

ԱԶԳԱՊԱՏՈՒՄ

ՀԱՅ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՑՔԵՐԸ ՍԿԻԶԲԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ ՅԱՐԱԿԻՑ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՎ ՊԱՏՄՈՒԱԾ

ԳՐԵՑ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ՆԱԽՔԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ Գ. ՀԱՏՈՐ ՄԱՍՆ Ա.

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Բարերարութեամբ՝

ՊՐՆ. ՏԱՃԱՏ ՍՐԱՊԵԱՆԻ

ՊԷՅՐՈՒԹ ՏՊ. ՍԵՒԱՆ 1961

2309. ԵՓՐԵՄԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Դանիելի մատուամբը անտերունջ մնացած կը սեպուէր Մայրաթոռը, զի յաջորդ ցուցուած Եփրեմը հասած չէր սակայն նոր կարգադրութեամբ Վարիչ Սինոդ մը կազմուած էր, որ տէր կանգնեցաւ Աթոռին, և իր նախանդամը, Բարսեղ Աշտարակեցի եպիսկոպոսը, տեղակալութեան պաշտոնը ստանձնեց: Բարեբախտաբար Դաւիթ Էնէգէթցի գահապուրկ կաթողիկոսին կողմէն ալ իւրրտում մը տեղի չունեցաւ, զի Միաբանութիւնը բովանդակ իրեն դէմ էր, և Յիցիանովի գրած նամակին յայտնութեամբը՝ Պարսիկներուն բարեկամութիւնն ալ կորուսած էր, արտաքին կերպարանովն ալ ներկայանալի ձև չունէր, զի մօրութիւն ածիլուելէն հապիւ ամիս մը անցած էր: Միաբանութիւնը ակնկալութեան դիրքը մը կազմեց իրեն մինչև որ Եփրեմ հասնի, որուն ետևէն զրկուած էր Ռեթէոս եպիսկոպոս՝ վայն Էջմիածին առաջնորդելու համար, Միաբանութեան հանրադրութեան, և Դանիելի յայտնած համաձայնութեան, և Ապպաս-Միրզա արքայորդիէն ստացուած հաստատութեան վօրութեամբ: Բայց մինչև որ Եփրեմ հասնէր, նոյն Ապպաս-Միրզայի՝ Ժառանգի տէրութեան Պարսից հրովարտակաւ Բարսեղ Աշտարակեցի և Սիմէոն Մակուեցի եպիսկոպոսներ նշանակուեցան Վերատեսուչ պատրիարքական կառավարութեան: Կ. Պոլսոյ պատրիարքութեան մէջ ալ՝ Դաւիթեան շարժում տեղի չունեցաւ, թէպէտ պատրիարքական աթոռին վրայ կը գտնուէր տակաւին Յովհաննէս Բաբերդցին, երբեմն Դաւիթի պաշտպան եղած, իսկ ոմանք յառաջադեմք ի ներգործութիւն ազգական, այսինքն Կ. Պոլսոյ ազգային գործերու գլուխ գտնուողներէն ոմանք, թելադրութիւններ ալ հասուցին Էջմիածին, որպէսզի շուտով Դանիելի յաջորդը նշանակուի, ինչ որ Միաբանութիւնը Դանիելի կենդանութեան օրերէն հոգացած էր (2300): Կ. Պոլսեցւոց փափագն էր որ վերև յիշուած աթոռի երեք վերատեսուչներէն մէկը անմիջապէս կաթողիկոս հռչակուէր և օծուէր, ինչ որ Դաւիթին վերադարձը արգիլալու նպատակը կը ցուցանէ: Բայց Միաբանութիւնը հաստատուն մնաց Եփրեմը կաթողիկոսացնելու միտքին վրայ, ինչպէս որ Դանիելի կրկին կրկին յանձնարարած էր իր վերջին օրերուն մէջ: Այդ նպատակին հասնելու համար Միաբանութիւնը պաշտօնական ձևակերպութեանց ալ ձեռնարկեց, և ժողով հռչակեց, թէ իրենց ընտրութեամբ հայրապետական աթոռին վրայ կ'ուզեն միայն զԵփրեմ եպիսկոպոսն՝ որ ի Ռուսաստան, և ոչ այլ ոք: Այդ որոշումը գրուեցաւ Մայրաթոռոյ գերագոյն իշխանութիւն ճանաչուած, և Սուրբ ժողովն բարձրագոյն խորհրդարանի Սրբոյ Էջմիածնի կոչուած մարմինին հեղինակութեամբ, և ըստ այնմ պաշտօնագիրներ ուղղուեցան, թէ Եփրեմի և թէ Ռուսաց կայսեր, և յղուեցան Ռեթէոս եպիսկոպոսին, որ արդէն պատուիրակ նշանակուած էր, բայց պատերազմական արգելքներու պատճառաւ չէր կրցած իր ուղևորութիւնը փութացնել և աստ և անդ կը դեգերէր: Ներսէս նորէն դարձաւ Ապպաս-Միրզայի մօտ, պարսիկ կառավարութեան վերջնական հաստատութիւնն ստանալու, և որչափ ալ Ապպաս աւելի յօժար կ'երևէր, որ Ռուսաստանէ գալիք մէկուն տեղ, պարսիկ արքունիքին մօտէն ծանօթ՝ Մակուայ առաջնորդ Սիմէոնը կաթողիկոսանար, սակայն թէ Սիմէոնի ետ քաշուելով, և թէ Ներսէսի յանուն

Միաբանության ըրած ջանքերովը, արքայորդին հաւանեցաւ և վերջնական ընտրութեան պաշտօնագիրը տուաւ Եփրեմի անունով: Այդ գիրն ալ յղուեցաւ Ռեթեոսի, որ վաւերագիրներով պօրացած, իր պաշտօնը կարենայ գլուխ հանել: Այսպէս լրացաւ Եփրեմի կանոնական ընտրութիւնը, առանց սպասելու Կ. Պոլսոյ ապագայնոց համաձայնութեան և սուլտանի ֆէրմանին, վասնզի ժամանակ չկար, և անակընկալի մը դիմաց գտնուելէ կը վախցուէր: Եփրեմի անունը արդէն Տաճկահայոց ծանօթ էր և անգամ մըն ալ ընտրելի ներկայացած էր (2219), և հակառակութեան չէր հանդիպած, իսկ անկէ ետքը իր ուղղութեամբն ու գործունէութեամբը նոր յարդ ու աւելի վարկ շահած էր Տաճկահայոց աչքին ալ:

2310.

Ռուսաց կառավարութիւնը այդ վերջին անցուդարձերէն առաջ ստացած էր Դանիէլի դիմումը, որ իր հիւանդութեան պատճառով կը խնդրէր, այժմէն Եփրեմը փոխանորդ և վարիչ նշանակել, ապագային անարգելք և առանց ժամանակ կորցնելու յաջորդելու կարենալու համար: Մինաս Լապարեան ալ ստացած յանձնարարութեան համեմատ՝ ոյժ տուած էր այդ գործին: Բայց կառավարութիւնը կ'ուզէր նախապէս Կովկասի կուսակալին կարծիքն ալ առնել, և ըստ այնմ գործի ձեռնարկել: Գլխաւոր նախարար, Կոմս Սալդիկով, 1809 յունուար 29-ին Կոմս Գուտովիչի կը գրէր այս մասին, առանց Դանիէլի մեռած ըլլալէն լուր ունենալու, թէպէտև մահուան օրէն 112 օրեր անցեր էին, ինչ որ ժամանակին տիրող յարաբերութեանց դժուարութեանը մասին գաղափար մը կու տայ: Սալդիկով իբր սկզբունք կ'ընդունի, թէ Ռուսիոյ համար կանոն է, ոչ թէ հակառակիլ ընդհանուր Հայ ազգի ցանկութեանը, այլ ջանալ համերաշխ լինել այդ ցանկութեան, և կը հարցնէ թէ ո՞վ է բաղձացուած ընտրելին, պայմանաւ որ իւր հաւատարմութեամբ և աջակցութեամբ՝ ռուսական կայսրութեան շահերին համակիր մէկ մը ըլլայ: Կայսրը, կ'ըսէ, հեռի չէ Դաւիթն ալ ընդունիլ, եթէ միայն կարող էք յոյս տածել՝ դարձնել դորան մեր կողմը, և ներկայ պատերազմական վիճակին մէջ նորա ազդեցութիւնից օգուտ քաղել: Միանգամայն կը հրահանգէ, որ եթէ Դանիէլի մահը կանխէ, յարմար դատած մէկը փոխանորդ հաստատէ չսպասելով նոր կայսերական հրամանի: Գուտովիչ կը պատասխանէ նոյն 1809 տարուոյ փետրուար 27-ին, և կը ծանուցանէ Դանիէլի մահը, կը յայտնէ՝ Դանիէլին և Միաբանութեան կողմէն Եփրեմի ուզուած ըլլալը, և անոր հաստատութիւնը՝ ռուսական շահերուն համաձայն ըլլալը. կը յաւելու թէ Դաւիթի ընտրութիւնը շատ սակաւ կը համապատասխանէ թէ Ռուսիայի օգուտներին, և թէ Հայոց ազգի ցանկութեանը: Ինքն վստահութիւն չունի որ Պարսիկները համակիր ըլլան Եփրեմի, ուստի կը թելադրէ, որ Էջմիածնի Պարսից ձեռքը գտնուելուն պատճառով, օգտաւէտ կը լինի որ մի առժամանակ նա մնայ Թիֆլիսում ռուսական հովանաւորութեան ներքև: Այդ միջոցին, 1809 փետրուարին, Ռեթեոս դեռ նոր հասած էր Տիֆլիս, ձմեռային դժուարութիւններէ և պատերազմական արգելքներէ յապաղած, բայց Տիֆլիսի մէջ առած լուրերը և Գուտովիչի տրամադրութիւնները պինքը քաջալերեցին վստահութեամբ պատուիրակութիւնը շարունակելու: Այդ եղելութեանց մէջ նկատողութեան արժանի կը սեպենք այն փութկոտութիւնը, զոր ամէնքը կը դնեն կաթողիկոսական ընտրութեան համար ռուսական կայսրութեան հաւանութիւնն ստանալու, թէպէտ Էջմիածնի ռուսական տիրապետութեան ներքև չէր: Այդ փութաջանութեան մէջ անհնար է չտեսնել, Ռուսաց հանդէպ Հայերուն ունեցած մեծ վստահութեան և մեծ համակրութեան յայտնի նշանը: Ռուսներ արդէն Կովկասներն անցան, և բաւական գաւառներու ալ տիրապետած, և հետըզհետէ ընդարձակուելու վրայ էին, այնպէս որ Էջմիածնի ռուսական տիրապետութեան անցնիլ այսօրուան վաղուան մի գործ կը նկատուէր: Միւս կողմէն այնչափ ծանրացած էին պարսկական անկանոն և բռնական տիրապետութեան նեղութիւնները, որ Ռուսիա իբր ապատարար

կ ողջունէր, և անոր գալուստը կը բաղձացուէր, և այդ պատճառով տարածուած էր Հայոց մէջ անդաստին Օրիի օրերէն: Ասով մէկտեղ չմոռանանք յիշատակել, թէ Էջմիածնի Աթոռը՝ միջապագային կացութիւն մը կը սեփականէր իրեն, իրաւասութիւն ունենալով Ամենայն Հայոց վրայ, որ պետութեան ներքեւ ալ գտնուին անոնք: Այս պատճառով է որ նա շարունակած էր Օսմանեան կայսրութենէ հրոարտակ ստանալ, թէպէտ ինքն պարսկական տիրապետութեան ներքեւ էր, բայց Հայութեան մէջ մասը օսմանեան հպատակ էր, և անոր վրայ ալ Էջմիածին իրաւասութիւն կը վայելէր: Այս ատեն արդէն Հայութեան մի մասն ալ ռուսահպատակ դարձած էր, և ռուսական հրովարտակն ու հաստատութիւնն ալ կարևոր կը դատուէր միևնոյն պատճառով:

2311. ՊԱՐՍԻԿՆԵՐ ԵՒ ՌՈՒՍՆԵՐ

Պարսից և Ռուսաց մէջ ալ շարունակուող պատերազմական գործողութիւնները Էջմիածնայ մէջ շփոթ կացութիւն մը ստեղծած էին, առանց որոշ երակացութեան մը յանգելու, զի Ռուսեր դեռ նոր Երևանը նուաճելու ետևէ չէին, այլ կ'աշխատէին Պարսիկները խոնարհեցնել՝ և անով հիւսիսային գաւառներու մէջ հաստատուիլ և ընդարձակուիլ, առանց վերջնական սահմանագլուխներ գծելու երկու տէրութեանց մէջ (ՏՊԷ.378): Ֆէթհալի Շահն ալ իր կողմէն կը ջանար օգտուիլ այն բարեկամական կապերէն և օգնութեան խոստումներէն, զորս Նաբոլէոն կայսր իրեն կը հասցնէր իր դեսպաններուն ձեռքով, զորս իրարու ետևէն Պարսկաստան կը յղէր, և որոց վերջինն էր Կարտան Կորալարը: Իսկ Անգղիացիք՝ բանակցութեանց օգուտը և գործոց ասպարէզը մինակ Գաղիացոց չթողելու համար, սկսան խնդիրին խառնուիլ, և ճօն Պրիճ անգղիական դեսպան, սկսաւ Կարտանի առաջարկները խափանելու աշխատիլ: Այդ համառօտ ակնարկներ բաւական ըլլան բացատրել այն ջանքերը, զորս ռուսական կառավարութիւնը կընէր Էջմիածնի մէջ այնպիսի մէկ մը ունենալու՝ որ իր շահերուն համակիր և աջակից ըլլայ: Դանիէլի մահուընէ ամիս մը ետքը, 1808 նոյեմբերին մէջ Ռուսներ Արարատի դաշտէն քաշուեցան, բայց Դանիէլի մարմինը հազիւ չորս ամիս ետքը Էջմիածին փոխադրուեցաւ, 1809 փետրուարին, և ամփոփեցաւ առ հիման սեանն մեծի վանգակատան. ի հարաւ կուսէ (ՇԱՀ.Ա.234): Ռուսներուն մեկնելէն առաջ Պարսիկներ նորէն Արարատ եկած էին սեպտեմբերի սկիզբը ահագին բանակ կազմած, որ Միաբանութիւնը ահաբեկեց, այլ պարզ ցոյց մըն էր եղածը: Նախ երկրորդ արքայորդին Մահմատ-Ալի, յետոյ սեպտեմբերի 15-ին, Խաչվերացի չորեքշաբթին, գահաժառանգ Ապպաս -Միրզա վանք եկան բարեկամաբար, և պատուեցին և պատուուեցան: Ապպաս մինչև իսկ իր սուրը օրհնել տուաւ մայր տաճարին մէջ, յատուկ երգերով և թափօրով, և առատ խոստումներով դարձաւ Երևան: Միւս օր 16ին Ներսէս Աշտարակեցի պաշտօնապէս շորհակալութեան գնաց, և նախնի թագաւորներէ տրուած հրովարտակներուն վերահաստատութիւնը ընդունեցաւ (ԵՐՅ.Ա.53): Այդ առթիւ Դաւիթ ուզած էր կրկին անգամ Ներսէսը ամբաստանել արքայորդւոյն առջև (2299), բայց այս անգամ ալ յաջող ելք չունեցաւ և մերժուեցաւ, որով Էջմիածնեցիք կրցան ըսել թէ կրակի և ջրի միջից կրկին անցանք անվտանգ (ԵՐՅ.Ա.54): Իսկ վանական կառավարութիւնը հանդարտ ընթացք մը ունէր Բարսեղի տեղապահութեամբ, Բարսեղի և Սիմէոնի և Ներսէսի վերատեսչութեամբ, և Բարձրագոյն Խորհրդարանին գործակցութեամբ, որոնք թէպէտ տարբեր անուններ և տարբեր վարիչներ էին, սակայն միևնոյն անձերէ կազմուած ըլլալով՝ բաղխումներու առիթ չտուին: Դաւիթ մերժուած և Դաւիթեանք ընկճուած՝ արգելքներ յարուցանելու ոյժ չունէին, և ամէնուն մտադրութիւնը սկեռեալ կը մնար Եփրեմի ռուսական հովանաւորութեամբ պօրացած աթոռ հասնելուն և գործերու տիրանալուն:

2312. ԵՓՐԵՄ ՀՐԱԻԻՐԻՌԻԱԾ

Պատուիրակ Ռեթէոս եպիսկոպոս՝ 1809 փետրուարին Տփղիսէն մեկնելով, շիտակ կերթար Աստրախան, ուր կը կարծէր Եփրեմը գտնել, բայց ջուրերու յորդութեան և երեսնօրեայ զգուշական արգելարանին պատճառով՝ հապիւ ապրիլի վերջը այնտեղ հասնելով, պարապի եկած ըլլալը կիմանար, զի Եփրեմ Նոր-Նախիջևան կը գտնուէր: Նորէն ճամբայ ելլելով վերջապէս յունիս 12ին, Լուսաւորչի նշխարաց գիւտին օրը, կը հասնէր նորընտիր հայրապետին մօտ: Արդէն ութը ամիսներ անցեր էին Դանիէլի մահէն, և այդ միջոցին ռուսական կառավարութիւնը իր հաւանութիւնը տուած էր Եփրեմի կաթողիկոսանալուն, Գուտովիչէ ստացած տեղեկութեանց վրայ հիմնուելով, մինչև իսկ կայսերական հրաման ալ տրուած էր հրովարտակը պատրաստելու, և Եփրեմի հաղորդուած էին այդ կարգադրութիւնները: Էջմիածնի պատուիրակը, որ այդ յաջողութիւնները պատրաստելու պաշտօն ունէր, արդէն ամենայն ինչ լրացած կը գտնէր, և իրեն կը մնար միայն նորընտիրին ընկերակցելու պատիւը, զի Աղեքսանդր Կայսր փափաք յայտնած էր, որ Եփրեմ Էջմիածին չգացած իրեն ներկայանայ, միտք ունենալով զայն ևս քան զևս փառաւորել և զօրացնել, և միանգամայն անոր միտքն ու սիրտը ռուսական քաղաքականութեան վրայ ամրապնդել: Ստացուած յաջողութեանց արժանիքը պէտք է վերագրել Յովակիմ Լապարեան իշխանին աշխատութեանց և անդուլ ջանքերուն: Իսկ Եփրեմ, թէպէտ ամէն կողմանէ իրր պաշտօնը ապահովուած, և պաշտօնապէս ինքզինքը կաթողիկոսացած կը տեսնէր, բայց Հայ եկեղեցւոյ աւանդական կանոնին, և օծման պայմանին հնազանդելով, կը գոհանայ պարզապէս՝ հաստատեալ ի կաթողիկոսութիւն Ամենայն Հայոց վերտառութեամբ կամ ստորագրութեամբ տալ իր պաշտօնագիրերը (ԵՐՅ.Ա.52): Ընտրեալ կաթողիկոսը, պատուիրակ եպիսկոպոսին և իր հետևորդներուն հետ Նոր-Նախիջևանէ մեկնեցաւ 1809 յունիս 23-ին, բայց կառքի արկածի պատճառով հապիւ յուլիս 14-ին հասաւ Մոսկուա, Վարդավառի երկրորդ չորեքշաբթին, և փառաւոր ընդունելութիւն գտաւ: Այնտեղ քանի մը օր մնաց, Լապարեանէ ստացած հրահանգին համեմատ, Ռեթէոսը առջևէն ճամբայ հանեց յուլիս 19-ին դէպի Պետրբուրգ, քանի մը օրէն ինքն ալ ուղևորեցաւ և օգոստոս 1-ին, Վարդավառի հինգերորդ կիրակէին, հանդիսաւոր կերպով մտան ռուսաց մայրաքաղաքը, և հիւրընկալուեցան Լապարեանց ապարանքը: Անկէ ետքը կարգադրուեցան կայսերական ընդունելութեան պատրաստութիւնները և պայմանները, որոնք երեք շաբաթի չափ ուշացան, և այդ միջոցին Եփրեմ աշխատեցաւ ներքին գործերու կարգադրութեամբ, կարևոր անձերու տեսակցութեամբ, և ռուսական պաշտպանութիւնը ևս քանակ ևս ապահովելու ջանքերով:

2313. ԵՓՐԵՄ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Կայսերական ընդունելութիւնը տեղի ունեցաւ օգոստոսի 20-ին, Վերափոխման ուրբաթ օրը: Եփրեմ ներկայացաւ իրեն հետ ունենալով Ռեթէոս եպիսկոպոսը, և Ղուկաս ու Մանուէլ վարդապետները, և Յովակիմ Լապարեան իշխանը, և քանի մը ուրիշ եկեղեցականներ: Կայսրը պահ մը առանձինն մնաց գլխաւոր եկեղեցականներու հետ, որու ատեն թարգմանի պատօնը վարեց Մանուէլ վարդապետ, իսկ բոլորին միասին տրուած ունկնդրութեան պահուն այդ պաշտօնը կատարեց Աղեքսանդր Խուտաբաշխեան, պետական պաշտօնատանց թարգման: Ամէնքը հիացած և սքանչացած էին Կայսեր քաղցրաբան և քրիստոնէավայել վարմունքին վրայ, և միսիթարուած էին Կաթողիկոսական Աթոռին և Հայերու պաշտպանութեան համար Կայսեր խօսած լիաբերան խոստումներով: Սակայն որչափ Հայերը Կայսեր պաշտպանութեան՝ նոյնչափ ալ Կայսրը Հայերուն բարեկամութեան պէտք ունէր իր ապագայ դիտումներուն համար: Չանապան թանկագին ընծաներ և դրամական ու պաշտօնական առատ նուէրներ տրուեցան ամէնուն. իսկ Եփրեմ, որ իբր Ռուսաստանի առաջնորդ վեղարի խաչը և լանջաց պանակէն ստացած էր, Սուրբ Աննայի

ասպետական կարգին առաջին աստիճանով պատուուցեցաւ: Ուտելուց պատուասիրութիւն ալ եղաւ արքունեաց մէջ, բայց օրուան պահքին պատճառով մրգեղինօք գոհացան հրաւիրեալները: Կայսեր փափաքին համեմատ Եփրեմ սեպտեմբեր 12-ի Խաչվերացի օրը հայրապետական պատարագ մատոյց Հայոց եկեղեցին, որուն Կայսրն ալ ներկայ եղաւ իր ընտանիքին ու պալատականներուն, նախարարներուն ու մետրոպօլիտներուն հետ, ուսկից ետքը Լապարեան իշխան իր տան մէջ Կայսեր և բոլոր հետևորդներուն ընդունելութիւն ըրաւ: Այդ հանդէսէն երեք օր ետքն էր, որ սեպտեմբեր 15-ին, Պարսից արքայորդին ալ Մայրաթոռին մէջ պատուասիրուեցաւ, որով հայրապետական աթոռին յարաբերութիւնները՝ երկու կողմերուն հետ ալ հաշտ կերպարան մը կառնէին: Եփրեմ ալ այդ նպատակին կը հետևէր, և իր ազգակիցներէն Գրիգորիկ Վահրամեանը՝ Պետրբուրգէ ճամբայ կը հանէր, Պարսիկ արքայորդւոյն ընծաներ տանելու իր հասնելէն առաջ: Նորընտիր կաթողիկոսը երկու ամիս ևս Պետրբուրգ մնաց, մինչև որ կայսերական հրովարտակը ստորագրուեցաւ սեպտեմբեր 30-ին, և ուրիշ գործողութիւններ ալ լրացան: Հապիւ 1809 դեկտեմբեր 20-ին, երկուշաբթի օր կրցաւ Պետրբուրգ մեկնիլ: Աւագ տօները ճամբան անցուց, և 1810-ին Ծննդեան Տօնը Մոսկուայի մէջ կատարեց: Բայց ձմեռնային եղանակին սաստկութիւնը, իր վատառողջ անձ մը լինելը, և Ռուսաստանի քաղաքներուն այցելելով երկար տարիներ հովուած ժողովրդին հրաժեշտի ողջոյնը տալու փափաքը երկարեցին Մոսկուայէ Կովկաս ուղևորութիւնը, և հապիւ 1810 յուլիսի սկիւբները Տփղիս մտաւ: Յապաղելուն մէկ պատճառն ալ նոյն օրերը Ռուսաց և Պարսից յարաբերութիւններուն նորէն ցրտացած, և թշնամական երևոյթներ ըստացած ըլլալն էր: Այնպէս որ վօրավար Տօրմասով, Գուտովիչի յաջորդող կուսակալը, խորհուրդ տուաւ Տփղիսի մէջ սպասել մինչև որ Պարսից կողմէն վստահեցուցիչ լուրեր ստացուին: Այս միտքով պատուիրակութիւն ալ յղուեցաւ Երևան Ապպաս-Միրզա արքայորդւոյն, և անոր կողմէն սիրով ընդունելութիւնը երաշխաւորուե լէն ետքը, Եփրեմ Տփղիսէ մեկնեցաւ, և հոկտեմբեր 5-ին Խաչի չորրորդ չորեքշաբթին սահմանագլուխը անցաւ և Պարսիկ երկիրը կոխեց՝ Ապարան գաւառին կողմէն:

2314. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾԵՐ

Այստեղ կը ստիպուինք էջմիածնի և Մայրաթոռի գործերուն պատմութիւնը ընդհատել, և քաղել ինչ որ ուրիշ աթոռներու մէջ գործուեցաւ, և վորս պահ մը աչքէ վրիպեցուցինք, կաթողիկոսական յաջորդութեանց թելը չխպելու համար: Յիշատակութեան արժանի դիպուածը 1806-ին Երուսաղէմի մէջ ծագած աղմուկն է, Սուլթան Սէլիմ Գ ի օրով, երբ Անթիմոս՝ Երուսաղէմի Յոյն պատրիարքը՝ ուկեց բռնանալ Հայերու սեփականութեանց վրայ, վօրութեամբ այն հրովարտակներուն, որ մինչև այն օրը գաղտնի պահուած էին (2308): Թէոդորոս պատրիարք Կ. Պոլիսէ օգնութիւն խնդրեց, և Յովհաննէս պատրիարք Երուսաղէմէ պահանջեց իբրև փաստ ծառայելու պէտք եղած հին հրովարտակները: Պահ մը Թէոդորոս անձամբ Կ. Պոլիս գալու միտքը ունեցաւ, այլ միաբանները դէմ դրին, որպէսպի իրենց անգլուխ մնալովը՝ Յոյնք առաւել համարձակութիւն չստանան: Այդ առթիւ առաջին անգամ հրապարակ կ իջնէ Պօղոս Գրիգորեան վարդապետ, աւելի ծանօթ Ադրիանուպոլսեցի մականունովը, որ հրովարտակներու պատճէններով, Կ. Պոլիս յղուեցաւ Յակոբ Եպիսկոպոսի օգնելու համար (ԱՍՏ.Բ.159): Ներհակընդդէմ վէճերը երկարեցան, զի Յոյներ պաշտպանութիւն կը գտնէին շահուած պաշտօնեաներէն, իսկ Հայեր տկար կը մնային հրովարտակներու պատճէններ, և ոչ բնագիրներ ներկայացած ըլլալնուն: Երուսաղէմէ չէին կրնար բնագիրներ հասցնել, զի անոնց կարևորները, և յատկապէս Էօմէրի դաշնագիրը, Եղիապար Այնթապցիի օրէն Կ. Պոլիս մնացած էին (ԱՍՏ.Բ.161): Այդ մասին Յակոբի և Պօղոսի թախանձանքները ապարդիւն մնացին Կ. Պոլսոյ ազգային մեծամեծաց առջև:

Կարապետ Ալնաուորեան և Գրիգոր Չարապլեան ամիրաներու ջանքերն ալ, որոնք իբրև հմուտք տաճկական դպրութեան կայսերական դիւաններու կը դիմէին, արդիւնք մը չարտադրեցին, և պաշարեցան Հայք ի տրտմութիւն մեծ: Յակոբ Եպիսկոպոս փոխանորդութենէ ձեռնթափ եղաւ, Պօղոս վարդապետ նուիրակութեան պաշտօնը շարունակելու համար Զմիւռնիա մեկնեցաւ ամէնքը գրեթէ յուսաբեկ ստիպուած էին այցելութեան Տեառն (ԱՍՏ.Բ162): Եւ ահա կը սկսին 1807 մայիսի քաղաքական շփոթները (2308), Երուսաղէմի գործերը մոռացութեան կը տրուին, հին վիճակը կը շարունակէ, և Հայերը կը յաջողին ապագային ստացութիւնները իրենց ձեռքը պահել:

2315. Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԴԵԸ

Խնդիրները նորէն կ'արժարժւին, երբ շփոթներու վերջանալովը և Մահմուտ Բ-ի գահակալելովը ընդհանուր կացութիւնը քիչ մը կը հանդարտի: Անակնկալ պատահար մըն ալ առիթ կ'ընծայէ այդ կրկնումին: Վարագայ Խաչի չորեքշաբթիին գիշերը, 1808 սեպտեմբեր 30-ին, երեք ազգերուն ալ գիշերային պաշտամունքը լրանալէն ետքը, արևելեան ժամահաշուով գիշերուան 9-ին, որ է կէս գիշերէն երկուքուկէս ժամ ետքը, ել հուր և բորբոքեցաւ վերնատունն Հայոց ի տաճարին Ս. Յարութեան: Մարելու ճիգեր ապարդիւն եղան, հրդեհը ճարակեցաւ տաճարին մէջ, պատեց Հայոց վերնատունը, փայտակերտ սենեակները, Յունաց եկեղեցին, Գողգոթայի մասը, և Գերեզմանին շրջապատը, որոնք հրկիւցեցան իրենց վարդերով և ըսպասներով, հոյակապ շինութեան քարէ սիւներն ալ վնասուեցան, և Ս. Գերեզմանին վրայի կամարակապ գմբեթն մեծ անկաւ ահագին շառաչմամբ, և կործանեցան կամարք և շինուածք: Ամենէն շատ կորուստը Հայերն ունեցան, Յոյները քիչ պակաս, իսկ Լատիններ գրեթէ անվնաս մնացին: Անձերու կորուստին կողմէն կը յիշուի միայն՝ թէ Ս. Յարութեան տեսուչ Ադրիանուպոլսեցի Մելքոն վարդապետը գմբեթին փլատակին տակ մնացած է: Միւս օր կատարուած կառավարական քննութեանց մէջ, կրակին Հայոց վերնատունէն ելած ըլլալը ստուգուելով, որչափ ալ պատահական ըլլալը տաճիկ պահապաններու վկայութեամբ հաստատուեցաւ, բայց համարձակութիւն տուաւ Յոյներու և Լատիններու՝ Հայերը մեղադրելու, և Հայերը ստիպուեցան անձնական պաշտպանութեան ալ աշխատիլ: Յոյներ ամէն տեսակ ջանք թափեցին այդ առիթի Հայերը բոլոր իրենց ստացեալ իրաւունքներէն վրկել, չներելով պաշտօններ կատարել, աւերակները մաքրել և մնացորդները հաւաքել, մանաւանդ թէ ջանալով Լատիններ և տեղացիներ շահիլ Հայոց աննպաստ վկայութիւններ տալու: Սակայն ոչ միշտ յաջողեցան, և Լատիններ արթուն գտնուեցան նախատեսել, որ վրկողութիւնը տարածուելով իրենց ալ կրնար հասնիլ, ուստի յայտնի պաշտպանութիւն ալ ըրին Հայոց, և հոկտեմբեր 25-ին Գիւտ Խաչի արարողութիւնը կատարել տուին, իրենց սեփական բաժնին մէջ (ՍԱԻ.1027): Բայց պարագաներ Յոյներու նպաստեցին և վերաշինութեան կայսերական հրամանն ալ անոնց անունին տրուեցաւ, քանի որ Լատիններ նշանաւոր վնասներ ունեցած չէին: Յոյներ հետզհետէ ընդարձակելով ստացած համարձակութիւննին, ոչ միայն Ս. Յարութեան տաճարին մէջ Հայոց պատկանող ինչ ինչ մասերուն տիրացան (ԱՍՏ.Բ.171), այլ և եպարքոսը շահելով, աղերս մատուցին Կայսեր որ Ս. Յակոբայ հայ մայրավանքն ալ իրենց յանձնուի, իբր թէ՛ Հայք ի ձեռն կաշառուց գրաւեալ են վնա ժամանակին, և այնպէս մինչև ցարդ մնացեալ է ի ձեռս հայոց (ՊԷՐ.60): Սուլթան Մահմուտ խոհեմութիւն ունեցաւ և իսկևիսկ հրաման չըրաւ Յունաց աղերսագրին համեմատ գործադրել, ինչպէս կը թելադրէր մեծ եպարքոս Բէօր Եուսուֆ փաշա (ՊԷՐ.59), կամ ձիջդ կոչմամբ Եուսուֆ Զիա փաշա (ԺՈՒ.385), նոյն այն պոր Պաղեստինի պատերապմներու առիթի յիշեցինք (2181): Հայեր որչափ և նկուն և ընկճուած, ջանքերնին չդադրեցուցին, հակառակ եպարքոսին Յոյներէ շահուած ըլլալուն, և կը սպասէին նպաստաւոր պարագաներէ օգտուիլ:

2316. ԱՌԱՋԻՆ ԱՂԵՐՍԱԳԻՐ

Այն օրէն որ 1807 փետրուար 8-ին, Յովհաննու ուրբաթ օրը, 11 մատանաւերու անգղիական տորմիդ մը, Չանաքքալէի նեղուցը բռնաչքօսելով, յանկարծ Կ. Պոլսոյ դիմաց երևցած էր, երկու պետութեանց յարաբերութիւնները ձգտած կը մնային (ՊԷՐ.56), մինչև որ 1809 յունուար 5-ին դաշնագրով հաստատուեցաւ (ԺՈՒ.385): Այդ լուծումը ռուսական քաղաքականութեան հաճելի չեղաւ, Եաշի բանակցութիւնները խլեց, թշնամութիւնները նորոգեց, և Իպրայիլի յաղթանակը տարաւ (ԺՈՒ.385): Եուսուֆ եպարքոսը պատերազմի դաշտը մեկնեցաւ և տեղակալութիւնը ստանձնեց Շաքիր Ահմէտ փաշա, որ Հայերուն նպաստաւոր պագսումներ ունէր (ՊԷՐ.60): Անոր խորհրդով և հաւանութեամբ որոշուեցաւ յատուկ դիմում ընել կայսեր, և զօրաւոր գրութիւն մը մատուցանել, յիշելով Հայերուն հնօրեայ իրաւունքները, անդատին Էօմէրի օրէն ունեցած սեփականութիւնները, Սէլիմի հրովարտակով տրուած հաստատութիւնը, և յաջորդներէն կրկնուած վաւերացումները: Աղերսագիրը մատուցանելու օր որոշուեցաւ 1809 ապրիլի 23-ին, Յինանց չորրորդ ուրբաթը, երբ սուլտանը ուրբաթի աղօթքին պիտի երթար Հէքիմ Օղլու Ալի-փաշա մվկիթը (ՊԷՐ.60), Աքսէրայ թաղը (ԱՍՏ.Բ.185): Եկեղեցականներու մեծ խումբ մը հաւաքուեցաւ թագաւորին անցած ճամբուն վրայ, Պօղոս Գարագոչեան եպիսկոպոս, Պրուսայու առաջնորդ, Կաղպուանցիի աշակերտութենէն, պատկառելի ծերունի մը, բնիկ Կեսարացի, յաջողակ և լեզուանի, որ աղերսագիրը ներկայացուցած ատեն բերանացի ալ աղաչողական և մաղթողական խոսքեր արտասանեց: Թագաւորը տպաւորեցաւ եղած ցոյցէն, աղերսագիրին մէջ յառաջ բերուած կէտեր ել նշանակալից երևցան, ուստի պէտք տեսաւ գործը պոզուութեամբ ստուգել և հրամայեց ի կախ թողուլ վկուի և վվէճ երկուց ապագայ (ՊԷՐ.60): Բայց Յոյներ կանխած էին շինութեանց համար ստացած հրամաննին գործադրութեան դնել, և ճամբայ հանած էին Էլմասփաշապատէ Ապտիլրրահման պէյը, իբր պետական վերակացու, և Ղումպիանոս ճարտարապետը շինութեանց հսկող: Յատուկ նաւով մըն ալ կրկած էին 150 արհեստաւորներ և բաւական շինուածանիւթեր: Վերակացուն և ճարտարապետը 1809 մայիս 5-ին Յոպպէ հասան և անկէ Երուսաղէմ ելան գործի սկսելու համար, առանց հրովարտակը հրատարակելու, որպէսպի մինակ Յոյներու անուին ըլլալը խնդրի առարկայ չդառնայ: Հայեր և Լատիններ պնդեցին հրովարտակը տեսնել, և Դամասկոսի կուսակալութենէն ներկայացուցիչ ունենալ, որ հապի կրցաւ հասնիլ յունիս 12-ին: Ասով ալ կացութիւնը չպարզուեցաւ: Յոյներ պաշտօնեաներ շահած էին, Հայեր ու Լատիններ ալ ժողովուրդէն շատերը շահեցան, որոնք կը պնդէին երեք քրիստոնեայ ազգերը միաբան և միասին տեսնել: Յոյները ստիպուեցան վերջապէս հրովարտակները հրատարակել, որոնցմով բոլոր տեղերը յունական սեփականութիւն կը հռչակուէին, նոր շինութիւններ անոնց կը յանձնուէին, միւս երկու ազգերուն մէն մի պատարագամատոյց սեղան միայն թողլով շնորհիւ Յունաց, բոլոր վանքերն ալ, նոյն իսկ Սուրբ Յակոբն ալ, Յոյներուն պիտի անցնէին: Յոյներ կրցան դրամի զօրութեամբ իրենց կողմն անցնել Հայոց պաշտպան տեղացիները, բայց Հայեր դատարանի առջև հանեցին իրենց հրովարտակները, և Լատիններն ալ գործը Կ. Պոլսոյ դատարանին փոխանցեցին, և այս կերպով կրցան չափաւորել տրուած հրամանները, որով կուսակալը Յոյներուն ներեց միայն իրենց մասերը շինել, և միւս ազգաց վանքերուն գրաւումը հրամայեց յետաձգել:

2317. ԵՐԿՐՈՐԴ ԱՂԵՐՍԱԳԻՐ

Հապի շփոթները սկսած, Կ. Պոլսոյ մէջ վախճանած էր՝ Երուսաղէմի փոխանորդ Յակոբ եպիսկոպոս, և իրեն օգնական Մարկոս եպիսկոպոսը գործին տիրանալու անբաւական սեպուելով՝ փոխանորդութեան կոչուած էր Ադրիանուպոլսեցի Պօղոս վարդապետը, որ Չմիւռնիայէ հասնելով ձեռք առաւ իրաւանց պաշտպանութեան գործը: Թէոդորոս պատրիարք մայրաքաղաքի մէջ

կատարուելիք դիմումները պօրացնելու համար, յատկապէս հոն յղեց Պաղտասար լուսարարապետ եպիսկոպոսը, Մատթէոս լուսահան վարդապետը, և Դիոնեսիոս քարտուղար վարդապետը: Յոյներուն կողմէ շինութեանց համար Երուսաղէմ անձեր և իրեր պրկուած ըլլալը, և Երուսաղէմի մէջ տեղի ունեցած դէպքերուն լուրերը ստիպեցին գործը ապագային ժողովի առջև հանել, պոր Յովհաննէս պատրիարք գումարեց Մայր Եկեղեցւոյ մէջ, Վարդավառի բարեկենդանին նախընթաց շաբաթ օրը, որ կիրիսար 1809 յունիս 26-ին, և ուր հրաւիրեց և բերաւ կաթողիկոսեան յարած իշխանաւորներն ալ, ինչպէս էին Յովհաննէս Տիւլեան, Մինաս Թընկըրեան, և Անտոն Գըլճեան: Պատրիարքը ապու բանախօսութեամբ ունկնդիրները բորբոքեց, և ամէնքը խոստացան ապահ սաղիմական իրաւունքները պաշտպանելու համար ամէն ջանք թափել և ամէն պոհողութիւն ընել: Նոյնտեղ որոշուեցաւ կրկին անգամ կայսեր դիմել եկեղեցականաց աւելի խուռն բազմութեամբ, որ հինգ հարիւրի հասած կըսուի: Աղերսագիրը մատուցուեցաւ յուլիս 23-ին, Վարդավառի երրորդ ուրբաթ օրը, Իւսկիւտարի մէջ, թագաւորին Մահմուտիյէ մվկիթը աղօթքի երթալու ատեն: Պօղոս Գարագոչեան և Աստուածատուր Կոստանդնուպոլսեցի եպիսկոպոսներ, Պօղոս Գրիգորեան և Վարդան Մշեցի վարդապետներ, բազկատարած և բացաւ գլխով աղերսագիրը մատուցին, և Սուլտան Մահմուտ, շարժել ի գուր և ի սէր ապգիս Հայոց, յիշեց խնդիրը լաւ քննելու պէտքը պագացած ըլլալը, և կրկին հրաման ըրաւ որ շէյխիւլիսլամ կամ դենպետ Տիւրքիպատէ Ապտուլլահ էֆէնտիի գլխաւորութեամբ յատուկ ատեան մը կազմուի, և գործը ամէն կողմերով քննուի: Ժողովին ատենակալներ կարգուեցան եպարքոսութեան բարձրագոյն պաշտօնեաներէն Վահիտ և Ապիկ և Ապիկ և Եուսուֆ Ակեահ էֆէնտիներ, և դենպետութեան դուռնէն էմին, Թահիր և Ղասսէմ էֆէնտիներ (ՍԱԻ.1035), որոնց առջև հրաւիրուեցան Յունաց և Հայոց պատրիարքարի ներկայացուցիչները, իրենց փաստերը առաջարկելու, և փոխադարձ առարկութիւնները լուծելու (ՊԷՐ.61): Ժողովը չգումարուած Վահիտ էֆէնտի, որ եպարքոսարանի ըէիս էր, այսինքն է արտաքին գործերու յատկացեալ պաշտօնեայ, Յոյներու կողմէ շահուած ըլլալով, առանձինն կոչեց Գարակոչեանն և Գրիգորեանը, և ջանաց սպասնալեօք, ահացուցանել, որ Հայերը ետ քաշուին, բայց երկու Պօղոսներ համարձակ պաշտպանեցին ապգիս իրաւունքը, և մինչև ի բանտ և ի մահ պաշտպանելիք ըլլալնին յայտարարեցին (ԱՍՏ.Բ.183): Այդ դարձուածներն ալ Տիւլեանի ձեռքով: Հաղորդուեցան կայսեր, որ կրկին և կրկին հրամաններ տուաւ ժողովը փութացնելու:

2318. ՅԱՏՈՒԿ ԱՏԵԱՆ

Հինգ գումարումներ ունեցաւ առաջին նիստը, օգոստոս 2 երկուշաբթի, 5 հինգշաբթի, 9 երկուշաբթի, 12 հինգշաբթի և 16 երկուշաբթի օրերը: Հայոց կողմէն ներկայացան Երուսաղէմի Պօղոս և Դիոնեսիոս վարդապետները, և իշխանաւորներէն Կարապետ Ապնաւորեան, Յովհաննէս Երկանեան, Գրիգոր Չարապլեան, Առաքել Տատեան, Անտոն Գըլճեան, և Մինաս Թնկըրեան (ՍԱԻ.1036), թէպէտ ուրիշներ մէկ երկու անուններ տարբեր կը յիշեն (ՊԷՐ.62.ԱՍՏ.Բ.183): Յոյներուն կողմէն եկած էին, Թեսաղոնիկէի Գերասիմոս և Իկոնիոնի Կիւրղոս մետրապօլիտները, Երուսաղէմի միաբաններէն Մետրոփանոս և Պրոկոպիոս վարդապետները, և իշխանաւորներէն Լամբիկ և Եօրկի (ՍԱԻ.10369), թէպէտ ուրիշներ 4 եկեղեցականներ և 8 իշխանաւորներ կը յիշատակեն (ՊԷՐ.62): Յովհաննէս պատրիարք ամէն անգամ անձամբ հաւաքեց և հրահանգեց պատուիրակները, բայց ժողովներուն չմասնակցեցաւ (ԱՍՏ.Բ.184): Ժողովին ատենագրութիւնները ընդարձակորէն յառաջ բերուած կը գտնենք (ՍԱԻ.1036-1063, և ԱՍՏ.Բ. 194-192), այլ մեզ բաւական ըլլայ գիտնալ թէ ներհակընդդէմ փաստաբանութեանց հիմերը կը կազմէին հնագոյն հրովարտակները: Յոյները այդ հրովարտակներուն բնագիրները կը ներկայացնէին, որոնք թէպէտ պետական դիւանի արձանագրութեանց մէջ ալ կը գտնուէին, բայց բառերու

տարբերութիւններ կը նշմարուէին, և կասկած կը յարուցանէին Յոյներու խարդախութեան մասին, զի որչափ ալ բնագիրներ էին ներկայցուածները, բայց մէջը ձեռք խաղցած կ'երևար: Յառաջ կը բերուէին երկու կողմէն ալ պատրաստուած յատակագիծները, սեփականութեանց բաժինները ճշդելու և տեղերը տարորոշելու համար: Յոյներ հնագոյն ժամանակներու շինծու պատմութիւններ ճշդելու և տեղերը տարորոշելու համար: Յոյներ հնագոյն ժամանակներու շինծու պատմութիւններ և կեղծ վարձակալութիւններ ալ կը յիշէին, բայց այս մանրամասնութեանց հանդէպ Հայերուն կողմը զօրաւոր կ'ելլէր: Ուր որ Հայեր տկարացան, հրովարտակները պատճէնի վրայ և ոչ բնագիրով ներկայացնելնին էր, և այդ մասին ժողովը իր պահանջը կը խստացնէր: Պատրիարք և ալգայինք, որ իւրաքանչիւր նիստէ ետքը կը հաւաքուէին եղելութիւնները լսելու և ըլլուելիքները կարգադրելու, երրորդ գումարումէն ետքը, օգոստոսի 10-ին, թախանձողական նամակ մը ուղղեցին Թէոդորոս պատրիարքին, թէ բնագիրներուն չղրկուելով կրնար գործը վտանգուիլ, և վճռական որոշումէն ետքը անոնք իրենց արժէքը կը կորսնցնեն: Նամակին ստորագրած էին պատրիարքը, Պօղոս և Աստուածատուր եպիսկոպոսները, վրե՛ս յիշուած մածամեծներէն՝ Կատ նաև Յովհաննէս Տիւղեան, Մկրտիչ Արփիարեան, Յակոբ Լաթիֆեան, Անտոն Տավուաեան, Յարութիւն Նորատունկեան, Մանուկ Ալլահվէրտեան, և ուրիշներ, ընդ ամէնն 14 իշխանաւորներ: Օգոստոս 16-ի վերջին նիստին մէջ քննիչ ժողովը իր խորհրդածութիւնները ամփոփեց, և ինչ-չափ ալ Հայերուն բացարձակ իրաւունք չտուաւ, փաստերու պակասութեան պատճառով, այլ զիրենք իրենց ստացութեանց մէջ պահեց, մինչև բնադիրներու ներկայացուիլը: Իսկ նոր շինութեանց իրաւունքը Յոյներուն վրայ մնաց, սակայն նորանոր վէճեր արգիլուեցան, և ժողովին որոշումը հրամանագիրի վերծուելով պաշտօնապէս հրատարակուեցաւ, և երկու կողմերուն ալ պատճէններ հաղորդուեցան: Իրաւ Հայեր չկրցան կատարել իրաւունք ստանալ, բայց բացարձակ կորուստի ալ չենթարկուեցան և յուսալից մնացին բնադիրներուն հասնելուն իրաւանց և սեփականութեանց տէր դառնալ:

2319. ԱՐՔՈՒՆԻ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐ

Օգոստոս 10-ին նամակը Երուսաղէմ տանելու որոշուեցան Կարապետ վարդապետ Իւսկիւտարի Երուսաղէմատան տեսուչ և Կարապետ Բիւրէլի, որոնք հապիւ սեպտեմբեր 7-ին Երուսաղէմ հասան: Նամակը միաբանութեամբ կարդացուեցաւ, և պատրիարք ու միաբաններ համոզուեցան թէ պէտք է հրաժարին բնադիրները վանքէ չհանելու սովորութենէն: Ինը հրովարտակներ հաւաքեցին, առաջինը Սէլիմ Եավուպ, երկրորդը Սիւլէյման Բանունի կայսերներէն, միւսներն ալ յաջորդներէն, իբրև ի միոյ աղբերէ բղխեալ վաւերագիրներ, որոնց վրայ աւելցուցին նոր վճռագիր մը, Երուսաղէմի դատաւորէն առնուած: Աթոռին կողմէ Սահակ արեղան ալ ընկեր տուին Կ. Պոլսէ եկած թղթաբերներուն, և երկու օրէն սեպտեմբեր 9-ին ճամբայ հանեցին: Մինչև որ գործեր կրկին քննութեամբ վճռական և վերջնական կացութիւն մը ստանային, բաւական նեղութիւններ ունեցան Հայեր Երուսաղէմի մէջ, Յոյներու ստացած համարձակութեան, և վերջին ժողովով տրուած հրամանագիրին պատճառով, որ Երուսաղէմի մէջ հրատարակուեցաւ 1810 յունուար 12-ին (ԱՍՏ.Բ.197) Յոյներ աղիկամի փոփոխութիւններ կը մտցնէին տաճարին և Գերեզմանին և ուրիշ բաժիններու մէջ, վերաշինութեան իրաւունքէն օգտուելով: Հայերը չէին կրնար պաշտօնապէս ընդդիմանալ, միջոցներու պակասութիւնն ալ ունէին անպաշտօն յաջողութիւններու համար իսկ Կ. Պոլիսէ ապագայի յուսադրութիւններ միայն կ'ընդունէին, և աղօթքի ապաւինելու յորդորներ (ԱՍՏ.Բ.193): Երուսաղէմէ մեկնող հրովարտակու թղթաբերներ 52օրէն Կ. Պոլիս հասան, որ է ըսել 1809 նոյեմբերի առջի օրը: Բնագիր և վարդապիր հրովարտակու տեսքը ուրախութիւն և քաջալերութիւն ապրեց ամէնուն: Նախ անոնց վաւերական

պատճէները պատրաստուեցան, պետական դիւանատան ձեռքով և կնքով, և ցրուեցան պալատ, եպարքոսարան, դենպետարան, և ամէն կարևոր պաշտօնատուներ, և խորունկ տպաւորութիւն գործեցին: Հրովարտակներուն պատճէները արքունի դիւաններու մէջ գտնելու և բաղդատելու պաշտօնը յանձնուեցաւ Սատրղ Էֆէնտի անուն երևելի . . .պաշտօնակալի մը, 40 քարտուղարներու գործակցութեամբ: Երկարատև աշխատութեանց պէտք եղաւ մինչև որ Եավուղ Սէլիմի հրովարտակը գտնուեցաւ Տէֆթերխանէի դիւանէն ուր կային Երուսաղէմի առման ժամանակին վաւերագիրները: Առաջին Մահմուտինը Աթմէյտանի դիւանէն, ուրիշներն ալ վանապան տեղերէն, և ասոնց ամէնուն տեղեկագիրը կայսեր հաղորդեցաւ 1810 յունուարի վերջերը: Քսան օր մըն ալ պալատին մէջ մնացին ու նայուեցան, և մարտ 14-ին եպարքոսին պրկուեցան, վերստին առաջին ժողովը գումարելու և վճռական որոշման յանգելու հրամանով:

2320. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎՃԻՌ

Համաձայն կայսերական հրամանին առաջին բարձրագոյն ատեանին անդամները, քանի մը փոփոխութեամբ նոր նիստ բացին պետական դրան մէջ 1819 ապրիլ 7-ին, մեծ պահոց վեցերորդ հինգշաբթին և Աւետման տօնին օրը, ուր երկու կողմանց ներկայացուցիչներ իրենց յայտարարութիւններն ըրին: Այս անգամ հայ եկեղեցականներ էին, Աբրահամ, և Պօղոս և Մարտիրոս Եպիսկոպոսներ, Կ. Պոլսոյ փոխանորդ Կիրակոս, և Երուսաղէմի միաբան Պօղոս և Դիանեսիոս վարդապետներ: Երկրորդ գումարումը տեղի ունեցաւ ապրիլ 11-ին, աւագ երկուշաբթի օր, որուն առաջինէն աւելի բազմամոգամ և հանդիսական կերպով ներկայացան երկու կողմերը: Յոյներ կը ներկայացնէին Մէհմեմէտի բենչէ կամ ինքնագիր մը՝ որուն մէջ Երուսաղէմի խօսք չկար, Էօմէրի գրութիւն մը դաշնագիր անուանելով, այլ ժողովն այդ կոչումը մերժեց, և գրուածն ալ առաջին գումարմանց մէջ կեղծ դատուեցաւ: Ներկայացուցին ևս Մահմուտ Ա-ի հրովարտակ մը, որ իրենց դէմ դարձաւ, զի յայտնապէս ըսած էր վերջը, թէ երեք ազգո՝ սեփական տեղեաց իւրեանց, որպէս յառաջն, նոյնպէս և այժմ և առ յապայն տիրեսցեն (ԱՍՏ.Բ. 204): Հայերն ալ իրենց հրովարտակները ներկայացուցին, որոնց վաւերականութիւնը պատշաճ բաղդատութիւններով ստուգուեցաւ, և Յոյներն ալ չկրցան ուրանալ, և այսպէս Հայոց իրաւունքներն ու սեփականութիւնները հաստատուեցան: Երրորդ նիստին մէջ, ապրիլ 14-ին աւագ հինգշաբթի օր, նայուեցաւ եամագ կամ հետևակ ազգաց խնդիրը, որոնք են Հապէշք և Ղըփտիք և Ասորիք, և Հայերու իրաւունքը ճանչցուեցաւ: Ատեանը փակուեցաւ, ատենակալներ բացարձակ կերպով Հայոց սեփականութիւններն ու իրաւունքները հաստատեցին, և երկու օրէն, այսինքն ապրիլ 16-ին աւագ շաբաթ օրը, տեղեկագիրը կայսեր ներկայեցին, վաւերացումը ստանալու համար: Ամիս մը յետաձգեց կայսրը վճիռը, և միայն մայիս 19-ին, Յինանց հինգերորդ հնգշաբթին, երկու կողմերը հրաւիրուեցան վայն լսել: Կայսերական հրամանն էր, Սէլիմի հրովարտակը հիմ բռնել, որ Երուսաղէմի օսմանեան տիրապետողն էր եղած: Եթէ այն հրովարտակը անվաւեր նկատուի ալ, ինքն իր կողմէն Սէլիմեան հրովարտակին պարունակութեան համեմատ կը հրամայէ, երկու ազգերուն տիրել տեղեաց իւրեանց: Հետևակ ազգերուն կը թողու հետևիլ ում և կամիցին: Նոր շինութիւնները Յոյներուն կը յանձնէ, բայց ոչ որպէս իւրեանց իրաւունքով, այլ իբրև գործադիր հրամանի կայսեր: Հայեր առաջարկեցին, թէ քանի որ բարձրագոյն հրովարտակը ըստ ամենայնի ըստ առաջնոյն վերաշինել կը հրամայէ, մինչև Յոյներ փոփոխութիւններ մուծած են, պէտք է որ առաջին ձևերն ու դիրքերը մանրամասն կերպով յիշուին: Ատենակալները իրաւացի դատեցին Հայոց պահանջը, և ըստ այնմ Հայեր ետուն հաւանութիւն, և Յոյներ գիջան ասել ա՛յո. ատենագրութիւն ալ կազմուեցաւ որ մայիս 29-ին, երկրորդ Ծաղկապարդի կիրակին, կայսեր յղուեցաւ, որպէսզի ըստ այնմ հրովարտակի պատրաստութիւնը հրամայուի Պէյլիկձի կոչուած

հրովարտակաց դիւանին: Բայց տակաւին շատ ատեններ անցան, մինչև որ գործին վերջնական և պաշտոնական վիճակ մը տրուէր, ուստի այստեղ ընդհատելով Երուսաղէմի խնդիրին պատմութիւնը, կանցնինք ուրիշ ժամանակակից դէպքերու:

2321. ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

Երուսաղէմի խնդիրը իր համապագային կարևորութեամբը իրարու մօտեցուցած էր բոլոր հայ մեծամեծները, թէ բուն հայադաւանները և թէ հռոմէադաւանութեան միտեալները: Երկու կողմերուն իրարու հանդէպ տածած հակակրօթիւնը մեղմացած էր, և հակառակութեանց յիշատակները ջնջելու փափաքներ արթնցած էին: Յովհաննէս պատրիարքի զգացումները մեծ դեր ունէին այդ շարժումին մէջ: Ասոր որով դադարած էին կաթօլիկամիտներու հանդէպ գործածուած բուն միջոցները, և նա կրցեր էր անոնց գլխաւորներն ալ շահիլ, ինչպէս յայտնուեցաւ Երուսաղէմի խնդիրին ընծայուած գործակցութեամբ: Կաթօլիկութեան յարողներու մէջ ալ աւելի ասպարէզ գտած էր Վենետիկի Մխիթարեանց պաշտպանած ուղղութիւնը, այսինքն կաթօլիկութեան պահանջները չափաւորել, և ազգային պահանջները կաթօլիկութեան վրայ պատուաստել: Երկու կողմերու միտումներն ալ քիչ քիչ իրարու մօտեցած էին, այնչափ որ պահ մը յուսացին փոխադարձ համաձայնութեամբ միջին կէտի մը վրայ միաբանիլ, և հայ հասարակութեան մէջէն խնդիրն ու գժտութիւնը արմատաքի վերցնել: Այդ միտումներ հարկաւ մասնաւոր տեսութիւններու և բանակցութիւններու առիթ տուին, և գործը քիչ քիչ նախապատրաստուեցաւ Երուսաղէմի համար կազմուած գումարումներու և խորհրդակցութիւններու մէջ: Վերջապէս միաբանութեան խնդիրը սեղանի վրայ գրուեցաւ անմիջապէս որ 1810 մայիս 19-ին, Երուսաղէմի խնդիրին հայոց նպաստաւոր լուծում ստացած ըլլալը լսուեցաւ: Իսկ պատրիարքարանի մէջ գումարած պաշտօնական ժողովներուն սկիզբը նշանակուած է 1810 յուլիս 3-ին Լուսաւորչի կիրակէին խորհրդաւոր օրը: Որոշակի յիշուած չէ թէ որոնք եղան կաթօլիկամիտներու մէջէն գործին առաջնորդողները, բայց անշուշտ Տիւղեան, Թնկըրեան, և Գըլճեան ամիրաները, որոնք Երուսաղէմի խնդիրին մէջ գործոն դեր ստացած էին, հարկաւ այս անգամ ալ առաջիններ եղան պատրիարքարանի մօտենալու: Եկեղեցականներ ալ պէտք է գտնուէին, և բնական էր որ Վենետիկի Մխիթարեաններ առաջին կարգին մէջ գտնուէին, զի հայր Միքայէլ Չամչեան Կ. Պոլիս կը գտնուէր (2164), և իրեն համամիտներն ալ ունէր: Այս տեսութիւնները մերձեցումներով կը կազմենք, զի որոշակի յիշատակագիրներ չունինք առջևնիս: Հռոմէականք հինգ կէտերու վրայ ամփոփեցին իրենց պահանջները, որպէսզի անպայման պատրիարքարանին հնապանդին և հայադաւան եկեղեցիէն չվատուին, և մնացեալ կէտերուն մէջ անփոփոխ հայ եկեղեցւոյ կանոններուն և օրէնքներուն հետեւին: Այս հինգ կէտերն ալ գիրի առնելով ետուն իշխանաց մերոց, որով կը տեսնուի թէ աշխարհականներն են առջև նետուողները, իսկ եկեղեցականներ վարագոյրի ետև կը մնան, և ասով կը հետևի թէ պաշտօնական դիրք չունեցող եկեղեցականներն էին գործը մշակողները: Յիշեալ հինգ կէտերն էին. 1 երկու բնութիւն, երկու կամք, և երկու ներգործութիւն բանաձևը: 2. Հոգւոյն սրբոյ համար և յորդոյ բղխման յաւելուածը: 3. Առանձնական դատաստանն ու քաւարանը: 4 Պետրոսի վրայ հիմնուած պապութեան գրօթիւնը: 5. Վերջին օժում խորհուրդը (ՊԷՐ.67)

2322. ԱՆՅԱԶՈՂ ՎԱԽՃԱՆ

Որչափ ալ այդ հինգ կէտերուն ընդունելութիւնը, հայ եկեղեցւոյ դաւանութեան մէջ հիմնական փոփոխութիւն յառաջ կը բերէր, սակայն Յովհաննէս պատրիարք գործը խանգարող չերևնալու, և մօտեցող կաթօլիկամիտներուն զգացումները չպաղեցնելու համար, յանձն առաւ հինգ կէտերը կարող անձանց քննութեան և դիտողութեան ենթարկել և այնպէս պատշաճը

պատասխանել: Միանգամայն ուլեց անձամբ քննութեանց մասնակցիլ և քննիչ ժողովին նախագահել: Ժողովականներուն թիւը 18 կը ըսուի, որոնք եղան, պատրիարքէն դատ, 5 Եպիսկոպոս, 4 վարդապետ, 5 վարժապետ և 3 իշխան: Եպիսկոպոսներն էին, Աբրահամ Գօլեան նուիրակ, և Մարտիրոս Զմիւռնոյ, Պօղոս Պրուսայի, Երեմիա Եւդոկիոյ և Վարդան Մշոյ առաջնորդներ. վարդապետներն էին, Պօղոս Ադրիանուպոլսեցին, ու Ստեփան Զմիւռնացին, ևս և Ստեփան Աղաւնի ու Պետրոս Ծերունեան՝ Գարագոչեանի աշակերտներ: Վարժապետներն էին, Մեսրոպ աւագերէց, Գէորգ Պալաթցի, Գրիգոր Փէշտիմալձեան, Խաչատուր և Յարութիւն: Իսկ իշխաններուն մէջէն ժողովին մասնակցեցան, Առաքել Տատեան, Գրիգոր Չարապլեան և Գրիգոր Սաքայեան, որոնք իբր գիտնական և գործին մղում տուող կը նկատուէին: Ասոնք հնգիցս ժողով արարեալ ի տաճարի մայր եկեղեցւոյն, հինգ կէտերը քննութեան կ առնեն (ՊԷՐ.68): Ոչ կրնան ընդունիլ, և ոչ ալ մերժելով յոյսերը ջնջել կ ուլեն ուստի պատշաճ մեկնութիւններով կ աշխատին գործին մէջէն ելլել, և բանակցութեան շարունակութեան բաց դուռ թողուլ: Բնութեան միութիւնը կը վերածեն Կիւրեղեան բանաձևին, և բաւական կը սեպեն յայտնել թէ հայ եկեղեցին Եւտիքէսի գրութիւնը կը մերժէ: Հոգւոյն սրբոյ բղխման մասին կը բաւականանան ի նոցունց էութենէ ըսել, զի յՈրդւոյ բացատրութիւնը աւետարանական չէ: Ննջեցելոց կացութեան համար կ ընդունին թէ արդարք ի փառս են յուսովն, և մեղաւորք ի դատապարտութեան յուսահատութեամբ: Պապութեան գրութիւնը աւետարանէ օտար և երեք ժողովներուն կանոններէն դուրս կը գտնեն: Վերջին օծումի համար աղօթս առնել սովորութեամբ ընդունուած իսկ իւրը հարկաւոր չեն գտներ: Իւրաքանչիւր կէտին բացատրութեան համար ալ վկայութիւններ յառաջ կը բերեն Սուրբ Գիրքէն, Լուսաւորիչէն, Շնորհալիէն և ուրիշ հայրերէն, և պատասխաննին գիրի կ առնեն: Ասիկա պարզապէս հինգ կէտերուն մերժումն էր, մինչ հռոմէականք իրենց առաջարկներուն քննութեան ենթարկուելէն քաջալերուած, երկու նոր կէտեր ալ կ առաջարկեն, Որոտներցին և Տաթևացիները պատարագի մէջ չյիշեն, և Լեւոնի ու տոմարին նվովքը ձեռնադրութեան մաշտոցէն վերցնել: Թերևս այդ վերջին կէտերը աւելի դիւրաւ ընդունուէին, եթէ եկեղեցականներէ ոմանք բուռն ընդդիմութիւն չցուցնէին, և նոյն իսկ աշխարհականներէն ալ ոմանք՝ վերջին կէտերուն աւելի կարևորութիւն չտային: Հռոմէականներն ալ գոհ չէին առաջին հինգ կէտերուն մասին տրուած, իբր թէ մեկնողական, բայց իսկապէս մերժողական պատասխաններէն, և այսպէս երկու կողմերէն ալ գոհունակութեան իղձ մը և համաձայնութեան կէտ մը չգտնուելովը, փորձը մնաց ապարդիւն, իր ետևէն թողլով միայն միտումներու քաղցրացում մը և յարաբերութեանց մերձեցում մը, գլխաւորապէս աշխարհական դասակարգին մէջ:

2323. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Եթէ այդ միաբանական փորձերուն իսկութիւնը քննենք, մասնակցողներուն բարի դիտումները չնուազեցնելով ալ, համարձակ պիտի ըսենք, թէ խնդիրը, ինչպէս որ կառաջարկուէր, ըստինքեան ապարդիւնութեան մատնուած փորձ մըն էր: Եթէ հռոմէադաւան եկեղեցականներ և հռոմէականութեան միտեալ իշխաններ, հաստատուն էին հռոմէական տեսութիւններու հաւատարիմ մնալ, չէին կըրնար սպասել որ Հայ եկեղեցին իր ինքնութիւնը ուրանալու զիջանի: Իսկ եթէ կը կարծէին Հռոմէական եկեղեցւոյ կողմէ զիջողութիւններ, ստանալ, պէտք է ըսել թէ պապական կազմակերպութեան և վատիկանեան քաղաքականութեան բոլորովին անգիտակ էին: Գալով հայադաւաններուն, եթէ ընդունինք ալ որ Հայ եկեղեցին իր ներողամիտ սկզբունքներուն հետևողութեամբ և իր կացութեան պահանջներուն ստիպմամբ, զիջողութեանց համակերպելու պիտի միտի, միթէ Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը կրնա՞ր ընդհանուր Հայ եկեղեցւոյ վրայ ազդեցութիւն գործածել, և իր կազմակերպելիք ձևին գրութեան հպատակեցնել Մայրաթոռն ու

Երուսաղէմը, Կիլիկիան ու Ադթամարը, Ո՞չ ապաքէն այս աթոռներ ոչ մայրաքաղաքի քաշկուտութներուն մթնոլորտին մէջ կ'ապրէին, և ոչ անկէ առաջ եկած պահանջները կը պգային: Միւս կողմէն ենթադրել իսկ հնար չէ, որ լոկ Կ. Պոլսոյ պատրիարքութեան համար բարեփոխեալ և ուրոյն հայ եկեղեցի մը կապմելու միտքը յղացուած ըլլայ: Եթէ երկու կողմերն ալ իրենց եկեղեցիներուն ամբողջութեան վրայ ապրել չէին կրնար, ուրեմն հիմնապէս անհնար և սկզբէն ապարդիւն գործի մը կը ձեռնարկէին, և մեռած-ծնած արդիւնք մը պիտի ունենային անկասկած: Իսկ եթէ եղածը պարզապէս Կ. Պոլսոյ և շրջակայից մէջ գտնուող կաթոլիկամէտ տարրին անձնասիրութիւնը գգուելով, և կերպով ու չափով մը անոնց պատուապագութիւնը գոհացնելով, մայրենի եկեղեցոյս ու հայրենի պատրիարքարանին հետ հաշտուելու, և ըմբոստ ընթացքէն հրաժարելու դիւրութիւն պիտի ընծայուէր, այս ալ թերևս արդարանար ամիրայական կամ աշխարհական տարրին մէջ, այլ ոչ եկեղեցականներուն համար, որոնք մասամբ Տաճկաստանէ դուրս հոռմէադաւան երկիրներ ապաստանած էին, և մասամբ ալ Տաճկաստանի մէջ լատին կամ լատինացեալ հոգևոր պետերու ձեռքին տակ էին, և հոռմէական պահանջներու ըստ ամենայնի գլուխ ծռել պարտաւոր էին:

2324 ԱՐՄԱՇԻ ՎԱՆՔԸ

Բայց որով հետև առանց որոշեալ դրոյմի լուրջ ձեռնարկ մը չըլլար, և որով հետև Յովհաննէս պատրիարք և իրեն շուրջը գտնուող եկեղեցականներն ու իշխանաւորները լրջութենէ անմասն չենք կրնար ըսել, եղած փորձը արդարացնելու համար ուրիշ մեկնութիւն չենք կրնար տալ բայց եթէ յարգանք կամ ակնածանք մը այն փոքր ի շատէ վարգացման և ուսման, որ կը տեսնուէր Եւրոպիոյ հետ շփման մտնող եկեղեցականներու, և անոնց ձեռքով դաստիարակուած աշխարհականներու վրայ: Իրօք ալ ամէն հայ անյագ տենչանօք կը փափաքէր պայն իր մէջը փոխադրել, առանց սակայն պարտաւոր ըլլալու ենթարկուիլ այն եկեղեցուրաց պայմաններուն, որոնց ներքև կամայ ակամայ մտած էին անոնք, որ Եւրոպիոյ հետ շփմամբ մտաւորական օգուտին ետևէն կ'ըլլային: Զուտ ապգային ճիգերուն քանի քանի օրինակներ տուինք պատմութեանս մէջ, և վերջին անգամ բացատրեցինք Կոլոտներու և Նալեաններու և Փոքուպեաններու անկեղծ և անխոնջ աշխատութիւնները: Դեռ ևս վատ էին Կաղպուանցիին ներշնչած սիրտն ու հոգին, և իրեն աշակերտներն էին որ այս միջոցին տաճկահայութեան գործերը կը վարէին, և իրեն աւանդած հրահանգներուն կը հետևէին: Այդ հոգևով կը գործէին Յովհաննէս Չամաշըրճեան պատրիարքական աթոռին վրայ, Բարթողիմէոս Կապուտիկեան Արմաշի մէջ, և Պօղոս Գարագոչեան Պրուսայի կողմը: Բարթողիմէոսի ըրածէն մաս մը պատմեցինք իր կարգին, և յիշեցինք ալ թէ իր ստացած վարկովն էր, որ կաթողիկոսութեան ալ արժանի կը դատուէր, թէպէտ անհատական գրգռութիւններու առջև յօժարակամ կը հրաժարէր, և կը դառնար իր վանքն ու վիճակը 1800 տարուոյ ամառուան մէջ: Չորս տարիներ ևս, 1800-է մինչև 1804, Բարթողիմէոս նոր ջանքեր ըրած էր, որպէսզի վանքին ուսումնական վարգացումը բարձրացնէ, և վիճակին ժողովուրդը հարստահարութենէ պահպանէ: Յովհաննէս պատրիարք ալ իրեն կ'օգներ, պէտք եղած պաշտպանողական հրամանագիրները ստանալով կառավարութենէն: Հետաքրքրական է այդ հրամանագիրներէն 1215 պիւլպատէ 28, կամ 1801 մարտ 31-ին տրուածը, որով Նիկոմիդիոյ տեղական իշխանութեանց կ'արգիլուի Բարթողիմէոսը նեղել և տարապարտ պահանջումներ ընել, ըսելով թէ դուք եկեղեցիներ չորոգած էք, և մեր նախորդին սաչափ ստակ տուած էք, մենք ալ կ'ուզենք, թէ ոչ ձեզ կը բանտարկենք, ձեզ կը նեղենք, ձեզի կը վնասենք, և եթէ չտաք եկեղեցիներ կը քանդենք (ԴՊՐ.): Իբր Բարթողիմէոսի արդիւնաւորութեան նշանակ յիշենք ևս, թէ Արմաշու աշակերտութենէն էր Երեմիա Խայմախեան եպիսկոպոսը, զոր յիշեցինք Էջմիածին պատուիրակ

երթալուն (2322): Արմաշի Բարթողիմէոսեան աշակերտութենէն եղան նաև, Գէորգ փոխանորդ, Պօղոս Չէնկիլէրցի, Յովհաննէս Գասպարեան, Կարապետ Պալաթցի, Բարթողիմէոս Նիկոմիդացի, Կարապետ Պօլուցի, Պօղոս Գաղատացի, Մատթէոս Եալագտէրէցի, Մարկոս Վանեցի, և Սարգիս Պարտիպակցի վարդապետներ, ամէնքն ալ քիչ ու շատ ազգային ծառայութեան անձեր (ԱՐՄ):

2325. ԱՐՄԱՇԻ ԱՐԿԱԾԸ

Դժբախտաբար Բարթողիմէոսի սկսած գործը անակնկալ արկածներու մատնուեցաւ: Օսմանեան կայսրութիւնը տակաւին կը տագնապէր տէրէպէյի անունով ծանօթ ըմբոստ իշխաններու երեսէն, որոնք պանապան կողմեր բռնած, թէ ժողովուրդը կը կեղեքէին, և թէ իրար կոծանելու կ'աշխատէին: Նիկոմիդիոյ նահանգն ալ ունէր այսպիսիները, և Արմաշի շուրջը կը տիրէին Չագըր-Հասան՝ Կէնճալի կամ Աղճալը գաւառին, և Այանօղլու՝ Գնայմաս գաւառին մէջ: Այանօղլուն Չագըրին զօրանալէն ստիպուած վանքը կ'ապաւինի, և վանականք կը պահեն զայն առաջուրնէ ցուցած բարեկամութեանը համար: Բայց երբ այդ պաշտպանութեամբ Այանօղլու կը յաջողի փախչիլ, Չագըր-Հասան իր վայրոյթը վանքին վրայ կը թափէ, կ'այրէ ու կը քանդէ, կ'աւերէ և կ'աւարէ ամէն բան, այնպէս որ Բարթողիմէոս վանք դարձած ատեն, ծխող աւերակներու կոյտ մը միայն կը գտնայ: Արկածը հանդիպած է 1804-ին, իսկ որոշ օրը նշանակուած չէ: Կայծակնահար եղածի պէս կը սասանի Բարթողիմէոս, իր 18 տարիներու քրտնաջան աշխատութեանց արդիւնքը չարագուշար օրուան մը մէջ փճացած տեսնելով, և այն օրէն իր կենսական վիճակն ալ, և բարոյական կեանքն ալ, ուժգին հարուածին աղիտալի հետևանքները կը կրեն: Կը սկսին թափառական շրջիլ վիճակին մէջ, գոնէ ժողովուրդը հովուելու և վերաշինութեան հնարաւոր օժանդակութիւններ ձարելու նպատակով այլ հինգ տարիներ զորս ապրեցաւ արկածէն ետքը, չբաւեցին Արմաշու վանքը վերակենդանացնել, մանաւանդ որ դժուարին և տագնապալից էին ժամանակները, մայրաքաղաքն ալ ուրիշ կարևոր խնդիրներով կը զբաղէր, ու կը տառապէր Երուսաղէմի ստացութեանց վտանգին պատճառով (2317): Նոր արկած մըն ալ կրեց Բարթողիմէոս Եալօվայի կամ Բօրուի ջերմուկները գտնուած ատեն, 1807-ին, ուր զինեալ աւազակներ յարձակեցան վրան, Պօղոս Գաղատացի վարդապետը սպանուացաւ, և ինքը անտառներու մէջ գիշերելով, և գիւղէ գաղտագողի խուճապելով, հապիւ Նիկոմիդիա կը հասնէր, բայց այլևս անկեալ և անկար կեանք մը կ'անցընէր: Բարթողիմէոս տակաւին 50 տարեկան էր, այլ փորձանքներէն հիւժած և մաշած կը վախճանէր 1809 մարտ 25-ին, աւագ հինգշաբթի օր, Նիկոմիդիոյ մէջ, ուր կը գտնուի գերեզմանը եկեղեցւոյ բակը: Բարթողիմէոսի յաջորդեց Կարապետ եպիսկոպոս, Շփոթ մականուանեալ, որ խաթարեալ վանքը կենդանացնելու կարողութիւնը չարդարացուց, և միւս տարին, 1810-ին Արմաշու վանքն ու վիճակը յանձնուեցան Պրուսայի առաջնորդ Պօղոս Գարագոչեան եպիսկոպոսին, և Կարապետ անոր տեղը գնաց Պրուսա (ԱՐՄ.): Կարապետ այն տեղ ալ ձախողելով ետ եկաւ 1811-ին, և իբր ապաւէն հռոմէականութեան յարեցաւ, և Լիբանան գնաց Անտոնեանց վանքը, ուսկից 1818ին փոխադրուեցաւ նոյն միաբանութեան Հռոմի վանքը, և հոն մեռաւ 1819 յուլիս 28/9 օգոստոսին: Իր անհաստատ ընթացքը, և հռոմէականութեան մէջ եպիսկոպոս սրբոյ Երուսաղէմի և Եփեսոսի տարօրինակ տիտղոսը գործածելը, լիովին կարդարացնեն իրեն Շփոթ մականունը: Իսկ Արմաշը վերակենդանացնելու համար Պօղոսի թափած ճիգերը քանի մը տարիներ երկարեցան, որոց պիտի դառնանք իրենց կարգին:

2326. ԿԻԼԻԿԻՈՅ ԱԹՈՌԸ

Կը փափաքէինք ամէն աթոռներու և վանքերու լիագոյն տեղեկութիւններ տալ մեր պատմութեան մէջ, նպատակնիս ըլլալով ազգային եկեղեցւոյն ամէն մասերը արժանապէս պատկերացնել: Դժբախտաբար ոչ ամէն յիշատակներ լոյս տեսած են, և ոչ ամէն

յիշատակարաններ մեզի տրամադրելի եղած են, և հակառակ մեր բուռն փափաքին պիտի չկարենանք լիապէս գոհացում տալ մեր նպատակին: Կիլիկիոյ աթոռին վրայ Թէոդորոսի յաջորդած ցուցուցինք Կիրակոսը, Աջապահեաններուն վեցերորդը, և Թէոդորոսի եղբորորդին, աթոռ բարձրացած 1791-ին, Թէոդորոսի տապանագիրին հետևողութեամբ, և ոչ 1801ին, ինչպես անմտադրութեամբ կերևի նոյնիսկ տապանագիրը հաղորդողին կողմէ : Կիրակոս Կիլիկիոյ աթոռին երախտաւորն եղած է, և իր անունը գովութեամբ կաւանդուի տակաւին, և Մեծ մակդիրով կը պատուուի: Յիշեցինք ուխտի համար Երուսաղէմ գացած ըլլալը 1803-ին (2307), իսկ իր արդիւնաւորութեան գլխաւորն է Ս. Սոփիայի հին կաթողիկոսարանը վերաշինելը Սոյս վառիվայրին գլուխը, երեսբաց և ընդարձակ բնակարանով, և խաչաձև դահլիճով, եկեղեցին ալ նորոգելը, և Ս. Գրիգորի Լուսաւորչի անունին վերակոչելը (ՄԻՍ. 217): Արձանագրութիւնը 1259 1810 մայիս 10 թուականին կու տայ այդ շինութեանց, և յատկապէս կը յիշատակէ Եղիա Խարբեթացի, իմա Խարբերդացի, եպիսկոպոսին անունը, որ իբրև արիաջան փոխանորդ ընտիր վեհիս Կիրակոսի, այսքան ամօք աշխատող եղած է շինութեանց վրայ (ՄԻՍ.218): Կիրակոսի շինուածը պարսպապատ և պաշտպանեալ ըլլալուն, առիթ տուաւ յաչադկոտներու, իբր թէ ապստամբութեան բերդ կառուցած ըլլայ: Զէյթունի լեռնականներու խլրտումը ոյժ տուաւ այդ պրպարտութեան, և Կիրակոս իբրև անոնց համախոհ ձերբակալեալ Կ. Պոլիս բերուեցաւ (ՄԻՍ.218):

2327. ԱՂԹԱՄԱՐԻ ԱԹՈՌ

Աղթամարի աթոռին վրայ Կարապետ մը տեսանք էջմիածնի շինութեանց ժամանակը, առանց ճշդել կարենալու թէ ո՛ր մականունով պիտի կոչենք վայն, Վանեցի Ղրմբեսե՞նց Հաւաքարանին հետևողութեամբ, թէ ոչ Շատախցի՝ միւս ցուցակին համեմատ (2174): Աղթամարի կաթողիկոսի մը էջմիածնի կաթողիկոսին ընտրութեան և օծման մասնակցիլը իր նշանակութիւնը կրնար ունենալ, եթէ գործը հասուն խորհրդակցութեամբ, և պարզուած տեսութեամբ կատարուած ըլլար: Ընդհակառակն այս առթիւ Կարապետի ներկայութիւնը միմիայն Բագրևանդի արտասովոր օծումին արտաքին փայլը աւելցնելու ծառայեց: Վասնզի ոչ Վիրապեցիի ժամանակ տիրող տեսութիւնները նորոգուեցան և ոչ Զահկեցիի և Երևանցիի պաշտպանած սկզբունքները նկատի առնուեցան, և երկու աթոռներու յարաբերութիւնները շարունակեցին իրարմէ պատուած մնալ, միայն թէ վերցուեցաւ Աղթամարի վրայէն հերձեալի կամ հետտեալի նկարագիրը, և Աղթամար սկսաւ նորէն Մայրաթոռոյ հետ կանոնական խորհրդակցութիւն պահել: Կաթողիկոսներուն անուններուն և չարքին վրայ իսկ համաձայնութիւն և ստուգութիւն չունեցած ատեննիս, հարկաւ պիտի չկարենանք աւելի բան մը գրել անոնց գործունէութեան մասին: Երկու ցուցակները իրարու կը մօտենան, երբ Հաւաքարանը կըսէ թէ Կարապետ Վանեցին 1804-ին մեռած է Բաղենց Ս. էջմիածին վանքին մօտ, որ է այժմեան Երեւնի Ս. էջմիածինը, իսկ միւս ցուցակն ալ Կարապետ Շատախցին 1803-ին կաթողիկոսութենէ դադարած կը ճանչնայ և երկու ցուցակները համաձայն կերպով Վանեցի կամ Շատախցի Կարապետին յաջորդ կը դնեն Խաչատուր Վանեցին, որ այր առաքինի և սուրբ կոչուած, և իբրև հրաշագործ հռչակուած է որ իբրև մականուն ալ մնացած է անոր վրայ: Խաչատուր նեղութիւններ կրած կըսուի ներքին գժտութեանց երեսէն, բայց գործունէութենէն և արդիւնաւորութենէն տեղեկութիւն չենք գիտեր. իսկ մահը երկու ցուցակներէն ալ համաձայնութեամբ կը դրուի 1814-ին:

2328. ՎԻԷՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՔ

Պատմած ենք թէ ինչպէս Վենետիկէ անջատուած մաս մը Մխիթարեաններ՝ Թրիէստ էին ապաւինած: Այս մասը ինքզինքը բաւական ուժով չզգալով, ուզեց 1799-ին վերջերը, Մելքոնեանին մահունէ ետքը նորէն Վենետիկի հետ հաշուիլ բայց ելքը յաջող չեղաւ: Անոր վրայ

հայր Աստուածատուր Պապիկեան, որ այդ ճիւղին գլուխն էր, յաջողեցաւ 1800 յունիս 8-ին եպիսկոպոս ձեռնադրուիլ, Էջմիածնի արքեպիսկոպոսութեան անուանական բայց տարօրինակ տիտղոսով, և 1803-ին նորահաստատ միաբանութեան արքահայր ընտրուեցաւ, և այսպէս վերջնական դարձաւ Մխիթարեան միաբանութեան երկուքի բաժնուիլը: Բայց երբ Թրիէստեանք ինքզինքնին ապահով կը կարծէին, մօտալուտ հասաւ իրենց վտանգը: Լիւրիկէի կամ Իլլիրիոյ թագաւորութեան մը կազմուելովը, Թրիէստ քաղաքի դիրքը վտանգուեցաւ, Մխիթարեանց պարտքերը ճնշմամբ պահանջուեցան, գոյքերնին աճուրդի դրուեցան: Այդ արկածները տեղի կունենային 1810սեպտեմբերին: Պապիկեան և երեք ընկերներ յուսահատ վիճակի մէջ Վիէննա կը դիմեն, բարեկամներէ պաշտպանութիւն կը խնդրեն, և հին ծանօթներու միջոցով կայսերական հովանաւորութիւն կը գտնեն, և 1810 դեկտեմբեր 7-ին խոստումով կը մխիթարուին, իսկ 1811 յունուար 3-ին լքեալ վանքի մը շնորհը կը ստանան, որուն ստացութեան կը մտնեն փետրուար 16-ին, և 18-ին հանդիսական նաւակառիքը կը կատարեն: Այս կերպով Մխիթարեան անջատեալ ճիւղը, երկրորդ անգամ ըլլալով նոր կեանքի սկզբնաւորութիւն կունենայ, որ տիրապէս Վիէննական միաբանութեան հիմնարկութիւնը կրնայ ըսուիլ (ՅՇՐ.8': Ասով Վիէննական աստիճան մը ևս լատինամօտ ուղղութեան կը հպատակին, զի կատարելապէս անոր հետևելու պէտքը կը զգան, քանի որ Լատիններէն ստացած էին իրենց նոր գոյութիւնն ալ:

2329. ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՔ

Տարբեր էր և կը մնար Վենետիկի ճիւղին ուղղութիւնը, որ 1799 հոկտեմբեր 4-ին կորուսած էր իր առաջնորդը, Ստեփաննոս Մելքոնեան արքահայրը: Սա եթէ մէկ կողմէն պատճառ նկատուեցաւ միաբանութեան պառակտելուն, միւս կողմէն քաջալերիչ եղաւ ուսումնական, և յատկապէս հայկաբանական վարգացման: Իր օրով կը սկսի Վենետիկի մէջ հայ լեզուական վերածնունդը, մինչ անկէ առաջուան արտադրութիւնները տակաւին կը կրէին վերջին աղաւաղմանց հետքերը (2109): Ստեփաննոսի յաջորդեց Ստեփաննոս մըն ալ, Մելքոնեան Գիւվէր-Ադոնցը, Դրանսիլվանիոյ ճուրճով քաղաքի հայ գաղթականութեան ազնուականներէն, 1740-ին ծնած, 1757-ին Ս. Ղապարու վանքը աշակերտած, 1759- ին միաբան ընդունուած, 1763-ին քահանայ ձեռնադրուած, 1770-ին ընծայացուներու դաստիարակ նշանակուած, 1780-ին ուրիշ վանական պաշտօններու անցած, 1785-ին արքահօր փոխանորդ, կամ ինչպէս իրենք կ'ըսեն աթոռակալ ընտրուած, 1790-ին Դրանսիլվանիոյ հոռմէադաւան հայ գաղութին հովուութեան կոչուած: Ադոնց վերջնապէս 1800 նոյեմբեր 9-ին արքահայր ընտրուեցաւ (ՅՈՒ.57), նախորդին մահուանէ տարի մը ետքը, և քսան տարի վարեց նա այդ պաշտօնը: Մխիթարեանք իրաւամբ կրնան պարծենալ անոր արդիւնաւորութեամբը, հայ ազգն ալ գովութեամբ կը յիշատակը վայն իր անձնական աշխատութեանց, իր ազգած քաջալերութեանց, իր հետևած ուղղութեանց, և հայ գրականութեան տուած իսկական մղումին համար: Իրեն դաստիարակական և արքահայրական կրկին պաշտօններուն մտջոցին կազմուած աշակերտութենէն են, Յովհաննէս Զօհրապեան, Ղուկաս Ինձիճեան, Մկրտիչ Աւդերեան, Իգնատիոս Փափապեան, ու Մանուէլ Զախախեան, զորս Մելքոնեանի օրով ալ յիշեցինք (2109). և Մեսրոպ Աղաչրաղեան, Յարութիւն Աւգերեան, Եղիա Թոմաճանեան, Սուքիաս Սոմալեան, Մինաս Բժշկեան, Արսէն Բագրատունի, Եփրեմ Սէթեան, Գէորգ Հիւրմիւղեան և Պետրոս Մինասեան վարդապետներ (ՅՈՒ. 219-222), որոնք երկրորդ կրտսեր խումբ մը կը կազմեն, և ամէնն ալ գրական աշխարհի ծանօթ անուններ են: Այստեղ անուններ յիշելով կը բաւականանանք, քանասիրական ճիւղին նուիրուողներուն թողլով յիւրաքանչիւրին արդիւնաւորութիւնն ու արժանաւորութիւնը գնահատել: Ամէնուն ծանօթ է որ Վենետիկի միաբանութեան կողմէ հայ լեզուին և հայ գրականութեան մատուցուած

ծառայութեանց լաւագոյն ժամանակամիջոցը Ադոնցի պաշտօնավարութեան օրերին են: Այդ միջոցին էր որ պօրաւոր կերպով կը տիրէր Ս. Ղապարի մէջ հայասէր ոգին, հայութիւնը բարձրացնելու և լատինամոլութենէ խորշելու ուղղութիւնը, իրաւ անիրականալի ձեռնարկ մը, սակայն գոնէ սիրտերու մէջ վառ մնացած իղձ մը կ'արտայայտէր: Կ. Պոլսոյ մէջ 1810-ին փորձուած միաբանական ճիգերն ալ (2321), թէպէտ ըստ ինքեան ապարդիւնութեան մատնուած ձգտումներ որակեցինք (2323), սակայն անոնց մէջ Վենետիկեան միաբաններուն ուղղութիւնը կը տեսնուէր, աւելի պօրաւոր քան յատագայ ժամանակներու մէջ: Ադոնցի ժամանակին եղելութեանց կարգին յիշենք վենետիկեան արքայադուրուն եպիսկոպոսական աստիճան ստանալն ալ, որոնց առաջինն եղաւ ինքն Ադոնց, 1804-ին, Սիւնեաց արքեպիսկոպոսութեան անուանական տիտղոսով: Իբր յաջողութիւն պիտի յիշատակուին նաև Նաբօլէոնի արշաւանքներուն ժամանակ, Իտալիոյ կրօնաւորական միաբանութեանց կրած տագնապներէն և վտանգներէն, Վենետիկի վանքին անվնաս ապաստիլը, ինչպէս անկէ առաջ Անտոնեանք ալ ապատած էին իրենց Հռոմի ստացութիւնները (2183): Վերջապէս այդ միջոցին կիյնայ Հնդկաբնակ բարերարին Աղեքսանդր Ռափայէլեան Ղարամեանի, ազգային վարժարանի մը համար կտակը, որուն գործադրութիւնը Վենետիկոյ Մխիթարեանց կը յանձնուէր, անոնց ցուցուցած արդիւնաւորութենէն յորդորուելով և անկողմնակալ հոգւոյն վստահելով, թէպէտ գործադրութիւն չարդարացուց իրենց վրայ դրուած վստահութիւնը և տեղի տուաւ կամայական և միակողմանի կարգադրութիւններու:

2330. ՀՌՈՄԷԱԿԱՆ ՀԱՅԵՐ

Հռոմէական հաստատութեանց վրայ խօսած ատենիս պէտք էր Անտոնեան միաբանութեան, և Հռոմէ կազմակերպուած կաթողիկոսութեան վրայ ալ խօսիլ, սակայն ասոնց մասին ըսուելիքները կանուխէն առաջ տարած կը գտնուինք (2182, 2183): Միևնոյն սովորական կեանքն է որ երկուքին մէջ ալ կը շարունակէ, իսկ իրարու մէջ սկսած շփումները, արդէն դադարած էին Գրիգոր Զիւրէլեանի հաշտարար ընթացքովը: Ընդհանրապէս ԺԹ. դարուն առաջին տասնեակ տարիները հռոմէականութեան համար հանդարտ միջոց մը եղած են: Կերևի թէ արտաքին ծանրածանր փորձանքներ, և ընդհանուր հայութեան վրայ ճնշող արկածներ, երկու կողմերն ալ հանդարտութեան յորդորած էին: Նոյն իսկ Հռոմի վարժարաններէն ելլող եկեղեցականներ, կարծես թէ նուազ բուռն էին իրենց հետապնդումներուն մէջ, ինչպէս այս պագումներուն արտայայտութիւնը տեսանք Երուսաղէմի պաշտպանութեան (2317), և միաբանական բանակցութեանց մէջ (2321):

2331. ԵՓՐԵՄ ՅԷԶՄԻԱԾԻՆ

Նորէն Մայրաթոռի եղելութեանց դառնալով, կը գտնուէին այն կէտը, որ նորընտիր կաթողիկոսը, ամէն ձևակերպութիւնները լրացուցած և կաթողիկոսութեան իրաւապէս տիրացած, 1810 հոկտեմբերի 5-ին, երեկոյին ուշ ատեն, պարսկական սահմանագլուխէն ներս կը մտնէր Ապարան գաւառը (2313): Միևն առտուն, հոկտեմբեր 6-ին, սկսան հետպհետէ հասնիլ բազմաթիւ դիմաւորողներ, թէ էջմիածինէ և թէ Երևանէ, և պէտք եղած պատրաստութիւնները լրացնելով, Եփրեմ Մայրաթոռ կը մտնէվ հոկտեմբեր 9-ին, Խաչի հինգերորդ կիրակի օրը, որ էր տարելից երկրորդ ամի հանգստեան Դանիէլ նահատակ կաթողիկոսի (2302), ինչպէս ինքն Եփրեմ կը գրէ (ԵՐՑ.Ա.56): Մայր տաճարին մէջ ուխտը կատարելով, երկու օրէն հոկտեմբեր 11-ին կը մեկնի ողջունել Ապպաս-Միրզա արքայորդին, որ արդէն իր հրաւիրակները յղած էր, և 13-ին կը հասնի Խորվիրապի մօտ արքունի բանակետը, և արտասովոր պատիւներով կընդունուի, 14-ին կը ներկայանայ, 15-ին իր ընծաները կը մատուցանէ, 16-ին արքայորդիէն խիլաները կը ստանայ իրեն և իրեն հետ եղող եօթը եպիսկոպոսներու, և խաչակիր աւագ քահանայ Մելքիսեդէկ Ղամապեանի

համար: Վերջապէս 17-ին հրաժեշտ առնելով Մայրաթոռ կը դառնայ, և նոյեմբեր 6-ին, Հրեշտակապետաց կիրակիին կաթողիկոսական օծումը կը կատարուի, և կանոնաորապէս ալ կը լրանայ Եփրեմի կաթողիկոսութիւնը: Իբրև հետաքրքրական յիշենք շնորհուած խիւլային ձևը, որ է շալ արկանել պարանոցաւ. երկոքին ծայրքն կախեալք պառաջեաւ մինչև ցթաթս ոտիցն, հետո ունենալով գօտի ոսկեթել ծանրագին. (ԵՐՅ. Ա. 57): Բացառիկ պատիւներուն մէջ կը յիշուի նաև պերկուս հէտէկս ընթացուցանել առաջի, որոց մէկը ըստ նախնի սովորութեան, իսկ միւսը Ապպասէ աւելցած յատուկ ողորմութեան նշան. միանգամայն կը շնորհուի Եփրեմի ռոճիկ տարեկան չորս հարիւր թուման (ԵՐՅ. Ա. 58), որ նախընթաց չունէր: Բացառիկ պատիւներու հետ բացառիկ պարտք մըն ալ կաւելցնէ արքայորդին, և կը պահանջէ որ կաթողիկոսը և Էջմիածնեցիք հաւատարմութեան երդում տան, լսած ըլլալով որ ռուս կառավարութիւնը այսպիսի սովորութիւն ունի: Ըստ այսմ անոնք ալ պայմանը կը կատարեն, և հին գրչագիր աւետարանի վրայ ստորագրելով արքայորդույն կը յանձնեն: Գուցէ այդ պահանջէն յորդորուելով, Մայրաթոռոյ ժողովն ալ գրաւոր երդում կը խնդրէ և կը ստանայ Եփրեմ կաթողիկոսէն, ոչինչ չգործել առանց Սինոդի համաձայնութեան (ԵՐՅ. Ա. 59):

2332. ԵՓՐԵՄԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նորընտիր կաթողիկոսը պաշտօնի գլուխ անցած օրէն, տարբեր նկարագրի ներքև կը տեսնենք: Մենք ճանչցանք Վինքը միշտ գործունեայ և խիւլախ, կամ քի տէր և գործին փարած, ոչ մի դժուարութենէ ընկրկող և պատասխանատուութենէ չխուսափող: Տեսանք Յովսէփի համար թափած ջանքերը, և մանաւանդ Դանիէլը աթոռ բարձրացնելու համար անխոնջ աշխատութիւնները, Ռուսաց կառավարութեան մօտ ճիգերը, Էջմիածինը ոգևորելու համար ըրածները, և Կ. Պոլիսը շահելու համար գործածած կերպերը: Ասոնք ակնկալել կու տային որ աթոռի վրայ բուռն գործիչ մը պիտի ըլլար, և աթոռը վերակենդանացնող կաթողիկոս մը, ինչ որ չէր կրնար ըլլալ Դանիէլ, տարիքով ու տառապանքով ընկճուած, և տկար ըսուելու չափ մեղմ բնութեան տէր անձ մը: Բայց հակառակ այդ յուսալից ակնկալութեանց, տակաւին վաթսնամեայ, և վարչական գործունէութեան ամենայարմար տարիքին մէջ, առանց հակառակորդ և մրցակից ունենալու, և ամէն կողմէ յարգուած ու պաշտպանուած ըլլալով, արդիւնաւոր պաշտօնավարութեան տիպար մը չեղաւ: Իրաւ պաշտօնի և կաթողիկոսութեան հետամուտ մէկը եղած չէր Յովսէփի կամ Դաւիթի նման, սակայն գործէ փախչող կամ պատասխանատուութենէ վախցող մըն ալ չէր մինչ աթոռի վրայ ստէպ հրաժարելու փորձեր կատարեց, զորս կեղծ ձևակերպութիւններ ալ կարծելու իրաւունք չենք վգար: Դժուար է ճշդել թէ ի՞նչ էր այդ փոփոխութեան պատճառը, քանի որ ժամանակակիցներն ալ այդ բաղդատական խորհրդածութիւններէ կը խուսափին, և Եփրեմ եպիսկոպոսէ բոլորովին տարբեր Եփրեմ կաթողիկոս մը կը ներկայեն: Հնար էր միտքէ անցընել թէ Եփրեմ շուարած կամ յուսախաբ եղած ըլլայ, իր սպասածէն տարբեր միջավայր մը գտնելով Էջմիածնի մէջ, և կարծածէն տարբեր անձերու հանդիպելով Մայրաթոռոյ մէջ. սակայն ոչ նոր մըն էր միջավայրին և ոչ անձանոթ մը իր միաբանակիցներուն, զորս առաջուրնէ կը ճանչնար, և որոց հետ շարունակ յարաբերութեան մէջ էր: Ուստի այդ կողմէն ալ բաւարար և համոզկեր մեկնութիւն մը չենք գտներ, և կը թողունք որ գործերը խօսին և ընթերցողներ անոնցմէ ներշնչուին, և ոչ մեր թելադրութիւններէն: հիւանդոտ էր, և մեծ մասամբ անկողին էր ծառայում, ըսելն ալ (ՆԵՐ.Ա.9) բաւարար մեկնութիւն չենք գտներ, Եփրեմի վրայ առ ի օրէն երևցած փոփոխութիւնը բացատրելու:

2333. ՆՈՒԻՐԱԿՆԵՐ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

Եփրեմի առաջին գործերէն մին եղաւ նուիրակներ յղել, զի ասկէ առաջ նուիրակութիւնը շփոթ վիճակի մատուած էր Դաւիթի և Դանիէլի կողմէն վատ-վատ ղրկուելուն, և գացողներուն իրար չեզոքացնելու աշխատելու պատճառով: Որչափ ալ նուիրակութեանց մեծագոյն նպատակը Մայրաթոռոյ հասոյթն էր, սակայն Եփրեմէ տրուած հրահանգներուն մէջ ընդարձակ տեղ կը բռնեն ժողովուրդին բարոյական օգուտը, և պահանջմանց մէջ չափաւորութիւնը, մէկ խօսքով, լինել խաշնարած, և ոչ անձնարած և պորտաբոյծ (ՄՍՐ.82): Նուիրակներուն յատկապէս կը հրամայէր շարունակ քարոյել և խրատել, և քահանաներուն վրայ հսկել, յորդորել և հրահանգել, ամէն օր եկեղեցի գտնուիլ, համեստ և օրինակելի կենցաղ ունենալ, չափաւորութեամբ ապրիլ, աւելորդապաշտութեանց չհետևիլ, տուրքերը հետապնդելով չթախանձել և չբարկանալ և չանհիծանել, քահանաները բռնադատելու համար չբռնանալ և չպատժել և չդատապարտել, առաջնորդներուն հետ համաձայն գործել, ուրիշ նուիրակութիւններու վնաս չբերել: նկատելի է գրչագիրներ հաւաքելու և Մայրաթոռոյ մատենադարանին հասցնելու յատուկ յանձնարարութիւնը: Իսկ նուիրակութեան նիւթական արդիւնքի մասին՝ կը յանձնարարէր կամաւոր իուէրներով գոհանալ, առածնին անունով և չափով և տեսակով արձանագրել, գանձանակները քննել, պակաս տեղեր նորոգ հաստատել, խնայօրէն ապրիլ, և երեք տարուան մէջ որոշուած շրջանակը աւարտել (ՄՍՐ. 81-83): Առաջնորդական վիճակներու մասին յատուկ հրահանգի կամ կարգադրութեանց չենք հանդիպիր: Դարուս սկիզբները տակաւին Էջմիածին ուղղակի միջամտութիւններ կը պահէր վիճակներու վրայ, ոչ միայն տէրունի կոչուածներուն վրայ, որոնք ուղղակի Մայրաթոռին կը պատկանէին, այլ և Տաճկաստանի վիճակներուն վրայ ալ, որոնք Կ. Պոլսոյ աթոռին հսկողութեան ներքև էին: Պետութիւններու ալ եկեղեցական անուանմանց կամ առաջնորդութեանց մասին տակաւին միջամտութեան օրինադրեալ ձևեր չունէին, մանաւանդ տաճկականը ու պարսկականը: Իսկ ռուսականը, թէպէտ ներքին կարգադրութիւն մը ունէր իրեններուն համար, բայց օտարապիներու վրայ վայն չէր տարածեր: Ըստ այսմ երբոր 1810-ին վերջին օրերը կը վախճանէր Տիգրիսի առաջնորդ Յովհաննէս Գեղարդակիրը, Կենդանի-նահատակ մականունով ալ կոչուած, Եփրեմ անոր տեղ կը գրկէր Աստուածատուր եպիսկոպոսը, որ անհակառակ կընդունուէր ռուսական կառավարութենէն (ՄՍՐ. 78): Իսկ բուն Ռուսիոյ առաջնորդութեան համար նոր անուանում չէր ըներ իր մեկնելէն ետքը, զի Գրիգոր Աքքիրմանցին կամ Զաքարեանը, Դաւիթի օրէն առաջնորդ նշանակուած էր, թէպէտ ժողովրդէն չսիրուած և չընդունուած, բայց ժամանակ անցնելով կիրքեր երկկողմանի հանդարտած էին, մանաւանդ Դաւիթի անկումէն ետքը, և Եփրեմ ալ թողուց վայն նոյն պաշտօնին վրայ, մինչև անոր մահը 1828-ին (ՄՍՐ. 122), որ է ըսել գրեթէ իր կաթողիկոսութեան բովանդակ ժամանակը:

2334. ՆԵՐՍԷՍԻ ԶԱՆՔԵՐԸ

Ինչ որ բնաւ չէր սպասուեր, Եփրեմի և Ներսէսի միջև պաղութիւն իյնալն էր: Պատմութեանս կարգին այնպէս միաբան և միամիտ և միախորհուրդ տեսանք այդ երկուքը, որ անհնար կը կարծուէր անոնց օր մը իրարմէ տարակարծիք գտնուիլը: Բայց անակնկալը իրականացաւ, և անոր պատճառ տուաւ Ներսէսի տարապայման գործունէութիւնը, որ ամէն բանի հասնիլ կուղէր, առանց խաբելու ինչ որ իրեն, կամ ինչ որ ուրիշին կը պատկանէր, և համարձակ կը լրացնէր այն ամէն պէտքերը կամ գործերը, որ յատուկ տէր չունէին, կամ թէ տէրը սեփականելու նախանձախնդրութիւնը չունէր: Մայրաթոռոյ մէջ կային, կաթողիկոս և սինոդ և միաբանութիւն: Կաթողիկոսը տեսանք աշխուժութենէ ձեռընթափ, և Եփրեմն ալ դարձած նոր ոմն Դանիէլ, թոյլ տուող որ գործողը գործէ: Միաբանութեան ձայնը արդէն կարճեր էր, յորմէ հետէ պաշտօնապէս սինոդ մը կազմուած էր, միաբանական գործունէութեան աւանդապահ: Իսկ սինոդի անդամներէն

մէկն ալ Ներսէսն էր, ալևորեալ և տկարացեալ ընկերներուն հանդէպ՝ երիտասարդ և ժիրաժիր անդամակից մը: Հետևապէս Ներսէսի վրայ կու գար ամփոփուիլ բոլոր գործունէութիւնը, և Ներսէս ալ փախչող չէր այդ բեռէն, մանաւանդ թէ յօժարակամ վայն իր վրայ հրաւիրող և առնողն էր: Սակայն ոչ ամենուն փորձելի կընար ըլլալ այդ գիրքը, և կէս կատակ ու կէս գանգատ, ընդհանրապէս կը խոսուէր թէ, Կաթողիկոս և Սինոդ և Էջմիածին, ասել է մի Ներսէս: Յայտնի կը գրուցուէր թէ Ներսէս իր ձեռքին ներքև է առած կաթողիկոսն ու սինոդը, ինչ ուզում է, այն է անում, և ոչ ոք կարայ նրան ընդդիմանալ: Այդ խոսքերը Էջմիածինէ դուրս ալ ելած էին, և մինչև Պարսկաստան և Հնդկաստան հասած : Լսուած ալ էր, թէ կաթողիկոսական իրաւունքների վրայ բռնանալուն դէմ, բողոքել են նաև Պոլսոյ պատրիարքը և ամիրայք. (ԵՐՅ. Ա. 70): Ամէն ոք կրնայ մտածել, որ եթէ այդ ձայներ կը տարածուէին ձայները մշակող և տարածող մըն ալ կար, և իրոք ալ Ներսէսի մրցակից մը ելած էր Մայրաթոռի մէջ, որ Ներսէսը չափաւորել ուզելով ինքն տարածուելու կաշխատէր, և այս էր Յովհաննէս Կարբեցի եպիսկոպոսը: Յովհաննէս ծնած էր Կարբի գիւղի մաս կապմող Յովհաննավանք գիւղակը, 1762-ին, Մողնու վանքական և Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցներուն աշակերտած, և Ղուկաս կաթողիկոսի օրով կուսակրօն քահանայ ձեռնադրուած, և վարդապետական գաւապան ալ ընդունելով նուիրակութեանց յղուած, և 1807-ին Դանիէլ կաթողիկոսէ եպիսկոպոսութեան բարձրացած (ԵՐՅ.Բ.23), և անկէ ետքն ալ երկրորդական դերերու մէջ մնացած էր, բայց սինոդին անցնելով (ՄՍՐ.112), իրեն առջև ասպարէզը բացուած տեսաւ, և վայն ընդարձակելու փափաքը յղեցաւ, փափաքն ալ լրացնելու համար պէտք էր, Եփրեմի և Ներսէսի միջև եղած մտերմութիւնը քանդել:

23355 Պատմուածները նորէն կրկնել պէտք կըլլար, եթէ ուզէինք Եփրեմի և Ներսէսի սրտակից և գործակից մտերմութիւնը բացատրել: Ներսէս ոչ թէ լոկ Դանիէլի, այլ և Եփրեմի ծառայած էր, և վայն մինչև կաթողիկոսութիւն բարձրացուցած էր: Եփրեմ երախտապարտ պէտք էր մնար Ներսէսի աշխատութեանց, և շնորհակալ ևս պէտք է ըլլար որ կաթողիկոսութեան ատենն ալ, յանուն կաթողիկոսի գործերով, իր աշխատութիւնը կը թեթևցնէր և արժանիքը կը բարձրացնէր: Բայց Եփրեմի ականջը դրուած խօսքերը՝ իրենց ազդեցութիւնն ունեցան, իբր թէ Ներսէս վայն կ անարգէր, վայն ապիկար կը ներկայացնէր, անոր ազդեցութիւնը կը կոտրէր: Եփրեմ սկսաւ պաշտօնի և իր բերնէն սկսան լսուիլ, թէ Հնդկաստանի և Ռուսաստանի մէջ Ներսէսով գործած չէ, թէ Ներսէսի ըրածներուն մէջ ալ մեղադրելի կէտեր կան, թէ Ներսէսի պատճառով իշխանութիւնն իմ ոչ անցանէ քան պսեամս սենեկի իմոյ (ՄՍՐ.79): Կերևի թէ այդ վշտացեալ սրտի արձագանգ էր, որ Եփրեմ 1812ին սկիզբները, օծումէն իբր տարիուկէս ետքը, փափաք կը յայտնէր կաթողիկոսութենէ հրաժարելու, և տեղեկութիւնը Ներսէսի կ անաջարկէր: Բայց Ներսէս հրաժարելով կը հրաժարէր, և կը յայտարարէր թէ այդ պաշտօնը ստանձնել չուզէր, մինչև իսկ եթէ մահ ալ հանդիպէր Եփրեմի (ՄՍՐ.77): Եփրեմի 1812ին հրաժարիլ ուզած ըլլալուն յիշատակութիւնը՝ կայսերական հրովարտակի մէջ ալ ակնարկուած է (ՄՍՐ.221): Բայց հրաժարելու միտքը ընթացք չունեցաւ և խօսքը փակուեցաւ այսու հանդերձ Եփրեմի կասկածը չդադրեցաւ. պի վայն հրահրելու պատրաստներ պակաս չէին: Այս անգամ Ներսէս եղաւ որ հրաժարելու առաջարկն ըրաւ, և 1812 դեկտեմբեր 10-ին գրաւոր կերպով խնդրեց սինոդականութենէ արձակուիլ, և միաբանութեան կարգը անպաշտօն ապրիլ: Ներսէս այդ գրութեան մէջ յառաջ կը բերէ իր նախընթաց գործերը, Եփրեմի հանդէպ հաւատարմութիւնը, որուն որդի և ծառայ կը դաւանի պինքն, և անոր վրայ իրաւունք կը ձանձնայ իրեն հրամայելու ի բաց կալ ի դրանց իւրոց, և այնպէս ընդարձակել արժանապէս պիշխանութիւն իւր, և ի պուր չունենալ այնքան առանձնական կուտակութիւնք կենամաշ կրից և յաճախութիւնք տրտնջաց (ՄՍՐ.49-50): Երբոր գործը այդ կէտին

հասաւ, Եփրեմ չուպեց Ներսէսի հրաժարականը ընդունիլ, որով Ներսէս երկու ևս տարիներ մինչև 1814 շարունակեց Մայրաթոռոյ մէջ աշխատիլ, բայց պարտաւորուեցաւ չափաւորել իր գործունէութիւնը, և Կարբեցին ալ դիւրութիւն գտաւ իրը ընդարձակելու: Ասով ալ Եփրեմի և Ներսէսի միջև ցանուած գրգռութիւնը արմատաքի չվերացաւ. Եփրեմ միշտ կասկածանօք նայեցաւ Ներսէսի վրայ՝ իրեն եղած թելադրութիւններէ գրգռուած, և Ներսէս ալ աշխատեցաւ առիթ մը և կերպ մը գտնել աթոռէն հեռանալու, և իրեն ապատ գործունէութեան ասպարէս ստեղծելու:

2336 ՄԱՅՐԱԹՌՈՒ ԵՒ ՏԱՃԿԱՀԱՅՔ

Եփրեմի կաթողիկոսութիւնը անհակառակ ընդունուած էր Տաճկահայոց կողմէն, զի Դաւիթեան համակրութիւնը դադարած էր Դանիէլի օրէն, և Եփրեմ Կ. Պոլսոյ մէջ լաւ անուն և համակրութիւն շահած էր կանուխէն: Յովհաննէս պատրիարք անմիջապէս անոր անունը յիշատակեց և յիշատակել հրամայեց եկեղեցական պաշտամանդ մէջ, միայն խոհեմութիւն սեպեց յիշատակութենէն առաջ Օսմանեան կառավարութենէ հաստատութեան հրովարտակ ստանալու դիմում չընել: Այդ պոլսոսութիւնը պատրիարք և ամիրայք ունեցած են, սակս ընդերկար կալոյ Եփրեմայ յերկրի Ռուսաց (ՄՍՐ.78), կասկածելով որ մի՛ գուցէ թշնամի տէրութեան մը ծառայած ըլլալը արգելք ըլլայ հրովարտակին տուուչութեան ուստի առանց հրովարտակի ալ պէտք եղածը յաջողած են լրացնել: Արդէն ալ կաթողիկոսը ուղղակի գործ մը չունէր Օսմանեան կառավարութեան առջև կատարելիք. և ամէն յարաբերութեանց համար բաւական էր պատրիարքին միջնորդութիւնը: Եկեղեցիներու մէջ անունի յիշատակութիւնը կառավարութեան մտադրութիւնը չէր կրնար հրաւիրել, և հրովարտակէ ըսպասուած յատուկ արդիւնք մը չկար: Ինչ որ այս անգամ իբրև խոհական, բայց և իբր պատահական պոլսոսութիւն սկսաւ, նովին իսկ հաստատուն սովորութիւն դարձաւ, զի Եփրեմէ սկսելով Էջմիածինի կաթողիկոսներուն համար այլ ևս օսմանեան հրովատակներ չստացուեցան: Եփրեմի աթոռ բարձրանալուն ատեն տակաւին Էջմիածին և Երևան պարսկական երկիրներ էին, և հին սովորութիւնը կրնար շարունակուիլ, բայց Եփրեմի կենդանութեան Էջմիածին ռուսական երկիր եղաւ, և պետական յարաբերութիւններ փոխուեցան, և ռուսական կառավարութեան ներքև ենթադրելի իսկ չէր, որ իր երկրին մէջ պաշտօնավարողի մը համար՝ օտար կառավարութենէ հաստատութեան հրովարտակ առնուէր: Այսպէս խափանուեցաւ հինաւուրց սովորութիւն մը: Միևնոյն պատճառով կաթողիկոսներ ալ այլևս օսմանեան տէրութեան հետ յարաբերութիւններ չկրցան ունենալ, և Տաճկահայոց վիճակներու մէջ ուղղակի միջամտութիւն չկրցան գործածել: Իսկ Կ. Պոլսոյ պատրիարքներուն իրաւասութիւնը կատարեալ և ամբողջական դարձաւ բովանդակ Թուրքիոյ առաջնորդութիւններուն վրայ: Ըստ այսմ առաջնորդներուն ընտրութեան ու հաստատութեան իրաւունքը, վիճակային գործերու հսկողութիւնը, խնդիրներու և դատերու լուծումը, բովանդակապէս Կ. Պոլսոյ պատրիարքներուն ձեռքն անցան. մէկ խօսքով, անոնք եղան հայրապետական իշխանութեան անմիջական գործադիրները, կամ ուրիշ բառով, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան լիապոր ներկայացուցիչները: Այս կերպով օրինաւոր իրականութիւն դարձաւ ինչ որ երբեմն այնչափ գրգռած էր Երևանեցիին միտքը (1827): Կ. Պոլսոյ պատրիարքներ կերպով մը փոխանակեցին երբեմնի աթոռակից կաթողիկոսներու դիրքը (1404), միայն թէ օժում չունենալով չկրցան միւռոն օրհնել և եպիսկոպոս ձեռնադրել, իսկ անոնցմէ դուրս սկսան կատարելապէս գործադրել հայրապետական իշխանութեան պատկանող գործնական իրաւունքները: Թէպէտ Էջմիածինի նուիրակները համառօտ միջոց մը շարունակեցին, բայց անոնց ներկայութիւնը իրաւասական խնդիրներու և աւելորդ շփումներու առիթ տալուն

պատճառաւ, քիչ ետքը նուիրակներու առաքումն ալ դադրեցաւ, և Կ. Պոլսոյ պատրիարքներ նովին իսկ Էջմիածնի նուիրակներու դերն ստանձնեցին բոլոր Թուրքիոյ վիճակներու համար:

2337. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՀՐԱԺԱՐԻԼԸ

Յովհաննէս պատրիարք, ներքին և արտաքին խնդիրներէ ապատած, կաթողիկոսական հակառակութիւնները վերջացուցած, հռոմէականաց երկպառակութիւնները մեղմացուցած (2188), վարչական և կրթական ձեռնարկներու գոհացուցիչ ձև մը տուած (2177), գրեթէ 11 տարի էր, որ երկրորդ անգամ աթոռ բարձրանալէ ետքը (2142), պատրիարքական պաշտօն կը վարէր: Տակաւին 56 տարեկան էր, և տարիքին կողմէ արգելք մը չկար պաշտօնը շարունակելու, ընդհանուր յարդն ալ ու վարկն ալ չէր պակասած, բայց տարապայման թանձրամտութիւն մը եկած էր վրան, ոտքի վրայ կանգնիլ և ինքնիրեն շարժուիլ չկրնալու չափ, մինչև իսկ նստուկ պատարագ ընել ստիպուելու չափ (Օ1. ՕՐԱ. 176): Գիրութիւնը յայտնի հիւանդութիւն էր, փայծեղնացաւութիւն կոչուած յոմանց (ՊԷՐ. 71), բայց աւելի հաւանաբար ճարպի չափաւանց աճելէն առջև եկած էր, և անտանելի վիճակ ունէր, որ ժողովրդական դիտողութեանց ալ առիթ տալու սկսած էր: Այս վիճակի մէջ ալ Յովհաննէս քաշուելու մտադրութիւն չէր դարձներ, որով ամիրաներ ստիպուեցան այդ պէտքը իրեն յիշեցնել, և 1813 մայիսին, Զատիկէն քիչ ետքը, որ հանդիպած էր ապրիլ 13-ին, պատրիարքարան ժողուելով հրաժարուելու հարկը իրեն վագացուցին: Առաջարկը քաղցրացնելու համար յաջորդի ընտրութիւնը բացարձակապէս իրեն թողուցին, պարտքերը վճարել յանձնառու եղան, թոշակ տալ խոստացան, և Իւսկիւտարի Երուսաղէմատան մէջ հանգիստ ընել առաջարկեցին: Յովհաննէս դժուարութիւն չցուցուց, և իբրև յաջորդ ներկայեց Տաթևացի Աբրահամ Գուլեան եպիսկոպոսը, որ շատ տարիներ Էջմիածնի նուիրակութիւն վարած էր, և Կ. Պոլսոյ մէջ անպաշտօն կապրէր, և արդէն յաճախ հանդիսութեանց մէջ պատրիարքը փոխանակողն էր: Ամիրաներ դիտողութիւն չըրին և հաւանեցան և Յովհաննէս միևնոյն օրը հրաժարագիրը ստորագրեց, և Աբրահամի յաջորդութիւնը կառավարութեան առաջարկեց: Գիրը կայսեր ներկայացուեցաւ, որ ընդունելէն առաջ յատուկ պաշտօնէի ձեռքով Յովհաննէսի բռնադատուած չլինելը ուկեց ստուգել, և անկէ ետքը հաւանութիւն տուաւ Աբրահամի պատրիարքութեան, որ մայիս 15-ին (ՊԷՐ.451), Երևման Խաչի հինգշաբթին կապան վզեցաւ, այսինքն է պետական դուռը պաշտօնապէս ընդունուեցաւ և գործի ձեռնարկեց: Յովհաննէս անձամբ կատարեց անոր պաշտօնական ընդունելութիւնը պատրիարքարանի մէջ, և այս առիթ իբրև պատրիարքութեան յատկանիշեր, անոր յանձնեց ծիրանի Փիլոնն, յակինթ մատանին և փղոսկրեայ արծաթապատ և ոսկէլօծ գաւանդանն (ՊԷՐ.73): Ուրիշ տեղ մայիս 5 է յիշուած (ՊԷՐ.72), բայց տպագրութեան սխալ կ'ենթադրենք, և ժամանակագրական ցուցակին թուականը նախադասելի կը գտնենք, և չենք ալ գիտեր թէ ուրիշներ ուսկից քաղած են 1813 սեպտեմբեր 6 թուականը (Օ1. ՕՐԱ.178): Յովհաննէս Բաբերդցի, ազգանուն Չամաչըրձեան, Կաղպուանցիի աշակերտներէն, առաջին անգամ 1800 մայիս 18-ին պատրիարք ընտրուած (2231) և 1801 հոկտեմբեր 29ին պաշտօնանկ եղած (2262), 17 ամիս և քանի մը օր պաշտօն վարած էր: Իսկ երկրորդ անգամ 1802 հոկտեմբեր 21-ին ընտրուած, բայց դեկտեմբեր 3-ին պաշտօն անցած (2305), մինչև 1813 մայիս 15 տասնուկէս տարի ևս, և ընդ ամէնն իբր 12 տարի պաշտօնավարած եղաւ, և վերջին գարուն ամենէն երկար աթոռի վրայ մնացող պատրիարքը եղաւ: Յովհաննէս կը ներկանայան հանդարտ և կանոնաւոր գործիչ մը, հակառակութիւններէ խուսափող, լրացեալ եղելութեանց համակերպող, ինչ որ գործնապէս ցուցուց, թէ Դաւիթը պաշտպանելուն (2261), թէ Դանիէլը ընդունելուն (2293), թէ հռոմէականներու հետ վարմունքին (2321), և թէ Եփրեմի յաջորդութիւնը ճանչցնելուն մէջ (2336): Վարչական և եկեղեցական, բարեգործական և կրթական

ձեռնարկներու մէջ ալ արդիւնաւոր եղաւ, կեցադովը փառաւորութեան և վայելչութեան հետևող մը, մինչև միւլիւք, այսինքն ճոխաձիր և ճոխակերպ կոչուելու չափ (01. ՕՐԱ 169): Հրաժարելէն ետքը իբր 4 տարի ևս ապրեցաւ Իւսկիւտարի մէջ, և ուր մեռաւ 1817 յուլիս 26-ին և գերեզմանը կը գրտնուի տեղույն գերեզմանատունը (01. ՕՐԱ 176):

2338. ԱԲՐԱՀԱՄ ՊԱՏՐԻԱՐՔ

Աբրահամ պատրիարք նախընթացաբար ժիր գործիչ մը եղած էր Դաւիթեան կուսակցութեան մէջ: Անոր ստորագրութիւնը կը գտնենք 1803 փետրուար 10-ին ի նպաստ Դաւթի՝ Ռուսաց կայսեր յղուած նամակին ներքև (ԴԻԻ. Ե. 317), ուր կը յիշուի թէ իրենց պատուիրակները չեն կրցած ունենալ զմուտ անցանելոյ գալոյ ի դուռն ողորմութեան կայսեր, և Տփղիս մնացած են (ԴԻԻ. Ե. 314): Ասոր վրայ Աբրահամը Կ. Պոլիս եկած կը գտնենք 1803 սեպտեմբերին (ԴԻԻ. Ե. 349), և իջևանած Զինձիրլի խան (ԴԻԻ. Ե.460), միտք ունենալով Յովհաննէս օգնութեամբ այդ կողմէն Ռուսիա մտնել, և Դաւիթի համար Ռուսիոյ կայսրէն հրովարտակ ստանալու: Ուստի ծպտեալ ի կերպարանս ի ձև վաճառականի, և պանուն իւր վերաձայնեալ Գրիգոր Սարգիսով 1805 սեպտեմբեր 5ին Գրիգորուպոլիս կ'երթայ, Գրիգոր Աքքիրմանցիին օգնութեամբ ճամբան շարունակելու համար: Բայց Դանիէլեանք լուր կու տան Մանուէլ վարդապետին, որ իրողութիւնը նոյնիսկ Աբրահամի բերնէն ստուգելով, կը հաղորդէ Վօնէնիին կուսակալին, և սա Աբրահամի ունեցած գրութիւնները ձեռքէն կ'առնէ և պնա ինքն ընդ կրունկն ի Կոստանդնուպոլիս կը դարձնէ հոկտեմբեր 7-ին: Այդ թուականէն սկսելով Աբրահամ նուիրակութիւն կը վարէ արևմտեան շրջանակներու մէջ, այսինքն, Կ Պոլիս և Ռումէլի, իբր պամ ութ, հաւասարապէս Դաւիթ և Դանիէլ և Եփրեմ կաթողիկոսներու կողմէ: Նուիրակութեան շրջանները լրացուցած ըլլալով, ոչ տեղը կը դառնայ և ոչ իր հաշիւները կը դրկէ, որով հարկ կ'ըլլայ յատուկ պատուիրակութեամբ Կ. Պոլիս յղել Յովհաննէս Կարբեցի եպիսկոպոսը, հաշիւները առնելու, միանգամայն օսմանեան հրովարտակի գործը կարգադելու, որուն մասին խօսեցանք (2336), և վարժարանի մը հիմնարկութեան աշխատելու, որուն մասին պիտի խօսինք: Աբրահամ նուիրակութենէ հաւաքած գումարներէն ալ օգտուեր էր իր պատրիարքութիւնը յաջողցնելու, երբ լուր կ'առնէ թէ Կարբեցին իր վրայ քննող և գանձող կու գայ: Կը փութայ լուր հասցնել Եւդոկիա, ուր հասած էր Կարբեցին, որ աշխատութիւն չառնէ, պի ինքն հաշիւ և դրամ Մայրաթոռ պիտի յղէ: Սակայն Կարբեցին ետ չի դառնար, Կեսարիոյ մէջ ալ ընելիքներ լրացնելով Կ. Պոլիս կը հասնի, և կ'երթայ իջևանիլ ռուսական դեսպանատան թարգման Բիպանիի մօտ, որուն յատկապէս յանձնարարական ալ ունէր Կովկասի ռուսական կուսակալութենէն: Աբրահամ պատրիարքական աթոռ բարձրացած էր, և ամիրաները ամօթ սեպեցին թէ իրենց և թէ իրենց պատրիարքին խայտառակուիլը, ուստի պատաւորուեցան ետ տալ որչափ ինչ Աբրահամ իրենց պարգև տուած էր: Որչափ ալ Աբրահամ խոստացած կ'ենթադրուի ուրիշ կերպով նոյն գումարները ամիրաներուն դարձնել, սակայն ամիրաները կը կասկածէին որ մի գուցէ դեսպանն ապդ արասցէ ի դուռն արքունի. և իրենք խայտառակուին: Ուստի հաշիւ ու գումար յանձնեցին Կարբեցին, և անոր ալ միտքը աղաչանօք և ընծայիւք հաճեցուցեալ ճամբայ հանեցին : Հրովարտակի խօսք չեղաւ, պի Յովհաննէսի օրէն գործը նոր ձև առած էր (2336). իսկ վարժարանի գործը դեռ անպատրաստ և անկերպարան բան մըն էր. Կարբեցի ալ անորր հետամուտ եղած չերևիր: Աբրահամ բաւական ծանր փորձանք մը անցուցած եղաւ, սակայն կարծես թէ պաղութիւն մը մտաւ ամիրաներուն սիրտը, որ խախտեց Աբրահամի գիրքը:

2339. ԵՓՐԵՄԻ ԾՐԱԳԻՐԸ

Զանապան տեղերու գործերը ժամանակակից կերպով պատմելու նպատակով նորէն կը դառնանք Էջմիածնի գործերուն: Երբոր Եփրեմ Կ. Պոլիս յղեց Կարբեցին, միայն նուիրակական

արդիւնքներու և վարժարանական հիմնարկութեան խնդիրներով չէր բաւականացած, այլ ընդհանուր բարեկարգութեանց և Մայրաթոռոյ յարաբերութեանց ալ ծրագիր մը կազմած էր տասը յօդուածներով, զոր Կարբեցին Տաճկահայաց ընդունել պիտի տար: Բայց մենք բնաւ յիշատակութիւն չենք գտնար ծրագիրին առաջարկուելուն կամ քննութեան առնուելուն վրայ, և մեռեալ տառ մը մնացած կը գտնենք: Ասով մէկտեղ անօգուտ չենք սեպեր յօդուածներուն քաղուածը տալ, գոնէ Եփրեմի տեսութեանց մասին գաղափար մը կազմած ըլլալու համար: Ծրագիրը կառաջարկէր, 1. Կ. Պոլսոյ ամիրաներուն մէջէն մէկը նշանակել էջմիածնի գործակալ և գանձապետ: 2. Երուսաղէմի, Կիլիկիոյ և Աղթամարայ վանքերէն դուրս գտնուող մասնաւոր վանքերուն մատակարարութիւնը ամփոփել երեք անդամէ բաղկացեալ հոգաբարձութեան մը ձեռքը: 3. Մասնաւոր վանքերու անունով նուիրակներ չհանել: 4. Կաթողիկոսը իրեն աջակից պահէ երկու խոհական և վկայեալ եպիսկոպոսներ, և անոնցմէ մին վիճակաւ աթոռին յաջորդէ: 5. Դանիէլ կաթողիկոսի Մարաղայի մէջ կազմած կոնդակը (2287) տպուի և ցրուի: 6. Օսմանեան տէրութենէ առնուելիք հրովատակին մէջ սինոդն ալ յիշատակուի: 7. Էջմիածինէ և Երուսաղէմէ դուրս եպիսկոպոսներուն թիւը շատ չըլլայ: 8. Նուիրակներ առանց կաթողիկոսի կամ պատրիարքի կոնդակին չըրջագային, և միասին մասունք չտանին: 9. Իւրաքանչիւր եկեղեցւոյ պէտքէն աւելի քահանայ չձեռնադրուի: 10. Ս. Էջմիածնի անունով և Մայրաթոռոյ ծախքով վարժարան մը հաստատուի Կ. Պոլսոյ մէջ: Այս տասը գլուխներէն վերջինին ձեռնարկութիւնն ալ չեղաւ, ինչպէս յիշեցինք, մեկալնոնք ալ չխօսուեցան, բայց օգտակար եղած կ'ըլլային, եթէ նկատառութեան առնուէին, ի իրաց առեալ չորրորդը որ յաջորդութեան տարօրինակ ձև մը կը ստեղծէ, և կերպով մը հին աթոռակցութեամբ յաջորդութեան ձևը կը նորոգէ. և վերջին ընտրութեանց առթիւ յառաջ եկած շփոթներէն, Եփրեմի սրտին վրայ տիրած զգուանքը կ'արտայայտէ:

2340. ԵՓՐԵՄ ԵՒ ԴԱԻԻԹ

Պաշտօնանկ Դաւիթին անունը վերջին անգամ տուինք Դանիէլին յետին օրերուն մէջ, Ներսէսի դէմ քսութիւն ընելուն (2299). և Ներսէսի արդարանալուն առթիւ (2301): Դաւիթի կրած այդ վերջին ամօթապարտութիւնը զինքն կասեցուցած էր նորէն կաթողիկոսանալու միտքէն (2309), և Եփրեմի յաջորդութիւնը անհակառակ յառաջացած էր: Եփրեմ ալ երբոր էջմիածին մտաւ, թօթափած էր իրմէ՝ հին պայքարող հոգին, և կարծես թէ չյիշեց իսկ, որ ինքն էր Դաւիթի տապալման գլխաւոր գործիչներէն մէկը, եթէ ոչ բուն իսկ գլխաւորը, ռուսական կառավարութեան մօտ գործած ազդեցութեամբը: Կաթողիկոսական օծումէն ետքը առաջին գործերէն մէկն եղաւ Դաւիթին դիրքը կանոնաւորել, և այնպիսի ձևի մը վերածել, որ այլևս խնդրի նիւթ չդառնայ: Այս նպատակին համար պէտք էր որ Դաւիթ ձգտումներէ և յաւակնութենէ ետ քաշուէր, իսկ Եփրեմի ալ պէտք էր որ Դաւիթը զրկողութեանց չենթարկէր: Դաւիթ համոզուած էր որ Եփրեմին հզօր պաշտպանութիւններով և ընդհանուր համակրութիւնով աթոռը գրաւելէ ետքը, անհնար էր վայն տապալել Եփրեմի բնաւորութեան համար ալ ծանր չէր, անցուկը մոռցուկով, հաշտ ու համերաշխ ընթացքը մը կազմել: Իրարու հետ տեսակցեցան ալ, հարկաւ հակառակութեանց երեսէն ազգին ու եկեղեցւոյն վնասուած ըլլալն ալ խօսեցան, իրարու դէմ ըրածնին և ըսածնին մոռացութեան տուին, և իրենց հաշտութիւնը գրաւոր դաշնագիրի վերածեցին և 1810 դեկտեմբեր 25-ին ստորագրեցին, եօթը եպիսկոպոսներու վկայութեամբ ալ վաւերացուցին: Այդ դաշնագիրին զօրութեամբ, Դաւիթ կը հրաժարէր որևէ իրաւունքէ և ձգտումէ, կը մտնէր միաբան եպիսկոպոսներուն կարգը, կը խոստանար հանդարտ ապրիլ, և յանձն կառնուր առաջնորդական կամ նուիրակական պաշտօն ալ կատարել, եթէ ինքն յօժարեսցի: Միւս կողմանէ կաթողիկոս և սինոդ ազատութիւն կը թողուին անոր, բնակիլ աթոռի մէջ, կամ Երևան եղբօրը մօտ, կամ

Արարատեան դաշտին որևէ մէկ գիւղը ըստ հաճոյիցն, և մնալ ուր և որչափ հաճոյ թուեսցի ինքեան: Միանգամայն կապահովէին անոր ապրուստը խոստանալով տալ տարուէ տարի 150 թուման պարսիկ դրամով, որ է 2250 դուրուշ օսմանեան դրամով, քսան սօմար ցորեն, և ուրիշ պարէններ որոշեալ լիտրով, այսինքն է, միս 100 բրինձ 20, կարագիւղ 7, շուշմաձէթ 5, ոսպ 10, սիսեռ 5, բակլայ 5, սոխ 30, գինի 50, օղի 5, ձեռքը մը պատկանաւոր հանդերձ, և երկու սպասաւոր պատկանել հանդերձիւն և վարձուքն (ԵՐՑ. Ա. 61): Անգամ մը որ Դաւիթ յոյսը կտրեց և իր հին ձգտումներէն հրաժարեցաւ, այլևս իր վրայ խօսելու առիթ չտուաւ. մինչև իսկ այնուհետև ամենայն ջերմեռանդութեամբ ապրած ըլլալը կը վկայուի (ՇԱՀ. Ա. 233), միաբանական սենեակներուն կարգը, ուր միշտ կը ցուցուէր Դաւիթի սենեակը, որ վերջին օրեր քակուեր է հիւսիսակողման սենեակներուն շարքին հետ: Եփրեմ ալ իր կողմէն ամէն տեսակ քաղցրութիւն և պատուաւիրութիւն պակաս չըրաւ, սինդոն ալ ճշդապահ մնաց յանձնառեալ պայմաններուն, Ներսէս ալ իր կողմէն հաւատարմութեամբ հետևեցաւ կաթողիկոսին բռնած ուղղութեան: Եօթը տարի ևս ապրեցաւ Դաւիթ այդ դաշնագրութենէն ետքը, ընդհանրապէս վանքի մէջ, և միայն մերթ ընդ մերթ եղբօրը մօտ երթալով: Վախճանեցաւ 1817 հոկտեմբեր 31-ին, և թաղուեցաւ Ս. Գայիանէի գաւիթին հիւսիսակողմը (ՇԱՀ.Ա.233)

2341. ՆԵՐՍԷՍ ԱՌԱԶՆՈՐԴ

Երբ որ մէկ կողմէն Մայրաթոռոյ մէջ Դանիէլի և Դաւիթի խնդիրը վերջնականապէս կը փակուէր, միւս կողմէն նոր խնդրի առիթ կու տային Ներսէս Աշտարակեցին և Յովհաննէս Կարբեցին՝ իրենց մրցակից ձգտումներով: Ներսէս պահ մը տեղի տալ ուլած էր հրաժարելով, բայց Եփրեմ չէր ընդունած, զի դիւրին չէր կորանցնել Ներսէսի պէս գործունեայ օգնական մը, և ոչ ալ կը համարձակէր վստահօրէն Յովհաննէսի կրթնիլ: Անոր վրայ շարունակեց տակաւին Ներսէսի ազդեցութիւնը, որ աւելցաւ ալ Թավրիզ արքայորդւոյն մօտ կատարած պատուիրակութեամբը, այնպէս որ 1812 սեպտեմբեր 12-ին էջմիածին այցելող անգղիացին Հենրիկոս Մարթին արեղայ կը գրէ, թէ մենաստանս այս, կամ լաւ ևս ասել, ընդհանուր ապա Հայոց ընդ իշխանութեամբ Ներսէսի, և թէ պատրիարքն Եփրեմ է անուանակիր եւեթ, որ և ստէպ յակողնի հիւանդութեան տեսանի: Ասկէ ետքն է Կարբեցին Կ. Պոլիս երթալը (2338), և յաջողութեամբ դառնալը, որ իրեն ազդեցութիւնը աճեցուց, և Ներսէս անցուդարձերէ ձանձրացած որոշեց վերջնապէս էջմիածինէ հեռանալ, և կաթողիկոսէն խնդրեց Տփղիս առաջնորդութիւնը, ուր համարձակ և ընդարձակ գործունէութեան ասպարէզ պիտի ունենար: Եփրեմ յօժարակամ հաւանեցաւ Ներսէսի առաջարկին, զի ինքն ալ սկսած էր սիրտը դնել, թէ Ներսէսի միտքն է հայրապետական իրաւունքների վրայ բռնանալ (ԵՐՑ.Ա.72): Արդէն Աստուածատուր ալ (2333), ոչ մեծ արդիւնւորութեան ցուցուցած էր, և ոչ ռուսական կառավարութեան մօտ ազդեցութիւն ստացած էր, և Ներսէսի Տփղիսի մէջ ներկայութիւնը կրնար մեծապէս օգտակար ըլլալ: Աստուածատուր ետ կանչուեցաւ, և Ներսէս Տփղիսի առաջնորդութիւնը ստանձնեց 1814-ին, բայց Եփրեմի դիրքը ասով չզօրացաւ, մանաւանդ թէ աւելի ևս տկարացաւ. զի թէպէտ Ներսէս չափապանց գործունէութեամբ ամէն բան իր ձեռք անցուցած կ'երևար, սակայն գոնէ Եփրեմի հինաւուրց բարեկամն ու նուիրեալ հաւատարիմն էր, մինչ Կարբեցին, որ Ներսէսի տեղ ինքն կաթողիկոսացաւ, Եփրեմի հանդէպ միևնոյն պգացումներ չէր տածեր, այնպէս որ Ներսէս անոր վրայ խօսած ատեն կը գրէր, Կարբեցի եղբայր դաշնակցեալ ընդ սատանային, Դաւիթ երկրորդ կամի յայտնել զանձն իւր (ԵՐՑ.Ա.73), որ է ըսել, օրինաւոր կաթողիկոսի չէմ հակառակաթու մը ըլլալ: Եթէ Կարբեցին ասպարէզը կ'ընդարձակուէր, Ներսէս իր ազդեցութենէն և գործունէութենէն բան մը կորսնցուցած չէր ըլլար, վասնզի ռուսական կառավարութեան հետ անմիջական յարաբերութեան մէջ գտնուելով, էջմիածնի բախտին տէր կը

դառնար, և Ռուսներն ալ առաւել կարևորութիւն կու տային Ներսէսի, քան թէ Եփրեմ կաթողիկոսին և Էջմիածնի ժողովին:

2342. ՏՓՂԻՍԻ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Եթէ Ներսէսի գործունէութեան ասպարէսը ընդարձակուեցաւ, բայց ինքը դժուարութեանց և հակառակութեանց տագնապէն չ ապատեցաւ, և համարձակ պէտք է խոստովանիլ, թէ Ներսէս իրեն հետ կը պտըտցնէր այդ կացութիւնը, որուն պատճառ կու տար իր ձեռնարկներով, որոնց նիւթն ու նպատակը ուղիղ էին, սակայն գործողին յախուռն ու անկաշկանդ կերպերը՝ գրգռիչ և վիրաւորիչ կը դառնային: Տփղիս հասնելով և վիճակային կառավարութեան գլուխ անցնելով, միտքը դրաւ վայն կարգ ու սարքի ենթարկել, և գլխաւորապէս երկու կէտերու մտադրութիւն դարձուց, եկեղեցականներուն կենցաղին և մատակարարութեանց հսկողութեան: Ժամանակակից յիշատակները անեմատխուր գոյներով կը նկարագրեն այդ կէտերը: Քահանայական դասուն վրայ կը տիրէր խորին տգիտութիւն և անբարոյականութիւն (ԵՐՅ.Ա.70) ընտրութիւն և արժանաւորութիւն չէր փնտռուեր, ծխատիրութիւնը ժառանգական էր և առևտուրի առարկայ, ուսում և հմտութիւն չէին արժեր, առաջնորդի իրաւասութիւն չէր յարգուեր, ընդհակառակն այս կամ այն իշխանաւորի պաշտպանութեան կրթնելով՝ ուկածնուն պէս կ'ապրէին, առաջնորդներն ալ ստիպուած էին հլու հպատակ դառնալ առաջաւոր կամ իշխանաւոր աշխարհականներուն (ԵՐՅ.Ա.79): Ներսէսի բնաւորութեան տէր մէկը մը՝ կացութեան հպատակող չէր կրնար ըլլալ, ուստի շուտ սկսաւ ազդեցիկ քահանաներուն և առաջաւոր աշխարհականներուն հետ պայքարը, որ առաջ խուլ ձև ունէր, բայց հետզհետէ հրապարակային դարձաւ: Ներսէս իր բնական կորովէն վատ՝ իրեն թիկունք կապմած էր ուսական կառավարութեան ներկայացուցիչները, որոնք կանուխէն ձանձցած էին անոր կարողութիւնը. Եփրեմ ալ շատ գողտրիկ վարքագրութիւն մը յղած էր անոր մասին, որ մինչև Պետրբուրգ հաղորդեցաւ (ԵՐՅ.Ա.73) և աչքի ներքև ալ կը տեսնուէր անոր արդիւնաւոր աշխատութիւնը: Ներսէսի պաշտօնը կայսրէն ալ հաստատուեցաւ, և ինքն ալ պահանջուած հաւատարմութեան ուխտը կատարեց, և կայսերահաստատ առաջնորդութեամբ և իշխանութեան բարեկամութեամբ պօրացած՝ իրեն համար ամուր գիրք մը ապահովեց, և այնպէս պայքարի մտաւ անկաշկանդ կերպով: Ներսէսի վրայ կասկածներ խօսուած են, թէ նախկին դաւիթեաններու հետ անձնական հաշիւներ շտկելու միտքն ունեցած ըլլայ, սակայն դաւիթեանութիւնն այլևս գոյութիւնն իսկ կորուսած էր, և Էջմիածնի մէջ Դաւիթի անձին իսկ հանդէպ իր պագցումները փոխող Ներսէսը, պէտք չունէր Տփղիսի մէջ նախկին դաւիթեաններու հանդէպ հին պագցումները պահել: Աւելի պուգադիպութիւն մը պէտք է նշմարել այդ պարագային մէջ, զի դաւիթեանց ուղղութիւնն էր ներքին բարեկարգութենէ աւելի արտաքին պաշտպանութիւն հետապնդել, մինչև Ներսէս անձերէ աւելի ուղղութեան հետ պայքարի մտած էր:

2343. ԾԽԱՏԻՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ոչ մտադիր ենք, և ոչ ալ մեր աշխատութեան պայմանները կը ներեն, Տփղիսի բոլոր անցուդարձերուն հետևիլ, և անոնց մանրամասնութիւնները պատմել, որոնք ուրիշներէ խնամով հաւաքուած են. բայց աւելորդ չենք սեպեր քանի մը գլխաւոր կէտեր յիշատակել, ընդհանուր գաղափար մը տալու համար: Ներսէսի դէմ շարժումներուն պատճառներէն մին եղաւ վիճակագրութիւն կազմելու ձեռնարկը, որուն առաջին պահանջողն ուս կառավարութիւնն էր, բայց Ներսէս ալ ամենայն եռանդով փարեցաւ անոր: Վիճակագրութիւնը պիտի ճշդէր հայաբնակութեանց թիւը և պիտի կանոնաւորուէին ծխատիրութեան պահանջները, պիտի գիտցուէին եկեղեցական կալուածները և հասոյթները, երևան պիտի գային բռնաբարողներուն պեղծումները, պիտի ապահովուէին եկեղեցիներու սպասները ու շարժական ստացութիւնները, և

պիտի խափանուէին անիրաւ սեփականութիւններն ու անկանոն վատնումները: Անկարգութեանց բարձումը շատերու շահերուն կը դպչէր. և այս է Ներսէսի ձեռնարկներուն հակառակելու և անոր իշխանութեան դէմ կքրելու իսկական պատճառը: Ներսէսի հակառակորդ խումբին մէջ կը գտնուէին Բեհրութեան, Արղութեան, Ղորղանեան և Թումանեան իշխանապուն գերդաստանները, և ասոնց կը հետևէին՝ շատ մը ազնուականներ և պատուաւոր քաղաքացիներ: Ամէնուն գլուխը կանգնած էր իշխան Դարչի Բեհրութեան, երբեմն տէր և տիրապետող Տփղիսի հայութեան, եկեղեցականութիւնն ու առաջնորդութիւնն ալ մէջը ըլլալով, մինչև իսկ մեք ևս եմք յատկացեալ կնեալ և եպիսկոպոս մերոյ հօտի, գրելու չափ համարձակող մը (ԵՐՅ.Ա.101): Այս տրամադրութեան հետևանօք շարունակ մասնաւոր խնդիրներու առիթներ կը ստեղծուէին. այլ նշանակութիւն ունեցաւ Նորաշէնի քահանային ժառանգական կամ ծխատիրական խնդիրը: Նորաշէնի եկեղեցին Բեհրութեանց սեփականութիւն համարուած էր, որուն ծերունի քահանայն Տէր Յակոբը, անվաւակ ըլլալուն, իրեն որդեգիր և յաջորդ ընտրած էր Ապօձավրեանց Մովսէս տիրացուն, զոր Ներսէս ինքն ձեռնադրած էր ժամանակին, և Դանիէլ կաթողիկոս անոր ժառանգական ծխատիրութիւնը հաստատած էր: Ժամանակ անցնելով Յակոբի եղբօրորդին ալ կը քահանայանայ Տէր Գաբրիէլ անունով, և Յակոբի վերջին օրերը կը յաջողի իրեն վրայ դարձնել տալ ծխական ժառանգութիւնը, որուն Բեհրութեանք ալ պաշտպան կը կանգնին, մինչ Ներսէս կ'ընդդիմանայ, և կաթողիկոսական հաստատութեամբ ստացուած իրաւունքը եղածնել չ ուզեր: Ներսէս կը պատճառէ ևս այն պարագայէն, որ Գաբրիէլ վարակուել էր ծայրայեղ արբեցողութեան ախտով, և մինչև իսկ այդ տգեղ վիճակի մէջ ներկայացուցած էր վայն իր պաշտպաններուն: Բայց Դարչին ասով չէր պիջաներ: Ուստի 1806 յունիս 15-ին իր կողմնակիցները կը գումարէ, և Ներսէսի դէմ բողոքագիր մը ստորագրել կու տայ Եփրեմ կաթողիկոսի ուղղուած, խնդրելով որ հեռացնէ վիճակարիչն ազգի մերոյ և պատուոյ, և սպառնալով թէ չար լիցի յետինս քան վառաջինն: Թէպէտ ոռուական կուսակալ իշխան Ռտիշչեվ կ'ուզէր բողոքագիրին առաքումը արգիլել, բայց կը ստիպուի պիջանիլ, և նամակը կը յղուի հասցէին, Յովսէփ Բեհրութեանի մասնաւոր նամակով մը, որուն մէջ գրուած էր ևս, թէ խնդրեմ մտաբերեալ պիլվով քաղաք Լեհաց, և ի փոքր գրութենէս իմաստասիրեալ (ԵՐՅ.Ա.111):

2344. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ

Այս կերպով Տփղիսի մէջ երկու տարիէ ի վեր արծարծուած կնճիռը Մայրաթոռոյ ատենը ելաւ, ուր Ներսէսի հանդէպ անկեղծ համակրութիւն չէր տիրեր. բայց հնար ալ չէր դիւրին կերպով վայն յայտնել: Տփղիսի ժողովուրդը, և մանաւանդ կանանց դասը, յայտնապէս ի նպաստ Ներսէսի ցուցմունքներ կը կատարէին, լացուկոծ բարձրացնելով առաջնորդարանի առաջ, և կ'աղաչէին որ չվշտանայ և չանիծէ, միտք Ծակոսկոր մականունեալ մարդու մը՝ Ներսէսի անէծքին վրայ ամբողջ գերդաստանով քանի մը օրուան մէջ ջնջուիլը: Նոյն իսկ Լատին եկեղեցականներու մեծաւոր Հայր Փիլիպպոս, Ներսէսի պաշտպանութեան համար յատկապէս կը գրէր Եփրեմի, որուն վաղածանօթ էր (ԵՐՅ.Ա.113): Վրաստանի եքսարք Վարլասամ մետրապոլիտն ալ գրաւոր պաշտպանութիւն կը կը յղէր կարողիկոսին, մեղադրելով հայ իշխանաւորներուն ընթացքը (ԵՐՅ.Ա.115), և իրեն ձայնակից կը լինէին Դոսիթէոս Կախեթի արքեպիսկոպոսը և Ալեքսիոս արքիմանտրիտ Ռուսաց կողմէն (ԵՐՅ.Ա.113): Ներսէս ալ լուռ չէր կենար, և մի շարք գրութեանց մէջ մանրամասն կը բացատրէր բոլոր անցուդարձերը, Բեհրութեան Դարչիի գրգռած յուզումին անկանոնութիւնը, վիճակին անբարեկարծ կացութիւնը, հիմնական բարեկարգութեան պահանջը, և կը խնդրէր որ կաթողիկոսը բացարձակ յայտարարէ թէ ինքն առաքեալ է Ներսէսը, յատկապէս յաղագս բարեկարգելոյ զեկեղեցիսն և զեկեղեցականս, և ազատէ ի մոլի տգեղութենէ անգոսնելի

կրից Բեհրութեանց ոչ միայն զինքն, այլ և զարքեպիսկոպոսութիւնն (ԵՐՅ.Ա.117): Եփրեմ և իր խորհրդականներ նեղ դրութեան մէջ ինկան, չէին կրնար ոչ Ներսէսի կողմը անտեսել և ոչ Բեհրութեանի կողմը ցուցնել, և միջասահման կերպով երկու կողմերը մօտեցնելու կերպը փորձեցին: Կաթողիկոսը 1816 յուլիս 20-ի կողակով նախ կը մերժէ ծխատիրութեան մասին ժառանգական իրաւունքի գոյութիւնը, և կը հռչակէ որ ծխատէրին մեռնալով ծուխեր տէրունի կը դառնան, և առաջնորդը իրաւունքը ունի պատշաճը տնօրինել: Միանգամայն Ներսէսի կը թելադրէ Ապօծավրեանին համար չանդել, և կաթողիկոսական կողակով հաստատուած ըլլալը անդառնալի չսեպել, զի ինքնն իսկ Աստուած ի սէր ժողովրդեանն, ըստ պահանջման հարկին, փոփոխէր զիւր կամս և զբանս (ԵՐՅ.Ա.118), այլ ջանալ ժողովուրդը շահիլ յարմար բարեփոխումներով: Այս պատճառով Ապօծավրեանի նպաստաւոր նոր որոշում չի տար, Ներսէսի համար ալ նոր յանձնարարական չի գրեր կուսակալին, և ոչ պաշտօնական գիր կը յղէ՝ Պետերբուրգ ներկայացնելու համար: Միւս կողմէ Տփղիսեցիներու գանգատագիրին կը պատասխանէ, թէ Ներսէսը հեռացնելու բաւական պատճառ չի գտներ, թէ անոր ձեռնարկած բարեկարգութիւնները կը պահանջուին ըստ անդառնալի հրամանի նորին սուրբ կայսերութեան, և թէ անոնք պէտք է գործադրուին թէ կամեսջիք, և կամ եթէ ոչ կամեսջիք, ուստի և հաշտութեան յորդոր կը կարդայ: Գործը դիւրացնելու համար յատուկ պաշտօն կու տայ վերոյիշեալ Դոսիթէոս Եպիսկոպոսին, և Էջմիածինէ ալ յատկապէս ճամբայ կը հանէ Մարտիրոս Եպիսկոպոսը, և մասնաւոր նամակներով Ռըտիշչեվ կուսակալին ու Վարլամ Եքսարքին ձեռնտուութիւն ալ կը խնդրէ:

2345. ԴԱՐՉԻ ԲԵՀԲՈՒԹԵԱՆ

Եփրեմը կը յուսար թերևս այս կերպով խնդիրը փակել, բայց անկնալութիւնը չպսակուեցաւ: Դարչի Բեհրութեան իր հետապնդումէն ետ չկեցաւ, և 1816 օգոստոս 18-ին նոր բողոքագիր մը ուղղեց կաթողիկոսին, Ներսէսի հեռացումը պահանջելով, թէև այս անգամ նուազագոյն հետևորդներով: Եփրեմը գրգռելու նպատակով և մասնաւոր նամակով կը հաղորդէր, թէ Ներսէս սովոր եղած ըլլայ ըսել, թէ կաթողիկոսը առանց իմ ոչինչ կարէ հրամայել ի վիճակի իմում, և թէ նմա անկարելի է փոխադրելն իմ աստի (ԵՐՅ.Ա.123): Դարչի չափապանցութիւնները նոյնիսկ Տփղիսի հայութեան մի մասը պայրացուցին, որոնք կաթողիկոսին դիմելով յայտարարեցին, թէ Բեհրութեանց, և ոմանց համախոհից հնարագործութեամբ գրեալքն, բոլորն չարակամութեան հնարք են: Ուրիշներ ալ սեպտեմբեր 1-ին համակրութեան ուղերձ մատուցին Ներսէսի, յայտնելով թէ ամենայն հասարակութիւնն ջերմեռանդութեամբ ի պատրաստի կայ ի կատարումն ծառայութեան: Երկու գրութեանց ներքև ալ բազմաթիւ իշխանութիւններու և ազնուականներու ստորագրութիւններ կային (ԵՐՅ.Ա.124): Դարչի իրեն օգնութեանհրաւիրեաց վրացի ազնուականները, հաւատարմացնել տալով թէ Ներսէս կ'աշխատի հայոց ճորտերի ապատութեան մասին վրացոց ստրկութիւնից, որով անոնք ալ սկսան զինուիլ Ներսէսի դէմ, և Ռըտիշչեվ կուսակալին միտքը պղտորել: Ասոր վրայ Ներսէս պարտաւորուեցաւ իշխան Գօլիցին մեծ նախարարին պաշտպանութեան դիմել, Յովակիմ Լապարեանցի միջորդութեամբ և պետական կարգադրութեանց գործադրութեանց աշխատիլը յիշեցնել: Եփրեմ վախնալով որ մի՛ գուցէ ծանր հետևանք մը հասնի Ներսէսի հակառակորդներուն վրայ, փութաց ինքն ալ գրել մեծ նախարարին, խնդրելով շնորհել վշտացեալ ծերունւոյն զյանցանս նոցա, վարկանելով զայն ամենայն ոչ ի կամայական ինչ դրդմանց յառաջացեալ: Նախարարը բաւական սեպեց Ռըտիշչեվի յանձնարարել, որ Հայ ժողովրդին իմացնէ, թէ կառավարութեան հրամանները վնաս ոչ գործեն, ոչ ազգի և ոչ եկեղեցւոյ, և յորդորէ որ զպարտ ու պատշաճ յարգանս ցուցցեն Ներսէս արքեպիսկոպոսին (ԵՐՅ.Ա.127): Եփրեմ նոր կոնդակ մըն ալ գրեց Դարչիի և համախոհներուն յորդորելով հաշտուի և

խաղաղ կենալ, բայց Դարչի ծրար իսկ չուզեց ընդունիլ, ոչ Ներսէսի և աչ ալ Վարլաամի ձեռքէն, և հարկ եղաւ Ռըտիշչեվի իշխանական հրամանով ընդունիլ տալ: Ասով մէկտեղ Դարչի տակաւին չկակղցաւ, մինչև իսկ մերժեց Ներսէսի ողջոյնը, երբ պատահամբ անոր հանդիպեցաւ Յովսէփ Բեհրուբեանի տունը, և վայն յետս մղեց ըսելով, Աստուած սիրես, վարդապետ, գնա քո բանից կաց, և պատուհանէն սանդուխտով իջաւ, որ առաջնորդին երեսը չտեսնէ:

2346. ԽՆԴԻՐԻ ՓԱԿՈՒՄԸ

Տփղիսի առաջնորդ Ներսէսի և Բեհրուբեան Դարչի իշխանի նմիջև յուղուած խնդիրը այնչափ աճեցաւ, որ ոստիկանութեան մտադրութիւնն ալ շարժեց, Պետերբուրգի նախարարութեան ուշադրութիւն ալ գրաւեց, և պաշտոնական քննութիւն բանալու պէտքը պահուեցաւ: Հրամանը Գօլիցին նախարարէն եկաւ, իսկ գործադրութիւնը վիճակեցաւ պորավար Ալեքսէյ Պետրովիչ Երմոլովի, որ այս միջոցին Ռըտիշչեվի տեղ կուսակալ էր անուանուած: Յատուկ յանձնաժողով մը կազմուեցաւ պորավար Կուտուկովի նախագահութեամբ, և 1817 փետրուար 23-ին հարցափորձեր սկսան: Ներսէսի դէմ բողոքագիրը ստորագրողներ, 77 իշխանապուներ ու պալատականներ, մի առ մի հարցաքննութեան ենթարկուեցան տասն օր շարունակ, ինչ որ ամէնքը ահուգողի մատնեց, յիշելով որ 1811-ին նմանօրինակ հարցաքննութեան մը հետևանքով շատեր աքսորի և բանտարկութեան դատապարտուած էին: Նոյն ինքն Ներսէս ալ մտահոգութեան մատնուեցաւ կասկածելով որ չլինի թէ իւր պատճառով այնքան բազմաթիւ անձանց վտանգ գայ. ուստի պէտք եղած դիմումներն ըրաւ յանձնաժողովին և կուսակալին մօտ, որ գործը դիւրին վերջ մը ունենայ: Իրօք ալ պետական տեսակէտէն ոչ մի բան երևան բերուեցաւ, զի ամէնքն ալ պետական բարեկարգութեանց յանձնառութիւն յայտնեցին, շատեր բողոքագրի պարունակութեան անգիտակ ձևացան, ամենէն համարձակները իբր պատրուակ ցուցուցին, թէ բազմիցս ըստ նոցա ցանկութեան առաջնորդներ են փոխուած: Յանձնաժողովն եզրակացուց թէ աւելի ներքին շփոթ կացութեան հետևանք է եղածը, և պէտք տեսաւ աշխարհականներուն միջամտութեան իրաւունքները ճշդել: Ըստ այսմ տեղեկադրեց կուսակալութեան մարտ 9-ին և կուսակալութիւնն ալ նախարարութեան և անոր հաստատութեամբ հետևեալ կանոնները սահմանուեցան: 1. Աշխարհականներ իրաւունք չունին խառնուելու քահանայից կարգադրութեան, և ուրիշ հոգևոր վարչութեան գործերուն: 2. Հասարակութեան կողմէ այլ ևս հանրագրութիւններ պիտի չկազմուին, այլ գանգատ ունեցողը ինքն իր գործին համար պիտի բողոքէ: 3. Դարչի և համախոհներուն անվայել լեզուով կազմած գանգատագիրը, այս անգամ առանց պատիժի կը թողուի, առաջուրնէ որոշում մը հրատարակուած չըլլալուն համար, բայց ապագային այդ տեսակ գործեր պիտի ենթարկուին օրինաց խոտապահանջութեան: Այդ կանոնները գիրի առնելով բողոքողներուն ներկայացուեցան, անոնք անհակառակ ստորագրեցին 1817 ապրիլ 16-ին, իրենց գլուխն ունենալով Բեհրուբեան ընտանիքէն, Յովսէփ, Դարչի, Արսէն, Աբիսողոմ, և Մելիքադ իշխանապուները: Խնդիրին այսչափով փակուիլը ընդհանուր գոհունակութիւն պատճառեց, և սիրտերն ալ Ներսէսի մօտեցուց, տեսնելով որ իր թելադրութիւններով և վկայութիւններով մեծապէս օգնած էր բողոքներուն, և պաշտօնապէս ալ գրած էր յանձնաժողովի նախագահին, թէ անպատում գոհունակութեամբ պիտի տեսնէ գործին առանց խստագոյն ինչ վրէժխնդրութեանց վերջանալը (ԵՐՅ. Ա. 135):

2347. ԶԱԲԱՐԻԱ ԳՈՒԼԱՍՊԵԱՆ

Խստութեան միակ գործն եղաւ Զաբարիա Գուլասպեան վարդապետը Տփղիսէ հեռացնելը, որ Բեհրուբեան ալ կը կոչէ զինքը, Յովսէփ Բեհրուբեանի քեռորդին ըլլալուն համար (ԵՐՅ. Ա. 135): Գուլասպեանը Կարբեցիին թելադրութեամբ և տկարութեան պատրուակով՝ առժամեայ

կերպով Տփղիս եկած, և Բեհրութեանց մօտ իջևանած, բողոքողներուն գրութիւնները պատրաստողն էր, և Ներսէս անհրաժեշտ դատեց պայն կուսակալին ձեռքով Էջմիածին վերադարձնել: Գուլասպեան բնիկ Տփղիսեցի, Կ. Պոլիս էր գացած երիտասարդութեան ատեն, և այնտեղ Գարագօջ Պօղոս եպիսկոպոսի աշակերտած, և անոր ձեռնադրութեամբ վարդապետութեան բարձրացած, Պրուսայի առաջնորդութեան միջոցին, ինչպէս կը քաղուի Արմաշի տաճարին սպասուց կարգին նշանակուած, երկու միջակ ծանրագին վարպետաւոր խաչերու յիշատակագրութենէ, որոնք էին ի Պրուսա շինեցուցեալ ձեռամբ Թիֆլիսեցի Ջաքարիա վարդապետին: Ջաքարիայի անունը Արմաշու միաբաններուն շարքին մէջ ալ կը յիշուի, ուր եկած պէտք է ըլլայ Գարագոչեանի հետ, երբ սա 1810-ին Արմաշու և Նիկոմիդիոյ առաջնորդ անուանուեցաւ: Բայց այնտեղ երկար մնացած և աշխատած պիտի չըլլայ, զի Արմաշի վերաշինութիւնը տեղի ունեցաւ 1820-ին, մինչ 1817-ին Ջաքարիա կանուխէն Էջմիածին դարձած, և Կարբեցիին խորհրդակից և գործակից կը գտնուի: Անկէ ետքն է որ պետական հրամանով Տփղիսէ Էջմիածին կը վերադարձուի: Մայրաթոռի մէջ նշանաւոր գործունէութեան մը վրայ չենք տեսնար զինքը, գուցէ Կարբեցիին հետ ալ գժտած է, և օգուտ անձին խորհելով, կամակար յօժարութեամբ Սևան կը քաշուի, իբր ի խաղաղ նաւահանգիստ: Այս առթիւ 1825-ին կը պատրաստէ Վէպ ծովակին Գեղամայ համառօտ պատմութիւնը, սակայն կը յիշէ ուրիշ չորս գործեր ալ գրած ըլլալը, հաւանաբար Սևանի առանձնութեան մէջ, որք են, 1. Հայելի Ուղղափառութեան, 2. Յուցակ Դաւանութեան, 3. Ունակ քարոյից. 4. Երգարան երգոց (ՎէՊ 4), զորս տեսած չենք սակայն անունները նպաստաւոր գաղափար կուտան: Անոնց լեզուն ալ կոկիկ եղած պիտի ձանչնանք, չափելով փոքրիկ վէպին մաքուր և կանոնաւոր գրաբար գրութենէն: Գուլասպեանի կեանքին մնացուածին և վախճանին վրայ առաջիկային պատեհ պիտի ունենանք վերադառնալու, և եպիսկոպոսութեան ալ բարձրացած պիտի տեսնենք:

2348. ԱԲՐԱՀԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ

Ժամանակագրական պահանջին հետևիլ մեղի կանոն ըրած ըլլալով, դարձեալ Էջմիածինէ կը դառնանք Կ. Պոլսոյ կացութիւնը պատմելու: Աբրահամ Գօլեանի պատրիարքութեան բարձրանալը յիշած էինք, աւելցնելով իսկոյն իր դիրքին խախտուած ըլլալը (2338): Գօլեան պաշտօնին բարձրութեան համապատասխան ձիրքեր չցուցուց, և դիրքը ամրացնելու համար սկսաւ յեղյեղուկ քաղաքականութեան հետևիլ, և աստ աւելի ևս վնասեց իրեն, հետզհետէ վարկը կորսնցուց, այնպէս որ մեծամեծներ յաջորդին մասին մտածելու սկսան: Այս դիտմամբ էր որ 1814-ին իրենց ընծայագիրով Էջմիածին ղրկեցին Երուսաղէմի փոխանորդ Ադրիանուպոլսեցի Պօղոս Գրիգորեան վարդապետը՝ եպիսկոպոսանալու համար, որպէսզի պատրաստ պատրիարքու մը ունենան: Գօլեան կարծեց իշխանաբար վարմունքով ազդեցութիւն աւելցնել, ուստի բարկացող և հակառակող, երկպառակութիւն ցանող և դրամ հաւաքող անձ մը դարձաւ բայց այս կերպով ալ աւելի վարկաբեկ եղաւ: Տեսնելով որ իրեն դէմ եղող մեծամեծներ, հակակաթոլիկեան գլխաւորներէն էին, որոնց կառաջնորդէին Կարապետ Ազնաւորեան և Յովհաննէս Երկանեան ամիրաները, մտածեց կաթոլիկամիտներու խումբը իրեն կողմնակից կապմել, որոնց գլխաւորն էր Գրիգոր Տիւլեան ամիրան: Մտածեց վերցնել տալ ով հրաշալի շարականին վերջին երեք յաւելուածական, այսինքն Բաղկեդոնի և Լևոնի նպովքները պարունակող տուները, որ հռոմէականներուն սիրտին դպած կէտերուն գլխաւորն էր, և կարծեց անով իրեն պաշտպաններ կապմել: Գրիգոր Փէշտիմալձեան պատուելիին հետ խորհրդակցեցաւ, և հնագոյն գրչագիրներ գտնելու հետևեցաւ, որոնց մէջ յիշեալ տուները չգտնուին: Բարեբախտաբար Տատեան Առաքել ամիրային մօտէն գտան 2ԾԱ- 1302-ին, Գրիգոր Անաւարպեցիի և Հեթում երկրորդի օրով, գրուած

շարական մը, որ Խորեվ անապատի միաբան Թովմաս արեղայէ մը գրուած էր: Խորեվ անունով անապատ մը ուրիշ կողմէ ծանոթ չլինելուն, կը կարծենք թէ շարականին գրող Թովմասը Կիլիկիոյ Խորին անապատի միաբան եղած ըլլայ: Գօլեան հրամայեց այդ գրչագիրին վրայ շարականի նոր օրինակ մը կապմել, և Արապեան Պօղոսի տպագրութեամբ հրատարակելու և ցրուելու ձեռնարկել: Երբ դիտողութիւններ սկսան, Գօլեան իր գիտակցութիւնն ու գործակցութիւնն ուրացաւ, հակառակ պատրաստողին և տպագրողին յայտնի վկայութեանց, և մինչև իսկ Փէշտիմալձեան բանտարկեց աքսորելու սպառնալիքով: Պատուելի Տիւլեանի պաշտպանութեան դիմաց, նա ալ Ազնուաւորեանի և Երկանեանի միջնորդութիւնը խնդրեց. Փէշտիմալձեան ապատեցաւ, բայց Գօլեան փոխանակ կաթոլիկամիտները շահելու, անոնց համակրութիւնն ալ կորանցուց: Երուսաղէմի փոխանորդին եպիսկոպոսանալէն խրտնչելով, սկսաւ Երուսաղէմի միաբաններուն վրայ ծանրանալ, զոմանս աքսորեաց և զոմանս արգել, և Գրիգոր վարդապետ մը կարգաւոյժ հռչակեց: Խիղճը նախորդ պատրիարք Յովհաննէսի պաշտպանութիւնը խնդրեց, նա ալ Յարութիւն Պէլձեան ազնուականը պատրիարքին վրկեց, յորդորելով ետ առնուլ Գրիգորի համար տուած Վճիռը, և դադրեցնել Երուսաղէմացոց դէմ խստութիւնները, որոնք պարզապէս քմահաճ կիրքի արդիւնք էին: Բայց Գօլեան մեծութիւն սեպեց չպիջանիլ, մինչև իսկ Պէլձեանը նախատելով ետ դարձուց (ՊԷՐ.77):

2349. ԱՔՐԱՀԱՄ ՊԱՇՏՕՆԱՆԿ

Սակայն չպիջանիլն ալ Աբրահամի վնասակար դարձաւ, Պէլձեանը մերժած ատեն արտասանած էր, ի բաց յինէն դեսպան հերձուածողաց խօսքերը, իբր զի Պէլձեան փողերանոցի պաշտօնեայ էր, որուն վարիչն էր Տիւլեան Գրիգոր ամիրան: Պատրիարքին այդ խօսքերը Տիւլեանն ալ վիրաւորեցին, որ Ազնուաւորեանի և ընկերաց հետ միացաւ Գօլեանը իջեուցանել յաթոռոյ: Նոյն օրեր, 1814 յուլիս 4-ին, մեծահանդէս կատարուած էր Քատրքէօյի, հին Քաղկեդոնի, Ս. Թագաւոր նորաշէն եկեղեցւոյն օծումը, մինչ եօթը տարիէ ի վեր աւերակ կը մնար Բերայի Ս. Երրորդութիւն հրկիպեալ եկեղեցին (2306): Բերացիք պատրիարքին դիմեցին բողոքարկելու շեշտով, իսկ սա պահանջեց զհապար քսակս ոսկւոյ, զի հրաման ստանայ նորոգել զեկեղեցին (ՊԷՐ.77): Բերացիք զայրացած կը մտածեն հանրութեամբ սուլտանին դիմել արտօնութիւն ստանալու, իսկ Գօլեանի ձանձրացողներ, Տիւլեան և Ազնուաւորեան և այլք, պատրիարքի դէմ գանգատի և անոր անկումը պահանջող խնդրագիր մը կու տան ժողովուրդին ձեռքը: Այս խնդրագիրը կը մատուցուի կայսեր 1815 նոյեմբեր 26-ին ուրբաթի աղօթքին առթիւ: Իսկոյն կ ելլէ պատրիարքի պաշտօնանկութեան կայսերական հրամանը, ինչ որ կը ցուցնէ թէ կառավարական շրջանակներէն ալ իրեն համակիր չէին: Նոյեմբեր 29-ին, երկուշաբթի օր, Աբրահամի պաշտօնէ իյնալուն հրամանը պատրիարքարան կը հաղորդուի: Աբրահամի բարեկամներէն խլրտողներ կ ըլլան, խնդրագիրին խարդախուած ըլլալը մէջտէղ դնելով, բայց արդիւնք չ ունենար: Դեկտեմբեր 1-ին նոր պատրիարքի ընտրութիւնը կը կատարուի և 3-ին Պօղոս եպիսկոպոս Գրիգորեան Ադրիանուպոլսեցի պատրիարք կը հաստատուի. և Աբրահամ Գօլեան Քատրքէօյ կը փոխադրուի, անկէ Մէրպիֆուն կամ Մարսըլան երթալու համար առաջնորդական անունով: Այսպէս վերջացաւ Աբրահամ Գօլեանի երկու քուկէս տարուան պատրիարքութիւնը, ոչ մտ հետք չթողլով իր ետևէն:

2350. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՋՁԵԱՆ

Այս առաջին անգամ գործի վրայ կը տեսնենք Յարութիւն Պէլձեան ամիրան, որ առաջիկային նշանաւոր և արդիւնաշատ դեր վարած է Կ. Պոլսոյ պատրիարքութեան գործերուն մէջ, և ի դէպ կը կարծենք անոր նախընթացը պատմել: Յարութիւնի հայրն է մահտեսի Պօղոս, բնիկ Կարսեցի, որ 1769 տարւոյ զօրաժողովին խաժամուժէն վնասուելով կարօտութեան կ ենթարկուի, և

իրբ դարման Կ. Պոլիս կը փոխադրուի: Այս տեղ իրեն ձեռնտու կ ըլլայ Կարսեցի Կարապետ մը Մայրեկեղեցւոյ Յակոբ քահանայ փեսայ, արհեստով կտաւագործ և Կէտիկ բաշա թաղի բնակիչ: Պօղոս կը շահուի Կարապետի գործած կտաւներուն շրջուն առևտուրովը, և աւելի մտերմանալով կամուսնանայ Կարապետի դստեր և Յակոբ քահանայի թոռան Վառվառէի հետ: Կտաւի առևտուրէն կը ծագի պէպէ՛ծի Պօղոս կոչումը և անկէ Պէպճեան մականունը: Պօղոս համեստ գիրք մը կապմելով, առանձին բնակութիւն կը հաստատէ Եէնիքաբու թաղը, և հոն կը ծնի իր անդրանիկը 1771 ապրիլ 10-ին, զոր կը կոչէ Յարութիւն, զի Յինանց սկիզբները տեղի ունեցած էր ծնունդը, և զատիկը հանդիպած էր մարտ 27-ին: Յարութիւն միայն երկու քոյրեր ունեցած է, Մարիամ և Համասփիւռ, իսկ եղբայրը ոչ: Մանկութեան ատեն աշակերտած է նոր բացուած Մայրեկեղեցւոյ վարժարանին, բայց հապիւ 12 տարեկան, շուկայ հանուած, և աշակերտ գրուած է երիպագործի մը մօտ, ուսակից Գապէպ կոչումը: Տասներկու տարիներ արհեստին հետևելով կը յաջողի 1785-ին առանձին կրպակ բանալ, և յառաջադէմ և վստահելի վարպետ համարուի: Երբոր Յովհաննէս Տիւլեան 1802-ին մետաքսի մաքսը կը վարձէ, այսինքն կապալով կը վերցնէ, այդ ճիւղին համար յատուկ գրասենեակ կը բանալ, և Յարութիւնը յառաջ կը կոչէ իբրև կարող և վստահելի մետաքսագործ արհեստաւոր, և գրասենեակին գլխաւոր կը կարգէ: Յարութիւն այդ գիրքին մէջ համբաւ և արդիւնք շատցուց, ընդարձակ բնակութիւն հաստատեց Գումքարու թաղը, քոյրերը ամուսնացուց, Մարիամը Նուրեան Յովհաննէսի և Համասփիւռը Մերկերեան Գէորգի հետ, և փեսաներուն հետ ընկերակցութեամբ ընտիր բեհեզներու և մետաքսեղէններու առևտուր ալ բացաւ: Յարութիւն Պէպճեանի և Յովհաննէս Տիւլեանի յարաբերութիւնները միշտ աճելու վրայ էին, երբ վերահաս պարագայ մը զայն ևս քան զևս հաստատեց: Սուլթան Սէլիմի անկման առթիւ 1807-ին ծագած ապստամբութեան գլուխները, ոչ-մահմետականներէն ալ իրենց կիրքին զոհեր ուլեցին, և յերկրածոյ պատճառներով մահուան դատապարտուեցան, Յարութիւն Նորատունկեան հացագործ, Յովհաննէս Տիւլեան ոսկերիչ, Թոտորաքի յոյն գինեվաճառ, և Մուսի հրեայ վաճառական, չորսն ալ պետութեան հետ գործ ունեցողներ: Յարութիւն հապիւ թէ այդ լուրը կառնէ, Յովհաննէս Նուրեանի հետ ապստամբներուն գլխաւոր Գապանձի հաճի Մուսթաֆայի կը դիմէ, որուն հետ առևտրական յարաբերութիւններ ունէին, և այնչափ կը թախանձէ և կը ժտէ, որ ապստամբապետը կը զիջանի և ընկերներն ալ կը համոզէ, և չորսին դատապարտութիւններն ալ կը ջնջուին: Այնուհետև Տիւլեան, ոչ միայն գործերուն, այլ և կեանքին կապովը Յարութիւնի անձնանըւէր կը դառնայ, և զայն իր վեց զաւակներուն հետ իբր եօթներորդ կը նկատէ: Այսպէս Յարութիւնի դիրքը օրըստօրէ բարձրացաւ, և շահերը ընդարձակուեցան, որով կրցաւ բարերարութեանց ալ ձեռնարկել, որոնք մինչև հիմա անմոռանց կը յիշուին: Այդ միջոցներուն էր որ Աբրահամ պատրիարք անարգանօք զինքն կը մերժէր, բայց անով իր մերժուելուն դուռ կը բանար: Իսկ Պօղոսի պատրիարքութեան ատեն, արդէն Պէպճեանի դիրքը իւր գագաթնակէտը գտած էր:

2351. ՊՕՂՈՍԻ ՆԱԽԸՆԹԱՅԸ

Պօղոս պատրիարքին դառնալով կը տեսնենք, որ որչափ մեծ եղած էր Աբրահամի մասին յուսախաբութիւնը, այնչափ և աւելի մեծ էր Պօղոսի վրայ յուսադրութիւնը, որուն գործունէութեան ասպարէզը կընդարձակուէր: Այս առթիւ կարևոր կը սեպենք ինչ ինչ հետաքրքրական տեղեկութիւններ տալ անոր անձին նկատմամբ ալ: Պօղոսի ծննդեան տարին որոշակի յիշուած չէ, այլ 1853-ին իննսնամեայ վախճանած ըսուելուն, կրնանք ծնունդը դնել 1763-ին, Ադրիանուպոլիս քաղաքը: Ծագումը եղած է հասրակ դասակարգէ, որով կանուխէն ապրուստի պէտքին հետևած է, և մինչև 28 տարեկան ըլլալը որ է ըսել մինչև 1790, անմասն մնացած է ամենէն տարրական ուսումէ ալ, նոյն իսկ մայրենի լեզուն խօսելէ, և հետևած է հասարակ

դերձակութեան արհեստին: Անկէ ետքը միայն սրտին մէջ արթնացած է ուսման փափաքը, և դիմած է Երուսաղէմի վանքը, և սպասաւոր մտած հայրենակից վարդապետի մը մօտ, որ փոխանակ անոր բաղձանքը մշակելու, պաղեցնելու միջոցներ է գործածած, մինչև որ Պօղոս, որ ծածուկ ինքնօգնութեամբ պարզ ընթերցանութեան կը հետևէր, պարտաւորուած է Կ. Պոլիս դառնալ (ՍԱԻ.1297): Այստեղ դռնապան կը մտնէ Խիւտավէրտի վարժապետին դպրոցը, և անոր պաշտպանութեան արժանանալով, ոչ սակաւ կը յառաջէ հայերէնի մէջ: Իր մեծ դիտումն էր Ս. Գրոց խրատներն ու խորհուրդները մատչելի ընել տաճկախօս ազգայիններու, և այս միտքով Երուսաղէմ կը դառնայ, ուր նպատակին հայար կ'օգտուի: Արաբերէնը վարգացնելու համար Եգիպտոս կ'անցնի, և պարսկերէնի փափագով Պաղտատ կ'երթայ, միշտ արհեստովը վաստակելով, և վաստակածը ուսման ծախսելով: Պաղտատի մէջ ինքզինքը կը ծածկէ, և Եուսուֆ անուն մահմետական արհեստապետին քով կը մտնէ, և վարգացումով ու ճարտարութեամբ անոր համակրութիւնը կը գրաւէ: Հիւանդութեան և այլ պատճառանքներով ուրբաթի աղօթքներէն կը խուսափէ, բայց երբ համակրանքը մինչև փեսայացնելու կը հասնի, կը պարտաւորուի Հայոց եկեղեցին դիմել, ինքզինքը ճանաչցնել, և ազգայնոց պաշտպանութեամբ քաղաքէն խոյս տալ, և երրորդ անգամ Երուսաղէմ գալ, Յովակիմի պատրիարքութեան վերջին օրերը, որ է ըսել 1793 ամառուան ամիսներուն: Երուսաղէմի մէջ արժանիքի յիշատակ չէր թողած դէմքով ու տեսքով ալ խոստմնալից կերպարան չունէր, կ'ըսուի. ուստի Ս. Գերեզմանի սպասաւորութեան կը գրուի, մինչ ինքը պարապ ժամերը օգտակար կ'ընէր Ս. Գրոց ուսումասիրութեան և մեկնութեան: Հարկաւ միաբանութիւնն ալ սկսած էր զգալ Պօղոսի արժանիքը, որ քիչ ետքը սարկաւագութեան, և 1707 ին արեղայութեան կը բարձրացնէ Պետրոս պատրիարքի ձեռնադրութեամբ (ՍԱԻ.1302):

2352. ՊՕՂՈՍԻ ԱՐԺԱՆԻՔԸ

Արեղայութեան մէջ ալ համեստ և քաշուած ընթացք պահած է Պօղոս, մինչև իսկ չհամարձակելով դասին մէջ կանգնիլ վարդապետաց կարգին, կամ աչքառու պաշտօնավարութեանց միջամտել, բայց միշտ վարգացման և ուսումասիրութեան հետամտելով գլխաւորապէս Ս. Գրոց և կրօնական խնդրոց շրջանակին մէջ: Սովորութիւն է Երուսաղէմի մէջ, նոր հասնող ուխտաւորները արարողութեամբ ընդունիլ Գլխադիրի մատուռը, պատշաճ խրատաբանութեամբ և կարևորաց բացատրութեամբ: Անգամ մը հանդիպմամբ այդ պաշտօնը Պօղոսի կը յանձնուի, որ իր ատենաբանութեամբ կը հիացնէ բոլոր միաբանութիւնը, և Պետրոս պատրիարքն ալ, որ վրայ կը հասնի: Ժամերգութեան վերջը պատրիարքէն կը կոչուի, և երբ ինքն յանդիմանութիւն կը կարծէր լսել, ծաղկեայ փիլոնով կը վարձատրուի, և պատրիարքարան քարտուղար կ'անուանուի, և օրէ օր կարող և բանիբուն անձի հոչակ կը ստանայ: Տակաւին գրեթէ նորընծայ էր, երբ 1801-ին նուիրակութեան ընտրուեցաւ, որ յառաջացեալ միաբաններու յատուկ պաշտօն էր, և իրեն յանձնուեցաւ Ջմիւռնիոյ շրջանակը Պրուսայով և Կուտինայով մէկտեղ: Երբոր 1806-ին Յունաց հետ խնդիրները աճեցան, Թէոդորոս պատրիարքը հրաման ստացաւ Կ. Պոլիս անցնիլ և փոխանորդ Յակոբ եպիսկոպոսի օժանդակել (2314), ուսկից նորէն նւիրակութեան դարձաւ: Ս. Յարութեան հրդեհէն ետքը, երբոր Երուսաղէմի խնդիրները զօրացան, Պօղոս իբր կարողագոյն անձ Կ. Պոլսոյ փոխանորդութեան կոչուեցաւ 1809-ին (2317): Իսկ այդ պաշտօնին մէջ կատարածները արդէն պատմեցինք (2317-2320), մինչև որ իբր ապագայ պատրիարքոց Կ. Պոլսեցւոց առաջարկութեամբ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ 1814-ին (2347), և վերջապէս պատրիարքութեան բարձրացաւ (2348): Պօղոս մեծ ապաւորութիւն գործեց ժողովուրդին վրայ 1815 դեկտեմբեր 3- ին, իր առաջին ատենաբանութեամբը, զոր ըրաւ Բարձրագոյն դուռնէն պատրիարքարան եկած օրը (ՊԷՐ. 80): Աւելի մեծ խոհականութիւն ցուցուց պատրիարքական

իշխանութեան հաստատութիւն տալու առաջարկներով, որպէսզի մէկ կամ քանի մը ամիրայի ազդեցութեամբ գահընկէցութիւն կամ ընտրութիւն չըլլայ, այլ ամենայն ինչ ամիրաներէ և արհեստապետներէ կազմուած ժողովով կատարուի, դժգոհութեան պահուն այն ժողովէն ազդարարութիւն ըլլայ պատրիարքին, և նա ալ հրաժարի և քաշուի, և մասնաւորներու ազդեցութեան տեղի չտրուի: Առաջարկները ընդունուեցան և պատրիարքական հրովարտակն ալ 1816 յունուար 16-ին ստացուեցաւ (ՍԱԻ. 1138):

2353. ՏԱՏԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆ

Կ. Պոլսոյ ազգային գործերուն վրայ խօսուած ատեն, շատ մը անուններ կը յիշուին, որոնք ամիրայական տուներու կը պատկանին: Դժբախտ պարագաներ միշտ կարճատև ըրած են այս տուներուն կեանքը, այնպէս որ շարունակ նոր անուններ երեւան կու գան, և առաջիններ հետզհետէ կաներևութանան: Այս է պատճառը որ անոնցմով յատկապէս վբաղելու պէտք չենք վգար, և այստեղ բացառաբար երկու գերդաստաններու վրայ համառոտ ակնարկ մը բաւական կը սեպենք, որոնք աւելի երկար տևողութիւն ունեցան, և աւելի ալ արդիւնաւոր եղան: Ասոնց առաջինն է Տատեանց տունը, որու ազգաբանութիւնը Պօղոս եպիսկոպոս, 1742-ին Ակնայ առաջնորդ, մինչև ԺԴ. դարուն սկիզբները կը բարձրացնէ, հետևելով հետապօտեալ հնութեանց, և քաղելով ի դիւանագրութենէ եկեղեցիներու, թէպէտ յայնի չեն յիշուած աղբիւրները: Այս տեղեկութեանց համեմատ Պերոպ ոմն իշխան ի սերնդոցն Սենեքերիմայ Արծրունեաց, 1350-ին ատենները Սեբաստիայէ Ակն կը գաղթէ, և իր Միհրդատ գաւակէն կը սկսի Ակնայ մէջ Պեռեանց տունը, իբր Պերոպեան անունին համառօտութիւն: Մենք Սեբաստիոյ Արծրունիներուն յիշատակութիւնը ըրինք մինչև 1079 (895), երբ դեռ կենդանի էին Ատոմ և Աբու ահլ, որոնք հարկաւ սերունդ ալ թողուցին, սակայն Պօղոս եպիսկոպոսի յիշատակարանը բացատրութիւն չի տար 1079-է մինչև 1350 պահուած ազգաբանութեան վրայ, և ինքն իսկ կերկրայի ուղիղ սենեքերիմեան սերունդ լինելուն, և վերջէն կաւելցնէ, թէ է սերունդ մեծի, կամ թագաւորաց և կամ անկարծիք նոցին նախարարաց: Պերոպէ իններորդ ծնունդ՝ Յարութիւն Պեռեանց, Եփրատի վրայ կամուրջ մը շինելու կը ձեռնարկէ, գործ վարմանալի հիւսուածոյ ագուցիկ փայտից, բայց Ակնայ այլապի մեծամեծներուն նախանձէն վախենալով Կամարակապ գիւղը կը փոխադրուի, շուրջ 1650-ին և այստեղ Պեռեանց տունը Տատեանց անունը կառնէ Յարութիւնի մեծպապ Տատ Առաքելի անունէն, անուն մը որ որդւոյն վրայ ալ կրկնուած է: Տատ անունին ծագումը կրնայ Աստուածատուրի կրճատում առնուիլ, բայց անհաւանական չենք գտներ, հանրութեան համար հայրապատիւ անձ մը եղած, և ամենէն Պարոն Տատ կամ Տատ Առաքել կոչուած կարծել: Այդ Տատ Առաքելի թոռն է դարձեալ Տատ Առաքել, 1757-ին ծնած Կամարակապի մէջ, որուն համար Պօղոս եպիսկոպոս 1762-ին գրելով կ ըսէ, թէ դեռ հինգամեայ, տեսանի ի յինքեան ձիրք իմն վարմանալի ուշիմութեանց (ՊՕՂ.): Այս Տատ Առաքելն է, որ երիտասարդութեան Կ. Պոլիս փոխադրուելով, և հնարագէտ ճարտարութեանց հետամուտ ըլլալով, վառօդաշինութեան արհեստին կը հետևի, և երբ Սուլթան Սէլիմ Գ., 1789-ին գահ բարձրացած, կ ուլէ պետական գործունէութեան նոր վարկ տալ, Տատ Առաքել կամ Առաքել Տատեան ամիրայն կը նշանակէ Արքունի վառօդապետ Օսմանեան պետութեան (ՏԱՏ.1): Տատ Առաքել ազգային շրջանակներուն մէջ ալ առաջնակարգ դիրք ստացած էր, ինչպէս քանի անգամներ յիշեցինք (2318), և նոյն իսկ իբրև լեզուագէտ և հմուտ անձ ճանչցուան ըլլալն ալ ակնարկեցինք, քանի որ գրական և ուսումնական խնդիրներու համար իրեն դիմումներ կ ըլլային (2322), և վերջին անգամ գրչագիր շարականին ալ իր մօտ գտնուիլը (2348), միևնոյնը կը հաստատէ: Որոշ չենք գտած Առաքել ամիրայի մահուան թուականը, իսկ գրչագիր շարականին գտնուիլը 1814-ին կը դրուի (ՊԷՐ.75), մինչ կողմէ 1814 փետրուար 15-ին, արդէն

Առաքելի երէց որդին Սիմոն՝ վառօդապետութեան մէջ հօրը յաջորդած կը ցուցուի, որով յարմարագոյն պիտի ըլլայ շարականի խնդիրը 1813-ին տանիլ, Գօլեանի ընտրութենէն քանի մը ամիս ետքը, որ տեղի ունեցած էր 1813 մայիսին (2337):

2354. ՏԻՒԶԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆ

Միւս նշանաւոր գերդաստանը եղած է Տիւլեան ազգատոհմը, որուն նախահայրը կը յիշուի Սեբաստացի Յարութիւնը, որ շուրջ 1600-ին Կ. Պոլիս կու գայ, և ոսկերչութեան արհեստին մէջ յառաջանալով արքունի ոսկերչապետ կանուանու: Իսկ Տիւլ մակդիրը, ոմանք Յարութիւնի որդւոյն Սարգիսի ուղղաբերձ հասակէն կ'առնեն, իսկ սովորական աւանդութիւնը նոյն Սարգիսի ուղղամիտ և արդարակշիռ գործառնութենէ յառաջ եկած կը կարծէ (ԴԱՄ.7): Տիւլեանք Կ. Պոլսոյ մէջ կաթոլիկամիտ կուսակցութեան կը սկսին յարիլ, սակայն ձրի կարծիք մըն է Սեբաստացի Յարութիւնը՝ 1600-էն առաջ կաթողիկէայ հայապգի, այսինքն կաթոլիկ կարծել, երբ տակաւին այդ անունը և այդ կուսակցութիւնը լսուած իսկ չէր: Առաջին անգամ կը տեսնենք Յովհաննէս Տիւլեանը՝ իբրև կաթոլիկութեան յարող գլխաւորներէն մին, 1809-ին Յովհաննէս պատրիարքէ բանակցութեան հրաւիրուած (2317). բայց այս Յովհաննէս թոռն էր առաջին Յարութիւնի թոռ Յովհաննէսին, և 200 տարիով հեռու էր Տիւլեանց նախահօրէն: Արքունի ոսկերչութիւնը ժառանգական մնաց Տիւլեանց ազգատոհմին մէջ, թէպէտ պանապան կողմերէ հակառակութեանց հանդիպեցաւ: Բայց ժառանգական յաջորդութիւնը ընդունուած էր Օսմանեան կառավարութեան մէջ նոյն իսկ արհեստական պաշտօններու համար, ինչպէս եղաւ վառօդապետութիւնն ալ Տատեանց, և ճարտարապետութիւնն ալ Պալեանց ազգատոհմերուն մէջ: Ոսկերչապետութեան յարակից էր փողերանոցի տեսչութիւնն ալ, բայց երբ Յովհաննէս մեռաւ 1812 ապրիլ 9-ին, երկու պաշտօնները բաժնուեցան և տրուեցան իր երկու երիցագոյն վաւակներուն. Սարգիս ոսկերչապետ, իսկ Գրիգոր փողերապետ կամ փողերանոցի վարիչ անուանուեցան, ինչպէս պինքն այդ պաշտօնին վրայ յիշեցինք Գօլեանի պատրիարքութենէ հանուելուն առթիւ (2349): Տիւլեանց ազգատոհմը այլևս գլուխ կանգնած կը տեսնենք կաթոլիկութեան կուսակցութեան, և իր ազդեցութեամբ և նիւթական միջոցներով անոր պաշտպան եղած: Միայն թէ պատմական ճշդութեան համար պիտի յայտարարենք, թէ Տիւլեանք երբեք չուլեցին ծառայել կատարեալ, թունդ, լատինասէր և մոլեռանդ ձիւղին, այլ միշտ գտնուեցան ազգայնական կաթոլիկ ուղղութեան վրայ, եթէ օրէն է այդ բացատրութիւնը գործածել Վենետիկի Մխիթարեաններուն հետևած ոճին, այսինքն կաթոլիկութեան վրայ պատրաստուած հայութիւն մը կազմելու միտքին, որուն պաշտպանութեան դերը կը վարէր Յովհաննէս Սեղբոսեան (2166):

2355. ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄ

Հրապուրիչ և գեղատեսեալ կերպարանով կը ներկայանար կաթոլիկամիտներու խնդիրը, իբր պի մէկ կողմէ Արևմուտքի հետ յարաբերութիւններ կ'ընդարձակուէին, և միւս կողմէ ուսման և պարգացման բաղձանքը յագուրդ կը գտնէր, և այս տեսութիւնները սերտ և անխպելի կերպով կապուած կը կարծուէին: Հայը կղպիացեալ դիրք մը ունէր Արևելքի մէջ, ուր իր ձգտումներուն համաձայն օժանդակութիւն չէր գտներ, միւս կողմէն Արևմուտք, որ է ըսել, Արևելքի հետ յարաբերութիւն պահող կաթոլիկ Եւրոպան, կրօնամոլ սկզբունքներէ մղեալ իր ձեռնտուութիւնը չէր շնորհեր, եթէ ոչ իր կրօնքին և իր դաւանանքին հնապանդելու պայմանով: Այդ պարագանելու հանդէպ, նաև հայութեան հաւատարիմ և իրենց եկեղեցին սիրող Հայեր, լրջօրէն կը մտածէին, թէ եղանակ մը արդեօք հոռմէադաւանութիւնը գոհացնել առանց հայադաւանութեան վնասելու, և ակնկալեալ օգուտները քաղել առանց բան մը վրայ տալու, կամ ուրիշ խօսքով, հայութեան մէջէն գժտութեան և երկպառակութեան սերմը ջնջել, և հայութեան առջև յարաբերութեանց և

դիւրութեանց դուռերը բանալ: Այդ միտքէն բոլորովին օտար չէր երևար նորընտիր Պօղոս պատրիարքն ալ, ուսման և վարճացման յամառ հետապնդող մը, ինչպէս իր նախընթացէն ալ ցուցուցինք (2351): Ուստի ինքն ալ կը մտածեր, թէ հնար չէ՞ր արդեօք պատուաւոր կերպով իրականութիւն տալ այդ ձգտումներուն: Երբոր մէկ կողմէն օգուտի մը նպատակակէտը միտքերը կը գրաւէր, միւս կողմէն անտեղութեանց առջևն առնելու պէտքն ալ կը վագուէր կաթոլիկութիւնը կաճես թէ աւելի ոյժ և աւելի տարածում ստացած էր ազգին մէջ, շնորհիւ հռոմէադաւան եկեղեցականներու գործունէութեան, որոնք բաւական շատցած էին, Մխիթարեան կրկին և Անտոնեան միաբանութեանց, և Հռոմի Փրովականաայի դպրոցին աշակերտութենէն: Ասոնք կը յաջողէին շարունակ համակիրներու շրջանակը ընդլայնել, միշտ ուսման և վարճացման և ևրոպական յարաբերութեանց և օգնութեանց հրապոյրներով, ինչ որ ազգին մէջ երկպառակութիւնները կը շատցնէր: Բայց միւս կողմէն կաթոլիկամիտներն ալ իրենց մէջ համաձայն չէին, և օրէ օր կը պօրանային Աբբացի և Բօլէճցի ուղղութեանց հոսանքները, վորս արդէն բացատրած ենք (2163), և որուն առիթ տուած էին Չամչեանի խմբագրած Վահան հաւատոյ գիրքին (2165) այսօրեր երևան գալը, և նոյն գիրքին մասին ներհակընդդէմ կարծիքները: Այդ ամէնը կրնար անտարբեր թողուլ Պօղոս պատրիարքը, եթէ իր իրաւասութեան շրջանակէն դուրս բան մը ըլլար. սակայն հայ ազգը, որուն ինքն գլուխն էր, հաւասարապէս իր մէջը կը պարունակէր. հայադաւանը և հռոմէադաւանը, Աբբայեան և Բօլէճեանը, և հոգածու պետ մը չէր կրնար այդ տարածայնութիւնները իրեն օտար համարիլ և անոնցմով չզբաղիլ:

2356. ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

Ահա Պօղոսի միտքը գրաւող պարագաները, որոնք աւելի ազդեցութիւն կը ներգործէին գաւառները, և ամէն կողմերէն հասնող գրութիւններով, որոնք աղաղակելով և աղերսելով կը թախանձէին, զի գտնէ զհնար իմն այսմ անբժեշկելի ախտիս: Ընտրութենէն մինչև գրեթէ տարի մը Պօղոսին միտքը ինքն իր մէջ կը յուզուէր, և կերպ մը գտնելու կաշխատէր, որ միայն համերաշխ համաձայնութիւն մը կրնար ըլլալ: Վերջապէս գործի ձեռնարկելու որոշումը կու տայ, և 1816 նոյեմբեր 9-ին, լոկ ուղղափառ հայադաւան իշխաններով խորհրդակցութիւն կը կատարէ, և անոնց հաւանութեամբ նոյեմբեր 23-ին միւս կողմէն ալ քանիներ տեսակցութեան կը հրաւիրէ: Եկողներ եղան Գրիգոր Տիւպեան, Մատթէոս Ալլահվերտեան, Անտոն Տավութեան, Յովսէփ Թընկրեան և Պօղոս Աբիկեան (ՊԷՐ.82): Միութեան և համաձայնութեան յորդորական մը կը խօսի պատրիարքը, և իբր միաբանութեան հիմնակէտ կը յիշուին, երեք առաջին տիպերական սուրբ ժողովները, և ազգային աղբիւրներէն Լուսաւորչի Յաճախապատումը, և Շնորհալիի Ընդհանրականը: Համամտութեան արտայայտութիւններ կ'ըլլան երկուստեք, և տեսական խնդիրները առ այժմ յետաձգելով, կը գոհանան շրջաբերական յորդորներ ցրուել գաւառները, զի սիրով և խաղաղութեամբ վարեցին երկու կողմերը իրարու հետ: Միջոցը անտեղի չէր թերևս, բայց պէտք չէ միտքէ վրիպեցնել, որ այս առաջին քայլով հռոմէական որոշ մարմինի մը և նկատառութեան արժանի բաժինի մը դիրքը կը սկսէին ստանալ, որ իրենց նոր ոյժ տալու և յաւանութիւննին աճեցնելու պիտի ծառայէր: Եւ այս եղաւ արդիւնքը, և առաւել ևս աճեցին խռովութեան առիթ (ՊԷՐ.83): Նոր խորհրդակցութեան պէտք վագուէցաւ, զոր Պօղոս կատարեց 1817 մայիս 23-ին, որուն մէջ հռոմէականներ քանի մը օր պայմանաժամ խնդրեցին որոշ ծրագիր մը բերելու: Բայց ուշացուցին, և պատրիարքը նոր գումարումներ կապմեց յունիս 15-ին և յուլիս 11-ին Գուրուչէշմէի բնակարանին մէջ, բայց այս անգամ ալ հռոմէականներ 60 օրուան պայմանաժամ խնդրեցին, սակայն այդ միջոցին մէջ ալ չկրցան որոշ առաջարկ կապմել, զի Աբբայեան և Բօլէճեան ուղղութեանց տարբերութիւնը կը տիրէր, և եկեղեցական դասակարգը արգելքներ կը յարուցանէր:

Երբ այս մասնաւոր բանակցութիւնք սկսան վրոյցներու առիթ տալ, Պօղոս հարկ սեպեց, հոկտեմբեր 16-ին, ուղղափառ եկեղեցականներէ ժողով մը կազմել, յիսունէ աւելի անձանց ներկայութեամբ, և յաջորդ օրը, աշխարհականներու ժողով մըն ալ գումարել, հոկտեմբեր 17-ին, 27 ամիրաներու և բաւական թուով արհեստապետներու ներկայութեամբ, և երկու ժողովներն ալ պատրիարքի ըրածները լսելէն ետք, խնդրեցին ոչ թողուլ ի բաց զօգտակար խաղաղասէր եղանակն (ԱՆՑ. 14): Ասոր վրայ Պօղոս պատրիարք 1817 հոկտեմբեր 23-ին, Խաչի վեցերորդ երեքշաբթի օրը, երկու կողմերու նոր ժողով գումարեց Գուրուշէշմէի պատրիարքական ամարանոցին մէջ:

2357. ԺՈՂՈՎ ԵՒ ԿՈՆԴԱԿ

Այդ մեծահանդէս ատենի ներկայ գտնուեցան երկու կողմերէ տասուերկու քական ամիրաներ, որոնց առջև սրտառուչ ատենաբանութիւն մը ըրաւ Պօղոս, հիմ ունենալով Հայոց եկեղեցւոյ ուղղափառութեան պաշտպանութիւնը, և անկէ բաժնուելէն յառաջ եկած անտեղութիւնները: Իր Խօսքերն ինքն իսկ ամփոփած է, որոնք զգայուն ոճ մը ունին (ԱՆՑ. 15-20): Ներկայք միաձայն հաւանութիւն յայտնեցին, և պատրիարքն իւրաքանչիւր ժողովականը յանուանէ կոչելով, հաւանութեան յայտարարութիւնը ստացաւ, և կաթօլիկամիտներն իսկ Լուսաւորչի և Շնորհալիի դաւանութիւնները բացարձակապէս ընդունեցան: Միայն թէ երբոր յայտարարութիւնն ըստորագրելու հրաւիրուեցան, խուսափեցին ըսելով, թէ իւրաքանչիւրոցս վկայութիւն ի մէջ մեծի ժողովոյս, առաւել քան վկնիք հաստատուն է. և միանգամայն խնդրեցին ճշմարտասէր և գիտնական անձերէ մարմին մը կազմել, որոնք Հայոց ծիսական և դաւանական գիրքերը աչքէ անցնեն: Իսկ իրենց կողմէ անձեր ցուցնելու համար ալ քսան օր պայմանաժամ ուլեցին: Պատրիարքն և ուղղափառ կողմը ամէն պայմաններուն ջիջողութիւն ըրին, և քանի մը օրէն եկեղեցական անձերու գումարում մըն ալ ընելով, քննիչ մարմինին համար անդամակիցներ որոշեցին, և պատրիարքն ալ բոլոր որոշումները պաշտօնապէս հրատարակեց 1817 նոյեմբեր 22-ի կանոնական կոնդակով (ԱՆՑ. 24-28): Այդ կոնդակէն կը քաղենք, թէ պատրիարքարանի ընտրեալներն եղած են, Մարկոս արեպիսկոպոս նուիրակ Երուսաղէմի, Կարապետ արքեպիսկոպոս, որ է Պալաթցին, և Պետրոս վարդապետ, իսկ պատուաւոր քահանաներէն, Մելքոն աթոռակալ Պալաթու, Մեսրոպ վարժապետ Մայրեկեղեցւոյ, և Բարթողիմէոս աթոռակալ Իւսկիւտարի: Իսկ աշխարհականներէն ալ Թագաւոր վարժապետ պատրիարքարանի: Իբր նօտար կամ քարտուղար նշանակուեցան, Զաքարիա քահանայ Ղալաթիոյ, և Գրիգոր ատենադըպիր պատրիարքարանի: Դաւանութեանց աղբիւրներ նշանակուած են. Աստուածաշունչ, Ժամագիրք, Շարական, Խորհրդատետր, Ճաչոց, Մաշտոց, Յաճախապատում և Ընդհանրական: Վիճաբանութեանց կանոնաւորութեան և մեկնութեանց կերպին համար ալ որոշակի պայմաններ գրծուած են, որոնք Պօղոսի գործնական միտքին յայտարար նշաններ են:

2358. ԱՊԱՐԴԻԻՆ ՓԱԿՈՒՄ

Հռոմէականներուն կողմէ յայտնուած վարանոտ և յողոողը ընթացքը հետևանք էր իրենց դիրքին: Միութեան փափաքողներ և հետապնդողներ աշխարհականներ էին, որոնք պաշտօնական ձայն չունէին, որոշման մը գալու, և եկեղեցականներուն պէտք էր դիմէին. անոնք ալ ոչ յօժարամիտ էին և ոչ համամիտ: Այս պատճառաւ հոկտեմբեր 23-ին խնդրած և ստացած քսան օրերու պայմանաժամը, որ նոյեմբեր 13-ին կը լրանար, ապարդիւն անցուցին: Հարկ եղաւ Կարապետ Ազնաւորեան ամիրային ձեռքով ազդարարութիւն յղել, բայց պատասխանուեցաւ թէ կը սիրեն գրաւոր կատարել բանակցութիւնները: Պատրիարքը այդ միջոցին հրատարակեց իր կրօնական կողակը, նոյեմբեր 22 թուականով, և համաձայն կանխաւ հաստատուած որոշման, ինչպէս արդէն յիշեցինք: Կաթօլիկամիտ ամիրաներու ընթացքը հետևանք էր հռոմէական

եկեղեցականներու թելադրութեանց, զոր պատրիարքարանը բացէիբաց մերժեց, վասնպի ոչ միայն ընդունուած պայմաններուն հակառակ էր, այլ և աւելորդ էր, զի պատրիարքարանը գրաւոր աղբիւրներ ցուցուցած էր, և զի անթիւ վիճաբանութեան գիրք մինչև ցայժմ ոչինչ օգնեցին բառնալ վերկպառակութիւն ազգիս (ԱՆՅ.29): Կաթոլիկամիտ ամիրաներ և իրենց համամիտներ նկուն մնացին, իրենց յանձնառութիւնը չկրնար կատարելնուն, և մինչև իսկ Ազնաւորեան սենեակը երթալով գանգատեցան, կամայ ակամայ ամբաստանելով զհամարեալ գիտնոց իւրեանց: Պօղոս պատրիարք ալ հարկ ըզգաց իր ձեռնարկը արդարացնելու համար յատուկ ժողով մը գումարել Մայրեկեղեցին, 1817 դեկտեմբեր 12-ին, ուր հաւաքուեցան եկեղեցականներէ և ամիրաներէ վատ, յիսունէ աւելի արհեստապետներ, և ընդարձակ կերպով անցուդարձերը պատմեց: Բոլոր ներկաներ պատրիարքին վկայեցին, թէ իրաւունս ունի հայր սուրբ, ի լինելն ձեռնարկ յայս առաջարկութիւն, որուն վրայ պատրիարքն ալ յանձնարարեց որ լսածին ամէն կողմ պատմեն: Խօսակցութիւնները տարածուեցան, կաթոլիկամիտներն ալ զգածուցան, և դեկտեմբեր 18ին, երեք հարիւր չափ Լատինաց Ս. Երրորդութիւն եկեղեցին հաւաքուեցան, իրենց եկեղեցականներուն դէմ բողոքելու կամ ստիպելու. բայց Լատիններ զիրենք արտաքսեցին, առանց մտածելու, որ կաթոլիկներու առջև իրենց եկեղեցիները կը բանային երբ չհաշուելով նպատակ կամ: Լատիններ և Լատինամիտներ մինչև իսկ յաւակնեցան ամբաստանութիւններ ընել կառավարութեան առջև, թէ Հայերը իրենց Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ գումարուած են, կաթոլիկներու վրայ յարձակելու: Կառավարութիւնը զինուորական զօրութեամբ Հայոց եկեղեցւոյն վրայ եկաւ, բայց բան մը չգտաւ, որով յայտնի եղև ստութիւն նոցա (ԱՆՅ.30-35):

2359. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆՅԻՑ

Այսպէս փակուեցաւ միաբանական ճիգերու երկրորդ արարուածն ալ, կատարեալ անյաջողութեամբ, ինչպէս փակուած էր առաջին փորձն ալ (2322): Մենք չենք ուզեր անգամ մըն ալ կրկնել, թէ միաբանական ճիգեր իրենց բնութեամբ ձախողութեան մատնուած փորձեր են, և բաւական կը սեպենք ինչ որ անգամ մը այդ մասին գրեցինք ու բացատրեցինք (2323): Միայն այստեղ պարտք կը զգանք քանի մը խօսք աւելցնել Պօղոս պատրիարքի անձին վրայ, որ այս խնդիրին մէջ վարած դերին պատճառով, յոմանց դատաւիտուեցաւ իբրև անիմաստ գործի ձեռնարկող մը, և ուրիշներէն քննադատուեցաւ իբրև յայտնի կաթոլիկամիտ մը: Այդ երկրորդ մեղադրանքէն կարդացնէ զինքը Պատմութիւն անցից տետրակը, որ հրատարակուած է Կ. Պոլսոյ մէջ, Ակնեցի Անդրէաս Վարդապետի ապարանը, 1818 փետրուար 15-ին, որ է ըսել վերջին դեկտեմբերի եղելութիւններէն միայն ամիսուկէս ետքը: Տետրակը թէպէտ իբր անանուն հեղինակութիւն կը ներկայանայ, սակայն յայտնապէս Պօղոսէ չարագրուած գրութիւն մըն է, ինչպէս կը ցուցնեն, Յամենայն քաղաքաց աղաղակք և բողոքք հասանէին առ մեզ, և Այժմ ի պաշտօնէ պատրիարքութեանս իրաւունս ունիմք ի վերայ բոլոր ազգիս (ԱՆՅ. 7) և ուրիշ յաճախ կրկնուած նմանօրինակ բացատրութիւնները: Արդ Պօղոս տետրակին ճակատը դրոշմած է սա խօսքերը. վասն յայտնի կացուցանելոյ զճշմարտութիւն հաւատոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ՝ այնոցիկ, որոց չէին տեղեակ և մեղանչէին, ինչ որ ջերմեռանդ հայադաւանի մը խոստովանութիւնն է: Գրուածին թէ շուտով հրատարակութեան տրուիլը, և թէ պարունակութեան ամբողջութիւնը նոյն անկեղծ յայտարարութիւնները կը հաստատեն, մանաւանդ ուր կը պատմուի վերջին անգամ հռոմէադաւաններուն իրենց խոստումին դրժելը, և գրաւոր վիճաբանութեան խաղը մէջտեղ հանելնին: Իսկ առաջին մեղադրանքին մասին դիտել կու տանք, թէ այն ատեններ կաթոլիկներ վատուած մարմին չէին, և Հայոց պատրիարքարանին ուղիղ հպատակներն էին, և պաշտօնապէս անոր դաւանութեան ներքև կը նկատուէին, և իրենց գործերը, և նոյն իսկ

խորհուրդները նոյն պատրիարքարանին ձեռքով կը կատարուէին: Հետևապէս Պօղոս գլուխն էր հասարակ երկուց կողմանց, և հոգևորական և թագաւորական իշխանութեամբք, պարտաւորեալ էր պօգուտն ընդհանուր ազգիս կամել, և ըստ կարեաց յառաջացուցանել պարին (ԱՆՅ. 7): Երկպառակութիւնները ամենավառ հետևանքներ ունէին, աւելին ալ նախատեսել կու տային: Պատրիարք գտնուողին անհրաժեշտ պարտաւորութիւնն էր ամէն փորձ փորձել, և նոյն իսկ նուազ հաւանականներն ալ պանց չընել, գոնէ խիղճ պարտք մը լրացուցած ըլլալու համար: Այս է մեր համոզումը գործին վրայօք, և մեր տեսութիւնը Պօղոսին նկատմամբ: Ժամանակին ժողովուրդն ալ այնպէս դատած է, յայտնելով պատրիարքին, թէ իրաւունս ունիս, ըստ որում պարտական ես պօգուտն ազգին խնդրել (ԱՆՅ. 33):

2360. ԿԻՐԱԿՈՍ ԵՒ ՈՒԼՆԵՑԻՔ

Միաբանական ջանքերուն կրկին անգամ ձեռք առնուիլը պատմելէն առաջ, յիշենք Կիլիկիոյ Կիրակոս կաթողիկոսին իբրև ապստամբապետ ամբաստանուիլը, որուն առիթ տուին Ջէյթունցիներու խլրտումը, և նորոգուած կաթողիկոսարանին պարիսպով և աշտարակներով պատած ըլլալը (2326): Ջէյթունցիք հին ժամանակներէ ի վեր կէս անկախ դիրք մը կը պահէին Ուլնիոյ անմատչելի լեռներուն վրայ: Ներքին վարչութիւն մը ունէին, և իբրև հարկ որոշ գումար մը կը վճարէին, բայց ստէպ այն ալ վլանալու կը յաւակնէին, և վիճակորական պօրութեան ալ պօրութեամբ կը դիմադրէին: Այդ երևոյթներէն մին նորոգուած էր 1818-ին, և Բերիոյ կուսակալը տեղեկագրած էր արքունիքին, թէ շարժումին գլուխը նոյնինքն կաթողիկոսն է, որ կանուխ ալ իրեն ամուր դղեակ մը կառուցած է: Այսչափը բաւական եղաւ որ Գերմանիկ կառավարիչին հրաման տրուի ճարտար կերպով մը կաթողիկոսը մօտը բերել և սպաննել: Կիրակոս անկասկած թեմերու այցելութեան կը շրջէր, երբ Գերմանիկ հրաւիրուեցաւ և լսեց մահագոյժ հրամանը: Արդարացման բացատրութիւններուն հետ հնչուն փաստեր ալ առատաբար գործածելով, թոյլտուութիւն ստացաւ գործին պարագաները անգամ մը բարձրագոյն դրան հաղորդել, և հրամանին գործադրութիւնը յապաղել: Ինքն ալ փութաց իրողութիւնը պատրիարքին և աւագանւոյն ծանուցանել, և պաշտպանութիւն խնդրել: Պօղոս պատրիարք, Յարութիւն Պէլճեան, և Գրիգոր Տիւլեան՝ որ հօրը յաջորդած էր (2354), իրենց հետ առնելով Գրիգոր Պալեան ճարտարապետ ամիրան, և բոլոր աւագանին, ամէն հնարաւոր միջոցները գործածեցին, մինչև որ հրաման եղաւ Կիրակոսը մայրաքաղաք բերել և այնտեղ գործը քննել, և ըստ այսմ Կ. Պոլիս հասաւ 1809 ապրիլ 11-ին: Անգամ մը որ Կիրակոս կառավարութեան ներկայացաւ, իր համոզիչ բացատրութիւններով և իր պաշտպաններուն օգնութեամբ, շուտով կրցաւ իր անմեղութիւնը հաստատել: Նոր փորձ մըն ալ անցուց Կիրակոս, երբոր իրեն առաջարկուեցաւ արնշխաւոր և փոխանորդ լինիլ Ջէյթուցուոց հարկին վճարման, զոր բացէ բաց մերժեց, ապագային որևէ պատասխանատուութեան ներքև շիյնալու համար, և տէրութեան ընկճել չկրցան լեռնականները, ինքն հնազանդեցնելու միջոց չունենալը յայտարարելով: Վերջապէս ապատօրէն տեղը դառնալու հրովատակը ստացաւ, բայց ազգայինները միջոց մը ևս վինքը մայրաքաղաքին մէջ պահեցին, ուր ներկայ էր միաբանական ժողովին 1829 ապրիլ 2-ին, և յուլիսի վերջերը իր աթոռը մեկնեցաւ (ՊԷՐ.453):

2361. ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՁԸ

Միաբանական ճիգերուն փակումը կժու կերպով մը եղած էր ինչպէս յայտնի է Պօղոսի ալ խօսքերէն (ԱՆՅ.25), և գործերուն ալ վիճակէն: Պառակտումները շատցեր էին և իրարու վրայ մեղադրանքներ կը յաճախէին, և երկու կողմերուն մէջ ալ գժտութիւն ինկած էր: Հայադաւաններու մի մասը՝ միութեան և համերաշխութեան գաղափարը ամէն կերպով կը

պաշտպանէր, մինչ ուրիշ մաս մը՝ անոր մէջ ազգովին կաթողիկանալու վտանգ կը տեսնէր: Հռոմէադաւաններուն մէջ ալ կային փոքր պոհոլութեամբ բաժանումը վերցնել կարծողներ, մինչ ուրիշներ ճշմարիտ հռոմէադաւանութենէ հեռանալու վտանգ կը տեսնէին: Պատրիարքը՝ Կ. Պոլսոյ գլխաւոր ամիրաներու հետ միութեան փափաքողներէն էր, իսկ գաւառացի գլխաւորներ և եկեղեցականներէն շատեր, կասկածով կը վերաբերուէին: Հռոմէադաւաններէն պիջողութեան հակամէտ էր Աբբայեանց կողմը, գլուխ ունենալով Վենետիկոյ Մխիթարեանները, և Տիւլեան և Ալլահվէրտեան և ուրիշ գերդաստաններ: Իսկ բոլորովին հակառակ ուղղութեան կը հետևէր Բօլէճեան կղերը, Փրոփակատայի աշակերտներէն ու Վիէնայի Մխիթարեաններէն կազմուած, և Թընկրեան ու Գըլճեան և ուրիշ գերդաստաննրէ հովանաւորուած: Ներքին հակառակութիւն և լռին թշնամութիւն մը կը սաստկանար այդ կողմնակցութեանց մէջ, որոնք փոխադարձաբար ընդդմադիր կողմը վտանգելու և տապալելու մէջ կը տեսնէին իրենց յաղթանակը: Բահաններու կողմէ պատրիարքին դէմ յուլուած հակակառակութիւնն ալ այդ տեսակէտէն ծագած պէտք է նկատել: Պօղոս, պատրիարքութենէն առաջ, մեղադրած էր հանգուցեալ քահանայից ծուխերուն փոխանցումէ գոյացած գումարը՝ պատրիարքին սեփականերու ձևը, լաւագոյն համարելով նոյն գումարը հանգուցեալ քահանային ժառանգներուն թողուլ, և այս միտքը գիրով ալ յայտնած էր, և այդ գիրն ալ Մարտիրոս քահանայի մը ձեռք անցած էր: Ասոր վրայ քահանաներն ալ Պօղոսի բուռն պաշտպանութիւն ըրած էին պատրիարքական ընտրութեան ատեն: Ճիշդ այդ փոթորկալից տարիներու միջոցին կը վախճանի Պալաթու Գէորգ քահանան, և ծուխերու փոխանցման ատեն Պօղոս գումարը պատրիարքութեան կը սեփականէ ըստ աւանդական սովորութեան: Բահաններ կը սկսին քթամնջել և Պօղոսը իբրև ուխտադրուժ հռչակել, ժողովուրդը գրգռել, և մինչև իսկ կառավարութեան կը դիմեն Պօղոս պատրիարքի և սեղանաւորներու արհեստապետ Կարապետ Ազնաւորեանի դէմ, որ Պօղոսի գլխաւոր պաշտպանն էր: Կայսերական հրամանով քննութիւն կը բացուի, Պօղոսի կողմը կը պօրանայ, պի պաշտօնէն առաջ յայտնուած միտք մը չէր պօրեր հնաւանդ սովորութիւնը և օրինական դարձած իրաւունքը ջնջել: Շփոթներ պայրանալուն՝ քահանաներէն հինգը, Չաքարիա Բերայի, Վրթանէս Գումգարուի, Ստեփան Սամաթիոյ, և Պաղտասար ու Մկրտիչ Պալաթու, աքսորի կը դրկուին, ուրիշներ ալ կրկնամբ կը պատժուին, և թէպէտ աքսորուածներ և պատժուածներ կը ներուին, սակայն սիրտեր չեն հանդարտիր, պի ուրիշ աւելի ընդարձակ դիտումներ կային գործին մէջ:

2362. ՊԷՉՃԵԱՆ ԵՒ ՏԻՒՉԵԱՆՔ

Ուրիշ պարագայ մըն ալ, ոչ նւազ, անտարբեր կու գայ գրգռուած հոգիներուն հակառակութեան նիւթ մատակարարել: Յիշած ենք արդէն թէ Տիւլեան Յովհաննէսի պաւակներէն Գրիգոր և Սարգիս ոսկերչապետութեան և փողապետութեան անցած էին (2352), բայց պէտք էր գիտնալ թէ իրենց վրայ պաշտօնապէս տաճիկ մեծ մըն ալ կը գտնուէր միշտ, իբր վերատեսուչ կամ վերահսկող, որչափ ալ ամէն գործեր քրիստոնեայ վարիչներու ձեռքով կը լրանային: Տիւլեան եղբայրներ, բարեսէր և ուղղամիտ վարիչներ, շատ ընդարձակութիւն թողած էին իրենց երկրորդականներուն, որոնք օգուտ կը քաղէին համարձակ պեղծանիլ և անհաշիւ կերպով գումարներ գանձել, ուսկից տարադէպ անհաւասարակշռութիւն ալ կը ծագէր ակղական վիճակին մէջ: Պէզճեան, որ Տիւլեանց գլխաւոր և վստահելի պաշտօնեայն էր, կը տեսնէր իրաց վիճակը, և պատշաճ կերպով կը պեկուցանէր երկու Տիւլեան պետերուն, որոնք յանկարծ սթափածի պէս կը սկսին շատեր պաշտօնէ հեռացնել, Պէզճեանի ձեռնահասութիւնը ընդարձակել, և գրեթէ բարեկարգիչի դեր մը տալ անոր: Այստեղ յիշենք, որ Տիւլեանք շատ աճեցուցած էին փողերանոցի մէջ իրենց դաւանակից հռոմէականները, որոնք աւելի կը պգային նոր խստութեանց

հետևանքը, մանաւանդ տեսնելով որ հայադաւան մըն էր անոնց շարժիչը և անոնցմէ օգտուողը: Այդ դիտողութիւնը մինչև իսկ վարիչներուն երեսն ի վեր խօսեցաւ պաշտօնեաներու խումբ մը, գլուխ ունենալով Տիւբեանց հօրեղբօրորդին Մկրտիչը, զի Տիւբեանց բոլոր պարագաներն ալ պաշտօններ ունէին: Այդ զգացումը այնչափ առջև, գնաց, որ Պէպճեան խոհեմութիւն սեպեց պաշտօնէն հրաժարիլ և գործէն քաշուիլ, որուն ստիպուեցան համակերպիլ Տիւբեան պետերն ալ, և Պէպճեանի գործերուն և հաշիւներուն կանոնաւորութեան վկայագիրներ տուին, թէ իրենք վարիչները և թէ տաճիկ վերատեսուչ Ապտիւրրահման պէյը, Տիւբեանց ըստ ամենայնի բարեացկամ անձ մը:

2363. ՀԱՎԱՌԱԿՈՒԹԵԱՆՅ ՍԿԻՉԲԸ

Այդ եղելութիւնները ծածուկ չէին կրնար մնալ, զրոյցները ընդարձակուեցան, և Տիւբեանց ուղղութեան հակառակորդներ պատեհ սեպեցին կացութենէն օգտուիլ, անոնք տապալելու, որ անոնց ուղղութեան իրականացումն ալ խափանուի: Ձեռք առին արքունեաց մէջ ազդեցիկ և կայսեր մտերիմ Հալէթ էֆէնտին, յայտնապէս քրիստոնէից թշնամի, և յատկապէս Տիւբեանց դէմ դիպացող անձ մը: Սա առաջ ջանաց պաշտօնէ հեռացնել Ապտիւրրահման պէյը, Տիւբեանց բարեացակամ մը, զայն ուրիշ պաշտօնի անցնել տալով, և տեղը անուանել տուաւ Խայրուլլահ էֆէնտին, իրեն զգացումներուն համաձայն և իրեն հրամաններուն անսացող մը: Սա շուտով զգացնել կու տար իր անուանման նպատակը, երբ պաշտօնապէս ալ հրաման ստացաւ Տիւբեանց հաշիւները քննել, որոնք ապահովաբար բաց մը պիտի պարունակէին, հատկանք անհաշիւ ծախքերու և թոյլ մատակարարութեան և նշանները կը ցուցնէին: Այսպէս պատրաստուեցաւ Տիւբեանց գերդաստանին արկածը, զոր ազգային արկած նկատել չենք վարանիր: Մենք համարձակ յայտարարեցինք, թէ ազգայնոց կիրքն ալ իր մասը ունեցաւ այդ արկածին մէջ, և թէ՛ հայադաւաններու և հռոմէադաւաններու մէջ կային հաւասարապէս միաբանական ջանքերուն դէմ եղողներ, մինչ Տիւբեաններ այդ ջանքերուն ոյժ տուողներն էին: Սակայն բոլորովին ձրի վրայարտութիւն կը գտնենք Պէպճեանն ալ Տիւբեանց թշնամիներուն մէջ դասելը: Հռոմէականի մը գրիչին ներքև պատուական հայուն մուր քսելու փափաքը դիւրաւ կըմբռնենք. սակայն նա իր քսութիւնը հաստատելու յայտնի արարք չի յիշեր, այլ ենթադրական մեկնութիւններով կը գոհանայ: Ուր ընդհակառակն թէ արկածէն, և թէ արկածի ատեն, և թէ արկածէն ետքը միշտ Տիւբեանք և Պէպճեան բարեկամական յարաբերութեանց մէջ մնացին, և որ ևսն է Պէպճեան ալ Տիւբեանց համամիտ, միաբանական ջանքերուն հետամուտ էր, և նոյն ուղղութեան կը հետևէր: Իբր Գապէզը ամբաստանող յիշուած հեղինակն ալ, զգալի և շօշափելի գործ չի պատմեր, այլ պարզապէս միտքերու և մեկնութիւններու շրջանակին մէջ կը թափառի, և Տիւբեանց հետ սերտ յարաբերութիւն ունեցող մը ըլլալը, կուսակցական հոգի ունենալը կը մատնանշէ (90 ԱՄՍ. 278): Ամբաստանողներու ամենէն մեծ փաստը՝ փողերապետութեան յաջորդելն է, և ոմանց հետ ծանօթութիւն ունենալը. սակայն պաշտօնը Տիւբեանց նպաստելու դիտմամբ ընդունած ըլլալը վկայուած, և ծանօթութիւններն ալ գործերու առթիւ ըստացուած են: Այնպէս որ միշտ մոլեռանդ զգացմանց արտայայտութիւնն է, որ կերեւայ, և որ տակաւին մարած չէ Բօլէճեան ուղղութեան հերտուողներուն սիրտէն մանաւանդ կղերականներէն:

2364. ՀԱՇՈՒՈՅ ԲՆՆՈՒԹԻՒՆ

Հրամայուած հաշուական քննութիւնը բացուեցաւ 1819 օգոստոս 29, ուրբաթ օր, թէպէտ հանգիստի օր էր պետական կանոնով: Տոմարներ, արկղներ և սենեակներ կնիքի ներքև առնուեցան, և Գրիգոր ու Սարգիս արգելական պահուեցան փողերանոցին մէջ: Օր մը միայն, հետևեալ շաբաթ օրը, բաւական սեպուեցաւ հաշիւներու քննութիւնը վերջացնելու և

Եկրակացնելու, զի միւս օր, կիրակի, 31 օգոստոս, Միքայէլ Տնօպեան եղբայրնին, և Մկրտիչ Տիւպեան հօրեղբօրորդին, և Յովպաննէս Ալեքսանեան քեռայնին, բռնադատեալ ստորագրեցին անոնց պարտական և զեղծարար լինելուն, միայն Յովսէփ Ազնաւորեան հօրեղբօր փեսանին չպիջաւ ստորագրել, և շղթայակապ բանտարկուեցաւ (ՊԷԶ.34): Երկուշաբթի սեպտեմբեր 1, ամբաստանեալներուն ինչքերն ու ստացուածքները գրաւելու գործողութեան ձեռնարկուեցաւ: Ծովակալ Ապտուլլահ փաշա պաշտօնատարներով և զինուորականներով, Տիւպեաններու և անոնց ազգականներու և գործակալներու և պաշտօնեաներու 24 բնակարանները կնիքի ներքև առաւ, բոլոր բնակիչները դուրս հանեց, այրերը բանտ և կիները պատրիարքարան դրկեց, և տուներուն պահակներ կանգնեցուց (ՊԷԶ.35): Յանկարծական և ամենախիստ շարժումը ահուդողի մատնեց բոլոր ազգը, և շփոթ կացութեան առջև ոչ ոք կրցաւ արկածին առջևն առնելու կերպը մտածել: Կարծողներ կան, որ եթէ բոլոր ամիրաներ միաբանութեամբ Տիւպեանց բացը կամ պարտքը գոցելու երաշխաւոր կանգնէին, աղէտին առջևն կրնային առնել: Աւելորդ ենթադրութիւն մը: Մենք կանխեցինք բացատրել, թէ ինչպէս հակառակութիւն կար ամիրաներու մէջ (2359), որով Տիւպեանց տապալումը անհաճոյ պիտի չըլլար երկու կողմերու կասկածաւորներուն. զի հռոմէականներ հայանալու և հայադաւանները կաթոլիկանալու վտանգէն պիտի ազատէր. թող որ Տիւպեանց խնդիրը զեղծումի կերպարանն ունէր, որ դրամական վճարմամբ չէր գոցուեր. Տիւպեանց համամիտ հռոմէադաւան կողմը ընկճուած էր, իսկ անոնց համակիր հայադաւան ձիւղն ալ վախի մատնուած ու շփոթած էր: Պէզձեանն ինքն ալ երկիւղի մէջ էր, և երբ Գրիգոր Պալեան յանուն կայսեր կու գար փողերապետութիւն առաջարկել, Պէզձեան բացէ բաց կը մերժէր, մինչև որ Պալեանէ թելադրուած, Տիւպեանց օգտակար ըլլալու գաղափարով կը համոզուէր պաշտօնը ստանձնել: Խուլարկութեանց և բանտարկութեանց գործը, որ սեպտեմբեր 1-ին սկսած էր, միւս օրն ալ կը շարունակուէր: Այդ առթիւ ձերբակալման ենթարկուող այրերու ցուցակը քառասուն անուններու կը հասնի, որոնց մէջ են Տիւպեան հինգ եղբայրներ, Գրիգոր, Սարգիս, Կարապետ, Միքայէլ և Պօղոս, և երկու հօրեղբօրորդիներ Մկրտիչ և Յարութիւն, և Ալեքսանեան և Չամիչեան և Թընկրեան և Ազնաւորեան խնամիներ, և Ռափայէլեան Ստեփան վարդապետ, որ պատահմամբ Տիւպեանց տունը գտնուած էր (ՊԷՐ.454): Մնացածները փողերանոցի և կամ Տիւպեանց տունի պաշտօնեաներ էին:

2365. ՏԻՒԶԵԱՆՑ ԱՂԷՏԸ

Կնքուած տուններուն բացուիլը և գրաւուած ինչքերուն աճուրդի դրուիլը՝ նոր պարագայ մը ևս ստեղծեց, որ կառավարութեան աչքին մեծ ծանրակշռութիւն ստացաւ: Ընտանեկան կարասիներուն շարքին՝ մէջտեղ ելան եկեղեցական սպասներ ու վարդեր, և առտնին եկեղեցիներ, որոնք հաստատուած էին կաթոլիկութեան պետ ձանչցուած՝ պապական պատուիրակ Վինկենտիոս Բօրէչի եպիսկոպոսին արտօնութեամբ, մինչ կառավարութիւնը իրեն սեփականած էր եկեղեցիներու արտօնութիւն տալ: Կառավարութիւնն այդ կէտը՝ իբրև օրէնքի դէմ ապստամբութիւն նկատեց, միանգամայն իրմէ ձանչցուած ազգային պատրիարքին հպատակութենէն հետեւելով՝ օտար պետի հնազանդութեան անցնելու յաւակնութիւն, ինչ որ քրէական յանցանք կը համարուէր: Հարկաւ այդ պարագայն ծանրացուց Տիւպեաններու վրայ տիրող կասկածը, և ոյժ տուաւ անոնց դէմ կազմուած ամբաստանութեան, և պատճառ եղաւ որ Գրիգոր և Սարգիս իրենց արգելարանէն պատժապարտներու բանտը փոխադրուին սեպտեմբեր 17-ին, ուր հետզհետէ ուրիշներ ալ բերուեցան անոնց եղբայրներէն և գործին մէջ դեր ունեցող կարծուածներէն (ՊԷԶ.37): Ոչ մի պատմողի մօտ չենք գտներ, որ ամբաստանեալներու մասին ձևակերպութիւն կատարուած ըլլան, և չենք գիտեր թէ դատավորութեան պակասութեա՞ն, թէ ոչ պատմողներու մոռացութեան պիտի

վերագրենք այդ լուսինը: Միև կողմէն յայտնի է, որ առջի ժամանակներու մէջ անսովոր չէր, ծանր ամբաստանութեան կամ վստահելի վկայութեան կամ առ ձեռն քննութեան մը վրայ, անմիջապէս անձին մահապարտութեան և ինչքին գրաւման վճիռը տալ: Միևնոյն այդ ձևը գործադրուած կ'երևի Տիւբեանց մասին ալ, զի առաջին բանտարկութենէն հապիւ ամիս մը ետքը, մահապարտութեան վճիռը կը տրուէր, որուն մէջ կաթոլիկութեան կէտն ալ կը յիշուէր և իսկույն կը գործադրուէր: Տիւբեանց նոր կենսագիրը կըսէ, թէ թագաւորին տանելու պատրուակաւ բանտէ հանուած ըլլան, բայց մենք հաւանական չենք գտնէր, որ այդ վճիռը տուող միապետը հարկ ունեցած ըլլայ իր վճիռը ծածկելու համար պատրուակ ստեղծել: Գրիգոր և Սարգիս գլխատուեցան բարձրագոյն

դրան առջև, Միքայէլ և Մկրտիչ

կախուեցան Եէնիքէօյի ծովեպերեայ ապարանքներնուն պատուհանէն: Օրն էր շաբաթ, եօթանասուն և երկու աշակերտաց տօն, 1819 հոկտեմբեր 4: Պէպճեանը ամբաստանելու մարմաջ ունեցողը պէտք չէր մոռացութեան տար, որ ողբալի աղէտին գործագրութեան օրը, Փրոփականտայի և Վիէննայի եկեղեցականներուն հետևողներէն և Տիւբեանց հակառակորդներէն, Տավութեան և Թընկըրեան և Գըլճեան մեծամեծներ, ուրախութեան խնջոյք կը կազմէին Գանտիլի գիւղը, Եէնիքէօյի քստմնելի տեսաբանին հանդէպ. մինչ Պէպճեան բարեգործ և արդար Արեմաթացւոյն դերը կը ստանձնէր, և մահապարտներուն պատուաւոր թաղում տալու արտօնութիւնը ձեռք կը ձգէր, և հոկտեմբեր 6-ին Գուրուշէշմէի ընտանեկան գերեզմաննոցին մէջ կը հանգչեցնէր (63 ԺՄՆ. 49): Երբոր կանուխ բանտարկուածներէն չորսերը դառնապէտ մահուան կը հանդիպէին, միևներու մասին որոշում չէր լսուեր, և իրենց բանտին մէջ կը մնային, որով իրենց համար միջնորդութեան ժամանակ կը մնար:

2366. ՀԱՄԵՐԱՇՆԱԿԱՆ ԶԱՅԼԵՐ

Տուներուն մէջ գտնուած եկեղեցական սպասներուն խնդիրը՝ երթալով վայրացաւ կառավարական շրջանակներուն մէջ, որոնց ծանր կերևար, որ Հայոց մի մասը ոչ թէ լոկ դաւանութեամբ, այլ և հպատակութեամբ անձնատուր կըլլային օտարին, և պետական իշխանութենէ ձանձցուած պատրիարքարանին կը հետևէին, և օտարապահին իբր իրենց պետը կընդունէին: Այս կացութեան առջևն առնելու համար սաստիկ հրաման եկաւ պատրիարքին, որ ամէն միջոց գործածէ հետեալները պատրիարքարանի հնապանդութեան դարձնելու, և անսաստողները կառավարութեան իմացնելու : Պօղոս պատրիարքի անշուշտ հաճելի էր պառակտումները դադրեցնել, բայց գործին դժուարութիւններն ալ կը տեսնար, ուստի տեսակ մը վերապահումով կը դադաղէր, իրեն համամիտ ունենալով Կարապետ Ալնաւորեանը: Բայց միև կողմէն հայոց մեծամեծներ եռանդեամբ կը հետևէին գործին, և Վենետկոյ միաբաններէն ստացած տեղեկութիւններուն վստահելով, յաջողութեան ալ լիայոյս էին: Այդ միտքին գլխաւոր դերակատարներն էին, Գրիգոր Պալեան, Ճանիկ Փափապեան, Յովհաննէս Երկանեան, Յարութիւն Նորատունկեան և Յակոբ Մանանեան ամիրաները. իրենց հետ էր նաև Յարութիւն Պէպճեան, և ամէնքը միասին ապու ճնշումներ ըրին Կարապետ Ալնաւորեանի վրայ, և անոր ձեռքով Պօղոս պատրիարքի վրայ, որպէսզի գործնական ձեռնարկներ անցընեն: Իրօք ալ երկու կողմէն մտերմական բանակցութիւններ սկսան 1819 տարւոյ վերջին ամիսներու մէջ: Հռոմէադաւաններուն կողմէ առջև անցնողներ Վենետկեան միաբաններն էին, որոնցմէ քսանի չափ Կ. Պոլիս կը գտնուէին (ՊԷՐ.106), և աշխարհականներէն իրենց հետ ունէին Մանուկ և Մատթէոս Ալլահվէրտեաններէ առաջնորդուած խմբակ մը, քանի որ Տիւբեանք այլ ևս չկային: Սակայն հռոմէականաց մեծամասնութիւնը, և կղերականներէ աւելի մեծամասնութիւնը, և

կղերականներէ աւելի շատեր ասոնց հետ չէին: Վենետկեանք սովորաբար Աբբայեան անունով կը յիշուէին, իբր Մխիթար Աբբայի աշակերտներ. իսկ միւս կողմը Քուէճեան կը կոչուէր, զի գլխաւորները Փրոփականտայի քօլէճին կամ դպրանոցին աշակերտութենէն էին, և իրենց հետ ունէին Վիէննայի Մըխիթարեանները խմբովին և Անտոնեաններէն ալ քանիներ: Աբբայեան և Քօլէճեան յորջորջումները աւելի յաճախ տաճկերէնի վերջաւորութեամբ Աբբալը և Քօլէճլի կը հնչուէին, և կամաւոր աղաւաղութեամբ Ապալը և Քըլըճլը կ'ըսուէին, որ բառացի թարգմանութեամբ քրձապգեաց և սուսերաւոր կը նշանակէ:

2367. ՀԵՏԱՊՆԴՈՂ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Մտերմական բանակցութիւնները բաւական քաջալերեցին Աբբայեանները, որոնց գլխաւորներէն հայր Մեսրոպ Աղաչրաղեան 1820 յունուար 1-ին Եօնուպեան Յովհաննէսի միջնորդութեամբ պաշտօնական տեսակցութիւն խնդրեց հայոց գլխաւորներէն: Պէլճեան և Պալեան և Ազնաւորեան անձամբ գտցին Եօնուպեան տունը, և առաջարկեցին որ Աբբայեան և Քօլէճեան եկեղեցականներ հայ եկեղեցւոյ պաշտօնական գիրքերուն մասին կարծիքնին յայտնեն և թիւրիմացութիւններ վերցուին: Աբբայեան կողմը սիրով զրկեց առաջարկը, բայց ուրեք պապական նուիրակին և գաղղիական դեսպանին արտօնութեամբն ալ զօրանալ: Դիմեց և ստացաւ, յուսադրելով, թէ քանի որ առաջարկը միւս կողմէն կու գայ, չփախչելով և մօտենալով կրնան հռոմէականութեան օգտակար ըլլայ: Ասոր վրայ Քօլէճեան կողմի եկեղեցականներէն ալ ոմանք բանակցութեանց մասնակցելու հաւանեցան: Երբոր ընդհանուր համամտութեամբ գործին պիտի ձեռնարկուէր, հռոմէականաց մոլեռանդները պատրուակներ գտան պապական նուիրակին գաղղիական դեսպանին միտքերը փոխել, և տրուած հաւանութիւնը ետ առնել տալ: Սակայն Աբբայեանք, նկատել տուին, թէ արգելք վերջին վայրկեանին փառքուս զրպարտութեանց զօրութեամբ տրուած որոշում մըն էր, և որոշեցին ետ չկենալ, մանաւանդ որ հայոց մեծամեծներ հաղորդած էին պատրիարքին տրուած խիստ հրամանին պարունակութիւնը (2364): Յունուար 19-ին Աբբայեանց կողմէն, Մեսրոպ Աղաչբապեան, Թովմաս Մաքսէթեան, և Սերոբէ Ճէվահիրճեան վարդապետները, Եօնուպեանի տունը ներկայացան, և 23-ին վերջնական ձևի մը յանգլու որոշումը տուին: Տակաւին կապրէր ծերունին Չամչեան Միքայէլ վարդապետ, որուն գործունէութիւնը ներկայացուցած ենք իր կարգին (2163-2168): Բայց այլ ևս տկարացած և ի մահիճս ցաւագնել էր, այսու հանդերձ իր հին գաղափարին իրականացումը մօտեցած կարծելով, խնդագին քաջալերական մը կը գրէր իր միաբանակիցներուն յունուար 18 թուականով, թէ միով հոգևով զօրացեալք ի կատարումն առաջիկայ գործոյդ փութացէք (ՍԱԻ. 1141): Նշանակեալ օրը Եօնուպեանի տունը աւելի բազմութեամբ գտնուեցան, զի վերոյիշեալ երեքներէն զատ եկեր էին նաև Քերովբէ Ազնաւորեան, Գրիգոր Գապարաճեան և Թադէոս Ասկէրեան վարդապետներ վենետիկեաններէն. Պօղոս Բժշկեան և Սահակ Կարնեցի և Պետրոս վարդապետներ ուրիշ աշակերտութենէ, և Ստեփանոս եպիսկոպոս Աւգերեան: Երկուստեք հաւանութիւն յայտնուեցաւ որ երեքական անձեր նշանակուին իբր քննիչ, և ընտրուեցան, պատրիարքարանի կողմէն Մեսրոպ Գումբաբուի և Բարթողիմէոս Իւսկիւտարի քահանաներ և Թագւոր պատրիարքարանի վարժապետ. իսկ հռոմէականներէն Ազաչրապեան և Մաքսէթեան և Ճէվահիրճեան վարդապետներ: Յանձնախումբին նախագահ նշանակուեցաւ Ստեփան եպիսկոպոս Աւգերեան, երբեմն լատին նուիրակին օգնական, որ զիջաւ ընկերանալ պատրիարքի բացարձակ հրամանին վրայ, և իր դերն եղաւ բանակցութեանց կարգապահութեան հսկել, և երբեմն ալ հակառակ կարծիքները համաձայնեցնելու համար ձևեր և բացատրութիւններ թելադրել (ՊԷՐ.119): Յունուարի վերջերը սկսուած բանակցութիւնները մինչև ապրիլի սկիզբը շարունակեց (01. ՕՐԱ.183):

2368. ԲԱՆԻ ՄԸ ԴԷՊՔԵՐ

Բանակցութեանց նիւթ եղող խնդիրներուն չանցած, յիշենք քանի մը մասնաւոր դէպքեր, որ գործին ընթացքին լոյս կը սփռեն: Տիւլեան վեց եղբայրներէն Յակոբ Կ. Պոլիս բացակայ էր երբ եղբայրները բանտարկուեցան, և Բիոս կամ Սաքըզ կղզին կը գտնուէր, բայց ուր ըլլալը յայտնուելով Կ. Պոլիս բերուեցաւ 1819 հոկտեմբեր 12-ին, աղետալի օրէն ութն օր ետքը, և միւսներուն հետ բանտարկուեցաւ (ՊԷՐ. 455): Յունուար 1-ին պատրիարքարան յանձնուեցան Տիւլեանց և անոնց պարագայից տուները գտնուած եկեղեցական ըսպասները և վարդերը, փոխանակ հապար քսակ գումարի, որ հռոմէականներէն պահանջուեցաւ (ՊԷՐ. 456): Տիւլեանց խնդիրով ձերբակալեալներ շարունակեցին բանտի մէջ մնալ, բայց ամիսներ անցնելով և ոմանց դատապարտուելովը խնդիրն իր սաստկութիւնը կորսնցուց: Պատրիարք և մեծամեծներ, որոնք հռոմէականներու հետ բարեկամական յարաբերութիւններ կը մշակէին, քաջալերուեցան անոնց ապատութեան համար միջնորդել. Պէլճեան արքունեաց ազդեցիկները ձեռք առաւ և յաջողեցաւ անոնց կեանքին շնորհն ստանալ: Ասոր վրայ բոլոր բանտարկեալներ պատրիարքարան յանձնուեցան, պայմանով որ Տիւլեան եղբայրներ Կարապետ և Յակոբ և Պօղոս հօրեղբօրորդիինն Յարութիւն, և Ալեքսանեան ու Թընկըրեան ու Չամիչեան ու Ազնաւորեան խնամիներ Կ. Պոլիսէ հեռացուին, և մնացեալներ՝ այրեր ու կիներ ապատ թողուին: Աքսորուելիքներ պատրիարքի կարգադրութեամբ յարմարագոյն տեղեր զրկուեցան, Փոքր Ասիա կամ կղզիներ, իսկ երեք եղբայրներ Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը յղուեցան առաջնորդ Ստեփան վարդապետի յատուկ խնամոց ներքև: Ասոնց աքսորը նշանակուած է 1820 մարտ 1-ին (03 ժՄՆ. 50): Ասկէ առաջ հրաման եկած էր որ Տիւլեանց տուները յաճախող վեց եկեղեցականները աքսորուին: Ասոնք Վենետկոյ միաբաններէն պիտի ըլլային անշուշտ, բայց անուններ տրուած չէին ուստի պատրիարք և Պէլճեան օգուտ քաղեցին որևէ կերպով ու չափով Տիւլեանց հետ յարաբերութիւն ունեցող ուրիշ հինգ եկեղեցականներու վրայ գործադրել հրամանը, որոնց կամովին ընկերացաւ վենետիկեաններէն Դաւիթ վարդապետը: Այս վեցերուն աքսորը եղած էր յունուար 13-ին (ՊԷՐ. 456):

2369. ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՈՒՄԸ

Այդ ոչ ուրախալի դէպքերը ընդմիջուեցան Մայրեկեղեցոյ օծման հանդէսներով, որոնք տեղի ունեցան վերջերս կատարուած նորոգութեանց պատճառով, որոնց գլուխը կանգնած էր Պէլճեան, ուրիշ մեծամեծներու մասնակցութեամբ: Օծման կարգը, 1820 փետրուար 25 չորեքշաբթի օրուան առաջին գիշերէն սկսելով, մինչև յաջորդ փետրուար 26 հինգշաբթի էսօրը տեւած է (ՊԷՐ.458): Արարողութիւնը չորս անձերու վրայ բաժանուած է, անշուշտ յօգնութիւնն ալ բաժանելու համար: Պօղոս պատրիարք միջին տաճարը օծած է, Կիրակոս կաթողիկոս Ս. Որդւոց Որոտման հարաւային եկեղեցին, Աստուածատուր եպիսկոպոս Ս. Խաչի հիւսիսային եկեղեցին, և Դիոնեսիոս եպիսկոպոս միջին տաճարին գաւիթը: Արարողութեան երկար տևողութիւնը կը ցուցնէ, թէ չորս օծումները իրարու ետև կատարուած են, ամբողջութիւնը միևնոյն օրը լրացնելու համար:

2370. ԲՆՆՈՒԱԾ ԿԷՏԵՐ

Միաբանական բանակցութիւնները թողուցինք յանձնախումբի քննութեան առջև (2365): Բայց մինչ անոնք բառերու և բացատրութիւններու տարբերութիւններով կը վբաղէին (ՊԷՐ.119), Պօղոս պատրիարք աւելի կարճ ճամբով լուծման հասնիլ կաշխատէր. պետական ստիպումը առջև կը դնէր, և խնդիրները գործնական ձևի կը վերածէր: Յայտարարութիւն մը պատրաստած էր, ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ մերմէ սկսեալ մինչև ցարդ հայատանեայց ուղղափառ սուրբ եկեղեցոյ ընդունածը ընդունելու և մերժածը մերժելու, որ հռոմէականներէն շատերուն խիստ

երևցաւ: Այն ատեն աւելի ևս դիւրութիւն ընծայելու համար, գոհացաւ նիկիական հանգանակին վրայ ստորագրութիւն պահանջել, որուն ամենեքեան հաւանեցան (ՊԷՐ.116): Ասով Պօղոս փաստ պիտի ունենար կառավարութիւնը վստահեցնելու թէ պառակտումը վերջացած է: Բայց միւս կողմէն յանձնախումբը կը շարունակէր վիճել, զի հռոմէականներ կը պահանջէին որ Հայերը անպայման ընդունին սա հինգ կէտերը. 1. երկու բնութեան բանաձևը. 2. և յորդոր բղխումը. 3. Քաւարանի դրութիւնը. 4. պապական սկզբունքը. և 5. վերջին Օծումը (ՊԷՐ.119): Նիստերը ընդհանրապէս իրիկունները կը սկսէին, և մինչև գիշեր կը շարունակուէին: Գումարմանց տեղն էր Եէնիպարու թաղը, Պալեանի և Պէպճեանի տունները փոփոխակի (ՊԷՁ.45): Թէպէտ յանձնախումբը եօթը անձերէ բաղկացած էր (2365), բայց ստէպ ուրիշներ ալ կը մասնակցէին, երկու կողմերէն հաւասարապէս: Մէկ կողմէն լուծման մը յանգելու անկաշկանդ փափաքը, միւս կողմէն անօրինական խորհուրդներու մասին երկդիմի բացատրութիւնները, յաջողեցան վերջապէս երկու կողմերը իրարու մօտեցնել, բայց ոչ թէ յստակ և որոշ և ճշդուած բանաձևի մը վրայ, այլ Շարականներէն և Յաճախապատումէն քաղուած վկայութիւններու այնպիսի մեկնութիւններ տալով, որ երկու կողմերն ալ անոնց ներքև ուզած իմաստնին գտած կարծեն: Այդ միտքերը յատուկ դրութեամբ մըն ալ պարզուեցան, և Յանձնախումբի անդամներէն և անոնց խորհրդակիցներէն ստորագրուեցան, և պատրիարքին ներկայացուեցան: Այդ գրութեան պատճէնը ունինք, բայց թուական չունի, և թէպէտ ապրիլի սկիզբները ըսուած է, (Օ1. ՕՐԱ. 183), և սակայն աւագ չորեքշաբթի օրը յիշուելէն (ՊԷՁ.45) և 1820 ին վատիկը մարտ 28-ին հանդիպելէն, պէտք կը զգանք մարտ 24 չորեքշաբթին թուական ընդունիլ: Գրուածին ներքև ՌՄԿԹ=1820 մարտ 8 թուական կը տեսնենք (ՀՐԱ.51), որ կամ եւրակացութեանց յանգած ըլլալ նուն թուականն է, և կամ նոյն իսկ 1820 մարտ 28-ին վատիկ օրուան շփոթուած թուականն է: Իսկ գրուածին վերլուծումը տալ աւելորդ կը գտնենք, զի ինչպէս ըսինք, պարզապէս վերոյիշեալ հինգ կէտերուն շուրջը ինչ ինչ վկայութիւններ յառաջ բերուած են, և երկու կողմերուն լսելիքը չխայթող մեկնութիւններ տրուած են:

2371. ԺՈՂՈՎՈՎ ՈՐՈՇՈՒՄ

Միւս առաւօտուն որ կըլլայ աւագ հինգշաբթի 25 մարտ, ստորագրուած գրութիւնը պատրիարքին ներկայացուեցաւ, որ ընդիմութիւն չցուցուց, բայց հռոմէականներ անմիջապէս նոր առաջարկներ աւելցուցած էին, խնդրելով որ, 1. Քաղկեդոնի և Լևոնի դէմ նպովքներ վերցուին, 2. Յովհաննէս Որոտնեցի և Գրիգոր ու Մովսէս Տաթևացիներ չյիշուին, և 3. Բոլոր ուղղափառական, իմա հռոմէական ժողովները ընդունուին: Պօղոս այս յաւելուածներուն դէմ դրաւ, շատ համոզիչ պատճառներով, բայց միաբանական եռանդով վառուած ամիրաներ ամէն ստիպում գործածեցին պատրիարքին վրայ, որ մինչև իսկ աթոռէն հրաժարելու առաջարկը մէջտեղ դնելու հասաւ: Տիւպեանց աղէտին առթիւ յիշեցինք արքունեաց մէջ ամենակարող դարձած Հալէթ Էֆէնտին (2361), որ Բարիդի մէջ Օսմանեան դեսպանութիւն վարած ատեն, իբր գաղղիերէնի ուսուցիչ իրեն մօտ ունեցած էր Աղաչբաղեան Մեսրոպ վարդապետը: Սա առաջնակարգ գիրք ուներ Վենետիկեանց մէջ, և գլխաւոր դեր կը վարէր միաբանական ձգտումներու մէջ, ուստի Հալէթի կը դիմէ, այնպէս իմն կը ցուցնէ, թէ միութեան գործը պատրաստուած և կրոնական խնդիրը պարզուած է, միայն թէ պատրիարքը դժկամակութիւն կը ցուցնէ երկրորդական և աննշան խնդիրներ հանելով, և թէ արքունական հրաման մը կրնայ ամէն դժուարութիւն հեռացնել: Հալէթ կը համոզուի, իսկոյն արքունի հրովարտակ հանել կու տայ, անդառնալի հրամանաւ, որ պատրիարքին կը հաղորդուի յաւուր մեծի չորեքշաբթի սուրբ վատկին, որ է վատկին չորրորդ օրը, մարտ 31-ին : Երկու օր ետքը (ՊԷՁ. 45), որ է ուրբաթ (ՊԷՐ. 129), ապրիլ 2, մեծ ժողով մը կը

գումարուի մայր եկեղեցւոյ մէջ, բարձրաստիճան ու նշանաւոր եկեղեցականներու, վարդապետներու ու քահանաներու, և գլխաւոր ամիրաներու, եկեղեցեաց հոգաբարձուներու և գանձապետներու, արհեստապետներու և ուսումնական աշխարհականներու ներկայութեամբ: Ժողովի մէջ էին նաև Կիլիկիոյ Կիրակոս կաթողիկոսը, Էջմիածնի նուիրակը և Երոուսաղէմի փոխանորդը: Մէջտեղ գրուեցան յանձնախումբէ պատրաստուած դաւանական յայտարարութիւնը, վերջին երեք առաջարկները, միութիւնը պարտադրող հրովարտակը, և վերջին առաջարկները պատճառանք չընելու նոր հրամանը: Պետական ստիպումները և միութեան բուռն փափաքները իրենց ազդեցութիւնը գործեցին, ժողովականք միաձայնութեամբ ստորագրեցին դաւանական յայտարարութիւնը յաւելուածական յօգուածներով առանց դիտողութեան, գործը ըստ ամենայնի լրացած կարծելով: Պօղոս պատրիարք հապիւ թէ բուռն ընթացքը չափաւորեց վեղչելով Լևոնն ու Քաղկեդոնը ընդունելու խօսքը, և գոհանալով միայն 1. Շարականին մէջ և ձեռնադրութեան կոչումին լռել Լևոնին և Քաղկեդոնի նպովքը: 2. Պատարագին մէջ չյիշել Որոտնեցիի և Տաթևացիներու անունները: 3. Ընդունիլ ամէն դաւանութիւն որ համաձայն ըլլայ առաջին երեք սուրբ ժողովներուն. 4. Ընդունիլ սուրբ եկեղեցւոյս մերոյ վարդապետութիւնները Լուսաւորչին և Շնորհալիին բացատրութեանց համեմատ (ՊԷՐ. 129-130), որով պիտի իմացուէր յանձնախումբին գրութիւնը, որուն այս առթիւ հրաւէր Սիրոյ անունը տրուեցաւ:

2372. ՎԵՂԱՐ ԱՌՆՈՂՆԵՐ

Միաբանական որոշումը արտաքին ցոյցով մըն ալ պէտք էր նուիրագործուէր, և այս պիտի ըլլար հոռոմէական վարդապետներուն Հայոց եկեղեցին գալը և պատրիարքին հպատակութիւն յայտնելը: Վենետիկեան միաբաններու խմբակը որ մինչև այն ատեն ամենէն եռանդուն կերևար, իրեն նպատակին հասած սեպելով, արտաքին ցոյցէն հրաժարեցաւ, պատճառելով թէ գործը իրենցմով չի վերջաներ, և թէ իրենք միայն քանի մը վարդապետներ են, մինչև հոռոմէականք 7000 տուն ժողովուրդ են 60 եկեղեցականներով: Այս անգամ պատրիարքարան և աւագանին իրենց դէմ գործածեցին այն վէնքը զոր իրենք պատրիարքին դէմ գործածած էին, և նոյն ինքն Հալէթ Էֆէնտին ձեռքով գիրենք ստիպեցին պատրիարքին ներկայանալ և հայ եկեղեցին երթալ: Պարտաւորուեցան համակերպիլ, և օր որոշուեցաւ պատկի երրորդ կիրակին (ՊԷՐ. 131), որ է արխարհամարտն տօնին օրը, (ՊԷՁ.46), ապրիլ 11 ին (ՊԷՐ. 439) և ոչ 18-ին (ՊԷՐ.131. ՊԷՁ.46,01 ՕՐԱ. 183): Անցողաբար յիշենք, որ ամսաթիւերը վանապան տեղեր տարբեր կերպով գրուած ըլլալուն, պատաւորուեցանք ճշդել տոմարական հաշուով: Նշանակեալ առտուն Գումբարուի պատրիարքարանը եկան Վենետիկեան միաբաններէն, Մեսրոպ, Թովմաս, Թադէոս, Գրիգոր և Սերովբէ, և տեղական աշակերտութենէ Սահակ և Պօղոս վարդապետներ: Վենետիկեաններէն հայր Քերովբէ, որ ութերորդ պիտի ըլլար, օր առաջ Վենետիկ մեկներ էր: Պատրիարքարանի մէջ հայ վարդապետի տարապն առին վեղարով և փիլոնով, և հարցը երգուած միջոցին իջան մայր եկեղեցւոյ հարակողմեան Ս. Որդւոց Որոտման եկեղեցին, ուր հանդեսը պատրաստուած էր: Իրենց կառաջնորդէին Յակոբ վարդապետ Աղշէհիրցի պատրիարքական փոխանորդ, Գումբարուի Մեսրոպ քահանայ յանձնախումբի անդամներէն, և Պալեան և Ավնաւորեան ամիրաներ: Ըստ սովորութեան պատրիարքին ներկայացան, որ գաւապան ի ձեռին աթոռին վրայ կը գտնուէր, կանոնական յարգանքը մատուցին, և դասին մէջ կանգնեցան: Եկեղեցին լեցուն էր երկու կողմերու գլխաւորներով և ժողովրդական բազմութեամբ: Պատրիարքը պատշաճ ատենաբանութեամբ, շնորհաւորեց և խնդակցեցաւ, և նոյն օր իր երկու սարկաւագներուն քահանայական ձեռնադրութիւն տուաւ, կոչումի մէջ Քաղկեդոնի և Լևոնի նպովքները վեղչելով: Աղաչրաղեան Մեսրոպ պատարագի աւետարանը կարդաց և հանգանակը արտասանեց առանց յաւելուածի,

յիշատակութեանց կարգին Որոտնեցին և Տաթևացիներ պանց եղան, և պատարագին վերջը, ամէնքը հանդէսով պատրիարքական ելան, ուր պատրիարքը նորէն հաշտութեան վրայ բացատրութիւններ տըլաւ, թիւրիմացութեամբ գժտեալ եղբայրներու պիրար հասկնալով հաշտուելնուն առակովը: Թէպէտ Պօղոս կուպէր վերադարձողները ինքն հիւրասիրել, բայց ամիրաները չթողուցին, և նոյն երեկոյէն ամէնքը մէյմէկ տուն տարուեցան և պատուասիրուեցան: Յաջորդ կիրակիներու մէջ Կ. Պոլսոյ պանապան եկեղեցիներ պատարագեցին և քարուեցին: Որովհետև ժողովրդի մէջ չշնչիւններ սկսեր էին, պէտք եղաւ որ ջատագովական հրատարակութիւններ ալ տարածուին, ինչպէս ըրին հռոմէադաւաններէն հայր Թովմաս Մաքսէթեան մայիս 3-ին (ՊԷՐ. 137-142), և հայր Սերովբէ Ճէվահիրճեան մայիս 7-ին (ՊԷՐ. 143-148): Իսկ մայիս 17-ին Հոգեգալստեան երկուշաբթին Հրաւէր Սիրոյ յայտարարութիւնը պատշաճ տեղեկութիւններով տպագրուած (ՀՐԱ. 19-63) ժողովրդին մէջ ցրուիլ սկսաւ (ՕԼ. ՕՐԱ.183): Վերջապէս իբր գործին լրումն Պօղոս պատրիարք վերջին օծման իւղը օրհնեց, և քանի մը եկեղեցիներ վրկեց, որ ուպողներուն մատակարարուի (ՊԷՐ. 161), հարկաւ հռոմէականութենէ եկողները շահելու համար: Օրհնութեան օր յուլիս 12 նշանակուած է (ՊԷՐ. 459), որ գուցէ յուլիս 11 պէտք է կարդացուի, Թաղէոսի և Սանդիստոյ կիրակին, զի 12 երկուշաբթի լուր օր մըն է:

2373. ՕՐԻՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏ

Եղելութիւնները պատմեցինք մանրամասն պարագաներով, որպէսպի ճիշդ գնդափար մը տուած ըլլանք, իր էութեան մէջ կարևորութիւն ունեցող գործի մը վրայ, իւր էութեան մէջ կարևոր ըսինք, զի գործադրութեան մէջ պարտ ու պատշաճ կարևորութիւն տրուած չենք գտներ: Համերաշխութիւն գոյացնելու միակ ճամբան երկկողմանի պիջողութիւնն է, բայց պիջողութեան վաւերականութիւնը իշխանութեան և ձեռնահասութեան վրայ կը հիմնուի: Երկու կողմերն ալ պիջողութիւններ կընէին, բայց ընողներ չունէին պէտք եղած ձեռնահասութիւնը: Հայադաւաններ վերջին օծումին իւղը կընդունէին, և գործածական նպովքներ և յիշատակելի անուններ կը լռեցնէին: Հռոմէադաւաններ ալ պարզապէս մեկնութիւններու վրայ հիմնուելով ինչ ինչ բացատրութիւններէ և բանաձևներէ կը հրաժարէին, ինչպէս են, երկու բնութիւն, քաւարան, առանձնական դատաստան և յՈրդւոյ, ևայլն: Բայց այդ պիջողութիւն ընողներ քանի մը վարդապետներ և քանի մը ամիրաններ էին, և հռոմէականութեան ձեռնհաս ներկայացուցիչներ չէին, զի հռոմէականք առանց իրենց պապին բան մը վաւերական չեն ընդունիր: Հայոց կողմէն ալ Կ. Պոլսոյ պատրիարքը և Կիլիկիոյ կաթողիկոսը, համամիտներու խմբակով մը, Հայոց եկեղեցւոյն ոչ ներկայացուցիչները և ոչ ձեռնհաս պետերն էին, և երկու կողմերն ալ պահանջուած հեղինակութիւնը չունէին, և ոչ ալ կրնային ունենալ, ինչպէս անդամ մըն ալ բացատրեցինք (2323): Չենք կարծեր որ Պօղոս պատրիարք այդ չափը չգիտացող կամ չմտածող մէկն եղած ըլլայ, բայց եթէ գիտնալով մէկտեղ գործին մասնակցեցաւ, մանաւանդ թէ գլուխ ալ կանգնեցաւ, պիտի ըսենք, թէ մէկ կողմէն հոսանքէն տարուած, և միւս կողմէն յուսացած ըլլայ, առաջին անկատար քայլը հետզհետէ կատարելագործել, մինչև որ ամէն օրինակութիւններ լրանան: Այս միտքն ունենալուն նշան կը սեպենք եղածին պատմութիւնը և կապմուտ յայտարարութիւնները պերտ ու պատշաճ ստորագրութիւններով, և պատրիարքական փոխանորդ Ագշէհիրցի կամ Լիւստրացի Յակոբոս վարդապետին ձեռօք Եփրեմ կաթողիկոսին վրկելը, և հայրապետական հաստատութեան ենթարկելը: Յիշատակներու մէջ չենք գտներ, թէ Էջմիածնի մէջ ինչ ընդունելութիւն գտաւ առաջարկը, և թէ ինչ պաշտոնական գործեր կատարուեցան: Բայց կերևի թէ ձեռնարկութիւն իսկ չեղաւ, զի կանխեցին Կ. Պոլսոյ աղմուկները, և Յակոբոս՝ եպիսկոպոսական ձեռնադրութիւն

ստանալով՝ ետ եկաւ: Սա ինքն է Յակոբ Լիւսարացի կոչուած Երուսաղէմի միաբանը, որուն վրայ խօսու առիթ պիտի ունենանք:

2374. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՂՄՈՒԿ

Երբոր ազգին մի մասին մէջ խանդավառութիւն կը տիրէր, անդին միւս մասը եղածը ջնջելու կերպար կը մտածէր: Այս միտքին ծառայողներ երկու կողմերն ալ կը գտնուէին: Հայոց մէջ աւելի Ակնեցիներ և Կեսարացիներ գրգռուած էին, կարծելով թէ պատրիարքն ու պատրիարքարանը կաթոլիկութիւն ընդունած են, իսկ հռոմէականներէն ամբողջ Քօլէճեան մասը բազմաթիւ եկեղեցականներով իրենց կացութիւնը խախտած կը տեսնէին, թէ հաշտութեան և համերաշխութեան գաղափարը ծաւելէր և իրակութիւն գտնէր, զի կաթոլիկամիտներէ շատեր մի գկնի միոյ թեակոխէին ի գալ յեկեղեցիս Հայոց: Արդէն պաշտօնապէս ալ լատին եպիսկոպոսին դիմած էին, որ էր միշտ նոյն Վիկենտիոս Քօրէպին, և Հայոց պատրիարքարան գացող եօթներուն դէմ, թուղթ բանադրանաց առած էին (ՊԷՐ. 135), զոր յաղթութեամբ կը տարածէին: Իսկ Հրաւեր Սիրոյ տետրակին հրատարակութենէն ետքը, զայն աղաւաղելով և այլայլելով, և Լուսաւորչի պատկերին վրայ պապի պատկեր մը կպցնելով, բազմութիւնը կը գրգռէին, և նոյն իսկ իբր հայադաւան ներկայանալով, հայ ժողովրդին միտքերը կը շփոթէին և սիրտեր կը բորբոքէին: Գրգռութիւնը ևս քան վաս կը սաստկանար վերջին օծման իւրին օրհնութենէն ետքը. իբր թէ սրբալոյս միւռոնը հասարակ ձէթի վերածուած ըլլար: Գրգռութիւնը իր գագաթնակէտը հասաւ օգոստոս 7 շաբաթ օրը, երբ անունը անծանօթ մնացած Գաղատացի կաթոլիկ մը, մոլեռանդ հայադաւան ձեւանալով և Կեսարացիներու և անոնց համախոհներու շուկաները պատելով, ամբոխը գրգռեց թէ պատրիարքն մեր ֆրանկացեալ է, պէտք է անմիջապէս պատրիարքարան դիմել, և գործը կարգադրել: Իրօք ալ ամբոխը ժամադրութիւն տուաւ յաջորդ առտուն Գումբաբու հաւաքուիլ: Պատրիարք և Պէպճեան և Պալեան լուր առին գիշերուան մէջ, երբ արգիլելու այլ ևս ատեն չկար. և իրօք կիրակի առտուն, օգոստոս 8, Աստուածածնայ բարեկենդան, խառնիճադանճը կուտեցաւ մայր եկեղեցին, և մեք հայ ենք, ֆրանկ ոչ լինեմք աղաղակով ամէն կողմ կը թնդացնէր: Դիոնեսիոս վարդապետ պատրիարքական փոխանորդ, որ Յակոբի յաջորդած էր (2370), և Մարկոս և Յակոբ եպիսկոպոսներ, Երուսաղէմի միաբաններէն, ի վուր ջանացին ամբոխը հանդարտեցնել և իսկութիւնը բացատրել: Ոչ միայն չլսուեցան, այլ և բռնցի վռնտուեցան: Ամբոխը դուռեր խորտակելով պատրիարքարան ալ խուժեց, պատրիարք ձեռքը ձգելու համար, այլ Պօղոս ետևի պատուհաններէն և պարտէպի կողմէն խոյս տուած և դրացի տաճիկ մը տունը ապաստանած էր: Դիոնեսիոս փոխանորդ յաջողեցաւ լուր հասցնել եէնիշէրիներուն զօրապետին, որուն հրամանով իբր 500 զօրականներու գունդ մը հասակ, ամբոխը ցրուեց, քանիներ ձերբակալեց և բանտարկեց, պատրիարքարան զինուորական հսկողութեան ներքև առաւ, և պատրիարքն ալ տեղը բերաւ:

2375. ԱՂՄՈՒԿԻՆ ՇՈՒՐՁԸ

Երկուշաբթի օգոստոս 9, ոստիկանական քննութիւններ սկսան, մանաւանդ որ ոմանք պատրիարքին դէմ կառավարութեան բողոքագիր ալ տուին: Եպարքոսն իմանալով որ բողոքողներ երէկի աղմկարարներէն են, կը հրամայէ ամէնն ալ բանտարկել (ՊԷՐ 163), և տանջանաց ենթարկել որ գլխաւորներուն անունները յայտնեն: Այս կերպով երեք անուններ մէջտեղ կելլան, Տէլի Պաղտասար Սամաթիացի, Կարապետ սարկաւազ Կեսարացի, և շուկաներ պատող գաղատացին, երկուքը կը ձերբակալուին, իսկ երրորդը իրեն պաշտպան Քօլէճեաններու օգնութեամբ արդէն դէպի Եւրոպա խոյս տուած էր: Շաբաթ մը և աւելի շարունակեց հարցաքննութիւնները, թէ շփոթին պատճառն իմանալու, և թէ աղմկարարներուն դրդիչները երևան հանելու համար, զի պարզ կրօնական խնդիրէ մը աւելի, ապստամբութեան գոյն մը կը տեսնէր կառանարութիւնը, մանաւանդ

որ օտարի հետևելու և օրինաւոր իշխանութեան դէմ ըմբոստանալու պարագաներ կը խօսուէին: Պաղտասար և Կարապետ տանջանքներու ներքև, այս ու այն անուններ սկսան տալ, որոնք հետզհետէ բանտարկւեցան: Այս կարգէն եղան Աստուածատուր Եպիսկոպոս, Երեմիա Եպիսկոպոս, Յակոբ ապիտավաճառ Կեսարացի, Գրիգոր Ամիրա Սաքաեան, Ազարիա պատանի՝ Սաքաեանի ազգականներէն, Մկրտիչ ամիրա Արփիարեան, Աբրահամ ամիրա Գարաքէհեա, Պօղոս ամիրա Կէլկէլեան, և Պօղոս աղա Մարգարեան: Փետոուեցան նաև տիրացու Յովհաննէս Պէյքօւզցի, և Կարապետ Կեսարացի Յակոբի ընկեր, բայց չգտնուեցան: Կիլիկիոյ Կիրակոս կաթողիկոսի անունն ալ տրուեցաւ, որ արդէն մեկնած էր (2360), այլ Նալուխանէ ետ բերուեցաւ, բայց զինքն արդարացուց և արտօնութիւն ստանալով սեպտեմբեր 19-ին կրկին մեկնեցաւ իր այթուր: Տէլի Պաղտասար և Կարապետ սարկաւազ և Ազարիա պատանի տանջանաց սաստկութենէն իսլամութիւն ընդունելու ևս հաւանեցաւ, բայց այդ միջոցով ալ ապատութիւն չգտան, և այն ատեն ինքզինքնին ամբաստանեցին իբր գրգռիչ, որ գուցէ տանջանքները կարճուին և խնդիրը փակուի: Մեծամեծներէն ալ քանիներ հարցուփորձուեցան, համերաշխութեան խնդիրին, իւզին օրհնութեան և հրաւեր Սիրոյ տետրակին վրայօք, որ տաճկերէնի ալ թարգմանուեցաւ, պետութեան հակառակ կէտեր գտնալու յոյսով, բայց այնպիսի հետք մը չտեսնուեցաւ: Պօղոս պատրիարքն ալ, յատուկ հարցաքննութեան կոչուեցաւ օգոստ.26 հինգշաբթի գիշեր գլխաւորաբար գործին ընթացքին վրայ, և թէ ինչո՞ւ այդպիսի գործի մը գլուխ կանգնեցաւ: Նա իր արդարացման համար յիշեց կայսերական հրովարտակով համերաշխութիւն հրամայուած ըլլալը, և գործադրութեան մէջ տէրութեան ծանօթ անձերու խորհրդով վարուած ըլլալը: Իսկ երբ անուններ տալու հրաւիրուեցաւ, Պալեան, Պէլզեան, Փափապեան, Երկանեան և Ազնաւորեան ամիրաները յիշեց: Պատրիարքին յանձնարարուեցաւ ևս աղմուկին գրգռիչներ գտնել, և փախստականներուն տեղեր իմանալ, ուստի այս միտքով շրջաբերականներ ալ գրուեցան, և Դիոնեսիոս փոխանորդ թաղերու մէջ պտոյտներ կատարեց:

2376. ՅԱԻԱԼԻ ՎԱԽՃԱՆ

Հարցաքննութիւններ և բանտարկութիւններ և տանջանքներ կերկարէին քառասուն օրէ ի վեր, և պէտք էր վերջաւորութեան մը յանգիլ: Ընդարձակ և հակապետական շարժումի ենթադրութիւնը մէկ կողմ թողուեցաւ, և որոշուեցաւ գլխապարտութեամբ պատժել աղմուկին գլխաւորները, և աքսորել կամակից կամ պատճառ եղողները, և մնացեալները արձակել: Մահուան պատիժները գործադրուեցան սեպտեմբեր 18-ին, Խաչի եօթնեկին շաբաթ օրը, կիրակնամուտին երեկոյեան ժամերգութեան ատեն: Գրիգոր ամիրա Սաքայեան, ութսնամեայ ծերունի, որ եօթնօրեայ տանջանաց ներքև վամենայն մեղս յանձին իւր կալաւ, որպէսզի բազմութիւն անպարտ անձանց ազատի, մայր եկեղեցոյ դրան առջև գլխատուեցաւ: Յակոբ Կեսարացի Չէմպէրլիթաշի հրապարակին վրայ գլխատուեցաւ, Կարապետ սարկաւազ և Ազարիա պատանին Սուլթան Պայապիտի հրապարակը կախուեցան, Տէլի Պաղտասարն ալ Սամաթիա իր սրճանոցին առջև կախուեցաւ: Բոլորին ալ պատժապարտութեան փաստը տանջանաց ներքև ըրած խոստովանութիւննին էր: Յաջորդ օրը սեպտեմբեր 19-ին, գործադրուեցան երկու Եպիսկոպոսներու և ուրիշ 19 բանտարկեալներու ազատ թողուիլը (ՊԷՐ.169): Սեպտեմբեր 22-ին ճամբայ հանուեցան աքսորի դատապարտուածները, Արշիպեղնգոսի վանապան կղզիները երթալու համար: Գացողներն եղան Մկրտիչ Արփիարեան, Պօղոս Կերկէլեան, Պօղոս Մարգարեան և Կարապետ Ազնաւորեան ամիրաները: Աքսորեալներու բախտակից եղաւ Յարութիւն Պէլզեան ալ, որ իր հաշիւները կանոնաւորապէս յանձնելով հոկտեմբեր 3-ին կամ 10-ին (ՊԷՐ.170), մեկնեցաւ Իլիմիա կամ Լիմնոս կղզին: Աքսորէ ապատեցան, Աբրահամ Քարաքէհեա՝ Եգիպտոսի փոխարքային

սեղանաւորը, ճանիկ Փափապեան՝ եպարքոսին սեղանաւորը և Գրիգոր Պալեան՝ արքունի ճարտարապետ: Իսկ Յովհաննէս Երկանեան իր ապատուծիւնը ստացաւ ուրացութեան շնորհիւ: Նկատողութեան արժանի է հռոմէականներէ ոչ մէկուն պատժոյ ենթարկուիլը, զի որչափ ալ մասնակից էին գրգռութիւնը պարթուցանելու, այլ պոռնացած էին օգոստոս 8-ին աղմուկին յայտնապէս մասնակցելէ: Մինչև իսկ փողերապետութիւնն ալ իրենցմէ մէկուն, Պօղոս Պիլէղիկձեանի տրուեցաւ: Այն եօթը վարդապետներն ալ որ վեղար առած և պատրիարքարանի հնապանդած էին, մէջտեղէն անյայտացան, և պատրիարքի հրաւերին չպատասխանեցին, որ կուլէր անոնք էջմիածին ու երուսաղէմ և Գլակ չղել: Վեցերնին դիմեցին լատին եպիսկոպոսին և պղջում յտնելով և ապաշխարութեան ենթարկուելով ներում և արձակում ստացան: Իսկ եօթներորդը, հայր Գրիգոր Գապարաձեան Վենետիկի վանքէն, միաբանութենէն հրաժարելով Փարիզ գնաց, բայց կաթոլիկութիւնը պահեց տեղական լատին իրաւասութեան ներքև: Հռոմէականներէն անոնք որ հայ եկեղեցիներ յաճախել սկսած էին, յետոս կասեցան, և համարձակուելն լատին եպիսկոպոսին իրաւասութեան ներքև մտան: Վերջապէս այսչափ խօսուած և փափաքուած համերաշխական ձեռնարկները հակառակ արդիւնք ունեցան, զի առաւել ևս պօրացուցին հռոմէականներուն պատրիարքարանի դէմ ըմբոստութիւնը, և աճեցուցին ներքին գժտութիւնը: Կոստանդնուպոլսոյ իրողութիւնները այդ վիճակին մէջ թողլով կ'անցնինք էջմիածնի կողմի անցքերը պատմել, բայց նախ կուլենք փոքր ի շատէ տեղեկութիւն տալ այդ ատեններ հիմնուած երկու հաստատութեանց վրայ, որոնք են Տփղիսի Ներսիսեան դպրոցը, և Մոսկուայ Լապարեան ճեմարանը:

2377. ՆԵՐՍԻՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ներսիսեան դպրոցին գաղափարը կապմողը և գործադրութեան գնողը Աշտարակեցին է, ինչպէս հաստատութեան անունն ալ կը մատնանշէ: Ներսէսի սիրտին մէջ շատ հինէն ծագած էր ուսումնական կրթութեան ոյժ տալու փափաքը, բանի կը տեսնէր նապ կրթութենէն ծագած աղէտները: Նոր Նախիջևանի չաջորդ եղած ատեն, 1807-ին, փորձեց նոյն տեղ հաստատել Յովհաննէս Լապարեանցի կտակով հիմնուելիք վարժարանը (ՆԵՐ. Ա. 10-24): Երբոր 1808-ին էջմիածնի մէջ գործելու տիրացու, առաջին ձեռնարկներէն մին եղաւ վարժարանի կապմութիւն մը պատրաստել. և 32 աշակերտներ ալ հաւաքեց (ՆԵՐ. Ա. 25), բայց հապիւ 1813-ին յաջողեցաւ 50 ժառանգաւոր աշակերտներու համար դպրոց մը շինել, մտադիր ըլլալով մինչև 200 աշակերտի համար ընդարձակել, և համալսարանի բարձրութեան հասցնել (ՆԵՐ. Ա. 9): Ներսէսի խորհրդակից Սերովբէ վարդապետ Արարատեան, բնիկ Կարնեցի, Հռոմ ուսած, Լիբանան մնացած և Հայաստանեայց եկեղեցի վերադարձած, որ սակայն կը պնդէր ընդարձակագոյն կեդրոնի, գոնէ Տփղիսի մէջ բանալ կատարեալ վարժարան մը: Այդ մտածմունքին հետևանքն էր անշուշտ Կարբեցիին Կ. Պոլիս երթալուն առթիւ, այնտեղ վարժարան մը հաստատուելու համար տրուած հրահանգը (2338): Բայց վերջապէս տեղոյ խնդիրը Տփղիսի վրայ որոշում գտաւ, երբոր Ներսէս 1814-ին Տփղիսի առաջնորդ նշանակուեցաւ (2340): Ներսէս փափաքող էր անմիջապէս գործի ձեռնարկել, բայց տեսանք թէ ինչ տեսակ հակառակութեան բաղխեցաւ, մինչև որ համաձայնութիւն գոյացաւ 1817-ին (2342-2345): Ասով մէկտեղ 1815-ին փոքրիկ դպրոց մը բացաւ Վանք կոչուած մայրեկեղեցւոյն շրջափակին մէջ, Բէօշկ ըսուած տեղը, և շփոթներու մէջ ալ չկասեցաւ անոր վարճացման աշխատելէ: Այս վարժարանին աշակերտներէն են, Խաչատուր Աբովեանց, Ստեփանոս Նապարեանց, Առաքել Արարատեանց և ուրիշ յայտնի անուններ (ՆԵՐ. Ա. 36): Ընդարձակագոյն և մինչև 800 աշակերտի բաւական վարժարան մը կառուցանելու գաղափարին լրջօրէն կրցաւ հետևիլ 1817-ի հաշտութենէն ետքը (2345), և աւելի քաջալերուեցաւ

Սարգիս Լօռու Մելիքեանցի 500 ռուբլու նուէրով, և Յովհաննէս Լապարեանցի կտակին մէջ, Տփղիս շինուելիք վարժարանին 3000 ռուբլի սահմանուած ըլլալը իմանալով (ՆԵՐ. Ա. 40): Շինութեանց ձեռնարկեր 1818 յուլիսին, բայց ուսումնարանէն առաջ ուրիշ ստիպողական պէտքեր կային: Առաջնորդարանը կարի անշուք էր, և նոր տիրապետութեան ներքև հնար չէր եղածով գոհանալ: Շատ ազգապատկան հողեր աւերակ կը մնային, և կառավարութիւնը շինուելնին կը պահանջէր, հողատիրութեան իրաւունքէ վրկման սպառնալիքով և եթէ առաջնորդարանը չհամակերպէր, ընդ միշտ պիտի կորցնէր եկեղեցապատկան պարապ տեղերը. որ յետոյ այնքան գին ստացան (ՆԵՐ. Ա. 43): Ուստի առաջին անգամ ձեռք վարնուեցաւ առաջնորդարանին և կրպակներուն, որոնք վարժարանի համար հասութաբեր կալուած պիտի դառնային: Վարժարանի հողին նախապատրաստութիւնները սկսան 1821 սեպտեմբեր 16-ին, իսկ հանդիսաւոր հիմնարկէքը կատարուեցաւ 1822 փետրուար 7-ին: Շինութիւնը յառաջ տարուեցաւ ազգայիններու նուէրներով և Ներսէսի խնայողական ճարտարութեամբ: Այդ միջոցին, 1822 ամառուան, Ներսէս պարտաւորուեցաւ պահ մը Շուշի երթալ Եփրեմ կաթողիկոսի հոն ապաստանած ատեն, և 1823 մարտին կիսաշէն վարժարանին արևելեան պատերը ձեղքուեցան, ներքևէն բղխած առատ ջուրերուն պատճառով: Բայց Ներսէս իր բուռն հաստատամտութեամբ գործը առջև տարաւ այնչափ, որ 1824 սեպտեմբերին կրցաւ անոր մէջ փոխադրելի կանուխ հիմնած Բէօշկի վարժարանը, որուն վարիչն էր Ղարապաղցի Պօղոս վարդապետ, նշանաւոր հայկաբան ճանչցուած (ԵՐՅ. Ա. 161): Այդ առթիւ ուսումնական կացութեան ալ աւելի վարկ տալու համար, վարժարանի տեսչութեան կոչեց Յարութիւն Ալամդարեան²⁸ տարեկան այրի քահանան (ՆԵՐ. Ա. 84), նախադասելով վայն Սերովբէ Արարատեան և Յովակիմ Սալլանթեան վարդապետներուն, որոնք հոռմէականութենէ վերադարձած էին, և իր տեսութեան ըստ ամենայնի համամիտ չէին (ՆԵՐ. Ա. 38):

2378. ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Լապարեան ճեմարանին անցնելով, պէտք է յիշենք Լապարեան տոհմին նահապետ Աղապարը, և անոր ստացած կարևոր դիրքը և Հայութեան բարձրացման համար ունեցած ջանքերը (2193), որոնց աւելի մղում տուաւ իր անդրանիկն ու յաջորդը Յովհաննէս, գործակցութեամբ Յովսէփ Արղութեանի (2195), և յաջողեցան մինչև պաշտօնական դաշնագիրի մը նիւթ ընել Հայոց ապագան (2200): Դաւիթ-Դանիէլեան խնդիրին մէջ ալ Յովհաննէս Դանիէլի պաշտպանութիւնը ստանձնեց, և Եփրեմի օգնեց (2359), վոր իրմէ ետքը իր եղբայրը Մինաս լրացուց (2268), մինչև որ Դանիէլ գահակալեց: Յովհաննէս վախճանած էր 1801 հոկտեմբեր 24-ին, 66 տարեկան, բայց նոյն տարին հուլի վախճան կենաց իւրոց, կտակած էր երկերիւր հազար թուլլի թղթադրամ, Մոսկուայի մէջ հոյակապ ուսումնարան մը կանգնելու: Հայոց համար (ԼԱԶ. Ա. 15): Յովհաննէսի միակ արու վաւակը Յարութիւն, 23 տարեկան վախճանած էր 1791 յունուար 12-ին, Խաչատուր եղբայրն ալ 33 տարեկան վախճանած էր 1774 յունիս 11-ին. Մինաս եղբայրը անվաւակ էր, ուստի իբր ժառանգ և կտակարար մնաց կրտսեր եղբայրը Յովակիմ չորս արու վաւակներով, ուստի անոր յանձնեց Յովհաննէս՝ իր կամքին գործադրութիւնը (ԼԱԶ. Ա. 17): Յովհաննէս որոշեր էր որ 200, 000 ռուբլին դրուի ի խորհրդարանն որբախնամից ի մշտնջենաւոր ժամանակս, և անոր տոկոսեօք շինեսցի և պահպանեսցի ուսումնարան վասն Հայոց: Յովակիմ տեսնելով գումարին անբաւականութիւնը, իրմէ ալ 100 000 ռուբլի աւելցոց, և շարունակաբար շահեր գլուխին բարդելով գումարը աճեցուց (ԳՄՐ. 9) և միայն 1813-ին վարժարանի շինութեան ձեռնարկեց, իսկ դասատուութիւնները սկսան 1816-ին (ԼԱԶ.Գ.12): Ուսումնարանը անձնական հաստատութեան գիրքն ունէր իր սկզբնաւորութեան ատեն, որ անկայուն վիճակ մըն էր, և Յովակիմ փափաքեցաւ պետական

հաստատութեամբ և երաշխաւորութեամբ ապահովուած հաստատութեան մը ձևը տալ իր հիմնարկութեան: Իր առաջին դիմումին մէջ խնդրած էր կոչել պայն Հայկական Լապարեանց Ակադեմիա, սակայն ակադեմիա կոչումը չկրցաւ ընդունուիլ, զի Լապարեանց հաստատութիւնը, ոչ ժողով գիտնականաց ունէր, և ոչ վերին աստիճանի գիտութեանց ուսումնարան (ԳՄՐ.11): Յովակիմ իր տեսութիւնները ամփոփելով 1823 ին առաջարկեց Հայկական Լապարեանց Գիմնապիա բարձր գիտութեանց և արևելեան լեզուաց կոչումը և ուսմանց ծրագիրին մէջ յիշեց, Հայոց Արաբացոց, Պարսից և Տաճկաց գրականութիւնները, և ցուցուց միանգամայն վկարգեալ վասն նորա եկամուտս: Հաստատութեան պաշտօնական գիրքն ալ քննուելով լաւագոյն տեսնուեցաւ անմիջական կերպով դնել ընդ վերատեսչութեամբ առանձինն իշխանապետի, քան թէ ուղղակի նախարարութեան ազգային լուսաւորութեան ներքև դնել, կամ յանձնել Համալսարանին Մոսկովու, որ է Մոսկովայի (ԳՄՐ.15): Պէտք եղած բանակցութիւնք շարունակեցին 1824 տարւոյն մէջ, և իբր իշխանապետ առաջարկուեցաւ Լապարեանց կողմէն, թնդանօթաձիգներու վօրագլուխ կոմս Աղեքսանդր Արակչիյէվ, և կայսեր համաձայնութեան վրայ կոմսը իր հաւանութիւնը տուաւ 1825 յունուար 17-ին (ԳՄՐ. 2), և կայսերական հրովարտակն ալ ստացուեցաւ յունիս 30-ին (ԳՄՐ.12): Այսպէս Լապարեանց հաստատութիւնը պետական ուսումնարաններու կարգը դասուեցաւ Լապարեան ձեմարան արևելեան լեզուաց անունի ներքև: Յովակիմ Լապարեան, որ ձեմարանին համար արդեամբ և աշխատութեամբ և հոգածութեամբ բուն հիմնադիրը պէտք է նկատուի, արդէն ալևորեալ տարքը հասած էր, երբ վերոյիշեալ հետապնդումները կը կատարէր, անոնց լրանալուն միտիթարութիւնն ալ ունեցաւ, բայց քիչ ետքը վախճանեցաւ 1826 յունուար 24-ին, 83 տարեկան և ձեմարանին հոգաբարձութիւնը ստանձնեց իր անդրանիկը՝ Յովհաննէս Յովակիմեան Լապարեան: Շատ չանցաւ, ձեմարանին իշխանապետն ալ փոխուեցաւ, և Արակչիյէվի մեռնելովը անոր յաջորդեց Հեծելապօրաց վօրագլուխ կոմս Աղեքսանդր Բանկենտօրֆ, 1828 մարտին (ԳՄՐ.19) պայմանով որ ձեմարանն այն մի՛ արտաքսեցի յընդհանրական վերադիտողութենէ նախարարութեանն ազգային Լուսաւորութեան (ԳՄՐ.65):

2379. ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Լապարեան հիմնադիրներ, Յովհաննէս կտակող և Յովակիմ կտակակատար, նպատակ ունէին միայն հայապգի տղայոց կրթութիւնը քաջալերել, և անոնք հասցնել այն բարձրութեան, զոր Ռուսաց պետական վարժարանները կու տային թէ պաշտօնէութեան և թէ առևտուրի պատրաստուող երիտասարդութեան: Ըստ այսմ հայ և ռուս լեզուները և ընդհանուր վարգացման առարկաները պիտի կամէին վարժարանին ծրագիրը: Առ այս կը ձգտէին Լապարեանց փափաքները, երբոր Հայկական Լապարեանց ակադեմիա, կամ Հայկական Լապարեանց գիմնապիա բարձր գիտութեանց և արևելեան լեզուաց անունները կ'առաջարկէին իրենց հաստատութեան: Բայց երբ պետական հովանաւորութեան գաղափարը վօրացաւ, պէտք եղաւ պետական օրէնքներու պահանջներուն ալ համակերպիլ, որով գիտութեանց ճիւղը չյիշուեցաւ, և հաստատութիւնը կոչուեցաւ Հայոց Լապարեան ձեմարան արևելեան լեզուաց (ԳՄՐ.115): ձեմարան անունը ռուսերէնի մէջ institut բարով բացատրուած է, որ պարզապէս հաստատութիւն կը նշանակէ, իսկ ուսումնարանին բնութիւնը պարզ ազգային հայկական ըլլալէ աւելի, միջազգային կերպարան առաւ, զի զհայապգի և զօտարապգի մանկունս հաւասարապէս ընդունելու պայմանը դրուեցաւ: Ծրագիրին մէջ յիշուեցաւ արևելեան լեզուներէն, հայերէն, արաբերէն, պարսկերէն, տաճկերէն, վրացերէն և թաթարերէն, և երոպականներէն ռուսերէն, գաղղիերէն և գերմաներէն (ԳՄՐ.130): Իսկ ընդհանուր ուսմանց ծրագիրը սահմանուեցաւ հաւասար համալսարանէն ետքը եղող երկրորդ դասակարգութեան ուսումնարաններուն, որոնց կարգին արձանագրուեցաւ Արևելեան

ինողիտուդն Լապարեանց: Առանձինն ճիւղ կամ բաշխ մըն ալ աւելացուեցաւ տարիներ ետքը, եկեղեցականութեան նուիրուելիք աշակերտաց համար: Առ այս Էջմիածնի Սինողը յատուկ կանոնագիր մը պատրաստեց 1839 յուլիս 21-ին, որ պետական քննութիւններէ անցնելէ ետքը նախարարական հաստատութիւն և կայսերական վաւերացում ստացաւ 1841 յունուար 31-ին (ԼԱՁ.Գ.73-76):

2380. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՔ

Լապարեան ճեմարանին վարչութիւնը, որչափ ալ ընդհանուր կերպով հանրային կրթութեան նախարարին ենթարկեալ, բայց անմիջական կերպով առանձինն պետ մը ունի, ինչպէս յիշուեցաւ (2378), իշխանապետ անունով, որ կը կատարէ ինչ որ ուրիշ ուսումնարաններու վրայ կը կատարէ նախարարը: Անկէ ետքը կու գայ հոգաբարձուն վերին հսկող մը ճեմարանին բարգաւաճման և խնդիրները վճռող, որ ունի իրեն օգնական հոգաբարձու մը: Երկուքն ալ Լապարեանց տոհմէն պիտի ըլլան, իսկ եթէ նոյն տոհմին մէջ պաշտօնի պահանջած պայմանները ունեցող չգտնուին, պատուանունը կը մնայ Լապարեանին, իսկ գործին վարչութիւնը կը յանձնուի կարող տեղակալի: ճեմարանի անմիջական և լիակատար կարգաւորիչն է կառավարիչը, և անոր օգնականն է վերատեսուչը, որուն պաշտօնը կը համեմատի ներքին տեսուչի: Խորհրդարան մըն ալ կայ, կառավարիչէ, վերատեսուչէ, ուսուցչապետերէ, և վարժապետերէ բաղկացած, զոր մենք կրնանք ուսուցչական ժողով ըսել, նաև կառավարութիւն մըն ալ, կառավարիչէ, վերատեսուչէ, մէկ ուսուցչապետէ, և երեք մոսկուաբնակ ազգայիններէ բաղկացած, որ տիրապէս տնտեսական խորհուրդ մըն է (ԼԱՁ.Գ.14-17): Աշակերտներու թիւը որ առաջ հարիւր էր (ԳՄՐ.131), 140-ի բարձրացած է 1852-ին, որոնց կէսը թոշակաւոր, իսկ միւս կէսը ձրիավարժ. կամ լաւ ևս բարերարներու սաներ այսինքն 18 պետական սաներ ծախիւք արքունի գանձատան, 14-ը Կովկասցի ըլլալու պայմանով, 30 Լապարեան սաներ՝ անոնց հաստատած եկամուտներուն հաշւոյն, 2 Գասպարեան սաներ, 2 Մնացականեան սաներ և 20 եկեղեցական սաներ՝ Պետրբուգի և Մոսկուայի հայ եկեղեցիներուն հաշւոյն (ԼԱՁ.Գ.17): Չրիավարժ սաներու համար նախադասութիւնը կը տրուի քահանայից և պաշտօնէից վաւակներուն: ճեմարանին վարչութիւնն ու մատակարարութիւնը, ուսուցչութիւնը և աշակերտութիւնը, ընդարձակ և մանրամասնեալ կերպով կազմակերպուած են 1830-ին կարգադրութեան, այսինքն կանոնագիրին մէջ, որ ռուսերէն, հայերէն, գաղղիերէն և գերմաներէն լեզուներով հրատարակուած է (ԳՄՐ.115), և յետոյ աւելի լիակատար կերպով կրկնուած է 1852 ին (ԼԱՁ.Գ.13), զոր յիշատակել բաւական կը սեպենք, զի վարժարաններու ընդհանուր կազմակերպութիւններ քիչ տարբերութեամբ իրարու կը նմանին:

2381. ՄԻՔԱՅԷԼ ՍԱԼԼԱՆԹԵԱՆ

Լապարեան ճեմարանի վերաբերեալ տեղեկութիւնները լրացնելու համար, պէտք է յիշատակել Սալլանթեան եպիսկոպոսին անունը, որ աշխատաւոր և երախտաւորն եղաւ ճեմարանի ուսումնական, և յատկապէս հայ գրականական յառաջդիմութեան: Սալլանթեան Լիբանանի մէջ հաստատուած Անտօնեան միաբանութենէն էր (1939), ձեռնադրութենէ առաջ Մարկոս, և ձեռնադրութենէ ետքը Յովակիմ անունով կոչուած և ուսումնասէր ըլլալով՝ լեզուագէտ և գիտնական անձ մը ճանչցուած էր, և գրական արդիւնքներն ալ կը գտնուին տակաւին Անտօնեանց դիւանին մէջ: Այդ տեսութեամբ զրկուեցաւ Խրիմ գտնուող հայ կաթողիկներու հովուութեան, Կովկաս ալ անցաւ, ուր ազգային գործունէութեան նոր հորիզոն մը բացուած գտաւ իր առջև: Տփղիս կը գտնուէր 1815-ին երբ Ներսէս կուպէր իր վարժարանին կարող գործիչներ ունենալ: Սալլանթեանի աչքին տկար երևցան Ներսէսի միջոցները, և աչքը սևեռեց Լապարեան հաստատութեան, որուն միջոցները առատ էին: Տփղիսէ Մոզդոկ գալով մասնաւոր նամակով մը իր

միտքը կը յայտնէ Յովակիմ Լազարեանի, որ վստահ ըլլալու համար կուզէ պաշտոնական միջոցներով անոր միտքը իմանալ, սակայն այս կերպով իր գաղտնի միտքը երևան եկաւ, և Մովսէսի կաթողիկոսներ պինքն կը մեղադրեն թէ կերթայ կրթել վամակունս ազգին որ ի մէջ պատեալ, և Սալլանթեան կը ստիպուի իրեն եղած հարցումին բացասաբար պատասխանել թէ ոչ կամիմք գնալ: Սակայն ձեռքի տակէն 1816 յունուար 21-ին գրուած չափաւ նամակ մը կը հասցնէ Լազարեանին, թէ ստիպեալ ասանկ պատասխանեց, թէ ոչ մտադիր է յետ աւուրց տասնց և հնգից անպատճառ ելանել աստի (ԼԱՁ. Գ. 121), ինչպէս ալ կը տեսնանք որ յունիս 15-ին Մոսկուա կը գտնուի (ԼԱՁ. Գ. 126), և կը գրէ Յովակիմ իշխանի, անոր պարագաները տեսած և վմայլած ըլլալը, հակառակ որ արք որոմնացանք, ազգի ազգի թիւնալից բանիւք, կարի յոյժ այլապէս բաներ պատմեր էին իրեն անոնց վրայ (ԼԱՁ. Գ. 125): Սալլանթեան այդ նամակներուն ներքե կը ստորագրէ, նուաստ հայր Յովակիմ վարդապետ և կանոնական կրօնաւոր ի կարգէ սրբոյն Անտովնի արքայի, ի միաբանութենէ հարցն լերինն Լիբանանու, սակայն քիչ ետքը Լազարեանց միջնորդութեամբ Եփրեմ կաթողիկոսէ հայ եկեղեցոյ վեղարը կառնէ, և Յովակիմ անունն ալ փոխելով Միքայէլ կը կոչուի: Այնուհետև Սալլանթեանի կեանքը գրեթէ ամբողջապէս Լազարեան ձեմարանի հետ կապուած մնաց իբրև հայկաբան և կրօնագէտ ուսուցիչ, նոյնիսկ եպիսկոպոսութեան բարձրանալէն ետքն ալ: Սակայն աւելի ընդարձակ միտքեր ալ ունեցած է, և նորահաս եկեղեցականներ յորդորած է ուսման և գրականութեան նուիրուած միաբանութիւն մը կազմել, ինչպէս Վենետիկի Միսիթարեաններն են, որուն ինքն Սալլանթեան արքահայրը պիտի լինէր (ՍԵՏ. 27): Բայց Էջմիածնի կողմէն կասկածով նայուեցաւ այդ միտքին վրայ, նկատելով որ օտարազգիներից ևս նպաստներ են ստանալու, որով գործադրութեան իսկ չէ ձեռնարկուած: Այդ խորհուրդները տեղի ունեցած են 1830-է 1832 տարիներու միջոցին (ՍԵՏ. 28):

2382. ԵՄՈԼՈՎ ԵՒ ՊԱՐՍԻԿՆԵՐ

Կոսպանդ նուպոլսոյ անցուդարձերուն շարքը չընդհատելու համար, պարտաւորուեցանք պահ մը աչքէ վրիպեցան Էջմիածնի կողմին եղելութիւնները, զորս թողուցինք 1817 թուին, երբ Տփղիսի մէջ առաջնորդ Ներսէսի և հակառակորդներու գլուխ Դարչի մինջև հաշտութիւն գոյացաւ (2345): Եթէ առաջ Ներսիսեան և Լազարեան ուսումնական հաստատութիւններու մասին տեղեկութիւն տուինք, անոնք անկախ գործեր էին, որ ընդհանուր իրողութեանց հետ կապ չունէին: Այս վերջիններուն մտնելով՝ նախ պիտի յիշենք նոր կուսակալ Ալեքս Երմոլովի անունը (2345), որ ազդուապէս ներգործած էր Ներսէսի դէմ հակառակութիւնը պսպելու, և վայն քաջալերած էր համարձակ վարել պաշտօնը և բարեկարգել իր թեմը, յաւելլով միանգամայն թէ ըմբոստները նուաճելը իմ պարտքս լինի: Երմոլով ուսացած թաթար ցեղէ սերած, վիթխարի մարմնով, սարսափելի դեմքով, թանձր ունքերով, փայլուն ու սուր աչքերով, ահուդող ազդող կերպարան մըն էր, հակառակ իր բարի և մարդասէր բնաւորութեան (ԵՐՅ.Ա.175), և երկուքովն ալ ազդած էր Տփղիսի հայութեան խնդիրները փակելու: Նա պաշտօն ունէր դեսպանութեամբ Պարսից արքունիք ալ երթալ, երկու տէրութեանց յարաբերութիւնները կարգադրելու: Ներսէս օգուտ քաղեց պարագայէն Երմոլովը համոզելու որ Էջմիածին ալ հանդիպի կացութիւնը մօտէն վննելու համար, և շատ կէտեր ալ ինքն կանխաւ բացատրեց, Մայրաթողին ալ լուր տուաւ պարտ ու պատշաճն ընելու: Երմոլով Էջմիածին հասաւ 1817 մայիս 1-ին, երեքշաբթի երեկոյ, իր հետևորդ պաշտօնեաներով, որոնց մէջ հինգ ալ հայազգիներ կային: Չորեքշաբթի տաճարն իջաւ, և կացութեան վրայ տեղեկութիւններ քաղեց. և հինգշաբթի, 3 մայիս Համբարձման տօնին, կաթողիկոսական պատարագին ներկայ եղաւ, և նոյն օր Երևան վերադարձաւ, և անտի Թաւրիզ ու Թեհրան ուղևորեցաւ: Կաթողիկոսն ու միաբանութիւնը ամէն հնարաւոր պատուասիրութիւն

շռայլեցին, պոռնիկներով միանգամայն տիրող պարսիկ կառավարության կասկածները չարթնցնել: Երմուկի դեսպանությունը յաջող ելք չունեցաւ, և ունայնաձեռն դարձաւ Տիգրիս, հոկտեմբերի սկիզբը: Էջմիածնի ակնկալութիւններն ալ պարապի ելան, մանաւանդ թէ Պարսիկները քաջալերուեցան իրենց հարստահարութիւնները ընդարձակել, մինչև իսկ վեց արքեպիսկոպոսներ և քանի մը Վաղարշապատցի գլխաւորներ սենեկի մը մէջ փակելով, դուռ ու պատուհան հիւսել տուին, մինչև որ հապար ոսկոյ փրկանքը ապահովեն (ԵՐՅ.Ա.181): Հայոց նեղութիւնները օրէ օր կը ծանրանային, մինչ Ռուսիոյ ալ հաճելի էր Հայոց պաշտպանութեամբ իր երկրակալութիւնը ընդարձակել, սակայն եւրոպական պատերազմներէ յօգնած և նւազած էր երկիրը, և խաղաղասէր քաղաքականութեան ցանկացող դարձած էր կայսրն Աղեքսանդր Ա. և Պարսիկներ այդ ուղղութենէն կօգտուէին իրենց խորխտանքը աւելցնել, և մինչև իսկ Ռուսներու գրաւած գաւառները, Ղարաբաղն ու Լինքերանը ետ պահանջել (ԵՐՅ.Ա.182):

2383. ԷԶՄԻԱԾՆԻ ՏԱԳՆԱՊԸ

Պարսկական հարստահարութեանց պարագաները գրեթէ բոլոր դրամ շորթելու շուրջ կը դառնային, և ամէն դժուարութիւն և բարուրանք դրամական վճարմամբ կը հարթէր: Անտեղի առաջարկներու դիմաց՝ պարտքի մուրհակն ալ կընդունուէր, որ ետքէն խստիւ պահանջումներու հիմ կը դառնար: Պաշտօնեաներու և միջնորդներու պիջողութիւնն ալ առատ ընծաներով կը գնուէր, որոնք ի չգոյէ պատրաստ դրամի փոխառութեամբ կը հայթհայթուէին, և այս կերպով Մայրաթոռոյ պարտքը հետզհետէ կաճէր, և 184,000 արծաթ րուբլու գումարի հասած էր (ՄՍՐ.82), որ է իբր 36,800 օսմանեան ոսկի, մէջն ըլլալով վաշխ ի վաշխից վերայ բարդումները: Այդ մասին պշտալ բարս Եփրեմի մեղադրողներն ալ կան, թէ կը սիրէր առատաձեռն երևնալ և գովողներ շահիլ, և թէ ձեռնբացութեամբ կը գործէր (ՄՍՐ.83): Սակայն Եփրեմի բնաւորութիւնը մօտէն ուսումնասիրելով, յարմարագոյն կը սեպենք, աւելի ստիպողական պահանջներու առջև կքում մը տեսնալ Եփրեմի վրայ, քան ունայնամիտ շռայլութիւն: Ապպաս Միրզա արքայորդին, որ Հայաստանի փոխարքան էր, բացարձակ տէրն էր երկրին, և անոր հովանաւորութեան ներքև, ապառ բռնաւոր մըն ալ Հիւսէյին-Ղուլի խանն էր, Երևանի սարտարը կամ կուսակալը, որուն քոյրը Ֆէթհալի շահին կիներէն էր, և որդին ալ Ապպաս Միրզայի փեսան էր: Հիւսէյինի համար ամէն դիպուած նոր կեղեքումի պատրուակ էր: Նշանաւոր պարսիկ վաճառական մը պարտքերէն ապատելու համար Երևանէ կանհետանայ: Սարտարը պատրուակելով թէ պարսիկը Ռուսիա փախած ըլլայ, Եփրեմի վրայ ճնշում կը բանեցնէ, որ կամ վայն Ռուսիայէ բերել տայ, և կամ անոր պարտքերը վճարէ: Հայ հարուստներու անուններ տալով, կաթողիկոսը կը ստիպէր որ անոնցմէ գումարներ բերել տայ: Նոյնիսկ կը հրամայէր որ ամէն կողմ նուիրակներ հանէ, և առ այս նուիրակցու միաբաններէ ալ կը հրապուրուէր, պի յայտնի էր թէ յանուն Էջմիածնի ժողոված գումարի մի մասը սովորաբար անցնում էր նուիրակի քսակը: Մինչև իսկ լսուած էր թէ նոյն ինքն Յովհաննէս Կարբեցի, աւագ լուսարար և գործող սինոդական, 500 թուման կաշառք է խոստացել սարտարին, եթէ յաջողէր պինքն Գանձակ և Արցախ նուիրակ յղել տալ (ԵՐՅ.Ա.185): Զաքարիա Գուլասպեան ալ (2346) նոյն կերպով Վրաստանի նուիրակութեան ետևէ էր, բայց երկուքն ալ Ներսէսի դիմադրութեան հանդիպելով ձախողեցան, քանի որ անոր վիճակին մէջ պիտի շրջէին: Վերջապէս Յովհաննէս Կարբեցին և Ստեփանոս Ենովքեան և երրորդ մը, 1820 ամառուան ձամբայ ելան Կ. Պոլսոյ, և Զմիւռնիոյ և Ռումելիոյ նուիրակութեանց վրայ, սակայն Կ. Պոլիսէ երեք ժամուան ձամբայ հեռու լսեցին այն տեղ հանդիպած աղմուկներն ու աքսորներու դատապարտութիւնները (2371-2373), և խոհեմութիւն սեպեցին չյառաջանալ և ետ դառնալ (ԵՐՅ.Ա. 186): Պարտքերու ծանրութիւնը թեթևցնելու համար արքայորդւոյն դիմելու խորհուրդը

մտածուեցաւ, և Սարգիս վարդապետ Թաւրիկ յղուեցաւ առատ ընծաներով, բայց Էջմիածին մի թեթևութիւն չեղաւ: Գուլասպեան ալ նոյն ինքն շահին դիմելու գաղափարը առաջարկեց, և 1821 յունիսին ուղևորեցաւ դէպի Թեհրան, իրեն պետ տանելով երկու պարսիկ պարտատէրներ, որոնք իրենց բազմաթիւ ծառաներով վանքին մէջ նստած էին, և առանց պահանջին գանձելու մեկնիլ չէին ուզեր: Գուլասպեան ալ ունայնաձեռն դարձաւ, և այս անգամ Շուշի բնակող մեծահարուստ Թառամեան Զոհրաբ և Մարկոս եղբայրներու դիմում ընելու համար ճամբայ հանուեցաւ Յովհաննէս գրագիրը եպիսկոպոսը հանրագրեալ աղաչանքով, բայց այս փորձն ալ մնաց (ԵՐՅ. Ա. 188):

2384. ԵՓՐԵՄ Ի ՇՈՒՇԻ

Դրամ ճարելու և պարտք վճարելու համար Հիւսէյին խորհուրդ տուաւ կաթողիկոսին, անձամբ դիմել ռուսական պետութեան ներքև գտնուող Արցախի և Վրաստանի հայ հարուստներուն, որուն շուտով հաւանեցաւ Եփրեմ, զի գոնէ Էջմիածնի տաղտուկ կացութենէն կապատէր, և 1821 սեպտեմբերի կէսին Էջմիածինէ մեկնեցաւ Հին Նախիջևանի վրայով Արցախ մտնելու: Մայրաթոռին վարչութիւնը մնաց սինոդին ձեռք որուն անդամները 1819 փետրուարի կանոնագրութեամբ տասնամէկի վերածուած էին (ԴԻԻ. Բ. 236-241): Կաթողիկոսին ուղեկից էին, Մարտիրոս տեղապահ, Անտոն Մուկնեցի, Գրիգոր Ծուկալ, և Յովհաննէս գրագիր եպիսկոպոսները, և Յովսէփ Կարբեցի գանձապետ, Գրիգոր Աշտարակեցի կոնդակագիր, Յովհաննէս Ղրիմեցի ատենադպիր, Սահակ ծաղկարար, և Մինաս բժիշկ վարդապետներ, և սարկաւազներ և դպիրներ և սպասաւորներ, որոնց մէջ յիշատակուելու արժանի են, Թաղէոս Բէգնապարեան սարկաւազ, և Մեսրոպ Թաղիադեանց դպիր, (ԵՐՅ. Ա. 189, ՄՍՐ. 84) որ ուրարակրութեան հրաման ստացաւ Եփրեմէն Նախիջևանի մէջ, և անոր մոտ մնաց կոնդակներ գրելու: Դեռ Պարսից սահմանին մէջ էր ուղևոր կարաւանը, երբ հոկտեմբեր 2-ին լուր հասաւ, թէ Հիւսէյին զղջացած է կաթողիկոսը հեռացնելուն, և հեծեալներու գունդ մը ճամբայ հանած է վերադարձնելու համար: Կաթողիկոսը սկսեր էր կամաւոր նւերներով շօշափելի գումար կազմել, բայց առած լուրին օրն իսկ շտապեց ռուսական սահմանագլուխը անցնիլ զանց չընելով օրուան ժամերգութիւնն ալ կատարել ձիերու վրայ քալած ատեն, և սաստիկ ձիւնին ներքև: Հակառակ ամէն շտապի ուղևորներ չկրցան նոյն օր ռուսական երկիր մտնել և ստիպուեցան այն գիշերը մնալ ճանապարհին վրայ եղած քարաժայռների մի այրում, ոչ շատ հեռի Սիւնեաց Ծղուկ գաւառի Բոնակոթ աւանէն, որ առաջին կայանն էր ռուսական հոգին վրայ: Լուրը հասաւ Բոնակոթ, և գիշերանց գիւղացիներ դուրս ելան կապերտներով և պատրաստութիւններով, որպէսզի արև չծագած և ձիւնը չհալած, դիւրաւ մտցնեն կաթողիկոսական կարաւանը իրենց գիւղը: Եփրեմ անմիջապէս սկսաւ շրջակայ գիւղեր այցելել և նուէր հաւաքել, որոնց յօժարակամ կը մասնակցէին ամէն դասակարգեր, լսելով Մայրաթոռոյ տագնապալի կացութիւնը: Տաթևի մէջ լուր տրուեցաւ Եփրեմի տեղական իշխանութենէն այլևս չյառաջել մինչև որ Երմոլովէն արտօնութիւն ստացուի. բայց Երմոլով լեռնականներու դէմ պատերազմի էր գացած, և Վելիամինով կը տեղակալէր: Ներսէս անոր դիմեց որ ծերունի կաթողիկոսը գոնէ մինչև Շուշի գալու, և ձմերան ցուրտէն ապատելու, և հոն հանգստանալու արտօնուի. և ըստ այսմ Եփրեմ կրցաւ Հալիձորէ և Կէօրէսէ անցնելով Շուշի մտնել 1821 նոյեմբերի վերջերը, և իջևանիլ Հայրումեանց տունը, նախադասելով զայն Թառամեանց և Հախումեանց տուներու, որոնք աւելի մեծահարուստ էին, բայց հանրութեան գործերուն մէջ աւելի համբաւ չունէին:

2385 ՆԵՐՍԷՍԻ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ

Եփրեմ Շուշի մնաց, բայց ներքին հանգստութիւն չգտաւ, զի ամէն կողմէն սրտմաշուք լուրեր կը հասնէին: Էջմիածնի կացութիւնը օրէ ցօր վատթարացում էր, զի Հիւսէյին սարտար միաբանութիւնը պատասխանատու կը նկատէր կաթողիկոսին հեռանալուն, և անտեղի և կեղեքիչ պահանջներ կը շատցնէր: Միաբանութիւնն ալ անել գրութեան մատնուած կաթողիկոսին կը թախանձէր դարմանի կերպ մը հոգալ: Ինքն Եփրեմ առժամապէս Շուշի մնալու արտօնուած էր, պայմանաւ որ ոչինչ գործի ձեռնամուխ չլինի, որով ապարդիւն կանցնէին իր օրերը: Երմուլով դեռ կուշանար Տփղիս դառնալ, և Վելիամինով չէր համարձակեր կատարեալ արտօնութիւն տալ կաթողիկոսին: Եփրեմ շփոթած և շուարած Ներսէսին կը գրէր իրեն մօտ գալ խորհրդակցելու համար, բայց Ներսէս կը յապաղէր, զի վարժարանի հիմնարկութեան գործերուն տուած էր իր բոլոր ուշադրութիւնը: Բիշ մըն ալ ցաւած էր, զի կը սպասէր որ կաթողիկոսը առաջ իրեն լուր տուած ըլլար, որպէսզի նախահոգ պատրաստութիւնները կատարուած ըլլային: Բայց աստի ընդհանուր կացութիւն ձգտեալ էր, և Շուշիի մէջ կարգադրելու գործ չկար, և ինչ որ պիտի գործուէր, Տփղիսի մէջ պիտի կատարուէր Երմուլովի հետ տեսակցութեամբ, որուն օրէ օր կը սպասուէր, և պէտք չէր որ Ներսէս քաղաքէն հեռանար: Մանաւանդ որ Ներսէս ինքն սկսած էր իր միջնորդութիւնը Երմուլովի մօտ: Վերջապէս Երմուլով հասաւ 1822 յունուարի երկրորդ կիսուն, և բացարձակ կերպով անբաւականութիւն յայտնեց Եփրեմի ռուսական սահմանները անցնելուն և հոն մնալուն, պնդելով թէ Պարսից դէմ ցոյց մըն է եղածը, և ռուսական կառավարութիւնը վայն պաշտպանելով, առիթ տուած պիտի ըլլայ պատերազմ բանալու, որին շատ դէմ է խաղաղասէր կայսրը, և պիտի ոչնչանան Պարսից հետ հաշտ ապրելու իրեն կատարած ջանքերը: Ներսէս ընդհակառակն դիտել կուտար, թէ Եփրեմը դառնալու ստիպելը, վայն անխնայ բարբարոս սարտարի ձեռքը մատնել կըլլայ: Սակայն Երմուլով կը յամառէր իր միտքին վրայ, և յունուար 30-ին ուղղակի Եփրեմին ալ կը գրէր Էջմիածին դառնալ, որով Ռուսիան տագնապէ ապատած, և Պարսից ալ հաւատարմութիւն յայտնելով կաթողիկոսական գրութիւնը բարւոքած կըլլայ (ԵՐՅ.Ա.194):

2386. ԵՓՐԵՄ ՈՒ ՊԱՐՏՔԵՐ

Եփրեմ չէր կրնար Երմուլովի առաջարկին համակերպիլ, ուստի փետրուար 13-ին պատասխանեց յառաջ բերելով այն ամէն պատճառները որ զինքն ստիպեցին Ռուսիա ապաւինիլ, և Էջմիածնէ չմեկնած արտօնութիւն խնդրելը արգիլեցին, արգիլեցին, աւելցնելով նաև այն վտանգները, որոնց կենթարկուէր ետ դառնալով, ուստի կը խնդրէր որ կամ իրեն հրաման արուի Տփղիս երթալ և բերանացի խորհրդակցիլ, կամ Ներսէս արտօնուի իրեն գալ: Նամակը կը յանձնէր Սիմէոն Եպիսկոպոսի, որ Էջմիածինէ նոր հասած էր, որպէսի այնտեղի հանգամանքների մասին բերանացի ծանուցանէ: Երմուլով իր համոզումէն չփոխուեցաւ, և մարտ 24-ին նոր նամակով կրկին ստիպեց Եփրեմը Էջմիածին վերադառնալ, և եթէ կաթողիկոսութենէ հրաժարիլ ալ կը մտածէ, Էջմիածինի մէջ գործադրէ այդ խորհուրդը: Իսկ Ներսէսի Շուշի երթալուն պարագան, նոյն ինքն Ներսէսի կամքին կը թողուր, ոչ երթալը արգիլելով, և ոչ երթալու ստիպելով: Օր առաջ մարտ 12-ին գործը կոմս Նեսսելրօտէ նախարարին ալ հաղորդած էր, որ կայսեր կամքը հարցուի, և նախարարն ալ ապրիլ 12-ին կը պատասխանէր թէ կայսեր կամքով և իր կարծիքով՝ պէտք չէ որ Երմուլով կաթողիկոսին վերաբերութեամբ իր ընթացքը փոխէ: Եփրեմի վիճակը հետզհետէ կը ծանրանար Ռուսաց դիմադրութեամբը. հրաժարելու խօսքն իսկ, զոր Երմուլով իր նամակին մէջ յիշած էր, ծանր կու գար դուրսէն թելադրուելուն համար, որչափ ալ ինքը շատ կանուխէն այդ մտքը ունեցած ըլլար (2335): Իբրև վերջին միջոց, Տփղիս ղրկեց Մուղնեցի Անտոն արքեպիսկոպոսը և Ղրիմեցի Յովհաննէս վարդապետը, որ հարկաւ Ներսէսը Շուշի առաջնորդեն: Ներսէս ստիպուեցաւ և մայիսի սկիզբը հրաւիրակներու հետ Տփղիսէ մեկնեցաւ, և Շուշի հասնելով Թառամեանց ապարանքը իջաւ

(ԵՐՑ.Ա.203): Յուպիչ միջադէպ մը տեղի ունեցաւ այդ միջոցին: Յիշած ենք Էջմիածինի պարտքերուն համար Թառամեաններու եղած ապարդիւն դիմումը (2383), բայց Թառամեանց տրամադրութիւնը փոխուած էր Եփրեմի Շուշի հասնելէն ետքը. և յատկապէս Մարկոսի կողմէ, որ ուտնուռուցի անբուժելի ախտով կը տառապէր, և հաւաներ էր Եփրեմի մուրհակի հաշուոյն խնդրած 4000 ոսկին նուիրել: Երբոր Ներսէս հասաւ Մարկոս մերձ ի մահ էր, և իր հարստութիւնը օգուտ մը չունէր: Երկու տոպրակ ոսկի բերել կու տայ, Էջմիածինի և ուրիշներու մուրհակներն ալ մէկտեղ, և ուռուցեալ ոտքը անոնց վրայ դնելով, կը հառաչէ. Անպիտան գիրդ, ապաքինեա եթէ կարող ինչ իցես, դու յաստուած մոլորութեան աշխարհի: Ոչ, ոչ, այս ամենայն արտաքոյ է մտացածին պօրութեան քո: Եւ Աստուծոյ իմոյ օրհնեալ եղիցին կամք: Էջմիածինի մուրհակը սկտեղի վրայ կաթողիկոսին կը դարձնէ, ուրիշ մուրհակներն ալ կը հրամայէ տէրերուն յանձնել, երկու քսակ ոսկիներն ալ աղքատներուն բաժնել: Միւս օրը կը վախճանի, և Եփրեմի, Ներսէսի, միւս եպիսկոպոսներու և բազմաթիւ հոգևորականներու ու մեծամեծներու ներկայութեամբ կը թողուի չտեսնուած փառաւոր հանդէսով (ԵՐՑ:Ա.203):

2387. ԵՓՐԵՄԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Ներսէս Երմոլովի կողմէ հրահանգ ստացած էր, Եփրեմը կամ դառնալու կամ հրաժարելու համոզել, թէպէտ Ներսէս երկու պայմաններուն ալ համամիտ չէր, և Պետրբուրգ գտնուող ապգայնոց դիմած էր, որ աշխատին փոխել տալ կայսեր խիստ վճիռը: Բայց յաջող լուրը կուշանար, և Վելիամինով տեղակալ Երմոլովի անուամբ միշտ նոյն հրահանգը կը կրկնէր: Իսկ Եփրեմ ետ դառնալու միտքէն բացէ բաց կը հրաժարէր, և վերջապէս հրաժարելու ձևին գործադրութիւնը անհրաժեշտ կը դառնայ, որպէսզի կարենայ թոյլատրուիլ Ռուսիոյ սահմանին մէջ մնալ, և բնակիլ ուր որ ուզէ: Յունիս 20-ին գրեց Եփրեմ իր հրաժարականը, որուն վկայ ստորագրուեցան ներկայ եպիսկոպոսները, և Ներսէս հաղորդեց վայն Վելիամինովի 1822 յունիս 25-ին: Հրաժարագիրին մէջ գլխաւոր պատճառ յառաջ բերուած է իր տարիքը, և օր ըստ օրէ յամենայն կարողութեանց իւրոց, ներքնոց և արտաքնոց տկարանալը, թէպէտ դեռ 72 տարեկան էր: Կը յայտարարէ թէ ապատակամ ընտրութեամբ և ինքնայօժար անբռնադատ կամօք հրաժարած է: Կը յանձնարարէ յատկացուցանել փոխանակ իմ վայլ ոք բաւական ի բառնալ պահգուստի և կոչմանս, և հրաժարականը կուղղէ կայսերական մեծութեան ամենայն Ռուսաց, ևս և ժառանգի թագաւորութեան Պարսից, և ամենայն հասարակութեան հոգևորականաց և մարմնաւորականաց Հայոց, որք ի Ռուսաստան, և որք Կոստանդնուպոլիս և յամենայն սահմանս պանապան իշխանութեանց գտանին տարածեալք, և փափաք կը յայտնէ կալ ուրեք ի տեղի ապահով, ի ներքոյ քաղցր հովանաւորութեան և հպօր ձեռաց իւրոյ կայսերական մեծութեան ամենայն Ռուսաց: Այդ մասին Ներսէս Վելիամինովի կիմացներ թէ Եփրեմ մտադիր է Շուշիէն փոխադրուիլ Գանձակ կամ Ելիպաւետոպոլ քաղաքը: Արդէն Եփրեմ ուղևորած և Գուլստան գիւղը հասած էր, երբ Վելիամինովէ հրաման կը ստանար Շուշի մնալ, մինչև որ Երմոլով պատասխան ստացուի: Ուստի ստիպեալ Գանձակի ուղևորութիւնը կընդհատէր, և Գալուստանէ յունիս 30 թուականով յատուկ հրաժարագիր մըն ալ կուղղէր Աղեքսանդր Ա. կայսեր: Ասոր վրայ Եփրեմ կարսօնուէր, ու Գանձակ կը հասնէր օգոստոս 18-ին, բայց քաղաքին մէջ ապրիլ չուկելով կը քաշուէր Հաղբատու Ս. Նշան վանքը, իբր երկօրեայ ճանապարհ Տիգրիսէ հեռու: Հաղբատ կորսնցուցած էր իր հին փառաւոր վիճակը, և 1822 աշնան հապիւ երեք անշուք ու մութ ու խոնաւ խուցեր կրցան տրամադրուիլ Եփրեմի և իրեն հետ եղող եպիսկոպոսներու բնակութեան: Ներսէս ալ առժամապէս անոնց հետ մնաց, և վանքին ներքինին և պարիսպներուն նորոգութիւնը կատարեց, աւելորդ հետևորդները

Էջմիածին դարձուց, և ինքն ալ Տփղիս դարձաւ իր առաջնորդական պաղումներուն, և ի նպաստ Էջմիածնի՝ Կովկասի ռուսական կառավարութեան մօտ գործելու համար:

2388. ՆԵՐՍԷՍԻ ԶԱՆՔԵՐԸ

Եփրեմ 1822 աշունէն մինչև 1826 ամառ, իբր չորս տարի Հաղբատի մէջ բնակեցաւ, և անկէ ետքն ալ մինչև 1828 ամառ Տփղիս մնաց, միշտ հրաժարեալ կաթողիկոսի անունով, սակայն ոչ ոք մտաբերեց անոր հրաժարականը ընդունիլ և նոր կաթողիկոսի ընտրութեան ձեռնարկել, և ոչ իսկ կաթողիկոսական աթոռը պարապ հռչակուեցաւ, թէպէտ վեց տարի շարունակ կաթողիկոս չկար Էջմիածնի մէջ: Մենք ալ ուրեմն կրնանք Եփրեմի հրաժարագիրը պարզապէս իբր արտաքին ձև նկատել: Իսկ Ներսէս միշտ յաջադկոտներու լուստանաց առարկայ եղաւ, հակառակ իր գործունեայ ձգտումներուն և արդիւնաւոր աշխատութիւններուն: Այս առիթին մէջ ալ պակաս չեղան մախացող լեզուներ, որոնք հռչակեցին թէ Ներսէս բռնութեամբ ստիպեր է Եփրեմին հրաժարուիլ, թէ աքսորել է հայրապետին Հաղբատ, և թէ ինքն է հետամուտ գահին, մինչ ճշմարտութիւնն այս է որ եթէ Պետրբուրգ լուծիւն պահեց Եփրեմի հրաժարականի մասին Ներսէսն է պատճառը, և եթէ ռուսական նախարարներ շարունակեցին Եփրեմի գրութիւնները յարգել և միջնորդութիւններուն ընթացք տալ, դարձեալ Ներսէսն էր պատճառը: Մինչև իսկ Պարսից կառավարութեան առջև ալ միևնոյն ուղղութիւնը պաշտպանեց, համոզելով Ապպաս Միրպա արքայորդւոյն, թէ օծեալ հայրապետը ցմահ չէ կարող փոխուիլ, այնպէս որ նոյն ինքն Ապպաս երբեք կաթողիկոսի ընտրութեան վրայ չմտածեց, և Եփրեմը դառնալու ալ հրաւիրեց: Ապպաս աւելին ալ ըրաւ: Յովհաննէս Կարբեցին Էջմիածին չէր երբոր այս գործերը կը կատարուէին, և Կ. Պոլիս մտնել չկրնալով, Փոքր Ասիոյ վիճակները կը դեգերէր դրամ հանգանակելու: Եփրեմի հեռանալը և հրաժարիլը լսելով, փութաց մարդ ուղարկել Երևան, և առաջարկեց սարտարին երկու հազար թուման վճարել թէ կարենայ արքայորդին մօտ իր կաթողիկոսութիւնը յաջողցնել, սակայն Ապպասի պատասխան եղաւ թէ Հայոց օրէնքով անկարելի է նոր կաթողիկոսի ընտրութիւնը քանի որ օծեալը դեռ կենդանի է (ԵՐՅ. Ա. 219): Կարբեցին Էջմիածին գալէ վերջն ալ միշտ նոյն ձգտումները ունեցաւ, և ուկեց իրեն ճամբայ բանալ սարտարին առաջարկելով, որ եթէ կաթողիկոսի նոր ընտրութիւն պիտի չըլլայ, թող Ներսէս՝ կամ Եփրեմը վերադարձնէ կամ պարտքերը վճարէ: Այս առիթի է որ Ներսէս համարձակութիւն ունեցաւ ուղղակի Կարբեցին գրեալ 1821 սեպտեմբեր 13-ին, թէ խորհուրդ ի սրտի ունէիք ընկենուլ յաթոռոյ Կօծեալն Աստուծոյ (ԵՐՅ. Ա. 220): Այս եղելութիւնները կատարելապէս կարդարացնեն Ներսէսի ընթացքը, և եթէ կաթողիկոսութեան հետամուտ մէկ մը տեսնուի մէջտեղ, Կարբեցին և ոչ Աշտարակեցիին վրայ կը ծանրանայ այդ կասկածը (ՄՍՐ. 86):

2389. ՆԵՐՍԷՍ ԵՒ ՊԱՐՍԻԿՆԵՐ

Բայց աթոռը պարապ չէր, Եփրեմ միշտ իբր կաթողիկոս նկատուած էր, թէպէտ գործերէ ձեռընթաց էր բայց աթոռին մէջ պաշտօնապէս տեղակալ չկար: Սինոդ մը կար իբրև վարիչ ժողով, բայց առանց նախագահի գործունեայ դերչէր կրնար ըստանձնել: Ներսէս պատրաստ էր իր գործունէութիւնը ընդարձակել, բայց պաշտօնական կերպարան չունէր: Հետևաբար շփոթ կացութիւն մը կը տիրէր Մայրաթոռոյ վրայ և զուր ջանք ըրած պիտի ըլլայինք կանոնական ընթացք փնտռել ժամանակին եղելութեանց վրայ: Ներսէս միշտ նախաձեռնարկ և գործունէութեան մէջ անկաշկանդ, մինչև իսկ յատուկ գիրով և Տաթևի Մարտիրոս եպիսկոպոսի պատգամաւորութեամբ պարսից արքայորդւոյն կը դիմէր, և կառաջարկէր որ բարձրահրաման հրովարտակով իւրով հրաման տացէ իրեն կարգադրել պահակորականոն աթոռոյ Էջմիածնի: Միև կողմէ կը յիշատակուի, թէ 1826 յունուարին, Ներսէս մտադիր էր Ռուսաց կայսեր ալ ներկայանալ

վասն հոգատար լինելոյ աթոռական հարկաւորութեանց որ պարտքերու խնդրէն վատ ուրիշ բան չի կրնար ըլլալ: Իսկ Ապպաս Միրզայի մօտ իբրև առաջին քայլ կառաջարկէր, որ Էջմիածնի կաթողիկոսը ուղղակի թագաժառանգ փոխարքայէն կախում ունենայ, և Երևանի սարտարէն անկախ ըլլայ, վասնի ամէն անկարգութեանց և անիրաւութեանց արմատ և հեղինակ սարտար Հիւսէյին խան կը նկատուէր, որ բացարձակ իշխանութեամբ կը ձոխանար Երևանի նահանգին վրայ: Ներսէս կը խնդրէր ևս որ արքայական օրէնքով արգիլուի 30% տոկոսը, որ կը տիրէր, վեցամիսէ վեցամիս բարդումով, և տարեկան 10% կամ 12% տոկոսը բաւական կը սեպուի և ինքն Ներսէս ճանաչցուի հաշիւները նայող և կացութիւնը ներկայացնող (ԵՐՅ.Ա.221): Ապպաս Միրզա արքայորդին լաւ ընդունելութիւն յայտնեց առաջարկներուն, որոնք սակայն արդիւնք չունեցան, քանի որ Հիւսէյին խան իր գիրքը կը պահէր, և մինչև իսկ Էջմիածնի եպիսկոպոսները կը ստիպէր Երմոլովէ պահանջել, որ Ներսէսին հրամայէ Ռուսաստանէ և Տեճկաստանէ եկած նպաստները Էջմիածին դրկել: Առաջարկին նպատակը շատ յայտնի էր, ուստի Երմոլով եպիսկոպոսներուն կը պատասխանէր, թէ գիտէր որ բռնադատեալ գրած են, և թէ չէ ներեր օտար երկրի կառավարիչի ազահութիւնը յագեցնել իրեններուն դրամով: Սարտարին ալ ուղղակի կը գրէր թէ լաւ գիտէ, թէ որ աստիճան բռնանում է նա Էջմիածնի վանքի վրայ: Ապպասի ալ կապդարարէր որ իրեն պատուաւոր և օգտակար պիտի ըլլար Էջմիածինը պաշտպանել: Այս յայտարարութեանց իբր պատասխան Ֆէթհալի խան յատուկ դեսպանութեամբ Թաւրիպէ Թիֆլիզ կու գար, և կը յայտնէր որ Էջմիածինը Երևանի սարտարէն անկախ կը հռչակեն, եթէ Ռուսեր ետ դարձնեն Պարսիկներէ գրաւած երկիրներէն որոշ մաս մը (ԵՐՅ.Ա.224): Սակայն ոչ Ռուսեր երկիր դարձնել մտադիր էին, և ոչ Պարսիկներ իրենց առաջարկներուն մէջ անկեղծ էին երկու կողմեր ալ փոխադարձ յարաբերութիւնները կերկարէին լոկ ատեն շահելու և պատեհ գտնալու ականկալութեամբ: Այսպէս անցան 1822-է 1825 երեք տարիները, առանց գոհացուցիչ արդիւնք մը յառաջ բերելու: Եփրեմ և Ներսէս և Սինոդ ալ պարագաներու համակերպելէ և անկայուն կացութեան մէջ ծփայէ վատ բան չէին կրնար ընել: Նոյն ինքն Ներսէսի բուռն գործունէութիւնն ալ արդիւնք չէր ունենար, քանի որ պարագայից վրայ իշխելու չափ վօրութիւն չունէր:

2390. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Յանկարծ Պարսից արքունիքը իր փնտռած պատեհ առիթը գտած ըլլալը կարծեց Ռուսաց կայսեր մահուամբը: Աղեքսանդր Ա. անվաւակ կը մեռնէր 1825 նոյեմբեր 18-ին, Կոստանդին եղբայրը յաջորդութենէ կը հրաժարէր, և Պօղոս կայսեր երրորդ որդին, Նիկողայոս Ա. գահ կը բարձրանար դեկտեմբեր 12-ին: Երկու օր ետքը վինուորական դաւադրութիւն մը կը յայտնուէր նոր կայսեր անձին դէմ, որ թէպէտ շուտով կը զսպուէր, և խաղաղութիւնը կը շարունակէր, սակայն համբաւը կը ստուարանար, և Ապպաս Միրզա գործի օրը հասած կը կարծէր, իբր թէ Ռուսիոյ մէջ քաղաքական պատերազմ կը սկսի, Ռուսեր Կովկասէ կը քաշուին, և Պարսիկներ իրենց հին սահմանները կը նորոգեն: Տակաւ առ տակաւ պատերազմական պատրաստութիւններ կը սկսին Պարսից կողմէն, գունդեր դէպի սահմանագլուխ կը յառաջեն, ժողովուրդը կոզևորուի, կարդացողներ կրօնական պատերազմ կը քարոզեն: Ասով մէկտեղ Ապպաս Երմոլովի հետ բանակցութիւնները կը շարունակէ, մինչև իսկ կառաջարկէ շնորհաւորութեան դեսպան դրկել Պետրբուրգ, սակայն իրեն իմաց կը տրուի, թէ պէտք է սպասել որ նախապէս նոր կայսրը իր գահակալութիւնը պաշտօնապէս հաղորդէ: Այդ նպատակով Մենշիկով դեսպան 1826 փետրուարին Պետրբուրգէ կուղևորի, և Պարսկաստան հասնելով ականատես կըլլայ թշնամական խլրտումներուն Ֆէթհալի շահէն պապ ընդունելութիւն կը գտնէ, խաղաղութեան բանակցութիւններ ընդունելութեան չեն հանդիպիր մինչև իսկ դարձած ատեն ամիս մը Երևանի

մէջ արգելական կը պահուի. և դեսպանը Պետերբուրգ չդարձած պատերազմը կը սկսի: Նիկողայոս կայսր իր եղբոր հետևած խաղաղութեան և հաշտութեան ուղղութիւնը կը պահէր, որով կովկասեան բանակը անպատրաստ էր, և 1826 յուլիս 16-ին պարսիկ գունդ մը կը խուժէր Շիրակայ գաւառը, Կորագլուխ ունենալով Հասան խանը, սարտար Հիւսէյինի եղբայրը: Սակաւաթիւ ոռու գունդեր չէին կրնար դիմադրել յարձակող բանակին, որոնց միացած էին տեղւոյն ապստամբ մահմետականներն ալ: Շիրակ և Արցախ և Շամախի աւեր և աւար կը դառնային, և անձնապաշտութեան դիմող Հայերու սիրագործութիւններն ալ չարիքը արգիլել չէին կրնար: Տէլի Ղապարի և Ղարաբիլիսէցի Աւետիքի անունները դեռ կը յիշուին: Ապպաս Միրզա անձամբ Արցախ կը մտնէր 60,000 զօրքով, Շուշին կը պաշարէր, Գանձակի կը տիրէր, Տաթևը կաւերէր, վանահայր Մարտիրոս Եպիսկոպոսը, նոյն ինքն պատգամաւոր գացողը (2389), Թաւրիզ գերի կը դրկէր, որ յանկարծամահով կը վախճանէր նոյն քաղաքը: Շուշիի պաշարումը երկարեցաւ հակառակ պաշարի և ջուրի պակասութեան, և նոյն միջոցին ասպատակը տարածուեցաւ Գանձակի կողմերը, քանդեց Էլէնընտօրֆ, և Աննէնֆէլդ և Կատարինֆէլդ գերման գաղթականութիւնները, և հարիւրներով գերմանուհիներ հրապարակի վրայ վաճառուեցան և կանանոցներ ճոխացուցին (ԵՐՑ.Ա.236): Տփղիս ալ սկսած էր վախնալ պարսիկ արշաւանքէն:

2391. ՆԵՐՍԷՍԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Նեղ պարագաներուն մէջ, երբ բաւական ոռուսական զօրք չկար երկիրը պաշտպանելու, Երմոլով պինուորական խորհրդակցութեան հրաւիրեց Ներսէսն ալ իբր միակ մարդը, որ կրնար տեղական տարրը շարժման մէջ դնել: Ռուսեր յանկարծական յարձակումներու ներքև և անպատրաստ տակաւին օրինաւոր պատերազմի յայտարարութիւն չէին ըրած, երբ Ներսէս իր պատերազմաշունչ շրջաբերականը ցրուեց 1826 յուլիս 29 թուականով: Խոհական ըզգուշաւորութեամբ շրջաբերականը ուղղուած էր ոռուսահպատակ Հայերուն, Տփղիս, Գանձակ, Արցախ, Նուխի Շամախի, Բագու և Դարբանդ բնակողներուն: Շրջաբերականը նախնեաց յիշատակներով կը սկսի, այժմեան տխուր կացութիւնը կը բացատրէ, պարսկական բռնութեանց դէմ ոռուսական պաշտպանութիւնը կը բարձրացնէ Հայոց կողմէ Ռուսաց հանդէպ ցուցուած երախտագիտութիւնը և հաւատարմութիւնը կը պատմէ, գործելու ժամանակը հասած կը ցուցնէ, և Յուդա Մակարէի յորդորակը կը կրկնէ. Մեռցուք քաջութեամբ ի վերայ եղբարց մերոց, և ոչ խառնեսցուք պահուն վատութեան ընդ արութիւնս քաջութեան (Ա.ՄԱԿ.Թ.10). և կը վերջացնէ յորդորելով, դիմադրեցէք թշնամուն և սորա արբանեակներին, կամ Ռուսաց զօրքերի հետ միասին և կամ թէ մի ուրիշ կերպ, որ աւելի յարմար կը լինի ներկայ աւազակօրէն յարձակմանց միջոցին, իսկ թէ հարկ լինի մի՛ խնայէք ձեր արեան վերջին կաթիլը: Ներսէս խօսքով և խրատով չբաւականացաւ, այլ գլուխ կանգնեցաւ հայ կամաւորներուն, և մինչև որ ոռու գունդեր հասնէին և գործի ձեռնարկէին, հայ պինեալ խումբեր արի դիմադրութիւն ըրին Պարսիկներուն, և բաւական վնասներ ալ հասուցին:

2392. ԳՐԻԳՈՐ ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆՑ

Այս կարգին յատուկ յիշատակութեան արժանի է Գրիգոր մանուշարեանցի անունը, աստիճանով Եպիսկոպոս, պաշտօնով Նոր-Բերդի Ս. Նշանի վանահայր, բնիկ Արցախու Շամշադիլ գաւառի Հախում գիւղէն, որուն իր անունն ալ տուած է, պի Վարդապետի գիւղ անունով սկսաւ յիշուիլ Հախումը: Մանուշարեանց գիտէր վեղարն ու վերարկուն ալ ծալեալ, և Արցախեցիի ոչխարների գլխանոցը և շինականի տարազը հագնիլ, սուրը կապել, և հրացանը ուսը ձերմակ նժոյզը աշտանակել և կռիւի դաշտը ելլալ: Մանուշարեանց 500 կտրիճ երիտասարդներու հեծելագունդ մը կազմած էր, որուն ինքն էր գնդապետը, և պարագան ներկայացած ատեն գործի

կը ձեռնարկէր, գործը աւարելէն ետքը իր վանքը քաշուելու պայմանով: Իշխան Յիցիանովի 1803-ին Գանձակի և Երևանի վրայ քալած ատենը (2279), Մանուչարեանց իր գունդովը անոր յառաջապահն էր, և իր քաջագործութեանց ի վարձ Ս. Գէորգի վինուորական ասպետութեան շքանշանը և 300 ռուբլու թոշակ ստացած էր կռիւի դաշտին վրայ (ԵՐՑ. Ա. 244): Կոմս Գուտովիչ ալ 1808-ին Երևանի և Նախիջևանի վրայ քալած ատեն, Մանուչարեանցը և նորա գունդը միատեղ կառնէր, և դարձեալ ի վարձ կայսեր կողմէն Ս. Վլատիմիրի և Ս. Աննայի շքանշանները բերել կու տար, և 300 ռուբլու թոշակն ալ 600-ի կը բարձրացնէր: Պարսից հետ խաղաղութեան պատճառով Մանուչարեանց դարձեալ իր վանքն էր դարձած. միայն մերթ ընդ մերթ աւազակներ հալածելու և աւարնին թափելու համար իր հանդարտութիւնը ընդմիջելով: Այդ կացութիւնը կը շարունակէր երբոր պարսիկ խումբերը ռուսական սահմանները կասպատակէին (2390) իսկ Եփրեմը կը մնար Հաղբատ, և վախ կար որ Պարսիկներ այն կողմն ալ հասնին և անոր անձին տիրանան: Ներսէս կուզէր Եփրեմը ապահով տեղ մը փոխադրել, բայց ճամբաներն ապահով չէին, և Մանուչարեանցէ լաւ գործակատար մը չէր կրնար գտնալ: Իսկոյն Հաղբատ հասաւ, հայերէն Ազու Տէր, և մահմետականներէն Տէլի Քէշիշ կոչուած և սարսափ ազդող Եպիսկոպոսը, միայն 40 հեծեալներու հետ, և Եփրեմը օգոստոս 6-ին Հաղբատէ հանելով, միւս օր անվտանգ մտցուց Տփղիս, ճամբուն վրայ 300 պարսիկ հեծեալներու յարձակումն ալ ցրուելով: Երմոլով ալ վարմացաւ հայ Եպիսկոպոսներին քաջութեան վրայ, և անոր յանձնեց Շամշադիլի և Ղազախի և Սևանի կողմերէն փախած կամ գերուած ընտանիքները տեղերնին դարձնել: Երմոլով անձամբ ալ նոյն կողմերը գալով ականատես եղաւ Մանուչարեանցի սխրալի յաջողութեանց, և ինքնաբերաբար հարցուց թէ ինչո՞վ կարող է վարձատրել անոր ըրածները Եպիսկոպոսը իրեն համար բան մը չուզէ, այլ խնդրեց որ վերջ տրուի թուրք իշխանաւորներուն հայ ազգաբնակչութեան վրայ գործած կեղեքումներուն և Երմոլով 1826 հոկտեմբեր 1-պաշտօնագրով Մանուչարեանցի արժանիքը բարձրացուց, և յանձն առաւ անոր խնդիրը լիով կատարել, այժմէն մասնակի կարգդրութիւններ ալ հրամայելով:

2393. ԻՇԽԱՆ ՄԱՏԱԹԵԱՆՑ

Պարսիկ հրոսակը պաշարած էր Շուշի քաղաքը, ուր ապաւիններ էին ռուսական խումբերը, բայց պաշտպանութիւնը տակաւ կը տկարանար: Երմոլովի կողմէն քանի մը վաշտեր միայն կրցան յղուիլ պաշարողները ցրուելու, որոնք չկրցան ներշնչել քաջութեան յոյս մը, ինչ որ կրցաւ ազդել միայն իշխան Մատաթեանցի կամ Մատաթովի անունը: Արցախեցի աննշան մարդու վաւակ էր եղած, և որք մնալով մելիք Ջումշուտի տան մէջ պատսպարուած, և Մելիքին հետ անգամ մըն ալ Պետրբուրգ էր գացած: Հուժկու և հսկայ երիտասարդը Պօղոս կայսեր մտադրութիւնը գրաւած էր, որ վայն իրեն մօտ ունենալու համար Արցախէ ետ բերել կու տայ, թիկնապահ գունդին մէջ կը դնէ, սպանութեան կը բարձրացնէ և հետզհետէ մինչև իշխանական աստիճան կը շնորհէ: Մատաթով իբրև վինուորական մասնակցած էր 1808-1810 պատերազմներուն Տաճկաց դէմ, և 1812-1814ի պատերազմներուն Նաբօլէոնի դէմ և քաջութեան անուն ժառանգած էր, իսկ 1815-ին Շուշի և Շիրուան և Արցախ գաւառներու կառավարիչ էր նշանակուած, ուր Լէկզիներու դէմ նշանաւոր յաղթութիւններ տանելով, Երմոլովի սիրելի կը դառնար և հանրութենէն կը գովուէր: Շփոթութեանց օրերը, 1826 ամառը, Մատաթով Կովկասի ջերմուկները կը գտնուէր վէրքերէ բժշկելու և կապդուրուելու համար, այլ պատերազմի շոինդը չթողուց որ շարունակէ, Տփղիս եկաւ, Երմոլովի ներկայացաւ, իր ծառայութիւնը առաջարկեց, Շուշի գացող բանակին հրամանատար նշանակուեցաւ, և օգոստոս 13-ին արդէն բանակին մէջն էր (ԵՐՑ.Ա.258): Մեծ եղաւ տպաւորութիւնը, մանաւանդ երբոր Մանուչարեանց ալ իր հեծելագունդով Մատաթեանցի

խառնուեցաւ, և ոչ միայն տեղացի Հայեր, այլ և ռուսական գաւառներու Թուրքերն ալ կամաւոր գրուեցան Պարսից դէմ պատերազմելու: Զգացումներ փոխուեցան և ռուսական յաղթութեան վրայ վստահութիւնը շատցաւ:

2394. ՍԱՐԳԻՍ ՄԵՏՐԱՊՈԼԻՏ

Շուշի տակաւին պաշարուած կը մնար, և պարսիկ հրոսակը չէր յաջողեր քաղաքը գրաւել: Ապպաս Միրզա արքայորդին, պարսիկ արշաւանքին ընդհանուր հրամանատարը, նոր կերպ մը մտածեց պաշարեալներուն յամառութիւն յաղթելու: Իրեն գրաւած մասին մէջ կը գտնուէր Սարգիս Հասան-Ջալալեան, որ առաջ համակերպած էր Ղուկասի հրամանին և Աղուանից կաթողիկոսութեան անունէն և կարմիր կնիքէն հրաժարելով, իբր պարզ մետրապոլիտ կամ արքեպիսկոպոս կը մնար Գանձասար, բայց Ռուսաց տիրապետութեան առթիւ նորէն կաթողիկոսի անունն ու կնիքը սկսած էր գործածել: Ներսէս Տփղիսի առաջնորդութեան անցնելով, ռուսական կառավարութեան հետ բանակցութեան մտաւ Եփրեմի անունով, Աղուանից կաթողիկոսութեան անունը հիմնովին խափանել տուաւ պետական վճռով 1815-ին, և Սարգիս պաշտօնապէս հռչակուեցաւ որպէս միայն արքեպիսկոպոս կամ մետրապոլիտ Գանձասարի կամ Ղարաբաղի, որ է Արցախը: Բայց Սարգիս սիրտին մէջ կը պահէր միշտ կաթողիկոսական ձգտումները, և պարսից ներկայութիւնը յաջող առիթ կը նկատէր, ուստի յանձն առաւ Ապպասի առաջարկութեամբ Շուշիի բերդին առջև երթալ հայ և պարսիկ հետևորդներով և պաշարեալները անձնատուր ըլլալու յորդորել, յայտարարելով թէ ինքը Սարգիս կաթողիկոսն է. և երդվում է իւր սուրբ կարգով՝ որ Պարսիկները չեն վնասիլ նոցա, եթէ անձնատուր կլինին: Ոչ միայն պինդներ, այլ և կլիներ և աղջիկներ քարէ կարկուտով պատասխանեցին Սարգիսի առաջարկին, դու մեր հոգևոր տէրը չես դու մօլլա Սարգիս ես՝ աղաղակներով: Թէպէտ գովելի չէր Սարգիսի առած քայլը, այլ անուղղակի լաւ արդիւնք ունեցաւ, և Գանձասարի վանքը կործանումէ և շատուշատ Հայերու կեանքը կտորածէ ապատեց: Այդ միջոցին Մատաթեանց և Մանուչարեանց իրենց պատերազմական պատրաստութիւններով էին վբաղած, օգոստոս 22-ին ցրուեցին և հալածեցին Զուրաբ Խանի և վրացի Աղեքսանդրի պորքերը, սեպտեմբեր 3-ին Շամքօրի մեծ յաղթանակը տարին, և 4-ին Գանձանակը գրաւեցին, որ նոր անունով Էլիպավէթալ կը կոչուէր: Մատաթեանց իր ընթացքը շարունակելու կը պատրաստուէր, երբ սեպտեմբեր 10-ին Գանձակ հասու Յովհաննէս կամ Իւան Պասքևիչ պորավարը, Կովկասեան բանակին ընդհանուր հրամանատար անուանուած, իրեն հետ բերելով կայսերական թիկնապահ գունդին մի մասը, որ 1825 դեկտեմբեր 14 ի դաւանութեան (2390) մասնակցելուն համար, իբր պատիժ, Պարսից դէմ պատերազմին կը վրկուէր: Նոր ձակատամարտ խոնուեցաւ սեպտեմբեր 13-ին Գանձակի դաշտին վրայ, և յաղթութիւնը Ռուսներուն մնաց Մատաթեանցի շնորհիւ: Ապպաս Շուշիի պաշարումն ալ վերցուց և մինչև Թաւրիզ փախաւ, իսկ Պասքևիչ և Մատաթեանց ականակուռ սուրով պատուրեցան, և վերջինս պորաբաժինի պորավարի աստիճանին բարձրացաւ, իսկ աւարին թնդանօթներն ու դրօշները Մոսկուայի արքունական պալատը վետեղուեցան:

2395. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՍՔԵՒԻՉ

Պասքևիչ պարսկական արշաւանքին հրամանատար նշանակուելով Երմոլովի դիրքը խախտած պի կը մնար միշտ Կովկասի կառավարչապետ և Պասքևիչ պարտաւոր էր անոր հրահանգներուն հետևիլ: Բայց խուլ պայքարը սկսած էր արդէն երկուքին մէջ: Պասքևիչ հարաւային Ռուսիոյ Պլտաւա քաղաքը ծնած 1782-ին, և 18 տարեկանէն պալատական սպաներու շարքը անցած, 1804-1814 պատերազմներու մասնակցած, 29 տարեկան պորավարութեան աստիճանին բարձրացած, Աղեքսանդր կայսեր սիրելի եղած, Նիկողայոսի թագադրութեան

ուղեկցած, և կայսերական կամքի գործադրության պաշտօնեայ դարձած, զինքն միշտ բախտէն փայբայուած գտաւ, և իր ձգտումներուն չափ չդրաւ: Այս անգամ ալ իրեն դիւր ուրիշի ստորագրեալ ըլլալը, և առաջի օրէն Երմուղովը տապալելու ձեռք պարկաւ (ԵՐՅ.Ա.266), օգտուելով այն ներքին յարաբերութիւններէն՝ զորս արքունիքին մէջ ունէր, և ամենասև գոյներով նկարագրելով Երմուղովը և անոր օգնականները և բոլոր բանակը, մինչ երես առ երես ամէն գովեստ կը շռայլէր անոնց, անոնց ձեռնտուութիւն ապահովելու համար: Իսկ Երմուղովը անկասկած կը շարունակէր իր գործունէութիւնը: Հասան խանի նոր բանակով և մեծ հեծելագունդով յառաջելուն լուրն առնելով, ինքն Հասանու գետակի կողմը գնաց, Դիլիջանի ձորը Մանուչարեանցի յանձնեց, և Դենիս Դաւիթով զօրավարը Ջալալօղլի կողմը վրկեց, որ Հասան խանին հանդիպելով վայն փախուստի ստիպէ: Հասան խան հայ գիւղերէն հանեց իր վրէժը, և Էջմիածինն ալ քարուքանդ ըրած կըլլար, եթէ նոյնիսկ թիւրք պէյերը չընդդիմանային չարամիտ հրամանին: Հասան խան ետ դառնալով Երևան ապաւինեցաւ, և Դաւիթով պաշարման պիտի ձեռնարկէր, բայց ձիւներ սկսած էին, և Երմուղովէ հրաման եկաւ թշնամութիւնները ընդհատել, և պաշարումը գարունին յետաձգել: Միայն Մատաթեանցի հրաման տրուեցաւ ձմեռուան մէջ Երասխը անցնիլ, և Մուղանի դաշտը հաւաքուող խուժողութիւնները ցրուել, զոր նա գլուխ տարաւ հայ կամաւորներու հեծելագունդով և 1827 յունուարին Արցախու ձմերոցը դարձաւ, և այն տեղն ալ մաքրեց վանապան կողմերէ եկած աւարառու լեռնականներէն (ԵՐՅ.Ա. 264):

2396. ԵՐՄՈՒՂՈՎ ԵՒ ՊԱՍՔԵՒԻՉ

Պատրաստութեանց միջոց մը եղաւ 1826-1827 ձմեռը: Երմուղով մեծ յոյս դրած էր հայ կամաւորներու օգնութեան վրայ, և ամէն կերպով ջանաց շահիլ Հայերուն սիրտը, և ամուր կերպով միացնել անոնց զգացումները ռուսական կառավարութեան հետ: Այդ մասին իրեն հաւատարիմ գործակից և ժիր գործադրիչ ունեցաւ Աշտարակեցի Ներսէսը, որ պարսիկ իշխանութեան ներքև Հայոց նեղութիւնները և չքանալը տեսնելով, կատարեալ հաւատքով կակնկալէր Հայոց վերակենդանութիւնն ու երջանկութիւնը տեսնել ռուսական հովանաւորութեան ներքև: Երմուղովէ գաղտնի չէր անշուշտ, որ կոմս Տիբիչ ալ, որ պատերազմին նախագիծը կազմելու համար Կովկաս էր եկած, Նիկողայոս կայսեր կը ներկայացնէր Ներսէսը, որպէս մի անձնաւորութիւն որ կարող է շատ օգտակար լինել Ռուսաց բանակին: Ասոր հետևանքն էր 1827 փետրուար 2 թուակիր հրովարտակը Ներսէսի հասցէին ուղղուած, որով կայսերական երախտագիտութիւն կը յայտնուէր Հայոց ընթացքին մասին և վստահութիւն կը ներշնչէր թէ յարատեւել ունին, առ նոսա յատուկ ողորմութիւնք, ցորչափ տևեսցէ անյողողող հաւատարմութիւն ազգին Հայոց: Երմուղով ինքն ալ փետրուար 15-ին գրութեամբ կը փութար յայտնել երախտագէտ տէրութեան հարկ եղած շնորհակալութիւնը և կը հաւաստէր թէ Ներսէսի ամէն մի գովելի գործը իր կողմէն միշտ կը վկայուի կայսեր առջև: Կայսերական հրովարտակը հանդիսապէս կարդացուեցաւ Վանքի մայր եկեղեցին խուռն բազմութեամբ և Ներսէսի սրտառուչ ձառով (ԵՐՅ. Ա. 265): Բայց գաղտնի հնարքները Երմուղովը տապալելու, մինչև որ մարտ 29-ին կառավարչապետութեան պաշտօնն ալ Երմուղովէ Պասքեիչի կը փոխանցուէր, առաջիկայ պատերազմի միջոցին աւելի ամփոփոխ և աւելի ժիր վարչութիւն մը պատրաստելու պատրուակով: Պասքեիչի իսկոյն կը ձեռնարկէր Երմուղովի հաւատարիմներն ալ իր շրջանակէն հեռացնել, և հետզհետէ անգործ կը թողուէին կամ այլուր կը փոխադրուէին Երմուղովի ձեռքին ներքև յաղթութիւն տանող զօրավարներէն Վելիամինով եղբայրները և Դաւիթովը, ինչպէս նաև Մատաթեանցը, որ Տիֆլիսի մէջ հինգ ամիս անգործ թողուելէ ետքը Դանուբի բանակը կը վրկուէր ռուս և թուրք պատերազմին մասնակցելու: Թէպէտ այն կողմն ալ արդիւնաւոր եղաւ հայ իշխանը, սակայն իր սրտին վրայ ճնշեց Պասքեիչի

հալածանքը, և քիչ ետքը վշտերից մեռաւ 1829 սեպտեմբեր 4-ին Շումլա բերդին մօտ, և մարմինը Պետրբուրգ փոխադրուելով ռուսական եկեղեցւոյ մէջ թաղուեցաւ, զի ռուս օրիորդի հետ ամուսնացած և որթոտոքսութիւն ընդունած էր (ԵՐՑ. Ա. 259):

2397. ՆԵՐՍԷՍ ԵՒ ՀԱՅԱԳՈՒՆԴԸ

Ներսէսն ալ Պասբևիչի սիրելի չէր կրնար ըլլալ քանի որ Երմուլովի հոգևին յարած էր, բայց Ներսէս յառաջիկայ յաջողութեան համար անհրաժեշտ անձ մըն էր, և Ներսէս ինքն հանրային տեսակէտով ոգևորուած, անձնականութիւններէ շատ բարձր էր, որով կրցաւ պահ մը շարունակել Պասբևիչի և Ներսէսի գործակցութիւնը: Ներսէսի ծրագիրին գլխաւոր առանցքը կը կազմէր հայ գունդ մը մէջտեղ հանել, որով Հայեր պզալի կերպով Ռուսաց նիպակակից և աջակից պիտի ճանաչուէին, և յաղթութեան օգուտներուն մասնակցելու իրաւունք պիտի ստանային: Երմուլովէ ստացած հաւանութիւնը Պասբևիչի մօտ նորոգեց, և սորա կողմէն Տփղիսի պինուորական նահանգապետ պօրավար Սիպեագին պաշտօն ստացաւ կազմութեան հսկել: Ներսէսի հրաւուէրը սիրալիր ընդունելութիւն գտաւ Հայոց մէջ, և 1827 մարտին 200-ին հասած էր պինուորագրուողներուն թիւը, որոնց Ներսէս դիտաւորութիւն ունէր անձամբ առաջնորդել, և յառաջապահ պօրաց հետ քալել Երևանի վրայ: Մարտ 30-ին աւագ չորեքշաբթի օր, հանդիսաւոր պօրանցք կատարուեցաւ, և ձիու վրայ հեծած, սրտաշարժ ճառով ոգևորեց իւր պինուորներուն, և քանի մը անգամ գունդը առջևէն անցուց ռազմաւոր ձևերով և նուագուած երաշտութեամբ և կեցցէներու գոռումներով, որոնց Ներսէս կը պատասխանէր. Ապրիլ քաջեր, շնորհակալ եմ: Ներսէս չկրցաւ կազմակերպութիւնը աւարտելուն սպասել, և պարտաւորուեցաւ ապրիլ 2-ին Տփղիսէ մեկնիլ Զալաօղլի հաւաքուած ռուսական բանակին առաջնորդելու համար (ԵՐՑ.Ա.272), որ նոյն օր Բօրչալուէ պիտի մեկնէր դէպի Երևան, հրամատարութեամբ պօրավար Բենկենտօրֆի, Լապարեան ճեմարանի իշխանապետին եղբօր: Զինուորներու թիւը տակաւ ստուարացաւ, և մայիս 15-ին արդէն 600 եղած էր, երբ Երկրորդ Ծաղկապարդի կիրակի օրը վանքի մայր եկեղեցին հանդիսապէս և բազմաթիւ ռուս պօրավարներու ներկայութեամբ երգումի արարողութիւն ու դրօշակի օրհնութիւնը կատարուեցան, իսկ պարագային համեմատ ոգևորեալ և ոգևորիչ ատենաբանութիւնն ընել Ալամդարեան Յարութիւն քահանային վիճակեցաւ, զոր յիշեցինք իբր Ներսիսեան վարժարանի տեսուչ (2377): Հայագունդը Տփղիսէ մեկնեցաւ մայիս 17-ին իր դրօշակով դէպի Երևան, Բենկենտօրֆի և Ներսէսի միանալու համար, և այնչափ մեծ էր ապգային հրճւանքը, որ Երևանի սահմանը չհասած հապարէ աւելի եղած էր հայ պինուորութիւնը (ԵՐՑ.Ա.284):

2398 ՀԱՅԱԳՈՒՆԴԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Հայագունդին կազմութեան վերաբերեալ տեղեկութիւնները լրացնելու համար, յիշենք թէ պաշտօնագիրները մայիս 24-ին հրատարակուեցան պօրավար Սիպեագին ստորագրութեամբ, որով կորոշուէին կազմակերպութեան պայմանները 29 յօդուածներով, և մէկ յառաջաբան ապդարարութեամբ, որով կը ծանուցանէին կայսերական հրամանը, և Պասբևիչի կողմէ Սիպեագին եղած յանձնարարութիւնը, գունդին կազմուիլը, դրօշակի օրհնութիւնը, և պինուորներուն ուղևորիլը: Հրահանգը կը թուէ պինուորագրութեան պայմանները և կը ճշդէ պարտքերն ու իրաւունքները, և որպէսզի իւրաքանչիւր ոք որ յօժարակամ ի նոյն մտանէ կարասցէ գիտել թէ ցորչափ ժամանակ և որպիսի դաշամբք պարտաւորի ծառայել: Կանոնները շարադրուած են բոլորովին ռամիկ լեզուով իսկ պաշտօնական բառերը ռուսերէն են պահուած, որով լեզուի կողմանէ ևս հետաքրքրական վաւերագիր մը կը դառնայ հրահանգը (ՄՍՐ.192-197): Այսպէս 7-րդ յօդուածը կըսէ, նրանք օրթում են ուտում հաւատարիմ ծառայութեան համար այսինքն,

հաւատարմութիւն պիտի երդնուն, և 10-րդ յօդուածը կը գրէ, օֆիցերներ տեղ ջոկվում են Ունտէր օֆիցերներինմէն, իրանց դօշադութեան, խելքի և ջերմեռանդութեան գօրա, այսինքն սպաները ենթասպաներուն մէջէն կառնուին, իրենց քաջութեան և յաջողակութեան և կանոնապահութեան համեմատ: Հայ կամաւորները վաշտեր պիտի կազմէին, իւրաքանչիւրին մէջ 800 պինուոր, 80 ենթասպայ, հրամանատար մը որ պիտի լինի Հայոցմէն, 14 պանապան սպաներ, 8 փողահար և թմբկահար, և 40 սայլապան: Վաշտը պիտի բաժանուէր ութը հարիւրեակի, իւրաքանչիւրը տասը տասնեակով, և խաղացնելու խօսքերն պիտի լինիլ Հայոց լեզուովն, այսինքն, հրամանները հայերէն պիտի տրուին: Չգետի պէնքի և պարէնի մասին ալ չափ և կերպ որոշուած էր, և ամենայն ինչ տէրութենէն պիտի հոգացուէր, բայց մինչև որ կարգադրութիւնները լրանան մասամբ դրամ պիտի տրուէր, և պինուորականներ պիտի հոգային իրենց պէտքերը: Վաշտը յատուկ քահանայ և բժիշկ ալ պիտի ունենար: Ծառայութեան ժամանակ որոշուած էր քանի կռիւն Ղալբաշի հետ կու երկարվի, ուսկից ետքը կամ տուներնին պիտի դառնային, կամ կանոնաւոր պինուորութեան պիտի մտնէին: Այդչափը բաւ կը սեպենք կազմակերպութեան մասին գաղափար տուած ըլլալու համար: Առաջին անգամ պինուորական ծառայութեան մտնողներու մասնաւոր ցուցակներ պահուած կը գտնուին, որոնցմէ կը քաղենք թէ առաջին 214 անձերէն 18 տաճկաստանցի են, և 130 պարսկաստանի սահմանակից գաւառներէն եկած, մնացեալը ռաստանցի են, իսկ ղարաբաղցիք 9 անձ միայն, պի անոնք առաւելապէս Մանուչարեանցի հեծելագունդին մտած էին: Առաջին հրամանատարը եղաւ Գէորգ Լապարեան, և իրեն օգնական Դաւիթ Ղօրղանեան, և վեց սպաներէն չորսը Տփղիսեցի և երկուքը Արցախեցի (ԵՐՅ.Ա.279-280, ՄՍՐ197-200)

2399. ՌՈՒՍԱՅ ԱՐՇԱԻԱՆՔԸ

Արդէն նշանակեցինք ռուսական բանակին և հայ կամաւորներուն շարժումները: Ընդհանուր ծրագիրն էր Երևանը և Նախիջևանը գրաւելով, Վրաստանի և Արցաքի բանակները միացնել, և Երասխը անցնելով Թաւրիպի վրայ քալել և որչափ հնար է շուտ Պարսից հետ պատերազմը վերջացնել, որպէսպի Տաճկաց հետ պատերազմին պատրաստ գտնուին: Իսկ ձեռք բերուելիք օգուտը պիտի ըլլար Երևանի և Նախիջևանի նահանգները ռուսական կայսրութեան կցել: Թէ ռուսական սպայակոյտը և թէ Ներսէս վստահ էին պարէնի առատութիւն գտնել Պարսկահայաստանի կողմերը, այլ Պարսիկներ աճապարած էին գիւղերը քանդել, պաշարը ոչնչացնել, բնակիչները ետ քաշել, մինչև իսկ վարուցան արգիլել և հունձքեր փչացնել նոյնիսկ էջմիածնի համբարանոցները դատարկել և միաբաններու մեծ մասը Երևանի բերդը փոխադրել: Յառաջապահ քալողը Բենկենտօրֆի բանակն էր, որ ապրիլ 2-ին Բօրչալուէ մեկնելով, 9-ին Պարսից սահմանը մտաւ, դէպի ուղիղ էջմիածին հասնելու և պինուորական գործողութիւնները հոն կեդրոնացնելու համար: Բայց երկրին ամայացած և թալանուած վիճակը յառաջխաղացութիւնը կասեցուց և հարկ եղաւ Պասքեիչէ պաշար խնդրել: Միւս կողմէն Ներսէս մտածեց գաղտնի լուր հասցնել էջմիածնեցոց, իրենց մօտալուտ գալուստը աւետելու և պատրաստութիւն յանձնարարելու համար: Յովհաննէս Ասլանեան Բիւրականցի երիտասարդը, որ այս լուրը պիտի տանէր, Պարսիկներու ձեռքն ինկաւ և չարաչար տանջանքներու ենթարկուեցաւ գաղտնիքը յայտնելու: Քաջ երիտասարդը ամէնուն ալ տոկաց, և քիթը կտրած, մէկ աչքը հանուած, լեզուն ալ կտրած, իբրև կիսամահ թողուեցաւ դաշտին վրայ, բայց վերջապէս ուշքի եկաւ, և այդ վիճակին մէջ էջմիածին հասնելով, դարձեալ կարողացաւ հասկցնել թէ Ռուսներ և Հայեր և Ներսէս վաղը միւս օր կը հասնին: Յովհաննէս Ասլանեանցի անունը ռուսական տարեգրութեանց ալ անցած է, և ինքն ալ ոսկի շքադրամով և տարեկան հարիւր ռուբլու թոշակով վարձատրուած է (ԵՐՅ.Ա.282):

2400. ԷԶՄԻԱԾՆԻ ԱՌՈՒՄԸ

Դեպի Էջմիածին գացող Բենկետորֆի բանակը, որուն հետ էր Ներսէս (2393), ապրիլ 13-ին հասաւ Էջմիածին, և միաբանութեան մնացորդը, ընդ ամէնը 22 հոգի, խաչով ու խաչվառով դիմաւորեց եկողները: Մայր տաճարի մէջ հանդէս կատարուեցաւ, Ներսէս ոգևորեալ ատենաբանեց, ոռուս պինուորներն իսկ պգածուեցան: Բենկետորֆ վաշտ մը միայն թողուց Էջմիածինի պահպանութեան, և ինքն Սարտարապատի վրայ գնաց, բայց չկրնալով ամուր բերդը գրաւել, ետ եկաւ Երևանը պաշարելու, բայց գործը երկարեցաւ, Պասքևիչ ալ անձամբ պատերազմին դաշտը գալու համար մայիս 12-ին Տփղիսի մեկնեցաւ 500 հայ և վրացի հետևորդներով, և իր ետևէն 18-ին ալ ճամբայ ելաւ հայ 2397): Յունիս 8-ին ամէնքը հասած էին Էջմիածին, և փառաւոր ընդունելութիւն կատարուեցաւ, գլխաւորութեամբ Ներսէսի, որ Էջմիածին կը մնար պինուորական կարգադրութեամբ, հիւանդ պինուորներուն հոգ տանելու համար: Հիւանդութիւնը շատցեր էր Երևան պաշարողներու մէջ, և հարկ եղաւ որ ամբողջ բանակը օդափոխութեան համար Պաշապարան փոխադրել և պաշարման շարունակութիւնը յանձնել Կրասովսքիի գունդերուն: Աթանաս Կրասովսքի ալ նուատոհմիկ երիտասարդ ըլլալով, կանուխէն պինուորութեան մտած էր, և 1804 էն սկսելով պատերազմի մասնակցած, քաջակործութիւններ կատարած և 1825 ին պօրաբաժնի պօրավարութեան բարձրացած, և վերջերս Վրաստան գրկուած էր իբրև սպայակոյտի պետ, բայց չէր կրցած Պասքևիչի հաճոյանալ, և այս էր պատճառը որ կեդրոնական բանակէն հեռացուելով Երևանի պաշարման յղուեցաւ (ԵՐՅ.Ա.296): Բայց Կրասովսքի ալ պարտաւորուեցաւ Երևանի պաշարումը ընդհատել, իր բանակին մէջ ալ հիւանդութեան տարածուելով պատճառով: Իր բանակտեղը Էջմիածին հաստատեց և հոն տեղաւորեց հազարէ աւելի հիւանդներ, իսկ ինքը շրջակաները ընդարձակուեցաւ, և Օշական, Աշտարակ, Ապարան ոռուս գուդեր չետեղեց: Իր հեռանալը Հիւսէյին սարտարին համարձակութիւն տուաւ Ռուսներուն սպառնալու որ Էջմիածինէ ալ հեռանան, սակայն չյաջողեցաւ և ինքն պարտաւորեցաւ ետ դառնալ, միշտ յոխորտանք ձեռէ չթողլով: Պասքևիչ ալ Էջմիածինէ մեկնած էր յունիս 19-ին, և երկու օր ետքը Գառնիէ Նախիջևան էր անցած. քաղաքը անպաշտպան գտած և գրաւած էր: Ապպաս Միրզա մեծ հեծելագունդով ամրացած կը սպասէր Ապպասապատի մէջ. Պասքևիչ անոր վրայ քալեց, և Ջէվանբուլղի յաղթութեամբ փախուստի ստիպեց Պարսիկները, որով քաղաքն ալ անձնատուր եղաւ յուլիս 7-ին (ԵՐՅ. Ա. 185):

2401. ԱՇՏԱՐԱԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Այդ յաջողութիւնները չկրցան գործողութեանց որոշակի վերջ մը տալ, զի Պարսիկները օգտուելով Պասքևիչի գլխաւոր բանակով Նախիջևանի կողմը գտնուելէն և Կրասովսքիի արդէն հեռացած ըլլալէն, որոշեցին նախ Էջմիածինը գրաւել, և Էջմիածնի ու Երևանի շուրջը գտնուող փոքր ոյժերը ոչնչացնելով Տփղիսի վրայ ապատ ճամբայ բանալ: Սոյն նշանաւոր 1827 տարույ օգոստոս 15-ին, Աստուածածնայ մեռելոցի առտուն Ապպաս Միրզա իր բանակով Օշական հասաւ, երեկոյին Էջմիածինը շրջապատեց, և Եռուսէֆ խան պատգամաւորին ձեռքով անձնատուր ըլլալ առաջարկեց: Էջմիածինի մէջ կը հրամայէին ոռուս բերդապահ սպայ մը և Ներսէս, նա մերժեց առաջարկը, իսկ սա յայտարարեց թէ վանքը հպօր է Աստուծոյ պօրութեամբ: Գիշերանց սկսաւ ումբակոծութիւնը, որ սաստկացաւ առաւօտուն լուսնալէն ետքը: Ներսէսի յուղարկած լրատուներ հետզհետէ Պարսից ձեռքն ինկան, տանջուեցան, յօշոտուեցան, սպանուեցան. մէկը միայն կրցաւ Կրասովսքիի հաղորդել եղելութիւնները: Երևանի մեղիքներէն Սահակ Աղամալեան ալ յաջողեցաւ լուր հասցնել, թէ Ապպաս Միրզան մտադիր է Էջմիածինէ դէպի Տփղիս յառաջել: Երեքշաբթի ցերեկէն ետքը պատրաստութիւնները լրացան, և երեկոյեան դէմ ճամբայ ելաւ Կրասովսքի հապիւ

2500 (ԵՐՑ.Ա.291) կամ 3000 (ՄՄՐ.92) ոուս և հայ պինուորներով: Գիրշերը քիչ մը հանգստանալէն ետքը, չորեքշաբթի առտու, օգոստոս 17, ճամբան շարունակեցին Քասախի ձորին քարաժայռ կիրճերուն մէջէն, պորս Պարսիկներ բռնած էին (ՄՄՐ.92), նշաւակ մնալով միշտ անոնց յարձակումներուն: Ասով մէկտեղ և շատ կորուստ ալ տալով Կրասովսքիի գունդը իջաւ Էջմիածինի դաշտը, բայց նոր յարձակում կրեց երբ Քասախի ջուրով երկարատև ծարաւը մարելու թափուած էր: Ոչնչացած կրնար համարուիլ սակաւաձեռն բանակը, զի 24 սպաներու և 1130 պինուորներու դիակներ սփռուուած էին ճամբան և դաշտին երեսը, 200 հոգի գերի ինկած էին, և մնացածները մեծաւ մասամբ վիրաւորուած էին: Թէպէտ Պարսիկներուն կորուստը հնգապատիկ առաւելեալ էր, բայց անոնք 12000ի բանակ մըն էին (ՄՄՐ.92): Բնաջինջ եղած կըլլար ոուս գունդը, եթէ Էջմիածինի կողմէ օգնութեան գունդեր չերևային, որոնց առջև Պարսիկներ ետ քաշուեցան և կոտորածը դադրեցաւ, և Աշտարակի պատերազմը, թէպէտ մեծ պոհողութեամբ, յաջող ելք ունեցաւ: Յաջողութեան պատճառներուն մէջ պէտք է յիշուի Երևանցի Յակոբ Յարութիւնեանց, թնդանօթաձիգ սպայ Պարսից ծառայութեան մէջ, որ աղիտաբեր ժամուն իր պագցումներուն տեղի տալով, իրեն յանձնուած թնդանօթին բերանը Պարսիկներուն վրայդարձելով պանոնք շփոթեց, և ոուսական մնացորդին պատեհ ընծայեց պինքն ապատելու: Յակոբ, թէպէտ փախաւ, բայց Պարսից ձեռքն ինկաւ. աչք, քիթ, շրթունք, ականջ և կրունկ կորսնցուց, բայց կեանքը մնաց, սողալով ճամբայ ելաւ, Էջմիածին հասնիլ յաջողեցաւ, և ոուսական կառավարութենէ պարգևով և կենսաթոշակով վարձատրուեցաւ:

2402. ՎԱՐՁՔ ԵՒ ՅՈՒՇԱՐՁԱՆ

Պարսիկներու հեռանալովը Էջմիածինի պաշարումը վերցուեցաւ: Ներսէս և միաբանութիւն, որ պատերազմի ժամերուն մայր տաճարին մէջ հաւաքուած և Ս. Գեղարդը մէջտեղ դրած աղօթքի էին կեցած, ուրախութեամբ բացին վանքին դուռները և խնդութեամբ ողջունեցին Աշտարակի պատերազմին մնացորդները, որ իրաւամբ նշանաւոր յաղթութեանց կարգն անցած է, նկատելով Կրասովսքի յանդուգն ձեռնարկը և առաջն առնուած վտանգին մեծութիւնը: Պասքիչ միայն իր չարանախանձ պագցումներով ջանաց յաղթութիւնը պարտութիւն ցուցնել և Կրասովսքին ու Ներսէսը պատասխանատու ներկայել, բայց Նիկողայոս կայսր խոհական կշռադատութեամբ, Կրասովսքիի համարձակ և յաջորդ ձեռնարկութիւնը հրամայեց դասել Ռուսաց քաջ պօրաց նշանաւոր մեծագործութեանց կարգում, և պինքն ալ Ս. Վլատիմիրի երկրորդ աստիճանի շքանշանով վարձատրեց (ԵՐՑ.Ա.296): Էջմիածնի աթոռին կողմէն Եփրեմ կաթողիկոսն ալ գնահատելով Աշտարակի պատերազմին նշանակութիւնը, 1831-ին արտօնութիւն խնդրեց Էջմիածինէ չորս մղոն հեռաւորութեամբ արձան մը կանգնել 1827 օգոստոս 17-ին ինկողներուն յիշատակին: Կոմպանէյսքի ճարտարապետ նախագիծ մը պատրաստեց, և Եփրեմ 1831 դեկտեմբեր 24-ին, թէպէտ հրաժարած, խնդրանքը կրկնեց. արտօնութիւնը ստացուեցաւ, 1833 Մայսի 9ին հիմնարկէքը օրնուեցաւ, և 1834-ին շինութիւնը աւարտեցաւ և օրհնեցաւ Եփրեմ և Յովհաննէս կաթողիկոսներու ներկայութեամբ, և անկէ ի վեր ամէն օգոստոս 17ին միաբանութեան կողմէ հանդիսաւոր տարելից կը կատարուի յուշարձանին առջև (ԵՐՑ.Ա.295):

2403. ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ԱՌՈՒՄԸ

Պասքիչ Նախիջևանի կողմերը կը գտնուէր, և Թարևիկի վրայ երթալու մտածուններով կօրօրուէր, երբ լուր առաւ Էջմիածնի շուրջ կատարուած իրողութեանց վրայ: Օգոստոս 17-ին լուր ստացաւ և նոյն օրը ճամբայ ելաւ դէպի Էջմիածին. սեպտեմբեր 3-ին Գառնի հասաւ, և սեպտեմբեր 5-ին ուշ ատեն հանդէսով Էջմիածին մտաւ, բայց դառնացած սիրտով, զի նշանաւոր գործ մը կատարուած էր առանց իրեն: Սեպտեմբեր 6-ին Կրասովսքին հարցուփորձի ենթարկեց և

չքաշուեցաւ յայտարարել, թէ աւելի լաւ էր թողնել թըշ նամուն առնել Էջմիածինը, քան թէ նորա պատուութեան համար պօրքը վտանգի մէջ գցել: Իսկ Ներսէսի մասին սպառնացաւ. Ես մի լաւ կը ներկեմ պարոն արքեպիսկոպոսին որ նա չհամարձակուի սխալների մէջ գցել բանակը: Պասքևիչ աւելի առաջ չգնաց, զի կը պար թէ տակաւին պէտք ունէր երկուքին ալ օգնութեան (2397), այլ ուզելով օգուտ քաղել Պարսիկներու շփոթութենէն, սեպտեմբեր 9-ին ուղևորեցաւ Սարտարապատի վրայ, որ նոր ամրացուած էր և Հասան խանի հրամանատարութեան ներքև էր: Շարիար հանելով Պասքևիչ փոքր գունդով մը Ներսէսը Կողբի կողմերը գրկեց հաց ճարելու իրեն ընկեր տալով Սուխտէլէն պօրովարը իր գունդովը, իսկ ինքը մեծ բանակով ուղղուեցաւ դէպի Սարտարապատ, Կրասովսքին ալ իբր օգնական տանելով: Ներսէս Երասխը անցաւ, Պարսիկներուն ձեռքէն քանի մը հապար բեռ ցորեն ու գարի խլեց, և Աշտարակէ Օշականէ ու Փարաքարէ բռնի տարուած քանի մը հարիւր հայ ընտանիքներն ալ միասին առնելով սեպտեմբեր 12-ի թուականով Բեալակարի գիւղէն ազդու գրաւոր կոչ մը յղեց Ներսէս Հայոց բնակելոց ի Սարտարապատ ի մէջ բերդին (ԵՐՑ. Ա. 300), և 13 ին կանոնաւոր պաշարումը սկսաւ, և գործը Կրասովսքի յանձնուեցաւ: Պարսիկները արդէն սոսկումի ենթարկուած էին ռուսական արշաւանքին հանդէպ, նոյն ինքն Ապպաս Միրզա ալ Ղարաղալա բերդը թողած դէպի Մակու կը փախչէր (ԵՐՑ. Ա. 300): Սեպտեմբեր 18 ին սկսաւ Սարտարապատի ումբակոծութիւնը, որ 19-ին ալ շարունակեց, Հայեր Հասան խանին դիմեցին դիմադրութեան անօգուտ ըլլալը և անձնատուր ըլլալու պէտքը պագցնելով, իսկ նա գիշերային բերդէն փախաւ և Երևան ապաւինեցաւ, և որչափ ալ հայու մը ազդարարութեամբ ռուս վաշտ մը ետևէն գնաց, բայց չյաջողեցաւ հետքը գտնել և ձերբակալել: Սեպտեմբեր 20-ին Հայեր բերդին դուռները բացին, և Պասքևիչը եկեղեցական հանդիսաւորութեամբ դիմաւորեցին, պանապան կողմերէ հոն բերուած գերիները ազատեցին և խնդութեան տօն կատարեցին (ԵՐՑ, Ա. 302):

2404. ԵՐԵՒԱՆԻ ԱՌՈՒՄԸ

Սարտարապատի մէջ հայ և ռուս պահապաններ թողլով, Պասքևիչի բանակը Երևանի վրայ քալեց, 23-ին Էջմիածին հասաւ, և 25-ին Երևանի ումբակոծութիւնը սկսաւ, և նորէն Ներսէսի դիմում եղաւ Հայոց ձեռքով քաղաքին անձնատուութիւնը պատրաստելու: Ներսէսի յորդորական յայտարարութիւնները հետզհետէ յաջորդեցին հայ կտրիճներու ձեռքով, որոնցմէ մէկը Աստուածատուրեան անուն Պարսից ձեռքը ինկաւ և թնդանօթի բերանը կապուելով յօշոտուեցաւ, իսկ Ռուսաց կողմէն այրիին կենսաթոշակ կապուեցաւ: Հայեր, թէ տեղացիներ, թէ 12000-ի չափ ուրիշ կողմերէ բերուածներ, և թէ Էջմիածինի միաբանութեան մի մասը, Հասան խանը անձնատուր ըլլալու կը թախանձէին, մանաւանդ սեպտեմբեր 30-ի գիշերուան 40 թնդանօթներու կրակին վրայ: Հասան խան կը մերժէր և կը սպառնար, այլ վերջապէս կտտորուող ժողովուրդը ինքն առաջ անցաւ պարիսպներուն վրայէն ձերմակ թաշկինակներով նշաններ տուաւ, և հոկտեմբեր 1-ին, Եօթանասնից տօնին շաբաթ առտուն քաղաքին դուռները բացուեցան, Ռուսեր մտան, երեք ժամ թալան եղաւ, աւելի Պարսից թաղերը, Հասան խան և ուրիշ վեց եօթը խաներ և 4000 պարսիկ գլխաւորներ գերի ինկան: Հոկտեմբեր 2 կիրակի առտու, Երևանի պարսպի առաջ, Պասքևիչի և բոլոր ռուսական բանակի ներկայութեամբ, Ներսէսը մեծ հանդիսով գոհաբանական մաղթանք կատարեց (ԵՐՑ. Ա. 304), և ռուսական տիրապետութիւնը հռչակուեցաւ, և թնդանօթներ գողացին, և Էջմիածին ու Երևան հայկական նահանգ եղան ռուսական իշխանութեան ներքև: Բաւական յօդուածներ նուիրեցինք (2390-է սկսելով) պատերազմական վերջին գոծողութեանց վրայ, և որչափ ալ պատերազմական մանրամասնութիւնները օտար համարած էին մեր նպատակէն, սակայն Մայրաթոռոյ շուրջը դարձող և անոր ապագայ բախտը որոշեց գործողութիւններ, ինչ

տեսակ ալ ըլլան, պէտք էր որ եկեղեցական անցից կարգին իրենց տեղն ունենային: Այսուհետև կարող ենք մեր սովորական ոճին դառնալ:

2405. ԹԻԻՐԲՄԷՆՉԱՅԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ Պասքևիչ գրեթէ ակամայ ետ դարձած էր Թաւրիպի արշաւանքէն (2403), ուստի Երևանի գրաւումը լրացուցածին պէս, Կրնսովսքիի ու Ներսէսի յանձնեց քաղաքին և երկրին կառավարութիւնը (ՄՍՐ.102), և ինքն հոկտեմբեր 6-ին մեկնեցաւ Թաւրիպի արշաւանքին: Բայց մինչև որ ինքն հասնէր, Վօրավար իշխան Երիստով և գնդապետ Նկողայոս Մուրավիէվ, որ Նախիջևանի պաշտպանութեան էին թողուած, պարտաւորուած Ապպաս Միրզայի հետ պատերազմի բռնուեցան, որ իրենց վրայ կու գար, Երասխը անցան, արքայորդին հալածեցին, հոկտեմբեր 2-ին Մարանդ մտան, և անոր Թաւրիպ մուտքը արգիլելու համար, յաղթական գնացքը շարունակեցին, 12-ին Թաւրիպի առջևը հասան, 13-ին քաղաքը անձնատուր եղաւ և ռուս բանակը հանդէսով ներս ընդունուեցաւ: Պասքևիչ դեռ ճամբան էր, և միայն 16-ին Մարանդ հասնելով եղելութիւնը լսեց, և թեթև հեծելագունդով առջև անցաւ, և 19-ին յաղթական մուտք գործեց վեց օր առաջ գրաւուած Թաւրիպը, կրկին դառնացեալ սիրտով, Վի առանց իրեն լրացած էր փառաւոր գործը: Որչափ ալ Երիստովի և Մուրավիէվի շքանշաններուն համար միջնորդեց, սակայն երկուքն ալ հեռացուց, Երիստովը Տփղիս և Մուրավիէվը Ռուսաստան: Թաւրիպէ հեռացուեցաւ նաև Վրաց արքայազն Աղեքսանդրի ամուսին և Երևանի մելիք Սահակ Աղամալեանի դուստր, 23 տարեկան, վարմանալի գեղեցկութեան տէր իշխանուհի Մարիամը, վասնչի Աղեքսանդր Վանայ մէջ Ռուսաց դէմ հրոսակ կը կազմակերպէր, և Մարիամ մեծ ազդեցութիւն ունէր բոլոր Ատրպատականցոց, մանաւանդ Հայոց վրայ, և կրնար ռուսական ազդեցութեան դէմ գործել: Մարիամի հետ Երևան յղուեցաւ նաև իր փոքրիկ զաւակը Հերկալ (ԵՐՅ.Ա.307), որ վրացի արքայազուներուն վերջինն եղաւ: Պարսիկներ Վագիին հաշտութիւն կնքելու հարկը, և Պասքևիչ և Ապպաս Միրզա բանակցութիւնները կատարեցին Տէյկարկան կամ Տէրկայիսան գիւղը, պայմաններ որոշուեցան և Վօրահանդէս ալ կատարուեցաւ (ՄՍՐ.107): Բայց Ֆէթհալի շահ չյօժարեցաւ քսան միլիոն ռուբլի տուգանլին վճարման, ու Հայերու և օտարազգիներու մինչև տարի մը Պարսկաստանէ գաղթելու ապատութեան պայմաններուն: Ուստի թշնամութիւնները վերսկսան, և Ռուսեր հետզհետէ գրաւեցին Խոյ, Սալմաստ, Մարաղա, Ուրմիա և Արտաւիլ. և երբ Թեհրանի արջև երևցան, Ֆէթհալի ալ խոնարհեցաւ, և 1828 փետրուար 10-ին, Թեհրանի մօտ Թիւրքմէնչայ գիւղը ստորագրուեցաւ և կնքուեցաւ ռուս-պարսկական դաշնագրութիւնը (ԵՐՅ.Ա.308). Ռուսերը Երևանի և Նախիջևանի խանութիւններէն դուրս գրաւած պարսկական գաւառներէն պիտի ելլային, միայն Ուրմիան, Խոյն ու Մակուն աւանդ պահեցին, մինչև տուգանքին ամբողջական վճարումը (ՄՍՐ.106):

2406. ՀԱՄԱԿՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Թէպէտ վերջնական հաշտութեան կնքուիլը Թաւրիպի առնուելէն ետքը չորս ամիս ուշացաւ, 1827 հոկտեմբեր 13-էն մինչև 1828 փետրուար 10 (ԵՐՅ.Ա.322) և կայսերական վաւերացումը մնչև 20 սակայն առջի օրէն Հայեր գործը լրացած սեպեցին, և կարգադրութեանց և կարևոր իրողութեանց վբաղեցան, իբրև թէ արդէն ռուսական կառավարութեան հպատակ հռչակուած ըլլային: Նոյեմբեր 26-ին Էջմիածինի մէջ ալ Սիւնհոդոսի փոխարէն ժամանակաւոր կառավարութիւն հաստատուեցաւ Ներսէսի տնօրէնութեամբ, և նոր պարագաներու յարմար կանոնագրութեամբ (ԴԻԻ.Բ.241): Ռուսներն ալ միևնոյն տեսակէտէն կը գործէին, և փոխադարձաբար իրար շահելու և համաձայնութիւն աճեցնելու կաշխատէին: Թաւրիպի արշաւանքին չսկսած՝ Պասքևիչ ուլած էր իրեն հետ հայ աստիճանաւոր մըն ալ ունենալ, և Վայն գործի անցընելով օգտուիլ. և այս նպատակին յարմար դատած էր իշխան Յովակիմ Լապարեանցի կրտսեր որդին Ղապարոսը, կամ իր

ստորագրութեան հետևողութեամբ՝ Եղիապար Եղիապարեանցը (ԵՐՑ.Ա.314), Իսկ ռուսական կոչմամբ՝ Լապար Եաքիմովիչը, որ պինուորական ծառայութեան մտած էր, և 1826-ին դեռ 28 տարեկան կայերական թիկնապահ գունդին մէջ գնդապետութեան բարձրացած էր: Թաւրիպի առումէն ետքը քաղաքապետ անուանուեցաւ, և մեծապէս նպաստեց ռուսական ապրիլեան, և հայութեան ալ, պի ապգասիրութեամբ տոգորուած էր Ներսէսի նման (ԵՐՑ.Ա.310): Պասքեիչ որչափ և Ներսէսի համակիր չէր, այլ չկրցաւ անոր ծառայութիւնները ծածկել, և կայսեր առջև անոր վարձատրուելուն միջնորդեց, և Նիկողայոս կայսր Աղեքսանդր Նևսքի բարձրագոյն կարգին առաջին աստիճանի շքանշանը շնորհեց 1828 յունուար 26-ին յոյժ դրուատական հրովարտակով մը (ԵՐՑ.Ա.318): Ներսէսի գաղափարն եղաւ նաև Հայերը Պարսկաստանէ Ռուսաստան գաղթել տալը, պոր գնդապետ Լապարեանի ձեռքով Պասքեիչի թելադրեց (ԵՐՑ.Ա.314), և ուղղակի ալ գրեց, և Ստեփանոս Ենովքեան եպիսկոպոսը և Նիկողայոս Արցախեցի վարդապետը յատկապէս Պարսկաստան յղեց, որ Հայերը համոզեն անմիջապէս գաղթելու. քանի որ ռուս գունդերը հերացած չեն (ԵՐՑ.Ա.320): Պասքեիչ կուզէր Հայերէն որ 1500 կամ 2000 հոգի մշտական պինուոր գրուին, և Պարսիկներէ առնուած բերդերուն պահպանութեան յատկացուին, իբրև օդին և կրակին վարժուած անձեր: Մենք գիտենք թէ որչափ մօտ էր Ներսէսի միտքին Հայերուն պինուորագրութիւնը (2397): Այս և ուրիշ նմանօրինակ պարագաներ կը հաստատեն ինչ որ վերև ըսինք, համակրութիւն աճեցնելու համար եղած ջանքերուն մասին, պի մինչև իսկ Մասիսով, Տապանով, Դաստառակով և այլ հայկական նշաններով վարդարուած դրօշակ տրուեցաւ հայագունդին (ՄՍՐ. 111), և նոր առնուած երկիրները Հայկական նահանգ կոչուեցան, և Հայաստանի անունը կայսեր տիտղոսներուն աւելցաւ (ԵՐՑ. Ա. 322): Սոյն կարգին կրնանք աւելցնել 1828 յունուար 6-ին, Ներսէսի հանդիսագրութեամբ, ռուս պօրավարներու և գունդերու ներկայութեամբ, և հայ ու ռուս եկեղեցականներու ընկերակցութեամբ Հրապդանի վրայ կատարուած մեծահանդէս ջրօրհնէքը (ՄՍՐ. 113-115):

2407. ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՐԳ

Այստեղ կընդհատենք Մայրաթոռոյ շուրջը կատարուած անցքերը, ուր նոր կեանք և նոր կացութիւն մը կը ստեղծուէր տիրող պետութեան փոխուելովը: Հնար չէ ժամանակագրական գրութեան կատարեալ ճշտութեամբ հետևիլ, երբոր նիւթերու կապակցութիւնը կը պահանջէ սկսուած իրողութիւնները իրենց ամբողջութեան մէջ ներկայել: Ասոր հետևանքն եղաւ որ ստիպուեցանք ռուս պարսկական յարաբերութեանց և պատերազմաց չարքը մինչև 1828-ի հաշտութեան դաշնագիրը հասցնել, և այժմ ետ կը դառնանք արևմտակողման ապգայնոց անցքերը պատմելու, պորս ետև թողած ենք, Երուսաղէմինը 1810-ին, իրաւանց խնդիրներուն պետական վճիռին (2320), և Կոստանդնուպոլսինը 1820-ին, միաբանական աղմուկներուն ցաւալի վախճանին (2376): Կարգը կը պահանջէ ուրեմն որ նախապէս Երուսաղէմի իրողութեան դառնանք:

. 2408. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Ըսեր էինք թէ Հայերու և Յոյներու միջև յուզուած և արտասովոր դատարաններու յանձնուած սաղիմական խնդիրը, իր որոշման յանգած և Սուլտանին հաւանութեան ներկայացուած էր, այլ թէ ատեններ անցան մինչև որ վերջնական հաստատութիւնը ստացուէր (2320): Իրօք ալ

1810 մայիս 29-ին կայսեր մատուցուած որոշմնագիրը՝ հրովարտակաց դիւանին յանձնուելէն ետքը, 1811 յունիս 2 ին երկու միօրինակ պաշտօնագիրներու վերածուելով Սուլտանին վրկուեցաւ (ԱՍՏ. Բ. 218) որոնք հապիւ 1812 դեկտեմբեր 13-ին արքունական ձեռագրով վաւերացման և կառավարական դուռ յղուեցան, և ամիս մը ետքը, 1813 յունուար 13-ին, կայսերական նոր հրամանի

վրայ, առանց բացէն պարգևի, Հայոց և Յունաց յանձնուեցան, ճիշդ առաջին որոշումէն 31 ամիս ետքը: Հրովարտակը կը կրէ հիճրէթի 1228 մուհարրէմ 1թուականը, որ կը պատասխանէ անոր Դուռս Կրկուելու թուականին: Ուրախութեամբ օրհնեցին Հայք Վաստուած և վարքայն արդարասէր նպաստաւոր հրովարտակ ընդունելու և համար, բոլոր պետական դիւանները արձանագրել տուին, և պատճէնները հանելով ամէն հայաբնակ կեդրոններ հաղորդեցին (ԱՍՏ. Բ. 221): Ուրախութեան մեծ պատճառն այն էր որ հիմէն կը քանդուէր Յոյներէ պատրաստուած Հայերը բոլորովին Կրկուելու ամբարտակը, և կը ջնջուէին Յոյներուն ձեռք ձգած սխալ հրովարտակները (2308) և միանգամ ընդ միշտ Հայեր սուրբ տեղեաց մէջ սեփականութեանց և իրաւանց տէր կը հռչակուէին անդառնալի կերպով: Որովհետև հրովարտակը կը հրամայէր որ նախընթացները ոյժ չունեն, և այլ ևս վասն սոցին իրաց մի լիցի երբեք խռովութիւն ի միջի Հայոց և Յունաց ի պատճառս որ և իցէ իրաց, յինչ և իցէ ժամանակս, և եթէ լիցի, երբեք ունկնդրութիւն մի՛ լիցի (ԱՍՏ. Բ. 228): Ապա թէ ոչ ինչ որ վերջին հրդեհէն ետքը (2315), նոր շինութեանց առթիւ Յոյներ իւրացուցած, և Հայոց սեփականութիւններէն փոփոխած և իւրած էին, իրենց նոր կացութեան մէջ կը պահուէին Յոյներու նպաստաւոր հետևանքով: Հրովարտակը կը հրամայէր ևս որ մի ոք համարձակեցի ամբաստան լինել ասն շինութեան, Վի յայսմ նուագի շինութիւնն տուաւ ազգին Յունաց, և ընդհանուր նորոգութիւն նոցին ձեռամբ եղև, իբր վասն շինութեան և նորոգութեան ոչ ոք ունի իրաւունս լինել ձեռնամուխ, այլ միայն թագաւորական բարձր կամեցողութեան սեփական է, և ըստ ներելոյ Շէրիի օրինաց, յորժամ նորոգութեան պէտս ունի ըստ առաջին ձևոյն, առ որ կամիմ, կըսէ, ի հպատակաց տէրութեանս, նմա յանձն առնելով կատարի (ԱՍՏ. Բ. 227):

2409. ՀՐՈՎԱՐՏԱԿԻՆ ՔԱՂՈՒԱԾԸ

Հրովարտակին ամբողջութիւնը առջևնիս ունինք, թէ բնագրական լեզուով (ՍԱԻ. 1063-1076) և թէ թարգմանութեամբ (ԱՍՏ. Բ. 222-228), որով կրնանք անոր պարունակութիւնը վերլուծել: Հասցէն ուղղուած է Դամասկոսի կուսակալ Սիւլէյման փաշային և Երուսաղէմի դատաւորին, իբր քաղաքական և կրօնական իշխանութեանց պետերու, և կրօնական իշխանութեանց պետերու, և բոլոր յարաբերութիւն ունեցող իշխանաւորներու: Հրովարտակը կը սկսի պատմական կերպով թէ Եավուկ սուլտան Սէլիմ երբոր հիճրէթի 923 սէֆէր 25-ին յաղթանակաւ Երուսաղէմ մտաւ Հայոց Սարգիս պատրիարքը վայն դիմաւորած և խալիֆա Էօմէրէն և սուլտան Սէլահէտտինէն տրուած իրաւունքներուն հաստատութիւնը խնդրած է, և ըստ այնմ Սէլիմ հրովարտակ մը տուած է (1594), որ ամբողջարար յառաջ կը բերուի նոյն օր Յոյներու Աթալիա պատրիարքին դիմումը և անոր ալ տրուած հրովարտակը, միայն թէ նախ Հայոց և ապա Յունաց հրովարտակները յառաջ բերուած են: Յետոյ կը պատմուի թէ խռովութիւններու ատեն ոմանք տուեալ են հրովարտակս հակառակ իմաստիւք երկուց կողմանց (ԱՍՏ. Բ. 225), և թէ վերջին հրդեհին վրայ հարկ եղած է յատուկ ատեան կազմել բարձր պաշտօնակալներէ մեծ դենպետին նախագահութեամբ, և ապա ատեանին ներկայացած են երկու կողմերու պատգամաւորները, որոնց ամենուն ալ անունները կը յիշուին, և յատկապէս Հայերէն երկու եկեղեցականներ՝ Պօղոս և Դիոնեսիոս և ութը աշխարհականներ: Ատեանը հիմ ընդունած է Սէլիմի հրովարտակները, և որոշած է որ Ս. Յարութեան տաճարին մէջ երկու ազգեր բաժանորդութեամբ պաշտօնավարեն պայմանաւ առաջնութեան պատրիարքին Յունաց, ուրիշ տեղեր ալ անախութեամբ և ընկերակցութեամբ վարուին ըստ առաջնոյն: Երեք մասնաւոր խնդիրներ ալ յարուցած են Հայերը, Ս. Յարութեան մէջ բնակութեան տեղերուն, և հետևակ ազգերուն, և նորոգութեանց ատեն մուծուած փոփոխութիւններուն վրայ: Ասոնց մասին ալ որոշուած է, բնակութեան տեղերը կարգադրել ըստ առաջնոյն, հետևակ ազգերուն համար նոր քանութիւն կատարել Երուսաղէմի մէջ, իսկ փոփոխութեանց մասին խնդիրները կարճել,

նորոգութիւնը իբր արքունական իրաւունք նկատելով: Եւ այսպէս, կըսէ հրովարտակը, բոլորովին բարձաւ խոռովութիւն և տեղի ետ ատելութիւն, որ է ըսել թէ Հայեր գլխաւոր կէտերը շահուած տտեսներով, մանր վնասներուն մասին յանձն առին լռել և նոր խնդիր չյուկել: Այս դրութիւնն է որ կը տիրէ. այն օրէն ի վեր դար մը լրացած է և մեծ վէճեր չեն նորոգուած և յարաբերութիւնները օրէցօր քաղցրացած են, թէպէտ մասնաւոր արարողութիւններու կամ տեղերու կամ անձերու մասին՝ ըստ ամենայնի համեմատութիւն դեռ չի տիրեր, մանաւանդ Բեթղէհէմի Ս. Ծննդեան տաճարին և այրին շուրջը:

2410. ԻՆՉ ԻՆՉ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՔ

Սէլիմեան հրովարտակին մէջ յիշուած սեփականութիւններն և իրաւունքները, որչափ և բաւական մանրամասնեալ, սակայն հնար չէր որ ամէն փոքրիկ պարագայ յիշուէր, ուստի մի մասը ընդհանուր բացատրութիւններու ներքև պէտք է իմանալ: Ս. Յարութեան տաճարին մէջ Հայոց համար չիշուածներն են, Ս. գերեզմանը ընկերովի, իսկ անկախաբար տաճարին դրան առջև երկու աշտանակ և կանթեղներ, որոնք են Պատանատեղոյն քովերն ու վրան: Գերեզմանին դուռն ու ներսը կանթեղներ և խունկ և մոմ. լուսահանութիւնը Գերեզմանին մէջէն և թափօր շուրջը. մեծ դրան վրան և քովը սենեակներ և տեղեր, որ է երկրորդ Գողգոթան և տեսչարան, ուրիշ խորաններ և ուխտատեղիներ ալ, ինչպէս են Իւաբեր Կանանցը, Հանդերձի բաժանմանը, Յովսէփ Արեմաթացոյնը, և այլն, ջրհոր մը ներսը, և երկու ծանօթ պատուհաններ դէպի դուրս: Երուսաղէմի մէջէն յիշուած են Ս. Յովհաննէս եկեղեցին՝ Ս. Յարութեան արտաքին բակին վրայ, Ս. Հրեշտակապետը, Ս. Փրկիչը՝ Յիսուսի բանտ անունով ծանօթ, և Ս. Աստուածածնի գերեզմանը, այս վերջինը ընկերովի: Իսկ Ս. Յակոբ յիշուած է իբր կեդրոն, ուր կըը նստի Հայոց պատրիարքը, բոլոր սեփականութեանց և իրաւանց տէրը կամ վարիչը: Բեթղէհէմի մէջ յիշուած են, այրը և տաճարին հիւսիսային դրան բանալին, որ Հայոց յատուկ բաժինին դուռն է, և սենեակներ և հիւրանոցներ, և գերեզմաններ և այգիներ և պարտէպներ և ձիթաստաններ: Իբր Հայոց հետևակ ընդունուած են Եթովպացիներ կամ Հապէշներ, Եգիպտացիներ կամ Ղփտիներ, և Ասորիներ կամ Սիւրիանիներ: Առանձինն յիշուած է և Նապլուս կամ Նէպոլիս, որ է հին Սիւքէմը, բայց այժմ այնտեղ հայ սեփականութիւն չկայ: Իբր ընդհանուր ապատրութիւններ կամ արտօնութիւններ կը նշանակուին, Երուսաղէմի մէջը և դուրսը գտնուող եկեղեցիներու և վանքերու և ուխտատեղիներու ապատ կիրառութիւն ունենալ, աթոռոյ կառավարութեան և մատակարարութեան մէջ հկառակութիւն չկրել, ամէն աստիճանէ պաշտօնեաներ անուանել և հրաժարեցնել և փոփոխել, կալուածական գործերը ապատորէն կատարել, հանգուցեալ միաբաններու թողօնները ժառանգել, Յորդանան և հանդիսավայրեր ըստ հաճոյս երթևեկել, այս ամէնը հաւասարաբար տարածուած բոլոր հայ ազգայիններու և հետևակ ազգերու վրայ, առանց արգելք տեսնելու որևիցէ կողմէ, նոյն իսկ կայսրներէ և կայսերազուններէ և նախարարներէ և ամէն աստիճանէ պաշտօնակալներէ : Յոյներու տրուած հրովարտակին մէջ ալ ստացութիւններ և իրաւունքներ մի առ մի յիշուած են, զորս քաղել աւելորդ կը դատենք. միայն գիտել պիտի տանք, որ Ս. Յարութեան բակին Ս. Յովհաննէս եկեղեցիին, և Յիսուսի բանտի կամ Փրկիչի եկեղեցին, և Բեթղէհէմի տաճարին հիւսիսային դրան յիշատակութիւնները, և Եթովպացիներուն իբրև Յունաց հետևակ ցուցուիլը, պարզ շփոթութիւններ պէտք է նկատուին, զի անցելոյն մէջ Յոյներ երբեք այդպիսի իրաւունքներ օրինապէս վայելած չեն, և շփոթ ժամանակաց խառնակ գործեր իրաւունքի հիմ չեն կապմեր:

2411. ԳՈՐԾԱԴԻՐ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ

Հրովարտակաները Կ. Պոլսոյ մէջ յանձնուեցան, և ինչպէս տեսնուցաւ, ինչ ինչ կէտեր Երուսաղէմի մէջ պիտի քննուէին, և գլխաւորապէս պէտք էր նոյն իսկ որոշուած կէտերն ալ տեղւոյն վրայ ճշդել և գործադրել, զի Յոյներ շատ բան նորոգութեանց առթիւ շփոթած և խառնակած էին, և Հայեր հրդեհէն ի վեր իրենց սեփական տեղերը կորսնցնելով արարողութիւններէ և պաշտամունքէ իսկ արգիլուած էին, կանթեղներ և աշտանակներ և պատկերներ և այլ սպասներ նորէն պիտի գրուէին: այդ նպատակին համար անհրաժեշտ էր որ յատուկ պաշտօնեաներ որոշուէին կառավարութեան կողմէն, քանի որ Հայեր վստահութիւն չունէին Երուսաղէմի մէջ գտնուողներուն վրայ: Վերջապէս Հայեր յաջողեցան այդ պաշտօնին անուանել Պաշտօնաբժիպատէ Ջէքի էֆէնտին, սուրբ քաղաքաց քննիչներու դասակարգէն. բայց ան չկրնալով Կ. Պոլիսէ հեռանալ, պաշտօնը վրան մնալով, փոխանորդ անուանուեցաւ Մէհմէտ Նուրի էֆէնտի, մայրաքաղաքի դատարանին ատենադպիրը, և օգնականներ տրուեցան Ռաշիտ Մուստաֆա էֆէնտի իբր ոստիկանապետ, և Սէիտ Մուհամմէտ էֆէնտի իբր ճարտարապետ: Հայեր գործին ամէն կերպ գիւրութիւն ընծայելու պատրաստ, պատգամաւորութեան ճանապարհածախսը տուին, և Հիճրէթի 1224-ին տրուած և վերջէն ջնջուած հրովարտակը ետ դարձուցին: Ուղեկիցներ և գործակիցներ ալ նշանակեցին, Եւդօկիացի Ստեփանոս եպիսկոպոսը, այն ինչ դարձած Կարնոյ նուիրակութենէն, և Գարթալցի Կարապետեան Դիոնեսիոս վարդապետը, գործին ամէն պարագաներուն հմուտ: Իսկ Ադրիանուպոլսեցի Պօղոս վարդապետը Կ. Պոլիսէ հեռացնել պատշաճ չդատուեցաւ, հակառակ Երուսաղէմի յայտնուած բուռն թախանձանքներուն: Որոշուեցաւ նաև պատգամաւորութեան ընկերացնել մահտեսի Ադամ Գալֆան կամ ճարտարապետը, եօթը յաջողակ վարպետներով շինուածական աշխատութիւնները կատարելու և հսկելու համար: Իսկ Յոյներ բոլորովին հակառակ ընթացքի կը հետևէին, յուսալով մեծ հրովարտակին գործադրութիւնը խափանել անուղղակի արգելքներով, և կամ զայն բոլորովին այլայլել տեղական պաշտօնեաները շահելով: Ուստի ոչ ճանապարհածախսը վճարեցին, ոչ ջնջուած հրովարտակը դարձուցին, այլ Երուսաղէմի դատաւոր Մուսա Մուսաննըֆ էֆէնտին և քաղաքապետ Ապտիլքէրիմ էֆէնտին, և ուրիշ պաշտօնեաներ և գլխաւորներ առատ կաշառներով որսալու հետապնդեցին: Այսու ամենայնիւ պետական պատգամաւորութիւնը Կ. Պոլիսէ մեկնեցաւ 1813 մարտ 24-ին, և երկու օր առաջ ալ մեկնած էր Հայ ապգային պատգամաւորութիւնը: Երկու քը միացան Կիպրոս ապրիլ 11-ին. ապգային պատգամաւորութիւնը իրեն հետ առաւ պետականին կարասին և սպասաւորները, և Յոպպէի ճամբով Երուսաղէմ հասաւ ապրիլ 15-ին, և ամենայն ինչ հաղորդեց Թէոդորոս պատրիարքին և միաբանութեան, և ուրախութիւն պատճառեց: Իսկ պետական պատգամաւորներ Վերիտոնի ճամբով Դամասկոս ելան, հրովարտակին ու պարտ ու պատշաճը կուսակալին հաղորդեցին արձանագրութիւնները կատարել տուին, և կուսակալէն հրահանգներ և Մէհմէտ էֆէնտի հսկող պաշտօնեան առնելով Երուսաղէմ հասան մայիս 10-ին: Պատգամաւորութեան օթարանն ու ծախքերն ալ խնդրիի նիւթ եղան: Տեղական իշխանութիւնը Հայոց և Յունաց վրայ կը ճգէր, իբր անոնց վերաբերեալ գործ, Յոյներ փախուստ կու տային գործը խափանելու դիտմամբ, մինչ առատ կը ծախսէին դատաւորն ու քաղաքապետը ու պատգամաւորները շահելու, որով Հայեր կը պարտաւորուէին ծանրութեանց ենթարկուիլ, և պատգամաւորները սպասաւորներով և գրաստներով վանքին մէջ հիւրընկալել, սենեակներ վարդարել, ուտեստը հոգալ, և ամէն կերպով հաճեցնել, իբր զի գործին խանգարուելէն վնաս կրողը իրենք պիտի ըլլային, և իրենց վրայ ծանրացող վրկումները պիտի շարունակէին, ինչ որ Յոյներուն յայտնի նպատակն էր:

Որչափ երկար և դժուարին եղաւ արքունական հրովարտակին ստացութիւնը, նոյնչափ ալ աշխատալի և փոթորկալից եղաւ անոր գործադրութիւնը, և 1813 մայիս 10-ին Երուսաղէմ հասնող պատգամաւորութիւնը տարւոյն մնացորդը ամբողջ այնտեղ անցուց, մինչև որ հրովարտակին գործադրական կերպարան մը տրուէր: Եղելութիւնները մանրամասնութիւններով և փոխադարձ խօսակցութիւններով ընդարձակօրէն պատմած են Երուսաղէմի վերջին պատմագիրները (ԱՍՏ.Բ.229-328,ՍԱԽ.1076-1121), զոր մենք քաղելով միայն առջև պիտի բերենք, բաւականանալով գործին ընթացքը ցուցնել: Յոյներ միշտ հրովարտակին գործադրութիւնը խափանելու յամառած, իրենց կամակատար գործիք ըրած էին Երուսաղէմի դատաւորը, որ բացարձակ կերպով կայսերական հրովարտակն ալ անարգելու, և իրեն դատաւորութեամբը գործը արմատէն քննելու և դատելու յաւակնութիւնը կունենար, իրեն ներքնապէս գործակից, բայց արտաքնապէս կերծող նեցուկներն էին Երուսաղէմի քաղաքապետը և մայրաքաղաքէ եկող ոստիկանապետը, իսկ հրովարտակին ըստ ամենայնի գործադրութեան պաշտպանը՝ գործադիր պաշտօնէին փոխանորդ Նուրի էֆէնտին էր, իրեն համամիտ ունենալով Դամասկոսէ եկող ոստիկանապետը, որուն ճիշդ հրահանգներ տուած էր կուսակալը, Նուրի էֆէնտիէ լսած բացատրութեանց վրայ: Պետական ճարտարապետը նիւթական գործողութեանց պաշտօնէայ ըլլալով՝ իրաւանց խնդիրներէն զինքն հեռու կը պահէր: Առաջին գումարումը տեղի կունենար մայիս 20-ին, Յինանց վեցերորդ երեքշաբթին դատարանին մէջ, ուր կը կարդացուէին նոր պաշտօնագիրները, որոնցմէ դատաւորը կուզէր հետևցնել թէ Աստուածածնայ գերեզմանին և Ծննդեան եկեղեցւոյն մէջ Հայեր ոչ մի իրաւունք չունէին: Յոյներէն կը պահանջուէր 1224-ին ջնջուած հրովարտակը ետ դարձնել, իսկ անոնք կը խուսափէին՝ Կ. Պոլիս գտնուիլը առարկելով, մինչ Կ. Պոլսոյ մէջ՝ Երուսաղէմ գտնուիլը առարկած էին, և դատաւորը կը ստիպուէր հրովարտակաց տոմարէն նոյնին պատճէնը պարունակող էջը պատռել, և հրովարտակը ջնջուած հոչակել: Միւս օր չորեքշաբթի, դարձեալ դատարանին մէջ կը գումարուէին հետևակ ազգաց խնդիրը քննելու, և դատաւորը կը ընդդիմանար անոնց ներկայանալուն և կամքերնին յայտնելնուն, բայց անոնք իւրովի ատեան կելլէին, նախ Եթովպացիներ, յետոյ Եգիպտացիներ և Ասորիներ, և միշտ Հայոց հետևակ եղած և նոյնպէս մնալ ուզելնին կը յայտարարէին: Դատաւորը բարուրանքներ կը յարուցանէր յայտարարութիւնը արգիլելու, բայց Նուրի պայն կարճանագրէր և կը հաստատէր, հիմնուելով նաև տաճիկ դռնապաններու և ծերունի քաղաքացիներու վկայութեանց վրայ: Դատաւորը իբր թէ ատեն կը կազմէր դատը լսելու, բայց Հայեր իրենց դատին կայսերական ատեանին մէջ վերջացած ըլլալը յիշելով, դատ չունենալնին կը յայտարարէին:

2413. ԴԱՏԱԻՈՐԻՆ ԸՆԹԱՅՔԸ

Մայիս 22-ին, նոյն իսկ Համբարձման օրը, նիստ կը կազմուէր Ս. Յարութեան տաճարին մէջ, տեղերը չափելու և Յունաց ու Հայոց սահմանները ճշդելու, և պատկերներ և կանթեղներ պետեղելու համար: Դատաւորը Հայոց պահանջը արգիլելու համար, մինչև իսկ իսլամական օրէնքով պատկերներու արգիլեալ ըլլալը առջև կը դնէր, նոյպէս հին և նոր չափերուն տարբերութիւնը ճշդել և հին սահմանները վերահաստատել չէր ուզեր, հրովարտակով այսպիսի բան հրամայուած չըլլալը պատճառելով, մինչ Հայեր պարզ արձանագրութիւն միայն կուզէին, զի կարենան ըստ այնմ նորէն Կ. Պոլիս դիմել: Նիստը կը կրկնուէր մայիս 24-ին շաբաթ օր, իսկ դատաւորը գործը խառնակելու համար յանկարծ կը մեկնէր, Յոյներուն ալ նոյնը խրատելով, և միանգամայն հրովարտակին պարունակութիւնը քննադատելով, և սխալ կարգադրութիւններ եղած ըսելով, և իրեն աւելի հմուտ և արքունեաց պաշտպանեալն ըլլալուն վրայ պարծենալով: Քանի մը օր պարապ կանցնի, և 29-ին, Համբարձման դիմացի հինգշաբթին, նորէն նիստը կը

նորոգուի, ուր Հայեր կը պահանջեն որ արտօնուին փոփոխուածները վերաշինել, կամ թէ խնդիրը Կ. Պոլիս տանիլ, և միանգամայն տաճարի աւելածութեան իրաւունքնին վերահաստատել, զի Լատինք և Յոյնք սկսած էին փոփոխակի կատարել հրդեհին արկածէն ի վեր: Խնդիր կը յուզուի նաև Պատանատեղին և Գերեզմանին շուրջ Հայոց կանթեղներուն թիւը լրացնելու. բայց դատաւորն այս անգամ ալ անպատեհ գործերով և խօսքերով կայսերական որոշումը կը նախատէր, և նորէն գործը կը լքանէր իրեն պաշտպանեալները վօրացնելու դիտմամբ: Հրովարտակին ամբողջական գործադրութեան պաշտպան եղողներ մտածեցին Դամասկոսի կուսակալէն նոր հրաման բերել տալ, և յատուկ պաշտօնեայն յունիս 6-ին կը մեկնէր, և 21-ին կը դառնար հրովարտակին ճշդիւ հնազանդելու խիստ հրահանգով: Պաշտօնէին բացակայութեան միջոցին կուսակալէն հասած գիր մը առիթ ընծայած էր դատաւորին նոր քննութիւններ բանալու վանապան կէտերու գլխաւորապէս Աստուածածնայ գերեզմանին և Ծննդեան այրին նկատմամբ, որոնց ճարտարօրէն դիմադրած էին Հայերը միշտ պարապի հանելով դատաւորին խաբէական դարձուածները: Իսկ կուսակալութեան պաշտօնէին դառնալէն ետքը, նոր նիստ մը կը գումարուէր յունիս 22ին դատարանին մէջ, բայց դարձեալ նախատանաց խօսքեր կը կրկնուէին, և դատաւորը չափազանցութեանց կը տանէր լեզուն ու գործը, յուսալով այս կերպով ազդեցութիւն գործել:

2414. Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Մայրաքաղաքի պատգամաւորութեան գլուխը Նուրի էֆէնտի, կուսակալութեան պաշտօնէին հետ համախորհուրդ, կը ստիպուի դատաւորին վզացնել, որ հրաման ունին հրովարտակին դիմադրողները ձերբակալել և կառավարութեան յանձնել, և այս կը բաւէր դատաւորը մտահոգ ընել և վիջողութեան յորդորել: Բայց միանգամայն Հայոց կողմին կը յանձնարարէր ապահովել անոր ակնկալած օգուտը: Պաշտօնեաներն ալ հայերը կը յորդորէին դիւրամատոյց լինել այդ պայմանին, միանգամայն ոչ ամէն խնդիր լուծելու հետամուտ ըլլայ, այլ մաս առ մաս յառաջել. մի մասը ապահովել և մնացեալը հետապնդել: Ասոր վրայ սկսան դատաւորին և Հայոց մէջ բանակցութիւններ և սակարկութիւններ, մինչև որ միջասահման կէտի մը վրայ իրարու մօտեցան, և գիրեր փոխանակուեցան, Թէոդորոս պատրիարքի կողմէն վճարման խոստումով, և դատաւորին կողմէ Հայոց տեղերուն և իրաւունքներուն բացառութեամբ: Յատուկ գումարում մը կը հաւաքի Ս. Յարութեան տաճարին մէջ յուլիսի սկիզբը, ուր դատաւորն և Նուրի էֆէնտին և կուսակալութեան պաշտօնեայն համաձայնութեամբ կը հաստատեն և կը կարգադրեն Հայոց պահանջները: Պատանատեղւոյն և Գերեզմանին կանթեղները կը լրացուին, Իւղաբերից սեղանը կը վերահաստատուի, և Ուժաթափման տեղը կը կարգադրուի, պատկերներ և կանթեղի շարաններ և յատուկ կանթեղներ սիւներու վրայ և կամարներու մէջ կը վետեղուին: Արեմաթացիի մատուոին ներքին և արտաքին մասերը Հայոց կը յանձնուին, նոր միջնորմը կը վերցուի, և միայն կամարի մը շարանը կը կիսուի Յունաց հետ, և վերջապէս վերնատան եկեղեցին հետզհետէ և ըստ հաճոյս յարդարելու և վարդարելու ազատութիւն կը թողուի:

2415. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵՒ ԾՆՈՒՆԴ

Ս. Յարութեան վերաբերեալ կէտերը կարգադրուելէն ետքը, կը մնային Աստուածածնայ գերեզմանին և Ծննդեան այրին խնդիրները, որոնց մասին կուսակալին հրամանին կը սպասուէր: Իրօք ալ յուլիս 4-ին անկէ հասած գիրը կը հրամայէր գործի ձեռնամուխ չըլլայ, այլ Կ. Պոլիսէ գալիք նոր հրամանին սպասել: Հարկ եղաւ հրամանին հպատակիլ և ընդարձակ գիրերով դիմել Կ. Պոլսոյ պատրիարքին, որ էր Աբրահամ Տաթևացին, հապիւ երկու ամիս յառաջ Յովհաննէս Բաբերդցիին յաջորդած (2337), յատուկ յանձնարարութեամբ փոխանորդ Պողոս վարդապետին և ազդեցիկ աւագանւոյն, որպէսպի պարտ ու պատշաճ ջանքերն ընեն, նպաստաւոր հրամաններ

հանել տալու: Գիրերը յղուեցան յունիս 21-ին Կ. Պոլիսէ եկող Ադամ ճարտարապետին և Սարգիս միաբանի մը ձեռքով: Նուրի էֆէնտին ալ ընդարձակօրէն գրեց գործադրութեան իսկական պաշտօնեայ Պաշմաքճիպատէ Ջէքի էֆէնտին, մանրամասնօրէն բացատրելով Հայոց իրաւունքները, Յունաց ոտնձգութիւնները, դատաւորին անիրաւութիւնները, միւս պաշտօնեաներուն կեղակարծ ընթացքը, շինութեանց ծախքերուն հաշիւը, և արդար որոշմանց ծրագիրը: Ինքն միայն մնաց Երուսաղէմ գործին հսկելու, մինչ միւս պաշտօնեաները իրենց պահանջներն ու պարգևները ստանալով մեկնած էին յուլիս 10-ին: Ճիշդ այս օրերուն Դամասկոսէ հրաւիրակներ կու գան Հայոց և Յունաց կողմէն ներկայացուցիչներ տանելու կուսակալին, և Դիոնեսիոս Գաթալցի և Սարգիս Կիպրացի վարդապետներ յուլիս 23-ին կուղևորէին, և Դամասկոս կը հասնին յուլիս 29-ին: Այս անգամ կուսակալն էր որ Աստուածածնայ գերեզմանին և Ծննդեան յրին սակարկութեանը կը մտնէր, Հայերէն պահանջելով որ ստացութեան մտցնէ, և Յոյներէ պահանջելով որ Հայերը հեռու պահէ: Սակայն ինքն ալ կը վզար որ Հայոց նպաստաւոր պիտի ըլլայ գալիք հրամանը, ուստի պահանջեալ 1500 քսակ գումարին վրայ Վիջողութիւններ ընելով 450 քսակի ստորագրութիւն կառնէր վերոյիշեալ վարդապետներէն մինչ Յոյներէն ստացած 1200 քսակի փոխարէն հրամանագիր մը կը յանձնէր, որով Հայերը միայն տարին երկու անգամ Բեթղէհէմ, և շաբաթը երկու անգամ Ս. Աստուածածին պատարագելու իրաւունք պիտի ունենային մինչև նոր հրովարտակին հասնիլը: Բարեբախտաբար շատ կարճ եղաւ այդ պայմանաժամը: Կ. Պոլսոյ մէջ ամէն ջանքեր թափուեցան, առաւել քան Աբրահամ պատրիարքի, Պօղոս փոխանորդի գլխաւորութեամբ, ինչպէս նաև մեծամեծներու, և յատկապէս Պէպճեանի, թագաւորին առջև միջնորդութեամբը: Չենք ուզեր նուազեցնել Նուրիի նամակներուն ալ ազդեցութիւնը, զորս ի դէպ գործածեց Պաշմաքճիպատէն: Սուլտան Մահմուտ, վայրացած իր հրովարտակին գործադրութեան ուշանալուն, հրամայեց նոր հրովարտակ պատրաստել Աստուածածնայ և Ծննդեան սրբավայրերուն համար, Մուսա դատաւորը պաշտօնանկութեան և Կիպրոս աքսորուելու դատապարտեց, և Մուստաֆա ոստիկանապետը գլխատուելու, որ միջնորդութեանց զօրութեամբ Անաբա աքսորի և տեղւոյն ամրութիւնները իր ծախքով նորոգելու փոխուեցաւ: Այդ հրամանները Կ. Պոլիսէ ճամբայ հանուեցան սեպտեմբեր 30-ին յատուկ պետական սուրհանդակով:

2416. ՆՈՐ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Դամասկոսի պատգամաւորութեան ելքէն դժգոհ, և Կ. Պոլսոյ մէջ տեղի ունեցածներուն անտեղեակ, Երուսաղէմի մէջ տխուր և նկուն վիճակ մը կը տիրէր, երբոր 1813 հոկտեմբեր 26-ին յանկարծ լսուեցաւ պետական սուրհանդակին հրամանագիրներով հասնիլը, զի հրովարտակը ուղղակի Դամասկոս ղրկուած էր: Դատաւորին պաշտօնանկութիւնն ու աքսորը, ոստիկանապետին դատապարտութիւնը, և նոր հրովարտակին լուրը, երբ կոզևորէին մէկ կողմը, սարսափի կը մատնէին միւս կողմը: Բաղաբապետը գլխաւորապէս և Յոյներէ կաշառեալ պաշտօնեաներ ահուդողի մատնուած էին, մի գուցէ իրենք ալ փորձանքի հանդիպեն: Բայց կաշառքի զօրութիւնը սահման չունի, ամէն դժուարութեանց կը յաղթէ, նոյն ինքն նոր դատաւորը Մուսա Խալիտի, բնիկ Երուսաղէմացի, ապառ չմնաց անոր ազդեցութենէն, և երկկողմանի և խաբուսիկ ճամբաներ սկսաւ գործածել գործը խճողելու և երկարելու, թելադրութեամբ Յունաց, որոնք ամէն յապաղում օգտակար կը դատէին իրենց նպատակին, մանաւանդ պաշտպանութիւն կը ըսպանէին Սիւլէյման փաշա կուսակալէն, որ այսօրեր Մէքքէ ուխտի էր գացած, և վերջին ատեններ Յոյներէն շահուած էր: Բայց կուսակալութեան փոխանորդը հրովարտակի ուժգնութիւնը և գործին ստիպողականութիւնը տեսնելով, չէր ուզած կուսակալին դարձին սպասել, այլ նոյն օրին յղած էր վայն Երուսաղէմ նոր դատաւորին և Նուրի էֆէնտին, որ այս անգամ ուղղակի գործադիր էր

նշանակուած: Հրովարտակը Երուսաղէմ հասաւ նոյեմբեր 12-ին, հրամանագիրներուն հասնելէն 17 օր ետքը: Հրովարտակը 1228 չէվվալ 15 թուականը կը կրէր, առաջին հրովարտակէն իննուկէս ամիս ետքը, և հասցէն ուղղած էր Դամասկոսի կուսակալ նոյն Սիւլէյման փաշայի, նոր դատաւոր Մուսա էֆէնտիի, և գործադիր պաշտօնեայ Նուրի էֆէնտիի: Պարունակութիւնը կը շօշափէր առաջին հրովարտակին համառօտ քաղուածը: Սէլիմի հրովարտակներուն յիշատկութեամբը, անոն համեմատ հրամաններով, գործադրութեան մէջ դատաւորին և ոստիկանապետին անուղիղ ընթացքը, և անոնց դատապարտութիւնը, Աստուածածնայ գերեզմանին և Ծննդեան այրին մասին նորէն խնդիրը յուշուիլը, և այդ մասին հրամանը երկու ալ գք բաժանորդ լինելոյ և այսուհետև իսպառ բառնալոյ վիճակութիւնն: Մնացեալները հրամանին գործադրութեան ստիպումներ էին, ազահութենէ և կաշառքէ պգուշանալու, պատիժներ սպառնալով հրամաններուն հակառակը գործելու համարձակողներուն և հրամայողներուն (Ա.Ս. Բ. 289-293, ՍԱԻ. 1091-1099):

2417. ԲԵԹՂԵՀԷՄԻ ՄԷՋ

Հրամանագիրներուն գալէն մինչև հրովարտակին հասնելուն օրը անցած միջոցը, տեղի տուած էր Մուսայի և Նուրիի, Հայերու և Յոյներու, և շատ մը միջնորդներու բանակցութեանց և սակարկութեանց, և նոյն իսկ Հայոց տրուելիք իրաւունքներուն չափաւորութեանց և ամփոփմանց: Յոյներ աշխատելով յապաղել և կուսակալին հասնելէն օգիտուիլ, և Հայեր դիմադրելով որևէ պայմանագրութեան և իրաւախոհութեան և վճարման: Բայց հրովարտակին ուժգնութիւնը ամէն վարանում իսկոյն վերջացուց, և դատաւորն ալ անուղղակի շահերէն յոյսը կտրեց, և Նուրի իր ուղղութեան յաղթանակը տարաւ: Հրովարտակին հասնելուն յաջորդ օրն իսկ, նոյեմբեր 13-ին, պաշտօնեաներ և ներկայացուցիչներ և ժողովրդականներ խմբովին Բեթղեհէմ գացին, իրք 300 հոգի, և Բեթղեհէմի եկեղեցւոյն սիւնապարդ սրահին մէջ նիստ գումարուեցաւ արտաքին հանդերձանօք, զի խորաններ միջնորմով բաժանուած են արդէն: Խօսակցութիւններ երկարեցին, ամէն մէկ կտորի վրայ վէճեր շարունակեցին, փոխադարձ պահանջներ և առարկութիւններ իրարու յաջորդեցին, մինչև որ Հայոց գլխաւոր իրաւունքները հաստատուեցան և գործադրուեցան ընկերովի ըստացութիւն այրին, կանթեղ և պատկեր այրին հիւսիսային դրան վրայ, 10 կանթեղ և 2 պատկեր և մէկ աշտանակ այրին մէջ, աւելածութիւն այրին, հիւսիսային մասն եկեղեցւոյն բանալի աւագ դրան ընկերովի, և փայտեայ դրան կղպանքին բարձումը: Հրովարտակին պօրութեամբ պէտք էր որ եկեղեցւոյն երեք դուռներն ալ և սիւնապարդ սրահն ալ և փայտեայ դրան գաւիթն ալ ընկերովի եղած ըլլային. այլ այս կէտերը անորոշ մնացին, և մինչև իսկ Դիոնեսիոս Գարթալցի և Յակոբոս Լիւստրացի վարդապետներ իբր Յոյներէ շահուած ամբաստանեցան (ՍԱԻ-1100): Սակայն ընդհանուր կերպով Հայոց ձեռք ձգած կէտեր գոհացուցիչ երևցան այն ատեն, և նոյեմբեր 14 առտուն դարձան ուրախութեամբ, և հաղորդեցին Թէոդորոս պատրիարքին զոր ինչ պարգևեաց Տէր ալգին Հայոց: Պատրիարք անձամբ չէր գացած Բեթղեհէմ, այլ պաշտօնապէս ներկայացուցիչ նշանակած էր Եւդոկիացի Ստեփան փոխանորդ և Եւդոկիացի Մարկոս եպիսկոպոսներ, Մարաշցի Կիրակոս նախկին փոխանորդ, և Վանեցին Սիմէոն լուսարարապետ, և Գարթալցի Դիոնեսիոս վարդապետները, աւագ թարգման Աւետիս և Երուսաղէմացի Գէորգ Պօտուրեան պարոններ: Յոյներ ալ ներկայացուցիչ պատգամաւորութիւն մը, իսկ Լատիններ միայն իրենց թարգմանը նշանակած էին: Յունաց և Լատինաց հետ Վէճը շարունակեց պատարագի օրին և կարգին վրայ, նոյնպէս խորանի վարդերուն դրուելուն և մնալուն վրայ, և վերջապէս Հայեր հաւանեցան Լատիններուն յաջորդել, որոնք Յոյներուն կը յաջորդէին, և վարդերուն համար ալ որոշուեցան, յիւրաքանչիւրին իր պատարագին ատենը դնել, և մնացած ատեն խորանը անպարզ թողուլ: Ըստ այսմ Հայոց առաջին պատարագը մատոյց Կիւմիւշխանացի Ստեփան ծերունի վարդապետ

նույն 25-ին, Յիսնակաց առաջին երեքշաբթին: Աւելացնենք թէ Բեթղեհէմի մէջ իսպառ չեն վերջացած տեղի կամ անցքի խնդիրներ Յունաց և Լատինաց հետ, մինչ այդ կողմէն հանդարտ է Ս. Յարութեան և Ս. Աստուածածնի գործերուն վիճակը:

2418. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Բեթղեհէմի ետքը կը մնար Ս. Աստուածածնայ տաճարին կարգադրութիւնը, և գումարումը այնտեղ կատարուեցաւ նոյն 18-ին: Նորէն նոյն խաղեր և նոյն ճիգեր, և դատաւորին կողմէ անօգուտ փորձեր Հայերը քիչով գոհացնելու, և Յոյներուն կամքին և կաշառքին ծառայելու, մինչև որ Նուրի սրտմտութեամբ համարձակեցաւ ձայն բարձրացնել, թէ մենք եկած չենք գաղտնի բանակցութիւններով գործ կարգադրելու, այլ յայտնապէս արքունական հրաման գործադրելու: Ասոր վրայ կը սկսին ամենայն ինչ հաւասարութեամբ բաշխել երկու ազգերուն վրայ, արտաքին երկաթի դռնէն սկսելով մինչև Գերեզմանը և շրջապատը, իջնելու ատեն աջը Յունաց և ձախը Հայոց յատկացնելով: Ըստ որում կը բաշխուին, Յովակիմայ և Աննայի սեղանը Յունաց, իսկ Յովսէփայ Աստուծահոր սեղանը Հայոց, նոյնպէս տեսուչներու սենեկապետը, Գերեզմանին ետևի և դիմացի մասերը, և Գերեզմանին երկու կողմերու որմերը: Միայն Հայեր կը ստանան որ Հայոց խորանին առջևի կամարաձև շարանին երեք կանթեղները, չորս շարաններուն կարգին դրուին Յունաց ունեցածին նման, և պատարագն ալ Հայերը Յոյներէն ետքը մատուցանեն ամէն օր: Ըստ այսմ ալ նոյն 19 չորեքշաբթի առտուառաջին պատարագը կը մատուցուի Գերեզմանին վրայ, և անկէ ետքը պատկերներ և կանթեղներ և վարդեր կը վետեղուին: Վերջին պայմանները, որոնց հաւանութիւն տալը ուղղակի Դիոնեսիոս վարդապետի կը վերագրուէր և Յոյներէ շահուած ըլլալու ամբաստանութեան փաստ կը դառնար, առիթ եղան բաւական կարևոր ժխտի մը, որուն գրգիռ տուին քանի մը միաբաններ, և անոնցմէ անցաւ քաղաքացւոց և քաղաքացիներէ ուխտաւորաց, որոնք կուզէին Դիոնեսիոսը ձեռք ձրգելով, իբրև ազգային իրաւանց մատնիչ, յօշոտելով սպաննել: Ոմանց աչքին ամէնօրեայ պատարագը ծանրաբերուն աշխատութիւն կը նկատուէր, ուրիշներն ալ երեք կանթեղները կամարաձև շարանէ ուղիղ շարանի փոխելը ազգային կործանում կը նկատէին: Քանի մը անգամ կրկնուեցաւ ժխտը վանքին մէջ, պատրիարքը կը ջանար որ դուրսը չլսուի, բայց վերջապէս շփոթին քանի մը գլխաւորները կառավարութեան ձեռօք հեռացնելու միջոցը ձեռք առաւ, և շփոթը վերջացաւ: Բայց ձայնը մինչև Կ. Պոլիս հասաւ, և Թէոդորոս պատրիարք պարտաւորուեցաւ իսկութիւնը տեղեկագրել փոխանորդ Պօղոսի, և Դիոնեսիոսը և անոր գործակիցը արդարացնել:

2419. ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՓԱԿՈՒՄԸ

Գործադրութեանց գլխաւոր կէտերը լրացեալ էին, բայց մանրամասնութիւնք չէին լրացած, մանաւանդ որ Յոյներ գործին ստացած կերպարանքէն դժգոհ, շարունակ խնդիրներ կը յուզէին, կռիւներ կը պատրաստէին, շփոթներ կը գրգռէին, յուսալով Հայերուն վրայ ամբաստանութիւններ ստեղծել և զրկումներու դուռ բանալ: Դեկտեմբեր 1-ին Յիսնակաց երկրորդ երկուշաբթին գումարում մը ևս տեղի ունեցաւ Ս. Յարութեան մէջ, իբր փակման նիստ, ուր Հայեր նորէն յառաջ բերին իրենց պահանջները, այսինքն, տիրանալ մուտքին մեծ դրան վերին և ստորին մասերուն, նոյն մասին աւելածութիւնը, տաճարին մէջի մեծ ջրհորին և Գերեզմանին դրան պահնորդութիւնը: Իբր որոշում երեք ազգերու հաւասարութեան հրամանը շեշտուեցաւ: Հայոց վերնատունին անյարմար շինութեանց խնդիրներն ալ յիշուեցան, բայց փոփոխութեանց իրաւասութիւն չէր տրուած, և խաչկալի և ուրիշ մասերու կազմակերպութեամբ խնդիրը փակուեցաւ: Եթէ այլայլեալ և Յոյներէ յափշտակեալ տեղերը հինին վերածել հրաման ըլլար, քսանէ աւելի կտորներ կային, որոնց մէջ Յոյները իրենց մասերը ընդարձակած, և Հայոց ու

Ղպտոց տեղերը գրաւած կամ խաթարած էին , այլ եղածը նախկինին դարձնելու հրամանը յիշուած չէր հրովարտակին մէջ: Դեկտեմբերի մէջ Յոյներ չդադարեցան ամէն տեսակ խաբէական և անտեղի պատճառքներով խնդիրներ նորոգել, տեղացի իսլամներ ալ պարգևներու և իրաւունքներու խնդիրներ յուլեցին, քաղաքապետն Ապտիւլքերիմ, արդէն Յոյներէն շահուած, նորէն հրապարակ նետուեցաւ և քաղաքական միջադէպներ ալ կեղծելու ձեռնարկեց, որոնցմէ շատ նեղուեցան Հայեր, վճարումներու և տուգանքներու ենթարկուեցան, դատարաններու ալ քաշուեցան. բայց վերջապէս չընկճեցան, և որչափ ինչ հրովարտակի վօրութեամբ հնար էր պահել և պաշտպանել՝ անթերի լրացուցին: Մէհէմմէտ Նուրի էֆէնտին, գործադիր իշխանութեան առաջ փոխանորդը և վերջէն նոյնինքն գործադրութեան իշխանաւորը, այլևս իրեն գործ մնացած չըլլալը յայտնելով Կ. Պօլիս դառնալը որոշեց: Կարևոր ընծաներու հետ ճանապարհածախսը, և սպասաւորաց և հետևորդաց վարձքերը և պարգևները աթոռէն վճարուեցան. իսկ իրեն վճարուելիք պաշտօնական գումարը Կ. Պոլսոյ ամիրայից թողուցին որոշել, և փոխանորդ Պօղոսի գրեցին անթերի հատուցանել: Գոհունակութեան վկայական մըն ալ յանձնեցին պատրիարքի, եպիսկոպոսներու և վարդապետներու 27 ստորագրութիւններով, և դեկտեմբեր 28 թուականով, որ էր Գլխադիրի նախատօնակին օրը, և նոյն օրը Նուրի ալ Երուսաղէմէ Յոպպէ, անկէ ալ Կ. Պոլիս նաւելու համար ճամբայ ելաւ: Պետական պատգամաւորութեան Երուսաղէմ մնացած միջոցին 8 ամիս և 8 օր ըսուած է, որ դեկտեմբեր 28-էն դէպ ետև հաշուելով կը հասնի ապրիլ 20-ին, այսինքն Յոպպէ հասնելու միջոցին (2411):

2420. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ Մանրամասնօրէն պատմեցինք Երուսաղէմի խնդիրին պարագաները, և անոր հետզհետէ ստացած ծանր և վտանգաւոր կերպարանները, 1808 սեպտեմբեր 30-ին հրդեհին պատճառով (2315): Իրաւ ալ ճիշդ պատեհն էր կրկնելու թէ սակաւ ինչ հուր վորպիսի անտառս հրդեհէ (ՅԱԿ. Գ. 5): Դիպուածական կայծ մը որ Ս. Յարութեան այդ բաժինը այլ տաճարին շատ մասեր կաւերէ, մեծ գմբէթն իսկ վար կիջեցնէ, և քիչ կը մնայ որ նիւթականին աւերման հետ իրաւականն ու օրինական ալ ջնջէ, և այսչափ դարերէ ի վեր Հայոց վայելած ստացութիւնները և իրաւունքները և բոլոր նւիրականութիւնները փճացնէ, ազգն իր պարծանքէն և եկեղեցին իր փառքէն կապտէ և ընդ միշտ զրկէ: Հինգ տարիներ և աւելի լրացան և անցան մինչև որ հնար եղաւ նախկին վիճակը վերանորոգել իր էական կէտերուն մէջ, թէպէտ բաւականաչափ մասնակի կորուստներով: Յոյներ յաջողած էին մինչև իսկ Հայերը ամէն իրաւունքէ զրկելու հրովարտակներ ձեռք ձգել, և նոյնիսկ Ս. Յակոբի մայրավանքին տիրապետութեան յաւակնիլ, և ամենայն ինչ իւրացնել դրամի վօրութեամբ: Ազգը զգաց կորուստի մեծութիւնը, յանձն առաւ ամէն աշխատութիւն, գործածեց միջնորդութիւն, չխնայեց զոհողութիւն: Իսկ Երուսաղէմի միաբանութեանը գալով, նա էր որ գործին կառաջնորդէր, դժուարութեանց կենթարկուէր, պայքարներու կը տոկար, նեղութեանց կը համբերէր, անբուն կը հսկէր, որևիցէ պարագայի առջև տեղի չէր տար, և ամէն բան յանձն կառնէր, միայն թէ տնօրինական սուրբ տեղեաց մէջ Հայուն անունը չդադարէր, Հայոց եկեղեցին չանարգուէր, Հայ օրհնութիւնները չլռէին, և Հայութիւնը քրիստոնէութեան մէջ իր առաջնակարգ դիրքը անաղարտ պահէր: Այն ամէն մանրամասնութիւնները զորս պատմեցինք (2314-2320 և 2408-2419), փաստեր են գործին կարևորութիւնը, Հայուն զգացման, ազգային կամքին, և միաբանութեան արդիւնքն, որոնք մեզ կառաջնորդեն Երուսաղէմի վրայ ուղիղ միտքով նայիլ, ազգային և եկեղեցական զգացումով գործել, և թեթևակի մտածումներով չխանգարել և չքանդել ինչ որ դարեր մեզի հասուցին, նախնեաց ճիգեր պաշտպանեցին, ազգային սկզբունքներ թելադրեցին, և պատմական դասերը սորվեցուցին:

2421. ՄՆԱՑՈՐԴ ԽՆԴԻՐՆԵՐ

Թէպէտ գլխաւոր խնդիրը փակուեցաւ, և Հայեր վերջապէս միւս երկուց ազգաց Յունաց վաւ Լատինաց հետ հաւասար իրաւանց տէր ճանչցուեցան ընդհանրապէս, սակայն խնդիրներու դուռը չփակուեցաւ, մանաւանդ թէ ընդարձակուեցաւ, զի Յոյներէն զատ Լատիններն ալ Հայոց դէմ դարձան: Լատիններ մինչև այս ատեն Հայերուն նպաստաւոր ընթացք ունէին, զի կը կասկածէին որ եթէ Յոյներ յաջողին Հայերը ընկճել, կրկին զօրութեամբ իրենց ալ դէմ կը դառնային, բայց երբ Հայոց և Յունաց մէջ խնդիրները լուծուեցան, և Հայեր ըստ բաւականին նպաստաւորուեցան, այս անգամ իրենք ալ Հայոց դէմ դարձան, և սկսան Յոյներն ալ գրգռել, որպէսզի կարենան իրենք օգտուիլ: Մենք այլևս պիտի չհետևինք այն ամէն խնդիրներուն և միջադէպներուն որոնք տեղի ունեցան երեք ազգերու միջև, զի տեղական բնոյթ ունին, և ինչ որ ցարդ պատմեցինք տիրապէս ազգային խնդիրներ էին: Լատիններ կը ցաւէին որ Ս. Աստուածածնայ գերեզմանին մէջ իրենք մասնակցութիւն չունէին, նմանապէս Ս. Ծննդեան այրին մէջ ալ գլխաւոր սեղանին վրայ բնաւ իրաւունք չունէին, և կողմնակի Մսուրի սեղանով պարտաւորուած էին գոհանալ: Հայալատին խնդիրներ Ս. Յարութեան մէջ ասպարէզ չգտան, զի փոխադարձ շփման առիթներ կը պակսէին, և ինչ որ ընկերովի էր՝ հաւասարութեան սկզբունքով կարգադրուած էր: Ընդհակառակն գժտութեանց առիթներ ընդարձակուեցան Բեթղէհէմի եկեղեցւոյն մէջ, և գլխաւոր առիթը ընծայեց Լատիններուն իրենց եկեղեցիէն Ս. Այրը երթալու անցքը, որ Հայոց սեփական եկեղեցիին մէջէն պիտի ըլլար անհրաժեշտաբար: Լատիններ կը պահանջէին որ Հայեր ճիշդ իրենց եկեղեցին միջավայրը չեղակի անցք մը թողուն, և չկարեան փսիաթով կամ կապերտով ծածկել, մինչ նոյն տեղը իրենց եկեղեցւոյն դասին և ատենին կեդրոնը կը կազմէր, և հնար չէր կիսել: Երբեմն վէճեր և երբեմն բռնութիւններ, երբեմն ալ խուժանական յարձակումներ տեղի ունեցան այդ պատճառով, մինչև Հայեր կը ջանային նախկին լաւ յարաբերութիւնները չեղծանել, մինչև իսկ յանձնառու լինելով որ Լատիններ համարձակ անցնին իրենց սփռոցներուն վրայէն: Այդ զիջողութեան կը յորդորուէին թէ անցելոյն համար երախտագէտ զգացումով, և թէ ապագայի համար նախազգուշական դիտումներով: Փրանկիսկեան միաբանութեան մեծաւոր հայր Մանուէլ, առերես հաշտարար, բայց ի ներքուստ գրգռող, դերերը ճարտարօրէն կը միացնէր. Բեթղէհէմի քաղաքացիներ և քաղաքապետ իրենց շահու աղբիւր մը գտած էին փոփոխակի մէկ կամ միւս կողման գործիք դառնալով, Յարմար մէկ միջոցին Թէոդորոս պատրիարք իր առաջին ուխտը կը կատարէր ի Ս. Ծնունդ, և 1814 յունուար 12-ին, երկուշաբթի օր, Բեթղէհէմ կերթար հանդիսապէս և Ծննդեան ութօրէից նախատօնակը և առաւօտեան պաշտօնն ու պատարագը անձամբ կը կատարէր: Սակայն խնդիրներ չդադարեցան և բոլոր տարին տևեցին, դատարաններու առջև ալ ելան, կայսերական նոր հրամանագիր բերել տալ հարկ եղաւ, ինչպէս մանրամասնօրէն կը գրեն Երուսաղէմի պատմիչները (ԱՍՏ. Բ. 320-351. ՍԱԻ.1122-1129): Հայեր Երուսաղէմի Տաճկաց կողմանէ ալ նեղուեցան, զի քաղաքացի իշխանաւորներ և տաճարին դռնապաններ մեծամեծ գումարներ կը պահանջէին Հայոց նպաստել նուն համար, իբր թէ իրենց շնորհն ըլլար ստացուած արդիւնքը:

2422. ԹԷՈՂՈՐՈՐՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Երբոր Երուսաղէմի գործադրական շրջանը փակուեցաւ, և Նուրի պէյ մայրաքաղաք դարձաւ, տակաւին Կ. Պոլսոյ պատրիարք էր Աբրահամ Գօլեան, և թէ Նուրիի տրուելիք գումարը, թէ Դամասկոսի կուսակալին պահանջը, թէ Երուսաղէմի պաշտօնէից և քաղաքացւոց և քաղաքապետին տրուելիք պարգևները, և թէ գործադրութեան միջոցին եղած ծախքերը, ահագին գումարի պէտք գոյացուցած էին, զորս Պօղոս եպիսկոպոս իբր Երուսաղէմի փոխանորդ Կ. Պոլսոյ

մեծամեծներէն ստանալու կաշխատէր: Իսկ անոնք թէ եղած և ցուցած ծախքերը չափապանց կը գտնէին, և թէ Պօղոսի և Դիոնեսոսի վրայ կասկածներ կը յարուցանէին, և Գօլէան պատրիարքն ալ անոնց կամակից էր: Իրաց դարման մը գտնելու համար խորհրդակցութեան պէտքը զգացուեցաւ, և որոհետև անհնար էր ծերունի Թէոդորոս պատրիարքին Կ. Պօլիս գալ, Երուսաղէմի գլխաւոր եպիսկոպոսները հաւաքելու խորհուրդը ունեցաւ Պօղոս: Այս պատճառով հրաւիրուեցան Մարկոս և Յարութիւն՝ Երուսաղէմէ, Սիմէոն և Դիոնեսիոս և Կարապետ՝ Էջմիածինէ, ուր ձեռնադրելու գացած էին, Մկրտիչ՝ Տփղիսէ և Գաբրիէլ՝ Ջմիւռնիայէ, ուր նուիրակ կը գտնուէին, բայց ոչ մին յանձնառու եղաւ գալ, և միայն հաշիւները Երուսաղէմէ զրկուեցան թարգման Աւետիսին հետ, որ հապի կրցաւ հաշիւները Պօղոսին յանձնել, հիւանդացաւ և մեռաւ (ԱՍՏ. Բ. 358-359): Պօղոս դարձեալ մինակ մնացած էր Երուսաղէմի համար աշխատելու, երբ Աբրահամ պատրիարքութենէ պաշտօնանկ հռչակուեցաւ (2349), և 1815 դեկտեմբեր 1-ին ինքն Պօղոս պատրիարք ընտրուեցաւ, և դիւրութիւն ունեցաւ Երուսաղէմի գործերուն ձեռնտութիւն և պաշտպանութիւն ընել: Արքունական դիւաններէն հանել տուաւ Դամասկոսի և Երուսաղէմի իշխանաւորաց իրաւունքներուն քանակը, և այնպէս անոնց պօշաքաղութեան առջևան առաւ (ՍԱԻ. 1138): Երուսաղէմի վանքին մէջ աշխարհականներ ալ տիրացած էին, և գանձն ու մատակարարութիւնն ձեռք առած, որոնց կարգին կը յիշուին Պետուր մը, Հաննէ վարդապետին տահմէն, և անոր փեսայն Մուրատ Ջմիւռնացին, որոնց վրայ զրկուեցան Աւետիք Կեսարացի և Մեսրոպ Ադրիանուպոլսեցի եպիսկոպոսներ, և յաջողեցան աշխարհականները գործէ հեռացնել, և գործ ու հաշիւ յանձնեցին Նիկոմիդացի Գաբրիէլ եպիսկոպոսին որ փոխանորդ էր: Այս առթիւ գործէ հեռացուցին Դիոնեսիոս եպիսկոպոսն ալ, որ յիշեալ աշխարհականներուն գործակից և գովող էր ճանչցուած: Այսպէս դրամական խնդիրները հետզհետէ կարգադրուեցան, ներքին գործեր սկսան կանոնաւորութիւն ստանալ, երբ Թէոդորոս վանեցին պատրիարք ալևորեալ և լի աւուրք վախճանեցաւ 1818 օգոստոս 22-ին (ԱՍՏ. Բ. 360), որ թէպէտ 1800-ին ընտրուած, այլ հապի 1802 յուլիս 11-ին զիջած էր աթոռ բարձրանալ (2307), և շատ աղետալի օրեր էր անցուցած: Միաբանութիւնը նոյնինքն Պօղոսը հրաւիրեց Կ. Պոլսոյ աթոռը թողուլ և Երուսաղէմի աթոռը անցնիլ, բայց նախատեսելով որ թէ Պօղոս և թէ աւագանին պիտի դժուարանան այս ընտրութիւնը հաստատել, աւելցուցին որ ի հարկին ուրիշ մը ընտրեն, միայն թէ միաբանութենէն ըլլալ, որպէսպիսի պատ մնան Կարապետի նպովքէն (1949):

2423. ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵՒ Կ ՊՈԼԻՍ

Պօղոս պատրիարք և աւագանին 1818 սեպտեմբեր 20-ին ժողովին մէջ որոշեցին, Երուսաղէմի ընտրութենէն առաջ վանքին մէջ կանոնական գրութիւն հաստատել, անոր համար ընտրութիւնը կը յետաձգեն, և եօթն խորհրդականներու ժողովը կը նորոգեն, պաշտօնի կոչելով Գաբրիէլ Նիկոմիդացի փոխանորդ, Մկրտիչ Մեղրիկ լուսարարապետ, Եղիա աւագ թարգման և դարպասընկալ, Սիմէոն նախորդ լուսարարապետ, Կարապետ ճառաձի, Մինաս Մոմաշէն և Կիրակոս Երուսաղէմացի եպիսկոպոսները և Ստեփանոս ծերունի վարդապետը: Կանուխէն հաստատուած կանոնական բանք կարգադրութեան 12 յօդուածներուն 7 ևս աւելցուցին, և Կ. Պոլսոյ փոխանորդութեան մէջ Պօղոսի յաջորդող Լիւստրացի Յակոբ վարդապետի յանձնեցին Երուսաղէմ տանիլ և գործադրութեան հսկել: Յակոբ մեկնեցաւ 1818 հոկտեմբեր 1-ին և 1819 յունուար 13-ին Երուսաղէմ հասաւ, ուր միաբանութիւնը շուտով համակերպեցաւ եղած կարգադրութեան, վճարումները կատարուեցան նորահաստատ չափաւոր քանակներով, կարգադրութիւններն ալ գործադրուեցան, բայց և խնդրուեցաւ նոր պատրիարքի ընտրութիւնը փութացնել: Սոյն միջոցին վերստին արծարծուեցան Բեթղէհէմի Ս. Ծննդեան տաճարին վէճերը,

թէ Յունաց և թէ Լատինաց կողմէն, դատաւորին ատեանը ելան խնդիրները, Հայերուն ջանքերը ապարդիւն չեղան, ոտնձգութեանց տեղի տուին, և մասնաւոր յաջողութիւններ ալ ունեցան: Միայն արտաքին երկաթեայ դրան խնդիրը կասկածի ներքև էր, զի կը կարծուէր որ Դամասկոսի կուսակալ Սալիհ փաշա Յոյներէ շահուելով տարբեր կարգադրութիւններ ընէ: Ուստի դատաւորէն վճիռ և քաղաքացիներէն հանրագիր ստանալով Կ. Պօլիս յղեցին, որպէսզի կայսերական վճռով հաստատուին Հայոց իրաւունքները: Սոյն օրերուն հանդիպած էր Կիլիկիոյ Կիրակոս կաթողիկոսին խնդիրը (2360), որ բաւական վբաղեցուց պատրիարքն ու աւագանին: Հապիւ թէ վայն կարգադրեցին, Երուսաղէմի դարձուցին մտադրութիւննին, և աւագանին միաձայն հաւանութեամբ անհնարին գտաւ Պօղոսի Կ. Պօլիսէ հեռանալը, ուստի ընդունելի չդատուեցաւ 8 եպիսկոպոսներու և 27 վարդապետներու ստորագրութեամբ ընտրողական ընծայագիրը (ԱՍՏ. Բ. 361), և Երուսաղէմի միաբաններէն մէկը ընտրելու պայմանը յարգելով, պատրիարքութեան կոչեցին Նիկոմիդացի Գաբրիէլ եպիսկոպոսը, որ Թէոդորոսի ծերութեան ատեն և անոր մահուընէ ետքն ալ պատրիարքական փոխանորդութիւնը կը վարէր, և դիտողութեան տեղի չէր տուած, թէպէտ ծանոթ էր անոր տկար բնաւորութիւնը և հետևողական ընթացքը, դիւրախաբ ըլլալու չափ: Ընտրողական ժողովը գումարուած էր 1819 յուլիս 12-ին (ԱՍՏ. Բ. 367), իսկ ընտրողական գիրը գրուած էր օգոստոս 1-ին (ՍԱԻ. 1147), զոր ստորագրած էին պատրիարքին հետ 17 ամիրաներ: Նորընտիրին բնաւորութիւնը ծանօթ ըլլալուն, ամիրաները կը յորդորէին վայն միշտ խորհրդականաց ժողովով գործել, գրուած կանոնները ճշդութեամբ գործադրել, պատուիրակ յղուած Լիւսաբացի Յակոբը ժամանակ մը մօտը պահել, և եպիսկոպոսութեան բարձրացնել տալով Կ. Պօլիս դաձնել: Ասկէ ետքը մը դարձեալ Երուսաղէմը Կ. Պօլսոյ պատրիարքին և աւագանւոյն մտադրութենէն վրիպեցաւ, զի ճիշդ այդ օրեր Տիւպեանց խնդիրը սկսաւ 1819 օգոստոս 29-ին (2364), և հոկտեմբեր 4-ին աղէտը լրացաւ (2365), որուն հետևեցան միաբանական ձգտումները, մինչև որ 1820 ապրիլ 2-ի ժողովը հրաւէր Սիրոյ յայտարարութիւնը ընդունեցաւ և գործը նուիրագործուեցաւ. բայց քիչ օր ետքը ժխորը սկսաւ, օգոստոսին սաստկացաւ, և սեպտեմբեր 18-ին Սաքայեանի և այլոց գլխապարտութեամբը փակուեցաւ (2376):

2424. ՀԵԼԼԵՆԱՅ ԸՆԴՎՁՈՒՄԸ

Այստեղ պահ մը մեր ազգային շրջանակի անցքերը ընդհատելով, պիտի պատմենք երկու գլխաւոր դէպքեր, որ երկրին կերպարանին վրայ ազդելով, անուղղակի ազգային կեանքի հետ ալ յարաբերութիւն ունեցան: Ասոնց առաջինն ու նշանաւորագոյնըն է յունական ապստամբութիւնը: Ապստամբութեան առաջին գղափարն ու շարժումը կը վերագրուի Աղեքսանդր Իբսիլանթիի, երբեմն Մոլտաւիոյ բղեշխին, որ 1806-ին Ռուսիա փախած, այդ խորհուրդը կորոճար (ՊԷՐ. 171): Հապիւ 1821-ին իրեն կը յանկուցանէ Միխալ Սուցցօ և Թէոդոր Վլատիմիրքօ Մոլտաւիոյ և Վալաքիոյ բղեշխները, և անոնց հետ մարտ 11-ին կայրէ Գալաս քաղաքը, և տաճիկ բնակիչները կը կոտորէ: Թուրքիոյ Յոյներն ալ վայրացնելու համար, պատրիարքին և մետրոպոլիտներուն և իշխանաւորներուն հասցէին նամակներ կը գրէ, իբր թէ իրեն հետ խորհրդակից ըլլային, ջանալով ալ որ նամակները ձեռք իյնան, հալածանքը ընդարձակուի և կացութիւնը խառնակուի: Այսպէս գլխաւորութիւնները կը հրամայուին ազգապետէն սկսելով, ապրիլ 10-ին Գրիգորիոս կամ Լիպորիոս պատրիարքը և Եփեսոսի ու Թեսաղոնիկէի մետրապոլիտները կը կախուին, 19-ին ալ Առնավուտքէօյի եպիսկոպոսը և 27-ին Ադրիանուպոլսոյ մետրապոլիտը. իսկ իշխանաւորները անթիւ անհամար. անոնց հետ ժողովուրդներու կոտորածներ ալ: Յոյներ ազգովին ոտք կելլան, մանաւանդ Կղզեցիք և Պեղոպենեսացիք և Ատտիկեցիք, տրոմիղ կազմելով ծովի վրայ հինաբար կասպատակեն, օսմանեան նաւերը կայրեն. Օսմանեանք ալ ապստամբութիւն զսպելու նպատակով

ամէն խստութիւններ կը գործադրեն թէ՛ ծովի և թէ՛ ցամաքի վրայ. և այս վիճակը կը տիրէ մինչև 1827, երբ Եւրոպական տէրութիւններ հարկ կը պահանջէին միջամտել: Հոկտեմբեր 18-ին գաղղիական և անգլիական և ռուսական ուժեր Նաւարին նաւահանգիստը կը պարենն և 65 նաւերու օսմանեան տորմիդը կայրեն, դեկտեմբեր 18-ին ռուսական բանակը Պալքանեանց կոմէն կը սպառնայ, ուրիշ բանակ մըն ալ ասիակողմէն կը քալէ, անիկա կը յառաջէ մինչև Կէլիպօլու, ուր կը հասնի 1829 օգոստոս 7-ին. սա կը գրաւէ Կարինն ու Տրապիզոնը օգոստոս 28-ին: Ասոր վրայ հաշտութեան բանակցութիւնները կը սկսին Ադրիանուպոլսոյ մէջ սեպտեմբեր 7-ին, և հաշտութիւնը կը կնքուի 1829 հոկտեմբեր 7-ին: Ադրիանուպոլսոյ հաշտութիւնը, որ փոքր կայծէ յառաջացած ահագին հրդեհը մարեց, բաւական ծանր նստաւ օսմանեան կայսրութեան: Յունաստանի ապառ և անկախ թագաւորութիւն մը ստեղծուեցաւ Պեղոպոնետով, Ատտիկեան ցամաքամասով և կղզիներով. Վալաքիա և Մոլտաւիա ռուսական պաշտպանութեան անցան, Սերպիա ներքին վարչութիւն ստացաւ. ասիակողմէն՝ մինչև Փոթի և Ախլցիս և Ախալքէլէք գիծը Ռուսիոյ կցուեցաւ, Վոսփորի և Տարտանէլի ապառ անցուդարձը պայմանաւորուեցաւ և 700000 քսակի տուգանք որոշուեցաւ: Յունական շփոթներու միջոցին Հայոց վրայ ալ վնասներ չեղան, քանիներ քսութեան և կրպարտութեանց հանդիպելով սպանուեցան Յովհաննէս Պապաօղլու 1821 ապրիլ 7- յոշոտուեցաւ (ՊԷՐ 463), Գասպար Չերապ ամիրա ապրիլ 21 ին կախուեցաւ (ՊԷՐ. 465), և խմբովին կոտորածներ ալ պակաս չեղան: Բայց միւս կողմէն Յոյներուն՝ կառավարութեան աչքին կասկածելի դառնալովը, պաշտօնական և ելեմտական գործերէ սկսան հեռու պահուիլ, և նոյն շրջանակներու մէջ Հայերուն ասպարէզը ընդարձակուեցաւ: Միննոյն ատեն կաթոլիկական խնդիրները վայրացան, և Ադրիանուպոլսոյ հաշտութեան մէջ ալ նկատի առնուեցան, և կաթոլիկ նոր հասարակութեան կազմուելուն պատճառ եղան, ինչպէս այս ամէնը պիտի պատմէնք իրենց կագին:

2425. Թուրքիոյ համար ոչ նուազ կարևոր խնդիր դարձաւ Ենիշէրիներու գործը: Սուլտան Օրխանէ կազմուած Ենի Չէրի կամ Նոր Գունդը օսմանեան բանակին պարտութիւնն էր, և ամէն յաղթութիւններ և աշխարհակալութիւններ անոնց արդիւնքն էին: Բայց իրենց առաւելութիւններովը չըփացած, հին Հոնմին պրետորիականներն էին դարձած. բռնութեամբ կամքերնին քալեցնելու և սպառնալիքով իրենց կիրքերը գոհացնելու վարժուած, ոչ կարգի և ոչ կանոնի կանսային, ոչ միայն մեծամեծներու և նախարարներու, դենպետներու, և եպարքոսներու կեանքերը անոնց հաճոյքէն կախում ունէին, այլ և ժողովրդին վրայ ապատօրէն կը բռնանային, սուրերնին փորձելու համար՝ անցորդի գլուխ կտրելու չափ. այնպէս որ փողոց ելլողը՝ դառնալուն ապահովութիւնը չունէր, կամ թէ ամէն մէկ քայլափոխին տոյժի և տուգանքի յանձնառու պիտի ըլլար: Ենիշէրի գունդեր, կամ ինչպէս կը կոչուէին, օճագներ, ոչ միայն կէս դարէ ի վեր օսմանեան պարտութեանց պատճառ էին եղած, այլ և վերջին ութը Սուլտաններ անոնց կամքով գահընկեց եղած և սպաննուած էին (ՊԷՐ. 186): Սուլտան Մահմուտ Բ. իր գահակալութեան օրէն 1808 օգոստոս 11-ին, միտքը դրած էր ապատել երկիրն ալ իր անձն ալ այդ ահարկու սպառնալիքէն, բայց ոչ ընկճող պարտութիւն մը կար պատրաստ և ոչ ալ համամիտ կառավարութիւն մը: Պէտք էր ճարտար միջոցներու դիմել և Ենիշէրիներու մէջէն իրեն մտքին գործադիր մը ձարել: Այս անձն եղաւ Հիւսէյին մը, տօգուպունձու ուստա, այսինքն՝ իններորդ վաշտին պետ, Պէպճեան Յարութիւնի մտերիմ, և անոր միջնորդութեամբ Սուլտանին ծանօթացած և գործին կատարումը ըստանձնած: Հիւսէյին որ ըստ օրէ աստիճանի բարձրացում ստացաւ, մինչև որ Ենիշէրի աղասը կամ Ենէշերներու ընդհանուր հրամանատար ճէլալէատինի երկրորդ կամ Բուլ քէթիսիտասը անուանուեցաւ: Այս գիրքին մէջ յաջողեցաւ հրամանատարն ալ իր մտքին համոզել, և անոր հրամանով հետպահուէ վնասակար գնդապետները հեռացնել կամ մեռցնել: Այդ միջոցին 1824-ին,

կայսերական հրամանով, նոր պորագունդ մը հաստատուեցաւ, էշքինճի անունով, նոր տարապով և նոր մարպանքով, եւրոպական պինուորութեանց նմանութեամբ: Այդ պարագայն և չորս ապդեցիկ գնդապետներու ներքին գաւառներ փոխադրուելու հրամանը Եէնիչէրները պայրացուց, որոնք հրամանատար Ճէլալէտտինի և եպարքոս Սէլիմ փաշայի տուները կոխեցին և կողոպտեցին: Վտանգին առջևն առնելու համար Հիւսէյին հրամանատարութեան կոչուեցաւ, որ անմիջապէս մարյաքաղաքի պանապան կողմերը պտոյտի ելաւ, և շատ գլխաւորներ ձերբակալեց և սպաննեց: Իբր վարձ Իւչ թուղլու փաշայութեան բարձրացաւ, որ մարաշախտի աստիճանին կը պատասխանէր. տարապն ալ փոխեց, և Աղա փաշա կոչուիլ սկսաւ: Վճռական հարուածի պէտք կար, բայց ձեռնարկին արգելք կը նկատուէին Վոսփորի ամրութեանց պահպան Եէնիչէրի գունդերը, որ շատ ու պօրաւոր էին: Հիւսէյին նեղուցի պահպանութեան պաշտօնին անցաւ, հրամանատարութիւնը իր հաւատարիմներէն մէկուն փոխանցելով, և նոր պաշտօնի մէջ յաջողեցաւ իրեն շահիլ գլխաւոր բերդապահները: Ասոր վրայ հրաման ելաւ կայսերէն, որ Եէնիչէրիներ նոր պինուորական մարպանքներու հետևին, իսկ անոնք ըմբոստացան և 1826 յունիս 3ին, և ոչ 2ին, Համբարձման դիմացի հինգշաբթի օրը (ՊէՐ.184), նախ եպարքոսին, ապա նոր հրամանատարին տուները յարձակեցան ու կողոպտեցին և կանանոցները խառնակեցին, բայց եպարքոս Սէլիմ փաշա բացակայ էր, և նոր հրամանատարը մապապուր ապատեցաւ: Վերջնական հարուածին ժամանակը հասած էր այլ ևս. պետական անձեր համամիտ էին Եէնիչէրիներու վերցուելուն, անոնց մէջէն ալ իբր 200 գլխաւորներ Հիւսէյինէ շահուած էին: Յունիս 15, երեքշաբթի օր մեծ ժողով գումարուեցաւ Կ. Պոլսոյ կայսերական պալատը, բոլոր պետական մեծամեծներու և դէնպետութեան գլխաւորներու ներկայութեամբ Մուհամմէտի նուիրական դրոշը Սուլտան Ահմէտ մվկիթը տարուեցաւ, առաւօտու աղօթքը կատարուեցաւ, Ռէիպիլիլեմա կամ կրօնականաց պետ Արիֆ պէյ ապդու ատենաբանութեամբ Եէնիչէրիները անհաւատք և չար քան վանհաւատս, և անհնապանդք արքայի և օրինաց Մահմէտ և հրամանաց Աստուծոյ հոչակեց, և անոնք ի սուր և ի հուր սպանանել օրինաւոր վճռեց, և բոլոր բարեպաշտ մահմէտականները նուիրական դրօշին ներքև հրաւիրեց: Իսկոյն Հիւսէյին Աղափաշայն պինուորական նոր գունդերուն գլուխը, և թնդանօթաձիգներուն հրամանատար Իպրահիմ Զարաձէհէննէմն ալ իր հրետանիով, ուղղուեցան դէպի էթմէյտանի հրապարակը, ուր էր Եէնիչէրիներու մեծ ձմերոցը, և ուր 10000է աւելի հաւաքուած էին մեծ խոռվութիւն մը կազմակերպելու դիտումով: Ձմերոցին կրակ տրուեցաւ, թնդանօթներ գործեցին, փախչողներ սուրերու և սուիններու հանդիպեցան, և նոյն օր անդէն ջնջուեցաւ Եէնիչէրիական պօրութիւնը, և անարգանաց մատնուեցաւ Եէնիչէրի անունը իր 196 վաշտերով (ՊէՐ.471-472): Զառասուն օր տևեց սաստիկ մնացորդները գտնելու, և պահուրտած տեղերնէն հալածելու, գլխաւորները սպաննելու և մնացեալները խայտառակելով աքսորելու, չխնայելով նոյն իսկ Եէնիչէրիներու ծառայող հրեայ սեղանաւորները, (ՊէՐ.187): Այդ գործողութիւնն ալ մեծապէս նպաստեց Հայոց վիճակին, զի առաւել անոնք էին Եէնիչէրիներուն բռնութիւններէն նեղուողներ: Գործին մէջ ալ աւանդութիւնը պահած է Յարութիւն Պէպճեանի անունը, որ առաջին անգամ Հիւսէյինը սուլտանին ծանօթացնելէ ետքը, շարունակեց իր տեղեկութիւնները և խորհուրդները սուլտանին հաղորդելու մինչև յաջող ելքի հասցնելու ատենը:

2426. ԱՔՍՈՐԷ ԴԱՐՁՈՂՆԵՐ

Այդ երկու գործողութիւնները, թէպէտ ապգային շրջանակէ դուրս, բայց ապգային յարաբերութիւններէ օտար չէին, և այս պատճառով անոնց վրայ ալ գաղափար մը տալ աւելորդ չսեպեցինք. այժմ նորէն կը դառնանք Տաճկահայոց ներքին շրջանակին, սկսելով այն կէտէն որ 1820 ի միաբանական աղմուկները դադրեցան, ոմանց սպանութեամբ և ոմանց աքսորանքով (2376):

Աքսորեալներուն մէջ էր և Յարութիւն Պէպճեան, սակայն շատ համառօտ եղաւ արքորի պայմանաժամը, զի տարիէ մը կը գտնենք զայն փողերապետութեան պաշտօնին վերադարձած, և անկէ հինգ վեց ամիս ալ առաջ կայսեր անձնական սեղանաւորութեան կոչուած էր (ՊԷՁ.56), որով 1821 տարուոյ սկիզբները վերադարձին հրամանը ելած կըլլայ: Յիշուած չգտնանք թէ ի՞նչ միջոցով և ի՞նչ միջնորդութեամբ տրուած է Պէպճեանի ապատութեան հրամանը, բայց ամենայն հաւանականութեամբ Սուլտան Մահմուտի անձնական նախաձեռնութեան կը վերագրենք, որ եթէ պարզապէս յազգային գործս ձեռնամուխ ըլլալուն, ի խրատ զգուշութեան տուաւ արքորին պատիժը իր սիրելի և ամենայն հաւատարմութեամբ ծառայող պաշտօնէին, վեց ամիսը շատ իսկ էր այդ նպատակին համար: Բայց չենք կարծեր որ ի խրատ զգուշութեան տրուած պատիժը իր նպատակին ծառայած ըլլայ. զի Պէպճեան մինչև իր կեանքին վերջը երեք ետ չկեցաւ յազգային գործս ձեռնամուխ ըլլալէ, նոյն իսկ Սուլտանին առջև միջնորդութիւններով և դիմումներով: Աքսորէ դարձող Պէպճեանին գլխաւոր հոգը իրեն բախտակիցներուն ապատութիւնն էր անշուշտ, և յատկապէս Տիւլեաններուն, ինչ որ ըլլայ այդ մասին Պէպճեանը ամբաստաններու մարմաջէն բռնուած կենսագրին տեսութիւնը: Բայց Պէպճեանի ջանքերը արգիլող ոյժ մը կար դիմացէն, Հալէթ էֆէնտին, զոր սկիզբէն տեսանք իբր Տիւլեանց ռիստիմ թշնամի (2363): Պէտք էր որ առաջ Հալէթ վերնար մէջտեղէն, ինդպէս ալ եղաւ: Սուլտանին այդ սիրելիին համար ալ հնչեց վերջին վայրկեան, և 1822-ին Իկոնիոն արքորուեցաւ, ուր գլխատուեցաւ և գլուխը Կ. Պոլիս բերուեցաւ նոյեմբեր 1-ին: Պէպճեան ազդու և շօշափելի միջոցներով նախ Սուլտանին շրջապատը պատրաստեց, և անկէ ետքը միջնորդութիւնը ներկայեց, արտօնութիւնը ստացաւ, պնդադեսպաններով հաղորդեց, և 1823 ապրիլ 15-ին Կեսարիոյ Ս. Կարապետի վանքէն Կ. Պոլիս կը հասնէին Տիւլեան երեք եղբայրներ, Կարապետ և Յակոբ և Պօղոս: Պէպճեան միջոց մը իր Եէնիգարուի տունը կը հիւրընկալէր արքորէ դարձողները մինչև որ իրենց Քուրուշէշմէի վաղնջական տուները դարձուին և պատրաստուին և կարենան հոն փոխադրուիլ (ՊԷՐ. 188): Միւս չորս արքորականներն ալ (2376) արքորէ դարձած գիտենք միջնորդութեամբ Պօղոս Պատրիարքի (ՍԱԻ. 1144), Տիւլեաններէն ալ առաջ, քանի որ իրենց վրայ ծանր ամբաստանութիւն մը չէր ծանրանար, այլ դառնալուն թուականը որոշակի նշանակուած չգտանք: Տիւլեանց ապատութիւնը յաջողութեամբ մըն ալ կը լրանայ, զի Հալէթի հաւատարիմ գործիք և անիրաւութեանց հնարիչ, իր սեփական սեղանաւորը Իսիւլ հրեայն, որ նոյն միջոցին արքորուած էր Թէքէ, Իկոնիոնի նահանգին մէջ, այնտեղ կը գլխատուէր, և գլուխը Կ. Պոլիս կը բերուէր 1823 ապրիլ 26-ին Տիւլեանց հասանելէն 11օր ետքը:

2427. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Այդ միջոցներուն Գաբրիէլ պատրիարք, ինքն արդէն տոկուն և ազդեցիկ վարչականութենէ անմասն, և Տիւլեանց աղէտին և միաբանական ճգնած և ներքին շփոթութեանց պատճառով Կ. Պոլսոյ աթոռին ամուր պաշտպանութենէն զրկուած, մանր գործառութիւններով և առօրեայ կարգադրութիւններով կանցընէր տարիները, մինչ միւս կողմէն ներքին գործերը հետզհետէ աւելի կը խանգարուէին: Կ. Պոլսոյ փոխանորդութիւնը ստանձնած էր Մարկոս Եպիսկոպոս Եղոկիացի, Յակոբ Լիւստրացիին Երուսաղէմ յղելուն վրայ (2423): Գաբրիէլ ուկեց նորէն Լիւստրացիին հաստատել, բայց նա յանձն չառաւ և ասիակողման գաւառները դեգերելու ելաւ. իսկ փոխանորդութիւնը անցաւ Եղեսիացի Յարութիւն վարդապետի: Եղիա Եպիսկոպոս Եղոկիացի փոխանորդը, անտանելի դարձած էր իր ըմբոստ և անպուսա ընթացքովը, մինչև պարտաւորուիլ դատաւորութեան ձեռքով զայն Կեսարիա արքորել, բայց ինն ամիսէն ներում կը ստանար Պօղոսի միջնորդութեամբ, և Կ. Պոլիս գալով կը սկսէր Գաբրիէլին դէմ դաւաճանել: Պարտքերու խնդիրը

դեռ առկախ կը մնար, և օր ըստ օրէ կաճէր, զի Երուսաղէմէ ուլուած նոր հաշուեցոյցին առաքումն ալ կը յապաղէր: Այդ հաշուեցոյցը Պօղոս էր ուլած Եղիայի գրգռութեամբ, և Գրիգոր Պալեանի և Յակոբ Մանանեանի խորհրդով, և Յարութիւն Եղեսացի փոխանորդին ձեռքով: Գաբրիէլ թէպէտ կը պիջանի յղել, ոչ կամելով ընդդէմ կալ կամաց և առաջարկութեան ազգին, բայց միանգամայն Պօղոս և ժողովական ամիրաներուն ուղղակի կը գրէր, թէ այդ պահանջը ընդդէմ էր սովորութեան: Միև ժողովականներ կը գրգռուին առանց իրենց որոշման եղած պահանջին համար, և եկած հաշիւն ալ քննութեան չեն առներ: Բայց միև կողմէն կը դիտեն խորհրդականց ժողովը գրեթէ լուծուած էր, և գործերը Գաբրիէլի ձեռք խանգարուած, ուստի Պօղոսի առաջարկութեամբ ազգային ժողով մը կը գումարուի, մասնակցութեամբ Եղիա և Կիրակոս և Դիոնեսիոս եպիսկոպոսներու, և նորէն եօթը նոր խորհրդականներ կըտրուին Կ. Պոլիս գտնուող միաբաններէն, և նոր կանոնագիր մըն ալ կը կազմուի 16 յօդուածներով, 1823 օգոստոս 11-ին պատրիարքական կոնդակով կը հաստատուի, որուն ներքև կը ստորագրեն պատրիարքին հետ նաև 19 ամիրաներ, և եօթը նորընտիրներու կը յանձնեն Երուսաղէմ տանիլ և գործադրել: Կոնդակը որ Պօղոսի մտաց ծնունդ և գրչին խմբագրութիւնը կը տեսնուի, յառաջաբանին մէջ կը յիշէ խորհրդականաց դրութեան կանխաւ հաստատուած և այժմ խանգարուած ըլլալը, պարտքերուն աճիլը, և ուխտաւորաց պակասիլը յունական ապստամբութեան պատճառով, ամէնուն ըստ քմաց գործելը, և պատրիարքն ևս և ոչ զմի ի նոցանէ համարեալ ըլլալը, և կորոշուի որ վարչութիւնն ու մատակարարութիւնը լիապէս և բովանդակապէս խորհրդականաց ձեռամբ կատարուի և պատրիարքն իւրով ոչինչ չգործէ, և ձեռնամուխ չլինի ի գործս նոցա, զի մի ապա պատճառ վնասուց և անկարգութեանց գոլ դատեսցի: Յիշեալ 16 յօդուածներուն պարունակութիւնը մի առ մի վերլուծել աւելորդ կը սեպենք, զի իւրաքանչիւրին մէջ վարչական և մատակարարական գործոց մի մի ճիւղեր կորոշուին, թէ ինչպէս ամենայն ինչ ուղղակի խորհրդականաց պիտի ուղղուի, որոնք յատուկ խորհրդարան պիտի ունենան, իրենցմէ մին իբր գրագիր միշտ այնտեղ պիտի մնայ գիր և դիմում ընդունելու. շաբաթը երկու անգամ պիտի գումարուին, ամենայն ինչ միասին պիտի որոշեն և հրամայեն. ուրիշ պաշտօնեաներ առանց անոնց հրամանին բան մը պիտի չընեն և բան մը պիտի չտան ու պիտի չվճարեն: Վերջին յօդուածը պատրիարքին կը վերապահէ տարին երկու անգամ միաբանից ժողով գումարել յատեան սուրբ եկեղեցւոյն, և խրատել և յորդորել և բարեկարգութիւն յանձնարարել, մանաւանդ կենցաղային ճիւղին մէջ: Խորհրդականներ անձնապէս դիմումներ պիտի չընեն, և եթէ մէջերնէն մէկը երկպառակութիւնս և ատելութիւնս կամիցի արկանել, միւսները պիտի կարենան վայն հեռացնել, նոր մը ընտրել և Կ. Պոլիս ծանուցանել: Եօթը նորընտիր խորհրդականներ շուտով Կ. Պոլիսէ մեկնեցան, բայց երեքը ճամբան հիւանդանաց, իսկ չորսը Դամսկոսի մէջ ընկերներուն սպասեցին, և այսպէս ակնկալեալ արդիւնքը յապաղեցաւ:

2428. ՊՕՂՈՍԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Այդ ձեռնարկը Պօղոսի պատրիարքական գործունէութեան վերջին երևոյթն եղաւ. զի օգոստոս 11-էն երկուքուկէս ամիս ետքը պաշտօնէն քաշուեցաւ: Պօղոս որ այնչափ փառքով և յաջողութեամբ աթոռ բարձրացած էր, և որ արի և ձեռներէց գործիչ մը տեսնուած էր, և ընդհանուր յարգի և վարկի տիրացած էր, շատ բան կորացուց միաբանական ձգտումներուն երեսէն, որոնք երկիցս խղճալի ելք ունեցած էին, և երրորդին ցաւալի արկածներու ալ պատճառ տուած: Ամիրաներէն քանիներուն ալ աքսորը, իրեն դէմ մեղադրանաց նիւթ եղաւ, իբր զի Պօղոս անձին պաշտպանութեան համար, անոնց ստիպումները առջև դրած էր: Ժողովրդական ըմբռնումին մէջ ալ կաթոլիկութեան համակիրի, կամ գոնէ կաթոլիկամիտներու բարեկամի

գաղափարը կազմուեցաւ իր վրայ: Թէպէտ մենք իրողութեանց կշռադատութեամբ զինքն այդ մեղադրանքէ ազատ դատեցինք (2373), բայց ժողովրդական ըմբռնումը այնքան նուրբ հետապօտութեանց չի հետևիր, և ոչ ալ միշտ տրամաբանական ճշդութեամբ կը խորհի, մանաւանդ երբ առերևոյթ պարագաներ կու գան կասկածները հաստատել: Պօղոս կը վգար հետզհետէ իր դիրքին տկարանալը, բայց ոչ կուզէր բռնադատութեան առջև տեղի ունեցած երևալ, և ոչ ալ դժուարին պարագայից մէջ պատրիարքական տագնապ յարուցանել, և պատեհ ժամի մը կը սպասէր հրաժարելու և գործէ քաշուելու: Առ այս ի դէպ դատեց 1823 աշնան միջոցը, երբ սաստիկ խնդիրներ լուած էին, և նոր խնդիրներու նշաններ չկային: Հոկտեմբեր 18-ին հինգշաբթի օր աւագանին ժողովի գումարեց պատրիարքարանի մէջ և հրաժարականը յայտնեց, միայն յոգնած և տկարացած ըլլալը մէջտեղ դնելով: Ժողովականք թախանձանօք խնդրեցին պաշտօնը չթողուլ, բայց նա անդդուելի մնաց և գրաւոր յանձնեց իր հրաժարականը: Յաջորդ օրը հրաժարագիրը կառավարութեան ալ հաղորդեց, ուսկից կայսեր մատուցեցաւ, որ հրամայեց գործին պարագաները քննել և յաջորդին մասին միտքերը շոշափել: Հոկտեմբեր 24-ին չորեքշաբթի օր, եպարքոսէն հրաւեր եկաւ, և Պօղոս իբրև հրաժարեալ ել ի ճանապարհ հետի. բայց ձին ետևէն հասուցին և այնպէս տարին Բարձրագոյն Դուռ: Այնտեղ ալ միայն տեսառութիւն անձին իւրոյ առջև դրաւ, և վերջապէս նախարարները համոզեց, և յարմար յաջորդին մասին վստահեցուց: Պատրիարքն դարձաւ, ժողով գումարեց, և համակամ խորհրդով ընտրուեցաւ Պալաթցի Կարապետ Եպիսկոպոս, Երուսաղէմի միաբան, և Պօղոսի ձեռնասուն, նուիրակութեան և առաջնորդութեան պաշտօններ վարած (ԱՍՏ Բ. 385), որ շքեղ էր ատենաբանութեամբ և խորախորհուրդ մտօք (ՊԷՐ. 189): Նոյնտեղ Պօղոս պահպանիչը ըսաւ, ձեռքէն բռնելով աթոռ նստեցուց, և պատրիարքական գաւազանն ու մատանին ու փիլոնը յանձնեց, և շնորհաւորելով և օրհնելով մեկնեցաւ, և գնաց հանգստանալ Իւսկիւտար Երուսաղէմի վանքը: Կարապետի հաստատութիւնը շուտով ստացուեցաւ, և հոկտեմբեր 27-ին, Գիւտ Խաչի նախընթաց շաբաթ օրը Բարձրագոյն Դուռ ալ ներկայացաւ, վզեցաւ վերարկու պատուոյ, և մեծահանդէս փառօք դարձաւ պատրիարքարան (ԱՍՏ. Բ. 385), և մայր եկեղեցւոյ մէջ անդրանիկ ատենաբանութիւնը խօսեցաւ և խուռն ժողովուրդը օրհնեց:

2429. ՀՌՈՄԷԱԿԱՆԱՑ ԱՐԱՐՔԸ

Կարապետ պատրիարքի պաշտօնավարութեան առաջին տարիները հանդարտութեամբ անցան, և նշանաւոր կամ արկածալի անցքեր տեղի չունեցան: Առաջնորդական իրաւասութիւնները անաղարտ պահելու միտքով 1824 յուլիս 10-ին շրջաբերական գրութեամբ հրամայեց, որ եկեղեցականներ առանց վկայականի չընդունուին, առաջնորդներ իրենց վիճակէն չեղողները չձեռնադրեն, քահանաները պէտքէն աւելի չըշատցնեն, պանդուխտները առանց վկայականի չպսակեն, և ամէն տեղ դպրոցներ հաստատուին: Իսկ կաթողիկոսութեան խնդիրին մէջ ոչ բուռն ընդդիմութիւն ձեռք առաւ, և ոչ համերաշխութեան կամ միաբանութեան փորձերու ձեռնարկեց, որոնց ապարդիւն ելքը ակներև էր: Պօղոսի ձեռք առած փորձերը, նոյնիսկ իր մտաց հակառակ, կաթողիկոսութիւնը վօրացնելու պատճառ եղած էին, զի իբր ծանուցեալ մարմին մը սկսած էին երևալ, որոնց հետ դաշնադրութիւններ կը մշակէին, և որոնք պատրիարքարանին պայմաններ կառաջարկէին, և պատրիարքարանը խոնարհեցնելու չափ առջև գացած էին: Կարապետի դժուար էր ստացած դիրքերէն զիրենք ետ դարձնել, ուստի գոնէ պատրիարքարանի իրաւասութեան ներքև պահելու համար, մտածեց կաթողիկ եկեղեցականնարէն փոխանորդ մը նշանակել, և անոր ձեռքով պէտք եղածը հաղորդել և հրամայել կաթողիկոսութեան յարող Հայերուն, որ այս կերպով ոչ դաւանական բռնադատութիւն կրած, և ոչ պատրիարքարանի իշխանութենէն ընդվզած պիտի ըլլային: Խորհուրդը տակաւ մշակուեցաւ մինչև 1827, երբ Պէպճեան հաճեցաւ միջնորդն ըլլալ այդ

առաջարկին: Բայց երբ անձը նշանակելու եղան, Աբբայեանք Անտոն Նուրիճան, և Քօլէճեանք Պօղոս Մարուչ վարդապետներու կողմը եղան, և առաջարկը ընթացք և գործադրութիւն չունեցաւ: Բայց կաթողիկական խումբը աստիճան մը ևս զինքն զօրացած կարծեց, զի անջատ մարմին նկատուելու կերպարանն էր առած, որով պատրիարքարանի իրաւասութեան ներքև յատուկ բաժին մը կազմելէ, պատրիարքարանէ անկախ բաժին մը ըլլալու անցքը իրենց դիւրին երևցաւ: Թնկըրեան Յակոբի տուն ժողովի գումարուեցան, որ սպարապետ Մէհէմմէտ Խուսրէվ փաշայի սեղանաւորն էր, և կայսեր մատուցուելիք աղերսագիրը պատրաստեցին և ստորագրեցին, խնդրելով զատուցանել զմեզ ի Հայոց, և տալ մեզ յատուկ պատրիարք և եկեղեցի: Որպէսզի իրենց խնդրանքին ոյժ տան, իբր պատճառ յառաջ բերած էին թէ Հայերը կը մտածեն կանգնել ինքեանց զմասնաւոր թագաւորութիւն իմն ի Հայաստան, ընդ հովանաւորութեամբ տէրութեան Ռուսաց, և թէ իրենք չեն ուզեր միաբան երևիլ նոցա և հաղորդ չարախորհուրդ ապստամբութեան նոցա: Կայսրը այլապէս Պէլճեանը կը կոչէ, և անոր բացատրութիւնները առնելէն ետքը եպարքոսին կը գրէ, պատրիարքն ալ լսել և իր ազգին համար երաշխաւորութիւն պահանջել: Կարապետ պատրիարք և Պօղոս նախորդ պատրիարք Բարձրագոյն Դուռ կը հրաւիրուին, որոնք բացարձակ երաշխաւորութիւն կու տան իրենց հաւատարիմ ժողովրդին համար, և պահանջուած բացատրութեանց ալ պատասխեալով կը յայտնեն, թէ ծխատէր քահանաներու ձեռքով իրենք ժողովուրդին նկատմամբ ամէն տեղեկութիւն կը ստանան, այլ թէ չեն կրնար երաշխաւոր լինիլ անոնց, որոնք հայ ծխատէրները կը մերժեն լատին կամ լատինացեալ ծխատէրերու կը դիմեն, և հայ եկեղեցիները խորշելով լատին եկեղեցիներ կը յաճախեն Կայսրը և Բարձրագոյն Դուռը տրուած բացատրութիւններով կը համոզուին, և աղերսագիրին գլուխ կանգնողները իբր զրպարտողներ աքսորին կը դատապարտեն, Յակոբ Թնկըրեանը Կասարիա և Յովսէփ Թնկըրեանը Սեբաստիա, և 1827 հոկտեմբեր 3-ին ընտանեօք ճամբայ կը դրուին:

2430. ԱՔՍՈՐԻՆ ՀՐԱՄԱՆԸ

Սուլտան Մահմուտ Ատիլ արդարադատ կայսրը կուզէր աւելի ևս ընդարձակել զրպարտողներու դէմ իր խոստովանութիւնները, սակայն չէր ուզեր անուղղակի կերպով քրիստոնէայ պետութիւնները վիրաւորած երևալ, սակայն ի դէպ պարագաներ այդ զգուշաւորութեան ալ առջևն առին: Յու նական ապստամբութիւնը (2424) կը տևէր եօթը տարիներէ ի վեր, երբ Ռուսիա և Անգղիա և Գաղղիա անոնց պաշտպանութեան ելան, Պեղոպոնէսի և Հելլադայի համար անկախ և ազատ տէրութիւն պահանջեցին, և իբր 40 մարտանաւերու տորմիղ մըն ալ ղրկեցին այն ջուրերը, ուր հոկտեմբեր 13-ին հասան: Օսմանեան ծովակալ Թահիր փաշա երոպացի ծովակալները բանակցութեան հրաւիրեց 16-ին, բայց անոնց գալու ատենը ումբակոծել սկսաւ, Երոպացիք պատասխանեցին, և Նաւարին մէջ եղող 65 մարտանաւերու տորմիղը ջնջեցին, & Նաւարինը ու Մեթոնը քանդեցին, որուն վրայ Գաղղիոյ և Անգղիոյ և Ռուսիոյ դեսպաններ Կ. Պոլիսէ մերժուեցան նոյեմբեր 26-ին, և դեկտեմբեր 18-ին պատերազմ հրատարակուեցաւ Ռուսիոյ դէմ, որ արդէն դէպ Վալաքիա կը քալէր (ՄԵ.159): Այլևս Սուլտանին ակնածութեան կամ զգուշաւորութեան տեղի չէր մնացած, մանաւանդ թէ կաթողիկամիտներու քսութեանց և օտարասիրութեան և ըմբոստութեան ազդած զայրոյթը առաւել ևս սաստկացած էր: Երկու Թնկըրեաններուն աքսորին (2429), հետևեցան Թնկրեան Գրիգոր, Տավութեան Անտոն և Յովսէփ, Գըլճեան Գրիգոր և Վիչէն և ուրիշ քսու աղերսագիրին կազմութեան մասնակից Գտնուողներ (ՊԷՐ.190, 196), որոնք ճամբայ հանուեցան դեկտեմբեր 27-ին: Իսկ երեք օր ետքն ալ Դեկտեմբեր 30-ին, առ հասարակ կաթողիկներու մասին ձեռք խստութեանց հրովարտակը պատրիարքին հաղորդուեցաւ: Կարապետ հարկ սեպեց զիրենք ժողովի հրաւիրել Սամաթիոյ եկեղեցին, ուր

փոխադրուած էր պատրիարքարանը 1826 օգոստոս 18-ին ահագին հրդեհէն ետքը, որ լափեց լափիկպեց Կ. Պոլսոյ մի լաւ մասը, Պահճէ քարու և Այա Սօֆիա և Եէնիքարու և Պայապիտ շրջանակին մէջ գտնուած բոլոր թաղերը, Բումքարուի մայր եկեղեցին և պատրիարքարանն ալ միասին (ՊԷՐ. 474): Իրենց հաղորդուեցաւ հրովարտակը, որ հինգ կէտեր կը պարունակէր. 1. Գաղտացի կաթոլիկները Գաղատիա աքսորել բոլոր ընտանիքներով. 2. Հայ հոօմէական եկեղեցականները Երոպա աքսորել. 3. Կ. Պոլսեցի հայ հոմէականներ եթէ պատրիարքին հնազանդիլ յանձն չեն առներ Անատօլուի քաղաքները աքսորել. 4. Կաթոլիկ հայ մայրապետներն ալ իրենց տեղերը աքսորել. 5. Կ. Պոլիս մնացող հայ կաթոլիկները, Բերա և Ղալաթիա և Վոսփոր, Լատին եկեղեցի ունեցող թաղերէն հեռացնել: Հրամանները բոլոր կայսրութեան համար էին, բայց գլխաւորապէս մայրաքաղաքին վրայ կը ծանրանային: Հրամանը վճռական էր և կայսերական պայրոյթը անողոքելի, ուստի պատրիարքը գործադրութեան հսկելէ վատ բան չէր կրնար ընել: Նոր 1828 տարւոյն յունուար 9-էն գործադրութիւնը սկսաւ Գաղատացւոց վրայ, 27-ին Կ. Պոլսեցի կաթոլիկներ սկսան Բերայէ և Ղալաթիայէ վտարուիլ. փետրուար 6-ին Երոպա աքսորուելիք եկեղեցականներ ճամբայ հանուեցան, և 23-ին մայրապետներէն 30 հոգի Պանտրմա և 11 հոգի Մահալըճ և ուրիշներ ուրիշ տեղեր կրկուեցան. Կ. Պոլսեցի նշանաւոր կաթոլիկներէն Անատօլուի քաղաքները կրկուողներ ալ եղան, և բաւական թուով ալ իւրովի Երոպական երկիրներ խոյս տուին:

2431. ԳՈՐԾԻՆ ԻՍԿՈՒԹԻՒՆԸ

Ամփոփ կերպով քաղեցինք կաթոլիկական խնդիրին գլխաւոր պարագաները և թուականները, որ վերջին հալածանք անունով կը յիշուի հոմէականներէն: Բնական է որ հոմէականք ինքզինքնին հալածանքի ենթարկուած ուլեն ցուցեն իրենց դաւանութեան համար, և գործին աւելի գրգռիչ պոյն տալու համար պատրիարքարանը իբր հալածիչ ուլեն ներկայել, բայց այլ է իրենց ձգտումը, և այլ է գործին իսկութիւնը: Եթէ կաթոլիկութեան համակիր և նպաստաւոր ընթացք մը ուլուէր մտածուիլ, Պօղոսի և Կարապետի ընթացքէն աւելի դժուար էր կազմել, պի երկուքն ալ, թէպէտ հաստատամիտ հայադաւաններ, սակայն պիջողութեան չափը անցուցած ըլլալու չափ առաջ գացին, և մենք ալ չվարանեցանք կաթոլիկներու որոշ կերպարան և ինքնուրոյն գիրք և ձգտումներու քաջալերութիւն տուած ըլլալու մեղադրանքն ընել անոնց վրայ: Անաչեռ պատմաբանը և անկաշկանդ քննադատը չի կրնար չտեսնել, որ ամէն պարագայի մէջ հոմէականներու երկդիմի ընթացքը, խոստումներէ ետքը ետ դառնալը, շարունակ պայմաններ աճեցնելը, եթէ չըսենք նենգամիտ, գէթ անուղիղ ըլլալու արատէն չապատեր պիրենք: Նոյնիսկ իրենք իրենց մէջ պառակտած, ոմանք կէս ապատամիտ և ոմանք խիստ մոլեռանդ, պիրար կը չէվոքացնէին, և իրենք իրենց փորձանքը կը պատրաստէին: Լատին նուիրակին մօտ հայ փոխանորդ մը 1758-էն հաստատուած էր, և վերջին անգամ Բօրէվիի մօտ ընդհանուրէն սրիուած Անտոն Նուրիճան վարդապետի տեղ Բօլէճեաններէ պաշտպանուած Գէորգ Փափապեան վարդապետին պաշտօնի անցնիլը, այնչափ ընտանի կոիւներ, անհաշտ հակառակութիւններ, և սոսկալի թշնամութիւններ յառաջ բերաւ, որ նոյնիսկ իրենց խոստովանութեամբ, անոնց դառն և արտասուալի պտուղն եղաւ 1828-ին տէրութեան կողմանէ տրուած սաստիկ հրամանը (ՀԱՍ. 19): Ասոր հակառակ հալածիչ ըսուած պատրիարքարանէն, նոյնիսկ Կարապետէ, կաթոլիկներու դէմ դիմում մը չէ եղած երբեք, մանաւանդ թէ միշտ կառավարութեան կողմէն եղած կարգադրութիւնները մեղմացնելու ճամբաներ են գործածուած. Կարապետի վերջին առաջարկը կաթոլիկ փոխանորդ մը ընդունելու պատրիարքին մօտ, պիջողութեանց ծայրագոյնն էր, սակայն անկէ ալ օգտուելու չըփութացին, ընդհակառակն Հայերը քաղաքականապէս յանցաւորներ, պետութեան անհաւատարիմներ, թշնամուոյն ձեռնտուներ ցուցնելու և պաշտօնապէս

ամբաստանելու յանդգնութեան ալ հասան: Սակայն դաւը իրենց դէմ դարձաւ, և փասքուս չարախորհուրդը երևան գալով, իբրև երկրի խառնակիչներ կառավարական խստութիւններու ենթարկուեցան: Կուլէին Հայերը պետական յանցաւորներ ցուցնել, իրենց վրայ դարձաւ իրենց քսութիւնը, և իրենց փորած գուբին մէջ իրենք գլորեցան: Յաւելի էր ապաքէն այնչափ ընտանիքներու կիներով և տղաքներով բռնադատեալ տեղափոխութիւնը, ևս առաւել որ յունուարի դառնաշունչ եղանակին մէջ տեղի կունենար, այլ Հայեր ոչ հրաւիրեցին և ոչ պատրաստեցին այդ հետևանքները, իրենք եղան գրգռողները, մինչև իսկ զիրար ամբաստանողները: Կառավարութիւնն էր հրամայողը, և պատրիարքարանն ալ չէր կրնար գործադրութեանը ընդդիմանալ: Ի վուր է ուրեմն Հայոց պատրիարքութիւնը իբր հալածիլ ներկայելու մարմաջնին, և ճշտութեան դէմ մաքառիլ է եղելութեանց կամայական կերպարան տալու ճիգերնին:

2432. ՌՌԻՍ ԵՒ ԹՌԻՐՔ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Յիշեցինք արդէն Թուրքիոյ կողմէն Ռուսիոյ դէմ պատերազմ հրատարակուիլը 1827 դեկտեմբեր 18-ին (2424), բայց թշնամութիւնները յապաղեցան ձմեռային եղանակին պատճառով, և միայն 1828 ապրիլ 14-ին Ռուսեր իրենց կողմանէ պատերազմ կը հրատարակէին (ԵՐՑ. Ա. 395), և կարշաւէին Մոլտաւիա և Վալաքիա, որ է այժմեան Ռումանիա, յունիս 8-ին Իպրայիլը առին, և հետզհետէ յառաջելով Ելրկէօյ կամ ճուրճօվա հասան, Դանուբը անցնելով Սիլստրէ պաշարեցին և 25 օրուան պաշարումով գրաւեցին: Տակաւ յառաջանալով Վառնա պաշարեցին, և հոկտեմբեր 2-ին այն ալ գրաւեցին, և հետզհետէ Կէլիպօլու հասան, մինչ միւս կողմէն ուրիշ բանակ մը ասիակողմէն կը յառաջանար Պասքևիչի հրամանատարութեամբ, և հետզհետէ կը գրաւէր Փօթի, Ախլցիա, Կարս, Ալաշկերտ, Տիատին և Պայապիտ: Իսկ ևրոպական բանակը Տիպիչի հրամանատարութեամբ մինչև Ահեօլու ալ կը հասնէր: Չմեռը վրայ հասնելուն պատերազմը ընդհատեցաւ բայց նոր ոյժերով վերսկսաւ 1829 գարունին, յուլիս 22-ին ինկաւ Իսլիմա և օգոստոս 7-ին գրաւուեցաւ Ադրիանուպոլիս ևրոպակողման մէջ, իսկ ասիակողմը արդէն Կարին առնուած էր յունիս 27-ին (ԵՐՑ. Ա. 421), և Պայապիտ յուլիս 4-ին (ԵՐՑ. Ա. 423), և Կիւմիշխանէ օգոստոս 13-ին (ԵՐՑ. Ա. 426), և հատզհետէ Բաբերդն ու Տրապիզոնը: Երբոր Ռուսեր Սիլիվրի հասան մայրաքաղաքը դղրդեցաւ և հաշտութիւն խնդրելու հարկը տեսնուեցաւ: Բրուսիոյ դեսպանին գլխաւորութեամբ օսմանեան պաշտօնէից պատուիրակութիւն մը Կ. Պոլիսէ Ադրիանուպոլիս հասաւ և Տիպիչի ներկայացաւ հաշտութիւն խնդրելու: Թշնամութիւններ դադարեցան, բանակցութիւններ սկսան, որոնք 20 օրով վերջացան սեպտեմբեր 2-ին (ԵՐՑ. Ա. 428) և Ադրիանուպոլսոյ դաշնագիրը կազմուեցաւ 12 յօդուածներով և կնքուեցաւ հոկտեմբեր 7-ին: Առաջին յօդուածները Վալաքիոյ և Մոլտաւիոյ ապատութիւնը, և ասիակողմէն Ռուսիոյ թողուելիք տեղերը, և երրորդը պատերազմական տուգանքը կը պարունակէին: Տարտանէլի և Վոսփորի նեղուցներէն ապատ անցքը, ևրոպական տէրութեանց Կ. Պոլիս մի մի մարտանաւ պահելը, և օսմանեան մարտանաւերուն Սև ծով չելլալը կը պայմանաւորուի միւս երեք յօդուածներով: Օսմանեան հպատակներուն 18 ամիս պայմանաժամ կը տրուի Ռուսիա անցնելու, և չորս ևս յօդուածներ Յունաց թագաւորութեան հաստատութիւնը և անոր իրաւունքներն ու սահմանները կը ճշդեն (2424): Վերջին յօդուածով որևէ կրօնքէ եղողներուն ապատութիւն կը տրուի ուլած հաւատքնուն հետևիլ: Այս պայմաններուն գործադրութեան իբր երաշխաւորութիւն, կորոշուի որ Եւրոպիոյ Սիլիստրէ և Ասիոյ Կարին քաղաքներու մէջ ռուսական գունդեր մնան մինչև մէկ տարի:

2433 ՏԱՃԿԱՆԱՅՈՅ ԳԱՂԹԸ

Եօթներորդ յօդուածով որոշուած գաղթելու պայմանաժամը, նպատակ ունէր Կարնոյ և Կարսի և Պայապիտի և անոնց գաւառներուն մէջ եղող Հայերուն վիճակը ապահովել, որոնք

ռուսական տիրապետութիւնը տևական կարծելով ընդարձակած էին հակատաճկական ցոյցերը, և յուսախաբ մնացին երբոր հաշտութեան դաշնագիրը նորէն Օսմանեանց վերադարձուց այդ քաղաքները: Ներսէս թելադրեց, և Ռուս կառավարութիւնն ալ քաջալերեց գաղթականութիւնը, նպատակ ունենալով չէցներ բազմամարդացնել նոր գրաւուած երկիրները: Որոնք որ շտապ ունէին յառաջընթաց փոքր կարաւան մը կազմեցին, և 1829 հոկտեմբեր 14-ին Կարինէ մեկնեցան, սակայն վերահաս ձմեռը 1830 գարունին յետաձգեց բուն գաղթը: Ձմեռը վբաղեցան պատրաստութեանց, շարժական և անշարժ ստացուածներ վաճառելու, փոխադրութեան միջոցներ ձարելու, և պետական արտօնութեամբ նոր երթալիք երկիրնին իրենց տեղեր որոշելու: Ամէնէն աւելի Ախլցխայի քաղաքն ու գաւառը դիւր եկաւ Կարնեցոց, Կարսեցիք ընտրեցին Ղարաքիլիսէ և Ղփչաղ, հռոմէադաւաններ Լօռիի կողմերը. ըստ այսմ ուրիշ տեղացիներն ալ: Պասքևիչի կողմէ պօրավար Պանկրատիէվ վրեակացու նշանակուեցաւ գաղթականութեան, և ամենայն փութով աշխատեցաւ գաղթողներու դիւրութիւններ պատրաստելու, որուն օգներցին Ներսէսի ղրկած եպիսկոպոսն ու վարդապետը: Նոր տարւոյ մայիսի կէսին սկսաւ մեծ շարժումը, երբ տակաւին ձիւն և ցեխ էին ճանապարհները, սայլեր քիչ եկան գաղթողներուն և մինչև Տփղիսէ բերել տալու միջոցներ ձեռք առնուեցան: Կարնոյ քաղաքի 3000 տուններէն հապիւ մի քանի տասնեակներ մնացին տեղերնին: Կարապետ եպիսկոպոս Կարնոյ առաջնորդ քաջալերող և կարգադրողն էր գաղութին, և յունիս 3-ին ինքն ալ մեկնեցաւ, ինչպէս և Կարսի առաջնորդ Ստեփան եպիսկոպոս: Հետպահեալ պարապուեցան Կարնոյ դաշտը, Դերջան, Թորղում, Բասեն, Թէքման, Խնուս, Ալաշկերտ, Տիատին, Պայապիտ, հակառակ որ տեղացի Թուրքեր կը վստահեցնէին տեղերնին մնալ, և Կ. Պոլիսէ յղուած Բարթողիմէոս վարդապետ նոր առաջնորդը կը ջանար գաղութը արգիլելու: Յունիս 5 -ը ռուս գունդին վերջին օրն էր, և 2000 տնուոր Կարնեցիներու խումբ մը անոր հետ մեկնեցաւ, և դիւրութեան համար առժամանակեայ կերպով վրաններու ներքև մնաց Ախուրեանի եկերքը, Կիւմրի աւանի շուրջը, որ յետոյ Ալեքսանդրապոլ քաղաքն եղաւ: Գաղթողներու համագումարը 100,000 կը հաշուուի սովորաբար (ԵՐՅ. Ա. 442), որոնց մէջ 3000 կաթոլիկներ և 2000 յոյներ: Բաւական երկար տևեց այդ բազմութիւնը վետեղելու և հանգստացնելու աշխատանքը ռուսական կառավարութիւնը նպաստներ բաշխեց, և հինգ տարիով վճարելի փոխատուութիւններ ալ ըրաւ, քանի քանի յատուկ պաշտօնեաներ կրկեց, որոնց մէջ 1830 օգոստոսին Սերովբէ Արարատեան եպիսկոպոսն ալ քնելու և կարևոր տնօրինելու իշխանութեամբ, որ հոկտեմբեր 23-ին Ախլցխայի նոր քաղաքաբաժինին հիմնարկութեան հանդէսին ալ գտնուեցաւ: Իրաւ մեծ եղան գաղթականութեան նեղութիւնները, բայց կրցան իրենց հանգստաւէտ ապագայ մը պատրաստել (ԳՂԹ. 5-32):

2434. ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐՈՒ ԶԱՏՈՒԻԼԸ

Դաշնագիրին վերջին յօդուածը կը շոշափէր առաւելապէս հայ կաթոլիկներու վիճակը, զի Թուրքիոյ մէջ ուրիշ կողմէն կրօնից խնդիր չկար, և ծանուցեալ կրօնքներ ապատօրէն կը պաշտուէին: Միայն թէ օսմանեան կայսրութիւնը իր երկրին քրիստոնէութիւնը երկու մասերու բաշխուած գիտէր, յունական օրթոտոքսութիւնը, և արևելեան ուղղափառութիւնը, որոնց գլուխ կը ճանչնար Յունաց և Հայոց պատրիարքները, և անոնց հնապանդ կուպէր բոլոր քրիստոնէաները: Կաթոլիկութիւնը օտարապգեաց կրօնք գիտէր, և անոր յատուկ գիրք և կերպարան չէր ճանչնար իր հպատակներուն վրայ: Այս էր իսկապէս կաթոլիկ եղող Հայերը՝ Հայոց պատրիարքին հնապանդեցնելու հրամանը: Ադրիանուպոլսոյ դաշնագրութեան վերջին յօդուածը կաթոլիկ եղողներուն ինքնուրոյն գիրք մը ստեղծելու նախաշաւիղն էր, և առաջին անգամ Գաղղիոյ դեսպանը Անգղիոյ դեսպանին ձեռնտութեամբ, կայսեր տրուած 1829 նոյեմբեր 11-ի խնձոյքին

առթիւ, աքսորեալ կաթողիկներուն դարձը խնդրեցին և ստացան (ՊԷՐ. 482. ՍՏԵ.159), և ըստ այսմ մասնաւոր հրամանագիրները վրկուեցան ուրուրեք աքսորեալներ կը գտնուէին (ՊԷՐ. 213): Անկէ ետքը նոյն դեսպաններ կաթողիկներու համար ինքնուրոյն ազգային վարչութիւն մը խնդրեցին, իբր միակ եղանակ շարունակեալ գժտութիւնները և միջադէպները վերջացնելու, և այդ ալ շնորհուեցաւ 1830 յունուար 6-ին: Շնորհը իրականացնելու համար նախապէս հոգևոր պետի մը գոյութիւնը պէտք էր, զի օսմանեան օրէնսդրութեամբ նա էր որ իր քրիստոնեայ հասարակութեան վրայ կը վայելէր և կը գործադրէր այն ամէն իրաւունքները, որ Սուլտան Մէհմեմէտ Ֆաթիհի օրէն հաստատուած էին (1488): Յոյներ և Հայեր իրենց հոգևոր պետը ընտրելով կը ներկայացնէին կառավարութեան, որ վայն կը հաստատէր և ի հարկին պաշտօնէ կը ձգէր: Կաթողիկներուն դիրքը այդ մասին դժուարութեան կը մատնուէր, զի իրենց պետը Հռոմէ պիտի ընդունէին, և կառավարութեան ալ իբրև իրենցմէ ընտրուած պիտի ներկայացնէին, և այս հիմամբ Հռոմի հետ բանակցութիւնը սկսան: Պիոս Ը. պապ 1829 մարտ 19-31ին ընտրուած, և կաթողիկութեան արկածներուն գիտակ, և բնութեամբ ալ մեղմ և շահեցող, հաւանեցաւ որ ժողովրդական ընտրութեամբ ընտրելիներ առաջարկուին: Կ. Պոլսոյ կաթողիկ հայութիւնը, 1830 փետրուար 15-ին ժողովի գումարուեցաւ 96 անձանց ներկայութեամբ, 87 քուէով առաջին ընտրելի ցուցուեցաւ Անտոն Նուրիճան վարդապետ, նոյնը որուն ետ թողուիլը անգամ մը շփոթի առիթ տուած էր: Թունդ Բօլէճցոց ընտրելին ալ նյս անգամ ալ Պօղոս Մարուշ արդապետն էր, որ շատ քիչ քուէ շահեցաւ, բայց Բօլէճեանք ծածուկ հնարքներու կը ձեռնարկէին, և Նուրիճանի մասին քսութիւններ կը յորինէին իրենց պաշտպանեալը յառաջացնելու համար: Պապը օրինաւորութեան անսալով ժողովրդական ընտրութիւնը յարգեց, և 1830 յուլիս 11-ին (ՓԱՓ.1010) անձամբ եպիսկոպոսուական ձեռնադրութիւն տուաւ Նուրիճանին, և երբեպիսկոպոսական աստիճանի բարձրացուց: Սակայն ընդհանուր հայ կաթողիկոսութեան վրայ իրաւասութիւն չտուաւ, զի Թուրքիոյ հարաւային և միջին կողմերը արդէն իրենց կաթողիկոս պետ մը Արծիւեանէ սկսելով (2013), որով Նուրիճանի յանձնուեցան Թուրքիոյ հիւսիսային մասերը, Կ. Պոլիս, Պրուսա, Անկիւրիա, Տրապիզոն, Կարին և Արդուին, և աւելի շեշտուեցաւ հայ կաթողիկոսութեան ամբողջական մարմին մը չըլլալը:

2435. ԳՈՐԾԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բայց այսչափով ալ նորակապմ Բաթօլիք հասարակութիւնը կառավարութեան առջև զինքն օրինաւորապէս ներկայացնող պետը չունեցաւ: Անտոն Նուրիճան Հռոմէ գալով Կ. Պոլիս հասաւ 1830 սեպտեմբեր 30-ին, և երբոր կարգը եկաւ կառավարութեան հրովարտակը ստանալ, նորէն ներսէն և դուրսէն դժուարութիւն հանողներ ասպարէզ եկան: Նուրիճան Կարնեցի էր բնիկ (ՀԱՍ. 18), այլ գերմանական (ՊԷՐ. 216), իմա աւստրիական հպատակ ըլլալը յայտնուեցաւ, և կառավարութիւնը մերժեց օտարահպատակ մը իր հպատակներուն պետ ճանչնալ: Կաթողիկոսութեան պաշտպան կանգնող դեսպաններն ալ չկրցան հակառակը պնդել, և վերջապէս որոշուեցաւ ուրիշ մը ընտրել իբրև կաթողիկ հասարակութիւնը կառավարութեան առջև ներկայացնող, Նուրիճանը պահելով իբրև պապութեան կողմանէ նոր հասարակութիւնը կրօնապէս հովուող: Ազգային ժողով գումարուեցաւ 1830 դեկտեմբեր 22-ին, և նոր պաշտօնին ընտրուեցաւ Յակոբոս վարդապետ Չուխուրեան, կառավարութեան ներկայացուեցաւ, և հրովարտակն ալ ստացուեցաւ 1831 մայիս 24 թուականով (ԶԱՄ. Բ. 208): Հրովարտակը կը պատմէ թէ մինչև այն ատեն Կաթողիկներ առանձինն գլուխ չունէին, և յոյն ու հայ պատրիարքներու իշխանութեան ներքև կը մնային, բայց նկատելով որ կաթողիկներուն դաւանանքը ու ծէսը՝ Յունաց և Հայոց դաւանանքէն և ծէսէն տարբեր են, պատշաճ դատուեցաւ յատուկ պետ մը, հրովարտակին բառով փիսքօրոս մը տալ, յոյն և հայ

պատրիարքներէն անկախ, որ իշխանութիւն ունենայ, թէ կայսերական մայրաքաղաքին և թէ կայսերական երկիրներուն մէջ գտնուող բոլոր քաթօլիկ կրօնքէ գտնուողներուն վրայ (ՊԷՐ.217), և ոչ թէ բոլոր հայ հռոմէական ըսուածներուն վրայ, ինչպէս դարձուցած է հռոմէական հայերէն պատրաստուած թարգմանութիւնը: Օսմանեան տէրութեան հիմնակէտը պարզապէս կրօնական եղած ըլլալով, և ըստ այնմ ճանաչցած ըլլալով քրիստոնեայ ազգութեանց կազմակերպութիւնը, նոյն սկզբունքով կազմեց կաթօլիկներու ազգութիւնն ալ, մինչև նոյնին մէջ միացնելով որևէ ազգութենէ եղող օսմանեան հպատակ կաթօլիկները: Արդէն իրենց նախնական կնիքն ալ բաթրիքհանէի միլլէթը քաթօլիքեան, այսինքն կաթօլիկ ազգութեան պատրիարքարան վերտառութիւնն ունի, թէպէտ հրովարտակին մէջ բաթրիք կամ պատրիարք անունը տրուած չէ Չուխուրեանի, այլ լոկ փիսքոբոս տիտղոսը իբր առաջնորդ, զոր իրենք ազգապետ անունով թարգմանել սովորեցան (ՀԱՍ.26): Կառավարութիւնը իր հրովարտակին մէջ ուրիշ պետի մը գոյութիւն չենթադրեր իսկ. և բոլոր կրօնական իշխանութիւններն ալ միևնոյն Չուխուրեանի անձին վրայ համախմբուած կը ճանչնայ, որով մէկ ազգի մէկ պետ և մէկ իշխանութիւն ճանչնալու սկզբունքը անփոփոխ կը պահէ, թէպէտ կաթօլիկներ վայն երկուքի վրայ կը բաշխեն:

2436. ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐՈՒ ՆԵՐՔԻՆԸ

Տրուած տեղեկութիւններ բաւական են ցուցնել, թէ անդստին իր սկիզբէն անօրինակ ձևերով սկսաւ կաթօլիկ հասարակութեան գոյութիւնը, և երկու գլխաւորներու իրարու հանդէպ դրութիւնը խնդիրներու և վէճերու և տխուր միջադէպներու ասպարէզ բացաւ, որոնք այսօր ալ տակաւին կամ ու կը մնան, իրենց սկզբնաւորութենէ 85 տարի ետքը: Ընդհանուր խանդավարութիւնը և երկու պետերուն Չուխուրեանի և Նուրիջանի, խոհեմ ընթացքը կրցաւ պահ մը համերաշխութիւնը չխանգարեր, և ջանացին իրարու ձեռք տալով առաջին կազմակերպութիւնները կատարել: Նուրիջանի ընտրութիւնը կատարող ժողովը, առժամեայ վարչութիւն մըն ալ ընտրած էր, մէկ նախագահէ իշխանապետ անունով, և տասը ժողովականներէ երեսփոխան անունով. իշխանապետ ընտրուած էր Յակոբ Տիւլեան, և ժողովականներն էին Անտոն Կէօչէեան, Պօղոս Պիլէպիկճեան, Պետրոս Խիւտավէրտեան, Վիչէն Գըլճեան, Անտոն Թնկըրեան, Մելքոն Սաքայեան, Գէորգ Ազնաւորեան, Գրիգոր Մըսրէլեան, Խաչատուր Պօղուճուեան և Յակոբ Արդարեան: Ասոնք եղան որ գլուխ կանգնեցան ազգային ժողովով ներքին կանոններ հաստատելու, Նուրիջանի մասին յարուցուած դժուարութիւնը հարթելու համար Չուխուրեանի ընտրութիւնը մտածեցին (2434), սեփական եկեղեցի կառուցանելու արտօնութիւնը ստացան, և Ղալաթիոյ մէջ իրարու խիտ տուններու մէջտեղը, բայց իրենց տուններուն մօտ տեղ մը որոշեցին, Քուլէքաբու և Քէմէրայթը փողոցներուն միջավայրը, 1831 յուլիս 15-ին հիմարկէքն ալ կատարեցին: Բայց շինուածին լրումը երկարեցաւ (ՊԷՐ.236), մինչև 1834, և յուլիս 14-ին օծումը կատարուեցաւ (ՊԷՐ.258), հիմնարկէքէն երեք տարի ետքը, որչափ ալ բոլոր ժողովուրդը, նուէրով և ընծայով, բազուկով ու շալակով անոր աւարտելուն մասնակցած էր: Եկեղեցին օծուեցաւ յանուն Ս. Փրկչի, և հաստակառոյց շինուած մը եղաւ, յարակից սենեակներով ազգապետի և եկեղեցականաց համար: Նուրիճան, որ աւելի ազգայնական վգացումներու հետևող մըն էր, ջանաց հայկական ծէսը նոյնութեամբ հաստատել նորաշէն եկեղեցւոյն մէջ, օգուտ քաղելով Պիոս Ը. ի հրահանգէն ալ, որ իբր հռոմէականութեան նշանակ բաւական սեպած էր ծնունդը դեկտեմբեր 25-ին և Աւետումը մարտ 25-ին տօնել, բաժակին մէջ ջուր խառնել, Սուրբ Աստուածը առանց խաչեցարի երգել (ԶԱՄ.208), և Հոռմի պապին անունը պատարագի մէջ յիշել: Կիրառութեան ընդունուած տօնացոյցը նախասիմէոնեանը եղաւ. գուցէ անոր համար որ Վենետիկի վանքն ալ ընդունած չէր սիմէոնեանը: Տօնացոյցին կարգն ալ ընդհանրապէս պահեցին, բայց դեկտեմբերի վերջին կէսէն, զոր այլայլեցին դեկտեմբեր 25-ի

Ծնունդին յարմարեցնելու համար: Ծիսական գիրքերու հոռմէական տպագրութիւններ չգտնուելուն՝ հայկականները գործածուեցան, չմոռանալով և յՈրդոյ յաւելուածները ինչ ինչ փոփոխութիւնները պահել Հռոմի սրբագրութեանց հետևողութեամբ: Բօլէճեան կուսակցութիւնը այդ ժամանակէն սկսաւ լատինամոլութիւնը շեշտել ուլելով, շատ բաներ լատինականներու նմանեցնել. և բուն հայկականները վեղչել, անոնք իբր մոլորութիւն սեպելով, զոր օրինակ, վարագոյրը, վերաբերումը, եկեղեցական զգեստները, և այլն, և Հռոմի ալ բողոքներ գրելով: Բայց Նուրիճան հաստատուն մնաց իր ընթացքին մէջ, Աբբայեան կուսակցութեան եկեղեցականներէն և աշխարհականներէն քաջալերուած: Այդ միջոցին կը վերագրուի դպրաց շապիկներուն ուսանոցը շապիկէն պատելով թիկնոցի ձևին վերածել, որուն հեղինակ կը ճանչցուի Տիւլեան գերդաստանը իր շինել տուած շապիկներովը, ինչ որ ուսանոցներու անվնաս պահպանութեան միջոց մը կարծուելով, բուն հայ եկեղեցիներու մէջ ալ սկսաւ մուտ գտնել:

2437. ԿԱԹՈՒԼԻԿ ԱԶԳԱՊԵՏՆԵՐԸ

Որչափ ալ Սուլտան Մահմուտ կայսրը կաթոլիկներու ապատագրութիւնը կը հաստատէր, սակայն անխախտ էր անոր մտքին մէջ, իր հպատակները օտար յարաբերութիւններէ և նոյնիսկ օտարասիրութենէ հեռու պահելու սկզբունքը: Ըստ այսմ Չուխուրեանի տրուած հրովարտակին մէջ յայտնապէս յիշուած էր, բնաւ երբեք լատին եկեղեցիներ չերթալ (ՊԷՐ. 217), և օտարներու հետ խառն ամուսնութիւններ չընել (ՊԷՐ. 218): Բայց լսուելով որ պէտք եղած մտադրութիւնը չի դարձուիր այդ կէտերուն, 1832 փետրուարին նոր հրամանագիրով մը կը կրկնուէր քաթօլիք փիսքփոսու Չուխուրեանին, որ Լատիններու հետ խառն ամուսնութիւններու պատճառ եղողներ և հրաման տուողներ և օրհնող քահանաներ տանջանքներու պիտի մատնուին և դուռներուն առջև պիտի կախուին, և նոյն սպառնալիքներ ազգապետին ալ կուղղէին: Այդ պարագաները յայտնի կը ցուցնեն թէ ինչ պայմաններու ներքև արուեցաւ կաթոլիկներու անկախ հասարակութիւն կազմելու հրամանը: Առաջին անգամ իրենց պետին փիսքփոս անունով տրուած հրովարտակը, ինչչափ ալ ազգապետական իրաւունքներ կը պարունակէր, սակայն շատ ամփոփ և համառօտ էր, և Հայոց և Յունաց պատրիարքներուն տրուած հրովարտակներէն տարբեր էր, նոյնիսկ պատրիարքի անունն ալ չլացուած էր, և նոյնպէս մնաց մինչև Չուխուրեանի մահը 1834 ապրիլ 17-ին: Իրեն յաջորդ ընտրուեցաւ Յարութիւն վարդապետ Չուխաճեան նոյն ապրիլ ամսուն մէջ, և անոր հաստատութեան առթիւն էր, որ Յակոբ Տիւլեան բոլոր իր ազդեցութիւնը ու միջոցները գործածելով յաջողեցաւ Հայոց և Յունաց պատրիարքներուն նման տիտղոսով և արտօնութիւններով հրովարտակ հանել տալ (ՀԱՍ. 34), և կաթոլիկներու համար ալ պատրիարք և պատրիարքարան անուններ սկսան գործածուիլ պետական և ազգային շրջանակներու մէջ: Կարճառօտ եղաւ Չուխաճեանի պաշտօնավարութիւնը, զի իր նախորդին մահուան տարելիցին, 1835 ապրիլ 17-ին ինքն ալ կը վնիւճանէր, և մայիսի մէջ իրեն կը յաջորդէր Գրիգոր վարդապետ Էնքսէրճեան, Վիէնական Մխիթարեաններէն և Բօլէճեան կուսակցութեան ծառայողներէն, որով ազգապետը կրօնական պետին դէմ յայտնապէս կքրող մը եղաւ: Խաղաղութիւնը վերահաստատելու համար հարկ եղաւ Էնքսէրճեանը հրաժարեցնելու ութամսեայ պաշտօնավարութենէ ետքը, և 1836 յունուար 15-ին ստիպուեցաւ քաշուիլ, և յունուար 21-ին ընտրուեցաւ Կարապետ վարդապետ Եսայեան Վենետիկի Մխիթարեաններէն (ՀԱՍ. 524): Ասոր օրով 1838 յունուար 20-ին Նուրիճան ալ վախճանեցաւ ալևորեալ տարիքի մէջ, և կաթոլիկ հասարակութեան մէջ ներքին վէճերու ասպարէզը ընդարձակուեցաւ, որոնց պատմութեան կը դառնանք իրենց կարգին:

2438. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԵՐՁԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Պատմական պարագաներուն կապակցութիւնը պահելով եղելութիւնները լուսաբանելու հարկը, մեզ կը ստիպէ գլխաւոր դիպուածները մինչև իրենց հետևանքը յառաջ մղել, և ժամանակակից ուրիշ դիպուածները պահ մը յետաձգել, և վերջին ետ դառնալով ձեռք առնել: Կաթոլիկական խնդիրն ալ մեզ մինչև 1838 յառաջ մղեց, սակայն այդ թուականէն առաջ ունինք Կ. Պոլսոյ պատրիարքութեան վերաբերեալ նշանակելի կէտեր: Սկսինք Գումբաբուլի մայր եկեղեցւոյ վերաշինութենէն, որուն 1826 օգոստոս 18-ին պատրիարքարանի հետ հրկիւղուիլը արդէն յիշեցինք (2430): Հնար չէր երկար ատեն աւերակ թողուլ ալգային կեդրոնը, բայց հակառակ Պէպճեանի փութաջան հոգածութեանց, արտօնութեան և դրամի և ատաղձի պատրաստութիւնները ամբողջ 1827 տարին գրաւեցին, և հիմնարկէքը կատարուեցաւ 1828 փետրուար 10-ին, մեծ պահոց առաջին ուբաթ օրը, բայց շինութիւնը հապճեպ առջև տարուեցաւ, այնպէս որ ութ ամիս ետքը հոկտեմբեր 1-ին աւարտած արձանագրուեցաւ (09 ՕՐԱ. 156), թէպէտև օծման հանդէսը ամսուն 14-ին կատարուեցաւ (ՊԷՐ. 200), Խաչի հինգերորդ կիրակիին: Երեք մեծ և վատուցեալ տաճարներէ կը բաղկանայ մայր եկեղեցին, կեդրոնականը յանուն Ս. Աստուածածնի, աջակողմեանը կամ հիւսիսայինը յանուն Ս. Խաչի, և ձախակողմեանը կամ հարաւայինը յանուն Ս. Որդւոց Որոտման, որ կանանց յատկացեալ է և վերնատունով յարդարուած է: Ուրիշ երկու փոքր տաճարներ ալ շինուեցան երեքին մէջերը, աջակողմեանը Ս. Յարութեան և ձախակողմեանը Ս. Ծննդեան նուիրուած, որոնք մեծերը հաղորդակցութեան մէջ կը դնեն: Այս հինգ տաճարներու նուիրագործումները կատարեցին, Կարապետ պատրիարք, Աստուածատուր եպիսկոպոս, Երեմիա եպիսկոպոս, Յովհաննէս վարդապետ Երուսաղէմի փոխանորդ, և Բարթողիմէոս վարդապետ պատրիարքի փոխանորդ: Իսկ այժմ փակուած Ս. Հրեշտակապետաց վեցերորդ եկեղեցին, Ս Խաչին հիւսիսակողմը, Անդրէաս վարդապետ օծեց (ՊԷՁ 76): Մեծ տաճարները մայրաքաղաքի ընդարձակագոյններն են միջին տաճարը երկու կարգ սիւներով ալ բաժանուած, բայց գմբէթ և վանգակատուն չեն ունեցած, և այժմ տեսնուած վանգակատունը վերջին ատեններ աւելցուած է: Երեքն ալ ժամանակ ժամանակ մասնաւոր նորոգութիւնը ունեցած են. և միջին տաճարին գաւթի որմնափակն ալ վանդակապատի փոխուած է, և նոր լիակատար նորոգութիւն եղած է 1902-ին Սմբատեան Մանուկի ծախքով և Մաղաքիա Օրմանեան պատրիարքի հոգածութեամբ: Իսկ Ս. Խաչի տաճարը իր հին գաւթը կամ որմով բաժանուած ժամատեղին կը պահէ տակաւին: Մայր եկեղեցւոյ կից դպրաց ուսումնարան մըն ալ շինուեցաւ, և դրան հանդէպ պատրիարքարանը փայտաշէն երկու կողմէն հրդեհարդել բարձր պատերով դատուած, որ նոյնութեամբ կը մնար մինչև վերջին տարիները, և նոր շինութեան տեղի տալու համար քանդուեցաւ: Մայրեկեղեցիէն ետքը նորոգ շինուեցաւ Գարակէօմրիւքի Ս. Յովհան Ոսկեբերան փոքրիկ փայտաշէն եկեղեցին, Պալաթու Պաղտասար քահանայի բազմաշխատ վաստակօք, նոյն կողմերը բնակող Հայերուն մեծ վտանգէ մը ազատելուն յիշատակին: Օծումը կատարուեցաւ 1829 մայիս 7-ին Յինանց չորրորդ երեքշաբթին: Եկեղեցին իբր հրաշագործ ուտատեղի պատուուած էր ամէն ատեն մայրաքաղաքացիներէն մինչև 1900 յուլիս 6 ի հրդեհը: Այնտեղ պահուած Չարխափան Աստուածածնայ պատկերը Փոքր Արմաշու անունով կը յիշուի, և այժմ փոխարուած է Պալաթու եկեղեցին: Կարապետ պատրիարքի օրով շինուած են նաև Իւսկիւտարի Ս. Խաչ Խաաքէօյի Ս. Ստեփանոս եկեղեցիները, երկուքն ալ ընդարձակ և ամրակառոյց, առաջինը օծուած 1830 սեպտեմբեր 27-ին և երկրորդը 1831 յուլիս 4-ին, երկուքն ալ կը մնան տակաւին իրենց ամբողջութեամբը, ժամանակին պահանջած թեթև նորոգութիւններով բարւոքած: Կարապետի պատրիարքութիւնը այլևս շատ չերկարեցաւ, և ութը տարուան բաւական աղմկեալ պաշտօնավարութենէ ետքը, այն ալ ստիպուեցաւ հրաժարիլ, և 1831 սեպտեմբեր 4-ին

հրաժարականը ներկայեց և ընդունուեցաւ, և իրեն յաջորդ ընտրուեցաւ Ստեփանոս Զաքարեան, աւելի ծանօթ Աղաւնի մականունովը, Արմաշու և Նիկոմիդիոյ առաջնորդը:

2439. ԱՐՄԱՇԻ ՎԱՆՔԸ

Արմաշու վրայ չիսուեցանք Բարթողիմէոս Կապուտիկեան առաջնորդի մահուանէն, և Պօղոս Գարադօջեանի անուանումը ետքը (2325): Պօղոսի վիճակեցաւ Արմաշու աւերակներուն վրայ պաշտօնի կոչուիլ, երբ դիւրին ալ չէր վերաշինութեան հրաման ստանալ և կարևոր միջոցները ճարել: Գարադօջեան 1810ին Արմաշ փոխադրուած, 1811 ին Պրուսայի առաջնորդութիւնն ալ միացուց Կարապետ Եղոկիացիի մեկնելէն ետքը, և մինչև 1820 թէ կրկին վիճակները հովուեց, և թէ վանքին վերաշինութեան հետամուտ եղաւ: Արտօնութիւնը հապիւ թէ սոյն տարույ մարտին ստացաւ պաշտպանութեամբ նորընտիր եպարքոսին, որուն Նիկոմիդիոյ կառավարիչ եղած ատեն՝ այդ բարձր պաշտօնը բարեմաղթեր էր, և մարդը երախտագէտ պգացմամբ պահած էր սիրտին մէջ բարեմաղթանաց յիշատակը: Պէտքերը և ատաղձները հետզհետէ պատրաստ էր արտօնութիւն ստանալու ակնկալութեամբ, ուստի կրցաւ չորս ամսուան մէջ փայտաշէն եկեղեցին աւարտել, և վաքի շինութեան ալ ձեռնարկեց 1821-ին, և ուսումնարան ալ բացաւ: Գարադօջեանի շինած եկեղեցին ոչ ևս է, զի 1872ին վերաշինուած է քարուկիր և հոյակապ: Շինութենէն ետքը չորս ևս տարիներ շարունակեց Գարադօջեան իր աշխատութիւնները Արմաշու վանքին պարգացման համար չմոռնալով իրեն հովուութեան յանձնուած կրկին վիճակները, որոնց մէջ բաւական բարեկարգութիւն հաստատեց: Ինքն շրջուն կեանք մը ունէր Արմաշ և Նիկոմիդիա և Պրուսա, բայց իրեն պօրաւոր օգնականներ ունէր իր ձեռնասուններէն, Պրուսա՝ Պետրոս Ծերոնեան եպիսկոպոսը, Նիկոմիդիա՝ Ստեփանոս Զաքարեան եպիսկոպոսը, որուն ինքն տուած էր Աղաւնի մականունը, և Արմաշ՝ Պօղոս Թաքթաքեան վարդապետը: Գարադօջեան 74 տարեկան վախճանեցաւ 1825 օգոստոս 6-ին Արմաշու մէջ, և Զարիսփանի պատկերին առջև թաղուեցաւ, իսկ իր պաշտօնները բաժանաբար տրուեցան Ծերոնեանի Պրուսայի վրայ, և Աղաւնիի Արմաշու և Նիկոմիդիոյ վրայ: Աղաւնին Չմիւռնիա կը գտնուէր Գարադօջեանի մահուան ատեն իբր առաջին առաջնորդ Էջմիածնի տէրունի վիճակին Կ. Պոլսոյ պատրիարքութեան անցնելէն ետքը, ուր գացած էր 1823-ին, բայց յարմարագոյն անձը ձանձցուած էր վանական և ուսումնական ձեռնարկները պարգացնելու: Իրօք ալ յաջողեցաւ նա թէ նիւթապէս և թէ ուսումնապէս բարձրացնել Արմաշու մակարդակը, Գարադօջեանի օրէն մնացած պարտքերը վճարելէն վատ, ի նորոյ շինեց փառաւոր առաջնորդարանը և միաբնութեան թաղը, ուսումնարանը և հիւրանոցները: Առաջին երկունքը դեռ կը մնան նոյնութեամբ, իսկ հիւրանոցներ և ուսումնարան 1888-ի հրդեհէն ետքը քարուկիր վերաշինուեցան: Աղաւնին Արմաշ հասած էր 1825 սեպտեմբերին և փառաւոր և արդիւնաւոր վանահայրութիւն ըրաւ Արմաշու վրայ և առաջնորդութիւն Նիկոմիդիոյ վրայ, վանական ուսումնարանին պարկ տուաւ Բերիացի Մարուտ Պօյաճեան վարժապետին ձեռամբ, որ ժամանակին լաւագոյն հայկաբանն ու լեզուագէտն էր: Իր շինարար համբաւն ու բարեկարգ վարչութիւնն և պարգացման փութաջանութիւնն էին, որ Կ. Պոլսոյ աւագանին յորդորեցին զինքն պատրիարքութեան կոչել 1831 սեպտեմբերին, զոր ընդունեց առանց իր պաշտօնները լքանելու. այլ Յակոբ Սինանեան վարդապետը տեղւոյն վրայ թողլով, և Պօղոս Թաքթաքեան վարդապետը միասին առնելով Կ. Պոլիս եկաւ և գործին գլուխ անցաւ:

2440. ՍՏԵՓԱՆՈՍ ԱՂԱԻՆԻ

Աղաւնիին անձն ու պաշտօնը տարբեր կերպերով գնահատուած է ժամանակակիցներէն, և մինչ ոմանք իբր գործունեայ և յաջողակ անձնաւորութիւն կը ներկայեն, ուրիշներ իբր անկար և ապիկար կը ջանան ցուցունել: Ինքն Պրուսացի էր, 1777-ին ծնած, 1787-ին Գարադօջեանի

դպրոցին աշակերտած, Տէր Աբրահամեան Յովհաննէս սարկաւազի ուսուցչութեամբ, 1793-ին սարկաւազ, և 1798-ին արեղայ, յետոյ վարդապետ ձեռնադրուած, և վերջապէս 1816 յունիս 25-ին եպիսկոպոսութեան բարձրացած էր Եփրեմի ձեռքով (ՕՐԱ. 196): Զգացումները և ուղղութիւնը բարեմիտ և բարեսէր, բնաւորութեամբ հեղափոխարար և առաքինի, բռնութենէն կը խորշէր, խստութենէն կը վզուշանար, համեստ և չափաւոր սկզբունքներու կը հետևէր, և այս էր որ ոմանց աչքին տկար և անձեռնահաս կերևար: Զարմանալի չէ ուրեմն, եթէ վանական և ուսումնական և առաջնորդական շրջանակի մէջ վաստկած համբաւը չկրցաւ արդարացնել պատրիարքական ընդարձակ և բազմակնձիռն և փոթորկեալ պաշտօնավարութեան մէջ: Այսուհանդերձ կրցաւ նա ութը տարիներ աթոռին վրայ մնալ, և որ ևսն է, անգամ մը հրաժարելէն և հեռանալէն ետքը նորէն թախանձանօք աթոռ հրաւիրուեցաւ, որ իր ուղղամտութեան և առաքինութեան լուսաւոր վկայականն էր: Իր առաջին պատրիարքութեան առաջին տարիները կը զուգադիպին Եփրեմ կաթողիկոսի վերջին տարիներուն, հետևաբար յաջորդ շրջանին կը թողունք աւելի երկար գրել Աղաւնիին պաշտօնավարութեան վրայ: Արտաքին փորձանքներ եղան այդ առաջին տարիներու նշանակելի անցքերը: Վերջին ատեաններ շատցեր էին Կ. Պոլսոյ հրդեհները, որոնք իրարու վրայ կը յաջորդէին, և պատահական արկածներ չըլլալը կը տեսնուէր: Զգուշաւոր հետապոստութիւններ երևան բերին թէ տաճիկ կարգացողներէ գրգուած սրիկաներ էին, իբր պի հռչակ տարածուած էր թէ Եէնիչէրիներու դէմ եղած կարգադրութեանց նման (2425), իրենց դէմ ալ կարգադրութիւններ կը պատրաստուէին, գլխաւորապէս արփալք անունի ներքև վայելած հասոյթնին գրաւելու: Կառաարութիւնը ուրիշ միջոց չգտաւ, բայց եթէ ամէն գիշեր իւրաքանչիւր տունի վրայ վառած լապտեր մը, և դրան առջև տնեցի պահնորդ մը պահելու հրամանը արձակելու: Երկու ամիս տևեց այդ կարգադրութիւնը, այլ աւելի վերոյիշեալ հասոյթներուն ըստ առաջնոյն մնալու հրամանը սիրտերը հանդարտեցուց և հրդեհները վերջացան: Այդ միջոցին առաջին անգամ Կ. Պոլսոյ մէջ սկսաւ քօլերա կոչուած հնտախտին համաճարակը, որ հաւարաւոր կեանքեր հնձեց, և չորս ամիս չափ տևելով դադրեցաւ, կամ լաւ ևս, դէպ Եւրոպա յառաջացաւ (ՊԷՐ. 240-241): Ներքին կեանքին մէջ կը յիշատակուի 1831 նոյեմբեր 13-ին Պալաթու աւագերէց Մելքոն և որդիներ Պաղտասար և Ստեփան քահանաներուն և Գրիգոր վարդապետի մը արքայութիւնը վասն յիշատակեր տալոյ ի պատարագ վճարեացի: Դիպուածը անով միայն յիշատակելի դատեցինք, պի կը ցուցնէ 1820 ապրիլ 2-ի միաբանական ժողովին պիջողական որոշումները (2371), դեռ պօրութիւն կը պահեն և գործադրութեան մէջ են եղեր, որ վանցառուները պատժապարտ կը համարուէին, և չափտի կարենանք ճշդել թէ մինչև ե՛րբ տևեց այդ պիջողական ընթացքը, որուն այլևս հետքն իսկ չի տեսնուիր:

2441. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾԵՐ

Նորէն պիտի դառնանք Երուսաղէմի գործերուն, պորս թողուցինք Պողոսի պատրիարքութեան վերջը (2427), և դեռ ոչինչ պատմեցինք Կարապետի օրէն: Եօթ խորհրդականներէն երեքը հիւանդացած և ետ մնացած էին, և միւսները Դամասկոս կը սպասէին, և էին Եդիա եպիսկոպոս Եւդոկիացի, որ այս առթիւ նորէն միաբանութեան էր մտած և փոխանորդ ալ անուանուած, և Կիրակոս եպիսկոպոս Երուսաղէմացի, Դիոնեսիոս եպիսկոպոս Գարթալցի, և Յարութիւն վարդապետ Զմիւռնացի: Ասոնք վերջապէս որոշեցին ճամբանին շարունակել, և մտին խաղաղութեամբ յԵրուսաղէմ, և որքան կարելի էր խոնարհութիւն ցուցեալ, ընկալեալ եղեն ի պատրիարքէն և ի միաբանութենէ, և կոնդակը ներկայեցին պարունակեալ կանոնագիրով: Առաջին գործ եղաւ Եօթը խորհրդաաններու թիւը լրացնել, և ընտրուեցան Մկրտիչ եպիսկոպոս Մեղրիկ լուսարարապետ, Կարապետ Երպսկոպոս Եւդոկիացի դարպասընկալ և Յակոբ վարդապետ

Մահալըճցի հանդերձապետ (ՍԱԻ. 1156): Մինչև այս կարգադրությանց վերջանալը, արդէն Պօղոս Ադրիանուպոլսեցին հրաժարած էր Կ. Պոլսոյ պատրիարքութենէն, և հոկտեմբեր 27-ին Կարապետ Պալթցին անոր յաջորդած. սա ալ Երուսաղէմի միաբան: Որչափ ալ Երուսաղէմի միաբաններուն Կ. Պոլսոյ աթոռին վրայ գտնուիլը նպաստաւոր կենթադրուէր, և շատ անգամ իրօք ալ օգտակար կըլլար Երուսաղէմին, սակայն միւս կողմէն անձերուն և պարագաներուն ներքին գիտակցութիւնն, և նախընթացաբար ունեցած և շարունակաբար մշակած յարաբերութիւններնին առիթ կու տային անոնց՝ աթոռին և միաբանութեան ներքինին միջամտելու, և ունեցած ընդհանուր իշխանութիւններնուն զօրութեամբ բացառիկ և սաստիկ կարգադրութիւններ ընելու, որոնք չենք վստահիր իբր անօրինակ և անօգտակար վճռել, բայց չենք ալ կրնար դժպիհ հետևանքները ծածկել: Խորհրդականաց բացառիկ լիազօրութիւնը, և անոնց ձեռքը յանձնուած կանոնագիրը, և խորհրդականաց և պաշտօնակալաց անուանումներուն ուղղակի Կ. Պոլիսէ կատարուած ըլլալը, կարևորագոյն միաբաններուն յառաջ կոչուելովն իսկ, չարտադրեցին ինչ որ և ինչ չափ որ կենթադրուէր ու կը սպասուէր:

2442. ԿԱՐԳԱԹՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ

Եօթն լիապոր խորհրդականներու թիւին մէջ չէր առնուած Յակոբ Եպիսկոպոս Աքշէհրցին, զոր քանիցս յիշեցինք, և ժիր և արդիւնաւոր գործունէութեան մէջ ալ տեսանք սաղիմական խնդիրներու կարգին: Տեսակ մը հնախօսական ընթումամբ Լիւստրացի մականունը առած էր նա, թէպէտ նոյն Աքշէհր Իկոնիոնի կամ Գօնիայի հիւսիս արևմտեան կողմն է, մինչ հինն Լիւսարա հարաւ արևելքն էր, զոր ոմանք Լաթիկի և ուրիշներ Քատընսէրայի հետ կը նոյնացնեն: Հակառակ սաղիմական մեծ խնդիրին մէջ տուած աշխատութեանց Յակոբ և Դիոնեսիոս պատասխանատու կը նկատուէին Ս. Յարութեան և Ս. Ծննդեան տաճարներուն մէջ Հայոց ունեցած կորուստներուն (2419), և իբր Յոյներէ կաշառեալ կամբաստանուէին (2417): Այդ էր թերևս Յակոբի ետև ձգելուն պատճառը, կամ անյողդողդ բարուք ճանչցուած ըլլալը (ՍԱԻ. 1152), կամ վերջին անգամ Պօղոսի ծառայել ուզած չըլլալը (2427), կամ Եղիայի շնորհ գտնելէն ցաւիլը, և կամ թէ այս ամէն պարագաներու խառնուրդը, վերջապէս միտքը կը դնէ Երուսաղէմէ բաժնուիլ, և 1823-ի վերջերը, զհետ երթայ Պօղոս վարդապետի ուրումն այն ինչ դարձելոյ ի Հռոմայ, և ընդունի վկրօնս նորին (ՍԱԻ. 1152), որ կաթօլիկութեան յարիլ ըսել կըլլայ: Բայց կերևի թէ այդ վիճակն ալ զինքն չի գոհացներ, որ կը յարի ի կրօնս զոր սահմանեալ էր Լուտեր Մարտինոս (ԱՍՏ. Բ. 395), որ է բողոքականութիւն, և այդ կրօնքին տուած ազատութեամբ կամուսնանայ ալ: Յակոբի օրինակը կը գրգռէ Դիոնեսիոս Կարապետեան Եպիսկոպոսը Կ. Պոլսոյ Գարթալ գիւղէն, որուն մանաւանդ ծանր եկած էր Եղիայի փոխանորդութեան անցնիլը, այն որ աթոռին վնասակար ըլլալու չափ յառաջացան էր, մինչ ինքն աթոռին պաշտպանն ու արդիւնաւոր պաշտօնակալն էր եղած, և թէպէտ խորհրդականներու մէջ էր, բայց ատենադարութիւնն իսկ իրեն չէին տուած, այլ Կիրակոսին յանձնած: Ուստի տեսնելով զինքն զրկեալ ի փառաց և ի պատուոյ, մտածեց զրկել զաշխարհ, և 1824 փետրուար 28 ին, իբր խորհրդական հասնելէ մի քանի ամիս ետքը, Կ. Պոլիս երթալու պատրուակով, Երուսաղէմէ մեկնեցաւ, և դէպուպիզ գնաց Սիգոն կամ Սայտա, ուր կը գտնուէր Լիւստրացին և ըստ ամենայնի անոր ընկերակցեցաւ (ՍԱԻ. 1157), և միասին մեկնեցան Վերիտոն կամ Պէյրութ իրենց նոր գիրք մը ձարելու համար: Յաջորդ 1825 տարուոյ սկիպը, յունուար 8 ին երրորդ մըն ալ կաւելնայ նախընթացներուն, Յակոբ վարդապետ Պօլուցի, որ նոր դարձած էր Էջմիածինէ, ուր գացած էր Եպիսկոպոսութեան ձեռնադրութիւն ընդունելու (ՍԱԻ. 1153): Կ. Պոլսոյ վրայէն դարձած ատենը. նուիրակութեան ատեն հաւաքած ընծաներուն մէկ մասը Կիպրոս թողած էր ուստի Երուսաղէմէ Վերիտոն անցնելէն և միւս երկուքին միանալէն ետքը

Կիպրոս կը վերադառնայ նուէրները իւրացնելու, բայց այժմոյն գործակալէն ընդդիմութեան կը հանդիպի և ունայնաձեռն կը դառնայ (ԱՍՏ.Բ.399):

2443. Երեք եպիսկոպոսներուն վանք և աստիճան և կոչում և կրօնք թողլով, իրարու ետևէն միաբանութենէն հեռանալը բաւական նշանակելի կէտ մըն է, զոր առանց խորհրդանութեան թողուլ հնար չէ: Մանաւանդ որ երեքն ալ աննշան անձեր չէին, և մեր պատմական անցքերուն մէջ ալ կարևոր դեր վարող և արդիւնաւոր աշխատողներ երևցան արդէն Լիւստրացին և Գարթալցին, և անպիտան մէկն ալ չէր Պօլուցին, Գաբրիէլ պատրիարքի աշակերտ և նուիրակութեանց ու ներքին պաշտօններու մէջ գործածուած միաբան մը: Իբրև գրգռիչ պատճառ յառաջ բերուած պարագաներէն, խնդիրներու մէջ Յոյներէ շահուած կամ գումարներ իւրացուցած ըլլալուն ամբաստանութիւնը, բաւական պատճառ մը հնար չէ նկատել, զի մանաւանդ արդարացումէ վուրկ և ջատագովութենէ խուսափող ըլլալ նին կը հաստատէ: Աւելի կամ պակաս պաշտօն ունենալ նին, և մէկին կամ միւսին իրենց նախատուիլը ամէն մարմիններու և ամէն միաբանութիւններու մէջ յաճախ հանդիպող պարագաներ են, որ եթէ հաւատք և կոչում ուրանալու փաստ ըլլար, շատ ընդարձակ կը դառնար անոր հետևանքը: Երուսաղէմի պատմագիրներն ալ մանրամասնեալ և համոզիչ պատճառներ չեն ցուցներ, և որ արդէն մէկնեալ էր յաթոռոյն, կամ խորհեցաւ թողուլ զհոգևորական կեանս և գրկել զաշխարհ (ՍԱԻ. 1156), կամ գրաւեալ լինէր ի սէր աշխարհի (ՍԱԻ.1151) բացատրութիւնները ուրիշ բան չեն կրնար յայտնել, բայց եթէ անոնց կանուխէն աշխարհով զբաղած և աշխարհի սիրով վառուած ըլլալնին ցուցնել, որով սկսած էին ծանր զգալ իրենց կոչումը, եպիսկոպոսութեան բարձրանալէն ետքն ալ: Այս հետևութիւնը կարդարանայ մանաւանդ, երբոր մէկուն համար դրուի, թէ Երուսաղէմացիի մը հետ ամուսնացաւ, ընդ որում ունէր ասեն և կանխաւ յարաբերութիւնս, և միւսին համար կը վկայուի թէ էր այր ցոփ վարուք (ՍԱԻ.1159), որով աւելորդ կը դառնան խօսուած ըլլալու կամ յետադասուած ըլլալու պատճառանքները: Վերիտոն գացին ըսինք իրենց դիրք մը ճարելու, և յաջողեցան ալ՝ Լիւստրացին Նէապոլսոյ թագաւորութեան, և Գարթալցին անգղիական ինքնակալութեան հիւպատոսական գործակալներ (agent consulaire) անուանիլ Սիդոնի մէջ, թէպէտ Գարթալցին ի գործակալութեան ոչ եկաց առաւել քան վամիսս ինչ , և Լիւստրացին ալ շատ երկար մնացած չի կարծուիր: Բայց դիտելի է իրենց ի նպատակ , թէ Երուսաղէմէ բաժնուելով Երուսաղէմի դէմ թշնամական կամ զրպարտական քայլ մը չառին, ի բաց առեալ իրենց հին պահանջները գանձելու համար վերջին տարիներ կատարած ստիպումները: Մանաւանդ թէ զղջումի զգացումներով ալ շարունակեցին նամակներ գրել իրենց մտերիմ միաբանակիցներուն, միայն թէ չկրցան մտած ճամբաներնէն ետ դառնալ թէպէտ հրաւերներ ալ ստացան, գլխաւորապէս Դիոնեսիոս այրիանալէն ետքը, իսկ Լիւստրացին ամուսինէն առաջ մեռաւ 1845 հոկտեմբեր 26 ին: Դիոնեսիոսի նամակներուն քանի մը բացատրութիւնները, թէ ուզեց ապատ մնալ ի թօփուլէ ազգին և ի նենգապատիր խարդախանաց սուտ եղբարց (ԱՍՏ.398) և հարցնելը միթէ ես միայն էի թշնամի Գաբրիէլ պատրիարքին (ԱՍՏ.398), և թէ ինձ արարի և ոչ այլոց զոր արարի (ՍԱԻ.1158), և թէ եղև որ ինչ եղևն, այլ տացէ պատասխանի նա որ արարն, շփոթած միտքի և ցաւած սիրտի արտայայտութիւններ են, որչափ ալ յստակ կերպով եղելութեանց վրայ լոյս չեն սփռեր:

2444. ՊԱՐՏՔԵՐՈՒ ՏԱԳՆԱՊԸ

Երեք եպիսկոպոսներու կարգաթողութիւնը իրարմէ կարճ ընդհատումներով, չէր կրնար չցնցել բոլոր միաբանները, միայն թէ իրենց վրայ կը ծանրանար շատ աւելի մեծ տագնապ մը, դրամական անձկութիւնը և դարմանի անհնարինութիւնը: Հինէն, այսինքն մեծ խնդիրին կարգադրութեան ժամանակէն եղած պարտքերը կը մնային, ծանր տոկոսներով տարապայման

կաճէին, առօրէայ պէտքերը շարունակ կը բարդուէին, Լատիններու կողմէ Բեթղեհէմի մէջ յուվուած խնդիրները անպակաս էին, իրարու յաջորդող Երուսաղէմի կառավարիչներ, Սիդոնի բղեշխներ, Դամասկոսի կուսակալներ, և ոստիկանական աստիճանաւորներ, շատ մը անուններով գումարներ կը պահանջէին ծանր սպառնալիքներով, մինչև իսկ վանքը քակելու ահարկութեամբ, ինչպէս որ Ս. Փրկչի վանքին պարիսպէն քարեր վերցնել սկսած էին: Խորհրդականներէն գործի վրայ կը գտնուէին, Մկրտիչ, Եղիա, Կարապետ և Կիրակոս եպիսկոպոսներ և Մահալըճցի Յակոբ և Ջմիւռնացի Յարութիւն վարդապետներ, բայց Կ. Պոլիս գրելէ և ամէն բան մի առ մի պատմելէ վատ ուրիշ միջոց չունէին ձեռուրնին: Գաբրիէլ պատրիարք նուիրակներ կը շատցնէր և հետզհետէ կը յղէր Ջմիւռնիա, Պանտրմա, Կիլիկիա, Ռուսաստան, Հնդկաստան, Սասուն, Ամիդ, Ամասիա, Եգիպտոս, սակայն երկրին վիճակն ալ տագնապալից էր և արդիւնք չէր գոյանար: Յուսահատութեան վիճակը տիրած էր, ոչ միայն Երուսաղէմ, այլ և Կ. Պոլիս, որովհետև մայրաքաղաքն ալ դժուարութեանց և նեղութեանց մատնուած էր: Միանգամայն ծանր գանգատներ կը հասնէին Երուսաղէմի Գաբրիէլ պատրիարքի անկար և անհոգ վիճակին վրայ, և ոչ իսկ հոգածութեան շարժում մը կը տեսնուէր: Կարապետ պատրիարք և աւագանի քանիցս խորհրդակցութեան հաւաքուեցան, դուրսէն նպաստելու և օգնելու հնար մը չգտան, և թէպէտ պատմիչը կըսէ թէ փարթամութիւն ամիրայիցն և սեղանաւորաց վանց արար վնովաւ (ՍԱԻ. 1160), սակայն շատ կը թեթևնայ այդ դատաստանը, երբոր նկատի առնուին ընդհանուր տագնապը և Երուսաղէմի պէտքին մեծութիւնը: Իբրև միակ միջոց խորհեցան վսուրբ աթոռն տալ փրկանս ընդ անձին իւրոյ, այսինքն եկեղեցւոյ արժէքաւոր բայց նուազ կարևոր վարդերն ու սպասները ու կարասիները վաճառել, միաբաններու անհատական ստացութիւնները գրաւել, և վանքէն ալ ինչ որ հնար էր արդիւնքի վերածել, և այսպէս աթոռը աթոռով, վանքը վանքով, եկեղեցին եկեղեցիով չքանալու վտանգէն ապատել, և փառքը նուազելով գոյութիւնը ապահովել:

2445. ԾՌԱԶԱՏԻԿԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ Այդ նեղ պարագաներու մէջ, որ Երուսաղէմի աթոռը պարտքերու տագնապին ներքև կը հեծէր, Կ. Պոլսոյ աթոռը միաբանական խնդիրներու ձախող հետևանքներէն դեռ չէր ապատած (2428), և Եէինչէրիներու շփոթութիւնը կը տիրէին (2425), Էջմիածնի մայրաթոռն ալ Եփրեմի հեռանալովը անկերպարան վիճակ մը առած էր (2384), կերևոր գործ մը կատարուեցաւ, զոր անյիշատակ թողուլ չենք կրնար: Քանիցս առիթ ունեցած ենք յիշել ծռապատկին խնդիրներ (383,804,909,1053,1191,1361,1546,1671,1959), որոնք մինչև իսկ սպանութեանց և արիւնահեղութեանց առիթ տուած են: Խնդիրը, ինչպէս իր տեղ բացատրած ենք (383) կը հիմնուի 532 տարիներու հինգհարիւրեակին մէջ չորս Էասեան և իրիոնեան տոմարներուն իրարմէ տարբերելուն վրայ, այսինքն լուսնոյ լրումը կամ շաբաթ օրուան վերջին ժամին կամ կիրակի օրուան առաջին ժամին մէջ դնելուն վրայ, որով Ջատկի տօնը շաբաթին անմիջապէս յաջորդող կիրակիին կամ կիրակիին յաջորդող դիմացի կիրակիին կը տօնուի: Իրոնեան տոմարը առաջին հաշուոյ հետևելով ապրիլ 6-ին կը դնէ վատիկը, մինչ Էասեան տոմարը, որուն Հայեր կը հետևին, վատիկը ապրիլ 13-ին կը դնէ: Վերջին ծռապատիկը 1729-ին հանդիպած էր (1959), և 95 տարիներու հեռաւորութեամբ ծռապատիկը պիտի նորոգուէր 1824-ին, և ամէն ոք գրաւուած էր նոր շփոթներու երկիւղէն, և վախ կար որ ապրիլ

6 և 13 օրերը դժպիսի եղելութեանց թատը դառնային մեծ կեդրոններուն մէջ: Վտանգին առջևն առնելու ջանքերը կանուխէն սկսան, բայց մէկ եղանակ միայն կար վայն փարատելու, Հայոց համակերպիլը, զի ենթադրելի իսկ չէր որ ամբողջ որթողութիւնը, Յոյներով և Ռուսներով, Ռումէններով և Սլաւներով հրաժարէր իր տոմարէն: Կ. Պոլսոյ մէջ տոմարական հետապօտութիւնները յանձնուեցան Գէորգ Միւհէնտիսեանի, որ իր ժամանակին ամէնէն հմուտ

չափագէտն ու տոմարագէտն էր (01.ՕՐԱ.195): Չենք գիտեր թէ Երուսաղէմ և Էջմիածին որո՞նց յանձնեցին այդ ուսումնասիրութիւնները. բայց վերջապէս կանուխէն և համեմատութենէ ձեռք առնուեցան պէտք եղած միջոցները, և 1824 յունուար 26-ին Առաջաւորաց Բարեկենդան հաշուուեցաւ փոխանակ փետրուար 2-ին թողլու, և ապրիլ 6-ին ալ Չատիկ տօնուեցաւ, Յունաց և Ռուսաց հետ, ինչպէս սովորաբար կը տօնուէր, և ծնապատիկի ոչ խոսքն եղաւ և ոչ խնդիր յուզուեցաւ: Անկէ ետքը տոմարական ցուցակներեն ալ հինգհարիւրեակի շրջանին չորս ծնապատիկի տարիներուն Շ. տարեգիրը Հ. տարեգիրի փոխեցին, և այլևս ծնապատիկի անունն իսկ մոռացութեան մատնուեցաւ: Թէպէտ եղելութիւնը կարևոր և հետևանքը ընդհանուր, սակայն կատարեալ յիշատակներ կը պակսին թէ ո՞վ եղաւ առաջին միտք արթնցողը, ինչպէ՞ս կազմուեցաւ ազգային համեմատութիւնը, ի՞նչ կերպով համաձայնեցան բոլոր աթոռները : Շփոթներուն կեդրոնը սովորաբար Երուսաղէմն էր, և լուսահանութեան արարողութիւնը կը կազմէր անոր առանցքը, բայց այս անգամ կնճիռը աւելի ծանր պիտի ըլլար Մայրաթոռին կողմը, և գայթակղութիւնը մեծ պիտի ըլլար, եթէ Ռուսներուն դիմող և ապաւինող Հայերը տարբեր օրով պատիկ տօնէին: Այս դիտողութիւնը մեզ կը յորդորէ այդ նախատեսութեան մէջ ալ Աշտարակեցի Ներսէսի նախահոգ պգուշաւորութիւնը նշմարել:

2446. ԳԱԲՐԻԷԼ ՀԵՌԱՑՈՒԱԾ

Երուսաղէմի պարտքերուն դառնալով, որչափ դիւրին եղաւ միջոց մը մտածել (2444), ընդհակառակն շատ դժուար երևցաւ անոր գործադրութիւնը յանձնարարել: Երուսաղէմի միաբանութիւնը պաշտելութեան հասցնելու չափ փարած է իր ստացութեան և իր եկեղեցական փառաւորութեանց, և դժուար թէ նա յանձն առնուր կենդրոնին խորհած միջոցը գործադրել: Գաբրիէլ պատրիարքի վրայ ալ վստահիլ հնար չէր, զի ուզելով ալ կարող պիտի չըլլար գործը գլուխ հանել, առ որ ոչ ազդեցութիւն ունէր և ոչ հնարամտութիւնը: Ամէնուն մտադրութիւնը դարձաւ Պօղոս Ադրիանուպոլսեցի նախորդ պատրիարքին վրայ, որ թէ Երուսաղէմի միաբան էր, և թէ իբր Երուսաղէմի փոխանորդ կարևոր տեղեկութիւններն ունէր, և իբր ճարտար միտք, բուն կամք և բարձր ազդեցութիւն ճանչուած էր, և միաբանութեան կողմէն ալ յարգ ու վարկ ու համակրանք կը վայելէր, և Պօղոսը անուանեցին Ծայրագոյն կառավարիչ Երուսաղէմի, լիազօր պատուիրակութեամբ պատրիարքէն ալ բարձր: Երբոր գործը Պօղոսին առաջարկուեցաւ, նա պայման դրաւ պատրիարքը հեռացնել և գործէ դադրեցնել: Իրաւ էր որ Պօղոսի և Գաբրիէլի յարաբերութիւնները տաք չէին, հակառակ որ Գաբրիէլ Պօղոսով բարձրացած էր Թէոդորոսի փոխանորդութեան, անոր մահէն ետքը տեղապահութեան, և վերջէն պատրիարքական ընտրութեան իսկ: Վերջին պաղութեան պատճառը կը տրուի Գաբրիէլի գայթակղիլը և Պօղոսը կաթոլիկութեան հակամէտ նկատելը, մինչև իսկ նպովք խօսելու անոր դէմ Ս. Յակոբայ մայրատաճարին մէջ: Այս ցոյցերէն ետքը հնար չէր որ Պօղոս այլևս Գաբրիէլի համակիր մնար: Այսու հանդերձ մենք պիտի չմեղադրենք Պօղոսը թէ իր առաջարկը խորհեցաւ նա յանձահս (ՍԱՊ.1161), զի երկու անհամակիր և անհամաձայն գլուխներու դէմ դիմաց ներկայութիւնը յայտնապէս վնասակար պիտի ըլլար, և յոյս ալ չկար, որ Գաբրիէլ Պօղոսի գործակից դառնար, և դառնալով ալ ոյժ մը պիտի չըլլար: Ուստի Կարապետ պատրիարք և աւագանույ ժողովը շուտով համակերպեցան Պօղոսի դրած պայմանին և բարձրագոյն դուռնէն հրովարտակ առնուեցաւ Գաբրիէլի հեռացման, և յանձնարարականներ Դամասկոսի կուսակալին և Երուսաղէմի կառավարիչին գործը դիւրացնելու, և Ահմէտ աղա ոստիկան մըն ալ Գաբրիէլի առաջնորդելու: Կարապետ պատրիարքի կողմէն ալ կոնդակ ուղղուեցաւ միաբանութեան, որուն մէջ Գաբրիէլի Կ. Պոլիս կոչուելուն պատճառը կը ցուցուի, խորհել ի միասին գտանել պհնարս դիւրութեան և

յապատույթին պարտուց, և վստահութիւն կը տրուի թէ գալ նորին ոչ է հրաժարիլ յիշխանութենէ (ԱՍՏ.Բ.393), և ընդունելով ալ թէ հրաւէրս տարօրինակ է և չէ պատահեալ ցարդ, կը յայտարարէ թէ եղանակն ստիպեաց առնել արտաքոյ օրինաց, նկատելով Երուսաղէմի կործանման վտանգը, և կը վերջացնէ թէ քիչ օրէն առաքել վնասիկին պատրիարք Պօղոս և ծերունապարդ Մարկոս արքեպիսկոպոսունս ի սուրբ աթոռն, մինչև դարձցի պատրիարքն (ԱՍՏ.Բ.392):

2447. ԾԱՅՐԱԳՈՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ

Կոնդակը գրուած էր 1824 յունիս 23-ին, որ յանձնուեցաւ Ադրիանուպոլսեցի Մկրտիչ վարդապետին, որպէսպի Ահմէտ ոստիկանին հետ Երուսաղէմ տանի և գործադրութեան հսկէ: Պետական պաշտօնագիրներէն վատ պատրիարքական գիրեր ալ գրուեցան Գաբրիէլի և խորհրդականներուն, պարտ ու պատշաճ յորդորներով և հրահանգներով, և այսպէս վարդապետն ու ոստիկանը մեկնեցաւ և օգոստոս 9-ին Երուսաղէմ հասան, և նոյն օրը կառավարչութեան դուռը կոչեցին պատրիարքն ու խորհրդականները ու երիցագոյն միաբանները: Հրովարտակը կարգացուեցաւ և Գաբրիէլ յանձնառու եղաւ համակերպիլ, պատրաստութիւնները լրացուց, կնիք և բանալիք խորհրդականներուն յանձնեց, և իր ձեռնասուն Դաւիթ վարդապետի և սպասաւորի մը, և Մկրտիչ վարդապետին և ոստիկանին ընկերակցութեամբ ճամբայ ելաւ օգոստոս 19-ին, դէպ ուղիղ Կ. Պոլիս: Կարծուանծէն շատ աւելի դիւրութեամբ և խաղաղութեամբ լրացաւ այդ առաջին քայլը, միաբանութիւնը Գաբրիէլէ դժգոհ, խնդութեամբ լսեց Պօղոսի գալը. և Գաբրիէլ գործէն դժգոհ գոհունակութեամբ ընդունեցաւ պատասխանատուութենէ ապատուիլը: Նշանակութեան արժանի է Գաբրիէլի մեկնելէն ետքը Յակոբ և Յարութիւն վարդապետներուն խորհրդականաց ժողովէն հեռացուիլը իբր կուսակիցք Գաբրիէլի (ՍԱԻ. 1162): Պօղոս ալ շատ չուշացուց իր ուղևորութիւնը, և պատգամաւորներուն մեկնելէն իբր ամիս մը ետքը ինքն ալ ցամաքի ճամբով մեկնեցաւ, ինչպէս կու գար և Գաբրիէլ, և իրարու ալ հանդիպեցան Քուրտապուլաք օթևանը, Մըսիսի և Փայասի մէջտեղը (ՍԱԻ. 1162): Պօղոս միայն կու գար ուխտաւորներու հետ, ուզելով նախապէս դիտել, քննել և վննել, և այնպէս գործի ձեռնարկել: Երուսաղէմ մտաւ նոյեմբեր 4-ին, երեքշաբթի օր, և սկսաւ մեղմօրէն և առանձնակի միաբաններուն ականջը դնել իրեն գալուն նպատակը և իրեն տրուած պաշտօնը (ԱՍՏ. Բ. 393), իսկ նոյեմբեր 16-ին, յիսնակաց բարեկենդանի կիրակին, միաբանական ժողով գումարեց մայրտաճարի մէջ, և հոն հրապարակաւ յորդոր կարգաց աթոռն ու միաբանութիւնը կործանումէ ապատելու աշխատիլ, և բարոյապէս և նիւթապէս ամէն պոհոզութիւն յանձն առնուլ: Որչափ ալ, կըսեր, չիք ի ձեռին իմում իշխանութիւն, և չեմ եկեալ տիրաբար, սակայն պարտք ունիմ ամէն բան Կ. Պոլիս հաղորդել, և այն որ պօրութեամբ վարուեցաւ պատրիարքին հանդէպ, ոչ թողուցու անպատիժ վանհնազանդս: Պօղոսի խոսքերը իրենց ազդեցութիւնը ըրին, ամէն կողմէն իրեն գործակցելու յայտարարութիւնները կրկնուեցան : Արտաքին օգնութեանց դիմելու միջոցը գործածելու և միաբանութիւնը քաջալերելու նպատակով, որոշեց Եգիպտոս երթալ անձամբ և չև ճամբայ ելած ներքին բարեկարգութեան կանոններ ալ գրաւ. օրինակ իմն, պգեստներու պարպութիւն, սենեակներու մէջ չիմբուելու համար ընդարձակ բազմոց չունենալ, ամէնուն անխտիր հասարակաց սեղանատան մէջ ճաշել, գինի և օղի պատրաստելու գործարանը փակել, նուիրակներու և Նուէրներու աւելորդ ծախքերը դադրեցնել, ժառանգաւորաց վարժարան բանալ հեռի ի վանաց, և այլն: Այդ ամէնուն հոգը չորս խորհրդական եպիսկոպոսներուն յանձնելով և իւրաքանչիւրն ալ մասնաւոր խորհրդակցութեամբ հրահանգելով, դեկտեմբեր 14-ին մեկնեցաւ Եգիպտոս, առաջին անգամ այնտեղէն հանգանակութիւն կամ փոխառութիւն փորձելու համար (ՍԱԻ. 1163-1165): Պօղոս ուղեկից առաւ Մուրատ Չմիւռնացին, որ ազդեցիկ դեր ստացած էր վանքին վրայ Գաբրիէլի տկարամտութենէն օգտուելով, և Պօղոս

օգտակար կը դատէր պայն հեռացնել: Իսկ նա Գահիրէի մէջ բնիկ Ջմիւռնացի Եուսուֆեան Պօղոսի պէյի ազդեցութեամբ կը յաջողէր Նէպոլէոյ և Սարտենիոյ իտալական թագաւորութեանց հիւպատոսական գործակալութիւնը ձեռք անցունել Յոպպէի վրայ, ուր և եկաւ և հաստատուեցաւ, միշտ Երուսաղէմի աթոռին հետ, յոմանց քննադատել և յոմանց գնահատեալ յարաբերութեանց մէջ:

2448. ԲԵՒՐՈՆԻ ՓԱԽՈՒՍԸ

Նախ գահակալ պատրիարքին, և ետևէն ծայրագոյն կառավարիչին մեկնիլը պարտատէրները կասկածի մատնեց իրենց առնելիքներուն մասին, և պարգևներու ակնկալող պաշտօնեաները գրգռեց բռնութեամբ ապահովել պահանջին, և այսպէս նոր փոթորիկ մըն ալ սկսաւ վանական վարչութեան վրայ, որ բոլորովին կը ծանրանար չորս խորհրդական եպիսկոպոսներուն վրայ (2444): Իբր փոթորիկի լրում Երուսաղէմ կը հասնէր Դամասկոսի կուսակալը լաւ հունձք մը հնձելու միտքով: Յոյներէն և Լատիններէն և Հրեաներէն սկսաւ, օրինականացութեանց պատրուակներ առաջ բերելով, և շնչասպառ գանակոծութեան և շղթայակապ բանտարկութեան միջոցներն ալ գործածելով: Երբոր կարգը Հայերուն եկաւ վանական տուրքերու և պարգևներու անուններ առջև դրուեցան, ուպուտիյէ հպատակութեան տուրքը, իբրամիյէ՝ պատույ տուրք, ավայիտ՝ բացեն տուրք, ծխախոտի դրամ, հետևորդներու ծախք, պաշտօնեաներու նուէր, որդւոյն ընծայ ոստիկաններու պարգև, մինչ վանքը իր օրապահիկին կարօտ էր: Պահ մը բանտարկուեցան, սպառնալիքներ լսեցին, ազատելով պահուրտեցան, բայց այն ատեն ալ ոստիկաններ դուռեր կը կոտրէին, սենեակներ կը մտնէին, կը գանակոծէին, կը յափշտակէին: Ազատուելու համար ժողովեցին ինչ որ և ուր որ գտան դրամներէ վատ 42 հազար տրամ, այսինքն 105 քաշ ձոյլ արծաթ տուին շատ մը վարդեր և սպասներ ոչնչացնելով: Հապիւ թէ կուսակալը հեռացաւ, Երուսաղէմի կառավարիչն ելաւ անոր գործը շարունակել: Վերջին յուսահատութեան մէջ խորհրդականներ՝ անօրինակ մանաւանդ թէ տարօրինակ որոշում մը առին: Ուխտաւորներուն մնացորդները ճամբայ հանեցին, 25 վարդապետներ ցրուեցին երթալ ուր որ ուզեն, հասարակ միաբաններէն մէկ մաս Ռամլէ և Յոպպէ դրկեցին, մնացեալները ազատ արձակեցին, սպաս և վարդ մայրտաճարի գանձատունը փակեցին և դուռը հիւսեցին անյայտացնելու կերպով, ժամօրհնող Իսահակ վարդապետը քանի մը միաբաններով և անձեռն պարէնով ու պէտքերով պահապան թողուցին, ու հրամայեցին այլևս բնաւ վանքին դուռը չբանալ, և իրենք չորս խորհրդականներ, Մկրտիչ, Եղիա, Կարապետ և Կիրակոս եպիսկոպոսներ, 1825 ապրիլ 11-ին, աշխարհամատրան նախընթաց շաբաթ օրուան առտուն կանուխ և լուրեայն ուղևորեցան Բեբրոն, այժմ Խալիլուահման, և ապաւինեցան տեղւոյն մեծ շէյխին տունը, որ զիրեն սիրով հիւրընկալեց: Մտադիր էին անկէ ալ Եգիպտոս անցնիլ, և հոն մնալ մինչև հասցէ օգնութիւն: Ընդարձակ նամակ մըն ալ գրեցին Բեբրոնէ Կարապետ պատրիարքին, ամէն անցուդարձերը, կուսակալին բռնութիւնները, պարտատեարց ստիպումները և իրենց կացութիւնը պատմելով, և պատասխանը Եգիպտոս յղել խնդրելով: Այս նամակին պարունակութիւնը Կարապետ պատրիարք հաղորդած է կայսերական կառավարութեան:

2449. ՆԵՐՔԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆ

Վանքին պարպուիլը և խորհրդականներուն մեկնիլը, վարմանք և վիշտ, ցաւ և վայրոյթ միանգամայն պատճառեցին Երուսաղէմի կառավարիչին և այլապի բնակիչներուն: Վանքին տաճիկ բարապանը կը բանտարկեն որ կանուխէն լուր չէ տւած, պինուորներ կը դրկեն դարձնելու, բայց ետևէն չեն հասնիր, հրաւիրակներ կը դրկեն, բայց նոյնիսկ շէյխը չի հաւանիր որ մեկնին, մինչև որ դատաւորն ինք կերթայ, և երդմամբ կը խոստանայ պարտատէրերը լուրեցնել, բան մը չպահանջել, ոչ ընծայ և ոչ տուրք, մինչև որ ուխտաւորներ գան կամ օգնութիւն ստանան: Երբ

Եղիա Եպիսկոպոս խստիւ կը պատասխանէ, զայն ալ սպառնալիքով կը լռեցնէ, և վերջապէս խորհրդականները կը տեսնան, որ ուրիշ կերպ պիտի չկարենան գործել, հաւանութիւն կը յայտնեն և ապրիլ 18-ին, այսինքն միւս շաբաթ օրը վանք կը դառնան, Խալիլուահմանի շէյխն ալ միասին, իբր երաշխաւոր և հովանաւոր: Դառնալուն Պօղոսէ նամակ մը կը ստանան, որ Աղէքսանդրիայէ կացութիւնին կը հարցնէր, և միայն քանի մը օր ևս համբերելու և տոկալու յորդոր կը գրէր: Հակառակ երդմնակուռ խոստումներուն, վանական մատակարարութիւնը հանդարտութիւն չգտաւ, զի պարտատէրներու պահանջումները և պաշտօնակալներու բռնադատութիւնները շարունակեցին ինչպէս առաջ, Քեբրոնի շէյխին միջնորդութիւններն ալ հետևանք չունեցան: Անգամ մըն ալ Երուսաղէմէ խոյս տալու և վանքին դուռները փակելու խորհուրդը սկսաւ զօրանալ, բայց այս անգամ ալ Կարապետ պատրիարքի յուսադիր գրութիւնը յորդորեց տարօրինակ խորհուրդէն ետ կենալ: Երբոր կը տեսնեն որ յաջողութիւնը չի ժպտիր, խորհրդակցութեամբ գործողներն ալ կը սկսին զիրար մեղադրել և գժտութիւնը կը զօրանայ խորհրդականներուն միջև, գլխաւորաբար Եղիա Եպիսկոպոսին դէմ, որ իբր փոխանորդ գլխաւորութիւն կը վարէր, բայց բուռն և յախուռն խօսքերով և գործերով յաճախ դժուարութիւններ կը ստեղծէր: Չորսերուն մէջ խոհականագոյն կը նկատուէր Կիրակոս Եպիսկոպոս, որ կերպով մը ընկերները համոզեց Կ. Պոլիս երթալ և բերանացի ամէն բան Կարապետ պատրիարքի և աւագանիին հաղորդել, ինչ որ դժուար կըլլար գրով իմացնել, և այս նպատակով Երուսաղէմէ մեկնեցաւ 1825 մայիսին: Բայց Կ. Պոլիս ալ չմնաց, զի Պօղոս զայն յղեց Եգիպտոսի առաջնորդութեան, որ Երուսաղէմի վիճակ էր, հոգ տանիլ այնտեղ թէ վիճակին բարեկարգութեան և թէ Երուսաղէմի շահերուն: Իսկ ինքն Պօղոս Եգիպտոսի մէջ մեծ յաջողութիւն չէր գտած, և Կ. Պոլիս եկած էր ազգին հետ կրկին խորհրդակցելու և վերջնական որոշումները տալու: Այս առթիւ Երուսաղէմի փոխանորդ Յարութիւն Եղեսացի վարդապետն ալ Ջմիւռնիոյ առաջնորդութեան յղուեցաւ, և փոխանորդութիւնը յանձնուեցաւ Ջաբարիա Կոփեցի վարդապետի (ԱՍՏ. Բ. 404), իրեն օգնական ունենալով Յովհաննէս Ջմիւռնացի վարդապետը (ՍԱԻ. 1176):

2450. ԶԱՆԱԶԱՆ ՏԱԳՆԱՊՆԵՐ

Պօղոս Երուսաղէմէ մեկնած էր 1824 դեկտեմբեր 14-ին (2447), և միայն 1828 դեկտեմբեր 3-ին կը տեսնենք զայն Երուսաղէմ դարձած (ԱՍՏ. Բ. 430), չորս տարուան բացակայութենէ ետքը: Մեր նպատակէն և ծրագիրէն օտար կը սեպենք այդ միջոցին տեղի ունեցած անցքերը մանրամասնօրէն պատմել, զորս խնամով հաւաքած է Երուսաղէմի պատմագիրը (ԱՍՏ. Բ. 399-431): Այդ անցքերուն նմոյշ արդէն տուած եղանք (2448-2449), և բաւական ըլլայ ըսել թէ անոնց շարունակութիւնն էր, որ բոլոր քառամեային մէջ կը տւէր: Աթոռը բոլորովին անգլուխ, առանց իր պատրիարքին և առանց ծայրագոյն կառավարիչին, խորհրդականները որ խմբովին վարիչներ էին՝ իրենց մէջ պառակտած, միաբաններ աղիկամի ապրելու և գործելու համարձակութիւն գտած, տխուր վիճակի ենթարկած էին ներքինը, մինչ արտաքինը խղճալի էր պարտքերու և բռնութիւններու երեսէն: Ի լրումն դժբախտութեանց փոխանորդ Եղիա Եպիսկոպոսն ալ այդ դժուարին կացութիւնը դարմանելու անձը չէր, մանաւանդ թէ զայն աւելի կը ծանրացնէր իր անկանոն և անխոհեմ ընթացքով: Քանիցս անոր դէմ գանգատագիրներ ուղղուեցան ամէն կողմէն, նոյնիսկ ընկերները Մկրտիչ և Կարապետ Եպիսկոպոսներ գործերէ քաշուիլ ուլեցին Եղիայի երեսէն: Վերջապէս Կարապետ և Գաբրիէլ և Պօղոս պատրիարքներ համաձայնութեամբ որոշեցին Եղիան հեռացնել, և 1826 օգոստոս 11-ին իրեն հաղորդեցին թէ փոխանորդութենէ դադարած է, և պէտք է վանքէն ալ ելլէ և Կեսարիա կամ Եւզոկիա երթայ, բայց նա իր գործերը ամփոփելով հոկտեմբեր 21ին մեկնեցաւ դէպ Եգիպտոս (ԱՍՏ.Բ.412), և հապիւ ամիս մը մնալով

այնտեղէն անցաւ Կ. Պոլիս: Իսկ Մկրտիչ և Կարապետ եպիսկոպոսներու խորհրդական ընկերներ ընտրուեցան Աբրահամ և Յակոբ վարդապետներ, առաջինը Հնդկաց նուիրակ և երկրորդը Չանդրըրջին: Փոփոխութիւնը արմատական դարման մը չբերաւ կացութեան, բայց գոնէ առժամեայ կերպով լռեցուց ներքին պառակտումը: Այս միջոցներուն տեղի ունեցած է Եթովպացիներու խնդիրը, որոնք ղփտի եպիսկոպոսին ընթացքէն վայրացած վայն կը վտարեն և Երուսաղէմէ հայ եպիսկոպոս մը կը խնդրեն իրենց գլուխ, և իրօք ալ Երուսաղէմէ վարդապետներ ճամբայ կը հանուին: Բայց որովհետև գործը հետևանք ունեցած չէ, պէտք չենք տեսներ մանրամասնութեանց մտնել, և գացողներուն կրած նեղութիւնները պատմել, որոնցմէ Յակոբը կեանքն ալ վրայ տուաւ: Այլ այսչափ բաւական ըլլայ ակնարկել յապագայից յիշատակ (ՍԱԻ.1172-1174):

2451. ՎԵՐՋԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Պօղոսի ընթացքը մեղադրելի պիտի ըլլար, եթէ Գաբրիէլ պատրիարքը հեռացնել տալէն ետքը, և ծայրագոյն կառավարիչի կամ կերպով մը փոխպատրիարքի անունը վրան առնելէն ետքը, տարիներով ալ Երուսաղէմը անգլուխ թողլով, և շատերէն ամբաստանեալ բայց իրմէ պաշտպանեալ Եղիան գործի գլուխ պահելով, չի կարենար արդարանալ պարագաներու կշռադատութեամբ և հատկանաց յաջողութեամբ: Գաբրիէլի հեռացումը վնաս մը պիտի չշահուի, նկատելով որ ներկայութենէն ոչ մի օգուտ չէր սպասուեր: Եղիան փոխանորդ պահելը, գոնէ անոր ժրութիւն և արիութիւն ցուցնելովը կարդարանայ, մինչ ուրիշներ վարանոտ և տարտամ ընթացք մը ունէին, թէպէտ վերջէն վերջ ինքն ալ համոզուելով վայն հեռացուց (2450): Իսկ իրեն Կ. Պոլիս մնալը իր կամքէն անկախ պատճառներով երկարեցաւ: Նա ձեռնարկած էր նուէրներ հաւաքելու համար անձամբ շրջիլ յամենայն եկեղեցիս Կոստանդնուպոլսոյ (ԱՍՏ, Բ. 429), երբ 1826 օգոստոս 18-ի մայրեկեղեցւոյ և պատրիարքարանի և հայաբնակ թաղերու ահագին հրդեհը իր գործը կասեցուց, յարևման Շղթայակիրի որով հանդիպած արկածին (1927) Պօղոսս վագցուցած պիտի ըլլայ աւագնուոյն թէ Երուսաղէմը Երուսաղէմով փրկաւորելու ծրագիրը (2444), ոչ այնպէս դիւրին պիտի ըլլայ ինչպէս կենթադրուէր, և ոչ այնչափ արդիւնւոր որչափ կը կարծուէր, ուստի պէտք էր տարբեր եղանակներ խորհիլ: Շատ սուրբական էր նորէն բարեպաշտներու լումային և ունևորներուն քսակին դիմել, սակայն ասկածելի էր որ կարենար բաւակաչափ արտադրել: Այն ատեն խորհեցաւ պետական պաշտպանութեամբ տանելի կարգադրութեան մը յանգիլ, պարտքերէն ծանր տոկոսներ վեղդել, և վճարումները պարբերական մասերու կապել: Խորհուրդը լաւ էր, բայց գործադրութիւնը ոչ դիւրին, զի պէտք էր միջնորդել շահիլ, դիմումներ կրկնել, բացատրութիւններ տալ, գործը երկարել: Բայց վերջապէս պետական հաւանութիւնն առնուեցաւ, և գլխաւորապէս Պէլձեանի և Պալեանի միջամտութեամբ, բայց պէտք էր տեղական իշխանութեանց ալ համաձայնութիւնը ունենալ, և 1827 սեպտեմբերին Յովհաննէս Ջմիւռնացի Եգիպտոս ղրկուեցաւ, և հռչակաւոր Մէտմէտալիի կառավարութեան հաւանութիւնն առաւ: Անկէ Երուսաղէմ անցաւ դատաւորին վճիռն առնելու, և երբ այս արծաթ բազում կը պահանջէր, Դամասկոս գնաց կուսակալ Սալիհ փաշային դիմելու, որ մտադիր հաւանեցաւ, երբ միւս կողմէ դատաւորն ալ զիջաւ պարտ ու պատշաճ արձանագրութիւնները լրացնել, և Ջմիւռնացին պահանջուած պաշտօնագրերով Կ. Պոլիս դարձաւ, և կայսերական շնորհը հաստատուեցաւ, այսինքն պարտքերը առանց տոկոսի վճարել, և գլուխներն ալ տարուէ տարի մէկ ութերորդով ջնջել մինչև ութը տարի: Բայց այդ գումարն ալ ձարելու էր: Հանգանակութիւնը նորէն կը սկսի, և Կարապետ պատրիարք 1828 յուլիս 23-ի շրջաբերականով կը հրամայէ որ քաղաքացիք և գաւառցիք առհասարակ ըստ մարդաթուի մէկ կամ երկու կամ երեք դահեկան վճարեն ամ ըստ ամէ, այր և կին, մեծ և պղտիկ

անխտիր: Միանգամայն կը կրկնուի որ աթոռն ալ մասնակցի վաճառմամբ նուազ կարևոր և արժէքաւոր իրերու (ՍԱԻ. 1175 1177):

2452. ՊԱՏՈՒՈՅ ՎՃԱՐՈՒՄ

Վերջապէս Պօղոս յաջող ելք մը ձեռք անցուցած, 1828 սեպտեմբեր 19-ին Կ. Պոլիսէ մեկնեցաւ, հետն ունենալով հանգանակած գումարը: Յամաքի ճամբով իջաւ Ատալիա, ծովով հասաւ Աղեքսանդրիա հոկտեմբեր 28-ին, և Եուսուֆեան Պօղոսի և Կիրակոս եպիսկոպոսի ձեռնտուութեամբ արդիւնաւոր հանգանակութիւն կատարեց Եգիպտոսի մէջ, և նոյեմբեր 15-ին նորէն ուղևորելով դեկտեմբեր 3-ին Երուսաղէմ մտաւ, մեկնելէն չորրորդ տարւոյն լրանալէն միայն 11օր առաջ: Պետական հրովարտակը Դամասկոսի կուսակալին յղեց Կարապետ եպիսկոպոսի ձեռքով, որ գործադրութեան հրամանագիրը ստանալով դարձաւ դեկտեմբեր 26-ին: Կարապետ եպիսկոպոս չդարձած դեկտեմբեր 19-ին միաբանական ժողով գումարեց, բոլոր եղելութիւնները և որոշումները հաղորդեց, որոնք ուրախութեամբ լսուեցան միաբաններէն, և անհակառակ Երեմիա և Գրիգորիս վարդապետները ընտրուեցան վաճառելի իրեղէնները դատելու և հաւաքելու: Ոսկեղէն և արծաթեղէն անօթներ ոսկերիչներու ձեռքով հալածոյ կը վերածուէին, և կամ նոյնութեամբ որոշեալ գնով իբրև գումար կը տրուէին, որոնցմէ յետոյ իբր նուէր դարձնողներ ալ կը գտնուէին: Վաճառումները ոչ միայն Երուսաղէմի և շրջակայից մէջ կը կատարուէին, այլ և Եգիպտոս յղուեցան վաճառուելու: Մեծ եղաւ նաև վճարումները ընելու աշխատութիւնը, զոր անձամբ կատարեց Պօղոս, ճանապարհի աշխատութենէն պատճառած հիւանդութեան օրերը անցունելէն ետքը: Բայց ծանր էր աշխատանքը, զի պատատէրներ իրարու վրայ դիպուած կը նեղէին, և ութերորդ մասին վճարման պայմանին կը դժկամակէին: Պօղոսի հարկ եղաւ ամէն միջոցները գործածել, վաճառումները ընդարձակել նուիրակութիւններ հանել, ուխտաւորութիւնները քաջալերել, ուխտաւորները բորբոքել, միաբաններն ալ յորդորել: Պատմագիրը կարդարացնէ վայն միաբաններու սենեակները կոխելու և սնտուկները պարպելու վրոյցեն զոր ոմանք, կըսէ ստուգապէս յերիւրեն: Անհնարին եղան Պօղոսի կրած նեղութիւնները, և բազմադիմի ստակ հաւաքելու հնարագիտութիւնները, բայց մեծ եղաւ և յաջողութիւնը, զի կրցաւ ութամեայ պայմանաժամին կէսովը գործը վերջացնել, և չորս տարիով բոլոր պարտքերը սրբել (ՍԱԻ.1178), և 1833-ի ամավերջը առանց պարտքի ողջունել: Միաբանութեան մէջ պակաս չեղան դժուարութիւններ հանողներ, գանգատներ խօսողներ, բամբասանք ընողներ, և հասկնալի է վանական հարստութեանց ցրուելէն յառաջ եկած սրտացաւը: Բայց վերջնական յաջողութիւնը ամէն վրոյց դադրեցուց և ամէն լեզու լռեցուց, և Պօղոս օրհնութեան և գովութեան ցոյցերու արժանացաւ, և ցարդ փառաբանութեամբ կը յիշուի անոր անունը աթոռակալ յիշատակաց և վանական աւանդութեանց մէջ:

2453. Ս. ԳԵՐԵԶՄԱՆԻ ՊԱՏԱՐԱԳԸ

Անհնարին է մեզ միառմի հետևիլ այն ամէն անցքերուն և դարձուածներուն որ Երուսաղէմի մէջ կատարուեցան, և որ խնամով հաւաքուած են մասնաւոր պատմիչներէն. բայց հնար ալ չէ վանց ընել ընդհանուր ազգային նշանակութիւն և կարևորութիւն ունեցող եղելութիւններ: Այս կարգէն է Հայերուն Ս. Գերեզմանի վրայ պատարագելու իրաւունքին կրկին մտնելը: Հնագոյն ժամանակներէ Հայոց այդ իրաւունքն ունենալը կը հետևի Սալաէտտինի հրովարտակէն, սակայն վերջինէն Լատիններ վայելած են այդ իրաւունքը. Յոյներն ալ մասնակցած են երբ հրդեհէն ետքը շինութեան հրամանը ստացան, իսկ Հայեր տակաւին զուրկ կը մնային, և հակառակ երեք ազգերու հաւասարութեան սկզբունքին, այդ կէտը չէր գործադրուած, և տակաւին ամէնուն սիրտին մէջ

փափաք և ձգտում կը մնար: Սուլտան Մահմուտ կայսեր Հայոց հանդէպ ցուցած բարեացակամութիւնը, և Միքայէլ Փիշմիշեան ամիրային վայելած ազդեցութիւնը, և Փիշմիշեանին ալ փոխանորդ Չաքարիա Կոփեցի վարդապետին հետ մտերմութիւնը, փոխանորդը քաջալերեցին այդ շնորհն ալ խնդրել կայսրէն, իբրև լրումն արդէն հաստատուած երկու ազգաց հաւասարութեան սկզբունքին: Խնդրանքը շուտով և դիւրութեամբ քալեց, և Հայոց Ս. Գերեզմանի վրայ պատարագելուն հրովարտակը ելաւ 1829 մայիսին (ՍԱԻ. 1180), պարտքերուն մասին հրովարտակէն (2451) մօտաւորապէս երկու տարի ետքը: Հրովարտակը ուղղակի Եգիպտոս վրկուեցաւ Կիրակոսի ձեռքը, որպէսզի Երուսաղէմ հասցնէ ուրիշ պաշտօնագիրներու և յանձնարարագիրներու հետ: Բայց տեղական իշխանութեան ալ գործակցութիւնը պէտք էր, ուստի հրովարտակը Դամասկոս ալ տարուեցաւ, և կուսակալի հրամանագրով Երուսաղէմ բերուեցաւ օգոստոսի վերջին օրերը, դատարանի մէջ մեծ ժողով գումարուեցաւ, ուր Պօղոս անձամբ և Մկրտիչ ու Եղիա ու Կարապետ եպիսկոպոսներ և Աբրահամ ու Յակոբ վարդապետներ և Մուրատ թարգման ներկայ գտնուեցան, և Յունաց ու Լատինաց հակառակութիւնները ցրեցին: Ժողովը դատարանէն Ս. Յարութիւն փոխադրուեցաւ և տեղւոյն վրայ վարդեր և կարասիներ, պատկերներ և աշակերտներ հաւասարապէս Հայոց կողմէն ալ վետեղուեցան, զորս պատրաստած էին պէտք եղած ձևերով և չափերով: Միանգամայն դուռ բանալու, կոչնակ վարներու, գերեզմանին ներսն ու դուրսը և պատանատեղին աւելելու և սրբելու, աթոռ դնելու, նախագահին և դասականներուն գորգեր սփռելու, տօներուն համաձայն Ս. Գերեզմանին ներսն ու դուրսը վարդարելու, և գերեզմանին պահպանութեան մասնակցելու կէտերը որոշուեցան, ճշդուեցան, և դատական վճիռի ձևով արձանագրուեցան, թէպէտ ամէն մի քայլին և ամէն մի կէտին յունական և լատինական ընդդիմութիւններ կը բարձրանային: Իսկ պատարագի կարգ որոշուեցաւ կէս գիշերէն ետքը սկսելով, նախ Յոյնը, յետոյ Հայը, վերջէն Լատինը արշալոյսին ատենները, և պատարագները հանապազօր, միայն տարին երկու օր լռելով, բակլախորանին, և աւագ ուրբաթին: Այսպէս ամէն բան լրացնելէն ետքը 1829 սեպտեմբեր 1 կիրակի երեկոյէն, միաբանութիւն և ժողովուրդ, բազմութեամբ Ս. Յարութիւն հաւաքուեցան, և գիշերապաշտօնը Վերնատունը կատարելով, սեպտեմբեր 2 լոյս երկուշաբթի գիշեր, Ստեփանոսեանց և Գոհարինեանց տօնին, կէս գիշերէն երկու ժամ ետքը առաջին պատարագը մատոյց ինքն Պօղոս արքեպիսկոպոս Ծայրագոյն կառավարիչը, յատկապէս յիշատակելով ազգին մեծամեծները, բարերարները և աշխատողները, և մաղթանքներ ալ ընելով կայսեր արեւշատութեան և նախարարաց յաջողութեան (ԱՍՏ. Բ. 435-441) իսկ հետևեալ օրերուն մէջ եպիսկոպոսներ յաջորդեցին պատարագել ամիս մը ամբողջ: Եղած կարգադրութեանց կառավարական պաշտօնագիրներն ալ Կ. Պոլսոյ պատրիարքութեան յղուեցան: Անկէ և այս անխախտ պահուած է Հայոց վերսկսած իրաւունքը, և երկու ժամարարներ երկամսեայ հերթով անխափան կը մատուցանեն հանապազօրեայ պատարագը: Որոշեալ հինգ օրեր մեծահանդէս պատրիարքական կամ եպիսկոպոսական պատարագներ ալ կը մատուցուին, և այս առիթներուն սովորութիւն է յատուկ հանդէս ունեցող ազգին՝ վերջին մնալ և ըստ կամս երկարել իր արարողութիւնները:

2454. ԳՈՂԳՈԹԱՅԻ ԽՆԴԻՐ

Այդ իսկապէս մեծ և փառաւոր յաջողութեան, իրաւամբ սկզբնապատճառ պէտք է ձանձնալ Կոփեցին, որ ինքնաբերաբար առաջին քայլն էր առած, բայց այդ յաջողութիւնը պատճառ ալ եղաւ իրեն փորձանքի հանդիպելուն: Առաջին յաջողութենէն քաջալերուած, Երուսաղէմէ ուլեց և ստացաւ Ս. Գողգոթայի մասին Հայոց ստացութեան հին փաստաթուղթերը, զի ինչպէս յայտնի է 1431-ին Վրացիներ վայն Հայերէ գրաւեցին, և թէպէտ 1438-ին Մարտիրոս պատրիարք յաջողեցաւ

վերստանալ (2425), այլ Վրացիք նորէն գրաւեցին. և Մարտիրոս պարտաւորուեցաւ երկրորդ Գողգոթայի վերնատունով գոհանալ 1439-ին, իսկ 1440-ին Վրաց թագաւորութեան վերջանալովը Յոյներ մտան Վրաց ժառանգութեան (1506), և կը մնային մինչև այս ատեն, միայն կողմնակի մաս մը Լատիններու էր անցած: Կոփեցին Ս. Գերեզմանի պատարագին հրովարտակէն ետքը, միշտ Միքայէլ Փիշմիշեանի միջնորդութեամբ, խնդրամատոյց եղաւ կայսեր Ս. Գողգոթայի ստացութեանց համար: Բայց երբ գործը պալատէն բարձրագոյն դուռը քննութեան կը յանձնարարուի, Մեծ Եպարթոս Խուսրէվ փաշա վայրանալով Պէլճեանը կը յանդիմանի թէ չափազանց են Հայոց պահանջումները, և անտեղի դժուարութիւններ կը յարուցանեն պետութեան գլխուն, որ այն ինչ կնքած էր Ադրիանուպոլսոյ դաշնագիրը, և Գողգոթայի խնդիրը կրնար որթոտոքս և կաթոլիկ պետութիւնները վշտացնել: Պէլճեան և ամիրաներ, և նոյնիսկ Կարապետ պատրիարք ինքզինքնին անգիտակ կը յայտարարեն կոփեցիին դիմումէն, եթէ պարզ ձևակերպութիւն չէր ըսածնին, և բացէբաց կը մերժեն գործին մէջ մասնակցութիւն ունենալնին, և պատասխանատուութիւնը կը բեռցեն Երուսաղէմի փոխանորդին վրայ, իբր միաւ հեղինակ անխոհեմ և անպոյշ ցուցուած ձեռնարկին, իբր պի նոյն իսկ ազգային պատրիարքարանէն ծածկած էր իր գործը: Այդ չքմեղանք կընդունուի, բայց կը, հրամայուի Կոփեցին պաշտօնէն և քաղաքէն հեռացնել, որ 1830 մարտ 3-ին (ԱՍՏ.Բ.447) աքսորական Կիպրոս կը յղուի (ՍԱԻ.1182), և փոխանորդութեան պաշտօնը կանցնի Յովհաննէս Զմիւռնացիին, որ Կոփեցիին օգնականն էր (2449): Այդ պարագաներ որ տեղնիտեղօք պատմուած են գիտակ անձրևէ, և նոյնիսկ գործին հետևանքները, աւելորդ կը ցուցնեն Պէլճեանի ներբողաբաններուն գրած, թէ Ս. Գերեզմանին վրան պատարագելու հրամանը միայն Պէլճեանի ձեռքով ստացուած ըլլայ, գուցէ բոլորովին անգիտակ եղած չըլլայ: Իսկ Զաքարիա ժամանակ մը Կիպրոս մնալէ ետքը Երուսաղէմ անցաւ, և Ս. Աթոռոյ փոխանորդ անուանուեցաւ, Ծայրագոյն կառավարիչին մօտ (ԱՍՏ.Բ.451): Այստեղ կընդհատենք Երուսաղէմի անցքերուն շարքը, և կանցնինք պատմել Մայրաթոռոյ գործերը և Եփրեմի կաթողիկոսութեան վերջին տարիները:

2455. ՊԱՐՍԿԱՀԱՅՈՑ ԳԱՂԹԸ

Էջմիածինի պատմութիւնը թողուցինք երբ Թիւրքմէնչայի ռուսպարսկական հաշտութեան վրայ, Էջմիածին ռուսական երկիր դարձաւ 1828 փետրուար 10-ին, և նոր կարգի և նոր կեանքի սկզբնաւորութիւն գոյացաւ: Առաջին գործը եղաւ Պարսկաստանի Հայոց Կվկաս գաղթելու խնդիրը, որ Թիւրքմէնչայի դաշնագիրով պայմանաւորուած էր: և պէտք էր շտապել, որ ռուսական բանակը Պարսից թողուելիք գաւառներէն չմեկնած գաղթականն ալ ելնէր, որ յետոյ նեղութեան և վրէժխնդրութեան չենթարկուէր: Այսչափը անցողակի յիշենք թէ Պարսկահայոց գաղթը Տաճկահայոց գաղթէն առաջ սկսաւ, զոր արդէն պատմած կը գտնուինք (2433), բայց երկու գաղթերը գրեթէ միաժամանակ գործադրուեցան, և գաղթականութեանց պետեղման ընդհանուր պաշտօնեան՝ միևնոյն Պանկրատիէվ զօրավարն էր, զոր արդէն յիշեցինք: Իսկ գաղթականը ճամբայ հանելու և պէտք եղածը կարգադրելու պաշտօնը յանձնուեցաւ գնդապետ Ղապար Լապարեանին, որուն յատուկ հրահանգներ ալ տրուեցան, և Ներսէսի ալ հաղորդուեցան մարտ 28-ին (ԵՐՅ.326): Ինչչափ ալ գաղթականութիւնը ժողովուրդէն փափաքուած, և Ներսէսի միջնորդութեամբ Պասքևիչի թելադրուած և հաշտութեան դաշնագիրին անցած էր, սակայն գործադրութիւնը միևնոյն եռանդով ամէնէն չընդունուեցաւ: Նեստորական Բաղդէացիք առաջին անգամ ետ կեցան գաղթելու գաղափարէն, չուզելով բաժնուիլ իրենց նախնեաց շիրիմներէն և յիշատակներէն գուցէ և իրենց ապաստանի լեռներէն: Օրինակը ապրեց Հայերուն վրայ ալ, և սկսան գաղթելու համար պայմաններ և պահանջներ առաջարկել, և ասոնց գլուխ էր կեցած

Աղբակու Ս. Բարթողիմէոս առաջնորդ Իսրայէլ եպիսկոպոս, որուն մասին գանգատ ալ մատուցուեցաւ Եփրեմի, բայց կերևի թէ անոր դէմ ապդու միջոց չգործածուեցաւ, որ կարողացաւ պահել Պարսից սահմաններում քանի մի հապար գերդաստան (ԵՐՑ.Ա.330): Միայն գիտենք թէ Էջմիածնի կողմէ ժողովուրդը գաղթականութեան յորդորելու յղուեցան Ատեփան Ենովքեան եպիսկոպոս, և Նիկողայոս Արցախեցի և Գրիգոր վարդապետներ և կարող քահանաներ: Գործը դիւրացնելու օգնեցին և Լապարեանի աջակցեցան Մովսէս Արղութեան, Իսահակ Ղամապեան, Էնակոլոփեան և Շարոյեան գնդապետներ, և Ղորղանեան, Շաղուբաթեան, Մելիք-Շահնապարեան և Մելիք-Եուսուֆեան սպաներ, և վրացի Շալիկով, և ռուս Վոյնիկով, Եակիմով, Իսկրիկցի և Դէրուբէնկօ պինուորականներ, մինչև իսկ իրենց հեծած ձիերը կիներու և տղաներու տրամադրելով: Արգելքերու մեծերը Պարսիկներ կը պատրաստէին, գաղթողներուն իրեղէնները չգտնելով, կամ թէ ամենաստորին գիներ տալով, և պէտքերը և փոխադրութեան միջոցներ անօրինակ թանկութեան բարձրացնելով: Փետրուարի վերջերէն առաջին շարժումը տուին Թաւրիպցիները, որոնց հետևեցան միւս տեղերու բնակիչները, որոնց թիւը 40, 000 կը հաշուելի սովորաբար (ԵՐՑ. Ա. 332), զի միայն Երևանի և Նոր Նախիջևանի գաւառներուն մէջ հաստատուածները 35, 560 հաշուուած են պաշտօնական վիճակագրութեամբ (ԵՐՑ. Ա. 337): Գաղթողներ իրենց նոր բնակութեան մէջ ալ նեղութիւններէ վերծ չմնացին, զի իրենց պետեղման համար նախահոգ պատրաստութիւններ եղած չէին, և ընելու ատեն ալ չկար: Պասքեիչին թելադրողներ ալ եղան, իբր թէ սոքա Ռուսաց ոսկու համար են գաղթում, որուն դէմ համարձակապէս բողոքեց Լապարեան գնդապետը՝ գաղթականութեան վերակացուն (ԵՐՑ. Ա. 336): Բայց ինչպէս անգամ մը ըսինք (2433), Հայեր աւելի կրած հարստահարութիւններէն կը փախչէին, և ապագայ բարօրութիւն կը փնտռէին, և այդ մասին յուսախաբ չեն եղած, զի պաշտօնական վիճակագրութիւններն ալ, միայն Երևանի և Նախիջևանի մէջ առաջին 60 տարիներու ընթացքին եռապատիկ անցած կը ցուցնեն տեղւոյն հայաբնակութիւնը (ԵՐՑ. Ա. 338):

2456. ԿՐԱՍՈՎԱՐԻ ՀԵՌԱՑՈՒԱԾ

Երևան անձնատուր եղած էր 1827 հոկտեմբեր 1-ին, 2-ին հանդիսապէս օրհնուած ռուսական տիրապետութիւնը (2404), իսկ հոկտեմբեր 6-ին նորստացիկ հայկական աշխարհին կառավարութիւնը ժամանակաւոր վարչութիւն անուամբ յանձնուեցաւ Կրասովսքի պօրավարին և Ներսէս արքեպիսկոպոսին և Բօրօտին փոխգնդապետին, առաջինը նախագահ, երկրորդը խորհրդական և երրորդը օգնական: Պասքեիչ տակաւին պէտք կը պար Հայերը քաղցրութեամբ ողոքել և Հայերէն սիրուած անձերը օգտակար էին իր նպատակին: Ինքն Երևանէ Թաւրիպ ուղևորեցաւ, երբ Թաւրիպ հոկտեմբեր 13-ին արդէն ինկած էր Ռուսաց ձեռք, և Պասքեիչ 19-ին յաղթական մուտք կատարեց: Հաշտութեան բանակցութիւններ սկսան և 1828 փետրուար 10-ին փակուեցան (2405), բայց Պասքեիչ շատոնց վերադարձած էր Տփղիս և պինուորական ձեռնարկներէ ապատած՝ քաղաքական և վարչական գործերով կը պբաղէր, իրեն գլխաւոր նպատակ ունենալով հայաբնակ երկիրներէն հեռացնել Կրասովսքին և Ներսէսը, որոնց պարագաներէն ստիպեալ յանձնած էր նոյն տեղերուն առժամեայ կառավարութիւնը: Իր նախաքայլերը սկսաւ երկուքին ալ կատարած գործերը խծրծելով, և երբ արդիւնքնին չէր կրնար ուրանալ, պորս ժամանակին գոված ալ էր, նախընթացներէ և հետևորդներէ պարագաներ կը կցէր արժէքը նուապելու և օտար միտքեր վերագրելու, չքաշուելով իսկ գրել նախարարապետին, թէ չեմ ծածկում ձեզանից և իմ արած սխալներս, սխալ համարելով անոնց մասին ցոյց տուած վստահութիւնը և գրած վկայութիւնը (ԵՐՑ. Ա.350): Ուստի առաջին անգամ Կրասովսքիի հեռացումը պահանջեց: Նախարարութիւնը համակերպեցաւ իրեն, զի Օսմանցոց դէմ պատերապմ

սկսած էր և Պասքևիչ ասիակողմին մէջ պիտի գործէր: Կրասովսքի 1828 փետրուար 21-ին պաշտօնէն արձակուեցաւ, և 28-ին Երևանէ մեկնեցաւ համակրուեան մեծ պատիւներով Հայերուն կողմէն, որոնք ինքնաբերաբար կը մասնակցէին ցոյցերուն, և Եփրեմ կաթողիկոսն ալ անձամբ եկած էր ողջերթ մաղթելու: Պետրբուրգի մէջ գնահատուեցաւ Կրասովսքի ականակուռ պատուանշանով, մեծագումար նուէրով, և Օսմանեանց դէմ պատերազմին պօրաբանակի պօրազուլուխ անուանուելով, ուր Սիլիստրէի և Շումլայ առումով և Պալքաններու պատերազմով նոր անուն և նոր վարձատրութիւններ շահեցաւ (ԵՐՅ.Ա.351-3527: Երևանի նահանգապետութեան մէջ Կրասովսքիի յաջորդ անուանուեցաւ իշխան Աղեքսանդր ճավճավաձէ պօրավարը, Վրացի անվանականներէն, որ գիտցաւ ժողովուրդի համակրանքը գրաւել:

2457. ՆԵՐՍԷՍ ՀԵՌԱՑՈՒԱԾ

Կրասովսքիէ ապատելէն ետքը, հոգ չէ որ նա դարձեալ և աւելի փառաւորուած ըլլար, կարգը եկաւ Ներսէսը հեռացնելու, և ձեռնարկը սկսաւ 1828 մարտ 5-ին, պայն Երևանի ժամանակաւոր վարչութենէն արձակելով: Դիւրին չէր Ներսէսը իր հոգևորական պաշտօնէն հանել առանց կաթողիկոսի իշխանութեան, և Եփրեմ ալ համոզել Ներսէսը իր մօտէն հերացնելու, և ոչ ալ Ներսէսը վարկաբեկելով տապալել, այնչափ վկայութիւններէ, գնահատումներէ և վարձատրութենէ ետքը: Աքքիրմանցի Գրիգոր Զաքարեան արքեպիսկոպոս, Բեսարաբիոյ առաջնորդ, վախճանած էր 1826-ին, և վիճակը, որ այն ատեն միայն հինգ եկեղեցի ունէր, երկու տարիէ ի վեր Քիշնևի հոգևոր ատենի ձեռքով կը կառավարուէր (ՃՌԱ.Բ.124), ուստի իբրև դժուարութիւններէ ելնելու միջոց խորհուեցաւ Ներսէսը այնտեղ փոխադրել: Զաքարեանի նախընթացները պատմուած են իրենց կարգին, և վերջին անգամ յիշեցինք թէ Եփրեմ թողած էր պայն Բեսարաբիոյ առաջնորդութեան մէջ (2335), ուր վերահաստատուած էր 1806-ին (ԵՐՅ. Ա. 359): Ներսէսը տեղափոխելու գաղափարն անշուշտ Պասքևիչէ յղացուած է, բայց ձեռուընիս գտնուած գրութեանց մէջ, առաջին անգամ այդ առաջարկը կը կարդանք Բէնկէնտորֆ նախարարին 1828 ապրիլ 13-ին Եփրեմի և Ներսէսի ուղղած նամակներուն մէջ: Իբրև պատճառ կը բերուի Օսմանեանց դէմ սկսած պատերազմին առթիւ Բեսարաբիայի ստացած կարևորութիւնը, և այնտեղ կարողագոյն անձ մը ունենալու պէտքը, որ կարենայ նպաստել ռուսական քաղաքականութեան և հովուէ Բեսարաբիան և մերձակայ երկիրները, այլ և իշխանութիւն վարէ ի վերայ բնակչացն յայլ նահանգս Օսմանեանց, որոց տիրեսցէ պէնն Ռուսաց (ԵՐՅ, Ա. 363): Իրաւ յիշուած էր որ եթէ Ներսէս չի կրնար, ուրիշ մը նշանակուի, բայց սաստիկ կը շեշտուէր Ներսէսը վրկուիլը: Նախարարին նամակները Պասքևիչի մայիս 21-ի յանձնարարականներով Էջմիածին հասան մայիս 25-ին, երբ Ներսէս ալ հոն էր, որ 26-ին անմիջապէս պատասխանեց թէ յունիս 4-ին Էջմիածնէ կը մեկնի և կու գայ իրեն հետ տեսնուելու: Բայց Պասքևիչ պատասխանեց թէ անոր Բեսարաբիա մեկնիլը թագաւոր կայսեր կամօքն է և պէտք է անմիջապէս կատարուի, և հրահանգ թողլով որ առատ ճանապարհածախս և բացէն 300 ոսկի վճարուի, ինքն յունիս 5-ին Տփղիսը թողուց բանակին գլուխը երթալու: Ներսէս Էջմիածինէ մեկնեցաւ Եփրեմի հասնելէն և պէտք եղած կարգադրութիւններէն ետքը: Տփղիսի մէջ իր բացակայութեան միջոցին համար պէտք եղածը հրահանգեց, փոխանորդութիւնը յանձնեց Սիմէոն Բզնունի եպիսկոպոսի, օգնականութեամբ Յարութիւն Ալամդարեանի, վոր վարդապետեան բարձրացուց, և դրամական գործերու համար խորհրդականներ նշանակեց Գէորգ Արծրունին և Յարութիւն Շիրմապանեանը (ԵՐՅ. Ա. 374): Ինքն կը կարծէր թէ Բեսարաբիա իրեն կը յանձնուէր Տփղիսի առաջնորդութիւնը պահելով, և թէ կրնայ Բեսարաբիա չգացած Պետրբուրգ հանդիպիլ և կայսեր ներկայանալ: Օգոստոսի կէսին Տփղիսի թողուց, և 21-ին ըՍտաւրոպոլի մէջ հրաման ստացաւ ուղիղ Քիշնև երթալ, ուր հասած կը

գտնուէր արդէն հոկտեմբեր 16-ին, և Պասքևիչի կը գրէր յանձնարարելով Կովկասի Հայերը և յատկապէս նոր գաղթականները, և կը ծանուցանէր թէ իրեն համար նշանակուած գումարները չէ ուզած գանձել, վասնզի, կըսէ, երբեք չեմ ստացած դրամական նպաստներ, ու ոչ մտքումս անցել է այդպիսի բան խնդրել (ԵՐՑ.386): Պասքևիչի 1828դեկտեմբեր 29-ին պատասխանովը փակուեցան երկուքին յարաբերութիւնները, և Ներսէս կղզիացած մնաց Էջմիածնի և Տփղիսի, և Հայկական նահանգի յարաբերութիւններէն, որոնց համար այնչափ աշխատանք կրած, և այնչափ ալ արդիւնաւոր և երախտաւոր եղած:

2458. ՀԵՌԱՑՄԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Առեղծուածի պէս բան մը մնացած է Ներսէսի Տփղիսէ վտարուիլը կառավարութեան կողմէ, բաղաբաժարի, բայց և բռնադատիչ ձևերով, այնպէս որ կաթողիկոսին ալ կարգ չէ եկած համարձակ կարծիք յայտնել կամ որոշում տալ կամ դարման հոգալ: Ներսէս Տփղիսէ կը մեկնէր իբրև թէ յատուկ յանձնարարական պաշտօնի մը կոչուած ըլլար, ոչ պաշտօնէ դադարած կը յայտարարուէր, և ոչ յաջորդը կանուանուէր: Ժամանակիս անցքերը պատմագրողներ (ՄՍՐ. և ԵՐՑ.) Պասքևիչի անձնական հակառակութենէն վատ պատճառ մը չեն տար, և կայսերական կառավարութիւնն ալ պարզապէս Պասքևիչի հաճոյակատար կը ներկայեն: Բայց մենք կը կարծենք որ եթէ պետական շահեր այս տեսակ ստիպողական և բուռն գործ մը չպահանջէին, Ներսէս որ ռուսական յաղթութեան և տիրապետութեան բազմերախտ գործիլն եղած էր, պէտք էր որ նոյն տիրապետութեան հաստատուելուն անձնանուէր օժանդակը նկատուէր, և Տփղիսի մէջ պահուէր իբր անհրաժեշտ անձնաւորութիւն մը: Արդէն նոր գրաւուած երկիրներուն կանոնաւորութեան համար կազմուած յանձնաժողովը որոշէր էր, Հայոց հոգևոր գործերի վարչութիւնը յանձնել Ներսէս արքեպիսկոպոսին, միայն ծայրագոյն ղեկավարութիւն մը, կամ անունական գերագահութեան մը վերածելով կաթողիկոսի գործը: Իբրև գաղտնիքը լուծելու բանալի կը պատմուի թէ Ներսէս թուղթ մը ունէր, զոր ձախ ծոցի գրպանում էր պահում, և որից չէր բաժանվում գիշեր և ցերեկ, և սովոր էր կրկնել թէ Պասքևիչը ահա այստեղ է կաշկանդուած (ԵՐՑ. Ա. 356), ոչ ոք տեսաւ կամ լսեց այս թուղթին պարունակութիւնը, և մահուանէ ետքն ալ յայտնի չէ թէ այն թուղթը ինչ եղաւ: Ներսէսի հաւատարիմ ականատեսն ալ կը վկայէ թէ այդ թուղթը երբեք իրմէ չէր հեռացներ, և բնաւ մէկու դպչիլ չէր ներեր, թեև դրամարկղին բանալին իսկ համարձակ կը յանձնէր: Այն թուղթին փաթթուած թաշկինակը մահուանէ ետքը գտնուած է, բայց առանց թղթի (04 Բալ. 423): Այսչափը կը բաւէ հետևեցնելու թէ Ներսէսի և Պասքևիչի միջև համաձայնութիւն մը անցած էր, ուսկից Պասքևիչ կը խուսափէր, և և Ներսէսը իր սահմանին մէջ չէր ուզեր, մինչև իսկ տեսակցութենէ ալ խոյս կու տար: Երկու ամերիկացի քարոզիչներ ալ, որ իրենց ուղևորութիւնը հրատարակած են, լսած են այն ատեն, թէ անբաւականութիւն ինչ ծագեալ ի մէջ նորա և Պասքևիչի, սկիզբն եղև անակնկալ հեռացման: Բերնէ բերան խօսուած զրոյցներն ալ կը պատմեն, թէ Պասքևիչ շատ առջև գացած է Հայոց նպաստաւոր խոստումներու մէջ, Ներսէսը գործի մղելու համար, որոյ գործադրութեան կամք չէ ունեցած, և պահանջող մը մօտը պահել չէ ուզած: Արդէն Հայաստանի կազմութեան ատեն, Ներսէսի և Պասքևիչի միջև համաձայնութեան հիմ մը տրուած ըլլալը իր տեղը յիշեցինք (2397): Բայց եթէ այդ այդպէս է, պէտք է գործին աւելի ընդարձակութիւն ենթադրել, քան Պասքևիչի անձնական շրջանակը, գուցէ կրկնում մը 1789-ին դաշնագիրին (2200), բարձրագոյն հաստատութեամբ և Պասքևիչի միջնորդութեամբ առաջարկուած, բայց պետական տեսակէտով իրականացման չսահմանուած: Այս մասին իբրև փաստ կրնայ նկատուիլ, որ Ներսէսի հայաբնակ գաւառներէն անակնկալ հեռացմամբ, և կամ ճշմարիտ ևս ասել, արքայական նորա ի Բեսարաբիա (ՄՍՐ. 127), և 15 տարիներ հայ գործունեայ

ասպարէզէն հեռու պահուելուն բուն հեղինակը Պասքևիչի հետ նախարարութիւնն ալ եղած է: Վերը յիշուած և Ներսէսի ծոցը պահուած թուղթին մասին, խմբագիր մը, որ վրոյցներ հաւաքելու հետամուտ և երևակայութեան ասպարէզ տալու հակամէտ է, գրած է թէ Գիրսասն էլ միևնոյն արաւ, ակնարկելով վաճառման նամակը Յունաց կայսեր դարձնող Կիրակոսին (839), և ոչ Ջանգալ երէցին, այսինքն թէ Ներսէս կաթողիկոսի մահից յետոյ մէկ քանի հարկաւոր թղթեր որ միշտ ծոցումն էր պահում, տարու Ռուսաց կառավարութեան տուեց (ԾԻԼ. Ա. 324): Կերևի թէ այդ տողերը գրողն ալ վախցած ի իր ամբաստանած անձին անունը ուղիղ գրել, և Սարգիս անունին տառերը տեղափոխելով Գիրսաս է կազմած, իսկ Սարգիսն ալ նոյն ինքն Ջալալեան եպիսկոպոսն է (ԾԻԼ. Ա. 343), որ խմբագիրին կողմէ շարունակ դատաւիտուած է: Մենք իբրև պարզ տեղեկութիւն յառաջ կը բերենք այդ վրոյցները, առանց անոնց պատմական ստուգութիւնը երաշխաւորելու:

2459. ԵՓՐԵՄ ՅԷԶՄԻԱԾԻՆ

Երբոր Ներսէս կը հեռացուէր, արդէն Էջմիածին դարձած էր Եփրեմ, պետութիւնը փոխուած էր, և այլևս տեղի չունէին հեռի մնալու պատճառները, մանաւանդ Ներսէսը Էջմիածինէ հեռու պահելու խորհուրդին պահանջն էր, որ Եփրեմ Էջմիածին գտնուէր, զի որչափ և ծեր և տկար, տակաւին իր աստիճանով և իր ձիրքերով կրնար աթողին տէր կանգնիլ և կրոնաւոր կացութիւն պահել և Սինոդին ալ ուղղութիւն տալ: Ուստի մայիս 2-ին Եփրեմ Պասքևիչէ հրաւիրուեցաւ աթոռ դառնալ, և պէտք եղած պատրաստութիւնները տեսնուելէն, և ամենայն ինչ օրինաւոր կերպարան ստանալէն ետքը 1828 յունիսի սկիզբը Տփղիսէ մեկնեցաւ և հանդարտ ուղևորութեամբ 15-ին Էջմիածին մտաւ մեծ հանդէսով և ուղևորութեամբ, որուն արձագանք եղաւ Մսեր Մսերեան Մագիստրոս քերթողական ուղերձով մը: Թիչ օր ետքը 22-ին, Եփրեմ յանձնուէր Աղեքսանդր Նևսքի ականակուռ շքանշանը: Ներսէս Էջմիածինէ չմեկնած կարևոր կարգադրութիւնները կատարեց, Սինոդը վերակազմել տուաւ, Մարտիրոս տեղապահ, Յովհաննէս Կարբեցի, Սահակ Դարբինեան, և Ստեփանոս Գեղամեան եպիսկոպոսներով, և Մանուէլ Շահինեան, և Յովսէփ Մատթէոսեան վարդապետներով, յատուկ հրահանգներ ալ տուաւ, և երիտասարդագոյն սինոդական Մատթէոսեանի յանձնարարեց իրեն շարունակ տեղեկութիւններ հաղորդել: Թէպէտ Ներսէս Պասքևիչի գրած էր յունիս 14-ին Էջմիածինէ մեկնիլ (2457), սակայն Պասքևիչի ուղևորիլը և Եփրեմի հասնիլը հարկադրած են այդ ժամադրութիւնը փոխել, որով գլուխ կանգնեցաւ Եփրեմը դիմաւորողներուն: Յուլիսի սկիզբները թողուց Էջմիածինը, Տփղիսի մէջ կարգադրութիւնները լրացուց, և Ռուսաստան մեկնեցաւ ինչպէս պատմեցինք (2457): Անցողաբար յիշենք Սերովբէ Արարատեանի պատրաստած Ներսէսի դէմ գրութիւնը, զոր Պասքևիչի ներկայեց, Ներսէսի բոլոր գործառութիւնները խեղաթիւրելով, և անուղիղ միտքեր վերագրելով, այնպիսի ծայրայեղութեամբ, որ նոյնիսկ Պասքևիչ հարկ սեպեց գրել, թէ ինքն չէ երաշխաւորում այդ տեղեկութեանց ճշդութեան մասին: Սերովբէ կը յուսար այս կերպով Պասքևիչի մտերիմը դառնալ, ինչ որ էր Ներսէսը, բայց քսութիւն չի կրնար արդիւնաւորութեան հաւասարիլ և հաստատապէս արդասաւորիլ: Այդ կարգէն պէտք է համարել Ալամդարեանի դէմ հակառակութիւնն ալ, որ թէպէտ Սիմէոն Բզնուիի օգնական, այլ գլխաւոր գործիչն էր վիճակին վարչութեան մէջ, բայց որով հետև Ներսէսի հաւատարիմներէն էր, Պասքևիչ անոր մասին գանգատագիր ուղղեց Եփրեմի հոկտեմբեր 23-ին, բայց Եփրեմ նոյեմբեր 16-ին պատասխանեց, թէ Ալամդարեան թեմին վարիչը չէ, այլ միայն Բզնուիի օգականն է, և թէ մասնաւոր վիճակներ ուրիշ եպիսկոպոսներու յանձնուած են. Շամախին Մինասի, Շամշատիլը Գրիգորի, Ղարաբաղը Սարգիսի և Փամբակը Առաքելի: Կաթողիկոսի և Սինոդի և միաբանութեան կողմէ կեղծ գրութիւններու խնդիր մըն ալ երևան եկաւ նոյեմբերի մէջ, որոնց գրող եղած էին Ջաքարիա Գուլասպեան, Աբրահամ Վաղարշապատցի,

Ղուկաս Մաստարացի, և Յովհաննէս Շախաթունեան վարդապետները, բայց Արարատեանի թելադրութեամբ գրած ըլլալնին խոստովանեցան (ԵՐՅ.465): Այս և ասոր նման դէպքեր Էջմիածնի մէջ կը յաճախէին, զի Ներսէսի հելանալէն ետքը գիրք բռնելու ձգտումները կը պօրանային, քաղաքական իշխանութեանց հաճոյանալու ճիգերը կընդարձակուէին, և դժբախտաբար իրարու դէմ ալ կը մրցէին:

2460. ԵՓՐԵՄ ԵՒ ՆԵՐՍԷՍ

Եփրեմ առջի օրէն նախաձեռնութենէ վուրկ և ժլատութենէ անմասն վիճակ մը առած (2332), տարիներու ընթացքով աւելի ևս տկարացած, դժուարութիւններէ ընկճուած, և երկարատև բացակայութեամբ դիրքը խախտած էր, միանգամայն շարունակ անկողնի պարտաւորուած ըլլալով, կը պար որ պօրաւոր աջակից մը պէտք ունէր, և Ներսէսէն պատ մէկու վրայ վստահութիւն չունէր: Ինչ որ կաթողիկոսութեան առջի օրերուն մէջ անցած էր և իր միտքն ալ շփոթած (2335-2341) լիապէս բուժուած էին իր պանդխտութեան միջոցին Ներսէսին իրեն և աթոռին համար թափած ջանքերուն ականատես և փորձառու ըլլալովը: Ուստի միտքը դրաւ իր խիղճին հանդարտութեան և աթոռոյ ապահովութեան համար Ներսէսը մօտ բերել և ամէն բան անոր յանձնել, իշխանութիւնն ու աստիճանն ալ միասին, զայն օծելով և ինքն քաշուելով: Այս իմաստով պաշտօնագիր մը ուղղեց Նիկողայոս կայսեր 1828 հոկտեմբեր 18-ին, երբ հապիւ թէ Ներսէս Բիշնև հասած էր (2457): Նախապէս ռուսական կայսերութեան շնորհիւ երջանկութեան օրերու հասած ըլլալը կը վկայէ, և 1393 տարիներէ հետէ 54 կաթողիկոսներու կրած խղճութիւններէ ետքը իրեն փրկանաւոր փոփոխութիւնը տեսած ըլլալը կը յիշէ, և իր տկարութիւնը յառաջ բերելով կը խնդրէ որ Ներսէս իրեն մօտ դարձուի, որպէսզի զայն իրեն յաջորդ օծէ, և ինքն խաղաղ աչք փակէ: Երկու օր ետքը նոյեմբեր 20-ին յատուկ կոնդակով Ներսէսի ալ կը հաղորդէ կայսեր գրած ըլլալ և գրածին պարունակութիւնը (ՄՍՐ.132-136): Այդ գրութեանց մէջ Եփրեմ կը յայտնէ թէ ութսունամեայ եղած է, աչքը չաւ տկարացած, ականջը ծանրացած, ծուկերը կթոտած, բոլոր պայարանները խանգարած, միտքն ալ ընդարմած, և պաշտօնին և ոչ մի գործը կատարելու կարող: Եփրեմի այդ առաջարկէն ետքն էր որ Արարատեան սուտ նամակներու դաւադրութիւնը սարքած էր (2461), որպէսզի Ներսէսի յաջողութիւնը արգիլէ: Որչափ ալ չորս վարդապետներ Արարատեանի գործիք եղած ըլլալնին խոստովանեցան, սակայն հնար չէ չտեսնալ որ Արարատեանէ աւելի Կարբեցին այդ գործին դեր վարելու շահն ունէր, և Արարատեան ալ Կարբեցիին անձնուէրը դարձած էր: Եփրեմ կաթողիկոս, կայսեր մատուցած հրամանագիրը պօրացնելու, կամ թէ դաւադրական արգելքները հեռացնելու համար կայսեր գրածին միտքով Պասքևիչի ալ կը գրէր դեկտեմբեր 20-ին և խնդրէր գթալով առ բազմամեայ ծերունիս՝ զինամողական միջնորդութիւն ձեր միաւորել աղերսագրութեան իմոյ (ԵՐՅ. Ա. 482, ՄՍՐ. 211-214):

2461. ՊԱՍՔԵՒԻՉ ԵՒ ՆԵՐՍԷՍ

Բայց Պասքևիչ կանխած էր, և նոյեմբեր 16-ին Արարատեանի պատրաստած պարսաւագիրը Բլուտով նախարարին հաղորդելով իր կողմէն ալ դիտողութիւններ աւելցուցած էր, և Էջմիածնի մասին կատարուելիք կարգադրութեանց հետևեալ կէտերը առաջարկած: 1. Ներսէսի Վրաստան դառնալը ամէն կերպով արգիլել: 2. Եփրեմը համոզել որ Սինոդի օգնութեամբ գոնէ վերիվերոյ դեկավարէ: 3. Սինոդի իրաւունքները հաստատել և որոշել: 4. Մատթէոսեանը Էջմիածնէ և Ալամդարեանը Տփղիսէ հեռացնել: 5. Ներսէսի հաշիւները քննութեան ենթարկել: 6. Հայ եկեղեցականութիւնը կրթել և առանց ժողովրդին վրայ ծանրանալու ապրելու ձև մը հաստատել: 7. Հայ եկեղեցւոյ վարչութեան համար ընդհանուր և գրաւոր սահմանադրութիւն կազմել: Իսկ ներկայ

կացութիւնը բացատրելու համար կը գրէ, թէ կաթողիկոսը բոլոր հայոց պետն է, և ապա զայն մի կերպ պետ կը ճանչնայ աշխարհական գործերի մէջ ալ: Ուստի եթէ ընդունակ և ձեռներէց անձ մը կաթողիկոս դառնայ, կարող է Տաճկաստանի և Պարսկաստանի Հայերու ապրեցութեամբ պօրանալ, և դիմադրել ուսական քաղաքական իշխանութեան բարի կամեցողութեանց: Ներսէսի որևէ պաշտօնով էջմիածին դառնալուն ալ կը նդդիմանայ, զի Եփրեմ թոյլ է բնութեամբ և պառամեալ է տարիքով, և անկարող պարապել ծայրագոյն վարչութեամբ: Միւս կողմէ միաբանութեան վրայ խօսելով կըսէ Ներսէս արքեպիսկոպոսի կուսակիցների ձեռքով միաբանաց մէջ խառնակութիւնները աճում են: Վերջապէս ամէն տեսակ բութիւն կը գործածէ որ չըլլայ թէ Ներսէս Կովկաս դառնայ: Եփրեմ իրեն ուղղած գիրը առնելէն ետքը Պասքեիչ նորէն կը դառնայ նոյն նիւթին վրայ, և 1829 յունուար 5-ին նորէն և աւելի խստութեամբ կը պարզէ Բլուտով նախարարին իր տեսութիւնները, մինչև իսկ համարձակիլ գրել, թէ Եփրեմ վստահացաւ անհանգիստ անել թագաւոր կայսեր իւր անմիտ խնդիրքով, պատրիարքական աստիճանը ժառանգաբար Ներսէս արքեպիսկոպոսին յանձնելու մասին (ԵՐՑ.Ա.481-486): Պասքեիչի թելադրութիւնները իրենց ընթացքը ունեցան: Արդէն դիտել տւեր էինք թէ Ներսէսի հեռացուելուն մէջ նախարարութիւն ալ պարզ հետևող եղած չէր (2458): Դեկտեմբեր 25-էն նախարարական խորհուրդը Նէսսէլքօտէի նախագահութեամբ և Բլուտովի առաջարկութեամբ իր որոշումը տուած և Կայսեր ներկայացուցած էր: Այդ որոշումը կը պարունակէր Նարսէսը քաղաքավարի պատճառաբանութեամբ թողնել Բեսարաբիայում և արթուն հսկողութիւն ունենալ նորա նամակագրութեանց մասին, և գաղտնի հսկողութիւն ունենալ Մատթէոսեանի և Ալամդարեանի վրայ: Միևնոյն դեկտեմբեր 25-ի թուականով այդ կէտերը Պասքեիչի հաղորդուեցան, աւելցնելով թէ հայ եկեղեցւոյ համար ուսումնասիրութիւնք սկսած են: Այդ անցուդարձերը հասան Ներսէսի ականջը և իմացաւ Պասքեիչի իր մասին ամբաստանութիւններ գրած ըլլալը Արարատեանի գործակցութեամբ յունուար 7-ին կոմս Տիբիչի ընդարձակ գանգատագիր մը գրեց, բողոքելով իր դէմ խօսուած վրպարտութեանց համար, ականարկելով Արարատեանի որպիսի ոք ըլլալուն, յիշելով անցեալ եղելութիւնները, որոնց Տիբիչ ալ տեղեակ էր, և խնդրելով ամբաստանագիրին իրեն հաղորդուիլը, որ տեղնիտեղօք պատասխանէ: Նոյն յունուար 21-ին Բլուտով նախարարին ալ կրկնեց (ԵՐՑ.Ա.491-497), բայց երբոր իր գիրերը հասան, որոշումները արուած էին, Եփրեմի առաջարկը մերժուած, և Ներսէսի Բեսարաբիա մնալը հրամայուած: Պասքեիչի մասին նախարարութիւնն ալ անծանօթ չէր նորա կրթոտ բնութեանը, բայց կարևոր անձ էր իր պինուորական տաղանդովը և Տաճկաստանի դէմ պատերազմին ընդհանուր հրամանատար էր նշանակուած: Ներսէսի ծառայութիւններն ու արժանիքներն ալ անծանօթ չէին, բայց նա ալ նոյնպէս կրթոտ և անհանգիստ բնութեան տէր կը գիտցուէր, և կաթողիկոսանալու ձգտում կը վերագրուէր իրեն, ուստի երկուքը իրարմէ հեռու պահելը հարկ կը դատուէր: Այդ հիմամբ գրուեցաւ կայսեր պատասխանը առ Եփրեմ 1829 մարտ 12 թուականով, որով կը յանձնարարուէր իր պաշտօնը շարունակել, և կը յայտարարուէր Ներսէսի Բեսարաբիա մնալու հարկը յանձնարարութիւնները լրացնելու համար (ԵՐՑ.Ա.499, ՄՍՐ.211): Այսպէս փակուեցաւ Եփրեմի առաջարկին միջադէպը:

2462. ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ

Կայսեր պատասխանի 1829 մարտ 12 թուականէն մինչև 1830 հոկտեմբեր 8 Եփրեմի բացարձակ հրաժարագիրին թուականը, տարիուկէս անցաւ, և այդ միջոցին Եփրեմ շարունակեց վարել կաթողիկոսութիւնը, թէպէտ ոչ կատարեալ կերպով, զի թէպէտ միտքը ամբողջ դատողութեամբ կը գործէր (ՇԱ.Ղ. Ա. 236), բայր տեսութիւնը և ուրիշ արտաքին կարողութիւնները տկարացած էին, և

գործունեութենէ քաշուած անկողնոյ կեանք մը կանցունէր: Ներսէս հեռացած և կառավարական կարգադրութեամբ Էջմիածինի գործերէ հեռու պահուած, ասպարէզը մնացած էր Կարբեցիին, որ Սինոդի անդամ էր, և Պասքևիչի կոյր գործիք դարձած և անոր վստահութիւնը գրաւած էր Ներսէս եպիսկոպոսին ատեցող և թշնամի ըլլալու արժանիքով (ԶԱՄ. Բ. 159): Իր իսկ բարեկամ Արարատեանը վայն Պասքևիչի յանձնարարած ատենը, իբրև նպաստաւոր հանգամանքները ցուցուցած էր, թէ նա փառասէր է, և ի վաղուց ի վեր հետամուտ կաթողիկոսական գահին, թէ շահասէր է և երկրպագու ոսկուն և արծաթին, թէ պատրաստ է հաճոյանալ մեծամեծներին, և երբեք չի յանդգնիր նոցա ընդդիմութիւն ցոյց տալ (ԵՐՑ. Ա. 526): Եփրեմ չկրկնեց իր խնդրանքը կայսեր առջև, զի ոչ միայն յոյսի դուռները փակուէր էին, այլ և 1829 գարունէն սաստկացած էր ռուսերուք պատերազմը, և յարմար չէր, այդպիսի խնդիրներով զբաղիլ մինչև հաշտութեան օրը (2432): Այս պայմաններով Կարբեցիին Պասքևիչի հովանաւորութեան արժանացած, կրցաւ հետզհետէ մայրաթոռէն հեռացնել տալ Ներսէսի համակիրները և իր ազդեցութիւնը ընդարձակել: 2463. ՆԵՐՍԷՍԻ ԲՈՂՈՐԸ

Երբոր այս դարձուածները Էջմիածինի և Տփղիսի շուրջը կը կատարուէին, անգին բաւական կնճռոտ բանակդիւ մը սկսած էր Ներսէսի և Պասքևիչի և նախարարներու միջև: Բլուտով՝ օտար դաւանութեանց ռուսական նախարար, մարտ 12-ին, կայսեր նամակին օրը Ներսէսի կը պատասխանէր և վայն ամէն կերպով կը բարձրացնէր, վստահեցնելով թէ արդարութեամբ կը շարունակուի, անոր հանդէպ այն բարեհաճութիւնը որին արժանացած էր քանիցս անգամ, և կը յանձնարարէր նորանոր արդիւնքներ ցուցնել արևմտեան պատերազմին առթիւ, և աւելորդ կը սեպէր որևէ քննութիւն կամ բացատրութիւն: Իսկ այս նամակէն երեք օր ետքը, մարտ 15-ին, նոյն Բլուտով Պասքևիչի կը հաղորդէ Ներսէսի գանգատագիրը և տարբեր զգացումներ կը յայտնէ անոր մասին, թէ կաթողիկոսացուն ընդհանուր Հայոց սիրելի պէտք է ըլլայ, որպիսի չէ Ներսէսը, թէ կաթողիկոսին հնար չէ յաջորդ նշանակելու իրաւունք տալ, թէ պէտք է Մատթէոսեանի և Ալամդարեանի և Ներսէսի վրայ հսկել, թէ ընդհանուր կանոնադրութիւն ուսումնասիրելու է, և այլ այսպիսի թելադրութիւններ: Պասքևիչ, որ Ներսէսի բողոքի մասին զինուորական նախարար կոմս Չէրնիշէվէ ալ տեղեկութիւն առած էր, ապրիլ 5-ին նոյն ինքն Չէրնիշէվի կը գրէ ինքզինքը արդարացնելով, և Ներսէսի մասին նոր ամբաստանութիւններ աւելցնելով, և կը հաւաստէ թէ ինքն Հայոց հոգևորականութեան հետ յարգանք կը վարուի, զի Չէրնիշէվ յանուն կայսեր ազդարարած էր քաղաքավարի վարուիլ: Պասքևիչ աւելի ևս գրգռուած Ներսէսի դէմ նոր ամբաստանութիւններ քաղելու պաշտօն կուտայ Արարատեանի, որ Պայապիտէ կը դառնար, ուսկից հալածուած էր, իր չարախօսութեամբ շատերուն աքսորուելուն պատճառ ըլլալուն համար: Ապրիլ 29-ին գիշեր մը միայն Էջմիածին մնալով, առասպելական զրոյցներ կը հաւաքէ, և Պասքևիչ անոնցմով ճոխացած նոր գիր կը գրէ Բլուտովին մայիս 3-ին, ինչ ինչ խորհրդածութիւններ իրմէ աւելցնելով, և յատկապէս Ներսէսի ձգտումներ շեշտելով (ԵՐՑ. Ա. 512-515): Մայիս 9-ին Եփրեմի ալ կը գրէ Ներսէսի արարքը խծրծելով (ԵՐՑ. Ա. 516): Կայսրը տեսնելով որ գործը տգեղ կերպարաններ կառնէ, Չէրնիշէի ձեռքով Պասքևիչի կազդարարէ որ այս գործը վերջացած համարուի (ԵՐՑ. Ա. 515): Գալով եղելութեանց իսկութեան, ստոյգ է որ Ներսէս նոյնիսկ Բիչնևի առանձնութեանը մէջ չէր կրնար իր գործունեութիւնը դադարեցնել, և որովհետև հայրապետական հրամանով Տփղիսի առաջնորդութենէ արձակուած չէր, և տեղը ուրիշ մը նշանակուած չէր, կը շարունակէր Տփղիսով ալ զբաղիլ, և իբր Տփղիսի առաջնորդ Էջմիածինի գործերով ալ հետաքրքրուիլ: Մինչև իսկ երբ 1829-ի սկիզբները կը վախճանէր Աստրախանի առաջնորդ Գառնակերեան Յովհաննէս Արքեպիսկոպոսը, իբրև Ռուսաստանի առաջնորդ այն վիճակն ալ իրեն յանձնելու համար կը դիմէր

Եփրեմի (ԵՐՑ. Ա. 534), և հաւանութիւն ալ կը ստանար (ԵՐՑ. Ա. 529): Բայց աւելի հետաքրքրական է որ Սինդոն ալ չէր վարաներ իբրև ծայրագոյն կառավարչի հոգևորական գործոց, մանրամասն և ընդարձակ տեղեկագիրներ յղել Ներսէսի բոլոր եղելութեանց վրայ, որոնց նմոյշ մը նկատենք 1829 յունիս 30-ին գրուածը (ԵՐՑ. Ա. 517-525), որուն ներքև Կարբեցին ստորագրութիւնն ալ կը կարդացուի: Զի որչափ և թշնամի և հակառակորդ, չէր կարող դէմ յանդիման պատերազմել Աշտարակեցոյ հետ, բայց ձեռքի տակէն քսու գրութիւններ կը հասցնէր Պասքեիչի (ԵՐՑ, Ա, 527-531):

2464. ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Պասքեիչ տեսնելով որ կարևոր աթոռներու առաջնորդ մնացած ըլլալը, առիթ կընծայէր Ներսէսի ասպարէզը ընդարձակելու, հարկ կը դատէ Տփղիսի և Աստրախանի առաջնորդութիւնները իր հլուներուն յանձնել տալ, թէ իրեն գործիքներ ունենալու և թէ Ներսէսը ամփոփելու համար: Ռուսները պատերազմներէն յաղթական դառնալէ ետքը աւելի ևս համարձակութիւն ստացած, Եփրեմի կը գրէ Աստրախանի համար մէկ մը նշանակել, և Կաթողիկոսը հետզհետէ կառաջարկէ Եփրեմ և Յովհաննէս Կարբեցի և Բարսեղ Կեսարացի եպիսկոպոսները: Պասքեիչի ծրագիրին չեն համաձայնիր այդ առաջարկները, ուստի նախարարին դիտողութիւն կը գրէ, որ կը պատասխանէ Պասքեիչի կաթողիկոսի համաձայնութեամբ ուրիշ մը նշանակել: Այս պատճառով Կարբեցին Տփղիս կը հրաւիրուի, ուր կը գտնուի և Արարատեան, և երեքին խորհրդակցութեամբ կորոշուի Կարբեցին Տփղիս նստեցնել, և Արարատեանն ալ Աստրախան եպիսկոպոսական աստիճանով: Այդ խորհուրդին նպատակը յայտնապէս կը բացատրէ Պասքեիչ, թէ սորանով Ներսէս արքեպիսկոպոսի ազդեցութիւնը կը նուազի, գուցէ և բոլորովին ոչնչանայ: Կարբեցին Էջմիածին կը դառնայ, առաջարկը կը հաղորդէ, և Եփրեմ ստիպեալ կը համակերպի, Կարբեցին Տփղիսի առաջնորդութեան կանցնի, և Արարատեան Աստրախանի վիճակաւոր կը նշանակուի, և Պասքեիչի և անոր հրամաններուն գործադիր Վասիլ Լաւարեանի բռնութեամբ, 1830 մարտ 22-ին եպիսկոպոս կը ձեռնադրուի (ԵՐՑ. Ա. 578-580): Իսկ Ներսէսի կը մնայ Բեսարաբիայի անձուկ սահմանին մէջ ամփոփուիլ, երբ հաշտութիւնը արդէն կնքուած էր ռուսները սահմանագլուխը գծուած, և գրաւուելիք գաւառներու կարգադրութեան պատճառանքն ալ տեղի չունէր: Բայց կերևի որ նախարարութիւնն ալ կը պահածուի Ներսէսը այսչափ ստորացնելուն համար, և իբրև դարման կը խորհուի գոնէ վիճակը ընդարձակել: Առաջին ժամանակներ Ռուսաստան ամբողջ վիճակ մըն էր և աթոռանիստը Աստրախան քաղաքն էր, որ պահ մը Աղուանից կաթողիկոսներուն կը հնազանդէր (2093), բայց Սիմէոն կաթողիկոս Էջմիածինի աթոռին իշխանութիւնը վերահաստատեց (2094), և Արղութեան և ինքն Եփրեմ այդ վիճակը հովուեցին: Զաքարեանն ալ այդ պաշտօնը վարեց ատեն մը, բայց վերջապէս 1806-ին միայն Բեսարաբիոյ մէջ ամփոփեցաւ, և այսպէս բովանդակ Ռուսաստանի ընդարձակ վիճակէն փոքր մաս մը պատուած եղաւ, զի Աստրախանի աթոռը միշտ ընդարձակ վիճակ ունէր: Ներսէս իբրև Զաքարեանի յաջորդող՝ Բեսարաբիայի փոքր վիճակով կը մնար, և այս գրութիւնն է, որ նախարարութիւնը յորդորեց անոր վիճակը ընդարձակեալ, և բաւական մասեր Աստրախանէ բաժնելով Բեսարաբիայի կցել: Ըստ այսմ Գրիգորուպոլիս, Օտեսա, Խրիմ, Նոր Նախիջևան, Մոսկուա, Պետրբուրգ իրենց գիւղերով և բոլոր հիւսիսային և արևմտեան նահանգները Նախիջևանի և Բեսարաբիայի նոր վիճակին կցուեցան, և կայսրն ալ յատուկ հրովարտակով այդ վիճակը յանձնեց Ներսէսի, արձակելով զնա յառաջին պաշտօնէն: Ասով Ներսէս մինչև 1830 ապրիլ 23 Տփղիսի առաջնորդ նկատուած կըլլայ, հակառակ Պասքեիչի խրթրծանքներուն, որ նոր

կարգադրութեան դէմ ալ անբաւականութիւն յայտնեց գրելով, թէ կցորդելով նորա թեմին Մոսկվան և Պետրբուրգը, արդեօք նորան առաւել մեծ ազդեցութեան տէր չե՞ն շինած 571):

2465. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Վերև յառաջ բերուած պաշտօնագիրներու քաղուածներուն մէջ ստէպ յիշուեցաւ Էջմիածնի կամ Հայոց եկեղեցոյ հոգևոր կառավարութեան համար որոշ և հիմնական կանոնագիր մը հաստատել, որուն առաջին յիշատակութիւնը կը գտնենք Պասքևիչի 1828 նոյեմբեր 16-ին գրութեան մէջ (ԵՐՅ.Ա.478): Նախարարութիւնն ալ կատարելապէս համաձայն գտնուեցաւ գաղափարին, և բնական և օրինական ալ էր որ ռուսական կայսրութիւնը գիտնար իր տիրապետութեան ներքև նոր մտնող կրօնական գերագոյն իշխանութեան մը ընթացքը: Թէ իր ազդեցութիւնը պաշտպանելու և թէ անոր իրաւունքները պահպանելու կրկին նպատակով: Նախարարութիւնը հետամուտ ալ եղաւ թէ իր դիւաններէն և թէ ուրիշ աղբիւրներէն տեղեկութիւններ քաղել, իսկ Պասքևիչ աւելի առաջ ալ քալեց, և իր մտադրութեանց համաձայն ծրագիր մը պատրաստելու համար 1829 դեկտեմբերի 26-ին մի առաձինն գաղտնի յանձնաժողով անուանեց Հայոց եկեղեցոյ գործերի վարչութեան մէջ բարեկարգութիւն մտցնելու նախագիծը կազմելու համար: Ինչ որ այդ մասին աչքի պարնող կէտն է, ոչ թէ գործին էութիւնն է, այլ դիտումին բանաձևը, և առաւել ևս անդամներու անունները, որոնք չորս եղան, Բարսեղ իշխան Բեհրութեան, Սերովբէ վարդապետ Արարատեան, Յակոբ ուսուցիչ Ջրպետեան, և Լեհացի աստիճանաւոր Օվկին: Քանի որ Հայոց եկեղեցոյ սեփական կանոնները պիտի ուսումնասիրուէին, ներքին և խորին տեղեկութեանց պէտք կար, և բուն հայկական կանոններ և աւանդութիւններ պիտի քննուէին, իսկ յառաջ կոչուողներէն, Արարատեան կաթողիկոսենէ եկող մըն էր, Ջրպետեան և Օվկին կաթողիկէ էին, և Բեհրութեան զինուորական մըն էր եկեղեցական հմտութիւններէ անմասն:

2466. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ ԱՆԴԱՄՔ

Բարսեղ կամ սովորական կոչմամբ Վասիլ Բեհրութեան Տփղիսեցի, որդի էր Յովսէփի, որ Ներսէսի դէմ պայքարի մէջ Դարչիի աջակիցն էր, նախնական կրթութիւնը վրացերէն էր առած, և Հայերէն գրել և կարդալ չէր սորված, ռուսական ուսումնարանի և զինուորական դպրոցի մէջ ալ հայերէնէ անմասն մնաց: Մինչև գնդապետութիւն բարձրացաւ և վանապան ծառայութիւններ կատարեց, այլ Ներսէսի համակիր եղաւ, ոչ միայն հայերենի աւանդութեամբ, այլ և անոր համար որ Ներսէսի գործակատարները զինքը շատ նեղեցին, Ներսէսէ փոխ առած վեց հարիւր ռուբլի գումարը դարձնել, կամ գրաւականով ապահովել: Ներսէսի հակառակորդ ըլլալն էր որ յանձնաժողովի անդամակցութեան արժանի ըրաւ վայն, ապա թէ ոչ, ոչ Հայոց գիրը գիտէր և ոչ պատմութիւնը, ոչ եկեղեցական օրէնքները և ոչ ծէսերը: Սերովբէ Արարատեան Կարնեցի, տղայութենէ Հռոմ դրկուած էր, ուր Լատին եկեղեցականութեան ուսումը միայն առեր էր, և ետքէն Մէրտինի Հայ կաթողիկէ կուսակրօն քահանայ էր ձեռնադրուած, բայց Պաղտատի և Մէրտինի հայ կաթողիկէներուն մէջ երկպառակութեան պատճառ ըլլալուն երեսէ թողուեր, և անգղիական հիւպատոսին ապաւիներ: Այդ պարագայից վրայ Եփրեմի կը դիմէ հայ եկեղեցոյն մէջ ընդունուելու համար: Եփրեմ կը հաւանի և կը յանձնարարէ որ Պաղտատ վախճանած Հնդկաց նուիրակ Վրթանէս վարդապետի գոյքերը և թողօն միասին բերէ: Եւ Սերովբէ մինչև Պայպիտ կու գայ իբրև անգղիական հիւպատոսարանի պաշտօնեայ, և անկէ Էջմիածին հասնելով 1811-ին կընդունի վեղար ու փիլոն և վարդապետական գաւապան (ԵՐՅ.Ա.552): Այդ միջոցներուն Ներսէսեան և Լապարեան դպրոցներու խօսքերը կը դառնային, և Սերովբէ իբր լեզուագէտ նկատի կառնուի, բայց Ներսէսի հետ չհամաձայնելով Լապարեանց կը յարի: Ասպարէզը ընդարձակելու

ձգտումով Ղապարոս Լապարեանի հետ Պարսկաստան կերթայ պատերազմի ժամանակ, ռուսները պատերազմին կը ծառայէ և պանպան անցուդարձերէն ետքը իրեն փայլուն ապագայ մը ճարելու համար Կարբեցիի և Պասքեիչի կողմը կը յարի, և Ներսէսի դէմ հակառակութեանց գործիք կը դառնայ, ինչպէս արդէն պանպան պարագաներու մէջ յիշեցինք: Լատին եկեղեցական կրթութիւն ստացած ըլլալով և Մխիթարեանց աշակերտն չըլլալով, թէպէտ կը սիրէր այսպէս հռչակուիլ (ԵՐՅ.Ա.550), շատ հմուտ չէր բուն հայկական ուսմանց և կանոնաց, կամ թէ միայն կաթողիկական հակահայկական սկզբունքներով էր տոգորուած: Յակոբ Շահան Զրպետեան, հայ կաթողիկ աշխարհական, Փարիզի մէջ հայ լեզուի ուսուցիչ էր, երբ 1814-ին փափաքեցաւ Լապարեան ճեմարան փոխադրուիլ, այլ չյաջողելով, գուցէ Արարատեանի և Սալլանթեանի ներկայութեան պատճառով, 1824-ին Ներսէսեան վարժարանը մտաւ, իր գաղղիացի տիկնոջ հետ վարժարանի վերնայարկը բնակութիւն ստացաւ, և կանոնաւոր աշխատեցաւ քանի Ներսէս ներկայ էր: Անոր Բեսարաբիա մեկնելէն ետքը վճարմունքներու խնդիրներ ունեցաւ Ներսէսի գործակատարներու հետ, անոնք պարտաւորցնելու համար Պասքեիչի դիմեց, և Արարատեանի միջնորդութեամբ հովանաւորութեան արժանացաւ, և Ներսէսի հետ հակառակութիւնը իրեն արժանիք սեպուեցաւ յանձնաժողովին անդիմակցելու: Իսկ Լեհացի կաթողիկ Օվկինը, ոչ ազդով և ոչ կրօնքով Հայերու մօտաւորութիւն ունէր, և ոչ Հայոց մասին բան մը գիտէր. ուստի միւսներուն համակերպելու պարտաւոր էր, իրեն յատուկ պաշտօն ունենալով ռուսերէն խմբագրութեան քարտուղարութիւնը: Այս յանձնաժողովն էր որ Հայոց եկեղեցոյ կազմական և վարչական ծրագիրը պիտի պատրաստէր, զոր և 1830 մարտին սկզբները Պասքեիչի ներկայացուց, և նա ալ մարտ 20-ին Բլուտովի ուղարկեց, պատրաստողներուն համար յատուկ վարձքեր ալ առաջարկելով: Այս ծրագիրն է որ 1836-ի Պօլօժէնիէին հիմը կազմեց, ուստի պատմութեան կարգին կը թողունք պատշաճ տեղեկութիւնները և կանոնագրութեան վերլուծումը տալ:

2467. ՂՐԻՄԵՑԻԻ ԾՐԱԳԻՐԸ

Ժամանակակից իրողութիւններու կապը պահելու համար այժմէն պէտք կը վզանք յաւելուլ, թէ Սինոդի մէջ ալ կանոնադրութեան խնդիրը իր արձագանքը ունեցաւ, բայց ոչ թէ յանձնաժողովի գործէն տեղեկութիւն ունենալով, այլ միայն ընդհանուր վրոյցներու հետևելով: Սինոդը կաթողիկոսի հաստատութեամբ, 1830 յունուար 1-ին տասն յօդուածներով ներքին կանոնագիր մը կազմած էր գրագիրներու մասին (ԴԻԻ.Բ.247-250), որպէսպի առաւել կանոնաւոր յառաջէն դիւական գործողութիւնները: Դիւանի պետն էր Յովհաննէս վարդապետ Ղրիմեցին, որ անդամի և ատենադպիրի և թարգմանի պաշտօնները միանգամայն կը վարէր, և այս առթիւ իրեն օգնական տրուեցան Յովհաննէս վարդապետ Շահխաթունեան Շահրիարցի, և Դիոնեսիոս վարդապետի յանձնուեցաւ կաթողիկոսի մասնաւոր քարտուղարութիւնը: Ղրիմեցին ալ կանոնական կէտերու ամփոփումը կազմած է, ի հարկէ ոչ առանց Սինոդի գիտակցութեան, և 1830 մարտ 20-ին, Պասքեիչին իրեն պատրաստել տուածը դրկելու օրը, անգիտակից վուգադիպութեամբ, Ղրիմեցին ալ Դեմետր Բլուտովին յղած է իր կազմած ծրագիրը, որուն Առաջնական ձևակերպութիւն կարգադրութեան անունը տուած է: Յառաջաբանին մէջ կը յայտնէ մայրաթոռոյ վարչութեան կանոնաւորելուն պէտքը, և գիտելով որ բոլոր եկեղեցիներու կարգերը իրարու նման են, իր առաջարկը համեմատած է ռուսական եկեղեցական գործերի համար տպուած կանոնադրութեանց հետ: Ծրագիրը երկու մասի բաժնուած է, մէկը Հայոց եկեղեցականների իրաւունքների և պաշտօնների որոշումը, իսկ միւսը տաճկաբնակ Հայերի Էջմիածնի աթոռի հետ միաբանելու միջոցները: Երկու մասերուն համար կանոնադրութիւններ պատրաստուած են հետևեալ սկզբունքներու վրայ հիմնուելով. 1. Կաթողիկոսին ապահովել բաւական իշխանութիւն

նորա աստիճանին վայելուչ: 2. Ունենալ բարձրագույն խորհրդարան, գոր յարմար չի տեսներ սինոդ կոչել: 3. Էջմիածնի վիճակը վերապահել կաթողիկոսին: 4. Յայսկոյս Կովկասի գաւառները երեք վիճակի վերածել: 5. Էջմիածնի մէջ ունենալ Օբէր-Պրոկուրոր, և վիճակներու մէջ Պրոկուրոր: 6. Վիճակներու մէջ հաստատել դպրոցներ և հոգեւուներ: 7. Հայոց եկեղեցիները և վանքերը իրենց վաղեմի կարգերով կառավարել: Իսկ երկրորդ մասի համար կը դիտէ թէ Տաճկահայք Էջմիածինէ խլուած են անոր վատթար մատակարարութեան և անդամներու անմիաբանութեան և ոչ մաքուր բարոյականութեան համար և ծրագիրը կը հիմնէ հետևեալ սկզբունքներու վրայ. 1. Հայոց եկեղեցիներուն ապահովել ռուս եկեղեցիներու համահաւասար իրաւունք և արտօնութիւն. 2. Օտարահպատակ Հայերուն ձրի ձեռնդրութիւն տալ և միւռոն բաշխել. 3. Ստէպ հովուական կամ ընդհանրական թուղթեր յուղարկել անոնց. 4. Անոնցմէ արժանաւոր եկեղեցականները լանջախաչով և փիլոնով վարձատրել: Այս հիմքերով կարգաւորած առաջնական ձևակերպութիւնը կը մատուցուի օտար դաւանութեանց նախարար Բլուտովի, այլ պատճէնը յառաջ բերուած չենք գտներ: Ղրիմեցին կը յայտարարէ թէ Արարատեան և Ջրպետեան իրեն աշխատակցած են, և այս մտածել կու տայ թէ պետական յանձնաժողովը ջանացած է անուղղակի յարաբերութիւններ ունենալ մայրաթոռոյ պաշտօնեաներուն հետ (ԴԻԻ. Բ. 254-259): Տեղեկութիւնները ամբողջացնելու համար պէտք է աւելացնենք, թէ Տաճկահայոց Էջմիածինէ խլումը իսկապէս ներքին պատճառներէ չէր, այլ ռուսները պատերազմը, և Էջմիածինի ամենայն եռանդեամբ Ռուսաց օգնելը, պայն իբրև Օսմանեան պետութեան հակառակորդ նկատել տուած էր, և մինչև իսկ կաթողիկոսի անունին յիշատակութիւնը վանց կըլլար պատարագի և ժամերգութեան մէջ:

2468. ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՁԱՅՆԵՐ

Երբ վերջին հատուածներով պատմուած անցուդարձերը կը կատարուէին, Եփրեմ իր տկար և գրեթէ անգործ վիճակին մէջ կը շարունակէր, և որ ևսն է վինքն ամէն կողմէ լքեալ զգալով, և վիճակաւորներու վերջին կարգադրութեամբ Ներսէսի Տփղիս կամ Էջմիածին դառնալուն հաւանականութիւնը վերցուած տեսնելով, որոշեց վերջնականապէս հրաժարիլ, և աթոռոյ պարապութեան հիմամբ նոր ընտրութիւն կատարել տալ: Եփրեմի կը վերագրուի այն միտքը թէ ինքն լիովին վստահ էր թէ Ներսէս կը լինի միաբանութեան ընտրելին, և այս կերպով իր առաջին միտքը իրականացնել կը կարծէր : Եթէ իրօք Եփրեմ այդ համոզումը ունէր, պէտք է ըսել թէ բոլորովին խաբուած էր վինքն շրջապատողներէն, և թէ անտեղեակ էր Պասքեիչի ուղղութեան և իրեն համամիտ և գործակից նախարարութեան, որոնք վճռապէս կը խորշէին Ներսէսը բարձր և ազդեցիկ դիրքի վրայ տեսնել: Նոյնիսկ հայկական կեդրոնին մէջ չէին թողուր, զի կը խիթային որ այն կարողութիւնն ու արդիւնաւորութիւնը, զոր Ռուսաց տիրապետութեան համար ցուցուց, ազգային իրաւանց և պահանջից համար ալ գործածէ, ինչպէս առիթ ունեցանք անգամ մը դիտել տալ (2458): Պասքեիչ յայտնապէս գրած էր նախարարութեան, որ եթէ Էջմիածնի աթոռին վրայ անկամ և անկար և պետական առաջարկներու հաճոյակատար գործադիր մէկ մը ունենալ կուզուի, դա Կարբեցին է: Իսկ եթէ կամքի և մտքի տէր և իր աթոռին և եկեղեցիին և ազգին շահերուն հետևող մը ունենալ կը ներուի, այն ատեն միայն Ներսէսը ընտրելի ընել: Կարբեցին գիտակ Պասքեիչի իրեն ցուցուցած հովանաւորութեան, իր առաջնորդական ընտրութեան հաստատութիւնը չառած 1830 յունիսին եկած էր Տփղիսի և պաշտօնին ձեռք պարկած, և առաջին գործ ըրած Ներսէսի հաշուական և շինարարական գործերը քննութեան ենթարկել, և Ներսէսի գործակատարներէն, Արծրու նիէն և Շիրմապանեանէն հաշիւ պահանջել, և կրպակներու եկամուտը Ներսէսեան վարժարանին վլանալ: Գործը ձև մը չառած Գէորգ Արծրու նի հնտախտէ կը

վախճանի, որ տակաւ կընդարձակուէր, և Կարբեցին Էջմիածին կապաւինի, բայց սեպտեմբեր 17-ին նորէն Տփղիս կը դառնայ, առաջնորդական պետական հաստատութիւնը ստանալէն ետքը: Այս անգամ Ալամդարեանը կը նեղէ վիճակային հաշիւներու համար, և երբոր նա հաշիւները Ներսէսի գրկած ըլլալը կը պատասխանէ, Պասքեիչի ձեռքով Էջմիածին կը գրկէ սաստիկ պատժուելու համար: Ալամդարեան կը պարտաւորի մեկնիլ, բայց Տփղիսեցիք ետևէն խնդրագիր կը գրկեն կաթողիկոսին, որ եպիսկոպոսական աստիճանով վերադարձնէ վարժարանին և վիճակին համար: Ալամդարեան հոկտեմբեր 3-ին Էջմիածին հասաւ, եպիսկոպոսական ձեռնադրութեան արդէն խօսք չէր կրնար ըլլալ, բայց իրեն տուած տեղեկութիւնները ևս քան Վեսպուչի Եփրեմի վրայ, որ մարմնով տկար, սակայն խելքը տեղն էր և առողջ դատողութիւն չէր կորցրած, սարսափելով նայեց ապագայի վրայ, և անգամ մը ևս հաստատուեցաւ հրաժարականը փութացնել: Իրօք ալ քանի մը օր ետքը, հոկտեմբեր 8-ին, Խաչի չորրորդ չորեքշաբթին, յանձնեց Սինոդին հրաժարականին բացաձայն ծանօթութիւնը (ԵՐՅ.Ա.602):

2469. ԵՓՐԵՄԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Այդ հրաժարականը, որ մեծ կարևորութիւն ունի իբր պատմական և իբր կանոնական վաւերագիր, գրուած է լուրջ և վեհ ոճով: Սուրբ գրոց խօսքերով կը սկսի խօսիլ պաշտօն ունեցողին, պաշտօնը կատարելու վիճակի մէջ ըլլալուն վրայ, և յետոյ իր վիճակը նկարագրելով, կըսէ թէ է անցեալ վաւուրքք, և իրօք ալ ութնամեայ էր, և տուայտեալ լի ցաւովք, իւրացեալ ականջօք և վատեալ ի տեսողականութենէ: Թէպէտ, կըսէ գտանի դեռ յիս ամբողջութիւն մտաց և ուշիմութեան, բայց յառաջ բերելով կանոնական յօդուածը թէ քահանայ ծերացեալ և ախտակրեալ լռեսցէ ի պատարագէ, խիղճը հանդարտեցնելու համար կը հրաժարի և կնիքն ալ կը յանձնէ այժմէն, եթէ ուզեն, վերջապէս աւելի բացատրութիւն ուզողները կը հրաւիրէ որ գան և բերանացի լսեն: Ստորագրած է, իբր անունեալ կաթողիկոս ամենայն Հայոց, Եփրեմ (ԵՐՅ. 602-606 և ՄՍՐ. 216-220): Սինոդը հարկաւ օրը օրին վերջնական որոշման մը չէր կրնար յանգիլ, մանաւանդ որ Եփրեմ պետութեան ալ դիմում ընելու համար իրեն մօտ հրաւիրած էր Իշխան Վասիլ Բեհրութեանը, որ ծրագրի անդամակցութենէն ետքը (2466), իբրև վարձարտրութիւն Երևանի կամ Հայկական երկրի նահանգապէտ էր անուանուած: Բեհրութեան հոկտեմբեր 11-ին Էջմիածին հասաւ և Եփրեմի հետ մասնաւոր տեսակցութիւններ ունեցաւ, և Սինոդին հետ ալ խորհրդակցեցաւ (ԵՐՅ. 607), և Բեհրութեան ու Սինոդ հրաժարականի ընդունելութեան կողմը հակեցան: Հոկտեմբեր 15-ին Սինոդը Եփրեմի գրեց թէ ցաւով կը լսէ իր վերջնական հրաժարագիրը, բայց կը խնդրէ որ կնիքը իր մօտը մնայ մինչև որ նոր օժեալը նստի (ԴԻԻ. Բ. 262-265): Իսկ 16-ին որոշուեցաւ Սինոդականներուն թիւը տասնի բարձրացնել, առժամեայ վարչութեան ձևը տալով, և անդամներն եղան, Մարտիրոս Տեղապահ, Յովհաննէս Կարբեցի, Սահակ, Փիլիպպոս, Գրիգոր, Ստեփանոս, և միւս Ստեփաննոս եպիսկոպոսներ, և Յոսէփ, Ղուկաս ու Յովհաննէս վարդապետներ: Բեհրութեան Պասքեիչի հաղորդեց հոկտեմբեր 19-ին իր քննութեանց հետևանքը, թէ Եփրեմ կաթողիկոս ինքնակամաբար հրաժարուում է իր տկարութեան պատճառով, և իբրև գլխաւոր պատճառ կը ցուցունէ ևս, որ Տաճկահայեր Էջմիածնի կողմէ կաթողիկոսական գործունէութեան դադարումը տեսնելով, սկսած են Սիսէ ձեռնադրութիւն և միւռոն առնել: Սինոդական խորհրդակցութեան մէջ որոշուած էր նախապէս թէ կաթողիկոսներ կրնան հրաժարիլ, իսկ նոր ընտրութեան համար որոշեց հրահանգի սպասել, թէ անմիջապէս ընտրե՞ն, թէ ոչ արտօնութեան սպասե՞ն, կամ թէ մէկ մը ընտրե՞ն, թէ ոչ երկու ընտրելի առաջարկե՞ն (ԵՐՅ.Ա.606-609): Միևնոյն օր Բեհրութեան մասնաւոր նամակով կը հաղորդէ Պասքեիչի թէ ընտրութեան պէտք չէ աշխարհականները մտցնել, թէ Կ. Պոլսոյ պատրիարք Ստեփանոս Աղաւնին անյարմար ընտրելի է, թէ ստոյգ Յովհաննէս Կարբեցին

է, թէ երկու ընտրելի ցուցունելու առթիւ պիտի գրուի Մարտիարոս տեղապահը, 76 տարեկան ցաւագար ծերունի մը, և թէ Սինոդը հակառակ է Ներսէսի ընտրութեան: Բեհբութեանի նամակին քաղուածին մէջ սխալմամբ մուծուած կը կարծենք Աղաւնիի անունը, զի 1830 հոկտեմբեր 19-ին նամակին թուականին օրը, տակաւին Կարապետ Պալաթցին պատրիարքական աթոռին վրայ էր, և տարի մը ևս շարունակեց մինչև 1831 սեպտեմբեր: Իսկ եթէ Կարապետի ակնարկել կուզուէր, անհիմն էր դեռահասութեան համար (ԵՐՅ.Ա.610) ընտրելիութենէ դուրս թողուլ անձ մը, որ եօթը տարիէ ի վեր պատրիարքական աթոռը կը վարէր: Բեհբութեան միևնոյն հոկտեմբեր 19-ին օրը երրորդ նամակով մը Ալամդարեանի խնդիրը կը յուզէ, և կը հաղորդէ թէ ոչ միայն ձեռնադրութիւնը խափանուած է, այլև վանահայրական անունով Հաղբատ արքայի յղուած է (ԵՐՅ.Ա.614-616):

2470. ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՆ

Պասքևիչ Բեհբութեանէ ստանալով Եփրեմի հրաժարականը և տեղեկագրութեանց նամակները նոյեմբեր 9-ին կը յղէ Բլուտով նախարարին իր կողմանէ ալ աւելցնելով, թէ չէ ուզած ինքնագլուխ ընտրութեան հրաման տալ, ուստի կայսերական հրամանի կը սպասէ և միանգամայն Բեհբութեանի թելադրութիւնները կիւրացնէ: Բրուտով գործը նախարարութեան առջև հանելէ և պատմական յիշատակներ գրգռելէ, և զգուշաւորութեանց անհրաժեշտութիւնը շեշտելէ ետքը, դեկտեմբեր 30-ին ընդարձակ և պատճառաբանեալ պաշտօնագիրով (ԵՐՅԱ.618-628) Պասքևիչի կը հաղորդէ գործածուելիք միջոցները և ձեռք ձգուելու նպատակը: Այդ նպատակն էր Կարբեցին կաթողիկոսացնել, բայց այն կերպով որ իմացուի պետական դիտումը. միանգամայն աշխարհականներուն չթողուլ ընտրութիւնը, բայց և պահել անոնց միջամտութեան երևոյթը որովհետև թէ հին և թէ վերջին ժամանակներու մէջ Հայոց կաթողիկոսները աշխարհական տարրին ձեռքով կամ գործակցութեամբ կամ հաւանութեամբ կամ համաձայնութեամբ աթոռ բարձրացած են: Նպատակին մաս կը կապմէ ևս կայսեր երկու ընտրելիներ ներկայացնելու ձևը, թէպէտ այս մասին նախօրով դրուած կանոն կամ տրուած որոշում չկայ: Վերջապէս կը յանձնարարուի այնպէս գործել որ օտար երկիրներու մէջ գտնուող Հայեր ընտրեալը չձանձնալու փաստ չունենան, և ինչ փառաւորութիւն կամ շքեղութիւն որ աւանդութեամբ կը պահանջուի առատապէս շուսյուրի տէրութեան կողմէն: Ըստ այսմ հրահանգ կը տրուի որ նախ Սինոդը ընտրութիւնը կատարէ թեմակալներու և գլխաւոր հոգևորականներու հետ և Եփրեմի նախագահութեամբ: Ասոնց ընտրածները թեմական հոգևորականներու և աշխարհական տարրին, այսինքն մելիքներու և եիւզպաշիներու և ականաւոր անձերու հաւանութեամբ հաստատուին, ընտրելիներու անունները օտար երկիրներ ալ լսուին որ կարծիքները իմացուին, նորընտիրը նստելէն ետքը Տաճկաստան և Պարսկաստան կոնդակներ յղէ, և ռուսական դեսպաններուն յանձնարարուի հաւանութիւն պատրաստել տալ, և վերջապէս Կ. Պոլսոյ և Ասոյ և Ախթամարի և Երուսաղէմի աթոռներուն զեկուցուի, թէ եղած կարգադրութիւնները միայն այս անդամուան համար են, ստիպողական պարագաներու և պահանջուած զգուշաւորութիւններու պատճառով: Նկատողութեան արժանի է նորընտիրին տրուելիք հրահանգը, որ միշտ Եփրեմի խորհուրդներուն և խրատներուն հետևի: Պասքևիչի կը մնար այդ հրահանգները գործադրել, և գլխաւորապէս Կարբեցին յաջողցնելու համար յարմար գործիչներ որոշել: Բեհբութեան նահանգապետի պէտք եղած հրահանգները տրուեցան 1831 յունուար 26-ի գրութեամբ, ընտրութեան օր որոշելով մարտի 15-ը (ԵՐՅ. Ա. 631), և Սերովբէ Եպիսկոպոս Արարատեանը իբր յատուկ պաշտօնեայ էջմիածին յղուեցաւ Եփրեմի ուղղուած յունուար 28-ի նամակով, որով կը ծանուցուէր իր հրաժարականին ընդունուիլը, նոր ընտրութեան արտօնուիլը, և Արարատեանի յանձնուած պաշտօնը (ԵՐՅ. Ա. 629):

2471. ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Արարատեան 1831 փետրուարի առաջի օրերը Տփղիսէ մեկնեցաւ, 12-ին Երևան հասաւ, և 13-ին Բեհրութեանի հետ Էջմիածին եկան, և շաբաթ մը միասին աշխատեցան միաբաններուն միտքերը պատրաստել: Հաճոյանալու և շոյելու, սպառնալու և ահաջնելու ամէն միջոցները գործածեցին, զի քիչ չէին Ներսէսի կուսակիցները և Կարբեցիին վտանգաւոր կարծողները: Գերագոյն փաստն եղաւ թէ Պասքևիչի ցանկութիւնը չկատարել տէրութեան կամաց հակառակել է. ինչ որ ի հարկէ ոչ ոք չէր կամենում: Փետրուար 17-ին սկսան հրաւիրագիրներ ցրուել մարտ 15-ին գումարման, և 20-ին Բեհրութեան Երևան դարձաւ Արարատեանն ալ միասին տանելով, զի մի գուցէ հնարքներ գործ դնէ յօգուտ իր անձին: Փետրուար 25-ին սկսան հասնիլ հրաւիրագիրը ընդունելէ առաջ ճամբայ ելլողներ: Առաջին եղան Կարապետ Կարնեցիին նախկին Կարնոյ և այժմ Տայոց կամ Ախլցխայի գաղթականներուն առաջնորդ, և Ստեփանոս Խաժակնեան նախկին Կարսի և այժմ Կիւմրիի գաղթականաց առաջնորդ և Նիկողայոս վարդապետ Նախիջևանի պարսկահայ գաղթականաց առաջնորդ: Հետզհետէ հասան Սիմէոն եպիսկոպոս Տաթևի, Սիմէոն եպիսկոպոս Ագուլիսի, Սարգիս վարդապետ Նախավկայի, Յովհաննէս վարդապետ Սևանայ, Գրիգոր եպիսկոպոս Մանուչարեան Շամշատինի, և Իսահակ վարդապետ Երևանի վանահայրներ: Ասոնց հետ նաև Մինաս եպիսկոպոս Շամախու առաջնորդ, Սուքիաս վարդապետ Կարնեցի, Յարութիւն վարդապետ Շնողնեցի Սանահնի վանահայր, Մխիթար Բեթղեհէմի և Աբրահամ Աբումելիքեան Մողնու եկեղեցիներու աւագերէցներ, և ուրիշ պատուաւոր քահանաներ շրջականերէ: Հրաւիրագիրներ շատացան և չեկան, Բաղտասար Ղարաբաղի մետրապոլիտ, Սիմէոն Բյուուսի եպիսկոպոս, և առհասարակ Ներսէսի համակիր և Կարբեցիին հակակիր բարձրաստիճան եկեղեցականներ: Աւելորդ պիտի ըլլայ ըսել թէ Ներսէսն ալ չհրաւիրուեցաւ, իսկ Կարբեցիին մարտի 8-ին Տփղիսէ հասած էր իր հետևորդներով: Մարտ 14-ին Երևանէ դարձան Բեհրութեան և Արարատեան, և 15-ին մեծպահոց երրորդ կիրակին, Անառակի յիշատակին ընտրողական ժողովը գումարուեցաւ առաւօտեան պաշտամունքէն և ճաշէն ետքը, ժամը 3-ին արևելեան ժամահաշուով, կաթողիկոսարանի Ծաղկեալ Դահլիճին մէջ, Եփրեմի նախագահութեամբ և Բեհրութեանի ներկայութեամբ: Բացման ատենաբանութիւնը Եփրեմ պատրաստած էր, և Յովհաննէս Ղրիմեցի ատենադպիր վարդապետը կարդաց (ԴԻԻ.Բ.267), Արարատեան ալ խօսեցաւ ընտրութեան վեհութիւնը և կարծեաց պատուութիւնը բացատրելով, բայց ընտրողական գործողութիւնը յաջորդ երկուշաբթի օրուան թողուեցաւ: Նոյն օր երեկոյ, ինչպէս նախընթաց օրը, Բեհրութեան նոր դժուարութիւններու հանդիպեցաւ Կարբեցիի անհամակիրները վսպելու, մինչև իսկ սաստիւ լռութիւն և վգուշաւորութիւն հրամայելու հասաւ, որով յաջորդ օրուան 1831- ի մարտ 16-ին նոյնպէս Ծաղկեալ Դահլիճի մէջ կայացած գումարումէն ցանկացուած էլքը ստացուեցաւ, և Մարտիրոս Տեղապահ և Յովհաննէս Կարբեցի ընտրելի նշանակուեցան շնորհիւ իշխան Բեհրութեանի այն գիշեր ձեռք առած կտրուկ միջոցներին (ԵՐՅ.Ա.638): Ձայները հաւաքուեցան նախ աւագներէն ապա կրտսերներէն, ամենէն վերջը դահլիճ մտաւ Եփրեմ, ինքն ալ հաւանեցաւ և պահպանիչն ալ ըսաւ երկու ընտրելիներու վրայ: Հարկաւ շատ յօժարութեամբ տուած պիտի չըլլայ իր օրհնութիւնը, սակայն միտքը բերած կըլլայ ինչ որ բացման ճառին մէջ ըսած էր, թէ Իսահակ Եսաւի տեղ Յակոբը, և Յովսէփ Մանասէի տեղ Եփրեմն էր օրհնած: Ընտրութեան ատենագրութիւնը կազմուեցաւ Արարատեանի առաջնորդութեամբ և Ղրիմեցիի ձեռքով, և մարտ 20-ին հիգշաբթի օրուան երրորդ գումարման մէջ ամէնքն ալ ստորագրեցին և Եփրեմի վաւերացնել տուին, և ժողովը փակուեցաւ, և հրաւիրեալներ հետզհետէ իրենց տեղերը մեկնեցան:

2472. ՆԵՐՍԷՍ ԵՒ ՀԱՄԱԿԻՐՆԵՐ

Կատարուած ընտրութեան ձայնը շուտով տարածուեցաւ, մանաւանդ որ միտքերը շինելու համար տարածելու ալ փափաք կար, և թեմերու հոգևորականներուն և աշխարհականներուն ալ պարտք կար հաւանութիւնն ստանալ ինչպէս պայման դրուած էր, և այս միտքով յայտարարական գրութիւն անունով ցրուեցան ատենագրութեան պատճէնները: Շատ տեղերէ հաւանութեան ստորագրութիւններ հասան կամ պահանջուեցան և առնուեցան, սակայն քանի ուրիշ տեղերում Հայոց բարձրագոյն և վարգացեալ դասակարգը հրաժարուեցան ձայն տալու յօգուտ Կարբեցւոյ, և թէև նոցա ըսպառնալիքներ շատ եղան բայց նոքա յամառուեցան (ԵՐՅ. Ա. 640): Այդ մասին աւելի ասպարէզ եկան Տփղիսցիներ, և թէպէտ իրենցմէ մի մասը ակամայացեալ և ստիպմանց կոմսին Պասքևիչի ստորագրեցին, բայց և մնաց զօրաւոր խումբ մը, այնպէս որ փոքր միւս ևս յերկուս դասս բաժանել ունէր ժողովուրդն, այն է ի Ներսիսեան և ի Յովհաննիսեան (ՄՍՐ. 142): Ներսիսեաններ կը սպասէին որ Ներսէս ինքն առջև անցնի, խօսի և գրէ, դիմէ և պահանջէ անտեղի ընտրութեան ոչնչացումը, մնչև իսկ մտերմաբար կշտամբում էին արևոյն Ներսէսի, որ նա թոյլ է տալիս յաղթուել Պասքևիչից, լռում է և թողնում է որ Կարբեցին ձեռք բերէ կաթողիկոսական աթոռը (ԵՐՅ. Ա. 640): Բայց Ներսէս հանդարտ էր և անյողողող, նա լիովին գիտէր անցուդարձերը, պետական և կուսակցական դարձուածները, և իրեններուն հանդարտութիւն և լռութիւն կը յանձնարարէր բազմաթիւ նամակներով, և չէր կրնար յանձն առնուլ որ իր անունով նորոգուին Դաւիթ Դանիէլի անցքերը, որ այնչափ վնասակար եղած էին եկեղեցւոյն և ազգին: Իր անձին նկատմամբ ալ հաստատուն հաւատացեալի համոզմամբ կը յայտարարէր, լռեմ ես զի խօսեցի Աստուած (ԵՐՅ. Ա. 642), և մարգարէին խօսքերը կը կրկնէր, բարկութեան Տեառն համբերի, զի մեղայ նմա, մինչև արդարացուցէ զդատաստան իմ և արասցէ ինձ իրաւունս, և հանցէ զիս ի լոյս, և տեսից զարդարութիւն նորա, և տեսցէ թշնամին, և ծածկեսցէ զնա ամօթ (ՄԻՔ. Ե. 9): Այսպէս կը գրէր Ներսէս 1831 մարտ 20-ին, և միևնոյն օր նոյն վեհ և քրիստոնէական սկզբունքները Յարութիւն Ալամդարեան վարդապետի ալ կը կրկնէր, որ իր Հաղբատի առանձնութենէ գանգատանաց և անհամբերութեան գիրեր կը ղրկէր. Եւ եթէ գիտիցես թէ իրաւունք մեր գտանին դատապարտեալք և ոչ անիրաւութիւնք, ընդէր ոչ որպէս ամենաբարեպաշտ քրիստոնեայ վանձինս մեր չունիցիմք համարիլ ամենայն երկայնամտութեանց և պսակաւոր համբերութեանց: Ներսէս իր այդ զգացումներով շատ աւելի մեծ և բարձր կերևի գնահատողին աչքին, քանի իր արիական և ժիրաժիր գործուեցեամբը և լռել կը ստիպուին անոնք որ Ներսէսի արդիւնքը չկարենալով խծթել, անոր միտքը կը ջանային քննադատել և մեղադրել: Ներսէս իր հաւատքին լրումն ալ արժանացաւ տեսնել, զի Յովհաննէսէն աւելի ապրեցաւ և կաթողիկոսական գահն ալ բարձրացաւ:

2473. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼԱՄԴԱՐԵԱՆ

Ալամդարեանը յիշեցինք իբրև Ներսէսին մտերիմը և անոր պատճառով հալածուածը (2469), որուն չէր ալ ներուեր որ գոնէ Բեսարաբիա քաշուի Ներսէսի մօտ: Զրոյց մըն ալ կը շրջէր ականջէ ականջ, թէ Կարբեցին Էջմիածինէ Տփղիս գալուն առթիւ Հաղբատի մօտ Շուլավէր գիւղը, Ալամդարեանը կոչելով դեղ մահու արբուցեալ իցէ նմա: Շշուկը լռեցնելու միտքով Կարբեցին 22-ին կը հրամայէ Ալամդարեանին Էջմիածին երթալ, այլ առ խիթալով որ չարագոյն ինչ պատահի այն տեղ, զի խնդրէ որ ներուի Հաղբատ մնալ վասն դժնդակութեան օդոյն Էջմիածին (ՄՍՐ. 143): Կարբեցին անողոք իր որոշման մէջ, Արարատեանէ և Զրպետեանէ ալ գրգռուած, վճռագիրի պատճէն մը պատրաստել կու տայ Սինոդին յղելու, որով Ալամդարեան իբր դատուած և դատապարտուած՝ Ս. Հովսիսիմէի վանքը արգելական պիտի բանտարկուէր: Մանուէլ վարդապետ Շահինեան Կիւմիւշխանացին ի վուր կը ջանայ Կարբեցին ողոքել, և նոյնիսկ Ներսէսի օրինակով զայն հանդարտութեան յորդորել, այլ Կարբեցին պետական իշխանութեան կը գրէ վոստիկանական

հսկողութեամբ Ազամդարեանը Էջմիածին փոխադրել: Սակայն այդ միջոցին Ներսէս, մայիս 12-ին, երկար գրութեամբ մը դիմեր էր Բլուտովին, և իր կատարած ծառայութիւնները թուելով իբրև գոհունակութեան վկայութիւն խնդրեր էր, որ իր հին պաշտօնեաներ և գործակիցներ, Սիմէոն Բզնունի եպիսկոպոս և Յարութիւն Ալամդարեան վարդապետ, որ իր պատճառով հալածանաց ենթարկուած են, իրեն ղրկուին, Բզնունին իբրև Խրիմի վանքին և թեմին կառավարիչ, և Ալամդարեանը վիճակին ամէն կողմերը իր յանձնարարութիւնները կատարող: Նախարարը արդարացի գտնելով Ներսէսի խնդրանքը, և միւս կողմէն անոր հանդէպ փոքրիկ բարեացակամութիւն մը ցուցնել ուզելով, կայսերական արտօնութեամբ հրամայեց երկուքին ալ Բեսարաբիոյ վիճակ Ներսէսի մօտ յղել, և հրամանը Տփղիս, և յուլիս 21-ին Ներսէսի ալ պատասխանեց: Հրամանը Տփղիս հասաւ երբ Կարբեցին Ալամդարեանի բռնի Էջմիածին տարուիլը խնդրած էր, բայց բարձրագոյն հրամանին համաձայն եղաւ գործադրութիւնը, և Բզնունին ու Ալամդարեանը յուլիս 25-ին Տփղիսէ մեկնեցան դէպի Բեսարաբիա (ՄՍՐ.145): Բլուտովին պատասխանին մէջ գրուած էր, որ երկուքն ալ նախապէս իրենց հաշիւները ներկայեն, բայց կերևի թէ Կարբեցին այլևս այդ կէտին վրայ պնդած չէ, և ուղևորութիւնը ուշացնելու առիթ տուած չէ, զի համոզում ալ գոյացուցած պիտի ըլլայ թէ ամենայն ինչ կանոնաւորութեամբ կատարուած է:

2474. ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Ընտրողական գործողութեանց վաւերական ատենագրութիւնը Բեհրութեան Սինոդէն ստանալով հասոյց Պասքևիչի, որ ըստ ընկալեալ հրահանգին ուզեց ժողովուրդի կարծիքը հաւաքել երկու ընտրելիներու, Մարտիրոսի և Յովհաննէսի մասին, և երկջեան թերթեր պատրաստուեցան երկուքի անուններով, որպէսզի քաղաքներու և գլխաւոր տեղերու համայնքներ ստորագրեն այն էջը որուն անունը կը նախադասեն: Այս թերթերը դեռ շրջագայութեան մէջ էին ապրիլի կէսին, երբ Պասքևիչ հրաման ստացաւ Պետրբուրգ երթալ: Իսկոյն իրեն փոխանորդ նշանակեց Պանկրատիէվ վօրավարը, և անոր ձեռք գրաւոր հրահանգ մըն ալ յանձնեց ապրիլ 24 թուականով, թէ ինչ կերպով պիտի վարէ Հայոց գործերը, և յատկապէս յանձնարարեց Կարբեցիի ընտրութիւնը ամրացնել (ԵՐՑ.Ա.654-657): Քիչ ետքը մեկնեցաւ Պասքևիչ, և Պանկրատիէվ էր գործին գլուխը երբ Կարբեցի Ալամդարեանի բռնի առաքումը կը խնդրէր (2473): Բնական էր որ համայնքներու մեծամասնութիւնը Յովհաննէս նախադասէր ծերացած և ցաւագար Մարտիրոսին, և այդ արդիւնքը Պանկրատիէվ հաղորդեց Պետրբուրգ նոյն ինքն Պասքևիչի, որուն փոխանորդութիւնը կը վարէր: Պասքևիչ կոչուած էր Լեհաստանի ապստամբութիւնը ընկճելու, զոր յետոյ յաջողութեամբ կատարեց: Իսկ նոյն միջոցին մեծանուն վօրավար Տիրիշի հետախտէ մեռնելուն վրայ անոր յաջորդ նշանակուեցաւ Պասքևիչ, Կովկասի կառավարչապետութենէն արձակուելով, և իրեն վիճակուեցաւ Կարբեցիի հաստատութիւնը խնդրել և ստանալ կայսրէն, բան մը զոր արդէն ամէն կերպով պատրաստած և կարդացած էր: Վերջապէս 1831 տարուոյ յունիս 30-ին ստորագրեցաւ Յովհաննէս Կարբեցիի կաթողիկոսական հրովարտակը, և զրկուեցաւ Պանկրատիէվի հաղորդելու և գործադրելու համար, որ սակայն քիչ մը յապաղեցաւ, զի հոկտեմբեր 7-ին Տփղիս հասաւ Պասքևիչի յաջորդ անուանուած Բարոն Ռօէլը: Հաստատութեան հրովարտակին հետ առաջին աստիճանի շքանշաններ շնորհուեցան. Եփրեմի Ս. Անդրէի առաքելոյ, Յովհաննէսի Ս. Աղէքսանդր Նևաքիի, և Մարտիրոսի ու Սերովբէի Ս. Աննայի ասպետական կարգերէն: Այստեղ Եփրեմի կաթողիկոսութեան շրջանը փակելով, շարունակութիւնը պիտի պատմենք Յովհաննէս Կաթողիկոսի անունին ներքև, հետևելով հնաւանդ սկզբունքին, որուն համեմատ կաթողիկոսի մը պաշտօնական գործունէութիւնը իր օծումէն կը սկսի:

2475. ՄԻՒՍ ԱԹՈՒՆԵՐ

Բայց չև այդ շրջանին մտած օգտակար կը դատենք քաղուածօրէն ամփոփել թէ ինչ վիճակի մէջ կը գտնուէին ազգին միւս աթոռներ 1831 տարուոյ երկրորդ կէսին, երբ Մայրաթոռոյ գահակալը կը փոխուէր: Կ. Պոլսոյ մէջ ճիշդ այդ միջոցին 1831 սեպտեմբեր 4-ին Կարապետ Պալաթցի պատրիարքը պաշտօնէն կը հրաժարէր և Ստեփանոս Աղաւնի անոր տեղ պաշտօնի կը կոչուէր (2438), որով առաջիկային կը մնայ անոր գործերով պարզիլ: Երուսաղէմի մէջ Պօղոս Ադրիանուպոլսեցի Ծայրագոյն կառավարիչը 1828 դեկտեմբեր 3-ին տեղը դարձած և բոլոր ուշնուրուշը պարտքերու վճարման գործին դարձուցած յաջողութեամբ կը գործէր, ինչպէս որ 1833-ին ալ գլուխ կը հանէր (2452): Սիսի մէջ Կիրակոս կաթողիկոս 1791-ին ընտրուած, և 1819-ին իբր ամբաստանեալ Կ. Պոլիս բերուած (2360), պրպարտութենէ մաքրուած 1820 սեպտեմբեր 19-ին Կ. Պոլիսէ մեկնելէ ետքը, (2375), ապատօրէն Սիսի մէջ պաշտօնավարեց մինչև 1825 (06. ՕՐԱ. 384): Այս թուականը յետոյ 1822-ի փոխուած է (08. ՕՐԱ. 180) հետևելով Ալիշանի (ՍԻՍ. 218) բայց ինքն Ալիշան ալ քիչ վարը Կիրակոսը կենդանի կենթադրէ 1824-ին (ՍԻՍ. 222), այնպէս որ մենք, ուրիշ ստուգագոյն աղբիւր ձեռուընիս չունենալով, առ ժամ մի պահեցինք 1825 թուականը: Բայց ձեռագիր յիշատակարան մը (ՀԱԻ. 125) կը գրէ, որ թէպէտ Կիրակոս անգամ մը ապատեցաւ ի մահուանէ օգնականութեամբ ազգին և պատրիարքի տեսոն Պօղոսի Ադրիանուպոլսեցւոյ, բայց ի վերջոյ դեղով թիւնոյ Խոպանեան Ալի պէկի սպանաւ յԵնիգիւղ, Հայոց ՌՄՀԲ ի շաբաթ օր Խաչվերացի ի նաւակատիսն, որ է 1825 սեպտեմբեր 15, և օրով ու տեղով եղած յիշատակութիւն մը նախադասուելու արժանի է: Նոյն յիշատակարանը կը ճանչնայ Կիրակոսը ոչ միայն եղբօրորդի տէր Թէոդորոսի, այլ և որդի մահտեսի Գրիգորի որով կը ճշդուի Աջապահեանց ճիւղագրութիւնը: Այս վկայութեամբ ալ կը ստուգուի թէ Կիրակոս Ա. Աջապահեան մեծ մակդիր անունը ստանալու արժանացած, իր նախորդներու նման ինքն ալ Քօղանօղլու բռնապետներէն դեղակուր սպաննուեցաւ (ՍԻՍ. 218): Կիրակոսի յաջորդն ալ նոյն տունէն եղաւ, եղբօրորդին Եփրեմ Բ. Տէր Մանուէլեան (ՀԱԻ. 125): Աջապահեանց եօթներորդը, որ 1823-ին տակաւին 20 տարեկան երիտասարդ էր (ՍԻՍ. 219), և սա էր որ աթոռի վրայ կը մնար 1831-ին, բայց 1833-ին կը հրաժարէր, ինչպէս սովորաբար ըսուած է, բայց յիշատակագիր մը կը պատմէ, թէ վախճանի գօլեռա ցաւով ՌՄՀԲ. յաւուր Գիւտի նշխարաց Սրբոյն Գրիգորի (ՀԱԻ. 126) որ է 1833 յունիս 17, և այդ օրով գրուած յիշատակութիւնը կը նախադասենք: Մասնաւոր տեղեկութիւններ չունինք Կիրակոսի վերջին տարիներուն և Եփրեմի կաթողիկոսութեան վրայ: Իսկ Աղթամարայ աթոռը թողուցինք իր ինքնագլուխ և կղզիացեալ կացութեան մէջ (2174), որ չփոխուեցաւ Կարապետ կաթողիկոսին Բագրևանդի օծումին մասնակցելովը (2266): Խաչատուր Վանեցի Հրաշագործին 1814-ին վախճանելուն վրայ (2327) դարձեալ աթոռը գրաւեց Կարապետ Շատախցին, որ 1803-ին հրաժարեր կամ հրաժարեցուցուեր էր, և իրեն յաջորդեց Յարութիւն Տարօնեցին Կաքաւ մականուանեալ 1816 ին (08.ՕՐԱ.181) որ Արտօնքցի ալ կոչուած է Տարօնի Արտօնք գիւղէն, և 1823 աւագ ուրբաթ օրը, որ կիյնայ ապրիլ 20-ին, Խիպանի Ս. Խաչ վանքին մէջ նահատակուած է Ապարանից Ս. Խաչի վանահօր մատնութեամբ: Ասոր յաջորդեց Յովհաննէս Շատախեցին, որ աթոռի վրայ էր 1831-ին, և մինչև 1843 ալ մնաց, բայց աւելի բան մը պիտի չկարենանք պատմել ասոնց մասին: Ի դէպ էր այս կարգին Արմաշի վանքին վրայ ալ խօսիլ, սակայն արդէն անոր պատմութիւնը քաղած կը գտնուինք մինչև 1831 սեպտեմբեր մինչև Արմաշի վանահօր Աղաւնի Ստեփանոսի Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռ բարձրանալը, ինչպէս վերև յիշեցինք (2349):

2476. ԱՆՏՈՆԵԱՆՔ ԵՒ ԶՄԱՌՈՒ

Հռոմէական հայութեան մասին առ տեղեկութիւն տուած ըլլալու համար, պէտք է սկսիլ միաբանութիւններէն, որ գլխաւոր գործիչն եղան կաթողիկոսութեան յարած Հայերը ազգային

մարմիններէն դատելու, և Բաթօլիկ միլլէթի անունով նոր ազգութիւն կազմելու (2434): Այդ մասին Անտոնեաններ միջնասահման ընթացքի հետևած էին, և կաթոլիկներու ներքին խնդիրներու մէջ ցայտուն գործունէութիւն չէին ցուցուցած, և իրենց Լիբանանի կեդրոնն ալ Օսմանեան սահմաններուն մէջ գտնուելուն, աւելի խոհեմ ձգտումներ ունեցած էին, որով իրենց վրայ շատ խօսել չտուին: Իրենց միաբանութեան արբահայրն ալ եռամեայ պայմանաժամով փոփոխելի ըլլալուն, գլխաւոր դերակատարի մը անունն ալ չենք կրնար աւելցնել: Այդ ժամանակամիջոցին բոլոր իրենց ճիգերը ուղղած էին ուսումնական կեդրոն մը կազմելու Հռոմի մէջ, որուն առաջին քայլերը կանուխէն առած, բայց գաղղիական յեղափոխութեան և տիրապետութեան հետևանք խափանուած էին (2183): Աթանաս եպիսկոպոս Սարաֆեան, և անկէ ետքը Բարսեղ վարդապետ Տուրսունեան, Հռոմի մէջ կաշխատէին տեղւոյ և հասոյթի միջոցները կարգադրել այդ դիտումը իրագործելու, և 1831-ին ատենները բաւական յառաջացուցած էին իրենց յաջողութիւնը, ուսանող միաբաններ Լիբանանէ Հռոմ փոխադրելու չափ, և քանի մը տարի ետքն ալ, 1834-ին, ուղղակի Հռոմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ վանքին մէջ (2065) նոր աշակերտներով վանական ուսումնարան մը բանալ: Լիբանանի մէջ կազմուած կաթոլիկ կաթողիկոսութիւնն ալ, Ջմմառի վանքին կամ աթոռին մէջ պետեղուելէ ետքը (2182), աւելի ուժով հետևեցաւ իրեն վիճակներուն մէջ հռոմէական շարժումը տարածելու, և շատ ալ չցնցուեցաւ մայաքաղաքի մէջ տեղի ունեցած հայադաւան և հռոմէադաւան մրցումներէն, միաբանական ճիգերէն, և անոնցմէ յառաջ եկած շփոթութիւններէն և ընդդիմութիւններէն: Գրիգոր Պետրոս Ե. ի վախճանէն ետքը 1821 յունիս 17-ին իրեն յաջորդ ընտրուեցաւ Գրիգոր Պետրոս Զ. (ՀԱՍ. 522), որ ըստ ամենայնի իր նախորդին ընթացքին հետևեցաւ, և Անտոնեան միաբանութեան հետ ալ հաշտ ուղղութիւն պահեց, բովանդակ իր երկարատև պաշտոնավարութեան մէջ մինչև 1841 տարին:

2477. ԿՐԿԻՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՔ

Վենետիկի Մխիթարեաններուն մասին պատմած ենք մինչև Ստեփանոս Ագոնց Աբբահօր ընտրութիւնը 1800-ին և եպիսկոպոսական ձեռնադրութիւնը 1804-ին, և իրեն գործունէութեան ուրուագիծն ալ տուած (2329): Ագոնցի պաշտօնավարութիւնը երկարեցաւ մինչև 1824 յունուար 17-29 (ՅՈՒԲ. 6), և այդ միջոցին յիշած ենք արդէն իտալական գրաւմանց ժամանակին Ս. Ղապարը ապատելը, և հայկական դպրութեանց պօրաւոր վարկ տալը: Ներքին արդիւնքներուն կարգին յիշատակելի է ևս պետական արտօնութեամբ Ս. Ղապարու կղզեակն ընդարձակելը շուրջանակի ծանծաղները լցնել տալով և որմափակ ամրացնելով, և ընդարձակուած մասերուն վրայ աւանդատուն, աշակերտաց բնակարան, տպագրատուն և դահլիճ աւելցնելը (ՅՈՒԲ. 59): Իսկ արտաքին պարագաներէն պիտի յիշենք, թէ ոչ լոկ 1810-ին միաբանական փորձը (2321), այլ առաւելապէս 1820-ի միաբանական նոր ձեռնարկը, որուն նախաշարձակները եղան Վենետկոյ Մխիթարեաններէ քանիներ (2367), և հայկական վեղար առնելու չափ ալ առաջ գացին (2372), թէ ոչ բացայայտ, գոնէ լռելեայն իրենց արբահօր Ագոնցին ներշնչումը կը կրէին անշուշտ, և այսչափն ալ մեզի կը բաւէ Ագոնցին և իրեն ժամանակակից միաբանութեան հայասէր հոգին ճանչնալու, որչափ ալ Հայ եկեղեցին հռոմէական եկեղեցոյ վրայ պատուաստելու անիրականալի առեղծուածին վրայ հիմնուած ըլլար իրենց ծրագիրը, ինչպէս պարագաներովը բացատրած ենք իր կարգին (2373): Ագոնցի գործունէութենէն ուրիշ մասնաւոր պարագաներ պիտի չկարենանք պատմել, զի իր կենսագիրներն ալ աւելի քերթողական թռիչներ ունին (ՅՈՒԲ. 53-61) քան պատմական եղելութիւններ: Ագոնցի յաջորդեց Սուքիաս վարդապետ Սոմալեան, բնիկ Կ. Պօլսեցի, 1776 յունուար 24-ին ծնած, և 1804 դեկտեմբեր 9-ին քահանայացած, Հնդկաստան գտնուած, Մուրատեան և Ռափայէլեան կտակներու համար աշխատած, և գրական երկասիրութիւններ ալ

ունեցած էր, և չորրորդ արբահայրը ընտրուեցաւ 1824 մայիս 23-4 յունիսի իսկ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացաւ 1826 մայիս 9-21ին: Իսկ պաշտօնավարութիւնը տևեց 22 տարի մինչև իր մահը 1846 յունուար 29-10 փետրուար (ՅՈՒՆ. 64), բայց կեանքին վերջին տարիները ախտաւոր տկարութեան ենթարկուած էր, և քանիցս հրաժարելով քաշուելու և տեղը գործունեայ անձի թողլու միտքն ալ ունեցած էր: Իր ուղղութիւնը և աշխատութիւնը համանման էր Ագոնցին, որուն նախընծայ ձեռնասուններէն էր, բայց իր օրով տակաւ տկարացած կը տեսնենք Վենետկոյ արդիւնաւորութիւնը, զի այդ միջոցին աւելցած իբր 30 միաբան վարդապետներէն, միայն Աբրահամ Ճարեանի և Ղևոնդ Ալիշանի և Մանուէլ Քաջմունիի անունները կրնանք իբր նշանաւոր եղած յիշատակել (ՅՈՒՆ. 222-223): Նախորդին օրով փորձուած միաբանական ձգտումները իր օրով դադարեցան, զի ոչ միայն անոնց ձախող և աղետալի ելքը չէր քաջալերեր փորձեալը կրկին փորձել, այլ և այդ ձգտումներուն դուռներն ալ փակուած էին 1830-ի բաժանմամբ, և կաթողիկներու առանձին ազգ կամ ինքնագլուխ հասարակութիւն կազմելովը: Վիէնայի Մխիթարեաններուն մասին շատ ըսելիք չի մնար անոնց ուղղութիւնը բացատրելնէս (2328), և միաբանական շարժումներու մէջ անոնց վարած դերը նշանակելնէս ետքը (2366): Աստուածատուր Պապիկեան արբահայր վախճանած էր 1825 ապրիլ 28-ին, և տարիէ մը յաջորդ ընտրուեցաւ Արիստակէս վարդապետ Ազարեան 1826 ապրիլ 19-ին, և եպիսկոպոսացաւ 1827 յունուար 23-ին (ՅՇՐ. 9), և առաւել ևս սաստկացուց թունդ հռոմէական կամ Քօլէճեան ուղղութիւնը, մանաւանդ որ իր միաբանութեան հաստատութիւնն և վարձագման համար բոլոր յոյսը աւստրիական արքունեաց պաշտպանութեան և պապական գահուն հովանաւորութեան վրայ հիմնած էր, և Վենետկոյ Մխիթարեանց դէմ մրցման յաջողութիւնն ալ այդ կողմէն կը յուսար: Միևնոյն ձեռնարկութեանց շնորհիւ կրցաւ նա յաջողցնել վայելուչ վանքի մը շինութիւնը, որուն անկեան քարը դրաւ նոյն ինքն Փերտինանդոս Աւստրիոյ կայսրը 1838 հոկտեմբեր 18-ին և շինութիւնը մէկուկէս տարիէ աւարտելով միաբանութիւնը հոն հաստատուեցաւ (ՅՇՐ. 10): Հռոմէականաց վերաբերեալ տեղեկութիւնները լրացնելու համար պէտք էր այստեղ նոր կազմուած պատրիարքարանի մասին ալ խօսիլ, բայց անոր սկզբնաւորութիւնը 1830-ին եղած էր, և մենք ստիպեալ էինք եղելութեանց շարքը մինչև 1831 և անդր ալ հասցնել (2436), որով այստեղ նոր աւելցնելիք չի մնար:

2478. ՆՈՐ ՎԿԱՆԵՐ

Մեզի սովորութիւն ըրած էինք նոր վկաներու յիշատակները պահելու համար համառօտակի քաղել անոնց պատմութիւնները իւրաքանչիւր շրջանին վերջը: Սակայն Աղէքսանդր Բիւզանդացուոյն օրէն, այսինքն ԺԸ գարուն կէսէն ասդին (2055), ներքին խնդիրներու յարակցութիւնը արգիլեց մեզ այդ յիշատակները շարունակել, ուստի այստեղ յարմար կը դատենք յետամնացներու քաղուած մը կազմել: Յարութիւն Մալղարացի 20 տարեկան եղած ատեն չարի ինչ հանդիպեալ և զհաւատ իւր այլափոխեալ քիչ ետքը կը զղջայ, Մանիսա կը փախչի, բայց հոն ճանչցուելով կը բանտարկուի, կը չարչարուի և կը գլխատուի: Թուական յիշուած է հազար երկու հարիւր չորս, որ է 1755 առանց ամսաթուի իսկ տապանագիրին ճակատին 1853 թուականը պէտք է շիրմին շինութիւնը ցուցնէ (ՆՐՎ. Բ. 324): Յովհաննէս Մալաթիացի, Եւդոկիոյ մէջ արհեստաւոր, գլխահարկի համար կը բանտարկուի, և իբր իսլամացեալ յայտնուելուն վրայ կը պատմէ, թէ այլազգ դրացինս տուն տարաւ, զօրովէն թլփատեց զիս (ՆՐՎ, 217) որ կերևի թէ աղայութեան ատենի հանդիպում մըն է եղածը, բայց իր քրիստոնէութիւնը համարձակ կը խոստովանի: Տանջանքներու կենթարկուի որ ետ կենայ, գանակոծութիւն, բանտարկութիւն, կոճղ, ձաղանք, զինք չեն ընկճեր, վերջապէս կախաղանի վրայ կը վկայէ, և հապիւ երեք օրէն գանձով վար

կիջեցնեն և Զառասուն Մանուկ եկեղեցին կը թաղեն: Թուականը ՌՄԻԳ=1775 յիշուած է (ՆՐՎ.Բ.218), բայց օրը նշանակուած չէ: Նոյնպէս առանց ճիշդ օրուան պատմուած կը գտնենք, ուրիշ վկայի մըն ալ անունը, Թուխման Տիգրանակերտցի, ինչպէս յաճախ կը հանդիպինք գաւառներու մէջ Ս. Թուխմանուկ կոչուած եկեղեցիներու: Մատնուելուն պարագան որոշ չէ, զի պարզապէս ըսուած է, թէ աւուր միում յանկարծական փայլեց իբր աստղ առաւօտեան: Ուրացութեան ստիպում, գանակոծութիւն, բանտարկութիւն չկրցան երանելոյն հաստատամտութեանը յաղթել, որով ի դուռ ժամու բերին, զնա անդէն գլխատեցին : Յիշատակարանը, Մանուկ ամն անուն Թուխման, և երանելի Մանուկ Թուխման բացատրութիւններով անորոշ կը թողաւ թէ անունով, թէ ոչ տարիքով մանուկ մըն էր, և կերևի թէ աչքի վարկած գեղեցիկ երիտասարդ մը եղած է և զրպարտութեան հանդիպած: Թուականը ՌՄԼԳ=1784 ցուցուած է, բայց օրը չէ նշանակուած, և գլխատումն ալ Տիարպէքիի Ս. Կիրակոս եկեղեցւոյ դրան առջև կատարուած է: 2479. ՍԱՀԱԿ ԿԱՐՆԵՑԻ

Աւելի մանրամասնօրէն պատմուած է Սահակ Կարնեցի, Կանայճամբայ թաղի բնակիչ (ՆՐՎ. Բ. 224) 21 տարեկան (ՆՐՎ. Բ. 234) երիտասարդին նահատակութիւնը (ՆՐՎ. Բ. 220-248), Մսրր մականուանեալ, իբր Մսրրեան: Հօրմէն որը մնացած և պոռնիկ ու ջատուկ մօրմէն նեղուած և խոշտանգած Կ. Պոլիս կը մեկնի պատանեկութեան ատեն, բայց ծանր հիւանդութենէ մը ետքը հօրեղբօր խնամքով Կարին կը վերադառնայ և կրկին զրկմանց և նեղութեանց կենթարկուի մօրը կողմէն, որ հոմանիներուն ծախսած էր Սահակի և պստիկ եղբայրներուն ժառանգութիւնը, և ցաւալի, մերկ, նօթի, ողորմելի թողած էր զաւակները. Սահակի այդ մասին մեղմիկ դիտողութիւն կը կատարեցնէ անամօթ կինը, վաւաշոտ բարուք, տղմաթաւալ խոյ, ֆայիշէ, ջատի, օռոսպի և կոչուած ականատես յիշատակագիրէն (ՆՐՎ.Բ.225): Սա ուղղակի որդւոյն դէմ ամբաստանութիւն կը մատուցանէ Ֆայատ օղլու Խալիլ փաշային, որ բղեշխին տեղակալն էր, և որդին կը զրպարտէ ամէն տեսակով, մինչև այս գիշերս եկն յիմ անկողին ըսելու չափ, և յայտնապէս անոր մահը կը խնդրէ, թէ բարակ չուանով կախեսցես զնա: Թէպէտ կնոջ վարք ու բարքը յայտնի, սակայն և այնպէս Սահակ դատարան կը մատնուի, և կը բանտարկուի, և իբրև գթութեան նշան փաշային որդւոյն ձեռքով ուրացութեան կը հրաւիրուի, զոր բացարձակ կը մերժէ Սահակ (ՆՐՎ.Բ.233): Ասոր վրայ կրկին դատարան հանեցին երիտասարդը, ուր մայրը հանդէպ փաշային կրկին բողոքեաց, թէ է՞ր չես հաներ զդա ի կենաց: Ուրացութեան փորձն ալ կրկնուեցաւ ի զուր, և վերջապէս դատաւորին կողմէ կախելու վճիռը տրուեցաւ: Ճամբան եկեղեցւոյ առջևէն անցնելով կը տանին Կանայճամբայ թաղը, և հանդէպ բացխանին վճիռը կը գործադրեն: Նողկալի են անգութ մօր արարքը որ ետ զգին պարանին տղուն հրաժեշտի ողջոյնը մերժեց, և հոգին տալու ատեն գնացեալ յաղբիւրէն ձեռքով ջուր խմեալ, վա՛շ, զի զովացաւ սիրտ իմ ասացեալ (ՆՐՎ.Բ.240) Մօրը վատութիւնը և տղուն անմեղութիւնը, և մանաւանդ որ մահուանէ ետքը տղային կախանին պայծառացեալ էր, ձերմակ մարմինն ձիւնափայլեալ էր, թէ քրիստոնէից և թէ տաճկաց առ հասարակ սիրտերը մորմոքեց և մօրը վրայ անէծքներ իջեցուց: Նոյնիսկ փաշան ալ սաստիկ յուզուած անմիջապէս իջեցնելու և հանդէսով թաղելու հրամանը տուաւ, և սուրբ եկեղեցւոյ դէտն պանծալի, այսինքն առաջնորդը, որուն անունը չէ յիշուած, անձամբ նախագահեց յուղարկաւորութեան և հանգչեցուց ի դիր իւրոյ տապանին, որուն ճիշդ տեղը այժմ պատուած չենք յիշեր: Կարնեցի Յովհաննէս նօտար 656 տող տասնոտեան ոտանաւորով, յառաջաբանով և տաղով պատուած է նահատակին յիշատակը, ականատես և հետամուտ եղած ըլլալով եղելութեան բոլոր պարագաներուն (ՆՐՎ.Բ.222): Իսկ նահատակութեան օրը նշանակուած է ՌՄԽԷ=1778 յուլիս 23, Մակարայեցւոց տօն նախասիմէոնեան տօնացոյցին համաձայն:

2480. ՊԱԼԻ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Սահակի օրինակը քաջալերեց և աճեցուց Կարնոյ նահատակները, զի նորա վկայութենէն յետ անցման քանի մի տարեաց (ՆՐՎ. Բ. 222-251), զոր կրնանք մերձաւորաբար 1783-ին դնել, ուրիշ մըն ալ վասն գեղեցկութեան և արիական երիտասարդութեան, նախ հրապուրանց, և մերժելուն վրայ զրպարտութեան ենթարկուեցաւ: Պալի էր անունը, Կարնոյ դաշտի ճինիս գիւղի հանճարաշատ Մելքոն քահանայի որդին, որ տեսած էր վարիական նահատակութիւն սոյն Սահակ Մսրր մանկան, և անոր օրինակովը քաջալերուեցաւ և քաջացաւ, ողոքանաց և չարչարանաց ներքև չընկճուեցաւ և կախաղանի վրայ նահատակուեցաւ (ՆՐՎ. Բ. 251): Օրն ու տեղը յիշուած չեն, աւանդութենէ ալ նշաններ կը պակսին, և ենթադրութիւնները աւելորդ կը դատենք Կարնեցի մըն է նաև Յարութիւն, Չարըքճը Սանդոյի որդի, անձնեայ, առոյգ., ուժեղական և յաղթանդամ, հսկայական, որ Կարինէ մեկնելով Կ. Պոլիս և անկէ Ջմիւռնիա կերթայ Կարապետ եղբորը մօտ, որ հոն կաշխատէր և կը շահուէր: Զուարթութեան օր մը ընդ այլապագեաց յըմպել նստի, և մինչ կարի էր արբեցեալ, զայն կրօնափոխութեան կը հրաւիրէն, և իբր թէ ընդունած ըլլայ կանանչ ալ կը փաթթին: Ուշքի գալով բացէ ի բաց կը մեժէ, և որովհետև կը փնտրուէր, հիւպատոսներու մօտ կապաւինի, որոնք զինքը քաղաքէն կը հեռացնեն: Այլ Յարութիւնի խիղճը չի հանդարտիր, և կորոշէ ուր որ հաւատաս եմ կորուսեալ, անդ գտնիլ ինձ հարկ եղեալ: Ջմիւռնիա կը դառնայ, համարձակ հրապարակ կելլայ և կը ձերբակալուի: Սաստիկ տանջանքներու կենթարկուի, երկաթ ճանկերու, հրացեալ տապակի, գլխիվայր գանակոծութեան, և 12 օր կը շարունակեն տանջանքները, վերջապէս գլխատման կը դատապարտուի, իսկ մարմինը վապիթին գանձ շատ տուեալ, Ս. Ստեփանոս եկեղեցւոյն մէջ կը թաղուի մեծ հանդէսով, կանթեղ լուսոյ ալ կախելով վրան: Նահատակութեան օրն է 1806 փետրուար 26 (ՆՐՎ. Բ. 271): Անառակի երկուշաբթին: Յիշատակութիւնը ոտանաւոր գրուած է յումեմնէ նօտարէ (ՆՐՎ. Բ. 265), որ ինչպէս տուներու գլխադիրներէն ալ կը քաղուի, է նոյն Յովհաննէս, Սահակ Մսրր նահատակին վկայարանը:

2481. ՎԱՌՎԱՌԷ ԴՎՆԻԿՑԻ

Կարնեցի երիտասարդներուն ետևէն ունինք Կարնեցի կոյս մըն ալ, Վառվառէ, Զուրիկեան Համբարի դուստրը, Կարնոյ դաշտին Դըվնիկ գիւղէն: Վառվառէ տակաւին 11 տարեկան (ՆՐՎ.Բ.307) Ղուշճի գիւղէն երիտասարդի մը նշանակուած էր, և 14 տարեկան եղած ըլլալով հարսանիքը մօտէն պիտի օրհնուէր 1810 Ծննդեան ութօրէքէն ետքի պսակին: Հարսանեաց պատրաստութիւնները սկսած էին աւագ տօներուն, բայց դրացի այլապգի երիտասարդ մը կոյսին գեղեցկութենէ յափշտակուած, կը ջանար ամէն կերպով զայն իւրացնել, ուստի գիւղապետին կը դիմէ ըսելով թէ Վառվառէ շատոնց խոստացած է իսլամանալ և իրեն հարսնանալ: Գիւղապետը յանձն կառնու գործը կարգադրել: Գիւղացիք ալ կրօնամուլ զգացմամբ մտադրութիւնը գործադրութիւն կը սեպեն, և գործադրութիւնն ալ անդառնալի ճանչնալով, զրպարտիչ երիտասարդին պաշտպանութիւնը կը խոստանան: Վառվառէ սուրբ խորհուրդներով զինքն զօրացուցած էր, երբ Կարնոյ բղեշխին ատեանը տարուեցաւ, ուր համարձակ ճշմարտութիւնը յայտնեց և հաստատամտութիւնը խոստովանեցաւ: Ասոր վրայ կարդացողի մը յանձնուեցաւ համոզելու համար, և ողոքանաց փաստերուն ապարդիւն մնալուն վրայ ձաղկանաց ենթարկուեցաւ, և սաստիկ ձմեռուան մէջ ամբողջ գիրշեր մը մինչև ծունկը ջուրին մէջ մապերէն կախուած աւազանին մէջ թողուեցաւ: Կրկին ձաղկանք, կրկին սառոյցի և հրացեալ երկաթի տանջանքներ, բայց կոյսը յողորդ մնաց, մինչև կարդացողին ընտանիքն ալ լեզու ելլալուն տունէն հեռացուեցին: Երկրորդ կարդացողի մը յանձնուեցաւ որ քաղցրութեան միջոցներ գործածեց, բնյց միշտ անյաջող: Գործը բղեշխին դարձաւ որ հրամայեց իր կրօնքին մէջ թողլով այլապգի

երիտասարդին հետ ամուսնացնել, և այս պայմանով Դըվնիկ տարուեցաւ և երիտասարդին յանձնուեցաւ: Սակայն ամէն փորձ, սպառնալիք, բռնութիւնք, չկարացին կոյսը համուզել զինքն յանձնելու, մինչև իսկ արիաբար զգետնեց կորովի երիտասարդը: Ասոր վրայ ամէն տեսակ նեղութիւնները տրուեցան Վառվառին նոյն տունին մէջ, մինչև որ պատեհ առիթ մը տունէն փախաւ և յիշատակ քաղաք եկաւ (ՆՐՎ. Բ. 297), կամ ըստ այլոց Դըվնիկի մօտ Եփրատի մեծ կամուրջին ներքև երեք օր մնաց, ուր Գասպար եղբայրը յաջողեցաւ վայն գտնել, և Կարին փոխադրելով Մարիամ անուն ծանոթ կնոջ մը տունը գաղտնի պահեց (ՆՎԲ Բ. 279): Պէհրամ փաշա կուսակալին յաջորդեց Իպրահիմ փաշա, և Վառվառի գործը նորէն ձեռք առաւ: Հայեր այլազգիները կամբաստանէին թէ անյայտացուցին, իսկ այլազգիները Հայերը կամբաստանէին թէ փախուցին: Դվնիկցիներ խմբովին բանտարկուեցան և տանջուեցան, ևս առաւել Գասպարը, որուն վերջապէս ուրացութիւն առաջարկուեցաւ, զոր նա մերժեց և եկեղեցւոյ դուռը կախուեցաւ յունիս 8-ին Հոգեգալստեան չորրեքշաբթին: Վառվառէ լուր չունէր, երբ դրացի այլազգի կին մը վայն ճանչցաւ, և Վառվառէ ու Մարիամ բղջիխին առջև հանուեցան: Նորէն բանտարկութիւններ և կարդացողներու տուններ, սպառնալիքներ և նեղութիւններ, բայց երկուքն ալ իրենց հաւատքը խոստովանեցան, և վերջապէս եկեղեցւոյ մէջ կախուելու դատապարտուեցան, երեք օր՝ մարմինները հոն մնալու պայմանով: Բայց Երուսաղէմի նուիրակ Ստեփան Եպիսկոպոսին և ազգին գերապատուեցեալ իշխանապետ Յակոբ Մամիկոնեանի բողոքներուն վրայ եկեղեցւոյ դուռը կատարուեցաւ վճիռին գործադրութիւնը 1810 յուլիս 16-ին, Երկոտասան առաքելոց տօնին շաբաթ առտուն, և մարմիններն ալ անմիջապէս վերցուելով մեծահանդէս յուղարկաւորութիւն կատարուեցաւ երգօք հոգևօք (ՅԱՍ. Ա. 279-285 և ՆՐՎ. Բ. 286-305): Կարնոյ գերեզմաննոցին հիւսիս արևելեան կողմը, Նահատակաց գերեզմաններ կոչուած մասին մէջ, գետնի վրայ երեք անտաշ կարմրորակ սև բիծերով գերեզմանաքարեր, Վառվառի, Գասպարի և Մարիամի շիրիմները կը ցուցնեն, և Կարնոյ ժողովուրդին ուխտատեղի եղած են, և այնպէս կը մնային, մինչև որ 1880-ին Օրմանեան Մաղաթիա առաջնորդը նոյն քարերը շրջապատով փակեց և յիշատակի խաչքար կանգնեց, երբ տակաւին կապրէին երանելիներուն նահատակութեան ականատես ծերունիներ: Վառվառի անունը շատ հռչակուած է Կարնոյ և շրջակայից մէջ և շատ տաղեր յօրինուած են իրեն և ընկերներուն պատուոյն: Հրաշքներ ալ կը պատմուին շատերուն կողմէն, ոտանաւոր վկայաբանութիւն մըն ալ գիրի առնուած է Սահակ Մըսրի վկայաբանութեան ոճով և չափով և 646 տողով, որուն յառաջարանին և վերջին տաղին գլխագիրները Ի Հէննէէս կը կապեն, և միննոյն Կարնեցի նօտար Յովհաննէսը կը ցուցնեն սոյն ոտանաւորին ալ հեղինակը : Արդէն Յարութիւն Կարնեցի նահատակին վկայաբանութեան ալ գլխատառերը Ի Հաննէ նօտարէ Կարնեցւոյ կը կապեն (ՆՐՎ. Բ. 265-288): Երուսաղէմի միաբան Յովհաննէս արեղայ, Ստեփանոս նուիրակի ընկեր, երեք նահատակներուն զատ զատ տապանագիրեր ալ յօրինած է (ՆՐՎ. Բ. 311-313). Էնբառն=1810 թուականին բայց տեղը գրուած չեն:

2482. ՏՓՂԻՍԵՅԻ ՎԿԱՆԵՐ

Պարսից կողմն ալ կան հաւատոյ համար նահատակուած վկաներ: Այս կարգին պիտի յիշենք նախ Հասան-Ջալալեան Դանիէլ բէկը, Մէլիք բէկի որդին, Արցախ նահանգի Խաչէն գաւառի իշխանը, որ առ սուրբ հաւատոյ սա լուսահոգի, նահատակի աստ յամրոցիս Շուշի, դառն տնջանօք Իբրահիմ խանի, ինչպէս իր որդին Բաղդասար Աղուանից մետրոպոլիտը արձանագրած է նոր շինել տուած շիրմին վրայ (ՆՐՎԲ. 252): Իպրահիմ խանի բռնութիւններէն և հալածանքներէն փախչող Հասան-Ջալալեաններէն միայն Սարգիս և Դանիէլ մնացէր էին, որոնք տոկացին Իպրահիմ բռնութեանց, վերջէն իրենք ալ յաջողեցան խոյս տալ, այլ երբ Դանիէլ ետ դարձաւ

եկեղեցական գանձերը հաւաքելու նպատակով, խանին ձեռքն ինկաւ, և ուրացութեան չհամակերպելով անխնայ խողխողուեցաւ (80 ՓՐՁ. Ե. 144-146): Նահատակութիւնը տեղի ունեցած է 1791-ին, իսկ նոր շիրիմը կանգնուած է 1851-ին: Միւս նահատակն ալ նոյնպէս ծանօթ անձնաւորութիւն է, Սայեադ Նովա անունով հռչակուած աշուղը, որ է ժողովրդական երգիչը, աւազանի անունով Յարութիւն, բնիկ Տփղիսեցի, Հաւլաբար արուարձանէն, պանդուխտ Բերիացիի մը ևս Հաւլաբարցի կնոջ մը վաւակ, հաւանաբար 1712-ին ծնած, և աղայութեան ատէնէն ջուհակութեան աշակերտած, բայց քաղցր ձայնովը և երաժշտական աւիւնովը հետզհետէ ջութակահարութեան և երգիչութեան հետևած, և Սուրբ Կարապետի կարողութենով սովորած վանազան նուագարաններ (ՆՐՎ.Բ.255): Սայեադ Նովա երգած է թուրքերէն և վրացերէն և հայերէն լեզուներով, և հրապարակի ծանօթ երգիչ եղած է 1742-էն սկսելով, թէ ժողովուրին և թէ Վրաց արքունիքին վուարձացուցիչն ըլլալով հաւասարապէս իր գլխաւոր երգարուն հաւաքածոն ալ գտնուած է: Կրօնական և բարոյական ուղղութիւնը ամուր ըլլալով իր սիրտին մէջ, հետզհետէ կը պաղի իր երգիչութենէն, և երբ իր ամուսին Մարմարը կը մեռնի 1768-ին (ՆՐՎ.Բ.262), երկու մանչ և երկու աղջիկ վաւակները քաղաք կը թողու և ինքն Հաղբատու Ս. Նշան վանքը կառանձնանայ հաւանաբար 1770-ին, ուր արեղայ ալ կը ձեռնադրուի: Բսան և հինգ տարիներ ապաշխարողական կեանք կանցունէ աշուղութիւնն մեղք բան համարելով (ՆՐՎ.Բ.261): Աղա Մահմէտ Վրաստան խանի Վրաստան յարձակելուն և ասպատակելուն առթիւ Յարութիւն արեղայ Տփղիս կուգայ և վաւակները ապահովի կը հանէ Մուղդոկ քաղաքը, և երբ Հաղբատ կը դառնայ հրոսակը վանքը կը խուժէ, եկեղեցին կը մտնէ, ուր աղօթքի կեցած էր Սայեադ Նովան, և կը բռնադատէ վայն ելլալ և ուրանալ. իսկ նա կը պատասխանէ, եկեղեցուց դուրս չեմ գալ, Յիսուսին չեմ ուրանալ, և Պարսից սուրերուն ներքև հոգին կաւանդէ 1795 սեպտեմբերի մէջ (ՆՐՎ.Բ.264): Նահատակի գերեզման մըն ալ կը գտնուի Շուշի քաղաքը, Հին Հանգստարանի վարի կողմին մօտ, բայց Անտօն Տփղիսեցի անունէն և 1795 թուականէն աւելի տեղեկութիւն չունինք: Թուականը բաւական է հետևցնել, թէ պարսիկ հրոսակին ատեն ուրացութեան հրաւիրուած, և հրաւերին ընդդիմացած նահատակ մըն է Անտօնն ալ Սայեադ Նովայի նման: Նահատակի մատուռ մըն ալ կայ Շամախի գաւառի Բարքանջ գիւղի գերեզմանատունը, նուիրուած Սահակ վարդապետի, որ եղած է յայլապգեաց ի ծնէ բուն. բայց դարձած է հաւատ լուսաւորչուն, և վարդապետ ալ ձեռնադրուած, որ նահատակուած է հուրք այրեցեալ, հարկաւ իսալութենէ դարձած ըլլալուն պատճառով: Նահատակութեան թուականն է 1817 մայիս 1 (ՆՐՎ.Բ.314), որ կը հանդիպի Յինանց վեցերորդ երեքշաբթին: Շուշի քաղաքի գերեզմանոցին մէջ ալ նահատակի մը գերեզմանը կը գտնուի, Պետրոս Նիժեցի, որդի քահանայի, 1826 սեպտեմբեր 13-ին նահատակուած, բայց պարագաներ չեն յիշուած (ՆՐՎ.Բ.315):

Տ.ՅՈՎՀԱՆՆԷՍ Ը. ԿԱՐԲԵՅԻ

2483. ԿԱՐԲԵՅԻՆ ՅԷԶՄԻԱԾԻՆ

Նոր կաթողիկոսի մը ժամանակամիջոցը ձեռք առած ատեննիս, սովոր էինք նախապէս անոր անցեալը, բայց վերջին դարուս գործերն ու եղելութիւնը մանրապատում կերպով մեզի ծանօթ ըլլալուն, և հայրապետական գահը բարձրացնողներուն կանխաւ ասպարէպի վրայ գտնուելուն պատճառով, անոնք իբր արդէն ծանօթ անձեր կը ներկայանան մեզի և նախընթացնին պրպտելու պէտք չենք ունենար: Կարբեցիին մասին խօսիլ սկսած ենք Եփրեմի կաթողիկոսութեան առաջին օրերէն (2334), և շարունակաբար հետևած ենք անոր գործունէութեան, որ դժբախտաբար աւելի իր անձին քան հանրութեան օգտին շուրջը կը դառնար: Նախ կաթողիկոսին և կաթողիկոսութեան վրայ ազդելու, և յետոյ նոյնիսկ կաթողիկոսութեան հասնելու ճիգերը վերջապէս պսակուեցան,

թէպէտ ոչ առանց անուղիղ միջոցներու: Այլ այսպէս թէ այնպէս 1831 յունիս 30-ի կայսերական հրովարտակը եկաւ պսակել անոր այնչափ տարիներէ ի վեր տաժած փափաքը և գործածած ջանքերը, և պաշտօնապէս տիրացաւ Ամենայն Հայոց հայրապետական աթոռին: Յովհաննէս 69 տարեկան էր կաթողիկոս եղած ատեն (2334), և կը գտնուէր Տփղիս, ուր յուլիսի մէջ ձեռքը հասած կըլլայ կայսերական հրովարտակը, և իբր ամիսուկէս ևս Տփղիս մնալով սեպտեմբերի սկիզբները կը մեկնի, և 15-ին Էջմիածին կը հասնի: Սինոդին կողմանէ հրաւիրակներ ղրկուած էին Գրիգոր Արհեան ու Բարսեղ Ատրպատականի եպիսկոպոսներ, և Մատթէոս ու Յովսէփ վարդապետներ, յետինը նոյն ատեն Մատթէոսեան Տէր-Մարութեանց Կարբեցի վարդապետը, որ իբրև Ներսէսի անձնուէր յատուկ յանձնարարութիւններ ստացած էր անկէ (2459), բայց Ներսէսի Տփղիսէ հեռացուելէն ետքը Կարբեցիին կողմն էր անցած, որուն հայրենակից և ազգակիցն ալ էր, այլ ևս անկէ յուսալով իր ապագայ բարձրացումը: Կարբեցիին Տփղիսի առաջնորդութեան միջոցին ամէն ջանք թափած էր, Տփղիսեցւոց մոռցնել տալ Ներսէսի անունը և իրեն գրաւել անոնց համակրութիւնը, բայց ապարդիւն անցած էին իր բոլոր ջանքերը, որ մինչև իր մեկնելուն օրն ալ շեշտուեցաւ: Փոխանակ աւելի գերազանց արդիւնքներ ցոյց տալու, Ներսէսիները ապատելու ճամբան ընտրեց, և չյաջողելով Ներսէսի անձին վրայ, Ներսիսեան ուսումնարանին վրայ թափեց իր ցասումը: Վարժարանը ղրկեց իր եկամուտներէն, հինգդասեան ընթացքը երկդասեանի, 400 աշակերտները 160-ի, և 11 ուսուցիչները 3- ի վերածեց: Միև կողմէն իրեն պետական պաշտպանութիւն աւելցնելու համար վարժարանին պարպուած մասերը պիտուորական վարչութեան տրամադրեց, և վարժարանի Կոչոր կալուածը կառավարութեան նուիրեց, բայց իբր փոխարինութիւն առատ ճանապարհածախսէ աւելի բան մը չստացաւ: Պանկրատիէվ որ կառավարչական տեղեկութիւն կը վարեր, փափաքեցաւ անձամբ ներկայ գտնուիլ օծման արարողութեան, ուստի Կարբեցիին Էջմիածին հասնելէն ետքը պարտաւորուեցաւ յետաձգել տալ: Իսկ Պանկրատիէվ ալ իր փափաքին չհասաւ, զի ինքն չգացած հոկտեմբեր 7-ին հասաւ: Բարոն Գրիգոր Ռօպէն նոր կառավարչապետը, և ինքն ուլեց արարողութեան երթալ, բայց անկարող եղաւ փափաքը լրացնել, և այլևս չերկարելու համար ներկայացուցիչ նշանակեց Երևանի նահանգապետ իշխան Վասիլ Բեհրութեանը (ԵՐՅ. Բ. 14), որ արէն Կարբեցիին ընտրութեան մէջ ալ ազդեցիկ դեր վարած էր (2471): Հոկտեմբեր 28-ին Տփղիսէ ճամբայ հանեց Վլանդալի յոյն պօրավարը և Փալանդով վրացի իշխանը և Արարատեան Սերովբէ եպիսկոպոսը, իբր Բեհրութեանի ընկերակիցներ, և հրաման ալ ըրավ որ Երևանէ քաղաքական և պիտուորական պաշտօնակալներ, վաշտ մը պիտուոր և թընդանօթներ և նուագածուաց խումբ մը Էջմիածին երթան (ԵՐՅ, Բ. 14):

2484. ՕԾՄԱՆ ՀԱՆԴԷՍԸ

Ռօպէն թէպէտ բացակայ, բայց ստացած հրահանգին համեմատ, ամէն ջանք ըրաւ օծման արարողութիւնը շքեղ և փառաւոր կատարելու: Առաջին անգամ է որ ռուսական տիրապետութեան ներքև այսպիսի արարողութիւն մը տեղի կունենար, անձը իբր ռուսական քաղաքականութեան նուիրեալ և հաճոյակատար ըմբռնուած էր, միանգամայն ժողովրդականութիւն վայելող Ներսէսի դէմ մրցակից կը ճանչցուէր, որով կառավարութեան պատիւը կը պահանջէր իր պաշտպանելը ըստ կարի բարձրացնել և հանրութեան հաճելի ընել: Դուրսէն եկողները յիշեցինք, ներսն ալ պատրաստութիւնները ճոխութեամբ կատարուեցան. նոյեմբեր 6 ուրբաթ օր պաշտօնական ձևակերպութիւնները կատարուեցան Սինոդի մէջ, և Սինոդի հետ գործելու երդումը ստացուեցան, իսկ 7-ին շաբաթ օրը, Հրեշտակապետաց տօնին երեկոյին, մեծահանդէս թափօրով և 18 պանգակներու միաձայն հնչմամբ, նորընտիր առաջնորդուեցաւ մայր տաճարը իջման առջև, ուր եկեղեցւոյ երկրպագութեան սովորական աղօթքներէն ետքը կարդացուեցաւ նախ կայսերական

հրովարտակը ոռւսերէն և հայերէն լեզուներով, և ապա երդման ձևը զոր նորընտիր ստորագրեց և յանձնեց, և յետոյ կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւնը, և ժամ մը ետքն ալ եկեացէն և հսկումը: Յաջորդ օրը նոյեմբեր 8 Խաչի իններորդ կիրակէ, օծման արարողութիւնը կատարուեցաւ և առաջին հայրապետական պատարագը մատուցուեցաւ, Մաշտոցի կարգադրութեան համաձայն (ԵՐՅ. Բ. 18-19), և որպէսզի հանդիսաւոր արարողութեանը աւելի շուք տրուի, ամբողջ վաշտը միանուագ հրացան արձակեց, և թնդանօթներ 101 անգամ արձակուեցան (ԵՐՅ. Բ. 21): Եկեղեցւոյ մէջ աւուր պատշաճի ատենաբանութիւն մըն ալ արտասանեց Շահխաթունեան Յովհաննէս վարդապետ (ՇԱՀ. Ա. 237): Երկուտասան հանդիսագիր եպիսկոպոսներն եղան, Կարապետ Կարնեցին, Գրիգոր Բաբաջանեան, Գրիգոր Շամշատինի, Յակոբ Ժամօրհնող, Ստեփան Չախալեան, Ստեփանոս Ծերունեան, Սերովբէ Արարատեան, Սահակ Վաղարշապատցի, Ստեփանոս Գեղամեան, Բարսեղ Ատրպատականի, Յովհաննէս գրագիր և Խաչատուր Նախիջևանի (ԵՐՅ. Բ. 20): Եփրեմ չէր կրցած եկեղեցի իջնալ, որչափ ալ կայսերական հրովարտակը իրեն յանձնարարած էր, կարգաւորել և կատարել և կատարել զօծութիւն և զձեռնադրութիւն նորա համակ պարտուպատշաճ հանդիսավեհութեամբ (ԵՐՅ. Բ. 9), իսկ Մարտիրոս տեղապահ երեք շաբաթ առաջ հոկտեմբեր 16-ին վախճանած էր (ՄՍՐ. 229), որով եպիսկոպոսական դասուն գլուխ կանգնեցաւ Կարապետ, նախկին Կարնոյ և այժմ Տայոց արքեպիսկոպոսը: Եփրեմ բաւականացաւ վեհարանին մէջ դիմաւորել նոր օծեալ կաթողիկոսը, և կայսրը և ազգատոհմը օրհնելով, ձեռքովը յանձնեց խաչապսակ գաւազանը, երկու պաշտօնական պանակէները և վարդաձև մատանին, և գագաթը համբուրելով գնաց ի տեղի իւր այրն Աստուծոյ (ԵՐՅ. Բ. 20): Նոյն օր 300 հրաւիրեալներու ձաշ տրուեցաւ (ԵՐՅ, Բ. 22), և երեկոյեանի ատեն ալ երկու եպիսկոպոսներ կալեալ զձեռաց նորա հանին յաթոռ հայրապետական (ԵՐՅ. Բ. 20), և արարողութիւնները վերջացան: Մարտ 16-էն նոյեմբեր 8, մօտաւորապէս 8 ամիսներ անցած էին, մինչև որ նորընտիր Յովհաննէսի հայրապետական գործունէութիւնը պաշտօնապէս սկսէր:

2485. ՀՐՈՎԱՐՏԱԿ ԵՒ ԵՐԴՄՆԱԳԻՐ

Յովհաննէսի ուղղած հրովարտակը համառօտ է և 1831 յունիս 30 թուականը կը կրէ, իսկ մեծ հրովարտակը որ Մայրտաճարին մէջ ալ կարդացուեցաւ, ուղղուած է Եփրեմ կաթողիկոսի և բոլոր եկեղեցական և աշխարհական աստիճանաւորներու, և 1831 յուլիս 1 թուականը կը կրէ, Կարբեցիին ուղղուածին յաջորդ օրը: Ասոր մէջ նախ կյիշուի Եփրեմի 1812-ին և դարձեալ 1828-ին հրաժարիլը, և հրաժարականներուն մերժուիլը, և 1831-ի հրաժարականին ընդունուիլը գլխաւորապէս միւռոն օրհնելու և եպիսկոպոս ձեռնադրելու կարգադրութիւնը կորուսած ըլլալուն համար: Յետոյ կը պատմուին կատարուած ընտրութեան մանրամասնութիւնները, և երկու ընտրելիներէն Յովհաննէսի հաստատուիլը: Նշանակալից կէտն այն է, որ ոչ միայն նորընտիրին օծումը Եփրեմի կը յանձնարարուի, այլև յայտնապէս կը հրահանգուի, թէ ունի գործակից լինել նորոգ ընտրեալ պատրիարքին յամենայն ծանրագոյն դիպուածս վերաբերեալս առ կառավարութիւն եկեղեցւոյս այսորիկ իւրովք խորհրդովք և խրախուովք (ՄՍՐ. 223): Բայց յիշուած չենք գտներ, որ Յովհաննէս երբեք Եփրեմին խորհուրդին դիմել, կամ Եփրեմ կաթողիկոսութեան գործերու միջամտել ուզած ըլլան: Իսկ երդմնագիրը զոր նորընտիրը ստորագրեց, կը խոստանայ Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւնը անխախտ պահել, եկեղեցւոյ պաշտօնեաները բարեկարգել և պայծառացնել, ջատագով լինել ուսումնականութեան և մանաւանդ ընտիր աստուածապաշտութեան, հաւատարիմ ըլլալ Ռուսաց կայսեր ակնկարկութեան և տնօրէնութեանց, որք հային յօգուտ տէրութեան, սրբոյ եկեղեցւոյ և ազգին իմոյ, և խնամել իրեն յանձնուած բանաւոր հօտը: Այդ համառօտ վերլուծումները գաղափար կու տան պաշտօնական շրջանակներու մէջ տիրող մտայնութեան,

մանաւանդ Յովհաննէսը կերպով մը Եփրեմի խրատներուն ենթարկելը կը ցուցնէ, թէ որչափ ալ նա պետական պաշտպանութիւն կը վայելէր, բայց իր կարողութեան վրայ կատարեալ վստահութիւն չէր ներշնչեր:

2486. ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԳԻՐԵՐ

Նոր կաթողիկոսին, ինչպէս ամէն նոր պաշտօնի անցնողին, առաջին գործը պիտի ըլլար պինքը ձանչցնել և իր ուղղութիւնը բացատրել, մանաւանդ որ ներկայ պարագային մէջ մտահոգութեան առարկայ կրնայ ըլլալ Տաճկահայոց վերաբերումը սոյն ընտրութեան հանդէպ, որուն մասնակցելու չհրաւիրուեցան, և անսովոր ալ էր օրինաւոր և ընկալեալ կաթողիկոսին կենդանութեան նոր մը օծել, ոչ իբրև աթոռակից, ինչպէս երբեմն սովորութիւն եղած էր, և ոչ ալ լքեալ աթոռին տէր մը գտնուելու համար, ինչպէս Մովսէս Տաթևացիին առթին տեղի ունեցած էր: Այլ օրինաւոր և սիրեցեալ կաթողիկոս մը գործէ հեռացնելու ձևով, մանաւանդ որ այս փոփոխութիւնը կը կատարուէր լոկ ռուսական Հայաստանի ամփոփ սահմանին մէջ, առանց ուրիշ երկիրներու ազգայնոց, և յատկապէս առանց Տաճկահայոց գիտութեան և հաւանութեան: Ռուսաստանի վիճակներուն յղուած շրջաբերական կոնդակը, եղելութեանց պարզ պատմութենէն և ընդհանուր և սովորական խրատներէն պատ բան մը չէին պարունակեր, ինչպէս կը տեսնանք Բեսարաբիոյ ուղղուած օրինակին հրատարակութենէ, որ 1831 դեկտեմբեր 1 թուականը կը կրէ (ՄՍՐ.216-232), օծումէն 22 օր ետքը: Պարսկաստանի վիճակներուն ալ կրնար միևնոյն ձևով գրուիլ, զի անմիջապէս Էջմիածնի ենթարկեալ վիճակներ են և իրարու հետ միացեալ առանձին մարմին մը չեն կազմեր, ինչոր ճշմարտուի Թուրքիոյ վիճակներուն վրայ: Այս է պատճառը որ Թուրքիա յղուելիք շրջաբերականները պետական խնդիրի կարևորութիւնը ստացան:

2487. ՏԱՃԿԱՀԱՅՈՅ ՂՐԿՈՒԵԼԻՔՆԵՐ

Յովհաննէսի գլխաւոր կասկածը Եփրեմի հրաժարականին շուրջն էր, մի՛ գուցէ Տաճկահայք պինքն աթոռը յափշտակող և բռնութեամբ կամ խաբէութեամբ Եփրեմը տապալող մը կարծեն: Իբրև դարման մտածեց իր կոնդակին ձևով երկրորդ մըն ալ Եփրեմի բերնէն պատրաստել տալ, իր կառվին հրաժարականը յայտարարող, ինչ որ առանց դժուարութեան Եփրեմ ստորագրեց: Նմանօրինակ կողակներ Երուսաղէմի աթոռին հասցէին ալ պատրաստուեցան, և գրութեանց ոյժ տալու և Տաճկահայերը համոզելու համար, յատուկ պատուիրակներ ալ նշանակուեցան, Բարսեղ եպիսկոպոս Ատրպատականի առաջնորդ, և Յովհաննէս վարդապետ Շահխաթունեան: Բայց պատգամաւորները և գիրերը ճամբայ չելած, խորհեցաւ Յովհաննէս պետական հաւանութիւն ստանալ, և Գալուստ Էլիմիրպեան մտերմին ձեռքով գործն ու գիրերը կառավարչապետ Ռօպէնի հաւանութեան ենթարկեց, անցագիր և յանձնարարականներ ալ հանել տալու հրահանգով: Ռօպէն երբոր մէկ կողմէն գիրերուն պատճէնները Պետրբուրգ կը հաղորդէր դեկտեմբեր 2-ին, միւս կողմէն գիրերը հասցէին յղելու և պատգամաւորները ճամբայ հանելու հաւանութիւնը Էջմիածին գրել կը պատրաստուէր, երբ իրեն այցելեց Յովհաննէս Մելիք Ադամեան, սերնդեամբ Արցախեցի, բայց անցեալ դարէն Կ. Պոլիս փոխադրուած, որ դեսպանի յանձնարարութեամբ կու գար իր հայրենական կալուածներուն տիրանալու, և այդ նպատակով կառավարչապետին կը ներկայանար: Մարդը լիովին գիտակ էր Կ. Պոլսոյ պետական և ազգային շրջանակներու մտայնութեան և տեղական գործերու հանգամանքներուն, և Ռօպէն հետաքրքրուեցաւ օգտուիլ անոր տեղեկութիւններէն: Մելիք-Ադամեան համարձակօրէն դիտել տուաւ թէ Կ. Պոլսոյ կառավարական շրջանակներուն մէջ անվստահութեամբ կը դիտուի ամէն բան որ Ռուսիոյ հետ յարաբերութիւն ունի, թէ ազգային շրջանակներն ալ պարտաւոր են հետևիլ այդ ուղղութեան, թէ Եփրեմի համար պաշտոնական դիմում ընել հնար եղած չէ, թէ 1828 թըւականէ ասդին կաթողիկոսի անունին

յիշատակութիւնն իսկ դադրած է հոգևոր պաշտամանց մէջ (ԵՐՅ. Բ. 45), և Էջմիածնի եպիսկոպոս ալ Կ, Պոլխս չէ տեսնուած (ԵՐՅ. Բ. 44), Ռուսիոյ և Բարձրագոյն Դերան մէջ եղած անբաւականութեան պատճառով (ԵՐՅ. Բ. 31): Ռօպէն տպաւորուեցաւ այդ տեղեկութիւններէն, առկախեց Էջմիածին հաւանութիւն գրելը, և փութաց դեկտեմբեր 12-ին նորէն գրել Պետրբուրգ, նոր ստացած կասկածաւոր տեղեկութիւնները հաղորդելով և որոշ հրահանգ խնդրելով: Բլուտով ներքին գործոց նախարարը, Ռօպէնի առաջին նամակին կը պատասխանէր դեկտեմբեր 21-ին, և Կ. Պոլսոյ դեսպան Բուտէնէվէ ալ առած տեղեկութիւնները յիշելով, յարմար չէր տեսնէր Օսմանեան տէրութեան մտադրութիւնը արթնցնել պատգամաւորական երևոյթներով: Նոյն իմաստով կաթողիկոսին ալ կը գրէր դեկտեմբեր 28-ին, թէ ինքն լուր առած է դեսպանէն թէ Կ, Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքները յայտնած են, որ ամէն նշանաւոր հոգևոր արարողութեանց վերաբերութեամբ պարտ են միշտ դիմել առ այդ աթոռը, որպէս առ իւրեանց ընդհանրական պետը (ԵՐՅ. Բ. 40), իսկ կոնդակները կարելի է հեշտութեամբ և առանց որ և է ծախսերի տեղ հասցնել մեր դիպլոմատիկականէ գործակատարների, այսինքն դեսպաններու ձեռքով (ԵՐՅ. Բ. 42): Այս կարգադրութեան համաձայն Բլատով 1832 յունուար 11-ին Ռօպէնի կը գրէ որ կողակներու բնագիրները իրեն կրկուին ըստ պատկանելոյն տեղ հասցնելու համար (ԵՐՅ.Բ.43):

2488. ԿԱՐԲԵՑԻԻ ՊՆԴԵԼԸ

Յովհաննէսի դիւր չեկան այդ կերպերը, որ իր կաթողիկոսութեան վաւերականութիւնը ապահով մեծամասնութենէն, այսինքն Տաճկահայերէն կը սպասէր, և ռուսական միջամտութիւնը կը փնտոէր միայն, անոնց կողմանէ հանուելիք դժուարութիւնները հարթելու, եթէ երբեք տեղի ունենային: Իր դիրքին հաստատութեան հետ աթոռական իրաւունքներու և շահերու կէտերն ալ կային նկատողութեան առնուելիք, որչափ ալ Կ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքները վստահեցնէին թէ իրենց գերագոյն պետ կը ճանաչեն Էջմիածին նստող Ամենայն Հայոց կաթողիկոսը: Վերոյիշեալ 1828 թուականէ ասդին, Էջմիածին Թուրքիոյ համար եպիսկոպոս չէր ձեռնադրած, միւռոն չէր բաշխած, նուիրակ չէր չուղարկած, նուէր և օգնութիւն չէր ստացած, նոյնիսկ Էջմիածնապատկան կալուածներու եկամուտը չէր գանձած: Վերջին միւռոնի օրհնութիւնը 1820-ին էր եղած, և դադարած էր այդ առթիւ և ուրիշ առիթներով եկող ուխտաւորներու երթևեկութիւնը որ կաթողիկոսներու համար եկամուտքի նշանաւոր աղբիւրներից մէկն էր: Նոյնիսկ պաշտօնական թղթակցութիւնը դադարած էր Էջմիածնի և Կ. Պոլսոյ միջև: Եւ որովհետև Տաճկահայ վիճակներ առանց միւռոն չէին կրնար ըլլալ, Ասոյ Եփրեմ կաթողիկոսը օգուտ կը քաղէր իր օրհնած միւռոնը յղել, ինչ որ կրնար հետզհետէ Կիլիկիոյ իրաւասութեան ընդարձակուելուն ալ նպաստել: Որ Կիլիկիոյ աթոռը կրնար օգտուիլ պարագայէն, իրաւամբ կրնար ենթադրուիլ, բայց անտեղի էր Յովհաննէսի կասկածը Ստեփանոս Աղաւնի պատրիարքին մասին, երբ կը կարծէր թէ Էջմիածնի աթոռը գերագոյն ճանաչելով, իսկ պատգամաւորութիւնը վտանգաւոր ցուցնելով թշնամական դիրք էբռնել այդ պատրիարքը առ աթոռի շահերը (ԵՐՅ.Բ.46): Կ. Պոլսոյ պատրիարքները ոչ մի շահ և ոչ մի դիտում ունէին Սիսին նպաստելու, քանի որ ինքզինքնին Էջմիածնի ներկայացուցիչներ և մշտնջենաւոր նուիրակներ և կաթողիկոսական գործադիրներ կը նկատէին (2336): Էջմիածնի համար բաւական էր որևէ միջոցով Կ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքներուն հետ յարաբերութիւն ունենալ, միւռոնը անոնց յղել և ձեռնադրուելիքները անոնց կողմէն ընդունիլ, որ Մայրաթոռոյ գերագահութիւնը պահուէր և իրաւասութիւնը յարգուէր: Բայց տարբեր էր գործը եթէ նկատի առնուէին միւռոն բաշխող եպիսկոպոսներուն անձնական օգուտները, և ուխտաւորներուն Հայրապետի աջը համբուրելու և աջահամբոյր տալու անցեալը, որ վեհի անձնական սնդուկն է մտել: Յովհաննէս այդ կէտերը

որոճավով 1832 յունուար 30-ին Ռօպէնի գրելով, պատգամաւոր յղելու անհրաժեշտ պէտքը կը շեշտէր, և Ռօպէն փետրուար 11-ին Բլուտովի կը հաղորդէր կաթողիկոսին գիրը: Բայց Պետրբուրգ իր որոշումէն չէր փոխուեր, և որովհետև Յովհաննէս իր և Եփրեմի կոնդակներուն դեսպանական միջնորդութեամբ յղուելուն հաւանութիւն չէր տար, գիրերը կը մնային Տփղիս, Ռօպէնի մօտ, և Տաճկահայեր կաթողիկոսի փոփոխութեան պաշտօնական ծանուցումը չէին ստանար (ԵՐՅ.Բ.45), թէպէտև լուրը գաղտնի չէր կրնար մնալ, բայց գործնական արդիւնք չէր ունենար, զի արդէն Եփրեմի ալ անունին յիշատակութիւնը կանուխէն դադարած էր:

2489. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՒԹԵՐՈՐԴ

Կարևորութենէ վուրկ չենք կարծեր անցողակի դիտել տալ այստեղ, թէ Յովհաննէս առաջինը եղաւ, որ թուահամարի մակդիրով սկսաւ կոչուիլ պատմական և պաշտօնական շրջանակներու մէջ, և Յովհաննէս Ութերորդ անունով ճանչցուիլ (ՇԱՀ.Ա.140): Աներկուանալի է որ Ութերորդ թրւահամարը փոխադրուած է Չամշեանի ցուցակէն, որ թուահամարի անցուցած է Յովհաննէս Գ. Բագարանցի հակառակաթող, և Յովհաննէս Ե. Կոչած է Սսեցի Մեծաբարոյ (ՉԱՄ. ՅԱԻ. (109-110): Չամշեանէն առաջ Ջահկեցին ալ Յովհաննէս Բագարանցին ցուցակի անցուցած էր, Լուսաւորիչէն 24 թղ թուելով, բայց իւրաքանչիւր անունի թուահամար չէր աւելցուցած (ՃԱՀ. 585): Իսկ Շահխաթունեան թէպէտ Բագարանցին չի յիշեր, բայց Յովհաննէս Բ. Գաբեղեանէ (ՇԱՀ, Ա. 182), Յովհաննէս Դ. կանուանէ Օձնեցին (ՇԱՀ. Ա. 186), և Ութերորդ կը դնէ Կարբեցին (ՇԱՀ. Ա. 236), Չամշեանի թուահամարին հետևողութեամբ: Մենք Բագարանցի թուահամարէ դուրս թողուցինք (389), և Յովհաննէս Է. եղած պիտի ըլլար Կարբեցին, սակայն թիւրիմացութեամբ ցուցակներէ դուրս թողուած Յովհաննէս Աջակիրի անունը կաթողիկոսաց գաւազանին անցունելով, անոր վրայ լրացուցինք եօթներորդ թուահամարը (1507), որով պատմական ճշդութեամբ կրնանք պահել Կարբեցիին վրայ Յովհաննէս Ը. Կոչումը: Յովհաննէսի յաջորդող կաթողիկոսներ իրենց կենդանութեան ատենէն թուահամարով կոչուելու սովորութիւնը պահեցին, և նոյնպէս կը շարունակուի մինչև այսօր: Իսկ նախընթացներն ալ թուահամարով որոշելու սովորութիւնը պատմականօրէն ընդունուեցաւ և տարածուեցաւ, որուն մենք ալ հետևեցանք, թուահամարին հետ տեղական կամ ցեղական մականուն մըն ալ աւելցնելով միշտ, որպէսզի հին ու նոր սովորութիւնները միանգամայն յարգած ըլլանք և անձնաւորութիւնները ճշդելու դիւրութիւն ընծայենք :

2490. ՄԻԻՌՈՆԻ ՕՐՀ ՆՈՒԹԻՒՆ

Յովհաննէս Տաճկահայոց յարաբերութեան մտնելու հետամուտ, երբոր տեսաւ որ ռուսական կառավարութիւն իր տեսաակէտէն չի խախտիր, գործնական կերպով իր նպատակին կարծեց հասնիլ 1832 տարուոյ առաջին օրերէն ամէն կողմ լուր տարածելով որ առաջիկայ մայիս 8-ին, Երևման Խաչի կիրակէն, միւռօնի օրհնութիւն պիտի կատաուի, և յուսալով որ Տաճկաստանէ ալ շատեր Էջմիածին կու գան, և օգուտներ և յարաբերութիւններ կը կարգադրուին: Սակայն կացութիւնը տակաւին կանոնաւոր ձև առած չէր, և վստահութիւններ չէին արծարծուած: Օրհնութիւնը կատարուեցաւ և միայն սահմանակից գաւառներից եկողներ եղան սակաւ քանակութեամբ: Այս առթիւ օգտուեցան միայն Կարբեցիին մտերիմ և անձնուէր վարդապետներ որոնք եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացան միւս կիրակիին մայիս 15-ին. և էին Իսահակ Ծաղկարար Երևանցի, Ջաքարիա Գուլասպեան Տփղիսեցի, Յովսէփ Վեհապետեան Կարբեցի, Ղուկաս Տէր-Միքայէլեան Մաստարացի և Խաչատուր Երևանցի, և 28-ին ալ Ստեփանոս Արղուբեան: Վեհապետեանը նոյնինքն Մատթէոսեան կամ Տէր - Մարուգեան Յովսէփն է, որ նոր մականուն մը կազմեց ի պատիւ կաթողիկոսին, և որուն ուրիշներ ալ հետևեցան ապագային:

Միևուսի օրհնությունն է ետքը Յովհաննէս կաթողիկոս, Ռօպէնի դիմեց էջմիածնի եպիսկոպոսներէն մէկուն ձեռքով միևուս յղել Կ. Պոլսոյ Պատրիարքութեան և Թուրքիոյ վիճակներուն, սակայն 1832 մայիսին գրուած նամակը հապիւ 1833 մարտին Ռօպէնէ Բլուտովի հաղորդուեցաւ, և նոյն տարւոյ դեկտեմբեր 5-ին Պետրբուրգէ հրահանգ տրուեցաւ Բուտինէվ դեսպանին Օսմանեան կառավարութեան հետ բանակցութեան մտնելու, օգտուելով նոյեմբեր 25-ին անոր տուած տեղեկութիւններէն, թէ Ջաքարեան վաճառականի մը և Գապէզ Յարութիւնի միջնորդութեամբ կրցած է Կ. Պոլսոյ պատրիարքին և Երուսաղէմի պատրիարքական փոխանորդին հաւանութիւնները ստանալ փոխադարձ յարաբերութիւններ վերահաստատելու համար (ԵՐՅ. Բ. 51-53): Գապէզ Յարութիւն Պէլճեան ամիրան է, իսկ Ջաքարեան վաճառականը, ուրիշ տեղ Նապարեան կոչուած (ԵՐՅ. Բ. 73), մեկ անձանոթ կը մնայ, և պէտք չէ անուններու շփոթութեան վրայ շատ պնդել, քանի որ կը տեսնենք, որ ռուսական պաշտօնագիրներու մէջ, նոյնիսկ Ստեփանոս պատրիարքն ալ Յովսէփ է կոչուած (ԵՐՅ. Բ. 68): Այս բանակցութիւնները դեռ շատ ևս տևեցին ռուսի պահ մը ընդհատելով անոնց շարունակութիւնը, դառնանք Տաճկահայոց կողմը, և Կ. Պոլսոյ ու Երուսաղէմի պատրիարքութեան անցքերը պատմենք:

2491. ԵԳԻՊՏՈՍԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Քաղաքական անցք մը որ Ստեփանոս Աղւանքի պատրիարքութեան առաջին տարիներուն կը զուգադիպի, իրեն նշանակութիւն ունեցաւ Հայ պատրիարքութեանց շրջանակին մէջ ալ: Ծանօթ է թէ մինչև անցեալ գարուն սկիզբները Օսմանեան կայսերութեան նահանգական գրութիւնը հեռի էր այժմ տիրող կառավարչական ձևէն, ուր նահանգապետն ու գաւառապետը պարզ հրամանատար պաշտօնեաներ են: Նահանգապետներ հարկատու իշխանի կամ փոխարքայի մը գիրքն ունէին, և կայսերական գանձուն սակարկեալ գումարը վճարելէն ետքը, բացարձակ տէր էին ներքին վարչութեան, և ամէն ճիւղերու վրայ ապատօրէն կիշխէին: Նահանգներէն անոնք որ իրենց դիրքովը առաւելութիւններ կը վայելէին, կամ թէ նահանգապետը կարողագոյն անձ մըն էր, մինչև իսկ կայսեր դէմ ելլալու համարձակութիւն կունենար: Այսպիսի ոք էր Մէհմէտ-Ալի փաշա, որ Եգիպտոսի կուսակալութեան բացարձակ էր երկրին շինութեան և պարգացման ամէն կերպով փոյթ տարած, և կառավարչական ձևեր հաստատած էր, իրեն խորհրդական քարտուղար և թարգման և գանձուց կառավարիչ ունենալով Ջմիւռնացի Պօղոս Եուսուֆեանը, ուսեալ և բանիբուն և իմաստուն հայազգին: Մէհմէտ-Ալի իրեն թևարկութեան ներքև առած էր ոչ միայն ամբողջ Եգիպտոսը մինչև Եթովպիա, այլև Ափրիկեան գաւառներ մինչև Ֆէս և հարաւային Արաբիան մինչև Օվկիանոս, և իր համբաւը Եւրոպիոյ մէջ ալ տարածուած էր: Հակառակ ստացած այդ բարձր դիրքին Աքեայի կառավարիչը Ապտուլլահ փաշա (ՍԱԻ. 1185) համարձակեցաւ նեղել Եգիպտացի նաւերը և նախատական գիր ուղղել Մէհմէտ-Ալիի, 1831-ին, որ Սուլտանին դիմեց վայն յանդիմանել կամ պատժել տալու, մինչ Սուլտանը կառավարիչը արդարացնելով Մէհմէտ - Ալին մեղադրեց: Սա ևս քանակս վայրանալով գունդ կազմեց, իր որդւոյն Իպրահիմ փաշայի հրամանատարութեամբ, որ առաջ Ասկաղոնի վրայ քալեց 1832-ին, քաղաքը առաւ մայիս 26-ին, և Ապտուլլահն ալ գերաց, հակառակ որ կայսերական գունդեր եկեր էին վերջինիս օգնութեան: Այդ պարագան Իպրահիմը գրգռեց կայսերական ուրիշ գաւառներու վրայ ալ քալել և առաջին անգամ Յոպպէ և Յերուսաղէմ և Տիւրոս և Տրապոլիս իրեն հնապանդեցան մինչև Դամասկոս (ՊԷՐ.245): Իսկ Ապտուլլահ պատուով ընդունուեցաւ Մէհմէտ Ալիէ, ի շնորհս իր խրոխտ և առնացի դիմադրութեան: Օսմանեան կայսրութիւնը պէտք չգաց օրինաւոր պատերազմի ձեռնարկել ապստամբ կողմնակալին դէմ, և առաջին բանակը կազմուեցաւ Բերիոյ մէջ Հիւսէյին փաշայի հրամանատարութեամբ, սակայն քաղաքացին նեղուած և դժգոհ էր, բանակն ալ դժկամակ և

յուսաբեկ՝ գործի չսկսած ցրուիլ սկսաւ, և Հիւսէյին Բերիայէ հեռացաւ և Իպրահիմ քաղաքը գրաւեց: Նոր բանակ կազմուեցաւ Բէշիտ Մէհմէտ փաշայի սպարապետութեամբ, որ Իպրահիմի դէմ ճակատեցաւ Իկոնիոնի մօտ, բայց կայսերական բանակը յաղթուեցաւ, և սպարապետը գերի ինկաւ: Այլ ևս ճամբան բաց էր Իպրահիմի առջև մինչև Կ. Պոլիս, և մայրաքաղաքը սկսաւ վախնալ և կայսրն ալ վարանիլ: Յետին պարագային մէջ նորէն Պէյճեանի խորհուրդին դիմեց Սուլտան Մահմուտ, որուն քանիցս փորձն առած և օգուտը վայելած էր: Պէյճեանի խորհուրդն եղաւ ռուսական օգնութեան դիմել, որ Ադրիանուպոլսոյ դաշնագիրին վրայ (2432) Թուրքիոյ բարեկամ էր դարձած: Խոսրէվ Մէհմէտ փաշա, հինաւուրց խորհրդական, առաջարկին միացաւ, գիրեր գրուեցան և սուրհանդակներ մեկնեցան, մինչև միւս կողմէ Իպրահիմ Իկոնիոնի ճակատամարէն ետքը հանդարտաբայլ կը յառաջէր, և հետզհետէ կը գրաւէր, Իկոնիոն, Սիս, Ատանա, Անկիւրիա, Մաղնիսա, Այտն, Պալըքէսէր, և Քէօթահիա, մինչև Պիլէճիկ (ՊԷՐ.486), և մինչև Պրուսայի մօտերը: Տասն հազարի ռուսական բանակ մը և 18 նաւերու տորմիդ մը, Օրլօֆ հրամանատարութեամբ Վոսփորի վրայ երևցաւ 1833 փետրուար 7-ին (ՊԷՐ.248), և բանակը պետեղուեցաւ Ասնակողման Հիւնթարիսկէլէսի դաշտավայրը: Իսկ Իպրահիմ կանգ առաւ Կուտինա կամ Քէօթահիա, ուր կը գտնուէր: Գաղղիական և անգղիական դեսպաններ ռուսականին միանալով Մէհմէտ-Ալիի նպաստաւոր հաշտութեան համուցեցին Սուլտանը, Եգիպտոս բացարձակապէս ազատ իշխանապետութիւն եղաւ պարզ հարկատուութեան պայմանով, և միանգամայն անոր յանձնուեցան, Ասկաղոն, Երուսաղէմ, Տրապոլիս, Դամասկոս, Բերիա, և Անտիոք, որ է ըսել բովանդակ Ասորիք (ՊԷՐ.249), Էմիրիւհաճ պատուանունով, և Ատանա Սիսի հետ Իպրահիմի տրուեցան ի պարգևի մասին (ՍԱԻ.1186), և 1133 յուլիս 12-ին հաշտութիւնը կնքուեցաւ և Իպրահիմի յաղթական բանակը սկսաւ ետ քաշուիլ (ՊԷՐ.486): Ռուսներ ալ մեծամեծ պատիւներ և վարձատրութիւններ, շքանշաններ և հանդիսութիւններ վայելելով, իրենց կողմանէ ալ Նիկողայոս կայսեր ծննդեան տարեդարձի օրը փոխադարձ հանդէս մը կազմելով, միւս առաւօտուն խաղաղութեամբ մեկնեցան խաղաղական արշավանքներին վերջացնելով: Այդ միջոցներուն էր որ Յովհաննէս կաթողիկոս իր ազդեցութիւնը Տաճկահայոց վրայ տարածելու համար Ռուսիոյ պետական միջամտութեան կը դիմէր (2490), հիմնուելով Ռուսիոյ և Թուրքիոյ միջև սկսած մտերմութեան վրայ:

2492. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾԵՐ

Կ. Պոլիս շատ բան չզգաց այդ քաղաքին միջադէպէն, զի եթէ պահ մը Իպրահիմի մօտենալուն երկիւղը կրեց, բայց երկարատև չեղաւ և խաղաղ վերջաւորութիւն ունեցաւ: Իսկ Երուսաղէմ իրեն վարչական դիրքին մէջ նշանակալից փոփոխութիւն մը չզգաց, զի Կ. Պոլսոյ գերիշխան ազդեցութեան և տեղւոյն անմիջական իշխանութեան միջև, նոր կեդրոն մըն ալ ստեղծուեցաւ Եգիպտոսի մէջ: Իսկ ասկէ առաջ Երուսաղէմի վերաբերեալ գլխաւոր դիպուածները յիշենք: Եւ նախ Գաբրիէլ պատրիարքին Ջմիւռնիոյ առժամեայ առաջնորդութեան ղրկուիլը առանց պատրիարքական անունը թողլու: Կ. Պոլսոյ մէջ անգործ մնալը թէ իրեն և թէ իրիններուն ծանր կու գար, և Երուսաղէմ դառնալու փորձեր կը սկսէին, ինչ որ ոչ կացութեան բարւոքման և ոչ Պօղոսի ձեռնարկներուն յաջողութեան կրնար նպաստաւոր ըլլալ: Այդ նպատակով 1829 յուլիս 1-ին որոշուեցաւ Գաբրիէլի Ջմիւռնիա երթալը, և տեղւոյն առաջնորն Եդեսացի Յարութիւն վարդապետը Պրուսա և Կուտինա փոխադրուեցաւ (ԱՍՏ.Բ.433): Միւս պարագան Չաքարիա Կոփեցիին եպիսկոպոս ձեռնադրուիլին է: Սինչ Յովհաննէս կաթողիկոս ամէն կերպերով ետևէ էր Տաճկահայոց եպիսկոպոսական ձեռնադրութիւնը և միւռոնի բաշխումը մայրաթոռ վրայ անխախտ պահել, Պօղոս Ադրիանուպոլսեցին Երուսաղէմի վարդապետներէն երկուքը, Չաքարիան և

Աբրահամը, էջմիածին կուղևորէր 1833-ին, ճիշդ այն օրեր որ Ռօպէն կառավարչապետ կաթողիկոսին դիմումը Բլուտով նախարարին կը հաղորդէր (2490): Զաքարիա ձեռնադրութիւնը կընդունէր 1833 յուլիս 9-ին, Վարդավառի օրը, և հարկաւ նոր օրհնուած միւռոնէն ալ առնելով Երուսաղէմ կը դառնար: Իսկ Աբրահամ վարդապետ կաթուածահար եղած անագան ձեռնադրութիւն կը ստանար, և Երուսաղէմ դառնալով կը վախճանէր (ԱՍՏ. Բ. 452): Պօղոս նպատակ ունէր նոր ձառնադրուած եպիսկոպոսներու ձեռքով նուիրակութիւն ալ բանալ Ռուսահայոց մէջ, սակայն նոր օրէնքով պետական արտօնութեան պէտք կար և գործադրութիւնը դժուարացաւ: Քումբաբուի Երուսաղէմատան շինութիւնն ալ այդ միջոցին տեղի ունեցաւ, Յովհաննէս փոխանորդի ձեռքով, և Յարութիւն Պէպճեան և Միքայէլ Փիշմիշեան և ճանիկ Փափապեան ամիրաներու յորդորելով, որպէսզի Երուսաղէմի պատրիարքութիւնն ալ ազգային պատրիարքարանի կից, ազգութեան լրումը ներկայացնէ: Ինչ որ անոնցմէ դուրս Երուսաղէմի տեղական խնդիրներն են, ազգ ազգի, և իսլամներ ազգերու դէմ ունեցած անհատնում վէճերն են, որոնք յատուկ սաղիմապատում և ոչ ընդհանուր ազգապատում գրողներու կը պատկանին:

2493. ԱԻԱԳ ՇԱԲԱԹԻ ԱՂԷՏԸ

Ասորիքի և Պաղեստինի եգիպտական իշխանութեան յանձնուելուն լուրը սիրով չընդունեցաւ այդ երկիրներու բնիկներէն և խլրտումներու սկզբնաւորութիւններ կը լսուէին, երբ Իպրահիմ ետ կը դառնար, իր բանակով: Գլխաւորապէս Երուսաղէմի վրայ կը դառնար տեղացոց մտադրութիւնը, ուր եգիպտացի պահնորդ գունդ մը թողած էր Դաւիթի բերդ կաշուած քաղաքին գլխաւոր ամրոցին մէջ: Խաղաղութեան վերահաստատութիւնը և Հայոց Ս. Գերեզմանի վրայ պատարագելու արտօնուիլը (2453), հայ ուխտաւորներու անսովոր բազմութիւն մը հաւաքած էր Երուսաղէմ, իբրև տասն հազարիւ չափ, ի կատարումն տօնի սրբոյ պատկին (ՍԱԻ.1186), որ 1834ին ապրիլ 22ին կիյնար: Իպրահիմ արդէն հասած էր Երուսաղէմ, բայց ժանտախտի սկզբնաւորութիւնը իմանալով կուզէր անմիջապէս մեկնիլ, և միայն երեք ազգերու թախանձագին դիմումին տեղի տալով մնաց, զի ուխտաւորաց անսովոր բազմութիւնը և շրջակայ տեղացոց խլրտումը կասկածներ կապդէին երեք ազգերու ալ հաւասարապէս: Ապրիլ 21-ին աւագ շաբաթ երեկոյին Իպրահիմ ալ տաճարին մէջ էր 500 սպառապիներոց գունդով: Երբոր լուսահանութեան պահուն անթիւ անհամար մոմեղէններ վառուեցան, և ժողովուրդը շարժուելով անհնարութեան մէջ կը գտնուէր, այնպիսի օդի ապականութիւն մը սկսաւ, որ ամէնքը առհասարակ հեղձամղձուկ լինէին եկեղեցւոյ մէջ թանձրացած մոխիէն, որ գագաթի լուսանցոյցէն պատ ելնելու տեղ չունէր զի սովորութիւն էր դուռները փակ պահել լուսահանութեան միջոցին: Երբոր դուռները բացուեցան, այնչափ սաստկացաւ դուրս ելլելու դիմողներուն ժխորը, որ 226 հոգի ոտքի ներքև իյնալով կոխկոտուեցան և մեռան, որոնմէ երեքը Իպրահիմի զինուորներէն: Ինքն Իպրահիմ ալ վտանգաւ կենացն հապիւ ճամբայ գտաւ ելլելու, և իսկոյն մեռածները դուրս քաշել տուաւ: Աղէտին պատճառը փնտռելու հրաման արձակեց որ այնուհետև լուսահանութեան միջոցին երկու փեղկերով բաց պահուի տաճարին մեծ դուռը (ՍԱԻ. 1187): Այսպէս կը շարունակուի մինչև այսօր:

2494. ԱՐԱԲԱԿԱՆ ԽԼՐՏՈՒՄ

Արաբական շարժումը օրըստօրէ կը վօրանար և շարժումին գլուխներն էին, Քաարմ Սեվասթի կամ Սամարիոյ և Ապտիւրրահման Խալիլ ռահմանի կամ Քեբրոնի շէխերը: Իպրահիմ լսելով որ Յոպպէի կողմէ համախմբութիւն կը պատրաստուի, պատկի չորեքշաբթին ապրիլ 26-ին այն կողմ գնաց 3000-ի գունդով մը, կամաւորներ ալ աւելցնելով, բայց իր մեկնիլը ապստամբները քաջալերեց Դաւիթի բերդին վրայ յարձակիլ: Մայիս 9-էն եօթն օր պաշարումը տևեց, ուսկից ետքը ապստամբներէն մէկ քանի հոգիներու գաղտնածածուկ ճամբով ներս մտնելուն և պարսպապահ

քանի մը զինուորներ սպաննելուն վրայ, շփոթութիւնը սաստկացաւ քաղաքին մէջ: Եգիպտական զօրքը միջնաբերդին մէջ ամրացաւ, ապստամբները թալանի և աւարի սկսան, վանքեր ու տուներ դուռներնին փակեցին, և ոչ իսկ մայիս 13-ին Կարմիր Կիրակի օրը տեղի ունեցած երկրաշարժը կացութեան վրայ կրցաւ ազդել: Բայց բերդապահ հաւարապետը ստուգելով թէ ապստամբները 400-է աւելի չեն, յարձակում մը փորձեց, ցրուեց և գերեց, բայց նորէն փակուիլ և ամրանալ պարտաւորուեցաւ, զի աւելի մեծ բազմութեամբ մը վրայ հասան շրջակայից Արաբները, և Երուսաղէմը աւերելու և աւարելու ձեռնարկեցին: Իպրահիմ Յոպպէ էր երբ այս եղելութեանց լուրը առաւ, և իսկոյն իր գունդովը դիմեց Երուսաղէմ: Ապստամբներ Պապէլվատ կիրճին մէջ ուկեցին իրեն դէմ ելլալ, այլ չյաջողեցան, զի Իպրահիմ ընդ միտ եկեալ ինչպէս յիշատակագիր մը գրեր է, յիշէր ստէպ Վար Եագուպ (որ է Սուրբ Յակոբ) և կոչէր զնա յօգնութիւն իւր (ՍԱԻ. 1190): Անվտանգ անցաւ կիրճէն և Երուսաղէմ մօտեցաւ, և իր անունը միայն բաւական եղաւ որ ապստամբները ցիրուցան փախչին, և քաղաքը խաղաղութեան կերպարան զգենու: Քաղաքացիք և ամէն ազգէ եկեղեցականներ, որոնց գլուխ կանգնած էր Պօղոս, ելան Իպրահիմը դիմաւորել մայիս 25-ին, Յինանց հինգերորդ ուրբաթ օրը, Յոպպէի դրան առջևը: Հայոց վանքէն առատ մեղրաջուր ալ պատրաստած էին զինուորաց ծարաւը յագեցնելու, բայց Իպրահիմ չներեց որ խոնուին, և զօրապետներուն ձեռքով բաշխել տուաւ: Քաղաք մտնելով գնաց իջևանիլ Սիոնի իսլամական թաղը, ու է Քրիստոսի վերջին ընթրեաց վերնատունին տեղը: Քաղաքը հանդարտեցնելէն ետքը կը մնար բոլոր երկրին ալ խաղաղեցնել, զի ինքն Մէհմէտ Ալի ալ Պաղեստին եկած էր նոր բանակով: Պէյթճալայի և Խալիլ ռահմանի յաղթանակներով Իպրահիմ բաւական սարսափ ազդեց ապստամբներուն, բայց Յոպպէ իջնալէ կասեցաւ, զի նորէն ապստամբներ Պապէլվատի կիրճը բռնած էին: Հայ մը մուրացիկի կերպարանով կրցաւ լուր հասցնել Մէհմէտ-Ալիի յունիս 20-ին, և այնպէս հայր և որդի զիրար ողջունեցին Յոպպէի մէջ: Բայց տակաւին Քասրմ և Ապտիւրահման իրենց ձեռնարկէն ձեռնթափ չէին: Նոր արշաւանքի պարտաւորուեցաւ Իպրահիմ 16000-ի բանակով, նախ Քասրմը ընկճեց Սամարիոյ մէջ, յետոյ Ապիւրահմանը Քերրոնի մէջ, և որովհետև Մեռեալ ծովէն անդին փախեր էին, ետևէն պնդեցաւ մինչև Քէրէք և Սալթ, և ձերբակալելով Դամասկոսի մէջ գլխատել տուաւ, և Պաղեստինը նուաճեց եվիպտական իշխանութեան ներքև, և ահուսարսափ սփռեց ամէն կողմ (ՍԱԻ.1186-1193):

2495. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾԵՐ

Եգիպտական տիրապետութիւնը բաւական օգտակար եղաւ քրիստոնէից, զի ի սիրտս մահմետականաց և գլխաւորաց նոցին ահ արկեալ էր Իպրահիմ, և ընդարձակութիւնս շնորհեալ քրիստոնէից (ՍԱԻ. 1192): Այդ կացութենէն օգտուեցան Հայերն ալ և եգիպտական փոխարքայութենէն արտօնուեցան Ս. Յակոբի մայրտաճարը նորէն ծեփել, պատուհանները ընդարձակել, փոքր գմբէթ մը աւելցնել, գմբէթին լուսամուտները և վնասուած մասերը յարդարել, և գլխաւորապէս եկեղեցւոյ արտաքին գաւիթին ամբողջութեան վրայ վենատուն մը կազմել, մայրտաճարին ուխտաւոր կիներուն համար: Մայիս 1-ին սկսաւ այդ մեծ գործը Ջաքարիա Եպիսկոպոսի շինուածապետութեամբ, և հին պատէրն հնագոյն, Ո. և ՈԲ. հայկական թուականներով խաչքարեր ալ ելան, որոնք վերնատունին արտաքին որմին ագուցուեցան: Իսկ վերնատունին համար յարմար սանդուխներ և մէջն ալ երկու պատարագամատոյց սեղաններ աւելցուեցան: Այս առթիւ շինուեցաւ Ս. Մինասի կոչուած թաղն ալ խորհրդականներու բնակութեան համար, և վանքին աւագ դուռն ալ ընդարձակուեցաւ, ինչպէս ծեփուեցաւ և բռնուեցաւ Ս. Հրեշտակապետի եկեղեցին ալ, և Բեթղեհէմի վանքին պատուհաններն ալ լայնացան, և վնասուած սենեակներ վերաշինուեցան: Համբարձման ոտնատեղւոյն գմբէթը, որ երկրաշարժէն փլած էր, երեք ազգերու

ծախքով շինուեցաւ և իւրաքանչիւրին մի մի բանալի յանձնուեցաւ, և Բեթղեհէմի մեծ դրան բանալի մըն ալ Հայերուն տալ հրամայուեցաւ, բայց այդ վերջին կէտին գործադրութիւնը խափանուեցաւ (ԱՍՏ. Բ. 453-455): Զի Մէհմէտ-Ալի որչափ ալ քրիստոնէից պաշտպանութեան յօժարամիտ էր, բայց քրիստոնէայ քրիստոնէի դէմ գտնուած ատեն դիւրին չէր նոյն յօժարութեամբ գործել: Յոպպէի մէջ ալ Քարանթինա անունով տեղ մը շինուեցաւ ծովով եկող ուխտաւորներու վարակիչ հիւանդութեանց դէմ քառասնօրեայ վգուշաւորութեան ենթարկելու համար (ԱՍՏ. Բ. 453): Ս. Յարութեան տաճարին այլապէս դռնապաններուն ղօշաքաղութիւնը վսպելու համար ալ դիմում եղաւ փոխարքային, և անոնց իրաւունքի սակին և դռնապաններու թիւին մասին կանոններ հաստատուեցան (ԱՍՏ. Բ. 454): Իսկ Ս. Յարութեան մէջ կատարուելիք աշխատութեանց համար, որովհետև արքունական իշխանութեան վերապահուած էին (2408) պէտք եղաւ Կ. Պոլիս դիմել, և անկէ նոր հրովարտակ եկաւ որ բաժանորդ մասերը ընկերովի, իսկ սեփական տեղերը առանձնաբար նորոգուին (ԱՍՏ. Բ. 455): Ուրիշ շատ մը մանրամասնութիւններ ալ հարթուեցան, բայց ցարդ նշանակուածները բաւական կը սեպենք: 2496. ԳԱԲՐԻԷԼ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Երբոր այդ ամէնը կը կատարուէր տակաւին Երուսաղէմի աթոռը թափուր էր, Վի Գաբրիէլ Զմիւռնիա կը մնար (2492), իսկ Պօղոս՝ պատրիարք ու գահակալ չէր, և աթոռին շուքը կը պակսէր: Միաբանութիւնը ցանկացող էր որ այդ կէտն ալ կարգադրուէր և աթոռական կարգը ու սարքը լրանար: Գաբրիէլ ինքն ալ տարիքը առած, թափառական վիճակէն տաղտկացած, աթոռին բաղձանքով տոգորուած, մանաւանդ պարտքերու դժուարութիւններն, ալ վերջացած, ապագային պատրիարքին և Պէպճեան ամիրային և աւագանիէն ծանօթներուն կը դիմէր Երուսաղէմ դառնալու արտօնութիւն ստանալու: Սակայն կասկած կար մի գուցէ Պօղոս թողու ու քաշուի և գործը նորէն շփոթուի, ուստի հարկ եղաւ նախապէս անոր հաւանութիւնն ստանալ, և գործը կարգադրուեցաւ, պատրիարքական պատիւը Գաբրիէլի և գործունէութիւնը Պօղոսի վերապահելով: Վերջապէս Գաբրիէլ Զմիւռնիայէ մեկնեցաւ 1834 օգոստոս 1-ին (ՍԱԻ. 1198), և Երուսաղէմ մտաւ օգոստոս 19-ին (ԱՍՏ. Բ. 452), ուսկից մեկնած էր 1824 օգոստոս 19-ին (2447), օրը օրին ճիշդ տասը տարի առաջ: Իրօք ալ անուանական եղան Գաբրիէլի պատրիարքութեան մնացորդ վեց տարիներ, ինչպէս եղած էին անցած տարիներն ալ: Երբոր ինքն հասաւ արդէն կարգադրուած և սկսած էին ձեռնարկուած շինութիւնները, որոնց վերին հսկողն էր Պօղոս գործադրողն էր Զաքարիա, պաշտօնավարողն էր խորհրդականաց ժողովն, բայց յամենայնի կը տիրէր Պօղոսի ազդեցութիւնը (ՍԱԻ. 1198): Սովորաբար նոր շինութիւնները և նորոգութիւնները Գաբրիէլ պատրիարքի անունով կը յիշատակուի, բայց ճիշդ ըլլալու համար պէտք է ըսել ի ժամանակի, և ոչ ի ձեռն Գաբրիէլ պատրիարքի իմանալ: Նորա անունով վեց սենեակէ բաղկացած համեստ թաղ մը կայ ուխտաւորական բաժնին մէջ, և պէտք է սեփական գումարով շինուած անձնական յիշատակ ձանջնայ վայն:

2497. ԱՂԱԻՆԻ ԵՒ ՊԷՋՃԵԱՆ

Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան եղելութեանց անցնելով, նշանաւոր պարագաներ չունինք պատմելու: Ստեփան Զաքարեան մեղմիկ և հեզիկ բնաւորութեան համար Աղաւնի մակդիր անունով կոչուած էր իր վարդապետէն Գարագօջեան Պօղոս եպիսկոպոսէն, և միևնոյն ուղղութեամբ կը գործէր պատրիարքական աթոռին վրայ ալ, կանոնաց և օրինաց ճշդապահ գործադրող, ապագային խնամածութեան անսայթաք հեղևող: Բարեբախտաբար իր օրով դադրած էին ներքին և արտաքին տագնապալից խնդիրներ, և խաղաղ պաշտօնավարութեան ժամանակամիջոց մը սկսած էր, որով Ստեփանոսի ալ հնար եղաւ 1831-էն 1893 ութ տարի պատրիարքական աթոռի վրայ մնալ: Բայց իսկապէս աչքի վարնող անձնաւորութիւնը Յարութիւն

Պէզճեանն էր, թէ պետական և թէ ազգային շրջանակներու մէջ այնպիսի գիրք մը կազմած, որուն հաւասարը չենք գտներ մեր գիտցած ժամանակներուն մէջ: Պետական պաշտօնեայ, ճարտար ելեմտագէտ, ներքին խորհրդական, անձնական բարեկամ, և մտերիմ ընկերակից Սուլտան Մահմուտ կայսեր, ամենայն ինչ էր, վերանորոգիչ և բարեկարգիչ վեհապետին մօտ, որուն ընդունելի էին իր բոլոր առաջարկները և փոխադարձաբար ինքն ալ գործադիրն էր անոր բոլոր բաղձանքներուն, այնպիսի իմն հանձարեղ դարձուածներով, որ ուղղութեան և արդարութեան նպատակով ոտնակոխ չըլլար: Մենք տեսանք զինքն մայրեկեղեցւոյ նորահաստատ վարժարանին մէջ ընթերցանութեան աշակերտ, 12 տարեկանէն շուկայ ելած (2350), և այս կեանքէն զատ ուրիշ ասպարէզ չտեսած, բայց բնատուր ուշիմութեան սքանչելիք մը եղած, վարելու և վարուելու, խօսելու և համոզելու, գտնելու և ճարելու, գործելու և գործադրելու արտասուրոր կարողութիւններով, որով գրեթէ օսմանեան պետութեան վարիչը, և հայ ազգութեան պետը, և անհատական յաջողականութեանց տիպարը դարձաւ ի կենդանութեան, և անջնջելի հոչակ թողուց ետևէն:

2498. ՊԷԶՃԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ

Աւելորդ չենք սեպեր այսպիսի անձնաւորութեան մը վրայ քանի մը յօդուածներ նուիրել Ազգապատումիս մէջ, քաղելով մանաւանդ այն անհատական յիշատակները, որոնք պատմական ընթացքին մէջ չունէին իրենց տեղը: Պետական գործունէութեանց կարգին յիշենք նախ մարդ շահելու ճարտարութիւնը, առանց երբեք ստորնութեան զիջանելու, և նոյնիսկ իրեն դէմ մախացողներ իրեն նպաստաւոր դարձնելով, որով նոյնիսկ արքունեաց նախարար Հալէթ, զօրապետ Հիւսէին, եպարքոս Ռէշիտ, սպարապետ Խուսրէվ քարտուղար Մուսթաֆա փաշաները, չհամարձակեցան իրեն դէմ քսութիւններ ընդունիլ, թէպէտ նախանձոտ աչքով կը դիտէին Պէզճեանի ստացած դիրքը: Իբրև կարգադրիչ միտք նշանաւոր են արքունի փողերանոցին մասին ըրածները, երբ իբր, Տիւլեանց պեշտօնեայ կը գործէր, և մանաւանդ երբ անոնց աղէտէն ետքը փողերապետութեան կոչուեցաւ (ՊԷՐ.254): Իրեն գիւտն եղաւ ոռուսական պատերազմին ծախուց դիմանալու համար, կէս առ կէս արծաթի և պղնձի խառնուրդով դրամ պատրաստելը, որ մինչև մեր օրերը հասած են մէթալիք անունով: կայսեր այդ խորհուրդին հաւանիլը, մեծ եպարքոս Մէհմէտ Ռէշիտ փաշայի լոկ պղնձէ դրամ կտրելու ծրագիրը մերժելը, կեանքի վտանգի ալ ենթարկեց Պէզճեանը, եպարքոսին զայրոյթին երեսէն, բայց Պէզճեան աղօթքով և քաղցր լեզուով այդ վտանգէն ալ ապատեցաւ (63 ժՄՆ.113): Պատերազմական տուգանքի երկրորդ մասին վճարման առթիւ, օրը օրին եւրոպական վաճառականներէն և սեղանաւորներէ պէտք եղած գումարը ճարելն ալ իր գիւտն ու գործադրութիւնը եղաւ, որով թասվիրի հիւմայուն կամ կայսերական կենդանագիրի բացառիկ շքանշանով պատուուեցաւ, և ամբողջ նախարարութեան յարգանաց արժանացաւ, և նախարարներու հաւասար հանդերձանք ունենալ արտօնուեցաւ (63 ժՄՆ. 114): Իրեն խորհուրդն եղաւ ոռուսական օգնութեան դիմելով եգիպտական արշաւանքը կասեցնելը (2491): Ինքն մըրտածեց ազատ փոխադրութեանց և ազատ վաճառմանց ծրագիրով մայրաքաղաքը սովի վտանգէն ապատելով, և բնակչութիւնը ցրուելուն տարադէպ հրամանը ետ առնել տալ (ժՄՆ. 106): ՎագրՖ կոչուած կալուածներուն վաճառմանց և փոխանցմանց գործողութիւնները մէկ կեդրոնի մէջ ամփոփել հրամանն ալ ետ առնել տուաւ, որով ազգային վագրՖները վտանգէ ապատուեցան (63 ժՄՆ. 163): Վերջապէս ամէն օր Սուլտանը տեսնելու և զուարճացնելու, անոր ուտելիքը անտեսելու, մասին շուկաները պտտելու (ՊԷՐ. 225), և մինչև Տարտանէլ և Ադրիանուպոլիս ուղեկցելու չափ անբաժին ընկեր դարձաւ Սուլտանին, որ կարծես թէ առանց Պէզճեանի բան մը որոշել կամ հրամայել չէր կրնար:

2499. ՊԷԶՃԵԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ

Այդչափ պետական գործերու և արքունական շրջանակներու մէջ զբաղած անձ մը հոգևորականէն թէ ոչ բոլորովին հեռու, գոնէ հապիւ պաշտօնական պահանջի չափ մօտաւոր ի դէպ էր ենթադրել. ընդհակառակն մենք կը տեսնենք Պէվճեանը միամիտ քրիստոնէի մը չափ հոգևորական պարտքերու ճշդապահ, եկեղեցական կանոններու նախանձայոյց, և բարեպաշտական ջերմեռանդութեանց հետևող: Նշանաւոր է իր այդ ընթացքին համար ամիրաներուն կողմէ խծրծուելուն վրայ, յատուկ դպիրի շապիկ մը պատրաստելով, օր մը յակարծ անով եկեղեցւոյ դասը երևնար: Այդ շապիկը իբր յիշատակ կը պահուի Քումբարուի մայր եկեղեցին, և տարին մէկ երկու անգամ կը զգենուն դարաց դարապետները: Միևնոյն եկեղեցասէր զգացման հետևանքն էր դաս չմտնելը և առանց շապիկի դաս մտնել արգիլելը: Սարիմեան մաքսուտ ամիրա կը համարձակի արգելքը և արգելք դնողը և գործադրող աւագերէցը անարգելով դաս անցնիլ, ինչ որ Պէվճեանը կը զայրացնէ, և երբ արքունական քարտուղար Մուսթաֆա իր հարստահարութեանց համար պաշտօնէ կը մերժուի, Պէվճեան կը գրգռուի յայտնել թէ անոր խորհրդականը իր սեղանաւոր Մաքսուտն է, և անմիջապէս դատաստանի կենթարկուին Մաքսուտ և իր հօրեղբայրներ ճանիկ և Խնդիր, և զեղծումներ յայտնութիւնը մահուան վճիռ կը հրաւիրէ վրանին: Պէվճեան շփոթած, աղօթքով և սուրբ խորհուրդներով զօրացած, կայսեր ոտքը կիյնայ անոնց կեանքին շնորհը խնդրելու: Իր մտքին փոփոխութիւնը ճարտար կերպով կարդարացնէ, և շնորհը կընդունի. իսկ երբ ապատուածները շնորհակալութեան կու գան, չի քաշուիր անգամ մըն ալ եկեղեցական պատշաճութեանց յորդորները կրկնել: Նմանօրինակ ուղղութեամբ քսուրէ դարձուցած է Գրիգոր Պալեան ճարտարապետ ամիրան ալ (63ԺՄՆ.105): Պէվճեան որչափ խոնարհ և հեզ պլտիկներու հետ, նոյնչափ խիստ եղած է ամբարտաւան սոնքացող ամիրաներու հանդէպ, այնպէս որ ահ ու դողի առակայ դարձած էր ամէն զերծանողներու, զի չէր քաշուեր խիստ միջոցներ ալ գործածել անաստներու դէմ: Իր բարեպաշտական զգացումները յայտնի էին և հրապարակային, և չէր քաշուեր ամէն տեղ ալ զայն յայտնել: Մայրեկեղեցւոյ վերաշինութեան հրամանն իսկ այս կերպով ստացած է, յայտնելով կայսեր թէ աւերակին վրայ բացագլուխ աղօթելէն տկարութեան հանդիպած էր (ՊԷԶ.74):

2500. ՊԷԶՃԵԱՆ ԲԱՐԵՐԱՐ

Բայց ուր որ Պէվճեան ինքզինքն ալ կը գերպանցէ ողորմութեան և բարերարութեան գլուխն է: Ինքն ամուրի և անժառանգ, երկու քոյրերը առատապէս օժտած, լաւ վետեղած և ապագանին ապահոված, բոլոր իր ստացութիւնը ողորմութեանց և բարերարութեանց յատկացնելու իրաւունք զգացած է, և այսպէս ալ գործածած է իր բովանդակ ունևորութիւնը, որ յայտնի յիշատակուած առատաձեռնութեններէն հետևեցնելով, շատ մեծ գումարի կը յանգի: Միայն թէ, ինչպէս կերևի, մթերելու և դրամագլուխ կազմելու միտքը երբեք ունեցած չէ, այլ եկածը ծախսելով և ունեցածը գործածելով, ինքն ալ գիտցած չէ իր կարողութեան քանակը: Միևնոյն սկզբունքը ունեցած է իր բարերարութեանց մէջ, ալ ներկան հոգալով և ապագայն չմտածելով: Աղքատներ և տնանկներ կերակրած է հանապազօր և բազմաթիւ օգնած է աշխատութեան և արհեստի միջոց ու գործիք խնդրողներուն, շինած է եկեղեցիներ և դպրոցներ և հանրօգուտ չէնքեր, նպաստած է օգտակար հրատարակութեանց, առատապէս նուիրած է սպասներ և վարդեր թանկագին և մեծածախս ըլլալու պայմանով: Ոչ միայն մայրաքաղաքի մայրեկեղեցին և գլխաւոր եկեղեցիներ, այլև միւս աթոռներ և գաւառական եկեղեցիներ և վանքեր անմասն չեն մնացած Պէվճեանի նպաստներէն, որոնք մինչև ցայսօր կը պահուին երկիւղած յարգանքով: Դիտողութեան արժանի կը նկատենք միայն, որ Պէվճեանի անունով հասութաբեր կալուած մը և հաստատուն եկամուտ մը մնացած չենք գտներ, և

ինչ որ Պէպճեանի կտակ անունով ամսական 2500 դուրուշ մայեկեղեցւոյ դպրաց ուսումնարանին, և 500 դուրուշ Բարթալի դպրոցին սահմանուած է մայեկեղեցւոյ սնտուկին վրայ բացէն բեռ մըն է՝ բանկալի արդիւնքէն վճարուելիք, զի 1200 քսակ գումարը եկեղեցւոյ շինուածին գրուած է, և ոչ թէ կալուածի մը կապուած է (63 ԺՄՆ. 99): Պէպճեան իր և իր ժամանակին ոգիէն մղուած և կարծած է որ ամէն ժամանակ ազգը, և մանաւանդ ունևոր դասը բաց պիտի պահէ իր ձեռքն ու իր քսակը եկեղեցական պէտքերուն առջև, և առատապէս պիտի լեցնէ բանկալն ու պնակը, որով հնար պիտի ըլլայ ոչ միայն եկեղեցին չէն պահել, և վարժարան ու աղքատ հոգալ, այլ և կտակներ վճարել: Պէպճեանի համոզմամբ եկեղեցին հասութաբեր կալուած է նկատուած, և ոչ թէ հասոյթ սպառող հաստատութիւն, ինչպէս եղած է այժմ: Պէպճեանի անունը կը գովուի և կօրհնուի իր շինած եկեղեցիներով և դպրոցներով և հիւանդանոցով, բայց ա՛լ աւելի պիտի օրհնուէր, եթէ շարք մը հաստատուն կալուածներ ալ մնացին ըլլային իրմէն, քան թէ մարգարտաշար թագեր, ակնակուռ խաչեր, ոսկեթել կերպասներ, ոսկի և արծաթ սպասներ, և թանկագին ասղեգործածներ: Բայց իւրաքանչիւր ոք կոզկորուի իր ժամանակին ըմբռնումներով, և չապրիր ապագայ դարերու սկզբունքներով:

2501. Ս. ՓՐԿՉԵԱՆ ՆԻՒԱՆԴԱՆՈՑ

Պէպճեանի մեծագոյն յիշատակներուն փառաւորագոյնը Գումքաբուր մայր եկեղեցին է, իր քարուկիր և հոյակապ տաճարներով, զորս արդէն յիշած և նկարագրած կը գտնուինք (2438). բայց մարդասիրական տեսակետէն՝ աւելի մեծ նշանակութիւն կրնանք տալ Եէտիքուլէի ազգին հիւանդանոցին, որչափ ալ փայտակերտ և համեմատաբար համեստ ըլլայ անոր շինուածը: Մայրաքաղաքի հայութիւնը առանց հիւանդանոցի չէր. 1745, 1755 և 17925 թւականներով կայսերական հրովարտակներ կը հաւաստեն անոր գոյութիւնը, և կը հաստատեն անոր արտօնութիւնները (ՔԷՉ.): Այդ միջոցին, որուն վրայ կը խօսինք, ազգին գլխաւոր հիւանդանոցը Նաուքարու դուռնէն դուրս ծովափին վրայ կառուցուած էր, Ս. Յովհաննէս եկեղեցիին ներքև և քովը: Երկրորդ մըն ալ կար Բերայի ծայրը, Թաքսիմ աղբիւրին մօտերը, Ս. Յարութիւն փոքրիկ եկեղեցւոյն յարակից: Երկուքն ալ խեղճ շէնքեր էին, աւելի խեղճ կազմակերպութեամբ: Իսկ յիմարները Նաուքարու կը պահուէր, շղթային և գաւազանի դարմանով միայն խնամուած: Շատոնց ընդհանուր մտադրութեան նիւթ եղած էր բարւոքել և ընդարձակել հիւանդանոցի գրութիւնը և միաւորել երկու մասերը: Ս. Որդւոց Որոտման աւագ տօնը հիւանդանոցի տօնախմբութեան, ամիրայից հաւաքման և հաշիւներու կարգադրութեան օրն էր, և նոյնը տեղի կունենար 1831 դեկտեմբեր 29-ին երեքշաբթի օր: Պատարագին առէք կերէք-ին պահուն խրատուող խելագարներու աղաղակները կը խեղդեն ժամարարին ձայնը և արարողութեան երգերը: Պէպճեան և ամիրաներ կը զգածուին, և պատարագէն անմիջապէս ետքը ժողովի կը գումարուին, և նոր և անդորրաւէտ հիւանդանոց մը շինելու որոշումը կու տան (ՔԷՉ. 6): Ստեփանոս Աղաւնի պատրիարք, որ դեռ ևս նոր պաշտօնի էր անցած, պաշտօնական դիմումը իսկոյն կատարեց, միւս կողմէն գետինը գտնուեցաւ և կարգադրուեցաւ. Պէպճեան կայսերական հրամանը փութացուց, և 1832-ին հիմնարկէքը կատարուեցաւ, հաւանաբար տարւոյն վերջերը: Աշխատութիւնները յառաջ մղուեցան 1833-ին, երբ Պէպճեան հիւանդ և տկարացած անձնական աշխատութենէ քաշուած էր, բայց հոգ ու խնամք չէր պակասեցներ, որով շինուածին հոգաբարձութիւն վարեցին Փիշմիշեան Միքայէլ և Երկանեան Յարութիւն ամիրաները (ՔԷՉ. 4): Նոր հիւանդանոցին տեղը որոշուած էր Եէտիքուլէի դուռնէն դուրս, Գազըլէշմէ աղբիւրին մօտը, իբրև օդասուն և խճողումներէ ազատ տեղ մը, թէպէտ այն ստեն բոլորովին ամայի: Գընուած գետինը Սուլտան Պալապիտ մզկիթին վաղըճներէն էր 18000 կանգուն քառակուսի տարածութեամբ, որ գնուելուն առթիւ կայսերական

հրամանով և պատշաճ վճարումներով մուքաթայ պեմին վիճակի վերածուեցաւ, այսինքն է վագրֆին դառնալու վտանգէն բոլորովին ապաւեցաւ և մշտնջենաւոր ապգային սեփականութիւն եղաւ: Գնուած գետինը Լէպլէպիճիօղլու կոչուած բանջարանոցն էր, և քիչ ետքը Փիշմիշեանի ձեռքով անոր կցուեցան Բիրիշճիչայըրը և Բիրիշճի թարլասը կոչուած մասերը (ՔէՉ. 20): Շինութեան ճարտարապետը եղաւ Պալեան Կարապետ ամիրա և օգնական Սերվերեան Յովհաննէս ամիրա, և գործապետ Օտեան Պօղոս աղա (ՔէՉ. 18): Շինուածին ընդարձակութիւնը եղաւ 4000 քառակուսի կանգուն, և ծախքը 4000 քսակ, իւրաքանչիւր քսակ հինգ օսմանեան ոսկի հաշուով: Ծախքերուն մեծ մասը Պէպճեան տուաւ, և մնացածը ամիրաներու նվիրատուութիւններով հայթայթուեցաւ, որոնց մէջ յատկապէս կը յիշուին Ճանիկ Փափապեան, Յարութիւն Կէլկէլեան, Երամ Երամեան, Միսաք Միսաքեան և Անաստաս հայհոռոմ (ՔէՉ. 17): Պէպճեանի սկզբունքն էր ամէն ծախքերուն մեծ մասը նուիրել բայց միւս ունևորներն ալ մասնակցութեան ստիպել: Շինուածը փայտակերտ էր և ամէն ջանք թափուեցաւ որ առաջ վերջացնել, որովհետև Պէպճեանի վիճակը կը ծանրանար, և ամէն ոք կաշխատէր պայն միսթարել և ուրախացնել, և վերջապէս հապի թէ մեծ դուռը կախուեցաւ մահուանէ մէկ քանի օր առաջ բանալին իրեն ներկայացուեցաւ (ՔէՉ. 8), թէպէտ շինութիւնը բոլորովին աւարտած չէր:

2502. ՊԷՉՃԵԱՆԻ ՄԱՀԸ

Պէպճեան հապի 63 տարեկան էր տակաւին, որ ծանր տարիք մը չէ, բայց բազմաշխատ կեանք, տազնապալից անցքերը և մորմոքիչ դէպքերը հիծած էին պինքը, և 1832 տարւոյ վերջերը ջրգողութեան ախտիւ տկարացած դարմաններու կը հետևէր, առանց զգալի օգուտ մը տեսնելու: Պալատական բժիշկներու խորհրդով և Եալօվայի ճամբով Պրուսայի Չէքիրկէ ջերմուկը գնաց, բայց օգուտ չտեսնելով երեք շաբաթէ ետ եկաւ: Հիւանդութիւնը տակաւ կը ծանրանար, և որովհետև այլևս պալատ չէր կրնար երթալ, սուլտան Մահմուտ երեկոյ մը մթննալէն ետքը անձամբ այցելեց, և նաւակով Եէնիքարբու անոր տունը եկաւ: Միւս կողմէն արքունի սենեկապետները ամէն օր անպակաս կու գային լուր առնել և տանիլ: Օդափոխութեան յոյսով Վոսփորի վրայ Օրթաքէօյ փոխդրուեցաւ Փիշմիշեան տունը, բայց անկէ ալ օգուտ մը չտեսաւ, և հանդարտօրէն ու քրիստոնէաբար մահուան պատրաստութեան սկսաւ: Փողաբերութիւնը Տիւպեան Յակոբի համար խնդրեց և ընդունեցաւ (63 ժՄՆ.195), ինչպէս ճարտարապետութիւնը Պալեան Գրիգորի որդւոյն Կարապետի, և վառօդապետութեան երկու գործարանները Տատեան Սիմէոնի Եղբօր Յովհաննէսի և որդւոյն Պօղոսի փոխանցել տուած էր՝ Գրիգորի և Սիմէոնի մեռնելէն ետքը (63 ժՄՆ. 161): Այս միջոցին էր որ ուսական դեսպան Բլուտէվ Էջմիածնի և Կ Պոլսոյ յարաբերութիւնները վերահաստատելու համար Պէպճեանի միջնորդութեան պէտքը կը զգար, և 1833 հոկտեմբեր 25-ին կը գրէր, թէ նա ջերմուկներէ դարձած ըլլալով, ըստ ամենայնի հաւանած և օգնած է իր աշխատութեանց: Այդ պարագայն երկու երեք ամիս միայն առաջ էր իր մահուանէն և հիւծած էր արդէն, բայց միշտ ապգային մեծ շահերով կը զբաղէր Պէպճեան, զոր դեսպանը կը ներկայէ իբր Տաճկաստանում Հայ ազգի գլխաւոր անձն և նեցուկը (ԵՐՅ Բ. 53): Վերջապէս դեղ և խնամք չկրցան փրկել Պէպճեանը իր ցաւէն, և հոգին աւանդեց նոր 1834 տարւոյ յունուար 3-ին, չորեքշաբթի, Ծնունդի պահոց հինգերորդ օր: Յակոբ Տիւպեան իբրև մտերիմ անբաժան էր քովը արքունական կենդանագրի շքանշանը անմիջապէս կայսեր տարաւ, որ յուղուեցաւ և փղձկեցաւ բօթաբեր գոյժէն, մինչ իրեն հրամանով նոր տուն մը կը շինուէր Վոսփորի վրայ Պէպճեանի համար: Հրամայեց մարմինը իր պալատին առջևէն անցունել, որ հրաժեշտի բարևը կարենալ տալ, և ըստ այսմ Փիշմիշեան տունէն նաւամատոյց բերուեցաւ մարմինը լուին թափօրով, որուն կընկերանային Ստեփան Պատրիարք, Կարապետ նախորդ պատրիարք և Աստուածատուր ապագայ

պատրիարք: Յատուկ նաւակով և բազմաթիւ նաւակներու հետևողութեամբ, մարմինը բերուեցաւ Սարայպուրնուի արքունի պալատին առջև, մինչ սուլտան Մահմուտ պատուհանէն կը դիտէր և տիրապետեաց կոչունէր: Նաւակները Մարմարայի եզերքէն եկան Եէնիքաբու, Պէլճեանի տունը, ուր կազմակերպուեցաւ յուղարկաւորութեան եկեղեցական թափօրը, և մարմինը փոխադրուեցաւ Քումքարուի մայրեկեղեցին. կարգը կատարուեցաւ Ստեփան պատրիարքի նախագահութեամբ, իսկ դամբանականը խօսեցաւ Կարապետ նախորդ պատրիարքը, և մարմինը ամփոփուեցաւ իր իսկ պատրաստել տուած շիրիմին մէջ, Ս. Յարութիւն փոքր տաճարին առջևը: Հանդէսին փառաւորութեան և խուռն բազմութեան և օտարագեաց մասնակցութեան և եկեղեցական պատիւներու մասին բաւական ըլլայ կրկնել, թէ պայս մեծահանդէս թաղումն ոչ ոք ի ծերունեաց լուեալ և տեսեալ էր երբէք: Մահը յիշեցինք յունուար 3-ին, թաղման համար ալ նոյնպէս յերորդ աւուր յունուարի ըսուած է (ՊԷՐ. 258), որով պէտք կըլլայ ըսել թէ առաւօտեան դէմ կամ գիշերուան մէջ տեղի ունեցած է հոգւոյն աւանդումը, կէսօրին առաջ մարմինին կայսերական պալատին առջև և Եէնիքաբուբերուիլը, և կէսօրին ետքը եկեղեցական արարողութիւնը զի պատարագ ալ յիշուած չէ: Եկեղեցւոյ շրջապատին մէջ թաղուիլը առանձին հրովարտակով արտօնուած էր սուլտան Մահմուտէ: Կը պատմուի թէ անգամ մը կոչին ուշանալուն առթիւ սուլտանը կը հարցնէ թէ ո՞ր էիր, անոր պատասխանին վրայ թէ եկեղեցին էի, կայսրը կը պատասխանէ եկեղեցին մնաս, և Պէլճեան իսկոյն մշտնջենապէս եկեղեցին մնալու համար հոն թաղուելու հրամանը կը խնդրէ և կը ստանայ: Հրովարտակն ալ ընդունելով շիրիմը կը պատրաստէ և ստէպ անոր առջև կաղօթէ եղեր (63 ժՄՆ. 121): Կանխած ենք Պէլճեանի ձիրքերուն և կարողութեանց պանապան պարագաները բացատրել, ուստի աւելորդ կը սեպենք մահուանէ ետքը անդրադառնալ անոր անձին վրայ և կատարած գործերը թուել: Ազգային շրջանակի մէջ պէտք չէ մոռացուին որչափ ինչ ազգային տագնապներու և Երուսաղիմական կնճիռներու մէջ գիտցաւ կատարել և արդիւնաւորել, և որչափ ինչ մասնաւոր գործերու և մասնաւոր անձերու նպաստաւորեց: Պատմուածներուն հիմնուելով կրնանք վստահաբար եզրակացնել թէ իբրև անհատական անձ, իբրև հաւատացեալ քրիստոնեայ, իբրև հայապգի անդամ, իբրև մեծահարուստ աւագանի, իբրև հանրային անձնաւորութիւն, իբրև պետական պաշտօնեայ, իբրև քաղաքագէտ միտք, իբրև երևմտագէտ հանձար, իբրև կայսերական խորհրդատու, ամէն շրջանակներու մէջ ալ անբասիր գործունէութիւն մը ունեցած է, ընտիր բարեմասնութիւններով փայլած է իր բովանդակ կեանքին մէջ, և արժանի է այն համբաւին զոր վայելեց և կը վայելէ:

2503. ՀԻԻԱՆԴԱՆՈՑԻՆ ԼՐՈՒՄԸ

Պէլճեանի մեռած ատեն շատ մը ազգային ձեռնարկներ կային, իրմէ գաղափարուած և իրմով սկսած բայց իրենց վերջնական կազմութիւնը չէին առած, և արդիւնաւորութեան անցնելու համար հսկողութեան և աշխատութեան պէտք ունէին: Ազգային աւագանին կամ ամիրայից ժողովը, արդէն Պէլճեանէ ոգևորուած, անոր մահուրնէ ետքը անոր թողածները լրացնելու պարտքը զգաց, և Միքայէլ ամիրա Փիշմիշեան, որ այնչափ մօտիկ եղած էր Պէլճեանի, կերպով մը անոր յաջորդն ու անոր տեղը անցնողն եղաւ իբրև գլուխ ամիրայից ժողովին: Յունուար 25-ին միևնոյն մահուան տարին և ամիսը, ազգային ժողով գումարուեցաւ, մայրեկեղեցւոյ մէջ՝ Տնանկաց սնտուկին տուրքերը սահմանելու իւրաքանչիւր էսնաֆի կամ արհեստաւորաց խումբի կարողութեան և կարևորութեան համեմատ: Այդ սնտուկը 1832-ին հաստատուած էր Պէլճեանի նախաձեռնութեամբ, բայց կազմակերպութիւնը պէտք ունէր նորանոր որոշումներու: Այս և ասոր նման խնդիրներու համար հեղինակաւոր անձին պակսելովը հարկ եղաւ մարմին մը ընտրել վասն ազգին գործոց, որոնց գործն ըլլայ զբաղիլ ի բարւոք կառավարութիւն հիւանդանոցին, տնանկ

աղքատաց և դպրոցաց (ՔԷՉ.26), և մարտ 19-ին, մեծ պահոց երրորդ երկուշաբթին, Ստեփանոս պատրիարք ժողով հրաւիրեց ամիրայից և էսաֆի գլխաւորաց, ուր ընտրեցան և որոշեցան ի նախապատիւ արանց, իմա յամիրայից, տասն անձինք ազգային վերին մարմինը կազմելու, պատրիարքին խորհրդականներն ըլլալու, և պատրիարքարանը կառավարելու պատրիարքին հետ: Ընտրուած տասն ամիրաներն եղան, Միքայէլ Փիշմիշեան, Ճանիկ Փափապեան, Յարութիւն Երկանեան, Յովհաննէս Ազնաւորեան, Պետրոս Խօրասանձեան, Մարտիրոս Պաղտասարեան, Մաքսուտ Սարիմեան, Պաղտասար Գասպարեան, Յարութիւն Կէլկէլեան և Յովհաննէս Բինկեան: Առաջին գործերէն առաջինը հիւանդանոցի շինութիւնը լրացնելն էր, ներքինը կահաւորել և արտաքինը կարգադրել, և միանգամայն անոր յարակից մասերը լրացնել, որոնք Պէպճեանի մեծ ծրագիրին մասը կը կազմէին, բայց յետաձգուած էին: Երբոր հիւանդներու հոգով կը զբաղուէր ժանտախտը ճարակած էր և յատուկ խնամք կը պահանջէր, և տարափոխիկ ըլլալու պարագան բուն հիւանդանոցէն վատել կը պահանջէր: Հիւանդանոցի հիմնարկէքէն հինգ ամիս ետքը ստացուած էր ժանտախտանոցի հրովարտակը, և հաստատութեան գետինը նւիրած էր Տատեան Պօղոս պէյ վառօդապետ, 10000 քառակուսի կանգուն հող մը Մարմարայի ծովեզերքը, բուն հիւանդանոցէն հինգ վայրկեանի չափ հեռու, Իսքէնտէր Չէլէպի կոչուած տեղը: Այս մասն ալ փայտակերտ շինուեցաւ, և մէջն ալ ժանտախտի դէմ պաշտպան Ս. Յակոբ Մծբնայ հայրապետին նուիրուած մատուռ մը: Մատուռ մըն ալ բուն հիւանդանոցին մէջ պէտք էր, և անոր համար ալ յատուկ հրովարտակ մը ստացուած էր ժանտախտանոցի հրովարտակէն առաջ, և հիւանդանոցին հետ միասին շինուեցաւ, ու Ս. Փրկիչ անունին նուիրուեցաւ (ՔԷՉ.28): Ազգային եկեղեցիներուն մոմը պատրաստելու համար մոմարանի մը համար արտօնութիւն ձեռք բերուեցաւ Փիշմիշեանի ջանքով, և հիւանդանոցի յարկերուն նեղ գալը զգացուելով, յիմարանոցի և անկելանոցի մասերը աւելցնելու ձեռնարկուեցաւ (ՔԷՉ. 19): Այսպէս հետզհետէ ճոխացաւ և ընդարձակուեցաւ Պէպճեան հաստատութիւնը և կարգը եկաւ հանդիսական նաւակատիքը և պաշտօնական բացումը կատարելու, որ տեղի ունեցաւ նոյն 1834 տարին: Թէպէտ ճիշդ օրը յիշուած չէ, բայց պատրիարքական կոնդակին մէջ տարեկան հանդէս տօնախմբութեան կարգեցաւ լինել յաւուր Համբարձման Բրիստոսի ըսուելէն (ՔԷՉ. 34), միևնոյն Համբարձման օրը առաջին հանդէսին ալ տեղի ունեցած լինելը իրաւամբ կը հետևցնենք (ՔԷՉ. 36), որ 1834-ին հանդիպած է մայիս 31-ին: Պէպճեան շինուածը որ այն ատեն նոյն իսկ Եւրոպացւոց կողմէ յոյժ գեղեցիկ հաստատութիւն մը ճանչցուած էր (ՔԷՉ. 263), տարիներ անցնելով հինցաւ, և բժշկական պահանջները ու դարմանական գրութիւնները փոփոխուեցան, և հարկ եղաւ փայտակերտ հիւանդանոցը քակել և նորէն շինել քարուկիր, այնպէս որ Պէպճեան շինուածէն բան մը մնացած չէ այլևս Ս. Փրկչեան հիւանդանոցի մէջ: Վերաշինութեան հիմնարկէքը կատարուեցաւ 1888 օգոստոս 17-ին Յարութիւն Վեհապետեան նոր հրաժարած պատրիարքին նախագահութեամբ, և մաս առ մաս քակուելով ու շինուելով լրացաւ 18 տարի ետքը 1906 դեկտեմբեր 3-ին, նոր եկեղեցւոյն օծմամբ Օրմանեան Մաղաքիա պատրիարքին ձեռամբ:

2504. ՏԱՃԿԱՀԱՅԵՐ ԵՒ ԷԶՄԻԱԾԻՆ

Նշանաւոր եղելութիւններ հանգրուաններ կը կազմեն, և դիւրութիւն կընծայեն մեզ պատմութեան գետինը տեղափոխելու, ինչպէս այս անգամ ալ նորէն մայրաթոռի կողմը անցնելու: Յովհաննէս կաթողիկոս Տաճկահայոց հետ յարաբերութիւններ վերսկսելու հետամուտ, միւռոն յղելու համար 1832 մայիսին Կովկասի կառավարչապետին ուղղած նամակին պատասխանին կը սպասէր, որ կուշանար զի կառավարիչը 1833 մարտին միայն զայն նախարարութեան հաղորդած էր (2490): Յովհաննէս աւելի ճշդելով յարաբերութեան միջոցները, պատգամաւոր նշանակուած

Բարսեղ Եպիսկոպոսի ձեռքով առաջարկած էր, որ կաթողիկոսի անունը պատարագի և ժամերգութեան մէջ յիշուի, որ երեք տարին անգամ մը թեմերու միւռոն բաշխուի, որ Տաճկահայոց Եկեղեցիներու մէջ Էջմիածնի գանձանակ հաստատուի, որ Էջմիածնի կողմէ Կ. Պոլսոյ մէջ մնայուն վերահսկող գործակալ մը գտնուի (ԵՐՅ. Բ. 56): Բայց նախարարը մինչև վերջ պնդեց որ Էջմիածինէ պատգամաւոր չղրկուի, և յանձնարարեց կառավարչապետին կոնդակները դեսպանին յղել, որ անոր ձեռքով յանձնուին, ինչպէս որ ալ գործադրուեցաւ 1834 հոկտեմբերին, և միանգամայն դեսպանին յանձնարարուեցաւ կաթողիկոսին չորս առաջարկներուն համար աշխատիլ (ԵՐՅ. Բ. 57-58): Դեսպանին 1835 փետրուար 6-ին գրութենէն կը քաղուի, որ Կ. Պոլիս և Երուսաղէմ ջերմեռանդական յարգանքով ընդունած են կոնդակները, որ փոխադարձ պատասխանները յանձնած են դեսպանին, Եփրեմի և Յովհաննէսի և Բարսեղի հասցնելու համար, որ չորս առաջարկներէն երեքը ընդունած են իսկ Կ. Պոլսոյ մէջ Էջմիածնի գործակալ հաստատուելուն մասին քաղաքական դիտողութիւն են յայտնած: Էջմիածին կը կարծէր որ այդ դարձուածքներուն մէջ Կ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքները խաղ են խաղում, և թէ կը ջանան խուսափել նորա իրաւասութիւնը ճանաչելուց (ԵՐՅ. Բ. 61): Սակայն թիւրիմացութիւնը իրաւասութեան ձևին վրայ էր: Տաճկահայերը Մայրաթոռոյ իրաւասութիւնը հոգևորական կիմանային, իսկ Էջմիածին անոր նիւթական իմաստ կու տար, մինչ Օսմանեան օրէնսդրութիւնը անձի և ինչքի վրայ նիւթական իրաւասութիւնը օտարահպատակի չէր ներեր: Տաճկահայեր ալ կաշխատէին այդ ուղղութիւնը պաշտպանել առանց Էջմիածնի դիւրապագածութիւնը գրգռելու: Ուրիշ պարագայ մըն ալ կար Տաճկահայոց սիրտը վիրաւորող, իբր Վի Մայրաթոռոյ գահակալի փոփոխութեան մասին տեղեկութիւններ կը ստանային, թէ Յովհաննէսն է հրաժարեցրել Եփրեմին ու հեռացրել Ներսէսին և բռնի է տիրացել աթոռին և թէ միաբանութիւնը ապստամբել և նորա դէմ: Իրօք ալ առջի կէտերը բոլորովին սուտ չէին, եթէ գաղտնի մեքենայութեանց և ծածուկ դարձուածոց շրջանակի մէջ մտնենք, ինչպէս պատմեցինք, և վերջին մասն ալ արդէն սկսած էր, ինչպէս պիտի պատմենք, Յովհաննէս իր ուզած ձևը պաշտպանելու համար Տփղիս ալ գնաց, և բերանացի բացատրութիւններով Ռօպէնի վրայ ալ ապրեց միայն թէ պատշաճ դատուեցաւ Տաճկահայոց կասկածները փարատելու համար միաբանական հրանգիր մը պատրաստել, ինչպէս ալ պատրաստուեցաւ Յովհաննէսի դառնալէն ետքը, և կառավարչապետին յղուեցաւ, անկէ ալ 1835 նոյեմբերին նախարարութեան հաղորդուեցաւ անկէ ալ դեսպանին, և դեսպանէն պատրիարքին, բայց ակնկալեալ ապրեցութիւնը չունեցաւ, Վի գրուած է եղել անվայել ձևերով և կոշտ լեզուով (ԵՐՅ.Բ.64), այնչափ որ դեսպանն իսկ յանձնարարած է կաթողիկոսին իմացնել, որ չգործածէ ամբարտաւանութեան և կշտամբանաց լեզուն, որ, բացի գրգռելուց ոչինչ նպատակի չէ հասցնում: Այս պատճառով կայսերական հրաման ալ արձակուած է, որ Էջմիածնի գրութիւնները առ Կ. Պոլսոյ պատրիարքները կանխապէս քննուին ներքին գործոց նախարարութեան մէջ: Յովհաննէսի պնդումները շարունակեցին Ռօպէնի պաշտպանութեամբ, որ կապարելապէս անոր միտքին շահուած էր, մինչ նախարարն ու դեսպանը հակառակ կարծիք կը յայտնէին, և նախարարապետն ալ կը հրահանգէր, թէ այսպիսի գործերում չպիտի տեղի ունենան ո՛չ անմտադիր խուճապումն, և ո՛չ էր տհաճութեան ձևեր, այլ հարկ է յառաջ ընթանալ Վի գրութեամբ և խոհեմաբար (ԵՐՅ.Բ.58):

2505. ԿԱՐԲԵՑԻՒՆ ԱՐԱՐԲԸ

Սակայն Յովհաննէսի դիւր չէին դար այդ խորհուրդները, և դուրսն ալ կաշխատէր նոյն ուղղութեամբ գործել, որով ներսը կը գործէր, գլխաւոր կէտ նպատակի ունենալով իր դրամական օգուտը: Արդէն Տփղիսի առաջնորդութեան մէջ ալ, որ հապիւ տարի մը տևեց, այդ ուղղութիւնը առաւելօքը շեշտուած էր: Ներսէս տեսնալով քահանայից թիւն տարապայման աճած ըլլալը, և

անարժաններուն առջև անցած ըլլալը բնաւ քահանայական ձեռնադրութիւն չկատարեց 14 տարուոյ առաջնորդութեան միջոցին (ԵՐՅ. Բ. 101): Ընդհակառակն Յովհաննէս ընդարձակեց անխտիր, և բազմաթիւ ձեռնադրութիւններ կատարեց միակ մէկ պայմանաւ, աջահամբոյրի մասին համաձայնութիւն կայացնելուց յետոյ (ԵՐՅ. Բ. 101), և տասն և մէկ ամսուան մէջ (ԵՐՅ. Բ. 100) 23000 ռուբլու արդիւնք ունեցաւ ձեռնադրութիւններէն (ԵՐՅ. Բ. 103): Մտերիմ քահանաներ ունէր, որոնք միջնորդի դեր կը վարէին, և եկեղեցական պատիւներով կը վարձատրուէին, բաւական էր որ առատ նուէրներ ժողովէին նորընտիր հայրապետի համար: Նշանաւոր հանդիսացաւ այդ մասին Մողնու եկեղեցւոյն Եսայի Դանդուրեան քահանան: Յովհաննէսի այդ ընթացքը ժամանակին տէրութեան ուշադրութեան առարկայ դարձաւ: (ԵՐՅ.Բ.103), և գուցէ այդ էր նախարարութեան կողմէ Տաճկահայոց յարաբերութեանց մասին ցուցուցած վերապահեալ ուղղութիւնը. Կի Յովհաննէս եպիսկոպոսական և առաջնորդական ընտրութեանց համար բանակցութեանց մտած էր, թէ ո՛վ աւելի կը վճարէ իւրեան: Այդ ժամանակէն սկսան պետական հրամաններ, ամէն աստիճանէ եկեղեցականներ չձեռնադրել առանց կառավարական հաւանութեան, որով Էջմիածին պիտի գրկուէր նիւթական առատ աղբիւրից, որ ամէնից շատ էր Կարբեցւոյն (ԵՐՅ.Բ.106): Ռուսական տէրութիւնը ապառի և ճորտի տարբերութիւնը կը պահէր ժողովուրդին մէջ, և 1807-ի օրէնքով ամէն եկեղեցական աստիճան ունեցողը ապատ հոչակեց ճորտութիւնից, և անոր յարակից հարկերից և ծեծից, ինչպէս նաև ուրիշ անպատուութեանց ենթարկելէ, և այս էր պատճառը որ ամէն ոք սիրով կը վճարէր որևէ գումար, և տնով տեղով վայելում էր ապատ ապնուականաց իրաւունք, և առաջնորդներ կօգտուէին այդ տրամադրութենէն, ուսկից Աշտարակցին միայն չգայթակղեցաւ, որչափ ալ իր ձեռնարկելու համար առատ դրամի պէտք ունէր: Յովհաննէսի կողմէ Տաճկահայոց հետ յարաբերութեան խնդիրն ալ, ինչպէս արդէն ակնարկեցինք, անոր միտքին մէջ նիւթականին շուրջը կը դարնար (2504), և Աղաւնին աւելի քան մեղադրելի, գովելի պէտք էր դատուէր իր դիտողութեանց մէջ: Յովհաննէս կաթողիկոսութեան ատեն շատ աշխատեցաւ, առանց կառավարութեան միջամտութեան անարգելք ձեռնադրութիւն կատարելու համար, բայց իր ցանկութիւնը չիրագործեցաւ, և քանի մը տարի տևող բանակցութիւնները փակուեցան 1834 փետրուար 26-ի վճռական հրամանով, որ ետքէն Էջմիածինի համար կազմակերպուած կանոնադրութեան մէջ ալ անցաւ (ԵՐՅ. Բ. 119): Որչափ ալ յայտնի էր ռուսական կայսերութեան ուղղութիւնը, եկեղեցական վարչութեանց մէջ իր պետական ազդեցութիւնը շեշտելու, սակայն ցաւալի է նկատել, որ հայ եկեղեցականութիւնը, և յատկապէս Կարբեցին, քաջալեր ընծայած են այդ գործունէութեան: Իբր հետաքրքրական պատրագայ մը յիշենք Էջմիածինի պարտքին հաշիւները, որ պարսկական դրամով բարձրացած էր 44000 թումանի, զոր Հիւսէյին սարտար վերածած էր 30000-ի, և անոր փոխարեն 14500 Տփղիսէ վճարուած էր Ներսէսի ձեռքով և 9330 ալ աթոռէն վճարուելով, կը մնար 6170 թուման պարտք: Այդ պարտքը փոխանցուեցաւ Յովհաննէսի, և հաշուեցաւ 24800 ռուբլի: Իսկ այս գումարին հանդէպ, նա ստացած է 50148 ռուբլի վանապան հասոյթներէն և 10000 ռուբլի պետական շնորհէն (ԵՐՅ. Բ. 120-121): Յովհաննէսի տարադէպ ուղղութեան յայտարար մըն է նաև Լապարեան Յովհաննէս և Խաչատուր եղբայրներուն 1832 փետրուար 4-ին իրեն ուղղած նամակը, ուր Էջմիածնի անկումը և վեղծումները նկարագրելով անոնք բարեկարգելու յորդոր կը կարդան (ՍԵԴ. 132-137), բայց Կարբեցիի համար կարգ ու կանոն և ուղղութիւն անհասկանալի էին միանգամայն (ՍԵԴ. 138):

2506. ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑԸԸ

Յիշեցինք որ Կ. Պոլսոյ մէջ լուրեր կը պատէին թէ Էջմիածնի միաբանութիւնը Կարբեցիին դէմ ելած է (2504): Իրոք ալ այդ շշուկները սկսած էին նոյն իսկ Կարբեցիին հաստատութիւնը

չհասած և օժումը չկատարուած: Ընտրութենէն երկու ամիս ետքը, 1831 մայիսին լսուեցաւ որ Մայրաթոռոյ աւանդատունէն բազմաթիւ արծաթեղէն իրեր գողցուած են: Կասկածը ծանրացաւ Վաղարշապատցի Սահակ եպիսկոպոսի վրայ, և խուլարկութիւն կատարուելով քովէն ելան, 15 սկիհ, 15 գօտի, 60 խաչ, և արծաթէ ջահ ու աշտարակներ ու մասունքներ, և արձանագրութիւն կազմուելով Կարբեցիին հաղորդուեցաւ մայիս 28-ին: Բայց Կարբեցիին կուսակից էր, և բարւոք համարեց ծածկել այս խայտառակ իրողութիւնը (ԵՐՅ. Բ. 138), բայց ազդեցութիւնը մնաց: Պաշտօնավարութեան սկիւբէն սկսաւ միահեծան գործել, ոչ Եփրեմի և ոչ Սինոդի հետ խորհրդակցիլ, հալածել իրեն համակիր չեղողները, և առջև քաշել համակիր անպէտները: Սակայն դժգոհներ սկսան իրենց պատրաստութեանց, և լրտեսում և ցուցակագրում էին անոր բոլոր արածները: Այդ կէտը շեշտուեցաւ մանաւանդ 1832-ի եպիսկոպոսական ձեռնադրութիւններով (2490), որոնց աւելցան, 1832 յուլիս 10-ին Սուբիաս Կարնեցի, 1833 ապրիլ 30-ին Միքայէլ Սալլանթեան, յուլիս 9-ին Նիկողայոս Տէր-Մարուգեան, և սեպտեմբեր 17-ին Գէորգ Զեղվեցի և Յարութիւն Շիողնեցի, և քիչ ետքն ալ 1834 մայիս 6-ին Նիկողայոս Խամսեցին և յուլիսի 21-ին Մկրտիչ Կարձիկեանը: Ասոնց հետ ձեռնադրուեցան Տաճկահայերէն, Գրիգոր Տրապիպոնի առաջնորդ, Ջաքարիա Կոփեցի Երուսաղէմի փոխանորդ, և Պետրոս Կուրավցի Կարնոյ առաջնորդ: Էջմիածնի ձեռնադրութիւնները մեծ անբաւականութիւն պատճառեցին միաբանութեան մէջ, զի աւելի արժանաւորները յետաձգուած էին լոկ հակակրութեան պատճառով, և անոնց գլուխ էր կանգնած Յովհաննէս Ղրիմեցին Սինոդին ատենապետը, որ իրօք աւելի ուսումնականութիւն և աւելի պատրաստականութիւն ունէր, և այս պատճառով կը համարձակէր մինչև իսկ կառավարչապետին դիմել կաթողիկոսին դէմ: Բայց Ռօպէն արդէն վաստակուած էր Կարբեցիին կոմէն (ԵՐՅ.Բ.141), և դիմումն ալ նշանակութիւն չունեցաւ: միայն թէ դժգոհութիւնը տակաւ տարածուեցաւ և պաշտօնապէս երևան ելնելու համարձակեցաւ: Մէկէ աւելի պատճառներ ունէին Կարբեցիին պաշտօնավարութենէն դժգոհներ, ոչ թէ լոկ անձնական պատճառներով, այլ առաւելապէս աթոռական և միաբանական գործերու անխնամ մնալէն:

2507. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՆԵՐՍԷՍ

Յովհաննէս դժբախտաբար իրեն հին համակիրներն ալ կատարելապէս գոհացնելու ձարտարութիւնը չունէր: Տփղիսի դատարկ մնացած առաջնորդութեան ընտրելի ցուցուցած էր Ստեփաննոս Արղութեանը և Ջաքարիա Գուլասպեանը, մինչև աւելի արժանաւորներ և հինաւուրց եպիսկոպոսներ կը սպասէին այդ պաշտօնին: Ընտրութիւնը կայացած էր Արղութեանի վրայ, և Ջաքարիա Երևանի փոխթեմակայ անուանուեցաւ, բայց գոհ չմնաց, և Հաղբատի վանահայրութիւնը ուզց և առաւ, բայց չտապեց Տփղիս երթալ, և իր ազդեցիկ իշխան Գրիգոր Յովսէփեան Բեհրութեանցը ձեռք առաւ, Արղութեան առաջնորդին դէմ դժուարութիւններ յարուցանելու մինչև իսկ անոր առաջնորդութիւնը չճանչնալու աստիճան (ԵՐՅ. Բ. 142): Ջաքարիա սկսաւ պահանջել որ Ղապախ և Բօրշալու Տփղիսէ վատուելով Հաղբատի վիճակ կազմեն, այլ Յովհաննէս չհամարձակեցաւ խնդրանքը կատարել, և փոխարէն Սաղիանու վիճակը առաջարկեց, բայց մինչև որ գործը ելք մը ունենար, Գուլասպեան վախճանեցաւ 1835-ին, և յունիս 17-ին Յովհաննէս միխթարական գրեց Բեհրութեանց, բայց յարաբերութիւննին չքաղցրացաւ, և Արղութեան դժուարութենէ չապատեցաւ: Արղութեանի վրայ վստահանալով Յովհաննէս ուզեց անոր ձեռքով Աշտարակեցին նեղել հին հաշիւներու քննութիւն բանալով, Ներսէսեան վարժարանի անունը՝ Վարժարան Էջմիածնի ի Տփղիս կոչելով, և մինչև իսկ շէնքը վաճառելու և հոգաբարձութիւնները ցրուելու յանձնարարութիւն ըրաւ, որով ընդ միշտ վերանայ Ներսէսի անունը (ԵՐՅ.Բ.151): Տճղիսեցի բարեկամներ Ներսէսը կը գրգռէին հրապարակ իջնել, այլ նա

հանդարտ և խոհեմ, պէտք եղած, խրատը կը գրէր իրեններուն, որ չյուզուին, զի եղածները իրեն չէին կրնար վնասել, և Յոբի հետ կը կրկնէր, եթէ զբարիսն ընկալաք ի ձեռանէ տեառն, չարեացն ո՞չ համբերիցեմք (ՅՈՒԲ. Բ. 10): Իսկ իր գործերու մասին կը վստահեցնէր, թէ անոնք պաշտպանելու և բացատրելու միջոցներն ունէր: Բեսարաբիայի մէջ ալ ոչ նուազ փառքի և պատիւի մէջ էր շնորհիւ Նովորոսիայի կուսակալ Միքայէլ Վորոնցով կոմսին, որուն հետ հին տարիներէ լաւ յարաբերութիւն ունեցած էր, և զինուորակից եղած էր պարսկական պատերազմներու մէջ: Ներսէս մերթ անոր տեսութեան կերթար Օտեսսա, և անոր ընդարձակ ազարակներու շահագործման դիւրութիւններ կընծայէր, և 35 տեակ խաղողի ճիւղեր բերել տուած էր Երևանէն: Յովհաննէսի աչքին փուշ էին պարագաները, բայց չէր համարձակեր աւելի յայտնի հակառակութիւն մղել Ներսէսի դէմ:

2508. ԴԺԳՈՂՆԵՐՈՒ ՇԱՐԺՈՒՄԸ

Վերջապէս միաբանութեան մէջ տիրող խուլ շարժումը համարձակեցաւ ասպարէզ գալ, և առաջին քայլը ընող եղաւ Արդուիւնցի Գրիգոր Եպիսկոպոսը: Սա Գուլասպեանէ ետքը Երևանի փոխթեմակալ նշանակուեցաւ, բայց տենդ ստանալով երկար չմնաց: Նորնախիջևանի նուիրակութիւնը խնդրեց բայց Յովհաննէս չհամարձակեցաւ տալ զի Ներսէսի վիճակ էր: Հրաման ուլեց բժշկելու համար Պիատիգորսկի ջերմուկները երթալ, այլ չտրուեցաւ մի՛ գուցէ երթայ Ներսէսի միանալ, ուստի 1833 մայիս 31 թուականով կարեկցական առաւդեցութիւն մը գրեց կաթողիկոսին: Այս գիրով կը յայտարարէ որ վանքին և աթոռին մէջէն բարեկարգութիւն վերցուած է, և ամէն կողմէն վանք և միաբանութիւն կը նախատուին, և միաբաններ իրարու դէմ զիրար կը վիրաւորեն, և թէ այս պատճառով էր որ հեռանալ ուլեց: Ուստի կառաջարկէ կաթողիկոսին որ Դանիէլի և Եփրեմի հաստատած ուղղութեամբ գործէ, ինչ որ յաջորդներէ և նուիրակներէ և ուրիշներէ կու գայ գիրի առնուի, և Սինոդի համաձայնութեամբ գործուի, մասնաւորներ բան մը չիւրացնեն, նոյնիսկ կաթողիկոսին ալ: Յատկապէս կը խնդրէ որ հիւանդներ խնամուին, ամէն միաբան միատեսակ հոգածութիւն վայելէ, իւրաքանչիւրը կագրին և աստիճանին համեմատ պատրուի, միաբանական սեղանին կագրադրութիւն ըլլայ, ժամարարներ և աւագերէցներ անպակաս ըլլան, ուխտաւորներուն ալ հոգ տարուի առաջուայ սովորութեան համաձայն, և ամէն կէտերու վրայ ալ կաթողիկոսին և Սինոդի բարեհաճութիւնը տարածուի: Ի վերջոյ կը յայտարարէ որ եթէ բարեկարգութիւն ըլլայ, պատրաստ է վանքին մէջ մնալ, թէ ոչ կուլէ հիւանդութեան համար Ատաբապար երթալ, ուր մի լաւ բժիշկ կայ, կըսէ, ակնարկելով Միքայէլ Բէստէն Պատկանեանի: Յովհաննէս շարժումին առջևն առնելու միտքով գրաւոր պատասխան տուաւ թէ ինքն ուխտած է Դանիէլի և Եփրեմի հաստատած սինոդական կանոններով գործել. բայց գործերու ընթացքին մէջ ոչ մի փոփոխութիւն չըրավ, և շարունակեցին ինքնահաճ որոշումներ, համակիրներու շնորհներ, և դրամէ օգտուելու միջոցներ: Այս պատճառով ընդարձակուեցաւ անբաւական միաբաններու շրջանակը, մանաւանդ նոյն 1833 տարույ աշնանամուտին ատեններ, երբ Սիմէոն Բզնունի Եպիսկոպոսն ալ, որ Ներսէսի օգնական և Նորնախիջևանի յաջորդ էր, Էջմիածին դարձաւ, և դժգոհներ անոր շուրջը բոլորուեցան: Շարժումը կանոնաւոր վարելու համար իրենց մէջէն ութը միաբաններու յանձնաժողով մը ընտրեցին, և անոնց յանձնեցին պէտք եղած բերանացի և գրաւոր դիմումներն ընել: Ընտրուած ութը եղան, Սիմէոն Բզնունին, Գրիգոր Արդուիւնցի ու Նիկողայոս Տէր-Մարուգեան Եպիսկոպոսներ, և Յովհաննէս Ղրիմեցի, Գէորգ Տաթևացի, Ստեփանոս Արարատեան, Յովհաննէս Շահխաթունեան ու Մարտիրոս Շահապիլեան վարդապետներ: Ասոնք 1833 նոյեմբեր 16-ին կաթողիկոսին ներկայացան ընդարձակ յիշատակագիրով մը (ԴԻԻ-283):

2509. ԴԺԳՈՂՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐԸ

Յառաջաբանին մէջ բարեկարգութեան պէտքը և անոր բացակայութիւնը բացատրած ատեննին համարձակ կը յայտարարեն, թէ նոր ընտրութեան նպատակն էր հասարակաց սպասած բարիքը, և մանաւանդ Էջմիածնի վանաց բազմատեսակ գործերը և կարգադրութիւնները, մինչ ընդհակառակն ընտրութիւնից և օծումից յետոյ հասարակաց սպասած բարիքներից, գործերից և կարգադրութիւններից մինչև այսօր էլ ոչ թէ մի բան չառաջացաւ, այլ ընդհակառակը յառաջ եկան բազմաթիւ նորանոր անկարգութիւններ: Այդ յայտարարութեան վրայ յառաջ կը բերեն ութ գլուխ գլխաւոր անկարգութիւններ 1. Կաթողիկոսը ցանկալով կառավարել անսահման իշխանութեամբ, և գործել ամենայն ինչ ըստ անձնական հաճոյից, ոչնչացրել է սինոդական կառավարութիւնը, և նոյն իսկ օծման օրը փոխած է երդման իսկական ձևը, կրճատելով այն յօդուածները որ կը վերաբերէին սինոդական կառավարութեան, ինչպէս կը տեսնենք երդման ձևին մէջն ալ (ԴԻԻ.Բ.274): 2. Օծման օրէն ի վեր, ոչ մի վնասակար անկարգութիւն չէ ուղղած, և ոչ մի օգտակար կարգուկանոն վէ սահմանած: 3. Միշտ ձգտում ունեցած է անդուլ ոսկի և արծաթ դիպելով բազմացնել իւր սեպհական գոյքն ու գանձը, և հարստացնել աշխարհական ապականներին և մօտիկ ընտանեաց, և այդ դիտմամբ չէ ուզած ճիշդ հաշիւ տալ օծումից առաջ և յետոյ ստացած գումարներուն, այլ և վանքի գոյքից օգտուած է իր սեպհական գանձին համար: 4. Աշխատած է նուաճել և ընկճել Էջմիածնի վանքի ամբողջ միաբանութիւնը, և այդ նպատակով բնաւ հոգ չէ ունեցած միաբանական սեղանին, հիւանդացած խնամքին և աղքատ միաբաններուն: 5. Միայն անձնական շահերից դրդուած, աստիճաններ, շնորհներ և պատիւներ բաշխած է քահանաներու և արեղաներու և վարդապետներու, և եպիսկոպոսութեան բարձրացուցած է առանց սինոդի համաձայնութեան: 6. Փոյթ չէ ունեցած յայսկոյս Կովկասու գտնուած վիճակներուն կարգադրութեան, մինչ նշանաւոր անկարգութիւններ կը տիրեն կառավարութեան և ծիսակատարութեան մէջ, և ոչ իսկ վիճակագրական ցուցակներ կը պահուին: 7. Չէ ուզած Եփրեմի խրատին և խորհուրդին դիմել, թէպէտ այս հրամայուած էր կայսերական հրովարտակով: 8. Հակառակ որ նոր ընտրութենէ առաջ որոշուվծ էր, և ինքն Յովհաննէս ալ ստորագրած էր, որ նոր ընտրեալը հայրապետական գահը չնստի, և Եփրեմ վեհարանի մէջ մնայ, ինքն անմիջապէս գահ բարձրացած է, և Եփրեմը ստորին և հասարակաց խուցերում բնակեցուցած: Այդ պարագային կը վերագրեն Տաճկահայոց դժկամութիւնը Յովհաննէսի անունը յիշելու, և առաջ կը բերեն Ղուկասի բռնած խոհական ընթացքը (2152): Ջանց կընեն ուրիշ բաներ և իրենց յայտնարարութիւնները կարդարացնեն ըսելով, թէ ծածկած վէրքերը անբուժելի են մնում, և վրայ կը բերեն անհրաժեշտ նակատուած դարմանները : 1. Վերահաստատել սինոդական կառավարութիւնը և կայսերական վաւերացմամբ զօրացնել: 2. Առանց Սինոդին համաձայնութեան եպիսկոպոս չձեռնադրել: 3. Օծումէն առաջ և յետոյ ստացած բոլոր արդիւնքների և գումարների հաշիւը ներկայել: 4. Տփղիս դարձնել այն կինը զոր Տփղիսէ բերած է միասին, և կը խնամէ իր սարկաւագին հօրը տունը, և կնոջ հետ սարկաւագն ալ միաբանութենէ հեռացնել: Այդ երեսէն, կըսեն, շատ սաստիկ մեծացաւ աթոռի, աթոռայինների, կաթողիկոսութեան, և նոյն իսկ Ձեր սրբազնասուրբ անձին անարգանքն ու նախատինքը: Կը կիքեն գէթ երեք օրուայ ընթացքում պատասխան մը ստանալ, որ ընելիքնին գիտնան (ԴԻԻ. Բ. 283-294. ԵՐՅ. Բ. 168-175):

2510. ՀԵՏԵՒՈՐԴ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատմուած չէ թէ յիշատակագիրը ներկայացնող ութեր բերանացի բացատրութիւններ կամ առաջարկներ ալ աւելցուցին, բայց կերևի թէ կաթողիկոսին կողմէ նկատառութեան խոստումով մեկնած են: Յովհաննէս երկու օր անցուց, և նոյեմբեր 19-ին գիշերանց առանձին իր մօտ

հրաւիրեց Արդուիւնցին: Բայց անժամանակ և առանձին հրաւերը կասկած արթնցուց ութը ընտրեալներուն միտքը, ուստի կորոշեն միասին ներկայանալ, ինչ որ կը վայրացնէ Կարբեցին, անոնց միասին գալը յանդգնութիւն որակելով: Ութերը առաջ հանդարտօրէն կը պատասխանէն, բայց խօսքը երկննալուն ծանր բացատրութիւններ ալ չեն խնայեր, մանաւանդ Բզնունին, և այսպէս կը փակուի գիշերային տեսակցութիւնը: Յաջորդ օրը նոյեմբեր 20-ին Յովհաննէս կոնդակ մը կուզէ ութերուն անունին, որով կը հրամայէ երկու երիցագոյններուն, Բզնունիին և Արդուիւնցիին յանձնել բանակցութիւնները, և միւսներուն կը հրամայէ որ անոնց միջոցով յայտնեն իրենց ըսելիքները, և բոլորեքինքն միասին անհամեստութեամբ չհաւաքուիք վեհարանը առանց հրաւիրման մեզ ներկայանալու (ԴԻԻ. Բ. 295 ԵՐՅ. Բ. 176): Ութերը դարձեալ միասին կը պատասխանէ նոյեմբեր 21-ին, թէ իրենք խմբովին գործակիցներ են, թէ ոմանց հետ բանակցութիւնը հարկաւորութիւն կամ կարօտութիւն չունի, թէ ինքը կրնայ գրով իր պատասխանը յայտնել, և իրենք ալ կրնան դարձեալ գրով կամ բերնով ուրիշ ըսելիքնին ներկայել, և բացարձակ կը մերժեն անհաստատութիւն խօսքը, թէ իրենք համեստաբար ներկայացան և համեստաբար լսեցին իր խօսքերը, և համեստութեամբ դարձան իրենց տեղերը: Կարբեցին կողակ մը ևս կուզէ 23-ին Բզնունիին և Արդուիւնցիին անունին միաբանութեամբ, ուր կը յայտնէ թէ ինքն չէ դադարեր գործով հանդիսացնել աթոռին բարեկարգութիւնը, բայց եթէ աւելի բան մըն ալ կուզեն, յիշեալ երկուքը միւս սինոդականներու հետ, մի քանի միաբաններ ալ հրաւիրելով օգտակար կարծածնին առաջարկեն կարգալու և միանգամայն հաւանութիւն տալու: Ութեր 25-ին երրորդ գրութիւն մըն ալ կուզէ կաթողիկոսին, թէ իրենց նախընթացները կը կրկնեն, որոնց կաթողիկոսը չէ ուզած պարզ կերպով պատասխանել, կամ պարզ հաճութիւնը ցոյց տալ, և կաւելացնեն թէ սա կը լինի մեր վերջին գրութիւնը: Պահ մը լուութիւն կը տիրէ (ԴԻԻ.Բ.299), մինչև որ Կարբեցին դեկտեմբեր 7-ին նոր կոնդակ մը կուզէ լոկ Բզնունիին և Արդուիւնցիին անունին, համաձայնութիւն կը յայտնէ չորս առաջարկներէն առաջին երեքին, բայց այն կերպով թէ ինքն հաշիւներ տուած է, միշտ Սինոդին հետ գործած է. իսկ Սինոդի գրութիւնը կայսերական վճռով հաստատելու համար կը սպասէ, որ առաջ կանոններու ծրագիրը պատրաստեն: Ութերը միայն դեկտեմբեր 20-ին պատասխանեցին թէ ծրագիրը արդէն պատրաստուած է Դանիէլի և Եփրեմի ձեռքով, և իրեն կը մնայ վայն պետութեան ներկայել և հաստատութիւնը խնդրել (ԴԻԻ.Բ.301): Յովհաննէս այլ ևս այդ գրութեան չպատասխանեց, զի գործին ընթացքը բոլորովին նոր կերպարան առնել սկսած էր:

2511. ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ

Մինչև այս ատեններ անցուդարձեր կաթողիկոսի և միաբանութեան շրջանակէն դուրս ելած չէին, և երկու կողմերն ալ կը վգուշանային եղելութիւնները կառավարութեան հաղորդել: Բայց Բեհբութեան նահանգապետը, որ պահ մը Երևանէ բացակայ էր, դառնալուն լուրը կառնէր, և դեկտեմբեր 13ին կառավարչապետ Ռօզէնի կը հաղորդէր: Շարժումին գլուխ կը ցուցներ Բզնունին, իսկ գրագրութեանց հեղինակ Ղրիմեցին, և ընդունելով ալ որ վարդապետներ գուցէ արդարացի են բողոքում կաթողիկոսի արարքներու դէմ, հարկ կը տեսնէ պաշտպանել տէրութենէն ճանչցուած կաթողիկոսը (ԵՐՅ.Բ.185): Ռօզէն 1834 յունուար 18-ին տեղեկութիւններ խնդրեց Յովհաննէսէ, և դրամ տանելու պատրուակով Էջմիածնին յղեց ռուսապփ բայց հայերէնագէտ Եաղիկով սպան, որ ծածկաբար գործին ներքինը իմանայ: Սա Յովհաննէսի պատասխանով դարձաւ Տփղիս փետրուար 7-ին և լուր բերաւ թէ ութերէն երեքը, Գրիգոր Արդուիւնցի Եպիսկոպոս և Ստեփանոս Արարատեան և Յովհաննէս Շահխաթունեան վարդապետներ, որ սինոդական ըլլալով կամովին հեռացած էին, ներողութիւն խնդրած և նորէն սինոդին մասնակցած են: Յիշեց նաև Գէորգ սարկաւագին և Տփղիսեցի կնոջ և ընտրութեան կերպին վրայօք խօսուածները, աւելցուց

Բօրչալուի Ուլուլար կամ Սանահնի ձորէն մասունք բերուած ըլլալը Բզնունիի հրամանով առանց կաթողիկոսի գիտութեան, յայտնեց ևս Եփրեմի կողմէն խաղաղութիւն հաստատելու համար տրուած խոստումը, և թէ իր մեկնելուն խաղաղութիւն կը տիրէր Էջմիածնի մէջ, բայց և սրտից կը պատէր Ներսէսի Էջմիածնի վերադառնալուն մասին: Ռօպէն բոլոր գիրերը և լուրերը հաղորդեց Բլուտովի՝ փետրուար 14-ին, իր կողմէն Ներսէսը մատնանշելով իբր շարժումին գրգռիչ, չծածկելով թէ Հայոց մեծամասնութիւնը և ամենանշանաւոր դասակարգը Ներսէսի համակիր է, և Յովհաննէսէ անբաւական, բայց թէ Յովհաննէսը, չնայելով նորան վերագրուող պախարակելի գործերին, որոնցից գլխաւորը շահասիրութիւնն է, աւելի օգտաւէտ կարող է լինել տէրութեան նպատակներին. ուստի շեշտելով կը հետևեցնէր Ներսէսը Կովկասէ հեռու պահել: Բլուտով ալ իր մարտ 12-ին պատասխանին մէջ կը կարծէ թէ Ներսէսի մասին սրտիցը, ոչ թէ Ներսէսէն այլ անոր կուսակիցներէն ծագում առած կըլլայ, թէ Յովհաննէսի արարմունքները տեղի են տուել պատահած անկարգութեանց, և թէ պէտք է անոր սգացնել որ աւելի կանոնաւոր, և իւր ստանձնած վսեմ պաշտօնին վայել ընթանայ և հեռու կենայ շահասիրութիւնից (ԵՐՅ.Բ.199):

2512. ԲԱՅԱՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՁ

Ռօպէն ուկած էր ութերու յիշատակագիրը ունենալ, բայց Յովհաննէս չէր տուած, որով պետական անձերու հետաքրքրութիւնը աւելի գրգռուած էր, թէ անոր մէջ այնպիսի կէտեր կան, որ Յովհաննէս կը բաշտուի մէջտեղ հանել: Բայց ինչ որ Յովհաննէս կը ծածկէր բողոքները իրենք յղեցին Ռօպէնի 1834 մարտ 20-ին, ընդարձակ նամակի մը հետ, որուն մէջ պատմած են բոլոր մանրամասնութիւնները (ԴԻԻ. Բ. 304, ԵՐՅ, Բ. 198-202), որով յատուկ քննիչ ալ կը խնդրեն իրողութիւնը ստուգու համար: Եւ երբոր պատասխանը կուչանար, ապրիլ 26-ին նոր նամակով խնդիրնին կը կրկնէին (ԴԻԻ. Բ. 309, ԵՐՅ. Բ. 203-304): Բայց Ռօպէն ընթացք չէր տար խնդրանքին պետական տեսակէտէն տէրութեան ճանչցած և պաշտպանած անձը վտանգի չենթարկելու համար, և մայիս 8-ի մասնաւոր գրութեամբ նոյն ինքն Յովհաննէսի կը դիմէր և յիշատակագրին գլուխները յառաջ բերելով անոնց բացատրութիւնը կը խնդրէր, և Յովհաննէս ալ մայիս 22-ին, բաւական երկար գրութեամբ մը, իբր թէ պահանջուած բացատրութիւնները կու տար (ԵՐՅ. Բ. 208-212): Յովհաննէսի բացատրութիւնները պարզ ուրացութիւններ եի իրեն վերագրուած մեղադրանքներուն, իր յայտարարութեանց վրայ հիմնուած, թէ ինքն այն ըսուածներէն և ոչ մէկը չէ ըրած, այլ ընդհակառակն բոլոր օրինական պահանջները կատարած է: Իրեն դէմ հակառակութիւնն ալ կը վերագրէ, Բզնունիի առ Ներսէս արքեպիսկոպոս ունեցած կոյր անձնուիրութեան, Տէր Մարուգեանի որ իր ազգականն էր՝ Բզնունիի աշակերտ ըլլալուն, Ղրիմեցիի՝ Սինոդէ հանուելուն, Տաթևացիին՝ եպիսկոպոս չձեռնադրուելուն, Շահխաթունեանի՝ դիւանատանց մէջ ազատ չթողնելուն, Շահապիլեանի՝ իրեն պաշտօն շարուելուն, լռելով որ Ներսէսի ազգականն էր. միայն Արդուինցիին մասին բան չէ ըսուած: Իսկ Տփղիսեցի կնոջ իր գործածը կը վերագրէ մարդասիրաբար ողորմելու սգացման, ինչպէս Քրիստոս Քանանուհոյն, աշխատելով բարութել անոր գրութիւնը միմիայն ի փառս Աստուծոյ: Սակայն իրողութիւնը շատ տարբեր էր թէ այս կնոջ, և թէ Աշտարակեցի Գէորգ սարկաւագի մասին, անոնց կենցաղը, անոնք անբաժան մէկտեղ պատոցնելը, անոնց հետ յարաբերութիւնները, անոնց և անոնց պարագաներուն համար ծախքերը, այնչափ ակներև էին, որ հանրութեան բերանը ինկեր էին, և ինքն ալ անոնք պահ մը Աշտարակ յղած էր: Բայց հապիւ ամբաստանողները լռեցին Եփրեմի ջանքով, անմիջապէս ետ բերելը և Գէորգի 1834 մարտ 24-ին (ԵՐՅ. Բ. 213) յանկարծ դասին մէջ պաշտօն վարելու երևալը նոր գրգռութիւններ սարքուցին, և Բզնունիի համարձակեցաւ ուրարը խլելով Գէորգը դասէն վտարել, և հակառակութիւններ նորէն գլուխ տուին (ԵՐՅ. Բ. 207): Այդ միջադէպին ետքն էր որ

Յովհաննէս իր բացատրութիւնները կը գրէր, և Արգուիւնցիին միայն կը խնայէր: Ռօպէն ստանալով Յովհաննէսի գրութիւնը նահանգապետ Բեհրութեանի տեղեկագիրը, և պատուիրակ Եպիկով հաղորդած ծանօթութիւնները, հարկ կը տեսնայ խիստ միջոցներ թելադրել Յովհաննէսի, և ընդունելով ալ թէ Յովհաննէս կաթողիկոսն ամենևին պատ չեմ համարում նորան վերագրել մեղադրութիւններից, որոնցից գլխաւորն է շահասիրութիւնը, կը պնդէ թէ Յովհաննէս կաթողիկոսական աստիճանի մէջ աւելի կարող է մեզ պիտանի լինել, քան թէ ուրիշ ոք (ԵՐՅ, Բ, 223): Ուստի կեցրակացնէ , նախ ամբաստանողները հեռացնել, յետոյ շփոթները հանդարտեցնել , և ի վերջոյ մի կարգուկանոն սահմանել (ԵՐՅ. Բ. 218): Բլուտով նախարարն ալ, որուն ուղղած էր Ռօպէն իր երկար տեղեկագիրը , հարկ կը տեսնէ Անդրկովկասի Հայոց եկեղեցւոյ կառավարութեան համար մի հաստատուն կանոնադրութիւն ունենալ, և ստացած տեղեկութիւնները կը խոստանայ ներկայել այն յանձնաժողովին, որ հաստատած է այդ Պօլօժէնիէն նախագծի քննութեան համար (ԵՐՅ. Բ. 227):

2513. ԽՆԴԻՐԻ ՓԱԿՈՒՄԸ

Ամբաստանողներու մասին ձեռք առնուելիք միջոցներուն գալով, Յովհաննէս ութէն չորսը իբրև շահուելու պատրաստներ կը նկատէր, և միւս չորսերուն համար առաջարկած էր, Բզնունին Սաղիան աքսորել, Տէր Մարուգեանը և Ղրիմեցին՝ Սևան իսկ Շահապիլեանը՝ Ներսէսի եղբորորդին Էջմիածնի մէջ բանտարկել (ԵՐՅ. Բ. 200): Ասոր վրայ այս չորսերը Տփղիս ուղեցան, և գացին, ուսկից 1834 ամառուան մէջ ոստիկանական հսկողութեամբ Տէր-Մարուգեան և Ղրիմեցին դրկուեցան Սևան, և Բզնունին ու Շահապիլեան Սաղիան (ԵՐՅ.Բ.227), զի Ռօպէն պատշաճ չտեսաւ վերջինին Էջմիածնի մէջ բանտարկուիլը (ԵՐՅ.Բ.222): Իսկ Յովհաննէս, Բզնունին վիճակը աւելի ևս անտանելի ընելու համար, Սաղիանու վանահայր նշանակեց Պետրոս վարդապետ Պայծառեանը, մի մանուկ աբեղայ, ամէն խստութիւն գործածելու հրահանգով: Սևան աքսորուածները ինը ամիսէ Էջմիածին դարձան և 1835 ապրիլ 7-ին Ջատկի կիրակին և Աւետման տօնի օրը Ղրիմեցին հանդիսապէս ալ կաթողիկոսէն թողութիւն ստացաւ, բայց ամիսը չվերջացած նորէն գանգատագիր պատրաստեց Յովհաննէսի դէմ և ուղղակի նախարար Բլուտովի ուղղեց, որ յուլիս 25-ին գիրը Ռօպէնի դարձուց յանձնարարելով Ղրիմեցին Տփղիս բերել, առանձինն լսել և հոն պահել: Ռօպէն ուշացուց գործադրութիւնը մինչև որ Յովհաննէս հոկտեմբերին հրաւերով Տփղիս եկած ատեն Ղրիմեցին միասին բերաւ, և չուլեց պայն Տփղիս թողուլ անվնաս գտնելով նորա Էջմիածին մնալը, մանաւանդ թէ օգտակար իսկ հմտութեամբը և կարողութեամբը: Այսպէս շարունակեց Ղրիմեցին, մինչև որ 1841-ին եպիսկոպոս ալ ձեռնադրուեցաւ: Իսկ Տէր-Մարուգեան թէպէտ Էջմիածին դարձաւ, բայց այլևս պաշտօնի չկոչուեցաւ Կարբեցիին կողմէն, չնայելով որ իր ազգականն ալ էր: Սաղիան աքսորուածներուն երբ աքսորէ ազատած ըլլալնին ճշդիւ յայտնի չէ, թէպէտ երկարատև եղած ըլլալը կը գիտցուի (ԵՐՅ.Բ.228): Բզնունին Էջմիածին դառնալէն ետքն ալ անպաշտօն մնաց Կարբեցիի օրով, իսկ Շահապիլեան Ներսէսի ազգական լինելուն համար այլևս ոչ պաշտօն ստացաւ և ոչ աստիճան: Իսկ ութերէն միւս չորսերը շուտով շահուեցան Կարբեցիէն շնորհքներով և խոստումներով, երեք սինոդականները, Արգուիւնցին և Արարատեան և Շահիսաթունեան իրենց պաշտօնը պահեցին, Տաթևացին և Արարատեան նոյն 1835 տարւոյ յունիս 17-ին եպիսկոպոս ձեռնադրուեցան (ԵՐՅ.Բ.240), միայն Շահիսաթունեանի եպիսկոպոսութիւնը, մինչև 1841 ուշացաւ Ղրիմեցիին հետ: Այսպէս փակուեցաւ ութերու կոչուած Էջմիածնի միաբանական շարժումը, թէպէտ ութերը ներկայացուցիչ էին միաբանական մեծամասնութեան, բայց որովհետև ամէնքը գործի չխառնուեցան, ութերը միայն հրապարակի վրայ երևցան, և վատն ու լաւը իրենք կրեցին: Բողոքները անիրաւ և վրպարտիչ չէին իրենց ամբաստանութիւններով,

ինչպես պետական անձերն ալ հաստատեցին, բայց Կարբեցիին իրեն հաճոյակատար և տկար ընթացքովը պետական շրջանակէն օգտակար դատուած էր, և անոր պաշտպանութեամբը իր դիրքը պահեց, բայց չենք կարծեր թէ օգտուեցաւ ալ: Միայն թէ հետևանքը աւելի աղիտաբեր եղած պիտի ըլլար, եթէ բողոքողները ասպարէզ գտնէին, և կաթողիկոսական տագնապի առիթ տրուէր: Բողոքողները իրենց շարժումով ու դիմումներով առիթ ընծայեցին Պօլօթէնիէի փութացուցման, գուցէ պատճառ ալ տուին պետական միջամտութեան կէտերը աւելի ընդարձակելու նոյն կանոնադրութեան մէջ, իբրև միջոց ներքին շարժումները արգիլելու:

2514. ԵՓՐԵՄԻ ՄԱՀԸ

Կարգը կու գայ Պօլօթէնիէի կազմութեան և պարունակութեան մասին գրել, բայց այդ գլուխին չանցած յիշատակենք մահը հրաժարել կաթողիկոս Եփրեմի, կամ երիցագոյն սրբապնասուրբ կաթողիկոսի, ինչպէս կը կոչէին բողոքողները (ԵՐՅ.Բ.200) կամ ծերունի կաթողիկոսի մեր հօր, ինչպէս կը գրէր Յովհաննէս:Եփրեմ ծնած էր 1748-ին ըստ սովորական աւանդութեան (2258) կամ 1750-ին տապանագիրին համեմատ, որով 85 կամ 87 տարեկան վախճանեցաւ 1853 յուլիս 16-ին, Վարդավառի երեքշաբթի օրը, երեկոյին դէմ: Մեծահանդէս թաղում կատարուեցաւ վաղայաջող հինգշաբթի օրը, յուլիս 18-ին, և թաղուեցաւ Ս. Գայիանէի մօտ միաբանական գերեզմանատան մէջտեղը ըստ յանձնարարութեան իւրոյ, որուն վրայ բարձրերեկ բայց համեստ տապանաքար գրուած է, համեստ արձանագրութեամբ մըն ալ, որուն մէջ սակայն շատ արդար և իրաւացի առաքինութեամբ սրբասնեալ հայրապետ կոչումը (ՇԱՀ.Ա.,236): Առաքինութեան եւ սրբութեան ձիրքերը Եփրեմի առաւելութիւններն եղան կենդանութեան ատեն, եւ մահուանէ ետքն ալ իբր սուրբ պատուուեցաւ հանրութենէն, եւ մինչեւ այսօր իր գերեզմանը ուխտատեղի է բարեպաշտ ժողովուրդին: Եփրեմի կեանքն ու վարքը, բնաւորութիւնն ու գործունէութիւնը, լիովին պատկերացուցած ենք անդստին առաջին անգամ հրապարակի վրայ երեւնալէն սկսելով(2258), և միշտ տեսած ենք զինքն արդարութեան և հանրային բարւոյն հետեւող, ժիր ու գործունէայ, արթուն և հնարամիտ, բայց երբեք անձնասիրութեան և շահասիրութեան չծառայած: Կաթողիկոսութենէ առաջ ունեցած ժրութիւնը, կաթողիկոսութեան մէջ տկարացած յիշեցինք(2332), որ գուցէ բնական տկարութեան ալ հետեւանք էր, և պահ մը Ներսէսի վրայ կասկածն ալ, ամէն կողմէ յաճախած ձախող լրաբերութեանց և թելադրութեանց հետեւանք ցուցուցինք: Այսու հանդերձ սիրտով երբեք անկէ չբաժնուեցաւ, զի պայն Սինողէ Տփղիս փոխադրելը՝ բրաձրացնել էր և ոչ ստորնացնել, մինչև իսկ Կարբեցիին նախանձը շարժելու և նմանելու չափ (2464): Եւ եթէ փոքր ինչ կասկած կար, լիովին փարատեցաւ Եփրեմի Շուշի անցնելէն ետքը, այնպէս որ իր հաստատուն բաղձանքն եղաւ Ներսէսի փոխանցել կաթողիկոսութիւնը, և նոյն զգացման վրայ մնաց մինչև վերջին վայրկեանները, միշտ ա՛խ Ներսէս հառաչելով (ԵՐՅ. Բ. 238): Հրաժարելէին ետքը անցուցած հինգ տարիները շարունակութիւն եղան Եփրեմի առաջին կեանքին, որչափ և ներքին առողջութեամբ բաւականաչափ կազդուրուեց, սակայն աչք և ականջ, ոտքեր և ծունկեր չէին գործեր, և գրեթէ միշտ անկողինի մէջ կանցունէր, միայն թէ յիշողութիւնը և դատողութիւնը կատարեալ էին, և լաւ կը հետեւէր բոլոր անցուդարձերուն: Կատարուած իրողութեանց համակերպող, նոյն սկզբունքին կը յորդորէր բողոքողներն ալ, որոնք եթէ պահ մը կանսային ու կը լռէին, սակայն կրկին կը յուզուէին երբ կը տեսնէին պայն վեհարանէ արտաքսուած, գործերէ հեռու պահուած, և Յովհաննէսէ անտեսուած, որչափ ալ կայսերական հրովարտակը և պետական պաշտօնները հրամայած ու թելադրած էին իրեն Եփրեմի խրատով ու խորհուրդով գործել: Միայն երբոր ների կը մտնէր պայն միջնորդ կը բռնէր կառավարութեան և միաբանութեան առջև իր կամքը քալեցնելու,

և բարեսէր ծերունին չէր վլանար խնդրանքը կատարել, միշտ հանրային օգուտէն և խաղաղութեան նպատակէն յորդորուած: Յովհաննէս երբեք չկրցաւ վստահիլ Եփրեմի վրայ, գոր Ներսէսի անպայման համակիր էր ճանչցած, որչափ ալ Եփրեմ անձնականը հանրայինին գոհելու առաքինութիւնը լիովին փայլեցուց: Յովհաննէս յուլիս 27-ի յատուկ կոնդակով Ներսէսի հաղորդեց Եփրեմի մահը, պատուական գլուխ ձեր ողջ եղիցի և յաւելցէ ձեզ տէր կեանս բարերջանիկս մաղթանքով (ՄՍՐ.150), այլ պակաս չեղան կարծողներ, թէ այս խօսքով կուզէր հասկըցնել, թէ այլ ևս չկայ քո պաշտպան և ցանկացող Եփրեմը. սակայն աւելի Ներսէս էր եղած Եփրեմի պաշտպանը, քան թէ Եփրեմը Ներսէսին, և Ներսէս լաւ գիտէր որ Եփրեմի բաղձանքն ալ արդիւքն ունեցած չէր և ունենալիք ալ չունէր (ԵՐՅ.Բ.239): Արդէն Ներսէս ալ 65 տարեկան եղած էր, և իր շրջանակին գորունեութեամբը կը վբաղէր, և ինչպէս նախարարն ալ նախատեսած էր, Ներսէսի համակիրներն էին անոր անունը մէջտեղ նետողներ, և ոչ թէ ինքն Ներսէսը (2511), որ ծերութեան տկարութիւններն լ սկսած էր վգալ, և նոյնիսկ Եփրեմի մահուան օրը, 1835 յուլիս 16-ին գրած մէկ նամակին մէջ, աչքերուն ցաւած և տկարացած ըլլալէն կը գանգատէր, և ստիպեալ ի հարկէ միով ձախոյ աչօք գրեմ կըսէր (ԵՐՅ.Բ.240):

2515. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԷՏՔԸ

Պօլօժէնիէի կապմութեան գալով, դիտել պիտի տանք, թէ անոր մէջ երկու գլխաւոր կէտեր կան նըկատողութեան արժանի. առաջինն է կաթողիկոսական բացարձակ իշխանութեան, խորհրդարանի կամ խորհրդականաց ձեռքով սահմանափակուիլը, և երկրորդը հայրապետական հոգևոր իշխանութեան Ռուսիոյ քաղաքական իշխանութեան հետ ունենալիք յարաբերութիւնը: Առաջին կէտին մասին գաղափարը նոր չէր, Զաքարիա պատրիարքի և Ղուկաս կաթողիկոսի միջև յուղուած խնդիրին ատեն, այդ գաղափարը առաջին անգամ ծագեցաւ (2151), և հետզհետէ ընդարձակուեցաւ, Դանիէլ կաթողիկոսէ օրինական ձև ստացաւ (2286), և յետոյ պաշտօնապէս հաստատուեցաւ (2294), և Եփրեմէ ալ վաւերացուեցաւ (2331): Հետևաբար արդէն ծանօթ բան մըն էր այդ կէտը, և միայն Յովհաննէսի կողմէ ցուցուած թուլութիւնն ու երկդիմի ընթացքը, և նոյնիսկ իր ուխտին մէջ լռելը (2509), առիթ տուած էին բաղաքներու և պահանջներու, որոնք տեղի չէին ունենար, եթէ Յովհաննէս բացարձակ իշխանութիւնը նորոգելու և անկէ օգտուելու ուղղութեան հետեւած չըլլար: Ինչ որ պատմութեանս կարգին յիշած ենք, այդ կէտին մասին բաւական կը սեպենք, և մտադրութիւննիս երկրորդ կէտին կը դարձնենք: Էջմիածինէ քանիցս անգամ դիմում եղած էր ռուսական պետութեան, որպէսզի սինդական դրութիւնը կայսերական հաստատութեամբ վաւերացուի, և կանոնական ծրագիրներն ալ ներկայացուած էին, բայց այն ատեն կառավարական ատեանը դիտած էր, թէ Էջմիածնի վարչութեան գործերում Ռուսիան իրաւունք չունի խառնուելու, քանի որ Արարատեան աթոռը իւր սահմանից դուրս է (ԵՐՅ.Բ.288): Բայց խնդիրը փոխուեցաւ երբոր Էջմիածին ռուսական տիպպետութեան ներքև մտաւ: Մէկէ աւելի տեսակետներ կայսրութիւնը կը շահագրգռէին Հայոց կաթողիկոսութեան ընթացքը գիտնալ և անոր մէջ պետական տեսակէտը ապահովել: Արդէն որթոտոքս եկեղեցւոյն սկզբունքն է եկեղեցական իշխանութիւնը պետական իշխանութեան ենթարկել նկատել, և կրօնական ու քաղաքական յարաբերութեանց գերագոյն վարիչ պետութիւնը ճանչնալ. բնական էր որ նոր եկեղեցական իշխանութեան մը իր սահմաններուն մէջ մտած ատեն, անոր վրայ ալ տարածել ուզէր իր սկզբունքը: Բայց եթէ ազդեցութիւն ալ գործածել չուզէր, պէտք էր գիտնալ թէ ինչ կանոններով կը կառավարուի այդ եկեղեցին: Ասոր հակառակ կաթողիկոսարանը առձեռն կանոնագիր մը չունէր ներկայելու, որով և վրան պնդելու հիմ ալ չունէր: Կանոնագիրք մը կար անդստին Օձնեցիին ժամանակէն կապմուած (567), բայց հաւաքածոյ մըն էր վանապան կանոններու, որոնց մէջ

վարչականները կատարեալ չեն, և ամօթ չսեպուի խոստովանիլ, թէ գուցէ Մայրաթոռն ալ այն ատեն պայն իր ձեռքին տակ չէր պահեր և անոր չէր գործեր, զի խառնաշփոթ ժամանակներ ամէն կարգուկանոն խանգարած էին, ու կաթողիկոսներու և իշխաններու և եպիսկոպոսներու կամայական գործեր ասպարէզ գտած էին: Ասոր հետևանքն էր որ հապիւ թէ կարգուկանոնի գաղափարը պօրացաւ, տարակարծիք ուղղութիւններու վէճերն ալ միասին պօրացան, ընտրութեանց վաւերականութեան պայմաններ, իրաւասութեանց սահմաններ, յարաբերութեանց պահանջներ, շարունակ խնդիրներու առիթ տուին, և հիմնական կանոնի մը պակասութեամբ անլուծանելի մնացին: Նախընթաց գործերը պանց ընելով, կաթողիկոսի և միաբանութեան ներկայացուցիչներու միջև յուզուած վէճը մինչև պետութեան ատեան ելաւ, պետութիւնը չէր գիտեր ինչ հիմնակէտով կարծիք յայտնել և վճիռ արձակել, և ստիպեալ պէտք կը տեսնար մի հաստատուն կանոնադրութիւն ունենալ (2512):

2516. ԱՌԱՋԻՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ

Բայց նոր չէր որ պէտք կը պգացուէր: Երևան և Էջմիածին գրաւուած էին 1827 հոկտեմբեր1-ին և 1828 նոյեմբեր 16-ին Պասքևիչ այդ պէտքը կը յայտնէր, և 1829 դեկտեմբեր 26-ին յատուկ յանձնաժողով մը կը կազմէր ծրագրին պատրաստելու (2465), յանձնաժողովի ծրագիրն ալ 1830 մարտ 11-ին կազմուելով, 20-ին նախարարութեան կը յղուէր (2466), և միևնոյն օրը ծրագիր մըն ալ Էջմիածինէ կը ղրկուէր Ղրիմեցի վարդապետէ խմբագրուած, հարկաւ ոչ առանց Սինոդի գիտակցութեան (2467): Սակայն յանձնաժողովը միայն չէր այդ աշխատութեան հետևողը, նախարարութիւնն ալ լուրջ ուսումնասիրութեանց ետևէ էր, փափաքելով այնպիսի կանոնագիր մը կազմել, որ համաձայն ըլլայ Հայ եկեղեցւոյ նախկին կանոնաց և աւանդութեանց, չստորացնէ անոր յարդն ու պատիւը, բայց և որոշէ կաթողիկոսի և Սինոդի և վիճակաւորաց իրաւունքները, և պարունակէ կրթութեան և հաշուապահութեան և եկեղեցականաց չքաւորութենէ և անվայել ժողովարարութիւններէ ապատման պահանջերը (ԵՐՑ. Բ. 297): Բլուտով 1835 դեկտեմբերին կը գրէր Պասքևիչի, այժմ մենք երկուսս միասին պարապում ենք տեղեկութիւնները ժողովելով և կարգի գցելով, և իրոք ալ 1829 մարտ 16-ին անոր կը յղէր (ԵՐՑ. Բ. 299) ընդարձակ գրուած մը, որ կը պարունակուէր Հայոց եկեղեցւոյ մասին պատմական տեսութիւն մը քանի մը ուրիշ տեղեկութիւններով, և հարցումներու ցուցակ մը (ԵՐՑ. Բ. 301): Պատմական տեսութիւնը (ԵՐՑ. Բ. 302-311) ակնարկ մը ունի Հայ կանոնագիրքին վրայ, առանց պայն տեսած ըլլալու կամ ճանչնալու, զոր կը վերագրէ վեցերորդ դարում Ներսէս կաթողիկոսի, որով Բագրևանցին պէտք կըլլայ իմանալ, իսկ բոլոր քաղուածները առնուած են օտարապի հեղինակներէ, որոնք Հայոց վրայ գրած են թշնամական ուղղութեամբ և թերի ու սխալ տեղեկութիւններով, և անոնց մէջ խառնած են Յոյներու մասին տեղեկութիւններն ալ, իբր զի Հայն ու Յոյնը հաւասարապէս արևելեան եկեղեցիներ են, այս պատճառով անձիշդ կէտեր շատ կան և Աշտարակեցին իրաւունք ունեցած է ճակտին մակագրել. Տեղեկութիւնք վասն կաթողիկոսաց և պատրիարքաց Հայոց, կարօտ մաքրութեանց: Քանի մը ուրիշ տեղեկութիւններ երկու մասի կը բաժնուին, մէկը կը պարունակէ արտաքին գործոց նախարարութեան դիւանէն հանուած ծանօթութիւններ, վերջին հայ Կաթողիկոսներու ոռւսական պետութեան հետ ունեցած յարաբերութեանց մասին, և միւս մասը քանի մը հին ժողովական կանոններու քաղուածներ, Նիկիոյ, Անտիոքայ, Սարգիկիոյ և Կարթագինէի ժողովներէն առնուած (ԵՐՑ. Բ. 311-319): Իսկ հարցումներու ցուցակը կը պարունակէ 85 հարցումներ, որոնք կը վերաբերին, 7 եկեղեցական կառավարութեան, 34 արդիւնքներու և գոյից, 20 եպիսկոպոսաց և 24 եկեղեցական պաշտօնէից: Պէտք է ըսել թէ բաւական ուշադրութեամբ հաւաքուած են հարցումները, բայց ընդհանրապէս կազմուած են Վրաց Վախթանկ թագաւորի

սահմանադրութեանց հետևողութեամբ (ԵՐՑ, Բ. 319-329): Պասքևիչ պարտաւորեցաւ հարցումներուն պատասխանները պատրաստել տալ, և առաջ Արարատեան Սերովբէի դիմեց, որ չհամարձակուեցաւ ստանձնել, և այն ատեն Շահան Զրպետի յանձնուեցաւ, որ 1829 ապրիլին գործի ձեռնարկելով վեց ամիս անդուլ անդադար աշխատեցաւ և 305 երես գաղիերէն գրուած մը պատրաստեց, որուն մէջ 85 հարցումներու պատասխաններէն պատ, հայ ժողովներու ցուցակ մը և կանոնադրութեան նախագիծ մըն ալ աւելցուցած է: Ասոր վրայ կազմուեցաւ չորսերու գաղտնի յանձնաժողովը (2465), զոր վերն ալ յիշեցինք, և որ գործի սկսաւ 1830 յունուար 8-ին, և մարտ 11-ին իր աշխատութեանց տեղեկագիրը և իր հետևած սկզբունքները ներկայեց Պասքևիչի, կանոնադրութեան ամբողջական նախագիծ մըն ալ միասին, որ եթէ ոչ նոյնութեամբ, գոնէ մեծաւ մասամբ Զրպետի պատրաստածն էր, զի յանձնաժողովն ալ կրէ թէ նա առաջարկուած հարցումները լուծած է կարելոյն չափ լրիւ և բաւարար ձևով (ԵՐՑ.Բ.312-347): Յանձնաժողովին պէս իր գործն ալ գաղտնի էր, ոչ Եփրեմ և ոչ Ներսէս, ոչ Էջմիածնցիք և ոչ Տփղիսեցիք տեղեկութիւն չունեցան, և միայն Կարբեցին մէկերկու անգամ Բեհբուջեան խորհրդակցութեան հրաւիրեցաւ, առանց գործին մանրամասնութեանց ծանօթանալու: Հարկաւ այդ փոքրիշատէ տեղեկութիւնն էր որ Կարբեցին կը կասեցներ ութերուն առաջարկին համակերպելէ, և Դանիէլեան կանոնագիրին հաստատութիւնը կառավարութենէն ուզելէ (2510), գիտնալով որ կառավարութիւնը արդէն ձեռնարկած է կանոնադրութիւն կազմելու:

2517. ՏՓՂԻՍԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Տփղիսի մէջ Պասքևիչի հովանաւորութեամբ կազմուած նախագիծը 119 յօդուածներ կը պարունակէ 2 գլուխներու բաշխուած, որոնք են՝ ա. հոգևորութեան իրաւունքներ և առաւելութիւններ 9 յօդուած, և բ. հոգևոր գործոց կառավարութիւն 1 յօդուած և 12 մասեր, որոնք կը պարունակեն. -1 Կաթողիկոսի իրաւունքներ 18 յօդուած, -2. Կաթողիկոսի ընտրութիւն 2 յօդուած, -3. Ծայրագոյն խորհուրդի իրաւունքներ 21 յօդուած,

-4. Մենաստանի կառավարութիւն 3 յօդուած, -5. Թեմերու բաժանում 3 յօդուած, -6. Թեմական առաջնորդներ 11 յօդուած, -7. Թեմական կոնսիստորիաներ 17 յօդուած, -8. Հոգևոր դպրոցներ 6 յօդուած, -9. Աստուածահաճոյ հիմնարկութիւնք 6 յօդուած, -10. Մենաստաններ և միաբանութիւններ 14-ին յօդուած, 11. Եկեղեցական երէցփոխներ 3 յօդուած, -12. Պաշտօնէից արդիւնքներ 5 յօդուած (ԵՐՑ. Բ. 348-374): Աւելորդ կը սեպենք մանրամասն վերլուծութեան մտնել, զի նախագիծը իր ձևով և ամբողջութեամբ ընդունելի չգտուեցաւ նախարարութեան կողմէ, թէպէտ բաւական թուով յօդուածներ քիչուշատ փոփոխութեամբ պաշտօնապէս հաստատուած Պօլօթէնիէին անցան: Նոր նախագիծը պատրաստելու համար նոր յանձնաժողով կազմուեցաւ Պետրբուրգի մէջ, որուն աշխատութիւնը երեք չորս տարի տևեց, և նորը գրեթէ բոլորովին տարբեր եղաւ Տփղիսի մէջ պատրաստուածեն, և այդ փոփոխութիւնը բարեբախտաբար եղած կընդունի հետապնին բաղդատողը, զի յամենայն դէպս տարբերութիւնները յօգուտ Հայոց եկեղեցւոյ էին: Տփղիսական խմբագրութիւնը շատ գլուխներէ թերի գտնուեցաւ, մանաւանդ պաշտօնական և օրէնսգիտական լեզուի անհմուտ անձերէ պատրաստուած ըլլալով, միանգամայն վուրկ էր գրական օրէնքի յատկութիւնից: Միանգամայն չէր համապատասխանում մեր եկեղեցւոյ վարչական հոգւոյն, և ոչ ալ բարձրագոյն իշխանութեան ցանկութեանց և ձգտումներին, որուն դիտումն էր որ պահպանուին Հայաստանեայց եկեղեցւոյ հնաւանդ ծէսերը և կանոնները, մինչ Տփղիսի յանձնաժողովը մինչև իսկ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը երեք եպիսկոպոսներու կը թողուր (ԵՐՑ Բ. 352), միայն թէ բարձրագոյն իշխանութիւնը կը պահանջէր որ կանոնները յարմարցուին կայսերական օրէնքների ընդհանուր հոգւոյն: Տփղիսեան խմբագրութեան մի

գլխաւոր թերութիւնն ալ այն էր, որ Պասքեիչի թելադրութիւններէն մղուած կարծես թէ ուղղակի նպատակ ունէր Ներսէսի անձը, և կուզէր կաթողիկոսը տկարեցնել որուն վրայ Ներսէս ապդեցութիւն ունէր, և Սինոդը պօրացնել, որուն վրայ նա կը կարծէր դիւրաւ ապդել, թէպէտ տեսանք որ Սինոդն ալ Ներսէսի ապդեցութիւնը կը կրէր (2463):

2518. ՊԵՏՐԲՈՒՐԳԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Պետրբուրգի յանձնաժողովին անդամները նշանակուած չենք գտներ, բայց ամէն առիթի մէջ ձեռնահաս անձեր եղած ըլլալնին կը յայտնուի հապճեպ գործ չվերջացնելնէն, ինչպէս ըրած էր Տփղիսի յանձնաժողովը, և գործին վայել աչալրջութեամբ պնտութեանց հետևիլնէն: Գլխաւոր խնդիրներուն առաջինը որ իրենց աչքին կը ներկայանար, Հայոց եկեղեցին ինչ տեսակէտով նկատելն էր: Բիւզանդական ըմբռնումներէն ժառանգուած և ռուսական շրջանակներու մէջ արծարծուած գաղափարը, Հայոց եկեղեցին աղանդաւոր կը նկատէր, Եւրոպացի մատենագիրներու տեղեկութիւններով ալ տոգորուած, թէ Հայեր Եւտիքական են մինչ Հայեր իրենց եկեղեցւոյն պաշտամանց մէջ Եւտիքէսը կը նպովեն: Այդ մասին ինչ և ինչչափ հետապոտութիւն ընելնին չենք գիտեր, բայց կը տեսնենք որ նպատաւոր եզրակացութեան յանգեցան, ընդունելով Էջմիածինը որպէս մի սրբավայր և հոգևոր կեդրոն, որուն կապուած են աշխարհիս ամէն կողմերը ցրուած Հայերը, որով ռուսական ապդեցութեան նպատաւոր կըլլար վայն իր հովանաւորութեան ներքև ունենալ և պատուով պահել: Երկրորդ խնդիրը եղաւ կայսեր անունին յիշատակութիւնը եկեղեցական պաշտամունքներու մէջ, և այն ալ կաթողիկոսի անունէն առաջ: Որչափ ալ հին գրչագիրներ և սովորական տպագիրներ հոգևոր Տէրը պետական Տէրէն առաջ կը դնեն, Ռուսներ ալ այդ կարգն ունին մեծ մաղթանքին մէջ (ԵՐՅ.Բ.385), բայց նախադասեցին պետականը օգտուելով Յովսէփ Արղութեանցի ձեռքով հրատարակուած տպագիրի մը կարգէն, և կայսրը կաթողիկոսէն առաջ յիշատակելու որոշման յանգեցան: Ուսրիշ խնդիր մըն ալ Ռուսահայոց վիճակներուն բաշխումն էր, և այդ մասին ժամանակին տիրող բաժանման հետևեցան, և վեց վիճակներ որոշուեցան, երկուքն բուն Ռուսաստանի մէջ, Բեսարաբիա և Աստրախան, և չորսը Կովկասի հարակողմը, Երևան, Տփղիս, Արցախ և Շամախի, որ թերևս անյարմար չէր այն ժամանակի հայաբնակութեան համեմատ, այլ որ այլևս չի համապատասխաներ աճած հայաբնակութեան այժմեան թւոյն: Միայն Կարնոյ և Կարսի գաղթականաց առաջնորդ Կարապետի և Ստեփանոսի համար ժամանակաւոր բացառութիւն ընդունուեցաւ, իրենց գաղթականներուն առաջնորդ մնալ մինչև իրենց տեղափոխուիլը կամ մեռնիլը և անկէ ետքը անոնց թեմերը վերոյիշեալ վիճակներուն միացնել: Ուրիշ մասնաւոր կէտեր ալ յատուկ ուսումնասիրութեանց նիւթ եղան, վոր օրինակ վանականաց անհատական կալուածատիրութիւնը և կտակելու իրաւունքը, Մայրաթոռոյ և վիճակներուն ելեմտական կացութիւնը, և այլն: Ռօպէն ալ 1835 գարունին Պետրբուրգ գնաց և յանձնաժողովի նիստերուն մասնակցեցաւ (ԵՐՅ.Բ.385), և ի դարձին նոյն տարւոյ յուլիս 21-ին որոշ բացատրութիւններ խնդրեց Յովհաննէսէն, և գլխաւորապէս անոր 1834 յունուարին ըրած դիմումին վրայօք, որ արքունական ատեանների համանման կազմակերպութիւն տրուի Սինոդին ալ, ինչպէս նաև վիճակներու բաշխման և վանականներու կալուածատիրութեան կէտերուն մասին: Կաթողիկոսը բաշխումին համակերպեցաւ և կալուածատիրութեան մասին պատասխանեց թէ եկեղեցական կանոնները ոչ թույլտուութեան և ոչ արգելքի մասին չեն քոսիր: Այս տեղեկութիւններն ալ ստանալով Պետրբուրգի յանձնաժողովը վերջապէս իր նախագիծը ամբողջարար Ռօպէնի յղեց, որ տեղւոյն վրայ բաղդատութիւնները և հետապոտութիւններ կատարէ և տեղեկագրէ:

2519. ԿԱՐԲԵՅԻՆ ԵՒ ՌՕԶԷՆ

Երբ պետական շրջանակներու մէջ այդ աշխատութիւնները կը շարունակէին, Յովհաննէս ամէն ջանք կը թափէր կառավարչապետին հաճոյանալ և անոր համակրութիւնը գրաւել, և անով իր գիրքը ամրացնել, որուն պէտք կը զգար ութերու ձեռնարկած շարժումին և մեծամասնութեան մէջ տիրող զգացումին պատճառով: Ռօպէնը անձամբ տեսած չէր, զի ինքն 1831 սեպտեմբերի սկիզբները Տփղիսէն մեկնած էր, ուր Ռօպէնը կը հասնէր հոկտեմբեր 7-ին (2503): Բայց առիթ չէր փախցնէր մեծարանք յայտնելու և բարեկամութիւն մշակելու, մանաւանդ որ Ռօպէն պետական տեսակէտով ոգևորված և Յովհաննէսի հաճոյակատարութեան տեղեկացած, պէտք կը զգար կառավարութեան օգտակար և կառավարութենէ հաստատուած անձին գիրքը ամրացնել, ինչ ալ ըլլար անոր մասին կազմած գաղափարը, որ ըստ ամենայնի նպաստաւոր չէր, ինչպէս քանիցս յիշուեցաւ: Յովհաննէս պակաս չէր ըներ Ռօպէնի տան համար թարմ պտուղներ, տիկնոջ և դստերաց համար ընծաներ և ուրիշ նմանօրինակ նուէրներ, մինչև որ տիկինը, որ ազահ և արծաթասէր կին մը վկայուած էր (ԵՐՅ. Բ. 396), համարձակեցաւ կաթողիկոսէն խնդրել, որ իրեն տեսնելու յուղարկուի հին թանկագին և շքեղ ակներով զարդարուած հայապետական խոյրը կամ թագը, որուն գովասանքը վացուց էր լսել: Յովհաննէս Ռօպէնի և տիկնոջ հաճոյանալու առիթ մը ձեռք ձգած ըլլալուն ուրախ, անմիջապէս 1834 փետրուարին ճամբայ հանեց գանձային մեծ հնութիւնը, իր թարգման Մկրտիչ Բարտաշեանի ձեռքով, (ԵՐՅ. Բ. 394), որ մարտին դառնալով ութերէն չորսին աքսոր յղուելու համար Տփղիս երթալնուն հրամանը կը բերէր: Յովհաննէս ոչ միայն թագը յղեց, այլ և վեց ամսից աւելի պատորէն Ռօպէնի կնոջ ձեռքը թողուց, և երբեք թագը ետ եկաւ, ակները կեղծ ապակիներով փոխանակուած էին և ձևը այլայլած: Փոփոխութիւնը կատարուած էր ականագործ Կուսիկեանի ձեռքով, որ առատապէս վարձատրուեցաւ, իսկ կաթողիկոսը հարկաւ զգաց իր անխոհեմ մարդելուպութեան հետևանքը, բայց լռեց: Յովհաննէս աքսորականներուն ետևէն Բասեղ եպիսկոպոսը յղեր էր Տփղիս, բայց անոր ցուցուցած պաղ ընդունելութիւնը զինքն այլայլեց, ուպեց ինքն երթալ ետևէն, բայց հրաման ստացաւ սպասել մինչև հրաւեր ընդունի, և այլայլութիւնը շատցաւ: Սեպտեմբերի մէջ լսուեցաւ թէ Ռօպէն իր թարգման Եփրեմ Կավալեովը Էջմիածին կը գրկէ առանց կաթողիկոսին պեկուցանելու, և թէ նահանգապետ Բեհրութեանը Տփղիս կանչուած է: Յովհաննէսի այլայլութիւնը կատարել շփոթութիւն կը դառնար, զի կասկածոտ բնաւորութեամբը ամէն պատիկ պարագայի վրայ թերահաւատութեամբ կը նայէր: Զինքը շփոթեցին նաև պտտող կրոյցները թէ Ռօպէնի հետամուտ է ծանօթանալ ամենայն տեսակ եկամտից աթոռոյն, մանաւանդ երբ Ռօպէն ինքն Երևան եկաւ, և անցողակի Էջմիածին ալ այցելեց, մինչ Յովհաննէս իրեն ուղղուելիք հրաւերին կը սպասէր: Ձմեռն ալ անցաւ առանց մի լուսաբանութիւն ստանալու, 1835 գարունին Ռօպէն Պետրբուրգ գնաց, և հապի թէ սեպտեմբեր 15-ին դարձաւ, և Յովհաննէս փութաց զքանի բեռն կանաչ մրգեղէն հասցնել Տփղիս: Ռօպէնի ետևէն Տփղիս յղուեցաւ Պետրբուրգի յանձնաժողովին պատրաստած Պօլօժէնիէի նախագիծը, վերջին բաղդատութեան և հետապօտութեան համար, և այն ատեն միայն Ռօպէն հրաւեր ուղղեց Յովհաննէս կաթողիկոսի և Բեհրութեան նահանգապետի: Յովհաննէս վերջապէս հանդարտեցաւ և 1835 հոկտեմբերին ուղևորեցաւ Տփղիս, այլ և մեծապէս մխիթարուեցաւ Տփղիսի մէջ գտած պետական մեծահանդէս ընդունելութենէն:

2520. ՊՕԼՕԺԷՆԻԷԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Ռօպէնի հետապօտութիւնները այս անգամ շատ համառօտ եղան. Յովհաննէսէ ստանալիք տեղեկութիւնները ամփոփուեցան Էջմիածնի տնտեսական վիճակին, վանականաց ստացութեան իրաւունքին, վիճակներու բաշխման թիւին. իսկ վարչական ձևերու և յարաբերական կէտերու մասին ոչ հարցում ուղղուեր էր, և ոչ տեղեկութիւն առնուեր, զի արդէն հրամանն ալ

սահմանափակ էր նախագիծին, քանի մի յօդուածների վերաբերութեամբ կաթողիկոս Հայրապետի հետ խորհրդակցելու: Ռօպէն առանց շատ ուշացնելու նախագիծը Պետրբուրգ դարձուցած էր, ուր արդէն հասած էր 1836 յունուարին, նկատի առնելով այն ամէն վերջնական ձևակերպութիւնները, որոնք պէտք էր կատարուէր պետական օրէնք մը հրատարակելէ առաջ, մանաւանդ պարունակութեամբը փափուկ և պարագաներովը նորօրինակ և հեռաւորներու հետ հաղորդակցութիւնը դժուարին օրէնք մը, համեմատաբար շատ համառօտ եղած է ձմեռնային և տօնական քանի մը ամիրաներու միջոցը, վասնզի 1836 մարտ 11-ին պաշտօնապէս ստորագրուած և հաստատուած է գրեթէ ինը տարիներու ուսումնասիրութեանց և հետալօտութեանց արդիւնք եղող օրէնքը: Կայսերական հրամանագիրը ամփոփ է, կը յիշէ թէ երբ Էջմիածինը գրաւուեցաւ, և Հայ եկեղեցւոյ կառավարութիւնը ռուսական հովանւոյն ներքև մտաւ, հարկ էր յատուկ սահմանադրութիւն մը ունենալ, որ յանձնարարական ժողովի մը ձեռքով կազմուեցաւ, Էջմիածին ալ յուղարկուեցաւ խորհրդակցութեան համար, և կայսերական խորհրդարանի մէջ ալ նորէն քննուեցաւ, և այժմ կը հրամայուի ի գործադրութիւն (ԵՐՅ.Բ.403): Նոր օրինակը ապրիլ 23-ին նախարարական պաշտօնագիրով Ռօպէնի յղուեցաւ, որ պայն ուղղակի Կաթողիկոսին յանձնեց, երբ տակաւին Տփղիս կը գտնուէր (ԵՐՅ.Բ.403): Մկրտիչ Բարտաշեան անմիջապէս գրաբար հայերէնի թարմանեց, և թարգմանութիւնը ուղարկուեցաւ Էջմիածին պտագրելու առանձին տետրակով: Յովհաննէս բաւական ժամանակ ևս Տփղիս մնաց, ուր նոր պօլօժէնիէի վերաբերեալ կէտերը բերանացի կարգադրուեցան Ռօպէնի հետ, գործադրութեան սկզբնաւորութիւնը 1837 յունուար 1-ին թողուեցաւ, և Յովհաննէս միայն 1836 հոկտեմբեր 1-ին Էջմիածին վերադարձաւ (ԵՐՅ.Բ.420), մերձաւորաբար տարի մը աթոռէ բացակայ մնալով: Բայց մենք այդ մանրամասնութիւններուն չանցած, կարևոր կը սեպենք լիովի կերպով վերլուծել պօլօժէնիէն, որ Մայրաթոռոյ, և հետևաբար Հայ եկեղեցւոյ համար ալ, գործնական օրէնք մը դարձած է:

2521. ՊՕԼՕԺԷՆԻԷԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ

Պօլօժէնիէ, կամ սովորական հնչումով Պօլօժէնիա ռուսերէն բառը անխտիր կանոնադրութիւն և սահմանադրութիւն թարգմանուած է, բայց մեր մէջ ալ գործածական եղած է ռուսերէն բառը, իբրև յատուկ անուն Մայրաթոռոյ համար ռուսական կայսրութեան ձեռօք կազմուած և հրամայուած կանոնադրութեան կամ սահմանադրութեան, և մենք ալ ռուսերէն բառը գործածեցինք ուրիշ սահմանադրութիւններէ կամ կանոնադրութիւններէ տարրորջելու համար: Ամբողջական մակագրութիւնն է, բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան: Այդ մակագրութեան մէջ ի Ռուսաստան յաւելուածը կը ցուցնէ թէ կարգադրութիւնը հաստատողը ոչ միտք և ոչ համարձակութիւն ունեցած է ընդհանուր Հայ եկեղեցւոյ համար օրէնք մը կազմել, այլ միայն Հայ եկեղեցւոյ ռուսական կայսրութեան հետ ունեցած յարաբերական կէտերը ճշդել, ինչ որ իրօք ալ օգտակար է ձեռաց տակ հաստատուն կանոն գործոց և լուծումն խնդրոց ունենալու համար: Բայց թէ ասով մէկտեղ յօլուածներուն մէջ մտած են այնպիսի կէտեր, որ ընդհանուր Հայ եկեղեցւոյ կը պատկանին, պայն կը սիրենք վերագրել նիւթերուն առնչութեան, և ընդունիլ իբր ընդհանուր եկեղեցւոյ օրէնքներէն փոխառութիւն, և կամ նոյն օրէնքներուն համակերպութիւն: Ինչ որ մեր տեսութեամբ տարադէպ երևցած է և կերևար, Լուսաւորչական Հայոց եկեղեցի կոչումն է, որ երբեք Հայ եկեղեցւոյ գրութեանց մէջ գործածուած չէ, և չենք ալ գիտեր զով մեղադրել այդ նորահնար անուանակոչութեան համար: Տփղիսեան նախագիծը կը մակագրուի հոգևորականութիւն Հայոց ի Ռուսիա (ԵՐՅ.Բ.348), Ղրիմեցիի ծրագիրն ալ կը մակագրուի եկեղեցականաց Հայոց ի Ռուսաստան, և ուրիշ տեղ ալ չենք հանդիպիր Լուսաւորչական Հայոց եկեղեցի բացատրութեան: Գիտենք որ

Եկեղեցիներ կրկին անուններով կը տարորոշուին սովորաբար, մէկը ազգագրական և միւսը վարդապետական, ինչպէս յունական որթոտոքս եկեղեցի կամ լատինական կաթողիկ եկեղեցի և Ռուսներունն ալ ռուսական պրաւոսլաւ եկեղեցի, մինչ Հայեր լոկ ազգագրական կոչմամբ Հայաստանեայց եկեղեցի անունը գործածած են: Ռուսական կառավարութիւնը վարդապետական կոչումը մըն ալ փնտռած է, մանաւանդ որ ուրիշ դաւանութեամբ Հայեր ալ կային, և այդ առթիւ ստեղծած է Լուսաւորչական կոչումը, որ աւելի դիւրութեամբ Գրիգորեան թարգմանուած է ռուսերէնի մէջ, և այժմ տարածուած է բոլոր եւրոպական լեզուներու մէջ: Ոչ միայն ռուսական կառավարութիւնը այդ անունը կը գործածէ իր պաշտօնական և անպաշտօն գրութեանց մէջ, այլ և Էջմիածինն ալ այդ անունով կը վերտառէ տր պաշտօնագիրներկ և կնիքները, որ բնաւ ընդունելի չի կրնար ըլլալ Հայութեան տեսակետէն, զի Հայ եկեղեցին Գրիգոր Լուսաւորչով սկսած չէ, և Հայ եկեղեցին անոր անունով կոչել, կերպով մը Հայ եկեղեցւոյ առաքելականութիւնը ուրանալ կը նշանակէ: Մեր տեսութեամբ աւելի ուղիղ և օրինաւոր եղած պիտի ըլլար, եթէ յունարէն որթոտոքս և ռուսերէն պրաւոսլաւ կոչումներու համանշանակ ուղղափառ հայերէն կոչումը կամ բառը նոյնութեամբ պահուած և գործածուած ըլլար: Բայց ժամանակին գործիչները, և յահկապէս Կարբեցի կաթողիկոսը, այդ նրբութեանց միտք դարձնող չեն եղած, և այսօր շատ դժուարին պիտի ըլլար ռուսական օրինագիրքին անցած, և բաւական ժամանակէ ի վեր Ռուսիոյ և ընդհանուր Եւրոպիոյ մէջ գործածական դարձած կոչումը փոխել տալ: Այդ մասին հաճութեամբ կաւելացնենք թէ վերջին կաթողիկոսներն ալ մեր տեսութեանց համամիտ գտած ենք:

2522. ՊՕԼՕԺԷՆԻԷԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Պօլօժէնիէն 141 յօդուածներ կը պարունակէ, 10 գլուխներու բաժնուած հետևեալ կերպով. Ա. Ընդհանրական իրաւունք և արտօնութիւնք 9 յօդուած: Բ. Կաթողիկոս 23 յօդուած: Գ. Սինոդ 22 յօդուած: Դ. Թեմակալ առաջնորդք 17 յօդուած: Ե. Հոգևոր ատեանք և հոգևոր կառավարութիւնք 11 յօդուած: Զ. Մենաստաններ 19 յօդուած: Է. Ամուսնաւոր եկեղեցականք 10 յօդուած: Ը. Հոգևոր դպրոցներ 5 յօդուած: Թ. Կայից կառավարութիւն 10 յօդուած: Ժ. Եկամուտք եկեղեցական պաշտօնէից 15 յօդուած: Այդ համառօտ ցուցակը ներկայելէն ետքը կանցնինք լուսաբանել իւրաքանչիւր գլուխի կարևոր կարգադրութիւնները, և միանգամայն աւելացնել պարտ ու պատշաճ դիտողութիւնները եկեղեցական օրինաց համեմատութեամբ: Պօլօժէնիէի զօրութեամբ Հայոց եկեղեցին կը վայելէ կայսերական հովանաւորութիւնը հաւասար այլոց օտարապի դաւանութեանց, եկեղեցիները կրնան իրենց անշարժ կայքերուն տիրել և նորեր ստանալ կայսերական հաւանութեամբ, եկեղեցականները համարձակ կը կատարեն պաշտամունքը, կախում ունին իրենց հոգևոր իշխանութենէն, ապառ են յամենայն հարկատուութեանց և քաղաքական պահանջողութեանց, և բոլոր ընտանեօք և սերունդով չեն ենթարկուիր մարմնաւոր պատժոց: Դատական մասին, կրօնական խնդիրներու համար իրենց հոգևոր իշխանութենէ կը դատուին, իսկ քաղաքական և քրէական գործերու և օտարներու հետ խնդիրներու համար, հասարակ դատարաններու կենթարկուին, ուր սակայն հայ հոգևոր իշխանութիւնը կրնայ իր կողմէ ներկայացուցիչ մը նշանակել վասն հաղորդակցութեան ի քննութիւն նոյն գործոց: Կը հրամայուի յարգանք ուրիշ դաւանութեանց, և խստիւ կարգիլուի պրօտէլիտիվմը, որ նորահաւատութիւն թարգմանուած է, սակայն իսկապէս կրօնական մարդորսութիւն կը նշանակէ: Զանազան տրամադրութիւնները միաւորելով եկեղեցւոյ ապատութիւնը և եկեղեցականութեան պատիւը բաւականաչափ կը գտնենք առաջին գլուխին մէջ:

2523. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԼՈՒԽԸ

Կաթողիկոսը ճանչցուած է գլխաւոր կառավարիչ և ծայրագոյն տեսուչ Հայ եկեղեցւոյ, որ կը վայելէ հին տիտղոսները, վարդապետութեանց և պաշտամանց և նմանօրինակ խնդիրներու համար վախճանական վճիռ կու տայ, միւռոն կօրհնէ և ձրի կը բաշխէ, եպիսկոպոս կը ձեռնադրէ, եկեղեցականներ կը վարձատրէ, ընդհանրական թուղթեր կը հրատարակէ, և վանական գործերը կը տնօրինէ սեպհական նկատողութեամբ իւրով: Սինոդին կը վերագրուի միշտ գործակից ըլլալու արտօնութիւն, և կաթողիկոսին կարգիլուի իր իշխանութիւնն ու իրաւունքներն ու արտօնութիւնները ուրիշ ատեանի կամ անձի փոխանցել: Էջմիածինէ կրնայ բացակայիլ տարին չորս ամիս, աւելիին համար և յայնկոյս Կովկասու տեղերուն համար կայսերական արտօնութիւն պիտի ստանայ: Ինքն ալ իրեն ստորադասեալներուն բացակայութեան արտօնութիւն կուտայ, բայց չորս ամիսէ աւելիին և Ռուսաստանէ դուրս երկիրներու համար կայսերական արտօնութեան պիտի դիմէ, իսկ սինոդականներ երկուքէ աւելի միևնոյն ատեն պիտի չբացակային: Արտաքին պատիւներն ալ նշանակուած են ըստ ընկալեալ սովորութեան, և արտօնութիւն կը տրուի անձամբ կամ փոխանորդով կայսերական

թագադրութեանց ներկայ ըլլայ: Իսկ կաթողիկոսին յիշատակութիւնը եկեղեցական պաշտամանց մէջ օրինադրուած է անմիջապէս վկնի Կայսերն ամենայն Ռուսաց և Օգոստափառ Տան նորա (2518): Ըստրութեան ժողովի համար նշանակուած էէ տարևոր միջոց նախորդին մահուանէ հաշուելով, տեղը Էջմիածնի տաճարը, քուէարկուներ, 8 սինոդականներ, 7 Էջմիածնի միաբանութեան երիցագոյններ, վարդապետ կամ եպիսկոպոս, և իւրաքանչիւր վիճակէ առաջնորդը կամ վայն ներկայացնող եկեղեցական մը, և ժողովուրդէ ընտրուած աշխարհական մը: Առաջին քուէարկութեան, որուն բացականերն ալ կրնան մասնակցիլ, կը նշանակուին չորս ընտրելիներ, առաւելագոյն քուէ ստացողներ առանց համեմատականի, երկրորդ քուէարկութեամբ կորոշուին չորսէն երկու ընտրեալներ, նոյնպէս առանց համեմատականի, որոնք պատգամաւորութեան ձեռքով Կովկասի կառավարչապետին և անկէ կայսեր կը ներկայացուին, և կայսրը բացարձակ իշխանութեամբ երկուքէն մէկը կը հաստատէ կաթողիկոս և օծումը կը հրամայէ: Մահուան առթիւ սինոդի կը տիրանայ թուղթերու և գրութեանց և աթոռապատկան գոյից, իսկ անձնական գոյքեր, եթէ կտակ չունի, օրինաւոր ժառանգներու կը մնան եթէ կան, թէ ոչ աթոռին: Այդ գլուխին վրայօք նկատողութեան արժանի կը սեպենք, որ կաթողիկոսական բացարձակ իշխանութիւնը կը պարփակուի եկեղեցական և կրօնական և հոգևորական շրջանակին մէջ, և չեն յիշուի մատակարարական և դատաւորական շրջանակները, որոնք Սինոդի գլուխն մէջ պիտի տեսնենք: Բացակայութիւնը չափաւորելը օգտակար կը գտնենք, իսկ արտասահմանի համար պայմանը իբր քաղաքական պահանջ կընդունինք: Ընտրողական ժողովի համար տարևոր միջոցը գուցէ արդարանար ժամանակին տիրող հաղորդակցութեանց դժուարութեամբ, բայց այժմ այլևս տեղի չունի և եռամսեայ միջոցը բաւական կրնայ ըլլալ, և աթոռը կապատէ երկարատև անկերպարան վիճակէ: Ընտրութեանց մէջ աշխարհականաց մասնակցութիւնը համաձայն է Հայ եկեղեցւոյ աւանդութեանց, բայց կերևի թէ այն ատեն մտադրութիւն չէ դարձուած Տաճկահայ վիճակներուն թիւին վրայ, ապա թէ ոչ վգուշացած կըլլային արտասահմանի վիճակներուն ճնշողական առաւելութիւն տալէ: Վերջնական ընտրութիւնը կայսեր կամքին յանձնելը, որչափ և առաջին տեսութեամբ խիստ երևայ, սակայն կը մեղմանայ դիտելով թէ այն պիտի պարփակուի ընտրողներէ ցուցուած երկու անուններու մէջ: Միւս կողմէ եկեղեցական ընտրութեանց մէջ քաղաքական միջամտութիւնն ու հաստատութիւնը ընդհանրապէս ընդունուած կէտ մըն է, որ կը գործադրուի կամ միակ ընտրեալը մերժելու իրաւունքով, կամ երկու ընտրեալներէն մէկն առնելով, կամ

ընտրելեաց ցուցակը նախապէս վեղչելով, և թերևս աւելի խիստը երկրորդ ձևը չէ, զոր ռուսական կառավարութիւնը ամէն ընտրութեանց վրայ հաւասարապէս տարածած է:

2524. ՍԻՆՈՂԻ ԳԼՈՒԽԸ

Երրորդ գլուխը յատկացուած է Սինոզի կազմակերպութեան և իրաւանց, որ իր ամբողջութեան մէջ նորույթ կը տեսնուի, այնպէս որ Կ. Պոլսոյ կողմէ 1834 մայիս 3-ի դրութեամբ Սինոզի կազմութիւնը խիստ բռնակալութիւն դատուեցաւ, իբր զի վայն զոր ինքնիշխան գլուխ եկեղեցւոյ եմք յարգեալ, ընդ լծով հպատակութեան արկանէ (ԵՐՅ.Բ.292): Սակայն շատ հին ժամանակներու մէջ ալ կաթողիկոսներու քովը եպիսկոպոսներու մնայուն մարմին մը կը գտնենք, և միւս կողմէն Սինոզի գաղափարը ներքին պատճառներէ յառաջացաւ, կաթողիկոսներու վարչական և մանաւանդ մատակարարական վեղծումներէ գրգռուած: Միայն թէ Սինոզ կամ Սիւնհոդոս անունը տգեղ սկսաւ հնչել, զի այդ անունը վերապահուած էր տիեզերական կամ ազգային մեծ ժողովներու, և ոչ ութը տասը անդամէ բաղկացած պաշտօնական մարմինին մը: Այս պատճառով երբոր կաթողիկոսներու վեղծումներուն առջևն առնելու համար գործակից մարմինի մը պօտքը զգացուեցաւ, աւելի խորհրդականներու և խորհրդարանի և խորհրդարանական ատեանի անունները գործածուեցան, իսկ Սինոզ բառը նախադասուեցաւ այդ մարմինին ազդեցութիւնը ընդարձակելու, և կերպով մը ռուսական եկեղեցւոյ վարիչ Սինոզին նմանցնելու համար: Վասնզի Պետրոս Մեծէ ասդին՝ ռուսական Սինոզը կը գործէ առանց պատրիարքի, և բացարձակ իշխանութեամբ կը կառավարէ ռուսական եկեղեցին: Սինոզ անունը Դանիէլի գրութեանց մէջ ալ գործածուած է, և այդ անունին մեծ պաշտպանը Աշտարակեցին էր վերոյիշեալ տեսութենէ ազդուած, որուն նպատակը վերջապէս նուիրագործուեցաւ նոյն անունին Պօլօթէնիէի մէջ մտնելովը, և որովհետև այսպէս ալ ընդհանրապէս ընդունուած և գործածուած է, աւելորդ կը դառնայ այլ ևս անունին շուրջը դիտողութիւններ ընել: Դանիէլէ ասդին սինոզականաց կամ խորհրդականաց թիւը վեցէ տասուերկու՝ փոփոխական եղաւ, իսկ Պօլօթէնիէն ութը հաստատեց, չորսը եպիսկոպոս և չորսը վարդապետ. իսկ անդամներու վերջնական ընտրութիւնը դարձեալ կայսեր վերապահուեցաւ Կաթողիկոսէ ներկայացուելիք երկու ընտրելիներու մէջէն առնելու պայմանով: Սինոզին ձեռնհասութեան գործերը մի առ մի համրուած են 16 թուահամարով վարչական ճիւղին մէջ, և 4 թուահամարով դատական ճիւղին մէջ, և կը պարունակեն կրօնականէ և հոգևորականէ դուրս վարչական և մատակարարական գործեր, և կաթողիկոսին պատկանող կրօնական և հոգևորական գործերու մէջ ալ նախաքննութեանց և նախապատրաստութեան մասերը, զոր օրինակ ամուսնութեանց և ձեռնադրութեանց և թոյլտուութեանց և նմանեաց, որոնք կը կատարուին առանց կաթողիկոսի ներկայութեան, և արդիւնքը կենթարկուի անոր բացարձակ որոշումին: Միւս պարագաներու մէջ կաթողիկոսը կը նախագահէ գումարմանց, և ձայներու հաւասարութեան մէջ իր ձայնը կը գերակշռէ: Կաթողիկոսին բացակայութեան կը նախագահէ երիցագոյն եպիսկոպոսը, բայց այթոռոյ պարապութեան ատեն չեն կրնար վճռուիլ այն գործերը, որոնք կաթողիկոսական վճռահատութեան կը կարօտին: Սինոզը անմիջական կախում ունի ներքին գործոց նախարարութենէն, և միջնորդաբար կայսերական գերագոյն ծերակոյտէն կամ սինկոլիտոսէն, և իր յարաբերութիւնները կը կատարէ տեղական գործերու համար կառավարչապետին, իսկ ընդհանուր գործերու համար նախարարութեան հետ, անոնց ուղղելով իր տեղեկագիրները և գանգատագիրները և հարցումները: Սինոզի իր գործառնութեանց մէջ պիտի պահէ առհասարակ ամէն ատեաններու յատուկ եղող ձևերը և պարտաւորութիւնները փոխադարձ իրաւունքներով: Գումարումները տեղի պիտի ունենան շաբաթը երեք, գոնէ երկու անգամ:

2525. ՊՐՈԿՈՒՐՈՐԻ ՄԱՍԻՆ

Ինչ որ Պօլօժէնիէի մէջ բուրովին նոր էր, և ուրիշ ծրագիրներու կամ նախագիծերու մէջ միտքէ իսկ անցած չէր, Ռուսիոյ պետական պաշտօնէի անուանումն էր, Սինոդին վարչական և մատակարարական և դատաստանական գործոց վրայ հսկելու իրաւունքով: Այդ պաշտօնէի անունը լատին բառով Պրոկուրոր կոչուած է, որ բառական թարգմանութեամբ հոգածու կամ գործակալ կը նշանակէ, և նոյն անունը կը տրուի դատարաններու մէջ եղող պետական դատախապներու, որոնց պաշտօնն է օրէնքին ձայնը լսելի ընել դատարաններու մէջ: Նոյն է իրենց գործը քաղաքական և վարչական ատեաններու մէջ, և Սինոդին մէջ ալ այդ պաշտօնէին գտնուիլը հետևանք եղաւ այն առաջարկին, զոր Յովհաննէս մատուցած էր, որպէսզի Սինոդը պետական ատեաններու համահաւասար իրաւունքներ ունենայ (2518): Պօլօժէնիէն երկու յօդուածներով միայն կը վբարդի այդ կէտին վրայ, բաւական սեպերով ըսել թէ պրոկուրորը վարի ընդհանրական կանոնադրութեամբք որ վասն պարտաւորութեան պրոկուրորի. բայց կարծէ որ մենք քիչ մը աւելի լուսաբանենք անոր գործն ու դիրքը: Ինչպէս ըսինք, իր ձեռնհասութիւնը միայն օրէնքի ձայնը լսելի ընել ըլլալով, ոչ Սինոդի նիստերուն կը գտնուի, ոչ խորհրդակցութեանց և վիճաբանութեանց կը մասնակցի, և ոչ ալ կարծիք յայտնելու կամ խորհուրդ տալու կամ որոշմանց ընկերակցելու իրաւունք ունի, այլ միայն սինոդական որոշումները կը տեսնայ, և օրէնքին հակառակ չըլլալը կը վկայէ: Իսկ եթէ օրէնքի հակառակ տեսնայ, պարտաւոր է օրէնքին յօդուածը ցուցնելով և բացատրութիւնը տալով իր ըսածը հաստատել: Այդ պարագային մէջ ևս եթէ կաթողիկոսը հակառակ պնդէ, կրնայ իր որոշումը քալեցնել պատասխանատուութիւնը վրան առնելով: Այդ բացատրութեանց ներքև բեռը կարծուածին չափ դըժպըհի չեղած ատեն, մեծ օգտարակութիւն ունի, զի այս կերպով Սինոդի որոշումները վճռական հանգամանք կը ստանան, արքունական ատեանի կամ դատարանի հաւասար վօրութիւն կունենան, և պետական գործադիր պաշտօնէայք պարտաւոր կըլլան անոնք գործադրել առանց այլևայլութեան: Այս պատճառով Սինոդի կնիքը ռուսական երկգլխեան արծիւով կազմուած է, շուրջանակի ռուսերէն վերտառութեամբ, յարևմտան պետական ատեաններու կնիքներուն: Այս վօրութեամբ է որ Մայրաթոռը եկեղեցականութեան վրայ ազդեցիկ և գործնական իշխանութիւն կը վարէ, անհնապանդներ կը պատժէ և անտեղութիւններ կարգիլէ և իր որոշումները յարգել տալու վօրութիւնը կը վայելէ: Պրոկուրորին ինչ ազգութենէ ըլլալը որոշուած չէ, բայց Հայոց և Ռուսաց լեզուները գիտնալ պայման է, որով Սինոդը աշխատութեանց չի պարտաւորուիր: Սինոդական կազմութիւնը կը լրացնէ պաշտօնէից խումբը, որուն գլխաւորներն են գանձապետը և ատենապետը, և անոնցմէ վատ պիտի գտնուին ատենադպիրի օգնականներ, թարգման, գործադիր, դիւանապահ, և գրագիրներ, որոնց գործերը յայտնի են: Եկեղեցական կամ աշխարհական ըլլալնին ալ որոշ ըսուած չէ, բայց սովորաբար գանձապետը միաբաններէն կըլլայ ու մնացեալները աշխարհականներէ:

2526. ՎԻՃԱԿՔ ԵՒ ՎԱՆՔ

Չորրորդ գլուխը թեմական առաջնորդներու պարտաւորութիւններն ու իրաւունքները կը բացատրէ, որոնք սովորականէն տարբեր կարգադրութիւններ չունին: Յիշատակելի է միայն թէ առաջնորդները նշանակէ թագաւոր կայսրն, յեկեղեցականաց աստիճանաւորաց այսր դաւանութեան, և թէ առաջնորդները կարգին և արձակին բարձրագոյն հրովարտակօք (ՊՕԼ.11,ԵՐՅ.Բ.568): Յաջորդ հինգերորդ գլուխը կը հաստատէ վիճակներու մէջ մի մի հոգևոր արեան, որ է կոնսիստորիա, որ միևնոյն գործերը կը կատարէ առաջնորդին մօտ, ինչ որ Սինոդը կաթողիկոսին մօտ: Անդամները չորս են, մէկ վարդապետ և երեք քահանայ, և առաջնորդը նախագահ: Ընտրութիւններ կը կատարէ առաջնորդը հաւանութեամբ Սինոդին, որուն

պատասխանատու է հոկոր ատեանը: Իրեն ձեռնահաստութեան գործերը մանրամասնուած են 15 թուահամարով: Վիճակներուն մէջ կը կազմուին ուրոյն շրջանակներ, որոնց վարչութիւնը կը յանձնուի հոգևոր կառավարութեան մը, վարդապետ մը նախագահ և երկու քահանայ անդամներէ բաղկացած, բայց կրնայ ի հարկին նախագահն ալ քահանայ մը ըլլալ: Հոգևոր կառավարութիւնը ենթարկեալ է հոգևոր ատեանի, ինչպէս հոգևոր ատեանը Սինողին: Մենաստաններու կամ վանքերու համար ալ յատուկ գլուխ մը կազմուած է, որ է վեցերորդը, և ուր բաւական ճշդուած կանոններ կան վանականութեան մասին: Վանքերը արական են կամ իգական, իբրև գլուխ ունին վարդապետ մը կամ մայրապետ մը, վիճակային իշխանութենէ ընտրուած կաթողիկոսի հաստատութեամբ: Ասոնք վանքը կը կառավարեն երկու գործակալներով, որոնք միաբանութենէ կընտրուին թեմակալին հաստատութեամբ: Իւրաքանչիւր վանքի միաբաններու թիւը որոշուած պիտի ըլլայ, և ոչ պակաս քան ութը միաբանութիւն մը կազմելու համար: Միաբաններու թիւին չափ ալ ունկնդիրներ կընդունուին, իմա՛ ընծայացուներ, ասոնցմէ վատ ալ կընդունուին ծերացած և վառամած եկեղեցականներ և այրիներ, ինչպէս նաև չքաւոր եկեղեցաւաններու վաւակներ, պարզապէս պատուաւորեալի ձևով: Միաբան ըլլալու համար պայման դրուած է երեսնամեայ ըլլալ, բացի բացառիկ արժանաւորութեան պարագայէ, և եթէ հարկատու կամ ճորտական դասակարգէն են՝ ծերակոյտէն արտօնուիլ, իսկ ընծայացուներ կընդունուին որևէ չափահաս տարիքի մէջ: Վանականներ սեփական անշարժ ստացութիւններէ կը հրաժարին, և նորեր ալ չեն կրնար ստանալ, իսկ մահուան առթիւ շարժական ստացուածքնին վանքին կը մնայ, եթէ կտակ և օրինաւոր ժառանգ չունին: Ժառանգական այդ ձևը կաթողիկոսէ սկսելով բոլոր կուսակրօն եկեղեցականներու տարածուած է, անշարժ ստացուածքներն ալ մէջը առնելով, հարկաւ վանականութեան մէջ չեղողներուն համար: Հանգանակութեանց համար կը պահանջուի քաղաքական իշխանութեանց արտօնութիւնը, վերջապէս իբր ընդհանուր ուղղեցոյց ցուցուած են կանոնք սրբոյն Բարսղի մեծի: Մնացեալ կանոններն ալ ընդհանրապէս ծանօթ բաներ են: Ամուսնաւոր եկեղեցականաց նուիրուած է եօթներորդ գլուխը, և նկատի կառնէ աւագերէցներէն մինչև ստորին դպիրները: Ասոնց համար կապահովէ ապատութեան կամ ազնուականութեան իրաւունք իրենց օրինաւոր ամուսնութենէ սերած տոհմին հետ. եթէ կանխաւ ապատ են, և կամ ծերակոյտի վճռով ճորտութենէ ապատած են, նոյն իսկ բնակած տուններնին ալ ապատ կը կացուցանէ քաղաքական հարկերէ, ի բաց առեալ սալայատակի և մաքրութեան քաղաքագլխական տուրքերը: Անշարժ գոյից ստացութեան իրաւունք կը թողու ամենուն, մեծ աստիճանաւորները կենթարկէ թեմակալին, և փոքր աստիճանաւորները աւագերէցին:

2527. ԴՊՐՈՅՔ ԵՒ ԳՈՅՔ

Հոգևոր դպրոցներու մասին կը խօսի ութերորդ գլուխը, և այս անունին ներքև կիմանայ մեծ դպրոց մը Էջմիածնի մէջ, մի մի աստուածաբանական դպրոց իւրաքանչիւր վիճակի մէջ, և մանկանց դպրոցներ վիճակներու մէջ պահանջներուն և միջոցներուն համեմատ: Ամէն ալ կաթողիկոսական և վիճակային իշխանութեանց կենթարկէ, կանոնները ներքին գործոց նախարարութեան հաղորդելու, և Ռուսաց պատմութիւնն ու աշխարհագրութիւնը ռուսերէն աւանդելու պայմանով: Դպրոցներու համար կը թոյլատրէ իրենց սահմանին մէջ հանգանակութիւն և վանքերէ նպաստահաւաքութիւն ընել: Եկեղեցական կայից և գոյից ընդհանուր տէր կը ձանչնայ Հայոց եկեղեցին: Ամէն հանգանակութիւն որ սեփական շրջանակին մէջ և կաթողիկոսի հրամանով ու քաղաքական իշխանութեան թոյլատուութեամբ պիտի կատարուի: Իւրաքանչիւր եկեղեցւոյ համար եկեղեցպան կամ երէցփոխան մը կընդունի եռամեայ պայմանաժամով, և ի պատուաւորագունիցն ի ժողովուրդս ընտրուած: Վերջին գլուխը քահանայից և անոնցմէ

ստորիններուն հասոյթներով և այրեաց և որբոց հոգածութեամբ կը վբաղի: Եկամուտները երեք գլուխի կը բաժնէ: 1. Ժողովուրդէն տրուլիք որոշ թոշակ: 2. Պաշտօնակատարութեանց տուրք, սովորաբար պաշտօնէից կոչուած . 3. Կամաւոր նուէր: Առաջինը կանխաւ պիտի որոշուի, վերջինը կանոն չունենար երկրորդին համար կորոշէ վանապան պաշտամանց համար -10, 20 և 40 կոպէկ արծաթի: Խոստովանութիւնը ու հաղորդակցութիւնը ձրի կը հոշակէ, և նշանակուածներէն աւելի պահանջելը կարգիլէ, նոյնպէս չի ներեր պաշտօնը վլանալ վճարում չեղան ըլլալուն պատճառով: Կարօտներու հոգածութեան համար նուէրներէ վատ տարեկան վճարում մը կը տնօրինէ իւրաքանչիւրին կարողութեան համեմատ, և մատակարարութիւնը կը յանձնէ յատուկ հոգաբարձութեան, զոր թեմակալը պիտի կազմէ երեք քահանաներէ: Այսչափով կը փակենք հոշակաւոր Պօլօժէնիէի ամփոփումը, յառաջ բերելով միայն այն կէտերը, որոնք նորութիւն կրնան սեպուիլ, և կամ մայրաթոռ վարչական մեքենային գլխաւոր մասերը կը կազմեն: Աւելորդ սեպեցինք մտնել այն մանրամասնութեանց մէջ, որ հասարակ են ամէն կանոնաւոր վարչութեան, և ամէն վարչական մարմիններէ և մատակարարութիւն վարողներէ ընդհանրապէս կը պահանջուին: Կը մնայ այժմ ընդհանուր ակնարկ մը նետել և տեսութիւննիս յայտնել Պօլօժէնիէին հոգւոյն, և ուղղութեան և Հայոց եկեղեցւոյն հետ համեմատութեանց վրայ:

2528. ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑ ԼԵՌԱՑՈՒՄ

Բացարձակ կերպով չենք կրնար ուրանալ, որ մեծ քայլ մը և հիմնական օգուտ մըն է, որոշուած և պաշտօնապէս հաստատուած և գործադրութեանց միջոցներով պօրացած կանոնադրութիւն մը ունենալ, մինչ իսկ թերի և դիտողութեանց տեղի տուող բան մը ունենալը, բնաւ չունենալէն տասնապատիկ և հարիւրապատիկ լաւագոյն է: Մանաւանդ եթէ նկատի առնուին Սիմէոնի Երևանցիի մահուան յաջորդող շփոթութեանց և խռովութեանց կիսադարեան միջոցը, որ հետևանք էր ընտրողական և վարչական և ներքին յարաբերական առձեռն օրէնք մը և հաստատուն կանոնադրութիւն մը չգտնուելուն: Մայրաթոռոյ ռուսական թեմակրութեան ներքև անցնիլը այդ միջոցին էր, և կառավարութիւնը առաջին օրերէն հաստատուն կանոնադրութեան պէտքը պգաց, և պէտք է խոստովանիլ թէ հապճէպ շտապով ալ չգործեց եթէ 1827-ին սկսած գործ մը 1836-ին վերջացաւ : Իսկ Հայ եկեղեցւոյ ուղղութեան հետ համեմատութիւնը նկատի առած ատենիս, ամէնէն աւելի աչքի պարնող կէտ մը կը գտնենք աշխարհական տարրին կատարելապէս հեռու պահուիլը: Հայոց մէջ հայ եկեղեցականութիւնը եկեղեցւոյ բացարձակ տէրը չի նկատուիր, և խորհրդակատարութիւններէն դուրս ընտրութեան և վարչութեան և մատակարարական ճիւղերուն մէջ ընդարձակ տեղ կու տայ աշխարհականներուն: Իսկ Պօլօժէնիէն Հայ եկեղեցին ամբողջապէս եկեղեցականին կը յանձնէ, և աշխարհականը կը յիշուի միայն կաթողիկոսի և ոչ իսկ առաջնորդներու ընտրութեան մէջ, և հոն ալ թիւի գերակշռութիւն տալով եկեղեցականութեան: Իսկ մատակարարութեան մէջ միայն եկեղեցական մը կայ, նա ալ եկեղեցական իշխանութեան ներքև գրուած: Մնացեալին մէջ ընտրութիւն, վարչութիւն մատակարարութիւն, դատաստան , կրթութիւն, ոչ միայն հայրապետական այլ և առաջնորդական շրջանակներու մէջ, ամբողջապէս եկեղեցականներու յանձնուած են: Չենք գիտեր թէ ասկից աւելի ազդուեցաւ այդ աշխարհականներու վրկումը: Իրաւ անգամ մը Տփղիսի շփոթները առիթ տուին աշխարհականներուն ոտնձգութիւնները արգիլելու, և այդ սկզբունքով փակուեցան այն խնդիրները, սակայն տարբեր էր Դարչիի նմաններուն վեղծումը , և տարբեր օրինաւոր կազմակերպութիւն մը: Տփղիսեան յանձնաժողովին և Ղրիմեցի վարդապետին նախագիծերն ալ աշխարհականներու մասնակցութիւն չեն նշանակած որևէ վարչութեան և մատակարարութեան մէջ: Այդ մասին տարբեր եղած են Տաճկահայոց ըմբռնումն ու գործադրութիւնը և Տաճկահայերէ

ընտրուած կաթողիկոսներ մասնակի փոփոխութիւններ աշխատած են մուծանել Պօլօժէիէի կարգադրութեանց մէջ, օգտուելով գլխաւորապէս այն մասերէն, որոնք Պօլօժէիէի մէջ նկատի առնված չեն: Սակայն այստեղ անոնց հետեւելու տեղը չէ:

2529. ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ

Երկրորդ կէտը որ աչքի կը վարնէ, պետական իշխանութեան տարապայման միջամտութիւնն է Հայ եկեղեցւոյ գործերուն մէջ: Իրաւ բոլոր պետական պաշտօնագիրներ խնամով կը կրկնեն Հայ եկեղեցւոյ օրինաց և աւանդութեան պահպանութիւնը, սակայն անոնք պետական պահանջներու ալ կուզեն համաձայնեցնել, և ինչպէս ըսինք, որթոտոքս եկեղեցւոյ ուղղութիւնը , և առանձին կերպով ռուսական հայեցողութիւնը այն սկզբունքն ունին, որ եկեղեցին պետութեան մէջ նկատուի և պետական հսկողութեան ներքև մնայ (2515): Ամէն առիթի մէջ կը տիրէ կայսեր երկու ընտրեալներ ներկայելու ձևը, և անոր կամքին կը թողուի երկուքէն մէկը նախադասել, մինչև իսկ առաջնորդաց ընտրութեան մէջ երկու ընտրեալներու ձևը լռութեամբ կանցնի (ՊՕԼ. 11, ԵՐՑ. Բ. 568), ամէն որոշում և կանոն պետական հաստատութեան կենթարկուի , տեղեկագիրներ և յիշատակագիրներ , վիճակագիրներ և հաշուեգիրներ ներքին գործոց նախարարութեան կը ներկայացուին, թող պրոկուրորի տեղւոյ վրայ մշտատև հսկողութիւնը: Այդ մասին ուրիշ բան մը չենք կրնար ըսել, բայց եթէ շատ վիճաբանելու տեղի չի մնար ուր որ իշխանութիւնն է որ ձայն կը բարձրացնէ. բայց կերևի թէ ռուսական պետութիւնը ուզած է օգտուիլ այն նախընթացներէն, զոր պատմութիւնը կը յիշէ բիւզանդական կայսերներուն և հայ թագաւորներուն գործերու միջամտելնուն և ազդեցութիւն և ազդեցութիւն գործածելուն մասին: Իբրև հետևանք միայն այդ կրնանք աւելցնել , թէ եկեղեցական իշխանութիւնները լոկ բարոյական միջոցներ ունենալնուն, և կարգապահութիւնն ու բարեկարգութիւնը բռնապատիչ միջոցներու ալ պէտք ունենալուն, յաճախ օգտակար եղած է և կըլլայ պետական միջամտութիւնը , նոյնիսկ եկեղեցական գործողութեանց մէջ: Պէտք չէ ալ լռենք որ եկեղեցական բարեկարգութեան համար աւելի ազդեցիկ եղած է Պօլօժէիէն Ռուսահայոց համար, քան Սամանադրութիւնը Տնձկահայոց համար: Վերլուծումը և դիտողութիւնները այստեղ կը փակենք, մանաւանդ որ նպատակնիս քննադատական գրութիւն մը կազմել չէ, և կը դառնանք պատմական պարագաներուն:

2530. ԵՐԵՔ ԿԷՏԵՐ

Պօլօժէիէի կայսերական հրովարտակը կաթողիկոս հայրապետի հետ խորհրդակցութիւն կատարուած կըսէ, հաստատութեան չանցած (ԵՐՑ. Բ. 403), որ կրնար Յովհաննէսի առիթ ընծայել դիտողութիւնները ընելու. սակայն նա հաճոյակատար մնալու կամքով կերևի թէ ոչ մի դիտողութիւն չէ ըրած, և ոչ իսկ կանոնագրութեան ամբողջութիւնը գիտնալու հետևած է, վասնզի ամէն բան աւարտելէն ետքը, երբոր Պօլօժէիէն իրեն կը յանձնի և թարգմանութիւնը կը տեսնէ, և վանազան կողմերէ դիտողութիւններ իրեն կը հաղորդուին, այն ատեն միայն կը ստիպուի քանի մը յօդուածներու փոփոխութեանը հետամտիլ: Իր առաջարկած կէտերը երեք էին: Առաջինը կաթողիկոսներու (ՊՕԼ. 5, ԵՐՑ. Բ. 558), եպիսկոպոսներու (ՊՕԼ. 13, ԵՐՑ. Բ. 571), և բոլոր վանականներու (ՊՕԼ. 17, ԵՐՑ. Բ. 576), թողօններուն իրենց օրինաւոր , այսինքն ազգակցական ժառանգներուն անցնիլը կամ կտակով տրամադրելի ըլլալը: Երկրորդ, թեմակալ առաջնորդներուն բացարձակ կերպով կայսերէն ընտրուիլը (ՊՕԼ. 11, ԵՐՑ. Բ. 568), և երրորդը՝ սինոդական պաշտօնութեան (ՊՕԼ. 10, ԵՐՑ. Բ. 566) ռոճիկները վճարելու բեռը, որ տարեկան 3750 ռուբլի կը հասնէր (ԵՐՑ. Բ. 407), զի միայն Պրոկուրորին ռոճիկը արքունի գանձէն պիտի տրուէր (ՊՕԼ. 9, ԵՐՑ. Բ. 564): Այս երեք կէտերը Յովհաննէս գուցէ ակամայից ստիպուած Ռօպէնի ներկայեց, որովհետև իրեն հաճոյակատարութեան համաձայն քայլ մը չէր, բայց սրտացաւ անձանց բողոքը

այս անգամ շատ ապդու էր (ԵՐՅ. Բ. 406): Կառավարչապետը խնդիրը նույնութեամբ նախարարին հաղորդեց, որ օգոստոս 20-ին պատասխանեց, թէ թողօնի խնդիրը փոխել անհնար է, թէ թեմակալներու համար հնար է սինոդականներու մասին ցուցուած ձևով (ԵՐՅ. Բ. 559) կաթողիկոսին կողմէ երկու ընտրելի ցուցուիլ, և թէ դիւանին պաշտօնէութեան ռոճիկներ հարկաւ առաջ ալ կը տրուէն: Կառավարչապետը դիմումը կրկնեց միայն երրորդ կէտի վրայ, թէ մինչև հիմա ամենայն ինչ մէկ կամ երկու միաբանի ձեռքով կը լրանար, և այս կերպով տարեկան 3750 ռուբլիի ծախքը Երևանի նահանգային սնտուկին անցաւ կայսերական հաւանութեամբ :

2531. ՍԻՆՈԴԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Երբ այս բանակցութիւնները կըլլային, միւս կողմէն գործադրութեան ուրիշ մասերն ալ կը պատրաստուէին, և գլխաւորապէս Սինոդի կազմութիւնը: Ութը անդամներու համար 16 անուններ պէտք էր առաջարկուէին, սակայն կաթողիկոսը չորս եպիսկոպոսները ուլեց պահել պաշտօնի վրայ եղողներէն, և առաջարկեց Բարսեղ, Ղուկաս, Յովսէփ և Ստեփանոս Արարատեան եպիսկոպոսները , իսկ չորս վարդապետներուն համար առաջին կարգին առաջարկեց Յովհաննէս Ղրիմեցի, Սահակ Սաթունեան, Յովհաննէս Վաղարշապատցի, և Յովհաննէս Շահխաթունեան, և անոր թիւը լրացնելու համար երկրորդական կարգին առաջարկեց Յովհաննէս Անտոնեան, Սիմէոն Փառաբարցի, Յովսէփ Մկրտչեան և Մկրտիչ Աշտարակեցի վարդապետները: Եպիսկոպոսները և առաջին կարգի մէջ նշանակուած վարդապետները հաստատուեցան դեկտեմբեր 15-ին նախարարական պաշտօնագիրով (ԵՐՅ, Բ. 416): Սինոդական պաշտօնէութեան մէջ պրոկուրորութիւնը տրուեցաւ նահանգապետ Բեհրութեանի քրոջ որդի Թովմաս Ղորվանեանի, իսկ ատենադպրութիւնը Կարբեցի կաթողիկոսի թարգման Մկրտիչ Քարտաշեանի: Վեց թեմակալութեանց մասին Բաղտասար և Ներսէս և Սերովբէ պահուեցան Արցախի և Բեսարաբիոյ և Աստրախանի վիճակներուն վրայ: Կարնոյ և Կարսի գաղթականներուն առժամեայ առաջնորդութիւնները վերջացնելու համար Կարապետ Կարնեցին նշանակուեցաւ Տիգրիսի կամ Վրաստանի աթոռին, և Ստեփաննոս Մաժակեանը Շիրուանի կամ Շամախի աթոռին, իսկ Արղութեան Տիգրիսէ Երևան անցաւ և Տիգրիսի խնդիրն ալ փակուեցաւ (2507): Սինոդի համար յատուկ սինհոդոսարանի շինուած մըն ալ հիմնուած էր Վեհարանի ետևի բակին վրայ, առջևն ալ սինապարդ ձեմլիքով, Յովհաննէս Տիգրիսէ դարձաւ, 1836 հոկտեմբեր1-ին, և 1837 յունուար 1-էն Պօլօժնիէն պաշտօնական գործադրութեան մտաւ (ԵՐՅ.Բ.420), բայց բացման հանդէսը յատաձգուեցաւ մինչև յատուկ շէնքին աւարտումը, և վերջապէս որոշուեցաւ կատարել 1837 փետրուար 22-ին, Բարեկենդանի ուրախութեանց երկուշաբթին, Ղևոնդեանց տօնին նախընթաց օրը: Ամէն հնարաւոր շքեղութիւն տրուեցաւ հանդէսին, որուն ներկայ եղան նահանգապետ Բեհրութեան և նահանգական պաշտօնէութիւն, Երևանի մահմետական դատաւորն իրեն հետևորդներով, Երևանի և շրջակայից գլխաւոր հայագիք և խուռն ժողովուրդ: Եկեղեցւոյ պատարագը մատոյց Սինոդին նախանդամ Բարսեղ, իսկ Յովհաննէս հանդիսապետ կանգնեցաւ և կայսերական մաղթանքները արտասանեց. կայսերական հաւատարմութեան և Պօլօժնիէի հնազանդութեան երդումները կատարուեցան, և սինհոդոսարանի մէջ բացման նիստ կայացաւ, Պրոկուրոր Ղորվանեանի կողմէ ատենաբանութիւն խօսուեցաւ և ի վերջոյ մեծածախս հացկերոյթ տրուեցաւ, բազմաթիւ բաժակաձառերով: Այսպէս լրացաւ Էջմիածնի աթոռին կանոնադրութեան գործը, որուն առաջին գաղափարը Կ. Պոլիսէ էր ծագած 1780ին (2125), առաջին պաշտօնական ձևը Դանիէլ էր տուած 1806-ին (2287), առաջնակարգ պաշտպան հանդիսացած էր Աշտարակեցին, բայց լրմանը ներկայ չէր, մինչ իր գաղափարին հակառակորդը և բացարձակ իշխանութեան

հետամուտ եղող Կարբեցին էր, որ գործի նուիրականալուն և իր իշխանութեան չափաւորելուն հանդէսը կը կատարէր:

2531. ԿԱՐԱՊԵՏ ԿԱՐՆԵՑԻ

Գլխաւոր եղելութիւնները հանգրուաններ սեպելով պատմութեան գետինը փոխել սովորութիւն ըրած էինք, և ի դէպ էր Սինոդի կազմութիւնն ալ նոյնպէս նկատել, բայց այս անգամ եղելութեան ամբողջութիւնը լրացնելու համար պէտք կը վզանք անոր յարակից պարագաներն ալ աւելցնել: Ըստ այսմ նախ ներկայացնենք երկու անձեր, որոնց անունը բաւական հռչակ գտած է: Առաջինն է Կարապետ արքեպիսկոպոսը, վոր Ախլցխայ կամ Տայոց կողմերը հաստատուած Կարնեցին գաղթականութեան առաջնորդութենէն Տփղիսի աթոռը փոխադրուած յիշեցինք: Կարապետ, աւապանի անունով Յովհաննէս, թոռն էր Սպեր գաւառի Հունուտ գիւղի իշխան Եղիկեան Կարապետի, որ Բագրատունեան մականունն առած էր՝ Սպերը Բագրատունեանց բնագաւառը ըլլալէն: Հայրը Գրիգոր իր նշանած Արեգնապանին հետ Հունուտէ փախած էր Կարնոյ Կան գիւղը, առևանգութենէ պատելու համար, և Կանէ Կարին փոխադրուելով 1779 մայիս 18-ին ունեցած էր իր անդրանիկ Յովհաննէսը (75 ՓՈՐՁ.166): Հայրը ժանտախտէ մեռնելով, և մայրը երկրորդ ամուսնութեան անցնելով, անտէրունջ տղան արհեստի կը դրուի, բայց կարդալու փափաքով առաջնորդ Միքայէլ եպիսկոպոսին կապաւինի, որ Ակն ալ կը վարէր իբրև յարակից վիճակ: Անոր պաշտապանութեամբ Կ. Պոլիս ուսման կը ղրկուի, 1795-ին կը դառնայ, հետզհետէ դպիր և սարկաւագ և 1801-ին վարդապետ կը ձեռնադրուի, և Կարնոյ ու Ակնայ եկեղեցական կալուածոց տեսուչ կը նշանակուի: Միքայէլ կը վախճանի 1804-ին, և թէպէտ ժողովուրդը գործունեայ Կարապետ վարդապետը յաջորդ կուպէ, այլ ուրիշ մը կը յաջողի: Կարապետ Կ. Պոլիս կանցնի, և Յովհաննէս պատրիարքին պաշտպանութեամբ 1808 օգոստոս 21-ին Կարին կը դառնայ, կողակով և հրովարտակով հաստատուած առաջնորդ, և 1811 նոյեմբեր 2-ին եպիսկոպոս կը ձեռնադրուի Եփրեմ կաթողիկոսէ: Կարապետ եպիսկոպոս գրիչով և մանաւանդ լեզուով յաջողակ, ալ աւելի մեծ եղած է անխոնջ, տոկուն, ճարտար և հնարագէտ գործունէովութեամբ, դժուարութիւններէ չընկճուելով և յուսախաբութիւն չճանչնալով: Իր համոզմամբ մարդկային եղելութիւնները ոչ ուղղակի յերեսաց Աստուծոյ այլ մանաւանդ ինքեան մարդոյն յառաջ կու գային, ուստի մարդկային անհոգութիւնն ու տգիտութիւնը կաշխատէր դարմանել (75 ՓՈՐՁ.171): Իր գլխաւոր արդիւնքներուն կարգին պէտք է յիշուին, 1811-ի Կարնոյ սովին համար տարած խնամքը, հարիւրաւորներ քանի մը տարիներ իր միջոցներով կերակրելը, վանական և եկեղեցական կալուածներ գրաւումէ պատելը, աղքատաց գանձանակ հաստատելը, Կարապետեան նախընծայ դպրոցը բանալը, և իբրև արդար և իրաւարար դատաւոր հանրութենէ յարգուիլը, այնպէս որ կտրածը կտրած էր և կապածը կապած: Իրեն կը վերագրուին ևս Կարնոյ Կարմիր վանքի և Խաչկավանքի նորոգութիւնները, ընդհանրապէս ժողովուրդին բարոյականութեանը և մանկուոյն դաստիարակութեան ջանքը, դպրոցը մանուկներու պարտաւորիչ ընելու կանոնը, մինչև իսկ 40-50 աշակերտներ առաջնորդարանի մէջ կերակրելը և հագուեցնելը, և տուներու ալ նպաստ բաշխելը, որպէսզի տղաքը փոխանակ շուկայի՝ դպրոցին հետևին: Ուսմանց կանոնաւորութեան համար ալ լաւագոյն վարժապետներ Կ. Պոլիսէ հրաւիրած էր, որոնց մէջ կը յիշուին, Յովհաննէս Արդար, Գրիգոր Շէքերձեան, Կարապետ Վանցի, Գէորգ Տէր Յովհաննէեան, և Կարապետ Չմշկեան (75 ՓՈՐՁ.173-175): Կառավարութեան առջև ալ պղծեցիկ դիրք ստացած էր, գիտէր լաւ յարաբերութիւններ մշակել և միանգամայն օգտակար որոշումներ ձեռք ձգել: Այս և իր առաջնորդութեան առաջին քսան տարիներուն պատկերը մինչև 1828, երբ ծագեցաւ ռուսաթուրք պատերազմը, և Կարին նպատակակէտ դարձաւ ռուսական արշաւանքին:

2533. ԿԱՐԱՊԵՏԻ ԳՈՐԾԵՐԸ

Ռուսական բանակին Կարին չհասած տարած յաղթութիւնները, և քիրստոնեաներէն գտած համակիր ընդունելութիւնը կասկածներ հրաւիրեցին Կարնեցի Հայոց ընթացքին վրայ, և պինուորական իշխանութիւնը գաղափար յղացաւ պանոնք ջնջելու իրենց եպիսկոպոսէն սկսելով: Սպառնական կոչին գացած ատեն, ճամբուն վրայ կը նուագի Կարապետ, բայց իր հաւատարիմ Գէորգ Տէր Դաւիթեանի հոգածութեամբ սթափելով, կը ներկայանայ պինուորական իշխանութեան: Իր կերպարանն ու բացատրութիւնները գութ կը շարժեն, և Կարապետ յանձն առնելով, Ս. Նշանի բարձունքին շուրջը իրեննով խրամ փորել, պինքն ալ իրեններն ալ վտանգէն կապատէ: Կրկին կենաց վտանգ մը անցուց Կարապետ, երբ ձեռք ինկաւ Եփրեմի կոնդակը, որով Հայերը Ռուսաց օգնելու կը յորդորէր, բայց անկէ ալ ապատեցաւ ճարտար միջոցներով: Երրորդ վտանգ մըն ալ անցուց ռուս բանակին Կարնոյ առջև հասած պահուն, և այս անգամ նկուղներու մէջ պահուրտելով անցուց վտանգաւոր օրերը, մինչև որ քաղաքը անձնատուր եղաւ, և Կարապետ հանդիսաւորապէս գնաց ողջունել Պասքևիչ Ս. Նշանի բարձունքին վրայ 1829 յունիս 27ին (2432). Կարնեցիք յաջողութենէն գինովցած ամէն տեսակ նեղութիւններ և նախատինքներ հասուցին Տաճիկներուն, անոնց կրօնական պագումներն ալ վիրաւորելով, և օգուտ չունեցան Կարապետի խոհական խրատները: Այնպէս կը կարծուէր որ Օսմանէան տիրապետութիւնը ալ չի նորոգուիր Կարնոյ վրայ, սակայն Ադրիանուպոլիս դաշնագիրը յուսախաբ թողուց ամէնքը, և այս անգամ Կարապետ խմբովին գաղթելու մէջ միայն գտաւ ժողովուրդին ապահովութեան յոյսը: Գաղթականութեան գաղափարը պանապան կողմերէ ծագած ըսինք, թէ Ներսէսէն և թէ Ռուսերէն, բայց պէտք չէ դուրս թողուլ Կարապետի ալ ջանքը իր ժողովուրդը ապագայ, չարագոյն վիճակէ ապատելու համար: Արդէն խօսած ենք այդ գաղութիւն պարագաներուն վրայ և միտուընիս անոր վրայ վերադառնալ չէ: Ինչ որ այստեղ պէտք է աւելցնենք, Կարապետի այդ մասին ունեցած արդիւնքն է, պի ինքն եղած է այդ շարժումին հոգին, յորդորող և քաջալերող, կարգադրող և գործադրող, նեղութիւնները թեթևցնելու աշխատող, հնարաւոր դիւրութիւններ պատրաստող, ոչ միայն Կարինէ մինչև Ախլցխա ճամբուն վրայ, ուր Կարնեցուց հանգրուանը եղաւ, այլ և Ախլցխայի մէջ տեղաւորելու և բնակավայր կազմելու մէջ: Իրեն արդիւնքն են Ախլցխայի նոր քաղաքամասը, Փոցխով գետի աջակողմը, Հայոց նոր եկեղեցիները, նոր վարժարանը Կարապետեան անունով, և գաղթի խեղճութիւնները վերջացնելով բարեկեցիկ վիճակ մը պատրաստելը: Կարապետի գլխաւոր ձիրքերէն մին կը նկատուի ձեռքին ներքև ինկած միջոցները շահագործելու և դրամէ դրամ հանելուն ճարտարութիւնը հողագործութեան և արհեստներու և առևտուրի յարդը ճանչնալով անձամբ անոնց հետևիլը, և ուրիշներն ալ նոյններու յորդորելը, և այդ նպատակով գաղթականներուն եօթը տարի մաքսէ ապատ մնալու արտօնութիւնը, պոր ինքն կառավարութենէն խնդրեց և ստացաւ (75 ՓՈՐՁ. 190): Այդ միջոցին Կարապետ իրեն համար ալ անձնական լաւ բախտ մը կազմեց, այլ ոչ պոք վրկելով քանի Ախլցխայի մէջ էր (75 ՓՈՐՁ. 197): Իրեն կը վերագրուի հողատիրութեան ոգի մը, լքուած հողեր չնչին գիներով գնել գիւղերու և ձորերու մէջ, և մշակելով արդիւնաւորել, որով բազմաթիւ կալուածներ և ագարակներ շահեցուց եկեղեցիներու և դպրոցներու, և բաւականաչափ ալ իրեն պահեց անձնական սեփականութիւն: Պարագայ մըն ալ պոր նկատողութենէ վրիպեցնելու չէ, գանգատներու և բողոքներու հանդէպ աննկուն մնալն է: Գաղթականութեան առջի օրէն մինչև բարեկեցութեան սկսելուն օրը, երբեք չդադրեցան Կարապետի դէմ դիմումներն ու պայրոյթները, ամէն անգամ որ հանրութիւնը կամ ոմանք դժուարութեան կը հանդիպէին: Ամէն բանի, ուրկէ ալ ծագէր, պատասխանատուն մեծաւորն էր, այնպէս որ իրաւամբ կրնանք ըսել թէ նորա կեանքը ներկայում է մի լի վիշտերով պատկեր

նիւթական և բարոյական կատարեալ մարտասիրութեան: Բայց նա ամենևին յաղթեց, իր ժողովուրդին հետ նեղուեցաւ և ապրեցաւ, և այդ մասին ունեցած արդիւնքին վրայ Պօլօժէնիէով պետութեան կողմէ բացառիկ առաջնորդութեան շնորհը ստացաւ (ՊՕԼ. 11, ԵՐՅ. Բ. 568), և մայրաթոռոյ առաջարկութեամբ Տփղիսի առաջնորդութեան բարձրացաւ (ԵՐՅ. Բ. 420), բայց անկէ ետքը կարծես թէ իր ընթացքը տարբերեցաւ, ինչպէս պիտի տեսնենք: Կարապետի պէս նկատողութեան արժանացաւ, երբեմն Կարսի և յետոյ Շիրակայ գաղթականաց առաջորդ Ստեփանոս Խաժակեան, որ Շամախիի կամ Շիրվանի առաջնորդ նշանակուեցաւ , և օգտակար եղած էր իրեններուն, սակայն մեզի կը պակսին իր կենսագրական տեղեկութիւնները, ո յատուկ կերպով յառաջ բերէինք:

2534. ԲԱՂԴԱՍԱՐ ԶԱԼԱԼԵԱՆ

Միւս նշանաւոր անձնաւորութիւնն է Աղուանից կամ Արցախու կամ Ղարաբաղի կամ Շուշիի առաջնորդ Բաղդասար Մետրոպոլիտ, ծնած 1775 յունուար 12-ին, Կարապետէ չորս տարի առաջ, որդի Հասան Զալալեան Դանիէլ բէգի, զոր նոր վկաներու կարգին յիշեցինք (2482): Հասան Զալալեան տոհմը իշխանական եղած էր հին դարերէ ի վեր: Իր անունը կառնէ Հասան Զալալ, իշխանէ , որ ապրեցաւ ԺԲ. դարու վերջերը , և որ ուղիղ գիծով կիջնար Սմբատ Խոստովանողի որդի Սահլ իշխանէն, որ Վրաց և Աղուանից կողմերու իշխանութիւնը ստացաւ ամիրապետէն 837-ին (638): Հասան-Զալալեանք իշխանութենէ վատ Աղուանի կաթողիկոսութիւնն ալ ժառանգաբար իրենց տոհմին մէջ պահեցին բաւական ժամանակ, մինչև ծանոթ Սարգիսը, որուն կաթողիկոսութիւնը պարզ մետրոպոլիտութեան փոխուեցաւ վերջնականապէս 1815-ին, և որուն Շուշիի պաշարման միջոցին վարած դերը պատմեցինք (2394): Իպրահիմ խանի Ղարաբաղի վրայ բռնացած ատեն Բաղդասար դեռ մանուկ էր, բայց հարկաւ մասնակից գտնուեցաւ այն նեղութեանց որոնց ենթարկուեցաւ հայրը Դանիէլ և հօրեղբայրը Սարգիս մետրոպոլիտ 1876-էն, որ տարին ըսպաննուեցաւ Յովհաննէս Աղուանից կաթողիկոսը (2092): Բաղդասար իր հոր ընկերացաւ Գանձակ փախչելուն, ուսկից Դանիէլ դարձաւ եկեղեցւոյ գանձերուն համար, բայց բռնաւորին ձեռքն իյնալով նահատակուեցաւ 1791-ին (ՆՐՎ. Բ. 254): Իսկ Բաղդասար վայելեց Զաւատ խանի պաշտպանութիւնը , որ վմայլած էր մանաւանդ անոր յափշտակիչ ձայնին. 1796-ին սարկաւագ և 1798-ին վարդապետ ձեռնադրուեցաւ հօրեղբոր Սարգսի ձեռքով, որուն հետ Տփղիս ալ գնաց, և Վրաց թագաւորներէ գտաւ, և Սարգիսի Էջմիածին եկած ատեն միատեղ էր Բաղդասար , որ Ղուկասէ մեծագին փիլոնով և ծայրագոյն աստիճանով պատուուեցաւ իր ձայնին շնորհիւ: Տասը տարիներ Սարգիսի մոտ մնաց Հաղբատի վանքը, և 1808-ին Ղարաբաղ դարձաւ ռուսական հովանաւորութեան ներքև հայրենական կալուածները ձեռք բերելու: Չորս տարի աշխատեցաւ Բաղդասար, Գանձասարի աթոռին շէնքերը նորոգեց միաբանները հաւաքեց, ցրուած գիւղականները դարձուց, գրաւուած կալուածները ազատեց, բռնաւորներէն դատաստանով ետ առաւ, և ամէն կողմ կարգադրեց և ծաղկեցուց , և Սարգիսը Աթոռը դարձուց: Բայց վերջինս Պարսից վստահանալով նորէն կաթողիկոսի հովեր սկսաւ առնել, մինչև որ 1815-ին Ներսէսի ձեռքով և ռուսական իշխանութեամբ կաթողիկոսութիւնը վերջացաւ: Պարսիկ իշխաններու հետ կալուածական խնդիրներ կը շարունակէին, ուստի Սարգիս իրեն օգնական և յաջորդ պատրաստելու համար Բաղդասարը Էջմիածին յղեց, որ 1820 սեպտեմբեր 18-ին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Եփրեմէն: Ութ տարի իբրև օգնական վարեց Բաղդասար մետրոպոլիտութիւնը, մինչև որ 1828-ին Սարգիս վախճանեցաւ , և գործերը իր վրայ մնացին, այլ միայն 1830-ին Էջմիածնի մէջ Արցախու և Աղուանից երկիրներու մետրոպոլիտութեան պատիւը ստացաւ Եփրեմէն: Բաղդասար աւելի ևս պօրացած նշանաւոր բարեկարգութիւններ կատարեց, Գանձասարի

վանքին առապարներուն մէջ արահետ ճամբայ բացաւ, յետ մնացած վանական կալուածներն ալ ապատեց իբր 60 գիւղերու մէջ, միաբանութիւնը պօրացուց, դպրոց բացաւ, առաջնորդարան շինեց, հայաբնակութիւնը աճեցուց, պետութենէն վարձատրուեցաւ , և ամենայն իրաւամբ 1836-ի Պօլօժէնիէին գործադրուելուն առթիւ Արցախու անունով կազմուած ընդարձակ վիճակին առաջնորդ կարգուեցաւ, պահելով միշտ մինչև իր մահը մետրոպոլիտ պատուանունը (80 ՓՐՁ. 145-158):

2535. ՍԻՆՈՂԻԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նոր Սինողին կազմուելէն ետքը պէք չենք պզար անոր գործունէութեան մանրամասնութեանց հետևիլ, զի այս մեր տեսակէտին դուրս է իսկ անոր պաշտօնավարութեան ձևը սկսաւ նմանիլ պետական ատեններու մէջ ընդհանրապէս պահուած ձևակերպութիւններուն, և ոչ ևս նախընթաց քմահաճոյ ձևերուն, քանի որ ձևակերպութիւնները վարողներ պետական ատեններու մէջ վարժուած պաշտօնեաներ էին: Այդ ձևակերպութիւններու համաձայն գործերու չորս ճիւղեր որոշուեցան , կառավարչական , հաշուական, տնտեսական, դատաստանական, և իւրաքանչիւր ճիւղի պատկանող գործերուն նախաքննութիւնը սինողականներու վրայ բաշխուեցաւ՝ մէկ եպիսկոպոս և մէկ վարդապետ յատկացնելով: Առաջին ճիւղը յանձնուեցաւ Բարսեղ եպիսկոպոսի և Ղրիմեցի վարդապետի, երկրորդը Յովսէփ եպիսկոպոսի և Սաթունեան վարդապետի, երրորդը Ղուկաս եպիսկոպոսի և Վաղարշապատցի վարդապետի, չորրորդը Ստեփան եպիսկոպոսի և Շամխաթունեան վարդապետի (2531): Կարևոր որոշում ալ եղաւ բոլոր հոգևոր վարժարաններու ընդհանուր վերատեսուչ մը անուանել, ամենուն համար հաւասար ծրագիր մշակելու, կարգադրութիւններ կազմելու, և ուսուցիչներ ընտրելու համար, և այդ պաշտօնին կոչուեցաւ Յակոբ Արղութեան համալսարանական մը: Ագարակի հողագործական և անասնաբուժական գոծողութեանց քննութիւնն ալ արդիւնքէ աւելի ծախք ցուցնելու, որոշուեցաւ անոնք չափաւորել և կանոնաւորել: Արդէն ընդհանուր փորձառութիւնն ալ ցուցուցած է որ վանքերու ուղղակի մշակութիւնը շատ սուղի կը նստի իրենց, պարտաւորեալ ըլլալով ամենայն ինչ և ամենայն գործ վճարել և պարապ ատեններն ալ մշակ ու կենդանի պահպանել, թող վարձկաններուն անհոգ և անուղիղ ընթացքը մինչ հողագործ շինականը տունով տեղով, կինով և պաւակով իր գործին կը հետևի, իր աշխատութեանց վարձքը չի հաշուեր, իր սնունդը գտածով կը հոգայ, և բոլոր արդիւնքը շահ կը հաշուէ: Աւելի կարևոր որոշում մը եղաւ, Հայ եկեղեցւոյ կանոնները ուսումնասիրելով , առձեռն Հայ եկեղեցական օրինագիրք մը կազմել, և գործը յանձնուեցաւ Ղրիմեցի և Շահխաթունեան վարդապետներուն, սակայն գործին ծանրութիւնն ու կարևորութիւնը կարողագոյններու պէտք ունէր, ինչպէս որ իրենք ալ խոստովանելով ետ բաշուեցան, և գործը մնաց ուր որ էր, և կը մնայ մինչև ցայսօր (ԵՐՅ.Բ.427): Յիշենք ևս անցողակի թէ Սինողի բացումէն օր առաջ, փետրուար 7-ին, եպիսկոպոս ձեռնադրուեցան միաբաններէն Յակոբ Չալխամա Կ. Պոլսեցի, Մատթէոս Տէր-Աւետիսեան Շահարացի, և Պօղոս Չախալեան Կարնեցի, իսկ դուրսէն Յակոբ առաջնորդ Արաբկիրի օգոստոս 14- ին: Նշանակելի է ևս որ իբր մեծ բարձրացում Ստեփանոս Արղութեանի և Գէորգ Տաթևացի և Ստեփանոս Արարատեան եպիսկոպոսներու ծայրագոյն վարդապետութեան գաւապան տրուեցաւ կաթողիկոսէն 1837 նոյեմբեր 9-ին: Այս կը ցուցնէ թէ մինչև այս ատեն տակաւին ծայրագունութիւնը բարձր նշանակութիւն ունէր, և սովորական բան մը դարձած չէր:

2536. ԿԱՅՍՐԸ ՅԷԶՄԻԱԾԻՆ

Ռուսիոյ կայսերներ տակաւին Կովկասէն անդին անցած չէին, և նորստացիկ երկիրներու մէջ կայսեր անգամ մը երևնալը իր նշանակութիւնն ունէր, և Նիկողայոս կայսեր այցելելուն պրոյցները

քանիցս պտտած էին, և առաւելապէս Հայերը շահագրգռուած էին այդ լուրերով, քանի որ իրենք պիտի ըլլային գլխաւորապէս այցելութեան առարկաները. վերջապէս պաշտօնական լուրը հասաւ 1827 մարտին, Սինոդին բացուելէն անմիջապէս ետքը, և և ամէն կողմ պատրաստութիւններ սկսան: Էջմիածին վանքին և եկեղեցւոյն շինութիւններն իսկ նորոգելու և յարդարելու ձեռք պարկաւ. նոյն պատրաստութիւնները սկսան գլխաւոր քաղաքներու հայութեանց մէջ ալ, և ամէն տեղ եկեղեցիներն և դպրոցներ և առաջնորդարաններ ծեփուեցան և ներկուեցան ներսէն և դուրսէն: Սեպտեմբերի մէջ լսուեցաւ թէ Խրիմ հասած է, ուսկից շոգենաւով Կովկասի ցամաքը ելաւ սեպտեմբեր 27-ին Ռէտուրթալէ նաւահանգիստը, Փօթիի հիւսիսակողմը: Միւս օր 28-ին եկաւ Քութայիս, 30-ին Սուրամ, անկէ Բօրժօմ, և հոկտեմբեր 2-ին Ախլցիս, ուր իջեանեցաւ Կարապետի շինած առաջնորդարանը: Կարապետ Տփղիսի փոխադրուած ատեն Ախլցիսան յանձնած էր իր հաւատարիմ Գէորգ Տէր-Դաւիթեանի (2533) որ արդէն վարդապետ էր եղած, բայց այս առթիւ փութացեր էր իր բնիկ տեղը գտնուիլ և Կայսրը ընդունիլ: Կայսրը անդէն գիշերեց, և միւս օր նոր քաղաքին մէջ պտոյտ մը կատարելէն ետքը մեկնեցաւ Ախալքէլէք: Կը պատմուի թէ Նիկողայոս չմեկնած Կարապետին կը հարցնէ թէ ի՞նչ կը կամենայ իրմէ խնդրել, որուն կարապետ կը պատասխանէ. Այս մի բուռն քո նոր հպատակ ժողովուրդը պահպանեցին և պաշտպանեցին իմ թոյլ ոյժերով, մինչև բերի քո հզօր թևերի տակ, այսուհետև, մեծ արքայ, դու եղիր սոցա հայրը և պաշտպանը, իմ հայ ազգը քեզ եմ յանձնում, և քեզ Աստուծոյ: Կայսրը գոհ մնաց, ձեռք սեղմեց, և քովիններուն ըսաւ, լաւ քաղաքագէտ է: Կարապետ կայսեր մեկնելէն ետքը հիւանդացաւ, և չկրցաւ ժամանակին Տփղիս դառնալ, Կայսրը ընդունելու իր նոր առաջնորդութեան մէջ: Հոկտեմբեր 4-ին կայսրը հասաւ Գիւմրի, ուր Սրբուհւոյ Ալեքսանդրայի անուան նոր եկեղեցւոյ մը հիմը դրաւ, և քաղաքն ալ Ալեքսանդրապոլ անուանեց: Հոկտեմբեր 5-ին առտուն հասաւ Էջմիածին, ուր Քասախի եկերքը պինքն դիմաւորեց կաթողիկոսը ընկերակցութեամբ եպիսկոպոսներու և վարդապետներու, բարապաններու և յիսուն պինուորեալ անձանց Հայոց պատկանելոց Էջմիածնի: Պարիսպէն դուրս բոլոր միաբանութիւնը պատահաբար կը սպասէր, և հանդիսապէս առաջնորդեց մայր տաճարը, ուր իջման տեղւոյն առջև կաթողիկոսը բարի գալստեան և օրհնութեան և խնդութեան ատենաբանութիւնը գրաւոր յանձնեց կայսեր, որ հետպահեցէ պննեց եկեղեցին և գանձատունը: Այստեղ առանձին ուլեց տեսնել հին մեծագին թագը, և թանկագին ակներուն պարզ ապակիներ ըլլալը դիտեց, որուն պատասխանուեցաւ թէ այսպէս դարձաւ Տիկին Ռօպէնի մօտէն (2519): Կայսրը լոեց, բայց նշանակաւոր հայեացք մը դարձուց Ռօպէնի որ մօտ էր: Եկեղեցիէն ելլելով այցելեց սեղանատունը, տպարանը շատ խեղճ գտաւ, ուսումնարանը դատարկ տեսաւ, և Ղորղանեան որ թարգմանութիւն կընէր, կցկտուր արդարացումներ կարկտեց, այլ ևս մատենադարան չտարին, պի գիրքերն շատ խառնիխուռն էին: Վերջին անգամ այցելեց Սինոդը , ուր գոհունակութեան խոսքերու հետ օրինական յանձնարարութիւններ ալ աւելցուց, և հանգստանալու ելաւ Վեհարանի Ծաղկեալ այվան կոչուած սենեակը: Այստեղ Յովհաննէսի ալ կը հարցնէ Կայսրը, ինչպէս հարցուցած էր Կարապետին, թէ իրմէ ի՞նչ կը կամենայ խնդրել. որուն Յովհաննէս կը պատասխանէ թէ կը խնդրէ հզօր պաշտպանութիւն ցոյց տալ Ռուսիոյ գահին հաւատարիմ եղած հայ ազգին, և երկու Թեվումով եղբօրորդիներուն Ռուսական շքանշան, որպէսպիսի պանուական դառնան: Երբ Կայսրը հեգնօրէն հարցումը կը կրկնէ, Յովհաննէս Այլ ևս ոչինչ կը պատասխանէ , և Կայսրը կը մրմռայ, Չափաւոր բայց տարօրինակ խնդրանք , հարկաւ միտքը բերելով բերելով օր առաջ Կարապետէ ստացած ճարտար պատասխանը: Յովհաննէս այստեղ ալ կը յայտնէ իր շահամոլ բնութիւնը, և թերևս անկէ ըզգածուելով Կայսրը, ոչ ճաշը կընդունի և ոչ գիշերել կը հաճի, և անմիջապէս կը մեկնի Երևան, չնայելով որ արդէն ճաշի ատեն

էր և ճաշը պատրաստուած էր, և յորդահոս և անընդհատ անձրև կը տեղար, որ ստիպուեցաւ Կովկասեան երիճապ ծածկել, և սաստիկ թրջուած Երևան հասնիլ:

2537. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԵՐՋԵՐԸ

Նրկողայոսի ուղևորութիւնը մինչև Էջմիածնի հասնիլը հանդարտ և գոհունակ կերպարան ունէր, բայց Էջմիածինէ մեկնելէն սկսելով կծու և դժգոհ կերպարան ստացաւ, ամէն կողմ խօսուած կառավարութեան և ատեններու դէմ գանգատներու պատճառով, որոնց տեղեկացաւ թէ անձամբ և թէ Գան ծերակուականի նախագահութեամբ կազմուած քննիչ Յանձնաժողովոյ միջոցաւ: Երբ Երևանի բերդին մէջ Հրապրանի վրայ նայող պատշգամը նստած էր, մահմետական ամբոխ մը դիմացը կը կանգնի, փետտած աքաղաղ մը ցոյց տալով, իմացնելու համար թէ Բեհրութեանց նահանգապետ պիրենք այս օրին է հասցրել: Կայսրը դատարաններ ալ այցելեց և անկարգ գտաւ, ոռւս եկեղեցիներու վիճակն ալ անբարեկարգ տեսաւ, պաշտօնեաները վանցառու, և հրամանատարները անհոգ և կաշառառու և կեղեքիչ: Այս տեղեկութիւններէ պատճառով երբ Տփղիս հասաւ հրապարակաւ աստիճանապուրկ ըրաւ Դադեան իշխանը Ռօպէնի փեսան և աքսոր յղեց և Պետրբուրգ հասնելով 1837 նոյեմբեր 30-ին պաշտօնանկ ըրաւ կառավարչապետ Ռօպէնը և նահանգապետ Բեհրութեանը, և Կովկասը յանձնեց պօրաւար Եւգինէոս Գօլօվիննի և Երևանի նահանգը պօրաւար Պացովսքիի: Կարբեցիին որ իր երկու նեցուկները և պօրաւոր պաշտպանները կորսնցուց, պահ մը շփոթեցաւ, բայց Ղորվանեանը իրեն օգնական գտաւ նորերը շահասիրելու: Յովհաննէս նոր միւռոնօրհնէք ալ կատարեց 1838 յունիս 5-ին, Կաթողիկէ Էջմիածնի տօնին, որուն ներկայ գտնուեցաւ Գան, և տասն օր Էջմիածին մնաց կարդաց և կանոնաց հմտանալու համար, և իր ստիպման ներքև մատենադարանի գիրքերը խորշերէ և սնտուկներէ հանուելով շարուեցան և ցուցակագրուեցան Ղրիմեցիի և Շահխաթունեանի ձեռքով, որոնք մայրաթոռոյ ուսումնականներն էին: Այստեղ ալ յիշենք թէ Ներսէսի ժամանակ կատարուած մատենադարանի կարգադրութիւնը ատեն անցնելով բոլորովին լքուած և խանգարուած էր: Կարբեցիին վերջին տարիներուն ենք հասած, և այդ միջոցին գործունէութեան արդիւնք մը չունինք յառաջ բերելու: Էջմիածին տարբեր վարչութեան ձև առած էր Պօլօթէնիէի կարգադրութեամբ և Սինոդի գործունէութեամբ, որ սակայն միշտ կանոնաւոր և նպաստաւոր երևոյթ չունէր: Կարբեցիին ալ արդէն 75 անհատական գործունէութենէ թուլացած, շահասիրական ճամբաները գոցուած, անձնական պաշտպանները կորսնցուցած, իր ձգտումներուն ալ չափ դրած, հանդարտութեան տարիներ կանցունէր: Իր գլխաւոր գործերը եղան ձեռնադրութիւնները, պորս կը քաղենք ի յիշատակ ապագայից: Միւռօրհնութենէ ետքը յունիս 9-ին ձեռնադրեց Մատթէոս Չուխաճեան Պրուսայի առաջնորդը, որ եղև Մատթէոս Ա. Կաթողիկոսը և Յարութիւն Սէբէլեան Վանայ առաջնորդը: Նոյն 1838 տարույ յուլիս 10-ին Խաչատուր Ղարահիւսէյնեան Ասպահանի առաջնորդը, օգոստոս 6-ին Կարապետ ծերունի Սեբաստիոյ առաջնորդը, 8-ին Յակոբ Կեսարիոյ առաջնորդը և Յովհաննէս ըԶմիւռնացի Երուսաղէմի փոխանորդը: Յաջորդ 1839 տարույ յունիս 20-ին Գէորգ Իվմիրցի Բալուայ առաջնորդը, յուլիս 9-ին, Պօղոս Թաքթաքեան Ձմիւռնիոյ առաջնորդը և Յարութիւն Գանձանակեցի Սևանի վանահայրը հոկտեմբեր 29-ին Պետրոս Ալթունեան Կարնոյ առաջնորդը, 1840-ին Բարսեղ Տէր -Մարտիրոսեան Երևանցի աթոռոյ միաբանը, և 1841 յունիս 22-ին Եփրեմ Կարնոյ առաջնորդ, և աթոռոյ միաբաններէն Յովհաննէս Ղրիմեցի և Յովհաննէս Շահխաթունեան և Գէորգ Տէր Դաւիթեան և Գէորգ Մարգարեան վարդապետները: Վերջին չորսերէն երկու Յովհաննէսները ութը տարի առաջ ալ արժանաւոր էին այդ աստիճանին նկատելով իրենց բանիբուն հմտութիւնը և ամէն կարևոր առիթներու մէջ գործածուելնին, բայց Կարբեցիին չէր մոռացած անոնց 1833-ի շարժումին մասնակցութիւնը (2508): Իսկ Գէորգները Կարնեցի

Կարապետի և իրեն Կարբեցիի փոքրաւորները էին: Ասոնցմէ շատերուն ծայրագունութիւն ալ տուաւ, միշտ եպիսկոպոսական ձեռնադրութենէ ետքը: 2538. ԱՂԱԿՆԻ ՇԻՆԱՐԱՐ

Կոստանդնուպոլսոյ մէջ պատրիարքական աթոռին վրայ կը մնար Ստեփանոս Աղաւնի (2440), որուն պաշտօնավարութեան մասին արդէն գաղափար մը տուած ենք, և առիթ ալ ունեցանք յիշելու Մայրաթոռոյ և Տաճկահայոց յարաբերութիւններին վերահաստատման կէտը բացատրած ատեննիս (2490. 2504): Հանդարտ կերպով շարունակեցին Աղաւնիի տարիները, և ինքն բնութեամբ ալ մեղմիկ և հեպահոգի, հոգերէր և խաղաղասէր, ոչ ծանր խնդիրներու տեղի տուաւ, և ոչ խնդիրներ յուղելու մարմանջ ունեցաւ: Իր ժամանակին ամենանշանաւոր գործերը մայրաքաղաքի եկեղեցիներու նորոգութիւններն են, զորս կատարեց և անունն ալ արձանագրութեանց մէջ նշանակուեցաւ: Այս կարգէն են Եէնիքէօյի Ս. Աստուածածին եկեղեցին 1834 յունիս 24-ին, Ալէմտապիի Ս. Նշանը յունիս 29-ին, Պէյքօպի Ս. Նիկողայոսը սեպտեմբեր 16-ին, Գուրուչէշմէի Ս. Խաչը նոյեմբեր 16-ին, Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչը դեկտեմբեր 10-ին, և Պալաթու Ս. Հրեշտակապետացը 1835 սեպտեմբեր 7-ին: Նորէն շինուած կամ ի հիմնաց վերաշինուած եկեղեցիներ ալ եղան, Պէշիկթաշի Ս. Աստուածածին և Գուղկունճուքի Ս. Լուսաւորիչ արուեստակերտ եկեղեցիները՝ Պալեան և Սերվերեան արքունի ճարտարապետերու կողմէն շինուած, որոնք օծուեցան՝ վերջինը 1835 մայիս 11-ին և առաջինը 1838-ին: Եւս Բերայի Ս. Երրորդութիւն փառաւոր եկեղեցին, որ օծուեցան 1838 յունիս 18-ին Լուսաւորչի Նշխարաց տօնին օրը: Ընդհանուր կերպով 16 կը համարուին Աղաւնիի օրով նորոգուած եկեղեցիները, որոնց մէջ են նաև Թօփթաբուի Ս. Նիկողայոսը և Էյպուի Ս. Եղիան և Սամաթիոյ Ս. Գէորգը 1832-ին: Այս միջոցներուն սուլտան Մահմուտ մեծամեծ հանդեսներ կարգադրեց իր վաւակաց թլպատութեանց և ամուսնութեանց առթիւ, և հրաւիրեալներուն կարգին գտնուեցան պատրիարքներ և քրիստոնէայ վարժարաններու աշակերտներ իրնց վարժապետներով, ուրախութեանց և խնջոյից մասնակցեցան և պարգևներ ստացան, իսկ պատրիարքներ նորահաստատ Նշանը Իֆթիխար ակնակուռ շքանշանով պատուուեցան, յաջորդաբար պատրիարքներու սեփական մնալու պայմանով (ՊԷՐ.259): Երբոր մայրաքաղաքի մանուկները արքունի շնորհաց կարժանանային, միւս կողմէ գաւառներու հայ տղաքը 1836-էն սկսելով բռնի կը հաւաքուէին, և իբր թէ արհեստի հետևելու նպատակով Ոսկեղջիւրի ծայրը Իբլիքհանէ կոչուած կտաւի և երկաթի գործարանին մէջ չարաչար աշխատութեանց կենթարկուէին, զրկանաց և տուայտանաց ներքև և լոկ խեղճ օրապահիկի մը պայմանով: Իբր հինգ հազար կը հաշուուին առաջին անգամ բերուածները. և մանկաժողովը տարուէտարի կը նորոգուէր և նոր հարիւրաւորներ գաւառներէ կը բերուէին, և մինչև 1870 կը կարդանք թէ ամ յամէ նորոգի մինչև ցայսօր, և թէ վայս չար աղէտ ոչ ոք յիշխանաց կարացի ի բաց վտարել յազգէ իւրմէ (ՊԷՐ.261), բայց այժմ շատոնց է որ դադրած է:

2538. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՓԻՐԷՆԵԱՆ

Բ. Այս միջոցին կիյնայ Յովհաննէս նոր նահատակին վկայութիւնը, զոր կը փութանք պատմել ականատեսի յիշատակագիրէ քաղելով (ՓՆՐ.), ինչպէս միշտ ջանացինք մոռացութենէ հանել մեր նոր նահատակներուն յիշատակները: Բսանումէկ տարեկան երիտասարդ մըն էր նա, բնիկ Նիկոմիդիոյ հանդիպակաց Պաղչէճիկ կամ ըստ Հայոց Պարտիպակ գիւղէն, որդի Փիրէնեան Ստեփանոսի և Թագուհույ, 1817-ին ծնած, աղքատիկ բայց բարեպաշտ հողագործի վաւակ, բոլորովին անուս, զոր հայրը մշակութեան տուեր էր մերձակայ Եօրճիւն գիւղի տանուտէր Մահմետի քով: Երիտասարդը բարեձև և գեղապատշաճ՝ Մահմետի աղջկան նկատողութեան առարկայ կըլլայ, որ կը փափաքի վայն իր հաւատքին յանկուցանել, և ամուսինն ու հայրն ալ կը միջամտեն աղջկան փափաքը յագեցնելու, և այս նպատակով կը սկսին Յովհաննէսը հրապուրել և

յորդորել և ստիպել որ քրիստոնէութիւնը ուրանայ: Այդ ջանքերուն միջոցին էր որ 1837-ին Ս. Յակոբայ շաբաթապահքը Տաճկաց ռամազան ամսուն մէջ կը հանդիպի, և Յովհաննէս ալ ծոմապահ կանցունէ այն շաբաթը, դեկտեմբեր 13-էն 17, հետևելով Պարտիպակցի բարեպաշտներուն որոնք սովոր են իրեն գիւղին եկեղեցւոյն տօնին ծոմաջան պատրաստուիլ: Զուգադիպութիւնը նկատի կառնուի Մահմէտի տնեցիներէն, և կը խորհին դիպուածէն օգտուիլ Յովհաննէսը բռնադատելու իբր թէ նա արդէն իսկ իսլամական կրօնք ընդունուած, Մահմէտ անուն առած և ռամազան ալ պահած ըլլայ, և սուտ վկաներ ալ կը պատրաստեն Եօրձիւնի գիւղացիներէն: Այդ խորհուրդին իրապէս յոյն մը լուր կու տայ Յովհաննէսի, որ իսկոյն խոյս կու տայ Եօրձիւնէն և ոլորապտոյտ և դժուարին ճամբաներով կը հասնի Պարտիպակ, և իր հօրը տանը կը պահուրտի նախապէս սուրբ խորհուրդներով ինքզինքը ղօրացնելով: Հետապնդողներ ուր ըլլալը կը գուշակեն, և Նիկոմիդիոյ կառավարչին վկաներով կը բողոքեն, թէ Յովհաննէս ուրացաւ պիւր հաւատն և դարձաւ ի տինս մեր, և հիմա խոյս տուած իր հօրը տունը կը մնայ: Պարտիպակի Հայոց գլխաւորը կամ իշխան գիւղին Նիկոմիդիա գտնուելով կառավարիչը կը համոզէ որ նախապէս ամբաստանութիւնը Եօրձիւնէն ըստուգուի, և գործ կը յանձնուի աւանդապետին, այսինքն գիւղի մուխթարին, որ հարձուփորձի կը մտնէ, և տեսնելով որ իշխանք գիւղին սուտ վկաներուն հակառակ յայտարարութիւններ կընեն, ըստ այնմ կը տեղեկագրէ, որով կառավարիչն ալ անփոյթ արար վդատախապութենէ թշնամեացն, և նաև աւանապետն սպառնացաւ Մահմէտի փեսային դավաճանութենէ ետ կենալ: Բայց նա ձախողելէն վայրացած Կ. Պոլիս կը դիմէ, և Բիւրա խօճա կոչուած ազդեցիկ կադացողի մը ձեռքով գործը պետական դուռը կը հաղորդէ և կը հետապնդէ մինչև որ հրաման հանել կու տայ Յովհաննէսն ու դատախապներն ու վկաները Կ. Պոլիս բերել: Բայց ասկէ առաջ Նիկոմիդիոյ կառավարիչը կը փոխուի և նոր մը կու գայ այր ժանտ և գազանաբարոյ , որ վրոյցը լսելով Յովհաննէսը ձերբակալելու հրաման կը յղէ Պարտիպակի աւանապետին, որ իր կարգին նախ ողոքանօք կը փորձէ, և յետոյ շղթայել ու բանտարկել կու տայ 1838 մարտ 11-ին, յերեկոյի ուրբաթու որ էր մերձ տօնի Սրբոց Քառասնից (ՓՐՆ. 8), պոր լսելով Պարտիպակի քահանայք յատուկ հսկում կը կատարեն յօգնութիւն բանտարկեալ պատանւոյն: Ստեփանոս Աղաւնիի պատրիարքութեան միջոցն էր որ Ամաշու և Նիկոմիդիոյ առաջնորդութիւնն ալ վրան կը պահէր: Միւս օր ի լուսանալ առաւօտուն, մարտ 12-ին Յովհաննէս պինուորով և ձեռնակերպ Նիկոմիդիա կը յղուի, և կառավարիչէն քննութեան և հարցափորձի կենթարկուի: Յովհաննէս ինչպէս ըսինք պարզամիտ և անուս երիտասարդ մը, առանց երկար խօսակցութեանց մտնելու ուրիշ պատասխան չունէր, բայց եթէ ստէպ խաչակնքել, և միշտ կրկնել թէ անունը Յովհաննէս է, ուրիշ անուն առած չէ, քրիստոնեայ է և հաւատքը փոխելու յայտարարութիւն ըրած չէ: Կարավարիչէն դատաւորին և դատաւորէն դարձեալ կառավարիչին կը դրկուի, և ամէն հարցուփորձերու միևնոյն պատասխանը կրկնէ, և Նիկոմիդիոյ մէջ կը բանտարկուի կառավարիչին հրամանով, որ և բանտապահները կը հրահանգէ պէս-պէս տանջանքներով նեղել պատանին, որ թերևս համակերպիլ հաւանի: Տասնումէկ օր կը մնայ Յովհաննէս Նիկոմիդիոյ բանտին մէջ, սպառնալիքներէ աներկիւղ և տանջանքներէ աննկուն և իր հաւատքին վրայ անդրդուելի, մինչև որ Կ. Պոլիս դրկուելու հրամանը կը հասնի, և կառավարիչը վայն նաւով ճամբայ կը հանէ շղթայակապ, և տանող պինուորներուն հրամայելով նաւին մէջ նեղել և խոշտանգել: Յաջողակ հողմով կը հասնին Կ. Պոլիս (ՓՐՆ.35) շուրջ մարտ 25-ին: Այստեղ Յովհաննէս հետզհետէ պանապան ատեաններու առջև կը հանուի: Նախ արտաքին գործոց պաշտօնատունը Հարիճիյէ միւշիրի կամ ռէիս Էֆէնտի կոչուած նախարարին, ուր ոչ ողոքաններով և խոստումներով, և ոչ տանջանքներով և չարչարանքներով կը հաւանի Յովհաննէս միտքը փոխել: Յետոյ կը հանեն

վայն առ փոխարքայն, միևնոյն փորձերը և միևնոյն տանջանքները կը կրկնեն , զի ի չորս աւուրս շարունակ յայգուէ մինչև ցերեկոյ բնաւ ոչ դադարէին ի չարչարելոյ, և գիշերի անքուն առնելով լլկէին վնա չարաչար: Այդ օրերուն պիտի կատարուէր շէյխիսլամութեան նոր դատարանին բացումը ի պալատն զոր նորոգ շինել և կարգադրել էին ուստի երբ բացումը կատարեցին և կարդացին զօրհնութիւն նորոգ դատարանին, և բոլոր աւագ դատաւորները մեծ դանիշմանն և մեծ քաղաքի դատաւորն և Եւրոպիոյ և Ասիոյ բոլոր ժողովի գումարեցան, իբրև յաջողութեան սկընաւորութիւն Յովհաննէսով վբաղեցան, յուսալով վայն իսլամութեան շահիլ, սակայն յոյսերնէն վրիպեցան, զի Յովհաննէս իրեն յանգերգէն վատ բան չէր խօսեր, խոստումներէ չէր հրապուրեր և սպառնալիքներով չէր ընկճւեր (ՓՐՆ. 17). և յոյժ դժուարեցան , վասնզի ոչ յաջողեցաւ ըստ կամաց իւրեանց անդրանիկ դատաստանն նորոգ շինել դատարանին (ՓՐՆ.18): Յովհաննէս կրկին փոխարքային բանտը տարուեցաւ, ուր իբրև աւուրս քսան տանջանք չմնաց որ չփորձեն մինչև գլխատելու չոքեցնել, և գլխիվայր կախելով ներքևէն ծխել, կատանօք, խոշտանգանօք, լլկանօք կարծրագոյն վիշտս հասուցանել, այնպէս որ տանջողներն իսկ վարմանային յոյժ ընդ համբերութիւն երանելոյն : Փոխարքայութենէ սպարապետին ալ յղուեցաւ, և այն տեղ միևնոյն բաները կրկնուեցան ի վուր, մինչև տաղտկացեալ սպարապետն , այսինքն սէրասքէր փաշայն հրամայեց Նիկոմիդիա դարձնել, և այն տեղ վերջին փորձերը կատարել: Ըստ այսմ այն տեղ ալ խիստ տանջանքներ փորձուեցան, պորտին վրայ սուրճ եփել, կրակով այրել, չափումներով ազդրերը ծակոտել, և երբ այս կերպով ալ չկրցան հաւանութեան նշան մը առնել, Կ. Պոլիս լուր տուին, ուսկից իր գիւղին մէջ կախուելու հրամանը եկաւ, և 12 պինուորաց պահպանութեամբ և ձեռնակապուած նաւակով դիմաց անցուցին, և բոկոտն և կապուած դէպի գիւղ վազցուցին, և չուանին դրամն ալ իրմէ առնելով, և վերջին անգամ երիցս անունը հարցներէն և անոր միշտ Յովհաննէս է անուն իմ կրկնելէն ետքը գիւղին առջև թթենիէ մը կախեցին 1838 ապրիլ 30-ին, Երևման Խաչի նախընթաց շաբաթ օրը Տօնին կիրակի առնուն մայիս 1-ին հրաման եղաւ և մարմինը վար իջեցնելով սաղմոսիւք և օրհնութեամբ և մեծահանդէս պատուով գերեզմանատան մէջ հանգուցին առժամապէս: Բայց մայիս 2-ին երկուշաբթի երեկոյ գիշերը կոխելէն ետքը քահանաներ քանի մը հաւատարիմ անձերու հետ այն տեղէն հանեցին, և բերել եդին արտաքոյ եկեղեցւոյն ընդ որմով որ ի կողմանն հիւսիսոյ (ՓՐՆ. 25): Մարտ 11-էն մինչև ապրիլ 30-ը կատարեալ 51 օրեր տևած են Յովհաննէսի անընդհատ տանջանքներն ու խոշտանգանքները, մեծ պահոց 26-րդ օրէն մինչև Յինանց 28-րդ օրը, աւագ շաբաթն և Զատիկն ալ մէջը ըլլալով: Կարապետ քահանայ Տէր Գրիգորեան, որ ականատեսն ու գրողն եղած է Յովհաննէս նահատակին պատմութեան չարչարանաց և մահուան և թաղման ատեն կատարուած վանազան սքանչելիքներ ալ կը պատմէ: Իր արձակ շարադրութիւնը (ՓՐՆ, 3-26), 444 տող և 111 տուն ոտանաւորի ալ վերածած է, որոնց սկզբնատուերը կը կազմեն ի տէր Կարապետ քահանայէ նուաստէ է բանս պատմութեան յաղագս նահատակութեան նոր վկային Յովհաննու, որ ի Պարտիպակ գեղջ ի նահանգին Նիկոմիդայ (ՓՐՆ. 27-48): Պարտիպակցոց մէջ մինչև այսօր կենդանի մնացած է իրենց գիւղակից Յովհաննէս նահատակին յիշատակը, որ հինգ տարիով միայն առաջ է Կ. Պոլիս նահատակուող Յովակիմէ, որ իբրև վերջին նահատակ կը նկատուի:

2539. ՃԵՄԱՐԱՆԻ ԻՒՍԿԻՒՏԱՐԻ

Աղաւնիի նախընթացին և մտաւորական ձգտումներուն արդիւնքն էր վարժարաններ կարգացնելու և վարժարաններ շատցնելու ջանքը, և իր օրով բացուած կամ կարգացած վարժարաններուն կարգին պիտի յիշուին Պէլձեանը Էյուպի մէջ, Պօղոսեանը և Վառվառեանը Գումգաբուէ դուրս, Լանկայի, Կէտիկ փաշայի և Ֆէնէրի վարժարանները, և գլխաւորապէս

Սամաթիոյ Սուրբ-Սահակեան և Խաթէօյի Սուրբ Ներսէսեանը, որոնց մէջ կը դասախօսէին անուննին ծանօթ ուսուցիչներ, և որոնցմէ իբր քսան տարի ետքը ազգային վերածնութեան գործիչներ ճանչցուեցան: Ուսման փափաքը սկսած էր ընդհանուր տենդ դառնալ բոլոր հայութեան մէջ, և առ այս կը նպաստէին անշուշտ երոպական շփումներուն շատնալը, կաթոլիկ համայնքին հետ սկսած մրցումը, գործառնութեանց և յարաբերութեանց ցուցուցած պէտքը, և կառավարական շրջանակին մէջ ալ տարածուած շարժումը, զի գաղղիերէնի և երկրաչափութեան, բժշկութեան և նաւուղղութեան վարժարաններ սկսեր էին բացուիլ: Ազգային շրջանակին մէջ անբաւական երևցան գտնուած վարժարանները, որոնք լաւ նախակրթարաններ էին, և բարձրագոյն ուսումնարանի պէտքը զգալի դարձաւ, ուր միւս դպրոցներում աւարտող աշակերտներ կարողանային իրենց ուսումը շարունակել (ՊԱԼ.460): Այդ պէտքին մէկ գրգիռն ալ Կ. Պոլսոյ մէջ օտարազգի և օտարադաւան, կաթոլիկ և բողոքական վարժարաններու շատնալն էր, ուր սկսած էին դիմել Հայ պատանիները, և հետզհետէ անոնց կրօնական տեսութեանց ալ կը հրապուրուէին: Այս միջոցին, այսինքն 1836-ին Ջատիկէն ետքը, որ տօնուած էր մարտ 29-ին, Կ. Պոլիս ղրկուած էր Կիրակոս եպիսկոպոս Մնացականեան, որուն Պօղոս յատկապէս յանձնարարած էր ինչ-ինչ կարևոր գործեր, և միանգամայն անոր յանձնած էր Երուսաղէմի երևմտական վիճակին պատկերը, որ պարտքէ ապստ, և պատրաստ ալ ունեցող կացութիւն կը ներկայէր: Ամիրաներ քաջալերուեցան այդ տեղեկութիւններէն, և մինչև ատեն Երուսաղէմի նպաստելու վարժուած միտքերը, Երուսաղէմէ նպաստաւորելու գաղափարը յղեցան: Օգոստոս 26-ին ժողով գումարեց Ստեփան պատրիարք Տատեանց և Պալեանց առաջարկութեամբ, ուր հաւաքուեցան բոլոր գլխաւոր ամիրաներ, Փիշմիշեանը և Երկանեանը և Փափապեանը գլուխնին. հրաւիրուեցան նաև Կիրակոս եպիսկոպոսը և Երուսաղէմի փոխանորդ Յովհաննէս Ջմիւռնացի, և հոն Երուսաղէմի վրայ բեռցուցին նոր հաստատուելիք վարժարանին պէտքերը: Իւսիւտարի Երուսաղէմատունը նոր վարժարանի տեղ նշանակուեցաւ, և նոր շինութեան համար ալ 200,000 դահեկան Երուսաղէմի սնտուկէն ուղուեցաւ և առնուեցաւ, և դարձեալ ամսական 5000 կամ տարեկան 60,000 դահեկան ևս առօրեայ մատակարարութեան համար (ՍԱԻ.1205): Այդ գումարը ուրիշներէն տարեկան 100,000 (ՊԷՐ.270) կամ 120,000 գրուած է (Օ1.ՕՐԱ.203). որ յետոյ կատարուած յաւելումին հետ շփոթուած է: Պատրիարք և ամիրաներ պատուատ քաղցր և ողորջ գիրեր ուղղեցին Պօղոսի և Գաբրիէլի, և աւելի հրապուրելու համար նոր վարժարանը կոչեցին ձեմարան Սուրբ Երուսաղէմի, և շրջանաւարտներէն Երուսաղէմի միաբանացուներ հանել խոստացան: Մեծ գումարին փոխանակագիրին ալ յղեցին Աղեքսանդրիոյ սեղանաւորներէն Սթէֆանօ Չիչինոյի վրայ: Երուսաղէմի պատրիարքներ և միաբանութիւն պարտաւորուեցան համակերպիլ, վերապահելով միայն ամսական վճարման կէտը, և այսպէս 1836 սեպտեմբեր 18-ին. Խաչի ուրբաթ օրը, հանդիսապէս նոր շէնքին հիմնարկէքը կատարուեցաւ, որ 2500 քառակուսի կանգուն տարածութիւն պիտի ունենար:

2540. ՃԵՄԱՐԱՆԻ ԲԱՅՈՒՄԸ

Երկու տարի տևեց մինչև որ պատրաստութիւնները լրացան, և հապիւ 1838 դեկտեմբեր 9-ին, ուրբաթ օր, Յղութեան տօնին տեղի ունեցաւ բացումը: Յովհաննէս ամիրա Սերվերեան մեծ հոգաբարձու կամ միւթէվէլլի անուանուեցաւ, Կիրակոս եպիսկոպոս Մնացականեան պաշտպան, Յակոբիկ Մանուէլեան Սերվերեանի փեսան տնօրէն, Յովհաննէս Տերոնեանց ուսումնապետ, Խաչատուր Միսաքեան հայկաբան ուսուցիչ, Խաչատուր Պարտիկպանեան համարողութեան ուսուցիչ, և այսպէս ուրիշ պաշտօնեաներն ալ յարմարագոյներէն առնելով: Աշակերտներ գիշերօթիկ էին և ընտանօք առնուեցան միւս արժարաններու յառաջաղէմերէն: Ծրագիրը աւելի

ոյժ տուած էր գիտութեան և լեզուաց, թէպէտ լաւ բաժին մըն ալ սահմանուած էր կրօնական ուսմանց: Առօրեայ մատակարարութեան և ռոճիկներու ծախքը պիտի հոգային ամիրաները, ունեւորներու տղաքներէն տարեկան 3000 դահեկան թոշակ ստանալով, ուտեստ և զգեստ պահեստ և ուսում մէջը, և նոյն պայմաններով սաներ ընդունելով կարօտ տղաքներէ: Նոյն 1839 տարույ սկիզբը 50- ի հասած էր ճեմարանի աշակերտներուն թիւը. և միջոց մը գործերը բաւական կանոնաւոր քալեցին իբրև առաջին եռանդ, և Աղաւնի յորդորականներու ներքև, սակայն համառօտ եղաւ այդ միջոցը:

2541. ԲՈՂՈՔԱԿԱՆՔ ԵՒ ԱՂԱՒՆԻ

Այդ տարիներու մէջ նոր հոսանք և նոր շարժում սկսած էր Հայոց մէջ, որոնք ինչպէս յայտնի է միշտ միտեալ գտնուած են նորութիւններէ հրապուրելու: Հիւսիսային Ամերիկայ Միացեալ-Պետութեանց (Etats-Unis) կամ ինչպէս սովորութիւն եղած է գործածել, Միացեալ Նահանգաց բնակչութիւնը, որուն տիրող կրօնքը բողոքականութեան Աւետարանական կոչուած յարանուանութիւնն է, կրօնական թէ քաղաքական դիտումներէ մղուած, որոշեց արտաքին ուղղեցութիւն մշակել, ուսում տարածելը իբր միջոց և դաւանութիւն տարածելը իբր նպատակ գործածելով: Առաջին ամերիկացին որ Արևելքի եկաւ, եղաւ Բարսընս որ իր գործունէութիւնը սկսաւ Երուսաղէմի մէջ, 1821-ին (01 ՕՐԱ. 208): Բիչ տարի ետքը 1824-ին բողոքական քարոզչութիւնը ոյժ ստացաւ իրեն հետևող գտնելով երկու Երուսաղէմի եպիսկոպոսները, Յակոբ Լիւստրացին և Դիոնեսիոս Գարթալցին, իսկ Գրիգոր վարդապետ ըսուած հաւանաբար Յակոբ Պօլուցին ըլլալու է (2442): Առաջին քայլերը քաջալերական եղան, և 1829-ին Ամերիկայի քարոզչական խումբը որոշեց Թուրքիոյ Հայոց մէջ բողոքականութիւնը քարոզել կանոնաւոր կերպով, և 1830-ին Տուայտ և Էմիլ Սմիթ վանապան կողմեր այցելեցին, և Կուտել 1831-ին ընտանեօք հաստատուեցաւ Կ. Պոլիս (01.ՕՐԱ.208): Պէտք չէ միտքէ վրապեցնել թէ ճիշդ այդ միջոցին կաթոլիկները ուրոյն և ինքնագլուխ համայնք կը կազմէին (2435), և բողոքականութիւնը մրցումի կը գրգռուէր: Տուայտ ալ 1832-ին Կ. Պոլիս հաստատուեցաւ, ուր իրեն յարեցան Յովհաննէս Տէր-Սահակեան, և Սենեքերիմ Տէր-Մինասեան, ու Սարգիս Յովհաննէսեան, և բողոքական առաջին վարժարանը բացուեցաւ Բերա 1834 հոկտեմբերին, աղջկանաց համար յատուկ ճիւղով: Հետզհետէ գաւառներու մէջ ալ սկսէին տարացուիլ, 1833-ին Չմիւռնիա կը հասնէր Դիոնեսիոս Գարթալցին, որուն 1834-ին կը հետևէր Սարգիս Յովհաննէսէսեան, և Էճըր քարոզիչ տպարան կը հաստատուէր, և 1838-ին ժողովարան ալ կը բացուէր. Տուայտ և Տէր-Մահասեան Փոքր-Ասիա կը շրջէին, և Նիկոմիդիոյ մէջ երկու քահանաներ կորսային՝ Չըրթըլեան Վրթանէսը և Յարութիւնը, Շնայտըր Պրուսա կերթար և ճոնսթն Տրապիզոն, և հետզհետէ բողոքականութիւնը ասպարէզ կը գտնէր: Ազգասէրներ և եկեղեցասէրներ կուզէին որ պատրիարքարանէն խստութեան միջոցներ ձեռք առնուէին, բայց գիտէին միանգամայն որ Աղաւնին այդ ուղղութեան մարդը չէ, զի նա խստութիւններ հակառակ արդիւնքի տանող, և հաածումը տարածող բերող կարծողներէն էր: Ուստի առաջարկեցին և ընդունիլ տուին որ Յակոբոս եպիսկոպոս Սերոբեան, Մարսուանի և Ամասիոյ առաջնորդը, խորհրդական անունով պատրիարքին օգնական ըլլայ և այդ գործին ղեկավար դառնայ, և ըստ այսմ 1839 փետրուար 5-ին Յակոբոս պատրիարքարան կը մտնէր: Իբրև առաջին ձեռնարկ, երկու օր ետքը փետրուար 7-ին, հոչակաւոր Մարգար ժամկոչին ձեռքով պատրիարքարան բերել տաւ Յովհաննէս Տէր Սահակեանը, Պօղոս Ֆիլիքիա ուսուցիչը, Գէորգ Արծրունի քահանան, Թովմաս վարդապետը, և տիրացու Յովվհաննէս վարժապետը, և չորս օր ետքը ամէնքն ալ վանապան կողմեր աքսորեց (ՊԷՐ. 496): Յակոբոս միւս կողմէն ըսկսաւ թելադրել թէ պարզ խորհրդականի պաշտօնը չէր բաւեր ազդու գործունէութեան համար և մինչև իսկ

Աղաւնի պարզամտութեամբ բողոքականաց կողմը միտած հռչակել յաւակնեցաւ (ՊԷՐ. 269): Արդէն Աղաւնի ալ պաշտօնի աչք ունեցող մէկը չէր, և Յակոբոսի գալէն ամիս մը ետքը, 1839 մարտ 6-ին հրաժարականը ներկայեց, 13-ին, Յակոբոս ընտրուեցաւ, և 19-ին Աղաւնի Արմաշ և Նիկոմիդիա մեկնեցաւ, իր վանահայրական և առաջնորդական սիրելագոյն պաշտօնին (ՊԷՐ. 479, 01. ՕՐԱ. 211):

2542. ՅԱԿՈԲՈՍ ՊԱՏՐԻԱՐԶ

Յակոբոսի պատրիարք չեղած առած քայլը յախուռն էր արդէն, զի Տէր Սահակեանէ վատ միւսները ոչ բողոքական էին և ոչ բողոքականութեան համակիր, այլ իմաստասիրական ուսմանց կը հետևէին և Ամերիկայէ եկողներէն օգտուիլ կուզէին: Իր խոստութեան միջոցները յառաջացնելով Յակոբոս հրամայեց աշակերտ չյղել բողոքականաց դպրոցը, որոնք Բերայէ ետքը կանոնաւոր վարժարան մըն ալ բացեր էին Պէպէք գիւղը՝ Վոսփորի վրայ: Բողոքականաց մօտ այցելութիւն և անոնց հետ յարաբերութիւնն ալ արգիլեց, և յատենի եկեղեցւոյ անէծք կարդաց բողոքականներու դէմ, ուրիշ կապածաւորներ ալ կուզէր աքսորել, բայց շատեր արդէն խոյս տուեր էին, որոնց հետ նաև Մեսրոպ Թադիաթեանց, զոր յիշեցինք Եփրեմի Շուշի մեկնած միջոցին (2384): Սակայն Յակոբոս պարտաւորուեցաւ շուտով չափ դնել իր նախանձայնութեան, զի անգղիական դեսպանը բողոքականներու պաշտպանութիւնը ստանձնելով դատախալ կանգնեցաւ կառավարութեան առջև, և Յակոբոս բացատրութեան կոչուեցաւ և յանդիմանուեցաւ. իսկ Գրիգորիս Յունաց պատրիարքը, որ նոյն նպատակով կոնդակ հրատարակած էր, պաշտօնանկ ալ եղաւ: Բողոքականաց դէմ ձեռնարկին տկարանալովը Յակոբոս իր գործունէութիւնը ձեմարանին վրայ դարձուց, նկատելով զայն իբր պատուար մը բողոքականութեան դէմ: Բայց ձեռնարկին պէտք եղած դրամը կը պակսէր, ամիրաներէն շատեր, հին տեսութեանց հետևողներ, Տատեանց և Պալեանց և Սերվերեանց նոր ուղղութեան անհամակիրներ, կը ջանային կործանել հաստատութիւն մը, որ անոնց հիմնարկութիւնը կըմբռնուէր. իսկ Յակոբոս, իբր ժողովրդական կուսակցութեան պաշտպան, կաշխատէր առանց ամիրայից ալ գործը քալեցնել: Նախ անցագիրներու վրայ հինգ դահեկանի տուրք մը ստեղծեց յօգուտ ձեմարանի, յետոյ յատուկ սնտուկ մը հաստատեց հիւանդանոցի և վարժարաններու համար, և մատակարարութիւնը յանձնեց 24 անձերու, արհեստապետներէ առնուած, միայն երկու հոգի ամիրաներէ՝ իբր արհեստաւոր դասակարգ մը նկատելով, որոնք սակայն չմասնակցեցան: Մեծ աթոռներու ինչպէս են, Կարին, Մուշ, Սերաստիա, Եւզոկիա, Պրուսա, և այլն, առաջնորդներու փոփոխութիւններ ըրաւ, անոնցմէ գոյանալիք տուրքերը ձեմարանին յատկացնելու համար, զի աշակերտներու և սաներու թոշակները հետզհետէ կը դադարէին, և Երուսաղէմ ալ կը դժուարանար ուզուած ամսականը վճարել, և բոլոր ծախքերը կը ծանրանային Սերվերեան Յովհաննէսի վրայ, մինչև որ անոր ալ անտանելի կը դառնար այդ բեռը: Արհեստապետները անձարակած պէտք եղած գումարը հաւաքել և վճարել, առաջարկեցին որ հինգ ամիրաներ իրենց միանան, բայց անոնք մերժեցին, և գործը թողուցին 24 արհեստապետերու հոգաբարձութեան վրայ, որպէսզի ժողովրդական շարժումը ընկճեն: Այդ 1839 թուականէն կը սկսի հակաամիրական պայքարը, որ երթալով սաստկացաւ և 20 տարի մը տևեց Կ. Պոլսոյ հայութեան մէջ:

2543. ԲՈՂՈՔԱԿԱՆ Ի ԿՈՎԿԱՍ

Հայ բողոքականութեան սկզբնաւորութիւնը Տաճկաստանէ անկախ Ռուսական սահմաններուն մէջ ալ սկսած էր միևնոյն ատեն: Ռուսական կառավարութիւնը փափաքելով իր մահմետական և հեթանոս հպատակներու մէջ քրիստոնէական հաւատքը տարածել, 1823-ին արտօնած էր Հելուէտիոյ Բասիլիա (Basel կամ Bale) քաղաքի աւետարանական յարանուանութեանց անդամներէն երկուքը Շուշի հաստատուիլ և այդ նպատակին աշխատիլ:

Գործը դիւրին չէր և յաջողութեան յոյսերն ալ նուազ, ուստի աւելի դիւրին գտաւ Հայերու մէջ աշխատիլ, և հայերէնով դպրոց և հայերէն տպարան բացին. Հայերն ալ նորութեանց հետամուտ՝ շուտով գրաւուեցան, մինչև իսկ եկեղեցականներ ալ անոնց համակրեցան և յարեցան: Երբոր գործը հետզհետէ կընդարձակուէր, ապագային եկեղեցւոյ հաւատացելոց և պաշտօնէից մէջ դժգոհութիւններն ալ շատցան, էջմիածին ալ վաճառուեցաւ, և 1831-ին Եփրեմ Կաթողիկոս իր վերջին օրերը կառավարութեան դիմեց, և Կարբեցիին ալ կրկնելու հարկ եղաւ, մինչև որ Ռօպէն կուսակալն ալ գործին կարևորութիւն տար և նախարարութեան տեղեկագրէր, որուն վրայ 1835-ին Բասիլիայի քարոյիչներ արգիլուեցան Հայոց քարոյել և հայերէն հրատարակութիւններ ընել և հայ մանուկներ դպրոց ընդունիլ: Թէպէտ քարոյիչները 1836-ին ընդարձակ պատասխանով ջանացին վիրենք արդարացնել, թէ իրենք Հայերը հրաւիրող և հրապուրող չեն, այլ թէ Հայեր իրենց կը դիմեն. բայց կառավարութիւնն իր հրամանը կրկնեց, և 1837-ին քարոյիչները Շուշիէ ալ հեռացուց, և Բաղդասար մետրապոլիտ տպարաննին գնաց նոր բացուած դպրանոցին համար. բայց բողոքականութեան խմորը սկսած էր, և Շուշիէ վատ Շամախի ալ կարևոր կեդրոն դարձած էր Սարգիս Համբարձումեանի գործունէութեամբ, որ թէպէտ կատարելապէս բողոքականութեան յարած, սակայն արտաքինը դէռ կը յարգէր, և ասով կրցաւ իր բացած դպրոցը պահել, և հարցուփորձերու մէջ ալ ինքպինքը արդարացնել և գործը շարունակել Կարբեցիին օրերը: Բողոքականութեան խնդիրը նմանօրինակ աղանդի մը գոյութիւն երևան բերաւ: Ծանօթ են հայ Թոնդրակեցիները, որոնց մէկ ճիւղը Խնցուցի ալ կոչուած է, Մարգաղի գաւառի Խնունք աւանէն առնելով անունը, որ է այժմեան Խնուսը (805): Թէպէտ Թոնդրակեցւոց աղանդը տկարացաւ, և վերջացաւ իսկ Գրիգոր Մագիստրոսի ուժգին հալածանքով (858), բայց անհնար էր որ բեկորներ մնացած չըլլային, և գոյութիւն ունենալնին տեսնուած է Խնուսի Չէվիրմէ գիւղը: Ասոնցմէ ալ Ռուսաստան գաղթողներ եղած են Տաճկահայոց մեծ գաղթին հետ, Կարապետ եպիսկոպոսի հովուած ժողովրդին մէջ, որ առաջին անգամ 1837-ին այդ մասին տեղեկութիւն հաղորդած է Սինոդին, թէ նոր աղադի հետևողներ կը գտնուին Շիրակի Արխիմելի գիւղը, և տիրացու Գէորգ մը անոնց գլխաւորն է որոնց կը վերագրէ այնպիսի կարծիքներ որ հին Թոնդրակեցւոց վարդապետութիւններ կը շոշափէն, նոր բողոքականութեամբ խառնուած: Սինոդը պարտաւորուեցաւ նկատի առնել հաղորդուած տեղեկութիւնները, և քաղաքական իշխանութեամբ ալ ջանաց առջևն առնել գայթակղութեան, և մինչև 1845 տակաւին անոնց յիշատակները կրկնուած կը գտնուին, ուսկից ետքը անհետացած է, կամ թէ բուն բողոքականութեան վերածուած է: Այս մասին կրնանք աւելցնել թէ մինչև մեր օրերը շարունակուած է այդ կարծիքը Չէվիրմէի բողոքականներուն մէջ, թէ իրենք հին Թոնդրակեցւոց յաջորդներն են և ոչ թէ նոր բողոքականութեան աշակերտներ, թէպէտ ըստ ամենայնի բողոքականութեան հետևողներ են:

2544. ՄԱՀՄՈՒՏ ԵՒ ՄԷՀՄԷՏԱԼԻ

Քաղաքական կացութիւնն ալ բաւական ցնցում պատճառած է այդ միջոցին, Եգիպտոսի իշխան Մէհմէտալի փաշա կը շարունակէր կառավարել, Եգիպտոսի հետ Պաղեստինը և Ասորիքը, Արաբիան և Կիլիկիան, բայց առժամեայ կերպարան մը ունէր գործը, և ինքն կը բաղձար հաստատուն և անկախ և ժառանգական թագաւորութեան մը վերածել իր իշխանութիւնը: Այդ նպատակով նախ սկսաւ պայմանեալ հարկը վլանալ, և յետոյ աղիկամի օրէնքներ և ձևեր հրամայել: Սուլտան Մահմուտ թերևս հաւանէր, եթէ նա Եգիպտոսի վրայ ամփոփէր իր պահանջը, և ետ դարձներ անկէ դուրս եղող երկիրները, բայց Մէհմէտալի հեռու էր այդ չափաւորութենէ և բոլոր իրեն յանձնուածին վրայ կուպէր տարածել իր ծրագիրը: Այս պատճառով պատերազմը հրատարակուեցաւ 1839 մայիս 11-ին և 27-ին զօարւոր տորմիդ մը մեկնեցաւ Կ. Պոլիսէ Եգիպտոսի

դէմ: Ցամաքին կողմէն ալ բանակ մը կը քալէր դէպ Ասորիք, բայց Այնթապի ճակատամարտին Եգիպտացիք յաղթանակեցին յունիս 19-ին: Իսկ Մահմուտ հիւանդ էր արդէն, օղափոխութեան համար Չամլըճա էր փոխադրուած, իրեն համար աղօթքներ ունենալու համար բոլոր բանտարկուած պարտապաններու ապատութիւն կը շնորհէր, բայց անողոք մահը կը հասնէր նոյնիսկ յունիս 19-ին պարտութեան օրը, և յաջորդ կը հռչակուէր Ապտիլ-Մէճիտ որդին, տակաւին 18 տարեկան, և 29-ին գահակալութեան կամ սուր կապելու հանդէսը կտարուէր (ՊԷՐ.498): Պատերազմական ձեռնարկը պահ մը կընդհատուէր Օսմանեանց կողմէ, սակայն ընդփոյթ կը հասնէր անգղիական տորմիդը Եգիպտացոց դէմ պատերազմելու և օսմանեան պետութեան իշխանութիւնը պաշտպանելու: Յուլիս 3-ին դաշնակցութիւն մը կազմած էին Անգղիա և Աւստրիա և Ռուսիա և Բրուսիա, որ Եգիպտոս Մէհմէտալիին մնայ ժառանգաբար իբր հարկատու իշխանութիւն, հարաւային Սուրիոյ եզերքը իրեն մնայ մինչև իր մահը մնացեալները իսկոյն յանձնուին օսմանեան պետութեան: Մէհմէտալի դարձեալ ընդդիմացաւ առաջարկին, վէնքի բախտն ալ փորձեց, բայց վերջապէս ստիպուեցաւ տեղի տալ, և նոյեմբեր 2-ին դաշնագիր կնքուեցաւ, Նաբիէր անգղիացի ծովակալին և Պօղոս Եուսուֆեան Եգիպտոսի արտաքին գործոց պաշտօնէին միջև, դաշնակիցներու յուլիս 3-ին կազմած ծրագրին համեմատ, որ վերջնական վաւերացում ստացաւ 1839 դեկտեմբեր 23-ին: Հետզհետէ Մէհմէտալի ամփոփեցաւ նոր սահմաններուն մէջ: Որդին Իպրահիմ փաշա, ալ որ Ասորիքի պինուորական հրամանատարն էր, ժամանակ մը աստեանդ դեգերելէ ետքը 1841 յունուարին Եգիպտոս դարձաւ, և օսմանեան կայսրութիւնը իրեն կառավարութեան ներքև առաւ Կիլիկեան և Ասորիքը և Արաբիան:

2545. ԹԱՆԶԻՄԱԹ ԵՒ ՀԱՅԵՐ

Ապտիլ-Մէճիտ երիտասարդ Կայսրը իր հօր սկզբունքներուն հաւատարիմ ժառանգ և նոր դաստիարակութեամբ վարգացած, փափաքեցաւ ալ աւելի առաջ մղել իր հոր սկսած յառաջադիմութեան և բարեկարգութեան և արդար կառավարութեան ձեռնարկը և իր ժողովրդին բարեկեցութեան, և հնարաւորութեան սահմանին մէջ հաւասարութեան և ապատութեան բարիքը ճաշակել տալ: Այդ նպատակով կազմուեցաւ խաթթի հիւմայիւնը իբր թանպիմաթի կամ բարեկարգութեան հիմը, որով բոլոր օսմանեան հպատակներու անխտիր, առանց ցեղի և կրօնքի տարբերութեան, կեանքի և պատիւի և ստացութեան հաւասար իրաւունք և ապահովութիւն կը շնորհուէր, հարկերու բաշխումը պիտի կատարուէր, դատարաններ և վարչական ժողովներ պիտի հաստատուէին իսլամ և ոչ իսլամ անդամներով, կամայական և բռնական որոշումներ պիտի դադարէին, աքսոր և պատիժ և մահ առանց օրէնքի և առանց դատաստանի պիտի չգործադրուէին, և ոչ իսլամներ հաւասար իրաւունքով պետական պաշտօններ պիտի կոչուէին (ՊԷՐ. 270), նոյնիսկ պինուորութեան համար նոյն հիմամբ կանոնաւոր ընտրութիւններ պիտի կատարուէին (ՊԷՐ.499): Այդ ամէն փոփոխութեանց արժանաւոր սկզբնաւորութիւն տալու համար, մեծ ժողով մը գումարուեցաւ Կիւհանէի դահլիճը, Վոսփորի բերանը, նոյն իսկ կայսերական ապարանքի մէջ, և Ապտիլ Մէճիտ կայսր նախագահութեամբ, ուր բոլոր պետական և դենպետական և պինուորական աւագանիէն վատ, ներկայ վանուեցան քրիստոնեայ պատրիարքներ և երոպական դեսպաններ իրենց հետևորդներով և հրատարակուեցաւ թանպիմաթի հրովարտակը կամ նուիրակական գիրը: Օսմանեան պատմութեան էջերուն մէջ նշանաւոր թուական մըն է 1839 նոյեմբեր 9 հինգշաբթի օրը (ՊԷՐ.499), և աւելի ալ նշանակալից եղած է Սուլտան Ապտիլ Մէճիտի անունը, որ պաշտօնական կերպով փոփոխեց օսմանեան կառավարութեան հիմնակէտը և պարզ կրօնական գրութեամբ և օրէնսդրութեամբ կազմուած կայսրութեան քաղաքական կերպարան և քաղաքական օրէնսդրութիւն տուաւ: Իբրև առաջին հետևանք սկսան մասնաւոր կանոնադրութիւններ կամ

օրէնքների կազմուիլ իւրաքանչիւր վարչական ճիւղի համար, ճանչցուիլ անհատական իրաւունքները, ճշդուիլ գործունէութեանց շրջանակներ, և յատկացուիլ իւրաքանչիւրին պարտաւորութիւնները: Հայոց ներքին ալ պագայս փոփոխութեանց ապդեցութիւնը: Իրաւ 1839 նոյեմբեր 9-էն ալ առաջ սկսած էր Հայոց մէջ անհատական, կամ ինչպէս աւելի սովորութիւն եղած է ըսել, ժողովրդական իրաւունքներու պարթնումը, և նոյն իսկ ճեմարանի հիմնարկութիւնը, Յակոբոսի պատրիարքութիւնը և Քսանկչորսերու յանձնախումբը հետևանք էին այդ ապդեցութեան: Մինչև նյն ատեն ապգային վարչութեան ղեկը ամիրաներու ձեռքն էր, իսկ ամիրան դրամական կարողութեան տէր դարձողն էր, որ ժառանգութեան իրաւունքէ կը բղխէր, և ոչ յատուկ ընտրութեամբ կորոշուէր, և կարողութենէ ինկողը ամիրայական շրջանակէ ալ կիյնար: Ունևորներ փոխադարձաբար վիրար կը պաշտպանէին, և թէպէտ անհատաբար խուլ հակառակութիւններ ալ կը վարէին, բայց խմբակցական շահը ուտնակոխ չէին ըներ: Իրենց ստացած իրաւունքին հիմը դրամն էր, պի ամէն ապգային ծախքերը իրենց վրայ էին, և ժողովրդականներ հապիւ թէ կը մասնակցէին եկեղեցւոյ պնակէն դուրս: Պատրիարքական հիւանդանոց, վարժարան, կամ բացառիկ պէտք մը և կամ նոր շինութիւն մը, ամիրաներուն քսակէն կը հոգացուէին, և փոխադարձաբար կամքերնին քալեցնելու իրաւունք կը շահէին: Երբոր ժողովրդական կամ ոչ ամիրայական տարրը ուպեց իրաւունքներու մասնակցիլ կամ տիրանալ, ամիրաներ ձեռուրնին ետ քաշելով ուպեցին յաղթանակել, և արդէն տեսանք թէ ինչպէս սկսաւ այդ պայքարը ճեմարանի մատակարարութեան շուրջը՝ անանկաց սնտուկն ու հիւանդանոցն ալ նոր յարակցելով:

2546. ՅԱԿՈԲՈՍ ԵՒ ՍՏԵՓԱՆՈՍ

Յակոբոս Սերոբեան, որ պատրիարքական աթոռին վրայ իբր առաջին ժողովրդական անձը հոչակուած է, միանգամայն պայքարին ներքև ընկձուող ալ եղաւ: Երբոր տեսաւ որ իր ընտրած Քսանկչորսերը ճեմարանին մատակարարութեան անբաւական կը գտնուին, միանգամայն և երկիցս և երիցս հրաւերներ ուղղեց ամիրաններուն որ պատրիարքարան հաւաքուին և ջանան կարգադրել պգործս ապգին, սակայն ոչ ոք հրաւերին անսաց, և միայն Պօղոս աշնան կը յիշուի, որ երթևեկէր ի պատրիարքարան, և նա ալ աւելի պարագայից տեղեկանալու, քան թէ գործին օժանդակելու համար: Կրկին դարձաւ Յակոբոս ժողովրդական հոգաբարձերուն, բայց անոնք ալ փոխանակ հրաւերին պատասխանելու հրաժարականնին յղեցին, և Յակոբոս անոք և անօգնական մնալով, պայրոյթի նոպայի մը մէջ, կամ թէ տարօրինակ գործով մը ժողովուրդը ցնցելու միտքով, կը գոչէ թէ անտէրունջ անօնականաց վայելէ հիւանդանոցն, և յանկարծ պատրիարքարանը թողլով կերթայ փակուիլ Եէտիգուլէի Ս. Փրկիչ հիւանդանոցին մէջ: Այսպէս կը գրէ պատմիչը (ՊԷՐ.271), բայց բերանացի աւանդութիւնը կը պատմէ թէ Յակոբոսի ականջը հասած ըկլլայ ամիրաներէն ոմանց ըսելը, թէ պատրիարքը յիմար և անիմաստ գործելու կը հետևի, և հիւանդանոց քաշուած ըլլայ՝ ըսելով թէ խենթերու տեղը Փրկիչն է: Այս տեղի կուեննայ 1840 սեպտեմբեր առաջին օրերը: Չորս օր պատրիարքը մէջտեղ չերևար, և եղելութիւնը կառավարութեան ալ ականջը հասնելով, բարձրագոյն դուռ կը հրաւիրուին ճանիկ Փափապեան, Յարութիւն Երկանեան և Մագսուտ Սարիմեան, որոնք միւս կողմին գլխաւորներն էին, և պատեհ կը գտնեն ըսելու թէ պատրիարքը խելագարութեան ախտիւ ըմբռնեալ ոչ գիտէ պոր առնէ (ՊԷՐ.271), ինչ որ կը հաւաստէ աւանդական պատմութիւնը: Արդէն կառավարութիւնն ալ գոհ չէր Յակոբոսի խնդիրներ յուղելէն, ուստի կորոշի պայն դադարեցնել, և Ստեփանոս Աղաւնի նօրէն պատրիարքութեան դարձնել, և կայսերական հաստատութիւնը կը ստացուի 1840 սեպտեմբեր 15-ին: Եւ որպէսպի Աղաւնիի մեղմիկ բնոյթը գործունեայ օգնականով մը պօրանայ, Պօղոս եպիսկոպոս Թաքթաբեան, որ Չմիւռնիոյ առաջնորդութիւնը կը վրարէր, Կ. Պոլիս կը բերուի իբրև պատրիարքական

խորհրդական, պարզ փոխանորդէ բարձրագոյն դիրքով և ընդարձակագոյն ձեռնահասութեամբ: Այս կերպով ամիրայական կուսակցութիւնը կը կարծէր անարգել կացութեան տիրանալ:

2547. ԱՄԻՐԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ

2540. Բայց միւս կողմն ալ ինքզինքը ընկճած չէր զգար, մանաւանդ որ Աղաւնի և Թաթթաքեան, թէ ուսումնական վարճացման հետևողներ և քաջալերողներ, և թէ ճեմարանի առաջին հիմնարկութեան հովանաւորողներ (2540), կը փափաքէին յայն ասակցութեան և վարճացած տեսնալ, ինչ որ յարմար կուգար ժողովրդական ձգտումներուն, սակայն ժողովրդական միջոցներ առանց ամիրաներու չէին բաւեր ճեմարանը ապրեցնել: Վեց ամիսի չափ ևս գործը գէշաղէկ քալեցնելէ ետքը, 1841 ապրիլ 6-ին նոր կիրակի օրը ժողովրդական բազմութիւնը ճեմարան հրաւիրուեցաւ, ուր Մանուէլեան տնօրէն յուլիչ խօսքերով ճեմարանին անձուկ և վտանգաւոր վիճակը նկարագրեց և ժողովուրդը օգնութեան հրաւիրեց, որ անկախ ի կարգադրութենէ ամիրայից ճեմարանը պահելու և վարճացնելու հանդիսաւոր խոստում տուաւ: Ասոր վրայ Եղիապար Թօհաֆճի անուն մէկ մը 16 հատ ճեմարանի աշակերտ առջևը ձգելով, ամսուն 18-ին ուրբաթ օր աղերդագիր մատոյց կայսեր, որպէսզի Քսանուչորսերու յանձնաժողովը կայսերական հաստատութեամբ արտօնուի ազգային ելևմուտին հսկել: Գործը կառավարութեան յանձնուեցաւ, Յովհաննէս Զմիւռնացի, Երուսաղէմի փոխանորդ, պատրիարքին կողմանէ բացատրութեան գնաց մայիս 27-ին, և յանուն պատրիարքին, հաւանեցաւ ժողովրդական խնդրանքին, և յուլիս 1-ին եպարքոսական հրամանագիր տրուեցաւ որ Քսանուչորսները լինին տեսուչ ազգային երևմտից և արևելից պատրիարքարանին: Հրամանագիրը ստանալով հանդերձ Քսանուչորսերը յաջողութիւն չգտան, վասնզի ամիրաներ չէին օժանդակեր, մանաւանդ թէ ծիծաղէին հանապազօր ի վերայ նոցա (ՊԷՐ.273), մինչև որ անոնք ալ յուսահատած ետ քաշուեցան, և իրենց տրուած հրամանագիրն ալ յետս կոչուեցաւ օգոստոս 14-ին: Կրկին յուլուեցան ժողովրդականները, իբր զի իրենց ստացած իրաւունքը կը կորուսէր: Շարժումին գլուխ կեցաւ Իսքէնտէր գինեպան, յանդուգն և լեզուանի ամբոխավար մը, որ մեծաւ բազմութեամբ աղաղակաւ և պաղատանօք պալատ դիմեց, ինչ որ ծանր եկաւ կայսեր և քննութիւն հրամայեց: Ասոր վրայ Քսանուչորսերը կառավարութենէն կոչուեցան, որպէսզի յանդուգն և անտեղի կերպով իրենց պաշտպանութեան ելլողները ցուցնեն, և երբեք անոնք սկսան ինքզինքնին չքմեղել թէ չեն ճանչնար և չեն գիտեր, ամէնքը մէկէն բանտարկուեցան իբրև գաղտնի դրդիչներ: Յուլումը կրկնապատկուեցաւ, աւելի մեծ բազմութիւն մը իբր երկու կամ երեք հազար անձերու, միշտ նոյն ամբոխավար Իսքէնտէրի առաջնորդութեամբ, բարձրագոյն դուռ դիմեց բանտարկեալները ուղելու, և պատրիարք ու ամիրաներ չուզելու աղաղակներով: Նեղ ժամուն մէջ Ռիֆաթ փաշա, արտաքին գործոց և կրօնից նախարար, ստիպուեցաւ բանտարկեալները արձակել տալ, բայց միւս կողմէն իր քննութիւնները շարունակեց, եկեղեցականներ և ամիրաներ և արհեստապետներ հարցուփորձելով, որ մինչև 20օր տևեց, և իբրև խոովութեանց գլխաւորներ աքսորուեցան, Յովհաննէս Սեթեան և Պողոս վարդապետներ, Յակոբ Մանուէլեան տնօրէն, Իսքէնտէր գինեպատ ամբոխավար, Գէորգ Տիվիթճեան, Արթաքի Յովհաննէսեան, Անդրէաս Գույումճու, Պետրոս Պամաճը և ուրիշներ: Աքսորի թուական նշանակուած է սեպտեմբեր 16: Բայց հարկ եղաւ պատրիարքն ալ հեռացնեն, իբր զի անոր անունին շուրջը ամփոփուած էր խնդիրը: Արդէն Աղաւնին օգոստոս 3-ին հրաժարագիր մատուցած էր, բայց պատասխանը կուշանար, և միայն աքսորներուն ի յաջորդ աւուրն (ՊԷՐ.247), սեպտեմբեր 19-ին հրաժարականին ընդունիլը իրեն հաղորդուեցաւ, և նա սիրով և յօժարութեամբ դարձաւ իր սիրեցեալ Արմաշն ու Նիկոմիդիան, որոնց նուիրեց իր կենաց մնացորդը մինչև 1853 ապրիլ, վանքին տիրապէս հօր և վիճակին

բարեխնամ հովիւի համբաւ թողլով իր երևէն: Ծնած 1777- ին 76 տարեկան վախճանեցաւ Նիկոմիդիա, և թողուեցաւ եկեղեցւոյն բակը: Անոնք որ իր պատրիարքութիւնը թոյլ և տկար կը գտնան, պէտք չէ մոռնան որ խորհեմ և հանդարտ, փափկանկատ և ազնիւ անձնաւորութիւն մըն էր, սիրելի և համակրելի ամենուն, ուսմամբ վարգացած և քարոզութեամբ յաջողակ, և բազմարդիւն եղած վանահայրական և առաջնորդական ասպարէզու մէջ: Արդէն պատրիարքութեան մէջ ալ ոչ մի եպեղեղի գործ չունեցաւ, և ոչ մէկու ստրկաբար ծառայեց, և իր հանդարտութիւնը օգտակար եղաւ հանրութեան:

2548. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՊԱՏՐԻԱՐՔ

Աստուածատուր եպիսկոպոս Կոստանդնուպոլսեցի 73 տարեկան ծերունի, Ջաքարիա Կաղպուանցիի յետին և յետնեալ աշակերտ, պատրիարք ընտրուեցաւ 1841 սեպտեմբեր 19-ին, ուրիշ արժանիք չունենալով բայց եթէ ընտրող ամիրաներու ձեռք հլու գործիք ըլլալու առաւելութիւնը: Ճեմարանը ինքնիրեն քայքայած, անհամակիր ամիրաներու ձեռք ինկած, ժողովրդական շարժումը աքսորներուն հետևանքով դպուած, դժուար էր որ կարենար շարունակել, և Աստվածատուրի պատրիարք նստելէն հապիւ երկու շաբաթ ետքը, բոլորովին փակուեցաւ հոկտեմբեր 3-ին, աշակերտները ցրուեցան, ուսուչիցները արձակուեցան, և Ճեմարանի հակառակորդ կուսակցութիւնը իր յաղթանակը տարած եղաւ, Ճեմարանը ցուցնելով իբրև պատճառ խռովութեան ազգիս (ՊԷՐ.274): Բայց ամիրայական և ժողովրդական կուսակցութեանց խնդիրը առանց Ճեմարանի ալ գոյութեան հիմ ստացած էր, իբրև ազգային մատակարարութեան խնդիրը, որուն հանրութիւնը միջամուխ և հետամուտ ըլլալու իրաւունքը կը վգար, և ամիրայական բռնապետութենէ ազատագրելու ձգտումն ունէր, որչափ ալ նախընթաց սովորութիւնը և վերջին տարիներու փորձառութիւնը յայտնի ըրած էին, թէ ամիրայութիւնն էր որ հասոյթները կը հոգար, ժողովրդականութիւնը ինքն իրեն մնացած գործին հանդէպ անձարացած կը մնար: Բայց բուն ձգտումներ շատ նուրբ դիտողութեանց չեն մտներ, և այս անգամ ալ հապիւ ամիս մը կամ երկու անցած և վերջին դէպքերը դեռ չմոռացուած, դարձեալ ժողովրդական շարժումը գլուխ տուաւ, և նոյեմբեր 9-ին (ՊԷՐ. 509) նոր դիմում մը կապմուտեցաւ բարձրագոյն դուռ, թէ տէրութեան հնազանդ են, բայց ամիրաներու գերի չեն ուզեր մնալ, աւելի կը սիրեն մեռնիլ քան անոնց ծառայել: Ժխորը հետզհետէ սաստկացաւ, ամիրաներն ալ վտանգի սպառնալիք տեսան, Յովհաննէս Սուրենեան և Արպուման Արպումանեան միջնորդ ներկայացան, և դեկտեմբեր 4-ին յայտարարեցին թէ իրենք կը քաշուին և ամէն գործ ժողովուրդին կը թողուն, և ըստ այսմ դեկտեմբեր 12-ին Քսանեօթը անձեր ընտրուեցան արհեստաւորներէն, և Աստուածատուր պատրիարք և ամիրաներ գրաւոր յայտարարութիւն տուին անոնց գործին չխառնելի, և դուռն ալ հաստատեց նոր դրութիւնը: Բայց արհեստաւորաց այդ նոր մարմինն ալ զինքն անկար վգաց ազգային բոլոր պէտքերուն հանդէպ, պատրիարքարան, հիւանդանոց, վարժարաններ, աղքատաց սնտուկ և առօրեայ ծախքեր: Գանգատներ սկսան լսուիլ որ եթէ չէիք կարող բառնալ զծանրութիւն ազգիս, ընդէ՞ր առիք յամիրայից: Արհեստաւորաց յանձնախումբը յուսահատ ուզեց բեռը ռայէն նետել, և առանձին կերպով ճանիկ Փափապեանի դիմեց և երբ նա յանձն չառաւ ինքնիրեն գործել, 1842 սեպտեմբեր 25-ին կառավարութեան յանձնեցին իրենց հրաժարականը և ետ դարձուցին ամիրայից յայտարարութիւնը, և ամէն հոգ նորէն անոնց թողուցին, և նոյեմբեր 13-ին վերահաստատուեցաւ ամիրայական վարչութիւնն ու մատակարարութիւնը (ՊԷՐ. 513), և պահ մը դադրեցաւ հակամիրայական պայքարը, որ սակայն շուտով պիտի վերանորոգուէր:

2549. ՍԵՂԱՆԱԻՈՐԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

Պետական նոր կարգադրութիւն մը նշանաւոր դիրք պիտի ստեղծէր հայութեան, եթէ երբէք հնար եղած ըլլար վայն հաստատուն և համերաշխ ձևի վերածել: Օսմանեան կառավարութիւնը ելեմտից նախարարութիւն կամ պետական գանձի կեդրոնական վարչութիւն չունէր, իւրաքանչիւր նախարար կամ կուսակալ կամ պալատական իրեն սեղանաւորն ունէր, որ իր գանձն ու գանձապահն էր, ինչ որ անոր պէտք էր նա կը վճարէր, և պետական ելեմտութիւնը մասնաւոր և անհատական մատակարարութեան ձև ունէր: Այս մասնաւորները ընդհանրութեան վերածելու նպատակով 1842 մարտ 26-ին սեղանաւորներու համախմբութիւն մը հաստատուեցաւ, բոլոր պետական գանձումները և վճարումները ընկերովի կատարելու համար: Այդ պաշտօնին ընտրուեցան 12 սեղանաւորներ, ամէնն ալ հայ ամիրաներ, երկու խումբի բաժնուած, կէսը եւրոպական և կէսը ասիական նահանգներու հասոյթները գանձելու և կեդրոնական սնտուկին յանձնելու պաշտօնով: Ասիակողման խումբին մէջ էին, Յարութիւն Երկանեան, Պետրոս Բիրքճիխանեան, Միսաք Միսաքեան, Մկրտիչ Ճէվայիրլեան, Պաղտասար Չարապեան և Պօղոս Աշնանեան. իսկ եւրոպակողմն խումբը կը կազմէին, Ճանիկ Փափապեան, Մաքսուտ Սարիմեան, Յարութիւն Կէկէլեան, Աբրահամ Ալլահվէրտեան, Յովհաննէս Թնկըրեան և Յովսէփ Տավութեան: Տասներկուքներուն մէջէն Երկանեան ընդհանուր նախագահ էր, իսկ Փափապեան իր ճիւղին փոխ նախագահը, և եւրոպակողման վերջին երեքները հոմմէականներէն էին: Եթէ գործը համերաշխ գործունէութեան հանդիպած ըլլար, և եթէ վեղծումի կասկածներ ծագած չըլլային, թերևս օսմանեան կայսերութեան ելեմտական կացութիւնը Հայերու ձեռք մնար, և ընդհանուր հայութեան զգալի և տևական օգուտ մը պատրաստած ըլլար: Սակայն այս առաջինը չէր, և վերջինն ալ պիտի չըլլար, որ Հայոց բախտաւորութեան պարագաները չքանան, իրենց իսկ անվգուշութեամբ: Այստեղ կընդհատենք Կ. Պոլսոյ պատկանեալ իրողութեանց պատմութիւնը, և պահ մը կը դառնանք Երուսաղէմի վերջին անցքերը քաղել:

2550. ԾՆՈՒՆԴ ԵՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Երուսաղէմի անհատնում խնդիրներու առանցքը կը դառնայ սրբավայրերու վրայ, և առաւելապէս Ս. Համբարձման լերան և Ս. Ծննդեան այրին շուրջը: Երբ Պաղեստին և Երուսաղէմ Եգիպտական իշխանութեան յանձնուած էին, կարծես թէ գործադրութիւններ դիւրացած էին, և Հայեր քանակին պարագայէն օգտուելով Համբարձման լերան վրայ երկրաշարժէ փլած իրենց եկեղեցին վերաշինել, որուն հրովարտակը ըստացուած էր, բայց գործադրութեան համար արգելքներ կը յարուցանէին միւս ազգերու կողմէ: Արքունի հրովարտակը Եգիպտոսի և փոխարքային յղուեցաւ և հրամանագիր ստացուեցաւ որ Հայոց շինութեան արգելք չգրուի, և իրօք ալ շինութեան ձեռնարկուեցաւ 1836-ին Պօղոսի հոգածութեամբ, և Գաղատացի Իսահակ Տէր Գրիգորեան վարդապետի վերակացութեամբ, և ամենայն ինչ ըստ օրինի լրացաւ, և Եւդոկացի Կարապետ եպիսկոպոս, որ փոխանորդութիւն կը վարէր, առաջին պատարագը մատոյց Ոտնատեղւոյ գմբէթին ներքև յուլիս 17-ին: Երկրորդ հրամանագիր մը հասնելուն աւելի ևս ընդարձակեցին և լրացուցին շինութիւնները, բայց Լատիններու և Յոյներու հակառակութիւնները չէին դադրէր: Հարկ եղաւ Եգիպտոս պատուիրակ յղել, և նախարար Պօղոս Եուսուֆեանի միջնորդութիւնը խնդրել: Միևնոյն ժամանակ Բեթղէհէմի խնդիրն ալ կը վայրանար, Հայեր փակեր էին Լատիններուն դուռը, որ անոնց եկեղեցին այրին հետ հաղորդակցութեան կը գնէր, Հայոց յատուկ եկեղեցւոյ մէջէն անցնելով: Գաղղիոյ դեսպանը ամենայն ոյժով բացումը պահանջեց, և որովհետև թէ օսմանեան և թէ Եգիպտական կառավարութիւնները Գաղղիոյ բարեկամութիւնը կորսընցնել չէին հաճեր, փակուած դուռը բանալու հրամանը Կ. Պօլիսէ տրուեցաւ, և գործադրութիւնը Եգիպտոսի հրամայուեցաւ, և 1836 հոկտեմբեր 20-ին բացումը

կատարուեցաւ, և դրան բանալին Լատիններուն յանձնուեցաւ, և այն օրէն ի վեր Լատինք համարձակ կերթեկեն Հայոց եկեղեցոյն մէջէն, նոյնիսկ պաշտամունքը խանգարելու տմարդութեամբ, ինչ որ առիթ ընծայած է պատահական վէճերու և կռիւներու: Լատիններ բուն ծննդեան սեղանին մասնակցութիւն չունին, և իրենց սեփականութիւնն է քովընտի եղող Մսուրի սեղանը, գալու համար ներքին անցք ալ ունին, սակայն պատուոյ խնդիր մը ըրած են վերէն անցնելու իրաւունքը, ինչպէս ալ յաջողեցան ևրոպական ալդեցութեան վօրութեամբ, և ոչինչ և ապարդիւն եղեն մեծագումար ծախք և բազմադիմի աշխատութիւնք և տառապանք Հայոց: Լատինաց այդ յաղթութիւնը վիրենք խրախուսեց Համբարձման լերան խնդիրն ալ իրենց հաճոյից համաձայն կարգադրել, Հայոց սեփական շինութիւնները քանդել, Ունատեղոյ մատուռէն Հայերը վրկել, մատուռին շուրջը աւերակ թողուլ, և շրջափակին դրան բանալին Տաճկաց յանձնել: Մինչև իսկ բռնական գործադրութեան պիտի ձեռնարկէին, եթէ դատաւորը շինուածը քանդելու առաջարկին չընդդիմանալ (ԱՍՏ.Բ463-465): Հարկ եղաւ նորէն Կ. Պոլիս դիմել, և խափանուեցան Հայոց հակառակ որոշումները, բայց Լատինք Եգիպտոս ալ դիմեցին, և անկէ պաշտօնական քննութեան հրաման ստացան: Քննիչը յատկապէս Դամասկոս եկաւ ու Լատիններ առհասարակ ամէն սրբավայրերու համար սեփականութեան պահանջ յարուցին, որուն դիմաց Հայեր ցուցուցին, Մէհմէտի, Էօմէրի, Ալիի և Սալահէտտի հրամանագիրները, որոնցմով ամէն սրբավայրերը Հայոց և Յունաց կը վերագրուին, և Լատիններու անունն իսկ չի յիշուիր: Առջև բերին նաև քսան օսմանեան հրովարտակներ, և բազմաթիւ դատաւորական վճիռներ, իւրաքանչիւր սրբավայրին մէջ Հայոց իրաւունքները հաստատող, և այս կերպով անգամ մըն ալ վտանգն անցուցին: Բայց Լատիններ չհանդարտեցան, Յոյներն ալ միացան, Բարձրագոյն Դուռն ալ չկրցաւ օտար միջամտութեան դիմադրել, և Հայերու ձեռք ձգած վերջին երեք հրովարտակներ, 1833-ին Ս. Յարութեան և 1835-ին Ս. Ծննդեան նորոգութեանց և 1836-ին Ս. Համբարձման շինութեան համար, իբրև մասնակի դիմումով և ոչ համաձայնութեամբ տրուած հրովարտակներ, ջնջուեցան և չեղած սեպուեցան, և միանգամայն 1837 փետրուար 21-ին նոր հրովարտակ մըն ալ տրուեցաւ Յունաց, ընդհանուր նորոգութեանց իրաւունքը վերահաստատող (ԱՍՏ. Բ.475), մեծ հրդեհէն ետքը ձեռք ձգուած հրամանին համաձայն (2408): Յոյներ այս հրամանագիրով վօրացած սկսան Համբարձման շինութեանց քանդումը պահանջել դատաւորէն, որ էր Համտուլլահ էֆէնտի, և երբ նա ընդդիմացաւ անոր դէմ ալ ամբաստանութիւններ գրեցին Եգիպտոս և նոր քննութեան համար յատուկ պաշտօնեայ եկաւ Եգիպտոսէ 1838-ին, որ Հնֆլ Ռէշիտ էֆէնտի, և ատեան կազմուեցաւ Երուսաղէմի դատարանը, ուր Հայոց կողմէն ներկայացան փոխանորդ Կարապետ եպիսկոպոս և թարգման Իսահակ եպիսկոպոս և թարգման Իսահակ վարդապետ: Վիճաբանութիւնները և քննութիւնները կատարուեցան հրովարտակներու և թուականներու և գործողութիւններու մանրազնին բաղդատութեամբ, նոյնիսկ տեղերուն վրայ ալ երթալով, և ամենայն ինչ գիրի առնուելով (ԱՍՏ. Բ. 477-499), յղուեցան Եգիպտոս և Կ. Պոլիս: Նոր քննութեան պէտքը վգացուեցաւ և 1838 օգոստոսին քննիչ մըն ալ Կ. Պոլիսէ յղուեցաւ Շաթալտէ Արիֆ էֆէնտի, որ վանապան մասերը, այցելելէ ետքը սեպտեմբեր 26-ին իր տեղեկագիր պատրաստեց, որով Լատիններու և Յոյներու հաճելի ըլլալուն և խնդիրները փակելու համար Համբարձում լերան նոր շինութեանց քանդուիլը կառաջարկէր: Բարձրագոյն Դուռն ալ համակերպելով քանդելու հրամանը տուաւ, և 1839 սեպտեմբեր 11 և 12 երկուշաբթի և երեքշաբթի օրերը աշխարհախումբ բազմութեամբ հրամանը գործադրուեցաւ, և շրջափակին մէջը կատարեալ վերածուեցաւ, և մոլեգնեալ քանդիչներ անցանէին թըմբկօք և պարուք իբրև յաղթանակաւ առաջի վանաց Ս. Յակոբայ ի նախատինս Հայոց, որոնք ցաւագին շեշտերով եղելութիւնները հաղորդեցին

Էջմիածնի և Կ. Պոլիս և Եգիպտոս: Այս տարադէպ և բռնական գործողութենէն երկու ամիս ետքն էր որ Թանդիմաթը կը հրատարակուէր (2438):

2551. ԶԱՆԻ ՄԸ ԵՂԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Երուսաղէմի անցքերէն յիշատակութեան արժանի է նաև Ասորուոց խնդիրը, որոնց անունը թիւրիմացութեամբ կաթողիկներու ազգապետական կազմութեան հրովարտակին սպրդած էր, և Երուսաղէմի լատին հոգևոր իշխանութիւնը առիթ էր առած Ասորաց եկեղեցին գրաւելու: Ասորիներ Հայոց պատրիարքարանին դիմեցին, և Տիարպէքիր նստող կաթողիկոսնին Կ. Պոլսոյ պատրիարքին գրեց, և գիրով ու անձամբ դիմումներ կատարուեցան, և Ասորիներուն Հայոց և ոչ Հռոմէականաց դաւանակից ըլլալնին հաստատուեցաւ: Ասորիներու բացակայութեան Հայեր գրաւեցին Ասորուոց Ս. Մարկոս եկեղեցին և վանքը, շինեցին շտկեցին և շէնցուցին, մինչև որ նոր եպիսկոպոս մը վրկուեցաւ Տիարպէքիրէն Ապտիլնուր անուն, որ 1841-ին Երուսաղէմ հասաւ, և Հայեր անհակառակ և առանց պահանջի յանձնեցին անոր ամէն բան, բայց ոչ միայն երախտագիտութեան նշան մը չտեսան, այլ և ուր որ հայ գիր կամ հայ յիշատակ կար, ջնջուեցաւ և վերցուեցաւ Ապտիլնուրի ձեռքով (ՍԱԻ. 1233): Երուսաղէմի համար նշանակութիւն ունեցող պարագայ մը եղաւ բողոքական դաւանութեան անգղիական կամ եպիսկոպոսական յարանուանութենէ եպիսկոպոսի մը Երուսաղէմ հաստատուիլը 1840-ին: Բրուսիոյ լուտերական յարանուանութիւնն ալ փափաքեցաւ օգտուիլ պարագայէ, և ծախուց մասնակցելով երկու յարանուանութեանց հասարակ հոգևորական իշխանութիւն ունենալ: Առաջին անգամ դժուարութեանց հանդիպելուն՝ Սօղօմոն Ալեքսանտր և անոր յաջորդ Սամուէլ Գօրա անգղիական եպիսկոպոսներ սեփական գետին ստանալու համար, ինչ որ ներեալ չէր օտարապետուն, հապիւ 1847-ին հայու մը անունով գնեցին Դաւիթի աշտարակին հանդիպակաց գետինը, և անոր անունով արտօնուեցան եկեղեցի և եպիսկոպոսարան հիմնել, և այնպէս շարունակեցին մինչև վերջին ժամանակներ, երբ դաշնակցութիւնը խլուեցաւ, և Բրուսիոյ լուտերականք իրենց առանձին եկեղեցի և երիցատուն հիմնեցին Ս. Յարութեան տաճարին մօտերը: Յիշենք և 1839-ի թանկիմաթին հետևանօք (2545) Երուսաղէմի վրայ դարձուած պետական ակնարկը: Կայսերական մտադրութիւնը երոպական կարգաց մերձեցման և քրիստոնեայ տարրին հովանաւորութեան ոյժ տալ էր, և այս աւելի պէտք էր շեշտուէր Երուսաղէմի վրայ: Ուստի 1841 յունիսին Կ. Պոլսոյ պատրիարքներ բարձրագոյն դուռ հրաւիրուեցան, և հոն իրենց հաղորդուեցաւ, որպէսպի իրենք Երուսաղէմ հաղորդեն, թէ Երուսաղէմ Դամասկոսի կուսակալութենէն վատուած և անկախ կառավարչութեան վերածուած է, թէ առանց ազգի և կրօնքի տարբերութեան Երուսաղէմի մէջ ամէն քրիստոնեաներ ծիսակատարութեանց և գործունէութեանց կատարեալ ազատութիւն պիտի վայելեն, հարկեր և տուրքեր ընդհանուր օրէնքներու տրամադրածէն աւելի պիտի չպահանջուին, եկեղեցիներ և սրբավայրեր և վանքեր ապահարկ պիտի ըլլան, նորոգութիւններ և շինութիւններ ազատաբար պիտի կատարուին, տեղական իշխանութիւններ բռնի վանքեր պիտի չմտնեն, վաքերու կողմէ արտաքին ոյժ խնդրուած ատեն պիտի չզլացուին, և կարևոր խնդիրներ մայրաքաղաքի որոշմանց պիտի ենթարկուին: Համաձայն այդ յանձնարարութեանց պարտուպատշաճը հաղորդուեցաւ 1841 յուլիս 15-ին Ստեփանոս պատրիարքի կողմէն ծայրագոյն կառավարիչ Պօղոսի, որ ամէն իշխանութիւն կը վարէր Գաբրիէլի մահուանէ ետքը (ՍԱԻ. 1235):

2552. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԴՐԱՄԸ

Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան վրայ խօսած ատեննիս յիշեցինք Կիրակոս եպիսկոպոսի ձեռքով Երուսաղէմի հաշիւներուն Կ. Պոլիս յղուած ըլլալը (2539): Հաշիւները քննելու գործը յանձնուեցաւ Յարութիւն Երկանեան և Միքայէլ Փիշմիշեան և Ճանիկ Փափապեան

ամիրաներու, որոնք բարուք դիտողութեամբ ամէն կէտէր քննելով, ուրախ եղեն յոյժ և գովեցին պիտոհական կառավարութիւն ծայրագոյն կառավարիչ Պօղոսի: Հաշիւը 1835-ին մէջ բաւական պատրաստ գումար ցոյց կու տար, և մինչև 1837 երկու տարիներու մէջ հարկաւ պատրաստը շատցած կըլլար, ուստի հաշուեքննիչները մտածեցին ապահով վիճակ մը տալ այդ գումարին, որ մի գուցէ յանպէտս ծախսուի, կամ թէ վտանգի մը ենթարկուի: Կիրակոս եպիսկոպոսի ցուցած կերպերը, իբրև պահեստի գումար գանձատուն յանձնելու, կամ թէ նոր շինութիւններ աւելցնելու, ամիրաները չգոհացուցին, և ապահովագոյն սեպեցին գումարը Կ. Պոլիս փոխադրել, որպէսպի Երուսաղէմէ ընտրուած անձի մը վերակացութեամբ և իրենց երեքին գիտութեամբ փակել և կնքեալ արկեղբ պետեղեսցին ի ներքին քարուկիր գանձատան մայր եկեղեցոյն, և կամ թէ շահագործի քարուկիր կալուած ստանալով Կ. Պոլիս կամ Ջմիւռնիա, և կամ թէ գնեսցեն ադամանդեայ ակունք, որք միշտ յաճուամն գնոյ բնաւորեալ են: Այս նպատակով 1837 յունիս 20-ին խորհրդաբար գիր ուղղեցին Պօղոս կառավարիչն երախտագէտ մտօք շնորհակալու լինելով պիտոհեմապարդ տնտեսութենէ նորին: Առաջարկը լաւ ընդունելութիւն չգտաւ Պօղոսի աչքին, որուն հաճոյական չէր իր արդիւնքը Կ. Պոլսոյ քմայքին. իսկ մայրաքաղաքի մեծամեծներ այլևս չպնդեցին դրամը ձեռք անցնելու գաղափարին վրայ, և գոհացան կանխաւ յղացուած իրականացնել, այն է Երուսաղէմի դրամով բարձրագոյն վարժարան մը ունենալ մայրաքաղաքին մէջ: Այդ գործը որոշուած և 1830 սեպտեմբեր 18-ին ձեմարանի հիմնարկէքն ալ եղած էր, ուստի բոլոր ջանքերնին դարձուցին պայն լրացնելու, և 1838 դեկտեմբեր 9-ին, որ է ըսել դրամագլուխին տիրանալու համար գրուած նամակէն իբր տարի ու կէս ետքը ձեմարանի բացումը կատարուեցաւ (2540), որուն ոչ միայն գետինը և շինութեան ծախքը Երուսաղէմէն առնուեցաւ, այլ և առօրեայ ծախուց համար նախապէս տարին 60,000 և հետզհետէ աւելնալով 120000 դահեկան Երուսաղէմէ կը պահանջուէր, մինչև որ ժամանակին շփոթները առիթ ընծայեցին Երուսաղէմի այդ բեռը աթոռին վրայէն թօթափել:

2553. ԳԱԲՐԻԷԼԻ ՄԱՀԸ

Այդ գործողութեանց միջոցին տակաւին կենդանի էր Գաբրիէլ Նիկոմիդիացի պատրիարքը, այլ իբրև թէ չկար, պի ոչ միայն որոշում և գործունէութիւն Պօղոսի ձեռքն էր, այլ և Գաբրիէլ մարմնով ալ տկարացած և տարիքով ալ յառաջացած կապրէր լուութեամբ ի սենեկի իւրում, հեռի որևէ գործառութենէ: Այդ վիճակի մէջ գտաւ անողոք մահը 1840 ապրիլ 25-ին, Նոր Կիրակիի հիգշաբթի օրը, 76 տարեկան հասակին մէջ: Թաղումը կատարուեցաւ հանդիսապէս պատրիարքական այելչութեամբ, և Պօղոսի նախագահութեամբ, և մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկիչ եկեղեցոյ բակը պատրիարքներու կարգին: Գաբրիէլ ընտրուած էր 1819 յուլիս 12-ին (2423), որով 21 տարի պատրիարքական աթոռին վրայ մնացած կըլլայ, այլ ոչ պատրիարքութիւն վարած, պի 1823 օգոստոս 11ին գործունէութիւնը իրմէ առնուելով խորհրդականներուն փոխանցուեցաւ (2427), և 1824 օգոստոս 19ին Երուսաղէմէ ալ հեռացուեցաւ (2447), և 10 տարի դուրսերը մնալէն ետքը 1834 օգոստոս 19ին վերադարձաւ (2496), սակայն աթոռին վարչութիւնը Պօղոսի ձեռքը մնաց, և մինչև իր մահը պատուակալ պատրիարքութեան դերը պահեց: Գաբրիէլէ երկու տարի առաջ 1838 յունիս 10ին վախճանած էր Երևանցի Մկրտիչ Մեղրիկ լուսարարապետ եպիսկոպոսը 84 տարեկան, և անոր յաջորդած էր Նիկոմիդացի Գրիգորիս վարդապետ, որ իր Յոպպէ տեսչութեան ատեն հնտախտի դէմ պգուշարանն էր շինած, և լուսարարապետութեան անցնելէն ետքը Յոպպէի տեսչութեան և պգուշարանի հոգածութեան կոչուած էր Ամդեցի Մեսրոպ վարդապետ (ՍԱԻ.1222): Գաբրիէլ պատրիարքի յաջորդին ընտրութիւնը տարի մը ուշացաւ, պի Պօղոս կենդանի էր և գործի գլուխ էր, և պատրիարքի անձը թարմատար անուն էր դարձած բաւական տարիներէ իվեր, և

միաբանութիւնն ալ յօժար չէր նոր ընտրութեամբ Պօղոսի դիրքը խախտել: Միւս կողմէն պատրիարքութեան առաջնակարգ ընտրելի նկատուած էր Կիրակոս Մնացականեան եպիսկոպոսը որ սակայն Երուսաղէմացի էր, և միաբանական հնաւանդ կանոն մը Երուսաղէմացիները միաբանակցութենէ, ևս առաւել միաբանութեան գլխաւորութենէն հեռու կը պահէր: Կիրակոսէ ետքը աչքառու անձը Ջաքարիա եպիսկոպոսն էր, որ Պօղոսի փոխանորդն ալ էր, բայց Կիրակոսի աշակերտ կը համարուէր, և արդիւնքով ալ անկէ կրտսեր էր, այնպէս որ յարմար չէր տեսնուեր վայն պատրիարքութեան բարձրացնել: Միաբանութեան մտահոգութիւնն պատճառող առիթ եղաւ նաև տարածուած լուրը թէ Յովհաննէս Ջմիւռնացի վարդապետը, որ Կ. Պոլսոյ փոխանորդ էր, կը ջանայ մեծամեծները շահելով պատրիարք ընտրուիլ, մինչ շատոնց էր որ Կ. Պոլսոյ փոխանորդութեան հաշիւները չէր յղած հակառակ իրեն ուղղուած հրամաններուն: Այդ պատճառով միաբանութիւնը 1840 օգոստոս 23 թուականով հանրագրութիւն մը կուղղէ Աղաւնի պատրիարքին թէ Յովհաննէսի պատրիարքութիւնը չընդունիր, մանաւանդ թէ իբրև հաւատարիմ միաբան ալ չի ճանչնար: Այդ գրութեան ստորագրած էին Պօղոս և չորս եպիսկոպոսներ, Կարապետ, Կիրակոս, Ջաքարիա և Մարկոս և 40 վարդապետներ: Չենք գիտեր թէ մինչև որ աստիճան հաւանականութիւն ունէր Յովհաննէսի պատրիարքանալը, քանի որ Երուսաղէմէ ընտրելեաց ցանկ յղուած չէր, և Յովհաննէսի խնդիր ալ չեղաւ, և ընտրութիւնը կերկարաձգուէր: Բայց վերջապէս աթոռն ալ երկար տարիներ թափուր թողուլ պատշաճ չէր, Պօղոսի պատրիարք ընտրուելու տարիքը անցած էր, զի 78 տարեկան եղած էր արդէն. և ինքն ալ ծերացած և յօգնած և տկարացած, բեռը թեթևցնելու և հանգիստ առնելու պէտքը կը զգար: Ուստի ինքն Պօղոս նախաձեռնարկ եղաւ եւ միաբանութիւնը ընտրողական ժողովի հրաւիրեց 1841 մարտ և երեք ընտրելիներ նշանակուեցան Կ. Պոլսոյ պատրիարքութեան ներկայելու, որոնք էին Կիրակոս Մնացական Երուսաղէմացի և Ջաքարիա Տէր Պետրոսեան Կոփեցի, և Յակոբոս Սերոբեան Կ. Պոլսեցի (ԱՍՏ. Բ. 512), որ նախընթաց 840 սեպտեմբերին Կ. Պոլսոյ պատրիարքութենէն հրաժարած էր (2546): Ընտրողական գիրը Կ. Պոլիս յղուեցաւ Գաղատացի Իսահակ վարդապետի ձեռքով, և Ստեփանոս Աղաւնի որ երկրորդ անգամ պատրիարքութեան դարձած էր, աւագանին գումարեց ընտրութիւնը լրացնելու: Կիրակոս համեստ վարմունքով մը կանխաւ հրաժարած էր ընտրութենէ, յարգելով միաբանական հնաւանդ սովորութիւնը և հրաժարագիրն ալ յանձնած էր պատուիրակ վարդապետին (ԱՍՏ. Բ. 513), իսկ Յակոբոս որչափ ալ միաբանութենէ ընտրելի ցուցուած էր, բայց Երուսաղէմի միաբանութենէն չէր, և իր ընտրութիւնը կրնար նիւթ ընծայել, ուստի ընտրութիւնը կեդրոնացաւ Ջաքարիայի վրայ, որ արդէն 60 տարեկան էր, և արդիւնաւոր նախընթաց ունեցած էր, և նոյն պահուն ալ Պօղոսի աջակից և գործակիցն էր: Ընտրութիւնը հաստատող հրովարտակն ալ առնուեցաւ, և պատուիրակ Իսահակ վարդապետին ձեռքով Երուսաղէմ յղուեցաւ, որ հասաւ օգոստոս 16-ին, բայց կառավարիչ Թայար բացակայութեան պատճառով, հարկ եղաւ մինչև դառնալը յետաձգել գահակալութիւնը, որ տեղի ունեցաւ հրովարտակին հասնելէն երկու ամիս ետքը, հոկտեմբեր 24-ին (ՍԱԻ.1237), Գիւտիաչէն երկու օր առաջ:

2554. ԶԱՔԱՐԻԱ ԿՈՓԵՑԻ

Ջաքարիա ծնած էր 1780-ին Պուլանքի կամ հին գաւառի Կոփ աւանը, ուր է Ս. Դանիէլի վանքը, և ոչ թէ Կորդուաց Կողբ գիւղը, որ գոյութիւն ալ չունի: Որդի էր Պետրոս քահանայի, որ կանուխ այրիանալուն իր մանկիկը կնոջ մը կը յանձնէ, և ինքն արեղայ կը մտնէ Մշոյ Ս. Առաքելոց վանքը: Իբր տասը տարեկան եղած ատեն հայրը տղան վանք կառնէ, ընթերցանութիւն և գիր և նախնական գիտելիքներ սովորեցնելու, բայց Ջաքարիա ուսման փափաքով երկու ընկերներու հետ Էջմիածին կերթայ, ուր պահ մը կաշակերտի Աշտարակեցի Ներսէս վարդապետի:

Քիչ ետքը նորէն հօրը մօտ կը դառնայ և դարձեալ աւելիին ձգտումով Կ. Պոլիս կանցնի, և հոն պատահմամբ Վենետիկի Միսիթարեաներէն ոմանց ծանօթանալով Ս. Ղապարու վանքը կը ղրկուի աշակերտութեան: Բանի մը տարիներ կը մնայ հոն և ըստ բաւականին կօգտուի ալ, բայց կատարելապէս անոնց յարիլ չի յօժարիր, և երբ միաբանութեան ընծայելու օրհնուելու առաջարկը կընդունի, պատճառանքով մը վանքը կը թողու և կը մեկնի, և Կ. Պոլիս գալով Երուսաղէմի փոխանորդին կը ներկայանայ, և անոր ձեռքով Երուսաղէմի վանքը կը ղրկուի: Իբրև նոր միաբանցու ըստ սովորութեան առաջ հասարակ ծառայութեանց կը դրուի, բայց փոքր ի շատէ ուսմանց վարժուած ըլլալը յայտնելուն գրագրութեան պաշտօնով պատրիարքարան կը փոխադրուին Կիրակոս վարդապետի ձեռաց ներքև. հետզհետէ եկեղեցական ձեռնադրութիւններն ալ կընդունի մինչև քահանայական և վարդապետական աստիճանները Թէոդորոս պատրիարքի ձեռքէն, որ է ըսել 1818- էն առաջ: Մենք կը գտնենք զինքը 1820-ին նուիրակութեան ելած Տիրապէթիր և Սատուն, և յետոյ Ջմիւռնիա, ուսակից 1826-ին Կ. Պոլսոյ փոխանորդութեան կը կոչուի (ՍԱԻ.1240), Եդեսացի Յարութիւն վարդապետի յաջորդ (2449) Այդ պախտօնին մէջ Ջաքարիա արդիւնաւոր օգական եղաւ Պօղոսի, պարտքերու թեթևութեան համար 1827-ին ստացած հրովարտակին յաջողութեան մէջ (2451), և իր նախաձեռնութեան և աշխատութեան արդիւնքն եղաւ Ս. Գերեզմանին վրայ պատարագելու հրովարտակին ստացութիւնը 1829-ին (2453), իսկ Ս. Գողգոթայի տիրանալու համար ձեռնարկած փորձը ձախողելու 1830ին Կիպրոս աքսորուեցաւ (2454), ուսկից կրցաւ Երուսաղէմ անցնիլ 1831-ին և եպիսկոպոսութեան ալ բարձրանալով 1833ին (2492), Պօղոսի փոխանորդ և աջակից եղաւ մինչև իր պատրիարքութեան բարձրանալը: Ինչ որ ընդհանուր կերպով վարչական և մատակարարական ճիւղերուն կը պատկանի, գլխաւորաբար Պօղոսի գործունեայ և աննկուն ճիգերուն արդիւնքը պիտի ճանչցուին անշուշտ, և Ջաքարիայի երկրորդական դերն ընծայել չենք վարանիր. բայց Ջաքարիա ալ ունեցաւ իրեն յատուկ ասպարէզ մը, որուն մէջ առաջնորդութիւնը պէտք է իրեն վերապահենք, և այս ալ է Երուսաղէմի մէջ տպարանի սկզբնաւորութիւնը, և կանոնաւոր վարժարանի կազմակերպուելը: Այդ գաղափարներուն սերմը ստացած էր Ջաքարիա Էջմիածնի և մանաւանդ Վենետիկի աշակերտութեններէն, և դիւրըմբռնելի նախաձեռնութեամբ մը կը փափաքէր Երուսաղէմի բազմադարեան աթոռն ալ նոյն առաւելութիւններով ձոխացնել: Կ. Պոլսոյ փոխանորդութեան օրէն սկսած էր տպարանի նիւթեր և գործիքներ և գիրերու մայրեր գնել. Կիպրոս եղած ատեն Թրիէստ բնակող Եուսուֆեան Պետրոս վաճառականէն մամուլ մը և տառեր նուէր կը խնդրէ և կը ստանայ: Երուսաղէմէ Եգիպտոս գացած մէկ միջոցին վիմագրական մամուլ մըն ալ Ալէքսան Եղիապարեանէ նուէր կառնէ, և այսպէս նախապատրաստութիւնները փոքրիշատէ կարգադրելով կը յաջողի 1833-ին ապարանը բանալ Երուսաղէմի մէջ ծայրագոյն կառավարիչ Պօղոսի իշխանութեամբ և միաբանական ժողովոյ որոշմամբ: Կիրակոս և Ջաքարիա տպարանի և վարժարանի վերակացու կանուանուին, և իրենց տրամադրութեան կը թողուին նոյն ինքն Պօղոսի և Մեղրիկ Մկրտիչի աթոռին վրայ ունեցած անձնական պահանջները, և ձամբան վախճանած հնդկաց նուիրակ Սամուէլ վարդապետի թողօնը (ՆՇՆ. 18): Տպարանի բացման թուականէն մինչև Ջաքարիայի պատրիարքութիւնը անցած ութը տարիներու մէջ Երուսաղէմի տպարանէն ելած հրատարակութիւններուն կարգին նշանաւոր կարգին նշանաւոր է նոյն ինքն Պօղոսի երկասիրութիւնն եղող պանապանութիւն հինգ դարուց մակագրել եռահատոր հայատառ թուրքերէն գործը (ՆՇՆ. 20), որ և հին և նոր կտակարաններու պատմութիւնը, պարզաբանուած և բացատրութիւններով ձոխացած, և մայրենի լեզուն չխօսող Հայերուն դիւրութեան համար գրուած, ինչ որ Պօղոսի ուսմանց նուիրուելուն առաջին տարիներէ սկսելով հաստատուն

նպատակն էր եղած (2351): Այստեղ Երուսաղէմի անցքերն ալ ընդհատելով կը դառնանք Էջմիածին, Կարբեցիին վերջին օրերուն պատմութիւնն ամփոփելու:

2555. ԹԵՄԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՔ

Արդէն սկսած էինք Յովհաննէսի վերջին գործերը պատմել, և ակնարկած ալ էինք թէ գործերը միշտ կանոնաւոր և նպաստաւոր երևոյթ չունէին (2537): Պօլօժէնիէի գործադրութիւնը իր սկզբնաւորութեան մէջ շատ շփոթութեանց առիթ ընծայեց, նկատելով որ եկեղեցականութիւնը դեռ վարժ չէր ամենայն ինչ կանոնով և չափով գործելու: Թէ մայրաթոռոյ սինոդը և թէ վիճակներու կոսիսդորիաները չէին կրնար մօտէն հետևիլ ռուսական լեզուով և պետական բնոյթով գործողութեանց, որով վարիչներ ստորակարգել պաշտօնեաներու ձեռքը խաղալիք կը դառնայ, ասոնք ալ անոնց անունով ամէն տեսակ պեղծումներ և նենգութիւններ և կաշառակերութիւններ համարձակ կը գործէին: Այդ վիճակին աւելի ենթարկեալ էին Տփղիսի Կարապետ և Շամախիի Ստեփանոս առաջնորդները, Տաճկահայոց գաղթին գլուխները, որոնք հակառակ քանի տարիներէ յետոյ Ռուսական հողը փոխադրուած ըլլալուն, ամբողջաբար կը պահէին իրենց նախնական սովորոյթները, և կարգուսարքը, որ էր կամ աղիկամի գործեր կատարել և կամ գործերը ապատօրէն ստորադրելոց ձեռք թողուլ: Համեմատաբար լաւագոյն էր Բաղդասար մետրապոլիտեն կառավարած թեմին կացութիւնը, զի առանց դժուարութեան կը վարէր նա գործերը, ինչպէս կանխուէն սովորած էր, ժողովուրդը իրն էր, ինքն ալ ժողովրդին ծանօթ, մինչ Կարապետ և Ստեփանոս բոլորովին իրենց օտար տարրի մէջ կը գտնուէին: Երևանի գործերն ալ շատ դիտողութեանց տեղի չէին տար, զի բուն թեմակալ կը նկատուէր Կաթողիկոսը, որչափ ալ Արդութեան փոխթեմակալը իբր անկախ առաջնորդ կը գործէր: Իսկ Կովկասին հիւսիսակողմը Ներսէս և Սերովբէ գործի վարժ էին: Էջմիածնի սինոդը իրեն նպատակ ունէր վիճակներուն արդիւնքովը մայրաթոռը պօրացնել, իսկ վիճակներ հարկաւ կը դժուարանային ինքզինքնին ղրկել, կամ թէ անուղիղ միջոցներով տեղը լեցնելու համարձակութիւն կառնէին: Բայց Ներսէս անոնցմէ չէր որ սինոդին խաղին բռնուէր, և սինոդի պահանջներուն հեգնական ձևերով կը պատասխանէր, թէ երջանիկ է այժմ Հայոց ապգը, որ ունեցաւ վերջապէս իւր ցանկացած հայրապետը, որի ձեռնարկած բարենորոգութեանց շնորհիւ և աշալրջութեամբ սրբապան Սիւնհոդոսի այսուհետև ապգը բարօրութիւն պիտի վայելէ (ԵՐՅ.Բ.461): Ներսէս Պօլօժէնիէ յօդուածներով վիճակին համար ըլլալիք ձեռնարկները առջև կը դնէր, և ոչ միայն բան մը չէր ղրկեր, այլ և ուրիշ վիճակներու մէջ հանգանակութիւն բանալու պետքը կը պագցնէր: Սինոդը հարկաւ կիմանար Ներսէսի խաղերը, բայց դատ կամ հալածանք յարուցանելու առիթ չէր գտներ, իր օրագրութեանց մէջ ցաւ կը յայտնէր, և վերջապէս թղթակցութիւնը կը դադարեցնէր: Բայց Յովհաննէս չէր հանդարտեր և Սերովբէ Արարատեանի գրգռութեամբ, Նոր Նախիջևանը, Մոսկուան, և Պետրբուրգը Բեսարաբիայի վիճակէն վատելով Աստրախանի խառնելու համար պաշտօնագիր կը մատուցանէր կառավարութեան, և եթէ որ չյաջողի, Միքայէլ Սալլանթեանը, որ Մոսկուայի և Պետրբուրգի յաջորդ կամ փոխանորդ էր, Նոր Նախիջևանի և Նիժնինովկորոտի յաւելուածով անկախ առաջնորդ հռչակել կառաջարկէր. սակայն երկու կերպերն ալ ընթացք չէին գտներ նախարարութեան առջև, ոչ միայն Պօլօժէնիէի մէջ վիճակներու կազմակերպութիւնը վճռուած ըլլալուն, այլ և Ներսէսի արժանաւորութեանց և արդիւնաւորութեանց վկայուած ըլլալուն, և Սերովբէի վատ կողմից յայտնի լինելուն պատճառով:

2556. ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Պօլօժէնիէի հաստատութենէն չորս տարի ետքը, 1840 յուլիս 10-ին, Էջմիածնի մէջ ստացուեցան երկու գիրեր ուղղուած կաթողիկոսին և սինոդին, զորս ստորագրած էին 1839

դեկտեմբեր 14-ին Գէորգ Աւետեան Կալկաթայի եկեղեցւոյն և վանքին գործակալը, և 1840 յունուար 27-ին Պօղոս Մելիտոսեան և Բաղտասար Աստուածատուրեան և Յարութիւն Յովհաննէսեան Մատրասի եկեղեցւոյն երէցփոխանները: Գիրերը Պետրբուրգի անգղիական դեսպանէն ռուսական նախարարութեան, և անկէ Կովկասի կուսակալութեան, և անկէ ալ կաթողիկոսին յղուած էին: Ստորագրողները յանուն և ի դիմաց հնդկահայ գաղթականութեան լուրջ դիտողութիւններ կառաջարկէին 1836 մարտ 11-ի Պօլօժէնիէին պանապան յօդուածներուն գրայ, որ ազգասիրական և եկեղեցասիրական ոգևոլ նկատողութեան առնուած էին այդ հեռաւոր և գրեթէ մոռացուած հայ գաղութէն, մինչ ոչ մի ձայն լսուած չէր Կ. Պոլսոյ և Երուսաղէմի աթոռներէն կամ ուրիշ կողմերէն, որոնք հնար չէր, որ չորս տարիներու ընթացքին մէջ բնաւ տեղեկութիւն ստացած չըլլային այսպիսի նշանաւոր եղելութեան վրայ: Չէ՞ որ Պօլօժէնիէն ետքը եպիսկոպոսական ձեռնադրութեան համար Էջմիածնի գացողներ ալ եղած էին (2537) Հնդկահայ փոքարթիւ գաղութը որ այս գրութիւնը կը դրկէր, մնացորդ էր այն ստուար և կարող գաղութին որ ԺԸ. դարուն մէջ Պարսկահայ գաղութէն հատուածելով եկած էր Հնդկաստան, գլխաւորապէս Պէնկալա նահանգը և առևտրական յաջողութեամբ անբաւ հարստութիւն ապահոված էր: Հնդկաստանի առևտուրը Հայոց նաւերով կը փոխադրուէր երբ Երոպացի այն կողմեր չէր հասած, և հնդիկն ալ ծովագնացութենէ կը խորշէր: Այդ միջոցներով Հայր քաղաքական պօրութիւն ալ կազմած էր, և առևտրական ընկերութեան ձևին ներքև իսկապէս տիրացած էր տեղական իշխանութեան, երբ Անգղիացիք նոր կը սկսէին մուտք գտնել Հնդկաստան, և մասն առ մասն իրենց տէրութիւնը ընդարձակել, միշտ առևտրական ընկերութեան կերպարանին ներքև: Երբոր Քասրմալի խան, Ճաֆարայի խանին մրցակիցը, պէտք պգաց Անգղիացւոց դէմ պատերազմ մղել, ոչ միայն Հայ մը ունէր արքունական խորհրդական, Պետրոս Յարութիւնեանը, այլ և անոր եղբայր Կօրկին կամ Գրիգոր Յարութիւնեանը իրեն սպարապետն էր, և Յարութիւն և Մարգար պօրաբաժիններու հրամանատարներ էին, և Հայոց գունդ մը հնդկական բանակին ոյժը կը կազմէր (ՀՆԴ. 65): Գիտենք որ Հայեր իրենց դիրքը պիտի չկարենային պահել Անգղիացւոց յարաճուն պօրութեան և ազդեցութեան և անսպառ միջոցներու դէմ. բայց դժբախտաբար Հայը ինքն ալ իր անկումը փութացուց, մինչև եթէ փոյթ կալեալէր յանձին բերել պցանկալի միաբանութիւն առ իրեարս, և իմաստութիւն և գութ և սէր առ Հնդկիս իրեն լաւ վիճակ մը ապահոված կրնար ըլլալ հեռաւոր Հնդկաստանի մէջ: Ասոր հետ մէկտեղ ազգային աւիւնը մարեցաւ Հնդկահայոց մէջ, Հնդկահայ նուիրակութիւններ միշտ ամենէն բեղմնաւորը ճանչցուած էին, և միշտ մեծ եկեղեցիներ և ուխտատեղիներ հնդկական նուէրներով կը ճոխանային, մինչև իսկ Մեծն Պետրոսի ալ միջոցներ կընձեռէին, որպէսզի հայութիւնը պաշտպանէ, և Մեծին Կատարինէի միլիոններ կը խոստանային եթէ հայաբնակ գաւառներու անկախութիւնը պատրաստէ: Յովսէփ Ամիրխանեանը տարեկան կէս միլիոն ռուբլի եկամուտ դրամագլուխ տալ կառաջարկէր 1829-ին, եթէ իր նախնեաց հայրենիքի ազատութիւնը ապահոված գիտնար (ԵՐՑ. Բ.506-512): Այդ պգացմանց հետևանքն էր որ Հնդկահայ գաղութը կը յորդորէր ազգային եկեղեցւոյ շահերուն պաշտպան կանգնիլ Պօլօժէնիէի տրամադրութեանց հանդէպ, և որուն անունով Հնդկաստանի երկու գլխաւոր Հայ եկեղեցիներու գործակալները վերոյիշեալ դիտողագիրը կը գրէին:

2557. ՀՆԴԿԱՀԱՅՈՅ ԴԻՏՈՂԱԳԻՐԸ

Հնդկահայոց գրուածը, զոր բողոքագիրէ աւելի (ԵՐՑ. Բ.478), դիտողագիր կոչել յարմարագոյն կը դատենք, ընդհանուր առմամբ չի հակառակիր եկեղեցական վարչութեան համար կանոնադրութիւն հաստատուելու, և նոյն իսկ վարչական կազմակերպութեան ձևին համար ալ

դիտողութիւն չի յարուցաներ, այլ միայն քանի մը կէտեր փոփոխուած տեսնել, զորս հակառակ կը դատէ Հայ եկեղեցւոյ հոգւոյն և շահուն. զի թէպէտ Պօլօժէնիէն Ռուսաստանի համար հրամայուած կըսուի սակայն հետևանքները արտաքոյ ելանէին այսր սահմանի, և անուղղակի հայէին գրեթէ առ համառօրէն ազգս մեր: Արաջին դիտողութիւնը կընեն 11, 12 և 13 յօդուածներուն առթիւ (ՊՕԼ.2-3), որոնց պօրութեամբ աշխարհիս ամէն կողմէն գտնուող հայեր պիտի մասնակցին Կաթողիկոսի ընտրութեան, և կը հետևցնեն թէ ամէն հայաբնակութիւններ կարեն և պարտին առաքել նոյնպէս պատգամաւորս ի դպուածի անդ որոշելոյ զծանր և ծանր և վկարևորագոյն խնդիրս, և ոչ պարտին դրկել յայսպիսի արտօնութենէ և յիրաւանց ամենայն վիճակք, զոր ունին և ունէին: Երկրորդ դիտողութիւնը կընեն 32 և 71, և 91 յօդուածներու մասին, (ՊՕԼ. 5 13 17), որոնց մէջ ամէն կուսակրօն եկեղեցականներու, կաթողիկոսի, և եպիսկոպոսի և վանականի, թողօնները կը յատկացուին իրենց մերձաւոր ժառանգներուն: Ընդարձակ կերպով կը բացատրեն թէ կուսակրօններու տրուած նուէրները եկեղեցւոյ անունով կը տրուին և ոչ ազգականին հաստացնելու, և թէ այդ նպատակով վեղծումներ ալ կընդարձակուին, և թէ հաւատացեալք ալ կը ստիպուին նուէրները դադրեցնելու (ԵՐՅ. Բ. 486-495): Երրորդ դիտողութիւնը կընեն 33 և 37 յօդուածներուն մասին (ՊՕԼ. 6. 7.) որով չորս եպիսկոպոսէ և չորս

վարդապետէ բաղկացած սինոդ մը իրաւունք կունենայ տալ վախճանական վճիռ ամենայն գործոց վերաբերելոց եկեղեցւոյն: Անբաւական կը գտնեն ութ անձէ բաղկացեալ ժողով մը վախճանական վճիռ տալու, և կը պահանջեն որ առաջին դիտողութեան հետևողութեամբ ամէն վիճակներու պատգամաւորներով ազգային ժողովի վերապահուի, և կամ կարևոր գործոց համար 12 եպիսկոպոսէ և 12 վարդապետէ բաղկացած սինոդ մը կազմուի (ԵՐՅ. Բ. 490): Չորրորդ դիտողութիւնը կընեն 35 յօդուածին 6

րդ հատուածին դէմ, որով կուսակրօններու վանականութենէ և հոգևորական աստիճանէ մերկանալու իրաւունք կը տրուի զոր կը գտնեն ներհակ ընդհանուր եկեղեցւոյ և ընդդէմ սովորութեան և ծիսի Հայաստանեայց եկեղեցւոյ, և կը կարծեն թէ դուռ կը բանայ շահասիրական դիտմամբ եկեղեցականութեան մտնելու, և հարստանալով պայն մերկանալու (ԵՐՅ. Բ. 500), և 89 յօդուածին հետ ալ բաղդատելով, որով վանականաց կարգիլուի սեփական ստացուած ունենալ, հակասութեան մէջ կը գտնեն երկու յօդուածները:

2558. ԱՅԴ ՄԱՍԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՔ

Հնդկահայոց դիտողութիւնները ուշադրութեան առակայ եղան կաթողիկոսի և սինոդի և կուսակալութեան և արտաքին գործոց և ներքին գործոց նախարարութեանց ձեռքով մինչև կայսեր ներկայացուեցան, որ պէտք տեսաւ կաթողիկոսի կարծիքներն ու տեսութիւններն առնել, միշտ այն ուղղութեամբ, որ կարելւոյն չափ պահպանուած լինէր ազգիս հնաւանդ կանոններն ու ծէսերը (ԵՐՅ.Բ.506): Բայց 1842 մայիսին էր որ այդ միտքերը կը յայտնուէին, մինչ մարտին վախճանած էր կաթողիկոսը. ուստի գործը յետաձգուեցաւ քննել երբ նոր կաթողիկոսը նստի, և գործը առ ժամանակ մի հետևանք չունեցաւ: Մեր տեսութեամբ Հնդկահայոց խնդիրներուն գլխաւորը, որ է ընդհանուր եկեղեցւոյ պատկանող վճիռները ութը հոգիէ բաղկացած ժողովի մը ձեռքը մնալը, մեծ ստիպողականութիւն չի ներկայեր, քանի որ ոչ ոք միտքէն անցուցած է սինոդը Հայաստանեայց եկեղեցւոյ գերագոյն իշխանութիւն ճանչնալ, այլ միայն ռուսահայ վիճակներու բարձրագոյն վարչութիւնը: Պօլօժէնիէն Հայոց ընդհանուր եկեղեցին իր ձեռնահասութենէ դուրս ճանչնալով, անոր չէ վբաղած իսկ, որով այդ կէտը կը մնայ եկեղեցւոյն հնաւանդ կանոններուն յանձնուած, կամ թէ հայրապետական ազատ իշխանութեան թողուած: Արդէն դարեր անցան և Հայ եկեղեցւոյ ժողով չէ կայացած, և ոչ ընդհանուր եկեղեցւոյ պատկանող խնդիր մը վճռուած է: Միւս

գլխավոր կէտը կուսակրօններու թողօնն է, որ միշտ խնդրոյ նիւթ եղաւ, և միայն Գէորգ Դ-ի կաթողիկոսութեան ատեն նպաստաւոր լուծում ստացաւ: Իսկ վերջին կէտը որ է կուսակրօններուն կոչումէ հրաջարիլը, անհատական ապատութեան խնդիր մըն է, զոր առաքեալն ալ յարգած է, որուն հետևանքներուն հնար է մտադրութիւն դարձնել, այլ ոչ երբեք անհատականութիւնը բռնապօսել: Քանի որ եկեղեցական իշխանութիւն կրնայ եկեղեցականէն կոչումը վերցնել, ոչ մի պատճառ կրնայ արգիլել կոչումէն հրաժարելու սկզբունքը: Իսկ գործադրութեան համար դժուար չէ պայմաններ և ձևը օրինագրել որ անտեղութեանց առջևն առնուի:

2559. ՀԱՅ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ

Կարբեցիին կաթողիկոսութեան իբրև վերջին կարևոր ձեռնարկ կրնանք յիշել 1841 յուլիս 31-ին կայսեր ուղղած պաշտօնական յիշատակագիրը (ԵՐՑ.Բ.541): Հայոց եկեղեցւոյ ուղղադաւանութեան մասին: Հին են յունադաւան և հայադաւան եկեղեցիներու տարբերութեան խնդիրը, ինչպէս հին են Յոյներուն կողմէ Հայոց եկեղեցւոյն դէմ ամբաստանութիւններ և հակառակութիւնները, զորս պատմութեանս կարգին պէտք եղած ատեն յիշած և պարզաբանած ենք: Բոլոր խնդիրը կը հիմնուի Քաղբեղոնի ժողովը իբր սուրբ և տիեզերական չընդունուելուն վրայ, ուսկից ուլած են հետևցնել թէ ուրեմն Հայոց եկեղեցին և տիբական է: Ռուսեր որ Յոյներէ ստացան իրենց դաւանութիւնը, ոչ միայն անոնցմէ փոխանցեցին այդ սխալ կարծիքն ալ, այլ և անոր վրայ աւելցուցին Արմեան և Արիան անուններու նմանութենէն Հայերը արիոսական ալ կարծել, և իբր խորշելի հերետիկոսներ նկատել: Երբոր Իսրայէլ Օրիի ժամանակներէն Հայերու և Ռուսներու մէջ յարաբերութիւններ սկսան, պաշտպանողի և պաշտպանեալի դերեր ստեղծուեցան, պետութիւնը զգաց Հայերը չխրտչեցնելու պէտքը, և Պետրոս Մեծն 1719-ին հրամայեց որ ռուս եկեղեցականներ սուրբ խորհուրդներ մատակարարեն Հայերուն: Աննա Կայսրուհի 1734-ին Հայերուն ապատ դաւանութիւն և եկեղեցիներ ունենալու իրաւունք շնորհեց. նոյն հաստատեց Եղիսաբէթ 1744-ին և Մեծն Կատարինէ 1763-ին, և 1770-ին Մոսկուայ և Պետրբուրգի մէջ հայ եկեղեցիներ կառուցուեցան (ԵՐՑ.Բ.525): Հակառակ այդ հրամաններուն նախապաշարումը չջնջուեցաւ, և մինչև 1839-ին հրատարակուած ըստ երևոյթին պաշտօնական գիրքի մը մէջ Հայերը արիոսական և հերետիկոս կը կոչուէին: Այդ հրատարակութիւնը ցնցեց Պետրբուրգի և Մոսկուայի Հայերը: Իսկոյն բողոքագիր մը պատրաստեցին Կաթողիկոսի բերնէն և Էջմիածին յղեցին որպէսպիսի Կաթողիկոսի ստորագրութեամբ Կայսեր մատուցուի, և վերջ տրուի Հայոց դէմ յայտնուած նախապաշարեալ և սխալ կարծիքներու, և այս է 1841 յուլիս 30-ի պաշտօնագիրը: Առաջ կը յիշուին Ռուսաց կայսրներու կողմէ Հայերու թողուած կրօնական ապատութիւնը մինչև վերջին 1836ի Պօլօժէնիէն: Ապա կը պատմուին Յոյներու կողմէ եղած հակառակութիւնները և զրպարտութիւնները, և Ռուսաստանի մէջ աւելցուած արիոսականութեան ամբաստանութիւնը, որոնց հակառակ կը յիշուին Հայերու երբեք առաջին ժողովներուն մասնակցութիւնը, Քաղբեղոնի ժողովին չմասնակցելնուն պատճառ կը ցուցուին Պարսից հալածանքը, իսկ չընդունելնուն պատճառ կը տրուի Քաղկեդոնի կանոններուն սխալ թարգմանուած ըլլալը. բայց որովհետև հինգերորդ և վեցերորդ և եօթերորդ ժողովները ընդունեցին, դորանով բնականապէս ընդունած կը սեպուին և Քաղկեդոնի ժողովը: Մանաւանդ խոստովանում են Յիսուս Քրիստոսի մէջ երկու բնութիւն առանց խառնման, և կը նպովեն Արիոսը, Մակեդոնը, Նեստորը, Եւտիքէսը, Սելերոսը, Մօնօֆիլիթները, և բոլոր հերետիկոսները, որոց դատապարտած է Յունաց եկեղեցին (ԵՐՑ.Բ.539): Կաթողիկոսը ի վերջոյ կը խնդրէ որ արգիլուին Հայոց եկեղեցւոյ և անոր դաւանութեան դէմ հրատարակութիւնները (ԵՐՑ. Բ. 540): Կաթողիկոսին այդ պաշտօնագրին մասին պէտք է աւելցնենք, որ գրուածը Պետրբուրգի մէջ ալ աշխարհականներէ կազմուած ըլլալով, վարմանալի

պիտի չերևի ինչինչ անճշտութիւններ սպրդած ըլլալը, բայց Կաթողիկոսի և սինոդին ներելի չէր այնպիսի գիր մը տալ, որով Հայերուն կը վերագրուի Քաղկեդոնը և անոր յաջորդած երեք ժողովները ընդունած ըլլալը, թէպէտ ստոյգ է Եւտիքսէի դէմ Հայոց եկեղեցւոյն մէջ արձակուած նպովքը, անդստին Բաբգէն Կաթողիկոսին օրէն (343):

2560. ՊԵՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Բայց առ այժմ վանց ընելով այդ կէտին վրայ ծանրանալ, բաւական ըլլայ յիշել թէ Նիկողայոս կայսեր ուշադրութեան առարկայ եղաւ, և կարծիք յայտնելու համար ռուս եկեղեցւոյ մեծ սինոդին յանձնուեցաւ: Սինոդը ըստ ամենայնի գնահատելով հայրապետական յայտարարութիւնը, և տեսնելով որ Հայ եկեղեցւոյ դաւանութիւնը համաձայն է որթոտոքս եկեղեցւոյ դաւանութեան, հրաման ըրաւ գրաքննութեան որ Հայոց եկեղեցւոյն դէմ գրութիւններու հրատարակութիւնը չարտօնուի, և խնդրոյ նիւթ եղօղ գիրքն երկրորդ տպագրութեան ատեն, դիտողութեան տեղի տուող հատուածները վերուցին, միանգամայն ցանկութիւն յայտնեց ստանալ կարելոյն չափ լիակատար մեկնութիւն լուսաւորչական դաւանութեան: Կայսրը հաստատեցմեծ սինոդին տեսութիւնն ու որոշումը, և ներքին գործոց նախարարութիւնը 1841 դեկտեմբեր 12-ի պաշտօնագիրով Կովկասի կուսակալին հաղորդեց ի նպաստ Հայ եկեղեցւոյն տրուած հրամանը, և միանգամայն առաջարկեց լիակատար տեղեկութիւն ուլել կաթողիկոսէն: Գօլօվինի կուսակալը 1742 յունուար 14-ին գրեց կաթողիկոսին, բայց նա արդէն ծանր հիւանդութեամբ անկողին ինկած էր, և մարտ 26-ին վախճանեցաւ, և այդ մասին բան մը չեղաւ: Գործին ստիպողականութիւն տալու համար սինոդին քանիցս դիմում եղաւ կուսակալութեան կողմէն, բայց սինոդը միշտ հեռու մնաց որևէ գրութիւն ներկայելէ, իւրեան անձեռնհաս համարելով, և գործը յաջորդ կաթողիկոսին թողլով: Էջմիածնի պրոկուրոր Ղորպանեանցը ոմանց յորդորելով ինքն ձեռնարկեց գրութիւն մը պատրաստել, որուն մէջ յայտնապէս գրեց, թէ Հայոց եկեղեցւոյ դաւանութիւնը յամենայնի համաձայն է Ռուսաց դաւանութեան հետ, և այդ երկու եկեղեցեաց մէջ կրօնական ոչ ինչ խտրութիւն չկայ. բայց աշխարհական անձի մը տուած գիրը ոյժ չէր կրնար ունենալ ոչ պետութեան և ոչ մեծ սինոդի առաջ, և նշանակութիւն ալ չունեցաւ և նկատառութեան չարժանացաւ, և գործը մնաց յաջորդ կաթողիկոսին (ԵՐՅ.Բ.543): Ամէն առթի մէջ որոշումն ալ բաւական էր Հայոց մասին տարածուած նախապաշարումը հետզհետէ անհետացնելու:

2561. ԿԱՐԲԵՑԻՒ ՄԱՀԸ

Յովհաննէս Կարբեցի կաթողիկոսը 1762-ին ծնած, արդէն իր կենաց 80-րդ տարին թևակոխած էր, երբ 1841 նոյեմբերին անկողին ինկաւ քարի հիւանդութիւնից, և չորս հինգ ամիս ցաւերով տանջուեցաւ: Այդ միջոցին էր որ կը ստանար Հայոց եկեղեցւոյ դաւանութեան մասին բացատրութիւններ տալու հրաւերը, ինչպէս վերև յիշեցինք (2560), և յայտնի էր որ անով պբաղելու ժամանակ չունէր, բայց ուշքը վրան էր, և իր անձնական գործերուն մտադրութեամբ կը հետևէր, նպատակ ունենալով իր գոյքերով և ստացուածով իրենները բախտաւորել, օգտուելով Պօլօժէնիէի 32 յօդուածէն (ՊՕԼ.5): Ըստ այսմ, մասամբ ինքնին գործադրելով և մասամբ կտակային կարգադրութեամբ բոլոր իր ունեցածները թողուց իր Թէվումեան եղբօրորդիներուն և քանի մը ուրիշ ազգականներուն և իր հաւատարիմ Վեհապետեան Գէորգ արքեպիսկոպոսին, որ է նոյն ինքն, Աշտարակեցի Գէորգ սարկաւազը, որ յատուկ գանգատի նիւթ եղած էր իր տարօրինակ յարաբերութիւններով (2509 և 2512): Իսկ յօգուտ աթոռին բան մը կտակած ըլլալը յիշուած չէ: Անցողակի կերպով յիշենք թէ Կարբեցիին գործերուն հետևողներ կը դիտեն, թէ անոր թողօն վայելողներէն գրեթէ և ոչ մէկը կարողացաւ արժանապէս վայելել ստացած հարստութիւնը, և թէ

լիապէս արդարացաւ ժողովրդական առածը թէ եկեղեցականի և կրօնաւորի փողերը ոչ ոքի խէր չեն անիլ: Կարբեցիին չորս հինգ ամիս այդ հոգերով և հիւանդութեան ցաւերով տառապելէն ետքը, հոգին աւանդեց 1842 մարտ 26-ին, մեծապահոց չորրորդ հինգշաբթի երեկոյին, կէսօրէն եօթը ժամ ետքը, ու ուրբաթն ու շաբաթը պատրաստութիւններով անցնելէն ետքը, մարտ 29-ին, մեծապահոց հինգերորդ կիրակիին փառաւոր յուղարկաւորութիւն կատարուեցաւ, և մարմինը ամփոփուեցաւ Մայրտաճարին դրան առաջ և վանգականտան հիւսիսակողմը (ԵՐՅ.Բ.547):

2562. ԱՆՁՆ ՈՒ ԳՈՐԾՐ

Անաչառ կերպով քննեցինք և քննադատեցինք Կարբեցին պատմութեանս մէջ, այնպէս որ հարկ չի մնար երկար տեսութեանց մտնել իր վախճանէն ետքը: Իր շահասէր և շահագէտ ուղղութիւնը մինչև իսկ պետական շրջանակներու ծանօթ էր, բայց այսու հանդերձ կը պաշտպանուէր, Վի հլու հնազանդ գործիք էր կառավարութեան ձեռքը: Իրմէ օգտուողներէն ոմանք կը փափաքին վայն շինարար և մեծագործ ներկայել, բայց մենք սովորական ընթացքէ աւելի բան մը չենք գտներ: Կը յիշուի թէ աթոռին պարտքը սրբեց, բայց մենք տեսանք արդէն թէ պարտքին կրկնապատիկէն աւելի գանձեց այդ պատրուակով (2505): Կըսուի ևս թէ ետ վգումար ինչ յաճումն լուսնայաշահութեան յանուն աթոռոյն, առանց յիշելու գումարին քանակը, որ կերևի թէ յիշատակելի բան մը եղած չէ: Կը յիշատակեն ևս Քանքան կոչուած աղբիւրին նորոգութիւնը, Ղապարապատի վրայ երեք սենեակներու յաւելումը, և գրադարանի ընդարձակուիլը. սակայն առաջինը Ալեքսանդրապոլցի Յակոբ Մատակեանի, երկրորդը Եգիպտացի նախարար Եուսուֆեան Պօղոսի և եղբօրը Պետրոսի նախաձեռնութեամբ և արդեամբ կատարուած են, և երրորդը պարզապէս պատրաստ սենեակներու յարակցութիւնն էր, և դիրքերու կարգադրութիւնն ալ ծերակուտական Գանի ստիպմամբ էր եղած: Աշտարակի պատերազմին յուշարձանը Եփրեմի սկսած և հետևած գործն էր, իսկ տպարանի, վարջարանի, սենեակներու և վեհարանի վրայ կատարուած նորոգութիւններ, հիմնական և ծանրակշիռ բաներ չեն եղած, և պետական և կայսերական այցելութիւններու հոգերը բռնադատուած գործեր են գոնէ երևոյթները փրկելու: Ըստ այսմ նշանակելի արդիւնք մը չենք գտներ ներբողաբաններուն յառաջ բերածներուն մէջ, և միակ յիշատակը որ Յովհաննէսէ կը մնար սինոդի պաշտօնատունն էր, այն ալ իբր 70 տարի ծառայելէն ետքը այսօր քանդուած է (ԵՐՅ.Բ.544-546): Իր վաչական ընթացքն ալ օրինակելի հետք մը թողած չէ, Վի ամէն միջոցներու Վիջող է եղած իրեն փառասիրական ձգտումներուն հասնելու համար. փոքրոգի իր կարգադրութեանց մէջ, միաբանութիւնը շահելու ապիկար, շողոքորթներու չափազանց համակերպող, քննադատներու դէմ անհաշտ, մէկ խօսքով և պատկառելի դէմք չկրցաւ ըլլալ վեհափառ աթոռի վրայ, և համակրելի չդարձաւ ամէն դիւրութիւններ տրամադրելի ունենալով ան, մանաւանդ Տաճկահայոց մէջ բնաւ յարգ ու վարկ չվայելեց և համբաւ չունեցաւ, և միշտ իբր աթոռի յափշտակողն մը ճանչցուեցաւ, Եփրեմը տապալելով և Ներսէսը հալածելով, և այս եղաւ բուն պատճառը որ իր անունը չյիշատակուեցաւ երբեք Տաճկահայոց եկեղեցիներու մէջ: Իր անունը կապուեցաւ միայն Պօլօթէնիէի հրատարակութեան հետ, որ իսկապէս կանոնաւոր վարչութեան մը հիմնակէտը եղաւ, ինչ ալ ըլլան անոր մասին եղած դիտողութիւնները: Բայց այդ մասին ալ, եթէ Կարբեցին փոխանակ բարեմարդիկ երևնալու փութաջանութեան, իր աստիճանին և պաշտօնին խորին գիտակցութեամբ պատշաճ արթնութիւնն և օրինաւոր միջամտութիւնը կատարած ըլլար, անշուշտ պիտի կարենար օգտուիլ Նիկողայոս կայսեր և ռուսական կայսրութեան Հայոց եկեղեցւոյ կանոններուն և ծէսերուն հանդէպ տածած համակրութենէն, և խափանել ինչինչ կէտէր, որ Պօլօթէնիէի առաջի օրերէն սկսելով դիտողութեանց առիթ ընծայեցին:

2563. ՄԻՒՍ ԱԹՈՒՆԵՐ

Ազգային կեանքը երեք կեդրոններու շրջանակին մէջ ամփոփուած կը տեսնենք սովորաբար, որոնք են Էջմիածին կամ Ռուսահայք, Կ. Պոլիս կամ Տաճկահայք, և Երուսաղէմ կամ Ս. Տեղիք և գլխաւորաբար անոնց շուրջն է որ մեր պատմութիւնն ալ կը վբաղի: Բայց հայ տարրը ասոնցմէ վատ ունի ուրիշ բաժիններ ալ, որ եթէ առաջին երեքներուն կարևորութիւնը չեն ներկայեր, բայց միշտ արժանի են մտադրութեան, որպէսզի ամբողջանայ ազգին անցքերու պարունակը, և այն մասերն ալ բոլորովին ուշադրութենէ չվրիպեն: Ասոնցմէ ոմանք երբեմն պատահաբար կու գան խառնուիլ ելխաւոր շրջանակներուն հետ, բայց երբ այդ պատահականութիւնները կը պակսին, հարկ կը տեսնենք գլխաւորներու բացատրելէն ետքը, ժամանակակից միջոցին սահմանին մէջ միւսներն ալ քաղելով ամբողջութիւնը լրացնելու աշխատիլ: Այս նպատակով Կարբեցիի Կաթողիկոսութեան միջոցին երեք գլխաւոր շրջանակներէ դուրս Հայութեան պատկանող եղելութիւններուն կանցնինք, բայց դժբախտաբար այնչափ նուազ են մեր տրամադրութեան ներքև գտնուող աղբիւրները, որ ստիպուած ենք քանի մը անուններու յիշատակութեամբ շատանալ: Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռը 1825-ին յաջորդած էր Եփրեմ Բ. տակաւին նորահաս երիտասարդ (2475), որ 1833-ին կը հրաժարի, անշուշտ բռնաւոր պետերու վախէն ստիպուած, թէպէտ բուն պատճառը և պարագաները մեզի անյայտ կը մնան: Իրեն կը յաջորդէ Յովհաննէս Աջապահեանց ութերորդը, որ տակաւին աթոռի վրայ կը մնար Կարբեցիի մահուան տարին, և մինչև 1846 ալ շարունակեց (ԶԱՄ. Բ.66), բայց իր գործունէութեան մասին բան մը պիտի չկարենանք աւելցնել: Աղթամարայ աթոռին վրայ կը մնար Յովհաննէս Շատախցին, և շարունակեց մինչև Կարբեցիի մահուան յաջորդ տարին, ուստի փոփոխութիւն չունինք նշանակել, և ոչ ալ գործունէութեան մասին տեղեկութիւն տալ, ինչպէս կանուխ ալ ակնարկեցինք (2475): Արմաշու վանքին պատկանող տեղեկութիւնները տուած կը գտնուինք Ստեփանոս Աղաւնիի պատրիարքութեան ընտրուելուն (2440), և դարձեալ վերստին աթոռ դառնալուն առթիւ 1840 սեպտեմբեր 15-ին (2546), ուստի տարի մը ետքը 1841 սեպտեմբեր 17-ին կրկին հրաժարելով Արմաշ դարձաւ (2547): Այս անգամ նոր վարկ տուաւ Աղաւնի Արմաշու վանական վարժարանին, և ժիր գործունէութեան վրայ կը գտնուէր Կարբեցիի մահուան տարին: Պատրիարքութենէ ելնելէն ետքը 12 տարի ևս ապրեցաւ Աղաւնին մինչև 1853 ապրիլ 6, բայց 1848-է ետքը, արդէն 70 տարեկան եղած տկարութեան պատճառով գործունէութենէ քաշուեցաւ, բայց իրեն արժանաւոր օգնական ունեցաւ իր անուանակիցը Ստեփանոս Մաղաթեան վարդապետը (ՕՕ ՕՐԱ. 178):

2564. ԿԱԹՈՒԼԻԿ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Կաթոլիկ հասարակութեան սկզբնաւորութիւնը պատմած ատեննիս, ցուցցինք անոնց երկու պետերով կառավարուիլը, և այս պատճառով տեղի ունեցած ձգտումները, և իրողութիւնները հասուցինք մինչև 1838 յունուար 20, Անտոն Նուրիճան արքեպիսկոպոսին կամ կրոնական պետին մահը, երբ քաղաքական ազգապետութիւն կը վարէր Կարապետ Եսայեան վարդապետը Վենետիկի Մխիթարեաններէն (2437): Նոր հոգևոր պետին կամ ինչպէս կը կոչուէր նախագահ արքեպիսկոպոսին ընտրութեան համար ժողովը գումարուեցաւ փետրուար 2-ին, նախորդին մահէն 13 օր ետքը, որուն մէջ եկեղեցական ըլլալով գտնուեցան միայն ազգապետ և փոխանորդ վարդապետները, իսկ մնացեալներ գլխաւոր աշխարհականներէն էին 50 հոգի (ՀԱՍ. 41): Ընտրելի անձին մասին միևնոյն կուսակցական պայքարը սկսաւ մղուիլ, Աբբայեանց կամ Բօլէճեանց նպաստաւոր անձ մը առջև քշելու համար, բայց վերջապէս խաղաղութեան և սիրոյ և եկեղեցւոյ օգտին հետևելու գաղափարը զօրացաւ, Աբբայեանք վախեցան ներքին պառակտումներու առիթ ընծայել, երկու կողմեր իրարու մօտեցան և միաբերան ընտրեցին Պօղոս Մարուշ վարդապետը (ՀԱՍ. 40), նոյն այն որ Նուրիճանի մրցակից եղած էր փոխանորդութեան առաջարկին (2429), և

առաջին ընտրութեան ժամանակ (2434) ընտրողական գիրն ալ պատրաստուեցաւ և ստորագրուեցաւ Հռոմայ պապին յղուելու համար: Համաձայնութիւնը կազմուելու նպաստեց նաև Մարուշի անձը, որ արդէն տարիքն առած և շահեցողական ընթացքի միտած էր, և ապագային մեծ խնդիրներու տեղի չտալու երաշխաւորութիւն կը նժայէր: Բայց աստի հրապարակի վրայ Բօլէճեան ոյժ մըն ալ երևան եկած էր, մտադրութիւնը յառաջ տանելու կարող և ընդդիմադիրներէ նկատի առնուելու և պինքն անոնց սեպել տալու բաւական: Ընտրողական գիրը հասաւ Գրիգոր ԺԶ. պապին որ 1838 փետրուար 2-ին յաջորդած էր Պիոս Ը. ին, և ինքն Վենետիկէ ըլլալուն, լաւ յարաբերութիւն և բարեկամութիւն ունէր Մխիթարեանց և ընդհանրապէս հայ կաթողիկներու հանդէպ: Ըստ այսմ թէպէտ դիտողութիւն ըրաւ, որ Կ. Պոլսոյ հայ կաթողիկ հասարակութիւնը փոխանակ երեք ընտրելի ներկայելու միակ ընտրեալ մը առաջարկած էր, բայց գործին ընթացքը չխափանեց, Մարուշը հաստատեց և եպիսկոպոսական ձեռնադրութիւն ալ տալով յղեց Կ. Պոլիս պաշտօնին գլուխն անցնելու:

2565. ԱՆՏՈՆ ՀԱՍՈՒՆ

Վերև նոր ոյժ մը ակնարկեցինք որ ասպարէզ ելած էր Բօլէճեան կուսակցութիւնը պօրացնելու: Սա էր Անտոն Հասուն վարդապետը, հայկաթողիկ հասարակութեան անցուդարձուն մէջ հոչակաւոր դարձած անուն մը: Հասուն Անտոն որդի էր Եաղուպ Հասսօ Բերիացի ասորւոյն, որ Կ. Պոլիս փոխադրուելով և հայ կաթողիկի հետ ամուսնանալով ինքն ալ հայ կաթողիկ հասարակութեան մէջ մտաւ, և սկսաւ Յակոբ Հասուն կոչուիլ: Անտոն իր երկրորդ պաւակը ծնաւ 1809-ին, որ 1825-ին Հռոմ գնաց Փրօփականտայի դպրոցին աշակերտելու, բայց չընդունուելով ապաստանեցաւ Անտոնեանց Հռոմի վանքը, և Տուրսունեան Բարսեղ և Յովնանեան Կարապետ վարդապետներու խնամքով պահ մը վանքին մէջ հոգացուեցաւ, յետոյ Վատիկանեան դպրոցը գրուեցաւ, և 1830-ին Փրօփականտայի դպրանոցը ընդունուեցաւ, ուր 1833-ին ձեռնադրուեցաւ և Կ. Պոլիս դարձաւ: Շնորհիւ իր ուշիմութեան և յաջողակութեան, մեքենայութեանց և հնարագիտութեանց արդէն Հռոմի պաշտօնեաներու հետ սերտ յարաբերութիւններ ունէր, և Կ. Պոլսոյ մէջ ալ գրաւիչ կերպերով իրեն շրջանակ մը կազմեց, և եղաւ եղելութիւնները Հռոմ հաղորդող, եղանակներ առաջարկող, խնդիրներ յուզող, հաւասարապէս ընդունելի թէ Հռոմի առջև և թէ Բօլէճեան կուսակցութեան մէջ, և պոռնութեանց պարտաւորող ընդդիմակաց կողմը: Այս միջոցներով ոչ միայն կարողացաւ եպիսկոպոսարանի գործերուն մէջ ընդարձակ դեր ունենալ, այլ և Նուրիճանի պէտք եղաւ Փրօփականտայէն եկած հրամանին համեմատ Հասունեանի ձեռքն յանձնել նախագահական եպիսկոպոսարանի իշխանութիւնը, և մինչև իսկ Հռոմի յատուկ հրամանով եպիսկոպոսարանի փոխանորդութեան կամ աթոռակալութեան կոչել պայն, որով Հասուն Նուրիճանի մահով տեղապահութեան ալ ձեռնարկեց: Այս ազդեցութեանց ներքև յաջողած էր Մարուշի ընտրութիւնը (2564), և Մարուշ ալ Հռոմէ հասնելուն ուրիշ կերպ չկրցաւ ընել, բայց եթէ Հասունը իր փոխանորդութեան պաշտօնին վրայ հաստատել (ՀԱՍ.43), ինչ որ ըսել էր ինքզինքնին անոր յանձնել, նկատելով մանաւանդ իր յառաջացած և տկարացած տարիքը: Հասուն իրեն շուրջը համամիտներու պօրաւոր խումբ մը կազմած էր Բօլէճեան կղերէն, որուն մէջ յանուանէ կը յիշուին Տիմոթէոս Աստարճեան, Անտոն Շիշմանեան, Յովսէփ Ասլանկիւլեան, Յովսէփ Օթփուեան, Անտոն Հալաճեան, Գրիգոր Տէվրիշեան վարդապետները, որոնք ի դէպս և յանդէպս իրենց ուղղութեան համաձայն խորհուրդներ և թելադրութիւններ կու տային Մարուշի, որ որչափ ալ պոռնաւոր սակայն չէր կրնար պինքն անոնց ազդեցութենէն պերծ պահել: Աննշանակ պարագայ մը պայրացուց կացութիւնը: Հայ կաթողիկ եկեղեցականներ Հայ եկեղեցւոյ վեղարէն պատուելով համար քառակուսի գագաթով և մետաքս կերպասով ծածկուած

վեղարանման գլխանոց մը կազմեցին իրենց համար, զոր խաչգտակ անուանեցին: Միայն աւագ պաշտօնեաներ կամ ծայրագնութեան պատիւ ունեցողներ արտօնեալ էին փոխանակ մետաքս կերպասի շղարշով ծածկել իրենց խաչգտակը: Մարուշ այդ առանձնաշնորհութիւնը նաև երկու վարդապետներու, Գէորգ Հիւրմիւլեանի Վենետիկոյ Միթրաբեաններէն և Կարապետ Յովհանեանի Անտօնեան միաբանութենէն, որոնք Քօլէճեան կուսակցութենէ չէին, մինչ վերոյիշեալ խմբակին պատկանողներ այդ առանձնաշնորհութիւնը չէին վայելեր: Ասօնք նախ Մարուշը նեղեցին, ապա իւրովի իրենց խաչգտակին քողը փոխեցին, զի Հասուն ձեռքի տակէն զիրենք կը քաջալերէր, և Մարուշին կարգիլէր խստութիւն գործածել: Շուտով ուրիշներ ալ հետևեցան օրինակին և մետաքս կերպասէ քօղը խափանուեցաւ իսպառ (ՀԱՍ. 45): Հասուն շարունակ հետամուտ ամէն իշխանութիւն իրեն և իրեններու ձեռքն ամփոփել, նոյն նպատակին ծառայե 1838-ին վերջերը իբր այցելու Անկիւրիա հասնելով, քանի մը Քօլէճեան վարդապետներ պաշտպանելու, որոնց զեղծումները և կեղեքումները մինչև իսկ Անկիւրոյ մոլեռանդ կաթոլիկները լեզու հանաց էին (ՀԱՍ. 47): Մարուշ արդէն ծերացած էր և վախճանը մօտեցած կերևար: Հասուն յաջորդութիւնը ձեռք ձգելու համար օգնական և եպիսկոպոս փոխանորդի մը գրութիւնը մէջտեղ նետեց, և ընտրութիւնը առանց ազգային ձևի շիտկէ Հոռմէ իր վրայ հրաւիրելու համար, մտածեց անձամբ հոն երթալ և հոն ամէն բան լրացնել: Առաջին անգամ ճամբայ երնելուն կառքէն կիյնայ, երեք օր կիսամահ ինքզինքը չի ճանչնար, չորս կողմերը կը ջախջախուին, և կը ստիպուի Կ. Պոլիս դառնալ, ուր դարմանուելէ ետքը նորէն կը պատրասուի մեկնիլ: Բայց այս անգամ ալ սանդուխէ կը գլորվի գլխիվայր, և նորէն ամիսներով դարմանի կենթարկուի. բայց վերջապէս երրորդ փորձին կը յաջողի և Հոռմ կը հասնի 1842 տարույ սկիզբները: Հոն ամէն միջոց կառնէ, յունիս 7-ին, կը ձեռնադրուի և սեպտեմբեր 21ին Կ. Պոլիս կը հասնի, և կացութեան բացարձակ տէր կը դառնայ, զի ազգապետ Եսայեանն ալ ծերացած և տկարացած էր (ՀԱՍ. 54), իսկ ինքն 33 տարեկան առոյգ հասակի մէջ էր: Ուրիշ գաղտնի պարագայ մըն ալ կար գործին մէջ, որ անագան յայտնուեցաւ: Հոռմ սովորութիւն ունի ծեր թեմակալներուն օգնականները, ապագայ յաջողութեան պայմանով նշանակել. Հասուն այս տեսակ կոնդակ մըն ալ ձեռք ձգած էր, որ սակայն այն ատեն ամենէն գաղտնի մնաց: Այդ էր կաթոլիկ հասարակութեան կացութիւնը Կարբեցիի մահուան թուականին, յաջորդ եղելութիւնները կը թողունք առաջիկային:

2566. ԿԱԹՈՒԼԻԿ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

Կաթոլիկ համայնքին կարևոր տարրերը կը կազմեն միաբանութիւնները, որոնց նախընթացները արդէն պատմած ենք: Անտոնեանք վաղուց ձեռնարկած էին Լիբանանի առանձնութենէն ելնելով կրոնական քաղաքի մը մէջ ուսումնարան ունենալ, և արդէն պատմած ենք Հոռմի մէջ վանք հաստատելնին (2065) և ուսանողութիւն կազմելու ձեռնարկնին, որ Իտալիոյ քաղաքական փոփոխութեանց հետևանքով խափանուեցաւ (2183): Բայց յղացուած միտքը մնաց հաստատուն և ճիգեր չդադրեցան, մինչև որ 1830-ին Լիբանանի վանքէն երիտասարդ կրօնաւորներ Հոռմ յղուեցան ուսումնական ընթացք լրացնելու: Իսկ 1834-ին սկսան նոր աշակերտները ուղղակի Հոռմի վանքը ընդունիլ, և նախակրթական ուսումն ալ այնտեղ ստանալ: Այդ գործին արդիւնաւոր եղան Բարսեղ Տուրսունեան վարդապետը նիւթական պէտքերը հոգալով, և Միքայէլ Միասէրեան վարդապետ ուսումնական ընթացքը կարգաւորելով, և Տիմոթէոս Թելլալեան արքահայրը վերին իշխանութեամբ: Լիբանանէ փոխադրուած երիտասարդ ուսանողներէն նշանաւոր հանդիսացան Եղիա Նահապետեան և Արսէն Անճարակեան, իսկ ուղղակի յիշատակութեան արժանի են Անտոն Զոհրապեան, Սուքիաս Գազանճեան, Էմմանուէլ Շահինեան, Կղեմէս Միքայէլեան և Ռափայէլ Միասէրեան: Արդէն ըսած ենք որ Անտոնեաց

աբբահայրերը եռամեայ պաշտօնավարութեամբ կը փոփոխուէին. բայց այդ միջոցին նշանաւոր եղաւ Տիմոթէոս Թելլալեան վարդապետը, որ ութը անգամ պաշտօնին վրայ հաստատուեցաւ, և միաբանութեան ուսումնական պարգացման մղում տուողն եղաւ, թէպէտ ինքն միշտ Լիբանան կը գտնուէր Պէյթիսապոյի Ս. Անտոն վանքը, որ միշտ միաբանութեան կեդրոնը մնաց: Անտոնեան միաբանութեան և Ջըմմարի կաթողիկ կաթողիկոսներուն միջև ձգտեալ յարաբերութիւնները հիմնապէս չդադրեցան, որչափ ալ Բարսեղ Պետրոս Գ. Գրիգոր Պետրոս Ե. Ճիրանեան աւելի հաշտ ընթացքի հետևող էին: Գրեթէ միևնոյն ընթացքը շարունակեց Գրիգոր Պետրոս Ջ. ի և Յակոբոս Պետրոս Է. Հոլասեանի օրով, որոնց առաջինը 1812 յունիս 17-ին և երկրորդը 1841 յունիս 8-ին ընտրուեցան: Վերջինիս պաշտօնը շատ համառօտ եղաւ, զի 1843 յունիս 25-ին աթոռ բարձրացաւ Գրիգոր Պետրոս Ը. Տէր-Աստուածատուրեան , որ 23 տարի պաշտօն վարեց, և վանապան ձեռնարկեր ալ ունեցաւ, որոնց պիտի դառնանք իրենց կարգին: Միսիթարեան կրկին ճիւղերուն Վենետիկի և Վիեննայի միաբանութեանց վրայց այստեղ աւելցրինք չունինք, զի անոնց մասին ըստելիքը արդէն մինչև 1843 հասուցած ենք (2477), որ է ըսել Կարբեցիին մահուանէ ալ անդին, և շարունակութիւնը կը թողունք առաջիկայ բաժինին վերջը:

2567. ԱԹՈՌՈՅ ՊԱՐԱՊՈՒԹԻՒՆ

Իւրաքանչիւր կաթողիկոսի ժամանակը մեր բաժիններուն հիմ առած ատեննիս , աթոռոյ պարապութեան միջոցը միշտ նախորդին վրայ նշանակեցինք մինչև յաջորդին ընտրութիւնը: Կարբեցիին մահուանէ ետքը առաջին անգամն էր որ Պօլօժէնիէի տրամադրութեանց համեմատ ընտրութիւն պնտն կատարուէր, որոնց գլխաւորներն էին, 12-րդ յօդուածին համեմատ տարևոր միջոց սահմանել, և 13-րդ յօդուածին պօրութեամբ իւրաքանչիւր վիճակէ եկեղեցական և աշխարհական պատգամաւորներ ունենալ ընտրողական ժողովին մէջ (ՊՕԼ. 3): Իսկ տեղապահութեան համար նոր ընտրութիւն կատարելու պէտք չկար զի 42-րդ. յօդուածին համեմատ երիցագոյն սինոդական եպիսկոպոսին վերապահուած էր ամէն առիթի մէջ կաթողիկոսին տեղ փոխանակել (ՊՕԼ. 8): Ըստ այսմ տեղապահութիւնը այս անգամ վիճակեցաւ Բարսեղ Աշտարակեցի արքեպիսկոպոսին (04 ԲԱՁ, 351), իսկ տարևոր միջոցը 1842 մարտ 26-էն հաշուելով (2561) սահմանուեցաւ 1843 ապրիլ 13-ին (04. ԲԱՁ. 365): Զատկի երրորդ օրուան, և ընտրութիւնը լրացաւ ապրիլ 17-ին (ԶԱՄ.Բ.162): Զատկի շաբաթ օրը: Աթոռոյ պարապութեան միջոցին վրայ պատմելիք չունինք, զի յիշատակութիւններն ալ կը պակասին, և ինչպէս օրէն է հետևեցնել, նշանակութեան արժանի գործ տեղի ունեցած չէ Մայրաթոռոյ մէջ, և սովորական կեանքը շարունակած է մինչև ընտրութեան օրը: Սինոդը փութաց Յովհաննէս կաթողիկոսի մահուան մասին պաշտօնապէս լուր տալ մերձաւոր և հեռաւոր բոլոր վիճակներուն, և ընտրողական ժողովին համար սահմանուած օրը ծանուցանել, և պատգամաւորներ հրաւիրել: Ընտրողական պայքարի ալ ասպարէզ բացուած չերևիր Էջմիածնի միաբանութեան մէջ, ինչ որ կը հետևի ոչ միայն լուրսին պահուելէն, այլ աւելի ընտրելիին մասին ամէն կողմէն միասիրտ և միաբան ձայն մը բարձրացուելէն, որուն հանդէպ հակառակ կարծիքներն ալ ստիպուեցան լռել, և բոլորովին խաղաղական ընտրութիւն կատարուեցաւ:

Տ. ՆԵՐՍԷՍ Ե. ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

2568. ՆԵՐՍԷՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հապիւ թէ Յովհաննէս Ը. Կարբեցի կաթողիկոսին մահուան լուրը տարածուեցաւ, յաջորդին անունն ալ միանգամայն սկսաւ կրկնուիլ ամէնուն, հնդկական թեմերէն մինչև եւրոպական վիճակները, ուր ուրեք որ հայ ժողովուրդ կը գտնուէր, և այդ միաձայն յայտարարութիւնը Ներսէս

Աշտարակեցիի անունը կը կրկնէր: Այնչափ մեծ եղած էր Ներսէսի գործունէութեան ազդած հմայքը, որ Կարբեցիին աթոռ բարձրանալը իբրև անիրաւութիւն նկատուած էր, և թէպէտ ընդդիմութեան ցոյցեր չեղան, սակայն բոլոր Տաճկահայ վիճակներ անոր անունը երբեք չյիշատակեցին սուրբ պաշտամանց մէջ, և թերևս ընդդիմութիւն ալ երևան եկած ըլլար, եթէ ռուսական պետութեան ազդեցութիւնը միտքերը չճնշէր: Ներսէս մեծ ազգասէր մը յայտնուած էր Մայրաթողը հարստահարութեանց կացութենէն օրինաւորութեան վիճակին, և խեղճութենէն բարօրութեան առաջնորդելով մեծ շինարար մը հանդիսացած էր ելեմտագէտ հանձարով և անխոնջ աշխատանքով և օգտակար հաստատութիւններով. մեծ յառաջադիմական մը ճանչցուած էր դաստիարակութեան և կրթութեան և ուսմանց և գիտութեանց համար ցուցուցած ջանքովը և նշանակելի արդիւնքովը, մեծ բարեկարգիչ մը եղած էր Վեդժումներու և անկարգութիւններու դէմ անաչառ պայքարովը, և ամէն կարգ ու կանոնի համար գործածած ճիգերովը: Այդ առաւելութեանց վրայ մենք կուզենք աւելցնել ինչ որ թերևս շատերուն մտադրութենէն վրիպած, բայց մեր տեսութեամբ իր արժանաւորութեանց պսակն է եղած: Ներսէս Պասքիչէ հալածուած, Կարբեցիէ անարգուած, պետական տեսութեամբ հեռացուած, և իբր աքսորական Բեսարաբիոյ անկիւնը նետուած, երբեք ինքզինքը չստորանացուց և աւելորդ գանգատներով տկարամիտ ողբերու, գժմանութեան ձևերու, վշտացեալ անգործութեան և պատշաճից պանցառութեան ցոյցեր չրաւ, այլ Վիենն ամէն հակառակութիւններէ բարձր պահեց, իր արժանապատուութիւնը պաշտպանեց, , իր գործունէութիւնը ընդարձակեց, և Բեսարաբիոյ անշուք և լքեալ վիճակը նախանձելի գրութեան վերածեց, իր անձն ալ միանգամայն պատկառելի ընծայելով : մեր համոզմամբ շատ աւելի մեծ է ձախող պատահարներու հանդէպ իր պատիւը պահելը, քան յաջող պարագաներու մէջ արդիւնաւոր ըլլալը: Ներսէս մեծութիւնն ալ ունեցաւ, և ահա թէ ինչո՞ւ ընդհանուր ազգը Վայն կուզէր կաթողիկոսական գահին վրայ տեսնել: Էջմիածնայ միաբանութեան մէջ ալ նոյն Վգացումը սկսած էր տիրանալ: Կարբեցիին ճնշումներուն ներքև լռութեան ստիպուողներ, և կացութեան տէրը շողոքորթելով իրենց յաջողութիւն փնտոողներ, բոլորովին փոխուած էին երբ այլ ևս Կարբեցիին չկար, և Ներսէսին անցեալը, վեհ հոգին և արդիւնաւոր կեանքը իր ազդեցութիւնը կուեննար, միտքերը կը գրաւէր և սիրտերը կը շարժէր

2569. ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆԹԱՅԸ

Մայրաթողոյ սինոդը ամէն կողմ ծանուցեր էր Յովհաննէսի մահը, և 1843 Ապրիլ 13-ին ընտրողական ժողովին բացումը սահմանուած, և 1842 ապրիլ 17-ի պաշտօնագիրով Աստուածատուր պատրիարքի ալ հաղորդած էր որ թէ ինքն և թէ Տաճկաստանի բոլոր թեմակալ առաջնորդները կամ անձամբ ներկայ գտնուին ընտրողական ժողովին, կամ իրենց կողմէն եկեղեցական փոխանորդ մը յղեն, և կամ գրով յայտնեն իրենց կարծիքն ընտրելիներ ցուցնելով, միանգամայն իւրաքանչիւր վիճակի ժողովուրդն ալ աշխարհական պատգամաւոր մը ընտրէ, որ անձամբ ժողովին ներկայ ըլլայ, և եթէ չկամենայ գալ, գրով իր քուէն տայ, ինչպէս որ Պօլօժէնիէի 11, 12, և 13 յօդուածները կը տրամադրեն (ՊՕԼ.2): Ասոր վրայ Կ. Պոլսոյ մէջ ազգային ժողով կը գումարուի ամրաներէ և արհեստապետներէ, որ կը յայտնէ թէ կատարեալ վստահութիւն ունի Էջմիածնի միաբանութեան վրայ, և անոր կը յանձնէ իր քուէն, և միակ պատգամաւոր կը նշանակէ Պետրոս Կեսարացի վարդապետը, Նիկոպոլսոյ կամ Շապին գարահիսարի առաջնորդը, իբրև պատրիարքին փոխանորդ: Աստուածատուր պատրիարքը բոլոր վիճակներուն ալ հաղորդած պիտի ըլլայ եկած հրաւեր, որ առաջնորդներն ալ առիթ կառնեն իրենց միտքը յայտնել և քուէնին ուղղակի Էջմիածնի միաբանութեան կը յանձնեն: Այս կարգին կը յիշուին Վան, Բաբեդ Եղուիա, Ամասիա, Չմշկածագ, Ակն, Արաբկիր, Արզնի, Ճանիկ, Կեսարիա, Չմիւռնիա, Նիկոմիդիա, Պանտրմ,

Ադրիանուպոլիս, Ռոտտոսթոյ և Վառնա: Իսկ Կարին, Կարս, Պրուսա, և Կիւրին ուղղակի պատրիարքին կը յանձնեն իրենց քուէն, թէպէտ իրոք անոնք ալ Էջմիածնի միաբանութեն յանձնած կըլլան: Վիճակային ժողովուրդներն ալ առաջնորդներուն կը հետևին և բոլոր Տաճկահայոց քուէները միաբանութեան վրայ կը կեդրոնանան, թէպէտ գործադրութեան մէջ հետևանք չունենար, քանի որ որոշ անձ մը չէր փոխանորդը, և ոչ որոշ վիճակի ներկայացուցիչ, որ կամենար ըստ այնմ քուէ տալ, այս պատճառով միակ Պետրոս վարդապետէն վատ Տաճկահայոց կողմէ քուէ տուող չկրցաւ ըլլալ: Երուսաղէմ ալ հասած էր հրաւիրագիրը, և Ջաքարիա Կոփեցի պատրիարքն ալ 1842 նոյեմբերին միաբանական հանրագրութեամբ իր քուէն Էջմիածնի միաբանութեան կը յանձնէր: Նոյն տարին դեկտեմբեր 25-ին գրութեամբ Կ. Պոլսոյ Աստուածատուր պատրիարքն ալ միևնոյն յանձնարարութիւնը կընէր և գիրը ճամբայ կը հանէր պատգամաւոր Պետրոս վարդապետի ձեռքով (ՅՆՁ.46): Հնդկաստանցի հայեր դարձեալ կը խնդրէին որ ընտրութենէ առաջ իրենց կանխաւ ըրած առաջարկները գործադրուին (2557), բայց Նիկողայոս կայսրը կը հրամայէ որ ըստ օրինաց պէտք է ընտրութիւնը կանխէ և Պօլօժէնիէի խնդիրը կաթողիկոսով նկատի առնուի: Այդ հրամանը 1842 յունիս 13-ին կը հաղորդէր սինոդին: Պօլօժէնիէն ընտրողական ձևերու մանրամասնութեանց չէր մտած, ուստի Կովկասի կառավարչապետը 1843 յունուար 5-ին սինոդէն ծրագիր մըն էր ուզած, և սինոդն ալ փետրուար 5-ին ներկայացած էր (ՅՆՁ.37), որ ինչինչ փոփոխմամբ ապրիլ 9-ին կառավարութենէն հաստատուեցաւ, կանոնք ի հրահանգութիւն վասն ընտրութեան անունի ներքև: Այդ կանոնները 33 յօդուածներու մէջ ամփոփուած են և կը պարունակեն այն սկզբունքները որ այսօր ալ գործածութեան մէջ են: Նախ չորս ընտրելեաց քուէարկութիւն բացականերուն քուէներն ալ հաշուելով. յետոյ չորսերէն երկուքի քուէարկութիւն միայն ներկաներու քուէրով, և երկուքէն մէկին նախադասուիլը կայսեր թողուած, հաստատութեանը հետ: Քուէարկութեանց մէջ նկատի կառնուի պարզ առաւելութիւնը առանց համեմատականի. երկրորդ քուէարկութիւնը կը կատարուի վատ վատ առաջին չորս ընտրելիներու վրայ: Քուէարկուաց թիւը որոշուած էր արդէն, 15 սինոդէն և միաբանութենէն և 2 իւրաքանչիւր վիճակէն: Այս գլխաւոր կէտերու վրայ կազմուած են սովորական մանրամասնութիւնները, ինչպէս որ կանուխէն ալ յիշած ենք (2523):

2570. ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ընտրողական ժողովը բացուեցաւ 1843 ապրիլ 13-ին և լրացաւ 17-ին Ջատկի օրը, ինչպէս որ մօտէն տեղեկութիւն ունեցողներ կը նշանակեն (ՅՆՁ. 47, 82), իսկ ուրիշներուն մայիս 18-ին դնելը (ՊԷՐ. 279. 514), պէտք է թիւրիմացութեան վերագրել կամ ընտրութեան լուրին Կ. Պոլիս հասնելուն թուական համարել: Գրաւոր քուէ կրկող բացականերուն մէջ պիտի համրուի Աշտարակեցի ալ, որ 1843 փետրուար 18-ին սինոդին գրելով չորս ընտրելիներ կը նշանակէ, և առաջին կը դնէ Պօղոս Ադրիանուպոլսեցի պատրիարքը, երկրորդ սինոդին նախանդամ և տեղապահ Բարսեղ արքեպիսկոպոսը, երրորդ Ջմիւռնիոյ եռեջնորդ Մատթէոս Չուխաճեան եպիսկոպոսը և չորրորդ Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսը (ՍԵԴ. 131), և կերպով մը կը յայտնէ իր մտքին ուղղութիւնը: Իսկ ժողովին ներկաներուն թիւը 40 ըսուած է (ՊԷՐ. 279), թերևս գրաւոր քուէներն ալ համրելով, Կի այդ թիւը չարդարանար գիտցուած քուէարկուներով: Սինոդ 8 և միաբանութիւն 7, Ռուսաստանի վիճակներ 12, և Պարսկաստանի վիճակներ 4, և Տաճկաստանէ 1, կը գումարուին 32. մինչ Ռուսաստանէ Ներսէս բացակայ էր, հաւանաբար ուրիշներ ալ: Ըստ այսմ նախադասելի և միւս տեղեկութիւնը, ուր ըսուած է թէ ազգային ժողովը միաձայն, 26 ձայն, Կաթողիկոս ընտրեց Ներսէսը (ՋԱՄ. Բ.162), որոնց մէջ են Պարսկաստանի և Հնդկաստանի ներկայացուցիչ Սիմէօն վարդապետ (04 ԲԱԶ. 351), և Տաճկաստանի ներկայացուցիչ Պետրոս վարդապետ (ՅՆՁ. 46):

Պօլօժէնիէն կը պահանջէր որ երկու անուններ ներկայացուին կայսեր, և իրօք ալ Ներսէս Աշտարակեցի Բեսարաբիոյ արքեպիսկոպոսին անունին հետ ներկայացուած է Չաքարիա Կոփեցի Երուսաղէմի պատրիարքին անունը (ՄՈՎ. 351, ՍԱԻ. 1253), բայց երկրորդ անունը հապիւ թէ կը յիշուի, մինչև ոմանց կարծել թէ Ներսէսի անունը միայն և առանց երկրորդին ներկայացուած ըլլայ կայսեր (ՅՆՁ, 83), և այս միտքով մեկնիլ կայսերական հրովարտակին մէջ ըսուածը, թէ ծանիցէ ամենայն ազգն Հայոց թէ զիջեալ ի միաշունչ փափաք սրտից նոցա, յայտնի երևալ հանդիսի մեծաւ յէջմիածին ի 17 աւուր ապրիլ 1843 ամի, մեք հաստատեմք զարհիեպիսկոպոսն Ներսէս յեստիճան պատրիարքի էջմիածնի և Կաթողիկոսի ամենայն Հայոց: Այդ բացատրութեան վրայ հիմնուելով հետևեցնողներ եղան թէ պատգամաւորները չէ թէ երկու կանտիտատ ընտրեր են ըստ Պալաժէնիայի, այլ միայն Ներսէսն ուկեր են (ՅՆՁ. 83): Սակայն ստոյգ յիշատակեր երկու անուն ներկայացուած ըլլալը կը հաւաստեն, որչափ ալ մեծ եղած ըլլայ Ներսէսի անունին վրայ յայտնուած միաձայնութիւնը: Միւս կողմէն հրովարտակին խօսքերը բաւական չեն Պօլօժէնիէով հաստատուած ընտրողական կանոնին խափանումը ենթադրելու: Գուցէ Ներսէսի անունին շուրջ գոյացած 26 քուէներու միաձայնութիւնը, (ՄՈՎ. 395) և երկրորդ անունին 17 քուէով մնալը առիթ տուած ըլլան երկրորդ ընտրելի առիթ տուած ըլլան երկրորդ ընտրելի անունն իսկ չյիշելու: Հարկաւ այդ պարագային մէջ մեծ կշիռ ունեցած է Կ. Պոլսոյ պատգամաւոր Պետրոս վարդապետի ի նպաստ Ներսէսի յայտարարութիւնը յանուն բովանդակ Տաճկահայոց, թէպէտ իր քուէն իբր մէկ քուէ միայն հաշուած է: Պետք է յիշել որ թէպէտ Տնձկահայեր Պօլօժէնիէի համակերպելով կաթողիկոսական ընտրութեան մասնակցեցան, բայց բնաւ վիճակներու թիւ և ցուցակ ներկայած չեն, այլ անորոշ թուով ըրած են իրենց յայտարարութիւնը և յանձնարարութիւնը յանուն բովանդակ Տաճկահայոց վիճակներուն: Դիտելի է ևսևս որ Կիլիկիոյ և Աղթամարի կաթողիկոսութեանց բնաւ յիշատակութիւն չենք գտներ, և կերևի թէ նոյնիսկ Սինողը վանց ըրած է կամ թէ մոռացած է անոնց յատուկ հրաւերներ ուղղել, թէպէտ էջմիածին ամէն յարաբերութիւն իսկած չէր այս մասնաւոր կաթողիկոսութեանց հետ, ինչպէս կը հաւաստեն Չահկեցիին (2018) և Շամախեցիին և Երևանցիին Աղթամարի հետ (2105), և Աղբակեցիին Կիլիկիոյ հետ ունեցած յարաբերութիւնները (1618):

2571. ՆԵՐՍԷՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ներսէս Շահապիպեան, Արագածոտն գաւառի Աշտարակ գիւղէն, առաջնորդ Բեսարաբիոյ և նոր Նախիջևանի որ այսպէս հանդիսի մեծաւ կաթողիկոսութեան կը կոչուէր, նոյնիսկ Աշտարակեցին է, որուն կեանքն ու գործերը, արժանիքն ու արդիւնքները բաւական տեղ գրաւեցին մեր պատմութեան մէջ, և պէտք չունինք անոր նախընթացը լուսաբանել: Ներսէս Բ. Կաթողիկոսն ալ Աշտարակեցի կոչուած է յոմանց յԱշտարակաց Բագրևանդայ ըլլալուն համար, բայց մենք նախադասեցինք վայն Բագրևանդի կոչել, զի Աշտարակեցի անունը շատ սովորական եղած էր Արագածոտնեցի Ներսէսի վրայ (359): Նորընտիր Ներսէսը հինգերորդ կոչուեցաւ անուանակիցներու կարգին, Պարթևէն, Բագրևանդացիէն, Իշխանցիէն և Կլայեցիէն ետքը, զի Սարգիս Գ. ի աթոռակից Ներսէսը թուահամարի չէր անցած վերջին ցուցակագիրներէն, թէպէտ անցած են ուրիշ աթոռակիցներ (1518), ապա թէ ոչ Ներսէս Զ. պիտի ըսուէր Աշտարակեցին: Բայց այժմ պարտաւորուած ենք հետևիլ գործածական դարձած թուահամարին: Ներսէս 1770-ին (2257) կամ 1771-ին (ՃՌԱ. Բ. 142) ծնած, 72 կամ 73 տարեկան էր կաթողիկոս ընտրուած ատեն, բայց կատարեալ կը պահէր իր ժրութիւնն ու գործունէութիւնը, և ազգկ իրաւամբ կը սպասէր անկէ նորանոր արդիւնաւորութիւններ հակառակ յառաջացած տարիքին: Մեր ընթերցողները տեսան արդէն Ներսէսը կեանքին վանապան հանգրուաններուն մէջ, Դանիէլի օգնական, Դաւիթ

Դանիելեան խնդրոյն ժիր գործիչ՝ մինչև Դանիելի աթոռ բարձրանալը, Դանիելի կաթողիկոսութեան ատեն աշխատող և հօգածու, Եփրեմի կաթողիկոսանալուն գլխաւոր ձեռնտու, և անոր պաշտօնավարութեան օգնական, բայց և միանգամայն դժուարութեանց հանդիպող, Տփղիսի առաջնորդ, պեղծումներու դէմ աներկիւղ մաքառող, ռուսկարսիկ պատերազմներուն պինդորական գործակից, Հայերը պատերազմին մասնակցութեան ոգևորող, Ռուսիոյ պետական շահերուն հետ ազգային մասնաւոր շահերը անտես չընող, և ճիշդ այդ վերջին տեսակէտով Կովկասի ասպարէզէն հեռացուած, և հեռաւոր Բեսարաբիոյ անկիւնը նետուած: Այս ամէն կէտերը պատմած ենք լիովին, և միայն մինչև կաթողիկոսական ընտրութեան օրը Բեսարաբիոյ մէջ անցուցած միջոցին համարը կը մնայ քանի մը խոսք աւելցնել: Ընդհանուր կերպով ակնարկեցինք արդէն թէ ինչպէս վեհօգի գտնուեցաւ Ներսէս բախտին ձախող դարձուածին հանդէպ, և ինչպէս գիտցաւ բարձր պահել ստորացնելու համար եղած ճիգերուն դէմ (2568): Միւս կողմէն շարունակեց իր շինարար և բարեկարգիչ աշխատութիւնները, այնպէս որ լքել և անկեալ կարծուած վիճակը նախանձելի ըլլալու չափ կարևորութիւն ստացաւ: Մշակեց իր յարաբերութիւնները տեղական անձերու հետ, պահեց կանուխէն ստացած յարդն ու վարկը այնպէս որ նոյնիսկ նախարարական անձերը սկսան հետամուտ ըլլալ, որ անոր արժանավայել գիրքը մը կազմեն: Այդ նպատակով էր որ Քիշնևի անձուկ շրջանակը ընդարձակուեցաւ մինչև Նորնախիջևան և Մոսկվա և Պետրբուրգ, և կատարեալ արքեպիսկոպոսարան եղաւ, մինչև յառաջն հապիւ յաջորդարանի կամ փոխառաջնորդարանի կը հաւասարէր: Առաջնորդի բնակարանն իսկ կառավարութիւնը գրաւած էր, և ետ դարձուեցաւ, հասոյթներ անբաւական էին և պետական շնորհներով առատացած: Ներսէս դիւանական գործողութեանց և եկեղեցական ծիսակատարութեանց ալ յատուկ մտադրութիւն դարձուց և բարեկարգութիւններ հաստատեց, հասութաբեր կալուածներ հիմնարկեց ամայի երկիրներու վրայ, այրիներու և անտէրունջ օրիորդներու հաստատուն օգնութիւններ պատրաստեց, իր սեղանէն անպակս կընէ պատուաւոր սեղանակիցներ, և առաջնորդարանի մէջ կանոնաւոր սնունդ կը գտնային կարօտներ և աղքատներ: Մանկանց դաստիարակութեան ալ յատուկ հոգածութիւն նւիրեց, ինչ որ առաջին տարիներէն իր մեծ նպատակն էր եղած, մինչև իսկ Տփղիսի Ներսիսեանի նման դպրանաց մըն ալ կազմել կը խորհէր, եթէ սովորական պէտքերուն պահանջածէն աւելի միջոցներ գտնէր: Ձեռքը բաց, սիրտը լայն, առատ ծախքերու կենթարկուէր առանց վարանման, և թէ պէտ պատրաստը պակաս և անբաւական էր, սակայն ոչ մի գործ կիսակատար թողուց, զի ուղղամիտ և օգտակար և իմաստուն մատակարարութիւնը ամէնքը կը յորդորէր պէտք եղածը իրեն չզլանալու (ՃՌԱ. Բ. 138-140): Այդ արդիւնքներն էին որ պինքը միշտ իր բարձրութեան վրայ պահեցին և կաթողիկոսական աստիճանին վերջիվերջոյ արժանացուցին, զի իր նախանձոտներ ու կասկածողներն իսկ համոզուեցան թէ իրենց կարծարծէն շատ աւելի բարձր է եղել Ներսէս իր արժանիքով և արդիւնքով, իր կարողութեամբ և ձիրքերով, ըսենք ևս , իր առաքինական զգացումներով:

2572. ՆԵՐՍԷՍ Ի ՊԵՏՐՔՈՒՐԳ

Ազգային ժողովին կատարած ընտրութիւնը, օրէնքին համաձայն հաղորդուեցաւ Կառավարչապետին, և նա ներկայեց կայսեր նախարարութեան միջնորդութեամբ: Կայսրը փութացուց իր հաւանութիւնը, բայց և ուզեց անձամբ տեսնել և տեսակցիլ Ներսէսի հետ, և ուղղակի իրեն յանձնել հաստատութեան հրովարտակը: Այդ մասին չափազանցնել և ստուգութենէ հեռու կը գտնենք Սաղիմական պատմագիրին ըսելը, թէ կաթողիկոսական ընտրութիւնը Չաբարիա Կովեցիին վրայ կայացած ըլլայ, բայց նորա ոչ կամեցեալ թողուլ ըզսուրբ աթոռն Երուսաղէմի, զՆերսէս, Եպիսկոպոս յԱշատարակաց ընծայեցուցանէ փոխանակ ընդ առանձին իւրոյ (ՍԱԻ, 1253):

Ներսէսի ուղղուած հրաւերը հաղորդուեցաւ մայիսի կէսին, ընտրութենէն ամիս մը ետքը, ինչ որ կը ցուցնէ թէ գործին կարևորութիւն տրուած էր, և Ներսէսի անձն ալ յատուկ ուշադրութիւն կը հրաւիրէր: Ներսէս պահ մը կը մտածէ չերթալ և հրաժարիլ, անստոյգ տեսնելով ելքը և անվստահելի պետական և կառավարական շրջանակներուն նախընթացը, բայց շուտով մէկդի կը թողու այդ մտածմունքը, և նախարարի գրութիւնը ստանալուց տասն օր անցած կը վճռէ երթալ Պետրբուրգ, և անյտեղ գտնելիք տրամադրութեանց համեմատ տալ իր որոշումը: Հրաժեշտի ողջոյնը կու տայ ժողովրդին, յատուկ պատարագ կը մատուցանէ, և կը յայտարարէ որ կերթայ Պետրբուրգ , բայց որ ինչ անդ անցնելոց է ընդ իս ոչ գիտեմ (ԳՐԾ. Ի. 22): Ըստ այսմ Ներսէս յունիսի սկիպըը թողուց Թիշնէր երեք հետևորդներով, Թադէոս Բէգնապարեան վարդապետ, Յարութիւն Յովհաննէսեան քարտուղար, և Սեփանոս Սամուէլեանց սպասաւոր: Ճամբան Լիպովից քաղաքը տկարութիւն կը վգայ և կը պարտաւորուի քանի որ հանգիստ ընել և դարմանուիլ, և մեկնելէն երեք շաբաթ ետքը, Պետրբուրգ կը հասնի հիւրընկալուի Լապարեանց ապարանքը: Նիկողայոս կայսր ամառանոց կը գտնուէր, ուստի մինչև որ դառնայ Ներսէս նախարարներուն կայցելէր, բայց յօգնութիւնը, գուցէ և ձնիտղ դեպի մը ապդեցութիւնը, պինքն անկողնոյ պարտաւորեց սաստիկ թուլութեամբ մկ որ հետզհետէ կը սաստկանար (04. ԲԱԶ.256), և անհնար կընէր տեղէն շարժուիլ: Կայսրը կուպէր պայն ընդունիլ, բայց անհնար էր, ինքն ալ արտասահման պիտի երթար, ուստի առանց այլևս ուաջնելու հաստատութեան հրովարտակը տուաւ, և Աղէքսանդր Նևսքի շքանշանին ադամանդապարդ աստիճանը շնորհեց, (04, ԲԱԶ. 257), և ներքին գործոց նախարար Պերովսկիի յանձնարարեց ամէն խնամք ընել և առողջացնել: Երեք պալատական բժիշկներ օրը երեք անգամ կայցելէին, շարունակ գեղէր կը փոփոխէին, և կերևի թէ մինչև իսկ յանդուգն փորձեր ալ կընէին, պի տրուած գեղերուն ներքև ձախող փոփոխումներ կը տեսնուէին հիւանդին վրայ, և հիւանդը բոլորովին դալկացած իբր անվգայ կը մնար, խօսելու իսկ անկարող, և մարմնոյ բնական գործողութիւններն ալ չէր իմանար: Պերովսկին իբր կայսրէ յանձնարարութիւն ստացած, և իշխան Խաչատուր Լապարեան իբրև տանուտէր, ամէն պարագաներու կը հետևէին, պալատական բժիշկներուն ապսպրանքները արգիլելու կը համարձակէին, նմանաբոյժ (homeopathe) բժիշկներ ալ կը բերէին, և մինչև իսկ մաքնիսական և քնէածական փորձերու կը դիմէին և քննութիւններ կատարել կու տային : Այդ շփոթ և գրեթէ յուսահատական վիճակին մէջ, անգամ մը հիւանդագին անակնկալ կերպով ջուր ուպելը բարւոքման սկզբնաւորութիւն կըլլար, և հետզհետէ դարմանելով անկողինը թողլու և գործերու հետևելու կարող կըլլար: Այնչափ անակնկալ էր Ներսէսի ապաքինիլը, որ մինչև իսկ բժիշկներ կը յայտարարէին թէ ասում են որ այժմ հրաշք է (04. ԲԱԶ. 342-343):

2573. ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ Երբոր Ներսէս բաւական կապդուրեցաւ, կայսերական ունկնդրութիւնը տեղի ունեցաւ 1843 նոյեմբեր 28 կիրակի օր (ԶԱՄ. Բ.162): Ներսէս Պետրբուրգ հասած էր յունիսի վերջերը (2572), որով հինգ ամիսներու միջոց մը անցաւ մինչև որ կատարուէր այդ պաշտոնական պայմանը, որ ըստ ինքեան քանի մը օրէն կրնար լրանալ: Առաջ կայսեր բացակայութիւնը , վերջին ծանր և վտանգաւոր և երկար հիւանդութիւնը պատճառ եղան այդ յապաղման: Կայսերական ունկնդրութեան ելքը ամենամեծ յաջողութիւն եղաւ, և Նիկողայոս կայսր սիրտի հանդարտութիւն վգաց մօտէն ճանչնալով այդ Ներսէսը, որուն մասին այնչափ ձախող տեղեկութիւններ տրուած էին, և իբրև վտանգաւոր անձ մը ներկայացուեր էր, և ինքն ալ վգուշաւոր միջոցները հրամայած էր: Իբրև արտայայտութիւն այդ գոհունակութեան ունինք կայսեր կողմանէ Պերովսկի նախարարին ուղղուած խօսքերը. Ես այսօր շատ հաճելի ունկնդրութիւն ունեցայ, շնորհակալ եմ քեզանից ընտրութեանդ համար, իբր պի նախարարի

կայութեամբ էր որ ազգային ընտրութիւնը հաստատուած էր. Շատ ափսոս որ յառաջագոյն թողուած ենք այս արժանաւոր և վաստակաւոր անձին (04. ԲԱԶ. 344): Այս ալ անուղղակի մեղադրանք էր Պասքիչի բռնած ուղղութեանը (2461): Մանրամասնութիւններ չունինք Կայսեր և Ներսէսի մէջ խօսուածներուն մասին, և ոչ ինքն տեղեկութիւն տուած է Սինոդի ուղղած կոնդակին մէջ (86 ԱՐՇ. 785), և ինչ որ Կ. Պոլսեցի պատմագիրը յառաջ կը բերէ իբրև Ներսէսի և Նիկողայոսի կողմէն եղան խօսքեր և յայտնուած կարծիքներ, հեռուէ հեռու լսուած կրօններ են որ ոչ ճշմարտանման են և ոչ ոչ վաւերական աղբիւրներէ քաղուած: Միայն գիտենք թէ շատ երկար չէ եղած տեսակցութիւնը, զի Ներսէս հետևելով Խաչատուր Լապարեանի հրահանգին չէ ուլած կայսրը ձանձրացնել, և ինք առաջին ոտք ելած է մեկնելու, թէպէտ կայսրը յոտնակոյս ալ խօսակցութիւնը շարունակած է: Հարկաւ Ներսէս յիշած է իր անձին անհատապէս և Հայոց ազգին ընդհանրապէս Ռուսիոյ համար կատարած աշխատութիւնները, յանձն առած կոհողութիւնները և վկայուած հաւատարմութիւնը, բայց չէ կրցած խոսիլ ինչ որ Քիշնե եղած ատեն միտքը դրած էր խոսիլ եկեղեցու օգտին և կաթողիկոսի իրաւանց մասին, և անոնց համեմատ պաշտօնին յանձնառու ըլլալ (04 ԲԱԶ 256), զի ամէն պաշտօնական գործողութիւններ լրացած էին իր հիւանդութեան ժամանակէն, և այլևս յանձնառութեան կամ հրաժարման տեղի չէր մնացած: Ներսէս կայսր ներկայացած ատեն հիւանդութենէն մնացած տկարութեան հետքերը վրան կերևցներ, այնպէս որ հրաման եղաւ զայն սանդուխտներէն վեր հանել կայսերուհոյն գործածուած բազկաթոռով և խոր ձմեռուան ամիսներու մէջ Պետրբուրգէ Էջմիածին դառնալը անյարմար տեսնելնուն, կայսրը հրամայեց որ ձմեռը Պետրբուրգի մէջ անցուցնէ, և խնամուի, և լիովին կազդուրելով գարնան մեկի իր աթոռը (ՊԷՐ. 515): Յաջորդ օրերուն մէջ դեկտեմբեր 4-ին և 5-ին (ՍԵԴ. 149) Ներսէս այցելեց կայսերուհոյն , գահաժառանգի ն, կայսեր եղբօր, և ներկայ ալ գտնուեցաւ կայսեր դստեր Ալէքսանտրայի պսակադրութեան հանդէսին:

2574. ԱՆՈՒՆԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ

Աւանդական և ծիսական կանոն է, նորընտիր կաթողիկոսներուն անունը եկեղեցական պաշտամանց մէջ յիշատակելու համար սպասել անոնց օծուելուն, որ իրենց գահակալութան իսկական նուիրագործումն է: Այդպէս կը գրէ նաև կաթողիկոսական օծման մաշտոցը, և նոյնը բացայայտ կրկնած են վերջին ատեններ Յակոբ Շամախեցի և Ղուկաս Կարնեցի կաթողիկոսները իրենց կանոնական թուղթերով, որ ձեռագիր կը պահուին Էջմիածնի մատենադարանը: Ներսէսի ընտրութենէն բաւական ատեն անցներ էր, թէ ազգային և թէ պետական բոլոր պաշտօնական պահանջները լրացած էին, իսկ Ներսէսի մայր աթոռ գալն ալ դեռ երկար ատեն պիտի ուշանար, ծանր հիւանդութիւնը և մանաւանդ կայսեր հրամանին հետևանք, որով կաթողիկոս գտնուելով և պաշտօնի մտած ըլլալով հանդերձ պիտի շարունակէր աթոռոյ պարապութեան ձևը, որ 1842 մարտ 26-ին սկսած էր: Թէպէտ օծումը կատարուած չէր, բայց Էջմիածնի սինոդին պրոկուրորը 1843 հոկտեմբեր 29 և նոյեմբեր 8 գրութիւններով նախաձեռնութիւն էր ստանձնէ սինոդէա պահանջել , որ Ներսէսի անունին յիշատակութիւնը սկսի, բայց սինոդը նոյեմբեր 1ին օրինագրով կամ որոշումով չի համակերպիր առաջարկին յառաջ բերելով հնաւանդ օրէնքը, բայց և միանգամայն կը հարցնէ թէ մի գուցէ ստացեալ իցէ ի ծայրագոյն իշխանութենէն զպահանջ ինչ (ՍԵԴ. 62): Գործը Կովկասի կառավարչապետին և ռուսական նախարարութեան առջև կելլայ, Ներսէսի հարցում կուղղի, որ եկեղեցական կանոնով օծումէ առաջ յիշատակութեան արգիլուած ըլլալուն մասին չի կարողանում հաստատուն պատասխան տալ, և սինոդին հարցում կուղղէ: Բայց պատական թելադրութեանց համաձայն 1844 յունուար 21-ին հրաման կուզէ Բարսեղ տեղապահին, որ անկախաբար սինոդական որոշումէն և իբր հոգևոր պաշտամանց գործ, որ

Պօլօժէնիէի 25-րդ յօդուածով կաթողիկոսին կենթարկուի (ՊՕԼ. 4), իբր կաթողիկոսական տեղակալ, յիշատակութիւնը սկսի և եկեղեցիներու ալ հրամայէ յիշատակել, ինչպէս որ տեղապահն ալ կը հաղորդէ սինոդին մարտ 23-ին տեղեկագիրով (ՍԵԴ. 157-166), որ կը հանդիպի աւագ հինգշաբթի օրուան, և հարկաւ առաջիկայ Ջատկի օրը, 1844 մարտ 16-ին սկսած է յիշատակութիւնը: Իսկ սինոդը բաւականացած է մայիս 8-ին յաւելուած մը ընել իր առաջին որոշման և անհակառակ համակերպիլ: Մենք կը սիրենք ամուր պահել կաթողիկոսական գահակալութիւնը օծումին կապելու օրէնքը, և միայն անկէ ետքը ներեալ համարել անունին յիշատակութիւնը: Սակայն ամէն օրէնք իրեն բացառութիւնները կունենայ և Ներսէսի պարագոյն այնպիսի բացառիկ պայմաններու ներքև էր, որ չենք վարանիր բացառութիւնը համարիլ, բայց ոչ երբեք օրէնքը դադարած օրէնքը փոփոխուած կարծել, ինչպէս յետին ժամանակներու մէջ սկսան օգտուիլ Ներսէսի համար կատարուած բացառութենէն: Ասոր պարագայն եղական էր իր տեսակին մէջ, և ոչ միայն Էջմիածին ալ Կ, Պոլիս ալ յարգեց բացառութիւնը, զի օծուած Եփրեմի յիշատակութիւնը դադարեցնող, և օծուած Յովհաննէսի անունը չյիշատակող պատրիարքութիւնը փութաց զրկուած Ներսէսի յիշատակութիւնը կատարել, ինչպէս առաջիկայինպիտի պատմենք: Եթէ Էջմիածնի մէջ սկսած յիշատակութիւնը Ներսէսի կամքն ալ խառնուեցաւ, Կ, Պոլսոյ մէջ եղած յիշատակութեան մէջ նա մաս չունեցաւ, և Էջմիածնի համար յայտնուած կամքին հրամանին մասին, մենք ալ համաձայն ենք կրկնել, թէ նա չէ գործած փառասիրութեամբ, որի նշոյլն անգամ չկար նորանում (ՍԵԴ. 158), այլ աւելի տեղի տալով պետական պահանջման կամ թէ կանոնական գրական օրէնքներու նուազ տեղեկութեամբ:

2575. ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՅ ԽՆԴԻՐՆԵՐ

Ներսէս հինգ ամիս Պետրբուրգի մէջ մնացած էր կայսեր ներկայանալէն առաջ (2573), նոյնաչափ ալ մնաց ներկայանալէն ետքը, և համաձայն կայսերական հրամանին, և նոյնիսկ իր տկարութեան պահանջին, գարնան սկիզբը, 1844 մայիս կէսին մեկնեցաւ Պետրբուրգէ (04, ԲԱԶ. 351): Այդ երկրորդ հինգամեային մէջ առողջ էր և կարևոր գոծերով կարող, և իրօք երկու յոյժ կարևոր կէտեր կային Հայոց և Ռուսաց յարաբերութիւնները ճշդելու, այնպէս բոլորովին անհիմն բան մը ըսած պիտի չըլլանք, եթէ Ներսէս ձմեռն ի բուն Պետրբուրգ պահելուն հրամանին մէջ, Ներսէսի առողջական վիճակէն վատ, այդ երկու կէտերը լուսաբանելու նպատակն ալ ենթադրենք: Այդ երկու կէտերն էին, Ներսէսի վերագրուած հայկական քաղաքական կեանքի մը սկզբնաւորութեան ծրագիրը (2461), և Հայոց եկեղեցոյ դաւանութեան ռուսական կամ որտոտոքս դաւանութեան հետ համաձայնութիւնը (2559): Մինչև մեր օրերը հասած աւանդական վրոյցներ կը հաւաստեն այդ կէտերուն պաշտօնական կամ կէս պաշտօնական բանակցութեանց նիւթ եղած ըլլալը, թէպէտ մեր ձեռքը հասած լաւագոյն յիշատակներ որոշ և յատուկ տեղեկութիւններ չեն տար: Առաջին կէտի նկատմամբ տարածուած տեղեկութիւնն է, թէ Պասքևիչ Նիկողայոսի անունով կամ թէ Նիկողայոս Պասքևիչի ձեռքով, որոշակի ակնկալութիւններ ներշնչած են Ներսէսի Պարսիկներէն առնուած հայկական գաւառները ինքնաւար ձևի մը վերածելու ռուսական հովանաւորութեան ներքև, և հետզհետէ պայն ընդարձակելու, և թէ այս ակնկալութիւնն էր որ այնչափ բուռն կերպով ոգևորեց Ներսէսը զինուորական և քաղաքական ձեռնարկներու, իբր թէ ռուսական բանակին զօրագլուխներէն մէկն ըլլար: Ներսէսի ծոցը խնամով պահուած թուղթը (2461), այդ եղելութեանց հաւաստիքը կը համարուի, և Ներսէսը Բեսարաբիա հեռացնելն ալ սոյն պարագաներուն հետևանքը, որովհետև ինչպէս իր տեղը ըսինք, պետական տեսակէտն իրականացման չսահմանուած ակնկալութիւններ էին, որ կը ներշնչուէին տիրապետութիւնը դիւրացնելու, սակայն այն օրերէն ի վեր 15 տարիներ անցեր էին, և ամենայն ինչ տարբեր

կարգադրուած և օրինագրուած և գործադրուած էր: Միայն պէտք կըլլար ստուգել արդեօք Ներսէս հին գաղափարներով տոգորուած է՞ր տակաւին, կամ թէ ի՞նչ ուղղութեամբ պիտի գործէր նա մայրաթոռոյ վրայէն, որ ըստ այնմ վստահութիւն մը ստացուի, կամ թէ պատշաճ միջոցները գործածուէին: Մենք Ներսէսը տեսանք որչափ բուռն և կամ յախուռն իսկ իր ձեռնարկներուն մէջ, նոյնչափ ալ հանդարտ և խոհական պարագաները կշռելու և հանգամանաց յարմարելու մէջ: Այնպէս որ ենթադրելի իսկ չէր, որ նա հին անցուդարձերը գրգռէր, կամ թէ կատարուած իրողութիւնները շրջելու գաղափարներով օրօրուէր: Հարկաւ այս տրամադրութեանց համեմատ եղած են խօսակցութիւնները, նախարարներ փարատած են իրենց միտքի վարանումները, և ըստ այսմ պէտք է իմանալ կայսեր խօսքերն ալ՝ Շատ ափսոս, որ յառաջագոյն թողած ենք եղեր այս արժանաւոր և վաստակաւոր անձին:

2576. ԲԱՂԲԵԴՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Երկրորդ խնդիրը, որ է դաւանութեան խնդիրը, սկսած էր պաշտօնապէս յուզուիլ Յովհաննէսի վերջին օրերը (2559), և Յովհաննէսի ստորագրութեամբ յայտարարութիւն մըն ալ տրուած էր, ուսկից այնպէս կը քաղուէր, թէ հայադաւան եկեղեցին ըստ ամենայնի համաձայն է յունադաւան եկեղեցւոյն, թէ Բաղկեդոնի ժողովը կընդունի, և թէ տարբերութիւն չունին երկու եկեղեցիներու դաւանութիւնները: Այն ատեն ռուսական սինոդը և կառավարութիւնը կարելոյն չափ լիակատար մեկնութիւն ուզած էին Հայոց դաւանութեան վրայ, և էջմիածնի սինոդը ընտրելի կաթողիկոսին թողած էր պաշտօնապէս պատասխանել, իսկ Ղորվանեան պրոկուրորին պատրաստած բացատրութիւնը պաշտօնական չէր սեպուած (2560): Բնական էր որ խնդիրը վերարձարծուէր երբ կաթողիկոսը Պետրբուրգ կը գտնուէր, այն փափաքով որ Ներսէս հանդիսապէս հաստատապէս հաստատէր երկու եկեղեցեաց ըստ ամենայնի նոյնութիւնը, որ պիտի առաջնորդէր եկեղեցիներու ձուլման, ինչպէս հանդիպած էր քաղկեդոնիկ Վրացիներու: Ռուսական եկեղեցւոյն հետ ըստ ամենայնի նոյնութիւնը պատճառ եղած էր Վրաց կաթողիկոսութեան ջնջուելուն, յատուկ եկեղեցւոյ առաւելութիւնը կորսնցնելուն, սեփական իրաւասութեան դադարելուն, և ռուսական եկեղեցւոյ մետրոպոլտութեան մը վերածուելուն: Երբ Ներսէս Պետրբուրգ էր, կրօնական գործերով վբաղողներ կը շարունակէին յաճախել Ներսէսի մօտ, և դաւանական խնդիրներ կը յուզէին գլխաւորապէս Բաղկեդոնի ժողովի մասին: Ասոնց մէջ յանուանէ կը յիշատակուին, Սկրերից՝ օտար դաւանութեանց տեսուչ, Սիմաչկա արքեպիսկոպոս հռոմէականութենէ դարձած սինոդի անդամ, Մուրավիէվ կայսերական սենեկապետ և Հայոց վրայ դիրքի մը հեղինակ, և Վօլկոնսկի պալատն նախարար: Ասոնք և ուրիշներ Ներսէսը կը յորդորէին Բաղկեդոնի ժողովը ընդունելու յայտարարութիւն ընել, որ միակ կէտն է, որով յունադաւան և հայադաւան եկեղեցիներ կը տարբերին: Ներսէս թէ պատմական և թէ վարդապետական փաստերով կը բացատրէր այդ յայտարարութեան անհնարութիւնը, երեք ժողովներու վրայ համաձայնութիւնը ուղղափառութեան հիմ կը ցուցնէր, Յոյներուն երկար տարիներ Բաղկեդոնը չընդունիլը կը պատմէր, և առանց Բաղկեդոն ընդունելու ուղղափառական համաձայնութիւնը կը պաշտպանէր: Գործնական պատճառներու ալ անցնելով կը հաւաստէր որ եթէ ես ընդունիմ էր Բաղկեդոնի ժողովը, ոչ մի հայ ինձ չհետևի. հայեր իրենց առաքելաւանդ կրօնն անփոփոխ են պահել զոհելով ամենայն ինչ, և կը յիշեցնէր Եզրի պարագան, և Յունաց ճիգերը և Լատինաց հրապուրանքը: Յայտնապէս գրուած չենք գտներ թէ պաշտօնապէս ալ այդ առաջարկը Ներսէսի ներկայացուած ըլլայ, ինչպէս որ բերանացի վրոյցներ մինչև այսօր կը կրկնեն, սակայն պաշտօնական շրջանակի կողմէ հետապնդութիւն եղած է հարկաւ, և վերոյիշեալ անձեր լոկ անձնական նախաձեռնութեամբ չեն

մտած խօսակցութեանց մէջ: Թէպէտ գիրը ձեռուրնիս չունինք, սակայն Ներսէսի կողմէն Ռուսաց սինդիկին ուղղուած գրութիւնը կը հաւաստէ, թէ անոր կողմէն ալ Ներսէսի առաջարկներ եղած են, որ սա ալ հարկ վագացած է գրաւոր պատասխան տալ: Այդ գրութեան մէջ Ներսէս մանրամասնութեանց չի մտներ, այլ բաւական կը սեպէ յիշել, թէ Յունաց Մանուէլ կայսեր և Միքայէլ պատրիարքին ժամանակ այդ խնդիրները ցեցուած և պարզուած են, Ներսէս Շնորհալի և Գրիգոր Տղայ կաթողիկոսներու ձեռքով, և Հայոց ուղղափառութիւնը լուսաբանուած է, ուստի բաւական կը սեպէ յղել սինդիկին անոնց, գիրերուն ուսերէն թարգմանութիւնները, որոնք 1847-ին տպագրուած և հրատարակուած են: Եւ ի վերջոյ կառաջարկէ որ Ռուսաց գիրքերէն և յետկապէս դպրոցական դասագիրքերէն հրամայեն վերցնել զծանրալուր բառս ընդդէմ Հայոց եկեղեցւոյ: Հաւանաբար բարձր տեղեր ազդեցութիւն ունեցած են Ներսէսի փաստերը, և համոզում գոյացած է գործին անհնարութեան վրայ, և այդ տեսակէտով վանց եղած պաշտօնական առաջարկութիւնը: Նշանակալից են Վօլկոնսկիի խօսքերը Ներսէսը լսելէն ետքը, որ եթէ համաձայնէր ընդունելու Քաղկեդոնի ժողով, առաջինը ես պիտի ստոր անուանէի նորան (04.ԲԱԶ.350), որ ըսել է թէ Ներսէս կրցած է իր խօսակիցները համոզել Հայ եկեղեցւոյ գրութեան ուղիղ ըլլալուն վրայ: Նշանակալից է նաև Նիկողայոս կայսեր հրաժեշտի պահուն ըսածը. դուք աշխատեցէք որ կաթողիկոսութիւնը մուտք չգտնի ձեր ազգի մէջ, այս ալ ըսել է, ամուր կեցէք ձեր դաւանութեան վրայ: Այս կերպով փակուած է այդ խնդիրն ալ, և Ներսէսի հօր պաշտպանութիւնը իսպառ դադրեցուցան և Ռուսաց կողմէն հայերը Քաղկեդոնիկ դարձնելու միտքն ու ջանքերը:

2577. ԲԱՆԻ ՄԸ ՄԻԶԱԴԷՊԵՐ

Ներսէսի Պետրբուրգ գտնուած միջոցին վանապան միջադէպեր կը պատմվին, որոնք որչափ ալ մասնաւոր դիպուածներ են, սակայն յատուկ կերպով կը ներկայացնեն Ներսէսի անձն ու բարձր վագացումները: Լեհաստանի կառավարչապետ Պասքևիչ Վօրավար, որ այնչափ հակառակութիւն վարած էր Ներսէսի դէմ, այն օրեր Պետրբուրգ գտնուելով Ներսէսի այցելութեան եկաւ, և անցեալը թողնենք յայտարարութեամբ բարեկամական տեսակցութեան սկսաւ, և Ներսէս սիրալիր և յարգալից ընդունելութիւն ըրաւ անոր: Պասքևիչի ցաւ էր եղած, որ կառավարութիւնը ` իրեն Ներսէսի թշնամի կարծելով, իրեն կարծիքը չկամեցաւ իմանալ նորա մասին երբ ընտրութիւնը կայացաւ, և կերևի թէ կարծիքը փոխած ըլլալով, նպաստաւոր միտք յայտնելու պատրաստութիւն ունէր (04. ԲԱԶ. 350): Լապարեանց տանուտէր Իշխան Խաչատուր, որուն մօտ իջևանած էր Ներսէս, անոր հաճելի բան մը ըրած ըլլալու միտքով առաջարկութիւն մը պատրաստէր էր կայսեր մատուցանելի, որով կաթողիկոսը երկու հարիւր հազար ռուբլի պիտի կայսերական գանձէն ուզէր, փոխարինաբար առանց տոկոսի ուրիշ տարիների համար, որպէսզի վանապան տեղերում ուսումնարաններ հիմնէր: Ներսէս հապիւ թէ իմացաւ ուժգնակի մերժեց, յանձն չառաւ պետութենէ օգնութիւն մուրալ և անցելոյն մէջ ազգային օգնութեամբ ամէն ձեռնարկ գլուխ հանած լինելը, վստահութիւն յայտնեց թէ Աստուծոյ ապաւինելով և Հայոց ազգի առատաձեռն նուէրներով կը յուսայ նորէն յաջողիլ (04. Բապ. 349-350): Նա մերժեց նաև Լապարեաններու պատրաստել տուած մեծ կնիքը, որուն մէջ ուրիշ եկեղեցական վարդերու հետ փորագրուած էին երկու աշտանակներ որոնցով յունադաւան եպիսկոպոսներ ժողովուրդը կօրհնէն, զի Հայկական ծէսին հակառակ կը այնպիսի յաւելուած մը (04, ԲԱԶ. 350): Նմանապէս չընդունեց յունադաւան եպիսկոպոսներու գործածած ուրջառի նման ոսկեթել դիպակէ փիլոնը, զոր Յովսէփ Արղութեան ալ գործածէր էր Պօղոս կայսեր ներկայացած ատեն, և միայն վերարկուով ներկայացաւ Նիկողայոս կայսեր , պնդելով թէ մենք փիլոնը միայն եկեղեցում պիտի ծածկենք (04. ԲԱԶ. 344): Արգիլեց նաև Պետրբուրգի եկեղեցւոյն մէջ սովորութիւն եղաթ Ահիւ եղերուք, երկիւղիւ եղերուք

երգեցողութիւնը փոխանակ Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք ըսելու, իբր զի կացցուք համաձայն էր գերմաներէն կատցէ (katze=կատու) բառին (04. ԲԱԶ, 350): Անգամ մը Պերովսկի նախարար Ներսէսի յայտնեց թէ Էջմիածնի Պրովկուրոր Ստեփան Մատինեանց առաջարկած է Էջմիածինէ հեռացնել Յովսէփ Տէր Մարուգեանց և Ստեփանոս Արարատեանց եպիսկոպոսները, իրանց վատ բնաւորութեան պատճառով: Ներսէս իսկոյն խնդրեց իրեն թողուլ անոնք խրատելու գործը, այլ անհնար եղաւ հաւանիլ, զի կայսերական հրամանը տրուած էր արդէն, միայն արքայազնը փոփոխուեցաւ հայաբնակ Մուղղոկ քաղաքը, փոխանակ խոր Ռուսաստանի Կալուգա նահանգին, ուր բնաւ հայաբնակութիւն չկար: Ասոնք և ասոնց նման միջադէպէր լիովին կը հաստատեն Ներսէսի վրայ վեհօգի անձի մը ձիրքերը, հակառակորդին հանդէպ անյիշաչար, եկեղեցական և ազգային սովորութեանց և զգացմանց հաւատարիմ, ստորնութենէ խուսափող, և մանաւանդ դաւանական խնդիրներու մէջ հմուտ ջատագով և նախանձահոյ պաշտպան իր եկեղեցոյն:

2578. ՆԵՐՍԷՍ Ի ՄՈՍԿՈՒԱ

Ներսէս Պետրբուրգ հասած էր 1843 յունիսի վերջերը (2572), և մեկնեցաւ 1744 մայիսի կէսին (04. ԲԱԶ.351), որ ըսել է թէ այնտեղ մնաց իբր տասնուկէս ամիս, կայսեր ապաքինութեան, և ձմեռնային խստութեան պատճառներով: Ինչ որ իր պաշտօնին ձեռնարկելու համար պահանջուած պայմաններն էին, լրացած էին օծումէն վատ, որ այլևս երկրորդական ձևակերպութիւն միայն կերևար, որուն կատարման կարծես թէ մեծ կարևորութիւն չէր տրուեր, և Ներսէս ալ փոխանակ Էջմիածնի փութալու օգտակարագոյն սեպեց Ռուսիոյ հայաբնակութիւնները այցելել հանդարտօրէն, կացութիւնը իմանալ, գործերը կարգադրել, ևս և մայրաթոռոյ պէտքերուն համար ազգային միջոցներ հայթհայթել և միտքեր պատրաստել: Պետրբուրգէ Մոսկուա ձամբուն վրայ այցելելիք տեղ չկար, ուստի ուղիղ եկաւ Մոսկուա, և հոն մնաց երկու ամիս, որ է ըսել մինչև 1844 յուլիսի վերջերը: Այդ միջոցին տեսնուեցաւ նշանաւոր ազգայիններու հետ, հետաքրքրուեցաւ եկեղեցիով և ժողովուրդով, քննեց Լազարեան ձեմարանը, որուն ուսուցչութենէն հրաժարեցուց Դաւիթովը, որ հայ աշակերտներին համոզում էր հայերէն ընթերցանութեամբ չպարապել, և տեղը նշանակեց Մարոժկին (04.ԲԱԶ.351, կատարեց Գասպարեան անկելանոցին հանդիսաւոր բացումը, այցելեց իր հին բարեկամ և երբեմն Կովկասի կառավարչապետ Երմոլովի, սերտ յարաբերութիւն կապեց ուսւ մետրապոլիտ Ֆիլարետի հետ, որ համարձակ կը վկայէր Ներսէսի համար, թէ իւր կրօնական հայացքներով բարձր կանգնած մարդ է, բայց ինքն ալ Ռուսաց անուանի գիտնական հոգևորականն էր: Վերջին օր որ Ներսէս Մոսկուայէ պիտի մեկնէր, Ֆիլարետ անոր ուղեկցեցաւ մինչև 45 մղոն, մինչև Նիկոն պատրիարքի հիմնարկած Նոր Երուսաղէմը, Երուսաղէմի սրբավայրերուն նմանութեամբ շինուած, որ Ռուսերը աւելի այնտեղ գան ուխտի, քան թէ իրենց հարստութիւնը տանին Տաճկաստան: Այստեղ գրկախառն համբուրելով հրաժեշտի ողջոյնը տուին մետրոպոլիտն ու կաթողիկոսը, նա դարձաւ Մոսկուա և սա ուղևորեցաւ դէպի Բեսարաբիա: Մոսկուայի մէջ տեղի ունեցած միջադէպներն յիշենք Սալունեցած Սալլանթեանի հանդիպածը, լանթեանի հանդիպածը, որ այն ժամանակ Մոսկուայում կենում էր առանց պաշտօնի: Սալլանթեան կը վախնար Ներսէսի ներկայանալ, վասնզի գիտէր թէ Ներսէսի ձեռքն ինկած է Յովաննէսի վերջին օրերը իր գրած մէկ նամակը որով Ներսէսը պառամեալ և կուրացած և իլացած և մահուան մօտեցած ցուցնելով կառաջարկէր վայն դադրեցնել և Բեսարաբիայի առաջնորդութիւնը իրեն յանձնել: Նամակը Յովհաննէսի մահուանէ ետքը հասած էր, և Բարսեղ տեղապահէն Ներսէսի հաղորդուած: Սալլանթեան ոչ միայն չներկայացաւ, այլ Ներսէսի կոչին և հրաւերին ալ չանսաց, ասելով թէ նա ուզում է ինձ խայտառակի: Բայց վերջապէս տեղի տուաւ Ներսէսի վեհանձն բնաւորութիւնը յիշեցնողներուն, և

եկաւ ներկայացաւ մինչ անոր քով ժողովուած էին Մոսկուայի իշխաններն և քահանաները: Ներսէս չծածկեց նամակին միջադէպը, բայց և միանգամայն մօտը նստեցուց, ճաշի հրաւիրեց, և շարունակ ալ իրեն մօտ և ճաշակից պահեց: Կ. Պոլիս երթալուն համար ալ միջնորդեց, բայց Կոստանդնուպոլսոյ պատրիարքարանը ընդդիմացաւ ճանաչելով նորա անհանգիստ և փոփոխամիտ բնաւորութիւնը: Սալլանթեան այնչափ գրաւուեցաւ որ քարոյի մէջ ալ վկայեց, որ եթէ լռենք նորահաստատ սրբազնակատար հայրապետ Ներսէսի ազգօգուտ գործերի համար քարերը կաղաղակեն (04. ԲԱԶ. 351-352):

2579. ՆԵՐՍԷՍԻ ՔԻՇՆԵՒ

Մոսկուայէ Քիշնև ճամբու վրայ Ներսէս այցելեց Լապարեանց Տուլայի կալուածը, և իշխանական օթարանը, ուր Ռուսաց Կատարինէ կայսրուհին և Աւստրիոյ Յովսէփ կայսրն ալ իջևաներ են մէկ մէկ գիշեր և արքայական ընդունելութիւն գտեր: Քիշնև պետք էր մնար իր գործերը կարգադրելու, զորս յանկարծ թողեր և մեկներ էր տարի առաջ, վիճակին գործերուն ալ պետք էր հոգաժութիւն դարձնէր, և մինչև որ այս գործերը լրացնէր ձմեռը հասաւ, ուղևորութիւնը արգիլուեցաւ և ութը ամիս մնաց Քիշնև (04. ԲԱԶ. 403), մինչև 1845 ապրիլ: Քիշնև թէ ազգային և թէ պատերազմական տեսակէտէն կարեւոր կեդրոն մը չէր, և Ներսէսի յարաբերական գործողութեանց ասպարէզ չէր բանար: Իր զբաղումները ամփոփուեցան անձնական և վիճակային շրջանակներու մէջ, բայց իր հոր մնալը աւելի նպաստեց իր առողջութեան, հիւանդութենէն կազդուրուելու և յօգնութիւններէն հանգստանալու իրեն ճաշակով պատրաստուած բնակարանին մէջ, աւելի ժրութեամբ ձեռնարկելու համար իր ծանր և ընդարձակ պաշտօնին: Յիշատակներն ալ կը պակսին Քիշնև մնացած միջոցին մասին:

2580. ՔԻՇՆԵՒԷ ՆՈՐՆԱԽԻԶԵՒԱՆ

Հալիլ թէ գարնան դուռները բացուեցան Ներսէս Քիշնևէ ելաւ, ճամբուն վրայ գտնուող բոլոր քաղաքներուն այցելելով Էջմիածին հասնելու, և շիտակ ուղղուեցաւ Խրիմի վրայ: Անշուշտ Օտեսա հանդիպած է, թէպէտ յիշողութիւններու հեղինակը անունը չի տար: Խրիմի մէջ նախ այցելեց Վօրոնցով կոմսին Ալուանկայի ծովեզերեայ կալուածը, զոր անգամ մը յիշեցինք (2507), ինչպէս ինքը Վորոնցով, որ Կովկասի փոխարքայ էր նշանակուած, Տփղիսէ խնդրէր իր նամակով: Անկէ անցաւ Իշխան Գալիցիինի ամարանոցը, որ Յովակիմ Լապարեանի մտերիմն էր, և իբր Ներքին գործոց և օտար դաւանութեանց նախարար շատ օգտակար եղած էր Հայոց հոգևոր գործերուն: Իշխանական կալուածները այցելելէ ետքը հանդիպեցաւ Օրբապար, և անկէ եկաւ Եւպատորիա, որ է Գէօպլէվ, ուր մեծահանդէս ընդունելութիւն գտաւ Հայերէ, Ռուսերէ, Թաթարներէ և Կարայիմներէ հաւասարապէս, և ինքն ալ փոխադարձաբար պատասխանեց անոնց ըրած պատիւներուն: Հայոց եկեղեցին ուխտ ընելէ ետքը գնաց Ռուսաց եկեղեցին, անկէ Թաթարներուն մզկիթը, և անկէ Կարայիմներու սինոնական, ուր օրինաց տախտակները համբուրեց յարգանօք: Խախամը կաթողիկոսին համար բարմադրութիւններ ըրաւ և բազմութիւնը ամէններով ձայնակցեցաւ: Ներսէս Քիշնևէ ծանօթութիւն և բարեկամութիւն հաստատած էր անոնց գլխաւոր վաճառականներուն հետ, որոնք զինքը մեծապէս կը յարգէին, իրենց դատերը անոր որոշման ենթարկելու չափ (04. ԲԱԶ. 403): Ընդունեց և վայելեց անոնց պատրաստած նախաճաշիկի հրաւերը, և ամէն տեղ զանապան ազգերու իրարու հետ համերաշխ ապրելու յորդորը կրկնեց: Բաւական օրեր մնաց Եւպատորիա. անկէ անցաւ Սիմֆէրոպոլ որ է Աքմէսձիտ, շաբաթ մըն ալ հոն մնաց և եկաւ Ղարասուբապար, միշտ ամէն ազգերու հաւասարապէս համակրանաց առարկայ դարձած: Հոս ալ արգելեց Հայոց և Ռուսաց և Հայ կաթողիկաց եկեղեցիները և խօսեցաւ: Վերջինին գլուխը կը գտնուէին Վենետիկի միաբաններէն Մինաս Բժշկեան, Վրթանէս

Պօտորեան և երրորդ վարդապետ մը: Ասոնց եկեղեցւոյն մէջ Ներսէս չինայեց կաթողիկները մեղադրել՝ յայտնելով թէ՛ ձեր մօրը կաթը մոռցել էք, որուն ի պատասխանի Բժշկեանը միւս օր կը յայտարարէր, թէ Մխիթար սկզբում ամենևին մտադրութիւն չունէր իւր մայրենի եկեղեցին թողնել, և թէ միայն դժուարութեանց պատճառով նա այդ քայլն արեց: Այդպէս հաւաստեց Բժշկեան, Մխիթարեանց հեղինակաւոր միաբանակիցը, թէպէտ այժմեան Մխիթարեանք այդ բացատրութեան չեն հաւանիր (04. ԲԱԶ. 405): Ղարասուբապարէն եկաւ Թէոդոսիա կամ Կաֆա, միշտ նոյն պայմաններու ներքև ուղևորելով, անկէ ալ անցաւ Նորնախիջևան, և արդեն 1845 սեպտեմբերը յառաջացեր էր: Նորնախիջևան կարևոր կեդրոն էր, և վիճակին երկու աթոռանիստներէն մին, և մեծ խնդիրներ կը յուզուէին եկեղեցեաց ելևմուտքերու մասին, որոնցմով հեռուէն ալ վբաղած էր առաջնորդութեան ժամանակ, և ընդհանուր գանձապետ էր նշանակած Յարութիւն Խալիբեան քաղաքագլուխը, գումարներուն մասնաւորներու ձեռք ոչնչանալուն համար: Խալիբեան երբեմն Ներսէսի հակակիր, անոր մեծ համակիրն էր դարձած, կամ Ներսէսի խօսքով յառաջ Սողոս էր, յետոյ դարձաւ Պօղոս: Գաբրիէլ քահանայ Պատկանեանի անձն ալ խնդիրներու առիթ էր տրւած, և հարկ եղաւ վայն Տփղիս տեղափոխել: Նշանադրութեանց խնդիր մըն ալ յուզուեցաւ, և Ներսէս կարգադրեց որ այնուհետև քահանայի ներկայութեամբ կատարուին, որպէսզի բաժանումներու դիւրութիւն չտրուի (ԶԱՄ. Բ. 163): Այդ ամէն վբաղումներով աշունը անցաւ և ձմեռը սկսաւ, և Ներսէս կը խորհէր երրորդ ձմեռն ալ Նախիջևան անցունել, բայց պինքը համոզեցին այդ խորհուրդէն ետ կենալ (04. ԲԱԶ. 405):

2581. ՆԵՐՍԷՍԻ ՏՓՂԻՍ

Ներսէսի չափազանցօրէն դանդաղ ուղևորութիւնը, և օժումը չառան աստ և անդ թափառիլը առիթ տուած էին իրեն հակակիրներուն վրոյց տարածելու, թէ նա չի կրնար էջմիածին գալ, թէ արտօնուած չէ աթոռ բարձրանալ, որով միտքի պղտորութիւն կը տիրէր ժողովուրդի մէջ: Ազնուական Դաւիթ Թամաշեան, որ Ռուսաստանէ դառնալով Նորնախիջևան կը գտնուէր և ամէն տեղերու տեղեկութիւններն ունէր, համարձակեցաւ Ներսէսի հաղորդել Կովկասէ հեռու մնալուն ձախող հետևանքը, և վրեջապէս համոզեց շուտով ձամբայ ելնել, և ըստ այսմ նոյեմբերի վերջերը Ներսէս Նորնախիջևանէ մեկնեցաւ: Մոպղոկի մէջ պինքն դիմաւորեց Ստեփանոս Արարատեանց եպիսկոպոսը, որ հոն աքսորուած, էր Յովսէփ Տէր Մարուգեանց եպիսկոպոսի հետ (2577) և ուր մեռած էր այս երկրորդը, և Ստեփանոս մինակ մնացած: Ներսէս անյիշաչար կերպով մոռացութեան տուաւ անոր նախընթաց հակառակութիւնները, դրամական նպաստ ալ տուաւ, Մոպղոկցիներուն ալ կրկին և կրկին յանձնարարեց վայն լաւ խնամել, և Տփղիսի հասնելէն ետքը ապատութիւնն ալ ստացաւ (04. ԲԱԶ. 348): Ճամբուն վրայ հանդիպեցաւ ևս Գէորգևսկ և Ստաւրոպոլ քաղաքները, և դեկտեմբեր 13-ին հասաւ Վլատիկաւաս: Վորոնցով Տփղիսէ պէտք եղած հրահանգները տուած էր անվտանգ և հանգիստ լեռնաշղթան անցնել տալու համար: Հապարապետ մը և հարիւր հեծեալ խապախ Կապբէկէ սկսելով ընկերացան, Կորի հասնելուն կառքերը սահնակներով փոխանակուեցան, և գիշեր մը լեռներուն կողքը հասարակ կայարան մը, իսկ միւս գիշերը Քայլավուր Աւալով իշխանին տունը գիշերեցին: Նոյն գիշեր ձեան հիւս մը ահագին կոյտով ձամբան փակեց, և հարկ եղաւ գիւղացիները հանելով ձամբան բանալ որ Դուշէթ հասնին: Ներսէսի գալուն լուրը Տփղիսի մէջ տարածուեցաւ յառաջող ուղևորներէն, և դեկտեմբեր 17-ին շաբաթ օր ամբողջ Տփղիս, պաշտօնէութիւն և ժողովուրդ, հայ և վրացի, ռուս և տաճիկ, Ներսէսը դիմաւորեց քաղաքին ծայրը, Վերա թաղը, և առաջնորդեց մինչև Վանքի եկեղեցին, ուր շատ դժուարութեամբ կրցաւ մտնել կաթողիկոսը խուռն բազմութիւնը ձեղքելով, աղօթեց, օրհնեց, և հապիւ թէ եկեղեցիէն ելաւ, Վորոնցով անձամբ եկաւ, երկու վաղեմի բարեկամները գրկախառնուեցին և համբուրուեցին, և

իշխանը կաթողիկոսին իր ապարանքը տարաւ ընթերելու: Այլևս Ներսէս Տփղիս մնաց, և քանի որ Կովկաս մտնելովը և գտած ընդունելութեամբը պրոյցներու պատճառը վերացուած էր, որոշեց ձմեռը այնտեղ անցունել մինչև Ջատիկէ վերջը, որ 1846-ին կիյնար ապրիլ 7-ին: Տփղիս իր հին կեդրոնն և իր մեծագոյն գործունէութեան ասպարէզ էր եղած., իսկ Կարբեցին աշխատած էր Ներսէսի անունն իսկ մոռցնել տալ Տփղիսեցւոց, ուստի բաւական պատճառ կար որ Ներսէս շուտով չմեկնէր Տփղիսէ: Ասկէ վատ Կարապետ Կարնեցին շատ գանգատներու առիթ տուեր էր իր պաշտօնավարութեան կողմէն, ինչպէս որ առիթ ունեցանք կանուխէն ակնարկելու (2555): Կարապետ ստուգիւ դրամական և կալուածական կարողութիւն աւելցնելու հետամուտ էր, թերևս հանրային հաստատութեանց գործածել կը մտածէր, բայց առ այժմ իր անուան կարճանագրուէին բոլոր հողային և կալուածական ստացութիւնները, և ուրիշներու ուղղութեան վրայ հսկելու հեղինակութիւնը չունէր. և իր շուրջն եղող ներ կաշառքն ու անտեղի ստացութիւնը կը տարածէին: Գործը աշխարհահռչակ դարձած էր և պետական կառավարութեան դիմումներ ալ յաճախած էին, Կորս Վորոնցով պահած էր նոր կաթողիկոսին քննութեան ենթարկելու համար, և իրօք ահագին տրցակ մը կը դնէր Ներսէսի առջև: Ներսէս Կարապետի հանդէպ համակիր պագումներ կը տածէր: Նա գաղթականութեան քաջալերիչն էր և սա գործադրիչը և իրարու լաւ ընկերակից էին եղած: Յանձնաժողով մը կապմեց թէ իրեն հասած և թէ փոխարքայէ հաղորդուած գանգատագիրները և բողոքագիրները գտնելու, և անդամ նշանակեց Յովհաննէս Շահխաթունեան և Իսահակ ծաղկարար եպիսկոպոսներ և Պետրոս Կեսարացի վարդապետը, որ էջմիածինէ հրաւիրակ եկած էին և Տփղիսի անցուդարձերուն օտար էին: Աշխարհականներէն ալ ընտրեց Յովհաննէս Արղութեանցը և Դակիթ Խերոպիւնեանցը, որ իրեն մտերիմներն էին, և Յովհաննէս Միրաբեանցը ատենադպիր: Յանձնաժողովը 45 օր աշխատեցաւ և հակառակ իրեն բարեացակամութեան և Ներսէսի յանձնարարութեանց ստիպուեցաւ Կարապետը հեռացնելու և իրենները պաշտօնանկ ընելու առաջարկը բերել: Ներսէս չհամակերպեցաւ Կարապետը խայտառակել, և որոշումը յետաձգեց էջմիածին երթալուն:

2582. ՆԵՐՍԻՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ներսէսին սիրտին ամենէն մօտիկ եղողը իր Ներսիսեան վարժարանն էր, ասով մէկտեղ թէպէտ հինգ ամիսի չափ Տփղիս մնաց, սակայն ամենևին սիրտ չունեցաւ գոնէ մի անգամ այցելել իւր փայփայած ուսումնարանը, այնքան մեծ էր վեհի սրտի ցաւը: Ներսիսեանի հիմնարկութիւնը պատմած ենք արդէն (2377), և պարագայից բերմամբ ինչինչ անցքեր ալ յիշած իսկ անոր մասին: Կարբեցին անդստին այն օրէն որ Ներսէս Տփղիսէ հեռացաւ (2457), և անոր տեղ ինքն Տփղիսի առաջնորդ եղաւ, իրեն կէտ նպատակի ըրած էր Ներսէսի այդ հիմնարկութիւնը քանդել, իբր վի չկարենալով Ներսէսի ամձը մէջտեղէն վերցնել, կուպէր ջնջել անոր անունը անմահացնող յիշատակը: Հետպ հետէ պպտիկցուց և ստորնացուց ուսումնական ծրագիրը, գրաւեց վարժարանի հասոյթներուն աղբիւրները, այսինքն կալուածներուն վարձքերը (2468), նոյնիսկ շէնքին մէկ մասը պետական կիրառութեան տրամադրեց, Կօճառի գետինը կառավարութեան յանձնեց, ուսուցիչները նուազեցուց, վարժարանին անունը փոխեց, մինչև իսկ մտադրեցին բոլորովին գոցել Ներսիսեան ուսումնարանը և ծախել սորա բոլոր անշարժ կայքը (ՆԵՐ.324): Իսկ երբ 1836-ին Պօլօժէնիէ հրատարակուեցաւ, որ իւրաքանչիւր վիճակին մէջ սէմինարիա կամ դպրանոց մը կը պահանջէր, անունը փոխուած Ներսիսեանը իր յատուկ մատակարարութեան ձեռքէն հանեց, և վիճակային կոնսիստորիային յանձնեց, իբրև ոչ ևս ապգային դաստիարակութեան օրրան, այլ համեստ ծրագիրով թեմական դպրոց մը: Նախարարութիւնը այդ մասին 1837 մայիս 12-ի գրութեամբ Ներսէսի կարծիքը հարցուցած էր, և Ներսէս 1838 ապրիլ 23-ին շատ ընդարձակ

տեղեկագիր մը յղած էր (ՆԵՐ. Ա. 325-363), բայց չէր կրցած արգիլել որ Ներսիսեան վարժարանը հոգևոր սեմինարը Վրաստանի թեմի չդառնայ (ՆԵՐ. Ա. 364), 1837 մայիս 19-ին կաթողիկոսական կոնդակով (ՆԵՐ. Ա. 387), և ուսումնարանը չկորսընցնէ իր նշանակութիւնը և արդիւնաւորութիւնը : Ասոր վրայ ազգայիններ ոչ միայն իրենց վաւակները ետ առին, այլ և անոնց մէջ միտք ծագեց դիմել քաղաքական իշխանութեան, որպէսզի Ներսիսեան ուսումնարանի տարեկան եկամուտների կէսը տրուի արքունական գիմնավիային, որ պիտի բանայ հայ տղերանց համար մասնագիտական դասարաններ (ՆԵՐ. Ա. 376), բայց բարեբախտաբար սինոդի միջամտութիւնը խափանեց առաջարկին ընթացքը, թէպէտ ոչ այնչափ Ներսիսեան հիմնարկութիւնը, որչափ եկեղեցական ստացութեան իրաւունքը պաշտպանելու նպատակով: Իսկ վարժարանին նախկին ընթացքը խեղճ ողորմելի կերպարան էր առած. Կարապետ առաջնորդ անբաւական, Կոնստանտինոպոլիսի անհոգ, վերատեսուչ Յովսէփ քահանայ Օրբէլի նախաձեռնութենէ և հեղինակութենէ զուրկ, ուսուցիչներ ապօրինաւոր ընթացից մէջ, աշակերտներ յանդգնութեան հասած, ոչ վերատեսուչէն ամաչելով և ոչ բարձր դիտողութենէն երկնչելով, այնպէս որ Ներսէս յուսահատեցաւ մասնաւոր կարգադրութիւններով դարման մը ընել, և գործը թողուց ձեռք առնել էջմիածինէ դարձին օծումը ընդունելէ ետքը:

2583. ՆԵՐՍԷՍ ՅԷԶՄԻԱԾԻՆ

Այդ գործերով և ուրիշ մասնաւոր խնդիրներով և յարաբերութիւններ մշակելով, Տփղիս մնաց Ներսէս մինչև մայիսի սկիզբները, ապրիլ 7-ի Զատիկին հանդիսութիւնները իր նախկին թեմին մէջ կատարեց, և գարնանային եղանակով ուղևորեցաւ էջմիածին: Տփղիսէ մեկնեցաւ 5-ին և 8-ին Երևան հասաւ, հարկաւ քանի մը օր մնաց և փառաւոր հանդիսութեամբ մայրաթոռ ընդունուեցաւ, զի համակիրներ քաջալերած էին, և համակիրներ կամ դեր փոխելու ստիպուած և կամ լռելու պարտաւորուած էին: Օծման հանդէսին համար ալ մեծ պատրաստութիւններ եղան, զի միայն եկեղեցական ըլլալով 179 հոգիներ հաւաքուեցան, 14 եպիսկոպոս, 50 վարդապետ, 61 քահանայ և 50 սարակաւագ կամ ուրարակիր (ՆՍՐ.21): Խորհրդաւոր օր մը կատարուեցաւ օծումը, կաթողիկէ էջմիածնի տօնին օրը, 1846 յունիս 9-ին (04.ԲԱԶ.407), ընտրութենէն երեք տարի և երկու ամիս ետքը: Արդէն Ներսէսի կեանքին շատ պարագաները բացառիկ հանգամանք կը կրեն, նոյնպէս եղաւ օծումն ալ, կաթողիկոսութիւն վարելու սկսելէն երեք տարի ետքը զի եպիսկոպոս ձեռնադրելէ և միւռօն օրհնելէ դուրս կատարելապէս կաթողիկոսական պաշտօնավարութիւն եղաւ այդ միջոցին անցուցած կեանքը: Օծման օրը շատ եռանդուն ճառեր և քերթուածներ խօսուեցան, և նախ և առաջ խօսեցան Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոս և Շահնապարեան Կարապետ վարդապետ (ՆՐԱ. 21): Նոյն օր 1950 հոգևոյ ճաշ տրուեցաւ, վեհարանի, և սեղանատան և Ղազարապատի մէջ սեղաններ զետեղելով, լուսավառութիւն և գիշերահանդէս ալ կազմակերպուեցաւ երաժշտականաց մասնակցութեամբ (ՆՐԱ. 22): Հանդէսները նորոգուեցան հոկտեմբեր 27-ին Գիւտ Խաչի օրը միւռօնօրհնութեան առթիւ (ՆՐԱ. 23): Հապիւ թէ Ներսէս ներքին գործունէութեան սկսաւ, տեսաւ որ էջմիածին ալ ապօրինութեանց և կաշառակերութեանց տեղ մը դարձած էր Կարբեցիին օրէն, և շարունակած էր աթոռոյ պարապութեան և իր թափառմանց միջոցներուն: Մինչև իսկ Պետրբուրգ եղած ատենէն կը մտածէր ըստ յորդորանաց մինիստրութեան շատեր անպատճառ մեկուսացնել յաթոռոյն (ՍԵԴ. 147), ուստի իր առաջն գործն եղաւ անկարգութեանց դարմանին ձեռնարկել: Սինոդը վերանորոգեց հիներէն պահելով Ղուկաս Մաստարացի նախանգամ և Յովհաննէս Շահխաթունեան եպիսկոպոսները, և նորերէն աւելցնելով Նիկողայոս Տէր Մարուգեանց եպիսկոպոսը և Մակար Տէր Պետրոսեան և Սիմէոն Փարաքարցի վարդապետները, Յովհաննէսի յանձնելով գանձարանն ու արկղը, և Նիկողայոսը նշանակելով

վանական կառավարութեան գլուխ Գէորգ Աշտարակեցի և Թաղէոս Բէգնապարեան եպիսկոպոսներու հետ (04. ԲԱԶ. 409): Ուկեց Տփղիսի կնճիռն ալ լուծել (2581) սինոդի անդամակցութեան կոչելով առաջնորդ Կարապետ Կարնեցին, որ օծման արարողութեան ալ նախագահած էր, բայց սա ոչ մի կերպով համակերպեցաւ Էջմիածին մնալ, նոյն իսկ Տփղիսի առաջնորդութիւնն ալ վրան պահելով: Այդ մասին պինքը քաջալերողը ոչ միայն իր բերմունքն էր, այլ և Ղուկասի խրատը, որ նախանդամութիւնը պիտի կորսնցնէր Կարապետի սինոդ մտնալովը: Ներսէս պարտաւորուեցաւ լռել, միայն թէ այն վայրկեանէն, սիրտին մէջ դրաւ այլ ևս Կարապետի պաշտպանութենէ ձեռնթափ ըլլալ: Այդ առաջին ձեռնարկները հնարաւոր եղածին ձևի դնելէն ետքը փութաց Տփղիս դառնալ 1846 դեկտեմբեր 17-ին (ՆՐՍ. 23), օծումէն վեց ամիս ետքը, նպատակ ունենալով լրացնել իր սիրելի քաղաքին և ձեռակերտ ուսումնարանին գործերը, պորս թերի թողուլ պարտաւորուած էր օծումին ընդունելութեամբ վօրանալու համար(2482): Այստեղ պահ մը Մայրաթոռոյ եղելութիւնները ընդհատելով, անցնինք պատմել ինչ որ Կ. Պօլիս և Երուսաղէմ տեղի ունեցաւ Կարբեցիի մահուան յաջորդ ժամանակի մէջ:

2584. Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԵՐ

Կոստանդնուպոլսոյ աթոռին վրայ կը գտնուէր Աստուածատուր եպիսկոպոս Կոստանդնուպոլսեցին, իր դիրքին յայտնապէս անբաւական անձ մը, ինչպէս յիշեցինք (2548), բայց որ ամիրայական վարչութեան հլու հպատակ ըլլալուն շնորհիւ կը շարունակէր մնալ աթոռին վրայ: Ամիրաներ վօրաւոր էին այդ միջոցինպետութեան առջև, և անոնց շնորհիւ կը քալէին պատրիարքարանի գործերը առանց շատ վգացնելու պատրիարքին անբաւականութիւնը: Ապտիւլ Մէճիտ կայսր Յովհաննէս և Պօղոս Տատեան վառօդապետներու և Կարապետ Պալեան ու Յովհաննէս Սերվերեան ճարտարապետներու, ֆէս կոչուած կարմիր գլխանոցին վրայ կրուելիք ոսկի թուղբայի շքանշանն ալ շնորհված էր 1844 ապրիլ 1-ին, որ ևս քան վաս կը բարձրացնէր անոնց ազդեցութիւնը: Յատուկ պատուասիրութեան նշանակ եղաւ նաև վերոյիշեալ չորս ամիրաները և Կարապետ և Յակոբ փողերապետները իրենց ուղեկից առնելը, երբ 23 օրեայ պտոյտ մը կատարեց 1844 մայիսի մէջ Նիկոմիդիոյ ասուլիի գործարանը և Պրուսայի հանքային ջուրերը, և Տարտանելի նեղուցէն դուրս մինչև Միտիլի կղզին: Բայց ապագային շրջանակին մէջ մտած չէր ամիրայական և ժողովրդական պայքարը, և ոչ ալ ժողովուրդը հրաժարած էր հանրային գործոց մէջ մտնելու դիտումէն, միայն թէ անցեալին ձախող փորձերը պիրենք կը յորդորէին առաւել պատրաստութեամբ նորէն գործի մտնել, որպէսպի վստահօրէն գործեն և յաջողութեան հասնին: Այդ ձեռնարկը չուշացաւ, բայց անոր չանցած պատմենք այս միջոցին տեղի ունեցած նշանաւոր և կարևոր պատահար մը:

2585. ՅՈՎԱԿԻՄ ԹԱՎՈՒՔՃԵԱՆ

Յովակիմ Թավուքճեան, Կ. Պոլսոյ Սամաթիա թաղեցի ժիր երիտասարդ մը, որ յանկարձակաւ բերմամբ 1839-ին իսլամական կրօնք ընդունած էր, շուտով կը վղջայ, գաղտնապէս քրիստոնէութեան կը դառնայ և իր հետքը կոսնցնել տալու համար եւրոպական տարապով կը ծափի և կը սկսի անձանաչ ապրիլ մայրաքաղաքին մէջ: Ժամանակը կանցնի բայց յիշատակը չի մոռցուիր, մինչև որ գաղտնիքը իմացողներ կը գտնուին և կառավարութեան լուր կու տան, և մահմետական օրէնքին համաձայն Յովակիմ կը ձեռքակալուի և կը բանտարկուի 1843 օգոստոսի սկիզբները: Առաջ խոստումներով, վերջէն տանջանքներով կը փորձուի ընդունած իսլամութեանը վերադառնալ, որպէսպի ապառի մահուան պատիժէն, որուն կենթարկուին իսլամութեան օրէնքով ամէն անձեր որ իսլամութենէ ետ կը դառնան: Յովակիմ որչափ թեթև եղած էր առաջին անգամ իսլամութիւն ընդունելուն մէջ, այնչափ և աւելի հաստատուն կը գտնուի երկրորդ անգամ

չառնալու մէջ: Յովակիմի ծնողքներ և մերձաւորներ և բարեկամներ պատրիարքին կը դիմեն, բայց ոչ Աստուածատուր և ոչ ամիրաներ չհամարձակեցան աղաչաւոր լինել առ բարձրագոյն դուռն ծանօթ և տիրող օրէնքի մը դէմ: Պատրիարքարանէ անյոյս՝ աղերսագիր կը մատուցանեն Ռուսիոյ դեսպանին, և անոր խորհուրդով դիմում կը նեն նաև Անգղիոյ դեսպանին, որ էր Լորտ Քաննինկ, և որ իր թարգմանին ձեռքով կը խնդրէ Մեծ Եպարքոս Ռէուֆ փաշայէ, զի ի շնորհս երեսաց իւրոց ապատ թողուի հաւատքի համար բանտարկուած երիտասարդը: Եպարքոսը կը խոստանայ երկու օրէն խնդիրը նախարարական ժողովին հանել, և կը յուսադրէ յաջող ելքի հասցնել: Ժողովը տեղի կուներնայ, խնդիրը կը քննուի, բայց դենպետը նախարարներէն ոմանք մահմետականութեան անողոքելի օրէնքը կը պաշտպանեն, հակառակ Խաթթըհիւմայունով հռչակուած կրօնքի ապատութեան (2545) և անգամ մըն ալ ողոքանք և սպառնալիք փորձելէն ետքը օրէնքի գործադրութիւնը կը վճռուի և իսկոյն կը գործադրուի: Յովակիմ իր քրիստոնէութիւնը խոստովանելով խոնարհեցուց զգլուխն առաջի դահճին, որ մէկ հարուածով ընկէց զգլուխն, և գետինը փռուած մարմնոյն վրայ ևրոպական փեպոյրն եղաւ ընդ երաստանաւ գլխատելոյն, որոյ ես եղէ ականատես կը յարէ Պէրպէրեան Աւետիս պատմիչը (ՊԷՐ. 277): Գլխատման տեղը եղած է Կ. Պոլսոյ Պալլըքրապար դրան առջև, և օրը 1813 օգոստոս 17 (ՊԷՐ. 516), Վերափոխման երեքշաբթի օրը: Պատմիչը չի յիշուիր թէ ինչ ձևակերպութիւնները կատարուեցան նահատակին մարմնոյն համար, բայց այժմ կը տեսնենք անոր գերեզմանը Ջէյթունպուրնուի Ս. Յակոբի հիւանդանոցին եկեղեցւոյն գաւիթը, շքեղ տապանաքարով և յարմար յիշատակարանով պատուած, որ կը ցուցնէ թէ ժամանակին պատշաճ դիմումներ կատարուէր են, և մարմինը պատրիարքարանի յանձնուէր է, և նահատակը եկեղեցական պատուով թաղուեր է: Յովակիմի վրայ կենսագրական տեղեկութիւններ ալ չկրցանք տալ, և այդ մասին չենք կրնար ցաւ չյայտնել ժամանակակից յիշատակագիրներուն լռութեան վրայ:

2586. ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Այս սկզբունքով նահատակուած անձերու օրինակներ շատ յիշեցինք պատմութեանս կարգին, սակայն Յովակիմի նահատակութիւնը նշանաւոր եղած է անով, որ նա վերջինն եղած է իսլամական անողոք օրէնքին զոհ գացող նահատակներուն: Իրաւ չէր յուսացուէր որ այլևս հնօրեայ օրէնքով գործէր տէրութիւնը, որ արդէն 1838-ին Աշխարովացի Վառվառին առիթն աւելի ապատօրէն վարուած էր: Զի թէպէտ իբր մահմետականութեան դարձած ամբաստանուեցաւ 14 տարեկան աղջիկը, և բանտարկութեան և տանջանաց և աքսորանաց մատնուեցաւ, բայց վերջնական խոստովանութեան վրայ ապատ թողուեցաւ, (ՊԷՐ. 266): Այս նախընթացին և Թանգիմաթի պահանջին վրայ Յովակիմ նահատակութիւնը մեծապէս գրգռեց անգղիական դեսպանը, ոչ միայն ընդհանրապէս կրօնափոխութեան խնդիրին տեսակէտէի, այլ մասնաւորապէս իրեն վստահութեան դրժուելուն երեսէն: Քաննինկ բոլոր քրիստոնեայ դեսպանները յորդորեց և համաձայնութիւն գոյացուց օսմանեան կառավարութեան բողոքելու՝ քաղաքականութեան պահանջից հակառակ օրէնքով վարուելուն համար: Ըստ այսմ իւրաքանչիւր դեսպան իրողութիւնը իր տէրութեան հաղորդելով յատուկ հրահանգներ խնդրեց, և ամէնքն ալ հաւանեցաւ ապդու կերպով գործին հետևիլ: Յովակիմի նահատակութենէն յետ հնգից ամսոց, որ է 1844 յունուարին, դեսպաններ միաձայնութեամբ պահանջեցին իսլամական այդ օրէնքին խափանումը, կրօնափոխութեան ապատութիւնը, և հաւատքի պատճառով դատապարտութեանց արգիլուիլը: Միահամուռ քրիստոնէութեան բողոքը ապդեց օսմանեան կառավարութեան վրայ, որուն գործոց գլուխը սկսած էին գտնուիլը ևրոպական կրթութեամբ վարգացեալ անձեր: Մեծ ժողովներ գումարուեցան, դենպետի և իսլամական կրօնագէտներու և օրէնագէտներու ներկայութեամբ, և

պետական փաստերը պօրացան կրօնամուլ պահանջներու վրայ, և սկզբամբ ընդունեցան ևրոպացւոց առաջարկութիւնները և վստահութիւն տրուեցաւ ըստ այնմ գործելու: Միայն հրապարակաւ օրէնք մը հրատարակելու համար եօթնամեայ ժամանակ խնդրուեցաւ, մինչև որ իսլամ ռամիկը հնար լինի հրահանգել և համոզել, որպէսզի չըլլայ թէ աղմուկ մեծ ծագի, որ կրնար ըլլալ աղետալի ի վնաս քրիստոնեայ ազգաց (ՊԷՐ. 278): Այդ որոշումը դեսպաններու հաղորդուեցաւ 1844 փետրուար 21-ին (ՊԷՐ. 518), և դեսպաններ բաւականացան այդ յայտարարութեամբ: Կառավարութիւնն ալ իր կողմէ օրէ օր աւելի թոյլատու գտնուեցաւ ոչ միայն կրօնափոխութեան առիթներու մէջ, այլ ևս սկսաւ ներել որ եկեղեցիներ առաջիններէն աւելի վայելուչ և պայծառ շինութեամբ կառուցուին և վանգակատուններ ունենան, և կրօնից ազատութիւնը իր ամէն պարագաներով իրականանայ: Յովակիմ Թավուքճեան նահատակին անունը կապուած է բարեյաջող փոփոխութեանց հետ, իբրև սկզբնապատճառ կրօնից ազատութեան սկզբունքին ընդարձակուելուն, և շատ մը անախորժ եղելութեանց դադրելուն, և իբրև վերջին նահատակ և վերջին պոհ իսլամական անողոք օրէնքին:

2587. ՄԱՏԹԷՈՍ ՉՈՒԽԱՃԵԱՆ

Ըսինք արդէն թէ ազգային գործերը հետզհետէ վայրացած վիճակ մը առնել սկսած էին, և ամիրայական խումբը թէպէտ իշխանութիւնը ձեռքն ունէր, այլ ժողովրդական բուռն ընդդիմութեանց և գործերու մէջ մեծ դժուարութեանց դիմաց կը գտնուէր, և կացութիւնը աւելի կը ծանրանար պատրիարքական աթոռին վրայ նստող անձին ապիկարութենէն: Աստուածատուր պատրիարքի անձը ոչ միայն ոյժ մը չէր ներկայեր, այլ և ամիրաները վայրացուցեր էր, որոնք այլևս չէին կրնար տանիլ վանխոհեմութիւն նորա և վայրացկոտ բնաւորութիւն նորա, և վանվայել խօսս ի քարոզի և ի խօսակցութեան: Վերջապէս պատրիարք փոխելու հարկը պահանջուեցաւ, միանգամայն այնպիսի անձ մը աթոռ բարձրացնել որ ժողովրդական համակրութիւն վայերէր, և երկու կողմերը միանգամայն շահելու ճարտարութիւն ունենար: Ժողովի գումարուեցան 1844 յունիս 28-ին Յարութիւն Երկանեանի նախագահութեամբ, որ ազգային անկարգութիւնը պահկերացուց, բոլոր պատասխանատուութիւնը Աստուածատուրի վրայ ծանրացուց, և այլևս անոր գլխաւորութեամբ գործելու անհնարութիւնը բացատրեց: Ժողովը հաւանեցաւ և նոյնժամայն երկու ամիրաներ պատրիարքին ներկայանալով հրաժարագիրը պահանջեցին, պոր անհակառակ տուաւ Աստուածատուր, և գիրը իսկոյն մատուցուեցաւ բարձրագոյն դրան, բերանացի ալ գործադրութիւնը խնդրելով մեծ եպարքոսէն և արտաքին գործոց ու կրօնից նախարարէն: Յուլիս 1-ին ստացուեցաւ Աստուածատուրի հրաժարականին ընդունուելուն և նոր պատրիարքի ընտրութեան արտօնուելուն պաշտօնագիրը, և նոյն օր ամիրաներ ընտրողական ժողով կազմեցին և պատրիարք ընտրեցին Զմիւռնիոյ առաջնորդ Մատթէոս Եպիսկոպոս Չուխաճեանը, և մինչև որ նա հասնէր Յովհաննէս վարդապետ Սեթեան իբրև տեղապահ պաշտօնաւարեց (ՔԷՉ 117): Մատթէոսի ընտրութիւնն իսկ կը նշանակէր որ ամիրաներ ալ ձանձրացած և յօգնած էին ժողովրդական ներքին պայքարէն, և համերաշխ գործակցութեան կերպ մը կը փնտռէին, պի Մատթէոս յայտնի էր իբր ժողովրդական կուսակցութեան մարդ: Բնիկ Կ. Պոլսեցի, 1802-ին ծնած, որ է ըսել արդէն 42 տարեկան եղած, ծանօթ էր իբրև ուսումնասէր և ուսումնական եկեղեցական մը, որ գրական աշխատութիւններ ալ ունէր, և Ստեփանոս Աղաւնի պատրիարքին հրամանով աշխատակցած էր Գրիգոր Փէշտիմալճեանի 1834-ին կատարած Յայսմաւուրքի տպագրութեան՝ համայնայն Տէր Իսրայէլի ընտրելագոյն օրինակին (ՅԱՍԱ.Դ): Միւս տարին 1835-ին Պրուսայի առաջնորդութեան էր ընտրուած, և 1838-ին Եպիսկոպոսութեան բարձրացած Կարբեցիի ձեռնադրութեամբ, և 1841է ի վեր Զմիւռնիոյ առաջնորդ կը գտնուէր, և կարող և գործունեայ անձի

և Հայ Եկեղեցւոյ դաւանութեան նախանձայոյդ պաշտպանի համբաւը կը վայելէր: Բիչ օր առաջ ալ, կայսեր Միտիլի գտնուած միջոցին, եկեղեցական և աշխարհական հետևորդներով հոն գացած և կայսեր ներկայացած և պարգևներով պատուուած էր: Պետական հաստատութիւնը շուտով ստացուեցաւ, և երկու եկեղեցականներ և մէկ կառավարական պաշտօնեայ մը հրաւիրակ գացին Ջմիւռնիա, որոնց հետ նորնտիրը Կ. Պոլիս հասաւ յուլիս 17-ին երկուշաբթի օր, և պատրիարքարան հանդիպելով իսկոյն շքեղ հանդէսով բարձրագոյն դուռ գնաց և պատուեցաւ, և Վինուորական ընկերակցութեամբ Մայրեկեղեցի դառնալով կայսեր և նախարարաց համար բարեմաղթութեանց ատենաբանութիւն ըրաւ, և բազմութիւնը օրհնեց (ՊԷՐ. 522): Ժողովուրդը խնդրութեամբ ողջունեց Մատթէոսը, որուն ժողովրդական ազգասիրութիւնը կը ճանչնար, և մեծամեծ յոյսեր կը սպասէր անոր պաշտօնաւարութենէն: Մատթէոսի նկարագրին գալով, Պէրպէրեան պատմիչ որ անոր շատ մօտիկն ու շատ մտերիմը եղած է, և միշտ անոր արժանիքը կը բարձրացնէ, միևնոյն ատեն համարձակօրէն կը խոստովանի թէ միանգամայն փառասէր էր և նախանձոտ ընդ փառս այլոց, և հաստատ յառաջադրութիւն մտաց իւրոց, զոր ոչ կամէր փոխել, թեև լինէր ինքեան այն վնաս մեծ (ՊԷՐ. 281):

2588. ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՆԱԿԷ

Մատթէոս իր եռանդուն գործունէութեան առաջին նշանը տուաւ իր առաջին պատարագին մէջ, զոր մատոյց յառաջիկայ կիրակէին, որ յուլիս 17-էն ետքը կիյնայ 1844 յուլիս 23 ին Վարդավառի չորրորդ կիրակէին, զի անակնկալ կերպով յիշատակեց Ներսէս կաթողիկոսին անունը, թէպէտ 1828-էն ասդին ուսուցչութեամբ պատերազմին սկսելէն իվեր, Տաճկահայք չէին յիշեր Ամենայն Հայոց կաթողիկոսին անունը (ՊԷՐ. 281). Եփրեմի անունին յիշատակութիւնը ընդհատուած էր, իսկ Յովհաննէսի անունը երբեք չէր յիշատակուած: Թէպէտ և ըսուած է որ յիշատակութեան դադարումը եղած է հրամանաւ բարձրագոյն դրան (ՊԷՐ, 282), սակայն այդպիսի հրամանի մը հետքը չենք գտած, և չենք ալ կարծեր որ օսմանեան կառավարութիւնը պաշտօնական մտադրութիւն դարձուցած ըլլայ այդ մասին, և հաւանականագոյն կը կարծենք որ պարզապէս խոհական զգուշաւորութիւն մը եղած ըլլայ Կարապետի օրէն սկսելով, ապա թէ ոչ Մատթէոս ալ պիտի չկարենար այս կերպով յիշատակելու համարձակիլ: Կարբեցիի օրով եղած բանակցութիւններն ալ ցուցուցին արդէն, որ ոչ թէ պետական պահանջ մըն էր անոր չյիշատակուելուն պատճառը, այլ խոհական զգուշաւորութեան ներքև ծածկուած վերապահութիւն մը, նկատելով կաթողիկոսին կենդանութեան ատեն ուրիշ կաթողիկոսի մը այթոռ բարձրանալը, որ միտքերը վրդոված էր, և առանց Տաճկահայոց գիտակցութեան և հաւանութեան կաթողիկոսանալը, որ իրաւամբ բռնաբարում ըմբռնուած էր (04. ԲԱՁ. 351): Մատթէոս յիշատակութիւնը կատարելէն ետքը շնորհաւորութեան և հպատակութեան գիր ալ ուղղեց Ներսէսի, զոր ըստացաւ նա Բետրբուրգ գտնուած միջոցին, և կայսրն ալ մեծապէս գոհ մնալով Տաճկահայոց կողմէ Էջմիածնի աթոռին հանդէպ ցուցուած վերաբերութենէն, ուզեց Ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանը շնորհել Մատթէոս պատրիարքին: Այլ Ներսէս մտածելով որ մի գուցէ օսմանեան շրջանակներու մէջ լաւ տպաւորութիւն չընէ, առաջարկեց իր կողմէն ադամանդեայ պահակէ յղել, զոր և յանձնեց արտաքին գործոց նախարարին, և դեսպանին ձեռքով յանձնուեցաւ Մատթէոսի (04.ԲԱՁ.351): Պանակէ եկեղեցական շքանշանին անունը Պանափա կամ Պանակիա = Աստուածածին բառէն առնուած է՝ Աստուածամօր և երբեմն ալ Փրկչի կիտուածոյ պատկեր ունենալէն ականակուռ շրջափակի մէջ, որ որթոտոքս եպիսկոպոսներու կը շնորհուէր վիպէն շղթայով կախուած կուրծքին վրայ կրելու համար: Ասոր կիրառութիւնը սովորական դարձած էր ուստահայ եպիսկոպոսներու մէջ ալ, իսկ Տաճկահայոց մէջ այս առաջին անգամ մուտ կը գտնէր, և կիրառութեան նորութեանը

պատճառով Մատթէոս պատրիարք հարկ սեպեց վայն ներկայացնել արտաքին գործոց և կրօնից նախարար Ռէշիտ փաշայի, որ կայսեր ալ ներկայացուց, և այնպէս 1847 մարտ 27-ին արտօնուեցաւ պանակէի կիրառութիւնը, և սովորական դարձաւ Տաճկահայոց մէջ ալ: Պանակէի հետ օրհնութեան կողակ ալ յղած էր Ներսէս գովելով վիտականութիւն պատրիարքին (ՊԷՐ.282): Այս կոնդակին հանդիսաւոր ընթերցման համար ազգային մեծ ժողով գումարեց Մատթէոս 1844 սեպտեմբեր 14-ին (ՊԷՐ.524), Խաչի պահոց հինգշաբթի օրը, ուր կրօնականաց և աշխարհականաց բարեհաճութեամբ և ստորագրութեամբ որոշուեցաւ այսուհետև Մայրաթոռոյ կաթողիկոսին անուան յիշատակութիւնը կատարել առ հասարակ յեկեղեցիս Հայոց յօսմանեան տէրութեան, ինչպէս որ անխափան կը կատարուի մինչև ցայսօր, թէ պատարագի ևս առաւել յիշատակութեան և գոհութիւն քարոզին և թէ ժամերգութեան Ասասցուք քարոզին, և պատահաբար յատուկ գանձերու մէջ: Միանգամայն էջմիածնի Մայրաթոռին և Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռին փոխադարձ յարաբերութիւնները ճշդելու համար որոշուեցաւ որ երկու աթոռները իրարու հետ ուղղակի յարաբերութիւն պահեն և ոչ թէ իւրաքանչիւր վիճակ առանձինն, որ Կ. Պոլսոյ պատրիարքը նկատուի փոխանորդ և նուիրակ և գանձապետ Մայրաթոռոյ, մէկ խօսքով միակ և լիազօր ներկայացուցիչ էջմիածնի, որ նուիրակներու երթևեկը դադրի, և նուէրներ և գանձանակադրամներ պատրիարքին ձեռքով հաւաքուին և պրկուին, որ միւռոնը պատրիարքին յղուի, և անկէ վիճակներու բաշխուի, իսկ մինչև ցարդ առկախ մնացած գործեր և հաշիւներ փակուած համարուին, և անոնց մասին այլ ևս խնդիր չյղուի: Մատթէոս պատրիարք օրհնութեան կոնդակին շնորհակալութեան հետ, հաղորդեց յիշատակութեան համար տրուած որոշումը և յարաբերութեանց մասին առաջարկուած ձևերը, որոնց մէջ թէպէտ էջմիածնի դիւր չգալիք կէտեր կային, բայց Ներսէս լաւ գիտեր Օսմանեաց կողմէ Ռուսաց հանդէպ տիրող հակակրօնութիւնը, և իրաւունս ետ Կ. Պոլսոյ ժողովոյն կարգադրութեան (ՊԷՐ. 282), որ նոյն կերպով կը շարունակուի մինչև հիմա: Պանակէի տուշութիւնը որ մինչև սուլտանին ելաւ, ինչպէս յիշեցինք, անոր և նախարարութեան միտքն արթնցուց օսմանեան կառավարութեան կողմէ ալ եկեղեցական աւագանին շքանշանով պատուասիրել: Արդէն Յունաց, Հայոց, Կաթողիկաց և Հրէից չորս ազգապետները բարձրագոյն ադամանդեայ շքանշանով պատուած էին, կայսեր քրոջ Ատիլէ սուլտանուհոյն Մէհմէտ Ալի փաշայի հետ ամուսնութեան առթիւ (ՊԷՐ. 308). իսկ այս անգամ վեց շքանշաններ գրուեցան պատրիարքի տրամադրութեան տակ, զորս նա յղեց Կիլիկիոյ կաթողիկոսին, և Արմաշի, Պրուսայի, Ջմիւռնիոյ, Եւզոկիոյ և Մշոյ առաջնորդներուն (ՊԷՐ.

313):

2589. ՄԱՏԹԷՈՍ ԵՒ ԲՈՂՈՔԱԿԱՆՔ

Պատմեցինք իր կարգին բողոքականութեան մուտքը Հայոց մէջ (2541), և Յակոբոս պատրիարքի անոնց դէմ ձեռք առած խստութիւնը, զորս պարտաւորուեցաւ մեղմել բողոքական պետութեանց դիտողութեանց վրայ, որով բողոքականութիւնը դիւրութիւն ունեցեր էր հետզհետէ ընդարձակուիլ, մանաւանդ Աստուածատուրի իբր երեքամեայ պատրիարքութեան միջոցին: Հրապուրիչ քարոզութեանց և դպրոցական հաստատութեանց միջոցներուն աւելցած էր դրամական օգնութեանց միջոցը, ոչ միայն աղքատներու և պարտապաններու առձեռն ողորմութիւններով, այլ և կարօտներու ամսական նպաստներով: Ժողովրդական հրատարակութեանց ալ ձեռնարկեցին, և մանր տետրակներ կը ցրուէին ժողովուրդին մէջ, որոնցմով կը խծխրծէին Հայ Եկեղեցւոյ դաւանական և կրօնական սկզբունքները, եկեղեցւոյ խորհուրդները, սրբոց բարեխօսութիւնը, մասունքներու և պատկերներու յարգութիւնը, պահոց կանոնները և այլն, և բաւական ընդունելութիւն կը գտնէին նորութեանց վակատեալ և

թեթևութեամբ խորհող ազգայիններու մէջ: Մատթէոս պատրիարք որ նախանձայոյս պաշտպան մը եղած էր ազգային եկեղեցւոյ սկզբունքներուն, սաստիկ պագուեցաւ իրաց այս վիճակէն երբ պատրիարքական աթոռ բարձրացաւ, մանաւանդ երբ ծխատէր քահանաներէ հաւաքած տեղեկութիւններով իմացաւ որ 8000-ի կը հասնին մայրաքաղաքի մէջ բողոքականութեան յարողներ (ՊԷՐ.297): Իսկոյն պաշտպանողական գործունէութիւնը ձեռք առաւ, միամտութեամբ խաբուողներ լուսաբանելու, կարօտութեան երեսէն համակերպողներուն օգնելու, և ծխատէրներու ձեռքով կարևոր կարգադրութիւններն ընելու: Ամէն կիրակի ժամս երկուս և երիս խօսէր յատենի սուրբ եկեղեցւոյ, Մայրեկեղեցւոյ մէջ առանձին սենեակ մը բացած էր տարակոյս ունեցողներու կամ վիճաբանիլ ուզողներ հետ վբաղելու համար թէ բանիւ և թէ գրով, և նոյն սենեակին գլուխ կարգեց Յովհաննէս պատուելին, որ ժամանակին մեծ կրօնագէտն էր: Ձեռք առնուած միջոցները իրենց արդիւնքն ունեցան, և շատեր սկսան յետս կասիլ բողոքական ուղղութենէն, այնպէս որ Նիկոմիդացի Վրթանէս Չըրթըլեան քահանան (2541), որ 1835ին սկիչքները քահանայագործութենէ արգիլուած, և Արմաշ ու յետոյ Կեսարիա ապաշխարութեան յղուած, և օգոստոսին վերադարձած Նիկոմիդիա կը գտնուէր, փութաց Կ. Պոլիս գալ բողոքականութեան կացութիւնը ամրացնելու. պատրիարքին ալ ներկայացաւ, վիճաբանութեան ալ մտաւ, բայց Մատթէոսի դիմադրութեանց առջև տկարանալով, անդուռն լուտանքներու, խաչափայտը ատաղձավաճառի ապրանք և Աստուածածինը լկտի կին կոչելու հասաւ (ՊԷՐ.298): Հապիւ այս խօսքերը լսուեցան գրգռութիւնը վայրացաւ, ստորին խաւերն ալ հասաւ, և ամէն կողմէն դիմումներ և բողոքներ հասան պատրիարքին՝ հայհոյիչ բերանը կարկելու: Մատթէոս պատշաճը խորհելու համար 1846 յունուար 12-ին շաբաթ օր, խորհրդակցութեան հրաւիրեց Կարապետ Պննթցի նախկին պատրիարքը, Յովհաննէս Ջմիւռնացի Երուսաղէմի փոխանորդը, և վարդապետներու երիցագոյնը Յովհաննէս Խասթօյի քարոզիչը, և նոյն օր որոշուեցաւ և խմբագրուեցաւ Չըրթըլեանի բանադրանաց կողակը որ կոչուած է չիք և թշուառ Իվնիոիտցի Վրթանէս քահանայ, Պօղոս Գարագօջեան ձեռնադրուած, և որուն անշարք գործերը յիշուելէն ետքը կը վճռուի, թէ մերժեցաք պղա և արգելաք մտանել ի խումբս հաւատացելոց մերոց, և կարեցաք վքահանայութիւն սորա ընդ մէջ բանին Աստուծոյ (ՊԷՐ.302): Կոնդակը յաջորդ կիրակի և Ծնունդի ութօրէից օրը, Կ. Պոլսոյ եկեղեցիներու մէջ կարգադրուեցաւ, և նոր բանադրանաց կոնդակ պատրաստուեցաւ ընդհանուր բողոքականաց դէմ, որուն մէջ յանուանէ յիշուած էին, Ոսկան անհաւատն, Պօղոս և Յովսոփ Գամաղիլէեանք, Աբիսողոմ Իւթիւճեան, Կարապետ Միրիքէլամ և Ստեփան Բէրէստէճեան, որ կարգադրուեցաւ Կ. Պոլսոյ մէջ յաջորդ կիրակին 20-ին, և բոլոր Թուրքիոյ վիճակներն ալ դրկուեցաւ ու կարգադրուեցաւ: Երրորդ կոնդակ մըն ալ հրատարակեց Մատթէոս նոյն տարւոյ յունիս 9-ին, և աշխատեցաւ բողոքականաց հաստատութիւնները, նոյն իսկ Պէպէքի մեծ վարժարանն ալ փակել տալ, բայց իր ջանքերը աւելի ևս գրգռեցին բողոքականութեան յարողները (Օ1.ՕՐԱ.220):

2590. ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Բողոքական պետութեանց Անգղիոյ և Բրուսիոյ և Ամերիկայի դեսպանները սկսան շահագրգռուիլ Հայոց պատրիարքարանի կողմէ իրենց դաւանութեան դէմ բացուած հալածանքին մասին, և Հայոցմէ բողոքականութեան յարողներ ևս քանակս գրգռեցին դեսպանները, աշխատելով նոյն իսկ Եւրոպիոյ բողոքականները պատրիարքարանէ նախատուած ցուցնել: Օսմանեան կառավարութեան ալ բողոքներ տուին թէ պարկեշտութեան դէմ ըլլալ նուն համար կը հալածուին, զի ուրիշ խնդիրով չէին կրնար վայն շահագրգռել: Բանադրեալներէ խորշելու հրամանին հետևանօք զիրենք որդուք և ընտանեօք կարօտեալ և սովալլուկ ցուցուցին, և հայ

ջրհանակիրներու և բեռակիրներու պիրենք նեղելու և գանակոծելու հրաման տուած կարծեցուցին: Քաննինկ անգղիական դեսպան իր կողմէն ալ բողոքներ մատուց յանուն բողոքականութեան Հայոց պատրիարքին դէմ, պահանջելով անոր յանդգնութիւնը պսպել: Բանադրուածներ դեսպանի հրահանգով արտաքին գործոց և կրօնից նախարար Ռէշիտ փաշային ալ ներկայացան, բայց Ռէշիտ վայրացաւ անոնց յանդուգն կերպարէն, և մեղադրեց փոխանակ կառավարութեան՝ օտարին դիմելնին (ՊԷՐ.305): Միւս կողմանէ պատրիարքը առանձինն կոչելով յանդիմանէ պնա բանադրանացն, բայց Մատթէոս ինքզինքը կարդարացնէ անոնց կողմանէ ըսուած ապերասան և հայհոյիչ խօսքերը պատմելով, նոյն իսկ Մարիամ Աստուածածնին դէմ, զոր մահմետականներն ալ կը պատուեն: Ասոր վրայ Ռէշիտ խորհուրդ տուաւ երթալ Քաննինկի ալ եղելութիւնները պատմել, և Մատթէոս իրեն նախածանօթ անգղիական Ովրատիոս Սաթգէտ եպիսկոպոսին դիմեց (Օ1. ՕՐԱ. 220). և ընդարձակ բացատրական նամակ մըն ալ ուղղեց եկեղեցական սկզբունքներու և իր ընթացքին վրայ (ԱԶԳ. Գ. 73-75), և անոր միջնորդութեամբ ինքզինքնին բողոքական հռչակողներուն՝ Աստուածածնի և խաչի և մկրտութեան և պատարագի դէմ խօսածները, որոնց ինքն պաշտպանութիւն կընէր, և այդ մասին հայկական եկեղեցւոյն համամիտ էր անգղիական եկեղեցին ալ, որուն կը պատկանէին դեսպանն ու եպիսկոպոսը: Լիովին շինուեցաւ դեսպանին միտքը, որ պարտք սեպեց իր թարգմանին ձեռքով Ռէշիտի հաղորդել, թէ ինքն պատրիարքին դէմ գանգատ չունի, յանձնարարելով միանգամայն որ եթէ ուրիշներ ամբաստանեցեն, մի հաւատասցէ նոցա: Անգղիական եպիսկոպոսը մինչև իսկ հրատարակութեան տուաւ Մատթէոսի նամակը, իր կողմանէ ալ յայտարարութիւն մը աւելցնելով, թէ բողոքականութեան հետևողներն են խառնուրդք իմն անհաւատութեան և արմատական աղանդոց, խանգարիչ կանոնաց եկեղեցւոյ և ամենայն սկզբնական ճշմարտութեան (ԱԶԳ. Գ. 72): Մատթէոսի ընթացքը ոչ միայն հաճելի եղաւ անգղիական դեսպանատան և եպիսկոպոսարանին, այլ գովուեցաւ ալ օսմանեան կառավարութենէն, և վերիվերոյ բողոքականներէն շատ շատեր ետ կեցան իրենց թեթևութենէն, և

912 հոգիներ հաշտուեցան այն ատեն իբրև տիրապէս բողոքականներ (ՊԷՐ. 307): Անոնցմէ 40 գլխաւորներ 1846 յունիսին ժողովի գումարուելով իրենք իրենց պաշտօնական ձև տւին, Կոստանդնուպոլսոյ առաջին աւետարանական եկեղեցին կազմեցին, և Աբիսողոմ Իւթիւճեանը իրենց առաջին հովիւ ընտրեցին (Օ1. ՕՐԱ. 220), և յանդուգն ձեռնարկները ու անտեղի յարձակումները չափաւորելով խոհական և հանդարտ գործունէութեան ձեռնարկեցին: Այս ընթացքը աւելի օգտակար եղաւ իրենց, զի խազմարար ամբոխի ձևէն հանդարտ հասարակութեան կերպը սկսան ցուցնել, և բողոքական դեսպաններ աւելի համակրութեամբ սկսան վարուիլ և գործնական պաշտպանութիւն ցուցնել: Աբիսողոմ Իւթիւճեանի 1847 փետրուար 28-ին մեռնելուն վրայ Սիմոն եղբայրը անոր յաջորդեց, և անոր գլխաւորութեամբ ինքնուրոյն և անկախ հասարակութեան ձևն և իրաւունքները ստանալու ձեռնարկներ եղան: Լորտ Քօուլէյ որ առժամեայ կերպով անգղիական դեսպանութիւնը կը վարէր, Ամերիկոյ Քէր և Բրուսիոյ Լըբօք դեսպաններու հետ միացած, և կաթոլիկներու համար եղած կարգադրութեան վրայ հիմնուելով (2434), օսմանեան կառավարութենէն խնդրեց և ստացաւ բողոքականներու համար ինքնուրոյն հասարակութեան իրաւունքը, որ և հաստատուեցաւ 1847 հոկտեմբեր 3-ի կայսերական հրովարտակով (Օ1. ՕՐԱ. 220): Բողոքական հասարակութիւնը, պաշտօնական կոչմամբ Բրօթէսթան միլէթի, լոկ դաւանութեան վրայ հիմնուած է առանց ազգութեանց տարբերութեան, և բոլոր օսմանեան հպատակ բողոքականներ, ինչ ազգէ ալ ըլլան, միևնոյն հասարակութեան կը պատկանին, և այսպէս ալ պահուած է մինչև այսօր: Նմանապէս բողոքականութիւնը իր մէջ միակ և միապաղաղ կրօնական մարմին մը չէ, այլ բազմաթիւ յարանուանութիւնները ունի իր մէջ. սակայն Թուրքիոյ պետական

կազմակերպության առջև որևէ յարանուանություն է դրողներ, եպիսկոպոսականք, երիցականք, լուտերականք, աւետարանականք, մկրտականք, շաբաթականք, և այլ միևնույն հասարակության կը պատկանին: Իսկ հայ բողոքական կոչումը, որ մեր մէջ մտած է, պարզապէս մեծամասնութեան հայերէ կազմուած ըլլալէն ծագում առած է, եպէ թէ ոչ տիրապէս հայ չէ բողոքական հասարակութիւնը: Ամէն հասարակութեան պետը նոյնին եկեղեցական պետն է եղած, բայց բողոքականութիւնը եկեղեցական նուիրապետութիւն չունենալուն և միակ կրօնական մարմին չըլլալուն, վէթիլ կամ փոխանորդ անունով աշխարհական մէկ մկ նոր հասարակութեան իբր գլուխ ճանչցուեցաւ օսմանեան կառավարութենէ, և առաջինն եղաւ վերև յիշուած Ստեփան Բէրէստէճեան կամ Ստեփան Սերոբեան, հարապատ, եղբայր Սերոբեան Յակոբոս նախկին պատրիարքին, որ այն ատեն Մարտուանի և Ամասիոյ առաջնորդութիւնը կը վարէր, և տարի մը ետքը նորէն պատրիարքութեան դարձաւ, և երկու եղբայրներ դէմառդէմ գտնուեցան: Բրօթէսթան կամ բողոքական հասարակութեան պետին վէթիլ կոչումը, և մէջ սովորաբար ազգապետ անունով փոխանակուած է, թէպէտ ոչ բողոքականութիւնը ազգութիւն է, և ոչ անոր կազմութիւնը ազգային է:

2591. ՓՈՒՍԱԴԱՐՁ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերագոյնդ յիշեցինք թէ Ատիլէ սուլտանուհոյ հարսանեաց առթիւ, ադամակուռ մեծ շքանշանով պատուուած էին պատրիարքները (2588): Հարսանիքը տեղի ունեցած էր 1845 ապրիլ 18-ին (ՊԷՐ.528), և նոյն օր Ապտիլ Մէճիտ կայսր իր ներկայութեան ընդունելով պատրիարքները, յորդորած էր որ դուք ազգապետք գովելի քաղաքականութեամբ և հեզահամբոյր բարուք պատուասիրէք և յարգէք զմիմիանս երթևեկութեամբ և մեծարանօք (ՊԷՐ.309): Մատթէոս պատրիարք որ յոյսնին տաճկախօս չլինելուն պատճառով պատշաճ պատասխանը խօսեր էր կայսեր առջև ամենայն բարեմաղթութեամբ, ուպեց առաջին ալ ըլլալ փոխադարձ յարաբերութիւնները սկսելու մէջ, և ինք նախ Յունաց Մելիտոս պատրիարքին այցելեց Վոսփորի վրայ Առնավուտքէօյի ամարանոցը յունիս 8ին Հոգեգալստեան ուրբաթ օրը, և մեծ արժանաւոր յարգութեամբ և մեծարանօք ընդունուեցաւ: Երրորդ օրը յունիս 11 երկուշաբթի օր փութաց Մելիտոս այցելութիւն դարձնել Գումքարուի պատրիարքարանը, երկու եպիսկոպոս և վեց վարդապետ հետևորդներով, Մայրեկեղեցին ալ մտաւ, երկրպագեց, աղօթեց և օրհնեց և մեծարեցաւ յոյժ արժանաւոր յարգութեամբ (ՊԷՐ.310): Ասոր վրայ կաթոլիկ պատրիարքարանն ալ փութաց օրինակին հետևիլ, և Անտոն Հասունեան եպիսկոպոս, որ Եսայեան Կարապետ պատրիարքին յաջորդած էր սոյն 1845 տարուոյ ապրիլ 3-ին (01.ՊԷՐ.218), Գումքարուի պատրիարքարանը այցելեց յունիս 15-ին, բայց Մայրեկեղեցի չմտաւ, որով գայթակղեցոյց զժողովուրդն Հայոց (ՊԷՐ.310): Իսկ Մատթէոս այցելութիւնը փոխանակեց Ղալաթիոյ պատրիարքարանը: Հրէից բաբունապետն ալ իր կարգին եկաւ Գումքարուի պատրիարքարանը վեց րաբունիներով և երեք աշխարհական մեծամեծներով, որուն այցելութիւնը դարձուց Մատթէոս Պալաթի ազգապետարանը յունիս 18-ին: Մինչև այս ատեն երբեք սովորութիւն չէր եղած որ պատրիարքներ իրարու այցելեն, և Մատթէոսի նախաձեռնութեամբ սկսած նորութիւնը շարունակեց առաջիկային և օգտակար հետևանքներ ալ ունեցաւ: Հայոց պատրիարքարանը սկսաւ աւելի ճանչցուիլ և մտադրութեան արժանի պաշտօնատուն մը դարձաւ, որուն փափաքեցան Կ. Պոլիս եկող արքայապուն հիւրերն ալ: Կոստանդին մեծ դուքս Ռուսիոյ արքայորդին Գումքարու եկաւ յունիս 13-ին չորեքշաբթի օր ոռուսական և օսմանեան բազմաթիւ հետևորդներով, որոնց մէջ էր և հռչակաւոր հայազգի ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսքի: Եկեղեցի ալ մտաւ և աղօթեց, պատրիարքարանի մէջ մեծարուեցաւ, և անկէ Եւտիգուլէի ազգային հիւանդանոցն ալ այցելեց

(ՊԷՐ.532), և 27-ին Պրուսա անցնելով երեք օր օթևանեցաւ Հայոց առաջնորդարանը, և պատուուեցաւ առաջնորդ Քէրէստէճեան Գէորգ վարդապետէն: Ռուսիոյ արքայորդիէն ետքը Գաղղիոյ արքայորդին Մոնթանսիէ դուքսը, Կ. Պոլիս այցելելուն առթիւ, նա ալ օգոստոսի մէջ այցելեց՝ Հայոց Գումբարուի պատրիարքարանը, և հետաքրքրուեցաւ Հայոց վիճակին վրայ, ցաւով լսեց Ջմիւռնիոյ հրդեհելոց խեղճութիւնը, որոնց և առատապէս նպաստեց հոն գացած ատենը, և առանձինն շնորհակալեաց ընծայ տուաւ Տատեան Յովհաննէս վառօդապետին, որուն խնամքը տեսած էր երբ առջի գալուն պարտաւորուած էր վեց օր վառուարանի ենթարկուիլ Այոսթէֆանօ գիւղը (ՊԷՐ.530): Այցելութեանց յիշատակութիւնները փակենք Մատթէոսի նոյեմբեր 27-ին Յունաց նորընտիր Անթիմոս պատրիարքին երթալովը, որ յաջորդած էր վախճանեալ Միլիտոսի:

2592. ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Շքանշաններու ընդունելութեան հետևող այցելութիւններ՝ պատրիարքներու շրջանակէն դուրս ալ կատարուեցան, և նախարարութեանց ալ պատշաճ էր պարտուպատշաճ շնորհակալութիւնը յայտնել: Մատթէոս այդ ձևակերպութեանց մէջ ալ չթերացաւ, 1845 յունիս 5-ին այցելութեան գացած էր մեծ սպարապետ Ռիպա փաշայի անոր Քատրքէօյի ապարանքը: Այդ պատեհով խօսքը եկաւ ուսմունքները քաջալերելու մասին, և Հայոց բացած ճեմարանին վրայ, որ 1841 հոկտեմբեր 3-էն ի վեր փակուեցած էր (2548), և պարապ շէնքը 1843-ին Վիեննայի հիւանդանոցի վերածուած էր: Սպարապետը հաւանեցաւ պատրիարքը հաճեցնել, որուն վրայ Մատթէոս միւս օրը յունիս 6-ին արտաքին գործոց և կրօնից նախարար Շէքիպ էֆէնտիի ալ նոյն խնդրանքը կրկնեց, և յունիսի վերջին օրերը Վիեննայի կառավարութեան շէնքը պարպեցին և բանալիները պատրիարքին յանձնուեցան: Անմիջապէս սկսան շէնքին նորոգութեան և մաքրութեան աշխատութիւնները, որոնց յաջորդեցին կահաւորութեան պէտքերը և դասընթացք կազմելու ծրագիրները, ուսուցիչներ և վարիչներ նշանակելու կարգադրութիւնները: Ուսումնապետ նշանակուեցաւ Տէրոյենց Յովհաննէս պատուելին, և վերատեսուչ՝ Պօղոս Օտեան: Բաւական տւեցին պատրաստութիւնները և հապիւ 1845 հոկտեմբեր 1-ին, Վարագայ Խաչի երկուշաբթին, բացման հանդէսը կատարուեցաւ պատրիարքի նախագահութեամբ: Աշակերտները պիտի ըլլային 50 գիշերօթիկ, 40-ը թոշակաւոր, տարեկան 3000 դահեկանի թոշակով, և 10 ձրի՝ կարօտ ընտանիքներէն ընտրանօք: Աշակերտութիւնը կայսերական շնորհի ալ արժանացաւ 1846 յունիս 2-ին գիշերը, երբ լուսավարութիւններ և ուրախութիւններ կը կատարուէին, կայսեր կրօնակողման գաւառները: Ադրիանուպոլսէն մինչև Ռուսձուգ կատարած պտոյտէն վերադարձին առթիւ: Ճեմարանի աշակարտներէն 30 հատը յատուկ նաւով կայսերական պալատան առջև նոր և գեղեցիկ երգս երգելով համեղաձայն հաճեցուցին վարքայ, և 3000 դահեկանի պարգև ստացան (ՊԷՐ. 543): Այս տեղ յիշեցինք որ այդ միջոցին սկսաւ տէրութեան կողմէ Եէտիքուլէի հիւանդանոցին հացագինի շնորհը, Վոր խնդրեց Յովհաննէս Տատեան վառօդապետ և Ասլապէկի գործարանին հեղինակը, երբ Ապտիւ Մէճիտ կայսր 1845 ապրիլ 9-ին գործարանը այցելեց, և գոհ մնալով ուզեց պարգև մը ընել գործարանի հիմնադիրին: Առաջին շնորհը օրական 37 ու կէս քաշ էր, որ առաջիկային հետզհետէ աճեցաւ և միսի շնորհն ալ աւելացաւ:

2593. ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ ՓԱԿԵՂԸ

Մատթէոս պատրիարք իր այցելութեանց և օտարաց հետ յարաբերութեան առթիւ մտադրութիւն դարձուց եկեղեցականներու սովորական գլխանոցներու վրայ, տեսնելով որ ուրիշ ազգեր համաձև և կանոնաւոր գլխանոցներ ունէին, ինչ որ կը պակսէր Հայոց մէջ: Կուսակրէններ կամ վարդապետներ վեղար ունէին, բայց յաճախ վանց կընէին կրել վայն քաղաքներու մէջ, իսկ ամուսնաւորներ կամ քահանաներ աշխարհականներու յատուկ եղող գլխանոցներ կը կրէին ըստ

հաճոյս: Համաձև գլխանոցի մը հիմը ընտրուեցաւ վեղարներու ներքև գործածուող սրածայր գլխանոցը, որուն վրայէն քօղը վերցուելով, և մնացած մասը վայելուչ պատելով կապմուտեցաւ ինչ որ այսօր փակեղ անունով կը կոչենք: Վրայի ծածկոյթը որոշուեցաւ կուսակրօններու համար ի մանուշակագոյն թաւիշէ, և ամուսնաւորներու համար ի սեաւ չուխայէ (ՊԷՐ. 312). մասնուշակագոյն երանգին ընտրութիւնը անշուշտ նմանողութեամբ հռոմէականներէն առնուած է, որոնց բարձրագոյն եկեղեցիները այս գոյնը կը գործածէն: Փակեղին գագաթի սրածայր մասը ծալովի պիտի ծածկուէր և կոճակ մըն ալ սուր ծայրին վրայ: Պատրիարքի համար որոշուեր և մոյգ կարմիր թաւիշը ոսկի երիզով, բայց գործածուած ըլլալուն յիշատակ չէ լսուած: Մանուշակ թաւիշը կերևի թէ նախապէս փակեղին ամբողջին համար որոշուէր է, բայց կիրառութեան մէջ կիսովի եղած է, վարի գլանաձև մասը սև թաւիշէ, և միայն վերի սրածայր մասը մանուշակագոյն թաւիշէ որ իր երկգոյն երևոյթին մէջ ոչ վայելուչ և ոչ հաճոյատեսիլ կրնար ըսուիլ: Վերջին տարիներու մէջ Կիլիկիոյ Մկրտիչ կաթողիկոսին մանուշակագոյն վեղար գործածելուն, և անոր կողմէ փակեղներուն մանուշակագոյն մասին իբր արդարացում ցուցուելուն վրայ, Ներսէս Վարժապետեան պատրիարքը ամբողջ սև թաւիշէ փակեղ սկսաւ գործածել, և շատ ալ հետևողներ ունեցաւ, զի ոչ միայն միագոյն գլխանոց մը աւելի վայելուչ կերևէր, այլ և մանուշակագոյնը օդին և արևին մէջ շուտով իր երանգը կը կորսնցնէր: Միև կողմէն աւագ և երիցագոյն քահանաներ ևս սկսած էին սև ասուրի տեղ սև թաւիշէ փակեղներ գործածել, որով հետզհետէ նմանութեան կէտ մը հաստատուեցաւ կուսակրօններու և ամուսնաւորներու փակեղներու մէջ, ինչ որ մենք բնաւ անտեղութիւն չենք համարիր, զի եկեղեցականներու արտաքին տարազը իրենց կոչումին և ո՛չ իրենց աստիճանին նշանակ ըլլալու սահմանուած է, ապա թէ որ շատ աւելի բազմացնելու էր գոյներու տարբերութիւնը: Մատթէոս պատրիարք փակեղի կիրառութեան նշանակութիւնը աւելցնելու համար, զայն կառավարութեան ալ ներկայեց 1845 ապրիլին, իբր հայ եկեղեցականներու սեփական ձև, և հաստատել տուաւ հրամանաւ բարձրագոյն դրան (ՊԷՐ.526): Փակեղի կիրառութիւնը այսօր ընդհանրացած է տաճկահայ վիճակներու մէջ և ընդունուած է իբրև հայ եկեղեցականներու յատկացեալ տարազ: Փափաքելի էր որ ռուսահայ վիճակներու հայ եկեղեցականներն ալ յատուկ և սեփական փակեղ մը ունենային, մինչև այժմ կուսակրօններուն վեպարէն դուրս ամուսնաւորներ խառնիխուռն կերպով աշխարհիկ գլխանոցներ կամ և ուպական պէսպիսի գլխարկներ կը գործածեն, և ռուսական փակեղն ալ կամ կամելաֆկան իբրև պատուոյ նշանակ և առանձնաշնորհութեան առարկայ կը նկատեն:

2594. ՄԱՏԹԷՈՍ ԵՒ ԺՈՂՈՎՆԵՐ

Ինչ որ մինչև հիմա յառաջ բերինք Մատթէոս պատրիարքի գործունէութենէն, մասնաւոր ձեռնարկներ են պարագայից բերմամբ կատարուած, բայց իրմէ սպասուած գլխաւոր գործը պատրիարքարանի վարչութեան հաստատուն հիմնական ձև մը տալն էր, որ 1839-է ասդին (2545-2547) ազգային կնճիռ մը դարձած էր ժողովրդական ճգտումներու և ամիրայական պընդումներու երեսէն, և զօրաւոր ձեռքի մը կը կարօտէր իր լուծումը ստանալու: Մատթէոսէ կը սպասուէր որ ժողովրդականաց նպաստաւոր ըլլար և ամիրայական խումբին յաւակնութիւնները, բայց տեսնուեցաւ որ նա գործադրութեան մէջ ալ աւելի առաջ անցնելով և բոլորովին իսկ գործակցութեան պայմանը անտեսելով ինքն միայն կարգադրէ վամենայն, և գործերու մէջ կրօնականի և քաղաքականի բաժանում մը գնելով, աշխարհական տարրին խորհրդակցութիւնը կընդունէր միայն կալուածոց, հիւանդանոցաց, դպրոցաց և տնանկաց խնդիրներու մէջ, իսկ բացարձակապէս իրեն կը վերապահէր զհոգևորսն հոգալ, քննել կարգադրել, պատժել, պսակել և վառաջնորդսն ընտրել ըստ խնդրոյ և համահանութեան քաղաքացեացն, և ըստ այսմ ալ

յայտնապէս կընդդիմանար առաջնորդներէ ոմանց փոփոխութեան, զոր ամիրաներ կը պահանջէին: Խնդիրը այլևս ժողորդական և ամիրայական կերպարանը կը կորսնցնէր, և պատրիարքական իշխանութեան բացարձակ թէ գործակցական ըլլալուն վրայ կամփոփուէր, և ամիրայականք և ժողովրդականք իրարու կը մօտենային, և նոր գետնին վրայ նոր խնդրագիր կը բացուէր (ՊԷՐ. 318): Գործին գլուխ կը կանգներ Յակոբ Կրճիկեան, երկուկողմերէն ալ հաւասարապէս յարգուած անձ մը, 1806-ին ծնած Բերա, իսկապէս ուսումնական և գրական միտքով օժտուած, Եւրոպա գացած Ռէշիտ փաշայի հետ, դեսպանատանց մէջ դիւանագիտական կարևոր պաշտօններ վարած Փարիզ և Վիեննա և Լոնտրա, և Կ. Պոլսոյ մէջ ալ մեծ եպարքոսութեան քարտուղար և խորհրդական կը գտնուէր (Օ1. ՕՐԱ. 227): Իր այս գիրքէն օգտուելով և երկու կողմերէն քաջալերուելով, Կրճիկեան կրցաւ Ռէշիտ փաշան համոզել պատրիարքարանի վարչութեան օրինական և ժողովրդական ձև մը տալու պէտքին, և եպարքոսն ալ կայսերական հաւանութիւն ստացաւ, որուն վրայ պատրիարք և մեծամեծք արտաքին գործոց նախարար Ալի էֆէնտի կողմէ հրաւիրուեցան Վոսփորի վրայ Էմիրկէնի ամարանոցը 1847 մայիսի 7-ին չորեքշաբթի օր, և հոն իրենց հաղորդուեցաւ կայսերական հրովարտակը, որ կը հրամայէր երկու ժողովներ հաստատել պատրիարքարանի մէջ պատրիարքի նախագահութեան ներքև, մին կրօնական գործոց համար հոգևոր ժողով անունով և 14 անդամով, և միւսը քաղաքական գործոց համար Գերագոյն ժողով անունով և 20 անդամով, երկուքն ալ եկեղեցականաց և աշխարհականաց ամէն դասակարգերէն առնուած և համախմբութեամբ ընտրուած: Որչափ ալ գործը պատրիարքի պաշտօնավաւութիւնը չափաւորելու և բացարձակ իշխանութեան սահման դնելու, կամ սահմանադրութիւն հաստատելու դիտմամբ կարգադրուեցաւ, սակայն Մատթէոս պատրիարք բնաւ չդժկամակեցաւ, զի իր հիմնական տեսութեանց և վարչական սկզբանց հակառակ չէր գործակցական ձևը, միայն թէ օրինական սահմանի մէջ մնար և անհատներու աղիկամի հաճոյքներու չծառայէր:

2595. ԵՐԿՈՒ ԺՈՂՈՎՆԵՐ

Մատթէոս առանց ժամանակ անցնելու անմիջապէս առաջիկայ ուրբաթին մայիս 9-ին, Մայրեկեղեցոյ մէջ ժողով գումարեց եկեղեցականաց և աշխարհականաց, յորդորական մը խօսեցաւ, ընտրութեան կերպը հրահանգեց, և համահանութեամբ ամենեցուն ընտրուեցան երկու ժողովները կազմող անդամները: Հոգևոր ժողովին անդամ ընտրուեցան Յոհաննէս Եպիսկոպոս Զմիւռնացին որ Օրթաքէօյի քարովիչ էր, և չորս վարդապետներ, Գէորգ Երուսաղէմի փոխանորդ, և Յովհաննէս ծերունի Խասքէօյի և Յովհաննէս Սէթեան Գուլկունճուքի և Գրիգոր Զօրաբաբէլեան Պալաթի քարովիչներ, և ինը աւագերէցներ, Գալուստ Օրթաքէօյի, Գէորգ Խասքէօյի, Յովհաննէս Սէլմիյէի, Պաղտասար Եէնիմահալլէի, Զաքարիա Բերայի, Գրիգոր Պէքիշթաշի, Յարութիւն Ղալաթիոյ, Գրիգոր Սամաթիոյ, և Պաղտասար Պալաթի: Իսկ գերագոյն ժողովին ընտրուեցան, Յովհաննէս և Պօղոս Տատեան վառօդապետներ, Կարապետ Պալեան և Յովհաննէս Սերվերեան ճարտարապետներ, և Միքայէլ Փիշմիշեան, Մաքսուտ Սարիմեան, Գէորգ Երեմեան, Մկրտիչ Ճէպայիրլեան, և Միսաք Միսաքեան սեղանաւորներ, որոնց հետ համրելով նաև Յակոբ Կրճիկեանը, զոր յիշեցինք, կը լրանայ ժողովին ամիրայական կէսը: Իսկ միւս կէսը արհեստաւորներէն առնուեցան և ընտրուեցան, Յովհաննէս Չէլէպեան հացագործ, Յովհաննէս Չօպանեան ոսկերիչ, Յովհաննէս Սուրէնեան ժամագործ, Թովմաս Մարտիրոսեան երկաթավաճառ, Աստուածատուր Սարաֆեան ասուեավաճառ, Բերովբէ Պաշպապիրկեանեան մետաքսավաճառ, Գրիգոր Թիւսիւլեան բեհեկավաճառ, Կարապետ Տէր-Գրիգորեան կտաւատավաճառ, Սահակ Բիւշիկյակորեան ատաղձավաճառ, և Սարգիս վարպետ սուսերագործ:

Ըհտրուածներուն անունները կառավարութեան հաղորդուեցան և պետական պաշտօնագիրով հաստատուեցան երկամեայ պաշտօնավարութեան պայմանաժամով, և մայիս 20-ին հինգշաբթի օր, առաջին համագումար նիստը տեղի ունեցաւ, ուր պատրիարքը ազդու յորդորական մը խօսեցաւ ժողովականներուն, և որոշուեցաւ իւրաքանչիւր ճիւղին շաբաթական նիստ գումարել իրենց պատկանեալ խնդիրները քննելու և որոշելու, Գերագոյնը երեքշաբթի և Հոգևորը հինգշաբթի օրեր, և միշտ պատրիարքի նախագահութեամբ: Նոր կարգադրութեամբ որ մինչև 1860 տևեց իւրաքանչիւր դասակարգ իր գոհունակութեան մասն ունեցաւ, և վարչական գործեր կանոնաւոր ընթացք ունեցան, և կրնանք ըսել թէասիկա եղած է ազգային սահմանադրութեան տիրապէս սկզբնաւորութիւնը: Զի ինչ որ ասկէ ետքը կատարուեցաւ, 1860 ի կազմակերպութիւնը և 1863 ի հաստատութիւնը, այդ առաջին կազմութեան լրումն և ամբողջացումն են եղած: Ժողովին ձևակերպութեանց մէջ ատենապետներու և ատենադպիրներու ընտրութեան չենք հանիպիր, միայն Կրճիկեանի յատուկ և գործադիր պաշտօն յանձնուեցաւ լօղօֆէթ անունով Յունաց պատրիարքարանը մեծ պաշտօնակալ մը կը պահէ, և նապիտի ըլլար կառավարութեան հետ յարաբերութեանց միջնորդը և ներքին կարգադրութեանց հսկողը և ժողովներու դիւնները վարողը (01.ՕՐԱ.222):

2596. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԱՂԷՏՆԵՐ

Գաւառաբնակ ազգայնոց բարօրութեան խնդիրն ալ Մատթէոսի գործունէութեան առիթ ընծայեց, զի Վասպուրական նահանգի բնակչութիւնը սաստիկ նեղութեան մատնուած էր Պէտէրիսան պէյի և Մահմուտ խանի, երկու քուրդ ցեղապետներու երեսէն, որոնք արձակ համարձակ կարշաւէին, և տեղական իշխանութիւնները անբաւական էին վանոնք վսպել: Մատթէոս քանիցս գրով և բերանով խօսեցաւ եպարքոսին և նախարարութեան, և վերջապէս ստիպուեցաւ զեկուցանել թէ այն կողմերու հայաբնակութիւնը վերջին յուսաբեկութեան ներքև խմբովին սահմանագլուխ անցնելու և ռուսահայ գաւառները ապաւինելու կը պատրաստուի, և թէ ինքն պարտաւորուած է այժմէն կառավարութեան մտադրութիւնը հրաւիրել, զի մի՛ առ յապայս մեղապարտ գտանիցի: Այդ տեղեկագրութեան մեծ կարևորութիւն տրուեցաւ, կայսերական հրաման եղաւ, նախարարութիւնը խորհրդակցեցաւ, և Օսման փաշայի պաշտօն յանձնուեցաւ զօրաւոր բանակով մը ըմբոստ և ապստամբ ցեղապետները զսպել: Միանգամայն պատրիարքին հրահանգ տրուեցաւ որ Հայերը հրահանգէ բանակին օժանդակութեան, և նա ալ յատկապէս գրեց Վանայ, Կարնոյ, Բաղէշի, Բալուայ և Տիգրանակերտի առաջնորդներուն որ ժողովուրդներ օգնական լիցին և ծառայեսցեն արքունի բանակին, և զհաւատարմութիւն իւրեանց ցուցցեն: Օսման փաշա նախ քալեց ճէվիրէ գաւառը, ուր ամրացած էր Պէտէրիսան, հայ գունդերն ալ իրեն հետ, և հետզհետէ պաշարումը սեղմելով Պէտէրիսանը պարտաւորեց անձնատուր ըլլալ հանդերձ իւրով բազմանդամ գերդաստանով, որ 70 և աւելի հոգի եղած կըսուի կիներով և զաւակներով: Հայերու ուրիշ խումբ մը Մահմուտ խանի վրայ քալեց, և վայն նեղը ճգելով կալանաւորեց և վայն Օսման փաշայի յանձնեց: Երկու ցեղապետներն ալ իրենցներով Կ. Պոլիս յղուեցան, Պէտէրիսան ի Կրետէ և Մահմուտ ի Սիլիստրէ աքսորուեցան, առաջինը 1847 յուլիս 20-ին և երկրորդը սեպտեմբեր 19-ին, և քրդական խուժանը անգլուխ մնալով ցրուեցաւ, և Վասպուրական և շրջակայ գաւառներ խաղաղութիւն և հանդարտութիւն վերստացան (ՊԷՐ. 322և535): Օսման սպարապետ աննախանձ կերպով վկայեց Հայերու ընծայած ձեռնտուութեան և վկայած հաւատարմութեան, որուն արդիւնքն եղաւ պատրիարքի յանձնարարութեամբ ամէն եկեղեցիներու մէջ գոհաբանական աղօթքներ կատարուիլը օսմանեան բանակին ձեռք ձգած յաջողութեան համար, Յնծացք առ Աստուած սաղմոսին հանդիսաւոր երգեցողութեամբ: Կայսրն ալ զգածուելով այդ ամէն ցոյցերէն

(ՊԷՐ. 326), պալատական պաշտօնեաներէն ներքինապետի միջնորդութեամբ 1847 նոյեմբեր 22-ին շաբաթ օր յատուկ գոհունակութեան և խնդակցութեան արտայայտութիւն հասոյց պատրիարքին, այն շնորհին համար զոր Աստուած պարգևեց իր թագաւորութեան, իր աստուածաւանդ հպատակներուն կատարեալ հանգստութեանը համար (ՊԷՐ. 325): Պատրիարքն ալ այդ ցնծաւետ պարագայն աւետեց եզգին դեկտեմբեր 9-ին յատուկ շրջաբերականով, զոր կը սկսի աստուածապօրն Հայկայ և աստուածամարտն Բելայ յիշատակներով, կը յիշէ Պէտէրխանի և Մահմուտի աղէտները, և պատմէ կայսեր կողմէն իրեն հաղորդուած խնդակցութիւնը, և կը վերջացնէ կայսեր և կայսերամօր ու կայսերապուներու համար ջերմ բարեմաղթութիւններով (ՊԷՐ. 323-326): Անշուշտ շրջաբերականին թարգմանութիւնը արքունիք ալ հաղորդուեցաւ, զի պատրիարքը սկսաւ արքունեաց մտերիմ մը դառնալ, և կայսերամայրը երբ 1848 տարուոյ սկիզբները հիւանդացաւ, յատուկ պատրիարքին աղօթքը խնդրեց, որ եկեղեցիներու մէջ ութն օր Տէր ողորմեա ըսել հրամայեց, և ինքն ալ աւետարան և նարեկ և շուրջառ առած Տատեան Պօղոսի և Կրճիկեան Յակոբի և Վրթանէս վարդապետի ընկերակցութեամբ պալատ գնաց, աւետարան և աղօթք կարդաց, և ինն օրէն կայսերամօր ապաքինելուն աւետիսն առաւ: Գացողներուն ամէնն ալ պատուասիրուեցան և ընծաներ ստացան, որոնց մէջէն թանկագին կերպաս մը շուրջառի վերածուելով Ներսէս կաթողիկոսին նուէր գրուեցաւ (ՊԷՐ. 326-327):

2597. ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ ՖԷՐԲԻԷՐԻ

Մատթէոսի պատրիարքութիւնը այլապէս դիպուածներու հիսուած մըն է ինչպէս ցարդ պատմուածները կը ցուցնեն, և զայդ պէտք է վերագրենք իր կողմէն ցուցուած ամէն տեսակ գործի միջամտելու փափաքին: Նախընթաց 1846 տարուոյ յունիսին Գրիգոր ԺԶ- ին յաջորդած էր Պիոս Թ. Պապը ապատամիտ գաղափարներու տէր ճանչցուած անձ մը, որ ժամանակին պահանջից հետևելու միտքով, մինչև իսկ իր աշխարհական իշխանութեան սահմանադրական ձև տուած էր: Ուզելով նա ամէն տէրութեանց հետ ուղղակի յարաբերութիւնները պաստատել, օսմանեան սուլտանին ալ յատուկ դեսպանութիւն մը վրկեց, և այդ պաշտոնը յանձնեց Իննովկենտիոս Ֆէրբիէրի Սինոդի անուանական արքեպիսկոպոսին, և ոչ կարտինալին (ՊԷՐ. 327), որուն խորհրդական նշանակուեցաւ Փրօփականտայի պաշտօնեաներէն Վեսթասիանի վարդապետը, և թարգման՝ Անտոնեան Միաբաններէն Արսէն Անճարակեան վարդապետը: Ֆէրբիէրի յանձնուած պաշտօնը քաղաքական յարաբերութիւններ հաստատելէ և հայ-կաթողիկներու ներքին խնդիրները քննելէ վատ, կամ թէ նոյն իսկ քաղաքականէն աւելի նպատակ ունէր, հռոմէադաւան չեղող յոյն և հայ եկեղեցիները Հռոմի մօտեցնելու ջանքեր ընել, և այս միտքով շրջաբերական կոնդակ մըն ալ յանձնուած էր Ֆէրբիէրի, Հռոմի համամիտ չեղող եկեղեցիներու ուղղուած, որով ասոնց իրենց գրութենէ հրաժարելու և հռոմէական վարդապետութիւն ընդունելու կը հրաւիրուէին: Ֆէրբիէրի Կ. Պոլիս հասաւ 1847 տարուոյ վերջերը, և արժանավայել հիւրասիրութիւն և պատիւ գտաւ օսմանեան կառավարութենէն և արքունիքէն, և որչափ իր դեսպանութեան կրօնական նպատակն ալ կը լսուէր, բայց յոյն և հայ պատրիարքներէն շարժում չեղաւ, մինչև որ սուլտանն առաքեաց հրաման ի պատրիարքարանս Յունաց և Հայոց երթալ առ նա յայցելութիւն քաղաքավարական օրինօք: Յոյն պատրիարքարանը ասով ալ շատ չյորդորուեցաւ, և Անթիմոս պատրիարք պատճառեաց տկարութիւն անձին մեծ, և երեք եպիսկոպոսներ յղեց, որոնք քառորդ մի ժամու այցելութեամբ վերադարձան (ՊԷՐ.328): Մատթէոս ընդհակառակն փութաց անձամբ երթալ 1848 յունուար 4 (ՊԷՐ.556) կիրակի օր, խորհրդական Յովհաննէս Տէրոյենց, թարգման Մկրտիչ Աղաթօն, քարտուղար Աւետիս Պէրալեբեան, և Վրթանէս վարդապետ հետևորդներով, և բաւական երկար այցելութիւն տուաւ, դաւանական և կրօնական խնդիրներ ալ շօշափելով: Ֆէրբիէրի նախ Յունաց

պատրիարքարանը գնաց, և միայն յունուար 29-ին (ՊԷՐ.330) հինգշաբթի օր Գումբաբու Հայոց պատրիարքին եկաւ, բայց Մատթէոս այս անգամ ալ փառաւոր ընդունելութիւն ըրաւ, 12 քահանաներով և 6 վարդապետներով և 2 եպիսկոպոսներով վայն դիմաւորեց, և ոսկեթել ծածկոյթով թիկնաթոռի վրայ բազմեցուց և առաւելով պատուասիրեց (ՊԷՐ.328), բայց նա անբաղաբավարի կերպիւ խօսս եբաց վասն վարդապետութեան հաւատոյ (ՊԷՐ.557), Հայոց եկեղեցին իբրև մոլորեալ ցուցնելով և հռոմէականութեան հրաւիրելով: Պատրիարքը պատշաճ բայց մեղմ պատասխաններ տուաւ, իսկ Տէրոյենց աւելի խորունկը մտնել կուզէր, բայց ուրիշ առիթի թողուցաւ խօսակցութեանց այս մասը:

2598. ՖԷՐՐԻԷՐԻ ԵՒ ՀԱՅԵՐ

Ըստ այսմ քանի մը օր ետքը, փետրուար 3-ին երեքշաբթի օր, Տէրոյենց Ֆէրրիէրիէ առանձին տեսակցութեանց հրաւիրուցաւ, որ և տեղի ունեցաւ փետրուար 6-ին Յովնանու ուրբաթ օրը, Գաղղիոյ դեսպանատան մէջ, Ֆէրրիէրի երկու եկեղեցականներ ունէր միասին, իսկ Տէրոյենց մինակ էր (ՊԷՐ.331), և երեք ժամու մօտ քէց խօսակցութիւնը, զոր ինքն Տէրոյենց գիրի առած է, և Պէրպէրեան վայն հրատարակած է (ՊԷՐ.330-347): Ֆէրրիէրի կը սկսի նախ գոհունակութիւն յայտնել, որ պատրիարքը սիրոյ և միաբանութեան փափաքը մը ունի, և որովհետև հռոմէականաց պատրիարք Հասունեանի մօտ ալ կը տեսնէ այս փափաքը, կը վարմանայ թէ ինչո՛ւ այսպէս մէկ բարի և օգտակար գործ մը մինչև հիմայ ետ մնացեր է: Այս յառաջաբանով կը մտնեն երկու եկեղեցիներու դաւանական տարբերութեանց վրայ, Ֆէրրիէրի խնդիրները հետզհետէ կը յիշեցնէ, և Տէրոյենց թէ դաւանական և թէ պատմական բացատրութիւններ կու տայ: Այս կերպով հետզհետէ կը խօսուին, եւտիքականութեան, բնութեանց միաւորութեան, պապական իշխանութեան, ժողովական գերագահութեան, պապերու սխալականութեան, հայկական եկեղեցւոյ գիրքերուն, Օձնեցիին և երևութականութեան, Հոգւոյն Սրբոյ բղխման, Հայոց մէջ վանական ժամանակներ երևցած միաբանական ձգտումներու վրայ: Տէրոյենց հմտութեանց առատութիւն ցոյց կու տայ, բայց Ֆէրրիէրի աւելի Հայոց միտքը իմանալու աշխատած կերևի, և թէպէտ տրուած տեղեկութեանց վրայ շնորհակալութիւններ կը յայտնէ, սակայն բնաւ իր տեսակետէն հեռացած չերևիր: Պատճառ մը չունինք Տէրոյենցի գրութեան վրայ կասկածներ յայտնել, թէպէտ խօսակցութենէն 47 օր ետքը մարտ 25-ին (ՊԷՐ. 347) գրած է իր տեղեկագրութիւնը, բայց չենք ալ կարծեր որ շատ ազդեցութիւն ըրած ըլլայ Ֆէրրիէրիի համոզման վրայ: Այս խօսակցութեանց միջոցին Ֆէրրիէրի ներկայացուցած էր Տէրոյենցի վերը յիշուած շրջաբերականին լատիներէն, ծանուցանելով միանգամայն թէ Արսէն վարդապետի աշխատութեամբ հայերէն թարգմանութիւնը կը պատրաստուի (ՊԷՐ. 340): Իրոք ալ քիչ օր ետքը կոնդակէն տպեալ հայերէն օրինակ մը վրկուցաւ Մատթէոսի, որ անոր մէջ կարդալով թէ Այժմեան եկեղեցին Հայոց է մոլորեալ և անջատեալ ի յուղափառ շաւղաց նախնի հարց իւրոց, սաստիկ կը վայրանայ, և պահ մը կը մտածէ կառավարութեան բողոքել, բայց վառօդապետ և ճարտարապետ ամիրաներ կարգիլ են, և վրանին կառնեն Ֆէրրիէրիի հաղորդել զգաւ սրտի պատրիարքին վասն տեսրակին այնմիկ: Ասոր վրայ կը կարգադրուի ուղղակի տեսակցութիւն մը Մատթէոսի և Ֆէրրիէրիի միջև, որ տեղի կունենայ Պէշիքթաշ Տաւեան Յովհաննէսի տունը յետ մեծածախս ընթերցաց (ՊԷՐ. 329): Այս տեսակցութեան մէջ Մատթէոս կը պարզէ զճշմարիտ դաւանութիւնս Հայոց, և յթշնամեաց նոցին զհռոմէական գօլէճէանց վանխիղճ և պաստուածընդդէմ վպարտութիւնս, զորս կը ցուցնէ իբրև պատճառ Հայոց մասին կազմուած սխալ համոզման: Պէրպէրեանի վկայութեամբ, որ ներկայ եղած է, Ֆէրրիէրի վարմացաւ զի ոչ որպէս կարծէրն և լուեալ էր, ետես այնպէս և խոստացաւ երկրորդ բանակցութենէ ետքը գրել ի Հռոմ առ պապն զվկայական իւր յաղագս ուղղափառութեան

Հայաստանեայց եկեղեցւոյ: Այս երկրորդ բանակցութիւնն ալ տեղի ունեցաւ Այօսթէֆանօ Տատեան Պօղոսի տունը և նոյն արդիւնքն ունեցաւ, և Ֆէրրիէրի աւելի յայտնի կերպով սկսաւ խօսիլ Հայոց դաւանութեան ուղղափառութենէ չեղած չըլլալուն մասին: Բայց ասիկա վրդովեց հռոմէականներուն և գլխաւորապէս իրենց պատրիարք Հասունեանին միտքը, և ժողով կազմելով Ֆէրրիէրիին դիմեցին ուղղակի անկէ լսելու համար իր համոզումը: Երբոր նա յայտարարեց թէ համոզեցայ թէ չիք ի նոսա կասկած հերձուածողութեան, ամէնքը միաբերան վրան խուժեցին թէ Հայեր նենգամիտ են և իրենց դաւանութիւնը տարբեր է իրենց գիրքերէն, և թէ նա միամտութեամբ խաբուած է, և այնչափ խօսեցան և պնդեցին որ Ֆէրրիէրիին ալ վարանման մատնուեցաւ: Միւս կողմէն Հայեր արդէն յաջողութիւնը ձեռք ձգած կարծելով յատուկ հրաւեր կազմեցին Ֆէրրիէրիի պատուոյն, դարձեալ Տատեան Պօղոսի տունը 1848 ապրիլ 1-ին հինգշաբթի օր և մեծ հացեկոյթ մըն ալ տուին, ուր գաղղիերէն ճառ գովութեան խօսեցաւ Յարութիւն-Քարեգին երիտասարդը, Յովհաննէսի որդին, որ երկու ամիս առաջ Փարիզէն վերադարձած էր իր ուսմանց ընթացքը աւարտելով (ՊԷՐ. 559): Հացեկոյթը ուրախութեամբ անցաւ, բայց սեղանէ ետքը խօսակցութեանց միջոցին Ֆէրրիէրի յայտարարեց թէ լուայ ի բազմաց, զի Հայք ոչ այնպէս հաւատան, որպէս ընթեռնուն, և թէ այս պատճառով ոչ կարեմ, ըսաւ վկայել զձէնջ թէ բարի և թէ չար: Մատթէոս բորբոքեցաւ այդ յայտարարութեան վրայ, մինչև իսկ երեսն ի վեր գոչելով, միթէ դու Աստուած ես, զի ըզներքին խորհուրդ սրտից մերոց իմասցիս, և մեղադրելով հռոմէականաց կողմէ կրկնուած քու թելադրութիւններ, սրահէն մեկնեցաւ, միւսներն ալ ցրուեցան և իրենց սենեակները քաշուեցան և տրտմեցան յայնժամ ժողովեալքն: Միանգամայն փակուեցաւ միաբանական բանակցութեանց շրջանը:

2599. ՖԷՐՐԻԷՐԻ ԵՒ ՅՈՅՆԵՐ

Մատթէոս միւս առտուն ապրիլ 2-ին շիտակ Ֆէնէր թաղը իջաւ և այցելեց յունաց Անթիմոս պատրիարքին, և մի առ մի պատմեց իր և Ֆէրրիէրիի միջև տեղի ունեցած անցքերը և վերջին տեսակցութիւնը: Ծիծաղեցաւ պատրիարքն Յունաց, կարծես հեգնելով Մատթէոսի միամիտ փութկոտութիւնը, և անոր պատմեց թէ իրենց ալ յղած էր նոյն շրջաբերականին տպուած յունարէն թարգմանութիւնը, որով յունական եկեղեցին Փոտի ժամանակէն ուղղափառութենէ շեղած կը յայտարարէր: Անթիմոս աւելցուց թէ իրենք ոչ բանակցութեանց մտան և ոչ տեսակցութիւն ունեցան, այլ պաշտօնապէս պատասխան մը պատրաստեցին և Ֆէրրիէրիի հաղորդեցին, յայտարարելով թէ Հռոմայ աթոռը անսխալ վճռատու չէ, և միայն տիեզերական ժողովներու կը պատկանի այդ ձիրքը, թէ Հռոմի պատրիարք դատաւոր և գլուխ չէ, այլ միայն հաւասարներու մէջ առաջինն է, թէ յունական եկեղեցին եօթն ժողովներ միայն կընդունի. և արևմուտքին մէջ Լատիններու կողմէն կազմուած, Լատերանու, Փլորենտիոյ, և Տրիտենդայ և ուրիշ ժողովներ իրենց անընդունելի են, թէ Հռոմի եկեղեցին պէտք է առաջ ինքզինքը սրբէ և ազատէ յետսամուտ և նորաձայն վարդապետութիւններէ, և տեսակ տեսակ անտեղի և փառասէր կարգադրութիւններէ, որ կարենայ ուրիշները իրեն հետ միանալու հրաւիրել: Անթիմոս տեսնելով Մատթէոսի վարանումը, խոստացաւ կառավարութեան դիմել, թէ պապին դեսպանը խռովութիւններ կը տարածէ հպատակ ժողովուրդներու մէջ: Գանգատը կառավարութեան կողմէն Գաղղիոյ դեսպանատան հաղորդուեցաւ, և մայիսի առաջի օրերը Ֆէրրիէրի Կ. Պալիսէ մեկնեցաւ (ՊԷՐ. 350):

2600. ՀԱՄԱԶԳԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ֆէրրիէրիի յանձնուած գործերու մէջ կաթոլիկ Հայոց ներքին խնդիրներն ալ կային, և անոնց մէջ ալ աւելի յաջողութիւն չունեցաւ նա: Բայց այս կէտին բացատրութեան չմտած պէտք է

ներկայե՞նք կաթոլիկ հասարակութեան կացութիւնը, առնելով այն կէտն, ուր թողած ենք վայն Հասուն Անտոնի օգնական եպիսկոպոս նշանակուելուն թուականէն 1842-ին (2565): Բայց այդչափը բաւական չէր Հասունի ձգտումները յագեցնելու. նա նպատակ ունէր բոլոր իշխանութիւնները իր ձեռք անցընել, և որչափ ալ իբրև օգնական եպիսկոպոս կը նկատուէր, բայց Մարուշի ծերութենէն օգտուելով հոգևորական իշխանութեան վարիչն էր դարձած: Բայց անդին ազգապետական իշխանութիւն մը կար որ Վենետկոյ Միխիթարեան Կարապետ վարդապետ Եսայեանի ձեռք էր, և իր փոխանորդ Զմիւռնացի Ստեփան վարդապետ Փեհլիվանեան, այն ատեն տակաւին ուղղութեան կը հետևէր: Հասուն ամէն միջոց գործածեց, հոգ չէ որ քուսիւնը ընդարձակ դեր ունենար անոնց մէջ, մինչև որ Եսայեան պատրիարք, որ իրօք ծերացած էր, ստիպուեցաւ հրաժարականը տալ: Հաւանական յաջորդը կը նկատուէր Անտոնեան միաբանութենէն Կարապետ վարդապետ Յովնանեան, սակայն Հասուն կրցաւ վայն յետաձգել տալ, և իրեն վրայ դարձնել ընտրութիւնը, և օգնական եպիսկոպոսութեան հետ ազգապետ պատրիարքութիւնն ալ միացուց (ՀԱՍ.55-58) 1845 ապրիլ 3-ին (ՊԷՐ.526): Որչափ և Հասուն կրկնակի իշխանութեամբ ճոխացած քօլէճեան ուղղութեան յաղթանակին կաշխատէր, սակայն արքայեան ուղղութիւնը պօրաւոր էր տակաւին կաթոլիկ հասարակութեան մէջ, այն է հռոմէական դաւանութեան վրայ պատուաստուած հայկական ազգութեան գաղափարը յառաջացնել: Այդ նպատակին պիտի ծառայէր համազգեաց Ընկերութիւն անունի ներքև ծրագրուած միութիւնը որ 1846 տարույ սկիզբները կազմուեցաւ 76 ընկերներու համախոհ ժողովին մէջ (ՀԱՍ.77): Ընկերութեան կանոնագիրը կազմողն ու գործին առաջնորդողն էր Պետրոս վարդապետ Մինասեան Վենետկոյ Միխիթարեաններէն: Ընկերութեան անդամ պիտի ըլլային անխտիր հայադաւան և հռոմէադաւան և բողոքական ազգայիններ, նպատակը պիտի ըլլար ազգային վարգացում գրական և գիտական, հնագիտական և հայրենագիտական, արհեստական և առևտրական ճիւղերու մէջ հաւասարապէս, և կրօնական տեսակէտէն. վարիչ մարմինը պիտի կազմէին 3 տեսուչ, 12 խորհրդական, 12 խաղաղարար, 4 գանձապետ, 2 գրագիր, 3 գրաքննիչ, որոշումները պիտի տրուէին մեծամասնութեան քուէով: Իւրաքանչիւր ընկեր պիտի վճարէր ամսական 10 դահեկան, և այս հասոյթով և ուրիշ նուէրներով և պատահական արդիւնքներով պիտի բացուէին և պահուէին դպրոցներ և արհեստանոցներ, և պիտի հրատարակուէին գիրքեր և տետրակներ (ՊԷՐ.351): Ծրագրին հաստատութիւնը խնդրուեցաւ հռոմէականաց գերագոյն ժողովէն, որուն կը նախագահէր Հասուն իբր պատրիարք, և որ չէր կրնար հաւանիլ ոչ անկախ մարմնի մը կազմութեան, և ոչ տարբեր դաւանութեանց անխտիր մերձեցման, բայց այս անգամ չկրցաւ ընդդիմանալ ժողովականաց միաձայնութեան, որ գործը լոկ հանրային օգտին տեսակէտէն կը նկատէին: Հաւանութիւնը տրուեցաւ և 1846 մարտ 16-ին Համազգեաց Ընկերութեան յայտարարութիւնը ցրուեցաւ 76 առաջին ընկերներու ստորագրութեամբ: Անակնունելի ըլլալու չափ արագ և մեծ եղաւ ընկերութեան յաջողութիւնը, որուն բովանդատմամբ մասնակցեցան հայադաւաններն ալ, թէպէտ հռոմէադաւան չկրնար հաստատութիւնը, բայց այս աւելի կը վայրացնէր քօլէճեան ուղղութիւնը, որ այլ ևս իր հին անունը կորսնցնելով Հասունեան սկսած էր կոչուիլ, այնչափ աճած և ընդարձակուած էր Հասունին ազդեցութիւնը: Հռոմէականաց մէջ ալ շատ էին Համազգեացի համակիրներ, և նոյն ծերունի Մարուշն ալ (ՀԱՍ. 81), բայց միւս կողմէն հասուն չէր դադարէր արգելքներ յարուցանել, կիրքեր գրգռել, իրեններուն միտքերը վրդովել, մինչև եկեղեցականներու ձեռքով քարոզել թէ հռոմէական եկեղեցին արգելու միաբանիլ ընդ հերետիկոս, հետևաբար սպառնալով թէ ոչ կարեմք տալ ձեզ արձակումն և հաղորդութիւն, քանի որ այդ ընկերութեան մէջ կը մնաք (ՊԷՐ. 332): Այդ մեքենայութեանց

հետևանքն էր հռոմէականներու մէջ հակառակութեանց աճիլը, զի չէին պակսեր դիմադրողներ , թէ Համապգեաց Ընկերութեան գործը երբեք հոգևորս հաղորդակցութեան հետ յարաբերութիւն չունի, և այսպէսով ներքին պայքար մը կը մղուէր երկու կուսակցութեանց մէջ, և հետզհետէ կաճէր:

2601. ՀԱՍՈՒՆ ՆԱԽԱԳԱՀ

Նոր պարագայ մըն ալ վրայ եկաւ հռոմէականաց ներքին պայքարը պայրացնելու: Կաթոլիկներու կրօնական իշխանութեան պետ, Մարուշ Պօղոս եպիսկոպոսի, պաշտօնական կոչմամբ նախագահ արքեպիսկոպոսի ծերութիւնը, և անոր անունին ներքև Հասունի գործելը քանիցս յիշեցինք, և թէ անոր այս չափն ալ քիչ կերևար և իսկապէս պետ դառնալու միջոցները կը խորհէր: Մարուշ 1846 յունիսի մէջ Վոսփորի Պէօյիւքտէրէ գիւղը օդափոխութեան կը գտնուէր, որ մը Հասունի արբանեակ վերդապետներ պայն կը պատեն հրաժարելու յորդորեն, մինչև իսկ կը ստիպեն թէ եկեղեցւոյ և ժողովրդի օգուտին համար պէտք է որ այսոր նախագահական իշխանութենէ հրաժարիս, և գրիչ կապամար կը ներկայացնեն պատրաստուած հրաժարագիրը ստորագրելու: Մարուշ կը չուարի և կայլայլի, ինչ ընելիքը կը շփոթի, և պատասխան մը չի տալով նոյն օր ամարանոցէն կը մեկնի, բայց նաևակին մէջ կաթուած իջնալով ծանր վիճակի մէջ Բերա կը հասնի, և միայն քանի մը օր ապրելով կը վախճանի յունիս 22-ին շաբաթ օր (ՀԱՍ.60): Միւս օր Ղալաթիոյ Յիսուս Փրկիչ եկեղեցին յուղարկաւորութեան պատարագին մէջ զոր կը մատուցանէ ինքն Հասուն, սարկաւագութիւն ընողներ ստացած հրահանգներնուն համեմատ Գոհութիւն քարոյին մէջ կաւելցնեն և զնախագահ արքեպիսկոպոսն մեր գտէր Անտոն, զի Մարուշի մահուամբ նովին իսկ Հասուն գահակալ կը դառնար, համաձայն 1842-ի պապական կոնդակին (2565), ուսկից սակայն ոչ ոք տեղեկութիւն ունէր, և ժողովուրդը անակնկալի հանդէպ գտնուեցաւ, երբ յաջորդի ընտրողական գործողութեան պէտք էր անցնիլ: Բայց Հասուն կրկին իշխանութեանց միանգամայն տէր խլրտումները արգիլեց, և պապական իշխանութեան անսաստելու անտեղութիւնը իբր խրտուիլակ ցուցնելով, կրցաւ ընդդիմադիրները լռեցնել: Ժողով մըն ալ գումարեց 1846 օգոստոս 6-ին երեքշաբթի օր, ուր գտնուեցան 36 եկեղեցականներ և իբր 100 աշխարհականներ , և կարդալ տուաւ 1842-ի պապական կոնդակը որ յունիս 7 թուական կը կրէր: Ազգային իրաւունքին բռնաբարուած ըլլալուն վրայ դիտողութիւններ ըրին, Յակոբ Տիւպեան և Աբրահամ Ալլահվէրտեան ամիրաներ, բայց անոնք ալ գոհացան գրութիւն մը ուղղելով պապին, որ եղածը ապագային օրինակ չսեպուի, որուն Հասուն ալ հաւանեցաւ, զի իրեն բաւական էր որ իր իշխանութիւնը ապահովուէր, և ապագան իրեն համար անտարբեր էր: Միայն Տիւպեան պատրաստուելիք գիրին մէջ աւելցնել տուաւ, թէ երկու իշխանութեանց Հասունի անձին վրայ միացած ըլլալը պատահական էր, և դարձեալ կրնար բաժնուիլ (ՀԱՍ. 61-66): Գիրերը Հռոմ գացին, բայց Համապգեաց Ընկերութեան խնդիրը և Հասունի գահակալութեան եղանակին կնճիւր չվերջացան, և կաթոլիկ հասարակութեան մէջ պայքարները և միջադէպները և Հռոմ ուղղուած բողոքները չդադրեցան, զի Հասուն բացարձակ տէր կրօնական և քաղաքական իշխանութեանց, ինքն ինքնին ամէն բան կը տնօրինէր, ոչ ժողով կը ձանչնար, և ոչ իշխանապետ. մատակարարութիւնները իւրացուցած՝ հոգաբարձութեանց և եկեղեցականութեանց գործակցութիւնը կը մերժէր, նուէրներ և կտակներ և նպաստներ ինքնին կը գործածէր, բայց միւս կողմէն Հռոմ ուղղուած բողոքագիրներ կը յաճախէին, և ասոնց քննութիւնն էր, որ Ֆէրրիէրիի յանձնուած էր դեսպանութեամբ Կ. Պոլիս եկած ատեն 1847-ի վերջերը (2597):

2602. ՖԷՐՐԻԷՐԻ ԵՒ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐ

Ֆէրրիէրիի գալուստը պահ մը ազգային աւանդութեանց պաշտպան կողմին ակնկալութիւն ազդեց, թէ իրենց ձայնը լսելի պիտի ըլլայ, և սկսան իրենց մէջ ծրագիրներ կազմել թէ ինչ կարգադրութիւններ ընեն և պապական նուիրակին հաստատութեամբ վաւերացնեն: Բայց Ֆէրրիէրի պապական կեդրոնականութեան եռանդուն պաշտպան մըն էր, և իրմէ ալ աւելի էր Վեսբասիան խորհրդականը, որ մօտէն կաթոլիկներու գործերով կը պաղէր, երբ Ֆէրրիէրի պատմութեան և Հայոց և Յունաց հետ յարաբերութիւններ մշակելու ետևէն էր: Հասունի արդէն նախաձեռնօթ էին երկուքն ալ, ուստի դժուար չեղաւ երկուքին միտքն ալ գրաւել և անոնց ուղղութեան վրայ ազդել, այնպէս որ երկուքն ալ Հասուն ըսին և Հասուն լսեցին, և առանց անոր գիտութեան ոչ մարդ ընդունեցան և ոչ կարծիք յայտնեցին: Միւս կողմէ ազգային կազմութիւն մը ունենալ փափաքողներու նախաձեռնութեամբ 1848 փետրուար 29-ին կիրակի օր ազգային ժողով մը գումարուեցաւ Հասունի նախագահութեամբ, ուր կառաջարկուի կառավարութենէն խնդրել որ արտաքին պատրիարքական իշխանութեան համար երկուտասան անձինքներէ բաղկացեալ ազգային ժողով մը հաստատուի (ՀԱՍ.72): Հասունի հաճելի չէր առաջարկը և կերպկերպ պատճառանքներ յառաջ կը բերէ վայն արգիլելու համար: Ժողովները կրկնուեցան մարտ 2-ին և 5-ին առանց Հասունի ներկայութեան, և Պետրոս Եղլըքճեան, Անտոն Երամեան, Սրապ Մանասեան և Մկրտիչ Սամանճեան պաշտօն ստացան Հասունը համոզել, բայց Հասուն իրեն համամիտներուն ձեռքով հակառակ հանրագրութիւններ պատրաստել տուաւ, թէ մենք հիմակուան ազգին ընթացքէն գոհ ենք, նոր կարգադրութիւն և սահմանադրութիւն չենք ուզեր (ՀԱՍ.73), և անոնց հիմնուելով մարտ 20-ին յայտարարեց, թէ բան մը չեմ կրնար ընել, քանի որ ազգը երկու կողմ բաժնուած է: Վարիչ ժողով ուզողներ մարտ 22-ին ուղղակի կառավարութեան խնդիր մատուցին, Հասուն իրեններուն ալ հակառակ իմաստով խնդրագիր մը տալ տուաւ մարտ 24-ին: Երկու կողմերէն վէճեր սկսան, պատգամաւորներու խորհրդակցութիւն կազմուեցաւ, բայց ի վուր: Այդ ամէն բան կը կատարուէր Ֆէրրիէրիի ներկայութեան, որ երբեք խնդիրին խորը մտնել չուզեց, և բոլոր ջանքն եղաւ հասարակութիւնը Հասունի կամքին հնապանդեցնել: Համապատասխան Ընկերութեան կանոնագիրը, որ Հոռոմի ալ հաղորդուած էր, գժտութեան խնձոր էր դարձած, հայադաւաններէ և հոռոմէադաւաններէ խառն կազմութեանը պատճառով, ուստի Ֆէրրիէրի կառաջարկէր որ Հասուն ուրիշ կանոն մը շինէ և տայ ձեզի, որուն յայտնի էր որ պիտի չհաւանէին ընկերութեան ներկայացուցիչները: Հասուն գտած պաշտպանութենէն քաջալերուած՝ ապրիլ 14-ին Ֆէրրիէրիի ներկայութեամբ ժողով կազմեց իրեններուն հետ, և այս անգամ Աղքատաց հոգաբարձութիւնն ալ աշխարհականներէն առնելով իրեն սեփականելու խնդիրը մէջտեղ դրաւ: Երկու օր ետքը ապրիլ 16-ին Ֆէրրիէրիին Թաքսիմի մօտ Ս. Յովհաննէս Ոսկեբերանի աղքատանոցը կառաջնորդէ, և հոգաբարձուներէն հաշուետոմարները պահանջել կու տալ, և երբ անոնք կը վլանան, յափշտակութեամբ վերցնելու կը ձեռնարկէ, բայց Յովհաննէս Թօփթաշեան և Պօղոս Ղապարոսեան բռնի ձեռքէն կը խլեն (ՀԱՍ 88-89): Նպատակը չի յաջողիր, բայց Հասուն չի յուսահատիր, իրեն նպատաւոր քանի մը կարգադրութիւններ գրի կառնէ, և անոնք կուզէ, Ֆէրրիէրիի հեղինակութեամբ հաստատել և հրատարակել: Այդ նպատակով մեծամեծներ ժողովի կը հրաւիրուին ապրիլ 28-ին, բայց չեն ներկայանար (ՀԱՍ.90), ասոր վրայ մայիս 4-ին լոկ եկեղեցականներով ժողով կը կազմուի, և հոն կը հրատարակուին ծխատիրական ժողովրդապետութիւններ լատինական ձևին համեմատ. լոկ եկեղեցականներով երկու ժողովներ կը կազմուին պարզ խորհրդականի գրութեամբ, և կտակաց հաստատութիւնն ու գործադրութիւնն ու հսկողութիւնը եկեղեցական իշխանութեան կը վերապահուին: Ասոնցմէ վատ ինչինչ խնդրանքներ ալ կուզուին Փրոփականտային, և Ֆէրրիէրիի կը յանձնուին ներկայացնել և

յաջողցնել (ՀԱՍ. 92): Կառավարութիւնն ալ իր կողմէն հետամուտ էր գործոց ընթացքին և փափաքող գժտութեանց վերցուելուն, և կարծելով որ գործերը յաջողութեան կը մօտենան, ինքն ալ իր կողմէն ոյժ տալու համար մայիս 5-ին Հասունը և տասը մեծամեծներ հրաւիրելով, ի սէր և ի խաղաղութիւն յորդորեց (ՀԱՍ.75): Իրաւ արդիւնք մը գոյացած չէր, բայց իբրև թէ թափուած ջանքեր օգուտ մը խոստանային, Ֆէրրիէրին ալ պատեհ սեպեց պատուով հեռանալ, և այդ վերջին եղելութեններէն մէկ երկու օր ետքը Կ. Պոլիսէ մեկնեցաւ: Նա կրցաւ թերևս Հռոմի առջև իր ըրածը մեծաբանել, սակայն կաթոլիկ հասարակութիւնը չէր կրնար չտեսնալ նուիրակութեան անպտղութիւնը և չզգալ իր յուսախաբութիւնը:

2603. ԿԱԹՈՒԼԻԿ ՊԱՏՐԻԱՐԶԱՐԱՆ

Յորչափ պապական դեսպան կամ նուիրակ Ֆէրրիէրի Կ. Պոլիս կը գտնուէր, և ուղղակի կաթոլիկներու ներքին գործերուն կը միջամտէր, օսմանեան կառավարութիւնը փափկանկատ և դիւանագէտ ընթացքով վերապահութեան կը նայէր այդ խնդիրներուն վրայ, բայց երբ Ֆէրրիէրի 1848 մայիսին մեկնեցաւ, ուղղակի գործը ձեռք առաւ իրեն հիմ բռնելով մարտ 22-ի և 24-ի երկու կողմերէն իրարու հակառակ տրուած աղերսագիրները (ՀԱՍ.75): Կառավարութեան համար շատ պարզ էր որ պատրիարքարանին մէջ ժողով մը գտնուէր, և ոչ թէ պատրիարքին անհատական կամքը իշխէր, ուստի կայսերական հրամանով որոշուեցաւ ժողով ուլողներուն իրաւունք տալ, և պատրիարք Հասունի ալ լուր տրուեցաւ, բայց սա միշտ կը պնդէր, թէ ազգը ամբողջութեամբ այդ կարգադրութիւնը չընդունիր քանի որ Համազգեաց Ընկերութիւնը չվերնար (ՀԱՍ. 93): Կառավարութիւնը յատուկ պաշտօնով կաթոլիկաց պատրիարքարանը վրկեց երբունի դրան առաջին թարգման Էմին Էֆէնտին յունիս 28-ին, և և յետոյ յուլիս 6-ին ընդհանուր քարտուղար Սաիտ Էֆէնտին հետ, խնդիրը կտրուկ կերպով երջացնելու հրահանգով: Յատուկ ժողով հրաւիրուեցաւ, ուր գտնուեցան ինքն Հասուն, և 10 եկեղեցականներ և 24 աշխարհականներ իր ուլածներէն, և 24 հոգի ալ Համազգեաց Ընկերութեան պաշտօնակալներէն: Էմին Էֆէնտին յանուն կառավարութեան խօսելով յայտարարեց թէ տէրութիւնը վարիչ ժողով ուլողներուն խնդրանքը օրինաւոր գտած է, կայսեր ալ ներկայացուցած է, որ իր հրամանագիրն ալ արձակած է զոր և կարդաց: Հրամանագիրին պարունակութիւնն էր, կաթոլիկ պատրիարքին մէջ երկոտասանից ժողով հաստատել պատրիարքին նախագահութեամբ և երեսփոխաններու քուէով ընտրուած, որոշումները մեծամասնութեամբ պիտի տրուին, ժողովը, սեփական կնիք պիտի ունենայ, և կառավարութեան տրուելիք գրութիւններ պատրիարքի և ժողովի կնիքները պիտի ունենան: Հասունի կողմէն Համազգեաց խնդիր յուլուելուն վրայ, կանոնագիրը քննութեան առնուեցաւ, կամաց կամաց Հասունի կողմնակից աշխարհականներ պահանջեցին որ ընկերութեան կանոնագիրը փոփոխուի այն կերպով, որ միայն հոռնէադաւաններ ընդունուին, և վարիչ մարմիններէն չորս խորհրդական, երկու խաղաղարար, և չորս գրաքննիչ եկեղեցական ըլլան եկեղեցական իշխանութենէ ընտրուած: Պետական պաշտօնեաներ այդ պայմանները չհաստատեցին, բայց ինչինչ մանր փոփոխութիւններ մտցնելով կանոնագիրը հաստատեցին, և այսպէս գոնէ պաշտօնական կերպով վարիչ ժողովոյ և Համազգեաց Ընկերութեան խնդիրները փակուեցան 1848 յուլիս 6-ին, սակայն գործադրութիւնը յապաղեցաւ Հասուն պատրիարքի հանած արգելքներով: Միայն երկոտասանից ընտրութեան համար բռնադատեալ ժողով գումարեց օգոստոս 10-ին, բայց ժողովին արդիւնքն ալ խանգարեց, սակայն կառավարութիւնը կը պնդէր իր որոշումը գործադրել, և Հասուն ձեռքն ունեցած երկու իշխանութիւններէն քաղաքականը թողուլ հարկադրուեցաւ և պատրիարքութենէ հրաժարելու ստիպուեցաւ, գլխաւորապէս Հռոմի օժանդակութենէն ինքզինքը վրկուած գտնելով, զի Պիոս Թ. պապ Հռոմը թողած էր ժողովուրդին

ապստամբութեանը պատճառով, և գործէ քաշուած Նէապոլսոյ թագաւորութեան Կայիթա քաղաքը ապաւիած էր: Հասունի հրաժարականը շուտով ընդունուեցաւ, և նոյեմբեր 26-ին նոր ընտրութեան ժողով գումարուեցաւ, և ազգապետ պատրիարք ընտրուեցաւ Յովհաննէս Սելվեան վարդապետ, որ Կարնոյ առաջնորդ էր. դեկտեմբեր 31-ին Կ. Պոլիս հասաւ, և 1849 յունուար 1-ին գործի ձեռնարկեց (ՀԱՍ.108): Առաջիկային կը թողունք Կաթոլիկ հասարակութեան պատկանող յաջորդ եղելութիւնները քաղել:

2604. ԲԵԹՂԵՀԷՄԻ ԽՆԴԻՐԸ

Երուսաղէմի գործերուն պատմութիւնը թողուցինք Ջաքարիա Կոփեցիի պատրիարքական աթոռ բարձրանալուն 1841-ին (2553), որուն պաշտօնավարութիւնը երկար չեղաւ, զի թէպէտ տարիքով շատ ծանրացած չէր, այլ չորս ու կէս տարիէ վախճանեցաւ ախտիւ ջրգողութեան (ՍԱԻ.1257), տակաւին 66 տարեկան: Այս պատճառով Ջաքարիա, թէպէտ ընտիր ձիրքերով ճոխացած և բարձր միտքի և կարողութեան տէր և աթոռ բարձրանալէ առաջ նշանաւոր արդիւնաւորութիւն ունեցած, սակայն պատրիարքութեան միջոցին յիշատակաց արժանի շատ գործեր չկրցաւ կատարել: Սուրբ տեղեաց մէջ ազգային իրաւունքներու նախանձայոյ պաշտպան, և մանաւանդ խափանուած և կորած իրաւունքներու վերանորոգման հետամուտ՝ յատուկ մտադրութիւն դարձուց Բեթղեհէմի Ս. Ծննդեան ընդհանուր տաճարին և Հայոց մասին նուիրակին այրին շուրջը յուզուող խնդիրներուն, որոնք հայութեան նուազ նպաստաւոր կերպով փակուած էին մեծ կարգադրութեան ատեն (2417), և անհատնում վէճերու և կռիւներու առիթ կընծայէին: Ջաքարիայի պատրիարքութեան միջոցը անընդհատ չարք մը եղաւ Բեթղեհէմական խնդիրներու, և ամենէն տարրական նիւթեր, դուռ, բանալի, շարան, կանթեղ, պատկեր, սանդուխ, մուտք, անցք և նմանիք, անսպառ վէճեր յարուցին, և որ ևսն է ոչ միշտ միևնոյն ուղղութեամբ յառաջեցին, այլ յարափոփոխ ելևէջով, մերթ Հայոց և մերթ Յունաց կողմը յաջող եղան, ըստ որու բարձրագոյն դուռնէն և տեղական կառավարութենէն այս կամ այն կողմը իրեն նպաստաւոր հրամաններ կրնար հանել տալ: Դուռերը բացուեցան և փակուեցան, բանալիներ տրուեցան և առնուեցան, սանդուխներ քակուեցան և շինուեցան, անցքեր գործածուեցան և խափանուեցան, բայց վերջապէս Յունաց կողմը աւելի նպաստաւոր մնացած կը մնայ ցարդ, զի տարածամ մահ Ջաքարիա պատրիարքի և խռովութիւն ազգայնոց ի Կոտանդնուպոլիս (ԱՍՏ. Բ. 527) արգիլեցին գործերու հետապնդումը: Մենք ազգային ընդհանուր եղելութիւնները միայն քաղելու մտադիր, զանց կընենք այդ դարձուածներու մանրամասնութիւնները յիշել, որոնք ընդարձակ կերպով յառաջ բերուած են սաղիմական պատմագիրներէն (ՍԱԻ. 1243-1247, և 1254-1256, ԱՍՏ. Բ. 513-530): Խնդիրին գլխաւոր կէտը կը հիմնուէր տաճարին մեծ դրան վրայ, որ հաւասարապէս Հայոց և Յունաց մուտքը պիտի ըլլար, և պէտք էր երկու կողմերուն սեփական բանալի ունենալ ազատօրէն մուտեւել գործելու համար, մինչ Յոյներ հակառակ պետական հրամաններուն, որ Ս. Ծննդեան սրբավայրը բաժնեկից սեփականութիւն հռչակած էր երեք ազգերու, ինքնզինքն տաճարին բացարձակ տէրը կարծելով, կընդդիմանային Հայոց սեփական բանալի ունենալուն և Հայեր մտնելու և ելլելու համար Յոյներու քմահաճոյքին ենթարկել կը մնային (ԱՍՏ. Բ. 515): Յոյներուն մեծ փաստն էր նորոգութեանց արտօնութիւնը իրենց տրուած ըլլալը, և որչափ ալ նոր հրովարտակը յայտնապէս ըսած էր, թէ թէպէտ ընդհանուր նորոգութիւն յանձն եղև Յունաց, այլ ոչ երբեք տիրել և սեփականել և բռնաբարել զիրաւունս իւրաքանչիւր ազգի (ԱՍՏ. Բ. 517), բայց Յոյներ միշտ խաղերով և պատճառանքներով, և մանաւանդ հնչուն փաստերով, կը յաջողէին իրենց յանկուցանել գործադիր իշխանաւորները: Դրան խնդիրին հետ կը յուզուէին նաև տաճարին

և այրին մէջ կախուած կամ կախուելիք պարդերուն Յունաց բաժինը անցնելուն, և անկէ դէպի սուրբ այրը երթալու համար բացուած երեք ոտք սանդուխը:

2605. ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ԽՆԴԻՐՆԵՐ

Սուրբ Յարութեան տաճարին շուրջն ալ խնդիրներ կը յուկուէին, թէպէտ ոչ այնչափ շատ և ոչ այնչափ սաստիկ որչափ Ս. Ծննդեան տաճարին շուրջը: Ս. Յարութեան տաճարին խնդիրը կը դառնար գլխաւորապէս չորս սենեակներու վրայ, որոնք մաս կը կազմէին հրդեհէն առաջ Հայոց վերնատունի եկեղեցւոյն, և որոնց շնութիւնը թերի մնացած էր վերջին շինութեան ատեն, և յատկապէս երկուքը որ մեծ դրան կամարին վրայ կը տարածուէին, վանց էին եղած, և նոյն իսկ այն ժամանակ կազմուած արձանագրութեանց մէջ ալ յիշուած չէին: Այդ մասին թափուած նոր ճիգերը, նոր առնուած հրովարտակներ, և նոր բացուած գրութիւններ արդիւնք չունեցան, զի Ս. Յարութեան շուրջը եղող խնդիրներ և իրաւունքներ ժամանակին վերջնականապէս փակուած կը նկատուէին: Խնդիր մըն ալ տեղի ունեցաւ Ս. Յովհաննէսի փոքրիկ եկեղեցւոյն մասին, որ կը գտնուի Ս. Յարութեան արտաքին բակին արևելակողմը, և կից է Հայր Աբրահամ վանքին, որ կանխաւ Եթովպացւոց էր և յետոյ Յունաց սեփականութիւն էր եղած: Յոյներ այս վանին նորոգութեան ձեռնարկելով կանգուն մը ցածցուցին Ս. Յովհաննէս եկեղեցինն տանիքը, պատճառելով թէ եկեղեցւոյն տանիքն ու օդը իրենց սեփականութիւն են: Խնդիրը Երուսաղէմի մէջ չկրնալով վերջանալ, մայրաքաղաք ալ դիմում եղաւ նոր ընտրուած Մատթէոս պատրիարք ալ դիմումներ կրկնեց, քննութիւններ հրամայուեցան և կատարուեցան, ու Հայոց իրաւունքները երևան եկան, բայց Յոյներ ջանացին միշտ խնդիրները շփոթել և կնճռոտել, Հայոց նպաստաւոր որոշումներն արգիլել, և վերջապէս ոչ ետուն թոյլ շինել Հայոց, զտանիս եկեղեցւոյն, և մնաց այնպէս որպէս և էրն (ԱՍՏ. Բ. 530): Ինչպէս կը տեսնուի խնդիրներու և վէճերու անընդհատ շարք մը եղաւ Ջաքարիայի պատրիարքութիւնը, միխթարական յաջողութենէ զուրկ, հակառակ անդուլ անդադար ճիգերու, և ամէն միջոցներ գոծածուած ըլլալու, այնպէս որ Ջաքարիա խորին տխրութեան մատնուած և կասկածելով թէ մի գուցէ իր անձն ըլլայ ձախողութեանց պատճառը, Կ. Պոլսոյ փոխանորդին կը գրէր, որ եթէ չհաւանին իմ կառավարութեան, ես ոչ հակառակիմ, այլ իմ յօժարութեամբ գրեմ զիմ հրաժարական: Այսպէս կը գրէր, զի սպասածին չափ օգնութիւն չէր տեսներ Կ. Պոլսոյ պատրիարքարանէն, որուն իսկական պատճառը ոչ թէ իր անձն էր, այլ ազգային ներքին շփոթութիւնը, որ կը տիրէր մայրաքաղաքի հայութեան մէջ, և չէր ներեր ուրիշ գործերու մտադրութիւն դարձնել:

2606. ՏՊԱՐԱՆ ԵՒ ՎԱՐԺԱՐԱՆ

Ջաքարիայի օրով սուրբ տեղեաց խնդիրներուն յաջող ելք մը ունեցած չըլլալը պատմելով, երբեք պիտի չկարենանք անոր տկարութեան կամ անփորձութեան վերագրել ձախողութեանց պատճառը, զի իր աշխոյժ գործունէութեան և անվհատ յարատևութեան հաստատուն գրաւականներն ունեցանք արդէն Կ. Պոլսէն և Երուսաղէմի փոխանորդութեան օրերէն: Ասով մէկտեղ ինքն ալ կը խոտովանի թէ աւելի ըստ իմս ըղձի է, զտպարանն պայծառացուցնել և դպրատուն մի օրինաւոր կարգադրութեամբ հաստատել (ԱՍՏ. Բ. 519): Եւ իրօք ալ ինքն եղած է Երուսաղէմի աթոռին մէջ այդ երկու հանրօգուտ հաստատութեանց նախասկիզբը: Պատմեցինք արդէն տպարանը բանալու համար պատրիարքութենէն առաջ թափած աշխատութիւնը և ունեցած արդիւնքը, պատրիարքութեան ատեն աւելի եռանդով կը ջանայ մղում տալ տպարանին, և նախնի մատենագիրներու հրատարակութեան ալ կը ձեռնարկէ, և տպագրել կու տայ մկրտութեան Կանոնեալ Մաշտոցը, Յովհաննէս կաթողիկոսի Պատմութիւնը, և Ներսէս Լամբրոնացիի Խորհրդածութիւն Սուրբ Պատարագի (ՆՇՆ. 24): Նորատիպ գիրքեր Կ. Պոլիս հասնելուն

Աստուածատուր պատրիարքի հաճոյական չեղան, զի ոչ միայն ընդ ակամբ հայեր ի Չաքարիա, այլ և քննադատելու և գնահատելու կարողութիւն չունէր: Մաշտոցը հին գրչագիրներու հետևողութեամբ տպուած, տեղ մը կը տարբերէր գործածական մաշտոցէն. Լամբրոնացին հռոմէականութեան միտեալ կը ճանչցուէր, և Չաքարիայի վայն հրատարակելը իր Մխիթարեանց շփուած ըլլալուն (2554) կը վերագրուէր. և Յովհաննէս կաթողիկոսի պատմութեան մէջ ապատարբար գրուած կտոր մը գրգռիչ կը դատուէր: Աստուածատուր ոչ միայն այդ գիրքերուն վաճառումը կարգիլէ, այլ և հրաման առաքէ փակել վտպարանն: Բնական էր որ Չաքարիա յանձն չառնէր տպարան փակել, այլ և զհետ լինէր նորանոր հրատարակութեանց (ՍԱԻ. 1248), որոնք տասն և մէկի կը հասնին (ՆՇՆ. 21), բայց և միանգամայն խնդիր չյարուցանելու համար Մաշտոցը հրապարակէն ետ կը քաշէր, Յովհաննէս կաթողիկոսէ նկատի առնուած էջը կը զեղչեր, իսկ Լամբրոնացին նոյնութեամբ կը վաճառուէր: Տպարանի հետ վարժարանի գործն ալ Չաքարիայի մտադրութեան առարկայ էր, զի այլ ևս բաւական չէր կրնար սեպուիլ փոքրաւորական դրութեամբ ստացուած ուսումը, և դպրոցական գրութիւնը ամենուրեք տարածուած էր, և ինքն Չաքարիա ալ անոր ճաշակէն առած էր էջմիածին և Վենետիկ: Առաջին վարժարանը բացաւ անմիջապէս իր աթոռ բարձրանալէն ետքը Ռէմիլէի Ս. Գէորգ վանքի մէջ, անշուշտ կրթութիւնը լռին և հանդարտ միջավայրի մէջ պահելու մտածումով, և Տիգրանակերտցի Ստեփան վարդապետի հոգաբարձութեամբ և Տարոնցի Խաչատուր քահանայի ուսուցչութեամբ, ուր և հաւաքեց 30ի չափ աշակերտներ (ԱՍՏ.Բ.532): Կիրակոս եպիսկոպոսն ալ միաբանութեան մէջ Չաքարիայի հրահանգիչն էր եղած (2554), թէպէտ անկէ երեք տարեկան կրտսեր, այժմ անոր փոխանորդութիւնը կը վարէր, և անոր հրամանով ժառանգաւորաց Վարժարանի կանոնագիր ալ պատրաստեց 1843 յուլիս 23-ին: Հսկողութեան պահանջը ստիպեց երկրորդ տարւոյն վերջը վարժարանը Ռէմիլէէ Երուսաղէմ բերել, բայց միշտ հանդարտ ու ազատ մթնոլորտի մէջ պահելու գաղափարը թելադրեց վանքէն բաժան առանձին տունի մը մէջ զետեղել: Այդ միջոցին Երուսաղէմ ուխտի կու գայ Բերիացի Մուրատ Պոյաճեան, Արմաշու վանքին ուսուցիչը և իր ժամանակին նշանաւոր գիտնականը (2440). Չաքարիա վայն կը համոզէ Երուսաղէմ մնալ, և Մուրատ կը համակերպի, մանաւանդ որ իր հայրենական շրջանակին մօտ եղած կըլլար. և կը ստանձնէ տեսչութիւնն և ուսուցչութիւնը, ուսումնական ծրագիրին վրայ ճարտասանութիւն և տրամաբանութիւն աւելցնելով: Վարժարանը տակաւ կը վարգանար և տայր պտուղս հարիւնրաւոր, երբ Չաքարիայի վախճանը կը հասնի: Մուրատի աշակերտներուն նշանաւորագոյնը եղած է սարկաւազ Մարտունցի Կարապետ, ապա լուսարարապետ եպիսկոպոս, որուն վրայ իր կարգին պիտի խօսինք:

2607. ԵԳԻՊՏՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Չաքարիայի օրով տեղի ունեցած դէպքերուն մէկն ալ Եգիպտոսի տեսչութեան կամ առաջնորդութեան Երուսաղէմի պատրիարքութենէն վերջնականապէս բաժնուիլն է, որ կանուխէն յառաջացած և գրեթէ լրացած գործ մըն էր: Երուսաղէմ իր սահմանին մէջ և իր իրաւասութեան ներքեւ եղող հայաբնակ տեղերը ուղղակի իբր աթոռի վիճակ նկատելով, սովորութիւն ունի պարզ տեսուչներով կառավարել և վիճակային տեղական վարչութեան կերպարանը չէ տուած: Այդպէս է մինչև ցայսօր, այդպէս էր և Եգիպտոս, որ ի սկզբանէ անտի Երուսաղէմի թեմ էր եղած, և ուր պարզ տեսուչներ կը չղուէին, զի ոչ երկիրը կարևորութիւն և ոչ հայաբնակութիւնը նշանակութիւն ունէին: Բայց այդ կացութիւնը սկսած էր փոխուիլ յորմէ հետէ Եգիպտոս փոխարքայութիւն էր եղած (2451), և հայաբնակութիւնն ալ շատցած և բարձրացած, մանաւանդ Երուսաղէմի Պողոսի ազդեցութեան ներքեւ: Այդ փոփոխութեան հետևանք էր որ Եգիպտոս ալ փափաքէր առաջնորդական վիճակի ձև առնել և ազգային տեղական վարչութիւն ունենալ, և յատուկ

մատակարարութիւն կազմել: Կիրակոս Եպիսկոպոսի տեսչութեան օրով այդ ձգտումները աւելի աճեցան և ընդարձակուեցան, զի Կիրակոս առ ի չպայրացուցանելոյ պզխաւորս ժողովրդեանն կատարէր վկամս նոցա (ՍԱԻ.1217) բայց օրինական ձևերը չխախտեցան մինչև անոր տասնամեայ պաշտօնավարութեան վերջը (ԱՍՏ.Բ.504), այսինքն մինչև 1834 (ՍԱԻ.1215): Երբոր Կիրակոս Եպիսկոպոս Երուսաղէմ կը դառնար, իրեն տեղ տեսուչ նշանակեց Գերմանիկցի Գաբրիէլ վարդապետը՝ կարևոր հրահանգները տալով, և յարաբերութեանց ձևը պահել յանձնարարելով, բայց Գաբրիէլի մտադրութիւնը տարբեր էր, ոչ միայն տեղական ձգտումներու կողմը շահուած էր, այլ և իրեն նոր ասպարէզ կազմելու կաշխատէր: Սկսաւ Երուսաղէմի կալուածական հասոյթները, փոխանակ պատրիարքարան հասցնելու, տեղւոյն վրայ գործածել, նուիրակ վարդապետներու թողօնները իւրացնել, վանց չընելով արտաքնայարդար հպատակութեան գիրեր յղել Երուսաղէմ: Բայց Պօղոս արքեպիսկոպոս տեսնելով իրաց ընթացքը Գաբրիէլը ետ կոչեց Երուսաղէմ, բայց այս անգամ Եգիպտացիք չթողուցին վայն մեկնիլ. զի ուլած անձերնին գտած էին, և ետ դարձուցին Դաւիթ Կարնեցին, որ փոխանակելու եկած էր: Պատահական հրդեհ մը այն միջոցին հրկիպեց աթոռի կալուածներ, որոնց շինութեան համար լաւ գումար մը յղուեցաւ Պօղոսի կողմէ, բայց Գաբրիէլ և Եգիպտացիք ուրիշ նպատակներու գործածեցին գումարը, և ձեռնարկեցին շինել Ս. Աստուածածնայ նոր եկեղեցին, փոխանակ հին և անձուկ Ս. Սարգիս եկեղեցւոյն, որ ի խորշս Խբթի վանաց, և որ ժամանակին ստացուած էր ընդ մատրան խբթոց ի սնարս գերեզմանին Զրիստոսի ի Ս. Յարութիւն, և 1606-ին նորոգուած (ԱՍՏ.Բ.505): Ասոր վրայ Եգիպտահայեր Եպիսկոպոսացման վկայականը կը խնդրեն, որ առաջ մերժուեցաւ աթոռին կողմէ տարածած նկատելով, բայց երբ Պօղոս Եուսուֆեան, Ալեքսան Եղիապարեան և Միքայէլ Խաչերեան թախանձանքը երկրորդեցին, հարկ եղաւ զիջանիլ, և Գաբրիէլ ալ վկայականը ստանալէն ետքը նորէն հպատակութեան և հաւատարմութեան յայտարարութիւնները կրկնեց, (ՍԱԻ.1219), բայց Էջմիածին երթալու դժուարութիւնները պատճառելով փութաց Սիս երթալ և ձեռնադրութիւն ընդունիլ Կիլիկիոյ Միքայէլ Կաթողիկոսէն 1839 յունիս 15-ին (ԱՍՏ.Բ.507): Այլ ևս Գաբրիէլ սպասելիք չունէր, և բացէբաց յարաբերութիւնները խզեց, կալուածները իւրացուց, Երուսաղէմը իր հասոյթներէն զրկեց, պատրիարք անունն ալ սկսաւ գործածել պետական յարաբերութեանց մէջ: Գաբրիէլ իբր ուրոյն և անկախ վիճակի տէր բարձրագոյն դուռէն առաջնորդական հրովարտակ ալ ստացաւ Յակոբոս պատրիարքի ձեռքով: Չաքարիա պատրիարք 1844 յունիսին դարձեալ փորձեց Գաբրիէլը ետ կոչել, և Դաւիթը Եգիպտոսի առաջնորդ անուանել, բայց չյաջողեցաւ, և Եգիպտոս վերջնապէս բաժնուեցաւ Երուսաղէմի իրաւասութենէն (ՍԱԻ.1220). իսկ աթոռական կալուածները Եգիպտոսի առաջնորդութեան ձեռք մնացին մինչև 1867, այսինքն մինչև Գաբրիէլի մահէն ետքը և ուր ուրեմն կրցան նորէն Երուսաղէմի դառնալ (ՍԱԻ.1221):

2608. ԶԱՔԱՐԻԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Արդէն յիշեցինք թէ սակաւօրեայ եղաւ Չաքարիայի պատրիարքութիւնը (2604), տևական և յամրընթաց ախտ մը ունենալը յիշուած չէ, և ջրգողութեան ախտը որ իբր մահուան պատճառ կը ցուցուի, իրաւամբ կրնայ հետևանք սեպուիլ տխրութեան և թախծութեան, որ կարելի էր համակուեցաւ տեսեալ զձախող ելս ձեռնարկեալ, մանաւանդ եկեղեցւոյն Բեթղեհէմի և սենեկաց Ս. Յարութեան (ԱՍՏ.Բ.532), որ և երկար ալ չտևեց: Տպարանի յառաջադիմութիւնը և վարժարանի հաստատութիւնը, իրենց ներքին կերպարանովը չէին կրնար փոխարինել արտաքին ձախողութեան ցաւը, և Չաքարիայի սիրտը ճնշեց այդ վիճակը, մանաւանդ որ նա իր նախընթացքէն քաջալերուած կրնար իրեն փառաւորագոյն պատրիարքական ասպարէզ մը սպասել: Ասով մէկտեղ ոչ մի պարագայ իրաւունք կու տայ մեզ Չաքարայի գործունէութիւնը

մեղադրել կամ արժանիքը նուազեցնել, չի գործոց ընթացքին վրայ ազդողը աւելի օտար միջամտութեանց պօրանալն էր, և յունական հնչուն փաստելու առաւելութիւնը, և ստիպուած կը կրկնենք, Աստուածատուր պատրիարքի օրով թէ անոր ապիկարութենէն և թէ տիրող պարագաներու երեսէն 4. Պոլսոյ պատրիարքարանին պէտք եղած ձեռնտուութեան մէջ թերանալը: Ինչչափ որ ձեռքէն կու գար Ջաքարիա աշխատեցաւ եղածը պահպանելու, չի իր ձախողութիւնը ոչ թէ եղածը կորսնցնալն եղաւ, այլ կորածը ետ դարձնելու անհնարինութիւնը: Աթոռին և իր պատիւը գիտցաւ պաշտպանել և միշտ բարձր պահել, և արքայապուն իշխաններ ալ, ինչպէս Պարսից թագաժառանգ Նարէտտին Միրզան 1842 նոյեմբեր 1-ին, և Բրուսիոյ արքայեղբայր Ալբերտ իշխանը 1843 ապրիլ 28-ին, յարգանօք այցելեցին Հայոց պատրիարքին: Անոնց նմանութեամբ նաև Երուսաղէմի մէջ նոր հաստատուող եւրոպական պետութեանց հիւպատոսները (ՍԱԻ.1231): Ջաքարիայի առաւելութեանց կարգին յիշենք նաև անոր անունին Ներսէս Աշտարակեցիի հետ իբրև կաթողիկոսական քուէով ռուսաց կայսեր ներկայացուիլը (2570), որչափ ալ նախապատուութիւնը Ներսէսի տրուած ըլլայ, բայց Ներսէս ինքն ալ ջանաց պատուել իր ընտրելակիցը, միջնորդելով ռուսաց կայսեր մօտ, որ կաթողիկոսներու տրուած թանկագին պանակէին համահաւասարը Ջաքարիայի ալ նուիրակուի, ինչպէս որ ալ նուիրուեցաւ և յղուեցաւ, զոր Ջաքարիա չուպեց ընդունիլ մինչև որ տուչութեան հրովարտակն ալ միասին չներկայացուէր, որ առաջին անգամ վանց եղած էր: Օսմանեան կայսր Ապտիլ Մէճիտ ալ իր հաստատած Մէճիտիէ շքանշանին առաջին աստիճանովը կը պատուէ Ջաքարիա պատրիարքը 1846 յունուար 28-ին, որ սակայն արդէն մահացու ախտով տկարացած էր և հապիւ երեքուկէս ամիս ևս ապրեցաւ, և նոյն 1846 տարուոյ 7-ին, Երևման խաչին երեքշաբթին հոգին աւանդեց, և 8ին հանդիսաւոր յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Պողոս արքեպիսկոպոսի նախագահութեամբ, և մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկչի ներքին ձեմելիքներուն մէջ, նախորդ պատրիարքներուն կարգին: Դեռ ևս գործելու յարմար և 66 տարեկան էր Ջաքարիա մահուան ատեն, և 4 տարի 6 ամիս 13 օր պատրիարքութիւն վարած կըսուի (ՍԱԻ.1257), հաշուելով 1841 նոյեմբեր 24-էն, որ է հաստատութեան հրովարտակին պաշտօնապէս կարգացուելուն և աթոռ բազմելուն օրը (2553):

2609. ԶԱԲԱՐԻԱՅԻ ՄԱՀԷՆ ԵՏՔԸ

Տակաւին կենդանի էր ծայագոյն կառավարիչ Պողոս Ադրիանապոլսեցին, թէև 83 տարեկան ալևորեալ տարիքի հասած, որ Ջաքարիայի պատրիարքական աթոռ բարձրանալէն իվեր քաշուած էր կառավարութենէ և գործունէութենէ, և միայն կը պատուուէր իբրև մենտոր, որով ամէնքը և ինքն Ջաքարիա ալ յարգէին վխորհուրդս, և յամենայն խնդիրս ծանունս դիմէին առ նա ի խորհրդակցութիւն: Կիրակոս եպիսկոպոս որ Ջաքարիայի փոխանորդն էր և տակաւին 63 տարեկան էր, անմիջապէս յանձն առնու զսանձ տեսչութեան աթոռոյն, որուն արդէն փորձառու և ծանօթ էր, և բացարձակ կերպով ալ արժանագոյն անձը ձանչցուած էր: Կիրակոսի տեղապահութեան օրէն կատարած գործերէն կը յիշուին Ջաքարիայի հիմնած ժառանգաւորած Վարժարանին Երուսաղէմի մասնաւոր տունէն Ս. Յակոբայ վանքին մէջ փոխադրուիլը, մանաւանդ որ աշակերտներու թիւն ալ նուազած էր Մուրատ վարժապետի մեկնելէն ետքը: Կիրակոսի կարգադրութեամբ էր նաև որ վանական և ուխտաւոր ժամարարներու ժամուցը հինգ դահեկանի բարձրացաւ ընդհանրապէս: Ժամուցը նախապէս երեք դահեկան եղած է վանականներուն համար, և ձանիկ ամիրա Փափապեան 1845 մարտ 24-ին ուխտի գալուն առթիւ 25000 դահեկան նուիրած էր իբր դրամագլուխ, անոր շահով ժամացուցները չորս դահեկանի բարձրացնելու, բայց Ջաքարիա չէր հասած գործադրութիւնը կատարել, և Կիրակոս տեղապահ վայն կարգադրեց չորս դահեկան հինգի բարձրացնելով: ձանիկ Երուսաղէմ գտնուած ատեն Իւսկիւտարի ձեմարանին

պահպանութեան համար Երուսաղէմի աթոռէն պահանջուած 60000 դահեկան գումարին խնդիրն ալ յուղէր, զի Ջաքարիա վլացած էր, թէ ապառիկ մնացածներուն և թէ իր ժամանակի գումարներուն վճարումը: Այս միջոցին ճեմարանի վերաբացումին խօսքերը կը պտըտէին և մօտալուտ գործադրութեան պատրաստութիւնները սկսած էին (2592), և ճանիկ յաջողեցաւ վերջապէս 150000 դահեկան գանձել Ջաքարիայի ձեռքէն (ՍԱԻ.1255): Կիրակոս գործի գլուխ անցնելով վլացման վրայ պնդեց, թէպէտև ժամանակով ինքն էր եղած նոյն ճեմարանին պաշտպանը (2540), իբր զի ոչ ճեմարանը ակնկալուած նպատակին ծառայեց, ոչ ալ անկէ Երուսաղէմի համար խոստացուած օգուտները իրականացան, և ոչ ալ աշակերտներէն միաբանութեան մտնելու խոստումը կատարուեցաւ: Այս գլխաւոր կարգադրութեանց հետ Կիրակոս ըստ ամենայնի յառաջ կը վարէր աթոռին ներքին բարեկարգութիւնը և արտաքին գործառնութիւնները երբ յաջորդի ընտրութեան խնդիրն ալ կը ծեծուէր:

2610. ԿԻՐԱԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Աթոռը թափուր պէտք չէր մնար և յաջորդի ընտրութեան անցնիլ անհրաժեշտ էր, ուստի Պօղոս Ադրիանապոլսեցին գործին գլուխ կանգնեցաւ, և իր նախագահութեամբ միաբանական ժողով հրաւիրեց մայիս 16-ին նախորդին մահուանէն ինն օր ետքը: Խորհրդակցութիւնք երկարեցան արժանաւորագոյն ընտրելին գտնալու համար, Պօղոսի վրայ խօսիլ իսկ աւելորդ էր, և յառաջադէմ եպիսկոպոսներէն Մարկոս Պօթուշանցի փակակալ և Կարապետ Եղոկիացի դարպասընկալ արդէն ծերացած էին, և Յովհաննէս Չմիւռնացի Կ. Պոլսոյ փոխանորդ աղիկամի գործերուն և իր գործոց համար ու հաշիւ չտալուն միաբանութեան հետ գժտած և փոխանորդութենէ ալ քաշուած Օրթաքէոյ կը մնար իբր քարուպիչ (2595), և փոխանորդութիւնը կը վարէր Յովհաննէս Կոլոտ Եղոկիացի վարդապետը, աշակերտ Եղիա եպիսկոպոսի, որ Երուսաղէմէ Կ. Պօլիս երթալուն Միգնոս կղզին վախճանած էր: Կը մնար միայն Կիրակոս ոչ միայն համեմատական տեսութեամբ, այլ և բացարձակ արժանաւորութեամբ ըստ ամենայնի նախադասելի և միակ ընտրելի, բայց անոր մասին ալ դժուարութիւններ կային: Նախ որ բնիկ Երուսաղէմացի էր՝ Ջուղայեցի Մնացականի որդի, և աթոռական կանոնով մը Երուսաղէմացին ոչ թէ պատրիարք, այլ և միաբան իսկ չէր ընդունուէր: Կիրակոս սկիզբէն ալ միաբանութեան աշակերտած չէր, այլ կանուխէն իր երէց եղբօր Գէորգի հետ Կ. Պոլիս էր պանդխտած, ուր երկուքն ալ պահ մը արհեստի հետևած էին, բայց ուսման և եկեղեցականութեան փափաքով Ադրիանապոլիս կանցնին և առաջնորդ Միքայէլ եպիսկոպոսին կաշակերտին, ուսկից նախ Գէորգ, իսկ յետոյ Կիրակոս 1807-ին քահանայական և վարդապետական աստիճան կը ստանան: Չորս տարի ետքը 1811-ին Միքայէլ եպիսկոպոսի 1810-ին վախճանելէն ետքը երկու եղբայրներ Ադրիանապոլիսէ կը մեկնին Երուսաղէմ իրենց ծննդավայրը դառնալու, բայց Գէորգ ճանապարհին Չմիւռնիա կը վախճանի սեպտեմբեր 21-ին, և Կիրակոս մինակ Երուսաղէմ կը հասնի, Ս. Յակոբայ վանքին մէջ կը հիւրընկալուի և յաջողակութիւնը տեսնուելով դիւանի պաշտօնեայ կանուանուի Թէոդորոս պատրիարքէ, և կարգ ըստ կարգէ աստիճանով կը բարձրանայ և ամէն պաշտօններ կը վարէ իբր կատարեալ միաբան, ինչպէս որ պատմութեանս մէջ տեսնուեցաւ: Ըստ այսմ 1811-ի 1845, 35 տարի էր որ իբրև միաբանակից նկատուած էր Երուսաղէմացի ըլլալով հանդերձ, և այլևս իր ծննդավայրը պէտք չէր խնդիր ըլլար, զի միաբանական համահաճութեամբ, և Թէոդորոս ու Գաբրիէլ ու Ջաքարիա պատրիարքներու և Պօղոս կառավարիչի հաստատութեամբ իրեն համար բացառութիւնը լրացած էր: Ո՞չ ապաքէն Յովհաննէս Հաննա եպիսկոպոսն ալ Երուսաղէմացի էր: Այս տեսութեամբ մայիս 16-ի միաբանական ժողովը Կիրակոսը պատրիարք ուզեց և ընտրեց, և ընդունելութեան և

հաստատութեան համար հանրագրութիւնը միաձայն հաւանութեամբ և Պօղոսի գլխաւորութեամբ ստորագրուեցաւ:

2611. ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Միաբանական գրութիւնը Մատթէոս պատրիարքի կողմէ յունիս 27-ին ամիրայական ժողովի կը հանուի, որ նոյն իսկ միաբանութենէ աւելի աւանդապահ ձևանալով, Կիրակոսի Երուսաղէացի ըլլալը իբր բացարձակ արգէլք կը նկատէ և անոր ընտրութեան հաստատութիւնը կը վլանայ: Սակայն տարբեր էր Կ. Պոլսոյ պատրիարքութեան ներքին նպատակը իրեն դիտումն էր Երուսաղէմէ ձեմարանի համար սպասուած նպաստը, ապահովել, զոր Կիրակոս ալ կը վլանար Ջաքարիայի հետևելով, ինչպէս նաև հետամուտ էին Երուսաղէմի ելևմտական մատակարարութեան միջամտել, ուստի կը մտածէին կամ Յովհաննէս Ջմիւռնացին պատրիարք ընել, որ միաբանութեան հետ գժտած և իրենց կողմը շահուած էր, և կամ միաբանութենէն դուրս իրենց հաճոյակատար եպիվկոպոս մը Երուսաղէմի պատրիարքութեան բարձրացնել, իբր թէ շատ աւելի թեթև ըլլար Կարապետ կաթողիկոսի կանոններուն հակառակ (1949) ոչ միաբան մը, քան թէ Երուսաղէմացի մը պատրիարք ընել: Բայց իրենց ներքին չյայտնելով գիր մը կուղղեն Պօղոսի իբրև նախագահի, Մատթէոս պատրիարքի և 18 ամիրաներու ստորագրութեամբ, որ Կիրակոս մի կամ երկու խոհական վարդապետներու հետ, աթոռին հաշուետոմարը և Ջաքարիայի անձնական հուշատետրերը Կ. Պոլիս բերէ, որ հաշիւները քննեն և ընտրութեան մասին խորհրդակցին, և միանգամայն կը յայնեն, թէ վամենայն գիտութեամբ և բարձու հրամանաւ Պօղոսի ունին կատարել, և առանց անոր ակնարկութեան մի ինչ արասցեն (ԱՍՏ. Բ. 533): Պօղոս և Կրակոս և միաբանութիւն հարկաւ տեղեկութիւն առած էին Կ. Պոլսոյ անցուդարձէն, որ Կիրակոս ամէնուն հաճութեամբ յանձն չառաւ երթալ, և ոչ ալ հաշուետոմարներ յղուեցան: Այն ատեն Կ. Պոլսոյ ժողովականք յայտնապէս գրեալ ջանան հաւանեցուցանել Պօղոսն ու միաբանութիւնը որ կամ վՅովհաննէս եպիսկոպոս և կամ յարտաքնոց զոմն յեպիսկոպոսաց ընդունեցին ի պատրիարքութիւն: Այդ առաջարկութեան վրայ վրդովեալ ամբոխի միաբանութիւնն ողջոյն, և յուլիս 20-ին ժողովի գումարուելով բացէբաց կը մերժեն թէ Յովհաննէսի և թէ ոչ-միաբանի մը պատրիարքութիւնը, և պատմութեամբ ու վկայութեամբ ճոխացած պատասխան մը կը գրեն (ՍԱԻ.1259): Բայց պէտք էր կերպով մը միջին եղանակ մը գտնել և Կիրակոսի հաստատութիւնը դիւրացնել, և այս միտքով գործին գլուխը կը կանգնին Դաւիթ Կարնեցի, Գէորգ Պօթուշանցի, և Մեսրոպ Տիգրանակերտցի վարդապետներ, որ միաբանութեան աւելի գործունեայ անդամներն էին: Կիրակոսը կը համոզեն և գրաւոր յայտարարութիւն կառնեն, յետս կալ յամենայն յարաբերութեանց զոր ունի ընդ ազգակիցս իւր բնակեալս յԵրուսաղէմ, և ոչ զոք ի նոցանէ ճանաչել ժառանգ ինքեան. և մանաւանդ տեսնելով որ Կ. Պոլսոյ պատրիարքարանի բոլոր նպատակը դրամական է, միաբանութեան կողմէ ալ յանձնառութեան գիր կառնեն ձեմարանի համար վճարել ամ յամէ դահեկանս 120,000, Կ. Պոլսոյ պահանջած 60,000 գումարին կրկինը, բացի միւս պահանջից որ էր 3000 դահեկան տուրքն քանչէլէրիէ կոչեցեալ: Երկու թուղթերը առնելով Գէորգ Պօթուշանցի կուղևորի Կ. Պոլիս, և այլ ևս դժուարութիւն չի կրէր Մատթէոսն ու ամիրաները համոզել, մանաւանդ դրամական խոստումին փաստով, և Կիրակոսի ընտրութիւնն կը հաստատուի 1846 դեկտեմբեր 20-ին (ՎՐԹ. 120) ժողովին մէջ, և անմիջապէս կայսերական հրովարտակն ալ կը ստացուի, և Կոլոտ Յովհաննէս փոխանորդին կը յանձնուի Երուսաղէմ տանիլ, իսկ փոխանորդութիւնը կը փոխանցուի Պօթուշանցիին իբր աւելի կարող անձնաւորութեան (ՍԱԻ. 1260): Հրովարտակը 1847 փետրուար 13-ին Երուսաղէմ կը հասնի և կառավարութեան կը ներկայացուի (ՍԱԻ. 1261) և 14-ին, Մեծ Պահոց երկրորդ Ուրբաթին, և Տեառնընդառաջի տօնին,

Կիրակոս Կանդիսապէս կը բարձրանայ պատրիարքական աթոռը (ԱՍՏ. Բ. 534), և կիրականանայ միաբանութեան ընդհանուր փափաքը: Յովհաննէս Հաննա (1927), և Կիրակոս Մնացակեան երուսաղէմացիներ՝ Երուսաղէմի երկու արդիւնաշատ գործիչներ են, իրաւամբ արժանաւոր իրենց համար կատարուած բացառութեան:

2612. ՆԵՐՍԷՍ Ի ՏՓՂԻՍ

Կոստանդնուպոլսոյ և Երուսաղէմի պատրիարքական աթոռներուն անցից պատմութիւնը բաւական յառաջուցուցած ըլլալով, կը դառնանք նորէն Մայրաթոռի կողմը, ուր թողուցինք Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսը, վեց ամիս միայն էջմիածին մնալէն ետքը (2583) նորէն Տփղիս եկած 1846 դեկտեմբեր 17-ին (ՆՐԱ. 23): Ներսէս 76 տարեկան ծերունի մըն էր արդէն, բայց երիտասարդական ժրութեամբ գործերու կը հետևէր, և Տփղիս կու գար իր նախկին գործունէութեան ասպարէզը, վերանորոգել վիճակն և ուսումնարանը, որուն համար այնչափ աշխատէր էր, և այժմ բոլորովին խաթարեալ կը գտնէր: Առաջին մտադրութիւնը դարձուց ուսումնարանին վրայ, որ բոլորովին իր հիմնարկութիւնն էր եղած, և իր անունը կրած, և որչափ ալ Կարբեցին աշխատած էր անունը փոխել, սակայն ամէնուն բերանը հին անունն էր մնացած, և այժմ նորէն յաղթական կերպով կը կրկնուէր: Գործի չձեռնարկած պէտք էր իրաց կացութիւնը ճշդել, և անկէ սկսաւ Ներսէս վերապնդութեան ժողով մը կազմելով 1847 տարւոյ փետրուար 5-ին (ՆԵՐ. Ա. 436), և պաշտօն տալով տնտեսական վերջին տասն տարիներու հաշիւը առնելու Տփղիսի Կոնսիստորիայէն կամ վիճակային ժողովէն, որուն ենթարկուած էր ուսումնարանը (ՆԵՐ. Ա. 385) 1836-ի Պօլսօթէնիէի պահանջած սեմինարիան կամ դպրանոցը ըլլալու համար (2582): Այդ նպատակով վերապնդութեան ժողովը մարտ 3-ին պաշտօնապէս դիմեց Տփղիսի Կոնսիստորիային մանրամասնեալ տեղեկագիր պահանջելով ուսումնարանին պատկանող բոլոր իրողութեանց վրայ, զորս որոշակի 12 գլուխներու վերածեր և յիշեր էր (ՆԵՐ. Ա. 386): Կոնսիստորիան զգաց հրամանին խստութիւնը, և շաբթէ մը, այսինքն մարտ 10-ին տեղեկագիր մը ներկայեց (ՆԵՐ. Ա. 387-395), որուն վերջը Կարապետ եպիսկոպոս իբր ատենապետ դիտողութիւն աւելցուցեր էր. թէ այս ուսումնարան ոչ միայն զուրը է պահանջուած պայմաններէն, այլ տակաւին չէ յայտ նորա իսկական վիճակ և կոչումն, ուստի ոչ միայն անտեղի, այլ և անհնարին կը գտնէր խնդրել ի նոյն ուսումնարանէն զպտուղ հաւասար արդեանց կարգաւորեալ դպրոցաց (ՆԵՐ. Ա. 394): Տրուած տեղեկագիրը և յարակից ցուցակները անբաւարար գտնուելով նորէն դիմում եղաւ Կոնսիստորիային մարտ 27-ին, որ այլևս չպատասխանեց (ՆԵՐ. Ա. 396), և վերապնդութեան ժողովը ընդարձակ և մանրամասնեալ տեղեկագիրով (ՆԵՐ. Ա. 397-434) ներկայացուց կաթողիկոսին իր եզրակացութիւնները, որոնք սարսափ ձգեցին անհոգ գործավարների վրայ (ՆԵՐ. Ա. 436): Առաջնորդ, Կոնսիստորիա, վերատեսուչ, ուսուցիչներ, ամէնըն ալ զանցառու կամ զեղծարար նկատուեցան և Ներսէս ամէնքէն ալ հեռացուց, Կարապետ առաջնորդ արձակուեցաւ, թէպէտև պահ մը ընդդիմացաւ, և մինչև իսկ Պաքևիչի դիմեց Ներսէսի դէմ, բայց պարտաւորուեցաւ տեղի տալ, և երբ ետքէն Սինոդի անդամ անուանուեցաւ չուպեց ընդունիլ և հրաւիրակ Տէր Պետրոսեան Մակար վարդապետը ետ դարձուց (04. ԲԱԶ. 408 409), և Ախլցիսա քաշուած մնաց: Կոնսիստորիայի բոլոր անդամները փոխուեցան Կարապետէն առաջ: Յակոբ Կարէնցեանց վիճակային ատենադպիր և Յովսէփ քահանայ Օրբելի դպրոցական վերատեսուչ պաշտօնանկ եղան, և ուսուցիչներ դադրեցան, և այդ ամէնը լրացաւ 1847 ապրիլին: Նոր կարգադրութեան համար նախապէս պատրաստական միջոց մըն ալ պէտք էր, ուստի Ներսէս առիթ առնելով քաղաքին մէջ տիրող հնտախտը, աշակերտներն ալ ցրուելու հրաման ըրաւ և բոլորովին գոցեց դպրոցը, և այնպէս մնաց ամբողջ տարի մը: Ըլլալիք կարգադրութիւնները իրեն վերապահելու համար նոր առաջնորդ ալ

չնշանակեց, առաջնորդի տեղը ինքը բռնելով մնչև իւր կենաց վախճանը (ՆԵՐԱ,436): Իր հրահանգին ներքև վիճակային գործերուն կը հսկէին Նիկողայոս եպիսկոպոս Տէր-Մարուդեանց և Կարապետ վարդապետ Շահնապարեանց (04.ԲԱԶ.407), իսկ Կոնսիստորիայի նախագահութիւնը կը վարէր Սարգիս վարդապետ Զալալեան:

2613. ՀՆՏԱԽՏԻ ՀԱՐՈՒԱԾԸ

Տփղիսի մէջ ճարակուող հնտախտին պատճառով, որ տարածուած էր Համարեա ընդհանուր Ռուսաստանում, Տփղիսի եկեղեցականներն իսկ ցրուած էին վախերնէն, մանաւանդ Ստեփան Արարատեան եպիսկոպոսին 24 ժամուան մէջ մեռնելուն վրայ: Կարապետ եպիսկոպոս աճապարած էր Տփղիսը թողուլ, Սարգիս Զալալեան վարդապետ հեռացած էր, իսկ Ներսէս տեղից չշարժուեց: Տփղիսեցիք խուռն բազմութեամբ խնդրեցին իրմէ Ս. Գեղարդը բերել տալ, և իսկոյն սուրհանդակ յուղարկեց, և Գեղարդը հասաւ Պօղոս եպիսկոպոսի և Համապատեան Ստեփան վարդապետի ձեռքով: Ներսէս եկեղեցական թափօրի գլուխ մինչև քաղաքէն դուրս գնաց, և Գեղարդը ինքը վերուցած, և տեղտեղ կենալով և օրհնելով հապիւ չորս ժամէ Մայրեկեղեցի հասաւ և բոլոր ժամանակը Ս. Գեղարդը ձեռին բռնած ունէր: Բոլոր ճամբուն վրայ և Մայրեկեղեցիին առջև և մէջը թափուած էր բովանդակ Տփղիսը, Հայ և Ռուս, Վրացի և Մահմետական անխտիր, որոնք բոլոր և գոռումգոչումով ցաւին փարատում էր խնդրէին: Ներսէս մտածեց բերող եպիսկոպոսին և վարդապետին հանգիստ տալ, և ուրիշ եկեղեցականներ նշանակեց Գեղարդին պահպանութեան, բայց անոնց այդ մեզ անպատուութիւն է ըսելով խնդրեցին իրենք մնալ: Ներսէս զգաց թէ երկու գրօշի համար կամենում են մնալ, բայց երկուքն ալ տկարացած վիճակի մէջ ախտաւորներու հետ մնալով վարակուեցան, և նոյն օր վարդապետը և երկու օրէն եպիսկոպոսը մեռան: Ներսէս միշտ անվախ մնաց ընդհանուր կոտորածին մէջ, մինչև իսկ ուտելեաց խիստ զգուշաւորութեան ալ չէր հետևեր, և վստահօրէն կը կրկնէր, Աստուած իւր պէտքական ծառային կը պահէ (01.ԲԱԶ.349), բայց հարկաւ ինքպինքը պահպանելու չափ խոհականութիւնը ձեռքէ չէր թողուր:

2614. ՆԵՐՍԻՍԵԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Հնտախտը օրէցօր զգալապէս նուազած էր, քաղաքը բաւական հանդարտած էր, Վարժարանի նախապատրաստութիւններն ալ յառաջացած էին, ուստի Ներսէս 1848 մայիսին բանիմաց և պատուաւոր անձերը հրաւիրելով, ազգային ժողով գումարեց Տփղիսի մէջ, դաստիարակութեան պահանջները բացատրեց, Ներսիսեան վարժարանը ըստ առաջնոյն կազմակերպելու հարկը զգացուց, և այդ նպատակով հոգաբարձութիւն կամ խորհրդարան մը կազմելու համար երկու եկեղեցական և ութը աշխարհական հոգաբարձուներու ընտրութիւնը իրենց թողուց: Ժողովը ամենայն յօժարութեամբ համակերպեցաւ, աջակցութիւն խոստացաւ և անդամները ընտրեց, զորս Ներսէս յունիս 4-ի կոնդակով հաստատեց և հրահանգեց (ՆԵՐ. Ա. 437-438): Կոնդակին մէջ յիշուած անդամներն են, Կարապետ վարդապետ Շահնապարեան և Սահակ աւագ քահանայ Սահառունի, Իշխան Իւանէ Արղութեանց, Ստեփան Մադինեանց, Դաւիթ Արզանեանց, Մելքոն Լօմիձեանց, Գէորգ Հախվերտեանց, Ալթանտիլ Բաստամեանց, և Գէորգ Մանդինեանց (ՆԵՐ. Ա. 439), իսկ ատենագրութեանց մէջ յիշուած է նաև Գաբրիէլ Թամամշեանց (ՆԵՐ. Ա. 441): Յունիս ամսուան մէջ հոգաբարձութիւնը յաճախ նիստեր ընելով ուսուցչաց և աշակերտաց, ծախուց և կարգապահութեանց մասին որոշումներ տուաւ, հետզհետէ ընդարձակեց իր գործունէութիւնը, և Ներսէս կրցաւ ամսուն վերջը Էջմիածին դառնալ, ուր հասաւ յուլիս 1-ին և 9-ին դարձեալ քաջալերական կոնդակ մը ուղղեց նորընտիր հոգաբարձութեան (ՆԵՐ. Ա. 445): Սա իր աշխատութիւնները կրկնապատկելով յաջողեցաւ 1848 սեպտեմբեր 5-ին, Խաչի բարեկենդանի կիրակէին, բացման հանդէսը կատարել Շահնապարեանի նախագահութեամբ և

ատենաբանութեամբ (ՆԵՐ. Ա. 449-452), երբ Ներսէս Էջմիածին կը գտնուէր: Բացման հանդէսին անմիջապէս ետքը դասաւանդութիւններն ալ սկսան 113 աշակերտաց ներկայութեամբ: Ուսումնարանի վերատեսուչ և ապարանի վերակացու նշանակուեցաւ Շահնապարեան Կարապետ վարդապետ, որ իւր ժամանակուայ հայ հոգևորականաց մէջ համարուում էր վարգացած, գիտնական և գործունեայ մի անձն: Ներսէս ալ մեծ համարում ունէր վրան, և մինչև իսկ Վրաստանի առաջնորդութեան կը պատրաստէր (ՆԵՐ. Ա. 458): Արդիւնքը չարդարացուց Շահնապարեանի վրայ գրուած ակնկալութիւնը, զի պաշտօնավարութեան մասին հասած տեղեկութիւնները անոր թուլութեան կը վերագրէին Կարապետ եպիսկոպոսի որով տիրող անկարգութեանց շարունակութիւնը, ուսուցչաց և աշակերտաց կողմէ տեղի ունեցած անկանոնութիւնները և բոլոր բարոյական ազգութեան ծեծի մէջ կեդրոնացած ըլլալը: Նոյն իսկ տնտեսական տեսակէտէն ալ ծանր ամբաստանութիւններ յարուցուեցան անոր դէմ (ՆԵՐ. Ա. 457): Երբոր 1849 գարունին (ՆԵՐ, Ա. 467) Ներսէս Տփղիս դարձաւ, ամբաստանութիւնները լսեց և քննութիւն նշանակեց. վասնզի կը տեսնար որ նա ցուցեալ է վանհարապատութիւնս ի կառավարութեան տպարանին և ուսումնարանին: Ասոր վրայ Շահնապարեան զգածուեցաւ, հրաժարականը ներկայեց, սակայն պէտք էր որ քննութեանց արդիւնքն և կաթողիկոսի վճռին սպասէր: Այդ միջոցին ջղային հիւանդութեանց և մանաւանդ ջղային գլխացաւի ենթարկուեցաւ, և բժշկութեան համար Նարթուլի զինուորական հիւանդանոցը պատսպարուեցաւ, բայց հոն չմնաց՝ այլ Հաղբատ երթալու անունով հեռացաւ, և ինքնագլուխ, առանց հրամանի և անցագիրի Կ. Պոլիս փախաւ (ՆԵՐ. Ա. 456-457): Այստեղ կը նդհատենք Շահնապարեանի մասին ըսելիքնիս, վերապահելով յատկապէս անդրադառնալ անոր վրայ: Ներսէս, միշտ փափաքող Ներսիսեան վարժարանի վարգացման, յանձնարարեց հաստատուն կանոնագիր պատրաստել, բայց չորս տարբեր ծրագիրներ մէկէն ներկայացուեցան (ՆԵՐ. Ա. 459-466), և առիթ տուին անդամներուն փոխադարձ պայքարելուն և հեռանալուն, և հոգաբարձութեան լուծուելուն, կամ Ներսէսի բառերով՝ ցրուելուն ըտրելոց ի միմեանց և յետս կացելոց ըստ յիւրաքանչիւր հաճոյից (ՆԵՐ. Ա. 467): Ասոր վրայ լուծեալ հոգաբարձութեան անդամներէն Արդութեանէ և Թամամշեանէ և Մանդինեանէ և դուրսէն Դաւիթ Խերոտինեանէ առժամեայ հոգաբարձութիւն մը կազմուեցաւ 1849 ամրան վերջերը, և անոնց խորհրդով տեսչութեան հրաւիրուեցաւ երիտասարդ Պետրոս Շանչեանց, որ հոկտեմբերին պաշտօնի ձեռնարկեց, այլ ուզելով իւրովի կառավարել, մօտ 40 կամ 50 օրէն գործը լքեց, ինչպէս կը գրէ Ներսէս 1850 փետրուար 24-ին (ՆԵՐ.Ա.471): Նոյն 1850 տարուայ յունուարէն տեսչութիւնը կը յանձնուի Գաբրիէլ քահանայ Պատկանեանի՝ հոգաբարձութեան առաջարկութեամբ և Ներսէսի զիջողութեամբ, որ աննպաստ գաղափար ունէր անոր բնաւորութեան վրայ: Իսկ կանոնադրութեան պէտքը միշտ զգալի էր, և այս անգամ Յակոբ Կարէնեանցին և Միքայէլ Պատկանեանցին կը յանձնարարուի նոր ծրագիր պատրաստել: Ներսէս 1850 յունիսին առաջին օրերում Էջմիածին դարձաւ (ՆԵՐ.Ա.476), և հոն յուլիս 15-ին ստացաւ երկուքին կազմած և բոլոր ուսուցիչներէն ալ ստորագրուած ծրագիրը, որ նմանապէս չարժանացաւ հաւանութեան, բայց հաստատուն կանոնադրութիւն մըն ալ չկազմուեցաւ: Ներսէս միշտ անվստահ Պատկանեան քահանային վրայ, աւելի ևս զայրացաւ անոր եղբօր Միքայէլի և որդւոյն Ռափայէլի միջև տեղի ունեցած կռիւին պատճառով (ՆԵՐ.Ա.489), և հակառակ թախանձանաց չուպեց Գաբրիէլ քահանան հաստատուն վերատեսուչ անուանել: Ինքն մտադիր էր այդ պաշտօնին կոչել Սարգիս վարդապետ Զալալեանը բայց միւս ողմէն նորանոր յանձնարարութիւններ էր տալիս նորան, իսկ շատեր կը միջամտէին Պետրոս Շանչեանցը դարձնել տեսչութեան: Այս պարագաներու մէջ անցան 1850 և 1851 տարիները, և Գաբրիէլ Պատկանեան

առժամեայ պաշտօնավարութիւնը պահեց, մինչև որ վերջապէս Շանշեանց վերատեսչութեան կոչուեցաւ, ինչպէս կը տեսնուի Ներսէսի 1852 ապրիլ 26-ին Տփղիսի մէջ գրած կոնդակէն, ուր դարձած էր վարժարանի խնդիրը վերջնապէս կարգադրելու համար: Այդ միջոցին ուսումնարանի աշակերտներուն թիւը հասած էր մինչև 300, և անոնցմէ միայն 30 գիշերօթիկ և գլխաւորապէս եկեղեցական կոչման հետևողներ (ՆԵՐ.Ա.492):

2615. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏ

Ներսէսի կաթողիկոսական գործունէութիւնը 1852 էն հինգ տարի ևս շարունակեց մինչև 1857 փետրուար, անընդհատ տեղափոխութեամբ Էջմիածինէ Տփղիս և Տփղիսէ Էջմիածին, երկու տեղերուն վրայ ալ անձամբ հսկելու փափաքով. բայց առաւելագոյն ժամանակը Տփղիսի նուիրելով, որ իր նախնական ասպարէզն էր եղած, և բուռն ձգտում կը Վգար իր հեռանալէն ետքը գործուած աւերներով լիովին դարմանելու: Մեզի ալ դժուար պիտի ըլլայ ժամանակագրական կարգով պատմել այդ միջոցին գործառնութիւնները, զի նորութիւններ չեն որ կը յաջորդեն, այլ միևնոյն ձեռնարկներու նուիրուած ջանքերն են որ դժուարութիւնները կարճելու և դիւրութիւններ պատրաստելու կը նկրտին: Այդ պատճառով յարմարագոյն կը դատենք նիւթերու դասաւորութեամբ յառաջ բերել Ներսէսի անխոնջ գործունէութեան պարագաները: Ներսիսեան վարժարանին անցուդարձերուն վրայ բաւական խօսած ըլլալով՝ քիչ մըն ալ Մայր պթողին և Մայրավանքին կարգադրութեանց վրայ խօսելու կանցնինք: Ներսէսի նկարագիրը իր նախընթացին մէջ տեսանք. ազգային կազմակերպութեան նուիրուած անձ մը, ոչ միայն ներքին այլ և արտաքին ձեռնարկներու հետևողութեամբ , և մինչև իսկ Վինուորական գործերու մասնակցելով, և անոնց մէջ ալ իսկական և նախաձեռնարկ դեր ստանձնելով: Ինչ որ այդ ջանքերէն սպասուէր իրականութիւն մը առած էր, եթէ չկարենանք իսկ յայտարարել թէ ըստ ամենայնի իր դիմումներուն համապատասխան եղած էր, սակայն այդ ճիւղին մէջ այլևս գործելու ասպարէզը փակուած էր, և ինքն ալ եղելութեանց համակերպած էր, հոգ չէ որ ինքն անձնականապէս Վրկողութեանց ենթարկուած ըլլար: Հետևապէս իր այս երկրորդ շրջանին մէջ բոլորովին ներքին բարեկարգութեան սկսած էր հետևիլ, անդստին Բեսարաբիոյ առաջնորդութեան ժամանակէն, և նոյն ուղղութեամբ կաթողիկոսական գահը բարձրացաւ, և Մայրաթողին մէջ ալ նոյն ուղղութեամբ գործել սկսաւ: Երկու գլխաւոր կէտեր աւելի գրաւեցին իր ուշադրութիւնը, տնտեսագիտական կերպերու բացարձակ կերպերու բացարձակ Վանցառութիւնը , և Վեղծումներու բացուած սանձարձակ համարձակութիւնը: Ուստի ժողովրդական նուէրներու և նպաստներու Վօրութեամբ բազմաթիւ և բազմաձախս ձեռնարկներ յաջողցուցած մէկ մը եղած ըլլալով մէկտեղ, կը Վգար թէ չէ կարելի որ յոյսներս միշտ դնենք ժողովրդի նուէրքի վրայ, ուստի յայտնապէս կը բարոյէր Էջմիածնի միաբանութեան, սովորեցէք տնտեսութիւն, վանքի կալուածներն լաւ դրութեան հասցրէք, ասնկորուստ ստացէք արդիւնքն, ոչ թէ անգործ նստելով աչք տնկեցինք ժողովրդի ձեռքին (04. ԲԱԶ. 415):

2616. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Տնտեսագիտական ձարտարութեան նպատակը պարզապէս խնայողութեամբ գործածելը չէ, այլ և պատշաճաւոր և վայելուչ և օգտակար կիրառութիւնն է, որ եղած ծախքը լաւ արդիւնք ունենայ և նպատակին ծառայէ: Այս միտքով առջի օրէն հոգ տարաւ միաբանութեան սնունդին, և մեծ ջանք գործդրեց որ հացը լաւ և մաքուր պատրաստուի, կերակուրներուն ալ խնամով պատրաստուած ըլլալը ստուգելու համար մերթընդմերթ բարապանները սեղանատուն կը դրկէր, որ աշակերտների առջևից վերցնեն կերակուրն և իրեն բերեն. արդէն ամէն սեղանին ալ մի մի բաժին կաթողիկոսին կը բերուէր որ համը տեսնէր: Մառանի և շտեմարանի մէջ տոմար և

չափակշիռ սահմանեց որ մտածը նշանակուէր, և ելածը համեմատական չափով տրուէր, և ոչ թէ ի հաճոյս և ըստ կամաց բաշխուէր: Միսին համար Նոր Պայապիտի կողմերէն էժան գնով և արժանահաւատ մարդկանց ձեռքով տաւար և ոչխար գնել տալ սկսաւ, փոխանակ սուղ գնով մսավաճառէն գնելու: Հաւնոց հաստատեց թարմ հաւկիթ և ուտելու հաւ ունենալու համար, փոխանակ գիւղացիներէն ձու և հաւ մուրալու: Փուռի և խոհանոցի համար վառելիք փայտն ու ցախը ու աթարն ալ ներքին աւելորդներէն հոգալու եղանակները հաստատեց, փոխանակ ամէն բան դրամով դուրսէն ստանալու (04.ԲԱ.Ձ.410): Նորաշէն մեծ լիճին մէջ ձուկեր աճեցուց վանական պէտքին բաւելու չափ, շաքարի գործարան ալ բացաւ և շերամ հասցնելու պատրաստութիւններն ալ կատարեց, և երկուքին ալ արդիւնքը տեսաւ: Տնտեսական ձեռնարկներուն գլխաւորն եղաւ նոր և ընդարձակ և կանոնաւոր գոմանոցի շինութիւնը Ս. Գայանէի վանքին մօտերը, քանդել տալով ուսումնարանի յարակից գտնուող նախկին խեղճ գոմանոցը: Նորին մէջ առանձինն բաժիններ կազմուեցան եզներու և գոմէշներու, կովերու և հորթերու, ձիերու և ուղտերու, ոչխարներու և խոզերու համար, և անոնց մօտ գարիի շտեմարաններ, խոտի և յարդի մառաններ, և կառքերու սայլատուններ: Կենդանիները մաս մը դիւրագնոյ ստացուեցան, և մաս մըն ալ վանապան գաւառներէ նուէր եկաւ, ինչպէս 50 ուղտ Ղըվլարէն, իսկ մեծաւ մասամբ նեքին աճումով շատցան, և անոնցմով կը հոգացուէին մշակութեանց, բեռնակրութեանց, հաղորդակցութեանց և ուրիշ ծառայութեանց պահանջները, և աւելորդովը կը հոգացուէին շատ մը ներքին պէտքեր (04.ԲԱ.Ձ.410), ինչպէս յիշեցինք: Մինչև իսկ գաղափար ունէր վանապան վիճակներու և եկամուտներու հասոյթները հաւաքելով դրամատուն մը կազմել, ողորմելի ժողովրդին թեթև տոկոսով փոխառութիւն տալու, բայց նպատակին չհասաւ, զի վիճակներ չհամակերպեցան իր գաղափարին հետևիլ, նոյնիսկ սինողն ալ չթափանցեց գաղափարին օգտակարութեան (04.ԲԱ.Ձ.416), և պարտաւորուեցաւ ետ քաշուիլ: Ներսէսի ձեռամբ կատարուած ձեռնարկներէն միայն գոմանոցն է որ մինչև հիմա կը մնալ Պլան անունով, (04. ԲԱ.Ձ. 415), իսկ շաքարի և շերամի գործարաններ և շատ մը կարգադրութիւններ իր կեանքին հետ վերջացան, քանի որ պակսեցաւ հսկողութեան արթուն աչքը և անխոնջ ձեռքը:

2617. ՁԵՂԾՈՒՄՆԵՐՈՒ ԴԷՄ

Բաւական չէր միջոցներ պատրաստել, պէտք էր պեղծումներէ ալ ապատել, և Ներսէս այդ մասին խիստ և անաչառ եղաւ, բռնակալ և խստասիրտ մեղադրուելու չափ (04. ԲԱ.Ձ. 416): Նա թէպէտ մեծամեծ ձեռնարկներով պբաղած և մեծագումար գործածած, ինքզինքը մաքուր և վերծ կը պգար ամէն պեղծումէ, և այս էր որ պինքն կը քաջալերէր աներկիւղ կերպով պեղծարարներու դէմ վարուելու: Նոյն իսկ իր սիրելւոյն և գաղթականութեանց ձեռնարկին մէջ գործակցին՝ Կարնեցի Կարապետ եպիսկոպոսին դէմ չվարանեցաւ հատու խստութիւն գործածել, երբոր քննութեամբ հաստատուեցաւ անոր վրայ շահադիտական մեղադրանքը (04. ԲԱ.Ձ.406), և երբոր նա պատուովը չուպեց հեռանալ Տփղիսէ, պաշտոնէ ալ դադարեցուց և նոյնիսկ Պօլօթէնիէով հաստատուած Կարնեցի գաղթականներու առաջնորդ մնալու իրաւունքէն ալ (ՊՕԼ. 11) գրկեց, ըսելով թէ նա ինքնայօժար կամքով իրան գրկել է, երբ Թիֆլիսի առաջնորդութիւնն է յանձնառու եղել (04. ԲԱ.Ձ.408): Վարդան Օձնեցին, Եփրեմ Եզընկացի և Յովհաննէս Արշարունի վարդապետներն ալ անոր խստութեան հանդիպեցան, երբ իրենց փոխանորդական կամ յաջորդական պաշտօններուն մէջ անհաւատարիմ գտնուեցան, և չվարանեցաւ քահանաներու յանձնել փոխանորդութիւնները (04. ԲԱ.Ձ. 408): Եկեղեցական հասոյթներու հաւաքիչներ և գանձապետներ նշանակեց աշխարհականներէն, երբոր եկեղեցականներու պեղծումները հաստատուեցան (04. ԲԱ.Ձ. 416): Այդ մասին մէջ Ներսէս Հայ Եկեղեցւոյ հոգիէն չէր օտարանար,

որ եկեղեցեաց մատակարարութեան մէջ ընդարձակ տեղ կու տայ աշխարհականներուն, հակառակ Պօլօժնիէի սեղմումներուն (2528), և կրնանք աւելցնել թէ Ներսէս կապդուէր Տաճկահայոց մէջ տիրող գրութենէ: Ներսէս իր հետապոտութիւնները ընդարձակելով առ հասարակ ամէն վարդապետներու անցեալը քննութեան ենթարկեց, և պանպիտանսն և պանկարգսն առաքեաց ի Սևան կղզի (ՊԷՐ. 286): Միևնոյն ժամանակ հաւատարիմ պաշտօնավարողներն ալ հոգածութեան առարկայ ըրաւ, ինչպէս Նիկողայոս Տէր Մարուգեանց (04. ԲԱԶ. 407) և Յովհաննէս Շահխաթունեանց (ՍԵՂ. 169) եպիսկոպոսները: Նոյն կարգին էր և Կարապետ Շահնապարեան վարդապետը, մինչև որ անոր ալ վեղծումները խօսուեցան, և քննութենէ խուսափելով փախուստ տրուաւ, որով քննութեան արդիւնքը չճշդուեցաւ, թէպէտև ոմանք ըսին թէ Կարնեցի Կարապետ եպիսկոպոսէ կաշառուած և այլ ընդ այլոյ տեսած ըլլայ անոր հաշիւները, երբոր կը նախագահէր քննիչ յանձնաժողովին, որուն անդամակցած են նաև Կ. Պոլսոյ Գէորգ Բէրէստէճեան և Երուսաղէմի Դաւիթ Գէորգեան վարդապետները (ՊԷՐ. 288): Արդէն առաջին անգամ Էջմիածին մտած օրէն Ներսէս սկսած էր վեղծումներու և անկարգութիւններու դէմ պայքարը, ինչպէս իր կարգին պատմեցինք (2583): 2618. ԱՆՏԱՌՆ ՈՒ ԼԻՃԸ

Ներսէսի անունը անմահացնող շինարար ձեռնարկներուն գլխաւորը եղած է Տփղիսի Ներսիսեան ուսումնարանը, որուն մասին բաւական խօսած ենք (2377. 2582, 2614). յիշեցինք ևս գոմանոցը որ իր տեսակին մէջ կատարեալ հաստատութիւն մը կրնայ սեպուիլ (2616): Էջմիածնի մէջ աւելի աչքառու արդիւնքը մըն է նորաշէն մեծ լիճի և անոր յարակից նոր անտառը: Լիճի և անտառի գաղափարը հին էր Ներսէսի միտքին մէջ, անտառով օդին վատութիւնը դարմանելու և լիճով անտառը հասցնելու: Երբ տակաւին Էջմիածնի մէջ էր և իբր գլխաւոր կառավարիչ կը գործէր, Ս. Գայիանէի վանքին մօտ չափաւոր անտառ մը տնկել տուեր, և անոր յուրակից փոքր լիճ մը աւելցուցեր, բայց իր Տփղիսէ հեռանալէն ետքը տնկած անտառը անխնայ կտրատում են, և Գէորգ եպիսկոպոս Աշտարակեցին, Կարբեցիին սիրելին և Վեհապետեան մականուանուածը, լիճը կը քակէ և սրբատաշ քարերով իր եղբոր Եփրեմին տունը կը շինէ: Ներսէս կաթողիկոսութեան բարձրացած նորէն անտառին և լիճին շինութեան կը ձեռնարկէ, և գործին վերին հսկողութիւնը կը յանձնէ Շահխաթունեան եպիսկոպոսին, աստիճանաւոր Գրիգոր Մալինեացի և բժիշկ Կարապետ Վասնակեցի օժանդակութեամբ. լիճին ճարտարապետութիւնն ալ հապարապետ Մարտիրոս Վէքիլեանցին կը յանձնարարէ: Նոր լիճին շինութիւնը յաջող չեղաւ, զի ջուրը սկսաւ լճի կողերից դուրս գալ, հարկ եղաւ շինածը քակել և աւելի մեծ մը շինել Աղէքսանդր Նաումէնկո ճարտարապետին ձեռքով, որ յաջողութեամբ աւարտեց, և մինչև այսօր ալ նոյնութեամբ կը մնայ: Անտառը տնկուեցաւ 1847-է 1850 չորս տարիներու մէջ, և կը պարունակէր 200,000 ծառեր, և մինչև 500, 000 հասցնելու մտադրութիւն կար (ՍԵՂ. 171): Ուրիշ տեղ 47, 230 ըսուած են ծառեր, բայց այսչափ առաջին տարին տնկուած է (ՆՐՍ.24): Անտառին ծառերը խառն էին պտղատուներով և անպտուղներով իբր կէս առ կէս, զի պտղատուներ 60, 000 թթենի և 40, 000 ծիրանի եղած են (ՊԷՐ. 286). Ներսիսեան անտառը յաջորդ կաթողիկոսներուն օրով ալ մասնաւոր յաւելումներ ունեցած է, և առնուազն քառակուսի մղոն մը տարածութիւն ունի այժմ, և կը ծառայէ թէ օդը բարւոքելու, թէ հաճոյալի ճեմավայր մը ըլլալու, և թէ վանքին վառելափայտը մատակարարելու: Իսկ լիճը լայն պատերով և ամուր յատակով շինուած, 100 կանգուն երկայնութիւն և 50 կանգուն լայնութիւն ունի, որ է ըսել 50, 000 քառակուսի կանգուն տարածութիւն, և իբր 10 կանգուն խորթիւն, շուրջանակի քարայտակ ճեմելիքով և կրկին շարք ծառատունկով, որ թէ գուարձալի պտոյտի, թէ անտառը ոռոգելու և թէ ձուկ հայթհայթելու առաւելութիւններ կը ներկայէ (ՊԷՐ. 286): Անգամ մը հակառակութեան համար ձուկերը թունաւորեցին, բայց Ներսէս անվհատ, վնասուածները

առողջներով փոխանակեց և նորէն ձուկերը շատցուց: Անտառի թփենիները քանի մը տարի ետքը շերամի գործարան բանալու առիթ ընծայեցին: Ծիրանենիներ շատ երկարակեաց չեն, ուստի հետզհետէ նորատունկերով կը փոխանակուին, և հիները դիմացկուն և բոսորափայլ կրակ մը կը պատրաստեն ձմեռային ցուրտերուն դէմ:

2619. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՊԷՏՔԸ

Ներսէսի ձեռնարկներուն և արդիւնքներուն կարգին չենք հանդիպիր Մայրաթոռի մէջ արժանաւոր դպրոցական կամ ուսումնական հաստատութիւն մը հիմնելու ձեռնարկին, և ասիկա ոմանց աչքին մի խոշոր պակասութիւն է երևցած, է էջմիածնի միաբանութեան պատշաճաւոր կրթութիւն տալու անձեռնհասութիւն է նկատուած (ՍԵՌ.153): Կրթութիւն և ուսում և վարճացում տալու համար, թէ Ներսէս որչափ մասնագիտական և ուսուցչական ձեռնհասութիւն ունէր, խնդիրի նիւթ չենք ուզեր ընել, վասնզի գիտենք թէ բարձրագոյն և խնամեալ ընթացք չէր անցուցած: Բայց իր գործունէութեան առաջին օրէն սկսելով, ուսում տարածելու և վարժարաններ հաստատելու համար ըրած ջանքերը և ձեռք ձգած արդիւնքները գիտնալ նէս ետքը, Ներսէսը իբր պանցառու կամ իբր անձեռնհաս նկատել ստուգիլ մեծ անիրաւութիւն պիտի ըլլար անոր յիշատակին: Հետևաբար տարբեր պատճառ մը պիտի փնտռենք, իր պանապան ձեռնարկներուն կարգին այդ կէտին ձեռք վարկած չլինելուն: Իբրև արդարացում յառաջ կը բերուի թէ Մայրաթոռի և ալզի և վիճակների կառավարութեան և կարգաւորութեան բազմակնճիւղ և բազմապարզ գործերով գրաւուած էր, թէ միայնակ իւր ձեռքում ամփոփած էր բոլոր հողերը, և թէ ամէն մանր գործին ալ գոմանոցի և շտեմարանի և փռատան և հիւրատան և սեղանատան և մառանատան վերաբերեալ կարգադրութիւնները իւր անմիջական տեսչութեան ներքև առած էր, որով վարմանք չէր թէ անկարող գտնուեց հոգալ ամէն ինչ որ իրանից սպասելի էր: Բայց այդ արդարացումները անուղղակի մեղադրանք մը կը պարունակեն, իբր թէ գործը գիտցող մը չըլլար և իր ոյժն ու կարողութիւնը յանխորհուրդս գործածող մը ըլլար, ինչ որ չենք համարձակիր Ներսէսի համար ըսել, և որ տեսանք ամէն դիպուածի հանդէպ պարագաները կշռող և պատշաճը գործադրող: Մենք կը կարծենք թէ Ներսէս երկու լաւագոյն տեսութիւններով յետաձգած ըլլայ էջմիածնի մէջ ուսումնական մեծ հաստատութիւն մը հիմնելու գաղափարը: Առաջին տեսութիւնն է թէ յայսպիսի հիմնարկութեան մը համար գետին պատրաստուած պէտք էր ըլլար, որպէսզի պտղաբեր դառնայ: Էջմիածնի մէջ, ոչ միայն նիւթական գետինը կը պակսէր, այլ և բարոյական, Վի քիչուշատ կարգկանոն չհաստատուած, հնար չէր բարեկարգ վարժարան մը հիմնել, և տիրող ժխորին մէջ պահանջուած ուղղութեամբ մարդեր հասցնել, վարժարանական շինուած իսկ չկար, և ինչպէս Ներսիսեանին նախ շէնքը պատրաստեց (2377), էջմիածնի մէջ ալ նախ վարժարանական շէնք մը կառուցանելու միտքն ունեցած է, և գործադրութեան հրահանգներն ալ տուած է, գումարը պատրաստելու հետամուտ եղած է, թէպէտ գործադրութիւնը եղած չէ: Միւս տեսութիւնն է որ էջմիածնայ համար վարժարանը և էջմիածնայ համար մարդ հասցնելու նպատակը, անհրաժեշտ չէր որ էջմիածնի պարիսպներուն մէջ գործադրուէր: Ներսիսեան վարժարանը որուն վրայ կեդրոնացուցած էր իր բոլոր ուշնուրուշը, եկեղեցականութեան ծառայելու բաժինն ալ ունէր և օգտակարագոյն կերպով ուզուած նպատակին ծառայած կըլլար ոյժերու և միջոցներու միացմամբ, քան թէ երկուքի բաժնելով երկուքն ալ տկար և վտիտ ձգելով, և հաւանաբար անպտղութեան առաջնորդելով: Ուստի Ներսէս ամենայն իրաւամբ կրցաւ էջմիածնի մէջ նոր ուսումնական հաստատութիւն մը հիմնելու գաղափարը երկրորդական կարգի թողուլ, և առ այժմ իր ունեցած միջոցներով և ոյժերով և անձերով միակ հաստատութեան մը վրայ աշխատիլ, ուսկից բոլոր ժողովուրդ և բոլոր վիճակներ և Մայրաթոռն ալ հաւասարապէս պիտի օգտուէին: Որչափ ալ

Ներսէս նոր ձեռնարկներու համար խիպախ և վստահ, և միջոցներ գտնալու համար ճարտար և հնարամիտ ըլար, վերջապէս խոհականութիւնը կը պահանջէր հաւանականութիւնը և հնարաւորութիւնը լաւ կշռել և այնպէս գործել: Չմոռնանք յիշել որ Էջմիածին առանց վարժարանի չէր, այլ իր ժառանգաւորաց վարժարանն ունէր, որուն համար թէպէտ ըսող կայ թէ առկայծեալ փայլը կորսնցուց (ՄՈՎ.260), բայց մենք գիտենք որ նախապէս աւելի փայլ մը չունէր, և կը տեսնենք ալ որ Շահխաթունեանի տեսչութեան ներքև գոհացուցիչ վիճակ մը ունէր, և Ներսէս ալ շարունակ պէտք եղած հրահանգները կը հասցնէր, զոր օրինակ երբ կը հրամայէր դադրեցնել ըստ հնոյն գոեհկական կառավարութեանց ձևերը, ինչպէս են Փալախայ և ծեծ փայտի, որոնք առիթ կու տան հրաւիրել ի ծիծաղ յայտարարում խոհեմութեամբ և հանձարով առաւելեալ ժամանակի: Շահխաթունեանը նորէն յիշելու առիթ պիտի չունենանք, ուստի այստեղ կաւելցնենք, թէ կանուխ խանգարեցաւ անոր առողջութիւնը, և պարտաւորուեցաւ 1843-ին Տփղիս երթալ դարման գտնելու համար. Աբասթումանի հանքային ջուրներն ալ գնաց որ բազմամեայ փայծեղային տկարութիւնից ապատուի, ծննդավայրի բնակութիւնն ալ օգուտ չըրաւ, ուր տասն ամսով անկողնի մէջ մնում էր, քանի մը տարի ևս անձնամաշ հիւժմամբ կեանքը քաշքշեց, այլ վերջապէս 1849-ին վախճանեցաւ յիսուն տարեկան հասակում, երբ դեռ շատ օգտակար լինել կարող էր (ՍԵԴ.211):

2620. ՎԱՆԱԿԱՆԱՅ ԹՈՂՕՆԸ

Պօլօժէնիէի տրամադրութիւնները ատեննիս ըսինք, թէ Կարբեցին նախապատրաստութեանց ժամանակին լուրթիւն պահելով, հրատարակութենէն ետքը երեք կէտերու վրայ դիտողութիւն և խնդրանք ներկայացած էր, որոնք են վանականաց թողօնը, առաջնորդաց ընտրութիւնը և Սինոդի պաշտօնէից ռոճիկները, և թէ վերջինին գոհացում ստացած էր ռոճիկներուն պետական սնտուկէն վճարուելովը, և միջինին կիսովի գոհացում տրուած էր երկու ընտրելի առաջարկելու ձևով, և միայն առաջին կէտը մերժումի հանդիպած էր (2530): Էջմիածնի լուրերը միայն բերանացի վրոյցներէ քաղող պատմագիր մը կը գրէ, թէ Ներսէս ի նստիլ իւր յաթոռ Հայրապետութեան Հայոց՝ մերժեաց և հերքեաց պամենայն, այսինքն ամբողջ Պօլօժէնիէն, իբրև վնասակար և անընդունելի Հայաստանեայց եկեղեցույ, և հրատարակեաց ի լուր կայսերութեան Ռուսաց: Սակայն իրողութիւնը բոլորովին տարբեր է: Ներսէս որ Պօլօժէնիէի օրէնքով ընտրուած և Պետերբուրգ ալ գտնուելով համակերպած էր, ոչ կրնար ընել և ոչ ըրաւ այսպիսի բացարձակ մերժում մը, պարզապէս հետևելով Կարբեցիին ըրած առաջարկութեան, միայն ի կախ թողուած կամ մերժուած առաջին կէտին, այսինքն վանականաց թողօնին խնդիրը ձեռք առնելով 1848 յունիս 11ին կը դիմէր փոխարքայ Վօրօնցովի, որպէսզի բարեխօսէ թագաւոր կայսեր մօտ, որ բարեհաճի հրամայել Պօլօժէնիէի չորս յօդուածների ջնջումը, որոնք են կուսակրօններու թողօններուն անոնց բնական ժառանգներուն անցնիլը տրամադրող 32, 71, 89 և 91 յօդուածները, և անոնց տեղ հաստատէ օրէնք մը համաձայն Կարբեցիին և իր և այլոց կարծեաց և առաջարկութեանց, որ կուսակրօններու ունէ շարժական կամ անշարժ ստացուածք, զոր ժառանգութեամբ ստանան կամ յետ մահուան թողուն, իրենց կեցած վանքին սեփականութիւն լինին, և այս սկզբունքով լուծուին ամէն դատեր որ 1836 մարտ 11-է ետք ծագում առած են (ՅՆՁ. 49): Այդ կէտն էր զոր Ներսէս ալ ուժգնապէս կը պաշտպանէր, զի եկեղեցականութեան անունով և վանականութեան գիրքով կազմուած ստացութիւններուն այդ շրջանակէն դուրս ազգականութեան իրաւունքով ժառանգուիլը, թէ հոգևոր հաստատութեանց կործանման և թէ ներքին վեղծումներու համարձակ դուռ բանալ պիտի ըլլար ինչպէս Ներսէս ընդարձակօրէն կը լուսաբանէ Վօրօնցովի ուղղած պաշտօնագիրին մէջ: Գործով ալ միևնոյն սկզբունքը պաշտպանեց Ներսէս, երբ առիթը ներկայացաւ Աստրախանի

առաջնորդ Արարատեան Սերովբէի վրայ, որուն մասին վիճակայինները բողոք մատուցին թէ 20.000 ռուբլի գումար մը առաջնորդարանի արդիւնքէն շորթելով, իբր իր անձնական ստացութիւն, դրամատուն յանձնած է: Երբոր Ջալալեան քննութեան համար Աստրախան հասաւ, Սերովբէ վախճանած էր, և գործը ժառանգական ձև առած էր, և Սերովբէի ազգականները հետամուտ էին գումարը ձեռք անցնել, և մինչև իսկ դատ բացին տեղական դատարաններու առջև, և նախարարութիւնն ալ Պօլօժնիէի յօդուածներուն հետևողութեամբ յանձնարարութիւններ կը ներբայց Ներսէս մինչև վերջը ընդիմացաւ և պնդեց, թէ Սերովբէ նշանաւոր գումար է յափշտակել եկեղեցական դրամներից, և անոր ժառանգորդներուն բան մը չյանձնեց, և գործը յաջորդ կաթողիկոսին մնաց:

2621. ՄԵՂԱԴՐԱՆԱՅ ՊԱՏԱՍԽԱՆ

Ներսէսին 1848-ին ըրած դիմումը անպատասխանի մնաց, ուստի ստիպեալ իր առաջարկը կրկնեց շարունակաբար 1849ին և 1850ին (ՅՆՁ. 50), և վերջապէս պատասխան ստացաւ թէ Պօլօժնիէի քանի մը յօդուածոց փոփոխութիւնը անյարմար է առաջարկել կայսեր, և յարմարագոյն է այդ խնդիրը պահել երբ ամբողջովին վերաքննութիւնը ձեռք առնուի (ՅՆՁ. 55): Միանգամայն ինչինչ դիտողութիւններ եղան Ներսէսի թէ Սինոդի անդամները չի լրացներ թէ վիճակներու առաջնորդներ չի նշանակեր, և թէ Էջմիածնի մէջ կաթողիկոսական բարձր ուսումնարան չի հաստատեր, ուստ Ներսէս 1856 յուլիս 24-ին ընդարձակ տեղեկագիր մը ուղղեց Կովկասի փոխարքային (ՅՆՁ.50-55), որուն մէջ մանրամասնօրէն պատասխանեց, և իւրաքանչիւր կէտը լիովին լուսաբանեց իր ընթացքը արդարացնելու համար: Ներսէսի գրութիւններէն կը քաղենք թէ Կարբեցիին (2530), և Հնդկահայոց (2557) դիտողութեանց քննութիւնը պատշաճ սեպուած էր յետաձգել մինչ ցընտրութիւն նոր կաթողիկոսի, և տարեկան համարատուութեանց մէջ այս կէտը կը նշանակուի իբրև չգործադրուած բարձրագոյն հրամաններէն մին (ՅՆՁ. 48). ուստի ինքն ալ Պօլօժնիէի բոլոր յօդուածոց քննութեամբ պաշտօնը կը խոստանայ առաջին իսկ առթիւ (ՅՆՁ. 49): Ըստ այսմ 1856-ի պաշտօնագիրով նախապէս կը պատասխանէ իրեն ուղղած մեղադրանքներուն: Սինոդականներու և առաջնորդներու չնշանակուելուն, կամ աւելի ճիշդ ընտրելիներ չառաջարկուելուն բացարձակ պատճառ կը ցուցնէ, թէ չիք առ մեզ այնպիսի բարեյոյս և յարմարաւոր վանական անձինք, որք կարող լիցին ցանկալի օգտիւ և արժանաւորութեամբ ստանձնել վնասանշանակեալ տեղիս, և վերջերս յունիս 5-ին առաջարկած անձերուն համար ալ կըսէ, ոչ թէ ամենեքին նոքա արժանի էին յանձնարարեալն նոցա կոչման: Համարձակ կը յայտարարէ թէ ինքն չի կարծեր որ պահպանութիւն ձևոց վսեմագոյն ևս է քան վիսկականկատարումն գործոց (ՅՆՁ. 50), և բացէբաց կը հերքէ իբր թէ ինքն ոչ ցանկայ վի կատարեալ իցէ թիւ անդամոց Սինոդի և թեմակալ արհեստ: Արժանաւորներ չպատրաստուելուն պատասխանատուութիւնն ալ կը մերժէ, զի 1827 էն մինչև 1843 ինքն Էջմիածնի վարիչ չէր, և թէպէտ 1843-ին ընտրուած, բայց 1846-ին Տփղիս հասած է, և վաթոռն Էջմիածնի, զՍինոդն զվարժարանն, զկոնսիստորեայս, զհոգևոր կառավարութիւն, զեկեղեցի, զվանօրայս, և զամենայն զհոգևորականս, այնպիսի վիճակի մէջ գտած է, որ ամենուրեք աղաւաղում, անկարգութիւնք, վանցառութիւնք զրկանք և աղքատութիւնք կը տիրէին (ՅՆՁ. 51): Այսուհանդերձ պատշաճաւոր կրթարանը հաստատուելու և արժանաւորներ հասցնելու համար վիճակներէ նպաստներ և միջոցներ խնդրած է, բայց առաջնորդներէն բան մը չէ ստացած, և ոչ զմի կոպէկ: Սերովբէ Աստրախանի առաջնորդը, 17 տարի պաշտոն վարած, 120,000 ռուբլի իւրացուցած է, ուսկից միայն 30, 000 երևան եկած է: Կարապետ 10 տարի Տփղիսի առաջնորդ եղած 250, 000 ռուբլի պատրաստական մնաց և զեկեղեցական անշարժ գոյս աւանդեց իւրոց ազգականաց: Բաղդասար 35 տարի Արցախի

մետրոպոլիտ եղած ոչինչ հասոյց չէջմիածին: Մատթէոս 6 տարի Շամախու և 9 տարի Բեսարաբիոյ առաջնորդ եղած 35, 000 ռուլլի պարտական գտնուած է, և այսու հանդերձ Պետրբուրգի մէջ կը պաշտպանուի (ՅՆՁ. 52): Եւ կեպրակացնէ թէ քանի օր այս անտեղութիւնք չեն քնուիր, և վիճակներու հասոյթներ փոխանակ էջմիածին հասնելու անձնական կը դառնան, ինքն անպարտ է իրեն վերագրուած մեղադրանքներէն: Կը ծանրանայ յատկապէս թողօններուն խնդիրին վրայ, զի հետևանքը այլապէս կը լինէր եթէ առաջնորդներուն իւրացուցած գումարները աթոռին դառնային, փոխանակ ազգականներուն անցնելու: Զի այն ատեն թէ բարձրագոյն ուսումնարան հաստատելու, և թէ արժանաւոր անձեր ունենալու նպատակներ իրականացած կըլլային: Կը խօսի ևս Պօլօժէնիէի վերաքննութեան համար նոր ծրագիր առաջարկելու մասին, և իր միայնակ և անօգնական մնացած ըլլալը կը ցուցնէ յապաղման պատճառ: Ասով մէկտեղ յիշեալ 1856 տարուոյ մէջ մասնաժողովոյ մը ձեռօք ծրագիր մը խմբագրել կու տայ, որ զինքն չի գոհացնէր, և ինքն իւր ձեռօք կանոնադրութիւն մը կը խմբագրէ, և կուզէ զայն պետութեան չներկայացած հմուտ եկեղեցականներէ և աշխարհականներէ ժողով մը կազմել, և անոնց կարծիքն ալ առնել (ՅՆՁ. 55), գուցէ ազգային միւս կաթողիկոսութեանց և պատրիարքութեանց տեսութիւններն ալ լսել, բայց իր յանկարծահաս մահը վրայ գալով նպատակին չի հասնիր, և գործը կը մնայ իր վիճակին մէջ, այսինքն վերաքննութիւնը առկախ և 1836-ին Պօլօժէնիէի ի գործադրութեան: Ներսէսի խմբագրած կանոնադրութիւնը տեսնուած չըլլալուն, պիտի չկարենանք անոր տեսութեանց և մտադրութեանց մասին որոշակի բան մը ըսել: 2622. ՕՐԻՆԱԿԱՆ ԽՍՏՈՒԹԻՒՆ

Ներսէսի կաթողիկոսական գործունէութեան գլխաւոր ձեռնարկները յիշեցինք, և անոնց անցուդարձերն ու պարագաներն են որ կը գրաւեն բոլոր իր ժամանակը: Բայց մենք աւելորդ կը սեպենք անոնց մանրամասնութեամբը զբաղիլ: Միս կողմէն Ներսէսի կեանքին մէջ կան այնպիսի գործեր և դէպքեր, որոնք իր նկարագրին իսկութիւնը կը յայտնեն, և այնպիսիներն ալ չենք ուզեր անյիշատակ թողուլ, զի անհրաժեշտ են անձնաւորութիւնները ճանչնալու և արժանաւորութիւնները գնահատելու: Ներսէսի անձին վրայ միացած կը տեսնենք երկու իրարու ներհակ կարծուած երևոյթներ, օրինական նախանձայուպութիւն անողոքելի խստութեամբ, և օրինակելի թոյլտուութիւն անպայման ներողամտութեամբ: Իշխան Խաչատուր Լապարեան զոր այնչափ բարեկամ և մտերիմ տեսանք Ներսէսի հետ (2572), հրաման կը խնդրէ իր Աննա և Եղիսաբէթ աղջիկները ամուսնացնել իր Մարիամ քրոջ որդւոյն Յովհաննէս Տէլանեանցի կամ Դելիեանեանցի, և Մարթա քրոջ որդւոյն Սիմէոն Աբիմէլիքեանցի հետ, որ է չորրորդ աստիճան ազգակցութեան: Խաչատուր այդ ազգակցական ամուսնութեան միտքը ունեցած կըլլայ անշուշտ Լապարեան սերունդը ամփոփ պահելու համար, զի իր միակ արու վաւակը Յովհաննէս վեցուկէս տարեկան վախճանած էր 1850 նոյեմբեր 26-ին (ԼԱՁ. Ա. 34), և իր երիցագոյն դուստրը Մարիամ ամուսնացած էր Շուետացի բողոքական Ներոս կոմսին հետ (ԼԱՁ. Ա.52), և Խաչատուր հայազգի ժառանգ չունէր իր տոհմին: Խաչատուր վստահ էր թէ Ներսէս պիտի չզլանայ իրեն այդ արտօնութիւնը՝ նկատելով իրենց անձնական յարաբերութիւնները և բացառիկ պարագային պահանջը: Ներսէս սակայն խնդիրը մերժեց և գրեց ալ թէ եկեղեցական օրէնքը սահմանուած է առանց բացառութեան բոլորի համար, լինին հարուստ թէ աղքատ: Խաչատուր միջնորդներ ղրկեց էջմիածին Ներսէսի մտերիմներէն, Ազաֆոն Ակիմեանցը և Դաւիթ Թամամշեանցը, առատ նպաստներ խոստացաւ Ներսէսի ձեռնարկներուն, բայց Ներսէս աւելի ևս խոստացաւ: Միաբանութեան երիցագոյններէն ժողով ալ գումարեց, որուն մէջ միայն Ղուկաս Եպիսկոպոս գտնուեցաւ ներելու կողմը և վերջապէս մերժուեցաւ Խաչատուրի խնդրանքը: Բայց Խաչատուր իր միտքէն չհրաժարեցաւ, և երբ 1852-ին Մատթէոս Եպիսկոպոս Բեսարաբիոյ առաջնորդ, որով և

Պետրբուրգի թեմակալ, նոյն քաղաքը եկաւ, Խաչատուր ճարտար դարձուածներով անոր միտքը գրաւեց, և նա իր առաջնորդական իշխանութեամբ արտօնութիւնը առաւ, և պսակները կատարեցին քահանաները (04. ԲԱ.Ձ. 422, ԼԱ.Ձ. Ա. 52): Ներսէս լսելով Մատթէոսը էջմիածին կանչեց, և երբ չեկաւ՝ առաջնորդութենէն հրաժարեցուց, իսկ նա Պետրբուրգ գնաց և Լապարեան Խաչատուրի ապաւինեցաւ, որ առաջուկ խոստացած էր պաշտպան լինել նորան կառավարութեան միջոցով (04. ԲԱ.Ձ. 422): Բայցայն օրէն հնօրեայ անխալտի բարեկամը անհաշտ թշնամի մը եղաւ Ներսէսի, և ամէն ուրիշ մէջ աշխատուեցաւ հակառակութիւն մղել անոր դէմ: Իսկ Ներսէս ընդհակառակը միշտ իր օրինական նախանձայուութիւնը պահեց: Տեսնելով որ միաբաններ յաճախակի եկեղեցույ դասէն կը բացակային, որ մը հրաման կընէ որ ամէնքն ալ շինուելու եղող լիճին վրայ երթան և բոլոր օրը հոն մնան և ճաշի ալ չգան: Կէսօրէն ետքը ինքն ալ կերթայ և արիուն քրտինքով աշխատող մշակներն ու վարդապետները ցուցունելով ամէնքը կը յանդիմանէ, թէ անոնք աշխատութեամբ հաց են ճարում, դուք էր նորանց դառն քրտինքով աշխատածն էք վայելում անաշխատ, և ծուլանում էք Աստծուն փառաբանել, մինչդեռ ձեր էլ պարտականութիւնն է աղօթել վասն բարօրութեան ազգի: Խրատը իր ազդեցութիւնը ունեցաւ կըսէ յիշատակագիրը, և բոլոր միաբաններն երեկոյ առաւօտ եկեղեցուց յետ չէին մնում (04.ԲԱ.Ձ.418):

2623. ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆ

Այդ խստութեանց հանդէպ կը տեսնենք, Ներսէսը հեպահոգի և պիջողական, երբոր օրինական կէտ մը չէ խնդրի նիւթ եղողը: Վասիլ Բեհբութեանցի անունը քանիցս յիշուած է իբրև իր հօրմէն Յովսէփէ Ներսէսի դէմ հակառակութիւն ժառանգած (2343), և իբր Երևանի նահանգապետ Կարբեցիին ընտրութիւնը յաջողցնելու աշխատող Ներսէսի դէմ (2471), Բեհբութեանց ուրիշ անգամ ալ առիթ չէ փախցրել Ներսէսին վիրաւորելու: Նա պաշտպանել էր պրոկուրոր Կարապետ Վասակեանցը, որ Գէորգ Վեհապետեան եպիսկոպոսի թելադրութեամբ Ներսէսի դէմ քսութիւններ էր գրած, և Ներսէսին նկարագրել էր իբրև տէրութեան դաւաճան: Նա Ներսէսին յանդիմանել էր Վօրօնցով փոխարքայի ներկայութեան թէ ձեր ի՞նչ բանն է այս տեսակ գործերին խառնուիլ, երբ Ներսէս գիւղացիներու դրութեան համար կը միջնորդէր: Նա համարձակեր էր նոյնպէս Ներսէսը մեղադրել թէ թագաժառանգը առանց եկեղեցական զգեստաւորութեան դիմաւորեր էր (04. ԲԱ.Ձ.420): Վերջապէս միշտ Ներսէսի հակառակութիւն յայտնելէ ետ չէր մնացած: Այսու հանդերձ երբ նա 1854-ին Օսմանեանց դէմ պատերազմին հրամատար նշանակուեցաւ, Ներսէս անյիշաչար հոգւով և նորան օրհնելով և բարեմաղթելով, իւր ձեռքով թուրը կապում է նորա մէջքը (04.ԲԱ.Ձ.421), ուսկից ետքը տարած է Բեհբութեանց իր նշանաւոր յաղթութիւնները: Ներսէսն է եղած որ վերուցած է կիներու Սևանի անապատը մտնելուն արգելքը, իբր թէ անոնց ներկայութիւնը կրնար կրօնաւորներուն փորձութիւն պատճառել, մինչ Ներսէս կըսէր թէ այն չէ կարող նորանց գայթակղութեան առիթ տալ, եթէ իրանց հաւատքը վիճի վրայ է հաստատուած (04.ԲԱ.Ձ.418): Օր մը Գեչօրլուի գիւղականներ Ներսէսի ոչխար մը կը բերեն ընծայ և նա միւս օր անոնք ճաշի կը հրաւիրէ. բայց հանդիպմամբ նոյն օր Նապարով նահանգապետ երկու ընկերներով այցելութիւն կու գայ և ճաշի մնալու կըլլայ: Ներսէսի հաւատարիմը և եղելութեան յիշատակագիրը Ստեփան Սամուէլեանց, ծածուկ Ներսէսի կապարարէ թէ գիւղացիներու հրաւէրը ետ պիտի թողու, բայց Ներսէս ոչ միայն չի հաւանիր և պաշտօնակալներուն հետ գիւղացիներն ալ սեղանակից կընէ, այլ և սեղանին վրայ եղելութիւնը խօսից նիւթ կընէ, և ընդարձակօրէն կը բացատրէ այդ մասին իր տեսութիւնը և ժողովրդական հաւասարութեան սկզբունքները: Բայց միւս կողմէն պատշաճից պահանջներն ալ գիտէր լիովին կատարել, և բարձր հիւրերը բարձր կերպերով պատուասիրել, ինչպէս տեսնուեցաւ Նասրէտտին շահին մօրեղբօր Բահրամ կամ Պէհրամ խանին

Էջմիածին այցելելու առթիւ, որ անոր հետևորդներն իսկ ըսեր էին, թէ շահի մօտ էլ այսպիսի պատիւ չէ տեսած նորա քեռին: Նմանապէս Ռուսաց թագաժառանգ Աղեքսանդր մեծ դուքսին 21 աստիճանաւոր հետևորդներով և սպասաւորներու և խոհարարներու բազմութեամբ 1850 հոկտեմբեր 6-ին Էջմիածին այցելելու առթին, Ներսէս այնպիսի ճոխ հանդերձանք կազմակերպած էր որ Աղեքսանդր հրաման ըրաւ իր միատեղ ունեցած հանդերձանքը չբանալ, և այնպիսի ընտիր և հազուագիւտ համադամներ պատրաստած, որ կայսերական խոհարարապետը վկայած էր թէ մեզանում պալատան էլ սակաւ ենք պատրաստում այսպիսի կերակուրներ: Խրիմի պատերազմին ժամանակ ռուս զօրագունդը համարեա մի տարի բանակեցին վանքում և Վաղարշապատ գիւղում, երբ Ներսէս Տփղիս կը գտնուէր, բայց հրաման ըրած էր վանքին մէջ հիւրասիրել և կերակրել Վրանգէլ և Սուալով զօրավարները իրենց հետևորդներով, որոնք Վեհարանի մէջ կը բնակէին, եկող գացողներուն պատշաճ պատուասիրութիւններ կըլլային, և նշանաւոր օրեր պիտուրներուն ալ հաց և միս և բրինձ և օղի և գինի կը բաշխուէր, ամէն ինչ լիութեամբ (04.ԲԱԶ.421): Բայց ինքն սակաւապետ էր յոյժ, կաթ և մածուն, հաւկիթ և փլաւ էին իր սովորական սնունդը, և իր չափաւոր և կանոնաւոր կեանքին հետևանքն էր այն առոյգ վիճակի և անխոնջ աշխատութիւնը գորս պահեց մինչև իր մօտ իննսնամեայ տարիքը: Բայց մենք Ներսէսի վերջին օրերը չպատմած, դառնանք միւս աթոռներուն եղելութիւնները պատմել:

2624. ԿԻՐԱԿՈՍԻ ՇԻՆՈՒԹԻՒՆՔ

Երուսաղէմի աթոռին անցքերը թողուցինք Կիրակոս պատրիարքի ընտրութեան հաստատուելուն, և 1847 փետրուար 14-ին աթոռ բարձրանալուն (2611): Իր նախընթացը ծանօթ է մեզ արդէն, իսկ իր նկարագիրը կը ներկայացուի իբր այր մեծահանձար, փառահեղ, պատկառելի, և համեղ ի բանս և ի գրիչս (ԱՍՏ.Բ.536), որպիսի երևցած էր պատրիարքութենէն առաջ, և աթոռի վրայ ալ չստեց այն մեծ ակնկալութիւնը, զոր միաբանութիւնը գրած էր իր վրայ, և զոր կերաշխաւորէին Կ. Պոլսոյ, Եգիպտոսի, Երուսաղէմի և պահ մըն ալ Արմաշի մէջ ցուցած արդիւնաւորութիւնները: Թէպէտև համառօտ եղաւ իր պատրիարքութեան միջոցը, երեքուկէս տարիէ պակաս, բայց այնչափն ալ բաւեց որ ներքին բարեկարգութեան ազդու մղում տար և մտաւոր վարգացման գործը հետապնդէր, և միանգամայն իրաւանց խնդիրներուն խոհականութեամբ հետևէր: Կիրակոս յատկապէս յիշատակելի է նաև իբրև շինարար, զի բաւական շինութիւններ և նշանաւոր նորոգութիւններ կատարուեցան իր օրով, որոնց մէջ նշանաւորագոյն է Նորթաղը, ուխտաւորութեանց սահմանուած թաղերուն լաւագոյնը և ընտրելագոյնը, որ Պահճէ թաղ կամ Պահճալը թաղ, այսինքն Պարտիպաթաղ ալ կը կոչուի, բակին մէջ գտնուող փոքրիկ պարտէզէն առնելով իր անունը: Հիմերը դրուած էին Ջաքարիայի վերջին օրերը, բայց բոլոր շինուածը Կիրակոսի առաջին տարին բարձրացաւ 1847-ին վանական շինուածոց հարակողմը, երեք թևերու վրայ, երկյարկանի և 47 օդասուն սենեակներով, այնպէս որ ամառային եղանակներուն ուխտաւորութեանց փակուելէն ետքը, միաբանութիւնը սովոր է անոնց մէջ օդափոխութիւն ընել: Պատրիարքաց ամարանոցի համար ալ նորագոյն շինութեանց ոճով յատուկ յարկաբաժին մը կառուց 1848-ին, եկեղեցւոյ արևելակողմը եղող Յորենաթաղի սենեակներուն վրայ (ՍԱԻ.1264), և թեթև շինութեամբ սենեակներ աւելցան Հաննաթաղին մէջ: Ս. Փրկիչ վանքն ալ նորոգեց, սենեակներ և խուցեր աւելցնելով, և նորէն ծեփել և յարդարել տուաւ Ս. Յովհաննէս փոքր եկեղեցին՝ Ս. Յարութեան արտաքին բակին մէջ (ԱՍՏ.Բ.535), Ս. Յակոբայ Մայր տաճարին մէջ աւագ սեղանին և կողմնակի սեղաններու և Ս. Գլխագիրի կողմին փառաւոր խաչկալներուն ոսկեզօծները, որոնք Շղթայակիրի օրէն բաւական եղծած էին, ամբողջապէս նորոգուեցան, և Հրեշտակապետաց և Ծնունդի եկեղեցիներուն մէջ ալ ոսկեզօծներու նորոգութիւններ

կատարուեցան: Կիրակոս մեծ փափաքն էր վարժարանի համար ընդարձակ և տպարանի համար յարմարաւոր շէնքեր ունենալ, համոզուած ըլլալով որ տեղւոյն պայմանը մեծ դեր ունի կատարուելիք վարգացման մէջ, և այդ նպատակով պետական արտօնագիրը ստանալու համար ժամանակին հրահանգ տուած էր Զմիւռնացի Յովհաննէս Եպիսկոպոսին որ Կ. Պոլսոյ փոխանորդութեան պաշտօնին վերադարձած էր, բայց արտօնագիրը հապիւ Կիրակոսի կեանքին վերջին օրերը հասաւ, որով գործողութեան ձեռարկելու ատեն չունեցաւ (ՍԱԼ. 1279):

2625. ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԵՔ

Նիւթական շինութիւններու չափ, և թերևս աւելի ալ կարևոր են բարոյական շինութիւնները, և Կիրակոս չէր կրնար վանց ընել բարոյական շինութեան տարրերը, կրթութիւնն և ուսումը և բարեկարգ կանոնապահութիւնը: Ուսման և կրթութեան ինքն կանուխէն գործիչ մը եղած էր Երուսաղէմէ դուրս ալ, Իւսկիւտարի ձեմարանին և Արմաշի վանքին մէջ, և պատրիարքական այթողին վրայ ալ նոյն դերը պահեց: Ժառանգաւորաց Վարժարանը, զոր արդէն վանական շրջափակին մէջ մուծած էր իր տեղապահութեան ժամանակ (2609), կը պետեղէր հին պատրիարքարան կոչուած սրահին մէջ, Ս. Թէոդորոսի եկեղեցւոյն մօտերը, ուր այժմ գիրքերու թանգարանը կը գտնուի, և ուսուցիչ կը կարգէր Լիմայ Միաբաններէն Սիմէոն վարդապետ մը, սակայն անոր հայկաբանական հմտութիւնը գոհացուցիչ չգտնելով, 1848-ին Զմիւռնիայէ կը կոչէր Սաւալանեան Տիգրան ուսուցիչը, որուն ծանօթացած և որմէ օգտուած էր Զմիւռնիոյ նուիրակութեան ատեն 1822-ին, Սաւալանեան պաշտօնի կը մտնէր 1848 օգոստոսին, և քերականութեան վրայ կաւելցնէր ճարտասանութեան, կրօնագիտութեան և աշխարհագրութեան դասերը: Պատրիարք և ուսուցիչ կը փափաքէին աւելի ևս վարգացնել ծրագիրը և ընդարձակել Վարժարանը, և կը սպասէին նոր շինութեանց արտօնագրին, որ ինչպէս վերև ըսինք տարապայման ուշացաւ: Սաւալեան վարժարանական զբաղմանց հետ տպարանի համար ալ կաշխատէր, և Կիրակոս ալ քաջալերուած Կ. Պոլսէ նորաձևեալ Միւհէնտիսեան տառեր և Վիէննայէ գեղեցիկ մամուլ մը բերել տուաւ (ՆՇՆ. 25), և այս միջոցին տպագրուեցան Գաղատացի Իսահակ վարդապետի Յովսէփ գեղեցիկը, և Աղամալեանց Պետրոս Եպիսկոպոսի Եփեսացոց թուղթին մեկնութիւնը: Երուսաղէմացի մանկաւոյն համար բացուած նախակրթարանին համար ալ յատուկ խնամք տարուեցաւ, և այդ խնամքին արդիւնքն է արաբախոս ժողովուրդին մէջ հայերէն լեզուի գամբանկգամ տարածուիլը: Իսկ վանական կանոնապահութեան մասին մեծ վարկը իր օրինակով կու տար Կիրակոս, զի թէպէտ վատառողջ, բայց առտու երեկոյ անպակաս էր ժամերգութիւններէն և պատարագներէն, միշտ ներկայ էր միաբանական սեղաններուն, և ամէնքը կը յորդորէր վանական կարգապահութեան (ՍԱԻ. 1280), հեղգացողները խրատելով, փութաջանները քաջալերելով, բայց աւելի ևս իր օրինակով : Պատրիարքութեան առաջին օրէն փոխանորդ նշանակեց Կարնեցի Դաւիթ Գէորգեան վարդապետը (ՍԱԻ. 1261) և փակակալ կամ լուսարարապետ՝ Մարկոս Եպիսկոպոս Պօղոսեանի 1849 փետրուար 20-ին վախճանելուն վրայ անոր յաջորդ նշանակեց Պօթուշանցի Գէորգ Տէր-Յարութիւնեան վարդապետը (ՍԱԻ 1276), որոնց երկուքն ալ շուտով Եպիսկոպոսութեան բարձրացան, և միշտ զօրաւոր աջակիցներ եղան Կիրակոսի քանքերուն:

2626. ԲԵԹՂԵՂԷՄԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Կիրակոս ալ առիթներ ունեցաւ սուրբ տեղեաց խնդիրներու պայքարներ մղել, և առաւելապէս Բեթղէհէմի սրբավայրին շուրջը, որ կարծես թէ առաջի օրէն առաւելութիւն ունեցած է այդ տեսակ խնդիրներու մէջ: Առաջին խնդիրը մեծ դրան մասին եղաւ, որու բանալին տակաւին Յոյներուն ձեռք կը մնար, և շատ նեղութիւն կը պատճառէին հայ ուխտաւորներուն: Տեղւոյն վրայ

չկարենալով լուծում մը տալ, հարկ եղաւ Կ. Պոլսոյ պատրիարքութեան դիմել և Մատթէոս պատրիարք գիւրագոյն կարծեց ուղղակի Յունաց պատրիարքին հետ բանակցիլ, և վարդապետներով և ամիրաներով Ֆէնէր գնաց, և չորս առաջարկներ ներկայեց մէկը կամ միւսը գործադրելու, այսինքն կամ բանալի մըն ալ Հայոց յանձնել, կամ դուռները միշտ բաց թողուլ, կամ երկրորդ դուռ մըն ալ բանալ, կամ դուռը տաճիկ դռնապաններու յանձնել Ս. Յարութեան տաճարին պէս: Յոյներ թէպէտ համակերպութիւն ցուցուցին, բայց և ոչ մին գործադրեցին, և գործն մնաց անարդիւն մինչև 1854-ի պատերազմը (ՊԷՐ.317): Նոր խնդիր յուզուեցաւ Ծննդեան տեղւոյն աստղին պատճառով, թէպէտ Ծննդեան սեղանը Յունաց և Հայոց միայն յատկացեալ է պահելու և պատարագելու համար, սակայն Լատիններն ալ սեղանին ներքև ճաճանչաւոր աստղ մը ունին իրենց սեփականութիւն լատիններէն վերտառութեամբ, որ յանկարծ 1848 հոկտեմբեր 19-ին գիշերը անյայտացած և Լատիններ Յոյներուն և Հայերուն վրայ խուժեցին, իբրև գողութեան վրէժը լուծելու: Խաղաղութիւն հաստատելու և գողութիւնը գտնելու համար կառավարիչ Մուստաֆա Ջարիֆ փաշա պատրիարքներու հետ Բեթղէհէմ կու գայ, բայց անհնար կըլլայ գողութիւնը ճշդել, մինչև Լատիններ նոր մը պետեղելու ձեռնարկած ատենին, Հայեր կը լռեն և Յոյներ կընդդիմանան, և գողութիւնը իրենց կողմէն ըլլալուն կասկածը կը շատանայ: Ասով մէկտէղ որոշակի հաստատել անհնար կըլլայ, և յունական ընդդիմութեան շարունակելովը մինչև 1852 անհնար կըլլայ նոր աստղ մը պետեղել (ՍԱԻ. 1265): Խնդիր մըն ալ կը ծագի Բեթղէհէմի մէջ գտնուող Քառասնից այր, իսկ Լատիններէն Կաթին այր կոչուած սրբավայրին պատճառով: Աւանդութիւն է թէ Աստուածածինը այստեղ մնացած ըլլայ 40 օր մինչև տաճար երթալը, և հոն Յիսուսը դիեցուցած, և կաթէն գետին թափուած, որուն հողը մինչև հիմա ջերմեռանդ մայրերէ կաթի առատութիւն ստանալու համար կը գործածուի: Սրբավայրը երեք ալգերու միանգամայն սեփականութիւն էր, երբ 1849 յունիս 13-ին իբր թէ առաստաղը տեղտեղ վնասուած, Լատիններ վայն վար կառնեն և իրենք առանձինն կը վերաշինեն: Յոյն և հայ պատրիարքներ կը բողոքեն, կառավարական քննութիւն կը բացուի, դատարանի առջև ալ կը քննուի, և երեք ալգերու հաւասար սեփականութիւնը կը հաստատուի, բարձրագոյն դուռ ալ կը ծանուցուի, և հաւասար իրաւունքը կայսերական հրամանագրով կը վճռուի: Ըստ այսմ նոյն 1849 տարուոյ հոկտեմբեր 29-ին երեք ալգերու ներկայացուցիչներ տեղւոյն վրայ կերթան, պէտք եղած նորոգութիւնները կը լրացնեն, և ծախքը հաւասար բաժանմամբ կը վճարեն, և դուռն մշտնջենապէս բաց մնալուն պայմանով երեք ալգերու հաւասար իրաւունքը պաշտօնապէս կը հռչակուի և միջադէպը կը փակուի: Սակայն Լատիններ իրենց մտադրութենէն ետ չկեցան, և հուսկ ուրեմն յաջողեցան այդ սրբավայրը իբրև առանձին սեփականութիւն վարդարել և փակել: Նոր խնդիր ալ տեղի ունեցաւ դարձեալ Բեթղէհէմի մէջ 1850 ապրիլ 15-ին, երբ Գէորգ ամիրա Միսաբեան, Ասորիքի և Պաղեստինի մաքսերուն կապալառուն, ուխտի գնաց Բեթղէհէմ, և հայ տեսուչն ու միաբանութիւնը եկեղեցական արարողութեամբ ո թափօրով առաջնորդեցին ներքին սիւնապարդ գաւիթէն սկսելով: Յոյն տեսուչը աղաղակով և բռնութեամբ կուպէ թափօրը արգիլել, թէպէտև չի յաջողիր, բայց ամիրան Երուսաղէմ դառնալուն հրաման կու տայ մաքսատան պաշտօնեաներուն հնարաւոր եղածին չափ յոյն ուխտաւորները նեղել խուկարկութեամբ և դժուարութեամբ, մինչև որ Յունաց պատրիարքի կողմէն, Բեթղէհէմի տեսուչն ալ միասին բերելով, Հայոց պատրիարքարանը կու գան և ցաւ յայտնելով ու ներում խնդրելով ամիրային բարկութիւնը կիջեցնեն: Բոլոր այս անցուդարձերուն մէջ Կիրակոս պատրիարք խոհական կերպով հսկեց գործոց ընթացքին իրաւունքները պաշտպանելով, բայց միանգամայն խաղաղարար ուղղութեան հետևելով:

Կիրակոսի օրով տեղի ունեցաւ հրաշալի լոյսի մը երևումը, զոր ամենայն մանրամասնութեամբ կը պատմեն Երուսաղէմի պատմագիրները, իբրև ականատեսներու բազմութեան վկայութեամբ հաստատուած եղելութիւն, և մենք ալ հարկ կը տեսնենք վանց չընել պատմութեանս կարգին: Կիրակոսի գահակալութեան յաջորդող տարւոյն, 1848 ապրիլ 12-ին, Ջատկին երկրորդ օրուան հանդիսութիւնները լրացած էին Ս. Յակոբայ մայրատաճարին մէջ, պատրիարքական պատարագով և մեծահանդես թափօրով և բոլոր ճոխութեանց ցուցադրութեամբ, որ Երուսաղէմի հանդիսութեանց գլխաւորը ճանչցուած է, և կը կատարուի իբր ուխտադրութեան լրում և ուխտաւորաց հրաժեշտի արարողութիւն: Առաւօտեան ժամը 3-ին էր ըստ արևելեան արեգակնային ժամահաշուի, երբ արդէն հանդիսական կանթեղները մարած էին, բայց վարդերը մէջտեղ էին, իսկ դուռը բաց էր մասնաւոր ուխտ ընողներու դիւրութեան համար, և ահա յանկարծ յապուրակի և յանակնկալս լոյս հրաշալի և ճաճանչագեղ երկնատիպ գունով փողփողեալ կը ծագի ի վերայ պակերի աւագ սեղանոյ (ՍԱԻ.1271) և պատելով կը ճառագայթէ ի մատրանէ սուրբ Գլխադրի Սրբոյն Յակոբայ (ԱՍՏ.Բ.535), և տաճարին ամէն կողմերը տարածուելով՝ շարաններուն վրայի և առանձին կախուած ուարդէն մարած կանթեղները ինքնաբերաբար կը վառէ ու կը լուսաւորէ: Եկեղեցիին մէջ գտնուող ներ այլայլմէ եղած ձայն կու տան, վանականներ ու վանքին մէջ եղած ուխտաւորներ կը վազեն և հետզհետէ վառուող կանթեղները կը դիտեն: Դուրսէն ալ յայլապագեաց և յօտարաց բազմութիւն մեծ կը խոնուէր (ԱՍՏ.Բ.536), և անունն Աստուծոյ յամենայն շրթանց հնչէր օրհնութեամբ և սաղմոսիւք: Մարկոս եպիսկոպոս փակակալ, վախենալով որ խառնակութեան մէջ վարդերուն և սպասներուն վրայ անխիղճ ձեռքեր երկննան, և կամ խոռան մէջ ինկող և կոխան եղող տղաներ և տկարներ գտնուին, ամէն ջանք կընէ եկեղեցին պարպելու, գոնէ թեթևցնելու և դուռերը նոր խուժողներու դէմ փակելու: Բայց այս անգամ նոր պարագայ մը կաւելնայ, քանզի լոյսն փողփողինէջ և շողշողենի ընդ փակ դրունս եկեղեցւոյ արտաքս պղպջակեալ կելնէր դուրս, և արտաքին գաւիթին մէջ եղող կանթեղները կը լուսաւորէր ակնյանդիման ամենեցուն, որ վանապան ապգերէ հաւաքուած էին, նաև իսլամներ որոնք կառավարիչէ յղուելով եղելութեանց վկայեցին (ՍԱԻ.1272): Երևոյթը և հետաքրքիրներուն բազմութիւնը տևած է ժամս իբր երեք, ուսկից ետքը կերևի թէ կանթեղներ ինքնիրեն ալ մարած են, հարկաւ իւղերն ալ սպառելով: Մենք եղելութիւնը յառաջ բերինք ինչպէս պատմագիրներէն յառաջ բերուած գտանք, որոնք կը խոստովանին համարձակ թէ յայսպիսի դարու կեամք, յորում և վճշմարիտն իսկ յասել մեր, պարտիմք կանխաւ յանձին գոլ և խորհել զի մի՛ ստգտանիցիմք, և համարիցիմք թեթևախօս լինել և ընդայրաբան (ՍԱԻ. 1270): Մեզի անհնար է քննութեան կամ քննադատութեան մտնել, թէ որ և է պատահական պատճառ մը կրնար տեղի տալ այդ երևոյթին, ուստի իրողութիւնը կը թողունք իւրաքանչիւրի խղճի դատողութեան, միայն կաւելցնենք թէ ցայսօր նոյնութեամբ կը պատմուի սոյն իրողութիւնը, 67 տարի առաջ տեսնողներէն մնացող ծերունիներէն:

2628. ԻՍԱՀԱԿ ԳԱՂԱՏԱՑԻ

Այստեղ յատուկ յիշատակութեան արժանի կը դատենք Իսահակ Տէր Գրիգորեան վարդապետին անունը, աւելի ծանօթ Գաղատացի Իսահակ կոչմամբ, թէպէտ ինքն Անկիւրացի գործածած է իր ստորագրութեան մէջ (ԻՍԱ. 22): Իսահակ ճանչցուած է իբր այր հանճարաւոր, գործօն և արիասիրտ, և իբր մի յաշխատաւոր հարց սրբոյ պթոռոյն (ՍԱԻ. 1264): Նորա անունը յիշեցինք Համբարձման եկեղեցւոյն շինութեան առթիւ, որուն վրայ մեծ աշխատանք թափեց 1836-ին, բայց դժբախտաբար երեք տարի ետքը 1839-ին անոր քանդումն ալ տեսաւ (2550), թարգմանութեան պաշտօնին վրայ գտնուած ատեն: Երբոր նորէն հնդկաց նուիրակի առաքումը

որոշուեցաւ, Իսահակ նախադասուեցաւ իբրև գործունեայ անձնաւորութիւն, բայց ըսող ալ կայթէ խրոխտ բնաւորութեանը համար հեռացնել ուղուեցաւ: Ընտրելին ըստ սովորութեան Զաքարիա պատրիարք ծայրագոյն վարդապետութեան աստիճանը տուաւ 1842 մայիս 10-ին (ԻՍԱ. 20), և ուղևորեց Բաբերդցի Սարգիս Աստուածատուրեան սարկաւագին ընկերութեամբ: Իսահակի գործունէութիւնը ոչ միայն արդիւնաւոր եղաւ նուիրակութեան տեսակէտէն, այլ և հովուական և քարոզչական կողմէն, այնպէս որ Կալկաթայի հայաբնակութիւնը պարտք սեպեց պաշտոնական և հանդիսական կերպով իր երախտագիտութիւնը յայտնել: Քաղաքին 4 քահանաները և գլխաւորներէն 40 անձեր ժողովի գումարուեցան 1844 մայիս 5/17-ին Ս. Նապարէթ եկեղեցոյ սրահը (ԻՍԱ. 3), Խաչկեան Յովհաննէս քահանայի նախագահութեամբ և վարդապետին աշխատութիւնները գովաբանելէն ետքը որոշեցին մագաղաթի վրայ գրուած երախտագիտական ուղերձ մը մատուցանել ,և արուեստագործ գեղեցիկ ոսկեպօծ գաւապան մը նուիրել (ԻՍԱ. 7): Գաւապանը պատրաստուեցաւ 1844 հոկտեմբեր 6 թուակիր յիշատակագրութեամբ (ԻՍԱ. 15), եօթնագլուխ համակ արծաթեայ բազմարուեստ և ոսկեպօծ գաւապան մը (ԻՍԱ. 20), որ ցարդ կը պահուի, իսկ վայելչահիւս և վսեմ թուղթն շնորհակալութեան (ԻՍԱ. 8) կոկիկ գրաբարով գրուեցաւ Յովհաննէս Ավտալեանցէ, որուն մէջ գովութեամբ կը յիշուին նաև Երուսաղէմի միաբանութիւնը և Զաքարիա պատրիարքը: Ուղերձը 90 ստորագրութեամբ (ԻՍԱ. 8-15) մատուցուեցաւ վարդապետին սեպտեմբեր 30/12 հոկտեմբեր հանդիսական նիստի մէջ, ուր Իսահակն ալ շնորհակալութիւն յայտնած է ոգևորեալ ատենաբանութեամբ (ԻՍԱ. 16-22): Բայց տակաւին երկու տարի և աւելի ևս մնացած Իսահակ Հնդկաստանի մէջ, ուրիշ քաղաքներու հայ գաղութները շրջելով և միայն 1847-ին կը մեկնի Երուսաղէմ դառնալ դրամական և նիւթական լաւ արդիւնաւորութեամբ: Հաւանաբար Զատիկ ընելէ ետքը ճամբայ ելած է, որ այն տարի մարտ 23-ին կիյնար Վի մայիս 10-ին կը վախճանի Կարմիր ծովու ճիտտէ նաւահանգիստին մէջ յանկարծահաս մահուամբ (ՍԱԻ. 1264) կամ յանկարծ դիպուածով (ԱՍՏ. Բ. 534): Սարգիս Սարկաւագ լուր կու տայ Երուսաղէմ, ուր գոյքը կը հասնի յուլիս 29-ին, և Կիրակոս, որ նոր բարձրացած էր աթոռ, Տիգրանակերտցի Մեսրոպ վարդապետը և Այնթապցի Յովսէփ սարկաւագը ճամբայ կը հանէ, որոնք Բաբերդցի Սարգիս սարկաւագի հետ Երուսաղէմ կը փոխադրեն հանգուցելոյն հաւաքած նիւթական և դրամական արդիւնքները և բոլոր թուղթերը (ՍԱԻ. 1264), իսկ մարմինը թաղուած կը մնայ այնտեղ, մինչև որ 1856-ին ոսկրները կը փոխադրուին, և միաբան վարդապետաց կարգին կամփոփուին օգոստոս 30-ին, Ս. Փրկչի գերեզմանոցին մէջ (ԱՍՏ.Բ.534): Իսահակ գրական կարողութեան ալ տէր եղած է, և իր հեղինակութիւններէն տպագրուած է Յովսէփ գեղեցիկը Կիրակոսի օրով (2625): Ճանապահորդութեան յիշատակները և ուրիշ բանասիրական հատուկտորներ պահուած են Երուսաղէմի թանգարանը:

2629. ԵՐԵՔ ԱԶԳԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

Կիրակոսի պաշտօնավարութեան կարևոր յիշատակներէն մէկն ալ երեք ազգերու պատրիարքներուն միջև կայացած հաշտարար ուխտն է, որուն թէպէտ նախաձեռնութիւնը կառավարիչ Մուսթաֆա Զարիֆ փաշա ստանձնեց, սակայն գիտնալով Կիրակոսի զգացումները և կառավարիչին հետ մտերմական յարաբերութիւնները, ճշմարտանման կը գտնենք Կիրակոսի դրդումը տեսնել այդ ձեռնարկին մէջ: Բայց նախապէս յիշենք թէ առաջին ժամանակներուն մէջ Լատիններ պատրիարք չունէին Երուսաղէմի մէջ, այլ Փրանկիսկեան կրօնաւորաց մեծաւորը Սուրբ տեղեաց պահապանի պատուանունով թէ սրբավայրերու պաշտպանի պաշտօնը վարելու, և թէ հռոմէադաւան համայնքին առաջնորդն էր, սակայն արտաքին դիրքովը Յունաց և Հայոց պատրիարքներէն ստորին կերակէր: Պիոս Թ. պապ այդ կէտը նկատի առնելով Երուսաղէմի մէջ

լատին պատրիարքութեան աթոռ մը ստեղծեց 1847-ին, լոկ թեմակալ առաջնորդութեան իրաւասութեամբ, Սուրբ տեղեաց պաշտպանութեան և պաշտամանց իրաւունքները ըստ առաջնոյն Փրանկիսկեանց մեծաւորին վրայ պահելով: Նոր աթոռին առաջին պատրիարք անուանուեցաւ Յովսէփ Վալերկա, ազգաւ Իտալացի, և ծննդեամբ Գենուացի, որ Երուսաղէմ հասաւ 1848 յունուար 5-ին (ՍԱԻ.1266): Նոյն տարին երկու տոմարներուն վատիկները միևնոյն օր կը հանդիպէին ապրիլ 11-ին, իսկ Բրիտոսի յարութեան քրիստոնէական տօնը մեծ շփոթութիւններու և վէճերու և կռիւներու օր մըն էր Երուսաղէմի համար, մանաւանդ վատիկներու մասին հանդիպելուն առթիւ: Այդ բանին կառավարիչ փաշան ալ զգածուած ըլլալով, մարտ 3-ին Մեծպահի սկիպներէն, երեք պատրիարքները Ս. Յարութեան տաճարը հրաւիրեց, և ազդու կերպով խօսեցաւ փոխադարձ սիրոյ և խաղաղութեան վրայ, և նոյն սրբավայրին մէջ խոստում և ուխտ առաւ անոնցմէ իրարու հետ հաշտաբար յարաբերութիւններ պահելու, փոխադարձ այցելութիւններ ընելու, որ վերջին գժտութեանց պատճառով ընդհատուած էր, և իրենց օրինակով և յորդորներով ժողովուրդին մէջ ալ քրիստոնէական սէր արծարծելու (ՍԱԻ.1268): Գովելի էր կառավարիչին ջանքը, պատրիարքներն ալ հարկաւ զգածուած էին տեսնելով, որ իրենց, քրիստոնէական պետերուն, ոչքրիստոնէայ մը քրիստոնէութեան սկզբունքները կը թելադրէր: Սակայն դժբախտաբար պիտի չկարենանք իրականացեալ հետևանք մըն ալ արձանագրել, զի Սուրբ տեղեաց վէճերն ու կռիւները չեն անհետացած, և այսօր ալ թէպէտ աստիճան մը նւազած, տակաւին կան և կը մնան և արմատաքի խլուած չեն: Ս. Յարութեան ժողովէն քիչ օր առաջ, փետրուար 2-ին, պեղումներուն առթիւ հնութեանց հետքեր երևցած էին Մամիլլա աւազանին վերին կողմը, որ կը նոյնացուի Սուրբ Գրոց վերին աւազանին կամ վիշապաց լիճին հետ, կամ խաչակիրներու ժամանակին Պատրիարքի լիճին հետ: Հնութեանց մէջ Բրիտոսոս ողորմի Սարգիս վարդապետի ծնողաց հոգւոյ հայերէն արձանագրութիւն մը կար, որ հնութեանց և աւերակներուն Հայոց սեփականութիւն եղած ըլլալը կը հաստատէր, և Կիրակոս պատրիարք հետապնդեց ազգային իրաւունքը պաշտպանել և ստացութիւնը ապահովել, սակայն միւս ազգերուն ընդիմութիւնը և այդ պատճառով ծագած հակառակութիւնները, որ կը տևէին մարտ 3-ի գումարման օրն ալ, խնդիրը այնչափ կնճռոտեցին, որ կառավարիչը հրամայեաց լնուլ գտեղին աւազակուտիւ, և հնութիւնները անհետացնելով խնդիրներն ալ վերջացնել (ՍԱԻ. 1267):

2630. ԿԻՐԱԿՈՍԻ ՄԱՀԸ

Կիրակոս պատրիարք Մնացականեան 1783-ին ծնած, տակաւին 67 տարեկան էր, 1850-ին, որ ծանր տարիք մը չէ, բայց տկարութիւն իմն յանձին զգայր (ՍԱԻ. 1280), ի չարատանջ ախտէ զոր կրէր ի ստամոքսի իւրում, կարծեցեալ ախտ թանջից (ԱՍՏ, Բ. 536), ուսկից ստէպ կը նեղուէր և կը տանջուէր և ատեն տագնապներ ալ կանցունէր, բայց և հանապազ օր եկեղեցի իջնալէ և վանական կարգապահութենէ ետ չէր կենար: Պատմուած պարագաներ ստամոքսի քաղցկեղի նշաններ կերևան: Այդ տագնապները նորոգուեցան 1850 մայիս 24 չորեքշաբթի օր արև մտնելէն երկու ժամ ետքը: Ստամոքսի վրայ սաստիկ ծանրութիւն և անքնութիւն զգալով անկողինէն կելլէ, բայց չի հանդարտիր, ստամոքսը կը յուզուի, նողկանք կիմանայ, դուրս տալու պէտք կը զգայ, կը նուազի, բժշկի գացողներուն խոստովանահայր կանչել կը հրամայէ, և այդ շփոթութեանց մէջ անկողին վրայ կիյնայ և հոգին կաւանդէ մայիս 24-էն 25 կէս գիշեր քիչ անցած, որով 1850 մայիս 25, Երևման խաչին հինգշաբթին իր մահուան թուական կը նշանակուի տապանագիրին մէջ: Նոյն օր կը կատարուի փառաւոր յուղարկաւորութիւնը, և մարմինը կամփոփուի Ս. Փրկչի բակը շրջապատող երեսբաց ձեմելիքին մէջ պատրիարքաց կարգին, ուր կանգնեցաւ յետոյ շիրիմ փառաւոր (ԱՍՏ. Բ. 536): Կիրակոս մահուանէ հազիւ երկու օր անցած Երուսաղէմ կը հասնէր ճարտարապետ Սարգիս

Իջմէցի, արքունական շինութեանց Համամճի պաշի, այսինքն որմնադիրներու պետ, յատկապէս յղուած Էօմէրի մեծ մվկիթին նորոգութեան համար, որուն այս առթիւ Յովհաննէս եպիսկոպոս յանձնարարած էր արտօնագիրը առնուած վարժարանին և տպարանին շինութեանց ալ հսկել: Եւ որովհետև ամէն պատրաստութիւնք կատարուած էին հանգուցելոյն կողմէն, յունիս 1-ին մահուանէն շաբաթ մը ետքը, հինգշաբթի օր շինութեանց ձեռք վարնուեցաւ սկսելով Չամթաղ կամ Մայրիթաղ մասէն, որուն հիմերը արդէն գրուած էին Կիրակոսի կենդանութեան:

2631. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Պօղոս Ադրիանուպոլսեցի կենդանի էր Կիրակոսի մահուան ատեն. բայց գործերու վիճակի մէջ չէր. Դաւիթ Գէորգեան եպիսկոպոսը տեղապահութիւնը կը ստանձնէ միաբանական ժողով գումարելով ընտրելեաց եռանուն ցանկը կը կազմուի, Յովհաննէս, և Դաւիթ և Գէորգ եպիսկոպոսներու անուններով (ՍԱԻ.1272): Յովհաննէս Մովսէսեան Չմիւռնացի, որ Չաբարիայի մահուան ատեն միաբանութեան հետ գժտած, փոխանորդութիւնը թողած և հեռացած էր, և այդ պատճառով միաբանութիւնը անոր ընտրութեան դիմադրած էր (2611), Կիրակոսի ընտրութենէն ետքը միաբանութեան հետ հաշտուած և փոխանորդութիւնը վերստանձնած էր, Կիրակոսի գործածած շահեցողական ընթացքին շնորհիւ, ինչ որ չենք վարանիր իբր գովեստ յիշել Կիրակոսի հետևած ուղղութեան: Եւ որովհետև Չմիւռնացիին գործունէութիւնը ծանօթ էր, միաբանութիւնը չվարանեցաւ այս անգամ վայն ընտրելեաց ցանկին գլուխը նշանակել իբր շեշտելու նշան: Իսկ միւսները վանքին գլխաւոր պաշտօնակալներէն էին, փոխանորդ Դաւիթ Գէորգեան Կարնեցի և լուսարարապետ Գէորգ Տէր Յարութիւնեան Պօթուշանցի: Միաբանութեան պաշտօնագիրին վրայ Կ. Պոլսոյ ազգային ժողովը գումարուեցաւ յուլիս 4-ին, Յակոբոս պատրիարքի նախագահութեամբ, որ Մատթէոս յաջորդած էր, և անհակառակ հաստատեց Յովհաննէսի ընտրութիւնը և կայսերական հրովարտակն ալ ստացաւ շքանշանին հետ: Հրաւիրակ հասան Երուսաղէմէ երկու վարդապետ և երկու սարկաւագ, բայց Յովհաննէս տակաւին Կ. Պոլիս մնաց թէ իր գործերը կարգադրելու, և թէ նոր պատրիարքարանի շինութեան արտօնագիրը ստանալու համար: Հոկտեմբերի կէսէն ետքը Կ. Պոլիսէ մեկնեցաւ, նոյեմբեր 7-ին Երուսաղէմ մտաւ, 9-ին հրովարտակները անձամբ տեղական կառավարութեան ներկայեց, և 11-ին Հրեշտակապետաց տօնին կիրակնամուտի երեկոյին հանդիսապէս բազմեցաւ Երուսաղէմի պատրիարքութեան առաքելական այթողը (ՍԱԻ.1283.ԱՍՏ.Բ.537):

2632. ՄԱՏԹԷՈՍԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Այստեղ Երուսաղէմի անցքերուն շարքը պահ մը կընդհատենք, Կ Պոլսոյ ժամանակակից եղելութիւնները քաղելու համար, ուսկից ետքը նորէն Երուսաղէմ կը դառնանք Յովհաննէս պատրիարքի գործերը պատմելու: Կ. Պոլսոյ պատրիարք Մատթէոս Չուխաճեանի գործերը ըստ բաւականին քաղեցինք (2587-2598), որոնց մէջ յայտնուած է նա ինքնատիպ նկարագրի մը տէր, ամէն տեսակ գործերու ձեռնամուխ, դժուարութեանց առջև դժբախտ, նոր ձեռնարկներու հետամուտ, ու ինչպէս անգամ մըն ալ յիշեցինք (2587), փառասէր, նախանձոտ, և յամառ, մէկ խօսքով ինքնահաւան գործիչ մը առանց բաւականաչափ կարողութիւն և դատողութիւն ունենալու: Այդ նկարագիրը ամիրայից խումբն ալ յոգնեցուցեր էր, որ շատոնց կը մտածէր պատրիարք փոխել, և անոր նշանակած առաջնորդներն ալ փոփոխել, սակայն միախորհուրդ չէին, և մանաւանդ ամէնուն հաճոյ յաջորդ մը չունէին պատրաստ: Մատթէոս անգիտակ չէր անցուդարձին, բայց կերևի թէ ամիրայից անհամաձայնութիւնը զինքն աւելի քաջալերեց, մինչև իսկ անոնք ցաւցնելէ չբաշուելու չափ: Ճանիկ Փափայեանի քրոջ յուղարկաւորութեան հրաւերը մերժեց, Միսաք Միսաքեանի ընդդիմացաւ, որ Բերայի եկեղեցւոյն գետինէն երկու հարիւր

կանգուն կտոր մը կուզէր առնել, Գայիանեանց դպրոցին և արհեստանոցին և աղբիւրին շինութեանց համար ըրած ծախքին փոխարէն, և Բերայի ժողովուրդը գրգռեց որ Միսաքեանի փոփոխութիւնը պահանջէ, և իսկոյն այնտեղ Տատեան Պօղոս վառօդապետը Բերայի եկեղեցւոյն վերատեսուչ անուանեց: Ճանիկ և Միսաք միաբանեցան, ամիրաները գրգռեցին, և ժողովով որոշեցին պատրիարքէն հրաժարականը պահանջել, և այս նպատակով միանգամ և երկիցս պատգամաւորներ դրկեցին, բայց Մատթէոս միշտ մերժեց թէ այսու անարգական եղանակաւ չուզէր հրաժարիլ: Կառավարութեան դիմելով պաշտօնանկութիւնը խնդրելու խորհուրդն ալ յղացան, բայց չկրցան միաբանիլ, և ընդդիմացողներու գլխաւորն էր Մկրտիչ Ճէվայիրլեան: Այդ անցուդարձերը տեղի կունենային 1848 ապրիլին: Ամիսներ անցան և սեպտեմբերի մէջ օր մը Մատթէոսի կը ներկայանայ Պօղոս Օտեան, արքունի շինութեանց հաշուակալ և 50,000 դահեկան կը յանձնէ անունը չտալու պայմանով, բարեպաշտօն անձին միոյ անունով շահեցնելու և ամսական 500 դահեկան յատկացնելու Գարակէօմրիկի Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյ դպրոցին: Պատրիարքը կընդունի և կօրհնէ և գումարը առանց յատուկ անունի կը յանձնէ նոյն եկեղեցւոյ վերատեսուչին որդւոյն Միքայէլ Արզումանեանի: Ճէվայիրլեան Մկրտիչ իրողութիւնը լսելով պատրիարքին կը դիմէ իբրև ժողովական, կը ստիպէ նուիրատուին անունը յայտնել, և Մատթէոսի խիստ մերժումէն վայրացած, ուղղակի մեծ Եպարքոս Ռէշիտ փաշայի կերթայ, որուն սեղանաւորն էր, և պատրիարքը կամբաստանէ իբր պետութեան հրամանով հաստատուած ժողովը չսեպող և իւրովի գործող, և Եպարքոսն ալ Յակոբ Կրճիկեանի կը յանձնէ պատրիարքէն հրաժարականը պահանջել: Կրճիկեան պատրիարքին կը ներկայանայ Իսկիւտար, Խաչվերացի օրը սեպտեմբեր 17-ին, և հրամանը կը հաղորդէ, և Մատթէոս հինգշաբթիին սեպտեմբեր 21-ին ժողով կը գումարէ (ՊԷՐ.361), և բռնութեամբ ստիպեալ ըլլալը յայտնելով, յօժարութեամբ կու տայ հրաժարականը, իր կացութիւնը նմանեցնելով, առաքեալներուն, որ վասն անուանն Զրիստոսի արժանի եղեն անարգելոյ: Այդ առթիւ կը յիշէ թէ իրմէ ալ բաւական դահեկան ծախսած է ազգային գործերու համար, 37,865 բողոքականաց խնդիրին, 25,000 Սամաթիոյ հրկիպելոց, 6,000 Գաղատիոյ աղքատներուն, և 4,500 վանապան փորձանաւորներուն: Հրաժարագիրը կը յանձնէ Մաքսուտ Սարիմեանի և նոյն օր կերթայ պատրիարքարանի կից Ճանիկ Փափապեանի սեփական Յովհաննէս Ասլանեանի բնակած տունը (ՊԷՐ.365), և քանի մը օր ալ Այսօթեֆանս Տատեանց հիւր մնալով, 1848 հոկտեմբեր 1-ին կը փոխադրուի Օրթաքէօյ իր տունը (ՊԷՐ. 561):

2633. ՅԱԿՈՒՐՈՍ ԴԱՐՁԵԱԼ

Մատթէոս պատրիարքութեան բարձրացած էր ժողովրդականութեան արժանիքով, և այդ արժանիքը աւելցած էր իր վրան ամիրաներուն անսաստելուն և ամիրաներէ հալածուելուն պատճառով, որով իր հրաժարականը առիթ տուաւ ժողովրդական յուզումներու, որոնց գլուխ էր կանգնած հռչակաւորն Իսկէնտէր գինեպան, լեզուանի և յնդուգն ամբոխավար մը: Երբ սեպտեմբեր 23-ին շաբաթ օր (ՊԷՐ. 365), կառավարութեան պաշտօնեայն պատրիարքարան եկաւ նոր ընտրութիւն կատարել տալու, ամբոխին կողմէ ձայներ բարձրացան թէ նորէն Մատթէոս պատրիարքը կուզեն: Պաշտօնեայն անոր հրաժարականը ընդունուած և դառնալը անհնար ըլլալը իմացուց, և ամբոխը սկսաւ Յակոբոսի անունը տալ իբր վի նա ալ ամիրաներէ հալածուելով պատրիարքութենէ դադարած էր 1840 սեպտեմբերին (2546): Որչափ ալ Յակոբոսի անձն ալ հաճելի չէր ամիրայական խումբին, սակայն ժողովրդական ցոյցին դէմ չկրցան ելլել, և ակամայ կամօք վիջան յընտրութիւն ժողովրդոցն, իրենք ընտրութեան պաշտօնագիրը կապմեցին և պաշտօնեայն խոստացաւ կատարել վիսնդիր նոցա, և այսպէս Յակոբոս պատրիարքութենէ դադարելէն ճիշդ ութը տարի ետքը նորէն պատրիարք ընտրուեցաւ և պետական հաստատութիւնն ալ անյապաղ

կատարուեցաւ: Հրաւիրակներ մեկնեցան Ամասիա, ուր առաջնորդութիւն կը վարէր (ՊԷՐ. 271, 01 ՕՐԱ. 236) և ոչ Եւդոկիա (ՊԷՐ. 366, 561), Յակոբոսին առաջնորդելու, որ Կ. Պոլիս մտաւ նոյեմբեր 1-ին (ՊԷՐ.562), Գիւտիսաչի չորեքշաբթի օրը, և ուղղակի բարձրագոյն դուռ գնաց, և ընկալեալ պնշան պատրիարքութեան հանդիսապէս Մայր եկեղեցի եկաւ, ժողովուրդը օրհնեց և պատրիարքարան ելլալով աթոռ բազմեցաւ: Նա սովոր էր առաջ Յակոբոս ստորագրել, բայց երկրորդ պատրիարքութեան մէջ սկսաւ Յակոբ ստորագրել (01ՕՐԱ.236), բայց մենք կը շարունակենք առաջին ձևով տալ իր անունը, զի պարզապէս ձևի տարբերութիւն են երկու կոչումները:

2534. ՄԱՏԹԷՈՍԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Մատթէոսի ժամանակին պատկանող տեղեկութիւնները համառօտիւ լրացնել ուզելով, պէտք է յիշենք իր պատրիարքութեան օրով հայրութեան երկու մեծ կեդրոններուն Կ. Պոլսոյ և Ջմիւռնիոյ մէջ տեղի ունեցած կրթական և գրական և պարգացական արգասիքները: Ասով չենք ուզեր ըսել թէ այս ամէնը Մատթէոսի անձնական արդիւնաւորութեան հետևանքներ եղան, զի լաւ գիտենք թէ իր նախորդներուն, և գլխաւորապէս Աղաւիի օրերէն, եռանդոտ շարժում մը սկսած էր ազգին մէջ յառաջադիմական շաւղին հետևելու (2538): Առ այս գլխաւոր միջոցները նկատուած էին Երոպական երկիրներու, ինչպէս Իտալիոյ և գլխաւորապէս Գաղղիոյ հետ շփումը, և անոնց վարժարաններուն մէջ ուսած նորահաս սերունդի մը ազգին մէջ տարածուիլը, որոնք այդ միջոցին տեղերնին կը դառնային, և ոչ միայն ժողովրդական, այլ և ամիրայական դասակարգներուն հոգածութեան և պոհողութեան հոգի կը ներշնչէին, և անոնց հովանաւորութիւն իրենց աշխատութեանց միացնելով օգտակար հաստատութեանց նախաձեռնարկներ կըլլային: Այս կարգին մէջ առաջին պիտի յիշուին վարժարանները, որոնց գլխաւորն է Իւսկիւտարի ձեմարանը, և որուն բացումը (2540), և վերաբացումը (2592) արդէն պատմած ենք, և ոչ նուազ օգտակար և պարգացուն եղան ուրիշներն ալ, զորս արդէն յիշած ենք (2539), և որոնց մէջ աւելի արդիւնաւոր եղած էին Սամաթիոյ Սուրբ-Սահակեանը Երեմեան Գէորգ ամիրայի հովանաւորութեամբ, և Խաաբէօյի Սուրբ Ներսիսեանը Ճէպայիրլեան Մկրտիչ ամիրայի պաշտպանութեամբ: Ընկերական խումբեր ալ կազմած էին Գումբաբուի Լուսաւորչեանը, Բերայի Նարեկեանը, Նաուբաբուի Վառվառեանը, Պալաթի Խորէնեանը, Կէտիկփաշայի Մեսրոպեանը, և ուրիշներ, 1847-ին 25 ազգային վարժարաններ գտնուէին Կ. Պոլսոյ մէջ, ամէնն ալ բարեկարգ վիճակով (01.ՕՐԱ.230): Իսը Ջմիւռնիոյ մէջ առաջնակարգ դիրք գրաւուած էր Սուրբ Մեսրոպեան, և վարժարաններ հիմնուած էին վիճակին գլխաւոր աւանները (01ՕՐԱ.231): Վարժարաններ ետքը կու գան տպարաններ, Արապեան, Տիվիթճեան, Մինասեան, Չըրչիլեան, Բենետիկղեան, Կ. Պոլսոյ մէջ, և Պայթապարեան ու Հրատարակչականը Ջմիւռնիոյ մէջ: Պարբերականներն ալ սկսան հրատարակուիլ, Արշալոյս Արարատեան ի Ջմիւռնիա, և Ազդարար Բիւզանդիան և Հայաստան ի Կ. Պոլիս: Եղան ևս մտաւոր պարգացմամբ ճոխացած և օգտակար հրատարակութեանց հեղինակ բազմաթիւ անձեր, որոնց գլուխը կը յիշենք Յովհաննէս Տէրոյնց պատուելին, Սերովբէ Վիչէնեան բժիշկը, Յակոբ Կրճիկեան դիւանագէտը, Գրիգոր Աղաթօնեան և Գէորգ Աթիմարաճեան հողագէտներ, Կարապետ Տավութեան պատմագիր, Կարապետ Իւթիւճեան և Նիկողայոս Զօրայեան խմբագիրներ, Գրիգոր Սինապեան և Յարութիւն Տատեան բնագէտներ, Յովսէփ վուդճեան, Յովհաննէս Հիսարեան, Խաչատուր Պարտիկպանեան և Խաչատուր Միսաքեան գրագէտ ուսուցիչներ, և ուրիշ շատեր, ամէն ալ ծանօթ անուններ և ազգային կեանքի մէջ նշանաւոր գործիչներ, ինչպէս յիշելու առիթներ պիտի ունենանք: Նորագոյն խումբի մը պատրաստութիւնն ալ կը կատարուէր միևնոյն ատեն, և 1848-ին Երոպա կուղևորէին յուսալից

պատանիներ, Սարգիս Պալեան, Յովհաննէս Վահանեան, Աբեղիկ Նէվրուպեան, Գրիգոր Մուկեան, Միքայէլ և Թովմաս Խօրասանճեան, Յովհաննէս Թիւսիւպեան, Խաչիկ Կիւմիւշեան և ուրիշներ: Մենք բաւ կը սեպենք այսչափ ինչ յիշել, ժամանակին վրայօք գաղափար մը տուած ըլլալու համար, իսկ լաւագոյն տեղեկութեանց հետամուտներ կրնար դիմել մասնագիտաբար այս նիւթերը մշակողներուն (01.ՕՐԱ.224-234):

2635. ՀՐԱԺԱՐԵԱԼ ՄԱՏԹԷՈՍ

Մատթէոս Չուխաճեան պատրիարքութենէ հրաժարելով Օրթաքէօյի մէջ ինքզինքը գրական աշխատութեանց նուիրեց, միանգամայն գիղին Խնդրակատար Ս. Աստուածածին եկեղեցոյ քարոզչութիւնն ալ կատարելով: Գրական ասպարէզը օտար չէր Մատթէոսի, և յատկապէս կրօնական ճիւղը, որուն հետևած էր իբրև ձեռնասուն Չամաշըրճեան Յովհաննէս պատրիարքի աշակերտին՝ Կաղպուանցի Ջաքարիայի: Կանուխէն 1834-ին աշխատակցած էր Փէշտիմալճեան Գրիգոր պատուելիի Յայամաւուրքի նոր հրատարակութեան 1842-ին հրատարակած էր Խորհրդածութիւն շնորհաց և նշանաց գիրքը, և պատրիարքութեան ատեն պատրաստած էր Հանդիսարան ուղղափառութեան գործը, զոր հրաժարելէն ետքը հրատարակեց, և անկէ ետքը գրեց և տպեց Բարի մարդ և բարի քրիստոնեայ երկասիրութիւնը: Իբրև ուսումնական անձ Արմաշու վանահայր և միանգամայն Նիկոմիդիոյ առաջնորդ ընտրուեցաւ 1853 մայիս 11-ին, գլխաւորապէս վանական դպրոցը վարգացնելու նպատակով, այլ դժուարին պարագայք և իր ալ լուրջ գործունէութենէ հեռու մնալ և յաճախ բացակայութիւնը ապարդիւն թողուցին իր պաշտօնավարութիւնը, ուստի 1854 նոյեմբեր 9-ին կամովին հրաժարական տուաւ, որ դեկտեմբեր 14-ին ընդունուեցաւ (00. ՕՐԱ. 178), և նորէն Օրթաքէոյ քաջուեցաւ: Յաջորդ տարին 1855-ին Հոգևոր ժողովին ատենապետ ընտրուեցաւ (01. ՕՐԱ.234), և հակառակ մեծ գործունէութիւն և յաջողութիւն ցուցած չըլլալուն, լաւ համբաւ և մեծ յարգանք վայելեց, որ զինքն մինչև Ամենայն Հայոց կաթողիկոսութեան աթոռը բարձրացուց՝ Աշտարակեցիին մահունէն ետքը, ինչպէս պատմենք իր կարգին: Իսկ հիմա դառնանք Յակոբոս պատրիարքի կամ լաւ ևս իր ժամանակի գործերը ամփոփել:

2636. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐՈՅԵՆՑ

Մանաւոր և ցրիւ գործեր ենաւելի մեր պատմելիքները, հետևաբար դժուար պիտի ըլլար անոնք ժամանակագրական կարգով յառաջ բերել և պատշաճ կերպով ընդարձակել, ուստի գրեթէ ստիպեալ նիւթագրական կարգին պիտի հետևինք, և այսպէս կը կոչենք նիւթերու նմանութեամբ և ոչ ժամանակներու յաջորդութեան հետևողութեամբ պատմելու ոճը: Երբոր կաթողիկոսութեան կազմակերպութիւնը և բողոքականութեան յաջողութիւնը ազգային շրջանակի մը մէջ կրօնական թուլութեան դուռերը կընդարձակէին, միև կողմէն պահպանողական նախանձայուկութիւնը կը սաստկանար ուրիշ շրջանակի մկ մէջ, և ամէն մանր միջադէպ ազգային խնդիրի երևոյթ կը ստանար: Պահպանողական ուղղութեան հետևող էին Մատթէոս և Յակոբոս պատրիարքները, և շուտո տեղի կուտային միտքերու բորբոքման: Իսկ պաշտօնական շրջանակէն դուրս այս տեսակ խնդիրներ հրհրող և վարդապետական տեսակէտէն ասպարէզ նետուող Տէրոյենցն էր, բազմահմուտ կրօնագէտը, որուն անունը տուինք Իւսկիւտարի ճեմարանի անցքերը պատմած ատեննիս (2540, 2592): Տէրոյենցը իր կոչումներուն ամբողջութեամբ, Յովհաննէս Տէր-Կարապետեան Տէրոյենց Չամուռճեան Պրուսացի պատուելին, իրեն անխախտ սկզբունք ունէր հաւատարիմ մնալ ամէն մասամբ աւանդական ոգիին, դիմադրելով մէկ կողմէն ֆրանսական շատ արձակ գաղափարներուն, և միև կողմէն բողոքականութեան նորսկիւբ յորձանքին (ՄՏՐ. 51): Բայց պէտք է աւելցնել թէ երբ բողոքական ազատամտութեան դէմ կը մաքառէր, յանգաւստս

հռոմէական անձկամտութեան կը մօտենար: Ծնած էր 1801 օգոստոս 7-ին Պրուսա քաղաքը, և հոն հետևած Պօղոս Գարագօջեանի վարժարանին, նոյն խստակրօն առաջնորդին աշակերտած, և մատենագրական և կրօնագիտական ուսմանց մէջ յառաջացած, որ սակայն պայն եկեղեցական կոչման չէր ընդունած իր դասակիցներուն՝ Ստեփան Աղաւնիի, Պետրոս Ծերօնեանի և Պօղոս Թաթթաքեանի հետ, չվստահելով անոր յամառ և ինքնահաւան բնաւորութեանը: Այսու հանդերձ Տէրոյնց ինքնօգնութեամբ ընդարձակեց իր լեզուական և հմտական շրջանակը, ուսուցչութեամբ պարապեցաւ Պրուսա, Արմաշ, Ատաբալար, Պանտրմա և 1828-ին Կ. Պոլիս անցաւ, և այնչափ հոչակ վայելեց, որ 1835-ին Իսկիւտարի ձեմարանի բացման ատեն ազգային բարձրագոյն ուսումնարանին ուսումնապետ նշանակուեցաւ: Տէրոյնց ազգային պաշտօնական շրջանակներու մէջ գործ չունեցաւ, բայց ուսումնական և կրօնական և վիճաբանական շրջանակներու մէջ առաջնական գիրք գրաւեց և Մատթէոս պատրիարքէ բողոքականաց հետ վիճաբանութեան վարիչ և գլուխ նշանակուեցաւ (2589), և պապական նուիրակ Ֆէրրիէրիի հետ տեսակցութեանց ատեն միասին տարուեցաւ իբրև կրօնական հմտութեանց մասնագէտ (2597). ինչպէս իրօք ալ կը տեսնուի Ֆէրրիէրիի և Տէրոյնցի վիճաբանական խօսակցութեանց պատմութենէն (ՊԷՐ. 230-247): Տէրոյնց բոլոր կեանք նուիրեց ճիւղին և իր ետևէն թողուց բազմահատոր գրուածներ տպագիր և ձեռագիր ինչպէս Երևակ պարբերականը և ընդարձակ ձեռագիր եկեղեցական Պատմութիւնը, հռոմէական հեղինակներու հետևողութեամբ կազմուած, և Գաթրճեան հայր Յովսէփի Հայոց եկեղեցւոյն դէմ հրատարակութեան պատասխանը, Իրաւախոհ անունով 1868-ին հրատարակուած: Այս ուղղութեամբ անխոնջ աշխատեցաւ նա մինչև խորին ծերութիւն, զի 87 տարեկան վախճանեցաւ 1888 յուիս 24-ին (ՍՐՏ.54):

2637. ԵՐԿՈՒ ԳԻՐՔԵՐ

Այդ օրերը 1849-ին Նիկողայոս Զօրայեան տպագրութեամբ մէջտեղ հանեց Յիսուսի վարուց համառօտ պատմութիւն մակագրութեամբ գրքոյկ մը, որ էր Յիսուսի կեանքին և գործոց ամփոփում մը, իբր հասարակ անձի մը պատմութիւն գրուած, և աստուածային և գերբնական պարագաներէ թօթափուած, նմանողութեամբ Գերմանացի Շթրաւսի և Գաղղիացի Ռնանի հրատարակութեանց: Հրատարակութեան ճակատն ալ հրամանաւ Տէր Յակոբայ սրբապան պատրիարքի դրոշմուած էր, թէպէտ չենք կարծեր որ պատրիարքը գիրքին պարունակութիւնը հաստատել ուզած ըլլայ: Մատթէոս եկեղեցւոյ բեմէն այդ հրատարակութեան դէմ խօսեցաւ, նոյն իսկ վարք բառն ալ քննադատելով, թէ Յիսուսի չի կրնար պատշաճիլ: Ուրիշներ ալ ձայն բարձրացուցին, Տէրոյնց ալ գլուխնին: Խնդիրը մեծցաւ: յատուկ ժողով և քննութիւն բացուեցաւ, գիրքը արգիլուեցաւ, դպրոցներէ մերժուեցաւ, թէպէտ Զօրայեանի անձին դէմ ունէ որոշում չտրուեցաւ (01.ՕՐԱ.236): Ուրիշ հրատարակութիւն մըն ալ բաւական աղմուկ հանեց 1853-ին, թէպէտ պարունակութիւնը կրօնական չէր, բայց իբր լեզուական հերետիկոսութիւն նկատուեցաւ: Հեղինակն էր Նահապետ Ռուսինեան բժիշկ և հրատարակութեան անունը Ուղղախօսութիւն, և իրեն աջակցած էին Տիմոթէոս վարդապետ Թնկրեան, Վենետիկի Մխիթարեաններէն, և Գրիգոր Օտեան բանասէր դիւանագէտ, բայց հրատարակութեան ճակատը միայն ուսումնական խորհրդակցութեամբ գրուած կար: Ուղղախօսութիւնը աշխարհաբար հայրերէն քերականութիւն մըն էր բոլորովին անկախ գործածական լեզուի կանոններէն, այլ կամայական կանոններով հղովումներ և խոնարհումներ հաստատած, և բոլորովին նորալուր ձևերով լեզու մը կազմած, այնպէս որ աւելի ճիշդ եղած կըլլայ նորախօսութիւն ըսել քան Ուղղախօսութիւն: Խնդիրը ուսումնական շրջանակէն պաշտօնականին անցաւ, զի Ռուսինեան ուսումնական խորհրդոյ անդամ էր, կը փափաքէր իր լեզուն վարժարաններուն մէջ մտցնել և տարածել: Պատրիարքարանը

պարտաւորուեցաւ գործին միջամտել, յատուկ քննիչ յանձնաժողով մը կազմուեցաւ, որուն անդամ նշանակուեցան Նիկողայոս Պալեան, Խաչատուր Պարտիպանեան, Կարապետ Իւթիւճեան, Գրիգոր Օտեան և նոյնինքն Նահապետ Ռուսինեան: Բանի մը նիստեր տեղի ունեցան, բարեփոխութեամբ քալեցնելու կերպեր փորձուեցան, բայց ոչ մի ձևով գործնական ելք մը չգտնուեցաւ, և 1855 յունուար 25-ին պատրիարքարանի պաշտօնական յայտարարութեամբ Ուղղախօսութիւնը մերժուեցաւ և գործածութիւնը վարժարաններու արգիլուեցաւ (Օ1, ՕՐԱ. 241): Իսկ Ռուսիանեանի համբաւը ասով չխախտուեցաւ, և ապագային մէջ ազգային գործիչներու շարքին միշտ առաջնակարգ նկատուեցաւ: Բնիկ Կեսարիոյ էֆէրէ գիւղէն 1819-ին ծնած, 1831-ին Կ. Պոլիս եկած, 1841-ին Փարիզ գացած, բժշկական ուսմանց հետևած և վկայուած, իբրև կարողագոյն ազգային գործիչ, պատուոյ դիրք մը վայելեց ազգին մէջ մինչև իր մահը 1876-ին (Օ1. ՕՐԱ. 240): ԾԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ուսումնական խորհրդոյ մը անունը տուինք վերև, և իրօք ալ այդ մարմինը կազմուած էր 1853 սեպտեմբեր 29-ին Գերագոյն ժողովին որոշմամբ: Յորմէ հետէ պատրիարքարանին մէջ ժողովական վարչութիւն հաստատուծ էր, և կրօնական և քաղաքական գործերը Հոգևոր և Գերագոյն ժողովներու ձեռքով կը անօրինուէին (2595), պէտք պագուած էր օժանդակ խորհուրդներ ունենալ գործառութեանց մասնաւոր ճիւղերուն համար, խնդիրները ուսումնասիրելու, առօրեայ գործեր հոգալու և ընթացքին վրայ հսկելու, բարձրագոյն իշխանութիւնը վերապահելով երկու վարչական ժողովներու: Անգամ մը որ վարչութիւնը բացարձակ միապետականէ հեռանալով խորհրդակցական և գործակցական ուղղութեան մտած էր, այդ ձևերը անհրաժեշտ կը դառնային, և 1847-ին հիմնարկուած ձևը 1853-ին նոր քայլ մըն ալ կառնէր: Առաջին օժանդակ խորհուրդը կազմուեցաւ Ուսումնական խորհուրդ անունով, և իրաւամբ կրթական և վարժարանական ճիւղէն կը սկսէր, իբրև աւելի կենսական և նախադասելի ճիւղը: Այդ նոր մարմինը կազմելու համար Գերագոյն ժողովը յառաջ կոչեց վանական հմտութեանց մէջ յառաջադէմ և վկայեալ անձեր, և կրնանք ըսել թէ տիպար ուսումնական խորհուրդ մը եղաւ առաջինը, որունչկրցաւ հաւասարիլ յաջորդներէն և ոչ մէկը: Անդամները 14 եղան, Յակոբ Ամասեան հողագէտ, Աբրահամ Երամեան լեզուագետ, Կարապետ Իւթիւճեան հրապարակագիր, Յարութիւն Հովուեան բանասէր, Սարիմ Մաքսուտեան կենցաղագէտ, Նիկողայոս Պալեան ճարտարապետ, Խաչատուր Պարտիպանեան չափագէտ, Նահապետ Ռուսինեան լեզուաբան, Յովհաննէս Վահանեան տարրագէտ, Սերովբէ Վիշէնեան բժիշկ, Առաքել Տատեան ճարտարարուեստ, Յարութիւն Տատեան բնագէտ, Սիմոն Տատեան առևտրական, Գրիգոր Օտեան գրագէտ, և խումբին ատենապետ ընտրուեցաւ Սերովբէ Վիշէնեան, որ համառօտեալ ստորագրութենէն Սեր Վիշէն կամ Սերվիշէն կոչուեցաւ: Որչափ ալ ընտիր տարբերէ կազմուած և խոստմնակից էր անդրանիկ Ուսումնական խորհուրդը, սակայն մեծ արդիւնաւորութիւնը մը չկրցաւ ունենալ: Անդամակիցներէն իւրաքանչիւրը վարժարանական ծրագիրներէն պատ ձեռնարկեց իր մասնագիտութեան համաձայն առձեռն հրատարակութիւններ մշակել, և այս կարգին Ռուսիանեանն ալ Օտեանի աջակցութեամբ և ուրիշ ընկերներու խորհրդակցութեամբ ի լոյս ընծայեց իր Ուղղախօսութիւնը, որուն վրայ խօսեցանք, բայց գործին անյաջող վերջաւորութիւնը իր և ընկերներուն վրայ աննպաստ տպաւորութիւն թողուց, քի քըննիչ յանձնաժողովն ալ ամբողջապէս ուսումնական խորհրդոյ մէջէն առնուած էր, և խորհուրդը ամբողջ գործէ քաշուեցաւ (Օ1. ՕՐԱ. 241), հապիւ տարի մը պատօն վարելով, և հապիւ թէ գործին գլխաւոր գիծերը ուսումնասիրելով: Աւելի յաջող գործունէութիւն ունեցաւ Տնտեսական ժողով անունամբ 1856-ին կազմուած օժանդակ մարմինը, որուն յանձնուեցան պատրիարքարանի սնտուկը, հիւանդանոցը, և

տնանկաց մատակարարութիւնը, և անդամակցութեան կոչուեցան 22 անձեր առևտրական դասակարգերէն (ՔԷՉ.113), և որ 1859-ին վերակազմուեցաւ 26 անդամներով, և պաշտօնը շարունակեց մինչև սահմանադրութեան սկիզբը: Երրորդ օժանդակ մարմին մըն ալ, Դատաստանական ժողովը յիշատակուած կը տեսնենք (ՔԷՉ.95), թէպէտ աւելի տեղեկութիւն չենք գտներ անոր կազմութեան և գործունէութեան մասին:

2639. ԿԱՐԱՊԵՏ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Պահպանողականութեան և լայնախոհութեան միջև գոյացած պայքարը, առանց օտարադաւանութեան սահմանն ալ մտնելու, առիթ ընծայեց նոր խնդիր մըն ալ յուզելու Շահնապարեան վարդապետին շուրջը: Անոր անունը վերջին անգամ յիշեցինք անհրաման Կովկասէ Կ. Պոլիս մեկնելուն առթիւ, և ըսինք ալ թէ իր կարգին առիթ պիտի ունենայինք անոր մասին խօսելու (2614): Կարապետ վարդապետ Շահնապարեան բնիկ Պարսկաստանցի, 1810-ին ծնած, 40 տարեկան էր երբ 1850 սեպտեմբերին Ներսէս Աշտարակեցիի, իր նախկին պաշտպանին և գնահատողին ձեռքէն ապատելու համար Կ. Պոլիս կը հասնէր, Անունն ու համբաւը ծանուցեալ ըլլալով և գալուն ներքին պատճառը յայտնի չըլլալով, Յակոբոս պատրիարքի կողմէն Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ քարովիչ կը նշանակուի: Բայց երբ Ներսէսի գիրերը կը հասնին պատրիարքին և Պալեան և Տատեան ամիրաներուն զի չընդունեցին ՎՇահնապարեան իբրև Հայոց վարդապետ, պատրիարքը կը բաւականանայ քարոզչութենէն արգիլել (ՊԷՐ, 289): Շահնապարեան Տէրոյենցի հետ տեսակցութիւններ կունենայ և կրօնական խնդիրներու վրայ տեսութիւններ կը յայտնէ քիչ մը յայնախոհ միտքով խօսուած, և իսկոյն Տէրոյենց իր մտերիմներուն կը սկսի շշնջել թէ անհաւատութեան նշաններ տեսներ է անոր վրայ: Զրոյցները Շահնապարեանի սկսանքը կը հասնին և քննութիւն կը պահանջէ, և իրօք ալ 1851 փետրուար 21-ին յատուկ ժողով մը կը գումարուի պատրիարքարան, Յակոբոսի ու Մատթէոսի, եկեղեցականներու և պատուելիներու և ամիրաներու ներկայութեամբ, Տէրոյենց և Շահնապարեան դէմ դիմաց կը խօսին և կը վիճին, անհաւատութեան ամբաստանութիւնը կը փարատի և Շահնապարեան կը ճանչցուի Հայոց եկեղեցւոյ օրինաւոր, հաւատարիմ, կրօնասէր վարդապետներէն մէկը, բայց կերևի թէ Տէրոյենց իր պրոյցները կասեցուցած չէ, որ երկրորդ ժողով մըն ալ կը գումարուի Պէշիկթաշ Տատեանց տունը և աւելի կրօնագէտ համբաւ ունեցող անձերէ, ուր Շահնապարեանի թերուդէմ խօսողներ կը գտնուին, բայց ժողովի երակացութիւնը ունէ աննպաստ որոշում չի տար Շահնապարեանի դէմ: Տէրոյենց դարձեալ չի լռեր և իր պարբերականին մէջ Շահնապարեանի դէմ յօդուածներ կը հրատարակէ, որուն սա կը պատասխանէր Զմիւռնիոյ Արշալոյս հանդէսին մէջ ոմն ստորագրութեամբ: Երկու տարի ևս մնաց Շահնապարեան Կ. Պոլսոյ մէջ գրական և դպրոցական վբաղումներով, բայց տեսնելով որ պիտի չկարենայ իրեն ազատ ասպարէզ կազմել՝ 1853-ին մեկնեցաւ Եւրոպա, և նախ Բարիկ հաստատուեցաւ և Երկրագունտ հանդէսը սկսաւ հրատարակել (Օ1.ՕՐԱ.238), և այն տեղ գտնուող հայերուն հոգևորական խնամքն ալ ստանձնեց, և 1854 յուլիս 1-ին հայկական մատուռ մըն ալ բացաւ Նաբոլէոն Գ. կայսեր արտօնութեամբ, և հետզհետէ իր գրական և հրատարակչական ձեռնարկները կատարելագործելով շարք մը հայ անտիպ պատմագիրներ հրատարակեց 1851ին (ԱՍՈ.ՂՆԴ.ՍՄԲ.ՎԱ.Ղ.ՕՐԲ.), և ծանօթներ գաղղիերէնի ալ թարգմանեց (ՊԷՐ.289), ուսկից ետքը Անգղիա անցաւ և Մանչէսթրի հայ գաղութին յատուկ եկեղեցի շինուելուն գլուխ կեցաւ և հոգևորապէս հովուեց ժողովուրդը: Բայց ախտ ինչ դժնդակ և անբուժելի ստիպեց վայն գործունեայ ասպարէզէն քաշուիլ, և նախ Բարիկ դառնալ և անկէ եգիպտոս անցնիլ ախտին դարման, և եթէ ոչ բժշկութիւն, գոնէ կենաց երկարում փնտոել: Եգիպտոսի մէջ մտերմացաւ Զմիւռնացի Նուպար Նուպարեանի հետ, որ է նոյն ինքն

փոխարքայության նախարար և Եգիպտոսի բարեկարգիչ Նուպար փաշան, և անոր յանձնեց իր կազմած դրամագրուիւր և կտակակատար հաստատեց, անով Կիլիկիոյ մէջ վարժարան մը բանալու, և ինքն դարձաւ Կ. Պոլիս, ուր և վախճանեցաւ 1865-ին: Բայց հապար ոսկւոյ դրամագրուիս անբաւական էր իսկոյն վարժարանի մը հիմնարկութեան և պահպանութեան, ուստի Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան, որ նոյն տարին Կ. Պոլսոյ կողմէն քննիչ գացած էր Եգիպտոս, առաջնորդ Բէֆսիւեան Մկրտիչ եպիսկոպոսի խնդիրին համար (ԶՈԶ.387), յաջողեցաւ Նուպարը համոզել՝ նուիրատուութեամբ դրամագրուիւր լրացնել և Նուպար-Շահնապարեան անունով վարժարանը բանալ Կ. Պոլսոյ մէջ երեք հապար ոսկւոյ աւելուածով, և յանուն Շահնապարեան կտակին տասը Կիլիկեցի աշակերտներ ձրիաբար պահել ու կրթել, ապագային Կիլիկիոյ մէջ աշխատելու համար: Այս եղած է Խասքէօյի համանուն վարժարանին սկզբնաւորութիւնը, որ գովելի արդիւնք և լաւ համբաւ ունեցաւ ազգին մէջ, և որ Շահնապարեանի և Նուպարի անուններուն հետ Վարժապետեանի ալ անունին պարծանք հանդիսացաւ, զի վերջինս վարժարանին շինութեան և հիմնարկութեան հետ վերատեսչութեան ալ աշխատեցաւ:

2640. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՌԱՆԴ

Յակոբոսի պատրիարքութեան ժամանակին յիշատակելի պարագաներէն յիշենք ևս, թէ իր օրով Կ. Պոլսոյ նոր եկեղեցիներու վրայ աւելցան Կէտիկփաշայի Ս. Յովհաննէսը 1849 դեկտեմբեր 18-ին, Ալթըմէրմէրի Ս. Յակոբոս Գլխադիրը 1858-ին, ինչպէս նաև Գնալը կղզիի մէջ Ս. Գրիգոր Լուսաւորիչը 1857 սեպտեմբեր 22-ին (ՕՕ. ՕՐԱ.156-173), ուր Հայեր սկսած էին բնակիլ և պետական արտօնութեամբ կղզին չէնցնել (ՊԷՐ. 370): Ի հիմանէ նորոգուեցան Էյուպի Ս. Աստուածածինը 1885-ին, Գումաքաբուի դուրսի Ս. Յարութիւնը Յարութիւն Պէլճեանի կտակով 1855 դեկտեմբեր 14-ին, Ռումելիհիսարի Ս. Սանդուխտը 1856 յուլիս 29-ին Փափապեան ճանիկի կտակով, Սթենիայի Ս.Կարապետը 1857-ին Միսաք ամիրայի ծախքով, Գարթալի Ս. Նշանը 1857 սեպտեմբեր 1-ին Նորատունկեան Սիմոն և Յակոբ և Գրիգոր եղբարց առատ օժանդակութեամբ, Գասըմփաշայի Ս. Յակոբը 1857 ին Տօնիկ ամիրայի և Նորատունկեան Յակոբի նուէրներով (ՕՕ. ՕՐԱ.162-172): Յիշենք ևս թէ քիչ առաջ Մատթէոս պատրիարքի օրով վերաշինուած էին Եէնիքաբուի Ս. Թադէոս և Բարթուղիմէոսը 1846-ին, Գանտիլլիի Սուրբ Երկոտասան Առաքեալքը 1846-ին, Գարակէօմրուկի Սուրբ Յովհան Ոսկեբերանը 1847-ին և Պէօյիւքտէրէի Ս. Հռիփսիմէն 1848-ին (ՕՕ. ՕՐԱ.224): Բայց երբ կրօնական հաստատութեանց այդչափ փոյթ կը տարուէր, աւելի ալ կը գործադրուէր ուսումնական և կրթական ճիւղին համար, որուն տենդային եռանդով կը հետևէին ամէն դասկարգեր: Ոչ միայն գլխաւոր թաղեր, այլև նուազ կարևոր թաղեր և թաղամասեր, ինչպէս Ալթըմէրմէր, Աղատլը, Սթենիա, Գընալը, Տօլապտէրէ, իրենց յատուկ վարժարաններն ունեցան. և պաշտօնական քնութեան արդիւնքը կը ցուցնէր 42 վարժարան, 4376 աշակերտ, 1155 աշակերտուհի, 197 ուսուցիչ, և 875.000 արծաթ դահեկան վարժարանի ծախք (ՕՕ.ՕՐԱ.249): Այլևս ամենայն ինչ ամիրաներէն և ունևորներէն սպասելու հոգին մարած էր, և ժողովրդական խումբեր ընկերութիւններ կազմելով և փոքրիկ նուէրներով ձեռնարկներ կատարելու կը վարժուէին: Այս տեսակէն էին Գումաքաբուի Ընթերցասիրաց Միութիւնը, Օրթաքէօյի վերածնութեան Թանգարանը, Կ. Պոլսոյ Մեսրոպեան հրատարակչականը և Եղբայրասիրական խումբը (ՕՕ.ՕՐԱ.248): Լրագիրներու թիւը 20-ի հասած էր, թէպէտ մեծաւ մասամբ սակաւակեաց բայց միշտ տենդոտ ուսումնասիրութեան արդիւնք: Ասոնց գլխաւորն էր Գերագոյն ժողովոյ որոշմամբ և պատրիարքարանի հաշուոյն 1848-ին հրատարակուիլ սկսած շաբաթաթերթը, որ պանպան խնբագիրներ և հրատարակիչներ փոփոխելով, վերջապէս 1852 փետրուար 2-ին Կարապետ Իւթիւճեանի կանցնի, և Հայաստան անունն ալ Մասիս-ի փոխելով տևական կեանք մը կունենայ,

այնպէս որ իրաւամբ կրնանք Իւթիւճեանը ընդունիլ իբրև տաճկահայ լրագրութեան նահապետ և իբր կոկիկ աշխարհաբարի ու լրագրական ոճի հիմնադիր (01.ՕՐԱ.250): Հայերէն լեզուով թատերական բեմի սկզնաւորութիւնն ալ պուարճութենէ աւելի ուսումնական եռանդին հետևանք պիտի ճանչցուի, զի առտնին շրջանակներէ սկսաւ երբ տակաւին դերասանական հաստատուն խումբեր գոյութիւն չունէին: Այդ կարգին կրնանք յիշել Պէպէթի Գաղղիական Վարժարանին, Իւսկիւտարի Օտեան Պօղոսի տունին, Օրթաքէօյի Լուսնւորչեան Վարժարանին և ուրիշ մասնաւոր տուներու մէջ 1855-էն սկսելով տրուած ներկայացումները, մինչև որ 1858-ին առաջին թատրոնը կը բացուի Խասթէօյ, և հետզհետէ հրապարակի վրայ թատերագիրներ կերևան, Սրապիոն Հէքիմեան, Մկրտիչ Պէշիկթաշլեան, Թովմաս Թէրզեան, Մկրտիչ Աճէմեան, և այլք, այլ և դերասաններ, Էքշեան, Մաղաթեան, Մնակեան, Չափրաստճեան և ուրիշներ, և դերասանուհիներ: Գրական երկխոսութեանց մասին ալ կրնայինք խօսիլ, այլ մատենախօսական ճիւղէն ցարդ հեռու մնացինք, ոչ միայն զի մեզ կրնայ երկայնաբանութեանց տանիլ, այլ մանաւանդ որ յատուկ ճիւղ մըն է և իրեն մասնաւոր մշակողներն ունի:

2641. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԵՒ ՃԵՄԱՐԱՆ

Իսկ հիւանդանոցն ու ճեմարանը չենք կրնար պանց ընել, զի ազգային կեանքին մէջ կարևոր հաստատութիւններ եղան, և անցելոյն մէջ ալ անոնց մասին խոսեցանք և շարունակութիւնն ալ պէտք է աւելցնենք: Հիւանդանոցը այն օրէ որ իր լրումը ունեցաւ 1834-ին (2503), ժամանակին տիրող ձևով միւթէվէլլի, այսինքն վերատեսուչի մը հոգաժութեան յանձնուեցաւ, որ յառաջ Միքայէլ Փիշմիշեանն էր, և անոր վարեցին վերատեսուչութիւնը մինչև որ պաշտօնը ստանձնեց վառողապետ Պօղոս Տատեան (ՔԷՉ. 72), և զայն կը վարէր մինչև Գերագոյն Ժողովին հաստատուիլը 1847-ին (2595): Բնական էր որ վերատեսուչներ անձամբ ամէն բան չկարենային հոգալ և հսկել, մանաւանդ որ ուրիշ կողմէ ալ զբաղեալ անձեր էին, ուստի իրենց կողմէ և իրենց պատասխանատուութեան ներքև հոգաբարձուներ կամ հոգեբարձութիւն կը նշանակէին, և վերջին պահուն գործի վրայ կը գտնուէին Անտոն Գաբամաճեան, Յարութիւն Գաբամաճեան, Անդրանիկ Մինէճեան, Գէորգ Գաբամաճեան, և Քրիստոստուր Ղապարոսեան (ՔԷՉ 81): Տատեանք ընդհանրապէս ոգևորեցին նուիրեալ էին հիւանդանոցի պահպանութեան, և ինչպէս Պօղոս 1844-ին հիւանդանոցին կը թողուր իր ընտանեաց յատկացեալ օրական տասը քաշ միսի կառավարական պարէնը, 1845-ին ալ իր հօրեղբայրը Յովհաննէս Տատեան իբրև իր անձին յատուկ շնորհ օրական 15 քաշ միսի 37 ուկէս քաշ հացի շնորհը կընդունէր Ապտիլմէճիտ կայսրէ յօգուտ հիւանդանոցին (ՔԷՉ. 82): Արդէն Ս. Յակոբի ժանտախտանոցին գետինն ալ, հիւանդանոցի հանդիպակաց այգին ալ, և սայլերով ուտելիքներ, և ամէն պակասին անմիջապէս լրացումները Տատեան Պօղոսի սիրայօժար նուէրներն էին (ՔԷՉ.85). բայց հակառակ այսչափ ջանքերուն կը տեսնայ որ հիւանդանոցին վիճակը չհամապատասխաներ եղած այնչափ զոհողութեանց, ուստի կորոշէին գործէն քաշուիլ, և նորընտիր Գերագոյն Ժողովին մէջ կը յայտարարէ թէ այսուհետև չեմ կրնար տանիլ այս բեռը, և ասոր վրայ հիմնական փոփոխութիւններ կը կատարուի, և հիւանդանոցին վերին հոգաժութիւնը վերատեսուչութենէն Գերագոյն Ժողովին կանցնի 1848-ին, և անոր կողմէ ընտրուած են 14 անդամէ բաղկացած հոգաբարձութեան մը կը յանձնուի, որ հիւանդանոցին հետ տնանկաց սնտուկն ալ պիտի մատակարարէր: Ներքին կանոնագիրի պէտքն ալ կը զգացուի և կը պատրաստուի 1849-ին, բայց գործծադրուած չերևիր, իսկ 1850 ին ելամուտքը հաւասարակշռելու համար յանձնարարական ժողով մը կը կազմուի, և ինչ ինչ տուրքեր կաւելցուին ի նպաստ հիւանդանոցին, և հոգաբարձութեան երկամեայ լրանալուն ինչ ինչ փոփոխութեամբ կը վերակազմուի 17 անդամներով (ՔԷՉ.96-97): Նոյն 1850 տարուոյ դեկտեմբերին Գերագոյն Ժողովը

կը խորհի ճեմարանը եկեղեցական վարժարանի փոխարկել և վարդապետանոց բանալ, բայց գործադրութեան չանցած ճեմարան-վարդապետանոցը Իւսկիւտարէ հիւանդանոց փոխադրուեցաւ, և 16 չափահաս աշակերտներ ընդունուեցան, կրտսերագոյնը 23 տարեկան: Յաջորդ 1852 տարին հոգաբարձութիւնը փոխուեցաւ (ՔԷՉ.105) և վարդապետանոցը փակուեցաւ իբրև աւելորդ բեռ (ՔԷՉ.99) և աշակերտներ ցրուեցան, ոմանք վարդապետ եղան և ոմանք վարժապետ, բայց ոյժ տրուեցաւ վարժարանին, այնպէս որ իբր ալգային ուսումնական հաստատութեանց մէջ ամենակարևորը, և իբր առաջինը կրցաւ հռչակուիլ (ՔԷՉ.101): Հոգաբարձութիւնը վերանորոգուեցաւ 1854-ին միայն 8 անդամներով, որոնք երկու մասի բաժանուեցան եկամտից հայթհայթման և ներքին վարչութեան ճիւղերով: Այդ միջոցին ուսումնական խորհուրդը միտք յղացաւ՝ հիւանդանոցի կամ ճեմարանի վարժարանը երկրագործականի փոխարկել. Գերագոյն ժողովն ալ հաւանեցաւ, Յակոբ Ամասեան գլուխ կեցաւ, երկրագործական վարժարանը բացուեցաւ, բայց ծախքերը շատցան, նոյն ժամանակին տեղի ունեցող պատերազմն ալ տարապայման սղութիւն յառաջ բերաւ, և այդ վարժարանն ալ մէկ տարի տնելով միւս տարի փակուեցաւ (ՔԷՉ.109), հոգաբարձուներ հետզհետէ քաշուեցան, բայց կարօտութիւնը նոր գրգիռ մը ապրեց: Տատեանք և Պալեանք շարժուեցան և 1856ին նոր հոգաբարձութիւն կազմուեցաւ, որ կրցաւ դպրոցը բարեկարգել, որ մինչև 1859 շատ փայլուն վիճակ կը ներկայէր (ՔԷՉ.115): Արդէն 1858-ին վերաբացուած էր վարդապետանոցն ալ ժառանգաւորաց Վարժարան անուամբ (ՔԷՉ.99), և ոչ միայն ալգային ժողովոց և անձնաւորութեանց, այլ և 1858 սեպտեմբեր 28-ին հանրային կրթութեան պետական ժողովին գնահատման ալ արժանացաւ, և ալգային շրջանակներու մէջ արդիւնաւոր և նշանաւոր եղած աշակերտներուն անուններն ալ բաւական են նոյնը հաստատել: Միայն ժառանգաւորաց վարժարանի գոյութիւնը քննադատութեան ենթարկուեցաւ ալգին յառաջդիմասէրներուն կողմէն, որ լուսաւորեալ կը կոչուէին, իբր հիւանդանոցի և ճեմարանի նպատակներէն օտար մի ծախք, և ժառանգաւորացն ալ փակուեցաւ իր երկրորդ տարւոյն մէջ (ՔԷՉ.122): Բայց պէտք է դիտել որ ճեմարանին հիւանդանոցի հետ կցուելուն պարագայն այնպիսի մտայնութիւն մը յառաջ բերած էր, որ հիւանդանոցը այլ ևս ուսումնական և ոչ բարեգործական հաստատութիւն մը կը նկատուէր, և ամէն ջանք ու ծախք ուսմանց ճիւղին կը նուիրուէր բոլորովին անտեսելով հիւանդաց և անկելոց ճիւղը, զի նոյն այն տարիներուն մէջ երբ փայլուն ուսումնական վիճակ կը տիրէր, հիւանդաց բաժինը ամենախեղճ կացութիւն ունէր (ՔԷՉ.116), որուն նշանակն է հիւանդներուն թիւէն 38% և 40% մեռելներ եղած ըլլալը (ՔԷՉ.265):

2642. ՊՕՂՈՍԻ ՎԱԽՃԱՆԸ

Կոստանդնուպոլսոյ անցքերը ընդհատելով Երուսաղէմի պատրիարքութեան և Յովհաննէսի գործունէութեան չմտած, պիտի յիշատակենք Կ. Պոլսոյ նախկին պատրիարք Պօղոս Գրիգորեան Ադրիանուպոլսեցիին մահը, որ Երուսաղէմի բնիկ միաբան էր իբր փոխանորդ, և որ ծայրագոյն կառավարիչի անունով տիրապէս Երուսաղէմի պետն ու վարիչը, և եթէ ոչ անունով այլ իրօք և արդեամբ պատրիարք էր եղած, և Երուսաղէմը ապատած էր ծանր պարտքերու անտանելի բեռէն, և նորոգութեանց ու յարդարմանց, և Իւսկիւտարի ճեմարանին հիմնարկութեան ծախքերէն վատ, պահեստի համար խնայուած գումարներ ալ կրցած էր պատրաստել: Այդ ամէնը արդէն յիշած ենք, և մինչև Չաքարիայի ընտրութիւնը իր գործունէութիւնը պատմած: Չաքարիայի 1841-ին պաշտօնի գլուխ անցնելու օրէն, Պօղոս արդէն 78 տարեկան եղած, իր անխոնջ գործունէութեան ասպարէզը թօթափելով, լոկ խրատատու և խորհրդատու աջակից դերը վերապահած էր իրեն, և նոյն իսկ Չաքարիա պատրիարք առանց անոր գիտակցութեան և խորհրդակցութեան գործ չէր կատարել: Բայց հետզհետէ սկսաւ աչքերուն տեսութիւնը պակսիլ, ականջներուն լսելութիւնը ծանրացաւ, և

մարմնոյ կազմութիւնը թուլցաւ, և Ջաքարիայի վերջին տարիէն սկսելով մշտական անկողնոյ և հանգիստի պարտաւորուեցաւ և այսպէս ապրեցաւ այլ ևս 7 տարիներ մինչև 1853: Սակայն հակառակ մարմնոյ տկարութեան ուշ նորա և միտք կային ի նմա կենդանի (ՍԱԻ. 1304), և Ջաքարիայի և Կիրակոսի և Յովհաննէսի օրերն ալ ամենայն ինչ ակնարկութեամբ նորին տնօրիններ (ԱՍՏ.Բ. 538): Իր ժամանակը կանցնուէր աղօթքով, և օրական պայմանեալ պաշտամունքը անկողնին մէջ անթերի կը լրացներ, թելադրող սարկաւագներուն կամ դպիրներու օգնութեամբ, և մնացած ժամերն ալ պիտանի ընթերցումներու ունկնդրութեամբ կանցնուէր, և վինքն մխիթարելու կամ իր խորհուրդներէ օգտուելու եկողներուն հետ կը խօսակցէր: Օրինակելի համբերութեամբ անցուց 1846-է 1853 եօթը տարիները, միշտ մահուան պատրաստուելու մտածումներով և վագցումներով վբաղած, և իր կեանքով ալ օրինակ և խրատող հանդիսանալով միաբանութեան մեծին և պստիկին: Բայց հետզհետէ կը հիւծէր և չիջանելու կը մօտենար, մահուանէ օր առաջ կարծես իբր վօրացած նոր պարեգօտ և համեղ ուտելիք կը խնդրէ, կը հագնի և կը ճաշակէ, բայց առկածեալ հագնի և կը ճաշակէ, բայց առկածեալ պատրոյգին վերջին ցուացումն էր, Վի հոգին աւանդեց 1853 մայիս 5-ին, աշխարհամարտն երեքշաբթի օրը, և միւս օր մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկիչի բակը կամարակապ ձեմելիքին ներքև: Պօղոսը նկարագրեցինք իբրև ճարտար և անխոնջ գործիչ, և իբր ջերմեռանդ և առաքինի եկեղեցական, բայց նա արդիւնաւոր եղած է նաև իբրև դրական անձ: Ձանապանութիւն հինգ դարուց, և Թանգարան խրատու գործերը տպագրուած գործերը տպագրուած են, իսկ ձեռագիր կը մնան Մեկնութիւն հնգամատեանին, և Մեկնութիւն չորս մեծ մարգարէութեանց, և Մեկնութիւն յայտնուեցան Յովհաննու, երեքն ալ համառոտեալ հետևողութեամբ Կուռնելիոս Ալաբիտէ լատին մեկնաբանին, ճառեր յաղագս սիրոյն Աստուծոյ Աղէքսանդր Բալամաթայի հետևողութեամբ , և Անտառ այլաբանութեանց Բենետիկտեան Հերոնիմոսի թարգմանութիւն: Պօղոսի յիշատակը փակելով անցնինք Յովհաննէս Ջմիւռնացի պատրիարքին գործունէութեան:

2643. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐԸ

Յովհաննէս Մովսէսեան բնիկ Ջմիւռնացի, շուրջ 1795-ին ծնած և այնտեղ ապրած մինչև 1811 ծնողքներէն գաղտնի Կ. Պոլիս կու գայ, և նորընտիր առաջնորդ Մեսրոպ վարդապետի ընկերանալով Ադրիանուպոլիս կանցնի նոյն տարույ օգոստոսին: Բանի մը տարի կերթայ Էջմիածին Մեսրոպի եպիսկոպոսանալուն առթիւ, բայց ընդարձակագոյն ասպարէսի փափաքով Ադրիանուպոլիսէ կը հեռանայ և Երուսաղէմի միաբանութեան կորդեգրուի, և հետզհետէ յառաջանալով 1819 սեպտեմբեր 14-ին քահանայական ձեռնադրութիւն և արեղայութիւն կընդունի Գաբրիէլ պատրիարքէն 1822-ին Կ. Պոլիս կը յղուի և Հելլէն ծովահէններու կը հանդիպի, բայց կապտի և գերի ինկածները կապատէ, և Կ. Պոլիս կը մնայ իբրև օգնական Յարութիւն Եղեսացի և Ջաքարիա Կոփեցին փոխանորդներու Եգիպտոս և Երուսաղէմ պատգամաւորութիւններ կը կատարէ, 1830-ին փոխանորդ կանուանուի և 1838-ին եպիսկոպոս կը ձեռնադրուի, այլ պաշտօնին մէջ տղիկամի և ըստ հաճոյս գործելուն պատճառով փոխանորդութիւնը Գէորգ Պօթուշանցիին կը փոխանցուի, և ինքն ցաւելով կառանձնանայ Օրթաքէօյ և միաբանութեան հետ կը գժտի, միշտ ապաւինելով ամիրաներու և յատկապէս Փափապեան ճանիկ ամիրայի վրայ, որ և 1845-ին վայն միասին Երուսաղէմ կը բերէ և Ջաքարիա պատրիարքին հետ կը հաշտեցնէ, բայց փոխանորդութիւնը կրկին չի տրուիր, և Կ. Պօլիս կը դառնայ, և Ջաքարիայի մահուանէ ետքը միաբանութիւնը կընդդիմանայ անոր ընտրութեան: Վերջապէս Կիրակոս պատրիարք կը յաջողի երկու կողմերը շահելով Յովհաննէսը նորէն փոխանորդութեան կոչել, և այդ պաշտօնին մէջ էր երբ Կիրակոսի յաջորդ ընտրուեցաւ, և 1850 նոյեմբեր 11-ին պաշտօնապէս պատրիարքական աթոռ

բազմեցաւ: Այդ ամէն անցուդարձերը իրենց կարգին ընդարձակօրէն պատմուեցան, բայց անօգուտ չէր համառօտակի վերյուշել: Յովհաննէսի անձնաւորութիւնը մեծամեծ գովեստներու հետ կծու մեղադրանքներու առարկայ եղած է, և երբ իբր շինարար և քաղաքագէտ կը գովուի, իբր ուսումնաստեաց և նախանձոտ և անձնահաւան կը գորովուի: Իր առաւելութեանց մէջ ամենէն ցայտուն կէտը շինարարութիւնն է, որուն արդիւնքները ցարդ կը մնան և Երուսաղէմի աթոռին պարծանքի նիւթ կը մատակարարեն: Ինքն էր որ Սարգիս Իջմէցի ճարտարապետին յանձնարարած էր նոր վարժարանի և տպարանի շինութիւնները, անոնց արտօնութիւնը ստանալուն վրայ, իսկ պատրիարք ընտրուելէն ետն ալ նոր պատրիարքարանի շինութեան հրամանագիրը հանել տուած էր: Երբոր Երուսաղէմ հասաւ Մայրիթաղի շինութիւնը բաւական յառաջացած գտաւ, որ և 1853-ին լրացաւ: Այդ թաղը իբր ուխտաւորներու օթարան հիմնուած էր, և այնպէս ալ գործածուեցաւ ժամանակ մը, բայց վարժարանին նոր կազմակերպութեան ատեն իբր ննջարան և տեսչարան գործածուելու սկսաւ և հետզհետէ կատարելապէս վարժարանի վերածուեցաւ:

2644. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Յովհաննէսի ուղղակի ձեռնարկներուն առաջինը պատրիարքարանի շինութիւնն եղաւ, որ հիմնարկուեցաւ 1851 մայիս 1-ին, Հոգեգալստեան ուրբաթ օրը, և երկու տարիէ լրացաւ միշտ Սարգիս ճարտարապետին ձեռամբ և ընդարձակ յատակագիծով և հոյակապ շինուածով, այնպէս որ այսօր ալ Հայոց պատրիարքարանը ուրիշ պաշտօնատուներէն գերազանց կը նկատուի, և ամէնուն հիացման արժանի շինուած մը վկայուած է: Նոր պատրիարքարանը պետեղուեցաւ Պօղոսի ժամանակ շինուած և Ս. Մինասի կոչուած պաշտօնական թաղին ծայրէն դէպի արևմուտ դառնալով, և հասարակաց փողոցին վրայէն հաստակառոյց կամարով մը անցնելով և դէպի պարտեզներ երկարելով: Այդ գիրքը նոր դժուարութեանց ծագում տուաւ, զի մերձակայ Նէպիտավութ կամ Դաւթեան թաղի մոլեռանդ իսլամները իրենց նախատինք նկատելով այդ կամարին ներքևէն անցնիլ հազարումէկ արգելքներ յարուցին, որոնց առջև Յովհաննէս մեծ հնարիմացութեան և զօրաւոր ազդեցութեան, և մեծագոյն պոհողութեանց միջոցներով մաքառեցաւ և վերջապէս նպատակին հասաւ: Ուր եթէ պատրիարքարանի գիրքը արտաքին թաղին ուղղութեամբ դէպի հարաւ երկարած ըլլար, դժուարութեանց ենթարկուած չէր ըլլար, և փողոցի երկայնքին փառաւոր ճակատ մը աւելցուցած կըլլար, բայց կերևի թէ ծագելիք դժուարութեանց մտադրութիւն չէ դարձուցած, և նոյն փողոցին վրայ հինէն կամար մը գտնուելէն քաջալերուած է, արդէն Երուսաղէմի մէջ յաճախ կը տեսնուին այսպիսի կամարներ, և Յովհաննէս անգամ մը ձեռնարկելէն ետքը ետ դառնալ չէ ուզած, ինչ որ իրեն բնաւորութեան ընդհանուր նկարագիրն էր: Պատրիարքարանը 160 քառակուսի մեթր տարածութեամբ կեդրոնական դահլիճ մըն է, Բարձրակամար և գմբեթայարկ, ուր կը մտցուի պատշաճ նախադուռով, երկու կողմեր ամառնային և ձմեռնային կրկին յարկաբաժիններ կամ պատրիարքին փոխ առ փոխ բնակութեան սահմանուած, ընդարձակ և լուսաւոր սենեակներով, կենցաղական և տնական պէտք եղած ամէն յարակից մասերով: Մայրի թաղէն և մանաւանդ պատրիարքարանի վրայ եղած լիաբուռն ծախքերը, և արտասովոր պոհողութեանց համար պէտք եղած գումարները սպառեցին թէ աթոռին և թէ պատրիարքին տրամադրելի միջոցները. միւս կողմէն վերահաս պատերապմին պատճառով ուխտաւորներուն դադրիլը և հասոյթներուն նուազիլը ստիպեցին Յովհաննէսը ձեռք դնել եկեղեցւոյ գանձատան մէջ գտնուած պահեստի դրամին վրայ, որ կը մնար փակակալ Պօթուշանցի Գէորգ եպիսկոպոսի ձեռաց ներքև: Փակակալն ու երիցագոյնը միաբանները կը դժկամակէին այս առաջարկին առջև, մինչև Յովհաննէսի պէտք եղաւ խստութեանց և սպառնալեաց դիմել և պէտք

եղած գումարը գանձատունէն հանել տալ (ՍԱԻ.1334), և եղած ծախքերը փակել, բայց շինութեանց ալ պահ մը դադար տալ, մինչև որ պարագաները փոխուէին:

2645. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Պատերազմի դադարելուն և խաղաղութեան վերահաստատուելուն վրայ ուխտաւորաց խումբն բազմութիւն մը դիմեց 1857ին, որ մինչև 5.000 անձ կը հաշուուի և լաւ արդիւնաւորութիւն ունեցաւ, որով Յովհաննէս ոչ միայն գանձատունէն հանած գումարը տեղը դարձուց, այլ և նոյն տարույ ապրիլ 17-ին Նոր Կիրակիի չորեքշաբթի օրը համարձակեցաւ նոր վարժարանին հիմնարկէքը կատարել, որուն ճամարան անունը տուաւ (ՍԱԻ.1334): Վարժարան ըլլալու սահմանուած շէնքը հաստատուն և հոյակապ և գմբեթայարկ քառակուսի մըն է, հաստ պատերով միասին 240 քառակուսի մէթը տարածութեամբ գետնէն 12 ոտք բարձր, որուն չորս անկիւնները 25 մէթը տարածութեամբ չորս սենեակներ բաժնուած են, և մնացածը խաչաձև դահլիճ մը կը կազմէ: Որչափ ալ Նորաշէն ճեմարանը երևոյթին և ճարտարապետութեան տեսակէտէն աչքառու շինուած ըլլայ, իր բուն նպատակին շատ յարմար չէ եղած, զի վարժարանի մը պէտք եղող մասերէն շատ բան կը պակսի, մինչև իսկ ննջարան և ճեմիչ, և պտիվայր գետնին կիսուն մէջ յարմարցուած գետնայարկը չի բաւեր այդ պակասները լրացնելու, զի նոյն իսկ խաչաձև սրահը, թէպէտ ընդարձակ և լուսաւոր, բայց համախումբ սերտարանի յարմարութիւն չունի արդէն համախումբ սերտարանի գրութիւնն ալ իր հրապոյրը կորուսած է, և սերտարանը դասարանին հետ նոյնացնելը օգտակարագոյն եղած է: Այժմեան ճեմարանը փառաւոր հանդիսարանի և գեղեցիկ թանգարանի յատկութիւններն ունի, քան թէ յարմարագոյն վարժարանի: Այս է պատճառը որ երբ կանոնաւոր վարժարան կազմակերպելու ձեռնարկուած է, Մայրիթաղը ուխտաւորաց օթարան ըլլալէ դադրած և բոլորովին վարժարանական պէտքերու յատկացուած է: Յովհաննէս պատրիարք կը մեղադրուի թէ ուսումնական վարճացման հետևող եղած չէ, և կարծես թէ նոյն իսկ շինուածն նլ կը մատնանշէ, վարժարանական գրութեան անգիտակ, և բոլորովին շինուածական առաւելութեանց նուիրուած անձ մը եղած ըլլալը: Իր ժամանակ Երուսաղէմի Ժառանգաւորացը ուսումնական կամ կրթական առաւելութիւն չցուցուց, մանաւանդ թէ նախապէս ունեցած աստիճանէն ալ յետադարձ ունեցած կըսուի, (ՍԱԻ. 1335), բայց այդ մասին ըսելիքնիս վերջին կը թողունք: Վարժարանին հետ տպարանի շինութեան արտօնագիրն ալ ստացուած էր, բայց այդ մասին ձեռնարկ իսկ չկրցաւ ընել Յովհաննէս, և տպարանի վերակազմութիւնը ապագային մնաց, և այն ալ ոչ նորէն կառուցուած յատուկ շինուածով, ինչպէս պիտի յիշենք:

2646. ԱՅԼ ԵՒՍ ՍՏԱՑՈՒԹԻՒՆՔ

Յովհաննէսի շինարար արդիւնաւորութիւնը հոյակապ շէնքեր կառուցանելէ վատ, կալուածներ ալ աւելցնելու ետևէ եղաւ, և իր օրէն նշանաւոր ստացութիւններ աւելցած են աթոռակալ սեփականութեանց վրայ: Այդ կարգին կը յիշուին նախ երկու մեծ տուներ Երուսաղէմի Սիոն թաղին մէջ, և տուն մը Ռէմլէ քաղաքին մէջ. իսկ գլխաւորն է Երուսաղէմի արևմտեան դուռնէն դուրս Եաֆայի պողոտայի և Մամիլլա փողոցի մէջտեղը գտնուող ընդարձակ արտը կամ գետինը, որուն վրայ յետոյ շինութեանց աթոռին մեծ կալուածները, իսկ ինքն բաւականացած էր այն ատեն սրճարան մը շինել, որով սկսաւ այդ անշէն կողմերուն նոր քաղաքամասի վերածուիլը, որ այսօր քաղաքին վայելչագոյն և ընտրելագոյն թաղն է եղած: Յովհաննէսի կատարած վաանքին մէջ նորոգութիւնները, և քաղաքին մէջն ու դուրսը գնումները շարունակեցին 1857-էն սկսելով մինչև իր մահը, որոնց կարգին պէտք չէ վանց ընենք յիշել Փիլիպպոսի աղբիւրին գետինը (ՍԱԻ. 1348), որ է Ս. Փիլիպպոս սարկաւազին Եթովպացի ներքինին մկրտած տեղը: Յովհաննէս կարծես տենդային իմն եռանդէ վզածուած, ինչ գումար որ ձեռքը կանցնէր նորոգութեանց և նոր

ստացութեանց վրայ կը ծախսէր, այն սևեռեալ գաղափարով թէ առաջ նիւթականը պէտք էր ապահովել, որով ուսումնական ու բարոյականն ալ հնար ըլլայ վարգացնել, զի առանց նիւթական միջոցներու միւս ձեռնարկները չէին կրնար յաջողիլ: Այդ նպատակով էր հարկաւ որ ապագայ անակնկալներու նախատեսութեամբ գանձատան պահեստի գումարը, արուն անգամ մը ձեռք դրած էր ոչ միայն կրկին լրացուց, այլ և աւելցուց և շատցուց, և նշանաւոր պատրաստ գումար թողուց գանձատան մէջ (ՍԱԻ. 1332): Իրաւ է որ իր օրով միաբանութեան բարոյական վիճակը և ուսումնական աստիճանը նշանաւոր վարգացում չցուցուց, սակայն մենք մեղադրանաց յայտնի դատաստան պիտի չարձակենք իր վրայ, տեսնելով որ կարող վարիչի, ազդեցիկ գործիչի, ճարտար քաղաքագէտի և այթոռին հաւատարիմ և նախանձախնդիր պիտի ձիրքերը յայտնապէս վկայուած են, և այսպիսի ձիրքերով ճոխացած անձերուն գործերը ժամանակակից պարագաներու համեմատութեան մէջ պիտի դատուին, և ոչ վերացական և բացարձակ սկզբունքներով:

2647. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Իր կենսագիրը կը յիշէ թէ մեծ դժգոհութիւն կը տիրէր միաբաններու մէջ Յովհաննէսի նկատմամբ, և թէ այդ բանին պատճառներն էին, իր խստութիւնն ի կառավարութեան և ժլատութիւնն ի գործառնութեան (ՍԱԻ. 1332): Սակայն երկուքն ալ առաձգական մեղադրանքներ են, զի խստութիւնն ու ժլատութիւնն ալ մինչև աստիճան մը բարեմասնութիւններ կը նկատուին, և միայն իրենց անխորհուրդ չափազանցութեան մէջ կրնան մեղադրուիլ, և չափազանցութիւնն ալ պարագաներով և նկատումներով պիտի գնահատուի, զի խստութիւնն շատ անգամ ճշդութիւն է, և ժլատութիւնը խնայողութիւն է: Միւս կողմէ կենսագիրին դատաստանը վերծ չենք նկատեր անձնական շփումներէ և շահերէ, զի նա ինքն է հայկաբանութեան դասատուն զոր Յովհաննէս հաճեալ ի պաշտօնէ իւրմէ կարգեաց առանձինն քարտուղար պատրիարքարանի, և այդ պաշտօնին մէջ ալ վեղչելով վվարձս նորա պչափաւորն, և պատիպատ բանից խոստմամբ աշխատ առնելով չգոհացուց վայն, մինչև որ սա որոշեց թողուլ վպաշտօն իւր և ի բաց հեռանալ (ՍԱԻ.1332): Յայտնի կերևի ուրեմն մեղադրանքներուն մէջ անձնական տեսակէտներ խառնուած ըլլալը, մանաւանդ երբ կը տեսնենք որ միւս կենսագիրը Յովհաննէսը կը ցուցնէ իբր վշտացեալ ի դաւանաց և կը ցուցնէ իբր վշտացեալ ի դաւանաց և ի և չի վարանիր յարգանօք աւելցնել, որոյ յիշատակն եղիցի օրհնութեամբ: Գիտենք ևս թէ բուն գործունեայ անձերու սովորական է մանր գոհացումներու չհետևիլ, ընդդիմախօսութեանց առջև չընկճիլ, և դիտուած նպատակին հասնելու համար ամէն պարագաներէ օգտուիլ, և իշխանութեան ձեռներէցութիւնը մինչև ծայրը մղել, և այս բուն հոգին բնական է մեծ գաղափարներով տոգորուած և մեծ արդիւնաւորութեան հետամուտ անձերու վրայ, ինչպէս էր Յովհաննէսն ալ: Պէտք չէ մոռնալ ևս թէ կանուխէն հակառակութիւններ տեղի ունեցած էին իր և միաբաններուն միջև, և թէ նա Կիրակոսի ընտրութեան առթին և անկէ ալ առաջ իրեն դէմ ցուցուած ընդդիմութիւնները, և իր սաղիմական գործերէ քաշուելու ստիպուիլը չէր կրնար չյիշել, և այժմ որ իշխանութիւնը ձեռք անցուցած էր գուցէ ոչ միշտ կրցաւ անփորձ մնալ, և զինքն մեծանձն և վեհոգի բարձրութեան վրայ պահել: Այլ այսչափով ալ օրինաւոր չենք կարծեր նորա յիշատակը անձնական պատահարներու փաստերով դատաւիտել:

2648. ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՊ

Մասնաւոր պատահարներէն ալ ինչինչ յիշատակել ուզելով նախ և առաջ կը հանդիպինք Կարնեցի Դաւիթ եպիսկոպոսի անունին, որ փոխանորդն էր եղած Կիրակոսի, և տեղապահ՝ անոր մահուանէ ետքը (2630): Սա նոյն այն Դաւիթն էր որ գլուխ կանգնեցաւ Կիրակոսի ընտրութիւնը յաջողցնելու և Յովհաննէսի ընտրութիւնը արգիլելու (2611), և Յովհաննէս չէր մոռացած հարկաւ

անոր վարած դերը, ուստի սկսաւ զայն անգործութեան մատնել, փոխանորդութիւնը պիտակ անունի վերածեց, և եթէ Դաւիթ գործի մը ձեռնամուխ ըլլար, մինչև իսկ սաստիկ յանդիմանէր առ ի խորտակել վարձուքին նորա և վխորհուրդն ջրել: Փոխանորդութեան անունէն զրկելու չհասաւ, բայց գործունեայ դեր ունենալ չներեց, արդէն իսկ Յովհաննէս ամէն բան իւրովի գործերու միտեալ, և ազատ աղիկամի կառավարութեան հետամուտ ըլլալով, փոխանորդութիւնն իսկ աւելորդ կը դատէր: Հակառակ Կիրակոսի ընթացքին, որ անձնական նախաձեռնութիւններէ կը զգուշանար, Յովհաննէս ամէն բան անձնական ձեռնհասութեան կը վերածէր, ուստի պէտք կը զգար հեռացնել և ցրուել այն անձերը, որոնք Կիրակոսի ատեն ասպարէզնին ընդարձակած և գործերու տիրացած էին: Այսպէս էր Գաբրիէլ Եթովպացի վարդապետը, բնիկ խափշիկ հայածէս դարձած և Կիրակոսի իբր որդեգիր սեպուած և անպայման համարձակութիւն ստացած, որ Եթովպիա նուիրակ յղուեցաւ (ՍԱԻ.1327): Նոյնպէս Յովսէփ Այնթապցի սարկաւազը, զոր յիշեցինք երբ Գաղատացի Իսահակի թողօնը բերելու յղուեցաւ: Սա ալ Վերիտոն յղուեցաւ, ուր վանատունը գնեց, և իր հայրենիքը երթալով հոն ալ կալուած մը յիշատակ թողուց, և սարկաւազութեան մէջ վախճանեցաւ: Աշխարհական անձ մը կար այդ կարգին, Յովհաննէս անուն ճապի մականուանեալ, որ է կալուածական գործակատար, որ իր կեանքը անցուցած էր կալուածոց մատակարարութեամբ, և քմահաճ կարգադրութեանց ալ կը համարձակէր: Նա ալ հեռացուեցաւ և Կ. Պոլիս յղուեցաւ փոխանորդարանին մէջ մնալու համար:

2649. ՄԿՐՏԻՉ ԲԷՖՍԻՉԵԱՆ

Յովհաննէս չխնայեց նաև այն անձերու, զորս առաջ մօտէն էր բռնած, բայց չներեց որ անոնք իր թոյլ տուածէն աւելի ձեռներէցութիւն ունենան: Մկրտիչ վարդապետ Բէֆսիպեան Գերմանիկցի, գործունեայ բայց և ոչ հաւասարապէս ուղղամիտ մը, թարգմանութեան պաշտօնի կոչուեցաւ, այլ և պատրիարքի ձեռքը յարմար գործիք դարձաւ վերև յիշուած Դաւիթը փոխանորդական պաշտօնը ստորացնելու: Սակայն Յովհաննէս զգաց թէ Բէֆսիպեան զպաշտօն իւր ի փառաւորութիւն անձին իւրոյ վարէ, և այս բաւական եղաւ որ թարգմանութեան կոչուէր Յակոբոս վարդապետ Չիլինկիրեան, ուրիշ ձեռներէց միաբան մը, իսկ Մկրտիչ 1853-ին Դամասկոս կը զրկուէր տեսչութեան պաշտօնով աթոռէն հեռացուելու համար: Ասոր վրայ Մկրտիչ՝ պատրիարքին հետ նախկին մտերմութիւնը վրէժխնդրութեան փոխարկեց, ոչ միայն սկսաւ պատրիարքական հրամանները անարգել և պատուէրներուն անսաստել, այլ և իւրովի քաղաքին Ս. Սարգիս եկեղեցին նորոգեց և յանուն Ս. Գլխագիրի փոխարկեց, և աթոռին հակառակ նոր ուխտատեղի կազմելու համարձակութիւնն ունեցաւ, անոր հասոյթը խորելու և իրեն շահու աղբիւր ստեղծելու համար: Յովհաննէս գայթակղութեան տեղի չտալու համար, զի Դամասկոսի Հայեր ուժգնապէս կը պաշտպանէին զայն, մինչև իսկ զիջաւ, անոր Դամասկոս մնալուն իբր խոստովանահայր, երբ Յովհաննէս վարդապետ Սահաթեան յղուեցաւ իբրև նոր տեսուչ: Մկրտիչ այսչափ ալ չշահուեցաւ մանաւանդ թէ ձեռնարկեց Դամասկոսը Երուսաղէմի իրաւասութենէն զատելու աշխատիլ, ինչ պէս իր հայրենակից Գաբրիէլը յաջողած էր զատել Եգիպտոս, բայց երբ նպատակին չհասաւ Գաղղիոյ հիւպատոսարան ապաւինեցաւ, և ուզեց զամենայն իսկ զժողովուրդն թափել ի գոգ Վատիկանու: Այդկէտին այլ ևս խոհական զգուշութեան չափը լրացաւ, Չիլինկիրեան թարգման Դամասկոս յղուեցաւ, և Դամասկոսի կուսակալին գրուեցաւ որևէ կերպով Մկրտիչ Երուսաղէմ դարձնել, և իրօք ձերբակալուեցաւ նա ի փողոցամէջս քաղաքին, և ձիու վրայ ոտնակապով և Վերիտոն և անկէ Երուսաղէմ, ուր Յովհաննէս պահեց զայն ամիս ինչ առ իւր ի վանս ընդ պահպանութեամբ, և անկէ ետքը հեռացուց և Կ. Պոլիս յղեց, ուր սակայն Բէֆսիպեան

միաբանութենէն դուրս իրեն ընդարձակ ասպարէզ գտաւ, և հետզհետէ բարձրացաւ, ինչպէս իր կարգին պիտի տեսնենք:

2650. ՅԱԿՈԲՈՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Յակոբոս Չիլինկիրեան որ Բէֆսիպեանը զսպելու գործակատարն էր եղած, փոխանակ օրինակէն խրատուելու, անկէ վարակուելու ձևն առաւ: Բնիկ Կէլիպոլուցի, պլտիկ տարիքէն Երուսաղէմի վանքը ընդունուած աշխոյժ և մտացի և ուշիմ տղու ձիրքերով համակրելի դարձաւ միաբաններու և պատրիարքներու, որոնք ձեռնտու եղան անոր յառաջացման, մինչև այն կէտը որ Յովհաննէս վայն թարգմանութեան պաշտօնին կը կոչէր Բէֆսիպեանի տեղ, և ետքէն անոր ձեռքով Բէֆսիպեան ըմբոստութիւնը կը զսպէր (2649): Այդ կէտէն սկսաւ մթագնիլ Չիլինկիրեանի յաջողութեան աստղը: Առաջին նշանը տուաւ երբոր Դամասկոսէ դառնալուն տարապայման և տարադէպ ծախքերու պահանջ մը ներկայեց, զոր Յովհաննէս մերժելով մերժեց, և երբ Չիլինկիրեան իր ընթացքը խոստացուց, պաշտօնէն ալ հեռացուց, բայց ասով ալ չհանդարտեցաւ և վրիժառութեան ոգևով լցուած, անպգամեաց յառաջ վարել բռնութեամբ զդատ իւր, և այդ պայքարին մէջ միջոցները խտրելու խոհականութիւնն ալ կորսնցնելով խարդախեաց վկնիք տէրութեան Բրուսիոյ, և Յոպպէ քաշուելով համարձակեցաւ յայտնապէս Յովհաննէս պատրիարքի դէմ մաքառիլ, և ամբաստան եղև զնմանէ, քանի որ Կ. Պոլսոյ մէջ դժուար չէր համախոհներ գտնել և եկեղեցական իշխանութիւնները նուաստացնելու օգնականներ ձարել: Մինչև իսկ Երուսաղէմի պատրիարքութեան վարչութիւնը փոխելու ձևեր առաջարկելու ելաւ, և իր խելքով կանոնագիր ալ ծրագրեց և հրատարակութեան տուաւ, սակայն իր ճիգերը արդիւնք չունեցան: Յովհաննէսի մահուանէ ետքը միաբանութիւնը իսպառ մերժեց զնա յուխտէն, և իրմէ հեռացուց, և նա Կ. Պոլիս անցաւ և միաբանութեան դէմ գործեց, ինչպէս պիտի պատմենք (ՍԱԻ.1346):

2651. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

Յովհաննէսի ձեռքով կամ թէ պատճառով Երուսաղէմի վանքէն հեռացող միաբաններու մէջ ունինք ուրիշ մըն ալ, բայց բոլորովին տարբեր առիթով, և ոչ վերոյիշեալներուն կերպով, ինչպէս պատմագիրը կը կարծէ (ՍԱԻ.1327), թերևս իրարու հետ շփոթելով Յովսէփ Այնթափցի (2648) և Յովսէփ Եգիպտացն սարկաւագները: Վերջինս որդի էր Գահիրէի ՄարՄինա կամ Ս. Մինաս Գերեզմանատան Կիլէ գիւղացի այլապի պահապանին, ուշիմ և համարկրելի տղեկ մը, զոր Կիրակոս Եպիսկոպոս սիրած և որդեգրած է Եգիպտոս եղած ատեն: Նորա ծնունդը մեր հետապօտած հաւանակագոյն տեղեկութեանց համեմատ պիտի դրուի 1819-ին, աւելի քան 1817ին կամ 1823-ին, ինչպէս ուրիշներ կը նշանակեն: Արդէն Կիրակոս ալ 1825-ին Եգիպտոսի տեսչութեան ղրկուած է (2449): Կիրակոս ըստ կարի կը կրթէ և կուսուցանէ և 1834-ին միասին Երուսաղէմ կը բերէ տղայն, որ վերածննդեամբ Աբրահամ կը կոչուի, և Վրթանէս ու Արիստակէս վարդապետներու հոգածութեամբ տակաւ կը վարգանալ, և տպարանի մէջ կաշխատի իբր գրաշար (ՆՇՆ. 72): Զարգացման փափաք թէ Երուսաղէմէն հեռացնելու դիտում, կը յորդորեն Կիրակոսը Կ. Պոլիս կոչել իր որդեգիրը, ուր ինքն կը գտնուէր 1836-էն ի վեր (2539), և ըստ այսմ 1839 Զատիկէն ետքը, որ հանդիպած էր մարտ 26-ին, ճամբայ կելլայ Աբրահամ վերադարձող ուխտաւորներուն հետ և ընկերակցութեամբ Մարտուանցի Սահաթճեան Յարութիւն քաղցրաձայն դպրին, որ նոյնպէս Կիրակոսի պաշտպանեալն էր: Ծանրաբայլ ընթացքով և Տարտանէլի մէջ մետասան օր քարանթինայ պահել, մայիս 20-ին կը հասնին Կ. Պոլիս (ՎՐԹ 61) հինգ ամիս առաջ բացուած Իւսկիւտարի ձեմարանին աշակերտելու համար, որուն վերին հսկողն էր Կիրակոս: Խոհեմական զգուշաւորութեամբ թէ ուրիշ պատճառով Աբրահամ անունով Երուսաղէմէ մեկնող 20 տարեկան երիտասարդը Յովսէփ Կիրակոսեան Բերացի անունով կը մտանէ Կ. Պոլիս: ձեմարանին

աշակերտելու միտքը չի յաջողիր, Կի ի տասն և եօթն ամէ ի վեր տիօք մարդ ոչ առնուն, ուստի Յարութիւն յունիս 6 ին ճանապարհորդեցաւ կրակի նաւով Ջմիւռին Մեսրոպեան վարժարանը մտնելու Տէր Յովհան Վանանդեցի Մեծ վարժապետին ձեռաց ներքև, իսկ Յովսէփ ճեմարանին մէջ իբր Կիրակոս Եպիսկոպոսի սպասաւոր: Բայց չերկարեցաւ սոյն վիճակը, Կի Յովսէփ ալ յղուեցաւ Ջմիւռնիա, ուր կը գտնենք զայն 1840 փետրուար 20-ին (ՎՐԹ.32), բայց կերևի թէ Մեսրոպեան վարժարանի ակնկալեալ աշակերտութիւնն ալ դժուարութեան հանդիպած է, Կի 1841 յունիս 7-ին ինքն կը գրէ թէ Նուպարեան Յովհաննէս աղային քովը ծառայութեան եղեր է, և թէ հիմայ պօշն եմ: Ուստի ընդ հովանեաւ գերյարգոյ Պալասանեան Ստեփան Ջմիւռնցոյ աղայի կը յղուի Կ. Պոլիս և ճեմարան ամերիկացւոց, որ է Պէպէք գիւղը բողոքականաց բացած նոր վարժարանը (2542) առ յուսանիլ զանգղիերէն լեզուս և զայլ պիտանի գիտութիւնս (ՎՐԹ.49), և ուր մտած է 1841 սեպտեմբերին դպրոցական տարւոյն սկիպբը իբր գիշերօթիկ աշակերտ: Այնտեղ կանոնաւոր ընթացք մը կը կատարէ, Կի 1842 ապրիլ 1-ին կը գրէ, թէ մինչև յառաջիկայ տարի կատարելով ընթացքը, ապա հրաժարիմք ի ճեմարանէ (ՎՐԹ.53), և ըստ այսմ 1843 օգոստոսին շրջանը աւարտելով Պէպէքի վարժարանէն ելած կըլլայ: Բերանացի կը պատմուի թէ անգղիացի ուղևորի մը հետ իբր թարգման գացած է Թուրքիոյ Երոպակողման գաւառները և հաւանաբար նոյն անգղիացին է որուն հետ եկած է ի Պէյրութ, անկէ Մուսուլ երթալու համար, բայց դիպուածով իւրք այդ ուղևորութիւնը կարգիլուի, և 1844 փետրուար 5-ին կը մեկնի դառնալ ի Կ. Պոլիս ի ճեմարանի, որ ի Պէպէք (ՎՐԹ.80): Այստեղ կը յղանայ Ամերիկա երթալու և բժշկութիւն սովորելու միտքը (ՎՐԹ.104), և այս նպատակով նպաստ կամ փոխ կը խնդրէ, և որևէ օգնութիւն մը ստանալով 1845 յուլիսին կը նաև Ջմիւռնիա և անկէ Ամերիկա, ուր հապիւ եօթն ամիս կը մնայ, յուսախաբ ըլլալով իր ակնկալութեան մէջ, Կի երկիրը կը տեսնէ վայր անհաւատութեան, մոլորութեան և բազմաղանդութեան և կլիմայն վատառողջ, և մինչև իսկ կը վախնայ որ ցանկային տալ իրեն զարփիափայլ հաւատս լուսաւորչական ուրանել: Ուստի շուտով ետ կը դառնայ, և Կ. Պոլիս կը հասնի 1846 փետրուարին, ուր անմիջապէս անգղիերէնի և թուրքերէնի դասատու կը նշանակուի Գումբաբուի մայր վարժարանը Մատթէոս պատրիարքի հրամանով (ՎՐԹ.111): Նոյն 1846 տարւոյ դեկտեմբեր 20-ին հաստատուի Կիրակոսի պատրիարքական ընտրութիւնը (ՎՐԹ. 120):

2652. ԴԱՐՁԵԱԼ ՎԵՂԱՊԵՏԱԿԱՆ

Կիրակոսի պատրիարքութիւնը մեծ նշանակութիւն ունէր իր հոգևոր որդեգիրին համար, ուստի կը մտադրէ հաստատութեան հրովարտակը տանող Յովհաննէս կոլոտ վարդապետի հետ Երուսաղէմ երթալ (ՎՐԹ. 120), և իրօք ներկայ կը գտնուի Կիրակոսի գահակալութեան 1847 փետրուար 14-ին (2611): Բայց Երուսաղէմ չի մնար, այլ Ջատիկէն անմիջապէս ետքը, որ հանդիպած էր մարտ 23-ին, կը մեկնի Յոպպէ, ուսկից մարտ 27-ին կը նաև Պէյրութ, բայց նաև կը վնասուի (ՎՐԹ. 135), և ետ կը դառնալ, և կը հասնի Պէյրութ ապրիլ 3-ին և 25-ին անտի մեկնելով (ՎՐԹ. 147) ամիսէ մը կը հասնի Կ. Պոլիս (ՎՐԹ. 148): Ինչչափ ատեն ևս Կ. Պոլիս կը մնայ որոշ չունինք, միայն թէ գիտենք որ, Կիրակոս պատրիարք զայն իր մօտ կը կոչէ իբր անձնական գրագիր, և արտաքին զբազմանց փափաքն ալ անոր միտքէն հեռացնելով հոգևորական կեանքի կը կոչէ, մինչև որ 1849 մեծապահոց մէջ սարկաւազ ալ ձեռնադրել կու տայ Կարնեցի Դաւիթ Եպիսկոպոսին ձեռքով ի միաբանութիւն ուխտի Սրբոց Յակոբեանց, այլ չև արեղայական աստիճանին բարձրացած Կիրակոս կը վախճանի 1850 մայիս 25-ին (2630): Յովհաննէսի ընտրութենէն ետքը Յովսէփ սարկաւազն ալ հրաւիրակ կերթայ Կ. Պոլիս, և նորընտիր պատրիարքին հետ Երուսաղէմ կը դառնայ նոյեմբեր 7-ին (2361): Բայց երբ կարգը կու գայ Կիրակոսի փափաքը լրացնելու, Յովհաննէս կը խիթայ մի՛ գուցէ անտեղի զրոյցնելու տեղի տրուի,

ուստի ձեռնադրութիւնը կուշացնէ մինչև 1851, և վերջապէս լաւագոյն կը սեպէ գործը Կ. Պոլսոյ պատրիարքութեան յանձնել, և օգոստոս 30-ին ճամբայ կը հանէ յատուկ յանձնարարականով, և Յակոբոս պատրիարք ալ գործադրութիւնը կը յանձնէ Արմաշու վանահայր և նախկին պատրիարք Ստեփանոս Աղաւնի արքեպիսկոպոսի: Ձեռնադրութիւնը կը կատարուի Չարխապիան Ս. Աստուածածնի տաճարին մէջ, նոյն 1851 տարուոյ դեկտեմբերի 9-ին կիրակի օր, Յղութեան տօնին, ընծայացուին 32 տարեկան եղած ատենը, որ այս առթիւ կը կոչուի Յարութիւն, և մականունն ալ փոխալով Վեհապատեան սկսաւ գործածել ի պատիւ իր հայրագիրին Կիրակոսի, զի անսովոր չէր պատրիարքներն ալ վեհապետ կոչել (ՎՐԹ.142): Նորընծայ արեղայն իբր վեց ամիս Արմաշ մնաց և վարդապետական աստիճանն ալ ստանալով Աղաւնի եպիսկոպոսէ Կ. Պոլիս դարձաւ 1852 մայիս 25-ին և Յակոբոս պատրիարքի մօտ մնաց իբր գաւազանակիր և մայրեկեղեցույ ժամօրհնող: Յակոբոս տեսնելով անոր ճարտար և յաջողակ գործունէութիւնը, ծայրագոյն գաւազանի տուուչութեամբ պատրիարքական փոխանորդութեան բարձրացուց 1853-ին, պաշտօն մը զոր վարեց նա մինչև 1857, մինչև որ ապրիլ 20-ին Խարբերդի առաջնորդութեան կոչուեցաւ Խուլէի, Սորսորի, Չարդարիչի, և Դատեմի չորս վանքերուն թեմերը միացեալ վիճակի վերածելով: Բաւական օգտակար եղաւ այդ պաշտօնավարութիւնը, բայց երկար չեղաւ, զի Յակոբոս պատրիարքին կոմդէ դարձեալ Կ. Պոլիս կոչուեցաւ վստապելի աջակից մը ունենալու նպատակով, բայց Յակոբոսի հրաժարականը վրայ գալով, անոր յաջորդ Գէորգ պատրիարքէ դարձեալ փոխանորդ անուանուեցաւ 1858-ին վերջերը, բայց քանի մը ամիս յետոյ Չօրաբաբէլեան Գրիգոր եպիսկոպոսի մահուանէ ետքը Կարնոյ առաջնորդ ընտրուեցաւ 1859 ապրիլ 24-ին: Վեհապետեանի գործունէութեան շարունակութիւնը առաջիկային պիտի պատմենք. միայն դիտել կու տանք առ այժմ թէ որչափ ալ Երուսաղէմի հետ կապուած, բայց իր կենաց առաջին մասը Երուսաղէմէ դուրս գործառնութեանց նուիրուեցաւ:

2653. ՅՈՒՆԱՅ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Յովհաննէս պատրիարքի գործունէութեան դառնալով՝ կը գտնենք զայն նոյնչափ արի և փութաջան իրաւունքներու պաշտպանութեան մէջ, որ ամէն ատեն Երուսաղէմի պատրիարքներուն փորձաքարն և ասպարէզն է եղած: Ղփտի և Հապէշ հասարակութեանց մէջ խնդիր էր յուզուած Տէր էլ-սուլթան եկեղեցւոյն մասին, և անգղիական եպիսկոպոսը իբրև իրաւաբար միջամտելով բանալիին տիրացած իրեն քով կը պահէր, մինչ երկու հասարակութիւններն ալ Հայոց հետևակներ էին, և իրաւարարութիւնն ու աւանդապահութիւնը Հայոց պատրիարքին իրաւունքն էր: Յովհաննէսի հասնելէն յառաջ և ետքն ալ եղած պահանջումներուն մերժողական եղած էր Գոտա անգղիական եպիսկոպոսին պատասխանը, այլ Յովհաննէս անգղիական դեսպան Քաննիկի դիմելով իր պահանջումին գործադրութիւնը յաջողցուց: Բեթղէհէմի մէջ Յոյներ 1851 հոկտեմբերին ձեռնարկած էին գլխաւոր հրապարակին վրայ եղող գերեզմաննոցին որմափակել, յարակից Հայոց գերեզմանատան վնասելով: Յովհաննէս ձեռնարկին արգիլեց կառավարչական հրամանով: Ս. Ծննդեան եկեղեցւոյն սիւնապարդ մասին մէջ կատարուող Հայոց ճրագալոյցի թափօրին անգամ մըն ալ արգելքներ յարուցին Յոյները 1858-ին, Յովհաննէս պետական պօրութեամբ դիմադրեց, և Հայոց իրաւունքը գործադրել տուաւ: Միւս տարին ալ 1859 աւագ ուրբաթին մեծ կռիւ մը տեղի կունենայ Հայերու և Յոյներու մէջ, Յովհաննէս վրայ կը հասնի, կառավարիչը կը ստիպէ, ոստիկանական միջամտութիւն կը հրաւիրէ, և Ս. Յարութեան մէջ վախցուած չարագէտ հետևանքներու առջևը կառնէ (ՍԱԻ.1336): Ասկէ առաջ ալ Ս. Գերեզմանի դրան վրայի պատկերներու կարգը խանգարելու ձեռնարկած էին Յոյները, Յովհաննէս դարձեալ անձամբ տեղւոյն վրայ եկած, և ամենայն ինչ ըստ առաջնոյն կարգադրել ստիպած էր (ՍԱԻ.1337): Աւստրիոյ կայսեր եղբայր Մաքսիմիլիանոս արհիդուքսը, այն որ յետոյ Մեքսիկոյ կայսր

անուանուեցաւ, 1853-ին ուխտի եկաւ Երուսաղէմ, և թէպէտ Լատին պատրիարքը շրջապատեց
վայն, սակայն Յովհաննէս Հայոց դիրքն ալ գիտցաւ պաշտպանել, պատուց և պատուուեցաւ
փոխադարձ այցելութեամբ, ծանրագին մատանի մըն ալ յիշատակ ընդունեցաւ: Աւելի նշանաւոր
եղաւ Ռուսաց կայսրեղբայր Կոստանդին մեծ դուքսին գալուստը, որ ամուսնով և վաւակով և
հետևորդներով 1859 ապրիլ 30-ին Երուսաղէմ այցելեց: Յոյներ յաջողեր էին առանձինն առջև
անցնիլ անոր ընդունելութեան մէջ և իրենց հիւրասիրել: Բայց Յովհաննէս այս առթիւ ալ գիտցաւ
պատշաճ կերպերով Հայոց դերն ալ վագացնել, և դուքսը ու դքսուհին պաշտօնական այցելութեան
պարտաւորել, Ս. Կենաց փայտի նւէրով պատուասիրել, և յատուկ հացկերոյթի հրաւերով պատուել,
դառնալ նէն ետքն ալ շնորհակալեաց գրութեան (ՍԱԻ1338) և պատուոյ նշանի (ԱՍՏ.Բ.549)
արժանանալ, զոր սակայն չկրցաւ ինքն տեսնալ մահուան կանխելովը: Մասնաւոր դիպուածներ
ամփոփելով յիշեցինք, որպէսզի աւելի յստակօրէն յայտնուի Յովհաննէսի նկարագիրն ու
արժանիքը, որ թէպէտ կենդանութեան ատեն ալ խժբժանքներու ենթարկուեցաւ, ուսումնական
վարճացման հետապնդող չդատուեցաւ, և Իւսկիտարի ճեմարանին տարեկանը վլանալուն Կ.
Պոլսոյ պատրիարքարանին և աւագանւոյն անհաճոյ երևցաւ, բայց Յովհաննէս մինչև վերջ իր
պատուոյ դիրքը պահեց, թէպէտև հակառակութիւններ պինքը վշտացուցին և ընկճեցին, և իր
վախճանն ալ փութացուցին: Յովհաննէսի կեանքին վերջին մասը այս տեղ պատմել ի դէպ չենք
նկատեր, քանի որ մահը Աշտարակեցիին մահուանէն երեք տարիներ ետքը տեղի ունեցաւ:

2654. ԼԱՏԻՆԱՅ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Որչափ ալ քաղաքական խնդիրներ և պատերազմներ մեր ծրագիրէն դուրս կը մնան, սակայն
կարևոր կէտ մը վանց ըրած կըլլայինք եթէ այդ միջոցին Ռուսիոյ դէմ բացուած մեծ պատերազմի
մասին գոնէ ամփոփ տեղեկութիւն չտայինք, իբր զի սաղիմական անցուդարձերէ ծագեցաւ
պատերազմին սկզբնաւորութիւնը: Մենք ալ համոզուած ենք, որ այդ տեսակ եղելութեանց բուն
պատճառը՝ քաղաքական ձգտումներու և զօրաւոր պետութեանց հակընդդէմ մրցումներու
բաղխումն է, բայց պատահական դիպուածներ են որ անոնց պայթելուն առիթ կընծայէն: Արևելքի
վրայ ազդեցութիւն տարածել և Թուրքիոյ գործերուն միջամտել, եւրոպական մեծ տէրութեանց
մարմաջներուն գլխաւորն է եղած, բայց որովհետև տէրութեան մը միւս տէրութեան գործերուն
խառնուիլ իր մերկութեան մէջ պահանջուելիք ձև մը չէ, եւրոպական տէրութիւնք իրենց կողման
գտած են Թուրքիոյ քրիստոնէաները իսլամական տէրութեան հանդէպ պաշտպանելու ձևը, հոգ չէ
թէ այս պաշտպանութիւնը իրականացած ըլլայ կամ ոչ: Իսկ միւս կողմէն նոյն իսկ օսմանեան
կայսերութիւնն ալ մինչև աստիճան մը անոնց վրայ այդպիսի իրաւունք մը ճանչցած, և անոնց
պահանջներուն ասպարէզը ընդարձակած է: Այդ անցուդարձերուն մէջ աւելի առջև անցնողներ
եղած են Գաղղիա և Ռուսիա, նա կաթոլիկներու և սա՛ որթոտոքսներու պաշտօնական պաշտպան
նկատուած ըլլալով: Երուսաղէմ ալ, ուր քրիստոնէութեան վանապան ճիւղերը իրարու դէմդիմաց
կը գտնուին և շարունակ շփման մէջ են, իր բնութեամբ իսկ յարմարագոյն գետինը եղած է այդ
շփումներուն. վասնզի զի միևնոյն կէտին վրայ տեղի ունեցած են ստացութիւններու և
իրաւունքներու բաժանումները ու փոփոխութիւնները, որոնք պահանջներու առատապէս նիւթ կը
մատակարարեն: Իրօք ալ ստացութիւններ և իրաւունքներ դարէդար մեծ փոփոխութիւններ կրած
են տիրապետութեանց և ազդեցութեանց փոփոխուելուն համեմատ: Յովսէփ Վալերկա, լատին
նորահաստատ պատրիարքութեան առաջին աթոռակալը (2629), բռնութեամբ ձեռներէց,
գործունէութեամբ յախուռն, ձգտուներով մեծամիտ անձ մը, իր աթոռին նոր փայլ մը տալու
փափաքով, և խաչակիրներու ժամանակին լատինաց ունեցած ազդեցութիւնը վերանորոգել
երազելով, խորհեցաւ լատինական ընդհանուր տիրապետութիւն մը կազմել, և Յոյնն ու Հայը

իրենց ունեցած դերերէն խախտել: Բիչ ու շատ տեղական ուսումնասիրութիւններէ ետքը, գալէն տարի մը յետոյ 1849-ին Եւրոպա դարձաւ, Պիոս Թ. Հոռոմայ պապին իր մտքերը հաղորդեց և քաջալերութիւն ստացաւ, և անկէ Գաղղիա անցնելով Նաբոլէոն Գ. կայսեր ձեռնտութիւնը հայցեց, և փոխադարձ առաւելութեանց հետևանքներով վայն չլացուց, եթէ նախաձեռնարկ և պաշտպան կանգնէր Լատինաց փոխանցելու սուրբ տեղեաց վրայ ընդհանուր և բարձրագոյն իրաւունքը, հիմնուելով դար կամ դարուկէս առաջ տեղի ունեցած փոփոխութեանց և լատինաց ձեռքէն Յոյներուն անցած ստացութեանց վրայ (ՊԷՐ.374), միւս քրիստոնէից թողլով առանց սեփական իրաւունքի, միայն ուխտերնին և ջերմեռանդութիւննին կատարելու արտօնութիւնը: Նաբոլէոն նախաքննութիւն մը կատարել տուաւ Եւգինէոս Պօրէ արևելագէտ Գաղղիացի վարդապետին ձեռքով, որ Երուսաղէմ եկաւ, բայց պարզապէս Վալերկայի արձագանք եղաւ, և Նաբոլէոն քաջալերուեցաւ, և 1850 մայիսին օսմանեան կառավարութենէն պահանջեց, որպէսպի բացարձակ և կատարեալ կերպով Լատիններու սեփականուին և յանձնուին Ս. Յարութեան տաճարին մէջ Ս. Գերեզմանը, Պատանատեղին, Գողգոթայն, Գերեզմանի փոքր գմբէթը, տաճարին մեծ գմբէթը, Գողգոթայի ներքև Ադամայ մատուռը, և վերնատուններու կարգին Սուրբ Կոյսին եօթը կամարները, նմանապէս Գեթսեմանիի ձորին մէջ Ս. Աստուածածնայ գերեզմանն ու տաճարը, Բեթղեհէմի մէջ Ս. Ծննդեան այրն ու տաճարը ու պարտեզները, և Ձիթենաց լեռան վրայ Համբարձման տեղը (ՍԱԻ.1284, ԱՍՏ.539):

2655 ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՄԻԶՈՑԸ

Հապի թէ լսուեցաւ Գաղղիոյ դեսպանին ձեռամբ օսմանեան կայսեր եղած դիմումը, իսկոյն ասպարէզ նետուեցաւ Ռուսիոյ դեսպանն ալ պահանջելով որ ստացուած իրաւունքներու փոփոխութիւն չըլլայ, և տիրող կացութիւնը շարունակէ անփոփոխ: Լավալէթ Գաղղիոյ և Դիդով Ռուսիոյ դեսպանները ամէն կերպերով և միջոցներով սկսան ծանրանալ օսմանեան կառավարութեան վրայ, մինչև իսկ յարաբերութիւններ խլելու և մեկնելու սպառնալիքով: Նաբոլէոն Գաղղիոյ և Նիկողայոս Ռուսիոյ կայսերներ ալ ուղղակի Ապտիլմէճիտ կայսեր դիմումներ կընէին իրենց նպատաւոր որոշումներ կորզելու, մինչ օսմանեան կառավարութիւնը իզուր կը ջանար Գաղղիան գոհացնել առանց Ռուսիան վշտացնելու: Խնդիրը պանապան հրատարակութիւններու նիւթ մատակարարեց, Պելճիոյ դեսպանը Երուսաղէմ ալ եկաւ հաշտարար լուծում մը պատրաստելու, զի Եւրոպիոյ կաթոլիկ և բողոքական տէրութիւններ, Աւստրիա, Սպանիա, Պելճիա և Իտալիա, Անգղիա և Բրուսիա յայտնապէս Գաղղիոյ կողմն էին Ռուսիոյ դէմ: Օսմանեան կառավարութիւնը յատուկ յանձնաժողով մը կազմեց լուծում մը պատրաստելու, որուն ուսումնասիրութիւնները նախարարութեան ներկայացան 1851 նոյեմբերին, բայց մեծ եպարքոս Ռէշիտ փաշա գործէ քաշուեցաւ, և անոր յաջորդող Ռէուֆ փաշայի նախագահութեամբ որոշումը տրուեցաւ 1852 յունուարին, բոլոր սրբավայրերը հասարակաց լինել, այսինքն որ երեք քրիստոնէայ ճիւղեր, Լատին և Յոյն և Հայ, հաւասար իրաւամբ (ՍԱԻ.1288) պաշտօն մատուցանեն ամէն սրբավայրերու մէջ: Այդ որոշումը երկու կողմերուն ալ գոհացուցիչ չեղաւ, բայց որովհետև երկուքին համար ալ մերժողական չէր, ուստի պահ մը լռեցին, և երկու դեսպաններ նոր հրահանգներ ընդունելու համար մեկնեցան, Ռէշիտ փաշա եպարքոսութեան դարձաւ, և Աֆիֆ պէյ կառավարութեան կողմէ Երուսաղէմ ղրկուեցաւ 1852 սեպտեմբերին, տեղւոյն վրայ քննութիւն կատարելու, և յատկապէս մեծ գմբէթին նորոգութիւնը կարգաւորելու, իրեն հետ ունենալով Էսաստ էֆէնտի ճարտարապետը: Հոկտեմբեր 5-ին հինգշաբթի օր առաջին գումարում մը տեղի ունեցաւ Ս. Յարութեան տաճարին մէջ, ուր երեք ազգաց պատրիարքներուն և եկեղեցականներուն և նշանաւորներուն կարգին Հայերն ալ ներկայ էին, պետական պաշտօնէից և գաղղիական

հիւպատոսին հետ: Կայսերական պատուիրակը յայտնեց թէ գմբէթին վիճակը պիտի քննուի և նորոգութեան պէտքը պիտի ստուգուի և ծախսը պիտի հաշուուի յարքունուստ կատարուելու համար, և երեք ազգերէն մի մի ներկայացուցիչ խնդրեց պնդութեանց ընկերանալու: Ներկայք լուռութեամբ լսեցին այդ յայտարարութիւնները: Երկրորդ գումարում մը տեղի ունեցաւ հոկտեմբեր 4-ին շաբաթ օր Գեթսեմանիի ձորը Ս. Աստուածածնայ տաճարը, Հայեր և Յոյներ տաճարին մէջ խմբուեցան և Լատիններ դուրսը: Պատուիրակը յայտարարեց թէ այսուհետև Լատիններ ալ պիտի կրնան Յոյներէն և Հայերէն ետքը Գերեզմանին վրայ պատարագել, այլ տաճարին մէջ պիտի չունենան սեփական տեղի և ոչ թիւ մի ձեռին, զոր ասելով Լատին պատրիարքը իսկոյն մեկնեցաւ (ՍԱԻ.1290). և թէպէտ արտաքոյ տաճարին տեղ մը շինելու պայմանը առաջարկուեցաւ, բայց անով ալ չգոհացաւ պահանջելով տաճարին տէր ըլլալը գոնէ միւս ազգաց համահաւասար իրաւամբ: Իսկ Յովհաննէս Հայոց և Կիւրեղ Յունաց պատրիարքներ հաւանութիւն յայտնեցին, զի Յոյներն ալ փոխադարձաբար Համբարձման ոտնատեղոյ մատուոին մէջ պատարագելու իրաւունք պիտի ստանային (ՍԱԻ.1290): Գործին լուծումը պատրիարքներուն յանձնուեցաւ կարգաւորել, բայց Յովհաննէս պատրիարք յայտարարեց թէ իրենք բարձրագոյն որոշմանց գործադիրներ չեն: Երրորդ անգամ Յովհաննէս և Կիւրեղ առանձինն խորհրդակցեցան պատուիրակին հետ դեկտեմբեր 10-ին յատուկ հրաւերով, ուր իրենց հաղորդուեցաւ նոր հրամանագիր մը Լատինաց ալ Ծննդեան այրին և տաճարին բանալիները յանձնելու, և 1847-ին վերցուած ճաճանչը (2626) նորէն Լատինաց ձեռօք վետեղելու: Յոյներ չընդդիմացան, իսկ Հայոց պատրիարքը իրենց համար պատարագի և բանալիի իրաւունք խնդրեց: Ասկէ ետքը խօսք բացուեցաւ Ս. Աստուածածնայ գերեզմանի պատարագին կարգին և առաջնորդութեան վրայ, և Յովհաննէս առաջարկեց որ իւրաքանչիւր ազգ կարգաւ մի օր պատարագէ, իսկ պատուիրակը կառաջարկէր որ մէկ օր Յոյնն ու Հայը ըստ առաջնոյն պատարագեն, և միւս օր Լատինը միայն պատարագէ: Լատինը համաձայնեցաւ Յովհաննէսի առաջարկին, և միասին յայտարարութիւն ալ ստորագրեցին. բայց Յոյնը չհաճեցաւ և ոչ մի ձևի, որով իր առաջնութիւնը կը վտանգուէր, հետևաբար ուրիշ որոշումներն ալ ի կախ մնացին, և կատարեալ իրողութիւն ըլլալով միայն Ծննդեան սեղանին ներքևէն վերցուած ճաճախչին տեղը (2626) նոր ճաճանչ մը վետեղեցին Լատինները Աֆիֆ պէպի հովանաւորութեամբ, որ իր գործը կատարած սեպելով 1852 դեկտեմբեր 17-ին Երուսաղէմէ մեկնեցաւ, որուն ետևէն կիւրեղ պատրիարքն ալ անձամբ Կ. Պոլիս փութաց, Ռուսաց դեսպանատան ձեռօք Լատինաց պահանջները խափանելու համար:

2656. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Նոր 1853 տարույ առաջին երկու ամիսները լռին անցան, իւրաքանչիւր կողմ իր ծրագիրը որոճալով: Փետրուարին սկիւբը գաղղիական դեսպանը փոխուեցաւ, 12ին Լավալէթ մեկնեցաւ և Տըլաբուր յաջորդեց, իսկ 16ին ռուսական մարտանաւ մը արտասովոր դեսպան մը բերաւ Կ. Պոլիս, իշխան Մենշիկով պատերազմական գործոց նախարարը, իբր 30 հետևորդ պաշտօնեաներով: Բանակցութիւնները անշշուկ անցան, համաձայնութեան ակնկալութիւններ ծագեցան, բայց յանկարծ երևոյթները փոխուեցան: Մնպիս 1ին Գաղղիոյ և Ռուսիոյ դեսպանատանց հաղորդուեցան Յունաց տրուած հին հրովարտակը և Ս. Յարութեան գմբէթին արքունական ծախքով նորոգուելուն հրամանը, բայց Մենշիքով չգոհացաւ, պահանջեց որ Յունաց բոլոր իրաւունքներ թուրքուսու դաշնգիրի մը վերածուին և քաղաքական երաշխաւորութիւն վզենուն, ինչ որ ծանր էր օսմանեան կառավարութեան համար, զի նախատինք կը նկատուէր իր հպատակաց հանդէպ ունեցած իշխանութիւնը օտար տէրութեանց ազդեցութեանց ենթարկել: Նախարարութիւնը փոխուեցաւ և Մենշիքովի առաջարկը մերժուեցաւ, և պատշաճ կերպով իրեն

հաղորդուեցաւ, ամէն ապահովութիւն տալով իրաւանց յարգուելուն, և Ռուսաց ալ Երուսաղէմի մէջ եկեղեցի և վանք կառուցելուն: Մենշիքով գոհ չմնաց և վերջնական կերպով յարաբերութիւնները խպեց և սովորական և արտասովոր դեսպանները ռուսական մարտանաւով մեկնեցան (ՍԱԻ.1294) 853 մայիս 13-ին (ՊԷՐ.579): Օսմանեան կառավարութիւնը մայիս 25-ին շրջաբերական հրովարտակով ամէն կողմ հրամայեց որ իսլամներ սիրով վարուին քրիստոնէից հետ և յարգեն անոնց կրօնական արտօնութիւնները: Հրովարտակին մէջ յատկապէս Հայոց անունն ալ նշանակուած կը տեսնենք (ՍԱԻ.1511), իսկ միւս օր մայիս 26-ին պատրիարքները հրաւիրուեցան եպարքոսին ապարանքը, ուր նոյն հրովարտակը հաղորդուեցաւ և օրինակներ ալ տրուեցան կարգաւ տալու և տարածելու համար (ՊԷՐ.580), և խիստ հրամաններ ալ տրուեցան ամէն կողմ: Յունիս 20-ին լսուեցաւ թէ ռուսական բանակը մտած է Մուտաւիա և Երոպական տէրութիւններ փութացին միջամտել երկու կողմերը հաշտեցնելու, բայց ոչ Նիկողայոս կայսր հաճեցաւ համակերպիլ, և ոչ Ապտիլմէճիտ կայսր կրնար ստորնութիւն յանձն առնուլ: Արդէն Եորոպիոյ պետութիւնք, և գլխաւորապէս Գաղղիա և Անգղիա և Աւտրիա, կասկածով կը նայէին Ռուսիոյ վրայ և կը փափաքէին առջնն առնել անոր յարաճուն պօրութեան, ուստի չէինք քաշուեր օսմանեան կառավարութիւնը քաջալերել և գործնական օգնութիւն իսկ խոստանալ: Պատերազմի պատրաստութիւնները յայտնապէս սկսան ամէն կողմերէ, Ռուսիոյ և Թուրքիոյ բանակներէն վատ, Գաղղիոյ և Անգղիոյ տորմիղներն ալ կապմ և պատրաստ էին օգոստոսի մէջ, բայց տակաւին բանակցութիւնք կը շարունակէին, վերջապէս 1853 հոկտեմբեր 12-ին ռուսական դեսպանատուն փակուեցաւ, 15ին օսմանեան սպարապետը Դանուբը անցաւ, 17-ին գաղղիական և անգղիական տորմիղներ Վոսփոր մտան, բայց տակաւին պատերազմը չսկսաւ: Կը յուսացուէր որ հաշտարար միջոցները յաջողէին. Գաղղիոյ կայսրը և Անգղիոյ թագուհին անգամ մըն ալ հաշտութեան հրաւիրեցին Ռուսաց կայսրը 1854 յունուարի սկիպը, և երբ Նիկողայոս կայսր չհամակերպեցաւ, պատերազմ հրատարակեցին ամսուն 17-ին, իրենց պինակից ունենալով Բիէմոնթէի կամ Սարատենիոյ Իտալական թագաւորութիւնը (ՊԷՐ.587): Ճակատամարտեր շարունակեցին Երոպակողման և ասիակողման գաւառներուն մէջ, սակայն պատերազմին բախտը կեդրոնացաւ Խրիմին մէջ Սևաստապոլ ամուր դղեակին վրայ, զոր դաշնակիցք պաշարեցին օգոստոս 23-ին և հապիւ տարի մը ետքը վայն առին 1855 սեպտեմբերին: Նիկողայոս Ա. կայսր մեռած էր մարտ 2ին, և յաջորդն Աղեքսանդր Բ. 1856 յունուար 12-ին պինադադար առաջարկեց, մարտ 18\30-ին հաշտութիւնը կնքուեցաւ ի Կ. Պոլիս, որոնց մանրամասնութիւնները նիւթէն դուրս կը մնան:

2657. ՀԱՇՏՈՒԹԵՆԷ ԵՏՔԸ

Փարիզեան դաշնագիրը յատկապէս կը յիշէ օսմանեան հպատակ քրիստոնէից կրօնական աւատութիւնը, և անոնց տրուած արտօնութեանց անեղծ պահպանութիւնը, և միանգամայն Զրդ յօդուածով իբրև կատարուած եղելութիւն կարձանագրէ ներքին բարեկարգութեանց և պետական կարգադրութեանց հրովարտակը, զոր դաշնագիրէն առաջ փետրուար 6ին հրատարակեց սուլտանը, ինքնաբերաբար և անկաշկանդ տուած ըլլալուն ի նշան: Իսկ Երուսաղէմական խնդիրին մասին որոշ յօդուած չգրուեցաւ, այլ վերջնականապէս հաստատութիւն ստացաւ այն հրովարտակը, որ Աֆիֆ պատուիրակին դառնալէն ետքը Յունաց տրուած էր 1269 ըէճէպի վերջին օրուան հիճրէթի թուականով, և որով կը հրամայուէր տիրող վիճակը անփոփոխ պահել, զի և ոչ միոյ ապգի պաշտօնական գրովք նորոգ գործադրեալ թուլտուութիւն լինելոյ սակս, ամենքին պարտին մնալ ի վերայ ներկայ վիճակին: Այդ այն հրովարտակն է որ Մենշիքովը գոհ չէր թողուցեր, զի դաշնագիրի կերպարանը չէր պգեցած, ինչպէս ինքը կը պահանջէր, և հիմ եղած էր պատերազմ հրատարակելու: Նոյն հրովարտակը Լատիններն ալ գոհացնել չէր կրնար, զի իրենց ուզած

փոփոխությունները կը մերժէր, բայց այսու հանդերձ պատերազմէն ետքը իբր օսմանեան կառավարութեան կամք և որոշում յարգուեցաւ և անարգել գործադրութեան մտաւ: Որչափ ալ ռուսական դեսպանին պահանջմանց շատ չէր պատասխաներ, բայց Յունաց պատրիարքը վայն իբր յաղթութեան նշան Երուսաղէմ էր բերած, և եկեղեցական փառօք և հանդիսի հրատարակած, և սուլտանին կենաց համար աղօթքներ կատարած, զի Յոյներուն համար բաւական էր որ հրովարտակ մը իրենց ստացութիւնը վաւերացնէր, և Լատինաց յաւակնութիւնները մերժէր: Այս հրովարտակն է որ 1853-է ի վեր նկատուած է իբրև վերջնական կանոն Յունաց և Հայոց և Լատինաց ստացութիւններն ու իրաւունքները ճշդելու. և Սթաթու բուօ (Statu quo) լատին անունով ճանչցուած է, ինչ որ տառաբար կը թարգմանուի ի վիճակին յորում, այսինքն մնալ այն վիճակի վրայ որուն մէջ կը գտնուի, որ թարգմանուած է յառաջնումն վիճակի (ՍԱԻ.1306), այլ յարմարագոյն է կոչել կայուն կացութեան հրովարտակ: Լատիններ չէին կրնար գոհ մնալ այդ հրովարտակին պարունակութենէն, զի իրենց պահանջները գոհացում չէին ստանար, բայց Հայերն ալ կատարելապէս գոհ չեղան, զի իրենք ալ ունէին Յունաց գրառումներուն դէմ գանգատներ և պահանջներ, մանաւանդ վերջին նորոգութեան ատեն տեղի ունեցած փոփոխութեանց դէմ (2421) և դիմում ալ ըրին և խնդրեցին պաշտպանութիւն սեփանակութեանց իւրեանց, այլ շահեցան և ոչինչ, և ինչ որ կորսուած էր յանիրաւի, այս անգամ նուիրակութիւն ստացաւ: Բայց եթէ կորուստները ետ չկրցան առնել, գոնէ մնացածները նոր կորուստի վտանգներէն ապատած չգացին: Ըստ այսմ ամենայն ինչ կայուն կացութիւն առած է, և կը մնայ ի վիճակին յորում էր 1853-ին, և Հայեր եթէ բան մը շահելու ակնկալութիւնը կորսնցուցին, գոնէ ձեռուրնին մնացածը ապահովաբար պահելու վստահութիւնը ստացան:

2658. ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱՎԱՌԱԿ

Մասնաւոր միջադէպ մըն ալ տեղի ունեցաւ այդ միջոցին երկու պատրիարքներու միջև: Յովհաննէս սկսած էր զլանալ ճեմարանի տարեկանը՝ սնտուկին անձկութիւնը պատճառելով, և միւս կողմէն կը դժուարանար Երուսաղէմի հաշիւները ներկայել. Կ. Պոլսոյ պատրիարքարանը կուզէր նուաճել զինքնօրէն իշխանութիւն Յովհաննէսի, և բռնանալ ի վերայ կամաց նորին, մանաւանդ որ գանգատագիրեր ալ կը հասնէին դժգոհներու կողմէ (ՍԱԻ.1341): Ծանօթ էր Յովհաննէսի բնոյթը որ նամակներու շատ ականջ կախող չէր, ուստի քաղաքավարի ոճով զինքը Կ. Պոլիս կը հրաւիրեն 1856-ին Ջատիկէն ետքը, իսկ Յովհաննէս առանց ընդդիմանալու գործը կերկարէ և խորհրդականներն ալ կը գրեն, անշուշտ իր դրոմամբ, թէ լաւ չէր ըլլար Յովհաննէսի աթոռէն հեռանալը: Ազգային ժողովը իր միտքին մէջ հաստատուն, պաշտօնգիր ալ կը ստանայ կառավարութենէ Յովհաննէսի Կ. Պոլիս գալուն համար և Ղալաթիոյ Յարութիւն քահանայ Սերոբեան և Գալուստ Տէր-Պօղոսեան քարտուղարը ճամբայ կը հանեն իբրև նուիրակ, որոնք Երուսաղէմ կը հասնին հոկտեմբեր 18-ին: Պաշտօնագիրը պարզ արտօնագրի և ոչ հրամանագրի ոճով էր խմբագրուած, որով կառավարիչը Քեամիլ փաշա չի ծանրանար Յովհաննէսի վրայ, իսկ խորհրդականներ և միաբանութիւն վատվատ գիրեր կուղղեն պատրիարքարան և Տատեան և Պալեան և ուրիշ գլխաւոր ամիրաներու, և կը բացատրեն պատրիարքի բացակայութենէն աթոռին հասնելիք վնասները, մինչ Յովհաննէս զինքն միշտ պատրաստակամ կը ցուցնէր: Օրեր կանցնին, 1857 ապրիլ Սարիմ փաշա կառավարիչ կանուանուի, բայց նա ալ ծանրանալու իրաւունք չի զգար, մինչ միւս կողմէն դպրոցական կարգադրութիւններ կը հրամայուի և ապրիլ 17-ին ճեմարանի հիմնարկէքն ալ կը կատարուի (2645), Կ. Պոլսոյ ժողովը իր միտքէն ետ կասեցնելու դիտմամբ: Բայց սա իր մտադրութեան վրայ հաստատուն՝ ստիպումներու կը ձեռնարկէ, որոնք Յովհաննէսը կը յուզեն, և իրաւ ալ անկողին կիյնայ, և հիւանդութիւնը օրըստօրէ կը ծանրանայ, և

հրաւիրակներն ալ իրաց վիճակի տեսնելով կորոշեն ետ դառնալ և եղելութիւնը հաղորդել: Իսկ Յովհաննէս փոքր առ փոքր խնամքներէ օգտուելով վտանգէ կապատի, և պահ մըն ալ Բեթղեհէմի օդափոխութեան երթալով կը կապուրուի, և իր աշխատութիւնները կը շարունակէր, և Կ. Պոլսոյ ժողովը առժամապէս կը լռէ յարմարագոյն պարագայի սպասելով:

2659. ԴԱԻԻԹ ԳԷՈՐԳԵԱՆ

Յովհաննէս այս անցուդարձերուն մէջ լաւ նկատած էր միաբանութեան մէջէն ալ ոմանց մասնակցութիւնը, որոնց գլուխ կը նկատէր Կարնեցի Դաւիթ Գէորգեան փոխանորդ եպիսկոպոսը, որուն մասին արդէն գրեցինք, թէ նախորդ ընտրութեան ատեն Յովհաննէսի պատրիարքութիւնը արգիլելու աշխատած էր (2611), և երկրորդ ընտրութենէ վերջ Յովհաննէսի կողմէ հակակիր պագացումներու հանդիպած էր (2648): Յովհաննէս չուզեց ուղղակի ինքն պայն հեռացնել, այլ բարեկամներու ուղղած մասնաւոր գրութիւններով Կ. Պոլիս հրաւիրել տուաւ Յակոբոս պատրիարքին կողմէն, կարծել տալով Դաւիթի թէ Յակոբոսի իր տկարութեան պատճառով զինքն իր մօտ կուզէ իբր խորհրդական ունենալ: Այդ համոզմամբ Դաւիթ յօժարակամ մեկնեցաւ և Կ. Պոլիս հասաւ 1857 նոյեմբեր 6-ին, և նոյն տարույ դեկտեմբեր 15-ին Ս. Յակոբայ կիրակիին իբրև պատրիարքական խորհրդական կը յիշուի անոր անունը Յակոբոս պատրիարքի հետ հիւանդանոցի տրուած այցելութեան առթիւ. բայց կերևի թէ պաշտօնը հաստատութիւն և շարունակութիւն չունեցաւ, և աւանգանույն կողմէն ալ ցուրտ ընդունելութեան հանդիպեցաւ, ուստի յուզուած և շփոթած հարկադրուեցաւ Կ. Պոլիսէ հեռանալ օդին անյարմարութեան պատրուակով, և Վերիտոն օդափոխութեան երթալու դիտմամբ ձամբայ ելաւ, բայց ուղղակի Յոպպէ եկաւ, և անկէ Երուսաղէմ ելաւ, ուր անթայր (anthrax) կոչուած անբուժելի վէրք մը հանեց թիկնամէջին վրայ, որ կենաց թելն ալ կարծեց, և վախճանեցաւ 1858 հոկտեմբեր 6-ին, և մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկիչի բակը:

2660. ԿԱԹՈՒԼԻԿ ՀԱՍՈՒՆԻ ԿՈՒՅԻՒՆ

Կաթոլիկ հասարակութեան գործերը թողած ենք Ֆէրրիէրի արքեպիսկոպոսի Հոռոմ մեկնելուն, Հասունեանի ապգապետութենէ հրաժարելուն և Սելվեանին անոր յաջորդելուն 1849 տարույ սկիզբը (2603): Սելվեան իր պաշտօնավարութեան սկիզբէն Հասունի կատարեալ կամակատար մը յայտնուեցաւ հակառակ իրեն վրայ դրուած յուսադրութեան, և պարզապէս անոր մտադրութիւնները իրականացնելու գործակցեցաւ, որ էր բոլոր վարչական և մատակարարական գործերը ապգապետարանէն եպիսկոպոսարան փոխադրել: Ապգովին ընտրուած աղքատաց հոգաբարձութիւնը փոփոխեց և Հասունի համակիրներ դրաւ, Հասունի կազմած բայց գործադրել չկրցած նոր կանոնադրութիւնը հրատարակեց և կառավարութենէն հրամայուած վարչական ժողովին ընտրութիւնը յետաձգեց (ՀԱՍ.119): Ժողովուրդին մէջ նորէն դժգոհութեան ձայներ սկսան բարձրանալ, Հասուն օգտակար սեպեց պահ մը հեռանալ, և Պիոս Թ. պապին դէմ ելած ապստամբութեան գաղղիական զինուց պօրութեամբ ընկճուիլը առիթ առնելով 1849 օգոստոս 23-ին Կ. Պոլիսէ մեկնեցաւ, եկեղեցականներուն և իրեններուն ստորագրութեամբ գիրեր տանելով միասին (ՀԱՍ, 106): Հասունեանին մեկնելովը միւս կողմը առիթ գտաւ Սելվեանին վրայ ծանրանալ, և վերջապէս սեպտեմբերի մէջ Երկոտասանից առաջին վարչական ժողովը բուէարկութեամբ ընտրուեցաւ, և ընտրեալներն եղան, Միհրան Տիւլեան, Աբրահամ Ալլահվերտեան, Յովհաննէս Թնկրեան, Վիշէն Գըլճեան, Յարութիւն Կէօչէեան, Յովհաննէս Գուլումճեան, Ֆրան Սինապեան, Գասպար Սինապեան, Ֆէհրատ Տէօվլէթեան, Մուսա Հասունեան, Թովմաս Կէօչէեան և Յարութիւն Մանուէլեան: Այս կազմութեան մէջ երկու կողմերն ալ ներկայացուած էին, բայց ընդհանրապէս հասարակութեան օգտին աշխատելու միտքը կը տիրէր (ՀԱՍ. 122): Մինչև այն ատեն միակ եկեղեցի ունէին կաթոլիկները Ղալաթիոյ մէջ, ժողովը

հետամուտ եղաւ Բերայի, Սամաթիոյ և Օրթաքէօյի մէջ եկեղեցիներ աւելցնել, յատուկ պատրիարքարան մըն ալ շինել, և գլխաւորաբար պատրիարքարանի կանոնագիր մը ունենալ, խափանեալ ինչ ինչ փոփոխութիւններով գործադրութեան վերակոչելով: Այս նպատակով 12 ուրիշ անձեր ալ ընտրելով Սելվեան ազգապետին նախագահութեամբ, 25 անդամով Օրէսդիր ժողով մը կազմուեցաւ, որուն մէջ նոր մտնողներ եղան, Պօղոս Պիլէպիկձեան, Յովսէփ Տավութեան, Գէորգ Ազնաւուրեան, Մկրտիչ Սամաձեան, Յակոբ Տավութեան բժիշկ, Յակոբ Տուպեան, Յովսէփ Փորթուգալեան, Սրապ Մանասեան, Անտոն Երամեան, Անտոն Մալլըմեան, Կարապետ Թիւլպէնտձեան և Մելքոն Սագայեան (ՀԱՍ. 124): Օրէնագիրին նիստերը շարունակեցին, բաւական կէտեր համաձայնութեամբ նայուեցան, և որոշուեցաւ որ եկեղեցի, հիւանդանոց, աղքատանաց և դպրոց ազգային սեփականութիւն են, որ ամէն աստիճանի պաշտօնակալներ և ժողովականներ ազգային ընտրութեամբ կորոշուին, որ եկեղեցականներ յամենայն կարգէ և ի տեսակէ, այսինքն միաբանութիւններէ ըլլան և թէ փրօփականտայէ, ընդհանուր ժողովներու մէջ ձայն կը վայելեն (ՀԱՍ. 126): Բայց անհամաձայնութիւնը սկսաւ երբոր եպիսկոպոսական ընտրութեանց խնդիրը մէջտեղ եկաւ, զոր Հասունի համակիրներ Հոռմի կուլէին վերապահել, հարկաւ անոր գահակալութեան ձեռն պաշտպանած ըլլալու համար (2601), մինչև մեծամասնութիւնը վայն ժողովրդական ընտրութեան կուլէին սեփականել: Սելվեան ալ փոքրամասնութեան հետ եղաւ, համաձայնութիւն չգոյացաւ, և այն օրը 1850 ապրիլին Օրէնսդիր ժողովին վերջինը եղաւ, և կանոնագիրն ալ հաստատութիւն չստացաւ (ՀԱՍ. 127), իսկ Երկոտասանից վարչականը պաշտօնի վրայ մնացած սեպուեցաւ, և հինգուկէս տարի այսպէս շարունակեց, թէպէտ ներքին կուսակցութեանց պատճառով կանոնաւոր կերպով պաշտօն չվարեց (ՀԱՍ, 361):

2661. ՀԱՍՈՒՆԵԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հասուն Կ. Պոլիսէ մեկնելով ուղիղ Կայեթա հանդիպած էր Պիոս Թ. ի այցելութեան, և անկի Հոռմ անցած նր մտադրած գործունէութեան ասպարէզը հարթելու և միջոցները պատրաստելու, որոնցմով զբաղեցաւ 1849 օգոստոսէն մինչև 1850 մայիս, ինն ամիս շարունակ: Հասունեան քաղաքականութեան (ՀԱՍ. 1) մեծ նպատակէն էր հայկաթուղիկ հասարակութեան մէջէն բնաջինջ ընել ինչ որ հայութեան հետ վերաբերութիւն և կապակցութիւն ունի, և անոր տեղ հոռմական և լատինական ձևերն ու կերպերը հաստատել, անհետ ընել ինչ որ բուն հայ է, և ամրացնել ինչ որ զուտ կաթուղիկ է: Սակայն նպատակը իրագործելու համար արգելքներու կը հանդիպէր, և պէտք էր անոնք տկարացնել, եթէ ոչնչացնել հնար չըլլար: Արգելքներու գլխաւորը հասարակութեան կողմէն էր, որուն մեծամասնութիւնը կամ մի լաւ մասը չէր մերկացած ինչ որ աւանդաբար ունէր իր միտքին և սիրտին մէջ իբրև հայ, որչափ ալ կաթուղիկութիւնը ընդունած էր, և կը պահանջէր աշխարհական տարրին եկեղեցական գործերու մասնակցութիւնը, և ընտրողական ու մատակարարական ու վարչական պարունակներու մէջ ձայն և իրաւունք ունենալ: Հասուն հիմնուելով պապական անպայման իշխանութեան կաթուղիկ գաղափարին վրայ, կը ջանար պապի անունով խափանել ինչ որ հնաւանդ հայութեան զգացումէ կը ծագէր, և կը ջանար աշխարհական տարրը հիմնովին հեռացնել եկեղեցական և ազգային գործերէն, և ամենայն ինչ եկեղեցականներու և եկեղեցական իշխանութեան ձեռքին ներքև դնել: Իր ջանքերուն խոչընդոտ մըն էր Համապգեաց ընկերութիւնը, որ բոլոր Հայերու առանց դաւանական տարբերութեան, գործակցութիւնը կը նուիրագործէր, ուստի պէտք էր ընկերութիւնը տապալեալ կամ թէ իրեն գործիք դարձնել: Խոչընդոտ մըն ալ Վենետիկոյ Մխիթարեան միաբանութիւնն էր, որ Մխիթարէն ժառանգած ազգային զգացումը տակաւին այն ատեն վառ կը պահէր, և ինչպէս քանիցս առիթ

ունեցանք կրկնել (1938,2165) հայութիւնը կաթոլիկութեան պատուաստելու գաղափարով կօրօրուէր, որ թէպէտ մեր տեսութեամբ անհնարին մի բան էր, սակայն Հասունի աչքին կարևորութիւն ունէր, պի նա երևակայական խոչընդոտներ իսկ իր առջևէն հեռացուած տեսնել կը բաղձար: Իր նպատակին հասնելու համար նախ ընդարձակ տեղեկագրական պարութայ մը պատրաստեց կամ պատրաստելու տուաւ, իբր թէ հռոմէական հաւատքը արևելքի մէջ կործանելու վտանգի ենթարկուած ըլլայ եթէ աշխարհականներ գործի խառնուին, ուստի պէտք էր Կ. Պոլսոյ վիճակին մէջ եպիսկոպոսարաններ հաստատել, եկեղեցականութիւնը պօրացնել, և անոնց իրաւասութիւնը ընդարձակել, և կառաջարկէր վեց նոր թեմեր ստեղծել, Պրուսա, Անկիւրիա, Տրապիզոն, Խարբերդ, Կարին և Արդուին, և թեմակալներն ալ ուղղակի Հռոմի հրամանով անուանել և ժողովրդական ընտրութեան չթողուլ: Առաջարկը ընդունուեցաւ փրօփականտայի վարիչ ժողովէն և ընտրելիներ Հասունէն ցուցուեցան իրեն աշխատակիցներուն մէջէն և Հռոմէն հաստատուեցան (ՀԱՍ.132): Համալգեաց ընկերութիւնն ալ թէ ուղղակի և թէ Ֆէրրիէրիի ձեռքով ներկայացուեցաւ իբր կաթոլիկութեան վնասակար մի հաստատութիւն, և վայն արգիլող հրամանագիր մը ստացուեցաւ փրօփականտայի նախագահ Ֆրանսօնի կարտինալին և ատենադպիր Պարնապօ մօնսինօրին ստորագրութեամբ և 1850 մայիս 6/18 թուականով: Իսկ Մխիթարեանները, որովհետև Հռոմէ ճանչցուած միաբանութիւն էին և պարզ հրամանով մը վայն դադրեցնել հնար չէր, ուստի անոնց վարկը աղարտելու և անոնց դաւանանքը կեղակարծ ցուցնելու և պիրենք կասկածելի ներկայելու համար նախապատրաստութեանց ձեռնարկեց, և փրօփականտայի դիւանին մէջ ինչչափ որ Մխիթարեանց աննպաստ գրութիւններ կային, պանոնք հաւաքելու ետևէ եղաւ Հռոմ գտնուող Ստեփան Աւարեան և Յովհաննէս Հոլասեան նորընծայ կուսակրօն բահաններու ձեռքով, (ՀԱՍ. 156): Մխիթարեանները երկու կողմերը միացնելու և հաճեցնելու փափաքով, և երբեմն այս և երբեմն միւս կողմը առատանալով, անդստին Մխիթարի օրէն (1938) միշտ կասկածի ենթարկուած էին, և իրենց աննպաստ գրութիւններ ալ շատ էին, ինչպէս շատ էին նաև նպաստաւոր գրութիւններ, քանի որ իրենք ալ երկու կողմերուն հաւասարապէս համակրական ցոյցեր ըրած էին: Արդէն Պիոս Թ. Հռոմ դարձած էր, և Հասուն իր ձեռնարկներուն մէջ քաջալերուած Կ. Պոլիս դարձաւ 1850 մայիս 31-ին (ՀԱՍ. 135): 2662. ՀԱՍՈՒԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ

Հռոմի մէջ պատրաստածները պէտք էր Կ. Պոլսոյ մէջ գործադրութեան դնել, բայց Հասուն դարձեալ դժուարութեանց բաշխեցաւ: Հասարակութեան կողմէ խնդիր յուլուեցաւ թէ պարզապէս եպիսկոպոսարաններ հաստատելու և թէ առանց ժողովրդական ընտրութեան եպիսկոպոսներ անուանելու դէմ, և նոյն իսկ այն քաղաքներէն ալ, որոնց եպիսկոպոսներ նշանակուած էին, բողոքագիրներ եկան թէ ոչ եպիսկոպոսի պէտք ունին և ո՛չ եպիսկոպոսարանի բեռը կրնան տանիլ: Բողոքներ բողոքներու յաջորդեցին, միանգամ և երկիցս Հռոմի պապութեան դիմումներ եղան և խնդրագիրներ յղուեցան, և օսմանեան կառավարութեան ալ աղերսագիր տրուեցաւ, վարչական ժողովն ալ ջանաց Հասունը համոզել որ գործադրութիւնը յետաձգէ, իսկ սա միշտ նոյն յանգերգը կը կրկնէր, թէ եկեղեցւոյ և հաւատքի գործերուն տէրը պապն է, ժողովուրդը միջամտելու իրաւունք չունի, և իր պարտքը մտադիր հպատակելն է (ՀԱՍ. 133-136): Եւ որպէսպի ժողովուրդը լրացած գործողութեան դիմաց գտնուի, և իր ձիգերը դադրեցնէ, յանկարծակի որոշումը մը 1850 յունիս 25-ին շաբաթէ կիրակի գշերը, Ղալաթիոյ Յիսուս փրկիչ եկեղեցւոյն մէջ, փակել դուռներով, առանց ժողովրդի, և միայն երկու օտարածէս ընթերցականներու և քանի մը եկեղեցականներու ներկայութեամբ, առանց պատարագի և հանդիսութեան, Հասուն եպիսկոպոսական ձեռնադրութիւն կը կատարէ, և արշալոյսին Տիմթէոս Աստարձեան, Անտոն Շիշմանեան և Յովսէփ Հաճիդաւիթեան վարդապետներ եպիսկոպոսակերպ պարզարուած Բերայի

մեծ փողոցէն կանցնին, բայց տեսնողներ գիշերոյ և խաւարի եպիսկոպոսներ կոչմամբ կողջունեն անոնք (ՀԱՍ. 138), և Հասունի յաղթանական ալ խաւարի յաղթանակ ի դէպ կը լինի կոչել: Յաջորդաբար ձեռնադրուեցան միւս երեք եպիսկոպոսները և Աստարձեանի յաջորդը, որ տեղը չգացած Կ. Պոլսոյ մէջ մեռաւ 1851 մարտ 14-ին (ՀԱՍ. 152): Բայց ոչ թէ միայն Աստարձեան այլ և միւսներն ալ չկրցան իրենց համար նշանակուած թեմերը երթալ, զի օսմանեան դուռը չհաճեցաւ անոնք ճանչնալ և հորվարտակ տալ մինչև որ ալգապէտն և ալգային ժողովէն անոնց համար երշխաւորական և ընծայական պաշտօնագիր չներկայացուի, և որչափ ալ Սելվեան կաշխատէր Հասունը գոհացնել, սակայն ժողովին մեծամասնութիւնը կընդդիմանար իր կնիքը դնել պաշտօնագիրին ներքև: Գործը երթալով կը կնճռուէր երբ պապին կողմէ Գաղղիոյ կայսեր դիմում եղաւ, և կայսրը Լավալէթ դեսպանին հրահանգ տվալ գործը կարգադրել, երբ օսմանեան դուռն ալ Գաղղիոյ մտերմութիւնը կը մշակէր Երուսաղէմի մասին ռուսական բռնադատութեանց դիմադրելու համար: Լավալէթ իբրև միջոց առաջարկեց և ամէն կողմերուն ընդունել տուաւ, որ այսուհետև եպիսկոպոսական ընտրութեանց համար ալգը ըստ առաջին սովորութեան երեք անձ Հռոմային ներկայացնէ, որոնցմէ մէկը Հռոմ ընտրէ, և այս հիմամբ ձեռնադրուածները հրովարտակնին ստացան և 1851 օգոստոսին, այսինքն ձեռնադրութենէն 14 ամիս ետքը սկսան իրենց թեմերը երթալ: Եպիսկոպոսաց խնդիրը յուլուած միջոցին Համապգեաց ընկերութեան խնդիրն ալ կը յուլուէր, զի թէպէտ արտաին գործոց նախարարը յայտարարած էր թէ ձեռք ձգուած (2661) փրոփակատայի գիրը (ՊԷՐ.352-356) պետութեան անարգական է, որ ընկերութիւնը ճանչցած և հաստատած էր (2603), սակայն Հասուն խնդիրին հաւատոյ գոյն տալով հրամանագիրը եկեղեցին կարդացուց, և տպագրելով ժողովուրդին մէջ ցրուեց, որով ընթերցող ընկերներէն ոմանք խղճահարութեամբ, ոմանք ալ անտարբերութեամբ սկսան թօթափիլ, ընկերութիւնը տկարացաւ և հետզհետէ անգործ դարձաւ. թէպէտ ընկերութիւնը պաշտօնապէս չջնջուեցաւ, և իր ձեռք մնաց իր յատուկ շէնքը Բերայի Լալէ փողոցը, և հաւաքած դրամագլուխին մնացորդը:

2663 ՄԽԻԹԱՐԵԱՆՆ ՎԵՆԵՏԿՈՅ

Հասունի ձեռնարկներուն երրորդը Վենետիկի Մխիթարեանները եթէ ոչ ջնջել գոնէ վարկաբեկել էր: Հասունեանի գլխաւորութեամբ Մխիթարեանց աննպաստ գրութեանց հաւաքածոյն համառօտ եկրակացութիւններով (2621) պաշտօնական պարութայի (Ponenza) վերածուելով փրոփականտայի ատեանին մատուցուած էր մասնաւոր կերպով, բայց Մխիթարեանք յաջողեցան օրինակ մը ձեռք ձգել: Այդ միջոցին Վենետիկոյ Մխիթարեանց արքահայրն էր Գէորգ Հիւրմիւլեան, անուանական արքեպիսկոպոս Սիււեաց, որ Սուբիաս Սոմալեանի մահուանէ (2477) հինգ ամիս ետքը 1846 յունիս 20/2 յուլիսի արքահայր ընտրուած և օգոստոս 14/25 ին արքեպիսկոպոս ձեռնադրուած էր: Գէորգ Հիւրմիւլեան թէպէտև ուսմամբ վարգացած և ձիրքերով ճոխացած անձ մըն էր, այլ նուազ էր պաշտօնական կորովոյ կողմէն, և իր պաշտօնավարութիւնը որ 30 տարի տևեց (ՅՈՒ.221), Մխիթարեանց աւելի անկման քան բարգաւաճման միջոց եղաւ: Վերև յիշուած պարտութիւն իբր պատասխան Մխիթարեանք փութացին երեք լեզուով Յիշատակագիր մը (Memoria) պատրաստել իրենց նպաստաւոր վաւերագիրներով, և տպագրելով ցրուեցին Հռոմի բարձրաստիճան պաշտօնակալներուն (ՀԱՍ. 157): Հասուն ալ ստացաւ օրինակ մը, և որպէս զի իր առաջին յարձակողականին ոյժը չկոտրուի, խորհեցաւ աւելի ընդարձակ և աւելի ուժգին գրուած մը պատրաստել և փրոփականտային հասցնել, որ իրեն օրակարգի խնդիրներուն անցուցած էր առաջին պարութեան և յիշատակագիրը: Հասուն իր եկեղեցականներով ժողով մըն ալ գումարեց, ուր որոշուեցաւ խմբագրական յանձնաժողով մը կազմել, իտալերէն խմբագրել, գրութիւնը փութացնել, գաղտնի տպագրել, և

փրոփականտայի ատեանին մատուցանել, իսկ առ այժմ ընդհանուր հրատարակութեան չտալ: Յանձնաժողովին անգամ նշանակուեցան Յովսէփ Պօլճօնեան, Ամբրոսիոս Մաղաքեան, Պօղոս Մաղաքեան, Ստեփան Ապարեան և Յովհաննէս Հոլասեան վարդապետներ, և Գասպար Վուշին իտալացի վարդապետը գրութեան լեզուին համար (ՀԱՍ. 158): Այսպէս կապմուտեցաւ ՎԵՆԵՏԿՈՅ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆ (Mechitarista di S Lazzaro di Venezia) գիրքը, որ 1852 Վատիկի միջոցին, 40 օրուան մէջ տպագրուեցաւ Կ. Պոլիս թէպէտ Լիվօնօ նշանակուած է հատորին ճակատը (ՀԱՍ. 162): Որչափ ալ գաղտնի պահելու ջանք ըլլար, անհնար էր որ ձայնը դուրս չելլար, և իրօք ալ 1852 յունիս 1-ին նշանակուած կը գտնենք անոր հրատարակի վրայ երևնալը (ՊԷՐ. 573), իսկ յունիս 10-ին կաթողիկներու ընդհանուր ժողովին առջև ելլալը (ՀԱՍ. 168): Այս գիրքն էր որ յոմանց պարսաւագիր (ՊԷՐ. 267), և յայլոց չարամատեան (ՀԱՍ. 162) անունով կոչուեցաւ և ճանչցուեցաւ խօսից և գրուածոց մէջ:

2664. ՊԱՐՍԱԻԱԳԻՐՔԻ ԽՆԴԻՐԸ

Իբր 200 էջէ բաղկացեալ հատոր մըն էր հրատարակուածը, Մխիթարեաննրը կատարեալ կաթողիկութենէ հեռու և հաւատքնին կեղակարծ, մանաւանդ թէ կաթողիկութեան հանդէպ օտարադաւան ցուցնելու, և ուղղակի հայադաւան կարծեցնելու նպատակով շարադրուած: Այս հոգւով տոգորեալ Մխիթարեան մեռած վարդապետները և աբբահայրերը, Յանսէնեանց նման հերետիկոս և հերձուածող կանուանէին, կենդանի մնացող Մխիթարեաններն ալ հաւատաքնութեան ատեաններով դատապարտել կը թելադրուէր, անոնց հետևողներուն հոգւոց փրկութիւնը տարակուսական, և անոնց պաշտած խորհուրդներուն արդիւնքը երկբայական կը ցուցուէր: Քաղաքական տեսակէտով ալ Հայոց ազգը ապստամբեցնելու ջանալնին կը յիշուէր, և յանուանէ Աբբայեան կուսակցութեան գլուխ եղող Տիւպեան գերդաստան (2354) իբր ապստամբութեան գլուխ կը վրպարտուէր, Մխիթարեան վարչութեան ներքև եղող Մուրատեան և Ռափայէլեան վարժարաններու աշակերտները իբր անկրօն և անհաւատ կը բամբասուէին, և մէկ խօսքով միաբանութիւնը ջնջնելու և Ս. Ղապարու վանքը քանդելու պէտքը կը ցուցուէր: Լեզուն ալ գոեհիկ և կոշտ էր, ոճը անվայել, բացատրութիւնները ստորին, գնահատումները յախուռն: Այսպիսի հրատարակութեան արդիւնքն եղաւ միտքերը խանգարել, հասարակութեան մէջ երկպառակութիւն գրգռել, միամիտներու խիղճերը այլայլել, ապատախոհները բարկութեան մղել, և ամէն տեղ և ամէն տուն շփոթութիւններ և դժգոհութիւններ պարթուցանել: Մինչև իսկ Տիւպեանք իրենց մասին գրուածներէն զգածուեցան, և վատ հետևանքներ ալ կրնային գոյանալ, եթէ կայսրն ու նախարարները զիրենք չվստահեցնէին թէ դուք միշտ հաւատարիմ գտնուած էք, ուստի հանդարտ եղէք և պարապ տեղ սիրտներիդ չխռովին (ՀԱՍ.168): Հասարակութեան մէջ առաջին Կարապետ Թիւլպէնտճեան եղաւ օրինակ մը ձեռք ձգող, և ամփոփ շրջանակի մէջ կարդալ տուողը, որ երթալով ընդարձակուեցաւ (ՀԱՍ..164), և 1852 յունիս 5-ին հինգշաբթի օր, 60 հոգիի չափ խումբ մը ազգապետ Սելվեանի դիմեց, վարչական և ընդհանուր ժողովներ գումարել պահանջեց: Սելվեան խուսափողական միջոցներու դիմեց, որպեսպի գոնէ գիրքին բուն հեղինակները չնշանակուին, ուստի գիշերային ժողովակի մը մէջ առատ խոստումներով իտալացի Վուշինօյէն յայտարարութիւն կը խլեն, իբր թէ ինքն է միակ և բացարձակ հեղինակը այդ հրատարակութեան, և վայն կը բերէն յունիս 10-ին երեքշաբթի օր գումարուած ընդհանուր ժողովին, բայց ժողովը դարձուածներուն գիտակ, և ոչ իսկ Վուշինոյի յայտարարութեան ընթերցումը կը ներէ: Սելվեանէն կը պահանջուի որոշ կարծիք մը յայտնել դիրքին պարունակութեան վրայ, բայց նա դարձեալ կը խուսափէ խնդիրը կրօնական և հետևաբար Հասունի հոգևոր իշխանութեան պատկանող յայտարարելով: Հասուն կանխած էր Անկիւրիա ուղևորի՝

հեռու գտնուելու համար, ուստի Յովսէփ Պօրճօնեան և ատենադպիր Ստեփան Ապարեան վարդապետներ ժողովի կը կանչուին որ հարցուփորձուին: Այդ միջոցին Հասունի համակիրներէն խումբ մը ժողով կը թողու վայն ցրուելու նպատակով, բայց ստուար մեծամասնութիւնը կը շարունակէ, և Պօրճօնեանն ու Ապարեանը ների կը դնէ որոշ պատասխան մը առնելու: Ասոնք ամէն հնարամտութիւն կը գործածեն, բայց չեն կրնար ծածկել թէ հրատարակութենէն տեղեկութիւն ունին, թէ Հասունէ այդ մասին հրահանգներ ունեցած են, և թէ Մխիթարեանք իրենց հաւասար հոգևոր պաշտօն վարելու արտօնուած են, և երբ ըսածնին գիրով տալու կը հրաւիրուին, ստորագրութիւն չենք կրնար տալ ըսելով կը մեկնին, ժողովը կը ցրուի, եղելութեան մասին նախարարներուն մասնաւոր տեղեկութիւն կը տրուի, իսկ պաշտօնական դիմումը առ այժմ կը յետաձգուի:

2665. ԻԼԷՐՕ ԵՒ ՀԱՍՈՒՆ

Վուշինօյէն առնուած յայտարարութեան շշուկը նոր կերպարան տուաւ խնդիրին: Լատիններուն հոգևոր պետը, կամ պաշտօնական կոչմամբ, առաքելական նուիրակ և պատրիարքական փոխանորդն էր Իլէրօ արքեպիսկոպոսը, բնիկ Գաղղացի և բաւական ուղղամիտ եկեղեցական մը: Վերջին ժողովին մէջ հինգ հոգիէ յանձնախումբ մը ընտրուած էր գործին հետևելու և պատշաճը խօսելու ու գրելու, որոնք էին Մկրտիչ Սամանձեան, Կարապետ Թիւլպէնաձեան, Յովսէփ Երամեան, և Պօղոս Շաչեան ու Յակոբ Տավութեան բժիշկներ: Ասոնք ժողովին յաջորդ օրն իսկ, յունիս 11 չորեքշաբթի, Իլէրօյի կը ներկայանան, Վուշինօյէ առնուած յայտարարութեան վրայ կը խոսին և կը ցուցնեն, որով Իլէրօ կորոշէ իր կղերէն հեռացնել տգեղ ամբաստանութիւնը: Իսկոյն Վուշինօն կը կոչէ, որ անմիջապէս երկրորդ յայտարարութիւն մը կու տայ, թէ ինքն լոկ գրարգութիւն ըրած է, հայապգի կաթոլիկ եկեղեցականց ոմանց յանձնած թուղթերուն նայելով (ՀԱՍ. 178): Ասոր վրայ Իլէրօ յունիս 14-ին գրաւոր կերպով կը պահանջէ Սելվեանէ որ ճշմարտութիւնը չխարդախէ, և իրեններուն պատկանող տգեղ գործը լատին կղերին վրայ չծանրացնէ: Պատասխանը ուշանալուն յունիս 17-ին պահանջը կը կրկնէ սպառնալով իսկ թէ լատին եկեղեցւոյ յարգն ու պատիւը պահելու և պաշտպանելու համար ձեռքս գտնուած վաւերական գրուածներով և հաւատարիմ վկաներով մինչև ցվերջին կէտ ջանալու հիմակուրնէ ձեպի կը ծանուցանեմ (ՀԱՍ.182), Որովհետև հասարակութեան ներկայացուցիչներն ալ Սելվանը կը ստիպէին ժողով գումարել և խնդիրը լուծել, սա հասարակութեան ստիպելը կառավարութեան հաղորդելով և վնաս ծագելիքը թելադրելով, ժողով չգումարելու հրահանգ մկ կը կորպէ և հասարակութեան կը հաղորդէ, բայց կառավարական նախաքննութիւնը կը կատարուի և Վուշինօ դատի կենթարկուի, որ արդէն իր եպիսկոպոսին արգելմամբ պատժուած էր: Այս պատճառով Հասունի եպիսկոպոսարանը կերթայ, և կը սպառնայ ամէն բան խոստովանիլ եթէ վինքը չապատեն, բայց դարձեալ խոստումներով կը շահուի, և երրորդ յայտարարութիւն մըն ալ կու տայ Իլէրօյին տուածին հակառակ, և չորրորդ մըն ալ չտալու երդում կընէ, և յունիս 19-ին գաղղիական շոգենաւով Կ. Պոլիսէ կը հեռացուի Հասունեանց ծախքով և պաշտպանութեամբ: Իլէրօ յունիս 30-ին Պօրճօնեանէ ալ կը պահանջէ դիրքին հեղինակին մասին ստուգութիւնը հրատարակել, յունիս 2-ին Սելվեանին կը կրկնէ, յուլիս 6-ին դարձեալ Պօրճօնեանէ ալ կը պահանջէ և երկարօրէն կը գրէ (ՀԱՍ.186-200), և դիմացիններուն խօսածովն ու գրածովը իր ըսածը կը հաստատէ, թէ հայ կաթոլիկ եկեղեցականներ, թէ հայ կաթոլիկ եկեղեցականներ են գիրքին հեղինակները և ոչ թէ շատին Վուշինօն: Երբ գոհունակութիւն տրուելէն կը յուսահատի՝ փոխանակուած նամակները ամբողջովին հասարակութեան կը ներկայացնէ և կը հաղորդէ, և նա կը փութայ իտալերէն և գաղղիերէն և տաճկերէն լեզուներով հրատարակութեան տալ (ՀԱՍ. 200): Այդ միջոցին

ներկայացուցիչ յանձնախումբը 24 անդամի վերածուած էր արգիլուած ընդհանուր ժողովին տեղ գործելու համար: Ասոնք ալ Սելվեան ապագայետէ վերջնական բացատրութիւն կը պահանջեն, և չստանալով յունիս 26-ին կառարութեան կը դիմեն: Հասունենք ալ յունիս 29-ին հակառակ գրութիւն մը կը մատուցանեն (ՀԱՍ.203-206), և շփոթը ծանրանալուն, մանաւանդ լատին եպիսկոպոսին միջամտութեան պատճառով, Հասուն կը ստիպուի յուլիս 15-ին Կ. Պոլիս դառնալ, 16-ին հանրութեան ներկայացուցիչները դարձեալ կառավարութեան կը դիմեն Հասունին դէմ: Հասուն ալ յուլիս 18-ին ուրբաթ օր եկեղեցական ժողով կը գումարէ և բաւական բացայայտ կերպով Մխիթարեանց վրայ ծանրանալէն ետքը Հռոմէ եկաած թուղթ մը կը հաղորդէ թէ դիրքին հեղինակը Վուշինօն է և դատաստանն ալ Հռոմի վերապահուած է: Օգոստոս 2-ին ժողովրդին ալ կը հաղորդէ շրջաբերականով, որուն վրայ Իլէրօ օգոստոս 7-ին պաշտօնապէս քննիչ յանձնաժողով մը կը կազմէ: Բոլոր վաւերագիրները կը ներկայացնէ լատին եկեղեցականութեան եօթը նշանաւոր անդամներուն, բերանացի քննութիւններ ալ կատարել կը հրամայէ, և վճիռը կը հրատարակէ թէ գիրքն հեղինակութիւնը հայ կաթողիկ եկեղեցականներու, և ոչ թէ Վուշինօյի կը պատկանի (ՀԱՍ. 215-216):

2666. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԿԱԿՈՆՆԵԱՆ

Այս վճիռը հասարակութիւնը քաջալերեց, որ տեսնելով թէ Սելվեան յայտնապէս Հասունի պաշտպանութեան կաշխատի խորհեցաւ նախ պայն գործէ հեռացնել և կառավարութենէն անոր պաշտօնականութիւնը պահանջեց, որ 1852 սեպտեմբեր 1-ին վճռուեցաւ, և երբ Սելվեան շփութաց հրաժարականը գրել, 4-ին պաշտօնապէս իրեն հաղորդուեցաւ, և 6-ին նոր ընտրութեան հրահանգ տրուեցաւ, 8-ին վարչական ժողով գումարուեցաւ, ուր որոշուեցաւ այս անգամ Անտոնեան միաբանութենէն ընտրել պատրիարքը, իբր պի Բօլէճեանք և Վենետկոյ Մխիթարեանք փոփոխակի պիրար կամբաստանէին, և Վիեննայի Մխիթարեանք Աւստրիոյ հպատակ կամ պաշտպանեալ կը նկատուէին: Իսկ Անտոնեաններէն ընտրելի նշանակուեցան, երիցութեան կարգով, Վրթանէս Եիւզիքճեան, Եղիա Նահապետեան, Պօղոս Պօյնուէյրեան և Նիկողայոս Կակոնեան վարդապետները (ՀԱՍ. 223): Սեպտեմբեր 11 ին քուէարկութիւն պիտի ըլլար, բայց խափանուեցաւ պի Հասունեանք պնդեցին Բօլէճեաններէն ալ ընտրելի առնել: Ֆուատ պէյ, արտաքին գործոց և կրօնից պաշտօնեայ, երկու կողմի գլխաւորներէն հինգական հոգի խորհրդակցութեան հրաւիրեց սեպտեմբեր 16-ին, բայց համաձայնութիւն չգոյացաւ, 26-ին վեցական հոգիով նոր խորհրդակցութիւն տեղի ունեցաւ, բայց դարձեալ համաձայնութեան չյանգեցաւ, և որովհետև կառարութիւնը սաղիմական մեծ խնդիրով վբաղած և Եւրոպական տէրութեանց հետ (2655), ընտրութիւնը ետև մնաց (ՀԱՍ. 228): Այդ միջոցին օգոստոսին մէջ Հռոմէ հասաւ դոմինիկեան կրօնաւոր Կաուտէ վարդապետը, իբրև մասնաւոր քննիչ, որ հապիւ 15 օր Կ. Պօլիս մնաց և Հռոմ դառնալով իր տեղեկագիրը մատոյց: Անոր վրայ Հասուն և Իլէրօ Հռոմ կոչուեցան, և նա սեպտեմբեր 13-ին, իսկ սա հոկտեմբեր 25 ին մեկնեցան: Հասարակութիւնը յոյս ունէր Իլէրօյին վրայ և անոր յանձնած էր պապին ուղղած աղերսագիրներ Հասունի դէմ, սակայն Հռոմի ստիպման վրայ Իլէրօ ևս պարտաւորեցաւ իր պնդումէն ետ կենալ, և անցածին վրայ չի խօսելով հաշտութիւն գոյացնել Հասունի հետ (ՀԱՍ. 229-230): Նոյեմբեր 1-ին կառավարութեան կողմէ ընտրութեան նոր հրահանգ եկաւ, խորհրդակցութիւններ եղան, և վարչութեան Հասունեան անդամներ պնդեցին Եիւզիքճեանը և մանաւանդ Նահանգապետը ընտրելիներու ցուցակէն ջնջել, և փոխանակ դնել Դանիէլ Պօտուրեանը Անտոնեաններէն և Պետրոս Թիլքեանը Բօլէճեաններէն, բայց այս տալ հակառակութեան հանդիպեցաւ, և որովհետև նոյեմբեր 12-ին ընտրողական ընդհանուր ժողով հրաւիրուած էր, 11-ին յանձնախումբին կողմէ

մեծամասնությամբ աղերսագիր տրուեցաւ կայսեր: Այսուհանդերձ նոյեմբեր 12-ին ժողովը եղաւ, և պետական պաաշտօնեան յանձնարարեց, որ վերջին անգամ փոփխուած չորսերու ցանկին վրայ ոչ թէ քուէարկութիւն ըլլայ, այլ վիճակի թողուի, և երբ որ այդ ընդունելի չեղաւ, այն ատեն չէմ դիմաց խնդրի նիւթ տուող Եիւլիքճեան և Նահապետեան, Պօտուրեան և Թիլքեան մէկդի թողուեցան և տարաձայնութեան առիթ չտուող Պօյնուէյրեան և Կակոնեանի վրայ վիճակ նետուեցաւ, և վիճակ Կակոնեանի ելաւ: Ընտրութեան արձանագրութիւնը կազմուեցաւ, ընտրութիւնը հաստատուեցաւ, և Կակոնեան Նիկողայոս վարդապետ, Անտոնեան միաբան, նոյեմբեր 16-ին կառավարութեան և կայսեր ներկայացաւ և կաթոլիկներու ազգապետ պատրիարքութեան աթոռը բազմեցաւ: Հասունեանք գոհ մնացին Կակոնեանի ընտրուելէն, զի նոյն իսկ չորս Անտոնեաններու մէջէն խնդիրներու չմիջամտող և միայն հոգևորական զբաղմանց հետևող մէկն էր և Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյ ժողովրդապետութիւնը կը վարէր: Բայց շուտով զգացին թէ նա իրենց կարծարծէն շատ հեռու էր երբ իմացան թէ փոխանորդ ընտրած է Նահապետեանը, ուսկից այնչափ կը վախնային, և ատենդպիր՝ Գապանճեան Սուքիաս վարդապետը (ՀԱՍ. 231-239): Հասուն Կ. Պոլիս չէր ընտրութեան միջոցին, իրեններն ալ ստիպուած էին ինքզինքնին չափաւորել, ուստի Կակոնեան կրցաւ իր գործակիցներուն ձեռամբ ազգապետարանի նախնական վիճակը վերանորոգել, վարչական ժողովը կանոնաւոր գործունէութեան կոչել, անդամներուն մէջ համաձայնութիւն հաստատել, պարտուց բարձման յանձնաժողով կազմել, դատաստանական խորհուրդ ընտրել, եկեղեցիներու և յատկապէս Ս. Յակոբ հիւանդանոցին աշխարհականներէ առնուած հոգարբարձութիւններ կազմել, ազգային կանոնագիր վերակազմելու յանձնախումբ ընտրել, մէկ խօսքով խաղաղ կացութիւն մը և կանոնաւոր վարչութիւն մը երևան եկաւ, բայց հապիւ թէ երկու երեք ամիս տևեց (ՀԱՍ. 239-243):

2667. ՀՌՈՄԻ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ

Հասուն Հռոմի մէջ յաջողած էր պապական ատեանը իր կողմը յանկուցանել, և Իլէրօն ալ չէզօքութեան ստիպել, ուստի աւելի իր ընթացքին մէջ քաջալերուած, և Կակոնեանի ընթացքը խանգարել ուզելով հրահանգ կը դրկէ Յովսէփ Առաքելեան եպիսկոպոսին, զոր տեղապահ թողած էր Կ. Պոլիս նորէն գործի ձեռնարկել և խնդիրներ յուզել: Ըստ այսմ Առաքելեան 1853 փետրուար 10-ին երեքշաբթի օր, Կակոնեանը և Նահապետեանը տեսակցութեան հրաւիրելով, մասնաւոր ժողովակի մէջ կը սկսի դիտողութիւններ ընել թէ ազգապետարանը իր իրաւասութենէն դուրս կելլէ, թէ եկեղեցեաց և հիւանդանոցի և աղքատանոցի մատակարարութիւնները հոգևորական իշխանութեան կը պատկանին, թէ կտակաց հաստատութիւնը եկեղեցական գործ է, թէ առանց եպիսկոպոսարանի հարցնելու կարգադրութիւններ կընէ (ՀԱՍ.244): Կակոնեան բռնութեամբ հանդարտ և վէճերէ հեռու պահ մը կը լռէ. բայց Նահապետեան անդստին կաթոլիկ պատրիարքութեան հաստատութենէն սկսելով պատմական և կանոնական կերպով գործերը կը բացատրէ և կը պարզէ և Առաքելեանը կը լռեցնէ, սակայն վէճերու դուռը բացուած էր, և ահա փետրուար 24-ին երեքշաբթի օր Հասուն և Իլէրօ Կ. Պոլիս կը հասնին: Հասարակութիւնը շփոթած անմիջապէս բողոք մը կը պատրաստէ թէ ասկէ ետև զինքն իրենց հովիւ և առաջնորդ չեն ճանչեր, և 24-էն 25 գիշերը Հասունին կը հասցնեն, և 25-ին օրինակը տպագրութեան կը ցրուեն (ՀԱՍ. 255-257): Հասուն և Իլէրօ ալ մէկ մէկ յայտարարութիւններ կը ցրուեն ժողովուրդին մէջ խնդիրին փակումը ծանուցանելու: Հասուն իր տուած համառօտ բացատրութեամբ կըսէ, իբր թէ ինքն միայն Մխիթարեանց մէմօրիային չափաւոր պատասխան մը տալու դիտաւորութիւնն ունեցեր է, բայց խմբագրողը իրենն բոլորովին անծանօթ և առաջինէն տարբեր շարադրութիւն հրատարակեր, որով ինքն նոյն գիրքին հեղինակ պէտք չէ ըսուի: Իսկ Իլէօ բաւական ընդարձակ յայտարարութեամբ մը

(ՀԱՍ. 248-254), և ճարտար դարձուածներով պագցնել կուտայ, թէ իր ըրած ջանքն ու ճիգը պատշաճ և վայելուչ բան մը ըլլալուն, ամենևին մէկը չկրնար ուրանալ, բայց փրոփականտայի պաշտօնեաներէն ոմանք նախապաշարել հակամիտեցին ի կողմն գերապայծառ Հասունի, և թէ պապին կողմէ փրոփականտայի ատենապետը, որ էր Աղէքսանդր Պառնապօ, իրենց հաշտութեան ճամպան առաջարկեց, որուն ինքն ալ ստիպուեցաւ համակերպիլ: Այս յայտարարութեններէն ետքը միառմի կը ցրէ իրեն մասին եղած ամբաստանութիւնները, և կը յարէ թէ Հռոմ ալ ընդունած է իր արդարացումները: Հասունին յայտարարութիւնը աւելի գրգռիչ եղաւ, և մինչև իսկ փետրուար 28-ին, բուն բարեկանդանի նախընթաց օրը Յիսուս փրկիչ եկեղեցւոյ աւանդատան մէջ պայն պատառողներ ալ եղան, որուն վրայ վարչութեան Հասունեան փոքրամասնութիւնը գործը չափազանցելով տեղեկագիր մը պատրաստեցին և խաբկանօք հիւանդ ապագայետին կնքել տուին, սակայն մեծամասնութիւնը թէ բերանացի և թէ գրաւոր յայտարարութեամբ խնդիրը կառավարութեան պարզեցին մարտ 2-ին, իսկ 3-ին հասարակութեան կողմէն նոր աղերսագիր տրուեցաւ որպէսպիսի վիրենք Հասունի ձեռքէն ապատէ: Եւ որովհետև յայտարարութիւնը պատռող 14 անձերուն պատիժ պիտի տրամադրուէր, իբր 400 հոգիներ մարտ 4-ին ներկայացան իբր կամակիցներ միասին պատժուելու, որուն վրայ կառավարութեան կողմէ հրաման եղաւ Հասունի և Ամբրոսիոս ու Պօղոս Մաղաքեաներու որ եկեղեցեաց մէջ շատ չերևան մինչև որ խնդիրը քննուի: Հասուն Գաղղիոյ դեսպանատան դիմեց, և դեսպանատունն ալ արտաքին գործոց նախարարին, որ Հասունը կոչելով խստիւ յանդիմանեց, օտար տէրութեան դիմելուն համար (ՀԱՍ.261): Հասուն փոխանակ հանդարտելու խաժամուժը կը գրգռէ և կը պինէ և անոնց վստահելով մարտ 8-ին Ղալաթիոյ եկեղեցին կիջնէ, կը պատարագէ, բայց իր հաւաքածներէն վատ մարդ չի գտներ, և կարծեցեալ յաղթանակով Բերա կը դառնայ (ՀԱՍ.264): Այս տեղ պահ մը դադար կու տանք չարամատեանին հասարակութեան մէջ հանած շփոթներուն պատմութեանը, և կանցնինք Մխիթարեան միաբանութեան ներքին անցուդարձերը պատմել:

2668. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ԸՆԹԱՑԲԸ Մխիթարեանք մեծապէս պաճուեցան չարամատեանին հրատարակութենէն, և Հռոմի կողմէն իրենց աննպաստ որոշման մը վախով, մեծամասնութեամբ պիջողութեանց, և մինչև իսկ ստորնութեանց կողմը գտնուեցան, իրենց առաջնորդ և ուղեցոյց ունենալով Հիւրմիւլեան արքահօր տկար և կորովէ պուրկ վարչականութիւնը: Իրաւ չէին պակսեր Մխիթարեանց հին հոգւոյն հետևողներ, բայց գրուած էին և աստուանդ առաձինն մնացած, և գործունեայ դեր մը ստանձնելու անկարող կը գտնուէին: Միայն Փարիպի Մուրատեան վարժարանին տեսչութեան վրայ գտնուող երեք վարդապետներ, Սարգիս Թէոդորոսեան վերատեսուչ, Գաբրիէլ Այվապեան դաստիարակ, և Ամբրոսիոս Գալֆայեան ուսուցիչ (ԹՈՂ.190) ընդիմադիր դեր մը ստանձնեցին, և այդ իրենց ընթացքին առիթ ընծայեց Մխիթարեանց կողմէ պարսաւագիրքին տրուած պատասխանը, որ նոյնպէս նոր պատուագիրք անունով կոչուեցաւ (ՊԷՐ.367, ԹՈՂ.Գ.153): Հեղանակ էր Արսէն վարդապետ Կոմիտասեան (ՊԷՐ.367) կամ Անթիմոսեան (ԹՈՂ.166), որ է նոյն ինքն Բագրատունին, որ այս ապգանունը իւրացուցած է Բրգնիկցի ծագում ունենալուն համար, բայց որչափ ալ անկէ յօրինեալ, սակայն գրեթէ կերպարանափոխ եղեալ է ի Գերապայծառէն մերոյ, այսինքն Հիւրմիւլեան արքահայրէն, ինչպէս տպարանապետը կը վկայէ (ԹՈՂ.Գ.151): Գրութիւնը ոչ միայն ծաղրածու և գոեհիկ լեզուով գրուած էր, կարծես Հասունի պարսաւագիրքին հետ մրցելով, այլ որ ևսն է, անոր մէջ գրեթէ ամէն թերթին մէջ հերձուածող, հերետիկոս և մոլորեալ ածականներ կրկնուած են Հայոց համար: Հրատարակութիւնը Ընդիմախօսութիւն և Զատագովութիւն կոչուած է հաւասարապէս (ԹՈՂ.150-153), և 150 էջէ հատոր մըն է, որ երբ Հայ ժողովուրդի մէջ երևցաւ 1852 հոկտեմբեր 10-ին

(ՊԷՐ.574), մեծ շշուկ և աղմուկ հանեց. վասնզի մինչև այն ատեն այնպես համարուած էր, թէ Աբբայեան հարք ջատագով և պաշտպան են Հայաստանեայց եկեղեցւոյ (ՊԷՐ.368): Նոյն հրատարակութենէն առաջ ամէն համակրութիւն և ձեռնտուութիւն և նպաստ կրնծայուէր անոնց, բայց այժմ ծանեան ամենեքին զի և նոքա ոչինչ ընդհատ ի Բօլէճեանց, կամ ոչ պակաս քան զնոսին յիսերիմ թշնամի են Հայաստանեայց եկեղեցւոյն: Նոյն հրատարակութեան մէջ Համագեաց ընկերութիւնն ալ դատապարտուած էր, զի Մինասեան Պետրոս վարդապետի մասնակցութիւնը արդարացնելու համար ըսուած էր, թէ կանոնագիրին աշխատած էր, որպէս զի ալ գէշագոյն բան մը չընեն երիտասարդները (ԹՈՒԴ.Գ.165), իբր թէ արդէն գէշ գործ մը գեշագոյն չդառնար: Ըսուած էր նաև թէ Հիւրմիւլեան արդէն հաւատոյ դաւանութեան յայտարարութիւն մը կազմած էր Հայոց եկեղեցին դատարապետելու իմաստով, և իր միաբաններուն ստորագրել տալով ներկայացած էր Հռոմի փրոփականտային, և այս բոլոր պարագաները մեծ վայրոյթ պատճառեցին Հայ ազգին մէջ, և ձեռնթափ եղան անոնց պաշտպանութեան աշխատելէ, ինչ որ նապընթաց պարագաներու մէջ վանց ըրած չէին, և ազգային լրագիրներն ալ սկսան մեղադրական յօդուածներ հրատարակել Մխիթարեանց մասին, և ամբողջ հատոր մըն ալ հրապարակ ելաւ Մատթէոս պատրիարքէ գրուած (ՀԱՆ.): Մխիթարեանց կողմէ ելած ջատագովական հրատարակութիւնը փութաջան անպարանքի արդիւնք էր, օտար մինչև այդ ատեններ իրենց հետևած ճամբէն, մանաւանդ որ նոյն իսկ լատին եպիսկոպոս Իլէրօ, արդէն գործը ձեռք առած էր, և իր կղրէն Վուչինօյի խնդիրը պարզելով Մխիթարեաններն ալ պաշտպանած կըլլայ, և Բօլէճեանց մոլեռանդութիւնը երևան հանելով Մխիթարեանները պիտի արդարացներ (2665): Բայց Հիւրմիւլեանի ընթացքը օտար էր այդ խոհական դատողութենէն, և հապճեպ յայտարարութիւններով միաբանութիւնը վտանգէ ապատելու խորհուրդը կը փայփայէր. զի մենք ալ կը դժուարինք կարևորութիւն տալ ժողովրդական կրօններու, իբր թէ փրոփականտան շահելով Հասունը պաշտօնանկ ընել տալու, և անոր յաջորդ անուանուելու գաղափարը ունեցած ըլլայ (ՊԷՐ.368), զի այդչափ յետսամտութիւն չենք կրնար ենթադրել իր վրայ, թէպէտ իր տկարամտութեան գործերը մեղադրեցինք:

2669. ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Մխիթարեանց մէջ չէին պակսեր ստուգիւ գործը տարբեր տեսակէտէ նկատողներ, սակայն ոչ կրցան Հիւրմիւլեանի ազդեցութեան ընդիմնալ և ոչ համաձայնութեամբ ոյժ մը կազմել: Կ.Պոլիս գտնուողներ Հասունեանց հանած աղմուկէն շարած, և Ս. Ղապարու վանքը գտնուողներ արբահօր իշխանութենէն կաշկադուած, յայտնի գործակիցներ իսկ եղան Հիւրմիւլեանի, և միայն Փարիզ գտնուող երեքներն եղան, որոնք դիմադրութեան համարձակեցան, երեքին մէջն ալ գլուխ գտնուողը Սարգիս Թէոդորեան վարդապետն էր: Թէոդորեան, որդի հայադաւան Թորոսեան Սահակի, ծնած է Բաղէշ, 1783 Ջատիկ օրը, որ հանդիպած է ապրիլ 16-ին, և այս պատճառով Յարութիւն կոչուած, 12 տարեկան դերձակութեան աշակերտ կը մտնէ, քիչ ետքը հայրն ու եղբայրը ու բոյրը ժանտախտէ կը մեռնին կրկին կամուսնանայ և ինքն իր հօրեղբօր խնամոց ներքև կը մնայ: Իր հանուոյն եղբօրորդուն Սերվեան Սահակ քահանայի ձեռքով հռոմէականութեան կը հրապուրուի, և Մխիթարեանց անունէն գրաւուած Կ. Պոլիս կու գայ 1803-ին, և թէպէտ տարիքով մեծ այլ պատշաճ միջնորդութեամբ և յարատև հետևողութեամբ կընդունուի 1805-ին, 1809-ին քահանայական ձեռնադրութիւն կընդունի Ադոնց արքայէն Սարգիս անունով, և 1810-ին աշակերտական շրջանը կը լրացնէ 27 տարեկան, վարդապետական աստիճան կը ստանայ 1816 յունուարին, որ տարին Վենետիկ կու գայ Աղեքսանդր Ռափայէլեան Ղարամեանց Եղուարդի որդին, որ առաջին անգամ յղացեր էր վարժարան մը հիմնելու գաղափարը 1785-ին, և գործը

յանձնած էր սեպտեմբեր 10-ի նամակով Թրիեստի Մխիթարեանց խումբէն Նիկողայոս Բուկայեան և Պօղոս Մէհէրեան վարդապետներուն (ԹՈՂ.Ա.28-33), բայց որդին Աղեքսանդր Ղարամեան հօրը կամքին գործադրութիւնը նախ յապաղեց և ապա վլացաւ, և երկու վարդապետներն ալ Վենետիկի միաբանութեան վերադառնալով իրենց իրաւունքները փոխանցեցին յԱբբայի միաբանութեան և ի յաջորդս նորին (ԹՈՂ.Ա.46): Վարժարանի հիմնարկութեան խնդիրը առկախ կը մնար, երբ Սամուէլ Մկրտիչ Մուրատեան, որ փեսայացեալ էր Եդուարդին (ԹՈՂ.Ա.51), մտածեց ինքն իր արդեամբ իրականացնել աներոջ նպատակը, և 1816-ին իր կտակին վեցերորդ յօդուածով կտակեց 150,000 հուն գումար մը, որ է 525,000 ռուբլի կամ 1,400,000 Ֆրանք, և անոր հետ ողորմութեանց հաշուոյն գլխուն մնացորդ գումարը, որ ըստ խորհրդոյ և միջնորդութեան Վենետիկի Հայոց միանձանց, միացեալ գումարներուն շահին համեմատութեամբ Հայոց ազգէն որբ և աղքատ մանկունք ասացեալ դպրատանն ձրիապէս ուսումն և լեզուք ուսանեն: Մուրատեան Սամուէլ իր կտակէն ետքը ոչ ևս յերկարակեաց լեալ, 1816 ապրիլ 20-ին կը վախճանի և սեպտեմբեր 25-ին իր Եդուարդ և Յովհաննէս որդիքը հօրերուն կամքն ու կտակը Վենետիկի արքայօր կը հաղորդեն (ԹՈՂ.Ա.69), և իրենց առաջարկութեան վրայ Սուքիաս Սոմալեան և Սարգիս Թէոդորեան վարդապետներ 1817 յունիս 18-ին Հնդկաստան կը յղուին (ԹՈՂ.Ա.74), բայց ձեռնունայն Եւրոպա կը դառնան 1820 մաչիս 18-ին, Մուրատեան եղբարց ալ միտքը փոխուելուն վրայ: Նոր բանակցութիւնք և փոփոխակի առաջարկութիւնք և բացատրութիւնք կը շարունակենք, մինչև որ հարկ կը լինի Թէոդորեանի վերստին ուղևորիլ ի Հնդկաստան, և 1824 մարտ 27-ին Վենետիկէ մեկնելով (ԹՈՂ.Ա.164) սեպտեմբեր 24-ին կը հասնի Մատրաս, ուր կը լռէ Ստեփանոս Ադոնցի արքայօր մահը, և Սուքիաս Սամուէլեանի յաջորդելը (2477): Երկար աշխատութիւններէ ետքը Մուրատեան ժառանգներ, այսինքն Սամուէլի այրին Աննա և երկու զաւակները Եդուարդ և Յովհաննէս իրաւախոհութեան կու գան Թէոդորոսեանի հետ, և 1828 մարտ 28-ին գրութիւնները կը փոխանակուին (ԹՈՂ.Ա.215): Կտակին արդիւնքը կը հաշուուի 198,323 հուն տոկոս չհաշուելով, այլ 150,000 կտակին վրայ աւելցնելով կտակողին մահուան պահուն ողորմութեանց հաշուոյն ներքև գտնուող 48,323 հունը, որուն փոխարէն 12 կտոր պարտամուրհակներ կը յանձնեն ժառանգորդները յաջորդաբար գանձելի: Իրաւախոհութեան պայմանագիրին մէջ նշանակելի է երկրորդ յօդուածը, ուր կըսուի թէ ըստ խորհրդոյ և միջնորդութեան բացատրութիւնները չեն որոջ և ձիշդ, ուստի այժմ համաձայնութեամբ կորոջեն յանձնել միանգամայն միաբանութեան Վենետիկոյ վվերոյիջեալ բովանդակ դրամն... և թողուլ վամենայն ինչ անոր փորձառութեան սակս ամենայնի որ պատկանի եթէ կառուցման, եթէ կառավարութեան, եթէ խնամակալութեան, եթէ ապահովութեան և եթէ մշտնջենաւոր հաստատութեան դպրատանն և ամենայն կալուածոյ և ստացուածոյ նորա, յամենայնի և ըստ ամենայն մասանց (ԹՈՂ.Ա.218). Իսկ ժառանգորդներուն կը յանձնուի ապատութեան յայտարարութիւն մը, և բոլոր գիրքերը 1828 հոկտեմբեր 28-ին արքային և ամբողջ միաբանութեան ստորագրութեամբ կը վաւերացուին: Իրաւախոհութենէն ետքը գանձումն ալ երկար ձգձգմանց և դարձուդարձից, դատաստաններու և դատավճիռներու ասպարէզ կը բանայ, գումարներու թէ գլխուն և թէ տոկոսի կողմէն, և հապիւ Թեոդորեան ամէն գործ վերջացնելով 1835 փետրուար 7-ին Մատրասէ կը մեկնի, և հոկտեմբեր 28-ին կը հասնի Պատաւիոն, որ է Բատուա քաղաք Իտալիոյ, ուր 1832-ին բացուած էր Մուրատեան վարժարանը, և նոյեմբեր 2-ին կը մտնէ Ս. Ղապարու վանքը փառաւոր և եռանդուն ընդունելութեամբ պատուուած (ԹՈՂ.Ա.639), վերջին մեկնելէն տասն և կէս տարի ետքը:

Մուրատեան կտակի արդիւնաւորութենէն ետքը Ռափայէլ Ղարամեանի կտակին խնդիրն ալ կարգադրուեցաւ , Ռափայէլեան վարժարանը բացուեցաւ Վենետիկի մէջ 1836-ին Թէոդորեանի տեսչութեամբ (ԹՈՂ. Բ. 8) և 1838-ին Մուրատեանի տեսչութիւնն ալ անոր յանձնուեցաւ (ԹՈՂ. Բ.38): Նոր խնդիր մըն ալ ծագեցաւ Մուրատեան վարժարանի համարատուութեան համար, և աւստրիական պետութիւնն ալ այդ պահանջին մասնակցեցաւ, և Մխիթարեանք այդ բեռէն ազատելու համար Վարժարանը Փարիզ փոխադրեցին 1846-ին (ԹՈՂ. Բ. 178), ուր և մնաց հակառակ Գրիգոր ԺԶ. պապին կողմէ տրուած Բատուա դարձնելու հրամանին (ԹՈՂ. Բ 180): Միևնոյն 1846 տարւոյ յուլիս 2-ին Գէորգ վարդապետ Հիւրմիւլեան յաջորդ ընտրուած էր վախճանեալ Սուքիաս Սոմալեան արքահոր, և Թէոդորեան ալ աթոռակալ, որ է արքայական փոխանորդ, առանց լքանելու վարժարանաց տեսչութեան պաշտօնները, որոնց աւելի քան պաշտօնակալ, ինչպէս հիմնադիր ըմբռնուած էր, զի նա էր որ 1817-է մինչև 1835 անխոնջ և քրտնաջան աշխատութեամբ և վշտակիր յարատւութեամբ արդիւնաւորուած էր Մուրատեան կտակը, և անկէ ետքն ալ շարունակած էր նոր դժուարութեանց յաղթելու, և Ռափայէլեան կտակն ալ կենդանացնելու, այնպէս որ առանց իրեն երկու վարժարանները գոյութիւն ունեցած պիտի չըլլային: Արդէն 1829 յունուար 30-ի պաշտօնագիրով միաբանութեան արքայն ու անօրէն ժողով իրեն հրամայած էին ձեռնաքափ լինել գործին հետևելէ, և գանձուած մասնակի գումարն իսկ ետ տալ և Վենետիկ դառնալ (ԹՈՂ. Ա. 396-400): Բայց Թէոդորեան առանց վհատելու շարունակած էր իր աշխատութիւնները, և իրաւամբ կրնար պարծենալ թէ իր անձնական արդեանց հետևանքն էին երկու վարժարանները և Մխիթարեանց ձեռքն անցած յաջողութիւններն ու ստացութիւնները: Թէոդորեան այդ արժանաւորութեանց փաստին վրայ պարտաւորութեանց հարկ մըն ալ կը վզար իր վրայ, զի ինքն առաջի կտակարարի, առաջի կտակակատարներուն, և առաջի հանրային խիղճին երաշխաւոր կանգնած էր հաւատարիմ գործադրութեան Սամուէլի կտակին, որ անխըտիր հայ տղաք կերթալու համար էր թողուած առանց դաւանութեան տարբերութեան, մինչև Հիւրմիւլեան քաղաքականութիւնը Հռոմի պահանջներուն առջև ստորնանալով, յանձնառու եղած էր հայադաւան եղողները, որպիսի ոք էին Մուրատեան և Ռափայէլեան կտակողներն ալ կատակակատարներն ալ իբր հերետիկոս և հերձուածող և մոլորեալ հոշակել, և միանգամայն Մուրատեան վարժարանը Հռոմ փոխադրել պապին անմիջական հսկողութեան ներքև դնելու համար, հայադաւանները կտակին վայելումէն զրկել, և լոկ հռոմէադաւան սաներ ընդունիլ (ԹՈՂ. Գ. 35): Դժբախտաբար ինքն Թէոդորեան եղած էր որ իր ուղղամտութեան վստահելով, կտակին բնագիր անորոշ բացատրութիւնները, որ Մխիթարեանց բացարձակ իշխանութիւն չէին տար, իրաւախոհական պայմանագրութեան երկրորդ յօդուածով Մխիթարեանց բացարձակ տիրապետութեան էր փոխարկած, և ամէն հսկողութւն հեռացուած (2669): Թէպէտև օրինական խնդիր է թէ կտակի կատարման իրաւունք ունեցողներ կրնա՞ն արդեօք վաւերապէս կտակի փոփոխութեան իրաւունքն ալ վայելել կամ թէ կտակի մը գործադրութեան յանձնառու եղողներ կրնա՞ն անոր պայմանները այլայլել և մաքուր խղճով արդիւնքը վայելել: Հարկաւ ինքն Թէոդորեան ալ ուշաբերուած է իր միամտաբար կատարած գործադրութեան վրայ երբոր Մխիթարեանց բացարձակ տիրապետութեան պայմանը իր դէմ ալ գործածուեցաւ, և գուցէ այդ ուշադրութեան հետևանքն էր վարժարանը Փարիզ փոխադրելուն առթիւ կապմուտ ընդ իրաւախոհութեան մը ծրագիրը (ԹՈՂ. Գ, 609), որ սակայն չլրացաւ , և ոչ ալ նեղ ժամանակի մէջ Յովհաննէս Մուրատեանի կամքին դիմումը հիմնական արդիւնք մը ունեցաւ, և Թէոդորեան իր աշխատութեան վրայ ուրախանալու մխիթարութենէն իսկ զրկուեցաւ: Բայց մենք եղելութեանց կարգին դառնանք:

2671. ԹԵՌԴՈՐԵԱՆԻ ՎՏԱՐՈՒՄԸ

Հիւրմիւլեան արքայազնը և իրեն կամակիցներուն բռնած ուղղութեան դէմ Թէոդորեանի դժգոհութիւնները, միաբանական շրջանակին մէջ մնացէր էին, և իրենց մասնաւոր թղթակցութեանց մէջ փակուած էին, մինչև առաջին պարսաւագիրքին երևան գալը Հայոց մէջ (2668): Բայց երբ Մխիթարեանց իսկական ընթացքը հրապարակ ելաւ հայադաւան եկեղեցին անարգելովն և Մուրատեան վարժարանին իսկութիւնը այլապէս չէր թելադրուած, Թէոդորեանի և իր երկու համախոհներուն դիտողութիւններն ալ ստիպուեցան հրապարակ ելլել: Զմիւռնիոյ Արշալոյս Արարատեան լրագիրի մէջ, 1852 հոկտեմբեր 10-ին երևցած Մխիթարեանց մասին մեղադրական յօդուածը, պատեհ առիթը ընծայեց, և Գաբրիէլ վարդապետ Այվապեանի ստորագրութեամբ և նոյեմբեր 7 թուականով պատասխան մը երևցաւ նոյն լրագիրի վրայ, որով կը յայտարարուէր թէ Վենետիկէ ելած պարսաւագիրքը պէտք է միայնոյ անունը ծածկող հեղինակին և ոչ բովանդակ միաբանութեան վերագրեալ (ԹՈՒԳ.159-160): Հաւանաբար այդ բանը գրողն ալ իր գրածին չէր հաւատար, զի Մխիթարեանց տպարանին մէջ Մխիթարեանց մասին տպագրուած անանուն գիրք մը չէր կրնար միայնոյ անձի մը կողմէ հրատարակութիւն սեպուիլ, բայց Թէոդորեան և ընկերք ուրիշ ձև մը չունէին գտած միաբանութիւնը արդարացնելու: Յօդուածը Հայր Գաբրիէլ Այվապեան ստորագրութիւնը կը կրէր, որ չէր ուզած իր անունով հրապարակ իջնել, իսկ Այվապեան վարդապետը հարապատ եղբայրն էր հռչակաւոր ծովանկարիչ Յովհաննէս Այվապովսքիի (2591), հայադաւան ծնած, Մխիթարեանց աշակերտելով հռոմէականութեան անցած և նոյն միաբանութեան անդամակցած, և վարձագեալ և կարող և արդիւնաւոր Մխիթարեաններէն մին եղած: Այդ նամակին հրատարակուելուն վրայ փոխադարձ վէճ մը սկսաւ Փարիզի երեք Մխիթարեաններուն և Ս. Ղապարու Կ. Պոլիս գտնուող Մխիթարեաններուն միջև, այս վերջինները պնդելով թէ այն հրատարակութիւնը ոչ թէ մէկ անձի այլ միաբանութեան գործն է, որով պնդաւորինս վճարողութեան պամենայն միաբանութեամբն իբրև պահանջարկ փառաց արկեալ կըլլային և միանգամայն վանմիաբանութեան հաւաստիքը կու տային (ԹՈՒԳ.168): Իբրև առաջին գործնական քայլ մը դեկտեմբեր 19-ին Այվապեան հրաման ստացաւ Վենետիկ դառնալ, որուն համամտութեամբ ընդդիմացան Փարիզի երեքները դեկտեմբեր 31-ի գրութեամբ (ԹՈՒԳ.186-190): Գործը աւելի պայրացաւ երբ միաբանութեան կողմէ 1853-ին սկիզբները նոր յայտարարութիւն մը տրուեցաւ պապին կատարեալ դաւանական խոստովանութեամբ, որուն մէջ տասը յօդուածներով կը կրկնուէին հայադաւանութեան և Համապագեացին և վարժարանի աշակերտութեանց և ուրիշ կէտերուն վրայ արդէն յայտնուած ձախող տեսութիւնները: Այդ յայտարարութիւնը կը վուգադիպէր փրոփականտայի կողմէ Մխիթարեանց խնդիրը փակելու պարագային, որուն վրայ Հասուն և Իլէրո Հոռմի մէջ հաշտուելով միասին Կ. Պոլիս դարձան (2667): Իսկ Մխիթարեանց յայտարարութիւնը 1854 փետրուար 2-ի պապական կողակով հրատարակութեան ալ տրուեցաւ (ԹՈՒԳ.23): Փարիզի երեքները պնդեցին իրենց տեսութեանց վրայ և յայտարարութիւնը քննադատեցին և հայր Ղևոնդ Ալիշան վիրենք համոզելու դրկուեցաւ, բայց նա ալ պահ մը անոնց հետ միացաւ և անոնց հետ ստորագրեց, թէպէտ Վենետիկ դառնալէն ետքը նորէն Հիւրմիւլեանի ուղղութիւնը կը պաշտպանէր: Փարիզի արքեպիսկոպոսն և ոստիկանապետն ալ Հոռմի խնդրանօք վարժարանը Հոռմ փոխադրելու առաջարկը կրկնեցին, բայց չպնդեցին, և Մուրատեան Յովհաննէսի կամքը իբրև փաստ գործածուեցաւ տեղափոխութիւնը արգիլելու: Եդուարդ արքեպիսկոպոս Հիւրմիւլեան, արքայազնը Հոռմէ Փարիզ գալով Այվապեանը համոզեց վարժարանէն ելլել, որպէսզի միաբանութիւնը չվտանգուի, ինչպէս որ գործադրուեցաւ ալ 1854 օգոստոսին (ԹՈՒԳ.392), և Այվապեան ելաւ մասնաւոր տուն

մը հիւրընկալուիլ Փարիզի մէջ: Բայց անհամաձայնութիւնները չէին վերջանար, և Հիւրմիւլեան արքահայր կորոշէ Թէոդորեան ու Գալֆայեան վարժարանէն վտարել, որ վարժարանը Հռոմ փոխադրելու և հռոմէականացնելու գործը յաջողի, և այս նպատակով անձամբ Փարիզ կու գայ 1855 մարտ 10-ին: Հապի թէ նպատակը կը յայտնուի Թէոդորեան և Գալֆայեան կը պահանջեն որ իրենք 18 ամիս ևս մնան, մինչև որ դասարանի մը ընթացքը լրացնեն (ԹՈՂ.Գ.473), աշակերտներ կը խլրտին, Փարիզի արքեպիսկոպոսին և պապական նուիրակին միջամտութեանց դիմում կըլլայ, Գալֆայեանի անմիջապէս մեկնելուն պահանջ կը յարուցուի, գաղղիական ոստիկանութեան և օսմանեան դեսպանատան ալ դիմումներ կը կատարուին, և երբ այդ միջոցներ արդիւնք չեն ունենար, Հիւրմիւլեան 1855 ապրիլ 14-ին պաշտօնագիրներով բացարձակապէս կը հրամայէ Թէոդորեանի և Գալֆայեանի պաշտօնական հաշիւները ութ օրէն յանձնել և Վենետիկ դառնալ, և հրամանին գործադրութեան համար կը դիմէ դատական ատեանին և Փարիզի արքեպիսկոպոսին, քաղաքական և հոգևորական իշխանութիւններով ստիպելու համար, և իրօք 1855 մայիս 11-ին գաղղիական դատարանէն վերջնական վճիռ կը տրուի որ Թէոդորեան և Գալֆայեան վարժարանէն ելնեն, քանի որ վարժարանին միաբանութիւնն է, և իրենց ներկայութիւնը խռովութեանց առիթ կու տայ: Իսկոյն վճիռը կը գործադրուի, աշակերտներու բողոքը ոստիկան պինուորներով կը զսպուի, Թէոդորեան և Գալֆայեան դատարանէն դառնալով վարժարանի դուռները իրենց դիմաց փակուած կը գտնեն, իրենց սենեակները դարբինի ձեռքով կը բացուին, և պինուորական հսկողութեամբ իրենց ինչքերը կը յանձնուին, և նոյն երեկոյ վարժարանէն դուրս կը գիշերեն, և վերատեսչութիւնը կը յանձնուի Ռափայէլ Թրեանց վարդապետի (ԹՈՂ.Գ.538-548): Բայց շփոթ վիճակը կը շարունակէ, 15 թոշակաւոր աշակերտներ հարուստներու զաւակներ վարժարանէն կելնեն, Այվայեան որ կանուխէն ելած էր, վերջին ելնող երկուքներուն հետ կը միանայ, և Վենետիկոյ Մխիթարեան միաբանութենէն բաժնուելով նոր գործունէութեան ասպարէզ կը կազմեն, Մասեաց Աղաւնի ամսագիր մը հիմնելով, և Հայկապեան Վարժարան մըն ալ բանալով Փարիզի մէջ:

2672. ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆ

Պարբերական հրատարակութեան գործը գրական մասնաւոր ձեռնարկ մը ըլլալուն, վանց կընենք անով զբաղիլ, բայց քանի մը տեղեկութիւններ պէտք է տանք Հայկապեան Վարժարանին վրայ: Մուրատեան վարժարանէ արտաքսեալ երեք վարդապետներէն երկուքը, Թէոդորեան և Գալֆայեան, իբրև վարժարանին Հռոմ փոխադրուելուն և հռոմէականաց յատկանալուն հակառակորդներ, Հռոմի Հրամանով Փարիզի արքեպիսկոպոսարանի կողմէն կախակայեալ, այսինքն եկեղեցական պաշտամունքէ արգիլեալ հոչակուած էին, իսկ Այվայեան իբրև կանուխէն հեռացած և կամովին բաժնուած ազատ էր այս արգելքէն: Նոյնպէս առաջի երկուքը իբրև գաղղիական դատարանէ դատապարտութիւն կրած, վարժարանական տեսչութեան և դատարարական իրաւունքներէն զրկուելու կը նկատուէին, Այվայեանն ալ անոնց ընկերակից դարձած էր ուստի պարտաւորեցան վարժարանի իրաւունք ունեցող գաղղիացիի մը անունով բանալ Հայկապեան Վարժարանը, 1855 օգոստոսին, վճիռէն և վտարումէն երեք ամիս ետքը (2670), միայն 12 աշակերտներով, որոնք Մուրատեանէ հրաժարողներ էին: Քանի որ Մուրատեան վարժարանի խնդիրը Հայ Եկեղեցոյ և հայադաւան աշակերտաց շուրջի կը դառնար, նոր վարժարանը բացողներ լիայոյս էին թէ հայ ազգութենէ առատ և յօժար օժանդակութիւն պիտի գտնային, բայց անագան սկսան ժողովել զմանուկս յուսում լեզուագիտութեան և բնական գիտութեանց (ՊԷՐ. 369): Նոր վարժարանը մրցակից պիտի հանդիսանար Մուրատեանին, և Մխիթարեան միաբանութիւն և Հռոմի պապութիւն և Փարիզի արքեպիսկոպոսարան համամիտ

գործակցութեամբ ամէն տեսակ դժուարութիւններ կը յարուցանեն Հայկապնեան վարժարանին բացուելուն, իսկ Թէոդորեան և ընկերք 1855 յունիս 6-ին Կ. Պոլսոյ պատրիարքարանին կը դիմեն օգնութիւն և պաշտպանութիւն ապահովելու, և Յակոբոս պատրիարքը և ամիրայական ժողովը կը յորդորեն Մխիթարեանց ձեռքէն հանել Մուրատեան կտակին գործածութիւնը, որ ընդհանուր ազգին որբոց և աղքատաց սահմանուած է կտակողին կամքով, մինչև այժմ փոքրամասնութեան մը միայն կը յատկացուի Հոռոմի կամքով և Մխիթարեանց համակերպութեամբ: Պատրիարքարանը նկատողութեան կառնէ նամակին պարունակութիւնը, և յուլիս 5-ի նամակով գոհունակութիւն կը յայտնէ եղած առաջարկին, ոչ առանց վարմանք յայտնելու թէ քառասուն տարուընէ ի վեր, որ կտակը եղած է, այս առաջին անգամ է որ վաւերական գրութեամբ կը հաղորդուի իրենց ազգային իրաւունքը, որով հաղորդողներ գոհ պէտք չէ ըլլան այս տարժամ յայտարարութեամբ ինքզինքնին անպարտ համարել այսուհետև (ԹՈՒ. Դ. 9): Ասով մէկտեղ գործը հետապնդելու հրահանգ կը տրուի Կրճիկեանի, որ պետական պաշտօնով Փարիզ կը գտնուէր, գործը ուսումնասիրելու և հետաօգտելու, և նա իր կողմէն Մելիքեան ճարտարապետը Լոնտրա կը յղէ: սակայն խնդիրը գործողութեանց արգելք կը լինի, Կ. Պոլիս գումար հասցնելու դժուարութիւն կը վզայ, և Փարիզ ինքզինքը միջոցներէ վուրկ կը գտնէ, և հապիւ թէ Պօղոս Տատեան վառօդապետ Փարիզ գտնուելով նախնական պատրաստութիւնները կը հոգայ (ԹՈՒ. Դ. 11): Հայկապնեան վարժարանը բացողներ տեսնելով գործին կաղնիկաղ ընթացքը բերանացի բանակցութեանց համր Գալֆայեանը ճամբայ կը հանեն, ու 1856 ապրիլին կը հասնի Կ. Պոլիս (ՎԴՁ, Ա. 17), և խորհրդակցութեան կը մտնէ պատրիարքին և աւագնոյն հետ (ԹՈՒ. Դ. 17):

2673. ՎԵՐԱԴԱՐՁ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ

Նոր և բարձր վարժարան մը հիմնել առանց կտակի կամ բարերարութեան կամ դրամագլուխի ապահով միջոցներ ունենալու, այլ լոկ առձեռն նպաստներու և ենթադրական թոշակներու վրայ հիմնուելով, այն ալ հեռաւոր Եւրոպիոյ մէջ, ստոյգ որ յախուռն բերմամբ ձեռնարկուելու գործ մը չէր: Այս կէտին աւելցուի որ հիմնարկու ներկայացողներ ոչ միջոցներու տէր անձեր էին, և ոչ կշռուած նախապատրաստութեամբ գործի սկսողներ, այլ հակառակութեանց առջև ընկճուած, աւելի կիրքէ քան թէ ձիրքէ մղուած երեք եկեղեցականներ, որոնք ազգային մարմինին հետ հաղորդակցութիւն և կապակցութիւն ալ չունէին, այլ իրենց միաբանութենէն հեռացած, հոռոմէականութեան դէմ հակառակած, տակաւին հոռոմէական եկեղեցականի կերպարանը չէին մերկացած, և Փարիզի լատին եպիսկոպոսարանին պաշտպանութիւնը կը փնտոէին: Այդ կէտերը լուրջ նկատողութեանց և դէմընդդէմ կարծեց առիթներ ընծայեցին վարժարանին վարիչներուն և ազգային մեծամեծներու միջև, և Գալֆայեան համոզուեցաւ թէ առանց համարձակ և յատուկ որոշման մը յաջողութիւն յուսալ աւելորդ էր, և պէտք էր ուղղակի Հայ Եկեղեցոյ գիրկը վերադառնալ և հայ հայրապետութեան և պատրիարքութեան հպատակելու որոշման յանգիլ: Իր տեսութիւնը կը հաղորդէ Փարիզ եղող ընկելներուն, երկուքն ալ հայադաւան եկեղեցոյ աւապանէն վերածնուած անձեր (2669,2671), որոնք իրենց որոշման մէջ վարանում չէին վզար, և մայիս թուականով Յակոբոս պատրիարքի ուղղուած և մայիս 18 թուականով Ներսէս կաթողիկոսի ուղղուած նամակներով Հայաստանեայց եկեղեցոյ վարդապետութեանց և իշխանութեան հպատակելնին կը յայտնեն և գիրերը Գալֆայեանի կը հասցնեն որ իրեն ստորագրութիւնն ալ աւելցնելով Կ. Պոլսոյ պատրիարքութեան յանձնէ: Պատրիարք ու մեծամեծաց ժողովը խնդութեամբ ստացան իրեն յանձնուած երկու յայտարարութիւնները, և քաջալերուեցան Հայկապնեան վարժարանի պաշտպանութեան ձեռնարկել, մէկ մէկ օրհնութեան կողակ յանձնուեցաւ երեք վարդապետներուն, կաթողիկոսին ուղղուած գիրը յանձնարարականով

հասցեին յղուեցաւ (ԹՈՒԴ.Դ.21), Հայկազ նեան վարժարանին համար խնամակալաց ժողով մըն ալ կազմուեցաւ Պետրոս Խօրասանճեան ամիրայի նախագահութեամբ, աշակերտներ հաւաքելու հետամուտ եղաւ, և 40 հատ ընտրուեցան փոքրներ և չափահասներ խառն, և 16,000 Ֆրանքի գումար մըն ալ առձեռն յանձնուեցաւ Գալֆայեանի, և վարժարանի գոյացած պարտքին մնացորդ 30,000 Ֆրանքն ալ փութով հասցնելու խոստումով Գալֆայեան Փարիզ դարձաւ, 1856 օգոստոսին (ԹՈՒԴ.Դ.33): Ներսէս կաթողիկոս ալ մեծ խնդութեամբ ստացաւ վերադարձողներուն յայտարարութիւնը, և հետամուտ եղաւ աղբիւր ինչ օժանդակութեան ի հաստատութիւն վարժարանի նոցա անդ գտանել, և Ներսէսի հնարագէտ միտքն և եռանդուն հոգին գտանէր վայն անշուշտ եթէ ամ մի ևս կացեալ էր ի կենդանութեան իւրում (ԹՈՒԴ.Դ.27): Վերադարձող վարդապետներ իրենց առած քայլին բացատրութեան և ջատագովութեան համար յատուկ հրատարակութիւն մըն ալ պատրաստելով ազգին մէջ ցրուեցին (ՎԴՁ.Ա.39-53), որով իրենց հանդէպ համակրութիւնն ալ աւելցաւ: Մեծ էին ակնկալութիւնները, այլ մեծ չեղան արդիւնքները, թէպէտ ձախորդութիւնն չենք կրնար որոշ միակ պատճառի մը վերագրել: Եթէ Ներսէսի արագահոս վախճանը ռուսահայոց կողմէ սպասուած օգնութիւնը արգիլեց, Կ. Պոլսոյ մէջ ալ մէկէ աւելի խնդիրներ կը յուզուէին, և նոյն իսկ տեղական հաստատութիւններ դրամական դժուարութեանց մատնուած էին: Յակոբոս պատրիարքի կը պակսէր այլևս ժրութիւն և ազդեցութիւն, իսկ Կ. Պոլսոյ մեծամեծներ աւելի քաղաքավարի խօսքերով և մեծամեծ խոստումներով քան փութաջան և արդիւնաւոր գործունէութեամբ, ինչպէս լաւ դիտեր էր Ասլանեան Ստեփան բժշկապետ: Գործի գլուխ կեցող վարդապետներէն ամէնքն ալ Թէոդորեանի ջլապինդ բնոյթը չունէին, և այդ մասին Թէոդորեան ինքն ալ գանգատներ յայտնած է իր պատմութեան մէջ: Այվապեան Գաբրիէլ վարդապետ լքում զգաց, երբ մէկ կողմէն միջոցներու անձկութեամբ կը նեղուէր, և միւս կողմանէ Կ. Պոլիսէ եկած հասակաւոր աշակերիներու ընթացքը կը տեսնէր, որոնք դպրոցական կարգապահութեանց ըմբոստ ազատ կեանքի հովեր կառնէին: Իր եղբարն ալ ծովանկարիչ Այվապովսքին վայն կը յորդորէր Ռուսաստան դառնալ և ռուսահայոց օժանդակութեամբ այնտեղ վարժարան բանալ, միանգամայն էջմիածնի մէջ եպիսկոպոսութեան և առաջնորդութեան աստիճաններով փայլելու հեռապատկերը կը ցուցնէր: Փարիզի ռուսական դեսպանն ալ նոյն միտքերը կը թելադրէր, Փարիզի վարժարանով գաղղիական ազդեցութեան աճումը արգիլելու նպատակով: Ահա պատճառները, որոնցմէ յորդորուած Գաբրիէլ վարդապետ Այվապեան, որ յայսմ հետէ մականունին Այվապովսքի ձևը սովորական դարձուց, երկու տարի Հայկազ նեան վարժարանի աշխատելէ ետքը ընկերներէն կը բաժնուէր, 1857 մայիսին Ռուսաստան կանցնէր, և Կաֆա Թէոդոսիա եղբօրը մօտ կը հաստատուէր, Թէոդորեանի կը խոստանար Կ. Պոլիսէ անցնելով խոստանար Կ. Պոլիսէ անցնելով նպաստի առաքումը փութացնել տալ, բայց չէր յաջողեր միշտ պատճառներով: Այվապովսքի Փարիզէ չմեկնած 1857 մայիս 5 թուականով Ուրուագիծ ոգւոյ և ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ գրքույկը հրապարակ կը հանէր, և Մխիթարեանց Մխիթարի ոգիէն օտարանալուն փաստով իրենց ալ Մխիթարեաններէ հեռանալը կը ջատագովէր, աւելի ընդարձակ կերպով քան ինչ որ առաջին հրատարակութեամբ ըրած էին (ՎԴԾ. Ա. 39-53):

2674. ՆԵՐՍԷՍԻ ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԵՐ

Արդէն հասած կը գտնուինք Ներսէս կաթողիկոսի մահուան թուականին, որուն գործունէութեան ամփոփումը տուած ենք արդէն: Անոր կեանքին վերջին մասն ալ միևնոյն ձևն ու կերպարանն ունի ինչ որ առաջին ժամանակները ունեցաւ, այնպէս որ նոր աւելցնելիք նկարագիր մը չենք գտնար նոր միջադէպներուն կարգին: Իրաւանց պաշտպանութեան վերջին

գործերէն մին եղաւ Սերոբէ Արարատեան եպիսկոպոսի թողօնին մասին ըրածը: Աստրախանի ժողովուրդը բողոքեր էր թէ եկեղեցական հասոյթներուն արդիւնքը իր անունով պետական դրամատան է յանձներ, և Սարգիս Զալալեան քննիչ էր վրկուած: Բայց Զալալեանի հասնելուն Արարատեան արդէն մեռած էր և գործը ուղղելու ատեն չէր. ուստի Արարատեանի հռոմէադաւան ապականները Պօլօթէնիէի հիմամբ (2530) խնդիր յարուցին և իբր ժառանգներ դրամատան գումարը իւրացնել ջանացին, և պետական պաշտպանութիւն ալ հրաւիրեցին բայց Ներսէս մինչև իր մահը ընդդիմացաւ պնդելով թէ ինչպէս քննութիւնը ցոյց է տուել Սերովբէն եկեղեցիների փողերն է իրեն սեպհականացրել ապօրինաբար, և թէ կուսակրօններու թողունին մասին կաթողիկոսարանը արդէն բողոքած է Կարբեցիի օրէն սկսելով, և խնդիրը չէ վճռուած: Այդ մասին իրեն հաղորդուած էր թէ քանի մը յօդուածներու մասին փոփոխութիւն առաջարկելէ լաւագոյն էր ամբողջ կանոնագրութեան մասին դիտողութիւններ և փոփոխութիւններ առաջարկել, և Ներսէս ալ մասնաժողովի մը ձեռքով ամբողջ կանոնագրութեան մը ծրագիրը պատրաստել տուած էր, վոր սակայն չէր հաւանած, և ինքն մը ծրագրած էր: Բայց մտադիր էր նաև այդ նոր ծրագիրը հմուտ եկեղեցականներու և աշխարհականներու ժողովի մը քննութենէն անցունել, և անկէ ետքը Ռուսաց տէրութեան ներկայել, ինչ որ տեղի չուներցաւ վաղահաս մահուանը պատճառով (ՅՆՁ. 55):

2675. ՆԵՐՍԷՍԻ ՄԱՀԸ

Յիշելու պարագայ մըն է ևս Խաչատուր Լաւարեանի խաղացած խաղը, որուն Ներսէսի հետ թշնամանալուն պարագաները բացատրած ենք իր կարգին: Նիկողայոս Ա ի յաջորդող Աղեքսանդր Բ. կայսեր թագադրութիւն պիտի կատարուէր 1856 օգոստ. 18-ին, և կաթողիկոսն ալ պէտք էր հրաւիրուէր ըստ օրինի: Խաչատուր Լաւարեան մտերիմներու ձեռքով աշխատեցաւ Ներսէսը այդ պատիւէն վրկել, և հրաւէրը այնպէս գրուեցաւ, որ ներկայացուցիչ մը դրկէր, գուցէ խոր ծերութիւնը պատրուակ գործածուեցաւ: Ներսէս վգածուեցաւ, Սարգիս Զալալեան եպիսկոպոսը ներկայացուցիչ նշանակեց, բայց միանգամայն իր մտերիմներէն Օրլովի և Վորոնցովի առանձինն գրեց և խնդրեց պարզել իր կասկածը, որ մի՛ գուցէ կայսեր կամքով եղած լինի իւր ներկայ չլինելը: Երկուքն ալ պատասխանեցին թէ կասկածի տեղի չկայ, թէ թնգաւոր կայսրը ափսոսացել է որ այսպէս տնօրինուել, և թէ նոր կառավարչապետ Իշխան Բարիատենսքի ունի կայսրից ձեզ բերելու հաճոյական յանձնարարութիւն: Այդ յանձնարարութիւնը եղած կըլլայ կայսերական ողջունի հետ Ս. Անդրէի մեծ շքանշանը, և Բարիատենսքի հապիւ Տփղիս հասած 1857 փետրուարին Ներսէսի կայցելէ, և միւս օր Ներսէս փոխադարձ գնում է նորա այցելել: Մի քանի օրից յետոյ փետրուար 12-ին Բարիատենսքին դարձեալ հրաւիրում է Ներսէսին իւր մօտ, և առանձինն տեսակցութիւն կունենան: Նոյն գիշերը Ներսէս վախճանվում է (04. ԲԱՁ.422), զի փետրուար 13-ին, իւր 86 տարեկան հասակին, անակնկալ մահը յափշտակեց զինքն Հայաստանեայցս մայրաթոռէն (ՆՐՍ.24), և նոյն առաւօտուն կաթողիկոսին գտնում են վախճանած գրիչը ձեռին, մանաւանդ թէ գրիչը դեռ թաց, և մի թուղթ սեղանին վրայ կէսը գրուած, որ Ռուսաց տէրութեան ներքին գործոց պաշտօնէին ուղղուած է եղեր, իսկ նիւթը կաթողիկոսական իրաւունքների համար պաշտպանութիւն, վոր կարդացողներ ալ եղեր են: Ներսէսի անակնկալ մահը միտքերու մէջ յուզուած է պատճառած, մի՛ գուցէ դաւաճան ոճիրի մը վոհ գացած ըլլայ, և մինչև իսկ Զալալեան եպիսկոպոսի վրայ կասկածներ խօսուած են: Մեզի անհնար է փաստացի կասկած մը յայտնել, զի քննութեամբ վկայուեր է, որ երեկոյեան բոլորովին առողջ է եղել, և ոչինչ չէ կերել, բայց միայն կէս նուռ վրան շաքար ցանած, և գիշերուան մէջ ինքն իրան ճրագ վառելէ գրել այն թուղթը, որ կիսատ մնացած էր սեղանի վրայ (ԾԻԼ.Ա.38): Մանաւանդ թէ կը կարծենք որ առաւօտուն գրիչը ձեռքը գտնուած անխոռով և խաղաղ գիրքը կասկածները հեռացնելու կը ծառայէ, ուստի և

Էջմիածնի գործերու հմուտ պատմողներ ալ, պարզապէս կաթուածով վախճանեցաւ կը գրեն (ՄՈՎ.361): Միւս կողմէն Ներսէս 86 տարեկան էր արդէն, թէպէտ ոչ 96, ինչպէս վաւերական յիշատակներով ճշդուած է (ՃՌԱ. Բ. 142), և թէպէտ տակաւին ժիր, բայց չարաչար յօգնած էր, և այսպիսի ծերունիներուն համար ցանցառ չէ յանկարծական կերպով կեանքերնին կնքել, իսկ անակնկալ մահերն ալ սովորաբար պատճառաբանութեան կասկածներ կը վարթուցանեն, թէպէտ յաճախ ձրիաբար:

2676. ՆԵՐՍԷՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Փետրուար 13ի առտուն կանուխ, այն տարի Վարդանանց և Ղևոնդեաց տօներուն յաջորդող բարեկենդանի վերջին եօթնեկին չորեքշաբթի առաւօտուն, երբ Տփղիսի բոլոր Հայ եկեղեցիներու պանգակները միահամուռ մահապանգ դօղանչիւնները սկսան հնչեցնել, յանկարծական սարսուռ մը և մելամաղձիկ թախծութիւն մը տիրեց բոլոր քաղաքին վրայ ուրախութեան օրէր սուգի փոխուեցան, և ամէն աստիճանէ և ազգութենէ մարդիկ ողբացին ներսէսի կորուստը: Միւս օր հինգշաբթի Տեառընդառաջ և մինչև 17 բուն բարեկենդանի օրը մարմինը առաջնորդարանին մէջ պահուեցաւ, և միայն 18-ին բակլախորանի երկուշաբթին կէսօրէն ետքը Վանքի մայր եկեղեցին տարուեցաւ մեծ հանդէսով, որուն կը հետևէին փոխարքան և եքսարքը, և եկեղեցական ու քաղաքական ու պինուորական բարձրաստիճան անձեր, թող անթիւ անհամար բազմութիւնը: Հանդէսին կը նախագահէր Սարգիս Զալալեան եպիսկոպոսը, որ միշտ Ներսէսի հետ էր, պի Տփղիս սեփական թեմակալ չունէր. Ներսէս տարույն մեծ մասը հոն կանցունէր, և վիճակային գործերն ալ կը հոգար, իսկ Էջմիածնի մէջ կաթողիկոսի բացակայութեան սինոդի նախանդամ Ղուկաս արքեպիսկոպոս Մաստարացին, Արագածունի ալ կոչուած, տեղակալութիւն կը վարէր, և ներքին կացութեան կը հսկէր (ՄՈՎ.360): Գոյժը սինոդականներուն հաղորդուած էր և Տփղիս սպասուէին, բայց հապիւ 23-ին հասան վեց սինոդական եպիսկոպոսներ, որով հանգուցեալ կաթողիկոսի մարմինը երեք օր ալ եկեղեցին մնաց, և այդ միջոցին արք և կանայք, ծերք և տղայք, հայք և օրթոտոքս, հրեայք և մահմետականք առանց տարբերութեան եկեղեցի կը վազէին իւրեանց վերջին համբոյրը տալու: Վերջապէս փետրուար 24-ին մեծ պահող երկրորդ կիրակի օրը հանդիսաւոր պատարագ մատուցուեցաւ և հոգեհանգիստ կատարուեցաւ, և կէսօրէն երկու ժամ ետքը յուղարկաւորութեան թափօրը կազմուեցաւ Վանքի եկեղեցիէն մինչև քաղաքին երևանեան դուռնէն դուրս: Թափօրին առջևէն կերթային 12 հայ հեծեալներ և դագաղը տանելու սահմանուած ոսկեպարզ կառքը, սև ամպ հովանիով ծածկուած և առ ճրագրներով շրջապատուած, Ներսիսեան դպրոցի աշակերտներ խմբովին կը մասնակցէին իբրև դպիր, և բազմաթիւ եկեղեցականներ սևազգեստ, ետևէն դագաղը եկեղեցականներէն տարուած, որուն կը հետևէին փոխարքայն անձամբ պինուորական և քաղաքական բազմաթիւ հետևորդներով, ամէն ազգէ մեծամեծներ, և ապա բազմութիւն անթիւ ժողովրդոց վանապան ազգաց: Թափօրին վերջին ժամադրավայրը կրկին հոգեհանգիստ կատարուեցաւ, դագաղը կառքին մէջ գրուեցաւ, և Էջմիածինէ եկող սինոդականներու հսկողութեամբ փամբայ ելաւ, և արագ ընթացքով երկու օրէն Էջմիածին հասաւ փետրուար 26-ին: Միւս օր 27-ին, չորեքշաբթի, մարմնոյն օծումը շքեղաշուք հանդիսի կատարուելէն յետոյ թաղուեցաւ վանքի գաւթիս աջակողմը, Դանիէլ կաթողիկոսի շիրմին մօտը: Սինհոդոսը փութաց ամէն կողմ գոյժը հաղորդել, և ամէն եկեղեցիներու մէջ հանգստեան պաշտօններ հրամայել, և կաթողիկոսին անունը պատարագի մէջ իբր հանգուցեալ յիշատակութիւն հրահանգել: Իսկ յաջորդին ընտրութեան համար, որովհետև Պօլօթէնիէի նշանակած տարեւոր միջոցը (ՊՕԼ. 3) ձմեռուան կը հանդիպէր, յարմար տեսնուեցաւ ընտրութիւնը յետաձգել 1858 մայիսին Հոգեգալուստի շաթուն: Աթոռոյ պարապութեան միջոցին

տեղակալութիւնն ալ, նոյնպէս Պօլօժէնիէի կարգադրութեամբ (ՊՕԼ. 8) առանց յատուկ ընտրութեան, վիճակեցաւ սինոդի նախանդամին, Մաստարացի որ և Արարածունի Ղուկաս արքեպիսկոպոսի:

2677. ՆԵՐՍԷՍԻ ԱՐԺԱՆԻԲԸ

Ներսէս Աշտարակեցիի անունը հրապարակի վրայ տեսանք առաջին անգամ իր վարդապետին Դանիէլ Սումառեցիի հետ Ջմիւռնիա գալուն առթիւ 1796-ին (2257), և այն թուականէն յետոյ մինչև 1857, 61 տարի շարունակ գործունեայ ասպարէզին վրայ մնաց նա անընդհատ շարունակութեամբ, զի 86 տարեկան յառաջացնել և ծանրացեալ տարիքին մէջ ալ կանոնաւոր աշխատութեան վրայ էր, և մինչև մահուան նախընթաց օրը պաշտօնական գործերով կը վբաղէր Ներսէսի գործունէութիւնը երկար տևողութեանը հետ այլապանութեանց առաւելութիւնն ալ ունեցաւ իր մէջ, զի գրեթէ չմնաց միջավայր մը որուն մէջ գործած չըլլայ, եկեղեցականէն մինչև պիտոյականը, ուսումնականէն մինչև քաղաքագիտականը, խաղաղականէն մինչև խաղմականը պալատականէն մինչև ռազմականը, բայց ոչ մէկին մէջ յետնալ երևցաւ, և ամէն տեղ գիրքին պահանջած գործիչը եղաւ, և միշտ հնարաւոր յաջողութեամբ և պատուաւոր յաջողականութեամբ ձեռնարկներուն մէջէն ելաւ: Այս ըսելով բնաւ յաւակնութիւն չունինք կարծելու թէ որևէ թերութիւն ունեցած չէ, կամ թէ երբեք մեղադրանաց ենթարկուած չէ զի գիտենք թէ որչափ մէկ մը գործունէութեանց մէջ կընդարձակուի, և արդիւնաւորութեամբ կը պսակուի, այնչափ աւելի մախացողներու և վնասուողներու լուտանաց կենթարկուի: Ներսէս ալ ունեցաւ իր նախանձոտները, և առաւելօք ունեցաւ իրմէ վնասուողները, քանի որ բուռն պայքար մղեց աղիմակի գործողներու, վեղծում ընողներու, ապօրինի վարուողներու, հանրութիւնը խաբողներու, և օրէնքի անսաստողներու դէմ, որոնց ամէնքն ալ հարկաւ իրենց ձգտումներուն և իրենց շահերուն թշնմափ պիտի նկատէին իրենց դէմ արգելք հանող անձը: Բայց ասոնց ամէնն ալ ուրիշ բան չկրցան ըսել, բայց եթէ բնաւորութիւնը խծրծել, կերպերը մեղադրել, չափազանցութիւններ վերագրել, ձեռնարկները քննադատել, բայց չկրցան ոչ անիրաւութիւն մը հաստատել, ոչ շահադիտական հոգի ենթադրել, և ոչ հանրութեան բարին անձնականին զոհած ըսել: Նոյնպէս անտեղութեանց և վեղծմանց ընդհանուր տիրապետութեան դէմ պայքարի մտած ըլլալով, չէր կրնար մեղմ միջոցներով գործել, և բուռն միջոցներու պէտք ունէր, որոնց պէտք է խոստովանիլ թէ ձգտումներն ալ շատ յարմարութիւն ունէին, և պէտքն ու բնոյթը ձեռք ձեռքի տալով կազմեցին Աշտարակեցին, տեսակին մէջ իր ուղիղ մտադրութեան համաձայն, և իր բարձր նպատակին օգտակար: Այնպէս որ կրնանք առանց վարանման յայտարարել, թէ իր ժամանակին ամենամեծ ազգային դէմքը հանդիսացաւ, հայութեան համար պատրաստուած իսկական օգուտներու շարժառիթը ճանչցուեցաւ, և ազգային կեանքին դէպի լաւն յեղաշրջման գլխաւոր ազդակն եղաւ: Այս տեսակ անձնաւորութիւններ, երբոր իսկական արդիւնքներով և իրական արժանիքներով կը ներկայանան, անպէտք խծրծանք կըլլայ, անոնց մասին մանր պարագաներու և աննշանակ հանգամանքներու դիտողութեանց մտնել: Ներսէսի արտաքին երևոյթին մասին մեզի հասած կենդանագիրներ և նկարագիրներ կը ներկայէն վայն կազմուածով փոքր ու չոր մայր պթոռոյ հայրապետական գահին շրջափակին մէջ ծածկելու չափ, ջղուտ և ջղայնոտ և դիւրագրգիռ, անկքելի և բուռն, բայց միշտ իր անձին և իր կրից ու վզացմանց տէր, որուն մեծ հասատիքը տեսնուեցաւ Բեսարաբիոյ աքսորական վիճակին մէջ (2568): Այն համբաւը զոր վայելեց իր կենդանութեան տարիներուն մէջ, այն համակրական վզացումը, որով հայրապետական գահ բարձրացաւ, այն ընդհանուր հոշակը զոր մահուանէ ետև ալ վայելեց և կը վայելէ, բաւական են

արդարացնել մեր տեսութիւնները զորս անկաշկանդ բացատրել խիղճի պարտաւորութիւն սեպեցինք:

2678. ԿԻԼԻԿԻՈՅ ԱԹՈՌԸ

Կաթողիկոսութեան յաջորդին ընտրութիւնը պատմելու չանցած, պէտք կը պզանք անփոփել ինչ որ աթոռոյ պարապութեան 15 ամիսներուն մէջ գործուեցաւ և ինչ որ Ներսէսի կաթողիկոսութեան միջոցին ապագային մանաւոր շրջանակներու մէջ տեղի ունեցաւ: Կիլիկիոյ և Աղթամարի կաթողիկոսութեանց մասին, դարձեալ ընդարձակ և կատարեալ տեղեկութիւններ չունենալիս պիտի յայտարարենք, որչափ ալ կարևոր և հետաքրքրական պիտի ըլլար այդ մանաւոր աթոռներու ներքին կացութիւնը լիապէս ուսումնասիրել, և պարտաւորեալ հատուկտորներով պիտի գոհանանք: Վերջին անգամները յիշատակեցինք թէ երիտասարդն Եփրեմ Բ. Աջապահեանց եօթներորդը, 1823-ին աթոռոյ բարձրանալով 1833-ին վախճանած էր (2475), և թէ անոր յաջորդը Յովհաննէս Է. Աջապահեանց ութերորդը, Եփրեմի յաջորդելով պաշտօնավարած էր մինչև 1846 (2563): Յովհաննէսի յաջորդեց Միքայէլ Բ. Աջապահեանց իններորդը, որ այն աստիճան անբարեկարգութեան կը հասցնէ աթոռին և թեմերուն վիճակը և եպիսկոպոսական ձեռնադրութիւնները, որ Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը հարկ կը տեսնէ միջամտել Կիլիկիոյ ներքին գործերուն, և կարգիլէ ինքնագլուխ ձեռնադրութիւններ ընել, և Միքայէլ կը ստիպուի և 1850 մայիս 8-ին սէնէտ կը գրէ թէ ասկէ ետև եպիսկոպոս չպիտի ձեռնադրէ, առանց գիտութեան պատրիարքի և հոգևոր ժողովոյն պատրիարքարանի (ԻԶՄ. 481): Այս պայմանին համաձայն Այնթապի վիճակայինք 1851-ին Կ. Պոլիս կը դիմեն իրենց առաջնորդ Գրիգոր վարդապետի ձեռնադրութեանը համար, և Հոգևոր ժողովը 1851 սեպտեմբեր 6-ին դեռ արժանի չի դատեր շուտով հրահանգիր տալ (ԻԶՄ. 483): Եւ ոչ այսչափ միայն, այլ Հոգևոր և Գերագոյն ժողովները համաձայնութեամբ Կիլիկիոյ աթոռին համար կանոնադրութիւնը մը կը խմբագրէին, և վայն գործադրել տալու համար Ղուկաս Աջապահեան եպիսկոպոսը փոխանորդ անուանելով Կ. Պոլիսէ ճամբայ կը հանեն, իրեն օգնական տալով Վանեցի Մկրտիչ Խրիմեան վարժապետը, արդէն 31 տարեկան եռանդուն երիտասարդը: Ղուկաս եպիսկոպոս թէպէտ Աջապահեանց ապգատոհմէն, բայց Կ. Պոլիս մնացած և մայրաքաղաքի վարժարաններն ալ յաճախած կեդրոնին ծանօթ դէմք մըն էր և վստահութիւն կը ներշնչէր: Պատուիրակներ Սիս հասնելով 1851 նոյեմբեր 24 ին ժողով կը գումարեն, որուն մէջ Միքայէլ և ժողովականներ ստորագրութեամբ և կնիքով կը նդունին կանոնադրութիւնը: Բայց յետ տասն աւուր Միքայէլ կը մոռանայ կամ կանարգէ տուած ստորագրութիւնը, և դարձեալ իր անկանոն ընթացքը կը շարունակ: Խրիմեան թըրթռուն գրիչով կը նկարագրէ Կիլիկիոյ վիճակին և վիճակայնոց և Սիսի աթոռին և կաթողիկէին անկեալ վիճակը վիճակը (ԻԶՄ, 486 406), և Կ. Պոլսոյ պատրիարքարանը 1852 յուլիս 2-ին սաստիկ յանդիմանական գիրեր կուղղէ Միքայէլի, որ պահ մը սթափած կերևի և 1853 յունուարին Պէհէսնիի առաջնորդ Սրապիոն վարդապետի եպիսկոպոսական ձեռնադրութեանը համար Կ. Պոլիսէ հրամանագիր կը սպասէ (ԻԶՄ. 500): Բայց իր վերջին օրերը հասած էին, նոյն տարին կը մեռնի և իրեն կը յաջողէ Կիրակոս Բ. Աջապահեանց տասներորդը (ՍԻՍ. 219, և 06.ՕՐԱ.334), որ է նոյն ինքն Վերոյիշեալ Ղուկաս եպիսկոպոսը, որ օժմանը առթիւ այդ անունը կառնէր: Սա էր որ Կիլիկիոյ աթոռին վրայ կը գտնուէր Ներսէսի մահուան տարին, և մինչև 1865 պաշտօնը շարունակեց, իսկ իրեն մասին առաջիկային կը թողունք խօսիլ:

2679. ԱՂԹԱՄԱՐԻ ԱԹՈՌԸ

Աղթամարի աթոռին վրայ կը գտնուէր Յովհաննէս Շատախցին Կարբեցիի մահուան թուականին, բայց յաջորդ 1843ին ինքն ալ կը վախճանէր (2563), և Կ. Պոլսոյ պատրիարքարանը

բարեպատեհ առիթ կը կարծէ Աղթամարայ աթոռը խաւիանել, որուն կարևորութիւնն իսկ տարակուսելի էր, ուստի ամէն օրինաւոր միջոց ի գործ կը դնէ որ այլ ևս կաթողիկոսի ընտրութիւն չկատարուի, և Մահմուտ խանի ալ կը գրէ որ նոր կաթողիկոսի նստեցնելու համար չօգնէ: Սակայն Մոկացի Խաչատուր եպիսկոպոս միաբանակիցներու խորհուրդով և Մահմուտի պաշտպանութեամբ կաթողիկոս կը հռչակուի և կօծուի (ԻԶՄ.311) նոյն 1843 տարւոյ վերջերը (ԶԱՄ.Բ.150), կամ 1844 տարւոյ սկիզբները (06.ՕՐԱ.335): Պատրիարքարանը կը պիտուի կատարուած գործողութեան դէմ և արքունական հրամանով Խաչատուր կաթողիկոսի Նիկոպոլիս, որ է Շապինգարահիսարը Շարքի, և կաթողիկոսական վիճակը կը վարէ Վանայ առաջնորդ Գաբրիէլ եպիսկոպոս: Խաչատուր կայսեվրական ընդհանուր ներողութենէն կօգտուի աքսորէն դառնալու քանի մը տարի հոն մնալէն ետքը, բայց պաշտօն չի կրնար վարել, այնպէս որ 1848 նոյեմբեր 9-ին Ախթամարայ վիճակայիններուն համար Կ. Պոլիսէ միւռոն կը պահանջուի, զի 16 տարիէ ի վեր միւռոն չէր օրհնուած (ԻԶՄ.313), և 1850 նոյեմբեր 16-ին ալ քահանայ ձեռնադրելու համար իսկ արտօնութիւն կը խնդրուի: Վերջապէս 1851 յուլիս 16-ին նամակով Խաչատուրի մահը կը ծանուցուի պատրիարքարան, և կաթողիկոս ընտրելու արտօնութիւն կը խնդրուի, յայտնելով որ եթէ կաթողիկոս չգրուի մեծ շփոթութիւն կը ծագի ժողովրդոց մէջ (ԻԶՄ.317): Հոգևոր ժողովը 1951 յուլիս 28-ին ընտրութեան կը հաճի, և 1843-ի որոշումը կը փոխէ, բայց Գրագոյն ժողովը գործադրութիւնը կը յապաղէ և կը պահանջէ որ նախ շփոթութիւններ և կրօնափոխութեան սպառնալիքներ դադարին և միանգամայն Աղթամարի և Վանի կողմեր գտնուող եպիսկոպոսներու ցուցակը իրեն յղուի: Ըստ այսմ 1851 օգոստոս 7-ի նիստին կը ներկայացուի եօթը ընտրելի եպիսկոպոսներու ցուցակը, որոնք են Գաբրիէլ Վանայ, Մկրտիչ Բաղէշի, Յարութիւն Կտուցի և Մարգար Խիլանի առաջնորդներ, և Կարապետ և Մարգար Կտուցի և Պետրոս Աղթամարի միաբաններ: Ժողովը կը հաւանի ընտրութեան վերջին վեցերուն, միայն Գաբրիէլը դուրս ձգելով, իբր զի Էջմիածնի եպիսկոպոս ըլլալուն իրաւունք չունի Աղթամարայ կաթողիկոսութեան (ԻԶՄ.318-323):

2680. ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Հակառակ այդ որոշումին, Աղթամարի միաբաններէն և թեմական քահանաներէն և աշխարհականներէն կազմուած ժողովը իր ընտրութիւնը կը կեդրոնացնէ Գաբրիէլ եպիսկոպոսին վրայ, և Կ. Պոլսոյ պատրիարքարանը ուր ուրեմն պիջողութեան հարկ կը տեսնէ, առաջ 1851 հոկտեմբերին Աղթամարի վիճակը Վանայ առաջնորդին կը յանձնէ, և յետոյ դեկտեմբեր 14-ին անոր կաթողիկոս օծուելուն կը հաւանի, և երբ մէկ կողմէն կայսերական հրովարտակ առնելով կաշխատի, 1852 յունուար 31-ին Ներսէս կաթողիկոսին կը դիմէ անոր ալ հաւանութիւնը ստանալու: Պատրաստութեանց հետ մէկտեղ կանոնագիր մըն ալ կուսումնասիրէ ի պէտս բարեկարգութեան մեծի տանն Աղթամարայ, որ սովորական վարչական ձևերէն դուրս նորութիւն չէր պարունակեր: Կանոնագիրը կը հաստատուի 1852 յունիս 6ին, և քիչ օր ետքը կը ստացուի Ներսէս կաթողիկոսի յունիս 16-ի կոչակը (ԻԶՄ.340-358), որով կընդդիմանայ Գաբրիէլի կաթողիկոս օծուելուն, և երկարօրէն բացատրութիւններով կը յանդիմանէ Կ. Պոլսոյ պատրիարքը ու ժողովները որ կամակատար եղեալ խաժամուժին Աղթամարայ և խորհրդականին նոցա Գաբրիէլ եպիսկոպոսին Վանայ, իրենց սկզբունքն ալ կը փոխեն և եկեղեցական օրէնքները կանարգեն: Գաբրիէլ ալ կապուի և օծումէն կը հրաժարի, բայց իբրև տեղապահ կը կառավարէ Աղթամարը մինչև 1856, և անկէ յետոյ բոլորովին կը քաշուի և վանայ առաջնորդութեան մէջ կամփոփուի, և Աղթամարայ միաբաններէն Յակոբ Խիլանցի վարդապետը իբր առաջնորդ կը սկսի Աղթամարը կառավարել: Բայց Աղթամարցիք միշտ կաթողիկոս ունենալ կը հետապնդեն և երեք վարդապետներ և քանի մը

աշխարհականներ Կ. Պոլիս կու գան և պատրիարքարան կը դիմեն կրկին և կրկին, մինչև որ 1857 հոկտեմբեր 10-ին Սարգիս Ադրիանապոլսեցի եպիսկոպոսը պատրիարքարանի կողմէն կառաջարկուի, զի Սիս ձեռնադրուած ըլլալով Մայրաթոռոյ խնդիրի տեղի չէր տրուեր: Ասով մէկտեղ կորոշեն օծումը յետաձգել մինչև որ ընտրուի Մայրաթոռոյ յաջորդը: Ասով գործը կերկարի և 1858 յունուար 3-ին Սարգիսի հրաժարականը կը հասնի: Ասկէ ետքը իբր ընտրելի կը նշանակուի Պետրոս եպիսկոպոս Աղթամարայ միաբան, որ առաջին անգամ ներկայացուած եօթերէն մէկն էր (ԻԶՄ.322): Վարչական ժողովները այդ որոշումը կը հաստատեն 1858 փետրուար 7-ին, և Ընդհանուր ժողովը մարտ 14ին կը վաւերացնէ կազմուած պայմանագիրը, որուն համեմատ Աղթամարայ կաթողիկոսը Կ. Պոլսոյ պատրիարքութեան կոնդակով պիտի հաստատուի, Էջմիածնայ աթոռին հպատակ պիտի մնայ, առանց Կ. Պոլսոյ պատրիարքարանին հաւանութեան եպիսկոպոս պիտի չձեռնադրէ, Էջմիածնայ կաթողիկոսին անունը պիտի յիշատակէ, և ինքնագլուխ քահանայական և արեղայական ձեռնադրութիւն ալ պիտի չկատարէ: Վերջապէս կորոշուի ևս որ Աղթամարայ նոր կաթողիկոսի օծումը կատարուի Մայր աթոռոյ կաթողիկոսին օծումէն ետքը (ԻԶՄ.413) - Պայմանագիրին կը ստորագրեն Աղթամարցիներէ 2 վարդապետ, 1 քահանայ, 18 աշխարհական: Որչափ ալ Աղթամարցիք կը խոստանան իրենց կաթողիկոսին օծումը Մայրաթոռոյ կաթողիկոսի օծումէն 61 օր ետքը կատարեալ (ԻԶՄ.416), բայց հապիւ թէ Մայրաթոռոյ ընտրութիւնը կը լրանայ մայիս 17-ին, և Աղթամարայ հրովարտակն ու կոնդակը կը ստանան, իսկոյն Աղթամար կը դառնան և յուլիս 24-ին հինգշաբթի օր օծում կը կատարեն բռնի կերպով և մէկ եպիսկոպոսով, և նոր օծուած կաթողիկոսն յունիս 26-ին շաբաթ օր Խաչատուր և Յակոբ և Ղապար վարդապետները եպիսկոպոս կը ձեռնադրէ: Այլ ևս յաջորդ հատուածին կը մնայ խօսիլ Պետրոսին վրայ, որ իր քաղցրաձայն երգեցողութենէն ստացած է Պիւլպիւլ, այսինքն Սոխակ մակդիր անունը: Իսկ Երուսաղէմի (2659) և Կ. Պոլսոյ (2641) պատրիարքութեանց վրայ աւելորդ կը սեպենք այստեղ անդրադառնալ, զի արդէն անոնց պատմութիւնները հասցուցած ենք մինչև Ներսէսի մահուան թուականը, և շարունակութիւնն ալ առաջիկային պիտի տեսնենք:

2681. ԱՐՄԱՇԻ ՎԱՆՔԸ

Արմաշի վանքը Ստեփանոս Աղակնիի վարչութեան ներքև կը գտնուէր, երբ Ներսէս 1843ին կաթողիկոս կընտրուէր: Աղաւնին երկրորդ անգամ պատրիարքութենէ հրաժարած 1841-ին, բոլոր մտադրութիւնը Արմաշի վանքին և Նիկոմիդիոյ վիճակին դարձուցած էր, իրեն արժանաւոր օգնական ունենալով իր անուանակից Ատաբաղարցի Մաղաթեան վարդապետը (2563): Իր մահուանէն ետքը, որ հանդիպեցաւ 1853 ապրիլ 6-ին, Յակոբոս պատրիարք և պատրիարքարանի ժողովականք ուզելով Արմաշի դիրքը և արդիւնաւորութիւնը բարձրացնել, անմիջապէս մայիս 11-ին Աղաւնիի յաջորդ ընտրեցին պատրիարք Մատթէոս Զուխաճեանը, թէպէտ արդիւնքը ակնկալութեան չհամապատասխանեց. զի կարծես թէ հոգւով չի փարեցաւ գործին, կամ թէ այդ տեսակ պաշտօնի մը յարմարութիւնը չունեցաւ, և ստէպ բացակայ մնաց մինչև որ 1854 նոյեմբեր 9ին հրաժարեցաւ, և դեկտեմբեր 14-ին հրաժարականը ընդունուեցաւ, և նոյն օր յաջորդ ընտրուեցաւ Պօղոս Թաքթաթեան եպիսկոպոսը, որ Զմիւռնոյ առաջնորդ կը գտնուէր, բայց Պօղոս Գարագօջեանի ձեռնասունը և Աղաւնիի գործակիցն էր եղած, և 1823էն մինչև 1843 արդիւնաւոր և երկարատև աշխատութիւն ունեցած էր Արմաշի մէջ: Թէ Պօղոսի վարանումը և թէ Զմիւռնացւոց թախանձանքը պատճառ եղան որ պաշտօնը չընդունուի, թէպէտ կայսերական հրովարտակն ալ առնուած էր, և այս պատճառով 1855 յունուար 27-ին Արմաշն ու Նիկոմիդիան Ստեփանոս Մաղաթեան վարդապետին յանձնուեցան, նախ իբրև տեղապահի, և 1856 սեպտեմբեր 6-ին իբրև առաջնորդի, իսկ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը յապաղեցաւ մինչև 1860 յունիս 2:

Մաղաքեանի պաշտօնավարութեան ժամանակը Արմաշու վարժարանին պարգացման և Նիկոմիդիոյ վիճակին բարեկարգութեան միջոցներէն մէկն է, ինքն ալ իր անուանակից Աղաւնիի ընթացքին հետևող, վանական և ուսումնական ձեռնարկներու սիրահար, վարչական և բուռն գործերէ խորշող, բնուրեամբ քաղցր և հեզահամբոյր անձ մըն էր, որուն ձեռնասունն էր եղած:

2682. ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Ազգային շրջանակի հաստատութեանց կարգը անցած էր Փարիզի Հայկազնեան վարժարանի գործունէութիւնն ալ, յորմէ հետէ պայն հիմնարկող Սարգիս Թէոդորեան և Գաբրիէլ Այվազեան և Ամբրոսիոս Գալֆայեան վարդապետները 1856 մայիս 5 և մայիս 18 յայտարարութիւններով Հայոց Եկեղեցւոյն դաւանութեան և իշխանութեանց հպատակելու վերջնական որոշումնին հաղորդած էին Կ. Պոլսոյ Յակոբոս պատրիարքին և Մայրաթոռոյ Ներսէս կաթողիկոսին (2673) և թէպէտ 1857 մայիսին Այվազեան մեկնած էր և Կաֆա փոխադրուած, բայց տակաւին նոյն հաստատութեան մասնակցութենէ բաժնուած և խզուած էր: Այվազեանի մեկնելուն վրայ Փարիզի գործողներ երկու մնացած էին, բայց շուտով երրորդ մը կաւելնայ, Խորէն վարդապետ Գալֆայեան, հարապատ եղբայրը Ամբրոսիոս վարդապետի, որ սակայն սկսած էր Խորխոռունի մականունը գործածել: Այսչափ աւելցնենք այստեղ թէ Ամբրոսիոս 1826 օգոստոս 24-ին և Խորէն 1832 հոկտեմբեր 1-ին ծնած, բնիկ Կ. Պոլսեցի էին, Կեսարացի ծագում ունեցող և Գանթարեանց փեսայ և երբեմն Գանթարեան Գէորգի պաւակներ, միասին Ս. Ղապարու վանքին աշակերտած և լաւ պարգացում և հմտութիւն ստացած էին: Խորէն ձեռնադրուած էր 1854 յունուար 17ին Մուրատեան վարժարանի ներքին խնդիրներուն սկսելէ ետքը, և ճիշդ անցուղարձերուն սաստկացած միջոցին (2671), և հնար չէր որ եղբօրը ընթացքը իր վրայ ալ տպաւորութիւն չգործէր: Ամբրոսիոս ալ իր կրտսեր եղբօր հրաւեր կարդացած էր, բայց առաջին գիրը Հիւրմիւլեանէ վար դրուած էր, և միայն երկրորդ գիրը միջնորդի ձեռքով Խորէնին կը յանձնուի, և երբ սա իր վերջնական որոշումը կու տայ, համարձակ և ինքնաբերաբար կը հաղորդէ Հիւրմիւլեանի իր միտքը (ՎԴՁ.Բ.23), որ իսկոյն պայրանալով, նախ կը յանդիմանէ, յետոյ յօժարակամ հրաժարելու գիր մը կառնէ, իր եղբօր Եղուարդ եպիսկոպոսի և Բագրատունի և Մինասեան վարդապետներու ներկայութեամբ (ՎԴՁ.Բ.26), սենեակին բանալին կը խլէ Խորէնէն, և պայն անքնակ սենեակ մը փակելով, անոր իրեղէնները և թուղթերը կը գրաւէ (ԼԴՁ.Բ.28): Միանգամայն նաւակ պատրաստել տալով անմիջապէս քաղաք կը դրկէ (ՎԴՁ.Բ.41), և քաղաքին մէջ ալ յարաբերութիւններէ պրկելով երկաթուղի առաջնորդել կու տայ, և մինչև Վենետիկի սահմանագլուխը հանել կը հրամայէ: Խորէն այնտեղ կը տկարանայ, կապուրուելու համար շաբաթ մը կը մնայ և վերջապէս 1857 օգոստոս 9/21ին կը հասնի Փարիզ, ուսկից ամսուն 15/17-ին կուղղէ Յակոբոս պատրիարքի իր դաւանութեան և հպատակութեան յայտարարութիւնը, և օրհնութեան կոնդակով Հայ Եկեղեցին վերադարձը կընդունուի, և խնամակալներու ժողովէն ալ վարժարանի պաշտօնավարութեան մէջ կը հաստատուի: Եթէ գործիչ կաւելանայ Հայկազնեան վարժարանին համար, բայց դրամական օժանդակութեան չէր նպաստեր, որ օրքանսօր կը տկարանար. Վի երբ Թէոդորեան կը յուսար որ Այվազեան Ռուսահայոց նպաստները առատացնէ, կը լսէ որ նա կայսերական հրամանով Բեսարաբիոյ առաջնորդ անուանուած է Էջմիածնայ աթոռին պարապութեան միջոցին և առանց սինոդական առաջարկութեան (ԹՈՂ.Դ.59), և յանձնառու եղած է նոր վարժարան մը բանալ Թէոդոսիոյ կամ Կաֆայի մէջ իր տեսչութեամբ և Յարութիւն Խալիբեանի բարերարութեամբ: Այլ և երբ Կ. Պոլիսէ գալիք նպաստներուն ակնդէտ կը մնար, Տատեան Պօղոսէ հրաւեր կը ստանայ Կ. Պոլիս երթալ, որուն առաջ չէր հաւաներ Հայկազնեանը անգլուխ և անօգնական չթողլու համար (ԹՈՂ.Դ.72): Բայց երբ հրաւերը կը կրկնուի խնամակալաց ժողովին կողմէ ալ, Թէոդորեան յառաջագոյն կտակը կազմելով և ընկելներուն յանձնելով 1858

յունիս 18/1 յուլիսին Փարիզ է կը մեկնի, և Մարսիլիայէ ծովագնաց 10 օրէն կը հասնի Կ. Պոլիս, և կը սկսի ծանօթներու կարողներու այցելել և վարժարանին ապահովութեան միջոցները փնտռել, բայց ինչպէս ինքն ալ կը խոստովանի, յուսահատի նա պահաստատութենէ վարժարանի ի Փարիզ, և մնայ նմա ակնկալութիւն ի կաթողիկոսէն միայն (ԹՈՂ.Դ.98), որ է Մատթէոս, որուն էջմիածնի ժողովէն ընտրուած ըլլալուն լուրը Կ. Պոլիս հասած էր ճիշդ Թէոդորեանի Փարիզէ մեկնած օրը յունիս

18-ին (ՊԷՐ. 605): Մատթէոս մեծ հոգածութիւն կը յայտնէր և վարժարանին ապագան կաթողիկոսական իշխանութեամբ ապահովել կը խոստանար: Բայց ինչ որ ասկէ ետքը գործուեցաւ կը թողունք առաջ բերել կաթողիկոսական ընտրութիւնը պատմել նէս ետքը:

2683. ՀԱՍՈՒՆ ԴԷՄ ԲՈՂՈՔՆԵՐ

Կաթոլիկ Հայոց մէջ տեղի ունեցած անցուդարձերը բաւականաչափ յառաջ բերած կը գտնուինք դէմընդէմ հրատարակուած պարսաւագիրքերուն վրայ խօսելով (2660-2667): Վերջին դէպքը Հասունի 1859 մարտ 8-ին Ղալաթիոյ եկեղեցւոյն մէջ խաժամուծի պաշտպանութեամբ մատուցած պատարագն էր: Սակայն Հասունի ընդդիմադիր ժողովականներ առաջի օրուընէ արտաքին գործոց նախարար Ռիֆաթ փաշայի դիմած էին, և հասարակութիւնը Հասունի ձեռքէն ազատելը պահանջած, և նախարարը մարտ 10-ին երկու կողմերէ երեքական հոգի հրաւիրելով ազդարարած էր որ համախումբ ժողով մը կազմեն և վերջնական առաջարկ մը բերեն հասարակութեան մէջ տիրող հնացեալ դժգոհութիւնը դադրեցնելու: Ազգայնականք առանձին ժողովուեցան մարտ 20-ին և որոշեցին ընդարձակ տեղեկագիր մը պատրաստել Հասունին իշխանութեան ժամանակ խափանուած ազգային իրաւունքները, և իբր եզրակացութիւն Հասունի հեռացումը և կամ Հասունեաններէն բաժանուելնին պահանջել: Այդ որոշման ստորագրեցին մեծամեծներէն 24 անձեր (ՀԱՍ, 268). իսկ նախարարը համախումբ գումարումի վրայ պնդելով մարտ 24-ին Կակոնեան պատրիարքին հրաման կը պրկէ երկուտասանները և երկու կողմերէ ուրիշ մեծամեծները գումարելով առաջարկ մը բերել: Իրօք ալ ժողովը գումարուեցաւ 27-ին, ուրբայ օրը, 30 անձանց ներկայութեամբ, բայց ոչ Կակոնեան և ոչ Հասունեան ներկայ չեղան (ՀԱՍ. 269): Ազգայնական խումբը իր վերջին որոշումը կրկնեց, Հասունեանք ամէն խնդիր կրօնականի վերածելով անձեռնահաս ըլլալին յայտնեցին, և երկու կողմերը իրենց տեսութիւնները պատ պատ նախարարին հաղորդեցին մարտ 27-ին և ապրիլ 4-ին: Ասոր վրայ կառավարութիւնը հարկ սեպեց ութը պաշտօնակալ փաշաներէ յանձնաժողովի մը յանձնել խնդիրը, որոնք ապրիլ 13-ին երկու կողմերը հրաւիրեցին, բայց միայն ազգայնականք ներկայացան, և անոնց առաջարկը միայն քննութեան առնուեցաւ: Հասուն նեղի մտած իրեն պաշտպանութեան պէնք ըրաւ ընթերցաց կոնդակ կոչուած պապական օրէնքը, որով հոգևոր իշխանութեան դէմ աշխարհական իշխանութեան դիմողներ բանադրանքի կենթարկին և արձակումնին պապին կը վերապահուին, և ապրիլ 16-ի յայտարարութեամբ այդ վճիռը արձակեց ազգայնականներու դէմ, իբրև ընդդէմ եկեղեցւոյ և եկեղեցական իշխանութեան գործողներու, և միայն առաջիկայ ապրիլ 19-ի Զատիկին առթիւ պղծացողները արձակելու իշխանութիւն շնորհեց իրեն կողմնակից եղող խոստովանահայրերու, այն ալ բաց ի գլխաւոր յանցաւորաց (ՀԱՍ. 274): Այս որոշումը քարոզներով ալ հռչակուեցաւ թէ ով որ Հռոմայէն խրկուած իր եպիսկոպոսին չհաւանիր, այնպիսին հերետիկոս և հերձուածող է, և որովհետև Օրթաքէօյի կաթոլիկներ ամբողջութեամբ իրեն հակառակ էին, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մեծաւորը պաշտօնէ դադրեցուց, որ էր Անտոնեան միաբան Վրթանէս Եիւլիւքձեան վարդապետը, քարոզ և հոգևոր պաշտամունք և նոյն իսկ յուղարկաւորութիւն և պսակադրութիւն արգիլեց (ՀԱՍ. 276): Կառավարութիւնը ազդուեցաւ այդ բաներէն և Հասունի մասին եղած ամբաստանութիւնները գիրով ուզեց, որոնք յուլիս 6-ին մեծ եպարքոսին

մատուցուեցան մարտ 20-ի գումարման մէջ ճշդուած տասը գլուխներով (ՀԱՍ. 278): Ամբաստանագրին յառաջաբանին մէջ պատմականօրէն կը բացատրուի կաթոլիկութեան մուտքը, կաթոլիկ հասարակութեան կազմութիւնը, և կաթոլիկութեան պատճառով ազգային եկեղեցական իրաւունքներուն չջնջուիլը և լատինականութեան չհաւասարիլը: Իսկ ամբաստանութեան տասն գլուխներն են 1. Հասունի առանց ազգային ընտրութեան հոգևոր իշխանութիւնը գրաւելը: 2. Ազգապետութիւնն ալ ձեռք ձգելով օրինաց հակառակ բացարձակ իշխանութիւն գործածելը: 3. Հոգևորական իշխանութիւնը յափշտակելէն ետքը, ազգայնոց հետ միաբանելով իրաւանց պաշտպանութեան համաձայնելը, բայց յետոյ հակառակ կերպով վարուիլը: 4. Ազգային յառաջադիմութեան սահմանուած Համապգեաց ընկերութիւնն աւերելը հակառակ իր կանխաւ յայտարարութեան և ընդդէմ պետական հաստատութեան: 5. Առանց ազգային որոշման գաւառական եպիսկոպոսներ հաստատելն ու ընտրելը: 6. Հիւանդանոցի և աղքատանոցի և կտակներու մատակարարութիւնները հոգևորական պատրուակով իր ձեռքն անցնելը և վատթարացնելը: 7. Լատինական սովորութիւններ մուծանելը, ինչպէս ծխատիրութիւնը ժողովրդապետութեան վերածելը: 8. Միաբանութիւնները ու անուանի գերդաստանները անուանարկելու համար պարսաւագիրք հրատարակելը: 9. Վանական վարդապետները ուսումնական և հոգևորական պաշտօններէ վտարելը: 10. Ամէն գործ ու պաշտօն լատին կրթութիւն առած և իրեն համամիտ եկեղեցականներուն յանձնելու ջանքը: Իսկ վերջաբանին մէջ կը խնդրեն որ կառավարութիւնը հաճի հասարակութիւնը Հասունին և հասունեաններուն ձեռքէն ազատել: Այդ պարագաները կամ տեղեկագիրը եպարքոսութեան յանձնաժողովին զրկուեցաւ, որ յուլիս 13-ին Հասունը և իրեն համամիտները հրաւիրելով, ազդարարեց թէ պէտք է նորաձև ոտնձգութեանց վերջ տան և խաղաղութիւն հաստատեն:

2684. ԿԱԹՈՒԼԻԿ ԴԱՐՁՈՒԱԾՆԵՐ

Հասունի համամիտներ ուղեցին և ստացան ազգայնականներու ամբաստանագիրին պատճենը, և 1853 յուլիս 24-ին Հասունի նախագահութեամբ գումարուելով, ընդարձակ պատասխան մը պատրաստեցին և իբր հերքում կառավարութեան յանձնեցին, որ գործը երկարեց, իբր թէ պայն ուսումնասիրութեան ենթարկած ըլլայ, որով երկու կողմերը ակնկալութեամբ լռեցին: Հռոմ ալ առիթ ունեցաւ Հասունի ձեռքով իր հրամանները արձակել, որոնց առաջինն էր Վենետիկոյ Ս. Ղապարու Մխիթարեանը չարամատեանին դատապարտութիւնը, որ 1852 սեպտեմբեր 6-ին Հռոմի մէջ վճռուէր էր, և միայն 1853 սեպտեմբերին Կ. Պոլսոյ հասարակութեան կը հաղորդուէր (ՀԱՍ. 308): Երկրորդն էր Անտոնեան և կրկին Մխիթարեան միաբանութեանց վարդապետներէն Կ. Պոլսոյ մէջ բնակողներուն վանատուններու մէջ միասին ապրիլը, և ոչ ազատ բնակութիւն ունենալը, ինչպէս որ սկիզբէն մինչև այս ատեն սովորութիւն եղած էր, միանգամայն առանց փրօփականտայի արտօնութեան Կ. Պոլսոյ և վիճակներու մէջ չմնալը և չգալը: Երրորդ հրամանագիր մըն ալ հայ կաթոլիկ եպիսկոպոսներու ընտրութեան պայմանները կը կարգադրէր, թեմական ժողովուրդը վկայութիւն պիտի տար 6-է 12 եկեղեցականներու, որոնցմէ եպիսկոպոսաց ժողովը երեք պիտի պատէր եթէ արժանաւորներ գտնէր, թէ ոչ նոր ցանկ պիտի պահանջէր, և եթէ այս անգամ ալ արժանաւոր չգտնէր, ինքն երեք անձ պիտի ներկայէր Հռոմի, որ երեքէն մէկը կամ եթէ ուզէ երեքէն դուրս մէկը եպիսկոպոս պիտի նշանակէր, այս էր 1853 օգոստոս 20-ի ժողովրդական ընտրութեան կարգադրութիւնը (ՀԱՍ. 309-312): Նախընթացաբար կատարուած ընտրութեանց առթիւ եղած բողոքներուն վրայ, 1851-ին որոշուած էր հարկաւ ժողովրդէն ներկայուելիք երեքէն մէկը ընտրել (2662), մինչ այս նոր ձևով ժողովուրդին մասնակցութիւնը ծիծաղական կը դառնար: Ուստի սեպտեմբեր 6-ին բողոքագիր մը և հոկտեմբեր 1-ին

յայտարարութիւն մը հրատարակուեցաւ, միւս կողմէ տէրութեան հրամանով Կակոնեան պատրիարքէն նոյեմբեր 13-ին յայտարարութիւն եղաւ որ պարսաւագիրք ունեցողները վայն պատրիարքարանին յանձնեն, որպէսզի կառավարութեան հրահանգին համեմատ Հոռոմ ղրկուին, և պետական հրամանագիրին պատճէններն ալ եկեղեցիներու դուռները կախուեցան: Բայց Հասունեանք սրիկաներու ձեռքով այդ հրամանագիրը պատռել տուած էին, և անոնցմէ մէկն ալ ձերբակալուած և պատրիարքարանի մէջ բանտարկուած էր, ուստի պատրիարքարանը կոխելով բանտարկեալը ազատեցին: Ասոր վրայ Կակոնեան պատրիարք իբր բողոքի նշանակ, իր հրաժարականը և հրովարտակը և պատրիարքարանի բանալին Եպարթոս Կիրիլոսի Մուսթաֆա և արտաքին գործոց նախարար Ռէշիտ փաշաներու անձամբ ներկայեց: Հրաժարականը մերժուեցաւ, և երկու օր ետքը նոյեմբեր 28-ին յատուկ պաշտօնակալներ յանդգնութեան ընողները պատժելու խոստումով պատրիարքը տեղը նստեցուցին: Նոյեմբեր 29-ին դատը սկսաւ, բայց դեկտեմբեր 1-ին Կակոնեան մեծանձնաբար անոնց ներուիլը խնդրեց, և ատեանին նախագահ Ռիֆաթ փաշա յայտարարութեամբ վիրենք արձակեց: Այստեղ անցողակի յիշենք թէ արտաքին գործոց նախարարին ներքին գործերուն միջամտութեան պատճառը, կրօնից գործերն ալ արտաքին գործոց միացեալ ըլլալն էր, որոնք յետ ժամանակաց արդարութեան նախարարին անցան: Երբոր կաթոլիկ հասարակութեան գործերը անլուծելի վիճակի հասան, խումբ մը բարեմիտներ, որոնց գլուխ կեցած էին Պետրոս Եաղլըզեան և Գասպար Սինապեան, փորձեցին հաշտութիւն գոյացնել, բայց երբ անոնցմէ երաշխաւորութիւն խնդրուեցաւ Հասունին ապագայ ընթացքին համար, ապահովութիւն տալ չկրցան և ձեռնարկն ալ ապարդիւն մնաց (ՀԱՍ. 327): Կառավարութիւն յուսահատ 1854 յունուար 3-ին որոշեց կաթոլիկ հասարակութենէն լատինամիտ Հասունեանները ուղղակի լատին հասարակութեան անցունել, և մնացեալներով կաթոլիկ հասարակութիւնը պահել: Նյդ որոշումը կրնար պապին ալ ծանր գալ, ուստի Գաղղիոյ դեսպանատունը Հասունի դրդմամբ մէջտեղ ինկաւ, գործադրութիւնը յապաղել տուաւ, և նոյն օրերուն Հասունի և Կակոնեանի հաղորդուեցաւ Պիոս Թ ի փետրուար 2-ի շրջաբերականը, որուն մէջ վերև յիշուած երեք հրամանները կը բացատրուէին, և միանգամայն կը յայտարարուէր թէ Վենետիկոյ Մխիթարեան միաբանները իրենց ուղղափառ, իմա կաթոլիկ հաւատոյ և յայտարարութիւնը պարտուպատշաճ ստորագրութեամբ յուղարկեցին (ՀԱՍ. 331). այս ալ այն յայտարարութիւնն է վոր իր կարգին յիշեցինք (2671), և որ անգամ մը ևս Հայ ազգութիւնը գայթակղեցուց, Հայ Եկեղեցին իբր հերձուածող և հերետիկոս, և Համազգեաց ընկերութիւնը իբրև վտանգաւոր և վնասակար որակուած տեսնելով: Ասով Հասուն իր նպատակին կը հասներ, որ ինչպէս սկիզբէն ըսինք գոնէ Մխիթարեանները վարկաբեկեալ էր, եթէ ջնջել հնար չըլլար (2663):

2685. ԿԱԿՈՆԵԱՆ ԵՒ ՀԱՍՈՒՆԵԱՆ

Պապական կոնդակը Մխիթարեանները արդարացնելու ձևով իսկապէս վանոնք անկարգութեան կը մատնէր: Հասուն ալ սկսաւ պահ մը մեղմ միջոցներու դիմել, և 1854 մայիս 8-ին հովուական թուղթ մը հրատարակեց, որով իբր թէ աղքատանոցի և հիւանդանոցի և դպրոցներու և եկեղեցիներու մատակարարութեան մէջ աշխարհական տարրին մասնակցութիւնը կը ճանչնար (ՀԱՍ. 348-350), բայց միշտ պատիպատ դարձուածներով: Ազգայնական ուղղութեան հետևողներ, մարտ 5-ի բողոքով մը յայտարարած էին, թէ ասկից ետքը բնաւ մէկ կերպով մը Հասունը չենք ճանչնար մեզի հովիւ և առաջնորդ (ՀԱՍ.345), յունիս 28-ին ալ յատուկ տետրակով մը հովուական թուղթին դարձուածները պախարակեցին: Բայց գաղղիական դեսպանատան պաշտպանութիւնը պատրաստ էր Հասունի, և կառավարութիւնն ալ Ռէշիտ փաշայի բերանով ազգայնականները կը յորդորէր Հասուն հոգևոր գլուխ ընդունիլ, խոստանալով որ ինքն ալ Հասունին ընդունել տայ ինչ

որ իրենք խնդրեն: Սակայն խաբկանք էին բոլոր դարձուածները, Հասունի պէտք էր գոնէ առերևոյթ հանդարտ կացութիւն մը ստեղծել, որ դիւրին ալ կերևար, զի ազգայնականք ալ յոգնած էին, և իրեն ճիգերուն անպտուղ մնալէն յուսահատած, ու քիչ-քիչ ասպարէզէն կը քաշուէին, և Կակոնեան պատրիարք անհանդուրժելի վիճակի մէջ ինկած էր (ՀԱՍ.361): Երկոտասանից ժողովը նորոգուեցաւ 1855 մարտ 2-ին (ՀԱՍ.362), բայց նորերն ալ աւելի գործունէութիւն չկրցան ցուցնել, մինչև իսկ Հասուն կրցաւ դարձեալ առանց ընտրութեան եպիսկոպոսներ ձեռնադրել, ինչպէս որ 1855 օգոստոս 10-ին ձեռնադրեց Յովհաննէս վարդապետ Սելվեանը, երբեմնի պատրիարքը, Կարնոյ վրայ: Ժողովուրդը ընդդիմութենէ ձանձրացած և գաղղիական պաշտպանութեան պօրութիւնը արևելեան պատերազմին բերմամբ (2656) տարապայման աճած ըլլալով, Հասուն յաջողեցաւ Կակոնեանի ձեռք գտնուող պատրիարքական հրովարտակ մըն ալ ստանալ 1857 մարտին, իբր հոգևորական գործերու պետ և կաթողիկ պաշ փիսքոբոս անունով (ՀԱՍ. 365-368). որով կրնար այլևս կաթողիկ ազգապետական պատրիարքարանէ անկախաբար գործել և տնօրինել և յարաբերութիւններ կատարել, անկարգութեան մատնելով բուն պատրիարքարանը : Այդ էր կաթողիկ հասարակութեան կացութիւնը 1857-ին Աշատարակեցիին մահուան տարին: Կակոնեան պատրիարք արդէն բնաւորութեամբ պայքարելէ հեռու և անձամբ տկարացած, առաւել ևս տկարացաւ երբոր 1858-ին Եղիա Նահապետեան վարդապետ պատրիարքական փոխանորդը, որ իմաստութեամբ և քաղաքագէտ խորագիտութեամբ և հանձարով գրեթէ գործերու բուն վարիչն էր, ստիպուեցաւ պաշտօնէն հրաժարիլ (ՀԱՍ. 372) և ատենադպիր Գապանձեան Սուքիաս վարդապետն ալ անոր հետևեցաւ , և Կակոնեան գրեթէ անօգնական վիճակ մը ունեցաւ, և նոյն իսկ կաթողիկ պատրիարքարանն ալ աւելորդ պաշտօնատուն մը դարձաւ (ՀԱՍ. 373), զի Հասունի եպիսկոպոսարանը ուղղակի յարաբերութիւններ կը կատարէր: Կակոնեան պատրիարք արդէն տկարացած, սիրտի անբուժելի հիւանդութեամբ ախտացաւ և 1860 դեկտեմբեր 10-ին հրաժարականը մատոյց, որ թէպէն պաշտօնապէս չընդունուեցաւ, բայց ինքն այլևս քաշուած ապրեցաւ և 1861 օգոստոս 20-ին ալ իր վշտալից և տառապանօք լեցած ցաւագին կեանքը կնքեց 48 տարեկան ամաց հասակին (ՀԱՍ. 374), և վերջին ազգապետ պատրիարքն եղաւ: Որչափ ալ 1861 յունուար 4-ին յաջորդի ընտրութեան հրամանագիրն եկաւ (ՀԱՍ. 376), բայց փետրուար 17-ին ժողովին մէջ առաջ կանոնագիր պատրաստելու որոշումը տրուեցաւ, և 18 անձերէ յանձնաժողով մը կազմուեցաւ , որոնք կանոնադրութիւնք ընդհանուր ժողովոյ կաթողիկէ Հայոց անունով, 8 գլուխով և 35 յօդուածով ծրագիր մը պատրաստեցին, որ մարտ 17-ի ժողովին մէջ ընդունեցաւ, և յունիս 16-ին 120 երեսփոխաններու ընտրութիւնը կատարուեցաւ, բայց երբ տերութենէն անոնց հաստատութիւնը խնդրուեցաւ, Հասուն յաջողեցաւ զայն խափանել տալ և ընտրողական գործը առկախ և տարտամ մնաց: Պատրիարքական փոխանորդ Բարսեղ վարդապետ Մարտիրոսեան Վենետկոյ Մխիթարեաններէն, որ Կակոնեանի հրաժարելէն ի վեր իբր տեղակալ պատրիարքարանը կը վարէր, նա ալ հրաժարեցաւ և քաշուեցաւ, և պատրիարքարանը մնաց ատենադպիրն, Անտոնեան միաբաններէն Չրաձեան Ղևոնդ վարդապետի ձեռքը, որ դիւանը բաց պահելու և անցագիրներու և կալուածագիրներու վկայական տալու գործողութիւնները կը կատարէր, և թէպէտ վարչական ժողով մը կար պատրիարքարանի մէջ 1857- ին ընտրուած և 1857-ին նորոգուած (ՀԱՍ.527), բայց անգործ էր բոլորովին, և ի վեր Չրաձեան մեծամեծներուն կը դիմէր որ ներկայ թշուառ վիճակին վրայ ողորմին (ՀԱՍ.393), մինչև Հասուն իր նպատակին մէջ շարունակ կը յռաջէր, և հասարակութեան բախտին կատարեալ տէր էր դարձած (ՀԱՍ.385):

4. Պոլսոյ կեդրոնէն դուրս կաթողիկ հասարակութեան վերաբերեալ եղելութիւններէն յիշենք նախ Լիբանան նստող և Կիլիկիոյ անուն կրող կաթողիկոսական աթոռը, որուն վրայ կը գտնուէր Գրիգոր Պետրոս Ը. Աստուածատուրեան 1843 յունիս 25-էն ի վեր (2566), և պաշտօնավարեց մինչև 1865 տարւոյ վերջը: Բնութեամբ գործունեայ և կարողութեան տէր, իր աթոռին դիրքը բարձրացնել հետապնդեց, և այդ նպատակով վերանորոգեց Անտոնեան միաբանութիւնը իր ձեռքին ներքև առնելու համար միաբանութեան տէրը ճանչցուելու խնդիրը, մինչև Անտոնեանք ուղղակի պապէն կամ պապական աթոռէն հաստատուած միաբանութիւն ըլլալով թեմակալ իրաւասութեաններէ ազատ կը ճանչցուէին: Խնդիրը երկու կողմէն փրփակատայի ատենին առջև դատավարութեանց ենթարկուեցաւ, և երկար տարիներ տևեց, բայց Անտոնեանք կրցան իրենց դիրքը պաշտպանել, և Գրիգոր անապան մտաբերեց հաշտարար կերպով խնդիրը փակել, զոր իր կարգին կը թողունք բացատրել: Աթոռոյ ներքին բարեկարգութեանց համար ալ եպիսկոպոսական ժողով գումարեց 1853-ին Ջըմմառի աթոռին մէջ, և ընդարձակ կանոնագիրք մըն ալ պատրաստեց պատմական և դաւանական մասերով ճոխացած, Հռոմին ալ ներկայեց որ պապական իշխանութեամբ ալ հաստատուի, սակայն նպատակը չիրականացաւ և Ջըմմառի ժողովին կարգադրութիւնները իբրև լոկ ներքին կանոնագիր մնացին: Պարտաւորուեցաւ Հասունի հետ ալ մաքառիլ թեմական վիճակներու և իրաւասութեան սահմաններուն վրայ, որոնք իսկապէս ներքին դժուարութեանց կը բաղխէին, զի մէկ կողմէն Փոքր Հայք ու Կիլիկեան Լիբանանու կաթողիկոսութեան, և միւս կողմէն Պոնտոսն ու Կապադովկեան Կ. Պոլսոյ արքեպիսկոպոսութեան վիճակ տրուած էին, մինչ շատ քաղաքներ տարբեր առմամբ երկու կողմերուն ալ կրնային պատկանիլ: Այդ խնդիրներն ալ բաւական յոգնեցուցին Գրիգոր, բայց նա կրցաւ իր իրաւունքները պաշտպանել: Ինչ որ իր տեսութեամբ իրեն համար մխիթարական կրնար ըլլալ՝ հռոմէական դաւանութեան աստ և անդ սկսելուն կամ տարածուելուն պարագան էր: Խրիմի պատերազմին վրայ գաղղիական ազդեցութեան զօրանալը, և գաղղիական կայսերութեան ալ իր ազդեցութիւնը ընդարձակելու համար հռոմէականութեան պաշտպան կանգնիլը, կրցաւ Հայերուն մէկ մասին մէջ հռոմէականութեան յարելու միտքը վարթուցանել նիւթական օգնութիւն և քաղաքական պաշտպանութիւն վայելելու համար: Այս տեսութեանց հետևանքն եղաւ որ Լիբանանու կաթողիկոսութեան սահմաններու մէջ, Մելիտինէ, Գերմանիկ, Կասարիա և Ատանա մասնաւոր հռոմէական հատուածներ սկսան ունենալ, և Գրիգոր փութաց սոյն սակաւաթիւ հատուածներու համար նոր վիճակներ կազմել և նոր եպիսկոպոսներ ձեռնադրել, աւելի ևս շարժումը զօրացնելու նպատակով, թէպէտև առաջին քայլերէն ետքը նոր աճումներ չունեցան նորանջատ հատուածները: Շատ մասնաւոր շարժումներ ալ տեղի ունեցան Ջէյթուն և Հաճըն, որոնց առաջինը Գերմանիկի և երկրորդը Ատանայի վիճակներուն կցուեցան:

2687. ԿԱԹՈՒԼԻԿ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Անտոնեան միաբանութեան անցքերէն արդէն յիշած եղանք կաթողիկոսներուն հետ վարած դատը (2686). յիշած ենք նաև նոր ազգապետի ընտրութեան առթիւ Անտոնեանց վրայ դարձուած մտադրութիւնը (2666), և այդ պարագաներէն դուրս պիտի յիշենք Հռոմի մէջ բացուած ուսումնական վանքին (2566) յառաջադիմութեան համար տարուած խնամքը և ստացուած արդիւնքը: Ասոնցմէ դուրս սովորական ընթացքն է որ տիրած է այդ միջոցին մէջ: Անտոնեաններէն բաւական թուով գտնուած են միշտ Կ. Պոլսոյ մէջ, և կաթողիկաց անցուդարձերուն մէջ յայտնապէս ազգայնական ջանքերուն կողմը գտնուած են, թէպէտ խոհական չափաւորութեամբ մը, այնպէս որ խնդիրներու վայրացած պահուն և Սելվեան ազգապետի յաջորդին ընտրութեան ատեն, կրցան իբրև անկողմնակալ տարր մը նկատուիլ և

ազգապետն ալ իրենցմէ առնուեցաւ: Վենետկոյ մասին ընդարձակօրէն խօսեցանք պարսաւագիրքի անցուդարձերը (2663-2664), և Մուրատեան վարժարանի խնդիրը և Մխիթարեաններէն ոմանց վերադարձը պատմած ատեննիս (2668-2673): Իբլ ներքին վիճակնին մեծ նորութիւն չունեցաւ, և ոչ ալ վարգացում, մանաւանդ թէ կայուն վիճակէ ալ աւելի անկումի վիճակ մը եղաւ Հիւրմիւլեանի արքայութեան միջոցը, հոռմէականութիւնը շեշտելով հայութիւնը անարգելու չափ: Իբր գնահատելի արդիւնք Ալիշան Ղեւոնդ վարդապետի քանի մը աշխատութիւններէն վատ, ուրիշ նշանաւոր արդիւնաւորութիւն ալ չտեսնուեցաւ: Վենետկոյ Մխիթարեանց արդիւնաւորութիւնը իրաւամբ բողաձև ըսուած է, որ ընդարձակ հիմով կը սկսի և հետզհետէ ամփոփուելով նուրբ ծայրով մը կը վերջանայ: Հիւրմիւլեան 1797 նոյեմբեր 11-ին ծնած Վոսփորի Օրթաքէօյը, և 1819 յունուար 17-ին ձեռնադրուած, 49 տարեկան արքահայրութեան բարձրացած էր 1846 յուլիս 2-ին, և 30 տարի պաշտօնավարեց մինչև 1876 ապրիլ 11 (ՅՈՒ.221), հակառակ ընտրութեան միջոցին իր վրայ տեսնուած տկարութեան, և բժշկական վնասութեան հապիւ մէկ տարուան կեանք նախատեսելուն (ՅՈՒ.65): Իր ներբողաբանն ալ ընտիր դիպարանութեանց հիւսուած մը կրցած է պատրաստել անոր յիշատակին, բայց նշանաւոր գործ մը մատնանիշ չէ ըրած: Մխիթարեանց Վիէննայի ճիւղին վրայ ալ ըսելիքնիս հասոօտ պիտի ըլլայ: Արիստակէս Ազարեան արքային պաշտօնի սկսիլը յիշած ենք, որ 1826 ապրիլ 19-էն մինչև 1855 մայիս 5, 29 տարի տևողութիւն ունեցաւ, այսինքն մինչև իր 73 տարեկան հասակը: Իր գործունէութենէն ալ ինչ ինչ պատմած ենք (2477), բայց պիտի կրկնենք թէ իր արքայութեան միջոցը նա ոյժ տուաւ օտարամու կաթոլիկ ուղղութեան, և իր միաբաններ Կ. Պոլսոյ մէջ նեցուկ եղան Հասունի քաղաքականութեան: Ասով մէկտեղ պէտք է յայտնենք թէ գերմանական ուսմանց շնորհիւ, բարձր կրթութեամբ և ընդարձակ հմտութեամբ ձոխացեալ միաբաններ ալ յառաջ եկան այդ միջոցին, ինչպէս Արսէն Այտընեան, Յովսէփ Գաթըրճեան, Մատաթիա Գարագաչեան և այլք. թէպէտ ոչ ամէնքը նոյն սկզբանց և նոյն մտայնութեանց տէր: Արիստակէսի յաջորդեց Յակոբոս Պօպանճեան Անկիւրացի 1808 նոյեմբեր 30-ին ծնած և 1885 օգոստոս 6-ին ընտրուած, որ նոյն տարին Կեսարիոյ անուանական արքեպիսկոպոս ձեռնադրուեցաւ. բայց որովհետև մինչև 1883 ապրեցաւ, յաջորդ շրջանին կը թողունք իր վրայ խօսիլ:

2688. ՊԱՏՄԱԳԻՐԻՆ ԴԵՐԸ

Ներսէս Աշտարակեցին վախճանեցաւ 1857- ին և 1858-ին ընտրուեցաւ անոր յաջորդը, որուն պատմութեան կը պատրաստուինք մտնել, բայց այլ ևս ինքզինքնիս կը գտնենք ժամանակակից շրջանի մը մէջ, որուն գործիչներէն շատեր դեռ կենդանի են, և որոնք որ կեանքնին կնքած են, տակաւին կենդանի կը մնան ամէնուն միտքին և սիրտին մէջ: Կը պզանք թէ դժպիսի և դժուարին դիրքի մէջ կը գտնուինք պարտաւորեալ ըլլալով խօսիլ, իմա քննադատել կամ գնահատել այնպիսի անձեր, որոնց նկատմամբ դեռ կը տիրեն մասնաւոր կամ անձնական տեսութիւններէ ծագած հակակրօթիւններ կամ համակրօթիւնները, և մինչև աստիճան մը չենք յաւակնիր ինքզինքնիս ալ ապատ կարծել այդ պզացումներէն, մանաւանդ որ մենք ալ իբր գործակից շփուեցանք շատերու հետ և իբր գործիչ ալ հանդիսացանք ասպարէզի վրայ: Այդ մտածումները շատերու արգելք եղած են իրենց գրութիւնները մինչև ժամանակակից շրջաններ յառաջացնել. ոմանք ալ մինչև իսկ անպատշաճ կարծած են ժամանակակից շրջաններու պատմութիւնը գրել, թողլով որ ետեւէն եկողներ անկողմնակալ կերպով և առանց կիրքի և առանց անձնական տեսութեանց եղելութիւնները կշռեն ու պատմեն: Մենք այդ երկիւղած և երկիւղալից ընթացքին պիտի չհետևինք, զի պատմական եղելութիւններ պէտք է ժամանակակիցներէ, իմա գիտակից և մասնակից անձերէ վկայուին, որպէսզի տրամաբանական և իրաւագիտական տեսակէտով ալ

ստուգութեան հաւաստիքը կրեն. և իրօք ալ մեր հետապօտութեան մէջ միշտ ժամանակակիցներու, գոնէ մերձակիցներու վկայութեանց և գրութեանց կը դիմենք, ստուգութեան փաստ գտնելու համար: Բայց միւս կողմանէ անձնական կիրքերու կամ անհատական կարծիքներու ծառայած չըլլալու համար, բաւական է եղելութիւնները իրենց հանգամանաց և յարաբերութեանց մէջ պատկերացնել, և որչափ հնար է չափաւոր ըլլալ գնահատութեանց և քննադատութեանց մէջ, ոչ գովեստներ շռայլել և ոչ պարսաւանքներ առատացնել, այլ թողուլ որ ընթերցողներ և ապագաներ ազատ կերպով կշռեն գործերն ու գործիչները և կազմեն իրենց դատողութիւնները: Այդ պիտի ըլլայ մեր ուղղութիւնը և պիտի ջանանք որչափ կրնանք այդ մասին հաւատարիմ և ճշդապահ մնալ: Ուրիշ դժուարութիւն մըն ալ որ մեր դիմացը կելլէ, առաջնորդող պատմագիրը մը չգտնուիլն է. զի ազգային ժամանակակից պատմութիւնը տակաւին իր պատմաբանը ունեցած չէ, և կերպով մը այդ դատարկը լեցնելու կոչուած կը գտնուինք: Պարտաւորեալ պիտի ըլլանք թարթափել առձեռն յիշատակներ, պատահաբար հրատարակուած տետրակներ և լրագիրներու թերթեր, որոնցմէ կատարեալ հաւաքածոներ ալ չունինք մեր տրամադրութեան ներքև, ուստի ընթերցողները ներողամիտ աչքով պէտք է նային մեր աշխատութեան վրայ, եթէ թերի կէտերու կամ թերի բացատրուած իրողութիւններու հանդիպին: Զի անցեալին համար կարդարանայինք մեզի հասած յիշատակներուն կամ պատմութիւններուն պարունակին մէջ ամփոփուելով. բայց ժամանակակից անցքերու մասին կը ճանչնանք թէ ընթերցողներ և ապագաներ իարունք կունենան մեզմէ լիագոյն և անթերի պատմութիւն սպասել: Վերջապէս իբրև աղբիւր պիտի ունենանք մեր անձնական յիշողութիւններն և յիշատակներն ալ իբր զի պատմութեանս կարգին պէտք է առաջ բերենք այն եղելութիւնները, որոնց ներկայ կամ մասնակից գտնուեցանք, և այն գործողութիւններն ալ, որոնց գլխաւոր գործիչը և նոյն իսկ պատասխանատու գործիչ եղանք հանրային պաշտօնավարութեանց հետևանքով, որոնց կոչուեցանք և զորս կատարեցինք իբր յայտարարութիւն, մանաւանդ թէ իբր խոստովանութիւն, դնել այստեղ որպէսզի միանգամ ընդ միշտ պարզօրէն և անկեղծօրէն բացատրած ըլլանք մեր միտքը. զի նպատակ չունինք այլ ևս ամէն մէկ եղելութեան կամ ամէն մէկ իրողութեան պարագային այս տեսակ արտայայտութիւններ կրկնել:

Տ: ՄԱՏԹԷՈՍ Ա. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ

2689. ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՔ

Կաթողիկոսական ընտրութեան համար մեծ պատրաստութիւններ պէտք չէին Ռուսահայոց համար, զի ամենայն ինչ որոշակի ճշդուած էր 1836-ի Պօլօթէնիէով և 1843 ընտրողական հրահանգով (2569), և նոր ուսումնասիրութեան պէտք չկար: Նոյն էր նաև Պարսկահայոց երկու վիճակներու համար, որոնք ըստ ամենայնի Ռուսահայոց կանոններով կը վարուէին, բայց տարբեր էր գործը Տաճկահայոց համար, ուր Պօլօթէնիէի հետևողութիւնը իբր հաստատուն կանոն չէր նկատուեր, և միւս կողմէ իրենց սեփական և վաւերական կանոնագիր մըն ալ չունէին զոր կարենային Պօլօթէնիէին դիմադրել, և պարտաւոր էին խնդիրը ուսումնասիրել և առձեռն կերպ մը որոշել: Ներսէսի ընտրութեան առթիւ տեսանք որ առանց վիճակներու բաշխման ու թիւի, ընդհանուր Տաճկահայոց կողմէն միմիայն պատգամաւոր մը յուղարկած էին (2569). բայց ինչ ալ կարենար ըլլալ իրենց դիտումը այդ պատգամաւորին տալիք քուէին թուական արժէքին վրայ, նա միայն մէկ քուէի արժէքով հաշուուած էր քուէհամարի մէջ (2570): Այս անգամ ալ 1857 սեպտեմբեր 14-ի պաշտօնագիրով սինոդը դարձեալ իր գիտցած և պահած ձևը կը թելադրէր Յակոբոս

պատրիարքին, բայց պատրիարքարանի Հոգևոր և Գերագոյն ժողովները ընդարձակ մեկնութիւն մը տալով սինոդական պաշտօնագիրին բացատրութեան, բարեհանիլ այժմէն իսկ այդել ի միտս անդամոց ազգային գերագոյն ժողովոց հոգևորականաց և քաղաքականաց Հայոց Կոստանդնուպոլսոյ, կը կարծեն թէ դինոդականք իբրև արդարև գիտակէք սահմանադրութեան կառավարութեանց հոգևորականաց և ժողովրդականաց Հայոց Տաճկաստանի յանձնեցելոց յարթունուստ երկուց ժողովոց ի գործադրութիւն, համակերպած էին ուղղակի երկու ժողովներուն վրայ ճանչնար բոլոր վիճակներուն քուէները, ուստի բնաւ վիճակներուն դիմում կամ ազդարարութիւն չեն յղեր, այլ միայն Կ. Պոլսոյ պատրիարքութեան ենթարկեալ վիճակներուն թիւը 45-ի կը սահմանեն, և իրենք իրենց որոշում կու տան, կարծելով թէ իրենց որոշումը էջմիածնի քուէհամարին մէջ իւրաքանչիւր վիճակին երկու քուէ հաշուելով 90 քուէի համարժէք պիտի նկատուի: Այս միտքով 1858 մարտ 14-ին Ընդհանուր ժողով կը գումարեն, այսինքն երկու ժողովներ համագումար նիստ կը կազմեն, և ընտրելի կը նշանակեն Յակոբոս Սերոբեան Կ. Պոլսոյ պատրիարքը և Գէորգ Բէրէստէճեան Պրուսայի, Գրիգորիս Զօրաբաբելեան Կարնոյ և Պօղոս Թաթթաբեան Զմիւռնիոյ առաջնորդները, յայտարարելով թէ հաճութիւն մեր լի բովանդակ համարեսցի այնմ, վասն որո՛յ և իցէ հնգեցունց աստի, որուն վրայ կեդրոնանայ էջմիածնի ընտրողական ժողովին որոշումը: Յատուկ և պատգամաւոր ալ ընտրել հարկ չեն տեսներ, այլ այդ պաշտօնը կը յանձնեն Կովկասի փոխ-կառավարչապետ Իշխան Վասիլ Բեհրութեանի, խնդրելով որ կամ հրամանագրով ձերդ ազգապետութեան, և կամ ի դիմաց ձեր զոմն առաքելով ներկայացնէ 45 վիճակներուն 90 քուէները: Ապրիլ 2 թուականով կը գրուին պաշտօնագիրները, մին սինոդին իրենց որոշումը բացատրելու, և միւսը Բեհրութեանի պատգամաւորութիւնը յանձնելու, և երկու ժողովներ իրենց կնիքները միայն կը դնեն, թէ ի կողմանէ հոգևորականաց, և կամ թէ ի կողմանէ ժողովրդականաց Կոստանդնուպոլսոյ և քառասուն և հինգ առաջնորդութեանց եղելոց յօսմանեան տէրութեան, հոգևոր կամ ազգային ժողովը կնքեմք (ՅՆԶ.84-85): Ընտրելիներուն անունները այսպէս հինգ կը գտնենք երկու պաշտօնագիրներուն պատճէններուն մէջ. սակայն Պէրպէրեան, որ այն ժամանակ գործերուն մէջ կը գտնուէր, կը գրէ, թէ Յակոբոս պատրիարքի հրաժարելուն վրայ, միայն երեք ընտրելիներ ցուցուեցան, Յովհաննէս Մովսէսեան Երուսաղէմի պատրիարք, Մատթէոս Չուխաճեան նախորդ պատրիարք, և Գէորգ Բէրէստէճեան Պրուսայի առաջնորդ (ՊԷՐ.372), և ուրիշներ ալ կան որ երեք ընտրելի կը յիշեն, բայց մենք կը նախադասենք պաշտօնագիրներուն ցուցակը, որ 1866-ի և 1883-ի տեղեկագիրներուն մէջ ալ նոյնութեամբ կրկնուած են (ՅՆԶ.93,102):

2690. ՏԱՃԿԱՀԱՅՈՅ ՎԻՃԱԿՆԵՐԸ

Աւելորդ չըլլայ այստեղ քանի մը դիտողութիւններ աւելցնել 45 վիճակներու թիւին և բաշխման վրայ: Կ. Պոլսոյ պատրիարքարանի յիշատակներուն մէջ բնաւ չենք գտներ վիճակներու որոշուած և հաստատուած և համեմատական ճշդութեամբ կազմուած վիճակներու ցուցակ մը, որուն իբր թէ հետևած ըլլան 1858-ի ժողովները: Առաջնորդութիւններն ալ յարափոփոխ կերպարան ունեցած են, ըստ որում ըստ պատահմանց և պարագայից, և ըստ յաջողութեան և կարողութեանց անձանց, վանապան առաջնորդութիւն մը երկու կամ երեքի վրայ բաժնուած է: Հետևաբար անկայուն և անհաստատ էր առաջնորդութեանց թիւը, և 1858-ի ժողովները ուրիշ բան չեն կրցած ընել, բայց եթէ նոյն տարին պաշտօնի վրայ գտնուող առաջնորդները ցուցակի անցունել, մէկ շարքի վրայ դնելով վիլայէթներու կամ էյալէթներու կեդրոնները նստող առաջնորդները, և մէկ երկու գիւղ թեմ ունեցող վանահայրերը: Քառասուն և հինգ առաջնորդութեանց ցուցակը, որ պաշտօնագիրներու հետ հարկաւ էջմիածնի հաղորդուած է,

թէպէտ պաշտօնագիրին մէջ ակնար մը չենք գտներ, և ոչ իսկ այբուբենական կամ տեղագրական կարգ մը կը ներկայէ, և ըստ բերման իրարու ետև նշանակուած կերևի, և մենք վերլուծական ձևով մը յառաջ պիտի բերենք անոնց ցուցակը: Կ. Պոլսոյ մայրաքաղաքէն զատ ուրիշ 6 վիճակներ ալ կը յիշուին երոպական Թուրքիոյ մէջ, այսինքն Ռոտտոսթօ կամ Թէքիրտալ, Ադրիանուպոլիս կամ Էտիրնէ, Վառնա, որ է այժմեան Պուլկարիա, և Մոլտովալաքիա, որ է այժմեան Ռումանիա, ընդամէնն հինգ երոպական վիճակներ: Փոքր Ասիոյ մէջ կուսակալութեանց կեդրոններէն յիշուած են Պրուսա, Ջմիւռնիա, Ղալաթիա իմա Գաղատիա, Սեբաստիա և Տրապիզոն: Իսկ նահանգագլուխ քաղաքներէն յիշուած են, Նիկոմիդիա, Պանտրմա, Կուտինա կամ Քէօթահիա, Ճանիկ, Նիկոպոլիս կամ Շապինգարահիսար, Ամասիա Մարսուանի հետ, Եդոկիա կամ Թօքաթ և Կեսարիա: Իսկ Թամպարա Ածպտերի հետ երկու վանքեր են մէկ քանի գիւղերով. ըստ այսմ Փոքր Ասիա ներկայանայ 14 վիճակներով: Հայկական գաւառներէն կուսակալանիստ են, Կարին, Վան, Բաղէշի, Խարբերդ և Տիգրանակերտ կամ Տիարալէքի. նահանգագլուխ քաղաքներ են Երզնկա, Կարս, Պայապիտ, և Մուշ, և պարզ գաւառներն են Բաբերդ, Բասեն, Քզի, Դերջան, Կամախ, Չարսանձաք, Չմշկածագ, Արաբկիր, Ակն և Բալու, և Փոքրիկ վանահայրութիւններ են Լիմ և Կոուց, Արզնի և Չնքուշ, ընդամէնն 22 վիճակներ: Վերջապէս երեք ևս վիճակներ կան դէպ հարաւ, Եդեսիա կամ Ուրֆա, Քրդաստան որ է Սղերդ, և Պաղտատ և վերջապէս Եգիպտոս, որ նոր բաժնուած էր Երուսաղէմի պատրիարքութենէն (2607): Ընկ անուանելու ցուցակովն ալ յայտնապէս կը տեսնուի, որ պարզապէս պատահական և հիմնապէս անհամեմատ բաշխմամբ կազմուած ցուցակ մըն է 1858-ին ներկայացուածը, ուր հարիւրհազարէ աւելի ժողովուրդ ունեցող վիճակներու համահաւասար նկատուած են հապիւ հազար մը ժողովուրդ ունեցող թեմեր: Մայրաթողու և մայրաթողուի ձեռքով ռուսական կառավարութիւնը Կ. Պոլիսէ տրուած ցուցակը առանց դիտողութեան և նոյնութեամբ արձանագրութեան անցուցած են, և որ ևս է մինչև այսօր ալ նոյն ցուցակն է որ պաշտօնապէս կը գործածուի: Երբ փոքր վանքեր իրենց մէկերկու գերելով իբր առաջնորդութիւն նկատուած են, անդին կուսակալութիւններ և նահանգներ, ինչպէս Գոնիա կամ Իկոնիոն, Բասթամուռնի կամ Պափղագոնիա, Պիլէճիկ կամ Էրթողրուլ, ցուցակի չեն անցած, առաջինները Գաղատիոյ և վերջինը Կուտինայի առաջնորդներուն յանձնուած ըլլալով: Կ. Պոլսոյ պատրիարքարանը միայն իրմով և ուղղակի և հոգևորապէս իրեն հետ կապուած վիճակներով զբաղելուն, իր պաշտօնագիրներուն մէջ չէ յիշած Կիլիկիոյ և Աղթամարայ և Երուսաղէմի աթոռներուն թեմերը, և ուրիշ կողմէ ալ որևէ տեղեկութիւն չունինք որ ճշդենք անոնց եղած հրաւերը և անոնց մասնակցութիւնը: Էջմիածին չէր կրնար անգիտանալ այդ մեծ աթոռներուն գոյութիւնը. Երուսաղէմի հետ յարաբերութեան մէջ էր, Աղթամարի համար տեսանք Գաբրիէլի օծման դրուած (2680), Կիլիկիոյ հետ նուազ էր յարաբերութիւնը, բայց ամէն առիթ մէջ Էջմիածնի պինդ ունէր ընդհանրական կաթողիկոսի և ծայրագոյն պատրիարքի գիրքը և գիտակցութիւնը, և անշուշտ այդ մասնաւոր աթոռներն ալ կոչած է ընդհանրական աթոռին ընտրութեան, թէպէտ ոչ հրաւիրագիր յղուելուն և ոչ հրաւերի պատասխանելուն վրայ որոշ տեղեկութիւն չունինք:

2691. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Ընտրողական ժողովը բարուած պիտի ըլլայ 1858 մայիս 15-ին, Հոգեգալուստի հինգշաբթին, զի ընտրութիւնը լրացած է մայիս 17-ին շաբաթ օր, և ըստ սովորութեան առաջին օր բացման հանդէս կը կատարուի, երկրորդ օրը չորս ընտրելիներու քուէարկութիւնը: Ժողովի ներկաներու թիւը որոշակի նշանակուած չենք գտներ, բայց Ռուսահայոց կողմէն պէտք է ըլլային աթոռին 15 և վիճակներուն 16 քուէարկուներ, Պարսկահայերն ալ միասին: Իսկ Տաճկահայոց կողմէն պատգամաւոր նշանակուած Իշխան Բեհբութեանց վախճանած էր պաշտօնագիրը Տիղիս չհասած, և Կ. Պոլսոյ պատրիարքարանը

փութացած էր պատգամաւորական ներկայացուցիչ նշանակել վերկուս յերևելի իշխանաց Տփղիսեցւոց (ՊԷՐ.374) Ակաթէլ Գուրգէնբէկեան և Սահակ Թումանեան ապնուականները, որոնք լիակատար իշխանութեամբ Ս. Էջմիածնի կերթան, և երկու կաթողիկոսացուներու վերջնական ընտրութեան մասնակից կըլլան իւրաքանչիւրը քառասուն և հինգական, երկուքը մէկէն իննսուն ձայն կամ քուէ ունենալով, ինչպէս ենթադրած են Կ. Պոլսոյ ժողովները և յանձնաժողովները, բայց իսկապէս այդ ձևը իրականացած չէ: Զի երկու ընտրեալներու վերջին քուէարկութեան մէջ համաձայն կաթողիկոսական ընտրութեան կանոնների 25 յօդուածի, ընտրութեան իրաւունք ունեցել է միայն ժողովին անձամբ ներկայ եղողն, և բացակայ պատգամաւորների կարծիքը չէ ընդունել ի հաշիւ ձայների (ԱՂԱ.71), և ըստ այսմ Տաճկահայոց պատգամաւոր երկու Տփղիսեցիներն ալ համարելով, թէպէտ մին եկեղեցական չէ, 33-է աւելի չէ կրցած ըլլալ քուէարկուներու թիւը: Ընտրութեան գալով Էջմիածնայ միաբանութիւնն ու Ռուսահայերը իրենց մէջէն յարմարագոյն դատած էին Արագածունի Ղուկաս տեղապահ արքեպիսկոպոսը, այլ նա խոհական խորհրդով և ինքնին հրաժարելով ընտրելիութիւնից կառաջարկէ այս անգամ միայն Տաճկաստանի եպիսկոպոսներից ընտրել կաթողիկոս, և այս կերպով Տաճկահայոց յարաբերութիւնը մայրաթողի հետ ամրապնդել: Ուրիշներ կը յաւելուն թէ այդ միտքը ուս կառավարութեան թելադրութեամբ ալ հաստատուած է, և թէ երբ ընտրութիւնը այսպէս իրականացաւ, քաղաքական տեսակէտով մեծ նշանակութիւն տուեց ուս կառավարութիւնը (ԶԱՄ.Բ.165): Տեղեկալին առաջարկը ընդհանուր հաւանութիւն գտաւ, և այն ատեն Կ. Պոլիսէն ներկայուած հինգ կամ երեք անձերու վրայ (2689) կեդրոնացուցին իրենց մտադրութիւնը, և անհակառակ ընտրելագոյն դատուեցաւ նախորդ պատրիարք Մատթէոսը, իր համբաւով և արդիւնքով ծանօթ, և ընտրուեցաւ համարեա միաձայն քուէարկութեամբ, որ 33-էն գոնէ 30 քուէով ըսել կըլլայ, և երկրորդ քուէն ստացաւ Պրուսայի առաջնորդ Գէորգ համեմատական առաւելութեամբ 23 ձայնից (ՄՈՎ.363): Ընտրութեան թուականը ուրիշներ յունիս 18 նշանակած են որ չհամապատասխաներ Էջմիածնի արձանագրութեանց, և պէտք է այդ թուականը ընդունիլ իբրև ընտրութեան լուրին Կ. Պոլիս հասնելուն օրը, ընտրութենէն ճիշդ ամիս մը ետքը: Ռուսական կառավարութիւնը առանց դիտողութեան ընդունեց կատարուած ընտրութիւնը, և առաւելագոյն քուէ ստացող Մատթէոսի կայսերական որոշումը տրուեցաւ և ընդունուեցաւ իբրև կաթողիկոս ամենայն Հայոց, որուն թուականը չենք գտած, բայց օգոստոս 11-ին պաշտօնական լուրը ուսական դեսպանատան կողմէն օսմանեան կառավարութեան հաղորդուեցաւ, որպէսպի արտօնուի մեկնիլ ի Կոստանդնուպոլսոյ ի Ս. Էջմիածին, ինչ որ շնորհուեցաւ օգոստոս 22-ին (ՊԷՐ.607): Բայց պէտք է աւելցնել, թէ մեկնելու հրամանէն կարևորագոյն կէտը հպատակութիւնը փոխելն էր. զի ըստ օրինի կը պահանջուէր կաթողիկոսներու ուսական հպատակ հռչակուիլ: Գրուած է որ նոյն օրէն, այսինքն օգոստոս 22-էն, սկսաւ յիշատակութիւն անուան Մատթէոսի յեկեղեցիս ի սուրբ պատարագի (ՊԷՐ.607), բայց օգոստոս 22-ը Վերափոխման ուրբաթին կը հանդիպի, և յարմարագոյն է կարծել թէ առաջիկայ կիրակէին օգոստոս 24-էն սկսած ըլլայ յիշատակութիւնը: Պատճառ մը չունինք չկրկնելու, թէ տարադէպ և ոչ-կանոնական էր օժումէն առաջ անունի յիշատակութիւնը սկսիլ, զոր եթէ բացառաբար արդարացուցինք Ներսէսի պարագային (2574) պատճառ մը չկար որ Մատթէոս պարագային ալ կրկնուէր, այլ բացառիկ նախընթացներ ետէպ վնասակար կը դառնան, և առիթ կընծայեն վեղժումներ ընդարձակելու:

2692. ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Մատթէոս արքեպիսկոպոս Չուխաճեան, նախորդ պատրիարք Կ. Պոլսոյ, բնիկ Կ. Պոլսեցի Վոսփորի Օրթաքէօյ թաղէն 56 տարեկան էր (2587) կաթողիկոս ընտրուած տարին, և վկայուած էր

իրևելի քաղաքային խնամուած կրօնական կրթութիւն ստացած եկեղեցական մը. աշակերտած էր Բաբերդցի Չամաշըրճեան Յովհաննէս պատրիարքին. որ իր կարգին եղած էր ուսմանց պարթուցիչ Կաղպուանցի Փօքուկեան Զաքարիա պատրիարքին ընտրելագոյն աշակերտներէն մին (2121): Մատթէոս իրաւամբ կը նկատուէր իր ժամանակին գերազանցապէս ուսումնական եկեղեցականը, թէպէտ իր հմտութիւնը հայկական շրջանակէն անդին չէր անցներ: Նա հռչակուած էր իրևելի հմուտ աստուածաբան և քարուղիչ, և ծանօթ էր իւր վստահ ու համարձակ բնաւորութեամբ. Հայաստանեայց եկեղեցւոյ չափից աւելի նախանձախնդրութեամբ, և իւր հեղինակած բազմահատոր կրօնական գիրքերով (ՄՈՎ.363): Մատթէոսի նախանձայուկութեան փաստերը տեսանք իր պատրիարքական պաշտօնավարութեան ատեն, թէ բողոքականութեան (2589) և թէ պապականութեան հանդէպ (2598), և հարկ չենք տեսներ անոնց վրայ անդրադառնալ: Իսկ իր հմտական և գրական կարողութեան փաստերն են իր հրատարակութիւնները. որոնցմէ առաջինը եղած է Յայսմաւուրքի նոր և խնամեալ հրատարակութեան համար Գրիգոր Փէշտիմալճեանի գործակցիլը, որ միանգամայն կարտայայտէ Աղաւնի պատրիարքին պէս բանիբուն անձի մը անոր վրայ ունեցած համարումը և վստահութիւնը: Մատթէոսի հրատարակութեանց առաջինն է Խորհրդածութիւնք շնորհաց և նշանաց և խորհրդոց քրիստոնէական սուրբ եկեղեցւոյ, Զմիւռնիոյ առաջնորդութեան միջոցին գրուած, որուն մէջ եկեղեցւոյ խորհրդոց մասին քրիստոնէական վարդապետութիւնը կը բացատրէ գրաբար լեզուով և ընդհանուր տեսակէտէն: Իսկ ապագային եկեղեցւոյ տեսակէտէն կը գտնենք միայն վերջին օժման մասին յայտնած կարծիքը, ուր թէպէտ նախապէս իւրով օժումին Քրիստոսէ հաստատուած ըլլալը կը պաշտպանէ (ԽՐՀ.105), բայց վերջէն բաւական կը սեպէ Տեառնագրութեամբ սրբոյ խաչի և աղօթիւք կատարուիլը, և մինչև իսկ կըսէ թէ այս իսկ է վայելչական կատարումն խորհրդոյն առաջին դարուց անտի եկեղեցւոյ մեծարեալ (ԽՀՐ.117): Երկրորդ հրատարակութիւնը աւելի ստուար և աւելի կանոնաւոր է 1854-ին հրատարակուած, Հանդիսարան ուղղափառութեան Հայոց եկեղեցւոյ անունով, և գրուած է իրևելի պատասխանի խնդրոյն լուսաւոր կրօն հայապգի և հաւատարիմ ուղղափառ սուրբ եկեղեցւոյս մեծահաւատ յարգելւոյն (ՀԱՆ.1), նպատակ ունենալով ցրել Միսիթարեանց կողմէ իրենց պաշտպանութեան համար հրատարակուած տետրակին խօսքերը, որով Հայոց եկեղեցին հերձուածող և հերետիկոս էր հռչակուած (2668), ինչպէս որ յայնապէս հեղինակն ալ կը յիշէ: Այս գործը ամբողջապէս ջատագովական է պապականներու դէմ, իսկ Բարի մարդ և բարի քրիստոնէայ երկասիրութիւնը, Վոր երկու տարի ետքը հրատարակեց 1856-ին, հակաճառութիւն է բողոքականաց և պապականաց դէմ, միշտ Հայոց պաշտպանութեան նպատակով գրուած: Այդ երկու գործերը մեծ հռչակ ստացան իրենց հմտական ճոխութեամբ, վկայութեանց և պատմական յիշատակաց առատութեամբ, և կրօնական ուղղութեամբ: Բողոքականաց ալ երկրորդին դէմ պատասխան հրատարակելը ևս առաւել աճեցոյց գործին նշանակութիւնը, և առիթ տուաւ Տէրոյնցի Բանադատին, և մեծ հռչակ կապմեց Մատթէոսի անունին շուրջը: Մատթէոսի վերագրուած առաւելութեններէն մէկն ալ ժողովրդասէր անձ, կամ ժողովրդականութեամբը ճանչցուած ըլլալն էր (ՄՈՎ.363), այսինքն իրևելի հանրութեան բարւոյն հետևող, և ոչ դասակարգի մը շահուն ծառայող: Իրևելի վարչական անձ ալ բաւական երաշխաւորութիւն էր չորս տարի պատրիարքութիւն վարած ըլլալը, և իր օրով Կ. Պոլսոյ պատրիարքարանին գոհացուցիչ ընթացք և կերպարան ստացած ըլլալը, և հրաժարելէն ետքն ալ վարչական գործերէ հեռու մնացած չըլլալը, թէպէտ իր սիրած շրջանակը դրականն էր: Տարիքով և աշխատութեամբ ալ գործի գլուխ կանգնելու յարմարութիւն կը ներկայէր, և այս արժանիքներու հիմամբ Կ. Պոլիսէ առաջարկուեցաւ և Էջմիածինէ կոչուեցաւ և Էջմիածինէ կոչուեցաւ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան, որպէսպի

դուրսէ գալով վերանորոգութիւն, այսինքն նոր ոյժ և նոր ուղղութիւն ներշնչէ Հայոց հայրապետութեան: Իրաւ կանուխէն ալ եղած էին Տաճկահայերէ Մայրաթոռ բարձրացողներ, ինչպէս Եղիապար Այնթապցին, Կարապետ Ուլնեցին, Աբրահամ Կրետացին, և Մինաս Ակնեցին, սակայն այն ատենները որոշակի շեշտուած չէին երկու կողմերուն իրարմէ տարբերութիւնները, և ամէնքը հաւասարապէս միևնոյն պատրիարքութեան և աշակերտութեան պատկանող կը նկատուէին: Այլ թէ ինչպէս և ինչչափ կրցաւ Մատթէոս համապատասխանել ընդհանուր ակնկալութեանց, պատմութիւննիս յառաջացնելով պիտի կարենանք հետզհետէ տեսութիւննիս պարզել:

2693. ՅԱԿՈԲՈՍԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Մատթէոսի ընտրութենէն անմիջապէս ետքը հնար չէր անոր Կ. Պոլիսէ հեռանալ, զի օսմանեան կառավարութեան հաւանութենէն ետքն ալ ձևակերպութիւններ կային ուսական կառավարութենէ լրացուելիք, ուսկից ետքը պիտի գային Էջմիածնի հրաւիրակները նորընտիրը առաջնորդելու: Այս պարագաները գործը ամիսներով երկարեցին, ձմեռը վրայ հասաւ և ուղևորութիւնը դժուարին դարձաւ և առաջիկայ 1859 գարունին մնաց: Այդ միջոցին Մատթէոս իր իշխանութեամբը նպաստեց Աղթամարայ Պետրոս կաթողիկոսին հաստատութեան, և նախագահեց Կ. Պոլսոյ պատրիարքին փոփոխութեան: Արդէն պատմած ենք Յակոբոսի պատրիարքութեան օրերուն անցքերը, որոնք թէպէտ ցրիւ և իրարմէ անկախ եղելութիւններ, սակայն բաւական են նոյն ժամանակի ազգային գիրքը պատկերացնել և ազգային գործունէութեան գաղափարը տալ: Յակոբոս Սերոբեան պատրիարքը 1780-ին ծնած Կ. Պոլսոյ Պալաթ թաղը, արդէն տարիքը առած և տկարացած էր և յուզումնալից պարագաներէ ընկճուած, շատոց էր որ հրաժարելու և պատրիարքական բեռը թօթափելու հետամուտ էր: Անգամ մը 1856 նոյեմբեր 12-ին հրաժարական ներկայացած, բայց ետ առնելու ստիպուած էր ընդհանուր հաւանութեամբ ազգիս, թէպէտ կային ամիրաներուն մէջ պատրիարքի փոփոխութիւն ընել ուզողներ: Երկու տարիներ ևս անցան և Յակոբոս հնարաւոր չափին մէջ շարունակեց իր պաշտօնը և այդ միջոցին տեղի ունեցան Ներսէս կաթողիկոսի մահը և Մատթէոսի ընտրութիւնը ինչպէս պատմեցինք: Յակոբոս 78 տարեկան եղած և ծերութենէն ընկճուած, ընտրութիւնը հաստատուելէն քիչ ետքը (1858) հոկտեմբեր 7-ին (ՊԷՐ. 607) ժողով գումարեց պատրիարքարանի մէջ, որուն ներկայ գտնուեցաւ նաև Մատթէոս, և վերջապէս իր հրաժարականը մատոյց, որ և ընդունուեցաւ, և հրաժարականը կառավարութենէ ալ ընդունուելէն ետքը կրկին ժողով գումարուեցաւ հոկտեմբեր 17-ին (ՕԼ. ՕՐԱ. 244), և յաջորդի ընտրութիւնը կատարուելով պատրիարք հռչակուեցաւ Գէորգ Եպիսկոպոս Քէրէստէճեան, Պրուսայի առաջնորդը (ՕԼ. ՕՐԱ. 64), որ իբր երկրորդ ընտրեալ երկրորդ ընտրեալ նշանակուած էր Էջմիածնի ընտրողական ժողովէն: Եթէ Յակոբոս իբր պատրիարք շատ մեծ գործեր կատարած չէր, սակայն երևելի անցքեր տեղի ունեցած էին իր օրով, ինչպէս արևելյան կոչուած պատերազմը Ռուսիոյ դէմ, և չորս Վենետկոյ Միսիթարեան վարդապետներուն վերադարձը: Յակոբոս պատրիարքութենէ հրաժարելով քաջուեցաւ Իւսկիւտար, և բնակեցաւ Ս. Խաչ եկեղեցւոյն հանդէպ Յակոբ Նալեանէ կտակուած և հրաժարեալ պատրիարքներուն յատկացուած տունը, զոր իր ծախքով նորոգեց ու յարդարեց, նմանապէս իր արդեամբ կառոյց Ս. Խաչի ընդարձակ և քարուկիր վարժարանը, աշակերտաց և աշակերտուհեաց համար պատուած մասերով, և մեծ դրան ներսն ալ պարտէպին մէջ իրեն համար դամբարան մըն ալ պատրաստեց այնտեղ թաղուելու դիտաւորութեամբ: Յակոբոս որչափ ալ պաշտօնէ քաջուած, բայց գործէ քաջուած չի կրնար ըսուիլ, զի մեծ դեր վարեց օթէ ազգային սահմանադրութեան կազմուելուն, և թէ

Երուսաղէմի ներսէն դուրսէն ընտրողական խնդիրներուն մէջ, ինչպէս իրենց կարգին պիտի տեսնենք, իսկ իրեն վախճանը մտադրութենէն տարբեր եղաւ, զի 1862ին, արդէն 82 տարեկան, ուղևորեցան Երուսաղէմ հոկտեմբեր 3ին և հասաւ 18-ին բայց կարծես թէ միայն մեռնելու և թաղուելու համար եկած ըլլար, հասնելէն երկու շաբաթ ետքը հոկտեմբեր 31-ի գիշերը դիպուածով մահճակալին առագաստը մոմէն կրակ կառնէ, և մարելու համար ըրած ջանքերէն ձեռքերն ու ոտքերը և մարմինը կը խանձին, և թէպէտ իմացողներ կը հասնին և դուրս կը հանեն, բայց կրած վախէն և ստացած վէրքերէն կեանքը կը վտանգուի, և նոյեմբեր 5-ին (62. ՅԿԲ. 294) հոգին կաւանդէ, և 6-ին երեքշաբթի որ հանդիսապէս կը յուղարկուորի և կը թաղուի Ս. Փրկչի եկեղեցոյ գաւիթը, Երուսաղէմի պատրիարքաց շարքին մէջ (62.ՅԿԲ.299):

2694. ՄԱՏԹԷՈՍԻ ՄԵՎՆԻԼԸ

Նորընտիր կաթողիկոսը Էջմիածին առաջնորդելու ընտրուած հրաւիրակներուն գլուխը Մակար արքեպիսկոպոս Տէր-Պետրոսեան և ընկերները Մկրտիչ Բամբամեան և Գալուստ Փափապեան վարդապետներ և երկու կարմրապզեստ շաթըր կոչուած կաթողիկոսական բարապաններ Կ. Պոլիս հասան 1858 դեկտեմբեր 16-ին, որ է ըսել ընտրութենէն եօթն ամիս ետքը, և իջևանեցան Բերա Տատեան Պօղոս պէյի կողմէ յատկապէս պատրաստուած տուն մը, մինչ Մատթէոս կը շարունակէր մնալ իր Օրթաքէօյի տունը: Այդ առթիւ Մատթէոս հանդիսաւոր հայրապետական պատարագ մատուց բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին 1859 յունուար 11-ին, Ծննդեան ութօրէից մէջ հանդիպող կիրակին, ուր ներկայ գտնուեցաւ ամբողջ Ռուսիոյ դեսպանական մարմինը, և պատարագէ ետքը մեծածախս հացկերոյթ տրուեցաւ Տատեան Պօղոսի կողմէն: Թիչ ետքը սուլտանն ալ հաճեցաւ պատուասիրել նորընտիրը յատուկ ընդունելուեամբ, որ տեղի ունեցաւ փետրուար 7-ին շաբաթ օր, և նորընտիրն ու հետևող հրաւիրակները շքանշաններով մեծարուեցան, ինչպէս նաև Անդրէաս վարդապետ Տէր-Անդրէասեան, որ Մատթէոսին իբր գաւապանակիր կընկերանար: Էջմիածին ուղևորութիւնը գարունին յետաձգուած, և այնպէս ալ ռուսական դեսպանատան հաղորդուած ըլլալով, հրաւիրակները օգտուեցան Երուսաղէմի Սուրբ Տեղեաց ուխտագնացութիւնը կատարել և Զատիկին ընելով վերադառնալ, որ այն տարի կիյնայ ապրիլ 12-ին: Իսկ ապրիլ 20-ին Կ. Պոլիս կը հասնէր Ռուսիոյ պետական հրաւիրակը զօրավար Միքայէլ Լօրիս Մելիքով, իսկ բնիկ հայկական հնչմամբ՝ Լօռու Մելիքեանց, իրեն թիկնապահ օգնական ունենալով Միքայէլ Մինասարեանց հարիւրապետը (ՊԷՐ.610), 21ին կը տեսակցէր Գէորգ պատրիարքին հետ, և 23-ին հինգշաբթի օր պաշտօնապէս կը ներկայանար նորընտիր կաթողիկոսին: Ընդունելութիւնը տեղի ունեցաւ Օրթաքէօյ Եուսուֆեան ընդարձակ սրահին մէջ, ուր Մատթէոս կը սպասէր նախորդ պատրիարք Յակոբոսէ, Գուրումճեան Սարգիս եպիսկոպոսէ, ութը վարդապետներէ և քահանաներէ շրջապատուած, իսկ Լօրիս Մելիքովի կընկերանային Գէորգ պատրիարք և Տատեան Յովհաննէս և Պօղոս և Երեմեան Գէորգ պէյեր, չորս վարդապետ և ուրիշ հետևորդներ (ՊԷՐ. 610): Պաշտօնական ներկայացումներէ և յայտարարութիւններէ ետքը յատուկ բանախոսութիւն մըն ալ արտասանեց Տիգրան Եուսուֆեան գոհունակութեան և շնորհակալութեան արտայայտութիւններով (ՊԷՐ. 376-378): Անկէ ետքը մինչև յունիս 2-ին կաթողիկոսին և հրաւիրակներուն մեկնիլը, 40 օրեր շարունակ, ուրախութեանց և հրաւերներու և հանդէսներու միջոց մը եղաւ, առատ ծախքերով որոնք Թէոդորեանի սիրտը կը հալեցնէին: Ապրիլ 24-ին Մատթէոս փոխադարձ այցելեց Մելիքովի, 25-ին Մելիքով սուլտանէն և նախարարներէն ընդունեցաւ, 26-ին Մատթէոս Պէշիկթաշի եկեղեցին քարոզեց և Պալեան Կարապետ կայսերական ճարտարապետ հացկերոյթ տուաւ, մայիս 11-ին Յունաց պատրիարքի ներկայացուցիչ եպիսկոպոսներ շնորհակալութեան եկան, 18-ին Ռուսահայ վաճառականներ կոչունք տուին, 21-ին

հացկերոյթ մըն ալ տրուեցաւ Կ. Պոլսոյ ուսումնական խումբին կողմէն, 30-ին Անգղիոյ դեսպանը հացկերոյթ տուաւ, 19-ին Ռուսիոյ Կոստանդին մեծ դուքսը ընդունելութիւն կատարեց և այս ամէն առիթներու մէջ ժողովրդական ցոյցեր առատացան, բարեմաղթանքներ խօսեցան, և ամէն դասակարգերու մէջ եռանդուն արտայայտութիւններ տիրեցին եկեղեցական հանդէսներ ալ պակաս չեղան գլխաւոր թաղեր՝ հայրապետական պարագաներով և յորդաբուխ քարոյներով: Վերջապէս մայիս 17-ին կաթողիկոսը տանելու համար վրկուած ուսական շօգենավը հասաւ, յունիս 1-ին Կոստանդին մեծ դուքս սուլտանէն հրաւիրեցաւ, և յունիս 2-ին Հոգեգալստեան երեքշաբթի օրը, նախորդ տարին Հոգեգալստեան շաբթուն կատարուած էր ընտրութիւնն ալ (2691), առաւօտուն կաթողիկոսը կրկին անգամ սուլտանէն հրաժեշտի ողջոյնի ընդունուեցաւ, անկէ Օրթաքէօյ գալով Փափապեան ճանիկ ամիրայի տունը, ուր եկեղեցականաց և աշխարհականաց մեծ բազմութիւն մը Գէորգ պատրիարքի գլխաւորութեամբ հաւաքուած էր, հրաժեշտի ողջոյնը մատոյց, և երեկոյեան պահուն կաթողիկոսն և պետական ու այթոռական հրաւիրակներ շոգնաւը մտան, և բազմութիւնը բազմաթիւ նաւակներով բաւական տեղ շոգենաւին հետևեցաւ, մինչև Վոսփորի բերանէն Սև ծով ելլալը: Տաճկահայոց կողմէն կաթողիկոսին ուղեկցեցան Սարգիս Գուլուճեան եպիսկոպոս, որ Սիսէ ձեռնադրուած լինելով պէտք ունէր էջմիածինի ուխտը կատարեալ, Սարգիս Թէոդորեան վարդապետ որ Հայկապնեան վարժարանի օգնութեան համար Մատթէոսի խոստումներուն կը հետևէր: Աբրահամ վարդապետ Սարկաւագանեան քաղցրաձայն երգիչը Պիւլպիւլ մականունեալ, Անդրէաս վարդապետ Տէր-Անդրէասեան իբր գաւազանակիր, Աւետիս Պէրպէրեան վարժապետ, առաջ ուսուցիչ և յետոյ քարտուղար նորընտիր կաթողիկոսին, և Մարկոս Աղաբէգեան Ռուսահայոց և Մայրաթոռոյ կացութիւնը հետազօտելու և ուսումնասիրելու հետամուտ անձ մը, տասը Ներսիսեանի աշակերտներ, և երեսուն բախտախնդիրք, ընդ ամէնն իբր յիսուն անձ:

2695. ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Մատթէոսի Կ. Պոլիս եղած միջոցին Հայկապնեան վարժարանին գործն ալ անոր հոգածութեան առարկայ եղած ըլլալը յիշեցինք (2682), և այդ յուսով կօրօրուէր Թէոդորեան Կ. Պոլսոյ մէջ: Այվապեան հեռացած էր գործէն, և 1858 օգոստոս 1-ին Թէոդորեան Խալիբեան վարժարանին բացումն ալ կատարելով (ՊԷՐ.605), անոր տուած էր բոլոր մտադրութիւնը, և միայն ցաւակցական և քաջալերական նամակներու շրջանակին մէջ կը մնային Թէոդորեանի հետ յարաբերութիւնները, իսկ Գայֆայեան եղբարք Ամբրոսիոս և Խորէն, վարժարանին բեռը վրանին, միջոցներէ վուրկ պարտքերէ նեղուած, տառապանաց մատնուած, աղաչանքի և թախանձանքի, գանգատի և բողոքի նամակներ կը տեղային Թէոդորեանի գլխուն: Մատթէոսի ակնկալութիւններն ու խոստումները Ռուսահայոց վրայ հիմնուած էին, բայց իր ուղևորութիւնն ալ երկարաձգուած էր, և առ այժմ լոկ քաջալերական խօսքեր կրնար առատացնել: Սակայն անդիէն Այվապեան 1858 նոյեմբեր 30ի նամակով Թէոդորեանի կապդարարէ թէ կաթողիկոսը դժուարաւ յոյժ կարողանայ նպաստ լինել ուղղակի յետ մտանելոյն ի սահմանս Ռուսիոյ, ուստի յարմարագոյն կը դատէ որ այժմէն շրջաբերական մը հանէ առ բովանդակ ազգն միանուագ նուէրներով գէթ միլիոն Ֆրանքաց դրամագլուխ մը պատրաստելու, և Երուսաղէմի վանիցն գումար մեծ առ մի նուագ ևեթ պահանջել (ԹՈՂ.Դ.113), և այս նպատակով կոնդակին ծրագիրն ալ կը յղէ, բայց Մատթէոս յապաղէ և չկամի հրատարակել վայն (ԹՈՂ.Դ.214). և կը բաւականանայ Հայկապնեանի հոգածութիւնը Գէորգ պատրիարքին յանձնարարել (ԹՈՂ.Դ.120), որ Գերագոյն ժողովին կը փոխանցէ գործը, այն ալ Մկրտիչ Մոմճեանի, որ կը ջանայ հայթհայթել 5000 ֆրանք միայն, աննշանակ դարման տարապայման աճած կարօտութեան (ԹՈՂ.Դ.121), բայց և ոչ այն կը

գործադրուի (ԹՈՒԴ.Դ.126): Այվապեան, որ ընդհանուր հանգանակութեան և դրամագլխոյ կազմութեան խորհուրդ կու տար, միւս կողմէն Գալֆայեան եղբայրներուն կը թելադրէր Հայկապնեանէն յոյսերնին կտրելով գալ իրեն հետ միանալ և Խալիբեանին աշխատիլ: Թէոդորեանին վիճակը հետզհետէ կը ծանրանար Փարիզի նեղութեան և Կ. Պոլսոյ անհոգութեան միջև, որուն սիրտին ցաւ կը պատճառեն հրաւիրակներուն համար եղած տարապայման ծախքերը հանգանակութեամբ կամ մեծամեծաց ընծայներով, և վշտագին կը գոչէ, ահա սեպական բնաւորութիւն իշխանացն ի Պոլիս: Օրեր կանցնին, ակնկալութիւններ կը ցնդին, և Թէոդորեան 1859 ապրիլ 19-ին, որ է Նոր կիրակի օրը, երբ այլ ևս կաթողիկոսին կը դիմէ, թէ ահա ամիս տասն են Կի կամ ես աստ, բայց թէ գործ մը չիրականացաւ և Հայկապնեանը՝ փակեալ էր այն այժմ անշուշտ ի վնաս և ի նախատինս ազգիս Հայոց, եթէ կաթողիկոսը չէր փոյթ կալեալ, և եթէ չփութայ արդ հոգ տանել և պարտուց նորին, առաւել ևս լիցին վնաս և նախատինք (ԹՈՒԴ.Դ.153): Մատթէոս կը բաւականանայ նորէն բերանացի վստահութիւն տալ, իսկ պատրիարք և ժողովականք վարժարանը չփակելու համար ամսական 4,000 ֆրանքի գումար հասցնել կը խոստանան, բայց այն ալ չի գործադրուիր, և Մատթէոս մեկնելու օրը միայն շրջաբերական մը կը հանէ Տաճկահայոց հասցէին, իսկ Թէոդորեանը միասին կը տանի Ռուսահայոց դիմելու նպատակով:

2696. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐ

Մատթէոսի Կ. Պոլիս եղած միջոցին կատարուած գործերէն մին ալ ծագած փափագն էր, Էջմիածնի և Կ. Պոլսոյ աթոռներուն, այսինքն ռուսահայ և տաճկահայ ազգայնոց եկեղեցական յարաբերութիւնները որոշ և հաստատուն հիմերու վրայ դնել և ճշդել, և անցելոյն թիւրիմացութեանց կրկնումը խափանել: Այդ նպատակով կազմուեցաւ խնդիր և առաջարկութիւն ի դիմաց հոգևորականաց և ժողովականաց բնակելոց ի Տաճկաստան ծրագիրը: Գործին քաջալերութիւն տուողը Ռուսահայոց ընթացքն էր, որոնք Տաճկաստանէ ընտրած էին նոր կաթողիկոսը, և Մայրաթոռոյ և ռուսական կառավարութեան կողմէ պատուաւոր հրաւիրակներ եկած էին և կատարելապէս համակիր վարմունք ունէին: Այդ ամէնը ծրագիրին ճակատն ալ բացատրուած էր, որպէս Կի յարաբերութիւն մեր ընդ սրբոյ աթոռոյն, որ առժամանակ մի դադարեալ էր, սկիզբն առցէ շարունակել անընդմէջ և սետանալ, որպէս և էրն կանխաւ: Իսկ առաջարկը ուղղուած էր առ Սուրբ Սիւնհոդոսն Արարատեան Մայրաթոռոյ Սուրբ Էջմիածնի (ԾԻԼ. Ա. 221): Ստորագրողներն էին, Գէորգ պատրիարք, Յակոբոս նախորդ պատրիարք: Իսահակ վարդապետ Երուսաղէմի փոխանորդ, և Հոգևոր ժողովոյ անդամներէն ութը հոգի, Սարգիս եպիսկոպոս Գուլումճեան, Յովհաննէս Սէթեան, Յարութիւն Պողոսեան, ու միւս Յովհաննէս վարդապետներ , և Երեմիա Խասքէօյի, Յովհաննէս Սէլամիէի, Յովհաննէս Գումաբարուի, և Արիստակէս Սամաթիոյ աւագերէցներ: Իսկ գերագոյն ժողովը փոխանակ ստորագրութեանց ժողովական կնիքն էր դրած (ԾԻԼ, Ա. 234): Այդ առաջարկը վանազան Կրոյցներու և դիտողութեանց առիթ տուաւ, որոնց չանցած կարևոր կը սեպենք պարունակութիւնը վերլուծել: Երկու մասի բաժնուած է առաջարկը. առաջինն ունի Մայրաթոռին վերաբերեալ տասը յօդուածներ, և երկրորդը Երուսաղէմի և Կ. Պոլսոյ վերաբերեալ վեց յօդուածներ, որոնք են Ա. կաթողիկոսի ընտրութիւնը Պօլօթէնիէի համաձայն ընել: Բ. Սինոդը 12 անդամներով կազմել, 6. Ռուսաստանէ, 4. Տաճկաստանէ, 1 Պարսկաստանէ և 1 Մոլտովալաքիայէ և ուրիշ գաղութներէ: Գ. Էջմիածին փոխանորդ եկեղեցական մը ունենայ ի Կ. Պոլիս , որ տեղւոյն յուզմունքներէ հեռու մնայ, և պատրիարք չկարենայ ընտրուիլ, բայց եթէ պաշտօնը լրանալէն ետքը երեք տարի Էջմիածին մնացած ըլլայ: Դ. Կաթողիկոսը կարենայ ընդհանուր ժողով գումարել վասն վերանորոգութեան օրինաց և կանոնաց և աւանդութեանց սահմանելոց ի նախնի հարց և ժողովոց:

Ե, Կաթողիկոսը կրնայ անհնապանդները և մուրեալները և օրինաւոր իշխանութեան անաստողները պատժել: Զ. Կրնայ եպիսկոպոսներ ձեռնադրել վիճակայնոց հաճութեամբ, և Տաճկաստանի համար Կ. Պոլսոյ պատրիարքին և Երուսաղէմի պատրիարքին վկայութեամբ: Է. Կրնայ միւռօն օրհնել և բաշխել ընդ ամենայն եկեղեցիս Հայոց: Ը. Կրնայ Տաճկաստանի և ուրիշ ամէն տեղերու համար հոգևորական կալուածներու պաշտպանութիւն կատարել առանց միջամուխ գոլոյ վերակացութեան նոցին և առանց փոխադրելոյ ըստ հաճոյս: Թ. Կը յանձնարարուի յետ ոչ բազում ժամանակաց ընդհանուր ժողով մը գումարել, զի զխափանեալն երծիցեն յիւր տեղի, զպակասեալսն լցուցեն և զթիւրեալսն ուղղեսցեն: Ժ. Կը յանձնարարուի ևս որ էջմիածնի մօտաւոր վանքերէն միոյն մէջ բարձրագոյն ուսումնարան մը բացուի եկեղեցականաց համար: Երկրորդ մասին յօդուածներն ալ հետևեալներն են: Ա. Երուսաղէմի պատրիարքը պիտի ճանչցուի ծայրագոյն արքեպիսկոպոս և պատրիարք աթոռոյ Սրբոց Յակոբեանց ընդ գերագոյն հոգևոր իշխանութեամբ մայրաթոռոյ: Բ. Կ. Պոլսոյ պատրիարքը պիտի ճանչցուի ծայրագոյն արքեպիսկոպոս և պատրիարք ամենայն Հայոց բնակելոց ի Տաճկաստան, ընդ գերագոյն իշխանութեամբ Մայրաթոռոյ, և առաջնորդներ կարգելոյ և յետս կոչելոյ իշխանութեամբ: Գ. Ասոյ, Աղթամարայ, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ գահակալներ ի նստել յաթոռ մատուցեն զհաւաստիս մեծարանաց առ Մայրաթոռն, և միայն ի բանի և ի դէպս դժուարին խնդրոց Մայրաթոռոյ դիմեն: Դ. Տաճկաստանի եպիսկոպոսներ միշտ պիտի դիմեն Կ. Պոլսոյ պատրիարքին, կրնան անոր դէմ մայրաթոռոյ բողոքել, բայց մայրաթոռն ալ նախապէս բողոքը պատրիարքին պիտի հաղորդէ, և ապա մատիցէ տալ զարժանին վճիռ: Ե. Սոյ և Աղթամարայ և Երուսաղէմի գահակալներուն դէմ գանգատներ, նախ Կ. Պոլսոյ Հոգևոր ժողովին մէջ պիտի քննին, և եթէ խնդիրն ոչ լուծանիցի, կրնան դիմել Մայրաթոռոյ, որ սակայն նախապէս Կ. Պոլսոյ պատրիարքէն տեղեկութիւն պիտի ուզէ: Զ. Կը յանձնարարուի որ Երուսաղէմի պատրիարքը Ս. Յակոբայ վանքէն դուրս ժառանգաւորաց բարձրագոյն ուսումնարան բանայ: Յօդուածներէն վերջ ընդարձակ կերպով կը յայտարարուի, որ յօդուածները վաւերացուելէն ետքը երեք օրինակներ գրուին և էջմիածին, Երուսաղէմ ու Կ. Պոլիս պահուին, կաթողիկոսը անոնց գործադրութեան գերագոյն հսկողութիւն ընէ, և եթէ կաթողիկոսն ալ անոնց դէմ վարուի, զայնպիսին ոչ ընդունի և ոչ ճանաչէ ազգն իբրև արժանաւոր յաջորդ լուսաւորչեան աթոռոյ, և աթոռը թափուր նկատելով կը սպասէ մինչև յետ մահուան նորը ընտրուի: Առաջարկը 1859 մայիս 8 թուականը կը կրէ, որ է ըսել թէ կազմուած է Մատթէոսի Կ. Պոլիս գտնուած վերջին ամսուն մէջ:

2697. ԱՌԱՋԱՐԿԻՆ ԲՆՆՈՒԹԻՒՆԸ

Այդ առաջարկին շուրջն է, որ ահագին փոթորիկ մը յարուցուեցաւ ժամանակին և գործը ընթացք չունեցաւ, անոր մէջ Հայ եկեղեցւոյ ապագային մեծամեծ վտանգներ տեսնուելուն: Մարկոս Աղաբէյեանի պատմութեամբ՝ առաջարկը նախապէս ուսներէն պատրաստուեր է և յետոյ հայերնէնի վերածուեր է, զայն առաջարկողը եղեր է Լօրիս Մելիքովի ուսական կառավարութենէ ստացած հրահանգին համաձայն: Գէորգ պատրիարք ուսական կառավարութենէ շահուեր է զայն քալեցնելու համար: Հոգևոր և Գերագոյն ժողովի անդամներ պարզամտութեմբ խաբուեր են, հրաւիրակ Մակար եպիսկոպոսի չէ յանձնուեր գրութիւնը, Մատթէոս կաթողիկոսն ալ Կ. Պոլսոյ մէջ տեղեկութիւն չէ ունեցեր, և առաջարկին բոլոր նպատակն եղեր Հայ եկեղեցին սինոդին յանձնել, որ կաշկանդուած է Պօլսթէնիով, որպէսզի կերպով մը քաղկեդոնականութիւնը ընդունել տրուի Հայոց և Հայ եկեղեցին ջնջուի: Առաջարկը Լօրիսի մօտ գաղտնի մնացեր է մինչև Տփղիս հասնելուն եօթներորդ օրը, և այն ատեն միայն Մակարին յանձնուեր է սինոդին ներկայելու, և այդ առթիւ Մակար եղեր է առաջին անգամ քաղկեդոնականութեան վտանգը յայտնողը: Այդ

պատմութեան արձագանք եղած է նաև Մելքիսեդեկ եպիսկոպոս, որ այդ անցքերու ատեն Տփղիսի մէջ Աղաբէդեանի մտերիմներէն Գարեգին Մուրատեանն էր, և գաղափարակիցներ էին: Մեր տեսութեամբ վիպասանական ոճ մը կայ այդ պատմութեանց մէջ որ անմիջապէս աչքի կը վարնէ: Եթէ յօդուածներէն առաջինը Պօլօթէնիէի համակերպիլ կը պարունակէ, այն ալ պարզապէս ընտրութեան մասին ըսուած է և ոչ վարչութեան, և արդէն երկրորդ յօդուածը որ սինոդականները 12-ի կը բարձրացնէ և կէսառկէս օտարահպատակներ կընդունի, բնաւ չէր կրնար ռուսական կառավարութենէ ներշնչուիլ: Ընդհանուր ժողովի առաջարկն ալ և անոր վերապահուած գործեր, նմանապէս ռուսական կառավարութեան հաճելի չէին կրնար ըլլալ: Նախնի կանոնաց և օրինաց վրայ պնդելը՝ նորութիւնները կանխաւ կը մերժէ. դաւանութեան մասին բնաւ ականարկ չկայ, իսկ վերջաբանին մէջ կաթողիկոսը չճանչնալու սպառնալիքը բոլորովին հակառակ է ռուսական տեսութեանց: Նոյն իսկ խնդիր և առաջարկութիւն անունը՝ որոշման գաղափարը կը հեռացնէ և վերջը Սահմանադրութիւն կոչուիլը երկու կողմերու հաւանութեամբ վաւերացուելիք ձևին կը պատկանի, և ոչ նախնական առաջարկին: Այսու հանդերձ որովհետև նորութիւն մըն էր յարաբերութիւնները որոշման մը ենթարկելը և որովհետև առաջարկը ուրիշ աթոռներու ընդարձակութիւններ կը պարունակէր, իրաւամբ կրնային Ղուկաս և Մակար և ուրիշ սինոդականներ հակառակ ըլլալ, թէպէտ Աղաբէդեան իսկ տեղ մը Մակարը Լօրիսի կամակից կը ցուցնէ (ԾԻԼ.Ա.213), և հնար չէ որ գոնէ ստորագրող քահանաներ ըրածնին Մակարէ գաղտնի պահած ըլլան: Իսկ քաղկեդոնականութեան վտանգը ճարտար դարձուածք մը կը կարծենք միտքերը պղտորելու, ինչպէս ռուսահայոց մէջ ցրուած ծանօթութիւններ թերթը կը մատնանշէ, որուն մասին հարկ սեպած են բողոքել Գերագոյն ժողովոյ անդամներէն Յովհաննէս և Պօղոս Տատեան, Կարապետ Պալեան և Գէորգ Երամեան 1860 ապրիլ 27-ին Լօրիսի ուղղած նամակով (ԾԻԼ.Ա.242-245): Աղաբէդեանի պատմութեամբ Մատթէոսն ալ ռուսական կառավարութեան գործիք եղած կըլլայ, և իր թելադրութեամբ այդ քաղաքէն հեռացած, բայց միանգամայն վինքն ալ իր քովէն հեռացուած, որոնք այնպիսի պարագաներ են որ Աղաբէդեանի կարծիքէն աւելի ուրիշ փաստեր կը պահանջեն իբրև պատմական եղելութիւն ընդունելու համար: Ամէն առիթի մէջ ստոյգ է թէ առաջարկը ընթացք չունեցաւ, և չենք ալ գիտեր թէ ո՞ր մնաց, և թէ որո՞նք են այն աշակուրջ ապգայինները որոնց խորամտութեամբ գործը կը խափանուի (ՄԵԼ. 607): Ուստի այսչափ ինչ բաւական կը սեպենք այս մասին, և կը շարունակենք Մատթէոսի դէպ էջմիածին ուղևորութիւնը պատմել:

2698. ՄԱՏԹԷՈՍ ՅԷԶՄԻԱԾԻՆ

Կ. Պոլսոյ մէջ կատարուած ուրախական և պատուասիրական ցոյցերէն աւելին կատարուեցաւ Ռուսահայոց քաղաքներուն մէջ: Կաթողիկոսն ու հրաւիրակները ու հետևորդները տանող շոգենաւը երեքօրեայ յաջող նուիրակութեամբ 1856-ին յունիս 5-ին հասաւ Պաթի, գետաբերանի նաւահանգիստը, ուր կը հանդիպէին Այվազովսքիի, և հակառակ հողմին պատճառով, միւս օր 6-ին փոքրիկ շոգենաւով գետն ի վեր կը նաւարկեն մինչև Փօթի, ուր դիմաւորելու եկած էին Սարգիս եպիսկոպոս Ջալալեան իբր Տփղիս առաջնորդ պատշաճ հետևորդներով: Ամսուն 7-ին Փօթիէ կը նաւարկեն միշտ Ռիօն գետն ի վեր մինչև Մաւան, անկէ ետքը կառքերով կուղևորէին և կաթողիկոսն Թէոդորանը կառնու միշտ իրեն կառքի ընկեր, յունիս 8-ին կը հասնին Քութայիս, ուր կը մնան երկու օր, որ մըն ալ Սուրա, և հետզհետէ Կօրի ու Մծխիթա հանդիպելով և ամէն քաղաքներու մէջ հանդիպելով և ամէն քաղաքներու մէջ հանդիսական ընդունելութիւն գտնելով յունիս 14-ին Կաթողիկէ էջմիածնի կիրակիին կը հասնին Տփղիս: Բոլոր քաղաքը դղրդած և անցնելիք փողոցներուն վրայ խոնած էր, որոնց մէջէն անցնելով հասաւ Վանքի մայր եկեղեցին, և

բեմ բարձրանալով օրհնեց Ռուսաց կայսրը, և կայսերապուհները և պաշտօնակալները, և Տփղիսի և ընդհանուր Ռուսահայոց եկեղեցական դասը և աշխարհական ժողովուրդը: Նոյն գիշեր ոչ միայն առաջնորդարանին այլ և բոլոր քաղաքին մէջ լուսավառութիւններ կատարուեցան, և միւս օր յունիս 15-ին երկուշաբթի, փոխարքայական պալատան մէջ մեծահանդէս շքեղութեամբ կայսերական հրովարտակը կարդացուեցաւ և յանձնեցաւ և ականակուռ շքանշանով պատուուեցաւ (ԱՅՅ.3): Յունիս 16-ին երեքշաբթի հանդիսաւոր կերպով այցելեց Ներսիսեան ուսումնարանը, ունկնդրեց Յակոբ Կարէնեանց հայկաբանին ընդարձակ ճառախօսութեանց (ԱՅՅ.6-16) ալգալին կեանքի և միութեան վրայ, որուն պատասխանեց՝ օրհնելով հանգուցեալ Ներսէսի յիշատակը, և կոչելով զնա այր հաւասար Ներսիսի Շնորհալույ (ԱՅՅ.17), աչքէ անցուց ցուցակները, քննեց աշակերտները, պտտեցաւ դասարանները, և ննջարանը, և սեղանատուն ալ իջաւ տղայոց ճաշի ատենը և գոհ սիրտով մեկնեցաւ: Յունիս 17-ին փոխարքայական տեղակալը այցելութիւն տուաւ, և տասն օրեր ևս շարունակ հանդէսներ կատարուեցան, եկեղեցական արարողութիւններ և այցելութիւններ և ընդունելութիւններ, մինչև որ հասնելէն երկու շաբաթ ետքը յունիս 29-ին Տփղիսէ մեկնեցաւ, հասնելուն օրուան նման հանդիսական ցոյցերով: Ճանապարհին ուր որ հանդիպեցաւ անպակաս եղան ժողովրդական արտայայտութիւններ մինչև Քանաքեռ գիւղը, ուր նորընտիրը դիմաւորեցին տեղապահ Ղուկաս արքեպիսկոպոս և Երեւանի նահանգապետը և Պարսից դենպետը պաշտօնական խումբերով, և դարձեալ փառաւոր ցոյցերով մտաւ Երևան, ուր կրկնուեցան եկեղեցական հանդէսներ, լուսավառութիւններ, այցելութիւններ, ընդունելութիւններ և հացկերոյթներ (ՊԷՐ.381-382): Երեք օր ալ Երևան մնալով յուլիս 7-ին երեքշաբթի Էջմիածին կը մտնէ: Դարձեալ եկեղեցական հանդէսներ, լուսավառութիւններ չորս եկեղեցիներու վրայ և ընդունելութիւններ: Յուլիս 8-ին միաբանութիւն ամբողջ պաշտօնապէս կընծայէ զհամբոյր հնապանդութեան, 8 եպիսկոպոսներ, 24 վարդապետներ և 20 սարկաւազներ ու դպիրներ, և յուլիս 18-ին Վարդավառի նախատօնակին Իջման սեղանին առջև նորընտիրը կարտասանէ պետական հաւատարմութեան երդումը: Իսկ օծման հանդէսը կը յետաձգուի Էջմիածնի տօթէն կաթողիկոսի հիւանդանալուն պատճառով, այնպէս որ կուզէ մինչև հոկտեմբեր յետաձգել, և Թէոդորեանն ալ Տփղիս կը դառնայ, նոյնպէս հանդէսի եկողներէն շատեր. բայց յանկարծական որոշմամբ մը օգոստոս 15-ին Շողակաթի յիշատակի հանդիսաւոր տօնին օծումը կը կատարուի առանց պատարագելոյ և առանձինն, չգտանելով յեկեղեցւոջ և ոչ ոմանց ի ժողովրդոց, ինչպէս Թէոդորեան կը վկայէ, թէպէտ Պէրպլերեան ականատեսս զմայլած կը գրէ. հանդէս հրաշալի, զոր չէ մարթ ընդ գրով արկանել (ՊԷՐ.383), բայց կերևի թէ լոկ արարողական ձևերուն կարկանէ: Հետզհետէ կաթարուեցան պաշտօնական գործողութիւններ, ինչպէս են անդրանիկ օրհնութեան կոնդակին խմբագրութիւնը և տպագրութիւնը և աշխարհիս ամէն կողմեր առաքումը ուր ուրեք որ հայ բնակիչներ կը գտնուին: Նմանապէս արժանաւորներու և կանխաւ իրեն հետ գտնուողներու շնորհաբաշխութիւններ ըրաւ, եպիսկոպոսական պանակէներով, վարդապետական և քահանայական լանջախաչերով, կայսեր ալ պարտուպատշաճ յայտարարութեանց հաւատիքներ հասուց, միանգամայն պետական շքանշաններու ալ առաջարկներ մատուց: Եւ այսպէս փակուեցաւ նոր կաթողիկոսին գահակալութեան միջոցը, որ 1858-ի ընտրութեան օրէն մինչև 1859 օգոստոսի վերջերը՝ իբր 15 ամիսներու միջոց մը տևեց, իսկ աթոռոյ պարապութեան միջոցը 1857 փետրուարէն սկսելով երկուք ու կէս տարւոյ տևողութիւն ունեցաւ, որուն պատճառ տուած է գլխաւորապէս Պօլօթէնիէի կարգադրութիւնը ինչպէս դիտեցինք (2523):

Մատթէոս իր պատրիարքութեան օրէն իբրև գործունեայ մարդ ճանչցուած, կաթողիկոսութեան սկիզբն ալ նոյն կերպով գործելու նախաձեռնութիւնն ունեցաւ, և իր օծման յաջորդ օրէն հրաման արձակեց բանալ Մայր տաճարի գմբէթին պատուհանները, որոնք 1853-ին հիւսած էին, նախապաշտական միջոց Տաճկահայաստանի սահմանագլուխէն վախցուած արշավանքներու հանդէպ, և այնպէս մնացած էին Ներսէսի վերջին օրերը, և աթոռոյ պարապութեան ատենն ալ տեղակալութիւնը չէր համարձակած բանալ տալ: Իբրև ուսումնական անձ, մտադրութիւն դարձուց թէ աթոռոյ ժառանաւորաց վարժարանին և թէ Վաղարշապատի ծխական վարժարանին վրայ, և ինչինչ բարեկարգական կարգադրութիւններ հրամայեց: Աւելի համակրելի դարձաւ միաբաններուն կենցաղային պէտքերուն վրայ դարձուցած մտադրութեամբը, սեղանի կերակուրներուն աստիճանը լաւացնելով, և իւրաքանչիւր վանականի պատիւը, մոմին, փայտին, ածուխին և ուրիշ անձնական պէտքերուն բաշխումներ կամ յաւելուածներ սահմանելով: Բայց շուտով սկսաւ նա դժուարութեանց բաղխիլ իրեն ըմբռնումներուն և ձգտումներուն համաձայն չգտնելով կաթողիկոսական աթոռին վարչական ձևը և Պօլօժէնիէի գծած կանոնները: Մենք արդէն պատրիարքութեան ատենէն տեսանք պինքն, որ իր աղիկամի և ինքնահաւան և յամառ ձեռներեցութեամբ նոյն իսկ Կ. Պոլսոյ ժողովականներուն անտանելի դարձած էր և ստիպմամբ խլեր էին իրմէ իր հրաժարականը (2632): Դիւրահասկնալի էր որ նոյն իսկ առանց ներքին կանոնագիրի և առանց որոշեալ ձևակերպութեանց ժողովի մը կապերուն չհամակերպող անձ մը, դժուարաւ պիտի կարենար Պօլօժէնիէի կազմած գրութեան յարմարիլ, որուն մէջ ամէն բան ձևակերպութիւններու և պայմաններու ենթարկուած է, և թէպէտ կաթողիկոսին ընդարձակ իրաւասութիւն և պետական օժանդակութիւն խոստացած է, սակայն իրաւասութեան գործադրութիւնն իսկ բացարձակ դատողութեան և որոշողութեան յանձնուած չէ: Մատթէոս շուտով ինքզինքը կապուած և կաշկանդուած պզտց Թուսահայոց և Մայրաթոռոյ մէջ տիրող պետութեան ազդեցութեամբ գոյացած ձևակերպութիւններէն, և այդ պզտցմանց ներքև գրեթէ կորսնցուց ինչ որ էր, և չստացաւ ինչ որ պէտք էր դառնար նոր շրջանակին մէջ: Նա մինչև իսկ իրեն օրինաւոր նկատած էր, չլսենք անտեղի, գոնէ անպատեհ կերպերով ալ իր ինքնութիւնը արտայայտել, ինչ որ առջի վայրկեանէն հրաւիրակներուն ալ աչքին վարկած էր, և Մակար եպիսկոպոս և Լօրիս Մելիքով պօրավար յուսախաբութեան տպաւորութիւն պզտցած էին Մատթէոսի հետ քանի մը տեսակցութենէն ետքը, և այդ տպաւորութիւնը մինչև վերջն ալ մնաց, այնպէս որ հակառակ ինչ ինչ արդիւնաւոր և օգտակար ձեռնարկներու, պորս պիտի յիշենք, համբաւ մը չկազմուեցաւ Մատթէոսի անունին շուրջը: Թէոդորեան, որ կաթողիկոսին հետ մէկտեղ էր, և որուն գնահատումները վստահելի են, վանապան դէպքեր կը յիշատակէ, որոնց մէջ տարօրինակ տեսութիւններ կը յայտնէ Մատթէոսէ բղխած, պոր օրինակ, գրադարանի կազմութիւնը աւելորդ, և դիւանական գրութիւնները անպիտան համարել, և այլ նմանօրինակ գաղափարներ: Դիպուածական պարագայ մը ևս քանզև շեշտել Մատթէոսի ունեցած ներքին պզտցումը և շրջանակին վրայ տիրած տպաւորութիւն: Հասնելէն հապիւ յետ վեցից ամսոց, 1860 տարւոյ առաջին ամիսներու մէջ, թէ օդի և թէ կենցաղի փոփոխութեամբ, տենդ առօրեայ և բորբոք թանջից սկսան պինքը նեղել, և միտքը դրաւ օդափոխութեան աղագաւ գնալ ի Կոստանդնուպոլիս, և այդ նպատակով խնդրեաց հրաման ի կայսերէն, բայց կայսրը ոչ ետ հրաման (ՊԷՐ.384): Իրօք ալ խոհական առաջարկ չէր առաջին անգամ Տաճկաստանէ եկող կաթողիկոսի մը, միայն վեց ամիս ետքը Տաճկաստան դառնալու խնդրանքը, որուն պլացուիլը ակնյայտնի էր քաղաքական տեսակէտէն, և իրաւամբ կրնար խնդրարկուին վրայ կամ անուղղամիտի կասկածը հրաւիրել եթէ կշռադատութեամբ կը գործէր, կամ թէ թեթևամիտի կասկածը վարթուցանել եթէ առանց

կշռադատութեան կը գործէր: Մատթէոս իր ակնկալութենէն վրիպած հեռացոյց յիւրմէ վբարեկամս իւր, այսինքն Կ. Պոլիսէ եկողները ետ դարձուց, և առանձնացեալ ի սենեկի իւրում ոչ կամէր լսել յումեքէ բանս մխիթարութեան, մինչև իսկ սկսաւ ողբալ զծերութիւն իւր, թէպէտ 58 տարեկան էր տակաւին, աւաղել կաթողիկոսական ընտրութիւնն ու յանձնառութիւնը, և ոչինչ իմիք այնպէս ցանկալ որպէս մահու, ինչպէս համարձակօրէն կը վկայէ Պէրպէրեան (ՊԵՐ.384), որ միատեղ եկող գլխաւոր մտերիմն էր, և որ չկարենալով օգտակար դեր մը վարել, Կ. Պոլիս դարձաւ և Մատթէոսէ բաժնուեցաւ, և կարծես թէ ինքն ալ յուսախաբութեան ենթարկուելով՝ այստեղ կը փակէ իր պատմութիւնը, և Մատթէոսի մնացորդ կեանքը չի պատմեր, թէպէտ մահուանէ վեց տարի ետքը հրատարակած է իր գործը:

2700. ՀԱՅԿԱԶՆԵԱՆԻ ՓԱԿՈՒԻԼԸ

Հայկազնեան վարժարանի գործն ալ այդ շփոթ ուղղութեանց մատնուեցաւ, և վերջապէս վարժարանը փակուեցաւ: Թէոդորեան, որ ամէն ճիգ թափելէ ետքը այդ դժբախտ վերջաւորութիւնը արձանագրել կը պատրաստուի, կը ջանայ պատասխանատուութիւնը ասոր անոր վրայ ծանրացնել, և նոյն իսկ իր գործակիցներուն ալ չխայեր և անոնք ալ կը մեղադրէ: Երկարաբան պնդութեանց պէտք էինք մտնել, եթէ բոլոր իր յառաջ բերած թղթակցութիւնները վերլուծել և ձեռնարկները քննութեան ենթարկել ուլէինք (ԹՈՒ.Դ.183-344): Թէոդորեան իր տեսութեամբ կը մեղադրէ Տաճկահայերը, և մասնաւորաբար Կ. Պոլսեցի ունևորները, որ իրենց կարողութիւնը չեն տրամադրած Հայկազնեան վարժարանի պահպանութեան, մինչ առատ ծախսեր ըրած են ուրիշ նպատակներու և յատկապէս կաթողիկոսական հրաւիրակներու պատուասիրութեան համար: Կը մեղադրէ Ռուսահայերը, որոնց դիմում եղաւ գործին ձախողելու պարագային, որոնք եթէ անցեալ պարտքերը չեն վճարած, գոնէ ապագան ապահովելու բաւական դրամագլուխ չեն կազմած: Կը մեղադրէ Մատթէոս կաթողիկոսը, որ խօսքով խոստումներ շուայելէ և քաջալերութիւններ տալէ ետքը, գործնական միջոցներ ձեռք չէ առած անոնք իրականացնելու: Կը մեղադրէ Գաբրիէլ վարդապետ Այվազովսքին, որ կանուխ իրմէ բաժանուելով առաջնորդական պաշտօն է ստանձնած, Խալիբեանի բարերարութեամբ վարժարան է բացած, և նոյն իսկ Գալֆայեաններ հրապուրած է իր նոր բացած վարժարանին մէջ աշխատելու: Կը մեղադրէ Ամբրոսիոս Գալֆայեանը, որ իր մատակարարութեան յանձնուած և վարժարանին յատկացուած գումարները անհաւատարմաբար մատակարարած, և գոծածած է առատ ծախուց աղքատ տան հօրն: Կը մեղադրէ Խորէն Գալֆայեանը որ լրջութենէ զուրկ և թեթևութեանց հետամուտ, իր կենցաղով գործին վնասած է: Վարժարանը փակուած է 1859 աշնան, զի նոյեմբեր 15-ի նամակին մէջ կը յիշէ Խորէն Թէ Կ. Պոլսոյ պատրիարքէն հրաման եկած է փակելոյ զվարժարանն, և Ամբրոսիոսի Կ. Պոլիս գալու և յարդարել անդ ընդ Գերագոյն Ժողովոյ զիրս վարժարանին (ԹՈՒ. Դ. 273), զի 60, 000 ֆրանքի պարտքեր կային տակաւին, թէպէտ երկու տարուան մէջ 200, 000 ծախսած էին (ԹՈՒ. Դ. 344): Ռուսահայոց կողմէ մասնաւոր նուիրատուութիւններ եղած էին (ԹՈՒ. Դ. 340), և Տիդիսեցիք 60 ստորագրութեամբ կաթողիկոսին դիմած էին Հայկազնեանը վտանգէ փրկել (ԹՈՒ.Դ.250-254), բայց ասոնք բաւական եղած չէին վտանգին առջևն առնել: Սակայն անաչառ ըլլալու համար պէտք չի լուենք, թէ Մատթէոս իրաւամբ դիտել տուած է թէ ի սկզբանէ առանց մեծահանձար տնօրէնութեան և նախատեսութեան անխոհեմ բերմամբ որք մխեցան, և Հայկազնեանի հիմնարկութեան Թէոդորեան ինքն մխուեցաւ իր երկու ընկերներով, Մուրատեանէ արտաքսուելէն վայրացած, առանց առաջուց ապահովելու պահպանութեան միջոցները, պարզ ակնկալութեամբ մը որ բոլոր հայութիւնն ալ պիտի զգար իրեն զգացած ցասումը Մխիթարեանց դէմ, և բոլոր քսակները իր տրամադրութեան ներքև պիտի դրուին:

Մանաւանդ որ մեծ հրապոյր մը չէր ներշնչել, հեռաւոր Եւրոպիոյ մէջ նախակրթութեան չափով ուսում տալու ծրագիրը: Ամէն գործին պատասխանատուութիւնը իր հեղինակին կը պատկանի, և Թէոդորեանն ալ պէտք չէ խուսափի իր ըստանձնած պատասխանատուութենէն, ջանալով բոլոր բեռը ուրիշին վրայ ծանրացնել: Արդէն Մուրատեանէ վտարուելուն առթիւ ալ դիտել տուինք, թէ ինքն էր որ Մուրատեան կտակին բացարձակ տիրապետութիւնը Մխիթարեան միաբանութեան փոխանցած էր, որուն հետևանքը կը կրէր Հիւրմիւլեան տկարամիտ քաղաքականութենէն (1570): Նոյնը պիտի կրկնենք երբոր կը տեսնենք որ իր աւալի վրայ հիմնած շէնքը փորձանաց առաջին փոթորկի առջև կը քայքայուի: Կը ճանչնանք թէ Կ. Պոլսոյ պատրիարքարանն ու մեծամեծներ շատ քաջալերեցին Թէոդորեանը իր տկար ձեռնարկին մէջ, և շատ առատացուցին իրենց խոստումները (2672), բայց ինչ ալ ըլլան Կ. Պոլսոյ վարչական կամ ժողովրդական քայլերուն ազդեցութիւնը և հետևանքը, միշտ Թէոդորեանի պատկանող պատասխանատուութիւնը կը մնայ, և չի կրնար ազատ կերպով հիմնարկութեան փառքն իրեն պահելով՝ կործանման պատասխանատուութիւնը իրմէ հեռացնել: Երբոր ամէն յուսադրութիւնք կը սպառին՝ Վարժարանը կը փակուի Փարիզի մէջ, և Խորէն կը փութայ փոխադրուիլ Թէոդոսիոյ Խալիբեան վարժարանը: Թէոդորեան տասն ամիսներ Տփղիս և Էջմիածին թափառելէն ետքը (ԹՈԴ. Դ. 336), Կովկաս մնալու առաջարկը և եպիսկոպոսութեան և առաջնորդութեան խոստումները մերժելով (ԹՈԴ. Դ. 319), 1860 յունիս 10-ին Տփղիսէ կը մեկնի Ռոմանոս Նատիրեանի ընկերակցութեամբ և ծախքով, 17-ին կը մեկնի Տրապիզոնէ, 27-ին Կ. Պոլիսէ, յուլիս 4-ին Մարսիլիայէ, և 5-ին երեկոյին կը հասնի Փարիզ, ուր կը գտնուէր տակաւին Ամբրոսիոս, և անմիջապէս կը սկսին երկուքին մէջ հակառակութիւնը և հակաճառութիւնք, այնպէս մը Թէոդորեան իր խոսքով, տեսեալ զյանդգնութիւն և զժպրհութիւն և զանզգամութիւն Ամբրոսիոսի ի ծայր հասեալ, յանդիմանէ և խայտառակէ զնա: Այդ եղելութեանց մէջ ինչ որ Մատթէոսի կը պատկանի խոստումներուն մէջ առատանալով գործադրութեան մէջ տկարանալն է, ինչչափ որ պէտք էր չհոգալով և չաշխատելով Թէոդորեանի դատողութեան համեմատ: Մատթէոսի կաթողիկոսութեան մնացորդ պատմութիւնը ընդհատելով կանցնինք ժամանակակից ուրիշ եղելութիւնները քաղել:

2701. ՍԵՐՎԻՉԷՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Առաջ կանցունենք Երուսաղէմի աթոռը, որուն վրայ կը գտնուէր Յովհաննէս Մովսէսէն Զմիւռնացին, և արդէն իր գործունէութեան գլխաւոր ընթացքը լրացուցած, անձամբ ալ տկարացած և մանաւանդ հակառակութեանց հանդիպելէն նեղացած, իր վերջին օրերուն մէջն էր, որոնց պատահարներէն կը մնայ յիշել աղետալի կոտորածը. որ տեղի ունեցաւ 1860-ին, նախ մոլեգնեալ Տիւրիպներու կողմէ Լիբանանի մէջ, հարուստ գիւղեր աւարելով, 10, 000 մարդ կոտորելով, և անոնց հետևողութեամբ կատաղի Արաբացւոց կողմէ Դամասկոսի և Սիւրիոյ մէջ անխնայ ըսպանելով 5, 000-է աւելի քրիստոնեաներ, վանքեր և եկեղեցիներ կործանելով, տուներ այրելով, և ամենայն ինչ աւերի և աւարի մատնելով: Թէպէտ օսմանեան կառավարութիւնը փութաց աղէտի առջևն առնուլ, բայց Գաղղիա ալ իսկոյն միջամտեց Անգղիացւոց թևակրութեամբ, և բանակ ցամաք հանեց ապստամբները զսպելու: Տուատ փաշա լիպոր իշխանութեամբ Կ. Պոլիսէ գալով, սկսաւ յանցաւորները պատուհասեալ, Դամասկոսի քաղաքապետէն և հրամանատարէն սկսելով, աւարները թափել և տէրերուն դարձնել և վնասները հատուցանել: Այս առթիւ կազմուեցաւ Լիբանանի համար յատուկ կառավարչութիւն մը ինչ ինչ արտօնութիւններով և եւրոպական տէրութեանց համերաշխ հովանաւորութեան ներքև, և առաջին կառավարիչ անուանուեցաւ Անտոն Կարապետ Տավութեան ծանօթ փաշայն: Հայոց վերաբերեալ յատուկ պարագաներն են, Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցւոյն և վանքին հիմնադրատակ

կործանումը, Վանեցի Գաբրիէլ տեսուչ վարդապետին մապապուր մահուանէ ապառուիլը, և հայաբնակութեան ալ կորուստներու և աղէտներու ենթարկուիլը: Պետական պաշտօնութեան ձեռօք եկեղեցին միայն հնար եղաւ վերականգնել, իսկ վանքին վերաշինութիւնը անագան կատարուեցաւ: Նշանակելի է նաև բժիշկ Սերվիշէն էֆէնտիի Երուսաղէմ գալը, որ Ֆուատ փաշայի հետևորդ պաշտօնակալներուն թիւէն էր, և փաշայի որդւոյն հետ Երուսաղէմ ալ այցելեց, ապագային պատրիարքարանի կողմէն ալ յատուկ յանձնարարութեամբ: Այդ միջոցին կը յուզուէր Փարիզի Հայկապնեան Վարժարանին խնդիրը, որ փակուելու վտանգին հանդիպած էր պարտքերու շատութեան և միջոցներու պակասութեան երեսէն պատմած ենք (2694-2700): Կ. Պոլսոյ պատրիարքարանը պարտքերուն դարման գտնելու մտադիր, Սերվիշէնի յանձնարարած էր ճեմարանի 120, 000 տարեկան գումարին հնգամեայն, 600, 000 դահեկան, մէկ անգամէ Երուսաղէմէ գանձել, և այդ գումարով Հայկապնեան վարժարանի պատիւը ապահովել: Յովհաննէս պատրիարք բնաւ չէր յօժարէր այդ կանխավճարն ընել, բայց և իսկոյն բացարձակ ժխտում ալ յայտնել չուզելով սնտուկին անբաւականութիւնը պատճառեց, և առաջիկայ պատկական ուխտաւորութեան վերջանալէն յետոյ գործը նկատի առնելու խոստումով դատարկաձեռն դարձուց Սերվիշէնը, մանաւանդ որ Հայկապնեանն ալ արդէն փակուած էր (2700): Ամէն առթի մէջ Յովհաննէսի ընթացքը յայտնի էր և Կ. Պոլսոյ վարչութիւնը լաւ պագ Երուսաղէմի միաբանութեան միտքը, յիշելով քանի տարի առաջ տեղի ունեցած միջադէպը (2658), բայց մինչև որ պատրաստուէր հանել վրէժ ի միաբանութենէ, Յովհաննէս վախճանեցաւ, և մահուանէ ետքը տեղի ունեցած երկու պատրիարքական աթոռներու միջև պայքարը, ի դէպ է թաքուցեալ ցասումին հետևանները համարել (ՍԱԻ.1352):

2702. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՄԱՀԸ

Յովհաննէս պատրիարք որչափ արդիւնաւոր, այնչափ ալ հակառակութեանց նշաւակ, պվերջին քառեակ ամս կենաց իւրոց նեղութեամբ անցոյց, այսինքն այն տարիները որոնք կը փակուին Կ. Պոլսոյ պատրիարքարանին երկու հակակիր ցոյցերուն մէջ, 1856-ի կոչումին և 1860-ի պահանջքին միջև: Որչափ և տոկուն բնաւորութեան տէր, բայց և սաստիկ պգայուն ըլլալով ի պօրութենէ անկեալ յաղթէր, և ախտից կրճացաւութեան կը հանդիպէր, պոր ի դէպ է իբր շնչարգելութեան կամ իբր սիրտի ախտ իմանալ, և հովահրելու պէտք պգալով ստէպ Փիլիպպոսի աղբիւրը կերթար, պոր ինքն իսկ գնած էր (2646): Բայց հետպհետէ ախտը կը պայրանար և հոգք հալողականք յաճախեալք կենաց կարճիլը նախատեսել կու տային, թէպէտև տակաւին 65 տարեկան էր, և երկարամեայ գործունէութիւն կրնար ունենալ, 1860 օգոստոսին մէջ թեթև կաթուած մը անցուցած էր, որ դեկտեմբեր 21-ին ծանրապէս կը կրկնուէր, և որչափ ալ կարևոր և պգոյշ և հմուտ խնամքներ գործադրուեցան ճարտարներու խորհրդով, օգուտ չունեցան և 23-ին կաւանդէր ուրբաթ օր տեառնեղբօր հանդիսական յիշատակի նախատօնակին պահուն: Յաջորդ շաբաթ օր դեկտեմբեր 24-ին, երբ սովորութիւն է պատրիարքներուն հանդիսապէս Տեառնեղբօր նուիրական աթոռը բազմիլ, դագաղի մէջ ամփոփուած Յովհաննէսի յուղարկաւորութեան կարգը կատարուեցաւ, փակակալ Պօթուշանցի Գէորգ եպիսկոպոսի նախագահութեամբ և ամենայն շքեղութեամբ: Ընդ երեկո փառաւոր թափօրով, որուն մասնակցեցան, պետական ներկայացուցիչներ, օտար ապգաց հիւպատոսներ, և միւս ապգաց գլխաւորներ, տարուեցաւ Ս. Փրկչի վանքը, ուր ամփոփուեցաւ մարմինը բակին ճեմելիքին ներքև ի շարս պատրիարքաց, յետ ժամանակաց փառաւոր տապանաքար պետեղուեցաւ վրան: Յովհաննէսի պատրիարքութեան տևողութիւնը տասնուկէս տարի կը հաշուուի 1850 յունիսի միաբանական ընտրութենէն, կամ յուլիս 4-ի Պոլսոյ վարչութենէն հաստատուելէն համրելով:

2703. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ԱՐԺԱՆԻՔԸ

Յովհաննէս պատրիարք Երուսաղէմի աթոռին նշանաւոր գահակալներէն մէկն է ստուգիւ, ինչ ալ ըլլան իր մասին թէ կենդանութեան ատեն խօսուածները, և թէ քննադատներուն գրիչին ներքև կրկնուածները: Մեծ անձնաւորութեանց վրայ նկատուած մասնաւոր և անձնական տեսութիւններ չեն կրնար աղօտացնել անոնց նշանաւոր գործերը: Առիթ ունեցանք պատահաբար մեր միտքը յայտնել վանապան միջադեպներու առթիւ, բայց աւելորդ չենք սեպեր անգամ մըն ալ ամփոփ մեր տեսութիւնները նորա դամբանին փակուելուն առթիւ: Երուսաղէմի աթոռին երկու աչքառու շինուածները, պատրիարքրանը և ճեմարանը, բաւական են անուն մը անմահացնելու և իբր մեծագործ արձանագրելու: Իրօք ալ անմահ յիշատակաց արժանի երկու մեծանուն Գրիգորներէն, Պարոնտէրէն և Շղթայակիրները ետքը, երրորդ մը Յովհաննէս Չմիւռնացին է, որ աթոռը իրօք պայծառացուած և ճոխացուցած է, եթէ ոչ ապասներով և վարդերով, աւելի հոյակապ շինութիւններով: Յոպպէի դուռէն դուրս մեծ արտ կոչուած միայն բաւական էր վայդ հաստատել, որ աթոռին հարստութեանց աղբիւրն եղած է, և տակաւին ալ է, եթէ ուրիշ օգտակար ստացութիւններ և կարևոր նորոգութիւններ ալ չըլլային: Նախատեսութեան և ապագայի գուշակութեան հանձարը կը փայլի Յովհաննէսի ամէն մի գործին մէջ, զոր իր անողոք քննադատն ալ կը պարտաւորուի խոստովանիլ, թէ ոչ վներկայէն և եթ խորհէր, յայլ յապառնին յաւէտ նկատէր, և յապագայն Ս. Աթոռին խնամով ուշ եղեալ ապահովէր վհաստատութիւն (ՍԱԻ.1349): Աշխարհք տեսած, Կովկաս և Պոլիս եղած, և ընդարձակ գաղափարներու և մեծագործ տեսարաններու մէջ ապրած, կարծես թէ իր հոգին կապստամբէր տեղական ճղճիմ շրջանակներու և սահմանափակ գլուխներու հանդէպ, և եթէ երբեմն բուռն կերպով կարտայայտուէր անոնց դէմ և կը գործէր անոնց հակառակ, այն ալ դարձեալ լայնախորհուրդ և վարգացած միտքի հետևանք պէտք է ճանչնալ: Բնական էր որ այս տեսութիւններով պատրաստուած միտք մը չկարենար խաղաղորէն համկերպիլ Ս. Յակոբայ չորս պատերուն մէջ կազմուած գլուխներուն, և անտարակոյս շփումներ պիտի ունենար անոնց հետ: Բայց եթէ Սաւալանեան մըն ալ բնիկ Չմիւռնացի և վարգացեալ ըլլալու գիտակցութեամբ պանծացող մը, քննադատներուն կը ձայնակցի և Յովհաննէսը կը մեղադրէ թէ վնոյն սաստ և վնոյն կծծութիւն լծեալ ունէր անդաստին ի բնէ, և թէ չգիտաց կամ թէ չյօժարեցաւ բարոյապէս ևս վարգացնել վմիաբանութիւնն յարգելով գուսմունս և վգիտութիւն, պէտք չէ աչքէ վրիպեցնել թէ կծծութիւնը իր թոշակը քիչցնելուն, և ուսումնատեսցութիւնը իր տուած կրթութիւնը անբաւական գտնելուն մէջ տեսած է Սաւալանեան: Իրաւունք ունէինք վերև ակնկալեալ (2688) դիտողութեան մէջ, թէ անձնական պարագաներ վտանգաւոր փորձանքներ են ժամանակակից անցքեր պատմագրողին: Յովհաննէսի ծրագիրը կերևայ թէ եղած է նախ նիւթական ապահովել որ մտաւորականը արդիւնաւորի, հակառակ Փարիզի Հայկապնեանը հիմնարկողներուն ընթացքին, որոնք առանց նիւթականի մտաւորականին ձեռնարկեցին և ձախողեցան, և որոնց օրինակը Յովհաննէսի աչքին առջևն էր (2700): Եթէ չափաւոր բան մը պիտի ըլլար ձեռնարկը, քերականութեան և ճարտասանութեան մէջ ամփոփուած, այն արդէն կար, իսկ եթէ աւելի բանի մը պիտի ձեռնարկուէր, համապատասխան միջոցներ պէտք էր պատրաստուէին, և չենք իմանար թէ ինչ էին Սաւալեանի պահանջած ուսմունք և գիտութիւնք: Ճեմարանի շինուածն իսկ Մայրիթաղին հետ միացած, յայտնի կը ցուցնէ թէ ընդարձակ և լրացեալ բանի մը ծրագիրը կար Յովհաննէսի միտքին մէջ: Իսկ ներքին բարեկարգութեան մասին ուրիշ ժամանակներէ տարբեր չէր Յովհաննէսի ժամանակը, և Յովհաննէսի հնար չէր մոգական գաւապանով արմատացեալ ձևերը փոխարկել: Բէֆսիպեանի (2641) և Չիլիակիրեանի և առհասարակ միաբաններու հանդէպ բռնած ընթացքը (2648),

բարեկարգիչ ձգտումներու նշաններ կը նկատուին, և երևի թէ միաբաններու թիւը չնօսրացնելու համար ստիպուեր է խստութեանց միջոցներէն հրաժարիլ: Իսկ եթէ բնութեամբ հեղահամբոյր կամ թէ վարմունքով պիջողական չէ եղած, այն ալ պէտք է վերագրել համոզուած և պարգացած միտքի բերմունքներուն, որ չի կրնար շուտով իր հաստատուն սկզբունքներէն հրաժարիլ:

2704. ՄԻՆԻՄԱՍԵԱՆԻ ՊԱՐՍԱԻԱԳԻՐՔԸ

Յովհաննէսը դատապարտողներուն ականակած ատեննիս հնար չէ պանց ընել Թադէոս Միհրդատեանի անունը, որ այս նպատակով հատոր մը հրատարակած է, ուր նորա առաջին կեանքը բաղելէն ետքը, որ պատրիարքական գործունէութեան հետ կապ չունենար և չունէր, 30 գլուխ ամբաստանութիւններ կը շարէ, որպէսպի Յովհաննէսի կառավարութիւնը Երուսաղէմի աթոռին աղետալի եղած ըլլալը հաստատէ: Դժբախտաբար Միհրդատեան ծանօթ է իբրև յոռետես և կրքոտ և յուզմնալից գրիչ մը, որուն դատողութիւնները հնար չէ առանց վերապահութեան ընդունիլ, և ոչ ալ անոնց հիմնուելով եզրակացութեան յանգիլ: Իրօք ալ անոր հրատարակութեան պարունակութիւնը այնպիսի կէտեր կը շօշափէ, որոնք տարիներ և դարեր ալ առաջ տեղի ունեցած իրաւունքներու կամ կորուստներու կը պատկանին, Ս. Յարութեան, Ս. Ծննդեան, Ս. Համբարձման սրբավայրերուն մէջ, և որոնց վրայ մենք ալ խօսած ենք, և ժամանակին պատրիարքներուն ապարդիւն ջանքերը և ճիգերը պատմած ենք, մինչ Միհրդատեան կուզէ Յովհաննէսը նոյն իրողութեանց պատասխանատու ընել: Կը յիշէ նաև պանապան տեղեր, որոնց ստացութիւնը օգտակար պիտի ըլլային կը կածէ, և Յովհաննէսի չստանալէն ամբաստանութիւններ կը կազմէ: Բայց մեր տեսութեամբ Երուսաղէմի շահերուն և ժամանակի և տեղւոյ պարագաներուն մասին Միհրդատեանի կարծիքը, չէ որ Յովհաննէսի կարծիքին պիտի վերադասուի: Միաբաններէն ոմանց հետ վարմունքներէն վատկատ գլուխներ կազմած է, բայց վստահ չենք իր դատողութեանց վրայ, քանի որ Քէֆսիպեան (ԴԱՏ.71) և Չիլինկիրեան (ԴԱՏ.24) և իր տեղեկութեանց աղբիւրներ, որոնց ո՛վ ըլլալը (2649-2650), և տակաւին ալ առիթ պիտի ունենանք պատմել: Աւելի հիմնական եղած պիտի ըլլար Միհրդատեանի յարձակումը, եթէ մէկ կամ երկու իրական վնասներ յիշէր, քան թէ անհիմն պրոյցներով թիւ շատցնելու աշխատէր, և եթէ իսկական եղելութիւններ յիշէր, և ոչ թէ քմահաճոյ տեղեկութիւններ: Նա երբեմն Սաւալանեանն ալ վկայութեան կը կոչէ, բայց մենք Սաւալանեանի պատմութենէն քաղեցինք Յովհաննէսի արդիւնքները և Սաւալանեանն է որ կը հաւաստէ, թէ որչափ կեանք նորա ի կենդանութեան ոմանց կողմէ դատափետուեցաւ, այնչափ ևս առաւել յետ մահուան խնդրեցաւ անձն նորա և քաղցրացաւ յիշատակ նորա: Միհրդատեանի գործն ու գրութիւնը իր ժամանակին ալ քննադատուեցաւ հեղինակաւոր անձերէ, և իր դատաքննութիւն դատաքննութեանց պաշտպանողականը չբաւեց հեռացնել անհիմն պրոյցներու կրկնող և կիրքէ յուզեալ անձերու արձագանգ եղած ըլլալուն համոզումը, և մենք ալ աւելորդ կը սեպենք այլ ևս անոր ըսածներու մասին երկարաբանել: Կրնանք ընդունիլ թէ Յովհաննէս կրցաւ շատերը ցաւցնել իրաւամբ, կամ թէ թերևս ոմանք ալ յանիրաւի, բայց ոչ ոք կրցաւ անձնական շահի համար աթոռին կամ հաստատութեան վնասակար մէկ արարքը ցուցնել: Կրցաւ ալ թերևս իր նախատեսութեանց մէջ վրիպիլ, դիւրին կարծած ձեռնարկին մէջ դժուարութեանց հանդիպիլ, սակայն այսպիսի պարագաներ ժամանակին հանգամանքներուն հետ բաղդատութեամբ, և ոչ բացարձակ տեսութեամբ պիտի դատուին, և մեզ բաւական է հակակիր պատմիչին իսկ խոստովանիլը թէ աշխարհէ մեկնեցաւ թողեալ վկնի իւր յիշատակս անջնջելիս (ՍԱԻ.1348) յօգուտ գործածած ըլլալով ձեռք անցուցած գումարները, արգիլելով անխորհուրդ ծախքերը, և մեծագումար պահեստի գումար թողլով աթոռին գանձին մէջ: Վանական և բարեկարգական վիճակն ալ, գտածէն աստիճան մը լաւ, և ոչ թէ գտածէն աւելի ստորին թողուց:

2705. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՄԱՀԷՆ ԵՏՔԸ

Երբոր Յովհաննէս վախճանեցաւ միայն մէկ եպիսկոպոս կը գտնուէր աթոռին մէջ, փակակալ Գէորգ Տէր-Յարութիւնեան Թաթարեանց Ռումանացի կամ Պօթուշանցի, որ անմիջապէս տեղակալ ճանչցուեցաւ միաբանութենէն (2702) և միանգամայն ձեռնարկութիւններ եղան աթոռոյ պարապութեան ատեն կատարուելիք գործողութեանց: Միաբանութեան կողմէ 1860 տարուոյ յունուար 1-ին պաշտօնապէս երեք գիրեր գրուեցան Կ. Պոլսոյ պատրիարքարանին, Յովհաննէսի մահը ծանուցանելու, ընտրութեան փութացումը խնդրելու, անպատճառ միաբանութեան մէջէն առնելով ընտրելին, և մերժելով ոչ-միաբանները և անջատեալները, և վերջապէս Գէորգ եպիսկոպոսը իբր յաջորդ ներկայացնելու ի հաստատութիւն (ԵՂՄ.1-3): Օր առաջ Յովհաննէսի յուղարկաւորութեան յաջորդ օրը, դեկտեմբեր 25-ին գրուած էր Փոխանորդ Իսահակ վարդապետին: Յովհաննէսի մահուանէ ամիսներ առաջ, 1860 մայիսին, նոր ազգային սահմանադրութիւնը կազմուած և հրատարակուած էր, որուն մէջ ընդհանուր ազգային վարչութեան համար կանոններ գծուած էին, և Երուսաղէմի պատրիարքին ընտրութեան ալ ակնարկած էր, միաբանութիւնը այս պատճառով կը խոստանար ամէն բան կարգադրել և ծաղկեցնել համեմատ մտաց սահմանադրական ազգային կանոնադրութեան (ԵՂՄ.3): Եւ միանգամայն կը կանխէր պատրաստել կանոնս Վգուշաւորս ի պէտս կառավարութեան սուրբ աթոռոյն, բաժանելով Վպաշտօն իւրաքանչիւր ներքին և արտաքին գործոց, որ է ըսել, ներքին կանոնագիր մը կազմել, և միանգամայն ընտրել անդամս խորհրդոյ ընդ նախագահութեամբ Գէորգ եպիսկոպոսի, և Վայսոսիկ կանոնս տպեալ առաքել Վկնի նամակաց առ ազգային վարչութիւն: Իրաւ հնաւանդ սովորոյթ մը կար միաբանութեան մէջ աւագ լուսարարները կամ փակակալները պատրիարք չընտրելու, բայց անեղծանելի կանոն մը չէր, և պարագայից պահանջին հանդէպ Յովակիմ Քանաքեռցի պատրիարքն ալ փակակալութենէ բարձրացեր էր (ՏէՐ.71): Միաբանութիւնը իր կազմած կանոնադրութիւնն ալ վարչութեան հաւնեցնելու հոգն ալ կը յանձնարարէ փոխանորդ Իսահակի: Այդ ամէն գործողութիւնք լրացած էին շաբաթուան մը միջոցին մէջ, որչափ ալ տօնական օրեր էին: Կրնանք աւելցնել թէ շատ աշխատալի ալ չէր պատրաստութիւնը, քանի որ համառօտ էր պարունակութիւնը 2 հատուածով և 16 յօդուածով: Հատուածները որոշուած էին ներքին խորհուրդ և արտաքին խորհուրդ մակագրութիւններով: Ներքին խորհուրդ պիտի կազմէին աւագ լուսարար, փոխանորդ, դարպասընկալ, թանգարանապետ, և այլ ևս 4-է 6 ընտրեալ անդամներ, ասոնց գործերը որոշուած էին 9 յօդուածներով և ընդհանուր առմամբ և ոչ թէ իւրաքանչիւրին առանձինն: Իսկ արտաքին խորհուրդը պիտի կազմէին, հանդերձապետ, աւագ թարգման, շինուածապետ, համբարապետ, հիւրընկալ, տեսուչ Հրեշտակապետի և քաղաքացի ժողովրդոց, տեսուչ բնակարանաց ժողովրդեան և երկրորդ թարգման: Ասոնց ալ պարտաւորութիւնները բացատրուած են 7 յօդուածներով և ընդհանուր կերպով (ՏէՐ. 442-446): Կանոնադրութիւնը 1861 յունուար 1 թուականը կը կրէր, սակայն 5-ին Յոպպէ վրկուած էր, և ալեկոծութեանց պատճառով թղթատար նաւեր չհանդիպելուն միայն 20-ին կրցեր էր մեկնիլ Յոպպէ և անագան հասնիլ Կ. Պոլիս (ՀՐՔ. Բ. 19): Կանոնադրութեան մասին դիտողութիւններ չէ (ՏէՐ. 84-88), սակայն այդ կրնայ հապճեպ պատրաստութեան վերագրուիլ, և կանոնին հոգւոյն և ուղղութեան չվնասեր: Սոյն միջոցին անակնկալ մահուամբ մըն ալ բոլորովին խանգարեցաւ միաբանական կարգադրութիւնը: Մկրտիչ վարդապետ Արծրունի Բաղիշեցի դարպասընկալ, 1861 յունուար 14-ի Յովհաննէս Կարապետի տօնին շաբաթ առտուն պաշտամանց ատեն, (ՍԱԻ. 1354) կաթուածոյ պիտիւն ըմբռնեալ ի տես ներկայ ուխտաւորաց և քաղաքացւոց (ԵՂՄ. 8) և յանկարծ ընդ գետին անկեալ ընդ ոգիսն իւր ոգորէր (ՍԱԻ. 1354) և հապիւ 26 ժամ ևս կապրէր և 15-ի ցերեկին կը վախճանէր: Գէորգ եպիսկոպոս

աղետալի տեսարանն յուզուելով նոյն օրը մահիճ կիյնար և երկու օր ետքը 16-ին երկուշաբթի լուսնալուն ինքն ալ կը վախճանէր, վասն որոյ վկարգ թաղման երկոցունց հանգուցելոց կատարեալ ի միասին մին վկնի միւսոյն կը թաղէին Ս. Փրկչի բակը (ԵՂՄ. 8): Գէորգ Պօթուշանցին, աթոռին փակակալը, տեղապահ միակ եպիսկոպոսը, ընտրեալ պատրիարք և արժանաւորագոյն անձն է, և իր մահը Յոհաննէս պատրիարքի մահուանէն միայն 24 օր ետքը, ոչ միայն սուգի և տխրութեան, այլ և անելանելի տագնապի կը մատնէր միաբանութիւնը, որ անոր ներկայութեամբ իրեն կացութիւնը կարգաւորելու ակնկալութիւնն ունէր: Տագնապ մըն ալ միւսնոյն ժամանակ Կ. Պոլսոյ պատրիարքարանէն կը պատրաստուէր Երուսաղէմի աթոռին և պատրիարքութեան գլուխն: Նոր սահմանադրութիւնը նոր ձեռներէցութեանց ընդարձակ ասպարէզ մը բացած էր Կեդրոնական վարչութեան առջև, որ ամէն կողմ սահմանադրական բարեկարգութիւններ մտցնելու տենդով՝ ամէն բան նորելու ետևէ էր, և Երուսաղէմ ալ այդ շարքին մէջ առաջնակարգ տեղը կը գրաւէր: Միւս կողմէն Յովհաննէս պատրիարքի օրէն սկսած շփումները և գրգռութիւնները, պատրիարքին Կ. Պոլիս չերթալը (2648), Սերվիշէնի ձեռքով պահանջուած մեծ գումարին չվճարուիլը, և այն ժամանակէն յղացուած վրիժառութեան միտքը (2701), աթոռին և միաբանութեան անտէրունչ մնալէն ծագած պատեհով պօրացած, Երուսաղէմը ընկճելու և նուաճելու ժամանակը հասած կը ցուցնէին Կ. Պոլսոյ պատրիարքարանին և այդ նպատակով գործելու կը ձեռնարկէին: Բայց մենք այդ մանրամասնութեանց չմտած պէտք է նախապէս Կ. Պոլսոյ պատրիարքութեան անցքերը պատմենք, և սահմանադրութեան կազմուելուն պարագաները բացատրենք, որ Երուսաղէմի մասին ըսուելիքներն ալ իրենց իսկութեան մէջ ներկայանան:

2706. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆԹԱՅԸ

Բաւական ժամանակէ իվեր ըստիպուած յետաձգեցինք Կ. Պոլսոյ պատրիարքութեան եղելութիւնները, որպէս Վի չընդհատենք ուրիշ կողմերու դէպքերուն կապակցութիւնը, և այժմ պարտաւորեալ ետ դառնալով պիտի քաղենք կարևորագոյն կէտերը: Յակոբոսի օրով տեղի ունեցած խնդիրներուն մեծ մասը ելլամտական մատակարարութեան շուրջը կը դառնար, ազգային սնտուկ, ազգային հիւանդանոց, աղքատաց սնտուկ և ձեմարան ուսումնարան ամէնուն մտահոգութեան պատճառ կը դառնային, պէտքը կը վագցուէր, միջոցը կը պակսէր, պարտքը կաւելնար, և դարմանը կը դժուարնար, և շարունակ ձևեր կը փոխուէին, բայց հաստատուն կոռուան մը չէին գտներ: Այդ կէտերը փոքր իշատէ քաղած ենք (2641), և այնչափով կը բաւականանանք՝ մանրամասնութեանց շատ մտած չըլլալու համար: Աւելի ծանր խնդիրը պատրաւորութեանց և իրաւանց որոշումն էր քանի որ ամիրայական բացարձակ կամքը դադարած էր, և Հոգևոր ու Գերագոյն ժողովներ, այսինքն կրօնական ու քաղաքական գործերու վարիչները ընտրովի սկսած էին առնուիլ ամէն դասակարգերէ (1595): Իրաւունքի մասնակցիլ սկսող դասակարգերը պէտք էր պարտքերու ալ մասնակից ըլլային և ազգային մատակարարութեան օգնէին իրենց միջոցներով. պէտք էր նաև որ հաշտուէին իրաւանց և պարտուց չափերը, և անոնց փոխադարձ համեմատութիւնները, մէկ խօսքով՝ քանի որ ընտրողական և ժողովրդական վարչութիւն մը ստեղծուեցաւ ազգին մէջ, պէտք էր որ այն իր հիմնագիծը ունենար, որրպէսզի ամէն գործողութիւնք կանոնաւոր ընթանային: Այդ պէտքին վրայ շատ կը խօսուէր, կառավարութիւնն ալ կը բաղձար որ իւրաքանչիւր հասարակութիւն որոշ ուղղութիւն մը ունենար, բայց կը խօսուէր ու կը բաղձացուէր միայն, մինչև որ անոր գործնական ելք մը տալու համար առաջ անցաւ Գրիգոր Մարկոսեան, որ լօղօֆէթի պաշտօնին կոչուած էր Յակոբ Կրճիկեանէ ետքը, և սկսաւ ծրագիր մը կազմել, իրեն խորհրդակից ունենալով վարգացեալ անձերու փոքրիկ խումբ մը: Բայց ասոնց

կապմած ծրագիրը շատ ապատամիտ կը նկատուէր Տատեանց, Երամեանց և ասոնց համախոհ ամիրայական խմբակէն, թէպէտ այն ալ կանոնագիրի պաշտպանն էր և ապատ գաղափարներ: Մարկոսեան մտածեց միջասահման նոր ծրագիր մը պատրաստել առանց շատ մանրամասնութեանց մտնելու, և վայն Յանձնարարական ժողովոյ մը կողմէ ընդունել, և Գերագոյն ժողովին կողմէն վաւերացնել տալէ ետքը, 1857 մարտ 22-ին ուրբաթ օր ներկայեց ազգային ընդհանուր ժողովին, զոր Յակոբոս պատրիարք գումարեց իր նախագահութեամբ պատրիարքարանի մէջ և որուն ներկայ եղան եկեղեցականներ, մտաւորականներ և առևտրականներ (ՔԷՉ. 94): Այդ նախատիպ կանոնադրութեան սահմանադրութիւն անուն էր տրուած, որ թէպէտ բառացի իմաստով կանոնադրութիւն կոչումէ չի տարբերիր, սակայն լրագրական լեզուի և պաշտօնական կիրառութեան մէջ սկսած էր իբր ևրոպական քօնսթիթիւսիօն բառին համանշանակ գործածուիլ (ՔԷՉ. 138), որ կը նշանակէ միապետական իշխանութեան սեղմումը և սահմաններու մէջ փակուիլը: Մարկոսեան իր ծրագիրը մեկնաբանեց, ազգային պէտքերը բացատրեց, հիւանդանոցէ և վարժարաներէ և բարեգործական հաստատութիւններէ ետքը յիշեց նաև պատրիարքարանը, և հոգևորական ուսումնարանի պակասն ալ շեշտեց, և ասոնց ամէնուն համար անհրաժեշտ ցուցուց հաստատ եկամուտները և ազգային տուրքերը (ՔԷՉ. 94): Ժողովականք ըստ ամենայնի հաւան գտնուեցան ծրագիրին և բոլոր ներկաները ստորագրելով ազգովին ընդունեցան այն խնդրութեամբ և գոհութեամբ և օրհնութեամբ (ՔԷՉ.95): Սահմանադրութեան այս առաջին ծրագիրը լոյս տեսնելու բախտը չունեցաւ, ուստի պիտի չկարենանք անոր լիակատար վերլուծումը տալ. միայն գիտենք թէ պահուած էին երկու վարչական ժողովները, իսկ անոնց մօտ աւելցած էին օժանդակ ժողովներ, տնտեսական, ուսումնական դատաստատանական և Հայկազնեան վարժարանի խնամակալութիւնը (ՔԷՉ.95), ընտրելիներու և ընտրողներու պայմաններ ճշդուած էին, և տասը ղուրուշնոց փուլի ազգային տուրք մը հաստատուած էր. մէկ խօսքով, կրնանք ըսել թէ գլխաւոր գիծերով շատ հեռու չէր ապագային կապմուած սահմանադրութենէն:

2707. ՆԱԽՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Այս նոր և նախատիպ 1857-ի սահմանադրութիւնը կառավարութեան մատուցուեցաւ ի հաստատութիւն, բայց բաւական ժամանակ սպասուելէ ետքը մերժուեցաւ այն դիտողութեամբ, թէ պետութեան մէջ պետութիւն չի կրնար լինել (ՔԷՉ.95): Սակայն իսկական պատճառը ազգին երևեպեաց մէջ ծագած գժտութեան հետևանքն էր (ՔԷՉ.138), որուն արդէն ակնարկեցինք (2706): Ասով մէկտեղ վարչական ժողովներ մասամբ համակերպեցան ծրագիրին պայմաններուն, և ներքին գործերու մէջ այլևայլ տրամադրութիւնք գործադրուեցան, օժանդակ ժողովներ կազմուեցան, հիւանդանոց և տնանկաց և ազգային սնտուկ միացուելով տնտեսականին յանձնուեցան, որ 25-30 անդամներէ բաղկացեալ մարմին մըն էր: Աղջկանաց արհեստանոց մը հաստատուեցաւ (ՔԷՉ.95), և ընդհանուր վարչութեան աւելի կանոնաւոր ձև տրուեցաւ: Ասով մէկտեղ հաստատուն և հաստատեալ կանոնադրութեան մը պէտքը օրէօր աւելի պզալի կըլլար, քի յարաբերութիւններէն ծագած խնդիրները լուծելու, և պարտք և իրաւունք ճշդելու համար ընդունուած կանոն մը անհրաժեշտ էր: Բականցութիւններ ու խորհրդակցութիւններ, ծրագիրներ ու յանձնաժողովներ շարունակեցին 1857-է 1860, մօտ երեք տարի շարունակ, նպատակ ունենալով վանապան կարծիքներ իրարու մօտեցնել և համաձայնութիւն գոյացնել (ՔԷՉ.138): Նոր ծրագիր մըն ալ կազմուեցաւ 1859-ին երբ Յակոբոս պատրիարքի յաջորդած էր Գէորգ (2693), մը սկզբունքով կանոնագիր մը կազմուելուն հակառակ չէր, բայց գործնականի մէջ պաշտպան էր միապետական գրութեան: Մատթէոս կաթողիկոս ալ Կ. Պոլիս գտնուած միջոցին օտար չէր

մնացած տիրող խնդիրներէն, արդէն ալ ժողովրդական կուսակցութեան պաշտպան նկատուած էր (2587): Գէորգ պատրիարքի նախաձեռնութեամբ 1859-ին յանձնաժողով մըն ալ ընտրուած էր, որ իր ծրագրով կազմեց ինչպէս յիշեցինք, սակայն այն ալ գոհացուցիչ չգտնուելով նոր սահմանադրական ժողով մը կազմուեցաւ 5 եկեղեցական և 14 աշխարհական անդամներով (ՊԱԼ. 470), որ 1857-ի և 1859-ի ծրագիրները միացնելով և վանապան կարծիքները մօտեցնելով վերջապէս յաջողեցաւ ամբողջական սահմանադրութեան մկ նախագիծը մէջտեղ հանել: Վերջին յանձնաժողովի անդամներն էին, Կարապետ եպիսկոպոս Սեբաստիոյ առաջնորդ, Յովհաննէս վարդապետ՝ Ղալաթիոյ քարոյիչ, և Յովհաննէս Հիւնքեարպէյէնտեան, Յովհաննէս Փափապեան և Երեմիա Խասքէօյի՝ աւագերեցներ. Արիստակէս Ալթունտիւրրի, Պօղոս Աշնանեան, Վարդերես Միսաքեան, Մկրտիչ Աղաթոնեան, Եաղուպ Եաղուպեան, ու Ենովք Տէմիրճիպաշեան՝ մեծամեծներէն. Նահապետ Ռուսինեան ու Բարունակ Ֆէրուհիան՝ բժիշկներ. Կարապետ Իւթիւճեան՝ լրագրապետ, Յովհաննէս Սուրէննեան, Սահակ Փէշտիմալճեան, Մինաս Մինասեան, Թովմաս Քայսերեան և Գրիգոր Օտեան՝ նոր գործիչներէն (ՊԷՐ. 427): Յանձնաժողովին մէջ չէին Սերովբէ Վիշէնեան և Ստեփանոս Ասլանեան բժիշկներ, և Նիկողայոս Պալեան ճարտարապետ, սակայն անոնք ալ յայս մեծ գործ վաստակեցան (ՊԷՐ. 389) որուն սկիզբէն ոյժ տուողներն էին: Երբոր կը կարծուէր թէ սահմանադրութեան գործը յաջող վերջաւորութեան մը պիտի յանգի՝ Գէորգ պատրիարք նոր դժուարութեանց առիթ տուաւ, դժգոհ լինելով նոր օրէնսդրութիւնից, որ պատրիարքական իրաւունքները կարճում և պագային ժողովի կամքին էր ենթարկում (ՊԱԼ. 471), և երբոր չկրցաւ իր միտքը քալեցնել, ստիպուեցաւ քաշուիլ, և 1860 ապրիլ 21-ին հրաժարականը ներկայեց (ՊԷՐ. 621), որ շուտով ընդունուեցաւ, և մայիս 2-ին քուէարկութիւն կատարուեցաւ եռանուն ցանկի վրայ, և 87 քուէով պատրիարք ընտրուեցաւ Սարգիս եպիսկոպոս Գուլումճեան Ադրիանուպոլսոյ առաջնորդը, մինչ Թադէոս Ռոտոսթոցի և Պօղոս Զմիւռնիոյ առաջնորդները 67 և 21 քուէ ստացան (60. ՄԱՍ. 430): Սարգիս մայիս 12-ին Ադրիանուպոլսէ հասաւ (60. ՄԱՍ. 431), և 14-ին բարձրագոյն դուռ գնաց և պաշտօնի ձեռնարկեց (60. ՄԱՍ. 432): Սարգիս ծրագրեալ սահմանադրութիւնը ընդունելու սկզբունքով ընտրուած էր, ուստի առաջին գործն այս եղաւ, պի մեծ յուզմունք պատճառած էր ժողովուրդին մէջ Գէորգի հրաժարիլը, մանաւանդ հրաժարելուն շարժառիթը, իբր թէ նոր խմբագրուած սահմանադրութիւնը անվաւեր և ապարդիւն ձգելու համար եղած ըլլար (ՍՏԵ. 190): Մայիս 20-ին ուրբաթ օր յանձնաժողովը ծրագիրը ստորագրեց (ՊԷՐ. 427), և պաշտօնապէս նորընտիր պատրիարքին ներկայեց, և 24-ին Հոգեգալստեան երեքշաբթի օրը Ընդհանուր ժողով գումարուեցաւ Մայր եկեղեցին, պատրիարքի նախագահութեամբ և նախկին պատրիարք Յակոբոսի ներկայութեամբ, և գլխաւոր եկեղեցականներով և ամէն դասակարգէ կազմուած բազմութեամբ: Նախ ծայրէծայր սահմանադրութիւնը կարգադրուեցաւ (60. ՄԱՍ. 433), յետոյ եկեղեցականաց դիմում եղաւ, որոնք Յակոբոսի առաջնորդութեամբ վկայեցին թէ կարդացուած ծրագիրը Հայ եկեղեցւոյ օրինաց հակառակ բան չի պարունակէր. յետոյ ամիրաներուն ալ հարցում ուղղուեցաւ, որոնցմէ ներկայ էին Տատեանք, Պալեանք, Երեմեանք, և այլք, որոնք համարձակ հաւանութիւն տուին ի վերջո մտաւորական, առևտրական և արհեստավորական շարքերէն եղողնէ, իբրև ժողովրդական դասուց ներկայացուցիչք իրենց ընդունելութեամբ վաւերացուցին (ՔԷՉ. 138), և ամենքն ալ ստորագրեցին (ՍՏԵ. 191), և սահմանադրութիւնը պագային ընդհանուր ժողովին միաձայն հաւանութեամբ ընդունուած և ստորագրուած հռչակուեցաւ (ՊԷՐ. 427): Սրտայոյզ հանդիսաւորութիւն մը ունէր այս ժողովը, որ ապգին մէկ մեծ փափաքը կու գար լնուլ: Նոյն օր Հոգևոր և Գերագոյն ժողովները դադարած նկատուեցան և առժամեայ ժողովականներ ընտրուեցան, մինչև որ երեսփոխանութեան կազմուի,

և օրինական վարչական ժողովներ նստին, ինչ որ երեք ամիսներ տևեց: Առժամանակեայ ժողովներէն կրօնականը 7 և քաղաքականը 12 անդամ ունէր, կրօնականին մէջն էր նաև Իսահակ վարդապետ Երուսաղէմի փոխանորդը:

2708. ԱՆՈՐ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Այդ առթիւ կազմուած սահմանադրութիւնը վերջէն գործածուած սահմանադրութիւնը չէ. ասով մէկտեղ կարևորութենէ վուրկ չենք նկատեր անոր համարօտ վերլուծումը տալ, որպէսզի վի առաջին ժամանակներու մէջ տիրող մտայնութիւնը յայտնուի, թէ վերջին օսմանեան կառավարութեան սահմանադրութեան տարբերութիւնը իմացուի: Այդ 1860-ի սահմանադրութիւնը բովանդակ 150 յօդուածներէ կը բաղկանայ վեց հիմնական սկզբունքներէ վատ: Հինգ գլուխի բաժնուած է, Առաջին գլուխը, ազգային վարչութիւն ստորաբաժանեալ հատուածներով, որոնք են կազմութիւն 6 յօդուած, պատասխանատվութիւն 1, յարաբերութիւնք1, ընդհանուր ժողով 5. կրօնական ժողով 7, պատրիարք 6, քաղաքական ժողով 6, ուսումնական խորհուրդ 5, տնտեսական խորհուրդ 13, ելևմտական խորհուրդ 5, դատաստանական խորհուրդ 4, թաղական խորհուրդ6, դիւանատուն9, գաւառական ժողով 2, առաջնորդ 3, գաւառական վարչութիւն 4, ընդամէնն 83 յօդուած: Երկրորդ գլուխ՝ ազգային տուրք 5 յօդուած: Երրորդ գլուխ՝ ընտրական օրէնք 39 յօդուած: Չորրորդ գլուխ՝ ներքին կանոնադրութիւն 18 յօդուած: Հինգերորդ գլուխ՝ վերաքննութիւն 5 յօդուած: Կարևորագույն մաս կը նկատուին հիմնական սկզբունքները, որոնք կը վճռեն. Ա. թէ Ազգը անհատին և անհատը ազգին պարտաւորութիւններ ունի, որոնք կարգադրողը ազգային վարչութիւնն է, որուն օսմանեան տէրութիւնը յանձնած է Տաճկաստանի Հայոց ներքին գործոց տնօրէնութիւնը: Բ. Իրաւանց և պարտուց հիմը արդարութիւնն է, և ոյժը ձայնից բազմութիւնն է: Գ. Ազգն ու ազգային վարչութիւն փոխադարձ պատրիարքներով կապուած են: Դ. Ազգայինք պարտաւոր են ծախքերուն մասնակցիլ, ծառայութեանց յանձնառու ըլլալ և տնօրէնութեանց հնազանդիլ: Ե. Վարչութեան պարտականութիւնները մի առ մի կը համրուին, որոնց մէջն են Հայաստանեայց սուրբ եկեղեցոյ դաւանութիւնն ու աւանդութիւններն անխախտ պահել, և բոլոր բարոյական և մտաւորական և նիւթական պիտոյից, դատախարակութեան, մատակարարութեան, պաշտօնէից կացութեան, վէճէրու լուծման, բարեկարգութեան և յառաջադիմութեան հոգ տանիլ: Զ. Այդ նպատակին պիտի ծառայէ սահմանադրութիւնը: Այս հիմնական սկզբունքները անփոփոխելի, այսինքն անոնց վերաքննութիւնն ալ անընդունելի հռչակուեցան (ՍԵ.192): Վարչական կազմութիւնը պիտի բաղկանայ երեսփոխանական ընդհանուր ժողովէ, որ կեդրոնն է ազգային իշխանութեան, պատրիարքէ որ գործադիրն է որոշմանց և միջնորդ յարաբերութեանց, ժողովներէ, որոնք որոշում տուողներ են պատրիարքի գլխաւորութեամբ, և խորհուրդներէ, որ օժանդակներ են ժողովներուն և վանապան ճիւղերու տեսչութիւնը կը վարեն, միշտ ժողովներու վաւերացմամբ: Երեսփոխանական ընդհանուր ժողովը պիտի ունենայ 220 ընտրեալ անդամ, 160-ը Կ. Պոլսոյ թաղերէն և 60-ը գաւառական վիճակներէն, որոնց բաշխումն ալ որոշակի ցուցուած է, (ՊԷՐ.425-426), և իբր 180 յիրաւանաց անդամներէ, ինչպէս են կրօնականի և քաղաքականի անդամներ, տեսուչ և թաղական խորհուրդներու ատենապետներ, Կ. Պոլիս գտնուող եպիսկոպոսներ և քարոզիչներ և աւագերէցներ, տէրութեան պաշտօնակալներ և պետական ժողովականներ և վարժապետներ, բժիշկներ, ուսուցիչներ, լրագրապետներ, մատենագիրներ, այն պայմանով որ բովանդակը 400-է աւելի պիտի չըլլայ և յիրաւանց անդամներ ընտրեալներէն նուազ պիտի ըլլան: Ընդհանուր ժողովը հինգ տարի անգամ մը ամբողովին պիտի նորոգուի վերընտրութեան իրաւունքով: Իսկ նիստերու օրինաւորութեան համար պիտի պահանջուի 111 անդամոց ներկայութիւն: Տարեկան նիստերը պիտի գումարուին

մարտի վերջերը, օրակարգ ունենալով վարչութեան համարատուութիւնը, վարչական ժողովոց կէսին ընտրութիւնը, և տարեկան տուրքին որոշումը: Իսկ արտասովոր նիստեր տեղի կունենան, կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքներ ընտրելու, պատրիարքի և վարչութեան անհամաձայնութիւնները կարգադրելու, սահմանադրութեան վերաքննութիւնն ընելու, և արտաքոյ կարգի ծանր խնդիրներ լուծելու համար: Պատրիարքը Էջմիածնի եպիսկոպոս և օսմանեան հպատակ պիտի ըլլայ, և թէ վարդապետ է, անմիջապէս Էջմիածինէ պիտի ձեռնադրուի: Կրօնական ժողովը 14 եկեղեցականներէ և քաղաքականը 20 աշխարհականներէ պիտի բաղկանայ, որ միատեղ նիստ ընելով խառն ժողով ալ կը կազմեն, անդամները կրնան առնուիլ որևէ դասակարգէ, պայմանով 30 տարեկան ըլլան և ընտրելիութենէ պրկուած չըլլան: Տեսուչ խորհուրդներն են ուսումնականը և տնտեսականը և ելեմտականը որ տասնական աշխարհականներէ, 30 տարեկան և մասնագէտ, և դատաստանականը 5 եկեղեցական և 5 աշխարհական, 40 տարեկան և ամուսնացեալ անձերէ բաղկացած պիտի ըլլան: Առաջին երեքը քաղաքականէ և վերջինը խառն ժողովէ պիտի ընտրուի: Վարչական և տեսուչ ժողովներ ամէն տարի կիսովի պիտի նորոգուին, և ելլողները նոյն պաշտօնին անմիջապէս վերընտրելի պիտի չըլլան: Թաղական խորհուրդները ըստ տեղւոյն 5-է 9 անդամներէ պիտի բաղկանան և թաղեցի ընտրողներէ պիտի ընտրուին, և չորս տարի անգամ մը ամբողջովին պիտի նորոգուին վերընտրութեան իրաւունքով: Դիւանատունը պիտի ունենայ թղթակցութեան և արձանագրութեան և ազգահամարի գրասենեակներ, կարող դիւանապետ մը և բաւական թուով դիւանադպիրներ, և օրը 8 ժամ բաց պիտի պահուի: Գաւառական վարչութիւններ կեդրոնին նմանութեամբ պիտի կազմուին, վարչական ժողովներ 7էն 12, և տեսուչ և թաղական խորհուրդներ 5-էն 9 անդամներով: Ազգային տուրքը ընդհանուր և մասնաւոր պիտի ըլլայ, վարչական և թաղական ծախուց յատկացեալ, քանակին հիմ պիտի կազմէ իւրաքանչիւրին կարողութիւնը, չափը պիտի որոշուի վարչութեններէ, և գաւառները իրենց հաւաքածէն հարիւրին այսքան մը պիտի տան կեդրոնին: Վարչական և տեսչական և թաղական ժողովականներ, առանց պատճառի երրորդ բացակայութենէն ետքը, կրկին ազդարարութիւններ պիտի ընդունին, և հինգերորդ առանց պատճառի բացակայութենէն ետքը հրաժարեալ պիտի նկատուին: Վերաքննութիւնը երրորդ տարիէ ետքը պիտի կարենայ ըլլալ, և պատրաստութիւնները 30 անդամէ կազմուած յանձնաժողովի մը պիտի յանձնուի: Սահմանադրութիւնը ընդարձակօրէն կը բացատրէ ժողովներուն ձեռնհասութիւնները և ընտրութեանց ձևերը: Ընտրողութեան իրաւունքը 25 տարեկանին կը պահէ, ընտրելիութիւնը 30 տարեկանին, և պրկմանց պատճառներուն մէջ սովորականէն վատ կայ նաև ազգային տուրքին վճարումի մերժումը: Սահմանադրութեան մնացեալ յօդուածները ընդհանրապէս ծանօթ և սովորական բաներ ըլլալուն վանց կընեն յիշել: Նոյնպէս առ այժմ վանց կընենք սահմանադրութեան մասին խորհրդածութիւններ աւելցնել, վերապահելով վայն ընել բահմանադրութեան կառավարութենէ հաստատուելէն ետքը, զի այս 1860-ի սահմանադրութիւնը իր ամբողջութեամբ կիրառութեան չմտաւ:

2709. ԱՆՈՐ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Մայիս 24-ին ընտրուած առժամեայ ժողովը (2707), Մկրտիչ Աղաթոնեանի ատենապետութեամբ, ամէն ջանք թափեց օր առաջ երեսփոխանական ընտրութիւններ կատարել տալ մայրաքաղաքի և մօտակայ վիճակներու մէջ, և անուանեց յիրաւանց անդամակցութեան պայմաններ ունեցողները, և երբոր օրինաւոր նիստ կազմելու բաւական ընտրութիւններ կատարուեցան, երեսփոխանական ընդհանուր ժողովոյ առաջին նիստը գումարուեցաւ 1860 օգոստոս 25-ին, Աստուածածնայ ինքօրէնքին վրայ եկող հինգշաբթին մայր վարժարանի սրահին

մէջ, Սարգիս պատրիարքի նախագահութեամբ, և 120 ընտրեալ և 60 յիրաւանց անդամներու ներկայութեամբ: Մկրտիչ Աղաթոնեան մանրամասնեալ տեղեկութիւններ տուաւ ընտրութեանց մասին, պատկերացուց ազգին կացութիւնը (ՔԷՉ. 139), և յատկապէս ծանրացաւ ազգային պարտքին վրայ, որ վանապան գլուխները գումարելով կը հասնէր 1, 047, 476 դահեկանի (ՔԷՉ. 135), և յիշեց այդ մասին ձեռք առնուած առժամանակեայ կարգադրութիւնները: Ժողովը գոհութեամբ վաւերացուց առժամեայ վարչութեան արաքն, և անցաւ երկու վարչական ժողովներն ընտրել կրօնական ժողովին 14 անդամներուն ցուցակին չհանդիպեցանք իսկ քաղաքական ժողովին 20 անդամներէն միայն Միրիճեան Փափապեան Ամիրա պատուանունով նշանակուած է, հինգ հատ ալ էֆէնտի պատուանունով: Գրիգոր Մարկոսեան, Մինաս Մինասեան, Արիստակէս Ալթունտիրրի, Եղուպ Եղուպեան, և Սահակ Ապրոյեան իսկ մնացեալ տասներկուքը աղա են կոչուած, Մկրտիչ Աղաթոնեան, Յարութիւն Սարուխանեան, Ասապա Համբարձումեան, Մանուէլ Նէվրուպեան, Մկրտիչ Ֆրէնկեան, Յակոբ Մուպահեաճեան, Յակոբ Նորատունկեան, Յովհաննէս Այվատեան, Յովհաննէս Մարտիրոսեան, Պօղոս Օտեան, Սիմոն Նորատունկեան և Վարդերես Միսաքեան (ՔԷՉ. 32): Դիտելի կը նկատենք որ ընտրեալներուն մէջ չենք գտնէր սահմանադրութիւնը պատրաստող և կազմող նորահասուններուն անունները, ինչ որ կը ցուցնէ թէ Ընդհանուր ժողովը ուլած է գործնական պաշտօնները փորձառուներու ձեռքը յանձնել: Վարչական ժողովներ պետական հաստատութիւնը ստացան սահմանադրութենէ անկախաբար նախընթաց ժողովներու կազմութեան հիմամբ, և առաջին նիստը կազմեցին սեպտեմբեր 14-ին Խաչին չորեքշաբթի օրը, որուն մէջ ընտրուեցան Մարկոսեան ատենապետ և Մինասեան գերատենապետ, Աղաթոնեան ատենադպիր և Սարուխանեան գերատենադպիր և մինչև Ծնունդ՝ 17 նիստեր տեղի ունեցան (ՔԱՂ. 19), որոնց մէջ գլխաւորապէս հետապնդում եղաւ սահմանադրական կազմութիւնը գործադրութեան մտցնել թէ մայրաքաղաքին և թէ գաւառներուն մէջ, տեսուչ խորհուրդներ և դիւանական պաշտօնեաներ ընտրել, գաւառներուն համար հրահանգներ պատրաստել և թաղական խորհուրդներ ընտրել տալ: Բայց ասոնցմէ ամէնքը մինչև երեք ու չորս ամիսներ տևեցին, որ է ըսել 1860 տարուոյ վերջին ամիսները գրաւեցին (ՔԱՂ. 5):

2710. ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵՒ ԿԵԴՐՈՆ

Բայց ծանրագոյն խնդիրը պարտուց վճարումն էր, զոր վարչութիւնը Ընդհանուր ժողովոյ նոյեմբեր 4-ի նիստին ներկայեց, և երեսփոխանութիւնն ալ որոշեց 600, 000 դահեկան Երուսաղէմի սնտուկէն փոխ առնուլ (ՔԱՂ. 12) և մնացեալին համար կարևոր նուէրներ հաւաքել (ՔԷՉ. 136): Երուսաղէմէ փոխառութեան գաղափարը նախապէս Փարիզի Հայկապ նեանի համար մտածուած էր, և Սերվիշէն բժշկապետ այդ առաջարկը Յովհաննէս պատրիարքին ներկայացած էր և Յովհաննէս ճարտարութեամբ գործը յետաձգելու ձևին վերածած էր (2701): Ընդհանուր ժողովը այս անգամ վայն պատրիարքարանի պարտքին կը պատշաճեցնէ, և վարչութիւնը նոյեմբեր 11-ին նիստին մէջ պաշտօնապէս կը գրէ Յովհաննէս պատրիարքին, որ Սերվիշէնի տուած պատասխանին նման մինչև Ջատիկ սպասել և միանգամայն գումարը պակսեցնել կը պատասխանէ, բայց մինչև որ դեկտեմբեր 30-ին այդ պատասխանը վարչութեան հասնէր՝ Յովհաննէս վախճանած էր 23-ին: Նոր 1861 տարուոյ յունուար 4-ին դարձեալ միևնոյն պատասխանը կը հասնէր Յովհաննէսէ իր վերջին օրերը գրուած, որուն վրայ բժշկապետ Սերվիշէնէ, որ Ընդհանուր ժողովոյ ատենապետ էր, բերանացի տեղեկութիւններ կը քաղէ Երուսաղէմի վարչութեան և միաբանական վիճակին վրայ, բոլորն ալ տխուր գոյներով ներկայացուած: Վարչութիւնը այդ տրամադրութեանց ներքև կորոշէ Յովհաննէս պատրիարքին վճուաբար հասկացնել, որ ինքը չունի իշխանութիւն ընդհանուր ժողովոյն որոշումը փոխելու, մինչ պէտք էր դիտել որ Ընդհանուր ժողովը ոչ թէ օրէնք և կանոն

կը հաստատէր, այլ ուրիշի սնտուկին մատակարարութեան ձեռնամուխ կըլլայ: Այդ տրամադրութեանց մէջ էր վարչութիւնը երբ յունուար 1-ին Յովհաննէսին մահը կը լսէ որ յունուար 1-ին գրուած էր (2705), և պատեհը հասած կը կարծէ Երուսաղէմի սնտուկին տիրապետելու՝ դուրսէն տեղապահ կամ առժամեայ կառավարիչ մը յղելով: Ուստի 12-ին կը հեռագրուի Զմիւռնիոյ առաջնորդ Թաքթաքեան Պօղոս եպիսկոպոսի, որ ուղևորութեան պատրաստուի (ՍԱԻ.1353), և 13-ին անգամ մըն ալ Սերվիչէնի տեղեկութիւնները լսելով, անբաւական թուով գումարման մը մէջ (ՏԷՐ.73), Թաքթաքեանի կը հեռագրէ անմիջապէս Երուսաղէմ մեկնիլ (ՔԱՂ.13): Սակայն Թաքթաքեան, այր խոհական և հեռատես, և մանաւանդ վանական ձևերու և կացութեանց փորձառու, և Արմաշի միաբանութենէն և պաշտօնաարութենէն վարժուած, և ճանչնալով պներքին խորհուրդս մտաց ժողովոյն, որ տեղապահի անուանմամբ պատրիարք ալ դնելու ճամբայ կուպէ բանալ, կը հրաժարի առաջարկուած պաշտօնէն և տեղէ չշարժուիլ: Իսկ վարչութիւնը միւս կողմէն Երուսաղէմի համար կանոնագիր մը պատրաստել կու տայ խառն յանձնաժողովի ձեռքով, առանց մտադրութիւն դարձնելու Գէորգ եպիսկոպոսի միաբանութեան կողմէ պատրիարքութեան ներկայացուելուն և այդ մասին Երուսաղէմէ եկած գրութեան (ԵՂՄ.3): Իրեն նպաստաւոր կը գտնէր քիչ որ ետքը փետրուար 10-ին հասնող Գէորգի մահուան լուրը (2705), և աւելի ևս իր դիտման մէջ յառաջանալու կը քաջալերուէր, մինչ միաբանութիւնը ապգային սահմանադրութեան հետևել և ամէն բան բարեկարգել խոստանալով մէկտեղ, կեդրոնէն կը խնդրէր անպատճառ միաբաններէն մէկը պատրիարք ընտրել (ՔԱՂ.13), և դուրսէն մէկ կամ միաբանութենէ անջատեալ կամ հեռացեալ մը բնաւ չէր ընդուներ և իբրև յարմարագոյն կը ներկայէր Բաբերդցի Աստուածատուրեան Իսահակ վարդապետը, նոյն ինքն Իսահակ Գաղատացւոյն հետ Հնդկաց նուիրակութեան գացող Սարգիս սարկաւազը (2628), որ Կ. Պոլսոյ փոխանորդ էր: Գործին աւելի տալու համար կորոշեն ճամբայ հանել Տիգրանակերտցի Յակոբ Յովհաննէսեան Զարպաւածձեան վարդապետը, իբր Կ. Պոլսոյ փոխանորդութեան օգնական (ԵՂՄ.8): Միաբանութիւնը Իսահակը ներկայացած ատեն նկատի ունէր անոր արժանաւորութենէ վատ, հանգուցեալ Գէորգէն ալ ընտրելի ցուցուած ըլլալը այլ և Կ. Պոլսոյ ալ քաջածանօթ և ընդունելի և անոնց ալ հաճելի նկատուիլը: Վրայ կը բերէին թէ ամէն առիթ մէջ չեն ընդունիր ոչ կոք արտաքոյ միաբանութեան կամ ի միաբանութենէ անջատելոցն (ՍԱԻ.1355): Իսկ Երուսաղէմի մէջ միաբան եպիսկոպոս մնացած չըլլալուն Ատեամանցի Վրթանէս Վարդանեան ծերունի վարդապետը տեղապահութեան կըտրուէր (ՍԱԻ.1355). իսկ հանդիսութեանց և ձեռնադրութեանց համար կօգտուէին Գերմանիկցի Մեսրոպ եպիսկոպոսի ներկայութենէն, Ստոյ միաբան և Անտիոքայ առաջնորդ, որ բարեպատեհ պուգադիպութեամբ Երուսաղէմէ ուխտի գալով, այնտեղ մնաց և մինչև 1863 մարտ 14 ապրեցաւ (ԱՍՏ.551):

2711. ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ Վերոյիշեալ պաշտօնագիրը, որով Իսահակի ընտրութեան և Յակոբի առաքման որոշումը կը հաղորդէր, 1861 յունուար 24-ին ստորագրուած էր, բայց Յակոբի մեկնելէն առաջ միաբանական կասկածները կը շատնան, որովհետև իրենց առջի գիրերու պատասխան չէին առեր, և միւս կողմէն Կ. Պոլսոյ անցուդարձերուն վրայ ալ փոքրիշատէ լուրեր կը ստանային Իսահակ փոխանորդէն յունուար 28-ին հասած նամակով: Ուստի գործը աւելի ամուր բռնելու համար, որչափ միաբաններ կային Երուսաղէմի մէջ, յունուար 29-ին կիրակի որ խորհրդակցութիւն կը կատարեն, և վերջնական կերպով և համախոհ և միասիրտ ու միակամ միաբանութեամբ ուխտագիր մը կը ստորագրեն Միաբանական կանոն աւանդապահութեան վերտառութեամբ, որով կը յայտարարեն չընդունիլ արտաքոյ միաբանութեան սրբոյ աթոռոյս թէ պատրիարք, թէ տեղապահ և թէ քննիչ, և այդ կէտին վրայ ճգնել մինչև ցմահ կենաց մերոց, և ի

հաստատութիւն որոշման ըստ ուխտագրին ամէնքն ալ կը ստորագրեն (ԵՂՄ. 7): Պաշտօնական թուղթ մըն ալ կը գրեն դարձեալ յանուն պատրիարքին և քաղաքական ժողովոյ փետրուար 2 թուականով, որուն մէջ ապդու և վճռական կերպով կը պատմեն թէ որչափ վնասակար եղած է աթոռին՝ օտարին իշխանութիւնը ինչչափ արդիւնքներ ունեցած է միաբանութիւնը սուրբ տեղերը պաշտպանելու մէջ, անարգանք և տկարութիւն պիտի պատճառէ դուրսէն մէկուն պաշտօնի անցնիլը, թէ ինչպէս նախնիք փակեցին ընդ նվովիւք արտաքոյ լրբութեան միաբանութեան չընդունիլ զօք (ԵՂՄ. 5-10): Գրութիւն մըն ալ յատկապէս ուղղեցին Սարգիս պատրիարքին (ԵՂՄ. 11) և մասնաւոր նամակներ մեծամեծներէն և ժողովականներէն նշանաւորներուն (ԵՂՄ. 13): Նամակ մըն ալ փոխանորդ Իսահակին իրենց մտածածն ու ըրածը հաղորդելու (ԵՂՄ. 72), և դարձեալ ուրիշ նամակ մըն ալ իրեն մասին եղած ընտրութիւնը յարգելու (ԵՂՄ. 14): Յակոբ վարդապետի կը յանձնեն ևս զօրինակս ուխտադրութեան և վկանոնացն կապելոց ի սկիւբն յունուարի (ՍԱԻ. 1355), և բոլոր այդ թուղթերով վերջապէս Յակոբ կը մեկնի և յաջողութեամբ կը հասնի Կ. Պոլիս, ուր սակայն կը տեսնէ թէ բոլորվին տարբեր գաղափարներ կը տիրեն, և Երուսաղէմի հանդէպ ընդդիմութեան հովեր կը շնչէն: Այդ ուղղութեան ոյժ տուողը Կ. Պոլսոյ պատրիարքութեան քաղաքական ժողովն էր, որ երկու կէտերու վրայ գրած էր իր զօրութիւնը, դուրսէն տեղապահ մը զրկել Երուսաղէմ և անոր ձեռքով իր պատրաստած կանոնադրութիւնը գործադրել տալ: Թէպէտ Թաքթաքեան հրաժարած էր, սակայն կային ուրիշ եպիսկոպոսներ, որոնք պատրաստականութիւն կը յայտնէին տեղապահութիւնն ալ պատրիարքութիւնն ալ ընդունելու (ՍԱԻ. 1353), և այս կարգին յանուանէ կը յիշուին Գէորգ նախորդ պատրիարք և Սարգիս այժմեան պատրիարք, որոնք խոստում ալ կու տային Երուսաղէմի սնտուկէն կեդրոնին սպասած դրամական օգնութիւնն հասցնել, զի վարչութեան միտքին մէջ առաւել քան Երուսաղէմը բարեկարգելու, կեդրոնը նիւթականապէս նպաստաւորելու գաղափարը կը տիրէր (ՔԷՉ. 141): Խնդիրը վերջապէս Ընդհանուր ժողովի առջև ելաւ փետրուար 17-ին, կանոնագիրը ընդունուեցաւ և հաստատուեցաւ, բայց դուրսէն նշանաւոր եպիսկոպոս մը տեղապահ կամ նախագահ ընտրելու կէտը չքալեց, զի արդէն ազգին մէջ պառակտումը սկսած էր, և միաբանութենէ դուրս մէկու մը տեղապահ ընտրուիլը ընդհանուր հաւանութեան չէր հանդիպեր: Վարչութիւն իր տեսակէտին վրայ պնդած ատեն Յակոբոս նախկին պատրիարք կընդդիմախօսէր և եպիսկոպոսի մը ներկայութեան պէտք չըլլալը կը զգացնէր Գերմանիկցի Մեսրոպ եպիսկոպոսին ներկայութիւնը յիշելով: Ասոր վրայ Երուսաղէմէ զրկուած Յակոբ վարդապետն ալ Երուսաղէմի միաբանութեան ուխտագիր յայտարարութիւնը մէջտեղ կը հանէ, քաղաքականի ատենապետ Մարկոսեան կուզէ բացատրութեան մտնել, սակայն նվովիւք արգիլեալ է, և նվովք է յայդմիկ ձայները կը բարձրանան, և բուէի կանցնին և 66 բուէի դէմ 83 բուէով կը մերժուի տեղապահ ընտրելու և զրկելու առաջարկը (ՍԱԻ. 1363): Նվովքի խօսքը Կարապետ կաթողիկոսի վճռին արձագանքն է (1949), որ ազգայնոց ականջը հասած էր, գլխաւորապէս Իսահակ վարդապետի նախաձեռնութեամբ: Երուսաղէմական կուսակցութիւն մըն ալ կազմուած էր Յակոբոս նախկին պատրիարքի գլխաւորութեամբ (ՔԷՉ. 141), և Տէրոյենցի բուն պաշտպանութեամբ, թէպէտ խաւարեալ յորջորջուած տարրերէ բաղկացած: Իսկ լուսաւորեալ կոչուածներ կամ սահմանադրականներ կը հիմնուէին սահմանադրութեան տարրին, որ Երուսաղէմայ և Պոլսի պատրիարքաց ընտրութիւնը բացարձակ և անպայման կերպով ընդհանուր ժողովի յատկացուցած էր, իսկ նվովքի փաստը Ասորի Հաննա պատմագիրի վկայութեան վերագրելով (ՔԷՉ. 142) և Հաննայի նվովք կոչելով (ՔԷՉ. 140), առ ոչինչ կը գրէին, մինչ Հաննա՝ Շղթայակիրին գործակից Երուսաղէմացի Յովհաննէս բազմարդիւն հայ եպիսկոպոսն է (1927) և Կարապետ Ունեցի

կաթողիկոսի արտասանած վճիռը իր պատմութեան մէջ յիշող մըն է, և ոչ թէ նպովք արձակող մը (1949): Իսկ եթէ նախորդ պատրիարք Գէորգն ալ դուրսէն ընտրուելու կողմն էր, պատճառը պարզապէս ինքն ընտրուելու ակնկալութիւնն էր (ՔէՉ.141):

2712. ԿԱՆՈՆԱԳԻՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ընդհանուր ժողովը որ միայն կանոնադրութիւնը հաստատած էր, վարչութենէ կը պահանջէ որ այն կէտառկէտ գործադրուի, որուն վարչութիւնը կը պատասխանէ, թէ իր երկար խորհրդածութեամբ պատրաստած դուրսէն տեղապահ մը ընտրելու միջոցը ընդհանուր ժողովոյ կողմէն չընդունուելէն ետև, գործադրութեան պատասխանատուութիւնը չի կրնար ընդունիլ, և ուրիշ բան չի կրնայ ընել բայց եթէ վաւերացեալ օրինակները յատուկ պատրիարքական նամակով դրկել միաբանութեան, Աստուծոյ և խղճի յանձն առնելով գործադրութեան հոգը (ՔԱՂ, 14): Իրօք ալ այս կերպով կը հաղորդէր այս կանոնադրութիւնը պատրիարքական մարտ 6-ի նամակով, որ հասած էր 16-ին, և միանգամայն կառաջարկուէր պատրիարքութեան համար երեք ընտրելիներ ներկայել քուէարկութեամբ (ԵՂՄ. 39): Վարչութենէ պատրաստուած և ընդհանուրէն դուրսնաքեայ փոփոխութիւններով հաստատուած կանոնագիրը (ՍԱԻ. 1362), 42 յօդուածներ ունի: Առաջին յօդուածը Երուսաղէմի վարչութիւնը կը յանձնէ պատրիարքէ նախագահուած տնօրէն ժողովի մը, թէ ի կրօնական, թէ ի քաղաքական և թէ յուսումնական մասին: 2-րդ յօդուածը ընդհանուր ժողովի անդամ կընդունի եպիսկոպոսներ, վարդապետներ, աւագ սարկաւագներ և աւագ դպիրներ. 3-րդ յօդուածը երկուերորդ մասին ներկայութիւնը կը պահանջէ որոշմանց վաւերականութեան համար. 4-րդ յօդուածը ընդհանուր ժողովին կու տայ պատրիարքացուներու, աւագլուսարարի և տնօրէն ժողովի անդամներու ընտրութիւնները, և ծանր խնդիրները. 5-րդը կըսէ որ պատրիարքացուներու և ժողովականներու ընտրութիւնները Կ. Պոլիս պիտի հաղորդուին. 6-րդ՝ որոշումները գաղտնի կամ յայտնի քուէով պիտի ըլլան, իսկ ընտրութիւնները միշտ գաղտնի քուէով: 7-11-րդ՝ միաբանութիւնը պիտի ունենայ ժառանգաւորաց դպրոց, թանգարան, տպարան, հիւանդանոց դեղաբանով և բժիշկով, և սնտուկ պատրիարքին մօտ ժապաւինեալ տոմարով և բանալիքով տնօրէնին ձեռքը: 12-րդ կալուածոց գնումը տնօրէնին կը թողուի, իսկ վաճառումը կեդրոնին կը պահուի: 13-րդ Տնօրէն ժողովը պիտի ունենայ տասն անգամներ, լուսարարապետ, փոխանորդ ուսումնապետ և եօթն ընտրեալներ. 14-րդ պիտի ունենայ ատենապետ և ատենադպիր, 15-րդ պիտի հսկէ ամենայնի 16-րդ, պիտի ընտրէ պաշտօնեաներ 17-րդ որոշումներ պիտի տայ յայտնի կամ գաղտնի քուէով, իսկ ընտրութիւնները պիտի ընէ միշտ գաղտնի քուէով, 18-րդ պիտի գործէ անդամներէն կէսէն աւելին ներկայութեամբ. 19-րդ երեք տարիէ պիտի փոխուին ընտրեալ անդամներ, բայց վերընտրելի են 20-րդ պիտի ամբաստանուին ընդհանուր ժողովին առջև 21-րդ անօրէնը երբ և ուզէ հաշիւ կը պահանջէ պաշտօնեաներէ, տարեկան հաշիւները կը փակէ մայիսին, որոնք հետզհետէ կանցնին պատրիարքին ընդհանուրին և կեդրոնին, կաւելցուի նաև թէ տնօրէնը պիտի շարունակէ վճարել կեդրոնի տարեկան նպաստը 22-րդ պատրիարքը գլուխ է միաբանութեան և նախագահ ընդհանուրին և տնօրէնին 23-րդ ընտրութիւնները կը հաստատէ և որոշումները կը գործադրէ. 24-25-րդ կը ձեռնադրէ և վարդապետութեան վկայական կու տայ տնօրէնի հաւանութեամբ 26-րդ պիտի ըլլայ գոնէ 33 տարեկան և վկայեալ. 27-րդ պիտի ըլլայ միաբանութեան եպիսկոպոսներէն կամ վարդապետներէն . 28-րդ և պիտի ընտրուի կեդրոնի Ընդհանուր ժողովէն միաբանութեան ներկայած երեք ընտրելիներուն մէջէն 29-րդ գլխաւոր պաշտօնեաներ են լուսարարապետ, փոխանորդ, ուսումնապետ, դարպասընկալ, թարգման, մատակարար, հիւրընկալ և ուրիշներ ի հարկին. 30-36րդ ասոնց պաշտօնները կը ճշդուին. 37-րդ պատասխանատու են և պիտի հնազանդին տնօրէնին. 38-րդ Կ. Պոլսոյ կեդրոնական վարչութիւնը

պատրիարք կընտրէ երեք ընտրելիներուն մէջէն. 39-րդ կը հաստատէ տնօրէնի անդամները. 40-րդ կու տայ վարժարանական ծրագիրը. 41-րդ քննիչ կը դրկէ. 42-րդ թէպէտ կրնայ վանքը մատակարարել իրմէ անուանուած երկու գործակալներով, բայց առ այժմ միաբանութեան կը յանձնէ, և կը յուսայ թէ չստիպուիր իր իրաւունքը գործադրել (ՍԱԻ.1356-1362): Մանրամասնօրէն քաղեցինք սահմանադրութենէն ետքը կազմուած այս առաջին կանոնագիրին պարունակութիւնը, որպէսզի լաւ հասկացուին և կշռադատուին այն խնդիրները և միաբանութեան ու կեդրոնին միջև մղուած պայքարները, որոնք տարիներ տևեցին:

2713. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՏԵՍՈՒԹԻՒՆՔ

Միաբանութիւնն փետրուար 2-ի գրութիւններէ ետքը, զորս Յակոբ վարապետ տարած էր Կ. Պոլիս (2711) փետրուար 23ին և մարտ 16-ին դարձեալ նոյն իմաստով գրութիւններ ուղղած էր կեդրոնական վարչութեան և պատրիարքին (ԵՂՄ.18-39), միշտ դուրսէ տեղապահ կամ պատրիարք ընտրելու անկանոնութիւնն ու վնասները բացատրելով: Գրութիւն մըն ալ յղուած էր Մատթէոս կաթողիկոսի միաբանական իրաւունքներուն պաշտպանութիւնը խնդրելով (ԵՂՄ.30) և ամէն գիրերն ալ ստորագրած էին, միակամ կամօքն լրութեան սրբոյ պթոռոյս Երուսաղէմի (ԵՂՄ.32), և իրօք ալ օրինակելի համամտութիւն կը տիրէր բոլոր միաբաններու մէջ: Յովհաննէսի մահուանէ ի վեր կեդրոնէն որևէ պատասխան մը չառնող միաբանութիւնը, կարծես գոհունակութիւն պագց Սարգիս պատրիարքի 1861 մարտ 6-ի նամակը ստանալով 16-ին, որով պատրիարքութեան ընտրելիներ միաբաններէն պիտի ցուցուէին, իսկ կանոնագիրն ալ պարզ կերպով մը կը հաղորդուէր, որ է ըսել թէ հարկաւ դիտողութիւններ պիտի չմերժուէին, ուստի մարտ 20-ին մեծ պահոց երրորդ երեքշաբթին երեկոյի ընթրիքէն յետոյ մայր տաճարը կը հաւաքուին Վրթանէս վարդապետ ծերունապարդ տեղապահին նախագահութեամբ և աղօթքներէ ու սաղմոսներէ ու ընթերցուածներէ ետքը կարգաւ կերթան քուէին արկանեալ ի տեղի արիւնամեծ սուրբ գլխոյ մեծի առաքելոյն Յակոբայ, զորս երկու խոստովանահայրեր դուրս կը բերեն և ամէնուն առջև բանալով կը համրեն Իսահակ արդապետ Աստուածատուրեանի 64 քուէ, Յակոբ վարդապետ Յոհաննէսեանի 7 քուէ, և Եսայի վարդապետ Կարապետեանը ևս 7 քուէ (ԵՂՄ. 41). իսկ անոնցմէ վատ քուէ ստացող վարդապետներ եղած են, Ղուկաս 4 Պետրոս 3, և Պօղոս, Աթանաս Սիմէոն ու Մարկոս մէկմէկ (ԵՂՄ. 44), և ըստ այլոց Ստեփան վարդապետ ևս 1 քուէ (ՀՐՔ. Բ. 31) կամ 3 քուէ (ՏԷՐ. 123), բովանդակ գումարը կամ 90 կամ 92 քուէ: Հարկաւ այս առթիւ խորհրդակցած են կանոնագիրի համար ալ, որովհետև կը տեսնանք թէ 8 դիտողութիւններ գիրի առած են այդ մասին: Ա. Առաջին յօդուածով տնօրէնին յանձնուած պաշտօնը կը նդունին, եթէ անոր օգնող արտաքին խորհուրդ մըն ալ ըլլայ, միաբաններէ կազմուած և միաբանութենէ ընտրուած մատակարարութեան համար, որով մերժած կըլլան 42-րդ յօդուածը: Բ. 7-րդ յօդուածով նշանակուած ժառանգաւորաց վարժարանը կը նդունին, պայմանով որ ծրագիրը միաբանութիւնը իր կողմէ իր կարողութեան և կացութեան համեմատ պատրաստէ, որով մերժած կըլլան 40-րդ յօդուածը: Գ. 8-րդ և 9-րդ յօդուածներով նշանակուած թանգարանն ու տպարանը գոյութիւն ունին կըսեն, և միայն կը խնդրեն որ արտօնութիւն ունենան միաբանական քննութեամբ հրատարակել և տպուածները ապաստօրէն վաճառել, որ արդիւնք ստացուի, ասով ալ կակնարկեն Զաքարիա պատրիարքի հրատարակածներուն դէմ կեդրոնէն հանուած դժուարութեանց (2606): Դ. 12-րդ յօդուածով նշանակուած առանց կեդրոնի հաւանութեան կալուած վաճառելու արգելքը կը նդունին, զի միաբանութիւնըն ալ ոչ վաճառած է և ոչ վաճառել կուզէ, միայն կաւելցնեն որ կեդրոնն ալ առանց միաբանութեան հաւանութեան չկարենայ վաճառել, և կը պահանջեն որ դուրսերը գտնուող կալուածներու մասին միաբանութիւնն աւելի իրաւունք ունենալ քան կեդրոնը: Ե. 21-րդ

յօդուածին մէջ յիշուած տարեկան 120,000 դրուշի վճարումը չեն խոստանար, զի ապահով չէ վանքին արդիւնքը, և եթէ լաւ արդիւնաւոր տարի ըլլայ չեն վլանար ըստ մասնեայ նպաստ մը: Զ. 41-րդ յօդուածով նշանակուած քննիչը չեն ընդունիր, որ հին պապաներու կրնայ վերածուիլ և անտեղութեանց առիթ տալ, և այդ մասին կը խոստանան նորէն գրել: Է. 41-րդ յօդուածով նշանակուած գործակալները չեն ընդունիր, և բաւական կը գտնեն 21-րդ յօդուածով որոշուած համարատուութիւնը: Ը. 39-րդ յօդուածին մէջ կառաջարկեն աւելցնել թէ միաբանութիւնը իրաւունք ունի դուրսերը գործակալներ յղել կամ հաստատել, գրչագիր հաւաքելու, կալուածներ նորոգելու, հասոյթներ ստուգելու և աշակերտ ընտրելու: Թէ երեք ընտրելեաց և թէ կանոնագիրին մասին դիտողութեան համար պաշտօնագիրները գրուած են մարտ 23 թուականով (ԵՂՄ.39-47): Երեք ընտրեալներէն թէպէտ ո՛րն և ըլլայ պիտի ընդունին, սակայն կը խնդրեն որ նշանակութիւն տրուի իրենց քէներուն և Իսահակ վարդապետ նախադասուի, ինչպէս Էջմիածինի քուէարկութեան մէջ տրուեցաւ Աշտարակեցիին: Իսկ կանոնագիրին մասին իրենց ալ արդէն կանոնագիրի ծրագիր մը յղած ըլլալնին կը յիշեցնեն, և կը խնդրեն որ անոր և ներկայ դիտողութեանց համեմատ նոր և բարեփոխեալ կանոնագիր մը պատրաստուի:

2714. ՆԵՐՍԷՆ-ԴՈՒՐՍԷՆ ԽՆԴԻՐԸ

Կեդրոնական վարչութեան քաղաքական ժողովը, թէպէտ իրեն դէմ գտաւ Ընդհանուր ժողովը դուրսէն տեղապահ դրկելու առաջարկին մէջ, սակայն անով իր միտքէն ետ չկասեցաւ, և երբ երեք ընտրելիներ կը խնդրէր միաբանութենէն՝ միտքովը վայն մերժել կը պատրաստուէր, նախատեսելով որ միաբանութիւնը պիտի չհաւանի իրեն կազմած կանոնագիրին (ՍԱԻ.1364): Երուսաղէմէ հասած գիրերը համաձայն էին իր տեսութեանց, և այլ ևս բացուած էր Երուսաղէմի և Կ. Պոլսոյ, կամ աւելի ճիշդ միաբանութեան և քաղաքականին միջև պայքարը: Քաղաքականին ըսինք և ոչ ազգին կամ պատրիարքարանին, զի մայրաքաղաքի ամբողջ հայութիւնը և վարչութեան կրօնական ժողովը համամիտ չէին քաղաքականին ուղղութեան: Արդէն սահմանադրութեան կազմուելուն ատենէն երկուքի բաժնուած էր հանրութիւնը, որչափ ալ երկու կողմերն ալ ազգային կանոնադրութիւն մը կուզէին ունենալ, սակայն եւրոպական կրթութեամբ կամ շփմամբ յառաջ եկածներ հետամուտ էին բուն և ընդարձակ ապատական ձևերու, մինչ տեղական և աւանդական գաղափարներով սնածներ կը սիրէին ապատութեան չափաւոր կիրառութիւնը: Անոնք սահմանադրական էին, ասոնք պահպանողական, բայց պարծենկոտ ձևով անոնք ինքզինքնին լուսաւորեալ կը կոչէին, և իրենց դիմացիները խաւարեալ կանուանէին, իսկ յորմէհետէ Երուսաղէմի խնդիրը սկսաւ հրապարակը գրաւել, անոնք դուրսէն ընտրութիւնը կը պաշտպանէին, իսկ ասոնք ներսէն ընտրութիւն կը պնդէին, և ներսէն-դուրսէն խնդիրը օրուան կենսական խնդիրը դարձած էր, կիրքեր յուզելու և շփոթներ յարուցանելու չափ: Այդ պարագաներուն մէջ կը հասնէին միաբանութեան դիտողութիւնները կանոնագիրին մասին, և երեք ընտրելեաց ցուցակը երեք միաբաններէ բաղկացած, և աչքառու մեծամասնութեամբ ի նպաստ Իսահակ վարդապետի, որ Կ. Պոլսոյ մէջ բուն կերպով կը պայքարէր դուրէնականներու դէմ: Քաղաքական ժողովը կանոնագիրին ամբողջապէս և պարզապէս չընդունուելէն վայրացած եռանուն ցանկը իբր չեղեալ նկատեց, պատճառելով թէ քուէարկութիւնն միաբանութեանն խարդաւանօք իցէ և ոչ ըստ կանոնի սահմանադրութեան: Ամէն աննշան պարագայէ օգուտ քաղելու մտադրութեամբ քուէներով հաշիւին ալ մտան, և Իսահակ վարդապետի քուէներուն անհամեմատաբար առաւելութիւնը, և մէկ գրիչէ ելած վանապան ստորագրութիւնները խարդախութեան նշաններ մեկնեցին: Ժամանակին լրագիրներն ալ իրենց ասպարէզ գտան ամէն անհիմն խօսք գիրի առնելու և վրոյցներ տարածելու թէ միաբանութիւնը պատուիրակ թունուորած

է, թէ կարդար-գրել չգիտցող վարդապետներ կան, թէ ազգին դէմ ապստամբ են, թէ անվայել լեզու գործած են, և թէ նպովքի խօսքը կեղակարծ բան մըն է: Իսկ ներսէսականներ իրենց հիմ և հիմնական փաստ ըրած էին Հաննայի նպովք կոչուածը, որուն իսկապէս Կարապետ կաթողիկոսի վճիռ ըլլալը անծանօթ չէր, և դուրսէն առնուած պատրիարքներուն երեսէն Երուսաղէմի աղէտալի վնասներ կրած ըլլալը յայտնի էր: Մէջտեղ նետուած մեղադրանքներուն ալ յերկրածոյ բաներ ըլլալը ստուգուած էր, և գլխաւորապէս նոյն գրիչէ ելած ստորագրութիւններ ոչ թէ գիր չգիտնալու հետևանք էր, այլ Երուսաղէմէ դուրս գտնուողներուն կողմէ գրուած էին, որոնք քուէնին հեռուէն դրկած էին, այլ տեղեկագիրին չէին կրնար անձամբ ստորագրել (ՀՐՔ.Բ.34): Իսկ Իսահակ վարդապետի քուէներուն անհամեմատ առաւելութիւնը հետևանք էր շատերուն միակ անունի մը քուէ տալուն, վայն միակ արժանի նկատելով (ՏԷՐ.125, ՍԱԻ.1367), զի քուէարկութեան կանոնը որ աւելի անուն գրելը կարգիլէ, պակաս գրելը չարգիլեր: Պահպանողական ներսէսականներուն թիւէն էին բոլոր եկեղեցականք, իսկ կրօնական ժողովը միաձայնութեամբ որոշեր էր և պաշտօնապէս կը յայտարարէր, թէ Երուսաղէմի քուէարկութիւնը օրինաւոր է, և պէտք է ցուցուած երեքներէն մին ընտրել: Կրօնականին այդ որոշումը ցրելու համար քաղաքականը և դուրսէնականք չվստահացան խնդիրը ոչ երեսփոխանական ընդհանուրին յանձնել և ոչ եկեղեցական համագումարին տանիլ, զի երկուքէն ալ իրենց նպաստաւոր որոշում չէին սպասեր, այլ խառն ժողովին հանեցին, և հոն պատգամաւորի մը Երուսաղէմ դրկուիլը որոշեցին, որ միաբանութեան սորվեցնէ քուէարկութեան ձևերը, հսկէ քուէարկութեան, նոր եռանուն ցանկ պատրաստել տայ, և երկու կամ երեք արժանաւոր միաբան վարդապետներ ալ որոշել տայ և Կ. Պոլիս բերէ, որ էջմիածին դրկուին և եպիսկոպոս ձեռնադրուին և պատրիարքու դառնան (ՍԱԻ.1369): Իսկ գաղտնի կերպով հրահանգ կը տրուէր քաղաքականին կողմէն, որ նախապէս կանոնագիրը ամէնուն ստորագրել տայ, և այս պայմանով միայն քուէարկութեան անցնի: Պատգամաւորի անուանումն ալ կատարուելով, հրաւիրակ անունի ներքև կորոշուէր Յովհաննէս քահանայ Հիւնքեարպէյէնտեան, կրօնական ժողովոյ անդամներէն:

2715. ՀՐԱԻԻՐԱԿԻ ԱՌԱՔՈՒՄԸ

Երուսաղէմի խնդիր յուզելով մէկտեղ խառն ժողովը ոչ կը խորհրդակցի և ոչ տեղեկութիւն կու տայ Իսահակ և Յակոբ վարդապետներուն, այլ երբ արդէն Հիւնքեարպէյէնտեան մեկնելու վրայ էր պատրիարքէն լուր կը տրուի Իսահակ վարդապետի, որ բազմօք կաշխատի վայն համոզել դուրսէն պատուիրակ չյղել, ընտրութիւն չձգձգել, աւելորդ խնդիրներ չյուզել, անտեղութեանց առիթ չտայ, և որպէսզի չկարծուի թէ իրեն համար կաշխատի, կարգը վկայ կոչելով կը յայտարարէ, թէ ես պատրիարք ըլլալու բնաւ աչք չունիմ (ՏԷՐ.163): Այս պարագան է որ Իսահակ վարդապետը անընտրելի նկատելու պատրուակ դարձաւ, իբր թէ ահաւոր երդումներ ըրած է հրապարակաւ յանուն ամենասուրբ երրորդութեան, պատրիարքութեան պաշտօնը չընդունելու, որով այլ ևս աւելորդ պիտի ըլլար զինքն ընտրել: Քաղաքականը չէր քաշուեր այսպիսի ստորին և նենգամիտ միջոցներու ալ դիմել, որպէսզի արգիլէր միաբանական և այթռական իրաւանց ամուր և ճարտար պաշտպան անձին ընտրութիւնը: Հիւնքեարպէյէնտեանի մեկնիլը արգիլել անհնար էր դարձած, ուստի Յակոբ վարդապետ, Հիւնքեարպէյէնտեանի մեկնած մայիս 10 օրուան յաջորդ մայիս 11 օրը ուրիշ շոգենաւով ետևէն կը մեկնի, և Զմիւռնիա անոր կը միանայ և միասին կը մտնեն Երուսաղէմ (ՍԱԻ.1372): Հիւնքեարպէյէնտեան երեք գրութիւններ ունէր իրեն հետ քաղաքականին կողմէն միաբանութեան ուղղուած, որոնց առաջինը հրաւիրակին առաքումը և անոր պաշտօնը կը ծանուցանէր, նախընթաց ընտրութեան մէջ միաբանութիւնը անկանոն կերպով գործած ենթադրելով, երբ իր ենթադրութիւնները կամայական էին և իրողութեան հակառակ: Երկրորդով

ընտրութիւն ընելու ձևեր կը ցուցուէին (ՏԷՐ.492-495), որոնք տարրական բաներ են և միաբանութեան ալ ծանօթ էին: Երրորդով կը պատասխանուէր միաբանութեան կողմէն կանոնագիրին մասին յայտնուած ութը դիտողութեանց (2713), այնպէս կարծել տալով թէ իրենք մտադիր չէին միաբանութեան կասկածած կերպով գործադրել իրենց միջամտութիւնը Երուսաղէմի մատակարարութեան և վարչութեան վրայ (ՏԷՐ. 495-501), սակայն իրենց ընթացքը ոչ մի երաշխաւորութիւն չէր ներշնչեր իրենց բարեմտութեան վրայ, որ միաբանութիւնը վստահութեան յորդորէր: Հիւնքեարպէյէնտեան գիրերը յանձնելով ամէն ճիգ և ամէն ճարտարութիւն թափեց որ միաբանները համոզէ Կ. Պոլսոյ կազմած կանոնագիրը անփոփոխ և անհակառակ ընդունելու, գրգռելով իսկ վիառասիրութիւն նոցին իւրաքանչիւր, իսկ համոզելով վնոսա պերճախոս բանիւք: Սակայն իրեն դէմ կը գտնէր ամբողջ միաբանութիւնը և չէր կրնար քակտել անոնց համամտութիւնը, որր անձնական տեսութիւններէն ալ հրաժարած, միակամ և միասիրտ ընդհանուր դատ մը կը պաշտպանէին: Միաբանութիւնը երբ մէկ կողմէն թէ կանոնագիրի և թէ նոր քուէարկութեան համար պատրաստութիւն կը յայտնէր, միւս կողմէն կը յայտարարէր թէ առանց պատրիարքի, առանց փոխանորդի և առանց լուսարարապետի չի կրնար ոչ կանոնագիրը անպայման ընդունիլ և ոչ ալ առանց նախապատրաստութեան ընել, և իր պատասխանները յունիս 21-ի և 22-ի գրութեամբ կը յանձներ Հիւնքեարպէյէնտեանի՝ պատրիարքին հասցէին, և 29-ին նախկին պատրիարք Յակոբոսի ալ կը հաղորդէր, որ միաբանական իրաւանց պաշտպան էր կանգնած (ԵՂՄ. 77-81): Հիւքեարպէյէնտեան տեսնելով որ կանոնագրի պայմանը չյաջողիր, կը յօժարի վանց ընել կրկին քուէարկութիւնն յընտրութիւն պատրիարքացուաց, և յունիսի վերջերը, այսինքն հապիւ ամիս մը Երուսաղէմ մնալով կիջնէ Յոպպէ, ուր իրեն կը միանայ Չիլինկիրեան Յակոբոս (2650), և միասին կը նաւեն Կ. Պոլիս, ուր կը հասնին յուլիս 3-ին (ԵՂՄ. 93): Իսկ մայրաքաղաքին մէջ բողոքողներն ու ընդդիմաբանութիւնը Հիւնքեարպէյէնտեանի մեկնելուն օրէն սկսած էին, մինչև իսկ վայն շոգենաւէն դուրս հանելու աշխատողներ եղած էին, բայց չէին յաջողած, և բոլոր ոյժերնին տուին յայտարարութիւններով հրապարակը ողողել. հրաւիրակին երթալուն վանապան նպատակներ վերագրել, վարչութեան ընթացքը քննադատել, անուղիղ գործողութիւններ և գաղտնի հրահանգները մեղադրել, այնպէս որ քաղաքական ժողովն ալ ինքզինքը նեղը ինկած տեսաւ, և ժողով գումարելէն և ժողովի առջև խնդիրը պարզելէ խուսափելով, ինքն ալ յայտարարութիւններով պատասխանելու ձևին հետևեցաւ: Առաջինը մայիս 12 թուական կը կրէ, պաշտօնական յայտարարութիւն ի դիմաց ալգային կեդրոնական վարչութեան վերտառութեամբ և առանց ստորագրութեան, և որուն պարունակութիւնն է, թէ միաբաններէն կեդրոնը երեք ընտրելի ուլեր է, անոնք ալ ապօրինաւոր ընտրութիւն ըրեր են, քաղաքական ժողովը ստիպուեր է մերժել, ուստի հրաւիրակ ղրկուեր է նոր և օրինաւոր ընտրութիւն ընել տալու: Նկատելի է որ կանոնագիրին շուրջը յուզուած խնդիրը բնաւ յիշուած չէ, իբր թէ անոր փետրուար 15-ի Ընդհանուր ժողովէն անցած ըլլալը, միաբանութիւնը դիտողութեան իրաւունքէ վրկած ըլլար: Իսկ երկրորդ յայտարարութիւնը մայիս 16 թուական և Ընդհանուր ժողովոյ ատենապետ Սերվիշէնի և ատենադպիր Աղաթոնի ստորագրութիւնները կը կրէ, և ուղղած է Ընդհանուր ժողովոյն ընտրեալ և յիրաւանց անդամներուն (61. ՄԱՍ. 484): Պարունակութիւնը նախընթացին նման է, որով Ընդհանուր ժողովոյ սահմանադրական դիւանը քաղաքական ժողովը կը պաշտպանէ, և միաբանութեան սահմանադրական գործողութեանց ընտելացած չըլլալը իբրև անոր արդարացում կը յիշէ: Առաջին ընտրութիւնը ապօրինի կը դատէ, նոր ընտրութեան պէտքը կը ցուցնէ, հրաւիրակը գործը դիւրացնելու համար ղրկուած կըսէ, ընտրելի պատրիարքին եպիսկոպոսներէ առնուիլը շեշտելով՝ կը պահանջէ որ միաբանութեան

ցուցած երեք ընտրելիներ նախ եպիսկոպոս ձեռնադրուին և յետոյ ընտրութիւն կատարուի: Կապահովէ ևս թէ երեք կեդրոնը միաբանութեան դէմ բան պիտի չընէ, միայն Երուսաղէմի վրայ ունեցած իշխանութիւնը պիտի գործածէ, զոր մերժել ապստամբութիւն է: Իսկ խնդիրին քննութեան մտնել կամ ժողով գումարել աւելորդ կը դատէ, որ է ըսել թէ Ընդհանուրին վրայ վստահութիւն չկար, և թէ նա քաղաքականին ընթացքին պիտի չհաւանէր և պիտի չհաստատէր: Այդ յայտարարութիւնները ակնկալեալ արդիւնքը չունեցան, մէջ յայտարարութեանց դէմ յայտարարութիւններ շատցան, երեսփոխաններուն մէջ հրաժարականներ սկսան, Երուսաղէմէ աղերսներ եկան լրագիրներուն դէմ բողոքներով (ՀՐՔ. Ա. 1-10), և այս պատճառներով գումարում մը տեղի ունեցաւ մայիս 26-ին, ուր նկատի առնուեցաւ միաբանութեան բողոքը, և լրագրաց յանձնաժողով մը կազմուեցաւ, և ուրիշ խնդիր չյղուեցաւ (ՏէՐ. 191):

2716. ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Այդ շփոթութեանց միջոցին Հիւնքեարպէյէնտեան ձեռնունայն կը դառնայ, և կը լսուի թէ կանոնագիրը դարձեալ անփոփոխ ընդունուած չէ, և ընտրելեաց նոր ցուցակ կազմուած չէ: Պարագայ մըն ալ աւելցած է միտքերը բորբոքելու: Յունիս 4-ին (ՀՐՔ. Գ. 66), Հիւքեարպէյէնտեանի Երուսաղէմ գտնուած ատեն, լատիններ Բեթղեհէմի Հայոց եկեղեցւոյն փսիաթը կը խախտեն, միւս օր փսիաթէն մաս մը ալ կը կտրեն իրենց անցքի գիծը ուղղելու նպատակով: Երուսաղէմէ միաբաններ կը փութան պաշտպանութեան և փսիաթը կը նորոգեն, 6 ին լատիններ սովորականէն դուրս թափօրի ձև տալով, բիրերով և բազմութեամբ անպէն Հայոց վրայ կը խուժեն, և ընդհանուր կռիւ կը խառնուի երբ Հայեր իրենց խսիրին դիրքը կը շտկէին, և Հայոց կողմը վտանգաւոր հարուածներ կընդունի: Ներսէս և Եսայի և Փիլիպպոս վարդապետներ գլուխէն կը վիրավորուին, սարկաւագներ և դպիրներ և միաբաններ անոնց բախտակից կըլլան, արաբացի բարապան Խայրէտտին ալ մահուան քրտինք կը թափէ, աշտանակներ, կանթեղներ, սպասներ և վարդեր կը կոտորուին և կը փշրուին (ՀՐՔ. Գ. 13): Հայերէն մի քանին միայն լատիններու ձեռքէն բիրերը խլելով անոնց վրայ կը դարձնեն (ՏէՐ. 194), սակայն յաջողութիւն չեն ունենար 40-50 հուժկու փրանկիսկեաններու և անոնց օգնականներուն դէմ, որոնք յաղթանակաւ կը մեկնին, և միայն ամէն բան վերջանալէն ետքը կառավարութեան պաշտօնեաներ կը հասնին: Եղելութիւնը մանրամասնօրէն նկարագրուելով և տպուելով Կ. Պոլիս յղուեցաւ (ՀՐՔ. Գ. 3-16), իբր չարայարութիւն առաջին ուղղուած բողոքին (ՀՐՔ. Ա. 1-10), և լրագրական ամբաստանութեանց դէմ տրուած բացատրութեանց (ՀՐՔ. Բ. 11-39): Այդ դէպքերն ալ հետևանք էին անգլուխ միաբանութեան դէմ օտարապահներուն պագացած քաջալերութեան , և ևս քանկաւ գրգռեցին պատրիարքական ընտրութեան խնդիրը և դէմ ընդդէմ պայքարները: Հիւնքեարպէյէնտեան Կ. Պոլիս հասած էր յուլիս 3-ին, և 7-ին խառն ժողով կը գումարուի, ուր հրաւիրակը Երուսաղէմի անցքերը և Բեթղեհէմի դէպքը կը պատմէ, և պատրիարքութեան համար արժանաւորագոյն ընտրելի Իսահակ վարդապետը մատնանիշ կընէ (ՏէՐ.204), ինչ որ ճարտար դարձուած մըն էր արժանաւոր միաբան մը չգտնուելը հետևեցնելու, քանի որ Իսահակը դուրս ձգելու համար երդումի պատճառանքը կազմուած էր (2715): Յակոբ վարդապետի ալ յանցանք համարուեցաւ առանց պատրիարքի հրամանին Կ. Պոլիսէ Երուսաղէմ երթալը և ընտրելիութենէ վրկուելու պատճառանք կազմուեցաւ, մինչ նա Կ. Պոլսոյ պատրիարքութեան հետ կապ մը չունէր, Երուսաղէմի յանձնարարութեամբ եկած՝ Երուսաղէմ կը դառնար: Խառն ժողովը այդ կէտերը շոշափեց, բայց որոշման չյանգեցաւ, յուլիս 11-ին եկեղեցական համագումար հաւաքուեցաւ, ուր Սարգիս պատրիարք միաբանութիւնը վրկուած ցուցուց ընտրելի ներկայելու իրաւունքէն՝ կանոնագիրը առանց դիտողութեան չընդունելուն համար, և նախապէս յղուած ցանկն ալ ոչնչացած ցուցուց

Իսահակի և Յակոբի դուրս թողուելով, ուստի կամ անջատեալ ներէն կամ դուրսի եպիսկոպոսներէն պատրիարք ընտրելու առաջարկները բերաւ, բայց երկուքն ալ ստուար մեծամասնութեամբ մերժուեցան, այլ որոշումը տեղեկագրել և ստորագրել արգիլուեցաւ, որպէսպիսի փաստ չդառնայ (ՏԷՐ.209): Այն օր ալ քաղաքականի նպատակը չիրականացաւ:

2717 ԱՊԱՐԴԻԻՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Այսուհանդերձ Ընդհանուր ժողով գումարուեցաւ անմիջապէս յաջորդ օրը յուլիս 12-ին, Թարգմանչաց տօնին նախընթաց չորեքշաբթի օրը, և ատենապետ Սերվիչէն միևնոյն կերպով միաբանութիւնը իրաւունքէ վրկուած, և առաջին ցուցակը ջնջուած ցուցնելէ ետքը, խառն ժողովը հրաւիրեց որ նոյն պահուն գումարուի և երեք ընտրելիներու անունները քուէարկէ: Յակոբոս նախկին պատրիարքին դիտողութիւնները չլեռուեցան, դուրսէն ընտրելի չընդունելու բողոքներուն ալ մտադրութիւն չդարձուեցաւ, խառն ժողովը իր նիստը կազմեց, և հապճեպ կերպով երեք ընտրելիներ նշանակեց, որ կրնայ նոյնիսկ քուէարկութեամբ որոշուած ըլլալը կասկածի ենթարկել: Ընտրելիներն եղան, երեք նշանաւոր եպիսկոպոսներ, Գէորգ Բէրէստէճեան նախորդ պատրիարք, Պօղոս Թաթաթեան Չմիւռնիոյ առաջնորդ և Արիստակէս Ռափայէլեան Ադրիանուպոլսոյ առաջնորդ: Ասոնցմէ Թաթաթեան արդէն Երուսաղէմ երթալէ հրաժարած մըն էր (2710), և Ռափայէլեանի ալ տեղէն շարժուիլը անհաւանական էր. ուստի Բէրէստէճեանը մատնանիշ ընելու միտքը շատ յայտնի էր, որ հոգւով կը բաղձար այդ պաշտօնին, և Կ. Պոլսոյ ակնկալած նպատակն ալ Երուսաղէմի սնտուկէն հոգալ կը խոստանար (2711): Խառն ժողովը վբաղած ատեն, Ընդհանուրի անդամներուն և ունկնդիրներուն մէջ ձայներ կը բարձրանային, թէ դուրսէն չենք ընդունիր, նպովքի ներքև իյնալ չենք ուզեր: Ասով հանդերձ երեք անունները կը ներկայացուին ժողովին վերաբացուելուն, աղաղակներ կը բարձրանան, Յակոբոս նախկին պատրիարք նորէն ընդարձակօրէն նպովքը կը պարզաբանէ և կը պաշտպանէ. խառն ժողովէ ներկայ կրօնականներուն դիմում կըլլայ թէ ինչո՞ւ չեն ազդարարած, անոնք ալ համագումարին ատենագրութեան հաղորդուիլը կը պահանջեն, երեսփոխաններ և ունկնդիրներ ժխորը կը սաստկացնեն, Յակոբոսի ետևէն խումբ մը երեսփոխաններ ժողովէն կելլեն, և Սերվիչէն ատենապետ ժողովը կը փակէ մեծամասնութիւնը կորսուած ըլլալուն պատճառով: Ասով մէկտեղ քուէարկութեան մասնաժողով մը կը նորէ, և տոմսակներով Ընդհանուրի անդամներէն կը խնդրէ որ մինչև առաջիկայ երեքշաբթի յուլիս 19, գրաւոր կերպով քուէ յղեն դուրսէն ընտրելի ընդունելուն և երեքէն ո՞րը ընտրելուն մասին (ՏԷՐ.232): Սակայն եկեղեցականութիւնը զինուեցաւ ընդհանուր շարժումով, եպիսկոպոսներ և վարդապետներ և քահանաներ հարիւր յիսուն չափ բողոքագիր մը ուղղեցին պատրիարքին, թէ ոչ միայն դուրսէն ընտրելի առնել նպովքի ներքև է, այլ և այսպիսի կէտ մը քուէի անցընելը: Սահմանադրութեան հիմնական և անփոփոխելի սկզբունքներէն հինգերորդին հակառակ է (ՊԷՐ.391): Եկեղեցականաց ետևէն ստուար թուով ժողովականներ և նշանաւոր անձեր համամիտ ըլլալնին ստորագրեցին, և բողոքագիրը յուլիս 17-ին Սարգիս պատրիարքին հասուցին, որպէսպիսի յաջորդ օրուան քուէհամարը խափանէ: Սարգիս նոյն երեկոյ Վոսփորի Եէնիքէօյէն, ուր կը գտնուէր, պատրիարքարան կիջնայ, և միւս առտուն թէպէտ քուէից քննիչներ եկած էին և 134 քուէթուղթեր հաւաքուած էին առանց անունի և առանց ստորագրութեան, բայց քուէհամարը կարգիլէ բողոքագիրին պատճառով, և առաջիկայ ուրբաթ օրուան, յուլիս 21-ին Ընդհանուր ժողով կը հրաւիրէ (ՏԷՐ.239): Ժողովը գումարուեցաւ, բայց վէճն ու ժխորը նախորդ ատենագրութեան կարդացուելէն սկսաւ, և ճիշդ է, ճիշդ չէ աղաղակները ականջները կը խլցնէին: Ժողովէն դուրս ալ ձայներ կը լսուէին երկու կարծիքներուն կողմնակիցներէն, այնպէս որ ատենապետը Ընդհանուրի յաջող մթնոլորտ մը չտեսնելով, ժողովը

շարունակել անհնար կը յայտնէ և առանց պաշտոնական յայտարարութեան ժողովէն կելլէ, ամբողջ դիւանն ալ կը հետևի և ժողովն ինքնիրեն կը լուծուի (ՏԷՐ. 247): Նոյն օրը պատրիարքը քաղաքական ժողովոյ ինն անդամներուն կողմէ գիր մը կը նդունի, որոնք անցուդարձը յիշելով և համագումար հրաւիրած ըլլալը պատճառ բռնելով և քաղաքականի իրաւունքը անարգուած ըմբռնելով, կը յայտնեն թէ պաշտօնինն ի կախ թողլով կը պարտաւորուին պաշտօնական յարաբերութիւննին կտրել պատրիարքին հետ, մինչև որ նա Սահմանադրութեան նկատմամբ ունեցած կարծիքը երևան հանէ (ՏԷՐ. 252):

2718. ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Նոր կնճիռը Սարգիս պատրիարքը կը շփոթէ, որ նոյն գիշեր Վինքն հիւանդ ալ կը վգայ: Իսկ քաղաքականի անդամներ Գէորգ Բէրէստէճեանը կը քաջալերեն իրենց հետ մնալ, և Վինք Երուսաղէմի աթոռը բարձրացնելու կը վստահեցնեն (ՏԷՐ. 255-256): Յուլիս 22-ին առտուն համագումարը կը սկսի հաւաքուիլ, երբ Բէրէստէճեան աւելորդ կը դատէ վայն, և կառաջարկէ եպիսկոպոսներով խնդիրը լուծել: Սերվիշէն վրայ կը հասնի, իբր պատրիարքը և քաղաքականը հաշտեցնելու միջնորդ, և իբր համաձայնութեան պայման կառաջարկէ նորէն եկեղեցական մը վրկել Երուսաղէմ, կանոնագիրը անփոփոխ ընդունել տալ, նոր եռանուն ցանկ քուէարկել տալ, և Իսահակ ու Յակոբ վարդապետներ ընտրելիութենէ դուրս թողուլ: Համագումարի ելքը իմանալու համար բազմութիւն մըն ալ հաւաքուած կըլլայ պատրիարքարան, ընտրելիները հարկաւ միաբաններէ առնուիլը պաշտպանելու, ներկաներ մասնաւոր խոսակցութեան կը մտնեն հոն գտնուող եկեղեցականներու հետ, և գոհ կը մեկնին երբ իրենց կը ներկայացուի պատրիարքը հարկաւ միաբաններէ ընտրելու յայտարարութիւն մը, Սարգիս պատրիարքէ, Յակոբոս և Գէորգ նախորդ պատրիարքներէ, և Ռոտոսթոցի Թադէոս և Եդեսացի Յակոբ եպիսկոպոսներէ ստորագրուած (ՏԷՐ. 264): Բայց գոհ չի մնար քաղաքականը իր կուսակցութեան հետ, որ դուրսէն պատրիարք ընտրելու հետամուտ էր, և կը վշտանայ իրեն պաշտպան կարծած Բէրէստէճեանն ալ իրեն հակառակ ստորագրութիւն տուած տեսնելով: Ուստի այլևս պատրիարքի չդիմէր, այլ Ընդհանուր ժողովոյ ատենապետ Սերվիշէնի և Աղաթոն ու Իւթիւճեան ատենադպիրներու ստորագրութեամբ յուլիս 24-ին կը պահանջէ որ հինգ եպիսկոպոսներու ստորագրութիւնը իբր որոշում չնկատուի, այլ վերջին անգամ հաշտութեան համար Սերվիշէնէ առաջարկուած պայմանները Ընդհանուր ժողովով հաստատուին, և առ այս երեք օր պայմանաժամ կու տայ, անկէ ետքը իր գործը շարունակելու համար պէտք եղած միջոցները ձեռք առնելու սպառնալիքով (ՏԷՐ. 267): Պատրիարքը Ընդհանուրը գումարելը վտանգաւոր կը տեսնէ և լոկ քաղաքականը կը հրաւիրէ յուլիս 27 հինգշաբթի օրուան, երեսփոխաններէն մաս մըն ալ միասին խորհրդակցելու համար: Քաղաքականէն կու գան միայն ինը բողոքողներէն դուրս մնացողները, և երեսփոխաններուն հետխորհրդակցութիւններ կը կատարեն քաղաքականի կազմած կանոնագրի մասին, ուսկից երևան կու գայ որ գոնէ վերջին 41 և 42 յօդուածները հակառակ են նպովքներու պահանջին, և երբ ընդհանուր որոշումը իբր փաստ կուզուի գործածել, երեսփոխաններ կը պատասխանեն թէ յանգէտս տրուած որոշումներ չեն կրնար ոյժ ունենալ, և այս հիմամբ խնդիրը նորէն Ընդհանուրին հանել կառաջարկեն, բայց անդին ինը բողոքողներ քանի մը ընկեր ևս աւելցնելով նոր յայտարարութիւն մը կը յղեն պատրիարքին, որ եթէ կը հաւանի նոր տնօրէնութիւն չընել, այլ որոշուածին վրայ քալել, կրնան նորէն միասին գործել: Սակայն իրենց գրութեան մէջ ազգային պատրիարքարանը անկարգութեանց ասպարէզ է բացատրութիւնը միտքերը կը շփոթէ և սրտեր կը վշտանան, և գրութիւնը ընթացք չունենար: Ասոր վրայ պատրիարքը օգոստոսի 2-ին Վարդավառի չորեքշաբթին դարձեալ եկեղեցական համագումար կը հրաւիրէ, որ մեծ թիւով կը գումարուի և

միաձայնութեամբ կորոշուի: 1. թէ Երուսաղէմի պատրիարք ներսէն պիտի ըլլայ. 2. թէ քաղաքականի կանոնագիրին 41 և 42 յօդուածները նպովքի ներքև կիյնան, 3. թէ կրօնական խնդիրներ կանոնաց հեղինակութեամբ և ոչ թէ քուէով կորոշուին. 4. թէ վարդապետներն ալ կրնան պատրիարք ընտրուիլ. 5. թէ Իսահակ և Յակոբ վարդապետները ընտրելիութենէն պակեղու պատճառ չկայ, և 6. թէ համագումարը ձեռնահասութիւն ունի այդ որոշումները տալու (ՏէՐ. 280-286): Երբ այդ որոշումները կը լսուին դուրսէնականներ կը յուզուին. և միւս օր օգոստոս 3-ին պատրիարքին տասն անձերէ պատգամաւորութիւն մը կը պակեղու բացատրութիւն պահանջելու, բայց պատրիարքը պիտեմք կը հանդարտէ, թէ իրենք միայն կրօնական կէտերով պարզեցան, իսկ ընտրութիւնն Ընդհանուրը պիտի ընէ (ՏէՐ. 291-293):

2719. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԴԱԴԱՐԵԱԼ

Թէպէտ պատգամաւորները համոզուելով կը մեկնին, այլ կուսակցութիւնը չբաւականարար, և Համագումարին հեղինակութիւնը հարկ կը տեսնէ ջնջել, ուստի իբր թէ ազգային սահմանադրութիւնը և ազգային վարչութեան պատիւը վտանգի մէջ ըլլար, օգոստոս 4-ին յանուն քաղաքական ժողովոյ Ընդհանուր ժողով կը հրաւիրեն օգոստոս 5-ին գումարուելիք Բերայի Նարեկեան վարժարանը և պատրիարքին ալ կապդարարեն: Հրաւիրագիրը Սերվիշէնի ստորագրութիւնն ունէր առանց իր գիտակցութեան գրուած, որուն բողոքին վրայ գործէ քաջուած քաղաքականի ատենապետ Մարկոսեանի անունը կը գրուի: Ժողովը կը գումարուի շատերու բացակայութեամբ և քանի մը եկեղեցականներու ներկայութեամբ և Գէորգ եպիսկոպոսի նախագահութեամբ: Պատրիարքը կամբաստանուի Համագումար հաւաքած և որոշումներ տալ տուած ըլլալուն համար, կառաջարկուի հրաժարականը պահանջել, յետոյ կառաջարկուի համագումարի որոշումները քննելու յանձնաժողով կազմել, բայց և ոչ մին կը քալէ, համախոհութեան դէմ բողոքի յայտարարութիւններ կը ցրուին, ժողովի եկողներն ալ հետպահեմ կը մեկնին, և ժողովը կը փակուի ապարդիւն կերպով (ՏէՐ. 295-312): Միւս օր օգոստոս 6 ին Գէորգ եպիսկոպոս Ալի փաշայի կերթայ քաղաքականի անդամներէն քանի մը ընկերներով, և ծանր կերպով Սարգիս պատրիարքը կամբաստանէ: Իսկ օգոստոս 7-ին Սարգիս պատրիարք կերթայ եպարքոսին քանի մը եկեղեցականներով, և համագումարի որոշումներուն և ազգային հանրագրութեան թարգմանութիւնները կը ներկայէ և բացատրութիւններ կու տայ ինչ ինչ հարցումներուն, պորս եպարքոս կուղղէր պատրիարքին, Գէորգի ամբաստանութիւններէն ներշնչուած (ՏէՐ. 315-317): Սարգիս հրաման ալ խնդրեց Երուսաղէմի պատրիարքի ընտրութեան համար Ընդհանուր ժողով գումարել, զի Ալի փաշա յայտարարած էր, թէ կառավարութիւնը տակաւին իրենց կանոնադրութիւնը կամ սահմանադրութիւնը հաստատած չէ, և անիկա չի կրնար իբր գործոց կանոն ծառայել: Երուսաղէմի պատրիարքին ընտրութեան համար ժողով գումարելու արտօնագիրը օգոստոս 14-ին տրուեցաւ (ՏէՐ. 321) բայց դուրսէնական կուսակցութեան գլուխներ Համագումարի որոշումները ջրելու կերպ մը մտածեցին, որ էր ստորագրող քահանաները իբրև սահմանադրութեան դէմ ուխտադրութիւն, ծխատիրութենէ մերժել, և այս իմաստով շրջաբերականներ ցրուեցին յուսալով որ քահանաներ կը ստիպուին ստորագրութիւննին յետո կոչել, բայց միայն դէմադէմ յայտարարութիւններ շատցան (ՏէՐ. 327-336): Պատրիարքը օգոստոս 19-ին հրաւիրագիր էր գրած օգոստոս 21-ին Վերափոխման իններորդ երկուշաբթի օր ժողով գումարելու երեսփոխաններէ պատ նշանաւոր անձեր ալ հրաւիրած էր եպարքոսին հրահանգին հետեւելով որ Հայոց ազգի վաղեմի սովորութեանց համեմատ (61. ՄԱՍ. 498). այսինքն սահմանադրութենէն անկախաբար ընտրութիւն կատարել կը հրամայէր, և միանգամայն պզուշութեան համար ուստիկաններ ալ բերել տուած էր: Բայց դուրսէնական կուսակցութեան

պետեր, խումբ մը երիտասարդներու գլուխ անցած, պատրիարքական կը խուժեն, և իրենց միտքով յայտարարութիւն մը գերի առած (ՏԷՐ. 342), պատրիարքը կը բռնապատեն ստորագրել, Գէորգ և Յակոբոս եպիսկոպոսներն ալ իրենց հետ: Պատրիարքը ճարահատած բռնութեան ներքև կը ստորագրէ յայտարարութիւն մը, որ կը պարունակէ կանոնագիրն ամբողջաբար պահուիլը, Իսահակի և Յակոբի ընտրելիութենէ վրկուիլը, և եռանուն միաբան ընտրելեաց ցանկին խառն ժողովէ կազմուիլը (61. ՄԱՍ. 498), բայց ամբողջը իբր յաղթական դուրս ելլելու ատենը ոստիկանութեան նախարար Մուհամմէտ փաշան իր դիմացը կը գտնէ (ՏԷՐ. 344), անոր հետ նաև սպարապետութեան դուռէն եկած Խուսրէվ և Սէլիմ փաշաներ (ՏԷՐ. 341), որոնք խռովութեան ձայնէն տեղույն վրայ հասած էին, և պատրիարքարանի փողոցը պաշարած: Քանիներ կը ձերբակալուին իբրև գրգռիչներ, բայց պատրիարքի միջնորդութեամբ կը թողուին, գրգռիչ լրագիրները նոյն օր կը խափանուին. ընտրութիւնը անհնար դարձած ըլլալով վանց կըլլայ, և պատրիարքարանը մինչև 24 ժամ վիճուորական պահպանութեան ներքև կը մնայ. իսկ շաբաթ օր օգոստոս 26-ին բարձրագոյն դուռնէն պաշտօնապէս կը հաղորդուի, թէ կառավարութենէ չհաստատուած կանոնադրութիւնը օրէնքի ոյժ չի կրնար ունենալ, և ըստ այսմ Երուսաղէմի խնդիրին հետ սահմանադրութիւնն ալ կը թաղուի՝ կառավարութեան վայն չձանչնալուն վրայ, 1860 մայիս 24-էն մինչև 1861 օգոստոս 15, միայն 15 ամիս ներքին կեանք մը և այն ալ փոթորկալից ու անպտուղ կեանք կը անցունելէն ետքը. ըսել է թէ նոյն իսկ սահմանադրականներն եղան, որ իրենց անխորհուրդ և անհեռատես ընթացքով իրենց գործը քանդեցին:

2720. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

Սահմանադրական անուն առնողներ, կամ լաւ ևս դուրսէնական կուսակցութեան պետեր, իրենց նպատակին չհասնելէն վայրացած, այս անգամ ձեռք կը վարենն Սարգիս պատրիարքին դէմ ելլալ, նկատելով որ նա թէպէտ սկիզբէն պահ մը իրենց համախոհ երևցաւ, բայց գործի ներքինը թափանցելէն և նվովքի խնդիրին հրապարակ ելնելէն ետքը վիրենք թողուց և համարձակ ներսէն դրութեան յարեցաւ: Ուստի հանրագրութիւնը մը սկսան պատրաստել կառավարութեան ուղղուած թէ պատրիարք չեն, ուզեն, թէ սահմանադրութիւն կուզեն, և օգոստոս 21-ի ցուցարարներուն արդարացումը կը պահանջեն (ՏԷՐ.348): Բայց միևնոյն ժամանակ հակառակ հանրագրութիւն մըն ալ սկսաւ կազմուիլ գլխաւորապէս Բերացիներու կողմէն, թէ պատրիարքը պէտք է մնայ և թէ սահմանադրութիւնը կառավարական հաստատութենէ ետքը պէտք է գործադրուի: Այս երկրորդը աւելի ստորագրողներ գտնալուն առաջինին ոյժը կոտրեցաւ, և նենգութեամբ երկրորդը պատուել վերցնել ուզողներուն խաղն ալ մէջտեղ ելաւ: Առաջիններուն դիտաւորութիւնն էր Եդասացի Յակոբ եպիսկոպոսը կ. Պոլսոյ պատրիարք ընել, թէպէտ Սոսյ աթոռէն էր, անոր ձեռքով օգոստոս 2-ի Համագումարին վճիռը ջնջել, և Գէորգ եպիսկոպոսը Երուսաղէմի պատրիարք ընել բայց երկու հանրագրութիւններ միանգամայն տրուեցան կառավարութեան և բարձրագոյն դուռը պատրիարք փոխելու չհաւանեցաւ (ՏԷՐ.354), և սեպտեմբեր 14-ին հինգշաբթի օր փորձեց երկու կողմերը համաձայնեցնել, 18-ին պատրիարքը և վարչութեան անդամները հրաւիրուեցան, և 21-ին հրաւերը կրկնուեցաւ հին ձևով ընդհանուր ժողով գումարելու. ցուցակները մէջտեղ ելան Յակոբոսի թելդրութեամբ, թէպէտ Գէորգ անոնց գոյութիւնը կը ժխտէր, և վերջապէս որոշուեցաւ, 1. Երուսաղէմի պատրիարքը ընտրել երեսփոխաններու և մեծամեծներու քուէով, 2. Հրաւիրուելիքները վարչական ժողովով որոշել, 3. Սահմանադրութիւնը վերաքննելով հաստատութեան ներկայել և հաստատուելէն ետքը միայն գործադրել, և 4. Առաջիկայ երեքշաբթի սեպտեմբեր 6-ին վարչութիւնը գումարել (ՏԷՐ. 357): Ոմանք կուզէին որ նախապէս պատրիարքը հրաժարի, կամ թէ վերոյիշեալ ժողովներուն չնախագահէ և դուրսէ ընտրելի ընդունի, բայց այդ

կէտէրը մերժուեցան, և որչափ ալ պատրիարքի դէմ անտեղի և անհիմն գանգատներ շատցուցին, կառավարութիւնը իր միտքէն չփոխուեցաւ և պատրիարքը աթոռին վրայ պահեց (ՏէՐ. 361): Բայց այս կերպով կացութիւնը չփոխուեցաւ և շփոթները չդադրեցան, մանաւանդ թէ նոր պարագայ մը պայն աւելի ևս արծարծեց: Որովհետև անհամաձայնութեան հիմնակէտը Ուլնեցի Կարապետ կաթողիկոսի նպովքներուն շուրջը կը դառնար և պայն կասկածի ենթարկողներ կային, Իսահակ վարդապետ մտածեց անոնց վերահաստատութիւնը ստանալ Մայրաթոռէն և այս պատճառով ճամբայ հանեց Նապարեան Ռափայել փոքրաւորը (61. ՄԱՍ. 497), ապագայ Մատթէոս վարդապետն ու եպիսկոպոսը, անոր յանձնելով նաև յուլիս 26ին թուականով խնդրագիր մը՝ երկու եպիսկոպոսէ, երկու վարդապետէ, երկու քահանայէ և 12 աշխարհականներէ ստորագրուած յանուն հանրութեան (ՏէՐ. 363-366): Մատթէոս կաթողիկոս ըստ ամենայնի համամիտ Կարապետի կանոններուն, սեպտեմբեր 1 թուականով ընդարձակ կոնդակ մը հրատարակեց (ՄՈՎ. 166-367), որուն մէջ նախ սիրոյ և խաղաղութեան յորդորներ կը կարդայ, յետոյ Կարապետի կանոններուն պատմականը կը քաղէ, և կանոններն ալ բառացի յառաջ կը բերէ և կը յարէ. Ուստի և նպովեմք պայնոսիկ կանոնս հաստատեալս վասն պայծառ պահպանութեան սրբոց տնօրինական տեղեացն, և Սրբոց Յակոբեանց վանաց, քակտել և լուծանել, և յարտաքին եպիսկոպոսաց զոք նստուցանել այսուհետև յաթոռ պատրիարքութեան սրբոյն Երուսաղէմի, և կը կնքէ ըսելով թէ պայս մեր կոնդակ պատուիրեմք ընթեռնուլ յամենայն եկեղեցիս Կոստանդնուպոլսոյ, և տարածել յամենայն վիճակս Անատոլեայ և Ռումելիի: Կոնդակին Կ. Պոլիս հասնիլը սեպտեմբեր 26ին լսուեցաւ, և ծանօթ կուսակցութենէն բողոքի ձայներ ալ ելան միանգամայն, թէ պատրիարքը Ռուսաստանի թելադրութեամբ կը գործէ (ՏէՐ.373), և մինչև իսկ ռուսական շքանշան առնելը ամբաստանութեան նիւթ ըրին (ՏէՐ.359), և ամէն կողմ սկսան միտքերը պղտորել: Որովհետև կոնդակին պատճէնը տպագրութեամբ տարածուած էր, բնագիրին համաձայն չէ և խարդախեալ է ալ սկսան ըսել, և մինչև իսկ Սոս կաթողիկոսին իշխանութեան ներքև անցնելու խօսքեր տարածեցին (ՏէՐ.377): Կոնդակին օրինակները բոլոր եկեղեցիներ յղուած էին որ հոկտեմբեր 1-ին Վարագայ խաչին կիրակին կարդացուին, բայց առաջին բողոքողը Մայր եկեղեցւոյ թաղակալութիւնն եղաւ բնագիրը պահանջելով, ինչ որ հնար չէր յանձնել, զի ձեռք ձգելու և ջնջելու միտքը յայտնուած էր կուսակցութեան կողմէն (ՏէՐ.383): Մինչոյն բանը կը նորոգուի միւս կիրակի Եէնիքաբուի եկեղեցւոյն մէջ, և եկեղեցւոյ մէջ ժխոր ալ տեղի կունենայ:

2721. ՍԱՐԳԻՍԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Ասոր վրայ կուսակցական խումբ մը նորէն բողոքագիր կու տայ բարձրագոյն դրան պատրիարքին դէմ, և երբ կը մերժուի, հոկտեմբեր 15-ին կը փորձէ պատրիարքին անունին յիշատակութիւնը արգիլել բարձրէ Տէր աղաղակներով Եէնիքաբուի եկեղեցին, ուր ուրիշ թաղերէ ալ բազմութիւն հաւաքուած էր, ծեծկըռտուք ալ կը սկսի իրարու ներհակ մտածողներու մէջ, պատարագի վարագոյրը կը փակուի, կոիւր փողոց կը տարածուի, ոստիկանութիւն կը հասնի և գլխաւորները կը ձերբակալէ: Սպարապետութեան դուռնէն ալ զօրապետ և զօրք կու գայ, ոստիկանութեան նախարարն ալ անձամբ կը ներկայանայ և ժխորը կը ցրուի (ՏէՐ.395): Սակայն կուսակցական խումբեր դարձեալ պատրիարքի դէմ կառավարութեան կը դիմեն և կոնդակի խնդիրը պատրիարքի խնդիրի կը փոխուի, որով հարկ կըլլայ ազդեցիկ միջոցներու դիմել: Կառավարութեան կողմէն հոկտեմբեր 17-ին մեծամեծներէ ոմանք խորհրդակցութեան կոչուեցան, 18ին Նիկոմիդիոյ առաջնորդ Ստեփան եպիսկոպոս Մաղաթեան կառավարութեան հրամանով Կ. Պոլիս հասաւ, Գէորգ եպիսկոպոս Բէրէստէձեան նոյնօրինակ հրամանով Պրուսա դառնայ պարտաւորուեցաւ, և Սապրի էֆէնտիի նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուեցաւ կացութիւնը պարզելու, որուն անդամ

նշանակուեցան եկեղեցականներէն, Ստեփան եպիսկոպոս Մաղաթեան, Յովհաննէս վարդապետ Կապուտիկեան, և Յովհաննէս Փափապեան և Յովհաննէս Հինքեարպէյնտեան, քահանաներ. իսկ աշխարհականներէն Յովհաննէս Տատեան, Գէորգ Երեմեան, Սերովբէ Վիչէնեան, Գրիգոր Աղաթոնեան, Յակոբ Նորատունկեան, Յակոբ Մուպահեաճեան, Յովհաննէս Եղիապարեան, և Գասպար Կիւմիւշճեան (61.ՄԱՍ.506): Սարգիս պատրիարքի այլևս տոկալով հարկ չէր մնար, ուստի հրաժարականը ներկայեց հոկտեմբեր 19-ին ուրբաթ օր, կամ ըստ այլոց 21-ին (ՏԷՐ.406), և այս առթիւ առժամեայ վարչութիւն մը կազմուեցաւ պատրիարքարանը վարելու Մաղաթեանի նախագահութեամբ և միւս երեք եկեղեցականներու անդամակցութեամբ, և եօթը նոր ընտրուած աշխարհականներով, որոնք էին, Միրիճան Փափապեան, Գէորգ Փափապեան, Յարութիւն Գարամաճեան, Սահակ Փէշտիմալճեան, Ասապ Համբարձումեան, Գրիգոր Թիւյսիւկեան և Մկրտիչ Ֆրէնկեան: Պատրիարքի հրաժարականը ընդունուելով Մաղաթեան տեղապահ անուանուեցաւ և պատրիարքարանի վարչութիւնը ստանձնեց յանձնարարական ժողովին և պատրիարքարանի ժողովին հետ: Սարգիսի հակառակորդներ անոր հրաժարականով ալ չգոհանալով սկսան հռչակել թէ Մայր աթոռէ կոնդակ եկած չէ, և թէ Սարգիս վայն յերկրած է Յովհաննէս Տէրոյենց օժանդակութեամբ: Հարկ եղաւ որ յանձնարարական ժողովն ինքն ալ քննութիւն բանայ բարձրագոյն դրան ալ հաստատել տայ, թէ բնագիրը Մայր աթոռէ եկած է, և թէ տպագիրին յար և նման է, որպէսզի միանգամ ընդ միշտ կոնդակի և պատրիարքի խնդիրները փակուին պաշտօնական յայտարարութեամբ, որ հոկտեմբեր 25-ին հրատարակուեցաւ: Սարգիս Գուլումճեան 1860 մայիս 2-էն (2707) մինչև 1861 հոկտեմբեր 21 տարիուկէսէն քանի օր պակաս պատրիարքական աթոռին վրայ մնաց, և ամենայն փառօք իբրև սահմանադրական անձ աթոռ բարձրանալով, իբր հակասահմանադրական մը հրաժարիլ պարտաւորուեցաւ: Այդ բախտը հասարակ է ամէն անոնց որ առողջ և խոհական սկզբունքներուն հետևելով խնդիր մը կը ընդգրկեն, բայց ծայրայեղութիւններէ խորշելով անկշռադատ գործիչներէ կը հալածուին: Սահմանադրական սկզբունքը որ կանոնաւոր վարչութեան հիմնակէտը պիտի ըլլայ, պէտք չէ որ շփոթուի յախուռն և աղիկամի ձեռնարկներու հետ, որոնք ուղղամիտ կանոններէ աւելի շահագէտ նպատակներէ կառաջնորդուին: Երուսաղէմի ներսէն-դուրսէն խնդիրն ալ, ոչ Երուսաղէմի աթոռը բարձրացնելէ, և ոչ սուրբ տեղեաց պաշտպանութիւնը ապահովելէ առաւ իր ծագումը, այլ Երուսաղէմի հասոյթով Կ. Պոլսոյ աթոռը ձոխացնելու նպատակէն սկսաւ, ինչպէս յայտնապէս երևցաւ Սերվիչէնի պատգամաւորութենէն (2700) և սահմանադրական ժողովներու պահանջէն (2710): Կ. Պոլսոյ վարչութիւնը տեսնալով որ Ս. Յակոբեանց միաբաններ շատ պինտ կը պաշտպանեն իրենց աթոռն ու սնտուկը, մտածեց անոնք միաբանութենէ օտար մէկու մը յանձնել, որպէսզի տեղական տեսութիւններով չշարժի և Կ. Պոլսոյ վարչութեան կամքը կատարէ: Յաւալի է միայն տեսնել որ Գէորգ եպիսկոպոս Բէրէստէճեան, որ նախորդ պատրիարք էր և ապագայ կաթողիկոսի պիտի ըլլար, պատրիարքական աթոռի մը մարմաջէն բռնուած, յանձնառու եղած էր այդպիսի անտեղի ձգտումներու գործիք դառնալ: Սարգիսի գալով նա թէպէտ պահ մը Կ. Պոլսոյ քաղաքականին տեսութեանց համամիտ երևցաւ, բայց շուտով ետ կեցաւ, երբ գործին իսկութիւնը թափանցեց և չափապանցութեանց ձգտումները նշմարեց, և մանաւանդ երբ կարապետեան կանոններուն խնդիրը երևան եկաւ: Իրեն համար գովեստի փաստ կը նկատենք որ հակառակ ընդդիմութեանց և բռնադատութեանց և նոյնիսկ անարգանաց և նախատանաց գործէ ետ չքաշուեցաւ, մինչև որ իր ընդգրկած սկզբունքն իրականանալուն ապահովութիւնը չգտաւ: Սարգիս որչափ ալ հեզ և խոհական և ծանրագլուխ անձ մը ճանչցուած էր, և իրօք ալ հեզ և հանդարտ վարմունք ունէր,

սակայն այդ չէր արգիլեր որ ամուր ըլլայ իր տեսութեանց և հաստատուն իր սկզբանց վրայ, և ասոր ալ փորձը տուաւ սաղիմական խնդիրին մէջ բռնած ընթացքովը:

2722. ՄԻՐԻՔԷԼԱՄԻ ԽՆԴԻՐԸ

Սարգիս պատրիարքութեան առաջին օրէն արի հաստատամտութեան փորձը տուած էր Կարապետ Միրիքէլամի թաղման շուրջը յուզուած խնդիրին մէջ: Բողոքականներ տակաւին իբրև անկախ հասարակութիւն դատուելնէն առաջ և վատուելնէն ետքն ալ առանց դիտողութեան կը թաղուէին հայ գերեզմանոցներու մէջ: Միրիքէլամ իրեն հաւատակիցներուն նշանաւոր դարձած էր Հայոց եկեղեցւոյն դէմ անդուուն հայհոյանքներով, հայադաւանները կռապաշտ և հայ եկեղեցիները կռատուն և արարողութիւնները աւելորդ ապաշտութիւն կոչելով, և իրեն ալ նոր աւետարանի առաքել ըլլալու հովեր տալով (ՊԷՐ. 384): Իրեն մահը հանդիպեցաւ Պալաթ թաղի մէջ 1860 յուլիսին առաջի օրը, որ է ըսել Սարգիսի պատրիարքութենէն և Սահմանադրութեան կազմուելէն հապիւ ամիսուկէս ետքը, բողոքականներ ուկեցին վայն թողել էտիրնէքաբուէ դուրս Պալաթի գերեզմանոցին մէջ, իսկ Պալաթցիք խմբովին գերեզմանոցի մէջ ժողովուեցան թաղումը արգիլելու: Խնդիրը սկսաւ յուլիս 2 շաբաթ օր: Կրկին էր Պալաթոց ընդդիմութեան պատճառը, զի ոչ միայն Միրիքէլամ, համարձակ հայհոյիչ և իրենց եկեղեցւոյն անարգող մըն էր, այլ և Պալաթի թաղեցի չէր, և Պալաթի գերեզմանոցը տակաւին բողոքական մը թաղուած չէր (60. ՄԱՍ. 440): Բողոքականներ կը պնդեն և ոստիկանական միջամտութեան կը դիմեն, բայց հայեր բացարձակապէս կընդդիմանան, արդէն մերձակայ և հեռաւոր թաղերէն ալ եկողներ ստուարացուցած էին Պալաթոց թիւը: Գործը պատրիարքական կը հասնի և երկուշաբթի յուլիս 4-ին ժողով կը գումարուի, և կորոշուի թէ բողոքականներ իբրև վատուած և անկախ հասարակութիւն իրաւունք չունին Հայոց ստացուածքին վրայ, թող որ պատրիարքարանը չի կրնար պատրաւորել գայթակղած և վայրացած խիղճերը: Երեքշաբթի յուլիս 5-ին կառավարութենէ հրաման կու գայ գերեզմանոցին մէկ կողմը թաղման տեղ մը ցուցնել. Անգղիոյ և Ամերիկայի դեսպաններն անձամբ պատրիարքական կու գան իրենց կրօնակիցը պաշտպանելու, բայց տեղի կու տան պատրիարքի համոզկեր բացատրութեանց, կը հաւանին որ գերեզմանոցի մէկ անկիւնը տեղ մը ցուցուի, և կը խոստանան կարգադրել որ այլևս բողոքականներ Հայոց գերեզմանոցներ չթաղուին և այս կերպով ալ կը գրեն պնդող բողոքականներուն: Իսահակ վարդապետ և Յովհաննէս Տատեան և Գրիգոր Օտեան Պալաթու գերեզմանոցը կերթան վատուեցաւ տեղ մը ցուցնելու երբ արդէն իրիկուն էր: Այդ կարգադրութեանց վրայ եղած ատեննին շշուկ մը կը լսուի թէ բողոքականներ սպաննած են Իսահակ վարդապետը, և իսկոյն գերեզմանոցը ժողովուրդով կը լեցուի, ոստիկանապետն ալ հասնելով հապիւ կրնայ ժողովուրդը ցրուել արև մտնելէն երեք ժամ ետքը: Թաղումը միւս օրուան կը յետաձգուի, և յուլիս 6 չորեքշաբթի առտու, սպարապետ Ռիվա փաշա գերեզմանոց կու գայ բազմաթիւ զօրքով և գործը վերջացնելու միտքով, բայց դարմանը որոճացած ատեն նորէն յուզում կը պատճառէ, իբր զի որոշուած տեղը Հայոց գերեզմաններուն մօտն էր, զինուորներ կը միջամտեն զէնքով ժողովուրդը հեռացնելու և իբր 15 հոգի կը վիրաւորուին: Պատրիարքը լսելով անձամբ տեղւոյն վրայ կու գայ, սպարապետին կը խօսի և կը հանդարտեցնէ, ուրիշ վատուած տեղ մը կորոշէ և ամենայն ոյժով կը պաշտպանէ Հայոց ազգային և կրօնական իրաւունքը, մինչև որ սպարապետը տեղի կու տայ և պատրիարքին ցուցած տեղը Միրիքէլամի դիակը կը թաղուի, ուրբաթէ չորեքշաբթի անթաղ մէջտեղ մնալէ ետքը: Անգղիական դեսպան Հէնրի Պուլվորը յուլիս 9-ին պատրիարքին գաղտնագիր մը կուղղէ, աններողամտութիւն և քրիստոնէական եղբայրակցութեան մոռացում վերագրելով Հայոց, և շեշտելով որ եթէ Հայեր համակրութիւն չունին բողոքականներուն, մեր ազգին ալ շատ դժուար կըլլայ համակրութիւն

ունենալ ձեպի: Պատրիարքը ընդարձակ գրույթեամբ մը կը պատասխանէ 12-ին Հայոց ներողամտութիւնը բարձրացնելով, Միրիքէլամի ընթացքը բացատրելով, և ապագային ու կրօնական իրաւունքները ճշդելով, այնպիսի համոզիչ և խոհական լեզուով, որ Պուլվըր 17-ին կը ստիպուի պատասխանել ստացած նամակին, թէ բերկրութեամբ կընդունիմ վայն, և անոր մէջ ապացոյց մը կը նշմարեմ այն խաղաղասէր և հաշտարար ոգւոյն, որով ես ինքս վառուած եմ (60. ՄԱՍ. 442): Միրիքէլամի միջադէպը ոչ միայն Սարգիսի գործունէութեան սկիզբէն՝ անոր վրայ վարկ ու յարգանք հրաւիրեց, այլ և առկախ խնդիր մը վերջացուց, զի կառավարութեան կողմէն հրաման եղաւ բողոքականներուն յատուկ գերեզմաննոց որոշել, և այլևս Հայոց գերեզմաննոցներն չթաղել: Սարգիսի համառոտ պաշտօնավարութիւնը սահմանադրութեան և Երուսաղէմի խնդիրներով սպառեցաւ, և Միրիքէլամի միջադէպն ալ միայն իբրև նշանակալից իրողութիւն մը յառաջ բերինք:

2327. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ ՆՁՈՎՔՆԵՐՈՒ ԴԷՄ

Սարգիս պատրիարքի հրաժարելով և սահմանադրութեան կիրառութիւնը արգիլելով, Ընդհանուր ժողովը գործէ դադրելով և պատրիարքարանը առժամեայ վարչութեան յանձնուելով, Երուսաղէմի ընտրութեան խնդիրը անպայման ժամանակով յետաձգուաց կըլլայ, որով և ներսէն-դուրսէն խնդիրը պաշտօնական շրջանակներու մէջ այլ ևս գոյութիւն չէր կրնար ունենալ, զի ընտրող ժողովն իսկ գոյութենէ դադրած էր: Բայց երբ պաշտօնական շրջանակները չէին կրնար այդ խնդիրով զբաղիլ, այս ըսել չէր որ հրապարակը անով չզբաղէր, մանաւանդ որ խնդիրին ամենայետին կերպաւորութիւնէն մին, Կարապետ կաթողիկոսէ նվովքի ներքև հռչակուած կանոնները, այսինքն Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքութիւնները մէկ անձի վրայ չմիացնելը և ոչ-միաբանի մը պատրիարք չընտրուիլը, իբրև անդոյ մի կանոն, մանաւանդ թէ իբրև խաբէութեամբ ստեղծուած կանոն հռչակուիլ սկսած էր, և այս կէտը պնդողներ կը գտնուէին Մատթէոս կաթողիկոսի պաշտօնական հաստատութեան և վերանորոգման կոնդակին հակառակ ալ (2720): Այդ կարծիքը մէջտեղ նետողը Չիլիսկիրեան Յակոբոս վարդապետն էր իրեն ընկերակից ունենալով Թադէոս Միհրդատեան հրապարակագիրը, և ժամանակին լրագիրներէն ալ դուրսէնական դրութեան պաշտպանները ինքզինքնին զօրացած կարծէին անոնց խօսքովը և անոնց արձագանք կու տային: Չիլիսկիրեանը կանուխէն ներկայացուցած ենք իբրև անհանդարտ բնաւորութեան և անուղիղ ընթացքի տէր մէկ մը (2650: Յովհաննէս պատրիարքի հրամանով պաշտօնէն զրկուելէն ետքը նա Յոպպէ քաջուած էր և հոն կը մնար մինչև անոր մահը, միշտ շարունակելով իր անտեղի գործերը: Այս պատճառով միաբանութիւնը հարկ սեպեց վայն իրմէ դուրս հանել, և միաբան լրութեամբ կազմեց մերժման յայտարարեալ ծանօթութիւնը 1861 յունուար 24 թուականով, որուն մէջ իբր պատճառ կը յիշուին, թէ յամենայն ժամ չդադարի մատնել զեկեղեցին Աստուծոյ դիւրամէտ կրից իւրոց, թէ իբրև զելուզակ կամ Վասակ մատնիչ գոլ քրտնի, թէ ունի վարուեստակեալ կնիք գերազօր տէրութեան Պրուսայի, որով վնենգեալ գործս իւր յառաջ մղել, թէ իրեն մօտ գտնուած են յափշտակեալ ինչք վանուցս և թէ կրնան ապացուցանել վայս ամենայն և առաւել քան վայս, ուստի թէպէտ և ներողութիւն սրբազան պատրիարքաց յամենայն պարագայս հայրական գթով կը վարուէր անոր հետ վասն ուղղութեան, բայց իրենք այլ ևս չեն կրնար տոկալ, և այս պատճառով կը յաւելուն իսպառ հերքել ի միաբան լրութենէս մերմէ, վայն չընդունիմք ի շարս միաբան եղբարց, և այսպէս վճռեմք և այսպէս ստորագրեմք: Չիլիսկիրեան ասկէ ետքը Յոպպէ մնալն ալ անհնար տեսնելով, Հիւնքեարպէյէտեանի Կ. Պոլիս դառնալուն առթիւ անոր ընկերացաւ (2715), և հասնելով յայտնի պայքար բացաւ Երուսաղէմի միաբանութեան դէմ, օգտուելով մանաւանդ պատրիարքական ընտրութեան խնդիրէն, և Երուսաղէմի դէմ եղող

դուրսէնական կուսակցութեան յարելով ուլեց միաբանութիւնը ընկճել: Որչափ ալ ինքն կանուխէն իր պատրաստած Երուսաղէմի կանոնագիրի մը ծրագրին մէջ, զոր հրատարակութեան ալ տուած էր, յայտնապէս գրած ըլլար, որ Երուսաղէմի կողմէ Կեդրոնի վարչութեան ներկայուելիք երեք ընտրելիներ, ըստ հին կանոնի սուրբ աթոռոյս հարապատ միաբաններէն պիտի ըլլան (ՏԷՐ.635-636), բայց հապիւ Կ. Պոլիս ոտք կոխած յուլիս 15 թուականով, իր ստորագրութեամբ և նախկին աւագ թարգման սուրբ աթոռոյն Երուսաղէմի պատուանունն ալ կցելով, յայտարարութիւն մը ցրուեց ազգին մէջ թէ Կարապետ կաթողիկոսէ նպովքի ներքև հռչակուած կանոնները գոյութիւն չունին, թէ Երուսաղէմի մէջ պահուած ձեռագիրին մէջ չկան, և թէ օտար ձեռքէ մուծուած են տպագիրին մէջ: Շուտով իրեն ձայնակցեցաւ Թաղէոս Միհրդատեան օգոստոս 25-ին հրատարակած Երկու խօսք գրութեամբ (ՄԻՂ.192), որուն մէջ կը վկայէր թէ ինքն ալ տեսած է կանոնները չունեցող ձեռագիրը, և թէ մէջէն թերթ մըն ալ կտրած վերցուցած է Դաւիթ Եպիսկոպոսի հաւանութեամբ, որով կը հաստատուի որ նպովքի մասը օտար ձեռքէ մուծուած է Հաննայի տպագիրին մէջ: Չիլինկիրեանի ընթացքը բացատրեցինք արդէն, իսկ Միհրդատեանի համար երկար գրելու պէտք չունինք, զի նա յայտնի է իբրև ընդդիմութեան հոգիէ մղուած և բորբոքեալ երևակայութեամբ վառուած մի անձնաւորութիւն, պատրաստ ամէն բան աղարտելու և ամէն խնդիր շփոթելու: Որչափ որ երկուքին ալ ընդդիմութիւնները Մատթէոս կաթողիկոսի սեպտեմբեր 1-ի կոնդակով ցրուած նկատուին (2720), սակայն աւելորդ չենք սեպեր մեր կողմէն ալ ինչինչ բացատրութիւններ աւելցնել, իբր զի կաթողիկոսական կանոններու վաւերականութիւնը կենսական խնդիր է ազգային եկեղեցական պատմութեան համար:

2724. ՏՊԱԳԻՐԻՆ ՎԱԻԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հաննա վարդապետի Գիրք պատմութեան սրբոյ և մեծի քաղաքին Աստուծոյ Երուսաղէմի երկասիրութեան բնագիրը կամ ձեռագիրը Երուսաղէմի մէջ չկայ և չէ եղած, և այս շատ բնական է, զի Երուսաղէմի մէջ պատրաստուած բնագիրը Կ. Պոլիս յղուած է տպագրուելուն համար, և տպագրութեան գործածուած օրինակը, ոչ դարձած է և ոչ ալ դառնալու վիճակին մէջ մնացած կըլլար: Գիրքին սկիզբը 1727 յունուար 1 թուականով մը նշանակուած է (ՀՆՆ.2), որ պարզապէս գրութեան սկզբնաւորութեան թուականն է, զի տպագրութիւնը լրացած է 1734 յունիս 26-ին (ՀՆՆ.376): Տպագրութեան յղուելուն ժամանակին համար ալ ըսուած է, թէ մինչ լրումն եղև շարադրութեանս, ետ սուրբ հայրս մեր Գրիգոր Շղթայակիր վսա ի տպումն, որ է ըսել թէ գրութիւնը լրանալէն անմիջապէս ետքը տպագրութեան յղուեցաւ, իսկ տպագրութեան սկսելուն մասին ալ ըսուած է թէ մինչ ի սկիզբն էաք տպեցմանն հետո վախճան հեղինակին, որ տեղի ունեցած է 1733 յունիս 11-ին (1968): Ըստ այսմ կը քաղենք թէ 1727 յունուարին խմբագրութիւնը սկսաւ, 1732-ին լրացաւ և տպագրութեան յղուեցաւ, և 1734 յունիսին տպագրութիւնը աւարտեցաւ, որով բնաւ անժամանակութեան խնդիր չի կրնար ըլլալ եթէ 1729-ի և 1731-ի դէպքերը կը յիշուին գիրքին մէջ (ՀՆՆ. 167-168), ինչպէս ոմանք ուլեցին կարծել (61. ՄԱՍ.493): Գալով ձեռագրին խնդիրին Երուսաղէմի թանգարանին մէջ կը գտնուի արհեստով սուվայինի եղած ըլլալուն համար (ԾԵՓ. 845) ծեփարար մականունեալ Կեսարացի Եղիա վարդապետի ընդօրինակած Սարգիս Շնորհալոյ կաթողիկեայց թուղթերուն մեկնութեան հատորը, որուն վերջը աւելցուած է Հաննա վարդապետի յիշատակարանը յաղագս անցիցն անյելոց և վասն Ծոպատկի (ԾԵՓ. 1157), և այս էր որ սխալմամբ Հաննայի պատմութեան բնագիր կարծուեր է, բայց Հաննայի ընդարձակ գիրքը չէ, այլ միայն համառօտ գրուած մըն է (ԾԵՓ. 1157-1183), և այն ալ երկու կտորէ բաղկացած և մաղթանքներով և ամէն-ով իրարմէ պատուած (ԾԵՓ. 1170), որոնց առաջինը Երուսաղէմի աղէտալի օրերուն կրած նեղութիւնները, և Կոլոտի ու Շղթայակիրի ջանքերով նեղութիւններէ ազատիլը կը պարունակէ, և

երկրորդը 1729 տարույ ծռապատկին դէպքերը կը պատմէ, և իրարմէ անկախ երկու մասեր կը կազմեն: Առաջինը ինչպէս մտադրութեամբ կարդալով կը տեսնուի 1726-էն առաջ, այսինքն Կարապետ կաթողիկոսութենէն ու կանոններէն առաջ գրուած. որով չէր կրնար անոնց վրայ խօսիլ: Իսկ երկրորդը միայն ու միայն ծռապատկով կը վբաղի և ուրիշ խնդիր չխառներ, որով նվովքները յիշելու առիթ ալ չունէր: Աւելցնենք ևս թէ առաջին մասին շարադրութիւնը բոլորովին տարբեր է տպագրեալ գիրքին յաղագս անցիցն անցելոց գլուխին շարադրութենէն (ՀՆՆ. 115), որ է ըսել Հաննա առաջին գրութիւն մը կազմած է իբր պարզ աթոռական յիշատակարան, և յետոյ մեծ աշխատութեան մէջ նոյն նիւթը անցուցած է փոփոխութեամբ և տարբեր շարադրութեամբ, թէպէտ նմանութիւններ կան երկու խմբագրութիւններու միջև, ինչ որ բնական էր: Ըստ այսմ կանոններուն ձեռագիրի մէջ չգտնուիլը և տպագրութեան մէջ գտնուիլը, բնաւ անոնց վաւերականութիւնը չխախտեր, և լոկ աչքկապուկ խաղ մըն է Չիլիսկիրեանէ և Միհրդատեանէ այդ մասին ստեղծուած վրոյցը: Երուսաղէմի թանգարանին մէջ կը գտնուի ուրիշ ձեռագիր մըն ալ ծռապատկի պատմութիւնը պարունակող, ուր Շղթայակիրի գործերէն ինչ ինչ յիշուած են, բայց այն ոչ թէ Հաննա վարդապետի այլ Սեոսամուէլեան Աբրահամ սարկաւազի մը գործն է (ՍԵՌ. 81), Երուսաղէմի մէջ գրուած ու ամբողջապէս ծռապատկի խնդիրին նուիրուած և կանոններուն հետ կապ չունեցող, բայց ուլեցինք յիշել որ մի գուցէ վրոյցի հեղինակներէն իբր Հաննայի գիրքին ձեռագիրը կարծուած ըլլայ:

2725. ՆԱՐԵԿԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Փալով Կարապետ կաթողիկոսի կողմէն հռչակուած կանոններուն ստուգութեանը, պարմանալի է այսպիսի հեղինակաւոր և մանրամասնօրէն պատմուած իրօղութեան մը մասին կասկածներ յարուցանել, և միայն կամակոր միտք մը կրնար այսպիսի տեսութիւն մը յղանալ: Գրիրքի մը մէջ օտար ձեռք մը կրնայ թերևս բան մը փոխել, տող մը աւելցնել, իմաստ մը այլայլել, բայց ամբողջ պատմութիւն մը յերիւրել, և վայն պատմական և իսկական պարագաներով տեղագրական և ժամանակագրական հանգամանքներով տպագիր երկասիրութեան մը մէջ մուծանել, նորանշան դիպուած մը եղած կըլլար: Մենք իր կարգին յառաջ բերած ենք այդ պարագաները (1849) Հաննայի գիրքէն քաղելով (ՀՆՆ. 156-161), և կրկնելու պէտք չենք վգար: Մտադրութեան արժանի է ևս որ գիրքին տպագրութեան և հրատարակութեան ատեն կենդանի էին Կոլոտն ալ Շղթայակիրն ալ, և պէտք կըլլար այդ երկու պատուական և ամենագովելի անձերը իբր խարդախողներ ամբաստանել, եթէ իրօք Հաննայի պատմութեան տպագիրին մէջ օտար ձեռք մտած ըլլար: Բայց այս տպագրութենէն ալ առաջ նվովիւք փակուած կանոններուն հռչակման վկայութիւնը կը գտնուի միևնոյն 1726 տարուոյն մէջ Կ. Պոլիս տպուած Նարեկի յիշատակարանին մէջ (ՏԷՐ. 671), և խստապարանոց կամակորութեամբ միայն հնար կըլլայ օրը օրին և ամէնուն աչքին առջև խարդախութիւն մը ենթադրել պաշտօնական և հրապարակային եղելութեան մը վրայ: Մեր աչքին առջև ունինք Նարեկի այդ տպագրութիւնը, որ եհաս ի կատարումն տպեցման ի թւին հայոց ՌՃՀԵ=1726, ի լրումն տարուոյն, այսինքն ի վերջնումն դեկտեմբերի (ՆՐԿ. 428), որուն յիշատակարանին մէջ գրեթէ բառացի յառաջ կը բերուին Հաննայի պատմութեան այս մասերը, և աւելորդ չենք սեպեր վայն ամբողջապէս գնել այստեղ: Արդ նախ կը յիշուի Երուսաղէմի անցուցած տագնապը, և տագնապէ ապատուիլը, կը պատմուի տագնապին պատճառը փնտռելին և ստուգալին, թէ այն էր պատճառն որ եկամուտ և ոչ ի տունն այն սնեալ ոք առաջնորդ և վէթիլ եղև նմա, որ յայտ է գիտողաց, և այլք ոմանք ի ձեռս աշխարհականաց տուեալ վվերակացութիւն վանից, քայքայեցին և գրեթէ ի հիմանց տապալեցին: Եւ կը շարունակէ պատմել. իբրև վայս այսպէս ստուգեցին, ապա հրամանաւ նորապսակ հայրապետին և սրբապան կաթողիկոսին, և երկուց

ընտրեալ պատրիարքաց այսոցիկ, և այլ պատրաստ գտեալ եպիսկոպոսաց և վարդապետաց և քահանայից հաստատեցաւ կանոն իմն այսպէս: Եթէ յայմահետէ եկամուտ ոք որ ի տունն այն չիցէ սնեալ և վելումուտ նորա չիցէ իմացեալ, և յանդգնեսցի առաջնորդ լինել նմա կամ վէքիլ. նվովեալ եղիցի: Եթէ ոք յայսրմահետէ պատճառ լիցի վպատրիարքութիւն սրբոյն Երուսաղէմի կցեալ ընդ առաջնորդութեան կոստանդնուպոլսոյ կամ այլ ինչ տեղւոյ, որ մեծ պատճառն այս էր սրբոյ տանս աւերման, նվովեալ եղիցի: Արդ յիշեցաք վայս զի վգուշութիւն լիցի սպառնեացն, և ոչ ի փառս ներկայ եղելոց:

2726. ԿԱՍԿԱԾՆԵՐՈՒ ՀԵՐԲՈՒՄԸ

Հաննայի տպագիրին ստուգութիւնը օրը օրին կատարուած հրատրակութեամբ ալ հաստատելէն ետքը, բոլորովին անհիմն լեզուագարութիւն ըսել, թէ նոյն յիշատակարանը չի գտնուիր 1763-ին Նալեանի օրով կատարուած Նարեկի յաջորդ տպագրութեան մէջ, որով իբր թէ առաջին յիշատակարանին խարդախեալ ըլլալուն համար վանց եղած ըլլալը կը հետևեցնեն: Սակայն գրչագիրներու և տպագիրներու յիշատակարանները իրենց օրերուն յատուկ են և յաջորդներուն չեն անցնիր, և միայն իրենց օրուան դիպուածները կը յիշատակեն (ՏԷՐ.672): Կարապետեան կանոններուն և նվովքներուն վաւերականութիւնը այնպէս յայտնի և ստոյգ մի կէտ է, որ 1801-ին ալ Երուսաղէմի միաբանութիւնը վայն կը յիշեցնէ Կ. Պոլսոյ պատրիարքարանին չընտրել վայլ ոք կամ օտար, զոր և նվովիւք փակեալ են ի պատրիարքութեան տեառն Գրիգորի արժանաւորնտիր վեհին, այսինքն Շղթայակիրին, մի՛ և մի՛ յարտաքնոց եպիսկոպոսաց կացուցանել պատրիարք, և այդ սկզբունքով կը յաղթէին Վանեցի Թէոդորոսի պատրիարքութիւնն ընդունելու դժկամակութեան, զի մի՛ գուցէ զմինն ընտրելոց կաթողիկոսաց, Դանիէլը կամ Դաւիթը դիցեն պատրիարք աստ յԵրուսաղէմ: Իսկ Էջմիածնի և Կ. Պոլսոյ աթոռներուն օրինակները, Երուսաղէմի վրայ ալ տարածելու անխտիր ամէն կողմէ աթոռակալներ առնելու սկզբունքը, պարզ իմաստակական պատճառաբանութիւն մը կը դառնայ երբոր գիտենք, թէ Էջմիածնի և Կ. Պոլսոյ աթոռները ընդհանուր ազգին վրայ իրաւասութիւն վարող աթոռներ են, մինչ Երուսաղէմ յատկապէս սուրբ տեղեաց պաշտաման և պահպանութեան և պաշտպանութեան նուիրուած աթոռ մըն է ամփոփ իրաւասութեամբ և առանձնայատուկ պայմաներով, որոնք անհրաժեշտ կը դարձնեն նոյն աթոռին վրայ չունենալ մէկ մը, որ ի սուրբ Երուսաղէմ չիցէ սնեալ և վամենայն վելս և վմուտս սրբապան Երուսաղէմայ աթոռոյն չիցէ իմացեալ, և բազմաւ ժամանակաւ չիցէ վարժեալ յամենայն գործս սրբոյ Երուսաղէմի (ՀՆՆ.157): Մենք իրողութիւնը յիշելով և կանոնին բառերն ալ յառաջ բերելով անոնց իմաստին բացատրութեանը չենք մտներ, և ոչ ալ կը փնտռենք թէ Երուսաղէմի միաբանութեան անդամակից չգտնուած մէկ մըն ալ կրնա՞յ արդեօք կանոնին մէջ յիշուած պայմանները ունեցող սեպուիլ, և այս այն դիտմամբ որ կանոնին հռչակուելէն և Շղթայակիրին 1749-ին վախճանելէն ետքը Երուսաղէմի պատրիարք ընտրուած Նալեանին անձը խնդիրի նիւթ եղած է, բայց եթէ միաբան նկատուի ինչպէս ոմանք կը պնդեն (ՏԷՐ.685), կամ թէ չնկատուի ալ ինչպէս ուրիշներ կը կարծեն, իրականութիւն մըն է թէ նա Երուսաղէմի աթոռին մէջ ալ ապրած անձ մըն էր, և բացառիկ պարագաները անհրաժեշտ կը դարձնէին այնպիսի մէկու մը Երուսաղէմի աթոռին վրայ գտնուիլը մինչև որ կացութիւնը պարզուելով Յակոբ Նալեան կը բաշուէր, և Թէոդորոս Խորենացին բնիկ միաբան աթոռ կը բարձրանար 1752-ին (2037), և այնպէս ալ կը շարունակէ անընդհատաբար, զի Յովհաննէսի մահուանէն ետքը յուզուած ներսէն-դուրսէն խնդիրն ալ վերջապէս ներսէնական սկզբունքին համաձայն վերջացաւ:

2727. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԶԱՆՔԵՐ

Ըսինք արդէն (2727) թէ սահմանադրութեան դադարելովը, Երուսաղէմի խնդիրը պինադուլի ժամանակ մը ունեցաւ, մինչև սահմանադրութեան պետական հաստատութեամբ վերանորոգուիլը, 1861-էն 1863երկամեայ միջոց մը: Այդ օրուն մէջ նկատողութեան արժանի եղելութիւններ չունինք պատմելու, պի ակնկալութեան միջոց մըն էր, սպասելով որ սահմանադրութեան հաստատութեամբ ընդհանուր ժողով բացուի և հնար ըլլայ պատրիարքի ընտրութիւն կատարել: Աթոռական վարչութեան գլուխը կը մնար ծերունի Վրթանէս վարդապետ Վարդանեան, իսկ արարողական հանդիսութեանց կը նախագահէր Գերմանիկցի Մեսրոպ եպիսկոպոս Սոյս աթոռին միաբաններէն: Լուսարարապետութեան կամ հանաւանդ կոչմամբ փափկալութեան պաշտօնը բաց կը մնար Գէորգ եպիսկոպոսի մահուան վրայ, և յաջորդի ընտրութիւնը յետաձգուած էր նախապէս պատրիարքի ընտրութիւնը լրացնելու համար: Կ. Պոլսոյ եղելութիւնները Երուսաղէմը կը հետաքրքրէին և Իսահակ վարդապետ պակաս չէր ըներ հաղորդել բոլոր անցուդարձերը, և փոխադարձ գիրեր կը յաճախէին, Կ. Պոլսոյ պատրիարքարանին ալ դիմում կըլլար օր առաջ ընտրութիւնը կատարել տալու, բացատրութիւններ ալ կը տրուէին Իսահակի վերագրուած երդումի մասին, թէ պատրիարքութեան աչք չունենալ երբեք չընդունելու երդում չէ, թող որ նա չէր կրնար այսպիսի երդում ընել, քանի որ նախապէս երդուեալ էր աթոռական իշխանութեան հնապանդիլ: Նշանաւոր է այս մասին հոկտեմբեր 19-ին այսինքն նոյն իսկ Սարգիս պատրիարքի հրաժարականին օրը (2729) անոր ուղղուած նամակը (ԵՂՄ. 115-117): Միւս կողմէն նկատելով թէ շարունակ միաբանութիւնը կամբաստանուի իբր ուսման անհոգ և ապագայի անտարբեր, ժողովականք ձեռնակեցին ժառանգաւորաց վարժարանը բարեկարգել ձեռնհաս ուսուցիչ մը հրաւիրելով, և առ այս նորէն կը դիմէին Տիգրան Սաւալեանի, որ հեռացեր էր Յովհաննէսի օրէն (2647), և երբ սա կը դանդաղէր, Իսահակ վարդապետ ուրիշ Զմիւռնացի մը կը դրկէր, որ սակայն գոհացուցիչ չգտնուելով նորէն Սաւալանեանի կը դիմեն, որ հապիւ 1863 դեկտեմբերին կը հասնէր, և գործի կը ձեռնարկէր, երբ արդէն սահմանադրութեան հաստատութիւնը ստացուած էր: Տեղապահ Վրթանէս վարդապետ աւելի յարգանքի և պատկառանքի ոյժով բարձր կը պահէր իր դիրքը, քան թէ կարողութեամբ և գործունէութեամբ, բայց իրեն լաւ գործակիցներ ունէր ներքին և արտաքին խորհուրդներ, որոնք կապմուած էին 1861-ին սկիզբը, միաբանութեամբ կապմուած կանոնագիրին համաձայն (2705), որոնք ամէն փոյթ և ջանք ձեռք առած էին չտալ ումբ խծրծելոյ և մեղադրելոյ վմիաբանութիւնն, և միանգամայն ամենայն պնդութեամբ պաշտպան կը կանգնէին սեփական իրաւանց սրբոյ աթոռոյն ընդդէմ անիրաւութեանց, որոնք թէ բաժնեկից ապգութիւններէն կը մղուէին սուրբ տեղեաց մէջ, և թէ Կ. Պոլսոյ կողմէն կը յուլուէին միաբանական կապակերպութեան դէմ: Մատակարարական տեսակէտէն մեղադրանքներ լսուած են, թէ այս միջոցին տեսուչներուն վրայ պարտուպատշաճ հսկողութիւնը պակսեցաւ, թէ շռայլութեանց կամ իւրացուցմանց ալ պարագաներ ճշմարտուեցան, և թէ սուրբ աթոռին ելամուտը հաւասարակշռութիւնը կորսնցնելու հարկեցաւ առնել փոխառութիւնս, որով եղաւ հիմն պարտուց (ՍԱԻ.1379): Սակայն պէտք չէ դիտողութենէ վրիպեցնել, թէ կեդրոնական վարչութիւն իր անհարկի միջամտութիւններով, և մանաւանդ Երուսաղէմի արդիւնքները Կ. Պոլսոյ պատրիարքութեան դարձնելու ձգտումներով, անհրաժեշտ պաշտպանողականի ստիպեց միաբանութիւնը, մինչ յայտնի էր որ որևէ պայքար առանց ծախուց և առանց պոհողութեանց առաջ չի տարուիր: Այս միջոցին էր որ Յակոբոս Սերոբեան նախկին պատրիարք Երուսաղէմի համար աշխատելէն ետքը, Երուսաղէմի ուխտն ալ կատարել ուլեց, և 1862 հոկտեմբեր 3-ին Կ. Պոլիսէ ուղորեցաւ Յովհաննէս Սեթեան և Ալիքսան Ունձեան և Զաքարիա վարդապետաց հետ, և 12-ին Յոպպէ և 17-ին Ռեմէլէ

մեկնելով 18-ին Երուսաղէմ մտաւ (62.ՄԱՍ.556), բայց նոյեմբեր 5-ին վախճանեցաւ, ինչպէս գրեցինք (2593), և յուդարկաւորութիւնը կատարուեցաւ Մեսրոպ Եպիսկոպոսի հանդիսադրութեամբ:

2728. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅՈՅՅԸ

Եթէ Սահմանադրութեան հաստատուելուն խնդիրը այնչափ կը շահագրգռէր Երուսաղէմը, յայտնի է թէ շատ աւելի պիտի վբաղեցնէր Կ. Պոլիսը, որ բովանդակ իր վարչական ընթացքը կաշկանդուած կը վգար, որչափ ալ տեղապահ մը և առժամեայ ժողով մը գտնուէին պատրիարքարանի մէջ: Սահմանադրութեան դադարումը վերաքննութեան պայմանով էր հրամայուած, և այս նպատակով առօրեայ վարչութենէն վատ յատուկ վերաքննութեան յանձնաժողով մըն ալ կար կառավարութենէ որոշուած (2721) Սերովբէ Վիչէնեանի կամ Սերովիչէնի բժշկապետի ատենապետութեամբ որ անմիջապէս գործի ձեռնարկեց 1861 նոյեմբերի սկիզբները, և փութաց իր գործը օր առաջ լրացնել, և 1862 յունուարին սկիզբները կառավարութեան ներկայեց վերաքննեալ սահմանադրութեան ծրագիրը: Կառավարութիւնն ալ փութաց իր վննութիւններն ընել և ինչ ինչ փոփոխութիւններով ծրագիրը յանձնաժողովին դարձուց փետրուար 8-ին, որ կառավարութեան դիտողութիւնները ըստ մեծի մասին ընդունեց: Սակայն կառավարութիւնը փետրուար 14-ին պաշտօնագիրով (ՍՀՄ.1) հրամայեց որ եկեղեցականներ և դադարեալ ժողովին երեսփոխանները գումարուին, և եօթը անձեր ընտրեն, որոնք պետական Յանձնաժողովին հետ համախորհուրդ վերջնական ծրագիրը պատրաստեն: Ժողովը անմիջապէս գումարուեցաւ 92 անձանց ներկայութեամբ և տեղապահի նախագահութեամբ, և ընտրուեցան Ստեփան Ասլանեան և Նահապատ Ռուսինեան բժիշկներ, Գրիգոր Օտեան, Մինաս Մինասեան, Մկրտիչ Աղաթոնեան, Յովհաննէս Սուրէնեան և Մանուկ Մանուկեան: Երկու յանձնաժողովներ մէկ գումարումով համաձայնութիւն գոյացուցին, և պատրաստուած ծրագիրին ընկերացող տեղեկագիրը ստորագրուեցաւ փետրուար 16-ին, տեղապահէն և պետական յանձնաժողովոյն 11 և ազգային յանձնաժողովին 7 անդամներէն (ՍՀՄ.2-7), բայց կերևի թէ անպան ներկայացուցեցաւ ապրիլ 1-ին կիրակի օր: Կառավարութիւնը օր առջի օրեր խնդիրը վերջացնելու մտադրութիւն կը ցուցանէր, այս անգամ ամիսներով ուշացուց իր պատասխանն ու որոշումը, հակառակ Մաղաթեան տեղապահին և երկու քննական յանձնաժողովներուն և Բարունակ Ֆէրուհիան բժիշկի ատենապետութեամբ գործող վարչական յանձնաժողովին հետապնդութեանց: Հանրութիւնը անհամբեր Տեղապահն ու Յանձնաժողովը իբր անհոգ ենթադրելով 1862 օգոստոս 1 չորեքշաբթի օր, իբր հապար հոգույ մեծ բազմութեամբ պատրիարքարան կը դիմէ վարչական ժողովին գումարման պահուն և սահմանադրութիւնը կը պահանջէ: Ատենապետը կը խոստանայ կառավարութեան դիմելով միւս չորեքշաբթի պատշաճ հաղորդել, բայց բազմութիւնը գիրին պատասխան կը պահանջէր, տեղապահը ստորագրելու հարկ չի տեսներ, ատենապետը առանց անունի լոկ ազգային վարչութիւն կը ստորագրէ, նկատելով որ խնդրագիրն ալ հայ հասարակութիւն ստորագրութիւն ունէր: Բազմութիւնը որ գործին վերջնական լուծումը տալու նպատակով խմբուած էր, հետզհետէ իր պահանջները կը շատցնէ, ատենապետի ստորագրութիւն, տեղապահի ստորագրութիւն, կառավարութեան անմիջական դիմում, պաշտօնէ դադարում կը պահանջէ, և յորդորներ ու խրատներ օգուտ չեն ըներ, պատգամաւորներու թիւը հետզհետէ կաւելնայ, պատրիարքարանը խուռն բազմութեամբ կը լեցուի, որոնք վերջին ընելիքնին կը գործադրեն. տեղապահ և ժողովական և պաշտօնեայ և սպասաւոր պատրիարքնէն կը հանեն, դուռը կը փակեն, և բանալիները տանելով եկեղեցին կը հաւաքուին բուռն աղաղակներով: Եղելութիւնը կը լսուի, պատրիարքարանի գործակատարն ալ պարագաները կը հաղորդէ, Սէլիմ փաշա վինուորական ուժով տեղւոյն վրայ կու գայ, տեղապահը և ժողովականները կը տեսնէ, կը

ստիպուի անձամբ եկեղեցի ալ մտնել և բազմութեան հետ բանակցիլ և հապի խրատներով և յորդորներով, բայց աւելի սահմանադրութեան հաստատութիւնը փութացնելու խոստումով կը յաջողի ժողովուրդը ցրուել, սակայն այն օր ամենայն ինչ անկերպարան կը մնայ (62. ՄԱՍ. 547): Միւս օր օգոստոս 2 հինգշաբթի Սէլիմ փաշա կը դառնայ, դարբինի ձեռքով պատրիարքարանը բանալ կու տայ. տեղապահը և ժողովականները տեղերնին կը նստեցնէ, հրամանագիր մըն ալ կարդալ կու տայ, որ եթէ հակառակութիւն մը պատահելու ըլլայ համարձակողները ըստ կանոնաց պատժուելու և խրատուելու համար բարձրագոյն դուռ ծանուցուի, և պահ մը ալ այնտեղ մնալով կը մեկնի (62. ՄԱՍ. 548):

2729. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Ժողովրդական բուռն ցոյցը իրաւ գործը իր լուծումն չհասցուց, բայց նոր կացութիւն մը ստեղծեց, վարչական մարմինը անհաստատ գիրքի մէջ դրաւ և գործելու ստիպեց, և միանգամայն կառավարութեան ալ վգացուց գործին ելք մը տալու հարկը: Այդ պարագաներու հետևանքով տեղապահ և վարչութիւն 1862 սեպտեմբեր 1-ին հրաժարականը կը մատուցանեն, որ սակայն չընդունուիր, ուստի 14-ին Իսկիւտարի մէջ մեծ ժողով մը կը գումարուի 25 եկեղեցական և 70 աշխարհական ներկաներով (62.ՄԱՍ.553), որ 19-ին իրենց աղերսագիրը կը ներկայեն կառավարութեան, միշտ նոյն խնդրանքը կրկնելով (62.ՄԱՍ.554): Պատասխան կը տրուի թէ ուսումնասիրութիւնները լրացած են և կայսեր պիտի մատուցուի (62.ՄԱՍ.557), բայց դարձեալ գործադրութիւնը կը յապաղի, և նոյեմբեր 24-ին նոր դիմումներ կըլլան միշտ եպարքոս Ալի Փաշային, որ դարձեալ մօտ օրէն լրացնելու խոստումը կը կրկնէ: Սակայն օրեր կանցնին և սպասուած պաշտօնական ծանուցումը կը յապաղի, և տեղապահը եկեղեցականներու ընկերակցութեամբ, որոնց մէջ նաև Երուսաղէմի փոխանորդ Իսահակ վարդապետ, նոր դիմում մը կընէ 1863 յունուար 19-ին շաբաթ օր, և նորէն առաջիկայ երկուշաբթիին պատասխանը ընդունելու խոստումով կը մեկնի (63.ՄԱՍ.572): Երկուշաբթին ալ կանցնի, ուրիշ երկուշաբթիներ ալ կանցնին ակնկալութեամբ և հետապնդութեամբ, մինչև որ վերջապէս մարտ 16-ին շաբաթ օր, պայրամի շնորհաւորութեան այցելութեան առթիւ Ալի փաշա տեղապահին կաւետէ թէ ազգային սահմանադրութիւնը օգոստափառ ինքնակալին բարձր հաւանութեամբ վաւերացած է: Երեքշաբթի մարտ 19-ին տեղապահ և պետական յանձնաժողովոյ անդամներէ ոմանք եպարքոսին ապարանքը երթալով կընդունին հաստատուած սահմանադրութիւնը և հաստատութեան կայսերական հրովարտակը, որ մարտ 17 թուականը կը կրէր (ՍՀՄ. 8): Չորեքշաբթի 20 մարտ կը հաւաքուին պետական քննիչ և ազգային վերաքննիչ և առժամեայ վարիչ յանձնաժողովներ և պաշտօնապէս կընդունի սահմանադրութիւնը տեղապահ Մաղաքեան Ստեփան եպիսկոպոսի ձեռքէն (63. ՄԱՍ. 580), շաբաթ 23 մարտ դադարեալ Ընդհանուր ժողովոյ անդամներէն 85 երեսփոխաններ և բաւական թուով եկեղեցականներ պատրիարքարան Ընդհանուր ժողովի կը գումարուին և սահմանադրութեան հանդիսական հրատարակութիւնը կը կատարուի (63. ՄԱՍ. 581), վոր ծայրէ ծայր կը կարդայ Ստեփան Ասլանեան բժշկապետ: Կայսեր և մեծ եպարքոսին և նախարարութեան և տեղապահին շնորհակալիքներ կը յայտարարուին, ոգևորեալ ատենաբանութիւններ կը խօսուին, և տասը անդամներէ բաղկացեալ սահմանադրութեան գործադիր և առժամեայ վարիչ մարմին մը ընտրութիւնը կը քուէարկի, սակայն քուէհամարը երկուշաբթի մարտ 25-ին կը լրանայ, և կընտրուին, Ստեփան Ասլանեան, Մկրտիչ Աղաթոնեան, Յովհաննէս Սուրէնեան, Վարդերես Միսաքեան, Գրիգոր Մարկոսեան, Արիստակէս Ալթունտիւրրի, Յովակիմ Նէվրուպեան, Մարտիրոս Միւհէնտիսեան, Պօղոս Աշնանեան և Գիսակ Թորոսեան: Այսպէս 1860 մայիս 24-ին սահմանադրութեան նախնական կազմութենէն 34 ամիս ետքը, իսկ 1861 օգոստոս 26-ի

դադարում էն 19 ամիս ետքը օսմանեան հպատակ հայ ազգութիւնը ազգային վարչութեան համար պետական որոշումով և կայսերական հաստատութեամբ վաւերացեալ կանոնագիր մը ունեցաւ, որով կարենար կառավարել իր ներքին գործերը և ամուր կոուանի վրայ հիմնել փոխադարձ իրաւանց և պարտուց յարաբերութիւնները: Բայց մենք պատմութեան կարգին չյառաջացած օգտակար կը դատենք վաւերացեալ սահմանադրութեան ամփոփումը տալ և նախնականին հետ (2078) բաղդատել:

2730. ՀԱՍՏԱՏՈՒԱԾԻՆ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Սահմանադրութեան հաստատուած բնագիրը տաճկերէն լեզուով պիտի ըլլար բնականաբար, սակայն հայերէնն ալ սկիզբէն իբրև բնագիր նկատուեցաւ, որչափ ալ եթէ խնդիր մը տեղի ունենար, տաճկերէնն էր որ իբրև լուծման փաստ պիտի ծառայէր: Այս տեսակէտէն սկսելով սահմանադրութիւն անունը նիզամնամէ գրուած է տաճկերէնին ճակատը, որ պարզապէս կանոնագրութիւն կամ կարգադրութիւն կը նշանակէ, և չի համապատասխանէր ևրոպական լեզուներու մէջ կիրարկուած քօնսթիթիւսիօն բառին, որ այժմ միապետական իշխանութիւնը չափաւորելու կամ սեղմելու իմաստով կը գործածուի, Սահմանադրութեան սկիզբը պատիկ յառաջաբանութիւն մը (ՍՀՄ. 9) և վեց յօդուած հիմնական սկզբունք կան (ՍՀՄ. 11-12), որոնք սակայն տաճկերէն պաշտօնականին մէջ կը պակսի: Հիմնական սկզբունքները նորին մէջ՝ պարունակութեամբ նման են նախնականին սկիզբը գտնուող հիմնական սկզբունքներուն, թէպէտ տարբեր և աւելի խնամել շարադրութիւն մը ստացած են: Նախնականը 150 յօդուած ունէ, իսկ հաստատուածը միայն 99 յօդուած ունի, հակառակ որ նոր նիւթերը կամ գլուխներ աւելցուած են վերջինին մէջ: Իսկ գլուխները հինգ և նորին մէջն ալ Ա. Ազգային կեդրոնական վարչութիւն, Բ. Ընդհանուր կանոնք ժողովոց, Գ. Ազգային տուրք, Դ. Փաւառական վարչութիւն, Ե. Վերաքննութիւն. մինչ նախնականին մէջ Ա. և Ե. գլուխները նոյնք էին, իսկ Բ. էր ազգային տուրք, Գ. Ընտրութիւն և Դ. ներքին կանոնադրութիւն ժողովոց: Հաստատուածը ուղղակի պատրիարքէն կը սկսի, Ընտրութիւն և հրաժարում, և պաշտօն ու պարտաւորութիւնք ստորաբաժանմամբ, և Ընդ ամէնն 12 յօդուածներով (ՍՀՄ. 13-19), մինչև նախնականին մէջ այդ կէտերը ցրուած էին վանապան գլուխներու և հատուածներու ներքև: Ըստ այսմ հաստատուածին մէջ վեղչուած են կազմութիւն և պատասխանատվութիւն և յարաբերութիւնք հատուածները, որոնք 8 յօդուած կը բռնէին: Նմանապէս ազգային ընդհանուր ժողով հատուածն ալ, որ նախնականին մէջ պատրիարք հատուածին նախադասուած էր (ՊԷՐ.394-396), հաստատուածին մէջ բոլոր վարչական ժողովներէն և խորհուրդներէն ետև թողուած է (ՍՀՄ. 39-49): Ընդհանուր առմամբ պատրիարքին Ընտրութեան կերպը, իրաւունքները, պարտքերը, հրաժարիլը և ամբաստանուիլը հիմնական տարբերութիւն չունին երկու խմբագիրներու մէջ, թէպէտ տարբերած են բացատրութիւններն և շարադրութիւնները: Նկատելի կէտէր են, որ երբ նախնականը յայտնապէս պատրիարքը էջմիածնայ կաթողիկոսէն ձեռնադրեալ կամ անկէ իբր էջմիածնայ եպիսկոպոս ընդունուած անձ պիտի ըլլայ կըսէ, հաստատուածը ի վաղուց անտի պատրիարքութեան յատկացեալ եպիսկոպոսաց դասէն կըսէ, էջմիածնի անուն չտալու համար, և մինչ նախնականը պարզապէս օսմանեան տէրութեան հպատակ կըսէր, հաստատուածը գոնէ իւր հօրմէն սկսեալ օսմանեան հպատակ կաւելցնէ (ՊԷՐ. 416, ՍՀՄ.13), օտարահպատակները աւելի հեռացնելու համար: Ուստի ձևին մէջ ալ աւելցուած է հաւատարիմ մնալ տէրութեան և ազգիս «ՍՀՄ.16), որ նախնականին մէջ կը պակսէր (ՊԷՐ.417): Ամբաստանութեան քննիչ յանձնաժողովին անդամները նորին մէջ տասնի վերածուած են (ՍՀՄ.17), մինչ նախնականին մէջ 21 էին (ՊԷՐ.417): Պատրիարք հատուածի 12 յօդուածներուն նորին մէջ կը հետևի

պատրիարքական դիւանատունը, յօդուած 13-16, որ շատ տարբերութիւն չունի նախնականին 66-74 յօդուածներէն (ՊԷՐ.405-407): Նորին մէջ աւելցուած է պատրիարք սրբոյ Երուսաղէմի հատուածը, յօդուած 17-23, որ քիչ ու շատ Կ. Պոլսոյ պատրիարք հատուածին կը նմանի: Ընտրութեան ձևին համար ըսուած է թէ միաբանութիւնը եօթը ընտրելիներ կը ներկայէ, որոնք միաբանութեան եպիսկոպոսներէն կամ վարդապետներէն պէտք է ըլլան, և միանգամայն միաբանութենէ վատուած պէտք չէ ըլլան, և ընտրութիւնը Կոստանդնուպոլսոյ ապագային ժողովներուն կողմէն պիտի կատարուի, այսինքն խառն ժողովը եօթնանուն ցանկէն եռանուն մը պիտի կազմէ, բայց Ընդհանուրը եռանունին կապուած չէ, այլ եօթնունին մէջէն ո՛րն որ ուզէ, կրնայ ընտրել: Երուսաղէմի հատուածին յաւելումը յայտնապէս հետևանք էր տիրող խնդիրին, և հարկաւ խնդիր յուզուած չլինելուն պատճառն է որ մոռցուած են Կիլիկիոյ և Աղթամարայ կաթողիկոսութիւնները, որոնց մասին յիշատակութիւն եղած չէ սահմանադրութեան մէջ, որչափ ալ պէտք էր ընել Կ. Պոլսոյ աթոռին հետ կապուած ըլլալնուն համար: Կրօնական ժողով և քաղաքական ժողով և խորհուրդներ, ուսումնական ու դատաստանական, որ 24-27 յօդուածներուն մէջ կը պարունակուին, շատ չեն տարբերիր նախնականին 20-50 և 56-59 յօդուածներէն (ՊԷՐ.398404): Նախնականին ելևմտական խորհուրդը ելևմտից հոգաբարձութեան փոխուած է, և աւելցուած են վանօրէից խորհուրդ և կտակաց հոգաբարձութիւն և կը պարունակուին 48-51 յօդուածներու մէջ (ՍՀՄ. 32-36), որոնք յատուկ նկատելի պարագայ մը չեն ներկայեր: Թաղական խորհուրդներ նորին 52-56 յօդուածները կը գրաւեն (ՍՀՄ. 37-38), և շատ չեն տարբերիր նախնականին 62-65 յօդուածներէն (ՊԷՐ. 404-405): Նորին մէջ ասոնցմէ ետքը գրուած է Ընդհանուր ժողովը, ընդհանուր կանոններուն հետ մէկտեղ, և 57-84 յօդուածներուն մէջ կը պարունակուի (ՍՀՄ. 39-49), մինչև նախնականին մէջ պատրիարքէն առաջ կը դասուած կազմութեն և իրաւանց տեսակէտէն, իսկ ընտրութիւններ առանձինն գլուխ եղած էին (ՊԷՐ. 395-396 և 410-416): Ընդհանուր ժողովի մասին գլխաւոր տարբերութիւնն է, որ 400 ժողովականց թիւը 140-ի վեղչված է, 20 եկեղեցական, 40 աշխարհական գավառներէ, և 80 աշխարհական մայրաքաղաքէն, որոնց բաշխումն ալ վարչութեան թողուած է և կանուխէն ցուցակ չէ կազմուած և փոփոխելի է: Յիրաւանց կամ ի պաշտամանէ ժողովականներ ջնջուած են, և բոլորն ալ ընտրեալ երեսփոխան պիտի ըլլան, մայրաքաղաքացիները իւրաքանչիւր թաղի վարչական ընտրողներէն, գաւառցիները գաւառական ընդհանուր ժողովներէն և եկեղեցականները մայրաքաղաքի եկեղեցականներէն: Իսկ պետական պաշտօնէութեանց կամ աստիճանաւորաց համար ըսուած է միայն թէ մայրաքաղաքի 80 երեսփոխաններէն գոնէ եօթ աստիճանաւոր անձինք ըլլալու են (ՍՀՄ. 43): Ընտրութեանց ձևեր սովորականներն են և նախնականին ու նորին մէջ շատ տարբերութիւն չունին: Նորին առաջին գլուխը ընդամէնը 84 յօդուածներ ունի, որով շատ քիչ տեղ տրուած է մնացած չորս գլուխներուն, այսինքն ժողովոց կանոններուն 5 յօդուած, ապագային տուրքի 4, դաւանական վարչութեան 5, և վերաքննութեան 1, ընդ ամէնն 15 յօդուած (ՍՀՄ.49-54): Այս չորս գլուխներու մասին նորին և նախնականին կարգադրութիւնները հիմնական տարբերութիւն չունին, միայն վերաքննիչ յանձնաժողովը 30 անգամէ 20-ի վերածուած է, և վերաքննութեան համար հինգ տարի պայմանաժամ որոշուած է:

2731. ԱՆԿԱՇԿԱՆԴ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ապագային Սահմանադրութիւնը երկարատեւ ապգին մղձաւանջ եղաւ, և հաստատուելէն ետքը ալ ապագային պարծանքը սեպուեցաւ և մինչև վերջին օրեր ամենայն գուրգուրանքով պահուեցաւ և պաշտպանուեցաւ, և վտանգներէ պաւտուիլը մեծ յաջողութիւն սեպուեցաւ: Որչափ ալ այս տողերը գրողն ևս իր մասնակցութիւնն և աշխատութիւնն ունեցած է վերջին

պարագաներու մէջ Սահմանադրութեան գոյութիւնը պաշտպանելու, այսու ամենայի անաչառ պատմագիրի և անկաշկանդ քննասէրի պարտք կը սեպելի իրականութեան պարագաներն ալ չծածկել իր ընթերցողներէն: Սահմանադրական շրջանը, այսինքն 1860-է ասդին անցած կէս դարը անկասկած ազգային վարգաճման և յառաջադիմութեան ժամանակամիջոց մը եղած է, սակայն իրաւացի չէր ըլլար կարծել թէ այս ամէնը պարզապէս տաճկահայոց սահմանադրութեան արդիւնքն է, զի շատ աւելի պատճառներ, ինչպէս դարին պահանջը, միջազգային շփումները, պետական կարգադրութիւնները, օտարաց ձեռնտուութիւնները, նպաստեցին այդ արդիւնքը յառաջ բերելու: Մանաւանդ պէտք չէ մոռնալ որ Ռուսահայեր առանց Տաճկահայոց սահմանադրութեան, անոնցմէ աւելի յառաջացած և վարգաճած կը գտնուին այսօր: Տաճկահայոց դիրքը, որ յատուկ կացութեան, ներքին կազմակերպութեան և ինքնուրոյն վարչութեան առաւելութիւնները վայելած է օսմանեան գահուն հովանաւորութեան ներքև, իրեն հիմ ունեցած է կրօնական սկզբունքը և եկեղեցական կերպարանը, և անով ապրած է միշտ, որով այդ սկզբունքը հնար չէր խախտելու: Ազգին որոշ կանոնադրութիւն մը ունենալը անհրաժեշտ էր, դասակարգերուն ժառանգական կամ նիւթական առաւելութեամբը իրարու վրայ ճոխանալը նոր ժամանակը չէր ներեր, եկեղեցական գործոց մէջ աշխարհական տարին մասնակցութիւնը Հայ եկեղեցւոյ սեփական պարծանքն էր, և այդ հիմերը պէտք էր որ նուիրագործուէին պաշտօնական կանոնադրութեան կամ սահմանադրութեան մէջ: Բայց այդ նպատակները իրականացնելու ձեռնարկողներ աւելի քան աւանդական սկզբունքներէ, իրենց կրթուած տեղւոյն, յայտնի ըսենք գաղղիական երկրին ու մթնոլորտին ազդեցութիւններէն առաջնորդուած իրենց ներշնչումներն առին նոյն երկրին քաղաքական գաղափարներէն և նոյն մթնոլորտով ոգևորուեցան, և կրօնական և եկեղեցական հիմամբ կազմված հասարակութիւնը՝ պարզապէս քաղաքական հասարակութեան մը ձևին կաղապարել յորդորուեցան: Ընդհանուր ժողովին մէջ 20 եկեղեցականի դէմ 120 աշխարհական, վարչական ժողովներու և խորհուրդներու մէջ 24 եկեղեցականի դէմ 62 աշխարհական, թաղական խորհուրդներու մէջ բոլորը աշխարհական, անշուշտ եկեղեցական նշանակութեան նուազման և կրօնական ազդեցութեան տկարացման պիտի առաջնորդէին: Մանաւանդ որ ազգային գերագոյն ատենը բացարձակ համարառուն և ինքնապօր ուղղիչը Ընդհանուր ժողովն էր, որուն 20 եկեղեցականները որոշմանց ոյժին մէջ հապիւ 15% կը կազմէին, պատրիարքն ալ որոշմանց գործադիր պաշտօնեայ մըն էր դարձած, և եկեղեցական գաղափարը աննշանակ տարր էր ուղղութիւն տալու տեսակէտէն: Դիտելի է ևս որ երբ ազդեցութիւն մը կը ջնջուէր, ուրիշ մը չէր կրնար զօրանայ, քանի որ պետական տեսակէտը չէր կրնար ներել որ իր սահմանին մէջ ուրիշ քաղաքական ձև մը կազմուէր, որով թէ հինը կը կորուսէր և թէ նորը չէր ստացուէր: Յունական ազգութիւնը, որուն կանոնադրութիւնը կամ սահմանադրութիւնը Հայ ազգութեան սահմանադրութենէն առաջ կազմուեցաւ, ոչ մնայուն և վարիչ ու համարառու ընդհանուր ժողով ունի, ոչ առանձինն գործող քաղաքական ժողով ունի ոչ աշխարհական խորհուրդներու բազմաթիւ ճիւղեր ունի, և այսօր հայ հասարակութենէն ոչ միայն յետնեալ չէ, այլ և աւելի խաղաղ և կանոնաւոր կեանք կանցունէ, և ազգային կոչուած իրաւունքները աւելի ամուր կերպով կը պաշտպանէ: Երուսաղէմի ընտրողական պայքարը, որով փոքրիշատէ վբաղեցանք և դեռ պիտի վբաղինք, քաղաքական ժողովին արդիւնքն էր, և սահմանադրութեան առաջին օրէն գայթակղութեան քար մը եղաւ, և քիչ մնաց որ սահմանադրութիւնը վտանգէր, մանաւանդ որ միակ ալ չմնաց իր տեսակին մէջ, և սահմանադրական միջոցին Տաճկահայոց կեանքը սոյնտեսակ էութեամբ մանր այլ աղմուկով ծանր խնդիրներու անընդհատ չարայարութիւն եղաւ: Իսկ թէ ինչպէս պետական շրջանակը հաճեցաւ այդպիսի սահմանադրութիւն մը հաստատել, արդէն

տեսնուեցաւ որ պարպապէս հանդարտութիւն պահպանելու բռնադատեալ պիջողութիւն մը եղաւ, որուն հաստատութիւնը տալ տուողն իսկ խեթի հայեցաւ, և նոյն եպարքոսին բերանը կը դրուի, թէ տրուած սահմանադրութիւնը քառակուսի անիւ մըն էր, որ պայն դարձնել ուղևորներուն փորձանքը պիտի ըլլայ: Նորէն կը կրկնենք թէ պատմագիրի անհրաժեշտ անաչառութենէն չխուսափելու տեսակէտէն և այդ տողերուն շարժառիթը:

2732. ԶԷՅԹՈՒՆԻ ԳՈՐԾԵՐ

Սահմանադրութեան գործադրելուն պարագաները չպատմած յիշենք մասնաւոր միջադէպ մըն ալ, որ հետապնդութեանց միջոցին տեղի ունեցաւ: Կիլիկոյ լեռներուն դժուարամատչելի մի մասը կը կազմէ հինն Ուլնիա, յետին ժամանակաց մէջ Զէյթուն կոչուած, ուր ապաստան գտած էր դարերէ ի վեր ափ մը հայ ժողովուրդ, դադարեալ ժամանակաց բեկորներէն մնացած: Հին ատեններու մէջ տիրող և աւանդականի նմանող գրութիւնը, անառիկ տեղերուն ընծայած դիւրութիւնը, նոյն իսկ ինքնուրոյն կացութեանց հանդէպ օսմանեան պետութեան թոյլատու ուղղութիւնը, կայսերութեան վանապան կողմեր պահած էր քանի քանի տեղեր որոք որոշ հարկի մը պայմանով առտնին կառավարուելու արտօնեալ էին: Այսպէս էր և Զէյթուն, որուն կացութիւնը պաշտօնապէս վաւերացուած էր Մուրատ Դ. Սուլտանի 1618 փետրուար 17-ի կայսերական հրովարտակով (ՎՐԺ. 39-42): Զէյթունի մասին ակնարկ մը ըրած կը գտնուինք (2360), զի Զէյթուն վանապան ժամանակներ իր վրայ խօսիլ տուած է, և իր շուրջ աւելի կամ նուազ կարևոր միջադէպներ տեղի ունեցած են, և մինչև իսկ իրենց դիրքը պաշտպանելու առիթներ անցուցած են, այլ միայն այն առիթով որ 1859-ին նորոգուեցաւ: Զէյթունի դրացի է Թէճիրլի, ուր Թիւրքմէն հատուած մը կը մնար Զէյթունցոց նման ինքնուրոյն կացութեամբ: Կառավարութիւնը 1842-ին ձեռնարկած էր վայն նուաճել, Թէճիրլիցիք Զէյթունցիներէ օգնութիւն խնդրած, և միանալով կառավարական յարձակումը ընկրկած էին (ՎՐԺ. 61): Զէյթունցիք կը սպասէին փոխադարձ բարեկամութիւն գտնել, ընդհակառակն շարունակ ընդհարումներ ունեցան, մինչև որ Թէճիրլիցիք 1855-ին պարտութիւն խոստովանեցան և երդումով խոստացան այլևս չարիք չհասցնել Զէյթունցիներուն, որոնց կը հրամայէր Տէր Յովհան քահանայ Ղէրպոյեան, Տէլիքէշիշ մականունեալ (ՎՐԺ. 66), և երբեմն օսմանեան անկանոն գունդերու հապարապետ ալ եղած (ՎՐԺ. 206): Զէյթունցիք իրենց խնդիրները վերջնական կարգադրութեան մը յանգեցնել ուզելով, Մեսրոպ վարդապետը և Մովսէս քահանան Կ. Պոլիս պատգամաւոր ղրկեցին 1859 ին Թէճիրլիցիները Զէյթունէն հեռացնել տալու յաջողեցան, բայց երբ կը ջանային Մուրատ Դ. ի հրովարտակը վերանորոգել տալ, ընդհակառակն Զէյթունը հասարակ գաւառի դիրքին վերածելու հրամանը տրուեցաւ, և Մարաշի կառավարիչ Խուրշիտ փաշա մեծամբոյս բանակով 1860 յունիս 8-ին Զէյթունի առջև երևցաւ, և 12 տարիներու յետնեալ տուրքերը պահանջեց (ՎՐԺ. 66): Զէյթունցիք վլացան Մուրատ Դ. ի հրովարտակին վրայ հիմնուելով պէնքի ալ դիմեցին, և վրանին եկող բանակը իրենց սահմանէն, ձիհան գետէն անդին հալածեցին (ՎՐԺ. 67): Միւս տարին Զէյթուն եկաւ ինքպինքը Լևոն իշխան, և մինչև իսկ Լևոն է. անուանող մէկ մը, որ Զէյթունցիներէ Գաղղիոյ կայսեր Նաբոլէոն Գ. ի ուղղուած հանրագրութիւն մը առնելով Գաղղիա դարձաւ, և մինչև իսկ յաջողեցաւ Նաբոլէոնի Կ. Պոլսոյ Գաղղիական դեսպանին յանձնարարել տալ, որ Զէյթունցոց խնդիրով պաղի: Հետևանքն եղաւ որ օսմանեան կառավարութիւնը խորհեցաւ միանգամ ընդ միշտ ջնջել Զէյթունի լեռնականները, և այդ գործը յանձնեց Մարաշի կառավարիչ Ապիկ փաշայի (ՎՐԺ. 69), որ առիթ քաղելով թուրքի մը դիակին շուրջը բացուած կոիւէն, և Զէյթունցոց կոիւին մասնակցելէն, պահանջեց անոնց չորս իշխանները և 70 յարձակողները իրեն յանձնել որ դատէ, և երբ անոնք մերժեցին, անկանոն գունդերու և գլխաւորապէս Ռուսիայէ

գաղթող Ձէրքէպներու անհղ բազմութեամբ և երկու թնդանոթով Ձէյթունի վրայ յարձակեցաւ: Պաշտպանութեան կէտին վրայ ծագած անհամաձայնութեան երեսէն Ձէյթունցիներու փոքրիկ խումբ մը կորուստով նահանջեց, Ս. Փրկչի վանքը գրաւուեցաւ, Չմշկածագցի Մամբրէ վարդապետ խողխողուեցաւ, բայց Ձէյթունցոց գունդերը երեքի բաժնուելով լաւ գիրքերը բռնեցին, հատուած մը առջևը թողուցին, որ փախուստ ձեռնարկելով թշնամին թակարդի ենթարկեց, մինչ գունդերը Ս. Աստուածածնի վանքը հսկումով և քարոզով և հաղորդուելով գործի կը պատրաստուէին և 1862 օգոստոս 2 հիգաշաբթին իրենց յաջողութեան օր ըրին: Ապիպի բանակը հալածական ետ դարձաւ և ճիհանը անցաւ լեռնականներուն ձեռքը թողլով երկու թնդանոթները, ձիեր և պէնքեր և ուտելիքներ և իբր 2000 հոգի սպաննուած (ՎՐԺ. 76-79), զորս Ձէյթունցի Մուսթաֆա մոլլա թաղել դժկամակեցաւ ըսելով թէ անոնք եկած էին անմեղները և կիներ բռնաբարելու (ՎՐԺ. 80): Սակայն Ապիպի գունդին հալածուիլը կացութիւնը չէր, պարպէր կրնար իսկ աւելի դժուարացնել, ուստի Յակոբ քահանայ և Մնացական Սէմէրճեան պատգամաւոր նշանակուեցան և սեպտեմբեր 27-ին Կ. Պոլիս հասան, երբ կայսերական նոր պատգամ մը կանոնաւոր վորքը շարժման դնել և Ձէյթունը բնաջինջ ընել կը հրամայէր: Նեղ ժամուն Գրիգոր վարդապետ Աբարդեան Ձէյթունէ Կ. Պոլիս և անկէ Փարիզ վրկուեցաւ, ուր Շահնապարեան Կարապետ վարդապետի ձեռնտութեամբ աղերսագիր մատոյց Նաբոլէոնի, նա ալ Ապտիլ Ապիպ սուլտանը ստիպեց հրամանը փոխել, զօրքերը ետ քաշել և դեսպանատան երկրորդ թարգմանը Յուլիոս Ռոպեր երկու պատգամաւորներուն հետ Ձէյթուն եկան մօտէն կացութիւնը հետապօտելու և Ապիպի արշաւանքին մասին Մարաշի մէջ պաշտօնական քննութիւն բանալու, քննիչ մըն ալ պատրիարքարանի կողմէ նշանակելով: Սարգիս պատրիարքի կողմէն այդ պաշտօնին նշանակուեցաւ Եօզղատի առաջնորդ Մատթէոս վարդապետ, բայց անոր ճամբայ չելած վախճանելուն վրայ, պաշտօնը յանձնուեցաւ Կ. Պոլսոյ արուարձան Խասթէօյի Ս. Ստեփանոս եկեղեցւոյն քարովիչ Ներսէս Վարժապետեան երիտասարդ վարդապետին (ՎՐԺ. 86):

2733. ՆԵՐՍԷՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Պատուիրակութեան պաշտօնին կոչուող Ներսէսը նոյն ինքն ապագային հռչակ ստացող Ներսէս պատրիարքն է, և պէտք կը զգանք այժմէն զայն ներկայացնել մեր ընթերցողներուն: Ներսէս իր Վարժապետեան մականունը և իր Պօղոս աւապանի անունը ժառանգած է իր մեծ հօրմէն, Խասթէօյցի Պօղոս երաժիշտ վարժապետէն, Ձէննէ մականուամբ ծանօթ իգականի նման քնքուշ ձայնին պատճառով, որ իր ժամանակին նշանաւոր դէմք մը եղած է քաղցր ձայնովը, երգիչի յաջողութեամբը, երաժշտական հմտութեամբը, և Ջինճիրլի խանին մէջ երգեցողութիւն ուսուցանելովը, որով Բաբերդցի Յովհաննէս պատրիարքէ գրեթէ բանի սարկաւագ կը ձեռնադրուի, և հապի կապատի քահանայ ձեռնադրուելէ (ԱՅՎ. Ա. 116): Թողը Ներսէս Խասթէօյ ծնած 1837 յունուար 28-ին յառաջադէմ, աշակերտ եղած է թագին Ս. Ներսիսեան վարժարանին, և ուշիմութեամբը և անուշ ձայնովը սիրելի եղած է թաղին և վարժարանին խնամակալներուն, որով երբ 15 տարեկան Ստեփան հօրմէն որը կը մնայ և մօրը ու պապիկ քրոջը ու երկու մանր եղբայրներուն հոգը իբրև անդրանիկ իր վրան կը ծանրանայ, թոշակաւոր վարժապետ կը նդունուի 1853 ին, ուսկից 1855 ին ուսուցչութեան պաշտօնով կը փոխադրուի Ադրինաուպոլիս, և 1858 օգոստոս 16-ին առաջնորդ Արիստակէս Ռափայէլեան եպիսկոպոսէ քահանայութեան և արեղայութեան ձեռնադրութիւն կը նդունուի, և քիչ օրէն վարդապետական աստիճան ալ կը ստանայ, և ինչպէս ուսուցչութեամբը, նոյնպէս քարոզչութեամբ ալ համակրանաց կարժանանայ: Այդ միջոցին է որ հայ հռոմէական քարովիչներուն Ադրինաուպոլսոյ մէջ հատատուիլը կարգիլէ իր ջանքերով և քարոզներով: Միւս տարին Խասթէօյի հնօրեայ քարովիչ Յովհաննէս

վարդապետին վախճանելովը, թաղեցիներէն քարոպիչ կուպուի, և Գէորգ պատրիարք հրամանով Խասքէօյ կը հաստատուի 1859-ին: Մայրաքաղաքին մէջ սահմանադրական ճիգերու շրջանն էր, եկեղեցականութեան մէջ ցանցառ էին լուսաւորեալ կոչուած խումբին ձեռնտուներ, Ներսէս հոգևով ու սրտով խումբին կը յարի, և նորահարս երիտասարդութեան աշխոյժով կատարեալ խորհրդակից և գործակից կը գտնուի անոր ամէն պարագաներու մէջ. խումբն ալ չվարանիր անոր բարձրացնել, իբր լեզուագէտ, իբր կրօնագէտ, իբր քարոպիչ և իբր գործիչ, զի իրօք ալ Ներսէս կարդարացնէր իր վրայ դրուած վստահութիւնը: Ներսէս Երուսաղէմի ընտրողական կամ ներսէն-դուրսէն խնդիրին մէջ ալ իր բարեկամ խումբէն չբաժնուեցաւ, և անոնց միտքով կը խօսէր և կը գործէր: Ռումանիոյ այցելու յղուեցաւ 1861-ին, և Կ. Պոլիս դառնալէն ետքը Թրանսիլվանիա ալ գնաց նոյն պաշտօնով, և այդ պատուիրակութեանց մէջ ցուցուցած յաջողականութեան վրայ 1862-ին Ատանայ յղուեցաւ ժողովուրդին մէջ ծագած խնդիրները վերցնելու, և սահմանադրական կանոնները գործադրելու և հոն գտնուելուն առթիւ Մատթէոս վարդապետի տեղ Զէյթունի յանձնաժողովին ալ անդամակից նշանակուեցաւ 1862 նոյեմբեր 3-ին (62. ՄԱՍ. 560): Բայց Ներսէս արդէն Ատանան խաղաղացուցեր և ժողովներ կազմեր էր, և Կիրակոս Բ. կաթողիկոսի հետ ալ անհամաձայնութիւնը հարթելու համար Ատանացի գլխաւորները Սիս էր տարած և կաթողիկոսի հետ հաշտեցուած: Կիրակոս տեսնելով Ներսէսի արդիւնաւորութիւնը և յառաջիկային ալ յօգուտ Կիլիկիոյ գործելու մտադրութիւնը, Ատանացուց ալ խնդրանքով հոկտեմբեր 13-ին Թարգմանչաց և Ներսէսի Շնորհալուոյ տօնին օրը եպիսկոպոս կը ձեռնադրէ 25 ուկէս տարեկան երիտասարդ վարդապետը քանի որ Կիլիկիոյ ժողովուրդը երկար ժամանակներէ ի վեր բանիբուն վարդապետի մը երես տեսած չէր: Գավութեամբ ընդունուած է այն ատեն Ներսէսի Կիլիկիոյ հայութեան նուիրուիլը (62.ՄԱՍ.563), բայց չենք իմանար թէ ի՛նչ հիմամբ Կիլիկիոյ կաթողիկոս մը կրցած է Շիրակայ արքեպիսկոպոս պատուանունը տալ իր ձեռնադրածին: Ներսէս Ատանա դարձեր և եպիսկոպոսական պատարագ մը մատուցեր էր նոյեմբեր 6-ին և պաշտօնագիրներուն կը սպասէր Մարաշ երթալու և յանձնաժողովին մասնացելու, երբ հրամանագիրին հետ Մարաշէ լուր ալ կը հասնի թէ յանձնաժողովը քննութիւնը աւարտած և իր տեղեկագիրը կազմած է, որուն դէմ կայսեր բողոքելու համար Զէյթունէն երկու գլխաւորներ և քահանայ մը իբրև պատուիրակ Ատանա կը հասնի: Այդ պարագային վրայ յարմար կը դատուի որ Ներսէսի եպիսկոպոս ալ պատուիրակներուն ընկերանայ, և այդ նպատակով ճամբայ կելլայ և դեկտեմբեր 9ին Կ. Պոլիս կը հասնի Զէյթուցոց գործին մայրաքաղաքին մէջ օգնելու համար: Բայց Կ. Պոլիս դառնալէն ետքը ոչ միայն Զէյթուցոց դիմումներով կը վբաղի, այլ և անբաժանելի ընկեր և գործակից կըլլայ Մաղաքեան տեղապահին վերջին ճիգերուն որոնք պսակուեցան սահմանադրութեան պետական հաստատութեամբ (2729):

2734. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ

Երուսաղէմի կացութեան մասին ըսած ենք արդէն (2727), թէ ամենայն ինչ առժամեայ կերպով կընթանայ, քանի որ Կ. Պոլսոյ մէջ ալ ակնկալութեանց շրջանը կը տիրէր, բայց անակնկալ պարագայ մը Երուսաղէմի գիրքին վրայ ազդեց: Գերմանիկցի Մեսրոպ եպիսկոպոսը, որ առ ի չգոյէ միաբան եպիսկոպոսի արարողական և հանդիսական պէտքերը կը լրացնէր, վախճանեցաւ 1863 մարտ 13-ին Մեծապահոց հինգերորդ չորեքշաբթին, թէպէտ որ առաջ մարտ 10ին Դատաւորի կիրակէին մեծ հանդէսին թափօրապետ էր եղած (63.ՅԿԲ.34-35): Արդէն տարիէ ի վեր Մեսրոպ տկարացած էր և եպիսկոպոսական ձեռնադրութեան պէտքը անհրաժեշտ էր դարձած, իսկ այս կարգին առաջին ընտրելին Կ. Պոլսոյ փոխանորդ Իսահակ վարդապետն էր, զոր միաբանութիւնը միշտ իբրև պատրիարքոս ներկայացուած էր, բայց Կ. Պոլիսէ հեռացնելն ալ օգտակար չէր, ուստի

վանքին մէջ գտնուողներէն ալ պէտք էր ընտրելիներ յառաջ ածել: Բայց այդ երկրորդ կէտը չհոգացած հարկ տեսնուեցաւ Իսահակի ձեռնադրութիւնը փութացնել, ինչպէս որ իրեն ալ հաղորդուած էր: Մարտ 15-ին Սիմէօն վարդապետ՝ Սէֆէրեան անոր բացակայութեան փոխանակելու ընտրուեցաւ, և մարտ 20 թուականով ընծայական գիրերը պատրաստուեցան թէ կաթողիկոսին և թէ տեղապահին հասցէին (ԵՂՄ.169-174), և նոյն օր Սիմէօն ուղևորուեցաւ, և Կ. Պոլսոյ աթոռին ապրիլ 9 թուակիր յանձնարարականներն ալ ստանալով (ԵՂՄ.172-173), ապրիլ 13-ին Իսահակ Կ. Պոլիսէ մեկնեցաւ (63.ՄԱՍ.583), և Մատթէոս կաթողիկոսէ ձեռնադրութիւն ստանալով յուլիս 17-ին Կ. Պոլիս դարձաւ (63.ՄԱՍ.397): Վանական պէտքերու համար ալ գոնէ երկու եպիսկոպոս պէտք էր, որոնց մին արդէն պաշտօնովը կընծայուէր, Մարտուանցի Կարապետ Ներսէսեան վարդապետը, որ Ս. Մինաս գանձատան երկու տարի փակ և վարդերուն անտեսանելի և անինամ մնալուն վրայ, վերջապէս 1862 դետեմբեր 17-ին աւագ տօներէն օր առաջ լուսարարապետ ընտրուած էր: Երրորդի մը համար ընտրութիւնը դժուար չեղաւ, զի Յակոբ վարդապետ Յովհաննէսեան Տիարպէքիրցի միշտ գործունեայ դեր վարած և արդիւնաւոր եղած էր միաբանական պայքարի ընթացքին: Միաբանութիւնը անհակառակ համաձայնեցաւ այդ երկու անուններուն վրայ, Կ. Պոլսոյ պատրիարքարանն ալ հաւանութիւնը տուաւ, ինչպէս Սիմէոն վարդապետէ լուր հասաւ մայիս 19-ին (63.ՅԿԲ.93), և մայիս 27-ին ընծայական և յանձնարարական գիրերը պատրուաստուեցան (63.ՅԿԲ.99), և միւս օր 28ին ընծայեալները հանդիսապէս ուղևորեցան ցամաքի ճամբով Էջմիածին երթալու (63.ՅԿԲ.100): Մայիս 31-ին Յոպպէէ կը նաւեն և յունիս 8-ին Իսկէնտէրունէ ճամբայ կելլեն և 11-ին կը հասնին Բերիա, ուսկից կը մեկնին 18-ին և 23-ին կը մտնեն Եդեսիա, և յուլիս 1-ին Տիարպէքիր: Անտի ալ կը մեկնին 8-ին և 18-ին կը հասնին Գլակայ Ս. Կարապետի վանքը, ուսկից կը մեկնին յաջորդ օրը 14-ին, և 18-ին կը մտնեն Կարին և կը հիւրընկալուին Վեհապետեանէ (2652), որ երեք տարի առաջ 1860 յունիս 2-ին եպիսկոպոսական ձեռնադրութիւն առած էր Մատթէոս կաթողիկոսէ: Յուլիս 22-ին Կարինէ կը մեկնին և Բասենի և Կարսի և Աղեքսանդրապոլի ճամբով, և Օշականի ու Մուղնու վրայէն կիջնան Արարատի դաշտը, և վերջապէս օգոստոս 9-ին կը մտնեն Էջմիածին 74 օրեայ ճամբորդութեամբ: Օգոստոս 12-ին ծայրագունութիւն կընդունին սուրբ կաթողիկէին փակակալ Եդիպար արքեպիսկոպոսէ, 13ին երգման արարողութիւնը կը կատարուի, և 15-ին Աստուածածնայ պահոց հինգշաբթի օրը եպիսկոպոսական ձեռնադրութիւն կընդունի Մատթէոս կաթողիկոսէ, 17-ին Շողակաթի օրը միւղունի օրհնութեան կը մասնակցին, և 21-ին կը մեկնին Էջմիածինէ դառնալ Երուսաղէմ միևնոյն ցամաքի ճամբով, ուր հապիւ դեկտեմբեր 26-ին կը հասնին 128 օր ետքը, զի ճամբան առաջ Կարապետ և յետոյ Յակոբ կը հիւանդանան, և Իսկէնտէրունէ Յոպպէ նաւած ատեննին ալեկոծութեան պատճառով Աղեքսանդրիա կիյնան: Նոր ձեռնադրուած եպիսկոպոսները կատարեն Ս. Գլխադիրի տօնը դեկտեմբեր 28-ին շաբաթ օր, Կարապետ քարուղելով և Յակոբ պատարագելով (63. ՅԿԲ. 192-196), և միաբանութիւնը կարծես թէ կոգևորուի, վանպի երեք միաբան եպիսկոպոսներ ունենալը յաւել ի միաբանութիւն նորագոյն եռանդն և խնդութիւն և մխիթարութիւն, որով համարէին ապահովացեալ զիրաւունս սրբոյ աթոռոյն ընտրելոյ պատրիարք ի միաբանութենէ (ՍԱԻ. 1380): Մինչև որ Երուսաղէմի աթոռը քիչուշատ ապահովուած կացութիւն ստանար, արդէն Կ. Պոլսոյ մէջ սահմանադրական վարչութենէ հաստատուած և նոր պատրիարք ալ ընտրուած էր:

2735. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ

Սահմանադրութիւնը իրականացնելու պաշտօնով ընտրուած տասներու գործադիր և վարիչ մարմինը (2729), անմիջապէս գործի ձեռնարկեց Ստեփան Ասլանեան բժշկապետի

ատենապետութեամբ, և թէպէտ կարևորագոյն գործը պատրիարքի ընտրութիւնն էր, բայց պէտք էր նախապէս վարչական ժողովներ, Ընդհանուր ժողով, և թաղական խորհուրդներ կազմուէին, և ընտրողներ որոշուէին ուստի նախ և առաջ թաղական և երեսփոխանական ընտրողներ պատուեցան 25 և 75 դահեկան տարեկան տուրք վճարելու սկզբունքով: Սահմանադրութեան նախնական կազմութեան երրորդ տարեդարձն ալ որ մայիս 24-ին կիյնար, կիրակի 26-ին աւելի շքեղ կերպով տօնուեցաւ, Հիւնքեարիսկէլէսի վթուսավայր, որ օր իտալական թագաւորութեան սահմանադրութեան տարեկան հանդէսն ալ կը կատարուէր նոր տոմարով յունիսի առաջին կիրակի օրը, նոյն վթուսավայրին մէջ: Եկեղեցական արարողութեանց հանդիսագիրը Ներսէս եպիսկոպոսն էր Պէյքօզի Ս. Նիկողայոս եկեղեցւոյն մէջ, և երկու տօնական խումբերու փոխադարձ այցելութիւններն ու շնորհաւորութիւնները հանդէսին փայլը աւելցուցին (63.ՄԱՍ.590), որ արդէն նոր ոգևորութիւն ստացած էր պետական հաստատութեան հետևանք: Թաղական խորհուրդներու ընտրութիւնը հրամայուեցաւ յունիսի վերջերը, և մայրաքաղաքի 80 երեսփոխանները բաշխուեցան, Գումբարու 13, Սամաթիա 10, Բերա 10, ութը թաղեր 4-6, և մնացած 11 թաղեր 1-2 (63.ՄԱՍ.599): Եկեղեցական 20 երեսփոխաններ ընտրուեցան օգոստոս 10-ին, և քուէ ստացան 4 եպիսկոպոսներ, Սարգիս, Իսահակ, Ներսէս և Յովհաննէս, 4 վարդապետներ և 12 քահանաներ (63.ՄԱՍ.601): Իսկ մայրաքաղաքի 80 երեսփոխաններու ընտրութիւնները լրացան սեպտեմբերի սկիզբները (63.ՄԱՍ.605), և սեպտեմբեր 20-ին առաջին նիստը տեղի ունեցաւ 81 երեսփոխանաց ներկայութեամբ, որուն մէջ Սերովբէ Վիչէնեան ատենապետ և Գրիգոր Օտեան ատենադպիր ընտրուեցան (63.ՄԱՍ.606): Վարչական ժողովներու քուէարկութիւններն ալ սկսան, բայց յաջորդ երեքշաբթի լրացան 23-ին, և կրօնականին մէջ առաւելագոյն քուէ ստացողը Ներսէսն էր, իսկ ամբողջութիւնը կը պարունակէր 2 եպիսկոպոս, 3 վարդապետ և 9 քահանայ. իսկ քաղաքականի 20 անդամներ, ինչպէս նաև աշխարհական երեսփոխանները, գրեթէ ամբողջութեամբ, դիրքով և վարձացմամբ և պաշտօնով և գործունէութեամբ ծանօթ անձերն էին: Սեպտեմբեր 30-ին կրօնական ժողովը կազմուեցաւ և Ներսէս եպիսկոպոս ատենապետ ընտրուեցաւ, իսկ երկրորդ ատենապետը և երկու ատենադպիրները քահանաներէ առնուեցան (63.ՄԱՍ.608): Հոկտեմբեր 5-ին համագումարը պատրիարքական ընտրեալեաց ցանկը պատրաստեց որուն առաջին եօթները քուէից կարգով եղած էին Իգնատիոս Վանայ 26, Պողոս Չմիւռնիոյ 24, Սարգիս նախորդ պատրիարք 20, Թադէոս Ռոտոսթոյի 20, Արիստակէս Ագրիանուպոլսոյ 12, Մկրտիչ Գաղատիոյ 12, Ստեփանոս տեղապահ 11: Իսկ քաղաքականը, որուն ատենապետ ընտրուեցաւ Ստեփան Ասլանեան, հնգանուն ցանկը կազմեց քիչ մը փոփոխելով: 1. Պողոս Չմիւռնիոյ, 2. Իգնատիոս Վանայ, 3. Գէորգ նախկին պատրիարք, 4. Ստեփանոս տեղապահ, 5. Մկրտիչ Գաղատիոյ (63. ՄԱՍ. 609): Վերջապէս Ընդհանուր ժողովը գումարուեցաւ շաբաթ օր, հոկտեմբեր 12-ին, և 80 ներկաներէն 40 քուէ ստացաւ Պողոս և 24 Իգնատիոս և հարկ եղաւ համեմատական քուէարկութեան դիմել, որ լրացաւ երեքշաբթի հոկտեմբեր 15-ին, և 90 քուէարկուներու 58 քուէով պատրիարք հռչակուեցաւ Չմիւռնիոյ առաջնորդ Պողոս եպիսկոպոս Թաքթաքեան: Այսպէս ազգին կամ պատրիարքարանին սահմանադրական կազմութիւնը լրացան ըլլալով, իւրաքանչիւր մարմին ձեռնարկեց իրեն ինկած մանրամասնութիւնները կարգադրել և սահմանագրական օրէնքին պահանջած օժանդակ մարմիններէն վատ, բացառիկ յանձնաժողովներ ալ կազմել առձեռն կանոնագիրներու, գաւառական գործադրութիւններու և ուրիշ նմանօրինակ առժամեայ գործողութեանց հսկելու և փութացնելու համար (63. ՄԱՍ. 610):

Պաշտօնական գործողութիւնները իրենց չորուցամաք ձևակերպութեանց մէջ ալ հոգեբանական նշանակութիւններ կը պարունակեն, ուստի կատարուած պատրիարքական ընտրութեան մասին անդրադառնալիս աւելորդ պէտք չէ սեպուի: Ստեփանոս Մաղաքեան եպիսկոպոս, որ այնչափ մեծ վստահութեամբ և ամենադժուարին պարագայից մէջ պաշտօնի կոչուեցաւ, և աւելի քան պարզ տեղապահ մը, առժամեայ պատրիարք մը ըլլալու սահմանուեցաւ, և 1861 հոկտեմբեր 21-էն մինչև 1863 հոկտեմբեր 15 լման երկու տարիներ ազգին ղեկը վարեց ալեկոծեալ կացութեան մէջ, և առանց իրեն վրայ անձնական գանգառ հրաւիրելու իրմէ սպասուած գործը յաջողութեամբ լրացուց, և հաստատուած սահմանադրութիւնը ազգին ընծայեց, աւելի մեծ վկայութիւն մը կրնայ սպասել ազգին կողմէն, քան թէ համագումարի եօթնանունին վերջինը, և քաղաքականի հնգանունին վերջընթերը, և Ընդհանուրի քուէարկութեան մէջ մէկ քուէ մը միայն ստացած ըլլալը: Բայց այդ երևոյթը պէտք չէ իբր նախատական նկատել Մաղաքեանի անձին: Բնութեամբ հեզահամբոյր և հանդարտ, համակերպող և երկայնամիտ, յարմարագոյն ընտրելին էր երբոր դժուարին ժամանակներու մէջ այդ ձիրքերն էին որ վարիչին վրայ կը պահանջուէին, բայց տարբեր անձ էր փնտռուէր երբոր ամէն դժուարութիւն հարթուելով և կացութիւնը հանդարտելով ժիր և աշխոյժ, նախաձեռնարկ և հաստատամիտ անձ մը պէտք էր գործերուն գլուխը: Ինքն Մաղաքեան ալ իր թնոյթին և իր կարողութեան գիտակ՝ առջի օրէն ամէն կողմ դիմած էր, որ զինք ազատ թողուն, և ժողովներու մէջ ալ պաշտօնապէս կրկնած էր, և Ընդհանուր ժողովի մէջ համարձակ խոստովանութիւններ ըրած էր այդ մասին, և կերպով մը իր բաղձանաց համաձայնելու ձևերը էին եղած քուէարկութիւնները: Միւս կողմէն Սերվիչեն ատենապետ պատրիարքական ընտրութենէն առաջ լիաբերան դրուատիք խօսած էր Մաղաքեանի երկամեայ պաշտօնավարութեան մասին, և ազգովին երախտագիտութիւն յայտնած անոր բարեբաստիկ յաջողութեան համար: Իսկ Թաքթաքեան Պօղոս եպիսկոպոս որ պատրիարքութեան կը բարձրանար, թէպէտ արդէն 64 տարեկան, բայց ժիր էր կատարեալապէս կամքի և գործի տէր: Մաղաքեան և Թաքթաքեան սրտագին կապուած էին իրարու իբրև Արմաշու Գործակից միաբաններ, և Թաքթաքեան ամէնուն ծանօթ էր իբր Արմաշու վանքին և Նիկոմիդիոյ վիճակին վրայ Գարագօշեանի և Աղաւնիի փոխանորդ, և իբր Աղաւնիի խորհրդական պատրիարքարանի մէջ, և յամենայնի ցուցած գործոց հմտութեամբ և արդիւնաւոր գործունէութեամբ: Չմիւռնիոյ վիճակին մէջ ալ յայտնած էր գնահատելի պաշտօնավարութեամբ, յառաջդիմական և ուսումնական զգացումներովը, և գործերու մէջ ճարտար և յաջողակ կարողութեամբը, ուստի յարմարագոյն անձը նկատուեցաւ նորահաստատ սահմանադրական կարգերը իրականացնելու և ապահովելու: Աւելցնենք նաև որ ինքն երեք տարիներէ ի վեր մայրաքաղաքէն հեռու ըլլալուն, մղուած պայքարներէ անմասն էր, կուսակցութիւններէ ազատ, և նախապաշարեալ և կանխադիտեալ գաղափարներէ զերծ, որով կրնար աւելի դիւրութեամբ վանալան կարծիքները միաբանել, տարբեր տեսութիւնները մօտեցնել և անձնականութիւններէ ազատ և անկախ կերպով լոկ օրինաւորութեանց հետևող ըլլալ: Թաքթաքեանի ընտրութիւնը շուտով կայսերական հաստատութիւնը ստացաւ, և հրաւիրակներ Ներսէս եպիսկոպոսի գլխաւորութեամբ հոկտեմբեր 30-ին Չմիւռնիա մեկնեցան, առքունական շոգենաւ մըն ալ պատրիարք բերելու տրամադրուեցաւ, Չմիւռնիոյ մէջ պետական և ազգային պատիւներ շոայլուեցան, նորընտիրին, որ նոյեմբեր 5-ին երեքշաբթի առտու Եէնիքաբու ցամաք ելաւ, Իսահակ եպիսկոպոսի գլխաւորութեամբ եկող պատգամաւորութենէ ընդունուեցաւ, և 7-ին հինգշաբթի օր Ընդհանուր ժողով գումարուեցաւ, տեղապահը ատենաբանեց, պատրիարքին ուխտը կատարեց, օրհնութեան և բացատրութեան խօսքեր ըրաւ, և շնորհակալութեանց ճառեր լուեց (63. ՄԱՍ. 613): Իսկ 14-ին դարձեալ հինգշաբթի

օր կայսերական ընդունելութեամբ պատուուեցաւ, բարձրագոյն դուռն ալ այցելէ, և մայրեկեղեցւոյ մէջ կրկին օրհնութիւններ խօսեցաւ և հանդիսական և արարողական պայմանները փակելով, սկսաւ ժողովոց նախագահել և ազգային գործերու տիրանալ:

2737. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Պատրիարքարանի վարչութեան կանոնաւոր վիճակ առնելէն ետքը, դիւրին է իմանալ թէ ինչ ընթացք ունեցան ազգային գործերը, և որովհետև այլևս միջադէպներ և փոփոխութիւններ կանհետանան կամ կը նուազին, պատմագիրին մտադրութիւնը հետաքրքրութիւնը շարժող պարագաներ ալ կը պակսին: Ինչ որ իբր նկատելի կէտ մը պիտի յիշենք, սահմանադրական բուռն եռանդին յանկարծ պարպիլն է, որով Ընդհանուր ժողովոյ գումարումներ յաճախ անհնարին կը դառնային ներկայից թիւն պակասութեանը պատճառով, և ժողովներ և խորհուրդներ չէին կրնար օրինաւորապէս գործել շարունակեալ և յաճախեալ հրաժարականներու երեսէն: Այդ դժուարութեան հանդիպեցաւ Երուսաղէմի պատրիարքական ընտրութիւնն ալ, որուն Թաքթաքեան շուտով ձեռք վարկաւ, զի իբրև փորձառու վանական լաւ կը զգար Երուսաղէմի ընտրութեան անհրաժեշտութիւնը: Այդ նպատակին համար յատուկ Ընդհանուր ժողով հրաւիրեց 1863 դեկտեմբեր 6-ին, որ է ըսել գործի ձեռնարկելէն միայն 22 օր ետքը (63.ՄԱՍ.617), ուր ներկաներէն 42 երեսփոխաններ միայն վարչութեան առաջարկութիւններուն հաւանեցան, սակայն օրինական որոշում չկրցան կայացնել: Յաջորդ գումարումներն ալ ապարդիւն մնալուն, պատրիարքը իր տեսակին մէջ նոր ձև մը մտածեց, այն է մասնաւոր նամաներով հաւանութիւններ հաւաքել վարչական առաջարկութեանց վրայ, և այսպէս լրացնել օրինական թիւը, ինչ որ յաջողեցաւ կատարել, և 1864 յունուար 21-ին պաշտօնական ծանուցումով հրատարակեց: Որոշուած կէտերն էին, ընտրութիւնը կանխել և յետոյ կանոնագիրին աշխատիլ: Վեղարաւորներէն վատ սարկաւագներն ալ ձայնի տէր ճանչնալ, ձևակերպեալ միաբանական ժողովով նորէն տեղապահի ընտրութիւն կատարել (64.ՄԱՍ625): Այս հիմանց վրայ գործի ձեռնարկուեցաւ, և փոխանորդ Իսահակ եպիսկոպոսի ձեռքով փետրուար 26-ին հրահանգ յղուեցաւ Երուսաղէմ (64.ՄԱՍ.629), ուր ապրիլ 9-ին միաբանական ժողովը կազմուեցաւ, 10-ին տեղապահութեան համար կանոններ գրուեցան, որ առանց Տնօրէն ժողովոյ կեդրոնին հետ չթղթակցի, և յատուկ օգնական ու յատուկ քարտուղար ունենայ, որ թղթակցութեանց և հաշուոց տոմարներ պահէ, և 11 ին տեղապահի ընտրութիւն կատարուեցաւ յանձին Յակոբ եպիսկոպոսի (ՍԱԻ. 1383): Արդիւնքը վարչութեան հաղորդուեցաւ, որ փութաց եղած ընտրութիւնը մերժել խժրժեալ պատճառներով, բայց իսկապէս Յակոբի անձին դէմ կազմուած հին հակակրութեամբ (2715), և նոր ընտրութիւն հրամայուեցաւ: Հեռագրական հաղորդակցութիւնը գործը շտապուցին, այնպէս որ ապրիլ 23-ին կրցաւ նոր միաբանական ժողով գումարուիլ 33 միաբաններու ներկայութեամբ ուր առաջին քուէարկութեան Յակոբ եպիսկոպոս 10 և Վրթանէս 7 քուէ, իսկ երկրորդին Վրթանէս 17 և Յակոբ 14 քուէ ստացան (ՍԱԻ. 1384), հարկաւ միաբանները կեդրոնին ուղղութիւնը տեսնելով չուկեցին պնդելով գործը յապաղել, և ապրիլ 30-ին տեղեկագիրը յղեցին: Վրթանէսի տեղապահութիւնը կեդրոնէն հաստատուեցաւ և պատրիարքի ընտրութեան հրահանգն ալ հասաւ յունիս 21-ին (64.ՅԿԲ.39): Երուսաղէմի մէջ նախապատրաստական գումարումներ տեղի ունեցան յունիս 27-ին, ընտրող ճանչցուեցան 35 ներկայք, 2 եպիսկոպոս Կարապետ և Յակոբ, 25 արդապետ և 8 սարկաւագ. իսկ ընտրելի ճանչցուեցան 26 վեղարաւորներ 35 տարին լրացուցած և իրաւոնքէ չզրկուած, որոնմէ 2-ը եպիսկոպոս, Իսահակ և Յակոբ, զի Կարապետ ցկեանս լուսարարապետ ըլլալուն ընկալեալ սովորութեան համեմատ պատրիարքութեան ընտրելի չէր նկատուեր: Քուէարկութիւնը կատարուեցաւ յունիս 29-ին, Լուսաւորչի պահոց երկուշաբթի օրը և եօթանուն ցանկին մէջ մտան

Իսահակ եպիսկոպոս Աստուածատուրեան 31 քուէով, Յակոբ եպիսկոպոս Յովհաննէսեան 16, Սիմէոն վարդապետ Սէֆէրեան 15, Յովհաննէս վարդապետ Մարգարեան 12, Եսայի վարդեպատ Կարապետեան 11, Ներսէս վարդապետ Գէորգեան 11, և Խորէն վարդապետ Միսիթարեան 11: Մնացեալ ներէն մէկ մը 8, երկուք 7, երկուք 5, երեք 4, մէկ 3, երեք 2, չորս 1 քուէ առած էին և 3 բնաւ առած չէին (ԵՂՄ.175-189): Ըստ այսմ յուլիս 2-ին տեղեկագիրը պատրաստուեցաւ և ստորագրուած ցուցակներով Կ. Պոլիս յղուեցաւ: Վարչութեան խառն ժողովը յուլիս 30-ին եօթնանունին վրայէն եռանուն ցանկը կազմեց Սիմէոն և Եսայի և Ներսէս վարդապետներու անուններով, օգոստոս 7-ին Ընդհանուր ժողովը ապարդիւն անցաւ, և վերջապէս օգոստոս 14-ին Աստուածածնայ պահոց ուրբաթ օրը ընտրութիւնը լրացաւ, և 80 ներկայ երեսփոխաններէն 48 քուէ ստացաւ Եսայի վարդապետ, 30 Իսահակ եպիսկոպոս, և 1 Յակոբ եպիսկոպոս և Սիմէոն վարդապետ, որով Եսայի վարդապետ Կարապետեան պատրիարք հռչակուեցաւ (64.ՄԱՍ.653), նախորդ պատրիարք Յովհաննէսի մահուանէն 3 տարի և իբր 8 ամիս անցնելէն և փոթորկալից անցուդարձերէն ետքը: Լուրը ստացուեցաւ Երուսաղէմ երեք օր ետքը օգոստոս 17-ին Աստուածածնայ մեռելոցի օրը հեռագրական միջոցով (ՍԱԻ.1385):

2738. ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

Այդ ընտրութիւնը թէ նախընթացաբար տեղի ունեցան խնդիրներով և թէ կատարման պարագաներով կերևոր տեսութեանց առիթ կընծայէ, զորս դարձեալ անկաշկանդ կերպով պիտի ներկայենք ի յագուրդ անոնց, որ պատմութեանց մէջ չոր եղելութիւններէն աւելի անոնց հոգեբանութեամբը կը շահագրգուի: Ընտրեալը վերջապէս միաբաններէն առնուեցաւ, դուրսէնական դրութեան լուսաւորեալ պաշտպաններ տեղի տալ ստիպուեցան, և ներսէնական դրութեան պաշտպան միաբանութիւնը և իր համախոհները դատերնին շահած եղան: Այդ կէտին մէջ շատ աւելի վեհանձն երևցած պիտի ըլլար լուսաւորեալ խումբը, եթէ վերջին վայրկեանին չպիջանէր փոքրոգի վրէժխնդրութեամբ միաբանութեան բաղձանքին և կամքին հակառակ ընտրութիւն կատարել: Ընտրելեաց ցուցակը որուն մէջ 35 քուէարկուներէն 31 քուէով Իսահակ իբր ընդհանուր փափաքուած ընտրելի կը ցուցուէր, պէտք էր իր ծանրակշռութիւնը ունենալ և յարգուէր, և ոչ թէ եօթնանուն ցանկին, վերջինները, որ և ոչ մէկ երրորդ քուէն ստացած էին, ամբողջական քուէ ստացողին նախադասուէին: Մանաւանդ որ նախընթաց վէճերուն մէջ բարձրաբարբառ կը քարոզուէր և կը պահանջուէր որ ընտրելին արդէն եպիսկոպոս պէտք է եղած ըլլայ, և միաբան եպիսկոպոս չգտնուելուն համար դուրսէն եպիսկոպոսը անհրաժեշտ կը ցուցուէր, իսկ այս անգամ միաբան եպիսկոպոսները կը յետաձգուէին և նորահաս վարդապետներ առջև կանցնէին: Եւ ոչ ալ հնար էր Իսահակի վրայ որ է պակասութեան կամ ապիկարութեան կամ անբաւականութեան խժրժանք դնել, զի կոնդակին մէջ ալ իր գործունէութեամբը յարգուած էր, ժողովական ընտրուած էր, և սահմանադրութեան հաստատութեան համար թափուած աշխատութիւններուն մէջ իր յատուկ տեղը ունեցած և իր արդիւնաւոր դերը վարած էր ընդհանուր վկայութեամբ: Միայն թէ որովհետև զօրաւոր գործիչ մը եղած էր դուրսէնական դրութեան դէմ, իր միաբանութեան իրաւանց ամուր պաշտպան եղած էր և Կ. Պոլսոյ պատրիարքարանին և վարչութեան արգիլած էր Երուսաղէմի հասոյթներուն տիրանալ և գործերուն տիրապետել, և որովհետև վերջապէս նա էր որ կը յաղթանակէր, լուսաւորեալ խումբը իրեն կարելի վրէժխնդրութիւնը կը լուծէր պայն ընտրութենէ պրկելով: Սակայն ամբողջ Ընդհանուր ժողովը այս միտքէն չէ եղած, զի Իսահակի անունը եռանուն ցանկին մտած չըլլալով ալ 30 քուէ ստացաւ անկախ երեսփոխաններէ, և եռանունէ դուրս Յակոբի տրուած քուէն ալ հաշուելով, միայն 10 քուէ ետին մնացած կըսուի Իսահակի ընտրութիւնը, հակառակ քաղաքական ժողովին և իր խումբին

ճիգերուն: Միւս կողմէն երեսփոխանութիւնը, գոնէ արժանեօք և արգասեօք ծանօթ մէկ մը դիմադրած ըլլար իրեն անհամակիր եղող անձին դէմ: Եսայի վարդապետ բնիկ Թալասցի 1825-ին ծնած (ՍԱԻ.1390), և հետևաբար տակաւին 39 տարեկան, թէպէտ այլուր 41 ամաց նշանակուած է (ԵՂՄ. 183), մինչև 20 տարեկան ըլլալը հիւսնութեան պարապած էր և վանքին մէջ ալ ուսումնական ընթացք չէր կատարած, վարչական պաշտօնի վրայ չէր եղած, բոլոր իր մտադրութիւնն ու ջանքը ձեռագործ արհեստներու դարձուցած էր (ՍԱԻ. 1396), քանի մը տարի Կ. Պոլիս, մէկերկու ամիս ալ Եւրոպա շրջած էր պարպապէս լուսանկարչութեան արհեստը ձեռք ձգելու նպատակով, և այդ պարագաներուն մէջ ալ և ոչ իսկ օտար լեզուի մը հմտացած էր, և ուրիշ առաւելութիւն չէր ներկայէր, բայց եթէ Կեսարացի ծագումը, փառաւոր կերպարանը, և Եւրոպայի քովէն անցած ըլլալը: Արդէն իր պաշտօնավարութիւնն ալ պիտի տեսնենք որ այժոյն և վանքի խոհական և կշռադատեալ արդիւնք մը չարտադրեց: Միաբանութիւնը միշտ կասկածով կը նայէր դուրսիններուն և դուրսէնականներուն, թէ աւելի քան Երուսաղէմի այժոյն և միաբանութեան և սուրբ տեղեաց օգտին հետևելու, Երուսաղէմէ օգտուելու նպատակին կը ծառայեն, և այս վերջին ընտրութիւնը լիովին արդարացուց միաբանութեան կասկածը, զի կեդրոնը չուզեց ունենալ զօրաւոր և կարող մէկ մը, այլ այնպիսի մէկ մը. որուն վրայ կարենայ դիւրաւ ազդեցութիւն, և եթէ հարկ տեսնայ ճնշում ալ գործածել: Այդ տեսութիւններ միաբանութեան անծանօթ չէին, այսու հանդերձ անհակառակ ընդունուեցաւ կատարուած ընտրութիւնը, զի մեծ խնդիրին կարևոր կէտեր ապահովուած էր, միաբան մըն էր ընտրուածը, ով ալ ըլլալը, և հնար էր անոր ուղղութեան և գործունէութեան վրայ պէտք եղած զգուշաւորութիւնն ու հսկողութիւնը գործածել կանոնական միջոցներով:

2739. ԵՍԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ

Կ. Պոլսոյ վարչութիւնը նորընտիր Եսայի վարդապետը Կ. Պոլիս առաջնորդելու համար հրաւիրակներ նշանակեց, պատրիարքի գաւապանակիր Ստեփան վարդապետը և Սամաթիոյ Արիստակէս քահանայն, որոնք օգոստոս 26-ին ուղևորելով (64.ՄԱՍ.655), սեպտեմբեր 5-ին Երուսաղէմ հասան (64.ՅԿԲ.63), 9-ին միաբանական ժողովով ընծայագիրներ պատրաստուեցան նորընտիրին ձեռնադրութեան համար (64.ՅԿԲ.66), որ 10-ին մեկնեցաւ Յոպպէ հրաւիրակներով և ընկերակիցներով (64.ՅԿԲ.67), և Կ. Պոլիս հասաւ 21-ին, և 26-ին ալ մեկնեցաւ անտի Էջմիածին երթալու Սէֆէրեան Սիմէոն վարդապետի ուղեկցութեամբ (64.ՄԱՍ.659), ուր Մատթէոս կաթողիկոսէ եպիսկոպոսական ձեռնադրութիւն կընդունի հոկտեմբեր 10-ին Թագրմանչաց շաբաթ օրը (64.ՅԿԲ.107), և նոյն նոյեմբեր 19-ին Տփղիս հանդիպելով (64.ՄԱՍ.669)) Կ. Պոլիս կը վերադառնայ դեկտեմբեր 3-ին (64.ՄԱՍ.669), և 5-ին լուր կառնուի յԵրուսաղէմ (64.ՅԿԲ.151): Բայց Եսայի չի փութար Երուսաղէմ դառնալ մտադիր ըլլալով ժամանակ մը Կ. Պոլիս մնալ և կեդրոնական վարչութեան հետ բանակցիլ առ ի կարգադրել զգործս սուրբ այժոյն Երուսաղէմի (ՍԱԻ.1390), իրեն աջակից ունենալով Իսահակ եպիսկոպոսը և Սիմէոն վարդապետը, որոնք աւելի հմտութիւն և վարժութիւն ունէին Կ. Պոլսոյ ազգային գործերու մասին: Կեդրոնական վարչութիւնն ալ կուզէ պահ մը նոր պատրիարքը իր մօտ պահել, գլխաւորապէս Երուսաղէմի սնտուկէն տարեկան 120,000 դահեկան գումարին վճարումը ապահովելու համար, որ Իւսկիւտարի ձեմարանին հիմնարկութենէն ծագում առած էր (2539), և Կիրակոսի ընտրութեան առթիւ նոր հաստատութիւն ստացած էր (2611) բայց ձեմարանի դադարելովն ալ կեդրոնը գումարին վճարումը կը հետապնդէր, Հայկապնեան վարժարանի պարտքն ալ անով կը ջանար կարգադրել (2701), և իր ընտրած անձին հաճոյակատարութենէ օգտուիլ կը մտադրէր: Սակայն այնպիսի հաստատուն սկզբունքներ կան միաբանութեանց մէջ, որ բնաւորութեանց և անձնականութեանց

տարբերության ներքև ալ չեն փոփոխուիր, և Եսայի ալ չէր կրնար այդ մասին կեդրոնը գոհացնել, և իր աջակիցներն ալ վայն իր բերմանց չէին թողուր: Վարչական ժողովը մտադրեալ պահանջին հետ նորընտիրին վրայ կը ծանրանար Երուսաղէմը օժտել վարգացուն դպրատունով և տիպար տպարանով և ճոխ թանգարանով, որոնք առատ և ապահով միջոցներու կը կարօտէին, մինչ Երուսաղէմի հասոյթը ուխտաւորութեանց պատահական դիպուածներէ կախում ունէր, իսկ ծախքը սուրբ տեղեաց խնդիրներու երեսէն կաճէր: Վարչական կրկին առաջարկներ վիրար կեղծանէին, ուստի Եսայի և Իսահակ ճարտար դարձեալով միոյն կամ միւսին դադարումը անհրաժեշտ ցուցուցին, և վերջապէս կեդրոնը չկրնալով Երուսաղէմը անխնամ թողլու կողմը հակիլ, ստիպուեցաւ տարեկան վճարումի դադարումը յանձն առնուլ, և այսպէս հարթուեցաւ երկար տարիներէ հետէ քար գայթակղութեան դարձած խնդիր մը, և յաջողութիւնը բարեգուշակ համարեցաւ Եսայիի պատրիարքական պաշտօնին, և կերպով մըն ալ իր գործունէութեան մասին ակնկալութիւններ արթնացուց (ՍԱԻ. 1392-1939): Բայց այս գրեթէ միակ արդիւնքն եղաւ Եսայիի չորս ամիս Կ. Պոլիս դեգերելուն. Վի ինչ որ իր ունակական բերմանց համեմատ, լուսանկարչական գործարանի կատարելագործման և կալվանանեան գրութեամբ ստեղծագործութեան համար պատրաստութիւններ կատարեց, աթողին բնութեան համաձայն և իսկական օգուտներու գործեր չէին կրնար սեպուիլ: Երուսաղէմի նոր կանոնագիրին ընդհանուր ժողովոյ կողմէն քննուելուն և հաստատուելուն երկարիւն ալ պատրիարքի ոգևորութիւնը արգիլեց (65. ՄԱՍ. 683), և ստիպուեցաւ բաւական ժամանակ Կ. Պոլիս դեգերել մինչև որ գումարման մէջ, և նոյն օր Եսայի պատրիարք յատենի ժողովոյն ուխտն ալ կատարեց (65. ՄԱՍ.684), ինչպէս որ նոյն կանոնագիրի 2-րդ յօդուածին մէջ գրուած էր: Այդ կանոնագիրին մանրամասնութեանց չենք մտներ այստեղ, Վի վերջնական կարգադրութիւն մը չեղաւ: Եսայի կրնար անմիջապէս մեկնիլ Ջատիկին Երուսաղէմ գտնուելու համար, բայց դարձեալ ուշացուց, և միայն վերջին վայրկենանին 250 ոսկոյ սակարկութեամբ յատուկ շոգենաւ վարձեց, և ուրիշ արտասովոր ծախքերու ալ ենթարկուելով, ապրիլ 1-ին (65.ՅԿԲ.77) աւագ չորեքշաբթի օր Կ. Պոլիսէ մեկնեցաւ, բայց հապիւ ապրիլ 5-ին Ջատիկի մեռելոցի երեկոյին կրցաւ Երուսաղէմ մտնել, երբ թէ Ս. Յարութեան և թէ Ս. Յակոբայ տաճարներուն մէջ բոլոր վատկական հանդէսներ աւարտած էին, որով հակառակ մեծագումար ծախուց, արարողութեանց նախագահելու փափաքէն և մտադրութենէն ալ վրիպած մնաց: Միաբանութիւնը և կառավարութիւնը և հարևան ազգութիւնները պարտուպատշաճ պատուասիրութեամբ ընդունելութիւն կատարեցին, մայրտաճարին մէջ օրհնութիւնք և մաղթանք տեղի ունեցան, պատրիարքական աթողը բազմեցաւ, և պատրիարքարան ելաւ հանգչիլ հեծիկ կատարուած, բայց աննպատակ դարձած ուղևորութենէն: Եսայի ուղեկից էին Կ. Պոլսոյ փոխանորդ Իսահակ եպիսկոպոս, Վոր մօտն ունենալ փափաքեցաւ Եսայի, փոխանորդութիւնը Սէֆէրեան Սիմէոն վարդապետի փոխանցելով, և Մկրտիչ վարդապետ Խրիմեան որ Գլակայ վանահայրութեան մէջ հակառակութեանց հանդիպած, Կ. Պոլիս եկած ու պաշտօնէն հրաժարած էր, և պահ մը սուրբ տեղեաց այցելութեամբ միխթարուիլ փափաքած էր, և Յուսիկ վարդապետ Գալբազեան Վարագայ միաբաններէն, և 50 ուրիշ հետևորդներ, պաշտօնական կամ անպաշտօն ուղեկիցներ, որոնք օգտուած էին յատկապէս վարձուած շոգենաւով ձրի ճանապարհորդել (65ՅԿԲ.79-81):

2740. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԴԷՊԵՐ

Վերջին օրերու մէջ Երուսաղէմի դիպուածներուն մասին շատ բան չունինք գրելու, Վի գլխաւոր անցուդարձեր Եսայիի ընտրութեան և ուղևորութեանց շուրջ կը դառնային, Վորս ամփոփ կերպով պատմեցինք արդէն: Բայց Երուսաղէմի անհնար էր առանց սուրբ տեղեաց խնդիրներու

մնալ, և այդ միջոցին ալ պակաս չեղան նմանօրինակ դիպուածներ: Երուսաղէմի կառավարիչ Իգգէթ փաշա 1864-ին քաղաքին շինուածական բարեկարգութեան նպատակով սկսած էր կրպակներու առջև հնօրեայ սովորութեան համեմատ գտնուող բարձրավանդակները քակել, և Ս. Յարութեան տաճարին և մեծ մզկիթին ճամբաները նորէն սալարկել տալ: Յոյներ առիթէն օգտուելով կը ձեռնարկեն նորոգել Ս. Յարութեան արտաքին բակին արևելաւողման պսակի դուռը վայն իւրացնելու դիտմամբ: Սակայն Հայեր արթուն կը գտնուին, Լատիններն ալ կը վգուշացնեն, և թարգման Ներսէս վարդապետ Գէորգեան կը յաջողի կառավարիչին ձեռքով Յունաց գործածաները քակել և պետական ծախքով վերաշինել տալ ընդհանուր իրաւունքը պահելու համար: Յոյներ վայրացած և վրէժխնդրութեան առիթ պատրաստելու համար Ս. Ծննդեան այրին պատարագամատոյց սեղանին պատկերը, զոր երկու ազգեր պատարագի ատեն դնելով անմիջապէս վերցնելու սովոր էին, կը սկսին պատարագէ ետքն ալ վետեղել, և Հայոց դիմադրութիւնը նախատեսելով, ուխտաւորներէն և բնակիչներէն երիտասարդս ուժաւորս և հաստոյրս պատրաստ կը բռնեն բռնութեամբ յաղթանակելու համար: Իրօք ալ կռիւը տեղի կունենայ նոյեմբեր 1-ին, Հայեր թէպէտ սակաւաւոր ասպարապէն չեն ընկրկիր, տեսուչ Փիլիպպոս վարդապետ Նաճարեանի գլուխը կը պատռի, ժամարար վարդապետին բազուկը կը կոտրուի, ժողովուրդ վրայ կը հասնի, կռուարարներ կը զսպէ, բայց Յունաց պատկերն ալ կը վերցուի: Կռիւը կը վերանորոգուի դեկտեմբեր 17-ին Հայոց բաժնին առաստաղը աւելելու առթիւ, որուն Յոյներ կը միջամտեն, կառավարութիւնը առժամաբար երկու կողմերն ալ կարգիլէ, բայց 24-ին կը թոյլատրէ կամ աչք կը գոցէ Յունաց ձեռնարկին, որոնք գաղտ ու գիշերային աւելածութիւնը կը լրացնեն և պատկերն ալ գիշեր մը սեղանին վրայ կը թողուն: Հայեր կատարուած իրողութեան հանդէպ ուրիշ միջոց չեն ունենար, բայց եթէ միւս տարին դիմադրութիւնը նորոգելու սպասել երբ առիթն ալ նորոգուի, որ մինչև այսօր չէ դադրած իւրաքանչիւր տարի խնդիրի նիւթ ըլլալ (ՍԱԻ. 1387-1388): Իբրև յիշատակաց արժանի պարագաներ կրնանք սեպել նաև Երուսաղէմ եկող արքունական ուղևորներ, որոնք Ս. Յակոբայ վանքն ալ այցելեցին, ինչպէս Շամպորի դուքսը Գաղղիոյ նախկին թագաւորական Պուրպոնեան գերդաստանէն 1861 հոկտեմբերին, Մօտենայի դուքսը Աւստրիոյ կայսերական ազգատոհմէն 1864 փետրուարին, և Անգղիոյ Վիկտորիա թագուհւոյն որդին Արթիւր իշխանը 1865 մարտին: Իսկ ազգին նշանաւոր ուխտաւորներուն կարգին յիշատակելի է Կատարինէ Ղորպանեան Տփղիսի կուսաստանին սարկաւագուհիներէն, որ երկրորդ անգամ ըլլալով սուրբ տեղեաց ուխտի կու գար, յիւր գոյից և Տփղիսեցի բարեպաշտուհեաց նւերներով պատրաստուած յիշատակի հարուստ ընծաներով, ինչպէս են 31հատ ոսկեթել հիւսածով կարմիր դիպակի շուրջառներ, և արծաթեայ և ուրիշ սպասներ: Կ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքական աթոռներուն եղելութիւնները մինչև Պօղոս և Եսայի նորընտիր պատրիարքներու գահակալութիւնները շարունակեցինք, պարագայից կապակցութիւնները չխանգարելու համար, բայց այստեղ կանգ կառնենք և անոնց պաշտօնավարութեան մասին խօսելիքնիս կը յետաձգենք, որպէսզի դառնանք Մատթէոս կաթողիկոսին գործունէութեան վրայ խօսիլ, որուն պատմութիւնը ընդհատած ենք իր էջմիածին հասնելէն ի վեր (2699):

2741. ՄԱՏԹԷՈՍԻ ԸՆԹԱՅԸԸ

Յիշեցինք թէ ինչպէս 1860 տարուոյ սկիզբները Կ. Պոլիս օդափոխութեան երթալու առաջարկին մերժումով: Մատթէոս այլայլմէ եղած և յուսահատութեան մատնուած կատարելապէս անօրինակ կեանք մը կապմեց իրեն, սովորական ընթացքէն օտար, պատշաճից պահանջներուն դէմ ըմբոստ, և կանոնական ձևերու հակառակ, որով առեղծուածական հիւսուածք մը դարձած է 1860-է 1865 անցուցած կեանքը, և անհաւատալի ըլլալու չափ տարօրինակ դէպքեր և միջադէպներ,

անցքեր և գործեր տակաւին կենդանի և ամէնուն բերանը, որոնք կատակներ և վաւեշտներ կրնային ըսուիլ, եթէ կաթողիկոսական բարձրագահ դիրքին մէջ տեղի ունեցած չըլլային: Ասոր հետ մէկտեղ վակաս չեն լուրջ և օգտակար ձեռնարկներ ալ, որոնք իր մտածութեանց հետևանք և լուրջ ջանքերու արդիւնք են եղած, և գովութեանց հիմնական փաստեր ընձեռած և իրենց հեղինակին հոչակ պատրաստած կըլլային, եթէ միւս կողմէն տարօրինակ պարագաներ անոնց արժանիքը չնուազեցնէին: Անցողիկի աւելցնենք թէ աստ և այժմ մեր տրամադրութեան ներքև չենք գտներ բնագիրներ և վաւերագիրներ, և մանրամասնեալ և պատճառաբանեալ յիշատակագիրներ, որոնց հիմնուելով կարենայիք գոհացուցիչ և կատարեալ ուսումնասիրութիւն մը կազմել մատթէոսի կաթողիկոսական կեանքին վրայ: Մենք տեսանք զինքն իբրև պատրիարք, և չվարանեցանք արդիւնաւոր պաշտօնավարութիւն մը վերագրել իրեն, որչափ ալ ցրուած բազմատեսակ ձեռնարկներու ետևէն, և յախուռն իր նպատակին դիմելու մէջ, բայց միշտ անվկանդ հրապարակին վրայ և խոյս չտուող հակառակութեանց մէջ առանձնացեալ և մենացեալ, յարաբերութիւնները ընդհատող, տեսնուելէ իսկ խուսափող, մինչև աջահամբոյրի մօտեցողներուն ձեռքին թաթը երկարել վարագոյրի ետևէն և երեսը ծածկել: Այն օրէն որ Կ. Պոլիս երթալը չյաջողեցաւ վշտալի յորջորջումը իբրև մակդիր անուն իր ըտորագրութեան նշանակ չէր, ընդհակառակն փոքրագրութեան փաստ կը դառնայ երբոր կամայական անձնդիրութեան պարագայի մը շուրջը կը դառնար, զի ոչ ներսէն և ոչ դուրսէն յատուկ վիշտ մը չէր ծանրանար իր վրան, գործերը իրենց սովորական ընթացքը կը պահէին, և իր անհատական կեանքն ալ հնարաւոր դիրութիւններով շրջապատուած էր: Իսկ եթէ Պօլօթէնիէի կարգադրութիւնները զինքն սեղմեալ կացութեան մը կենթարկուէին, այն պէտք չէր իրեն համար անակնկալ նորութիւն մը ըլլար, զի իբրև հնօրեայ ազգային պաշտօնակալ, իբրև առաջնորդ և պատրիարք, իբրև գործիչ և վարիչ, իբրև գրող և ուսումնասիրող, լաւ պէտք էր գիտնար Մայրաթոռոյ գիրքը, և ի հարկին պէտք չէր անոր ենթարկուէր, և ոչ թէ անսահման խնդութենէն սենեկին մէջ պարելու ելլէր, երբոր ընտրութեան աւետիսը կը լսէր: Վերջապէս առեղծուածական դէմք մը եղած է Մատթէոս կաթողիկոսական աթոռին վրայ, և նորէն պիտի դառնանք զայն նկատի առնել իր գործունէութենէն ինչ ինչ պարագաներ յառաջ բերել նէս ետքը:

2742.ԳՊՐՈՑԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մատթէոս լուրջ և օգտակար ձեռնարկներ ունեցած է ըսինք, և առաջ անոնցմէ կը սկսինք մեր բացատրութիւնները: Պօլօթէնիէն ազգային վարժարանները հոգևոր դպրոցք անունով կը կոչէ, իբր զի անոնց գոյութեան գլխաւոր փաստը հայադաւան ժողովուրդին իրեն կրօնքն ու հաւատքը ուսուցանելն է, զի յայտնապէս անոնց յանձնի կրօնական և բարոյական կրթութիւն մանկանց ի նմին ուսանողաց, և առանձինն յիշուած էջմիածնի և իւրաքանչիւր վիճակի գլխաւոր դպրոցնէն վատ, որոնք, են դպրանոց կամ սեմինարիա կոչուածները, կենթադրուի թէ կան յամենայն եկեղեցիս և ի մենաստանս վիճակին (ՊՕԼ.21) դպրոցներ, և թեմակալներու պարտք կը դրուի դարձուցանել զձիշդ մտադրութիւն իւրեանց ի վերայ որպիսութեանց դպրատանաց եղելոց ընդ տեսչութեամբ վանօրէից և եկեղեցեաց (ՊՕԼ.13), բայց յայտնապէս յիշուած չէ թէ ինչ միջոցներով կը գործադրեն թեմակալներ պահանջուած մտադրութեան պարտքն ու իրաւունքը: Այդ լուրթենէ օգուտ քաղելով Մատթէոս ուշադրութիւն դարձրեց ծխական դպրոցների վրայ, և ծխական հոգաբարձութիւններ կազմեց ընդհանրապէս աշխարհական անձերէ, յարմար եկեղեցականներն ալ չգրկելով, և այս կերպով ժողովրդական իրաւունք մը ստեղծեց տալով ժողովրդին իւր դպրոցական պէտքերը հոգալու հոգսը: Իրմէ առաջ մութ մնացած էր այդ կէտը, նոյն իսկ Ներսէս ալ չէր մտածած խնդիրը լուսաբանել և գործը կարգադրել, ինչ որ աւելի հեշտ

եղաւ Մատթէոսի, Տաճկահայոց և գլխաւորապէս Կ. Պոլսոյ մէջ գործածուած ձևին հետևողութեամբ: Իր այդ նախաձեռնութիւնը խնդրութեամբ ողջունուեցաւ Ռուսահայոց կողմէ, իբր զի նորա շնորհով դպրոցական գործը մեծ պարգացում ստացաւ Ռուսահայոց մէջ, զի նա յարգելով ժողովրդեան կամքը (ՄԵԼ. 607), ուսումնարանների վարչութիւնը աշխարհական հոգեբարձուների ձեռքն անցաւ (ՊԱԼ. 470), և ասով նորա կաթողիկոսութեան ժամանակ Ռուսահայոց ապագային կեանքի վերածնունդ է սկսվում (ԶԱՄ. Բ. 161): Եղած ձեռնարկը անով աւելի ոյժ ստացաւ, որ դպրոցական կանոնագրութիւններ վաւերացնելով (ՄԵԼ. 607), նոցա պահպանութեան համար եկեղեցիներից և վանքերից եկամուտներ նշանակուեցան (ՊԱԼ. 470), և այս կարգադրութիւններ մինչև ցայսօր գործադրութեան մէջ են: Դպրոցական հաստատութեանց մէջ կարևորագոյնն ու նախապատիւը Ներսիսեան ուսումնարանն էր, և գիտենք թէ Ներսէս ինչչափ ետևէն էր վայն կանոնադրութեամբ մը օժտել, բայց չէր կրցած իրականացնել (2614): Մատթէոս այն ալ գլուխ հանեց և 1861-ին (ՀՄՌ. 96) հաստատեց Ներսիսեան դպրոցի կանոնագրութիւնը, որով մինչև այս օր վարուում է այդ հաստատութիւնը (ԶԱՄ. ք. 165), և տիրապէս Ներսիսեան ուսումնարանի տևողականութիւնը երաշխաւորուած եղաւ: Մեծ բաներ կը սպասուէին Մատթէոսի ուսումնասիրութենէն և ուսումնականութենէն, և իր պաշտօնավարութեան սկիզբը յաջողցուցած դպրոցական ձեռնարկները նշանակութիւն ունեցան ժամանակի մտածող մարդոց յոյսերն արդարացնել (ԶԱՄ. Բ. 165):

2743. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆ

Մատթէոսի արդիւնքներէն ուրիշ մըն ալ Մայրաթոռոյ մատենադարանի մասին տուած հոգն է: Էջմիածնի տպագիրներուն մատենադարանը նշանաւոր չէ, և չէր ալ եղած, բայց գրչագիրներու մատենադարանը ամէն ատեն հռչակ ունեցած է, և այսօր ալ աշխարհի վրայ հայերէն ձեռագիրներու ամենէն ճոխ հաւաքածոյն է: Կարբեցիին օրէն յիշած ենք անոր անկարգ պահուած ըլլալը (2736), և առձեռն կարգադրութիւն մը մտցուիլը ծերակուտական Քանի մղումով (2537): Ներսէսի օրով ալ հիմնական կարգադրութիւն մը չեղաւ, և Մատթէոս գտաւ վայն ի խառն դրութեան, որ վամենայն տեսողաց զսիրտս ճմլէր ի կարեկցութիւն ուստի հարկ եղաւ նախ մատենադարանապետ ունենալ, և ընտրուեցաւ Դանիէլ վարդապետ Շահնապարեան Տարոնեցի 1860 սեպտեմբեր 30-ին սինոդական պաշտօնագիրով, որուն հրամայուեցաւ կանոնանուր ցուցակ կազմել, և իրեն ընկերակից տրուեցաւ Անդրէաս վարդապետ Վեհապետեան, որ է ՏէՐ-Անդրէասեանը և Սուքիաս վարդապետ Պարպեան, Յակոբ սարկաւազ Սիւնեաց օգնական, և Նիկողայոս Տէր-Յովսէփեան քարտուղար: Երբոր Յակոբ Կարինեան Տփղիսի ծանօթ ատենադպիրը (2612) 1861 սեպտեմբերին Էջմիածին այցելեց, մատենադարանը մաքրուած և յարդարուած և կարգադրուած գտաւ և ձեռագրաց ցուցակը լմննալու մօտ, և խոստացաւ վայն իր ծախքով տպագրել տալ: Դանիէլ վարդապետ ցուցակը աւարտելով վայն կաթողիկոսին ներկայեց 1862 յունուար 10-ին, և կաթողիկոսը 1863 մայիս 29-ին յղեց Կարնեանցի ի Տփղիս, որ անմիջապէս տպագրութեան յանձնեց, և 1863 տարին չլրացած լոյս տեսաւ հատորը, որ Կարինեան ցուակ կը կոչուի սովորաբար, հրատարակողին և ոչ թէ երկասիրողին անունէն: Շահնապարեանի ցուցակը թէպէտ չունի այն կատարելութիւնը, որ վերջին ատեններ սովորական դարձած է, սակայն գոհացուցիչ ձևով կազմուած է, իւրաքանչիւր հատորին մէջ գտնուած մասերը զատ զատ նշանակուած են, յիշատակարաններուն վրայ տեղեկութիւններ տրուած են, և հատորին վիճակը բացատրուած է: Պարունակութեանց ցուցակագրութեան կարգին նկատելի են մանաւանդ ճառընտիրները (ՅՈՒ. 78-136), և գլխաւորապէս 7-րդ ճառընտիրը, որ 414 տարբեր կտորներ կը պարունակէ (ՅՈՒ. 102-126): Գիրքերը դասաւորած են գլխաւոր նիւթին այբուբենական կարգով, իսկ

հեղինակներն առանձինն նշանակուած են: Ցուցակի անցած հատորներ 2340 հատ են (ՑՈՒ. 230), իսկ այժմ Մայրաթոռոյ գրչագիրները 4000-է աւելի են: Կարինեն իր յառաջաբանին մէջ կը յորդորէ որ Էջմիածնի կնիքով գրչագիր ունեցողներ փութան ետ դարձեալ սեփական գրչագիրներ ունեցող Էջմիածնի նուիրեն, անտիպները հրատարակելու հոգ դարձուի, և ուսումնասիրութեանց պէտք ունեցողներ Էջմիածնի սինողին դիմեն: Բայց մատենադարանը ճոխացնելու գլխաւոր միջոցը եղած է Մատթէոսի և յաջորդներուն ջանքերը, որով մասնաւոր վանքեր և եկեղեցիներ գտնուածները Մայրաթոռ փոխադրուած են: Կարինեանէն ետքը տակաւին նոր ցուցակ հրատարակուած չէ, և Մակար կաթողիկոսի ձեռքով 1888-ին ձեռք առնուած նոր հոգածութիւն յաջորդներուն օրով չշարունակուեցաւ:

2744. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ ԾՐԱԳԻՐ

Մատթէոսի միտքին տագնապներէն գլխաւորը Պօլօթէնիէի կանոններուն մէջ փակուած մնալն էր, որ կարգիլէր իրեն ըստ հաճոյից և ըստ քմաց վարել իր իշխանութիւնը, և անոր համար ինքզինքը վիշտերու մատնուած կը գտնէր և վշտալի կը հոչակէր: Հետևաբար հոգուով փարեցաւ պետութեան կողմէ Ներսէսի օրով եղած կառավարական ազգարարութեան, թէ յարմարագոյն էր Պօլօթէնիէի ամբողջութեան վրայ դիտողութիւններ ըսել և առաջարկներ ըրել (2674), ուստի նոր կանոնադրութեան ծրագիրը մը ուսումնասիրելու և պատրաստելու ձեռնարկեց, կը կարծենք 1860-էն սկսելով, երբ Կ. Պոլիս երթալու արգելք տեղի ունեցաւ (2699), թէպտ 1863-ին միայն կրցաւ իր ծրագիրը պատրաստել և ռուսական կառավարութեան առաջարկել որ հաստատուի և գործադրութեան դրուի փոխանակ Պօլօթէնիայի: Ծրագիրին համար ըսուած է թէ մասնաժողովոյ մը ձեռօք պատրաստուեցաւ, թէպէտ տեղեկութիւններ չգտանք թէ երբ կազմուեցաւ մասնաժողովը, որո՞նք էին անդամակիցները, և ի՞նչ պայմաններու ներքև գործեցին: Մատթէոսեան ծրագիրը նոյն իսկ Պօլօթէնիէի անողոք քննադատներէն թերի և անբաւական ըսուած է (ՅՆՁ. 55), հետևաբար իբր 1836-ի պետական կանոնագիրներէն լաւագոյն չընդունուիր, որով և անհատկանք մնացած ըլլալն ալ կորուստ մը պիտի չկարծուի: Սակայն մեր պատմութեան ամբողջացումը կը պահանջէ որ ամփոփ կերպով ներկայացնենք վայն մեր ընթերցողներու, գոնէ իբրև պարզ տեղեկութիւն: Ծրագիրը մակագրուած է կարգ և կանոն Հայաստանեայց եկեղեցոյ կաթողիկոսութեան, որ առաջին տպաւորութեամբ կը ցուցնէ թէ ծրագրողը աւելի իր կաթողիկոսական իշխանութեան գաղափարովը տոգորուած է, քան թէ ընդհանուր եկեղեցոյ տեսակէտով: Բովանդակ 89 յօդուածներ կը պարունակէ 6 գլուխներու բաժնուած, կաթողիկոս և ընտրութիւն 17 յօդուած, կաթողիկոսի իրաւունք և պատրիարք 21, տեղապահ և կաթողիկոսական խորհուրդ 7 վիճակային առաջնորդք և խորհուրդք 14, եկեղեցական արդիւնք կամ հասոյթ 17, և Ռուսաստանի մէջ իրաւունք և արտօնութիւնք 13 (ՅՆՁ. 56-57): Ծրագիրին առաջին հինգ գլուխներու մէջ բնաւ ակնարկ չկայ Ռուսիոյ և ռուսական կառավարութեան վրայ, այլ Հայոց կաթողիկոսութիւնը կը նկատուի տեղական յարաբերութիւններէ անկախ (Extraterritoriale) գիրքի մը մէջ, որ միևնոյն կերպով կը վերաբերուի ամէն տէրութեանց հետ ուր ուրեք որ Հայ եկեղեցոյ հաւատացեալ ժողովուրդ կը գտնուի: Կաթողիկոսութեան կը տրուի բացարձակ և անձնական միապետական իշխանութիւն, որուն անպայման հնազանդութեան ներքև են, և որուն պատասխանատու են բոլոր Հայաստանեայց եկեղեցոյ հոգևորականք, վիճակաւոր առաջնորդներ և վիճակային խորհուրդներ ալ մէջը, աշխարհքի ո՛ր կողմը և ո՛ր տէրութեան մէջ ալ գտնուին: Նա լիակատար իշխանութիւն ունի Հայաստանեայց առաքելական եկեղեցոյ վարչութեան վրայ, նա նշանակում է վիճակաւոր առաջնորդ աշխարհքի ամէնն կողմ գտնուող Հայերուն, միայն ի յարգանս ընդունելով ազգի կարծիքը նրանց նշանակելու ժամանակ (ՅՆՁ.62), ինչոր

բացարձակապես կը ջնջէ ժողովրդական ընտրութեան իրաւունքը: Նա կը նշանակէ տեղապահ մը և կաթողիկոսական խորհուրդի ութը մշտակայ անդամները որ և է դասակարգէ, և իրաւունք ունի արձակել և փոխել թէ խորհրդականները և թէ առաջնորդները ի՛նչպէս և ե՛րբ օգտակար կարծէ: Այդ պայմաններու ներքև ջնջուած պիտի նկատուի նաև Տաճկահայոց սահմանադրութեամբ ժողովուրդին ապահոված ընտրողական և վարչական իրաւունքները, զորս Մատթէոս չէր կրնար անգիտանալ: Կաթողիկոսական ընտրութեան համար կընդունի նախորդի մահուանէն մի տարի պայմանաժամը, բայց չի ճանչնար ոչ առաջնորդներու և ոչ եկեղեցականներու սեփական ընտրողական իրաւունք մը, զի պատգամաւորներ պիտի ընտրուին առանց վանապանելու նրանց ծնունդը, վիճակը և կոչումը, և կարող են լինել ինչպէս աշխարհական նոյնպէս և հոգևորական: Իւրաքանչիւր գիւղ և քաղաք պիտի ընտրէ մէկ պատգամաւոր, ասոնք գործակալութեանց մէջ հաւաքուելով պիտի ընտրեն երկու պատգամաւոր, ասոնք ալ այթոռանիստ քաղաքին մէջ գումարուելով, և նոյն քաղաքի իւրաքանչիւր եկեղեցւոյ երեք պատգամաւորներու հետ միանալով պիտի կատարեն մի վիճակային պատգամաւորի ընտրութիւնը, որոնք վերջապէս էջմիածինի մէջ ժողով կազմելով և միաբանութեան եօթը պատգամաւորներու հետ միանալով պիտի կատարեն կաթողիկոսի ընտրութիւնը: Միայն ներկայ գտնուողներ ձայն պիտի ունենան, բայց վիճակային պատգամաւորներու հետ փոխանորդներ ալ պիտի ընտրուին հարկաւոր եղած ժամանակ նրանց տեղ բռնելու համար: Վիճակային պատգամաւորներ նախ մի մի անուն պիտի գրեն, որով պիտի կազմուի ընտրելեաց նախնական ցուցակը, յետոյ իւրաքանչիւր պատգամաւոր այդ ցուցակէն չորս չորս անուն պիտի քուէարկէ, և ով որ շատ ձայն է ստանում, ընտրում է կաթողիկոս ամենայն Հայոց. իսկ հաւասար ձայներու առթին վճռուում է վիճակ ձգելով: Այս կերպով ընտրուածը կերդնու և կօծուի առանց որ և է ուրիշ պետական ձևակերպութեան կամ հաստատութեան: Բաւական կը սեպենք այդ գլխաւոր կէտերը վերլուծել, զի մնացեալ կէտերը ընդհանուր և ծանօթ սկզբունքներ կը պարունակեն, միշտ ամուր պահելով կաթողիկոսի բացարձակ իշխանութիւնը ամէն պարագայի մէջ և ամէն հայ եկեղեցական հաստատութեանց վրայ: Նոյն բացարձակ իշխանութիւնը ճանչցուած է վիճակաւորներուն ալ իրենց վիճակին վրայ, պատասխանատու ըլլալով ուղղակի և միայն առաջի կաթողիկոսին: Վերջին վեցերորդ գլուխը յատուկ է ռուսական կառավարութեան հետ անհրաժեշտ յարաբերութեանց, պարզապէս տեղական և դատական և ելևմտական հանգամանաց մէջ, մերժելով որևէ վարչական և ընտրողական և հաստատողական միջամտութիւն թէ կաթողիկոսի, թէ առաջնորդաց և թէ խորհրդականաց նկատմամբ: Մատթէոսը պատկերացեալ կը տեսնենք իր ծրագիրին մէջ, ամէն օրինական և խորհրդակցական կաշկանդումներու դէմ ըմբոստ, և իբր ծայրագոյն հոգևոր հէր ու հովիւ աղիկամի և բացարձակ իշխանութեամբ գործելու հետամուտ, առանց նկատի առնելու կամ ենթարկուելու այն անհրաժեշտ պահանջներու ալ, որ պետական իշխանութեան և տիրապետական կացութեան ուղղակի հետևանքներ են: Բնական էր որ այս տեսակ ծրագիր մը չի կարենար ընդունուիլ կամ հաստատուիլ ռուսական կառավարութենէ, որուն ներկայացաւ ի վաւերացումն, երբ չէր ճանչցուեր անոր միջամտութիւնը, և կերևի թէ մերժելու նպատակով իսկ նկատողութեան չառնուեցաւ, և կաթողիկոսը չվշտացնելու միտքով մէկ կողմ թողուեցաւ, և Մատթէոս առանց պատասխան մը իսկ առնլոյ վախճանեցաւ, ծրագիրին մատուցանելէն երկու լրացեալ տարիներ ետքը (ՅՆՁ.55), և մենք այդ մասին աւելի պնդելը աւելորդ կը սեպենք:

2745. ՄԱՏԹԷՈՍԻ ԲՆՈՅԹԸ

Մատթէոս կաթողիկոսի արդիւնաւորութենէն ինչինչ յառաջ բերինք, և կուզէինք շատ աւելին գրել, սակայն դժբախտաբար իր յիշատակագիրներ մեզի նշանակելի կէտեր չեն ներկայեր, և

վգուշաւորներն իսկ գրեթէ լուռութեամբ կանցնին անոր գործունէութեան վրայէն, մինչ ուրիշներ չեն վարանիր յայտնել թէ շատ դիւրախաբ ու փոփոխամիտ անձնաւորութիւն էր, և այս իսկ պատճառով էլ ոմանց ձեռքն խաղալիք դարձաւ: Մայրաթողի տնտեսական բարւոքմանց վրայ նա ուշադրութիւն չդարձրեց, և իւր նախորդի Ներսէսի ձեռնարկութիւնները անխնամ թողեց (ԶԱՄ. Բ. 166): Աւելի առաջ ևս մղուողներ կը գրեն թէ օտարամոլ եկեղեցականք և աշխարհականք ոմանք կը յաջողին շատ դիւրութեամբ Մատթէոսի միտքը խարբալել, և իւր ի սկզբան յարգած սկզբունքներու դէմ սպառապիներ: Դպրոցներու և ուսումնականաց առաջին բարեկամ Մատթէոսն շուտով հակառակորդի կը փոխուի, խաղալիկ լինելով այլոց ձեռքը: Ինչ ալ ըլլայ այդ մեղադրանքները գրողներուն տեղեկութիւնն ու հմտութիւնը, մենք համամիտ պիտի չգտնուինք իրենց տեսութեանց և ոչ դիւրախաբ մը և ոչ փոփոխամիտ մը պիտի ըսենք Մատթէոսը, այլ ընդհակառակն իր կարծիքներուն վրայ յամառ, և իր ձգտումներու մէջ անձկուն հոգի մը կը տեսնենք անոր վրայ, որ չափապանցութեան տանելով իր բնաւորութիւնը քէն կընէ երբ որ չի կրնար իր կամքը տեղը տանիլ կամ իր միտքը իրականութեան հասցնել: Մայրաթողոյ մէջ տիրող և Պօլօժէնիէով նուիրագործուած կացութենէն նեղացած և վայն քակելու և քանդելու անհնարութենէն ընկճուած, և այդ նոր կացութիւնից դժգոհ ինքն իրեն կորոշէ ընդհանրապէս քաշուած կեանք վարել (ՊԱԼ. 470), ամէն ինչ սինդիին կամքին թողած (ԶԱՄ. Բ. 166), որով վարմանալու չէ, եթէ այդ պարագաներու ներքև նոյն իսկ իր միտքին և իր կամքին հակառակ գործեր երևան գան իր անունին ներքև, որով իբր թէ ի սկզբան յարգած սկզբունքներուն դէմ սպառապիներ կարծուի: Սկզբունքներու խնդիրին մէջ ալ, ոչ թէ ուսումնասէր Մատթէոսը ուսումնատեաց դարձած պիտի ըսենք, այլ անոր ուսումնասէր հոգին վերլուծելով պիտի գտնենք անոր մէջ մոլեռանդ պահպանողական մը, եկեղեցական աւանդութեան և սովորութեանց և համոզմանց մէջ քննադատական ուղղութենէն հեռու, որ անխտիր կը պաշտպանէ ինչ որ սկիզբէն ինչ որ սկիզբէն պահած է կամ իր վարդապետէն ընդունած է, և կը կարծէ այս կերպով հայ եկեղեցու դաւանութեանց անարատ պահպանութեան գաղափարով գործել: Ուստի ոգորելու կելլէ ոչ թէ ուսման դէմ այլ տարբեր գաղափարների դէմ, և համարձակ կը կռուի Այվալեան վարդապետի, Շամախու հայ բողոքականների ու Հիւսիսափայլի դէմ, որ հայ եկեղեցու համար ռէֆօրմ էր պահանջում, և մինչև իսկ կաշխատի Հիւսիսափայլը խափանել (ԶԱՄ.Բ.166): Բայց այս երևոյթները ոչ թէ ուսումնատեաց մը կը կապմեն մեր աչքին, այլ ուսմանց և ուսումնասիրութեանց մէջ անկքելի համոզում կապմած մէկ մը, որ երբ իր տեսութեանց հակառակ տեսութիւն կամ կարծիք կամ խօսք կամ գրուած կը տեսնէ, համարձակ վայն ջնջելու և քանդելու ետևէ կըլլայ, ի՛նչ ալ ըլլայ հետևանքը, և բնաւ չուզեր և չպիջանիր կշռել և դատել հակառակ կարծիքները: Այս ուղղութիւնը նախնական էր Մատթէոսի վրայ, և այնպէս տեսանք մենք վայն թէ իբր գործօն պատրիարք և թէ իբր գրոց հեղինակ. ուստի կաթողիկոսական աթոռին վրայ ալ նոյնը տեսած ատենիս, ոչ դիւրախաբ և ոչ փոփոխամիտ պիտի կարծենք վայն, այլ ընդհակառակն ամուր և պինդ իր առաջին տեսութեանց վրայ, միայն քէն ընող մը որ հրապարակէն կը քաշուի երբ որ իր միտքն և իր կամքին համապատասխան չգտնէր, կամ թէ իր միտքին և իր կամքին չի կրնար հպատակեցնել տիրող պարագաները: Իսկ երբ երևալու ու գործելու կը ստիպուի, բոլորվին նորօրինակ և տարօրինակ ձևերու կը հետևի, որոնք հանրային և ընկալեալ ձևերէն օտար ըլլալուն, չսենք այլանդակութեան գոնէ ջղագրգիռ եսականութեան կարծիքը ուրիշներու փոփոխութիւն և դիւրախաբութիւն ըսածին նկատմամբ, և վայն կը գտնենք պինդ ու ամուր ու յամառ ու անձկուն բնաւորութեան ուղիղ հատկանք:

Մատթէոսի նախապաշարեալ պահպանողականութեան մէկ հետևանքն ալ եղաւ, հայրապետական աթոռին վրայ գտնուած ատենը Դաշանց թուղթին նման անվաւեր գրուած մը պաշտպանելը, որ Հայ եկեղեցւոյն պատիւ չի բերեր, մանաւանդ թէ անոր առաքելական սկզբնաւորութեան և աթոռին բարձրութեան կը վնասէ: Մենք համարձակ յայտարարած ենք Դաշանց թուղթին անվաւեր գրուած ըլլալը, և միանգամայն անոր ծագումը վերագրած ենք հայկական բարեմիտ խաբէութեան, որով Խաչակիրներու օգնութեան ապաւինած և պապերու հովանաւորութենէն օգտուտ սպասող հայեր յաջողած են Ատիոքի Լատին պատրիարքներուն ոտնձգութիւն արգիլել, որոնք Կիլիկիոյ նահանգին Անտիոքայ պատրիարքութեան սահմանին մէջ ըլլալուն հիմնուելով կուլէին Հայոց կաթողիկոսութեան վրայ իշխել (75-76): Մատթէոս իր պաշտպանողականը պատրաստել է կաթողիկոսութենէ առաջ 1850է 1857 տարիներու մէջ. և 1858-ին ասանկ ճառ մը գրած ըլլալը և տպագրելու միտք ունենալը յայտներ է նաև Շահնապարեան Կարապետ վարդապետի, որ խնդրեր է որպէսզի այդ մտադրութենէ հրաժարի, յայտարարելով իսկ որ եթէ այսպիսի հրատարակութիւն մը ընէ, պինքն պիտի պարտաւորեցնէ հերքումը գրել (ԴԱՇ.8): Շահնապարեան այդ գործին կը խառնէ Պաւեան Կարապետ և Փափապեան ճանիկ ամիրաներու անուններն ալ, առաջինը իբր Դաշնաց թուղթը պաշտպանող և երկրորդը իբր վայն տպագրութեամբ տարածող (ԴԱՇ.7,9). սակայն մենք այդ անուններով չենք վբաղիր, քանի որ ոչ գրական անձնաւորութիւններն են և ոչ եկեղեցական հեղինակութիւններ: Մատթէոս իր պատրաստած գրուածը միասին կը տանի Էջմիածին, և թէրևս պահ մը ինքն ալ կը դեղևի հրատարակութեան տալ, զի երեք տարի ետքը երևան եկած է այն առաջին անգամ Մսեր Մսերեանի ճռաքաղ հանդէսին 1861 մարտ 1-ի և 15-ի թիւերուն մէջ Մատթէոս կաթողիկոս ամենայն Հայոց ստորագրութեան ներքև (ՃՌԱ.237,253), զոր իբր իրեն եղած պատիւ մը կը համարի հրատարակիչ մագիստրոսը քահանայապետական գլխոյ սրբոյ եկեղեցւոյ հայաստանեայց, և մեծափառ հեղինակին կողմէ, Էջմիածնի սինոդին միջնորդութեամբ (ՃՌԱ. Բ. 237): Շահնապարեան իր կանխաւ յայտարարութիւնը յիշելով տարի մը ետքը հերքումը կը հրատարակէ Փարիզի մէջ 1862 յունիս 30-ին (ԴԱՇ. 10), և նոյն հատորի մէջ կը միացնէ Դաշտանց թուղթին (ԴԱՇ. 11-30), ու Մատթէոսի պաշտպանութիւնն ալ (ԴԱՇ. 31-53): Մատթէոսի բոլոր փաստերուն հիմը Ագաթանգեղոսի պատմութեան գրածն է, ուր յիշուած է Գրիգորի և Տրդատի տիեզերական քաղաք երթալը, և Դաշանց թուղթին Ագաթանգեղոսի պատմութեան վերջը տպուած ըլլալը (ԱԳԱԹ. 371-348), ուսկից կը հետևեցնէ թուղթին նոյն իսկ Ագաթանգեղոսէ գրուած ըլլալը: (ՃՌԱ. Բ. 238. 242), և իբր ստուգարան վկաներ կը յիշէ յետին ժամանակաց հայ պատմագիրները, Ստեփանոս Ասողիկ, Յովհաննէս պատմաբան, Ներսէս Շնորհալի, Յովհաննէս Վանական, Վարդան Բարձրբերդցի, Կիրակոս Գանձակեցի, մինչև իսկ Միքայէլ Չամշեան: Նմանապէս Վրթանէսի նամակին մէջ Կոստանդիանոսի և Տրդատի միջև պայման ուխտի, և Յովսէփի նամակին մէջ յիշատակարան նախնեաց բացատրութիւնները գտնելով Դաշտանց թուղթին վրայ կը մեկնէ, և ոչ թէ քաղաքական իրաց վրայ, զի հոգի առաւել քան զմարմին, և Կոստանդիանոս և Տրդատ հարկաւ աւելի հոգևորական սիրոյ և միաբանութեան ուխտ հաստատած կըլլան քան քաղաքական դաշնագրութիւն: Այս չափով Դաշտանց թուղթը իբր ստուգապատում գրուած ընդունելով, կը դառնայ յարձակիլ Միսիթարեանց դէմ, որ վայն Ագաթանգեղոսի հետ չեն հրատարակած, իբր թէ նախանձելով այն փառաւորութեանց և իրաւանց և շնորհաց համար զորս Սեպրեստրոս ընծայած է Լուսաւորչին, և կը ջանան անյայտ ընել այն հրաշագործութիւնները, զորս Լուսաւորիչը կատարած կըլլայ Հռոմի մէջ, և կը գոչէ, Տեսէ՛ք չար նախանձու դառնադառն պտուղը (ՃՌԱ. Բ. 257): Մատթէոսի պաշտպանութեան ընդհանուր գիծերը վերլուծելով վաննց կընենք երկրորդական

կէտերու մտնել, միայն թէ քննադատական ուղղութեան հետքն իսկ չենք գտներ, ոչ իր միտքին մէջ և ոչ իր գրիչին ներքև:

2747. ԱՆՈՐ ՀԵՐՔՈՒՄԸ

Եւ ճիշդ այդ քննադատական ուղղութեամբ կը պօրանայ Շահնապարեան իր Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը հրատարակութեան մէջ (ԴԱՇ. 55-144): Նախ համառօտակի կը քաղէ Դաշանց թուղթի ստուգութեան կամ անվաւերութեան մասին Կ. Պոլսոյ մէջ տեղի ունեցած հակաճառութիւնները (ԴԱՇ. 55-64), որոնց մենք ալ ակնարկեցինք (2746), յետոյ կը ցուցնէ թէ Դաշնաց թուղթի հնագիր օրինակ բնաւ չկայ, ոչ Ագաթանգեղոսի հետ և ոչ առանձինն (ԴԱՇ.64-65), և կանցնի միառմի բացատրել հայ պատմագիրներէն Մատթէոսի յառաջ բերած վկայութիւնները, և կը գտնէ որ ոմանք Գրիգորի անունը չունին, ուրիշներ եկեղեցական շնորհաց խօսք չեն ըներ, ամէնն ալ յետին դարերու կրկնողներ են, և Դաշանց թուղթի մը գոյութեան բնաւ նշան կամ ակնարկ չեն ընծայեր: Թուղթին մէջ գտնուած պատմական յիշատակութիւնները պրպտելով մի առ մի յառաջ կը բերէ անժամանակութեան հանգամանքները, այսինքն Դաշնաց թուղթի գրութեան ենթադրեալ ժամանակէն դարեր ետքը տեղի ունեցած դէպքեր կամ դէմքեր կամ կոչումներ, և այդ առթիւ քաղուած մըն ալ կը կապմէ թուղթին պարունակութեան, և յետոյ մի առ մի կը թուէ թուղթին անստուգութեան կամ անվաւերութեան, և վերջին դարերու յերկրած մի գրութիւն ըլլալուն ապացոյցները. 1. Նախընթաց լեզուէն և գրականութենէն օտար ոճը և անճոռնի և քառականգուն բառերը, 2. Թուրքերէնէ և թաթարերէնէ և արաբերէնէ փոխանցեալ բառերը, 3. Գործածուած գաղղիերէն բառերը, և 4. Պատմական սխալները և ստութիւնները և անհաւատալիքները, որոնց կարգին 70,000 պօրաց բանակով ուղևորութեան պարագայն: Շարունակելով յառաջ բերել պատմական և ժամանակագրական և աշխարհագրական ստութիւնները կը յիշէ Գեգոնեհոնի յարձակման թուականը, 2. Զրիստոսի ահագին ու անգին արիւնը թանաքի տեղ գործածելը, 3. Թշնամեաց թշնամի ըլլալու յայտարարութիւնը, 4. Սագաստան և Տելմաստան երկիրներէն առաջինին կայսրութենէն դուրս և երկրորդին անգոյ ըլլալը, 5. Նոյնպէս Ատրպատական և Արաք երկիրներէն առաջինին կայսրութենէն դուրս և երկրորդին արաբական կոչում ըլլալը. 6. Խաչի գտնուելուն թուականին տարբերութիւնը. 7. Խաչի երևման տեղուոյն և գետնին տարբերութիւնը, 8. Կոստանդիանոսի հիւսիսականներէ պարտուելուն թուականը, 9. Խաչի երևումէն ետքը հալածում հանելու պարագան. 10. Կոստանդիանոսի Սեղբեստրոսէն բժշկուելուն դէպքը. 11. Լուսաւորչի Սեղբեստրոսէ ձեռնադրուած ըլլալը. 12. Հայոց աթոռին ինքնագլխութիւնը տալը. 13. Բեթղեհէմը Տրդատի պարգևելը (ԴԱՇ. 99-111): Այդ բացատրութենէ ետքը ինքզինքը գայթակղած կը վգայ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մը բերնով Հայոց դէպի Հռոմ հրապուրուիլը (ԴԱՇ. 114): Իբր վերջաբան ազգին ապագային համար երեք բացատրէ, որոնք են, ազգային կեդրոնէ բաժնուած ճիւղերը դարձեալ միաւորել, գրաւոր և հաստատ օրէնք մը ունենալ, և ազգին մէջ ուսում և արուեստ և ոգի աճեցնել: Այս է Շահնապարեանի հերքմնագիրին ամփոփումը, որ յաղթական կերպով կը խախտէ Մատթէոսի պաշտպանողականը, և արդէն այսօր այլ ևս Դաշանց թուղթը չունի և ոչ մի պաշտպան: Իսկ լատիներուն կողմէն հրատարակուած ըլլալը, որ Մատթէոսի համար փաստ կը կապմէ (ՃՌԱ. Բ. 254, բնաւ նշանակութիւն չունի, զի Բոլլանդեան վկայաբանք, որ Լատինաց համար հեղինակութիւն են, հիմնովին կը մերժեն Տրդատի և Լուսաւորչի Հռոմ երթալը (ԱԹՌ. 59), և միւս կողմէն գիտնականներ անվաւեր գրուածներն ալ կը պահեն և կուսումնասիրեն իբրև հերքման փաստեր: Աւելցնենք նաև ինչ որ կանխաւ մենք ալ գիտել տուած ենք, թէ Հռոմի աթոռին կողմէն Հայոց առանձնաշնորհութիւններ տրուիլը և անոնց պօրութեամբ արևելեան եկեղեցիներու իրաւասութեանց փոփոխուիլը, ժամանակին հոգւոյն և սովորութեանց և

յարաբերութեանց հետ բոլորովին անհաշտ ենթադրութիւն մըն է: Նմանապէս նկատուելու արժանի է, թէ եկեղեցական պատմութիւնը կը վկայէ և ժողովական կանոններ կը հաստատեն, թէ ոչ մեծ և ոչ փոքր կրնար ուրիշ վիճակներու կառավարութեանց և ձեռնադրութեանց միջամտել, և անհնար էր որ Հռոմ կարենար ուրիշ աթոռի վրայ գործել, վիճակը պատել և ինքնագլուխ ընել: Աւելցնենք նաև թէ Լիկիանոսի հալածանքին և Կոստանդիանոսի Բիւզանդիա փոխադրուելուն պարագաները անհաւատալի կը դարձնեն Հռոմի ուղևորութիւնը, թէ Լուսաւորչի այցելութեան շրջիլը իր կենցաղական ուղղութեան անյարմար է, և թէ Ներոնի օրով 64 տարի Հայոց թագաւոր Տրդատի մը պատմութիւնն է, որ ամբողջական պարագաներով 324 ին ապրող Տրդատի մը վերագրուած է յայտնի թիւրիմացութեամբ (76), և Ագաթանգեղոսի պատմութեան ներմուծելով յետագաներէն ալ միամտաբար կրկնուած է: Յորչափ օտարներ կամ օտարամիտներ են որ առաքելական հաստատութիւն ունեցող աթոռ մը Հռոմի պարգևաբաշխութեան կուլեն ստորնացնել, վարմանալու կէտ մը չէ, բայց ցաւալի պարագայ մը եղած է անոնց ձայնակից տեսնել վերջին ատեններու մէջ Մատթէոս Ա. կաթողիկոսը (ԱՊՏ. 109):

2748. ՄԱՏԹԷՈՍԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Եթէ համարձակ կը մեղադրենք Մատթէոսի պահպանողական մենամուտութիւնը պատմական նիւթերու մէջ, նոյնը պէտք չէ տարածենք երբոր խնդիրը Հայոց եկեղեցւոյ դաւանութեան և անոր ուղղափառութեան շուրջը կը դառնայ, որոնց պաշտպանութեան հոգևին նուիրել մըն է Մատթէոս: Նա երբոր կացութենէն և պարագաներէն դժգոհ քաշուած կեանքի շրջանակը նախընտրեց, և վշտալի անձի կերպարանը զգենլով մինչև իսկ պաշտօնական գործունէութենէ հրաժարածի ձևն առաւ, ինքզինքը պարապորդ անգործութեան չտուաւ, այլ կրօնական հրատարակութեանց ճիւղը մշակեց, որ անդաստին սկիւբէն իր սիրելագոյն զբաղումն էր եղած, և մինչև տասերկու հատոր գիրք թողած կըսուի վանապան կրօնական բովանդակութեամբ: Ասոնցմէ յիշեցինք Յայսմաւուրքը, Խորհրդածութիւնը, Հանդիսարանը և Բաբի մարդը (2692), և այս անգամ ալ Դաշանց թղթոյն ստուգութիւնը (2746): Իսկ կաթողիկոսութեան ատեն հրատարակած գործերուն գլխաւորն է Ներածութիւն աստուածաբանական տեղեաց, 1862-ին պատրաստուած և 1863-ին տպուած Շուշի տպարանին մէջ Շուշեցւոց ծախքով, որ ընդարձակ ոճով քրիստոնէական վարդապետութիւն մըն է ինը գլուխներու բաժնուած, որոնց նիւթերն են 1. Աստուածաբանութիւն, 2. Տեղիք, 3. Շնորհք, 9. Ստորագրութիւնք. 5. Յայտնութիւն, 6. Երրորդութիւն, 7. Մարգեղութիւն, 8. Պարգևք, 9. Հոգին սուրբ, որոնց մէջ հաւաքուած են հոծ կերպով Սուրբ Գիրքէն և սուրբ հայրերէն վկայութիւններ, թէպէտ կը պակսին անոնց կապակցութիւններն ու բացատրութիւնները, և որ 200 երեսէ լաւ հատոր մը կը կազմեն: Միւս այլ հրատարակութիւնն է Դիտողութիւն ճշմարտութեան սուրբ աւետարանի Յիսուսի Բրիստոսի, 1863-ին հրատարակուած Տփղիս 42 երեսէ գրուած մը, որուն առիթ տուած է Փարիզի մէջ 1854-ին տպուած աւետարանի Համաբարբառը Վարք տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի վերտառութեամբ: Այդ վերտառութիւնը և ինչ ինչ ուրիշ գրական բացատրութիւններ անհաճ երևցած են Մատթէոսի, մանաւանդ Վարք ըսելը փոխանակ Աւետարան ըսելու և աւետարանական բացատրութեանց գրական իմաստ տալը, և այդ նպատակով տասը գլուխներ շարադրած է միշտ իր սիրած ոճով, վկայութեանց կուտակութեամբ: Թէպէտ Բարիկ Մուրատեանէն ելած և Այվապեան Գաբրիէլ վարդապետի աշխատասիրութեամբ կատարուած հրատարակութիւնը հեռի էր այն հոգիէն, որով կազմուած էր Նիկողայոս Զօրեանի Յիսուսի վարուց համառօտ պատմութիւնը (2637), սակայն նոյն իսկ վարք բառը բաւական եղաւ Մատթէոսի ընդդիմաբանութեան, որ թերևս տեղեկութիւն չունէր թէ այդ բառը հռոմէական և կրօնամուտ հեղինակներու կողմէն ալ գործածուած է: Այվապեան վարդապետի գործերէն Մատթէոս

քննադատության ենթարկուեցաւ Մեկնութիւն խորհրդոյ և արարողութեանց սրբոյ պատարագի դասատետրն ալ, Թէոդոսիա հրատարակուած Խալիբեան ուսումնարանի տպարանէն, որուն մէջ տասնուհինգ սխալմունքներ կը վատէ կաթողիկոսը և մի առ մի կը հերքէ փոքր հատորով մը 1863-ին Էջմիածին տպուած և 85 երեսէ բաղկացած: Մենք աչքէ անցընելով տեսանք որ Մատթէոս խորհրդաւոր իմաստէն վատ ուրիշ մեկնութիւն չհանդուրժեր, և գրական ու պատմական բացատրութիւնները սխալմունք կը դատէ, մինչ առ առաւելն վանցառութիւն կըրնար ըսուիլ՝ գրական և պատմական իմաստներուն քով խորհրդաւոր իմաստն ալ չաւելցնել: Միւս տարին 1864-ին ուրիշ հատոր մըն ալ հրատարակեց Մատթէոս նոյնպէս Ս. Էջմիածնի տպարանէն ելած, 169 երես հատոր մը, որուն մակագրութիւնն է, Առաջնորդ լուսաշաւիղ ճանապարհին յաւիտենական կենաց, յօրինեալ ի յորդոր մանկանց ուղղափառ սուրբ եկեղեցւոյ, առ ի բարւոք ընթանալ և հասանել յերանաւէտ ժառանգութիւն փառաց երկնից արքայութեան: Գործը 13 գլուխները կը պարունաւէ, նիւթ ունենալով աւետարանական բարոյականը, հաւատքն ու պատուիրանները ու եկեղեցիքն և նմանինք: Ոճը իրեն սեփականնէ, կայութեանց կուտակութիւն և խորհրդաւոր իմաստներու հետեւողութիւն, որոնք թէպէտ հեղինակին միտքով վեհութիւն կը սեպուին, բայց գոծնականութիւն չեն արտադրեր: Նոյն ոճով է և Ռեդեցոյց քրիստոնէական ուղղափառ վարդապետութեան գոծը, 1861-ին տպուած Մոսկուա, որ կրնայ քրիստոնէական վարդապետութեան առձեռն դասագիրք մը նկատուիլ: Մեր յառաջ բերած գործերը 10թիւը կը լրացնեն և եթէ խորհրդածութիւն գործին, նախ գրաբար 1842-ին և 1847-ին, և յետոյ աշխարհաբար 1848-ին և 1862-ին տպագրութիւնները վատվատ համբենք, կրնայ լրանալ նախապէս յիշատակուած 12 թիւը (ՀՄՌ. 96), զի մենք Մատթէոսի ուրիշ հրատարակութեան չհանդիպեցանք: Մատթէոսի գրական արժանիքը գնահատած ատեննիս, պէտք է զինքը առաջնակարգ մանաւանդ թէ տիրապէս առաջին դէմք մը ճանչնալ ժամանակին եկեղեցականութեան մէջ, որ սակայն թէ ընդհանրապէս կապուած է տիրող ոճին հետ, և թէ անհատապէս նոյն ոճին սիրահար մշակող մըն է, որ ներկայ ժամանակներու մէջ ոչ ևս կրնայ գործնական օգտակարութիւն ունենալ: Իրեն համար սևեռեալ գաղափարներ ալ ունի, որոնք չեն կրնար այլևս պաշտպանուիլ այժմեան քննադատ ոճին առջև, բայց ինչ որ ժամանակին բերմունքն է անհատին վրայ մեղադրելի չի դառնար:

2749.ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՐԱԺԱՐՈՒՄՆ

Մինչև հիմա տրուած բացատրութիւններ և յառաջ բերուած եղելութիւններ բաւական են հետեւցնելու թէ աննախանձելի վիճակ մը կը տիրէր Մայաթոռոյ մէջ, երբոր աթոռին և գործին տէրը վայն լքած և գործէն օտարացած, ուրիշներու ձեռք թողած էր ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ անկախ և աղիկամի ԵՒ ՀՐԱԺԱՐՈՒՄՆ կերպով գործեր տնօրինել, որոնցմէ ինքն անմասն չէր կրնար ըսուիլ, քանի որ պօլօթէնիական ձևակերպութեանց հետևողութեամբ պարտաւոր էր սինոդական որոշումները իր ստորագրութեամբ լրացնել, և կերպով մը չըրած գոծին պատասխանատուութիւնը ստանձնել: Այդ կացութիւնը կը քաջալերէր պղտոր ջուրի ձկնորսները, իրենք ալ իրենց կողմէն խնդիրներ յուզել և պահանջումներ բարձրացնել բան մը ձեռք ձգելու ակնկալութեամբ, և անձնականութիւններ և կուսակցութիւններ մշակել որևէ ելքի մը հասնելու համար: Բաւական խառնակ կացութիւն մը երևակայել կու տան մեզ այդ պարագաները, որոնց ներքինը թափանցելու և գործիչները ճանչնալու աղբիւրները չունինք և համառօտ ակնարկներով կը պարտաւորուինք գոհանալ (ՄԵԼ.608): Առաջնորդութենէ մերժուած եկեղեցականաց յիշատակութիւնը կը գտնենք առանց անուններու, որոնք մինչև իսկ կը յաւակնին դիմումներ կազմել, որպէսզի ազգին կաթողիկոսն աթոռէ ձգուի: Ամբաստանագիր ալ կը կազմեն, 116 յօդուած յացանքներ պարունակելով Մատթէոսի վրայ, և կենթադրենք որ ոչ թէ տիրապէս հարիւր

տասնուվեց յանցանքներ, այլ պարպապէս դիպուածներյ յառաջ բերած կըլլան, որոնք միևնոյն ամբաստանութեան շուրջը պէտք էր դառնային, այն է աթողի հոգածութեան վանցառութիւն և լքում: Ընդարձակ ցուցակը չունինք որ դիտողութիւննիս ընդարձակենք: Ամբաստանագիրը ապագային շրջանակի մէջ կուղարկուի վանապան քաղաքներ, ուր ուրեք որ կարևոր հայաբնակութիւններ կը գտնուին, թէ Ռուսիոյ մէջ և թէ Ռուսիայէ դուրս, բայց չծառայեր այն նպատակին, որուն կը դիմէին ամբաստանողները: Ժողովուրդը աւելի խոհական քան Մայրաթոռոյ դժգոհ միաբանները, բացէբաց կը մերժէ կաթողիկոսը պաշտօնանկելու գաղափարը, և միաբանութեան գլուխն և անդամոց մէջ անհամաձայնութեան նշան մը տեսնելով կաճապարէ ռուսահայ քաղաքներէ պատգամաւորներ յղելով կաթողիկոսն ու էջմիածնի միաբանութիւնը իրարու հետ հաշտեցնել: Ո՞վ էին եկողները, ի՞նչ կէտեր քննութեան առնուեցան, ի՞նչ դերեր կատարուեցան, պիտի չկարենանք բացատրել աղբիւրներ չունենալով, բայց կենթարկենք թէ Մատթէոս յանձնառու եղած չէ գործերուն լիովին պատասխանատվութիւնը ստանձնել, և սինոդը օրինապէս իրաւասու և պատասխանատու մարմին մը ըլլալուն, գործերուն ընթացքը անոր յանձնուած է, և այս ըսելը թէ Մատթէոս իսպառ գերի կը դառնայ ոմանց ձեռքը, և թէ կը սկսի Ռուսիոյ տէրութեան և Սինոդի կամակատար ծառայն լինել: Բայց այս դերը նոր բան մը եղած չըլլար, զի Մատթէոս իր դժգոհ և գժտմնեալ ընթացքովը այն կընէր արդէն, միայն ձևը օրինաւորութիւնս վագեցած կըլլայ: Միևնոյն կըլլայ Տաճկահայոց կարծիքն ալ, և անոնց ալ միջամտութեամբ կը խափանի Մատթէոսի պաշտօնանկութեան դիտումը: Բայց գլխաւորապէս ինքն Մատթէոս իր վեհանձնութեամբ դիւրացուցած է այդ ելքը: Երբոր առաջին շշուկներ կը լսուին, կառավարութեան կողմէ յատուկ պաշտօնեայ մը քննութեան կը յղուի որ Մատթէոսէ շարժումի գլուխներուն անունները կը պահանջէ խստութեամբ լռեցնելու համար այլ Մատթէոս բացէբաց կը մերժէ անուններ տալ, յայտարարելով թէ ինքն հայր մըն է որ չի կրնար վաւակներն ատել, այլ պարտի անոնց անխորհուրդ գործերը ներել: Պաշտօնեայն ձեռնունայն կը դառնայ, բայց ահի և սարսափի մատնուած միաբաններ կը վգածուին կաթողիկոսին ընթացքէն և ներում հայցելով ետ կը քաշուին, մանաւանդ թէ կաթողիկոսի պաշտպաններ կը դառնան: Այսպէս ապագայնոց պատգամաւորները գետինը պատրաստ կը գտնեն երբոր հաշտութիւն գոյացնելու կու գան: Նոյն կերպով նաև Մատթէոսի հրաժարումը կը խափանուի, զի պահ մը նա ալ և կաթողիկոսութենէ հրաժարիլ և տէրութենէ թոշակ ստանալով առանձնական կեանք վարել մինչև իւր մահը, և եթէ յաջորդի ընտրութիւնը դժուարութեան հանդիպի, գոնէ ինքը պատասխանատուութենէ վերժ մնայ իւր պաշտօնը մի տեղապահի յանձնելով: Մատթէոս իր աթողին վրայ հաստատուելով կը մտածէ Մայրաթոռին մէջ նորակառոյց դպրոց մը հիմնել և պատրաստութեանց կը ձեռնարկէ, սակայն չհասնիր միտքը գործադրութեան դնել (ՄՈՎ. 370): Այսպէս թէ այնպէս յուզում ուզողներ նպատակին չեն հասնիր, բայց կացութիւնն ալ իսկապէս չփոփոխուիր:

2750. ՄԱՏԹԷՈՍԻ ՄԱՀԸ

Անոնք որ յուզում գրգռելու նպատակով մէջտէղ նետուած էին, կրնային աստիճան մը գոհ ըլլալ Մատթէոսի ձեռներէցութիւնը պաշտօնապէս ամփոփուած տեսնելով, բայց վստահութիւն չէին կրնար վգալ գիտնալով որ Մատթէոս փոփոխամտութեան ենթակայ անձն լինելով, անշուշտ օր մը պիտի վերստին իրենց դէմ լինի: Բայց ինչ որ սովորական խօսից մէջ փոփոխամտութիւն կըսուէր, ներքին իմաստով բան մը աւելի ճանչցուած էր, ջղագրգռութիւնը մինչև ջղագարութեան մղուած, և ամէնէն տարադէպ և տարօրինակ, մանաւանդ թէ անօրինակ և անպատշաճ աստիճանի հասած: Մինչև այսօր այնպիսի միջադէպեր կը պատմուին Մատթէոսի

գործերուն վրայ, որ անհաւատալի ըլլալու չափ պարագաներ կը ներկայեն, և մեզի բաւական սեպուի այդչափն ալ ակնարկած ըլլալ: Ասոր հետ մէկ տեղ այնպիսի կանխամտածութեան և ճարտարութեան գործեր ալ կը յիշուին, որ չես գիտեր թէ կեղծիք մըն էր իր տարօրինակութիւնը, թէ ոչ վայրկենական ազգեցութեանց հետևանք: Այդ վերջին կէտն էր որ շփոթի կը մատնէ յուզմանց պետերը, որոնք կը խիթային թէ երբ պահ մը իրենցմէ վրէժ լուծելու գաղափարը ծագի միտքին մէջ, կարող է իրենց գլխուն ծանր խաղեր խաղալ և իր ձեռնարկներուն մէջ յաջողիլ: Այդ տպաւորութեանց և այդ վախերու ներքև վանազան նորանոր խորհուրդներ յղանալու կը վբաղին, որոնք Մատթէոսի ձեռքէն ազատ մնալու նպատակով մինչև իսկ որևէ միջոցով և կերպով կրնային յառաջել: Այդ ամէն դարձուածները որ 1864 ին սկսած էին և 1865 ին տակաւ հասուննալու կը դիմէին, յանակնկալս կը դադրին Մատթէոսի յանկարծ մեռնելովը, երբ տակաւին ոչինչ նախատեսել կու տար անոր վախճանը, զի առողջութիւնը լաւ էր և ջղագրգիռ անձեր շուտով չեն ընկճուիր (ՄԵԼ. 609): Կարճօրեայ հիւանդութիւնից յետոյ տեղի ունեցած է անակնկալ մահը 1865 օգոստոս 22-ին (ԶԱՄ. Բ. 166): Վերափոխման ութերորդ օրը կիրակի, իսկ հանդիսական յուղարկաւորութեան մտադրութիւն չդարձուիր, այլ աճապարանօք կը թաղուի իբր ժանտախտահար (ՄԵԼ. 609) Ս. Գայիանէի վանքում (ԶԱՄ. Բ. 166), Մայրտաճարի բակէն դուրս, թէպէտ վերջերը սովորութիւն եղած էր կաթողիկոսները այդ բակին թաղել, Մայրտաճարի ճակատին առաջը: Մատթէոս 63 տարեկան էր տակաւին, որ ծանր տարիք մը չէ, տկարակազմ ալ չէր, հիւանդութիւնն ալ երկարատև չեղաւ, այսու հաներձ թունաւորման կասկածը որ այսպիսի պարագաներուն դիւրութեամբ երևան կու գայ, Մատթէոսի համար վրուցած չէ: Հիւանդութեան անունն ալ յիշուած չենք գտներ, և իբրև ժանտախտահար բացատրութիւնն ալ, աւելի թաղման աճապարանքը ցուցնելու համար ըսուած է քան թէ հիւանդութիւնը ճշդելու: Օծումն ալ հանդիսաւոր չէր եղած (2698), նոյնպէս եղաւ և թաղումը, անանկ որ Մատթէոս Էջմիածինի մէջ փառաւորութեան օր չունեցաւ, թէպէտ շատ փառաւորուեցաւ ընտրութենէ ետքը Կ. Պոլիս անցուցած օրերը: Մատթէոսի մասին ըսելիքնիս փակելու համար մենք ալ կը վարանինք վճռական և ամբողջական բան մը ըսել անոր նկարագիրին և արդիւնքին և արժանիքին վրայ: Իբրև գրական մարդ լաւագոյն եղաւ իր ժամանակի եկեղեցականութեան մէջ իբր հմուտ և իբր երիտասարդ, թէպէտ մեղադրելի քննադատութենէ վուրկ և գործնական տեսակէտէն թերի ըլլալուն համար: Իբր գործիչ և պաշտօնական անձ բաւական արդիւնաւոր շրջան մը ունեցաւ կաթողիկոսութենէ առաջ, թէպէտ վաճառ չարդարացուց կաթողիկոսական աթոռին վրայ: Իբր ճարտար և հնարագէտ, գեղեցիկ միջադէպներ կը պատմուին դժուարութիւններէ ազատելու կամ նպատակը իրագործելու մէջ, թէպէտ յաճախ այդ յաջողութիւնը այլանդակութեանց հասցնելու չափ առջև տարած է: Ժողովրդական և ազատական կենցաղական խնդիրներու մէջ և նախանձայոյս իրաւանց և փառաց կնճիռներու մէջ, թէպէտ ստէպ ճշմարիտը ճշմարտանմանին հետ շփոթող, և քննադատութեան ու գնահատման մէջ սայթաքող: Մէկ խոսքով բարձրին և ստորինի, լաւի ու թերիի կատարեալի ու պակասաւորի այնպիսի խառնուրդ մը, որ ոչ նժարով ու կշիռով հնար է ճշդել, և ոչ կշռադատութեամբ եզրակացութեան մը յանգիլ: Իր տեսակին մէջ առեղծուածական անձ մը, որ ցարդ յոգնեցուցած և դեռ չատ պիտի յոգնեցնէ պատմագիրները: Վերջապէս մէկ մը որ կաթողիկոսական աթոռէն անցաւ, իր երեստէն չատ քիչ յիշատակաց արժանի հետք թողլով, և որոնց մասին ինչ որ կրնայինք ըսել արդէն իրենց կարգին քաղացինք (2742-2743):

2751. ԱՂԹԱՄԱՐԱՅ ԱԹՈՌԸ

Երբոր Մատթէոս դատարկ կը թողուր Մայրաթոռը թափուր կրնար ըսուիլ Աղթամարայ կաթողիկոսական աթոռն ալ: Պետրոս Պիւլպիւլը որ հապճեպով օծուած էր այդ աթոռին անուամբ,

1858 յուլիս 24-ին (2680), հանդարտ օրեր չէր անցուցած և գլխաւորապէս իրեն նեղութիւն տուողները իր ձեռնադրած եպիսկոպոսներն էին, իր վրայ ալ կը պակսէր պանոնք վսպելու և կացութեան տէր լինելու կարողութիւնը: Օծումէն երկու օր ետքը ձեռնադրուած Պօղոսնեսցի Խաչատուր Շերոյեան, Խիպանցի Յակոբ և Ղապար գրագիր երեք եպիսկոպոսներուն վրայ 1864-ին սկիզբը աւելցած էր Նարեկացի Յովսէփ Խոստեղեան, և այդ չորսերն էին որ գլուխ ունենալով Շերոյեանը մտադրեցին Պետրոսը պաշտօնանկ հռչակել և իրենցմէ մէկը կաթողիկոս օծել, և գաղտնիք չէր թէ ով պիտի ըլլար այդ մէկը, որ լեզուի և գոծի ճարտարութեան ոսկւոյ վորութիւնն ալ կրնար յարակցել (64 ՄԱՍ. 664): Ուստի 1864 տարուոյ Վարագայ խաչի պահոց չբաթուն մէջ կը վճռէն նպատակին գործադրել և գործը յանկարծական կերպով լրման հասցնել առանց դիմադրութեան միջոց թողլու: Սեպտեմբեր 25 Վարագայ պահոց ուրբաթ առաւօտ կանուխ (ԻԶՄ, 423), Ախտվանքի դուրսի տունը պատրաստութիւններ կը սկսին, Պետրոս որ արդէն լուր առած էր կը ջանար պատրաստութիւնները խափանել, մինչև իսկ անձամբ և բուռն ոյժով կաշխատի կղզի գացողները նաւակէն դուրս հանել, սակայն Խաչատուրի ձեռք առած միջոցներով և հաւաքուած ամբոխին ձեռքով ինքն Պետրոս բռնի դուրս կը հանուի նաւակէն արիւնաթաթաւ ծովափին աւազին վրայ կը թողուի: Իսկ Խաչատուր իրեն ընկերացող Ղապար և Յովսէփ եպիսկոպոսներով և հետևորդներով նաւակին առաջաստները բացած Աղթամարայ կղզին կը հասնի, տաճարը կը մտնէ, և նոյն օրին իրեն ընկերացող եպիսկոպոսներէն, շահուած միաբան վարդապետներու աջակցութեամբ, կաթողիկոս կօծուի: Իսկ Պետրոս բաւական ժամանակ աւազին վրայ վիրաւոր մնալէն ետքը կը փոխադրուի մօտիկ Փշավանք գիւղը իր եղբօրորդւն տունը, բայց նոյն գիշեր ատրճանակի և դանակի հարուածներով կը սպաննուի նոյն տան մէջ: Հապիւ թէ օծումին լուրը Վանայ մէջ կը լսուի, առաջնորդ Իգնատիոս եպիսկոպոս Գալմաճեեան կառավարիչին կը դիմէ և ապօրինաւոր գործը արգելուլ կը խնդրէ, կուսակալն ալ հարիւրապետ մը և պինուորներ կը փութացնէ, որոնք սակայն Պետրոսը սպանուած կը գտնեն, և երկու եպիսկոպոսներ, երեք վարդապետներ՝ Մխիթար և Յակոբ և Յարութիւն, Փշավանքի գիւղապետը, Պետրոսի եղբօրորդին և ձիապանը ձերբակալուելով Վան կը բերեն հարցափորձի ենթարկուելու համար (64. ՄԱՍ. 664). Խաչատուր Աղթամար կը գտնուէր և ապառ կը մնայ: Կ. Պոլսոյ պատրիարքարանը կը սպասէ մինչև որ նամակով տեղեկութիւն ստանայ, և հոկտեմբեր 30-ի վարչական ժողովին մէջ Աղթամարայ տեղապահ կը նշանակէ նոյն ինքըն Վանայ առաջնորդ Ինգնատիոս եպիսկոպոսը, և անոր տեսչութեան ներքև տեղւոյն վրայ գործերը վարելու համար տեղապահի օգնական կը նշանակէ Պօղոս Մելիքեան վարդապետը, որ Կտուցի վանահայր կը գտնուէր (64. ՄԱՍ. 664): Այս որոշմամբ իբրև չեղեալ նկատուած եղաւ Խաչատուր Շերոյեանի կաթողիկոսական օծումը, որ արդէն իր մէջ ոչ մի օրնական պայման ունէր, ոչ աթոռոյ պարապութիւն, ոչ օրինաւոր ընտրութիւն, ոչ կեդրոնի հաստատութիւն և ոչ ծիսական պայմաններու համաձայնութիւն: Իսկ խնդիրին լուծումը թողուեցաւ պաշտօնական քննութեանց և սահմանադրական ձևակերպութեանց ընթացքին: Այս միջոցին էր որ Մայրաթոռոյ պարապութիւնն ալ տեղի ունեցաւ 1865 օգոստոս 22-ին (2750), 1864 սեպտեմբեր 25-ի արկածալից իրողութենէն 11 ամիս ետքը, որուն մասին Մատթէոսի կողմէն քայլ մը առնուած չէր:

2752. ԽԱՉԱՏՈՒՐ ՇԵՐՈՅԵԱՆ

Խաչատուր, որ այդ կերպով կաթողիկոս կը հռչակուէր, 1819-ին ծնած 45 տարեկան էր արդէն, որդի Պողոսնիս գիւղը հաստատուած բնիկ ասորի, այլ հայադաւան դարձած Շերոյի, տղայութեան Աղթամար մնացած էր Մոկացի Խաչատուր կաթողիկոսի մօտ, յետոյ անկէ արտաքսուած և Կտուց անցած, անկէ ալ Էջմիածին անցած, Խաչատուր վարդապետի աշակերտած, և ասոր մահուան

առթիւ սնտուկը ներքեւէն քակած, մէջի դրամները և արժէքաւոր իրերը կողոպտած և էջմիածինէ խոյս տւած և կրկին Մոկացի Խաչատուրէ ընդունուած, 21 տարեկան եղած ատեն 1840-ին սարկաւագ, և քիչ ետքը արեղայ և վարդապետ ձեռնադրուած Մոկացին, որոյ մասին խօսած ենք արդէն, 1851-ին մեռաւ (2679), և այս պատճառով տեղի ունեցած անցքերուն և Պետրոսի կաթողիկոսանալուն մէջ մեծ դեր վարեց Խաչատուր, երբեմն իբր տեղապահներու օգնական և երբեմն իբրև անցուդարձերու վարիչ, և իւր խորամանկութեան հետ միացնելով մեծ հարստութիւն, ճիւղուիդական ձևեր, և այն յատկութիւնը, որով դէպի ինքն էր գրաւում հէնց առաջին անգամ իւր հետ տեսակցողի սիրտը: Վանայ և Աղթամարայ բոլոր գիւղերու Հայերուն ու Քուրդերուն մէջ խորին հաամակրութեան և յարգանքի էր արժանացած, և Իգնատիոս եպիսկոպոսի Աղթամարէ հեռանալէն ետքը Խաչատուր ներքնապէս այժոռի վարիչ դարձաւ (97. ԱԲՍ. 52-55), որչափ ալ պաշտօնապէս Խիպանցի Յակոբն էր նշանակուած (2680): Նա ինքն գլխաւոր դերն ունեցաւ Աղթամարը առանց կաթողիկոսի չթողլու և Պետրոսը որ կաթողիկոսացնելու համար եղած ջանքերուն մէջ, և Պետիոս ալ իրեն համար աշխատող երեք վարդապետները իր օժումէն երկու օր ետքը եպիսկոպոս ձեռնադրեց (2680): Խաչատուր իրեն նպատակին մեծ քայլը առած եղաւ և անկէ ետքը սկսած հեռուէ հեռու միջոցները պատրաստել, միաբաններ շահիլ, ժողովուրդը իր կողմը վաստկիլ, և Քուրդերու պաշտպանութիւնը ապահովել, որ կարենայ Պետրոսը մէջտեղէն վերցնելով կաթողիկոսութեան բարձրանալ, օրինաւորութեան արտաքին ձևակերպութիւններն իսկ ոտնակոխ ընելով, ինչպէս որ տեսանք:

2753. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Մատթէոս կաթողիկոսի մահուան և Մայրաթոռոյ պարապութեան առաջին պաշտօնագիրը սինոդի կողմէն 1865 սեպտեմբեր 11-ին էր գրուած, իսկ Կ. Պոլիս կը հասնէր նոյեմբեր 19-ին, որ է ըսել մահուանէն երեք ամիս ետքը, մինչ արդէն գործը լսուած էր և ըստ պատրիարքական հրահանգի հոգեհանգստեան պաշտօններ կատարուած էին Կ. Պոլսոյ և գաւառներու մէջ (ԻԶՄ. 502-503): Պաշտօնագիրը երեք օրինակ էր պատրիարքի և կրօնական ժողովոյ և քաղաքական ժողոպ հասցէներուն, և պատրիարքն ալ նոյն ժողովներուն յանձնարարած էր գիրերը, և ժողովներն ալ նախապատրաստութիւններով սկսան վբաղիլ, երբ դեկտեմբեր 17-ի նիստին մէջ Ստեփան Ասլանեան յանուն Ընդհանուր ժողովոյ գանգատ կը յայտնէ, թէ պաշտօնագիրը իրենց հաղորդուած չէ (ԻԶՄ. 506), մինչ սահմանադրութեան համեմատ Ընդհանուր ժողովին կը պատկանի կաթողիկոսական ընտրութեան մասնակից ըլլալ (ՍՀՄ, 40): Ասոր վրայ դեկտեմբեր 24 ին ժողովական ընտրութեամբ 4 եկեղեցական և 4 աշխարհական անձերէ բաղկացած կաթողիկոսական յանձնաժողով մը կը կազմուի, և անոր ընելիքը կը ճշդուի Ստեփան Ասլանեանի և Մատթէոս Մամուրեանի թելադրութեանց համեմատ: Ընտրեալներն եղան Արիստակէս Ռափայէլեան, Անդրէաս Տէր Անդրէասեան և Ներսէս Վարժապետեան եպիսկոպոսներ ու Յովհաննէս Սեթեանի վարդապետ , իսկ աշխարհականներէն Ստեփան Ասլանեան, Սարգիս Աղաբէդեան, Գրիգոր Մարկոսեան և Կարապետ Իւթիւճեան (ԻԶՄ. 516-516), որոնց մէջէն Վարժապետեան ատենապետ և իւթիւճեան ատենդպիր կը նշանակուին (ՅՆՁ. 93): Իսկ ընելիքնին կորոշուի 1. Կաթողիկոսութեան վիճակը քննել, 2. Ընտրութեան եղանակը ուսումնասիրել, 3. Տաճկահայոց մասնակցութիւնը որոշել (ՅՆՁ. 69), որոնց իբր բացատրութիւն կը շեշտուի պակաս կէտէրու դարմանը հոգալ, և այժոռին անկախութիւնը ու իշխանութիւնը և Հայ եկեղեցւոյ իրաւունքները պաշտպանել (ԻԶՄ. 513-514): Սինոդական պաշտօնագիրը ժողովին բացումը որոշած էր 1866 սեպտեմբեր 15-ին, իսկ բնաւորութիւնը ժողովին երրորդ օրը սեպտեմբեր 17-ին, Խաչվերացի շաբաթ օրը (ՅՆՁ. 86): Յանձնաժողովը փութաց անմիջապէս գործի ձեռնարկել, և չորս ամսւան մէջ 11 նիստ

գումարելով (ՃԱՆ. Ա. 3), 1866 ապրիլ 29-ին իր տեղեկագիրը փակեց ու ստորագրեց (ՅՆՁ.93), և մայիս 27-ին Ընդհանուր ժողովոյ նիստին մէջ նկատի առնուեցաւ, և նախ մաս առ մաս և յետոյ ամբողջութիւնը քուէարկութեամբ ընդունուեցաւ (ԻԶՄ.517-518): Կարծէ ուրեմն որ այդ կարևոր պաշտօնագիրը համառօտ կերպով մը քաղենք, մեր տեսութիւններն ալ աւելցնելով: Բայց կանխենք ծանուցանել թէ ութը անդամներէն եօթը միայն ստորագրած են տեղեկագիրը (ՅՆՁ.93), զի Անդրէաս եպիսկոպոս թէպէտ աշխարտութեանց մասնակցած, այլ զգուշացած է Ռուսական կառավարութեան անհաճոյ գրուած մը ստորագրել, մտադրած ըլլալով, Էջմիածին դառնալ և ռուսահպատակութիւն ընդունիլ, զի Մատթէոսի հետ ապրած էր շարունակ Էջմիածնի մէջ և ռուսական կացութեան ընտելացած, ուր յետոյ առաջնորդական պաշտօն ալ ստացաւ (ԻԶՄ. 515):

2754. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Տեղեկագիրն առաջին մասը որ կաթողիկոսութեան վիճակը քննելու նուիրուած է հոետորական դատախապութիւն մըն է պօլօթէնիէի գրութեան դէմ, և մանրամասնութիւններն իսկ նկատի առնուած են եկրակացնելու համար թէ այդ օրէնսդրութեան համեմատ Հայոց ընդհանրական հայրապետը ամենայնհայոց կաթողիկոսութեան անունը միայն կը կրէ (ՅՆՁ. 70), և թէ պօլօթէնիէն Հայոց եկեղեցին օտար, եկամուտ և վնասակար է, և անոր անկախութեանն ու ապատութեանը սպառնացող և պայծառութեան ու բարեկարգութեան աղաւաղիչն է թէ բոլորովին կեղծանէ եկեղեցին, ուսկից աւելի չկայ սրբազան բան մը աշխարհի վրայ Հայոցս համար, վասն զի առանց եկեղեցւոյ մեք ոչ հոգևոր և ոչ մարմնաւոր կեանք չունինք. նա է մեր պսակը, նա է մեր ուրախութիւնը և անով է մեր յաւիտենական կեանքը: Պօլօթէնիէի ամբողջութիւնը քննելով կը հետևեցնէ տեղեկագիրը թէ կաթողիկոսը զրկուած է առաջնորդութեանց վրայ իշխանութենէն և վիճակներու հետ հաղորդակցութենէն, թէ չկրնար անկախ հոգևոր ժողով ունենալ, և իրեն ու ժողովին իրաւունքները շփոթած են, թէ առաջնորդները անկախօրէն չկրնար կարգել և արձակել, և ոչ ալ հաստատուն կալուածներ գնել ապատօրէն: Յատկապէս կը ծանրանայ պօլօթէնիէի յօդուածներէն տասնուիննին վրայ, և ամէնուն մէջ ալ վերև յիշուած անտեղութիւնները կը գտնայ: Կընդունի իրաւ թէ Հայոց եկեղեցին շատ բռնաբարութեանց ներքև գտնուած է, բայց անոնք անցաւոր բռնութիւններ կը նկատէ և ոչ օրինական կացութիւն (ՅՆՁ, 70-71): Վերջապէս բոլոր այս առաջին մասը (ՅՆՁ. 69-78) պօլօթէնիէի դատափետութիւնն է: Երկրորդ մասին մէջ ըտնրողական ձևերու վրայ կը խոսի, և կը խոստովանի թէ ցարդ որոշ և տիրող ձև մը եղած չէ, բայց պօլօթէնիէի տուած ձևին մէջն ալ շատ ապօրինութիւններ կը գտնէ, երկու ընտրելիները, մէկ տարուայ պայմանաժամը, աշխարհական պատգամաւորին իշխանաւորներէ ընտրուիլը, եկեղեցական ընտրողներուն աշխարհականներէ 15 աւելի ըլլալը, երկրորդ քուէարկութեան ներկաներով վերջանալը, և երկու ընտրելիներէն մին կայսրէն որոշուիլը: Միանգամայն Ներսէսի և Մատթէոսի ընտրութեանց վրայ խօսելով, վանոնք պօլօթէնիէի անհամաձայն կը գտնէ, և Ներսէսի ու Մատթէոսի պօլօթէնիէին մասին դիտողութիւններ առաջարկելը հերքել և մերժել կը մեկնէ, որով պօլօթէնիէի օրինական ոյժ չընդունիր (ՅՆՁ. 79-91): Իսկ երրորդ մասին մէջ զիջանելով պօլօթէնիէի ձևին գլխաւոր գիծերը պահել, կառաջարկէ Մատթէոսի ընտրութեան ժամանակ յիշուած 45 վիճակները 65-ի բարձրացնել, 20 ալ միւս աթոռներուն յատկացնելով, այսինքն 13 Կիլիկիոյ, 2 Աղթամարայ և 5 Երուսաղէմի: Իսկ ընտրութեան ձևին համար կը ծրագրէ նախ Կ. Պոլսոյ վիճակային եկեղեցական ժողովով, այսինքն համագումարով, ընտրելեաց ցուցակ կազմել, և այդ ցուցակին վրայէն Ընդհանուր ժողովով մէկ մը ընտրել, և այդ մէկին վրայ կեդրոնացնել 65 եկեղեցական և 65 աշխարհական, բովանդակ 130 վիճակային ձայները, և երկու պատգամաւորներ յղել Էջմիածնի, մէկը եկեղեցական և միւսը աշխարհական, և անոնց բերանով

Էջմիածնի ընտրողական ժողովին մէջ իւրաքանչիւրէն 65-ական կամ համանգամայն 130 քուէ տալ Ընդհանուր ժողովէ ընտրուած անձին (ՅՆՁ.91-93): Այդ է տեղեկագիրին հոգին և ասոնք են անոր էական կէտերը, որոնք իբր կատարեալ և գործնական մի դրութիւն լիագոյն քուէով ընդունուեցան Ընդհանուր ժողովոյ 1866 մայիս 27-ի նիստին մէջ, և գործադրութեան յանձնուեցան միևնոյն կաթողիկոսական յանձնաժողովին, Ընդհանուրի ատենապետ Բարունակ Ֆէրուհիանն ալ աւելցնելով (ԻՄՁ.518), և պատրիարքին ու վարչութեան հետ համընթաց գործակցութեամբ:

2755. ՏԵՂԵԿԱԳԻՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Մենք առիթ ունեցած ենք պօլօժէնիէի մասին տեսութիւնիս յայտնել (2528-2529), բայց յանձնաժողովի տեղեկագիրին առթիւ ինչինչ դիտողութիւններ ալ յաւելուլ աւելորդ չենք կարծեր: Տեղեկագիրը պատրաստողներ Հայոց եկեղեցւոյ իշխանութիւն և անկախութիւն ըսած ատեննին այնպիսի գիրք մը կը ձգտին ստեղծել, որ Հայոց կաթողիկոսը որ և է պայմանէ կամ կացութենէ անկախ աղիկամի գործող մը ըլլայ, ուստի անտեղութիւն կը կարծեն կաթողիկոսի մօտ խորհուրդ մը գտնուիլը, և այդ մարմինին իրաւունքներուն ճշդուիլը, որ անհրաժեշտէն սահմանափակում մը պիտի յառաջ բերեն կաթողիկոսին գործունէութեան վրայ մինչ միւս կողմէ բուն պաշտպաններ են սահմանադրական սկզբունքներու և սիրահար են օրէնք կանօն ունենալու, ուստի միայն իբր խծրծանք կըլլան նոյն իսկ իրենց չընդունածը: Նմանօրինակ կէտ մըն ալ կը նկատեն քաղաքական իշխանութեան միջամտութիւնը եկեղեցական գործոց մէջ, նոյն իսկ երբոր խնդիրները հոգևորական պարունակէն դուրս կելլեն, և անձնաւորութեանց, ստացութեանց, ժառանգութեանց, ձեռնհասութեանց, և նմանօրինակ արտաքին շրջանակներու մէջ կը մտնէն: Սակայն քաղաքական իշխանութեան չի կրնար վլացուցիլ կէտերը գիտնալու և նայելու և զգուշանալու իրաւունքը: Այսպէս եղան և են բոլոր աշխարհի պետական օրէնքները, և եթէ այժմ ուրեքուրեք սկսած են եկեղեցին պետութենէն զատել, այնտեղեր ալ ոչ մի ապատութիւն կամ առանձնաշնորհութիւն կամ արտօնութիւն կամ առավելութիւն չեն ճանչնար եկեղեցւոյն վրայ, և անհատական հպատակութեան կը հաւասարցնեն եկեղեցականները: Ուստի սկզբունքի, տեսակէտէն ի վեր էր պօլօժէնիէի դէմ մաքառիլ: Իսկ եթէ մասնաւոր պարագաներու մէջ դիտողութեանց առիթ ներկայանայ, արգիլեալ չէ փոփոշութիւն առաջարկել և ուղղելու աշխատիլ: Մենք ալ մեր դիտողութիւնները յառաջ բերինք (2528-2529), ուսական պետութիւնն ալ չմերժեց դիտողութիւններ ընդունիլ, մանաւանդ հրաւիրեց ալ ներկայել և ինչինչ կէտեր ալ փոփոխուեցան կաթողիկոսներու առաջարկութեամբ, սակայն դիտողութիւն առաջարկելը հերքել և մերժել չէ, և ոչ ալ նոր գրութեամբ և նոր ձևով օրէնք մը պատրաստելու ձամբայ է: Այս է պատճառը որ անհետևանք մնացին տարբեր կերպով եղած առաջարկները, որոնք ըստինքեան ալ կատարեալ բաներ չէին (2743): Մանաւանդ մտացածին ենթադրութիւնները, բոլորովին կը տկարացնեն եղած դիտողութիւնները, ինչպէս էր Ներսէսի անունին հետ ուրիշ ընտրելի ցուցուցած չըլլալու կարծիքը (2570), կամ Մատթէոսի ընտրութեան 45 վիճակաց քուէներուն միացմամբ յաջողիլը (2691), որոնք իրականութենէ հեռու ենթադրութիւններ են: Տեղեկագիրին ցուցած ընտրողական ձևն ալ, որ է Ընդհանուր ժողովով վիճակներու անունին քուէ տալ, և մեծամասնութիւն ստացողին քուէն բոլորին վրայ տարածել, ընտրութեան գաղափարին ալ հակառակ է զի ընտրողական ժողովներու մէջ իւրաքանչիւր քուէարկուի իրաւունքը անհատաբար յարգելու պարտք կայ, և ոչ թէ քանի մը քուէ ստացողին անունը անոր քուէ չտուողներու վրայ բռնի պատշաճեցնել: Նոյն իսկ ամէն վերջնական ընտրութեանց մէջ ընտրեալը մեծամասնութեան քուէի իրաւունքով կընտրուի և մեծամասնութիւնը միաձայնութիւն չդառնար: Ինքզինքը խաբելու ձև մըն էր կարծելը թէ Կ.

Պոլսոյ 90 կամ 130 քուէները ազդեցութիւն ունեցած են թիւին վրայ, զի պարզապէս ներկաներուն կողմէ ազնիւ զգացման մը, թող ըլլայ իսկ շահագիտական նպատակի մը հետեանք էր իրենց իսկական քուէները տալ Տաճկահայոց կողմէն նախադասուած անձին, և յաջողցնել պարզապէս ներկայից քուէներու պօրութեամբ: Եկեղեցականներու և աշխարհականներու քուէներուն մասին ըսուածն ալ հետեանք է ոչ թէ հնաւանդ ազգային դրութեան, այլ գաղղիական շարժումներէ ազդուած գաղափարներուն, որոնցմով կազմուեցաւ Տեճկահայոց սահմանադրութիւնն ալ, աւելի օտար քան թէ բնիկ գաղափարներով, որոնց մասին անկաշկանդ տեսութիւննիս յայտնած ենք, և հայ տարիին պօլսթէնիէի գրութեան ներքև աւելի լուրջ վարգացում և արդիւնաւորութիւն ունեցած ըլլալը շեշտած, քան թէ Տաճկահայոց սահմանադրութեան ներքև (2731): Կաթողիկոսական յանձնաժողովին անդամները նոյն իսկ սահմանադրութիւնը կազմողներէն էին ատենապետէն սկսելով, և մէջերնէն հանդարտ մտածող անդամներ մեծամասնութեան մէջ սուլած էին: Այս քանի մը ընդհանուր տեսութիւնները բաւական կը սեպենք, և աւելի մանրամասնութեանց մտնելու հարկ չենք տեսներ:

2756. ԺԱՄԱՆԱԿԻՆ ՔՆՆԱԴԱՏՆԵՐԸ

Ժամանակին ալ այդ մտածումները յայտնողներ գտնուեցան, և առաջին եղաւ Ճանիկ Արամեան, որ դիտողութիւն ի վերայ տեղեկագրի կաթողիկոսական յանձնաժողովոյ մակագրութեամբ տետրակ մը հրատարակեց (ՃԱՆ. Ա.) մայիս 20-ին: Ընդհանուր ժողովոյ հաւանութենէն որ առաջ, և որուն ձայնակից գտնուեցան Յովհաննէս Տէրոյենց և Յովսէփ Վարդանեան և Յակոբ Կարինեան: Սակայն տեղեկագիրին պաշտպանութեան փութաց Մարկոս Ազաբէկեան, խոստովանելով իսկ թէ տեղեկագիրին հայեցուծքը ոչ նախնի աւանդութեանց համաձայն է, և ոչ ալ այսօրուայ Հայոց համար հետեւելու մի սկզբունք է (ԾԻԼ. Ա. 664): Արամեան երկրորդ անգամ ալ իր տեսութեանց պաշտպանութիւնը հրատարակեց Ռուսիա և Ընդհանուր ժողով Հայոց ի Կոստանդնուպոլիս տետրակով (ՃԱՆ. Բ.) որոնց ուղղակի պատասխանեց Ազաբէկեան (ԾԻԼ. Ա. 295 և 363), միշտ նոյն յանկերգը կրկնելով թէ Հայոց եկեղեցականութիւնը և կաթողիկոսութիւնը պէտք և այնպիսի գիրք մը վայելեն, որ ոչ մի տէրութենէ և ոչ մի կառնագրութենէ կախում չունենալ, ոչ մէկը իրեն գործերուն խառնուի, ըլլան իսկ անձանց կամ գոյից, սեփականութեանց կամ ստացութեանց գործեր, այլ վայելէ այնպիսի արտերկրական արտօնեայ գիրք (Extraterritorialite), որպիսին քրիստոնեայ տէրութիւններ իրենց կրօնքին կամ կրօնական պետերուն ալ չեն ներեր: Տեղեկագիրը քննադատողներուն փաստերը կը հիմնուէին պահանջուած պայմաններուն կամ գաղափարներուն հակաքաղաքական ըլլալուն վրայ, որով Հայերը կամ կասկածելի պիտի ըլլային բոլոր տէրութեանց, որոնք Հայ հպատակներ ունէին, կամ ծիծաղելի պիտի դառնային իբր եղջերուաքաղներով օրօրուողներ: Քննադատներ համարձակ կը յայտարարեն թէ տեղեկագիրը աւելի պապական տեսակէտէն և կաթոլիկ ուղղութենէն ազդուած էր եկեղեցական իշխանութեան մասին կազմած գաղափարովը քան բուն հայկականէն, որ աշխարհիկ տարրը եկեղեցիէն չմերժեր, և պետական տարրն ալ աշխարհիկ տարրին ներկայացուցիչ եղած է հին ժամանակներէ սկսելով: Իրաւ տեղեկագիրը կազմողներ և պաշտպանողներ Հայ եկեղեցւոյ հնաւանդ կանոններ կը յիշէին, սակայն ոչ գոյութեան և ոչ պարագաներու փաստեր կը բերէին, այլ սովորութիւններ կենթադրէին որ երբեք իր իրակութիւն ունեցած չեն. զի իրօք Հայ եկեղեցին ամէն ատեն թագաւորներու և իշխաններու և նոյն իսկ օտար տիրապետողներու կամքին ենթարկուած է: Տեղեկագրի պաշտպանութեան համար Հայոց եկեղեցւոյ և ազգութեան սերտ կապակցութիւնը մէջտեղ դնելն ալ, և այդ տեսակէտով անպարփակ անկախութիւնը պահանջել, այնպիսի անխոհեմ և վտանգաւոր քայլ մըն էր, որ իրենց դիտած նպատակին և փափաքած

արդիւնքին բոլորովին ներհակ հետևանքի կրնար տանիլ: Բայց բարեբախտաբար այդ խնդիրներ ամփոփ շրջանակի մէջ կը ծեծուէին և պետական շրջանակներու մէջ մտադրութիւն գրաւեր, և իբր անկախութեան կամ ապատութեան առարկաներ կը խօսուէին, հաւատքը, վարդապետութիւնը, ծէսը, արարողութիւնը և աւանդութիւնը (ՃԱՆ.Բ.8), որոնց մասին խնդիր չկայ: Ահա թէ ինչո՞ւ և ի՞նչպէս խօսողներ խօսեցան և գրողներ գրեցին, սակայն պօլօժէնիէն իրեն վարչական և յարաբերական մասերուն մէջ մնաց ինչ որ էր, և գործադրուեցաւ ամբողջութեամբ: Անշուշտ աւելի արդիւնաւոր և օգտակար եղած պիտի ըլլար պօլօժէնիէի քննադատութիւնը, եթէ փոխանակ անբաղաձայն և անհնար պահանջներու, հնարաւոր և գործադրելի կէտեր առաջարկուէին. զի միացեալ հայութեան օրինաւոր ձայնը հարկաւ իր ծանրակշռութիւնը պիտի ունենար ռուսական կառավարութեան առջև: Պատմագիրի պարտք սեպած ըլլալով եղելութեանց ներքինը ուսումնասիրել, աւելցուցինք մեր այս տեսութիւնները, և ըստածը բաւական սեպելով դառնանք եղելութեանց:

2757. ԿԻԼԻԿԻՈՅ ԱԹՈՌԸ

Ընդհանուր ժողովը տեղեկագիրը ընդունելով, անոր գործադրութիւնը միևնոյն յանձնաժողովին թողած էր, պատրիարքի և վարչութեան համընթաց գործակցութեամբ (2754): Տեղեկագիրը իր առաջին երեք մասերուն մէջ ուղղակի Մայրաթոռով զբաղած և գործադրութեան կերպը եօթը յօդուածներով ամփոփած էր, ինչ որ մենք ալ համառօտիւ ամփոփեցինք (2754): Բայց տեղեկագիրը չորրորդ մաս մըն ալ ունէր (ԻԶՄ.531), որուն առիթ տուած էին ոչ միայն Սսոյ և Աղթամարայ մասնաւոր կաթողիկոսութեանց Մայրաթոռոյ հանդէպ դիրքն ու յարաբերութիւնները, այլ մանաւանդ որ այն միջոցին Մայրաթոռին պէս երկու մասնաւոր աթոռներն ալ պարապութեան մէջ կը գտնուէին: Աղթամարայ աթոռին կացութիւնը պարզած ենք արդէն (2751), Կիլիկիոյ աթոռն ալ պարապ մնացած էր Մայրաթոռէն երկու ամիս ետքը: Վերջին կաթողիկոսը Կիրակոս Բ. Աջապահեան, որուն նախընթացը և փոքր ի շատէ դաստիարակուած անձնաւորութիւնը կրնար լաւ յոյսեր ներշնչել (2678), ընդհակառակն աննշանակ կերպով անցուցած էր իր օրերը, ոչ արդիւնաւորութիւն մը ցուցնելով և ոչ յատուկ մեղադարանց արժանի պարագայից մէջ գտնուած ըլլալով: Տէրվիշ և Իսմայիլ փաշաներ 1865-ին պաշտօն առած էին Գօղանօղլուները նուաճել, որ բացարձակ բռնապետներ դարձած էին Տորոսի շղթային վրայ և Սիս ու Հաճըն կը հեծէին անոնց բռնութեանց ներքև: Կիրակոս միացած էր փաշաներուն, զի Կիլիկիոյ կաթողիկոսներն ալ կրած էին Գօպանեանց չարիքը, և քանիներ կեանքերնին ալ կորուսած էին անոնց դաւաճանութեամբ: Այդ գործողութիւններ կը կատարուէին 1865-ին աշնան միջոցին, երբ հնտախտի համաճարակը այդ կողմերն ալ հասաւ և Կիրակոս ինքն ալ գոհ գնաց հոկտեմբերի մէջ (65. ՄԱՍ. 712), երբ ժողովուրդը լեռնային բացաստաններէն դաշտային կողմեր կիջնար: Ըստ այսմ երեք կաթողիկոսական աթոռներն ալ միանգամայն պարապ էին, երբ 1865 դեկտեմբեր 24-ին կաթողիկոսական չանձնաժողովը կը կազմուէր (2753), և երեքին մասին պէտք եղածը ծրագրել միևնոյն յանձնաժողովի կը յանձնուէր: Կ. Պոլսոյ պատրիարքարանը փութացեր էր Կիլիկիոյ աթոռին տեղապահ նշանակել Այնթապի առաջնորդ Մկրտիչ Սէմէրճեան եպիսկոպոսը, առաջիկային թողլով յաջորդի ընտրութեան խնդիրը: Բայց Նիկողայոս եպիսկոպոս Կիլիկիոյն և մօրը կողմէն Աջապահեան Բերիոյ առաջնորդը աթոռը գրաւելու հետամուտ էր իբր տոհմային իրաւուիքի ժառանգ: Կիրակոսի մահուան օրերէն սկսած էր Սիսի կողմերը դեգերել, կերպով մը նպատակին հասնելու համար: Կ. Պոլսոյ պատրիարքարանը զգալով անոր դիտումը ուզեց զայն հեռացնել, և մինչև իսկ փոխարքայական հրամանագիր ստացաւ և զրկեց, բայց Նիկողայոս հրամանագիրը զրկուելէն ետքը, գիշեր ատեն գողնիգող մէկ եպիսկոպոսով, որ էր Յարութիւն Աջապահեան, ինքզինքը կաթողիկոս օծել կու տայ յունիս ամսոյ 11-ին (ԻԶՄ. 678): Իսկ

պատրիարքարանը արդէն Նիկողայոսի վրայ գայթակղած անոր կանխաւ պժգալի գործեր ըրած և պահ մըն ալ Հռոմէականութեան յարած ըլլալէն, Կ. Պոլիս բերելու համար կրկնակի հրամանագիրներ կը ստանայ, իր օծողն ալ Կիպրոս աքսորելու հրամաններ կը հանէ, սակայն Նիկողայոս տեսակ տեսակ խաբեբայ ճանպաներով և սպառնալիքներով իրեն կողմնակիցներ կը շահի և ատեն վաստկելու կը նայի (ԻԶՄ. 679), քաջալերուելով անշուշտ սպանութեամբ աթոռ բարձրացող Խաչատուրին անխռով տեղը մնալէն:

2758. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԶՆՆՈՒԹԻՒՆԸ

Երբոր այդ կարևոր գործեր կը կատարուէին, կեդրոնն ալ տագնապի մէջ էր, և իր վարչական մեքենան կանոնաւորապէս չէր գործեր: Անցեալ 1865 տարւոյ մայիս 1-ին ընտրուած քաղաքական ժողովը տարին չլրացած հինգ անգամ ամբողջական կամ մասնակի ընտրութիւններով նորոգուած էր և դեռ ալ հաստատուն չէր, թէպէտև կաթողիկոսական ամենակարևոր խնդիրներ կը ծեծուէին (66. ԺՄՆ. 41): Տուրքի բաշխման և գանձման ձևերը ստիկ անհամաձայնութիւններու առիթ տուած էին (66. ԺՄՆ. 49), և ահա Կարնեցի Յակոբ քահանայի խնդիր մըն ալ վարչական ժողովներու անհամաձայնութեան նիւթ կը դառնար, զի Յակոբ քահանայ Խրիմեան Մկրտիչ վարդապետի դէմ վատ մատնութեան գիր մատուցած էր Կարնոյ կառավարութեան, և անոր պատիժը տնօրինելու մասին երկու ժողովներ իրաւասութեան խնդիր կը յուզուէին, մատնութիւնը արտաքին յանցանք էր, իսկ Յակոբ քահանայ եկեղեցական էր (66. ԺՄՆ. 6 և 17): Թաքթաքեան պատրիարքն ալ եկեղեցականներու դատին ու պատիժին կրօնական ժողովին պատկանիլը կը պաշտպանէր, և երբ խնդիրը սաստկացաւ պէտք վգաց մարտ 4-ին Ընդհանուր ժողովին հրաժարական մատուցանել, որով պարապ աթոռներ չորսի բարձրացած պիտի ըլլային (66. ԺՄՆ. 43): Ամէն կողմէ վարմանի առաջարկներ բարձրացան, սահմանադրութիւնը վերաքննել, բացառիկ իշխանութեամբ վարչութիւն կազմել, նոր ընտրութեանց դիմել, բայց վերջապէս կառավարութիւնը միջամտեց մարտ 20-ի ազդարարութեամբ և պաշտօնագիրով (66. ԺՄՆ. 57-59), որով պատրիարքի հրաժարականը կը մերժուէր, վարչական ժողովները կը լուծուէին, և անոնց տեղ ինը անգամով խառն ժողով մը կանուանուէր, և 10 անգամով յանձնաժողով մըն ալ սահմանադրութիւնը վերաքննելու կը կոչուէր. իսկ Ընդհանուր ժողովը կը պահուէր, բայց առանց վերաքննիչ յանձնաժողովոյ հաւանութեան և առանց կառավարութեան հրամանին գումարում պիտի չունենար: Վարչական խառն ժողովի անգամ նշանակուեցան, եկեղեցականներէն Անդրէաս եպիսկոպոս Տէր-Անդրէասեան, Խորէն վարդապետ Գայֆայեան և Սահակ քահանայ Տէր-Սարգիսեան, իսկ աշխարհականներէն Գրիգոր Մարկոսեան, Ներսէս Տատեան, Սիմոն Մաքսուտեան, Յակոբ Ֆրէնկեան, և Ալիքսան Սագայեան, որոնց մէջէն Մարկոսեան ատենապետ ընտրուեցաւ: Իսկ վերաքննիչ յանձնաժողովի անդամ նշանակուեցան եկեղեցականներէն Արիստակէս Ռափայէլեան, Ներսէս Վարժապետեան և Յովհաննէս Կապուտիկեան եպիսկոպոսներ, և աշխարհականներէն Սերվիչէն բժշկապետ, Գէորգ Երամեան, Յովհաննէս Տատեան, Յակոբ Մուպահեաճեան, Գրիգոր Աղաթոնեան, Ստեփան Ասլանեան, Բարունակ Ֆէրուհիան և Յովհաննէս Սուրէնեան: Երբոր 1865 դեկտեմբեր 24-ին ընտրուած կաթողիկոսական յանձնաժողովը 1866 ապրիլ 29-ին իր տեղեկագիրը կը փակէր, արդէն այդ նոր վարչական ձևը հաստատուած էր, և մայիս 27-ին Ընդհանուր ժողովն ալ անոր առաջնորդութեամբ կը գործէր և գործադրութիւններն ալ սոյն այս վարչութեան հովանաւորութեամբ և միևնոյն յանձնաժողովոյ ձեռքով պիտի կարգադրուէին (2753): Մայրաթոռոյ մասին եղած կարգադրութիւնները բացատրած ենք (2754). Աղթամարայ աթոռին համար ալ եղած կարգադրութիւնը յիշեցինք (2751), կը մնար Կիլիկիոյ աթոռը, որուն մասին պատրիարքը 1866 օգոստոս 3-ին կոնդակ մը հրատարակեց, որուն

մէջ եղելութիւնները պատճառելով կը ծանուցանէր, թէ վիճակային եկեղեցական համագումար ժողովը, ուր տասը եպիսկոպոսու նք էին, և ապազային երեսփոխանական Ընդհանուր ժողովը վճռած են, թէ Կիրակոս Գ. անուն առնող Նիկողայոս Աջապահեանի կաթողիկոսական օծումը (2757) ինքնահրաւէր և ինքնակոչ և ինքնընտիր, անվաւեր և ապօրինաւոր է, ինքն կաթողիկոս չէ, և իր ձեռնադրածները եպիսկոպոս չեն (ԻԶՄ. 678-683):

2759. ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ Վիճակային համագումար համաժողովը որուն կակնարկէ պատրիարքական կոնդակը (ԻԶՄ. 679), գումարուած էր յուլիս 12-ին երեքշաբթի օր, բայց նախընթաց օրը առանձինն լոկ եպիսկոպոսաց ժողով մըն ալ գումարուեր էր, և Աղթամարայ և Սսոյ մասին վճիռը պատրաստուէր էր (ԻԶՄ. 570): Եպիսկոպոսական ժողովը այս անգամ բացառիկ հանդիսականութիւն մը ունէր, զի պատրիարքի նախագահութեան ներքև հաւաքուած էին Կ. Պոլիս գտնուող եպիսկոպոսներէն զատ նաև Թաղէոս Ռոտոսթոյի, Յովսէփ Կուտինայի, Նիկողայոս Նիկոմիդիոյ, Մեսրոպ Տրապիզոնի և Յովհաննէս Պանտրմայի առաջնորդներ, և Եփրեմ Արմաշու և Մկրտիչ Գլակայ վանահայրեր: Մեծ աթոռներու ներկայացուցիչներ ալ կային, Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան Կիլիկիոյ և Յովհաննէս վարդապետ Սեթեան Աղթամարի տեղապահներէն անուանեալ, և Սիմէոն վարդապետ Սէֆերեան Երուսաղէմի պատրիարքէն նշանակուած (ԻԶՄ. 565): Վիճակային համագումարը 42 անդամոց ներկայութեամբ նախապատրաստական քուէարկութիւն կատարեց Մայրաթոռոյ ընտրելեաց համար և 49 եպիսկոպոսներու ցուցակէն զատեց 7 ընտրելիներ որոննք եղան, Գէորգ Բէրէստէճեան 31 Պօղոս Թաքթաքեան 30, Իգնատիոս Գազմաճեան 26, Թաղէոս Ռոտոսթոյի 20, Արիստակէս Ռափայելեան 19, Եսայի պատրիարք 18, և Մակար Տէր-Պետրոսեան 16 քուէով (ԻԶՄ. 567): Անկէ ետքը Աղթամարի և Կիլիկիոյ խնդիրներուն անցնելով անվաւեր և ապօրինաւոր վճռեց ու հռչակեց Խաչատուրի և Նիկողայոսի կաթողիկոսութիւնները և անկանոն իրենց օծումները, ուստի այդ աթոռներուն համար ալ ընտրելեաց եռանուն ցանկեր քուէարկեց: Աղթամարի համար Երեմիա վարդապետ Տէվկանց 29, Յակոբ եպիսկոպոս Խիվանցի 23 և Մկրտիչ վարդապետ Խրիմեան 22 քուէով, իսկ Կիլիկիոյ համար Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան 21, Արիստակէս եպիսկոպոս Դերձակեան 17 և Յովհաննէս եպիսկոպոս Եդեսեան 15 քուէով (ԻԶՄ. 567-571): Այդ նախապատրաստութեանց վրայ յուլիս 22-ին ուրբաթ օր Ընդհանուր ժողովը հաւաքուեցաւ, որ առաջ միաձայն հաւանութեամբ հաստատեց համագումարին վճիռ և թափուր հռչակեց Աղթամարայ և Սսոյ կաթողիկոսական աթոռներ (ԻԶՄ. 573), և յետոյ Ամենայն Հայոց առոին ընտրութեան անցաւ, բայց որովհետև ներկաներուն թիւը օրինականէն նուազ էր, քուէարկութեան լրումը թողուեցաւ յուլիս 27-ին և նոյն օր քննիչ յանձնաժողովոյ ձեռամբ քուէհամարը կատարուելով Եսայի պատրիարք և Գէորգ Բէրէստէճեան հաւասար կերպով 44 քուէ ստացած գտնուեցան, երրորդն էր Իգնատիոս Գազմաճեան 29 քուէով: Հարկ եղաւ առջի երեքի վրայ համեմատականի քուէարկութիւն կատարել օգոստոս 1-ին երկուշաբթի օր, և առաւելագոյն քուէով Գէորգ արքեպիսկոպոս Բէրէստէճեան Պրուսայի առաջնորդը նշանակուեցաւ իբր թուրքիաբնակ Հայոց միակ բացարձակ ընտրելին, որուն պիտի պատկանէին ժողովին միտքով Տաճկահայոց 65 վիճակներուն 130 քուէները (ԻԶՄ. 529): Նոյն ժողովին մէջ պատգամաւոր ընտրուեցան եկեղեցականներէն Ներսէս Վարժապետեան եպիսկոպոսը, և աշխարհականներէն Յակոբ Նորատունկեան: Ներսէսի անձը դիտողութեան առիթ տուաւ ռուսական դեսպանատան կողմէն, թէ մի' գուցէ Ռուսիոյ կողմէն իր պաշտօնին համաձայն ընդունելութիւն չգտնէ, ռուսական կառավարութեան աննպաստ տեղեկագիրը ստորագրած (ԻԶՄ. 581) և ըլլալուն համար, որուն պատասխանուեցաւ թէ ընդհակառակն ռուսական քաղաքականութեան ալ նպաստաւոր պարագայ մըն է Կիլիկիոյ ներկայացուցիչին Մայրաթոռոյ

հպատակութիւն յայտնելը և Պետրբուրգի նախարարութենէն հաւանութիւն ստացուեցաւ, և օգոստոս 26-ին երկու պատգամաւորներ դեսպանին ներկայացան (ԻԶՄ.579-584) և պատուով ընդունեցան: Արդէն յունիս 15-ին պատրիարքին կողմէն սինոդին հաղորդուած էր ընտրողական նախապատրաստութեանց սկսիլը (ԻԶՄ.546-558) օգոստոս 26 թուականով ի դիմաց վարչութեան և ի դիմաց Ընդհանուր ժողովոյ պատրիարքական կոնդակներն ալ գրուեցան (ԻԶՄ.585-606), և առձեռն հրահանգ մըն ալ յանձնուեցաւ անոնց (ԻԶՄ.606-614), և անմիջապէս ուղևորուեցան և պայմանեալ օրը արդէն Էջմիածին հասած էին: Մասնաւոր եղելութիւնները յետաձգելով նախապէս Մայրաթոռոյ պատմութիւնը պիտի լրացնենք:

Տ. ԳԷՈՐԳ Դ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ

2760. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Մայրաթոռոյ ընտրողական ժողովը կանխաւ համեմատ բացուեցաւ Ս. Էջմիածնի Մայր տաճարին մէջ 1866 սեպտեմբեր 15-ին Խաչվերացի հինգշաբթի օրը: Մեկի տրամադրելի յիշատակներ չեն տար ժողովական կազմութեան մանրամասնութիւնները, սակայն ամէն առթի մէջ ներկայից թիւը 33-է աւելի եղած չէր կրնար ըլլալ, հաշիւի առնելով պթոռի 15 և Ռուսաստանի և Պարսկաստանի վիճակներուն 16, և Կ. Պոլիսէ եկող 2 պատգամաւորները իսկ իրօք միայն 29 ընտրող կամ ձայնատէր եղած են (Ա.ՂԱ.70), թէպէտ չենք կրնար ճշդել թէ ո՞ր չորսեր բացակայ կամ պակաս մնացած են: Ժողովական և ընտրողական գործողութիւններ կատարուեցան 1836-ի պօլօժէնիէի և 1843-ի հրահանգին համաձայն, և սեպտեմբեր 17-ին շաբաթ օր ընտրութիւնը լրացաւ, բայց ոչ այն հաշուով որով կը կարծէր գործել Տաճկահայոց Ընդհանուր ժողովը: Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան, որ կաթողիկոսական յանձնաժողովին ատենապետն էր եղած, և հաւանաբար տեղեկագիրն ալ պատրաստողը կամ գոնէ իւրացնողն էր, և որ համոզմանց և իրեն յանձնուած հրահանգաց համաձայն (ԻԶՄ.613) ընտրողական թերթին վրայ ստորագրեց. Ես պատգամաւորս ի դիմաց համայն եկեղեցական վիճակաց Սրբոյ Էջմիածնի և կաթողիկոսութեանց Սսոյ և Աղթամարայ և պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի, ըստ հրահանգին տուելոյ ինձ յազգային ժողովոյ պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ ընտրեցի կաթողիկոս Ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարք համապգական Մայրաթոռոյ Արարատեան Սրբոյ Էջմիածնի վամենապատիւ վՏէր Տէր Գէորգ սրբազան արքեպիսկոպոսն Պրուսայու, և ոչ զոք կանտիդատ (Ա.ՂԱ.72): Այս բանաձևին վրայ որ ի Տաճկաստան և նախամեծար բառերը աւելցած կը գտնենք ուրիշ օրինակի մէջ (ԻԶՄ.617): Նմանօրինակ բայց աւելի համառօտ ձևով եղած է և Յակոբ Նորատունկեանի ստորագրութիւնը, որուն մէջ գրուած է ի դիմաց ամենայն ժողովրդականաց վերոյիշեալ վիճակացն (Ա.ՂԱ.72): Ներսէս խոհական խորհրդով և հասուն խորհրդակցութեամբ պեղչած է իր և ընկերին ստորագրութեան մէջ վաթսուն և հինգ առաջնորդութեանց, և հարիւր երեսուն քուէներու թիւերը, թէպէտ անոնք գրուած էին հրահանգով որոշուած բանաձևին մէջ (ԻԶՄ.613), զի ինքն ալ համոզուեցաւ հարկաւ թէ անհնար մանաւանդ թէ ծիծաղելի պիտի ըլլար մէկ ձայնով միայն այդչափ քուէ ներկայացնելը, քանի որ մէկ անձի, և ոչ իսկ եղեք ձայն ունենալ կը ներուէր, և միջասահման բանաձևով մը, այսինքն ըստ հրահանգին տուելոյ ինձ բառերով երկու կողմերն ալ ջանաց հաճեցնել, զի միւս կողմէն ապահովութիւն ստացած էր, թէ Էջմիածնի բոլոր ընտրողները համամիտ են Գէորգին տալ իրենց քուէները, թէ Տաճկահայերը հաճեցնելու, թէ խնդիրի առիթ չտալու, և թէ վկայել և արժանաւոր անձ մը պթոռին վրայ ունենալու համար: Սակայն իրօք Գէորգ միայն 29 ձայնով ընտրուած է, և ոչ թէ 157 ձայնով, ինչպէս պիտի հաշուուէր,

Եթէ ներկայ 27 Ռուսահայ պատգամաւորներու թիւին աւելնային Տաճկահայոց 130 ձայները: Այդ մասին ոմանց կարծելը թէ պարզ համաձայնութեան հետևանօք վիճակներու թիւը նշանակուած չէ, և թէ բոլոր պատգամաւորներ ալ պանց ըրած են իրենց վիճակաց թիւը նշանակել (67. ԺՄՆ. 32), հաստատուն հիմ մը չունի, զի Ռուսահայ պատգամաւորներէն իւրաքանչիւրը միայն մէկ վիճակ կը ներկայէր և ոչ աւելի: Նմանապէս ճարտար դարձուած մը եղաւ Ներսէսի կողմէն հեռագրով Կ. Պոլիս աւետելը պարզապէս, թէ Գէորգ սրբազան արքեպիսկոպոս միակ վնտրելին թուրքիարնակ Հայոց Համապգական ընտրողական ժողովին մէջ միաձայն հաւանութեամբ ընտրուած է կաթողիկոս Ամենայն Հայոց (ԻԶՄ. 617), զի Գէորգ ոչ իբրև միակ այլ իբրև առաջին ընտրեալ քուէարկուեցաւ, և իրեն հետ իբրև երկրորդ ընտրեալ նշանակուեցաւ Մատթէոս արքեպիսկոպոս Վեհապետեան Աստրախանի առաջնորդը, և երկրորդ անունը երբեք յայտագիրէն չվերցուեցաւ, ինչպէս միամտօրէն կարծեր են Կ. Պոլսոյ մէջ (67. ԺՄՆ. 40) այլ երկուքը միասին առաջարկուեցին ի նկատողութիւն և ի հաստատութիւն թագաւոր կայսեր Ռուսիոյ (ՄՈՎ. 317), թէպէտ կայսրն ալ ըստ ընկալեալ սովորութեան նախադասեց առաջին ընտրեալը, և նոյեմբեր 23-ին հաստատեց Գէորգի կաթողիկոսական ընտրութիւնը (ԶԱՄ, Բ. 167), որ է ըսել ընտրութենէն բաւական ուշ, 67 օր ետքը, չենք գիտեր թէ պատշաճ քննութիւն լրացնելու, թէ ոչ Տաճկահայոց հակապալածէնիական եռանդը չափաւորելու դիտմամբ յերկարաձգելով իր կամքին յայտարարութիւնը:

2761. ԳԷՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Գէորգ աւազանի անուամբ Գրիգոր, որդի դերձակ Պետրոսի և թոռն ատաղձավաճառ Գրիգորի, ուսկից առած է Բէրէստէճեան ազգանունը, ծնած էր Կ. Պոլսոյ Սամաթիա թաղը 1813 յուլիս 3-ին (ԱԲՂ. 3), որով 53 տարեկան էր կաթողիկոս ընտրուած ատեն: Գլխաւոր ուսումը առած էր Կարապետ պատրիարքի բացած Գումգաբուի Ժառանգաւորաց վարժարանը՝ Փէլտիմալճեան Գրիգոր պատուելիի ուսուցչութեամբ, ուր ընթացքը լրացնելով գրագիր ընդունուած էր պատրիարքարանի դիւանը 1830 մայիս 25-ին 17 տարեկան եղած ատեն, և հոն կը մնար մինչև 1834 ապրիլ 7-ին սարկաւագ և 1835 Սեպտեմբեր 1-ին արեղայ ձեռնադրուիլը Ստեփանոս Աղաւնի պատրիարքէն Արմաշու միաբանութեան անունով և Գէորգ կոչուելով: Նոյն 1835 տարույ դեկտեմբեր 9-ին մասնաւոր գաւազանի իշխանութիւն կընդունի դարձեալ Աղաւնի պատրիարքէն ի վարձ իր յաջող քարոզչութեան, և քիչ ետքը Խասքէայի ամիրաներէն թաղին քարոզիչ կուլուի և կը հաստատուի և արդիւնաւոր կըլլայ քարոզչութեամբ և դպրոցի տեսչութեամբ և ժողովրդական հոգածութեամբ (ԱԲՂ. 5): Գէորգ կասկածելի երևցաւ Յակոբոս պատրիարքին աչքին բողոքականաց դէմ վարուած պայքարին մէջ իրեն համամիտ չըլլալուն (2542), ուստի Խասքէօյէ հեռացնելով իբրև յետնեալ տեղ մըը Բերտ ուլեց յղել, բայց ամիրայական միջամտութեամբ Օրթաքէօյ փոխադրուեցաւ, ուր մնաց մինչև Աղաւնիի երկրորդ պատրիարքութիւնը (2546), որուն հրաւիրակ գնաց Արմաշ, և եերբ Թաքթաքեան ալ խորհրդական նշանակուեցաւ, Գէորգ ալ փոխանորդ անուանուեցաւ 1840 դեկտեմբեր 12-ին և 1841 յունուար 15-ին ծայրագոյն վարդապետութեան բարձրացաւ, և փոխանորդութիւնը պահեց Աստուածատուր պատրիարքի օրով ալ (ԱԲՂ. 9): Մատթէոս պատրիարքի օրով հիւանդանալուն Պրուսայի ջերմուկները գնաց դարմանուելու, ուր Պրուսացոց համակրութիւնը շահեցաւ և առաջնորդ ուլուեցաւ, և 1844 օգոստոս 2-ին ընտրութիւնը հաստատուեցաւ և հոկտեմբեր 8-ին պաշտօնին գլուխն անցաւ: Իսկ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը յապաղեցաւ մինչև 1847 (ԱԲՂ. 15), թէպէտ Աղաւնիէ ալ վկայական ստացած էր ժամանակին (ԱԲՂ. 9): Մեծապէս արդիւնաւոր եղաւ Գէորգի պաշտօնավարութիւնը Պրուսայի մէջ, ոչ միայն ժողովրդական հոգածութեամբ այլ և ծիսական

բարեկարգութեամբ և եկեղեցական երգեցողութեամբ, որոնց համար լաւ յաջողակութիւն և բուռն ճաշակ ունէր, բայց աւելի մեծ եղած է դպրոցական արդիւնաւորութիւնը աշակերտաց վարձագման և հայախօսութեան ընդարձակման մէջ, որոնց գրեթէ հիմնարկուն կը ճանչցուի Պրուսայի մէջ, զի նախկին խեղճուկ դպրոցը հապար աշակերտով և աշակերտուհիով բարեկարգ վարժարանի աստիճանին բարձրացուց (ԱԲՂ. 12): Այս պարագաներ աճեցուցին Գէորգի համբաւը, անանկ որ երբ սուլտանը 1846-ին վեց շքանշաններ դրաւ Մատթէոսի՝ պատրիարքի տրամադրութեան ներքև, անոնցմէ մէկը Պրուսայի առաջնորդին տրուեցաւ (2586): Եպիսկոպոսական ձեռնադրութեան խնդրանքը Պրուսայի ժողովուրդէն մատուցուեցաւ 1847-ին, և վկայականը շուտով տրուեցաւ Մատթէոս պատրիարքէ, և Գէորգ Կ. Պոլիսէ ուղևորեցաւ յունիս 7-ին, Տրապիզոնէ անգին ցամաքի ճամբով, Կարնոյ և Ալէքսանտրապոլի վրայէն: Ներսէս կաթողիկոս Տփղիս էր և մօտ օրէն Էջմիածին դառնալ մտադիր չէր, ուստի վայն իր մօտը հրաւիրեց, հոգի քո և սիրագործութիւնք քո ծանօթ են ինձ ողջունիլ գրկեց, և պատուով և մտերմութեամբ իբրև հիւր պահեց մինչև որ Էջմիածին դարձաւ 1848 յունիս 24-ին, և յուլիս 11-ին վարդավառի բարեկենդանին ձեռնադրութիւնը կատարեց (ԱԲՂ. 17), որուն օժակից գտնուեցաւ Դաւիթ վարդապետ Կարնեցի Երուսաղէմի միաբան: Գէորգ Էջմիածինէ դառնալուն ճամբան կը հիւանդանայ և հապիւ սեպտեմբեր 28-ին Պրուսա կը հասնի, մեկնելէն իբր 15 ամիս ետքը, երբ օր առաջ սեպտեմբեր 21-ին հրաժարած էր Մատթէոս պատրիարք և 23-ին Յակոբոս վերընտրուած էր, որ նոյեմբեր 1-ին պաշտօնին անցաւ (2632-2633), և վայն վարեց 10 տարի և մինչև 1858 հոկտեմբեր 7: Յակոբոսի յաջորդ ընտրուեցաւ Գէորգ 1858 հոկտեմբեր 17-ին, որ մինչև այն օր Պրուսայի առաջնորդ մնացած էր անընդհատ 14 տարի, առաջին ընտրութենէն սկսելով (2693): Մատթէոս ընտրեալ կաթողիկոս դեռ Կ. Պոլիս կը գտնուէր, երբ Գէորգ պատրիարքութեան կը բարձրանար, իսկ ինչ որ ասկէ ետքը Գէորգի կեանքին և գործին կը պատկանի, արդէն գրուած է պատմութեան մէջ և աւելորդ կը սեպենք մանրամասնօրէն անդրադառնալ:

2762. ԳԷՈՐԳԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Շատ համառօտ եղաւ Գէորգի պատրիարքութիւնը, 1858 հոկտեմբեր 17-էն մինչև 1860 ապրիլ 21, այսինքն 18 ամիս միայն, և այս առթիւ կատարեալ հրապարակ ելաւ Գէորգի նկարագիրը, որ գաւառական շրջանակի մը մէջ նկատի չէր առնուեր, այլ նշանակութիւն ունեցաւ մայրաքաղաքին և հայութեան կեդրոնին մէջ: Սահմանադրութիւն պատրաստելու և ծրագրելու ժամանակն էր, Գէորգ ալ այդ գաղափարին հակառակ չէր, բայց նա կուզէվր որ պատրիարքական և վարչական իշխանութիւնները վաւերացուին ու հաստատուին, ուստի չկրցաւ համակերպիլ պատրաստուած ծրագրին, որով պատրիարքական իշխանութիւնը կը սեղմուէր և կը չափաւորուէր: Այս կէտը երևան հանեց Գէորգի սեփական նկարագիրը, միապետական իշխանութեան և ազատ գործունէութեան հետևող և պաշտպան, որ թէպէտ սահմանադրութիւն պատրաստելու յանձնաժողովները կազմեց և քաջալերեց, բայց եր արդիւնքը տեսաւ, գործէն հեռացաւ, և մինչև իսկ նախադասեց պատրիարքութենէ քաշուիլ քան թէ այդ նոր նպատակին գործակցիլ (2707): Գործունեայ և արդիւնաւոր անձ մըն էր Գէորգ, բայց պայմանով որ ինքն ըլլար գործին տէրը, տիրաբար հրամայողը, հրամանը ձևակերպողը, և ձևը իրականացնողը: Այդ պայմանով գործած էր Պրուսա, և եղած էր լաւ առաջնորդ, նոյն պայմաններով պիտի չկարենար գործել Կ. Պոլիս և ըլլալ լաւ պատրիարք, բայց կրնար գործել Էջմիածին և ըլլալ լաւ կաթողիկոս: Նա յուսախաբութեան պիտի չմատնուէր կաթողիկոսական աթոռին վրայ, զի ուսումնասիրած էր թէ մինչև ուր կը հասնէր իր ձեռնահասութիւնը, և ինչով կը սահմանափակուէր իր իշխանութիւնը: Նա պէտք չունէր ինքզինքը վշտակիր կարծել և վշտալի կոչել, զի պօլօթէնիէն ընդարձակ վարչական ասպարէզ կու տար

կաթողիկոսին, սինդոնին իշխելու բաց դուռներ էր թողած, և կառավարական հովանաւորութեամբ ոյժ և պօրութիւն էր ապահոված: Ուստի իր անկաշկանդ գործունէութեան արգելք չտեսաւ, և իր մտադրութիւնները գլուխ հանեց: Գէորգի այս տեսութիւնը ոմանք ռուսասիրութիւն կարծեցին, և ուրիշներ կամակատար ծառայութիւն մեկնեցին, ուր ընդհակառակն նա իբրև պատուութեան ասպարէզ նկատեց, և այնպէս ալ վարուեցաւ: Գէորգի նկարագիրին յատկանշական հանգամանքներէն մէկն ալ մեծութեան և իշխանութեան արտաքնայարդար ձևեր տալն է, պատգամախօսական ձևով հրամաններ արձակել, հանրութեան տեսութենէն ու շփումէն խուսափիլ, միջնորդներու բերնով և ձեռքով գործել, խորհրդակցութեան և գործակցութեան ձևերէ վզուշանալ, ըրած կարգադրութիւնները անփոփոխելի կերպարանել, արտաքին ձևակերպութիւններ առատացնել, անմերձենալի կացութիւն պահել, և իբրև թէ մահկանացուներէ բարձր վիրք մը ստեղծել, որ եթէ առանց արդիւնքի լոկ երևոյթ մնար ունայնամտութիւն կըլլար. այլ ճարտարօրէն կիրարկուած ատեն գործունէութեան միջոց կը դառնար: Բնական բերմամբ այդ ձևերը սիրողի մը կաթողիկոսական գահը շատ յարմար պիտի գար իր բարձրագիտակ և աստուածապատիւ գիրքովը, և իրօք ալ Գէորգ գիտցաւ պայն լիապէս շահագործել: Կ. Պոլսոյ մէջ տաճկահայ սահմանադրութեամբ ձևակերպուած սահմանադրական պատրիարքութեան անյարմար անձն էր, որ Էջմիածինի մէջ ռուսահայ կանոնադրութեամբ կառավարուած կաթողիկոսութեան ամենայարմար անձն եղաւ, և ինչ որ ոմանք ռուսական ստրկութիւն և կառավարական ծառայութիւն ըսին, Գէորգի ձեռք ճշմարիտ արդիւնաւորութեան իսկական միջոց դարձաւ: Մեր համոզմամբ ալ ուր ուղիղ և ճշմարիտ արդիւնաւորութիւն կը տեսնենք, և երևակայական գաղափարները և վերացական խճրճութիւնները աւելորդ և անտեղի կը սեպենք, և այդ ուղղութեամբ պիտի դատենք Գէորգի կաթողիկոսական գործունէութիւնը:

2763. ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Գէորգ պատրիարքութենէն հրաժարելէն ետքը կարծես սահմանադրութեան մասին տեսութիւնը փոխած երևցաւ, և լուսաւորեալ կոչուած սահմանադրականներուն հետ միացաւ Երուսաղէմի ներսէն դուրսէն խնդիրին մէջ, բայց ոչ թէ խնդիրին հոգիէն շարժուելով, այլ պարզապէս Երուսաղէմի պատրիարքութեան խոստումէն չլացած, որուն հետամուտ էր, և յայտնապէս ալ կը խոստանար Կ. Պոլսոյ պատրիարքութեան Երուսաղէմի սնտուկէն պահանջուած նպաստը իրականացնել (2717): Այս նպատակով բուռն միջոցներու ալ կը մասնակցէր և Երուսաղէմի միաբանութեան դէմ ոգևիւն կը մաքառէր, այնպէս որ իբր շփոթները արծարծող կառավարութեան հրամանով պարտաւորուեցաւ 1861), որոնք առաջնորդութիւնը վրան կը պահէր, այլ տեղը դառնալ կը դանդաղէր Երուսաղէմի պատրիարքութեան ակնկալութեամբ: Պրուսա դառնալէն ետքը այլ ևս Գէորգ իր վրայ խօսիլ չտուաւ, մանաւանդ երբ Սարգիս պատրիարքի հրաժարելովը և սահմանադրական ժողովներու դադարելովը և Ստեփանոս Մաղաբեանի պատրիարքական տեղապահութեամբը, Երուսաղէմի խնդիրը հրապարակէ վերցուեցաւ և Գէորգի ակնկալածն ալ իրականացումէ հեռացաւ: Եթէ կաթողիկոսական խնդիրին ծագելովը Գէորգի անունը դարձեալ հրապարակ նետուեցաւ իբր միակ ընտրելի, և նոյն իսկ սահմանադրականներու կողմէ պաշտպանուեցաւ, չենք կարծեր որ ներսէն դուրսէն խնդիրի մասնակցութիւնը փոխել տուան ըլլայ անոր հակասահմանադրական ձգտումներուն վրայ կապմուած համոզումը. այլ միայն իր անհատական կարողութեան և արդիւնաւոր գործունէութեան վրայ կապմուած գաղափարը ծառայեց Վինքը միակ ընտրելի ցուցնելու, յուսալով ալ թերևս որ տաճկահայ գաղափարներով սնած և բուռն կամքով օժտուած կը յաջողէր պօլօժէնիէի դէմ պայքար մղել և միանգամայն յաջող ելքի հասցնել: Երուսաղէմի ներսէն դուրսէն խնդիրը արդէն իսկ վերջացած և թաղուած էր

Եսայի պատրիարքի ընտրութեամբը : Գէորգ ալ Վագագած էր նոր ճիգերու աւելորդ և ապարդիւն ըլլալը: Գէորգի անունը բարձրացնելու ծառայած էին, Պրուսայի 1855-ի մեծ երկրաշարժը և 1863-ի աղետալի հրդեհը, որով ալ Վագային հաստատութիւններն ալ վնասուեցան, եկեղեցի և վարժարան խախտուեցան, և հապարաւոր ընտանիքներ անյարկ մնացին: Գէորգ ամէն հնարաւոր միջոցները գործածեց, հետական և ալ Վագային նպաստները արդիւնաւորեց, ջանքն ու աշխատանքը ընդարձակեց մինչև որ Պրուսա քաղաքը և իր ալ Վագային հաստատութիւնները իրենց շքեղ կացութեան վերադարձան: Մայրաքաղաքի մէջ ալ սահմանադրութեան պետական հաստատութիւնը, Պօղոս Թաքթաքեանի պատրիարքութիւնը, սահմանադրութեան շուրջը յուլուող խնդիրները, և վերջապէս անոր վրաքննութեան ենթարկուիլը (2758) շատ նուազած ու տկարացուցած էին սահմանադրական կոչուած գաղափարներով արծարծուած խնդիրները, այնպէս որ Գէորգի անձն ու ընտրութիւնը, անկախաբար իր հակասահմանադրական անցեալէն, և միշտ իր վրայ տիրող միապետական ձգտումներէն, ընդհանուր համակրութեան առարկայ էր դարձած, և Գէորգի կաթողիկոսանալը իբր ալ Վագային գաղափարներու յաղթանակ կողջունուէր:

2764. ԳԷՈՐԳ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ Գէորգի ընտրութեան Ռուսաց կայսեր կողմէն 1866 նոյեմբեր 23-ին հաստատուելուն լուրը շուտով հասաւ Կ. Պոլիս և Պրուսա այնպէս որ 16 օր ետքը դեկտեմբեր 9-ին Պրուսայի եկեղեցւոյն մէջ անոր անունը իբրև կաթողիկոս յիշատակուեցաւ, իսկ Էջմիածին 1867 յունուար 1-ին կը սկսի յիշատակութիւնը փոխարքային դեկտեմբեր 29-ի պաշտօնագիրին հասնելէն ետքը (ԱԲՂ. 26): Կ. Պոլսոյ մէջ ալ այս միջոցին պատրիարքական շրջաբերականով կը հրամայուի անունին յիշատակութիւնը (ԻԶՄ. 624), և շրջաբերականը կը ցրուի դեկտեմբեր 16-ի խառն ժողովին որոշմամբ (66. ԺՄՆ. 205): Օսմանեան կառավարութեան կողմէն ալ հպատակութիւնը փոփոխելու արտօնութիւնը կը շնորհուի, և այսպէս կը լրանան ընտրական ձևակերպութիւնները 1866 տարին չվերջացած: Ռուսիոյ կայսրը հաստատութեան հրովարտակին հետ նորընտիր կաթողիկոսին կը շնորհէ վեղարի ադամանդակուռ խաչը, և Ս. Աղեքսանդր Նևսքի ասպետական կարգին առաջին աստիճանի շքանշանը: Վեղարի խաչը իբր հայրապետական յատուկ պատիւ մը կարծուած է յոմանց, և նոյն սկզբամբ Յովսէփ Արղութեանի շնորհուիլը բացատրուած է (ԻԶՄ. 622), սակայն պէտք է գիտենալ թէ խաչի եկեղեցական շքանշանը, Վոր Ռուսաց կայսերները սովոր են շնորհել իրենց երեք մեծ մետրոպոլիտներուն, այսինքն Բիէվի և Մոսկուայի և Պետրբուրգի, կանխաւ կը տրուէր Ռուսաստանի Հայոց առաջնորդներուն ալ ևս Վայն ստացած են Գրիգոր Զաքարեան և Յովհաննէս Գառնակերեան և Յովսէփ և Եփրեմ ալ ստացած են կաթողիկոսական ընտրութենէն առաջ, և միայն Էջմիածնի ռուսական կայսերութեան ներքև մտնելէն ետքն է որ վեղարի խաչը Հայոց կաթողիկոսներու վերապահուեցաւ, և Ռուսաստանի առաջնորդներուն այլևս չտրուեցաւ, Ներսէս Աշտարակեցիի կողմէն թելադրուած առաջարկին համեմատ: Իսկ օծումէ առաջ անունի յիշատակութիւնը մասին մեր դիտողութիւնը ըրած ենք Մատթէոսի ընտրութեան առթիւ (2691), բայց այլ ևս խնդրոյ նիւթ ընել չենք ուզեր տեսնելով որ բացառութիւնը սովորութեան փոխուած կը գտնուի: Երբոր արդէն ձևակերպութիւններ լրացան, կարգը երկաւ հանդէսներու: Պատրիարքարանի կողմէն յատուկ հրաւիրակներ և Ռուսիոյ դեսպանատան թարգմանը Պրուսա գացին, ուր Գէորգ Ծննդեան տօնին վերջին պատարագը մատոյց և ժողովուրդը օրհնեց, և յունուար 15-ին պետական և հիւպատոսական և ժողովրդական անձանց ուղեկցութեամբ Պրուսայէ մեկնեցաւ, և դեսպանատան շոգենաւով 16-ին Բերայի ներքև Բապաթաշի նաւամատոյցը ցամաք ելաւ, ուսկից ուղիղ եկաւ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, և իւր հայրապետական նախընծայ ողջոյնն ու օրհնութիւնը տուաւ բոլոր հայ ազգին, և վ թաղական խորհրդարանին մէջ պատուասիրուեցաւ, ուր առաջին անգամ յանուն ազգին խմբագրապետներ

ուղերձ մը մատուցին՝ հայրապետէն խնդիրները պարզելով (ԻԶՄ. 625): Այդ ուղերձին պարունակութիւնը կանուխէն պատրաստուած էր դեկտեմբեր 19-ին, պատրիարքին ներկայուած էր յատուկ գրութեամբ, եպիսկոպոսներու և վարդապետներու յատուկ գումարման մը մէջ (67. ԺՄՆ. 4): Ուղերձը ստորագրած էին վեց խմբագրապետներ, Կարապետ Իւթիւճեան Մասիսի, Համաբարձում Ալաճաճեան Փունջի, Կարապետ Փանոսեան Մանվումէի, Մարկոս Աղաբէգեան Ծիլն Աւարայրի, Կարապետ Չուխաճեան Ծիածանի, և Ստեփան Փափապեան ժամանակի, որ և ուղերձի ընթերցումն ըրաւ, (ԻԶՄ. 638): Ուղերձը սովորական եղող մաղթողական և շնորհաւորական խօսքերէն ետքը նորըտիրէն կը պահանջէր: 1. Պահպանութիւն և ամբողջութիւն Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ, 2. Երաշխաւորեալ պահպանութիւն ազգի և ազգային իրաւանց, և 3. Դաստիարակութեան ծաւալումը: Իւրաքանչիւր կէտը ընդլայնելով օրական դէպքերու յիշատակութիւններով ուղերձը կը կնքէին ըսելով, որ եթէ կատարէ բոլոր ազգին պարտելի և պաշտելի պիտի ըլլայ, իսկ եթէ չկատարէ ոչ մէկը պիտի գտնէ իւր շուրջը (67. ԺՄՆ. 17-18 և (ԻԶՄ. 626-636): Գէորգ պատասխանեց թէ եղած առաջարկներ իր սրբապան պարտաւորութիւններն ու իր պագումներն են: Ընդունելութիւնը փակուեցաւ և Գէորգ գնաց հանգչիլ պատգամաւոր Յակոբ Նորատունկեանի Բերայի մեծ փողոցին վրայ եղող ընդարձակ ապարանքը, զոր տանուտէրը անոր տրամադրութեան ներքև գրեր էր, որ և պատգամաւորութեան ամբողջ ծախքը իր քսակէն ըրած էր: Յունուար 16-էն մարտ 28, ընդամէնը 71 օր մնաց Գէորգ Կ. Պոլսոյ մէջ, յունուար 17-ին ռուսական դեսպան Իկնաթիէվ անձամբ յանձնեց նորընտիրին վեղարի խաչը և կայսերական ինքնագիրը, խետրուար 18-ին կը հասնին Էջմիածնի հրաւիրակները Սարգիս արքեպիսկոպոս Զալալեան և Գրիգոր վարդապետ Մուշեղեան, իսկ Կովկասի փոխարքայ Միքայէլ Նիկոլայեվիչ մեծ դուքսին կողմէն կու գայ զօրապետ Զենովիէվ, պատիւներ և յարգանքներ կը կատարուին ազգայնոց կողմէն, Ռուսաց և Պարսից դեսպաններ հացկերոյթներու կը հրաւիրեն, և մարտ 1-ին Ապտիւլապիլ սուլտանին կը ներկայանայ և Մէճիտիյէ շքանշանով կը պատուուի: Պօղոս պատրիարքը կաթողիկոսին ներկայած էր Սոյ և Աղթամարայ խնդիրները, որ փետրուար 6-ին մասնաժողով մը կը կարգէր, և այն ալ վեց յօդուածով առաջարկ մը կը բերէր, զոր կաթողիկոսը պատրիարքին կը յանձնէ (ԻԶՄ. 639-650): Փետրուար 10-ին Ընդհանուր ժողով կը հրաւիրուի, բայց ապարդիւն կը մնայ, զի հապիւ 20 երեսփոխան կը ներկայանան, որպէսզի Պալաժէնիայի խնդիրը չյուզուի մինչև որ սրբապան կաթողիկոսը մեկնի Պոլսէն (67. ԺՄՆ. 42): Երկրորդ հրաւերով նիստը կը գումարուի փետրուար 24-ին, բայց միայն Սիսով ու Աղթամարով կը վբաղի (ԻԶՄ. 664): Ընդհանուր ժողովոյ դիւանը տեսնելով որ ժողովը Հայոց հայրապետին ներկայութիւնը վայելելու բախտը չունենար, որով Պօլօժէնիէի խնդիրն ալ մէջտեղ չլլար, մարտ 20-ին կաթողիկոսական տեղեկագիրին միտքով ուղերձ մը կը պատրաստէ, ատենապետ Բարունակ Ֆէրուհիանի և ատենդպիր Գրիգոր Մարկոսեանի ստորագրութեամբ որ կաթողիկոսին մատուցուի, սակայն 22-ին եպիսկոպոսներ և աշխարհական երևելիներ վատ վատ խորհրդակցութիւն կունենան կաթողիկոսին հետ, և միայն 24-ին Թաքթաքեանի ձեռքով վերոյիշեալ ուղերձը կը մատուցուի, որ մարտ 26-ին Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին կը պատարագէ (ԻԶՄ. 662), և հայրապետական օրհնութիւնը և հրածեշտի ողջոյնը կու տայ և 28-ին Մեծ պահոց հինգերորդ երեքշաբթի օրը վերջին համախմբութիւնը տեղի կունենայ Օրթաքէօյ Մաքսուտեանց ծովեպերեայ ապարանքը, ուր ապենապետ Ֆէրուհիան նոր ուղերձ մը կը կարդայ (67. ԺՄՆ. 56-58), և կաթողիկոսը անմիջապէս ռուսական յատուկ շոգենաւով կը մեկնի դէպի Փօթի, Կ. Պոլիսէ իրեն կուղեկցին չորս վարդապետներ, Յովհաննէս Սէթեան Գուվկունճուքի քարոյիչ, Պետրոս Վեհապետեան իր գաւապանակիրը, Սիմէոն Սէֆէրեան Երուսաղէմի փոխանորդ, և Խորէն Գալֆայեան Բերայի

քարոզիչ. իսկ իբր Տաճկահայոց ներկայացուցիչ, օժման մասնակցելու համար, Կարինէ կը մենի առաջնորդ Յարութիւն եպիսկոպոս Վեհապետեան: Գէորգի Կ. Պոլիս եղած միջոցին պօլօժէնիէի խնդիրը խոսքի կամ վէճի բնաւ նիւթ չըլլալը, և այս կէտին մէջ յայտնի կը տեսնուի նորընտիր Գէորգի կամքը, և կարդարանայ որչափ ինչ պօլօժէնիէի նկատմամբ իր ունեցած տեսութեանց մասին գրեցինք (2762): 2765. ԳԷՈՐԳ ՅԷԶՄԻԱԾԻՆ

Փօթի ցամաք ելլալով Բութայիսի, Գորու, և Մցխեթի վրայով ապրիլ 7-ին, Մեծապահոց վերջին ուրբաթ և Աւետման տօնին օրը կը մտնէ Տփղիս մեծահանդէս փառաւորութեամբ: Տփղիսի հասարակութիւնը Մցխեթէն կը դիմաւորէ և ճաշ կու տայ, փոխարքան իր կառքը կը յուղարկէ, Հայոց և Վրաց և Ռուսաց եկեղեցիներու վանգակները կը հնչեն, առաջնորդարանի մօտ եկեղեցական թափօր կը կազմուի, կայսեր և փոխարքային կողմէն պատգամաւորներ կողջունեն, և հայրապետական ատենաբանութիւնն ու օրհնութիւնը տեղի կունենայ Վանքի մայրեկեղեցին, ուր խոնուած էր ազգային և օտարազգի անհամար բազմութիւն մը: Պատուասիրութիւններ ամենայն շքեղութեամբ կը կատարուին Տփղիսի մէջ, փոխարքայ մեծ դուքսը ապրիլ 10-ին անձամբ կու գայ և կը յանձնէ կայսերական հրովարտակն ու շնորհուած շքանշանը, և յատուկ հրաւեր և հիւրասիրութիւն ալ կը կարգադրէ. իսկ Գէորգ ապրիլ 16-ին Ջատկի օրը հայրապետական նախընծայ պատարագ կը մատուցանէ Վանքի մայրեկեղեցին, և երեք շաբաթ Տփղիս մնալով կարևոր տեղեկութիւններ կը քաղէ, ճանչնորութիւններ կը հաստատէ, այցելութիւններ կու տայ և կընդունի, և վերջապէս մայիս 4-ին հինգշաբթի օր կը մեկնի, և հարկաւ Երեւան ալ հանգիստ ընելով, 12-ին ուրբաթ օր կը մտնէ Էջմիածին, և 21-ին Յինանց վեցերորդ կիրակիին մեծաշուք հանդիսով ստանում է կաթողիկոսական օծումը և անմիջապէս գործի կը ձեռնարկէ ստանձնելով հայրապետութեան սրբազան և ծանրաբեռն լուծը: Գէորգի գործունեայ հոգւոյն նշանակն էր օժումէն վեց օր ետքը մայիս 27-ին անդրանիկ կոնդակը հրատարակելը, զոր ուրիշներ ամիսներով կը յետաձգեն, և կոնդակին մէջ ալ, ընդհանուր և վերացական բացատրութիւններէ աւելի, որոշ և գործնական կէտեր շոշափելը, որ միանգամայն իր ուղղութեան ծրագիրը կամ իր պաշտօնավարութեան ուղեգիծը կը պարզէին: Այն երեք կէտերը զորս Կ. Պոլսոյ խմբագրապետները յիշած էին իրենց ուղերձին մէջ (2764), կրկնուած էին անդրանիկ կոնդակին մէջ, յատկապէս շեշտելով առաջինը, հայադաւան վարդապետութեան մէջ նշանակեց իսկ չփոխել, հաստատուն կանոններ հաստատել և նորաձևութեանց առջևն առնել: Դպրոցական խնդիրը կրնայ ըսուիլ որ իրեն միտքին մէջ սկեռեալ գաղափարի չափ ամրացնել էր, իսկ ինչ որ ազգի կեանք և ազգի իրաւունք ըսուած է, Գէորգի մտքին մէջ շատ հեռու էր նորահաս սերունդի գաղափարներէն, և այդ մասին շատ սեղմ էին իր բացատրութիւնները: Իբրև գործնական յանձնարարութիւններ անդրանիկ կոնդակին մէջ յիշուած էին. 1. Մեծապահոց մէջ բաց պատարագներէ դուրս ժողովուրդին հաղորդ չտալ. 2. Փեսացուներու և հարսընցուներու ուղղակի հաւանութիւնը չառած չպակսել. 3. աշխարհաբարը եկեղեցւոյ մէջ միայն քարոզի և խրատի համար գործածել. 4. Մկրտութիւնը տունները չընելը և ութ օրէ աւելի չուշացնել. 5. Չորրորդ պսակը բացառաբար երիտասարդներու և առողջներու միայն ներել. 6. Հարսնցուները վաճառելու պաշլըխի սովորութիւնը արմատաքի խափանել, 7. Աստուածային պաշտամունքը, այսինքն արարողութիւնները և երգեցողութիւնները ամենուրեք միևնոյն ձևով կատարել (ԱԲՂ. 32-33): Կոնդակէն քիչ օր ետքը մայիս 31-ին անդրանիկ ձեռնադրութիւնն ալ կը կատարէ, և իրեն հետ եկող չորս վարդապետները (2764) եպիսկոպոսութեան կը բարձրացնէ, անոնց ընկերակցելով Գաբրիէլ Այվապեան վարդապետն ալ: Ընդհանուր վարչութեան ալ կը ձեռնարկէր և մեծ մտադրութիւն կը դարձնէր հայրապետական իրաւասութեան, եկեղեցական իրաւանց, ներքին

բարեկարգութեան, հոգևորական կարգապահութեան, ելևմտական արդիւնաբերութեան, որոնք մէկ օրէն միւսը լրանալիք ձեռնարկներ չէին, պի պետք էր նախ գետինը պատրաստել, հերկել ու սերմանել և ժամանակին հունձքի սպասել (ԱԲՂ. 31):

2766. ԳԷՈՐԳ ԶՈՐՐՈՐԴ

Առաջին ժամանակներու մէջ, ինչպէս քանիցս յիշած ենք, սովորութիւն չէ եղած կաթողիկոսներուն անունները թուահամարի յաւելուածով յիշատակել, զոր վերջին ժամանակներու մէջ սկսան աւելցնել մեր նոր հեղինակներ, և մենք ալ հետևեցանք այդ սովորութեան, որ տարածուած է բոլոր գրական աշխարհին մէջ: Յովհաննէս Կարբեցիի վրայ առաջին անգամ սկսաւ նաև իր կենդանութեան պիւքն Յովհաննէս Ը. անուանել (2489), թէպէտ իր ստորագրութեանց մէջ տեսներ: Մատթէոս առաջին էր այդ անունով և թուահամարի տեղ չկար, որով Գէորգ առաջինը եղած կըլլայ թուահամարի յաւելուածով Գէորգ Դ. ստորագրութիւն գործածողը: Սակայն կաթողիկոսաց գաւապանը միայն երկու Գէորգներ ունի իրմէ առաջ, Գէորգ Ա. Բիւրականցին, որ 792-է 795 համառօտ կաթողիկոսութիւն մը ունեցաւ (628), և Գէորգ Բ. Գառնեցին, որ 20 տարի պաշտօն վրայեց 877-է 897, և Աշուտի ու Սմբատի թագաւորական օրհնութիւնները կատարեց (680, 686): Իսկ Գէորգ Լոռեցին, կաթողիկոսական գաւապանի անցնելու իրաւունք ունեցած չէ, պի Վկայասէրի բացակայութեան ձեռնադրեալ տեղապահ մը եղած է, և Վկայասէրի դարձին պաշտօնէ դադարած է, աստիճանէ և քօղէ ալ զրկուած է և հակաթոռութեան հովեր ալ առած է Կիլիկոյ արևմտեան կողմերը (885): Բայց որովհետև ոմանք յանգաւստ Լոռեցին իբր Գէորգ Գ. նշանակած են, Գէորգ կաթողիկոսն ալ առանց մտադրութեան անոնց հետևած և Գէորգ Դ. թուահամարը ընդունած է, և ըստ այնմ ստորագրած և հռչակած է, մենք ալ ստիպուած պիտի պահենք Գէորգ Զորրորդ կոչումը, որով ընդունած կըլլանք Լոռեցին Գէորգ Գ. կոչել:

2767. ԳԷՈՐԳ Ի ՊԵՏՐԲՈՒՐԳ

Գէորգի կաթողիկոսութեանց բարձրանալուն արարողական պահանջներէն մէկն ալ Ռուսաց կայսեր կողմէ ունկնդրութեան ընդունիլն է, որուն համար արտօնութեան և ժամադրութեան ձևակերպութիւններ կային, որոնք լրացան Էջմիածին հասնելէն առաջին ամիսներուն մէջ: Ներկայացումը աշունին պիտի կատարուէր, բայց Գէորգ կանխեց Էջմիածինէ մեկնիլ, որպէսպի միջոց ունենայ Ռուսիոյ քաղաքաց հայ գաղութներուն այցելել: Յուլիս 11-ին մեկնիլը հրատարակեց և տեղակալ նշանակեց Զալալեան Սարգիս արքեպիսկոպոսը, և 13-ին հինգշաբթի օր Էջմիածինէ մեկնեցաւ, նախապէս Կովկասի քաղաքները քննելու, և հետզհետէ այցելեց Աղեքսանդրապոլ, Ախլցխա, Ախալքալաք, Բորժոմ ուսկից անցաւ Վլատիկաւկաս: Գէորգի ուղևորութիւնը հովուական այցելութիւն էր, եկեղեցին և դպրոցը քննել, ժողովրդեան վիճակին տեղեկանալ, սիրոյ և խաղաղութեան խրատներ խօսիլ, ուսման և հայախօսութեան յորդորներ կարդալ, և միանգամայն Մայրաթոռոյ պատկանեալ կալուածական և ելևմտական գործերուն հետևիլ, մոռցուած արդիւնքներ որոնել, վիճելի կէտեր պարզել, և լքուած հասոյթներ հաւաքել: Վլատիկաւկասի մէջ պիւքն դիմաւորեց և պատուեց Միքայէլ Լօրիս-Մելիքով զօրապետ, որ Կովկասի հիւսակողման նահանգապետն էր: Անոր մօտէն ելլելով հետզհետէ այցելեց Մոզդոկ, Ղըվլար և Աստրախան, և երեք տեղեր ալ դպրոց բանալու կամ դպրոցի նոր շէնք մը շինելու ձեռնարկեց: Աստրախանի մէջ Արարատեան Սերովբէ եպիսկոպոսի թողօնին խնդիրն ալ ուսումնասիրեց: Ժողովուրդը տեսնելով յօգուտի ազգի և եկեղեցւոյ թափուած ջանքերը, հետզհետէ կաճեցնէր իր համակրութիւնը դէպի նոր և գործունեայ կաթողիկոսը, որուն ընթացքը հակապատկեր մըն էր Մատթէոսի քաշուած ընթացքին և կը նորոգէր Ներսէսի գործունեայ կեանքին յիշատակները: Աստրախանէ Նոր-Նախիջևան անցնելու առթիւ մեծ պատիւներ

կընդունի, և օրհնութեամբ և մասունքներով կը փոխարինէ Յարիցիւնի ուս հասարակութեան սիրալիր և յարգալից ցոյցերը: Նոր Նախիջևանի մէջ կը յաջողի վերջացնել տիրող երկպառակութիւնը և իրարու հետ հաշտեցնելու Խալիբեանն ու Հայրապետեանը, որոնք կուսակցութեանց գլուխներն էին: Ս. Խաչի վանքին մէջ դպրոց կը բանայ, աթոռին համար նուէր կը հանգանակէ, և հնութիւններ կը հաւաքէ, և դէպ ուղիղ կուղևորի Մոսկուա, ուր կը հասնի օգոստոս 22-ին, էջմիածինէ մեկնելէն 40 օր ետքը, 12 օր այնտեղ կը մնայ և Յովնանեան Յովհաննէսի տունը կը հիւրասիրուի, և լիապէս կը գործէ ինչ որ ամէն տեղ կը գործէր, և փոխադարձ կընդունի սիրոյ և յարգանաց անկեղծ արտայայտութիւններ, հանդէսներ և տօնախմբութիւններ: Պետերբուրգի մէջ կօթևանի եկեղեցւոյ տունը, և իրեն ի պատիւ տրուելիք մեծ հացկերոյթէն հրաժարելով, հաւաքուած գումարով 16 պարգևաւոր արժեթուղթ դնել կու տայ, և արդիւնքը կէս կը յատկացնէ Կ. Պոլսոյ Ս. Փրկչեան հիւանդանոցին և Ջէյթունի թաղական դպրոցներուն սեպտեմբեր 3-էն մինչև հոկտեմբեր 14 տեղւոյն գործերով կը վբաղի, որ օր կայսերական ունկնդրութեան կընդունուի պարտուպատշաճ պատիւներով, և ինքն ալ արծաթեայ սկուտեղի վրայ կայսեր կը նուիրէ Ս. Գէորգայ մասունքը ադամանդալեռ ոսկի մասնատուփի մէջ ամփոփուած: Հոկտեմբեր 14-էն մինչև նոյեմբերի վերջերը Պետրբուրգի մէջ կը մնայ, տեսարաններ և թանգարաններ կը շրջի, նախարարութեանց հետ յարաբերութեանց կը մտնէ, զինուորական դպրոցներու մէջ Հայոց համար կրօնագիտութեան դասեր հաստատել կու տայ, Հայ եկեղեցւոյ գործերուն դիւրութիւններ կը կարգադրէ, և գլխաւորապէս կուսակրօն եկեղեցականներու ժառանգութեան խնդիրը կը յուլէ և կը յաջողցնէ: Կայսերական պատիւներ ալ կը ստանայ և կը հրաւիրուի ներկայ գտնուիլ Յունաց Գէորգ թագաւորին մեծ դքսուհի Օլկայի հետ պսակադրութեան հանդէսին, ուր հոգևորականութեան մէջ առաջին տեղը կը տրուի իրեն: Նոյեմբեր 25-ին երկրորդ անգամ կայսեր կը ներկայանայ հրաժեշտի համար, և քիչ օր ետքը Պետրբուրգէ կը մեկնի Լեհաստանի վրայով դառնալով: Հետզհետէ կը հանդիպի, Վարշաւիա, Կրակովիա, Իլվով, Չերնովից, ուր Պուքովինայի, Գալիցիայի, Վալաքիայի և Մոլտաւիայի 35 ներկայացուցիչներու պատգամաւորութիւնը կընդունի, Քիշնև, Օտեսա, Սիմֆէրոպոլ, Գարասուպապար, Թէոդոսիոյ, Կերչ, Փօթի, Բութայիս և 1868 յունուար 26-ին մտնէ Տիֆլիս, այնտեղ և Երևան ալ մնալով, փետրուար 27-ին մեծ պահոց երրորդ երեքշաբթին կը հասնի էջմիածին, մեկնելէն եօթնուկէս ամիս ետքը: Յաջորդ ուղևորութիւնն բարձրացուցած էր Գէորգը միաբանութեան աչքին, և յարգի ու վարկի արժանացուցած էր ժողովրդեան առջև: Այստեղ ընդհատելով Գէորգի ընդհանուր գործունէութեան սկզբնաւորութիւնը, կանցնինք Կ. Պոլսոյ պատրիարքութեան անցուդարձերը պատմել:

2768. ԱՂԹԱՄԱՐ ԵՒ ՍԻՍ

Տաճկահայոց մէջ յուլուած խնդիրներէն մէկը լրացած ու փակուած էր Գէորգ կաթողիկոսի ընտրութեամբ, բայր տակաւին կը մնային Աղթամարի և Կիլիկիոյ աթոռներուն խնդիրները, երկու աթոռներն ալ ինքնակոչներու ձեռք ինկած, և թէպէտ ազգային կեդրոնէն մերժուած, բայց իրապէս և պաշտօնապէս լրացեալ լուծումի կերպարան չառած: Ասոնց հետ մէկ տեղ երրորդ և թերևս ա՛լ աւելի նշանակալից խնդիր մըն էր ծագած սահմանադրութեան վերաքննութեամբ, որով սահմանադրական ժողովներ պետական առժամեայ էին փոխարկուած, և Ընդհանուր ալ թէպէտ կար ու կը մնար, բայց կարկամեալ վիճակի մէջ (2758): Աղթամարի Խաչատուրը իր գիրքը կը պահէր, նոյնպէս Կիլիկիոյ Նիկողայոսն ալ, թէպէտ կեդրոնը անոնք անվաւեր էր հրատարակած և տեղապահներ կարգած էր, Իգնատիոս Գագմաճեանը Պօղոս Մելիքեանի օգնականութեամբ յԱղթամար (2751), և Մկրտիչ Սէլէրճեան ի Սիս (2757): Պահ մը խնդիր եղաւ թէ յարմարագոյն չէ՞ր արդեօք երկու մասնաւոր աթոռներն ալ իսպառ դադրեցնել.. սակայն կաթողիկոսական

յանձնաժողովը իր 1866 ապրիլ 29-ի տեղեկագիրի վերին մասին մէջ նկատել տուած էր, թէ ուրիշ է նորնորոյ աթոռի մը երևան գալը արգիլել, և ուրիշ էր երկար տեւողութեամբ հաստատութիւն ունեցած աթոռ մը դադարեցնել, և երակացուցած էր հրապարակաւ յայտնել, որ Սոյ և Աղթամարայ կաթողիկոսական աթոռոց համար իբր կարծիքն է, անոնց բարձմանը խնդիր չյարուցանել (ԻՄՁ.533), և Ընդհանուր ժողովն ալ մայիս 27-ին այդ երակացութիւնը հաստատած էր, և Համագումարն ալ յուլիս 12-ին ընտրելեաց ցուցակ պատրաստած էր (2759): Իսկ Ընդհանուր ժողովը յուլիս 22-ին Աղթամարայ և Սոյ խնդիրները յետաձգած էր (ԻՄՁ.576): Նորընտիր Գէորգի Կ. Պոլիս եղած ատեն, մասնաւոր աթոռներու խնդիրը անոր ալ ներկայուած էր, և անոր հրամանով 1867 փետրուար 6-ին հաստատուած մասնաժողովը խնդիրը ուսումնասիրելով (2764) առաջարկած էր. 1. Աջապահանց ժառանգականութիւնը դադարեցնելով երկու աթոռներուն կաթողիկոսները վիճակային ժողովով և Կ. Պոլսոյ Ընդհանուր ժողովով ընտրել, և Ամենայն Հայոց կաթողիկոսին առաջարկել ի վաւերացումն և հաստատութիւնը: 2. Երկուքին ալ օժումները Էջմիածնի մէջ նոր կաթողիկոսի ձեռքով կատարել: 3. Երկու աթոռներուն մէջ ալ եպիսկոպոսաց ձեռնադրութիւնը Ամենայն Հայոց հայրապետի գրաւոր հաւանութեամբ կատարել: 4. Ամենայն Հայոց կաթողիկոսի յիշատակութիւնը ընել թէ կաթողիկոսին և թէ վիճակային եկեղեցականներու կողմէն: 5. Ամենայն Հայոց վերտառութիւն չգործածել: 6. Ծանր խնդրոց լուծումն ու որոշումը Էջմիածնի ընդունիլ: Կաթողիկոսը պատրիարքին կը յանձնէ ըստ այսմ գործադրել, բայց գործնականապէս և ոչ իսկ փորձը կըլլայ (ԻՄՁ.640-650): Ընդհակառակն Նիկողայոսի և վայն օժող Յարութիւնի 1866 մարտ 17-ին կառավարական միջոցով Կ. Պոլիս բերուիլը մտայնութեանց փոփոխութիւն կը պատճառէ, և անոր անձնական յարաբերութիւնները, Կիլիկեցոց մի մի մասին կողմէ դիտումները, կրօնափոխութեան սպառնալիքները, նկատի կառնուի և նժարը Նիկողայոսի կողմը կը ծանրացնեն, և միտումներ կարթնացնեն Նիկողայոսը արթարացնելով աթոռը նստեցնել: Սէրմէճեան Մկրտիչի անձն ալ կասկածաւոր դատուի տեղապահական պաշտօնին մէջ և Պետրոս եպիսկոպոս Հաճնոյ տեղապահ կանուանուի (66.ԺՄՆ.205): Աղթամարայ աթոռն ալ անիշխանութենէ և անկարգութենէ ապատելու համար տեղապահ անուանուեցաւ Խիլանցի Յակոբ եպիսկոպոսը, և Խաչատուրը դուրս հանելու հրաման ղրկեցաւ (66.ԺՄՆ.181): Նոյն իսկ Գէորգ կաթողիկոսին դէպի Նիկողայոսի կողմը նպաստաւոր միտքեր կը վերագրուէին: Ընդհանուր ժողովն անգամ 1867 փետրուար 24-ի նիստին մէջ ուզելով գործը մեղմացնել, նոր յանձնախումբ մը կը կազմէ, մասնաւոր աթոռներու ընտրութեան եղանակը որոշելու և երեք աթոռներու յարաբերութիւնները ճշդելու, սակայն յանձնաժողովը կը լուծուի առանց արդիւնք մը արտադրելու (ԻՄՁ.686-687): Վիճակաւոր եպիսկոպոսաց ժողով մըն ալ կը գումարուի սեպտեմբեր 19-ին, նիստերուն մէջ նոյն խնդիրով կը վբաղի, և վերջապէս խնդիրը նորէն Ընդհանուր ժողովոյ հոկտեմբեր 20-ի նիստին առջևը կելլէ (ԻՄՁ.691): Ժողովը նոր յանձնաժողովոյ մը կազմութիւնը կը խորհի, բայց վերջէն խառն ժողովոյ կը յանձնէ գործը քննել և տեղեկագրել և առաջարկել, նկատի ունենալով թեմական իրաւունքները և Աջապահանց ժառանգականութիւնը, ևս և երկու աթոռները Կ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքութեանց կցելու գաղափարը (ԻՄՁ.691-694): Այս որոշումներ թէպէտ անհետևանք մնացին բայց իրօք կեղծանէին կանուխէն տրուած որոշումները, որոնք վճռական նկատուած էին (ԻՄՁ.687):

2769. ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Խառն ժողովը իրեն հիմնակէտ առաւ նախընթաց որոշումներուն օրինաւոր հիմանց վրայ հաստատուած չըլլալը, տեսնելով որ Նիկողայոս անարժան մը չէ, և ընտրելիները Համագումարով ցուցնելը թեմականներու իրաւանց հակառակ է, ուստի բոլոր եղածները չեղան նկատելով որոշեց

վարուիլ ինչպէս որ կարելի է վարուիլ թէ որ խնդիրը այսօր երևան ելած ըլլար: Ըստ այսմ կընդունուէր որ Նիկողայոսի ընտրութիւնը օրինաւոր կերպիւ չէ եղած, և նա ալ իր հրաժարականը տուած է, կը դիտէ որ Սոյ աթոռը երբեմն հակաթոռ և երբեմն հաւասար աթոռ ճանչցուած է նոյն իսկ Մայրաթոռոյ կողմէն, և բաւական կը սեպէ որ երկու աթոռներուն մէջ մեր եկեղեցւոյ ոգւոյն համեմատ յարաբերութիւններ հաստատուին, և վերջին ընտրութեան Մայրաթոռի մէջ փոխանորդով մասնակցելնին կը մեկնէ, թէ բարոապէս երկու աթոռները մէկվմէկու արդէն կապուած են: Այս տեսութիւններու հիմամբ կը կազմէ իր առաջարկութիւնը տասը յօդուածներով: 1. Աթոռոյ պարապութեան վրայ տեղապահը կեդրոնէն կանուանուի, վիճակայինք երեք ընտրելի կը քուէարկեն, խառն ժողովը անոնց արժանաւորութիւնը կը քննէ, Ընդհանուր ժողովը մէկը կըտրէ, ընտրեալը պատրիարքին կամ տեղապահին առջև ուխտ կընէ և կօծուի: 2. Նոր օծեալը օրհնութեան գիր կը գրէ կեդրոնական վարչութեան և բարեկամական նամակ Մայրաթոռոյ կաթողիկոսին: 3. Սոյ կաթողիկոսը պիտի յիշէ Էջմիածնի կաթողիկոսը, բայց Երուսաղէմի և 4. Պոլսոյ պատրիարքները և եպիսկոպոսները և քահանաներն ալ պիտի յիշեն Սոյ կաթողիկոսը: 4. Ամենայն Հայոց վերտառութիւնը միայն Էջմիածնայ կաթողիկոսին իրաւունքն է: 5. Սոյ կաթողիկոսը ի քաղաքականս յարաբերութիւն պիտի ունենայ 4. Պոլսոյ վարչութեան հետ, իր թեմին առաջնորդները ինքը կընտրէ, բայց վարչութեան ընդունուած անձեր պիտի ըլլան: 6. Սոյ կաթողիկոսը միւռօն կօրհնէ, և եպիսկոպոս կը ձեռնադրէ պէտք եղածին չափ: 7. Եւ երբ բոլոր հայաբնակ գաւառներէ ընտրուած եպիսկոպոսներէ բաղկացեալ սինհոդոս կը կազմուի (2696), թէ Էջմիածին և թէ Սիս առանց այս սինհոդոսի հաւանութեան եպիսկոպոս պիտի չձեռնադրեն, բայց մինչև որ կազմուի, Սիս արտօնութիւն ունի իրեն միաբանութեան խորհուրդին քննութեամբը ձեռնադրել, և ամէն առիթի մէջ Էջմիածնայ կաթողիկոսութեան իմաց տալ բարեկամական նամակաւ: 8. Սիս չորս եպիսկոպոսներէ բաղկացեալ խորհուրդ պիտի ունենայ, և խորհուրդին ձեռնահասութենէ վեր գործերը Էջմիածնայ երեսփոխանական սինհոդոսին պիտի ներկայէ երբ հաստատուի: 9. Սոյ վանքին մէջ ժառանգաւորաց կրթարան մը ունենալ: 10. Նիկողայոսը տեղը չդարձնել մինչև որ ընտրութեան գործողութիւնները լմնան. Խաչատուրն ալ 4. Պոլիս բերել տալ, և նմանօրինակ կերպով գործադրել (ԻԶՄ.702-710): Առածը կըսէ թէ երկու ծայրեր իրար կը շոշափեն, և ի դէպ է պայն կրկնել տեսնելով որ Սոյ աթոռը և ինքնակոչ Նիկողայոսը ամէն տեսակ ստորնութեանց ենթարկուած վճռուելէ ետքը Ամենայն Հայոց աթոռոյն հաւասար աթոռ կը կոչուի, անոր յիշատակութիւնը Հայաստանեայց բոլոր եկեղեցիներու պարտաւորիչ կը դառնայ, և Մայրաթոռի հանդէպ պարզապէս բրեկամական գրութեանց կը պարտաւորուի: Առաջարկեալ գլուխներուն քննադատութեան մենք չենք մտներ, զի այն ժամանակին հեղինակաւոր կերպով հրատարակուած է:

2770. ԳԷՈՐԳԻ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Տեղեկագիրը և առաջարկը տպագրուած ըլլալուն օրինակ մը չուտով կը հասնի Գէորգ կաթողիկոսին, անծանօթ մնացած անձանց միջնորդութեամբ: Խառն ժողովը 1867 հոկտեմբեր 20-ին Ընդհանուրէ պաշտօն ստանձնած էր (ԻԶՄ. 691), բայց տեղեկագիրն և առաջարկին մասին խօսուած չէ 1867 նոյեմբեր 17-է մինչև 1868 փետրուար 23 նիստերուն մէջ (ԻԶՄ.694), որ է ըսել թէ հապի մարտի սկիզբները կրցած է այն հրապարակ ելլել, իսկ Գէորգի քննադատութիւնը 1868 ապրիլին է գրուած (ԻԶՄ.735), որ փութկոտ հոգածութիւն կը ցուցնէ: Զննադատութիւնը Պօղոս պատրիարքի ուղղուած կոնդակ մըն է (ԻԶՄ.711-735), որուն մէջ անմիջապէս տարականոն և ցաւալի կը կոչէ Խառն ժողովին դիտողութիւնները ու առաջարկները, և կանցնի Սոյ աթոռին վրայ պատմական յիշատակներ յառաջ բերել, իբր հակառակ աթոռ սկսած ըլլալը հաստատելու, և

Փիլիպպոս կաթողիկոսի ժամանակ եղած համաձայնությունը սէր միայն եղած է կըսէ և ոչ իրաւասութիւն հաւասար: Կը պնդէ որ Հայ եկեղեցին մի է և գլուխն ալ մի կրնայ ըլլալ և ոչ աւելի. ուստի կը մերժէ ընդհանուր յիշատակութիւնը և բարեկամական յարաբերութիւնը, և կը կրկնէ իր Կ. Պոլիս գտնուած ատեն կազմուած առաջարկները (2768), և Աղուանից կաթողիկոսներուն ամենայն Հայոց կաթողիկոսէն օծուիլը յիշելով Աղթամարայ և Սսոյ վրայ կը տարածէ, և վերջապէս կը պահանջէ որ հպատակական (ԻԶՄ. 732) ըլլան այս աթոռներուն Մայրաթոռոյ հետ յարաբերութիւնները, և հակառակ պարագային կը սպառնայ Աղթամարն ու Սիսը թողուլ ըստ առաջնոյն ի թիւս հակաթոռ և ապօրինաւոր կաթողիկոսաց սարտուցելոց ի գրկաց մօրն լուսոյ Հայաստանեայց եկեղեցոյ սրբոյ Էջմիածնի (ԻԶՄ. 733): Միանգամայն կը յայտարարէ թէ իր պահանջը ոչ թէ հայի յիշխանական միապետութիւն ինչ կամ յայլ ինչ անգոսնելի մտածութիւն, վոր քաւ մի լիցի, այլ զի իշխանութիւն և իրաւասութիւն ընդհանրական աթոռոյ և աթոռակալի նորա մնացէ հաստատուն ի վօրութեան իւրում: Կը յորդորէ պատրիարքը խափանել տարօրինակ առաջարկները, և իր Կ. Պոլիս եղած ժամանակին կազմած առաջարկութեանց համեմատ գործել: Կաթողիկոսական կոնդակը հարկաւ իր պղծութիւնը պիտի ունենար, սակայն առանց անոր ալ Խառն ժողովոյ առաջարկները համամտութեան չէին հանդիպած Կ. Պոլսոյ մէջ, զի թէպէտ սահմանած էին Ընդհանուր ժողովոյ հաստատութեան ենթարկել, սակայն մինչև կոնդակին հասնիլը, մինչև 1868 մայիս տակաւին Ընդհանուրին առջև ելած չէին և կոնդակին ելնալն ալ անհնարին դարձաւ և Խառն ժողովոյ նոր առաջարկը մեռեալ տառ մնաց, միայն թէ նախընթաց որոշումներն ալ, որոնց ոմանք անպայման կարևորութիւն տալ կուզէին (ԻԶՄ. 671-674), իրենց վօրութիւնը կորսնցուցած կըլլան, Ընդհանուր ժողովին կողմէն առաջիններուն տեղ նոր ծրագիր և նոր առաջարկ հրամայուելովը, ինչչափ ալ նորերը ընդունուած և հաստատուած և նկատողութեան անգամ առնուած չըլլան: Իսկ միւս կողմէն երկու ինքնակոչներն ալ կը շարունակէն նպաստաւոր դիրք մը վայելել, թէպէտ ոչ լրացած և ոչ օրինաւորապէս ճանչցուած: Խաչատուր կը մնայ Աղթամար, թէպէտ աթոռը թափուր նկատելով Կ. Պոլսէ անուանուած տեղապահ մըն ալ կար, և Գագմաճեանի տեղ կը նշանակուէր Յակոբ Թօփուլեան Խիլանցի եպիսկոպոսը Աղթամարայ միաբան. իսկ Նիկողայոս թէպէտ Կ. Պոլիս բերուած, սակայն կը յաջողի պետական հրամանով և ազգային համակերպութեամբ (ԻԶՄ. 777) Կիլիկիա դառնալ անպաշտօն մնալու պայմանով, և 1868 օգոստոս 27-ին Կ. Պոլիսէ կուղևորի, և Ռոտոսթոյի մէջ կաթողիկոսական պատիւներ ալ կը ստանայ Թաղէոս եպիսկոպոսէ: Սսոյ մէջ ալ հաւասար պատիւներ կը վայելէ, թէպէտ ոչ պաշտօնապէս ճանչցուած, զի Հաճնոյ Պետրոս եպիսկոպոսը կը վարէր Սսոյ աթոռը տեղապահական պաշտօնով:

2771. ԶԱԼԱԼԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ

Գէորգ կաթողիկոս Սսոյ խնդիրէն օգտուելով և Մայրաթոռոյ ընդհանուր իրաւասութիւնը պաշտպանել ուզելով, և այդ կերպարանին ներքև իր անձնական և սեփական իղձերուն ալ ծառայելով, նոր խնդիր մը յարոյց Կ. Պոլսոյ մէջ հաստատուն ներկայացուցիչ մը պահելու, իբրև վերին հսկող եկեղեցական գործառնութեանց, և որ կանուխ ալ մտածուած և յայտնուած էր Մատթէոսի ընտրութեան առթիւ կազմուած առաջարկներուն կարգին: Ինքն Գէորգ ալ իբր պատրիարք ստորագրած էր (2696), բայց պէտք չէր մոռնար որ այլապէս կարգադրուած էր Մատթէոսի պատրիարքութեան ատեն (2688) և ինքն ալ իբր պատրիարք միևնոյն դրութեան հետևած էր: Մտածեց օգուտ քաղել օսմանեան մեծամեծաց հետ ունեցած մտերմութենէն, և Պօղոս պատրիարքի գրած կոնդակէն վատ պաշտօնագիր մըն ալ ուղղեց մեծ եպարքոս Ֆուատ փաշայի, և նորահաստատ ներկայացուցիչի պաշտօնով անմիջապէս ճամբայ հանեց Սարգիս

Ջալալեան արքեպիսկոպոսը, որ Կ. Պոլիս հաւաս 1868 սեպտեմբեր 13-ին, կոնդակին հասնելէն իբր չորս ամիս ետքը: Գէորգ իր ձեռնարկը կը հիմնէր հին ատեններ սովորական եղած նուիրակներու դրութեան վրայ, որոնք սակայն կաթողիկոսին ներկայացուցիչ չէին, այլ լոկ միւռոն բերող և նուէր հաւաքող: Ներկայացուցիչի դերը տարբեր բացատրութեամբ դեսպանութեան պաշտօնն է, և դեսպաններ օտար տէրութեանց մօտ կը հաստատուին, և ոչ ուղղակի ստորակարգել պաշտօնէութեան մօտ, որով Գէորգ ինքն իրեն հակասած կըլլար երբոր մասնաւոր կաթողիկոսներն ու պատրիարքները իրեն հպատակ և ստորակարգեալ կը նկատէր, և յետոյ անոնց մօտ ներկայացուցիչ հաստատել կուզէր: Այդ մտածումները հասարակութեան մէջ ալ ծագած և Ջալալեան լաւ ընդունելութիւն չգտաւ: Որչափ և Պօղոս պատրիարք կը միտէր կամ միտել կը ցուցնէր Գէորգի փափաքը քալեցնել, բայց չհամարձակեցաւ կոնդակը հրատարակել: Այդ գործին մէջ նախաձեռնարկ դեր մըն ալ կը վերագրուի գաղղիական պետութեան և առհասարակ կաթողիկ հանրութեան (ՋԱՄ.Բ.1714 ԱԲՂ.36), որոնք լաւ աչքով չտեսան էջմիածնի ներկայացուցիչի մը Հայոց կեդրոնին մէջ գտնուիլը զի էջմիածնայ աթոռը բոլորովին ռուսական ազդեցութեան ներքեւ ինկած էր, և էջմիածնի միջնորդութեամբ կրնար, ռուսական ազդեցութիւնը ընդարձակուիլ և ամրապնդուիլ Տաճկաստանի մէջ և Տաճկահայոց վրայ, որով մրցակից մը կը Վօրանար Գաղղիոյ դէմ, որ ուղղակի կաթողիկոսութեան և անուղղակի քրիստոնէութեան պաշտպան էր կանգնած, և անով կաշխարտէր իր ազդեցութիւնը ընդարձակել և ամրապնդել Թուրքիոյ մէջ: Բարձրագոյն դրան վրայ ազդեցութիւն բանեցնող միայն գաղղիական դեսպանատունը չենք սիրեր կարծել, հարկաւ հայ մեծամեծներն ալ պակաս չեն ըրած իրենց կողմէն թելադրութիւններ ընել, և այս երկուքին խօսքերէն աւելի պետական դրան վրայ կը ծանրանար ռուսական միջամտութեան գաղափարը, որուն հանդէպ միշտ կասկածոտ էր օսմանեան քաղաքականութիւնը, և ոչ մի կերպով չէր կրնար հաճիլ անոր ընդարձակուելուն: Այս ոգւով գրուած է արտաքին գործոց նախարար Սալֆէթ փաշայի կողմէն կաթողիկոսէն մեծ եպարքոսին ուղղուած նամակին պատասխանը նոյեմբեր 12-ին, Ջալալեանի հասնելէն ճիշդ երկու ամիս ետքը, որ կը ցուցնէ թէ գործը շուտով վերջացնելու ջանք եղած է: Քաղաքավարական խօսքերէն ետքը կը վկայուի կայսերական կառավարութեան հայ կրօնին նկատմամբ ունեցած մասնաւոր համակրանքը, և կանցնի հաստատել թէ անոնց պատրիարքին պաշտօնն է Թուրքիոյ Հայոց հոգևոր շահերուն վրայ հսկել, թէ օրինակը տեսնուած չէ կաթողիկոսի նուիրակին Թուրքիոյ մէջ բնակութիւն հաստատած ըլլալուն, թէ հին նուիրակներ միայն միւռոն կը բերէին և կը դառնային թէ Հայոց եկեղեցւոյ ներկայացուցիչը Կոստանդնուպոլսոյ պատրիարքն է, թէ նուիրակին յատկացուած դերը պատրիարքին ունեցած նուիրակին պաշտօնն է, թէ նուիրակին ներկայութիւնը անվրէպ ցաւալի հետևանքներ յառաջ պիտի բերէ, թէ ինքն կաթողիկոսն ալ պատրիարքութիւն վարած ըլլալով՝ այդ կէտերը լաւ գիտէ, և կեզրակացնէ թէ բարձրագոյն դուռը իր աւանդութեանց հաւատարիմ կենալով պարտք կը համարի բնաւ որ և է պաշտօն մը չձանաչել իբր նուիրակ եկող Ջալալեանի վրայ (ԻՋՄ. 739-745): Այսպէս կտրուկ մերժուած է կաթողիկոսական նուիրակի մը Կ. Պոլիս մնալուն խնդիրը, և Գէորգի ծրագիրը ձախողած, թէպէտև շատերուն համար գոհունակութեան կէտ եղած է, այս առթիւ Կ. Պոլսոյ պատրիարքին իբր կաթողիկոսի ներկայացուցիչ յայտարարուած ըլլալը (ԻՋՄ. 746, ԱԲՂ. 38), սակայն այդ կէտն ալ աւելի իբր բացատրութիւն կամ մեկնութիւն աւելցուած բառերուն վրայ կը հիմնուի (ԻՋՄ. 744), իսկ էջմիածնայ կաթողիկոսական Հայոց կրօնական գերագոյն պետը ճանչցուելուն կէտը երբեք խնդիրի նիւթ եղած չէր որ նորէն՝ ընդունելութեան նիւթ ըլլար, միայն օսմանեան կառավարութիւնը Վաղարշապատ է և կը Վաղարշապատ իր հպատակներուն ներքին վարչութեան և մատակարարութեան կեդրոնը իր սահմաններէն դուրս հաստատուելու: Ջալալեան

նոյեմբեր 12-ի պաշտօնագիրէն ետքն ալ անպաշտօն կերպով շարունակեց Կ, Պոլիս մնալ, գուցէ յուսալով որ ռուսական դեսպանատունը յաջողի նոր տրամադրութեան և նոր որոշման միջնորդ դառնալ, որ անշուշտ պիտի ջանար հակակռել գաղղիական դեսպանատան պղծութիւնը, սակայն այս կողմէ ալ ակնկալութեանց պարապի ելլալուն վրայ Կ, Պօլիսէ կը մեկնի 1869 յունիս 14-ին, հասնելէն ութ ամիս գտքը և կը վերադառնայ Էջմիածին:

2772. ԱՐՄԱՇ ԵՒ ՆԻԿՈՄԻԴԻԱ

Թէպէտ մասնաւոր բայց յիշատակութեան արժանի եղելութիւն մըն է այս տարիներու մէջ Արմաշու վանքին վրայ եղած փոփոխութիւնը: Արմաշու վանքին 1611-ին հիմնարկուելէն ի վեր (1635) Նիկոմիդիա Արմաշու վիճակ եղած էր, Պանարման ալ մասին մինչև 1780 (ՕՐԱ. 176), և այսպէս շարունակուած էր երկուք ու կէս դարէ ի վեր մինչև Մաղաքեան Ստեփան եպիսկոպոսի ժամանակը: Վանահայր առաջնորդը սովորաբար վանքը կը նստեր, և փոխանորդ կամ նուիրակ վարդապետներ կը գրէին Նիկոմիդիա, Ատաբապար, Կէյվէ, Պարտիպակ, Եալովա, որոնք վանքի նուիրակութեան հետ վիճակի փոխ առաջնորդութիւն ալ կը վարէին: Մաղաքեան իր տեղապահութեան կամ աւելի ճիշդ փոխպատրիարքութեան պաշտօնը լրացնելէն ետքը, 1863-ին նորէն Արմաշ դարձաւ ժամանակին պահանջած մղումը տուաւ վանքին ուսումնական և բարեկարգական պարգացման, ուսումնարանին համար նոր և ընդարձակագոյն ծրագիր պատրաստեց, տպարան հաստատեց, հողային ստացութիւնները և հասոյթները աճեցուց, և Յոյս անունով ամսագիր մըն ալ սկսաւ հրատարակել 1864 օգոստոսին (ՕՐԱ. 179), Երուսաղէմի 1866 յունուարի Սիոնէն և Էջմիածնի 1866 մայիսի Արարատեան բաւական առաջ հին Գարագոչեան տաճարն ալ քակեց նոր և փառաւոր վերաշինելու համար: Սակայն սահմանադրական սկզբունքներով հաստատուած նոր ձևը պզակի վանահայրական և առաջնորդական պաշտօններուն միացման դժուարութիւնները. վիճակին կեդրոնը առաջնորդին ներկայութեան պէտք ունէր, և վանքը առանց վանահօր անգլուխ մարմին կը դառնար: Երբոր այդ դժուարութեան լուծումը կը խորհուէր, և երկու պաշտօններու անջատելու ծրագիրը կը մտածուէր (69, ՅՈՅ. 62), այն օրեր տիրող հնտախտի համաճարակին պոհ գնաց Մաղաքեան ալ, երբ Պարտիպակ այցելութեան կը գտնուէր, և 1865 օգոստոս 24-ին վախճանեցաւ 65 տարեկան, և տեղւոյն եկեղեցւոյն բակը թաղուեցաւ: Մաղաքեան որդի էր Ատաբապարի Յովհաննէս քահանային, պատանութենէ Արմաշու վանքին աշակերտած, գոհացուցիչ ուսում և պարգացում ստացած, 28 տարեկան արեղայ ձեռնադրուած Աղաւնի եպիսկոպոսէ, թէ վանքին մէջ և թէ վանքէն դուրս արդիւնաւոր պաշտօններ վարած, պորս իրենց կարգին յիշած ենք: Օգոստոս 23-ին Աստուածածնայ ութօրէից Պարտիպակի եկեղեցւոյն մէջ երկար քարոզ խօսելով և քրտնելով ու պաղելով համաճարակին կենթարկուի, և հակառակ ամէն կարելի դարմաններու երեքշաբթի Յովակիմայ և Աննային տօնին հոգին կաւանդէ (65.ՅՈՅ339): Եփրեմ վարդապետ Հավլուճեան, որ փոխանորդ էր, կրկնակի տեղապահութիւնը ստանձնէ, բայց և միաբանութիւնը լրջօրէն ձեռք կառնէ վանքն ու վիճակի անջատելու խորհուրդը, և պայն իրականացնելու համար Հավլուճեանը վանահայր կընտրէ և կը հռչակէ, վիճակին թողլով իր առաջնորդն ընտրել: Նիկոմիդիոյ վիճակայինք լաւ չեն տեսներ այդ անջատումը, նպատակ ունենալով վանքէն լայնօրէն օգտուիլ: Միաբաններ պտտող պրոյցները խափանելու համար ուխտ միաբանութեան Չարխափան Ս. Աստուածածնայ վանաց յԱրմաշ ստորագրութեամբ յայտարարութիւն մը հրատարակեցին 1966 փետրուարին և միանգամայն իրենց դիմումները կրկնապատկեցին կեդրոնական վարչութեան մօտ, պի մարտ 20-ին կառավարութիւնը սահմանադրութիւնը վերաքննութեան ենթարկած և Ընդհանուր ժողովը դադրեցուցած էր (2758): Պողոս պատրիարք Արմաշու միաբան և բազմաշխատ

երախտաւոր էր, ինքն ալ կը փափաքեր վանքին ապառ զարգացման, ուստի մեծապէս նպաստեց անջատումը գործադրելու, և 1866 մայիսին սկզբունքը պատրիարքական կոնդակով հաստատեց, վանքը վիճակէն պատեց և Հալլուճեան Եփրեմ վարդապետի վանահայրութիւնը վաւերացուց և արքունական հրովարտակով ալ հաստատել տուաւ: Միայն անպատեհ շփմանց տեղի չտալու համար, վանքին յարակից Արմաշ և հանդիպակաց Խասկալ, տաճկերէն կոչմամբ Էրմիշէ և Փիրահմէտ գիւղերը վիճակէն պատուեցան և Արմաշու վանական թեմ նշանակուեցան (66.ՅՈՅ.533): Այն օրէն սկսաւ Արմաշու վանքին նոր կեանքը, վիճակային հոգերէ ապառ ուսումնական և բարեկարգական զբաղմանց հետեւելու: Եփրեմ վանահայր և Միքայէլ վարդապետ, որ տնտեսապետ կամ ելեմտից տեսուչ նշանակուեցաւ, հիներէն էին, բայց նոր ուսումնական ոյժեր էին Գէորգ Ալեքսանեան և Պօղոս Խօլտամեան և Խորէն Աշըգեան վարդապետները, Մաղաբեանի ձեռնասուններն, որոնք իսկոյն ձեռնարկեցին ժառագաւորաց ուսումնարանին մղում տալ, վանական և վարժարանական կանոններ հաստատուեցան և երբ վանահօր քաջալերութեան և հովանաւորութեան ներքեւ եկեղեցւոյն վերաշինութեան կաշխատուէր և անոր եպիսկոպոսանալուն կը հետապնդուէր, Եփրեմ յօգնած և տկարացած կը վախճանի 1868 յուլիսի 66 տարեկան: Պրուսացի էր բնիկ, Գարագոչեանէ սարկաւագ և Աղաւնիէ արեղայ ձեռնադրուած, և վանական պաշտօններէ պատ Կ. Պոլսոյ պատրիարքական փոխանորդութիւնն ալ վարած էր: Նոր խնդիրներու եռիթ չտալու համար նոր ընտրութիւնը փութացուեցաւ, և 1868 օգոստոսին վանահայր հռչակուեցաւ Գէորգ վարդապետ Ալեքսանեան Չէնկիլերցի, տակաւին 34 տարեկան: Նիկոմիդացիք առաջնորդ ընտրած էին Նիկողայոս եպիսկոպոս Աղասեանը, և կերևի Եփրեմի մահուանէն քաջալերուած, 1869-ի առաջին ամիսներուն մէջ հանրագրութեամբ պատրիարքարան դիմեցին որ վիճակին հետ վանքն ալ անոր հսկողութեան յանձնուի, որուն միաբանութիւնը ամենայն ուժգնութեամբ դիմադրեց (69. ՅՈՅ. 115), և դիմումը արդիւնք չունեցաւ: Միւս կողմէն վանքին դիրքը բարձր պահելու համար Ալեքսանեան 1869 մարտին Էջմիածնի ուղևորեցաւ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելու, բայց կաթողիկոսին հիւանդութեան և բացակայութեան պատճառով ձեռնադրութիւնը յապաղեցաւ, և միայն սեպտեմբեր 14-ին կատարուեցաւ Խաչվերացի տօնին, և նոյեմբեր 25-ին երեքշաբթի օր Արմաշ վերադարձաւ: Ալեքսանեան լուսաւորեալ միտքով, բուռն կամքով և անխոնջ աշխատասիրութեամբ օժտեալ մի անձ, ծաղկեալ վիճակ մը տուաւ վանքին, ժառանգաւոր աշակերտները զարգացուց, եկեղեցին վերաշինուեցաւ քարուկիր և գմբեթայարկ, Յոյս ամսագրի լաւագոյն պարունակութեամբ շարունակուեցաւ, գիշերօթիկ վարժարան բանալու պատրաստութիւններ սկսան, բայց աւա՛ղ որ հիւժական ախտով բոլորովին տկարացաւ, և երբ իր մահը մօտալուտ տեսաւ, կողովին մէջ բարձրանալով նորաշէն եկեղեցւոյ խորանին ձակատն օժեց, և իր սաներուն, թէպէտ նորահասներ, ձեռնադրութիւնը կատարեց, և մահմոռնէ առաջ Կ. Պոլսոյ լրագիրներուն վրայ իր մահագոյժն ալ կարդալով, 1872 նոյեմբեր 28-ին վախճանեցաւ, տակաւին 38 տարեկան, և իր շինած տաճարին հովանւոյն ներքեւ թաղուեցաւ (ՕՕ. ՕՐԱ. 180): Իր յաջորդին վրայ պիտի խոսինք առաջիկային: Իսկ Նիկոմիդացիք վիճակին նոր ոյժ աւելցնելու համար 1870-ին Նիկողայոս Աղասեանի տեղ Ներսէս Վարժապետեանը իրենց առաջնորդ բերին:

2773. ՊՕՂՈՍ ԵՒ ԱՐԻՍՏԱԿԷՍ

Այդ միջոցներուն մայրաքաղաքի մէջ պատրիարքական խնդիր էր սկսած, և Պօղոս Թաքթաքեան պատրիարքի դէմ դժգոհութիւն շատցած էր: Սահմանադրութեան կիրառութիւնը առկախ մնացած էր վեաքննութեան ներքեւ. 1866 մարտ 20-էն բաւական ժամանակ անցած էր, վերաքննութիւն պատրաստուած և կառավարութեան ներկայուած էր, սակայն բնաւ խօսք չէր ըլլար, և մօտ երեք տարի էր որ առժամեայ խառն ժողովը կը գործէր և յաջողութեան չհասնելուն

համար կը մեղադրուէր: Աղթամարի և Սիսի աթոռներուն խնդիրները կը քաշքաշուէին, առաջարկի կը յաջորդէր, բայց և ոչ մին գործնական արդիւնք չէր արտադրեր: Մենք չենք վարանիր յայտարարել որ այդ կացութիւնը սահմանադրական ձևերէն և անոնցմէ յառաջ եկած գործերուն ճապաղումէն, գործի խառնուող ներուն շատութենէն, որոշիչ և կտրուկ միջոցներու պակասութենէն յառաջ եկած հետևանք էր. սակայն սովորութիւն է գլուխ գտնուողներ մեղադրել և պատասխանատու կարծել, թէպէտ եղելութիւնները անոնց կամքէն անկախ ըլլան, և գործերն անոնց կամքին հակառակ կատարուին: Սահմանադրութիւնը մեղադրած ատեննիս երբեք ինքզինքնիս հակասահմանադրական եղած չենք կարծեր, զի ուրիշ է սկզբունքը և ուրիշ այս կամ այն ձևը: Սահմանադրական դրութիւնը շատ տեղեր հաստատուած է, սակայն ոչ ուրեք տեսնուած է վարիչ մարմինը քուէարկութեամբ ընտրել, կամ վարչական գործերը Ընդհանուր ժողովի յանձնել և վարչութեան ձեռքը կապել, ինչ որ Հայ կամ Տաճկահայ սահմանադրութեան մէջ օրինագրուած է: Թաքթաբեան ալ այդ անտեղութեանց փորձը տեսաւ, դժգոհ հանրութիւնը և դժգոհութեան առիթ տուող գործիչները սկսան պատրիարքը մեղադրել, թէպէտ բարի բայց հաստատ բնաւորութեան տէր անձ էր (ՄՈՎ.194), և իր ծանօթ կարողութեան և յամառ գործունէութեան և արթուն հսկողութեան վկայութիւնները մինչև վերջին օր ամէնուն բերանն էին: Արտաքին ցոյցեր ալ սկսան, պատարագին մէջ չյիշելու աղաղակներ բարձրացան, և տեղտեղ յիշելու պանցառութիւններ ալ տեղի ունեցան, և Թաքթաբեան ստիպուեցաւ տեղի տալ և հրաժարականը մատոյց 1869 յունուար 17-ին, թէպէտ ուրիշներ տարբեր օր կը նշանակեն, այսինքն յունուար 23-ին (ՄՈՎ.377), կամ մարտ 17 (ԱԲՂ.42): Խառն ժողովը իսկոյն հրաժարականը կընդունի իբրև կացութիւնը հանդարտելու միակ դարման, և նոյն օր տեղապահ կընտրուի Արիստակէս Ռափայէլեան եպիսկոպոսը, և կառավարութեան հաստատութիւնը կը խնդրուի յունուար 27-ին: Տեղապահը անմիջապէս ձեռք կառնէ պատրիարքարանի գործերը որոնց առաջիններէն մէկը կըլլայ փետրուար 1-ին կոնդակով հանրութեան սիրտը հանդարտեցնել, թէ Նիկողայոս միայն բնակելու արտօնութեամբ Սիս դարձած է, իսկ կաթողիկոսութեան խնդիրը առկախ կը մնայ, և Նիկողայոս իրաւունք չունի կաթողիկոս կոչուելու և կաթողիկոսութիւն վարելու (ԻԶՄ.749-752). բայց Նիկողայոս-Կիրակոս այս կոնդակին կը պատասխանէ անմիջապէս կաթողիկոսական գործի ձեռնարկելով, և ապրիլին առաջին օրերը եպիսկոպոսական ձեռնադրութիւն կու տայ Ֆրունչի վանահայր Ստեփան Դաւթեան և Ատանայի տեղապահ Դաւիթ Ներշապուհեան վարդապետներուն, առաջինը կոչելով Նիկողայոս և երկրորդը Թէոդորոս: Իբր իր գործին ջատագովական միաբանութեան անունով գիր մըն ալ կը գրէ պատրիարքարան, թէպէտ ինքն միաբանութեան ընտրեալն ալ չէր, ուր Թաքթաբեանի ըրած անխոհմտութիւն կը կոչուի, և երբեմն ի նոցունց բարբարոսաց գործուած թշուառութիւններէն աւելին ըրած կըսուի, Կ. Պոլսոյ պատրիարքութեան Կիլիկոյ գործերուն խառնուելու իրաւունքը կը վլացուի, և Էջմիածնի աթոռը սկսեալ ի Վիրապեցւոյն Կիրակոսէ ճշմարիտ հերձուած իմն կը հռչակուի ամենաօրինաւոր կաթողիկոսութեանն Կիլիկիոյ: Այդ եղելութիւնները կեդրոնը կը յուլեն, բայց դարձեալ վերջնական կտրուկ որոշման չեն յանգիր: Մայիս 21 և 28 և յունիս 10 օրերը երեք անգամ Կ. Պոլիս գտնուող եպիսկոպոսները խորհրդակցութիւն կը կատարեն, բայց խնդիրը Մայրաթոռ տեղեկագրելու և լուծումը խնդրելու որոշումէն անդին չեն անցնիր: Նոր ձեռնադրուած եպիսկոպոսները և Նիկողայոսի գործակիցները Կիլիկիայէ հանելու որոշում կու տան, բայց Նիկողայոսի անձին նկատմամբ բան մը չեն վճռեր, իբր զի նա պետական արտօնութեամբ Կիլիկիա գտնուէր, իսկ հոգևորական աստիճաններէ կապտելու ձեռնահասութիւնը չեն պզար, և բոլոր ոյժերնին նոր կատարուած գործողութիւնները չճանչնալու մէջ կամփոփուէր: Այդ

պարագաներուն մէջ էր որ Յարութիւն Աջապահեան իսլամութեան, Մկրտիչ Սէմէրճեան անգղիականութեան, և Թէոդորոս Ներշապուհեան հռոմէականութեան յարեցան միայն Նիկողայոս Դաւիթեան Հայ եկեղեցիէ չգտնուեցաւ, Կ. Պոլիս դիմեց և կեդրոնէն չանջատուեց:

2774. ՊԱՏՐԻԱՐԶԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ

Արիստակէս տեղապահին գլխաւոր գործունէութիւնը պիտի ըլլար, վերաքննութեան կենթարկած և առժամաբար դադարած սահմանադրութիւնը իր տարտամ կացութենէն ազատել, և կատարեալ ու համարձակ գործադրութեան դարձնել: Խնդիրը Պօղոս պատրիարքի օրով ալ մտադրութեան առարկայ եղած էր: Դադարումէն հինգ ամիս ետքը 1866 օգոստոս 27-ին կըսուէր թէ վերաքննութեան խմբագրութիւնը աւարտէր է (66. ԺՄՆ. 136), բայց հոկտեմբեր 10-ին դեռ լրացած չէր (66. ԺՄՆ. 175), և միայն նոյեմբեր 19-ին կը հրատարակուի թէ խմբագրութիւնը աւարտած է, և թէ 20-ին կառավարութեան պիտի ներկայացուի (66. ԺՄՆ. 185): Վերաքննութեան այդ պատճէնը չունինք, որ սահմանադրութեան երրորդ խմբագրութիւնըն էր, բայց ինչինչ կէտեր կը գտնենք լրագիրներու մէջ յիշուած: Այս տեղեկութեանց համաձայն երեսփոխութիւնը 70 անգամի վերածուած պիտի ըլլար կէս առ կէս վեղչերով 20 և 40 և 80 բաժիններ (2370), վարչութեան ժողովներուն անդամները 7-ականի վերածուած, թաղական խորհուրդներու ատենապետները միայն թաղէն ընտրուած, իսկ 4 անդամակիցներ վարչութենէն նշանակուած ատենապետէն ներկայացուած ութանուն ցանկին վրայ, իսկ ժողովրդական քուէով ընտրուած խորհուրդը վեց ամիսը անգամ մը թաղական հաշիւները պիտի քննէ: Թաղական ընտրողութեան իրաւունքը 20 դուրուշ տուրքի տուրքի իսկ վարչական ընտրողութեան իրաւունքը 150 դուրուշ տուրքի պիտի կապուի. ժողովոց և խորհրդոց ներքին կանոնները նոյն իսկ սահմանադրութեան մէջ պարունակուած պիտի գտնուին: Անշուշտ այդ ծրագիրը 1866 նոյեմբերին վերջերը ներկայացուեցաւ, բայց 1869 յունուարին դեռ պատասխան մը առնուած չէր, գուցէ և բերանացի դիտողութիւններ եղած էին, որ Արիստակէս տեղապահին ձեռօք նոր և չորրորդ խմբագրութիւն մը կազմուի երկրորդ վերաքննութիւն անուամբ, որ տպագրութեան ալ կը տրուի (ՍՀՆ.): Ամբողջութիւնը 100 յօդուած է, 7 հիմնական սկզբունքներէ պատ, վեց գլուխի բաժնուած է: Գլուխ Ա. Կեդրոնական վարչութիւն. Ազգ. 2 յօդուած, Պատրիարքարան Կ. Պոլսոյ 9 յօդուած, Կրօնական խորհուրդ 10, Զաղաքական խորհուրդ 14, Դատարան 4, Ընդհանուր ժողով 9: Գլուխ Բ. Թաղական մատակարարութիւն Պոլսի Թաղ. 1 յօդուած, Թաղական խորհուրդը 6, Թաղական ժողովը 12: Գլուխ Գ. Գաւառական վարչութիւն, առաջնորդարանք 2 յօդուած, գաւառական ժողովը 1, Թեմական ժողովը 1: Գլուխ Դ. Ազգային հանգանակութիւն. Ընդհանուր սկզբունք 2 յօդուած, ուղղակի հանգանակութիւն 6. անուղղակի հանգանակութիւն 1, Եկեղեցական իրաւունք 4, դպրոցական իրաւունք 1, ձեռնադրական իրաւունք 3. դիւանական իրաւունք 2. գաւառական հանգանակութիւն 2: Գլուխ Զ. վերաքննութիւնը 1 յօդուած: Անգործադիր մնացած ծրագիր մը ըլլալուն մանրամասնութեանց չենք մտնել, միայն յիշենք թէ վարչական ժողովներ 12-ական անդամ ունին (ՍՀՆ. 8 և 11), Երուսաղէմի գլուխը և տեսուչ խորհուրդները ջնջուած են, Ընդհանուրին երեսփոխանները 100-ի վերածուած են, 20 եկեղեցական և 80 աշխարհական կէս առ կէս մայրաքաղաքէն և գաւառներէն (ՍՀՆ. 16), տուրքի չափը անհատին երկու օրական շահին հաշիւով պիտի ճշդուի, և առանց տուրքի վճարման ընտրողական իրաւունք պիտի չստացուի (ՍՀՆ. 30-31): Այս ծրագիրն ալ կառավարութեան ներկայացուեցաւ տեղապահի ձեռքով, որ 1869 յունուարի վերջերը պաշտօնի անցած էր, բայց երկար չկրցաւ գործել և պատրաւորուեցաւ հրաժարիլ: Կայսերական տօնախմբութեան մը առթիւ, երբոր հոգևոր պետեր կայսեր պիտի ներկայանային, Հասունեան որ կաթոլիկներու կաթողիկոս պատրիարք էր եղած, կաշխատի

տեղապահէն առջև անցնիլ, թէպէտ Հայոց պատրիարքին կարգը ի հնուց անտի Յունաց Պատրիարքէն ետքը և կաթողիկ պատրիարքէն առաջ էր: Արիստակէս տեղապահ երբոր չի կրնար ոտնձգութիւնը արգիլել, կորոշէ ազգին դարաւոր մէկ իրաւանց պաշտպան կենալու համար ներկայանալէ հրաժարիլ և արքունիքէն ետ կը դառնայ, ինչ որ պալատական դիտողութեանց առիթ կու տայ, և Արիստակէս կը պատրաստուի, մանաւանդ թէ անուղղակի կը հրաւիրուի որ հրաժարի, և յուլիս 3-ին հրաժարականը կու տայ, Սսոյ խնդիրը իբր պատճառ նշանակելով: Կառավարութիւնը հրաժարականը դիւրաւ կընդունի, բայց միանգամայն նոր տեղապահի ընտրութիւն չի պահանջեր, և յուլիս 20-ի պաշտօնագիրով անմիջապէս պատրիարքական ընտրութեան հրամանը կու տայ: Ընդհանուր ժողովը կը գումարուի յուլիս 31-ին և պատրիարք կընտրուի Իգնատիոս Եպիսկոպոսը Գաբմաճեան Վանայ առաջնորդը, որ Կ. Պոլիս կը գտնուէր: Ազգայիններէ ոմանք և գլխաւորապէս Մահգումէ լրագրոյ խմբագրապետ Կարապետ Փանոսեան, առիթ առնելով Աղթամարի խնդիրը, անիրաւ և իսպառ դատապարտելի յարձակմանց կը սկսին Գաբմաճեանի դէմ, որ այնչափ կը զգացուի, որ անթայր կամ կայծակ կոչուած քաղցկեղի հիւանդութեամբ կախտանայ և 12 օրէն, դեռ պաշտօնին գլուխը չանցած օգոստոս 12-ին կը վախճանի և պատրիարքական պատուով կը թաղուի Բերիայի Ս. Երրորդութիւն եկեղեցոյ հարակողմը: Հարկ եղաւ պատրիարքական ընտրութիւնը կրկնել, և ընտրելեաց ցանկին մէջ Ներսէս Վարժապետեանի անունն ալ ուզուեցաւ դրուի, որ Սիսէ ձեռնադրուած էր (2733), և թէպէտ էջմիածին պատգամաւոր գացած էր (2760), բայց Մայր աթոռի Եպիսկոպոսաց կարգն անցնելու ոչ խնդիր ըրած էր և ոչ գործողութիւն կատարուեցած էր, ուստի Եպիսկոպոսներու կողմէն դիտողութիւն և ընդդիմութիւն յայտնուեցաւ, որուն ոյժ տուողը Խորէն Գալֆայեան Եպիսկոպոսն էր (2765), որ կը յուսար Ներսէսի հրապարակէն հեռանալով ինքն նախադասուիլ պատրիարքական ընտրութեան մէջ: Այլ ակնկալութիւնը չպակուեցաւ, զի սեպտեմբեր 4-ի ժողովին մէջ ընտրուեցաւ Մկրտիչ Եպիսկոպոս Խրիմեան:

2775. ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆ

Մկրտիչ Եպիսկոպոս Խրիմեան անձանօթ մէկ մը չէր, ազգային շրջանակի մէջ յարգուած գործիչ մըն էր, ընդհանուր համակրութիւն զինքը կը շրջապատէր, բայց որովհետև կեդրոնական շրջանակներու մէջ պաշտօնական դեր վարած չէր, այս պատճառով մենք ալ առիթ ունեցած չէինք իր նախընթացով և իր անձով զբաղիլ, թէպէտ երբեմն հարևանցի անոր անունը տուինք Սսոյ (2678) և Աղթամարայ (2759) գործերուն առիթ: Մկրտիչ Խրիմեան Վանայ Յայնկոյսներու թաղէն Ղրիմցոնց համեստ ընտրանիքի վաւակ, ծնած էր 1820 ապրիլ 4-ին (ՐԱՖ.59) և իր մանկութիւնը անցուցած ընտանեկան շրջանակի մէջ, կտաւագործութեան հետ ընթերցանութեան վարժուելով (ՀՈՎ.8) իր հօրերբօր խնամոց ներքև (88.Ա.ԶՍ.71): Իսկ պատանեկութեան փոխադրուեցաւ Վարազայ վանքը, և գլխաւորապէս ձեռք բերեց գրաբար լեզուի հմտութիւնը (ՀՈՎ.9): Մկրտիչ մանուկ մտավարժ էր և հոգւոյ բարւոյ տիրացած, բնական ուշիմութեան և արթնութեան ձիրքերով օժտուած, մեծոգի ձգտումներ և անյագ փափաքներ սնուցած, որով այդ լքեալ շրջանակի մէջ ալ գրում էր իւր երգերը (ՐԱՖ.7): Բանաստեղծական աւիւնը և արևակայական եռանդը, որ ժառանգական է Տոսպեցւոց արիւնին մէջ, առաւելութեամբ կը փայլէր պատանի Խրիմեանին վրայ, որ այն ժամանակէն ցոյց կու տար այդ ձիրքերուն մէջ յայտնի գերապանցութիւն մը: Տասնութօթը տարեկան էր երբ 1837-ին Կ. Պոլիս եկաւ իբրև սոսական պանդուխտ պատանի. ուզեց բարձր ուսմանց հետևիլ, բայց ոչ պաշտպան ունեցաւ և ոչ միջոցներու դիւրութիւն ունէր, մինչև իսկ օրական հացի համար մտածել պարտաւոր էր (ՐԱՖ. 8), և հարկադրուեցաւ կօշկակարի մօտ ծառայել իրեն նպատակին հասնելու համար (ՀՈՎ. 12), ուստի

այնչափ ինչ շահեցաւ որչափ մասնաւոր պարագաներէ օգտուելով և ժրաջն ինքնօգնութեամբ կրնար գանձել: Բայց այսչափով ալ սկսաւ օգտակար ըլլան արհեստակիցներու ուսուցչութիւն ընելով, և կամաց - կամաց այդքան ընդարձակեց այդ ձեռնարկը, որ վարժապետի կարգ անցաւ, Խաաքէօյի վարժարանին մէջ պաշտօն գտաւ և Յովհաննէս Այվատեանի վաւակաց առտնին դաստիարակ ընդունուեցաւ: Քանի մը տարի այդ կեաքը վարելէն ետքը Վան վերադարձաւ, հայրը մեռած էր, մօրը և մեծ եղբօր ատիպմամբ ամուսնացաւ և պսակուեցաւ Սևիկեանց Յովհաննէսի դստեր հետ և Թագուհի վաւակ մըն ալ ունեցաւ: Հայրենեաց վիճակը և անոր բարւոքման տենչը, աւելցնենք նաև հայրենասիրութեան բանաստեղծական գաղափարները, զինքը յորդորեցին նախ Վասպուրականի և յետոյ Արարտի նահանգները շրջել, և հին յիշատակներով ոգևորուիլ, իր զգացումները գիրի ալ առաւ չափաւ բանահիւսութեամբ մը, զոր Հրաւիրակ Արարատեան անուանեց: Այս եղաւ իր անդրանիկ երկասիրութիւնը և իր անունը ծանօթացուց գրական աշխարհին: Կ. Պոլիս դարձաւ 1850 ին և նոյն տարին տպուեցաւ Արատեան Հրաւիրակը, և անմիջապէս կրօնական թափով Երուսաղէմ ալ այցելեց, և դարձեալ տպաւորութիւններն ու զգացումները գիրի առաւ Հրաւիրակ երկրին Աւետեաց բանաստեղծութեամբ: Ս. Յակոբայ տանիքին վրայ Ս. Հոգևոյ մատուռին մօտերը, ցարդ կը ցուցուի սենեակին տեղը, ուր բնակեցաւ և ուր գրեց Խրիմեան, և Կ. Պոլիս դառնալուն այս երկրորդ հրաւիրակին ալ հրատարակեց 1851 թուին, և ևսքանչևս բարձրացաւ Խրիմեանի անունը, և անձը ծանօթացաւ գրաւիչ խօսքերովը և բացեռանդն արտայայտութիւններովը: Այդ տարին էր որ Կիլիկիա յղուեցաւ կանոնագիրի գործադիր Աջապահեան Ղուկաս եպիսկոպոսի հետ իբր օգնական (5678), և միանգամայն Կիլիկիոյ մէջ դպրոց բանալու և կարգաւորելու յատուկ յանձնարարութեամբ (ՐԱՖ. 9): Երկու պաշտօնները արդիւնաւոր չեղան յարուցուած խոչընդոտներու պատճառով, բայց Կիլիկիոյ սէրը Խրիմեանի սրտին մէջ մնաց, զոր մինչև իր կեաքին վերջը չքաշուեցաւ արտայայտել: Բաւական ժամանակ էր որ պանդխտած էր, ուստի ծննդավայրը ուկեց դառնալ, ուր սակայն մինակ գտաւ զինքն երբոր 1852-ին Վան հասաւ, զի ամուսինն ու վաւակը մեռած էին: Կրնար կրկին ամուսնական կեանքին դառնալ, բայց գրեթէ անոր ընտելացած իսկ չէր, և միւս կողմէն հայրենանուէր ապատ կեանքը իր իղձերուն և ձգտումներուն աւելի յարմար էր: Նախ Վանայ մէջ աշխատեցաւ մանչերու և աղջիկներու վարժարաններ բանալ, և դարձեալ դժուարութեանց բաղխեցաւ, ուստի ապատօրէն ամէն կողմ աշխատելու համար յարմարագոյն գտաւ եկեղեցականութեան ասպարէզը, Վարագայ միաբան մտաւ և այդ անունով արեղայական և վարդապետական աստիճան ստացաւ 1854 փետրուար 14-ին (ՐԱՖ. 10) Աղթամարայ մէջ (ՀՈՎ. 15) Գաբրիէլ եպիսկոպոսէն, որ Վանայ առաջնորդութեան հետ Աղթամարայ տեղապահութիւնն ալ կը վարէր (2680), կիրակի օր Տեառնդառաջի տօնին, 34 տարեկան եղած ատեն: Խրիմեան վարդապետ Վասպուրականի վանքերու և անապատներուն վարդապետներէն բոլորովին տարբեր ուղղութիւն մը ստեղծեց, անմիջապէս որ վեղարի և գաւազանի արտօնութեամբ գործի ձեռնարկեց: Ժողովուրդին կեանքը, ժողովուրդին կացութիւնը, ժողովուրդին վարգացումը, ժողովուրդին անդորրութիւնը, ժողովուրդին ապագան եղան իր դիտակէտը, և քարոզութեանց նիւթը, խրատներու իմաստը և աշխատութեանց նպատակը, համեմատելով այդ ամէնը անցելոյն յիշատակներով և առաջիկային յոյսերով: Բայց շուտով թշնամիներ ունեցաւ և պարտաւորուեցաւ կրկին Կ. Պոլիս դառնալ, ուր աւելի ապատ շնչելու փորձառութիւն ունէր, և մայրաքաղաքը իւր նպատակների իրագործման օձախն էր համարում: Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ քարոզիչ նշանկուեցաւ Յակոբոս պատրիարքէն, բայց դէպի Վասպուրական հայեացքը չկորսնցուց, և 1855-ին Կ. Պոլսոյ մէջ Արծիւ Վասպուրականի պարբերականը սկսաւ հրատարակել, գաւառը մայրաքաղաքացուց ծանօթացնելու

և պանոնք գաւառով շահագրգռելու համար, որոնք հապիւ թէ այս կէտերը կը մտածէին: Երբոր կարծես թէ բաւական նախապատրաստութիւն կազմած էր իր նպատակին համար, 1857-ին ուղևորեցաւ իր ծննդավայրը Վարագայ վանահայրութեան պաշտօնով, մամուլ և տառ և տպագրական պիտոյք հայթհայթած, և Վարագայ վանքը ժառանգաւորաց վարժարանի փոխարկելու ծրագիրով (ՐԱՖ.12-13):

2776. ԽՐԻՄԵԱՆ Ի ՄՈՒՇ

Խրիմեանի կեանքը անհատական շրջանակէն պաշտօնականի կանցնէր, թէպէտև պարզապէս գաւառական ասպարէզին վրայ և կեդրոնի շոհնդներէն հեռու, ուր սկսեր էին և տակաւին ընդարձակուած էին ամիրայական և ժողովրդական դասակարգերու պայքարները, և կը յառաջէին դէպի սահմանադրական գրաւոր գրութիւնը: Իր գործին օժանդակ Պաշտպանողական ընկերութիւն մը կազմած էր մայրաքաղաքի մէջ, Արծիւ Վասպուրականի պարբերականը Վարագայ նորահաստատ տպարանէն սկսաւ շարունակել, Վարագայ ժառանգաւորացը մինչև 30 գիշերօթիկներ ունէր, ուսմանց ծրագիրը հմտութիւններու և լեզուներու և գիտութիւններու ճաշակ կը պարունակէր, յուսալից երիտասարդներ թէ եկեղեցւոյ և թէ աշխարհի ասպարէզներուն կը պատրաստուէին (ՐԱՖ.13), և 1862 դեկտեմբեր 6-ին նոր վարդապետներ կը ձեռնադրուէին, Գրիգորիս Աղունեան, Յուսիկ Գալբաթեան, և Վրթանէս Տէվկանց Վարագայ շրջանաւարտներէն (63.ժՄՆ.21): Խրիմեան դիւրապատրաստ միջոցներ չունէր, երբոր այս արդիւնքները կարտադրէր: Անգամ մըն ալ Կ. Պոլիս այցելած էր Պաշտպանողականը քաջալերելու և գործի մղելու, 1860 նոյեմբեր 10-ին Կովկաս ալ այցելած էր և Մատթէոս կաթողիկոսի կոնդակով հանգանակութեան ձեռնարկած, լաւ գումար մըն ալ հաւաքած, մեծ համբաւ ալ վաստկած, այլ նախանձոտներու քսութեամբ պարտաւորուեցաւ հեռանալ և հաւաքած գումարն ալ իրեն տրամադրելի չմնաց (ՐԱՖ.16): Երբոր Վարագայ անդրանիկները կը ձեռնադրուէին Խրիմեանի ասպարէզը ընդարձակուած էր. Վի նոյն 1862 տարին քիչ առաջ, առանց Վարագայ վանահայրութիւնը թողլու, Տարոնոյ առաջնորդ և Գլակայ վանահայր նշանակուած էր, հետզհետէ Մուշ իրեն կեդրոն կը դառնար, և Վարագայ մամուլն ալ Ս. Նշանէն Ս. Կարապետ էր փոխադրած, և Արծուիկը սկսած էր լոյս տեսնալ 1863 փետրուար 18-էն (63.ժՄՆ.79), Մկրտիչ Խրիմեանի հոգեսուն աշակերտ Գարեգին Սրուանձտեանի խմբագրութեամբ: Բայց պէտք չէ կարծել թէ Խրիմեան գոնէ բարոյապէս խաղաղ միջավայրի մը մէջ կը գործէր. Վարագայ մէջ քուրդեր վարձուած էին իրեն դաւաճանելու (ՐԱՖ.14), Մշոյ մէջ ալ ուղղակի վարդապետներ եղան որ մայիս 22 չորեքշաբթի գիշերը հրապէններ արձակեցին վանքի առաջնորդարանի լուսամուտէն ներս, մինչ Խրիմեան ներսը նստած՝ վիճակին և վանքին համար կաշխատէր (63. ժՄՆ. 104): Անոնք մէկ անգամով ալ չհոգացան, այլ կէս գիշերէն մինչև լոյս հրացան պարպեցին (64. ժՄՆ. 134) և դաւաճան փորձեր կիրակի գիշեր Մայիս 27-ին ալ կրկնեցին (63. ժՄՆ. 104): Պատճառը Գլակեցւոց վայրոյթն էր Խրիմեան Վարագցիներ բերած էր միասին, որոնք Գլակայ վարդապետներուն աչքին փուշ էին, և կուպէին ամէնքը ցրուել: Պահ մը ուրախացած էին երբ 1862 նոյեմբերին Խրիմեան Վարապ գնաց վերոյիշեալ ձեռնադրութեան առթիւ, բայց երբ վայն վերադարձած տեսան ոչ միայն սպանութեան միջոցներու ձեռնարկեցին, այլև Մշոյ փոխկառավարչին մատնութեան գիր ալ տուին, և Խրիմեանը ամբաստանեցին իբր ժողովուրդը գրգռող, տրոց վճարումը արգիլող, ապստամբութեան յորդորող, և անհրաման գործերու ձեռնարկող (63. ժՄՆ. 95): Երբոր այդ եղելութիւնները Կ. Պոլիս լսուեցան Խրիմեանի կեանքը ապահովելու համար կառավարութեան դիմեցին. հակառակորդներէն Զաքարիա վարդապետ և ուրիշ չորս վարդապետներ և Վարդան Մամիկոնեան Կ. Պոլիս բերել տալու հրաման հանեցին, սակայն Խրիմեան խոհեմութիւն և

ապահովութիւն սեպեց ինքն հեռանալ, և անմիջապէս Մուշէ Կարին եկաւ, և Կարինէ Կ. Պոլիս ուղղուեցաւ, ուր հասաւ յուլիս 21-ին կիրակի օր Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին քարոյեց, ուրիշ եկեղեցիներ ալ հրաւիրուեցաւ, բայց իր գլխաւոր գործն եղաւ Կ. Պոլիս բերուելիք Գլակցիներուն բերուիլը արգիլել: Ինքն աղջառողջ հասած էր, դաւաճանները զսպելու միջոցները Մուշի մէջ գործած էր, Կ. Պոլսոյ պատրիարքարան ալ դեռ անկերպարան էր (63. ԺՄՆ. 149), զի սահմանադրութեան հաստատութիւնը ըստացուած էր, բայց սահմանադրական վարչութիւն կազմուած չէր (2735), և պէտք էր անոնց աւարտման սպասել օրինաւոր վճռատու մը ունենալու համար: Կ. Պոլսոյ մէջ տեղապահին կողմէ Ղալաթիոյ քարոյիչ նշանակուեցաւ, նոյեմբեր 17 ին տեղեկագիր ներկայեց վարչութեան և շրջաբերական ուղղեց Տարոնոյ ժողովուրդին յուսադիր ոճով (63. ԺՄՆ. 191): Միտքերու յուզումը մեծ էր, վասնզի Մշոյ կառավարութեան մատուցուած ամբաստանագիրը բարձրագոյն դրան և պատրիարքարանի հաղորդուէր էր, և պատրիարքարան ալ հարկ տեսած էր Խրիմեանը Կ. Պոլիս կոչել քննութեան համար, որ հրամանը ստացած էր Տրապիզոն, երբ արդէն ինքն գալու վրայ էր: Պատրիարքարանը նոյեմբեր 29-ին երեք եկեղեցական և երեք աշխարհական անդամներով յանձնաժողով մը կազմեց, գործը քննելու և Մշոյ խնդիրը պարզելու, որ խիստ ուշադրութեամբ քննեց այս խնդիրը, և Խրիմեանը անպարտ ներկայացուց 1864 յունուար 11-ի տեղեկագիրով, և պատրիարքարան ալ ըստ այնմ պատասխանեց կառավարութեան մանրամասնաբար բացատրելով անցուդարձերը: Խրիմեան ամբաստանութեանց հերքուելովը գոհ մնաց, և յօժարակամ հրաժարեցաւ առաջնորդական պաշտօնէ և քաղաքական հոգերէն, բաւականանալով Վարագայ և Գլակայ վանահայրական հոգևոր պաշտօնով, իսկ Մշոյ առաջնորդութիւնը յանձնուեցաւ Տէվկանց Երամիա վարդապետի Բաղէշի առաջնորդութիւն ալ վրան պահելով (64.ԺՄՆ.43):

2777. ԽՐԻՄԵԱՆԻ ԵՐԹՈՒԴԱՐՁԸ

Պատրիարքարանը այդ որոշմանց հետ պէտք տեսաւ որ Գլակի համար վարչական ներքին կանոնագիր մը պատրաստուի, և գործը յանձնեց Վանորէից խորհուրդին Խրիմեանի գործակցութեամբ և Արիստակէս Ղըլըճեան վարդապետի մասնակցութեամբ, որ Խրիմեանի հակառակորդ Գլակցիներու պարագլուխն էր ճանչցուած, յայտարարելով միանգամայն թէ վանքը Խրիմեանի յանձնուած է և հակառակորդ միաբաններ պիտի հեռացուին: Պատրիարքարան կը կարծէր, թէ այս որոշումները բաւական պիտի ըլլան կացութիւնը հանդարտեցնելու մինչ գրգռութեան շատցած ըլլալուն լուրը կը հասնէր: Ապրիլ 4ին Մուսնի վիրապի օրը Գլակայ միաբանութիւնը Վանեցուց քուելուն փառաւոր հանդէս կատարած էր. Աղուանեան Գրիգոր վարդապետ, որ Խրիմեանի փոխանորդութիւնը կը վարէր, մազապուր ապատած էր անոնց շնորհիւ, որոնք զինքն պարսպէն վանդակաւ իջեցուցին և ապրեցուցին: Գլակեցիք Կ. Պոլսոյ ջանքերուն դէմ սոնքալով կը պարծենային թէ իրենք շատ օտարներ հեռացուցած են. Յակոբ Պոլսեցի եպիսկոպոսը քուրդերու սպաննել տուած են, Կուրավցի Պետրոս եպիսկոպոսը աքսորած են, Զօրաբաբելեան Գրիգորիս եպիսկոպոսը գաղտագողի փախչելու ստիպած են, Եոզղատցի Մատթէոս վարդապետը հրացանով գիշերափախ ըրած են, Կեսարացի Կարապետ եպիսկոպոսը արտասուք թափելու հասուցած են, և Վանեցի Խրիմեանէն ալ ապատելու կերպը գիտեն (64.ԺՄՆ.134): Եւ իրաւ ալ երբոր հեռացած Խրիմեանի անձին վրայ այլ ևս բան մը չէին կրնար ընել, խնդիրներ յուզելով վերադարձը կարգիլէին, և մինչև իսկ ներսէն-դուրսէն խնդիր ալ ստեղծեցին, թէ Գլակայ վանահայրը պէտք է բնիկ միաբաներէն ըլլայ (64.ԺՄՆ.167): Իսկ Խրիմեան գործին երկարելէն ձանձրացած ընդարձակ տեղեկագիր մը կը ներկայէ վարչութեան օգոստոս 28-ին (64. ԺՄՆ. 171), զոր կը կնքէր յայտարարելով թէ իմ պաշտօնիս և հայրենասիրութեանս պարտուց

պահանջն այսչափ էր և ահա վճարեցի (64. ԺՄՆ. 177): Վարչութիւնը տեղեկագրին վրայ որոշեց, որ Խրիմեան պաշտօնին գլուխն ալ երթայ և Կ. Պոլիս եկած միաբաններն ալ ժողովէ տանի: Խրիմեան պագ թէ այդ որոշումը բան մը չգործելու հաւասար էր, ուստի սիրով և շնորհակալութեամբ մատոյց իր հրաժարականը Գլակայ վանահայրութենէն ալ, և Վարագ դառնալու պատրաստութիւններով սկսաւ վերադիլ: Զատիկը մօտեցաւ և դեռ Կ. Պոլիս կը մնար անորոշ կացութեամբ, մտադրեց Արմաշ երթալ և քանի մը օր հանգիստ ընել, երբ Եսայի պատրիարքի յատուկ շոգենաւով մեկնիլը իմացաւ (2739), և առիթէն օգտուեցաւ անգամ մըն ալ Սուրբ տեղեաց այցելութեամբ հոգևորապէս մխիթարուելու (65. ԺՄՆ. 64): Երկար չմնաց Երուսաղէմ, և ապրիլ 19-ին Աշխարհամատրան երկուշաբթին մեկնեցաւ (65. ՅԿԲ. 91) և շուտով Կ. Պոլիս դարձաւ, և որոնք որ կը կարծէին թէ գործելէ ձեռննթափ է, յուսախաբ մնացին (65. ԺՄՆ. 77): Վարչութիւնն ալ ամէն ստիպում գործածեց և ամէն արտօնութիւն տուաւ Խրիմեանի, որչափ ինչ պէտք էր ապատօրէն գործելու Գլակայ մէջ, ուսկից հեռացուած էին խաղաղութիւնը վրդովող միաբաններ: Վերջապէս Խրիմեան համոզուեցաւ և 1865 յունիս 2 չորեքշաբթի օր Կ. Պոլիսէ մեկնեցաւ, ուր կը մնար երկու տարիէ ի վեր (2776) անորոշ վիճակի մէջ առաջնորդութիւնը վանահայրութենէն բաժնուած էր (64.ԺՄՆ.159), և այս պիտի դիւրացնէր Խրիմեանի բարեկարգիչ ձեռնարկը: Տրապիպոն հասնելուն վարժարանը կայցելէ, երկու օր ալ Կարին կը մնայ, և երբ Մուշ կը հասնի արդէն պրոյցը իրմէ առաջ հասած կը գտնէ, թէ Խրիմեան Պոլսէն փախած կու գայ. ոչ հրովարտակ ունի և ոչ կոնդակ և ոչ հրամանագիր: Ետէն ալ կը հասնին հեռացուած վարդապետներ, Յովհաննէս Բագրատունի և Արիստակէս Ղըլըձեան իրենց գոյքերը ժողովելու և վերցնելու պատճառանքով, կը միանան վանքին մէջ գտնուող հակառակորդներուն, և բուն պօրութեամբ վԽրիմեան Ս. Կարապետէն դուրս կը հանեն բոլոր իր գործակիցներով, և Խրիմեան կը պարտաւորուի Մշոյ քաղաքը ապաւինիլ: Այնտեղ իրեն կը հասցնեն վանահայրութեան կոնդակը, որ օգոստոսի 5-ին Կարին հասած էր ետէն, մինչ պէտք էր վինքը պաշտօնագիրներով պօրացած ձամբայ հանել, և հակառակորդներուն ետէն երթալու շնորհը չշնորհել: Խրիմեան չէր կրնար օգտուիլ տարածամ հասնող կոնդակէն, ուստի Մուշէն Կարին կանցնի (65.ՄԱՍ.707), և հոն կը սպասէ կեդրոնին որոշումներուն, որոնք սակայն կը յապաղին, Վի Կ. Պոլիս ալ վարչական տագնապ կար և ժողովականներ կը փոխուէին, ուստի սերպեմբեր 1ին նոր տեղեկագիր մը կը յղէ Կ. Պոլիս (65.ԺՄՆ.150): Այդ գրութենէն կը տեղեկանանք թէ Խրիմեանի հակառակորդներուն նեցուկ կանգնած էր Կարնոյ աւագերէց Յակոբ քահանան (65. ԺՄՆ. 128), որ ամէն տեսակ պրպարտութիւններով լի աղերսագիր մատուցած էր Կարնոյ կուսակալին (65. ԺՄՆ. 166-167), որուն սահմանին մէջ կը գտնուէր Մուշն ալ այն ատեն, և ամէն միջոցներ կը գործէր Խրիմեանի հետ մրցելու և վայն իսպառ այն կողմերէն հեռացնելու (65. ԺՄՆ. 173): Գլակ գտնուող հակառակորդ միաբաններ կեդրոնէ Խրիմեանի փոխանորդ Մխիթար վարդապետն ալ կը մերժեն, համարձակ յայտարարելով որ պատրիարքարանի հրամանը և իշխանութիւնը ոչ կը ձանձնանք և ոչ կընդունինք, և կը յաջողին ալ իրենց փասքուս պրպարտութիւններով Մխիթարն ալ վապթիյէով մը Ս. Կարապետի վանքէն դուրս հանել (65. ԺՄՆ. 188), և միայն Կարին տանել տալ (66. ԺՄՆ. 11): Յակոբ քահանային գործը կեդրոնն ալ վերադեցուց և որոշուեցաւ վայն Բասենի Ս. Աստուածածնայ վանքը ապաշխարութեան յղել, չորս վարդապետներն ալ Կ. Պոլիս բերել տալ և վատել (66. ԺՄՆ. 17-18), և յատուկ պաշտօնեայ մըն ալ ձամբայ հանուեցաւ որ Խրիմեանը վանք վերադարձնէ և վարդապետները Կ. Պոլիս բերէ (66. ԺՄՆ. 36). բայց Խրիմեան կանխած էր Կ. Պոլիս գալ, ուր հասաւ 1866 մարտ 7-ին, իսկ Կ. Պոլիսէ մեկնող պաշտօնեայն հիւանդանալով Տրապիպոն էր մնացած (66. ԺՄՆ. 48):

2778. ԽՐԻՄԵԱՆ ԿՐԿԻՆ Ի ՄՈՒՇ

Խրիմեան Կ. Պոլիս կը մնար, Մուշի խնդիրն ալ կը շարունակէր, Յակոբ քահանայ և ապստամբ վարդապետներ իրենց գիրքը կը պահէին, և որչափ ալ ուզէնք կեդրոնի դանդաղութիւնը մեղադրել, պէտք չէ նաև մոռնանք որ Ամենայն Հայոց Մայրաթոռին և Աղթամարի և Սիսի աթոռներուն պարապութիւններէն յառաջ եկած կնճիռներն ալ կեդրոնին վրայ կը ծանրանային և վայն կը վբաղեցնէին (2751, 2757, 2768): Խրիմեան նոր տեղեկագիր մըն ալ տուած էր ապրիլի մէջ և յայտարարած էր թէ Մշոյ վանքը 28-30 վարդապետի պէտք չունի (66. ԺՄՆ. 74), ինչ որ կնճիռը լուծելու կերպ մըն էր, բայց հապիւ թէ յունիս 3-ին նախկին որոշումները կը կրկնուէին, Խրիմեանը վերադարձնել և վարդապետները բերել Սոյն որոշումին գործադրութիւնը կը յանձնուէր Կարնոյ առաջնորդ Յարութիւն վեհապետական եպիսկոպոսի և Կարնոյ մեծամեծներէն Փաստրմաճեան Խաչատուրի (66. ԺՄՆ. 94), և Խրիմեան ստիպուած Կ. Պոլսոյ մէջ կը մնար և առօրեայ գործերով ժամանակ կանցնէր, 1866 յուլիս 12-ին կաթողիկոսական ընտրութեան համար հաւաքուած համագումարին առաջարկներ կը ներկայէր (66. ԺՄՆ. 115), և 22-ին երեսփոխութեան մէջ քերթողական ոճով ատենաբանութիւն կարտասանէր կաթողիկոսական ընտրելիին հանգամանաց վրայ, և Մարգարիտ արքայութեան երկնից գրքոյկը հրապարակ կը հանէր, որ Լերան քարոյին ոգևորեալ մեկնութիւնն է աւետարանի հոգւոյ և աշխարհի ընթացքին հակընդդէմ բացատրութիւններով (66. ԺՄՆ. 126-128): Իսկ Վեհապետեան յուլիս 9-ին Գլակ կը հասնէր փոխանակ Խաչատուր Փաստրմաճեանի անոր ներկայացուցիչ Յովհաննէս Պապայեանի ընկերակցութեամբ, 14-ին ժողով կը գումարէր և պատրիարքարանի հրամանները կը հրատարակէր: Խրիմեանի անունը ժխորի պատճառ կըլլար: Յակոբ և Եսայի ու Կարապետ վարդապետներ բուռն միջոցներու և յանդուգն յայտարարութեանց կը դիմէին, Վեհապետեան սպառնալէօք և մեկնելու պատրաստութեամբ ժխորը կը վսպէր, և վերջապէս 15-ին ընդդիմադիրները հրահանգին պայմանները կը ստորագրէին (66. ԺՄՆ. 143), անշուշտ ակամայ կերպով, ուստի Վեհապետեան իր տեղեկագիրին մէջ կառաջարկէր կամ ամբողջ Գլակայ միաբանութիւնը փոխել, կամ թէ վեց պարագլուխները, հեռացնել, թէ ոչ Խրիմեանի օձիքը թողուլ, զի այդ պայմաններուն մէջ վայն վերադարձնել գերեզմանի մէջ թաղել պիտի ըլլար (66. ԺՄՆ. 167), զի քուրդն ալ միաբաններու ձեռնտուութեամբ գործին տիրացէր էր, և Խրիմեանը սպաննելու իսկ պատրաստ էր (66. ԺՄՆ. 172): Կեդրոնը վերջապէս պատուիրակին ցուցուցածներէն վեց վարդապետները արքորելու որոշումը կու տայ, և կայսերական կառավարութեան հրամանագիրն ալ հանել տալով հոկտեմբեր 10-ին Կարնոյ առաջնորդին կը յղէ գործադրելու համար (66. ԺՄՆ. 175): Գործը լրացնելու համար հարկ կըլլար Մշոյ առաջնորդութեան ալ ձև մը տալ, ուստի Տէվկանց Երեմիա վարդապետի հրաժարականը կընդունուէր, Երուսաղէմի միաբան Տէր Սահակեան Երեմիա վարդապետ կընտրուէր, որ կը հրաժարէր, և Վանեցի Մելիքեան Պօղոս վարդապետ կընտրուէր Խրիմեանի առաջարկութեամբ, բայց նա կը թողուէր, և վերջապէս Մշեցի Միսիթար Մահապալեան վարդապետ կը նշանակուէր իբր Խրիմեանի համամիտ, թէև աւելի կեղծեօք քան իրօք, բայց դժուարութեանց և հակառակութեանց առջև չխոնարհող մէկ մը: Վեհապետեան հապիւ թէ հրամանագիրը կը ստանար, Կարնոյ կուսակալին հետ պէտք եղած կերպերը կը կարգադրէր, և յանկարծ Գլակայ մէջ կը ձերբակալուէին և կը բանտարկուէին վեց խոովայոյզ վարդապետները, Արիստակէս Ղըլճեան Ալէքսանդրապոլցի, Խորէն Շահնապարեանի Զիարէթցի, Եսայի Ղևոնդեան Լիպեցի, Յակոբ Գրիգորեան Արճէշցի, Գաբրիէլ Խաչատուրեան Չնքուշցի և Կարապետ Եսայեան Աւրանցի, և ձիերու վրայ ոտնին շղթայուած և բաւական թուով ուստիկան պինուորաց հսկողութեամբ կուղևորին դէպի Տիարպէթիր, և անկէ, Սևերեկի, Ուրֆայի, Հալէպի, Պէլէնի և Յոպպէի ճամբով 1866

դեկտեմբեր 14-ին կը հասնին Երուսաղէմ (67. ԺՄՆ. 60), և Եսայի պատրիարքի միջնորդութեամբ կը յանձնուին Ս. Յակոբեանց վանքը (67. ՍԻՈ 14): Չենք կարծեր որ անհանդարտ խմբակին ներկայութիւնը Երուսաղէմի միաբանութեան ալ հաճոյական եղած ըլլայ. թէպէտ մանրամասնութիւններ չունինք անոնց վարած կեանքին վրայ, միայն 1867 տարուոյ սկիզբները կատարուած Ժառանգաւորաց ուսումնարանի քննութեանց մէջ իբրև քննիչ նշանակուած կը գտնենք Եսայի և Խորէն վարդապետները (67. ՍԻՈ. 32): Ինչ ալ ըլլայ կեանքնին, երկար ատեն զմնացին, զի 1867 մայիս 23-ին մօտ օրեր Կ. Պոլիս վերադարձած ըլլալնին կը կարդանք (67. ԺՄՆ. 96), որ է կսել թէ շուրջ չորս ամիս միայն Երուսաղէմի մէջ ատեն անցուցած կըլլան: Խրիմեանն ալ անշուշտ անոնց աքսորէ դառնալուն համամիտ մանաւանդ թէ ջանադիր եղած կըլլայ, համաձայն իր դիւրահաւան և զիջողական բնաւորութեան և տրուած խրատը ազդու եղած ենթադրելով: Բայց վեցերը հապիւ թէ Կ. Պոլիս կը դառնան տեղեկութեան ձևով ծպտեալ բողոք կը հրատարակեն իրենց կարծեցեալ անմեղութիւնը պաշտպանելու և ոտնակոխ եղած արդարութեան հատուցում պահանջելու (67. ԺՄՆ. 96): Բայց երկար չտևեց այս ընթացքնին, զի կերևայ թէ խելացի անձերու առաջ ծունկ չոքած ըլլալով բերաննին փոխեցին, և սկսան խոստովանիլ թէ վանական կարգ ու կանոն, վանականաց ընթացք և յարմարութիւն Ս. Երուսաղէմի մէջ տեսնելով համոզուեր են, որ իրենց ընթացքը ուղիղ չէ, և Խրիմեանի ընթացքը ուղիղ է, ուստի անցեալին վրայ ներում հայցելով, Խրիմեանի հաստատած և հաստատելիք կանոնաց հնազանդիլ կը խոստանան: Այսչափը կը բաւէ որ կեդրոնական վարչութիւն ձեռք առնէ իրեն սովորական թուլութիւնը, դիւրահաւանութիւնը, երկչոտութիւնը և գթալիր ակնկալութիւնը, Խրիմեանն ալ նոյն ուղղութեամբ վարուի, ներում շնորհուի, և Խրիմեան անոնց հետ միատեղ Գլակ դառնայ (67. ԺՄՆ. 1259) 1867 մայիսին: Սոյն առթիւ վարչութիւնը Խրիմեանի եպիսկոպոսութեան վկայական ալ տուաւ, որ տեղը երթալէն քանի մը ամիս ետքը Էջմիածին երթայ ձեռնադրութեան համար: Նոյն վկայագիրը տրուեցաւ Երեմիա Տէվկանց վարդապետին ալ, որ Խարբերդի առաջնորդ որոշուած էր և միասին պիտի մեկնէր (67. ՄԱՕ. 34):

2779. ԽՐԻՄԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԶ

Խրիմեան այս անգամ կը յուսար Գլակայ վանքին մէջ քիչ մը հանդարտութիւն գտնալ և կանոնաւոր պարշտօնավարել. Գլակայ վանահայրութիւնը ստանձնելէն ի վեր (2776) հինգ տարի շարունակ վրդովմանց և շփոթութեանց մէջ անցուցած էր, և արդիւնաւորութեան առիթ իսկ ունեցած չէր: Հասնելէն քիչ ետքը հոկտեմբեր 5 թւականով շրջաբերական կոնդակ մըն ալ հանած էր, որով յատկապէս Կ. Պոլսոյ, Ադրիանուպոլսոյ, Ջմիւռնիոյ, Նիկոմիդիոյ, Պրուսայի, Ռոտտսթոյի և Պանտրմայի գաղթական Հայոց ձենտութիւնը կը խնդրէր Ս. Կարապետի ցանկալի վանքը վերստին պայծառացնելու: Սակայն շուտով իր վիճակը անտանելի դարձաւ, զի ըմբոստ խումբը նորէն զօրացաւ, մինչև իսկ զայն չէին ներս թողնում, և նա ստիպուած թափառում էր (ՀՈՎ.21): Եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ալ բաւական ուշացած էր, բայց կարծելով թէ բարձր աստիճանների վրայ կանգնելով աւելի օգուտ կարող է բերել, 1868 աշնան Էջմիածին գնաց և հոկտեմբեր 20-ին Խաչի վեցերորդ կիրակին ձեռնադրուեցաւ Գէորգ կաթողիկոսէ (ՐԱՖ.19), Տէվկանց կամ Տէր-Սարգսեան Երեմիա վարդապետի հետ (68.ՄԱՍ.265), բայց դարձեալ անկարելի էր իրեն Գլակ մնալ, զի իր հաւատարիմները հալածուելով և ցրուել էին, և հիմնած հիմնարկութիւնները քանդել և ոչնչացել էին: Օրըստօրէ հակառակութիւնը կաճէր, որոնց Խրիմեան երկայնամտութեամբ կը դիմադրէր. բայց ճիշդ այն կէտին երբ պատրաստութիւններ կը կատարուէին Խրիմեանը վերջնապէս Գլակէ դուրս նետելու (ՀՈՎ.21), անոր Կ. Պոլսոյ պատրիարք

ընտրուելու լուրը կը հասնէր (2774). դաւաճան խորհուրդներ կը դադարէին, շողքորթ ցոյցեր կը սկսին, բայց ոչ առանց քողարկեալ գոհունակութեան մը որ այսպէս կամ այնպէս վանքը Վանեցիներէ և Վարագցիներէ պիտի ապատէր, և ըմբոստ խումբը իր նպատակին պիտի հասնէր և Գլակը Գլակցիներուն պիտի մնար: Կը պատմուի որ Խրիմեանի մեկնելէն ետքը, մինչև իսկ Վանայ կատուներ սպանած են: Բայց ի՞նչ էր այդ ընտրութեան հիմը և ի՞նչ կէտեր կը յորդորէին 1869 սեպտեմբեր 4-ի Ընդհանուր ժողովը իր բուէները ամփոփել Խրիմեանի անունին վրայ: Խրիմեանի եպիսկոպոսութեան դեռ տարին լրացած չէր, թէպէտ ինքը 49 տարեկան էր արդէն, արդիւնաւորութեան բախտն ալ ունեցած չէր թէպէտ գործունեայ ճանչցուած էր, Վարագայ վարժարանին և տպարանին գործն ալ արդէն հինգած էր և Մշոյ խնդիրներուն մէջ մոռցուած: Գլակայ եօթնամեայ պաշտօնավարութիւնը շփոթներով էր անցած և բնաւ արդիւնք չէր ունեցած, այնպէս որ չկար շոշափելի փաստ մը իր կարողութեան և իր ընդունակութեան: Սակայն ոչ միշտ իրականացած արդիւնքներն են, որ ընտրութեանց մէջ կը փնտռուին, և աւելի մեծ դեր կը խաղան ակնկալութիւնը և պարագայից խոստումը: Խրիմեան, եպական իր տեսակին մէջ, առաջնական դէմք մը եղած էր: Մայրաքաղաքին մէջ բարեկարգութեան և վարգացման հոգին շատոնց արթնացած էր, ժողովրդականութեան և սահմանադրականութեան ձգտումը բաւական ասպարէզ առած էր, սակայն ժողովրդական ըսուած խումբը մայրաքաղաքի միջակ դասակարգը վերին դասակարգին իրաւունքներուն մասնակից ընելէ անդին չէր անցներ, այն իրաւունքին համապատասխան պարտքի և տուրքի գաղափարը չյարակցելով: Բայց բուն ժողովուրդը, ազգին ընդհանրութիւնը, գաւառական տարրը, անոր կացութիւնը, ցաւալի պարագաները, դարմանի եղանակները, ապագային պէտքերը, նպատակայարմար միջոցները, մայրաքաղաքացւոց միտքէն հեռու էին, գաւառի արթուն և ուշիմ, եռանդոտ և անշահասէր վաւակը պէտք էր այդ կէտերը երևան հանելու, ծանօթացնելու և հետապնդելու համար: Այսպիսի անձ մը ճանչցուած էր Խրիմեանը: Անոր քսան տարիներէ ի վեր ըրած քարոզութիւնները, թափած ճիգերը, աննկուն յարատեւութիւնը, բարոյական արիութիւնը մայրաքաղաքացւոց վրայ ալ ազդած էին, գաւառներով և գաւառացիներու կեանքով, աղէտներով և դարմաններով, վանքերով և վարժարաններով սկսած էին շահագրգռուիլ. ժամանակին լրագիրները լեցուն էին գաւառական թղթակցութիւններով, անցուդարձից պատմութիւններով և օգնութեան խնդրանքներով: Մայրաքաղաքացին, որ պատրիարքական աթոռին բացարձակ տէրն էր, պէտք վագաց այդ կէտերու վրայ դարձնել իր հայեացքը, և այդ կէտերուն համապատասխանող անձ մը դնել ազգին գլուխը, և երբոր այդ տեսութիւնը Վօրացաւ, ընտրութիւնը դժուար չէր. ըսենք համարձակ, կանխաւ որոշուած էր, Խրիմեանէ կատ երկրորդ մը չկար այդ դիտումին համապատասխանող: Գրիգոր Օտեանի ձայնը ուրիշ բանի չծառայեց, բայց թէ իսկութիւնը բացատրելու և թաքուն վագցումները արտայայտելու, և բուէները շուտով միացան և ամփոփուեցան այն անձին վրայ, որ անձնաւորութիւնն էր այդ նոր գաղափարներուն, և Խրիմեան անհակառակ ընտրուեցաւ: Բայց թէ Խրիմեան իսկապէս այդ պէտքը գոհացնող մը կրնա՞ր ըլլալ, կամ թէ վգալ ու խորհիլ, խօսիլ և գործել ներքնապէս և հաստատապէս միացած ձիրքե՞ր են, այժմէն խնդիրի նիւթ ընել չենք ուզեր, և մեր տեսութիւն կը վերապահենք արտայայտելու եղելութիւնները պատմելնէս ետքը:

2780. ԿԱԹՈՒԼԻԿ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

Երբոր Հայ եկեղեցւոյ կաթողիկոսական աթոռներուն խնդիրները կը յուզուէին, աթոռի խնդիր մըն ալ հայ կաթողիկներու մէջ ծագած էր, և վայն ալ ամփոփ կերպով պատմել հարկ կը սեպենք, զի հայութեան կեդրոնէն անջատուած հատուածներուն գործերն ալ մեր ընթերցողներուն հետաքրքրութեան առարկայ եղած են միշտ: Շփոթ վիճակի մը մէջ թողուցինք նախընթաց

դէպքերը Կ. Պոլսոյ ազգապետական պատրիարքութիւնը իր դիրքին ու պաշտօնութիւնը կորուսած, Հասունեան իր պարզ հոգևորական իշխանութիւնը ազգապետականի փոխելու հետամուտ, Մխիթարեաններ հակառակութեանց դիմադրելու համար ստորնութեանց յանձնառու, և կաթողիկոսութիւնին պահելու համար հայութեան թշնամանող դարձած, Լիբանան նստող և Կիլիկիոյ անուն կրող պապական կաթողիկոսութիւնը հակառակութեանց երեսէն յոգնած, Անտոնեաններ դժուարութեանց չհանդիպելու են իրենց միաբանութեան կացութիւնը ամրացնելու և վարճացնելու համար, խոհական չափաւորութեամբ ծայրաեղ գործերէ վզուշացող, վերջապէս բազմաթիւ կազմական խնդիրներ սակաւաթիւ հասարակութեան մը մէջ (2685-2687), որոնց ելք և լուծում մը տալ հարկ էր տանելի վիճակ մը պատրաստելու համար: Այդ գաղափարին իրականացման առաջին շարժումը տուաւ Գրիգոր Պետրոս Ը. կաթողիկոսը (2686), նա որ թէ Անտոնեանց հետ և թէ Հասունեանի հետ երկար պայքարներ մղած էր, բայց իր վերջին օրերուն մէջ վզաց թէ աւելի օգտակար գործ կատարած պիտի ըլլար եթէ հաշտաբար միջոցներով գործէր: Առաջին քայլը առաւ 1861-ին և Անտոնեանց հետ հաշտութիւն կնքեց՝ յետս կոչելով Փրօփականտային առջև բացած դատը, և Անտոնեանները թողլով իրենց կայուն վիճակին մէջ: Իսկ անոնք իր կաթողիկոսական աթոռին կապելու համար հաստատուն թեմակալութիւն տուաւ միաբանութեան, և Ասորիքը անոր վիճակ նշանակեց Անտիոքի անունով, որուն մէջ միայն սակաւաթիւ հոռմէականներ կը գտնուէին Քէսապ և Պէյլան գիւղերուն մէջ: Այլ որովհետև Անտոնեանց արբահայրութիւնը եռամեայ փոփոխական էր, և յարմար չէր ամէն ընտրեալին եպիսկոպոսական ձեռնադրութիւն տալ, ուստի մինչև որ միաբանական կանոնին այդ կէտը փոխուէր, թեմակալութեան պաշտօնավարութիւնը յանձնեցաւ ժամանակաւոր արբահօր դիտապետ պատուանունով, և առաջինը եղաւ Կղեմէս Միքայէլեան վարդապետ, նոյն 1861 տարին ընտրուած: Այդ ձևը պահուեցաւ մինչև եռամեայի լրումը, և 1864-ին միաբանական ժողովը արբահայրական պաշտօնին ցկեանս տևական ըլլալու գրութիւնը ընդունեց, և այդ հիման վրայ նոյն ժողովին մէջ ընտրուած Սուքիաս Գապանձեան նոր արբահայրը, արքեպիսկոպոս Անտիոքայ անունով թեմակալ եպիսկոպոսութեան ձեռնադրութիւն ստացաւ նոյեմբերի մէջ, իրեն օծակից ունենալով Գասպարեան Բարսեղ արքեպիսկոպոսը, Կիպրոսի անուանական տիտղոսով, որ Հռոմի կաթողիկոսական փոխանորդն էր, և Անտոնեանց դէմ խնդիրները և դատերը վարած 1861-էն առաջ: Գապանձեան շատ երկար չմնաց Լիբանանի վանքը ուր էր արբայարանը, այլ առձեռն գործերէ առիթ առնելով 1865-ի ամառուան սկիզբները Կ. Պոլիս դարձաւ, և այլևս եղելութեանց և միջադէպներու հետևանք այնտեղ կեդրոնացան Անտոնեանց գործերը, թէպէտ արբայարանը միշտ Լիբանանի Պէյթխաշպոյի վանքը նկատուեցաւ, ուր կը նստէր միաբանութեան աթոռակալը կամ արբայական փոխանորդ Շիշմանեան Պետրոս վարդապետը:

2781. ՀԱՍՈՒՆԵԱՆԻ ԶԳՏՈՒՄՆԵՐ

Ըսինք արդէն թէ Կակոնեան Նիկողայոս ազգապետ պատրիարքին մահուանէ ետքը Հասունեանի մեծ ջանքն եղած էր յաջորդ ընտրութիւնը արգիլել, վարչական ժողովի կազմը լուծել, աղքատանոցի և հիւանդանոցի մատակարարութիւնը իր և իրեններուն ձեռքը անցունել, մէկ խօսքով ամէն կազմակերպութիւն և իրաւասութիւն իր ափին մէջ առնուլ և բացարձակ տիրապետել, և իր սիրած և հետևած լատինամիտ ուղղութիւնը տարածել (2685): Հասարակութիւնն ալ անկերպարան վիճակէն ձանձրացած կառավարութեան դիմեց որ արտօնուի վարչական ժողով մը կազմել, և անոր ձեռքով ազգապետ պատրիարքի ընտրութեան յանգիլ: Պետական հրամանագիրը 1863 սեպտեմբեր 2-ին ստացուեցաւ Հասունեանի ուղղուած (ՀԱՍ. 394), որ յակամայից բռնադատուեցաւ գործադրել, և սեպտեմբեր 12-ին պատրաստական, և 26-ին կաթողիկ

ազգային ժողովը գումարեց, և տասն անդամով ժողով մը ընտրուեցաւ: Շատեր ազգայնական խումբէն էին, Պետան Աղաշրաքեան, Գասպար Սինապեան, Յովհաննէս Չամիշեան, Յակոբ Տավութեան, Յակոբ Կէօշէեան, Յովհաննէս Սաքըլեան, և Պետրոս Կիւլէլեան, և մնացեալք Հասունեան խումբէն, Անտոն Մսրըլեան, Բիւկանդ Թընկըրեան և Բերովբէ Շէրպէթեան: Հոկտեմբեր 23-ին պետական հաստատութիւնն ալ եկաւ (ՀԱՍ. 396), բայց այնչափ եղան Հասունի դարձուածները որ ժողովը առանց արդիւնքի մը յանգելու 1864 ամառուան մէջ հրաժարականը ներկայեց կառավարութեան և ցրուեցաւ, և Հասունի փափաքը լրացաւ (ՀԱՍ. 418): Յրուելուն առիթ տուաւ աղքատանոցն հոգեբարձութեան խնդիրը, որ ազգայնականաց ձեռքը մնացած պօրութիւնն էր, բայց Հասուն անոնք խախտելու համար նոյն իսկ հիմնարկութիւնը ձեռնարկեց ջնջել, և Թաքսիմի Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյ շինութեան նպատակով աղքատանոցն ու անոր գետինը գրաւեց, հապիւ անկիւն մը թողլով հոգեբարձութեան, որ 1863 նոյեմբեր 15-ին իր հաշիւները հրատարակեց և վերջնապէս գործէ քաշուեցաւ և ձեռնթափ եղաւ (ՀԱՍ. 411): Հասուն գոհ չմնաց միայն մայրաքաղաքին մէջ և իր արքեպիսկոպոսական սահմանին մէջ ամէն բան ձեռքն անցունել, փափաքեցաւ իր ազդեցութիւնը տարածել հայ կաթողիկներու միւս մասին վրայ ալ, որ Լիբանանի կաթողիկոսութեան ներքև էր: Նախ ազգային կրթութեան ժողով մը փորձեց հիմնել 1860 օգոստոս 19-ին, որ կարենայ դպրոցներու և դաստիարակութեան պատրուակով կաթողիկոսութեան վիճակաց գործերուն միջամտել: Երբ այդ գործը ձախողեցաւ (ՀԱՍ. 389--392) մտածեց նոյն վիճակներուն կողմէ դիմումներ ստանալ և գործերնին կարգադրել, և այն կողմի եկեղեցականներէն բարեկամներ կազմել, որ հետզհետէ ազդեցութիւն տարածէ և իրաւասութիւն ընդարձակէ (ՀԱՍ. 427-430): Գրիգոր կաթողիկոս զգաց դիտումն ու նպատակը, և Ֆուտա փաշայի Պէյրութ գտնուելէն (2701) օգտուեցաւ Կ. Պոլսոյ մէջ իրեն փոխանորդ մը հաստատել, և այս պաշտօնին կոչեց Եղիա Նահապետեան վարդապետը, Կակոնեան պատրիարքին փոխանորդը, արդէն իր ճարտարութեամբ և յաջողակութեամբ ծանօթ Անտոնեան միաբանը (2666): Իսկ Հասուն սկսաւ Հռոմը համոզել երկու աթոռները միացնելու գաղափարին, որով հնար պիտի ըլլար Լիբանանի աթոռին մէջ աւանդաբար մնացած արտօնութիւններն ու իրաւունքները ջնջել: Հռոմ ալ փարեցաւ այդ գաղափարին և այդ կէտին մէջ ալ իր պաշտպանութիւնը առատացուց Հասունեանին: Հրամայեց Նահապետեանը փոխադրութեանէ հանել, և օգնութիւն և պաշտպանութիւն գտնելու համար Փարիզ գացող և Նաբոլեոն Գ. կայսրէն լաւ ընդունելութիւն գտնող Աղէքսանդրեան Միքայէլ եպիսկոպոսը յետո կոչել (ՀԱՍ. 431-433), այնպէս որ Գրիգոր կաթողիկոս ստիպուեցաւ աթոռներու միաւորութեան գաղափարին համակերպիլ, որուն մէջ իրեն առժամեայ բարձրագոյն գիրք մը կը խոստացուէր, աթոռը առաջին անգամ իրեն յանձնելով և Հասունը իբր փոխանորդ և յաջորդ նշանակելով: Արդէն Գրիգոր տարիքը առած և տկարացած անձ մըն էր, որ երկար ապրելու հաւանականութիւն չունէր, իր կենդանութեան ալ գործերը հարկաւ Հասունի ձեռքով պիտի կառավարուէին: Բանակցութեանց պատգամաւոր նշանակուեցան Ալէքսանդրեան եպիսկոպոսը և Նահապետեան վարդապետը, սակայն երկուքն ալ գոհ գացին 1865-ին մայրաքաղաքին մէջ ճարակող հնտախտին, և իրենց տեղ նշանակուեցան Ներսէս Հալէպլեան Սեբաստիոյ և Սուբիաս Գազանձեան Անտիոքայ եպիսկոպոսները, բայց ասոնք հապիւ թէ բանակցութեանց սկսան Գրիգոր Պետրոս Ը. Աստուածատուրեան վախճանեցաւ 1865 դեկտեմբեր 28-ին (ՀԱՍ. 438) գործողութեանց կերպարանը յեղաշրջուեցաւ և աթոռին պարապութիւնը ասպարէզ բացաւ ապատօրէն գործելու և համարձակ նպատակին դիմելու:

Լիբանանի կամ Զմմառի կաթոլիկ կաթողիկոսարանին միաբանութիւնը շուտով հաւաքուեցաւ և գաղտնի քուէով տեղապահ ընտրեց Սերովբէ Դաւթեան վարդապետը, ինչ որ ծանր եկաւ Գասպարեան Բարսեղ արքեպիսկոպոսին, որ աթոռին մէջ գտնուող միակ եպիսկոպոսն էր և տեղապահութիւնը իրեն իրաւունքը կըմբռնէր: Այս ներքին գժտութիւնը և նոր ընտրութեան համար բացակայ եպիսկոպոսներու սպասելու հարկը, յաջորդի ընտրութիւնը յապաղեցին, և 1866 փետրուար 5-ին Յովսէփ Վալերկա Երուսաղէմի Լատին պատրիարքը իբրև այդ գործին համար նշանակուած յատուկ պապական նուիրակ եպիսկոպոսներու յայտարարեց ու ազդարարեց թէ ընտրութիւնը վետաձգուած է պապին հրամանով. մարտ 7-ին տեղապահի ընտրութեան մասին տեղեկութիւններ հարցուց, և մայիս 15-ին Դաւթեանի ընտրութիւնը ջնջելով, Մելքոն Նապարեան Մամպուտի կամ Մէրտինի եպիսկոպոսը տեղապահ հռչակեց (ՀԱՍ.439): Միև կողմէն կաթոլիկ աթոռին եպիսկոպոսները կը հաւաքուին Զմմառ, Յուլիս 14-ին ընտրողական գումարումը կարտօնուի, բայց միանգամայն Հասունն ընտրելու ճնշումներ ձեռք կառնուին, ընդդիմադրողները կակղցնելու միջոցներ կը գործադրուին, և վերջապէս 1866 սեպտեմբերի 2-ին ընտրական նիստը տեղի կունենայ ութը եպիսկոպոսներու ներկայութեամբ եւ նախագահութեամբ, Վալերկայի, որ բացարձակ իշխանութեամբ երկու եպիսկոպոսներ Յովհաննէս Հաճեանն ու Ղևոնդ Խորխոռունին և եպիսկոպոսական ձեռնադրութիւն չունեցողները ընտրութենէ կը պրկէ, և Հասունը ընտրելու բարձրագոյն կամքը կը յայտնէ, և ութը եպիսկոպոսներ հպատակելի պատ եղանակ չեն հաներ, և 13-ին Պիոս Թ. պապին ուղղուած ընտրողական ընծայագիրը կը ստորագրեն, որով աթոռներու միաւորութիւնն ալ ընդունելնին կը յայտարարեն: Աթոռին եպիսկոպոսներէն իններորդը կը պակսէր, Սուքիաս Գապանձեանը, զոր Վալերկա աշխատած է հեռու պահել, որպէսզի ընդդիմութեան գլուխ չդառնայ, և երկչոտ ընդդիմադիրները չբաջալերէ: Իսկ Արսէն Անճարակեան, Եւդոկիոյ նախորդ եպիսկոպոսը, աթոռի եպիսկոպոսներու կարգէն հրաժարած կը նկատուէր և Հռոմ կը մնար: Ստորագրող եպիսկոպոսները կարծեցին կաթողիկոսական աթոռին ապագան և միաւորութեան առթիւ իրաւանց ամբողջութիւնը ապահոված ըլլալ՝ ընծայագիրին մէջ յիշելով թէ Հասունը կընտրեն իբրև յաջող իրաւանց և առանձնաշնորհութեանց նորին հանգուցելոյ պատրիարքին իւրեանց (ՀԱՍ. 438-446), իբր թէ այդ խօսքը բաւական պիտի ըլլար Հռոմը կասեցնել իր հետևած ուղղութեան մէջ: Երբ կը սպասէին անմիջապէս Հռոմի հաստատութեան հասնելուն, հրաւէր կը ստանան Հռոմ երթալ, ուր Պետրոս առաքելոյ նահատակութեան ութևտասներորդ հարիւրամեակը տօնուէր առաջիկայ 1867 յունիս 17/29-ին, և բաւական միջոց կար ու չէր յուսացուեր ու անկէ առաջ հաստատութիւնը լրանայ: Հասուն ամէնուն միտքը հանդարտեցնելու համար առատ յայտարարութիւններ կը շուայլէր, որ եթէ կաթողիկոսութեան իրաւունքներուն մէջ փոփոխութիւն կամ նուազութիւնը առաջարկուի, յանձն չառնէր և կը հրաժարի (ՀԱՍ. 445): Հասարակութեան մէջ ալ կարծիք կազմուած էր որ նա իր փափաքներուն ծայրը հասած ըլլալով, այսուհետև իրաւունքները պաշտպանել կաշխատի, որով կաթողիկոսութեան ընդարձակ իրաւունքները մէկ մասին մէջ չամփոփուելով ամբողջութեան վրայ կը տարածուի: Հասունեան, ընկերակցութեամբ Ազարեան Ստեփան վարդապետի, 1867 փետրուար 4-ին Կ. Պոլիսէ մեկնեցաւ դէպի Հռոմ, ուր հետզհետէ հաւաքուեցան Լիբանանի եպիսկոպոսներուն հետ արքեպիսկոպոսական վիճակին եպիսկոպոսներն ալ ու երկու Միսիթարեան արքահայրերն ալ. բայց բացակայ մնաց Գապանձեան, որ ընտրողական ժողովէն հեռու պահուելուն համար ցաւած էր: Սակայն եպիսկոպոսներ բնաւ Հռոմի անցուդարձերէն տեղեկութիւն չունէին, Հասունեան առանձինն և ծածուկ, կը գործէր փրոփականտային հետ, նոր ձևակերպութիւններ համեմատութեամբ կը պատրաստուէին, իսկ հետաքրքիրներու կը

պատասխանէր, թէ ես ալ չեմ գիտեր, բան մը չեն ըսեր, բան մը չեն հարցներ (ՀԱՍ.451): Վերջապէս ութը ամիս անստուգութեան և ակնկալութեան, կասկածի և յոյսի մէջ անցնուելէն ետքը, յունիս 15/27-ին բոլոր հայ կաթողիկէ եպիսկոպոսներ պապին մօտ կը հրաւիրակին, և Պիոս Թ. ի բերնէն կը լսեն երկու աթոռներուն միաւորութեան և Հասունի ընտրութեան հաստատութիւնը, առանց ուրիշ յաւելումաճի կամ բացատրութեան, միայն բաղձանք մը կաւելցուի որ եպիսկոպոսաց ընտրութիւնները Հռոմէ կատարուին իրեն առաջարկուած երեք անուններուն մէջէն, որուն Հասունեան իսկոյն կը պատասխանէ թէ ձեր փափաքը մեզի հրաման է, և թատերական ցոյցը կը փակուի, որ գաղտնի պատրաստուած փոփոխութեանց յայտնի հաստատութիւն պիտի նկատուէր: Հարիւրամեակի տօնախմբութիւնը կը լրանայ յունիս 17/29-ին, և յուլիս 12/24-ին հանդիսապէս պալիւմի արարողութիւնը կը կատարուի, Հասունեան շնորհակալութեան ուղարձ մը կարտասանէ, և ո՞վ մեծի բարենշան աւուրն բացականչութեամբ կողջունէ այն օրը, յորում հայ կաթողիկոսութիւնը իր հլութիւնը վկայեց, ոչ թէ հրամանաց, այլ և յորդորանաց և բաղձանաց սրտին (ՀԱՍ.463): Ամենայն ինչ լրացած ըլլալով եպիսկոպոսներ կը սկսին դառնալ Կ. Պոլիս՝ անցուդարձէն կտարեալ տեղեկութիւն չունենալով, և Հասունեան ալ Հռոմէ հովուական մը կուղղէ իր կաթողիկ ժողովուրդին, աթոռներու միաւորութիւնը և իր ընտրութիւնը, կաթողիկոսութեան բարգաւաճումը, և Հայ եկեղեցոյ մոլորած ըլլալը յիշել պայնց չընելով: Նորադարձ կաթողիկէներու տեղերը համարելով յիշէ, Ատանա, Մարաշ, Բիլիս, Թիւրքմէն, Արաբկիր, Մարաթիա, Այնթապ, Ուրֆա, Մարսուան, Պիրէճիք, Պէհէսնի, Պահճէճիկ, Պէլէն, Թարսուս, Քայսէրի, Ջէյթուն և Թէլէրմէն: Պապական շնորհները բարձրացնել, և Հայոց ակնարկելով կըսէ թէ Լուսաւորչին վարդապետութեան լրումն չեն պահեր: Հասունեան Հռոմէ մեկնելէն ետքը Փարիզ հանդիպելով օգոստոս 7-ին Կ. Պոլիս կը դառնայ, կաթողիկոսական օրհնութիւնը, ոչ օծումը, ընդունելու և նոր պաշտօնին գլուխը անցնելու, որուն համար որոշուած էր օգոստոս 13, Աստուածածնայ Վերափոխման տօնին օրը (ՀԱՍ.455):

2783. ԱՆՏՈՆԵԱՆՔ ԵՒ ՀԱՍՈՒՆ

Կարծես թէ Հասուն անյագ փափաք մը ունէր առանց շփոթի և խռովութեան գործ մը չանցունել, և ահա իր կենաց նշանաւորագոյն օրերէն մին ալ Անտոնեանց հետ նոր պայքար բանալու ծառայեցուց: Միսիթարեանց հետ հաշիւը գոցած էր, պանոնք թէ ոչ ջնջելով գոնէ նուաստացնելով, Անտոնեանք հետզհետէ ընդարձակած բարձրացած էին, Հռոմի հետ պատուաւոր յարաբերութիւններ կը պահէին, և Լիբանանու կաթողիկոսարանին հանդէպ պարտաւոր դիրք կը պահէին, անոր առաջին հաստատողներ եղած էին և վերջին փառաւորողներն էին, պէտք էր պանոնք ընկճել, որպէսզի Հասուն իր ճամբուն մէջ խոչընդոտներու չհանդիպէր: Միաբանութեան թեմակալութիւնը, արբահօր եպիսկոպոսութիւնը, և միաբաններուն վարգացումները և ազդեցութիւնները հակառակորդ ոյժ մը նախատեսել կու տային իրեն, նոյն իսկ Գապանճեան անձն ալ, իբր Կակոնեանի պատրիարքական ատենադպիր, իբր ծանօթ գործիչ և վերջին ընտրութեան մէջ իբր վերապահ ընդդիմադիր, հակակրութեան առարկայ մըն էր Հասունի աչքին: Օգոստոս 13-ին երբ բոլոր եպիսկոպոսները Մաքըվադաճ փողոցի կաթողիկոսարանը կը հաւաքուէին, Գապանճեան ալ իր փոքրաւորին ձեռքով առաջուրնէ կը դրկէր իր եպիսկոպոսական վզեստը: Յարութիւն Ռուպեան սարկաւագ, որ կարգադիր էր նշանակուած, կը մերժէ վզեստներն ընդունիլ, պատճառելով թէ հրահանգ չունի: Փոքրաւորին այդ լուր բերելուն վրայ, իսկոյն արբայական քարտուղար Մաղաթիա Օրմանեան երիտասարդ վարդապետը կաթողիկոսարան կը փութայ, Հասունը կուզէ տեսնել թիւրիմացութիւնը պարզելու, բայց պայն սենեակին մէջ փակուած կը գտնէ, այս կողմ այն կողմ հարցումներ կուղղէ, դուռին բացուելուն կը սպասէ, և վզեստաւորեալ

Հասունեանի ալ կը խօսի, որ նեղույթեամբ հիմայ այսպիսի հարցմունքի ժամանակը չէ պատասխանելով Գասպարեանի կը յղէ, սա ալ կուզէ կաթողիկոսին խօսիլ, բայց միանգամայն անոր չուզերը կիմացնէ, իսկ Ռուպեանը եպիսկոպոսները կը փութացնէ, և Օրմանեանի աչքին առջև թափօրը եկեղեցի կը մտցնէ, հանդէսը կը սկսի, և Գապանճեանի գալը անհնարին կը դառնայ, բայց ժողովուրդին մէջ ներհակընդդէմ վրոյցներ կը շատնան, ոմանք Գապանճեանը դժկամակ ցուցնելով, իսկ շատերը Հասունեանը մեղադրելով: Վերջապէս Անտոնեանց դէմ պայքարը բացուած էր, և Հռոմ ալ յայտնապէս միջամտած էր ամբաստանութեան նիւթ ընելով Գապանճեանին Լիբանանի և Հռոմի գումարմանց չմասնակցիլը, և Անտոնեանց առանց պապական հաստատութեան արբայական պաշտօնը մշտնջենաւորութեան փոխելը և թեմակալութիւնը և եպիսկոպոսութիւնը ընդունիլը և Լիբանանէ Կ. Պոլիս փոխադրուիլը : Այդ պատճառով Գապանճեան հրաման ստացաւ Հռոմ ներկայանալ, և սեպտեմբեր 20-ին Կ. Պոլիսէ մեկնեցաւ Եղիշէ Թէոդոսեան և Ստեփանոս Սարեան վարդապետներով իբր միաբանութեան պատուիրակներ և Օրմանեան քարտուղարով: Ուղևորութիւնը կատարեցին Մարսիլիայի վրայէն հնտախտէ ճարակման և Հռոմի քաղաքական շփոթներու պատճառով, ուր հասան հոկտեմբեր 15-ին: Լիբանանէ Ռափայէլ Միսաէրեան և Հռոմէ Սերովբէ Հանըմեան վարդապետները աւելցան իբր պատգամաւորներ, և Դաւիթ Չրաճեան վարդապետ իբր քարտուղար: Այդ եօթներու ձեռքով ստուար և բազմաթիւ գրութիւններ ներկայացուցան փրոփականտայի ատենին, պահանջուած բացատրութիւնները տալու և ամբաստանութիւնները ցրելու պատշաճ քննութիւններն ալ կատարուեցան, որոնք գրեթէ մը տևեցին, և վերջապէս փրոփականտայի ատեանը խնդիրը փակեց անպարտութեան վճռով, եկողները արտօնեց ապատարար Կ. Պոլիս դառնալ, և նոր կազմուած դրութեամբ իրենց գործերը շարունակել. և ըստ այսմ 1868 հոկտեմբեր 17-ին Հռոմէ մեկնեցաւ և 25-ին Կ. Պոլիս մտան ի մեծ ցաւ Հասունեանի, որ կը կարծէր Անտոնեանց ջնջումը կամ գոնէ դատապարտութիւնը ապահոված ըլլալ. բայց իբրև թէ ինքն եղելութեանց մէջ մաս ունեցած չըլլար, սկսաւ բարեկամական ցոյցեր շոռայել:

2784. ՊԱՊԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՐ

Երբոր Հռոմի մէջ Անտոնեանց խնդիրը կը ծեծուէր, Կ. Պոլսոյ մէջ Հասունի գործերը նոր կնճիռներու կը բաղխէին: Ինչպէս Հասուն Հռոմի մէջ առանց եպիսկոպոսական դատուն գիտակցութեան փրոփականտայի հետ հայ կաթօլիկ կաթողիկոսութեան համար նոր ձևակերպութիւններ կազմած յուլիս 12-ի պապական կոնդակի վերածել տուած գաղտնի կը պահէր, նոյնպէս ալ Կ. Պոլսոյ մէջ լոկ եպիսկոպոսներու ստորագրութիւններով առանց ազգային ընտրութեան և մասնակցութեան և մեծամեծներէն ալ գաղտնի դիմում ըրած էր կառավարութեան, և կաթողիկոսութեան ազգապետական կերպարան տալով, ազգապետ պատրիարքի հրովարտակ ձեռք ձգած կը պահէր: Այդ գործերով երկու ամիսի չափ ատեն անցած էր գալէն ի վեր, և հասարակութիւնն ակնկալելու կը սպասէր, մաս մը կաթողիկոսութեան Կ. Պոլիս փոխադրուելէն յափրացած, և մաս մըն ալ Հասունի ձգտումները լրացած ըլլալէն անոր փոփոխուած ըլլալը յուսարլով: Վերջապէս Հասուն հոկտեմբեր 13 թուականով և Անտոն Պետրոս Թ. պատրիարք տանն Կիլիկիոյ կաթողիկոս Հայոց ուղղափառաց իմա կաթօլիկաց, ստորագրութեամբ հրաւիրագիր կը ցրուէր, հոկտեմբեր 20-ին ուրբաթ օր Սաքըպպաճի կաթողիկոսարանի մէջ գումարելի ժողովի (ՀԱՍ. 465): Հրաւիրագիրին մէջ բարձրագոյն դռնէն եկած պատրիարքական պէրաթը կարդալու ըսուած էր, և այս բաւական միտքերը յուզեց, զի պէրաթը կամ հրովարտակը ազգապետ պատրիարքին կը տրուէր, և այն ալ ժողովրդական քուէով կը իտրուէր, իսկ Հասունի մասին այդ բաները կատարուած չէին: Նոր Հասունեան քաղաքականութեան խաղի մը գաղափարը ծագեցաւ,

բայց եղելութիւնը ստուգելու հետաքրքրութեամբ շատերը փութացին ներկայ ըլլալ և 150 անձեր նշանակեալ օրն ու տեղը ժողովի հաւաքուեցան: Հասուն համառօտ խօսքերով նիստը բացաւ, յիշեց աթոռներու միաւորութիւնը, իր հաստատութիւնը, եպիսկոպոսութեան համար երեք ընտրելի առաջարկելու կէտը, եպիսկոպոսներուն կառավարութենէն հրովարտակ ուզելը, և ընթերցումը հրամայեց: Խօսքը ընդմիջեց Տիւլեան Միհրան պէյ, եպիսկոպոսաց ընտրութեան մէջ ազգային իրաւանց ջնջուիլը մատնանիշ ընելով, բայց հրովարտակի ընթերցումը չարգիլուեցաւ պարունակութիւնը ստուգելու համար: Տիւլեան դարձեալ խօսք առաւ, այս անգամ ալ ազգին իր պետը ընտրելու իրաւունքին կորուստը աւաղելով և եպիսկոպոսներու ընթացքը պախարակելով, և եզրակացնելով թէ ըզմեզ համաժողովեր էք, որպէսզի զմեզ անարգելով մեր վրայ ծիծաղիք (ՀԱՍ. 471): Գասպար Սինապեան ալ վրայ բերաւ թէ մեզի ուրիշ բան չէ մնացեր, բայց եթէ երթալ և եղած կորուստին վրայ արցունք թափել (ՀԱՍ. 473): Այս յայտարարութեանց վրայ ժողովականներուն կէսէն աւելին սրահը կը թողու ու դուրս կելլէ, իսկ Հասուն մնացած եկեղեցականներուն և իրեն փոքրաթիւ կողմնակիցներուն քանի մը խոսք կարկատելով ինքն ալ ոտք կելլայ և ժողովը կը լուծուի, ակնկալութիւններ կը ցնդին և խռովութիւնները կը սկսին վերստին (ՀԱՍ. 467-475): Մասնաւոր տեսակցութիւններ տեղի կունենան աստուանդ, աւելի բազմաթիւ ժողով մը կը գումարուի 1867 նոյեմբեր 3-ին Պօղոս Մըսրեանի տունը, լուրջ բացատրութիւններ կը տրուին և ազգին երկու, ներքին և արտաքին իշխանութեանց իրաւունքը բռնաբարուած ըլլալը կը վճռուի: Ինը անդամով յանձնաժողով մը կընտրուի մինչև մէկ ամիս դարմանի առաջարկ մը բերելու պաշտօնով: Ասոնք թէ Հասունին ըստացած հրովարտակը և թէ մինչև այն օր գաղտնի պահուած Ռէվէրսուրուս (Reversurus) բառով 1867 յուլիս 12-ի պապական կոնդակը կուզեն, ու մանրամասնօրէն կուսումնասիրեն, և ոչ միայն նախկին սովորութեանց և արտօնութեանց և իրաւանց խափանուած և դադարած ըլլալը կը տեսնեն, այլ և կեղծ գրութեանց վրայ հիմնուած ըլլալը կը ստուգեն (ՀԱՍ.479-483): Իրաւանց և արտօնութեանց փոփոխութեան մասին պապական կոնդակին մէջէն աւելի աչքի վարնող կէտերը հետևեալներն եղան. 1. Տեղապահը եպիսկոպոսներու մէջէն և միայն եպիսկոպոսներու քուէով պիտի ընտրուի: 2. Կաթողիկոսի ընտրութեան քահանաներ և եկեղեցականներ և աշխարհականներ պիտի չմասնակցին, այլ միայն եպիսկոպոսներ: 3. Ընտրեալը պապական հաստատութենէ առաջ իրաւունք և իրաւասութիւն պիտի չգործածէ և աթոռ պիտի չբազմի: 4. Հաստատութիւնը տրուելէն ետքը ալ պալիումի ստացութեան պիտի սպասէ, մինչև իսկ հանդիսաւոր պատարագ պիտի չմատուցանէ: 5. Եպիսկոպոսներու ընտրութեան համար միայն եպիսկոպոսներ երեք ընտրելի պիտի որոշեն և ընտրողական ժողովի ատենագրութեան հետ պապին պիտի ներկայեն որ մէկը ընտրէ: 6. Եթէ առաջարկուածները արժանաւոր չնկատուին,, պապը կրնայ երեքէն դուրս մէկը եպիսկոպոս նշանակել: 7. Կաթողիկոսը իւրաքանչիւր հինգ տարի անձամբ պապին պիտի ներկայանայ և բոլոր իր գործոց համարատուութիւնը պիտի ընէ: 8. Պապէն եկած որ և է հրաման և հրահանգ ճշդութեամբ պիտի գործադրէ: 9. Աթոռին և ամէն եկեղեցիներու բոլոր ստացուածները առանց պապին հրամանին պիտի չվաճառէ, չպարգևէ, չօտարացնէ և գրաւի չդնէ: 10. Այդ պայմաններու հակառակ գործած ատեն նովին իսկ ինքզինքը բանադրանքի ենթարկուած կը ճանչնայ (ՀԱՍ.484-491): Իսկ կայսերական հրովարտակը նախորդ ազգապետներու տրուածին յարկնման էր, սա յաւելուածով որ ամէն իշխանութիւն պատրիարքին անձին կը վերագրուէր առանց ժողովներու գործակցութեան: 2785. ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐՈՒ ՇԱՐԺՈՒՄԸ

Յանձնաժողովը ճիշդ ամիսէ մը 1867 դեկտեմբեր 3-ի գումարման մէջ Ընդհանուր ժողովի երկու առաջարկներ բերաւ, զի մասնաժողովը երկուքի բաժնուած էր: Մէկ մասը կառաջարկէր

Հասունի ազգապետական հրովարտակը չճանչնալ և ազգապետ պատրիարքի ընտրութեան աշխատիլ, իսկ միւս մասը կառաջարկէր այս անգամուան հրովարտակովը պահել և Հռոմէ բռնաբարուած իրաւունքները վերստանալու հետեւիլ: Առաջին կարծիքը ներկայացուց Յովհաննէս Սաքըպեան, և երկրորդը Գասպար Սինապեան. իսկ ժողովը գրեթէ միաձայնութեամբ Սաքըպեանի առաջարկը նախադասեց. և ըստ այնմ դեկտեմբեր 11-ին աղերսագիր մատուցուեցաւ կառավարութեան, որ կաթոլիկ հասարկութեան համար կանուխէն տրուած որոշման համեմատ կրօնական և քաղաքական գործեր պատկատ գլուխներու յանձնուած ըլլալով, Հասունի տրուած հրովարտակով այդ ձևը եղծուած է, և առանց ազգային ընտրութեան ազգապետ մը անուանուած է, ուստի կառավարութենէ կը խնդրուի որ ազգն արտօնէ ազգապետ պատրիարք ընտրելու: Օսմանեան կառավարութիւնն իր իրաւունքն ալ խափանուած և ազգապետական ընտրութիւնը Հռոմի անցած տեսնելով, կատարեալ իրաւունք տուաւ ազգայնոց աղերսագիրին: Իսկ արտաքին գործոց նախարար Ֆուատ փաշա ուլեց առիթէն օգուտ քաղել պապութեան հետ բանակցութեան մտնելու և օսմանեան կաթոլիկներու յարաբերութիւնները երկկողմանի դաշնագիրի մը վերածելու: Այսպէս ալ յայտարարեց դեկտեմբեր 13-ին իրեն մօտ հրաւիրուած կաթոլիկ մեծամեծներուն: Հռոմ ալ գոհ չմնաց Հասունի ընթացքէն, Վի որչափ ալ հետամուտ էր բոլոր եկեղեցական իրաւունքներն իրեն ձեռքն ամփոփելու, այնչափ ալ հեռու էր օսմանեան կառավարութեան քաղաքական իրաւանց միջամտելէ, և Հասունի ընթացքն այն միտքի համաձայն չէր եղած, հեւապէս Հասուն այդ կողմէն Հռոմի կատարեալ օժանդակութիւնը չգտաւ: Պէտք կը վզանք յաւելուլ որ Արսէն Անճարակեան և Սուքիաս Գազանձեան եպիսկոպոսներ, և իրենց միաբանական խնդիրին աշխատող Անտոնեաններ, Հռոմի մէջ ոգևին ոյժ կու տային կաթոլիկ հասարակութեան ընդգրկած տեսակէտը վօրացնելու, և հինէն ու նորէն տեղեկութիւններով և գրութիւններով պապական շրջանակը լուսաբանելու: Հետևանքն այն եղաւ որ Հռոմի խստիւ հրամայեց Հասունի որ ժամ մը առաջ ազգապետական իշխանութենէն հրաժարի, որպէսզի եկեղեցականը չվտանգուի (ՀԱՍ.504): Երուսաղէմի լատին պատրիարքը Վալերկա, որ Հասունի ընտրութիւնը յաջողցուցած էր (2782), Հռոմի կողմէն յատուկ պաշտօնով և Հասունը խրատելու յանձնարարութեամբ, Կ. Պոլիս եկաւ 1868 փետրուար 5-ին, և Հասուն դժուարին կացութեան մէջ ինկաւ, հասարակութենէն և կառավարութենէն և պարապութենէն հաւասարապէս լքուած գտնուելով, և գաղղիական դեսպանին միջամտութենէն ալ օգտուիլ չկրնալով. ուստի մարտ 3-ին կիրակի օր մեծամեծներէն 16 հոգի հրաւիրելով բերանացի յայտարարեց ազգապետութենէն հրաժարած ըլլալը, սակայն ոչ հրաժարագիրը կար մէջտեղ և ոչ հրովարտակը ետ տրուած էր, միտքերը հանդարտեցնելու և ատեն վաստակելու միջոց մըն էր ըրած յայտարարութիւնը (ՀԱՍ. 505-506): Վալերկա Հասունէ հրապուրուեցաւ իրենց նպաստաւոր ձև մը գտնել, օսմանեան կառավարութիւնը առերևույթ ձևակերպութիւններով խաղցնել և ակնկալութեան փոշի ցանել հասարակութեան աչքին. սակայն ոչ մի փորձ յաջող ելք չունեցաւ, և Վալերկա չկրնալով յուզուած վէճին և խնդրոյն լուծում մը տալ, Հռոմէ ըստացած հրամանին վրայ Երուսաղէմ դարձաւ (ՀԱՍ. 512): Հասուն ալ 1868 18-ին Վերափոխման տօնին իր գահակալութեան տարեդարձին նոր կոնդակ մը հրատարակեց, որուն մէջ, լրջորեն թէ լրբօրէն, կը յայտարարէր թէ աստուածապահ վիճակիս կարևոր գործերը քիչ շատ բարեկարգուեցան, մինչ ժողովուրդը զուլանօք եկեղեցիէ դուրս կելլէր յայտնի սուտեր չլսելու համար: Սակայն աչքկապուկի խաղ էին կոնդակն ալ յայտարարութիւնն ալ, Վի քանի մը օր ետքը 22-ին Կ. Պոլիսէ կը մեկնէր Եգիպտոս և Լիբանան այցելելու համար, այլ իսկութեամբ հեռանալով զայրոյթը մարեցնելու և խնդիրը մոռցնելու նպատակով, սակայն անով ալ չկրցաւ յաջողիլ: Հռոմէ նոր պատուիրակ մը յղուեցաւ Վալերկայէն աւելի քաղաքագէտ անձ մը, Աղէքսանդր Ֆրանքի,

Թէսապոնիկէի անուանական արքեպիսկոպոսը, Հռոմի քաղաքական պաշտօնէութեան դասակարգէն, որ աւելի քան հասարակութեան կառավարութեան հետ գործեր կարգադրելու հետևեցաւ, օսմանեան կառավարութեան հետ կաթոլիկ հասարակութեանց ներքին յարաբերութեանց և վարչութեան ձև մը գտնելու, և վայն հաստատուն դաշնագիրի մը վերածելու, միշտ պապական միջամտութիւնը չնուազելու պայմանով, սակայն Ֆրրանքի ալ յաջող ելք չունեցաւ և ձեռնունայն ետ դարձաւ: Այդ միջոցներն էր որ Գալանձեան և իր գործակիցներ Հռոմէ կը դառնային և գոհութիւն կաթոլիկ ազգայնոց լուսամիտ և ազգասէր մասին (68. ՄԱՍ. 873), որոնց նոր քաջալեր կաւելցներ անոնց վերադարձը, և Հասունի դէմ ունեցած յաջողութիւնը: Հռոմ ալ կը վգար վերջապէս թէ հիմնական կարգադրութիւն մը և ազգովին համաձայնութիւն մը անհարժեշտ էր, զի Հասունի ազգապետ պատրիարքութիւնը տէրութեան կամքով անգործ և առկախ վիճակի մէջ կը գտնուէր, հոգևոր կաթողիկոսութիւնն ալ նոյն պատճառով անորոշ վիճակի ենթարկուած էր, ուստի հրամայեց որ Կ. Պոլսոյ մէջ բոլոր հայ կաթոլիկ եպիսկոպոսներ ժողովի գումարուին և սինհոդոս կազմեն, խնդիրները քննեն ելից հնարք մը գտնեն, կանոնական ծրագիր մը կազմեն, և իրեն հաւանութեան և հաստատութեան առաջարկին:

2786. ԿԱԹՈՒԼԻԿ ՍԻՒՆՀՈՂՈՍԸ

Այդ ժողովին բացման էր նշանակուած էր 1869 յուլիս 5, Լուսաւորչի Նշխարաց տօնին շաբաթ օրը. իբրև խորհրդաւոր բայց 1868 նոյեմբերէն նախապատրաստութիւններ սկսան, և Ազարեան սկսան, և Ազարեան Ստեփան վարդապետի նախագահութեամբ երեք յանձնաժողովներ կազմուեցան, դաւանական ու կանոնական ու ծիսական, որոնց մէջ Անտոնեաններէն և կրկին Մխիթարեաններէն շատ անգամներ առնուեցան ուսումնասիրութեանց աշխատելու համար: Մէկ կողմէն ամէն նիւթերու վրայ ծրագիրներ կը կազմուէին կանոնական ոճով ու յանձնաժողովներու բովէն կանցնէին, և միւս կողմէն բազմագրութեամբ կը պահուէին, ատենին ժողովական հարց բաշխուելու համար, որպէսզի ժողովը նիւթ պատրաստ գտնէ և իր հաւանութեամբ հաստատէ: Այդ պատրաստութիւնները և խնդիրներուն ժողովի մը քննութեան և որոշման ենթարկուիլը, և ժողովական եպիսկոպոսաց մէջ ազգայնական սկբրանք գտնելու վստահութիւնը, իրենց ազդեցութիւնն ունեցան, և ապագայ որոշմանց ակնկալութեամբ առժամեայ հանդարտութիւն պահելու և նոր խնդիրներ չյուզելու ծառայեցին, և այսպէս անցան դեկտեմբերէ յունիս եօթն ամիսները: Երբոր Հասունեանի կողմէն ժողովական պատրաստութիւններ կը կատարուէին, միւս կողմէն ալ ազգայնականաց կողմէն Ուղերձ անունով գիրք մը կը հրատարակուէր ժողովական եպիսկոպոսներու ուղղուած, ազգային իրաւունքները բացատրելու և եպիսկոպոսներու ուղղութիւն մը ցոյց տալու նպատակով: Դժբախտաբար հեղինակը իրեն նպատակէն դուրս ելլելով Կիլիկիոյ աթոռին վրայ Լուսաւորչի ուղիղ յաջորդութիւնը ցուցնելու և Էջմիածնի աթոռը օտարացեալ ցուցնելու կէտերը կը շոշափէր (1462-1464), և անով փոխանակ զօրացնելու իր նպատակը կը տկարացնէ: Ուղերձը անանուն է, բայց Էնֆիէձեան Գրիգոր վարդապետէ գրուած ըլլալը ստոյգ է: Հասուն հոգաց բարեպաշտական զգացումներ վարթուցանելով՝ իրեն վրայ համակրութիւն ձարել, և պապին դիմեց և հաւանութիւն ստացաւ Իտալիոյ Նէապոլիս (Napoli) քաղաքը պահուած Ս. Գրիգոր Լուսաւորչի մասունքներէն և շղթայէն մաս մը նուիրել իր կաթողիկոսանիստ Ս. Աստուածածին եկեղեցւոյն, և իրօք շնորհին տրուիլն, ու մասունքներու բերուիլն ալ բաւական ոգևորութիւն արթնցուց ժողովուրդին մէջ: Վերջապէս ժողովականներ հետզհետէ հաւաքուեցան, նախկին Լիբանանի կաթողիկոսարանին ենթարկեալ 10, և Կ. Պոլսոյ արքեպիսկոպոսարանին ենթարկեալ 6 եպիսկոպոսներ, երեք արքահայրներ, և երկու Հռոմ գտնուողներ, որոնց մին փոխանորդով, ընդ ամէնն 22 որոշիչ ձայներ Հասունն ալ համրելով: Յանձնաժողովներու

գործերն ալ աւարտեցան, և յուլիս 4-ին Հոռմէ նուիրուած Լուսաւորչի մասունքները մեծաշուք թափօրով Յիսուս Փրկիչ եկեղեցիէն Բերայի Ս. Աստուածածին եկեղեցին փոխադրուեցան, և 5-ին ժողովին բացման արարողութիւնը կատարուեցաւ: Ժողովին մէջ լոկ խօսելու արտօնութեամբ 8 աստուածարան վարդապետներ որոշուեցան, 6 ալ քարտուղար վարդապետներ, և անոնց գլուխը Ազարեան Ստեփան վարդապետ՝ դիւանը կառավարելու պաշտօնով: Ժողովին առջի օրերէն ժողովուրդին կողմէ մեծամեծներու ստորագրութեամբ խնդրագիր մը ներկայացաւ ազգայնական ուղղութեամբ և իրաւանց պաշտպանութեամբ: Ժողովի մեծամասնութիւնը լաւ ընդունելութիւն ըրաւ խնդրագիրին, և գործը ուսումնասիրելու համար իր մէջէն հինգ եպիսկոպոսներու յանձնաժողով մը ընտրեց, միայն մէկը Հասունի համամիտ, և Օրմանեան վարդապետը քարտուղար: Արդէն նախկին Լիբանանի աթոռին եպիսկոպոսները պապական կոնդակէն ցաւած ամէնն ալ ազգայնական կողմն էին հակած: Անտոնեանց և Վենետկեանց արբահայրերը, և Հոռմ գտնուող Եղուարդ Հիւրմիւլեան և Արսէն Անճարակեանի փոխանորդ Ստեփանոս վարդապետ Սարեան յայտնի այն կողմն էին, և Հասուն կը մնար իր նախկին վեց եպիսկոպոսներով, իսկ Վիէննական արբահայրն ալ կաղնիկաղ դեր մը կը վարէր: Հասուն պարտաւորուեցաւ զգածուիլ այդ առաջին քայլէն, և թէպէտ փութաց հակառակ խնդրագիր մը տալ իրեն հաճոյակատար մեծամեծներուն (2785), բայց ուրիշ խնդիրներու մէջ ալ ազգայնական կողմը ժողովին մէջ զօրաւոր տեսնելով, և զինքն անոնց վրայ ազդելու անբաւական դատելով, յանկարծ պապական նուիրակ Անտոն Բլուիմ, Թիանայի անուանական արքեպիսկոպոսը, ժողովին բերաւ իբր նախագահ կամ իբր հսկող, որ բոլոր նիստերուն սկսաւ ներկայ գտնուիլ և գործոց հետևիլ Վիէննայի Մխիթարեան վարդապետի մը թարգմանութեամբ: Յուլիս 5-էն մինչև հոկտեմբերի վերջերը ժողովը շարունակեց ամենօրեայ նիստերով, տօնական օրերէ զատ, և երբեմն օրական երկու նիստերով ալ: Ինչ որ դաւանական, բարոյական, կանոնական, ծիսական և տեսական կէտեր էին, քիչ դժուարութեամբ կանցնէին, թէպէտ յանձնաժողովներու խմբագրած ծրագիրները քիչուշատ փոփոխութիւններ կը կրէին: Բայց երբ խնդիրը ազգայնական իրաւանց և կանոնաց կը վերաբերէր, ծանր վիճաբանութեանց նիւթ կը դառնար և լուծման չէր յանգեր: Ազգայնոց խնդրանքներու մասին յանձնաժողովին եզրակացութիւնները, և վանական միաբանութեանց իրաւունքներուն և յարաբերութիւններուն մասին յայտնուած կարծիքները, թէպէտ մեծամասնութեան կողմէ, կը պաշտպանուէին, բայց Հասուն իր դարձածներով և մանաւանդ Բլուիմի օգնութեամբ որոշումները կը խափանէր, այնպէս որ շարունակ երեքուկէս ամիս աշխատութիւններ և 80-է աւելի նիստերէ վերջ ժողովը չկրցաւ իր գործը աւարտել, և գլխաւոր և գործնական կէտեր անորոշ թողլով՝ առժամապէս փակուեցաւ, և 1869 նոյեմբեր 1-ին բոլոր եպիսկոպոսներ ճամբայ ելան, որ ատենին պատրաստ գտնուին վատիկանեան ժողովին բացման, որ տեղի պիտի ունենար նոյեմբեր 28/8 դեկտեմբերին: Ոչ Հասունի և ոչ ազգայնոց ակնկալութիւնները չէին պսակուած. զի ժողովէն կամ սիւնհոդոսէն ոչ մի ազգայնական որոշում չէր տրուած, բայց Հոռմի ուլած ձևերն ալ չէին հաստատուած: Միայն ազգայնական կողմն աւելի համարձակութիւն ստացած էր, և երբ Հասուն և բոլոր եպիսկոպոսները կը մեկնէին, կաթողիկոսութեան գործերուն վարչութիւնը կը յանձնուէր Գասպարեան Բարսաղ եպիսկոպոսի, որ ազգայնական ուղղութեան պաշտպաններէն էր: Այս եղելութեանց վրայ 1870 յունուարին սկսաւ հակահասունեան կոչուած մեծ պայքարը, որուն մասին պիտի խօսինք. բայց առաջ ուրիշ կողմերու անձուղարձերն ալ մինչև նոյն թուականը հասցնել կը պատաւորուինք:

Երուսաղէմի եղելութիւններէն կը սկսինք, որոնք աւելի ետև թողած ենք, Եսայի պատրիարքին 1865 ապրիլ 5-ին աթոռ բազմելուն օրէն ի վեր (2739): Եսայի արտաքին ձևերով և անձնական պայմաններով իր դիրքը բարձր պահելու կերպերը գիտէր, և առաջին գործն եղաւ ամբողջ միաբանութիւնը գումարել Ս. Յակոբայ մայրտաճարին մէջ, և անցեալն ու ներկայն, Կ. Պոլիս գործուածներն ու առաջիկային գործուելիքները բացատրելով, միաբանական կեանքի պահանջներուն և աթոռոյ ու միաբանութեան պէտքերուն ներկայել, հայրական խրատներով և համոզկեր յորդորներով համեմելով իր խօսքերը: Կրօնաւորական կենաց ներքինն ու արտաքինը իր ատենաբանութեան հիմն էր, գետին մը որուն մէջ համարձակ կրնար ընթանալ. զի ընդհանուր վկայութեամբ անբասիր և բարեջան կեանք մը անցուցած էր և պատրիարքութեան ալ բարձրացած ատեն իր պարզ և մաքուր, հոգեսէր և կարգապահ կեանքը ձեռքէ թողլու կերպեր չէր առած: Իւրաքանչիւր դասակարգի և պաշտօնի պարտաւորութեանց շրջանակն ալ մտաւ, միշտ բարոյական մասերուն վրայ ծանրանալով եկեղեցականութիւն և կանոնապահութիւն, համեստութիւն և միասրտութիւն յանձնարարելով: Յիշեց Կ. Պոլսոյ մէջ կազմուած կանոնագիրը, և գլխաւորապէս յիշեց վարժարանի ու տպարանի ու թանգարանի համար տրուած կարևորութիւնը, որոնց գործադրութեան համար բովանդակ միաբանութեան գործակցութեան կը դիմէր: Խօսքին վերջը նորէն կրօնաւորական կեանքին կը վերադառնայ և ջերմագոյնս կը յանձնարարէ վերջացնել վամենայն եկամուտ ունակութիւնս աշխարհայինս, որք տակաւ սպրդեալ էին ի մէջ եկեղեցական դասուն (ՍԱԻ.1394): Ինչպէս ըսինք այդ մասը Եսայիի զօրաւոր կողմն էր, և բոլոր պաշտօնավարութեան մէջ վայն չստեց, բարոյական և կրօնաւորական կեանքին օրինակը իրմէ սկսելով, որ ուրիշներուն վրայ խստապահանջ ըլլալու իրաւունքը պահէ: Այդ մասին բաւական ալ յաջողեցաւ, քաղցր և մեղմ, բայց և միանգամայն ճշդապահ ընթացքովը գիտցաւ միաբանական յարաբերութեանց մէջ համակրանք և յարգանք շահիլ իր վրայ. և երանի՛ տէ՛ որչափ կրօնաւորական կեանքի գիտակցութիւն և նախանձայուկութիւն ունէր, վարչական կեանքի մէջ ալ կարողութիւն և գործադրութիւն ունեցած ըլլար, որով Երուսաղէմի աթոռին նշանաւորագոյն գահակալներէն մին եղած կըլլար ստուգիւ: Մինչ ընդհակառակն իր օրով և իր ձեռքով աթոռին ձախողութիւնները, և այս ոչ վատթար դիտումէ և ոչ մոլեկան ուղղութենէ, այլ պարզապէս պարագաները և միջոցները, նպատակները և արդիւնքները լաւ չկշռելէ, և անխորհուրդ գործերու համարձակ միջամտելէ, և լաւ ձեռնարկներու մէջ ալ մասնագիտական և փորձառական պաշար չունենալէ, ինչ որ անհրաժեշտ էր ամէն բան լաւ կշռելու և հաստատուն քայլերով յառաջանալու համար: Վարժարան, տպարան, թանգարան, անունները կեդրոնին մէջ իրեն թելադրուած, իրմէ պահանջուած, և իրմէ խոստացուած գործերն էին, զորս միշտ իր մէջ և իր լեզուին վրայ ունէր, և որևէ կերպով ու միջոցով անոնք իրականացնելու հողը իրեն նուիրական պարտք կը համարէր: Յովհաննէս պատրիարք կշռող և չափող, պարագաները ուսումնասիրող և պատեհները շահագործող անձն էր, և կրցաւ սնտուկը լեցուն թողուլ: Անիշխանութեան միջոցին տեղի ունեցող անցուդարձերը պատրաստը սպառելէ վատ անպատրաստն ալ ծանրաբեռնելու ծառայեցին: Եսայի ոչ միայն վտանգեալ կացութիւնը չդարմանեց, այլ և անխորհուրդ ձեռնարկներով ևս քան վաս կացութիւնը խանգարեց:

2788. ՎԱՐԺԱՐԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Վարժարանէն սկսաւ առաջին ձեռնարկը, որուն համար պատրաստ էր Յովհաննէսի շինել տուած փառաւոր ձեմարանը և Կիրակոսի հիմնած Մայրիթաղը, առաջինը իբր սերտարան և դասարան, և երկրորդը իբր բնակարան և ննջարան: Տեսչութիւնն և ուսուցչութիւնը յանձնուեցաւ Տիգրան Սաւալանեանի, որ 1863 դեկտեմբերէն Չմիւռնիայէ դարձած և աթոռին դպրոցական և

գրական գործերու գլուխն էր անցած (2727): Սաւալանեան ինքն է որ կը բարձրացնէ իր ձեռնարկները, կազմած կանոնները և ցուցած յառաջադիմութիւնը (ՍԱԻ.1395): Սակայն 1866 փետրուարին կատարուած քննութեանց տեղեկագիրին մէջ տեսնուած նիւթերը, հայերէն քերականութիւն և թուաբանութիւն և աշխարհագրութիւն միայն կը պարունակեն և բարձրագոյն նիւթ տարրական տրամաբանութիւնն է: Գոհունակութեամբ նկատելի կէտ մըն է որ ուսանողաց կարգին կը գտնուին նաև նախկին աշակերտք, 5 սարկաւազ, 6 ուրարակիր, և 4 դպիր, իսկ նոր աշակերտներն 7 են միայն (66.ՍԻՈ.33-35): Սաւալանեան շուտով եղուած կը կարծէ իր պատրաստած յառաջադէմ ընթացքը, զի անոնք որ զինքն փոխանակեցին, ըստունգանեցին արկանել զանձինս ընդ պարտաւորութեամբ, մերժեցին զկանոնադրութիւնն, զոր ինքն էր կազմած, և Եսայի պատրիարք որ նշան տկարութեան սկսած էր տալ, ոչ բռնդատեաց նոր եկողները Սաւալանեանի կանոնագիրով ընթանալու: Սակայն իսկութիւնը տարբեր կը ներկայանայ մեզ: Այս միջոցին 1867 տարուոյ կէտերը (ՆՇՆ.54) Երուսաղէմ կու գայ Գարեգին Մուրատեան բնիկ Արցախեցի, որ առիթ ունեցած ենք յիշել (2697), իբր Ռուսահայոց մէջ ուսումնական և գործիչ անձ մը, որ արդէն 30 տարեկան էր: Մուրատեան հաւատարիմ հետևող Պետրոս Շանշեանի, անոր կարծեաց ալ պաշտպան էր, և այս պատճառով Մատթէոսի անհամակիր դառնալուն յանկարծական որոշմամբ Տաճկաստան կը փոխադրուի, միջոց մը Կ. Պոլսոյ մէջ ուսուցչութեամբ կը զբաղի, բայց հոն ալ իրեն կատարեալ յագուրդ չգտնալով Երուսաղէմ կանցնէր թէ ուսումնական ճիւղին մէջ աշխատելու և թէ եկեղեցական կոչում ընդունելու՝ եթէ մօտէն տեսնելով դժուարին չգտնէ: Այդպիսի անձի մը Երուսաղէմի մէջ երևնալը Եսայիի աչքին նշանաւոր մի բախտ էր, ուստի նա Սաւալանեանը ետ կառնէր դպրոցական և ուսուցչական պաշտօնէն և նորա գործունէութիւնը դիւանի և տպարանի և մատենադարանի մէջ կամփոփէր, իսկ Ս. Յակոբայ ուսումնարանը կը յանձնէր Մուրատեանի բացարձակ իշխանութեամբ, միայն Մկրտիչ վարդապետ Սահակեանի տեսուչի պաշտօնը թողլով պարզապէս նիւթական պէտքերու հոգածութեան համար: Մուրատեան տարբեր գաղափարներով և տարբեր ուղղութեամբ պատրաստուած անձ, բնական էր որ թէ իր անձը ցուցադրելու և թէ իր գաղափարները յառաջ տանելու համար, պիտի չհաճէր Սաւալանեանի զգացմանց և կծու ակնարկութեանց գաղտնիքը: Եսայի պատրիարքի դերը այդ փոփոխութեան մէջ գործին հմուտ և ըրածին գիտակից անձի մը որոշումը չէ. զի նա ոչ դպրոցական կեանքի փորձառութիւնն ունէր, և ոչ ալ ուսումնական ճիւղին մասնագիտութիւնը. վարժարանի յառաջադիմութիւնը իրեն համար սևեռեալ և պարտաւորեալ գաղափար մըն էր, և լոկ արտաքին փաստերով կը գործէր երբ Մուրատեանը Սաւալանեանի կը նախադասէր: Գալով Մուրատեանի, համարձակ պիտի ըսենք թէ իսկական արժանիքէն շատ աւելի էր անոր անունին շուրջը կազմուած հռչակը զի իր ուսումնական պաշարը Տփղիսի Ներսիսեան ուսումնարանի ծրագիրէն աւելի չէր, թէպէտ ինքնաշխատութեամբ և պայքարականութեամբ ընդարձակած էր նախնական շրջանակը: Իր տնօրէնութեան ներքև աշակերտաց, թիւը 40-ի բարձրացած կը գտնենք, իսկ նիւթերու կողմէն 1868 յունուարին կատարուած քննութեան մէջ աւելցած կը գտնենք Ս. գրոց պատմութիւն, եկեղեցական պատմութիւն, ճարտասանութիւն, Տաճկերէն և Գաղղիերէն, իսկ գծագրութիւնը կանխաւ ալ կար Կարապետ Եազըճեանի ուսուցչութեամբ, որ Սաւալանեանի և Մուրատեանի հաւասարապէս գործակից եղած է (68. ՍԻՈ.48): Մուրատեան 1868 փետրուար 8-ի պարգևաբաշխութեան հանդէսին առթիւ խօսած ատենաբանութեան մէջ, աւելի հին ու նոր ազգային կենաց պարագաներով կը զբաղի, քան վարժարանի ընթացքը բացատրելով, և հոգևոր զինուորութեան և տգիտութեան դէմ պատերազմին պէտքը կը շեշտէ ազգին ապագային համար: Այդ դիտողութիւնները կաւելցնենք այն նպատակով, որ մեր տեսութեամբ Մուրատեանի

ուսումնական գործունեությունը Երուսաղէմի վարժարանի մէջ, որչափ ալ արտաքին փայլուն երևոյթներով շրջապատուած, ոչ իսկական բարւոքում եղաւ Երուսաղէմի կացութեան և ոչ իրական պարգացում Երուսաղէմի միաբանութեան: Գլխաւոր հետևանքները որ աչքի կը պարնեն Մուրատեան աշակերտութենէ յառաջ եկողներուն վրայ, մեծ մասին միաբանութիւնը լքել և օտարանալն է, նոյն ինքն իրմէ սկսելով, որ թէպէտ իր նետերքին նպատակն ալ իրագործեց և միաբանութեան անդամակցեցաւ և եկեղեցականութեան հետևեցաւ, և 1869 յունիս 22-ին Արցախեցի ընկերակցի մը, Գէորգ Բարխուդարեանի հետ ձեռնադրութիւն ալ ստացան Մելիքսեդեկ և Մակար անուններով, սակայն նոյն իրենք եղան միաբանութենէ առաջին օձտողները: Իսկ որոնք որ միաբանութեան մէջ մնացին միաբանութեան պառակելուն սկզբնապատճառներն եղան. և շատ նշանակալից է Յովհաննէս և Յարութիւն պատրիարքէն ետքը Երուսաղէմի աթոռին շուրջը կատարուած անցուդարձերուն և միաբանութեան գամագիւտ ըլլալու արտաքին միջամտութիւններուն բաղադրութիւնը զի երբ Յովհաննէսի մահուանէ ետքը միաբանութեան մէջ տիրող միասիրտ և միախոհ միութիւնը յաջողութեան առաջնորդեց: Յարութիւնի վերջին ետքը բոլորովին տարբեր ձև մը առաւ գործը, միաբանութեան մէջ սերմանուած գժտութեանց և երկպառակութեանց երեսէն: Դժբախտաբար Եսայի պատրիարք անձնապէս ներքին կենաց ուղղութեան նւիրուած անձ մը, փորձառական պօրութենէ անմասն, այնպիսի միջոցներ թոյլատրեց, որոնք իր միտքին և իր ուղղութեան դէմ հետևանքներ արտադրեցին: Առ այժմ այս չափ միաբանութեան գործեր և միջադէպներ մեզի առիթ պիտի ընձեռեն աւելի մանրամասնութեանց մտնելու:

2789. ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Վարժարանէն ետքը Եսայի միտքին մէջ սևեռեալ գաղափարներէն երկրորդը տպարանն էր: Վանքին հիւսիս արևելեան կողմը վերնայարկի քանի մը սենեակներուն մէջ կազմուած նախնական տպարանը, ընդարձակելու և բարգաւաճելու յարմարութիւններ չունէր, և արդէն Կիրակոս պատրիարք տպարանի յատուկ շէնքի մը պէտք պգացած էր, և իր հրահանգով Յովհաննէս փոխանորդ պետական արտօնագիրը հանել տուած էր: Բայց Կիրակոսի վերահաս մահը և Յովհաննէսի գլխաւորապէս պատրիարքարանի և ձեմարանի և ուրիշ շինութեանց և ստացութեանց հետևիլը, տպարանի շինութիւնը յետաձգած էին: Եսայի պգաց նոր շինութեան մը անհնարութիւնը և մտածեց օգուտ քաղել տրամադրելի շինուածներէն: Վանքին կեդրոնական բակին հարաւակողմը կը գտնուէր ընդարձակ և հաստակառոյց շինուած մը 750 քառակուսի մէթը տարածութեամբ, Եղիապար Այնթապցի պատրիարքէն 1675-ին շինուած, ցամաքի ձամբով եկող ուխտաւորներու գրաստները պատսպարելու համար: Անոնց դադարելէն կամ նուազելէն ետքը այստեղը իբրև փայտանոց կը գործածուէր, և այս շէնքն եղաւ տպարանի վերածուածը: Նախ 1865-ին երկու երրորդ մասերը, և 1871-ին երրորդ մասն ալ մաքրուեցան և նորոգուեցան և յարդարուեցան և լաւ տպարանի մը վերածուեցան, տպագրական և վիմագրական և մանր գործոց մամուլներով, ճնշիչ գործիներով, ձուլարանով և կազմատունով և յարակից վաճառանոցով, այնպէս որ Երուսաղէմի տպարանը կրնար իբր կատարեալ հրատարակչական գործարան մը նկատուիլ: Ծախքերը ընդհանրապէս և առատապէս վանական սնտուկէն եղան, մեծկակ մամուլ մը 1866 օգոստոս 14-ին պատրիարքին հայրենակից Թալասցի եգիպտաբնակ Յակոբ Աշըգեանէ նուիրուեցաւ, որ երրորդ մասին վերածման և ձուլարանի կազմակերպութեան ծախքերն ալ վճարեց 1871-ին, իսկ արագաշարժ մամուլը 1891-ին արքունի շինուածապէտ Ներսէսեան Գրիգորէ նուիրուեցաւ (ՆՇՆ. 74): Տպարանի տեսչութիւնը յանձնուեցաւ Սաւալանեանի, և անոր յաջորդող տեսուչներուն ձեռքով Եսայիի 20 տարիներու մէջ, մեծ ու պլտիկ առաջին կամ կրկնուած

տպագրութիւններով 169 հրատարակութիւն կը հաշուուի Երուսաղէմի տպարանէն ելած, գլխաւորապէս եկեղեցական դիրքեր, նախնեաց մատենագրութիւններ և դպրոցական դասագիրքեր: Երուսաղէմի տպարանին հրատարակութեանց կարգին յատուկ կերպով նշանակելի է Սիոն ամսագիրը, 16 երեսէ բաղկացեալ մեծ ու ութածալ երկիջեան պրակներով, որոնց առաջինը լոյս տեսաւ 1866 յունուարին, և որ 12 տարի կեանք ունեցաւ: Արտօնութիւնը ստացուեցաւ կառավարիչ Իվվէթ փաշայի միջնորդութեամբ, իսկ խմբագրապետութիւնը դարձեալ Սաւալանեանի յանձնուեցաւ որ վարեց վայն գրեթէ միայնակ, ուսկից ետքը գործը անցաւ Մուրատեանի ձեռքը իր հասուցած աշակետրներով (ՆՇՆ. 52-54): Սիոնը նմանօրինակ հանդէսներէն աւելի բարձր բան մը չէ եղած, և որ յայտնի չէ թէ որ շրջանակի և որ դասակարգի սահմանուած է, պի իմաստասիրական և կրօնական ուսումնասիրութեանց հետ աշակերտական շարադրութիւններ կը յաճախէն: Նշխարք Ավգային պատմութեան մակագիրին ներքև Երուսաղէմի գրչագիրները շատ աւելի նիւթ կրնային մատակարարել, քան որչափ ինչ օգտուած է Սաւալանեան իսկ իր յաջորդները վայն բնաւ իսկ վանց ըրած են, որ պատմական ուսումնասիրութեանց համար շատ պիտանի գլուխ մըն է: Երուսաղէմի պատմական յիշականերուն և ժամանակակից դիպուածները ալ մեծ ուշադրութիւն դարձուցած չէ, բայց այս դիտողութիւններով մէկտեղ առաւելագոյն օգուտին տեսակէտը պէտք չէ եղէ մինչև եղածը ուրանալու: Ո՛ր էր թէ Երուսաղէմ այս որ ալ ունենար իր Սիսն ամսագիրը, գոնէ պարագայք ներէին Նոր Սիսն մը հրատարակել: Սաւալեան, մնշտ անձին պաշտպանութեան ձգտումով ոգևորուած, դարձեալ իրեն յաջորդներուն վրայ կը թողու Սիսնի դադարման մեղաշրանքը, թէ ոչ խոհեմագունի ձեռին վիճակեցաւ խմբագրութիւն նորին, քանպի փոխանակ յաւելլոյ այնու վապտիւ սուրբ աթոռոյն, նշաւակ կացոյց ըվգահակալ նորին անլուր անարգանաց և անծաւալի թշնամանաց, և արկ վիհ մեծ ի մէջ սուրբ աթոռոյն և եկեղեցւոյն Եգիպտոսի ի բարոյական և ի նիւթական վնաս միաբանութեան, և ոչ միայն այս, այլ և գժտութիւն և հակակրութիւն ձգեաց ի մէջ երկուց աթոռոց Էջմիածնի և Երուսաղէմի: Այս տողերով կուպէ ակնարկել սաղիմական կալուածոց Եգիպտոսի վարչութեան գրաւուելուն, և Գէորգ կաթողիկոսի ինչինչ գործոց մասին Սիոնի մէջ երևցած յօդուածներուն: Սակայն ճիշդ ըլլալու համար աւելի քան խմբագրութիւնը, պէտք էր պատրիարքը մեղադրէր որուն ծանր եկաւ Եգիպտոսի խնդիրին մէջ ձախողիլը, և չմոռցաւ Գէորգի Կ. Պոլսոյ մէջ Երուսաղէմի հանդէպ բռնած ընթացքը պատրիարքանալու փափաքով: Իսկ Սաւալանեանի համար անմարսելի բան մը դարձաւ Մուրատեանի իրեն նախադասուիլը, և այս պատճառով իր գրիչին հարուածները ուղղակի կամ անուղղակի դարձուց Եսայիի դէմ: Մենք ոչ Եսայիի և ոչ Մուրատեանի պաշտպանութեան պիտի մտնենք բայց պիտի չկարենանք լուել թէ Սաւալանեանի դիտողութիւնները աւելի անձնական վգացմանց հետևանք են, քան գործոց և պարագայից լուրջ կշռադատութեան:

2790. ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Երրորդ կէտը վոր Եսայի Կ. Պոլիսէ ստանձնած էր, և իրեն նուիրական պարտք կը սեպէր, թանգարանն էր, որուն ներքև կիմացուին մատենադարանը, գրչագիրները, հնութիւնները և հետաքրքրական առարկաները: Երուսաղէմի աթոռը տպագիրներու կողքին հարուստ չէ, և ինչ որ ունի աւելի անցած դարու գիրքերն են, որոնցմէ բազմաթիւ օրինակներ ալ ունի, գլխաւորապէս հին միաբաններու թողօններէն հաւաքուած: Գրչագիրներու հաւաքածոյն աւելի ճոխ է, որոնց մէջ կը գտնուին բաւական թուով վերջին դարերու ընդօրինակութիւններ և թարգմանութիւններ. սակայն կա՛ն և բազմաթիւ հնօրեայ ընտիր երկաթագիրներ: Ռուբինեան շրջանի պատկերապարդներ, եւ կարեւոր հին մատենագրութիւններ, որոնք այն ատեն ամփոփուած էին նախկին պատրիարքարանի

և յետոյ վարժարանի գործածուած սենեակին մէջ, և որոնց խնամեալ ցուցակը կազմած է Սաւալանեան: Իսկ այժմ շատ աւելի ճոխացած է գրչագրաց մատենադրանը, և հատորները վայելուչ և ապահով կերպով պետեղուած են Ս. Թէոդորոսի եկեղեցւոյն մէջ, և Սաւալանեան ցվուցակին 1742 թիւը հասած է 2720-ի: Գրչագիրներէն ետքը կու գան հնութիւններ և հետաքրքրական առարկաներ, որոնք այս առթիւ ամփոփուեցան և պետեղուեցան ճեմարանի որմերուն մէջ բացուած 12 դարաններուն մէջ: Այդ առարկաները, որոնց մէջ ամէն տեսակ բաներ կը գտնուին, մեծաւ մասամբ բերուած են հնդկաց նուիրակներէն, բայց պետեղումը եղած է առանց ուսումնական շարադասութեան: Նոյն տեսակ իրերէն լաւ մաս մըն ալ կը գտնուի պատրիարքարանի մեծ դահլիճին և խորհրդարանի դարաններուն մէջ, որոնք եթէ միացուին և ուսումնական ոճով պատուին և ճաշակով պետեղուին, բաւական ճոխ և այլապէս թանգարան մը կազմելու բաւական են: Չենք յիշեր մայրտաճարի գանձատան մէջ գտնուած արհեստական և արուեստակերտ արծաթեղեններ, դիպակներ, ասեղնագործուածներ և վանապան տեսակ սպասներ, որոնք իսկական և յարգի հնութիւններ են, բայց իրենց կրօնական նշանակութեան համար եկեղեցւոյ գանձատան մէջ ամփոփուած կը պահուին ամենայն խնամօք, և Վգուշաւորութեամբ լուսարարապետին հսկողութեան ներքեւ, և միայն կրօնական պարագաներուն գործածութեան կը հանուին և կը տեսնուին:

2791. ԾԱԽՔԵՐ ԵՒ ՊԱՐՏՔԵՐ

Վարժարան և տպարան և թանգարան Եսայիի համար պարտադրեալ գործեր էին, բայց ինքն իրեն համար յատուկ ճիւղ մըն ալ ունէր, Վոր արդէն յիշեցինք (2738), այն է լուսանկարչութիւն և կալվանեան գրութեամբ մետաղագործութիւն: Արհեստը Եսայիի համար գոգ բնապղական բերմունք մըն էր, և իր ճաշակն ու փափաքն ու գոհացումը կը գտնէր այդ ճիւղին մէջ, որչափ ալ այն օտար ըլլար եկեղեցական կոչումէն և անյարմար պատրիարքական պաշտօնին: Նա սիրով և մեծ գոհունակութեամբ իր ապատ ժամերը կը գործածէր արհեստական վրադումներու: Այդ նպատակին համար էջմիածինէ դարձին Կ. Պոլսոյ մէջ ալ ընդարձակ պատրաստութիւններ կատարած էր (2739), և Երուսաղէմ հասնելուն անոնց վարգացման համար ամէն միջոցներու ձեռնարկեց, Ս. Թէոդորոսի տանիքին վրայ յատուկ լուսանկարչական գործարան շինեց, պատրիարքարանի մէջ սենեակ մը կալվանականութեան գործարանի փոխարկեց, և բոլոր իր ուշնորուշը անոնց կատարելագործութեան դարձուց և արդիւնաւորութեան երևոյթներ տալ աշխատեցաւ, և ոչ մի ջանք և ոչ մի ծախք չխնայեց այդ նպատակին, և Ս. Յակոբեանց գործարանէն ելած լուսանկարեալ տեսարաններ իր յաղթանակը կը կազմէին, իսկ կալվանեան արհեստագործութիւնք կը ծառայէին անպիտան և աննշանակ իրեր ոսկեպօծելու և արծաթապօծելու կամ կաղապարելու, որոնցմէ սակայն իրական արդիւնք մը ստացուած չէր: Արհեստական ճիւղին մէջ իրեն գլխաւոր աշխատակիցներն եղան Եվեկիէլ վարդապետ Գէորգեան և Կարապետ սարկաւագ Գրիգորեան, երկուքն ալ Զմիռնիոյ նահանգէն, որոնք այնչափ ուժգնակի փարեցան արհեստին ու ճաշակին, որ սքեմն ալ անոնց Վոհեցին: Բայց պէտք կը Վգանք աւելցնել թէ Եսայի որչափ և օտարոտի վրադմանց վակատեալ, սակայն ոչ իր կոչումին անարգանք բերաւ և ոչ իր կրօնաւորական կենցաղը ստեց, այլ մնաց միշտ այն մաքուր ուղղութեան վրայ, Վոր գովութեամբ յիշատակեցինք արդէն (2787): Ուր որ Եսայի գթեց մատակարարական ճիւղն է: Անիշխանութեան ժամանակ Յովհաննէսի թողածը սպառած, և նոր ծանրութիւններ բարդուիլ սկսած էին, և որչափ ուզէնք ալ այդ ժամանակին վարիչները մեղադրել անվգոյժ ծախուց համար, պէտք չէ մտադրութենէ վրիպեցինք թէ մեծ տագնապ մը կար առջևնին, և աթոռական և միաբանական իրաւունքներու պաշտպանութիւնը կը ստիպէր, և գործը ամէն շահերէ գերագոյն էր

և ամէն գոհողութիւն կարդարացնէր: Թող որ անիշխանութեան անունն իսկ ինքնիրեն արդարացում կը կազմէ անհեռատես մատակարարութեան և անկանոն վարչութեան: Եսայի ընդհակառակն կանոնաւոր վարչութեան գլուխ կանգնած, համակիր պագսմամբ շրջապատուած, և կեդրոնական պաշտպանութիւնը ապահոված, նա կրնար պատշաճը խորհիլ, պարագաները քննել, պատեհը կշռել, հնարաւորին հետևիլ, անհնարէն խորշիլ, և արդիւնքէն բարձր ծախքերէ պզուշանալ: Նա պարտաւոր էր վարժարանին համար արդիւնքին անհամաձայն և հետևանքը կեղակարծ ծախքերը խնայել, տպարանին մէջ ծառայողները և բազմութիւնը յապաւել, և հրատարակութեանց մէջ ապարդիւնքէ պզուշանալ: Իսկ լուսանկարչութեան և կալվանագործութեան ճիւղերուն և ոչ իսկ մօտենալ: Միաբանութեան բարեկեցութեան համար անպայման գոհողութեանց չմատնուիլը, մեծութիւն և ճոխութիւն ցուցնելու համար եղած աւելորդ ծախքերու և տարադէպ պարագաներու դուռ չբանալ, և իր գործունէութիւնը ցուցադրելու համար երևոյթներու ոյժ չտալ. մինչ այս ամէն խոհական նախատեսութիւնները անտես եղան Եսայիի ձեռքին տակ, փոխառութեանց դուռը երկփեղկեայ բացուեցաւ որ և է տոկոսով և պայմանով, և այսպէս հետզհետէ բարդուեցաւ և աճեցաւ աթոռին պարտուց քանակը, որ Երուսաղէմի աթոռին մեծագոյն տագնապն եղաւ, և նիւթականէն բարոյական տագնապի փոխարկուեցաւ: Եսայի մտածեց նուիրակութեանց և հանգանակութեանց միջոցներով տագնապը դարմանել, և հետզհետէ յղուեցան Յակոբ եպիսկոպոս Յովհաննէսեան հայաբնակ ներքին գաւառներ, Ներսէս վարդապետ Գէորգեան Հնդկաստանի գաղութներուն, Երեմիա վարդապետ Տէր Սահակեան Ռուսահայոց կողմերը, Սիմէոն վարդապետ Սէֆէրեան Եւրոպական Թուրքիա և շրջակայ երկիրներ, Աստուածատուր վարդապետ Տէր-Յովհաննէսեան Պաղեստինի և Աքսորի քաղաքները, որոնք իբր 9000 օսմանեան ոսկոյ գումար կը բերին սնտուկին, այլ օգնեաց ինչ որ պարտուցն (ՍԱԻ.1402), զի շարունակեցին շուսլ և անխորհուրդ ծախքերը, զորս կը կարծէր արդարացնել, պայս պահանջէ ի մէնջ ազգն և ժամանակն պատասխանելով (ՍԱԻ.1399): Դրամատուներու մօտ եղող կտակեալ գումարներն ալ փորձեց վերցնել և մասամբ յաջողեցաւ (ՍԱԻ.1402), և մինչև իսկ մայր տաճարի գանձատան մէջ պատրաստ գումար գտնուիլը իմանալով, ուզեց վերցնել, բայց լուսարարապետ Կարապետ Ներսէսեան եպիսկոպոսի կողմէն դիմադրութեան հանդիպելով, գժտութեանց և անհամաձայնութեանց կերպարանը տուաւ գործին, և պայն պաշտօնապէս հեռացուց 1869 հոկտեմբեր 9-ի ժողովին մէջ, և Աստուածատուրեան Իսահակ եպիսկոպոսը լուսարարապետութեան կոչելով նպատակին հասնիլ կարծեց (ՍԱԻ.1434): Բայց այդ ձեռնարկը նպաստաւոր չեղաւ Եսայիի համբաւին և վարկին, զի Երուսաղէմի աթոռին մէջ հաստատուն կանոն էր լուսարարապետներուն անփոփոխելիութիւնը, յարևնման պատրիարքներու անփոփոխելիութեան:

2792. ԱՌԱՋԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

Երուսաղէմի աթոռին կառավարութեան համար Կ. Պոլսոյ Ընդհանուր ժողովը կանոնագիր մըն ալ կազմեր էր Եսայիի Կ. Պոլիս գտնուած միջոցին, և միաբանական հաւանութեան պայմանը լրացած կարծուեր էր լոկ Եսայիի հաւանութեամբը, որ մինչև իսկ ուխտ ալ ըրեր էր այդ կանոնագիրին վրայ (2739), և յանձնառու եղած էր պայն գործադրել տալ Երուսաղէմի մէջ: Այս կանոնագիրը, զոր 1865-ի նախնական կանոնագիր կը կոչենք, սահմանադրութեան հաստատուելէն ետքը առաջին կազմուածը ըլլալուն, վանական վարչութեանց սովորական եղող կէտերէն պատ ունէր ինչինչ պայմաններ ալ, որ նոր էին և Երուսաղէմի աթոռին և միաբանութեան դիրքին յարմար չէին գար և դիւրաւ պիտի չընդունուէին: Այս կէտերուն գլխաւորներն էին. պատրիարքին ուխտին Կ. Պոլսոյ Ընդհանուր ժողովին առջև ըլլալը (ԿՆԳ.3) և ոչ Երուսաղէմի մէջ,

մատակարարին կամ ելևմտից տեսուչին Կ. Պոլսոյ վանօրէից խորհուրդէն ընտրուիլը (ԿՆԳ.6), Ընդհանուր միաբանական ժողովի մը կազմուիլը իբրև աթոռին գերագոյն իշխանութիւն, մինչև 25 տարեկան կիսասարկաւագներու անդամակցութեամբ (ԿՆԳ.8), վարժարանական ծրագրին Կ. Պոլիսէ տրուիլը, և թանգարանին յօգուտ ազգին տրամադրուիլը (ԿՆԳ.10) յայտնի չըսելով թէ ի՛նչպէս, վանական իշխանութեանց տարին 50,000 դահեկանէ աւելի փոխառութիւն չկրնար ընել, առանց կեդրոնին հաւանութեան կալուած չկրնալ վաճառելը (ԿՆԳ.11), ի նպաստ կեդրոնական սնտուկին տարեկան 18,000 դահեկան վճարելը (ԿՆԳ.12) և վերջապէս Երուսաղէմին վանօրէից խորհուրդին ենթարկուած ըլլալը իբրև մի հասարակ վանք (ԿՆԳ.13): Չենք կրնար կարծել որ Եսայի այս ամէնը կատարեալ հաճութեամբ ընդունած ըլլայ, զի միաբանական իրաւունքներու հզօր պաշտպաններէն մին եղած էր ներսէն-դուրսէն խնդիրին ժամանակ: Հաւանաբար լաւագոյն դատած է ձևական հաւանութեամբ գործը վերջացնել, քանի որ գործադրութիւնը իրմէ կախում պիտի ունենար: Իրօք ալ վերոյիշեալ պայմաններէն գրեթէ և ոչ մին գործադրուեցաւ Եսայիի ձեռքով, և ամենայն ինչ ըստ առաջնոյն քալեց: Նոյն իսկ միաբանական Ընդհանուր ժողովի կազմութիւնն ալ, որ միաբանութեան նպաստատուոր կէտ մը պիտի ըլլար, ծանր եկաւ Եսայիի, երբոր նոր ուրարակիրներ և նորահաս երիտասարդներ ժողովականութեան իրաւունքով սկսան յատենի ժողովոյ խծրծել պատրիարքի աւագ պաշտօնակալներու և տնօրէն ժողովոյ գործերը, ուստի պարբերական գումարումները խափանեց, հապիւ անհրաժեշտ պարագայից առջև ժողովի հրաւիրելով, և այն մեծ զգուշաւորութեամբ: Ըստ այսմ կրնանք ըսել թէ 1865-ի կանոնագիրը մեռեալ տառ մնաց, և նոյն իսկ կեդրոնն ալ մտադրութիւն չդարձուց և խստապահանջ չեղաւ, զի արդէն կեդրոնին մէջ բահմանադրութիւնն ալ վերաքննութեան ենթարկուեցաւ (2758) և պաշտօնական գործադրութենէ դադրեցաւ: Կանոնագիրին անորոշ վիճակը շարունակեց 15 տարի մինչև 1880 երբ Կ. Պոլսոյ պատուիրակի ներկայութեամբ և միաբանութեան համաձայնութեամբ կանոններու նոր ծրագիր մը կազմուեցաւ և հաստատութեան առաջարկուեցաւ:

2793. USUՅՈՒԹԻԻՆՔ ԵՒ ՇԻՆՈՒԹԻԻՆՔ

Եսայի անխորհուրդ ծախքերը մեղադրեցինք, վարժարանին և տպարանին համար եղածները չափազանց, և լուսանկարչութեան և կալվանագործութեան համար եղածները աւելորդ նկատելով. բայց Եսայի ծախուց ուրիշ ճիւղ մըն ալ ունեցաւ, որ է կալուածական գնմանց և վանական շինութեան համար եղածները: Երուսաղէմի պատրիարքներուն պատուոյ կէտ մը դարձած է, հաստատուն ստացութիւն մը աւելցնելով կամ ստացութիւն մը բարւոքելով իր անունին յիշատակ մը թողուլ: Եսայի ալ այդ ձգտումէն վերծ չէր կրնար մնալ, ուստի գետին մը առաւ Պրոպատիկէի աւագանին մօտերը, երկու կրպակներ գնեց շուկայի մէջ, ընդարձակ ջրամբար մը շինեց Յոպպէի դուռնէն դուրս Յովհաննէսի ստացած գետնին մէջ, նոյն գետնին վրայ եղող սրճարանին ախոռներ աւելցուց, բազմածախս հետապնդութեամբ ազատեց Յոպպէի դրան մօտ եղող գետինը որ գրաւուած և օտարացած և գրեթէ կորած կը նկատուէր, բայց չյաջողեցաւ Թումայ առաքելոյ տուն կոչուած գետինը ձեռք ձգել, թէպէտ մեծամեծ զոհողութիւններ ըրաւ այդ նպատակին (ՍԱԻ.1399-1400): Նոյնպէս չյաջողեցաւ ձեռք ձգել Ս. Յարութեան տաճարին մօտ եղող խաղախորդարանին գետինը, որուն Յովհաննէս պատրիարք ժամանակին առաւելագոյն գին տուողն էր եղած, զի 1869-ին Բրուսիոյ գահաժառանգին այցելութեան առթիւ անոր նուիրուեցաւ, և վրայ լուղերականաց եկեղեցին կառուցուեցաւ: Այդ ամէն ստացութիւնք կամ ստացութեան հետապնդութիւնք նշանակութիւն ունեցող բաներ չէին, իսկ ինչ որ Եսայիի անունին իբր յիշատակ կրնայ նկատուիլ, վանքին մեծ դրան առջևէն անցնող նեղ փողոցը ընդարձակելն է, և սեղանատան ու պատրիարքարանի կամարներուն մէջ գտնուող մասը վայելուչ հրապարակի

վերածելն է, պարտէպին պատը ներս ընկրկելով, և պատին ետևը և կամարին ներքևը կրպակներ աւելցնելով: Թէպէտ այս կէտին վրայ ալ դիտողութիւն ընող կայ, թէ չէր արժեր տոկոսաւոր փոխառութեամբ շէնքեր բարեկարգել (ՍԱԻ.1400), բայց ինչ ալ ըլլայ գործածուած միջոցը այ փոխառութեամբ վանքին մուտքը պատշաճաւոր և պատուաւոր կերպարան մը առած է: Այստեղ յիշենք անցողակի, թէ 1869 տարին Սուէյի ժամ ջրանցքին լրման և բացման հանդէսին ներկայ գտնուելու համար Եգիպտոս գացող արքունական այցելուներէն, Երուսաղէմ ալ հանդիպեցան և Ս. Յակոբայ վանքն ալ այցելեցին, Իտալիոյ արքայորդին իշխան Ամէտէօ, Բրուսիոյ գահաժառանգը իշխան Ֆրիտրիխ (Փրեդերիկոս), և Աւստրիոյ կայսր Ֆրանց Եօլէֆ (Փրանկիսկոս Յովսէփ): Այս վերջնոյս Եսայի պատրիարք եկեղեցական շքեղ ընդունելութիւն կատարեց Վալերկա լատին պատրիարքին կատարածին հետևողութեամբ (ՍԱԻ.1434):

2794. ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ԽՆԴԻՐՆԵՐ

Երուսաղէմի պատրիարքներուն ճակատագիրն է սուրբ տեղեաց խնդիրներով ալ տագնապի, և Եսայիի ալ հնար չէր առանց անոնց մնալ: Այդ կարգին առաջինն եղաւ Քառտոնից այրին խնդիրը, որ 1849-ին յուլուած էր Լատինաց տիրապետել ուլելովը, և վերջապէս գործը նախկին վիճակին վերածուեր էր (2626): Սակայն ինչպէս այն ատեն ալ ըսինք, Լատիններ իրենց մտադրութենէն ետ կեցած չէին և 16 տարի ետքը խնդիրը նորոգեցին և 1865-ին օրուան մը մէջ դուռ կախելով և պատեր բարձրացնելով, և ուլեցին Հայերն ու Յոյները կատարեալ իրողութեան դիմաց դնել: Եսայի հաշտաբար բանակցութեան ճամբան նախադասեց, բայց յաջողութիւն չգտնելով Յոյներու միացաւ, որ իսկոյն բողոքի դիմած էին: Առաջ Երուսաղէմի մէջ քննութիւն բացուեցաւ, բայց մայիս 21-ին տեղւոյն վրայ վննութիւններ եղան և վկայութիւններ լսուեցան: Լատիններ փաստերու պակասութեան վրայ նախատինքներու դիմեցին, բայց վերջապէս յուլիս 17-ին Լատինաց շինութիւններ քանդուեցան, և այրը նախնական անշէն և անշուք վիճակին դարձաւ: Բարձրագոյն դուռ ալ տեղեկագրուեցաւ վերջնական հրաման մը ձեռք բերելու համար, բայց կայթղիկ դեսպաններու միջամտութիւններ վերջնական վճիռը արգիլեցին, և Լատինք օգտուեցան նորէն շինութիւններ և պարդեր աւելցնելու և տիրապետելու, և այնպէս ալ կը մնայ տակաւին (ՍԱԻ. 1403-1408): Ասկէ ետքն էր որ մարախի և հնտախտի աղէտները հասան Երուսաղէմի վրայ, և Եսայի արտաքին Ջանքերուն հետ հոգևորականներ ալ վանց չըրաւ, խաչափայտի և մասունքներու օրհնութիւններով և հսկումներով (ՍԱԻ. 1408-1410): Գերեզմաննոցները որմնափակելու համար 1866 փետրուարին տրուած պետական հրամանը նոր խնդրի դուռ բացաւ, զի Լատիններ որ արդէն հայ գերեզմաննոցէն մաս մը իւրացնելով սեփական գերեզմաննոց կազմած էին, ուլեցին այդ առթիւ տեղերնին ընդարձակել, և մուտքն ալ փոխանակ փողոցի կողմէն դնելու, Հայոց գերեզմանատան կողմէն թողուցին, և նոյն իսկ պատերու պեղումներէն օգտուելով գերեզմաննոցներ ալ խանգարեցին և ոսկրներ ցրուեցին: Խնդիրին սկզբնապատճառը գետինի մաս մըն էր, զոր Լատինք իրենց գերեզմաննոցին կուլուէին աւելցնել և Եսայի վճռապէս կը դիմադրէր, տեղական իշխանութեանց և կեդրոնական կառավարութեան դիմումներ ըրաւ ու կրկնեց ու շարունակեց, բայց ի վուր. զի կառավարիչ Իվլէթ փաշա վաստկուած էր և հիւպատոսներու բարեկամ, բարձրագոյն դուռն ալ դեսպանատուններու հետ մրցիլ չէր ուլեր, որով գործերը մնացին առկախ, և Հայոց գերեզմանատունին որմնափակումը յետաձգուեցաւ երկար երկար ատեն մինչև Յարութիւն պատրիարքի օրերը: Ս. Յարութեան տաճարին մեծ գմբէթին նորոգութիւնն ալ խնդրի նիւթ դարձաւ Լատինաց և Յունաց մէջ, որ վայն կատարելու իրաւունքին վրայ կը վիճէին: Հայեր թէպէտ իբր իրաւանց տէր չներկայացան, բայց ամէն միջոց ձեռք առին որ երից ազգաց հաւասար պատկանող գմբէթը մէկին կամ միւսին չսեփականուի, և

այսպէս ալ որոշուեցաւ, որ նորոգութիւնը օսմանեան կառավարութեան ձեռքով կատարուի, իսկ սեփականութիւնը երեք ազգերու պատկանի հաւասարապէս: Գործի ձեռնարկուեցաւ 1867 յունուար 2-ին, առաջուց իւրաքանչիւր ազգի վարդերուն թիւերը և տեղերը գիրի առնելով, որ յետոյ նոյն կերպով տեղաւորուին: Ս. գերեզմանը ազատ թողուեցաւ, և փոքր գմբէթին վրան փոփոխութիւն չկատարուեցաւ, և եկեղեցական պաշտամունք և արարողութիւնք անխափան շարունակեցին գրեթէ երկամեայ ժամանակ, որչափ տևեցին նորոգութիւնները (ՍԱԻ. 1412-1413):

2795. ԼԱՏԻՆԱՅ ՊԱՏԱՐԱԳՆԵՐԸ

Իրողութեանց նմանութեան քան թէ ժամանակագրական կարգի մտադիր, զի թուականներ բաւական են իրողութեանց կարգը ցուցնելու, աստէն կը մտնենք խօսիլ աւելի մեծ խնդրոյ մը վրայ, որ յղուեցաւ Հայոց և Լատինաց մէջ: Սովորութիւն էր Լատինաց տարին մէկ մէկ օր Հայոց երկու եկեղեցիներուն մէջ պատարագել, մէկը Ս. Յակոբ Ջեբեթեանի տօնին, նոր տոմարով յուլիս 25-ին, Ս. Յակոբայ Գլխագիրի սեղանին վրայ, և միւսը Լատինաց Հոգեգալուստին երկրորդ օրը՝ Ս. Փրկիչ եկեղեցին: Այդ սովորութիւնը իբր երկու վար հնութեան յիշատակներ ունի, բայց երբեք իրաւունքի կարգ անցած չէ, այլ լոկ բարեացակամ հաճութեան հետևանք է. զի իրաւունքներ ընկերովի պատկանող սուրբ տեղեաց համար հաստատուած են, և ոչ իւրաքանչիւրին յատուկ սեփականութեանց համար պատարագներուն ալ կը մատուցուէին պարզ կերպով առանց հիւպատոսական ներկայութեան և գործը կը շարունակէր առանց միջադէպի: Առաջին միջադէպի գրգռեց էտմոն Պարէր Գաղղիական հիւպատոսը, որ 1867-ի տօնին զինուորական հանդերձանօք և հանդիսութեամբ յանկարծ ներկայ եղաւ Ս. Յակոբայ մէջ Լատինաց պատարագին, գործին իրաւունքի ձև տալու դիտումով: Միւս տարին ինքն Եսայի պատրիարք կարգադրեց զինուորական հանդերձանքը և հիւպատոսին գալը արգիլուեցաւ: Բայց Լատինաց և Հայոց մէջ գրգռութիւնը արծարծած էր արդէն, և Ս. Յակոբայ տօնին օրէն քիչ առաջ 1869 ապրիլ 25-ին յանկարծական հրդեհ մը այրած է Ծննդեան այրին առաստաղին ծածկոյթը և Հայոց ու Յունաց շուրջանակի պատկերները և կանթեղները խորտակած: Երբոր Հայեր և Յոյներ ուլեցին այրածներուն տեղ նորեր փոխանակել, Լատիններ դժուարութիւններ յարուցին, որով մատնանիշ ըրին հրդեհին հեղինակներն ըլլալնին: Կառավարական հրամանով պատկերները պետեղուեցան, բայց մայիս 8-ին գողցուեցաւ Հայոց եօթը և յունաց մէկ պատկերները, և գաղտնիք մը չէր թէ որոնք էին գողութեան հեղինակները, թէպէտ Լատինք իրենց աստղին մէկ բևեռն ալ խախտած էին, իբր հաւասարապէս վնասուած երևնալու համար: Թէ տեղական իշխանութիւնը բարձրագոյն գրած և թէ Հայեր և Յոյներ Կ. Պոլսոյ պատրիարքներուն դիմեցին Լատինաց գործին ընդդիմութեանը համար, և հազիւ յուլիս 23-ին եպարքոսական հրամանով պետեղուեցան Յունաց պակսած պատկերը և Հայոց պատկերներէն երկուքը: Այս գրգռութեանց մէջ անցաւ 1869 տարին, որոնք զօրացած էին գերեզմաննոցի խնդիրներով ինչպէս պատմեցինք (2794): Բայց 1870 տարւոյ յուլիս 6-ին Լատիններ նոր խնդիր մըն ալ կը յուլեն՝ Հայերուն արգիլելով Բեթղեհէմի այրին հիւսիսային սանդուխը ալել, հակառակ հնօրեայ իսլանց, մինչև իսկ անաստելով կառավարիչ փաշային հրամաններուն: Լատիններ անիրաւութեանց չափը անցուցած ըլլալով այլ և պատարագելու արտօնութիւնները կամ բարեացակամ հաճութեան նշանները աւելորդ կը դառնային: Լատիններ մինչև իսկ եկեղեցւոյ մէջ խօսած քարոզովնին յայտարարած էին թէ աւազելի էր այսպիսի պատուական սրբավայրին հերետիկոսներու ձեռք մնացած ըլլալը, որով մեր եկեղեցին անարգած և թշնամացած էին (ՍԱԻ.1431), մինչ իրենք նոյն օրեր վատիկանեան ժողովով պապին անսխալականութիւնը վճռած էին, հակառակ սուրբ գրոց և հաւատոց, որով զստորագելիս աստուծայինս մարդոյ մահկանացուի ընծայած, և տիրապէս մոլորութեան մէջ ինկած կըլլային:

Եսայի պատրիարք այլ ևս անհանդուրժելի տեսնելով Լատինաց ընթացքը, երբոր 1780 յուլիս 13/25-ին նախատոնակին Լատինաց թարգմանը երգեհոնը կը բերէ պատարագին համար, կը մերժէ ներս առնել և կը վլանայ պատարագելու արտօնութիւնը, և իր մերժումը յուլիս 12-ի պաշտօնագիրով Բեամիլ փաշա կառավարիչին ալ կը հաղորդէ, թէ այդ որոշումը տուած է ի սակս պատճառաց ինչ որ կրօնականք են գլխովին, և որոց վասն հրահանգս ընկալեալ է ի կողմանէ սրբազան վեհին, որ է գլուխ ազգային եկեղեցւոյն մերոյ: Ասոր վրայ Լատինաց և Հայոց կողմէն հեռագիրները կը տրուին Կ. Պոլիս, առաջ սպառնալիքներ, յետոյ աղաչաւորներ, ի վերջոյ հաշտարար առաջարկներ կը յաճախեն, որպէսզի Լատիններուն պատարագը ներուի: Բայց Եսայի անյողդողդ կը մնայ իր որոշման վրայ, զոր կը հիմնէր գլխաւորապէս մեր եկեղեցւոյն մէջ մեզ նախատելուն և նորօրինակ վարդապետութիւն ստեղծելուն վրայ, և ամէն ոք իրաւունք կու տար պատրիարքին, նոյն իսկ կառավարական շրջանակներն ալ, երբ արտաքուստ իբր Լատինաց կողմնակից կը ձևանային: Ամիսէ մը օգոստոս 24-ին յատկապէս Կ. Պոլիսէ կու գար Միւնիք Էֆէնտի և քննութիւններ կը բանար, Երուսաղէմի կառավարիչ Բեամիլ և Դամասկոսի կուսակալ Ռէշիտ փաշաներու և Երուսաղէմի ու Դամասկոսի գաղղիական հիւպատոսներու ներկայութեամբ, սակայն արդիւնքի մը չէր յանգեր, և Եսայիի յառաջ բերած կրօնական պատճառները կը յարգւէին, թէ ոչ իրաւունք տալով, գոնէ հակառակ որոշման տեղի չտալով, այնպէս որ 1871 տարւոյ Հոգեգալուստին Ս. Փրկչի մէջ մատուցուելիք պատարագին արտօնութիւնն ալ կը վլացուէր Լատինաց: Մեծ ջանքեր կը թափէ Դամասկոսի գաղղիական հիւպատոսը հաշտարար և Վիշողական կերպերով Լատիններուն արտօնուելուն համար, այլ Եսայի ամուր կը մնայ իր որոշման վրայ, չանսար բարձրագոյն դուռնէն եկած հրամաններուն ալ, նոյն իսկ կընդդիմանայ Կ. Պոլսոյ պատրիարք Խրիմեանի կողմէ Լատինաց նպաստաւոր թելադրութեանց, և այսպէս փոխադարձ չարակամութեան երեսէն դադարեցաւ բարեկամութեամբ տրուած արտօնութիւն մը: Լատինք 1870-է սկսելով այլևս չկրցան պատարագել Ս. Յակոբայ և ոչ ալ Ս. Փկրչայ մէջ, թէպէտև մինչև հիմա ամէն տարի բողոքոյ գրութիւն մը անպակաս կընեն յուլիս 11/24-ին, տօնին նախընթաց օրը: Դրուատելու արժանի են այդ գործին մէջ Եսայի պատրիարքի ունեցած հաստատամտութիւնը և յօգուտ և ի պատիւ աթոռոյն ցուցած նախանձախնդրութիւնը, և մենք լիաբերան գովութեամբ կը յիշատակենք Վայդ, անաչառ պատմագիրի պարտք սեպելով իւրաքանչիւր գործողութիւն իր շրջանակին մէջ պահել և մէկը միւսին չխառնել: Ծախուց և մատակարարութեանց մէջ թերութիւնները փաստ չեն կրնար ըլլալ անոր բարոյական անձնաւորութիւնն ու օրինական նախանձայուլութիւնը նուազելու կամ ուրանալու:

2796. ԵՍԱՅԻ ՅԵՔԻՊՏՈՍ

Միևնոյն հոգւով էր ազդուած երբոր ուլեց Եգիպտոսի խնդիրը նորոգել, որ ժամանակով Երուսաղէմի վիճակ էր և ուր աթոռը բաւականաչափ կալուածներ ունէր, բայց 1839-էն ի վեր Գերմանիկցի Գաբրիէլ եպիսկոպոսի ձեռքով վիճակի Երուսաղէմի իրաւասութենէն ելած էր և կալուածներն ալ յօգուտ վիճակին գրաւուած էին: Բայց Երուսաղէմի աթոռը հրաժարած չէր իր հին իրաւունքէն, և մինչև իսկ Յովհաննէս պատրիարք խրատով և յորդորելով և մեծամեծներու միջնորդութեամբ աշխատած էր Գաբրիէլը հպատակութեան դարձնել, որ տակաւին կենդանի էր, և կալուածոց արդիւնքները ձեռք ձգել: Եսայի աթոռ բազմելով առաջին գործերէն մին ըրաւ Եգիպտոսի խնդիրը լուծել ի նպաստ Երուսաղէմի, և 1865 յուլիս 1-ին (ՍԱԻ. 1418), որ է ըսել Երուսաղէմ հասնելէն միայն 85 օր ետքը (2739), իրեն հետ Կ. Պոլիսէ եկող Իսահակ եպիսկոպոսը ձամբայ հանեց որ երթայ այդ նպատակին հետևի, և Եգիպտոսը Երուսաղէմի իրաւասութեան դարձնելու և կալուածներուն տիրանալու աշխատի: Սաւալանեանը այստեղ ալ իր անձնական

վզացմանց ասպարէզ տուած կը կարծենք, երբ իսահակի ձեռնունայն դառնալը կը վերագրէ պատուիրակին վուրկ ի կարևոր հանգամանաց և ի պատշաճաւոր խոհեմութենէ ըլլալուն (ՍԱԻ. 1418), զի մենք Իսահակը միշտ յաջողակ գործունէութեան վրայ տեսանք, իրեն միաբանութեան ամբողջական յարգը գրաւած, և մայրաքաղաքին մէջ խնդիրներու յանձնարարութեամբ և ժողովներու անդամակցութեամբ պատուուած: Խնդիրը իր ներքին պարագայից մէջ չըսենք անհնարութեան, գոնէ սաստիկ դժուարութեանց առջև կը գտնուէր: Եգիպտոս իր դիրքով բարձրացած և իր ժողովրդով յառաջդիմած, և 26 տարիէ ի վեր ազգային վարչութեամբ կառավարուած, չէր կրնար Երուսաղէմի ներքև պարզ տեսչութեան վերադառնալ. իսկ կալուածներն ալ այսչափ տարիներէ ի վեր ազգային պէտքերուն ծառայած, հնար չէր ձեռքէ հանելով տիրող կացութիւնը խանգարել: Ըստ այսմ պէտք էր փոփոխակի զիջումներով միջին եղանակ մը գտնել, և Իսահակ այդ զիջողութեանց հրահանգ չունէր, և ինչ որ կրցաւ խորհիլ ու խօսիլ, հարկաւ իր պատրիարքին հաղորդելու պէտք ունէր, և ասոնք եղած են անշուշտ իր պատուիրակութեան մասին բերած տեղեկութիւնները: Եսայի իր նախանձախնդիր սկզբունքներու մէջ ամուր չէ համոզուած բերուած տեղեկութեանց կամ առաջարկութեանց, և միտքը կը դնէ անձամբ գործել, և իր բարձր դիրքով և անձնական գործունէութեամբ նպատակին հասնիլ: Այս դիտմամբ Իսահակի երթալէն ճիշդ երկու տարի ետքը 1867 յունիս29-ին կը մեկնի Երուսաղէմէ, Ներսէս Գէորգեան, Աստուածատուր Տէր-Յովհաննէսեան և Մատթէոս Նապարեան վարդապետներու ուղեկցութեամբ, և յուլիս 2-ին Յոպպէ, և 4-ին կը հասնին Աղէքսանդրիա (67. ՍԻՈ. 106): Այս ուղևորութեան իբրև նպատակ կը խոսուէր Իսմայիլ փաշայի սուլտան Ապտիւլպաիպէ ընդունած արտօնութիւնները և իշխանութիւնները և խտիվական կոչումը շնորհաւորել, լռելով բուն նպատակը, զոր սակայն շուտով կրնային գուշակել Եգիպտոսի հայաբնակութեան դիւանագէտ մեծամեծները: Թագւոր Յակոբեան բնիկ Ջմիւռնացի, Աղէքսանդրիա հաստատուած, Եգիպտական փոխարքայութեան աստիճաններով և գործերով փառաւորուած, և բարերարութեամբ և իմաստուն վարչութեամբ ազգային երախտաւորաց ճանչցուած, Եսայիի շքեղ ընդունելութիւն կը պատրաստէ, իր ասպարանքին մէջ կը հիւրընկալէ, ամէն տեսակ պատիւներ կը շնայլէ, և կամաց կամաց Եսայիի բուն նպատակին վրայ խօսելով կը յորդորէ կալուածները վերադարձնելու վրայ չպնդել, այլ վիճակը Երուսաղէմի դարձնելով գոհանալ, և կալուածոց յօգուտ հասարակութեան գործածուելուն հսկել: Եսայի գուցէ իրաւասութենէն աւելի կալուածներուն հետամուտ էր, ուստի Աղէքսանդրիայէ կանցնի Գահիրէ, և խտիվի ունկնդրութենէն ետքը ազգային մեծամեծներուն հետ խօսքի կը մտնէ, բայց Աղէքսանդրիոյ առաջարկէն տարբեր բան չի լսեր: Մեծամեծներ դիմադրութիւննին աղաչանքի ձևին կը ներկայեն, գթալ Եգիպտաբնակ ժողովուրդին և մանկութեան, և միջոցներէ կապտելով խեղճութեան և անդաստիարակութեան չմատնել: Այդ աղաչաւոր լեզուն տկարութիւն կարծուեցաւ Եսայիէ, ուստի առանձինն և ի հրապարակի և մինչև իսկ յատենի եկեղեցւոյ բուռն և յանդիմանական և սպառնական լեզու գործածել իր իրաւանց պաշտպանութեան համար: Ժողովուրդը զայրացած սկսաւ հակառակութիւն ցոյց տալ, և մինչև իսկ եկեղեցւոյ մէջ խօսիլը արգիլել: Այն ատեն կառավարութեան կը դիմէ, հրովարտակներ և մուրհակներ կը ներկայէ, փաստաբանական ձեռնարկներ ալ կը փորձէ կալուածոց սեփականութիւնը հաստատելու, բայց արտաքին գործոց նախարարութիւնը բաւական չգտներ ներկայուած փաստերը կալուածներուն տիրապետութիւնը Եգիպտոսէ Երուսաղէմի փոխանցելու համար: Երբոր այն փորձն ալ կը ձախողի ետ դառնալէ ուրիշ ելք չգտներ, կիջնէ Աղէքսանդրիա, և Թագւոր Յակոբեանէ կրկին պատուասիրելով կուղևորի Երուսաղէմ, ուր կը հասնի 1868 յունուար 8-ին, այս անգամ ալ ծննդեան տօնախմբութեանց լրանալուն յաջորդ օրը, և վեց ամիս ու տասն օր

բացակայութենէ ետքը: Միաբանութեան տուած տեղեկութեանց մէջ պատեհին անյաջողութեան վրայ պնդելով կը յանձնարարէ ոչ բնաւ ձեռնթափ լինել յիրաւանց սուրբ աթոռոյն, մինչև ի պատեհ ժամու մտանել ի ժառանգութիւն իւրեանց (ՍԱԻ.1421): Այդ յանձնարարութիւնը կը ցուցնէ թէ իրաւասութենէ աւելի կալուածներն էին Եսայիի նպատակը, և իրաւասութեան դադարումը շատ չէր ծանրանար անոր միտքին վրայ:

2797. ԵԳԻՊՏՈՍԻ ԽՆԴԻՐԸ

Ըստ այսմ պիտի իմանանք այն ամէն ջանքերն ու փորձերը, զորս Եսայի շարունակեց Եգիպտոսի խնդիրին շուրջը իր անյաջող արշաւանքէն ետքն ալ: Այդ կարգին առաջիններէն մին եղաւ Գէորգ կաթողիկոսի և անոր ուղղակի իր իշխանութեամբ կամ միջնորդութեամբ Ռուսիոյ պետութեան ձեռնտուութիւնը խնդրելը, որպէսպի Իկնաթիէվ դեսպանը թէ դիւանագիտական միջոցներով և թէ Թագուր Յակոբեանի ռուսական հպատակութենէն օգտուելով Եգիպտացւոց վրայ ծանրանայ, և Երուսաղէմի կալուածները աթոռին դարձնելու ստիպէ: Սակայն այդ փորձէն ալ արդիւնք մը չկրցաւ ձեռք ձգել, գուցէ այս պատճառով կաթողիկոսին հանդէպ հակակրօնութիւնը շատցաւ: Եսայի Կ. Պոլսոյ պատրիարքարանին ալ դիմեց, որպէսպի իր կեդրոնական իշխանութեամբ յօգուտ Երուսաղէմի վճիռ արձակէ սաղիմական կալուածոց մասին և վճիռը գործադրէ, բայց կեդրոնական վարչութիւնն ալ չհամարձակեցաւ կտրուկ վճռով մը Եսայի գոհացնելու համար Եգիպտոսը ցաւցնել, և գոհացաւ յետաձգել Մեսրոպ եպիսկոպոս Սուքիասեանի անձին վրայ Եգիպտոսի կատարուած առաջնորդական ընտրութեան հաստատութիւնը, և որոշեց Իգնատիոս եպիսկոպոս Գագմաճեանը Եգիպտոս յղել իբր բննիչ և իբր հաշտարար համաձայնութեան միջնորդ: Սիմէոն եպիսկոպոս Սէֆէրեան Երուսաղէմի փոխանորդն ալ ընկերացաւ Գագմաճեանի, թէ իբրև կեդրոնին կողմէ օգնական և թէ իբր Երուսաղէմի կողմէն ներկայացուցիչ: Երկուքը միատեղ Գահիրէ հասան 1869 յունուարին, Եսայիի մեկնելէն տարի մը ետքը, և համուկեր փաստերով և պիջողական ձևերով համաձայնութեան յանգելու յաջողեցան: Գահիրէի մէջ երեք տուները միայն վիճակին թողլով մնացեալ տուները Երուսաղէմի դարձուցան. Աղեքսանդրիոյ մէջ Մէհմէտալի փոխարքային յանուն ազգին նուիրած գետինին հետ մաս մըն ալ Երուսաղէմի սեփական գետինէն վիճակին թողլով, մնացեալ գետինը և շէնքերը Երուսաղէմի յատկացուցան, միայն թէ կալուածագիրներու փոխանակութիւնը յապաղեցաւ դատարանին առջև, և Սէֆէրեան գործին լրումը ի կախ թողլով Կ. Պոլիս դառնալ պարտաւորուեցաւ: Գործը աւարտելու համար Երուսաղէմէ եկաւ Աստուածատուր վարդապետ Տէր-Յովհաննէսեան, բայց որչափ ալ երկուստեք համաձայնութիւնը հաստատուած էր, սակայն դատարանական ձևակերպութեանց պահանջները և կալուածին մէկ բարոյական անձնաւորութեան փոխանցումը դատարանական օրինաց անհամաձայն ըլլալուն, և անհատական անձնաւորութեան միջամտութիւնը անհրաժեշտ ըլլալուն, դարձեալ գործին օրինական վերջաւորութիւնը յապաղեցաւ, և հակառակ ջանից նախարար Նուպար փաշայի և պաշտօնակալ Թագուր պէյի, ժամանակ մը ևս ի կախ մնաց Եգիպտոսի սաղիմական կալուածոց օրինական վերջաւորութիւնը: Իսկ իրաւասութեան խնդիրը միանգամ ընդ միշտ վերջացած նկատուեցաւ, պի Երուսաղէմի աթոռին ենթարկեալ թեմեր ազգային վարչութիւն չունէին, և Եգիպտոս այդ ձևին ենթարկեալ անհնար էր, ուստի Մեսրոպ եպիսկոպոս Սուքիասեանի ընտրութիւնը կեդրոնէն հաստատուեցաւ, և 1839-ին սկսած անջատումը օրինաւորութիւնն զգեցաւ և տևական դարձաւ:

2798. ԵԹՈՎ ՊԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Այդ միջոցին կատարուած իրողութեանց մէջ նշանաւոր է Երուսաղէմէ եկեղեցական պատգամաւորութեան մը Եթովպիա դրկուիլը, որ թէպէտ ազգային կեանքին և եկեղեցւոյն հետ

ներքին յարաբերութիւն չունի, այլ իբրև հետաքրքրական միջադէպ մը հարկ կը սեպենք գոնէ համառօտ տեղեկութիւն մը տալ անոր մասին, քաղելով Սափրիչեան Տիմոթէոս վարդապետի ընդարձակ տեղեկագրութենէն, որ պատուիրակներէն մէկն էր: Եթովպիա կամ Հապէշիստան կամ Խափչիկներու երկիր, թէպէտ հին աշխարհի մաս, բայց գրեթէ անծանօթ մնացած երկիր մըն է, որնէ վարգացումէ և կրթութենէ զուրկ, և թէպէտ քրիստոնեայ, բայց ամէն տեսակ զեղծումներու և աւելորդապաշտութիւններու մատնուած: Դաւանութեամբ միաբնակներու ճիւղին կը պատկանի և այս տեսութեամբ սուրբ տեղեաց մէջ Ասորիներու և Ղպտիներու հետ Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան հետևակներէն է, և նոյն պատրիարքութեան հովանաւորութիւնն ու օժանդակութիւնը կը վայելէ: Օսմանեան երկիրէն դուրս գտնուելուն՝ Եթովպացիներ Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքութեան ուղղակի ենթարկուած չէին սեպուեր, բայց օսմանեան կայսրութեան մէջ գտնուողներ միշտ Հայոց պատրիարքարանէն կը հովանաւորուէին: Իսկ քաղաքական կազմութեամբ գաւառ իր բացարձակ իշխանն ունէր, որոնք սակայն աւատական գրութեամբ իւրեանց գլուխ թագաւոր մը կամ կայսր մը կը ճանչնային, ոչ ժառանգական իրաւամբ այլ հզօրագունին տիրապետութեամբ որոշուած: Այդ տիտղոսը 1852-էն սկսելով կը կրէր Թէոդորոս, որ յառաջէն Քաոսա կը կոչուէր, և Ամարայի Ռաս կամ իշխան Ալիի փեսայանալով և 1846-ին թշնամանալով անոր կը յաղթէ (ՍԱՓ.Բ.90), և հետզհետէ ուրիշ իշխաններ ալ նւաճելով թագաւոր կօծուի 1852-ին Թէոդորոս անունով, և մինչև 1859 գովելի և օգտակար իշխանութիւն կը վարէ, իսկ անկէ ետքը անգութ և անիրաւ բռնաւոր մը կը դառնայ (ՍԱՓ.Բ.95), և բոլոր իշխանները իրեն դէմ կը գրգռէ: Իրեն հետ բարեկամներ և խորհրդականներ ունէր Երոպացիներ և ուրիշ ճերմակ մարդեր, որոնց կանսար, և գլխաւոր մտերիմն էր Քամերոն հարիւրապետ, անգղիական հիւպատոսը. սակայն Գերմանացւոց և Գաղղիացւոց թելադրութիւնները կամաց-կամաց կասկածելի կընեն վայն Թէոդորոսի աչքին, որուն կողմէ Անգղիոյ թագուհւոյն ուղղուած նամակի մը միջադէպ, և հիւպատոսին խրոխտ պատասխանները Թէոդորոսը կը վայրացնեն, և կը հրամայէ հիւպատոսին ոտքերը և յետոյ ձախ ձեռքն ալ շղթայի վարնել: Փակուած և վատուած բանտերու սովորութիւն չգտնուելուն Եթովպիոյ մէջ, հասարակ բանտարկութեան ձևը այս էր (ՍԱՓ.Բ.104): Գաղղիացի մը յաջողեցաւ ևսքանվազ գրգռել Թէոդորոսի կասկածները անգղիացւոց և գերմանացւոց դէմ, որոնք 1866-ին վերջին ամիսները շղթայակապ Մակդալա լեռը ղրկուեցան, որ Եթովպացւոց անառիկ և ապահովագոյն տեղն էր: Լուրը Անգղիա հասնելուն՝ թագուհւոյն անունով ու նամակով ու ընծայներով Ռասամ անունով պատգամաւոր մը ղրկուեցաւ որ յաջողեցաւ շղթաներէ ազատել, բայց նոր քսութիւններ Ռասամն ալ կասկածելի դարձուցին, և այս անգամ ալ նա և իրեն հետ եկող Տիգրանակերտցի Պետրոսն ալ և առաջուան շղթայուածները ալ ծանր շղթաներով Մակդալայի մէջ բանտարկուեցան (ՍԱՌ.Բ.105): Անգղիացւոց տէրութիւնը չդուպեց իսկոյն բռնի միջոցներու դիմել, և ուզելով օգուտ քաղել Թէոդորոսի կրօնական զգացումներէն, և իմանալով որ Հայոց դաւանակից են և Երուսաղէմի մէջ Հայոց պատրիարքին հովանաւորութեան ներքև կը գտնուին, անգղիական դեսպան Լորտ Լայնսի ձեռքով Կ. Պոլսոյ պատրիարքին կողմէ միջնորդութեան գիր մը գրուի Թէոդորոսի և պատգամաւորի մը ձեռքով յղուի: Պօղոս պատրիարք հաւանեցաւ առաջարկին, պատշաճ գիրերը յանձնեց դեսպանին, և սա ալ յղեց Երուսաղէմի անգղիական հիւպատոսին, որ 1867 մարտի սկիզբները ներկայացաւ Եսայի պատրիարքին և ներկայեց Կ. Պոլսոյ դեսպանատան և պատրիարքին գիրերը և մտածուած առաջարկը (ՍԱՓ.Բ.105) Եսայի հաւանեցաւ և տնօրէն ժողովով որոշուեցաւ պատշաճ գիրեր պատրաստել և եպիսկոպոս մը ու վարդապետ մը պատգամաւոր յղել: Ազատ և հրամայական ընտրութիւնը դժուար էր՝ նկատելով գործին պարագաները, ուղևորութեան անստոյգ և տաժանակիր և վտանգաւոր հանգամանքները, ուստի

գոհութեամբ և գովութեամբ ընդունուեցան ժողովին անդամներէն Աստուածատուրեան Իսահակ եպիսկոպոսի և Սափրիչեան Տիմոթէոս վարդապետի ինքնյօժար յանձնառութիւնները: Պատրաստութիւնները կատարուեցան, գիրերը շարադրուեցան, որոնց մէջ ականակուռ խաչ մը կենաց փայտի մասունքով. հիւպատոսարանն ալ յանձնեց դեսպանին գիրը և իր կողմէն ալ բոլոր անգղիական ներկայացուցչաց յանձնարարականներ, և Եպեփէլ Թագւորեան Ղուրապէլէնցի միաբանն ալ իբր փոքրաւոր նշանակուեցաւ (67. ՍԻՕ. 50-51):

2799. ԵԹՈՎ ՊԻԱ ԳԱՅՈՂ ՆԵՐ

Պատրիարքի օրհնութեամբ և միաբանակցաց բարեմաղթանօք մեկնեցան Եթովպիա գացող պատգամաւորներ 1867 ապրիլ 1-ին Երուսաղէմէն և 2-ին Յոպպէէ, 3-ին հասան Աղէքսանդրիա և 6-ին Գահիրէ: Անգղիական ընդհանուր հիւպատոսին ներկայացան, որ կառաջարկէր Ատէնի վրայէն Մասաւա կամ Մուսաւա անցնիլ, բայց պատգամաւորներ նախընտրեցին անգղիական ճամբով չերթալ կասակած չպարթուցանելու համար, և ամսուն 11-ին երկաթուղիով չուեցին Սուվէիչ, ուր շոգենաւերու օրին սպասելու պարտաւորուեցան, բայց օգուտ քաղեցին ապրիլ 16-ին Զատիկն ալ այնտեղ ընել, գաղղիական հիւպատոսին տան մեծ սրահին մէջ ժամերգութիւն կատարեցին, և ջրանցքին վրայ աշխատող հարիւրէ աւելի հայ գործաւորներու և այնտեղ բնակող հայազգիներու ներկայութեամբ և հետերնին ունեցած սուրբ խորհուրդով հաղորդեցին և խրատով մխիթարեցին, և տկար ըլլալով Շարլուֆի գործատեղին մնացողներուն ալ վարդապետը այցելեց, մխիթարեց և հաղորդեց: Վերջապէս ապրիլ 28-ին Սուէիշէ նաւարկելով մայիս 3-ին կը հասնին Ճիտտէ, ուր կը հանդիպին վգուշարանին բժշկապետ Ֆրանկիւլ Մալէպեան, և ուրիշ ազգայիններու: Կարևոր յանձնարարականներ ստանալու և շոգենաւ հանդիպցնելու համար 12 օր կը մնան Ճիտտէ և հանդիպակաց Սեվազին կամ Սուտքին կանցնին, 5 օր ալ վգուշարանին մէջ մնալով ելլալուն կառավարիչէն կը պատուասիրուին (ՍԱՓ. Ա. 6-15): Ճանապարհին համար հեծնալիք և բեռնակիր ուղտերու պատրաստութիւնը և ճանապարհին առաջնորդ շէյխին հետ սակարկութիւնը 4 օր կը տևեն, և մայիս 25-ին Սուաքինէ մեկնելով 12 օրէն կը հասնին Քեսելա: Ուղևորութեան առաջին օրը սաստիկ փոթորիկներու, կայծակներու և տարափներու կը հանդիպին, և հետի քալել ալ կը ստիպուին. բայց մնացած օրերը յաջող կանցունեն: Յունիս 11-ին կը մեկնին Քեսելայէ և 8 օրէն կը հասնին Կատարիֆ, 3 օր Աթպարա գետին եպերքը մնալով յորդած ըլլալուն համար, և ուր ուրեմն ուղտերու վրայ ի լող անցնելով: Յունիս 23-ի Կատարիֆէն կը մեկնին և 5 օրէն կը հասնին Կալլապատ, Եթովպիոյ և Եգիպտոսի սահմանագլուխը, ուր կիշխէր Ճիւմա շէյխը Թագրուրի ցեղէն, երկու տէրութեանց կողմէն ճանչցուած և հաստատուած: Անկէց անդին եթովպացի իշխանները Թէոդորոսի դէմ ելած և պատերազմի մէջ ըլլալուն և ճամբաները գոց ու վտանգաւոր նկատուելով, Ճիւմա իրեն մոտ կը պահէ և կը հիւրասիրէ մինչև որ ստոյգ և ապահով լուեր առնէ (ՍԱՓ. Ա. 22-23), և երբ կառնէ յուլիս 6-ին ճամբայ կը հանէ (ՍԱՓ. Ա. 25), բայց միայն յուլիս 27-ին Եսայեայ մարգարէին տօնին օրը կը հասնին Ըսար-Ամպա, շատ մը փորձանքներ անցունելէ ետքը, պարտաւորուելով լարծուն ժայռերէ սահիլ, անկոխ անտառներ ձեղքել, մերկանալով գետերէն անցնիլ, ցեխանման հացերու կարօտ քաշել, և անբարեսէր ուղեկիցներէ նեղուիլ: Այս պատճառներով Եպեփէլ փոքրաւոր կը հիւանդանայ և կը մեռնի յուլիս 20-ին և մարմինը հոգին կը յանձնեն Գիտան-Մերեթ լեռան եկեղեցին: Այստեղ կիմանան որ ձմեռանային եղանակին և գետերուն յորդորուն և երկրին պատերազմական վիճակին մէջ ըլլալուն պատճառով դժուար է թագաւորին երթալ, որ երեք օրուան ճամբայ հեռու Կէլպի-Թափօր կը գտնուի եղեր, ուստի կը պարտաւորուին Ըսար Ամպայի մէջ դադարիլ, ուր երկու կողոպտուած Նապարթեցիներու կը հանդիպին, մէկը ճրրճիո օրթոտոքս և միւսը Էլիաս քրիստոնէութիւնը ընդունած, զորս իրենց

սպասաւորութեան կընդունին և մինչև վերջը քովերնին կը պահեն: Յուլիս 27-ին հասած էին և հապի սեպտեմբեր 9-ին հնար կըլլայ լուր տանող սուրհանդակ մը հանել դէպի Կէլպի Թափօր, որուն պատասխանն ալ հոկտեմբեր 4-ին կը հասնի թագաւորին բարևներով և գոհունակութեան արտայայտութիւններով, ծանուցանելով միագամայն որ պէտք է սպասեն մինչև որ հնար ըլլայ կամ իրեն գալ կամ պինուոր պրկելով պիրենք բերել տալ: Իրենց ապրուստին համար ալ հրամաններ տուած կըլլայ թագաւոր, որոնք սակայն ըստ արժանւոյն չեն գործադրուիլ Ըսար Ամպայի և Արպ' ամպայի իշխաններէն Թէոդորոսի համակիր չըլլալուն համար (ՍԱՓ. Ա. 47-48): Պատգամաւորները յոյս կառնեն և հոկտեմբեր 11ին արաբերէն նամակ մը կը յղեն թագաւորին Մէհմմէտ Եօնուկ մահմետական բարեկամի մը ձեռքով, որ 15-ին Կէլպի-Թափօր կը հասնի և անձամբ նամակը կը յանձնէ թագաւորին ձեռքը, որ ի նշան մեծի գոհունակութեան ջորի մը կը պարգևէ թղթաբերին, պատասխանն ալ կը գրէ և Ըսար Ամպայի իշխաններուն ալ նոր յանձնարարութիւններ կը յղէ, սակայն նամակը բերողը բոլորը մէկէն իշխաններուն կը յանձնէ, որոնք ոչ միայն պատգամաւորներուն նամակը չեն յանձներ, աայլ և կը սկսին խեթիւ նայիլ անոնց թագաւորին հետ մտերմութիւննին տեսնելով, որուն իրենք դէմ էին և յայտնի ապստամբութիւն կը խորհէին: Ասով մեկտէղ պատգամաւորները կը յուսան մօտ օրէն թագաւորը տեսնել և յաջող արդիւնք մը ձեռք ձգել: Բայց ճիշդ երբ այսպիսի յոյսեր կը տածէին յանկարծ կացութիւնը կը փոխուի, պի անգղիական պետութենէ յղուած հնդիկ բանակի մը Ռոպէրթ (Հոբերդոս) Նաիրէր պօրավարի հրամանատարութեամբ Զուլչա նաւահանգիստը ցամաք ելած ըլլալը կը լսուի, և մեք, կը գրեն պատգամաւորները, խոր տրտմութեան մէջ թաղուած մնացինք կարծէս թէ խաւար ամպեր մեր դին պատեցին:

2800. ԱՆԳՂԻԱԿԱՆ ԱՐՇԱԽԱՆՔԸ

Անգղիական կառավարութիւնը բռնական կամ պինուորական ոյժ գործածելէ խուսափելով Հայոց պատրիարքարաններուն միջնորդութեան դիմեր էր, և անշուշտ հաշտաբար արդիւնքի մը ակնկալութիւնն ունէր: Իր առաջարկը կատարուած էր Հայոց կողմէ, սակայն արտաքին պարագայք արգիլեր էին անոր արդիւնքը տեսնել, և յուլիս 25էն ի վեր պատգամաւորներուն ուղևորութիւնը արգիլուած էր, և եղանակաց խստութիւնը, մանաւանդ երկրին քաղաքական վիճակը, ապստամբութեան տարածուիլը և Թէոդորոսի հետզհետէ պօրութենէ և ապրեցութենէ իյնալը նպաստաւոր չէին ակնկալեալ արդիւնքը յառաջ բերելու: Այս տեսութեանց ներքև տրուեցաւ պինուորական միջոցին դիմելու որոշումը, և հրաման եղաւ Նաիրէր պօրավարին 30,000ի հնդիկ բանակով մը Եթովպիա արշաւել (68.ՍԻՌ.417), և ըստ այսմ ալ 1867 հոկտեմբերի մէջ հինդկական բանակը ցամաք ելաւ Զուլչա նաւահանգիստը, և շուտով լուրը հասաւ Թէոդորոսի և պատգամաւորներուն ինչպէս ըսինք (2799): Պատգամաւորներուն կրած տպաւորութիւնը տխրութիւն և գրեթէ յուսահատութիւն էր, պի նպատակնին վրիպած տեսնէին և իրենց ապահովութիւնը վտանգուած. իսկ Թէոդորոսի պագումը երկիւղ և սարսափ եղաւ, պի երկիրը իրեն հետ չէր, իսկ թշնամի պօրաւոր էր: Երբոր լուրը հասաւ, Կէլպի-Թափօրի շրջանակները հնապանդեցնելու և Ըսար-Ամպա գալու վրայ էր, բայց պինքն այլ ևս ապահով չպգալով Կէլպի-Թափօրի բնակութիւնները, այսինքն հիւղերը կիրակի տուաւ, և յառաջեց դէպի Սակտելա լեռը, որ ինչպէս ըսինք ապահովագոյն տեղն էր, իբրև բնական դիրքով անառիկ և անմերձենալի բերդ մը, և որ ինն օրուան ձամբայ հեռու էր Ըսար-Ամպայէ: Շուրջը գտնուող եւրոպացիներէն ալ վստահութիւնը վերցուց և սկսաւ անարգել և Մակտելայի բանտարկեալներուն վրայ ուլեց մօտէն հսկել, պորս շատցուցեր էր (ՍԱՓ.Ա.52), և նոյն իսկ պիտի եպիսկոպոս Սելամիէն ալ անոնց խառնած էր իբրև ապստամբութիւն գրգռող: Նաիրէր ոչ իսկոյն յառաջեց, և ոչ կրնար յառաջել,

անկոխ առապարներէն և վիհերէն, լեռներէն և անտառներէն իր բանակը չէր կրնար քալել, պաշարի պատրաստութիւն ալ չունէր, և իր ետևը ապահով կուզէր պահել: Ուստի ամիսներ անցուց Ջուլշայէն Մակտելա 650 քիլօմէթր երկարութեամբ հարթ ճամբայ պատրաստելու, ճամբուն վրայ մթերանոցներ և շտեմարաններ կազմելու և պարենաւորելու (67.ՍԻՈ.413), հեռագիր ալ գրաւ և 19 քիլօմէթր տեղ ալ դաշտային մասին մէջ երկաթուղի հաստատեց: Իր բանակէն 14,000 հոգի արշաւանքին յատկացուց, մնացեալներուն յանձնեց նաւահանգիստը և յարաբերութիւնները պահել, և ուղիներու և պարեններու պատրաստութիւնները հոգալ: Հապիւ 1868 մարտի մէջ 5,000-ի բանակ մը Մակտելայի առջև հասաւ (68.ՍԻՈ.413), զոր Թէոդորոս հրամայեց ուժմբերով հալածել. բայց արդիւնք մը չունեցաւ թնդանօթաձիգներուն ուղղակի չարձակելուն համար: Օր մըն ալ մարտ 29-ին իր բանակը սրտապնդելով յարձակում կը փորձէ, բայց անգլիացիք կը յաղթեն (68.ՍԻՈ.412): Ճարահատած անգլիացի բանտարկեալները կարձակէ որ յարձակումը դադրի, բայց Նաբիէր չգոհանար, զի հրաման ունէր Թէոդորոսը գերել, կամ սպաննել: Թէոդորոս պարտեալ և մանաւանդ բոլոր իրեններէն լքեալ, զի իշխաններէն և ոչ մէկը իրեն օգնութեան կը փութար, ինքզինքը արբեցութեան կու տայ, և կարծես խելագարեալ, օր մըն ալ անգլիացուց բանակին դիմաց ձի կը խաղցնէ, և 160 եթովպացի բանտարկեալներ մէկ անգամէն սպաննելու կու տայ (ՍԱՓ.Բ.108) Սելամի եպիսկոպոսն ալ միաստին (ՍԱՓ.Բ.118), և յետին յուսահատութեան մէջ անգլիացուց ձեռքը չիյնալու և չնախատուելու համար բերնին ատրձանակ մը պարպելով անձնասպան կըլլայ 1868 ապրիլ 1-ին, Ջատկի երկրորդ օրը: Անգլիացիք նպատակնուն հասած էին, յաղթական կը մտնեն Մակտելա, Թէոդորոսին երեսը մահուանէն ետքը միայն կը տեսնեն, և մարմինը պատուով կը թաղեն տեղույն եկեղեցին: Մակտելայի մէջ կը գտնեն թնդանօթներ, հրացաններ, սուրեր, տէգեր և վահաններ, ամէնն ալ անարժէք բաներ, ուստի ձեռք չեն դպցներ, այլ իբր վրէժխնդրութիւն Մակտելան մէջը եղածներով կայրեն: Ապրիլ 6-ին փրկեալ եւրոպացիներն իրենց ընտանիքներովն հետ առնելով ետ դառնալու կը սկսին, 8-ին զօրահանդէս կը կատարեն Տալանթա լեռնադաշտին վրայ, և հանդարտ կերպով դէպի Ջուլշա կուղևորին. իսկ Նաբիէր միշտ վերջապահ կը մնայ: Մայիս 24-ին հասեր էին Սինաբէ, յունիս 13-ին ելած էին Եթովպիայէ, ինն ամիս ևս անգլիական տորմիդը մնաց Աննէպէյ ծոցը, ծանր կազմածները պաշտպանելու և յարմար եղանակին փոխադրելու համար, և վերջին նաւին անկէ մեկնելուն Եթովպիոյ արշաւանքէն լոկ պատմական յիշատակ մնաց, իսկ Եթովպիա դարձաւ այն կացութեան զոր ունէր Թէոդորոսէ առաջ (68.ՍԻՈ.416):

2801. ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Երուսաղէմի պատգամաւորներ անհնարին շփոթութեան մատնուեցան, երբ Թէոդորոս հեռացաւ և Մակտելա քաշուեցաւ, զի այլևս գործ մը չունէին կատարելիք, և դառնալու համար պաշտպան չունէին, մանաւանդ թէ կասկածաւոր ալ եղած էին Թէոդորոսի մտերիմ ճանչցուելով: Անտէրունչ մնացած երկրին մէջ ամէն կողմէ ապստամբութիւններ շատցած էին, որոնք իրարու հետ ալ կը վարնուէին տիրապետութեան և աւարառութեան համար: Պատգամաւորներուն եղած կողմն ալ այդ կացութիւնը առած էր և չէին գիտեր որուն վստահիլ և որուն ապաւինիլ: Օրեր կանցնէին, 1868 յունուարը մտած էր, և Թըրսօ Կովապի իշխանը, որ Ըսար-Ամպայի Թեսեմմա իշխանին վրայ յարձակած էր, բանագնացութեամբ ետ քաշուած էր: Թեսամմա աչք կը դնէ պատգամաւորներուն սնտուկներուն, և այդ նպատակով բարեկամ և պաշտպան կը ձևանայ անոնց և զիրենք ապահովութեամբ մինչև Կալլապատ Եթովպիոյ սահմանագլուխը հասցնել կը խոստանայ: Բայց Թըրսօ Կովապի աւելի զօրութեամբ ետ կու գայ, և Թեսեմմա իբր թէ պատերազմի կը պատրաստուի, բայց բուն նպատակը փախչիլ կըլլայ: Պատգամաւորներն ալ միասին փախչիլ կը

հաւանին, բայց որովհետև մեծ սնտուկները տանելու դժուարութիւն կար, սնտուկները կը բացուին և Թեսեսմայի մարդիկներէն իւրաքանչիւրը ծրար մը կառնէ իբր թէ տանելու, բայց իրօք իւրացնելու, և խեղճ եպիսկոպոսն ու վարդապետը ունեցածներնուն մէկ մասէն կը կողոպտուին, նոյն իսկ իրենց հագնելիքներէն և պաշտօնագիրներէն, և միայն մաս մը սուրբ անօթներ և եկեղեցական զգեստներ և ընծայանիւթեր կրնան ապատել և երբ Ըսար ամպացիք խոյս կու տան, միայնակ կը մնան լերան վրայ եօթը շղթայեալներու հետ, որոնց շղթաները կը քակեն ու կապատեն: Թըրսօ Կովպի յաղթական կը բարձրանայ Ըսար Ամպա լեռը, սիրալիր ընդունելութիւն կընէ և յարգանքներ կընծայէ Երուսաղէմացիներուն, Իսահակի եպիսկոպոսական ոսկեթել զգեստները հագցնել կու տայ որ տեսնէ: Քանի օրերէ ի վեր մուրացկանութեամբ ապրող և երբեմն անօթի մնացող եպիսկոպոսին և վարդապետին ուտելիքներ կը հայթհայթէ և զիրենք ջորիով և իենց սնտուկները շալակով իրեն հետ մէկտեղ իր բանակտեղը կիջեցնէ յունուար 31 ին (ՍԱՓ. Ա. 73): Անկէ կը սկսին ուղևորիլ դէպի չոնկ ըսուած տեղը 12 օրուան ճամբայ: Եթովպացիք առջի օրեր շատ նեղութիւն կը հասցնեն, մինչև որ կը ստուգեն թէ ոչ թուրք, ոչ ֆրանք, ո՛չ ինկիլի, և ո՛չ ղըփթի. այլ հայ ուղևափառ են, և անկէ ետքը դիւրութիւններ և պատիւներ ալ կընծայէն, մանաւանդ թէ վփտիներէ զվուած ըլլալով, Իսահակը իբրև իրենց եպիսկոպոս պատել կուպեն և կառաջարկեն: Համբաւը կը տարածուի և ամէն կողմերէ այցելուներ կը սկսին յաճախել, իսկ իրենց չորս սնտուկները զորս գրաւուած կը կարծէին, առջևէն Չարտոգա զրկուած ըլլալը կիմանան, և իրենք ալ թոյլտուութիւն կը ստանան հոն երթալ, ուր վեց օրէն կը հասնին (ՍԱՓ. Ա. 80), և կը սպասեն: Թըրսօ-Կովպի իր տիրապետութիւնը ընդարձակելու և նոր երկիրներ գրաւելու հետամուտ, քանի մը յաջող ձեռնարկներէ ետքը մարտ 19-ին Վակչըմ-Կովպիի հետ պատերազմի կը բռնուի, և ճակատամարտին մէջ կը մեռնի: Պատգամաւորներ 24-ին կը լսեն և նորէն վարանման կը մատնուին (ՍԱՓ. Ա. 82-84), և Վակչըմ-Կովպիին անձնատուր ըլլայ կորոշեն, կը գրեն և ապրիլ 1-ին պատուով կընդունուին անոր եղբօրմէն, իրեն ալ կը ներկայանան, սնտուկները կը բերուին և կը բացուին որոնց մէջէն ընծայենք ալ կու տան մեծին և պատիկներուն, և փոքրիկ ոսկի խաչ մը կը նուիրեն իշխանին, զի ականակուռ մեծ խաչը (2798) Ըսար-Ամպայի մէջ յափշտակուած էր: Այս առթիւ խնդիր կը յուզուի Սելամիի տեղ ուրիշ վփատի եպիսկոպոսմը բերել տալու, կամ թէ Իսահակը իբրև եպիսկոպոս պահելու, և կը համաձայնին Իսահակը իբր գրաւական պահել, որպէսզի առանց 10, 000 թալէռ տուրքի վճարման ձրիաբար զփտի եպիսկոպոս մը բերել տան (ՍԱՓ. Ա. 87): Ապրիլ 6-ին Թէոդորոսի անձնասպանութեան լուրը կը հասնի, և պատգամաւորներ նորէն Վակչըմ-Կովպիի ընծաներ մատուցանելով, իբր եպիսկոպոս մնալու միտքը իրենցմէ կը հեռացնեն և կաշխատին ետ դառնալու արտօնութիւն ստանալ, բայց նա կը պատասխանէ երկու ամիս սպասել մինչև որ իրենք ժողովով ինչ ընելիք որոշեն: Վակչըմ Կովպիի հետզհետէ ունեցած յաջողութիւններէն և ստացած հպատակութիւններէն քաջալերուած ինքզինքը թագաւոր կը հռչակէ Թէքիլ Կորկիս անունով, և Եթովպիա նոր քաղաքական գիրք կը ստանայ (ՍԱՓ. Ա. 92): Այս միջոցին է որ պատգամաւորներուն խնամակալ նշանակուած անձին խարդախութիւններ և գողութիւններ երևան կու գան և կռուի առիթ կու տան, որուն մէջ Իսահակ եպիսկոպոսը քրի հարուած կընդունի կռակը, և գործը նախ տեղւոյն վրայ յետոյ Թէքիլ Կորկիսի ատեանին մէջ կը քննուի, նաև եպիսկոպոս և վարդապետ կամբաստանուին և շատ դժուարութեամբ կարդարանան, բայց բնակավայրնին փոխուելով Պելեսաս կը փոխադրուին, ուր կը հասնին 1868 յունիսին (ՍԱՓ. Ա. 104): Այնտեղ եղած ատեննին ապրուստի պէտքերնին պակսելուն, հոգևոր և մարմնաւոր բժշկութիւններու կը դիմեն, և աղօթքով և աւետարանով, պարզ դարմաններով և լաւացումներով հիւանդներ կը սկսին բժշկել, և փոխարէն պէտք եղած պարէննին ստանալ (ՍԱՓ. Ա. 113): Երկար

ամիսներէ ի վեր կը մնային այնտեղ և իրենց ապագային վրայ գրեթէ յուսաբէկ էին, երբ յոյսի նշոյլը կը ծագի յանկարծ: Մուսաւա բնակող Առաքել ճիվէլէկեանէն Եթովպացի սպասաւորի մը ձեռքով 1869 մարտի մէջ իրենց կը հասնին Երուսաղէմի նամակներու ծրար մը, և միանգամայն անգղիական կառավարութեան կողմէ Թէքլէ Կորկիսէն իրենց դարձը խնդրուելուն, և Թէկրիի իշխանին ապահովութիւն խոստանալուն աւետիսը (ՍԱՓ. Ա.119): Վերջապէս Թէքլէ-Կորկիսի թագաւորական արտօնագիրը կը ստացուի, և ապրիլ 16-ին աւագ չորեքշաբթի օր Պելեսսայի բնակիչներուն և իշխանաւորներուն կողմէ փառաւոր կերպով ճամբայ կը գրուին, բայց հապիւ 42 օրէն Աքսում կը հասնին Թէկրիի գլխաւոր տեղը, թէպէտ հնար էր 10 օրով ալ ճամբան կտրել (ՍԱՓ. Ա. 120-121): Ուղևորութեան մէջ նեղութիւններ, պրկումներ և ճանապարհի դժուարութիւններ կը կրեն շարունակ, թէպէտ գիւղէ առաջնորդներ և հոգածուներ կառնեն թագաւորական հրամանին համեմատ: Աքսումի մէջ կայցելան մեծ ուխտատեղին, և շատ դժուարութեամբ կը տեսնեն անտեսանելի և անհպելի եղող օրինաց նուիրակին տախտակը, որ հոն պահուած է, և նկատուած է իբր Սինա լեռան վրայ Մովսէսի ստացած տասնաբանեայի քարետախտակը, Զրիստոսի ալ ներկայացուած և անկէ ալ օրհնուած (ՍԱՓ. Ա. 126-132): Աքսումէն կելլան իշխանը հետերնին, նուագածուներ առջևէն, և զօրապետներ իրենց գունդերով ետևէն, իրենք ալ ջորիներ հեծած, և փառաւորութեամբ Ատուտ կը մտնեն մայիս 31 ին, և յունիս մէկին նամակ մը կը գրեն Երուսաղէմի Եսայի պատրիարքին, հասնելնին հաղորդելու, և նամակ մըն ալ Գահիրէ Ստանթօն հապարապետ անգղիական ընդհանուր հիւպատոսին շնորհակալութիւնին յայտնելու, և յատուկ յղթատարով Մուսավա ճիվէլէկեանին կը յղեն հասցէներուն հասցնելու համար: Թէկրիի իշխան Քասսա ամէն տեսակ յարգանք և պատիւ և օգնութիւն կառատաձեռնէ իր հիւրերուն, իր մեռած կնոջ համար հոգեհանգիստ կատարել կը հրաւիրէ, հոգեհաց կը պատրաստէ, առատ պաշար կը նուիրէ, հապար թալէո ճանապարհածախս կընծայէ, պատերազմի նոր թմբուկը օրհնել կու տայ, և պաշտօնագիր մըն ալ կը յանձնէ, ու զիրենք ճամբայ կը հանէ դէպի Ասմարա, Թէկրիի սահմանագլուխ քաղաքը: Այստեղ մեծապէս օգտակար կըլլայ Միքայէլ Պալտըրավա հալէպ վարդապետը, տղայ հասակէն Ս. Յակոբայ վանքին մէջ սնած և հովանաւորուած եկեղեցական մը, ինչպէս նաև Կ. Պոլսեցի ոսկերիչ Կարապետ Որգէ, որոնք ժամանակին միջնորդ ալ եղած էին Քասսան Նաբիէրի հետ բարեկամացնելու և անոր օգնել տալու, և Նաբիէր ալ օգնութիւնը փոխանակած էր պէնքեր նուիրելով (68. ՍԻՈ.415): Եօթը օրէն կը հասնին Ասմարա, ուր կը հանդիպին Եթովպիա գացող նոր զփտի եպիսկոպոսին իբր Սելամիի յաջորդ, որուն պէտք եղած հրահանգներն ալ կը խօսին, և եկեղեցականաց ժողովին ալ կը մասնակցին և պատշաճը կը բացատրեն, և այլ ևս երկար չմնալով, ինչպէս իրենք կը գրեն, դուրս կելլեն այն դժոխատիպ երկրէն: Նապարէթցի Էլիսան ալ կը մկրտեն, և երկու Նապարէթցիներուն դրամ և ջորի նուիրելով ետ կը դարձնեն Ատուտ վաճառականութիւն ընելու, և Ասմարայէն ելլելէն երկու օր ետքը կը հասնին Մուսավա (ՍԱՓ.Ա.152):

2802. ԵՐՈՒՍԱՂԷՄ ՀԱՄՆԵԼՆԻՆ

Եթովպական երկրէն ապատած օսմանեան հողին վրայ ոտք դրած օրերնին, ինքզինքնին այլևս Երուսաղէմ հասած կը կարծեն, բայց ինչպէս սովորական է ճամբան լրացնելէն ետքը յօգնութիւն վզալ, երկու պատգամաւորներն ալ տաժանակիր ուղևորութիւն առողջ անցուցած, հանգիստ գտնելնուն կը հիւանդանան, բայց ճիվէլէկեան Առաքելի խնամքով վտանգէ կապատին, և հապիւ քիչ մը ապաքինած յունիս 5-ին Մուսավայէ կը մեկնին, և 6 օրէն Սուաքին և 26 ժամէ ալ ճիտտէ կանցնին, ուր բժշկապետ Ֆրանկիւլ Մալէպեան զիրենք կը խնամէ բժշկական և ընտանեկան միջոցներով, կը կապդուրէ և քանի մը օր հիւր կը պահէ, մինչև Եգիպտոս գացող

շոգենաւով մը կը մեկնին, և եօթնօրեայ նաւագնացութեամբ Սուէիշ կը հասնին, ուսկից լուր կու տան Եգիտպոս կալուածոց տեսուչ Աստուածատու վարդապետին (2797): Իրենց դառնալը արդէն լսուած էր Գահիրէի հիւպատոսին գրած նամակներէն, թէպէտ Երուսաղէմի պատրիարքին գրած նամակնին ետ մնացեր էր շոգենաւին արկածի հանդիպելէն: Սուէիշէ Գահիրէ կանցնին, և անգղիական հիւպատոսին այցելութիւնը ընդունելով և տեսակցութեան երթալով կիմանան թէ ինչպէս Պելեսսա արգելուած մնալնին Գահիրէի մէջ լսուելով, անկէ Երուսաղէմի պատրիարքին, անկէ Կ. Պոլսոյ պատրիարքին, անկէ անգղիական դեսպանին, անկէ անգղիական կառավարութեան դիմումներ եղած են, և Անգղիոյ արտաքին գործոց նախարարէն ամէն կողմ պատշաճ հրամաններն ու հրահանգները տրուած են (ՍԱՓ.Ա.160): Գահիրէէ Աղեքսանդրիա իջնալով արտաքին գործոց նախարարէն իրենց ուղղուած նամակը և պատրաստուած զգեստները և ճանապարհի համար 1,000 ըոռալի գումար մըն ալ կընդունին, և քանի մը օր միայն այնտեղ մնալով, և Խտիվ Իսմայէլ փաշայէ ալ ունկնդրութեան ընդունուելով կանցնին Յոպպէ, ուր վիրենք կը դիմաւորեն տեսուչ վարդապետը և Երուսաղէմէ յատկապէս եկող աւագ թարգման Մատթէոս և Եպեկիէլ վարդապետները: Թէ Յոպպէ և թէ Ռէմլէ ամէնուն կողմէ խնդութեամբ կողջունուին: Գալունիա վիրենք կողջունեն Կարապետ և Սիմոն եպիսկոպոսներ քանի մը վարդապետներով, և Յունաց պատրիարքարանի և անգղիական հիւպատոսարանի ներկայացուցիչներ, անկէ շիտակ կու գան Երուսաղէմ, և ի ձայն վանգակաց և եկեղեցական հանդիսութեամբ կը մտնեն մայրտաճար, ուխտերնին կը կատարեն, միաբանակիցներու հետ կողջագուրուին, և երգեցողութեամբ կելլեն պատրիարքարան, ուր Եսայի պատրիարք արտասուախառն խնդութեամբ վիրենք կը գրկէ և կը համբուրէ և աշակերտներ արձակ և չափաւ ուղերձներ կը կարդան: Մեկներ էին 1867 ապրիլ 1-ին և կը դառնային 1869 օգոստոս 14-ին (69.ՍԻՕ.173), որով պանդխտութիւննին տևած էր երկու տարի և չորսուկէս ամիս: Անգղիական կառավարութիւնը, որ պատճառ եղած էր այդ տարապարհակ ուղևորութեան, գնահատեց եղած զոհողութիւնը և յատուկ շնորհակալութեան գիր ուղղեց պատրիարքին արտաքին գործոց նախարարին ձեռքով, թագուհւոյն և ամուսնոյն և վաւակին կենդանագիրները յղեց ի յիշատակ (ՍԱԻ. 1043), և 1025 Օսմանեան ոսկւոյ գումար մըն ալ ճանապարհի ծախուց փոխարէն: Իսկ Եսայի պատրիարք 1870 փետրուարին դրած պատասխանին մէջ փոխադարձ շնորհակալութենէ վատ անգղիական կառավարութեան և ազգին հովանաւորութիւնը կը մաղթէր հայ ազգին վրայ (ՍԱԻ. 1415):

2803. ԳՈՐԾԻՆ ՎՐԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Սոյն հետաքրքրական պատմութիւնը չենք կրնար փակել, առանց անոր մասին խորհրդածութիւննիս աւելցնելու: Գործին ամփոփումը վուր ջանք և ընդունայն վաստակ և անօգուտ ձեռնարկ եղած է, որուն մէջ նկատողութեան արժանի կը մնան հայութեան, և գլխաւորապէս Երուսաղէմի միաբանութեան ազգային անունին և պատուոյն և ակնկալեալ օգուտին համար ունեցած փութաջանութիւնը, և գործին կատարման յանձնառու երկու անձերուն, Իսահակ եպիսկոպոսի և Տիմոթէոս վարդապետի, անձնուրաց հոգին, տոկուն կամքը և տագնապալից փորձանքը: Գործին գաղափարը դուրսէն, այսինքն անգղիական կառավարութենէն թելադրուած ըլլալով, բնաւ պատասխանատվութիւն մը չի կրնար ծանրանալ Հայոց վրայ եթէ ձեռնարկը նպատակին չծառայեց: Իսկ ձախողուածի պարագաներուն պնտութեան մէջ աչքի կը վարնեն պատգամաւորներուն ճամբուն վրայ ուշանալը և անգղիական բանակին արշաւանքին կանխելը: Թերևս այս երկրորդը արդարանայ նկատելով պատգամաւորներուն ուշանալը. հարկաւ անգղիական կառավարութիւնն ալ չէր կրնար անպայմանաբար պատգամաւորութեան ելքին սպասելով ձեռուրները ծալլած նստիլ: Իրաւ ալ երբոր արշաւանքը որոշուեցաւ 1867

սեպտեմբերին, պէտք էր որ ապրիլին մեկնած պատգամաւորութիւնը լրացած ըլլար: Պատգամաւորութեան յապաղելուն գալով, Երուսաղէմի պատմագիրը կը կարծէ թէ դիւանագիտութիւն ոմանց հակառակորդաց ճարտարս գիտաց վլանալ յապգէն ըվփաոսս վայս, դեգերեցուցեալ ի ճանապարհի վգնացս նոցա յանցանելն ընդ Եգիպտոս և ընդ ջրանցս Սուէվի: Անցողակի յիշենք թէ՝ 1867-ին տակաւին Սուէիչի ջրանցքին անցքը չկար, որ կը խախտէ պատմագիրին ենթադրական մեղադրանքը: Իսկ Երուսաղէմէ Սուէիչ շատ արագ եղած էր պատգամաւորներուն ուղևորութիւնը, որոնք ապրիլ 1-էն 11, տասը օրուան մէջ կատարած էին այդ բազմամասնեայ ուղևորութիւնը, Երուսաղէմէ Յոպպէ, Աղեքսանդրիա, Գահիրէ, և Սուէիչ, անհրաժեշտ տեսակցութիւններն ու յարաբերութիւններն ալ մէջը: Կը մնայ Սուէիչէ Եթովպիա անցնելնին, որ աւելի դիւրին պիտի ըլլար հաւանաբար եթէ անգղիական հիւպատոսին թելադրութեամբ անգղիական շոգենաւով ուղղակի Ատէն և անկէ Մուսավա եկած ըլլային, ուսկից վգուշացան պատգամաւորները իբրև Անգղիոյ պատգամաւորներ կամ Անգղիայէ թելադրեալ չերևնալու և կասկածանաց ներքև չիյնալու համար, զի Թէոդորոս թագաւոր խորամանկ մէկն ըլլալով, կրնար լրտեսներ ունենալ այն կողմերը, և անգղիական նաւով երթալնիս լսելով կրնայ մեր հպատակին վնաս մը հասնիլ, և մեր վրայօք կասկած տալ անօր (ՍԱՓ. Ա. 7): Այսպէս պատգամաւորներ իրենց վրայ կառնեն այդ վգուշաւորութեան հեղինակութիւնը և չենք իմանար ո՞ր կը մնայ դիւանագիտական նախանձողաց ոմանց դաւը, որոնց պատմագիրը կը վերագրէ ուևորութեան յապաղիլը, մինչ պատգամաւորներ Ատէնի ճամբան թելադրող հիւպատոսին վրայ կը կասկածին, թէ ինքը աւելի Մուսավայի ճամբայով երթալնիս կը ցանկար, չեմք գիտեր ինչ թագուն նպատակաւ, զոր չէր ուզեր յայտնել (ՍԱՓ. Ա. 7): Ըստ այսմ տրամադրելի գտնուած յիշատակներու վրայ դատելու ստիպուած, մենք դիպուածներու կապակցութեանը և աննախատեսելի պարագաներու միայն կը վերագրենք յապաղմանց պատճառը, որոնց մէջ են գլխաւորապէս եղանակներուն խտտութիւնը և ապատամբութեանց տարածուիլը: Ինչ ալ ըլլայ պատասխանատուութեան մասին վերջնական եզրակացութիւնը, գործը արդէն իր մէջը հետաքրքրական միջադէպ մը, ազգին համար պատուոյ էջ մը, և Իսահակի և Տիմոթէոսի համար գովեստի և համբաւոյ յիշատակ մը կը մնայ:

2804. ԾԽԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Երուսաղէմէ նորէն էջմիածին կանցնինք, զոր թողուցինք Գէորգ կաթողիկոսի առաջին օրերուն (2765), անցողաբար միայն յիշելով մասնաւոր կաթողիկոսութեանց մասին առած քայլերը (2770): Այժմ ալ պիտի ամփոփուինք Մայրաթողին մէջ կատարած ձեռնարկներով, առաջիկային թողլով Տաճկահայոց հետ ունեցած յարաբերութիւնները պատմել, երբ այդ վերջիններով վբաղինք: Ըսինք արդէն թէ գործունեայ անձ մըն էր Գէորգ և թէ պօլօթէնիէն անոր գործունէութիւնը արգիլելու բնոյթ չունէր, և իրօք ալ կրցաւ լաւ կարգադրութիւններ իրականացնել Մայրաթողոյ և Ռուսահայոց վիճակներուն մէջ: Վարժարաններն եղան իր մտադրութեան առաջին առարկան: Պօլօթէնիէն կը ներէր ծխական կամ հոգևոր վարժարաններ ունենալ ամէն եկեղեցւոյ քով և ամէն վանքի մէջ, և այս բաւական էր որ ամէն տեղ վարժարաններ բանալու հոգ տարուի. իրօք ալ իր օրով բոլոր հայաբնակ քաղաքներ և գիւղեր իրենց հայ վարժարանն ունեցան: Այդ գործը յառաջացնելու համար 1867 յունիս 14-ին էջմիածնի կարող միաբաններէն ուսումնական յանձնաժողով մը կազմեց, և աւելի ետքը 1873-ին թեմական տեսուչներու պաշտօնը հաստատեց, որոնք իբրև առաջնորդներու ուսումնական փոխանորդներ վիճակին մէջ պիտի շրջէին, պակաս տեղերը դպրոց բանալու, և եղած տեղեր ուսումնական ծրագիրին և տնտեսական ընթացքին բարեկարգութեան պիտի հետևէին: Միանգամայն

ընդհանուր կանոնագիր մըն ալ կազմել տուաւ և հրատարակեց (469. ԱՐՐ. 141-146), որպէսզի վարժարաններ ամէնն ալ նոյն ձևով գործեն և նոյն կանոնով վարուին, և այսպէս լրացուց և պարգացուց Մատթէոսի օրով եղած առաջին կարգադրութիւնները (2742): Գէորգի գործունէութիւնը և հայ ծխական դպրոցներու գործը յաջողութեամբ կը յառաջէր, երբ 1873 նոյեմբեր 22-ի կայսերական հրամանագիրը հրատարակուեցաւ, որով բոլոր դպրոցներ անխտիր կրթական նախարարութեան ուղղակի իշխանութեան ներքև պիտի գրուէին և պետական տեսուչներու հսկողութեան պիտի ենթարկուէին, որոնց հետ հայ ծխական դպրոցներն ալ, թեմական դպրոցներէն վատ: Հրամանը էջմիածին հաղորդուեցաւ 1874 յունուար 12-ի պաշտօնագիրով, և հետևանքը կրնար ծանր ըլլալ հայ դպրոցներուն, մանաւանդ հայ լեզուին և հայ եկեղեցոյն: Իսկոյն գէորգ պարտուպատշաճ դիմումներու ձեռնարկեց, և թէ պօլօժէնիէով ապահովուած կարգադրութեամբ հիմամբ, և թէ Հայ եկեղեցոյ կրօնական պահանջներուն փաստերով, յաջողեցաւ հայ դպրոցներուն բացառիկ գիրքը պաշտպանել թէ ըստ ուսումնականին և թէ ըստ տնտեսականին: Իր առաջարկները ընդունելութիւն գտան և յարգուեցան, և 1874 յուլիս 19-ի բարձրագոյն հրամանագիրը ճշդեց պետական տեսուչներուն հայ վարժարաններու հետ ունենալիք յարաբերութիւնները, որոնք պարզապէս Ռուսաց լեզուին շուրջը կը դառնային, և ուսուցչաց հպատակութեան և ձեռնհասութեան կը պատկանէին. իսկ ուսումնական և տնտեսական պայմանները պօլօժէնիէին համաձայն կաթողիկոսին և առաջնորդներուն և իրենց ժողովներուն կը մնային (ԱԲՂ.62. և ՋԱՄ.Բ.168-169): Հայ դպրոցները պետական տեսչութեանց յանձնելուն խնդիրը անգամ մըն ալ նորոգուեցաւ Գէորգի մահուանէ ետքը, բայց այս անգամ ալ բացառիկ գիրքը յարգուեցաւ և պահուեցաւ Մակար կաթողիկոսի առաջին տարին (ՋԱՄ.Բ.178), և մինչև ցայժմ ուսահայ վիճակներու բոլոր դպրոցները Գէորգէ հաստատուած կանոններով կառաջնորդուին (ՋԱՄ.Բ.169):

2805. ԳԵՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Վիճակներու մէջ ծխական վարժարաններու այսչափ հետամուտ եղող անձ մը, Մայրաթոռոյ մէջ իր աչքին առջև այթոռին արժանաւոր ուսումնական հաստատութիւն մը ունենալ վանց պիտի չընէր: Մայրաթոռոյ մէջ մեծ ուսումնարան մը ունենալու միտքը շատ հին էր, և վերջին գարուն մէջ ապրող կաթողիկոսներէն գրեթէ ամէնքն ալ մեծագոյն փափաքն ունեցան, և իրենց ժամանակներուն ու պարագաներուն համաձայն ձեռնարկներ ալ կատարեցին, բայց գոհացուցիչ արդիւնք մը չունեցան: Գէորգ մտածեց հիմնական գործ մը կատարել, և այս նպատակին պէտք էին վայելուչ շէնք մը և շինութեան և պահպանութեան ծախուց ապահովութիւն: Առաջ տոկուն աշխատութեամբ ձեռք բերեց շատ անխնամ մնացած կամ վիճելի գումարներ, միանգամայն ընդհանուր հանգանակութեան սկսեց, և այդպէսով մի խոշոր դրամագլուխ կազմեց: Այս կարգին կրնան յիշուիլ Ամսթերտամի մէջ անտէրունչ մնացած եկեղեցոյ և կալուածներու վաճառումէն քաղած գինը, որ 27,000 ֆիօրին բռնած է, Աստրախանի մէջ Արարատեան Սերովբէ եպիսկոպոսին թողօնը (2674), Մոսկուայի կայսերական դրամատան մէջ Կարբեցիին շահեցուցման թողած աւանդը, Կարնեցի Կարապետ եպիսկոպոսի թողած գումարն ու գոյքերը, Կակաթացի Գէորգ Մանուկեանի կտակը 40-է աւելի տարիներու տոկոսներով (ԱԲՂ.50), Չմիւռնիոյ կալուածներուն յետամնաց հասոյթները, Տփղիսի և ուրիշ վիճակներու մէջ այթոռական իրաւունքներու հաշիւները, և ուրիշներ ալ, որոնց տեղեկութիւնները քաղած էր իր ճանապարհորդութեան ժամանակ (ՋԱՄ.Բ.169): Այսպէս նախապատրաստութիւնները լրացնելով 1869 մայիս 25-ին, Յինանց վեցերորդ կիրակի և իր օժման երկրորդ տարեդարձին օրը, մեծահանդէս արարողութեամբ նոր ուսումնարանին հիմնարկէքի օրհնութիւնը կատարեց, զոր Կ. Պոլսոյ և Մոսկուայի ձեմարաններուն

անունն էն յորդորուած կոչեց ժառանգաւորաց հոգևոր ճեմարան Սուրբ Գէորգեան, սակայն հասարակութեան բերանը Գէորգեան ճեմարան անունը տիրեց: Նոր ճեմարանը վետեղուեցաւ Էջմիածնի պարիսպէն դուրս, հին ժառանգաւորաց վարժարանին ետևօքը, ապա գետնի վրայ, Երևանի ճամբուն մօտերը: Երկյարկանի էր շէնքը, գետնայարկին մէջ դասարաններ և ճաշարան, իսկ վերնայարկին մէջտեղը գմբէթայարկ հանդիսարանը և երկու կողմերը ննջարաններ, բոլորն ալ լայն ճեմելիք մը երկու կողմերը բաշխուած: Պակաս չեղան շինութեան միջոցին երևան եկած խոչընդոտները, ինչպէս Աբգարեան Յովհաննէս ճարտարապետին սպանութիւնը, և յաջորդին շուտով մեռնիլը, և գործին երրորդի մը ձեռք անցնիլը (ԱԲՂ.66): Գերաններու պակասութիւնն ալ լեցուց օսմանեան կառավարութենէ հապար մեծ գերան ստանալով Սօդանլուի անտառէն (ԱԲՂ.65), և այսպէս Գէորգի ճարտարութիւնն ու հաստատամտութիւնը յաղթանակեցին. թէպէտ քիչ մը երկարեցաւ շինուածին լրումը, զի միայն 1874 սեպտեմբեր 28-ին, Ս. Գէորգայ տօնին շաբաթ օրը կատարուեցաւ հանդիսական օրհնութիւնը կամ նաւակատիքը, և 60 նոր հաւաքուած աշակերտներով դասերը սկսան ամսուն 30ին: Բայց խոչընդոտներ սպառած չէին, զի քիչ օր ետքը, հոկտեմբեր 16-ին անակնկալ և անբացատրելի հրդեհ մը ճեմարանին մէջէն ելլելով այրեց և աւերեց շէնքին մի մասը: Բայց Գէորգ չյուսահատեցաւ, անմիջապէս վերաշինութեան ձեռնարկեց և քիչ ատենէն գլուխ հանեց. այնպէս որ նորաբաց ճեմարանին ընթացքը չխանգարեցաւ, և աշակերտները որ Ղապարապատ էին փոխադրուած, 1875 յունիս 10-ին նորոգուած ճեմարանը փոխադրուեցան (ԱԲՂ.63): Առաջին տարին մէկ դասարան միայն բացուեցաւ, և այսպէս հետզհետէ յառաջացան և բազմացան դասարանները աշակերտներուն թիւը ակնկալութենէ վեր աճեցաւ և հարկ եղաւ 1879-ին նոր միայարկ շէնք մըն ալ աւելցնել իբր լոկ ննջարան և երկու շէնքերու ամբողջաբար ուսումնականի և աշակերտական սրահի յատկացնել (ՄՈՎ.373): Երբոր ճեմարանի մասին Գէորգի տարած հոգածութիւնը կը գովենք, պէտք չէ լռենք որ այն իր իսկական նպատակին չծառայեց, որ էր ժառանգաւորաց ճեմարան ըլլալ և ուսումնական ու վարճացեալ հոգևորականներ պատրաստել. զի հին ժառանգաւորաց վարժարանը, որ ճեմարանի բացման ատեն առժամապէս պահուեցաւ, 1882-ին գոցուեցաւ, բայց Գէորգի ժամանակ և ոչ մի շրջանաւարտ կամ աշակերտ հոգևորականութեան չհետևեցաւ և միաբանութեան չանդամակցեցաւ: Այս մասին չենք կրնար ուղղակի Գէորգը մեղադրել, զի նա վարժարանական ներքին մասնագիտութեամբ ճոխացեալ անձը չէր, թէպէտ արտաքին գործոց համար մեծ կարողութիւն ունէր: Երբոր առաջին եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կը կատարէր 1867-ին (2765), Խորէն Գալֆայեանէ խոստում առած էր երեք տարի Էջմիածին մնալ, և ուսուցչութիւն ընել (69.ՄԱՍ.923), և նոր բացուելիք ուսումնարանին մէջ աշխատիլ. սակայն կաթողիկոսին հետ Պետրբուրգ երթալէ ետքը պատճառանքով մը առժամեայ բացակայութեան արտօնութիւն ստացաւ, և անգամ մը Կ. Պոլիս երթալէն ետքը այլևս չվերադարձաւ: Այն ատեն գործը յանձնուեցաւ Գաբրիէլ Այվապովսի եպիսկոպոսին իբր վարժարանական փոճառութեամբ ճոխացեալ անձի, բայց նա ալ Տփղիսի առաջնորդութիւնը պայման դրաւ իր յանձնառութեան, և Տփղիս մնալով Էջմիածնի ճեմարանը կառավարել սկսաւ տեղեկատուներու ծանօթութիւններով և թելադրութիւններով, որուն հատկանքն եղաւ 1878-ին երրորդ դասարանին ըմբոստանալը և խմբովին արտաքսուիլը: ճեմարանի ծրագիրն ալ Մուրատեանի և Հայկապեանի պէս սովորական վարժարաններու նմանողութեամբ կազմուեցաւ, աւելի ընդհանուր բան եկեղեցական ուսմանց գրութեամբ, այնպէս որ ճեմարանը բոլորովին ձրի և ապա երկրորդական ուսումնարանի գիրքն առաւ, և վարմանալու չէ եթէ ձրի երկրորդական ուսում առնելու և ապատաբար դուրս ելլելու պայմաններու ներքև աշակերտաց թիւը դիւրաւ և տարապայման աճեցաւ:

2806. ՇԻՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Յայտնի է թէ Գէորգ կաթողիկոս Մայրաթողը համարեա աղքատ և խառնակ վիճակի մէջ ստացաւ (ՁԱՄ. Բ. 174), և ինչ որ կրցաւ ընել այս մասին և ինչ որ յաջորդին թողուց իր արդիւնքն եղած է բացարձակապէս: Տեսանք ճեմարանի շինութեան և պահպանութեան համար ծախսուածը բայց իր յիշատակները այդչափով չեն վերջանար, զի ուրիշ նշանաւոր ձեռնարկներ ալ կատարած է: Մայր տաճարին արևելյան վնասուած պատին նորոգութեան ձեռնարկած ատեն, նոյն կողմը և տաճարին յարակից երեք մատուռներ կամ աւագատուններ աւելցուց՝ պատարագամատոյց սեղաններով մինչ անկէ առաջ Մայր տաճարը երկու փոքրիկ խորշերէ վատ տեղ մը չունէր թէ սպասներ պահելու և թէ զգեստաւորելու համար: Այս երեք մատուռներ թանգարան անունով կը կոչուին այժմ անոնց միջինը յատկացուեցաւ մեծ մասունքները, Խաչափայտը, Գեղարդը, Աջը, Խաչալէմը, և բոլոր աթոռական բազմաթիւ մասունքները պահելու հիւսիսայինին մէջ պահարաններով և ապակեփեղկերով զետեղուեցան հնութիւններ, յիշատակի առարկաներ, Ամբսդերտամի եկեղեցիէն փոխադրուած ըսպասներ և արժէքաւոր իրեր, որոնց աւելցուց իր անձնականներուն և զանազան տեղեր գտնուածները: Իսկ հարաւայինը թողուեցաւ սովորական կիրառութեան իբր աւանդատուն և զգեստուց և սպասուց պահարան: մեծ պէտք մը լրացուց այդ շինութիւնը որ բաւական ծախքի ալ նստաւ, և որուն ուրիշ պակասութիւն չի կրնար վերագրուիլ, բայց եթէ վրայի գմբէթներուն տափակ կիսաբոլորակներէ ձևացած ըլլալը, փոխանակ Մայրտաճարին կաթողիկէներուն նմանութեամբ սրածայր ըլլալու և տիրող ճարտարապետական ոճին համաձայնելու: Գէորգ մտադրութիւն դարձուց Մայրաթողի զանազան մասերուն բարւոքման մատենադարանին ալ նոր ձև և յարգանք տուաւ, նշանաւոր նորոգութիւններ կատարեց, և յատուկ ու նոր միաբանական թաղ ալ շինել կուզէր, բայց չենք գիտեր թէ ինչու չձեռնարկուեցաւ: Ներսիսեան անտառը ընդարձակեց նոր մասեր տնկել տալով, շուրջանակի հողաթումբով պատեց, և լիճն ալ զարդարեց ճեմելիքներով և ծառուղիներով: Արագածի կողին վրայ Բիւրական գիւղին մէջ ամարանոց մըն ալ շինեց 1873ին, ուր ամառուան ամիսներուն կաթողիկոսները կարենան օդափոխութիւն ընել և զով օդ վայելել, և հաստատուն տեղ մը ունենալ փոխանակ աստ և անդ թափառելու (ԱԲՂ.80): Նշանաւոր գործերէն մին եղաւ Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցւոյն վերաշինութիւնը, ուր կը հանգչին մեծ վարդապետին ոսկերքը աւագ սեղանին ներքը՝ ստորերկրեայ մատուռի մը մէջ, բայց չհասաւ Վահան Ամատունիի գերեզմանին տեղն ալ վայելուչ ձևի վերածել: Հիւանդութեան պատճառով չկրցաւ անձամբ նախագահել Օշականի եկեղեցւոյն նաւակատիքին, որ կատարուեցաւ 1879 հոկտեմբեր 13-ին Թարգմանչաց տօնին շաբաթ օրը՝ զոր իբր տարեկան ուխտի օր սահմանեց: Այդ մասնաւոր ձեռնարկներուն գլուխը պէտք է նշանակենք Մայրաթողին տնտեսական կամ ելեմտական կացութեան բարեկարգութիւնն ու բարւոքումը: Կրկին էին պատճառները որոնք Մատթէոսի օրով հետզհետէ ի վատթարն մղեցին այդ ճիւղը. մէկն էր հասոյթները առատացնելու և նոր աղբիւրներ ձարելու անփութութիւնը, իսկ միւսը անխորհուրդ և անհաշիւ կերպով ծախքեր ընելը, որով թէ ծախքը կը շատնար և թէ արդիւնք և օգուտ և վայելք չէր արտագրեր: Եթէ անհատական զեղծումներ ալ կըլլային, անոնք մեզի անյայտ կը մնան, և բաւական կը սեպենք երևցած պարագաներով չզբաղիլ: Գէորգ այս մասին մասնագիտական տաղանդ ցոյց տուաւ, գիտցաւ կանոնաւոր ծախսարարութիւն հաստատել առանց միաբանութիւնը զրկելու և առանց երևոյթը ստորացնելու, մանաւանդ թէ երկու կէտերն ալ աճեցնելով և բարձրացնելով: Եւ մանաւանդ իր մեծ կարողութիւնը հաւաստեց խափանեալ արդիւնքներ վերակենդանացնելով, անտեսուած ճիւղեր մշակելով, առձեռն միջոցներ ստեղծելով, որով ոչ միայն աթոռը պարտքերէ և ծանրութիւններէ ազատեց, ոչ միայն բարեկեցիկ

և պատուաւոր կենցաղ մը կազմակերպեց, ոչ միայն մեծածախա շինութիւններ կատարեց, այլ և վանական սնտուկին մէջ 335,000 ռուբլու (ՉԱՄ.Բ.174), կամ 36,850 օսմանեան ոսկւոյ գումար մը թողուց ձեմարանին պահպանութեան յատկացուած: Կը յատուցուէր որ իր անձնական սնտուկին մէջ ալ մեծագումար պահեստի դրամ գտնուէր, և սնտուկին դատարկ գտնուիլը գողութեան և յափշտակութեան կասկածներ յարոյց, քննութիւններու ալ առիթ տուաւ, բայց արդիւնք չունեցաւ և գործը փակուեցաւ: Այդ մասին բաւական կը սեպենք այսչափը քաղած ըլլալ, մանրամասնութեանց մտնել կենսագիրներու կը պատկանի (ԱԲՂ.46-54), և ոչ ընդհանուր պատմագիրի:

2807. ԶԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆ

Մեզ աւելի կը հետաքրքրեն եկեղեցականութեան պատկանող խնդիրները, որոնց նոյնչափ հետամուտ եղաւ Գէորգ, որչափ տնտեսականին հատուիլը յիշեցինք: Միաբանութեան կամ կուսակրօն եկեղեցականութեան վարգացման պիտի ծառայէր ժառանգաւորաց ձեմարանը, որուն համար այնչափ հոգ տարուեցաւ, թէպէտ ժառանգաւորներ չարտադրեց: Նոյն հաստատութիւնը քահանայական կամ ամուսնաւոր եկեղեցականութեան ալ պիտի ծառայէր, բայց այդ կողմէն ալ արդիւնաւորութիւն ունեցած ըլլալը պատմուած կամ վկայուած ըլլալը չենք գտներ, սակայն առանց ձեմարանի ալ հնար էր քահանայական դասը բարձրացնել, որոշեալ չափով ուսում չունեցած և չպատրաստուած անձեր աստիճաններուն չընդունելով: Այդ հրամանը Գէորգի անդրանիկ կոնդակին մէջ շեշտուած էր, և տեսնելով որ պարտուպատշաճ մտադրութիւն չի դարձուիր, 1872 յունուար 27-ին յատուկ կոնդակով, խստիւ հրամայեց որ քահանայութեան չընդունուին անոնք որ պահանջուած ուսումը չունին. և որպէսզի քահանայի պակասութեան պատճառով որևէ ներկայացողը չձեռնադրուի, կը յանձնարարէ կանուխէն ծխական և վանական և թեմական հոգևոր դպրոցներու մէջ ընծայացուներ պատրաստել, որ ժամանակին կարենան աստիճաններու կոչուիլ: Եւ որպէսզի գործնական կերպով հրամաններուն գործադրութիւնը ապահովէ, առաջնորդներէն և յաջորդ կամ փոխառաջնորդ եպիսկոպոսներէ կը վերցնէ իւրովի ձեռնադրութիւններ որոշելու իրաւունքը, և կարգիլէ յաստիճան քահանայութեան և սակաւագութեան և կղերիկոսութեան ձեռնադրութիւնը առանց լուծման և տնօրէնութեան սինոդին, որպէսզի հրաման տալու իշխանութիւնը ամփոփուելով վերծումներու դուռերը գոցուին, և եղածին ինքն ալ անձամբ տեղեկանայ սինոդի օրագրութիւններով (ԱԲՂ.73): Այս կարգադրութիւնը մինչև այսօր կը պահուի Ռուսահայ վիճակներու մէջ: Գէորգի ունեցած եկեղեցական կարգապահութեան ջանքերուն մէջ գլխաւորներէն մին ալ երգեցողութեան կանոնաւորութիւնն ու միակերպութիւնն էր, և այս մասին ունեցած նախաձեռնութիւնը անձնական հեղինակութեան արժանիքի բարձրացած է: Հայկական եկեղեցական երգեցողութիւնը բերնէ բերան և անգիր կաւանդուէր և հին խաղերը ձայնագրական նշանակութիւնին կորուսած էին, և իւրաքանչիւր դպրագետ կամ երաժիշտ անձնական քմահաճոյ ձևով կերգէր, երբ Սեբեստացի Համբարձում երաժիշտ, աւելի ծանօթ Պապա Համբարձում կոչմամբ, եւրոպական խաղերու հետևողութեամբ և հայկական խաղերու նմանողութեամբ ձայնագրութեան ոճ մը կազմեց 1834-ին և եղանակները հաստատուն կերպարանի ենթարկեց. բայց անոր գործն ալ անձուկ շրջանակի մէջ մնացած էր և հրատարակուած չէր, որով հին ձևը կը շարունակէր տիրապետել, և իւրաքանչիւր դպրագետ իր ճաշակէն և իւրաքանչիւր եկեղեցի իր միջավայրէն կազդուէր: Գէորգ ինքն ալ գեղեցիկ ձայն և նուրբ ճաշակ ունէր, և կատարեալ շարականագէտ էր և ձայնագրագէտ երաժիշտ կը ձանջուէր. ուստի անձամբ գլուխ կանգնեցաւ եկեղեցական պաշտմանց երգեցողութիւնը ճշդելու և ձայնագրեալ հատորներ հրատարակելու: Ինքն Կ. Պոլսոյ մայր

Եկեղեցւոյ անուանի շարականագէտ Թէոֆորոս դպրի աշակերտութենէն էր, և իր երգեցողութեան վրայ մեծ համարում ունէր, բայց Կ. Պոլիսէ յատկապէս բերել տուաւ Կարապետ Պաղտատլեան և Նիկողայոս Թաշճեան դպրապետները, առաջինը իբր աւանդութեանց լաւ հմուտ և երկրորդը քաջահմուտ, և այնպէս կազմուեցաւ ձայնագրեալ գիրքերը հրատարակող մարմինը 1873 տարիէն սկսելով: Մէկ կողմէն եղանակները կը ճշդուէին և կորոշուէին, միւս կողմէ կը ձայնագրուէին, որուն համար տպագրութեան կը յանձնուէին, որուն համար տպագրական բոլոր պէտքերը ու հանդերձանքը կանուխէն պատրաստուած էին: Ձայնագրութեամբ երգեցողութիւնը առաջին անգամ Էջմիածնի մայրտաճարին մէջ սկսաւ 1873 դեկտեմբեր 14-ին (ԱԲՂ.34), և անկէ տարածուեցաւ և հետզհետէ ի լոյս ընծայուեցան ձայնագրեալ շարական, ձայնագրեալ պատարագ, և ձեռնադրեալ ժամանագիրք: Այս հրատարակութեանց եղած դիտողութիւնները կը յածին Ռուսահայոց եղանակները ետև ձգելով, Տաճկահայոց կամ լաւ ևս Կ. Պոլսոյ եղանակները նախադասելուն, և յաճախ համախորհուրդ որոշուած եղանակները անձնական հեղինակութեամբ փոփոխելուն շուրջ: Բայց ինչ որ իրական արդիւնք է, մեր տեսութեամբ մեծ արժանիք կը կազմէ, այս է միանգամ ընդ միշտ կամայական եղանակներուն, անհատական ձաշակներուն, և անհաստատ ծեփծեփումներուն դադարիլն է, որ կանոնաւորութեան և պատշաճողութեան հիմն է: Հրատարակութեան միջոցին երիտասարդ քահանաներ և յարմար ընծայացուներ հաւաքելով Էջմիածնի մէջ, անոնց համար ձեռնադրութեան ընթացքը բացաւ Թաշճեանի ուսուցչութեամբ, և վարժուածները քաղաքներ և գիւղեր ղրկելով, արհեստն ու կարգաւորութիւնն ընդարձակեց (ՄՈՎ.372. ԶԱՄ.Բ.170, ԱԲՂ.34-35), և այսօր Կովկասի և բոլոր Ռուսահայոց մէջ ձայնագրեալ գիրքեր են որ գրականներուն վրայ կը գործածուին, ուր յետոյ քաղուած շարականներն իսկ առանձինն ձայնագրուեցան և տպագրուեցան, և եկեղեցականութեան ընծայացուներուն համար հաստատուն կանոն եղաւ ձայնագրագէտ ալ ըլլալ: Տաճկահայոց մէջ անծանօթ չէ Գէորգեան ձայնագրութիւնը, բայց չէ ստացած այն տարածումը և պարտաւորիչ կիրառութիւնը, զոր ունի Ռուսահայոց մէջ: Ձայնագրական այս ձեռնարկին մէջ եղանակներու մասին աւելի դեր ունեցան ինքն Գէորգ և Պաղտատլեան, ձայնագրելուն մէջ Թաշճեան, իսկ տպագրելուն մէջ Վահրամ Մանկունի երիտասարդ վարդապետը: Գէորգին ցանած սերմը տակաւ ուռճացած մանաւանդ Ռուսահայոց մէջ, ուր գլխաւորապէս պատարագի եղանակները յատուկ ուսումնասիրութեանց նիւթ կազմեցին, և եռաձայնի և քառաձայնի ձևերն ալ ընդունուեցան, և յատուկ պատարագի երգեցողութիւններ կազմեցին Մակար Եկմալեան Վաղարշապատցի, Զրիստափոր Կարամուրվա Արցախեցի, և Կոմիտաս վարդապետ Սողոմոնեան Կուտինացի, իսկ Տաճկահայոց մէջ Լևոն Զիլինկիրեան Կ. Պոլսեցի:

2808. ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ՏՊԱՐԱՆ

Էջմիածին տպարան ալ ունէր, բայց ան ալ խեղճ վիճակի մէջ էր, զի նոյն իսկ Մատթէոսի երկասիրութիւնները աստ և անդ կը տպուէին, և Էջմիածին տպուածներն ալ արհեստին կողմէն շատ թերի էին: Գէորգ Էջմիածին հասնելուն առաջին օրէն զայն կատարելագործելու պէտքն զգաց, և Պետրբուրգ ուղևորելուն առթիւ Մկրտիչ Սանասարեանի և Յովհաննէս Յովհանեանի նուիրատուութիւններով նոր կազմածներ և գիրեր և պէտքեր հայթհայթեց, և ի դարձին բաւական բարեկարգեց և ճոխացուց նախկին խեղճ տպարանը, որուն համար յատուկ յանձնաժողով մըն ալ հաստատեց: Բայց պէտք էր արդիւնաւորութեան նշաններ ալ տալ, ուստի այդ նպատակով և միանգամայն աթոռին մէջ ուսումնական շարժում յառաջ բերելուն, և միաբաններն ալ եռանդի շարժելու համար որոշեց ամսագիրի մը հրատարակութեան ձեռնարկել, որուն Արարատ նուիրական անունը տրուեցաւ, և կաթողիկոսն ինքն իւր տնօրէնութեամբ առաջին թիւը ի լոյս ընծայեց 1868

մայիսին, Պետերբուրգէ դառնալէ երեք ամիս ետքը: Խմբագրութեան գլուխ նշանակելով Մխիթարեան Աբէլ եպիսկոպոսը (ԱԲՂ.55), և անոր ընկերակից նշանակելով ութը միաբաններ և անոնցմէ դուրս թէ աթոռը և թէ վիճակները գտնուող միաբաններուն առջև բանալով ամսագիրին էջերը, որուն ճակատը դրոշմուեցաւ աշխատասիրութիւն միաբանից սուրբ Էջմիածնի (68. ԱՐՐ): Ամսագիրին պարունակութիւնը պիտի ըլլար, կրօնական, պատմական, բանասիրական և բարոյական, բայց պէտք է ըսել թէ երևելի բաներ չեն 1868-ի թիւերը: Պատմական ճիւղին մէջ գրուածը Արարատ գաւառի սովորական աշխարհագրութիւնն է, բայց կարևոր են Խաչիկ Արշարունի կաթողիկոսի 976-ի գրած մի կոնդակը, և մանաւանդ Արտագեան յիշատակարանը (468.ԱՐՐ.102), ուսկից մենք ալ օգտուեցանք Հայոց հայրապետական աթոռին առաքելական յաջորդութիւնը կազմելու (20): Արարատի հրատարակութենէն վատ մտադրութիւն դարձուեցաւ գլխաւորապէս հին և անտիպ մատենագրութիւններու և յիշատակարաններու տպագրութեան, որոնք օգտակար եղած են պատմական ուսումնասիրութեանց: Տպարանական յանձնաժողովն ալ թէ գործարանին և թէ հրատարակութեանց կը հսկէր, և տպարանը կը բարւոքէր, որ հետզհետէ կանոնաւոր տպարանի կերպարանը զգեցաւ: Արարատին հրատարակութեան տարածուելուն մասին խմբագրութիւնը 1868 սեպտեմբերին կը ծանուցանէր թէ հինգ ամիսներու մէջ բաժանորդներու թիւը 1200-ի հասած է (68. ԱՐՐ.53), սակայն տևողութիւն ապահովելու համար կաթողիկոսը բաժանորդութիւնը պարտաւորիչ ըրաւ ամէն քահանաներու, այնպէս որ 1888-ին 2200-ի կը հասնէր բաժանորդներու թիւը 488.ԱՐՐ.789): Արարատ ամսագիրը 48 տարիէ ի վեր անխափան կը շարունակէ, թէպէտ տարբերեալ խմբագրութեամբ, իրեն խմբագրապետներուն փոփոխութեան և իւրաքանչիւրին կարողութեան և ճաշակին համաձայն, ուստի լաւ ու ընտիր, ստոր ու հասարակ պարունակութիւններ իրարու կը յաջորդեն իր կիսադարեան կեանքին մէջ: Տպարանի արտադրութեանց մէջ առաջնակարգ տեղ կը գրաւեն ձայնագրեալ հրատարակութիւնները, որոնց մասին խօսեցանք (2807): Ծիսական գիրքերէն հասարակ կիրառութեան պիտանիներէն վատ հրատարակուեցան եպիսկոպոսական ձեռնադրութեանց և միւռոնի օրհնութեան կանոնները, որոնք սակայն հրապարակ հանուած չեն. և քահանայական ձեռնադրութեանց մաշտոցը նոր եպիսկոպոսներու կը տրուի, իսկ մնացեալները Մայրաթոռի ներքին կիրառութեան համար խնամով կը պահուին:

2809. ՎԱՆԱԿԱՆԱՅ ԹՈՂՕՆԸ

Պօլօժէնիէի տրամադրութիւններէն ամէն կողմերէ քննադատուած, և շարունակ խնդրոյ նիւթ եղած մեծ կէտը կուսակրօն եկեղեցականաց, այսինքն վանականաց և միաբանից ազգականներուն, իբր անոնց թողունին ժառանգ ցուցուիլն է, և այս տրամադրութեան թէ կաթողիկոսին, թէ եպիսկոպոսներուն և թէ բոլոր վանականներուն համար կրկնուիլն է (ՊՈԼ. 5. 13. 17.): Այս կէտը Կարբեցիի կողմէ ներկայացուած երեք դիտողութեանց առաջինն էր (2530), նոյնը Հնդկահայոց կողմէ ալ առաջարկուած էր (2557), Ներսէս ալ նոյն կէտին վրայ պնդած էր (2674), Մատթէոս ալ այդ խնդիրը շոշափած էր իր ծրագրին մէջ (2744), և վերջին անգամ կաթողիկոսական յանձնաժողովն ալ միևնոյն խնդիրը յուզուած էր (ՅՆԶ. 77): Վերջապէս ամէնուն մտադրութեան առարկայ եղած էր, բայց մ'չ ոք յաջողած էր վայն փոխել տալ պօլօժէնիէի մէջ, մանաւանդ թէ անոր փոփոխութիւնը անհնար ըսուած էր առաջին անգամ Կարբեցիի առաջարկներուն պատասխանին մէջ (2530): Գործը իր ամբողջական դրութեամբ հասած էր Գէորգին, որ չէր կրնար վայն վանց ընել իր գլխաւոր ձեռնարկներուն կարգին: Գործին ընթացքը դիւրացնելու համար, 1867 մայիսէ յուլիս երկամսեայ միջոցին մէջ, նախ ինքն յօժարակամ յայտարարութեամբ իրեն ամբողջական յայտարարեց աթոռը, վլանալով իր ազգականներուն

իրաւունքը, և հրաժարելով նաև իր կենդանութեան իր գոյքերը յօգուտ իւրայնոց կամ այլոց պարգևելու և բաշխելու իրաւունքէն (68. ԱԲԲ. 7): Երբոր ինքն առաջին օրինակը տուաւ, իրաւունք ունեցաւ բոլոր միաբաններէն ալ, արքեպիսկոպոսէն մինչև դպիրները, նոյնը պահանջել և ամէնքն ալ յօժարակամ ուխտեցին և ստորագրեցին յայտարարութիւն մը, որով կը յայտարարեն թէ իրենց ժառանգը վանքն կամ աթոռն է, Թէ ազգականներ ժառանգութեան իրաւունք չունին, և թէ իրօք ալ չեն կրնար ըստ հաճոյս բաժանել իրենց գոյքերը, այլ իրենց պատկանող ամենայն ինչ կը մնայ Էջմիածնի գանձարանին, և ուրիշ վանականներունը վանուց իւրեանց, և միայն կը յարգուին յօգուտ Սրբոյ աթոռոյն վանօրէից կամ վանական դպրոցաց եղած կտակները (68. ԱԲԲ. 7-8): Գէորգ այդ յայտարարութիւններով զօրացած երբոր Պետրբուրգ հասաւ խնդիրը առաջարկեց ներքին գործոց նախարար Վալուեվի, և անոր հաւանութիւնը ստանալով կայսեր տեղեկագիրը ներկայացուց՝ երբ 1867 հոկտեմբեր 14-ին անոր ներկայացաւ, և խնդրեց պօլօժէնիէի այդ մասին խօսող յօդուածներու փոփոխութիւնը: Կայսրը բարեհաճեցաւ խնդիրը ստանալ և նախարարութեան յանձնել, որ իր հաւանութիւնը յայտնեց, և հրատարակուեցաւ փոփոխութիւնը վաւերացնել կայսերական հրամանագիրը, և այն որ 1836-է սկսելով հետապնդութեան առարկայ եղած էր, իբր 32 տարի ետքը, Գէորգի խոհական աշխատութեամբ իրականացաւ և հաստատուեցաւ: Ստացուած հրամանագիրին մէջ պակաս մնաց միայն միաբաններուն իւրեանց կենդանութեան իրենց գոյքերն ու արդիւնքները բաշխելու և նուիրելու արգելքը, որ այժմ մնացած է լոկ միաբաններու խիղճին և ուխտին վրայ, և միայն վկնի մահուան աթոռը կամ վանքը ընդհանուր և բացառաբար կերպով ժառանգ ձանդուցուած է, և որևէ կտակ անվաւեր նկատուած է բացի յօգուտ ազգային եկեղեցական հաստատութեանց եղածներէն (ԱԲՂ.57): Այդ փոփոխութիւնը կը ցուցնէ թէ անհնարին չէ պօլօժէնիէի ուրիշ կէտերն ալ փոփոխել, եթէ օրինաւոր և խոհական և պատճառաբնեալ դիմումներ ըլլան, փոխանակ յախուռն և անխորհուրդ ընդդիմութեանց:

2810. ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՊ

Գէորգի գործունէութեան մէջ նշանակելի կէտ մըն է, անոր միաբաններու հանդէպ ունեցած ընթացքը: Անցեալը հաճելի կերպարան մը չունէր և իրեն ալ հաճոյական չէր կրնար ըլլալ, սակայն ուղիղ չէր անցելոյն մէջ գործի վրայ գտնուողները պատասխանատու ընել Մատթէոսի ժամանակ կատարուած գործողութեանց, ուր ընդհակառակն աւելի իրաւացի էր անոնց գործունէութիւնը գնահատել, որ կաթողիկոսին գործերէ ձեռնթափ եղած միջոցին, գէշ աղէկ աթոռին պատիւն ու օգուտը պաշտպանելէ ետ չմնացին, և աթոռը պատուաւոր վիճակի մէջ իրեն յանձնեցին: Գէորգ տարբեր մտայնութիւն մը կազմեց այդ մասին, և հետզհետէ հեռացուց կամ հեռաւոր տեղեր պաշտօններու կոչեց և կամ հանգստեան վիճակի անցուց նախորդ կաթողիկոսի օրով գործի վրայ եղողները, և նորահասներու խումբ մը կազմեց իր շուրջը, զորս պաշտօնի և սինոդականութեան

կոչեց, և հապիւ երեսնամեաներ եպիսկոպոսութեան բարձրացուց: Գուցէ հիներու վրայ անվստահութենէ աւելի ձեռքին տակ հլու հպատակներ ունենալու դիտումը աւելի զօրաւոր եղաւ իր միտքին մէջ, բայց որն և ըլլայ ներքին պատճառը, իրաւացի պիտի չգտնենք երիցագոյն աշխատաւորները անտեսելը: նոյն իսկ Սարգիս Զալալեանը և Մակար Տէր Պետրոսեանը, որոնք նախընթացաբար գնահատելի դերեր վարած էին, և իր առաջի օրերուն մէջ ալ գործի վրայ գտնուած էին, հետզհետէ աթոռական վարչութենէ հեռացուեցան: Այդ կարգին յատուկ աչքի պարկաւ և շատ կրուցուեցաւ Վահրամ Մանկունի եպիսկոպոսի վարած դերը: Բնիկ Պրուսացի Ստեփան Սափրիչ Մանուկի որդի, և Գէորգի Պրուսայի առաջնորդութեան ժամանակէն և իր նորահաս պատանեկութեան տարիքէն անոր մօտ եղած և պահուած քսան տարեկան աշխարհական երիտասարդ մըն էր, զոր Գէորգ միասին Էջմիածին բերաւ 1867-ին, և 1872 ին յուլիս 16-ին

ձեռնադրության կոչեց ի միաբանութիւն Մայրաթոռոյ և նոյն տարւոյ օգոստոս 17-ին մասնաւոր և երկու տարիէ ծայրագոյն վարդապետութեան, և տարի մը ետքը 1875 հոկտեմբեր 19-ին եպիսկոպոսութեան բարձրացուց 29 տարեկան եղած ատեն: Մանկունի Վահրամ եպիսկոպոս էջմիածին գալուն առաջին օրէն ամենայն ինչ էր Գէորգի համար, և վարդապետութենէն սկսելով, իբր քարտուղար և գաւազանակիր, վեհարանին տէրը կը նկատուէր, և հնար չէր կաթողիկոսին մօտենալ կամ խօսիլ առանց Մանկունիի միջնորդութեան, և որևէ խնդրուած կամ առաջարկ չէր կատարուեր առանց նախապէս Մանկունիի հաւանութիւնը շահելու, զոր տիրող վրոյցը առանց գնելու կըսէր: Այնպէս իմն կը նկատուէր իբր թէ նա տիրացած ըլլար կաթողիկոսին միտքին և կամքին, և կաթողիկոսն ալ առանց անոր բան մը չկարենար ընել: Այս էր ընդհանուր համոզումը և այս տեսակէտէն վրոյցներ կը յաճախէին, որոնց մէջ ոչ Գէորգի և ոչ Վահրամի գովալի դեր մը չէր վերագրուեր: Մանկունին կաթողիկոսարանին մէջ ունեցած բազմակողմանի վբաղումներէն զատ, մտադիր և անխոնջ գործիչ մըն էր ապարանի և ամսագիրի, ձայնագրութեան և հրատարակութեանց բազմոստեան ճիւղերուն մէջ, և կաթողիկոսի և սինոդի միջև յարաբերութեանց միջնորդն ալ ինքն էր, այնպէս որ անհնար է ուրանալ Մանկունիի անխոնջ աշխատասիրութիւնը և գործնական կարողութիւնը: Տիրող գաղափարը բացատրեցինք ինչպէս կը խօսուէր, բայց մենք որ Գէորգի անձին և կարողութեան վրայ աւելի բարձր գաղափար մը կը տածենք, և Վահրամի բնոյթին և ձիրքերուն վրայ մօտէն տեղեկութիւն քաղելու առիթ ունեցած ենք, չենք միտիր հզօր կաթողիկոսը երիտասարդ եպիսկոպոսին ձեռաց ներքև ընկճուած կարծել, և աւելի պիտի սիրենք Գէորգի ձեռաց անձնուէր և հաւատարիմ և կամակատար գործիք մը ըսել Վահրամը, որ իր մեծաւորին սիրւոյն համար անոր կամքին և միտքին, յօժարութեան ու բաղձանքին ճշդապահ գործադիրն է եղած, մինչև իսկ տգեղ կողմերն ալ մտադիր յանձն առնելու՝ իր մեծաւորին համար զոհուելու անձնուրացութիւնն ունեցող: Նոյն իսկ հաւանութիւն դնելու միջոցներ ըսուածները, մեր կարծիքով, աւելի քան Վահրամի, նոյն ինքն Գէորգի հաշւոյն եղած գործողութիւններ էին: Այն կասկածները, որ Գէորգի անձնական արկղին դատարկ գտնուելէն ծագեցան, Մանկունիի վրայ կը ծանրանային, և քննութիւններն ու վննութիւններն ալ անոր գոյքերուն վրայ կատարուեցան (2806), բայց ինչպէս քննութիւններ ապարդիւն մնացին, Մանկունիի յետ այնորիկ և մինչև այսօր վարած կեանքն ալ կասկածները չեն արդարացներ, և զայն իբր ճոխ աւարի գողօնաթաքոյց չեն ցուցներ: Բաւական երկարեցանք Գէորգի կաթողիկոսական ներքին գործունէութիւնը պատկերացնելու անցնինք Կ. Պոլսոյ անցուդարձերուն, որոնց մէջ դարձեալ Գէորգի մասին խօսելու առիթ պիտի ունենանք, և առաջիկային թողունք անոր կեանքին վերջին մասը պատմել:

2811. ԽՐԻՄԵԱՆ ԱԹՈՌԻՆ ՎՐԱՅ

Կ. Պոլսոյ եղելութիւնները թողուցինք Մկրտիչ եպիսկոպոս Խրիմեանի պատրիարք ընտրուելուն 1869 սեպտեմբեր 4-ին. այժմ կը մնայ անոր գործունէութիւնը պատմել, և նախապէս եղելութիւնները յառաջ բերել իրենց ստուգապատում հանգամանաց և իսկական նկարագիրին մէջ որ հնար լինի անաչառ տեսութեամբ գնահատել կամ քննադատել անձնաւորութիւն մը, որ իրական հոչակ ունեցած է ազգին մէջ և պաշտելի անուն մը եղած է հանրութեան համար, և հնար չէ վարկապարապի տեսութեամբ դիտողութեանց և դատողութեանց համարձակ ասպարէզ տալ, որչափ ալ պատմագիրի դերը պահանջէ աւելի իրողութեանց մտադրութիւնը դարձնել քան անձնաւորութեանց: Խրիմեան 1869 սեպտեմբեր 4-ին ընտրուած, հոկտեմբեր 3-ին Մուշէն մեկնեցաւ (68.Ա.ՔԱ.83), և 16ին Կարինէն (69.ՄԱՍ.924), և նոյեմբեր 6ին անակնկալ Կ. Պոլիս հասաւ (69.ՄԱՍ.926), և 12-ին ուխտը ընելով աթոռ բազմեցաւ, և գործի ձեռնարկեց: Նշանաւոր և կնճռոտ

պարագայ մըն էր իրեն համար իրմէ պահանջուած սահմանադրութեան անթերի պահպանութեան ուխտը, քանի որ սահմանադրութիւնը առկաի վիճակ մը ունէր և վերաքննութեան ենթարկուած էր և վերջնական որոշում չէր տրուած, և դժուար էր այդ վիճակը համաձայնեցնել անթերի պահպանութեան ուխտին հետ: Խրիմեան այդ կնճիռը լուծեց իր ուխտը սահմանափակելով, և բանաւորագոյն դատեց սահմանադրութեան հիմնական և անփոփոխելի սկզբանց հաւատարիմ կենալու ուխտը տալ, որով ցոյց տուաւ հայ աշխարհին որ քաղաքագիտութեան մասին առաջին է հայ եկեղեցականաց մէջ: Այսպէս նոյեմբեր 12-ը իրեն համար քաղաքագիտութեան առաջին յաղթանակին օրն եղաւ, և ստեց անոնք որ Խրիմեանը քաղաքագիտութեան մարդ չէ կրսէին (69. ՄԱՍ. 927): Գոնէ այդ երկու առաջին տպաւորութիւնը, բայց խանդավառ համակրութեան հապճեպ դատաստանն էր Վի 1869 նոյեմբեր 12 էն մինչև 1873 օգոստոս 3, որ իր նշանաւոր դարձած հրաժարագիրը ներկայեց, և օգոստոս 24-ին ետ առնելով հոկտեմբեր 2-ին վերջնական հրաժարականը տուաւ, լման չորս տարիներու մէջ վարչական հանձարի արդիւնք մը երևան չեկաւ, և նոյն իսկ Վիինքն պաշտելու չափ պաշտպանող կենսագիրն ալ ստիպուեցաւ խոստովանիլ, թէ Խրիմեանի պատրիարքութեան չորս տարին անցաւ խիստ անգոյն կերպով, նա մի երևելի բան չարտադրեց, որովհետև նա կառավարչական մարդ չէր (ՐԱՖ. 18): Խրիմեան համակ սիրտ և ամբողջ ըզգացում, նշանաւոր խօսքեր, բարձր սկզբունքներ, վայրկենական գործեր ալ ունեցաւ, երբոր իր բնական բերմանց համեմատ ինքնաբոլի արտադրութեան առիթ գտաւ, բայց այդչափը չէր բաւեր վարչական հանձարին և կանոնաւոր գործիչի ձիրքերն արդարացնել, և ոչ ալ հաստատեցին թէ խօսիլ և խորհիլ, զգալ և գործել ներքնապէս և հաստատապէս միացած ձիրքեր են (2779): Բայց կանգ առնենք ու նպատակէն չշեղինք, և դիտողութիւնն ու դատողութիւնը եղելութեանց պատմութենէն առաջ չանցընենք:

2812. ԽՐԻՄԵԱՆԻ ԸՆԹԱՅԸԸ

Խրիմեանի քառամեայ պատրիարքութեան միջոցին յառաջ բերելիք ազգային վարգացման, ուսումնական յառաջադիմութեան և նորանոր ձեռնարկներու յիշատակներ չունինք. ինքն գաւառի վաւակ, գաւառական կեանքի անձնանուէր. գաւառի ժողովուրդին վիճակով տոգորուած, և գաւառացի տարրին բարւոքումը միայն իրեն նպատակ ըրած, գաւառէն վատ բան չխօսեցաւ, գաւառէն վատ բան չլսեց, բայց դժբախտաբար այդ նպատակին մէջ ալ արդիւնաւոր չեղաւ, բաղձաց բայց չհասաւ, աշխատեցայ բայց չյաջողեցաւ, ձեռնարկեց բայց չարտադրեց, և ասոր ալ ուրիշ պատճառ չենք կրնար ցոյց տալ, բայց եթէ նա սահմանադրական վարչութեան գլուխ լինելու, և պայմանաւորեալ գործունէութեամբ արդիւնք յառաջացնելու մարդը չէր, և համբերութիւն չունէր ազգային գործելու կանոնաւոր կերպով և յաջորդաբար բարեկարգուելուն (ՐԱՖ. 18): Սահմանադրական կեանքին հապի թէ մտաւ, սկսաւ նեղ զգալ իրեն համար գծուած շրջանակը, և ձեռուրները կապուած տեսաւ երբ ձևակերպութեանց համեմատ շարժուելու ստիպուեցաւ. ինքն որ սահմանադրական և ազգայնական կուսակցութեան մեծ համակիրներէն և համարձակ պաշտպանողներէն էր, կամ ինչպէս ինքն կրսէր, յառաջ քան վվաթսըներորդ թուական անդստին ի մօրէ սահմանադրութենէն առաջ սահմանադրական ծնած էր, այլ երբեք կեդրոնին մէջ սահմանադրապէս գործելու առիթ ունեցած չէր, և միայն գաւառական շրջանակներու մէջ արձակ գործելու, համարձակ խօսելու և ընդարձակ խորհելու ապատութեամբ էր ապրած, շուարեցաւ, երբոր նոր ձևերու և ձևակերպութեանց ներքև մտաւ: Այդ կապկպած և կաշկանդուած վիճակին պատճառը նա սահմանադրութեան մէջ տեսաւ, որ թէպէտ վերաքննութեան ենթարկուած, բայց տիրող օրէնք ըլլալէ չէր դադարած, ուստի փորձեց վայն այլայլելու եղանակը մտածել, և խորհելու ու խօսելու ու գործելու իր սիրած կերպարը իրականացնելու ն վերաքննութիւն

անուն տուաւ, և կարծեց այս կերպով վայն ձեռք ձգել, այլ երբ նպատակին չհասաւ, պահանջին համաձայն գործելու ոճը չփորձեց, և ոչ ալ տիրող օրէնքէն օգտուելու եղանակը գիտցաւ: Վարչական ճարտարութեան առաջին հիմնակէտը ձեռքի տակ եղած պարագաներէն օգտուիլն է, և ոչ թէ հիմնական փոփոխութեան ետեւէն ըլլալով պարագաներուն ընձեռած գործունէութիւնը վանց ընել: Խրիմեանի ամբողջ մտայնութիւնը և իր պատրիարքութեան բովանդակ ձգտումները խտացած են այն նշանաւոր 13 կէտերուն մէջ, զորս յառաջ բերած է իր 1873 օգոստոս 3-ի հրատարագիրին մէջ: Խրիմեան կառաջարկէ և կը պահանջէ 1. Պատրիարքարանը վարչութիւնը հանրային գրութեան վերածել և Կ. Պոլսոյ համար տեղական վարչութիւն կազմել: 2. Պատրիարքարանի և կառավարութեան յարաբերութիւնները օգտակարութեան օրինաւորութեան վերածել: 3. Ընտրողական գրութեան պեղծումները արգիլել: 4. Ազգային տուրքը կանոնաւորել և ընդարձակել: 5. Համարատուութեան գրութիւնը պարտաւորիչ ընել: 6. Եկեղեցականութեան վիճակը կերպաւորել և կանոնաւորել: 7. Առաջնորդաց պաշտօնավարութեան օրինաւոր կանոն սահմանել: 8. Վանօրէից և եկեղեցեաց եկամուտները ապահովել և օգտակար ընել: 9. Եկեղեցին պօրացնել և կրօնափոխութեան առաջքն առնուլ: 10. Ուսումն ու գիտութիւն ծաւալել: 11. Դատարարական դրամագլուխ հաստատել: 12. Նախակրթարանները ընդհանրացնել և կրօնական բարձր ուսումնարաններ բանալ: 13. Ընտանեկան և բարոյական կեանքը ամրացնել: Այդ կէտերը ուղղակի կամ անուղղակի Խրիմեանի սեւեռեալ գաղափարն եղող գաւառական կեանքին շուրջը կը դառնան. սակայն համարձակ խօսելու համար, անոնցմէ և ոչ մէկը սահմանադրութեան վերաքննութիւն կամ նոր սահմանադրութիւն չեն պահանջեր, և 1863-ի սահմանադրութեան ոչ մի կէտը այդ գործերը կը դժուարացնէր, մանաւանդ թէ միջոցներ ալ կընձեռնէր այդ նպատակները իրականացնելու: Եթէ սահմանադրական կեանքը, կամ լաւ ևս Կ. Պոլսոյ պատրիարքարանին մէջ տիրող սահմանադրական վարչութիւնը, փոխանակ կենսական գործերով պաշտօնէն, անձնականութեանց և կուսակցութեանց խնդիրներով ատեն չանցնէր, որ պարզապէս սահմանադրութեան ծագմանը ընկերացող պարագաներուն, դասակարգերու մրցումներուն, և գործերը աշխարհականացնելուն հետևանքն էր, որ պիտի չվերջանար որևէ վերաքննութեամբ կամ փոփոխութեամբ, որ միևնոյն հիման վրայ կատարուէր: Խրիմեանի 13 գլուխները նպատակներ միայն կը ցուցնէին, զոր տիրող սահմանադրութիւնը չէր ուրանար, և ոչ թէ գործնական միջոցներ կամ կազմակերպական այլալուծիւն կը թելադրէին, ի բաց առեալ առաջինը, որ պատրիարքարանը հանրութեան, այսինքն գաւառներու կը յատկացնէր, և Կ. Պոլսոյ համար տեղական վարչութիւն մը կազմել կառաջարկէր: Արդ եթէ այդ բաժանումը բոլորովին անջատում պիտի ըլլար, սկզբունքի և գործադրութեան անհնարութիւն կայր. իսկ եթէ ստորակարգեալ մարմին մը պիտի ըլլար, բազմամանուած վարչութեան վրայ բան մը ևս աւելցուցած պիտի ըլլար, և դարձեալ Խրիմեանի նպատակը պիտի չիրականանար: Այդ տեսութիւններ մեզ միշտ միևնոյն եզրակացութեան կը տանին, թէ Խրիմեանի կը պակսէր սիրտն և զգացմանց համապատասխան և համաչափ գործունեայ միտքն ու ճարտար վարչականութիւնը: Այս էր պահճաւոր որ սնտոփ պայքարները և երևակայական տեսակէտներ իսկական գործունէութենէ հեռացուցին վայն, որ չորս լրացեալ տարիներու մէջ, ոչ մի գործնական ձեռնարկի տէր չկրցաւ ըլլալ, և անպէտ ջանքեր անոր օրերը խլեցին և ոյժը ընդարմացուցին, և ի վուր հակասահմանադրական անունը ժառանգեց, որ մինչև իսկ վինքն ամբաստանելու առիթ ընծայեց, և այդ կերպարին ներքև հրատարելու ստիպեց:

2813. ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ

Խրիմեանի մտայնութեան և ընթացքին վրայ ճիշդ գաղափար մը տալու համար անկաշկանդ խորհրդածութիւննիս չի խնայեցիք, զի պատմագիրի մը առաջնորդ պիտի ըլլայ լատինական

ծանօթ առածը, թէ ինչ սիրելի ճշմարտասէրն Պղատոն, այլ ճշմարտութիւնն աւելի քան վՊղատոն բայց այն համարձակութիւնն զոր պատրիարքին նկատմամբ ցուցուցինք, պիտի չխնայենք ազգայիններու մասին ալ, որոնց պարտքն էր նորընտիր քաջալերեր, և ոչ թէ առաջին վայրկեանէն վայն լքուցանել: Մայրաքաղաքից կարծես իրենց պարտքը լրացած կը համարէին եռանդ ու խանդ ցուցագրելով, իսկ աշխատութիւնն ու զոհողութիւնը իրենց օտար կը սեպէին: Սահմանադրական սկզբունքը, որ գլխաւոր պետին ձեռնահասութիւնը կը չափաւորէ և ժողովրդական տարրը իրաւունքի և գործունէութեան կը բարձրացնէ, կը պահանջէր որ ազգայիններ յանձնառու ըլլան պաշտօններ վարել, աշխատութեան մասնակցիլ և զոհողութեանց ալ ենթարկուիլ, մինչ ընդհակառակն մեծամեծ ցոյցերով Խրիմեանը ընդունողներ կանհետանային և կաներևոյթանային երբոր գործակցութեան կարգը կու գար, և Խրիմեան իրաւունք կունենար սահմանադրութեան և սահմանադրական պահանջներու դէմ կբրել, եթէ այս և այսպէս պիտի ըլլար սահմանադրութիւն կոչուած օրէնքին արդիւնքը: Այն օր որ իր սահմանադրական ուխտը կը կատարէր, և ճարտարութեամբ մը սահմանադրութեան տառը հոգիէն կը վատէր (2811): Խրիմեան երեսփոխանութիւնն ալ հրաւիրեց իրեն հետ մէկտեղ սահմանադրութեան վրայ ուխտ ընել, եթէ իրօք գործակից պիտի ըլլային օրէնքին գործադրութեան բայց ժողովականք հազարումէկ ձևակերպական և արուեստակեալ պատճառներ գտան հրաւերը գլելու և առաջարկուած ուխտը չընելու (69. ՄԱՍ. 128): Ասոնք իբր թէ առանց ուխտի ալ իրենց պարտքը պիտի ճանչնային և պիտի կատարէին, բայց Խրիմեան իրեն շուրջը ժողովականի ներկայութիւն իսկ չէր գտներ, թող աշխատակցութիւնը: Երբ 1869 դեկտեմբեր 9-ին առաջին Ընդհանուր ժողովը հրաւիրուեցաւ պետական արտօնութեամբ նոր վարչութիւն ընտրելու նպատակով, իսկոյն ժողովական կազմակերպութեանց խնդիրներ յուզուեցան, զի երեսփոխաններէն շատեր հրաժարած էին, շատերուն տանամայն լրացած էր, շատեր վերակազմութեան պէտքը կը պնդէին: Մասնաժողով մը ընտրուեցաւ 18 անձերէ՝ կառութիւնը ճշդելու և պատշաճը առաջարկելու, բայց գրեթէ ամէնքը հրաժարեցան, և մասնաժողովը չկազմուեցաւ: Քաղաքական ժողովոյ 20 տեղ 6 անդամով քաղաքական ժողով կազմել որոշուեցաւ (69. ՄԱՍ. 932), բայց 6-էն ալ 5-ը հրաժարեցան, և պատրիարքի սրտառուչ նոր հրաւերին 25 հոգի միայն անսացին, և 1870 յունուար 13-ին ժողովին ներկայացան: Խրիմեան անձնական պատասխանատուութեամբ ժողով բանալով, երեք ամիսէ ի վեր աթոռին վրայ գտնուիլը և տակաւին ժողով իսկ չունենալը յառաջ բերաւ, և իր սովորական համարձակութեամբ յայտարարեց, եթէ դուք կը փախչիք, միթէ ես չե՞մ կրնար. իմ թևերս աւելի ազատ են: Բայց որովհետև 25 ներկաներ օրինաւոր հեղինակութիւն չէին կազմեր, գործին մեջէն ելլելու միակ եղանակ ժողովրդական 6 անձերն ընտրել, գիտցած կերպով երեսփոխանութիւնը վերակազմել, և Կիլիկիոյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց հնացեալ խնդիրներուն յարմար ընթացք մը տալ, հինէն տրուած որոշումներով չկաշկանդուիլ, վերաքնութիւնը դիւրացնել, և որ և իցէ խնդիրին լուծում մը պատրաստել: Այս որոշման հետևանօք առաջին գործը կըլլար վեցական անդամներով կրօնական և քաղաքական ժողովներ կազմել, պետական հաստատութիւնն ընդունիլ, և փետրուար 20 թևակիր յայտարարութեամբ հանրութեան ծանուցանել: Նորակազմ կրօնական ժողովոյ անդամներն եղան Ներսէս Վարժապետեան, Յովհաննէս Սեթեան և Սիմէոն Սէֆէրեան եպիսկոպոսներ, Կարապետ Սերովբեան վարդապետ, և Գէորգ Արծրունի և Արիստակէս Մամբրէեան աւագերէցներ: Իսկ քաղաքականին անդամակցեցան Սահակ Ապրոյ, Յակոբ Նորատունկեան, Տիգրան Եոսուֆեան, Յովհաննէս Կրճիկեան Գէորգ Մկրտիչեան և Միքայէլ Ռափայէլեան բժիշկ (70. ՄԱՍ. 949):

Պատրիարքը այդ ժողովներուն գործակցութեամբ առկախ խնդիրներու կարգադրութեան ել ձեռնարկեց: Մէկ կողմէն նոր ընտրութիւններով երեսփոխական Ընդհանուր ժողով կը կազմէր, և միւս կողմէն պատրիարքարանի վրայ ծանրացող 800, 000 դահեկանի պարտքին համար հանգանակութեան կը հետևէր, և գործին ոյժ տալու համար մարտ 27-ին ծանուցումով բոլոր ժողովուրդը ոայր եկեղեցի կը հրաւիրէր, ազգային մեծ խնդիրին վրայ խօսելիք լսելու և խնդիրին լուծումը որոշելու, յայտարարելով թէ կամ պէտք է լուծէք այս խնդիր, կամ թողէք որ լուծուիմ (70. ՄԱՍ. 959) և մարտ 28 ին խօսածն ալ դարձեալ պարտքը ջնջելու համար ընդհանուր հանգանակութիւնն էր (70. ՄԱՍ. 960): Առձեռն մասնաւոր խնդիրներ ալ վանց չէր ըներ, բայց ժողովուրդին մէջ դժգոհութիւն ըսած էր պատրիարքարանի թոյլ ընթացքին վրայ: Իբր գայթակղալից դիպուած մը ամէնուն բերանը կը պարտէր, թէ Գլակայ միաբաններէն Մխիթար, և Եսայի և Կարապետ վարդապետներ յանդգնած են պատրիարքին երեսն ի վեր ժպիրհ կերպով պոռչտել. և անոր դէմ կառավարութեան ամբաստանութեան մատուցանել, և լրագիրներ մէջ ալ պժգալի ամբաստանութիւններով նամակներ հրատարակել, և թէ տակաւին այդ ծանօթ ըմբոստներ և Խրիմեանի հին հալածողներ անպատիժ կը մնան: Սեբաստիոյ առաջնորդ Կարապետ եպիսկոպոս, որ ամբաստանութեամբ Կ. Պոլիս բերուած էր, անհրաման կը թողուր կը փախչէր (70.ՄԱՍ.951): Տեղերնին ձգող շատ մը վարդապետներ ինքնագլուխ մայրաքաղաքին մէջ լեցուեր էին, և իբր դարման եկեղեցականաց ժողով կը հրաւիրէր պատրիարքը, փոխանակ ազդու տեղերնուն կամ գործերնուն դարձնելու: Այդ մանր դէպքեր կը ցուցունեն թէ զօրաւոր վարչութիւն կը պակսէր կեդրոնին մէջ, որուն եթէ ամբողջ պատասխանատուն Խրիմեանը չէր, սակայն հետևանքը ամբողջ Խրիմեանին վրայ կը ծանրանար, զի իբր պատրիարք իրմէ կը պահանջուէր գործերուն ուղղութիւնը և վարչական զօրութիւնը: Իրաւ ինքն այդ ձիրքերով չէր, բայց իրեն հետ զօրաւոր աջակիցներ ունենալու բախտն ալ չունեցաւ. ժամանակը խառնակ էր, կացութիւնը անորոշ, սահմանադրութիւնը վերաքննութեան ներքև, զոր ծրագիրներու և յանձնաժողովներու փոփոխութիւնը այլևս կը կնճռոտէր, և իբրև այդ կացութեան դարման նորոգ կազմուելիք Ընդհանուր ժողովով մը նորոգութեան ակնկալութիւններ կը խօսուէին, և ընտրութիւնները լրացնելու և բացման հրամանը ստանալու հետապնդութիւններ կըլլային: Վերջապէս բաղձացուած հրամանը 1870 յուլիս 30-ին պատրիարքարան հասաւ (70.ՄԱՍ.995), և օգոստոս 21-ին Վերափոխման ուրբաթ օրը առաջին նիստը տեղի ունեցաւ Խրիմեան պատրիարքի նախագահութեամբ, Սարգիս Աղաբէղեանի առժամեայ ատենապետութեամբ և 71 երեսփոխաններու ներկայութեամբ: Անմիջապէս հաստատուն դիւանը կազմուեցաւ, և Գրիգոր Օտեան ատենապետ և Տիգրան Եռուսեֆեան ատենադպիր ընտրուեցան, և Սարգիս Աղաբէղեան և Յարութիւն Մերեձմգուլի անոնց փոխանորդներ կամ երկրորդներ: Պետական արտօնութիւնը հիմնուած էր 1863-ի սահմանադրութիւնը փոփոխելուն վրայ, որ 1866 մարտ 20-ին հրամանագիրով վերաքննութեան ենթարկուած էր (2758), պետական մասնաժողովը վերաքննեալ ծրագիր մը պատրաստած էր, Ընդհանուր ժողովէ անուանեալ ուրիշ մասնաժողով մըն ալ տարբեր ծրագիր մը կազմած էր, և այս երեք օրինակները ձուլելու և վերջնական ծրագիր մը կազմելու գործը կառավարութենէն նոյն ինքն Ընդհանուր ժողովոյ յանձնուած էր, և այս հիմամբ էր որ համաձայն 1863-ի սահմանադրութեան 61 յօդուածին ազգային սահմանադրութեան վերաքննութեանը համար կառավարութիւնը արտօնած էր բացառիկ և արտասովոր նստաշրջան մը բանալ (ԱՏՆ.10): Այս բացառիկ նստաշրջանն է որ անպայման շարունակեց երկար տարիներ առանց իր նպատակին ծառայելու, այսինքն առանց վերաքննութիւնը աւարտելու և պարբերական հնգետասանօրեայ նիստերու վերածուեցաւ, նոյն իսկ սահմանադրութեան 61-րդ յօդուածին յայտնի կարգադրութեան

հակառակ, որ երկտարեկան նիստեր միայն կը թողլատրէ, ամէն երկու տարին անգամ մը ապրիլի վերջերէն սկսելով մինչև երկու ամիս տևելու պայմանով (ՍՀՄ. 40): Անշուշտ մեզմէ չի սպասուիր ոչ պատրիարքարանի գործոց մանրամասնութիւն տալ, և ոչ Ընդհանուր ժողովոյ նիստերուն ամփոփումներ ներկայել: Մենք պիտի հետևինք ազգային կեանքին գլխաւոր անցքերը պատկերացնել, և եթէ Կ. Պոլսոյ պատրիարքարանին վերջին միջադէպները յառաջ բերինք, անոնց մէջ ազգային կեանքին մէկ նկարագիրը, և ազգային մեծ հանրութեան մը կացութիւնն էին, որ պէտք չէր վրիպէին մեր նկատողութենէն:

2815. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԵՒ ԿԻԼԻԿԻԱ

Գլխաւոր խնդիրը, որով պիտի վբաղէր Ընդհանուր ժողովը Կիլիկիոյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց խնդիրն էր, որուն վրայ արդէն տեղեկութիւններ տւած ենք (2768-2769): Բայց խնդիրը առկախ կը մնար պատրիարքական տագնապներուն պատճառով, և նոր կերպարան ալ առած էր Գէորգ կաթողիկոսի կողմէ եղած միջմտութեանց պատճառով (2770): Երբոր Խրիմեան աթոռ բարձրացաւ, պաշտօնի ձեռնարկելէն քիչ օր ետքը, 1869 դեկտեմբեր 5-ին հարկ սեպեց գիր մը ուղղել կաթողիկոսին, յայտնելով վջերմեռանդութիւն և պորդիական հնապանդութիւն առ Մայրաթոռն, որուն Գէորգ պատասխանեց 1870 յունուար 2-ին, և առիթէն օգտուեցաւ այնպիսի յայտարարութիւններ և պահանջներ ընելու յիշեալ երկու կաթողիկոսութեանց նկատմամբ, որ վանոնք պարպապէս անուանական դարձնելու նպատակն ունէին, ինչ որ արդէն ծանօթ էր Կ. Պոլիս եղած ատեն իր թելադրութեամբ կազմուած ծրագրէն ալ (ԻԶՄ.640, և 2768): Խրիմեան չհամարձակեցաւ այդ կոնդակը պաշտօնապէս հրատարակել. բայց անծանօթ չմնաց, և մինչև իսկ յաւելուածական խօքեր ալ բարդուեցան վրան, իբր թէ Սսեցոց և Աղթամարցոց համար ըսած ըլլայ թոյլ տուք մեռելոց թաղել վմեռեալս իւրեանց (ԻԶՄ.771.774): Թէպէտ այս բացատրութիւնը չի գտնուիր անագան հրատարակուած օրինակին մէջ, սակայն կաթողիկոսը բաւական խիստ բացատրութիւններ կը գործածէ երբ կը յայտարարէ թէ Խօվանեանց և ապստամբ Զրդաց վօրութեամբ միայն կը յաջողէին անոնք կաթողիկոսութիւն վարել, թէ ներեալ չէ անոնցմէ ձեռնադրութիւն առնողները քարոզչութեան ու ժողովականութեան ու առաջնորդութեան գործածեալ, թէ ուխտադրուծներ են Էջմիածնայ իրաւասութեան ներքև եղած վարդապետներ, որոնք եպիսկոպոսանալու համար Սիս կամ Աղթամար կը դիմեն, թէ անբաւական է վերաքննեալ ծրագիրին մէջ Կ. Պոլսոյ պատրիարքութեան համար պատրիարքութեան յատկացեալ եպիսկոպոսաց դասէն ըսելը, այլ պէտք է յայտնապէս Էջմիածինը յիշելը, մինչ այդ բացատրութիւնը ոչ թէ վերաքննեալ ծրագիրին, այլ 1863-ին հաստատուած սահմանադրութեան մէջ գրուած էր (ՍՀՄ. 13), և ինքն ալ չէր կրնար այդ բանը անգիտանալ: Վերջին խօսքերով կակնարկէր Ներսէս Վարժապետեանի պատրիարքական ընտրելի ցուցուելուն (2774), թէպէտ ութը եպիսկոպոսներու հեռագիրը չէր յիշել: Այս կէտերն էին որ Վարժապետեանը յորդորեցին կրօնական ժողովէ հրաժարիլ (70. ՄԱՍ. 947), սակայն Խրիմեան ընդդիմացաւ ժողովականութեան մէջ մէջ պահեց (70. ՄԱՍ. 949), թէպէտ Գէորգ պատուիրեմք սիրելութեան ձերում խոսքերով (ԻԶՄ. 762) Խրիմեանէ կը պահանջէր իր հրահանգները անթերի կատարել: Նկատողութեան առարկայ, դարձան նաև կոնդակին այն կտորները, որոնցմով Խրիմեանի կը հաղորդէր շնորհել արքեպիսկոպոսութեան վպատիւ, հաստատելով միանգամայն վընտրութիւնն ի պաշտօն պատրիարքութեան Կ. Պոլսոյ, ինչ որ նախընթաց չունէր, և ինքն ալ արքեպիսկոպոս տիտղոսը գործածած էր իր պատրիարքութեան ատեն առանց կաթողիկոսէ անուանուած ըլլալու, և պատրիարքութիւն վարած էր առանց կաթողիկոսէ հաստատուելու (70. ՄԱՍ. 957): Մայրաքաղաքին և ժողովականներուն և լրագիրներուն մէջ ահագին ժխորի մը առիթ տուին այդ կէտերը, և

մանաւանդ մէջտեղ կը գրուէին պօլօժէնիէի դէմ յայտնուած միտքերը Գէորգի մասնակցութեամբ, որ պայն բացարձակ հակասութեան մէջ կը գնէին, երբ Կ. Պոլսոյ և Կիլիկիոյ և Ադթամարայ աթոռակալներուն ընտրութիւնները իր ձեռքն անցնել կուզէր մինչ պօլօժէնիէի գրութեամբ և ոչ առաջնորդ մը կրնար ընտրել ռուսահայ վիճակներուն վրայ (70. ՄԱՍ. 949, 954), և Մայրաթոռին կատարեալ իրաւասութիւնը կը պահանջէր Տաճկահայոց վրայ, մինչ Ռուսահայոց վրայ իսկ ամբողջական իրաւասութենէ զուրկ կը գտնուէր, և այդ մասին լուռ և անհոգ կը մնար: Բոլորովին տարբեր էր մայրաքաղաքին մէջ տիրող մտայնութիւնը, պատրիարքն ալ դուրս չթողլով, ուր սաստիկ էր պօլօժէնիէի հակառակ կարծիքը, զոր իբր Հայոց եկեղեցւոյ կործանիչ կը նկատէին, և Գէորգն ալ ժամանակով համախոհ գտնուած էր այդ կարծիքին, մասնաւոր կաթողիկոսներու համար հակաթոռութեան անունը չէին ընդունիր, և զանոնք կաթողիկոսական իրաւութիւններու օրինաւոր տէր կը ճանդնային, և անոնց կատարեալ պահպանութիւնը անհրաժեշտ կը նկատէին, նոր պօլօժէնիէի դէմ բողոք և ռուսական ոտնձգութեանց հակակշիռ, և Սիսը Էջմիածնի համար բանաձևը նշանաբան էր դարձած: Իրենց տեսութեամբ բաւական էր որ Կ. Պոլսոյ աթոռը իբր բովանդակ Թուրքիոյ պատրիարքութիւն, մէկ կողմէն իբր ստորադաս՝ Էջմիածնի իրաւասութիւնը ճանդնար, և իբր գերադաս՝ Կիլիկիան ու Ադթամարն ու Երուսաղէմը իրեն հետ կապած պահէր, և ասկից աւելի կապեր չէին կրնար ստեղծել: Այս էր պատճառը որ Գէորգի կոնդակին պարունակութեանը վրայ շատ չխօսուեցաւ. վիճաբանեցաւ և հերքուեցաւ, բայց երբեք պաշտօնական գրութիւն չհրատարակուեցաւ, ոչ միայն ի բեմս եկեղեցեաց ի լուր ժողովրդեան չկարդացին այլ և ազգային ժողովոյ մէջ, կարդալն անգամ զլացան, և ծածկեցին: Այդ խնդիրը մեծապէս ազդեց Գէորգի անունը վարկաբեկելու Տաճկահայոց մէջ, այնպէս որ նկատի իսկ չառնուեցան իր գործունէութեան արդիւնքները, զորս մենք իրենց կարգին գովութեամբ յառաջ բերինք (2804-2809):

2816. ԽՆԴԻՐԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Նոր կազմուած Ընդհանուր ժողովը իր երկրորդ նիստէն սկսելով 1870 օգոստոս 28-ին ձեռք առաւ մասնաւոր կաթողիկոսութեանց խնդիրը, բայց Սիսով միայն սկսաւ զբաղիլ, գուցէ երկու խնդիրները խառնելով ճապաղելու պատճառ չտալու համար, մանաւանդ որ խնդիրները թէպէտ նման, բայց տարբեր շարժառիթներէ ծագում առած էին: Վեց ամբողջ նիստեր Սիսով զբաղեցաւ ժողովը, մինչև սեպտեմբեր 25, և վերջապէս հոկտեմբեր 16-ի նիստին մէջ որոշումը տուաւ և խնդիրը փակեց: Անհնար է հետևիլ այն երկարաբան ճառախօսութեանց, քմահաճոյ խժրծանաց, և անձնական մրցմանց, որոնցմով լեցուն են այդ նիստերուն ատենագրութիւնները (ԱՏՆ.27-119), ուստի բաւական կը սեպենք համառօտակի կերպով որոշման իսկութիւնը բացատրել: Խնդիրը առաջարկուեցաւ առժամեայ քաղաքական ժողովին կողմէն հակիրճ ծրագիր ձևով մը. Նիկողոսը Սիսէն հեռացնել և Կ. Պոլիս բերել, Տիգրանակերտի առաջնորդ Յակոբ եպիսկոպոսը տեղապահ նշանակել, Նիկողոսի հեռացնելէն ետքը եպիսկոպոս մը յղելով թեմականներուն ընտրեալեաց եռանուն ցանկ պատրաստել տալ երեքէն մէկը Ընդհանուր ժողովով կաթողիկոս ընտրել, Նիկողոսի ձեռնադրած Դաւիթ-Թէոդորոս Ներշապուհը Կիպրոս աքսորեալ տալու առաջարկն ալ աւելցած էր: Այդ առաջարկներուն մէջ Նիկողայոսի հեռացումը դժուարութեան չէր հանդիպեր, զի անպաշտօն կերպով Սիս մնալու արտօնուած ըլլալով կատարեալ կաթողիկոսութիւն կը վարէր տեղապահը վտարելով և եպիսկոպոսներ ձեռնադրելով մնացեալ կէտերն ալ ընտրութեան ձևէն կախում ունէին, ուստի անոր վրայ յուշուեցան երկարատև վիճաբանութիւնները: Չորս առաջարկներ գրուեցան մէջտեղ, որոնց ամէնն ալ իբր անհրաժեշտ նախաբան Էջմիածնի Մայրաթոռոյ Ամենայն Հայոց ընդհանուր և գերագոյն և միակ գլուխն ու կաթողիկոսն ըլլալը կը

դաւանէին, և միայն Կիլիկիոյ կաթողիկոսին գիրքն և ընտրութեան ձևը ճշդելուն մէջ կը տարբերէին: Չորս առաջարկներուն տիրութիւնը ստանձնած էին, Ռուբէն Կիւմիշկերտեան, Գրիգոր Օտեան, Ստեփան Փափապեան և Նահապետ Ռուսինեան: Առաջինը կառաջարկէր որ Կ. Պոլիս բնաւ չմիջամտէ, թեմականք երկու ընտրելի ցոյց տան անոնցմէ մէկը Էջմիածնի կաթողիկոսը ընտրէ (ԱՏՆ. 27-29): Երկրորդը կառաջարկէր ընտրութիւնը Էջմիածնի չթողուլ ցորաչափ պօլօժէնիէով անկախութիւնը կորսուած է, և Կ. պոլսոյ պատրիարքութեան մասնակցութիւնը, իբր Էջմիածնի փոխանորդի մասնակցութիւն բաւական սեպել Հայ եկեղեցոյ միութիւնը ապահովելու (ԱՏՆ. 40-45): Երրորդը ընտրութիւնը ամբողջապէս թեմականներուն թողլով, ընտրելին Կ, Պոլսոյ պատրիարքութեան կրօնապէս և քաղաքականապէս ենթարկեալ ըլլալը բաւական կը սեպէր Հայ եկեղեցոյ հետ Կիլիկիոյ միութիւնը հաստատելու (ԱՏՆ. 57-58): Վերջինը ընտրութիւնը թեմականներուն թողլով միայն վաւերացումը կեդրոնին կը վերապահէր, և իբր բանաձև կառաջարկէր ընտրութիւնը գաւառին, վաւերացումը կեդրոնին: Ձև մըն ալ Ներսէս եպիսկոպոս առաջարկեց, Կիլիկիոյ աթոռը Երուսաղէմի պատրիարքին յանձնել (ԱՏՆ. 38), բայց այս առաջարկը վիճաբանութեան իսկ նիւթ չեղաւ: Ռուսինեան իր ազդու և ընդարձակ ատենաբանութեամբ ամէնքը գրաւեց, տնանկ որ միւս առաջարկութեանց տէրերն իսկ այլ ևս չպնդեցին (ԻԶՄ.845), և Ռուսինեանի բանաձևը ընդունելի դատուեցաւ 25-ին. քուէի ձևակերպութիւնն ալ լրացաւ հոկտեմբեր 16-ին, բայց կեդրոն բառին իմաստը ճշդելու համար նիստ մըն ալ պահեցին, և վերջապէս Խրիմեան պատրիարքի բացարձակ յայտարարութեան վրայ, թէ կեդրոնը Ընդհանուր և ոչ Խառն ժողովն է, թէ ինքն ուրիշ կերպ չի կրնար ընդունիլ, 2 բողոքող և 1 հակառակ քուէներու դէմ ընդհանուր հաւանութեամբ կեդրոնի վաւերացումը երեսփոխանութեան յատկացուեցաւ (ԱՏՆ.118) և վերջնական որոշումը լրացաւ: Փոխադարձ յարաբերութիւնները ճշդելու, և ծրագրելու համար երեք եկեղեցական և երեք աշխարհական երեսփոխաններէ յանձնաժողով մը կազմուեցաւ, իսկ որոշման գործադրութիւնը վարչութեան յանձնուեցաւ: Այսպէս վերջացաւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան խնդիրին լուծումը, որուն էական մասերն եղան, Մայր աթոռին ընդհանուր իրաւասութիւնը ճանաչել, ընտրական գործողութեանց մէջ Մայրաթոռը դուրս թողուլ, թեմականներու իրաւունքը յարգել, և Կ. Պոլսոյ և ազգային պատրիարքարանի գլխաւորութիւնը նուիրագործել: Այդ եղելութեանց գլխաւոր շարժառիթներն եղան Մայրաթոռոյ պօլօժէնիով կաշկանդուած, և Կ. Պոլսոյ պատրիարքութեան Ամենայն Հայոց կաթողիկոսութեան ներկայացուցիչը ճանչցուած ըլլալը, ինչ որ շեշտուած էր Զալալեանի միջադէպով (2771): Այս սկզբանց վրայ հիմնուելով ոմանք յառաջացան Կիլիկիոյ և Աղթամարայ կաթողիկոսները վանահայր վիճակաւոր անուանել, որ մեր տեսութեամբ չարդարանար, զի կաթողիկոսական առաւելութիւններ որոշեալ բաներ են, որոնք երկու աթոռներուն վրայ ճանչցուեցան. իսկ հակաթողութեան ստգտանքն ալ, ինչ ալ ըլլայ երկու կաթողիկոսութեանց ծագումը Դաւիթ Թոռնիկեանի և Կարապետ Եղոկիացոյ յանդգնութեամբը, այլ ևս տեղի չունի, ցորչափ Էջմիածին խաղաղական և կանոնական սկզբունքի կողմէն մենք շատ կանուխէն յայտնած ենք մեր տեսութիւնը, որ Մայրաթոռոյ համամտութեամբ ալ հաստատուած է: Բոլոր քրիստոնէայ եկեղեցիներու նուիրապետական դասակարգութիւնը եպիսկոպոսէն և արքեպիսկոպոսէն վեր և հայրապետէն վար իրաւասութեան աստիճան մըն ալ կը ճանչնայ, թէպէտ տարբեր անուններու ներքեւ, որ ընդարձակ երկրի մը գլխաւորութիւնը կը վարէ. ինչպէս էին Վրաց և Աղուանից կաթողիկոսները Ամենայն Հայոց կաթողիկոսութեան հանդէպ: Ասոնց նմանութիւնն են այժմ Կիլիկիոյ և Աղթամարայ և Երուսաղէմի և Կ. Պոլսոյ աթոռները, և անոնցմէ երկու առաջիններուն անուանակոչութեան տարբերութիւնը, և եպիսկոպոս ձեռնադրելու և միւռոն

օրհնելու արտօնութիւնը պատահական առաւելութիւններ են, որ իրաւասական դրութիւն չեն այլայլեր, զի եկեղեցական կանոնով երեք եպիսկոպոսներ կրնան եպիսկոպոս ձեռնադրել, և ամէն եպիսկոպոս կրնայ միւռոն օրհնել, և Հայ եկեղեցւոյ մէջ ընդունուած վերապահութիւնը իրեն յատուկ սովորոյթ մըն է, որ կանոնական սկզբունքները չի խախտեր (ԱԹՌ. 76-80):

2817. ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Խնդիրին կանոնական տեսակէտէն եղելութեանց շարունակութեան դառնալով, կը տեսնենք որ որոշման 1870 հոկտեմբեր 16 թուականէն մինչև ընտրութեան վաւերացումը 1871 նոյեմբեր 12, Ամբողջ տարի մը և ամիս մը անցած է, և պատճառը գործադրութեան համար նշանակուած պայմաններն էին: Ասոնցմէ մին նախապէս յարաբերութեանց մանրամասնութիւնները ճշդել և հաստատելն էր, որուն համար ժանձնաժողով մըն ալ ընտրուած էր. բայց յանձնաժողովի անդամները վանապան պատճառներով պաշտօնէն խոյս տուին և գործը երեսի վրայ մնաց (ԱՏՆ. 522), և միայն 1871 նոյեմբեր 2-ին գոնէ Կիլիկիոյ հմար ծրագիր մը ներկայելու հրաւիրուեցաւ (ԻԶՄ. 884), և 8-ին մէկ նիստով 7 յօդուածէ բաղկացեալ ծրագիր մը կազմեց (ԻԶՄ. 886-889): Միւս պայմանն ալ նախապէս Նիկողոսը Սիսէն հեռացնելն էր, որ շատ մը պաշտօնական ձևակերպութեանց կը կարօտեր բռնի կերպով գործադրելու համար, որով հապիւ 1871 օգոստոս 14-ին ընդ հսկողութեամբ կը ժամանէ ի Կոստանդնուպոլիս և պահ մը Կ. Պոլսոյ մէջ մնալով սեպտեմբեր 24-ին կը փոխադրուի Արմաշի վանքը (ԻԶՄ. 779): Նիկողոսի հասնելէն ետքն է որ կեդրոնի պատուիրակներ, Սիմէոն Սէֆէրեան եպիսկոպոս և Յովհաննէս Ֆրէնկեան առևտրական դասակարգէն, Կ. Պոլիսէ կը մեկնին օգոստոս 19-ին, և Ատանա կը հասնին սեպտեմբերի սկիզբը (ԻԶՄ. 859), ուր իրենց աջակից պիտի ունենային կառավարութեան կողմէ նշանակուած Խուրշիտ էֆէնտի պաշտօնեայն (ԱՏՆ. 517): Վարչութեան հրահանգը կը տրամադրէր 10 վիճակներէ համեմատաբար ընտրուած 36 աշխարհական, և առաջնորդներէ և աւագերէցներէ առնուած 16 եկեղեցական պատգամաւորներով՝ 52 ներկայացուցիչներու ընտրողական ժողով մը կազմել, ընտրելեաց ցուցակ պատրաստել, ցուցակը կեդրոնին սրբագրութեան ենթարկել և անկէ ետքը կաթողիկոսն ընտրել: Պատուիրակներ ամիսուկէս նախատապրաստութիւններով զբաղեցան, և հապիւ հոկտեմբեր 21-ին առաջին նիստը գումարեցին, որուն մէջ միայն վիճակներէ առնուելիք աշխարհական պատգամաւորութիւններուն թիւը փոխուեցաւ, իւրաքանչիւր վիճակի մի-մի պատգամաւոր միայն յատկացնելով (ԱՆՏ.518): Իսկ հոկտեմբեր 22-ին ընտրելեաց ցանկը կը քուէարկուի, և 35 քուէարկուներէ Մկրտիչ եպիսկոպոս Բէֆսիպեան առաջնորդ Բերիոյ, կը ստանայ 33 քուէ, Ներսէս Վարժապետեան առաջնորդ Նիկոմիդիոյ 26. Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեան պատրիարք Կ. Պոլսոյ 20, Արիստակէս եպիսկոպոս Դերձակեան առաջնորդ Գաղատիոյ 17, Սիմէոն եպիսկոպոս Սէֆէրեան պատուիրակ վարչութեան 12, Եսայի արքեպիսկոպոս Կարապետեան պատրիարք Երուսաղէմի 11 (ԻԶՄ.860), որոնցմէ Վարժապետեան միայն Սոյ եպիսկոպոս կը գտնուէր, իսկ վարչական հրահանգով ընտրելի նշանակուած էին Հայաստանեայց եկեղեցւոյ բոլոր եպիսկոպոսունք և վարդապետք, որք ազգին կամ տէրութեան ատեններու առջև դատի կամ ամբաստանութեան տակ չեն գտնուիր (ԱՆՏ.518): Հոկտեմբեր 23-ին ցուցակը կեդրոնին հաղորդուեցաւ, ուսկից վարչութիւնը պատշաճութեան տեսակէտով ջնջեց երկու պատրիարքներուն անունները, և 26-ին վերադարձուց, և 27-ին ընտրողական ժողովը մնացած չորս անուններուն առաջինը, Մկրտիչ Բէֆսիպեան 35 քուէարկաց 28 քուէով Կիլիկիոյ կաթողիկոս կընտրէ և կը հռչակէ (ԻԶՄ.862), իսկ մնացած 7 քուէներէն 6-ը տրուած էր Դերձակեանի և 1-ը Վարժապետեանին: Ընտրութիւնը նոյն օր կեդրոնին կը հաղորդուէր, և մինչև անգամ յիշատակութեան սկսելու արտօնութիւն կը խնդրուէր (ԻԶՄ.863). իսկ կեդրոնը վաւերացման

գործին, յարաբերութեան խնդիրին կապուած ըլլալը յիշեցնելով 29-ին կառաջարկէր որ գոնէ ընտրեալը Ընդհանուր ժողովոյ ընելիք տնօրէնութեանց ընդունելու յայտարարութիւն և խոստում տայ (ԻԶՄ.865): Բէֆսիլեան առաջ ընտրութենէն կը հրաժարէր, բայց հրաժարականին մերժուելուն վրայ, նոյեմբեր 6-ին Սէֆէրեան կը ծանուցանէր Բէֆսիլեան յանձնառութիւնը, և 9-ին կը հաղորդէր պայմանեալ խոստմնագիրը յանձնելը, և այս տեղեկութեանց վրայ նոյեմբեր 12-ին Կ. Պոլսոյ երեսփոխանութիւնը բաւական յուզումնալից նիստի մը մէջ, և քանի մը բողոքներու աղաղակներուն հակառակ, միայն վեց հակառակ քուէներու դէմ, գրեթէ միաձայնութեամբ վաւերացումը կը քուէարկէր, և Մկրտիչ Բէֆսիլեան կը հռչակուէր կաթողիկոս Կիլիկիոյ (ԱՆՏ.530), և Խրիմեան պատրիարքի պաշտօնագրիին վրայ օծումն ալ կը կատարուէր նոյեմբեր 28-ին, Յիսնակաց շաբաթապահքին յաջորդող կիրակին, միայն երեք եպիսկոպոսներու ներկայութեամբ, որոնց երկուքը վերոյիշեալներէն Դերձակեան և Սէֆէրեան և երրորդը Պետրոս Հաճնոյ եպիսկոպոսը (ԻԶՄ. 894), որ երբեմն տեղապահ էր նշանակուած (2768): Ստոյգ է որ երկար տարիներ ձգձգեալ գործը վերջին անգամ հապճեալ շտապով քանի մը օրերու մէջ կը վերջացուէր, և այս բնական էր զի երբ ձանձրութեան չափը կը լրանայ՝ շտապելու զգացումը կը զօրանայ: Բողոքներ և աղաղակներ յաճախ բժախնդիրներու խրճրճանքներ են, և այս անգամ ալ նոյնքէն որոնք ոմանց բերնին մէջ կը յեղեղուէին առանց հիմնական լուսաբանութիւն աւելցնելու, և գլխաւորն էր Մայրաթոռոյ հաւանութիւնը խնդրելու պահանջը, և էջմիածին ձեռնադրուած և էջմիածնի աթոռին ուխտ ըրած եպիսկոպոսի մը Կիլիկիոյ աթոռին անցնիլը, որուն դէմ էր պաշտօնապէս էջմիածնի գահակալ Գէորգ կաթողիկոսը, և որուն արձագանգ եղած է աղթամարի և Սիսի անողոք քննադատը այն օրեր տակաւին նորընծայ վարդապետ և ժողովներուն մէջ ձայն չունեցող: Սակայն հնար չէ չյիշել որ նոյն այն Ընդհանուր ժողովը, որուն հեղինակութիւնը յանչափս կը բարձրացուի երբոր նպաստաւոր յայտարարութիւն մը կընէ (ԻԶՄ. 844), բացարձակապէս մերժած էր Գէորգի պահանջները, ընթացք չէր տուած անոր պայմաններուն, և Կիլիկիոյ ընտրութեան մասին տուած որոշմանց մէջ խօսքն իսկ չէր ըրած Մայրաթոռին մասնակցութեան, և թեմին և կեդրոնին մէջ ամփոփած էր պաշտօնական գործողութեան լրումը, ընտրութիւնը գաւառին և վաւերացումը կեդրոնին բանաձևով , որով այլ ևս աւելորդ կը դառնային Մայրաթոռին և Գէորգ կաթողիկոսին համար թափուած պաշտպանողականները, ինչպէս անվոր էին նախնական որոշումներու և գործողութեանց դիմումները, քանի որ անոնց ամէնքը իրենց արժէքը կորուսած էին նոր առաջարկներու զօրութեամբ (ԻԶՄ. 687. և 2768):

2818. ՄԿՐՏԻՉ ԲԷՖՍԻԼԵԱՆ

Նորընտիր կաթողիկոսը ընթերցողներուն համար անձանօթ անուն մը չէ, և անոր մասին շատ կանուխէն ինչ ինչ տեղեկութիւններ տուած ենք արդէն (2649): Բնիկ Գերմանիկցի էր 1815-ն ծնած, որ է ըսել 1871-ի ընտրութեան ժամանակ 56 տարեկան եղած, որ գործունեայ և փորձառու անձի տարիք է: Պատանեկութեան ատեն պղնձագոյն վարպետի մը մօտ աշխատած (94. ԱՔՍ. 124), աշխարհք ալ մտած, բայց շուտով այրինալով (94. ԱՔՍ. 122), շունչը Երուսաղէմի վանքն առած է, ուր իր գործունէութեամբ և ճարպիկութեամբ սուրբ աստիճաններու ալ բարձրացած է, և 1849 մայիս 1-ին Երևման կիրակին արեղայ ձեռնադրուած է 34 տարեկան եղած ատեն, Կարնեցի Դաւիթ եպիսկոպոսէն, Կիրակոս պատրիարքի վերջին տարին, և քիչ ետքը Յովհաննէս պատրիարքէ թարգմանութեան պաշտօնին կոչուած: Որչափ և ճարպիկ ու գործունեայ , Բէֆսիլեանի վրայ մինչև վերջը մնացած է շուկայիկ բերմունք մը և շահամոլ ընթացք մը, ինչ որ շուտով յայտնուած է թարգմանութեան պաշտօնին մէջ, ուսկից քիչ ետքը հեռացուած է Դամասկոս մէջ ալ այլընդայլոց ձեռնարկներու սկսած, և իբր ըմբոստ և ապստամբ բռնութեամբ Երուսաղէմ բերուած,

և վերջապես վանքէն դուրս հանուած, և միաբանութենէ ալ արտաքսուած է (2649): Կ. Պոլսոյ մէջ նկատառութեան արժանի եղաւ իբր գործունեայ ձիրքերով օժտուած, և վանապան տեղերէ առաջնորդ ընտրուեցաւ, գլխաւորապէս Անկիւրոյ մէջ փայլեցաւ, որուն վրայ եպիսկոպոս ալ ձեռնադրուեցաւ 1860 յունիս 2-ին Մատթէոս կաթողիկոսէ Յարութիւն Վեհապետեանի և այլոց օծակցութեամբ: Այլ ի սակս բռնական և անաստ բարոյից իւրոց, ստէպ տեղէ փոխադրուեցաւ, Եգիպտոս ալ գնաց, և իր ընդդիմադիրներէն քանիներ իշխանութեան մատնած և բանտարկեալ տուած ըլլալուն գանակոծ լինի ի կանանց անոնց, և վերջին անգամ Բերիոյ առաջնորդ կը գտնուէր Սոյ իրաւասութեան ներքև. արդէն ինքն բնիկ Գերմանիկցի՝ Կիլիկիոյ թեմական էր, և այս տեսութիւններ վօրացան անշուշտ զինքն նախադասել տալու Կիլիկեցոց աչքին, որոնք սակայն վերջէն շատ գոհ չմնացին ըրած ընտրութենէն, զի Բէֆսիպեան աւելի իր անձին և իր օգուտին նպաստաւոր եղաւ, իսկ կաթողիկոսական վիճակներ ակնկալեալ բարիքները չտեսան: Կիլիկիոյ աթոռին համար մեծ փոփոխութիւն մը կը բերէր այդ ընտրութիւնը, զի Գօպանեան բռնակալներուն հաճոյքին հետ Աջապահեան ժառանգորդներուն թեկնածութեան դադարում կը նշանակէր: Կ. Պոլիսէն ապատութեան և յառաջադիմութեան բուռն հողմէր կը շնչէին, ուստի Գերմանիկ և Բերիա և Ատանա և բոլոր Կիլիկիա հրճուանքի և սարքէին, եկեղեցական հանդիսութիւններ կը յաճախէին: Ասեցին միայն, որ կաթողիկոսներու և եպիսկոպոսներու ներքին կեանքերուն մօտէն տեղեակ էր, վարանոտ ակնկալութեամբ յոյսերուն իրականութեան կը սպասէր (94. Ա.ԲՍ. 123-125): 2819. ԳԷՈՐԳԻ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ

Գէորգ կաթողիկոս մեծապէս վայրացաւ (ԶԱՄ. Բ. 173), երբոր Կ. Պոլսոյ մէջ կատարուած գործողութեանց լուրը առաւ, զոր հարկաւ Ընդհանուր ժողովոյ բողոքողներ և անոնց համախոհներ փութացէր էին իրեն հաղորդել: Իր առաջին յայտարարութիւնը դեկտեմբեր 11-ին Խրիմեան պատրիարքի տուած հեռագիրն է, որ է ըսել հոկտեմբեր 16-ի որոշումէն 56 օր ետքը. կաթողիկոս կը յանդիմանէ պատրիարք որ ընդ քօղով մերս փոխանորդութեան յօժարի գործել յանուն մեր առանց մեր գիտութեան, և վայնպիսի խնդիրս և զնոր սահմանադրութիւնս յանձնապատան հեղինակել ձեռն արկանէ, որ կաթողիկոսի նախագահութեամբ գումարուած ժողովի մը կը պատկանին. ուստի կը կնքէ թէ ոչ կարեմք օրինաւոր ճանաչել վայնպիսի որոշում (ԻԶՄ. 896), և դեկտեմբեր 15-ին կը դառնայ և միևնոյն միտքերը ընդարձակագոյն կը բացատրէ յատուկ կոնդակով (ԻԶՄ. 898-905), որուն մէջ տարականոն կը կոչէ Կիլիկիոյ ընտրութեան վաւերացումը, ապօրինի կանուանէ զընթացս վիճակաւորացն Սոյ և Աղթամարայ, և կակնարկէ զընդվզեալս և զհակառակորդս ենթարկել դատապարտութեան: Միևնոյն դեկտեմբեր 15 թուականով և ուրիշ կոնդակով Գերապատիւ Մկրտիչ արքեպիսկոպոսի հրաւէր կը կարդայ իր ապօրէն յանձնառութենէն ետ դառնալ և Կիլիկիոյ կաթողիկոսէն հրաժարիլ (72. ՄԱՍ. 1191): Այդ յայտարարութեան Կ. Պոլսոյ Մկրտիչը անմիջապէս կը պատասխանէ, թէ խնդիրը բոլորովին իւր նպատակին հակառակ մեկնուած է, թէ կասկածներն անհիմն են, և թէ մանրամասն տեղեկութիւնները նամակաւ կը ստանայ (ԻԶՄ. 897): Իսկ Կիլիկիոյ Մկրտիչը 1872 փետրուար 27-ին կոնդակին հասնիլը կը ծանուցանէ և պատասխանը կը թողու ստանալ ի սրբապան պատրիարքէ և յազգային կեդրոնական վարչութենէ մայրաքաղաքին Կոստանդնուպոլսոյ (ԻԶՄ. 907): Սակայն հրաժարելու միտք չունենալը յայտնապէս կը ցուցնէ իր պատասխանին կոնդակին ձև տալով և վայն ուղղելով վեհափառ կաթողիկոսի սրբոյ Էջմիածնի նախապատիւ եղբօր մերոյ, և ստորագրելով խոնարհ Մկրտիչ Ա. վարդապետ Սրբոյ Երուսաղէմի, և եպիսկոպոս սրբոյ Էջմիածնի, և կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (ԻԶՄ. 908): Այս տարօրինակ ստորագրութիւնը սկսաւ այնուհետև իբրև սովորական գործածել: Կ. Պոլսոյ պատրիարքն ու վարչութիւնը, որ իրենց

ընթացքը նամակով բացատրել խոստացած էին, 1872 մարտ 10-ին բաւական ընդարձակ գրութիւն մը կողմէն կաթողիկոսին (ԻԶՄ.925-950), որուն աշխարհաբար լեզուով շարադրուած ըլլալը քաղաքականի դիւանէն ելած ըլլալը կը մատնանշէ: Պատրիարքի և վարչութեան տեսութեամբ Գէորգ կաթողիկոս կարծած է որ Էջմիածնի հեղինակութիւնը ուրացուած և ազդեցութիւնը ապահտ եղած ըլլայ, ուստի գլխաւորապէս այդ կէտին վրայ կը ծանրանան, և կաշխարտին ցուցնել թէ ընդհակառակն իրենք աշխատած են Էջմիածնի իշխանութիւնը պաշտպանել և ընդարձակել: Ուստի կը յիշեն Ընդհանուր ժողովին և պաշտօնագիրներուն մէջ ի նպաստ Էջմիածնի եղած յայտարարութիւնները և ցաւ կը յայտնեն և կը բողոքեն որ կաթողիկոսը իրեն գրութեանց մէջ խիստ և անիրաւ կերպով դաւ և խարդաւանք բառերը դործածած է կեդրոնին մասին, Էջմիածնի ամսագիրը խիստ լեզուով յօդուած հրատարակած է, և մանաւանդ Խորէն Գալֆայեան կամ Նարպէյ եպիսկոպոսին ուղղած և հրատարակութեան տրուած կոնդակին մէջ ալ, իրենց արարքը կոչուած է, դաւ խարդախութեան և գաղտնածածուկ դարան լարեալ ի փեռեկտումն միութեան (ԶԱՄ.Բ.174): Կը յիշեն թէ Կիլիկիա և Նիկողոս անկախ և ինքնագլուխ ըլլալ կը ձգտէին, և կեդրոնը վանոնք իրեն հպատակեցուց, և այս կերպով Էջմիածնի հնազանդեցուց: Յարաբերութեանց մասին ալ միայն գործը շուտով վերջացնելու համար նորընտիրէն ստորագրութիւն առին ըլլալիք կարգադրութեանց համակերպելու, և վաւերացումը կեդրոնին վերապահելով յանձնառութիւնը ապահովեցին, զի հակառակ պարագային նորընտիրը կրնար ևս պաշտօնանկ ըլլալ: Դիտել կու տային ևս թէ Էջմիածնի եպիսկոպոսներուն Ստյ աթոռն անցնելու մասին ինքն Գէորգն ալ հաւան գտնուած էր երբեմն, երբ 1866-ին Սիսի և Աղթամարի համար ընտրելիներու ցուցակ կազմուեցաւ, իսկ Կիլիկիա Էջմիածնի եպիսկոպոս մը իրեն կաթողիկոս ընտրելովը, աթոռով ու ժողովրդով Էջմիածնի հպատակութիւնը ձանձցած եղաւ: Այդ պատճառաբանութենէն ետքը Գէորգին կը յիշեցնեն պօլօթէնիէի բարձման համար աշխատելու խոստումը տուած ըլլալը, որով կուզեն հասկացնել թէ ինչո՞ւ ուղղակի Էջմիածնի գիրկը նետուած չեն: Իրաւ ալ Գէորգ կաթողիկոս անմեկնելի ճիգերու և թիրիմացութեան մատնուած կը տեսնուի, երբ Ռուսահայոց վրայ չունեցած իրաւունքները Տաճկահայոց վրայ գործածել կը պնդէ, և յայտնի հակասութեան մէջ կիյնայ երբ Տաճկաստան եղած ատեն Կիլիկիոյ և Աղթամարի համար ընդունած ձևերը Էջմիածին գացած ատեն աւրելու կաշխատի: Ինքն պատրիարք ալ եղած ըլլալով պէտք չէր անգիտանար օսմանեան կառավարութեան նկատումները, և պէտք չէր այնպիսի ձևերու ստիպէր Տաճկահայերը որ իբր թէ Ռուսիոյ ազդեցութեան ներքև ինկած ըլլան: Պէտք չէր նաև անգիտանար թէ առաջին ժամանակներու մէջ ալ Խաչատուր Սեբեստացի և Մատթէոս Կեսարացի Էջմիածնի եպիսկոպոսներ՝ 1658-ին 1694-ին Ստյ կաթողիկոս եղած էին, և Տիրատուր Սսեցի և Ազարիա Զուղայեցի Ստյ կաթողիկոսներ 1561ին և 1591-ին Կ. Պոլսոյ պատրիարք եղած էին: Եկեղեցական սկզբունքով ալ եկեղեցւոյ միութիւնը ապահովելու համար բաւական էին դաւանութեան և ծէսի և գերիշխանութեան միութիւնները, և առձեռն վարչական և ընտրողական միաւորութիւնը էական չէ: Ինքն Գէորգ ուրախութեամբ ընդունած էր Կիլիկիոյ և Աղթամարի ներկայացուցիչներուն իր ընտրութեան մասնակցիլը, և ասով ապահովուած համարած էր մի եկեղեցւոյ և մի եկեղեցական գլուխի սկզբունքը, մինչև իսկ Բէֆսիպեանի տարօրինակ ստորագրութեան մէջ եպիսկոպոս սրբոյ Էջմիածնի յիշատակութիւնը, Էջմիածինը բարձրացնելու և Էջմիածնի կապուած ըլլալուն խոստովանութիւնն էր: Ստյ անողոք քննադատը կը գրէ թէ ցաւալի վիճակը խափանուած կըլլար եթէ Բէֆսիպեան Մայրաթոռոյ գերագահութիւն և անոր իշխանութեան և իրաւասութեան ամբողջ Հայաստանեայց եկեղեցւոյ և ամէն աստիճանէ պաշտօնէից վրայ տարածուիլը ձանձնալու ոճով պատասխան մը գրած ըլլար (ԻԶՄ.910): Իսկ մենք պիտի ըսենք թէ ցաւալի վիճակին առիթ չէր

տրուեր եթէ Գէորգ գործը չքննած և պարագաները չուսումնասիրած և խորհրդակցութեան և բանակցութեան չմտած, Բէֆսիպեանը հրաժարելու չհրաւիրէր և Խրիմեանի ալ ընտրութիւնը չճանչնալու յանիմանութիւն չգրէր: Մեր տեսութեամբ աւելի մեղադրելի կը նկատուի Գէորգը, երբ եկեղեցական և ազգային և քաղաքական տեսակէտները չկշռելով նախադասակ կը լինի, քան Բէֆսիպեանը որ անարգուած կացութիւնը պաշտպանելու կը մղուի: Բայց ասով չենք ուզեր վայն բոլորովին արագացնել, մանաւանդ իր յետագայ և շարունակեալ չափազանցութիւններուն և մեղադրելի գեղծումներուն և անարդարանալի արարքներուն մէջ:

2820. ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ԿՈՆԴԱԿ

Գէորգ կը գրէ թէ անագան ուրեմն ստացած է պատրիարքարանի նամակը, այսու հանդերձ ապրիլ 18-ին կը պատասխանէ երկարօրէն (ԻԶՄ. 951-970), զոր կատարեալ հերքմնագիր կրնայինք կոչել, եթէ Կեդրոնին պատճառաբանութիւնները իսկապէս հերքուած ըլլային: Նա կը սկսի կշտամբել պատրիարքը և ժողովական եպիսկոպոսները, որ ձեռնադրութեան ատեն Մայրաթոռոյ հաւատարմութեան և հնազանդութեան համար ըրած ուխտերնին մոռացած և ոտնակոխ ըրած են, իբր թէ այն ուխտը կաթողիկոսին անձին հանդէպ անպայման համակերպութեան ուխտ եղած ըլլար, և ոչ թէ կանոնական ուխտ մը և եկեղեցոյ կանոնաց և պահանջից և օգուտին համաձայնութեամբ ստանձնուած պարտաւորութիւն մը, զի Կիլիկիոյ խնդիրին լուծումը տրուեցաւ պարագայից ներկայած ստիպողական պահանջից և պարագայից ներած անհրաժեշտ պայմանաց համեմատ: Անցողակի բառերով և հեգնական հարցումով մը միայն կը շոշափէ կարևոր կէտեր, ուստի ուսայք թէ ուխտեալ իցէ մեր յեկեղեցին բերայ, կամ տեղեակ գործողութեանց 66 ամի ժողովոյն պատրիարքարանի, և կամ անփոյթ վարքագրութենէն պալատէնիոյ, բայց բառ մը իսկ չաւելցնէր իրեն դէմ յարուցուած այդ առարկութիւնները ցրելու (ԻԶՄ. 918): Դաւի և խարդաւանանքի մասին առաջին կոնդակին ըսածները կը մեկնէ, թէ ի գործողութեանց այդմիկ գոն դաւք և խարդաւանանք օտարի, և թէ աղիտաբար ձեռն օտարի նշմարի այդր (ԻԶՄ.959). սակայն իր բացատրութիւններէն չի քաղուիր թէ ո՞ր օտարի և ո՞ր օտարի դիմումի կուզէ ակնարկել: Կը յաւելու գրել թէ խարդաւանանք օտարուոյն յաջողեալ է գրաւել վարս ոմանս, խոստանալով վունայն և վերևակայական բարիս յօգուտ հայ ազգութեան. բայց եթէ այս խոսքերով տեսակ մը հայ ազգայնական և քաղաքական օգուտներուն կուզէ ակնարկել, խնդիրէ չեղած կըլլայ, զի այս տեսակ և ոչ մէկ օգուտ կրնար քաղուիլ Կիլիկիոյ ընտրութեան ուղղակի Կ. Պոլսոյ պատրիարքութեան և անուղղակի միայն Էջմիածնի կաթողիկոսութեան կապուելովը: Ընդհակառակն աւելի դիւրին էր իրենակնարկը իրեն դէմ դարձնել, թէ Էջմիածնի աթոռը ամէն մանր գործերու մէջ մտցնելով կուզէ Տաճկահայերը ոռուսական ազդեցութեան ենթարկել, նկատելով այն երդմնագիրին մանրամասնութիւնները, զորս ինքն ընդունած էր ի նպաստ տէրութեան Ռուսաց: Պատրիարքական նամակը հարցուցեր էր թէ իր նախագահութեամբ յարաբերական խնդիրները լուծելու միտքը ե՞րբ և ո՞ւր և ի՞նչպէս կուզէ գործադրել, որուն կը պատասխանէ թէ կը փափաքէր անձամբ Կ. Պոլիս գալ, բայց այդ բանը ոչ ներեն մեզ այժմիկ հանգամանք ժամանակիս (ԻԶՄ.967), իմա Ռուսաց կայսրը չի ներեր իրեն Ռուսաստանէ ելլել, ուստի կառաջարկէ մէկ եկեղեցական և մէկ աշխարհական երկու պատգամաւորներ ընտրել և Էջմիածին դրկել անոնց հետ բանակցելու համար: Բայց ի՛նչչափ լաւագոյն ըրած պիտի ըլլար, եթէ Խրիմեանի յանդիմանողական և Բէֆսիպեան սպառնական կոնդակները չյղած, խորհրդակցութեան և բանակցութեան պէտքերը վագացած ըլլար, որ գոնէ պարագայից գիտակցութեամբ գործած ըլլալու չքմեղանքը վայելէր: Ճշմարտասէր Պղատոնէն աւելի նոյն ինքն ճշմարտութիւնը սիրելնուս վագացումն է, որ մեզ կը քաջալերէ յայտնապէս մեղադրել մեր

նշանաւոր գործիչներուն արարքներն ալ, երբ որ անոնք արդարացեալ չենք տեսներ ի մէտ կշռոյ օրինական նժարի: Բայց ասով ոչ երբեք կը մտաբերենք մէկ մեղադրանքով միւս արժանիքն ուրանալ, և միշտ գովաբանը պիտի մնանք Գէորգի գործունէութեան և յաջողակութեան, որչափ ալ այդ խնդիրին բազմակողմանի պարագաները չկշռելով յախուռն բերմամբ յարձակողականի մղուած ըլլալը կը մատնանշենք, և այժոռոց իրաւասութեան պատուիրակին ներքև անձնական ազդեցութեան և բացարձակ տիրապետութեան գաղափարէն շլացած ըլլալը կը շեշտենք, կարծես Ռուսաստանի մէջ տեսած անձկութեան սեղմումը Տաճկաստանի վրայ փոխանակել ուզելով:

2821. ԿՈՆԴԱԿԻՆ ՇՈՒՐՋԸ

Կաթողիկոսական կոնդակը կը հրահանգէր երկու պատգամաւորներուն ընտրութիւնը կատարել առանց յապաղելոյ, և կոնդակն ալ կարդալ յատենի երեսփոխանական ժողովոյ, ուստի Խրիմեան պատրիարք վայն ներկայեց 1872 մայիս 26-ին նիստին և կարդացուեցաւ (ԱՏՆ.658-661), ինչպէս նաև վարչութեան նախընթացաբար գրած նամակը (ԱՏՆ.662-665), իսկ վիճաբանութիւնը յետաձգուեցաւ: Յուլիս 7-ին կոնդակի խնդիրը նորէն ձեռք կառնուի անոր իմաստը ճշդելու համար, բայց առանց որոշման կը փակուի (ԱՏՆ.713): Օգոստոս 25-էն սկսելով մինչև 29 դեկտեմբեր գումարուած նիստերը կաթողիկոսական կոնդակով կը վբաղին, և ժողովին մեծամասնութեան մէջ վայրոյթ կը նշմարուի կոնդակին ինչինչ բացատրութեանց դէմ, և բուն կարծիքներ ալ կը յայտնուին թէ կաթողիկոսը առանց հիման պատրիարք և եպիսկոպոսներ ուխտադրուժ կանուանէ, թէ նա երեսփոխանութիւնը չուզեր ճանչնալ, գոնէ կուզէ ջախջախել, թէ ռուսական ազդեցութեան հպատակելով Սոյ աթոռը կուզէ ջնջել: Միւս կողմէ ալ աւելորդ կը նկատուի երկու պատգամաւորներու առաքումը, զի խնդիրը երեքչորս հոգիով լուծուելու գործ չէր, և զի կաթողիկոսը այդպիսի խնդիրներու ձեռնահաս մեծ և ընդհանուր ժողով հրաւիրած չէր: Այս խնդիրներ արգելք չեղան Բէֆսիլեանի համար կայսերական հրովարտակ ստանալու, որ սեպտեմբեր 9-ին պատրիարքարան յանձնուեցաւ (72.ՄԱՍ.1287): Գտնուեցան իրաւ կաթողիկոսը պաշտպանելու աշխատողներ, բայց խնդիրին և կաթողիկոսական առաջարկին ոյժ չկրցան աւելցնել, և վերջապէս իբր ի պատիւ կաթողիկոսին որոշուեցաւ գործը ուսումնասիրելու և տեղեկագրելու համար 12 հոգիէ խառն յանձնաժողով մը կազմել, և այդ կերպին վրայ երկու կարծիքներ համաձայնեցան, և 1872 դեկտեմբեր 29-ին յանձնաժողովը կազմուեցաւ, և անգամ նշանակուեցան Ներսէս Վարժապետեանի և Խորէն Նարպէյ եպիսկոպոսներ, Մամբրէ Մամիկոնեան և Մատթէոս Իզմիրլեան վարդապետներ, Սահակ Տէր-Սարգիսեան և Յովհաննէս Մկրեան քահանաներ, իսկ աշխարհականներէն Ստեփան Ասլանեան, Յարութիւն Մերեձմգուլի, Օգսեն Խօճասարեան, Պօղոս Պառնասեան, Թադէոս Պէկեան (ԱՏՆ. 785): Արդէն յանձնաժողովը գործ փութացնելու և խնդիրը վերջացնելու նպատակով չէր կազմուած, կարծես թէ պարագաներն ալ նպատակին ծառայեցին, զի այն օրեր ծագեցան Խրիմեան պատրիարքի և 1872 յուլիս 14-ին կազմուած քաղաքական ժողովին (ԱՏՆ.716) միջև կարծեաց տարբերութիւններ, որոնք մինչև հակառակութիւն յառաջեցան և պատրիարք ամբաստանելու հասան, և 1873 օգոստոս 3-ին իր հռչակաւոր հրաժարագիրը ներկայեց, որ իր ընթացքը ունեցաւ, քննիչ յանձնաժողովէ ընդունելի դատուեցաւ, կառավարութեան ալ ներկայացուեցաւ և ընդունուեցաւ, և նոյեմբեր 16-ին երեսփոխանութեան ալ հաղորդուեցաւ (ԱՏՆ. 955), և կոնդակի խնդիրը մէկ կողմ թողուեցաւ մինչև որ նոր պատրիարք ընտրուեցաւ: Այդ յապաղումները, և մանաւանդ աննպաստ խօսքերը աւելի գրգռեցին Գէորգը. որ իր անդամ մը ընդգրկած ուղղութենէն ետ դառնալու սովորութիւն չունենալով, և իր բնաւորութեան բերմունքով մտածեց աւելի ևս շեշտել իր պահանջները, և ձեռնադրուելիք եպիսկոպոսներու դէպ առ Էջմիածնի հաւատարմութեան և հպատակութեան

ստորագրուելիք երդման թղթի մէջ, աւելցրեց հակաթոռ և հետտեալ համարել Ստոյ և Աղթամարայ կաթողիկոսութիւնները (ՄՈՎ. 379), խոստանալով և ուխտելով ոչ երբեք ի կողմն ելանել այլոցէ կաթողիկոսական անուանեալ անվաւեր աթոռաց, որք հետտեալ մինչև ցայսօր ի միոյ միայնոյ երևելի գլխոյ եկեղեցւոյս Հայաստանեայց ի Սիս և յԱղթամար (ՅՍԿ. 33), և աւելի բերանացի տուած խրատներուն մէջ ալ յանուանէ յիշելով կը շեշտէր, որ Խրիմեանի պէս հակառակ հաւատարմութեան երդմանը չվարուին (ՄՈՎ. 378): Միև աթոռներուն մէջ ձեռնադրուած եպիսկոպոսները Մայրաթոռոյ հպատակութեան ընդունելու համար յատուկ արարողութիւն ալ կազմեց, և կրկին և ձեռնադրութենէ միայն զգուշանալով, Իջման Սեղանին առջև լոկ քահանայական զգեստաւորութեամբ ուխտ ընել տալ, և անկէ ետքը մատնի և եմիփորոն և խոյը շնորհել: Այդ արարողութեան առաջին ենթարկուողը Ներսէս Վարժապետեան եղաւ, որ արդէն Նիկոմիդիոյ առաջնորդ կը գտնուէր, բայց ուզելով միտքերը շփոթող պատճառանք մը վերջացնել, և իր բարձրացման օրինական արգելք ցուցուող (2779) պարագան դարմանել և դէմը ընդդէմ պնդումներու առիթը վերցնել: Սամաթիայի մեծ հրդեհէն արկածեալներուն համար հանգանակութիւն ընելու պաշտօնով 1872 ապրիլ 29-ին Կովկաս ուղևորեցաւ, և Էջմիածնի երթալով իր պատրաստականութիւնը յայտնեց, և մայիս 17-ին Էջմիածնի Մայրաթոռին հաւատարմութեան երդումն արեց սուրբ Իջման տեղի առաջ (ՄՈՎ. 379), և ստորագրեց ուխտագիր մը, որուն մէջ գրուած էր, թէ ուխտեմ և խոստանամ զմշտնջենաւոր հնազանդութիւն, որպէս մինչև ցայսօր և առաւել ևս հլութեամբ ցկեանս իմ, առ վեհափառ գահակալն առաքելական աթոռոյ սրբոյ Էջմիածնի տէր Գէորգ Դ. աստուածարեալ և սրբազնակատար պատրիարք կաթողիկոսն ամենայն Հայոց, որոյ ընտրութեան պատգամաւոր եղէ ի դիմաց ամենայն եկեղեցականաց և աթոռոց որ ի Տաճկաստան (ԻԶՄ. 920-923): Ներսէս այդ ուխտը ընելէն ետքը Կ. Պոլիս կը դառնար 1872 նոյեմբեր 10-ին հանգանակութիւնն ալ աւերտելով, կոնդակին նկատմամբ Ընդհանուր ժողովոյ մէջ եղած վիճաբանութեանց կը մասնակցէր, զայն քննելու և տեղեկագրելու պաշտօն ունեցող յանձնաժողովին կանդամակցէր և ատենապետ ալ կը նտրուէր: Իսկ նր միտքը և համոզումը դեկտեմբեր 5-ի ընդարձակ նամակով ալ կը բացատրէր, թէ Էջմիածինը Ամենայն Հայոց գերագահ աթոռ և Կիլիկեան մասնաւոր կաթողիկոսական աթոռ ձանչցած է սիւրբէն ի վեր, և այս ուղղութեամբ գործած է և պիտի գործէ (72. ՄԱՍ. 1323): Բայց մենք այստեղ կը նդհատենք այդ խնդիրը, զայն նորէն ձեռք առնելու համար նոր պատրիարքի ընտրութենէն ետքը, որ եղաւ նոյն ինքն Վարժապետեան Ներսէսը:

2822. ԱՂԹԱՄԱՐԻ ԽՆԴԻՐԸ

Կիլիկիոյ խնդիրին նման էր Աղթամարի խնդիրն ալ, սա տարբերութեամբ որ Աղթամարի մէջ պաշտօնի վրայ եղող Պետրոս կաթողիկոսին սպանութիւնն ալ տեղի ունեցած էր, և աթոռը գրաւող Խաչատուրը սպանութեան կամակից կամ գործակից ամբաստանուած էր (2751-52): Գործին սկիզբէն, այսինքն 1846 սեպտեմբեր 25-էն հինգ լման տարիներ անցած էին երբոր Խրիմեան պատրիարքութեան կը ձեռնարկէր 1869 նոյեմբեր 12-ին (2811), և իբր տարիէ մը, այսինքն 1868 հոկտեմբեր 12-էն ի վեր Կ. Պոլիս կը գտնուէր ամբաստանեալ Խաչատուրը (ԻԶՄ.1048): Կեդրոնական վարչութիւնը չուզեց ձանչնալ Խաչատուրի կաթողիկոսութիւնը և աթոռին տեղապահ մը նշանակեց, և սպանութեան մեղսակից ըլլալու ամբաստանութիւնն ալ նկատի առնելով՝ կառավարութենէն դատական քննութիւն և վճիռ խնդրեց, և իրեն կողմէն ալ քննութեանց մասնակցելու համար ներկայացուցիչ նշանակեց Վանայ և Կարնոյ առաջնորդները, Իգնատիոս Գագմաձեան և Յարութիւն Վեհապետեան եպիսկոպոսները: Քննութիւնները կատարուեցան թէ սպանութեան տեղը Փշավանք գիւղը և թէ Վանայ դատարանին մէջ, և

շարունակեցին մինչև 1865 ապրիլ 15, բայց գործին մօտէն ծանօթութիւն ունեցողներէ քաղուած պատմութեան հետ (64.ՄԱՍ.664, և 97.ԱՔՍ.52-55), փոքր ինչ այլալուծեամբ կապմուտեցաւ նոր պատմութիւնը: Պետրոս Պիւլպիւ կաթողիկոսին անվայել և անկարգ վարուց վիճակը, Աղթամարայ եպիսկոպոսներն ու միաբանութիւնն ու ժողովուրդը կը գրգռէ, որոնք 1864 սեպտեմբեր 17-ին ժողովով անոր պաշտօնանկութիւնը կը վճռեն, և Խաչատուր Շերոյեան եպիսկոպոսը միաձայն հաւանութեամբ կաթողիկոս կը նտրեն, սեպտեմբեր 25-ին կօծեն, և Պետրոսին կարգիլեն Փշավանքէն իր եղբօր տունէն կղզին ու աթոռն անցնիլը. ուստի կը ստիպուի Փշավանք դառնալ և Մանուկ Էսթէեանի տունը օթևանիլ, ուր հրացանի հարուածներով կը սպաննուի սեպտեմբեր 28-ի գիշեր, այսինքն օծումէն երեք օր ետքը, Եուսուֆ և Շահին անունով երկու քիւրդերուն ձեռքով, որոնք կը փախչին և հետքերնին չի գտնուիր: Դատարանը հաւանական կը գտնէ Խաչատուրին մասնակցութիւնը սպանութեան մէջ, բայց երկու սպանիչներուն ձերբակալուելուն և հարցաքննուելուն կը թողու իր վճիռը, ըստ այսմ կառավարութիւնն ալ յունիս 7-ին պատրիարքարանին կը հաղորդէ և կը վլանայ Խաչատուրի կաթողիկոսութեան հաստատութիւնը, և նոյեմբեր 4-ին իր որոշումը կրկնելով արժանաւորի մը ընտրութիւնը կը յանձնարարէ (ԻԶՄ.1006-1013): Արդէն պատմած ենք թէ սպանութեան համար կատարուած ձերբակալութեանց մէջ Խաչատուրի մասին գործողութիւն մը չէր եղած, զի ինքն Աղթամարի կղզին կը գտնուէր երբ սպանութիւնը տեղի կունենար Փշավանք գիւղը, և ոչ ոք անիկա ամբաստանած էր, հետևաբար Խաչատուր կրնար ավատօրէն գործել և իբրև կաթողիկոս ճոխանալ, թէպէտ կեդրոնը Գագմաճեանը տեղապահ էր նշանակած, և մանաւանդ Աղթամարի թեմականաց մէջ նպաստաւոր շարժումներ յառաջ բերել, որոնց մէջ կանուխէն կուսակցութիւն և ազդեցութիւն վաստակած էր իր ճարտարութեամբ և իր նիւթական միջոցներով: Աղթամարի թեմականք կը շարունակեն Խաչատուրի հաստատութիւնը պահանջել, և 1866-ի սկիզբները մինչև իսկ կրօնափոխութեան սպառնալիքներ կընեն պատրիարքարանը զիջողութեան ստիպելու համար, բայց յունիս 12-ին եկեղեցական վիճակային կամ համագումար ժողովը, Խաչատուրի ընտրութեան և օծման ապօրինի պարագաներու վրայ հիմնուելով, անվաւեր կը վճռէ անոր կաթողիկոսութիւնը և ընտրելեաց նորէն եռանուն ցանկ մըն ալ կը պատրաստէ ինչպէս յիշած ենք (2759): Կառավարութիւնը միշտ իր տեսակէտը կը կրկնէր սեպտեմբեր 6-ի պաշտօնագիրով, ուստի պատրիարքարանը հոկտեմբերի վերջերը տեղապահութիւնը Խիլանցի Յակոբ եպիսկոպոսին կը փոխանցէր, և Խաչատուրի Կ. Պոլիս բերուիլը կը խնդրէր կառավարութենէն, Աղթամարը բարեկարգելու միտքեր կը յղացուէին, բայց գործնականապէս բան մը չէր կատարուեր, մինչև որ որոշումէն երկու տարի ետքը Խաչատուր կը համակերպէր Կ. Պոլիս գալ, և 1868 հոկտեմբեր 12-ին կը հասնէր յուսալով անձամբ գործելով իր նպատակը յաջողցնել, բայց պատրիարքական տագնապի կը հանդիպի, Թաքթաբեան կը հրաժարի, Գագմաճեան կը վախճանի, և Խրիմեան կը նտրուի իր բարեբախտութեամբ, զի որչափ ըլլայ Վանեցւոց նպաստաւոր էր, և Աղթամարի ծանօթ և Խաչատուրի ալ բարեացակամ կը նկատուէր: Աղթամարցիք չէին դադրեր նաև Խաչատուրի բացակայութեան անոր կաթողիկոսութիւնն ու վերադառնալը պահանջել կառավարութենէն, որ այս տեսակ աղերսագիրներէն մէկը 1869 նոյեմբեր 22 թուականով, այսինքն Խրիմեանի գործի ձեռնարկելէն 10 օր ետքը, պատրիարքարան կը յղէր և հարկ եղածը տնօրինել կը յանձնարարէր (ԻԶՄ.1019): Խրիմեան պատրիարք գործը երեսփոխանութեան առջև կը հանէր 1870 յունուար 25-ին, որ լուծումը պատրիարքին և համագումարին կը յանձնէր (ԻԶՄ.1021), սակայն գործադրութիւն չէր ըլլար, մինչև որ Ընդհանուր ժողովոյ վերակազմուելուն վրայ, ինքն Խաչատուր օգոստոս 28 և սեպտեմբեր 11 բողոքագիրներով որոշում կը պահանջէր երեսփոխանութենէն, և հոկտեմբեր 27-ին ալ վարչութեան կը դիմէր: Իր

խնդրագիրներու մէջ իրեն մասին տրուած վճիռին վերաքննութիւնը կը պահանջէր, զի առանց զինքն լռելու տրուած էր իրեն ընտրութեան և օծման ազգային վարչութենէ անցնելէն առաջ կատարուելուն ներողութիւն կը խնդրէր, և Աղթամարի մասին գրուելիք կանոնները և տրուելիք հրահանգները կանուխէն ընդունիլ և գործադրել կը խոստանար (ԻԶՄ. 1523): Կը շարունակէն Աղթամարցոց կողմէ դիմումներ, կառավարութեան կողմէ յարաբերութիւններ և ազգային ժողովներու կողմէն չգործադրուած որոշումներ, մինչև որ հապիւ 1873 մարտ 30-ին պահանջած վերաքննութիւնը կընդունուի և համագումարին կը յանձնուի, որ առաջին անգամ մայիս 7-ին այս խնդիրին համար կը գումարուի, բայց այս խնդիրն ալ Կիլիկիոյ խնդիրին հետ (2821) պատրիարքական տագնապին կընդհարի, և լուծում նոր պատրիարքի ընտրութեան կը մնայ: 2823.

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Կիլիկիոյ և Աղթամարի խնդիրները, որոնց վրայ խօսեցանք, Խրիմեանի պատրիարքական գործունէութեան մի լաւ մասը գրաւեցին բայց ունինք իր օրով կատարուած ուրիշ գործողութիւններ ալ: Ասոնց առաջինը սահմանադրութեան վերաքննութիւն էր, կառավարութեան հրամանով երեսփոխանութեան յանձնուած, ւր Խրիմեանի ամբողջ պատրիարքութեան ժամանակ ժողովին օրակարգին մէջ մնալով և մերթ ընդ մերթ ձեռք առնուելով ալ ձևակերպութեանց վէճերով ելք մը չունեցաւ, և վերջապէս 1873 մարտ 23-ին վարչական ժողովներէ և խորհուրդներէ առնուած 12 անդամներէ բաղկացեալ յանձնաժողովի մը յանձնուեցաւ (ԱՏՆ. 848), և այսպէս նորէն գործի սկսելու ձևը առաւ Խրիմեանի հրաժարականէն իբր չորս ամիս առաջ, և ապարդիւն մնացին վերաքննութեան համար Խրիմեանի հետապնդումները, որ կը կարծէր վերաքննութեամբ թեթևցնել պատրիարքական իշխանութեան վրայ ծանրացած կաշկանդումները, մինչ իր պաշտօնաւարութեան կէսէն ետքը ընտրուած նոր քաղաքական ժողովը, զայն աւելի ևս կաշկանդելու ոճին կը հետևէր, մինչև որ Խրիմեան ստիպուեցաւ հրաժարիլ, ինչպէս առաջիկային պիտի տեսնենք: Խրիմեանի միտքին մէջ սևեռեալ գաղափար մըն էր գաւառացոց կացութեան բարելաւութիւնը ու բարեկարգութիւնը, մինչև իսկ համարձակ կրնանք ըսել, թէ այդ նպատակով միայն պատրիարքութեան լուծին ներքև մտնել յանձնառու եղած էր ինքն, որ ապատ և անբռնադատ գործիչի տիպարն էր եղած, և անկէ շեղելու ալ երբեք կամք չէր ունեցած: Գրեթէ ամէն ժողովական գումարմանց մէջ նա առիթ մը կը ստեղծէր այդ խնդիրը յուլելու, և փաղաքուշ և սրտաճմլիկ խօսքերով յիշեցնելու, թէ երբ ժողովականք պարապ վէճերով ատեն կանցունեն, անգին իրենց եղբայրները տառապանաց ներքև ճնշուած իրենցմէ օգնութիւն կը սպասեն, և թէ ինքն ալ այդ խոստումով մեկնած էր անոնց մէջէն: Հապիւ գալէն տարի մը ետքը 1870 նոյեմբեր 27-ին կը յաջողի գաւառական յանձնախումբ մը ընտրել տալ տասն անդամներով, որուն պաշտօնը պիտի ըլլար գաւառացոց կրած նեղութեանց և զրկողութեանց և հարստահարութեանց մի քաղուածը կազմել և պարտուպատշաճ դարմանը ցուցնել: Յանձնաժողովը գործի սկսաւ 1870 դեկտեմբեր 14-ին ատենապետութեամբ Վարժապետեան Ներսէս եպիսկոպոսի և ատենադպրութեամբ Փափապեան Ստեփանի և տարի մըն ալ անցաւ մինչև որ յանձնախումբը 24 նիստերով իր աշխատութիւնը լրացուց, և օրինաւոր և ընդարձակ տեղեկագիր մը ներկայեց 1871 հոկտեմբեր 8-ի գումարման: Այդ գրութիւնը որ գաւառական հարստահարութեանց առաջին տեղեկագիր անունով ձանչցուած է, երկու մասի կը բաժնուի, առաջինը զեղծումներու (ԱՏՆ. 468-478) և երկրորդը դարմաններու յատկացուած է (ԱՏՆ. 479-483): Զեղծումները բաժնուած են, տրոց, Պաշտօնէից դատարանաց և մասնաւոր տեղեաց գլուխներու, և մի առ մի յառաջ բերուած են զեղծումներուն նիւթերը և պարագաները, և գրեթէ կենցաղական ամէն պայմաններ իրենց համապատասխան զեղծումը, ունեցած են, որով

մանրամասնութեանց մտնել աւելորդ կը սեպենք: Հետաքրքրական է այդ պեղծումներու մասին պատրիարքարանի կողմէն կառավարութեան մատուցուած յիշատակագիրներուն ցուցակը, որոնք վերջին տասը տարիներուն մէջ 536-ի հասած են, և կուսակալութեանց և նիւթերու վրայ բաժնուած են: Տեղերուն կարգին առաւելագոյններն են Տիարպէքիի կուսակալութեան համար 158, և Կարինի համար 136 գրութիւն, սակայն այդ կուսակալութիւնները այն ատեն շատ աւելի ընդարձակ էին: Իսկ նիւթի կողմէն առաւելագոյններն են մասնաւոր պեղծման համար տրուածները 210, և պաշտօնէից պեղծմանց համար 122: Առաջարկուած դարմաններուն մէջ նշանաւոր են պինուորական տուրքին տեղ պինուոր տալ, տուրքերու գանձումը կառավարական պաշտօնեաներով կատարել և կապալառուներու չյանձնել, տեղացի ոստիկաններ չգործածել, ոչ-մահմետական վկայութիւնը ամէն դատարաններու մէջ ընդունիլ, պաշտօնեաները կարող և արժանաւոր անձերէ ընտրել, ինչպէս նաև ազգին կողմէն կարող և յաջողակ առաջնորդներ անուանել և դաստիարակութիւնը ընդարձակել: Այս տեղեկագիրին վրայէն շուտով պատրաստուեցաւ կառավարութեան մատուցուելիք յիշատակագիրը և քաղաքական ժողովէն երեսփոխանութեան ներկայուեցաւ, բայց հապի թէ 1872 փետրուար 18-ին Խրիմեան պատրիարքի և Երեմիա Տէվկանց եպիսկոպոսի բուռն թախանձանաց վրայ նկատի առնուեցաւ, և պատրաստուած պատճէնին մէջ քանի մը բառերու փոփոխութեամբ և ընդհանուր հաւանութեամբ ժողովէն ընդունուեցաւ (ԱՏՆ.593-598), և հանդիսական ձևով մատուցուիլն ալ պատրիարքին թողուեցաւ (ԱՏՆ.592), որ պայն ներկայեց եպարքոսին ապրիլ 12-ին 4 եկեղեցական և 7 աշխարհական հետևորդներով, որ խոստացաւ նկատի առնել (72.ՄԱՍ.1226): Այլ թէ ի՞նչ արդիւնք ունեցաւ, պատմուած չէ, միայն գիտենք որ շատ ետքը երկրորդ տեղեկագիր մըն ալ կազմուեցաւ, և երկրորդ յիշատակագիր մըն ալ տրուեցաւ, որ առաջինին գործնական արդիւնք ունեցած չըլլալուն նշանակն է, մանաւանդ որ կառավարութեան կողմէ պատրիարքարանի ազդարարուեցաւ կրօնականէն դուրս գործելու չմիջամտել (72.ՄԱՍ.1285):

2824. ԱՅԼ ԵՒՍ ԳՈՐԾԵՐ

Խրիմեան միշտ սահմանադրական կոչուած ձևերու կաշկանդումէն նեղուած, և ժողովական գործառնութեանց ձգձգումներէն ձանձրացած, երբեմն անձնական նախաձեռնութեամբ գործեր ալ կատարած է, որոնցմէ ոմանք հաւանութեամբ կամ լռութեամբ անցած են, և ոմանք ալ անոր դէմ ամբաստանութեան նիւթ եղած են հակասահմանադրական կերպարանքի ներքև: Իրեն ընկալեալ գործերէն գլխաւորն եղաւ քահանայ մը պատրիարքական փոխանորդութեան կոչելը, երբոր Սերոբեան Կարապետ վարդապետ փոխանորդութենէ քաշուեցաւ: Ընտրեալն եղաւ Յովհաննէս քահանայ Մկրեան (70. ՄԱՍ. 994), Պարտիպակցի Մկրեանց յայտնի գերդաստանէն, 1831-ին ծնած, բաւական դաստիարակութիւն և ուսում ստացած, երկար տարիներ վաճառականութեամբ և ազգային գործերով վբաղած, այդ նպատակով Կովկաս ալ գացած, ազգասիրական և կրօնասիրական բուռն ձգտումով վերջին ատեններ եկեղեցականութեան մէջ մտած և Ներսէս Վարժապետեանէ քահանայ ձեռնադրուած՝ Մխալեան Կարապետ և Ազարեան Մկրտիչ օծակիցներու հետ: Մկրեան ծանօթ էր Խրիմեանի իր ուղղութեամբ և իր գործնական կարողութեամբ և պայն փոխանորդութեան կոչեց 1871-ին, թէպէտ դարերէ ի վեր տեղի ունեցած չէր քահանայի մը փոխանորդութիւն վարելը, ինչչափ ալ շփոթ ժամանակներու մէջ պատրիարքութիւն վարողներ ալ եղած էին (1786): Կերպով մը կարդարանար Խրիմեանի որոշումը, պի պատրիարքարանի մէջ ամուսնական գործեր փոխանորդարանի կը պատկանին, և դատաստանական խորհուրդին ալ նախագահը փոխանորդն է: Բայց նորութիւնը հարկաւ հաճելի պիտի չըլլար վեղարաւորներու, որոնք խմբովին կը նախադասուին ամուսնացեալ

եկեղեցականութեան: Ընտրողին կամքը և ընտրելին ճարտարութիւնը յաջողեցան քահանան փոխանորդութեան մէջ պահել ո՛չ միայն Խրիմեանի օրով, այլ և նորա յաջորդին օրով ալ բաւական տարիներ: Խրիմեանի օրով հանդիպեցաւ նաև Լատինաց Ս. Յակոբայ մէջ պատարագելէ արգիլուիլը, զոր պատմած ենք (2795): Խնդիրը ժողովներուն մէջ ձգձգուելուն վրայ, Խրիմեան դեսպանական դիմումներէ ստիպուած՝ թեթև կերպով մը հեռագրեց Երուսաղէմ արգելքին վրայ չպնդել, որուն Եսայի պատրիարք չանսաց, սակայն իրաւանց անփութութեան վրոյցներ ընողներ եղան, թէպէտ այն ատեն պատրիարք և վարչութիւն համամիտ կերպով պաշտպանած էին ազգային իրաւունքը, և առջևն առած էին Գէորգ կաթողիկոսի ձախող միջամտութեան, որ բողոքեր էր Եսայի պատրիարքին դէմ իր անունը գործին խառնած ըլլալուն համար: Իսկ վրոյցը զօրացուցին 1872 դեկտեմբեր 29-ին երեսփոխանական ժողովին մէջ պատրիարքէն բացատրութիւն ուզողները, և պատրիարքին հրապարակաւ խօսիլ չուզելու և սահմանադրութեան գծած շրջափակին շատ նեղ ըլլալուն պատասխանը, և այս առթիւ բարձրացած ձայները (72.ՄԱՍ.1332): Ուրիշ առիթ մըն ալ ստեղծեցին Վանայ խնդիրները, որուն մէջ Խրիմեանի հակառակորդներ իրենց պարագլուխ ունէին Վանայ տեղապահ Մելիքեան Պօղոս վարդապետը, ուսկից ծագած են Պօղոսեան և Ապօղոսեան կոչումները: Երբ հակառակութիւնները վայրացան և Պօղոս իր պաշտօնով զեղծումներու տեղի կու տար, Խրիմեան պաշտօնանկ ըրաւ վայն պատրիարքական իշխանութեամբ և Բագրևանդայ Ս. Յովհաննէս վանքը արքայապետ հրաման հանեց, սակայն որոշումը վարչութեան բովէն անցած չէր և Պօղոս վարչութեան բողոքեց, որ բողոքը բանաւոր գտաւ և գործի քննութիւնը պահանջեց: Խրիմեան այդ պահանջը իրեն նախատինք համարեց (ԶԱՄ.Բ.195), և նոյն իսկ Վանայ մէջ տեղի ունեցած յուզումները լսելով հրամանը ետ չառաւ, միայն Կարնոյ առաջնորդութեան յանձնարարեց վայն Կարնոյ մէջ պատուով պահել (72.ՄԱՍ.1286), բայց միշտ Խրիմեանի վրայէն չվերցուեցաւ սահմանադրական կանոններու հակառակ գործած ըլլալու մեղադրանքը: Բիշ ետքը ուրիշ խնդիր մըն ալ յուզուեցաւ, որուն մէջ դարձեալ Խրիմեանի ընթացքին մասին դիտողութիւններ եղան: Բերայի բարձունքը կայ ընդարձակ գերեզմաննոց մը, որուն մօտ են Թաշգըշլա և Թօփչուդըշյա երկու մեծ գօրանոցները: Կառավարութեան կողմէն միտք ծագեցաւ Հայոց գերեզմաննոցը հասարակաց պարտէզի վերածել, կամ ըստ այլոց իբրև հարթավայր գօրանոցներուն յատկացնել, և 1872 նոյեմբերի վերջին օրը պատրիարքարանի հրաման տրուեցաւ որ շուտով գերեզմաննոցը մաքրուի և կառավարութեան յանձնուի (72. ՄԱՍ. 1321): Այդ հրամանը անհնարին շփոթի մատնեց հասարակութիւնը, և դեկտեմբեր 8-ի գումարման 5-6000 ստորագրութեամբ բողոքագիր մը ներկայացաւ խուռն բազմութեամբ և աղաղակներով, զոր հազիւ կրցաւ զսպել Խրիմեան յայտարարելով թէ գերեզմաննոցի խնդիր չկայ, այն ազգինն է և ազգին կը մնայ (72. ՄԱՍ. 1324): Խառն ժողովներ ալ գերեզմաննոցներու նուիրակութեան վրայ հիմնուելով յանձնելու անհնարութիւնը որոշեց, և դեկտեմբեր 16-ին փոխանորդ Մկրեան քահանային ձեռքով այդ կէտը հաղորդեց արտաքին և կրօնական գործոց նախարար Խալիլ փաշայի, որ անդրդուելի մնաց տրուած հրամանին վրայ, աւելցնելով որ եթէ ազգը չպարպէ գերեզմաննոցը, քաղաքապետութիւնը պիտի կատարէ այդ գործը (72. ՄԱՍ. 1328): Կրկին յուզուեցաւ ժողովուրդը, քանի մը հազարներով պատրիարքարան խուժեց դեկտեմբեր 21-ին, մինչև որ պատրիարքը բռնադատեց կառավարութեան երթալ: Եպիսկոպոս և վարդապետ և քահանայ երկերկու հետևորդներով և փոխանորդով: Սակայն միշտ անդրդուելի կը գտնէ նախարարը, կը բողոքէ, հրաժարելու ստիպուիլը կը յայտնէ, բայց ի վուր: Ասոր վրայ եկեղեցական դասը գրեթէ ամբողջութեամբ, 6 եպիսկոպոս, 40 վարդապետ և 150 քահանայ, իրենց գլուխ ունենալով Ռոտոսթոնցի Թադէոս եպիսկոպոսը, դեկտեմբեր 22-ի ուրբաթի

աղօթքին առթիւ Տօլմապահձէի արքունիքին առջև կայսեր կը մատուցանէ աղերսագիր մը, վոր գլուխն վրայ բարձր բռնած էր Թաղէոս եպիսկոպոսը և կայսեր հաճութեամբ կընդունի (72. ՄԱՍ. 1329): Միւս օր դեկտեմբեր 23-ին Խրիմեան Քեմաիլ և Շիրվանպաղէ Մէհմէտ նախարարներուն այցելելով յուսալից պատասխաններ առաւ, և նոյն գիշեր Բերա գտնուած միջոցին իրեն հաղորդուեցաւ գերեզմաննոցը իր վիճակին մէջ Հայոց ձեռք թողլու կայսերական հրամանը, վոր 24-ին կիրակի առտու Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ ժողովուրդին մէջ ժողովուրդին աւետեց, և գերեզմաննոցի մատուռին մէջ պատարագ և գերեզմանօրհնէք և հոգեհանգիստ և թափօր կատարուեցան, և կայսեր համար աղօթքներ բարձրացան ամէն կողմերէ (472. ՄԱՍ. 1330): Խրիմեանի հանդէպ հակակիր եղողներ այդ առթին մէջ ալ իրեն դէմ դժգոհութիւն յառաջ բերեց կըսեն (ԶԱՄ. Բ. 195), սակայն գործոց ընթացքը յայտնի բան մը ցոյց չի տար, և գուցէ աղերսարկու եկեղեցական խումբին գլուխը չգտնուիլը չարաչար կը մեկնուի, մինչ Խրիմեանի ընթացքը պատրիարքի և հասարակութեան դիմումները վատելով, ոյժն ու ազդեցութիւնը շատցնելու կրնար ծառայել: Գէորգի գովաբանները կը սիրեն այդ խնդիրին մէջ ալ գործունեայ դեր մը ընծայել անոր, և Խրիմեանը գերեզմաննոցը յանձնելու հակամէտ ցուցնել (ԶԱՄ. Բ. 170), մինչ ատենն ալ սուղ էր Էջմիածնի ձեռնտուութիւնը հասցնելու: Գէորգի ամբողջ ըրածը խընդակցութեան գիր մըն է պատրիարքին ուղղուած, երբոր գործին յաջող վերջաւորութեան լուրն առաւ, ինչպէս իր գրութենէն ալ կը քաղուի (72. ՄԱՍ. 1359, ՀՄՐ. Ա. 55). Իսկ Խրիմեան էր որ հանապազօրեայ դիմումներն ըրած էր: Անցողակի աւելցնենք թէ Բերայի գերեզմաննոցին գրաւման փորձը ուրիշ անգամ ալ եղած էր (72. ՄԱՍ. 1188) և պաշտօնական և ժողովրդական դիմումներ վօրացած էին Հոգևոր Տիրոջ, այսինքն Զուղայեցի Յակոբ Դ. կաթողիկոսի գերեզմանին իբր ուխտատեղի ճանչլած ըլլալէն (1796), որուն վրայ հրաշալի լոյս մըն ալ տեսեր էր մերձակայ ձմերոցին հրամանատարը, և Բերայի թաղականներն ալ կրցեր էին գիշերուան մը մէջ մատուռ մը երևան բերել անոր մօտը, և տեղն նուիրակութիւնը հռչակէ:

2825. ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

Խրիմեանի պատրիարքութեան ժամանակամիջոցը կրնանք երկու որոշ շրջաններու բաժնել, քաղաքական ժողովներու տարբերութեան համաձայն, առաջինը 1870 փետրուար 20-ին իր իսկ կազմած վեց անդամով քաղաքականին ժամանակը, որուն վարիչներն էին Սահակ Ապրոյ ատենապետ և Տիգրան Եուսուֆեան ատենադպիր (2813), և երկրորդ 1872 յուլիս 14-ին երեսփոխանութեան բուլետով ընտրուած և 14 անդամէ կազմուած քաղաքականին միջոցը (ԱՏՆ.716) որ 1873 օգոստոսին հրաժարական ներկայեց պատրիարքին հետ: Այս ժողովին վարիչներն եղան Սենեքերիմ Մանուկեան ատենապետ, Ստեփան Փափապեան ատենադպիր, և Քրիստոսատուր Ղապարոսեան աւագ անդամ ընտրել ներէն վեցը կանուխէն հրաժարեցան, իրենց տեղ եկողներն ալ քաշուեցան, և մնացեալները շարունակեցին ժողովական գործողութիւնները: Այդ ժողովին կազմութեան մասին ուրախացողներ եղան թէ Խրիմեանի պաշտպանութեամբ ժողովրդի միջին դասի ազդեցութիւնը վօրացաւ ազգային գործերի մէջ, մինչ դեռ առաջ ժողովների մեծամասնութիւնը տէրութեան մեծ պաշտօնեաները կամ հարուստ դասի անձինքն էին կազմում (ՊԱԼ.480): Չենք կրնար երաշխաւորել թէ իրօք Խրիմեան պաշտպանած ըլլայ այդ ընտրութիւնը, բայց եթէ իրաւցնէ աշխատեցաւ իր ձեռքով պատրաստած եղաւ իր փորձանքը: Առաջին քաղաքականը փորձառու և աշխարհավար անձերէ կազմուած նոյն իսկ Խրիմեանի անձնական ընտրութեամբ, գիտէր պարագաները գործածել, և որչափ ալ Խրիմեանի ծանր կու գար շատ մը պայմանաւորեալ ձևակերպութեանց ենթարկուիլ, կրնար պատշաճ կերպերով կացութիւնը գործածել, ծայրակեղութեանց չերթալ, ճարտար ընթացքով հաշտ գործակցութիւն պահպանել: Իսկ

երկրորդը Ընդհանուր ժողովին մէջ շատցած աւելի խօսող, քան գործող, աւելի ձևին քան իրեն պակատեալ աւելի գաղափարի քան արդիւնքի հետևող տարրէն կազմուած և ընտրեալներու մէջէն վեց աւելի խոհեմները և բանիմացները կանուխէն հեռացած, կատարելապէս երևոյթին կապուած մարմին մը դարձաւ, և շատ կանուխէն սկսաւ խուլ պայքար մը ժողովին և նախագահին մէջ: Իրաւ մնացեալ ութերէն ամէնքը չենք կրնար միևնոյն կերպով որակել, սակայն այսպիսիներն ալ վարիչ անհատներու ազդեցութիւնը կրող և յատուկ ձեռնհասութեամբ գործելու անկարողներ էին, և միշտ ձևական և վերացական ուղղութիւնը կը տիրէր վարչութեան մէջ, իր նախագահին ուղղութեան կատարեալ հակոտնեայ ուղղութիւն մը: Այս կերպով կուսակցութիւն մը կազմուեցաւ որ պատրիարքին տապալելու կաշխատէր (ՊԱԼ.480) սակայն այդ կուսակցութիւնը նոյնինքն քաղաքականին մէջն էր, որ համարձակ և պաշտօնապէս պատրիարք ամբաստանելու և հակասահմանադրական հռչակելու հասաւ, և Ղալաթիոյ ոճախ կոչուած կուսակցութիւնը, որի հետապնդութեամբ Խրիմեան ստիպուեցաւ հրաժարիլ, նոյն ինքն Ստեփան Փափապեանի կազմած և վարած խումբն էր, որ միանգամայն վարչութեան ատենադպիրն էր, կամ թէ ամենայն ինչն էր: Հապիւ վեց ամիս անցած էր նոր քաղաքականի ընտրութենէն, և անհամաձայնութիւնը հրապարակ ելած էր, և պատրիարք տապալելու խօսքերը տարածուած էին: Նոր տարւոյն սկիզբը Խրիմեան հիւանդ էր և Ծնունդի օր եկեղեցի չէր իջած, մայր եկեղեցոյ գանձանակէն ալ անստորագիր թերթիկ մը ելած էր Խրիմեանի վրան անբարոյականութեան կեղտը քսող և սպառնալեօք եկեղեցիէ արգիլող: Հինգհարիւրէ աւելի ստորագրութեամբ բողոքագիր մը կազմուեցաւ անմիջապէս պատրիարքը հարկաւ եկեղեցոյ մէջ տեսնել ուզող, զի կենթադրուէր թէ ցաւած կամ վախցած ըլլալով չիջնար, և թաղականը ստիպուեցաւ հիւանդ պատրիարքը եկեղեցի բերել որ աղմուկը հանդարտի: Անոր վրայ լսուեցաւ թէ վարչութեան անդամներ ժողովակներ կը կազմեն պատրիարքը տապալելու (73.ՄԱՍ.1344), ընդդիմադիր լրագիրներ անվայել հրատարակութիւններու սկսան, որոնցմէ Փունջը երկամսեայ դադարման ալ դատապարտուեցաւ (73.ՄԱՍ.1347), Երուսաղէմի հեռագիրին խնդիրը 1873 մարտ 13-ին վարչութեան նիստին մէջ Փափապեանի ըմբոստ կերպով պատրիարք անարգելու և բռնադատելու առիթ կընծայէր, մինչև որ պատրիարք ժողովէ կը հեռանար. իսկ վարչութեան վարիչներ լրագիրները գրգռելու կը պտտէին (73.ՄԱՍ.1373), թաղականներու ամբաստանագիրներ մատուցանել կը թելադրէին (73.ՄԱՍ.1374) Կրօնական ժողովն ալ Մատթէոս վարդապետ Իզմիրլեանի քաղաքականի վարիչներուն գործակցութիւնը կը խօսուէր, թէ պատրիարքը տուրքերէ և մուգաթայէ գումար մը ձեռք ձգելով իր աշխատութեամբ, պահանջատէրներէն քանի մը հատը ուղղակի լուեցուցած էր և գումարը վարչութեան ձեռքը չէր տուած (73. ՄԱՍ. 1389): Քաղաքականը կարծես թէ առիթ չէր անցնուեր որ պատրիարքին գործերը կամայական մեկնութեամբ կամ բմահաճոյ քաշկուտութեամբ հակասահմանադրական ցուցնելու չաշխատէր բայց որոշակի չէր ճշդեր, մինչև որ հրաժարականէն ետքը քննիչ յանձնաժողովէն ստիպուած տասնումէկ գլուխներու վերածեց, որոնց գրեթէ ամէնքը ժողովին և նախագահին տարակարծիք գտնուիլը կը ցուցնեն (73. ՄԱՍ. 1432), մինչ սահմանադրութիւնը երբեք չըստիպեր միշտ համակարծիք գտնուիլը, մանաւանդ թէ կարտօնէ պատրիարքը ի հարկին իւրովի գործել, որոշումները ետ դարձնել, և անհամաձայն գտածները անգործադիր թողուլ (ՍՀՄ. 18-19): Իր կարգին կը թողունք յառաջ բերուած կէտերը: Այդ գժտեալ ընթացքը իր գագաթնակէտը հասաւ 1873 յուլիս 24-ի և 26-ի նիստերուն մէջ, երբ ժողովականներէ ոմանք բռնութիւն գործածելու իսկ հասան պատրիարքը իրենց հպատակեցնելու համար, իրարու հետ ալ կռիւի բռնուեցան, և բարապաններու միջամտութեան պէտք չգացուեցաւ կռուարարները պատելու: Յուլիս 31-ին ալ բիրերով զինուած բազմութեամբ մը ցոյց մը տեղի ունեցաւ

պատրիարքին դէմ: Այս պարագայից վրայ էր որ վերջապէս պատրիարքը հրաժարելու յայտարարութիւն ըրած էր յուլիս 26-ին (73. ՄԱՍ. 1415) և ժողովէ քաշուած, իսկ յուլիս 31-ի Ընդհանուր ժողովը հրաւիրեց օգոստոս 3-ին գումարուելու և հրաժարականը լսելու (73. ՄԱՍ. 1416): Ասոր վրայ ժողովականք ալ կորոշեն հրաժարիլ, այնպէս որ կրկին հրաժարականներ միանգամայն կը ներկայացուին Ընդհանուր ժողովին:

2826. ԿՐԿԻՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆՆԵՐ

Օգոստոս 3-ի նիստը արտասովոր նշանակութիւն ունենալով 78 երեսփոխաններու արտասովոր ներկայութեամբ գումարուեցաւ, Յարութիւն ատենապետութեամբ և Տիգրան Եռսուֆեանի ատենադպրութեամբ, ուր առաջին անգամ կարգուեցաւ քաղաքական ժողովոյ 6 անդամներու նոյն որ ստորագրած հրաժարականը, որուն մէջ կը պակսէին Գարակէօսեան Գրիգոր և կարապետ եղբարց ստորագրութիւնները: Հրաժարականը աւելի ամբաստանագիր էր պատրիարքին դէմ Վի գրուածին բովանդակութիւնն էր թէ իրենք աշխատեր են սահմանադրութիւն գործադրել, բայց միշտ պատրիարքին ընդդիմութեան հանդիպեր են, և մինչև իսկ այս երեսէն ժողով և ժողովականք իրենց գիրքին մէջ անարգուելու փորձեր տեսեր են, ուստի չկրնալով այլևս տոկալ ու գործել, կը ստիպուէին հրաժարիլ (ԱՏՆ. 888): Պատրիարքը որ կանուխ երկտող հրաժարական մը յղեր էր ատենապետին, այս անգամ ընդարձակ գրութեամբ մը ներկայացաւ, որ հռչակաւոր դարձած է Խօսք հրաժարման անունի ներքև (ԱՏՆ. 889-899): Իր քառամեայ պատրիարքութեան համարատուութիւնըն է Վոր կու տայ Խրիմեան այս գրութեամբ, և կարժէ որ համառօտ ամփոփում մը տանք գլխաւոր կէտերը քաղելով: Խրիմեան կը խոստովանի թէ ոչ իմաստութեամբ, ոչ ուսմանականութեամբ, ոչ հանճարով, ոչ քաղաքագիտութեամբ, և ոչ մի քանի լեզուաց հմտութեամբ արժանիք չունէր պատրիարքութեան բարձրանալու (ԱՏՆ. 890), բայց որովհետև ժողովն ընտրեց, ինքն ալ կարծեց թէ օգտակար ծառայութիւն մը պիտի կարենայ ընել պառապեալ գաւառացւոց: Առաջին խնդիրը որ առջևնին վերաքննութիւն սահմանադրութեան էր, ինքն ալ այդ վերաքննութիւնը կուզէր, որ ազգային իշխանութիւնը գործադրելի ձևի վերածուէր, բայց չորս տարուան մէջ 63 նիստեր գումարուեցան, և արդիւնք մը չերևցաւ, անհատնում անհատական և մասնաւոր գործերով վբաղեցան ժողովներ, բայց ազգին կեանքը, ազգին վիճակը, իմա՛ գաւառացւոց պէտքերը, նկատի չառնուեցան: Այստեղ յառաջ կը բերէ այն 13 կէտերը (ԱՏՆ.891), Վորս մենք արդէն յիշեցինք (2812), իբրև վերաքննութեան նիւթ ըլլալիք կէտեր, որոնք սակայն գործադրական խնդիրներ են օրէնսդրական ձևերէ անկախաբար: Այս նախաբանէ ետքը իր հրաժարման շարժառիթներուն կանցնի և առաջին պատճառ կը դնէ ձանձրութիւնն և յուսահատութիւնը (ԱՏՆ.892): Փորձով տեսնուած է որ տիրող վարչական ձևը անբաւական է ազգիային պէտքերուն, ուստի ինքն մտածած և առաջարկած է ունենալ ժողով մի տեղական գործոց, ժողով մի գաւառական գործոց (ԱՏՆ.893). վասնզի առանց վարձքի և փոխարինութեան, շաբաթը միայն քանի մը ժամ աշխատելու պարտքը ունեցող ժողովականներ չեն բաւեր պատրիարքարանի գործերը սպառել: Սակայն քաղաքական ժողով խորշած է իր առաջարկէն, և այն ատեն դիմած է վերաքննիչ յանձնաժողովին, և կը կարդայ անոր ուղղած գրութիւնը (ԱՏՆ.893-895), որուն յանձնաժողովն ալ չէ համակերպած: Ինքն սահմանադրութեան ոգւոյն վրայ պնդած և ուխտած է, իրմէ սահմանադրութեան տառին համակերպութիւն պահանջուած է, որ իր համոզմամբ բաւական չէ ազգային պէտքը լրացնելու: Իր հրաժարման երկրորդ պատճառ կը ցուցնէ եկեղեցւոյ վիճակը (ԱՏՆ.896), և երկարօրէն կը բացատրէ պաշտօնէից պակասութիւնը, վիճակներու թափուր մնալը, գործի վրայ եղողներուն անբաւականութիւնը, կրօնական ժողովին անհատական գործերէ պաշարուած ընդհանուրը մտածելու ատեն չունենալը, և եկեղեցականներու պահուած

աննախանձելի վիճակը, և ապգին կողմէ հանդէպ եկեղեցւոյ անփութութիւնը, և իբր կտակ կը թողու եկեղեցականութեան պարտքերուն հետ իրաւունքներն ալ հաստատել: Ի վերջոյ օրհնելով և ներում հայցելով, և արձակուելու շնորհը խնդրելով կը փակէ իր խօսքը, և կը մեկնի ժողովատեղիէն, ժողովականները ապատ թողլու համար: Երբոր հրաժարականներու ընդունելութեան խորհրդակցութիւնը կը սկսի, Կարապետ Իւթիւճեան և Օգսէն Խօճասարեան, իրարու ընդդիմամարտ Մասիս և Օրագիր լրագիրներու խմբագրապետներ, կը միանան քննիչ յանձնաժողովոյ մը կազմութիւնը առաջարկել, համամիտներ ալ կը գտնեն, համաձայնութիւն կը կազմեն, և երկար վիճաբանութենէ և յանձնաժողովին նպատակը Գրիգոր Օտեանէ ճշդուելէ ետքը, նոյն օր այդ յանձնաժողովը կը կազմուի մինչև 8 օր տեղեկագիրը բերելու պայմանով, և անգամ կընտրուին Խորէն Նարէյ եպիսկոպոս, Ղևոնդ Արծրունի քահանայ. իսկ աշխարհականներէն Գրիգոր Օտեան, Սարգիս Աղաբէգեան և Առաքել Տատեան (ԱՏՆ. 910): Այս որոշումով հրաժարականներ ի կախ կը թողուին, և նոր վարչական մարմին մը ընտրելու պէտք չմնար: Ասով մէկտեղ Խրիմեան պատրիարքարանը ըթ թողու և առժամեայ կերպով Երուսաղէմատուն կը քաշուի:

2827. ԲՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Յանձնաժողովին անհնար կըլլայ 8 օրուան մէջ քննութիւնը աւարտել, ինչպէս ժողովին մէջ ալ նախատեսած էր (ԱՏՆ. 910) և հապիւ օգոստոս 24-ին կրնայ գումարուիլ Ընդհանուր ժողովը, որուն կը մասնակցին 79 երեսփոխաններ: Աւելորդ չըլլայ յիշել թէ այս երեք շաբաթներու միջոցին մէջ սաստիկ բանակուիներ և խորհրդածութիւններ և բացատրութիւններ երևցան լրագիրներու մէջ, որոնք ստուար մեծամասնութեամբ պատրիարքին նպաստաւոր և քաղաքականին աննպաստ էին: Որոշեալ օրը նախ մասնաւոր հանրագրութիւններ կարդացուեցան, որոնց առաջինը սահմանադրութիւնը և անոր գործադրութիւնը կը պահանջէր (ԱՏՆ. 913), երկրորդը Իվմիրլեան Մատաթէոս վարդապետի և Զրիստոստուր Ղապարոսեանի և Փափագեան Ստեփանին ժողովականութենէ դադրիլը և այլևս պաշտօն չվարելը կը պահանջէր իբր պատրիարքին դէմ գրգռութեան հեղինակներ (ԱՏՆ. 914), երրորդն ալ Փափագեանը կամբաստանէր որ, երկար տարիներէ ի վեր իբրև Ղալաթիոյ վարժարանին տեսուչ, լաւ թոշակ կը ստանար, բայց բոլոր ատենը գրգռութեանց ետևէն էր առանց վարժարանը հոգալու: Խրիմեան ալ նոր գիր մը ուղղած էր իր հրաժարականին քանի մը կէտերը լուսաբանելու, և գլխաւորապէս յայտարարելու թէ ինքն ոչ թէ սահմանադրական գրութեան, այլ վարչական կազմակերպութեան կը հակառակի և աշխատութեանց բաժանում կը պահանջէ (ԱՏՆ. 916): Ասոնցմէ ետքը կարգուեցաւ քննիչ յանձնաժողովին տեղեկագիր (ԱՏՆ. 916-927), որ կըսեր թէ պատրիարքի և քաղաքականի միջև սկզբունքի տարբերութիւն չգտնելով, քաղաքականէն պահանջեց պատրիարքին դէմ ունեցած գանգատները բացատրել, և միայն վեց ստորագրութեամբ գիր մը ընդունուեցաւ, որ 11 գանգատանաց կէտեր կը ցուցնէր, ուստի հարկ եղաւ անոնց քննութեան մտնել, և հետևեալ եզրակացութիւններու յանգեցաւ, պատրիարքի բացատրութիւններն ալ լսելով: 1. Մելիքեան Պօղոս վարդապետի պաշտօնանկութիւնը և աքսորը որոշած է քաղաքական ժողով չգտնուած միջոցին, և կրոնականին ալ գործը պատրիարքին յանձնելուն վրայ: 2. Երուսաղէմ յղուած հեռագիր մասնաւոր պարագայից հանդէպ իր անձնական պատասխանատուութիւնը կը ստանձնէ: 3. Կիլիկիոյ կաթողիկոսին մասին Խրիմեան ինքն կարծիք մը յայտնած էր, թէ պէտք է հասարակ առաջնորդներէ աւելի իրաւասութիւն մը ճանչնայ Կիլիկիոյ կաթողիկոսին վրայ, և կարծիք յայտնելու ապատ է: 4. Ամսականին թուղթ պատուելը բողոք մը եղած է քաղաքականին առանց խորհրդակցութեան պատրիարքական ամսականը կիսով չափ նուազելուն դէմ: 5. Մուգաթայի հաւաքման մտած է իրեն

աջակցութիւնը տնտեսականէն խնդրուելուն վրայ, և երբեք բան մը չէ իւրացուցած: 6. Ս. Կարապետի մուգայաթին գիրը չէ յղած, զի վանահայրութիւնը իր վրայ էր և ինքն ալ մասնաւոր ապագարարութիւն դրած էր: 7. Բալուի առաջնորդ Բագուանեան Պետրոս վարդապետի դադարման մէջ միայն պատճառին փոփոխութիւնը ըրած է, սահմանադրութիւն չգործադրուելուն անոր դէմ հասած գանգատները յիշելով: 8. Գատըքէօյի թաղականութեան խնդիրին մասին պատրիարքին ստորագրելու պաշտօնագիր չէ ներկայացուեր, և վարչականին որոշումը իր բացակայութեան տրուած ըլլալուն վերստին քննութեան դարձուցեր է գործը: 9. Նախարարներու տրուելիք այցելութեանց խնդիրը յանձնաժողովը փափկանկատութեամբ քննութեան իսկ չէ ենթարկեր: 10. Պատրիարքը կանխաւ հաստատուն որոշման մը վրայ յենելով՝ ամսականի վեղջը չէ ընդուներ պատրիարքարանի մատակարարութեան ծախքերն ալ իր վրայ մնալուն: 11. Պատրիարքը ոչ թէ նախատանօք վարուած է ժողովականներուն հետ, այլ մանաւանդ նախատուած է ժողովէն, ինչպէս ուրիշ ժողովականներ կը վկայեն, միայն միշտ կրաւորական կերպով չէ համակերպած իր միտքին և ուղղութեան հակառակ որոշումներուն և դիտողութիւններուն: Այսպէս յանձնաժողովը պատրիարքէն կը հեռացնէ հակասահմանադրականութեան ամբաստանութիւնը, առանց շատ ծանրանալու քաղաքականին վրայ, զի երկու կողմն ալ անկեղծութեամբ գործած կենթադրէ, վարչական ձևերուն անբաւականութիւնները և թերութիւնները կընդունի, և այդ մասին իրաւունք կու տայ պատրիարքին, և երեսփոխանութիւնը կը հրաւիրէ օր առաջ վերաքննութիւնը աւարտել, զոր պատրիարքն այնչափ թախանձանօք խնդրած էր, իսկ ուր ստիպողականութիւնը տեսած է վերաքննութեան ենթարկեալ կանոններուն տառէն դուրս ելլալը արդարացի նկատած է: Խնդիրին գործնական լուծման գալով կառաջարկէ պատրիարքին և քաղաքականին հրաժարականները ընդունիլ, նախատեսելով որ պիտի չկարենան այլևս միասին գործել, և կը թելադրէ շուտով տեղապահ մը և առժամեայ վարչութիւն մը անուանել:

2828. ՏԱԳՆԱՊԻ ՓԱԿՈՒՄԸ

Այս տեղեկագիրը լսելով ժողովը չհամակերպեցաւ առաջարկուած որոշումին. զի եթէ Խրիմեան հակասահմանադրական չէր, պատճառ չկար հրաժարականը ընդունելու. ուստի պատգամաւորութիւն մը յղելով ստիպեց հրաժարականը ետ առնուլ, և ժողովէն ետքը Երուսաղէմատունէ պատրիարքարան առաջնորդեց (73.ՄԱՍ.1427): Կը մնար քաղաքականի հրաժարականը, և պատրիարք Ընդհանուր ժողովը հրաւիրեց օգոստոս 31-ին նիստ ընելու և այդ խնդիրն ալ վերջացնելու (73.ՄԱՍ.1428): Ասոր վրայ երեսփոխաններու խումբի մը կողմէ նիստը դռնփակ ընելու առաջարկ մը ծագեցաւ, պատրիարք չուզեց այդ խնդիրին միջամտել, դիւանը այս կողմ այն կող դիմեց և վերջապէս համաձայնութիւն գոյացուց նիստը դռնփակ ընելու, բայց ոչ թէ ժողովրդական ճնշումէն վախնալով, այլ պարզապէս խնդիրին փափկութիւնը նկատի առնելով: Ըստ այսմ ծանոյց պատրիարքին սեպտեմբեր 22-ին, պատրիարքն ալ 25-ին հրաւեր ուղղեց 27-ին գումարուելիք դռնփակ նիստին (73.ՄԱՍ.1441): Բայց ժողովրդական ճնշումի վախը կար, ինչպէս ալ իրականացաւ սեպտեմբեր 28-ին, երբ 79 երեսփոխաններ հաւաքուած էին, բայց ժողովրդական ցոյցերը և բռնադատութիւնները այնչափ վօրացան որ առանց ժողով բանալու ժողովականներ ցրուեցան (73.ՄԱՍ.1442): Նոր գումարման որոշումը չտրուած և հրաւեր չեղած ժողովրդական ցոյցեր սկսան եկեղեցիներու մէջ յիշատակութիւնը արգիլելու, և գլխաւորապէս Պէշիկթաշի եկեղեցին: Քաղաքականի հրաժարման ստորագրողներ բացատրութիւն անունի ներքև տետրակ մըն ալ հանելով կացութիւնը հրահրեցին, և Խրիմեան տեսնելով որ հանդարտութեան յոյս չկար, հոկտեմբեր 2-ին կրկին և վերջնական հրաժարագիր մը ուղղեց երրորդ ատենապետ Սարգիս Աղաբէղեանի, զի Յարութիւն Տատեան և Ստեփան Ասլանեան առաջին և երկրորդ ատենապետներ

հրաժարած էին սեպտեմբեր 28ին ժխորին հետևանք, պոր չէին յաջողած արգիլել և պալել, և նա ալ հաղորդեց կրոնական ժողովոյ ատենապետ Ռոտտոթոցի Թադէոս եպիսկոպոսին, որ և փութաց հրատարակել ի գիտութիւն հանրութեան (73. ՄԱՍ. 1445): Խրիմեան հրաժարականը կառավարութեան ալ ներկայեց հոկտեմբեր 6-ին պարզապէս անձնական տկարութեան պատճառով (73. ՄԱՍ. 1450), և ընդարձակ հրաժարագիր մըն ալ հաղորդեց երեսփոխաններուն հոկտեմբեր 13-ին (73. ՄԱՍ. 1448), որուն մէջ վեց պարբերութիւններով կը կրկնէ թէ Խրիմեան ոչ ևս է պատրիարք Հայոց, և իբր պատճառներ կը ցուցնէ և կը բացատրէ, թէ մնալով իբր փառասէր և խոովարար պիտի երևնար, թէ վերջին անգամ յայտնուած յանձնառութեան յոյսն ալ վերացաւ, թէ ժխորներ և ճնշումներ շատցան, թէ ինքն բռնական միջոցներ չունի, թէ յանիրաւի պինքն էջմիածնի հակառակ ցուցնել ուզեցին թէ սահմանադրութիւնը ինչպէս գտաւ նոյնպէս ալ կը թողու առանց փոփոխութեան, և խաղաղութեան հաստատուելուն մաղթանքներով կը փակէ և թէ կանցնի փոթորիկը պի Յովհան և ծով գնաց (73. ՄԱՍ. 1448): Ամբողջ 1873 հոկտեմբեր ամիսը անորոշ վիճակի մէջ անցաւ պի պատրիարք և քաղաքական չկային, և միայն տկար կրօնական մը կար կացութիւնը պաշտպանելու: Նոյեմբեր 3-ին Խրիմեանի հաղորդուեցաւ հրաժարականին կառավարութենէն ընդունիլը, 6-ին կրօնականի հաղորդուեցաւ քաղաքական ժողով մը կազմուելով տեղապահ ընտրել, 8-ին կրօնականի ատենապետ Թադէոս եպիսկոպոս երեսփոխութիւնը հրաւիրեց, 16-ին ժողովը գումարուեցաւ, և միայն չորս անձեր մեծամասնութիւն շահեցան, 23-ին կրկին գումարուեցաւ և համեմատականի քուէարկութեամբ 14 անդամները լրացան, 27 ին քաղաքականը կազմուեցաւ Սիմոն Մաքսուտեանի ատենապետութեամբ, և Խառն ժողովով Նիկողայոս եպիսկոպոս Աղասեան տեղապահ ընտրուեցաւ, և դեկտեմբեր 5-ին քաղաքականի և 6-ին տեղապահի հաստատութիւններն ստացուեցան(73. ՄԱՍ. 1445-1472), և այսպէս փակուեցաւ պատրիարքական տագնապը, որ յուլիս 31-էն չորս ամբողջ ամիսներ երկարեցաւ և գայթակղալից միջադէպներու ասպարէզ բացաւ: Անհնարին է հանդարտ միտքով կարդալ այն դէմընդդէմ հրատարակութիւնները, որոնց առջև խմբագրապետներ լայնարձակ բացած էին իրենց լրագիրներուն էջերը, և ամենայն ոք ինչ որ միտքը կիյնար կամ բերանը կու գար գիրի կառնէր և մամուլի կը յանձնէր համարձակ կերպով: Հրաժարեալ քաղաքական ժողովը, որ այնչափ բծախնդիր էր ձևակերպութեանց, գործէ հեռացած էր առանց իր համարատուութիւնը ներկայելու. ուստի փութաց այդ պայմանը լրացնել և չորս մասէ բաղկացած համարատուութիւն մը ներկայեց 1874 փետրուար 14-ին (ՀՄՐ.Ա.46), որոնք են. քաղաքական ժողովի համարատուութիւն, խառն ժողովոյ համարատուութիւն, սահմանադրական հրահանգներ, և գաւառական վիճակագրութիւններ, բովանդակը 172 երկիջեան մեծագիր երեսներէ բաղկացած, որուն մէջ սակայն չէ պարունակուած պատրիարքի հետ տեղի ունեցած անհամաձայնութեան մասը, պոր սահմանադրական վարչութեան անվրդով ջանից յարատևութիւն կը կոչէ (ՀՄՐ. Ա. 45), և այս մասին համար կը յղէ իր հրաժարագիրն և անոր բացատրութեան տետրին (ՀՄՐ. Ա. 46): Յիշենք անցողակի թէ մենք նպատակ ունենալով ազգային ընդհանուր ընթացքը նկարագրել, պանց ըրած ենք Խրիմեանի պատրիարքութեան ժամանակ տեղի ունեցած շատ մը մասնաւոր և անձնական խնդիրներու հետևիլ, ինչպէս են Պրուսայի Բարթոլոմէոս Չամիչեան եպիսկոպոսի, Եգիպտոսի Սուքիասեան Մեսրոպ եպիսկոպոսի, Կուտինայի Եանըգեան Յովսէփ եպիսկոպոսի, Վանայ Մելիքեան Պօղոս վարդապետի, Գլակայ Մխիթար վարդապետի, և ուրիշ Նմանօրինակ խնդիրներ, և աւելի կարևոր կը նկատենք պահ մը պատմուած եղելութեանց վրայ անդրադառնալ, և պատրիարքի և քաղաքականի մասին մեր տեսութիւնները յայտնել, միշտ միևնոյն անկաշկանդ համարձակութեամբ, պոր մեզի պարտականութիւն ենք սեպած:

Խրիմեանի պատրիարքութեան աւելի ցայտուն մասը վերջինն է. զի ինչպէս ըսինք առաջին մասին մէջ, գէշ աղէկ գործերը կը բալէին Ապրոյ Եուսուֆեան վարչութեան գործածած մեղմ և ճարտար ձևերով եթէ վարչութիւնը չէր կրնար ալ համակերպիլ Խրիմեանի թէ ոչ երևակայական, գոնէ դժուարաւ իրականանալի տեսութեանց, բայց կրնար գրութիւնը հանդարտ անցունել և անհամաձայնութեան կերպարանէ վզուշանալ: Բայց այդ կացութիւնը վերջացաւ երբոր ոչ նուազ երևակայական անձերէ վարչութիւն մը կազմուեցաւ, զոր Քրիստոստուր Փափապեան վարչութիւն ի դէպ է կոչել: Վարժապետութենէ յառաջ եկած վարիչներ, գործնական և իրական կեանքի փորձառութենէ զուրկ, ամենայն ինչ ձևակերպութեանց տառականութեանց վրայ հաստատած, և իրակութիւնը ձևակերպութեան զոհելու սկզբունքով տոգորուած, գտնուեցան այնպիսի պատրիարքի մը հանդէպ, որ ընդհակառակն ամէն ձևակերպութիւն իրականութեան զոհելու սկզբունքը կը պաշտպանէր, և ահա թէ ինչո՞ւ իրար չկրցան հասկնալ երբ դէմ առ դէմ գտնուեցան պաշտօնական գետնի վրայ, մինչ յառաջագոյն իրարու վրայ վմայլողներ էին երբ միայն երևոյթներով զիրար կը դատէին: Եթէ լոկ սկզբունքի տեսակէտէն կարծիք մը պիտի յայտնենք, համարձակ Խրիմեանի կողմը պիտի ըլլանք. զի մենք ալ սկզբունքով և գործով ձևակերպութենէ աւելի իրականութեան հետևող մըն ենք, բայց պիտի չկարենանք Խրիմեանը պաշտպանել, երբոր պաշտօնական մեծաւորութեան տեսակէտէն խօսինք, զի ամէն մեծաւորի վրայ պարտականութիւն կը ճանչնանք պարագաները գոծածել, գործերը ծայրայեղութեան չմղել, հնարաւոր օգուտը քաղել, անձնաւորութիւնները շահիլ, տագնապի առիթ չտալ: Ահա Խրիմեանի մեծ պակասութիւնը, զոր վարչականութեան թերութիւն կը կոչենք: Ղալաթիոյ օձախի երկու պետերը Քրիստոստուր և Փափապեան, և իրենց երրորդ ընկերակիցը կրօնականի ատենադպիր Իվմիրլեանը, խորհրդարանական ընդդիմութեան պիտակ նմանութիւնը կազմելու թևակոխելով, և միշտ օրուան վարչութիւնը խծրծելու վարժուած, Խրիմեանի ձայնակից կը կարծուէին երբոր իր առաջին վարչութենէն դժգոհութիւններ կը յայտնէր բայց գործը փոխուեցաւ երբոր օձախը վարչութեան տէր եղաւ, և ուզեց իր ձևակերպութիւնը նուիրագործել, և Խրիմեանը չկրցաւ իր ամրապինդ իրականութենէն խախտիլ: Խրիմեանի կիշնար իբր գլուխ և պետ և նախագահ մարմինը իրեն լծորդել կամ գոնէ վայն գործածել, բայց ինքը այդ ձիրքին տէրը չէր. իր համարձակ յայտարարութիւնները և արձակ գործողութիւնները, և ընդարձակ տեսութիւնները չարաչար մեկնուելու առիթ տուին և հակասահմանադրական կեղտը և գանգատը և վերջապէս ամբաստանութիւնը ստեղծեցին: Հակասահմանադրականը սկզբունքի թշնամի է, և Խրիմեան սկզբունքի թշնամի չէր, ինչպէս քննիչ յանձնաժողովն ալ եզրակացուց: Առջևը ունէր տառ մը զոր առաջուց անբաւական դատած էր, իր իսկութեան մէջ վերաքննութեան ներքև էր, իրականութեան մէջ դժուարութեանց կը բաղիւէր, ուստի անիրաւ չէր երբոր ստիպմանց առջև բացառութիւններ ընդունէր: Սակայն շատ աւելի դիւրին կերպով մէջէն ելած կըլլար եթէ փոխանակ երկու բաժան վարչութիւններ ուզելու, մին տեղական և միւսը գաւառական նոյն վարչութեան օժանդակ գաւառական յանձնաժողով մը կազմել առաջարկէր կամ պահանջէր, կամ նոյն իսկ մէկէ աւելի յանձնաժողովներ գլխաւոր գաւառներու բաժանմամբ: Բայց վարչադիտական ձկուն կերպերը Խրիմեանին ձիրքերուն մէջ տեղ չունէին: Իսկ քաղաքականը բոլորովին անիրաւ և նոյն իսկ սահմանադրութեան հակառակ դրութիւն մը կը պաշտպանէր, երբեք պատրիարքին տրուած գործադիր իշխանութիւնը գործադիր պաշտօնէութեան հետ կը շփոթէր, իշխանութեան ամբողջութիւնը իր ձեռքը ամփոփուած կը կարծէր, և պատրիարքն ալ վարձեալ պաշտօնեայ մը կը համարէր, որ պիտի կնքէ ինչ որ իրեն առջևը կը դրուի, պիտի երթայ ուր որ իրեն

հրամայուի, պիտի խօսի ինչ որ իրեն հրահանգուի: Այդ հետևությունը շատ յայտնի կերպով կը քաղուի ամբաստանութեանց 11 կէտերէն, զորս քննիչ յանձնաժողովին տեղեկագիրին մէջ տեսանք (2827): Կրկին մեղադրելի դարձաւ քաղաքականը երբոր անհամաձայնութեանց մէջ յաղթական ելլալու համար բիրերով և մահակներով պինուած ամբոխը իբրև փաստ ուլեց, գործածել, որուն մէջ մեծամասնութիւն կը կազմէին Մշեցի պանդուխտներ, Մուշի մէջ Խրիմեանի դէմ լարուած հակառակութեանց խեղճ մնացորդներ, և իրենց վիճակէն երեսփոխան ընտրուած Փափազեանի կոյր գործիքներ: Տագնապը լուծուեցաւ վերջապէս, ինչպէս որ նախատեսելի էր և քննիչ յանձնաժողովն ալ յայտներ էր Խրիմեան պատրիարք և Քրիստոսատուր Փափազեան վարչութիւն ասպարէզին քաշուեցան, բայց շատ տարբեր կերպով: Խրիմեան իրաւ իբրև անվարչագէտ յայտնուեցաւ, բայց մարդը չպատկեցաւ անկեղծ միտքը, ուղիղ սիրտը, անշահասէր ընթացքը, ազգասէր նպատակը և առաքինասէր հոգին միշտ բարձր մնացին և կասկածի ներքև չինկան, և Հայրիկ փաղաքշական կոչումը և քանզևս հաստատուեցաւ, և մեծ անունը և մեծ մարդը մեծ մնաց միշտ: Ընդհակառակն քաղաքականը և իրեն կառավարած Ղալաթիոյ օձախը շահագիտական և ամբոխավարական և ծանրութենէն պինքն ապատել չկրցաւ, և իր համարատուութեան ստուար տետրն ալ պինքը չբարձրացուց, որուն մէջ հրատարակուած անհեռատես յիշատակագիրներ, ափյափոյ և արժանեաց փաստեր չեղան: Խոսքերնիս ճշդելու և տեսութիւննիս չշփոթելու համար պիտի աւելցնենք թէ Ղալաթիոյ օձախին և Քրիստոսատուր Փափազեան վարչութիւնը մեղադրած ատեննիս, մեր վերապահութիւնն ալ պիտի ընենք նոյն վարչութեան անդամակից բայց ոչ օձախի գործակից ընկերակիցներուն համար, Գրիգոր և Կարապետ Գարակէօզեան, Ալիքսան Խորասանձեան և ուրիշ հանդարտաբարոյ վաճառականներուն համար, որոնք թէպէտ ոչ միշտ ձայնակից գտնուեցան իրենց ժողովին վարիչներուն, այլ թերևս միամտաբար կարծեցին օրինապահութեան և կանոնաւորութեան ծառայած ըլլալը, իրենց վարիչներուն համակերպելով: Իրենց արդարացման համար բաւական է դիտել որ ժողովականութենէ ելնել նէն ոչ մի կերպով մօտեցան օձախականներուն, և յայտնապէս հակառակ խօսողներ եղան, գրողներ ալ գտնուեցան իրենց մէջէն:

2830. ՆՈՐԱ ՀՆԱՐ ԱՂԱՆԴ ՄԸ

Խրիմեան պատրիարքի հրաժարուիլը յարմար հանգրուան մը կը կարծենք, իր յաջորդին չանցած նորէն դէպ ետ դառնալով կաթոլիկ ազգայիններու ներքին խնդիրներուն գլխաւոր պարագաները համառօտիւ քաղել: Բայց անկէ առաջ թող ներուի մեզ ուրիշ մասնաւոր միջադէպի մը վրայ խօսիլ, որուան վրայ աւելի կանուխ ալ խօսիլ ի դէպ էր եթէ եղելութեանց կապակցութիւնը ստիպուած չըլլար միջանկեալներով անոնց թելը չընդհատել: Երուսաղէմի միաբան Յակոբոս Չիլինկիրեան վարդապետը կանուխէն յիշած ենք, թէ իրեն առաջին գործունէութեան և թէ Յովհաննէս պատրիարքէ հեռացուելուն առթիւ (2650), և Յովհաննէսի մահուանէ ետքը միաբանութենէ մերժվելուն, Յոպպէ մնալուն, և Հիւնքեարպէյէնտեան Յովհաննէս քահանայի հետ Կ. Պոլիս երթալուն, և այնտեղ միաբանութեան դէմ յայտնի պայքարի մտնելուն պարագաներով (2723): Երբոր իր ձեռնարկուած հակառակութեան յաջողութեան չհասաւ, և դուրսէն պատրիարք դնել տալ չկրցաւ, խորհեցաւ յանձին խորհուրդ չար տուժել վազգն ողջոյն (ՍԱԻ, 1347), և գլուխ կանգնեցաւ Հայ եկեղեցոյ բարեկարգութեան անունով նոր աղանդ մը կազմելու, որուն լուսաւորչական անունը տուաւ, և ինչպէս ամէն նորութիւն, իր գաղափարն ալ իրեն յարողներու խմբակ մը ունեցաւ, որուն մէջ մինչև 72 եկեղեցականներ գտնուած կըսէր, թէպէտ իրմէ վատ երկրորդ մը չունեցաւ իր գաղափարը հրապարակաւ պաշտպանող: Իրեն ձեռնարկէն մնացած միակ արդիւնքն է Պատկեր Հայաստանեայց Լուսաւորչական Սուրբ Եկեղեցոյ (ՊԱՏ.)

հրատարակութիւնը, որուն յառաջաբանին մէջ, որ հարկաւ իր գրչէն ելած է, կը գտնենք իր գրութեան բացատրութիւնը: Հայ եկեղեցւոյ մէջ շատ մը արևելեան և արևմտեան, այսինքն յունական և լատինական օտար ներմուծումներ և այլալուծութիւններ գործուած ըլլալը տեսնելով, կուպէ Հայ եկեղեցին իր դաւանութեամբ և արարողութեամբը Լուսաւորչի դարին վերադարձնել (ՊԱՏ. Ե.), և այս նպատակով ձեռք կառնէ անոր ծիսարանները, մաշտոցը (ՊԱՏ. 27), և ժամագիրքը (ՊԱՏ. 125), և շարականը (ՊԱՏ. 217), և անոնք ամէնքը կողղէ պարզապէս իր քմահաճ կամքով, և ոչ թէ հին յիշատակաց ուսումնասիրութեամբ կամ հիմնական պատճառաբանութեամբ, իբր թէ ինքն գիտական և պաշտօնական հեղինակութիւն մը եղած ըլլար: Իր ձեռք առած գիրքերը Հայ եկեղեցւոյ գործածական ծիսարաններն են, որոնց մէջէն ըստ կամս և ըստ հաճոյս արարողութիւնները կը սեղծէ, ուրիշներ կը համառօտէ, ոմանք կը փոփոխէ, և միշտ կեղծանէ: Ասացուածներուն և բացատրութիւններուն և բառերուն ալ կիջնէ, և անոնք ալ կը դնէ և կը վերցնէ, կայլալէ և կը շփոթէ: Աւելորդ աշխատանք կը սեպենք մասնաւորութեանց մտնել, մինչև իսկ նմոյշներ առաջ բերել, բաւական սեպելով ըսել, թէ յապաւմանց մէջ իր քմահաճոյքէն վատ փաստ մը չենք տեսներ. իսկ բառերու և բացատրութեանց մասին կը տիրեն բողոքականութեան գաղափարներ, թէպէտ ոչ կատարեալ և ոչ հաւատարիմ հետևողութեամբ: Եւ որ աւելին է, երբ Հայ եկեղեցին յատկութեան ձևին վերածել կը դիտէ, անմտադրութեամբ կը նդուսնի և կը պահէ այնպիսի կէտեր և մասեր, որոնք յայտնի և ստոյգ ներմուծումներ են յունական կամ լատինական ծիսարաններէ: Պատկերը առաջին դատապարտողը եղաւ Թաթթաքեան պատրիարք 1868 ապրիլ 5-ին, որուն դէմ Լուսաւորչեան Ընկերութիւնը երեսփոխանութեան դիմեց մայիս 2-ին, սակայն անձագանք չգտաւ: Իսկ գրական կերպով հերքումը կատարեց Սահակ Տէր-Սարգիսեան կրօնագէտ քահանան Սուտ Լուսաւորչականն հրատարակութեամբ, թէ Պատկերի ներկայած և պաշտպանածը Լուսաւորչի վարդապտութիւնը չէ, այլ անկլիքան բողոքական դրութիւնն է (ՍԼՍ.6), և մի առ մի յառաջ բերելով գլխաւոր կէտերը կը նշաւակէ Լուսաւորչականին ստոյթիւնները: Այս տեսակ անհիմն և անտրամաբանական գործ մը չէր կրնար ոչ արմատ ձգել և ոչ ճիւղեր արձակել, այնպէս որ մեռած-ծնած գործ մը եղաւ Չիլինկիրեանի յանդուգն ձեռնարկը, և առջի օրուան սակաւաթիւ հետևողներ ալ շուտով ցրուեցան, և ապգին մէջ ալ գրեթէ աննշանակ անցաւ նորահնար աղանդը: Երբ եկեղեցական իշխանութիւնք դատապարտեցին և լուծեալ ի կարգէ իւրմէ հռչակեցին Չիլինկիրեանը, նա բողոքականաց մօտեցաւ. բայց անոնց մօտա ալ ի յարգի կացուցեալ չեղաւ վասն անօրինակ գնացից և խառնակեաց կեանս կելոյ (ՍԱԻ. 1347): Թէպէտ պատրուակով մը բողոքական հասարակութեան մէջ արձանագրուեցաւ, բայց ապագայտարանը 1872 մայիս 24-ին պաշտօնական ծանուցումով յայտնեց, թէ ոչ բողոքականութեան պաշտօնեայն է և ոչ անդամը, և բնաւ յարաբերութիւն չունի իրենց հետ, և նորա կատարած ամուսնութիւններն ալ անվաւեր են (72. ՄԱՍ. 1242): Նմանօրինակ յայտարարութիւն մըն ալ կրօնական ժողովը հրատարակեց 1847 յուլիս 14 ին (74. ՄԱՍ. 1558), և ոչնչացուց Պէշիրեան Աւետիսի վրայ ըրած պսակը (74. ՄԱՍ. 1628), ինչ որ կը ցուցնէ թէ ամուսնութեանց տուրևառը Չիլինկիրեանի հասոյթի աղբիւրն էր եղած: Բողոքականաց ապագայտարանը իր ծանուցումը կրկնեց 1874 յուլիս 24-ին թէ վայն իրմէ չի ձանչնար և կատարած ամուսնութիւնները վաւերական չի համարիր (74. ՄԱՍ. 1562): Այս վիճակին մէջ անցուց իր ժամանակը բաւական ատեն մայրաքաղաքին մէջ, իսկ 1876-ին Մէրսին կը գտնուէր, և որով հետևա պատրիարքարանը պինքն Կ Պոլիս բերելու պետական հրաման առած էր, սղջման գիր կը գրէ, և Ներսէս պատրիարք գործը կրօնականին կը յանձնէ (76. ՄԱՍ. 1825), բայց նոր կարգադրութիւն չեղաւ իր մասին, և կրկին Կիլիկիա դարձաւ, ուր մասնաւորներու պաշտպանութեամբ և տեղական իշխանութեանց անմտադրութեամբ սկսաւ Հայոց եկեղեցւոյն

մօտենալ, առաջ Մէրսին, ետքէն Ատանա, այլ երբ Մկրտիչ Կիլիկիոյ կաթողիկոսը արգիլեց վայն իր շփոթ յայտարարութեանց համար և քիչ մըն ալ հալածեց հին եղելութիւններ յիշելով (2649), իբրև ապրուստի միջոց Ատանայի մէջ լատիններու դիմեց, և այլ ևս անոնց մօտ ապրեցաւ լատին տարապետ իբր հոռետաղաւան քահանայ, ուր և մեռաւ շուրջ 1903-ին խոր ծերութեան մէջ: Կարողութենէ վուրկ մէկը չէր, բայց նանրախորհուրդ և բուռն կիրքերէ մղուած անպտուղ կեանք մը ունեցաւ, իր անտեղի դիտումներն իսկ չկրնալով գործադրել, այնպէս որ թերևս աւելորդ թուի ոմանց իր մասին այսչափ գրելնիս ալ, սակայն վրուցուած եղելութիւն մը չուզեցինք անյիշատակ թողուլ պատմութեանս կարգին, և կարևորը քաղեցինք ականատեսներու տեղեկութիւններէն:

2831. ՀԱՎԱՀԱՍՈՒՆԵԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Կաթոլիկ ազգայնոց խնդիրները թողուցինք սիւնհոդոսի գումարման և առանց արդիւնքի փակման, և եպիսկոպոսական խումբին Կ. Պոլիսէ Հռոմ մեկնելուն կէտին: Միայն մէկ եպիսկոպոս թողուած էր Կ. Պոլիս իբրև կաթողիկոսական փոխանորդ, և այն ալ Բարսեղ Գասպարեան եղած էր ազգայնականաց նպաստաւոր գաղափար և ընթացք ունեցող մը (2786): Գասպարեան գործին գլուխը անցած և սիւնհոդոսին մէջ տեսնուած ուղղութենէն Վօրացած, սկսաւ կաթողիկոսարանի մէջ իրաց և անձանց այնպիսի կարգադրութիւններ ընել, որ յարմար չէին Հասունի ուղղութեան, և հետևապէս սա պիտի չկարենար ներել անոնց շարունակութիւնը: Ուստի հապիւ թէ առաջին լուրերը Հռոմ հասան, փրոփականտայի գահերէցին կողմէն հրաման դրկել տուաւ Գասպարեանի որ անմիջապէս Հռոմ գայ ժողովին մասնակցելու, իսկ կաթողիկոսական փոխանորդութիւնը վարելու նշանակուեցաւ Անկիւրիոյ եպիսկոպոս Յովսէփ Առաքելեան, Հասունի բոլորանուէր հետևող մը, որ իսկոյն Հռոմէ ուղևորեցաւ և եպիսկոպոսական խումբին մեկնելէն երկու ամիս ետքը Կ. Պոլիս հասաւ՝ նոր 1870 տարւոյ առաջին օրերը, իսկ Գասպարեան անհակառակ հրամանին համակերպեցաւ: Առաքելեան կոնդակ մը ունէր Հասունէն իր անուանումը և բացարձակ իշխանութիւնը ծանուցանող, միանգամայն ազգայնական ուղղութեամբ հրատարակուած գիրքերը և լրագիրները դատապարտող և ընթերցումը արգիլող: Կոնդակը եկեղեցիներու մէջ կարդացուեցաւ 1870 յունուար 11-ին կիրակի օր, և Բերա, Օրթաքէօյ, Սամաթիա շփոթի և արարողութեանց խանգարումի և բողոքի աղաղակներու և Հասունն ու իր նոր փոխանորդը չճանչնալու յայտարարութեանց թատր եղած, մանաւանդ Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյ մէջ, ուր եկեղեցին պարպուեցաւ և պատարագը կիսակատար մնաց: Պատարագւորն էր Յովհաննէս վարդապետ Ծաղիկեան Անտոնեան միաբանութենէն, որ նուազեալ և ընկճեալ հապիւ աւանդատուն կրցեր էր ապաւինիլ, և անդ քանի մը աննպաստ խօսքեր ըսել կոնդակին և կոնդակագիրին մասին, և այս պատճառով նոյն երեկոյ Առաքելեանէ յանդիմանուեր և քահանայագործութենէ արգիլուեր էր, թէպէտ ինքն հրամանը անիրաւ և պատիժը ապօրէն ճանչնալով համակերպած չէր (70.ՄԱՍ.912): Շարժումը յարգի բոցի պէս անցնող բան մը չեղաւ, և ժողովուրդին մէջ արմատական միջոցներ ձեռք առնուիլ սկսան, միանգամ ընդ միշտ Հասունի ձեռքէն ապատելու. մէկ կողմէն իրենց միութիւնը կամրապնդէին, միւս կողմէն պարտապատշաճ դիմումներով Հռոմէ անոր հեռացումը կը խնդրէին: Յունուար 13-ին Օրթաքէօյի հասարակութիւնը համախումբ ժողովով յայտարարութիւն մը կը հրատարակէր (70.ՄԱՍ.957), կառավարութեան ալ դիմումներ կըլլային պետական օրէնքով ապահովուած իրաւունքնին պաշտպանելու (70.ՄԱՍ.959), և վերջապէս յունուար 25 կիրակի օր, Բերա Լալէ փողոց Համապգեաց ընկերութեան ժողովարանին մէջ ամէն կողմերէ և մեծ բազմութեամբ կը հաւաքուէին ընդդիմադիր հայ կաթոլիկներ, հասարակութեան մեծամեծները քիչ բացառութեամբ, քսանէ աւելի եկեղեցականներ, և հազարէ աւելի ընտանեաց գլուխներ, ու գրութիւն մը կը ստորագրէին, Յունուար 25-ի յայտարարութիւն

անունով ծանօթ, որով կը ծանուցանէին թէ կաթոլիկ են և կաթոլիկ կը մնան, բայց արևելեան եկեղեցւոյ ծէսն ու կանոնները կը պահեն, Հասունը չեն ընդունիր և Հասունի կուսակիցներէն կը բաժնւին (ԱՀԿ.17): Իրենց հասարակութիւնը կը կոչէին Արևելեան հայ կաթոլիկէ ազգ, թէպէտ ժողովուրդին բերանը ու գրութեանց մէջ ալ աւելի ընդունուեցաւ հակահասունեան յորջորջումը: Սոյն օրեր փետրուար 2-ին կը հանդիպէր Բերայի Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյ օծման տարեդարձը, և Առաքելեան լուր կը վրկէր թաղականին թէ կուզէ նոյն օր հանդիսաւոր պատարագ մատուցանել: Թաղական դիտողութիւն կընէ որ լաւագոյն կըլլայ ժողովուրդը չգրգռել, իսկ Առաքելեան մտիկ չընէր, և ջոկատ մը չհնուորներով եկեղեցին շրջապատել տալով պատարագ կը մատուցանէ, ուսկից մնաց սուինաւոր կամ սինկիլի պատարագ կոչումը: Իսկ ազգայնականք ինքզինքնին եկեղեցիէ վրկուած գտնելով Համազգեաց ժողովարանին մէջ խորան մը կանգնելով պատարագ կը մատուցանեն, նախապէս մեծ եպարքոսէ ստացուած արտօնութեան համաձայն (70. ՄԱՍ. 944): Հռոմի պապութիւնը տեսնելով որ կացութիւնը կը ծանրանայ և Առաքելեան ալ պիտի չբաւականանայ վայն զսպել, կը փութայ Կ. Պոլիս վրկել պապական նուիրակ Անտոն Բլուիմ արքեպիսկոպոսը (2786), ամէն եկեղեցական իշխանութիւն տալով անոր՝ հակառակողները արգիլելու և նվովելու և բանադրելու, որ և փետրուար 24-ին Կ. Պոլիս կը հասնի և իր իշխանութիւնը կը սկսի գործածել: Սակայն ընդդիմադիր հասարակութեան քահանաները փետրուար 28-ին յայտարարութիւն մը կը հասցնեն իրեն թէ համաձայն փետրուար 11-ի ժողովին մէջ հաստատուած համաձայնութեան (70. ՄԱՍ. 947) ինքզինքնին ի խղճէ պարտաւորեալ կը վզան անխնամ չթողուլ իրենց ժողովուրդը, և հակառակ ամէն հրամանի պիտի շարունակեն Հասունէ բաժնուած ժողովուրդին հոգևոր հոգածութիւնը կատարել (ԱՀԿ. 19): Միւս կողմէն կառավարութիւնն ալ սկսաւ ոյժ տալ ընդդիմադիր մասին, իբրզի անոնց պահանջը, որ պապական իշխանութեան ներքին գործերուն խառնուելուն դէմ կը բողոքէր, համաձայն էր կառավարութեան տեսութեանց. ուստի պաշտօնապէս Բերայի Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցին հակահասունեանց յատկացուեցաւ պետական հրամանով, և մեծաւորը փոխուեցաւ, արդէն Օրթաքէօյի ժողովուրդը ամբողջապէս ընդդիմադիր կողմէն ըլլալով իրենց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյն տիրացած էին: Մինչև այս բաժանումին հաստատուիլը, որովհետև Հասունի կողմնակից եկեղեցականներ ալ կային որ անոր անունին յիշատակութիւնը կընէին, ժողովուրդը խաղաղական միջոց մը գտած էր վայն արգիլելու: Ժամարարին յիշատակութիւնը սկսած ատեն ժողովուրդը միահամուռ և բարձրաձայն Գոհութիւն և փառաբանութիւն քարոզը կը սկսէր երգել առանց Հասունի անունին, և ժամարարին և սարկաւագաց յիշատակութեան ձայները կը խեղդէր: Ընդդիմադիր հանրութեան գործը օրէ օր կը վօրանար հակառակ Բլուիմի ճիգերուն, որ եկեղեցականները քահանայագործութենէ կը դադրեցնէր, ժողովուրդին բանադրանք կը սպառնար, մինչ հետզհետէ գաւառական քաղաքներէ ալ բազմաստորագիր յայտարարութիւններ կը հասնէին, որոնք Հասունէ և հասունեաններէ բաժնուելին կը ծանուցանէին, այնպէս որ շուտով Հասունի հետևողներ փոքրամասնութեան կը վերածուէին: Կառավարութիւնն ալ հայ կաթոլիկ հասարակութիւնը հակահասունեաններու վրայ ճանչցաւ, և թիչ ետքն ալ մարտ 13-ին վանոնք արտօնեց վարչութիւն մը կազմել, որ ընտրուեցաւ 15ին, և յատուկ կնիքն ալ ճանչցաւ իրենց ընտրած Արևելեան հայ կաթոլիկ անունի ներքև Տիրան պէյ Ալիքսանեան պաշտօնապէս նախագահ անուանուեցաւ, և 12 ժողովականներուն ամէնն ալ կաթոլիկ հասարակութեան նշանաւորագոյն մեծամեծներն էին:

2832. ՀՌՈՄԻ ՄԷՋ

Երբոր շարժումը այսպէս կը վօրանար Կ. Պոլսոյ մէջ և կը տարածուէր գաւառներու վրայ, հասարակութիւնը պատրիարք կամ եպիսկոպոս գլուխ չունէր, և գլխաւորութիւնը ստանձնած էր

ծերունի Յովսէփ վարդապետ Բիւրելեան՝ աւագերէց անունով, իբրև քահանայական խումբին նախագահ, որ երկար տարիներ Հասունի մօտ պաշտօն վարած, բայց անոր դարձուածները մօտէն տեսնալով վզուած և բաժնուած էր: Եպիսկոպոսներ բոլոր Հռոմ էին և յայտնի մասնակցութիւն չէին կրնար ունենալ, թէպէտև սիրտով համակիրներ կային, ինչպէս սիւնհոդոսին մէջ երևցած էր: Հեռուէն գործող Գապանձեան Սուքիաս եպիսկոպոսն էր Անտոնեանց աբբահայրը, որ ծածուկ միջոցներով հրահանգներ և քաջալերներ կը հասցնէր, արդէն շարժման մասնակցող եկեղեցականներուն մեծամասնութիւնն ալ Անտոնեան միաբաններ կը կազմէին: Բայց գործը մինչև վերջը ծածուկ չէր կրնար մնալ. փրոփականտ տեղեկութիւն ունեցաւ և սկսաւ Հռոմի մէջ Անտոնեանց Ս. Գրիգոր Լուսաւորիչ վանքը ճնշել, Աբբահայր Գապանձեան Սուքիաս եպիսկոպոսը և վանահայր Հանրմեան Սերոբէ վարդապետը պաշտօնէ դադրեցուց և շատին վանքերու մէջ փակուիլ հրամայեց լատին կրօնաւոր մը, և անոր չյաջողելնուն լատին եպիսկոպոս մը վանքի այցելու կամ վարիչ նշանակեց 1870 մարտ 12/24-ին, վանականք ընդդիմացան և մերժեցին, օսմանեան գրօջ պարսկեցին և իբր օտար ստացուածք տեղական միջամտութիւնը յանձն չառին: Դաւիթ Չրաձեան և Մաղաքիա Օրմանեան վարդապետներ ընդդիմութեան գլուխ և գործիչ կանգնեցան պապութեան ձգտումներուն դէմ մաքառող գաղղիացի և գերմանացի եպիսկոպոսներուն օգնութեանը դիմեցին, Կ. Պոլսոյ մէջ միաբաններուն և աշակերտներուն ծնողքը օսմանեան կառավարութեան բողոքեցին, Ֆիրէնցէի օսմանեան դեսպան Ռիւսթէմ պէյ Հռոմ եկաւ, և գաղղիական դեսպանատան ձեռնտուութեամբ պաշտպանութեան աշխատեցաւ, և վանականները Հռոմէ դուրս հանելու համար գաղղիական անցագիրներ ստացաւ, և այսպէս մաս մաս և վանական ճամբաներով միաբաններ և աշակերտներ Հռոմէ մեկնեցան, և մնացին միայն Գապանձեան և երկու վերոյիշեալ գործիչներ: Բայց անոնք ալ վագահին թէ ապահով չեն, ուստի երեքնին միասին լուելայն Հռոմէ մեկնեցան ապրիլ 19-ին կիրակի գիշեր և ուղղակի հասան Լիվօնօ, ուր Անտոնեանք եկեղեցի և վանատուն ունէին և ժողովրդապետ էր Աստուածատուր վարդապետ Սարըպետրոսեան: Բանի մը օր այնտեղ մնացին վստահելի տեղեկութիւններ քաղելու համար, և ճամբանին շարունակելով մայիս 11-ին հասան Վիէննա և 17ին Կ. Պոլիս, ուր արդէն ապրիլ 24 ին հասած էր Հռոմէ մեկնող միաբանութիւնը և Օրթաքէօյի վանատան մէջ վետեղուած: Անտոնեանց հասնիլը մեծ պատուով ողջունուեցաւ (70. ՄԱՍ. 974) և ոյժ և քաջալերութիւն ազդեց ընդդիմադիր հասարակութեան, որ արդէն բաւական կանոնաւոր դիրք առած էր, Ղալաթիոյ պատրիարքարանի և Բերայի հիւանդանոցին տիրացած էր, և ներքին գործերու գլուխ վարչութիւն ալ ունէր: Մնննոյն միջոցին 1870 ապրիլի մէջ օսմանեան կառավարութիւնը յետ քննութեանց ստուգելով թէ Հասունի տրուած պատրիարքական հրովարտակը ապօրինի կերպով ձեռք ձգուած է (2784), վայն յետս կոչեց և Հասունի պատրիարքական իշխանութիւնը դադրեցուց (70. ՄԱՍ. 963): Իբրև հակահասունեանց յաջողութիւնը կասեցնելու միջոց, մայիս 24-ին բանադրանքի կոնդակ մը հրատարակուեցաւ բողոքող հասարակութեան դէմ Բլուիմէ արձակուած, բայց նոյն աւուր Բերայի ահագին հրդեհը վայն մտադրութենէ վրիպեցուց, և Ամբրոսիոս Մաղաքեան, պարսաւագիրքին առթիւ խօսուած վարդապետը (2663), որ նոյն առտու կոնդակին յաղթապանձ ընթերցողն էր եղած, աւերակներու մէջ այրած գտնուեցաւ: Բիչ օր ետքը Կ. Պոլիս հասաւ նաև Յակոբոս Պահտիարեան Տիարպէթիի եպիսկոպոսը, որ իր քարտուղարին վրայ Հռոմի պաշտօնեաներէն գործածուած բռնութենէն ցաւելով մեկնած էր: Եւ իբր վերջապէս 1870 յուլիս 6/18-ին Վատիկանեան ժողովի մէջ պապին անսխալականութիւնը հաւատոյ մաս հռչակուեցաւ, և եպիսկոպոսներ ալ սկսան ցրուիլ. Կ. Պոլիս եկող եպիսկոպոսներէն Իգնատիոս Ղալըպձեան և Բարսեղ Գասպարեան յայտնապէս

ընդդիմագիր հասարակութեան յարեցան, որ այս կերպով իրեն գլուխը չորս եպիսկոպոսներ ունեցաւ, և եկեղեցական նուիրապետութիւն ալ կազմակերպելու դիւրութիւն ստացաւ:

2833. ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՅ ԲԱՆԱԴՐԱՆՔԸ Բայց կազմակերպութեան առաջին քայլը կառավարութենէ ճանչցուած պատրիարք մը ունենալն է, և այս նպատակով մասնաւոր և ընդհանուր դիմումներ կըլլային շարունակ, և յուլիս 22ին և սեպտեմբեր 14-ին հասարակութիւնը շոգենաւներ ալ լեցնելով եպարքոսական ապարանքը գացած էր, իսկ եպարքոս Ալի փաշա միշտ յուսադրելով վերջնական որոշումը կուշացնէր: Հասուն և Բլուիմ իրենց աննպաստ ելքի մը առջևն առնելու դիտմամբ, որոշեցին անհատական ճնշումներ բանեցնել եկեղեցականաց վրայ: Հոկտեմբեր 6/18-ին Բլուիմ ստորագրութեամբ անհատական ազդարարութիւններ ուղղեցին չորս եպիսկոպոսներու և 42 վարդապետներու տասն օրուան պայմանաժամի մէջ ստորագրել հաւատոյ դաւանութեան առաջարկեալ բանաձևը, առանց որոյ պիտի դատապարտուէին իբրև իսկապէս հերձուածողս և վասնորոյ բաժանեալս ի կաթողիկէ եկեղեցոյ (ԱՀԿ. 21): Ազդարարութիւնը ընդունողներն ժողովի գումարուեցան և միաձայնութեամբ որոշեցին մերժել և պատասխանել, խմբագրութիւնը իտալերէն և հայերէն ըլլալու պայմանով յանձնեցին Օրմանեան վարդապետին, և ամսոյն 14/26-ին կրկին գումարուելով տասն օրը չլրացած պատրաստուած պատասխանը ստորագրեցին 43 վարդապետներ և Բլուիմի հասուցին (ԱՀԿ.3-15): Իսկ չորս եպիսկոպոսներ անմիջապէս չպատասխանեցին, բայց Բլուիմ անոնց դէմ ալ գործադրեց իր սպառնալիքը, և բանադրանքի կոնդակը կարդալ տուաւ հոկտեմբեր 23/4 նոյեմբերին յանուանէ յիշելով 4 եպիսկոպոսներ և 45 վարդապետներ: Թիւերուն տարբերութիւնը մեկնելու համար աւելցնենք, թէ Բլուիմէ ազդարարուած 42-ներէն երկուքը բացակայ էին Կ. Պոլիսէ և չէին ստորագրած, իսկ երեք ալ նոր աւելցած էին, և բացականեր ու յաւելեալներ հաւասարապէս յիշուեցան բանադրանքի կոնդակին մէջ, և այսպէս լրացաւ 45 թիւը: Առաջարկեալ հաւատոյ դաւանութեան պարունակութեանը գալով, բացարձակ և անպայման ընդունելութիւն կը պահանջէր Փլորինտեան և Վատիկանեան ժողովներու վճիռներուն և Ուրբանեան դաւանութեան, և պապին իշխանութիւնը ճանչնալ ոչ միայն հաւատոյ և բարուց, այլ և բարեկարգութեան ու կառավարութեան կէտերուն մէջ, ոչ միայն եկեղեցիներու՝ այլ և իւրաքանչիւր անհատի վրայ, և հաւատոյ մասերուն կարգին կը յիշէր փրոփականտայէ տրուած վանապան հրամանագիրներ, և կը պահանջէր դատապարտել և մերժել ինչ որ այս դրութեան հակառակ իւրաքանչիւրէն կամ ուրիշներէն ըսուած կամ գրուած են: Պատասխանի թուղթին մէջ քահանայք կը յայտարարէին թէ հասարակութեան մէջ յուզում պատճառողը Հասունն է, թէ ինքն Բլուիմ ալ, այդ կէտը ուրիշ անգամ ճանչցած և հաստատած է, թէ իրենց հիմադիրը կամ յունուար 25-ի յայտարարութիւնը հաւատքի հակառակ բան չի պարունակեր, թէ պահանջածնին արևելեան իրաւանց և բարեկարգութեան պահպանութիւնն է, թէ Հասունեանի դէմ ըլլալ հաւատոյ դէմ ըլլալ չէ, թէ Փլորինտեան ժողովը արևելեան իրաւանց պահպանութիւնը վճռած է, թէ Վատիկանեան ժողովը այվ վճիռը փոխած չէ, թէ փրոփականտայի հրամանագիրներ հաւատոյ դաւանութեան մէջ մտնելու բաներ չեն, և կը կնքեն ըսելով թէ Բլուիմ սպառնացած վճիռն արձակելու իրաւունք և հիմ չունի, և եթէ արձակէ՝ վճիռի կերպարանք կըլլայ ըրածը և ոչ իրական վճիռ: Բլուիմէ բանադրողը 45 վարդապետներէն 18 Անտոնեան էին, 12 Վենետկոյ Միսիթարեան, 5 Ջմմառեան աշակերտութենէն, 2 փրոփականտայի աշակերտներէն, և 8 աշխարհական ըսուած ոչ-միաբաններէն, թէպէտ ասոնց չորսը Անտոնեաններէ, Վենետիկեաններէ և Ջմմառեաններէ անջատուածներ էին: Իսկ 4 եպիսկոպոսներէ Գապանձեան միայն Անտոնեան էր, իսկ Ղալըպձեան և Պահտիարեան և Գասպարեան Ջմմառի աշակերտութենէն էին: Եպիսկոպոսներ իրենց յայտարարութիւնը հրատարակեցին հոկտեմբեր 29/10 նոյեմբերին Բլուիմի

բանադրանքը հռչակուելէն ետքը, և իբր կոնդակ ուղղեցին հայ կաթողիկ հաւատացելոց՝ քննադատելով Բլուխի առաջարկած կէտերը, ապօրէն ցուցնելով անոր պահանջը, ժողովուրդը պոռնակաբար ցուցնելով սխալ գրութիւններէ, և քաջալերելով չխաբուիլ անհիմն սպառնալիքներէ և ապարդիւն վճիռներէ (Ա.Է.Գ.3-7): Թերևս Հռոմ և Հասուն և Բլուխ մեծ կարևորութիւն տուած և մեծ յոյսեր գրած էին իրենց արձակած բանադրանքին վրայ, սակայն բնաւ պղծութիւն դգործեց, ոչ եկեղեցականներէն և ոչ աշխարհականներէն ետ կեցող մը չեղաւ, մանաւանդ թէ աւելի վայրացուց սիրտերը, զի բոլորովին օտարոտի կէտեր հաւատոյ կէտեր կը դառնային և հաւատոյ կերպարանին ներքև կը դրուէին, և նենգամիտ և սխալ կերպով յաջողութիւն պատրաստել կուզուէր:

2834. ՀԱՎԱՀԱՍՈՒՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

Սակայն հասարակութեան փափաքն և իր գոյութեան պատրիարք մը ունենալն էր, որուն համար պետական արտօնութեան պէտք կար և այն տարապայման կերկարէր, զի կառավարութիւնը պէտք ունէր կաթողիկ պետութիւնները և առհասարակ եւրոպական պետութիւնները վշտացուցած չըլլալ: Երբոր պետականը կը յապաղէր գոնէ հնարաւորը ունեցած ըլլալու համար չորս եպիսկոպոսներ 1871 տարուոյ յունուարին վերջերը կոնդակաձև շրջաբերական մը հրատարակեցին, որուն մէջ պատճառաբանութեամբ կը պաշտպանէին Հասունի ձեռք ձգած կաթողիկոսութեան անվաւեր և չեղեալ ըլլալը, և կաթողիկոսական աթոռոյ պարապութիւնը կեպրակացնէին: Ասոր վրայ ազգայինները հրաւիրեցին ընտրելեաց ցուցակը կազմել, և 1871 փետրուար 12-ին եռանուն ցանկը կազմուեցաւ չորս եպիսկոպոսներէն երեքին անուններով, ի բաց թողլով Ղալըպճեանը, որուն տարիքն ու տկարութիւնը չէին ներել այլ ևս գործունեայ դեր վարել, 13-ին եպիսկոպոսներ և եկեղեցականաց գլխաւորներ ժողովով ընտրեցին Պահտիարեան Յակոբոս եպիսկոպոսը, և հանդիսական օրհնութեամբ և Ղալըպճեանի նախագահութեամբ, Յակոբոս Պետրոս Թ. անունով կաթողիկոս հռչակեցին, իբր անգոյ ըմբռնելով Հասունի առած Անտոն Պետրոս Թ. անունը: Կացութիւնը ևս քան վաս վօրացնելու համար կորոշէին եպիսկոպոսներ ալ աւելցնել և մարտ 7-ին եպիսկոպոսական ձեռնադրութիւն կընդունէին Յովսէփ Բիւրէլեան աւագերէցը կամ նախագահ վարդապետը (2832), Մովսէս Ամպէրպոյեան Վենետկոյ Միսիթարեաննէն, Եղիշէ Թէոդոսեան Անտոնեաններէն, և Սերովբէ Դաւիթեան Չմմառի աշակերտութենէն, այն որ կանուխէն տեղապահ էր ընտրուած (2782): Նոյն տարուոյն վերջերը կը ձեռնադրուէր նաև Յովհան Բիւրէլեան դարձեալ Չմմառի աշակերտութենէն, և կաթողիկոսէն վատ հասարակութեան գլուխ կը գտնուէին ութը եպիսկոպոսներ: Անցեալ 1869 տարուոյ Սիւնդոսին մասնակցող եպիսկոպոսներէ ուրիշներ ալ կային որ սիրտով համակիր էին շարժումին, բայց գաւառները գտնուելնուն և Հռոմի նպաստներուն կարօտ ըլլալնուն չէին համարձակեր ինքզինքնին յատնել: Ինչ ալ ըլլար կացութիւնը, կառավարութենէ ճանչցուած պատրիարքը դեռ չկար անընդհատ էին ընտրութեան արտօնութիւն ստանալու դիմումները, բայց նպատակին չէին հասնէր, եպարքոսին կողմէն շարունակ յուսադրութիւն բայց ոչ երբէք գործադրութիւն կը ստանային: Վերջապէս ակնկալեալ օրը կը ծագէր 1872 մայիս 1-ին, և երկու կողմէն բազմաթիւ ներկայացուցիչներ բարձրագոյն դուռ հրաւիրուելով իրենց կը կարդացուէր կայսերական հրամանագիրը, որ կը յայտարարէր թէ պապին Ռէվէրսուրուս կոնդակին համաձայն պատրիարք ընտրուիլը հայ կաթողիկ հասարակութեան ի վեր ունեցած իրաւանց հակառակ է եղած, և Հասունի անուանումը իբրև ոչինչ և չեղեալ կը նկատուի, և նոր ընտրութիւն կը հրամայուի, ի բաց առեալ Հասունեանը և կայսերական կառավարութեան վստահութիւնը չստացող որ և է անձինք: Հակահասունեանք հասունեանց ալ հրաւէր ուղղելով մայիս 4-ին Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյ մէջ կը հաւաքուին և Յովհան Բիւրէլեան

Եպիսկոպոսը պատրիարք կընտրեն, Հասունեանք ալ առանձինն հաւաքուելով, բայց նուազ բազմութեամբ, կընտրեն Պետրոս Թիլքեան Եպիսկոպոսը, և Բարձրագոյն Դուռը կը բողոքեն թէ բանադրեալ մի պատրիարք չեն կրնար ընդունիլ: Ասոր վրայ Եպարքոսէն նոր և ընդհանուր ընտրութիւն կը հրամայուի Ղալաթասէրայի պետական շէնքին մէջ և պետական պաշտօնէի ներկայութեամբ, ուր մայիս 7-ին 1200 ներկայացողներէ 1193 ի քուէով դարձեալ Յովհան Բիւրէլեան կընտրուի, տեղեկագիրը կը կազմուի, և կառավարութեան կը ներկայացուի (72. ՄԱՍ. 1235) ընտրութիւնը շուտով կը հաստատուին և ընտրեալը 13-ին կայսեր ներկայանալով (72. ՄԱՍ. 1237) գործի կը ձեռնարկէ ի մեծ ուրախութիւն արևելեան հայ կաթողիկ հասարակութեան: Անցողիկի յիշենք թէ այդ որոշման ժամանակակից է Պուլղարներուն ալ Յունաց պատրիարքարանէն բաժնուելուն որոշումը:

2835. ՀԱԿԱՀԱՍՈՒՆԵԱՆՅ ՏԿԱՐԱՆԱԼԸ

Նոր պատրիարքի հաստատութեամբ կառավարութենէն ճանչցուած կաթողիկ ազգութիւնը, որ այլևս հայ կաթողիկ կոչուիլ սկսած էր, արևելեան կաթողիկներու կամ հակահասունեաններու ձեռք անցաւ, և հասունեաններու կը մնար անոնց դիմել իրենց պաշտօնական գործառնութեանց համար սակայն ուժգնութեամբ կը դիմադրէին դաւանական տարբերութեան և կրօնական խիղճի խնդիր պատճառելով: Կառավարութիւնը կացութիւնը պարզելու նպատակով որոշեց Հասունը մայրաքաղաքէն հեռացնել, որ և պարտաւորուեցաւ 1872 յուլիս 9-ին Կ. Պոլիսէ մեկնիլ Հռոմ երթալու համար: Բայց ասով ալ հասունեանց բողոքը չվերջացաւ, կառավարութիւնը քրիստոնեայ անդամներով յանձնաժողով մը կազմեց 1874 յունուարի մէջ որոշման մը յանգելու համար (74. ՄԱՍ. 1434), և վերջապէս Հասունի թաքըմը անունով բաժին մը կազմեց (74. ՄԱՍ. 1501), և անոնց յատուկ դիւանի կամ ազգապետարանի մը ձևը ստեղծեց՝ Բուլանդ Թնկրեան Էֆէնտիի գլխաւորութեամբ, ինչպէս որ հակահասունեանց ըրած էր Հասունք ճանչնայ չուլած ատեննին, և Արևելեան կաթողիկաց պաշտօնատուն մը կազմած էր (2831): Ըստ այսմ հայ կաթողիկ փոքրիկ հասարակութիւնը երկուքի բաժնուած մնաց, և այնպէս շարունակեց բաւական տարիներ: Պատրիարքութիւնը ձեռք անցուցած ըլլալով՝ գաւառական առաջնորդներու վրայ ալ ձեռք կրցան դնել երևելեաններ, և նոր առաջնորդներ որոշեցին և հրովարտակով պօրացած գաւառներ ղրկեցին: Իսկ արդիւնքը ամէն տեղ նոյն չեղաւ. կային քաղաքներ ուր հակահասունեանք, և քաղաքներ ուր հասունեանք պօսարաւորագոյն էին, և մայրաքաղաքին մէջ տիրող բաժանումը ամէն տեղ ալ կը ճշմարտուէր: Նոր կազմակերպութեան մը ծագումն ու պարագաները բացատրելու հարկին ներքև քիչ մը աւելի ընդարձակուեցանք այս եղելութեանց վրայօք. այսուհետև փոքրիշատէ կայուն վիճակ մըն է որ շարունակեց կաթողիկներու գործերուն մէջ, որոնց մանրամասնութեանց մտնելու հարկ չենք տեսներ: Սակայն ուր արտաքնոց դէմ մրցումները կը դադրին, ներքին պառակտումներ կը սկսին երևան գալ, և այսպէս սկսաւ ըլլալ հակահասունեանց կացութիւնը: Եկեղեցական դասակարգին կազմութիւնը ցուցուցինք արդէն (2833) թէ Անտոնեանք էին ստուարագոյն տարրը կազմողներ, և այս աւելի ևս շեշտուեցաւ երբոր Վենետիկի վանքը Հռոմի բռնադատութեանց առջև ստիպուեցաւ զինքն հակահասունեանց հակառակ յայտարարել, և իր միաբաններէն հակահասունեանց կողմը եղողները հետզհետէ վանք դարձնել և իրենց ուղղութենէն հրաժարեցնել, այնպէս որ միաբանական խումբը հետզհետէ Անտոնեանց վրայ ամփոփուեցաւ: Վիեննականներ առաջի օրէն Հասունեանց կողմն էին, և իրենցմէ երկուքն միայն Ղուկաս Տէրտէրեան և Կղեմէս Սիպիլեան հակահասունեանց կողմակից գտնուեցան բայց գործունեայ դեր չստանձնեցին: Անտոնեանք այս կերպով հակահասունեան մարմինին վարիչներ ըլլալու գիրք կառնէին, և իրենց մէջ ամենէն ցայտուն դէմքը Սուքիաս Գալանձեան արքայապետն էր:

էր որ իսկապէս այդ նպատակին կը ծառայէր. բայց իրեն դէմ մրցակից գտաւ Գրիգոր Էնֆիէճեան վարդապետը Չմմառեան աշակերտութենէն, որ պատրիարքական իշխանութիւնը Գապանճեանէ հեռացնելու համար Յովհան Բիւբէլեան իր հայրենակիցն ու միաբանակիցը, լոկ հետևող ըլլալու կարող անձը, ձեռք առած էր պատրիարքական ընտրութեան օրէն, երբ սկսաւ մրցակցութեան պայքարը: Էնֆիէճեանի պաշտպանն ու հովանաւորն էր հասարակութեան մեծամեծներէն Յակոբ Կէօշէեան, անձամբ ու դրամով այդ նպատակին նուիրեալ, որ սակայն ընդհանուր կացութեան ոչ թէ ոյժ՝ այլ տկարութիւն կը պատրաստէր անձնապահ ուղղութեամբ: Պատրիարքական ընտրութիւնը հակահասունեանց յաջողութեան վառիվերնի գագաթնակէտը եղած էր, անկէ անդին ձախողութեան վառիվայրը սկսաւ: Անգամ մըն ալ որ այդ պարագաներ հասարակութեան մուտք գործեցին, անմիջապէս սկսան տկարանալու նախաքայլերը, մանաւանդ որ հասարակութեան գոյութիւնն պարզ և յստակ գաղափար մըն ալ չէր պարունակեր: Կաթոլիկութիւնը պապականութիւն կոչուած է յաճախ, և տիրապէս պապի և պապութեան պաշտելութիւնն է իր իսկութիւնը հակառակ կաթոլիկութիւնը իր էութիւնը կը կորանցնէ, և դժուարին է որ հաստատուն կացութեան տիրանայ: Հակահասունեանք երբոր պապին հակառակ յայտարարութիւններ կըննէին, և արևելեան եկեղեցւոյ իրաւունքներուն պահպանութիւնը ու պաշտպանութիւնը կը վարէին նոյն իսկ պապին վճիռներուն և բանադրանքներուն հակառակ, պէտք է մտածէին թէ կտրած է այն ակնկալութիւնը, զոր պահ մը ունեցան պապութիւնը իրենց տեսութեան համաձայնեցնելու: Այս ակնկալութեամբ օրօրուած ատեննին էր որ ջերմ կաթոլիկ երևնալու ճիգեր կը թափէին, և կը զգուշանային ամենէն պլտիկ ցոյցէ որ իրենց դիտած միակ կէտէն դուրս կաթոլիկական ըմբռնումին դէմ ըլլար: Երբոր Գերմանիոյ Հին կաթոլիկեայք հակահասունեաններէ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ուզելու եղան, ասոնք զլացան, պապին հակառակ գործած չըլլալու համար: Մինչև իսկ երբոր Հայոց պատրիարքարանին կողմէ առաջարկութիւն եղաւ հակահասունեան իշխանաւորներէն և հանրութեան յարգած ազգայիններէ Տիւլեան Պօղոսի յուզարկաւորութիւնը եկեղեցականապէս պատուելու, հակահասունեանց պատրիարքարանը փախուստ տուաւ հերետիկոսներու հետ ի հոգևոր հաղորդակցութեան մէջ գտնուած չըլլալու համար: Ուրիշ պարագայ մըն ալ որ ներքին տկարութեան առաջնորդեց՝ դրամական անձկութիւնն էր: Ունևորներ սկսած էին ծախքերէ ձեռք քաշել, հասարակութիւնը պատրաստ կամ դիւրին հասոյթ չունէր գործեր առանց դրամի չէին կրնար կայուն մնալ, և Յակոբ Կէօշէեան որ դրամը չէր խնայեր, հանրայինէն աւելի կուսակցական շահերը կը մշակէր: Ահա թէ ի՞նչպէս հակահասունեանութիւնը հետզհետէ դէպի տկարութիւն, և տկարութենէ դէպի քայքայում յառաջեց: Բայց որովհետև տասնեակ տարիէ մը ետքը ճշմարտուեցաւ այդ վախճանը, մենք դառնանք Հայոց պատրիարքարանի գործերը պատմել Խրիմեանի հրաժարելէն սկսելով:

2836. ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Նոր ընտրութեան անցնելու համար նախապատրաստութիւններ անհրաժեշտ էին, որով միջանկեալ խնդիրներու դուռ կը բացուէր, և այս անգամի մեծ խնդիրը նոր պատրիարքին դիրքը վերաքննութեան հետ հաշտեցնելն էր, և անոր ընելիք ուխտին առարկան ճշդել զի միշտ խնդիրի նիւթ կը մնար, թէ ի՞նչպէս հնար է ուխտ ընել կանոնի մը պահպանութեան որ հաստատուն չէր և պիտի փոխուէր: Այդ մասին յայտնուած տարբեր կարծիքները, և մինչև վերաքննութեան լրումը առանց պատրիարքի մնալուն անտեղութիւնը, խորհրդակցութեանց և խօսակցութեանց, լրագիրներու և ժողովներու նիւթ եղած էին, երբ տեղապահ Նիկողայոս եպիսկոպոս Աղասեան անակնկալ կերպով թեթև անպգուշութենէ մը ծանր հիւանդութեան հանդիպելով կը վախճանէր 1874 փետրուար 11-ին, տակաւին 48 տարեկան, և 1873 նոյեմբեր 27-ի ընտրութենէն (2828) միայն

երկուքուկէս ամիս ետքը: Նոր տեղապահի ընտրութիւնը փութով լրացաւ, և շաբաթէ մը արդէն գործի գլուխ կը գտնուէր Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան ընդհանուր համաձայնութեամբ ընտրուած (74.ՄԱՍ.1498-1499), միայն մշտատև ընդդիմադիրներէն կժու դիտողութիւններով ողջունուած, որոնք Ներսէսը հրաժարականի կը մղէին մարտ 2-ին (74.ՄԱՍ.1504) ընտրութենէն երկու շաբաթ ետքը: Բայց բարեկամներու միջամտութեանց անսալով պաշտօնը կը շարունակէր և նոր ընտրութիւնը փութացնելու կաշխատէր: Պետական արտօնութիւնը կը ստացուէր մարտ 16-ին (74.ՄԱՍ.1510), 19-ին համագումարը ընտրելեաց ցուցակը կը կազմէր 15 անուններով, և 20-ին քաղաքականը հնգանուն ցանկը կը պատրաստէր գլուխը դնելով Ներսէսը, և յաջորդաբար Յարութիւն Վեհապետեան Կարնոյ, Մեսրոպ Սուքիասեան Եգիպտոսի, Արիստակէս Դերձակեան Գաղատիոյ, և Խորէն Աշգեան Արմաշու առաջնորդ եպիսկոպոսները: Վերև յիշուած ընդհանուր վէճեր, և մարտ 31-ին հանդիպող Զատկի տօնը յապաղեցին ընտրողական գումարումը մինչև որ քաղաքական ժողովը կառաջարկէր և կապահովէր ընտրութիւնը կանխել, վերաքննուած յօդուածները հաստատութեան ներկայել և վերաքննութեան լրումը փութացնել, մանաւանդ որ առանց հաստատուած պատրիարքի հնար ալ չէր այդ բաները գործադրել: Իբրև միջանկեալ գործեր այդ օրերուն մէջ՝ համագումարը կը հաստատէր Աղթամարի Խաչատուրին կաթողիկոսութեան ծիսականապէս վաւերականութիւնը, և կայսերական պահանջին վրայ կորոշուէր Պէշիկթաշի գերեզմանատան քարերը ծածկել և ծառերով պարտեպի վերածել, Երլտըզի հովանոցին աչքին առջէն տխուր տեսարանը հեռացնելու համար: Վերջապէս ապրիլ 26-ին Երևման խաչին նախընթաց ուրբաթ օր, ընտրութիւնը կը կատարուէր, և 67 ներկաներէն 3 ձեռնպահ, և 4 ցրուեալ քուէներու դէմ՝ 60 քուէով պատրիարք կընտրուէր Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան: Ներսէս նախընթացաբար և գրաւոր կերպով խնդրած էր իր անունը վերցնել ընտրելեաց ցուցակէն, և աւելի քան սովորական եղող անարժանութեան և անբաւականութեան պատճառէն առջև կը դնէր իր վտանգեալ առողջութիւնը, որ չէր ներեր ծանր բեռներու ենթարկուիլ (74.ՄԱՍ.1525): Իրաւ ալ անդստին այն ժամանակէ Ներսէսի վրայ յայտնուած էր չաքաբախտի հիւանդութիւնը, որուն համար ըզգուշաւոր և կանոնաւոր կենցաղ վարելու ստիպուած էր, և արտաքին մարզանքներով ախտին վայրանալը արգիլելու կաշխատէր բժիշկներու կարգադրութեամբ ինչ որ դիւրին պիտի չըլլար շարունակել պատրիարքութեան մէջ: Ընտրողական ժողովն ալ նկատի կառնէր այդ պարագայն և կորոշէր ազատ օրեր թողուլ իր առողջութեան համար, այնպէս որ ընդհանուր վարչութեամբ միայն վբաղի, և առօրեայ և առձեռն գործերը փոխանորդով կատարել տալ: Ամէն կողմէ ստիպումներ ընտրութենէ ետքն ալ յաճախեցին, մայիս 6-ին պետական հաստատութիւնը կը ստացուէր, 8-ին ուխտը կը կատարէր պարտուպատշաճ բացատրութիւններով և ազդու յորդորներով, և նոյն երեկոյ Ազգային Հիւանդանոց երթալով, 9-ին Համբարձման տօնին տարեկան հանդէսը կը կատարէր, և հաստատութեան ամէն կողմերը աչքէ կանցունէր (74. ՄԱՍ.1530): Իսկ կայսերական հրովարտակը 1875 յունուար 17-ին ստացուեցաւ (75.ՄԱՍ.1639-1640): Ուխտէն ետքը 1874 մայիս 25 ին կայսեր կը ներկայանար և գործելու կը ձեռնարկէր (74. ՄԱՍ.1536), գլխաւորապէս կը ջանարր վանապան կուսակցութիւնները իրարու մօտեցնել, և այդ նպատակով անոնց 12 գլխաւորները յունիս 11-ին բարեկամական հացկերոյթի կը հրաւիրէր և համերաշխութեան բաժակներ պարպել կու տար (74. ՄԱՍ. 1548): Ներսէսի ընտրութիւնը հեռուներէ ալ հաճութեամբ ողջունեցաւ Երուսաղէմ և Սիւս և Էջմիածին փութացին իսկոյն խնդակցութիւննին հեռագրել, և Գէորգ կաթողիկոս սիրտի վեղմամբ կոնդակ մըն ալ գրեց յուլիս 16-ին (ԻԶՄ. 176-189) որուն մէջ Կ. Պոլսոյ պատրիարքին կը յայտարարէ, թէ աջ մեր էք այդր

և բազուկի միջի հոգևոր հօտին մերոյ, միանգամայն և փոխանորդ մեր յաթոռակալութեան պատրիարքական իշխանութեանդ (ԻԶՄ. 182):

2837. ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐԶ

Ներսէս Վարժապետեանի նախընթացը պատմած ենք արդէն (2733) ուսկից կը հետևի թէ 37 տարեկան էր պատրիարք ընտրուած ատեն: Ջանապան առիթներու մէջ ալ բացատրած ենք իր կեանքին գլխաւոր կէտերը, եպիսկոպոսանալու պարագայն, կեդրոնին մէջ գործունէութիւնը, ժողովական և յանձնաժողովական պաշտօնները, կաթողիկոսական ընտրութեան պատուիրակութիւնը, Էջմիածնի եպիսկոպոսաց դասակարգին անցնիլը, այնպէս որ մեր ընթերցողներուն համար կատարելապէս ծանօթ դէմք մըն է նա, և նորէն ներկայելու պէտք չունինք: Միակ բան մը որ կրնանք այստեղ աւելցնել, Եգիպտոս քննիչ երթալն է, 1865-ին, Մեսրոպ Սուքիասեան եպիսկոպոսի գործոց քննութեան համար: Նոյն տարին օգոստոս 29-ին վախճանած էր Կարապետ Շահնապարեան Վարդապետը, իր ժառանգութիւնը, որ 1000 օսմանեան ոսկւոյ կը հասնէր, կտակելով մինչև 4000 աճեցնել և անով Կիլիկիոյ մէջ վարժարան մը հաստատել, կտակակատար կարգելով Նուպարեան փաշան և կտակը յանձնելով Ներսէս եպիսկոպոսին ձեռքը: Բարեդէպ զուգահիսութիւն եղաւ Ներսէսի Եգիպտոս ուղևորիլը, ուր ոչ միայն կտակը կտակատարին կը յանձնէր, այլև պայն կը համոզէր բարեգործութեան իրականացումը չյապաղել, և իր հանգուցեալ եղբոր Առաքել Նուպարեանի ժառանգութենէն նշանակուած աճումը իրականացնել, և վարժարանը անմիջապէս Կ. Պոլսոյ մէջ բանալ, Կիլիկեցւոց համար յատուկ վայելք մը սահմանելով: Նուպարի բարեացակամութեամբ և Ներսէսի ջանքով Շահնապարեանի կամ քը կը պսակուէր, և 1866-ին Խասքէոյ թաղը Չըքսալըի գագաթը սեփական շինութեան մէջ կը բացուէր Նուպար -Շահնապարեան Վարժարանը, որուն խնամակալութիւնն ու տեսչութիւնն ալ պահ մը ինքն Ներսէս անձամբ կը կատարէր մինչև ազգային ձևի մը վերածուիլը: Նուպար-Շահնապարեան Վարժարանի վարգացումն ու համբաւը և իր բազմաթիւ սաներուն գովանի արդիւնաւորութիւնը ծանօթ են ազգին մէջ, և բացատրութեան պէտք չենք վզար, միայն պիտի ըսենք թէ Ներսէսի ջանքն ու աշխատութիւնը պսակած է Շահնապարեանի վերջին փափաքը, և Նուպարեանց բարերարութիւնը, և այս ալ իր անունին փառաւորութեան փաստերէն մին եղած է: Մեծ էր Ներսէսի անձին վրայ գրուած ակնկալութիւնը ազգին խոհականագոյն և մեծագոյն մասին մէջ, թէպէտ խեթիւ կը նկատուէր ընդդիմադիր կուսակցութեան փոքրամասնութենէն, որ կրնար աղմուկ յուլել, ինչպէս ամէն ընդդիմադիր խումբերու սովորական է, բայց ոչ արգասիք և արժանիք նուազեցնել: Ամէն առիթներու մէջ Ներսէսը առջև քշելու ջանքեր տեսանք, որուն Կիլիկիայէ եպիսկոպոսական ձեռնադրութիւն առած ըլլալը, իբր արգելք կը նկատուէր, զոր վերջապէս հեռացնել յաջողած էր 1872ին Էջմիածին երթալովը (2821), և Կ. Պոլսոյ եպիսկոպոսական խումբին մէջ օտար տարր մը կարծուիլը վերջացուցած: Ներսէս, կրնանք ըսել համարձակ, ժամանակին եկեղեցականութեան ցայտուն դէմքն էր, Կերպարանով և բնաւորութեամբ համակրելի, դաստիարակութեամբ և ուսմամբ իր կարգակիցներէն գերազանց, աշխատութեան մէջ անխոնջ, գաղափարներով լայնախոհ և օրնաւոր սահմանի մէջ ապտամիտ, ազգասիրական և եկեղեցասիրական զգացումներով նշանաւոր խօսակցութեամբ համեղ, ատենաբանութեամբ ազդու, դժուարութեանց դէմ արի, հնարիմացութեանց մէջ ճարտար, մէկ խօսքով կատարեալ անձնաւորութեան մը տիպար: Միակ անձը որ կրնար զինքն համակշռել Խորէն Գալֆայեանն էր, եթէ իր առաւելութեանց և արժանեաց մէջ թեթևամտութենէ և ունայնասիրութենէ, և ոչ միայն եկեղեցականի այլև լուրջ աշխարհականի անյարմար եղող կանացի հտպտանքներէ ազատ եղած ըլլար: Նոյն իսկ իր ընտանեկան ազգանունը թողլով Նար-Պէյ մականունը առնելը, իբր թէ

Եգիպտացի իշխանապունի մը սերունդ եղած ըլլար, և քիչ ետքը ապգային պատուիրակութեամբ Բեդրպուրկ երթալուն առթիւ Նար-Պէյն ալ Լուսինեանի փոխարկելով արքայապուն իշխան կարծուելու թեկնածութիւնները, փոխանակ զինքն բարձրացնելու հասարակաց կարծիքին առջև ապտիկցնելու ծառայեցին, և իր բուն նպատակին ապգային և եկեղեցական շրջանակին մէջ աւելի բարձրանալուն արգելք եղան: Ներսէսի պատրիարքութեան սկիչքը յուլիս 5-ին (74.1553) Խորէն ալ կրօնական ժողովոյ ատենապետ եղաւ, և երկուքն ալ զիրար գործածելով յաջողեցան համերաշխ ընթացք պահել: Ներսէսի պատրիարքական գործունէութեան գլխաւոր պարագաները հետզհետէ պիտի պատմենք, բայց կանխաւ ընդհանուր գաղափար մը տալու համար ըսենք, թէ իննևտասներորդ դարուն միակ պատրիարքն եղաւ, որ աթոռի վրայ վախճանեցաւ տասնամեայ պաշտօնավարութենէ ետքը, թէպէտ յաճախ ընդհատելով անցաւոր հրաժարականներով և հիւանդութեան պատճառներով: Հրաժարականներն իրեն զէնքն էին, բայց նեղսրտութեան ալ արդիւնք էին, զոր ի բնէ ունէր, սակայն հիւանդութիւնն ալ աճեցուցած և զայրացուցած էր, իսկ հիւանդութիւնը կանխաւ շաքարախտն էր: Այն խնամքները որոնց առաջ կը հետևէր, չկրցաւ ըստ օրինի շարունակել պատրիարքական կեաքին մէջ, մանաւանդ թէ պատրիարքական պաշտօնին դժուարութիւնները և ներքին խժրժողներուն հակառակութենէն ստացած յուզումները, որոնց առջև չկրցաւ լայնասիրտ և անարգող անտարբերութիւն լայնասիրտ և անարգող անտարբերութիւն պահել, աւելի վնասակար եղան իր անձին թէպէտ իր ընթացքը չփոխեց ընդհամադիրներէ ընկճուելով: Իր հիւանդութիւնը բաւական ծանր ժամանակներ ալ ունեցաւ, որ մինչև տարածամ մահ ալ յառաջեց:

2838. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐԴԱՐԱՅԱԾ

Ներսէսի առաջին գործերէն մին Աղթամարի խնդիրն եղաւ: Տեղապահութեան օրէն կարևորութիւն տուած էր այդ գործին, զոր ուժգին կը հետապնդէին Աղթարմացիք, և համագումար ժողովը մարտ 11-ին ըստ կրօնականին վաւեր ընդունած էր կաթողիկոսական օժումը, իսկ ըստ քաղաքականին զինքն անձեռնհաս նկատած էր Պետրոսի սպանութեան խնդիրը վճռելու (ԻԶՄ. 1029): Պատրիարքական ընտրութենէ ետքը գործը Ընդհանուր ժողովին կը ներկայուէր, սա ալ 1875 ապրիլ 5-ին կառավարութեան կարծիքը կուզէր առնել, որովհետև նա էր որ սպանութեան խնդիրին պատճառով Խաչատուրի կաթողիկոսութիւնը վաւերացնել անհնար գտած էր: Իսկ այս անգամ յուլիս 26-ին կը պատասխանէր թէ քանի որ երկու մարդասպան քիւրտերը մեռած են, կամ աւելի ճիշդը, մեռած ցուցուած են, և քննութիւնը առաջ տանիլ հնար չէ, իրեն այլ ևս ըսելիք չի մնար և պատրիարքարանին կը թողու պատշաճը տնօրինել: Այս գիրին վրայ քաղաքականը կորոշէ Խաչատուր անպարտ ճանչնալ սպանութեան գործին մէջ (ԻԶՄ. 1032), իսկ կրօնականը համագումարին կը դիմէ, որուն առջև 1875 դեկտեմբեր 4-ին Խաչատուր երգմամբ կը յայտարարէ յանուն Աստուծոյ և խղճի թէ Պետրոսի սպանութեան մէջ մասնակցութիւն ունեցած չէ և մտքէն անգամ անցուցած չէ (ԻԶՄ. 1035), և այդ յայտարարութեան վրայ երեք ձեռնապահներու դէմ 39 քուէով Խաչատուր անպարտ կը հռչակուի և կը վճռուի, թէ քանի որ ազգին կողմէն ամբաստանեալ չէ, և իշխանութեանց առջև ամբաստանող ունեցած չէ, և կառավարութիւնն ալ ասելիք մը չունենալը յայտնած է, մեղսակցութեան կասկածը փարատած է, և օրինաւոր կաթողիկոս է Տանն Աղթամարայ (ԻԶՄ. 1033-1041): Խաչատուր կը փութայ յայտարարութիւն մըն ալ ստորագրել թէ ըստ ամենայնի հնապանդ է Մայրաթոռոյ էջմիածնի: Ասով մէկտեղ Ներսէս դեկտեմբեր 5-ին կը դիմէ Գէորգ կաթողիկոսի, և Սոյ և Աղթամարայ խնդիրներուն վերջնական որոշումը կը խնդրէ, և Գէորգ դեկտեմբեր 27-ի կոնդակով (ԻԶՄ. 1042-1050) շատ մը կաթողիկոսական իշխանութեան և կաթողիկոս կոչման մասին խօսելով, և Գանձասարայ կաթողիկոսութեան դադարումն ալ յիշելով,

կը յորդորէ փութալ ճեպել ի իպառսպուռ բարձունն երկրորդական և երրորդական աթոռոց կաթողիկոսական անուանելոց (ԻԶՄ. 1049): Այսպէս Գէորգ վերջապէս կը խոստովանի իր ներքին դիտումը, այն է Սիոն ու Աղթամարը ջնջել, որուն սակայն համամիտ չէին Կ. Պոլսոյ պատրիարքն ու ժողովներն ու ժողովուրդը: Պայմանագիր մը պատրաստուեցաւ հինգ յօդուածներով և Խաչատուր ստորագրեց 1876 փետրուար 10-ին (ԻԶՄ. 1051-1053): Գործը դարձեալ երեսփոխութեան ներկայացուեցաւ փետրուար 20-ին, և անկէ մասնաժողովոյ մը յանձնուեցաւ, որուն կրօնական անդամները եղած գործողութիւնները բաւական սեպեցին Խաչատուրի արդարանալուն համարուելուն (ԻԶՄ. 1056), իսկ աշխարհական անդամներ պնդեցին նորէն կառավարութեան դիմում ընել, որ պատասխանեց թէ երբ պատրիարքը անպարտութեան մասին համոզուի, կառավարութիւնը ըսելիք չունենար (ԻԶՄ. 1062): Ներսէս պատրիարք Ընդհանուրի յունիս 4-ի գումարման մէջ յայտնեց թէ սիրտը չուզեր հաւատալ մարդասպանութեան կասկածներուն, և ժողովէն կը պահանջէր որ յայտարարէ թէ եղած գործողութիւնները և փոխանակուած գիրերը բաւական ե՞ն արդեօք Խաչատուրը կասկածէ ազատ հրատարակելու: Ժողովը մեծամասնութեամբ այս կը պատասխանէ, և այսպէս 1864-էն 1876, 12 տարիներ քաշկոտուելէն ետքը Խաչատուր կարդարանայ, խնդիրը կը փակուի, հրովարտակը կառնուի, և 1876 յուլիս 4-ին մայրեկեղեցին կը պատարագէ, և յաջորդաբար ուրիշ եկեղեցիներ, և հոկտեմբեր 20-ին Կ. Պոլիսէ կը մեկնի (ԻԶՄ.1067), և օրինաւորութեան պայմաններով Տանն Արծրունեաց կաթողիկոսական աթոռը կը գրաւէ, բայց Գէորգ կաթողիկոս միշտ կը պնդէր Աղթամարի կաթողիկոս մը չճանաչել, և Խաչատուրի չէր ներեր իբր կաթողիկոս պատարագել Կ. Պոլսոյ մէջ (76.ՄԱՍ.1786): Պետրոսի սպանութեան և Խաչատուրի մեղսակցութեան պատմութիւնը մենք ըրած էինք ժամանակակից յիշատակներու և վկաներու յայտարարութեանց յենով (2751,2752), մինչ խնդիրին լուծման պարագաները կարծես բոլորովին կը ստեն նախնական պատմութիւնը: Այս մասին բերնէ բերան պտտող վրոյցներ Խաչատուրի հնչուն փաստերուն պօրութեան կը վերագրեն պատմական պարագաներուն այլալման գաղտնիքը, և անոր սկզբնաւորութիւնը կը վերագրեն Գաբմաքճեան և Վեհապետեան եպիսկոպոսներուն նախնական քննութեանց մէջ Խաչատուրի արդարացման կամ գոնէ կասկածէ ազատ մնալուն կողմը գտնուելուն: Վերջին օրերն ալ Խաչատուրէ տրուած 500 ոսկւոյ վրոյց մը ելաւ, որուն պատճառով Ներսէս պահ մը գործը կասեցուց մինչև որ վրոյցը հերքուէր (75.ՄԱՍ.1734): Եթէ այդպէս ընդունինք իրաց ստուգութիւնը պէտք էր կարծել թէ Խաչատուր շատ ընդարձակած ըլլայ իր հնչուն փաստերը, զի ոչ միայն շատուշատ անձեր ու ժողովներ մասնակցեցան իրեն արդարացման, այլ և Խրիմեան և Վարժապետեան պատրիարքներ, յայտնապէս զինքն կասկածէ վերծ պահելու կողմն եղան, և չէինք սիրեր ասոնց ամէնքը ճշմարտութիւնը վաճառողները կարծել: Մեր տեսութեամբ արդարացման բուն նպաստողը սպանութեան գործիչ չըլլալն է, և մեղսակցութիւնը վկայող կամ ամբաստանող չգտնուիլն էր, կամ աւելի ճիշդը՝ սպանողներուն մեռած և չգտնուած ցուցուիլն էր, և արդարութիւն ալ կը պահանջէր չդատապարտել մէկ մը որուն դէմ վկայի կամ ամբաստանողի փաստ չկար: Ընդհակառակն տեղական ընդհանուր ըմբռնումըն ալ, այսինքն Աղթամարի վիճակայնոց պագցումն ալ իրեն նպաստաւոր էր: Եթէ ընդհանուր տեսակէտէն խորհինք՝ Նիկողոս Աջապահեանի վիճակէն շատ աւելի ծանր էր Խաչատուր Շերոյեանի վիճակը, զի ինքնընտիր կաթողիկոսութեան վրայ, որ երկուքին հաւասար էր, յետինին վրայ սպանութեան կասկածն ալ կաւելնար, այսու հանդերձ ելքը աւելի ծանր եղաւ Նիկողայոսի քան Խաչատուրի վրայ: Այս տարբերութեան ալ գաղտնիքը պէտք է տեսնենք Խաչատուրի կեդրոնի հանդէպ ցուցուցած համակերպութեան և հլութեան մէջ, մինչ Նիկողայոս ըմբոստ և հակառակող կերպ մը ունեցաւ, և

հրամաններն ու հրահանգներն անարգեց, կարծելով բռնութեամբ իր դատը շահիլ: Բայց ընդհակառակն եղաւ ելքը, ինքն իսպառ վրկուեցաւ, մինչ Խաչատուր իր պատրաստած նպատակին հասաւ և աթողին տիրացաւ: Եթէ մեզի ներեալ է ապատ գաղափար մը արտայայտել, համարձակ պիտի ըսենք թէ գործեր ու պարագաներ Խաչատուրը անպարտ չեն ցուցներ, իրեն վերագրուած մեղսակից և նոյն իսկ դրդիչ ըլլալու կասկածէն, այլ և՛ պակսին զինքն պարտաւոր ցուցնելու դատարանական փաստեր:

2839. ԲԷՖՍԻՉԵԱՆԻ ԸՆԹԱՑՐԸ

Մկրտիչ Բէֆսիպեան որ 1871 նոյեմբեր 28-ին Կիլիկիոյ կաթողիկոս օծուած էր (2817), ընդարձակ և յաջող ասպարէզ մը ունէր թէ աթողը փայլեցնելու և թէ զինքն փառաւորելու, եթէ մի քիչ խոհականութիւն և կշռադատութիւն ունեցած ըլլար իր գործնական ձիրքերուն հետ: Նա պէտք էր գիտնար թէ որչափ ալ կեդրոնին թէ ոչ բռնադատական գոնէ ստիպողական միջոցներուն շնորհիւ կաթողիկոսութեան բարձրացաւ, սակայն միշտ իրեն անհամակիր տարր մը ունէր, Աջապահեանց և իրենց խնամիններուն բաւական ստուար խումբը, որ հաշտ աչօք չէին կրնար նկատել իբր 150տարիներէ ի վեր վայելած առանձնաշնորհութենէն վրկուելին, ինչպէս նաև Սոյ ամբողջ ժողովուրդը, որուն համար մինչև այսօր իսկ ընտիր և ընդունելի չէ ինչ որ Սսեցի չէ: Մկրտիչ փոխանակ այդ տարրերը շահելու և փափկութեամբ գործածելու, առջի օրէն անհայտ և կոշտ վարմունք մը ցուցուց անոնց հանդէպ, կարծելով թարևս թէ գաւառացին զսպելու համար աւելի վօրաւոր է խստութիւնը քան լրջամիտ խոհականութեան և իմաստուն հեռատեսութեան վարմունքը: Ասով մէկտեղ օծումէն ամիս մը ետքը 1872 կաղանդին Սսեցիք նոր կաթողիկոսին յարգանքին մատուցանելու համար միահամուռ վանքին եկեղեցին կը հաւաքուին, բայց մեծ կըլլայ յուսախաբութիւննին, երբոր բեմէն ամենայն անարգանօք և նախատանօք կշտամբանքներ կը լսեն իրենց դէմ, և նոյնհետայն կը մեկնին եկեղեցիէն: Ծնունդի օերեր անցունելով, յունուար 16-ի կիրակի օր կրկին վանքի եկեղեցին կը խոնուին, բայց այս անգամ նոյն իսկ Մկրտիչի ներկայութեամբ անոր անունին յիշատակութիւնը արգիլելու, ինչպէս որ ալ կը յաջողին աղմուկ և անկարգութիւն յարուցանելով: Բիչ օր ետքը Ատանացի հայ երիտասարդ մը (պիր Ատանալը հայ երիտասարդ) անունին ներքև Կիլիկիոյ գաղտնիքն ու խեղճութիւնը (Կիլիկեանըն Էսրաբը վէսէֆալէթի) վերտառութեամբ հայատառ թիւրքերէն տետրակ մը կը հրատարակուի Սիսեցիներու դէմ նոր անարգանքով լեցուն, և Մկրտիչի ամիս ու կէսի մէջ իբր թէ կատարած նշանաւոր ձեռնարկներով և գովեստներով, որուն վերջը Մկրտիչ Թաղէոսի և Բարթողիմէոսի և Գրիգորի արժանաւոր յաջորդը կանուանուէր: Տետրակը մինչև իսկ եկեղեցւոյ մէջ դպրի շապիկ հագած անձի մը կարդար կը տրուի, բայց շուտով կը յայտնուի թէ տետրակին հեղինակ Ատանացի երիտասարդը նոյն ինքն Մկրտիչ կաթողիկոսն է, իր քարտուղարն ալ ընդօրինակողը, և քարտուղարին եղբայրն ալ տպագրութիւնը հոգացողը, և այլևս ծայրը կը հասնի Սսեցւոց վայրոյթը, որոնք կորոշեն վայն աթողին մէջ հանդարտ չթողուլ, և Մկրտիչ կը ստիպուի հապի երկուերեք ամիս Սիս մնալէ ետքը անկէ հեռանալ, և իր ծննդավայրը Գերմանիկի մէջ ունեցած Բէրխան կալուածին մէջ կը հաստատէ իր բնակութիւնը: Իր հեռացումը արդարացնելու համար աթողի տեղափոխութեան խնդիր մը կը յուզէ պաշտօնապէս հոկտեմբեր 25-ին, բայց կեդրոնը վայն կը մերժէ նոյեմբեր 27-ին և Մկրտիչ խնդիրը կը նորոգէ 1873 յունուար 17-ին, այս անգամ տեղափոխութեան առաջարկին վրայ աւելցնելով տէրութենէ ամսական մը ստանայ Կիլիկիոյ աթողին, Կիլիկիոյ վիճակները աւելի տարածել, և Կիլիկիոյ կաթողիկոսութեան արտօնութիւններն ու իրաւասութիւնները ընդարձակել (ԻԶՄ.1079-1082): Այլևս յայտնի էր Մկրտիչի ներքին ձգտումը, որ եկեղեցականապէս Էջմիածնի համահաւասար, և գուցէ միակ օրինաւոր կաթողիկոս

ցուցնել կուպէր, և քաղաքականապէս Կ. Պոլիսէ անկախ նոր ազգապետական պատրիարքութիւն մը ստեղծել կը փափաքէր: Կ. Պոլսոյ պատրիարքարանը ոչ միայն այդ առաջարկները չընդունիր, այլ և Կիլիկիոյ և Կ. Պոլսոյ յարաբերութիւնները ճշդող հրահանգ մը կը պատրաստէ և Խառն ժողովով կը հաստատէ 1874 ապրիլ 24-ին, Ներսէսի տեղապահութեան վերջին օրը, և պատրիարքութեան առջի օրերը մայիս 29-ին Մկրտիչի կը հաղորդէ (ԻԶՄ.1086-1095): Մկրտիչ իր առաջարկներուն մերժուելէն և իրեն գործունէութեան պայմաններ նշանակուելէն դժգոհ, ոչ որոշումը կընդունի, ոչ հրահանգը կը գործադրէ, և իր պաշտօնը շարունակելու պայման կը դնէ իր առաջարկութեանց ընդունելութիւնը և իրականացումը, և իբր հրաժարեալ գործէ կը քաշուի, բայց ոչ պաշտօնէն. Կիլիկիոյ բոլոր գործերը կը լքանէ, ոչ կը գործէ և ոչ գործել կու տայ, Սսոյ վանքը գոցուած, վիճակները անառաջնորդ, վիճակայինք անգլուխ, խառնակութիւն ընդհանրացած, կացութիւնը թշուառացած, և Կիլիկիոյ ամէն կողմերէն գանգատի և բողոքի հանրագրեր կը տեղան Կ. Պոլսոյ պատրիարքարանը: Տարի մը կը տևէ այդ տխուր կացութիւնը, և մասնաւոր միջոցներ օգուտ մը չեն գործեր, 1875 մայիս 16-ին մասնաժողով մը կը նշանակուի խնդիրը քննելու և կարծիք յայտնելու, որուն եզրակացութիւնը կըլլայ Մկրտիչի հրաժարականը ընդունիլ, և ընդունելու համար խնդիրը Ընդհանուր ժողովին ներկայել (ԻԶՄ.1098-1103): Ընդհանուր ժողովոյ նախապատրաստական դիւանները օգոստոս 4-ին կը յարգեն մասնաժողովի եզրակացութիւնը (ԻԶՄ. 1104) և Ընդհանուր ժողովն ալ օգոստոս 29-ին կորոշէ ընդունիլ հրաժարականը (ԻԶՄ. 1112), բայց Ներսէս պատրիարք 1876 փետրուար 20-ին աւելի որոշ վճիռ մը կը պահանջէ երեսփոխանութենէ (ԻԶՄ. 1113), և ժողովը մարտ 12-ին Մկրտիչի առաջարկները մի առ մի և բացարձակապէս մերժելէն ետքը: կորոշէ իրեն հաղորդել, որ եթէ իւր առաջարկութեանց վրայ պնդէ, հրաժարականը ընդունուած պիտի համարուի (ԻԶՄ. 1118), և պատրիարքը այդ որոշումը կը հաղորդէ մայիս 17-ի պաշտօնագիրով (ԻԶՄ.1120): Մկրտիչ տեսնելով որ պնդելը օգուտ չունի, գուցէ և ձախող վերջ մը ունենայ, պահ մը կը լռէ, և երբ վարչութիւնը կը կրկնէ և պատասխան կը պահանջէ, ոչ ևս մերժումի, այլ դիտողութեան ձևով տասը կէտեր կառաջարկէ, որոնք սակայն միշտ նոյն նպատակին կը դիտէին, Կ. Պոլսոյ պատրիարքարանէն անկախ նոր ազգապետական պատրիարքարան մը հաստատել ընդարձակուած Կիլիկիոյ համար, և հայ ազգութիւնը երկուքի բաժնել: Այդ անցուդարձերով կանցնին, ոչ խնդիրը կը լուծուի, և ոչ պատրիարքարանը վճռական որոշման մը կը յանգի, խիթալով մանաւանդ Մկրտիչի նոր ձեռնարկներէն, որ պետական պաշտպանութիւն շահելու նպատակով, էջմնածնի և Ռուսիոյ և օտար պղծութեան քսութիւններ կը հասցնէր բարձր տեղեր: Արդէն տարիներն ալ քաղաքականապէս շփոթ էին. Վի Ռուսութուրք պատերազմներու միջոցն էր, և պատրիարքարանը ստիպուած մեղմօրէն կը վարուէր, իր կողմէն ղրկուած առաջնորդներով և տեղապահներով կաշխատէր Կիլիկիոյ վիճակները հոգալ, սակայն Մկրտիչ անոնց գործունէութիւնը կը ջանար խափանել, ոչ Վիրենք ճանչնալով, որ գործել թոյլատրելով, և ոչ իր կողմէ առաջնորդներ նշանակելով (ԻԶՄ.1127), և այդ վիճակը կը տևէր մինչև որ Ռուսութուրք հաշտութենէ ետքը խնդիրը նորէն ձեռք կառնուէր 1880-ին:

2840. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Պատմական եղելութեանց անցուդարձերը ամփոփ տալու համար պարտաւորուած ենք անոնք յառաջ մղել մինչև որոշ հանգրուան մը, ուստի Կիլիկիոյ խիդիրն ալ բաւական յառաջ տարած եղանք, այժմ ետ կը դառնանք Ներսէսի պատրիարքութեան ժամանակին ուրիշ գործերը պատմել: Ներսէս հապիւ աթոռի վրայ նսպած իր դիմաց երկու ծանր դրամական խնդիրներ գտաւ, որոնք անմիջապէս լուծում կը պահանջէին գործոց ընթացքը չխանգարելու համար: Ասոնց մէկն էր Խրիմեանի դէմ յուզուած հաշուական ամբաստանութիւնը իբր թէ հանգանակութիւններէ բան մը

իւրացուցած ըլլայ և իրաւունքէն աւելի գումար գանձած ըլլայ սնտուկէն: Ներսէսի համար ծանր էր Խրիմեանի մասին այդպիսի կասկածի ընթացք տալ, բայց թունշաններու խնդիրներն ալ դիւրաւ չէին կրնար մեկնութեանց ենթարկուիլ: Խրիմեան ալ վշտացած լրագրական յօդուածներ կը յաճախէր իր պաշտպանութեան համար: Հարկ եղաւ քննութիւնները շտապեցնել, և յայտնուեցաւ որ Խրիմեանի հանգանակութենէն իւրովի վճարուածներ ունի, բայց իւրացուցած չունի: Իսկ իրաւունքէն աւելի գումար գանձած ըլլալու խոսքը յառաջ եկած էր պատրիարքական ամսականի հաշուէն որ 10,000 էր և վարչութիւնը 5,000-ի վերածած էր, զոր Խրիմեան չէր ընդունած: Ներսէս չաջողեցաւ վարչութիւնը համոզել թէ անհնար էր Խրիմեանի պատրիարքարանի ծախքերով մէկ տեղ 5,000-ով բաւականանալ ուստի 10,000-ի դրութիւնը ընդունել տալով այդ խնդիրն ալ փակեց, և 1874 հոկտեմբեր 26-ի յայտարարական նամակով Խրիմեանի դրամական հաշիւներուն կանոնաւոր ըլլալը հրատարակեց (74. ՄԱՍ.1602), և որովհետև այս նամակին ինչինչ բառերը խժրժելով ամբողջ վարչութեան իրեն համամիտ չըլլալը պրուցուեցաւ, նոյեմբեր 1-ին երկրորդ հրատարակութեամբ բոլոր վարչութեան իրեն համամիտ ըլլալը յայտարարեց (74. ՄԱՍ.1605), և այսպէս խնդիրը փակուեցաւ: Միւս դրամական խնդիրը պատրիարքարանի սնտուկին մօտ 400,000 դահեկանի պարտքն էր, որ դժուար կըլլար փոքր հանգանակութիւններով փակել, զոր Խրիմեան ալ շատ աշխատութեամբ չէր կրցած բոլորովին վերջացնել: Խոշոր գումարով մը տագնապէն ապատելու կերպը փորձեց Ներսէս, և վարչութեան ատենապետ Սիմոն Մաքսուտեանը իրեն աջակից առնելով երկու մեծահարուստ ազգայիններու, խտիվական ներկայացուցիչ Երամեան Աբրահամի և արքունի ճարտարապետ Պալեան Սարգիսի, դուռերը բաղխեց, և վերջապէս յաջողեցաւ 300,000 դահեկանի գումար մը ստանալ միանուագ (74. ՄԱՍ. 1609), և անով ազգային պարտքի մեծ և ստիպողական մասերը մաքրել, և մնացածին համար ալ մասնաւոր հանգանակութեանց արդիւնքը տրամադրել, և պատրիարքարանը մեծ հոգէ մը վերծուցանել: Դրամական խնդիրներ ամէն տեղ և ամէն ատեն աւելի նշանակութիւն ունեցած են կենցաղական շրջանակի մէջ, և Ներսէսի այդ յաջողութիւնը աստիճան մը ևս բարձրացուց անոր անունը, միանգամայն ազգային ժողովին կողմէ երախտապարտ շնորհակալութեան առակայ եղան Երամեան և Պալեան նուիրատուները (74.ՄԱՍ.1612):

2841. ՎԵՐԱԶՆՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

Աղթամարի և Սիսի խնդիրներէն դուրս գլխաւոր կէտ մը չենք գտներ, որ յատուկ մտադրութիւն հրաւիրէ Ներսէսի պատրիարքութեան առաջին տարիներուն մէջ: Վարչական կազմակերպութիւնը կայուն ձև մը առած, կարող և արթուն անձ մըն ալ անոր գլուխն անցած, պարագայից բերմամբ յառաջ եկած գործերն էին որ պաշտօնական անձերու և մարմիններու մտադրութիւնը կը գրաւէին, և անոնց շուրջը կը դառնային բոլոր առօրեայ վբաղումները: Սահմանադրութեան վերաքննութիւնը 1870-էն ի վեր խնդրոյ նիւթ էր, և նոյնը շարունակեց ըլլալը 1874-էն ետքն ալ, և որովհետև որոշման մը չյանգեցաւ և լրացած գործողութիւն չեղաւ, աւելորդ կը սեպենք այդ մասին յայտնուած կարծիքները, շարունակուած վիճաբանութիւնները, յղացուած ծրագիրները, և դէմընդդէմ ներհակ ուղղութիւնները բացատրել: Այդ երկարաձգումները այնպիսի վարկաբարձի և անկարևոր կէտերուն շուրջը կը դառնային, որ կարծես թէ կամաւոր դիտում մը կար գործը չվերջացնելու, որպէս ի բացառիկ նստաշրջանին հիմը կազմող վերաքննութիւնը օրակարգէն չվերանայ, որպէսպի նստաշրջանն ալ շարունակէ, իրօք ալ հետզհետէ ունակական և օրինական դարձաւ մշտնջենաւոր Ընդհանուր ժողով ունենալ, որ վերաքննութենէ պատ ուրիշ ամէն գործերով, մինչև իսկ անհատական և պատահական գործերով սկսաւ վբաղիլ, և իբրև ազգային վարչութեան խորհրդարանական ժողով իրեն հաստատուն ներքին կանոնագիր ալ

կազմեց, ատենապետութեան և ատենադպրութեան երեքական անձեր ընտրեց զիրար փոխանակելու համար, ութը ճիւղով նախաքննիչ դիւաններ կազմեց, ձեռնահասութեան, իրաւասութեան, նախաձեռնութեան, դաստիարակութեան, համարակալութեան, յարաբերութեան, կալուածական և խմբագրական անուններու ներքև, ատենապետաց դիւան յորջորջմամբ նոր մարմին մը ստեղծեց, իրեն յատուկ ելևմտից յանձնախումբ մը հաստատեց, վերջապէս եղաւ տևողական տարր մը ազգային վարչութեան մէջ, բուն վարչութեան և անոր նախագահին ձեռքերը կապող, ժողովրդական ցոյցեր և յուզումներ իբրև փաստ գործածող, և լայն ասպարէզ բացող ընդդիմադիրներու խմբակին, կամ ժամանակին գործածուած ժողովրդական լեզուով Ղալաթիոյ օճախին, որ վարչութիւնը կաշկանդելու և պատրիարքը խծրծելու համար, ոչ միայն եղելութեանց և գործառնութեանց, այլ և բառերու և վանկերու քննադատութեանց կը կառչէր: Այդ կացութեան ոյժ կու տային ժամանակին լրագիրները, որ ամէն գրիչ բռնողին արտադարձ երկարաձիգ յօդուածները սիրով կը հիւրընկալէին, և ներհակընդդէմ վիճողներու դիւրութիւն կը նծայէին: Որ այս մարմանջով սնած անձերը լուեցնելու ազգային վարչութիւնը բաւական ոյժ չունենար դիւրաւ հասկանալի կը գտնենք. բայց որ կառավարութիւնն ալ, իր հաստատած սահմանադրութեամբ միայն երկամեայ պարբերութեամբ և երկամեայ տևողութեամբ նիստեր հաստատած ըլլալով մէկտեղ, մշտատև նիստերը թոյլտրելը, մեզի անբացատրելի կը մնայ: Եթէ ազգիայն և պատական շրջանակներու մէջ սահմանադրական գրութիւնը մեղադրողներ երևան եկան, մեր տեսութեամբ իրաւունք չունէին և չունին 1863-ի սահմանադրութիւնը դատապարտել, այլ 1870-էն ետքը տեղի ունեցող փոփոխութիւնը դատափետել, ոչ իրաւապէս այլ իրապէս գործադրուածը: Այդ նոր գրութեան հանդէպ էր, որ Խրիմեան անհանդուրժելի կը գտնէր սահմանադրութիւնը, որուն վարժ չէր, իսկ Վարժապետեան որ սկիզբէն սահմանադրականներու խումբին հետ ապրած և գործած էր, և անոր վարժութիւնն ալ ունէր, չկրցաւ քանի տարիներէ ի վեր արմատ թողած ձևին հակառակիլ, զգաց սակայն յառաջ եկած անտեղութիւնները, վերաքննութեան գործը մղեց գուցէ կարծելով որ երբ այն աւարտի բացառիկ նստաշրջանն ալ վերջանայ, և գործերը իրենց օրինական պայմանին դառնան, երեսփոխութիւնը երկամեայ պարբերութեամբ երկամեայ տևողութեան վերադառնայ, վարչութիւնն ալ ապատ գործունէութեան ասպարէզ գտնայ, որ ի՛նչպէս անձերէ ալ կազմուած ըլլար, ինքն վստահ էր պայն իր ուղղութեամբը վարելու: Սակայն այս դիտումը չիրականացաւ, վերաքննութիւնը չվերջացնողներ պօրացան, ինքն ի բնէ նեղսիրտ, հիւանդութեան երեսէն երկպատիկ նեղսիրտ դարձած, գործոց ընթացքով եռապատիկ սաստկացած, յաճախ հրաժարականներու դիմելով և մերթընդմերթ ներքին վայրոյթը պոռթկալով ալ չկրցաւ իր նպատակին հասնիլ, և տաժանակիր պաշտօնէութեան մէջ խոչընդոտելով պաշարուեցաւ, մեծ ձիրքերու տէր ճանչցուեցաւ, բայց իր մտադրած մեծ արդիւնքները ամբողջապէս իրականացնել չկրցաւ:

2842. ԻՆՉ ԻՆՉ ԵՂԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Այդ ընդհանուր տեսութեան հետ ինչինչ մասնաւոր եղելութիւններ յառաջ բերած ըլլալու համար, նախապէս պիտի յիշենք Ներսէսի ընտրութենէն յետոյ առաջին ընտրուած և Խորէն Նարպէյ ատենապետութեամբ կազմուած կրօնական ժողովը, որ բարեկարգութեան բուռն ձգտումներով անհատնում ծրագիրներ և հրահանգներ և շրջաբերականներ կը տարածէր, որոնք սակայն տևողական արդիւնքներ չէին արտադրեր: Նշանաւորագոյն կը գտնենք եկեղեցական աստիճաններու հասնելու համար որոշ պայմաններու կանոնը, որուն մէջ սարկաւագութեան 25, քահանայութեան 30 և եպիսկոպոսութեան 35 տարեկան ըլլալը նշանակուած էր, և եպիսկոպոսացուած համար միանգամայն քանի մը տարի յաջողակ կերպով առաջնորդութիւն

վարած ըլլալ կը պահանջուէր (74.ՄԱՍ.1610): Այս վերջին պայմանը յատկապէս կը դիտէր օձախին պետերէն Իվմիրլեան Մատթէոս վարդապետը, որ տակաւին 29 տարեկան՝ կերպով մը Պանտրմայի ընտրութիւնը ձեռք ձգած ըլլալով, առանց վիճակն երթալու, Էջմիածին երթալու համար իր խմբակը շարժման գրած էր (74.ՄԱՍ.1574), բայց երբ չյաջողեցաւ, առաջնորդութենէն հրաժարեցաւ (74.ՄԱՍ.1589), և լաւագոյն սեպեց կեդրոնին մէջ իր ընթացքը շարունակել: Սակայն այդ կրօնակէն քանիներ հետզհետէ օձախեանց համակրիլ կը սկսէին, իրենց գլուխն ունենալով Ամբրոսիոս Իսքէնտէրեան և Խորէն Կիւրոյեան վարդապետները, ուսկից կարծես Ընդհանուր ժողովն ալ ձանձրանալով 1876 յունիս 18-ին նոր կրօնականի կազմութեան առթիւ 12 հանդարտաբարոյ քահանաներով և 2 վարդապետներով ժողով մը կը նտրէր (76. ՄԱՍ. 1844), որուն հետևանքը կըլլար ատենապետ Խորէն Մխիթարեան վարդապետին նոյեմբեր 6-ին եպիսկոպոս ձեռնադրուիլը, գոնէ ժողովական եպիսկոպոս մը ունեցած ըլլալու համար: Անկէ քիչ առաջ Իվմիրլեան վարդապետ ի շնորհուկս Գէորգ կաթողիկոսի տեսութեանց պաշտպան կանգնելուն՝ յատուկ Էջմիածին կը հրաւիրուէր, և առանց ընծայական վկայագրի կը մեկնէր (76. ՄԱՍ. 1816), և 1876 մայիս 13-ին հապճեպ կը ձեռնադրուէր, և անմիջապէս Կ. Պոլիս կը դառնար (76. ՄԱՍ. 1827), Գէորգի անձն ու գործը պօրաւորագոյն կերպով պաշտպանելու: Դիտողութեան նիւթ եղաւ յունիս 6-ի առաջին պատարագին մէջ Իւկիւտարի Ս. Կարապետ եկեղեցին Իվմիրլեանի անունը քահանայապետ տիտղոսով յիշատակուիլը (76. ՄԱՍ. 1839), որ սակայն չօգնեց մօտ օրէն յունիս 18-ին կազմուած կրօնականին մէջ մտնելու: Շիշեցինք քանիցս Ներսէսի հիւանդութիւնը, աւելցնենք այդ պատճառով հրաժարիլն ալ լռելով հակառակութիւններէ նեղուիլը, սակայն վարչութիւն և երեսփոխանութիւն չուլեցին ընդունիլ, և 1875 հոկտեմբեր 24-ին արտօնեցին քիչ մը ատեն հանգիստ քնել և տեղակալ կամ խորհրդական նշանակել: Ըստ այսմ տեղակալութեան հետ քաղաքականի նախագահութիւնը Սէֆերեան Սիմէոն եպիսկոպոսի և կրօնականի նախագահութիւնը Նարպէյ Խորէն եպիսկոպոսի յանձնեց (75. ՄԱՍ. 1770), և թէպէտ օձախը դժուարութիւններ կը հանէր Սիմէոնի մասին, սակայն Ներսէս իր անուանումը չփոխեց: Աւելի մեծ հակառակութիւն կը մղուէր Մկրեան Յովհաննէս քահանայն փոխանորդութենէ հեռացնելու նպատակով, և կերպկերպ բարուրանքներ ու ամբաստանութիւններ կը յարուցանէին անոր դէմ սակայն Մկրեանի յատուկ բացաիրութիւնները և Ներսէսի հաստատամտութիւնը հակառակութիւնները ցրեցին (75.ՄԱՍ.1763), և Մկրեան պաշտօնը շարունակեց: Գաւառաց կացութիւնն ալ դարձեալ ստիպեց նորանոր դիմումներ ընել կառավարութեան (76.ՄԱՍ.1878), նոր յանձնաժողով մըն ալ կազմել (76.ՄԱՍ.1879) և հարստահարութեանց երկրորդ տեղեկագիր մըն ալ պատրաստել (2823), որ 1876 սեպտեմբեր 29ին երեսփոխանութեան հաղորդուեցաւ (76.ՄԱՍ.1881), և ըստ այնմ դիմումները նորոգուեցան. բայց հարկ եղաւ խստիւ չպնդել, զի Զէյթունցոց խլրտումը (76.ՄԱՍ.1851) և Հայոց հաւատարմութեան մասին տարածուած կասկածները ստիպած էին պատրիարքը հաւատարմութեան յորդորակներ և ազգային ծանօթ հաւատարմութիւնը չստելու ազդարարութիւններ հրատարակել 1876 յուլիս 11-ին (76.ՄԱՍ.1853): Պատրիարքարանի գործոց մէջ նորութիւն մըն ալ եկեղեցական համագումար ժողովին տևական ձև մը տալն եղաւ, մնայուն դիւան կազմելով և զայն ալ Իվմիրլեանի յանձնելով 1876 հոկտեմբեր 7-ին: Պահպանողական գործիչները համամիտ չէին այդ մասին, զի համագումարը պատահական ժողով մըն էր սահմանադրութեան համեմատ, սակայն Ներսէսի միտքն էր այս միջոցով եկեղեցական ընդդիմադիրները լռեցնել, որոնց կրօնական ժողովէն հեռու մնալնին ծանր էր եկած, և նորընտիր կրօնականին տկար կազմութիւնը կը յեղյեղէին: Իբրև նորութիւն կրնանք յիշել նաև արդիւնաւոր քահանաներէն ոմանց մշտնջենաւոր և պատուակալ աւագերիցութիւն շնորհուիլը, և այս պատիւը

առաջին անգամ տրուեցաւ Յովհաննէս Մկրեան, Յովհաննէս Հիւնքեարայէյնտեան, Սահակ Տէր-Սարգիսեան, և օրացուցագիր Երեմիա քահանաներու (76.ՄԱՍ.1829): Միխիթարական պարագայ մըն ալ տուած ըլլալու համար՝ յիշենք Գարակէօսեան Նպարէթ և Կարապետ և Գրիգոր և Յովսէփ և Տիգրան եղբարց իրենց վաղամեռիկ եղբօր Բիւզանդի ժառանգութիւնը առևտրական վարժարանի մը յատկացնելու կամքը, որուն վրայ Ներսէս բոլոր պաշտօնական ձևակերպութիւնները լրացնելով, Թաքսիմի դադարեալ գերեզմաննոցին մէջ շինուելիք վարժարանին կայսերական արտօնագիրն ալ ստածաւ. բայց Ներսէս այդ միխիթարութիւնն ալ չվայելեց, զի Կարապետի 1874 հոկտեմբեր 11-ին վախճանելով (74.ՄԱՍ.1595), որ գործին հոգին էր, գործադրութիւնը կը յապաղէր և հետզհետէ կը խափանուէր (75.ՄԱՍ.1690), մինչև որ նորէն ձեռք առնուեցաւ 20 տարի ետքը Տիգրանի կտակովը: Այս քանի մը կցկտուր յիշատակներ բաւական ըլլան Ներսէսի պատրիարքութեան առաջին տարիները պատկերացնելու համար:

2843. ՌՌԻՍՈՒԹՈՒՐՔ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Սովորական և գրեթէ տաղտկալի կացութիւն կը տիրէր երբ անակնկալ պարագայ մը եկաւ միտքերը ցնցելու և կացութիւնը յուզելու: Թուրքիա աղետալի պատերազմի մը տագնապներ ունեցած էր, որուն մանրամասնութիւնները թէպէտ մեր պատմութեան չեն պատկանիր, բայց հակիրճ ամփոփումը կարևոր է յետագայ ըսելիքներնուս իմացուածը դիւրացնելու համար: Եւրոպական Թուրքիոյ ծայրի նահանգները Պոսնիա և Հերսէք 1875ի ամառուան մէջ յայտնի ամբաստանութեան դրօշը պարզեցին, և շարժումը շուտով Պուլկարաց ալ փոխանցուեցաւ: Ռուսիա և Գերմանիա և Աւստրիա համաձայնեցան օսմանեան կառավարութեան ինչինչ բարեկարգութիւններ առաջարկել, որպէսզի շարժումին առաջն առնուի, իսկ Անգղիա չմիացաւ և ուզեց Թուրքիոյ թողուլ պատշաճն ընելու որոշումը, որուն հետևանքն եղաւ 1876 մայիսին Պուլկարիոյ կոտորածը (ԹՌԻ.510): Սուլտան Ապտիւլպիլ իշխանութիւնը ամէն կողմէ քննադատուած և իրեններէն ալ անարգուած մինչև գահազրկութեան հասաւ, և մայիս 18-ին Հասան Խայրուլլահ մեծ դենպետին պատգամովը որոշուեցաւ և նոյն օր գործադրուեցաւ մեծ եպարքոս Միտհաթ և սպարապետ Հիւսէյին Ավնի փաշաներուն ձեռքով: Ապտիւլմէճիտի երէց որդին Մուրատ Ե. կայսր հռչակուեցաւ և Ապիւլպիլ մայիս 24-ին Թօփթաքուի հին պալատի մէջ անձնասպան եղաւ կամ սպաննուեցաւ, և այս առթիւ անձնասպանուեցաւ բաւը հնարուեցաւ: Մուրատ, մեղկ կեանքով սնած մէկ մը, սկսաւ ջղագար և մտագար վիճակ ցոյց տալ և պաշտօնին անկարող դառնալ, ուստի նոյն գենպետին նոր պատգամով նա ալ գահազուրկ եղաւ, և իր եղբայրը Ապտիւլհամիտ Բ. կայսր հռչակուեցաւ օգոստոս 19-ին: Եւրոպա ակնդէտ կը նայէր Թուրքիոյ ներքին վիճակին յուզումներուն վրայ, բայց երբ Ապտիւլհամիտի իշխանութիւնը կայուն ձև մը առաւ՝ վեց պետութեանց դեսպանախորհուրդ մը կազմուեցաւ Կ. Պոլսոյ մէջ, օսմանեան կառավարութիւնն ալ մասնակցութեան հրաւիրուեցաւ, բայց սա վերջապէս մերժեց Պուլկարիոյ և Պոսնիոյ և Հերսէքի համար առաջարկուած ծրագիրը, և խօսքի տեղի չթողլու համար Միտհաթ արդէն պատրաստ ունեցած սահմանադրութիւնը կամ հիմնական կանոնագիրը (գահունի էսասի) մէջտեղ հանեց և կայսրն ալ դեկտեմբեր 11-ին վայն հանդիսապէս հրատարակեց թնդանօթի 101 հարուածներով (76.ՄԱՍ.1917): Օրինաւորութեանց և ապատութեանց հիմնական կանոններուն հրատարակուելէն ետքը, այլևս մասնաւոր բարեկարգութեանց խնդիր չէր մնար և Թուրքիա դեսպանախորհուրդէն քաշուեցաւ: Բայց նոյն չեղաւ պետութեանց համոզումը անոնք իրենց դեսպանախորհուրդը շարունակեցին, իրենց պահանջները չափաւորեցին, և Պուլկարիոյ և Պոսնիոյ ու Հերսէքի կուսակալներուն պետութեանց հաւանութեամբ ընտրութիւնը, և հիւպատոսական յանձնաժողովի մը բարեկարգութեանց գործադրութեան վրայ հսկողութիւնը իբրև վերջնագիր

առաջարկեցին, որ 1877 յունուար 6-ին 240 ավյափոյ գումարուած պաշտօնակալաց և մեծամեծաց ժողովին կողմէ մերժուեցաւ, ուր Մկրեան՝ Ներսէս պատրիարքը և Էնֆիէճեան՝ Բիւրէլեան պատրիարքը կը ներկայացնէին և յայտարարութիւններ ալ ըրին (77. ՄԱՍ. 1828): Որոշումը յունուար 7-ին դեսպանախորհուրդին անդամոց հաղորդուեցաւ, որոնք 8-ին մեկնեցան, բայց յարաբերութիւնները չխսուեցան: Մարտ 19-ին ևրոպական տէրութիւնք նոր ծրագիր մը պատրաստեցին և կառավարութեան առաջարկեցին, որ 28-ին միայն ցաւ յայտնեց խորհրդակցութեան չհրաւիրուելուն համար, զոր Ռուսիա յայտնի մերժում նկատեց, և ապրիլ 7-ին միւս պետութեանց հաղորդեց, և Եւրոպիոյ կամքը գործադրել տալը վրան առնելով պատերազմի սկսաւ (ԹՌԻ. 515): Ասիակողման և Եւրոպակողման սահմանագլուխներէն ներս մտաւ, այն կողմէն Բլէվնա ամրոցը և Շիբկա կիրճն ալ երկար դիմադրութենէ ետքը տեղի տուին, նոյեմբեր 27-ին Թուրքիա զինադուլ խնդրեց, Ռուսիա հաւանեցաւ 1878 յունուար 1-ին, Կ. Պոլսոյ արուարձան Այոսթէֆանօ կամ Սանսթէֆանօ գիւղը հասնելէն ետքը, բանակցութիւնները ամիսուկէս շարունակեցին և խաղաղութեան դաշնագիրը կնքուեցաւ փետրուար 18-ին կամ նոր տոմարով մարտ 3-ին:

2844. ՍԱՆՍԹԷՏԱՆՈՅԻ ՅՕԴՈՒԱԾԸ

Բանականութեանց միջոցին օսմանեան ազդեցութեանց մէջ բախտաւորուելու մեծ շարժում մը կը տեսնուէր: Ռումանիա և Սերպիա և Չերնակորա հարկատու իշխանութիւններ՝ անկախ տէրութիւններ կը դառնային, Պուլղարիա ընդարձակ սահմաններով հարկատու իշխանապետութեան կը վերածուէր, Պոսնիա և Հերսէք Աւստրիոյ խնամակալութեան կը յանձնուէին, Յունաստան 1877-ի մասնաւոր պատերազմէն նպաստաւոր պայմաններ ստացած էր, Փարիզի 1856 ի դաշնագիրին հռչակած օսմանեան կայսրութեան անկախութիւնն ու ամբողջութիւնը իրապէս խախտուած էր (ԹՌԻ. 517): Հայն ալ նեղուած և հարստահարուած տարր մըն էր Թուրքիոյ մէջ, և թերևս վերոյիշեալներէն ալ աւելի, զի Ասիոյ խորը և անտէրունչ մնացած էր, քիւրդ և չերքէզ անվուսպ և հուղակահար ցեղերէ շրջապատուած, և ոչ-ընտրելագոյն պաշտօնեաներով կառավարուած: Միթէ հայն ալ արժանի չէ՞ր ընդհանուր բարեկարգութեան մասնակցիլ, միթէ հայուն ալ նոր բարւոքումներէ բաժին հանել արժան չէ՞ր: Ահա մտածմունքը որ երկար գիշերներ Ներսէսի միտքը կը տանջէր և քայլ մը առնելու կը մղէր: Սովորաբար ըսուած է Ներսէսի իւրովի և այն ալ դաշնագիրին ստորագրուելուն նախընթաց օրը քայլը առած ըլլայ (ԹՌԻ.518), սակայն մեր տեղեկութեամբ խորհրդակիցներ ունեցած է, նախապատրաստութիւններ անտես ըրած չէ, և գործը մինչև վերջի օրը թողած չէ: Նիկողայոս մեծ դուքսը, որ ռուսական բանակին ընդհանուր հրամանատարն էր, Սանսթէֆանօ Տատեան Առաքել պէյի տունը կը բնակէր և գերդաստանին հետ կը տեսնուէր, կոմս Իկնաթիէվ որ բանակին դիւանագէտ մեծ պաշտօնեայն էր, Կ. Պոլսոյ նախկին դեսպանն էր և Ներսէսի և Հայոց լաւ ծանօթ էր: Ներսէս վերջապէս ամէն պատասխանատուութիւն յանձն առնելով Սան Սթէֆանօ գնաց, Իկնաթիէվը տեսաւ, Մեծ դուքսին ներկայացաւ, հայուն կացութիւնը պարզեց և դարման խնդրեց, գոնէ դաշնագիրին մէջ յիշատակութիւնը մըն ալ Հայոց համար: Առաջարկը անտես չեղաւ, մանաւանդ որ հայաբնակ գաւառներ Ռուսիոյ սահմանին վրայ էին, և Ռուսիոյ նպաստաւոր էր անոնց վրայ ազդեցութիւն ունենալ: Այսպէս կը կազմուի Սանսթէֆանոյի դաշնագիրին 16-րդ յօդուածը, որուն պահ մը կը դիմադրեն Թուրքիոյ պատգամաւորները, բայց կը պարտաւորին տեղի տալ յաղթական Չարին անուամբ եղած յայտարարութեան: Յօդուածը կըսէ որպէս զի ռուսական բանակին Հայաստանի մէջ գրաւած երկիրները պարպելը նոր շփոթութեանց առիթ չտայ, բարձրագոյն դուռը կը խոստանայ առանց աւելի յապաղման, տեղական պահանջներուն հարկաւոր ըրած բարւոքումները

ու բարեկարգութիւնները Հայոց բնակած գաւառներուն մէջ գործադրել, և երաշխաւորեալ անոնց ապահովութիւնը Բիւրտերու և Չէրքէպներու դէմ (ԹՌԻ. 518): Այդ յօդուածով Հայեր յատուկ և որոշ հովանաւորութեան մը ներքև կը մտնէին, Հայաստան երկիր մը պաշտօնապէս կը ճանչցուէր, Հայոց կացութիւնը առաջին անգամ միջապագային դաշնագիրներուն մէջ կը մտնէր, և լուելեայն գունդերու Հայաստանի մէջ ներկայութիւնը կընդունուէր մինչև բարեկարգութեանց իրականացումը: Դաշնագիրը 1878 փետրուար 18/3 մարտին Ռուսիոյ և Թուրքիոյ կողմէն կը ստորագրուէր, և այն որ հայկական խնդիր մը իրապէս և իրաւապէս երևան կու գար, որ այն օրէն մինչև այսօր ծեծուեցաւ և կը ծեծուի՝ քիչ անգամ յաջող և յաճախ ձախող պայմաններու ներքև: Խնդիրին կազմուելուն եթէ խորհրդակիցներ ալ գտնուեցան, ամէնն ալ խորհրդաւոր գաղտնութեան մէջ թողուած մնացին, և Ներսէս անձնապէս և միայնակ անոր պատասխանատուն կը մնայ, զոր երբեմն և ոմանք երկնաչափ բարձրացուցին, և երբեմն և ոմանք չարաչար դատաւիտեցին: Անաչառ կարծիք մը յայտնելու և արդար դատաստան մը ընելու համար պէտք է հիմնապէս որոշել այն պայմաններն ու նպատակը, որ Ներսէսի առաջարկին և անոր նախնական ձևին կը պատկանին, և այն պայմաններուն ու նպատակները որոնք հետզհետէ խնդիրին բարդուեցան և կերպարանափոխ ըրին, և պէտք չէ Ներսէսը պատասխանատու ընել այն պարագաներուն, որոնք իրմէ չբղիսեցան, և իրմէ ետքը մէջտեղ ելան: Ներսէսի խնդրածը և ստացածը պարզ ռուսական հովանաւորութիւն էր հայաբնակ արևելեան կուսակալութեանց վրայ, առանց անջատելու օսմանեան տիրապետութենէն, առանց հեռացնելու օսմանեան կառավարութենէն և առանց տարբերելու օսմանեան յարաբերութիւններէն: Եթէ այս առաջարկով ալ օտար պետութեան մը օսմանեան պետութեան վրայ ազդեցութիւնը ընդարձակելու առիթ կը տրուէր, այն ոչ միայն շատ անձուկ սահմանի մէջ պարփակուած բան մըն էր, այլ և նորութիւն մը չէր ժամանակին ընդունուած գրութեան համեմատ, զի արդէն պետական գործառութեանց ամէն ճիւղերուն մէջ օտար ազդեցութիւն իբրև սովորական և ընկալեալ պայման ճանչցուած էր, և երբեք օսմանեան ինքնակալութեան համար նոր ծանրութիւն և անսովոր հանգամանք մը չէր: Հետևաբար ոչ ազգային, ոչ պետական, և ոչ դիւանագիտական տեսակէտէն մեղադրելի կէտ մը չենք կրնար ծանրաբեռնել Ներսէսի վրայ, և եթէ հայկական խնդիրները ձախող հետևանքներ ալ կրցաւ ունենալ, պատասխանատու են անոնք որ խնդիրին կերպարանք այլայլեցին և օտարոտի պարագաներ ներմուծեցին:

2845. ՊԵՐԼԻՆ ՅՕԴՈՒԱԾԸ

Առաջին այլայլութիւնը շատ շուտ և միջապագային քաղաքականութենէ ծագում առաւ: Անգղիա հաշտ աչօք չէր գիտած Ռուսիոյ առանձնակի և ինքնիրեն ձեռք ձգած յաջողութիւնը. իրեն համամիտ կրցաւ դարձնել միւս պետութիւններն ալ. առաջ անգղիական տորմիւր Մարմարիայի ջուրերուն մէջ երևցաւ և արգիլեց ռուսական բանակին օսմանեան մայրաքաղաքը մտնելը, և յետոյ դիւանագիտութիւնը ստիպեց Ռուսիան որ իր կազմուած դաշնագիրը վերաքննութեան ենթարկէ Եւրոպիոյ մեծ տէրութեանց ներկայացուցիչներէն կազմուած վեհաժողովին առջև, որուն տեղ որոշուեցաւ Գերմանիոյ Պերլին մայրաքաղաքը, և գահերէց Պիլմարք իշխանը, և բացուելու օր ալ յունիս 1/13-ը: Որոշումը տրուելէն մինչև պայմանեալ օրը երկու երեք ամիսներու միջոց մը կար պատրաստութեան համար, և Հայոց պատրիարքն ալ որ Սանսթէֆանոյի դաշնագիրին մէջ որևէ մաս մը անեցած էր, պէտք էր որ նա ալ գործի ձեռնարկէր, որպէսզի Սանսթէֆանօ շահուածը Պերլինի վեհաժողովին մէջ չկորսուէր: Նոր գործունէութիւն մը բացուեցաւ Ներսէսի առջև, և այն բազմակողմանի, թէ ազգային շրջանակին մէջ, թէ օսմանեան կառավարութեան հետ և թէ մեծ տէրութեանց առջև: Երբոր ազգային շրջանակին մէջ

Սան Սթեֆանոյի դաշնագիրը և Հայոց համար յօդուածը տեսնուեցաւ, և ծագման պարագաները լսուեցան, սովորական ընդդիմադիր խմբակը այս անգամ ալ իր խժրժանքները չխնայեց, թէ պէտք էր որ պատրիարքը իր առնելիք քայլը երեսփոխանութեան ներկայէր և անոր արտօնութեամբ գործէր, իբր այն թէ օգտակար ըլլար այսպիսի կողմնակի և փափուկ ձեռնարկները կանուխէն հրատարակել և ձանձունել, և կասկածներ և արգելքներ ստեղծելու առիթ ընծայել: Օսմանեան կառավարութեան հանդէպ ալ պէտք էր նախապէս միտքերը շինել և հակառակութիւնները հեռացնել որ նպատակին արգելք չյարուցանէր: Իսկ մեծ պետութիւնները պէտք էր լուսաբանել, տեղեկացնել և շահագրգռել Հայոց պաշտպանութեան ոյժ տալու համար: Ազգային շրջանակին մէջ Ներսէս յաջողեցաւ մեծամասնութեան նպաստաւոր ձայներով փոքրամասնութեան խժրժանքները չափաւորել, և գրգռիչները շահելով արգելիչ պարագաները խափանել: Կառավարութեան առջև անկեղծ յայտարարութեամբ և համակրական ցոյցերով և հաւատարմութեան վկայութիւններով, Ներսէս ոչ միայն արդարացուց իր ընթացքը, այլ և կառավարութեան կողմէ համամտութիւն և յորդոր ալ լսեց, որպէսպի Պերլինի մէջ ալ իր դիմումը պաշտպանէ յատուկ ներկայացուցիչներու ձեռքով, և մինչև իսկ իրեն ծածկագիր թղթակցութեան և հեռագիրի ապատութիւն տրուեցաւ: Եւրոպական պետութեանց միտքերը պատրաստելու համար անբաւական նկատուեցաւ Կ. Պոլսոյ դեսպանատուներուն միջնորդութիւնը, և երկու յատուկ պատուիրակներ յղուեցան եւրոպական մայրաքաղաքները, Խորէն Նարպէյ Բեդրպուրկ և Մկրտիչ Խրիմեան Վիեննա և Փարիզ և Լոնտրա, երկուքն ալ յետոյ Պերլինի մէջ միանալու համար: Խրիմեանի ընկեր տրուեցաւ Մինաս Չերապ, լեզուագէտ և եւրոպական յարաբերութեանց վարժ անձ մը, որ կրնար այդ մասին Խրիմեանի թերին լրացնել, իսկ Նարպէյի ընկեր յղուեցաւ Ստեփան Փափապեան իբր ազգային տեղեկութեանց հմուտ մէկ մը, որուն Կ. Պոլիսէ հեռանալովը ընդդիմադիրներու ոյժն ալ կը նուազէր, ինչ որ կիրականանար նաև Իվմիրլեան եպիսկոպոսի հեռանալովը, որ էջմիածին յղուեցաւ Գէորգ կաթողիկոսի աջակցութիւնը խնդրելու ռուսական կայսրութեան առջև: Միւս կողմէն կարևոր տեղեկագիրներ կազմուեցան հայաբնակ գաւառներու շրջանակը ճշդելու, հայաբնակութեան կարևորութիւնը որոշուեցաւ, տիրող անպատեհութեանց և պահանջուած կարգաւորութեանց գլուխները ցուցուեցան, և այս ամէնքը իբրև անհրաժեշտ վաւերաթուղթեր Պերլին յղուեցան, որ ներկայացուցիչներու հաղորդուին և բերանացի ալ բացատրութիւններ տրուին և նպաստաւոր կերպով լիապօրները տրամադրուին, և միխթարական եղաւ ըսել թէ այս բանիս մէջ յաջողեցան (ԹՌԻ.528': Սանսթեֆանոյի 16-րդ յօդուածը Պերլինի դաշնագիրին մէջ իրաւ չջնջուեցաւ, բայց 61-րդ յօդուածն եղաւ, և ինչպէս թուանշանները շրջուեցան, նոյնպէս պարունակութիւնն ալ բաւական փոփոխութիւններ կրեց: Հայաստան բառը վերցուեցաւ և միայն հայաբնակ գաւառքեր յիշուեցան, ռուսական խնամակալութեան տեղ վեց տէրութեանց հսկողութիւնը գրուեցաւ, ռուսական գունդերու երաշխաւոր ներկայութեան տեղ ժամանակ առ ժամանակ օսմանեան կառավարութենէ տրուելիք ծանօթութիւնը փոխանակուեցաւ, Սանսթեֆանոյի մէջ խոստանայ ըսուած՝ Պերլին լոկ յանձն կառնէ (ԹՌԻ.522): Արդէն դաշնագիրին ուրիշ կէտերն ալ ի նպաստ թուրքիոյ փոփոխուած էին, Պուլղարիան ամէն կողմերէ յապաւուած, Պուլղարիոյ կէսը Արևելեան Ռումելի անունով կուսակալութեան վերածուած, Պայապիտ նահանգը Թուրքիոյ դարձուած, Հայաստանի, բարեկարգութիւնը առանց հաստատուն երաշխաւորութեան թողուեցաւ: Յունիս 1/13-ին սկսած Պերլինի վեհաժողովը յուլիս 1/13ին վերջացաւ: Բայց Անգղիա վեհաժողովին բացուելէն առաջ Ռուսիոյ հետ մայիս 18/30-ին յատուկ յիշատակագիր փոխանակած էր, և մայիս 23/4 յունիսին թուրքիոյ հետ Կիպրոսը իւրացնելու պայմանագիրը կնքած էր, և վարմանալու չէր որ մինչև վերջ ի նպաստ թուրքիոյ բարձրացնէր իր

ազդեցիկ ձայնը, մանաւանդ որ Գերմանիա և Աւստրիա պատրաստ էին պօրաւոր դրացի Ռուսիան տկարացնելու, Իտալիա դեռ պօրաւոր ձայն չունէր, և Գաղղիա տակաւին բարձրացած չէր 1870-ի անկումէն:

2846. ՅԱՐԱԿԻՑ ԴԷՊՔԵՐ

Ներսէսի կազմած ծրագիրը այսպէս սկիզբէն այլայլեցաւ և իր նախնական վիճակին մէջ չմնաց, բայց պատասխանատուն ինքը չէր: Եթէ Ներսէս և պատրիարքարան և հայութիւն բոլոր եւրոպական տէրութեանց դուռները ափ առնելու սկսան, եթէ դիմումները և ջանքերը տարածուեցան և ընդհանրացան, այդ Պերլինի դաշնագիրին յառաջ բերած փոփոխութեան հետևանքն էր, որպէսզի հնար ըլլայ շարժել անոնց ամէնքը, որ հաւասարապէս դաշնագիրին գործադրութեան հսկողութեան դերն առած էին, և անոնք իրարու մոտեցնելով արդիւնքի մը հասնիլ կարելի ըլլար: Սակայն գործ մը որ որոշիչ և գործադրիչ մէկու մը ձեռքէն կելլայ, և շատերու համերաշխութեան և գործակցութեան կենթարկուի, նովին իսկ անպայման անորոշութեան և անիրականալի գործադրութեան մէջ կիյնայ: Եւ իրօք այսպէս եղաւ իրաց վիճակը, 1878-ին տրուած որոշումը և կնքուած վերջնական դաշնագիրին յօդուածը գրեթէ մեռեալ տառ դարձաւ Հայոց նկատմամբ, և երկու տարուան ժամանակամիջոցն անցաւ, անպօր պնդումներով և անգործ խոստումներով: Ներսէս մէկ կողմէն յանձնառու կառավարութեան և միւս կողմէն հսկող պետութեանը մօտ թախանձանքները շարունակեց, որոնք ուրիշ արդիւնք չունեցան, բայց եթէ անգործ քննիչներ շրջեցնել և անհետևանք գիրեր փոխանակել: Սակայն միւս կողմէ նոր ոգևորութիւն մը կարծես արթնցած էր Հայերուս մէջ, և ներքին վարգացման ջանքեր իրարու կը յաջորդէին: Գլխաւորապէս մտադրութիւն դարձուեցաւ հայաբնակ գաւառներուն, որոնք դաշնագիրներու մէջ յիշուած էին, որպէսզի հնարաւորութեան սահմանին մէջ ուսում և կրթութիւն տարածուի և ակնկալեալ բարիքներէն օգտուելու յարմարութիւն ստեղծուի: Արևելեան և Դպրոցասիրաց և Արարատեան և Կիլիկեան ընկերութիւններ կազմուեցան հետզհետէ, ամէնքն ալ միևնոյն նպատակով, գաւառներու մէջ վարժարաններ բանալու, որոնք անօգուտ մրցակցութիւնները արգիլելու համար նախ առաջին երկուքը, յետոյ չորսը՝ միանգամայն ձուլուեցան և Միացեալ Ընկերութիւնք եղան: Գաւառներու մէջ ալ տեղական ընկերութիւններ կազմուեցան: Իգական սեռն ալ յորդորուեցաւ և Ազգանուէր և Դպրոցասէր հայուհեաց ընկերութիւններ կազմուեցան, Արհեստասիրաց ընկերութիւն մըն ալ երկրագործութիւն և արհեստներ քաջալերելու վբաղեցաւ, մէկ խօսքով ամէն կողմէ եռանդ և շարժում կերևէր ուղիղ և օրինաւոր միջոցներով Հայուն վիճակին բարւոքումը և հայաբնակ գաւառներու բարեկարգութիւնը պատրաստելու: Ներսէսին գործը այդ ճիգերուն ոյժ տալն եղաւ, աշխատողները քաջալերել, նուիրատուները յորդորել, դիմումները անպակաս ընել, և խժրժողները ճարտար կերպով լուեցնել: Զարգացման ձեռնարկներուն հետ կարօտութեանց հոգածութեան պէտքն ալ ծագեցաւ: Պատերապմէն առաջ Փոքր Ասիոյ նահանգները սովի վտանգներուն ենթարկուած էին, պատերապմէն ետքը աղետից թատր եղան ներքսագոյն գաւառներ: Ներսէս անոնց ալ ասոնց ալ նպաստող յանձնաժողովներ կազմեց կարող և անձնուէր անձերով, ամէն տեսակ պաշտպանութիւն և ձեռնտուութիւն առատացուց, ինքն ալ անոնց հետ աշխատեցաւ, Մեծապէս արդիւնաւոր եղաւ Փոքր Ասիոյ հմար աշխատող յանձնաժողովը, բայց աւելի նախախնամական դեր վարեց Հայաստանի Սովելոց Յանձնաժողովը, որուն վրայ առանձինն պիտի խօսինք: Այդ աշխատութեանց և ջանքերու մէջ Ներսէսի հիւանդութիւնն ալ կը պայրանար, ոչ միայն չէր կրնար այն կանոնաւոր և ախտախնամ կեանքը վարել, որով պատրիարքութենէ առաջ ինքպիւնքը կը դարմանէր, այլև սրտնեղութեան առիթներ, որուն ինքն ենթակայ էր և վոր իրմէ չէին խնայեր

ընդդիմագիր խմբակներ, պինքն հետզհետե կը հելէր ու կը մաշէր, և կամ գործէն ապատելու կամ հակառակութիւններ չափաւորելու համար ստէպ հրաժարականներու կը դիմէր, որուն սակայն դէմ կելլար մեծասնութիւնը և իրեն գործակից խումբը, և կը պարտաւորուէր նորէն նեղութեանց լուծին դառնալ: Նկատելի էր և անբացատրելի կերևար որ նոյն իսկ կայսրը, որ աւելի իրմէ ցաւած ըլլալ կենթադրուէր, Սանսթէֆանոյի և Պերլինի մէջ ունեցած ընթացքովը, ոչ մէկ կերպով յանձն կառնուր անոր հեռանալը, և չէր ներեր որ գործէ և աթոռէ քաշուի, և այս բաւական էր խժբժողները լռեցնելու, որոնք Ներսէսի անունը աղատելու կաշխատէին, սակայն շուտ կը ցրուէին իրենց բարուրանքները, պի ակնյայտնի և հրապարակային էին ազգային շահերու համար Ներսէսի կատարած ձեռնարկները, համարձակ յայտարարութիւնները, ազատ դիմումները, և անպայման գանգատագիրները, որով հանրութեան կարծիքը ոչ երբեք կասեցաւ Ներսէսի միտքին վրայ տիրող անկեղծ ազգասիրութեան և կատարեալ ժողովասիրութեան վրայ վստահիլ: Եթէ կրցաւ Ներսէս բոլոր իր ազատ գործերով Ապտիւհամիտ կայսեր վստահութիւնը վայելել, այն իր անկեղծութեան և խոհականութեան արգասիքն էր, պի անկեղծութիւնը վստահութիւնը կը ներշնչէ թէ այն անձը գաղտնի խաղեր չունի, և խոհականութիւնը կապահովցնէ թէ անպէտ և յախուռն միջոցներու մօտեցող չէ: Այդ ընդհանուր գիծերով կազմուած ուրագիծը բաւական ըլլայ 1878 տարույ ձեռնարկը պատկերացնելու, և հայկական խնդիրին ծագումը ցուցնելու:

2847. ՀԱԿԱՀԱՍՈՒՆԵԱՆՑ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Հակահասունեանց տկարանալը յիշած ենք (2835), իսկ իատճառներէն մէկն ալ նոյն ինքն պատրիարք ընտրուած Յովհան Բիւրէլեանի անձն էր: Էնֆիլէճեան վայն յառաջ յառաջ քաճ և ընտրութիւնը յաջողցնելու աշխատած էր՝ ձեռքին տակ հլու հպատակ պատրիարք մը ունենալու համար, որ նա անունը պահէ և ինքը գործը վարէ. սակայն Յովհան Բիւրէլեան այդչափի ալ բաւական չեղաւ, պի նորա անհաստատ բնաւորութիւնը, փոքրոգի նկարագիրը, գուցէ ևս սիրտին մէջ պահուած խղճահար կաթոլիկութիւնը գայթի գայթի ուղղութիւն մը տուած էին իր անձին, և մինչև իսկ իր պաշտօնին գիրքը պաշտպանելու կը տկարանար, այնչափ որ Էնֆիլէճեան ինքը նախաձեռնարկ եղաւ վայն պահ մը Կ. Պոլիսէ հեռացնելու, և իր հայրենիքին ու եպիսկոպոսակ կն ան վիճա եղող Տիարպէքիր յղելու: Տեղապահութիւնը յանձնուեցաւ նոր եպիսկոպոսներէն Մովսէս Ամպէրպոյեանի, այն ալ տկար անձնաւորութիւն մը, բայց ուղղամիտ և համեստ, որ սիրով ուրիշի կը թողուր, պատրիարքարանի գործերուն առաջնորդել, և այդչափը կը բաւէր որ Էնֆիլէճեան յառաջ անցնէր և Գապանճեանի և Անտոնեանց ասպարեզ չտրուէր հակահասունեան հասարակութեան վրայ իշխելու, թէպէտ բաւական չէր անոնց ազդեցութիւնը ջնջելու, որով միշտ մրցակցութիւնը կը տիրէր, և հակահասունեաց ներքին ոյժը կը քայքայուէր: Յովհան Բիւրէլեան Տիարպէքիրէն դառնալէն ետքն ալ իր անձը, ևսքանակս կասկածելի կը տեսնուէր հանրութեան աչքին, և պինքն պաշտօնէն ալ հեռացնելու ձեռնարկներուն սկսան, և մինչև իսկ 1876 յունիս 24-ին Արևելեաց ընդհանուր ժողովը վայն պաշտօնանկ հռչակելու հասաւ, տեղապահ նշանակելով Օրմանեան Մաղաքիա վարդապետը, որ նոր դարձած էր Հռոմէ, ինչպէս պիտի տեսնենք: Սակայն միևնոյն Հասունն ալ իր աքսորէն կը դառնար, օգտուելով Մուրատ Ե. կայսեր գահակալութեան առթիւ շնորհուած ընդհանուր ներումէն. ուստի հարկ եղաւ իսկոյն ներքին պայքարները լռեցնել, և մեծ հակառակորդին ներկայութեան դէմ պատրաստուիլ, որով Բիւրէլեան դէմ եղող շարժումն ալ լռեց, բայց կացութիւնը հիմնապէս չբարւոթեցաւ:

2848. ԱՆՏՈՆԵԱՆՑ ԳՈՐԾԵՐ

Երբոր Անտոնեանք պարտաւորուեցան Հռոմը թողուլ (2832), Իտալացի բարեկամի մը յանձնեցին իրենց վանքին ու գոյից պահպանութիւնը և պապական տէրութեան դէմ պաշտպանութիւնը, սակայն երկար չտևեց այդ վիճակը: Շուտով սկսան քաղաքական շփոթները Գաղղիոյ և Բրուսիոյ պատերազմին պատճառով, և Գաղղիացւոց պարտութիւնը ստիպեց վիրենք պապին պաշտպանութենէ ձեռնթափ ըլլալ, և իտալական բանակը յառաջ քալեց, և 1870 սեպտեմբեր 8/20-ին Հռոմը գրաւեց, զոր մայրաքաղաք հռչակած էր, և պապական իշխանութիւնը Վատիկանի պալատին շրջափակին մէջ ամփոփուեցաւ: Անտոնեանք պատեհութենէն օգտուեցան իրենցմէ ներկայացուցիչ ու գործակատար մը յղել Հռոմ որ վանքին և գոյից տիրանայ, և նոյնիսկ իտալական տէրութեան առջևն ալ պէտք եղածը գործէ, և իրենց սեփականութիւնը պաշտպանէ, և եկեղեցական ու վանական ստացութեանց գրաւման օրէնքէն ալատէ: Այդ պաշտօնին ընտրուեցաւ Մաղաքիա վարդապետ Օրմանեան, միաբանութեան և ազգապետութեան կողմէն լիազոր փոքանորդութեամբ, և Կ. Պոլիսէ մեկնեցաւ ապրիլ 1871 ապրիլ 24-ին և Հռոմ հասաւ ապրիլ 29/11 մայիսին, ոչ միայն վանական գոյից տիրացաւ, այլ ևս հետզհետէ հասոյթները գանձեց, պարտքերը վճարեց, վանքն ալ տպարանի վարձեց, զի միաբանութիւնը Հռոմ դառնալու գաղափարը թողուց, քանի որ եկեղեցականապէս բանադրեալ պիտի նկատուէր, և ազգայնապէս հասարակութիւն չունէր: Այդ պատճառով բոլոր շարժական գոյքեր, մատենադարան, թղթից դարան կամ դիւան, եկեղեցական սպասք և զգեստք և արժէքաւոր պատկերներ և իրեր հետզհետէ Կ. Պոլիս յղուեցան: Օրմանեան Լիբանանի կաթողիկոսարանի անունին եղող հասոյթներուն պաշտպանութիւնն ալ ըրաւ, և երկար բանակցութեամբ և պատճառաբանեալ գրութեամբ Անտոնեանց վանքը իբրև սեփական դրամով գնուած օտարահպատակ ստացութիւն (2065) գրաւումէ ալատաց, և դատեր ալ վարեց պապական տեսակէտով Անտոնեանց իրաւունքները մերժողներուն դէմ: Անոնց հետ գործողութեանց ուրիշ ճիւղ մըն ալ կար Օրմանեանի առջև, հետևիլ Վատիկանի և փրոփականտայի մէջ հակահասունեանց մասին կատարուած գործողութեանց, լուսաբանել և տեղեկացնել Կ. Պոլսոյ գործիչները, և լատին տարրին միտքը պատրաստելու համար թէ լրագիրներու և հանդէսներու մէջ և թէ առանձինն տեստակներով հրատարակութիւններ ընել, որ իրեն շարունակեալ աշխատութիւն մը եղաւ: Օրմանեան 1871-է 1876 Հռոմ մնաց այդ գործերը վարելու համար, 1875-ին ուղեղային թաղանթաւտապի մահացու հիւանդութիւն մըն ալ անցուց, բժշկապետներն իսկ անյոյս ձգելու աստիճան, և օղափոխութեան համար ևրոպական ուղևորութիւն մը կատարած ատեն, Վիեննայի մէջ Հասունի կողմէն անձամբ շուսյուած հրապոյրներուն ալ դիմադրեց, և երբոր միաբանութիւնը որոշեց վանքն ալ վաճառել և բոլորովին Հռոմի հետ յարաբերութիւնները խզել, այն ալ լրացուց 1876 ապրիլ 6/18-ին և ապրիլ 30ին Հռոմէ մեկնեցաւ և մայիս 7-ին Կ. Պոլիս հասաւ, և նոր կերպարան առին Անտոնեանց գործերը: Շփոթ և ցրուած ժամանակներու մէջ Գազանձեան ալատաբար վարած էր միաբանութեան ելևմտական գործերը, փոխառութիւններ կատարած, պարտքեր ըրած, ծախքերը շատցուցած՝ իրեններուն հետ ապրելով և ամէն կերպ գործողութեանց միջամտելով, որով միաբանական սնտուկին վրայ մեծ պահանջ մը կը ցուցնէր, և Հռոմի վանքին գինը, զոր Օրմանեան միասին բերած էր, իր պահանջին յատկացեալ կուզէր: Բայց կանոնաւոր հաշիւ չկար, միաբանութիւնը ուզեց նախապէս վայն կազմել, և միաձայնութեամբ այդ գործն ալ Օրմանեանի յանձնուեցաւ, որուն արդիւնքն եղաւ Գազանձեանի ոչ թէ պահանջող այլ պարտական ըլլալը: Այս պատճառով ստիպուեցաւ արբահայրութենէ հրաժարիլ, և սեպտեմբեր 1-ին գումարուած ժողովը արբահայր ընտրեց Ռափայէլ Միասէրեան վարդապետը, Օրմանեանն ալ խորհրդականաց ժողովին անգամ և ելևմտից ընդհանուր տեսուչ ընտրուեցաւ:

Մինչև հիմա արևելեան կաթոլիկ հասարակութեան և Անտոնեան միաբանութեան գործերուն մէջ յիշեցինք Մաղաքիա Օրմանեան վարդապետին անունը, բայց նա հայ ազգութեան հետ ալ յարաբերութեան կը մտնէր նոյն միջոցին, և 1877 փետրուար 11-ին Մկրեան Յովհաննէս փոխանորդի առաջնորդութեամբ Ներսէս պատրիարքի կը ներկայանար, և Հայոց պատրիարքարանի իրաւասութեան և Հայ եկեղեցոյ անդամակցութեան անցնելու խնդրանքը կը մատուցանէր: Ուստի ի դէպ կը կարծենք անոր նախընթացին վրայ տեղեկութիւններ աւելցնել այստեղ, մանաւանդ որ վայն ապագային ալ ազգային գործունէութեանց մասնակից և գործակից պիտի տեսնենք: Օրմանեանի և պատմութեանս հեղինակին սերտ առնչութիւնը կամ նոյնութիւնը, թող իբր չքմեղանք համարուի, եթէ անոր մասին քիչ մը աւելի երկարած երևնանք: Մաղաքիա, աւազանի անունով Պօղոս, Օրմանեանի Անտոնի և Միասէրեան Եղիսաբեթի որդի, ծնած է Կ. Պոլսոյ Բերա թաղը 1841 փետրուար 11-ին, որով օրըօրին 36 տարեկան էր Ներսէս պատրիարքի ներկայացած օրը: Օրմանեան մականունը ծագած է իր մեծ պապին հայադաւան Յովհաննէսի Դանուբեան նահանգի Տէլիօրման գաւառին բինկը ըլլալէն: Զինուորադրեալ Յովհաննէսին տակաւին նոր փեսայ՝ Ռոտոսթոյի մէջ սպանուելուն վրայ, յղի այրին Կ. Պոլիս կու գայ և պատահաբար հռոմէադաւան տուն մը կը պատրաստուի, ուր կը ծնի Աստուածատուր որդին, որով հռոմէադաւան կը սնուցուի, նոյնպէս կըլլան անոր Յովհաննէս և Անտոն և Միքայէլ որդիները, հետևաբար Պօղոս թոռն ալ, որ հապիւ տասը տարին լրացուցած Նահապետեան Եղիա վարդապետի թելադրութեամբ 1851 մայիս 13ին Հռոմ կը վրկուի Անտոնեանց վանքին (2065) աշակերտութեան: Հոն նախակրթական և երկրորդական ընթացքը կը լրացնէ, 1855 դեկտեմբեր 25-ին ընծայացու կորհնուի Մաղաքիա անունով իր հօր հովանաւորին և իր կնքահօր Փափապեան Մաղաքիայի յիշատակին, և 1858 յունուար 12-ին կրօնաւորական ուխտագրութեամբ Անտոնեան միաբան կորհնուի: Այնուհետև բարձրագոյն ուսմանց համար կը սկսի յաճախել հռոմէական կղերին եկեղեցական համալսարանը, ուր տարեկան քննութեանց մրցակիցները շահելէ գտա երկամեայ ընթացքով իմաստասիրութեան մագիստրոսի աստիճանը կընդունի 1860 օգոստոս 31/12 սեպտեմբերին, և քառամեայ ընթացքով աստուածաբանութեան մագիստրոսի աստիճանն ալ կը ստանայ 1865 օգոստոս 24/3 սեպտեմբերին: Այդ վերջին աստիճանին մեծ քննութիւնը հրապարակային և պապական հանդիսադրութեամբ կը կատարուի մայիս 27/6 յունիսին, որ բացառաբար և ցանցառակի կարողագոյններու կատարած ձևն է, իսկ արևելցի ուսանողաց մէջէն նախընթաց չունէր: Ուսանողական ընթացքին հետ միաժամանակ Անտոնեանց վանքի մէջ 1859 հոկտեմբեր 5-էն սկսեալ կրտսեր դասարանին կառավարութեան, 1860 հոկտեմբեր 28-էն ուսուցչութեան, և 1862 դեկտեմբերէն վանական մատենադարանեպութեան պաշտօններն ալ կը վարէր: Իսկ 1863 օգոստոս 12/24-ին քահանայական աստիճան կը ստանար Հիւրմիւլեան Եղուարդ արխեպիսկոպոսի ձեռնադրութեամբ, և 1865 յունիս 22/4 յուլիսին Հռոմոյ աստուածաբանական ակադեմիային կընդունի, և նոյն տարուոյ հոկտեմբեր 28/9 նոյեմբերին փրոփականտայի վարժարանին հայերէնի ուսուցիչ կը մտնէ: Եկեղեցական իրաւագիտութեան ընթացքը ընդհատելով Կ. Պոլիս կու գայ 1866 փետրուար 5-ին, 15 տարուան բացակայութենէ ետքը, և իր Գապանձեան արքահօր քարտուղար կը մասնակցի Կ. Պոլսոյ մէջ յուլուած կաթոլիկ այթոներու և միաբանութեանց և յատկապէս Անտոնեանց խնդիրներուն (2782-2783), և 1867 սեպտեմբեր 20-ին, Կ. Պոլիսէ կը մեկնի հռոմէական ատեանին առջև վարելու դատին առթիւ, որուն մէջ գործոն դեր կը վարէ (2783): Սոյն միջոցին եկեղեցական իրաւագիտութեան ընցաքն ալ աւարտելով այդ երրորդ ճիւղին մագիստրոսութեան աստիճանն ալ կը ստանայ 1868 օգոստոս 20/1 սեպտեմբերին, և

օգուստոս 23/4 սեպտեմբերին հրապարակային քննութեամբ աստուածաբանական ակադեմիայի կաճառորդի աստիճանին կը բարձրանայ: Նոյն տարին Կ. Պոլիս կը դառնայ հոկտեմբեր 25-ին, և կաշխատակցի կաթոլիկ սիւնհոդոսին նախապատրաստութեան համար կազմուած բոլոր յանձնաժողովներուն: Սիւնհոդոսի մէջ խորհրդական աստուածաբանի և խմբագիր քարտուղարի պաշտօնները միանգամայն կը վարէ (2786), և վատիկանեան ժողովին առթիւ 1869 նոյեմբեր 6/18-ին Հռոմ դառնալով հայապգի եպիսկոպոսաց խորհրդական աստուածաբան կը նշանակուի: Հակահասունեան շարժումին Հռոմի մէջ տեղի ունեցած դերը արդէն բացատրեցինք (2831-2833), և վերջին յօդուածով ալ (2843) պատմեցինք Անտոնեանց գործերուն ունեցած մասնակցութիւնը, և վերջապէս Հայոց պատրիարքին դիմելը Հայ եկեղեցոյ դաւանութեան և իրաւասութեան ներքև անցնելու համար, որուն գործադրութիւնը սակայն յետաձգուեցաւ նոյնինքն Վարժապետեանի հրահանգով, որ գիտակ ըլլալով հակահասունեանց հասարակութեան քայքայուելուն և Հայոց պատրիարքարան անցնելու միտումները սկսած ըլլալուն, բացարձակ կերպով կը հրամայէր, թէ մենք քեզ կը ձանձնանք, ուր որ ալ ըլլաս մերն ես, տեղդ նստէ և խմորէ: Օրմանեանի գրուածներն ու գործերը Ներսէսի անձանօթ չէին, և անոնց հիմնուելով էր որ այդ հրահանգը կու տար: Օրմանեանի կեանքին վրայ ընդհանուր կերպով կրնանք աւելցնել թէ ուսումն ու դաստիարակութիւն և հրատարակութիւնք անոր սիրելագոյն ասպարէզն եղան, ոչ միայն Հռոմի և Կ. Պոլսոյ վանական վարժարաններուն մէջ աշխատեցաւ շարունակ, այլ և Անտոնեանց 1867-ին Բերայի մէջ բացած Անտոնեան գիշերօթիկ վարժարանին, և 1878-ին բացած Համապգեաց օրիորդաց վարժարանին գործերը իրեն յանձնուեցան: Արևելեան կաթոլիկաց շարժումմին բացատրութեան և պաշտպանութեան համար վանապան լեզուներով բազմաթիւ և ընդարձակ լրագրական յօդուածներէ վատ՝ հինգ հատ ալ յատուկ հրատարակութիւններ ի յոյս ընծայեց, որոնց մէջ Վատիկան և Հայք գաղղիերէն հատորը, 307 երեսներէ բաղկացեալ, բաւական ըստուար գործ մըն է: Բայց աստի պաշտօնական գրուածներն գրեթէ բոլոր իր գրիչէն ելան, ինչպէս ոմանց համար յիշեցինք (2833): Յիշենք վերջապէս որ Հռոմ փութաց Օրմանեանի հեղինակութիւնները արգիլել գրոց իր ցուցակին (index) անցունել:

2850. ԴԻՄՈՒՄԷՆ ԵՏԶԸ

Օրմանեան մօտէն տեսած ըլլալով հակահասունեանց անկայուն վիճակը, և ներքին պառակտումով դէպի քայքայում դիմելը, որոշած էր գործին մէջէն ճողոպրիլ ելլալ և ապագային եկեղեցոյն ծառայեցնել իր գործունէութիւնը: Հռոմէական եկեղեցոյ սկզբանց և գործունէութեանց շատ մօտէն տեղեակ, կանուխէն պաղութիւն մը վագացած էր անոնց հանդէպ, և հռոմէական վարդապետութեանց ներհուն հմտութիւնը հակառակ արդիւնք ունեցած էր իր միտքին և սիրտին վրայ. և երբոր հակահասունեան շարժումին մասնակից կըլլար իբր գլխաւոր գործիչ ու գրիչ, իր դիտումը աւելի առաջ անցնիլ էր, և վայդ համարփակ յայտարարած էր անոնց, որ իրեն համար հռոմէական շրջանակի մէջ փայլուն ապագայ մը ցուցնելով, և հռոմէական պօրութեան դէմ յաջողութեան անհնարութիւնը յիշեցնելով, սկիբքէն վինքը ետ կենալու կը յորդորէին, ըլլալ համապգի մերձաւորներ և բարեկամներ, ըլլան օտարապգի ընկերակիցներ և համակիրներ: Հայոց պատրիարքին տուած տեղը մնալու և խմորելու թելադրութիւնը ստիպեց վինքը միևնոյն շրջանակին մէջ աշխատութիւնները շարունակել: Արդէն Անտոնեան միաբանութեան մէջ ստանձնած պաշտօնները յիշեցինք, որոնց վրայ պիտի աւելնան Օրթաքէօյի վանքին տեսչութիւնը և դիւանական գործոց և թղթոց կարգադրութիւնը: Իսկ հասարակային գործոց շրջանակին մէջ, իրեն յանձնուեցան պատրիարքական դիւանը, վարչական ատենադպրութիւնը, ելամտից հաշուակալութիւնը, ուսումնական խորհրդոյ անդամակցութիւնը, և

երեսփոխան ալ ընտրուեցաւ: Բայց Հայոց պատրիարքարանի գործերէն ալ հեռու չմնաց ազգահամարի յանձնաժողովի անդամակցութեան կոչեցաւ, ազգային մատենադարանի վերատեսուչ անուանուեցաւ, և ազգային խնդիրներու և բանակցութեանց մասնակից գտնուեցաւ, յաճախ ալ թաղական լսարաններու մէջ ատենաբանութիւններ խօսեցաւ, որոնցմէ տպագրութեամբ հրատարակուածներ ալ կան (80. ՄԱՍ. 2588), և Սիպիլեան Կղեմէս հնգէտ և հնխոյս վարդապետին համար 1878 յունիս 18-ին խօսած դամբանականը հայ հասարակութեան ճանչցուց զինքն իբր հմտութեամբ և տաղանդով ծանօթ անձ մը, և ունկնդրաց վրայ մեծ ազդեցութիւն ըրաւ (78. ՄԱՍ.2142): Զանազ օրմանեան ընդարձակել Հայոց պատրիարքարանի անցնելու միտքը, ունեցողներուն շրջանակը, և առանձինն իրեն միաբանակիցներուն թելադրեց խմբովին այդ քայլն առնել, և Ներսէս պատրիարքէ ալ դիւրութեանց խոստումներ ստացաւ, մինչև իսկ Արմաշու վաքը Անտոնեանց յանձնելու առաջարկը խօսուեցաւ: Սակայն այս մասին համեմատութիւն չգոյացաւ. զի կային քանիներ որոնց սիրտին մէջ ամուր էր կաթոլիկութեան զգացումը, ուրիշներ տարիքին առած էին նոր կացութեան մէջ մտնելու դժուարութիւն կը զգային. կային ալ որոնք մեծ ազդեցութեան մէջ գիրք մը կազմելու վստահութիւն չունէին, իսկ երիտասարդագոյններն բոլորովին իսկ սքեմը մերկանալու փափաքողներ կը գտնուէին, ինչպէս ընողներ ալ եղան: Միւս կողմէն հետզհետէ կը պայրանային հակահասունեանց ներքին պառակտումները, որոնց արձագանգ կըլլար խաղաղասէր ոմն միառմի թուելով խօսքի նիւթ եղող կէտերը: Անտոնեանց արժանիքը ու ընթացքը գնահատելով և Էնֆիէճեանի կողմէն տարածուած քսութիւնները ցրելով (76. ՄԱՍ. 1893-1895): Իսկ Բիւբէլեան շարունակ աւելի կը թուլնար իր գործառութեանց մէջ կասկածանօք կը դիտուէին Հասունի կողմէն իրեն ցուցուած մօտաւորութիւնները, և իրեն ալ Հասունեանց հետ տակաւ աւելցող մտերմութիւնը, բայց պատրիարքական տագնապին ելքը վտանգաւոր տեսնուելուն՝ հասարակութիւնը կը լռէր, զի Հասունին դիրքին օրըստօրէ ամրանալուն վտանգը ակներև էր: Այսպէս անցան երկու ևս տարիներ գայթիգայթի վիճակով մը, որուն ուժգնակի պաշտպանութիւնն իսկ խիթալի կը տեսնուէր, մինչև օր մը, 1879 փետրուար 27 առաւօտուն յանկարծ լսուեցան որ Բիւբէլեան Յովհան պատրիարք գիշերայն իր բնակութենէն անյայտացած և Հասունի մօտ գացած է և այսօր վաղը Հռոմ կուղևորի: Հակահասունեանց քայքայումը կատարեալ էր, բայց տակաւին պաշտօնական ձևը կը մնար, զի հասուն յաջողած չէր իր ետ առնուած պատրիարքական հրովարտակը վերանորոգել: Հակահասունեաններէն Հասունին կողմը անցնողներու անուններ կը լսուէին, Հայոց պատրիարքարան դիմողներ ալ եղած էին, ինչպէս Ապտուլլահեան եղբարք Վիշէն և Յովհաննէս և Գէորգ անուանի լուսանկարիչներ, Յովսէփ Շիշմանեան բժշկապետ գրական անունով Ծերենց, Յովսէփ Իսքէնտէրեան, Գրիգոր Նիկողիմոսեան, Անտոն Թիւլպէնտճեան և ուրիշներ: Օրմանեան պատեհ համարեց պաշտօնապէս մէջտեղ դնել և Ընդհանուր ժողովոյ առջև հանել առաջարկ մը, որ ժամանակէ մը ի վեր յղացուած էր, այսինքն հակահասունեանց բաժինը Հասունեանց գրաւումներէն մնացած Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյն հետ իբր յատուկ թագ մը Հայոց պատրիարքարանին ազգապետական իշխանութեան ներքև դնել, եկեղեցական տեսակէտէն ինչինչ մասնաւորութիւններ կամ տարբերութիւններ պահելով, և այս նպատակով Ներսէս պատրիարքին հետ բանակցութիւն ալ սկսած էր, և նա ալ եպիսկոպոսաց առանձինն գումարման մը մէջ անոնց համեմատութիւնը ապահոված էր: Իրաւ ծրագիրին կերպը հաստատուն գիրք մը չէր, բայց օգտակար էր դէպի կատարեալ միաւորութիւն առաջնորդելու: Սակայն հակահասունեան մրցակից պետերը, որ նուազեալ և վտանգեալ հասարակութեան մէջ ալ իրենց գիրք կազմելու կը հետապնդէին, ամէն ճիգ թափեցին առաջարկը խափանելու, որով Օրմանեանի ուրիշ ելք չէր մնար,բայց եթէ

բացարձակ միաւորութեան յարողներու խումբը կազմել և անոնց հետ Հայոց պատրիարքին ներկայանալ: Առաջին քայլը առնուեցաւ Զատիկի երկուշաբթին 1879 ապրիլ 2-ին պատրիարքարանի պաշտօնական շնորհաւորութեանց մէջ հակահասունեանց կողմէն երեսուն հոգւոյ պատգամաւորութիւն մըն ալ ներկայացաւ Օրմանեանի գլխաւորութեամբ, և նշանաւոր ուղերձ և պատասխան փոխանակուեցան (79. ՄԱՍ. 2292): Շնորհաւորողներուն հետ էր նաև գաւառական դպրոցաց երեք ընկերութեանց համախումբ պատգամաւորութիւնը, որուն մասնակցողներէն դարձեալ հակահասունեաններ կային: Օրմանեանի գաղափարին համակրութիւն յայտնողներ քիչ չէին, բայց ընտանեկան յարաբերութիւններ, անհատական ակնածութիւններ, պաշտօնական ակնառութիւններ շատերը վճռական որոշման պահուն վարանման կը մատնէին: Այս պատճառով հարկ եղաւ վերջնական ցանկին կազմութեան գործը ամիսներով յապաղել, մանաւանդ բարձրագոյն դասակարգէ եղողներուն պիջանալով:

2851. ՎԵՐԱԴԱՐՁԻ ՕՐԸ

Բայց հնար չէր անպայման յետաձգել. գործը այլևս հրապարակ ելած էր և յապաղումը սկսած էր տարբեր մեկնութեանց տեղի տալ, ուստի վճռական որոշման վարանողները ետև թողլով՝ յօժարակամ պատրաստները հաւաքուեցան գործը վերջացնել: Յապաղման պատճառներէն մէկն ալ Ներսէս պատրիարքի նոր հրաժարականով մը Պէյքօզ քաջուած ըլլալն էր, և հարկ կըլլար հրաժարականի միջադէպին փակուելուն և Ներսէսի պատրիարքարան դառնալուն սպասել: Վերջապէս 1879 հոկտեմբեր 28 Խաչ Գիւտի կիրակի օրուան ժամադրութեան առնուեցաւ, որ է ըսել Օրմանեանի համար 1877 փետրուարի դիմումէն 2 տարի և 9 ամիս ետքը: Իրեն հետ գալիք անձանց պանապան թաղերէ ըլլալուն՝ մեծ կամուրջին Կ. Պոլսոյ գլուխը ժամադրավայր որոշուեցաւ, ուր հետզհետէ հասան 34 աշխարհականներ և շարք մը կառքերով իջան Գումաքաբուի պատրիարքարանը, որուն բակն ու սրահները ու շրջակայ փողոցները լեցուն էին խնդակից և ծափահարող խումբն անբազմաբար: Ընդունելութիւնը փառաւոր և պատուաւոր ձևերով կատարուեցաւ, և խումբը առաջնորդուեցաւ մեծ սրահը, ուր պատրիարքը կը մնար եպիսկոպոսներէ և վարդապետներէ շրջապատուած: Եկող խումբին առաջը կը գտնուէին հինաւուրց և նշանաւոր անձնաւորութիւններ, Սերովբէ Ազնաւորեան փաստաբան, Գաբրիէլ Սևեան բժշկապետ, Պօղոս Խուրտաձեան դեղագործ արհեստապետ, Անտօն Օրմանեան, Պօղոս Շիշմանեան, Թովմաս Եսայեան, կոմիտաս Կէօզէեան, Հեթում Ալիշան, Գրիգոր Խուրտաձեան և ուրիշներ (79. ՄԱՍ. 2462): Յառաջ անցաւ Օրմանեան Մաղաթիա վարդապետ, և գրաւոր ուղերձ մը արտասանեց Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւնն և ազգային պատրիարքարանի հպատակութիւնն ընդունող՝ ներկայ և բացակայ խումբին կողմէն, որոնց 72 հոգւոյ ամբողջական ցուցակն ալ յանձնեց: Ուղերձին մէջ կը յիշուէին ազգային միութեան կրօնական իրաւասութիւններով բաժնուելուն վնասներն, իրենց խումբին ետևէն ուրիշներուն ալ պատրաստ ըլլալը, Ներսէս պատրիարքի ազգօգուտ ձեռնարկները և ազգախնամ ջանքերը, և ապագայ յաջողութեանց համար յուսակից բարեմաղթութիւններ՝ յայտարարելով թէ այնչափ յուզուած է, որ չվստահանալով մտամփոփ խօսիլ վագսումները գիրի առած է: Ներսէս ալ ծանրացաւ ազգային անջատմանց կէտին վրայ, անոնց վնասները յիշեց, ապագային վրայ յոյսեր յայտնեց, և համարձակ ըսաւ, թէ իրաւ աւելի վարդարուն տուն կը բնակէինք, բայց ձերը չէր, մինչև այս համեստ տունը ձերն է. աւելցուց թէ կրօնափոխութիւն չէ ըրածնիդ, այլ ձեր տունը գալ է, և այս ոճով բաւական ընդարձակեց Ներսէս իր բանախօսութիւնը (79. ՄԱՍ. 2463), և պահպանելով փակեց: Նոր եկողներուն կողմէն խօսեցան ևս Թովմաս Եսայեան և Սերովբէ Ազնաւորեան, որոնց պատասխանեցին Ասլանեան Ստեփան փաշա և Տիգրան Եուսուֆեան, և վերջինը յատուկ կերպով

շեշտեց թէ պատրիարքարան դիմողներ ազգին համար նորեկներ չեն, և թէ անոնց մէջ կը գտնուին այն անձեր, որոնցմէ իրենք երիտասարդութեան ատենին ազգասիրական պագուստներ և ձեռնարկներ սովորեցան: Ազգային ժողովականներ գրեթէ համախումբ լեցուցած էին ներքին և արտաքին սրահները, և պատուասիրութեանց հետ մտերմական տեսակցութիւններ շարունակեցին ժամը մը չափ, մինչև որ պատրիարքը ի դէմս խումբին իրենց առաջնորդը պատուելու համար, ամէնքը մայրեկեղեցի հրաւիրեց, և Օրմանեանի վեղար և փիլոն նուիրելով միասին եկեղեցին իջեցուց, և Ծայրագոյն Վարդապետութեան գաւազանի տուչութեան կարգը կատարեց եպիսկոպոսներու ընթերականութեամբ և մասնակցութեամբ: Այնչափ խուռն էր բազմութիւնը որ արարողական տեղափոխութիւնը կատարել անհնար եղաւ, և բոլոր կարգը բեմին վրայ կատարուեցաւ, ուր դպիրներն ալ ելնել ստիպուեր էին: Արարողութեան լրանալէն ետքը դարձեալ պատուասիրութիւններ եղան պատրիարքարանի մեծ սրահին մէջ, և հետզհետէ բազմութիւնը ցրուեցաւ, ուրախալից պարագայով մը տօնախմբութեան օր մը անցուցած ըլլալու գոհունակութեամբ: Օրմանեան հոկտեմբեր 31 ին Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ քարոզիչ անուանուեցաւ, նոյեմբեր 4-ին առաջին քարոզը խօսեցաւ, և 25-ին առաջին պատարագը մատուց: Հայոց պատրիարքարան չգացած երեք ընդարձակ թուղթերով հրաժեշտի ողջոյնը ուղղած էր Անտոնեան միաբանութեան, պարզելով իրաց վիճակը, իր պագուստները, և իր նպատակը, և միանգամայն առաջարկած է իր վարած պաշտօնները փոխանցել և յանձնել ելմտական հաշիւները, սակայն այնչափ սիրով կատարուած էր բաժանումը, որ միաբանութիւնը շարունակեց անոր ձեռքը թողուլ իր ելմտական գործերը մինչև Կ. Պոլիսէ մեկնելուն օրը: Օրմանեան հոկտեմբեր 29-ին հպատակութեան գիր մը ուղղած էր Գէորգ կաթողիկոսին իր և իրեն հետ եղողներուն կողմէն, Ներսէս պատրիարք ալ նոյեմբեր 9-ին այդ մասին տեղեկագիր թուղթ մը յղած էր Էջմիածին, և կաթողիկոսը դեկտեմբեր 14-ին ալ պատասխանեց յատուկ կոնդակներով (79. ՄԱՍ.2519):

2852. ԹԷՆՈՂՈՐԵԱՆ ԵՒ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Հակահասունեաց կացութիւնը և անկէ յառաջ եկած գործողութիւնները շարունակեցինք մինչև որ հանգրուանի մը վրայ կանգ առնենք բայց նոյն միջոցին ազգային պատրիարքարանի մէջը և շուրջը տեղի ունեցած շատ մը իրողութիւններ կան, որոնց գլխաւորները մոռացութեան մէջ չթողլու և պատմութեանս նիւթը ամբողջացնելու համար համառօտ ակնարկներով քաղել կարևոր կը սեպենք նախընթաց դէպքեր լրացնելու և ապագայ դէպքեր լուսաբանելու համար: Փարիսի Հայկապետեան վարժարանին պարտքին (2700) խնդիր փակուած չէր: Եւ յանկարծ նորէն խնդրոյ նիւթ եղաւ 1875 ին: Առաջին անգամ քաղուած տեղեկութեանց համեմատ, Ամբրոսիոս Գալֆայեան ոչ ևս վարդապետ, իր գաղղիացի կնոջ կը փոխանցէ Հայկապետեանի հաշիւներէն ունեցած 30,000 ֆրանքի պահանջը թէպէտ ժամանակով 35,000 ֆրանք յանձնուած կըլլայ, իրեն Կ. Պոլսոյ ունեւորներէն հաւաքուած, սակայն այդ վճարումը ծածկելով և նախնական գումարը 18 տարիներու քարդեալ տոկոսով 100.000 ի աճեցնելով, տիկին Ամբրոսիոսը, Կ. Պոլսոյ պատրիարքներէն կը պահանջէ գաղղիական տէրութեան ձեռքով և Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ կալուածներուն վրայ գրաւման գործողութիւն կը կատարէ, և պատրիարքարանէ ստիպողական վճարում կը պահանջէ (75. ՄԱՍ. 1683): Սակայն կատարուած հետապօտութիւններով կը ստուգուի թէ պահանջող տիկինը Ամբրոսիոսի կինը չէր, որ պահանջելու իրաւունք ունենայ, այլ պապապէս Ամբրոսիոսի փոխ տուող մըն է և ազգին հետ գործ ունեցած չէ, ինքն ալ մեռած է, և անոր ժառագորդներն են որ խնդիր կը յուպեն, սակայն ազգը անոնց հետ որևէ յարաբերութիւն ունեցած չըլլալուն, առած քայլերնուն անվաւերականութիւնը կը հաստատուի և կալուածներուն

վրայ գրուած գրաւի գործողութիւնը կը ջնջուի (75. ՄԱՍ. 1697): Մուրատեան վարժարանի խնդիր մըն ալ կը ծագի նոյն միջոցին, իբր զի Վենետկոյ Մխիթարեանք կորոշեն Փարիզի վարժարանը փակել, շէնքը վաճառել, և Մուրատեանը Վենետկոյ Ռափայէլեան վարժարանին հետ ձուլել: Ազգային ժողովը սկսաւ այդ խնդիրով զբաղիլ, իբր զի Սամուէլ Մուրատի կտակը առհասարակ հայ մանկաւոյն համար էր, զոր Մխիթարեանք լոկ հռոմէականներու սկսած էին սեփականել (2667), և ազգային ժողովը իրաւունք կը զգար Մխիթարեանց դէմ պահանջ յարուցանելու: Սակայն գործնական և արդիւնաւոր քայլ մը առնելու անհնարութիւնը շուտով զգացուեցաւ, զի ոչ միայն գործը բացարձակ կերպով Մխիթարեանց ձեռքը թողուած էր և ազգային պատրիարքարանի յիշատակութիւն իսկ չկար (2669), այլ և ձեռնհաս դատարանն ալ որոշել դժուար էր, քանի որ կտակը անգղիական վարժարանը, կալուածները իտալական, և միաբանութիւնը օսմանեան հպատակութեան ներքե կը գտնուէին (75. ՄԱՍ. 1691), ուստի պէտք եղաւ Մխիթարեանց պարզ յայտարարութեամբը խնդիրը փակել, և այսպէս ալ կը մնայ ցարդ, ազգային խիղճի առջև հաստատուած իրաւունքը օրինական ձևակերպութեանց համաձայնեցնելու դժուարութեան պատճառով: Այդ անցուդարձերուն ժամանակ կենդանի էր տակաւին, Սարգիս վարդապետ Թէոդորեան, բայց արդէն իննամսեայ և 1864 է ի վեր գործերէ քաշուած (ԹՈՂ. Դ. 460) առանձին կեանք կանցունէր Փարիզի մէջ, որով վարժարանաց շուրջը յուլուած խնդիրներուն մասնակցութիւն չունեցաւ, և միայն 1873 հոկտեմբեր 5/17-ին վարժարանաց մասին քանի մը վաւերագիրներ հրատարակութեան տուաւ (73. ՄԱՍ. 1451-1452), և 1877 յունիս 3-ին վախճանեցաւ (77. ՄԱՍ. 1954), 94-րդ տարին լրացուցած (2669): Թէոդորեանի գործունէութեան և աշխատութեան արդիւնքն եղան Մուրատեան և Ռափայէլեան վարժարանները, որոնց դրամագլուխները ապատեց կորսուելու վտանգէն, և իրենց նպատակին յատկացուց, բայց և պատասխանատու մնաց կտակները բացարձակ եղանակաւ Մխիթարեանց հաճոյքին յանձնելու գործին մէջ (2669), որով իր ապատածը ինքը կորուստի մատնած եղաւ, ընդհանուր հայութեան օգտին յատկացեալ հաստատութիւնները կրօնամոլ ուղղութեան ձեռքն անցնելուն պատճառ հանդիսացաւ, և օգուտը հռոմէադաւան փոքրիկ փոքրամասնութեան սեփականելու առիթ տուաւ. մինչև իսկ անյայտ մնաց և կը մնայ թէ Մուրատեան և Ռափայէլեան կտակներուն արդիւնքէն որչափ ինչ վարժարաններուն կը գործածուի, և որչափ ինչ ապատօրէն միաբանութեան կը տրամադրուի: Մեր տեսութեամբ ինչչափ կը բարձրանայ Թէոդորեան իր առաջին գործունէութեան մէջ, նոյնչափ կը նուազի երկրորդ տեսութեան ներքե: Հայկապնեան վարժարանի ձեռնարկին մէջ ալ որչափ մեծ եղած է իր ուսումնական եռանդը, նոյնչափ անխորհուրդ պէտք է ձանձնալ առանց միջոցներու ապահովութեան յառաջ նետուիլ և անպտուղ ստեղծելը: Մէկ խոսքով առաւելն ու նուազը, ուղիղն ու սխալը, գովելին ու մեղադրելին, տարօրինակ խառնուրդ մը կը կազմեն Թէոդորեանի գործունէութեան մէջ, և որովհետև գործիչներու մահուանէ ետքը լաւն է որ աւելի կը յիշատակուի և թերին կը մոռցուի, միշտ գովութեան առարկայ մը մնայ Թէոդորեան Սարգիս վարդապետի անունը:

2853. ՎԱՐՉԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրը բաւական յեղյեղեցինք, և Խրիմեանի պատրիարքութեան ժամանակամիջոցին ապարդիւն անցնիլը գրեցինք (2823). դժբախտաբար միևնոյնը, պիտի ըսենք Ներսէսի պատրիարքութեան տասնամեայ ժամանակամիջոցին համար ալ, թէպէտև տեսակ տեսակ նորութիւններ և ծրագիրներ յղացուեցան և վիճաբանուեցան, բայց երեք վերջնական և լրացեալ եզրակացութեան չյանգեցան: Այդ առաջարկներուն գլխաւորներէն մին եղաւ թաղական ժողով կազմելու գաղափարը: Ամէն սահմանադրական օրէնքներու մէջ ուղղակի

ընդհանուր քուէի թողուած են միայն օրէնագիր և համարառու մարմինները, ոչ երբեք վարիչ և մատակարար մարմինները: Ազգային սահմանադրութիւնն ալ կեդրոնական և գաւառական երեսփոխանները ընդհանուր քուէարկութեան յատկացուցած է, իսկ կեդրոնական և գաւառական վարչութիւններուն կազմութիւնը երեսփոխանական ժողովի վերապահած: Այս ընդհանուր կանոնէն բացառութիւն կը կազմեն թաղական խորհուրդները, որ թաղերու վարիչներն ու մատակարարներն են, բայց ուղղակի ընդհանուր քուէով կը նտրուին, և այդ գրութենէ յառաջ կու գան թաղական խորհուրդներու աններդաշնակ կազմութիւնները, ժողովրդական յուզմունքները, անտեղի միջամտութիւնները, յարափոփոխ կացութիւնները, և անհաստատ գործունէութիւնները, թող անհատական շահերով ընդհանուր շահերուն խափանուիլ: Ընդհանուր կանոնին համաձայն կըլլար եթէ թաղական խորհուրդներուն վրայ թաղային ժողովներ ալ գտնուէին, որոնցմէ ընտրուէին խորհուրդները, և ժողովը ըլլար լոկ կանոնագիրն ու համարառուն: Այս տեսութիւններէ ծագեցաւ թաղային խորհուրդներ հաստատելու ծրագիրը, որուն կազմութիւնը կը պատկանէր Նահապետ Ռուսինեան բժշկապետին, անուն մը վոր ստէպ կրկնեցինք ազգային ժողովներու գործառութեանց մէջ, և որ իր ծրագիրը ներկայեց 1875 յունիսին (75. ՄԱՍ.1699), ու համակիր ընդունելութեան ալ հանդիպեցաւ բայց ոչ որոշման յանգեցաւ և ոչ գործունէութեան մտաւ, և թաղական մատակարարութեանց հիմնական թերութիւնը իր դարմանը չգտաւ: Աւելի յաջող եղաւ վարչական ժողովներուն համար առաջարկուած նոր ձևը: Վարչութիւնը հինգ ճիւղի պիտի բաժնուէր, կրօնական, քաղաքական, կրթական, տնտեսական և դատական, իւրաքանչիւրը եօթնական մասնագէտներէ կազմուած ժողով պիտի ունենար, որոնցմէ մէկը ճիւղին գլուխը պիտի ըլլար ատենապետ կոչմամբ, բայց իսկապէս նախարարութեան նմանութեամբ, և հինգ պետերը միանալով պիտի կազմէին վարչական ատենը պատրիարքին նախագահութեամբ, որ միանգամայն ամէն ճիւղերուն նախագահը պիտի ճանչցուէր, և ամէն որոշումներու գործադիրը պիտի ըլլար: Ծրագիրը 37 յօդուածներով մանրամասնօրէն կը գծէր ընտրութեանց կերպերը, փոխադարձ յարաբերութիւնները, գործունէութեան ձևերը, և խնդիրներու լուծումները (76.ՄԱՍ1790-1791): Այս ծրագիրը ընդհանուր ժողովէ ալ վաւերացուեցաւ 1876 յունուար 30-ին (76.ՄԱՍ.1789), բայց գործադրութիւնը յետաձգուեցաւ, և մնայն 1880 հոկտեմբեր 31-ին (ԻԶՄ.1228) իբր ի փորձ գործածուեցաւ փոքր ինչ փոփոխմամբ, որովհետև վարչական խորհուրդը հինգի տեղ վեց պատասխանատու անդամներու վերածուեցաւ, որոնք խորհրդական անունն ալ առին, քաղաքականը ներքին և յարաբերական ճիւղերու բաժնուեցաւ, և իւրաքանչիւր ճիւղի ժողովները յապաւուեցան և նոր կառնանագիր ալ կազմուեցաւ (80. ՄԱՍ.2733-2734): Ատենապետ և ներքին գործոց խորհրդական ընտրուեցաւ Տիգրան Եռսուֆեան, կրօնական խորհրդական՝ նախ Մատթէոս Եպիսկոպոս Իսմիրլեան, և յետոյ Սիմէօն Եպիսկոպոս Սէֆէրեան, յարաբերական,՝ Միքայէլ, կրթական՝ Միքայէլ Մամիկոնեան, տնտեսական՝ Գարեգին Մելիքեան և դատական խորհրդական Սերովբէ Անպաւորեան, որ բոլորովին նոր կազմակերպութիւն մը տուաւ դատաստանական խորհուրդին և կազմական և դատավարական կանոնագիրքի ծրագիրներ պատրաստեց: Այդ գրութիւնը երկու տարի փորձելէ յետոյ թողուեցաւ, զի կառավարութենէ հաստատուած չէր, և զի վարչութեան պատասխանատու խորհրդականութիւնը ստանձնողներ չգտնուեցան (ԲԷՉ. 203), մանաւանդ որ հինաւուրց ձևին հետևողութիւնը ունակութիւն էր դարձած, և նոր ձևը օտարամուտ երևցաւ: Բայց անօգուտ եղած պիտի չըլլար եթէ շարունակէր և մշտապէս դառնար, զի 1863-ի սահմանադրութեան հաստատած 14 կրօնականով և աշխարհականով , ընդ ամէնն 20 կազմուած վարչութիւնը ճապաղ գրութիւն է, որուն ոչ մի սահմանադրական պետութեան մէջ հաւասարը կը գտնուի, և եօթն անդամով և յատկացեալ ճիւղերով վարչութիւն մը բաւական է Հայոց

պատրիարքարանի գործերը ամփոփ կերպով քննելու, արագ կերպով որոշելու և դիւրին կերպով գործադրելու մինչև բազմամյա, մարմին մը աւելի խորհրդարանի քան վարչութեան ձևը կառնէ, և իրօք ալ այդ դժբախտ հետևանքը տիրած է ազգային պատրիարքարանի մէջ: Սակայն օրինադրողներուն արդարացման համար կրնանք ըսել, թէ իրենց միտքին մէջ Ընդհանուր ժողովը երկամեայ շրջանով և երկամեայ տևողութեամբ միայն գործող մարմին մը պիտի ըլլար, որով կրօնական ու քաղաքական կոչուած ժողովները, աւելի քան վարիչ մարմին, պարզապէս Ընդհանուր ժողովոյ մնալուն ներկայացուցիչները կը նկատուէին: Արդէն ալ վարչութիւն և վարիչ բառերը սահմանադրութեան մէջ չեն գտնուիր. առաւելապէս նոր է վարչապետ անունը, որ քաղաքական ժողովոյ ատենապետներուն սկսաւ տրուիլ, որոնք միայն ատեն կազմուած ատեն գործունէութիւն ունենալ սահմանուած էին, մինչ իշխանութիւն բառը միայն պատրիարքին համար գործածուած է սահմանադրութեան մէջ (ՍՀՄ. 13): 2854. ԲԱՐԵՆՈՐՈՊՄԱՆՑ ԽՆԴԻՐ

Այս անցուդարձերուն հետ հրապարակի վրայ և հայութեան ամէն խաւերու մէջ խօսքի և կարծիքի տեսութեանց և գործադրութեանց նիւթ դարձած էր Հայկական խնդիրը, որ այլևս խորհրդապահ գաղտնութեան քօղին պէտք չունէր, քանի որ կրկին անգամ Սանօթէֆանոյի (2843) և Պերլինի (2844) միջազգային դաշնագիրներուն մէջ օսմանեան կայսրութեան պատուիրակներուն ստորագրութեամբ և կայսերական վաւերացմամբ ալ պաշտօնական գործոց կարգն անցած էր: Այդ դաշնագիրներուն մէջ Եւրոպական Թուրքիոյ ապստամբած տարրերուն վիճակը բարւոքմանց արժանացած էր, ոչ թէ անշուշտ ապստամբութեան արժանիքով, այլ նեղուած և հարստահարուած կացութեան արգահատանիքով: Երբոր այսպէս վանալան տարրներ նոր կացութեան և արտօնութեանց տէր կը դառնային, հայ տարրն ալ որ անոնցմէ աւելի նեղուած էր, ոչ միայն փափաք այլև իրաւունք կը վգար ինքն ալ մասնակցիլ բարեբաստիկ որոշմանց բայց ինքն ոչ ապստամբութիւն փորձած էր, ոչ կառավարութեան դէմ շարժում ըրած էր, և ոչ բռնադատական միջոցներու դիմած էր: Նա խաղաղ և հանդարտ կերպով իր վիճակը կը պարզէր իր կառավարութեան, և օտար պետութեանց գուրջ չարժել կը ջանար, որոնք գործողութեան հսկողութեան հրաւիրուած էին և երաշխաւորութիւն ստանձնած, յուսալով աւելի ընդունելութիւն գտնել այդ հանդարտիկ ուղղութեամբ քան թէ ըմբոստ պահանջմամբ: Սակայն իր նախընտրած ոճը ապարդիւն էր դարձած, և Պերլինի դաշնագիրը վիրենք աւելի բախտաւորած չէր, և իբր պատճառ կը ցուցնէր իրեն գործածած միջոցին տկարութիւնը: Հայերը շարժում ըրած չեն կըսուէր վոր Պերլինի պատուիրակութենէն դարձող Խրիմեանն ալ հերիսայի կաթսային առակովը կը բացատրէր, երկաթեայ շերեփներուն բաժին առնելու յարմարութեան և թղթեայ շերեփներուն անյարմարութեանը օրինակելով : Հայը ոչ ազատ տէրութեան, ոչ յատուկ իշխանապետութեան և ոչ կայսերութենէ անջատման գաղափարներ տածած էր, այլ Լիբանանի տրուած կացութեան նմանութեամբ (2701) կառավարութիւն մըն էր իր առաւելագոյն յուսադրութիւնը (78. ՄԱՍ. 2705). որուն Մարոնիէն շատ աւելի իրաւամբ կրնար արժանանալ (78. ՄԱՍ. 2164): Այսչափ էր և ոչ աւելի Հայկական խնդիրին իմաստը, որուն աւելի ճշդութեամբ բարեկարգութեանց խնդիր անունը տրուեցաւ: Այդ հիմամբ կը շարունակէին Ներսէսի ջանքերը թէ օսմանեան գահուն ու կառավարութեան և թէ հսկող պետութեանց դեսպանատուներուն ու դահլիճներուն առջև, ինչպէս նոյն միջոցին օրը օրին հրատարակուած յարաբերութիւնները և թղթակցութիւններ կը հաւաստեն, որոնց մէջ մէկ կողմէն խնդրուածք և հայցուածք կը կրկնուին, և միւս կողմէն աղիտալի դէպքերը կը պատմուէին: Երբոր խնդիրը այսպէս հրապարակի վրայ կը ծեծուէր: Ընդհանուր ժողովոյ խծրծող խմբակը անկէ ալ կծու դիտողութեանց առիթ կը քաղէր, Ներսէսի ըրածն ու չըրածն իրարու կը խառնէր, այնպէս որ հարկ կըլլար Ներսէսի ընդարձակ բանախօսութեամբ մը յատենի

ժողովոյն գործին ընթացքը բացատրել, սկզբնաւորութենէն մինչև ներկայ վիճակը (78. ՄԱՍ. 2153-2157), որ մեծամասնութիւնը կը գոհացնէր, բայց դժգոհներու խումբը չէր լուեր, և Թադէոս Պէկեան աւելի առաջ անցնելով ուղղակի պատրիարքին դէմ ծանր խօսքերով ամբաստանող կը կանգնէր, և հարկ կըլլար քննիչ յանձնաժողով կազմել (78. ՄԱՍ.2159), որուն սակայն նա չէր ներկայանար, և իր յայտարարած փաստերը չէր հաղորդեր, և միայն յատենի ժողովոյն կարգալ կը պահանջէր: Ժողովը կը պնդէր որ առաջ յանձնաժողովէն անցնէր, և միայն Ներսէսի պահանջին վրայ ժամերով Պէկեանը լսելու յանձնառու կըլլար, որ լուտանքէ և երևակայական ենթադրութիւններէ վատ ոչ մի փաստ և ոչ մի վաւերագիր չէր ներկայեր և առիթ կընծայէր անդամ մըն ալ ժողովական գոհունակութեան և պաշտօնական հաւանութեան յայտարարութիւն մատուցանելու Ներսէսի (78. ՄԱՍ. 2186), իսկ ինքն իբրև քու և զրպարտող ժողովական որոշմամբ՝ դատապարտութեան կենթարկուէր (78. ՄԱՍ. 2201), և չհամակերպելուն վրայ երեսփոխութենէ կը մերժուէր (79. ՄԱՍ. 2245): Սակայն Ներսէս անտանելի կը գտնէր իր կացութիւնը, իր անդադար և անխոնջ ճիգերը զգալի արդիւնք չէին արտադրեր, հսկող պետութիւններ գործնական միջոցներ ձեռք չէին ունենար, իր հիւանդութիւնն ալ զինքն սաստիկ կը տանջէր, զի ոչ միայն պտոյտի և օդի և զգուշութեանց դարմանները չէր կրնար գործածել, այլև սրտնեղութիւններ կը վայրացնէին, խժրժող ընդհմադիրներն ալ նորանոր խնդիրներով զինքն կը նեղէին: Այդ կացութեան առջև քանիցս հրաժարելու միտքեր էր յայտնած և հրամանագիրներ ալ ներկայացուած, և պահ մը պատրիարքարանէ քաշուած, սակայն ոչ միայն թախանձանօք կը մերժուէին, այլև ինքն միջադեպներու և անհրաժեշտ պարագաներու առջև անհոգ չէր կրնար մնալ, և գործի կը դառնար: Առօրեայ գործոց համար խորհրդական կամ փոխանորդ եպիսկոպոս մը հաստատուած էր պատրիարքարանի մէջ, առաջ Մխիթարեան Խորէն, և վերջէն Իվմիրլեան Մատթէոս, բայց գլխաւոր գործեր Ներսէսի ներկայութիւնը կը պահանջէին: Կառավարութիւնն ալ մերժեց անոր 1878 դեկտեմբեր 23-ին տուած հրաժարականը. զի կայսր ալ կառավարութիւնն ալ մերժեցին և յանձն չառին անոր քաշուիլը, ուստի միևնոյն օր կրօնից պաշտօնեային ձեռքով ետ դարձուցին անոր հրաժարագիրը: Այդ պարագաները բաւական են հաստատելու թէ Ներսէսի մղած բարենորոգմանց խնդիրը ոչ կայսրը ցուցնելու և ոչ կառավարութիւնը շփոթելու կերպարան չունէր, զի օրինաւորութեանց սահմանին մէջ կատարուած ձեռնարկ մըն էր, ուստի ինքնին կը ցրուին Ներսէսի դէմ յարուցուած իրարու ներհակ մեղադրանքները, մէկ կողմէն թէ կայսրը ազգին դէմ թշնամացնելու պատճառ եղած է, և միւս կողմէն թէ գաղտնապէս ազգին օգուտը պետական տեսութեանց զոհած է:

2855. ՓՈԽԱՆՈՐԴԻ ԽՆԴԻՐ

Մկրեան Յովհաննէս քահանայի 1871-ին պատրիարքական փոխանորդութեան կոչուելուն առիթ ակնարկեցինք, թէ այդ անուանումը ծանր եկած էր վեղաւորաց դասակարգին, որ իր նախադասութեան զգացմամբ չէր կրնար տանիլ քահանայական դասէ մէկու մը նոյն իսկ իրենց վրայ իշխանութիւն գործածելը և ըստ պարագայից նախապատուութիւն և նախաթոռութիւն իսկ վայելելը (2824) թէպէտ առջի ժամանակներ բաւական օրինակներ տեսնուած են: Խրիմեան կրցեր էր իր անուանածը պաշտպանել մինչև վերջը. Ներսէս ալ պահած էր վայն իր պաշտօնին վրայ և հակառակութիւններու առջև ալ տեղի չէր տար: Մկրեան ալ չէր քաշուեր փոխանորդութեան պատիւն ու գործերը ու ձևերը կատարեալ կերպով և առանց ակնածութեան պահել և պաշտպանել: Ընդդիմադիր խմբակն ալ այդ պարագայն իրեն գործունէութեան նիւթ ըրաւ, և չէր դադրեր փոխանորդի փոփոխութեան խնդիրներ յուպել, և վերջնական հարուածը տալու դիտմամբ Ստեփան Փափապեան պաշտօնապէս ամբաստագիր ներկայեց փոխանորդի դէմ, թէպէտև գաղտնիք մը չէր

թէ խմբակին վեղարաւոր պետն էր գործին գրգռիչը: Գործը քննիչ յանձնաժողովոյ յանձնուեցաւ (77.ՄԱՍ2022), բայց Ներսէս իր փոխանորդը պաշտպանեց և թող չտուաւ որ քաջուի յանձնաժողովի տեղակազիրէն առաջ, մինչ ամբաստանութեան դիտումը ոչ թէ բան մը հաստատել և հաւաստել էր, այլ անբաստանեալի անունի ներքև քաջուելու ստիպել: Այս պատճառով գործը երկարեցաւ, ոչ յանձնաժողովը գործեց, ոչ ամբաստանութեան նիւթերը լսուեցան, բայց և ոչ Մկրեանի թոյլ տրուեցաւ քաջուիլ, որ միշտ քննութեան գործադրութիւնը կը պահանջէր, և այսպէս կանցնէին 1877 տարւոյ վերջին ամիսները: Երբոր առաջին փորձը չյաջողեցաւ եկեղեցական դասէն քանիններ ձեռք առնուեցան, և պատրիարքին դիմեցին ամբաստանութեան ներքև անձ մը փոխանորդութեան մէջ պահելուն անտեղութիւնը ցուցնելով, և այն ատեն միայն Մկրեան, տեսնելով որ եկեղեցական հայրերէ և եղբայրներէ կըլլայ այսպիսի ձեռնարկութիւն մը նոյեմբեր 10-ին վերջնական կերպով իր հրաժարականը խառն ժողովին ներկայեց, զի նոյն օրեր պատրիարքն ալ իւր հրաժարականը մատուցած էր (77.ՄԱՍ.2060): Բայց որոշումը դարձեալ երկարեցաւ մինչև որ Մկրեանի պնդելուն վրայ փոխանորդութենէ արձակուեցաւ: Պատրիարքը անձի խնդիրը լուծած ատեն սկզբունքի խնդիրին մէջ տեղի տալ չուպեց, և ուրիշ քահանայ մը, Գարակէօմրիւկի եկեղեցւոյն Արիստակէս Գալֆայեան, փոխանորդութեան կոչեց 1878 յունուար 12-ին (78.ՄԱՍ.2076): Սակայն Գալֆայեան շատ հեռու էր Մկրեանի կարողութենէ, և քանի մը ամիս ետքը նորէն առաջարկներ սկսան Մկրեանը դարձնելու, և երեսփոխաններէն 56 հոգի բողոքագիր մըն ալ մատուցին քննութիւն չըլլալուն և չաւարտելուն համար, բայց Մկրեան գործի դառնալու կընդդիմանար և միշտ քննութեան վերջաւորութիւնը իբր պայման կը դնէր: Գալֆայեանի օրէնքէ դուրս մէկ երկու գործերն ալ առիթ տուին զայն պաշտօնէ դադարեցնելու, և վերջապէս նորէն վեղարաւորի մը, Արմաշի միաբաններէն Խօլտամեան Պօղոս վարդապետի փոխանորդ անուանելովը խնդիրները փակուեցան, և Մկրեանի դէմ եղած ամբաստանութեանց պարզապէս հակառակութեան զգացմանց արդիւնք և պաշտօնէ հեռացնելու պատրուակ մը եղած ըլլալը յայտնուեցաւ: Ներսէս իսկապէս ունէր քահանայական դասակարգը բարձրացնելու գաղափարը և ասոր նշանակներն եղան Սահակ Տէր Սարգիսեան քահանայն առաջ Եգիպտոսի փոխ առաջնորդ և յետոյ Խարբերդի վանքերուն վարիչ նշանակելն. Յովհաննէս Մկրեան քահանայն Եգիպտոսի առաջնորդ Մեսրոպ Սուքիասեան Եպիսկոպոսի և ժողովուրդին մէջ յուզուած խնդիրներուն քննիչ յղելը (79.ՄԱՍ.2425). Յովհաննէս Հիւնքեարպէյէտեան քահանայն Կիպրոսի տեսուչ անուանելը, այլ ձեռնարկներ, սակայն դժբախտաբար հիմնական փոփոխութիւն մը յառաջ չեկաւ այս մասին, ոչ միայն վեղարաւոր դասակարգին հակակրութեան պատճառով, այլ և ժողովրդական նախապաշարման երեսէն, որ գլուխը վեղար և ձեռքը գաւազան կրելը արժանաւորութեան միակ պայման կը նկատէր և կը նկատէ, և այդ պայմանն ունեցող ապիկար վեղարաւորն ալ ընդունիլ չվարանիր:

2856. ՕՐՄԱՆԵԱՆ ԵՒ ՂԱԼԱԹԻԱ

Օրմանեանի Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ քարոպիչը նշանակուիլը յիշեցինք (2850): Ընդհանրապէս համեստ կը տեսնուէր Ղալաթիոյ թաղը և շատ էին զինքը Բերայի եկեղեցւոյն մէջ տեսնել ուզողներ. սակայն Ղալաթիա իրեն յատուկ կարևորութիւնն ունէր, գուցէ Ներսէս ալ այդ անուանումով ուրիշ մտադրութիւն մը ունէր: Օրմանեան պատրիարքարանի մէջ Ներսէսի մօտ առանց պաշտօնական անունի յատուկ պաշտօնեայ մըն էր, մասնաւորապէս եւրոպական դեսպանատանց հետ պաշտօնական և անպաշտօն յարաբերութեանց կը գործածուէր, և կրօնական խնդիրներու ալ կը ծառայէր, ինչպէս երբոր հարկ եղաւ անգղիական եկեղեցւոյ Լամպէթեան ժողովին պաշտօնական գրութեանց և աստուածաբանական տեսութեանց լատին լեզուով

պատասախանել: Անոր գլխաւոր գործն եղաւ Ղալաթիոյ եկեղեցւոյն կարգաւորութիւնն ու պայծառացումը, հինգշաբթիի քարոզներով տեղացի ուխտաւորներուն եռանդը բորբոքել, և կիրակիի քարոզներով գաւառացի պանդուխտ ժամաւորներուն պգացումները ուղղել, միանգամայն եկեղեցական բարեկարգութեանց և ծիսակատարութեանց յատուկ մտադրութիւն դարձնել: Բայց Ղալաթիոյ եկեղեցին լոկ ուխտատեղի մը չէր, անոր անտէրունչ վիճակէն օգտուելով հոն տեղաւորուած էր ընդդիմադիրներու կեդրոնը: Ստեփան Փափապեան իբրև վարժարանի տեսուչ, Զրիստոսատուր Ղալարոսեան իբրև կիրակնօրեայ դասատուութեանց վարիչ, և միանգամայն իբրև թաղական խորհրդական ուրիշ երկու երեք ընկերներով Ղալաթիոյ արդիւնքը կը շահագործէին, և իրենք ալ կը շահուէին, և այնտեղէն կը վարէին իրենց սեփական գործունէութիւնը, և ասկէ ծագած էր Ղալաթիոյ օձախ անունն ալ: Անգամ մը պատրիարքարանըուպեց իրենցմէ թաղական համարատուութիւն պահանջել և եկեղեցին նոր խորհուրդի յանձնել, այլ մէջը եղողներ, օձախի պետերը և հետևորդները, բացորոշ կերպով դիմադրեցին և որոշումը ապարդիւն թողուցին (77. ՄԱՍ. 1949), և մինչև իսկ Փափապեան արիւն թափելով դէմ դնելու յայտարարութեան հասաւ (77. ՄԱՍ. 1953): Կացութիւնը շարունակեց տակաւին միևնոյն կամայական վիճակի մէջ, մինչև որ իրենք ալ տեսնելով որ պէտք էր որևէ օրինաւորութեան ձև մը տալ: Ղալաթիա գաւառացի և գործաւոր պանդուխտներուն թաղեցիկ իրաւունք տալու և անոնց քուէով խորհուրդ ընտրուելու գաղափարը յղացան, և շատ աշխատութեամբ Ընդհանուր ժողովի ալ հաստատել տուին, վստահ ըլլալով թէ խեղճ պանդուխտներու ձեռքով կրնան իրենց գիրքը ամրացնել, սակայն նպատակնին չիրականացաւ: Օրմանեանի քարոզչութեան ժամանակին հանդիպեցաւ որոշման գործադրութիւնը, որ պէտք եղած պատրաստութիւնները կատարելով, ընտրողաց ցանկերը պատրաստելով, և ընտրական ժողով կազմելով, հրաւերը հրատարակեց 1880 յունուար 28-ին (80. ՄԱՍ. 2537), և ընտրութիւնը կատարուեցաւ փետրուար 3-ին (80. ՄԱՍ. 2541), և իրեն թաղականներ առաջին քուէարկութեամբ ընտրուեցան, անվարժ քուէարկուներու կանոնաւոր քուէարկութեամբ և Օրմանեանի անձնական հսկողութեամբ: Ընտրեալներէն հինգը Ղալաթիոյ թաղին համար նոր գծուծած սահմանին մէջ ընտանէօք բնակողներն էին և երեքը Սեբաստացի և մին Արաբկիրցի պանդուխտներէն: Բայց յուսախաբ մնացին Մշեցի պանդուխտներ, Փափապեան հաւատարիմ գունդը կազմողներ, զի իրենց մէջ կուսակցութեան բաժնուելով քուէնին ցրուած էին, ուր Սեբաստացիներ իրենց ընտրելիներուն վրայ համաձայնած և միաձայն քուէարկուած էին: Դժգոհութիւնը և գրգռութիւնը տարածուեցաւ Մշեցւոց մէջ և ընտրութիւնը բեկանելու խլրտումներ պատրաստուեցան Փափապեանի հրամանատարութեամբ: Երբոր օրինաւոր քուէարկութեան դէմ դիմումնին անլսելի մնաց, զի պանդուխտները միահամուռ մի մարմին նկատուած էին և վանալան խումբերէ համեմատաբար անգամ առնելու պայման դրուած չէր, և ընտրութիւնը քաղաքականէն վաւերացաւ, պատրիարքական կոնդակն ալ գրուեցաւ, և փետրուար 14-ին հինգշաբթի օր և Տեառընդառաջի տօնն հրատարակուիլն ալ լսուեցաւ, Մշեցիք հրաման ստացան իրենց պաշտպանէն կապարագլուխ խարապաններով և ծանրագլուխ կաշեայ գօտիներով զինուած համախմբուիլ պատարագի ատեն: Բայց Օրմանեան կանխեց կոնդակի ընթերցումը և ձեռնարկեց խորհուրդին կազմութեան: Եւ երբոր Փափապեան Վոսփորէ հասաւ ամենայն ինչ լրացած, և պաշտօնական հրատարակութիւնը արգիլելու ծրագիրը խափանած գտաւ: Ասոր վրայ է որ Մշեցիք եկեղեցւոյ բակին մէջ Սեբաստացի և ուրիշ պանդուխտներու վրայ յարձակումի սկսան, բիբեր և խարապաններ շողալ սկսան, աղաղակներ բարձրացան, և եկեղեցւոյ ուխտաւորներուն վայնասունները շատցան: Օրմանեան անձամբ կուռարարներուն մէջ նետուեցաւ, եկեղեցին հանդարտեցուց, և յանդիմանելով ու

ամչցնելով բակը պարպելու յաջողեցաւ, և երբոր Փափապեանէ հրաւիրուած ոստիկանութիւնը հասաւ, արդէն հանդարտութիւնը հաստատուած էր: Նոր թաղականը Օրմանեանի նախագահութեամբ և Կեսարացի վաճառական Գէորգ Գլըճեանի ատենապետութեամբ անմիջապէս գործի ձեռնարկեց, եկեղեցին ու դպրոցը, սնտուկն ու հասոյթը ձեռք առաւ, թաղական խորհրդարանին օձախեանց ժողովարան ըլլալը արգիլեց, պաշտօն չունեցող անձերը հեռացուց, Մշեցիները շահեցաւ վարժարանի հոգաբարձութեան և բանկալի հսկողութեան մասնակից ընելով, և նոյն իսկ անոց ձեռքով Փափապեանը տեսչութենէ դադարեցուց: Այն օրէն Ղալաթիոյ օձախը իր ոտքի կռուանը կորսնցուց, և սկսաւ ցրուիլ ու տկարանալ, մինչև իսկ կասկածիլ ոմանց թէ յատկապէս ընդդիմադիր խմբակը ցրուելու նպատակով Օրմանեան Ղալաթիոյ քարուղջութեան կոչուած ըլլայ: Բայց եթէ այդ արդիւնքը յառաջ եկաւ աւելի իրենց ձախլիկ գործունէութեան պէտք է վերագրել: Իսկ Օրմանեան երկար չմնաց Ղալաթիոյ պաշտօնին վրայ, ինքն կանխաւ փափաք յայտնած էր վարչականէ աւելի ուսումնական ճիւղին մէջ աշխատիլ, բայց գաւառներէ շուտով դիմումներ սկսան սկսան պինքն առաջնորդ ուզելու, և ինքն ալ չուզեց Վոսփորի արհանգ կապուած մնացողի կերպարանն առնել վրան: Նպատակնին իրականացնելու մէջ աւելի շուտափոյթ գտնուեցաւ Կարնեցիներ, որոնք գաւառական երեսփոխաններու ստուար մեծամասնութեան ստորագրութեամբ Վեհապետեան Յարութիւն եպիսկոպոսը հրաժարելու հրաւիրեցին, և վայն ստանալով Օրմանեանը տեղապահ ընտրեցին 1880 մարտ 20-ին բայց նոր ընտրութեան նախագահելու համար հեռուէն տեղապահ տանելուն անյարմարութիւնը պատրիարքարանի կողմէն իրենց դիտել տրուելուն վրայ ապրիլ 2-ին առաջնորդ ընտրեցին, 11-ին խառն ժողովը վաւերացուց, 20-ին վատիկն ըրաւ Ղալաթիոյ մէջ, միւս կողմէն հրովարտակն առնուեցաւ, կոնդակը գրուեցաւ, և մայիս 12-ին Կ. Պոլիսէ մեկնեցաւ, և 29-ին Համբարձման օրը Կարին մտաւ, քանի մը օր Տրապիզոն մնալով ուղևորութեան պէտքերը կարգադրելէ ետքը, զի մեծամեծ խանգարած և աւրած էին նահանգական կառուղին:

2857. ՍՈՎԵԼՈՅ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ռուսութունք պատերազմը (2843), սաստիկ կերպով մղուած էր Թուրքիոյ արևելեան սահմանագլուխին վրայ, անվուսպ տարրներն ալ վէնքի կոչուած էին և պատեհէն օգտուելով յափշտակութիւններ և սպանութիւններ գործած էին համարձակ, որով հայ ժողովուրդը բաւական բազմութեամբ տեղը թողած ու մեկնած էր Երևանի նահանգը: Պատերազմի վերջանալէն ետքն ալ երկիրը շատուշատ վնասներ կրած էր, մշակութիւն և պտղաբերութիւն վտանգուած էին, սիրտերու մէջ հանդարտութիւն չէր վերանորոգուած, և անցեալին ու ապագային մտածումները գաղութը կը քաջալերէին գլխաւորապէս Կարինի և Բասենի ու Ալաշկերտի ու Պայազիտի դաշտերուն մէջ, յուսալով բարեկեցիկ վիճակ մը գտնալ սահմանագլուխէն անդին: Կարնոյ առաջնորդ Յարութիւն եպիսկոպոս ջանաց արգիլել, Կ. Պոլիս ալ գրեց, ուր ապագայ բարեկարգութեանց ակնկալութիւնները վօրացած էին, և Հայերուն պակսիլը բնաւ նպատակայարմար չէր ըլլար, ուստի ամէն միջոցներ ձեռք առնուեցան գաղթը արգիլելու: Օսմանեան կառավարութեան դիմումներ եղան որ ամէն վստահութիւնը կուտար, զի իրեն ալ օգուտին յարմար չէր երկրին գործունեայ և արդիւնաբեր բնակչութեան պակսիլը: Ռուսական կառավարութիւնն ալ չուզեց գաղութը քաջալերել, եկողները ետ դարձնելու յայտարարութիւնները ըրաւ, և մեկնող բանակին վօրավարներ, որոնց մէջ հայապգիներ ալ կային, գաղթականութիւնը արգիլել կը ջանային, այսուհանդերձ բաւական ժողովուրդ գնաց բայց սպասած երջանկութիւնը և ակնկալած դիւրութիւնները չգտնելով սկսաւ ետ դառնալ, որով խեղճութիւնը կրկնապատկեցաւ, վասնզի դառնալ նուն ոչինչ գտան պատրաստ և կատարեալ սովի տագնապին մատնուեցան: Խեղճութիւն

և կարօտութիւն և սովամահ և կոտորած, և անոնց հետևանօք աղաչանք, կողկողանք ամէն կողմէ սկսան բարձրանալ, և կեդրոնը չէր կրնար անտարբեր մնալ, մանաւանդ Ներսէս կարօտութեանց և նեղութեանց հանդէպ աւելի պագայուն սիրտ մը կը կրէր: Անցեալ տարիներու մէջ Փոքրասիոյ գաւառներ երաշտութեան երեսէն սովի մատնուած էին և Կ. Պոլիս հոգաժողութիւն պակաս չէր ըրած. հապիւ այդ տագնապը նուազած էր ներքսագոյն գաւառներու վիճակը դառնացաւ և ձեռք կարկառելու հարկը ստիպողական դարձաւ: Մայրաքաղաքի թաղերուն մէջ մասնախումբեր կազմուեցան նպաստ հաւաքելու, մասնաժողով մըն ալ անոնց արդիւնքն ամփոփելով նպատակին գործածելու: Բայց այդ առաջին մասնաժողովը շուտով ձեռնթափ եղաւ ընդհակառակը Գատքէօյի մասնախումբը հոգւով և սրտով գործին փարեցաւ. առաջիններուն հրաժարականը ընդունեցաւ Ներսէս, և 1880 յունուար 12-ի կոնդակով երկրորդը կեդրոնական յանձնաժողով հռչակեց, և Կ. Պոլսոյ 24 թաղական մասնախումբերը անոր յարակցեց (80.ՄԱՍ.2527): Յանձնաժողովը կազմակերպողներն էին Սերովբէ Կիւլպէնկեան և Սահակ Ղապարոսեան ատենապետներ, Պօղոս Շաշեան և Գաբրիէլ Նորատունկեան ատենադպիրներ, Աբիկ Ունձեան և Գրիգոր Նիկողիմոսեան այցելուներ կամ խնամակալներ, Աբէլ Կիւլպէնկեան գանձապետ, և Գառնիկ Յովակիմեան համարակալ, որոնց անունները կը յիշենք ի պատիւ իրենց բազմաշխատ և խոհական արդիւնաւորութեան պի իրաւամբ կրնանք ըսել թէ բոլոր նախընթաց նպաստամատոյց մարմիններու գործերէն ընդարձակագոյն և օգտակարագոյն եղաւ իրենց արդիւնքը և 39,000 ոսկւոյ հասուցին իրենց հանգանակութիւնը (86. ԱՐՇ. 659): Նպաստ հաւաքելու համար չամփոփուեցան մայրաքաղաքին մէջ, այլ ուր ուրեք հայ կը գտնէիննուէր, մինչև Ամերիկա և Հնդկաստան և ճավա իրենց դիմումները հասուցին, ապա յին շրջանակէն ալ դուրս ելան և օտարապահներու դուռերն ալ բախեցին, կառավարական շրջանակներուն ալ ներկայացան, կայսերական գթութիւնն ալ հայցեցին, մինչև իսկ կրոնական վեհապետներէն ալ նպաստներ խնդրեցին և ստացան: Ներսէս պատրիարք իրենց հովանաւորն էր, և անոնց առաջարկներուն վրայ բարձրագոյն տեղեր իր անունով դիմումներ կը կատարուէին: Արիկ Ունձեան իր Գատքէօյի ընդարձակ տունը իբրև պաշտօնատուն տրամադրած էր, ուր գիշերո կը շարունակէին ժողովական գումարումները, և չափապանցած չենք ըլլար եթէ ըսենք թէ մինչև 1882-ի սկիզբները երկու տարի շարունակ մնայուն գումարում մըն էր յանձնաժողովին գործունէութիւնը: Իրենց խոհականութեան մի նշանաւոր կէտը կը կազմուէր, հասած տեղեկութիւնները, եղած թախանձանքները, ցուցուած պէտքերը միտոմի կշռելով և կշռադատելով աւելորդ և անպէտ ծախքերու առիթ չտալ, և խաբեպատիր դիմումներու ասպարէզ չբանալ, և այնպէս գործածել նպաստները, որ առօրեայ սնունդին հետ մնայուն օգուտն ալ միանայ: Այդ նպատակով հաստատուն ձեռնարկներ ալ պանց չըրին, վարժարաններու օգնեցին, հողագործական միջոցներ հայթհայթեցին, նորանոր մշակութիւններ պատրաստեցին, վանական արհեստներ քաջալերեցին, և երկրագործներուն աշխատութիւնը դիւրացուցին կենդանիներ և գործիքներ փոխատուութեան ձևին ներքև յանձնելով, պի չէին ուզեր որ անաշխատ նպաստը վտանգաւոր դատարկապորտութեան և մուրացիկ ստորնութեան ծառայեր: Իրենց գործունէութեան ընդարձակագոյն ասպարէզը Վանայ նահանգը, և անկէ ետքը Պայսպիտի գաւառն եղան, բայց ուրիշ կողմեր ալ անմասն չմնացին անոնց նպաստներէն, նոյն իսկ Փոքրասիոյ նեղուած գաւառները: Գլխաւորաբար կարոտ հայն էր իրենց նպատակը, բայց հայուն դրացի ուրիշ ազգերէ կարօտեալներն ալ հաւասարապէս խնամուեցան, անօթիին հացին հետ ուրիշ պէտքեր ալ հոգացին: Վանայ ձեռնարկներուն մէջ յիշուելու արժանի են Վարագայ նոր հիմնուած երկրագործական վարժարանը, Սալախանէ գիւղին ստացութիւնը իբր տնանկ գաղթականներու բնակավայր, Վանայ

և Աղբակու դպրոցները: Վանայ մէջ Խրիմեանն էր բոլոր նպատներուն գործածութեան նախագահը, Կարոնյ մէջ Օրմանեան եղաւ երկու կողմերէ յարաբերութեանց և առաքմանց միջնորդը, զի դեռ կը պակսէին Կարինէ անդին ներքին գաւառներու հետ ուղղակի յարաբերութիւնները: Այս ընդհանուր գիծերը բաւական ըլլան յանձնաժողովին գործունէութեան մասին գաղափար մը տալու, որը բիւրաւոր կեանքեր ատեց սովին ճիրանէն, օգտակար հետքեր թողուց ներքին գաւառներու մէջ, և պահեստի գումար մըն ալ աւելցուց երբ գործէ քաշուեցաւ, որով նշանաւոր կալուած մը գտնուեցաւ Կ. Պոլսոյ մէջ, և հասոյթը որբանոց արհեստանոցի յատկացուեցաւ: Յանձնաժողովին գործունէութիւնը յատուկ կերպով պատկերացած է 1884-ին Օրմանեանի խմբագրութեամբ կազմուած տեղեկագիրով, որ 1886 մարտի տպագրուեցաւ (86.ԱՐՇ.658), և ընդարձակ ամփոփում մըն ալ քաղուեցաւ (86. ԱՐՇ. 659):

2858. ԿԻԼԻԿԻՈՅ ԽՆԴԻՐ

Երբոր Կ. Պոլսոյ պատրիարքն ու պատրիարքարանը հանրութեան խնդիրներով կը վբաղէին, նոր խնդիրներ միտք յոգնեցնելու ստիպեցին: Կիլիկիոյ կաթողիկոս Մկրտիչ Քէֆսիպեանի տարօրինակ ընթացքին պատճառով տեղի ունեցած ընդունայն բանագնացութիւնները Ռուսութեան պատերազմին ժամանակ ընդհատուած էին (2839), բայց խաղաղութենէ ետքը պէտք կըլլայ նորէն ձեռք առնել: Այն տառը դիտողութիւնները, զորս 1876 մայիս 17-ին պաշտօնագիրին դէմ ներկայացուցեր էր, թէպէտ կեդրոնէն մերժուած, սակայն իր կողմէն իբր հարկ կըլլայ 1880 յուլիս 9-ին գրութեամբ (ԻԶՄ. 1123-1130) բացարձակ և յստակ կերպով յայտարարել, թէ իր առարկութիւնք երկրորդ ալգային պատրիարքարան մը բանալ կը ձգտէին տուած խոստմնագիրին, և զոր անվերադառնալի և անտնօրինելի կերպով մերժած է ազգը, և չի կրնար երբեք միտք փոխել ուստի ցաւով կը յայտարարուի թէ անիշխանութեան ժամանակէն յոռի (ԻԶՄ. 1128) վիճակին մէջ կը գտնուի կաթողիկոսութիւնը, թէ ինքն Մկրտիչ աթոռը լքած աստ անդ կը թափառի տասը տարիներէ ի վեր, թէ գլխաւոր վիճակներ, Հալէպ, Մարաշ, Այնթափ, Եոզղատ, Անտիոք, Կիւրին, Տիւրիկ, թափուր և առանց առաջնորդի կը մնան (ԻԶՄ.1126), և վարչութիւնը կը պարտաւորուի անգամ մըն ալ իր բացարձակ որոշումը հաղորդել, որ կամ պէտք է Կիլիկիոյ համար պատրաստուած կանոնագիրին հպատակի, և կամ իր հակառակ կամքը յայտնէ, որուն հետևանքը պիտի ըլլայ անխուսափելի վճիռը (ԻԶՄ.1130): Մկրտիչ այդ բացարձակ որոշման դէմ նոր ոյժ մը ձարելու համար իր կաթողիկոսութեան մէջ նորինորոյ ընդհանուր ժողով մը կը կազմէ թեմական անունով (ԻԶՄ.1132), և իւրաքանչիւր վիճակէ համեմատաբար մէկէ վեց ներկայացուցիչներ կը հրաւիրէ սեպտեմբեր 1-ի շրջաբերականով, և ժողովը կը բանայ Սոյ մէջ հոկտեմբեր 15-ին 41 անդամոց ներկայութեամբ. Կիլիկիոյ վիճակներուն խեղճութիւնը կը յիշէ, և պատճառ կը ցուցնէ Կիլիկեցոց անփութութիւնը և կեդրոնի միջամտութիւնը, վանց ընելով յիշել իր անհոգ ու անտարբեր և թափառաշրջիկ և խառնակիչ ընթացքը: Սիս հաւաքուած ներկայացուցիչներ առանց երկար խօսակցութեանց կը ստորագրեն իրեն ներկայած գրութիւնը, որուն յառաջաբանին մէջ կը խօսուէր Կիլիկիոյ կարօտութեանց վրայ, դարմանին հոգածութիւնը կեդրոնական վարչութեան կը յանձնուէր, և իբր անհրաժեշտ պայմաններ վեց յօդուածներ կառաջարկուէին: 1. Կաթողիկոսութեան բոլոր եկեղեցական պաշտօնէից սահմանադրապէս ընտրութիւնը և պաշտօնանկութիւնը կաթողիկոսին թողուլ, որուն ազդարարութեան վրայ կեդրոնը կառավարութենէն պաշտօնական գիրեր ձեռք պիտի բերէ, կաթողիկոսին կը թողուէին նաև բոլոր սահմանադրական ժողովները կազմել և անոնց որոշումները վաւերացնել: 2. Կիլիկիոյ և կեդրոնին միակ միջնորդը կաթողիկոսը պիտի ըլլար, և ամէն դիմումներ անոր պիտի ըլլային, և ամէն յարաբերութիւն անոր ձեռքով պիտի կատարուէր: 3. Կեդրոնը 1,500 ոսկի պիտի հայթհայթէր Սոյ

կաթողիկոսարանի նորոգութեան, որուն համար 500 ոսկի ալ Կիլիկիոյ թեմերը պիտի ընձեռնէին: 4. Սոյ աթոռը պիտի ունենար 60 հոգւոյ միաբանութիւն մը, 1 կաթողիկոս, 4 եպիսկոպոս, 8 վարդապետ, 4 սարկաւազ, 8 դպիր և 15 միաբան. միանգամայն իւրաքանչիւր երեք տարի գումարուելիք թեմական ընդհանուր ժողով մը, որուն անգամ պիտի ըլլային աթոռին մէջ ներկայ միաբան եպիսկոպոսներ և վարդապետներ, և վիճակներու կրօնական և քաղաքական ժողովոց ատենապետներ, և անշուշտ առաջնորդներ ալ թէպէտ յիշուած չեն աթոռին մէջ պիտի կազմուէին նաև Կ. Պոլսոյ պատրիարքարանին ունեցած բոլոր ժողովներն ու խորհուրդները: 5. Աթոռին մէջ 25 գիշերօթիկ վարժարան մը պահելու և ուրիշ ծախուց համար կեդրոնը պարտաւոր պիտի ըլլար կամ պետական գանձէն իբր 150 ոսկւոյ ամսական սահմանել տալ, կամ թէ ինքը տարեկան 1,500 ոսկւոյ եկամուտ մը ապահովել որ և է պատուաւոր կերպով, կամ Կիլիկիոյ վիճակները աւելցնելով: 6. Կիլիկիոյ աթոռին պատիւը պահելու համար կեդրոնը բարձրագոյն դուռէն քաղաքական առանձնաշնորհութիւն մը ձեռք պիտի բերէ յանուն կաթողիկոսութեան: Թեմական ժողովոյ տեղեկագիրը կաւելցնէր թէ այդ պայմաններով ամենայն ինչ կարգադրելու խնդրած է կաթողիկոսէն, և նա ալ յանձնառու եղած է անձամբ Կ. Պոլիս երթալ և կեդրոնին հետ պէտք եղածը գործել և գործադրել տալ (ԻԶՄ. 1134-1146): Բէֆսիպեան այսպէս իր գործողութեանց ծրագիրը պատրաստելով, և իր թելադրած թեմական տեղեկագիրը իրեն իբր ոյժ առնելով, առանց նախապէս բանակցութեան, 1880 նոյեմբեր 23-ին Կ. Պոլիս կը հասնի, և պատրիարքարանի կարգադրութեամբ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ ժամատունը կիջեանի: Մկրտիչ Սիսէ չմեկնած, առանց կեդրոնի գիտակցութեան, Յովհաննէս Բէքմէպեան և Ստեփանոս Ոսկերիշեան վարդապետները եպիսկոպոս ձեռնադրած էր՝ Կիրակոս և Միքայէլ անուններով (ԻԶՄ, 1175), իսկ Կ. Պոլիս գալուն իրեն կընկերանար իր ձեռնասունն ու հաւատարիմ գործակից և քարտուղար, Ներսէս Մանիսալեան վարդապետը, նոյն ինքն որ յետոյ Մկրտիչ Վեհապետեան եպիսկոպոսն եղաւ, իսկ ժողովուրդին բերանը Գաճան վարդապետ անունով կոչուեցաւ: Իսկ պատրիարքարանի մէջ իբրև ամիս մը առաջ հաստատուած էր վարչական խորհուրդի ձևը հոկտեմբեր 31-ին, և կրօնական գործոց խորհրդական էր Մատթէոս եպիսկոպոս Իվմիրլեան (2853), և կրօնական ատեանին ատենապետն էր Կարապետ եպիսկոպոս Սերոբեան (ԻԶՄ.1177):

2859. ԲԷՖՍԻՉԵԱՆ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ Մկրտիչ առանց ատեն անցնելու 1880 նոյեմբեր 30-ին կը ներկայանայ վարչական խորհուրդին, և ինքն ալ կը խոստանայ իր թեմական ժողովին տեղեկագիրը ներկայել, թէպէտ առժամապէս պէտք եղած կը յանձուի կրօնական խորհրդականի և ատեանի, իսկ ինքը միայն դեկտեմբեր 17-ին կը յղէ: Ղալաթիոյ թաղականն ալ դեկտեմբեր 5-ին հրահանգ խնդրած էր թէ ինչպէս պիտի վարուի եթէ կաթողիկոսը պատարագել փափաքի, և պատրիարքարանը ա՛յն ալ կրօնական խորհրդականի և կրօնական ատեանի յանձնած էր ուսումնասիրել և պատշաճը ցուցնել: Թեմական տեղեկագիրը չհասած ալ խորհրդական և ատեան իրենց պատասխանը կը փութացնեն դեկտեմբեր 10-ին: Պատարագին համար կըսեն թէ քանի որ Աղթամարայ և Սոյ կաթողիկոսութեանց դիրքերը նոյն են, Մկրտիչ ալ պարտի նախապէս պատրիարքարանէ առաջարկուած հինգ կէտերը ստորագրել, և յետոյ համարձակ պատարագել, ինչպէս Խաչատուր ալ ըրաւ (2838): Ըստ այսմ նոյն հինգ յօդուածները վեցերորդի մը յաւելուածով կը ներկայեն որ Մկրտիչ ստորագրէ: Յիշատակուած հինգ յօդուածներն էին, 1. Հպատակութիւն Էջմիածնայ Մայրաթոռին, 2. Պատարագի և ժամերգութեան մէջ Կիլիկիոյ կաթողիկոսէն առաջ Ամենայն Հայոց կաթողիկոսը յիշել, 3. Կեդրոնի հաւանութեամբ միայն եպիսկոպոս ձեռնադրել, 4. Առանց կեդրոնի հաւանութեան իր եկեղեցականները իր սահմաններէն չհանել, 5. Միւռոնը միայն իր վիճակներուն համար օրհնել. իսկ նոր աւելցուցած վեցը կըսէ լոկ կաթողիկոս տանն Կիլիկիոյ

տիտղոսը գործածել (ԻԶՄ. 1177-1180): Կրօնական խորհրդականն ու ատենը դիտողութիւն ըրած էին Մկրտիչ գործածած վարդապետ Երուսաղէմի և Եպիսկոպոս Էջմիածնի և կաթողիկոս Կիլիկիոյ (ԻԶՄ. 1241) ստորագրութեան վրայ, և սխալ կը գտնէին այդ բացատրութիւնները և աւելորդ անուններու կիրառութիւնը դիտողութիւն ըրած էին նաև Մկրտիչի գործածած մանուշակագոյն վեղարին համար, և պայն հակառակ կը գտնէին ընկալեալ և ընդհանուր կիրառութեան և օտար վեղարին խորհրդական նշանակութենէն, և կառաջարկէին սևի փոխել տալ: Կը յիշեցնէին նաև առանց կեդրոնի գիտակցութեան Եպիսկոպոսական ձեռնադրութիւն կատարած ըլլալը, որ հակառակ էր առաջարկեալ պայմաններէն երրորդին (ԻԶՄ.1165-1180): Ներսէս անմիջապէս կը հաստատէ առաջարկուած տեղեկագիրը և 11-ին պաշտօնագիրով մը կը հաղորդէ Մկրտիչի, առաջարկելով ստորագրել զվեցեսին պայմանս և ի բաց թողուլ զգործածութիւն մանուշակագոյն վեղարի և տարականոն ստորագրութեան (ԻԶՄ.1182), և ուրիշ գրով մըն ալ Մատթէոս և Կարապետ Եպիսկոպոսները կը ներկայացնէ պէտք եղած բանակցութիւնները կատարելու (ԻԶՄ. 1184): Անոնք իրենց պաշտօնը կը լրացնեն պաշտօնագիրները կը ներկայացնեն և բացատրութիւններ կու տան, որոնց Մկրտիչ առակութիւններ կը դիմադրէ, զոր և կը յղէ դեկտեմբեր 22-ին (ԻԶՄ. 1185-1199): Առաջին կէտը, այսինքն պայմանները ստորագրել բացէքաց կը մերժէ: Ստոյ աթողը վեցդարեան մի ազգային աթոռ և կաթողիկոսութիւն է կըսէ և 5-6 եկեղեցականէ բաղկացեալ ատեան առաջարկել (ԻԶՄ. 1189): Եկեղեցոյ միութեան խնդիրը խանգարող Գէորգ կաթողիկոսը կը ցուցնէ որ նոյն իսկ Էջմիածնայ առաջին կաթողիկներէ ճանչցուած աթոռ մը հակաթոռ և ընդվզեալ կը հռչակէ և անոր ժողովուրդը մեռեալ կը նկատէ (ԻԶՄ. 1168): Իսկ եթէ յարաբերութիւններ ճշդել պէտք ըլլայ, Փիլիպպոսի և Ներսէսի ժամանակ եղածին նման (1689) երկոցունց ներկայութեամբ պիտի լինի կըսէ, և զինքն պատրաստական կը ցուցնէ այդ ձևին (ԻԶՄ. 1192): Ստորագրութեան մասին կը պատասխանէ թէ երբեք Երուսաղէմի ուսուցիչ և Էջմիածնի տեսուչ ըլլալու գաղափարը ունեցած չէ, այլ միայն Երուսաղէմէն վարդապետ և Էջմիածնէն Եպիսկոպոս ձեռնադրուած ըլլալու իմաստով կը գործածէ այդ ձևը (ԻԶՄ. 1194): Մանուշակագոյն վեղարի մասին ալ կը գիտէ, թէ քանի որ գոյնագոյն ծաղկեայ փիլոններ, և ճերմակ փիլոն ու վեղար, և վեղարին ճակատը ականակուռ խաչ գործածել կը ներուի, և վեղարին ու փիլոնին մեռելութեան նշանակութիւնը չկորուսիր, իրեն մանուշակագոյն վեղարը պէտք չէր դիտողութեան նիւթ ընել (ԻԶՄ. 1196): Կըսուի նաև թէ մանուշակագոյն վեղարի օրինակ բերած ըլլայ Կիլիկիոյ կաթողիկոսի անունն առնող Աբրահամ Արծիւեանը: Իսկ սպիտակ վեղարին խօսքն ալ Ներսէս Աշտարակեցիի ակնարկելով ըսած է. սակայն Ներսէս սպիտակ վեղար գործածած չէ, մանուշակագոյն վեղարը կաթողիկ Արծիւեանը գործածած է Հռոմի մէջ, և փիլոնն ալ արեղայական վեղարին հետ յարաբերութիւն չունի, այլ յատուկ քահանայական զգեստ է: Մկրտիչ իր պատասխանին վերջը կը յարէր թէ շատ աւելի կարևոր են թեմական տեղեկագիրին կէտերը Հայ եկեղեցոյ և Կիլիկիոյ աթոռին պայծառութեան համար, ուստի պատրիարքարանը թող ջանայ անոնք յիրակութիւն վերածել (ԻԶՄ. 1198): Այս մասին եղաթ են Մկրտիչ ձայնակիցներ, թէև Կիլիկեցիներու մէջէն, որոնք յաւակնութիւն կը կարծեն պատրիարքարանի դիտողութիւնները վեղարի և ստորագրութեան մասին հրահանգ և ձևակերպութեան դասեր կարդալը (95. ԱՔՍ. 126): Սակայն միւս կողմէն պատրիարքարանի գործողութիւններն ալ իրենց պաշտպաններն ունին, և գլխաւորապէս նոյն ինքն կրօնական խորհրդականը, որ արկնօրէն կը պատճառաբանէ Մկրտիչի պատասխանագիրին ամէն մասերը հերքելու (ԻԶՄ. 1199-1223): Մանուշակագոյն վեղարի մասին եղած խորհրդակցութեանց միջոցին Մկրտիչ յիշած կըլլայ, նաև վեղարաւորներու գործածած փակեղին վերի մասին մանուշակագոյն ըլլալը, և այս դիտողութեան վրայ Ներսէս իսկոյն ամբողջ սև փակեղ գործածելու կը սկսի, և անոր

հետևողությամբ սև փակեղի կիրառութիւնը հետզհետէ կը նդարձակուի մայրաքաղաքի վեղարաւորներուն մէջ: Մկրտիչին դառնալով՝ երբ կը տեսնէ որ կեդրոնը կարևորութիւն չի տար իր առաջարկներուն և միշտ Կիլիկիոյ աթոռը Կ. Պոլսոյ վարչութեան ենթարկելու հետամուտ է, և կաթողիկոսութիւնը իսկապէս վանահայրութեան փոխարկել կը ջանայ, կը սկսի ծայրայեղ միջոցներու դիմել, առանց մտածելու որ երբ արտաքին երևոյթով, թէ ոչ վեցդարեան գոնէ դարաւոր աթոռին իրաւունքները պաշտպանելը ցուցնէր, իսկապէս ազգային եկեղեցւոյն մէջ բաժանման խրամատները կը պատրաստէր, և ինչ որ թերևս իրմէ առաջուան ժամանակին համար չէր արդարանար, Սոյ աթոռը Գէորգի հետ հակաթոռ և հետտեալ և ընդվզեալ կոչել, իրականութիւն դառնալ կը սկսէր իր այդ ընթացքով: Թեմական տեղեկագիրն վերջին յօդուածը որ բոլորովին լրումն էր, Կիլիկիոյ աթոռին բացառիկ գիրք մը ստեղծելով կառավարութեան առջև իբրև տարբեր և անկախ Պատրիարքարանի վերածել, պետական շրջանակներու ալ անհաճոյ գաղափար մը չէր, մանաւանդ Պերլինի դաշնագիրէն ետքը երևան եկած նոր խնդիրներու տեսութեամբ, զի հայ ազգութիւնը բաժնել և պառակտել վայն իսկապէս տկարացնել ըսել էր: Մկրտիչ կանուխէն սկսած էր իրեն նպատակին գործածել այդ տեսութիւնները, աւելցնելով Կ. Պոլսոյ պատրիարքութեան էջմիածնայ կաթողիկոսութեան հետ ունեցած յարաբերութիւնները, հպատակութեան կապը և փոխանորդութեան կերպարանը, և վայն իբր ուսական ազդեցութեան միջնորդ ցուցնելով՝ իրեն փափաքած անկախութիւնը հաւատարմութեան նշանակ կարծեցնել:

2860. ԲԷՖՍՒԶԵԱՆԻ ԴԱՐՁՈՒԱԾ ԲԸ

Մկրտիչ Կ. Պոլիս հասնելուն առաջին օրէն սկսած էր այդ գաղափարը մշակել (ԻԶՄ.1225), և ոչ թէ իբր պատրիարքարանի ընթացքէն ցաւած ու ստիպուած մղուած էր այդ միտքին, զոր գաղտագողի և խաբուսիկ միջոցներով կը մշակէր (ԻԶՄ.1225), իր գործին հանդէպ ազգին աննպաստ ըլլալուն (ԻԶՄ.1226) ներքին գիտակցութիւնը զգալով: Իրեն նոր ոյժ մը աւելցնելու դիտմամբ 1881 փետրուար 15-ին Կ. Պոլսոյ գտնուող Կիլիկեցիները ժողովի կը հրաւիրէր Ղալաթիա, որպէսզի թեմական տեղեկագիրը հաստատեն, սակայն անոնք անձուդարձերուն գիտակ անձեր, գործէն խոյս տալու դիտմամբ՝ նախապէս քննիչ յանձնաժողովոյ մը ձեռքով խնդիրը նախաքննել կառաջարկեն (ԻԶՄ.1269): Ասոր վրայ էր որ մարտ 23-ին վարչական խորհուրդը նոր բանակցութիւն ունեցաւ Մկրտիչի հետ երկու կողմերու միջև մերձեցում մը կապմելու նպատակով: Այդ տեսակցութեան մէջ, ինչ որ Ամենայն Հայոց հայրապետութեան, այսինքն միոյ եկեղեցւոյ մի գլուխի գրութեան կը պատկանէր, ամուր բռնելով, Կ. Պոլսոյ պատրիարքութեան հետ Կիլիկիոյ յարաբերութիւնները վերաքննութեան և բարեփոխութեան ենթարկել ընդունուեցաւ և խորհուրդին ատենապետ Տիգրան Եուսուֆեանի յանձնուեցաւ բանակցութիւնները լրացնել: Մկրտիչ նախապէս վարչութեան ծրագիրը կուզէր տեսնել (ԻԶՄ.1251-1253), պարզապէս կառավարութեան հետ սկսած գործին ատեն վաստակելու դիտմամբ, և աւելի ազատ գործերու համար ապրիլի մէջ Ղալաթիոյ բնակութիւնը թողուց և Վոսփորի Գուրուշէշմէ գիւղը փոխադրուեցան (ԻԶՄ.1245): Իսկ պատրիարքարանը ինքզինքը դիւրամատչելի ցուցնելու համար հաւանեցաւ որ պայմանները չստորագրած ալ (2559), մայիս 21-ին Համբարձման տօնին օրը Գուրուշէշմէի եկեղեցին պատարագէ, սակայն Մկրտիչ իբր թէ Կիլիկիա կը գտնուէր և ոչ Կ. Պոլիս, թէ Ամենայն Հայոց կաթողիկոսին և թէ Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքներուն անունները բոլորովին վանց ըրաւ յիշատակութեան ատեն (ԻԶՄ.1245): Եւ ոչ այսչափ միայն, այլ իր ընթացքը աւելի շեշտելով, մայիս 15 թուականով գրգռիչ շրջաբերական մը կը յղէր գաղտնապէս Կիլիկիոյ վիճակներուն (ԻԶՄ.1226-1241), որուն մէջ թեմական ժողովին տեղեկագիրը և իր Կ. Պոլիս գալուն նպատակը յիշելէն ետքը, ամէն տեսակ զրպարտութիւն և քսութիւն կը գրէր Կ. Պոլսոյ վարչութեան դէմ, թէ Կիլիկիոյ

կաթողիկոսութեան գոյութիւնն իսկ չուկեր ճանչնալ, մինչ ան եղած էր Էջմիածնի կաթողիկոսին գաղափարին դէմ անոր գոյութիւնն ու դիրքը պաշտպանողը, թէ եպիսկոպոս ձեռնադրել և միւռոն օրհնել, իսկ կարգիլէ, մինչ միւռոնի խօսք եղած չէր երբեք, իսկ եպիսկոպոսական ձեռնադրութեան խնդիրը լոկ վարչական տեսակէտով կեդրոնական վարչութեան հետ համաձայնութեան ենթարկուած էր, թէ Կիլիկիոյ աթոռը հակաթոռ և հետտեալ և ընդվզեալ կը ճանչնար, մինչ Կ. Պոլիս յայտնապէս Գէորգի յայտարարութեանց ալ ընդդիմացած էր, իսկ իր կողմէն կը յաւելուր թէ Կիլիկիոյ հայրապետութիւնը ճիշդ Սուրբ Լուսաւորչէ, ուղղագիծ յաջորդութեամբ հաստատեալ և մինչև ցայսօր շարունակեալ հայրապետութիւն մէ, զոր պարզապէս պատմութեան տգիտութեան (1463-1464), և կիլիկեցի կաթողիկոսաց ոմանց մեծամտութեան արձագանք պիտի ըսենք, եթէ կամաւոր նենգութիւն չըսենք, Մայրաթոռոյ իրաւանց միշտ նախանձայնոյ պաշտպան եղած և Երուսաղէմի աթոռին միաբան եղած մը բերանը: Այդ գրգռիչ շրջաբերականին վերջը իբրև եզրակացութիւն կը հաղորդէ, թէ Կ. Պոլսոյ վարչութենէն որևէ պատասխան ընդունիլ չկրնալով, ստիպուեցանք առ բարձրագոյն դուռն ևս դիմել, մինչև Կ. Պոլիս հասած օրէն սկսած էր և շարունակած էր կառավարութեան մօտ իր քսութիւնները, և կը յաւելուր թէ մտադիր եմ ի մօտոյ բացակայիլ աստի (ԻԶՄ. 1240), անշուշտ Կիլիկիա դառնալու նպատակով և հուսկ յետոյ կը յարէր, սթափեցարուք ուրեմն ի քնոյ, եռանդով գործեցէք զպարտուպատշաճն, աշխատեցէք պաշտպանել ձեր աթոռոյն բռնաբարուած իրաւունքը (ԻԶՄ. 1239), իրաւունք չունիք երբեք զմեզ պատասխանատու ըմբռնել (ԻԶՄ. 1237), և այս աղաղակներով իր վիճակայինները ընդդիմութեան և ապստամբութեան կը հրաւիրէր, թէպէտ ոչ մի արձագանք չէր գտնար Կիլիկիոյ կողմէն (ԻԶՄ. 1249): Վարչութիւնը յունիս 22 ին յղած պաշտօնագիրի պատասխանը չստանալով յուլիս 17-ին նորէն կը երէր, և գաղտնի շրջաբերականին մասին բացատրութիւն կը պահաջէր, սակայն Մկրտիչ չարձեալ կը լռէր, զի իր նպատակին հասած էր արդէն, և 1881 յուլիս 20 (հիճրէթի 1298 ռամազանի 7) թուակիր և մինչև այն օր յապաղած հրովարտակը կընդունէր (ԻԶՄ. 1255) ուղղակի կառավարութենէն, որուն մէջէն ջնջուած էր Ստոյ կաթողիկոսութեան համար միշտ գործածուած Կոստանդնուպոլսոյ և Անատոլուի և Ռումելիի և շրջակայից պատրիարքութեան ենթարկեալ բացատրութիւնը (ԻԶՄ. 1256), և միանգամայն եկեղեցական առանձնաշնորհմանց շարքէն տասը կէտեր ալ վերցուցած էին (ԻԶՄ. 1257-1259), զորս Մկրտիչ յանձն առած էր զոհել միայն իր կիրքը յագեցնելու համար: Հրովարտակին հետ Մկրտիչի կը խոստացուէր նաև մէճիտիյէի առաջնակարգ շքանշան, և 35 ոսկւոյ ամսական թոշակ (95. Ա.ԲՍ. 126): Ներսէս պատրիարք, հապիւ թէ հրովարտակին ուղղակի ստացուելուն լուրը կառնէ, բողոքոյ յիշատակագիր մը կը մատուցանէ կառավարութեան, հաւասարապէս հերքելով թէ Կ. Պոլսոյ պատրիարքութեան իրաւանց և թէ կաթողիկոսութեան առանձնաշնորհմանց հակառակ մասերը, կը պահանջէ հրովարտակը յետս կոչել, և իր նախկին ձևին վերածել, և օգոստոս 8-ին Մկրտիչի ալ կապդարարէ հրովարտակը ետ դարձնել կամ պատրիարքարանի յանձնել: Օգոստոս 11-ին դարձեալ գրելով անպատասխանի մնացած գիրերուն պատասխանները փութացնել կը պահանջէ, եթէ ոչ ծանր պատասխանատուութեան պիտի ենթարկուի (ԻԶՄ. 1260): Կերևի թէ պատրիարքին սպառնական շեշտը ազդեցութիւն մը ըրած է Մկրտիչի վրայ, որ լռութիւնը բեկանելով կը պատասխանէր թէ ծրագիրն մասին բանակցութեան մտնելու համար նախապէս կը սպասէ իր թեմական ժողովուրդին տեսութիւնները ստանալ, որուն մասին արդէն գրած է (ԻԶՄ. 1261): Միւս կողմէն ինքն ալ կապդուի երբոր կը տեսնէ, որ երբ Կ. Պոլսոյ պատրիարքութենէն անկախ գիրք կը ստանար, ունեցած առանձնաշնորհութենէն կը կապտուէր և հասարակ առաջնորդներու վայելած արտօնութիւններէն ալ կը զրկուէր:

2861. ՀՐՈՎԱՐՏԱԿԻՆ ՇՈՒՐՋԸ

Հրովարտակի ստացութեամբ և պատրիարքարանի ընդդիմութեամբ Մկրտիչի նոր կացութիւն մը կը բացուէր, Կոր ոչ կրնար բացարձակապէս պաշտպանել և ոչ կը յօժարէր անըէ հրաժարիլ, և խաբեպատիր միջոցներէ վատ եղանակը չէր գտներ: Վիճակայիններ լուռ մնացած էին գրգռիչ շրջաբերականին հանդէպ, իսկ պոլսեբնակ կիլիկեցիները աւելի առաջ անցան երբ որ նոր հրովարտակին մանրամասնութեանց տեղեկացան, փետրուարին կազմուած քննիչ յանձնաժողովը ի դիմաց պոլսեբնակ կիլիկեցւոց Ներսէս պատրիարքին դիմեց, և 1881 օգոստոս 24-ին իրեն միտքը պարզեց հինգ որոշ յօդուածներով թէ 1. Չեն ընդունիր կաթողիկոսին այն առաջարկութիւնները որոնք հանրութեան օգտին ծառայելու բնութիւն չունին, 2. Ազգային միութենէ չեն բաժնուիր, և պատրիարքարանի Կիլիկիոյ վրայ ունեցած իրաւունքները կընդունին, 3. Էջմիածնի սուրբ աթոռին նկատմամբ բնաւ ըսելիք չունին, միայն կը ցաւին արդի գահակալին բացատրութեանց մասին: 4. Սոյ աթոռոյն դարաւոր իրաւունքներուն պահպանութեանը կը փափաքին, 5. Կիլիկիոյ վիճակներուն ճշդուիլը և սահմանադրութեան համեմատ կառավարուիլը կուզեն (ԻԶՄ. 1269-1274): Կեդրոնի երեսփոխութեան Ընդհանուր ժողովը 1881 օգոստոս 27-ին բողոքեց Մկրտիչի արարքներուն դէմ և վարչութեան յանձնել պարտուպատշաճը գործել: Ուստի Ներսէս հարկ տեսաւ ուղղակի Մկրտիչի հետ տեսակցութիւն մը կատարել Օրթաքէոյ Եռսուֆեան ատենապետին տունը, օգոստոս 30-ին և տեսակցութիւնը թէպէտ յուզել վիճաբանութեան մը կը փոխուի, բայց վերջապէս Մկրտիչ յանձն կառնէ հրովարտակը դարձնել առանձնաշնորհութեանց կորուստին վրայ հիմնուելով, ինչպէս ալ սեպտեմբեր 2-ին յանձնուիլը նամակով կը ծանուցանէ, և միանգամայն կը խոստանայ վարչութեան պատրաստած ծրագիրին համեմատ գործել (ԻԶՄ. 1277): Ասոր վրայ նոր յանձնաժողով մը կը կազմուի սեպտեմբեր 12ին Սոյ իրաւանց և պարտուց վրայ հիմնուած կանոնագիր մը պատրաստելու, որուն անգամ կը նշանակուին Պետրոս եպիսկոպոս Թահմիզեան Սեբաստիոյ առաջնորդ, Յովհաննէս քահանայ Մկրեան նախկին փոխանորդ, և աշխարհականներէն Սարգիս Աղաբէգեան, Յակոբ Ֆրէնկեան, Յարութիւն Նորատունկեան և Մատթէոս Ալէքսանեան (ԻԶՄ. 1280): Յանձնաժողովոյ անդամը առաջին խորհրդակցութիւն մը կունենան պատրիարքին և վարչական ատենապետին հետ սեպտեմբեր 16-ին իրենց ընելիքը ճշդելու (81. ՄԱՍ. 2995), և մինչ անոնք գործի կը ձեռնարկեն, Մկրտիչ կը սկսի այս կողմ յայտարարել թէ յանձնառութեան նամակը ճնշման ներքեւ գրած է և ստորագրած է (81. ՄԱՍ. 3005) և իր միտքէն և ուղղութիւններէն շեղած չէ: Սակայն յանձնաժողովը իր գործէն ետ չի կենար, և հոկտեմբեր 3-ին կը լսուի թէ գործը աւարտելու մօտ է, և թէ Մկրտիչ ալ հրովարտակին փոփոխութիւնը կը հետապնդէ (81. ՄԱՍ.3007): Իսկ հոկտեմբեր 9-ին Մկրտիչի հետ հիմնական կէտերու վրայ կը համաձայնի, և Մկրեանի և Նորատունկեանի կը յանձնուի ծրագիրը խմբագրել (81.ՄԱՍ.3012): Բայց Մկրտիչ խաբէական և երկդիմի ընթացքը ձեռքէ չէ թողուր, և այս անգամ ալ լուր կը տարածէ թէ պատրաստուած է մեկնիլ, և հանրութեան միտքին մէջ հետզհետէ կը հաստատուի այն կարծիքը, թէ համաձայնելու համար ցոյց տուած յօժարակամութիւնը կեղծիք մըն էր միայն ժամանակ շահելու և իւր գործը կամ գաղտնի դիմումները յառաջ տանելու համար (81ՄԱՍ.3016): Այդ կասկածը կը սորանայ մեկնելու պատրաստութիւններ ընելովը, և միանգամայն պահանջելովը, որ եթէ Կիլիկիոյ վիճակներուն մէջ Էջմիածնայ կաթողիկոսը պիտի յիշատակուի (81.ՄԱՍ.3017): Մինչ այս մինչ այն լուր կը լսուի թէ յանձնաժողովոյ անդամներ հոկտեմբեր 15-ին Մկրտիչի մօտ երթալով երկար տեսակցութիւն կունենան, պատրաստուած ծրագիրը երկուստեք կը համաձայնեցնեն և համեմատութիւն կը գոյացնեն, միասին կը ճաշեն, և Մկրտիչ՝ Գէորգ կաթողիկոսի և Ներսէս պատրիարքի կենաց բաժակներ կառաջարկէ (81.ՄԱՍ.3018), և երկուստեք ստորագրուած ծրագիրը

յարակից տեղեկագիր մըն ալ ունէր հոկտեմբեր 21-ին ստորագրուած յանձնաժողովի անդամներէն, որ կը բացատրէ թէ ի՛նչ ուղղութեամբ գործածուած է, և ինչ հիմամբ Սոյ կաթողիկոսութեան հետ համաձայնութիւն գոյացած է (81.ՄԱՍ.3016): Ծրագիրը կը բաղկանար 18 յօդուածներէ երեք մասի բաժնուած, 21 յօդուած Մայրաթոռոյ հետ յարաբերութեանց մասին, 9 յօդուած Կ. Պոլսոյ պատրիարքութեան հետ յարաբերութեանց նկատմամբ, և 7 յօդուած Սոյ աթոռին ներքին կազմութեան վերաբերեալ: Առաջին մասը կը տրամադրէ որ Սիս Էջմիածնի գերագահութիւնը կը ճանչնայ, բայց Էջմիածին ալ Սիսը հակաթոռ և հետտեալ պիտի չըսէ: Երկրորդ մասին մէջ Սոյ վիճակներուն յարաբերութիւնները ուղղակի կաթողիկոսին և անոր միջոցաւ կեդրոնին հետ պիտի կատարուին, որով կեդրոնի իրաւունքները կը պահուին և Սոյ աթոռը իր վիճակներէն օտարացած չըլլար: Երրորդ մասին մէջ կըսուի թէ Սիս աթոռանիստ կը մնայ, և թէ անոր ներքինին համար վանական կանոնագիր, և արտաքինին համար նորոգութիւն և բարեկարգութիւն պիտի պատրաստուին և այդ նպատակով ինչ ինչ միջոցներ կը ցուցուին (81. ՄԱՍ. 3045): Կատարուած համաձայնութիւնը իբրև յաջողութիւն կը տօնախմբուի նոյեմբեր 8-ին Հրեշտակապետաց կիրակիին: Առաւօտուն մեծահանդէս շուքով Մկրտիչ կաթողիկոս կը պատարագէ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, և Էջմիածնի կաթողիկոսի և Ներսէս պատրիարքի յիշատակութիւնը կը կատարէ, ցերեկին Միքայէլ Յակոբեան մեծահարուստ վաճառական մեծահաց կոչունք կու տայ անոր պատուոյն իր բնակարանին մէջ, որուն կը մասնակցին բարձրաստիճան եկեղեցականներ և ազգային մեծամեծներ (81. ՄԱՍ. 3038): Ներսէս պատրիարք ալ վրայ կը հասնի յատկապէս խնդակցելու համար, բազմաթիւ և ոգևորեալ բաժակաճառեր կը խօսուին, և եկեղեցական սխրալի հանդէսի օր մը անցուցած կըլլան (81. ՄԱՍ. 3040), այն համոզմամբ թէ ամենայն ինչ վերջնականապէս լրացած է:

2862. ՊԱՏՐԻԱՐԶԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ

Բայց Մկրտիչի յեղյեղուկ և նենգամիտ ընթացքը լրացած չէր: Նա նոյն օրերը կը ստանար խոստացեալ շքանշանը և ամսական թոշակը (2860), որոնց դէմ արգելք չյարուցանելու համար միայն կարծես պատրիարքարնը կը շոյէր, և նպատակէն հասնելէն ետքը իսկոյն կը փոփոխուէր և կը մերժէր ընկալեալ ծրագիրին մանրամասնութեանցը համար վարչութենէ պատրաստուած պայմանագիրը և վայն չէր ստորագրեր, և ծրագիրին տուած ստորագրութիւնն ալ կը ժխտէր թէ ճնշման ստորագրած էր, որով իրաւունք կու տար հասարակաց կարծիքին, որ քանիցս տեսնուած յեղյեղմանց վրայ պինքն եկեղեցական պատմութեան մէջ խորամանկութեան մէկ հատիկ օրինակ սկսած էր ճանչնալ (81. ՄԱՍ. 3047): Ներսէս պատրիարքի վրայ ալ ազդեցին այդ անցուդարձերը, մինչ նոյեմբեր 7-ին հրապարակաւ գոհունակութիւն կը յայտնէր, թէ հանապազօր և կանոնաւորապէս պատրիարքարան կիջնէ և կարևոր գործերով կը վբաղի (81. ՄԱՍ. 3037), յանկարծ կը լսուի թէ 12-ին առանց մէկու մը ծանուցանելու մեծ եպարքոսին կերթայ, պաշտօնին դժուարութեանց վրայ կը խօսի և հին ծրագիրը կը ներկայացնէ և հրաժարագիրը կը ներկայէ, Կոր եպարքոսը չընդունիրնիր, և երբ Ներսէս կը պնդէ ոչ եպարքոսին, այլ արդարութեան և կրօնից նախարարութեան ուղղելու ձևակերպութիւնը իրեն կը յիշեցուի: Ըստ այսմ 13-ին արդարութեան նախարարին կը տանի և կը ձգէ հրաժարագիրը , և 14-ին հրաժարականը մատուցած ըլլալը վարչական խորհուրդին կը հաղորդէ (81. ՄԱՍ. 3045): Ներսէսի առաջին և գլխաւոր պատճառը իր անձնական հիւանդութիւնն ու տկարութիւնն էր, բայց պաշտօնավարութեան դժուարութիւնները առանձին գիրով կը յիշէր, և այս կարգին կը թուէր պատրիարքարանէն անկախաբար Կիլիկիոյ կաթողիկոսին հրովարտակ և շքանշան և թոշակ շնորհուիլը, Հայոց վրայ կասկածանօք նայուիլը, կարող առաջնորդաց դէմ հալածանքը, և հանգանակութեանց արգիլուիլը (81. ՄԱՍ. 3047): Այս

հրաժարականով ծանր պագնապ մը կը սկսէր ազգին մէջ, որ տարի մը տևեց: Ամէնուն բերանն էր Կիլիկիոյ Մկրտիչին խարդաւանքը, որ հոկտեմբեր 25-ի նամակով յօժարակամ և հաւանելով ստորագրած ըլլալը յայտարարելէն ետքը (81. ՄԱՍ. 3048), ճնշման ներքև ստորագրած ըլլալու պատճառանքը կը ստեղծէր: Իսկ Ներսէսի հրաժարականը բոլորովին անընդունելի կը դատուէր այնպիսի պարագաներու ատեն, որոնց մէջէն ելլելու յոյսը միայն իրեն վրայ գրուած էր: Ազգայիններուն չափ այդ խնդիրով կը վբարէին օտարազգի լրագիրներն ալ, նոյն իսկ արտասահմանի թղթակիցները, և պալատն ու կառավարութիւնն ալ հրաժարականը մերժելով մեծաւ հոգածութեամբ Ներսէսը համոզել և հաճեցնել կաշխատէին: Ընդհանուր ժողովը նոյեմբեր 26-ի նիստին մէջ 80-ի աւելի ներկայից արտասովոր միաձայնութեամբ և առանց վիճաբանութեան կը մերժէր հրաժարականը, ատենապետաց դիւանին և վարչական խորհուրդին յանձնելով պաշտօնավարութեան արգելքները վերցնելու, և ժողովրդական սիրելի պատրիարքը յիւր աթոռ դարձնելու գործը (81. ՄԱՍ. 3052): Բայց Ներսէս տակաւին իր պաշտօնի վրայ մնալը վնասակար կը տեսնէր, ինչպէս որ պէտք էր աշխատիլ չկարենալուն համար (81. ՄԱՍ. 3054). իսկ արդարութեան և կրօնից նախարարը միանգամ (81. ՄԱՍ. 3055), և երկիցս (81. ՄԱՍ. 3057) ընդարձակ տեսակցութիւններ կունենար Ներսէսի հետ անոր գանգատանաց նիւթ եղող կէտերը լուսաբանելու համար, կայսեր կողմանէ ալ բացարձակ կամք և հրաման կը հաղորդէր հրաժարականին վրայ չպնդելու (81. ՄԱՍ. 3058), բայց Ներսէս տակաւին կը պնդէր և իր հիւանդութեան հետ կը խառնէր Մկրտիչի տրուած հրովարտակին չփոխուիլը և բարեկարգութեանց խնդիրին մէջ պատրիարքի միջամտութիւնը արգիլելու մասին տաճիկ լրագրաց թելադրութիւնները (81. ՄԱՍ. 3062), և առհասարակ ազգին կացութեան համար ակնկալուած բարելաւութեանց համար ադու միջոցներ չգործադրուիլը: Տարին կը լրանայ, 1882 տարիէն ալ ամիսներ կը սահէին, ոչ որոշում մը կը տրուէր, ոչ կացութիւնը կը պարզուէր, ոչ Ներսէս կը համակերպէր հրաժարականը յետս կոչել, ոչ ժողով և ժողովուրդ կը հաւանէր հրաժարականը ընդունիլ, ոչ կառավարութեան կողմէ ազդու միջոց մը կը գործածուէր, և ոչ ալ կայսեր կողմէն բարձրագոյն հրաման կը ստացուէր: Իւրաքանչիւր ոք իր միտքին և կիրքին համաձայն մեկնութիւններ կու տար, և գաղափարներու բարելոնական խառնակութիւն կը տիրէր: Ներսէս կը մեղադրուէր իբրև թէ խաղի ըլլայ. վասնզի երբոր հրաժարականին վրայ կը պնդէր և պատրիարքարանի մէջ չէր երևար, եթէ կարևոր և ստիպողական գործ մը հանդիպէր՝ անտարբեր չէր և վարչութիւնն ու փոխանորդը և խորհրդականները հրահանգել չէր զլանար, և փոխանորդ Գէորգ Ռուսճուրղեան վարդապետն ալ ի բացակայութեան սրբազան պատրիարք հօր պաշտօնագիրները կը ստորագրէր, իբր թէ պատրիարքը գործը գիտցած և պատահաբար բացակայ գտնուած ըլլար: Ազգային Ընդհանուր ժողովը նիստերը դադրեցուցած էր, պատրիարքը պաշտօնին գլուխը բերելու համար պէտք եղածը գործելու հրահանգը վարչութեան և իր ատենապետութեան յանձնելէն ետքը, սակայն ժողովուրդը երեսփոխանները կը մեղադրէր և բունն ցոյցերով ալ կը դատաւիտէր թէ պէտք եղածը չեն գործեր: Մկրտիչ Քէֆսիպեան ստորագրութիւն մը տուած էր, զոր թէպէտ բերանացի յետս կը կոչէր, բայց գրաւոր բան մը չէր յայտնած, իբր թէ թող կու տար որ վարչութիւնը գործէ, բայց ձեռքի տակէն ինքն էր որ շարունակ կը խառնակէր, հրովարտակին փոխուիլը կը խափանէր, և Ներսէսի յառաջ բերած պատճառներէն գլխաւորը միշտ կենդանի կը պահէր: Իրօք ալ կենսական էր հրովարտակին խնդիրը, զի օսմանեան հպատակ հայութիւնը մէկ ազգ, մէկ ժողովուրդ, և մէկ միութիւն ըլլալէ կը դադրեցնէր, և Կիլիկիան տարբեր հայութիւն և տարբեր ազգութիւն պիտի դառնար: Արդարութեան և կրօնից նախարար ճէվտէթ փաշա Մկրտիչի անձնապէս բարեկամ և անոր տրուած հրովարտակին ալ

հեղինակը, երբոր խօսակցութեան մտնէր՝ անտեղութիւնը կը ճանչնար, բայց գործադրութենէ խոյս կու տար, ոչ իր ըրածը կուզէր քանդել և ոչ իր բարեկամը ցաւցնել: Եպարթոս և կայսր թերևս աւելի բարեմիտ էին, սակայն կը սպասուէր որ առաջին քայլը ձեռնահաս նախարարութենէ գար: Բարենորոգմանց կամ ուրիշ անունով հայկական խնդիր մըն ալ կար, որ Ներսէսով արծարծուած էր, որ օտար պետութեանց միջամտութեան դուռ կը բանար, որ օսմանեան կառավարութեան դիւր չէր գալ, և կը կարծուէր, և հաւանական ալ կերևար, թէ Ներսէսի անձը կայսեր և եպարթոսին հաճելի չեն, և անոնք ալ իրենց նպատակն ունին գործը չվերջացնելու մէջ: Այս ամէն դիտողութիւններով մէկտեղ կը Վգանք որ մեր ուրուագիծն ալ յստակ չէ, բայց ըստ ինքեան խառնակ և անյարիր կացութիւնը ուրիշ կերպ հնար չէր պատկերացնել, և աւելի ալ չենք երկարեր, զի մեր նպատակը օրագրական մանրամասնութեանց մտնել չի կրնար ըլլալ:

2863. ՏԱԳՆԱՊԻՆ ՊԱՐԶՈՒԻԼԸ

Այդ շփոթ կացութեան մէջ երբ 1882 մայիս 1-ին Ներսէսի հրաժարականին գլխաւոր պատճառը հարթուած կը կարծուէր, զի կառավարական յանձնաժողովը կառաջարկէր Կիլիկոյ կաթողիկոսութիւնը իւր նախկին վիճակին վերածել, առանց որևէ նոր փոփոխութիւն մուծանելու (82.ՓՆՁ.1668), յանկարծ կը լսուի թէ մայիս 12-ին Մկրտիչ կաթողիկոսը Կ. Պոլիսը թողած է և անակնկալ կերպով մեկնած: Ըսողներ եղան թէ Մկրտիչ տեսնելով որ իր խնդիրը մոռցուած է, յանկարծ թոթափեց պատրիարքարանի լուծը, թոթափեց իւր ոտից փոշին և հեռացաւ Պոլիսէն (95.ԱԲՍ.126): Բայց եթէ պարագաները իրարու մերձեցնենք, պէտք է ըսենք, թէ Մկրտիչ մօտալուտ տեսնելով իր խաղերուն վերջը և իր խորամանկ ընթացքին ամբարտակին քայքայումը, չուզեց անոր աւերակին ներքև մնալ, այլ խուսափելով ինքզինքը ապատեց և գործին վերջանալը անհնար դարձուց, և այդ նպատակին հասնելու համար փախուստի կերպը մտածեց: Գործին իսկութիւնն ալ այդ տեսութիւնը կը հաստատէ: Մայիս 10-ին երկտող մը կուղղէ Եուսուֆեան ատենապետին թէ 12-ին կը մեկնի, Եուսուֆեան իսկոյն կը պատասխանէ որ ուղևորութիւնը յետաձգէ մինչև տեսակցին, որ անտեղի հետևանքներ չծագին: Մկրտիչ միայն 12-ին առտուն կը պատասխանէ թէ իրեն համար գործ չէ մնացած, և նոյն ժամուն գումարուած ժողովը կը կրկնէ յետաձգելու ազդարարութիւնը, որ 15-ին տեսակցին և խորհրդակցին, բայց Մկրտիչ արդէն շօգենաւ մտած էր, և նամակը տանող բարապանին բերանացի կը պատասխանէ թէ ամենայն ինչ լրացած է և փոխել հնար չէ, և շօգենաւը քիչ ետքը ճամբայ կելնէ (82. ՓՆՁ. 1672): Մկրտիչ իրեն արդարացման համար ըսած կըլլայ որ կրօնից նախարարէն հրաման առած է, բայց կրօնից տեսուչը հակառակն է խօսած իրեն, և նոյն իսկ իր պատմութեան համեմատ նախարարը եթէ բանաւոր արգելք մը չկայ ըսեր է եղեր (82. ՓՆՁ. 1672), իսկ բանաւոր արգելք իրօք կար և ինքն ալ գիտէր: Պատրիարքարանը նաւահանգիստներ կը հեռագրէ թէ փախստեամբ մեկնած է և պատիւներ չըլլան, բայց Մկրտիչ տեղ մը չհանդիպիր և շիտակ Մերսին ցամաք ելլելով Ատանա կը հասնի և բացարձակ գործելու կը սկսի (82. ՓՆՁ. 1676): Մկրտիչ Կ. Պոլիս հասած էր 1880 նոյեմբեր 23-ին, որով 1882 մայիս 12-ին իբր 18 ամիսէն Կ. Պոլիս կը թողուր: Մենք ալ զինքը կը թողունք պահ մը, և պատրիարքական տագնապին կը դառնանք որ պատրիարքարանին համար գլխաւոր գործն էր, Կիլիկիոյ խնդիրէն անկախաբար առեալ, թէպէտ Ներսէսի տեսութեամբ իր հրաժարականին պատճառը աւելի կը ծանրանար այս կերպով, և ոչ թէ կը թեթևնար: Պաշտօնական և անպաշտօն, ժողովրդական և մտերմական, համոզկեր և աղաչաւոր, բոլոր դիմումներ չէին ազգած Ներսէսը իր միտքէն հեռացնել, հիւանդութեան պատճառը և աշխատելու անբաւականութիւնը միշտ կը յեղյեղուէր, բայց նա աւելի բան մը կը սպասէր, Վգալի հետևանք մը ազգին և պատրիարքութեան նպաստաւոր, թէ ոչ գոնէ պատասխանատուութենէ ապատուիլ: Վարչութիւնը կը խորհի խնդիրը

Ընդհանուր ժողովին հանել, և 1882 մայիս 20-ին հինգշաբթի օր ժողովը կը գումարուէր, հրաժարականի խնդիրին վրայ խորհելու, և ժողովրդական բուն ցոյցերու մէջ, որ երեսփոխութիւնը կը մեղադրէր և կը նախատէր թէ պարտուպատշաճը չի խորհիր ու չի գործեր, ժողովը վարչական խորհրդույ և ատենապետաց դիւանի տեղեկութիւններ լսելով կորոշէր միահամուռ Խասքէօյ երթալ և կացութիւնը ըստ բաւականին պարզուած և խնդիրներէն մի մասը լուծուած և միւսը պատրաստուած ըլլալը յիշեցնելով, և իրեն հանգստեան և դիւրութեան համար պէտք եղած պոհողութիւնն ալ յանձնառու լինիլնին յայտնելով, թախանձել որ պաշտօնին գլուխը դառնայ (82. ՓՆՁ. 1674): Որոշումը գործադրուեցաւ կիրակի օր մայիս 23 ին, բաւմաթիւ երեսփոխաններ ամէն դասակարգէ Խասքէօյ խմբուեցան Չըքսալրի բարձունքը, ուր էր Ներսէսի հօրենական համեստ բնակարանը, 3-100 հոգի ալ քաղաքացի և գաւառացի անոնց ետևէն խոնեցաւ, թէպէտ Ներսէս կանուխէն պէտք եղած տեղեր լուր պրկած էր, որ պարապ տեղ աշխատանք չքաշեն: Ամէն փորձ, ամէն խօսք, աղաչանք և թախանձանք չկրցան Ներսէսը իր միտքէն շարժել, և ձեռնունայն դարձաւ արտասովոր ցոյցը: Սակայն հնար չէր անգործ մնալ. երեքշաբթի մայիս 25-ին մասնաւոր խորհրդակցութիւն մը կատարուեցաւ Նարայէյ եպիսկոպոսի նախագահութեամբ, և հոն որոշուեցաւ բոլոր երեսփոխաններու ստորագրութեամբ ուղերձ կամ աղերսագիր մը ներկայել (82. ՓՆՁ. 1675): Գրուածը պատրաստուեցաւ, ստորագրութիւններ հաւաքուեցան, և պատուաւոր պատգամաւորութեամբ ներկայացուեցաւ յունիս 10-ին, սակայն Ներսէս իսկոյն նոյն օր գրով պատասխանեց թէ պարզապէս իր տկարութեան և անբաւականութեան համար պարտաւորեալ և հրաժարիլ, և ոչ թէ երեսփոխանաց և ոչ որևիցէ ժողովոց հետ աններդաշնակութեան պատճառաւ, և կը խնդրէր շնորհք ընել փութանակի յաջորդ մը ընտրել իրեն (82. ՓՆՁ. 1680): Այլևս Ներսէսը գործի դարձնելու յոյսերը կտրուեցան, ուստի 17-ին Ընդհանուր ժողովը և 19-ին վարչական խորհուրդը նիստեր ըրին պատշաճը խորհելու և կացութիւնը կառավարութեան ալ ներկայելու, որուն, մատուցած էր Ներսէս իր հրաժարականը (82. ՓՆՁ. 1681), և անմիջապէս նոյն օր յունիս 19-ին յիշատակագիր պատրաստելով ներկայացուին արդարութեան և կրօնական գործոց նախարարին, խնդրելով որ շնորհ ընէ ընդ փոյթ հաղորդել պատրիարքարանի կայսերական կառավարութեան բարձր տնօրէնութիւնը (82. ՓՆՁ. 1683): Կառավարութեան պատասխանը երկարեցաւ և գործերը սկսան աւելի կաղալ, վարչական խորհուրդը հրաժարեցաւ և քաշուեցաւ, և սեպտեմբեր 9-ին նոր մը ընտրուեցաւ Սերվիշէն բժշկապետի ատենապետութեամբ (82. ՓՆՁ. 1704), սակայն այն ալ գործի չսկսած հրաժարեցաւ (82. ՓՆՁ. 1705) և անիշխանութիւնը կատարեալ էր պատրիարքարանի մէջ, և նորէն Ներսէսը թախանձելու խորհուրդներ սկսան մշակուիլ: Վերջապէս նախարարութենէ գործը ապագային որոշման կը թողուիսեպտեմբեր 30-ին Ընդհանուր ժողով կը գումարուի, Ներսէսի նոր դիմում ընելու գաղափարը կը խօսուի և կը ծեծուի, բայց վերջապէս 54 ներկաներէ 35 քուէով հրաժարականը կը նդունուի, և իբրև յետին պարտք՝ յոտնկայս շնորհակալութեան օրակարգ մը կը քուէարկուի, իսկ տեղապահի ընտրութեան համար նոր հրահանգ կուլուի կառավարութենէն (82. ԱՐԵ. 421-422), և կացութիւնը անգամ մըն ալ կը կնճռոտի:

2864. ՆԵՐՍԷՍԻ ՎԱՐԱՀԱՍՏԱՏՈՒԻԼԸ Տեղապահի ընտրութիւնը ըստ սահմանադրութեան վերապահուած էր խառն ժողովոյ, այսինքն կրօնական և քաղաքական ժողովներու համախումբ գումարման, որ դադարած էր յորմէհետէ վարչական խորհուրդի կամ տեսակ մը նախարարական ձևի վերածուած էր պատրիարքարանի վարչութիւնը (2853): Նոր գրութեան մէջ կային կրօնական և քաղաքական ատենաններ կամ խորհուրդներ, որոնք կրնային համախումբ խառն ժողովոյ գործը կատարել, սակայն նոր գրութիւնը պետական հաստատութիւն չունէր, և այդ թերութեան խիղճն էր որ կառավարութենէ ընտրութեան հրահանգ խնդրելու կը յորդորէր: Կառավարութիւնն ալ իբրև

եղելութեան գիտակ, կամ թէ անգիտակ ձևանալով, կը պատասխանէ որ սահմանադրութեան ցուցած և ցարդ գործադրուած ձևով վարուին, և ասկէ կը ծագի նոր գործողութեանց շարք մը: Վարչական խորհուրդին հինն ալ նոր ընտրուածն ալ գործէ ձեռնափ էին, նոր ձևը պետական հաստատութիւն չունէր, անոր գործունէութիւնն ալ ընդհանուր համակերպութեան և գոհունակութեան չէր առաջնորդած, ուստի կորոշուի նորէն հինին դառնալ նախարարութեան կողմէ փոխանորդին ալ խօսուած թելադրութեան համաձայն (82.Ա.ՏՆ.186), և նորէն 14-ական անդամներով երկու ժողովներ կազմել, անոնց հաստատութիւնն ընդունիլ, և անոնց ձեռքով տեղապահ ընտրել: Անիշխանութիւնը այս անգամ կատարեալ էր և գործին ընթացքն ալ բաւական ժամանակի կարօտ: Մէկ կողմէ քաղաքական ժողովը նախ կազմուեցաւ (82.Ա.ՏՆ.234), Սիմոն Մաքսուտեանի ատենապետութեամբ, և նոյեմբեր 1-ին հաստատութիւնը ստացուեցաւ, և կրօնական ժողովի կազմութիւնն ալ լրացնելով (82.Ա.ՏՆ.276) նոյեմբեր 17ին վարչութեան կողմէ շրջաբերական մը հրատարակուեցաւ իրեն բռնելիք ընթացքին մասին (82.ՓՆՁ.1724), և տեղապահի ընտրութեան համար պաշտօնական արտօնագիրը ստանալու ժամէժամ կը սպասուէր, և տեղապահի որոշելու խնդիրը ամէն խաւերու մէջ կարծարծուէր, և բազմաթիւ ընտրելիներ կը խօսուէին, և իւրաքանչիւրը իր պաշտպաններն ունէր, Պրուսայի առաջնորդ Բարթոլդիմէոս, Կարնոյ առաջնորդ Յարութիւն, Ջմիւռնիոյ առաջնորդ Մելքիսեդէկ, Եւոկիոյ առաջնորդ Յակոբ Եպիսկոպոսներուն անունները աւելի կը յեղյեղուէին: Մայրաքաղաքին մէջէն ալ Սիմոն Սէֆէրեան և Հմայեակ Դիմաքսեան շարքին կը մտնէին, բայց ամենէն աւելի հետապնդող և աշխատող և ամէն միջոցներ գործածողը Խորէն Նարպէյն էր, որ մինչև իսկ Լուսինեան նորաստեղծ մականունը կը պահէր, ականջը հասած ըլլալով թէ արքայապուն ըլլալու յաւակնութիւնները և Կիպրոսի թագին ժառանգ ըլլալուն խօսքերը գէշ տպաւորութիւն ըրած էին պետական շրջանակներու մէջ: Միւս կողմէն իր անձնական կենցաղը, գաւառական պաշտօններէ փախուստը և եկեղեցականութեան անյարմար կերպերը հրապարակաւ լրագիրներու մէջ կը հրատարակուէին, որ չըլլայ թէ ընտրողներու վրայ ազդեցութիւն գործած ըլլան անոր արտաքին և ուսումնական առաւելութիւնները: Երբոր այսպէս նոր ընտրութեան տենդը ընտրողներու և ընտրելիներու և բովանդակ ժողովուրդին վրայ տիրած էր, նոր անակնկալ մը կացութիւնը բոլորովին կը փոխէ: Երբոր Ներսէսի հրաժարականին ընդունելութիւնը կայսերական հաւանութեան կառաջարկուի, Ապտիլ համիտ կայսր բացէբաց կը մերժէ և պատրիարքութիւնը շարունակելու բարձր հրամանը կարձակէ: Երեքշաբթի նոյեմբեր 29 Մեծեպարքոս Սայիտ փաշայէ հրաւեր մը կու գայ Ներսէսի, նոյն օր կամ թէ միւս առտու իրեն մօտ գալու Նշանթաշի ապարանքը, և Ներսէս կը փութայ միայնակ, սոսկ բարապան մը միասին առնելով, նոյն օր կոչին երթալ: Այնտեղ երեք ժամի չափ խորհրդակցութիւն և բանակցութիւն կը կատարուի երկուքին մէջ: Եպարքոսը կը հաղորդէ կայսերական անդառնալի հրամանը: Ներսէս կը պատասխանէ իր դժուարութիւնները յառաջ բերելով: Իր անձնական տկարութեան համար եպարքոսը կը պատասխանէ թէ տևողական հիւանդութիւն մը աշխատութիւն չարգիլեր և զգուշութեամբ կրնայ դարմանուիլ. իր անբաւականութեան համար կը պատասխանէ թէ ազգն ու տէրութիւնը կատարեալ վստահութիւն ունին իրեն վրայ. Ընդհանուր ժողովէն հրաժարականին ընդունուած ըլլալուն կը պատասխանէ թէ ժողովը իրմէ գանգատ կամ դժգոհութիւն ունեցած չէ, և միայն յոշակամաց զիջած է իր յամառ պնդումին առջև: Անլոյծ մնացած խնդիրներուն համար ալ կը պատասխանէ թէ երբ պաշտօնը ստանձնէ՝ անոնք աւելի դիւրաւ պիտի կարգադրուին, մէկ խօսքով եպարքոսը ամէն փախուստի ճամբաները կը փակէ, և Ներսէսի բարձր հրամանին հպատակելէ վատ եղանակ չմնար, և անոր առջև խոնարհելով կը մեկնի: Եպարքոսէն կրօնից նախարարին, և անկէ պատրիարքարանի

պաշտօնական տեղեկութիւն տրուեցաւ, փոխանորդ Ռուսճուքլեան և ատենապետ Մաքսուտեան բարձրագոյն դուռ ալ երթալով բերանացի հրահանգներ ստացան, խառն ժողովը պարտուպատշաճը տնօրինեց և ամէն կողմէ շնորհաւորողներ փութացին Խասքէօյ (82.ՓՆՁ.1727): Ուրբաթ դեկտեմբեր 3-ին Ընդհանուր ժողով գումարուեցաւ մայր եկեղեցին, կայսերական հրամանը և նախարարական հրամանագիրը հաղորդուեցան ընդհանուր խնդութեան և ծափահարութեանց մէջ (82.ԱՏՆ.274-277): Ներսէս պատրիարք Երուաղէմատունէ ժողով եկաւ պատգամաւորներէ առաջնորդուած, և մ ցւոյ այր եկեղե դպրաց դասուն երգեցողութիւններով, ծափահարութիւններ կրկնուեցան (82.ԱՏՆ.277-278), փոխադարձ արտայայտութիւններ և շնորհաւորութիւններ և կայսեր կենաց մաղթանքներ եղան և ժողովական նիստը կատարեալ հանդիսութեան փոխուեցաւ, և որոշուեցաւ կայսեր ալ շնորհակալութեան ուղերձ մատուցանել (82.ԱՏՆ.280): Երեսփոխաններէն ոմանք որ ժողովին կողմէ հրաժարականը ընդունուելէն ետքը պատրիարքին վերադառնալուն դիտողութիւն ընելով ժողովատեղին մտած չէին, ընդհանուր ցոյցին առջև չկրնալով այլ ևս պնդել, անոնք ալ պատրիարքին հետ ժողովի եկան և արտայայտութեանց մասնակցեցան (82.ՓՆՁ.1728): Կիրակի դեկտեմբեր 5ին մայրաքաղաքի եկեղեցիներու մէջ գոհաբանական և կայսեր կենաց մաղթողական աղօթքներ կատարուեցան, և ցերեկէն ետքը կայսեր կողմէ հազար ոսկւոյ նպաստ մը ղրկուեցաւ Ներսէսի: Երկուշաբթի դեկտեմբեր 6-ին կայսեր կողմէն հրաւիրուեցաւ, ուր շքեղ ճաշէ մը ետքը, կայսերն ալ պայն ներկայութեան կրնդունէր, քովը կը նստեցնէր, սիրոյ և վստահութեան վկայութիւններ կը կրկնէր, և երբ դուրս կելլար եպարքոսը առիթ կառնէր կրկնելու, թէ տեսա՞ք, ես չըսի՞ ձեզի թէ նորին վեհափառութիւնը սէր ու համակրութիւն ունի առ ձեզ և առ ազգն: Նոյն պահուն ականակուռ տուփ մըն ալ ընծայ կրնդունէր Ներսէս և մեծ պատուասիրութեամբ կը մեկնէր, և եկեղեցւոյ և պատրիարքարանի մէջ կայսեր դէպ առ ազգն համակրական և ապագային համար խոստումնալից խօսքեր կը հաղորդէ, և մաղթանօք և օրհնութեամբ օրը կը փակուի, և Ներսէս գործի գլուխ կանցնի (82.ՓՆՁ.1729), իսկ չորեքշաբթի դեկտ. 8-ին ազգային ժողովոյ կողմէն կայսեր մատուցուելիք շնորհակալեաց ուղերձը կը ներկայացուի մեծ եպարքոսին (82.ՓՆՁ.1730): Պատրիարքական տագնապին այդ վերջաւորութիւնը ապագային համար երաշխաւորութիւն մըն էր թէ այլևս պիտի չկրկնուի:

2865. ՊԱՐԱԳԱՅԻՑ ՊԱՐՉԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Պատմական կարևոր եղելութիւնները, մանաւանդ անոնք որ իրենց մէջ նոր և անսովոր կէտեր կը պարունակեն, հնար չէ առանց խորհրդածութեան անցունել, և պէտք է գործին ուղիղ տեսակէտը ձշղել: Ներսէս իր հրաժարականով տարի մը ամբողջ 1881 նոյեմբեր 13-էն մինչև 1882 նոյեմբեր 29 ազգը ահագին տագնապի մէջ պահած էր, գործերուն երեսի վրայ մնալուն պատճառ եղած էր, և ազգին մէջ խժբժանքներու առիթ ընծայած էր: Արդ, ի՞նչպէս եղաւ որ քանի մը ժամուան մէջ հրաժարականը ետ առաւ: Ներսէս հրապարակաւ և յամառ կրկնութեամբ պինքն անբաւական և իր պաշտօնի վրայ մնալը վնասակար հռչակելէն ետքը, ի՞նչպէս կրցաւ միտքը փոխել պինքն կարող և իր պաշտօնավարութիւնն օգտակար ցուցնել: Ներսէս իր հրաժարականը մինչև ազգին կողմէ ընդունել տալու հասցնելէն ետքը, ի՞նչպէս կրցաւ օրինաւոր գործողութիւն մը ոտնակոխ ընել և ժողովէն դուրս իր պաշտօնին վերստին յանձնառու ըլլալը: Ներսէս հայկական խնդիրը ստեղծելէն և օսմանեան կայսեր և կառավարութեան միտքին հակառակ գործելէն, և լաւ աչքով չնայուելէն ետքը, ի՞նչպէս կրցաւ կայսեր սիրելին և վստահելին դառնալ: Միթէ մեղադրելի փոփոխականութեամբ մը կայսեր հաճելի և կառավարութեան վստահելի միջոցներու ձեռնարկե՞ց, կամ թէ հակառակ անընչասիրութեան համբաւին կայսերական ընծաներով շահուեցա՞ւ և ստորնացա՞ւ, ինչպէս եղան հազար ոսկին և ականակուռ տուփը, և

Օրթաթէօյի տունը որ քանի ամիս ետքը շնորհուեցաւ: Այդ տեսութիւնները կրնայինք դեռ շարունակել, պորս ոչ թէ մենք կը մտածենք, այլ նոյն օրեր ոչ միայն առտնին և առանձին տեղեր, այլ և լրագիրներուն սիւնակներուն մէջ ալ արտայայտուեցան: Սակայն առեղծուածական կարծուածը շուտով կը լուծուի եթէ իրաց և անձանց վիճակին հետ գործերուն բնութիւնը նկատի առնուի: Ներսէս բնութեամբ նեղսիրտ, հիւանդութեամբ դառնացած, իր կեանքին վտանգը հասկացած, ինքզինքը հանգիստի տալու անհնարութեան մէջ գտնուած, միւս կողմէ մեծահոգի, և կարևոր գործերու սիրահար, անոնց համար անձնազոհ ըլլալու չափ պատրաստական, բայց արտաքին դժուարութիւններէ նեղուած, ներքին խժբժանքներէ պաշտուած, բարձր ակնկալութեան մէջ վրիպած, և յախուռն քայլեր առնելէ վախեցած, իրօք այնպիսի վայրկեաններ ունէր, որոնք իրարու անյարիր կը տեսնուէին, այլ ոչ անյարիր պարագայից հետևանք էին: Մենք չենք ուզեր ըսել թէ Ներսէս փառքի գաղափար չունէր, մինչև իսկ կարդարացնենք փառասիրութիւնը եթէ իբր իրական արդեանց հետևանք հետապնդուի, և ոչ թէ անուղիղ միջոցներով և սին երեւոյթներով ձեռք ձգել ուզուի: Ներսէս եթէ մեծ ըլլալ և մեծապէս փառաւորուիլ կը սիրէր, պայն գովանի և օգտակար արդիւնքներով շահիլ կուզէր, և այս անկեղծ իղձերն էին որ հակառակ ամէն քննադատութեանց զինքն միշտ յարգելի և սիրելի կը պահէին այդ օրինաւոր պագումներն էին որ զինքը կը բարձրացնէին, այդ ուղիղ դիտումներն էին որոնց ակնկալութեամբ ինքն ալ կօրօրուէր: Անբաւականութեան պատճառանքը զոր կը յեղյեղէր, անշուշտ ինքզինքը ապիկար կարծելը չէր, այլ պարագաներուն վրայ իշխելու

յուսաբեկութիւնն էր. հիւանդութեան պատճառը ոչ այնչափ անկէ յառաջ եկած նեղութիւնն էր, այլ ամիսներով անկողին մնալու հարկն էր, և մարմինին ու երեսին վրայ ուռոյցներով և պալարներով տանջուիլն էր որոնք զինքը գործելէ կարգիլէին, և որոնց ներքև որևէ ամուր սիրտ մը չէր կրնար իր արիութիւնը պահել: Իր պաշտօնին վրայ մնալը վնասակար ըսելը իր կարողութենէ թերահաւատութիւն չէր, այլ իր անձնական արգելքներուն պատճառով գործառնութեանց ետև մնալուն վախն էր: Ասոնց հետ մէկտեղ որովհետև իր նախաձեռնութեամբ ձեռնարկ մը սկսած էր, ձեռնարկին ծրագիրը ինքն կապմած էր, գործին շուրջը թերահաւատներու, խմբակ մը կը տեսնուէր, վախ մը կը ծագէր սիրտին մէջ մի՛ գուցէ գործը լքանելով անոր ձախողելուն կամ կորսուելուն առիթ տուած ըլլայ, և այս պատճառով բոլորովին քաշուելու որոշումէն կը խրտչէր: Աչքը չորս դին, միտքը շուարած, որևէ կողմէ մը վստահութեան նշոյլ կը փնտոէր, ապագային համակրութեան ցոյցերը լաւ էին, բայց ոյժ չէին, զի գործին չէին կրնար ազդել, հսկող պետութեանց քայլերն ու յորդորները կրնային բան մը արժել, բայց իրականութեան չէին անցներ, կայսերական կամքն ու պնդումը և արտայայտութիւնը իբրև խաւարին մէջ լոյս մը ծագեցան իր աչքին: Կրնար կարծել թէ վեհապետը կասկածանօք կը նայի իր վրայ, թէ իր ձեռնարկը անոր հաճոյ չէ, թէ իր գործը նա քանդել կուզէ, բայց նոր նշանները հակառակը կապացուցէին, միակ ակնկալութեան աղբիւրը իր մտաց տեսութեան առջև ցուացաւ և չուզեց պայն անարգել, բաւական վստահելի բացատրութիւններ ստացաւ եպարքոսէն, մտածած դժուարութիւնները կերպով մը փարատեցան, և այդ պագումն ներքև գործի դառնալ յանձնառու եղաւ, հրաժարականը ետ առաւ, գործի գլուխ անցաւ, և թէ հաստատուն հաւատք ալ չունեցաւ, բայց գործնականապէս առիթն անարգելու պատճառ չտեսաւ, և գործնական յուսադրութեան հիմամբ վարուեցաւ: Ինքն կանուխ յարաբերութիւն ունեցած չէր, տեսակցութիւններ ըրած չէր, սակարկութեան մտած չէր, որ իր վրայ կասկածելու հիմ ունենայինք, իսկ ընծաները՝ գումարն ու տուփը, իրական թէ խաբէական, յուսադրութիւնը աւելցնելու միջոցներ էին, զորս մերժել հնար չէր, իսկ տունը անապան մտածուեցաւ, երբ կայսերական պալատին նախարար Յակոբ Գապապեան, յանուն կայսեր

հիւանդոտեսի եկաւ, և ի դարձին Ներսէսի բնակած տան խեղճութիւնն ու կիսաւեր վիճակը կայսեր նկարագրեց: Այդ խորհրդածութիւններն մտացածին կերպով չէ որ կը յաւելունք, այլ նոյն իսկ Ներսէսի հետ ունեցած մտերմական յարաբերութիւններէն և անոր միտքին ինքնաբերաբար արտայայտութիւններէն կը քաղենք: Մեր գրածներուն իբր փաստ պիտի աւելցնենք, որ եթէ Ապիւհամիտ կայսր, որ մեծ վարդապետն էր անձեր և զգացումներ ճանչնալու, այդպէս վստահօրէն վարուեցաւ Ներսէսի հետ, երբ նա արտաքին երևոյթով հակապետական անձ մը կը կարծուէր, ուրեմն նա ալ ճանչցաւ անոր անկեղծ զգացումները, և ազգային օգուտը պետական շահերուն հետ համաձայնեցնելու անխարդախ դիտումը:

2866. ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Երբոր Ներսէս գործի գլուխ դարձաւ Պերլինի դաշնագիրէն չորս տարիներ անցած էին արդէն, եւրոպական գաւառներու համար որոշուած պայմանները գործադրուիլ սկսած էին, իսկ հայաբնակ ասիական գաւառներու համար եղած որոշումները տակաւին թուղթի վրայ կը մնային, հսկող պետութեանց կողմէն գործածուած միջոցները ազդարարութենէ անդին անցած չէին, և բերանացի խոստումներով կամ բացատրութիւններով փակուած էին պաշտօնէից զեղծումներ և անվուսպ տարրներու բռնութիւններ կը շարունակէին, հիւպատոսներ կը տեղեկագրէին, լրագիրներ կը հրատարակէին, և նեղեալներ աղերսախառն դիմումներ կը կրկնէին: Իրաւ հսկող պետութիւններ աւելի բան մը ընելու որոշման յանգած էին, 1880-ին անգղիական յատուկ պատգամաւոր մը եկած էր Կ. Պոլիս, դեսպանական խորհուրդներ կատարուած էին, և արդիւնքն եղած էր իւրաքանչիւր դեսպանին կողմէ համիմաստ յիշատակագիր մը մատուցանել մայիս 30/11 յունիսին գլխաւորաբար Պերլինի 61-րդ յօդուածին գործադրուած չըլլալը յիշեցնելով, իբր զի օսմանեան կառավարութիւնը անոր պայմանները յարգելու համար որևիցէ կարգադրութեան ձեռնարկած չէր, ինչ որ հսկող պետութիւնք չէին կրնար անտես ընել (ԹՌ.545): Օսմանեան կառավարութեան կողմէն յունիս 25/5 յուլիսին տրուած պատասխանին պարունակութիւնը եւրոպական հիւպատոսներուն հակառակ տեղեկագիրներով ստուէր, և առիթ կընծայէր վեց դեսպաններու կողմէն 1880 օգոստոս 26/7 սեպտեմբերին հաւաքական յիշատակագիրին, որ մատուցուած էր օգոստոս 30/11 սեպտեմբերին դրան պնդածներուն սխալները ցուցնելով, Հայոց մեծամասնութիւնը շեշտելով, կէս վայրենի քիւրդ տարրին բռնութիւնը հաստատելով, և ինչինչ կարգադրութիւններ իբր դարման առաջարկելով (ԹՌ.547): Յիշատակագիրը որուն հայերէնն ալ հրատարակուեցաւ, դիտել տուած էր որ օսմանեան կառավարութեան կողմէ բոլոր երկրին ընդհանուր բարեկարգութիւններ հրատարակելը նպատակայարմար չէ, վասնզի բնակաւոր ժողովուրդներն ու կէս թափառիկ ցեղերն միևնոյն եղանակաւ կառավարել բացարձակապէս անկարելի էր, և կեւրակացնէր թէ հայաբնակ նահանգաց մէջ մուծանելի բարենորոգմունք պարտին լինել համապատշաճ տեղական պիտոյից, և գործադրուիլ ընդ հսկողութեամբ տէրութեանց ըստ բանից յանձնառութեան, զորս նա բարձրագոյն դուռը, դաշնագիրուած է մի միջազգային մուրհակաւ, զի տեղական պիտոյից պահանջած բառերը դաշնագիրին մէջ կը գտնուին (ՀՅԿ.6), և զի կառավարութեան յղած յանձնախումբը ոչ մի արդիւնք յանգած չեն (ՀՅԿ.4): Յիշատակագիրին ի պատասխան օսմանեան կառավարութեան կողմէն աւելի համարձակութեամբ տրուած սեպտեմբեր 21/3 հոկտեմբերի պատասխանը պայնց կընէր տէրութեանց առաջարկները յիշել և կը կրկնէր իր մտադրած բարեկարգութիւնները, կը մերժէր պետութեանց միջամտութիւնը, և յարձակողական կը կոչէր անոնց պահանջները (ԹՌ.548):

Պետություններին ոմանք Անգղիա գլուխինն ըլլալով 1881-ին առաջարկած էին հսկող պետությունները ժողովի հրահրեալ Ասիոյ վիճակը բարւոքելու համար, իսկ ուրիշներ Գերմանիա գլուխինն ըլլալով, գործերը չկնճռոտելու համար ուրիշ խնդիրներու լմննալուն սպասել և Հայոց խնդիրը յետաձգել կառաջարկէին: Այս պատճառով Հայոց նկատմամբ ըլլալիք հետապնդումները կը խափանուէին (ԹՈՒ.550), և Հայոց վրայ յուսախաբութեան պագումներ պօրացած էին և նոր ձգտումներ կը սկսէին երևան գալ, երբ Ներսէս գործէն կը քաշուէր: Ասոնց առաջինն է Հայերուն ալ գործունէութեան մղուիլը, և պահանջներուն ոյժ տալու համար բռնադատիչ միջոցներու ձեռք պարնելը: Այդ պագումը կը թելադրէին նախապէս գործը և հետևապէս գրգիռները: Եւրոպական գաւառներու մէջ գործադրուող բարեկարգութիւնները առաջ եկած էին բնիկ տարրներուն խլրտելէն և պինեալ ընդդիմութիւններէն և ներքին շփոթութիւններէն, ինչ որ գործնականապէս կը թելադրէր թէ այս միայն ըլլայ բարելաւութիւններ ձեռք ձգելու միջոցը: Այդ մեկնութիւնը յայտնի կերպով ալ կը կրկնուէր ասիակողմը գտնուող եւրոպական հիւպատոսներէն, կը թելադրուէր մայրաքաղաքի դեսպանատանց ակնարկներէն, և Եւրոպիոյ մէջ խօսուածներէն և գրուածներէն, որ եթէ Հայեր իրաւցնէ բան մը ձեռք ձգել կուզեն, պէտք է իրենք առջև անցնին և հաստատուն կամքերնին գործնականապէս ցուցնեն, և շոշափելի կերպով հաստատեն թէ իրենք են երկրին բնիկներն ու տէրերը, և ոչ քիւրդերը, պի պինեալն է որ երկրի մը տէրը կը ճանչցուի և ոչ անպէնը, իսկ արգահատանք շարժելու համար մուրացիկ հայեցուածներ բաւական չեն արդիւնք պատրաստել: Այդ գրգիռները դուրսէն լսուելով և ներսէն պագուելով փոփոխութիւն մը առաջ բերին հայ մտայնութեան վրայ, և 1878-է 1882 հանդարտ աղերսարկուն և խեղճուկ աղաչաւորը, գրեթէ բռնադատեալ նոր միջոցներու մղուեցաւ, և հայուն կեանքին ու գործին վրայ փոփոխութիւն նշմարուեցաւ: Հեռուէն դիտողը և անաչառ կշռադատողը յայտնապէս կը տեսնէ որ կերպով մը օսմանեան կառավարութիւնն էր փոփոխութեան պատճառ տուողը, երբ հանդարտ աղերսարկուն կանարգէր և խռովարար պահանջողը կը գոհացնէր, մինչ բոլորովին հակառակ պէտք էր ըլլար իր քաղաքագիտական ընթացքը, եթէ իր իսկական նպատակն էր հպատակները շահիլ և անոնց բարեկեցութիւնը պատրաստել: Բարենորոգումներ խոստացող կառավարութենէն ոչ նուազ պատասխանատու էին հսկող պետություններն ալ որոնք ամէն միջոցներ, ապդու սպառնալիքներ, բռնադատիչ պահանջներ, նաւային ցոյցեր չխնայեցին ապստամբած և խռոված տարրները գոհացնելու պաշտպանութեան մասին: Հայերու շարժումին առաջին քայլերը 1882-էն կը սկսին, գլխաւորապէս Վանի և Մուշի և Կարինի գերապանցապէս հարստահարուած կուսակալութեանց մէջ, բայց Հայեր դարձեալ եւրոպակողման ըմբոստ տարրներուն ընթացքը ընդօրինակողներ չեղան, իրենց բոլոր ձեռնարկը անհատապէս պինուելու նպատակէն անդին չէր անցներ, պինեալ քիւրդին և չէրքէպին և լապին բռնութեանց պէնքով պատասխանել, և լոկ անձնապաշտութեան աշխատիլ կը դիտէին, և երբեք չէին օրօրուեր կառավարութեան դէմ ելլալու կամ պետութենէն ապստամբելու կամ անջատման դիմելու երապներով, որոնք անպտողութեան խորապէս համոզուած էին, նկատի առնելով իրենց դիրքը, իրենց տարրին վանապան պետութեանց ներքև բաշխուած ըլլալը, և իրենց դրացիներուն ոյժն ու թիւը:

2867. ԿԱՐԻՆ ԵՒ ՄՈՒՇ

Անհատաբար պինուելու գաղափարը նոր սկսած էր տարածուիլ, բայց հրապարակի վրայ չէր գիտցուեր, միայն իբրև դաշնագիրներու արձագանք այստեղ այնտեղ խորխտ խօսքեր և յանդուգն արտայայտութիւններ կը լսուէին, որոնց հետևանք եղան Մշոյ առաջնորդ Գրիգորիս Ալէաթճեան եպիսկոպոսի, և Պուլանըգի փոխանորդ Յովսէփ Սարաճեան վարդապետի պետական հրամանով Կ. Պոլիս գալը, և Արաբկիրի առաջնորդ Եպնիկ Ապահունի եպիսկոպոսի հսկողութեամբ բերուիլը: Եւ

ահա Կարինի մէջ տեղի ունեցած պատմական դիպուած մը իբր առաջին յեղափոխական շարժում խօսուեցաւ: Մելքիսեդէկ քահանայ Տէր-Մելքիսեդէկեան ապաշխարութեան համար Կարմիր վանք գտնուած ատեն հիւանդացաւ, և խնամուելու համար իր տունը դառնալ արտօնուեցաւ: Բահանային անձնապէս հակառակորդ քանի մը անձինք անոր տանը առջև բուռն ցոյցերու մղուեցան, և մօտակայ պահականոցին ոստիկանութենէն ձերբակալուեցան 1882 նոյեմբեր 22-ին: Վրանին խուլարկուած ատեն վինակիր ընկերութեան մը մասնակից ըլլալնին երևան եկաւ, և հարցաքննութիւններով և հետախուլութիւններով 72 հոգի ձերբակալուեցան ամէնն ալ ստորին դասակարգէ երկաթագործ կամ հողագործ երիտասարդներ (82.ՓՆԶ.1763): Այդ էր գործին իսկութիւնը, որուն յեղափոխութեան կերպարան տրուեցաւ, թէպէտ ձերբակալեալներուն մէջ ոչ խելքով, ոչ դրամով, ոչ գիրքով, ոչ ազդեցութեամբ մէկ մը չկար, և իբր գլուխ կը ցուցուէր Խաչատուր Կէրէքցեան երիկագործ աղքատ արհեստաւոր մը: Կարնոյ մէջ կառավարութիւն, և ոստիկանութիւն և դատարաններ, և մայրաքաղաքին մէջ նախարարութիւն գործին կարևորութիւն տւին, և Կարնոյ մէջ ամբաստանութեան վճիռ արձակուեցաւ, որուն դէմ Կ. Պոլսոյ վճռաբեկ ատեանին բողոքուեցաւ: Օրմանեան առաջնորդ 1882 նոյեմբեր 9-ին նոր դարձած էր Մշոյ վանքերուն և վիճակին քննչութենէն և Ալաշկերտի և Բասենի այցելութենէն երբոր այդ միջադէպները սկսան, բայց տեսնելով որ իրեն վրայ ալ կասկածներ կը կազմուին և կը տարածուին, և թէ գործին լուծումը մայրաքաղաքին մէջ պիտի ըլլայ, առանց սպասելու որ վինքն ալ հեռացնելու պաշտօնական գործողութիւններ սկսին, փութաց Կ. Պոլիս երթալ, շփոթած վիճակայինները վստահեցնելով որ գործը մղելու և ոչ թէ գործէ խոյս տալու համար կը մեկնի, և թէ իւրովի առաջնորդական պաշտօնէն պիտի չքաշուի, և այսպէս Կարինէ մեկնեցաւ 1883 մարտ 24ին: Գրեթէ երեք տարի էր որ Օրմանեան Կարնոյ առաջնորդութիւնը կը վարէր և վիճակայնոց գնահատման արժանացած էր, որոնք անոր մեկնելուն կընդդիմանային կասկածելով որ չդառնային: Օրմանեան առաջնորդարանի օրինաւոր կազմակերպութիւն էր տուած, և 1880 սեպտեմբերէն թաղական վարժարանաց տեսչութիւնն ալ ստանձնելով դասարաններու և դասախօսութեանց, ծրագիրի և թոշակի օգտակար կարգադրութիւններ էր ըրած աղջկանց վարժարանը նոր և ընդարձակ շէնքը փոխադրած էր, և ընկերական կոչուած վարժարանը թաղականին հետ ձուլած էր: Կարնոյ շուրջը եղող առաջնորդական վիճակներ հետզհետէ իրեն էին յանձնուած, 1880 մայիս 10-ին Քղի, սեպտեմբեր 5-ին Դերջան, սեպտեմբեր 30-ին Խնուս, և 1881 մարտ 3-ին Բասեն, իսկ Սպեր կանուխէն Կարնոյ միացած էր, որոնց իւրաքանչիւրին մէջ փոխառաջնորդ վարդապետներ և տեղական վարչութիւններ էր հաստատած իր հսկողութեան ներքև: Օրմանեանի ներկայութիւնն էր որ Մկրտիչ Սանասարեան բարերարին և իր խորհրդական Կարապետ Եղեանցի իբրև փաստ ծառայեց Կարնոյ մէջ հաստատելու Սանասարեան վարժարանը, որ բացուեցաւ 1881 հոկտեմբերին, և որուն հիմնարկութեան և վարչութեան և մատարակարարութեան հոգերն ալ նոյն ինքն Օրմանեանի յանձնուեցան, իբրև նախագահի Սանասարեան երեք սաներու հետ կազմուած տեսչութեան: Երկար ատեններէ ի վեր Գլակայ վանքը երկպառակութեանց մատնուած էր վանահայր Մամբերէ Մամիկոնեան եպիսկոպոսի և վանական միաբանութեան մէջ տիրող վէճերու պատճառով, և 1881 աշնան վերջերը Օրմանեանի յանձնուեցաւ քննչական պաշտոնով երթալ և խաղաղել: Սակայն վանահոր մահը և վերահաս սաստիկ ձմեռը պարտաւորեց յետաձգել, մինչև որ նոր հրամանով մը վանքը բարեկարգելու և վիճակին կացութիւնն ալ ճշդելու յանձնարարութեամբ քննչութեան պաշտօնը կրկնուեցաւ, և 1882 օգոստոս 5-ին Կարինէ մեկնելով Գլակ հասաւ ամսուն 13-ին և յաջողեցաւ խաղաղութեամբ և համակրութեամբ կանոնաւորութիւն հաստատել, մինչև միաբան վարդապետներուն իսկ

վարմացմամբ յիշել սեպտեմբեր 9-ին մեկնած օրը, թէ Մշոյ Ս. Կարապետը երբեք պատուով և սիրով քննիչ մը ճամբայ գրած չունի: Հետզհետէ այցելեց Եղորդուտի Ս. Յովհաննու վանքը, Մուշ քաղաքը, Տիրինկատարի Ս. Առաքելոց վանքը, Ծխաւու Մատնավանքը, Կոփայ Ս. Դանիէլը, Բագրևանդայ Ս. Յովհաննէսը, Բասենայ Ս. Աստուածածինը, իւրաքանչիւրին մէջ ալ պէտք եղած քննութիւնները կատարելով: Կարին դառնալէն 17 օր ետքն էր որ վերոյիշեալ ձերբակալութեանց միջադէպը սկսաւ, և քանի մը ամիս անոնց շուրջը աշխատելէն և կեդրոնը ըստ ամենայնի գիտակից և տեղեակ պահելէն ետքը Կ. Պոլիս հասաւ 1883 ապրիլ 5-ին: Այստեղ կընդհատենք Կ. Պոլսոյ պատրիարքութեան շուրջը կատարուած եղելութեանց պատմութիւնը, և կանցնինք Երուսաղէմի և Էջմիածնի դիպուածներուն, վորս բաւական ետև ենք թողած:

2868. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՆՈՐԱՀԱՍՆԵՐԸ

Երուսաղէմի գործերը թողուցինք 1868 յունուար 8-ին, Եսայի պատրիարքին Եգիպտոսէ դառնալուն, և անոր ետևէն Սիմէոն Եպիսկոպոսի 1869-ին պատուիրակ երթալուն և Եգիպտոսի խնդիրին որևէ լուծում մը տալուն (2796-2797), իսկ Եսայիի պաշտօնավարութեան ընդհանուր նկարագիրը տուած էինք արդէն(2787-2793), և բաւական ըլլայ աւելցնել, թէ միևնոյն ընթացքն է որ 1870-է ասդին ալ շարունակեց Երուսաղէմի աթոռին մէջ, ուստի մեզ կը մնայ առանց նորէն ընդհանուր տեսութեանց մտնելու, միայն պատմութիւննիս լրացնելու համար յառաջ բերել մէկ քանի վարչական կարևոր և մտադրութիւն հրաւիրող խնդրագիրներ, որոնք ոչ միայն ժամանակին աչքառու պարագաներն եղան, այլ և ապագային տեղի ունեցած խնդիրներուն դուռ բացին, և որոնք կարևոր և սկիզբէն պարզել, որ եղելութեանց իմաստը ճշդուի: Մուրատեան Գարեգինի, Սաւալանեանի յաջորդելով, վարժարանական ընթացքին մէջ մուծած նորութիւններուն ալ գնահատումը ըրած, և մանրամասնութեանց մտնելը առաջիկային թողած էինք (2788), և ահա ճիշդ այն կէտին հասած կը գտնուինք: Մուրատեան աշակերտներու 1869 փետրուարի հարցաքննութեանց ցուցակին մէջ 33 անուններ կը գտնենք (69. ՍԻՕ. 48), որոնցմէ քիչերը միայն յետո միաբանութեան շարքին անցած են: Անցնողներու մէջէն աւելի առաջադէմներն ու խօսուածներն են. Յակոբ Անոյշեան Կ. Պոլսեցի, Գաբրիէլ Կարապետեան կամ Խապայեան Խարբերդցի, Մելքոն Յակոբեան Ռոտոսթոցի, Մաքսուտ Մաքսուտեան Դամասկացի, և Գէորգ Տէր-Յարութիւնեան կամ Երէցեան Իսմայելցի, որոնցմէ վերջին երկուքը վարժարան ընդունուած են, Գէորգ 1867 հոկտեմբերին (67. ՍԻՕ. 71), և Մաքսուտ 1868 մարտին (68. ՍԻՌ. 71), իսկ միւսները անոնցմէ առաջ: Ասոնց վրայ ապագայ յոյսեր հաստատուած ըլլալով պատշաճ դատուեցաւ յատուկ խնամքի ալ արժանացնել, ուստի Յակոբը իբր տարիքով հասուն և սարկաւագ իսկ Գէորգը դեռ տարիքով պզտիկ ըլլալուն, միւս երեքը Գաբրիէլ և Մելքոն և Մաքսուտ 1869 օգոստոս 21-ին սարկաւագ կը ձեռնադրուէին և ուսումնական կատարելագործութեան համար անմիջապէս 1869-ին վերջերը Կ. Պոլիս կը յղուէին, ուր երկամեայ ժամանակ մասնաւոր ընթացքը կը կատարեն, աթոռոյ փոխանորդին առանձինն խնամքն ալ վայելելով: Երու տարիէ վանք կը դառնան 1871-ին վերջերը, ուր արդէն Մելիքսեդէկ վարդապետ եղան Մուրատեանին օգնական կը նշանակուին վարժարանի ուսուցչական և տեսչական ճիւղերուն մէջ, և այդ պաշտօնին մէջ կը մնան իբր տասը տարի, և արեղայական ձեռնադրութիւն կընդունին 1877 յուլիս 3-ին, Սահակ և Վահան և Ղևոնդ անուններով: Բայց սարկաւագութեան ատենէն արդէն գործերու տիրացած էին, և իբրև վարճացեալներ էին, և իբրև վարճացեալներ և բանդէտ անձեր ամէն գործերու մէջ նախադասութիւն կը վայելէին, իրենք ալ ընդարձակ կը տարածէին իրենց գործունէութիւնը, միշտ իրենց գործակից ունենալով Անոյշեան սարկավագը Գաբրիէլ անունով արեղայ, և Գէորգ Երէցեանը սարկաւագ ձեռնադրուած: Այդ բանին նշանակներն են 1874 յուլիս 3-ին վերաբացուած

միաբանական Ընդհանուր ժողովոյ արձանագրութիւնները, որոնց մէջ ընդարձակ տեղ կը բռնեն այս նորահասներուն առաջարկները, ծրագիրները, հարցումներն ու բացատրութիւնները, մինչ հապի համառոտ խոսքերով կը ներկայանան հիները, իբրև ձևերու անվարժներ, և սահմանադրական դարձուածներու անտեղեակներ, որոնց հմտութիւնը միատեղ կը բերէին Կ. Պոլիսէ եկողներ, և այդ առաւելութեամբ Ընդհանուր ժողովոյ տիրանալով մինչև իսկ չորս սարկաւագներ առաջին և երկրորդ ատենապետութիւնները և ատենադպրութիւնները միահագոյն գրաւելու կը հասնէին (77. ՄԻԱ. 208): Բայց ոչ միայն հիներն էին որ նորահասներու տեղի կու տային, այլ և նոյն իսկ իրենց ուսուցիչն ու գլխաւորը եղող Մելիքսեդեկ Մուրատեան վարդապետը պարտաւորուած էր զգալ անոնց նախաձեռնութիւնը, և տեղի ալ տալ նորակազմ խմբակի մը ձեռներէցութեան: Օդափոխութեան անունով 1873 յունիս 16-ին Կ. Պոլիս կը մեկնէր, և անտի իբր պատրիարքական այցելու Ռումիհիա կը շրջէր, Վիէննա և Զուրիցերիա կը հանդարտէր (74. ՍԻՕ. 36), և թէպէտ ինը ամիսէ 1874 մարտ 15-ին Երուսաղէմ դառնալով ուսումնարանի տեսչութիւնը կը վերստանձնէր (74. ՍԻՕ. 71), բայց իր ձեռնասունները արդէն գործին տիրացած էին, և իր գիրքը փոքրացած էր: Ընդհանուր ժողովոյ ատենապետութիւնն ու տնօրէն խորհրդոյ անդամակցութիւնն ալ չբաւեցին Մելիքսեդեկի գիրքը բարձրացնել, և իր գործերը սկսան նորահասներէն քննադատուիլ և խծրծուիլ, ուստի 1875 հոլտեմբեր 6-ին ատենապետութենէն (75. ՄԻԱ. 117), և 1876 յունուար 12-ին ժողովականութենէ (76. ՄԻԱ. 16) և նոյն տաւոյ մայիս 26-ին միաբանութենէն ալ կը հրաժարէր (76. ՏՆՕ. 218), և ցաւած սրտով և վշտացնել հոգւով Երուսաղէմի կը հեռանար:

2869. ԿԱՅՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Պատմուած պարագաներն ալ բաւական են ցուցնել թէ Երուսաղէմի միաբանութեան ներքինին մէջ հիմնական փոփոխութիւն մը եղած էր: Հին ժամանակներ կը տիրէին իրաւ պարզամտութիւնն և ուսման նուազութիւնը, բայց օծուած էին անվկանգ միաբանասիրութեամբ և եռանդուն եկեղեցասիրութեամբ , որ լուսաւոր արտայայտութիւնն էր եղած Յովհաննէսի մահուանէ ետքը ծագած ներսէն դուրսէն խնդիրին մէջ տեսնուած միաբանութեան օրինակելի համերաշխութիւնը և կոչման հաստատութիւնը և հաւատարմութիւնը: Վերջին ատեններ ուսումնական վարգացման համար ամէն կողմէ բարձրացած ձայները, և նոր պատրիարք Եսայիի վրայ ազդովին գործած բռնադատութիւնը վայն մղեցին վարժարանի տպարանի թանգարանի (2788-2790) անփորձ ճիգերուն և խօլ ծախքերուն, որոնց գլխաւորն եղաւ Մուրատեան Գարեգինն ուսումնարանին վրայ իշխելը և Մելիքսեդեկ վարդապետ դառնալով վանական ընթացքին վրայ ազդելը: Այդ կէտէն է որ Երուսաղէմի միաբանութեան ներքինը կայլայլի, նպատակը լաւանալն էր անշուշտ, բայց արդիւնքը

վատանալն եղաւ: Երբոր գործի մը մէջ շատ մը հանգամանքներ և մէկէ աւելի շարժառիթներ կու գան միանալ, դժուար կըլլայ վճռաբար պատասխանութիւնը ճշդել: Մուրատեան Երուսաղէմի վանական հոգւով չէր սնած, գուցէ սաղիմական գործունէութեան խորն ալ չէր թափանցած, իբրև վերանորոգիչ մտեր և անցեալը անարգելու հոգւով էր գործած, քանի մը տարի վանքի մէջ՝ բայց ոչ վանական կեանքով ապրիլը զինքը կերպաւորելու չէր բաւած: Ըսե՞նք արդեօք թէ իր տւած ուսումն ու դաստիարակութիւնն ալ Երուսաղէմի միաբանութեան համար պահանջուածը չէր: Կացութեան կատարելապէս չյաջողած, և իր ձեռնասուններէն իսկ վշտացած, անմիջապէս միաբանութենէ բաժանուելու որոշումը բաւական է արդարացնել մեր դիտողութիւնները: Այժ բաժանման հոգին որ հաստատուն կապակցութեան պակսելուն և նպատակին պահանջած զոհողութեան հանդէպ զոհողութեանց հարկը չզգալուն հետևանքն է, կարծես իբրև վարակիչ ախտ

ընդարձակուեցաւ այդ միջոցին, և բաւական երկար ցուցակ մը կը կազմեն, Բառնաբաս Յովսէփեան, Փիլիպպոս Նաճառեան, Տիմոթէոս Սափրիչեան, Խորէն Մխիթարեան, Վարդան Մամիկոնեան, Մկրտիչ Սահակեան, Եղեկիէլ Գէորգեան, Յակոբ Շահպապլեան, Մովսէս Կէօմիւրքճեան, Կիւրեղ Սրապեան, Մակար Բարխուդարեան, Դանիէլ Աշըքեան, Մաղաքիա Տէրունեան, Ամբակում Համբարձումեան վարդապետներուն և Բարսեղ Այաղմալեան, Վահան Տէր-Մինասեան, Գառնիկ ճէվահիրճեան, Գէորգ Շահինեան, Կարապետ Գրիգորեան սարկաւազներուն, և բազմաթիւ ժառանգաւոր աշակերտներուն անունները: Երբոր օրինակները կը շատնան անհատական պատճառներուն տեղ ընդհանրական պատճառը փնտռել անհրաժեշտ կը դառնայ: Երբոր կացութեան տիրապետութիւնը նախայիշատակեալ հինգերուն կը մնայ, անոնք իսկ մինչև ցվերջ միացեալ չեն մնար և կը բաժնուին երկուքն յերից և երեքն յերկուց, որ է ըսել միևնոյն եսական հոգին է որ կը տիրէ: Իսկ երեքը որ միջավայրին տէր կը մնան, Խապայեան և Մաքսուտեան և Երէցեան, իրենց գործով և արդիւնքով չեն արդարացներ այն մեծ ակնկալութիւնը որ անդստին առաջին երիտասարդութեան օերէն իրենց ըայ գրուած էր, զի իրենց կատարեալ ազդեցութեան ներքև յառաջ եկող միաբանութիւնը ոչ ուսումնական վարձացմամբ կը փայլի, ինքնաշքատ ջանքով վարձացող ցանցառ անհատներու բացառութեամբ, ոչ միաբանական անբակտէլի համերաշխութեամբ կը փառաւորուի, ոչ եկեղեցասիրական անխոնջ աշխատութեամբ կը պայծառանայ, ոչ անարատ համբաւով և օրինակելի կենցաղով կը գովաբանուի, ոչ իր մէջ միասիրտ և միախորհուրդ մարմին մը կազմելով կը պօրանայ, և ոչ մատակարարական յաջողութեամբ կը ճոխանայ, որով փոխանակ օր ըստ օրէ վարձացնելու, որ ըստ օրէ տկարանալու վառիվայրին վրայ կը տագնապի: Այդ հետևանքին պատասխանութենէ վերժ չենք կրնար համարել անոնք որ իրենց տիրապետութիւնը տարածելու և իրենց պօրութիւնը ամրացնելու աշխատած ատեննին, այնչափ ճիգ չթափեցին հանրութեան օգտակար ըլլալու, որչափ ունեցան մէկը ներքին ազդեցութեամբ, երկրորդը ելեմտական բախտաւորութեամբ և միւսը արտաքին յարաբերութիւններով անձնապէս առատանալու: Բայց երդար ըլլալու համար պէտք չէ ևս մոռցանք որ ասօնք ալ իրենց նախնական սկզբունքները ուրիշէ առին, զոր չենք կրնար լիովին արդարացնել, իրենց գործունէութեանը մէջ երկու պատրիարքներու հովանաւորութիւնը վայելեցին, որոնց դերը հնար չէ նկատողութենէ վրիպեցնել, իրենց քաջալերիչներ և խորհրդակիցներ և գործակիցներ ունեցան, որոնք հետևանքին մասնակցութենէ պէտք չէ ապատ նկատուին: Բայց ինչ ալ ըլլայ ամենուն համար ըսելիքնիս , անոնք որ առաջնակարգ գծի վրայ գտնուած ըլլալու կերպարանը կը սիրեն պահել, պատասխանատուութեան մէջ չեն կրնար ինքզինքնին յետին գիծերուն անցունել: Չմոռնանք ալ դիտել որ վերագոյնդ գրուած միաբանական դասալիքներու շարքին մէջ անոնցմէ հնագոյններ ալ կան, սակայն հնագոյն եղած ըլլայ ազդեցութենէ վերժ մնալ ըսել չէ, զի իրենց ընթացքով, վարմունքով, օրինակով, խօսքով, ուղղութեամբ շատ դիւրաւ կրնան հնագոյններուն վրայ ազդեցութիւն գործածել, և տարբեր գործերու մղել ետևէն եկողներն ալ, և աւելորդ կը սեպենք խօսքերնիս հաստատելու համար անհատներու կենսագրական մանրամասնութիւններով ըզբաղիլ:

2870. ԵԼԵՒՄՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ Երուսաղէմի Ս. Յակոբեանց աթոռին և միաբանութեան միայն ներքին կացութիւնը չէր որ տագնապալի երևոյթ կառնէր, նիւթական կացութիւնն ալ համահաւասար կերպով օրըստօրէ ի վատթարն կը դիմէր, և այդ մասին փոքրիշատէ տեղեկութիւններ քաղցած և տուած ենք Եսայիի պատրիարքութեան նախնական նկարագիրին մէջ (2791): Փամանակը սաստկացուց տագնապը և պարտքերը հետզհետէ շատցան և դիպուեցան , և վանական բարեկարգութեան համար 1875-ին կազմուած մասնաժողովը, իբրև կարևորագոյն խնդիր

մը նորէն սուրբ աթոռոյ պարտքը թեթևցնելու միջոցները կառաջարկէր սեպտեմբեր 15-ին Ընդհանուր ժողովին, միջոցներ որ տարի մը առաջ ալ առաջարկուած և անգործ մնացած էին: Մտածուած միջոցներն էին, նուիրակներ հանել, տպարանի մնացած գիրքերը վիճակահանութեան դնել, ձեռքէ տրուելիք մինչև 30,000 լիրայի տոմսակներ հանել, և կամ հանրագրութեամբ կեդրոնական վարչութեան դիմել (75. ՄԻԱ. 106-110), բայց փոխանակուած խօսքերէ ետքը գործը նորէն կը յետաձգուէր, մինչև որ 1876 յունիս 15-ին նորէն ձեռք կառնուէր մետասան միաբաններու գրաւոր յայտարարութեամբ թէ դրամական տագնապը հետզհետէ աւելնալու վրայ է (76. ՄԻԱ. 171): Այս անգամ իբրև միջոց կառաջարկուէր հարագրութեամբ կեդրոնական վարչութեան դիմել, և գաւառներու մէջ ցրիւ գտնուող կլուածներու վաճառման արտօնութիւն ուզել, և կառավարութենէ 20 տարեկան 1,000 լիրայի փոխատրութիւնը խնդրելու, և Ռուսիոյ մէջ նուիրակներ յղելու համար Մայրաթոռոյ առջև կեդրոնին միջամտութիւնը պահանջել (76. ՄԻԱ, 171-173): Երբոր խնդիրը ձեռք կառնուի, կը գիտուի թէ կեդրոնը կանուխէն գրուած նամակներուն ալ պատասխանած չէ, համոզելով միաբանութենէ անջատուող միաբաններու խօսքերուն, որոնք ջանացած են ազգը համոզել որ վանքը պարտք չունի (76. ՄԻԱ. 188): Դարձեալ խնդիրը մտադրութենէ կը վրիպի մինչև որ տարի մըն ալ ետքը Ելեմտացոյցի քննութեան առթիւ 1877 մայիս 3-ին Եսայի պատրիարք պարտքերու բարդուելուն խնդիրը մէջտեղ կը դնէ պատճառներ ցուցնելով 1. Վերջին երկու տարիներուն մէջ պարագայից բերմամբ ուխտաւորներուն նուազիլը: 2. Հանրային պարտուց և երկաթուղեաց տոկոսներուն կանոնաւոր չվճարուիլը. 3. Յոպպէի կալուածոց արդիւնքին մէկ քառորդին տուրքի պատճառով գրաւուիլը: 4. Վերջին ժամանակներու մէջ կատարուած կալուածոց անհրաժեշտ նորոգութիւնները կամ կալուածները ազատելու ծախքերը, և կեպրակացնէ թէ պարտքը քսան հազարի մօտեցաւ (77. ՄԻԱ. 231): Այդ բացատրութեանց մէջ Եսայի կը մօտնար յիշել թէ ինքն կը շարունակէր վարժարանի համար աւելորդ, լուսանկարի և կալվանագործութեան համար ումպէտ, տպարանի համար չափազանց, միաբանական կեանքին համար և պատուոյ անունով շուայլ ծախքերը, և ազատաբար կը կնքէ ծանր տոկոս փոխառութեանց մուրհակներ, որչափ ալ կը յայտարարէր թէ ինչ որ պարտք եղած է, սուրբ աթոռոյ ծախուց համար եղած է, և ոչ թէ ես իմ ուզածիս պարտք դիպած եմ, բայց ոչ ոք ըսած էր թէ ինքն բան մը իւրացուցած ըլլայ, թէպէտ վանական արկղը իրեն ձեռքն էր, և միայն 1877 մայիս 16-ին որոշուեցաւ երեք բանալիով դրամարկը հաստատել, և բանալիները տնօրէն ժողովէ երեք անդամներու յանձնել (77.ՄԻԱ.260): Պարտքի խնդիրը տակաւին կաղնիկաղ կերթար առանց վճռական որոշման յանգելու, երբ 1878 յունուար 25-ին Խապայեան Սահակ և 30-ին Մաքսուտեան Ղևոնդ քանի մը ամսուան արեղաներ տնօրէն ժողովոյ մէջ կը մտնէին, երբ իրենց օժակից ընկերն ալ Յակոբեան Վահան արեղայ ընդհանուրի ատենապետն էր (78.ՄԻԱ.287-290), իսկ տնօրէնի պաշտօններու բաշխման ատեն բանալիներէն մին Մաքսուտեանի կը յանձնուէր: Արդէն նախընթացին մէջ ալ միշտ Ելեմտական գործառնութեանց մասնագիտական հմտութիւն և յատուկ ճարտարութիւն նկատուած էր Մաքսուտեանի վրայ, որ այս անգամ կը նուիրագործուէր: Պարտքերուն դարմանին դառնալով պատրիարքը 1878 մայիս 26-ին կը յայտարարէր թէ խնայողութեան համար ստիպուած էր կերակուրը նուազեցնել և տարեկանը վեղչել (78.ՄԻԱ.293), բայց այսչափը չէր բաւեր ոչ միայն պարտքը ջնջելու, այլ և ոչ իսկ աճումը դադարեցնելու: Այլևս ժամանակը հասած էր պաշտօնական և թախանձագին գրութեամբ կեդրոնին ներկայելու աթոռին Ելեմտական վիճակը և անմիջական և գործնական դարման խնդրելու: Այդ դիմումին հասնիլն ալ 1878 նոյեմբեր 30-ին կը հանդիպէր (78.ՄԱԱ.2208), և ազգին մէջ կը վարթնու սուրբ տեղերը և Ս.

Յակորբեանց աթոռը վտանգէ փրկելու ուշադրութիւնը (78.ՄԱՍ.2231), բայց խնդիր էր կերպը գտնել և վայն գործադրել:

2871. ԿԵԴՐՈՆ ԵՒ ՊԱՏՈՒԻՐԱԿ

Երուսաղէմի բախտէն արդօք, թէ Կ. Պոլսոյ պատրիարքարանի մշտատն վիճակէն պարտուց խնդիրը պարզուելու և գործնական ձև առնելու համար դժուարութեանց կը հանդիպէր: Հալիլ թէ 1879 յունուար 17-ին խառն ժողովը առաջին անգամ այդ գործով կը վբաղէր, և կորոշէր վայն Ընդհանուր ժողովոյ առջև հանել, քանի որ լուծումը ազգովին և ընդարձակ գործողութեանց կը կարօտէր (79.ՄԱՍ.2232), իսկ Ընդհանուր ժողովը սկսած էր Ներսէսի նոր հրաժարականով վբաղիլ: Միև կողմէն իբրև նախաշաւիղ և կամ իբրև ժամանակ շահելու միջոց, Երուսաղէմէ կատարեալ հաշուետուութիւն կը պահանջուէր, որ կը հասնէր փետրուար 20-ին, և վանօրէից խորհրդոյ նախաքննութեան կը յղուէր (79.ՄԱՍ.2258): Հաշիւները ներկայելի ձևի վերածելու համար, կոկելու և կանոնաւորելու պէտք եղած էր, և Մաքսուտեան գլխաւոր դերն ունեցած էր, բայց տակաւին ըստ ամենայնի գոհացուցիչ գտնուած չէին: Նախաքննութեան հետ ամիսներ կանցնէին Երուսաղէմ Կ. Պոլիսէ լուր մը չէր առներ, իսկ Կ. Պոլսոյ մէջ կը լսուէր թէ Եսայի պատրիարք մտադիր է անձամբ Կ. Պոլիս գալ գործը մղելու (79.ՄԱՍ.2333): Ուստի վարչութիւնը անոր առջևն առնելու համար կը փութար լուր հասցնել, թէ գործը մտադրութեամբ նկատի առնուած է, և մօտ ժամանակէն արդիւնքը կը հաղորդուի (79.ՄԱՍ.2345): Բայց միշտ հրաժարականի խնդիրը կը մնար, որ աւելի ստիպողական էր և ժողովներ ուրիշ գործով չէին կարող վբաղիլ, մինչև որ Ներսէս օգոստոս 10-ին նորէն գործի գլուխ կանցնէր (79.ՄԱՍ.2400), օգոստոս 24-ի գումարման մէջ Երուսաղէմի գործին ստիպողականութիւնը կը բացատրէր, և ժողովը իրեն կը յանձնէր ամէն հարկ եղածն ի գործ դնել (79.ՄԱՍ.2410): Այս յանձնարարութեամբ Ներսէս փութաց յանձնախումբը մը կազմել, և գործին ոյժ տալու համար անձամբ ալ կը նախագահէր, և հոկտեմբեր 9-ին (79.ՄԱՍ.2446) կորոշուէր ամէն ազգային անհատէ երեք տարի երեքական դահեկանի պարտաւորեալ նուէր կամ տուրք հաւաքել թաղերու և առաջնորդարաններու ձեռքով, հաւաքուածին 75% մասը Երուսաղէմի յատկացնել, իսկ մնացորդէն 10% տեղական վարժարաններու, 10% պատրիարքարանի, նորոգութեան և 5% հաւաքիչներու վարձքին գործածել: Կորոշուէր ևս Եգիպտոսի մէջ Երուսաղէմի կալուածները արդիւնաւորեալ և արտաքոյ Թուրքիոյ նուիրակներ հանել (79.ՄԱՍ.2460): Բայց որովհետև պէտք էր Երուսաղէմի վիճակը և գործերը մօտէն գիտնալ, կանոններու և կարգադրութեան թերին լրացնել, և ապագային ապահովութեան միջոցներ տնօրինել, կարող պատուիրակի մը պէտքը զգացուեցաւ, և ի դէպ հանդիպեցաւ բժշկապետ Ստեփան Ասլանեան փաշային օղափոխութեան համար Ասորուոց կողմեր մեկնիլը, և անոր յանձնուեցաւ լիազօր պատուիրակի պաշտօնը, որ և ուղևորեցաւ նոյեմբեր 1-ին (79.ՄԱՍ.2465), և Երուսաղէմ հասնելով նոյեմբեր 15-ին ներկայացաւ միաբանութեան ընդհանուր ժողովին, և իր պաշտօնը բացատրեց ճարտար ատենաբանութեամբ, ներկայելով նաև կեդրոնէն իրեն յանձնուած հրահանգը (79.ՄԻԱ.314-319): Պատուիրակը միաբանութենէ վստահութիւն և գործակցութիւն պահանջեց, որպէս զի իրենց թերին իրենք դարմանած ըլլան փոխանակ դուրսէն ստիպուած ըլլալու: Իսկ հրահանգը նախ կը բարձրացնէր սուրբ տեղեաց պահապան և պաշտպան միաբանութեան հին և նոր արդիւնքը, և կաւելցնէր թէ ներկայ ժամանակը կը պահանջէ մկանանց զօրութենէն տարբեր մտաց զօրութիւն ալ պատրաստել, և օրինակ կը բերէ միևս ազգաց միաբանութիւնները: Կը դիտէր թէ հաշիւներու քննութիւնը աննպաստ եզրակացութեանց տեղի տուած է, թէ վարժարանի, տպարանի, արհեստանոցի, վանական կեանքի ծախքերը պէտք է աւելի խոհական և հաստատուն սկզբունքներու վերածուին, անցեալը ստուգուի որ ապագան ծրագրուի, վասն զի, կըսէր ամէնուս

նպատակն է մեր նախնեաց այնքանս զոհողութիւններով կանգուն մնացած յիշատակարանաց ապագայն ապահովել: Հրահանգն ալ կը շեշտէր և կը պահանջէր միաբանութեան գործակցութիւնը պատուիրակին հետ, և կատարուելիք գործողութեանց մէջ յատկապէս կը շեշտէր 1865-ի կանոնագրին վերաքննութիւնը իսկ պարտուց գումարը 28,200 լիրայի հասած կըսուէր (79.ՄԻԱ.317): Միաբանական ժողովը նոյեմբեր 15-ի և 16-ի նիստերուն մէջ յայտնեց թէ առաջարկուած միջոցներէն շատերուն արդէն ինքն ձեռնարկած է, բայց համակերպեցաւ հրահանգին գործադրութեան և պատուիրակին խնդրած երկու եռանուն յանձնախումբերու տեղ վեցանուն միակ յանձնախումբ մը գործակից ընտրեց, անդամակցութեան կոչելով Սահակ և Աստուածատուր Եպիսկոպոսները, Եփրեմ, Սահակ և Ղևոնդ վարդապետները և չորս ամիս առաջ ձեռնադրուած Գէորգ նորընծայն: Իսկ իրենց անուանման պաշտօնագիրը հրահանգի ձևով պատրաստուեցաւ, և Ընդհանուր ժողովոյ նոյեմբեր 19-ի ժողովին մէջ հաստատուելով յանձնուեցաւ (79.ՄԻԱ.330-332), որուն մէջ կը շոշափուէին նախընթաց նիստերու մէջ յայտնուած միտքերը: Նոյեմբեր 19-էն մինչև 1880 յունուար 27 իբր երկու քուկէս ամիս միասին աշխատեցան պատուիրակն ու յանձնախումբը, և նոր կանոնագիր մը պատրաստեցին 1865-ի կանոնագիրը հիմնապէս փոփոխելով, զոր և յունուար 28-ին միաբանութեան ներկայեցին, որ մինչև փետրուար 5 եօթը նիստերու մէջ 101 յօդուածներէն իւրաքանչիւրը քննեց, կազմողներու տուած բացատրութիւնները լսեց, և գրեթէ անփոփոխ ընդունուեցաւ, և փոխադարձ շնորհակալութեան և յորդորանաց խօսքերով գործը լրացաւ (80.ՄԻԱ.337-371): Միայն անցեալին քննութեան տեղեկագիրը չէր աւարտած, որուն վրայ յանձնախումբը պիտի աշխատէր պատուիրակին բացակայութեան ատեն և ժամանակին ալ պիտի ներկայացուէր միաբանութեան (80.ՄԻԱ.336):

2872. ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Երուսաղէմի կանոնագիրներուն անդրանիկը կրնայ սեպուիլ 1861-ին կեդրոնին կողմէ կազմուածը, սակայն միաբանութեան կողմէ չընդունուելով անգործ մնաց (2711-2712), որով առաջին կանոնագիր նկատուեցաւ 1865-ին կազմուած, որուն Եսայի պատրիարք յանձնառու եղաւ յանուն միաբանութեան (2739), և թէպէտ տառ առ տառ չգործադրուեցաւ, բայց իբրև վարչական հիմնագիծ ծառայեց 15 տարիներ մինչև 1880-ի վերոյիշեալ կանոնագրութիւնը: Այդ նորը, որ պատրիարքի և միաբանութեան համահաճ համաձայնութեամբ կազմուեցաւ, երկրորդ կանոնագիր կրնայ կոչուիլ, պատուիրակին ձեռքով կեդրոնին ներկայացուեցաւ, և նոյն 1880 տարուոյ հոկտեմբեր 10-ին Ընդհանուր ժողովէն ամբողջութեամբ հաստատուեցաւ և վաւերացուեցաւ պատուիրակ Ասլանեանի տուած բացատրութեանց վրայ (80.ՄԱՍ.2743): Նոր կանոնագիրը նոր կազմով և նոր սկզբունքներով յօրինուած էր, և ազգային և կանոնագրական գործոց մէջ փորձառու պատուիրակին կնիքը կը կրէր իր վրայ: Ամբողջը 101 յօդուածներէ կը բաղկանայ երեք գլուխներու բաժնուած, որոնք են, կազմութիւն 20 յօդուած, վարչութիւն 79 յօդուած և վերաքննութիւն 2 յօդուած: Առաջին գլուխը վանապան ստորաբաժանումներով կորոշէ միաբանութեան թիւը, ձայնատէր եկեղեցականներ 73, և մնացեալը 172, բովանդակ 245 հոգի անկէ կանցնի բացատրել անդամակցութեան ընդունելու պայմանները, միաբաններուն պարտքերն ու իրաւունքները, ամբաստանութեանց ձևերը և միաբաններուն վախճանը: Վարչական գլուխը կը խօսի նախ պատրիարքի և յետոյ Տնօրէն ժողովոյ վրայ, զոր պիտի կազմեն վեց մեծ պաշտօնակալներ, լուսարարապետ, փոխանորդ, ուսումնապետ, ելևմտապետ, տնտեսապետ և կալուածապետ, որոնք պիտի ընտրուին անձնիւր անդամ իր պաշտօնին որոշմամբ, և անհատապէս պատասխանատու պիտի ըլլան իրենց ճիւղին և հաւաքարար ընդհանուր վարչութեան: Միաբանական ընդհանուր ժողովոյ խոսելէն ետքը կանոններ կը գծուին վեց մեծ պաշտօնակատարներուն պարտուց և

իրաւանց և իրաւասութեանց նկատմամբ բաւական մանրամասնութեանց ալ իջնելով: Ժողովական վեց մեծ պաշտօնակալներէն ետքը կը յիշուին, դարպասընկալը, դիւանապետը, Կ. Պոլսոյ փոխանորդը, սուրբ տեղեաց և թեմերու տեսուչները, նուիրակներն ու այցելուները, և իւրաքանչիւրին գործը կը ճշդուի, և ի վերջոյ հատուած մըն ալ կը նուիրուի ընդհանուր վարչական ընթացքին վրայ: Վերաքննութեան գլուխը երեք տարի պայմանաժամ կը դնէ, և մինչև նոր կանոնագիրին վաւերացումը հինը գործադրութեան վրայ կը պահէ: Յուցակ մը աւելցուած է իւրաքանչիւր տեղի և գործի համար որոշուած անձերու թիւը ցուցնող տարբեր դասակարգերու բաժանմամբ, որոնք են եպիսկոպոս, վարդապետ, սարկաւազ, դպիր, ժառանգաւոր, քրձապագեաց և մայրապետ: Վերջէն ծանոթութիւն մը կաւելցուի թէ ի հարկին կրնան փոփոխուիլ թէ թիւերը և թէ դասակարգերը: Աւգային երեսփոխանութիւն միայն երկու փոփոխութիւն ըրաւ 30-րդ յօդուածին մէջ նորընտիր պատրիարքի անունին յիշատակութիւնը ուխտէն ետքը պահեց, և 100-րդ յօդուածին մէջ վերաքննութեան պայմանաժամը երեքէն երկու տարիի իջեցուց: Նոր կանոնագիրին ընդունած տրամադրութեանց մէջ գլխաւորներն են. յօդ. 31. Տնօրէն ժողովը պատասխանատու պաշտօնակալներէ կազմել և ոչ անպաշտօն հրամայողներէ. յօդ. 38. Ընդհանուր ժողովոյ մէջ ձայնատէր ճանչնալ մինչև ձեռնադրեալ սարկաւազները բացառաբար. յօդ. 39. Ընդհանուր ժողով գումարել ամէն ամսագլխին ցորչափ խնդիր գտնուի. յօդ. 42. սովորական նիստերու համար բաւական սեպել Երուսաղէմի մէջ ներկաներուն կէսէն մէկ աւելին, իսկ պատրիարքական ընտրելեաց և լուսաւորապետի ընտրութեան համար բոլոր միաբաններու կէսէն մէկ աւելին. յօդ. 29. Պատրիարքական ընտրելեաց ցուցակներ կազմել և երկուքը միասին ներկայացնել կեդրոնին. յօդ. 83. Երեք առ հարիւրէ պակաս արդիւնք բերող կալուածոց վաճառումը Ընդհանուր ժողովով որոշել. յօդ. 32. վեց մեծ պաշտօնակալներ միաբանական ժողովով, իսկ բոլոր ուրիշ պաշտօնեաները տնօրէն ժողովով ընտրել: Մնացեալ կէտեր ընդհանուր կերպով ամէն կանոնագիրներու մէջ եղածներն են և մանրամասնել վանց կընենք: Կեդրոնին հաստատութիւնը որ 1880 հոկտեմբեր 10-ին տրուած էր, հապիւ 1881 մարտ 26-ի նամակով կը հաղորդուի Եսայի պատրիարքի (81. ՄԻԱ. 388), և կը ներկայացուի ապրիլ 23-ի միաբանական ժողովին, բայց գործադրելու համար կը սպասուի պաշտօնի վրայ եղող տնօրէն ժողովին պայմանաժամին լրանալուն, և անոր համարատու տեղեկագրին քննուելուն, որ քանի մը նիստերու նիւթ կը մատակարարէ, և միայն յունիս 6-ին նոր կանոնագրի տրամադրութեամբ տնօրէն ժողովը կը կազմուի, և անդամները կըլլան Իսահակ եպիսկոպոս Աստուածատուրեան արդէն լուսարարապետ և մշտական անգամ: Յարութիւն եպիսկոպոս Վեհապետեան փոխանորդ և յարաբերութեանց տեսուչ, Աստուածատուր եպիսկոպոս Տէր Յովհաննէսեան կալուածապետ, Սահակ վարդապետ Խապայեան ուսումնապետ, և Ղևոնդ վարդապետ Մաքսուտեան ելեմտագէտ: Յարութիւն եպիսկոպոսի համար պէտք է յիշել թէ 1880 մարտին Կարնոյ առաջնորդութենէն հրաժարելէն ետքը Կ. պոլիս հասած էր մայիս 12-ին նորընտիր առաջնորդ Օրմանեանի Կ. Պոլիսէ մեկնած միւսնոյն օրը, և մայրաքաղաքի մէջ հաստատուիլ չուելով յուլիսին հասած էր Երուսաղէմ, ուր կը մնար ինն ամիսներէ ի վեր առանց վանական գործոց մասնակցելու, մինչև որ տնօրէն ժողովը 1881 ապրիլ 20-ին ընդհանուր ժողովի առաջարկեց վայն միաբանական գործունէութեան հրաւիրել, նկատելով որ արդէն ի սկզբանէ անդամ էր միաբանութեան (81. ՄԻԱ. 381), պէպէտ իբր հեռացնել կը նկատուէր ինչ որ անհակառակ հաւանութիւն գտաւ, և յունիս 6-ին ալ տնօրէն ժողովոյ անդամակցութեամբ և փոխանորդութեան ընտրուեցաւ:

Նոր կանոնագիրը կապմուտեցաւ, հաստատուած և գործադրութեան սկսած էր, եռանդն արծարծած էր միաբաններու վրայ, վստահութիւնն շատցած էր դուրսը, և ակնկալութիւններ կերաշխաւորէին, այնպէս որ 1881 յունիս 6-ին ընտրութեանց թուականը փափաքանաց լրումը կը կարծուէր: Կեդրոնն ալ Ասլանեանի պատուիրակութեամբ Երուսաղէմի մէջ թէ ոչ իրականացած վիճակ, գոնէ վստահութեան փաստեր տեսնելով միտքի հանդարտութիւն գոյացուցած էր, և յօժարակամ ջանքով պարտքի խնդիրը լուծելու և կարգադրելու ձեռնարկած էր: Բայց ամիս մը միայն տևեց այդ յուսալից վիճակը, 1881 յունիս 6-ին լրացածը յուլիսի սկիզբները սկսած էր քայքայման երևոյթը ցուցնել: Կացութեան տիրապետողները միշտ նոյն հինգերն էին, զորս կանուխէն մատնանշեցինք (2868), և որոնք կանխաւ պաշտօններու վրայ էին, այս անգամ ալ նոր տնօրէնին և ընդհանուրի դիւանին տէր եղած էին: Իրօք ալ ասոնք իրենց առաջուաններէն աւելի վարգացած էին, աշխատութեան մէջ փութաջան և միաբանութեան պայծառութեան անձնանէր էին, միաբանակիցներուն կողմէն ալ յարգ ու վարկ կը վայելէին, բազմամեայ աշխատաւոր և պատկառելի միաբաններ անհակառակ անոնց առջև բաց կը թողուին գործունէութեան ասպարէզը, մինչև իսկ չորս սարկաւագներու միանգամայն ընդհանուր ժողովոյ դիւանը յանձնած էին, որ ըսել է, միաբանական ընդհանուր կացութեան վրայ ազդելու վիճակի մէջ գրած էին: Եսայի պատրիարք խնդամիտ և երջանիկ էր ձեռքին ներքև այսպիսի ընտիր աշխատողներ գտած ըլլալով, որոնց կը շռայլէր անհակառակ համակերպութիւն և անսահման վստահութիւն և անպայման հովանաւորութիւն: Հինգերուն մեծ ոյժը իրարու հետ հոգեկցորդ միութիւնն էր, և անոր հիներուն մէջէն յարգոցներ և նորերուն մէջէն հետևողներ կապահովէին: Այդ միութեան տրուած առաջին հարուածն և որ կացութիւնը կը կերպարանափոխէ, և միութեան քակտելուն պատճառ տուող պարագան այնչափ անբաւական և պատահական է որ հնար չէ չըսել թէ գործը կանուխէն ներքին հարուած մը կրած էր, և երևան գալուն համար որ և է առիթի մը կը սպասուէր, ինչ որ կը ցուցնէ թէ միութեան ալ իսկական և ներքին հիմը կատարեալ ուղղամիտ և անխառն հանրային օգուտը չէր, եթէ կրցաւ փոքրոգի անձնականութիւններով վտանգուիլ: Ներքինին թերութիւնը երևան հանող պարագայն բոլորովին դուրսէն առիթ մը եղաւ: Մաքսուտեանին եղբայրը Յակոբ, որուն համար ըսուած է թէ քանիցս անգամ միաբանութենէն արտաքսուած էր իւր անառակութեանց և խռովարարութեանց պատճառաւ (ՆՄԿ.) ծննդավայրը Դամասկոսէն Երուսաղէմ դառնալով, հոն Մալլըմեանց Յովհաննէսի դստեր հետ կը նշանուի, և յուլիս 12-ին նշան կօրհնուի, և նշանածներ վանքին լուսանկարչատունը գալով միասին կը կենդանագրուի, վանականներ կը տեսնան և իրարու կանցնին, և նոյն օր 12 յուլիս, 17 ձայնատէր միաբաններ, 3 եպիսկոպոս և 10 վարդապետ, և 4 սարկաւագ, հանրագրութեամբ Եսայի պատրիարքին կը դիմեն նշանածներուն նշանը ջնջելու (81.ՄԻԱ.62): Իբր զի Երուսաղէմի աթոռին նուիրական և աւանդական կանոնն էր միաբաններուն Երուսաղէմի մէջ ազգական և խնամի չունենալ և չկապմել, և որուն հետևանքն էր Երուսաղէմացի միաբան չընդունիլ: Հանրագրութեան բողոքարկուներէն, և հաւանաբար գլխաւոր գործիչներէն մէկը հինգերէն մին էր, Վահան վարդապետ Յակոբեան: Հինգերէն ուրիշ մըն ալ Գէորգ վարդապետ Երէցեան երկու կողմերուն ալ չխառնուելով միջնորդի դերը ստանձնած էր, Ղեւոնդ Մաքսուտեան գործին առարկայն էր, Գաբրիէլ Անոյշեան և Սահակ Խապայեան վարդապետներ Մաքսուտեանի պաշտպան և թևակունք էին: Իսկ միաբանութեան ամբողջութեան գալով, 17 բողոքարկուներ երկրորդ հանրագրութեան մէջ 18 կըլլային (81ՄԻԱ.66), և ժողովական քուէարկութեան առթին 21-ի կը բարձրանային 3 ձեռնպահներէն զատ. իսկ Մաքսուտեանի 8 միայն էին (81.ՄԻԱ.72): Մաքսուտեան առանձինն և Անոյշեան և Խապայեան միասին միաբանութենէ հրաժարականը կը մատուցանեն յուլիս 14-ին (81.ՄԻԱ.64-65), պատրիարքին հետ խօսուածները,

տնօրէնի յուլիս 10-ի նիստին մէջ ըսուածները, աւանդական կանոնին հաստատութիւնը, բացառիկ նախընթացները, անհատնում ըսիրսաւներու և բերանացի ու գրաւոր բանավէճերու առատ նիւթ կը մատակարարէին, զի երկու կողմեր իրարու ներհակընդդէմ պարագաներու վրայ կը պնդէին ու կը պնդէին: Պատրիարք սկզբունքը պաշտպանելով ներած ըլլալը կը մերժէր, Վեհապետեան միակ բացառութիւնը ներել կը թելադրէր, պայմանաւ որ նշանածներ Երուսաղէմէ դուրս պսակուին ու ապրին: Երէցեան կառաջարկէր բացառութիւնը ընդունիլ ինչպէս եղած էր Հաննա եպիսկոպոսի և Կիրակոս պատրիարքի համար, Մաքսուտեանէ խնամիական յարաբերութիւններէ հեռու մնալու գիր առնել, և ապագային համար որոշ և յստակ կանոն սահմանել: Բայց ժողովին մեծամասնութիւնը ոչ մի կերպով չէր զիջանէր: Անոյշեան և Խապայեան կը հաւանէին միաբանութենէ չհրաժարիլ, սակայն Խապայեան ուսումնապետութիւնը վերջնապէս կը թողուր, որով օգոստոս 3-ին (81.ՄԻԱ.89), անոր տեղ ուսումնապետ կընտրուէր Երեմիա եպիսկոպոս Տէր-Սահակեան, և Մկրտիչ վարդապետ Սահակեան ելեմտից տեսուչ կընտրուէր, զի Մաքսուտեան ամուր կը մնար պաշտօնէ և միաբանութենէ հրաժարականին վրայ, և օգոստոս 8-ին (81.ՄԻԱ.99), Երուսաղէմէ կը մեկնէր և 9-ին Պէյրութի մէջ, Աստուածածնայ բարեկենդանի արգիլեալ օրը, Խնդիրի նիւթ եղող պսակը կօրհնուէր: Դիտուելու արժանի կը ստեպենք թէ Մաքսուտեան երբ առաջ կը պնդէր պատրիարքի առջև թէ եղբայրը ամուսնանալ չուկեր և ինքն է գործը կարգադրողը (81.ՄԻԱ.74), վերջին գիրին մէջ կըսէր թէ եղբօրը ամուսնական խնդիրը իր կամքէն կախում չունի (81.ՄԻԱ.88), որ կը ցուցնէ թէ ամուսնութիւնը առիթ մըն էր հեռուէհեռու պօրացած կիրքերու յայտնումներէ և ոչ թէ իսկական պատճառ մը:

2874. ԽՆԴԻՐԻՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Առեղծուած ըլլալու չափ դժուարին կը նկատուին միշտ ներքին անցքերու պարզաբանութիւնները, բայց չենք ալ կրնար վանց ընել և բացատրութիւններէ խուսափիլ, զի Երուսաղէմի ապագային անիւր ճիշդ այդ առանցքին վրայ դարձած է, և պատմագիրի պարտքն է եղելութիւնները ոչ միայն յիշել, այլ և լուսաբանել: Մաքսուտեանի հանդէպ հնար չէ ուրանալ ուշիմութեան, ճարտարութեան, յաջողականութեան, գործունէութեան, և հնարիմացութեան ձիրքերը, վարչականին մէջ բաւական, տնտեսականին մէջ գերազանց, ոչ անխառն ծննդավայրին սեփական եղող խորամանակ և շահագէտ բարքերէ: Տասնըեօթը տարեկան սարկաւագ ձեռնադրուած էր, և տասնըինը տարեկան Կ. Պոլսոյ աշակերտութենէն դառնալով գործունեայ դեր կը ստանձներ միանգամայն, մինչև որ ուսումնականէն հեռանալով բոլորանուէր ելեմտականին կը հետևէր յատուկ յաջողականութեան նշաններ ալ տալով, որով ոչ միայն վանական շրջանակին մէջ կը փայլէր, այլ և Ասլանեան պատուիրակին (ՆՄԿ.), և առևտրական դասակարգէ ուխտաւորներուն ալ յատուկ մտադրութիւնը կը գրաւէր և արժանաւորութեան հռչակ հանած էր: Հինգերու շրջանակն ալ Մաքսուտեանի այդ առաւելութիւնը ճանչցած էր, և աննախանձ կերպով վայն ապատ թողած էր ըստ այնմ գործելու: Անոյշեան գործելու շատ խորունկը թափանցողը չէր, Խապայեան բոլոր իր գործունէութիւնը և գոհունակութիւնը բարոյական ճիւղերու յատկացուցած էր, Երէցեան կրտսերագոյն էր և շատ ձեռներէց չէր: Կը մնար Յակոբեան որ իր բնոյթով և իր ձգտումներով կրնար մրցակից մը ըլլայ Մաքսուտեանի, բայց Մաքսուտեան անդստին սկիզբէն ընդհանուր ժողովոյ ատենապետութեան խայծով վայն իր ճիւղէն հեռու պահած էր: Ճիշդ ալ վերև պատմուած միջադէպը ծագում առաւ երբ Յակոբեան տնտեսապէս ընտրուեցաւ, և ելեմտապէտին վայելած առաւելութիւնները և կազմած դիրքութիւնները տեսաւ, և իրեն անմասն մնացած ըլլալը վզաց: Մաքսուտեան իր խնամիին տուն գնելու հասած էր, թող իր առձեռն ուրիշ շահերը: Յակոբեան ոչ նուազ շահագէտ և ոչ նուազ յաջողակ անձ մը, քուէ արթնցածի վիճակն ունեցաւ, և

շատ նշանակալից է որ Մաքսուտեանի եղբորը ամուսնութեան խնդիրը չեւած. Մաքսուտեանի 1881-ի ընտրութենէն առաջ վարած պաշտօններուն հաշիւները քննելուն խնդիրը կը յուզուէր Յակոբեանի նախաձեռնութեամբ: Այդ քննական ձևակերպութիւնը շատ կրնար երկարիլ, և կրնար ալ դիտուած նպատակին չհասցնել, մինչ ամուսնութեան խնդիրը աւելի կարճ էր և աւելի ազդու Մաքսուտեանը գործէ հեռացնելու և անոր պօրաւոր գիրքը խախտելու, որ միևնոյն ատեն ելեմտից տեսուչ էր, տնօրէն ժողովոյ ատենապետ նշանակուած էր, ընդհանուր ժողովոյ ատենապետ ընտրուած էր, և այդ պաշտօններու համախոնութեամբ դիւրաւ կրնար հաշուեքննիչներուն աչքին փոշի փչել. մինչ աւանդական կանոնին նախանձայուպութիւնը աւելի դիւրաւ կը գրգռէր միաբանութիւնը: Պէտք է ըսել թէ միաբանութեան մէջ ալ տարածուած պէտք էր ըլլար Մաքսուտեանի ընթացքին ու դիրքին ու վարմունքին դէմ հակակրօթիւնը, եթէ 40-ի չափ ձայնատէր միաբաններէն 8 միայն գտնուեցան իրեն նպաստաւորներ: Այս է պարագաներու հետապօտութենէն և արձանագրութիւններու ընթերցումէն մեր քաղած տեսութիւնը, ապա թէ ոչ եթէ թաքուն համակրօթիւն մը չըլլար, եթէ Մաքսուտեանի դիրքն ու ընթացքը շատերը ուժացուցած չըլլար, ամուսնութեան խնդիրը մէկ անլուծելի կնճիռ չէր, և Երէցեանի առաջարկած ձևը, այսինքն Մաքսուտեանի խնամիական յարաբերութիւններէ հեռանալը, եղբորը իր քաղաքը դառնալը, և աւանդական կանոնը գրաւոր հաստատուն օրէնքի վերածելը, բաւական պիտի ըլլար բացառիկ պարագայն հիմնական խնդիր չդարձնելու: Իսկ Խապայեանի բուն պաշտպանութեան ոճը, այսինքն Մաքսուտեանի արդիւնաւորութեան և արժանաւորութեան փաստը կարծես աւելի վնասած է Մաքսուտեանի դատին, զի ճիշդ այդ կէտերն էին որ հակակրօթիւնը վայրացուցած էին: Հարկաւ անձանոթ մնացած չէր Մաքսուտեանին հետզհետէ ստացած դիւրակեաց և լայնաձեռն գիրքը, մինչ որ հայրենական ժառանգութիւն մը ունէր, և ոչ ալ վանական մատակարարութեան գործերէն և վարկէն վատ շահագործելու և օգտուելու ուրիշ միջոց ունէր: Նմանապէս չէր կրնար դիտուած չըլլալ եկեղեցական սպասարկութենէ հեռու մնալը, կերպարանով եկեղեցական, իսկ զբաղմամբ կատարեալ առևտրական կենցաղը, մինչև իսկ նորընծայութեան առաջին պարագաներէն ետքը պատարագած չըլլալը, և ամենէն նուիրական օրերն ալ եկեղեցոյ դասին մէջ չերևնալը: Այս պարագաները կը յիշենք հաւաստելու համար թէ Յակոբեանի մրցումին հետ միաբանութեան հակակրօթիւնը մեծ դեր ունեցած է Մաքսուտեանի դէմ լարուած և վարուած պայքարին մէջ: Այս մասին մեր տեսութեանց հաստատութիւնը կը գտնենք 26 միաբաններու օգոստոս 29-ին Գէորգ կաթողիկոսի ուղղած բողոքագիրին մէջ, ուր մինչև իսկ ընդ ամէնը երկու պատարագ ըրած ըլլալը կը յիշուի, և Մաքսուտեանի գործը ծանրացնելու համար, Եսայի պատրիարք Յարութիւն եպիսկոպոս իբր ծածուկ պաշտպաններ կը ցուցուին, և ասոնց ալ, մանաւանդ Եսայիի զեղծումներուն մասին ծանր ակնարկներ և ամբաստանութիւններ կը դիպուին (ՆՄԿ.):

2875. ԽՆԴԻՐԻՆ ՓԱԿՈՒՄԸ

Վերև ակնարկեցինք թէ յատկապէս Ասլանեան և ուրիշ Երուսաղէմ հանդիպող և դրամական գործէ հասկացող ազգայիններ հաւասարապէս գնահատած էին Մաքսուտեանի ելեմտական յաջողակութիւնը, և երբոր կը ձեռնարկուէր Երուսաղէմի պարտուց խնդիր կարգադրել և կացութիւնը բարւոթել, կը յուսուցանէր օգտուիլ Մաքսուտեանի գործունէութենէն և յաջողականութենէն: Մաքսուտեան գիտակ էր այդ պարագային և հարկաւ պիտի մտածէր անկէ օգտուիլ, ուստի անմիջապէս բողոք կալաւ առ ազգային վարչութիւն (ՆՄԿ.) թէ պինքն պաշտօնանկ ըրած են, մինչ իր հրաժարականն էր իր քաշուելուն բուն պատճառը: Արդէն պատրիարքարանը Ասլանեանի տեղեկութիւններէն պատրաստուած էր ի նպաստ Մաքսուտեանի,

ուստի պատրիարք և վարչություն և Երուսաղեմի յանձնաժողով անոր պաշտպանութեան կը պինուին, և օգոստոս 12-ին նոր ելամտից տեսուչին ընտրութենէն միայն 9 օր ետքը, և Երուսաղեմէ բացատրութիւն չուկած, կը հեռագրեն թէ Մաքսուտեան պաշտօնանկ եղեր է (այլ իտիւմիշ), թէ անոր պաշտօնին վրայ մնալը Երուսաղեմէ յանձնաժողովին ամէն կերպով հարկաւոր (էպհէր ճիհէթ էլ էմ) նկատուած է, ուստի վայն պաշտօնին վերահաստատելով տեղեկագրելնիդ կը յանձնարարուի: Լուրին խեղաթիւրած ըլլալը յայտնի էր, զի Մաքսուտեանի պնդելը կապմած էր գործին հիմը, և անշուշտ այս խեղաթիւրումը անկէ օգուտ սպասողին կողմէն եղած էր, ինչ որ Եսայիի կողմէ ալ վկայուած կը գտնենք (ՆՄԿ): Հեռագիրը 13-ին Երուսաղեմ կը հասնի, 14-ին Եսայի տնօրէնին հետ խորհրդակցելով կը պատասխանէ թէ անհնար է (ղայրը միւմքին) Մաքսուտեանը պաշտօնին վերադարձնել և թէ բացատրութիւնը նամակով պիտի տրուի: Իսկ բացատրութիւնը պատրաստելու համար Կ. Պոլսոյ հեռագիրը 16-ին ընդհանուր ժողովին կը հաղորդուի: Անոյշեան, որ ատենապետութիւն կը վարէր, յայտնապէս Մաքսուտեանի պաշտպանութիւնը կը ստանձնէ, Յակոբեան ամենայն ոյժով տրուած որոշումը կը պաշտպանէ, բացարձակապէս տեղեկագիրը պատրաստելու համար չորս հոգիէ յանձնաժողով կը կազմուի, ամէնն ալ Մաքսուտեանի հակառակ եղող տնօրէնի անդամներ: Պատրաստուած տեղեկագիրը օգոստոս 19-ի գումարման կը ներկայացուի, մեծ ժխորի պատճառ կըլլայ. Եսայի պատրիարք իրեն եղած թելադրութիւններէն կը շփոթի, թէ կեդրոնի անսաստելով ակնկալեալ դրամական օգնութիւնը կը խափանուի. ուստի աւանդական կանոնին համար ի պաշտպանութիւն ըսածները կը սկսի փոփոխել և ժխտել, և տնօրէնին վրայ կուպէ ծանրացնել տրուած որոշումը: Ատենապետ Անոյշեան բացարձակապէս կընդդիմանայ ստորագրել, վարանումի կը տիրէ, միաբաններէ շատեր կարծիքնին կը սկսին փոփոխել, և ժողովը շփոթելով կը փակուի, սակայն ծրագրեալ տեղեկագիրը պաշտօնապէս չի մերժուիր, և տնօրէն ժողովը կորոշէ յղել վայն պատրիարքի և իր դիւանի ստորագրութեամբ, ինչպէս որ ալ կը յղուի օգոստոս 19 թուականով, և որոշումը օգոստոս 15-ի գումարման մէջ կը նշանակուի (81.ՏՆՕ.37), որով Եսայի պատրիարքի հեռագիրով տուած խոստումը գործադրուած կըլլայ: Ներսէս գործը կրօնային ատեանի քննութեան յանձնած էր, իսկ Ասլանեան որ Գահիրէ կը գտնուէր, հապիւ նոր դէպքերը լսած ամէն ճիգ կը թափէր իր կատարած կազմակերպութիւնը անխախտ պահել, որուն Մաքսուտեանի ներկայութիւնը անհրաժեշտ կը դատէր, և մէկ կողմէն Եսայի և միւս կողմէն Ներսէս պատրիարքները քաջալերել և հրահանգել իր գրութիւններով (ՆՄԿ): Կեդրոնը Ռուսաստան նուիրակ յղելու համար վարդապետներ կուպէր, և Եսայի պատրիարքի կառաջարկէր Կ. Պոլիս գալ և անձամբ հանգանակութեան գլուխ կանգնիլ, և Եսայի կը փութար Ռուսահայոց նուիրակութեան որոշել Մամբրէ Մարկոսեան և Սահակ Խապայեան վարդապետները, որոնք օգոստոսին վերջերը կը մեկնէին (81.ՏՆՕ.44), իսկ պատրիարքին Կ. Պոլիս երթալը վանական գործոց վնասակար կը դատուէր (81.ՏՆՕ.37): Այս միջոցին կիյնայ 26 միաբաններու, 3 եպիսկոպոս, 15 վարդապետ և 8 սարկաւագ, Գէորգ կաթողիկոսի ուղղած բողոքագիրը, որով Ներսէս պատրիարքն ալ իբրև սխալ տեղեկութիւններէ խաբուած կը դիմեն Երուսաղեմի վանքը և սրբավայրերը կործանումէ ապատելու համար (ՆՄԿ.): Միւս կողմէն Սիմէոն եպիսկոպոս Սէֆէրեան որ Կ. Պոլսոյ փոխանորդ էր և կեդրոնական վարչութեան մօտ և Երուսաղեմի յանձնաժողովին հետ ուժգին կերպով պարտուց խնդիրը կը մղէր, նամակ նամակի վրայ կապդարարէր ու կը թախանձէր Մաքսուտեանի խնդիրը կերպով մը փակեր, կեդրոնին կամքին համակերպիլ, որպէսպի կեդրոնէն սպասուած աջակցութիւնը և պաշտպանութիւնը չվտանգուի: Կրօնական ատեանին ուղղութեան գալով՝ գաղտնիք չէր միաբանական ժողովին որոշումը հերքելու և Ղևոնդը պաշտպանելու միտքը, և Երուսաղեմի մէջ ալ յայտնի եղաւ Աստուածատուր

Եպիսկոպոս և Վահան վարդապետ գաւառական պաշտօններու պատրուակով Տիարպէթիր և Մուշ երթալու հրաման ստացան, որով կուզուէր անոնց համամիտներուն վրայ ալ ազդել, բայց երբ մէկ մասը կեդրոնին կամքին հպատակելու կը միտէր, միւս մասը իրեն կարծիքէն չբաժանելու համար մինչև իսկ աթոռէն բաժանուիլ կը մտածէր: Բայց յառաջագոյն պետական իշխանութեան կամ կառավրչութեան դուռն ալ կը բողոքէր, և անոր միջամտութիւնը կը պահանջէր իր ընդդիմութիւնը զօրացնելու, և երբ ակնկալեալ օգնութիւն չէր գտներ (ՆՄԿ) հոկտեմբերի սկիզբը մեկնելու պատրաստութիւն կը տեսնէր, և Եպիսկոպոսներէն Երեմիա Տէր Սահակեան և Աստուածատուր Տէր Յովհաննէսեան, Վարդապետներէն Մկրտիչ Սահակեան, Վահան Յակոբեան, Գարեգին Սաքայեան և Յակոբ Սանասարեան, ու սարկաւագներէն Սարգիս Նորիկեան, Սարգիս Խաչատուրեան և Գրիգոր Կիրակոսեան, ու միաբաններէն Միքայէլ Դաւիթեան և Կարապետ Յովհաննէսեան վանքը կը թողուն, և Եսայի ալ անհակառակ թոյլ կու տայ Ասլանեան առած հրահանգի համեմատ (ՆՄԿ), և այսպէս անջատեալք Կ. Պոլիս կը հասնի հոկտեմբեր 21-ին (81.ՄԱՍ.3023): Կրօնական ատեանը իր վճիռը գրաւոր ներկայած էր հոկտեմբեր 5-ին, և նկատելով, որ ազգովին վաւերացեալ կանոնագիրին մէջ միաբաններու ազգակցութեան կամ խնամիութեան յօդուած չկայ, որ Մաքսուտեանի եղբօր Երուսաղէմի մէջ բնակելովը Երուսաղէմացի միաբան չընդունելու աւանդութիւնը չէր վնասուեր, որ Մաքսուտեան միաբանական կանոնին կամ աւանդութեան դէմ գործած չէր, անվաւեր կը վճռէր միաբանական ժողովին որոշումը, և Մաքսուտեանը միաբանակցութեան և պաշտօնին մէջ կը վերահաստատէր: Այդ վճիռը Ներսէս պատրիարք հոկտեմբեր 6-ին Եսայի պատրիարքի կը հաղորդէր (81.ՄԻԱ.106-109), և նա ալ հոկտեմբեր 19-ին զայն միաբանական ընդհանուր ժողովին առջև կը հանէր: Այս նիստին մէջ, որ 17 ներկաներու և 7 գրաւոր ձայնակիցներու մասնակցութեամբ և Անոյշեանի ատենապետութեամբ գումարուած էր, Վեհապետեան կառաջարկէ կեդրոնին վճիռը յարգել միաբանութեան օգուտին տեսակէտէն, և աւանդութիւնն ալ յարգելու համար կանոնագիրին մէջ յօդուած մը աւելցնել, որ եկեղեցական միաբաններ ազգակցութիւն կամ խնամիութիւն չունենան և չհաստատեն Երուսաղէմի մէջ և ազգականներ և խնամիներ չբնակին Երուսաղէմի մէջ: Այդ առաջարկութեան վրայ համաձայնութիւն կը գոյանայ և կորոշուի ըստ այնմ հաղորդել կեդրոնին, Ղեւոնդ վարդապետը միաբանակցութեան դարձնել և ելեմտից տեսչութեան մէջ վերահաստատել, և ըստ այսմ պաշտօնագիրներ կը յղուին հոկտեմբեր 24-ին, իսկ տնօրէն ժողովոյ անդամներէն մեկնողներու տեղ նորեր կը նտրուին: Այդպէս կը փակուի այդ միջադէպը, որ Երուսաղէմի ապագային վրայ ազդած ըլլալուն բացատրել կարևոր սեպեցինք: Մաքսուտեան իր պաշտօնին դարձաւ, Կ. Պոլիս մեկնող փոխանորդ Սէֆէրեանէ շահուելով հետզհետէ վանք դարձան բացի Սահակեան և Յակոբեան վարդապետներէ, որոնք վերջնական կերպով միաբանութեան հետ յարաբերութիւննին խղեցին: Իսկ գլխաւոր հետևանքն եղաւ Մաքսուտեանի յաղթանակը, որ փոխանակ տկարանալու առաւել ևս զօրացաւ, ելեմտից տեսչութիւնը անընդհատ պահեց 25 տարիներ մինչև 1905, տնօրէն ժողովոյ մշտնջենաւոր անդամ մնաց և ատենապետութիւն վարեց, և ընդհանուր կերպով աթոռին և միաբանութեան և վանքին բացարձակ տէրը դարձաւ: Գէորգ կաթողիկոս 26 միաբաններու բողոքագիրը ստանալով հոկտեմբեր 1-ին կոնդակ մը յղած էր Եսայիի (81.ՏՆՕ.57), յիշելով զայն ալ թէ վինքն կամբաստանեն թէ անխնայ վատնած է պատրաստի գումարներ և ցրուած է աթոռական գանձատան հարստութիւնները, և կը յիշէր նաև պանախորժ անցս գումեմնէ Ղևոնդ վարդապետ անուանելոյ: Եսայի միջադէպին փակուելէն ետքը նոյեմբեր 21-ին կը պատասխանէ կաթողիկոսական կոնդակին, և երկարօրէն դէպքեր և անձեր և նախընթացներ յիշելով իրմէ կը հեռացնէ ամաստանութիւնը, առաւելապէս հիմնուելով անոնց ժամանակին չխօսած և չբողոքած

ըլլալուն վրայ, և յետոյ ուրեմն մէջտեղ դրած ըլլալնուն, և կը կնքէ թէ այժմ միաբանութիւնը ի խաղաղութեան կայ առաւել քան վառաջինն (ՆՄԿ.): Միաբանական ներքին ընթացքը մեր դիտումէն դուրս ըլլալով՝ գործին ունեցած հետևանքին և ուրիշ մանրամասնութեանց չենք մտնէր. բայց Մաքսուտեանի խնդիրին պիտի վերադառնանք երբոր այն կրկին անգամ ընդհանուր ազգային խնդրի կերպարան առած պիտի տեսնենք:

2876. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՐՏՔԸ

Երուսաղէմի վերաբերեալ խնդիրներուն մէջ գլխաւորը պարտքի խնդիրն էր, որ կրնանք մինչև իսկ բոլոր խնդիրներու շարժառիթը համարել: Խնդիրը հասուցած ենք: այն կէտին, որ Երուսաղէմ պարտուց բարձման յանձնաժողով մը գործին գլուխ անցաւ մայրաքաղաքի մէջ անդամակից ունենալով, Յովհաննէս Կիւմշեան ատենապետ, Աստուածատուր Զունդ ատենադպիր, Յակոբ Նորատունկեան գանձապետ, Սերովբէ Կիւլպէնկեան, Սենեքերիմ Մանուկեան, և Տիգրան Բարաղամեան, որ յաջորդեց բժշկապետ Սերվիչէնի (82.ԱՐՁ.71,59): Պարտքին մասին բացատրութիւններ տուած ենք (2870), իսկ պարտուց գումարը կլոր հաշուով 30,000 օսմանեան լիրա կամ 330,000 ռուսական ռուբլի կամ 690,000 գաղղիական ֆրանք հաշուուած էր: Յանձնաժողովի ծրագիրն էր իւրաքանչիւր տաճկահայ անհատէ երեք տարի երեքական դահեկանի պահանջը (2871), Ռուսահայոց կողմն ալ նուիրակներ յղել, ինչպէս որ Մարկոսեան և Խապայեան վարդապետներու երթալը յիշեցինք, և Կ. Պոլսոյ մէջ գործին ոյժ տալու համար Եսայի պատրիարքի անձամբ ներկայութիւնը պահանջուեցաւ (2875): Ռուսիա գացող նուիրակները Կ. Պոլիսէ Էջմիածին ուղևորեցան, Քէրոզ կաթողիկոսին ներկայացան, որ գիտել տալով հանդերձ թէ Ռուսահայեր յօգնած են Տաճկահայոց հանգանակութիւններէն, ներքին ձևակերպութիւնները կատարեց և շրջագայելնին արտօնեց, և նոյեմբեր 21-ին կոնդակով Եսայի պատրիարքի ալ հաղորդեց (81. ՄԻԱ. 117): Կովկասը յանձնուեցաւ Խապայեանի և ներքին Ռուսաստանը Մարկոսեանի, որոնք ամէն տեղ պատուաւոր և սիրալիր և յարգալից ընդունելութիւն գտան թէ անձնական արժանիքով և թէ Սուրբ Տեղեաց համբաւով: Բայց Խապայեան շուտով դժուարութեանց հանդիպեցաւ Կովկասի տեղական իշխանութիւններուն կուսակալի արտօնագիր պահանջելուն վրայ (81. ՏՆՕ. 95), և ազգային շրջանակներու մէջ Երուսաղէմի մասին խառնակ պրոյցներ տարածուելուն պատճառով, որով պարտաւորուեցաւ միտքերը շինելու և գաղափարները ուղղելու համար, և Երուսաղէմի միաբանութեան վրայէն անխորհուրդ մսխովի և խարդախ շահագէտի մեղադրանքը հեռացնելու համար ընդարձակ յօդուածներ հրատարակել պարբերականներու մէջ (82. ԱՐՁ. 289 և 306): Խապայեան բաւական ընդարձակ տեղեկութիւններ տուաւ Երուսաղէմի հասոյթներուն և ծախքերուն, և պարտքին բարդուելուն վրայ, զորս մենք վանց կընենք վերլուծել, արդէն ըստ բաւականին բացատրած ըլլալով: Իսկ նա պահանջողական և ստիպողական պարագայից փաստերով կարդարացնէր պարտքերուն գոյանալը, և կը յիշէր ներսէն-դուրսէն խնդիրը, Եսայիի ընտրութիւնը, Էջմիածնի և Երուսաղէմի ուղևորութիւնները, Եգիպտոս երթալը, պարգևներու և բարեացակամներ շահելու ծախքերը, Տպարանի և վարժարանի նորանոր ծախքերը իբրև կեդրոնէ պարտադրուած. բայց կը լռէր լուսանկարչական և կալվանագործական կամայականները, և Եսայիի անկոպար և անխորհուրդ փոխառութիւնները, և աւելի ոյժ կու տայ 20% շահով փոխառութեանց երեսէն բարդուած տոկոսներուն: Այդ միջոցին էր որ Երուսաղէմէ մեկնող միաբաններէն Կ. Պոլիս մնացող և իրենց հակառակութիւնը շարունակող երկուքը, Սահակեան և Յակոբեան, առաջինը գրաւոր և երկրորդը բերանացի առաջարկութիւններ կը սփռէին Երուսաղէմի պարտքին մասին, թէ ցուցուցած գումարը կեղծ է, և թէ պարտքին պատճառն ալ նենգութիւնն է (82. ԱՐՁ. 86), և ամենայն հաւանութեամբ անոնցմէ ներշնչուած էին Կ. Պոլսոյ լրագիրներէն

ումանք և Զմիւռնիայի ամսաթերթը (82. ԱՐԵ. 280,337,394) որոնք կծու քննադատութիւններ կը հրատարակէին: Ուստի հարկ եղաւ որ երկուքն ալ օրինաւոր հարցաքննութեան ենթարկուին պատրիարքարանի մէջ, բայց չկրցան որոշակի և փաստացի բան մը հաստատել և վաւերագիրներ ալ չներկայացուին, ուստի այդ մասին ընդարձակ յայտարարութիւն մը հրատարակուեցաւ 1882 օգոստոս 27-ին պատրիարքական փոխանորդի և վարդական խորհուրդի և Երուսաղէմի յանձնաժողովին ստորագրութիւններովը (82. ԱՐՁ. 518-521, և 82. ԱՐԵ. 386-394), որոնք կը վկայեն թէ Երուսաղէմի ելեմտից մատակարարութեան մէջ տնտեսագիտական և հաշուեգիտական թերութիւնք տեղի ունեցած են թեւ, բայց խարդախութիւն, գողութիւն և յափշտակութիւն չէ եղած և չէ տեսնուած պաշտօնական մարմնոց կողմէն (82. ԱՐՁ. 520), և կը յայտարարէին ևս թէ ելեմտից արդի տեսուչ Արժանապատիւ Ղևոնդ վարդապետն վանական ելեմտից հաշուակալութեան նորոգ հաստատեալ դրութիւնն ամենայն ճշդութեամբ ի գործ կընէ ուստի ամբաստանողները կրօնական ատեանի կը յանձնէին որ ըստ եկեղեցական օրինաց արժանաւոր պատիժը տնօրինուի (82. ԱՐՁ. 521), որուն դէմ սակայն Յակոբեան Ընդհանուր ժողովի կը բողոքէր նոյեմբեր 3-ին (82. ԱՏՆ. 257): Պաշտօնական յայտարարութեան նպատակն էր տարածուած կրոյցները հերքելով բացուած հանգանակութեան յաջողութիւն ապահովել: Մինչոյն նպատակով Եսայի պատրիարք ալ վերջապէս տեղի տալով յանձնաժողովին ստիպմանց 1882 տարուոյ Չատիկէն ետքը ապրիլ 12-ին Երուսաղէմէ կը մեկնէր, փոխանորդ նշանակելով Յարութիւն Վեհապետեան եպիսկոպոսը, որ արդէն Տնօրէն ժողովոյ մէջ յարաբերութեանց տեսուչ և ատենապետ էր (82. ՏՆՕ. 158), բայց այս առթիւ ատենապետութիւնը փոխանցուեցաւ Մաքսուտեանի և ատենադպրութիւնը Երէցեանի, փոխան Անոյշեանի, որ պատրիարքին ընկերացաւ: Եսայի պատրիարք Աղեքսանդրիա և Զմիւռնիա հանդիպելով ապրիլ 26-ին կը հասնի Կ. Պոլիս, և հանդիսապէս կընդունուի (82.ՏՆՕ.190): Հոն եղած ատեն կը ստանայ լրացեալ 1881-82 տարուոյ հաշուեցոյցը և առաջիկայ 1882-83 տարուոյ ելեմտացոյցը և սեպտեմբեր 22-ին յանձնաժողովին կը ներկայէ, որուն մէջ 1882 ապրիլ 30ի հաշուեփակին բացը ցուցուցած էր 35,020 լիրա օսմանեան (82.ԱՏՆ.191): Տնօրէնը իր տեղեկգիրին մէջ կը գանգատէր թէ հակառակ նորին բարձր սրբապնութեան երկարժամանակեայ ներկայութեան ի Կ. Պոլիս, դեռ որևէ արդիւնք մը տեսնուած չէ (82.ԱՏՆ.182). իսկ երկար ժամանակեայ ըսած հինգ ամիս ալ չէր տակաւին, մինչդեռ շատ աւելի պիտի երկարէր Եսայիի Երուսաղէմէ բացակայութիւնը քանի որ իւրաքանչիւր անձէ հաւաքուելիք երեքական դահեկանին գործը յաջողութիւն չէր գտներ: Առաջնորդներ իրենց պէտք եղած տուրքն իսկ հայթհայթել չէին կրնար, և յաւելուածական գործը վրանին չէին առներ, յատուկ նուիրակներ հանելու համար թէ բաւականաչափ վեղարաւորներ պէտք էին, թէ պետական արտօնութիւն ստանալ հարկ էր, և թէ նոր ծախքերու դուռ կը բացուէր, մինչ ընդհակառակն վիճակներու պէտք եղած վարդապետներ կը պակսէին, կառավարութիւնը չէր վստահեր ազատ հանգանակութիւն արտօնել, և նոյն իսկ շրջաբերութեան հանուած տոմսերը գրաւած էր, իսկ նուիրակութիւնք գանձելի արդիւնքէն մի լաւ մասը պիտի վեղչէին իրենց ծախքերով: Երկար ատեն այդ կէտերը մտածուեցան, 1883 փետրուար 17-ին նուիրակներ դժուարութեանց հանդիպեցան, և ուրիշ գաղթականութեանով նուիրակ հանելը չփորձուեցաւ անգամ:

2877. ՊԱՐՏՈՒՅ ԲԱՐՁՈՒՄԸ

Վերոյիշեալ արգելիչ պարագաները յանձնաժողովին և վարչութեան թելադրեցին հանգանակութիւնը պետական իշխանութեան և հսկողութեան ներքև դնել, այսինքն վինուորական տուրքին յարակցել երեքական դահեկանի գանձումը, վի վինուորական տուրքը տղայն ու ծերը, ապիկարն ու անկարողը վճարումէ դուրս կը թողուր թէպէտ, այլ հաշիւի մէջ կառնէր, բայց

բաշխումն ու գանձումը ազգին կը թողուէր և վճարումն ալ մեղմօրէն կը կատարուէր: Երբ խառն ժողովը յանձնաժողովին համեմատութեամբ այդ ձևը նախընտրեց, ձայնը դուրս ելլելով Ընդհանուր ժողովի մէջ հարցումի առիթ կու տար, իսկ վարչութիւնը 1883 մարտ 10-ին, տակաւին գործը բանակցութեան վիճակի մէջ ըլլալուն բացատրութիւն տալը անյարմար կը գտնէր (82. ԱՏՆ. 359): Առաջարկը կառավարութեան ներկայացուած էր 1883 փետրուար 17-ին և պատրիարքական յիշատակագիրը Երուսաղէմի կարևորութիւնը և օսմանեան պետութեան կողմէ հայ ազգին և յատկապէս Երուսաղէմի հայ սեփականութեանց մասին պաշտպանութիւնը յիշելէն և բարձրացնելէն ետքը կը խնդրէր, որ Երուսաղէմի պարտքը մինչև երեք տարի բանելիք տոկոսներն գումարելով 45,000 լիրայի պիտի լրանայ, ուստի կառավարութիւնը երեք տարի պիտուորական տուրքը 3 դահեկան յաւելուածով գանձէ, և նոյն երեք տարիները ազգային պատրիարքարանի տարեկան 15,000 լիրայ կանխիկ վճարէ, որով փակուի 45,000 պարտքը և կառավարութիւնն ալ իր կանխավճարը ստացած կըլլայ (84. ԱՏՆ. 386+8): Կառավարութեան կողմէ խնդիրը սկզբամբ ընդունելի նկատուեցաւ, պի յղացուած կասկածները կը ցրուէին, բայց գործադրութեան կերպը ճշդելը չափազանց երկարեցաւ: Ընդհանուր ժողովի մէջ շարունակ ստիպումներ կըլլային վարչութեան, գործին ելքը ծանուցանելու, իսկ վարչութիւնը գործը լրացած չըլլալուն՝ պատասխան տալէ կը խուսափէր (83. ԱՏՆ. 230): Վարչութիւնը երկարաձգումներէ յոգնած պահ մը պիտուորական տուրքի յաւելուածը թողլով, նուիրակներ յղելու արտօնութեան դարձաւ, և ըստ այնմ 1884 մայիս 15-ին նոր յիշատակագիր ալ ներկայեց (84. ԱՏՆ. 396+10), բայց ճիշդ այդ օրեր յունիս 5-ին պետական պաշտօնագիրը եկաւ, որ կընդունէր պիտուորական տուրքի վրայ երեք տարի երեքական դահեկանի յաւելուածը, բայց չէր ընդունէր տարեկան 15,000 լիրայի կանխավճարը, և կը խոստանար հաւաքուած մասերը հետզհետէ պատրիարքարանի յանձնել (84. ԱՏՆ. 390+11): Այս անգամ խնդիրը Ընդհանուր ժողովի առջև կեցելէ յուլիս 6-ին (84. ԱՏՆ. 126), ուր պանապան առարկութիւններու և միջադէպերու առիթ կընծայէր, դռնփակ նիստի կրօնականի մասնակցութեան, դաւանափոխութեան, այսինքն կաթոլիկութեան և բողոքականութեան յարելու, մինչև որ վարչութիւնը հոկտեմբեր 25-ին կը պարտաւորուէր յունիս 30-ին ներկայած տեղեկագիրին որոշումը փութացնել (84. ԱՏՆ. 343). բայց վիճաբանութիւնը քանի մը նիստերու նիւթ կը մատակարարէր, ատենապետաց դիւանի և յատուկ յանձնաժողովոյ քննութենէն կանցնէր, մայրաքաղաքի Հայոց մասնակցութիւնը կը խօսուէր, մինչև որ 1895 փետրուար 1-ի նիստին մէջ ընդունուեցաւ վարչութեան 1884 յունիս 30-ի տեղեկագիրին գործադրութիւնը (84. ԱՏՆ. 396+1-7), պարտաւորիչ ձև տալով մայրաքաղաքացւոց մասնակցութեան (84.ԱՏՆ.393): Միևնոյն ատեն Երուսաղէմի պարտուց բարձման յանձնաժողովէն վատ Ընդհանուրին կողմէ հինգ անձանց յանձնաժողով մըն ալ կազմուեցաւ գործադրութեան հսկելու և օգնելու, և իւրաքանչիւր վեց ամիս Ընդհանուրին տեղեկագրելու (85.ԱՏՆ.30): Բայց որովհետև գործը բազմակողմանի էր և երկարաձգումներ կրնային ծագիլ և գործը վտանգել, վարչութիւնը 1885 մայիս 23-ին պարտաւորուեցաւ նորէն Ընդհանուրին դիմել և յանձնաժողովին լիազօրութիւն պահանջել պատրիարքի նախագահութեան ներքև: Խնդիրը նկատի առնուեցաւ Ընդհանուրի յուլիս 5-ի նիստին մէջ և ընդունուեցաւ հինգ անդամները եօթնի վերածելու և ընտրութիւնը Ընդհանուրէն բղխելու պայմանով (85.ԱՐՂ.452), և 19-ին ընտրութիւնը կատարուեցաւ, որուն մէջ վարչութենէ ընտրուած հինգերէն չորսը հաստատուեցաւ, Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան, Յովհաննէս Նուրեան, Սեպուհ Մաքսուտեան, և Սենեքերիմ Մանուկեան, և նորէն աւելցան Յարութիւն Մէրեմբուլի, Կարապետ Սըվաճեան և Համապասպ Պալլարեան (85. ԱՐԼ.46): Այս մարմինը կոչուեցաւ խորհրդարանական յանձնաժողով որ ի դիմաց Ընդհանուր և վարչական ժողովոց

պարտուց բարձման յանձնաժողովին հետ պէտք եղածը լիազօրութեամբ պիտի որոշէր պատրիարքի նախագահութեամբ, որպէսզի գործը երկարաձգումներու չենթարկուի: Արդէն իսկ յունիս 20-էն գաւառական առաջնորդներու յղուած էին հրահանգի շրջաբերականները (85.Ա.ՐԼ.439), և մայրաքաղաքի արուներու մարդահամարն ալ կատարուելով 30,000 հոգի գտած էին, որոնց վրայ պարտադիր հանգանակութիւն պիտի տարածուէր գաւառացւոց նման (85.Ա.ՐԼ.438):

2878. ԲԱՐՁՄԱՆ ԿԵՐՊԸ

Եսայի պատրիարք որ 1882 ապրիլ 12-ին Երուսաղէմէ մեկնած էր, տակաւին Կ. Պոլիս կը մնար, պարտուց բարձման գործին հետամուտ: Առաջին ժամանակներու մէջ երբ դեռ վինուորական տուրքի հետ հաւաքելու խնդիրը մէջտեղ ելած չէր, թէ թաղերու մէջ շրջելով քարոզելու և միտքեր հանդարտեցնելու աշխատեցաւ, և թէ ունևոր դասակարգէն 50-60 հոգիներու անձամբ դիմեց նպաստ հաւաքելու, թէպէտև շատ չափաւոր յաջողութեամբ: Իսկ վինուորական տուրքին հետ հաւաքելու պետական որոշումը տրուելէն ետքը, անոր գործադրութեանը աշխատակցեցաւ պատրիարքի և վարչութեան հետ: Բայց հապի թէ 1885 փետրուար 1-ի նիստին մէջ Ընդհանուրին որոշումը լրացաւ, իսկոյն ձամբայ ելլելու սկսաւ պատրաստուիլ, մանաւանդ որ բաւական ծանր հիւանդութիւն մըն ալ անցուցած էր և օդափոխութեան պէտք կը վգար: Քանի մը օր ևս մեկնելը յապաղեց կայսեր ներկայանալու համար արքունի պալատէն եկած հրամանին համեմատ, և վերջապէս փետրուար 21-ին Կ. Պոլիսէ մեկնեցաւ հանդիսական հանդերձանօք և բազմաթիւ եպիսկոպոսներու և խուռն բազմութեան պատուագիր ընկերութեամբ (85. Ա.ՐԼ. 343) և մարտ 1-ին Երուսաղէմ կը մտնէր խնդակից միաբանութեան դիմաւորութեամբ : Բացակայութիւնը տևած էր երեք տարիէ երկու ամիս պակաս, բայց վերջապէս որևէ յաջող արդիւնք մը ձեռք ձգած էր: Եթէ պատրաստական գումարներ չէին ձեռք ձգուած, գոնէ ապահովութիւն մը ստացուած էր, պարտքին պատճառով աթոռին և միաբանութեան հասած վտանգի մը վախը փարատած էր, և հնար էր ապագային հաստատուն ակնկալութեամբ պարտատէրները լռեցնել: Գալով ձեռք առնուած եղանակին արդիւնաբերութեան, Հայերուն վինուորական տուրքին վրայ երեք դահեկանի յաւելուածը գործադրուեցաւ 1885 մարտ 1-էն սկսող ելևմտական տարիէն և պիտի տևէր մինչև 1888 փետրուար 29-ին աւարտող տարւոյն վերջը: Զինուորական տուրքին հիմը վինուորականութենէ ազատելու համար որոշուած 5,000 դահեկանի հաշիւն է: Կառավարութիւնը հաշուած ըլլալով թէ իսլամներէն իւրաքանչիւր տարի վինուորագրուողներուն թիւը 180տրուէ և մէկ մը կըլլայ, նորածինէն մինչև հարիւրամեան մէջը համրելով, ըստ այնմ ոչ իսլամներէն 180-ին մէկը վինուորագրութենէ ազատելու գումարը կը պահանջէր կը պահանջէր, որ 180-ին վրայ բաժնուելով՝ իւրաքանչիւրին 27 դուրուշի և 30 փարա կըլլայ (84. Ա.ՏՆ.396+4), և որովհետև անչափահասներ, ծերեր, անկարներ, եկեղեցականներ վճարումի չէին կրնար բռնադատուիլ, անոնց մասը կարողներու և ունևորներու վրայ կը բարդուէր: Ըստ այսմ 3 դահեկանի յաւելմամբ տուրքին միութիւնը 30 դուրուշ և 30 փարայի բարձրացաւ, որ ստուգապէս անտանելի յաւելում չէր: Եւ որպէսզի դաւանափոխութեան ալ դիւրութիւնը չընծայուի, 1862-ին տրուած հրամանը որով դաւանափոխին իր առաջին դիրքէն ունեցած պարտքը մտած հասարակութեան հաշուոյն պիտի փոխադրուէր (84.Ա.ՏՆ.396+12), այս առիթ կրկնուած և վերանորոգուած է: Այդ մասին տրուելիք տեղեկութիւնները լրացնելու համար այստեղ աւելցնենք, թէ որովհետև վինուորական տուրքին (պէտէլաթը ասքէրիյէ) և Երուսաղէմի նպաստին (Մար Եագուպ ագճէսի) խառն էին հաշիւները, գաւառական սնտուկներ այդ անուններով գոյացած գումարները առանց որոշելու կը փոխանցէին կեդրոնական սնտուկին, և որովհետև վինուորական տուրքին գումարը միշտ մեծ ապառիկներ

կունենար, Կգալի չէր ըլլար Երուսաղէմի նպաստին գումարը, և կեդրոնական սնտուկէն ալ բան մը չէր կրնար վճարուիլ: Այդ անունով պատրիարքարանի յանձնուած ցանցառ գումարներուն առաջինը Կարինէն եղաւ, Կի Օրմանեան առաջնորդ կառավարական սնտուկին տարեկան հաշիւներուն փակուելուն առթիւ, անձամբ կուսակալութեան համարակալին գործակցելով յաջողած էր հաւաքուած գումարին համեմատական մասը յանուն Երուսաղէմի նպաստին նշանակել տալ, և այդ անունի ներքև կեդրոնին փոխանցուելուն վրայ կեդրոնական սնտուկը իսկոյն նշանակուած գումարը պատրիարքարանին յանձնած էր: Պատրիարքարանի դիմումները ապարդիւն կը մնային Երուսաղէմի անունով գումար հասած չըլլալուն պատճառով, մինչև որ Վեհապետեան Յարութիւն եպիսկոպոսին Կ. Պոլսոյ պատրիարքութեան վերջը 1887-ին, ելևմտից նախարարութեան կոչուած Գալպպեան Յակոբ փաշայի բարեկամութենէն օգտուելով, յաջողեցաւ հին հաշիւները քննել տալ և Հայոց Կինուորական տուրքի վճարումներէն համեմատական մասը յանուն Երուսաղէմի փոխանցել տալ կառավարական հաշուետումարներու մէջ, և այդ հաշուոյն մաս մը ուղղակի ելևմտից նախարարութենէն դարձնել, մաս մըն ալ Երուսաղէմի սնտուկին վրայ յանձնարարութիւն կամ փոխգիր ստանալ, իսկ մաս մըն ալ 9,000 լիրայի գումար մը տակաւին Երուսաղէմի վանական սնտուկը պահանջ ունի պետական սնտուկին վրայ: Այդ յապաղման հետևանքն եղաւ որ պարտքին բեռը Երուսաղէմի ուսէն չվերցաւ գաւառացւոց վճարած գումարը իր անմիջական օգուտը չարտադրեց, և պարտքերը շարունակելով ստուարացան, տոկոսները բարդուեցան և անբաւական հասոյթներ տարեկան բացեր աւելցուցին:

2879. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾԵՐ

Պարտքի խնդիրը ամբողջացնելու համար ուրիշ գործերը վանց ըրինք, սակայն նշանաւոր դէպքեր ալ չկան Ազգապատումնիս ճոխացնելու: Բաւական ծանր և բաւական կարևոր դէպքեր եղան Բեթղէհէմի Ս. Ծննդեան տաճարին շուրջը տեղի ունեցած Յունաց և Լատինաց յարուցած վէճերը, և Հայոց աւանդական իրաւունքները կապտելու ջանքերը, որոնց նախնական մասերը գրած ենք (2794), և վերջէն նորէն նորոգուեցան և նոր ջանքերու ստիպեցին, նոր ծախքերն ալ միասին: Հայոց հետևակ եղող Ղփտի և Ասորի և Հապէշ միաբանութիւններ ինքնագլուխ ըլլալու, և իբրև Հայոց բաժնեկից անոնց ստացութիւններէն և իրաւունքներէն մասեր կորուցելու յուզումներ յարուցին միւս ազգութեանց թելադրութեամբ, որոնց նպաստաւոր պիտի ըլլար Հայոց տկարանալը, մինչ որևէ վնաս չէր կրնար բերել հետևակ ազգութեանց քիչ մը վօրանալը: Նշանաւոր խնդիր մըն ալ եղաւ Մեծ արտ կոչուած գետինին սեփականութիւնը, որուն ստացութիւնը յիշած ենք Յովհաննէս պատրիարքի որով (2646): Ընդհանրապէս Կարկուռ փաստաբան այդ գետինին տիրապետութեան մասին խնդիր յուզեց և պետական դատարանին բարեկամութենէն օգտուելով նպաստաւոր վճիռ ալ ձեռք ձգեց, Երուսաղէմի փոխանորդին վլանալ տալով իր փաստերը և վաւերագիրները Երուսաղէմի բերել տալով ներկայելու պայմանաժամը: Եսայիի Կ. Պոլիս եղած պահուն խնդիրը յուզուիլ սկսած էր, որուն ամենայն ուժգնութեամբ փարեցաւ Յարութիւն իր Կ. Պոլսոյ պատրիարքութեան միջոցին, և դենպետական վճիռը ջնջել տալով և գործը պետական ժողովին առջև հանելով յաջողեցաւ վերջապէս այթողին իրաւունքը պաշտպանել, և գետինը արդիւնաւորելու համար մասամբ վաճառելու և մասամբ շինելու կայսերական արտօնութիւնն ալ ստանալ, և այժմ այդ գետինին վրայ կառուցուած են Երուսաղէմի այթողին գլխաւոր կալուածները: Իսկ վանական կառավարութիւնը կրնայ ըսուիլ թէ Մաքսուտեանի բացարձակ տիրապետութեան ներքև մտած էր, յորմէ հետէ իր հակառակորդաց վրայ յաղթանակելով և վանոնք ցրուելով և վանոնք ցրուելով կամ հեռացնելով, կամ յանձնառու հետևողներու կամ համաբակ միաբաններու խումբ մը կազմած էր իր շուրջը: Այդ գիրքը աւելի

վորացած էր պատրիարքին բացակայութեամբ, որով ինքն ելևմտից տեսուչ, ինքն տնօրէնի ատենապետ, գործունեայ հմտութեան և ձեռնհաս յաջողականութեան համբաւն ալ կազմած, այլևս ոչ մի արգելք չէր գտներ իր առջև, որ ամէնքը իր միտքին հպատակեցնէր, և պաշտօնակալները իր կամքին հնազանդեցնէր: Ինչպէս ըսինք Մաքսուտեանի ձիրքերը իրաւամբ պինքը պիտի բարձրացնէին, եթէ իր գործերու կերպերը և շահագէտ դիտումները առիթ տուած չըլլային ապագային իր գործունէութիւնը մեղադրելու և իրեն վրայ քննադատութիւններ հրաւիրելու:

28805. ԳԷՈՐԳԻ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Երուսաղէմի պարտքին խնդիրն ալ որոշ հանգրուանի հասցնելու համար բաւական յառաջացանք անոր պատմութիւնը կարգին, ինչպէս Կ. Պոլսոյ և Կիլիկիոյ գործերուն մասին ալ ըրեր էինք արդէն (2857,2682), ուստի կը վերադառնանք Մայրաթոռոյ անցքերը պատմել, վորս բաւական ետև թողուցինք (2810): Գէորգի արդիւնաւորութիւնը կանխեցինք պատմել և բացատրել և արժանաւոր գնահատումն ալ վանց չըրինք, վորս խելահաս ուղևոր մըն ալ անկեղծօրէն գովաբանած է՝ քաղելով կաթողիկոսին պաշտօնավարութեան գործունէութիւնն ու արգասիքը: Այդ կարգին կը թուէ նա. 1. Գէորգեան հոյակապ ձեմարանը իր ուսանողներով և ուսուցչական խմբով. 2. Հնութեանց թանգարանը իր ներքին կանոնաւոր կազմակերպութեամբ ու նորաշէն գիրքով. 3. Մատենադարանը իր պատուական մագաղաթներով. 4. Ընծայարանը քահանայացու կամ դպիրացու պատանեօք. 5. Եկեղեցական և մատենագրական գրոց տպագրութիւնները. 6. Արարատ ամսագիրը. 7. Հայկական երգեցողութեան բարենորոգումը. 8. Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցին. 9. Բիւրականի ամարանոցին շինութիւնը. 10. Թեմական կրթական տեսչութեանց հաստատութիւնը: Այցելուն ապագային ալ ակնարկելով այս և ուրիշ բաներ թուելը պատմագիրին սրբապան պարտք կը նկատուէր (82.ՓՆՁ.1731), և մենք այդ դերը ստանձնած լինելով՝ այդ պարտքը կը կատարենք և կատարեցինք և յիշեցինք Գէորգի (2805) ձեմարանը, շինութիւններն ու ստացութիւնները (2806), ծխական վարժարանները (2804), քահանայութեան և երգեցողական վարգացումը (2807), ամսագիրն ու տպարանը (2808), աւելցնելով կարևորագոյն գործ մըն ալ վանականաց թողօնին կարգադրութիւնը

(2809), որ այցելուին աչքին չէր հանդիպած: Սակայն պատմագիրի անաչառութեամբ չվարանեցանք գիտել տալ և հոս ալ կրկնել թէ ձեմարանը եկեղեցականութեան համար գիտուած օգուտը Գէորգի օրով չարդարացուց, թէ թանգարանին շինուածը տաճարին ճարտարապետութիւնը խանգարեց, թէ Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցիին մոտ Վահան Ամատունիի գերեզմանը մտադրութենէ վիրիպեցաւ: Ասով մէկտեղ կը խոստովանինք թէ պատմուած և յիշուած արդիւնքները բաւական են որևէ անունի հռչակ տալու, այնպէս որ եթէ մեծագործ պատուանունն ալ շատ երևնայ, վոր բարեբարեալ կենսագիր մը համարձակ յատկացուցած է Գէորգի (ԱԲՂ. 5 և 91), բայց արդիւնաւոր կաթողիկոս մը եղած ըլլալը կասկած չի վերցներ, և կաթողիկոսներու շարքին մէջ պատուաւոր տեղ մը կապահովէ Գէորգի: Սակայն որևէ գործիչ և գործունեայ անձ, որչափ ալ մեծագործ և մեծանուն ըլլայ, հնար չէ որ մեղադրանքէ և քննադատութենէ ապատ մնայ, ոչ միայն յաջողկոտ բերաններու ձեռք իյնալով յանիրաւի, այլև իսկապէս իր կիրքին կամ անձնական ձգտումներուն տեղի տալով, կամ թէ գործին վանապան առումներն ու կողմերը մտադրութենէ վրիպեցնելով և սևեռեալ գաղափարներուն ծառայելով մեղադրանքի առիթ ընծայէ: Ըստ այսմ պարտք կը վզանք Գէորգի անձին վրայ դիտողութեան տեղի տուած կէտերուն վրայ ալ խօսիլ կատարեալ անաչառութեամբ:

2881. ԳԷՈՐԳ ԵՒ ԿԻԼԻԿԻԱ

Ժամանակին եղած և մինչև այսօր ալ կրկնուած դիտողութեանց մէկը կիլիկիոյ և Աղթամարայ աթոռներուն հանդէպ բռնած ընթացքն է: Յորչափ Գէորգի կը փափաքէր Հայ Եկեղեցւոյ միութեան նշանակ Մայրաթոռոյ գերագոյն դիրքը պահպանել ու պաշտպանել, և մինչև իսկ կերպով մը զգալի ընել տալ, ան իր իրաւունքին մէջէն էր, և ոչ ոք կրնար ընդդիմանալ, և ոչ ալ ընդդիմացած էր, և ընդհանրապէս ընդունած կէտ մը շեշտեալ պաշտպանութեան պէտք իսկ չունէր: Բայց երբոր նա սկսաւ այնպիսի բացատրութիւններ գործածել Կիլիկիայի և Աղթամարայ աթոռներուն դէմ, զորս իր նախինք գործածած չէին, ոչ աւանդական ճշմարտութեան, այլ անձնահաճ յաւակնութեան հետևելու կերպարանն առաւ: Նա երբեք իրաւունք չունէր հնաւանդ ուխտ ձևը փոխելով անոր մէջ նորութիւններ մտցնել, զի թէպէտ կաթողիկոս էր, բայց չիմիշ և ոչ քակտիչ մերձեցուցիչ և ոչ մերժեցուցիչ պէտք էր ըլլար: Պատմութիւնը իրեն չէր նպաստեր երբոր յիշեալ երկու աթոռները, անունեալ, անվաւեր, հետտեալ, հակաթոռ կը կոչէր, զի իր նախորդները ամէն ատեն ընդունած և յարաբերութեան մէջ գտնուած էին նոյն աթոռներուն հետ և եթէ յարաբերութեանց շփումներ շփումներ ալ կունենային, սիրայորդոր խորհրդակցութիւններով և ժողովներով կը փակուէին, ինչպէս ըրին Էջմիածնի Փիլիպպոսը և Սոյ Ներսէսը: Կիլիկիոյ աթոռը երբեք Մայրաթոռէն հակաթոռ հռչակուած և վճռուած չէր, և Աղթամարայ աթոռին դէմ արձակուած Սեաւ լերան ժողովին վճիռը (929): Տաթևացիէ (1393) և Վիրապեցիէ (1461) փոփոխուած էր, ուստի անվաւերութիւնը մտացածին էր, և ինքն Գէորգ ալ հարկաւ չէր ունեցած այդ կարծիքը՝ երբոր Ներսէս Վարժապետեան իրեն համար քուէ կու տար Կիլիկիոյ աթոռն ալ ներկայացնելով: Իսկ միւս աթոռներէն ձեռնադրուած եպիսկոպոսները Էջմիածնայ աթոռին դարձնելու կազմուած արարողութիւնը, կամ ինչպէս ինքն կոչած է, բուլութիւնը, կամ ինչպէս ինքն կոչած է, կարգ վաւերացուցանելոյ զիրաւունս եպիսկոպոսութեան ձեռնադրելոցն յանվաւեր կաթողիկոսաց, բոլորովին նորահնար էր, որպիսի ինչ Գրիգոր Պահլաւունիէ սկսելով կաթողիկոսներէն և ոչ մէկը մտածած կամ յանդգնած էր ընել: Գէորգի ըրածը մինչև իսկ հակասական էր, զի օրինաւորութեան թերին կը լրացուի օրէնքով, իսկ անվաւեր նովին իսկ ոչինչ և չեղեալ կըմբռնուի, և պարզ օրհնութեամբ անվաւերը չի վաւերանար, և չեղեալը եղեալ չըլլար: Նոյնիսկ իր շարադրած և յօրինած տուչութեան ձևը, որով իշխանութիւն կը տրուի կատարել այսուհետև և պաշտել իրաւամբ և անխափան համարձակութեամբ զկարգ եպիսկոպոսութեան, բաւական կնճռոտ կը դառնայ, զի անմեկնելի կը մնայ թէ ի՛նչ դատաստան պէտք է ընել անվաւերին մինչև այն ատեն պաշտած խորհուրդներուն մասին: Մենք չենք վարանիր հետևցնել թէ որչափ ալ ինքն կը կրկնէր թէ իր անձին համար չէ պահանջը, այլ աթոռին համար, միշտ յայտնի կըլլար թէ ամբարտաւան և խրոխտ զգացումը, որ Գէորգի անձին տիրող հոգին էր, և որ միշտ կը զգացուէր իր ամէն խօսքի և ամէն շարժումին մէջ, այդ առիթին մէջ աւելի կը ցոլար: Ինքն Կ. Պոլսոյ պատրիարք եղած էր, և ազգային ու քաղաքական պահանջները մօտէն կը ձանչնար, և պատրիարքական իշխանութիւնն ալ լրբութեամբ իրաւանց վարած էր, ուստի պէտք չէր իբրև անպիտակ և անփորձ ոք այնպիսի պահանջներ յարուցանէր, որոնց անտեղութիւնը չէր կրնար զգացած չըլլալ, և որոնց ինքն իսկ յանձնառու չէր եղած: Մեր տեսութեամբ աւելի բարձրացուցած կըլլար Մայրաթոռոյ դիրքը, երբոր զինքն յարգող և գլուխ ձանչցող կաթողիկոսական աթոռներ ալ գտնուէին, քան թէ երկրորդական կամ մասնաւոր ձանչցուած աթոռներ ջնջուէին, ինչպէս ինքն կաշխատէր ընել (ԻԶՄ.1049), մանաւանդ որ պէտք չէր մոռնար թէ ազգութեան մէջ տիրած էր Մայրաթոռը պօլօթէնիէով կաշկանդուած նկատելու գաղափարը, զոր ինքն Գէորգ ալ պաշտպանած էր, և Ռուսական կառավարութեան կողմէ ալ այդ կաշկանդումը վերցնել տալու խոստումը տուած էր, հետևաբար պէտք չէր որ այս պարագաները մոռցողի

կերպարան առնէր: Ինչ որ մենք կը դիտենք նոյն ատեններն ալ ընդարձակօրէն նկատուած և հրատարակուած էր (70.ՄԱՍ.954), ուստի թէ անցեալն ու ներկայն, և թէ պատմականն ու կանոնականը չէին նպաստեր Գէորգի տեսութեանց, և միայն անձնականը կը մնար, որ վինքն չի կրնար արդարացնել: Ստոյգ է որ Քէֆսիվեան բուռն ընթացք մը բռնեց, սակայն Գէորգ առիթ տուած եղաւ, որ եթէ Մկրտիչը չարդարացներ, Գէորգն ալ իրաւունքի տէր չըներ, ինչպէս իր կարգին ալ բացատրեցինք (2819-2821): Ահա Գէորգի անունին արատ բերող կէտերէն մին, որ եթէ իրական արդիւնքներ չեղծաներ, սակայն միտքերը պղտորելու կը ծառայէ ինչպէս որ ալ հանդիպած է:

2882. ԽՆԴԻՐՆ ՈՒ ՍՈՎՐ

Ոչ նուազ դիտողութեանց տեղի տուած է Գէորգի վերաբերումը Հայկական խնդիրին մասին: Երբոր միջազգային դաշնագիրներու հետապնդումներով և եւրոպական տէրութեանց հովանաւորութեան ապաւինելով ընդհանուր շարժում մը կայացած էր տաճկահայ հանրութեան մէջ, և ռուսահայ հանրութիւնն ալ հրատարակութիւններով և ուրիշ միջոցներով կու գար ոյժ տալ այդ շարժումին, ամէնուն փափաքն էր Մայրաթոռոյ գահակալն ալ այդ գործին մասնակից տեսնել: Մասնաւոր պարագայ մը ևս քան վեա կը շեշտէր այդ փափաքը: Գործին ծագումը ռուսութուրք պատերազմով սկսած էր, ռուսական պետութենէն ընդգրկուած էր առաջնակարգ դերը, ուստի ռուսաբնակ կաթողիկոսութեան միջնորդութիւնը մեծ պղբեցութիւն կրնար ունենալ Ռուսիոյ կայսեր և նախարարութեան առջև, և ամէնքը կը սպասէին որ Ներսէսէն շատ աւելի իրաւամբ, և Ներսէսէն շատ աւելի ուժգնապէս Գէորգ ինքն ինքնին ձեռնամուխ եղած ըլլար այդ նպատակին, ինքն Ռուսիոյ կայսեր առջև հանած ըլլար այդ գործը, և ինքն հետապնդէր որևէ գործնական լուծում մը տալ և իրականացնել: Բայց Գէորգ այդ շարժումը չունեցաւ: Հարկ եղաւ որ Կ. Պոլսոյ կողմէն դիմում ըլլար, և Գէորգի սիրելի անձնաւորութիւն մը, Կիլիկիոյ և Աղթամարայ աթոռներուն մասին իր միտքերուն Տաճկահայոց մէջ արձագանգն եղող և եպիսկոպոսութեամբ իրմէ վարձատրուող Իվմիրեան Մատթէոս եպիսկոպոսը որոշուեցաւ էջմիածին երթալու և Գէորգի աջակցութիւնը խնդրելու (2845): Իվմիրեան անշուշտ իր ստացած պատգամաւորութիւնը խղճիմտօք կատարեց, և իր յաջողակ լեզուին և ժիր գործունէութեան ոյժերն ալ գործածեց, բայց անհնար եղաւ Գէորգը շարժել և ձեռնարկին գործակցութեան համոզել, մինչև իսկ գործադրողները մեղադրելու և գործը հերքելու միտքը և խոսքեր վերագրուեցան իրեն: Իրաւ քաղաքական տեսութեանց և կարծիքներու տարբերութիւններ տեղի ունեցան և ունին ալ, և Ներսէսի ձեռնարկը հետևանքներու փոստով քննադատողներ եղան ու կան, որոնք անշուշտ պիտի կանգնին: Բայց եթէ ասոնք հեռաւոր հետևանքներու վրայ պիտի հիմնուէին, պէտք կըլլայ որ Գէորգի վրայ մարգարէական հոգի ալ ճանչնան, իսկ եթէ նախնական նպատակէն օտարացած պարագաներու վրայ պիտի հիմնուէին (2865), առիթ կու տան առարկելու որ ոչ թէ խնդիրին իսկութեան պէտք էր ընդդիմանալ, այլ կասկածելի պարագաները արգիլելու համար խոհական գլուխներ ձեռնարկին մասնակցած պէտք էր ըլլային, և ջանային լաւագոյն ապագայ մը պատրաստել օրինաւորութեան շրջանակին մէջ: Ամէն առթի մէջ իրականութիւն մըն է, թէ լաւ տպաւորութիւն չգործեց այն ատեն Գէորգի բռնած չէզօք և անտարբեր գիրքը, և պատճառ տուաւ որ թէ ռուսահայ և թէ տաճկահայ հանրութեան մէջ նւազեցնէր Գէորգի հանդէպ ազգային համակրութիւնը, որ օգտակար չեղաւ անոր համբաւին: Եւ այս պարպութիւնը ոչ թէ որոշ և անձուկ շրջանակի մէջ սահմանափակուեցաւ, այլ ընդարձակութիւն գտաւ հայութեան ամէն դասակարգերուն մէջ: Ոչ նուազ դիտողութեանց և ստգտանաց առիթ տուաւ Գէորգի, չսենք անտարբեր, գոնէ անհոգածու գիրքը Վանայ և Կարնոյ և շրջակայից սովին հանդէպ: Երբոր

ամբողջ հայութիւնն աշխարհիս ամէն կողմէն հնարաւորը ընել կաշխատէր իր սովեալ եղբայրները կերակրելու, երբոր մարդասիրական զգացումը օտարազգիներն ալ կը մղէր սովելոց ձեռք կարկառելու, Էջմիածին որ ամբողջ հայութեան միակ հայրն ու տէրը ըլլալ կը ձգտէր, և Մայրաթոռոյ կաթողիկոսը որ իրենէն վատ ամէն իշխանութիւն չքացնել կը մտաբերէր, բաւականացաւ այնդպի նուազ գործել, որ իր դիրքին և մտայնութեան բաղդատմամբ ոչինչէ քիչ տարբերութիւն ունէր: Ժողովրդական կարծիքը անզգայ անտարբերութիւն կոչմամբ սկսած էր որակել Գէորգի ընթացքը (78. ՄԱՍ. 221), իսկ Ռուսահայերու կողմը կառաջարկուէր ամէն տեղերէ պատգամաւորութիւն ուղարկել կաթողիկոսը շարժելու, բայց իսկոյն վրայ կը բերէին թէ օգուտ պիտի չունենայ զի Գէորգի վեհարանը դժուարամատչելի և այցելուների դիմաց (78. ՄԱՍ. 221): Իր գովաբանն իսկ ուրիշ նպաստ չի կրնար նշանակել, բայց եթէ մինչև Էջմիածին հասնողներուն սեղանատան աւելորդէն կերակուր մը տալ, և հին հանդերձներ բաժնել: Կը յիշէ ևս Երևանի և Ալէքսանդրապոլի և Նորայապիտի թեմերուն կոնդակ մը յղել, և քանի մը պանդուխտ քահանաներու ողորմութիւն հաւաքելու վկայական յանձնել (ԱԲՂ. 79-80): Սակայն հանրային կարծիքը կը սպասէր որ բոլոր հայութիւնը, գոնէ բոլոր ռուսահայութիւնը շարժման մէջ դնէր, Տփղիսն ու Պաթումը, Աստրախանն ու Նոր Նախիջևանը, Մոսկուան ու Պետրբուրգը ոգևորէր, Ռուսաստանէն դուրս իր ձայնը լսեցնէր: Եւ երբոր ամէն կողմերէ փութաջան նորոգ հոգածութիւններ կը պատմուէին, լրագրութիւնը ցաւով կաւելցնէր, թէ կը յուսանք որ Վեհափառ Հայրապետը այլևս չյապաղիր մեր հայրենանուէր սրբազան պատրիարքին Ներսէսի օրինակին հետևելու (80.ՄԱՍ.2577), որ բաւական կծու ակնարկ մըն էր Գէորգի հասցէին: Գովաբանն ալ կը զգայ այդ թերին և արդարացուցման փաստեր կարկտել կաշխատի, թէ նա հեռու էր շարունակ ձրիակեր դատարկապորտներ պահելու մտքից (ԱԲՂ.78), և թէ նպաստ աշխատանքը հարկաւ միայն կաթողիկոսի վրայ չէր ծանրացած (ԱԲՂ.80), և չկրնալով ծածկել թէ կաթողիկոսի ընթացքը լուտանքի տեղի էր տուած, և մինչև իսկ Ալաշկերտցոց անունով իբր հացագին հաւաքուած գումարին կէսը վար էր գրուած, կը յայտնէ թէ վար գրուած մասը Ալաշկերտի վարժարաններուն յատկացուեցան. սակայն այդ եղաւ երբոր ձայները բարձրացան, և յատկացումներն ալ իբր Գէորգի առատաձեռնութեան նպաստ գովուեցաւ: Կը զգուշանանք ուրիշ մանրամասնութեանց մտնել, չըլլայ, թէ ամբաստանողի դեր ստանձնել կարծուինք, ինչպէս կարծուեցաւ, Հայաստանի սովը և Էջմիածինը հրատարակութեան հեղինակը (ՍՈՎ.25-62), թէպէտ Գէորգ այդ միջոցներով ազդուողը չէր (ԱԲՂ.81): Գովաբանէն փառաբանուած նպաստներուն կարգին, 1878-ի Բերայի հրդեհին, 1871-ի Փոքրասիոյ երաշտութեան, և 1875-ի Պարսկաստանի գաղթականներուն մէկ անգամ միայն 1000 ոսկոյ հանգանակութիւն մը կը յիշուի. իսկ մնացեալը մէկ երկու կոնդակի գրութենէն աւելի գործունէութիւն չի պարունակէր (ԱԲՂ.78): Եթէ ուզենք բացատրել Գէորգի այդ նուազ հոգածութեան և իրմէ պահանջուածէն պակաս գործունէութեան պատճառը, մենք ոչ ապիկարութիւնը ցոյց պիտի տանք, ոչ միջոցներու պակասութիւնը, և ոչ անզգայ անտարբերութիւնը, այլ միայն դժոմնութիւնն ու դժկամութիւնը զոր կը զգար Տաճկահայոց հանդէպ, յորմէ հետէ անոնք հլու հպատակ չգտնուեցան իր ուռուցիկ մտայնութեան, և Սիսն ու Աղթամարը ջնջելու, և կամ ինչպէս իր միտքին թարգմանը կը բացատրէր (ԻԶՄ.), վանահայրութեան աստիճանին ստորացնելու չգործակցելնին: Պարզապէս ցաւած սիրտի ու վրէժխնդիր զգացմանձ արտայայտութիւն էր Գէորգի Տաճկահայոց գործերուն և պէտքերուն հանդէպ պահած անտարբերութիւնը, և իր միտքին հակառակ կարծած անձերուն հանդէպ ցուցած հակակրութիւնը:

Գէորգ որչափ յառաջ տարիքին մէջ և պաշտօնին վրայ, այնչափ աւելի պօրացան իր վրայ անձնահաճ վագսումները, որոնք սակայն իր միտքին հակառակ ազդեցութիւն գործեցին, և իր համբաւը, որ իրօք մեծափառ հռչակով սկսած էր, տակաւ նւաղեցաւ հայութեան մէջ: Նոյնիսկ Մայրաթոռոյ միաբանական և պաշտօնական շրջանակին մէջ տկարացաւ իր մասին կազմուած մեծ գաղափարը: Առաջին օրերուն ձեռնարկու և շինարար դործերը լրանալէն ետքը նորեր չյաջորդեցին, զի անոնք մշտատև և յարաճուն չէին կրնար ըլլալ, իր նախորդներուն օրով գործի վրայ եղողները ցրուելն ու հեռացնելը դժգոհներու խումբ մը կազմեց, նորահարսները՝ զորս սինոդականութեամբ և եպիսկոպոսութեամբ գործի գլուխ անցուց, ոչ վարգացմամբ բարձր և ոչ գործուէութեամբ նշանաւոր անձեր էին, այլ հլու գործիքներ ըլլալու սահմանուած էին, շուտով շփացածի հովեր և պահանջներ ցուցուցին իր անհպելի և անմերձենալի դիրքին մէջ փակուիլը, և Վահրամ Մանկունի եպիսկոպոսին առջև ընդարձակ ասպարէզ բանալը, միաբանական և այթոռական շրջանակին դիւր չեկաւ և դժգոհութիւններ և գանգատներ սկսան բարձրանալ: Դարձեալ պիտի կրկնենք (2810), թէ աւելի քան Մանկունիի ձեռներէց գործունէութեանը Գէորգէ հրամայեալ գործակատարութիւնը կը տեսնենք մենք այդ երևոյթին մէջ, բայց ժամանակին ուղղակի Մանկունին էր դատաւիտուածը (ՍՈՎ.62), և անուղղակի միայն կը խօսուէր Գէորգի վրայ, իբր թէ տկարացած և իր անձնական պաշտօնէին ձեռքը խաղալիք դարձած մէկ մը ըլլար, ինչ որ սակայն չէր արգիլեր Գէորգի շուրջը համակրութիւնը նուազեցնել, և այն անհաճոյ եղելութեանց պատասխանատու նկատել: Նոյն իսկ Գէորգի ամենամօտ անձեր և իրեն հետ Պրուսայէ Էջմիածին գործունէութեան անցնողներ, Պետրոս Վեհապետեան և Ստեփանոս Սանտալձեան եպիսկոպոսներ, չկրցան հաշտ աչքով տեսնել նորահաս Պրուսացւոյց, Մանկունի եպիսկոպոսին ստացած ընդարձակ գործունէութիւնը և ամենատէր դիրքը, և երկուքն ալ պատճառանքով մը Էջմիածինէ քաշուեցան. նոյնը ըրաւ Գէորգի մտերիմներէն եղող և վեց եօթը տարիներ հաւատարմութեամբ անոր ծառայող Յովհաննէս Հովուեանն ալ, որ ոչ միայն Էջմիածինը թողուց, այլ և սաստիկ վայրոյթէն Կ. Պոլսոյ մէջ իրեն միտքին համուկեց Սանտալձեանը, որ Պալաթի քարոզչութիւնը կը վարէր, և Գէորգի հովուած եկեղեցիէն հեռացած ըլլալու դիտմամբ, անոր հետ Հոռոմ մեկնեցաւ 1875 օգոստոս 9-ին (75. ՄԱՍ. 1719), ուր հռոմէականութեան ալ յարեցան, և Հովուեան զինքն աւելի համարձակութիւն ստացած կարծելով Գէորգի դէմ վիմատիպ հրատարակութիւն մը պատրաստեց և ամէն կողմ ցրուեց նոյն տարուոյ հոկտեմբերին սկիզբը (75. ՄԱՍ. 1745): Բերան չառնելու չափ նողկալի չարախոսութիւններ Հովուեանի ամբաստանագիրին մէջ պարունակուածները, ըստ ինքեան անհաւատալի ըլլալու չափ չափազանցուած են Գէորգի և Վահրամի յարաբերութեանց մասին ըսուածները, և գրութեան ոճն ալ կը մատնէր թէ թշնամական ոգւոյ արտայայտութիւնք են (75.ՄԱՍ.1745):Ուստի մենք ալ աւելի ընդարձակուիլ չենք ուզեր գրուածի մը վրայ, որ պաշտօնական կերպարանէ հեռացած և անհատական հանգամանքներու մէջ մտնել ուզած է: Մեր պատմութեան պատկանող կէտը այն է միայն, թէ Գէորգի բռնած անձնահաճ ու միակողմանի, բուռն ու խրոխտ ընթացքը ոչ միայն շինարար և օգտակար չեղաւ, այլ և իր իսկ անձին ու համբաւին վնասեց, և մինչև աստիճան մը կեանքն ալ թիւնաւորեց, զի որչափ և անտարբեր ուզէր ցուցնել զինքը վրոյցներու ու գրուածներու հանդէպ, սակայն անհնար էր որ անոնք չարաչար չվիրաւորէին իրմով լցուած միտք մը և իր փառքով տոգորած սիրտ մը: Գրեթէ աննշանակ անցան Գէորգի կաթողիկոսութեան կէսէն ետքի տարիները, զի ոչ միայն նոր բան մը չկրցաւ աւելցնել առաջին կէսին մէջ կատարած յաջողութեանց վրայ, այլ և պարագայից բերմամբ կազմուած տպաւորութիւններ սկսան առաջին փայլն ալ մթագնել, ոչ թէ եղելութիւնները ջնջելով, այլ կողմնակի տեսութեանց երեսէն

գաղափարները այլալեզուով: Անցողակի յիշեցինք և աւելցնենք թէ Սանտալճեան եպիսկոպոսը որ 1875 օգոստոսին Հռոմ եկած և հռոմէականութիւն ընդունած էր, 1876 ապրիլին արդէն Երուսաղէմ կը գտնուէր ապաշխարելու համար: Շուտով զղջաց նա առած քայլին վրայ, կամ թէ չգտաւ ակնկալած յաջողութիւնը, ուստի Հասունին կը դիմէ որ տակաւին Հռոմ կը գտնուէր (2847), և անոր յանձնարարութեամբ Անկիւրիա պաշտօնի երթալու պատրուակով Հռոմէն կելլէ, Բօրֆուէն ճամբան կը փոխէ, Եգիպտոսի առաջնորդ Սուքիասեան Մեսրոպ եպիսկոպոսի մօտ կու գայ, և անոր միջնորդութեամբ Երուսաղէմ երթալու արտօնութիւնը կը ստանայ, ուր հասած էր ինչպէս ըսինք 1876 մարտի սկիզբները կամ վերջերը (76.ՄԱՍ.1817):

2884. ԳԷՈՐԳԻ ՄԱՀԸ

Գէորգ կաթողիկոսին դառնալով որչափ ալ նա խորին ծերութեան հասած չէր, և 1880-ին տակաւին 67 տարեկան էր, այսուհանդերձ հիւանդագին և տկարացած և ուժաթափ վիճակի ինկած կըսուէր, և բուրովին անմերձենալի դարձած՝ ամենայն ինչ Մանկունիի ձեռքով կը կատարուէր (2883): Այդ կացութիւնը տևեց դեռ տարիներ, միշտ կաթողիկոսի տկարութիւնը կը խօսուէր, թէպէտ ախտին բնութիւնը չէր պրուցուէր, և հիւանդութեան թեթևալուն կամ ծերանալուն մանրամասնութիւնները չէին լսուէր: Գէորգ բուռն ճիգ մը ընելով, ինչպէս կըսուէր, 1882 մայիս 9-ին, երկրորդ ծաղկապարդի կիրակին, եպիսկոպոսական աստիճան տուաւ Եօթը ընծայեալներու, որոնցմէ երկուքը Տաճկաստանէն էին, Պօղոս Մելիքեան Լիմայ և Գէորգ Դերձակեան Կուտինայի առաջնորդներ, և հինգը Մայրաթոռոյ միաբաններէն (82. ԱՐՁ.197), Յովհաննէս Տէր-Յարութիւնեան, Թաղէոս Տէր-Դանիէլեան, Ստեփանոս Մխիթարեան, Արիստակէս Սեդրաքեան, և Գէորգ Սուրէնեան. իսկ շնորհին չէին կրցած մասնակից ըլլալ Պետրոս Ներկարարեան, Ստեփանոս Յովակիմեան և Մեսրոպ ճերմակեան Տաճկահայոց առաջնորդներ՝ ատենին հասած չըլլալուն համար (82. ԱՐՁ. 225): Միւս կիրակի մայիս 16 Հոգեգալուստի օրը ար տասովոր հանդիսութեամբ կատարուեցաւ նաև միւռոնի օրհնութիւնը որուն մէջ թէպէտ ականատեսը կը վկայէ թէ կաթողիկոսը իր առնական ձայնի կօրհնէր և բարձրաձայն կերգէր (82. ԱՐՁ. 227,228), բայց Գէորգ հանդէսէն անմիջապէս ետքը նորէն իր տկարացնել և առանձնացնել գիրքը առաւ, այնպէս որ երեք ուշ հասնող եպիսկոպոսուներ ձեռնունայն դառնալ պարտաւորեցան , զի կաթողիկոսը այլևս ինքզինքը անկար պգաց ձեռնադրութիւն կատարելու: Մայիսէն սկսելով հետզհետէ սաստկացան Գէորգի հիւանդութեան լուրերը, այնպէս որ 25-ին Ս. Գէորգայ տօնին շնորհաւորութեան առթիւ Տփղիսի հասարակութիւնը կը հեռագրէր թէ պատրաստ է ընձեռել ամենատեսակ օժանդակութիւն, որուն Մանուկի կը պատասխանէր թէ Նորին օծութեան առողջութիւնը բաւականին գոհացուցիչ դրութեան մէջ է, հետզհետէ գնում է դէպի լաւը (82. ԱՐՁ. 513): Խնամող բժիշկ Տէր-Գրիգորեանց ալ կը հաւաստէր թէ Նորին վեհափառութեան առողջութիւնը միանգամայն գոհացուցիչ դրութեան մէջ է, հաւատ չընծայէք տարածուած անհիմն լուրերին, և Սինոդի նախանդամ Մկրտիչ Բարամեան եպիսկոպոսն ալ նոյն խոսքերով կը վստահացնէր միաբանութիւնը տօնական սեղանին վրայ (82. ԱՐՁ. 514), թէպէտ նոյն օր Գէորգ չէր կրցած կաթողիկոսական մաղթանքին ներկայ գտնուիլ, միայն երեք եպիսկոպոսներ ընդունած էր շնորհաւորութեան, բայց փափաքած էր անգամ մըն ալ Գէորգեան ճեմարանի 220 սաներու երգեցողութիւնը լսել, որոնք բակին մէջ հաւաքուած էին ձայնագրագէտ Յովակիմեան Ղեւոնդ վարդապետի առաջնորդութեամբ (ԱԲՂ.88): Ըստ այսմ հակառակ տրուած ապահովութեանց Գէորգի առողջութեան վտանգուած լինելը յայտնի էր, և պրոյցը հետզհետէ 1882 յուլիսի մէջ, Բիւրականի ամարանոցը գտնուած ատեն, հանդիպել էր տաք բաղանիքից յետոյ մի թեթև կաթուած, ելեքտրական դարմանով օգուտ տեսեր է, բայց օգոստոսէ մինչև սեպտեմբերի

սկիզբները կաթուածը չորս անգամ կրկնուեր է, սեպտեմբեր 19-ին էջմիածին վերադարձեր է շատ օգտուելուն վրայ՝ 25-ին վերոյիշեալ աւետաւոր լուրեր կրցեր են հաղորդիլ (82.ԱՐՁ.529): Սակայն միխթարական լուրը աւելի երևութական էր քան իսկական. Գէորգի հիւանդութիւնը օրէօր կը սաստկանար, և աւետաւոր լուրէն 15 օր ետքը հոկտեմբեր 10-ին Տփղիսէն մասնագէտ բժիշկ մը կը խնդրուէր, որ 15-ին կուղևորէր, կը քննէր, կը պնէր, բայց մեծ յոյս չէր ներշնչեր, զի Գէորգի մարմնի ձախ կողմը կաթուածի էր ենթարկուած, և անոր վիճակը այլևս կարեկցութեան, ցաւակցութեան և մտատանջութեան առարկայով էր դարձած (82.ԱՐՁ.509): Եթէ մասնագէտին պնդութիւնը բժշկութիւն չէր խոստանար, բայց մօտալուտ վտանգ ալ չէր գուժեր, մինչև դեկտեմբեր 1. ամիսուկէս միջոց ևս մահուան տխուր դէմքը հեռաւոր կը կարծուէր: Այն օրն էր որ դրութիւնը վատթարացաւ, ընդհանուր թուլութիւնը տիրեց մարմնին, բայց յիշողութիւն և միտք կատարելապէս վրան էին. 2-ին վերջին թոշակի սուրբ խորհուրդը ընդունեց. և սինոդականները օրհնելով յանձնարարեց, ապրեցէք ընդերկար և աղօթեցէք ինձ համար, կառավարեցէք գործերը, և ամենայն ինչ կարգուընտնի մէջ պահեցէք: Այսպէս անցան երկու երեք օրեր ևս, 5-ին ինքն ևս պզտիկ մօտալուտ մահը, պզտիկ ամէնքն ալ, նա ընդհատուող ձայնով օրհնում էր ամենուն, անոնք տխրագին տպաւորութեամբ վայրկեանները կը համրէին, 6-ին առտուն մրմունջներ դադրեցան, կէսօրին մօտ գիտակցութիւնը կորցրեց, հոգեվարքը կատարեալ էր, և կէսօր երկուքուկէս ժամ անցած վերջին շունչը տուաւ, հոգին աւանդեց: Անմիջապէս վեհարանը կնքուեցաւ, քոյրը և Մանկունին և սպասաւորներ տեղափոխուեցան, և Մկրտիչ եպիսկոպոս Բաբամեան տեղակալ յայտարարուեցաւ: Դեկտեմբեր 8-ին լուացումը կատարուեցաւ և մարմինը եկեղեցի փոխադրուեցաւ առանձին հանդիսադրութեամբ, պգեստաւորեալ մարմինը այնպէս հիւծած ու մաշած էր որ հապիւ էր ճանչուում անձնեայ և մարմնեղ կաթողիկոսը (82.ԱՐՁ.657,658): Գէորգ 1813 յուլիս 5-էն մինչև 1882 դեկտեմբեր 6, ապրեցաւ 69 տարի, 5 ամիս և 1 օր. վախճանեցաւ Յիսնակաց երկրորդ երկուշաբթին և թաղումը կատարուեցաւ Ս. Յակոբայ, բարեկենդանի կիրակին ամսուն 12-ին, ժամանակ տալու համար հեռու տեղերէ եկողներուն, որոնք շատ ու շատ եղան: Յուղարկաւորութեան ներկայ գտնուեցան ահագին բազմութիւնը ժողովրդեան և պատգամաւորութիւնք, փոխարքայի ներկայացուցիչ, Երևանի և Վաղարշապատի կառավարական մարմիններ, պինուորական աստիճանաւորներ, և պատուոյ ջոկատ, ամէն ազգէ և կրօնքէ և դասակարգէ ներկայացուցիչներ: Յուղարկաւորութեան թափօրը ձեմարանը շրջապատելով դարձաւ Մայրտաճարի առջևը, և նշխարքը հողին յանձնեցին տաճարի աւագ դրան ձախակողմը (82.ԱՐՁ.683): Այսպէս վերջացաւ 1867-ի օծումը թուականէն 15 ու կէս տարի տևած Գէորգ Զորորդի կաթողիկոսութիւնը:

2885. ԳԷՈՐԳԻ ԱՐԺԱՆԻՔԸ

Կոստանդնուպոլսեցի Գէորգ Զերէստէճեանի գործունեայ կեանքէն բաւական բան գրած ենք թէ պատրիարքութեան և թէ կաթողիկոսութեան և թէ միջանկեալ տարիներու ատենէն, բաւական մանրամասնութեանց ալ մտած ենք, աննախանձ պատմած ենք արդիւնքները, անկաշկանդ յառաջ բերած ենք իրեն մասին խօսուած մեղադրանքը, զոր գովաբանն ալ կը ճանչնայ, թէ ժամանակակից սերունդը չկարողացաւ ըստ արժանաւոյն գնահատել նրան (ԱԲՂ.91): Փակուած շիրմին առջև մենք ալ պիտի յայտարարենք թէ իրօք յաջորդ սերունդը տարբեր գաղափար կազմած է անոր վրայ, և այժմ Գէորգ արժանաւոր և արդիւնաւոր կաթողիկոսի համբաւը կը վայելէ ազգին մէջ: Այդ երևոյթին բացատրութիւնն ալ դժուար չէ: Ինչ որ Գէորգի լաւ կողմերը կը կազմեն հաստատուն և մնայուն բաներ են, ձեմարանը, թանգարանը, Օշականը, ուսումնական վարկը, բարեկարգական վարկը, բարեկարգական ջանքը, ելևմտական կարգը, ծիսական փայլը

կարգապահական ճիգը, որոնք կայուն վիճակ մը ունեցան: Հիմը հաստատուն էր, հետևանքն ալ յարաձուռն է: Իսկ ինչ որ իրեն վրայ մեղադրելի խօսուեցաւ, ապագային սահմանադրութեան չհամակերպիլը, Երուսաղէմի անցքերուն մէջ վարած դերը, հայկական խնդիրէն չհրապուրիլը, սովելոց նպաստելու պաղութիւնը, Մայրաթոռին մէջ անձնահաճ ընթացքը, նորահասներէ գործիքներ պատրաստելու դիտումը, ամէնն ալ անցաւոր պարագաներ էին, որոնք իրենց ժամանակին դժգոհութիւն պատճառեցին վիրաւորուողներու դժկամութիւնը յուլեցին, բայց առիթը անցնելէն և կացութիւնը փոխուելէն ետքը հետք չթողեցին և մոռացութեան հետ ալ աննպաստ պագումները ջնջուեցան: Այս երևոյթը սովորական է, և անոր մեծագոյն պատճառը մահն է. մահը իրեն հետ կը տանի պագումները, իսկ գործնական և նիւթական արդիւնքները դրական են և տևական կը մնան, ասոնք կը խօսուին, անոնք կը մոռցուին, մեռնողներ այլևս տարբեր տեսակէտով կը ներկայանան մնացողներուն աչքին, և բամբասանքը և մեղադրանքը կը դադրի և անձը սիրելի և յարգելի կը դառնայ: Այս երևոյթը ամէնօրեայ է, և ամէն մարդ պայն փորձառութեամբ ալ կը պայ երբ իր յարաբերութեանց վրայ ուշադրութիւն կը դարձնէ. Գէորգի վրայ ալ ճշմարտուեցաւ որ իսկական և իրական արդիւնքներ և յիշատակներ թողուց իր ետևէն և մոռցուեցան իրեն մասին խօսուածները: Այս փոփոխութիւնը աւելի ևս պօրացած կը գտնենք դիտելով որ մեղադրանքի նիւթ լապմող իրողութիւններ ժամանակով փոխուեցան և մեղմանալ սկսան ապագային սահմանադրութիւնը կեղակարծ հետևանքներու տեղի տուաւ: Երուսաղէմի խնդիրը չմնաց ինչ որ էր և նոր կնճիռներ ստեղծեց, հայկական խնդիրը ձախող առումներու և անխորհուրդ ձգտումներու առիթ ընծայեց, սովելոց տագնապը համառօտ շրջանով փակուեցաւ, միաբաններու հանդէպ ընթացքը ուրիշ կողմէ պեղծումներ և անտեղութիւններ խափանեց, և այս հետևանքով պագումներն ալ փոխուեցան: Արդիւնքներուն մասին դիտողութիւններն ալ ինքնին մեղմացան. եթէ ձեմարանը այն ատեն եկեղեցական չտուաւ, ընդհանուր պարգացման նպաստեց և ապագայ եկեղեցականներու գետին պատրաստեց, եթէ թանգարանին գմբէթները ձարտարապետութեան համաձայն չեղան, թանգարանի գոյութիւնը օգտակար եղաւ, եթէ Ամատունիի գերեզմանը մոռցուեցաւ Մեսրոպի գերեզմանը փառաւորեցաւ, և այս պարագաներուն մէջն ալ առաւելագոյն օգուտը նուապագոյն թերին ընկղմեց: Այսպէս Գէորգի անունը որ կենդանութեան ատեն, և մանաւանդ կեաքին վերջին մասին մէջ դիտողութեանց տեղի տուած էր, հալոցէն անցած ոսկիին նման վրայի աղտերէն սրբուելով փայլուն և ցայտուն կերպարան առաւ իր մահուանէն ետքը, և այսօր Գէորգի անունը անհակառակ լաւագոյն և ընտրելագոյն կաթողիկոսներուն մէջ տեղ մը գրաւած է: Անմիջապէս իր մահուան օրէն սկսաւ Ներսէս Ե. ի պուակից դասուիլ (82. ԱՐՁ. 621), թէպէտ Ներսէս շինարար և բարեկարգիչ արդիւնքներու վրայ ժողովրդական և ապագային արդիւնքներու առաւելութիւններն ալ ունէր, որոնք Գէորգի արդիւնքներուն մէջ չփայլեցան:

2886. ՄԱՀՈՒԱՆԷ ԵՏՔԸ

Գէորգի մահուանէ ետքը աթոռոյ պարապութեան միջոցը շատ երկարեցաւ ինչպէս պիտի պատմենք, զի հապիւ 1885 նոյեմբեր 10-ին նոր գահակալը աթոռ բարձրացաւ, երեք տարի ետքը, ուստի տակաւին շատ բաներ ունինք պատմելու Գէորգի անունով մակագրուած հատուածին ներքև. ինչպէս սովորութիւն ըրինք աթոռոյ պարապութեան ժամանակին գործերը նախորդին անունին ներքև պատմել, արդէն անոր անունն ալ իբր հանգուցեալ կը յիշատակուի եկեղեցական պաշտամանց մէջ: Ընդհանուր պատմութեան կարգին քանիցս խառնած ենք փոքր միջադէպերու յիշատակութիւնները որոնք մեր տեսութեամբ շատ պարագաներ կը լուսաբանեն, և այսպէս կը կարծենք հետևյալն ալ: Հայոց եկեղեցիներ միակ մեծ վարագոյր մը ունին պատարագամտոյց

խորանը ծածկելու: Կաթողիկ հայեր սկսած են երկրորդ փոքր վարագոյր մըն ալ աւելցնել լոկ սեղանը ծածկելու չափ, ուսկից առնելով նոյնը աւելցուցին մայրաքաղաքին հայ եկեղեցիները: Գէորգ կաթողիկոս առանց ծիսական հետապօտութեանց մտնելու, նոյնը հաստատած էր Էջմիածնի Մայրտաճարին մէջ, կարծելով պակաս մը լրացնել: Հին աւանդութեանց պահապան միաբաններ չէին կրցած ընդդիմանալ Գէորգի բուռն կամքին, սակայն մահուան օրն իսկ առաջին գործերէն մին կըլլայ փոքր վարագոյրը խլել վերցնել, որ այլ ևս վերանորոգուած չէ: Գէորգ 315,000 ռուբլու գումար մը ապահոված էր իբր անձեռնմխելի դրամագլուխ ձեմարանի համար, բայց նկատողութեան արժանի կէտ մը եղաւ որ անձնական ուրիշ գոյք երևան չէկաւ: Թաղման արարողութենէն ետքը, դեկտեմբեր 14-ին, կաթողիկոսարանի գոյքը և կաթողիկոսի թողօնը ցուցակագրել սկսան, բայց միայն 67 ռուբլի 80 կոպէկ գտնուեցաւ պահարանին, և 3 ռուբլի 70 կոպէկ ալ գրպանին մէջ, արժեքաւոր իրեր ալ շատ փոքր թուով, մինչ կը սպասուէր բաւական գումար և բաւական արժեքաւոր իրեր գտնել կաթողիկոսին մօտ, որ ձեռքին ներքև բաւական դրամ պէտք էր ունեցան ըլլար, իր բնաւորութեան և ճոխ կերպերուն նայելով (82.ԱՐՁ.684): Գէորգի գահակալութեան ատեն 1867-ին ցուցակագրութեամբ տրուած արժաթեայ և ուրիշ թանկագիրն առարկաներէն, և 15 տարիներու մէջ ստացած ընծաներէն մի տասներորդ բաժինն ալ չերևցաւ, այլ կտակ մը ելաւ թէ ինքն փող չէ գումարած, այլ միշտ բաժնած և ազգականաց, գործավարաց, եկեղեցեաց, և ուսումնարանաց (83.ՓՆՁ.1738), որ կը վերջանար ըսելով թէ ոչ մի ինչ ի դրամական գոյցից իմոց չէ մնացեալ ալ իս, և չէ իմ և ոչ գումար մի: Կտակը 1882 սեպտեմբեր 22 թուական ունէր, սակայն ոչ ոք կուզէր հաւատալ այնպիսի մի շինծու կտակին (83.ՓՆՁ.1740): Իսկոյն կասկածը դարձաւ Մանկունիի վրայ, իբրև հանգուցելոյն կողոպուտը, զի բաւական ժամանակ և դիւրութիւն կրցած էր ունենալ այդ գործը կարգադրելու, և մտադիր ալ ըլլալով իր մեծաւորի մահուանէն ետև այլևս Էջմիածին չմնար, կանխած էր սնտուկներ ձամբայ հանել դեռ Գէորգը չմեռած, ինչ որ կասկածները կը պօրացնէր: Հետևապէս սինոդը Մանկունին խիստ հսկողութեան ներքև կառնէ և անոր բնակութեան համար ստորին խուցերից մէկը կը յատկացնէ (82.ԱՐՁ.684), կաթողիկոսարանի ծառաներուն տուները խուլարկութեան կենթարկէ, և բաւական վեհարանէ տարուած իրեղէններ կը յայտնուին (83.ՓՆՁ.1743): Կ. Պոլիս ալ լուր տրուեցաւ Մանկունիի սնտուկները պգուշութեան ներքև առնել և քննութեան ենթարկել, որով նա բաւական ժամանակ այս կացութեան մէջ մնաց: Սինոդը ընտրողական ժողովի համար անյարմար գտնելով 1883 դեկտեմբեր ամիսը ցուրտերու, ուղևորութեանց դժուարութեանց պատճառով, նոր ընտրութեան օր որոշեց 1884 մայիս 7 Երևման խաչին երկուշաբթին: Իսկ Գէորգ կաթողիկոս իր վերջին ամիսներուն մէջ նկատի առնելով որ սինոդի նախանդամ Մկրտիչ Բաբամեան եպիսկոպոսը բաւական պօրաւոր չէ տեղապահութեան պաշտօնը վարելու, որ իրեն պիտի վիճակէր պօլօժէնիէի 42-րդ յօդուածին պօրութեամբ, կանխած էր սինոդի անդամակցութեան առաջարկել Մակար Տէր-Պետրոսեան եպիսկոպոսը, զոր մինչև այն ատեն աթոռին գործերէն հեռու պահած էր, բայց կարողութիւնը կը ճանչնար: Մակար սինոդականութեան հաստատութիւնը Գէորգի մահուանէն քիչ ետքը 1883-ի սկիզբները ստացուեցաւ (83.ՓՆՁ.1754), և նովին իսկ Բաբամեանի տեղապահութիւնը դադրեցաւ և Մակար տեղապահ հռչակուեցաւ, քանի որ սինոդի նախանդամութիւնը կամ փոխնախագահութիւնը, և անոր հետևանք եղող տեղապահութիւնը պարզապէս երիցութեան կամ աւագութեան կարգով կորոշուի և ոչ ընտրութեամբ: Մակար տեղապահութիւնը ստանձնեց (81.ՓՆՁ.1754), և բաւական ատեն Էջմիածին մնաց, բայց ստէպ բացակայեց և Բեսարաբիոյ ու Նորնախիջևանի վիճակին առաջնորդութիւնը մօտէն վարեց, թէպէտ միշտ տեղապահական իշխանութիւնը իր վրայ մնաց, և Մկրտիչ անոր բացակայութեան միջոցներուն իբր փոխտեղապահ

գործեց: Այստեղ պահ մը Մայրաթոռոյ գործերը ընդհատելով կը դառնանք Կ. Պոլսոյ եղելութեանց պատմութեան: 2886. ՋԱԼԱԼԵԱՆ ԿՏԱԿԸ

Բ. Բայց չև Կ. Պոլսոյ եղելութեանց մտած, իբրև հետաքրքրական մի յիշատակ և տարօրինակ մի գործ միջանկեալ կերպով բացատրենք Ջալալեան կտակը: Քանիցս յիշեցինք բնիկ Արցախեցի Սարգիս Սասան-Ջալալեան եպիսկոպոսին անունը, որ գործունէութեան բաւական շրջան մը ունեցաւ և կարևոր գործերու մասնակցեցաւ, մանաւանդ Ներսէս կաթողիկոսի օրով. իսկ Գէորգի կողմէն 1868-ին իբրև ներկայացուցիչ Կ. Պոլիս յղուելէն և ձեռնունայն դառնալէն ետքը (2771), ասպարէզէ քաշուած առանձնական կեանք վարեց մինչև 1879 հոկտեմբեր 16 իր մահը, որ տեղի ունեցաւ Տփղիսի մէջ 69 տարեկան եղած ատեն, Կուր գետին կողմը, իր իսկ աւելցուցած մասին մէջ (84.ԱՐՁ.90): Մահուանէ տարի մը առաջ 1878 մայիս 28-ին պատրաստել և վաւերացնել տուած էր կտակ մը, որ աւելի քան գործնական և անմիջական օգուտի, իր անունը անմոռաց ընելու բնութիւնն ունէր: Կտակած գումարը 25,000 ռուբլի էր, իբր 2,700 օսմանեան լիրա, որ պէտք էր յանձնուէր պետական դրամատան մինչև որ 125 տարի անձեռնամխելի մնալով, և շահը գլխուն բարդուելով 25,000 ռուբլին 12,000,000 ռուբլի գումարի կը հասնէր: Նպատակը այդ գումարը լրացնելով ըլլալով, տարիներու տևողութիւնը պիտի կարենար կամ նուազել կտակին գործադիր մարմնոյն ձեռքով, որ որոշուած էր Մոսկուայու Լազարեան ձեմարանի վարչութիւնը: Երբոր որոշեալ գումարը լրանար դրամագլուխը շահի դրուելով տարեկան տոկոսը 24 բաժին պիտի ըլլար, և տարուէ տարի հետևեալ հաստատութեանց պիտի յանձնուէր, միշտ Լազարեան ձեմարանի վարչութեան ձեռքով, որ իւրաքանչիւր գործածէ ի սեղան փառաց և բարօրութեան ապագայ սերնդեան ազգիս Հայոց Լուսաւորչականաց: Նշանակուած բաժինները պիտի յատկանան, 2 Լազարեան ձեմարանի, 1 Մոսկուայի համալսարանին, 2 Էջմիածնի ժառանգաւորաց վարժարանին, 1 Կ. Պոլսոյ ժառանգաւորաց վարժարանին Արմաշի վանքը կամ այլուր, 2 Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանին, 1 Սանահնի ժառանգաւորաց վարժարանին, 1 Տփղիսի, 1 Երևանի, 1 Շուշիի, 1 Նուխիի, 1 Ախլցխայի, 1 Ալէքսանտրապոլի քաղաքային վարչութեանց կամ կառավարութեանց, 2 Կոստանդնուպոլսոյ, 1 Ջմիւռնիոյ, 1 Կարնոյ, 1 Վանայ, 1 Ուլնիոյ ազգային վարչութեան և 1 Նոր Զուղայի հոգևոր կառավարութեան, որոնք են բովանդակ 22 բաժին երկուքը յիշել մոռցած ըլլալուն կտակակատարները յատկացուցին Էջմիածնի աթոռին: Բոլոր բաժիններու արդիւնքներ պիտի յատկացուին միմիայն դպրոցական ծախքերու, եղած դպրոցները ընդարձակելով կամ նոր դպրոցներ բանալով յանուն բարերարին, և պիտի գործածուին յօգուտ հայազգի և հայադաւան աշակերտաց, բացի Կովկասի քաղաքային կառավարութեանց յատկացուածներէն, որոնք կրնան գործածուիլ ընդհանուր կրթութեան առանց վանապանութեան ազգի և դաւանութեան: Լազարեան ձեմարանը պիտի մնայ միշտ վարիչ և մատակարար կտակեալ և աճեցեալ գումարին, և մինչև գումարը լրանայ պարտի հսկել գումարին աճելուն, և երբեմն երբեմն հրատարակել ի լրագիրս: Իսկ լրանալէն ետքը իւրաքանչիւրին բաժինները պարտի բաշխել իր ձեռքով կամ ընտրուած գործակալներու ձեռքով, և կրնայ ըստ պատշաճին դրամագլուխը տեղափոխել առաւել օգուտի և ապահովութեան տեսակէտով: Այս կտակով պահուած վարժարաններուն ծրագիրները պիտի կապմուտին ժամանակին պահանջմանց համեմատ, բայց հայերէն գրաբարը անհրաժեշտ պիտի ըլլայ միշտ: Նոյն ուսումնարաններ պիտի պահեն ևս գիշերօթիկներ, պիտի ունենան տպարան, պիտի հրատարակեն լրագիր գրչագիրներ և ուրիշ պիտանի դիրքեր: Եթէ բաժիններէն որևէ մէկը անգործադրելի դառնայ, Էջմիածնի կաթողիկոսը Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքներու խորհրդակցութեամբ պիտի կարենայ դարձուցանել վբաժին այնր ուսումնարանի յայլ քաղաք կամ վանք: Ամէն բաժին վայելող աթոռ կամ վանք կամ

քաղաք իր հաշիւները հրատարակութեան պիտի տայ: Վերջապէս եթէ Լաւարեան ճեմարանի վարչութիւնը սկիզբէն հրաժարի կտակին մատակարարութիւնը ստանձնել, սկզբնական չորս կտակարանները, որոնք են, Աղէքսանդր Թայիբեանց, Պղատոն Գուրգէնբէկեանց, Մխիթար Հասան Զալալեանց իր ազգականը, և Նիկողայոս Տէր Յակոբեանց իր որդեգիրը, պիտի կարենան որոշել և սահմանել ուրիշ մատակարար մարմին մը, (84. ԱՐՁ. 88-89): Ինչ որ սակայն հարկ չեղաւ, զի Լաւարեան ճեմարանի վարչութիւնը յաննառու եղաւ և 1879 էն ի վեր 38 տարի է որ գումարին աճելուն կը հսկէ և հաշիւները կը հրատարակէ: Սակայն մինչև 125 տարիներուն լրանալը, այսինքն մինչև 2005 թուականը տակաւին 87 տարիներ կան, և այս օրերու ծնունդներն իսկ պիտի չտեսնեն կտակին գործադրութիւնը, եթէ նոյնիսկ նշանակեալ գումարը իրականացնելու համար ցուցուած տարիները երկարել հարկ չըլլայ, ինչ որ հաւանական է յուզուած և յուզուելիք քաղաքական և ելեմտական տագնապներու պատճառով: Զալալեան եպիսկոպոս իր կտակին յաւելուած մը ըրեր էր իր մահուան առիթ ըլլալիք ծախքերուն համար, զոր սակայն չէր կրցած իր ձեռքով ստորագրել ի պատճառս կուրութեան, որով և յաւելուածը դատական իշխանութենէ չհաստատուեցաւ, և մնաց չորս կտակակատարներուն կամքին (84.ԱՐՁ.89-90): Մենք յառաջ բերեցինք Զալալեան կտակը իբրև հետաքրքրական յիշատակ մը միայն, և ժամանակին վայելողներուն կը մնայ անոր արդիւնքը տեսնել և գնահատել: Կտակին ցուցած գումարները հաշուական գործի ենթարկած ատեն կը տեսնեք, որ 25,000 ռուբլին 12 միլիոնի բարձրանալու համար 5 առ հարիւր սակով 127 տարի պէտք է և 12 միլիոնի տոկոսն ալ 24 բաժինի բաշխուած ատեն իւրաքանչիւրը 20,000 ռուբլի կըլլայ, միշտ 5 առ հարիւր սակով, և այսպէս կտակին նախնական գումարը իւրաքանչիւր բաժնին տարեկան առնելիքը կըլլայ: Սակայն քանի որ գումարը դրամատանց մէջ պիտի շահագործուի, չենք կարծեր որ 5 առ հարիւր սակը, ոչ աճեցնելու ատեն կարենայ գտնուիլ, որով թէ 125 տարին շատ աւելի երկարելու է, և թէ 12 միլիոնի իրականանալէն ետքը իւրաքանչիւր բաժնին հապիւ թէ 15,000է 20,000 գումար մը, կամ 1,600-է 2,200 օսմանեան լիրայ կրնայ իյնայ: Այդ կէտը ճշդելու հոգը մեզմէ դար մը ետքը ապրողներու ուսումնասիրութեան թողլով դառնանք պատմութեանս կարգին և Կ. Պոլսոյ եղելութեանց:

2887. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆԸ

Գրեթէ օրը օրին զուգադիպութեամբ կը հանդիպէին Ներսէսի պատրիարքութեան վերահաստատուիլը, և Գէորգի մահուան գոյժը, որ Կ. Պոլիս կը հասնէր, դեկտեմբեր 7ի երեկոյին (82.ՓՆՁ.1789), երբ Ներսէս դեկտեմբեր 3-ին Ընդհանուր ժողովէն խնդութեամբ ընդունուեր էր, իսկ 6-ին կայսեր ներկայացեր էր, (5684), միևնոյն օրը որ Գէորգ հոգին կաւանդէր: Այսպէս Ներսէս վերահաստատուելուն առաջին վայրկեանէն նոր և նոր կարևոր խնդիր մը ևս կունենար նր առջև, զի կաթողիկոսական ընտրութիւնը միշտ տագնապալից խնդիր մը եղած էր Տաճկահայոց համար, ինչպէս Մատթէոսի (2689) և Գէորգի (2759) ընտրութեանց առթիւ պատմեցինք: Գոյժը հանրութեան մէջ շուտով տարածուեցաւ, բայց հապիւ դեկտեմբեր 17ին պաշտօնապէս Ընդհանուր ժողովին հաղորդուեցաւ, և ի նշան սգոյ ամիս մը նիստերու դադարում որոշուեցաւ, օգտուելով միանգամայն մօտալուտ տարեմուտի և տօներու սովորական դադարումէն (82.ԱՏՆ.290): Իսկ ընտրողական նախապատրաստութեանց խնդիրը յետաձգուեցաւ, զի գոնէ տարի մը կար ընտրութեան պայմանաժամին: Մենք ալ վայն կը յետաձգենք, որպէսզի զի նախապէս ուրիշ եղելութիւնները քաղենք: Առջևնիս եղած ժամանակամիջոցը Ներսէսի պաշտօնավարութեան և կեանքին վերջին մասն է, զի վերահաստատութենէ երկու տարին լմնցնելու մօտ, 1884 հոկտեմբեր 26-ին նա մահկանացուն կնքեց, և միշտ անհաստատ և երերեալ պաշտօնավարութիւն մը ունեցաւ, ինչպէս առաջ ալ ունեցած էր: Մեզմէ չի պահանջուիր հարկաւ հետևիլ այն ամէն մասնաւոր

դիպուածներու և պարագաներու որոնք տաճկահայութեան շուրջը դարձան, ոչ ալ մի առ մի պատմել ժողովներու և ժողովականներու և վիճակաւորներու և վիճակայիններու անհատնում դարձուածները, և յարաբերական գործերու կնճռոտ անցուդարձերը որոնք ոչ ապագան կը շահագրգռեն և ոչ ըստ ինքեան կարևորութիւն ունին: Մեր պարտքն է մտադրութիւն դարձնել այն խնդիրներու և եղելութեանց վրայ, որ հանրային բնութիւն և հարստութեան հետ սերտ առնչութիւն ունին: Այս տեսակետէն է ըստուգիւ Երուսաղէմի պարտքին խնդիրը, այլ անոր մասին արդէն խօսեցանք Երուսաղէմի գործոց կարգին, և Ներսէսին մահուանէն ետքի եղելութիւններն ալ քաղեցինք նիւթին ամբողջութիւնը տուած ըլլալու համար (2877-2879), հետևապէս նորէն անոր վրայ ադրադառնալու պէտք չմնար: Բայց կան ուրիշ մտադրութեան արժանի մասնաւոր եղելութիւններ, որոնց չմտած Ներսէսի վերջին պաշտօնավարութիւնը պատկերացնելու հարկը կը պահանջէ: Արքունի հրամանով գործի գլուխ դառնալը երկու կողմերը կը պարտաւորէր ճամբանին փոխել, զի այլևս որ Ներսէս հրաժարական մատուցանելու, և ոչ ընդդիմադիրներ ձանձրացնելով հրաժարականի ստիպելու գաղափարներով պէտք չէր օրօրուէին, այլ հանդարտորէն առօրեայ գործոց ընթացք արէին առանց միջադէպներ ստեղծելու: Սակայն երկու կողմերն ալ իրենց սկեռեալ գաղափարներէն չէին հրաժարած, և գործոց ընթացքը միշտ տարադէպ հետևանքներու կը տանէր: Ընդհանուր ժողովոյ նիստերը առանց Ներսէսի նախագահութեան ալ կը շարունակէին, Նարայէյ կամ Սէֆէրեան եպիսկոպոսներու փոխնախագահութեամբ, և լեցուն էին անպտուղ ասուլիսներով, յարաճուն խժբժանքներով, և տարօրինակ քաշքշուկներով, որով կարևորագոյն գործեր ետև կը մնային: Երեսփոխանութիւնը կարծես վարչութիւն դարձած, ամէն միջադէպ և ամէն մանր գործ իրեն վիճաբանութեան նիւթ կը դարձնէր անվերջանալի հարցումներով և հարցապիղումներով, և Ներսէս ձեռուրները կապուած կը պար և կը նեղուէր, մանաւանդ որ երեսփոխանութեան վրայ եկեղեցական համագումարն ալ աւելցած էր այդ օրեր, և այն ալ շատ մը վարչական խնդիրներով կը պառնէր, և պատրիարքի և վարչութեան գործունէութեան արգելք մը ևս կաւելցնէր: Մտադրութենէ չվրիպեցնենք որ Ներսէսի կեանքը դաւաճանող շաքարախտն ալ երթալով կը սաստկանար և կը պօրանար, և Ներսէս արմատական դարմաններու անհրաժեշտ պզուշտութեան անհնարութեանը մատնվուած էր, ինչ որ ուժգնակի կապդէր իր բնական և իր բարոյական կեանքին վրայ հաւասարապէս, ուսկից յառաջ կու գար որ ան ալ փոխադարձաբար կծու ակնարկներ չէր խնայեր ընդդիմադիրներուն նոյնիսկ ժողովներու մէջ: Այս պարագայից հետևանքն էր որ յանկարծ 1883 օգոստոս 6-ին հրաժարագիրներ կը դրկէր կառավարութեան և արքունիքին և Խասքէօյ կը քաշուէր (83.ՓՆՁ.1795), սակայն նոր կայսերական հրաման մը կը հասնէր, թէ Հայոց ազգին պատրիարք պիտի մնայ, և թէ կրնայ անունները հաղորդել անոնց որոց ընթացքը դժկամակութիւն կը պատճառէ իրեն, և Ներսէս հրամանէն ստիպուելով և պայմանէն խրտչելով (83.ՓՆՁ.1802), կը փութար պատրիարքարան դառնալ, և օգոստոս 14 Վերափոխման կիրակի օրը պատարագել և քարոզել և հրաժարականը ետ առած ըլլալը յայտնել (83.ՓՆՁ.1797): Բայց կանոնաւոր գործունէութիւնը դարձեալ չէր իրականանար, զի անձնական տկարութիւնը տակաւ կը պայրանայ (83.ՓՆՁ.1817), և մինչև իսկ հոկտեմբեր 17-ին կայսրորդույ թլպատութեան առիթ տրուած հացկերոյթին չէր կրցած ներկայ գտնուիլ, բայց կայսեր շեշտուած փափաքին վրայ անգամ մը անոր ներկայանալու համար հոկտեմբեր 20-ին մեծ ճիգեր ընել ստիպուած էր (83.ՓՆՁ.1820): Սակայն այդ կացութիւնը ազգային գործոց ընթացքին ալ կապդէր և շատ խնդիրներ լքեալ կը մնային, և վարչութիւնը յատուկ պատգամաւորութեամբ և մասնաւոր դիւրութիւններով պատրիարքը Խասքէօյէ պատրիարքարան բերելու կերպերը կը խորհէր (83. ՓՆՁ. 1844):

2888. ԿԱՐՆՈՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՔ

Կարնոյ մէջ ծագած իբր յեղափոխական պատրաստութեանց խնդիրը, և այդ առթիւ կատարուած ձերբակալութիւնները պատմեցինք արդէն: Առաջնորդ Օրմանեանի մասին ալ կասկածներ յարուցուած ըլլալը յիշեցինք, բովանդակ ձերբակալները 72 եղած էին, որոնցմէ 21 հոգի գործին ընթացքին մէջ անպարտ արձակուեցան, և 51ին դէմ յանպարտութեան որոշում տրուեցաւ 1883 փետրուարի սկիւբները (83. ԱՐՁ. 113), բայց որոշումին չէմ դիմում եղաւ մայրաքաղաքի վճռաբէկատեանին: դատը հոգալու, և միանգամայն իր վրայ եղած կասկածն ալ աճեցնելով ձախող միջադէպի տեղի չտալու համար, Օրմանեան կանխեց Կ. Պոլիս ուղևորիլ, ուր հասաւ 1883 ապրիլ 5-ին (2867): Եպարքոսութեան նախարարութեանց և վճռաբէկատեանակալաց մոտ Ներսէս պատրիարք ուժգնութեամբ կատարեց պէտք եղած պաշտօնական դիմումները, այլ իր տկարութեան պատճառով նոյնինքն Օրմանեանի յանձնած էր հետապնդելու և բացատրութիւններ տալու գործը, և արդիւնքն եղաւ ամբաստանութեան որոշումին ջնջումը: Բայց երբ դատը դարձեալ Կարնոյ դատարանին յանձնուեցաւ և այլևս վայն ջնջել տալու աշխատութիւնը աւելորդ դատուեցաւ, և Կարնոյ պատժական դատարանը 11 հոգի ևս ապատ հոչակեց, և 40 անձանց դէմ դատապարտութեան վճիռ արձակեց, մէկը 15, մէկը 13, երկուքը 10, մէկը 7, չորսը 6, և երեսու նումէկը 5 տարուան բանտարկութեան: Դատապարտեալները առհասարակ խեղճ դասակարգի արհեստաւորներ և հողագործներ էին, մեծաւ մասամբ նորահաս երիտասարդներ, որոնց մէջ ոչ կարողութեան և ոչ խելահասութեան տէր մէկ մը կար, որ կարծեցեալ յեղափոխութեան գլուխ կանգնելու և գործ վարելու արդարացնէր: Արդէն որոշուած պատիժներն ալ կը հաւաստէին թէ դատաւորներն իսկ կարևոր շարժում մը տեսած չէին այն գործողութեան մէջ, որ անձնապաշտպանութեան նպատակէն անգիր չէր անցներ (2866): Երբ ամբաստանութեան երկրորդ որոշումին դէմ դիմումէն հրաժարելով դատապարտութեան վճիռին ճամբայ բացուեցաւ, առաջիկային ներում ստանալու միտքերը և յուսադրութիւնները յղացուած էին ուստի միջոց մը ուշացնելէ ետքը կայսերական ներման դիմումներն սկսան պատրիարքի հովանաւորութեամբ և Օրմանեանի ձեռքով, որոնք վերջապէս յաջողութեամբ պսակուեցան, և առաջին չորսէն վատ մնացեալ 36-ին պատիժին երկու երրորդին ներուելուն հրամանագիրը ստացուեցաւ 1884 յունիս 6-ին: Ըստ այսմ 31 հինգ տարուան դատապարտեալներուն բանտարկութիւնը միայն 20 լուսնական ամիսներու վերածուեցաւ, որչափ ինչ լրացուցած էին 1882 նոյեմբերէն սկսելով, ուստի պարտուպատշաճ ձևակերպութիւններն ալ լրանալով 1884 յունիս 22-ին ուրբաթ օր արձակուեցան Կարնոյ բանտէն ժողովրդական մեծ խնդութեան մէջ: Անկէ առաջ Բերայի գերեզմաննոցին եկեղեցիին տօնին առթիւ Օրմանեան հանդիսապէս մաղթանքներ ըրած էր կայսեր կենաց համար, 11-ին ալ Ներսէս Պատրիարք պալատ երթալով շնորհակալութիւն մատուցած էր, 23-ին ալ Գիւտի Նշխարաց տօնին օրը գոհաբանական աղօթքներ և կայսերական մաղթանքներ կատարուեցան Կարնոյ մայր եկեղեցւոյ մէջ առաջնորդական փոխանորդ Գրիգոր Արծնեան աւագերէցին նախագահութեամբ: Երեսունումէկերուն արձակուելովը և միւս հինգերուն ալ մօտալուտ արձակման հաշուովը գրեթէ բոլորովին փակուած կը նկատուէր յեղափոխական կարծուած Կարնոյ մէջադէպը: Իսկ Օրմանեանի մասին եղած կասկածները բոլորովին փարատուած էին, և մանաւանդ եպարքոսի և նախարարաց հետ անձնական տեսակցութիւններէն ետքը, որոնցմէ յանձնարարութիւն իսկ ստացած էր ներքին գաւառաց բարեկարգութեան համար կապմուտ յանձնաժողովին հետ խորհրդակցիլ, և ինչինչ օգտակար առաջարկներու համար գրութիւն ալ ներկայած էր: Ուստի համարձակ կրնար դառնալ իր պաշտօնին գլուխը, որուն մինչև վերջ հաւատարիմ մնացած էր՝ Կարինէ մեկնելուն օրը յայտնած ուխտագիր խոստումին համեմատ:

Մշոյ Ս. Կարապետի Վանքին 1884 յունիս 7ին վանահայրութեան ընտրուած էր (84.ԱՐԼ.138), և նոյն տարւոյ յուլիս 14-ին Էջմիածնի Գէորգեան ձեմարանի տեսչութեան հրաւիրած էր, բայց երկուքին ալ յանձնառու չէր եղած միշտ Կարնոյ առաջնորդութիւնը պատճառելով: Պատրիարքարանի վարչութիւնն ալ և յատկապէս Սիմոն Մաքսուտեան ատենապետը քանի քանի անգամներ յորդորած և ստիպած էր որ Կարնոյ առաջնորդութենէն հրաժարի և իբր Ներսէս պատրիարքի կատարեալ վստահութիւնը վայելող անձ մը, պատրիարքական փոխանորդութեան կոչուի, քանի որ Ներսէս ծանրացած հիւանդութեան պատճառով չէր կրնար ամէն աշխատութիւնը կատարել, և կայսերական կամքին պատճառով ալ հնար չէր Ներսէսի յաջորդ մը ընտրել. բայց Օրմանեան այդ առաջարկներն ալ մերժած էր միևնոյն պատճառով: Արդէն Կ. Պոլիս հասնելու օրէն արգելք գրած էր Կարին տեղապահ մը յղուելուն, և իր վրայ պահած էր Կարնոյ գործերուն պաշտօնական պատասխանատուութիւնը: Բանտարկելոց ներումէն ետքը իր վերադարձին ձևակերպութիւններուն հետևեցաւ, և օգոստոս 16ին պաշտօնական յանձնարարականներն ալ ստացաւ (84.ԱՐԼ.195), բայց գործադրել կը յապաղէր Ներսէսի տկարութեան աւելնալուն և մահիձ իյնայ տեսնելուն, և մահուան վտանգը նախատեսելով մեկնիլ չկրնալուն: Բայց վերջապէս, նոյնինքն Ներսէսի բացարձակ հրամանով, օր առաջ Կարին գտնուելու համար՝ սեպտեմբեր 24-ին Կ. Պոլիսէ մեկնեցաւ և հոկտեմբեր 9-ին յանակնկալս Կարին մտաւ մութը կոխելէն ետքը, անխորհուրդ ցոյցերու առիթ չտալու համար: Արդէն յիշած ենք թէ նոյն 1884 տարւոյ հոկտեմբեր 26-ին Օրմանեանի Կարին հասնելէն 19 օր ետքը Ներսէս մահկանացուն կնքեց (887):

2889. Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԵՐ

Օրմանեան Կ. Պոլիս գտնուած միջոցին իրեն գլխաւոր գործ ըրած էր Կարնոյ բանտարկելոց խնդիրը, և պատրիարքէն ալ արտօնութիւն ստացած էր անձամբ և ազատութեամբ գործը հետապնդել, ըսածին և ըրածին տեղեակ պահելով պատրիարքը համաձայնութեամբ ընթանալու համար: Հասնելէն շաբաթ մը ետքը 1883 ապրիլ 12-ին անգամ նշանակուեցաւ վանօրէից խորհուրդին և վիճակաց վերակազմութեան և բարեկարգութեան համար հաստատուած յանձնաժողովին, որուն անդամակից էին Մատթէոս Իսմիրլեան, Գրիգորիս Ալէաթճեան, Եզնիկ Ապահունի և Հմայեակ Դիմաքսեան եպիսկոպոսները: Քիչ ետքը, սեպտեմբեր 24-ին անդամակցեցաւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան խնդիրներուն համար կազմուած յանձնաժողովին ալ, իսկ 1883 մայիս 3-ին առժամեայ քարոզիչ անուանուած էր Բերայի եկեղեցիներուն, Ներսէս Ասլանեան վարդապետի Եւդոկիոյ առաջնորդութեան մեկնելուն առթիւ: Նոյն միջոցին կը յուզէին Բերայի 1876-ի մեծ հրդեհէն ետքը թաղական կալուածներուն մատակարարութեան խնդիրները, կը կատարուէր Ս. Երրորդութիւն եկեղեցոյ հրկիպեալ կալուածներուն տեղ նոր թատրոնին շինութիւնը, ոյժ կը տրուէր թաղական վարժարաններու վարգացման, և աղջկանց արհեստանոցի բացման և ընդարձակման, և Օրմանեան իբրև քարոզիչ և թաղական խորհրդույ նախագահ գործունեայ դեր ունեցաւ այդ ամէն ձեռնարկներուն մէջ: Բայց բոլորովին նոր ձեռնարկ եղաւ Բերայի գերեզմաննոցին կազմակերպութեան գործը: Կառավարութիւնը 1875-ի հնտախտի համաճարակին օրէն արգիլած էր Թաքսիմի գերեզմաննոցին մէջ մեռեալ թաղելը, վասնզի Բերայի ընդարձակուելովը քաղաքամիջի գիրք առած էր, և Բերայի վերի կողմը Շիշլի կոչուած մասին մէջ նոր գերեզմաններու տեղեր տուած էր Հայոց և Յունաց և Կաթողիկաց և Հրէից: Միևս ազգեր որմով շրջապատած էին իրենց մասերը և ներքինն ալ կազմակերպած, միայն Հայոց մասը կը մնար առանց շրջապատի և խառնիխուռն կը թաղուէին ննջեցեալները: Օրմանեան գլուխ կանգնեցաւ գերեզմաննոցը կազմակերպելու ձեռնարկին, որուն թաղական քորհուրդն ալ պէտք կը վզար, և իր նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուեցաւ, իբրև Բերայի թաղականութեան չորրորդ ձիւղ,

որ արդէն եկեղեցեաց և վարժարանաց և կալուածոց երեք ճիւղերու բաժնուած էր Յովհաննէս Նուրեանի գործունեայ ատենապետութեամբ: Յանձնաժողովը պատրիարքական կոնդակով հաստատուեցաւ 1884 մայիս 4-ին, զոր կը կազմէր Մաղաքիա վարդապետ Օրմանեան նախագահ, Գրիգոր Աճէմեան և Յովհաննէս Մկրեան աւագերէցներ խորհրդական, Յարութիւն Մերկէմզուրի ատենապետ, Ատիմար Սաւալեան ատենադպիր, Սենեքերիմ Պասմաճեան գանձապետ, և Զենոր Երեմեան ճարտարապետ: Արդէն նախապատրաստութիւններ մասամբ եղած էին, յանձնաժողովի ձեռքով լրացան, և կանոնագիրն ու յատակագիծը թաղականութեան միջնորդութեամբ վարչութեան ներկայացուեցան: Ոչ միայն նոր էր գերեզմաննոցները յատակագիծի և կանոնագրի վերածելը, այլ և կրօնական ժողովին նորալուր երևցաւ վճարմամբ յատուկ թաղեր կամ հողամասեր սեփականելը, և շինուելիք շիրիմներուն յանձնաժողովոյ քննութեան ենթարկուիլը: Օրմանեան պարտաւորեցաւ անձամբ ժողովին առջև պաշտպանել և փաստաբանել մատուցուած առաջարկը, մինչև որ կրօնականն ալ համոզուեցաւ, կանոնագիրն ու յատակագիծը խառն ժողովէն վաւերացան 1884 յուլիս 11-ին, և պատրիարքէն գործադրուեցան հրամայուեցան յուլիս 25-ին, և յանձնաժողովի յայտարարութեամբ հրատարակուեցան օգոստոս 18-ին, երբ օր առաջ օգոստոս 13-ին եկեղեցական հանդիսութեամբ և Օրմանեանի հանդիսագրութեամբ կատարուած էր որմափակի հիմնարկէքին օրհնութիւնը: Գերեզմաննոցի յատակագիծը կազմուած էր յարմար քառակուսիներով, որոնց երեսները չորս աստիճանի բաժնուած մասնաւոր գերեզմանատեղիներու, իսկ մէջտեղները ընդհանուր թաղումներու յատկացուած էին: Մասնաւորներ պիտի վճարէին գետինին գինը մեղրի չափով և մուտքի տուրք մը, ընդհանուրներ միան մուտքի տուրք, իսկ անտէր և անանկ թաղումներ բոլորովին ձրի պիտի ըլլային: Յատուկ տեղեր որոշուած էին մատուռի մը, որ տակաւին շինուած չէ, և քահանայի և պահապանի սենեակներու և յուղարկաւորաց սրահի, որոնք անագան շինուեցան 1904-ին Օրմանեանի պատրիարքութեան միջոցին: Քառակուսիները բաժնող ուղիներու հայ սուրբերու անուններ գրուած էին, ծառեր տնկուած և ջուրի ճամբաներ շինուած, այնպէս որ Շիշլիի գերեզմաննոցը իր տեսակին մէջ նշանաւոր և հայ գերեզմաննոցներու մէջ անսովոր ձև մը ստացաւ, և հետզհետէ արուեստակերտ շիրիմներով վարդարուեցաւ ու ճոխացաւ: Կառնոյ ապգային գերեզմաննոցիմէջ ալ Օրմանեան հնար եղածին չափ ծառուղիներ կազմած էր իր պաշտօնավարութեան սկիզբը: Կ. Պոլիս եղած միջոցին միացեալ ընկերութեանց ժողովներուն ալ մասնակցեցաւ, որոնց կանուխէն անդամակից էր, և Կարնոյ մէջ ընկերութեան գործակատարութիւնը կը վարէր փոխադարձ յարաբերութեանց համար: Նոյնը ըրած էր Սովելոց յանձնաժողովին համար ալ, որուն ընդարձակ տեղեկագիրն ալ ինքն խմբագրեց Կ. Պոլիս գտնուած միջոցին (84. ԱՐԼ. 118), և 1884 ապրիլ 22-ին սկսելով սեպտեմբեր 9-ին աւարտեց, որ և յատուկ հատորով հրատարակուեցաւ: Ուրիշ մանր տեղեկութիւնները վանց ընելով կանցնինք այդ ժամանակամիջոցին մէջ կատարուած գլխաւորագոյն գործին պարագաները պատմել, որ է կաթողիկոսական ընտրութիւնը:

2890. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ Թէպէտ 1882 դեկտեմբեր 17-ին Ընդհանուր ժողովի նիստին մէջ առժամաբար յետաձգուեցաւ կաթողիկոսական ընտրութեան գործը (2887), բայց հանրութեան մտադրութիւնը գրաւուած էր այդ գործէն, որ ստուգապէս հայուն համար ամենակարևոր խնդիր մըն էր, քանի որ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան գահակալը հայ հանրութիւնը անձնաւորող կը նկատուէր (83.ԱՐԶ.65-67): Կ. Պոլսոյ պաշտօնական շրջանակներն ալ կը վբարէին այդ խնդիրով և 1883 մարտ 18-ի Ընդհանուրի նիստին մէջ որոշուեցաւ Էջմիածինէ բացատրութիւն պահանջել ընտրութեան ժամանակին յետաձգման մասին, և ընտրութեան գործը ձեռք առնել (82.ԱՏՆ.388), իսկ ապրիլ 4-ին ընդարձակ վիճաբանութիւն բացուեցաւ և պօլօժէնիէն

դարձեալ քննադատուեցաւ, և 16 սրբագրելի կէտեր մատնանշուեցան (82.ԱՏՆ.444), մինչև իսկ Ռուսահայոց պատրիարքութիւնը և Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը իրարմէ անջատելու ակնարկներ եղան (82.ԱՏՆ.452), օսմանեան կառավարութեան միջնորդութեամբ պօլօժէնիէի դէմ բողոքելու առաջարկն ալ խօսեցաւ (82.ԱՏՆ.465), բայց վերջապէս Ներսէս պատրիարքի պնդելով լիազօր յանձնաժողով մը ընտրելու որոշումը տրուեցաւ (82.ԱՏՆ.471), ընտրութիւնն ալ կատարուեցաւ 1883 ապրիլ 11-ին (ՅՆԶ.1): Անկէ ետքը ստուգուեցաւ թէ իրօք սինոդը յետաձգելու կարգադրութիւնն ըրած և կառավարական արտօնութիւնն ալ ստացած էր, պատճառելով ուղևորութեանց դեկտեմբերի մէջ դժուարութիւնը և Մեծ պահքի մէջ անյարմարութիւնը (2886), բայց գանգատներ յայտնուեցաւ ժողովի մէջ, իբր պի կանխաւ Կ. Պոլսոյ հաճութիւնը չէր փնտռուած: Պօլօժէնիէի տրամադրութեանց մասին ընդդիմաբաններ չէին նկատեր թէ իրենք որոշակի ճշդուած և արդէն գործադրուած օրէնք մը չունէին, և թէ Տաճկահայոց Ընդհանուր ժողովը ամէն ընտրութեան առիթին նորինորոյ ուսումնասիրութեանց կը ձեռնարկէր և նորանոր առաջարկներ կը կազմէր, որով խոստովանած կըլլար թէ ինքն հիմնական և հաստատուն օրէնք մը չունի, և օրինական յենարանի մը կրթնելով իր ընդդիմութիւնը չիզօրացնէր, մինչև շարունակ փոփոխութեան ենթարկուած առաջարկներ աւելի քմահաճութեան քան օրինականութեան կերպարան կը պգենուին: Պաշտօնական մարմիններ ալ գործածուելիք ձևին մասին շարունակ տարբեր կարծիքներ կը յայտնէին, մինչև իսկ կը խորհուէր ռուսական դեսպանատան հետ բանակցիլ, կամ Պետրբուրգ պատգամաւորներ յղել, կամ սինոդին հետ բանակցութեան մտնել, կամ յետաձգման համար բողոք ուղղել, բայց ինչպէս ըսինք վերջապէս խնդիրը կը փակուէր յանձնաժողովի մը ընտրութեամբ, որուն անդամակցելու կոչուեցաւ եկեղեցականներէն Խորէն Նարպէյ և Մատթէոս Իզմիրլեան եպիսկոպոսներ և Յովհաննէս Մկրեան քահանայ, և աշխարհականներէն Սերվիշէն բժշկապետ, Կարապետ Իւթիւճեան և Մարկոս Աղաբէդեան, իսկ Ստեփան Փափապեան թէպէտ ընտրուեցաւ, բայց բնաւ չմասնակցեցաւ, և յանձնաժողովը եօթնի տեղ վեց անդամով գործեց 1883 ապրիլ 23-է սկսելով (ՅՆԶ. 2): Յանձնաժողովոյ աշխատութեանց միջոցին ալ միջադէպեր և առաջարկներ պակաս չեղան, կարծիքներու անհամաձայնութիւններ ալ երևան եկան, սակայն յանձնաժողովը անկախաբար իր գործը շարունակեց, մինչև որ իր ուսումնասիրութիւնը աւարտեց 1883 օգոստոս 4-ին տեղեկագիրը խմբագրելով և տեղեկաբեր նշանակելով Իզմիրլեանը: Սակայն երկու օր ետքը Ներսէսի տկարութեան ակելցած ըլլալով մատուցած հրաժարագիրը (2887) գործին նկատառումը յապաղեցուց, մինչև որ միջադէպը փակուեցաւ աւելի կայսերական բացարձակ հրամանին քան թէ ժողովական մերժումին պօրութեամբ: Սեպտեմբեր 13ին Ընդհանուր ժողով հրաւիրուեցաւ (83.ՓՆԶ.1805), և 16-ին գումարուեցաւ և կաթողիկոսական յանձնաժողովին կողմէ հաղորդուեցաւ թէ ի մօտոյ պիտի մատուցանէ իւր գործոց համարն (83.ԱՏՆ.216), ինչպէս որ ալ ներկայեց սեպտեմբեր 21-ի դռնփակ նիստին, և բաւական եռանդուն վիճաբանութեան նիւթ ընծայեց: Տեղեկագիրը ընդարձակ և պատմական ձև առած էր, իրեն նպատակ ունենալով պօլօժէնիէի կազմութիւնը և անոր ընդունելութեան մասին տեղի ունեցած պարագաները պատմել, 1866-ին կազմուած կաթողիկոսական առաջին յանձնաժողովին աշխատութիւնը անոր հետևանքները լուսաբանել և Հայ Եկեղեցոյ հիմնական սկզբունքները ճշդել, և ամէնէն յետոյ կաթողիկոսական ընտրութեան հրահանգը առաջարկել: Հարկ է սակայն ամէնէն առաջ դիտել տալ, որ եթէ 1866-ին պաշտպանուած սկզբունքները հաստատ և որոշ էին, պէտք չէր որ նորէն սկզբունքները քաղուէին, առաջուանները փոխուէին, և ոչ ալ նոր ուսումնասիրութիւններու և առաջարկներու նիւթ ըլլային, մինչ նորերը 1866-ի սկզբունքները անբաւական սեպելով նորեր կազմելու

հետևեցան, և ասով իրենք իրենց գործը տկարացուցին: Պօլօժէնիէի կազմութեան պատմութիւնը քաղուած է անդատին Ղուկաս կաթողիկոսի օրէն, երբ Էջմիածնի համար կանոնադրութիւն մը վարիչ ժողով մը հաստատելու նախափորձեր սկսան, որուն պատմութեան մէջ 1866-ի յանձնաժողովին գործառնութիւնն ալ կը ցուցուի, ռուսական պաշտօնագիրներ յառաջ կը բերուին, և ամբողջաբար կարտադրուի 1836-ի պօլօժէնիէն և 1843-ի ընտրողական հրահանգը (ՅՆՁ.1-45): Կը պատմուին նաև Ներսէս Ե. ի ընտրութիւնը և անոր կողմէ պօլօժէնիէի ինչինչ յօդուածոց փոփոխութեան համար եղած դիմումները (ՅՆՁ.46-55), յառաջ կը բերուի Մատթէոս Ա. ի կազմած ծրագիրը իբր կարգ և կանոն Հայաստանեայց եկեղեցոյ կաթողիկոսական իշխանութեան (ՅՆՁ.55-67), և անով կը փակուի առաջին մասը: Երկրորդին մէջ ամբողջաբար յառաջ կը բերուին 1866-ի կաթողիկոսական յանձնաժողովին տեղեկագիրը, Մատթէոսի ընտրութեան պարագաները և հին ընտրութեանց մասին տեղեկութիւններ (ՅՆՁ.68-94): Անոնք մենք իրենց պատմական կարգին յառաջ բերած ենք և վերլուծած, և նորէն կրկնելու հարկ չենք զգար: 2891. ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՁԵՒԵՐ

Նախընթաց երկու մասերը պատմական հմտութիւններ են, որ լոկ խնդիրն ու կացութիւնը կը լուսաբանեն, այլ յանձնաժողովէն սպասուած գլխաւոր կէտը առաջիկային հետևելիք ձևն ու կաթողիկոսութեան յաջորդին ընտրութեան կերպն էր, և այս կը կազմէ տեղեկագիրն երրորդ մասը: Յանձնաժողովը այդ մասին մէջ ալ անցեալէն քանի մը գրութիւններ իբր վաւերագիր և տեղեկութիւն յառաջ բերելէն ետքը (ՅՆՁ. 91-100), կը ներկայէ իր նոր ծրագիրը երեք գլուխներու բաժնուած Ա. Կաթողիկոսական իշխանութեան պարտքերն և իրաւունքները: Բ. Կաթողիկոսական վարչութեան պայմանները (ՅՆՁ. 101-107). և Գ. Կաթողիկոս ընտրելու իսկական նպատակը կը կազմէր: Անշուշտ կը սպասուէր որ յանձնաժողովը 1866-ին առաջարկուած և գործադրուած ձևը կրկնէր, վասնզի Ներսէս որ այս երկրորդին նախագահն էր առաջինին ալ ապենապետն էր եղած, Կարապետ Իւթիւճեան հեղինակաւոր խմբագրապետը երկուքին ալ անգամ էր, միւսներն ալ միևնոյն խումբի պատկանող անձեր էին, այլ ընդհակառակն երկրորդ յանձնաժողովը բոլորովին նոր ձև մը, և բաւական կնճռոտ ձև մը կազմեց: Սոյն առաջարկին մէջ Էջմիածին և Կոստանդնուպոլիս երկու ազգային կեդրոններ կը ճանչցուին երկու կեդրոնները զատ զատ վիճակային ժողով գումարելով ընտրելեաց երկու ցուցակ պիտի պատրաստեն գաղտնի քուէարկութեամբ առանց որոշեալ թիւի: Ընտրելի ըլլալու պայմաններն են, Մայրաթոռոյ եպիսկոպոս ըլլալ և կաթողիկոսութեան յարմար հանգամանքներ ունենալ: Երկու կեդրոններուն կազմած ընտրելեաց ցանկերը փոխադարձաբար հաղորդուելով և իրարու միացուելով միակ ընտրելեաց ցանկի պիտի վերածուին, զոր երկու կեդրոնները իրենց վիճակներուն և միաբանութիւն ունեցող վանքերուն պիտի յղեն, որպէսզի պարունակած անուններէն մէկը իրենց կողմէն ընտրելի ցուցեն: Տաճկահայ վիճակներու մէջ այդ ընտրութիւնը պիտի կատարեն սահմանադրական գաւառական ժողովները, ռուսահայ վիճակներու մէջ պատուիրակաց ժողովները, և վանքերու մէջ տնօրէն խորհուրդները: Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռը և Էջմիածնի կաթողիկոսական աթոռը իբրև որոշ վիճակ պիտի նկատուին: Վիճակներու քուէներուն արժէքը իրենց հայաբնակութեան համեմատ պիտի հաշուուին, իւրաքանչիւր 10,000 անձի կամ կոտորակի քուէ մը յատկացնելով, այսինքն մինչև 10,000 անձի կամ կոտորակի մէկ քուէ, իսկ մինչև 20,000 բնակութիւն ունեցողի երկու, մինչև 30,000 անձի երեք, մինչև 40,000 անձի չորս, և ըստ այսմ յառաջանալով: Այդ հաշիւը պիտի ծառայէր բազմամարդ վիճակները քուէի հաշիւն մէջ շահեցնելու: Վիճակներէն եղոց քուէներ պիտի հաւաքուին և բացուին երկու կեդրոններու մէջ և պիտի առնուին առաջին եօթը աւելի քուէ ստացողներ, և եթէ եօթնէ պակաս անուն լինի ցուցակը պիտի լրացուի կեդրոններուն վիճակային ժողովներէ աւելի քուէ առնողներով. երկու

կեդրոններուն մէջ կազմուած եօթանուն ցուցակները Կ. Պոլսոյ Ընդհանուր ժողովին և Էջմիածնի վիճակային ժողովի մէջ նոր քուէարկութեան ենթարկուելով եռանուն ցանկի պիտի վերածուին, և երկու կեդրոններու եռանուն ցանկերը վերջնական ընտրելեաց ցանկը պիտի կազմեն: Անուններու թիւը այլ ևս որոշուած չէ զի միևնոյն անուն երկու կողմերէ ալ կրնայ ստացած ըլլալ, որով վերջնական ցանկը 3-է 6 անունով կազմուած կըլլայ: Վճռական ընտրութիւնը պիտի կատարուի Էջմիածնի մայր տաճարին մէջ ընտրելեաց վերջնական և փակեալ ցանկին վրայ, երկու կեդրոններէ ընտրուած երկու եկեղեցական և երկու աշխարհական չորսական պատգամաւորներէ, որոնց քուէները պիտի հաշուուին իւրաքանչիւր կողման վիճակային քուէներու թիւով, և իւրաքանչիւր կողմի պատգամաւորը իր կեդրոնէն ցուցուած երեքներէն մէկուն պիտի տայ իր քուէն և ոչ միևս կողմէն ցուցուած երեքներուն, բայց եթէ նոյն անունը երկու կողմերէ ալ ցուցուած ըլլայ: Քուէ-համարը անմիջապէս պիտի կատարուի, և աւելի քուէ ստացողը իսկոյն կաթողիկոս պիտի հռչակուի, և ընտրեալին անունը Ռուսիոյ և Թուրքիոյ և Պարսից կայսերուն և հայ հպատակ ունեցող ամէն տէրութեանց պիտի հաղորդուի (ՅՆՁ.108-109): Այդ ձևը ինչպէս կը տեսնուի, բոլորովին կամայական ստեղծագործութիւն մըն էր, և կերպով մը Պօլօժէնիէի հետևողութեամբ կազմուած էր, հետևապէս երեսփոխանութեան կողմէն շատ խժրժուեցաւ, և վերջապէս 1883 հոկտեմբեր 21-ին մերժուեցաւ և նորէն 1866-ին գործադրուած ձևը նախադասուեցաւ, այսինքն որ Ընդհանուր ժողովը կատարէ ընտրութիւնը յանուն բովանդակ տաճկահայ վիճակաց (83. ՓՆՁ. 1821): Այդ որոշման իբր փաստ սեպուեցաւ թէ այդ ձևը ռուսական կառավարութենէ ալ յարգուած և գործադրուած էր Գէորգի ընտրութեան առթիւ, վասնզի Ընդհանուր ժողովոյ կողմէ Գէորգ միակ ընտրելի կամ ընտրեալ ցուցուած էր, և նոյնը Էջմիածնի ընտրողական ժողովէն ընդունուած , և ռուսական կառավարութենէն հաստատուած էր (83. ՓՆՁ.1826): Ռուսական դեսպանատունը քանի մը անգամներ, պատրիարքարանի յայտնապէս ծանուցուած էր թէ իր կառավարութիւնը պօլօժէնիէի հաստատած ձևէն զատ ուրիշ ձև չի ճանչնար և չընդունիր, սակայն տաճկահայ երեսփոխութիւնը բնաւ կշիռ չէր տար այդ ազդարարութեանց, իբր զի ինքն Գէորգը ընտրած էր և Գէորգ ռուսական կառավարութենէ հաստատուած էր, ուրեմն իր ընտրութիւնը և ընտրութեան ձևը յարգուած էին, և կրկնուած ազդարարութիւններ աչքկապուկի խաղեր էին: Սակայն իրողութիւնը բոլորովին տարբեր էր. ռուսական կառավարութիւնը ոչ թէ համակերպած էր Տաճկահայոց կազմած ձևին, այլ Էջմիածնի ընտրողական ընդհանուր ժողովը իր քուէով հաստատած էր ինչ որ տաճկահայ երեսփոխանութիւնն էր ըրած, թէ համակերպելով անոր տեսութեանց և թէ համոզուած ըլլալով Գէորգի արժանաւորութեան: Ընտրութիւնն իր ոյժը առած էր Էջմիածնի ընտրողականին քուէէն և ոչ Կ. Պոլսոյ երեսփոխանութեան քուէէն, թէպէտ նոյն եղած էր երկու քուէարկութեանց ալ արդիւնքը (2760): Էջմիածնի միաքանութիւնը 30 ստորագրութիւն և 1884 փետրուար 1 թուական կրող յայտարարութեամբ մի այդ թիւրիմացութիւնը կը պարզէր, և իւրաքանչիւր վիճակի պատգամաւորներուն համապատասխան ընտրողական ժողովին ներկայանալու հարկը, և հակառակ գործունէութեան ռուսական կառավարութենէն անընդունելի ըլլալը կը բացատրէր, սակայն երեսփոխանութիւնը իր ուղղութիւնը չէր փոխեր, և անցեալին մէջ իր կարգադրութեան յարգուած լինելուն համոզուած կը մնար: Եթէ իրօք տաճկահայ երեսփոխանութիւնը անցեալ ընտրութեան իսկական պարագաները կանգիտանար, չենք կարծեր որ Ներսէս ալ անգիտանար քանի որ այն ատեն ատենապետ և պատգամաւոր էր եղած, և այս անգամ պատրիարք և նախագահ էր, բայց կերևի թէ նախադասած է լուել նոր խնդիրի առիթ չտալու համար, վստահ ըլլալով՝ թէ Էջմիածնի ընտրողականը այս անգամ ալ կը հիմակերպի և իր քուէով կիրականացնէ Տաճկահայոց փափաքը կամ որոշումը: Երեսփոխութիւնը մերժելով յանձնաժողովին ընտրութեան նոր ձևը, ծրագիրին

առաջին երկու մասերուն վրայ դիտողութիւններ չըրաւ, միայն ուլեց որ նոր խմբագրութիւն մը ըլլայ գրաբարով լեզուով, մինչ առաջինը աշխարհաբար էր խմբագրուած, ուստի կանոնագիրի նոր ծրագիր մը պատրաստուեցաւ դարձեալ երեք մասերով, առաջինը 8, երկրորդը 29 և երրորդը 3 յօդուածներով: Վերջին մասին մէջ ընտրութեան կերպը անորոշ թողուած էր, բաւական սեպելով ըսել, թէ կաթողիկոսը կընտրուի ձայնակցութեամբ համօրէն ազգին Հայոց. և թէ ազգին իւրաքանչիւր մասը վարի ըստ իւրոց ներքին ազգային օրինաց: Այդ ծրագիրը հաւնուեցաւ նոյեմբեր 25-ի նիստին մէջ և եկեղեցական համագումարի յղուեցաւ, որ եթէ կրօնականապէս դիտողութիւն ունի նշանակէ և դարձնէ: Նոյն նիստին մէջ կաթողիկոսական յանձնաժողովը ընտրութեան գործադիր յանձնաժողովի փոխուեցաւ և անդամոց թիւը 8-ի բարձրացաւ, և Մարկոս Աղաբէղեանի հրաժարելով մնացեալ հինգերուն վրայ (2890) աւելցան եկեղեցականներէն Սինմէն Սէֆէրեան եպիսկոպոս, և աշխարհականներէն Յովհաննէս Նուբեան և Յովհաննէս Թորոսեան (83.ՓՆԶ.1850): Համագումարը իր հաւանութիւնը տուաւ 1884 մարտ 11-ին, և երեսփոխանութիւնը վերջնականապէս ընդունեց կանոնական ծրագիրը և հաստատեց մարտ 23-ին (ՅՆԶ.110): Միւս կողմէն երեսփոխութիւնը պաղեցաւ Տաճկահայոց ներքին ազգային օրէնքը ճշդելու, և որչափ ալ 1866-ի ձևին վրայ պնդած էր, սակայն անոր մէջ ալ նոր փոփոխութիւն մուծեց: Այն անգամ Ընդհանուրը վերջնական մէկ անձի ընտրութիւն կատարած էր Կ. պոլսոյ համագումարին եօթնանունին ցանկին րայ, իսկ այս անգամ որոշուեցաւ բոլոր բացակայ առաջնորդներէն ալ քուէ ուլել և առնել, և համագումարի քուէներուն հետ հեշուելով եօթնանուն ցանկը կազմել, և այդ ցանկէն երեք անուն ընտրել Ընդհանուր ժողովոյ, և ինքն ալ իրենց ստացած քուէներու թիւով Էջմիածնի ընտրողական ներկայել, որ անոր մէջ ալ առած քուէները բարդուելով առաւելագոյն քուէ ստացողը կաթողիկոս ընտրուի և հռչակուի, և Ռուսիոյ կայսրութենէ ընդունուի և հաստատուի:

2892. ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ընտրութեանց ձևակերպութեանց հետ ընտրելի անձնաւորութեան խնդիրն ալ կը յուլուէր բովանդակ հայութեան մէջ, որ թերևս կարևորագոյն մասն էր ընտրողական գործողութեանց: Հայութիւնը բովանդակ, Տաճկաստան, Ռուսաստան, և ուրուրեք հայ կը գտնուէր միաձայն և միասիրտ Ներսէս Վարժապետեանի անունը կը հնչեցնէր, և անգամ մըն ալ կը կրկնէր այն համամտութիւնը որ ուրիշ Ներսէսի մը, Աշտարակեցիին անունին շուրջը յայտնուած էր 40 տարի առաջ (2569): Մէկ ձայն միայն կը դատուէր այդ միաձայնութենէն, և այն այլ ինքն Ներսէսի ձայնն էր, որ ինքզինքը անյարմար և անբաւական կը հռչակէր կաթողիկոսական բեռը բառնալու, հիմնուելով մանաւանդ ախտաւոր կացութեանը վրայ, չմոռնալով յիշել նաև իր կարողութեանը նուազութիւնը: Ներսէս առիթ չէր փախցնէր բանիւ և գրով, յայտագիրով և պաշտօնագիրով իր կանխապէկոյց հրաժարականը պնդել, քանի լսէր և կիմանար թէ նախապատրաստական գումարումներ, կէս պաշտօնական համախմբութիւններ, հրապարակագրական արտայայտութիւններ իր անունը կը կրկնեն իբր նախապատիւ արժանաւոր և իբր բացարձակ ընտրելի: Բայց կարծես հակառակ արդիւնք կու տային այդ հրաժարականները, և առիթ կընծայէին նորանոր ցոյցեր աւելցնելու: Իսկ հրաժարականները կը բաղդատուէին պատրիարքութենէ տուած հրաժարականներուն, զորս իր պաշտօնավարութեան միջոցին գրեթէ իւրաքանչիւր տարի կրկնած էր, բայց և պաշտօնէն չէր հեռացած, ժողովական պնդումներու կամ պարագայից պահանջներու և կամ բարձրագոյն հրամաններու առջև պիջանելով կաթողիկոսանալու ալ հարկաւ կը պիջանէր երբոր ընտրութիւնը լրանայ և հարկը ստիպէ: Իսկ Ներսէս իր կողմէն իբր յարմարագոյն ընտրելի կը ցուցնէր մակար Տէր Պետրոսեան եպիսկոպոսը, որ Բեսարաբիոյ առաջնորդ էր և

կաթողիկոսական տեղեկայության անցած էր (2886), և որուն խոհականության և պատկառելի անձնաւորութեան վրայ մեծ յարգ կը տածէր Ներսէս: Բաւական խօսուած անուն մըն ալ Մկրտիչ Խրիմեանն էր, որ լիովին ծանոթ է մեր ընթերցողներուն և հանրածանօթ էր հայութեան մէջ: Չորրորդ անուն մըն ալ ըԶմիւռնիոյ առաջնորդ Մելիքսեդեկ Մուրատեան եպիսկոպոսն էր, որուն ի նպաստ յառաջ կը բերուէր ուսումնականութեան համբաւը, առողջ և տոկուն կազմը, և մանաւանդ ուսական լեզուի և օրէնքներու հմտութիւնը: Ասոնց հետ կը յիշուէր նաև Յարութիւն Վեհապետեանի անունը, որ Կարնոյ առաջնորդութենէն հրաժարած Երուսաղէմի պատրիարքական փոխանորդութիւնը կը վարէր, բայց շատ պնդողներ չունէր (84. ԱՐՁ. 100): Սակայն բոլոր յիշուածներուն արժանիքէն անպայման գերազանց կը նկատուէր Ներսէս իբր պագային կեանքին գիտակ, պագային կացութեան վերանորոգիչ անկեղծ և պագասէր անձնաւորութիւն գործունեայ և նախաձեռնարկ, ուսեալ և լեռագէտ, և մանաւանդ եկեղեցական և քաղաքական գործոց փորձառու: Շատ ընդարձակ պիտի ըլլար մեր գրելիքը, եթէ ժամանակակից յիշատակարաններէն և լրագիրներէն յառաջ բերուած մանրամասնութիւնները քաղել ուզէինք, այլև մեր ընդհանուր տեսութեանց ոճէն հեռացած պիտի ըլլայինք, ուստի մտադիր պանց կընենք անոնց մէջ մտնել: Յիշենք միայն թէ երբ Ներսէսի անունը ընդհանուր կը հռչակուէր, պայն պարտելու և անոր արժանիքը նուազեցնելու աշխատողներ ալ կային, սովորական ընդդիմադիրները և անոնց հեռաւոր ձայնակիցները, սակայն լուրջ և իրական բան մը չէին կրնար առարկել (84. ԱՐՁ. 55), և Ներսէսի անունին շուրջը կազմուած համատութիւնը երթալով կաճէր: Կաթողիկոսական յանձնաժողովը որ ուսումնասիրող և ծրագրող մարմինէ գործադիր մարմին դարձած էր, պատրիարքի նախագահութեամբ ընտրական գործողութիւնները կը մղէր, և 1884 յունուար 1-էն բոլոր առաջնորդներուն շրջաբերական էր ցրուած իրենց քուէն յղելու (84. ԱՐՁ. 69), և նոյն թուականով Մակար տեղապահին ալ հաղորդած էր, աւելցնելով միանգամայն թէ Կ, Պոլսոյ ծրագրած եղանակը արդէն իսկ ընկալեալ է ի պետութենէ անտի Ռուսաց առանց դիտողութեան իրիք (84. ԱՐՁ. 114), իսկ որ ուղիղ չէր, ինչպէս բացատրեցինք (2891), և որուն պատասխանն է միաբանութեան փետրուար 1-ի գրութիւնը (84. ԱՐՁ. 124): Սակայն Կ. Պոլսոյ պատրիարքարանը իր որոշուած ճամբով յառաջեց, և մարտ 12-ին Մեծ պահոց երկուշաբթին եկեղեցական համագումարը հրաւիրուեցաւ ընտրելեաց եօթնանուն ցանկը քուէարկելու: Յիշեալ օրը ժողովը Մայրեկեղեցոյ մէջ բացուեցաւ մեծ հանդիսութեամբ և շարականներով, Եսայի պատրիարք կը խուսափէր, Գրիգորիս Ալէաթճեան եպիսկոպոս կատենապետներ ժողովին, որին ներկայ էին 1 պատրիարք, և 13 եպիսկոպոս, 16 վարդապետ և 27 աւագերէցներ, ընդամէնը 57 ժողովական, որոնց մէջ կը գտնուէին Կ. Պոլիս գտնուող և յատկապէս եկող առաջնորդներ. 10 հոգի Կ. Պոլսոյ մէջէն նամակով յղած էին, և 29 քուէ ալ բացակայ առաջնորդներէ և եպիսկոպոսներէ և վանահայրերէ եկած էր, ընդամէնը 96 քուէ, Աղթամարի և Երուսաղէմի աթոռներէն եկածներն ալ մէջը, իսկ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը մերժած էր մասնակցիլ, և միայն 20 քուէներ կը պակսէին 116 հրաւիրագիրներէն: Քանի մը ճառեր խօսուեցան ընտրութեան կարևորութիւնն ու նշանակութիւնը բացատրող սովորական խոսքերով, քուէարկութիւնը լրացաւ, քուէհամարի համար եօթը վարդապետներ որոշուեցան Օրմանեանի գլխաւորութեամբ, և դիւանադպիր Խորէն քահանայ Փէհլիանեանի գոծակցութեամբ, և կաթողիկոսական յանձնաժողովոյ մասնակցութեամբ: Քուէհամարի արդիւնք միայն երեք ընտրելիներ տուաւ բացարձակ առաւելութեամբ, այսինքն Ներսէս 63, Մակար 53 և Մելիքսեդեկ 51 քուէով: Մեծ բազմութիւն մը իբր 2, 000 հոգիներու խոնուած էր Մայրեկեղեցոյ մէջ որ մեծադղորդ ծափերով և կեցցէներով ողջունեց առաջին հռչակուած Ներսէսի անունը: Միայն երեքին բացարձակ քուէ ստանալը և միւսներուն ետև մնալը

հետևանք էր Ներսէսի ընտրելիութեան աշխատողներուն ճարտար դարձուածին այսինքն լոկ քանի մը անուն գրելով գոհանալուն, որով երկրորդական և աննշանակ անուններ քուէ չէին ունենար, մինչև կրնային ունեցաւ ըլլալ եթէ եօթը թիւը լրացնելու համար թարմատար անուններ աւելցուէին: Եթէ 96 քուէներ եօթնական անուն ունենային 672 քուէ պիտի ըլլար, մինչև 7-է մինչև 1 անուն պարունակող տոմսերը հաշիւի առնելով միայն 514 քուէ տրուած էր, որոնց 167 քուէն կը պատկանէր երեք բացարձակ ընտրելիներուն, և 257 անոնց հետևող ութերուն, որոնք համեմատականի պիտի մնային, իսկ 90 քուէներ գազաններու վրայ ցրուած էին (84.ԱՐԼ.59): Եօթնանուն ցանկը լրացնելու համար միւս երկուշաբթի մարտ 19-ին երկրորդ գումարում եղաւ, և համաձայնութիւն գոյացաւ առանց համեմատականի քուէարկութեան մերձաւորումները ընդունիլ, և ցանկին անցան Իվմիրլեան 48, Եսայի պատրիարք 39, և Խրիմեան 38 քուէով, իսկ եօթներորդ համար Յարութիւն Վեհապետեան և Խորէն Աշըգեան առնուեցաւ: Մնացեալ երեքներն էին Արիստակէս Սեդրաքեան 25, Խորէն Մխիթարեան 20, և Խորէն Նարպէյ 17 քուէով: Երկրորդ ժողովը փակուեցաւ եօթնանուն ցանկը Ընդհանուր ժողովոյ ներկայացնելու որոշմամբ (84.ԱԼՐ.65), որ իր քուէարկութիւնը կատարեց ապրիլ 2-ին աւագ երկուշաբթի օր, և 101 ներկայ քուէներէն Ներսէս ստացաւ 62, Խրիմեան 50 և Մեքլիսեդ 42 քուէ (48.ԱՐԶ.201): Եկեղեցական համագումարը յարգելով Ռուսահայոց պատիւը, և Ներսէսի թելադրութիւնը երկրորդ տեղը Մակարին էր տուած, իսկ երեսփոխանութիւնը ժողովրդական խաւերու անսալով Մակարը դուրս էր թողած, և երկրորդ տեղը Խրիմեանի տուած: Ներսէսի նախադասուիլը ընդհանուր փափաքը լրացուցած էր, զի համագումարն ալ բացարձակապէս մերժած էին Ներսէսի իրենց ուղղած կրկին և կրկին հրաժարականները:

2893. ՆԵՐՍԷՍ ԸՆՏՐԵԱԼ

Տաճկահայոց Ընդհանուր ժողովը այս անգամ 130 ձայներու վօրութեամբ միակ ընտրեալ մը չէր առաջարկներ, այլ կը հաւանէր որ երեք ընտրելիներու ստացած քուէներուն վրայ Էջմիածնի մէջ ստանալիք քուէները գումարուելով, երեքի մէջէն առաւելագոյն ստացողը ընտրեալ հռչակուի, որով հնար էր որ իր առաջին ընտրեալն իսկ ետև մնար: Իրենց այդ որոշումը Էջմիածին հաղորդելու համար պատգամաւոր յղելու խնդիրն ալ ծեծուելով և փոփոխուելով, վերջապէս յատուկ անձ չյղելու և գիրով Մակար տեղապահը պատուիրակ և ներկայացուցիչ անուանելու միտքը վօրացաւ, և ըստ այնմ ալ գործադրուեցաւ: Էջմիածնի համապագային ընտրողութիւնը բացուեցաւ մայիս 7-ին 32 ժողովականաց ներկայութեամբ յաջորդ օրը չորս ընտրելիներ պատուեցան, և 9-ին ընտրութիւնը լրացաւ, և Տաճկահայոց երեք ընտրելիներ ստացան Ներսէս 27, Մեքլիսեդ 19, և Խրիմեան 13 քուէ, որով ասոնց առաջին երկուքը իբր վերջնական ընտրելի կամ ընտրեալ նկատուեցան կայսերական որոշման ենթարկուելու համար (84.ԱՐԼ.107) պինդ բռնելով պօլօթէնիէի կանոնը, որ միայն ներկաներու քուէները կընդունի, և արդէն ալ յայտարարուած էր կառավարութեան ներկայացուցիչ մեծ պրօկուրօր Մեհրապովի կողմէն: Մակար տեղակալ որ Տաճկահայոց միակ ներկայացուցիչն էր յատուկ քուէ չտուաւ, բայց չկրնալով Տաճկահայոց երեսփոխանութեան որոշումը պօլօթէնիէի օրէնքին նախադասել տալ, իր բոլոր ազդեցութիւնն և ոյժը գործածեց, գործողութիւնը Տաճկահայոց ընտրելիներու վրայ ամփոփելու, և ինքն բացարձակապէս ընտրելիութենէ հրաժարեցաւ գործին խանգարում չբերելու համար, և Ներսէսի տուած հրաժարականը անընդունելի հռչակեց: Մակարի բռնած այս ընթացքը իրաւամբ գնահատուեցաւ չի գուցէ ուրիշ մը կամ ուրիշ ընթացք մը կրնար բոլորովին ազգավնաս ելք մը տալ խնդրոյն (84.ԱՐԼ.107): Լեւոնաբար մայիս 8-ի ընտրելեաց քուէարկութեանը մէջ միաձայն հաւանութեամբ ընդունուեցան Տակճահայոց երեք ընտրելիները իրենց կարգով, և չորրորդ

աւելցուեցաւ Եսայի պատրիարքի ի պատիւ իր աթոռին: Այս կերպով դարձեալ Տաճկահայոց կամքը իրագործուեցաւ Էջմիածնի ժողովականներուն համաձայնելով և ոչ իրենց ընտրական որոշման պօրութեամբը: Բայց Տաճկահայեր ընդհանրապէս գոհ մնացին արդիւնքէն որ իրենց ուլածն էր, առանց կերպին վրայ անդրադառնալու: Միայն ոմանց և գլխաւորապէս Վանեցիներու կողմէ իբր 7.500 ստորագրութեանց ներկայացուցիչ 8 անձերու ստորագրութեամբ (84. ԱՏՆ. 43-46) դիտողութիւն եղաւ, որ Տաճկահայոց կողմէ Խրիմեան 50 և Մելիքսեդեկ 42 քուէ ստացած ըլլալով, եթէ Էջմիածնի մէջ ստացած 13 և 19 քուէները գումարուին Խրիմեան 63, և Մելիքսեդ 61 քուէ ստացած կըլլան, և երկրորդ ընտրելին Խրիմեան և ոչ Մելիքսեդ պէտք էր նկատուէր (84. ԱՏՆ.45), և այս տեսութեամբ Մակար եպիսկոպոսի պատուիրակութիւնը անգոհացուցիչ և մեղադրելի կը դատուէր, մինչ կայթողիկոսական յանձնաժողովը գոհունակութիւն յայտնելով Ընդհանուր ժողովոյն կողմէ շնորհակալեաց արտայայտութիւն կը յանձնարարէր (84. ԱՏՆ. 48), և խնդիրը կը փակուէր լիագոյն տեղեկութիւններ ստանալու որոշումով (84. ԱՏՆ. 51): Բայց միշտ աչքէ վրիպեցնելու չէ այդ դիտողութիւններն ընողներ միշտ Տաճկահայոց որոշումներուն ռուսական կառավարութենէ յարգւած ըլլալուն թիւրիմացութեամբը կօթօրուէին, և Էջմիածնի ընտրողական համակերպութենէն կը խաբուէին: Միւս կողմէն Ներսէսի առաջին ընտրեալն ըլլալը, և երկրորդին քուէներուն վրայ նշանաւոր տարբերութիւն ունենալը, և Ռուսիոյ կառավարութեան միշտ առաջին ընտրելին հաստատած ըլլալը, և Ներսէսի հանդէպ ռուսական կայսրութեան համակիր վերաբերումը, կատարեալ վստահութիւն կապղէին անոր պաշտօնապէս հաստատուելուն, և արդէն Ներսէս վեցերորդ կոչմամբ կողջունուէր Վարժապետեանը: Շնորհաւորական հեռագիրներ ամէն կողմէ, մօտէն և հեռուէն, Թուրքիայէն և արտասահմանէն հեղեղաբար կը տեղային Ներսէսի բնակարանը, կայսերական շնորհիւ ստացած Օրթաքէօյ արուարձանի Թաշվէրտիվէն փողոցի ընդարձակ տունը, ուր փոխադրուած էր ապրիլ 23-ին (84.ԱՐԼ.94), որ է ըսել ապրիլ 2-ի Տաճկահայոց ընտրութենէն քիչ ետքը, և մայիս 9-ի Էջմիածնի ընտրութենէն քիչ առաջ: Այցելուներ անընդհատ կը շարունակէին, խնդրանք, աղաչանք, թախանձանք ամենէն և ամէն կողմէ կը կրկնուէին, բայց Ներսէս անդրդուելի էր իր հրաժարականին վրայ, և անմիջապէս նորէն հեռագրած էր Մակար տեղապահին, որպէսպի ժողովը չցրուած նոր ընտրութիւն ընել տայ, սակայն նա 11-ին կը պատասխանէր Ներսէսի, թէ ժողովը լուծուած էր, և անդամք մեկնած էին երբ ստացայ ձեր հեռագիրը (84.ԱՐԼ.109): Ներսէս կը փութար ուղղակի Ռուսաց կայսեր ալ հեռագրել իր հրաժարականը, որուն պատասխանը մայիս24-ին կը բերէր ռուսական դեսպանատան խորհրդականը, թէ կայսրը բացարձակապէս մերժած է անոր հրաժարականը (84.ԱՐԼ.113), և նոյն ինքն դեսպանն ալ անձամբ գալով հրաժարականի վրայ չպնդելը կը խնդրէր, և թէ կայսրը մտադիր է հաստատել, և կը փափաքի որ հրաժարականի խօսք չըլլայ. սակայն Ներսէս ոչ մի կերպով կը պիջանէր և միշտ իր հրաժարականը կը պնդէր: Ներսէսի յառաջ բերած պատճառներուն գլխաւորը և վճռականը իր խախտուած առողջութիւնն էր, բայց բերանացի պրոյցները իբր պատճառ կը ցուցնէին նաև պօլօժէնիէի խնդիրը, ապգին պահանջները և գոհացնել չկրնալը և հակառակորդ խումբին պատրաստած դժուարութիւնները (84.ԱՐԵ.398): Ներսէսի միտքին վրայ ազդելու համար եկեղեցական անձ մը ուժգին և զոգ պատգամախօսական ռճով ընդարձակ նամակ մը կը հրատարակէր, և աստուածային կամքին հնապանդելու պարտքը կը յիշեցնէր, և համարձակ կեցրակացնէր. եթէ եկեղեցւոյ ծառայութենէ դուրս ձեզ հանգիստ և դիւրութիւն գտնել կը կարծէք, կամ թէ յօժարակամ ընկալեալ լուծը, ոչ անդ և ոչ այնպէս կը ձգտինք վարել, ուր և որպէս երկնաւոր ուղղիչին կամքը կառաջնորդէ, ոչ եկեղեցին և ոչ եկեղեցւոյ գլուխը չեն ներեր ձեզ այն հանգիստը, և չխնայեր ի ձեզ Տէր, երբ դուք չէք խնայեր նորա եկեղեցւոյն (84.ԱՐԼ.102): Նամակը

անանուն հրատարակուած էր, բայց Օրմանեան իր ստորագրութեամբ և անձամբ յանձնած էր վայն Ներսէսի ձեռքը: Ամէն կերպեր գործածուեցան և ամէն միջնորդներ միջոցներ ձեռք առնուեցան, բայց անհնար եղաւ Ներսէսը իր անդորուելի կամքէն ետ կեցնել: Նա յայտնապէս իր կեանքին մօտալուտ վախճանը կը խօսէր, և քանի մը օրուան համար տեղափոխուիլը և ապագային նոր տագնապ ստեղծելը անխորհուրդ կը գտնէր, և նոյն իսկ ուղևորութիւնը կատարելու ինքն անկարող էր պար: Իրօք ալ թէպէտ մերթընդմերթ ինքինքեան բուռն ճիգ ընելով կարևոր գործերու և այցելութիւններու կը պաղէր, բայց օր ըստ օրէ կը ծանրանար իր առողջական վիճակը, տունէն ելնել չկրնալու (384.ԱՐԼ.163), և օրական ծանուցագիրներու պէտք տեսնելու չափ (84.ԱՐԼ.169), և մինչև իսկ անկողին իյնալու պարտաւորուելով, զի քաղցրամիլութեան պայրանալովը՝ բնասպիտը սիրտին վրայ ներգործելու կը սկսէր (84.ԱՐԼ.175), և հիւանդութիւնը օրէ օր վտանգաւոր կը դառնար (84.ԱՐԼ.192): Միւս կողմէն յուլիսի սկիզբները սկսաւ լսուիլ թէ Ռուսիոյ կայսրը ընդունած է կամ պիտի ընդունի Ներսէսի հրաժարականը (84.ԱՐԼ.155), և այս մասին կերպերապ խորհրդածութիւններ ալ սկսան խօսքի և գիրի նիւթ ըլլալ (84.ԱՐԼ.161):

2894. ՆԵՐՍԷՍ ՀՐԱԺԱՐԵԱԼ

Մայիս 9-ի ընտրութենէն գրեթէ չորս ամիս անցեր էր, և կաթողիկոսական գահուն պարապութիւնը կը շարունակէր տատամոտ անստուգութեան մէջ Ռուսիոյ կայսեր որոշումը կը յապաղէր, անշուշտ Ներսէսի դժկամութիւնը յաղթելու ակնկալութեամբ, և հիւանդութեան ելքը տեսնելու դիտաւորութեամբ, որ դժբախտաբար օրըստօրէ յուսաբէկութեան կերպարան կը պզգնուր: Վերջապէս օգոստոս 27-ին Պետրբուրգի մէջ կը հրատարակուէր, և սեպտեմբեր 3-ին Կ. Պոլսոյ մէջ թղթակցութեան միջոցով կիմացուէր, թէ կայսրը հիմնուելով Ներսէսի բացարձակ հրաժարելուն, և այս պատճառով երկու ընտրելիներ առաջարկելու կանոնին եղծուելուն վրայ, մայիս 8 և 9 օրերը կատարուած ընտրութիւնը անհետևանք կը հռչակէ, և Էջմիածնի սինոդին կը հրամայէ նոր ընտրութիւն կատարել: Առաջին ընտրելին պակսած ատեն երկրորդին ընտրուելիք շատերէն օրինաւոր և հաւանական կը կարծուէր, բայց այդ պարագայն ալ հեռացնելու համար պետական պաշտօնագիրը քանի մը թերութիւններ նկատած էր ընտրական գործողութեանց մէջ 1. Միաբանութեան ներկայացուցիչները աւանդագոյններէն առնուելու տեղ կրտսերագոյններէն առնուեր են. 2. Պարսկաստանի ներկայացուցիչը մեծամասնութեան ընտրեալը չէ եղեր. 3. Վանեցւոց գրութիւնները նկատի չեն առնուեր: Բայց նոյն իսկ պաշտօնագիրը ասոնց ծանրակշռութիւնը կը նուազեցնէր երբ ընտրութեան հետևանք չտալու համար գլխաւորապէս Ներսէս պատրիարքի Ներկայացուցած հրաժարականի վրայ կը պնդէր (84. ԱՐԼ. 202): Սակայն երկրորդ ընտրելին Մելիքսեդեկը չընդունելու համար յիշել պատճառներէն վատ ուրիշներքին պատճառ մըն ալ կը խօսուէր, և այս ալ ճիշդ այն պարագայն էր, որ ոմանց կարծիքով անոր վրայ առաւելութիւն նկատուած էր, այսինքն ռուսական լեզուին և օրինաց հմուտ (2892), և նոյն իսկ ռուսաստանցի ըլլալը: Իբր զի նա պետական կանոններու դէմ գործած էր առանց իր կառավարութեան գիտակցութեան և հաւանութեան անցնելովը, և կառավարութիւնը եթէ վայն չէր հալածէր, չէր ալ կրնար իր որոշմամբ արդարացնել և վարձատրել: Այդ դժուարութիւնը կանուխէն ալ յարուցուած էր անոր եպիսկոպոսութեան համար Էջմիածին երթալուն առթիւ, և միայն Ներսէս պատրիարքի և ռուսական դեսպանի միջև տիրող մտերմութեան պօրութեամբ, իբր բնիկ Տաճկաստանցի Մելիքսեդեկ վարդապետ մը ներկայացած և գնացած էր, անգիտանալով կամ անգիտակ ձևացնելով թէ նոյն ինքն Ռուսաստանցի Գարեգին Մուրատեանն էր նա, որ հակառակ օրինական ձևակերպութեանց իր հպատակութիւնը փոխած և պետական օրինաց պանցառու գտնուած էր: Այսպէս թէ այնպէս կաթողիկոսական աթոռը 20 ամիսներէ ի վեր թափուր մնալէ

ետքը երկրորդ անգամ թափուր կը հռչակուէր (84. ԱՐՁ. 501), և ընտրողական ժողովը փակուած և ցրուած ըլլալուն, հարկ կը ծագէր նորէնոր ընտրողական ձևակերպութեանց և պատրաստութեանց սկսիլ, որոնց մենք ալ պիտի վերադառնանք սոյն միջոցին կատարուած մտադրութեան արժանի եղելութիւններ քաղելէ ետքը:

2895. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՔ

Այս ժամանակամիջոցին մէջ որ ընտրողական գործողութիւնը բուռն հետապնդութեամբ կը կատարուէին ուրիշ խնդիրն ալ պակաս չէին Կ. Պոլսւյ մէջ, որոնք որչափ և ուշագրաւ և ազգային կեանքին հետ կապակցած ըլլային, համառօտ յիշատակգրութիւններով քաղել, և ամփոփել բաւական պէտք է սեպուի: Առաջին կարգին մէջ դնենք Մկրտիչ Քէֆսիպեան Կիլիկիոյ կաթողիկոսին մեղադրելի ընթացքը, որուն նախընթացներ ընդարձակօրէն պատմած ենք (2858-2861). իսկ Կիլիկիա դառնալէն ետքը աւելի համարձակօրէն իր աղիկամի ընթացքին մէջ կը յառաջէր: Նենգամիտ ճամբաներով ձեռք ձգած հրովարտակը, որով իբրև թէ Կ. Պոլսոյ պատրիարքութենէն անկախ կապահովուէր, և իբրև թէ նոր և անջատ հայ ազգութիւն մը կը կազմէր, ոչ միայն ետ չէր դարձներ, այլ կառավարութեան առջև Կ. Պոլսոյ պատրիարքին պահանջները իբր ռուսական ազդեցութեան տարածուելուն և Վօրանալուն ձեռնտուութիւն ներկայելով պետական պաշտպանութիւն կը հայթհայթէր: Իր բռնական ընթացքը Կիլիկեցի համայնքին վրայ, դրամ դիպելու համար գործածած կեղեքիչ միջոցները, առանց քաշուելու կատարեալ առևտրականի քան թէ կաթողիկոսի վայել ձեռնարկները, աթոռը լքեալ և ժողովուրդը անխնամ թողլով՝ շահ ետևէն թափառիլը, ազգավաս և մինչև ազգադաւ միջոցները, բոլոր իր ժողովուրդն ալ Վօրուցուցած էր, որ թախանձանօք անոր դէմ պաշտպանութիւն կը խնդրէր կեդրոնէն, բայց սա խիստ միջոցներէ կը Վօրուշանար, վախենալով որ մի գուցէ բացարձակ հերձուածի առիթ տուած ըլլայ, կամ պետական գայթակղութիւն մը ծագի. միանգամայն վարանոտ էր իր ձեռնհասութեան չափին վրայ, զի թէպէտ կաթողիկոս մը հաստատելու իրաւունք գործածած էր, բայց կաթողիկոս մը պաշտօնանկելու, կամ եկեղեցականապէս պատժելու իրաւասութիւն ունենալուն վրայ կերկարէր: Խնդիրը երբեմն վարչութեան սեղանին և երբեմն երեսփոխանութեան առջև կելլար, բայց միշտ առանց որոշման կը փակուէր, և Ներսէս ինքն ալ ծայրայեղ միջոցներու չէր դիմեր և կառավարութեան ձեռով հրովարտակին յետս կոչուիլը կը յուսար յաջողցնել, ինչպէս որ եպարքոսը կը յուսադրէր, բայց նախարարութիւնը Քէֆսիպեանը կը քաջալերէր (84.ԱՐՁ.157-160): Ուրիշ տագնապալի խնդիր մըն ալ որ Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը կը վբաղեցնէր, Երուսաղէմի պարտուց բարձման գործն էր, որ տակաւին կը շարունակէր ինչպէս պատմած ենք (2887), և հապիւ Ներսէսի կաթողիկոսութեան ընտրութենէն ամիսի մը չափ ետքը կառավարութեան հրամանը կը ստացուէր, երբ միւս կողմէ Ներսէսի կաթողիկոսութենէ հրաժարելուն խնդիրն ալ կը յուզուէր, և գործը հապիւ յաջորդ պատրիարքին օրովը կը կարգադրուէր (2876-2878): Կարնոյ բանտարկելոց խնդիրն ալ սոյն այս միջոցին տեղի կունենար, և յունիս 6-ին կը ստացուէր ներման պաշտօնագիրը (84.ԱՐԼ.130), Երուսաղէմի գործին հետ միևնոյն օրը, ինչպէս որ այդ նեղութեան ալ պարագաները արդէն տուած ենք (2888): Օրմանեան ալ տակաւին Կ. Պոլիս կը մնար, նախ բանտարկելոց և յետոյ Ներսէսի գործերով վբաղած, որուն համար բանիւ և գիրով աշխատած ըլլալը յիշած, և իր Կարին դառնալն ալ պատմած ենք (2888): Այս իրողութեանց ժամանակ Ներսէսի հիւանդութիւնը տակաւ կը ծանրանար, բայց նա իր կարողութեան ներածին չափ գործերու մղում տալէ ետ չէր մնար, կը բաղձար և կաշխատէր հայկական բարենորոգմանց խնդիրն ալ յաջող ելքի մը յանգեցնել, և կայսեր կողմէ վկայուած բարեկամութեան նշանները իրական արդիւնքի վերածել, սակայն հակառակ իր ջանքերուն գործը

պգալի փոփոխութիւն մը չէր ստանար: Անձնական դիմումներու աշխատութիւնը կը պարտաւորուէր յանձնակատարներու ձեռամբ ալ լրացնել, և համակրական և խոստմնադիր վերաբերումներու լուրերով կը սփոփուէր, բայց դժբախտաբար իրական յաջողութեան միխթարանքը չէր ունենար: Տիրող վարանոտ կացութեան հետևանօք գաւառներու գործերն ալ լքուած կացութիւն մը առած էին, առաջնորդներ կը պակասէին, բայց վիճակներ անառաջնորդ մնալու հոգ չէին ըներ, և ընտրութեան դժուարութիւններն ալ տեղի կուսնային: Խառն ժողովը 1884 յունիս 20-ին կառաջարկէր իբրև բացառիկ տնօրէնութիւն պատրիարքարանի կողմէ առաջնորդներ կանգնել (84.Ա.ՏՆ.231), սակայն նախաձեռնութեան դիւանը համամիտ չէր գտնուած (84.Ա.ՏՆ.232), Ընդհանուր ժողովին մէջ ալ նոր ծրագիր կառաջարկուէր մեղմացուցիչ պայմաններով (84.Ա.ՏՆ.236 և 294) և վերջապէս կորոշուէր որ նախապէս անառաջնորդ վիճակներու ցանկը և առաջնորդ չընտրուելուն պատճառը, և ըստ այնմ արտօնուի խառն ժողովը բացառիկ տնօրէնութիւն ընել (84.Ա.ՏՆ.301): Շատոնց ի վեր ազգին մէջ կը խօսուէր թաղական վարժարաններէ աւելի բարձր վարժարան մը ունենալ, ուր թաղականներու շրջանաւարտներ կարենան ազգային լեզուով և ազգային գրութեամբ բարձրագոյն ուսում ստանայ, և այդ հաստատութեան Կեդրոնական անունն ալ յատկացուաց էր, Ներսէս իր պատրիարքութեան ատեն մշակեց այդ գաղափարը, վայն Ղալաթիոյ մէջ հաստատելու, և նորաշէն վարժարանը անոր յատկացնելու, և Լուսաւորչի եկեղեցւոյն և Փրկչական ուխտատեղւոյն հասոյթները և կալուածական եկամուտները նոյն հաստատութեան սեփականելու կէտերը հետզհետէ որոշման ներքև առնուեցան: Աւելի մեծ խնդիրը կեդրոնական վարժարանին ծրագիրին և նպատակին և բնութեան մասին յուզուեցաւ: Ներսէս մինչև իսկ տունէն ելնելէ արգիլուած ատեն տունին մէջ հաւաքեց այդ խնդիրով պաղող ժողովներն ու յանձնաժողովները, և գործին մղում տալու ամէն միջոցները գործածեց, թէպէտ լրացած տեսնելու միխթարութիւնը չունեցաւ. այսուհանդերձ Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանը իբր Ներսէսի ձեռնարկ նկատուեցաւ և անոր անունին յիշատակարան ընդունուեցաւ (84.Ա.ՐԼ.248):

2896. ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ներսէսի պատրիարքութեան ժամանակի մտադրութեան արժանի գործերէն մէկն ալ ազգային հիւանդանոցի բարեկարգութիւնն էր: Հիւանդանոցի հիմնարկութիւնը և նախնական պարագաները պատմած ենք (2501), բայց իբրև ազգային հաստատութեանց կարևորագոյնը արժանի է որ յաջորդ դէպքերն ալ քաղենք, զորս ցարդ ստիպուեցանք աչքէ վրիպեցնել յուզիչ խնդիրներու պատճառով: Սահմանադրութեան հաստատուելուն օրէն սկսելով ծանր իրողութիւն դարձաւ պատրիարքարանի դրամական մատակարարութիւնը, զի ունևոր և նպաստող ամիրայք գործէ ձեռք բաշեցին, և սահմանադրական ազգայինք դրամական զոհողութեանց թէ անկար և թէ անկամ էին: Երեք սնտուկներ կային մատակարարուելիք, պատրիարքարանինը և հիւանդանոցի և տնանկ աղքատացը: Վերջին երկուքը միացած էին արդէն, երբ Պօղոս Թաքթաբեանի պատրիարքութեան օրով կարօտ և անխնամ կացութիւնը ևսբանվա կը ճնշէր, և 1867-ին խորհուեցաւ երեք սնտուկներու միացմամբ 14 հոգիներէ հոգաբարձութիւն մը կազմել, և մայիս 16-ին կանոնագիր մը, և 27-ին ընդարձակ հրահանգ անոնց (ՔԷՉ. 176-183): Ասոնց գործի ձեռնարկելուն սկիզբը հիւանդանոց այցելութենէն ետքը այն գաղափարը կազմեցին, թէ ազգին թշուառները այդ տեղ վրկելէն աւելի աղէկ է ոտքերնին քար մը կապած Գըզգուլէսիի հոսանքին մէջ նետել (ՔԷՉ. 184): Սակայն յիսնօրեայ եղաւ իրենց պաշտօնավարութիւնը, մայիս 15-էն յունիս 30 (ՔԷՉ. 186), զի անդամներէն երկուքը, որ աւելի գործունեայ դեր կը վարէին, Կարապետ Փանոսեան խմբագրապետ և Կարապետ Գալուստեան բժշկապետ, հոգաբարձութեան լոկ

հսկողութիւնը բաւական սեպելով, բռանդակ գործունէութիւնը վրանին առնել առաջարկեցին. հոգաբարձութիւնը համակերպեցաւ և քաշուեցաւ, Պօղոս պատրիարք ալ հաստատեց յուլիս 13-ի պաշտօնագիրով (ՔԷՉ. 187), և պահ մը գործերը փայլուն սկզբնաւորութիւն ունեցան, և քանի մը իսկապէս գնահատելի բարուքումներ կատարուեցան (ՔԷՉ. 189): Փանոսեան յաջողութենէ չլացեալ կամ թէ տաղտկացեալ, չենք գիտեր, երեք ամիս ետքը հոկտեմբերին Եւրոպա մեկնեցաւ, այնտեղի ազգայիններէ նպաստ հաւաքելու նպատակով և ամսօրեայ պայմանաժամով, բայց Փարիզի տիեզերական արուեստահանդէսին ատենն էր, և երեք ամիսներ անցնելէն ետքն ալ չէր դարձած: Ամէն կողմէ գանգատներ սկսած էին, գործը կը կաղային, գալուստեան մինակ մնացած անբաւական էր եղած, ձախող մեկնութիւններ կը տրուէին Փանոսեանի մասին, մանաւանդ երբ լսուեցաւ որ Գալուստեանի գրած էր, եթէ շատ նեղէն վքեպ փութացուր հրաժարականդ (ՔԷՉ. 195): փանոսեան երբոր 1868 յունուարի սկիզբը դարձաւ ամենայն ինչ ձախող և անբաւարար գտաւ, Կի իր վրայէն ազգային վստահութիւնը վերցուած էր և նպատներ ու օգնութիւններ դադարած էին, որով փետրուարի սկիզբը Փանոսեան և Գալուստեան գործէ քաշուեցան Բարեկենդանի օրերը, յետին խեղճութեան մէջ թողլով հիւանդանոցը, նոյն իսկ հացի և լոյսի պակասութեան մէջ, Փանոսեան մատակարարութիւնը գործին շատ ընդարձակութիւն էր տուած, պատասպարելոց թիւը իբր 400 էր եղած, որոնց համար 98 ամսականաւոր պաշտօնեաներ և սպասաւորներ կը պահուէին (ՔԷՉ. 93): Իսկ երբ Փանոսեանի քաշուելովը Բարունակ Ֆէրուհիան բժշկապետ առժամեայ վերատեսուչ անուանեցաւ, անմիջապէս 1868 փետրուար 4-ի ձմեռային օրուան մէջ պատասպարեալներէ 121 և սպասաւորներէն բաւական հոգիներ դուրս հանուեցան, որ նոր ցաւալի երևոյթներ յառաջ բերաւ (ՔԷՉ. 194), բայց հիւանդանոցի պատասպարեալները 282-ի և սպասաւորները 40-ի վերածուեցան (ՔԷՉ. 195): Փետրուարը ամենախեղճ կերպով անցաւ, մինչև որ մարտի սկիզբը Սենեքերիմ Մանուկեան, Մկրտիչ Աղաթոնեան, և Խաչիկ Ալեանադեան յանձնառու եղան հոգաբարձութիւնը ստանձնել, որոնց հովանաւոր էր Սերվիշէն ատենապետ վարչութեան և մօտէն ալ հիւանդանոցի կարգադրութիւններով կը վբաղէր: Փանոսեան մարտ 17-ին հաշուեկշիռ մը հրատարակեց, որուն դէմնոր հոգաբարձութիւնը կը բողոքէր մարտ 30-ին, Ընդհանուր ժողովէ որոշուած քննիչ յանձնաժողովը կը տեղեկագրէր թէ Փանոսեան մատակարարը 128, 392 պարտք թողած է, որ իբր ազգային պարտք կրնայ ընդունուիլ, և ժողովն ալ օգոստոս 29-ին այդ կերպով խնդիրը փակեց (ՔԷՉ.198-200): Խրիմեանի պատրիարքութեան օրով Սենեքերիմ Մանուկեան հոգաբարձութիւնը կրցաւ հիւանդանոցի վիճակը առջև տանիլ, թէ ոչ նշանաւոր բարուքումներով, գոնէ գոհացուցիչ ընթացքով մը մինչև անոր հրաժարականը 1874 յուլիսին, սակայն օգոստոսին դարձեալ Սենեքերիմ Մանուկեան հոգաբարձութիւնը նորոգուեցաւ նոր կազմութեամբ (ՔԷՉ.224), որ մինչև 1878 գործեց, և միայն վերջին միջոցին խնդիրի և խօսքի նիւթ եղան իր պաշտօնեաներէն ոմանց գործած վեղճումները: Սենեքերիմ Մանուկեան գործէ քաշուեցաւ ինը տարի շարունակ հիւանդանոցի համար խիղճով և արդիւնքով աշխատելէ և շատ միջադէպներ և կնճիռներ խոհականութեամբ կարգադրելէ և փակելէ ետքը, որոնց մանրամասնութեանց մտնել մեզի համար աւելորդ կը դատենք (ՔԷՉ.237): Միայն ըսենք թէ Մանուկեան իր հոգաբարձութեան մէջ լաւ ընկերներ ունեցաւ (ՔԷՉ.225): Մանուկեանի քաշուելէն ետքը Ներսէս յաջողեցաւ Կօրաւոր հոգաբարձութիւն մը կազմել դրամի վգացումի և գործունէութեան տէր անձերէ, որոնցմէ ոմանք մահուամբ և ոմանք միջոցէ մը ետքը հրաժարելով փոփոխուեցաւ և դադրեցան և արդիւնաւորութեամբ և տևականութեամբ յանուանէ յիշատակելու արժանի են Միքայէլ Յակոբեան ատենապետ, Տիգրան Կիւմիւշկերտեան գանձապետ, Սերովբէ Կիւլպէնկեան և Յովհաննէս Էսաեան (ՔԷՉ.239), իսկ ներքին բժշկական խնամոց

կանոնաւորութեան և յաջող արդիւնքներուն մասին գովութեամբ պիտի յիշատակուին Միքայէլ Ռափայէլեան և Վիչէն Օրմանեան բժշկապետները: Վերջինիս կազմած 1878-1882 տարիներու քառամեայ (ՓՐԿ.10-37) ընդարձակ տեղեկագիրը վկայուած է իբր այս հաստատութեան վրայ հրատարակեալ կատարելագոյն ծանօթութիւնը (ՔԷՉ.246), որուն հետևած են տարեկան տեղեկագիրներ, ինչպէս 1884-ինը (85.ԱՐԼ.393), և երեսնամեայ ցուցակ մըն ալ առանձինն (ՔԷՉ.265): Այս հոգաբարձութիւնը իր երկրորդ քառամեայ կը վարէր Ներսէսի մահուան թուականին, և իր օրով իրականացան նշանաւոր բարւոքումներ հաստատութեան ամէն ճիւղերուն մէջ, հիւանդանոցը, յիմարանոցը, անկեւանոցը, որբանոցը, թէ տեղի և թէ խնամոց կողմէ մեծ տարբերութիւններ ստացան, վարչութիւն և մատակարարութիւն և հսկողութիւն օրինաւոր վիճակի վերածուեցան, և ծախքերն զգալապէս աւելնալով մէկտեղ՝ տարեկան հաշուեփակուելուն յաւելեալ և պատրաստ գումարն ճշմարտուեցան մինչև 2,200 օսմանեան ոսկի (ՔԷՉ.282): Այդ հոգաբարձութեան ամենամեծ արդիւնք եղաւ հիւանդանոցին վերաշինութիւնը, զի Պէպճեանի կառուցած հիւանդանոցը փայտաշէն էր և 50 տարիներէ ետքը քայքայուելու մօտեցած ըլլալէն պատ, տիրող կացութեան համեմատական չէր: Սոյն այս հոգաբարձութիւնն եղաւ որ վերաշինութեան գործին ձեռնարկեց իրեն դուրսէն օգնականներ ալ աւելցնելով, և հիւանդանոցին հին փայտաշէն մասերը քանդելով նոր յատակագծի վրայ և նոր առողջապահիկ պահանջումներու համապատասխանող կրկինէ աւելի ընդարձակութեամբ քարուկիր նոր շինուածներ սկսաւ կառուցանել, և 1884-ին Ներսէսի մահուան թուականին արդէն գործը սկսած էր և կը յառաջէր:

2897. ՀԱԿԱՀԱՍՈՒՆԵԱՆՅ ՎԵՐՁՐ

Շատոնց չենք խօսած հայկաթոլիկ հասարակութեան գործերուն և հակահասունեանց կացութեան վրայ, զոր թողած ենք Բիւրէլեանի փախուստին և Օրմանեանի խումբին վերադարձին պարագաներուն (2851): Այդ դէպքերը բաւական ցնցեցին հակահասունեանց վիճակը, որ ներքնապէս ալ օրըստօրէ կը տկարանար աննշանակ ձգտումներով: Հասուն Բիւրէլեանը շահելէն և հեռացնելէն ետքը, կաշխատէր նորէն պաշտօնապէս պատրիարք ճանչցուիլ, բայց կառավարութիւնը կը զգուշանար տակաւին երէկի աքսորականը այսօր վարձատրել: Հակահասունեանք առժամեայ դիրք կը պահէին և Էնֆիլէճեան Գրիգոր վարդապետ իբր փոխանորդ հակահասունեանց գործերը կը հոգար: գազանձեան Սուքիաս եպիսկոպոս Անտոնեանց աբբայութենէն հեռանալովը (2848), իր ազդեցութենէն շատ կորսնցուցած և գործէ քաշուածի ձև էր առած, որով Էնֆիլէճեան համարձակութիւն կառնէր ազատորէն գործել: Հասունեանք օրըստօրէ կը պօրանային, 1879 օգոստոս 30-ին յաջողած էին բռնութեամբ Ղալաթիոյ պատրիարքարանը և Բերայի անկեւանոցը գրաւել, և իբր կաթոլիկ ազդեցութեան տէր կը դառնային: Պապական միջնորդութեամբ գաղղիական դեսպանատան հովանաւորութիւնն ալ նորէն ստացան, պետական անձեր ալ իրենց կողմը շահեցան և նոյն 1879 տարւոյ վերջերը պատրիարքական հրովարտակը Հասունի դարձուեցաւ, և Հասունեանք պաշտօնապէս կաթոլիկ ազդեցութիւն սեպուեցան, իսկ Հակահասունեանք անջատեալ բաժին մնացին Բերայի Ս. Յովհան Ոսկեբերեան եկեղեցիով և Էնֆիլէճեանի գլխաւորութեամբ: Սակայն կաթոլիկ ազդութիւնը ոչ հանդարտութիւն գտաւ և ոչ ալ ներքին պառակտումները վերջացան, մինչև իսկ Հասունեանց մէջէն դժգոհներ սկսան երևան գալ Հասունի արարքներուն դէմ, զի Հասունի մեծ կարողութիւնը և վարչական ուղղութիւնը բացարձակապէս զսպելու կերպն էր, ժողովուրդ շահելու կերպն իրեն սովորական չէր: Այս բանը վերջապէս Հռոմի փրօփականտան ալ տեսաւ, և նորընտիր Լևոն ԺԳ.պապն ալ համոզուեցաւ և պատուաւոր կերպով Հասունը հեռացնելով կաթոլիկ համայնքը

շահելու պետքն պահանջում է: Միև կաղմէն Հասունի փոխանորդ ու ընդհանուր ղեկավարող և սատարն եղող Ստեփանոս Ապարեան եպիսկոպոսը գիտցաւ այդ պարագայէն օգտուիլ, և իր ձգտումներուն համարձակ ընթացք տալով, տեղեկատուութեամբ և խորհրդակցութեամբ Հասունի հեռացման օգուտը մանաւանդ թէ պետքը պահանջում է, և ինքն պատրաստական ներկայեց պապութեան տեսակէտը քաղցրութեամբ և շահեցողութեամբ յաջողցնելու: Ըստ այսմ Հասուն իր վերանորոգեալ պատրիարքութեան մէջ տարին չլրացուցած 1880 տարույ աշունին Հոռմ կոչուեցաւ, և պատուաւոր խոստումներով հրաժարելու հրաւիրուեցաւ, նոյեմբերին կաթողիկոսութենէ ու պատրիարքութենէ հրաժարեցաւ և դեկտեմբերին կարգինալ անուանուեցաւ երիցանց կարգէն, Սրբոց Վիտազէսի և Գերուասիոնի և Պրոտասիոնի եկեղեցւոյն պատուակալ աւագերէցութեան կոչումով: Կարգինալաց ժողովը 70 անդամներէ կը բաղկանար, որոնց 14ը սարկաւագաց կարգէն են, թէպէտ անհատաբար կը պահեն ձեռնադրութեամբ ստացած աստիճաններն: Կարգինալները առ հասարակ լատինաձէս են, և Հասուն առաջինն ու միակ հայաձէս կարգինալն եղաւ, անկէ առաջ Պիոս Թ. պապ յունաձէս կարգինալ մը անուանած էր Աւստրիոյ Ռուբեններէն: Հայկաթղիկներուն աթոռին թափուր մնալովը անմիջապէս Ապարեան յաջորդ ընտրուեցաւ՝ Ստեփանոս Պետրոս Ժ. կոչմամբ, և ինչպէս խոստացած էր շուտով ձեռք պարկաւ քաղցրութեան և համոզման կերպերով անձեր շահիլ, որոնց մէջ նոյնինքն Գապանձեան Սուքիաս եպիսկոպոսը, և առերևոյթ վիշումներով և ազգութեան ձևով կանոնագիրներ առաջարկելով հաշտութեան ճամբայ բանալ, և նորէն ամբողջ հայկաթղիկութիւնը պապութեան ձեռաց ներքև հպատակեցնել: Գապանձեան մեռաւ 1883 յուլիս 1-ին, և թէպէտ Էնֆիլէձեան կը շարունակէր կէս պաշտօնական կերպով հակահասունեան բաժինին գլուխ և վարիչ ճանչցուիլ, սակայն օրըստօրէ կը նուազէր հետևողաց թիւը, և մնացողներու միտքին մէջ ալ խնդիրը իր կարևորութիւնը կը կորսնցնէր: Հասուն 1884 փետրուար 14/26-ին կը մեռնէր Հոռմի մէջ. ինչպէս պիտի պատմենք և տակաւին հակահասունեանութիւնը կապրէր, թէպէտ շատ ճղճիմ և աննշանակ կերպով, և երկու տարի ևս շարունակեց մինչև 1886 փետրուար 26, որ օր Էնֆիլէձեան ալ կը մեռնէր (86.Ա.Ր.Լ.614), և անոր տեղ կանցնէր Նիկողայոս Պաքշեան վարդապետը (86.Ա.Ր.Լ.659): Սա ոչ նոյն ազդեցութիւնն ու գիրքը, և ոչ ալ անոր կարողութիւնն ու յաջողականութիւնն ունէր, և հակահասունութիւնն ալ նուազման մօտեցած էր. ուստի միջոց մը ևս անկայուն վիճակը շարունակուելէն ետքը, Ապարեան պատրիարք, մնացորդ գլխաւորներուն հետ խորհրդակցութիւններուն և բանակցութիւններու սկսաւ, 1887 ապրիլին (87.Ա.Ր.Լ.993), և երկու կողմերէն որոշուած պատգամաւորներ ժողովներ գումարեցին, բայց յաջող ելքի չյանգեցան, հակասունեանց որոշ պայմաններ և երաշխաւորութիւններ պահանջելուն համար: Վիճակը դարձեալ միջոց մը նոյն կերպով շարունակեց, մինչև որ Ապարեան յանձնառու եղաւ ազգային կանոնագրութիւն մը պատրաստել և պայն կառավարութեան ենթարկել, և այսպէս 1888 ապրիլին համաձայնութիւն գոյացաւ, և 23-ին աւագ շաբաթ օր կրօնից տեսուչը Ապարեանի պատրիարքարանը գալով պետական հաւանութեան և ձուլման պաշտօնագիրը հաղորդեց (88.Ա.Ր.Լ.1294), Զատկին օրը հանդիսական յայտարարութիւն եղաւ, և խառն անդամներով քաղաքական ժողով մըն ալ ընտրուեցաւ (88.Ա.Ր.Լ.1300): Այսպէս ընդհանուր ներման ու ազգային կանոնագրութեան մը կազմութեան պայմաններով՝ Հակահասունեանց մնացորդը պապական հպատակութեան և Ապարեանի իշխանութեան ներքև կը մտնէր, և կը փակուէր խնդիր մը, որ 1870 յունուար 25-ի յայտարարութեամբ շեշտուած և գործնական կերպարան մը առած էր (2831), և բաւական յաջողութիւններ ալ ձեռք ձգելէ ետքը անփառունակ կը վախճանէր 18 տարի ապրելէ ետքը: Այդ անյաջող վախճանին սկզբնաւորութեան մէջ էր, զի տիրապէս հակասական ուղղութիւն

մըն էր առանց պապի անձին՝ պապականութիւն, և առանց կաթոլիկ սկզբունքներու՝ կաթոլիկութիւն կապմել: Պապը վիջողութեան և կաթոլիկութիւնը համակերպութեան պարտաւորել ենթադրելի չէր, և եթ երբեք հնարաւոր ըլլար, պէտք էր որ բոլոր արևելցի կաթոլիկները, գոնէ բոլոր հայկաթոլիկները, միաձայն և միաբան ոյժով արևելեան կաթոլիկութիւն մը ստեղծէին և պաշտպանէին, ինչ որ շատ յուսալի չէր, նկատելով պապականութեան ուղղութիւնը և վօրութիւնը, և ընդդիմադիրներուն ամէն կողմէ տկարութիւնը, շատերուն երկիւղած հոռմէադաւանութիւնը, և մէկ մասին ալ անձնական ձգտումներով պառակտումները: Հնար էր դէպի մայրենի եկեղեցին վերադարձ մը յուսալ, բայց նոյն պատճառներ այդ յոյսն ալ ի դերն հանեցին:

2898. ՀԱՍՈՒՆԵԱՆԻ ՄԱՀԸ

Անտոն Հասունեան ծիրանաւոր կարտինալը իր նոր կեանքին մէջ յատուկ ասպարէզ մը չունէր, բայց այդ կեանքն ալ բանի մը օգտակար ընելու դիտումով ձեռնարկեց Հայոց յատուկ դպրանոց մը հաստատել տալ Հռոմի մէջ: Հռոմ ունէր Ուրբանեան դպրոցը, փրոփականտայի վարչութեան ներքեւ, որուն նպատակն էր ոչ-կաթոլիկ ազգելու համար եկեղեցական պաշտօնեաներ պատրաստել, նոյն իսկ անոնց համազգիներէն: Դպրոցին հիմնարկուն եղած էր Ուրբանոս Ը. պապը 1630-ին, և անկէ ելած էին հոռմէականութեան մէջ կրթուած և հոռմէադաւանութիւնը տարածելու աշխատող եկեղեցականներու շարք մը: Բայց Ուրբանոսէն առաջ Գրիգոր ԺԳ. պապը 1586-ին կոնդակով որոշած էր Հայոց յատուկ դպրանոց բանալ Հռոմի մէջ, բայց իր վաղահաս մահուամբ որոշումը անգործադրելի մնացած էր, և հայ աշակերտներ կրնդունուէին Ուրբանեան դպրանոցին մէջ ուրիշ ազգերէ եղողներու հետ (1573): Այսպէս ալ կը շարունակէր մինչև վերջին ատեններ երբ Հասուն մտածեց Հայոց յատուկ ճիւղ մը հաստատել, ինչպէս կանուխ յատուկ ճիւղեր բացուած էին Յոյներու և Ամերիկացիներու համար: Ասով Գրիգոր ԺԳ. պապ նշանաւոր գործ մը կատարած պիտի ըլլար Լևոնեան նոր դպրանոցի մը հիմնարկութեամբ, և ինքն Հասուն մասնաւոր արգասիք և արժանիք ստացան պիտի ըլլար: Կարտինալութեան անցնելու օրէն սկսաւ այդ միտքը մշակել, բայց հապիւ 1883-ին յաջողեցաւ իր նպատակը իրականացնել, և Ս. Նիկողայոս Տօլինտինացիի եկեղեցին և յարակից վանքը Հայ դպրանոցին յատկացուեցաւ, որուն մէջ ինքն ալ հաստատեց իր բնակութիւնը: Լևոնեան Հայ դպրանոցը միշտ փրոփականտայի իշխանութեան և մատակարարութեան ներքեւ պիտի մնար, աշակերտներն ալ փրոփականտայի կեդրոնական դպրանոցին մէջ պիտի առնէին իրենց դասերը, միայն յատուկ բնակութիւն պիտի ունենային, իրենց լեզուն պիտի խօսէին, և նոյն եկեղեցւոյն մէջ Հայ լեզուով և ծէսով պաշտամունք պիտի կատարէին, որ դուրս եցած ատեննին իրենց արարողութեանց և սովորութեանց անգիտակ չըլլային: Հասուն իր աշխատութեան երախայրիքն ալ չկրցաւ տեսնալ, զի դպրանոցին տարին չբոլորած 1884 փետրուար 14/26-ին կը մեռնէր, և այսպէս կը վերջանար 74 տարուան և ճուկէս ամսուան կեանք մը (84. ԱՐԼ. 42), որ բաւական խօսել տւած էր իր վրայ, ինչպէսմենք ալ բաւական գործեր ու դէպքեր պատմեցինք իր առաջին օրերէն սկսելով (2565): Հասուն իրաւ համբաւ մը թողուց իր ետևէն, բայց տխուր և մթագնեալ համբաւ մը, որ չբարձրացներ իր արժանիքը: Աներկբայաբար ունեցած է գործի գլուխ անցնող անձէ պահանջուած ձիրքերը, առիթներէ օգտուիլ գիտցող, բարեպատետ առիթներ պատրաստող, գործունէութեան մէջ անխոնջ, աշխատութեան մէջ յարատև ընդդիմութեանց հանդէպ արի, դժուարութեանց դէմ աննկուն, հաստատուն քայլելով յառաջող, մտադրել գաղափարէն չշեղող միայն ուղղամտութիւնը պակսեցաւ իրեն, անձնական փառքի և մենամոլ հոռմէականի իղձերու և ձգտումներու պոհելով ամէն բան, օրէնք և կանոն, սիրտ և միտք, հանրութիւն և ժողովուրդ, և նոյն իսկ իրեն պաշտած եկեղեցիին օգուտը: Զի եթէ իրօք հոռմէականութիւնը Հայոց մէջ տարածելու կաշխատէր, շատ

աւելի գրաւիչ պիտի ըլլար, եթէ հայկական սովորութեանց և արարողութեանց և աւանդութեանց պահպանութեամբ դուրսինները հրապուրել աշխատէր, քան թէ ներսինները հայութենէ հեռացնելով և լատինականութեան մօտեցնելով իրմէ ուժացնէր: Բոլոր իր պաշտօնավարութեան տևողութեան մէջ քար գայթակղութեան եղաւ կաթոլիկ Հայերու համայնքին. անդադար գժտութիւններու, անհաշտ երկապառակութիւններու, և վանապան անջատումներու առիթ տուաւ իր անտանելի ձեռնարկներով: Ակն յայտնի է որ հայ կաթոլիկութիւնը շատ աւելի խաղաղաւետ և արդիւնաւոր վիճակ ունէր երբ ինքն 1848 ին հայկաթոլիկներու արքեպիսկոպոսութեան կը բարձրանար, կամ 1866-ին կաթոլիկ կաթողիկոսութեան կը տիրանար, քան երբ 1880-ին հայկաթոլիկ հասարակութեան գործերէն կը բաժնուէր, և Հոռմի աթոռին կարտինալական խումբին կը մտնէր: Ընդհանուր հայ ազգութեան տեսակէտէն հարկ իսկ չենք տեսներ խօսելու, ուսկից հեռու մնաց սկիւբէն վերջ, գուցէ վգացումն իսկ չունեցաւ իր ասորի ծագումին արիւնովը (ՀԱՍ.31): Կեանքին մէջ անգամ մը միայն Ջէյթունի բանտարկեալ իշխանները բանտէ ազատելու միջամտեց, սակայն նպատակը Ջէյթունը կաթոլիկութեան որսալու համար էր, օգտուելով Գաղղիոյ Նաբոլէոն Գ. Կայսեր արդէն տուած խոստումէն և ըրած ձեռնարկէն: Կաթոլիկ համայնքին օգտակար եղող նշանաւոր բան մըն ալ չթողուց իր ետևէն, զի Բերայի կաթողիկոսարանը, սովորական կուսաստան մը, Կ. Պոլսոյ մէջ երկու երեք մանր եկեղեցիներ, գաւառներուն մէջ փոքրը եպիսկոպոսարաններ, բաւական չեն փոխարինելու այն վնասները, զորս հասուց, հասարակութեան ներքին ոգին, միութիւնն ու պօրութիւնը յարգն ու վարկը նուազեցնելով, համապագեաց ընկերութիւնը քայքայելով, Մխիթարեան միաբանութեան արդիւնաւորութիւնը արգիլելով, Անտոնեան միաբանութեան դէմ պայքարելով, գէշաղէկ կաթողիկոսական արտօնութիւնները ջնջելով, կաթողիկոսութիւնը ազգային վգացումէ օտարացնելով, մէկ խօսքով իրեն յանձնուած հասարակութիւնը ստորացնելով: Եթէ իր օրով Փոքր Ասիոյ և Կիլիկիոյ Հայոց մէջ շարժում մը տեղի ունեցաւ դէպի կաթոլիկութիւն, պէտք կը վգանք դիտել տալ, որ այն պարզապէս հետևանք էր գաղղիական նախաՖեռնութեան և 1854-ի պատերազմով ստացուած ազդեցութեան, և այն ալ ոչ թէ Հասունի իրաւասութեան, ենթարկեալ վիճակներու մէջ կատարուեցաւ, այլ Լիբանանի կաթողիկոսութեան ենթարկեալ վիճակներու մէջ, ինչպէս որ ակնարկեցինք գէշաղէկ կաթողիկոսական արտօնութեանց դրութեամբ կը կառավարուէր այն ատեն, և զորս Հասուն ջնջեց կամ ջնջելու օգնեց՝ երբոր Լիբանանի կաթողիկոսութիւնը գրաւեց: Անոնք էր Հասունեանի մահէն ետքը անոր կենսագրութեամբը վբաղեցան, ցաւ կը յայտնեն որ նշանաւոր կարողութիւն մը յումպէտս վատնուեցաւ ու մանաւանդ թէ անուղիղ գործունէութեամբ վնասակար իսկ եղաւ, և վայդ կը շեշտեն ոչ թէ լոկ ընդհանուր հայութեան, այլ նոյն իսկ կաթոլիկ հայութեան տեսակէտէն (84.ԱՐԼ.42): Նոյնը կեպրակացնենք և մենք, և կը պնդենք իսկ, թէ Հասունի ընթացքէն վստելով մայրենի եկեղեցւոյ գիրկը դարձնողներէն ստացած օգուտը, զոր ոմանք իբրև արժանաւոր փոխարինութիւն կը կարծեն (84.ԱՐԶ.117), չի բաւեր իբրև դիմաբաժանեալ և հաւասարաչափ արդիւնք նկատուիլ. այնչափ աւելի մեծ կը կարծենք մենք Հասունեանի գործած վնասները:

2899. ԿԱԹՈՒԼԻԿ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

Հասունեանի տարաբախտ գործունէութեան կարգին ակնարկեցինք կաթոլիկ միաբանութեանց հանդէպ բռնած ընթացքին, իբր զի ան այդ միաբանութեանց մէջ կը տեսնէր իր դիտումը խափանող ոյժ մը և ամէն կերպով մաքառեցաւ անոնց դէմ, եթէ հնար ըլլայ ջնջելու չափ, կամ գոնէ անոնց ազդեցութիւնը ի սպառսպուռ խափանել: Երեք միաբանութիւններն ալ, Անտոնեանը և կրկին Մխիթարեանները, թէպէտ վանապան աստիճաններով, բայց միշտ հայկական կեանքէ ներշնչեալ գործունէութիւն մը կը պարզէին ազգին մէջ, զոր չէր կրնար անտարբեր

աչքով տեսնել կաթոլիկութիւնը մինչև լատինականութիւնը մղելու պիտուած անձ մը: Իր առաջին շրջանին մէջ քանի քանի մտածեց, փրոփականտայէ հրամաններ հանել տուաւ, պաշտօնակատարութեանց մէջ խտրութիւններ մտածեց, թիւի և բնակութեան պայմաններ ստեղծեց, ամէն մանր պարագայ խժբժանքի նիւթ ըրաւ, միշտ միևնոյն դիտմամբ, որ արգիլէ համակրութիւնը, զոր միաբանութիւնք կը վայելէին ժողովուրդին կողմէ, և խափանէ ապրելութիւնը, զոր միաբանութիւնք ստացած էին ժողովուրդին վրայ: Երկրորդ շրջանի եղելութեանց կարգին յիշած ենք այն դիրքը, զոր Անտոնեանք ունեցան Հակահասունեան շարժումին առաջ քայլէն սկսելով (2783), երբոր Հռոմի վանքերնին թողուլ ստիպուեցան (2832), և պարագայից բերմամբ ներքին տագնապներ ալ անցուցին (2848), որով միաբանական վիճակնին սկսաւ տկարանալ: Այդ տեսութիւնն էր որ Օրմանեանն ալ յորդորեց իր վերադարձը փութացնել, ինչպէս ընդարձակ և գրաւոր կերպով պարզեց միաբանութեան առջև, թէ անոր ուրիշ ճամբայ չէր մնացած, բայց եթէ կամ իսպառ վտանգուիլ կամ Հռոմի ստրկանալ, և թէ այդ երկսայրի նախատեսութենէն չէր կրնար ոչ առաջինը արգիլել և ոչ երկրորդին համակերպիլ: Հռոմի մէջ տեղի ունեցած անցքերը, միաբանութեան արբահօր և վանահօր պաշտօնանկութիւնը, և լատինները Հայոց վրայ մեծաւոր նշանակելը Անտոնեաններ մերժեցին և նոր կարգադրութեանց չի համակերպեցան, և Հռոմ ալ Հայ Անտոնեանց միաբանութեանց անունը ջնջեց կաթոլիկ միաբանութեանց պաշտօնական ցուցակէն: Նոյնիսկ երբ Անտոնեանց մնացորդը Հակահասունեան համայնքին հետ համակերպեցաւ Հռոմի և Ապարեանի հպատակութեան ենթարկուիլ միաբանութեան անունը չվերանորոգուեցաւ, թէպէտ մասնաւոր գրութիւններով ինչինչ յարաբերութիւններ տեղի ունեցան Անտոնեանց և իրենց արբահօր Ռափայէլ Միասէրեանի և Հռոմի միջև: Անտոնեանք Կ. Պոլսոյ Օրթաթէօյի վանքին մէջ փորձեցին վանական աշակերտութիւնը վերսկսիլ, Հռոմի վանքը վաճառած ըլլալով Լիբանանի վանքին տիրապետութիւնը պահեցին. սակայն մահեր և անջատումներ իրենցմէ շատեր պակսեցուցին, որով այլևս տասնեակի մը իսկ չէր հասներ անոնց թիւը անստուգութեան մատնելով իրենց ապագայն ու շարունակութիւնը: Անտոնեան միաբանութիւնը Հակահասունեանութեան գլխաւոր դերը ստանձնելով ինքպինք պոհեց խնդիրին սիրոյն, և չենք գիտեր թէ ո՞ր ընթացքը նախադասելի պիտի սեպուի, խնդիրին սիրոյն միաբանութիւնը պոհել, թէ միաբանութեան սիրոյն խնդիրը պոհել: Այդ երկրորդ պայմանին հետևեցան Վենետիկի Միսիթարեանները, որոնք արդէն պարսաւագիրքի խնդիրին ժամանակ ալ խոնարհամիտ համակերպութեան ճամբան նախադասած էին (2663), միաբանութեան գոյութիւնը ապահովելու տեսակէտով: Հակահասունեան շարժումին մէջ ալ միևնոյն կերպով գործեցին: Գէորգ Հիւրմիւլեան արբահօր 1876 մարտ 30/11 ապրիլին մեռնելուն վրայ, նոյն տարույ յուլիս 21/2 օգոստոսին յաջորդեց Իգնատիոս Կիւրեղեան, բնիկ Տրապիպոնցի 1833 փետրուար 2/14-ին ծնած, 1854 յունուար 5/17-ին քահանայացած, որ 1877 մայիս 8/20-ին ալ եպիսկոպոսացու (ՅՈՒ.321,324): Կիւրեղեան Հիւրմիւլեանէ աւելի համակերպող հանդիսացաւ Հռոմի առջև, և Հիւրմիւլեանի տկարամիտ ուղղութիւնը գերազանցեց (2670): Կ. Պոլիս գտնուող Միսիթարեաններ առաջին թափով Հակահասունեանց յարած էին, Կիւրեղեան անոնք միառմի Կ. Պոլիսէ հանեց, վանք բերաւ, և խնդիրէն ձեռնափ ըրաւ, և վերջին մնացող Մովսէս Ամպերպօյեան ալ, որ Հակահասունեան եպիսկոպոս ձեռնադրուած էր, Ապարեանի հետ կնքուած հաշտութեան պահուն հպատակելու յանձնառու եղաւ: Այսպէս Վենետիկի Միսիթարեանք իրաւ իրենց միաբանութիւնը նաւաբեկութենէ ապատեցին, և Անտոնեանց վտանգին չենթարկուեցան, բայց և առանց վնասի չմնացին զի Հայ կաթոլիկ հասարակութեան մէջ իսկ իրենց վարկն ու յարգը, ապրելութիւնն ու գործունէութիւնը մեծապէս աւրուեցաւ և վտանգուեցաւ, և վերջին գրական

արդիւնքնին իսկ առաջիններուն հետ բաղդատուած ատեն շատ ետև մնաց, և մաղթելի էր որ լաւագոյն ապագայի վիճակէին: Իսկ Վիէննայի Միխիթարեանք անդստին Հռոմի գիրկը ինկած, և կաթողիկոսիւնը մինչև մոլութիւն հասուցած, Պապիկեանէ և Ապարեանէ ետքը յաջորդ ունեցան Յակոբոս Պօպաճեանը, որ 1855 յուլիս 25/6 օգոստոսին ընտրուեցաւ, ապրիլ 23/5 մայիսին մեռնող Արիստակէս Ապարեանի տեղ (ՅՆՇ.12), և պաշտօնավարեց մինչև 1883 սեպտեմբեր 19/1 հոկտեմբեր, և միաբանութիւնը միևնոյն ուղղութեամբ կառավարեց: Համառօտ եղավ Վարդան Ըստկարեանի արբայութիւնը, որ 1884 յունիս 30/12 յուլիսին ընտրուելով, 1886 յունիս 3/15-ին մեռաւ, տակաւին 43 տարեկան: Բնիկ Սամոշույվացի Տրանսիլուանիոյ նահանգէն, իր հրատարակած եկեղեցական պատմութեամբ աններող կաթողիկոսեան հոգին յայտնած էր: Անոր յաջորդեց Արսէն Այտնեան Կ. Պոլսեցի 1824 յունուար 8-ին ծնած և 1866 օգոստոս 4/16-ին ընտրուած (ՅՆՇ.18), որուն օրով պահ մը հայկական հոգին Վիէննայի վանքին մէջ ալ մուտք գտնել սկսաւ, և որչափ պարագաները կը ներէին հայկական լուրջ ուսումնասիրութեանց հետ ներողամիտ ներշնչումներ ալ երևցան: Արդէն ըսած ենք թէ Վիէննականք սկիզբէն հեռու մնացած էին Հակահասունեան շարժումէն, և իրենցմէ միայն երկուքը Կղեմէս Սիպիլեան և Ղուկաս Տէրտէրեան, Այտընեանի ընկերակիցներ, շարժումին համակրած էին, բայց գործունեայ դեր չստանձնեցին: Երբոր Այտընեան պաշտօնի անցաւ արդէն Ստեփան Ապարեան իր հաշտարար ուղղութեամբը գործելու սկսած էր, որով այդ մասին յայտնելու առիթ ալ չունեցաւ, բայց յաջողեցաւ չափո մը բարձրացնել Վիէննականաց յարգը, որ իսպառ ինկած էր նոյնչափ հայութեան որչափ հայկաթողիկոսեան առջև: Այդ միջոցին էր որ Լիբանանի Զըրմառեան աշակերտութիւնը միաբանական ձև մը կազմելու նախաձեռնարկ եղաւ, բայց ոչ Հասունեան և ոչ Ապարեան իրենց այդ դիտումը կրնային յաջողութեան հասցնել, որոնք բոլորովին գրաւուած էին Հռոմի փրօփակատայի կամ նորահիմն Լևոնեանի աշակերտութեան վերապահել ամենայն ինչ: Այդ համառօտ ուրուագիծերը բաւական ըլլան հայկաթողիկ միաբանութեանց վիճակը պատկերացնելու Հասունի մահուան թուականին:

2900. ՆԵՐՍԷՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Սեպտեմբեր 3-ին էր որ Կ. Պոլսոյ մէջ լսուած էր թէ Ռուսիոյ կայսրը Ներսէսի հրաժարականը ընդունած և նոր ընտրութիւն հրամայած է. սակայն օգոստոս 11-ին Կ. Պոլսոյ առաջնակարգ բժիշկներէն վեց օտարապիներ և ութը ազգայիններ միահամուռ խորհրդակցութեամբ տեղեկագրեր էին թէ շաքարի հիւանդանութիւնը բնասպիտութեան փոխուած է, սրտային և կրծային յուզումներ պատճառած է, առողջութիւնը այլայլած է, և իրեն պաշտաման վբաղմանց և աշխատութեանց շարունակութիւնը առաւել ևս կը ծանրացնէ իր վիճակը, և իրեն պէտք են բացարձակ հանգիստ և բացակայութիւն ի գործողութեանց պաշտաման իւրոյ (84.ԱՏՆ.351): Վճռական էր տեղեկագիրին իմաստը, որ իր բժշկական դարձուածներով աղիտալի վախճանը գուշակել կու տար: Այդ համոզումը բոլոր ազգայնոց միտքը կը պաշարէր, և նոյն իսկ կազմակերպեալ ընդդիմադրութեամբ Ներսէսի նեղութիւն պատճառողներ ներքնապէս վզածուած էին, թէ առանց Ներսէսի պատրիարքութեան ի՛նչ պիտի ըլլան այսչափ ատենէ ի վեր ձեռք առնուած խնդիրները: Օրմանեան ալ որ Կարնոյ բանտարկելոց գործը աւարտած, և օգոստոս 16-ին իր վերադարձին պաշտօնական գիրերը ստացած էր, կը վարանէր մահամերձ Ներսէսը անկողնի մէջ թողուլ և մեկնիլ, և անոր մօտէն չէր դատուեր, և Սանասարեան վարժարանի և Բերայի գերեզմաննոցի կոնդակներուն վրայ Ներսէսի ստորագրութիւնը անկողնի մէջ դնել տուած էր, քիչ մը հանդարտ վայրկեաններէն օգտուելով: Ամէնքը համոզուած էին այլևս թէ Ներսէս ուղիղ նախապագամամբ խօսած և գործած էր, երբոր անդրդուելի կերպով կաթողիկոսութենէ կը

հրաժարել, թե ընտրությունն առաջ և թե ընտրությունն ետքը: Ներսէս կուպէր բժշկական վկայագիրը ձեռքը ձգած օրէն հրաժարականը ներկայել պետութեան և ազգութեան, սակայն իրեն շուրջը եղողներն այսուայն պատճառանքով արգելք կըլլային, բնական ընթացքով կատարուելիք գործին ձևակերպական պարագաներ աւելցնելով աւելորդ սեպելով: Այսպէս անցան երկու ամիսներ ևս, Օրմանեանը կը մեկնէր սեպտեմբեր 24-ին, զի Ներսէս հրամայած էր որ ինքն աչքերն չգոցած նա Կարին գտնուի, որպէսզի արգելիչ նոր պարագաներու չհանդիպի: Իսկ հրաժարականի միտքը երբեք Ներսէսի ուշադրութենէ չէր հեռացած, և վերջնականապէս հոկտեմբեր 15-ին կը ստորագրէր իր թելադրութեան ներքև գիրի առնուած հրաժարագիրը, որ աւելի վերջին կտակի ձևին և աշխարհէ հրաժեշտի ողջոյնը ու շնորհակալեաց արտայայտութիւնը կուղղէր, առանց մոռանալու իրմով հետաքրքրողներէն, իրեն գործակիցներէն, իրեն հոգ տանողներէն, զինքն խնամողներէն և ոչ մէկը, և յանուանէ յիշատակելով կայսրէն սկսելով նախարարները, միւս ազգաց հոգևոր պետերը և նշանաւոր ազգայինները, և 22 բժիշկներ յականէ յանուանէ, Հայոց ազգը, ժողովները, եկեղեցականները, մայրաքաղաքացիները, գաւառացիները, և կը վերջացնէր ըսելով, կը պաղատիմ որ ազգային ժողովն անմիջապէս ընդունելով հրաժարականս ինձ յաջորդ մը ընտրէ, և օրհնութիւններով ու մաղթանքներով կը կնքէր իր գրութիւնը (84.Ա.ՏՆ.349-350): Այդ գիրէն երկու օր առաջ հոկտեմբեր 13-ին Ս. Ներսէսի Շնորհալույ տօնին օրը իր անունին տօնախմբութիւնը կատարած էր Ներսէս, և իրեն այցելութեան եկողներուն բերանացի հաղորդած էր պատրաստած գրութեան միտքը: Վարչութիւնը արդէն անոր վիճակին վրայ համոզում գոյացուած, հոկտեմբեր 3-ին խորհրդակցած և առժամեայ տեղապահ մը նստեցնելու համար: Ընդհանուր և կրօնական և քաղաքական ժողովներու ատենապետներուն պաշտօն յանձնած էր, թէ պատրիարքին և թէ կառավարութեան հետ այդ միտքին համար բանակցիլ և օրինականութեան պահանջները պատրաստել (84. Ա.ՐԼ. 228): Ներսէս թէպէտ հրաժարագիրը հոկտեմբեր 15ին ստորագրած և քաղաքականի ատենապետ Սիմոն Մաքսուտեանի յանձնած, սակայն սա չէր ուլած գրութեան պաշտօնական ընթացք տալ, այլ իրեն մօտ պահած էր, թէպէտ իրեն յանձնուած ըլլալը լսուցած էր (84. Ա.ՐԼ. 242), զի առժամեայ տեղապահի գործով կը վբաղէր, և հրաժարականի խնդիր յարուցանել պատշաճ չէր: Զրոյցներ խառնուէին, Ներսէսի վտանգաւոր վիճակը միշտ աւելի կը շեշտուէր, և առժամեայ տեղապահի առաջարկը կը մշակուէր, և այնպէս լուր կը տարածուէր թէ Ներսէսի պետութեան և ազդեցութեան ուղղելիք հրաժարագիրներուն պատճէնները հոկտեմբեր 24-ին վարչական ժողովի մէջ կարդացուէր են ստորագրուելուն առաջ, թէպէտ հոկտեմբեր 15-ին ստորագրուած էր (84.Ա.ՏՆ.350): Զրոյցմըն ալ կը լսուէր բերնէ բերան թէ ազգութեան ուղղած բայց դեռ պահուած հրաժարագիրին հետ պետութեան ալ ներկայած է իր հրաժարականը, բժշկական վկայագիրն ալ կցած, և միանգամայն արտօնութիւն խնդրած Եւրոպիոյ ջերմուկներն երթալով առողջութիւն փնտռել, և թէ այդ կէտին վրայ ալ կը բանակցէր Մաքսուտեան ատենապետը կառավարութեան հետ ունեցած յարաբերութեանց մէջ (84.Ա.ՐԶ.587): Սակայն դեռ որոշման մը չյանգած և վտանգին օրըստօրէ մօտենալուն վրայ որոշուեցաւ հոկտեմբեր 26-ին երեսփոխանական նիստ կապմել և հրաժարագիրը հաղորդել: Իսկ նոյն առտուն Ներսէսի մօտ մտնող ելլողներ այնպէս լուր կու տային թէ աւելի հանգիստ կերևի և վիճակը յոյս կը ներշնչէ: Այս Անորոշ տպաւորութեան ներքև բացուեցաւ 1884 հոկտեմբեր 26-ի երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ նիստը: 2901. ՆԵՐՍԷՍԻ ՄԱՂԸ

Արտաստովոր կերպով բազմամարդ չէր գումարումը, միայն 52 ներկաներ (84.Ա.ՏՆ.339): Մի քանի վայրկեան խորին լռութիւն տիրեց, երբ կարդացուեցան Ներսէսի կողմէ վերջին հրաժեշտի ոճով գրուած վզայուն հրաժարականը, և 14 բժիշկներու ճնշիչ տեղեկագիրը (84.Ա.ՏՆ.351): Երբոր

խօսիլ սկսան պանապան կարծիքներ յայտնուեցան պահուելիք ձևակերպութեանց վրայ, առաջարկներ եղան կամ վարչութեան կամ ատենապետաց դիւանի կամ մայր դիւանի յղելու, քի ամենուն միտքն ալ ատեն շահիլ էր, և իմանալ կուզուէր թէ կառավարութեան ալ ուղղած էր հրաժարականը, և թէ կառավարութիւնը ի՛նչ տրամադրութիւն ունի: Վերջապէս որոշուեցաւ ատենապետաց դիւանին յանձնել որ վարչութեան հետ խորհրդակցութեամբ ութ օրէն տեղեկագիր բերէ (84.ԱՏՆ.354): Բայց երբ երեսփոխանութիւնը Ներսէսի պաշտօնէն հրաժարելուն խնդիրով կը պահէր, և վստահ կերպով մը ութ օր կը յետաձգէր, Ներսէս արդէն աշխարհքէն հրաժարած էր, բայց ոչ ոք տակաւին տեղեկութիւն ունէր: Աղետալի վախճանէն իբրև քսան օր առաջ՝ շնչարգելութիւնը քիչնքն սաստկապէս կը տանջէր, գիշերներն անքուն էր, իրեն այնպէս կը թուէր թէ սենեակին մէջ օդ չկայ, ուստի պատուհանները բանալ տալով դէպի դուրս կը շնչէր, և օդ տուէք ինձի կը կրկնէր (84.ԱՐԼ.251): Սակայն օր մը առաջ կարծես թէ հանդարտած էր, և վերջին հոկտեմբեր 25-ի գիշեր քունի մտած էր, տագնապ մը չէր երևեր, և մօտն ալ մարդ չէր մնացած: Առաւօտուն ձայն չհանելը նպաստաւոր նկատուած էր և հանգիստը խանգարել չէր ուզուած: Մինչև կէսօրին երկու ժամ մնացած այդ համոզումով կօրօրուէին տնեցիները, բայց վերջապէս գոնէ հետաքրքրութիւն գոհացնելու համար սենեկ կը մտնեն, և անշնչացեալ կը գտնեն Ներսէսը անկողնին մէջ: Բժիշկներ կը բերուին շտապով, գուժկաններ կը մեկնին Օրթաքէօյէն Ղալաթիա գումարուած երեսփոխութեան լուր տանելու: Բժշկական պնդութիւնք կը հաւաստեն կանուխ գիշերը չվերջացան վախճանած ըլլալը: Սիրտի նենգածէտ հիւանդութիւնը իրեն սովորական խարդախ խաղերէն մին կատարած էր, և անակնկալ կերպով, մանաւանդ թէ բարեյոյս ակնկալութեանց ներքև վերջացուցած էր իրեն ժանեաց ներքև ինկած կեանք մը: Երեսփոխութիւնը նիստը փակած էր, և ցրուելու պահուն լսեց բօթաբեր լուրը (84. ԱՐԼ. 247): Ներսէսի ծննդեան թուական ընդունուած է 1837 յունուար 28 (2733), թէպէտ այն իսկապէս յաւապանէ վերածննդեան թուականն է, որով 1884 հոկտեմբեր 26-ին 47 տարեկան 9 ամսական վախճանած կըլլայ, երկար և բեղմնաւոր կեանք մը անցուցած ըլլալով այն տարիքի մէջ, ուր շատեր դեռ նոր սկսած կըլլան իրենց գործունէութիւնը: Վարժապետեան Պօղոս Ներսէսի համար կանխահաս եղած էր ամենայն ինչ 16 տարեկան ուսուցիչ, 21 տարեկան վարդապետ, 22 տարեկան ազգային գործիչ, 24 տարեկան պատրիարքական պատուիրակ, 25 տարեկան եպիսկոպոս, 26 տարեկան կրօնականի ապենապետ, 37 տարեկան պատրիարք, և 47 տարեկան կաթողիկոս ընտրուած, բոլոր կացութիւններուն մէջ ալ երբեք անբաւականութեան նշան չտուած, լիովին կատարած ամէն պաշտօններուն պահանջները, նախաձեռնարկ նոր ծրագիրներու, հեղինակ կարևոր գործունէութեանց, և վարիչ տեսակ տեսակ ազգօգուտ գործառութեանց, իրաւամբ ողբաց համօրէն հայութիւնը իր տարածամ կորուստին վրայ, քրկուելով այն ամէն արդիւնքներէն և օգուտներէ, որ յուսալից կեանք մը իրեն կը խոստանար, բայց դժբախտաբար գրեթէ կէս ճամբուն վրայ կը նուազէր և կը վերջանար:

2902. ԹԱՂՈՒՄՆ ՈՒ ՇԻՐԻՄԸ

Այն եռանդուն համակրական պգացումը, քոր հայութեան բոլոր դասակարգերը, պաշտօնական կերպականութեամբ ընդդիմադիրն իսկ դուրս չթողլով, կը տածէին Ներսէսի վրայ, գրեթէ պաշտելութեան աստիճանի հասաւ անմիջապէս որ ձայն գուժեց թէ Ներսէս ոչ ևս է: Հոկտեմբեր 26-ի երեկոյին սկսան ամէն կողմ ոգակիր ցոյցերը և արժանաւոր թաղումի պատրաստութիւնները: Պատրիարքական փոխանորդ Գէորգ Ռուսձուգեան վարդապետ, որ բաւական ժամանակէ ի վեր իբրև պատրիարքարանի վարիչ կը գործէր: Խորէն Նարպէյ կրօնականի և Սիմոն Մաքսուտեան քաղաքականի և Տիգրան Եուսուֆեան Ընդհանուրի ատենապետներ, նոյն երեկոյ Օրթաքէոյի տունը երթալով դարաններ և թուղթեր կնիքի ներքև առին, և ազգային ամենէն

նշանաւոր և ձեռնհաս անձերէ 16 հոգւոյ յանձնաժողով մը կազմեցին թաղման կարգադրութիւններն ու պատրիարքութիւնները հոգալու. թաղեր և ընկերութիւններ և վանապան դասակարգեր իրենց նուիրական պարտք կը սեպէին որ և է արտաքին նշանով մը տխուր հանդէսին մասնակցիլ և վագսումնին յայտնել: Յանձնաժողովը ոգևորեց գործին փարեցաւ, քան և հանգիստ վոհեց որպէսզի ամէն հնարաւոր պատրաստութիւն և պահանջուած կարգադրութիւն և պահանջուած կարգադրութիւն անթերի գործադրուի: Գուժատար լուրեր և հեռագիրներ ամէն կողմ սփռուեցան, պաշտօնական և ընկերական մարմիններու հաղորդուեցան, եկեղեցւոյ և պատարագի և դամբանականի կատարողներ որոշուեցան, և ամէն կողմերէ սգակիր ցաւակցութեան արտայայտութիւններ ընդունուեցան, որոնց գլուխը կայսեր կողմանէ յայտնուած ցաւն ու թախծութիւնը, ինքնաբերաբար շնորհուած արտօնութեամբ միասին մարմինը թաղելու ուր որ ալ ուլեն, որուն պօրութեամբ որոշուեցաւ հանգուցանել մայր եկեղեցւոյ տաճարին մէջ: Շաբաթ օրը ամբողջ հրամաններով և հրահանգներով անցաւ, և կիրակի տեղի ունեցաւ յուղարկաւորութեան հանդէսը: Օժման կարգը շաբաթ օրուրնէ կատարուած էր մասնաւոր կերպով, զի սաստիկ արիւնահոսում մը այլայլած էր դէմքն ու մարմինը, և հարկ եղած էր զինգեայ թիթեղէ սնտուկի մէջ ամփոփել, դէմքը միայն տեսանելի թողլով ապակիի ներքև, որ շուտ փոփոխուած էր մահաբեր շաքարախտին բնական հետևանքով: Եսայի պատրիարք պատրաստուած էր ինքն պատարագել, բայց նա ալ տկարութեան ենթակայ ըլլալով վերջին պահուն բաւական սեպեց յուղարկաւորութեան նախագահել, իսկ պատարագը մատոյց Երուսաղէմի փոխանորդ Սիմէոն Սէֆէրեան եպիսկոպոս: Ամէն եկեղեցիներէ եկած դպիրներ ստուար բազմութեամբ, Նիկողոս Թաշճեան մեծ դպրապետի գլխաւորութեամբ, մեծաշուք և ներդաշնակ կերպով կատարեցին պատարագի և քահանայաթաղի երգեցողութիւնները: Մայր եկեղեցւոյ մէջ որոշ տեղեր նշանակուած էին օտարազգի հիւրերու և ազգային պաշտօնական անձերու, և մինչև ատեն մը հնար եղաւ ըստ այնմ կարգադրել, բայց ժողովուրդին անօրինակ բազմութիւնը յաղթեց կարգադիրներու ճիգերուն: Պաշտօնապէս ներկայացուցիչներ ունէին կայսերական պալատը, եպարքոսութիւնը, նախարարութիւնները, պետական խորհուրդը սպարապետութիւնը, Ռուսիոյ, Անգղիոյ, Գաղղիոյ, Գերմանիոյ, Աւստրիոյ, Իտալիոյ, և Պարսից մեծ դեսպանութիւնները, նոյնպէս Սպանիոյ, Ամերիկոյ, Ռումանիոյ, Սերպիոյ, Յունաստանի և Պուլկարիոյ դեսպանութիւնները: Յունաց, Պուլկարաց, Հայբողոքականաց և Հրէից ազգապետութիւնները և Ասորւոց փոխանորդութիւնը: Ազգային ամէն մարմիններ, թաղական խորհուրդներ, ուսումնական ընկերութիւններ, ազգային վարժարաններ, վանապան հոգաբարձութիւններ, մասնաւոր յանձնաժողովներ, գաւառական վարչութիւններ, պաշտօնապէս ներկայացուցած էին. դագաղը ծածկուած էր խաչերով և յիսունէ աւելի պսակներ շուրջը բոլորած էին, իսկ ազգայնոց և օտարազգեաց բազմութիւնը, ոչ միայն եկեղեցին և յարակից մասերն ու բակերը, այլ և շրջակայ փողոցները խուռնընթաց ողողած էր անօրինակ կերպով, զոր 50,000 հաշուած են ականատեսներ (84.ԱՐՁ.622): Դամբանականը վիճակած էր Խորէն Նարպէյ եպիսկոպոսին, որ կէս ժամէ աւելի խօսեցաւ, և բացատրեց թէ ազգը ստուգապէս մեծ մարդ մը կորսնցուց, ի վեր հանեց անոր անձնական բարեմասնութիւնները և ընտիր ձիրքեր, և խօսքը բերաւ ազգին բարօրութեան և ապագային բարելաւութեան, վարգացման և բարձրացման համար Ներսէսի բացած նոր ասպարէզին վրայ, և այդ կէտին մէջ բացատրեց թէ ինչպէս հաւատարմութեան վագսումներով և կայսերական բարեացակամ հովանաւորութեամբ պօրացուց իր ձեռնարկը: Արարողութիւնք երկուքուկէս ժամ տևեցին. և անոնց վերջանալուն մեծ թափօրը մեկնեցաւ մայրեկեղեցիէն, առջևէն պետական և պատրիարքական և թաղական բարապաններու խումբը, և երկու կողմերէն զինուորական պահպանութիւններով, վարժարաններու աշակերտներ, և

վանապան պատգամաւորութիւններ իրենց նուիրած պսակներով, դպիրներու մեծ խումբը, թագն ու գաւապանը ու շքանշանները կրող վարդապետներ փոխանորդին հետ, եկեղեցականաց դասը երաթէ բոլոր մայրաքաղաք գտնուող եպիսկոպոսներով և վարդապետներով և բազմաթիւ քահանաներով, Եսայի պատրիարքի հանդիսագրութեամբ, մի մասն ալ դագաղը շրջապատած, կոր կը կրէին 12 կիսապգեստ քահանաներ, ետևէն դարձեալ դպրաց խումբ մը, ազգային մարմիններ, օտարազգի ներկայացուցիչներ, մնացեալ պատգամաւորութիւններ և անհարմար ժողովուրդ: Թափորը ընդարձակ շրջան մը ըրաւ, և Նշանճը, Վլանկա, Եէնիքարու, Քումքարուի դուրս Չիֆթէկէլին և Մօլլաթաշի փողոցներով մայրեկեղեցի դարձաւ, ուր դագաղը պետեղուեցաւ երկու օր ևս ժողովրդական յարգանք առարկայ ըլլալու համար (84. ԱՐԼ. 248): Թափօրի ատեն բոլոր հայ և յոյն եկեղեցիներ տխուր մահապանգը կը հնչեցնէին շարունակ: Չորեքշաբթի հոկտեմբեր 31-ին նախապէս Ս. Խաչի աջակողմեան տաճարին մէջ 90 երեսփոխաններու ներկայութեամբ, Ընդհանուր ժողովոյ ոգոյ նիստ մը կայացաւ, և յետոյ միջին տաճարին մէջ թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Եսայի պատրիարքի նախագահութեամբ և շուրջառներով և շապիկներով զգեստաւորուած եկեղեցական դասուն մասնակցութեամբ, անթիւ անհամար ժողովուրդի ներկայութեամբ, և նորանոր պսակներու նուիրմամբ: Մարմինը հոգին յանձնուեցաւ ինչպէս որոշուած էր մայրտաճարի ներքին գաւիթին հարաւակողմը (84. ԱՐԼ. 250): Հանդիսակատարութիւնը լիութեամբ և գոհունակութեամբ լրացաւ, և միայն աչքի վարկաւ հայկաթոլիկ հասարակութեան կողմանէ պաշտօնական ներկայացուցիչներու բացակայութիւնը, մինչ Ներսէս իր հրաժեշտի գրութեան մէջ շնորհակալութեամբ յիշած էր հայկաթոլիկները, և յանուանէ իրենց Ապարեան պետը, մասնաւոր անձնաւորութիւններ իսկ ներկայ չէին, և հապիւ քանի մը հոգիներ տեսուեցան ժողովուրդին խառնուած: Շինուելիք շիրիմը յատուկ յանձնաժողովի յանձնուեցաւ, որ իսկոյն հանգանակութիւն բացաւ, և աշխատեցաւ կառուցումն ալ չուշացնել մայրեկեղեցւոյ արևմտեան պատին ներսի կողմը, մեծ դրան հարաւակողմը: Արուեստակերտ և սիւնապարդ շիրիմ մը եղաւ կառուցուածը. առջևն ալ թաղուած տեղւոյն վրայ գետնէն բարձր գերեզմանաքար մը գրուեցաւ: Պատրիարքի մը մարմինը եկեղեցւոյ մէջ թաղել, թէպէտ ոչ սովորական, սակայն բոլորովին անօրինակ չէր, զի Յովհաննէս Կոլոտ պատրիարքի մարմինն ալ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ ներքին գաւիթին մէջ թաղուած էր (1988), թէպէտ այժմ, եկեղեցիին արևմտեան մասին կտրուելովը, դուրսի բակին մէջ մնացած է:

2903. ԱՆՁՆ ՈՒ ԲՆՈՅԹԸ

Ներսէսի անձնական հանգամանաց վրայ փոքրիշատէ տեղեկութիւն տւինք, անոր հանրային ասպարէզ մտնալուն առթիւ (2733), և նորա կեանքին վանապան հանգրուաններուն և գործունէութեան գլխաւոր կէտերուն հետ բացատրութիւններ ալ տուինք, որով թէ Ներսէսի անձնաւորութիւնը և թէ մեր տեսութիւնները ըստ բաւականին ծանօթացած են: Այսուհանդերձ ներուի մեզ գերեզմանին փակուելէն ետքը քանի մը մը յետսհայեաց տեսութիւններ աւելցնել անոր անձն ու արդիւնքը ու արժանիքը պատկերացնող, հիմնուելով մեր իրեն հետ մօտաւոր յարաբերութեանց և ծանօթութեանց վրայ, ինչպէս ժամանակին ալ ըրած էինք առօրեայ հրատարակութեանց մէջ (84. ԱՐԼ. 261): Բարեձև և բարետեսիլ էր Ներսէսի արտաքինը, բարձր հասակ, գեղադէմ կերպարան, անձնեայ և մարմնեղ, գրաւիչ հայեացք, մօրուք և ընչացք առատ, հապիւ վերջին ատեններ երևան եկած ցանցառ սպիտակ թելերով, խօսքը համեղ, վարմունքը հրապուրիչ, վերաբերմունքը քաղցր, տեսակցութիւնը շահեկան, յամենայնի վեհ, պատկառելի և համակրելի միանգամայն: Բնաւորութեամբ հեզահոգի և երկայնամիտ էր հասարակ կենակցութեան շրջանակի մէջ, իսկ պաշտօնական շրջանակի մէջ պահանջկոտ իր համոզմանց դէմ յայտնուած

հակառակութեանց, մանաւանդ արուեստակեալ և կամայական ընդդիմութեանց հանդէպ խոստացող, ուսկից յառաջ կու գային նեղսրտութեան արտայայտութիւններն, որոնք հետզհետէ աճեցան ինքն տառապեցնող ախտին հետևանօք, բայց առանց ջնջելու կենցաղական քաղցր բնաւորութիւնը, որով երկու հակառակ երևոյթներու տարօրինակ միացումը յայտնի կիրականանար իր վրայ: Այս էր պատճառը որ պաշտօնապէս խստութեան կը միացնէր անհատական քաղցրութիւնը, ոչ քէն կը պահէր և ոչ խէթ, և պաշտօնական շրջանակէն դուրս անկեղծ բարկամութիւն կը ցուցնէր անոնց ալ որոնց դէմ խստացած էր (84.ԱՐԵ.522): Ներսէսի վրայ նշանակելի էր պարզասիրութեան ձգտումը, առանց ստորնութեան հասնելու և առանց գծուծ ապրելու, ուտեստը, զգեստը, և բոլոր կենցաղը պարզ էր և պարզ մնաց: Չրքսալրի բարձունքի հօրենական տունը և կարասին հասարակ էին, պատրիարքի մը անվայել ըլլալու չափ, և եթէ երբեմն Բերա և Վլանկա և Քումգաբու վարձու բնակութիւններ փոխադրուեցաւ, պաշտօնական յարաբերութեանց և անձնական դարմանաց պէտքը միայն նկատի ունեցաւ, իսկ կայսեր պարգևած տունին մէջ հապիւ վեց ամիս մնաց. հոն մեռաւ աւելի քան թէ ապրեցաւ: Զգեստի նիւթերն հասարակ էին միշտ, երփներանգէ և սեթևեթներէ խորշեցաւ իսպառ, և առաջին առիթով փակեղին մանուշակագոյն մասն ալ սևի փոխարկեց (2859): Նիւթականին հանգոյն էր բովանդակ կեանքն ալ, Արծաթասիրութեան ստուերուն իսկ չերևցաւ իր վրան, և ձեռքն անցած ցանցառ և չափաւոր նուէրներն ու արժէքները մտադիր կը տրամադրեր հանրօգուտ բարեգործական և ուսումնական ձեռնարկներու: Մեռնելէն ետքը մօտէն բան մը չելաւ, և անոնք որ կենթադրէին թէ պահծու գումարներ ունեցած ըլլայ, եղբայրները ամբաստանեցին թէ վերջին պահուն եղածը վերցուցած ըլլան: Իր վարգացումներուն գալով՝ կատարեալ հաւատացեալի տիպարն էր, կրօնական պարտաւորութեանց ճշդապահ, եկեղեցի յաճախող, կարգապահութեանց և հանդիսակատարութեանց քաջալերող, պաշտամանց ատեն մտամփոփ, համոզուած և յուլիչ քարոզող, արարողութեանց սիրահար, եկեղեցւոյ մէջ խոսքն ու ծիծաղը չէր տեսնուած, պատրիարքական աթոռը չէր նստեր, ի գուճս քիչ մը կը բազմէր, յտընկայս կը մնար ցորչափ մարմնոյ տկարութիւնը կը ներէր: Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեանց նախանձայոյզ պաշտպան էր, թէպէտ հոռմէական եկեղեցւոյ և եկեղեցականաց կարգապահութեան գովաբան և շարունակող: Այս մասին իր համոզմանց լուսաւոր փաստ կը կազմեն Օրմանեանի և հետևողաց մայրենի եկեղեցի վերադարձին առթիւ յայտնած տեսութիւնները (79. ՄԱՍ. 2463), զի և անոնց նմանողներուն վերադարձին գործը իր շահեցողութեամբ իրագործուեցաւ, 1830-ի բաժանումէն ի վեր չտեսնուած, չափով: Ասով մէկտեղ այլադաւաններու հանդէպ միշտ չինիշ յարաբերութիւններ պահեց, և մոլեռանդ խստութիւններ չգործեց ինչ որ մասամբ իր բնաւորութեան և մասամբ իր մտայնութեան հետևանքներ: Վատիկանեան ժողովի հրաւերին հանդէպ եթէ կարի խիստ ցոյցեր չըրաւ, թերևս պայմանաւոր վարմունքով ազգայնաբար բան մը շահելու մտածմունքն ունեցաւ, բայց ոչ համամտութիւն յայտնեց և ոչ նպաստաւոր քայլ մը առաւ: Իր եկեղեցին կը սիրէր ու կը յարգէր, ու կէտ մը իսկ զոհել չէր ուզեր, բայց հոռմէական կարգապահութենէ բան մը ներս առնելու փափաքը չէր ծածկեր: Մէկ խոսքով անբասիր կենցաղը և եկեղեցականի վայել կեանքը գերապանցեց ամէն անձնական և պաշտօնական նկատումներու վրայ, այնպէս որ իր անձին ուխտեալ հակառակորդներ կամ լաւ ևս արուեստակեալ ընդդիմադիրներն իսկ չհամարձակեցան երբեք այդ մասին և ոչ ակնարկ մը ընել անոր դէմ:

2904. ՈՒՍՈՒՄՆ ՈՒ ԱՐԴԻՒՆԲԸ

Ներսէսի ուսումնական վարգացումը Խասքէօյի թաղական վարժարանին ծրագիրով փակուած էր, որ որչափ ալ կանոնաւոր եղած ըսուի, վերջապէս թաղական վարժարանի մը

ընթացքին աւելի չէր կրնար ըլլայ, և ինչ որ անկէ աւելի ստացած, ինքնաշխատութեան և անձնական ջանքերու արդիւնքն եղած է: Իր աշակերտութեան ժամանակէն յատուկ աշխատութիւն և յառաջադիմութիւն ունեցած պիտի ըլլար, որ 16 տարեկան եղած ատեն նոյն վարժարանին մէջ ուսուցչական պաշտօնի կոչուեցաւ և 18 տարեկան Ադրիանուպոլիս փոխադրուելով քաղաքացւոց վարկն ու համակրութիւնը վայելեց, որոնք անշուշտ չունէին իր վրայ այն ներողամտութիւնը, որ կրնայ ենթադրուիլ Խասթօյցիներու վրայ իրենց գիւղակից որբ պատանիին հանդէպ: Հայերէն և տաճկերէն և գաղղիերէն լեզուներուն բաւականաչափ տիրացած, ուսումնական և կրօնական հմտութեանց գոհացուցիչ պաշար մը գանձած, նա արժանացած է մայրաքաղաքի ուսեալ և վարգացեալ և լուսաւորեալ դասակարգին յարգանքը գրաւել, և իբր անոնց գլխաւորներէն մին պատուուիլ, և մինչև աստիճան մը ռահահորդ հանդիսանալ: Առանձին շրջանակներու մէջ բանիբուն բացատրութիւնները, ժողովներու մէջ խոհական տեսութիւնները, բեմերու վրայ հմտակից և օժուն քարոյները, գրութեանց մէջ սահուն և կուռ ոճը, կը հաւաստեն անոր մտաւոր վարգացումը, որ եթէ կանուխէն առատ պաշար ալ չունէր, դարձեալ մտաւորական ուշիմութեան նշանակ էր պաշարէն աւելի արդիւնք ցուցնել, գլխաւորապէս կրօնական ճիւղին մէջ: Կը պատմուի թէ Ռուսիոյ դեսպանատան մէջ Իկնաթիէվ դեսպանին և բարձրաստիճան օսմանեան պաշտօնէի մը ներկայութեամբ այնպիսի կուռ և առատ և դիտական բացատրութիւն մը տւած է Երրորդութեան վրայ, որ երկուքն ալ վարգացմամբ վկայած և գոված են Ներսէսի աստուածաբանական հմտութիւնը (84.ԱՐԼ.270): Ներսէս իր ետևէն նշանաւոր երկասիրութիւններ թողած չէ. բայց այս ա՛լ պարզապէս իր վարած կեանքին հետևանքն է եղած, որ միշտ յարատև վարչական շրջանակին մէջ մնացած է, ժողովական, ատենապետ, պատուիրակ, առաջնորդ, պատրիարք, որոնք գրական վաստակոց ոչ պատեհ կու տան և ոչ վբաղիլ կը ներեն, և կրնանք ըսել թէ պաշտօնական կեանքէն ազատ վայրկեան մը չունեցաւ: Իր գրական արդեանց երախայրիքը ջատագովական տեսորակ մըն է 26 փոքրագիր երեսներով և Քրիստոսի սուրբ եկեղեցին և անոր հակառակորդները վերտառութեամբ, զոր գրած և հրատարակած է 1864 յունուար 21-ին (ՔՐԻ.26) ազգայիններէն ոմանց եկեղեցւոյ սկզբանց և խորհրդոց դէմ տեսորակներ հրատարակելուն առիթ, և հրամանաւ պատրիարքին և կրօնական ժողովոյ (ՔՐԻ.1), որ կը ցուցնէ պաշտօնական շրջանակին մէջ կրօնական հմտութեանց տէր ճանչցուած ըլլալը: Աւելի ընդարձակ աշխատութիւն մըն է: Ուսումն Համաբարբառ Աւետարանի Տեսոն մերոյ հրատարակութիւնը պատրիարքութենէ առաջ պատրաստուած և պատրիարքութեան սկիզբը հրատարակուած, որ է չորս Աւետարաններու իրարու համաձայնութեամբ միացումը գրաբար բնագիրը և աշխարհաբար բացատրութիւնը պարունակող, տեղեկութիւններով և խորհրդածութիւններով ճոխացած: Յառաջաբանին մէջ ինքն ալ կը խոստովանի թէ հնոց և նորոց կարևորագոյն բացատրութիւններն ընտրանու համառօտած է, և որչափ ալ օտարազգի հեղինակներէ օգտուած ըլլալը կերևի, մասնաւորապէս Հայաստանեայց եկեղեցւոյ Սուրբ Հարց գրուածներն ալ աչքի առջև ունացած ըլլալը կը յիշէ (ՌԻՍ.1): Գործը սեփական քննադատութիւններ և յատուկ իմաստասիրութիւններ չունի, բայց մեծապէս օգտակար է Քրիստոսի կեանքին և վարդապետութեանց վրայ ժողովուրդի միտքերը լուսաբանելու: Ներսէսի անունով կտակ մըն ալ հրատարակուեցաւ 1895-ին, մահուանէ 11 տարի ետքը (95.ԱՔՍ.153-164), բոլորովին ազգային և վարչական պարունակութեամբ, զոր այստեղ միայն գրական տեսակէտէն կը յիշենք: Հրատարակողը վայն իր ձեռքն ունեցած է անդստին 1888-էն գաղղիերէն լեզուով հրատարակուած, զի հայերէն բնագիրը չէ տեսնուած, և հրատարակութիւնը եղած է նորէն գաղղիերէն հայերէնի թարգմանելով: Որչափ ալ հրատարակողները կը վկայեն թէ երաշխաւորեալ են մեզ սորա բնագրի մասին (95.ԱՔՍ.153), բայց միշտ տեղի կը մնայ կասկածելու թէ տեղեակ

գրողի մը յօրինուածը կրնայ ըլլալ: Կտակը 1884 հոկտեմբեր 1 թուականը կը կրէ (95.Ա.ՔԱ.164), որ է ըսել մահուանէ 25 օր առաջ: Մենք չենք մտներ վաւերականութեան խնդիրին մէջ. միայն Ներսէսի հետ ունեցած մտերմական յարաբերութիւններնու վրայ հիմնուելով կրնանք վկայել, թէ իսկապէս Ներսէսի մտայնութեանց և համոզմանց արտայայտութիւնն է կտակին պարունակութիւնը, ինչպէս առաջիկային պիտի վերլուծենք:

2905. ՈՒՂՂՈՒԹԻՒՆ ՈՒ ՀԵՏԵՒԱՆՔԸ Ներսէսի զօրաւորագոյն կողմը իր վարչական կարողութիւնն էր, որով դժուարին պարագաներու ձեռնամուխ ըլլալով իսկ՝ կրցաւ անոնց մէջ ինքզինքը բարձր պահել և ուղղութենէ չշեղիլ: Իր տասնամեայ պատրիարքութիւնը վանապան և բազմակողմանի խնդիրներով խճողուեցաւ, և ինքն ալ նախաձեռնարկ եղաւ նոր և դժուարին խնդիրներ յուպելու, որոնք եթէ իրենց նպատակին հասնելով չպսակուեցան, բայց և ոչ Ներսէսի վարկին և արժանիքին ստուերած բերին: Նա կրցաւ միշտ ճարտարութեամբ մէջէն ելնել և արժանեաց վարկը վրայ չտալ: Վարչական գործունէութիւնը կրնանք երկու մեծ ճիւղերու բաշխել, դէպի դուրս՝ կառավարութեան հետ և դէպի ներս՝ ուղղութեան հետ: Առաջին բաժինին մէջ խրիմեանի օրէն ծագած էր Հայ ազգին կացութեան խնդիրը, և գլխաւորապէս գաւառացի աննախանձելի վիճակը, որ յառաջ կու գար քրդական անպուսպ ցեղերու համարձակ բռնապետութիւնէն, կառավարական մարմիններու և պաշտօնեաներու թոյլ և անհոգ վարմունքէն, ապիկար և շահագէտ ընթացքէն չլսելու համար, և հայ տարրին անդէն և անպաշտպան ըլլալէն և դիմադրութեանց միջոց չունենալէն: Այդ կացութեան հարստահարութեան խնդիր անունը տրուեցաւ, և Խրիմեանի պատրիարքութեան ատեն Ներսէսի ատենապետութեամբ կազմուած յանձնաժողովը առաջին տեղեկագիր մը կազմեց (2823), երկրորդ մըն ալ Ներսէսի պատրիարքութեան ատեն կազմուեցաւ (2842), 1876 սեպտեմբեր 17 թուականով (ԲՏՂ.9-44) և դիմումներ կրկնուեցան, և գործը առկախ կը մնար երբոր ռուսութեամբ պատերազմը սկսաւ (2843), և Թուրքիոյ վանապան տարրներու վիճակին բարւոքման և երկրին բարեկարգութեան գաղափարները արթնացան: Ներսէս նախաձեռնարկ եղաւ, հարկաւ ոչ առանց խորհրդակիցներու և ոչ առանց գործակիցներու, բայց միշտ իր անհատական ձեռնարկութեան և անձնական պատասխանատուութեան ներքև, ուպեց առիթէն օգտուիլ և հայուն համար ալ լաւագոյն կացութիւն մը պատրաստել, և խաղաղութեան միջապագային դաշնագիրներու մէջ յաջողեցաւ հայուն անունն ու պէտք ու իրաւունքը արձանագրել տալ, ինչպէս որ իր կարգին պատմած ենք (2844-2845), և այդ ձեռնարկէն ծագած Հայկական խնդիրին վանապան պարագաներն ալ բացատրած (2866): Նպատակնիս պատմութիւնը կրկնել չէ, այլ պարզապէս վեր հանել այն յաջողակութեան և վարչական կարողութեան փաստը, որ պիտի քաղուի այդ դժուարին և փափուկ ձեռնարկին մէջէն անփորձ ելնելէն, ոչ զինքն վտանգելով և ոչ իր գործը ուրանալով: Ներսէսի ձեռնարկը եթէ իր կատարեալ նպատակին չհասաւ, արգելքները պատահական պարագաներէն առաջ եկան, իսկ խնդիրը մնաց և միջապագային յարաբերութեանց և պետական մտադրութեանց առարկայ ըլլալ շարունակեց, և կրնար ալ արդիւնաւորիլ եթէ ձախողակի շեղումներու չհանդիպէր: Այնպէս իմն կըմբռնուէր որ Ներսէս Թուրքիոյ Վեհապետին և պետութեան անախոյժ ընթացքի մէջ գտնուած ըլլայ, և իր անձին հետ ազգն ալ վտանգի ենթարկած ըլլայ, սակայն միշտ ու յարատև և մինչև վերջին վայրկեանը Վեհապետին սիրելի և պետութեան ակնածելի մնացած ըլլալը և յատուկ պատուասիրութեանց առարկայ դառնալը, ձախող ըմբռնումը կը ցրէ, և ասով իսկ կարգարացնէ և կը բարձրացնէ Ներսէսի վարչական կարողութիւնը: Իրօք ալ վարչականութեան առաւելութիւնը, դժուարութեանց առաւելութեամբ և փորձութեան յաճախութեամբ կը չափուի, և ոչ դիւրութեանց առատութեամբը: Թէպէտ քանիցս այդ կէտը դիտել տալու առիթներ ունեցանք,

բայց վերջին անգամ մըն ալ հեղինակաւոր անձանց ձայնակցութեամբ կրկնել աւելորդ չենք սեպեր: Ներսէս նոր ճամբայ բացաւ ազգին առջև, ճամբայ մը որ կը տանի դէպ օրէնք և իրաւունք. զի օրէնք և իրաւունք էին իւր կէտ նպատակին, ինչպէս կը յայտարարէր դամբանախօս եպիսկոպոսը (84.ԱՐԼ.248): Սիրելի եղած էր մեր Օգոստոսիան կայսեր, և վանապան պարագաներու մէջ իւր հաւատարմութիւնը փորձով ցոյց տուած էր, ինչպէս կը վկայէր երեսփոխանութեան ատենապետը (84.ԱՐԼ.251): Գաղափարի մը ներկայացուցիչ էր, և նշանաբան մը՝ որով կը յուզէր ու կոգևորէր ազգին ամէնէն խոր ու ջերմ վզացմունքը որով լուսաբանութեան և բարօրութեան օրեր կաւետէր, ինչպէս կը հռչակէր իրեն ոչ միշտ ջատագով եղող խմբագրապետ մը (84.ԱՐԵ.522): Արձագանք մըն ալ հեռուէն և կը ցաւէր որ Ներսէս գիշերուան առանձնութեան մէջ առանց ընկերակցի հոգին աւանդելով, մեռնում էր առանց իւր վերջին խօսքը իւր ազգին առնելու, բայց կը մխիթարուէր աւելցնելով, թէ ունինք քու կեանքիդ, ունինք քեզմէ այդ ժառանգութիւնը: Իրօք ալ իր հանձարը և խոհական և ուղղամիտ կեանքը արժանի է ազգային մշտնջենաւոր ժառանգութիւն սեպուելու:

2906. ԿԵԱՆՔՆ ՈՒ ԱՐԺԱՆԻՔԸ

Նկատողութեան արժանի կէտ մըն ալ Ներսէսի հանդէպ ցուցուած ընդիմութիւնը, և Ներսէսի կողմէ յայտնուած վզացումն է: Նախ և առաջ պետք է ըսենք թէ ընդդիմադիր խումբը ոչ մեծամասնութիւն էր և ոչ կարևոր բազմութիւն մը, և ոչ ժողովրդական բաժին մը, այլ պարզապէս փոքրիկ խմբակ մը, խօսքի յաջողակ, գրիչի ատակ, և գործի հետևակ, որ սահմանադրութեան տառին կառչած էր և հոգիէն շլմորած, բծախնդրութեանց սիրահար անձեր կը կազմէին վայն, տեսակ մը սահմանադրամուկներ, եթէ այսպէս օրէն է կոչել, որոնք իրեն աւելի ձևին, իսկութենէ աւելի երևոյթին կը հետևէին, և իրենց վրայ խօսիլ տալու փափաքով, և գիտցողի ու գործողի օդեր առնելով. ոչ թէ Ներսէսի անձին դէմ յատկապէս, այլ ամէն գործին գլուխ գտնուողներուն հանդէպ միևնոյն վարմունքն ունէին: Միւս կողմէն վարմանալի էր որ Ընդհանուր ժողովներու մէջ խնդիրներ և աղմուկներ գոյացնող և ըմբոստութեան հասնող այդ անձեր, ձևական շրջանակէ դուրս Ներսէսի հանդէպ պատուոյ և յարգանքի, սիրոյ և վարկի պահանջները խստիւ պահողներն էին: Ներսէս ալ եթէ ուրեք երբեք պաշտօնական շրջանակի մէջ անոնք հարուածէր, և անոնցմէ ձանձրանալով հրաժարականներ կը կրկնէր, պաշտօնականէն դուրս կատարեալ բարեկամ անոնց հանդէպ: Գայթակղութեան քարը սահմանադրական ձևն էր, որուն կազմութեան Ներսէս ալ օգնած էր իր առաջին գործունէութեան ատեն, բայց երբ գործի գլուխ գտնուեցաւ, տեսաւ ընդունուած ձևին թերի կողմերը, և նեղ դրութեան մէջ գտնուեցաւ, չկրնալով ոչ սահմանադրութիւնը ուրանալ և ոչ հետևանքները տանլի: Այդ ներհակ վզացումը յայտնապէս կը բացատրուի կտակ գրութեան մէջ: Նա չուրանար որ ինքն ևս նպաստեր է իրաց այս վիճակին, բայց չուզէր մեղադրուիլ այդ ըրածին համար, և վանապան մեկնութիւններ կուտայ, կամ իր բերնով կը տրուին, բոլոր անտեղի հետևանքները ոչ սահմանադրութեան, այլ շեղումներու կը վերագրուին, կը յիշուի եկեղեցական իշխանութեան անարգուիլը, մինչ այն սահմանադրութենէ առաջ էր, և սահմանադրութիւն վայն չէր ջնջած կը յիշուի Ընդհանուր ժողովին հասարակ տարրներէ կազմուիլը, որ սահմանադրութեան պահանջը չէր. կը յիշուի սահմանադրութենէ դուրս ներքին կանոնագիրին ստեղծման կացութիւնը, մինչ կանոնագրութիւնը սահմանադրութիւն չէր: Նոյնպէս կը դիտուի թէ յաջողութիւնը փոխանակ սեպհական խոհականութենէ և, աշխատութենէ սպասելու, վայն շնորհքէ և պաշտպանութենէ սպասելու համոզումն էր տիրած, և ինքն ալ կարող աջակիցներէ վուրկ էր մնացած: Այս դիտողութեանց մէջ մեր տեսակէտով էական կէտ մը վանց եղած է, որ երեսփոխանութիւնը փոխանակ երկտարեկան ժողով մը ըլլալու, մշտատև ժողով մը

դարձած և վարչութեան դեր ստացած էր: Հայկական խնդիրին վրայ ալ խօսելով կտակը կը յայտարարէ թէ Ներսէս հաւատարմութեան սկզբունքներէ չեղած չէ, և թէ իր օրինաւոր ընթացքով պետական պատիւ և հովանաւորութիւն ալ գտած է: Էջմիածնի ընտրութեան վրայ ալ խօսելով բացարձակապէս կը պաշտպանէ Մակար եպիսկոպոսի ընտրելիութիւնը: Կ. Պոլսոյ աթոռին համար իրեն յաջորդ մը չուկեր ցուցնել, միայն ուղիղ միտքով գործող մը կը յանձնարարէ: Երուսաղէմի պարտքին վճարման կարևորութիւնը կը շեշտէ, Նուպար-Շահնապարեան վարժարանը վերակենդանացնել կը բաղձայ, և անկէ ելած սաներուն կը յանձնէ այդ փափաքը իրականացնել (95.Ա.ՔԱ.158-164): Այդ համառօտ ակնարկներ բաւական ըլլան ներքին վարչութեան մասին Ներսէսի միտքը բացատրելու, զոր կրնանք վստահօրէն հաւաստել կտակ կոչուած գրութեան վաւերականութենէն անկախաբար: Ներսէսի մասին դեռ շատ ևս կէտեր և շատ երկարօրէն կրնայինք բացատրել, և եթէ քիչ մը աւելի ալ ընդարձակուեցանք, նպատակնիս եղած է ճշդիւ պատկերացնել անձ մը որ մեծ եղած է իր միտքով ու գործով սակայն արդ ևս կը գտնուին իր մասին դիտողութիւն ընողներ, իր ուղղութիւն ու ձեռնարկներ մեղադրողներ, որոնք Ներսէսի գործունէութիւնը անկէ վեղծանողներուն գործերուն հետ կը շփոթեն: Մենք վստահօրէն կը կրկնենք նոյն խօսքերը, զորս 33 տարի առաջ գրած ենք հապիւ գոցուած գերեզմանին վրայ: - Ներսէս իր ազգին բարւոյն և յառաջադիմութեան նախանձայոյց եղաւ: Ներսէս իր ազգին ճշմարիտ օգուտին համար անձնուէր աշխատեցաւ: Ներսէս իր եկեղեցւոյն պայծառութեան ժիր մշակ եղաւ: Ներսէս իր պետութեան ճշմարիտ շահերուն գիտակ և հետևող եղաւ: Ներսէս իր ամէն պաշտօններուն մէջ ժողովուրդը կէտ նպատակի ունեցաւ: Ներսէս իր բարձրութեան մէջ ժողովուրդին պէտքն ու ցաւերը չմոռցաւ: Ներսէս ժամանակին բերմունքը ճանչցաւ և ըստ այնմ գործեց: Ներսէս արդարացի և հնարաւոր իրաց համարձակ թարգմանը: Ներսէս անձնական բարեմասնութեանց օրինակելի տիպար մը հանդիսացաւ: Ներսէս արդեամբ և արժանեօք բարձրացաւ: Ներսէս իր ազգը ճանչցուց և սիրացուց և պատուեց: Ներսէս պարագաներուն ներածին չափ իր ազգն ու եկեղեցին շահեցուց ու վարգացուց (84, Ա.ՐԼ. 261): Ազգը Ներսէսէն աւելին ևս կը սպասէր՝ աւելի ընդարձակ ասպարէզի մէջ Ամենայն Հայոց աթոռին վրայէն, բայց դժիւմ բախտը չնպաստեց, դժպիսի փստը դաւեց, դըժնեայ պարագաներ վայրացան դժգոհ մնաց հայ հանրութիւնը, դժնդակ հետևանքներ երևան եկան, երբոր գործին տէրն և ուղղիչը պակսեցաւ, և օտարոտի ձեռքեր տիրացան և ուղղիչ դառնալ յաւակնեցան:

2907. ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ներսէսի մահուամբը ևս քանզևս աճեցաւ ազգային տագնապը: Մայրաթոռը թափուր էր Գէորգ կաթողիկոսի մահուանէ ի վեր. Երուսաղէմի աթառակալը Եսայի տարիներէ հետէ պանդուխտ կը թափառէր Կ. Պոլսոյ մէջ. Կիլիկիոյ աթոռին վրայ Մկրտիչ իբրև օտար կը վարուէր իր պաշտօնին հանդէպ: Աղթամարէն գանգատներ կը հասնէին շարունակ Խաչատուրի ընթացքին դէմ Կ. Պոլսոյ աթոռին պարապութիւնը կու գար լրացնել տագնապներուն շարքը, զի ամէն աթոռներ մտահոգութիւն պատճառող պարագաներ կը ներկայէին, և Կեդրոնին լուրջ հոգածութիւնը կը պահանջէին: Անհրաժէշտ դարմաններու շուտով ձեռք վարնելու և գործերը չյապաղելու դիտմամբ վարչութիւնը մտածեց Տեղապահի ընտրութիւնը ընել, և պատրիարքական փոխանորդ Գէորգ Ռուսճուզլեան վարդապետի նախագահութեամբ անմիջապէս պատրիարքի ընտրութիւն կատարել, որպէսզի յետոյ նորընտիր պատրիարքի ձեռքով միւս պահանջները լրացնէ: Այդ խորհուրդին նախաձեռնութիւնը կրօնականը ստանձնեց և Խառն ժողովը հաստատեց հոկտեմբեր 31-ին, նոյն իսկ Ներսէսի թաղման օրը (84.Ա.ՐԼ.250), սակայն պէտք էր կառավարութեան հաւանութիւնն ալ ընդունիլ, և Մաքսուտեան ատենապետ այդ նպատակով

սկսաւ գործել: Միւս կողմանէ համագումարը հրաւիրուեցաւ ընտրելեաց ցանկը պատրաստելու և գումարուեցաւ նոյեմբեր 12-ին (84.ԱՐԼ.260): Տաճկահայ եպիսկոպոսաց ցուցակը 30 անուն կը պարունակէր (84.ԱՐԼ.257), և ըստ սովորութեան ամէնն ալ ընտրելի ցուցուեցան, քանի որ մէկ քուէն իսկ բաւական ընդունուած է ընտրելի սեպուելուն համար: Այդ կէտը խնդիրի նիւթ դարձաւ գումարման մէջ ալ, և առաջարկուեցաւ 7 կամ 10 կամ 12 կամ 15 անուններով փակեալ ցանկի դրութիւնը ընդունիլ, և թէպէտ 15 անունի վրայ մեծամասնութիւն գոյացաւ, սակայն վերջնական որոշում չտրուեցաւ, զի սահմանադրութեան յօդուածին (ՍՀՄ.14) փոփոխութիւնը կենթադրէր: Համագումարի ցանկին գլուխը աւելի քուէ ստացող եօթները եղան, Յարութիւն Վեհապետեան 41, Մատթէոս Իզմիրլեան 33, Բարթողիմէոս Չամիչեան 27, Մելքիսեդեկ Մուրատեան 27, Խորէն Նարայէյ 22, Խորէն Աշըգեան 21, և Մկրտիչ Խրիմեան 17: Միւս եպիսկոպոսներէն երեքը 16-էն 12, երեքը 7, երեքը 4, երեքը 3, վեցը 2, և հինգը մէկ քուէ առեր էին (84.ԱՐԼ.260): Վերոյիշեալ եօթերէն իւրաքանչիւրն ալ զինք առաջն քշող կուսակցութիւն մը ունէր, և իւրաքանչիւրին համար նախադասութեան փաստեր կը խօսուէին տարբեր ըմբռնումներու հետևողութեամբ. բայց ամենէն աւելի խօսուածը Վեհապետեանն էր, որուն ընտրելիութիւնը հոգևին կը պաշտպանէր երեսփոխանութեան մէջ կազմուած և իրեն յառաջադիմական անունը տուած կուսակցութիւնը, որչափ ալ Վեհապետեան հեռի էր յառաջադիմական գաղափարներով տոգորեալ ըլլալէ: Մուրատեանի պաշտպանութիւնը աւելի Չմիւռնիոյ կողմէն կը լսուէր իսկ Չամիչեան և Նարայէյ իրենք էին որ իրենց ընտրելիութեան համար ճիգեր կը թափէին: Այսպէս նախապատրաստութիւնները լրացնելով օրէօր ընտրութիւն կատարելու պետական արտօնագիրին կը սպասուէր, որ սակայն կուշանար, բայց վերջապէս նոյեմբեր 28-ին պատասխան կը ստացուէր, թէ օրէնքին համաձայն նախ պէտք է տեղապահը նշանակուի, որ անոր անունին նոր ընտրութիւնը հրամայուի, և թէ փոխանորդին չի կրնար այսպիսի յանձնարարութիւն մը ըլլալ (84.ԱՐԼ.273): Այսպէս վարչութեան մտածած փութացնելու եղանակը աւելի ուշացնելու պատճառ կը դառնար, որ պէտք չէր վրիպած ըլլար վարչութեան նախատեսութենէն և շատ աւելի գործը դիւրացած կըլլար եթէ Ռուսճուգլեանը փոխանակ փոխանորդի՝ սկիւբէն տեղապահի անունով ներկայացուցած ըլլար, ինչ որ վերջէն վերջ ստիպուեցաւ ընել, և նոր անձնաւորութիւն մէջտեղ չհանելու համար պայն պաշտօնապէս տեղապահ ընտրեց դեկտեմբեր 5-ին, և անոր անունով ընտրութեան արտօնագիրը խնդրեց (84.ԱՐԼ.279): Բայց դարձեալ գործը երկարեցաւ, զի կառավարութիւնը նոր հետապօտութեանց ետևէն եղաւ, և վարչութեան թախանձանքները շարունակեցին, և հապիւ 1885 յունուար 15-ին ստացուեցաւ պահանջուած արտօնագիրը, 16-ին քաղաքականը հինգ նախադասելիներու ցուցակը կազմեց Վեհապետեանի, Իզմիրլեանի, Չամիչեանի, Նարայէյի և Աշըգեանի անուններով (85.ԱՐԼ.312): Առաջին եօթներէն զեղջեց Մուրատեանի անունը, զի հօրմէն սկսեալ օսմանեան հպատակ չէր (ՍՀՄ.13), և Խրիմեանի անունն ալ, որ անգամ մը պատրիարք եղած էր (2826): Վեհապետեանի անունը այս անգամ ալ ցանկին գլուխը անցած էր, և ամէն պարագայ նախատեսել կու տար անոր անհակառակ ընտրութիւնը, ինչ որ իրականացաւ ալ յունուար 25-ի Ընդհանուր ժողովոյ գումարման մէջ, և 88 ներկաներու 65 քուէով (84.ԱՐԼ.321) կամ քուէներու երեք քառորդով Յարութիւն Վեհապետեան պատրիարք հռչակուեցաւ, և Ընդհանուրի կարծիքը, համագումարի միտքը, քաղաքականի առաջարկը միանգամայն արդարացան երեսփոխանութեան քուէարկութեամբ, և ընտրութիւնը մեծադողորդ խնդրութեամբ ողջունուեցաւ ժողովականներու և ունկնդիրներու կողմէն, և արձագանք տուաւ ժողովուրդի մէջ: Բայց երբ կը սպասուէր անմիջական հաստատութեամբ նորընտիրը գործին գլուխը տեսնել, ահա նոր խնդիր մըն ալ երևան ելաւ: Մայրաքաղաքի գաղղիերէն թերթերէն

ումանց մէջ տեղեկութիւններ երևցան Վեհապետեանի ծագման և ազգութեան վրայ, և յայտնապէս գրուեցաւ թէ մահմետական ծնողաց վաւակ եղած է, ու 14 տարեկան եղած ատեն քրիստոնէութիւն ընդունած է (85. ԱՐԼ. 323): Բնական էր որ այսպիսի տեղեկութիւն մը պիտի գրաւէր իսլամական պետութեան մտադրութիւնը, որուն կրօնական օրէնքն աններող է իրեններուն կրօնափոխութեան դէմ, ուստի ձեռք վարնուեցաւ անպաշտօն և մասնաւոր միջոցներով իրողութիւնը ստուգել: Ազգային լրագիրներ (85. ԱՐԼ. 323), և նոյնիսկ թուրք թերթեր (85. ԱՐԼ. 324) կրոյցը ստեցին, և բնիկ վիտի և քրիստոնեայ ծնողներու վաւակ ըլլալը հրատարակեցին, և խառն ժողովն ալ յունուար 30-ին որոշեց կառավարութեան բողոքել այլընդայլոյ հրատարակութեանց դէմ (85. ԱՐԼ. 333): Կարավարութիւնը իր քննութիւնները շարունակեց, մինչև իսկ Երուսաղէմի կառավարիչին ձեռքով նոյնիսկ Վեհապետեանի մտերմաբար հարցում ուղղուեցաւ (85. ԱՐԼ. 352), իսկ պատրիարքարանէն վկայագիր ալ տրուեցաւ թէ հորմէն սկսեալ օսմանեան հպատակ ըլլալուն, և թէ Եգիպտոս գաղթաց Բերիացի Կիրակոսի վաւակ ըլլալուն, ինչպէս ալ ճանչցուած էր առաջին անգամ Կ. Պոլիս եկած ատենը (2651): Վերջապէս բոլոր դժուարութիւնները հարթուելով կայսերական հաստատութեան պաշտօնագիրը պատրիարքարան հաղորդուեցաւ մարտ 19-ին աւագ երեքշաբթի օր, ընտրութենէ 54 օր ետքը, սիրտերը հանդարտեցան և գործերը օրինաւորութեան ձև ստացան, և մարտ 24 Զատիկի օր յիշատակութիւնը սկսաւ (85. ԱՐԼ. 366): Եղելութիւնը պատմականօրէն յառաջ բերելէ ետքը, աւելորդ չենք սեպեր յաւելուլ, թէ ժամանակին բերնէ բերան խօսուած տեղեկութիւնները Խորէն Նարպէայ եպիսկոպոսը կը մեղադրէին իբր Վեհապետեանի ծագման խոսքերը գաղղիերէն լրագիրներուն հաղորդողը, անոր ընտրութիւնը բեկանել տալով իրեն ընտրուելուն ճամբայ բանալու դիտմամբ, զի Վեհապետեանէն ետքը առաւելագոյն քուէ ստացողը ինքն էր, թէպէտ 88-էն միայն 12 քուէ: 2908. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐԹ

Յարութիւն Վեհապետեանի առաջին կեանքը պատմած ենք մինչև Կարնոյ առաջնորդ ըլլալը 1859 ապրիլին (2652), պաշտօն մը վ օր վարեց մինչև 1880 մարտ, որ է ըսել 21 տարի ամբողջ: Հնար չէր որ այսչափ երկար տարիներ առանց որ և է միջադէպի անցնէին, և Վեհապետեան ալ մէկ երկու անգամ ժողովրդական խնդիրներ ունեցաւ, ամբաստանութիւններ եղան իր վրան, որոնց համար պատրիարքարան գալ պարտաւորեցաւ, ռուսական շքանշան մը կառավարութենէն անհրաման գործածած ըլլալուն համար տէրութեան կողմէն քննութեան ենթարկուեցաւ, բայց երբեք գիրքէն չխախտուեցաւ և պաշտօնին վրայ մնաց առանց ընդհատման: Վեհապետեան սկզբունքով խիստ պահպանողական, հեռի էր որևէ նորութեան հետևելէ. նոյն իսկ սահմանադրական ձևերուն համակիր մը չէր, բայց որչափ անտարբեր էր նորութիւններ մտաածելու մէջ, առաւել ևս ստեղծելու մղելու մէջ, նոյն չափ ալ ճշդապահ էր հաստատուած կանոնները ու ձևերը անթերի կատարելու մէջ: Կարնոյ մէջ չէին պակսեր բուռն յառաջադիմական գաղափար մշակողներ, որոնց համար Վեհապետեան առաջնորդ սպասուած ու փնտռուած դերակատարը չէր: Իրաւ, իր օրով շինուած էին նոր առաջնորդարանը և նոր վարժարաններ, սակայն ոչ վարչական կազմակերպութեան և ոչ ուսումնական վարգացման և կատարելագործեալ ծրագիրներու հեղինակ չէր եղած, թէպէտ երբ ժողովրդական ձեռնարկներ կըլլային արգիլողը չէր: Ինքն ալ մասնակցած էր երկրին բարեգործական ծրագիրը կազմելու, երբոր պատրիարքարանէն վայն պատրաստելու հրահանգ էր եկած: Հիներու համար նա պատկառելի առաջնորդ մնաց, իսկ նորերու կողմէն անբաւական անձ նկատուեցաւ, և սոյն ըմբռնումները աւելի ևս վօրացան երբոր ռուսութուրք պատերազմէն ետքը նոր գաղափարներ երևցան ազգին մէջ, և մինչև աստիճան մը կառավարութիւնն ալ անոնց նպաստաւոր ընթացք բռնեց: Այդ եղաւ պատճառք որ Վեհապետեան

վգաց թէ այլ ևս հանդարտ պաշտօնավարութիւն պիտի չունենայ Կարնոյ մէջ, և յօժարակամ հրաժարեցաւ երբոր երեսփոխական ժողովոյ մեծամասնութիւնը գրաւոր կերպով իր հրաժարականը խնդրեց, մանաւանդ երբ ստորագրողներու մէջ տեսաւ իրեն վստահած անձերուն, Պալլարեաններու և Փաստրմաճեաններու և Տէր Ապարեաններու անունները: Միւս կողմէն Կարնեցիք ալ վգուշացան որ և է անպատուաբեր շարժումէ իրեն դէմ, և սիրով կարգադրեցին անոր դրամական խնդիրները, և այսպէս առանց քաշկուտելու թողուց Կարինը, Կ. Պոլիս ալ մնալ չուզեց, և իր նախկին միաբանութեան ծոցը դարձաւ Երուսաղէմ: Այնտեղ ինն ամիս առկախ կացութիւն մը պահելէ ետքը, միաբանական գործունեայ կեանքի մէջ մտաւ 1881 յունիսէն սկսելով (2872), և տարի մը ետքը 1882 ապրիլին Եսայի պատրիարքի Կ. Պոլիս մեկնելուն առթիւ տեղակալութիւնը ստանձնեց (2876), և վարեց վայն երեք տարի մինչև 1885 մարտ 1-ին Եսայիի աթոռ դառնալը (2878): Անգամ մը միայն 1884 նոյեմբեր 11-ին Աղէքսանդրիա ուղևորեցաւ Գէորգ Երէցեան և ուրիշ վարդապետներու ուղեկցութեամբ, քաղաքին նորաշէն եկեղեցիին օծման հրաւիրուելով, որուն խաչափայտի և տպագիրներու նուէր ալ տարաւ (84. ԱՐԼ. 82), և դեկտեմբեր 9-ին արարողութիւնը կատարելով շուտով դարձաւ Երուսաղէմ, և քիչ ետքը 1885 յունուար 26-ին Կ. Պոլսոյ պատրիարք ընտրուելուն լուրն առաւ (85. ՏՆՕ. 125): Եթէ ճիշդն ըսել ուզենք ազգային գործոց բռնած ուղղութեան յարմար չէր Խրիմեանէ և Վարժապետեանի ընտրութիւնը, ոչ միայն զի երկուքէն ալ տարէց էր, այլ և բերմունքով և սկզբունքով ալ անոնց ձեռնարկներուն նմանողը չէր: Այլ եթէ ընդհանուր համեմատութիւն մը գոյացաւ անոր ընտրութեան մասին, և նոյնիսկ յառաջադիմական խումբը իրեն ընտրելին հռչակեց Վեհապետեանը, պէտք է հետևցնել թէ տիրող որոշ գաղափար մը կար այդ ընտրութեան մէջ: Ներսէսի ձեռնարկը կրնար վտանգաւոր կողմն ալ ունենալ եթէ ճարտար և խոհական ձեռքի չիյնար, մինչ Ներսէսի տեսակէն յարմար յաջորդ մը չէր գտնուէր: Այն ատեն պէտք եղաւ գոնէ այնպիսի մէկը ունենալ, որ կացութեան հաւատարիմ մնալու սկզբունքը յարգէր, չափազանցութեանց չծառայէր, փորձառութեամբ պարագաները կշռէր, և ձարտարութեամբ պետութեան հետ անոյշ չարաբերութիւնները պահէր. և իրօք, այսպիսի ոք էր Վեհապետեան նոր ծրագիրներ և նախաձեռնութիւններ կազմելէն հետո, բաց գտաած վիճակն ալ ճշդութեամբ պահպանելու հաւատարիմ, և ահա թէ ինչպէս յաջողեցաւ Վեհապետեանի ընտրութիւնը: Երբոր յունուար 26-ին կէսօրին Կ. Պոլսոյ հեռագիրները հասաւ ընտրութիւնը աւետող, Ս. Յակոբեանց միաբանութիւնը խմբովին շնորհաւորութեան չիմեց, մինչ Վեհապետեան կը դժուարէր տակաւին իւր յանձնառութիւնը որոշեալ: Երեմիա Տէր-Սահակեան եպիսկոպոս, որոյ առաջնորդութեամբ կը ներկայանար խումբը, ըստ պաշտօնի բացատրեց միաբանութեան փափաքն ու ակնկալութիւնը, զոր իրաւամբ կը տածէր այս ընտրութեան առթիւ: Միաբանները ձայնակցեցան, կրկնեցին, թախանձեցին, մինչև որ անոր բերնէն լսեցին թէ միայն յօգուտ Ս. Աթոռոյ կը յօժարի ընդունիլ այդ պաշտօնը: Թողլով բոլոր ընդհանուր պարագաները, որոնց մէջ իր միաբանութիւնը սիրող Երուսաղէմի միաբան մը կրնար կատարել ազգային պատրիարքութեան աթոռին վրայէն, երկու մեծամեծ խնդիրներ կային միաբանութեան վրայ ծանրացող, պարտուց բարձումը և մեծ արտին գրաւումէ ազատութիւնը, և երկուքն ալ Կ. Պոլսոյ պատրիարքին գործունէութենէն և բարեացակամութենէն կախում ունէին, և կարծես թէ Երուսաղէմի աթոռին համար յատուկ նախախնամական այցելութիւն մըն էր Վեհապետեանի պատրիարքական ընտրութիւնը: Պետական հաստատութեան յապաղումը և մէջտեղ նետուած փափուկ պատճառը պահ մը ընտրեալն ալ միաբանութիւնն ալ մտահոգութեան մատնեցին, բայց առանց վարանման պատճառանքները փարատել, աշխատեցան, և յատկապէս Կ. Պոլսոյ մէջ Երուսաղէմի փոխանորդ Սէֆէրեան Սիմոն եպիսկոպոսը, միաբանական շահերու անձնուէր և բոլորանուէր գործիչ մը,

ուստի երբ պետական հաստատութեան աւետիսը հասաւ, միաբանութիւնը խմբովին և ամբողջութեամբ կրկնեց իր շնորհաւորական ցոյցը (85.ՏՆՕ.154):

2909. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾԵՐ

Եսայի պատրիարք Կ. Պոլիս կը մնար տակաւին երբ պատրիարքական ընտրութիւնը տեղի ունեցաւ որուն ելքը ինչպէս Երուսաղէմի միաբանութեան նոյնչափ և աւելի ևս անոր պետին ուրախութիւն պատճառեց: Երեք տարիներ լրանալու մօտ էին որ նա Կ. Պոլիս կը դեգերէր պարտուց բարձման ազդու միջոց մը ճարելու, և մտածուած միջոցին գործադրութիւնը կարգադրելու: Մենք կանխած ենք և Երուսաղէմի պարտքին պատմութիւնը լրացուցած ենք (2877-2878), նիւթը ամփոփ սպառած ըլլալու համար, բայց նորէն պիտի յիշենք որ թէպէտ վինուորական տուրքին վրայ յաւելուածով Երուսաղէմի դրամ հաւաքելու առաջարկը պետութենէն ընդունուեցաւ 1883 յունիս 5-ին, սակայն հնար չեղաւ այն իսկոյն գործադրել Ներսէսի հիւանդութեան և մահուան պատճառով, և հապիւ 1885 փետրուար 1-ին երեսփոխանութիւնը հաստատեց գաւառացուց համար մտածուած ձևը, և պարտաւորիչ պայման մըն ալ աւելցուց մայրաքաղաքացուց համար (84.ԱՏՆ.393): Այդ որոշումէն շաբաթ մը առաջ յունուար 25-ին տեղի ունեցած էր Վեհապետեանի ընտրութիւնը, և Եսայի պատրիարք այլ ևս ամենայն ինչ լրացած, որոշողութիւնը տրուած, և գործադրութիւնը կարող միաբանի մը յանձնուած տեսնելով, սկսաւ Երուսաղէմ դառնալ պատրաստութիւններով վբաղիլ, մանաւանդ որ բաւական ծանր հիւանդութիւն ալ անցուցած էր մտահոգութիւն պատճառելու չափ (84.ԱՐԼ.270), Եսայի մեկնելու միտքը յայտնած էր նոյն իսկ Ընդհանուր ժողովին օրը փետրուար 1-ին, բայց ստիպուեցաւ յապաղել, գլխաւորաբար կայսեր կողմէ վինքն տեսնելու յայտնուած փափաքին վրայ, և փետրուար 31-ին մեկնելով մարտ 1-ին Երուսաղէմ մտաւ, և հոն կը գտնուէր երբ մարտ 19-ին Վեհապետեանի պատրիարքութեան կայսերական հաստատութեան աւետիսը հասաւ (2878): Եսայի պատրիարքին հետ Երուսաղէմ եկած էին Մատթէոս Իվմիրլեան եպիսկոպոս և աշխարհականներէ Գէորգ Փանոսեան իբր Եսայիի յուզարկ և Յարութիւնի հրաւիրակ միանգամայն, թէպէտ տակաւին հաստատութիւնը ստացուած չէր, բայց վստահութիւնը կազմուած էր: Հաստատութիւն լսուելուն վրայ առաջիկայ աւագ հինգշաբթի օրը Իվմիրլեան առաջին յիշատակութիւնը կատարեց Ս. Յակոբեանց տաճարին մէջ (85.ՏՆՕ.154), և միւս կողմէն մեկնելու կարգադրութիւններն եղան, և առանց շատ օր անցունելու ապրիլ 4-ին Նորկիրակիի հինգշաբթին Վեհապետեան պատրիարք հանդիսաւոր կերպով Երուսաղէմէ մեկնեցաւ, և 7-ին Աշխարհամատրան կիրակիին Յոպպէն նաւեց միշտ կրկնելով, թէ քանի որ ջ է չպիտի մոռնայ Երուսաղէմը և Ս. Աթոռը, ուր կը թողու իւր հոգին անբաժան միաբանութենէն: Վեհապետեանի Կ. Պոլիս հասնիլը առաջիկային թողլով, նախապէս Երուսաղէմի դէպքերը քաղենք: Երուսաղէմի աթոռին մէջ մեծ է փակակալի կամ լուսարարապետի դերը, որ մինչև իսկ պատրիարքի դերը կը հակակշռէ. վասն զի բացարձակ վարիչն է եկեղեցւոյն և տէրն է գանձատան, ուր ինք մինակ կը մտնէ և կելլէ, կը հանէ և կը դնէ, միայնումիայն իր խիղճին պատասխանատուութեան ներքև: Վերջին լուսարարապետ Բաբերդցի Իսահակ եպիսկոպոս Աստուածատուրեան, անկողնին մէջ կաթուածահար և մեռած գտնուած էր 1883 մարտ 15-ին առտուն, և 21-ին գանձը կնքուած էր, և 22-ին պաշտօնական տեղեկագիրը կազմուած, և երկու տարի էր որ այդ գրութիւնը կը տիրէր, տօնական հանդէսներուն զգեստներ կը պակսէին, և վարդեր և սպասներ անխնամ կը մնային: Եսայի պատրիարք Կ. Պոլիս կը գտնուէր և նոր ընտրութիւն կը յապաղէր, զի ամբողջ միաբանութեան կէսէն աւելիին քուէարկութեամբ պէտք էր ընտրուէր լուսարարապետը, և պատրիարքի նախագահելն ալ կարևոր էր, որուն մօտ օրէն դառնալուն յոյսերն ալ միշտ վառ կը մնային: Իբր կացութեան դարման Եսայի 1884 նոյեմբերին առաջարկած էր

աթոռին ներկաներով եռանուն փակեալ ցանկ մը կազմել, և անոր վրայ բացակայից քուէներն ալ պահանջել, սակայն տնօրէնը նոր և անյարմար տեսած էր այդ առաջարկը (84.ՏՆՕ.85): Եսայի երկրորդ անգամ առաջարկած էր 1884 դեկտեմբերին բաց կերպով բացականերէն քուէ ուզել և ներկայից քուէներուն խառնելով ընտրութիւն կատարել, բայց այս ձևն ալ ձգձգուած էր, զի իր դարձը իբր մօտալուտ լսուած էր (84. ՏՆՕ. 104), և վերջապէս ընտրութիւնը մնացած էր իր վերադառնալուն: Ըստ այսմ ընտրողական ժողով գումարուեցաւ 1885 մարտ 7-ին, մեծապահոց հինգերորդ հինգշաբթի օրը, և բացականերէ հասած 5 քուէներն ալ 33 ներկայից քուէներուն աւելցուելով ընտրութիւնը կատարուեցաւ, և 21 քուէից մեծամասնութեամբ լուսարարապետ կամ փակակալ ընտրուեցաւ Կովկասի նուիրակ Սահակ Խապայեան վարդապետ, 8 քուէ ստացեր էր Երեմիա եպիսկոպոս Տէր-Սահակեան, և 9 քուէներ ցրուած էին 8 անձանց վրայ (85. ՄԻԱ. 265): Կատարուած ընտրութեան հոգին և նշանակութիւնը յայտնի էր, Ղևոնդ Մաքսուտեան նախընթաց պայքարէն յաղթական ելած (2875) անօրէնին կատենապետէր և Գէորգ Երէցեան ատենդարին աջակցութեամբ ընտրութեան իշխողն էր, և Եսայի պատրիարք իրենց կը հովանաւորէր, և այս կերպով Ղևոնդ կը փոխարինէր առաջին պայքարին մէջ Սահակէ ընդունած պաշտպանութիւնը և իր գործունէութեան հաւատարիմ գործակցութիւնը (2873) և Խապայեան ալ ապրիլ 15-ին իր շնորհակալութիւնը կը հեռագրէր (85. ՏՆՕ. 167): Սակայն այս ընտրութեամբ գանձատան խնդիրը չէր լուծուէր, զի ընտրեալը բացակայ էր, և առաջիկայ Զատիկին պէտք եղած վարդերը չէր կրնար հանել, բայց եթէ պէտքը չէր լրանար, Ղևոնդ իր պարտքը լրացուցած կըլլար: Իսկ պէտքին համար կը կարգադրուէր ինչ որ առանց ընտրութեան ալ ընել հնար էր, և չորս անձանց մասնախումբ մը կը կազմուէր, որ կնիքները քակելով վարդեր և սպասներ հանուին և գանձատունը վերստին կնքուի վերստին կնքուի, և հանուածներն ալ առանձինն պահուին հանգուցեալ լուսարարապետի օգնական վարդապետին հսկողութեան ներքե, և այսպէս ալ կը գործադրուէր մարտ 9-ին (85. ՏՆՕ. 150-151), և վատկական հանդէսները շքեղօրէն կը կատարուէին: Վերև յիշեցինք թէ հնաւանդ սովորութեամբ գանձատունը լուսարարապետին յանձնուած էր՝ միայն իր խիղճին պատասխանատուութեան ներքե: Այդ կէտը խնդրի նիւթ եղաւ ընտրութենէ առաջ, և հանդէպ Աթոռին և Միաբանութեան ալ պատասխանատուութեան ձև մը գտնելու առաջարկներ եղան, բայց որոշ ձևի վրայ համաձայնութիւն չգոյանալուն, սկզբամբ ընդունեցաւ գանձատան պարունակութեան ցուցակ կազմել և նորընտրելի լուսարարապետը պարտաւոր ընել համակերպելու և հնազանդելու որևէ որոշումի և տնօրէնութեան որ ժամանակին և պարագայից պահանջմանաց համեմատ միաբանական ընդհանուր ժողովին կողմէ պիտի լինի (85. ՄԻԱ. 264): Երուսաղէմի աթոռին գործերը շարունակեցին իրենց սովորական ընթացքին մէջ, ընդհանուր ժողովի դիւանը նորոգուեցաւ (85. ՄԻԱ. 269), Երեմիա եպիսկոպոս Վեհապետեանի յաջորդեց փոխանորդութեան մէջ, նոր տնօրէն ժողով ընտրուեցաւ միշտ Մաքսուտեանի և Երէցեանի պարտաւորիչ դարձած մասնակցութեամբ (85. ՄԻԱ. 301), Իսկ պարտքի և մեծ արտի խնդիրներուն կարգադրութեանց համար Յարութիւն պատրիարքին Կ. Պոլսոյ մէջ կատարելիք յաջողութեանց սպասելով:

2910. ՅԱՐՈՒԹԻՒՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

Վեհապետեան Յարութիւն պատրիարք ապրիլ 7-ին Յոպպէ մեկնած աւստրիական շոգենաւով, արդէն Երուսաղէմ գտնուող Իվմիրլեան և Փանոսեան հրաւիրակներու, և Անոյշեան Գաբրիէլ վարդապետի ուղեկցութեամբ, առանց նորերու գալուն սպասելու, 12-ին հասաւ Զմիւռնիա ուր փառաւոր ընդունելութիւն պատրաստած էր իրեն Մուրատեան առաջնորդը, Երուսաղէմի նախկին միաբան (2868), ազգային և պետական հանդերձանքներով, և գիշերն ալ Սպարթալեանց ապարանքը հիւրասիրուելով (85. ԱՐԼ. 385): Միւս օր 13-ին Զմիւռնիայէ մեկնելով, 14-ին կարմիր

կիրակի առտուն հասա Չանաբգալէ, ուր յատուկ շօգենաւով ընդ առաջ եկած էր 60 հոգիէ բաղկացեալ պատգամաւորութիւն մը, Արիստակէս Դերձակեան և Հմայակ Դիմաքսեան եպիսկոպոսներու գլխաւորութեամբ, որոնց մէջ 6 վարդապետ և աւագերէցներ, 12 երեսփոխաններ, 10 վարչականներ և մնացեալը ժողովականներ: Նորընտիր և հետևորդները եկող շոգենաւը փոխադրուեցան, շնորհաւորութեան բանախօսութիւններ փոխանակութեան Չանաբգալէի թաղականութիւնն ու ժողովուրդը ներկայացան և երգեր երգուեցան: Եկող շոգենաւը կէսօրին ճնմբայ ելլելով Կէլիպօլու հանդիպեցաւ, ուր խնդակցական ցոյցեր կրկնուեցան (485. ԱՐԼ. 383), և վերջապէս երկուշաբթի առտու ապրիլ 15-ին շոգենաւը կանգ առաւ Եէնիգաբուի ծոցը: Պատրիարքական տեղապահը դիմաւորեց և ցամաք հանեց, ուսկից փառաւոր թափորով առաջնորդուեցաւ Գումգաբուի մայրեկեղեցին. ուր մտաւ եկեղեցական հանդէսով աղօթեց, խոսեցաւ և օրհնեց, և պատրիարքական ելլելով պաշտօնական մարմիններու շնորհաւորութիւնները ընդունեցաւ, և կէս օրին Երուսաղէմատուն անցաւ հանգստանալու: Ժողովրդական բազմութեան մասին ըստած է թէ անհնար կըլլար անցքի ակոս մը բանալ Եէնիգաբուէ Գումգաբու եկած պահուն, և ընդունելութեան հանդէսը նման ցարդ չտեսնուած փառքով և շքով եղած կը վկայուի: Պատրիարքական ուխտը կատարուեցաւ ապրիլ 17-ին չորեքշաբթի օր (85.ԱՏՆ.455), իսկ կայսերական ընդունելութիւնը յապաղեցաւ մինչև մայիս 6. Երկրորդ Ծաղկապարդի երկուշաբթին: Բայց Յարութիւն պատրիարք կանխեց և պաշտնական գործերու ձեռնարկեց, ժողովներու նախագահեց, դիւանները և դիւանական գործերը քննեց, դիմումներ ընդունեցաւ և կարգադրեց, և ժիր գործունէութեան առհաւատաչեայն տալ սկսաւ: Ինքն 66 տարեկան էր տակաւին, ինչպէս կրցած ենք ստուգել արժանահաւատ և քաջահմուտ անձերէ, կազմուածքով առողջ, բնութեամբ գործունեայ, և աշխատութեան տոկուն, իր առաջին քայլերուն մէջ լաւ տպաւորութիւն թողուց մայրաքաղաքի հանրութեան վրայ, և որչափ ալ նորութիւններէ և փոփոխութիւններէ հեռու, սակայն տիրող պարագայից համակերպող և գտածը պահպանելու աշխատող էր, ինչ որ կը բաւէր խոհական դասակարգը լիովին գոհացնելու: Իր պատրիարքական գործունէութեան և իր օրով տեղի ունեցած գործերու մասին պիտի խօսինք առաջիկային:

2911. ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՔ

Յարութիւն պատրիարքի ուխտէն և գործի սկսելէն միայն երկու օր ետքը, ապրիլ 19-ին Էջմիածնի ընտրողական ժողովը կը բացուէր, և 21-ին Երևման խաչի կիրակիէն կաթողիկոսական ընտրութիւնը տեղի կկունենար, բայց մենք պէտք է պահ մը ետև դառնանք Տաճկահայոց մասնակցութեան անցքերը պատմելու: Ռուսահայոց մասին ըստելիք չունինք, անոնց մասնակցութիւնը հաստատուն կերպով որոշուած էր պօլօթէնիէի օրէնքով և նոր խնդիրներ յուզելու առիթ չունէին, և այս անգամ ալ իբրև նոր ընտրութիւն մը նորէն միևնոյն կերպերը գործադրէին, զի նախընթաց տարւոյ մայիսի ընտրութեան համար կատարուած գործողութիւնները այս անգամուան համար ոյժ չէին կրնար ունենալ, և ամենայն ինչ նորէն պիտի կատարուէր: Իսկ Տաճկահայեր հաստատուն կանոն մը չունենալով, ամէն անգամ նոր խնդիրներու և նոր ձևերու ետևէ կըլլային, ինչպէս այս անգամ ալ Ներսէսի հրաժարականին կամ որ նոյն է մահուան օրն իսկ, 1884 հոկտեմբեր 26-ին, Ընդհանուր ժողովը կաթողիկոսական ընտրութեան խնդիրը օրակարգին կանցունէր, որպէսզի կարենայ խորհրդակցիլ և որոշել թէ ի՞նչ ուղղութեան պիտի հետևի ներկայ ընտրութեան առթիւ (84.ԱՏՆ.354), որով անգամ մըն ալ իր երերուն և անկայուն ընթացքը և օրինական կանոն մը չունենալը կապացուցանէր: Հակառակ այդ առաջին փութկոտութեան դեկտեմբեր 11-ին դեռ գործի ձեռք վարնուած չէր, և իբրև տակաւին

որոշուելիք խնդիրներ կը յիշուէին պօլօժէնիէի պարունակութիւնը և ընտրութեան ձևը և գաւառաց մասնակցութեան կերպը (84.ԱՐԼ.283), և վանապան կարծիքներ կը յայտնուէին, կամ նորինորոյ ընտրելիներ անուանել, և կամ նախընթաց ընտրութեան որոշումները պահել, միայն Ներսէսի պակասած անունին տեղ մերձաւորագոյն քուէ առնողները անցունել, եօթնանունին վրայ Վեհապետեանը և եռանունին վրայ Աշըգեան, նկատելով որ գաւառներէ քուէ ուզելու ժամանակ կը պակսի: Այս վերջին ձևը անով աւելի նախընտրելի կը սեպուէր, որ նովին իսկ Խրիմեան առաջին ընտրելի և բաղձացեալ ընտրելի կը դառնար, զի Խրիմեանի անունը միշտ հրապուրիչ կողմ մը ունէր (85.ԱՐԼ.335): Բայց Վահրամ Մանկունի եպիսկոպոս, որ տակաւին ամբաստանեալ գրութեան մէջ Էջմիածին կը մնար, յունուար 28 թուակիր ընդարձակ նամակ մը կը հրատարակէր, որով Տաճկահայերը կը յորդորէր իրենց եպիսկոպոսներուն շրջանակին մէջ չպարփակուիլ, խտրութենէ խորշիլ, և ռուսահայ եպիսկոպոս ալ ընտրելի ցուցնել (85. ԱՐԼ. 341): Փետրուար ամիսը լմննալու վրայ էր, ապրիլի կէսին ընտրողական ժողովը պիտի լացուէր, և տակաւին Տաճկահայոց երեսփոխութիւնը որոշման մը յանգած չէր, և հրապարակի վրայ իրարու հակառակ կարծիքներ կը յայտնուէին, իսկ Էջմիածնի սինոդի կողմէ պարարութիւն կը հասնէր, թէ պօլօժէնիէի ընդունած ձևէն տարբեր որ և է ընթացք չպիտի ընդունուի (85. ԱՐԼ. 345): Այսուհանդերձ Տաճկահայ երեսփոխութիւնը մարտ 1-ին նիստին մէջ կորոշէր 1884-ի ձևը անխախտ պահել (2892), այսինքն երեք ընտրելիներ ներկայել իրենց երեսփոխութենէ ստացած քուէներով, և ընտրելեաց եռանուն ցանկը լրացնելու համար Աշըգեանի անունը աւելցնել 1884-ին ստացած 18 քուէով, մինչ Խրիմեան և Մուրատեան կը մտնային 50 և 42 քուէով: Կառաջարկուէր ևս Խորէն Նարայէյ եպիսկոպոսը և Մինաս Չերապը պատուիրակ նշանակել, և գաւառները հրահանգել որ ուղղակի չմասնակցին, այլ եթէ հրաւերին կը պատասխանէն յիշեալ երկու պատուիրակները իրենց ներկայացուցիչ ցուցնել (85. ԱՐԼ. 350): Պատուիրակներու առաքումը դարձեալ դժուարութեանց կը հանդիպէր և գործը կերկարէր, օրը կը մօտենար, ուստի նորէն կաթողիկոսական տեղապահ Մակար եպիսկոպոսը պատուիրակ կը նշանակուէր, և Յովհաննէս Մկրեան քահանայի կը յանձնուէր պաշտօնագիրները տանիլ և որոշմնագիրը Էջմիածին հասցնել, որ և հապիւ ապրիլ 6-ին Կ. Պօլիսէ կուղևորէր և օրըստօրին Էջմիածին կը հասնէր (85. ԱՐԼ. 387), և յայտնի յանձնարարութեամբ Տաճկահայոց առաջին ընելին Խրիմեանը յաջողցնելու կաշխատէր համապատասխան ընտրողական ժողովին մէջ (85. ԱՐԼ. 374): Դժուարին է ճշդել թէ ինչ տեսակ մտայնութիւն կը տիրէր տաճկահայ երեսփոխանութեան մէջ, երբ որ այս քանիցս անգամ ձախողած ճամբուն մէջ կը յարատուէր, և ամէն անգամ տարբեր ձևեր կը կազմէր և կառաջարկէր: Մեզի անհաւատալի կը թուի ենթադրել որ իրօք այնչափ պարզամիտ ըլլար երեսփոխանութիւնը, որ անգիտաբար թէ իսկապէս, ինչ օրէնքով կը վարուէր Էջմիածինը և ինչ կանոնով ընտրութիւն կը կատարէր: Աւելի հաւանական կը կարծենք ըսել թէ պարզամտութիւն կը կեղծէր, ոչ ձևին այլ հետևանքին վրայ հիմնուելով, զի կը տեսնէր որ Մատթէոսի և Գէորգի և Ներսէսի ընտրութեանց մէջ իր մատնանիշ ըրած անձերը իրօք ալ ընտրուած էին, և Էջմիածնի ընտրողական ժողովին խոհականութիւն իրեն պօրութեան հետ կը շփոթէր, և անոնց խոհականութեան ապաւինելով դարձեալ իր անգամ մը ըրածէն ետ չէր դառնար, և վստահօրէն կը կարծէր որ երեք անգամ կրկնուած երևոյթը չորրորդ անգամ մըն ալ կը յաջողէր: Սակայն երբը չարդարացուց իր ակնկալութիւնը բոլոր ընտրական գործողութիւնները աւարտած էին երբոր Մկրեան քահանայի մեկնելէն ինն օր ետքը Վեհապետեան պատրիարք Կ. Պօլիս կը հասնէր, որով նոր պատրիարքը դարձուածներուն մասնակցութիւն չունէր: Արդէն ալ ապրիլ 1-ին, տակաւին Երուսաղէմ գտնուած ատեն, Եսայի պատրիարքի համամիտ գտնուած էր երբ յանուն

Երուսաղէմի կորոշուէր, կաթողիկոսական ընտրութեան խնդրոյն մէջ ցարդ ձեռնպահ մնացած լինելով, նոյն ընթացքը շարունակել (85.ՏՆՕ.152):

Տ. ՄԱԿԱՐ Ա. ԹԵՂՈՒՏՅԻ

2912. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Էջմիածնի համալգային ընտրողական ժողովը ըստ կանխաւ որոշման բացուեցաւ 1885 ապրիլ 19-ին, Յինաց չորրորդ ուրբաթ օրը, սովորական ձևերով և արարողութիւններով: Տեղակալ Մակար եպիսկոպոս բացակայ էր և Քիշնէ չէր մեկնած, որով տեղակալի փոխանորդութիւնը կը վարէր Մկրտիչ Բաբամեան եպիսկոպոսը: Ներկայ էին 20 եկեղեցականներ 22 ձայնով և 8 աշխարհական պատգամաւորներ միայն (85.ԱՐՐ.160): Տաճկահայոց կողմէ պատգամաւոր նշանակուած էր Մակար եպիսկոպոսը, և այս պաշտօնն ալ փոխանցուած էր Մկրտիչ եպիսկոպոսի (85.ԱՐՐ.172): Մկրեան քահանայ ապրիլ 16-ին Էջմիածին հասած էր (85.ԱՐԼ.386), բայց ինքն իբր թղթաբեր եկած էր և իբր ներկայացուցիչ ձայն չունէր: Պետական յատուկ ներկայացուցիչն էր Պրիբել, որ նոյնպէս 16-ին հասած էր Էջմիածին 20-ին չորս ընտրելիները որոշելու գումարման մէջ անհակառակ ընդունուեցան Տաճկահայոց երեք ընտրելիները, Խրիմեան, և Մուրատեան և Աշըգեան, և չորրորդ աւերցուցեցաւ Մակար, որ այս անգամ ներկայ չէր որ հրաժարէր, և որուն համար մեծ շարժում ունէին եկեղեցական ընտրողները մինչ աշխարհական ընտրողներ համակիր էին Խրիմեանի ընտրութեան: Մուրատեանի ընտրութեան Մուրատեանի ընտրութեան յատուկ շարժում չկար, իսկ Աշըգեանի մասին և ոչ իսկ կը խօսուէր: Վերջնական ընտրութիւնը տեղի ունեցաւ 21-ին Երևման Խաչի կիրակի օրը, և արդիւնքն եղաւ Մուրատեան 30, Մակար 16, Խրիմեան 13, և Աշըգեան 3 քուէ (85. ԱՐԲ. 175), որով կայսեր ներկայանալիք երկու ընտրելիներ կամ ընտրեալները եղան Մուրատեան և Մակար, և ըստ այսմ ալ օրագիրը կազմուեցաւ (85. ԱՐՐ. 176): Տաճկահայոց առաջին ընտրելին այս անգամ դուրս մնացած էր, և թէպէտ առաջին ընտրելին իրենց եռանուն ցանկէն էր, սակայն անոր համար ընդհանուր և եռանդուն փափաք չէր յայտնուած: Ընտրողական ժողովին մէջն ալ կարծիքները Մակարի և Խրիմեանի անուններուն շուրջը կը մրցէին, և Մուրատեանի մասին յայտնուած միաձայնութիւնը, 30 ընտրողներէ 30 քուէ, նախատեսուած չէր և երբեք այս տեսակ միաձայնութիւն հայ ընտրողական ժողովի մը մէջ երևցած չէր, նոյն իսկ Ներսէսի անունը 32 ընտրողներէ 27 քուէ ստացած էր (2893): Այդ տարօրինակ երևոյթին մեկնութիւնը գաղտնի մնացած չէ: Մենք յիշենք թէ Մելիքսեդեկի պետական օրէնքներու հակառակ կացութեան մէջ գտնուիլը արգելք եղած էր անոր կայսեր կողմէն հաստատուելուն երբ Ներսէսի հրաժարականը կընդունուէր (2894): Սոյն պատճառը իր ոյժը չէր կորսնցուցած, և պետական յատուկ ներկայացուցիչն ալ առիթ ունեցած էր յայտնելու, թէ քանի որ պօլօժէնիէի մէջ կառավարութեան իրաւունք տրուած չէ եպիսկոպոս մը ընտրելիութենէ վրկելու, նա կրնայ իր պետական տեսութիւնները պաշտպանել երկուքէն որևէ մէկը առնելու իրաւունքով: Այդ յայտարարութիւնը ծածուկ չէր մնացած, և Խրիմեանի և Մակարի կուսակիցներ հաւասարապէս միտք ունեցած էին երկու ներկայացուելիք անուններէն մէկը թարմատար դարձնելու համար Մուրատեանի անունը գործածել, և այդ պարագայի մէջ յայտնի էր որ 8 աշխարհականներու Խրիմեանի համար քուէարկելը պիտի չկրնար հակակշռել 22 եկեղեցականներու Մակարի համար քուէարկելը, որչափ ալ արդիւնքն մէջ 5 եկեղեցական քուէարկուներ Մակարէ պակսած և Խրիմեանի աւելցած ըլլան: Խրիմեան այս երկրորդ անգամ ալ դարձեալ 13 քուէով ընտրելիներու մէջ չէր կրցած մտնել: Հակառակ այդ ներքին տեղեկութեանց, շատեր և նոյն իսկ ընտրողականի նախագահ փոխ տեղակալը, փութացին Մելիքսեդեկը իբր ընտրեալ շնորհաւորել (85.ԱՐՐ.199), որ Մելիքսեդեկ

երկրորդ կաթողիկոս Ամենայն Հայոց կոչմամբ ալ ողջունուեցաւ (85.ԱՐԼ.391), և ինքն ալ լիակատար վստահութեամբ իր հաստատուելուն աւետիսին կը սպաւր, և ծրագրեր կը պատրաստեր առաջիկայ ասպարէզին համար թէ ինչպէս պէտք է սկսիլ, և ինչպէս պէտք է շարունակել որ պսակուի իր պաշտօնավարութիւնը (ԽՕՍ.14), թէպէտ հակառակը կասկածողներ կային և քիչ չէին: Ռուսիոյ արքունեաց գործերը շտապով չեն կատարուիր, իսկ այս անգամ յայտնապէս ալ պէտք էր ատեն անցունել միտքերու հանդարտելուն սպասելով, զի հայ ազգութիւնը անձնականութիւններէն աւելի ազգային իրաւունքի տեսակէտէն մղուելով վարժուած էր իր առաջին ընտրելին անխափան հաստատուած տեսնել, ո՛վ ալ և ի՛նչպէս ալ քուէ ստացած ըլլար: Ապրիլ 21-էն սկսելով երեք ամիսներ վարանմանց և ակնկալութեանց օրեր եղան Հայոց համար ընտրութեան հաստատուիլը տեսնելու յուսադրութեամբ: Կայսերական բարձրագոյն հրովարտակը արձակուած էր յուլիս 18 թուականով, և Նորնախիջևանի ու Բեսարաբիոյ առաջնորդ, սինոդի անդամ և կաթողիկոսական տեղակալ Մակար արքեպիսկոպոս, Էջմիածնի պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս հռչակուած էր (85.ԱՐԲ.417), սակայն լուրը տարածուած չէր: Յունիս 21-ին Կ. Պոլսոյ մէջ կը կարծուէր թէ Մելքիսեդեկ հաստատուած է (85.ԱՐԼ.440), յուլիս 12-ին Մոսկուայէ ալ նոյն յոյսերը կը հաղորդուէին (85.ԱՐԼ.457), յուլիս 16-ին լուր կը տարածուէր թէ Էջմիածինէ և Տփղիսէ դիմում եղած ըլլայ Մակարի հաստատուելուն համար (85.ԱՐԼ.460 և 463), թէպէտ լուրը ստուգութեան հիմ չունէր, ինչպէս ընդարձակ նամակով հերքեց Սուքիաս Պարպեանց եպիսկոպոսը, որուն անունը յատկապէս յիշուած էր (85.ԱՐԼ.487): Մակարի հրաժարելուն անհիմն լուրն ալ խօսուեցաւ մինչև որ օգոստոս 3-ին ստոյգ լուրը Կ. Պոլիս հասաւ, և 5-ին հրատարակուեցաւ ցաւօքի սրտի (85.ԱՐԼ.477): Տփղիսի մէջ ալ աննշանակ կերպով կը հրատարակուէր օգոստոս 2-ին Պետրբուրգէ տրուած հեռագիրը (85.ԱՐԶ.65), իսկ Էջմիածնի պաշտօնական ամսագիրը օգոստոսի պրակով կը հրատարակէր նոյն լուրը տուող հեռագիրը (85.ԱՐԲ.417), և սեպտեմբեր պրակին մէջ ալ անուանման և վեղարի խաչին և Աղեքսանդր Նևսքի շքանշանին բարձրագոյն հրովարտակները (85.ԱՐԲ.417-420), բայց օժման հանդէսը կը յապաղէր մինչև նոյեմբեր 10 (85.ԱՐԲ.516), հաստատութենէն չորս և ընտրութենէն եօթն ամիս ետքը:

2913. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Այս յապաղումը Մակարի կողմէն խոհական մտածմունքի հետևանք էր, թէ ոչ Քիշնէ Էջմիածին գալ շատ օրերու կարօտ չէր, ամառնային եղանակն ալ նպաստաւոր էր: Ռուսահայոց մէջ տիրող տպաւորութիւնը աւելի նպաստաւոր էր քան հակառակ իրաւ կար աշխարհական դասակարգէն ցուրտ վերաբերուող մաս մը որ իրեն լրագրական բերանն ալ ունէր, սակայն պետական որոշման դիմադրել չկրնալուն՝ հետզհետէ իր ոյժը կը կորսնցնէր: Միւս կողմէն աշխարհական տարրին մէջ ալ կար նպաստաւոր մը որ լրագրութեամբ ալ կը խոսէր, իսկ եկեղեցականութիւնը ուրախ էր իր բաղձանքը իրականացած տեսնելով: Տաճկահայոց մէջ առաջին տպաւորութիւնը մեծամասնութեամբ ընդդիմագիր էր, մինչև իսկ բացարձակապէս չընդունեցաւ և չճանչնալու խոսքեր կը պատէին, սինոդին պաշտօնագիրը ետ դարձնել կը խոհէին: Յիշատակութիւնն ալ չէր սկսեր, թէպէտ պատրիարքարանը օժումէն առաջ յիշատակութիւն չսկսելու կանոնին կը հիմնէր, որ սակայն պահուած չէր վերջին երեք կաթողիկոսներու համար: Խմբակներ, լրագիրներ, ժողովներ և նոյն իսկ Ընդհանուր ժողովը յայտնի դիմադրութեան առաջարկներ կը կրկնէին, իսկ Չմիւռնիա որ Մուրատեանի առաջնորդական վիճակն էր, մինչև իսկ յայտնապէս բողոքագիր կը հրատարակէր, լրագիրներու կը հաղորդէր (85. ԱՐԼ. 489), և պատրիարքարան ալ կը յղէր (85. ԱՐԼ. 492): Ծանրածանր պատճառաբանութիւններ կը խօսէին, թէ եկեղեցական ազատութիւնը բռնաբարուած է, թէ Հայ եկեղեցին վտանգուած է, թէ հայուն կրօնքը

անարգուած է, և ամէն ինչ որ կը խօսէր, կը գրուէր ալ, և գրգռութիւնը աճեցնելու փափաքողներ իրենց բացատրութեանց չափ և կոպար չէին գներ: Բայց այս առաջին տպաւորութիւնները հետզհետէ չափաւորեցան, երբոր տեսական ու վերացական գաղափարներէն ետքը, գործնական և դրական ընթացքը մտածելու կարգը եկաւ: Կաթողիկոսութիւնը Տաճկահայոց միայն պատկանող հաստատութիւն չէր, որ ըստ կամս վճռէին, բովանդակ հայութեան կը պատկանէր, և Ամենայն Հայոց միութեան յօդակապն էր, և օրինաւոր ժողովէ մը անցած էր ընտրութիւնը, և ընտրեալ կաթողիկոսն ալ օրինաւորապէս հռչակեալ էր, հայութեան կէսը որ է Ռուսահայ մասը իրեն յարակիցներով, համակերպած և ընդունած էր, միւս կէսին ընդդիմութիւնը ազգը պիտի պառակտէր, եկեղեցական հերձուած յառաջ պիտի բերէր, և արդէն տկարացած հայութիւնը հարուած մը ևս պիտի կրէր: Կարժէ՞ր արդէօք աներկիւղ և անվրդով սիրտով այդ վնասները դիմագրաւել: Հետևապէս հանդարտ միտքեր սկսան երևան գալ, թէ Մակար արդէն ամենանախնական համագումարի ընտրողական ցանկին մէջ Ներսէսի գրեթէ համահաւասար քուէ ստացած էր (2892), անբասիր եկեղեցական մըն էր, երկարամեայ կեանքին մէջ օգտակար և ուղիղ պաշտօնավարութիւն ունեցած էր անարժան անյարմար մէկ մը չէր, մանաւանդ թէ Մելքիսեդեկի վրայ շատ առաւելութիւններ ունէր: Պօլօթէնիէի օրէնքն ալ նորութիւն մը չէր, անոր պօրութեամբ ընտրուած և ընդունուած էին Ներսէս Ե. և Մատթէոս Ա. և Գէորգ Դ. և պիտի ընդունէր վերջին Ներսէսն ալ: Եթէ ռուսաց կայսերներ ցարդ առաջին ընտրեալը հաստատած էին, երկրորդը հաստատելու իրաւունքէն հրաժարած կամ մերկացած չէին, և ազգն ալ գոնէ լուելայն ճանչցած էր այդ իրաւունքը, երբոր իր կաթողիկոսին վերջնական որոշումը կայսրէն կը սպասէր, և հաստատութենէն առաջ իբրև կաթողիկոս չէր յիշատակէր, որով նորէնոր խնդիր յուրացնելու տեղի չէր մնար: Այս մտածմունքները հետզհետէ կը պօրանային, գլխաւորապէս եկեղեցական դասակարգը երկիւղայից աչքով կը նայէր եկեղեցական պառակտման կամ հերձուածի հաւանականութեան, իրեն գլուխ ունենալով նորընտիր Յարութիւն պատրիարքը, երբեք մասնակից չէր եղած Կ. Պոլսոյ պատրիարքարանին տարադէպ ըմբռնումին և ընթացքին, որ կատարեալ համոզում կազմած էր Մակարի արժանաւորութեան վրայ, և որ Մուրատեանի սաղիմական անցեալին վրայ մեծ համակրութիւն չէր պգար: Այս մտածումներ քանի կընդարձակուէին խնդիրը հետզհետէ կը պարպուէր, և երեք ենթադրութիւններէն, այսինքն Մակարի կաթողիկոսութիւնը, կամ պարպապէս մերժել, կամ պարպապէս ընդունիլ, և կամ բողոքելով ընդունիլ երրորդը ասպարէզ կը գտնար, զի գործնական կողմը կապահովէր, և ընդդիմադիրներու ալ գոհացում կու տար: Այս տեսակէտը պօրացնելու համար Արևելք օրագիրը որ յառաջադիմականներու բերանն էր և ժամանակին հեղինակաւոր թերթն էր, ընդարձակ յօդուածներով կը պաշտպանէր Մակարի արժանաւորութիւնը, ընտրութեան օրինաւորութիւնը, և համակերպութեան օգտակարութիւնը (85. ԱՐԼ. 489,491,493), և խմբագրապետ Բիւզանդ. Քէշեան պատմական ուսումնասիրութիւններով կը հաւաստէր թէ կաթողիկոսական ընտրութիւնը հաստատուն կերպ մը չէ ունեցած անցեալին մէջ, թէ տաճկահայն ալ իրեն հաստատուն կանոնը չունի, թէ քաղաքական իշխանութիւններ ազգային կամ օտար միշտ մասնակցած և ստէպ տիրացած են կաթողիկոսական ընտրութեան, և թէ եկեղեցին ալ ոչ սկզբունքով և ոչ հետևանքով վտանգի չենթարկուիր եթէ Տաճկահայեր ներկայ պարագային մէջ համակերպութեան կողմը գտնուին (85. ԱՐԼ. 505.519,532, 538): Ուրիշ լրագիրներ և ուրիշ գրողներ ալ հետզհետէ այդ կարծիքին կը մօտենային, և անլուծանելի կարծուած կնճիռը տակաւ կը լուսաբանուէր:

Երբոր խնդիր այս աստիճանի հասաւ, պատրիարքարանի Խառն ժողովը սեպտեմբերի մէջ, այսինքն ընտրութենէն իբր հինգ ամիս ետքը, քաջալերուեցաւ վերջնական լուծումն մը հասնելու համար, գործը ընդհանուր ժողովոյ որոշման ենթարկել, յատուկ բանաձև մըն ալ կազմելով, որուն հոգին էր եղելութեան համակերպիլ, նկատելով որ Մակարի անձը որ և է արգելք և անպատեհութիւն չունի, և թէ տիրող փափուկ հանգամանքները կը պահանջեն Հայաստանեայց Եկեղեցւոյ միութիւնը պահպանել ազգային իրաւունքներուն հետ ալ համաձայնեցնելով (85. ԱՐԼ. 503): Կրօնական ժողովը առանձինն բանաձև մըն ալ կազմեց, քիչ մը աւելի շեշտելով եկեղեցւոյ իրաւանց պաշտպանութիւնը, բայց միշտ համակերպութեան պէտքը պնդելով (85. ԱՐԼ. 509): Այդ կերպով սեպտեմբեր 20 ին հաւաքուեցաւ Ընդհանուր ժողովոյ դռնփակ նիստը յատկապէս կաթողիկոսական խնդիրին համար, որուն մէջ վանապան դիտողութիւններ և խորհրդածութիւններ թերուղէմ խօսուելէ ետքը, Յարութիւն պատրիարք ազդու կերպով յանձնարարեց խնդիրը վերջացնել, եկեղեցւոյ միութիւնը չվտանգել, աւելորդ խնդիրներ չյուլել, ձևակերպութեանց պատճառով իսկական օգուտը չյետաձգել: Ասոր վրայ յատուկ յանձնաժողովոյ մը ընտրութիւնը որոշուեցաւ պատրիարքը նախագահութեամբ, և նոյնհետայն անդամները ընտրուեցան եկեղեցական և 8 աշխարհական վանապան կարծիքներու ներկայացուցիչներէ առնուած (85. ԱՐԼ. 516): Յանձնաժողովոյ աշխատութիւնները ամիս մը տևեցին համամտութիւն գոյացնելու համար, ինչ որ անհնար եղաւ, և հոկտեմբեր 21-ի իններորդ նիստին մէջ երկու տեղեկագիր կազմուելու որոշումը տրուեցաւ, մին մեծամասնութեան կողմէն, համակերպութիւնը պաշտպանող բողոքախառն յայտարարութեամբ, և միւսը փոքրամասնութեան կողմէ Մակարի կաթողիկոսութիւնը մերժելու միտքով (85. ԱՐԼ. 542): Տեղեկագիրները պատրաստուեցան փոքրամասնութեան գիրին միայն 3 հոգի Մարկոս Աղաբէղեան Յակոբ և Ռէթէոս Պէրպէրեան ստորագրեցին, իսկ մեծամասնութիւնը կը կազմէին 10 հոգի, զի Ընդհանուրի ատենապետ Տիգրան Եռսուֆեան յանձնաժողովին ատենապետած էր ի դիմաց պատրիարքին և մեծամասնութեան հետ ստորագրեց, զոր կը կազմէին Խորէն Նարպէյ և Սիմոն Սէֆէրեան եպիսկոպոսներ, Յովհաննէս Մկրեան քահանայ և աշխարհականներէն Գաբրիէլ Նորատունկեան, Յարութիւն Մերեձմգլուի, Յովհաննէս Թորոսեան, Կարապետ Սրվաճեան, և բժիշկ Յարութիւն Թիրեաքեան: Միւս երկու անգամներ Մատթէոս Իզմիրլեան եպիսկոպոս և Յակոբ Աշոտ վարդապետ, մեծամասնութեան համակարծիք գտնուելով ալ ստորագրութեան ատեն ձեռնպահ մնացած էին ինչինչ անուղղակի պատճառներով: Տեղեկագիրը կարգադրուեցան հոկտեմբեր 25-ին երեսփոխութեան նիստին մէջ (85. ԱՐԼ. 546), որոնք բաւական ընդարձակ գրուածներ էին, իսկ յառաջ բերուած նկատումները մեծաւ մասամբ մեր արդէն յիշած բացատրութիւններուն համաձայն ըլլալուն չենք կրկներ: Մեծամասնութիւնը կառաջարկէր. 1. Բացառաբար համակերպիլ եղելութեան և անունը յիշատակել օծումէն ետքը. 2. Նոր կաթողիկոսէն խնդրել որ համազգային ժողովով վերջնապէս լուծէ պօլօժէնիէով գոյացած դժուարութիւնները. 3. Վերապահել Տաճկահայոց ազատութիւնը եթէ արդիւնքը չարդարացնէ ակնկալութիւնը (85. ԱՐԼ. 552): Իսկ փոքրամասնութիւնը կառաջարկէր, 1. Չընդունիլ Մակար սրբազանի կաթողիկոսութիւնը, զի ազգային ընտրեալը Մելիքսեդէկ սրբազանն է. 2. Շարունակել հանգուցեալ Գէորգ կաթողիկոսի անունին յիշատակութիւնը (85. ԱՐԼ. 553): Բայց հոկտեմբեր 25-ի նիստին մէջ վիճաբանութիւններ չվերջացան, և որոշումը մնաց նոյեմբեր 1-ի դարձեալ դռնփակ նիստին: Փոքրամասնութիւնը ամբողջական ցոյցերով գործը խափանելու համար դատարկապորտ անձերու խումբ մը պատրաստած էր շփոթ և ժխոր գոյացնելու դիտումով, և շարժումին կառաջնորդէին նոյն իսկ յանձնաժողովի փոքրամասնութեան երեք անդամները, սակայն Ընդհանուրի և քաղաքականի ատենապետութիւնները արթուն գտնուեցան

յարմար միջոցներով անոնց դիտումը արգիլելու (85. ԱՐԼ. 526) Կի ի Կուր եկեղեցին ուսոյականներով շրջապատել, և տաճարի դռները ժողովրդեան առջև փակել բացատրութիւններով կաշխատի որակել կաթողիկոսանալէ վրկուած Մուրատեանը (ԽՕՍ. 45-46): Վերջնական նիստին մէջ մեծամասնութեան բանաձևը անուանական բուէի ենթարկուելով 65 ներկաներէն 42 երեսփոխաններ բացարձակ ընդունեցան, և 7 երեսփոխաններ հաւանելով մէկտեղ անուղղակի պատճառներով ձեռնպահ մնացին, և ընդ ամէնն 49 անձեր բանաձևին պարունակութեանը հաւանեցան. իսկ փոքրամասնութեան առաջարկը միայն 16 բուէ ստացաւ, որով և ժողովէն մերժուեցաւ (85. ԱՐԼ. 552): Կրօնական ժողովը նոյեմբեր 4-ին շրջաբերական ցրուեց օծումէն ետքը Մակար կաթողիկոսի անունը յիշատակելու (85. ԱՐԼ. 554). սակայն նոյեմբեր 2-ին արդէն պաշտօնական լուր եկած էր թէ օծումը պիտի կատարուի նոյեմբեր 10-ին (85. ԱՐԼ. 552): Ըստ այսմ Տաճկահայոց վերջնական որոշումը օծումէն, այսինքն կանոնական և ծիսական գահակալութենէն շաբաթ մը առաջ լրացած եղաւ, և պատրիարքի և ժողովներու և ուրիշ ազգային մարմիններու կողմէն շնորհաւորական և մաղթողական հեռագիրներ օծումը կանխեցին, և Մակարի կողմէն ալ եռանդուն շնորհակալեաց պատասխաններ հասան (85. ԱՐԼ. 553):

2915. ԿՈՎԿԱՍԻ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Երբոր Տաճկահայոց մէջ կաթողիկոսական խնդիր կը յուկուէր, Մակար Քիշնի մէջ կը սպասէր, անշուշտ դիտելով թէ ինչ ուղղութիւն պիտի ստանայ տաճկահայ շարժումը, և անոր հետզհետէ մեղմանալը տեսնելով և նպաստաւոր ելքը կանխատեսելով կորոշէր Էջմիածին ուղևորիլ: Բայց ուրիշ պատճառ մըն ալ կը վերագրուի իր յապաղելուն, այս է Կովկասի Հայ վարժարաններուն բացումին խնդիրը (85. ԱՐԼ. 525): Այդ նիւթին վրայ պէտք կը զգանք յետահայեաց բացատրութիւններ տալ, նախապէս հետևելով Կովկասի կառավարչապետին պաշտօնական յայտարարութեանց (85. ԱՐԼ. 276-278 և 85 ԱՐԼ. 363): Թէպէտ 1836-ի աօլօթէնիէի 35 և 77 յօդուածները (ՊՕԼ. 6. և 14) Հայ դպրոցները յանձնած էր Հայ հոգևորական իշխանութեան, սակայն 1883 նոյեմբեր 22-ին նոր բարձրագոյն հրաման մը կը հանուէր Կովկասի ոչ-ռուսական վարժարանները պետական իշխանութեանց ենթարկելու, և որովհետև այդ մասին դիտողութիւններ եղան Հայոց կաթողիկոսի կողմէ, 1874 յուլիս 19-ին յատուկ կարգադրութիւններ հրատարակուեցան Հայ վարժարաններու համար, գլխաւորապէս ծրագիրները և ուսուցիչները հաղորդելու պետական իշխանութեանց, անոնցմէ տրուած հրահանգները գործադրելու, և անոնց կողմէ անընդունելի դատուած ծրագիրներն և ուսուցիչները դադրեցնելու, ռուսերէնն պարտաւորիչ ընելու, Ռուսիոյ պատմութիւնն ու աշխարհագրութիւնն ռուսերէն աւանդել, և վարժարանները կառավարական պաշտօնէից քննութեան ենթարկել: Այս հրամանները իսկոյն գործադրուած չըլլալուն՝ 1876 ապրիլ 29-ին հրամանը կը կրկնուէր, բայց դարձեալ կաթողիկոսի կողմէ ընթացք չէր տրուեր: Կովկասի կառավարութիւնը 1881 մարտ 20-ին ուղղակի կը դիմէ կաթողիկոսին և Գէորգ մայիս 27-ին կը պատասխանէ թէ Հայ հոգևոր դպրոցները չեն ենթարկուիր կառավարական պաշտօնէութեանց, բայց և այնպէս յանձնարարած է առաջնորդարաններուն որ դպրոցաց մասին պարզապէս տեղեկութիւն հաղորդեն: Կառավարչապետը կըսէ թէ անկէ ետքն ալ բան մը չհաղորդեցաւ կառավարութեան, և 1874-ի օրէնքին տրամադրութիւնները չգործադրուեցան, ուստի 1884 ապրիլ 6-ին յատուկ օրէնք մը հրատարակուեցաւ և սինողին ալ հաղորդեցաւ, որ աթոռին պարապութիւնը այսպիսի խնդիրներուն կաթողիկոսի անձին վերապահուած ըլլալը պատճառուելով, առաջարկեց մինչև նոր ընտրութիւն գործադրութիւնը յետաձգել: Կառավարչապետը երկար բացատրութիւններով կաշխատի անընդունելի ցուցնել սինողին չքմեղանքը, պնդելով թէ միայն հոգևորական կամ կրօնական գործեր կաթողիկոսի

անձին կապուած են, և դպրոցներու գործը այդ կարգէն չէ: Կը յիշէ ևս թէ մերժուեցաւ Սուքիաս Պարպեանց եպիսկոպոսի յատկապէս Պետրբուրգ երթալով սինոդի անունին կատարած պատգամաւորութիւնը, ուստի պարտաւորուեցայ կըսէ 1885 փետրուար 6-ին հրամանագիրով և երկու շաբթուան պայմանաժամով օրինական խստութեամբ օրինաց անմիջական գործադրութիւնը պահանջել, հակառակ պարագային Հայ դպրոցները փակելու հրամանով: Այս հրամանին գործադրութիւնն էր որ ամենախիստ և բռնադատական միջոցներով սկսաւ գործադրուիլ Կովկասի մէջ փետրուար 25-էն սկսելով, և շատ աղիտալի տեսարաններու ալ առիթ ընծայելով (85. ԱՐԼ. 371), և ընդհանուր հայութեան մէջ տխուր տպաւորութիւն գործելով, ինչպէս տեսնուեցաւ Կարնոյ եկեղեցւոյն մէջ ուսումնաւորիկ համալգեաց համար Զատկին օրը երգուած տէր ողորմեա մաղթանքով (85. ԱՐԼ 379), որ ռուսական հիւպատոսին ուշադրութիւնը գրաւեց (85. ԱՐԼ. 384): Ռուսիոյ հրամայած խստութիւնը անով աւելի նշանակալից կը դառնար, որ ի մօտոյ կաթողիկոսական ընտրութիւն պիտի կատարուէր, և ռուսական օրէնքներու պահպանութեան խնդիրը կը յուզուէր: Փակուած վարժարաններու թիւնը մօտ 600 ըսուած է, գիւղական ամենայետին դպրոցէն մինչև բարձրագոյն ուսումնարանը մէջը համրելով (86. ԱՐԲ. 773): Կառավարչապետի յայտարարութիւնը, Հայ հոգևորական իշխանութեան ենթարկուած վարժարաններու փակումը արդարացնելու աշխատելով, յորդոր կը կարգայ Հայ ժողովուրդին, որպէսզի կառավարութեան դիմեն կառավարական վարժարաններ բանալու իրենց վաւակաց համար, յայտնելով ևս որ սոյն ձեռնարկութեանց քաջալերութեան համար դասատուութիւնը կարող է հայերէն լեզուով կատարուիլ, բայց պահանջելով որ ռուսերէն լեզուն, ռուսաց պատմութիւնն, և Ռուսաստանի աշխարհագրութիւնն հարկ եղած կերպով աւանդուին (85. ԱՐԼ. 363): Պաշտօնական յայտարարութիւնը քաղեցինք խնդիրին ստացած ձևը բացատրելու համար, իսկ մեր կողմէն պէտք կը վգանք աւելցնել, որ որչափ ալ ընդհանուր կերպով հնար չէ պետական իշխանութեանց վրայ իրենց հսկողութիւնը տարածելու իրաւունքը, սակայն ռուսական կառավարութիւնը իրական պատճառ մը չունէր անգամ մը օրինադրուած և գործադրուած կացութիւնը այլայլելու, օգուտ չունէր Հայ հանրութիւնը իրմէ ուժացնելու, և խոհական ձեռնարկ մը չէր իր ընթացքը խստացնել, երբոր կաշխատէր իր օրէնքները պարտաւորական ընել նոյն իսկ իրեն հպատակ չեղողներու վրայ: Իսկ սինոդը շատ իմաստութեամբ կը վարուէր երբոր խնդիրին իսկութեան չմտնելով, աթոռոյ պարապութեան փաստով կուզէր միջադէպը փակել, շատ հաւատարմութեամբ կը գործէր երբոր իրեն յանձնուած աւանդը ամբողջութեամբ կուզէր գալիք աթոռակալին յանձնել, և շատ արիւթեամբ կը պնդէր երբոր սպառնալիքներէ իսկ չվախնալով իր ուղղութիւնը չէր փոխեր: Տփղիսի Կովկաս պաշտօնաթերթ վարժարանաց փակումը արդարացնելու համար յատուկ յօդուածներ ալ հրատարակած ըլլալուն, սինոդը կուռ պատճառաբանութեամբ և պաշտօնական աւերաթուղթեր յառաջ բերելով վօրաւոր պատասխան մը ուղղեց (85. ԱՐԲ. 122-135), որ հարկաւ իր ազդեցութիւնը ունեցած է: Իսկ Մակար թէպէտ բացակայ ըլլալով չէր ստորագրած սինոդի կողմէ գրուած 1884 սեպտեմբեր 15-ի յայտարարութիւնը (85. ԱՐԲ. 130-132), սակայն իբրև սինոդի անգամ և տեղակալ օտար չէր կրնար համարուիլ սինոդական յայտարարութենէն, և այսչափը բաւական էր որ սինոդականութենէ կաթողիկոսութեան անցած պահուն ամէն ձիգ թափէր անհետացնելու վարժարաններու փակուելուն տխրազդեցիկ միջադէպը:

2916. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ստուգապէս աւելի ապահով եղած կըլլար եթէ ձեռնարկը կարգադրուէր և դպրոցները բացուէին Մակարի մեկնելէն առաջ, սակայն կառավարութիւն մըն ալ չէր պիջաներ յանձն առնուլ պայմանաւորեալ և ստիպեալ կերպով գործած երևալ, ուստի Մակար, որ խոհականութեան

չափազանց հետևող մըն էր, բարեացակամ խոստումները բաւական սեպելով, Կ, Պոլսոյ շարժումին ալ նպաստաւոր ելքը նախատեսելով, որոշեց Էջմիածին երթալ, օծումը ընդունիլ և պաշտօնի գլուխ անցնիլ: Սեպտեմբեր 9-ին Քիշնև հասած էին սինոդի հրաւիրակներ Գրիգոր Սաղինեան և Յովակիմ Տէր-Գրիգորեան եպիսկոպոսները, որոնք միև օր պաշտօնապէս նորընտիրին ներկայացան (85. ԱՐԼ. 420), իսկ Քիշնևէ մեկնիլը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 3-ին և 5-ին Օտեսայէ նաւեցին, և Պաթումի ճամբով Տփղիս հասան 11-ին, Խաչի չորրորդ ուրբաթ օրը: Երկաթուղւոյ կայարանէն մինչև մայրեկեղեցի մեծաշուք և կարգապահ հանդէսով առաջնորդուեցաւ, ուր առաջնորդ Արիստակէս Սեդրակեան եպիսկոպոս բարիգալըստեան ուղերձ կարդաց, և կաթողիկոսը պատշաճ պատասխանը տուաւ, կայսրն ու կառավարութիւնը ու ժողովուրդը օրհնեց և բարեմաղթեց: Յաջորդ շաբաթ օրը 12-ին կառավարչապետին ներկայացաւ, որ էր Տոնդուկով-Կորսակով իշխանը, ուր հրովարտակները կարգադրուեցան և շնորհաւորականներ խօսուեցան փոխադարձաբար , և ներկայացումներ փոխանակուեցան, իշխանուհիին ալ այցելեց, և առաջնորդարանի մէջ եկեղեցական դասը և ուրիշ այցելուներ ընդունեց, և կիրակի 13-ին պատարագի ներկայ ըլլալէն ետքը կառավարչապետի այցելութիւնը ընդունեց: Մակար կաթողիկոս երկու շաբաթ մնաց Տփղիս , ուր առաջնորդ եղած էր, և տեղական գործերով հետաքրքրուեցաւ, և հոկտեմբեր 25-ին ուրբաթ օր Տփղիսէ մեկնելով և ճամբուն վրայ ամէն գիւղէ և կայարանէ խնդութեամբ ողջունելով (85. ԱՐԶ. 277), 28-ին մտաւ Երևան դարձեալ փառաւոր ընդունելութիւն, դարձեալ ոգևորեալ ուղերձներ (85. ԱՐԶ. 261). անկէ եկաւ Էջմիածին, և նոյեմբեր 10-ին Հրեշտակապետաց կիրակին տեղի ունեցաւ օծման հանդէսը (85. ԱՐԶ. 275), որ կատարուեցաւ սովորական շքեղութեամբ, և հացկերոյթ տրուեցաւ բոլոր պատուաւոր եկողներուն, ինչպէս նաև ժողովրդականներուն (85. ԱՐԶ. 293-295): Անդրանիկ օրհնութեան կոնդակն ալ հրատարակուեցաւ և կարգադրուեցաւ դեկտեմբեր 8-ին (85. ԱՐԶ. 308): Այսպէս աւարտեցան գահակալութեան ձևակերպութիւնները և կաթողիկոսական աթոռը ունեցաւ իր աթոռակալը 1882 դեկտեմբեր 6-էն, Գէորգի մահուան օրէն մինչև 1885 նոյեմբեր 10 Մակարի աթոռ բաւմելուն օրը, երեք տարիէ 26 օր միայն պակաս աթոռոյ պարապութեան միջոցէ մը ետքը, երբ Հայ եկեղեցին երկար ատենէ ի վեր իր հայրապետն ունենալու կարօտը կը քաշէր, և վանապան տագնապալի պարագաներ անցուցած էր մինչև որ իր փափաքը պսակուէր: Առաջին ընտրութեան յետաձգումը, Ներսէսի հրաժարիլը և մահը, կրկին ընտրութեան պէտքը, և Մակարի ընտրուելուն և ճանչցուելուն տագնապը, բաւական դժուարութեանց և հոգածութեանց առիթ տուած էին, անոնք վերջապէս կը փակուէին, ձևերու կողմէն կնճռոտ, բայց արդիւնքն մէջ ոչ անյաջող կերպով:

2917. ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Մակար կաթողիկոս բնիկ տաճկաստանցի էր, Մուշի նահանգին Պուլանդը գաւառի Թեղուտ գիւղը ծնած, որ տարբեր է Խաթայ Թեղուտէն: Իր ծննդեան թուական ընդունուած է 1813 ապրիլ 6 օրը, որ կիյնայ Ծաղկապարդի կիրակին, թէպէտ ուրիշ տեղ ապրիլ 13 գրուած է (91. ԱՐՐ. 228ա), որ հաւանաբար մկրտութեան հետ շփոթուած է, որ կիյնայ Զատիկի կիրակիին: Հապրոյենց Պետրոսի, ուսկից իր գործածական Տէր-Պետրոսեան մականունը, իսկ աւագանի անունը յիշուած չգտանք: Այդ հաշուով ճիշդ 72 տարին լրացուցած կըլլար կաթողիկոս ընտրուած ատենը: Պետրոս քահանայ ուրիշ գաղթականներու հետ ոռուսական սահմանները տեղափոխած էր 1828-ի ոռուսութիւրք պատերազմէն ետքը, և իր 15 տարեկան վաւակը Մայր աթոռոյ ժառանգաւորաց վարժարանին յանձնած: Այստեղ 1834-ին ընթացքը աւարտելով դպիր կը ձեռնադրուիլ, և 1838-ին սարկաւագ, 1842 մարտ 25-ին վարդապետ, և 1843 օգոստոս 21-ին մայրաթոռոյ դպրանոցին տեսուչ կը կարգուի, 1847 ապրիլ 30-ին կանուանուի սինոդական, 1849-ին մատենադարանապետ նշանակուած է և 1852

ապրիլ 12-ին ծայրագոյն վարդապետութեան բարձրացած, և օգոստոս 15-ին եպիսկոպոս կը ձեռնադրուի, 1858-ին Մատթէոս կաթողիկոսի հրաւիրակ կերթայ, 1859 մարտ 10-ին արքեպիսկոպոսութեամբ կը պատուուի, և յուլիս 13-ին լուսարարապետ կը հաստատուի, 1862 ին օգոստոս 9-ին Տփղիսի կառավարիչ, և 1864 մարտ 15-ին նոյն վիճակին առաջնորդ, 1876 փետրուար 20-ին Նորնախիջևանի և Բեսարաբիոյ առաջնորդ, և 1883-ին միանգամայն սինոդական և տեղակալ (91. ԱՐԲ. 228բ.գ): Ըստ այսմ քայլառքայլ ամէն աստիճաններէ և պաշտօններէ անցնելով կը հասնի կաթողիկոսութեան: Մակարի արտաքինը պատկառելի կերպարան մը ունէր, բարձր հասակ և վեհ դէմք մաքուր և կոկիկ առանց սեթևեթի, աւելի հին ժամանակի հայրապետներու կերպը, քան թէ նոր ժամանակներու ջաղափարներ կը յիշեցներ. կեցուածքը, քալուածքը, խօսուածքը դիմացինին վրայ ազդելու բնութիւնն ունէր, առանց ճնշիչ ծանրութեան: Ուսմունքը և վարգացումը ազգային շրջանակէն դուրս չէր ելլար, բայց իր շրջանակին քաջահմուտ էր, եկեղեցական և կանոնական հմտութեանց լիովին տեղեակ, և օտարաց վերաբերեալ կէտերը իմանալու հետաքրքիր մինչև իսկ ծերութեան տարիքին մէջ: Իր աշակերտութիւնը Մայրաթոռոյ ժառանգաւորացին սահմանէն դուրս չէր ելած, և ինչ որ ինքնօգնութեամբ և յամառ ընթերցանութեամբ աւելցուցած էր միւնոյն շրջանակին մէջ կամփոփուէր: Վարմունքը և ընկերակցութիւնը ծանր չէին, թէպէտ աւելի պաշտօնականութեան կնիքը կը կրէին քան մտերմականութեան պայմանը. սաստ և բարկութիւն և բուռն պահանջմունք չունէր բնաւ, թէպէտ ձևակերպութեանց և ճշդապահութեանց վերջին աստիճան նախանձայոյզ էր: Աշտարակեցիին ուղղութեան ներքև կրթուած, Մատթէոսի ժամանակ գործոց գլուխ եղած, Գէորգի ժամանար գործէ հեռացուցած, երբեք իր բնական և ծանրական կերպէն չէր շեղած, և ամէն տեսակ փորձութեանց հետ շփուած ըլլալով իրեն սեփական ուղղութիւնը պահած էր: Ազգասիրական գաղափարներու տեսակէտէն ոչ մէկի երկրորդ էր, միայն թէ ազգին կրօնական միջոցներով պահուած և կրօնական պայմանի ներքև կեցած ըլլալուն համոզուած ըլլալով, միւնոյն տեսակէտով ապրելուն և գործելուն և վարգանալուն հարկը կը վգար: Ներսէս Վարժապետեան և Մակար Տէր Պետրոսեան , որ իրարմէ հիմնապէս տարբեր գործիչներ նկատուած էին, իրարու ամենամօտ միտքեր և իրարու սերտ կապուած սիրտեր էին, և առեղծւած երևնալու չափ անհաւատալի կը կարծուէր ինչ որ սակայն իրականութիւն էր: Բառերու տարբերութիւն էր միայն որ աչքի կը վարներ, այլ իրօք երբ Ներսէս ազգ կըսէր եկեղեցին անարժան կիմանար, և երբ Մակար եկեղեցի կըսէր ազգը անանջատ կըմբռնէր, և անոր համար էր որ իրարու հետ կատարելապէս միասիրտ և միաձայն էին: Առաջին ընտրութեան ժամանակ Ներսէս ամէն ճիգ ու ջանք թափեց որ Մակարի ընտրութիւնը յաջողցնել տալ բայց եկեղեցականութեան վրայ միայն յաջողեցաւ ազդել, երեսփոխանութեան վրայ չյաջողեցաւ: Մակար ալ առաջին ընտրութեան ատեն ընտրելի ըլլար չուկեց խոստովանելով յայտնապէս թէ Ներսէսի հանդէպ քաշուիլը իրեն պարտք կը ճանչնար, ինչ որ ուրիշի հանդէպ ընելու երբեք հարկ չզգաց: Բայց գործին ընթացքը այնպէս բերաւ որ երկուքին փափաքն ալ տեղը հասաւ, Ներսէս ընտրուեցաւ և Մակար նստուեցաւ: Բայց եթէ մարդուն թէ ոչ կեանքին գոնէ գործունէութեան սահմանը եօթանասուն տարին է, Մակար վայն անցուցած գործի կը հրաւիրուէր, ուստի հնար չէր իրմէ պահանջել ինչ որ տարիքը չէր ներեր, այսուհանդերձ իր փորձառութեամբ և խոհականութեամբ ապարդիւն չըրաւ իր կաթողիկոսութեան վեց տարիները, թէպէտ ինքն ալ կը վգար աւելին ալ գործելու հարկը, և սովոր էր կրկնել թէ մարդը գործի կը կոչեն երբ արդէն ուժաթափ եղած է: Իր գործունէութեան և արդիւնաւորութեան մասին պիտի խօսինք առաջիկային:

Աթոռներու պարապուստեան խնդիրները մեզ բաւական զբաղեցուցին, բայց կարծէս թէ շարքը տակաւին փակուած չէր, զի հապիւ թէ Մայրաթոռոյ գահակալը ընտրուած և տակաւին աթոռ չէր բազմած, ահա Երուսաղէմի աթոռոյ պարապուստինը վրայ կը հասնէր Եսայի պատրիարքի տարածամ մահուամբը: Երբ Եսայի 1885 մարտ 1-ին Երուսաղէմ մտաւ, Կ. Պոլսոյ մէջ ունեցած ծանր հիւանդութենէն կատարեալ ապաքինած չէր (2909), և քանի մը որ ետքը իր ներքին ցաւերը սկսած էին զինքն վերստին նեղել (85. ՏՆՕ. 248), զի ախտին արմատը իրեն հետ էր, այսինքն փամփուշտի քարը, ախտ մը որ դարմանի ապստամբ չէր, եթէ բժշկական զննութիւնք իրենք վճռական որոշումը տուած ըլլային, և առենին պատշաճ գործողութիւնք կատարուէին: Յաւերու ժամանակաւոր դադարումներ գոհացուցիչ կը պատուէին, և ինքն իսկ Եսայի պատրիարք առանց իր կացութեան վրայ որոշ գաղափար մը կազմելու, երբեմն հիւանդ կը պառկէր և երբեմն սովորական գործերով կը զբաղէր, միշտ Մաքսուտեանով և Երէցեանով կազմուած տնօրէն ժողովէն առաջնորդուելով (2909): Երբոր փամփուշտի քարին գոյութիւնը հաւանական կը դառնար, իրեն խորհուրդ կը տրուէր Վիէննա երթալ, և այնտեղ ճարտարներու քննութեան և գործողութեան ենթարկուիլ, զոր սակայն անիրականալի կը գտնէր և յանձն չէր առնէր, և այն առեն կը թելադրուէր Վերիտօն երթալ հոն գտնուող մասնագէտ ամերիկացի բժիշկին կարծիքն ու խնամքը ստանալու, և կամ զայն Երուսաղէմ հրաւիրել, սակայն մասնագէտն ալ Ամերիկա մեկնած կը գտնուէր (85. ՏՆՕ. 248): Երբոր Երուսաղէմ գտնուող բժիշկներու, մինչև իսկ տեղացի փորձական դարմանիչներու զննութիւնք, քարի գոյութիւնը կը ստուգէին, տակաւին գործողութեան ենթարկուելու վստահութիւնը կը պակսէր և այսպէս օրեր և ամիսներ կանցնէին, և ցաւերու պատահական ընդհատումներ յուսադրութիւն կը ներշնչէին: Այդ իրերու ներհակ ըմբռնումներու արձագանգը Կ. Պոլիս ալ կը հասնէր, և որ մը յուսալից և միւս օր յուսաբէկ լուրեր կը տարածուէին մայրաքաղաքին մէջ, որ Յարութիւն պատրիարքի և Սիմէոն Եպիսկոպոսի միտքերն ալ կը շփոթէին: Վերջապէս մեծ և աղիտալի իրակութիւնը յայտնուեցաւ 1885 օգոստոս 11-ին, Աստուածածնայ բարեկենդանի կիրակի օրը, առտու եկեղեցի իջնալէն ետքը: Բժիշկներ կը հրաւիրուէին, որոնք մասնաւոր զննութիւններէ ետքը ամսուն 16-ին ուրբաթ օր միահամուռ խորհրդակցութենէ ետքը քարի գոյութիւնը տակաւին անստոյգ կը դատէին և գործողութեան չէին համարձակէր: Բայց ցաւերը օրէօր կը սաստկանային և 23-ին այն աստիճանի հասած էին, որ հիւանդը ինքը գործողութիւն կը պահանջէր, և լաւագոյն կը համարէր գործողութենէն յետոյ մեռնիլ: Իրօք ալ բժշկական խորհրդակցութիւնը այս անգամ քարի գոյութեան որոշման կը յանգէր, և 24-ին գործողութիւնը կը կատարուէր քնացնելով կամ թմբեցնելով, և բաւական մեծ ութը տրամ կշռող քար մը կը հանուէր սրածայր անկիւններ ունեցող, ինչ որ սաստիկ ցաւերուն իսկական պատճառն էր: Հիւանդը կը սփոփուէր, ցաւերը կը դադրէին, և կատարեալ առողջութեան յոյսեր կը զօրանային երբ յանկարծ նոր տկարութիւն մկ երևան կու գար հիւանդին վրայ, որ հետզհետէ ծանր երևոյթներ կառնէր, այնպէս որ օգոստոս 28 չորեքշաբթի օր բժշկական խորհրդակցութիւնը ամէն յոյս և ակնկալութիւն վերջացած կը տեսնէր, և հոգեվար վիճակը յայտնի կերևար, և դգրոց կնքելու ու սենեակ փակելու նախազգուշական գործողութեանց կը ձեռնարկուէր, մինչև իսկ յուղարկաւորութեան կարգադրութիւններ կըլլային (85. ՏՆՕ. 251): Գիշերը չորս վարդապետ և սարկաւազներ և միաբաններ հսկելու մնացին, նուազումը զօրացաւ, և օգոստոս 29 հինգշաբթի առտու արեգակի ծագման հետ հոգին աւանդեց, և մարմնոյն վիճակի պահանջմամբ կանխաւ կատարուած պատրաստութեանց համաձայն, անմիջապէս թաղման արարողութիւնները կատարուեցան նոյն հինգշաբթի Երեմիա մարգարէի տօնին օրը, մեծահանդէս շքով և Երուսաղէմի պաշտօնական և ժողովրդական բոլոր դասակարգերու ներկայութեամբ, զի գոյժը իսկոյն ամէն

կողմ հասած էր, և հեռագիրներ ալ ցրուած էին բոլոր ազգային և միաբանական կեդրոններու: Հանգուցելոյն մարմինը երեկոյեան դէմ փոխադրուեցաւ Ս. Փրկիչ եկեղեցւոյ վանական բակը և թաղուեցաւ ձեմելիքներու ներքև ի չարս հանգուցեալ պատրիարքաց: Թափօրին կը հետևէին կառավարութեան և բոլոր ազգաց և հիւպատոսաց ներկայացուցիչներ, ինչպէս նաև Վինուորական ջոկատ մը և ոստիկաններու խումբ մը կառավարութենէ յղուած ի պատիւ և ի վգուշութիւն (85. ՏՆՕ. 252): Գոյժը Կ. Պոլիս կը հասնէր միևնոյն օգոստոս 29-ի երեկոյին, Յարութիւն պատրիարք յայտնապէս խոովեալ կարտասուէր, և երեսփոխութիւնը ի նշան սգոյ կը փակէր օգոստոս 30-ի նիստը, և լրագիրներ ընդարձակ մահագուժներ կը հրատարակէին (85. ԱՐԼ. 498): Մակար կաթողիկոս նոր հաստատութիւն ստացած տակաւին Քիշնև կը մնար, ուստի գոյժը տեղակալ Մկրտիչ Եպիսկոպոսի կը հաղորդէր (85. ՏՆՕ. 252), իսկ Երուսաղէմի միաբանական ժողովը պաշտօնական յիշատակութիւնը կը կատարէր սեպտեմբեր 5-ի գումարման մէջ, կը լսէր տնօրէն խորհրդոյ պաշտօնական տեղեկագիր , և տեղապահ կը նտրէր Երեմիա Տէր-Սահակեան Եպիսկոպոսը, և ուրիշ միաբանական կարգադրութիւնները կորոշէր, գոյից արձանագրութեան և ուրիշ կանոնական գործողութեանց համար (85, ՄԻԱ. 306-314): Իբրև լրացուցիչ տեղեկութիւն հարկ կը սեպենք յաւելուլ, թէ փամփուշտի քարին վտանգը հեռացուելէն ետքը յառաջ եկած անդարմանելի տագնապ վերագրուած է գործողութենէն յառաջ եկած վէրքին քաղցկեղի փոխարկուելուն, և այս մասին հնար չէ պատասխանատուութենէ վերծ համարել վիրաբուժական գործիքներուն և վիրադարման խնամքներուն մէջ տեղի ունեցած թերութիւններն ու վանցառութիւնները:

2919. ԱՆԱՉԱՌ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Եսայի Կարապետեան Երուսաղէմի պատրիարք, 1825-ին ծնած (2738) և 1864 օգոստոս 14-ին ընտրուած, տակաւին 60 տարեկան էր վախճանած ատեն և 21 տարի ամբողջ պատրիարքութիւն վարած էր Երուսաղէմի աթոռին վրայ: Մենք բաւական ընդարձակ կերպով պատմած ենք իր ընտրութիւնը (2737), բացատրած ենք այդ ընտրութեան հոգին (2738), ներկայացուցած ենք Վինքն իր անձնական հանգամանաց ներքև (2739), և գծագրած ենք իր նկարագիրը (2787), այնպէս որ պատմութեանս հետևողներ կրցած են որոշ գաղափար կազմել Եսայիի անձնաւորութեան վրայ, բայց աւելորդ չսեպուի եթէ գերեզմանին փակուելէ ետքը, կամ լաւ ևս, եթէ եղելութիւնները պատմելնէս ետքը, քանի մը տող ևս աւելցնենք անկաշկանդ կերպով և անաչառ պատմագիրի տեսակէտէն: Երկու բառով ամփոփելու համար մեր տեսութիւնը համարձակ պիտի ըսենք թէ պատուական անձնաւորութիւն մըն էր Եսայի, բայց անպիտան պատրիարք մը եղաւ: Ինչ ձիրքեր որ կը պահանջուին անհատական անձնաւորութեան մը պատուական կոչուելուն, Եսայի ունեցաւ անթերի անբասիր կեանք, անշահասէր գործունէութիւն, ուղիղ միտք, բարի սիրտ, հեղահամբոյր բնոյթ, բարեպաշտ վգացում, կատարելապէս ունէր և յայտնապէս ցուցուց: Երուսաղէմի պատրիարքէ մըն ալ պահանջուած ձիրքերէն լիապէս ունեցաւ ազգային իրաւանց և առանձնաշնորհութեանց և սեփականութեանց և պատուագրութեանց նախանձայուկութիւնը, սակայն դժբախտաբար այսչափը չէր բաւեր բարձր գիրքի մէջ գործելու կոչուած մէկու մը, որ դժուարին պարագաները գործածելու ալ ատակ չէր: Բայց այդ մասին ինքը չէր պատասխանատուն, այլ Կ. Պոլսոյ գործիչ մարմիններն ու պաշտօնական ժողովներն էին, որոնք ներսէն դուրսէն խնդիրին մոլեգնութեամբը ներշնչուած և իր իրաւունքը պաշտպանող միաբանութիւն մը ճնշելու մղուած, չվարեցան անյարմար գլուխ մը ընտրել միաբանութեան և աթոռին, իբրև թէ այս կերպով ուզեցին վրէժ լուծել միաբանութենէն, երբոր չկրցան անոր դէմ իրենց կամքը իրականացնել: Եսայի իր կեանքը սկսած էր իբրև արհեստաւոր, և

արհեստաւորութիւնը բարձրացուց պատրիարքական աթոռին վրայ լուսանկարչական և կալվանագործական արհեստները եղան իր սիրելագոյն վբաղումները և անխորհուրդ ծախքերու պատճառներէն մէկը: Կեդրոնը իր վրայ դրաւ անյարմար կանոններ և անկոպար և անկշիռ վարճացումներու պարտքեր, և ինքն ալ անոնք իրականացնելու կուրօրէն ջանքով՝ ծանրաբեռնեց աթոռը նորանոր պարտքերով: Իր վարչական անբաւականութեան գիտակից ըլլալով՝ յօժարութեամբ յանձնեց զինքն վարճացեալի հովեր առնող նորահասներուն ձեռքը, որոնք աւելի փայլուն երևոյթներու և անձնական օգուտներու կարևորութիւն ընծայեցին, քան իրականին, կամ լաւ ևս քան կացութեան և պարագաներուն տանիլ կրցած իրականութեան: Յովհաննէս պատրիարք պատրաստ գումարներով լեցուն սնտուկ մը թողած էր իր ետևէն ներսէն-դուրսէն խնդիրը պատրաստը կերաւ և իբր 5,000 ոսկւոյ պարտք մը յանձնեց Եսայիի, և սա 21 տարի պաշտօնավարութենէն վերջ 40,000 ոսկւոյ տագնապ մը կը թողուր իր ետևէն, առանց արդիւնաւոր փոխարէն մը ցուցնելու արհեստարանները ապարդիւն, տպարանը անօգուտ, վարժարանը անվարճացուն, միաբանութիւնը անբաւական, աթոռը տարակուսեալ: Վանքի աւագ դրան առջևի ընդլայնուած հրապարակը յիշատակաց արժանի գլխաւոր ձեռնարկն է, որ Եսայիի օրով կատարուած կը յիշուի, և այն ալ քանի մը հարիւր ոսկւոյ արդիւնք է: Դարձեալ կը կրկնենք թէ պաշտօնաւարութիւնը քննադատելով՝ պաշտօնավարողը պիտի չդատապարտենք: Եսայի ինքն հետամուտ պաշտօնին, որ յաւակնոտ և յանձնասպան ըսուի: Եթէ անյարմար կանոնագիր մը գործադրելու հետևեցաւ, կեդրոնը զինքը երդմնակուռ ուխտով պարտաւորեց: Եթէ վարժարանական և տպարանական խօլ ծախքեր ըրաւ, ազգը այսպէս կուլէ ստիպումէն մղուեցաւ: Եթէ ճոխութեան երևոյթներու դուռ բացաւ, աթոռին պատուոյն պահանջէն թելադրուեցաւ: Եթէ նորահասներու վրայ անպայման վստահութիւն դրաւ, իր խոնարհամիտ չափաւորութեամբը խաբուեցաւ: Եթէ կացութեան վրայ տիրապետել չկրցաւ, չկամութեան կամ վեղծման ուղղութեամբ չգործեց: Եթէ օրինակելի վիճակ մը չտուաւ միաբանութեան, իր անձնական օրինակը միշտ անբասիր մնաց: Իրեն անձնապէս վերագրելի միակ թելադրութիւնը արհեստամուլ հոգին է, և այդչափն ալ շատ պիտի չտեսնենք արհեստաւորութենէ առջև եկած անձի մը վրայ: Այս է մեր անաչառ տեսութիւնը, որ սակայն չի նուազեր Եսայիի մահուան միիջոցին աթոռին և միաբանութեան ունեցած տագնապալի վիճակը, և չի թեթևցներ ծանր ժառանգութիւնը, որ կը թողուր նա իր յաջորդին:

2920. ՅԱԶՈՐԴԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Երուսաղէմի վերաբերեալ դէպքերէ և տեղեկութիւններէ չհեռացած, Եսայիի յաջորդին ընտրութեան խնդիրն ալ ամփոփենք: Միաբանութիւնը որ եօթանուն փակեալ ցանկը կեդրոնին ներկայելու իրաւունքն ունէր, փութաց ընտրութեան գործը շտապցնել, և սեպտեմբեր 30-ի միաբանական նիստին մէջ կազմեց այդ ցուցակը, որուն մէջ մտան, Յարութիւն Վեհապետեան Կ. Պոլսոյ պատրիարքը 31 քուէով, Երեմիա Տէր-Սահակեան եպիսկոպոս տեղապահ 30, Աստուածատուր եպիսկոպոս Տէր Յովհաննիսեան ընդհանուրի ատենապետը և Մամրէ վարդապետ Մարկոսեան Ռուսիոյ նուիրակը 24-ական Սիմէոն եպիսկոպոս Սէֆէրեան Կ. Պոլսոյ փոխանորդը և Սահակ վարդապետ Խապայեան ընտրեալ լուսարարապետը և Ղևոնդ վարդապետ Մաքսուտեան տնօրէնի ատենապետը և ելամտից տեսուչը 21 ական քուէով: Եօթներուն ստացած քուէներուն գումարը կընէր 172 իսկ ներկայ ժողովականք 26 էին, 8 քուէ ալ տեսչութեանց մէջ եղողներէն նամակով եկած էր, և Գաբրիէլ վարդապետ Անոյչեան Կ. Պոլսէ իրեն քուէին փոխանորդ նշանակած էր Մաքսուտեանը, ըստ այս 35 քուէարկուներուն եօթնական քուէները կու տային 245 քուէ, և եօթներուն առածէն դուրս 73 քուէներ ցրուած էին 16 անձանց վրայ 12-էն մինչև 1: Իսկ

Յարութիւն պատրիարք և Սիմէոն եպիսկոպոս հրաժարած էին քուէ յղելէ կամ փոխանորդ նշանակելէ (85.ՄԻԱ.319): Եօթնանուն ցանկէն չորսը եպիսկոպոս էին Մամբրէ և Սահակ վարդապետներուն ալ եպիսկոպոսացման որոշումը տրուած էր (85.ՏՆՕ.214), որով Մաքսուտեան միայն կը մնար ընտրելի վարդապետ: Եօթնանունին մէջէն երեք նախադասելիներու քուէարկութիւնն ալ կատարուեցաւ յաջորդ օրը հոկտեմբեր 1-ին և քուէ ստացան Սէֆէրեան 19, Վեհապետեան 18 և Խապայեան 16, վիճակով նախադասուած նոյն չափ 16 քուէ ստացող Տէր-Սահակեանի (85.ՄԻԱ.323), և ըստ այսմ կեդրոնին յղուելիք տեղեկագիրը կազմուեցաւ հոկտեմբեր 4-ին, ընտրողական գործողութեանց հետ ընտրելիներու կենսագրութիւններն ալ (85.ՄԻԱ.329-333): Ինչ ալ ըլլար քուէներու նշանակութիւնը, միաբանութեան մէջ շեշտուեցաւ փափաք մը կամ վարչականութեան և մատակարարութեան մէջ կարող և փորձառու և ժիր անձ մը տեսնել պատրիարքական աթոռին վրայ, կերպով մը դարմանելու համար Եսայիի ընտրութեամբ տեղի ունեցած թերութիւնը, և այս նպատակով միաբաններուն դիտումն էր Վեհապետեանը Կ. Պոլիսէ Երուսաղէմ փոխադրել, և ըստ այսմ յանձնարարութիւններ կը յաճախէին Սէֆէրեանին այդ փափաքը իրականացնելու համար, մինչ Սէֆէրեանն ալ, ուղևժուծով համակ սաղիմական մը, ինքնին տոգորեալ էր այդ դիտումով, և աւելի հոգ կը տանէր Երուսաղէմի քան Կ. Պոլսոյ աթոռին օգուտին: Նոյն ինքն Վեհապետեանն ալ Կ. Պոլսոյ անհաստատ և փոթորկալից աթոռին կը նախադասէր Երուսաղէմի հաստատուն և հանդարտիկ աթոռը, որուն սիրտով ալ փարած էր, և յայտնապէս ալ կը պարզէր իր միտքը թէ պատրաստ է անհակառակ հեռանալ Կ. Պոլսոյ աթոռէն: Միայն կեդրոնի վարչութիւնն ու երեսփոխանութեան մեծամասնութիւնը կը դժուարանային այս միտքին հանդէպ, և չէին ուզեր վերանորոգել հինգ վեց ամիսէ ի վեր դադրած պատրիարքական տագնապը, մանաւանդ որ պատրաստ և աչքառու ընտրելի մըն ալ չունէին անմիջապէս իրենց աթոռին բարձրացնելու: Երուսաղէմի քուէարկութեան արդիւնքին պաշտօնագիրը Կ. Պոլիս հասած էր հոկտեմբեր 15-ին (85. ԱՐԼ. 536). և հրատարակութեան ալ տրուեցաւ (85. ԱՐԼ. 545), և 17-ին վարչութիւնը ուզեց երեսփոխանութեան հանել (85. ԱՐԼ. 539), և անմիջապէս սկսան խորհրդածութիւնները, և որովհետև եօթը ընտրելիներէն Վեհապետեան և Սէֆէրեան միայն ծանոթ էին կեդրոնին, և Վեհապետեանն ալ Կ. Պոլսոյ աթոռէն փոխելը ծիծաղելի պիտի դառնար, ուստի միտքերը Սէֆէրեանի վրայ սկսան ամփոփուիլ (85. ԱՐԼ. 541): Ընդհանուր ժողովը հոկտեմբեր 25-ի նիստին մէջ սկսաւ այդ խնդիրով վբաղիլ, բայց միջադէպերու և կարևորագոյն նկատուած կաթողիկոսական խնդիրին պատճառով (2914) շարունակութիւնը յետաձգուեցաւ, և այդ միջոցին գաղափարներ փոխանակուեցան վանապան շահերը և փափաքները համաձայնեցնելու: Նոյեմբեր 15-ին ընտրական քուէարկութիւնը եղաւ, և 66 քուէարկուներէն Վեհապետեան ստացաւ 34, Սէֆէրեան 27 և Խապայեան 2 քուէ, և 3 ալ սպիտակ քուէ գտնուեցաւ: Վաւերական որոշման կամ ընտրութեան համար 36 քուէներու համամտութիւնը կը փնտռուէր ըստ կանոնագրի, և վէճերը նորոգուեցան և քուէարկութիւնը իբր անհետևանք մնաց (85. ԱՐԼ. 564): Նորէն սկսան խօսիլ Վեհապետեանի Կ. Պոլսոյ աթոռին վրայ ունեցած արդիւնքները, ապագային յուսադրութիւնները և չհեռացնելու պահանջը (85. ԱՐԼ. 567): Ատենապետաց դիւանը մասնաւոր խորհրդակցութիւններ ունեցաւ ելք մը գտնելու (85. ԱՐԼ. 569 և 571), բայց պարզ յայտարարութիւններէ աւելի բան մը չբերաւ Ընդհանուր ժողովոյ դեկտեմբեր 6-ի նիստին որ յատկապէս գումարուեցաւ Երուսաղէմի ընտրութիւնը աւարտելու, ինչ որ պատրիարքն ալ դեկտեմբեր 2-ի նամակովը կը պահանջէր, և իբր դարման կառաջարկէր իր անունը ընտրելիներու ցանկէն հանել, որպէսպի դադարին այն ամէն խօսքերը որ պինքն կարի վիրաւորած են: Ուրիշ գրութեամբ մը 45 երեսփոխաններ կառաջարկէին Երուսաղէմի ընտրութիւնը յետաձգել, մինչ

ուրիշ խմբակ մը, սահմանադրութեան մէջ վերջէն մուծուած և փոփոխուած յօդուածին վրայ լինելով, եղած ընտրութիւնը վաւերական կը համարէին, և ասոնք աւելի անոնք էին որ Վեհապետեանը Կ. Պոլիսէ հեռացնել կը գիտէին: Վիճաբանութիւններ երկարեցան, Յարութիւն պատրիարքի ընտրութիւնը ուսողներ շատցան, վայն հեռացնել չուսողները պօրացան, և նոր բանաձև մը կազմուեցաւ, նոր ընտրութիւն կատարել խծրծանաց տեղի չթողլու համար, Վեհապետեանը ընտրել ամէն կողմերը գոհացնելու համար, Բայց և միանգամայն կառավարութեան առաջժմ չհաղորդել կեդրոնին պէտքերուն համաձայն անմիջապէս չգործադրելու համար, և երկու աթոռներու անունները միանգամայն չգործադրել, այլ սպասել մինչև որ Երուսաղէմի կանոնագիրը վերաքննուի, և Վեհապետեան Կ. Պոլսոյ աթոռէն հրաժարի, և այն ատեն իբրև արդէն ընտրեալ Երուսաղէմի աթոռին անցնի: Այդ հիմար նոյն օր դեկտեմբեր 6-ին, և 57 ներկայ քուէարկուներէ 53 քուէով Վեհապետեան Երուսաղէմի պատրիարք ընտրուեցաւ մէկ քուէ տրուած էր Սաֆարեանի, մէկ ալ Խապայեանի, և 2 ալ սպիտակ քուէ կային (85. ԱՐԼ. 581): Այսպէս աւարտեցաւ Եսայիի յաջորդին ընտրութիւնը, վոր միաբանութիւնը խնդութեամբ ողջունեց իր դեկտեմբեր 8-ի ժողովին մէջ (85. ՄԻԱ. 335): Վեհապետեանի Երուսաղէմի անուն չկրելը և կառավարութեան չներկայացուիլը արգելքներ չէին որ Երուսաղէմի համար բոլորանուէր չաթխատէր, և ոչ ալ միաբանութիւնը կը վրկուէր անոր առաջնորդութեամբ կառավարուելէ: Արդէն եթէ Կ. Պոլսոյ աթոռէն բաժնուելով Երուսաղէմի պատրիարք հռչակուէր ալ, դարձեալ Կ. Պոլիս պէտք էր մնար սաղիմական կենսական խնդիրները վերջացնելու համար, ինչ որ առաւել ևս ուժգնութեամբ և արդինաւորութեամբ կրնար կատարել Կ. Պոլսոյ պատրիարքութեան անունին ներքև: Այս անօրինակ, բայց ոչ անօգուտ ձևը պաշտօնապէս տևեց երկու քուէկէս տարի մինչև 1888 ամառը, իսկ իրօք երեք տարի մինչև 1889 գարունը, և իսկապէս կրկնուեցաւ այն երևոյթը որ տեղի ունեցած էր Եսայիի 1882-էն 1885 եռամեայ բացակայութեան և Յարութիւնի փոխանորդութեան առթիւ:

2921. ՆԵՐՍԷՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Երբ Յարութիւն Երուսաղէմի պատրիարքութեան յաջորդ հռչակուեցաւ 1885 դեկտեմբեր 6-ին, հապիւ ութն ամիս էր որ Կ. Պոլսոյ պատրիարքութեան գլուխն անցած էր, և իր գործունէութեան տուած ճաշակը եղած էր անօրինակ ձևին իսկական պատճառը, որպէսպի ոչ ներկային մէջ Կ. Պոլսոյ աթոռը վրկուի պահանջուած օգուտէն, և ոչ ապագային մէջ Երուսաղէմի աթոռը վրկուի ակնկալեալ արդիւնքէն: Յարութիւնի պաշտօնավարութեան գլխաւոր հետևանքներն էին, պետութեան և ազգութեան միջև յարաբերութեանց քաղցրանալը, վանապան առկախ խնդիրներու լուծումը, ուրիշ խնդիրներու լուծումն պատրաստութիւնները, պատրիարքարանի գործերուն կարգուկանոն դնելը, եկեղեցական կարգապահութեան թուլցած կապերը ամրացնելը, Կ. Պոլիս թափառող առաջնորդները տեղերնին դարձնելը, անձնական փառքի և շահի հետևող եկեղեցականները չափի մտցնելը, և մանաւանդ կաթողիկոսական խնդիրին լուծման համար ցոյց տուած կորովի արիութիւնը, թէ իր պաշտօնին նախաձեռնութեան իրաւունքը պահելով և թէ սահմանադրական պատրիարքի մը պատասխանատուութեան գիծերը չխախտելով (85. ԱՐԼ. 567): Ներսէսը ձանձրացնող և նեղացնող ընդդիմադիրները չյաջողեցան Յարութիւնի վրայ միևնոյն ազդեցութիւնը ներգործել, և արհամարհանքի հանդիպեցան, և ասոնք էին որոնց ակնարկեցինք երբոր Յարութիւնը Երուսաղէմ փոխադրելով Կ. Պոլիսէ հեռացնելու աշխատողները յիշեցինք (2920): Յարութիւն հեռու մնաց նաև փոքրօգի ստորութենէ, որով յաճախ յաջորդներ նախորդներու արժանիքը նուազեցնելով կը կարծեն իրենցը բրձրացնել: Յարութիւն ոչ մէկ առիթի մէջ Ներսէսի անձին կամ պատուոյն կամ ձեռնարկներուն հակառակ միտք մը յայտնեց, և նոյն իսկ հայկական

խնդիրին մասին ալ, որուն շատ մօտ չէին իր տեսութիւնները, հակառակ արտայայտութիւն մը չըրաւ, թէպէտև այս մասին տաք վերաբերում մը չէր պար, և հետապիղելու միտք ալ չունէր: Սակայն խնդիրը մատնել, և բարւոքմանց և բարենորոգութեան պահանջն ալ կրկնել, պարզապէս օսմանեան բարեացակամութեան դիմելով, և լսելով միջապագային կարգադրութեանց և միջամտութեանց փաստը: Ներսէսի անունին մշտնջենաւոր յիշատակ մը թողլու համար մասնախումբ մը կազմուած էր նշանաւոր և ունևոր 17 անձերէ որոնք յօժարակամ ստանձնած էին այդ գործը, իրենց մէջ նախնական հանգանակութիւն մըն ալ բացած էին, նպատակ ունենալով Ներսէս Վարժապետեան Ուսումնարան մը հիմնել նոյնիսկ Ներսէսի բնական Օրթաքէօյի տունին մէջ, և վայն ամէն դասակարգելու օգտակար ընել ձիավարժներու ու թոշակաւորներու, գիշերօթիկներու և ցերեկեաներու համախմբութեամբ: Իսկ քաղաքական ժողովը լաւագոյն կը սեպեր Ներսէսէ ծրագրուած Կեդրոնական Վարժարանը բանալ Ղալաթիոյ մէջ լոկ ցերեկեայ գրութեամբ, և թաղականներէ ելլող շրջանաւարտներուն ապագային բարձրագոյն ուսմանց ասպարէզ տալ: Ներսէսի մարմինն ալ մայրեկեղեցոյ ներքին գաւիթին մէջ հանգչեցնելէ ետքը անոր վայելուչ շիրիմ մը անհրաժեշտ էր, և այս ալ յատուկ ձեռնարկ մը պիտի ըլլար նոյնպէս Ներսէսի յիշատակին: Երեք ձեռնարկներն ալ իրենց կարևորութիւնը ունէին և անձնուէր մասնախումբը առաջինն ու վերջինը միայն կը ստանձնէր, մինչ վարչութիւնը միջինը կը հետապնդէր: Վերջապէս համաձայնութիւն գոյացաւ երեքը միևնոյն մասնախումբին յանձնել որոշ պայմաններով, որ յայտագիրով մըն ալ հրատարակուեցան (84.Ա.ՐԼ.292), և երբոր Յարութիւն գործի գլուխ անցաւ, ինքն ալ միևնոյն ուղղութեամբ նոյն ձեռնարկներուն իրականացման պէտք եղած ջանքն ու օգնութիւնը նուիրեց: Մասնախումբը գործին ամենայն մտադրութեամբ հետևեցաւ, Կեդրոնական վարժարանը բացուեցաւ 1886 սեպտեմբեր 1-ին (86.Ա.ՐԼ.798): Շիրիմն ալ արուեստակերտ և սիւնապարդ ձակատ մը եղաւ մայրեկեղեցոյն արևմտեան պատին վրայ, սպիտակ և սև մարմարներով կազմուած, և բացուեցաւ նոյն 1886 տարույ հոկտեմբեր 26-ին , մահուան երկրորդ տարեդարձին, որ կիրակիի մը հանդիպեցաւ, և Յարութիւն պատրիարք ինքն արարողութեանց նախագահեց, պատարագեց և արժանապէս դրուատեց նախորդին յիշատակը (86.Ա.ՐԼ.844): Իսկ Ներսէս Վարժապետեան ուսումնարանը չկրցաւ իրականանալ ոչ միայն զի մեծ ծախքի պէտք ունէր, և մասնակի հանգանակութիւնն ալ միւս երկու ձեռնարկներուն ծախսուեցաւ, այլ զի Ներսէսի նուիրուած տունն ալ կայսրն ինքն գնեց վազըֆներէն, որոնք ընդհանրապէս ապագային էին, և պալատան մառանապետ Օսման Պէյի նւիրեց, և նորէն տեղ փնտոել և գտնել դժուարացաւ, պէտք եղած գումարն ալ անհնար եղաւ նորէն հաւաքել, մանաւանդ որ Կեդրոնականի բացումը ուսումնարանին պէտքը նուազեցուց, և հետպհետէ մտագրութենէ վրիպեցուց:

2922. ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

Յարութիւն պատրիարք նորանոր խնդիրներ յարուցանելէ հեռու, իր մտադրութիւնը դարձուցած էր ձեռք առնուած խնդիրները հաշտաբար միջոցներով լուծելու, Պատրիարքարանը յօգնեցնող խնդիրներէն մէկն ալ Կիլիկիոյ կաթողիկոս Մկրտիչ ընթացքն էր, որ պատրիարքարանէ անկախ կացութիւն մը կազմած էր ձեռք ձգած և ետ դարձնելու դժկամակած հրովարտակին յենլով (2861), և իր ժողովուրդին հանդէպ ալ անհոգ և բռնական ուղղութիւն մը կը պահէր, և իր գործունէութիւնը կատարելապէս շահագիտական նպատակի յատկացուցած էր առանց միջոցներն ալ խտրելու: Ներսէսի օրով հնար չէր եղած կերպով մը Մկրտիչի ընթացքը փոխել տալ, սպառնալիքներն ալ ապուշեցութիւն չէին ունեցած, մանաւանդ թէ ինքն պատրիարքարանի դէմ սպառնական գիրք էր առած, ինքզինքը տաճկասէր և պատրիարքարանը ռուսասէր ներկայելով

կառավարության: Յարութիւն պատրիարք ալ ձեռնարկեց այդ խնդիրներու կարգադրութեան, և առիթ առնելով իրենց հին յարաբերութիւններէն, իբր զի Մկրտիչ ալ Երուսաղէմի միաբան էր եղած և Յարութիւնի օծակից եպիսկոպոս գտնուած, վարչութեան գիտակցութեամբ մտերմական գիր մը ուղղեց Մկրտիչի ազգային կեդրոնական պատրիարքարանի հետ յարաբերութիւնները օրինական շաւիղի բերելու: Մկրտիչ, որ առիթներէն օգտուելու և վրայ չտալու խաբուսիկ կերպերու վարպետն էր, փութաց պատասխանել՝ շնորհակալ ըլլալով իր հին ընկերակիցին բարեացակամ յորդորներուն, և առանց իր կողմէ բան մը որոշելու կամ ընելու գործը կը յանձնէր Վեհապետեանի իր ուլած կերպով որոշել և կարգադրել, որուն յօվարակամ համակերպութիւն կը խոստանար, անշուշտ բերանացի, բայց առիթ կառնէր պատրիարքէն պահանջելու որ իր ապառիկ մնացած ամսականներուն վճարումը փութացնել տայ, Կիլիկիոյ աթոռանիստ վանքը նորոգելու հանգանակութիւն բանայ, և կաթողիկ ու բողոքական քարուպիչները Կիլիկիայէ հեռացնելու և արգիլելու համար կեդրոնին պօրութիւնը գործածէ: Յարութիւն վանց չըրաւ ապառիկ ամսականներու համար միջնորդել, և այս եղաւ Մկրտիչի քաղած օգուտը. իսկ իր կողմէ բան մը չգործուեցաւ թէ հրովարտակի ետ տրուելուն և թէ ժողովուրդին հոգածութեան մասին, միայն իր աստանդական թափառումները ընդհատելով Սոյ աթոռը դարձաւ (86. ԱՐԼ. 586): Աղթամարի կողմէն ալ գանգատներ կը յաճախէին Խաչատուր կաթողիկոսի ընթացքին դէմ, որ առաջնորդէ աւելի հաստահարիչի ձևեր կը գործածէր իրեն նիւթական արդիւնքը աւելցնելու, բայց ապօրէն վայելք չեն բերեր, և Խաչատուր օր մը ինքզինքը կողոպտուած գտաւ իր պահած քանի մը հազար ոսկւոյ գումարէն: Վանեցի գործիչներու խմբակ մըն էր գողութեան դերակատարը, որուն գլուխ կըսուէր նոյն օրեր Երոպա խոյս տուող մէկ մը, բայց Խաչատուր ենթադրելով որ առանց ներքին գործակցութեան հնար չէր իր պահեստը գիտնալ և վերցնել, պաշտօնապէս բողոք տուաւ իր միաբաններէ Տեյեցի Պօղոս Կարապետեան և Վրընտուցի Խորէն Գրիգորեան վարդապետներուն և հինգ աշխարհականներու դէմ (86, ԱՐԼ. 845), և ամէնն ալ բանտարկել տուաւ Վանայ կառավարութեան ձեռքով, երբոր ինքն իր միջոցներով չկրցաւ խոստովանութիւն քաղել: Խիպանցի Յակոբ եպիսկոպոսն ալ պետական պաշտօնական ենթարկել տուաւ, և ինքն ալ իբրև դատախազ ներկայացաւ Վանայ դատարանին: Յարութիւն պատրիարք մտերմական յորդորներ ուղղեց Խաչատուրի և իր արարքներուն տգեղութիւնը և ձախող տպաւորութիւնը պագուց, յուսալով համակերպութիւն գտնել իրենց նախկին յարաբերութեանց շնորհիւ (2822). բայց այս առիթին մէջ ալ Յարութիւնի հաշտարար ջանքերը արդիւնք չունեցաւ, և Խաչատուր չդարձաւ իր յամառ հետապնդումէն, մինչև իսկ վերաքննութեան դիմեց երբոր դատարանը ամբաստանեալները արդարացուց: Մայրաքաղաքի և գաւառներու անցքերու մասին շատ բան չունինք յառաջ բերելու Յարութիւնի վարչական գործունէութենէն, իբր զի նորանոր խնդիրներ յուլելէն կամ ստեղծելէ հեռու, իր մտադրութիւնը դարձուցած էր ընթացիկ և սովորական գործերու կանոնաւոր և արդիւնաւոր ընթացք մը տալ, և հանդարտութեան վիճակը ապահովել: Այս նպատակով նա ոյժ կու տար վարչական գործերու օրինական և արագ կատարման, թաղական մատակարարութեանց կանոնաւորութեան, և մանաւանդ գաւառական գործերու օրինաւոր ընթացքին, իբրև գաւառական պաշտօններու հինաւուրց փորձառուն և գաւառական գործերու կարևորութեան համոզուած անձ մը: Այս տեսակէտով փութաց նախ շքանշանով պատուել տալ Կարնոյ, Տրապիպոնի, Բաղիշոյ, և Վանայ առաջնորդները (85. ԱՐԼ. 576), և հետզհետէ ուրիշ առաջնորդներ ալ, և ամուր պաշտպան կեցաւ Կարնոյ և Տրապիպոնի և Նիկոմիդիոյ առաջնորդներուն եպիսկոպոսացման, երբոր վիճակները խնդրամատոյց եղան, և աննախանձ կերպով պաշտպանեց Կարնոյ առաջնորդին ձեռնադրութիւնը, երբոր Խորէն Նարպէյ եպիսկոպոս

արգելք դնել կաշխատէր նոյնինքն Յարութիւնի Կարնոյ անունով եպիսկոպոս ձեռնադրուած լինելը պատճառելով (86.ԱՐԼ.607 և 612), չնայելով լոկ իսկ որ Նարպէյ և Օրմանեան իրարու ապկակից էին իբր երկու քոյրերու թոռեր: Միննոյն միտքս Յարութիւն անարգել քալեցուց Պայապիտ առաջնորդին եպիսկոպոսացումը, իբր իր իսկ ձեռնարկը պնդելով (86.ԱՐԼ.679), երբոր Օրմանեան յիշեցուց թէ վաստակոց և նեղութեանց մէջ աշխատող յետնեալ վիճակի առաջնորդն ալ պէտք չէ վրկուի այն բարձրացումէն, որ փայլուն վիճակներու առաջնորդներուն կը շնորհուի:

2923. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Յարութիւն Վեհապետեան Կ. Պոլսոյ պատրիարքութեան յանձնառու եղած էր միայն Երուսաղէմի աթոռին օգտակար ըլլալու դիտաւորութեամբ և յայտարարութեամբ (2908), և վերջին ընտրութիւնն ալ (2920) կու գար նուիրագործել այդ դիտաւորութիւնը, զի Երուսաղէմի աթոռին յաջորդ նշանակուելովը պարտաւոր էր այլ ևս բոլորանուէր վբաղիլ անոր շահերով և անոր ապագայով: Մենք վանց կընենք աթոռին առօրեայ գործերը պատմել, որոնք մեր շրջանակէն դուրս կը մնան, և որոնց հոգաձուլիւնը ուղղակի կը ծանրանար տեղապահ Տէր-Սահակեանի վրայ տնօրէն ժողովոյ գործակցութեամբ, որ սակայն տեղապահ անունի և ձևի ներքև իրօք իբրև ընտրեալ պատրիարքին փոխանորդ կը գործէր, և անոր հրահանգներն ու խորհուրդները կը ստանար Սէֆէրեանի միջնորդութեամբ, որպէսզի Յարութիւնի ուղղակի աթոռին վարչութեան միջամտած ըլլալու երևոյթը առած չըլլայ: Բայց կային գործեր որ պաշտօնապէս Կ. Պոլսոյ աթոռին ձեռքն անցած էին, ուստի կրկնակի կերպով մօտ էին Յարութիւնի սիրտին և առարկայ կը կազմէին անոր գործունէութեան: Երբոր նա Կ. Պոլիս հասաւ Երուսաղէմի պարտքին վճարման համար զինուորական տուրքին վրայ երեք դահեկանի յաւելուածը կայսերական հրամանով հաստատուած էր, և ազգային ժողովով ալ կարգադրուած (2877) և թէպէտ 1885 մարտ 1-էն գործադրելի պիտի ըլլար (2878), սակայն ապրիլ 15-ին Վեհապետեանի հասած օրը տակաւին ոչ մի գործ եղած չէր: Այդ պարագայից և բոլոր մանրամասնութեանց հոգնաձուլիւնը Յարութիւնի հասնելէն ետքը սկսան իրականանալ, որ թէ երեսփոխութիւնը և թէ վարչութիւնը և թէ պարտուց բարձման յանձնաժողովը շարժումի մէջ դրաւ, որոշումներ տրուեցան, հրամաններ արձակուեցան, հրահանգներ ցրուեցան, և գաւառներուն մէջ գործադրուիլ սկսան և ինչ որ մենք կանխելով պատմած ենք (2878), Յարութիւնի օրերուն գործերն են եղած: Բայց հաւաքումներուն խառն կերպով կատարուելէն, Երուսաղէմի դրամին զինուորական դրամին հետ խառն կերպով կառավարական սնտուկները մտնելէն, և նոյնպէս խառն կերպով կեդրոնական սնտուկին փոխանցուելէն, Երուսաղէմի դրամին մասը շոշափելի կերպով և անմիջապէս ձեռք չանցաւ, ի բաց առեալ Կարնոյ և ուրիշ քանի մը տեղերուն մասերը, ինչպէս արդէն յիշած ենք (2878): Հետևաբար ակնկալեալ գումարներուն ժամանակին չհասնիլը առիթ տուաւ տոկոսներուն նախատեսուած պայմանաժամէն աւելի երկարելուն, և համեմատաբար պարտքին ալ աճելուն: Յարութիւն ամէն ճիգ դրաւ այդ դժուարութեան առջևն առնելու և պարբերաբար հասած գումարները գանձելու, սակայն հապիւ իր Կ. Պոլսոյ պատրիարքութեան վերջերը կրցաւ յաջողիլ, այսինքն Գալապեան Յակոբ փաշայի 1886 դեկտեմբեր 7-ին ելեմտից նախարար անուանուելէն ետքը (86.ԱՐԼ.880): Գալով մեծ արտի խնդիր կոչուած գործին, այս ծագում առած էր ճիպրայէլ Կարակուր փաստաբանին կողմէ Երուսաղէմի աթոռին դէմ բացած դատէն: Զաղաքին արևմտեան դուռնէն դուրս՝ Եաֆա և Մամիլլա պողոտաներուն միջև գտնուող ընդարձակ գետինը՝ Յովհաննէս պատրիարք ժամանակին ստացած էր օրնաւորապէս (2646), բայց Կարկուր ինչ ինչ հին և կեղծ թուղթեր երևան հանելով իրեն սեփականելու խնդիր յուշուած էր Եսայիի Կ. Պոլիս գտնուած ատեն, և վատ բացած էր անոր անունին դենպետական դատարանին առջև: Պատրիարքարանի

դիւանապետ Կարապետ Խաչատուրեան ներկայացաւ այն ատեն Եսայիի կողմէն, և պայմանաժամ խնդրեց կարևոր վաւերաթուղթեր բերել տալու համար, սակայն Կարկուր շնորհիւ իր անձնական յարաբերութեանց յաջողեցաւ վլանալ տալ խնդրուած պայմանաժամը, և իր ներկայած թուղթերուն հիմամբ իրեն նպաստաւոր վճիռ ստանալ (2876), և այս վիճակի մէջ մնացած էր գործը Եսայիի Կ. Պոլիսէ մեկնած ատենը (85.ԱՐԼ.312): Երուսաղէմի մէջ ալ կրոյցի և աղմուկի տեղի տուած էր այդ գործը, որով տեղական դատաւորին միտքն ու կամքը իմանալ կարևոր դատուեցաւ (85.ՏՆՕ.123), և թէպէտ Սէֆէրեան Կ. Պոլիսէ քաջալերութիւն և յոյս կը ներշնչէր, և տրուած վճիռին փոխուելուն մասին օրէնագէտ խորհրդատու Խայրուլլահ էֆէնտիի նպաստաւոր տեսութիւնը, և նախարար Գալպեան Յակոբ փաշայի այդ մասին ցուցած հովանաւորութիւնը կը հաղորդէր, սակայն միտքեր միշտ շփոթած կը մնային: Դատավարական գործոց ընթացքը կը պահանջէր որ նախապէս առաջին վճիռը ջնջուի, և այս նպատակին ուղղուեցան բոլոր աշխատութիւնները: Իրօք ալ գործը կարող փաստաբաններու յանձնուեցաւ, խառն կերպով առնուած այլապիներէ և ալգայիներէ, իւրաքանչիւրը իր դերին մէջ օգտակարապէս գործածելու համար:

2924. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԵԾ ԱՐՏԸ

Յարութիւն պատրիարք անձամբ և ոգևիւն մեծ արտին գործը (2923) կը հանդիպէր և անդուլ անդադար անոր վրայ կաշխատէր, զի խնդրի նիւթ եղող և Յովհաննէսէ նախատեսութեամբ գտնուած գետինը իբր 80,000 քառակուսի կանգուն տարածութեամբ և յաջող դիրքով և ընդարձակուած քաղաքին կեդրոնական մասն ըլլալու յարմարութեամբ մեծ ապագայ կը խոստանար աթոռական մատակարարութեան, և օտարաց առջև պատուոյ խնդիր ալ դարձած էր հայ ալգութեան համար: Այդ նպատակով երբ մէկ կողմէն դատավարական գործողութիւնները կը կարգադրուէին, և միւս կողմէ կառավարական բարձր շրջանակները գործին իսկութեան մասին կը լուսաբանուէին, ժողովրդական միտքն ալ հանդարտելու համար ընդարձակ բացատրութիւններ և վաւերագիրներու պատճէներ հրատարակութեան կը տրուէին լրագիրներու միջոցով (86.ԱՐԼ.670 և 672): Այս տեղեկութիւններէն կը քաղուէր թէ Կարկուրի իբրև փաստ գործածած մուրհակները կեղծ և խարդախեալ թուղթեր են, և այսպէս ալ վկայուած են ժամանակին բացուած քննութեանց պօրութեամբ: Դատին ծագման վրայ ալ տրուած ծանօթութիւններէն կը քաղուէր, թէ Կարկուր 1863-էն սկսելով այդ գործին ետևէն եղած է, և վանապան ժամանակ տեղի ունեցած դէպքերը ըստ հաճոյից կերպարանափոխած է, իրեն դէմ եղող գիրերը և անցքերը վանց ըրած, և իր նենգեալ և խարդախեալ գիրերը և մտացածին անցքերը առջև դնելով ջանացած է, թէ դենպետութիւնը խաբել իր աղերսագիրով, և թէ հասարակաց կարծիքին վրայ ալ դել յատկապէս հրատարակած տետրով մը (86.ԱՐԼ.673): Ասիակողման մեծ դատաւորին առջև կատարուած դատավարութեան պարագաները յայտնի կը ցուցնեն Կարկուրի հակառակ օրինաց վարած դերերը, և դատաւորին յայտնի կողմնակցութեան և բռնադատական միջոցներով գործը շտապեցնել, և փաստաթուղթեր բերելու պայմանաժամը վլանալը, և դատախապին ներկայացուած թուղթերը իբրև դատափետեալէ ցուցուած կարծեցնելը, որոնք դատաւորին տուած վճիռին անվաւերականութիւնը կապացուցանէին (86.ԱՐԼ.675), ինչպէս որ ընդարձակ կերպով խմբագրած են դատին փաբտաբանները Եորտամեան Աւետիս և Շէհիր և Վէհպի և Ռէշիտ, և ստորագրուած է դատին օրինաւոր ներկայացուցիչը Սէֆէրեան Սիմէոն եպիսկոպոսի կողմէն (86.ԱՐԼ.680-681): Հին ատեններ Տաճկաց կրօնական դատարանները վերաքննութիւն չունէին, և յետոյ ուրեմն հաստատուեցաւ թէտքիքաթը շէրիէ կոչուած վերաքննիչ կրօնական ատեանը 15 ընտրեալ օրէնագէտներէ կազմուած, լոկ գրութեանց վրայ գործող ատեան նորէն կողմերը լսելու: Ասոր առջևը ելաւ 1885 յունիսին ասիակողման դատաւորին վճիռին դէմ մատուցուած բողոքագիրը և

քննութիւնը երկարեցաւ, զի Երուսաղէմէ պաշտօնական տեղեկութիւններ ուզուեցան, որոնք աթոռին նպաստաւոր եղան: Մեծ դենպետը 1886 փետրուարին պատրիարքին կը ծանուցանէր թէ Կարկուրի ձեռք բերած վճիռը ջնջուեցաւ, և ամէն կողմ ուրախութեան լուրեր կը տարածուէին սակայն մարտի սկիզբը վճիռին պաշտօնական գիրին մէջ տեսնուեցաւ որ շփոթ որոշում մըն է տրուածը, որ առաջին վճիռին մէջ ինչ ինչ թերութիւններ կը նշանակէ, նորէն դատ վարելու իրաւունք կու տայ, բայց եթէ նոր դատ տեղի չունենայ առաջինը գործադրելի կը ճանչնայ: Կարկուր այդչափէն ալ օգտուելով անմիջապէս գորադիր պաշտօնէութեան կը դիմէ, և ամէն կողմ լուր կը տարածէ թէ նպաստաւոր վճիռ ստացած էր, և թէ Երուսաղէմ և Հայութիւն իրաւունք չունին, և յաջողութիւն պիտի չստանան (86. ԱՐԼ. 680): Այս եղելութիւններ ժողովուրդին մէջ արձագանգ գտան և մարտ 28-ին արհեստաւորաց բազմաթիւ ներկայացուցիչներ, և մայր եկեղեցւոյ մէջ հաւաքուած ժողովուրդը, և անոնց ետևէն Ղալաթիա խմբուած քանի մը հարիւր հոգւոյ ամբոխը, պատրիարքին կը դիմէն հիմնուելով Կարկուրի կողմէ տարածուած լուրերուն: Պատրիարքը ամէնքը կը վստահացնէ թէ սուտ լուրեր են տարածուածները, թէ դատը կորած չէ, թէ յաջողութիւնն ալ մեծայոյս է, և թէ պէտք եղած միջոցները ձեռք առնուած են (86. ԱՐԼ. 672), բայց ժողովրդական յուզումը չէր դադրեր և մարտ 31-ին նորէն կը կրկնուէր (86. ԱՐԼ. 673): Պատրիարքն ալ նոր բողոքագիրներ կը մատուցանէր, և փաստաբաններու խորհրդով խնդիրին նոր ձև կու տար, և այս անգամ դատական նախարարութեան կը դիմէր, ձեռնահաստութեան խնդիր ալ կը յուզէր, թէ պատրիարքի մը դէմ վճիռը դենպետէն միայն կրնայ տրուիլ, և ոչ ուրիշ դատաւորէ: Նախարարութիւնը գործը պետական խորհուրդին որոշման կենթարկէր, և անմիջապէս լուրը կը տարածուէր թէ Կարկուրի ձեռք բերած վճիռը նենգեալ և խարդախեալ և օրինաց հակառակ ըլլալուն ջնջուած է (86. ԱՐԼ. 680), սակայն հապիւ ապրիլին մէջ թուղթերը կը յանձնուէին պետական խորհուրդին (86. ԱՐԼ. 691), և միայն մայիս 17-ին լուր առնուեցաւ թէ Երուսաղէմի նպաստաւոր որոշումը տրուած է (86. ԱՐԼ. 719), որով անգործադրելի կը վճռուէր Կարկուրի ձեռք անցուցած վճիռը (86. ԱՐԼ. 711), և 21-ին պետական խորհուրդի որոշումը նախարարութենէ կը աւերացուէր (86. ԱՐԼ. 713), և կը հռչակուէր Երուսաղէմի իրաւունքը և կը սօրանար ուղղամիտ արդարութիւնը (86. ԱՐԼ. 715), և պաշտօնապէս պատրիարքարանին կը հաղորդուէր (86. ԱՐԼ. 786), և եպարքոսական հաստատութեամբ հրատարակութեան կը տրուէր (86. ԱՐԼ. 778), և միաբանութիւնը 1886 օգոստոս 11-ին խնդութեամբ կը լսէր բոլոր այդ յաջողութիւնները (86. ՏՆՕ. 424): Յարութիւն պատրիարք նկատելով որ թէպէտ Կարկուրի ստացած վճիռը անգործութեան մատնուած է, բայց ապարդիւն կրնան նոր միջադէպներ ծագիլ, կը մտածէ նոյն վճիռը նուիրագործել տալ կայսերական հաստատութեամբ, և արտին կէսը վաճառելով միւս կէսը շահագործելու արտօնութիւն կը խնդրէ: Կառավարութիւնը նկատի կառնէ առաջարկը և Երուսաղէմի կառավարիչէն պաշտօնական տեղեկութիւն կը պահանջէ, ինչպէս նոյեմբեր 20-ին կը ստացնէր պատրիարքը (86. ՏՆՕ. 460): Կարկուր այդ առաջարկին դէմ ալ կը բողոքէ (86. ՏՆՕ. 491), սակայն պատրիարքին ջանքը կը յաղթանակէ, և կայսերական արտօնութեան ծանուցագիրին հասած ըլլալը 1888 ապրիլ 2-ին միաբանութեան կը հաղորդուի (87. ՏՆՕ. 502): Պատրիարքը յատուկ հրովարտակ ալ ստանալու ջանքը կը շարունակէ, որուն հաւասար կը սեպուի կայսերական հրամանին հրովարտակաց դիւանին մէջ արձանագրուած ըլլալուն վաւերական վկայագիրը, և պատճէնը Երուսաղէմի կառավարչութեան ալ կը հաղորդուի: Արտին կէսը վաճառելով միւս կէսը շինելու արտօնութիւնը կը հռչակուի, և պատրիարքին կը հաղորդուի ապրիլ 3-ին իբրև վատկական աւետիս (87. ԱՐԼ. 976), և անոր գործադրութիւն տալու համար անմիջապէս կտոր մը վաճառելու և չէնք մըն ալ կառուցանելու որոշումը կը տրուի 1887 մայիս 4-ին (87. ՏՆՕ. 514), ինչպէս

պատրիարքը Կ. Պոլիսէ կը թելադրէր (87. ՏՆՕ. 519), և միանգամայն իր անձնականէն գումար մըն ալ կը տրամադրէր, որով շինուեցաւ մեծ արտին վերի կողմը պատրիարքի տուն կոչուած շէնքը, իբրև մեծ արտին վրայ կատարուած կալուածներուն առաջնապտուղը: Յարութիւն պատրիարք մեծ արտի ապատութեան համար թափած աշխատութեամբը և ձեռք ձգած յաջողութեամբը իրաւամբ Յովհաննէս պատրիարքի հաւասար երախտաւոր պատրիարք կը նկատուի այդ նշանաւոր և արդիւնաւոր սեփականութեան գործին մէջ:

2925. ԷԶՄԻԱԾՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Մակար կաթողիկոս և Յարութիւն պատրիարք միաժամանակ աթոռ բարձրացած էին, երկուքն ալ իրարու նման հանգամանքներու մէջ, գրեթէ անցած սերունդի պատկանող գործիչներ, որոնք նոր սերունդի գլուխ կը դառնային, և հակառակ կարծեցեալ անյարմարութեան՝ իրապէս օգտակար և արժանապէս արդիւնաւոր կը վկայուէին: Իրենց նախորդները Գէորգ և Ներսէս նոր գործառութեանց ձեռնարկած էին, բայց հակառակ իրենց հաստատուն կամքին, և ոչ նուազ յաջողակութեան, պարագայից բերմամբ մեկնած էին առանց նպատակնին աւարտելու: Հանդարտ և հանդարտեցնող ձեռքերու պէտքը պակաս էր, և այդ դերը արեցին Յարութիւն Կ. Պոլսոյ և Մակար Էջմիածնի մէջ: Գլխաւորապէս Էջմիածնայ աթոռին եռամեայ պարապութիւնը աւելի սաստկացուցած էր կացութիւնը, և աճեցուցած էր հանդարտեցնող ձեռքի մը անհարժեշտութիւնը, և Մակար առաջին վայրկեանէն պակաս իր կոչումին պարտաւորութիւնը, և այն վեհ ու պատկառելի ներկայութեամբ, որ իրեն բնական էր, շուտով կրցաւ իր պղծութիւնը տարածել, և ամբողջ միաբանութեան վրայ կարգապահութեան և ճշդապահութեան հոգին ներշնչել: Մակարի ընտրութեամբը բաւական պրոյցներու առիթ տրուած էր, նպաստաւոր և աննպաստ գործողներ յայտնի էին, և այնպէս կը կարծուէին, թէ այդ պարագայն պիտի ազդէ անոր վերաբերութեանց վրայ: Ընդհակառակն Մակար բնաւ դիտողութիւն կամ վիշտի առիթ չպատճառեց անոնց, որ իրեն հակառակորդ ճանչցուած էին, ոչ ալ յատուկ բարեկամութիւն ցուցուց իրեն համար աշխատողներուն: Սուքիաս Պարպեան եպիսկոպոս, որ վերջիններուն պարագլուխն էր, և Մակարի պաշտպանութեան ներքև Էջմիածնի վարիչ ըլլալ կը կարծուէր, հրաման ստացաւ շուտով իր վիճակը Աստրախան դառնալու: մակարի այդ ընթացքը լաւ և գոհացուցիչ տպաւորութիւն մը թողուց իր մասին և համակրութիւնը շատցուց (85. ԱՐԼ. 592): Առկախ գործերու ալ վերջ տալ ուզելով Մակար սինոդէն պահանջեց Մանկունի Վահրամ եպիսկոպոսի գործին բացատրութիւնը, պի նա տակաւին պգուշութեան ներքև Էջմիածին կը մնար (2886), և 1885 նոյեմբեր 14-ին նոր օծուած կաթողիկոսին դիմած էր իր մասին վեջնական որոշում մը տալ: Սինոդի հետապոտութիւնները Մանկունիի դէմ փաստ մը չէին արտադրած, և ինչ որ Մանկունիի քովէն ելած էր, արժէք և արժեթուղթ, Սինոդի մօտ աւանդ կը մնար, քաղաքական ատեանն ալ գործի միջամտելու չէր հրաւիրուած, և Ներսէս պատրիարքի 1883 յունուար 18 ին ըրած միջնորդութիւնը ի կախ մնացած էր: Այդ տեղեկութիւնները Մակարը համոզեցին կարճել խնդիր մը, որ երեք տարիներու մէջ ելք մը չէր ունեցած, և նորինորոյ քաղաքական իշխանութիւնը միջամտութեան հրաւիրել կրնար անախորժ միջադէպներ ստեղծել, ուստի 1885 դեկտեմբեր 20-ին հրամայեց հանգուցեալ կաթողիկոսի գոյից յափշտակութեան յանցաւորն ու մեղսակիցները յանձնելով ի դատ ծածկագիտին Աստուծոյ, Մանկունիի աւանդները իրեն դարձնել և պինքն ապատ թողուլ Կ. Պոլիս դառնալու միայն վերապահելով եպիսկոպոսական խոյրի մը համար իրեն յանձնուած մասնաւոր գումարը մինչև որ խոյրը շինել տայ և յանձնէ (86. ԱՐԼ. 666): Ըստ այսմ Մանկունին ապատ թողուեցաւ մեկնիլ, և 1886 յունուար 24-ին Կ. Պոլիս հասաւ և հաստատուեցաւ Վոսփորի Օրթաքէոյ արուարձանը (86. ԱՐԼ. 617), և բաւական ժամանակ պաշտօնական գործերէ հեռու և

առանձնացած ապրեցաւ զգուշաւոր խոհեմութեամբ: Երուսաղէմի նուիրակներ Մամբրէ Մարկոսեան և Սահակ Խապայեան վարդապետներ Գէորգի մահուանէն առաջ Կովկաս հասած, և աշխատութեան սկսած էին, և տակաւին այն կողմերը կը մնային միջակ յաջողութեամբ, ժամանակին կէս անտէրունջ վիճակին և Երուսաղէմի մասին տարածուած այլընդայլոյ լուրերուն պատճառով: Ժամանակն էր որ այլևս վերջացնէին իրենց նուիրակութիւնը, որ նոր յաջողութեանց նշոյլ չէր տար, միաբանութիւնն ալ անոնց եպիսկոպոսանալուն որոշումը տուած էր (85. ՏՆՕ. 214), և Խապայեանն ալ լուսարարապետ ընտրուած էր (2909), և երկուքն ալ նոր կաթողիկոսի օծման կը սպասէին որ իրենք ալ օծուին և դառնան: Սովորութիւն է նոր կաթողիկոսներուն առաջին ձեռնադրութիւնը առաւել հանդիսութեամբ կատարել, սակայն պարագաներ նեղ էին և պատրաստութեանց պայմանաժամ չկար, ուստի Մակար փութաց երկուքին ձեռնադրութիւնը կատարել նոյեմբեր 24-ին, իր օծումէն միայն երկու շաբաթ ետքը, անոնք ալ աճապարեցին Կովկասէ մեկնիլ և Կ. Պոլիս հասան դեկտեմբեր 16-ին և 1886 յունուար 9-ին սոնց Երուսաղէմ մտան (86. ԱՐԼ. 686): Իսկ հանդիսաւոր ձեռնադրութիւնը յետաձգուեցաւ մինչև 1886 յունիս 8, և այդ առթիւ նոր կաթողիկոսը միւռոնի առաջին օրհնութիւնն ալ կատարեց: Ձեռնադրուածները ինը եղան, հինգը Էջմիածնայ միաբաններէն և չորսը Տաճկահայոց առաջնորդներէն: Առաջինները եղան Սարգիս Տէր Գասպարեան, Կարապետ Տէր Գալստեան, Արիստակէս Դաւթեան, Մամբրէ Սանասարեան և Կարապետ Այվապեան վարդապետներ: Ասոնց առաջին երեքը Գէորգի ժամանակ յետաձգուածներ էին, որոնց զրկանքը Մակար ուզեց դարմանել, որչափ ալ յետաձգումը արդարացնելու համար պատճառանքներ խօսուած էին անոնց դէմ, չորրորդը սինոդական էր, վերջինը առաջնորդ: Իսկ Տաճկահայոց առաջնորդներն էին, Յովհաննէս Տէր Աստուածատուրեան Պայպիտի, Մաղաթիա Օրմանեան Կարնոյ, Գարեգին Սրուանձտեանց Տրապիպոնի և Ստեփանոս Յովակիմեան Նիկոմիդիոյ: Միջին երկուքը ազգային և գրական և վարչական շրջանակներու մէջ ծանօթ և յարգուած անուններ էին, և միասին Տիգրիսէ անցնելնուն յատուկ պատուասիրութիւններ տեսան ազգային վարգացեալ դասակարգին կողմէն: Առաջինը արդէն յիշեցինք (2922) իբրև անձնուէր առաջնորդ մը, վերջինն ալ աշխատաւոր առաջնորդի համբաւ ունէր, անագմ մըն ալ եպիսկոպոսանալու եկած և Գէորգի մահուան պատճառով ձեռնունայն դարձած էր (2884), այնպէս որ Մակար բարեբախտ ըսուեցաւ արժանաւորներու վրայ ձեռք դրած ըլլալուն համար: Նախապէս վերոյիշեալ երկուքներուն, և յետոյ այս իններուն ձեռնադրութեան առթիւ նկատողութեան արժանի կէտ մըն է, եպիսկոպոսացուաց ուխտագիրին մէջէն Սոյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց դէմ մուծուած յաւելուածին և պանոնք անվաւեր և հետտեալ հոչակուելուն (2821) վերցուիլը զոր Մակար ինքնաբերաբար կատարեց (86. ԱՐԼ. 617), և խափանեց քար գայթակղութեան և այնչափ հակառակութեանց պատճառ եղած Գէորգի կամայականութիւնը: Մակարի այդ որոշումն ալ մեծապէս գնահատուեցաւ մանաւանդ Տաճկահայոց կողմէ, և ազգուապէս զօրացուց իր կաթողիկոսութեան ճանչցուելուն խնդիրը (2914): Դիտողութիւն մըն ալ աւելցնենք: Էջմիածին սովոր է Ռուսահայ եպիսկոպոսները յանուն աթոռոյ ձեռնադրել, և ետքն ըստ կամս առաջնորդութեանց յղել և փոխել, մինչ Տաճկահայեր յանուն վիճակի կը ձեռնադրուին, թէպէտ ստէպ կը փոփոխուին կամ կը հրաժարին: Վերջին ձեռնադրութեանց ատեն Կեդրոնը Կարնոյ և Տրապիպոնի և Պայպիտի վկայագիրները յանուն վիճակի տուեր էր, երբ մտածեց այսուհետև յանուն վիճակի չտալ, և Յովակիմեանի վկայագիրը տրուեցաւ յանուն միաբանութեան Արմաշու (86. ԱՐԼ. 704): Ասոր վրայ Խորէն Աչըգեան Արմաշու վանահայրը իսկոյն բողոքագիր հասուց դէպի ամէն կողմ, մինչև իսկ Էջմիածին (86. ԱՐԼ. 731), թէ պայն իրենց միաբան ճանչնար և այդ անունով ձեռնադրուիլը չեն ընդունիլ: Պահ մը Մակար ալ Վարանեցաւ թէ ինչ պէտք է ընէ,

բայց միև եպիսկոպոսոսուներ վստահցուցին թէ նոր կարգադրութիւն մըն է որ հաստատութիւն չէ գտած, և Յովակիմեան ձեռնադրուեցաւ իբրև միաբան Արմաշու և իբրև առաջնորդ Նիկումիդիոյ միանգամայն: Իսկ Կեդրոնին մտցնել ուլած նոր ձևը շարունակութիւն չունեցաւ, և անկէ ետքն ալ բոլոր եպիսկոպոսոսուներու վկայագիրերը յանուն վիճակի տրուեցան, մէկերկու յանուն աթոռոյ ձեռնադրուածներէն վատ:

2926. ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԱՅՈՒՄԸ Մակար կաթողիկոս իր ընտրութենէն անմիջապէս յետոյ իրեն գլխաւոր գործ ըրած էր Կովկասի Հայ վարժարաններու բացումը (2915), որուն մասին բարեացակամ խոստումներէ բաջալերուած մեկնած էր Քիշնևէ (2910): Տփղիս գտնուած միջոցին և տակաւին էջմիածին չուղևորած, մասնաւոր բանակցութիւններ կատարեց կառավարչապետի հետ, և գործին ընթացք տալու համար որոշուեցաւ որ խնդրագիր մը մատուցանէ կայսեր իր ուլածը բացատրելով և ըստ այնմ կարգադրուի տրուելիք որոշումը: Խնդրագիրը անմիջապէս պատրաստուեցաւ, ոչ թէ 1884 փետրուար 16-ի օրէնքին պարզապէս յետս կոչուելուն և վարժարաններուն հին գրութեամբ բացուելուն հիմամբ, այլ նոյն օրէնքին քանի մը յօդուածներուն փոփոխուելուն ձևով (86. ԱՐԼ. 690), որոնք բաւական սեպուեցան ազգային դաստիարակութիւնը և ազգային դաստիարակութեան վրայ ազգային հսկողութիւնը ապահովելու, պետական կառավարութեան ընդհանուր իրաւունքը չուրանալով: Մակար կաթողիկոս կը սպասէր որ գոնէ նոր 1886 տարուոյ շնորհաւորութեանց առթիւ կարող ըլլայ խոստացուած աւետիսը հոչակել, սակայն չկարողացաւ, զի հապիւ յունուար 19-ին ստացաւ կառավարչապետի հեռագիրը, թէ միայն երէկ կայացաւ բարձրագոյն վճիռ դպրոցական կանոնների վերաբերմամբ (86. ԱՐԼ. 690), և ուրախութեան ցոյցերը անմիջապէս սկսան ամէն կողմ: Բայց հարկ էր տրուած որոշմանց ամբողջ պատճենը տեսնալ, և պաշտօնագիրը մարտ 18-ին միայն հասաւ կաթողիկոսին ձեռքը: Անոր մէջ ամուր կը պահուէր նախընթաց օրէնքին ոյժը, և մեկնողական ոճով կընդարձակուէր անոր իմաստը, երկու դասարանը հինգ տարիի հաւասար կը գրուէր, չիշուած կէտերը թոյլատրեալ կը ցուցուէին, հոգևոր իշխանութեան թողուած կէտերը անպայման կը տարածուէին, մատակարարութեանց մէջ կիմացուէր հսկողութիւնն ալ, ուսուցիչներու անուանման համար ազգային վարժարանաց վկայագիրերը բաւական կը սեպուէին, և վերջապէս Մակարի անձին բացառապէս կը շնորհուէր վարժարաններ բանալու, պաշտօնեաներ կարգալու, հսկողութիւն կատարելու, և հոգաբարձութիւններ անուանելու իրաւունքը, որ հին օրէնքը պետական պաշտօնեաներու վերապահած էր, և այս շնորհը կը հիմնուէր ինքնակալական անձնական վստահութեան և բարձրագոյն բարեհաճութեան վրայ (86. ԱՐԼ. 679): Բացուելիք վարժարանները համահաւասար և հաստատուն գրութեամբ պահելու պայմանն ալ կար, որ կը պահանջէր ընդհանուր հիմնադիր մը ունենալ, և զայն պետական հաստատութեան ենթարկել: Ուստի Մակար յատուկ յանձնաժողով մը կը կազմէր զայն պատրաստելու համար, որուն անդամ կը նշանակուէին Մեսրոպ Սմբատեան եպիսկոպոս ձեմարանի վերատեսուչ, Նիկողայոս Խոսրովեան ձեմարանի տեսուչ, Արշակ Նահապետեան Ներսիսեանի տեսուչ, և Սեդրակ Մանդինեան և Ստեփան Պալասանեան մասնագէտ ուսուցիչներ, որոնք գործը կաւարտէին և կաթողիկոսին կը ներկայէին ապրիլ 3-ին (86. ԱՐԼ. 690): Ծրագիրին հաստատութիւնը և վերահաս մեծ արձակուրդի միջոցը ծառայեցին վարժարանական նախապատրաստութեանց, հոգաբարձութեանց և կազմակերպական գործադրութեան, և 1886 սեպտեմբերէ վարժարանները սկսան կանոնաւոր ընթացք վարել: Ռուսահայեր, որոնք ուղղակի գործին դիւրութեանց և դժուարութեանց ենթարկեալ էին, գոհութեամբ և գովութեամբ ողջունեցին Մակարի ձեռք բերած յաջողութիւնը, զի ապահոված տեսան ազգային նախնական կրթութիւնը և անոր ազգային իշխանութեան յանձնուիլը, որ էական

էին ազգին պահպանութեան և եկեղեցւոյն հաստատութեան: Արդէն թեմական դպրոցներու և ճեմարանի մասին խնդիր իսկ եղած չէր, իսկ բարձր նախակրթարաններու մասին ալ բաւական բաց դուռ թողուած էր, և ուսուցչական արտօնութեան համար բաւական կը նկատուէին դպրանոցներու և ճեմարանի վկայականները: Պետական միջամտութիւնը շատ ամփոփուած էր, զի վերջիվերջոյ կը վերածուէր ուսուցչաց ուսական հպատակութեան, կանոնագիրներու հաստատութեան, ընթացքին տեղեկատուութեան և ուսական լեզուի պարտաւորեալ ուսուցման (86. ԱՐԼ. 666): Այդչափը համաձայն էր ընդհանրապէս ընդունուած կառավարական պահանջներուն և ազգային կրթութիւնը չէր արգիլեր: Սակայն Տաճկահայոց ըմբռնումը տարբեր էր: Օսմանեան կառավարութեան կրօնական պահանջներուն հետևողութեամբ պատրիարքարաններու տրուած կենցաղական քան թէ քաղաքական առանձնաշնորհութիւնները, և կրթական գործին ամբողջապէս պատրիարքարաններու թողուած ըլլալը, իրենց միտքին մէջ կառավարութենէ անկախաբար և լոկ ազգային իշխանութեամբ ուզածին ընելու գաղափարը հաստատած էր, և որւէ պետական միջամտութիւն՝ պետական բռնութիւն կը նկատուէր, և վարժարաններու մասին ուսահայ պայմանները Տաճկահայերը գոհ չթողուցին: Յատկապէս կաթողիկոսական ընտրութեան մէջ երկրորդ ընտրելիին նախադասուելէն վայրացած խումբը (2913), բացարձակ կերպով ստացուած յաջողութիւնը անարգեց, Մակարը քննադատեց, և իբր եկեղեցին կործանման մատնուած կարծեց, կամ կարծելտալ աշխատեցաւ (ԽՕՍ. 67-70): Ուր ընդհակառակն Ռուսահայոց կողմէ Մակար իբր շրջահայեաց, հաստատակամ և խոհուն անձնաւորութիւն դատուեցաւ, և 1884-ին փակուած ծխական դպրոցներու բանալը գովուեցաւ իբր յիշատակաց արժանի իւր առաջին գործերից մէկը (ԶԱՄ. Բ. 177): Արդիւնքն ալ արդարացուց այդ դատողութիւնը, զի Մակարի ձեռքով հաստատուած դպրոցական գրութիւնն ու կարգադրութիւնը իրապէս նպաստեց հասարակութեան վարգացման և ուսումնական յառաջադիմութեան:

2927. ՃԵՄԱՐԱՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Մակարի համար գրեցինք արդէն թէ հին հմտութեամբ հարուստ, իսկ նոր ուսումնասիրութեամբ փայլուն անձ մը չէր, սակայն նոր ուսման ալ յարգանքը և անոր համար ջանքը մեծ էր իր սիրտին մէջ, և մեծագոյն էր եկեղեցականութիւնը նոր վարգացմամբ բարձրացնելու փափաքը: Գէորգի հիմնած ճեմարանը, հիմնարկութեամբը գնահատելի , բայց արդիւնաւորութեամբը քննադատելի էր (2805), զի եկեղեցական վարգացման և ուսումնական բարձրացման օգտակար չէր եղած, և այնպէս դատեց Մակար ալ, և ճեմարանի բարձրացման և վարգացման յատուկ մտադրութիւն դարձուց: Որչափ Ռուսահայոց մէջ ընտրելագոյն ուսուցիչներ կային ճեմարանի մէջ հաւաքեց: Արշակ Նահապետեան, Սեդրակ Մանդինեան, Կարապետ Կոստանեան, Փիլիպպոս Վարդանեան, Ստեփան Պալասանեան, Մկրտիչ Պալեան, Սարգիս Գաբրիէլեան, գործի հրաւիրուեցան գոհացուցիչ պայմաններով, Նահապետեանի տեսչութեան ներքեւ, և նախաձեռնութեան ընդարձակ արտօնութեամբ: Բայց գործի սկսելէն ետքը նոյնինքն հրաւիրեալ ուսուցիչներ վագահին թէ իրենք ամէնքն ալ արտաքին ճիւղերու մասնագէտներ են, իսկ կրօնական ճիւղը, որ հիմնական և էական է և պէտք էր ըլլար հոգևոր ճեմարանի մը համար իրենց համահաւասար և համալսարանական աւանդող չունէր, և հապիւ թէ Սուրբ Գրոց պատմութիւնը կաւանդուէր ստորին դասարաններու մէջ, և բարձրագոյն լսարաններուն մէջ կրօնական դասեր կը պակսէին: Ուստիայս կէտը կաթողիկոսին մտադրութեան ներկայացուցին, և պատասխան ստացան կարող անձը գտնել և առաջարկել, որպէսզի ինքն ալ գործի հրաւիրէ: Ուսուցչական խումբը երկար վարանումէ ետքը, հուսկ ուրեմն Նահապետեանի թելադրութեամբ, Օրմանեանի անունը տուաւ, որ Կարնոյ առաջնորդութիւնը կը վարէր, և ուր տեսած էր զայն Նահապետեան 1885 յուլիսին, երբ

Մկրտիչ Սանասարեանի ընկերացած էր, և նորա բարերարութեամբ բացուած Կարնոյ վարժարանին այցելութեան էր եկած: Երբոր Մակար կը խորհէր Օրմանեանը ուսուցչութեան հրաւիրել, Կ. Պոլսոյ պատրիարքարանէն եպիսկոպոսոցուներու անունները հաղորդուեցան, որոնց մէկն էր Օրմանեանը (2925), ուստի գործը յետաձգուեցաւ անոր հասնելուն: Օրմանեան անցուդարձէ անտեղեակ հետաքրքրութեամբ կը դիտէր ձեմարանի ուսուցչաց կողմէն իրեն հանդէպ ցուցուած մտադրութիւնն ու մերձաւորութիւնը, որ կերևայ թէ անձամբ ճանչնալու նպատակն ունէր, և միայն ձեռնադրութեան յաջորդ առտուն, 1886 յունիս 9-ին, իրեն կառաջարկուէր Կարնոյ առաջնորդութենէն հրաժարիլ և ձեմարանի ուսուցիչ մնալ: Նա առաջարկին հետ ի սրտէ համակրելով մէկտեղ, հարկ կը սեպէր դիտել տալ, թէ թեմակալութեան ուխտին վաւուրին, առանց վիճակին գիտակցութեան և առանց պատրիարքարանի հաւանութեան, այսպիսի հրաժարականն մը իրեն անտեղի կերևար, ուստի գործը կը յանձնէր կաթողիկոսին բարձր ու ազատ անօրէնութեան: Բայց որովհետև միևնոյն ժամանակ Կ. Պոլսոյ պատրիարքարանէն ստիպողական հրաման կը հասնէր Օրմանեանի Վան երթալու, Կաթողիկոսն ալ մեկնելուն կը հաւանէր և իր վրան կառնէր պատշաճը հոգալ, և կը բաւականանար Օրմանեանի խոստումով, որ հրամանը ստանալուն պիտի հնազանդի ու պիտի գայ: Կաթողիկոսին և պատրիարքին միջև բանակցութիւնք բաւական ժամանակ գրաւեցին և միայն 1887 յունիս 10-ին գրուեցաւ կաթողիկոսին հրամայական կոնդակը (87.ԱՐԼ. 1051), զոր յունիս 24-ին ստացաւ Օրմանեան՝ Թորգոմի և Սպերի այցելութենէն վերադարձին: Յունիս 28-ին հրաժարականը ներկայեց գաւառական ժողովին, որ ցաւով և յուզմամբ ստիպեալ ընդունեց յուլիս 6-ին Կարինէ մեկնեցաւ և Կ. Պոլիս հանդիպելով սեպտեմբեր 3-ին հասաւ Էջմիածին, և 7-ին ստանձնեց ձեմարանի աստուածաբանական ճիւղին ուսուցչութիւնը՝ երեք լսարաններու մէջ օրական չորս ժամով աստիճանաբար բաշխուած: Դպրոցական տարին բոլորեցաւ կանոնաւորապէս, մայիսին տարեկան քննութիւններ կատարուեցան, որոնք գոհացուցիչ վկայուեցան, զի ոչ միայն դասեր աւանդուեցան և կրօնագիտական վարճացում ստացուեցաւ, այլ և գրաւոր ձեռնարկներ պատրաստուեցան և եկեղեցականութեան մտնալու որոշումներ ստացուեցան: Մակարի գերագոյն բաղձանքն էր ձեմարանի ուսումնաւարտներէն վարճացեալ եկեղեցականներ ունենալ, զի մինչև այն օր տակաւին ոչ մի ձեմարանի ընթացաւարտ եկեղեցականութեան յանձնառու եղած չէր: Այդ նպատակն ալ Օրմանեանի յանձնուեցաւ, որ յաջողեցաւ 1888 յունիս 15-ին տեսուչ Նահապետեանը և ձեմարանի ընթացաւարտներէն չորսը կաթողիկոսին ներկայել ուխտերնին յայտնելու և օրհնութիւնը ընդունելու: Երբոր այսպէս գործը յաջողութեամբ կը յառաջարկէր, յանկարծական պարագայ մը վայն հիմնովին խանգարեց: Մակար իբրև կառավարութեան բոլորանուէր կուսակից ճանչցուած ըլլալով (85. ԱՐԼ. 99): դիտողութեան առարկայ եղաւ ինչինչ անտեղի պահանջմանց հանդէպ կոյր համակերպութիւն չցուցնելը, ուսկից առիթ առնելով ոմանք, և յանուանէ լուսարարապետ Երեմիա Գալստեան եպիսկոպոս և պրոկուրոր Նիկողայոս Յովսէփեան, Օրմանեանը մատնանիշ ըրին իբր Մակարի փոխուելուն պատճառ, որուն հետևանքն եղաւ կառավարութեան կողմէն Օրմանեանի մասին կամ հպատակութիւնը փոխելուն և կամ Էջմիածինէ մեկնելուն հրամանը: Առաջին պայմանը Օրմանեան անհարկի գտնելով, կանուխէն յանձնառու եղած չէր, և երկրորդին առջևն առնելու համար Մակարի ջանքերը չյաջողեցան, և մինչև իսկ յունիս 27-ին գլխաւոր պաշտօնեայ մը հասաւ Պետրբուրգէ, Օրմանեանի և իրեն մտերիմ և կառավարութեան անհամակիր կարծուած ոմանց հեռացումը պահանջելու համար: Մակար կրցաւ Ռուսահայերու մասին իր երաշխաւորութիւնը ընդունել տալ, իսկ Օրմանեանի մասին ստիպուեցան զիջանիլ, կամ իր բացատրութեամբ եղէգի քաղաքականութեան հետևիլ, որ առժամապէս ծոելով փոթորիկի վտանգը կանցնէ, և ոչ մայրիկ քաղաքականութեան որ

դիմադրելով արմատախիլ ըլլալու վտանգին կենթարկուի: Օրմանեանի առաջարկուեցաւ իւրովի հրաժարիլ իբր պատուաւոր եղանակ, այլ նա նախադասեց հրամանով և ոչ հրաժարականով հեռանալ, և խորին ցաւով էջմիածինէ մեկնեցաւ յուլիս 19-ին Աղէքսանդրապոլի ու Ախլցխայի ու Պաթումի ճամբով, և Կ. Պոլիս հասաւ օգոստոս 11-ին: Էջմիածնի մէջ իր ցանած կրօնագիտական և եկեղեցասիրական սերբերը տակաւ աճեցան, ճեմարանի ծրագիրին մէջ հաստատուեցան աստուածաբանական ուսումները, Օրմանեանի ներկայած հինգ ընծայացուներէն թէպէտ երեքը պարագաներէն վշտանալով ետ քաշուեցան, բայց Արշակեան Նահապետեան տեսուչ և Կարապետ Տէր Մկրտչեան ընթացաւարտ ձեռնադրութիւն ստացան, և բաւական հետևողներ ունեցան միւս լսարաններէն և դասարաններէն, որոնք Գերմանիոյ համալսարանաց մէջ ալ կատարելագործուեցան, և ճեմարանական ընթացաւարտ վարդապետներու ընտիր խումբ մը կազմուեցաւ Մայրաթոռոյ մէջ:

2829. ՎԱՆԱՅ ԱՆՅՔԵՐԸ

Վերագոյնդ յիշեցինք Օրմանեանի էջմիածինէ Վան երթալը (2927), և կարգը կը պահանջէ որ Վանայ անցքերն ալ յիշատակենք: Պօղոս վարդապետ Մելիքեան, որ 1882 մայիս 9-ին եպիսկոպոս ձեռնադրուած էր Լիմայ վանահայրութեան անունով, երկու տարի և աւելի էր որ Վանայ վիճակին տեղապահութիւնը կը վարէր: Սակայն անդադար գանգատներ կը հասնէին իր ընթացքին դէմ, որ կատարելապէս բռնապետական և շահագիտական բնութիւն ունէր, ինչ որ միշտ ալ խօսուած էր իր մասին, և Պօղոսեան ու Ապօղոսեան խնդիրներն ու վէճերը աշխարհահռչակ դարձած էին ազգին մէջ: Երբոր Պօղոսի գործերը ծայրայեղութեան հասան, և կեդրոնը տակաւին որոշման մը չէր յանգեր, Վանայ բոլոր գլխաւորներու ստորագրութեամբ քննիչի մը առաքումը պահանջուեցաւ 1886 ապրիլ 10-ին, և լրագրութիւնն ալ Վանայ խնդիրով սկսաւ զբաղիլ (86.ԱՐԼ.698): Երկու էին վերջին օրերուն մէջ գանգատի տեղի տուող գլխաւոր պատահարները, մին վարչական զեղծում և միւսը ընդհանուր գայթակղութիւն: Պօղոսի ուզելով իր կողմը զօրացնել՝ ձեռնարկած էր գաւառական ժողովը փոփոխել, եղածը անժամանակ դադրեցնելով նորը ընտրել տալ, բայց չկրնալով իր միտքին համակերպող մեծամասնութիւն գոյացնել, իրեն դէմ եղողները իբրև խռովարար ամբաստանած և 40-է աւելի անձեր կառավարութեան ձեռքով ձերբակալել և բանտարկել տուած էր (86.ԱՐԼ.727): Իսկ գայթակղութեան գործը փորձութեան հացի դէպքն էր: Գողութեան մը հեղինակները գտնելու համար բոլոր միջոցներու անպտուղ մնալուն վրայ, Պօղոս տաճիկ տէրվիշ մը բերել տուած էր առաջնորդարան 1886 յունուար 31-ին, և կախարդասար կերպով կարդար տուած էր անձանօթ բաղադրութեամբ շինուած հաց մը, զոր յետոյ ոստիկանական բռնութեամբ կերցուած էր 17 բանտարկեալ կասկածաւորներու այն համոզմամբ որ ճշմարիտ գողը այն հացը ուտելով մինչև երեք օր հարկաւ պիտի պայթէր: Աւելորդ է աւելցնել որ սպասուած արդիւնքը տեղի չէր ունեցած, բայց եպիսկոպոսի մը այլապէս և կախարդութեան դիմելը մեծ գայթակղութիւն յարուցած էր Վանայ մէջ, և Պօղոսի դէմ հակակրութիւնը ևս քան զևս ընդարձակուած (86.ԱՐԼ.657): Կեդրոնը մայիս 8-ին կը մտադրէ Օրմանեանը Վանայ քննչութեան յղել (86.ԱՐԼ.702), սակայն գործադրութիւնը կը յապաղէ և կը բաւականանայ ինչինչ հրամաններ յղել Պօղոսի, և միւս կողմէն կը սպասէ այն օրեր կատարուելիք եպիսկոպոսական ձեռնադրութեան լրանալուն: Երբոր գործը կերկարի Վանեցոց մէջ կաթոլիկանալու շարժում մը կը սկսի և հանրագրութիւններ պատրաստուելուն լուրին վրայ՝ յունիս 16-ին հապճեպ կը հեռագրուի Օրմանեանի էջմիածինէ Վան ուղևորիլ, երբ Այրիվանքի և Խորվիրապի ուխտերէն դարձած և միւսուրի օրհնութեան գտնուած էր, ինչպէս յիշեցինք ալ (2927), առանց սակայն հրամանին նպատակն ու պատճառները բացատրելու: Օրմանեան Կարին դառնալու պէտք ունենալուն, Կարին

հանդիպելով Վան անցնելու պատրաստականութիւնը կը յայտնէ, բայց հրամանին կրկնուելուն՝ կը ստիպուի ուղղակի Վան ուղևորիլ (86.ԱՐԼ.735), և յունիս 19-ին էջմտածինէ մեկնելով Իկտիր և Պայպիտ և Ապաղայի լեռնադաշտի ճամբով 26-ին Վան կը հասնի, պարբերական տենդը վրան ըլլալով և տագնապալի ժամեր անցունելով մանաւանդ ճանիկ գիւղին մէջ: Վանայ մէջ գտած պաշտօնագիրները մասնաւոր հրահանգներ էին միայն առանց պատրիարքական կոնդակի և առանց պետական հրամանգիրի, և պաշտօնապէս պօրացած չէր ըլլար, մէկ կողմէն ևս տենդը կը շարունակէր: Այսու հանդերձ պարագաները յօգուտ գործածելով և կացութիւնը պատրիարքարանի առջև պարզելով, քարոզութիւններով ժողովուրդը հանդարտեցնելով, և անհրաժեշտ միջոցները կեդրոնին թելադրելով, խնդիրները ուսումնասիրելով և լուսաբանելով, և Պօղոսի պաշտպան կուսակալին յարուցած արգելքները հարթելով, վերջապէս կը յաջողէր Պօղոսը հանել, առժամեայ վարչութիւն մը կազմել, Կտուցի փոխանորդ Մաժակեան Յովհաննէս վարդապետը տեղապահ նստեցնել, կաթողիկական շարժումը անհետացնել, և բանտարկելոց արձակուրդը պատրաստել, բայց և միանգամայն կը հարկադրուէր անձնական ապահովութեան համար առաջնորդարանէն Գափամաճեանց Փանոսի և Պետրոսի տունը փոխադրուիլ, և միջոց մըն ալ ապաքինութեան և կազմուրման համար Վարագայ վանքը մնալ: Պօղոս յետին վայրոյթի մէջ կրկին ու կրկին կեանքի սպառնալիքներ կը հասցնէր Օրմանեանի, որով սա կը պարտաւորուի գիշերախառն Վանէ մեկնիլ օգոստոս 4-ին, քառասնօրեայ միջոցին մէջ անհրաժեշտ կարևորը աւարտելով և կացութիւնը ապահովելով, զի իր մեկնելէն 10 օր ետքը, օգոստոս 14-ին բանտարկեալներն ալ արձակուեցան: Այս կերպով միանգամ ընդ միշտ Վան ապառուելով Պօղոսի դարձուածներէն, որ այլևս ստիպուեցաւ Լիմայ վանքը մեկնիլ և գործունեայ ասպարէզէն քաշուեցաւ մինչև իր սպանութիւնը: Օրմանեան Վանէ մեկնելով Արտամետ և Ոստանի ճամբով Աղթամար հասաւ օգոստոս 5-ին, զի անոր մասին ալ յանձնարարութիւն ունէր կեդրոնէն, գողութեան միջադէպին առթիւ Խաչատուր կաթողիկոսի յարուցած խնդիրը քննել և կարգադրել (2922): Արդէն Վան գտնուած միջոցին բանակցութեան մտած էր Խաչատուրի հետ, որ Վան կը մնար իր յարուցուած դատը մղելու, բայց անհնար եղած էր Խաչատուրը իր ընթացքէն ետ կեցնել, հակառակ գործին տգեղութեան և կեդրոնի թելադրութեանց մասին համոզկեր յորդորներու, թէպէտ ձեռք առնուած միջոցներու պօրութեամբ քիչ ետքը Աղթամարի բանտարկեալներն ալ ապատեցան (86. ԱՐԼ. 823), իսկ Խաչատուր չվարանեցաւ վճռաբեկ ատեանի ալ բողոքել, թէպէտ ի վուր: Աղթամարի այցելութեամբ Օրմանեան ուզած էր տեղական հանգամանքներն ալ ուսումնասիրել և կեդրոնին հաղորդել, և այս կէտն ալ լրացնելով, Նարեկայ և Սորվիայ վանքերն ալ այցելելով Բաղէշ հասաւ, և հոն ալ կեդրոնին ուզած տեղեկութիւնները քաղելով, Խլաթայ և Խնուսայ ճամբով Կարին կը դառնար օգոստոս 13-ին:

2929. ԿԱՐՆՈՅ ԳՈՐԾԵՐԸ

Օրմանեան իր վիճակը դառնալով՝ անմիջապէս ձեռք առաւ Կարնոյ գործերը, ուսկից հեռացած էր իբր չորս ամիս առաջ մայիս 4-ին: Առաջին գործերէն մին եղաւ Կարնոյ բանտարկելոց վերջին մնացորդ երեքներուն ներումն ու ապատութիւնը հետապնդել, որոնք արձակուեցան սեպտեմբեր 3-ին (86. ԱՐԼ.801): Նոյն օրեր Կարին հասաւ Կարապետ Եպեանց Ռուսահայ պետական խորհրդականը, նպատակ ունենալով Սանասարեան վարժարանը քննել Սանասարեանց բարերարին կողմէն, որուն խորհրդակիցն ու յորդորողն եղած էր: Կարին մնաց 20 օր, սեպտեմբեր 5-էն 25, քննեց ու տեղեկացաւ և գոհ մնաց եղած կարգադրութենէն և ստացուած յառաջադիմութենէն, որ կանոնաւորապէս կը շարունակէր Սարգիս Սողիկեան, Յովսէփ Մատաթեան և Գէորգ Աբուլեան սաներուն համերաշխ տեսչութեան, և Օրմանեանի հովանաւորութեան ներքև, որուն

Սանասարեանց և Եզեանց յանձնած էին իրենց ձեռնարկին մօտէն հսկողութիւնն ու պաշտպանութիւնը: Եզեանց Կարինէ մեկնեցաւ Կ. Պոլիս, ուր պատրիարքարանի հետ համաձայնութեամբ, գրուեցան վարժարանին և պատրիարքարանին փոխադարձ յարաբերութեանց հիմերը, և հոգաբարձութիւն մըն ալ հաստատուեցաւ: Սանասարեան վարժարանը, որ եւրոպական վարժարանաց կատարելութեամբ կազմուեցաւ Կարնոյ մէջ, նախախնամական բախտ մը եղած էր հայաբնակ նահանգներուն համար, ուր բաւականաչափ կարօտներ ձրիաբար և բազմաթիւ ունեւորներ համեստ թոշակով կրնային ազգային կրթութիւն և բարձր ուսում ստանալ Եւրոպիոյ մէջ առնուելիքին հաւասար կամ գոնէ գրեթէ հաւասար: Վարժարանը ուսումնական ճիւղին յարակից արհեստական բաժին մըն ալ բացած էր, ուստից փայտի և երկաթի վրայ գործող ընտիր արհեստաւորներ սկսան տարածուիլ գաւառական քաղաքներու մէջ: Յիշատակութեան արժանի կը սեպենք այստեղ Կարնոյ կաթոլիկ եպիսկոպոսին յուլած յառաջագահութեան խնդիրը: Այսպիսի բան տեղի ունեցած չէր Վեհապետեանի առաջնորդութեան 21 տարիներու մէջ, բայց Օրմանեանի եպիսկոպոսական ձեռնադրութիւն չունենալը առիթ տուաւ Մելքիսեդեկեան Ստեփան եպիսկոպոսի՝ առաջնութեան խնդիր յարուցանելու, որուն կառավարութիւնն ալ չկրցաւ ընդդիմանալ: Այս պատճառով Օրմանեան թէպէտ կառավարական ժողովներուն կը յաճախէր, սակայն ժողովական որոշումները չէր ստորագրեր, բայց եթէ երբ Մելքիսեդեկեանի բացակայութենէն օգտուելով գրագիրներ վանց կընէին անոր տեղը նշանակել ստորագրութեանց կարգին: Կարնոյ վիճակայինք 1882-ին Օրմանեանի եպիսկոպոսացման խնդիրը յուլած և կեդրոնէն վկայագիրը ուլած էին, բայց Գէորգ կաթողիկոսի վերահաս մահը և աթոռին եռամեայ պարապութիւնը յապաղեր էին փափաքին կատարումը: Իսկ Օրմանեանի եպիսկոպոսութենէն ետքն ալ Մելքիսեդեկեան աստիճանի հնութեան և նորութեան խնդիրը յուլեց, որ վերջապէս լուծուեցաւ Յարութիւն պատրիարքի յատուկ պաշտօնագիրով Կարնոյ աթոռին արքեպիսկոպոսական ըլլալը յայտարարելով, ինչպէս որ առաջնորդարանի դրան վրայ ալ արձանագրուած էր, և Օրմանեան յառաջագահութեան իրաւունքը ստացաւ, և 1886 սեպտեմբեր 9-ին սկսաւ կաթոլիկ եպիսկոպոսէն վեր ստորագրել կառավարական ժողովին որոշումներուն ներքև: Երբ Օրմանեան էջմիածինէ կը մեկնէր մօտ ատենէ ուսուչութեամբ հոն վերադառնալու նախատեսութեամբ էր. սակայն գործերուն հետևեցաւ ամենայն մտադրութեամբ, և Վանէ վերադառնալէն ետքը տասը ամիս ևս շարունակեց առաջնորդական գործունէութիւնը, մինչև 1887 յուլիս 6-ին Կարինէ մեկնիլը, ինչպէս արդէն պատմեցինք (2927): Օրմանեանի Կարնոյ առաջնորդութիւնը եօթը տարի տևեց 1880 մայիսէն սկսելով, որուն մէջ միայն վերջին տարին եպիսկոպոսական աստիճանով: Այս եօթը տարիներու միջոցին, թէպէտ տարիուկէս Կ. Պոլիս անցուց 1883-է 1884, սակայն ոչ պաշտօնէ դադրեցաւ և ոչ գործը լքեց, այլ Կ. Պոլիս գտնուելով իսկ անձամբ ուղղեց և վարեց Կարնոյն գործերը Արծնեան Գրիգոր քահանայի փոխանորդութեամբ (2888-2889): Իր օրով Կարնոյ առաջնորդական վիճակը նոր ընդարձակութիւն ստացաւ, Սպրէ վատ՝ Բզիի, Դերջան, Բասենի և Խնուսի վիճակներուն իբրև յարակից Կարինի յանձնուելովը, որով երկուհարիւրէ աւելի եղած էին վիճակին հայաբնակ տեղերը: Նա առաջնորդութենէն ալ ոչ թէ իւրովի, այլ պարզապէս կաթողիկոսական բացարձակ հրամանով հրաժարեցաւ, այն ալ առաջնորդութենէ ուսուցչութեան անցնելու համար: Մակար կաթողիկոս այդ հրամանը տալուն առիթ չէր ուլած ընդարձակ վիճակի մը պէտքերը անտեսել կարծուիլ, այլ ինչպէս ինքն կըսէր, եկեղեցւոյ օգուտին տեսակէտէն աւելի էր վիճակ կառավարողներ հասցնել քան թէ վիճակ մը կառավարել:

Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան գործերուն դառնալով, պիտի կրկնենք թէ Յարութիւն պատրիարքի յիշատակելի գործոց կարգին գլխաւոր տեղ մը տուած էինք կաթողիկոսական խնդիրը լուծելուն, և Մակարի ճանչցուելուն համար ցուցած հոգածութեանը, նկատի ունենալով ընդհանուր հայութեան օգուտը և Հայ եկեղեցւոյ միութեան տեսակէտը: Մակար ալ այդ տեսակէտէն ընդունեցաւ Կ. Պոլսոյ պատրիարքին ընթացքը, և յատուկ գոհունակութիւն յայտնեց, և իբր գնահատման նշանակ կոնքեռի արտօնութիւնը շնորհեց Յարութիւն պատրիարքին (87.ԱՐԼ.1041), զոր գուցէ Մելիքսեդեկ Մուրատեանի շնորհել ի դէպ էր, ինչպէս Մակար ինքն ըսած էր, եթէ նա տարօրինակ ընթացքի մը հետևած չըլլար: Իսկ Յարութիւնի այդ մասին գործունէութիւնը ժողովական որոշումէն ետքն ալ շարունակեց, զի այն 16 երեսփոխանները, որոնք ժողովին մէջ հակառակ քուէ տուեր էին (2914) չհանդարտեցան, և Մելիքսեդեկ եպիսկոպոսն ալ և իրեն բերան եղող Ջմիւռնիոյ Արևելեան Մամուլ ամսագիրն ալ, և Ջմիւռնիոյ ազգայիններէն կամակոր բանասէրներու և միամիտ հիացողներու խմբակ մը, ազգին իրաւունքը պաշտպանելու անունով ազգային օրէնքին առջև ալ խոնարհիլ դժկամակեցան, և եթէ ոչ պաշտօնապէս, գոնէ իրապէս և գրապէս հերձուած յարուցանելու ալ ճիգեր թափեցին: Ազգընտիր և Չարընտիր բառերը ստեղծեցին Մելիքսեդեկի և Մակարի համար (85.ԱՐԵ.534 և 548), և Էջմիածնի գահակալ բացատրութիւնը սկսան գործածել՝ աթոռը բռնութեամբ և ապօրինի գրաւած կարծեցնելու համար, և Ամենայն Հայոց Կաթողիկոս չճանչնալու միտքով: Երկար կըլլար անոնց այս միտքով առած քայլերը և խաղցած դերերը միառմի յառաջ բերել: Մինչև իսկ համարձակեցան 1886-ի տարեգլուխին Մելիքսեդեկի իբր կաթողիկոսի շնորհաւորութեան հեռագիր յղել, թէպէտև հեռագրական վարչութիւնը հասցէն սխալած ըսելով վար դրաւ և չյղեց (86. ԱՐԼ. 604), և գործը խնդիրի նիւթ ալ եղաւ: Այս մասին աւելի վարմանալի էր Մելիքսեդեկի մտայնութիւնը, որ զինքն արդէն կաթողիկոսութեան հասած կարծելով, խաշանիշ վեղարով լուսանկարներ կազմած ամէն կողմ կը ցրուէր (85. ԱՐԼ. 586), առանց միտ դնելու թէ իր իւրովի ստեղծած անկանոն կացութիւնն էր որ զինքն զրկած էր իր նպատակին հասնելէ (85. ԱՐԼ. 556), ինչ որ կանխաւ հանրածանօթ էր, թէ ինքն չէր կրնար վաւերանալ ռուսական կառավարութենէն (87. ԱՐԼ. 1137), և թէ առաւելագոյն քուէ ստանալը, ոչ թէ առաջին ընտրելի ըլլալուն, այլ անընտրելի ճանչցուած ըլլալուն հետևանքն էր (2894 և 2912), զի մրցումը ոչ թէ Մակարի ու Մելիքսեդեկի, այլ Մակարի և Խրիմեանի անուններուն վրայ տեղի ունեցած էր, և Մելիքսեդեկի չվաւերանալը ծանուցուած ըլլալուն, նորա անունը իբրև թարմատար գործածուած էր ամէն ընտրողներէ: Այդ պարզ իրողութիւնները չըլլային ալ, Մելիքսեդեկի պէտք էր ըլլար, առաքելական պատգամը, թէ ոչ եթէ որ գանձն իւր ընծայեցուցանէ նա է ընտրեալն (Բ. ԿՐՆ. Ժ. 18), և պէտք չէր որ ինքն անձամբ իրեն կարծեցեալ կաթողիկոսութեան փաստաբանը և Մակարի կաթողիկոսութեան մերժողն երևար, պատիպատ յիշատակութիւններ չհնարէր, և կաթողիկոսական կոնդակին ընթերցումը չանարգէր (86. ԱՐԼ. 700): Առաջները իրեն վիճակին մէջ Մանիսայի քարուկիչ գտնուող Յակոբոս Շահպապլեան վարդապետը իրեն բերան ըրած էր, Մակարի դէմ իր գրիչինկծու արտադրութիւնները անոր ստորագրութեամբ հրատարակել տալով (85. ԱՐԵ. 533-550), և կրօնական ժողովոյ որոշմամբ պատրիարքի կողմէն հաղորդուած արդարութեանց և տրուած հրամանց գործադրութենէն խուսափելով (86. ԱՐԵ. 156): Շահպապլեան մինչև իսկ կաթողիկոսը չյիշելու յանդգնած էր Մելիքսեդեկի թոյլտուութեամբ, և թէպէտ Շահպապլեանը Կ. Պոլիս յղելու ազդարարութիւն եղաւ իրեն 1887 ապրիլ 30-ին (87. ԱՐԼ. 987), բայց նա լուռ մնաց (87. ԱՐԼ. 989), հրամանը կրկնուեցաւ (87. ԱՐԼ. 995), բայց գործադրութեանը ընդդիմացաւ: Կրօնական ժողովը պնդեց (87. ԱՐԼ. 1000), Խառն ժողովն ալ կրկնեց (87. ԱՐԼ. 1003), բայց Մելիքսեդեկ պատասխանեց

թէ գործադրել պարտաւոր չէ (87. ԱՐԼ. 1025): Երրորդ անգամ հրամանը կրկնուեցաւ (87. ԱՐԼ. 1028), և վերջապէս կառավարութեան դիմելու որոշում տրուեցաւ Շահապալեանը Կ. Պոլիս տալու (87. ԱՐԼ. 1059), երբ միւս կողմէ Մանիսացիներէն ալ խնդրագիր կը հասնէր Շահապալեանը հեռացնելու (87. ԱՐԼ. 1099), Իսկ Մելիքսեդեկի բերան եղող Արևելեան Մամուլ ընդարձակ յօդուածներով Շահապալեան և պաշտպանէր (87. ԱՐԵ. 188, 281, 337): Նախկին 16-ներէն 10 անձեր շնորհաւորական նամակ կուղղեն Մելիքսեդեկի անունին տօնին առթիւ, օրինաւոր գահակալ աթոռոյն սուրբ Լուսաւորչի դաւանելով, վոր ամսագիրը կը հրատարակէ առ ազգընտիր կաթողիկոս մակագրութեան ներքև (87. ԱՐԵ, 344): Այդ տգեղ և անտեղի անցուդարձերը այնչափ յառաջեցին որ Ջմիւռնիոյ ողջամիտ հասարակութիւնն ալ պզուանք պզտց Մելիքսեդեկի ընթացքին և Շահապալեանի ցուցած պաշտպանութեան վրայ և օգոստոս 12 թուականով և 300 ստորագրութեամբ հանրագիր մը յղեց պատրիարքարան (87. ԱՐԼ. 1094), որ տխուր տպաւորութիւն կը թողուր ազգին վրայ (87. ԱՐԼ. 1095): Միւս կողմէ Շահապալեանի գալուստը կուշանար (87. ԱՐԼ. 1102), որով Ջմիւռնիացիք երկրորդ գանգատագիրը մըն ալ կը յղեն սեպտեմբեր 5 թուականով և 150 ստորագրութեամբ (87. ԱՐԼ. 1135), որուն մէջ կծու ակնարկներ գրուած էին Մելիքսեդեկի ընթացքին մասին (87. ԱՐԼ. 1172), և մինչև իսկ Ջմիւռնիոյ եկեղեցւոյն մէջ առաջնորդին հակառակ ցոյցեր կըլլային նոյեմբեր 29-ին (87. ԱՐԼ. 1179): Կ, Պոլսոյ եկեղեցականութիւնն ալ բողոք կը բառնար անոր դէմ (87. ԱՐԼ. 1181), և վերջապէս դեկտեմբեր 2-ին հրաժարականը կու տար գաւառական ժողովին և պատրիարքարանին (87. ԱՐԼ. 1176): Գաւառական ժողովը դեկտեմբեր 4-ին նկատի կառնէր հրաժարականը, առաջ կը մերժէր քաղաքավարական կամ կուսակցական ոգւով, բայց պնդելուն վրայ իբր ստիպեալ կընդունի և պատրիարքարանին կը հաղորդէ (87. ԱՐԵ. 588-598): Մելիքսեդեկ իր հրաժարականին մէջ երկարօրէն կը թուէր իր 11 տարուան առաջնորդութեան արդիւնքները, ինքն կապմելով իր ներքողականը, բայց վերջապէս 1888 յունուար 23-ին Ջմիւռնիայէ մեկնելով (88. ԱՐԵ. 37), 25-ին Կ. Պոլիս կը հասնի և կերթայ բնակիլ գատքէօյի Բըզըլթօփրաք արուարձանը (88. ԱՐԼ. 1217): Աւելորդ է յիշատակել թէ ըՋմիւռնիայէ մեկնելուն և Կ. Պոլիս հասնելուն կունենայ ինքն գովաբանող հակամակարեան խմբակ մը, և ինքն ալ չփաւորութեան և պզուշաւորութեան պայմանները մոռնալով Երկու խօսք տետրակը (ԽՕՍ.) իր անունով կը հրատարակէ: Այս հրատարակութեան պարզ ընթերցումն իսկ բաւական է համոզուելու թէ առանց մտային սաստիկ յուզման չէին կրնար այնպիսի անհեթեթ խօսքեր արտաբերուիլ, թող թէ տպագրութեամբ հրատարակուիլ, որոնք միտքէ անցունելու համար իսկ մեծամտական մտադրութիւնն կը պահանջեն: Եւ իրօք հնար չէ պարզապէս դատել Մելիքսեդեկը, երբոր իր կաթողիկոս չըլլալը, Յակկերտի քրիստոնէութեան դէմ հանած հալածանքին հաւասար կը նկատէ (ԽՕՍ. 34), և Մակարը որակներու համար Սուրմակի և Բրքիչոյի անունները կու տայ (ԽՕՍ. 35), համարձակ կը հռչակէ թէ ազգը իսպառ սիրեց զիս իւր ազգային վստահութեամբ (ԽՕՍ. 28), երբոր հնար չէր որ չգիտնար, թէ ինչ կերպով յառաջ եկած էր իրեն տրուած քուէին պատահական և անօրինակ պարագան (2912): Մելիքսեդեկի այս յուզեալ վիճակը այնչափ ծանրացած և այնչափ տարօրինակ երևոյթներու առիթ տուած էր որ Ջմիւռնիոյ խոհական և հանդարտ ժողովուրդն ալ, որ կանուխէն ալ Մակարի անձին և Մակարի ճանչցուելուն նպաստաւոր արտայայտութիւններ կատարած էր (85. ԱՐԼ. 593), վերջապէս իր առաջնորդին դէմ դժգոհութեան ցոյցեր ընելու հասաւ, ինչպէս յիշեցինք: Ուրիշ պարագայ մըն ալ Մելիքսեդեկը ստիպեց հրաժարելու և Ջմիւռնիայէ ելնելու (87. ԱՐԼ. 1154): Այս պարագան ալ յառաջ եկած էր ազգային կեդրոնական իշխանութեան դէմ ցոյցեր ընելու մարմաջէն, որով Ջմիւռնիոյ գրեզմանները խախտելու և գերեզմաննոցները խափանելու ձեռք կը դնէր՝ նոր կրպակներ շինելու պատրուակով, երբ Կ. Պոլսոյ պատրիարքարանը

գերեզմաննոցներու նուիրակութեան և անձեռնմխելիութեան փաստով Պէշիկթաշի ազգային գերեզմաննոցը գրառումէ վերծուցանելու կաշխատէր (86. ԱՐԼ. 934): Այդ մասին ալ կեդրոնը կը ստիպուէր իրեն ազդարարել (87. ԱՐԼ. 1167), Զմիւռնիոյ ժողովուրդն ալ բողոքարկու հանրագրութիւն կը հասցնէր (87. ԱՐԼ. 1168), և գործն ալ կը խափանուէր նոյն իսկ կառավարական արգելքով (87. ԱՐԼ. 1174): Մելիքսեդեկ Բըզըլթօփրաքի առանձնութեան մէջ ալ իր կազմակիցներէն շրջապատուած, և կերպով մը պաշտուած անտեղի ցոյցերը շարունակեց, բայց վերջապէս զգաց անոնց անօգուտ և ծիծաղելի ըլլալը և իր կացութեան տկարանալը. զի Յարութիւն պատրիարք խոհական բայց ամուր կերպով կը պաշտպանէր եկեղեցւոյ միութեան հիմնակէտը, և չէր թողուր որ Մելիքսեդեկի և իր սակաւաթիւ կողմակիցներուն ճամարտակութիւնները գործնական կերպարան զգենուն: Այսպէս խնդիրը ինքնիրեն նուազեցաւ և ոչնչացման յանգեցաւ Յարութիւնի յաջորդին օրով 1889 ապրիլ 16-ին, ինչպէս առիթ պիտի ունենանք պատմել:

2931. ՊԷՇԻԿԹԱՇԻ ԳԵՐԵԶՄԱՆՆՈՅԸ

Յարութիւն պատրիարք Կ. Պոլսոյ աթոռին վրայ առժամեայ վարիչի ձևն առած էր այն օրէն որ Երուսաղէմի աթոռին յաջորդ նշանակուեցաւ, միւս կողմէն չէին պակսեր իրմէ դժգոհ եղողներ ալ, գլխաւորապէս հայկական խնդիրին ջերմապէս յարողներ, որոնց կարծիքով Յարութիւնի մեղմ և խոհական ընթացքը, խնդիրը լքանելու և թողելու հաւասար կը մեկնուէր, և քննադատութեան կենթարկուէին իր այս մասին գիրերն ու հեռագիրները: Այս բանը հարկաւ Յարութիւնի շատ հաճելի չէր կրնար ըլլալ, որչափ ալ նա խծրծանքները անարգելով անտեսելու վարժ ըլլար, բայց նոր և ծանր խնդիր մըն ալ եկաւ իր կացութիւնը դժուարացնել: Սուլտան Ապտիւլհամիտ իր հաստատուն բնակութիւնը հաստատած էր երլտըզի ամարանոց պալատը, որուն գրեթէ կից էր Պէշիկթաշի Հայոց գերեզմաննոցը, և սուլտանին աչքին անհաճոյ կու գար գերեզմաններու տխուր տեսարանը. որուն տեղ կը բաղձար զուարճալի պարտէզ մը տեսնալ: Այս նպատակով պատրիարքէն խնդրուեցաւ որ գերեզմաննոցի ոսկորները վերցուին, և գետինը արքունիքին թողուի: Խնդիրը սկսած էր 1887 յունուար 15-ին, և մասնաւոր գիրերը փոխանակուած էին արքունեաց նախարար Ղազի Օսման փաշայի և Յարութիւն պատրիարքի միջև (87. ԱՐԼ. 1023 և 1028): Գերեզմաննոցը պարտէզի փոխարկել առանց Պատրիարքը կառաջարկէր իր կողմէն գերեզմաննոցը պարտէզի փոխարկել առանց ոսկորները շարժելու, և միանգամայն արտօնութիւն կը խնդրէր Բերայի գերեզմաննոցին եկեղեցին վերաշինել և ճամբուն կողմը չթաղուած մասին մէջ կալուածներ կառուցանել: Իսկ փաշան առաջին առաջարկը կը մերժէր, և վերջիններուն համար միջնորդել կը խոստանար (87.ԱՐԼ.934): Իսկ խառն ժողովը փետրուար 4-ին և յաջորդ օրերը խնդիրը ձեռք կառնէր (87.ԱՐԼ.927), և 9-ին խնդիրը երեսփոխանութեան կը հանէր, մինչ կրօնական դասակարգը գրեթէ ամբողջովին և Պէշիկթաշի թաղականութիւնը և ժողովրդական զգացումը, գերեզմաններու անձեռնմխելիութեան և գերեզմաննոցներու նուիրականութեան սկզբունքով՝ ուժգնակի կը պնդէին չյանձնել և գրառումը արգիլել. իսկ պետական յարաբերութեանց պահանջը և կայսերական կամաց համակերպութիւնը զիջում ընել կը թելադրէին: Ըստ այսմ կորոշուէր կրկին դիմում ընել կայսերական գթութեան, իսկ անկէ ետքը պարագայից բերմամբ պատշաճը տնօրինելու հոգը դարձեալ խառն ժողովին կը յանձնուէր (87.ԱՐԼ.931): Բայց երկար խորհրդակցութիւններէ ետքը գործը երակացութեան մը չէր յանգեր զի կրօնական և քաղաքական ժողովներուն, կամ աւելի ճիշդ եկեղեցական դասակարգին և պետական պաշտօնէութեան համաձայնելուն կերպը չէր գտնուէր (87.ԱՐԼ.936): Այդ անել կացութեան հանդէպ Յարութիւն պատրիարք 20-ի խառն ժողովին մէջ իր հրաժարականը կը յղէր Ընդհանուրի

ատենապետին (87.ԱՐԼ.944). իսկ կառավարութեան յղուելիք հրաժարականը մինչև փետրուար 28 յապաղել կը խոստանար, սպասելով որ կրօնական և քաղաքական ժողովներ կարենան համաձայնութեան յանգիլ, և փարատի ազգին մէջ տիրած տագնապի յուլումը (87.ԱՐԼ.942): Երկու ժողովներու մէջ անհամաձայնութեան կէտը ոչ այնչափ խնդիրին իսկութեան որչափ ձևակերպութեան շուրջը կը դառնար. Վի կայսերական գթութեան դիմումը երեսփոխանութենէն որոշուած էր, և կրօնականին ու քաղաքականին կողմէ ալ դժուարութիւն չէր յարուցուած: Բայց խնդիրը կը տարբերէր երբ քաղաքականը կրօնականէն կը պահանջէր այժմէն որոշել թէ ի՛նչ պէտք էր ընել եթէ դիմումը չընդունուէր, Վոր կրօնականը այժմէն որոշել աւելորդ կը դատէր, կայսերական գթասրտութեան վրայ վստահութիւն յայտնելով (87.ԱՐԼ.944): Այս վերջին տեսութիւնը հետզհետէ ընդհանրացնելու, պատրիարքն ալ հարկ տեսաւ իր հրաժարականը յետաձգել մինչև Պէշիկթաշի խնդիրին վերջանալը, միանգամայն դիմումի համար կառավարութեան հետ տեսակցեցաւ, բայց որովհետև խնդիրը արքունեաց հետ էր, պատրիարքին առանց միջնորդի ուղղակի կայսեր դիմելը յարմարագոյն տեսնուեցաւ, և այդ միտքով Օսման փաշայի վերջին գրութեան պատասխան մը պատրաստուեցաւ (87.ԱՐԼ.948), Վոր մարտ 4-ին պատրիարքը անձամբ տարաւ: Ճիշդ այդ միջոցին էր Մելքիսեդեկի Զմիւռնիոյ մէջ գերեզմանոց խափանելու ձեռնարկը (2930): Պատրիարքին տարած գիրով կը բացատրուէր գերեզմանոցներու նուիրական նշանակութիւնը և գերեզմաններու անձեռնմխելիութեան կանոնը, և պետական օրէնքով փոխանցումէ և գրաւումէ ապատ ըլլալը, և ժողովուրդին կրօնական զգացմանց տագնապը, և կը խնդրուէր կայսերական գթասրտութեան շնորհը, աւելցնելով որ եթէ կայսեր բացորոշ կամքն է, չկայ բացարձակ Վոհողութիւն մը Վոր ազգը սիրով յանձն չառնու գոհացնելու համար իւր հայրախնամ վեհապետը (87.ԱՐԼ.949): Դիմումը իր յաջող ելքն ունեցաւ: Պատրիարքին Օսման փաշայի հետ տեսակցելէ ետքը իր գիրը առաջին սենեկապետ Հաճի Ալի Պէյի ձեռքով կայսեր ներկայացուեցաւ, որ պարունակութեանը տեղեկանալէ ետքը հրաման արձակեց, թէ որչափ ալ կուզէր ոսկրներուն գերեզմանոցէն հանուիլը, սակայն լսելով որ այս բանը կը ներկայացուի իբր հակառակ կրօնական զգացմանց, և չուզուիլը Վիջում ընել բայց եթէ իբրև բացառութիւն իմ անձիս համար, չեմ կրնար ընդունիլ որ իմ անձիս համար սոյն օրինակ Վոհողութիւն մը ըլլայ, և չեմ ուզեր որ պատրիարքը այս պատճառով դժուարութեանց մէջ իյնայ: Այս դիտումով և Վզացումով սուլտանը կը հրամայէ, որ գերեզմանոցին միայն պատերը վերցուին, և փոխանակ վանդակապատեր դրուին, քարեր և ոսկորներ՝ հող աւելցնելով՝ լաւ ծածկուին, ծառեր տնկուին, սեփականութիւնը Հայոց մնայ և մերթընդմերթ քահանաներ կարենան գալ և գերեզմանները օրհնել (87.ԱՐԼ.910): Այս շնորհը գոհութեամբ հաղորդուեցաւ մարտ 5-ին խառն ժողովին, ուր ուրիշ կարևոր անձեր ալ ներկայ էին, և պատրիարքը իր հրաժարականին պայմանաժամը լրացած յայտարարելով նախագահական աթոռը թողուց և յարեց թէ ինքն ոչ ևս է պատրիարք Կ. Պոլսոյ (87.ԱՐԼ.951): Կանուխէն 1886 օգոստոսէն սկսած էր խօսուիլ պատրիարքի հրաժարականին վրայ (86.ԱՐԼ.796), իբր Վի Կ. Պոլսոյ մէջ Երուսաղէմի համար ընելիքները ձամբայ առած էին. իսկ Պէշիկթաշի խնդիրը իբր պատրուակ մը ուզած էր գործածել իր հրաժարականը արդարացնելու համար. սակայն այս անգամ ալ վերջնական չեղաւ Յարութիւնի հրաժարականը, և համակերպելով վարչութեան թախանձանաց՝ շարունակեց միջոց մը ևս վարել կեդրոնին գործառնութիւնները: Իսկ Պէշիկթաշի խնդիրը պալատականաց համար վերջնական չէր, և անգամ մըն ալ նորոգուեցաւ, և այս անգամ հարկ եղաւ գործը կաթողիկոսին ենթարկել իբրև Վուտ հոգևորական խնդիր, և Մակար 1888 փետրուար 28-ի կոնդակով կարտօնէր ոսկրներու փոխադրութիւնը (88.ԱՐԼ.1268): Բայց երբ գերեզմանոցը կայսեր նուիրելու որոշումը կը տրուէր և Պէշիկթաշի թաղականին կը

հաղորդուէր (88.ԱՐԼ.1272), և ըստ այնմ ալ կայսեր կը ծանուցուէր, նա դարձեալ իր առաջին հրամանը կը կրկնէր, ոսկրները չխախտել, սեփականութիւնը ազգին պահել, և միայն ծածկելով ակնահաճոյ ձև մը տալ (88.ԱՐԼ.1277): Սոյն հրամանով կայսրը ոչ միայն ազգը գոհացնելու դիմում ունէր, այլ և օտար տեղէ եկած արտօնութեամբ նպաստաւորելու գաղափարը կը մերժէր: Այսպէս անգամ մըն ալ Պէշիկթաշի գերեզմաննոցին խնդիրը կը փակուէր, բայց դարձեալ նորէն կը բացուէր 1888 սեպտեմբերի սկիզբը, երբ պալատան նախարարը Ղազի Օսման փաշա գերեզմաննոցէն 250 քառակուսի կանգուն տեղ կը պահանջէր պալատան մեքենաները պետեղելու: Պատրիարքարանը կը պատասխանէր գերեզմաննոցը արդէն տրամադրած ըլլալը (88.ԱՐԼ.1400), և գործը դարձեալ կը փակուէր նախընթաց կերպով, բայց հիմնապէս չէր վերջանար:

2932. ՇԱՀ ՊԱՋԻ ԽՆԴԻՐԸ

Մասնաւոր և անհատական գործ մըն ալ ընդհանուր կնճիռ դարձաւ այդ միջոցին, Կարապետ Շահպապեան տէրութենէ բարձր աստիճանով պատուընուած, և ազգին մէջ խոհական և կարող մարդու համբաւ վայելող անձնաւորութիւն մը, որ Երմոնէ Եուսուֆեանի հետ ամուսնացած և վեց չաւակներ ունեցած էր, օգտուելով անոր հիւանդութեան դարմանի համար արտասահման գտնուելէն, կը խորհի կրկին ամուսնանալ երեք պաւակի տէր Յուստիանէ Խուրտաճեան այրի կնոջ հետ, և յանկարծ իբր օրինաւորապէս ամուսնացած մը մէջտեղ կելլայ՝ անունը անյայտ քահանայի մը ձեռքով պսակի օրհնութիւն ստացած ըլլալը յայտարարելով: Այս գործը ծանօթ ազգայիններու պատուաւոր շրջանակը վայրոյթի կը գրգռէ, որոնցմէ ոմանք կանուխէն ալ շատ համակիր չէին Շահպապեանի, ուստի պատրիարքը կը դրդեն օրինակելի վճիռ մը արձակել անոր դէմ, հիմնուելով պարզապէս Շահպապեանի յայտարարութեան վրայ: Գործը 1887 յունիս 20-էն օր առաջ լսուած էր, և 20-ին պատրիարքը տեսակցութիւն մը ունեցաւ Շահպապեանի հետ, դատական նախարարութեան խորհրդական Վահան էֆէնտիի մօտ, բայց նա երկուքին յորդորներուն ալ չանսալով իր կարծեցեալ ամուսնութեան վաւերացումը կը պահանջէր ուղղակի պատրիարքէն: Յունիս 22-ին պատրիարքի մօտ դառնալով խնդրագիրն իսկ չէր յանձներ, երբոր կիմանար թէ կրօնական ժողովին պիտի ենթարկուի, որ հաւաքուած էր: Ընդհակառակն դատական նախարար ճէվտէթ փաշայի կը դիմէր որպէսզի իր անունը Հայոց պատրիարքարանի արձանագրութենէն ջնջուի առանց պատճառն ու նպատակը աւելցնելու (87.ԱՐԼ.1045), և նախարարն անոր գիրը պատրիարքին կը յղէր: Յունիս 27-ին խառն ժողով կը գումարուի, և պահ մը Շահպապեան ալ կը ներկայանայ, բայց դարձեալ կարևոր բացատրութիւնը չի տար, քահանայի անուն չի յայտներ, միայն իր խօսքով կը պնդէ կարծեցեալ պսակին վաւերականութիւնը. ըրածին և ըսածին վրայ ալ կը յամառի՝ հակառակ Յարութիւն պատրիարքի և Խրիմեան ատենապետի յորդորներուն, ուստի իսկոյն բանադրանքի կոնդակը կը պատրաստուի, յունիս 22 թուականով: Շահպապեանի պսակ օրհնող քահանայի անուն չտալէն իբրև հաւանակագոյն խօսուած էր այն ատեն ալ թէ պսակ օրհնող քահանայութիւն կեղծող անձ մըն էր, և խաղը նպատակ ունէր միայն Յուստիանէն խաբել, որ առանց օրինաւորութեան չէր հաւաներ անձնատուր լինել Շահպապեանի հրապուրանաց: Այդ գործին մէջ կանոնական ձևակերպութեանց պահանջը աւելի դիւրութեամբ լրացած կըլլար, եթէ պատրիարքարան Շահպապեանի յայտարարած պսակը անգոյ և չեղեալ վճռէր, որով Շահպապեանի գործը ապօրէն կենակցութեան վիճակին կը վերածուէր, և ուրիշ շատերու նման մտադրութենէ կը վրիպէր, քան թէ բանադրանքի պատիժին ցուցադրութեան ենթարկուէր, որ շատոնց կիրառութենէ խափանուած ձև մըն էր: Սակայն Յարութիւն ալ տարուեցաւ նախանձայոյցներու գրգռութենէն, որոնք կանոնականէ աւելի անձնական նպատակի կը հետևէին: Ինչևիցէ, 27-ին որոշուած բանադրանքի կոնդակը 28-ին քանի մը եկեղեցիներու մէջ կարդացուեցաւ վարագոյրը փակելու և

բացատրություններ աւելցնելու հանդիսականութեամբ, մինչ շատ եկեղեցիներու հասած իսկ չէր (87.ԱՐԼ.1044) և միայն միւս կիրակին կարդացուեցաւ (87.ԱՐԼ.1050), իսկ Շահապեան մեծ դենպետութեան կը բողոքէր իրեն դէմ արձակուած բանադրանքին համար, որ բնականաբար գործին ընթացք չէր տա, ամուսնական գործերու կայսերական հրովարտակներու պարտութեամբ պատրիարքարանի բացարձակ իշխանութեան վերապահուած ըլլալուն (87. ԱՐԼ. 1049): Ուստի Շահապեան Կարապետ ուրիշ ելք մը չի գտներ բայց եթէ ուղղակի իսլամութիւն ընդունիլ (87. ԱՐԼ. 1051), ինչպէս որ ալ կը գործադրէ Ալի Շահապա անուն ընդունելով: Սակայն իր նպատակին ալ չի հասնիր, զի նոյնինքն Յուստիանէ անկէ կը խորշի բանադրանքը և կրօնափոխութիւնը իմանալուն, և լքեալ ու տարէց իսլամուհի մը Շահապաի ամուսին կը տրուի բարձր հրամանով: Իր պետական և պաշտօնական յառաջադիմութիւնն ալ կը վնասուի զի վճռաբեկ ատեանի անդամակցութենէն զոր ունէր աւելի բան մը չի տրուիր իրեն, մինչ շատ հաւանական էր որ Վահան էֆէնտիի մահուանէ ետքը դատական նախարարութեան խորհրդական անուանուէր, իբրև բարձր և հնօրեայ դատաւոր և դատական գործոց հմուտ և փորձառու և յարգուած պաշտօնեայ: Յարութիւն պատրիարքին դառնալով՝ յաջող հետևանք մը չունեցաւ կատարած գործողութիւնը, զի թէպէտ ազդեցիկ յորդորներ և հաւանողներ ունեցաւ և կրօնական ժողովի անունն ալ խառնուեցաւ կողակին մէջ, սակայն քաղաքական ժողովը ուլեց գործէն բոլորովին հեռու մնալ անոր հոգևորականութեան պատճառով, և հանրային կարծեաց ստուար մեծամասնութիւնն ալ կրօնամուլ զգացում մը տեսաւ վճիռին բնութեան մէջ է, և նախանձաւորէ աւելի նախանձոտ անձանց համակերպութիւն նշմարեց, այնչափ ապօրէն կենակցութենէ աչք գոցած ատեն, մէկին վրայ ծանրացած խստութեան մէջ: Ասով մէկտեղ ոչ Շահապաի արարքը կրնայ արդարանալ, և ոչ մենք թեթևցնել կուզենք մանաւանդ իր անհատական գործը հանրայինի վերածելուն, և լոկ զգայական հաճոյքի մը համար եկեղեցի և ազգ և ազգային իշխանութիւն ծաղրելու և անարգելու յաւակնելուն պատճառով:

2933. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Վեհապետեանի պատրիարքութեան գործերէն յիշատակութեան և բացատրութեան արժանի է Երուսաղէմի ներքին կանոնագիրին վերաքննութիւնն ալ, որուն պէտքը շեշտուած էր կեդրոնին կողմէն, իբրև պարտքին աճելուն առջևն առնելու միջոց մը: Յարութիւն պատրիարք կրկին և կրկին յանձնարարած էր միաբանութեան վերաքննութիւն ընել և առաջարկել, ինչպէս որ 1886 փետրուար 3-ին միաբանական ժողովին ալ հաղորդուեցաւ և ժողովին օրակարգին անցաւ (86. ՄԻԱ. 362), այլ միայն յուլիս 7-ի գումարման մէջ վերաքննութիւնը պատրաստելու համար եօթը անդամով յանձնաժողով մը կազմուեցաւ, չորսը տնօրէնէն դուրս (87.ՄԻԱ.367): Յանձնաժողովի պատրաստած ծրագիրը քննուեցաւ հոկտեմբեր 13-ի միակ և 4-ի կրկին նիստերուն մէջ, և ինչ ինչ փոփոխութիւններով ընդունուելով 100 օրինակ տպուեցաւ, որոնք Կ. Պոլիս հասան և երեսփոխաններու ցրուեցան նոյեմբեր 25-ին (86.ԱՐԼ.859): Նոր ծրագիրը նշանաւոր փոփոխութիւններ կը պարունակէր 1880-ի կանոնագիրին վրայ (2872), որոնց գլխաւորներն էին, տնօրէն ժողովոյ անդամներուն պաշտօնէական գրութիւնը ջնջել, տնօրէն ժողովոյ պաշտօնավարութիւնը չորս տարիի ընդարձակել, երկերկու տարիէ կէսառկէս փոփոխութեամբ, տնօրէն ժողովոյ ընտրութիւնը երկպատիկ փակեալ ցանկի վրայ կատարել, յարաբերական գործոց տեսչութիւնը ջնջելով ուղղակի պատվիարքին վերապահել, միաբանական ժողովոյ ձեռնհասութեան պահուած գործերէն մի լաւ մասը տնօրէն ժողովոյ փոխանցելով՝ ասոր ձեռնհասութիւնը ընդարձակել, և գլխաւորապէս անոր վերապահել միաբաններու ընդունելութեան և մերժման և բարձրացման հաւանութիւնները, և վաճառմանց ու գնմանց ու

փոխառութեանց որոշումները, որով ընդհանուր ժողովին կը մնային միայն պատրիարքի և տնօրէնի ընտրութիւնները կատարել, և ելեմտացոյցը և հաշուեցոյցը հաստատել: Հին կանոնագիրին յօդուածները այդ սկզբունքներու համեմատ փոփոխուած էին, թիւն ալ 101-է 86-ի վերածուած էր, և ջնջուած էին պաշտօնէութեանց յարակից ցուցակները (86. ՄԻԱ. 392-394): Կեդրոնին յղուած ծրագիրը նախապէս պարտուց բարձրման յանձնաժողովին քննութեան ենթարկուեցաւ (86. ԱՐԼ. 880), որ իր կողմէ ինչինչ փոփոխութիւններ առաջարկեց (87. ԱՐԼ. 923), սակայն միաբանական ծրագիրը ընդհանուր կերպով երեսփոխանութենէ ընդունուեցաւ 1887 ապրիլ 14-ին (87. ԱՐԼ. 991), հետզհետէ յօդուածներու քննութեան անցնելու պայմանով: Գլխաւոր կէտը որ կեդրոնը կը վբաղէցնէր ոչ այնչափ աթոռին ներքին կառավարութիւնն էր, որչափ անոր դրամական մատակարարութիւնը կարգաւորել և կեդրոնին անմիջական հսկողութիւնը պօրացնել, որուն չէր բաւէր տարուէ տարի յղուած լրացած և նախատեսուած ծախուց ցուցակը, և մինչև իսկ կառաջարկուէր մատակարարական տոմարներուն պատճառները ամսէ ամիս Երուսաղէմէ Կ. Պոլիս յղել, և հոս ալ մայր տոմար մը կազմել (87. ԱՐԼ. 1033): Յուլիս 17-ի երեսփոխանութեան գումարման մէջ ծրագիրին առաջին 30 յօդուածները անփոփոխ ընդունուեցան (87. ԱՐԼ. 1060), բայց շարունակութիւնը յապաղեցաւ մինչև հոկտեմբեր 16-ի նիստը, որուն մէջ անօրէն ժողովոյ ձեռնահասութեանց մասին երկար վիճաբանութիւններէ ետքը գրեթէ նոյնութեամբ ընդունուեցան 31-է մինչև 41 յօդուածները (87.ԱՐԼ.1136): Եւ դարձեալ մոռցուեցաւ շարունակութիւնը, մինչև որ Յարութիւն պատրիարքի ստիպմանց վրայ 1888 մարտ 18-ի նիստին մէջ թեթև խորհրդածութեամբ և քանի մը բացատրական և բաւական փոփոխութիւններով ընդունուեցան 42-է մինչև 86 յօդուածները, և 40 ներկայ երեսփոխանաց միաձայնութեամբ բուխարկուեցաւ և հաստատուեցաւ միաբանութեան ծրագրած կանոնագիրը (88. ԱՐԼ. 1264): Յարութիւն պատրիարք մտադիր ըլլալով մօտ ատենէ իր վճռական հրաժարականը տալ՝ աշխատեցաւ որ Երուսաղէմի այս գործն ալ վերջացած ըլլայ: Նոր կանոնագիրը որ 1888-ի կանոնագիր անուն կը կրէ, 1880-ի կանոնագիրէն (2872) տարբերութիւն չունի միաբանական կազմակերպութեան ձևերուն մէջ, բայց բոլորովին տարբեր է վարչական ոճը ինչպէս կանխեսցինք ակնարկել: Միաբանութիւնը 210-ի վերածուած փոխանակ 245-ի, իսկ միաբաններու մասին յօդուածները միևնոյն են 2-էն մինչև 20: Պատրիարքի ձեռնահասութեանց կարգին յաւելուածներ եղած են 23 յօդուածին վրայ, վերցուած են պատրիարքին դէմ ամբաստանութեան վրայօք եղող 1880 ի կանոնագիրին 24-է 26 յօդուածները, իբրև սպառնալի սահմանադրութեան 10 և 19 յօդուածներով կարգադրուած մի կէտ, որով նոր կանոնագիրին 24-է 27 յօդուածները կը պարունակէն պատրիարքական ընտրութեան պայմանները: Նոր կանոնագիրին վարչական ուղղութիւնը կը պարունակուի 25-է 34 յօդուածներուն մէջ, որ անօրէն ժողովոյ ձեռնահասութիւնները կը ճշդէ, և անոր կը վերապահէ գրեթէ բոլոր վարչական գործերը: Ճղաւոր և ծանրակշիռ գործերը տնօրինել, պաշտօնէից ընտրութիւնները կատարել, հրահանգներ և տնօրէնութիւնները սահմանել, միաբանից ընդունելութիւն որոշել, ամբաստանութիւնները քննել, հրաժարում վճռել, եպիսկոպոսութենէ վատ բարձրացումները որոշել, վախճանեալ միաբանից գոյքերու կանոնական տրամադրութիւն կատարել, ամէն ամսազուրիս պաշտօնէից հաշիւները քննել, չորս ամիսը մէկ ելեմտից վիճակը ստուգել: Ինչպէս կը տեսնուի աթոռն ու միաբանութիւնը ամբողջաբար տնօրէնի կը յանձնուէր, և երբոր գիտենք որ տնօրէնի տիրապետողը Մաքսուտեան վարդապետն էր, շուտով կը թափացնենք նոր կանոնադրութեան հոգին, մանաւանդ որ թէպէտ 34 յօդուածը կը տրամադրէր որ տնօրէնի անդամներ համարատու պաշտօններ չստանանն, սակայն Մաքսուտեան տնօրէն ժողովոյ անդամակցութեան և ատենապետութեան հետ ելեմտից տեսչութիւնն ու կալուածապետութիւնն

ալ պահեց 20 տարիէ աւելի միջոց մը: Յաջորդ յօդուածներ կը պարունակեն միաբանական ժողովի, լուսարարապետի, պատրիարքական փոխանորդի, երևմտից տեսուչի, դարպասընկալի, դպրոցաց տեսուչի, դիւանապետի, թարգմանի, կալուածոց տեսուչներու, տպարանի ու թանգարանի, մատակարարի, հանդերձապետի, բժիշկի ու դեղագործի, Կ. Պոլսոյ փոխանորդի, սուրբ տեղեաց ու թեմօրէից տեսուչներու, գործակալներու ու գանձապետներու, և այցելուներու ու նուիրակներու վերաբերեալ կանոններ, որոնք 35-է մինչև 81 յօդուածները կը գրաւեն: Երեք յօդուածներ են վարչական ընթացքին և երկու վերաքննութեան, որուն համար չորս տարի պայմանաժամ տրուած է: Տնօրէն ժողովի գլուխէն ետքը եղող յօդուածներ ծանօթ և սովորական կարգադրութիւններ պարունակելուն մանրամասնութեանց չենք մտներ, իսկ բովանդակութեան մասին դիտողութիւններ արդէն նշանակեցինք: Այս 1888-ի կանոնագիրն է որ տակաւին իբրև տիրող կը նկատուի, զի թէպէտ 1907-ին վերաքննութեան փորձ մը եղաւ, բայց չլրացաւ, և 1914-ին կազմուած կանոնագիրն ալ գործադրութեան չանցաւ, ինչպէս իրենց կարգին պիտի պատմենք: Միայն այժմէն աւելացնենք թէ 1888-ի կանոնագիրը, որ Երուսաղէմի պարտքին աճելուն առջևը պիտի առնէր, բոլորովին հակառակ արդիւնք ունեցաւ:

2934. ՊԵՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

Որչափ ալ մեր ընդգրկած ոճը մեզ չի ներեր ամէն դիպուածներով և գործերով վբաղիլ, որոնք մասնաւոր պատմութիւն գրողներուն կը պատկանին, սակայն ժամանակին ընդհանուր նկարագիրը և Յարութիւնի գործունէութեան պատկերը լրացնելու համար աւելցնենք, թէ Յարութիւնի վարչական գործունէութիւնը հարուստ եղաւ յարաբերական խնդիրներով, որոնց առիթ տուին պետութեան մէջ նոր արծարծած միտքը և պատրիարքարանի մէջ զօրացած հինին պահպանութեան գաղափարը: Պետական շրջանակներ ուժգնակի կը մղէին ամէն յարաբերական կամ կենցաղական խնդիրները քաղաքացնելու և ուղղակի կառավարական պաշտօնէութեան ձեռք անցունելու, մինչ պատրիարքարան ամուր բռնելով անոնց գուտ կրօնական կամ կրօնականի խառն բնութիւնը կը պնդէր վանոնք իր հնաւանդ ազգային ձևին մէջ պահել: Այս է իսկապէս առանձնաշնորհութեանց կոչուած և ստպ յեղյեղուած խնդիրին իմաստը: Այս մասին Յարութիւն պատրիարք մասնագէտի մը հմտութեամբ ձոխացած ձանձցուելով, իսկապէս ժամանակին պահանջած ազգապէտ պատրիարքը ըմբռնուած էր, և աւելի այս տեսութեամբ կը զօրանային Յարութիւն Կ. Պոլսոյ աթոռին վրայ պահելու հետամուտները: Յիշուած գործերուն կարգէն են առաջնորդներու հրովարտակներուն մէջ իրաւանց յապաւումները, և առաջնորդներու յառաջապահութեան կարգը, Ասորոց պատրիարքութեան Հայոց պատրիարքարանին հանդէպ դիրքը, օտարազգի և օտարադաւան քարոզիչներու համարձակութիւնը եկեղեցականներէն դատարաններու առջև պահանջուած երդումին ձևը, Կիլիկիոյ վիճակներուն Կ. Պոլսոյ պատրիարքութենէն կախումը, ազգային սեփականութեանց և ազգային վագրֆներու մատակարարութիւնը ամուսնական դատերու պատրիարքարանի վճիռներուն գործադրութիւնը, և ուրիշ նմանօրինակ խնդիրներ, որոնք ընդհանրապէս ազգային իրաւանց համապատասխան կերպով լուծուեցան: Յարութիւն յաջողեցաւ անձնական խնդիրներու ալ նպաստաւոր ելք պատրաստել, և ամբաստանութեամբ Կ. Պոլիս բերուած Գրիգորիս Ալէաթճեան Մշոյ, և Եզնիկ Ապահունի Արաբկիրի եպիսկոպոսները արդարացնելով իրենց վիճակները դարձնել: Պուլանըքի փոխ առաջնորդ Յովսէփ Սարաճեան վարդապետ ալ արդարանալով կարևորագոյն պաշտօնի կոչուեցաւ, Մամուլ վաւեշտաթերթի արտօնատէր Գէորգ Այվապեան աքսորէ վերադարձուեցաւ, և

շատ մը կասկածով բանտարկեալներ արձակուեցան: Յարութիւն ոգւով չափ աշխատեցաւ նաև արքունեանց և կառավարութեան միտքէն հեռացնել Հայոց նկատմամբ ներշնչուած անվստահութեան գաղափարները, որոնք այդ միջոցին սկսած էին մուտք գտնել կայսեր և նախարարաց գաղափարին մէջ: Բարենորոգմանց խնդիրը, զոր ռուսութուրք դաշնագիրին առիթ մշակել ձեռնարկած էր Ներսէս, օսմանեան կառավարութիւնը մտահոգ ընելու բնութիւն ունեցած չէր (2854). Կարնոյ մէջ ծագած խնդիրն ալ ամբողջաբար լուծուած և կասկածն ալ փարատած և անհետացած էր (2888) իսկ հայկական խնդիր կոչուած ձգտումները մտադրութեան արժանի ըլլալու չափ կարևորութիւն չէին ստացած (2966) բայց ակնկալեալ բարենորոգմանց յապաղիլը կասկածաւոր նկատուած ըլլալու ըմբռնմամբ, և Եւրոպա խոյս տուողներուն շատնալը, և անոնց եւրոպական շրջանակներու ապատամիտ գործունէութեան նմանողութիւնը, և նոյն իսկ եւրոպական պետութեանց միջամտութիւնը խոթացնելու համար գրգռիչ դիպուածոց թելադրութիւնները, սկսած էին իբր վտանգաւոր սկզբնաւորութիւն սեպուիլ, և անտարբեր կամ անկարևոր պարագաներէ օգուտ քաղել հետապնդողներ չախապանցեալ և երևակայական ներշնչումներով միտքեր վրդովելու կաշխատէին, այսպէս որ արքունիքն ալ և պետական դասն ալ իրենց կարգին նախապգուշութիւններ ուղղելու կը թելադրուէին: Այս նպատակով ազգային և պետական մեծ անձնաւորութիւններ, Յարութիւն Տատեան, Յովհաննէս Վահան, Սերովբէ Սերվիչէն, և Յովհաննէս Նուրեան, 1888 յունուար 9-ին մեծեպարքոս Բեամիլ փաշայէ տեսակցութեան կը հրաւիրուէին, և ծագող կասկածներու մասին տեղեկութիւններ և բացատրութիւններ, և ազգային մարմիններու ու բովանդակ ազգին վզացումներուն մասին պարտուպատշաճ վկայութիւնները կու տային, և արտասահմանէ հասնող լուրերուն և լրագիրներուն տեղական տարրին հետ յարաբերութիւն կամ անոր վրայ ազդեցութիւն չունենալը կը վստահացնէին: Միանգամայն տրուած բացատրութեանց կայսեր հաղորդուած և գոհունակութեան արժանացած ըլլալը պատրիարքին կը հաղորդուէր, ինչ որ խնդութեամբ կաւետէին լրագիրները զրպարտիչներու և մատնիչներու դերն ալ նշաւակելով: Ասոր վրայ մայրեկեղեցւոյ և ուրիշ եկեղեցիներու մէջ սուլտանին կենաց համար մաղթանքներ կը կատարուէին (88.Ա.ՐԼ.1218), և պատրիարքն ալ շրջաբերականով գաւառացի ժողովուրդին կը հաղորդէր աւետիսը, և հաւատարմութեան յորդորներ կաւելցնէր: Այս վրոյցներու պատճառով բանտարկեալներ ալ եղած էին գաւառներու մէջ, որոնց ապատութեան կաշխատուէր, սակայն վրոյցներ և քութիւններ չէին դադրեր: Պատրիարքն ալ կայսեր ունկնդրութեան կը հրաւիրուէր (88.Ա.ՐԼ.1240), և փետրուար 22-ին առաջին քարտուղարի հետ տեսակցելէն ետքը (88.Ա.ՐԼ.1242), 26-ին կայսեր կը ներկայանար, և յոյժ սիրալիր կերպիւ ընդունելութիւն կը գտնէր (88.Ա.ՐԼ.1246): Այսուհանդերձ բերանացի լուր կը տարածուէր, թէ պատրիարքին անձին հանդէպ համակիր վկայութեանց խառնուած ըլլան կասկածաւորներու մասին սպառնական բացատրութիւններ, որոնք մինչև իսկ պատրիարքը կը յուլեն: Բայց Յարութիւնի խոհականութիւնը թոյլ չէր տար տակաւին որ կայսեր և ազգութեան յարաբերութիւնները խանգարուին կամ վնասուին: 2935.

ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

Յարութիւնի պաշտօնավարութիւնը ոչ նուազ հարուստ է ազգային շրջանակի մէջ կատարուած բարւոքումներով և օգտակար ձեռնարկներով: Այս տեսակէտէն աչքառու ճիւղերը երկու են գլխաւորաբար, կրթականը և բարեգործականը: Կրթական ճիւղէն յիշեցինք արդէն Ղալաթիոյ Կեդրոնականին բացումը (2921), և Սանասարեան վարժարանի մասին կարգադրութիւնները (2929): Աւելցնենք Բերայի մէջ բացուած աղջկանց արհեստանոցը, մանկապարտեպներու սկզբնաւորութիւնը, մայրաքաղաքի և գաւառաց պանապան

վարժարաններուն պաշտպանութեան ձեռնարկները, Միացեալ Ընկերութեանց ընդարձակման և ապահովութեան համար աշխատանքները, նոյնը Ապգանուէր Հայուհեաց և ուրիշ կրթական ընկերութեանց համար, դպրոցական դասագիրքերու որոշման և անոնց պետական հաստատութեան կարգադրութիւնը, կրթական տեսչութեան հաստատութիւնը, կրթական հրահանգի հրատարակութիւնը, Հայոց պատմութեան դասագիրքի տպագրութիւնը, Իզմիրեանց կտակի մրցանակաց յանձնաժողովն ու հրահանգը, Գումբաբուի Կեդրոնականին, և ալգային արհեստանոցի, և Գարակէօպեան վարժարանի, և եկեղեցական ընծայարանի համար հետապնդումները, և ուրիշ նմանօրինակ ջանքեր: Իրաւ է որ այս ձեռնարկներուն մէջ նախաձեռնութեան և աշխատութեան և նուիրատուութեան արդիւնքներ ունին ալգային անհատներ և խումբեր, սակայն ստոյգ և միանգամայն որ պատրիարքական ալդեցութիւնն է անոնք առջև մղողը, և պատրիարքական հովանաւորութիւնն է անոնց գործունէութիւնը ապահովողը, և Յարութիւն պակաս չըրաւ իր կողմէ ինչ որ պատրիարքական իշխանութենէ կը սպասուէր: Բարեգործական ճիւղին գլուխը պէտք է նշանակենք ալգային Սուրբ Փրկչեան հիւանդանոցին բարգաւաճ վիճակը, ժիր և անձնուէր հոգաբարձութեան մը խնամքով, վոր Յարութիւն պաշտօնի վրայ պահեց շարունակ և ամրապէս քաջալերեց և պաշտպանեց: Նոյն հոգաբարձութեան ձեռօք կարգադրուեցաւ հիւանդանոցին վերաշինութիւնը ընդարձակ և խնամեալ ծրագիրով: Ղալաթիոյ եկեղեցին ալ նորոգուեցաւ և բակին մէջ պաշտօնական շինութիւններ աւելցան, Իւսկիւտարի Ս. Կարապետ և Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցիները վերաշինուեցան, առաջինը հրկիպուածին նորոգութիւն և երկրորդը հիմանց շինութիւն: Աղէտներ ալ պակաս չեղան, ինչպէս են Ասլանպէկի, Իւսկիւտարի, Խասքէօյի, Վանայ, Նիկոմիդիոյ, Ջէյթունի, և ուրիշ տեղերու հրդեհները, Կիլիկիոյ և Փոքրասիոյ գաւառներու մէջ երաշտութեան պատճառած կարօօտութիւնն ու սովը, որոնց օգնութեան ձեռնարկներ եղան և հոգաբարձութիւններ կազմուեցան, միշտ պատրիարքին հետապնդելով և յորդորելով: Յիշենք նաև ալգային վարչութեան կանոնաւոր ընթացք տալու համար կազմուած ընդհանուր կանոններն ու հրահանգները, ինչպէս են, ալգային կրթական ընկերութեանց հիմնագիրը, կտակներու համար կազմուած կանոնագիրը, առաջնորդական վիճակներու կազմակերպութիւնը վիճակները անառաջնորդ չթողլու տնօրէնութիւնները, պատրիարքարանի դիւանական վերակազմութիւնը, և ամուսնական դատերու մէջ պահուելիք սկզբունքները: Յատկապէս յիշենք պատրիարքարանի ելեմտից կարգադրութեան և հաւասարակշռութեան վրայ դարձուած մտադրութիւնը, որ ճիւղին մէջ ալ մասնաւոր ձեռնհասութիւն ունէր պատրիարքը: Զանց կընենք նորէն կրկնել Երուսաղէմի համար ըրածները, վի արդէն բաւական խօսած ենք պարտքին և մեծ արտին և կանոնագիրին վրայօք: Ասոնցմէ վատ այդ միջոցին տեղի ունեցած սուրբ տեղեաց բոլոր խնդիրներ ամուր պաշտպան մը և ձեռնհաս հոգածու մը գտան Կ. Պոլսոյ աթոռին վրայ, որ արդէն իր յանձնառութեան վայրկեանէն Երուսաղէմը իրեն կէտ նպատակի ըրած էր Կ. Պոլսոյ պաշտօնին մէջ, և երբեք չստեց իր հիմնական նպատակակէտը: Յարութիւնի պատրիարքութեան նկատմամբ նշանակելի կէտ մըն է սահմանադրական ձևակերպութեանց համակերպութիւնը, համակրութիւն չունենալով մէկտեղ: Յարութիւն պարտեաց և պատշաճից ճշդապահ ըլլալու սկզբունքին յարած, լաւ գիտէր իր անձնական տեսութիւնները օրինականին հնապանդեցնել, ընել ինչ որ պէտք էր, և ոչ թէ ինչ որ հաճոյ էր: Հետևաբար գաղտնիք մը չլինելով իսկ թէ կարի հեռու էր սահմանադրական ձևերու հիացող կամ պաշտպանող մը ըլլալէ առիթ չտուաւ որ իբր սահմանարական ձևերու վանցառու մեղադրուէր, և այս ալ կը նշանակենք իբրև իր նկարագիրին կնիք և իր ուղղութեան գովեստ:

2936. ՄԷԿ ԱԹՈՌԷ ՄԻԻՍ ԱԹՈՌ

Երեք տարին լրացեր էր յորմէհետէ Յարութիւն Վեհապետեան Կ. Պոլսոյ աթոռին վրայ կը պաշտօնավարէր, 1885 յունուար 25-ին ընտրուած մարտ 19-ին հաստատուած, ապրիլ 15-ին Կ. Պոլիս հասած, ապրիլ 17-ին գործի ձեռնարկած, և դեկտեմբեր 6-ին Երուսաղէմի յաջորդ նշանակուած այդ վերջին պարագայն պինքն կը յորդորէր օր առաջ մայրաքաղաքէն հեռանալ և սուրբ քաղաքին հանդարտութեանը դառնալ: Միննոյն էր պատճառը որ այս ու այն պարագայն պատճառ ընելով հրաժարական կը մատուցանէր (87.ԱՐԼ.988 և 991): Սակայն թէ վարչական և ժողովրդական միջամտութիւնները, թէ պարագայից բռնադատիչ պահանջը, և թէ Երուսաղէմի գործերուն յարմար հանգրուանի մը հասած չըլլալը, պինքը կը յորդորէին հրաժարականը ի կախ թողուլ և դարձեալ կեդրոնի գործերով պաշտօնի: Այլ երբ մեծ արտին խնդիրը լրացաւ, պարտուց բարձման կէտը բաւական պարզուեցաւ, և կանոնագիրն ալ հաստատուեցաւ, Երուսաղէմի համար գլխաւոր ընելիք չմնաց. միւս կողմէն Պէշիկթաշի գերեզմաննոցին, Շահպալի ամուսնութեան, պետական անվտանգութեան, գաւառական նեղութեանց, և ուրիշ նմանօրինակ խնդիրներ սկսան իրարու վրայ ծանրանալ, և մայրաքաղաքի ժողովուրդին և եկեղեցական դասուն ունակական դարձած պատրիարք փոփոխելու մարմանջն ալ հետզհետէ երևոյթներ առաւ, Յարութիւն միտքը դրաւ վճռապէս Կ. Պոլսոյ պատրիարքութենէ հրաժարիլ, կամ աւելի ճիշդ բացատրութեամբ, Երուսաղէմի պատրիարքութիւնը ստանձնել, իբր պի բոլորովին նոր ձև մը ունէր ետ քաշուիլը, որ ոչ թէ պաշտօն մը թօթափել էր, այլ նոր ընտրութեամբ պաշտօնը փոխել և աթոռէ աթոռ անցնիլ, ինչպէս օրինակ իմն, առաջնորդ մը վիճակը թողլով պատրիարքութեան կանցնէր: Վարչութեան Խառն ժողովն ալ տեսաւ այլևս անօգուտ պիտի դառնար Յարութիւնի Կ. Պոլիս մնալուն վրայ պնդել, ուստի 1888 ապրիլ 6-ին գումարման մէջ, ոչ թէ հրաժարական ընդունելու խնդիր ըրաւ, այլ 1885 դեկտեմբեր 6-ի ընտրութեան վօրութեամբ գրուելիք Ընդհանուր ժողովոյ ընտրողական հանրագրութիւնը պատրաստեց (88. ԱՐԼ. 1280), որ 16-ին երեսփոխաններէ ստորագրուեցաւ (88. ԱՐԼ. 1288), և կառավարութեան մատուցանելով ընդունուեցաւ (88. ԱՐԼ. 1290): Այլ երբ իբր գործը վերջացած նկատելով ապրիլ 22-ին աւագ ուրբաթ օր պատրիարքը պալատ գնաց, պատասխան ստացաւ, թէ կայսրը իրմէ գոհ է, և կիմանայ որ Հայոց ազգն ալ գոհ է, ուստի կը մերժէ անոր հրաժարականը և կը հրաւիրէ որ պաշտօնը շարունակէ (88. ԱՐԼ. 1293): Յարութիւն դարձեալ պարտաւորեցաւ Կ. Պոլսոյ պատրիարք մնալ, և մինչև իսկ երեսփոխանութեան մայիս 20-ին նիստին մէջ Երուսաղէմի նոր պատրիարք մը ընտրելու առաջարկ եղաւ, թէպէտ հետևանք չունեցաւ (88. ԱՐԼ. 1315): Իսկ Յարութիւն կարևոր անձանց հետ կը տեսակցէր և միտքեր կը պատրաստէր իր Երուսաղէմի աթոռին անցնելու միտքը իրականացնելու մեծեպարքոս Բեամիլ փառայի միջնորդութիւնն ալ խնդրեց (88. ԱՐԼ. 1328), և վերջապէս յունիս 16-ին Հոգեգալուստի հինգշաբթի օրը պաշտօնապէս լուր ստացաւ թէ Կ. Պոլսոյ պատրիարքութենէ հրաժարականը ընդունուած և Երուսաղէմի պատրիարքութեան ընտրութիւնը հաստատուած է (88. ԱՐԼ. 1337): Ուստի փութաց 17-ին նախարարաց և 18-ին կայսեր իր շնորհակալիքը մատուցանել, և 20-ին խառն ժողովը տեղապահի ընտրութիւնը կատարեց: Ըստ այսմ 1885 ապրիլ 17-էն մինչև 1888 յունիս 16 ճիշդ երեք տարի և երկու ամիս տևած եղաւ Յարութիւն Վեհապետեանի Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը: Մենք ըստ բաւականին լուսաբանեցինք իր պաշտօնավարութեան ուղղութիւնն ու արդիւնաւորութիւնը, ուստի պանց յետահայեաց տեսութիւններ աւելցնել իր պատրիարքութեան համար: Մանաւանդ որ այդ փոփոխութիւնը Յարութիւնի համար գործունէութեան վերջ չէր, այլ միայն գործունէութեան գետինի տարբերութիւն, և եռ առիթ պիտի ունենանք իր մասին տեղեկութիւններ և տեսութիւններ գրել: Առ այժմ բաւական ըլլայ մեզ

ըսել թէ Յարութիւն օգտակար պաշտօնաւարութիւն ունեցաւ Կ. Պոլսոյ աթոռին վրայ, և բաւական հարթուած և յարդարուած գետին մը թողուց իր յաջորդին: Յարութիւն Կ. Պոլսոյ պատրիարքարանը թողլով և Երուսաղէմատան մէջ ամփոփուելով իսկոյն Կ. Պոլիսէ չհեռացաւ, այլ մայրաքաղաքի մէջ մնաց մինչև 1889 մայիս 10 (89. ԱՐԼ. 1605), որ է ըսել մերձաւորաբար տարիի մը չափ ևս: Իր նպատակն եղաւ Երուսաղէմի պարտքին համար գաւառացի ազգայիններէ գանձուած տարեկան երեք դահեկանի պարտաւորեալ նուէրին գումարը պետական ելեմտից սնտուկէն ազատել: Այդ մասին կանուխէն տեղեկութիւն տուած ենք (2878), թէ Երուսաղէմի դրամը պինուորական տուրքին հետ խառն հաւաքուելուն որոշակի պատուած չէր, և իրապէս Երուսաղէմի սնտուկին չէր մտած: Յակոբ փառայի ելեմտական նախարարութեան ատեն և անոր ջանքով հնար եղած էր պինուորական տուրքին գանձուածէն համեմատական մասը գտել և վատել, սակայն գանձումն եղած չէր, և Յարութիւնի Երուսաղէմի պատրիարքութեան անցնելու միջոցին ելեմտից նախարարը փոխուած էր: Յարութիւն չուկեց առանց այդ կէտն ալ իրականացնելու Կ. Պոլիսէ հեռանալ, զի դժուար պիտի ըլլար վայն Երուսաղէմէ հետապնդել: Կ. Պոլսոյ մէջ իսկ անխոնջ և երկարատև աշխատութեան պէտք եղաւ մինչև որ վատուած մասին վճարումը հրամայուեցաւ որուն մէկ մասը իրապէս վճարուեցաւ, և մեծ մասին համար Երուսաղէմի սնտուկին վրայ պարտամուրհակներ տրուեցան, և մէկ մասին ալ կարգադրութիւնը առաջիկային թողուեցաւ, որ տակաւին Երուսաղէմի աթոռին պահանջը կը մնայ կառավարական սնտուկին վրայ:

2937. ՏԵՂԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ

Յունիս 20-ին կատարուած տեղապահական ընտրութեան համար վանազան անուններ խօսուեցան ըստ սովորութեան, գլխաւորապէս Պրուսայի առաջնորդ Չամիչեան Բարթողիմէոս եպիսկոպոսի անունը կը տրուէր, բայց վերջապէս ընտրուածն եղաւ Երուսաղէմի փոխանորդ Սիմէոն Սէֆէրեան եպիսկոպոսը (88. ԱՐԼ. 1339): Սէֆէրեան ոչ կրթական բարձր վարգացում և ոչ վարչական նախընթաց ունէր, և բոլոր իր անցեալը Երուսաղէմի աթոռին և Երուսաղէմի փոխանորդութեան մէջ կը պարունակէր: Բնիկ Նկոմիդիոյ Կէյվէէն, 1830-ին ծնած և 1867-ին եպիսկոպոս ձեռնադրուած, 58 տարեկան և 21 տարուան եպիսկոպոս էր, անխոնջ աշխատող, ճարտար գործող և անվհատ հետապնդող անձի համբաւը կը վայելէր, և Երուսաղէմի գործառութեանց մէջ փորձառու եղած և յաջողակութիւն ցուցած էր, ինչպէս որ մենք ալ ստէպ առիթ ունեցանք անոր անունը յիշելու և գործունէութիւնը պատմելու: Հետևաբար իրաւամբ խառն ժողովը կրնար վայն պաշտօնի կոչել. բայց խառն ժողովէ աւելի Յարութիւն պատրիարքի փափաքն ու թելադրութիւնը կը տեսնենք մենք այդ ընտրութեան մէջ, որպէսզի Կ. Պոլսոյ պատրիարքարանին գլուխը այնպիսի մէկ մը գտնուի որ Երուսաղէմի գործերն աւարտելու և շահերը պաշտպանելու պատրաստական ըլլայ: Սիմէոնի տեղապահութեան նկարագիրը ամբողջաբար տուած կըլլանք, երբոր ըսենք թէ նորա ջանքն եղաւ որ պատրիարքարանի ընթացիկ գործերը կանոնաւորութեամբ յառաջեն, և Յարութիւնի հետապնդած հաւաքեալ գումարմները գանձելու նպատակը պատրիարքարանով պօրանայ: Իբրև բացառիկ միջադէպ մը յիշենք միայն՝ նոյն օրեր հրատարակութեան տրուած Լևոն ԺԳ. պապին մէկ կոնդակը, որ օգոստոս 7-ին հայկաթողիկ եկեղեցիներու մէջ հանդիսապէս կարգադրուեցաւ: Կոնդակին բուն նպատակը եղած էր Հակահասունեանց փրոփականտայի փարախը դառնալուն և հայկաթողիկութեան երկու մասերուն ձուլուելուն համար խնդակցութիւն յայտնել, որ Հայ ազգութեան համար անտարբեր կէտ մըն էր, և պապն ալ կրնար ուրախանալ և ուրախակցիլ իրեններուն հետ, թէպէտ առիթը մեծ չէր. զի Հակահասունեանութիւնը շատոնց իրմով տկարացած և քայքայած էր (2897): Կոնդակին նշանակելի կէտը այն էր որ պապն այդ յաջողութենէն առիթ առնելով ամբողջ Հայ ազգութիւնը

պապուսեան գիրկը կը հրաւիրէր, և Ապարեան պատրիարք կոնդակը հայերէնի և հայատառ տաճկերէնի թարգմանելով Հայոց մէջ ալ ցրուեր էր առատապէս, առաջնորդներու և նոյն իսկ պատրիարքարանի ալ դրկած էր: Կոնդակին ոճն ալ կը ցուցնէր թէ Ապարեան խմբագրութեան մէջ ալ մասնակցութիւն ունեցած պիտի ըլլար, քանի որ Հռոմի դիւաններուն անսովոր ակնկարներ և բացատրութիւններ շատ էին գրութեան մէջ: Կոնդակին հիմը կը կազմէր Հայերուն ի սկզբանէ հռոմէադաւան եղած ըլլալը, և իբրև փաստ կը յիշուին Հայ կաթողիկոսութեան Սեղբեստրոսէ հաստատուած ըլլալը, Սիսի և Ատանայի ժողովներուն որոշումները, Փլորենտիոյ ժողովին պատուիրակութիւնը, Կիլիկիոյ Ապարիա կաթողիկոսին վկայութիւնը (88.ԱՐԼ.1381), որոնց ոչ ստորագրութիւնը վաւերական է և ոչ արժէքը օրինական: Իբրև յորդորիչ փաստեր ալ կը յիշուին Գրիգոր ԺԳ. պապի Հայոց համար վարժարան բանալու միտքը, Բենետիկտոս ԺԳ.ի Լիբանանի կաթողիկոսութիւնը հաստատելը, Պիոս Ը.ի Կ. Պոլսոյ արքեպիսկոպոսութիւնը հիմնելը, և կրնար աւելցուիլ Պիոս Թ.ի կաթողիկոսութիւնը արքեպիսկոպոսութեան մէջ ձուլելը, և իրեն Լևոն ԺԳ.ի Հայոց դպրանոց բանալը, որոնք իբրև թէ Հայոց համար մեծ բարիքներ եղած ըլլան, և ոչ թէ իրական չարիքներ և որոմնացան ձեռնարկներ: Կոնդակը կուզէ հաւատացնել թէ Հայեր կաթոլիկ ըլլալով քաղաքական առաւելութիւններ և կենցաղական բարիքներ պիտի վայելեն, և օսմանեան կառավարութեան հաւատարմութիւննին ալ պիտի ապահովուի, ինչ որ տեսակ մը շողոքորթ քսութեան կերպ կրնայ սեպուիլ: Կոնդակը բաւական շշնջիւն ազդեց ազգին մէջ, տեղապահ և վարչութիւն պարտք սեպեցին օգոստոս 26-ին Վազգէնի շրջաբերական մը հրատարակել (88.ԱՐԼ.1395), եկեղեցական գրիչներ ինչպէս Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեան (88.ԱՐԼ.1396), Խորէն եպիսկոպոս Աշըգեան (88.ԱՐԼ.1198), Մելքիսեդեկ Մուրատեան (88.ԱՐԼ.1397) մերժումներ հրատարակեցին, լրագիրներ ալ պատմական հերքումներ գրեցին (88.ԱՐԼ.1385-1397), և Ապարեանի գոյացնել բաղձացած մերձաւորութիւնը, առաւել ևս հեռաւորութիւնը շեշտելու և ընդիմութիւնը ամրացնելու առիթ եղաւ: Սիմէոնի տեղապահութեան միջոցին կատարուած գլխաւոր գործերէն մէկն ալ Հիւանդանոցի վերաշինութեան հիմնարկէքը եղաւ, որուն Յարութիւն պատրիարք նախագահեց օգոստոս 17-ին (88.ԱՐԼ.1387): Իսկ Սիմէոն տեղապահ գործի ձեռնարկելուն առջի օրէն ետևէն եղաւ պատրիարքական ընտրութիւնը փութացնել և վարչական բեռը վրայէն նետել, բայց հակառակ իր ջանքին՝ 16-էն մինչև սեպտեմբեր 29 յապաղեցաւ, և պարտաւորուեցաւ չորս ամիսի չափ տեղապահութիւն վարել:

2938. ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Սիմէոն տեղապահ գործի ձեռնարկելէն հապիւ երկու շաբաթ անցած էր, որ եպիսկոպոսաց ցանկը կրօնական ժողովէն պատրաստուած և համագումարը հրաւիրուած էր ընտրելեաց ցանկը քուէարկելու: Տաճկահպատակ եպիսկոպոսաց ցանկը 27 անուններ կը պարունակէր, և Օրմանեանի անունը վանց եղած էր (88.ԱՐԼ.1350), զի տակաւին արտասահման կը գտնուէր, թէպէտ դառնալը որոշուած էր: Քուէարկութիւնը կատարուեցաւ 1888 յուլիս 4-ին ըստ սովորութեան 27 անուններ ալ ընտրելի ցուցուեցան, թէպէտ կէսը 4 կամ 2 քուէով (88.ԱՐԼ.1352), վանպի վերջին ընտրութեան ժամանակ յուզուած, սահմանափակ թիւով ընտրելի ցուցնելու խնդիրը (2907) ընթացք և ելք չէր ունեցած: Ընտրելեաց առաջին եօթներն եղած էին Բարթողիմէոս Չամիչեան 34, Խորէն Նարայէյ 22, Խորէն Մխիթարեան 22, Մատթէոս Իվմիրլեան 17, Հմայեակ Դիմաքսեան 15, Մկրտիչ Խրիմեան 13 և Սիմէոն Սէֆերեան 13 քուէով, բայց Խորէն Աշըգեան ալ 13 քուէ առած էր: Առաջին երկուքն աւելի խօսուած էին, իբր երկու ուղղութեանց նախադասեալ ընտրելիներ. բայց քաղաքական ժողովը որ շաբաթէ մը յուլիս 11-ին գումարուեցաւ, յանձնարարելեաց հնգանուն ցանկը պատրաստելու, բոլորովին տարբեր երևոյթ մը ցոյց տուաւ: Առաջին նշանակուածն էր Մատթէոս Իվմիրլեան որ չորրորդ էր, երկրորդ

Խորէն Աշըգեան որ ութերորդ էր, երրորդ Խորէն Մխիթարեան որ նոյնպէս երրորդ էր, չորրորդ Բարթողիմէոս Չամիչեան որ առաջին էր, և հինգերորդ Արիստակէս Դերձակեան որ երեքտասաներորդ էր 6 քէով (88.ԱՐԼ.1357): Քաղաքականը այս անգամ կը հեռանար նախորդներուն օրինակէն, որոնք ընդհանրապէս համագումարին եօթնանունին համաձայն կը կապմէին իրենց հնգանունը, ինչ որ կը ցուցնէր թէ տարբերա ծէին վարչական և եկեղեցական ու ժողովրդական տեսութիւնները ապագայ պատրիարքացուին մասին: Տեղապահը միշտ ընտրութիւնը փութացնելու դիտմամբ երեսփոխանութիւնը հրաւիրեց յուլիս 22-ին քէարկութիւն կատարելու, սակայն քուէարկութիւնը յետաձգուեցաւ վանապան ձևակերպութեանց պատճառով (88.ԱՐԼ.1367), և գլխաւորապէս փոփոխուելիք և պակասած երեսփոխաններու տեղ ընտրութիւնը կատարելու և լիագոյն ժողով ունենալու համար: Ընտրելի պատրիարքին մասին ալ համաձայնութիւն գոյացնելու պէտքը կը վգացուէր, զի երկու տարբեր ուղղութիւններ մրցման մէջ էին, Չամիչեան և Նարպէյ եպիսկոպոսներու ընտրութիւնը պաշտպանելով: Ամիսուկէս ժամանակ անցաւ մինչև որ ընտրողական ժողովը գումարուէր, և սեպտեմբեր 9-ի քուէարկութեան մէջ երկու մրցակիցներ իրարու շատ մօտ քուէ ստացան, Չամիչեան 39 և Նարպէյ 36, բայց 47 քուէ պէտք էր 92 ներկայից մէջ մեծամասնութիւն գոյացնելու համար. մնացեալ 17 քուէներ ցրուած էին Աշըգեան 11, Մխիթարեան և Իվմիրեան մէկմէկ, 3 քուէ ալ Խրիմեան, և քուէ մը ջնջուած (88.ԱՐԼ.1406): Ըստ օրինաց պէտք էր համեմատականի քուէարկութիւն կատարել առաջին երկուքին վրայ, և հաւանակութիւնը Նարպէյի յաջողելուն կողմն էր, զի Չամիչեանէ խորշողներ էին ցրուած քուէներուն տէրերը: Եւ ահա յանկարծ կը լսուի թէ Նարպէյ ընտրելիութենէն կը հրաժարի (88. ԱՐԼ. 1408), կուսակցական պայքարի տեղի չտալու և կուսակցութեան պատրիարք չերևնալու համար (88. ԱՐԼ. 1410): Սակայն ականջէ ականջ խօսուած լուրեր, որոնք զինքը հնգանունէ դուրս ձգեր էին, կը հաւաստէին թէ Նարպէյ այդ քայլը առած է իրեն հակառակորդ խումբին գլխաւորներուն խորհուրդով, թէ կերպով աւելի համակրութիւն կը շահի և իր ընտրութիւնը կապահովուի, մինչև իրօք իրեն կողմն եղողներն ալ վշտացած եղան, և իր հաստատամտութեանը վրայ կասկած յարուցանելով իրեններէն ալ լքուեցաւ: Համեմատական քուէարկութեան համար սեպտեմբեր 16-ին հաւաքուած նիստը ժխորի մէջ ցրուեցաւ, և սեպտեմբեր 29-ին դարձեալ երեսփոխանութիւն գումարուեցաւ, որուն վաղորդուեցաւ սեպտեմբեր 19-ին կրօնից նախարարութենէն յղուած պաշտօնագիրը, որ կը մեղադրէր 16-ի գումարման շփոթները և օրինական ընտրութիւն կը յանձնարարէր (88. ԱՐԼ. 1319): Որուն Յովհաննէս Նուրեան, Գաբրիէլ Նորատունկեան և Տիգրան Եուսուֆեան, պետական բարձր պաշտօնեաներ, որոնք Նարպէյի պատրիարքութեան համակիր չէին, ուժգին կերպով պաշտպանեցին անցած քուէարկութեան ջնջուած ըլլալը և նորինորոյ ընտրութիւն առաջարկեցին և ժողովն ալ երկար վիճաբանութենէ ետքը ստուար մեծամասնութեամբ նոր քուէարկութեան առաջարկը ընդունեց, և նոյնօրին քուէարկութիւնն ալ կատարելով 95 ներկաներէ 76 քուէարկուներու 66 քուէով պատրիարք ընտրուեցաւ Արմաշու վանահայր Խորէն Աշըգեան եպիսկոպոսը, Չամիչեան 7 և Նարպէյ 1 քուէ առած և 2 քուէ ալ սպիտակ էին: Ինչպէս գործողութեանց ընթացքը կը ցուցնէ կատարուած ընտրութիւնը ոչ նախապատրաստուած և ոչ ալ կշռուած ձեռնարկ մըն էր, այլ իրենց կուսակից ընտրելիին յաջողութիւնը կասկածելի տեսնելուն, և միւս կողմին յաջողութիւնը արգիլելու համար, բոլորովին դուրսէն մէկու մը վրայ համաձայնելով կուսակցական պայքարին վերջ տալու միտքն էր որ կառաջնորդէր: Խորէն Աշըգեան միայն ուսումնական եպիսկոպոսի և հանդարտ անձնաւորութեան համբաւ ունէր, ոչ վարչական նախընթաց ունէր և ոչ վարչական կարողութեան նշան տուած էր: Իր կեանքն ու գործունէութիւնը Արմաշու վանքին չորս պատերէն դուրս ելած

չէին, և վանքին վրայ ալ նշանակելի արգասիք ունեցած չէր, մանաւանդ թէ նախորդ վանահայր Ալիքսանեան Գէորգ եպիսկոպոսի օրով տեսնուած արդիւնքներն ալ իր օրով նուազած էին, ժառանգաւորաց վարժարանը խափանուած, Ղևոնդեանց գիշերօթիկ վարժարանը փակուած, Յոյս ամսագիրը դադրած, մատակարարութիւնը պարտքի տակ ինկած, հողային արգասաբերութիւնը նւազած, և ինքն ալ երկու վարդապետներու և երկու նորընծաներու հետ անգործ կեանք մը կը վարէր, ուստի աչքառու գործերով և վկայեալ համբաւով չէր որ պատրիարքութեան կը կոչուէր, այլ մի մասին Չամիչեանէ խորշելուն և միւս մասին Նարպէյը չուպելուն պատճառով, երրորդ մըն էր որ երկուին վրայ կը շահէր և կը շահուէր:

2939. ԱՇՂԳԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

Խորէն Աչըգեան, Նիկոմիդիոյ վիճակին Քէրէմէթ գիւղին, 1842 նոյեմբեր 4-ին ծնած, և 1851 դեկտեմբեր 8-ին Յարութիւն Վեհապետեանի կոչումին օրը (2652) տակաւին 9 տարեկան Արմաշու աշակերտութեան մտած, շարունակ նոյն վանքին մէջ մնացած և յառաջացած էր, 1863 փետրուար 17-ին վարդապետ և 1871 ապրիլ 23-ին եպիսկոպոս ձեռնադրուած, և մինչև 1888 սեպտեմբեր 29 վանահայր մնացած և 46 տարեկան պատրիարք ընտրուած: Չախող զուգադիպութեամբ մը սեպտեմբեր 27-ին Արմաշու վանքի մի մասը, վարժարանն և ուխտաւորաց թաղը գիւղին մէկ մասին հետ անակնկալ հրդեհով մը մոխիր կը դառնար: Պատրիարքական ընտրութիւնը պետական հաստատութիւն կը ստանար հոկտեմբեր 10-ին (88.Ա.ՐԼ.1431), և Արմաշ եկող բազմաթիւ հրաւիրակներ վանքին մնացած մասին հետ հրդեհին մոխրակոյտն ալ կը տեսնէին (88.Ա.ՐԼ.1437), և հոկտեմբեր 15-ին նորընտիրին հետ Արմաշէ մեկնելով 17-ին Նիկոմիդիայէ կը նաւէին, և նոյն օր, Խաչի վեցերորդ երկուշաբթին կէսօրէն ետքը, շքեղ հանդէսով մայրեկեղեցի կը մտնէին և պատրիարքարան կելլէին, հոկտեմբեր 19 ին ալ ուխտի նիստը կը կատարուէր: Նշանաւոր գումարում մը եղաւ այն, զի նախորդ և նորընտիր պատրիարքներ միասին ներկայ եղան և իրենց միտքն ու իղձերն յայտնեցին զգայուն բանախոսութիւններով, և նախորդ իր ձեռքով յանձնեց յաջորդին պատրիարքական գաւազանը, և բարեմաղթութիւններ փոխանակուեցան Կ. Պոլսոյ և Երուսաղէմի աթոռներուն համար, և իրար ողջագուրելո բաժնուեցան երկու պատրիարքները, իսկ կայսերական ընդունելութիւնը յապաղեցաւ մինչև նոյեմբեր 8 (88. Ա.ՐԼ. 1456): Խորէն պատրիարք երեսփոխանութեան առջև խօսած ատենաբանութեան մէջ ինքն ալ կը խոստովանէր թէ աշխարհային կեանքէ միշտ հեռու, վանական կրթութեամբ և վանական կեանքով ապրած է, այլ կը յաւելու թէ միշտ անձը նուիրած է հաւատոյ և գիտութեան և եկեղեցոյ պաշտամանց (88. Ա.ՐԼ. 1439), ինչ որ ըսել կըլլայ թէ գործնականէ աւելի վերացական կենցաղ և սկզբունք ունեցած է: Աչըգեան եկեղեցական կանոնաց աւանդապահ ըլլալով, առաջին գործը կըլլայ վիճակներու հովուութեան և հոգածութեան դարձնել իր միտքը, և ուխտէն ութն օր ետքը, Կ. Պոլիս գտնուողներէն եօթը եպիսկոպոսներ ժողովի կը գումարուէր, և Վիճակաց վերակազմութեան նպատակով (88. Ա.ՐԼ. 1448), երկու նոր առաջարկներ կը դնէր առջևնին, առաջնորդներու վիճակային ընտրութեան տեղ պատրիարքարանէ անուանում հաստատել և առաջնորդներու պէտքերուն համար կառավարութեան կողմէ թոշակ յատկացնելու աշխատիլ: Բանակցութեանց միջոցին Օրմանեան ուղղակի հակառակ կարծիք կը յայտնէր, ոչ միայն զի եպիսկոպոսաց ժողովը սահմանադրապէս ոյժ և հեղինակութիւն չունէր, այլ նաև զի վիճակային ընտրութիւնը խափանել հայ ազգային եկեղեցոյ կանոնաց և սահմանադրութեան հակառակ կըլլար, և կառավարական թոշակը կրնար ձախող հետևանքներու տանիլ: Կարծիք յայտնելէ ետքը Օրմանեան կը պարտաւորէր մեկնիլ կեդրոնական վարժարանի կրօնագիտական դասերու պատճառով, զորս նոյն օրեր ստանձնած էր, իսկ գումարումը առանց վերջնական որոշման գործը վարչութեան կը

թողուր, և այն ալ յետոյ երեսփոխանութեան կը հանէր, բայց խնդիրը անլոյծ կը մնար, սահմանադրութեան փոփոխութեան հարկ տեսնուելուն պատճառով (88. ԱՐԼ. 1488): Իսկ Օրմանեան թիւրիմացութեան տեղի չտալու համար, եպիսկոպոսաց գումարումէն մէկ երկու օր ետքը նոյն նիւթին վրայ խօսելու համար պատրիարքին տեսակցութեան կը դառնար, և կոչումին յարգող և ժողովուրդին նուիրուող առաջնորդներ ունենալու միակ միջոց եկեղեցական վարժարանէ արժանաւոր ընծայացուներ հասցնելու եղանակը կը թելադրեր: Աջըգեան սիրով կընդգրկէր այդ գաղափարը, զի ինքն ալ ժամանկին եկեղեցական վարժարանի համար աշխատած էր, և այն օրէն եկեղեցական վարժարան հիմնելու գաղափարը պաշտօնական և անպաշտօն բանակցութեանց նիւթ կըլլար, և լրագրութիւնն ալ անով վբաղիլ կը սկսէր, (88. ԱՐԼ. 1465): Ղալաթիոյ ուխտատեղւոյն հասոյթով կեդրոնական վարժարանը հիմնուած և ապահովուած էր, Գարակէօմրիկի ուխտատեղւոյն հասոյթով ալ եկեղեցական վարժարան հիմնելու և ապահովելու միտքը յղուեցաւ (88. ԱՐԼ. 1481), և վերջապէս խառն ժողովը նոյեմբեր 30-ին Գարակէօմրիկի թաղէն Սալմաթօմրուքի թագաբաժինը Պալաթի կցելով, և Գարակէօմրիկը պարզ ուխտատեղի թողլո յանձնուեցաւ հոգաբարձութեան կամ յանձնաժողովի մը (88. ԱՐԼ. 1481), Օրմանեան ալ նախագահ և եկեղեցւոյն քարուպիչ նշանակելով, որպէսզի եկեղեցական արժարանի համար պէտք եղած պատրաստութիւնները և կարգադրութիւնները կատարեն: Օրմանեան սիրով յանձնառու եղաւ, Զմիւռնիոյ առաջնորդ ընտրուելու առաջարկը և Կարնեցւոց վայն իր առաջին վիճակը դարձնելու շարժումները անտեսելով իսկ յանձնաժողովոյ անդամ նշանակուեցան, Աբիկ Ունճեան, Տիգրան Եռսուֆեան, Յովհաննէս Եսայեան, Պատրիկ Կիւլպէնկեան, և Գաբրիէլ Գաբրիէլեան ամէնքն ալ կարող և գործին նախանձաւոր անձեր:

2940. ԱՐՄԱՇՈՒ ԴՊՐԵՎԱՆԶԸ

Եկեղեցական վարժարան մը ունենալու գաղափարը սահմանադրութեամբ սկիզբէն, այինքն 1860-էն ի վեր, և անկէ ալ առաջ, բաղձացուած, մտածուած, զրուցուած, և ժողովներու մէջ խօսուած խնդիր մըն էր, այլ երբեք գործնական վիճակի մտած չէր, զի Հիւանդանոցի մէջ բացուած ժառանգաւորաց վարժարանը, և Նուպար-Շահնապարեանի մէջ կազմուած ընծայացուաց բաժինը, տիրապէս ուզուած նպատակին համապատասխան չէին, և ոչ ալ գործին նուիրուած պատրաստական անձը գտնուած էր: Այս անգամ Աջըգեանի և Օրմանեանի դիտումները իրար գրկեցին և փափաքը իրականութեան վերածեցին: Օրմանեան ցաւով և ակամայ էջմիածնի եկեղեցական ձեմարանէ բաժնուած, նմանօրինակ հաստատութիւն մը Կ. Պոլսոյ պատրիարքութեան անհրաժեշտ ըլլալը կը յեղյեղէր ամէն կողմ, և Աջըգեանի հետ ունեցած տեսակցութիւնն ալ անոր հետեանքն էր: Աջըգեան ալ վանականութեան վարժ և ուսումնականութեան նուիրեալ անձ ըլլալով, շուտով յարեցաւ նոյն գաղափարին իրականացման, և պատրիարք նստելէն հազիւ երկու ամիս ետքը գաղափարը ընդունուած, որոշումը տրուած, կերպը ծրագրուած և յանձնաժողովը կազմուած էր (2939): Յանձնաժողովին առաջին գործն եղաւ Գարակէօմրիկի Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյ մատակարարութիւնն և ուխտաւորութեան արդիւնքը կանոնաւորել և ապահովել: Բայց շուտով տեսնուեցաւ որ ոչ տեղը յարմար և ոչ արդիւնքը բաւական է եկեղեցական վարժարան մը հիմնելու և պահելու, հարկ եղաւ ուրիշ միջոցներ գտնելու աշխատիլ: Վարժարանը Կ. Պոլսոյ մէջ հաստատելու գաղափարին հետեւելով քննուեցան և պննուեցան Խասթօյի Նուպար-Շահնապարեան վարժարանի լքուած շէնքը, Իւսիւտար Ս. Կարապետի կից հրկիզուած ձեմարանին տեղը, Գընալը կղպւոյն մէջ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն սեփական գետինը, և Զէյթինպուրնուի Ս. Յակոբ եկեղեցւոյ հին հիւանդանոցը, բայց և ոչ մէկը նպատակայարմար դատուեցաւ տեղական ձևակերպութիւններուն և ծախքերուն

պատճառով, և միտքերը դարձան Արմաշու Չարխափեան Ս. Աստուածածնի վանքին վրայ, որ թէպէտ մասամբ հրկիզուած, բայց տակաւին բաւականաչափ տրամադրելի տեղեր ունէր: Օրմանեանի յանձնուեցաւ տեղւոյն քննութիւն կատարել, և 1889 փետրուար 13-ին երթալով 18-ին դարձաւ, և նպաստաւոր տեղեկագիր ներկայեց (89. ԱՐԼ. 1539): Արմաշու վանքին առաջնորդարանը և միաբանից թագը բաւական տրամադրելի տեղ ունէին, հողային կալուածները և ուխտաւորական արդիւնքները բաւական հասոյթ կարտադրէին, եկեղեցին կրօնական պաշտամանց դիւրութիւն կընծայէր, առանձնութիւնը կանոնաւոր կեանքի կը նպաստէր, և ուխտատեղին ընդհանուր հայութեան համակրութիւնը կը շարժէր: Այս տեսութիւնները հասարակաց կարծիքին վրայ ալ ազդեցին (89. ԱՐԼ. 1544), և վերջապէս եկեղեցական վարժարանը Արմաշու վանքին մէջ բանալու որոշումը տրուեցաւ, վանքն ալ Կ. Պոլսոյ աթոռական վանք յայտարարուեցաւ, և Արմաշու վանքն ու եկեղեցական վարժարանը ու Գարակէօմրիկի եկեղեցին յանձնուեցան խնամակալութեան մը, որ կազմուեցաւ յանձնաժողովի հինգ անդամներէն, պատրիարքի նախագահութեամբ, և երկու եկեղեցական անդամ աւելցնելով, որոնք եղան Մաղաքիա Օրմանեան և Գարեգին Սրուանձտեանց եպիսկոպոսները, և պաշտօնի կոչուեցան յունիս 6-ի պատրիարքական պաշտօնագրով (89. ԱՐԼ. 1621): Օրմանեան որ սկիզբէն բոլորով սրտիւ գործին փարած էր, ընդարձակ տեղեկագիր մը պատրաստած էր, բոլոր յարակից խնդիրները լուսաբանելով, որ հրատարակութեան ալ տրուեցաւ հանրութեան միտքը պատրաստելու համար: Այս տեղեկագիրով մանրամասնօրէն բացատրուած էին, 1. Եկեղեցական վարժարանի անհրաժեշտ պէտքը (89. ԱՐԼ. 1589), 2. Անկէ օգուտ քաղելու կերպը (89. ԱՐԼ. 1591), 3. Անոր վանապան տեսակները (89. ԱՐԼ. 1593), 4. Ազգային կացութեան յարմարագոյն տեսակը (89. ԱՐԼ. 1595), 5. Հսկող իշխանութիւնը, 6. Պահպանութեան միջոցները, 7. Վարժարանին տեղը, 8. Եւրակացութիւնը (89. ԱՐԼ. 1597): Խնամակալութիւնը յունիս 7 ին իր առաջն նիստին մէջ իր կազմութիւնը կատարեց, Եռսուֆեան ատենապետ, Գաբրիէլեան ատենադպիր, Կիւլպէնկեան գանձապետ և Օրմանեան տեսուչ (89. ԱՐԼ. 1620): Սակայն պէտք է դիտել տանք թէ ասոնք պաշտօնական անուանումներ էին, իսկ գործին հոգին ու վարիչը Աբիկ Ունձեանն էր, որ ամէն գործի մէջ պատրաստ էր բոլոր հոգերը ստանձնել առանց պաշտօնական կոչում ընդունելու: Գարակէօմրիկի հասոյթը և ոչ իսկ իր ներքին բարեկարգութեան բաւած էր, Արմաշ վատրաստ գումար չունէր, ուստի թէ առաջնորդարանը վարժարանի վերածելու, թէ հարկաւոր կարասին հոգալու, թէ աշակերտաց ուտեստն ու վզեստը պատրաստելու միջոցները Ունձեան հայթհայթեց իր կողմէն, և յունիսէ սեպտեմբեր երեք ամիսները, այդ նախապատրաստութիւններով անցան: Օրմանեան որ նախապատրաստութեանց հսկողութիւնը կը կատարէր, յուլիս 13-էն օգոստոս 23 Արմաշու մօտակայ Ատաբալարի քննութեամբ ալ զբաղեցաւ, Դաւիթ Նաւարէթեան նախկին Մխիթարեան վարդապետի (88.ԱՐԼ.1450) պատճառով ծագած շփոթները հանդարտելու (89.ԱՐԼ.1597), և կաթոլիկական շարժումը արգիլելու համար (89.ԱՐԼ.1612): Պաշտօնը լրացնելով Կ. Պոլիս գառնալէն ետքը, պէտք եղած պատրաստութիւններն ալ լրացած ըլլալով, սպտեմբեր 9-ին Արմաշ վերադարձաւ, ուխտաւորական հանդէսները կատարեց, նոր աշակերտներ հասան, և սեպտեմբեր 19-ին Խաչվերացի երկրորդ օրը եկեղեցական վարժարանը հանդիսապէս բացուեցաւ Արմաշու Չարխափեանեան Ս. Աստուածածնի վանքին մէջ: Իսկ բացուելէն ետքը 1890 յունուար 10-ին Դպրեվանք Պատրիարքութեան Կոսպանդնուպոլսոյ անունը պաշտօնապէս տրուեցաւ եկեղեցական վարժարանին (90.ԱՐԼ.1799), և այլևս այդ անունով ճանչցուեցաւ նոր հաստատութիւնը:

Արմաշու վանքին աթոռական վանք հռչակուելովը, և Դպրեվանքին ուղղակի Կ. Պոլսոյ աթոռին պատկանելուն հետևութեամբ Արմաշու վանահայրական անունը Կ. Պոլսոյ պատրիարքին վերապահուեցաւ, և տեղւոյն վրայ վանքը կառավարողին Փոխ-Վանահայր անունը տրուեցաւ, կատարեալ իրաւասութեամբ և աթոռի իրաւունքով, և փոխվանահօր պաշտօնն ալ վերատեսչութեան հետ միաւորուեցաւ բաժանման և մրցման առիթ չտալու համար: Արմաշու և Գարակէօմրիկի միացեալ մատակարարութիւնը յանձնուեցաւ երկու եկեղեցականէ և հինգ աշխարհականէ կազմուած և Կ. Պոլսոյ պատրիարքին նախագահութեամբ գործող և Կ. Պոլսոյ մէջ նստող խնամակալութեան (2940), որուն գործադիրն էր փոխ վանահայր տեսուչը, տեղական և ներքին բոլոր գործերը կարգադրելու իշխանութեամբ: Ներքին պաշտօնէութեան առաջին կազմը որոշուեցաւ այսպէս. երևմտից տեսուչ և մատակարար՝ Ներսէս վարդապետ Տէր-Բարթողիմէոսեան, ուսուցիչներ՝ Օրմանեանը, և Մամբրէ Նալպատեան ու Յուսիկ Էամէրեան վարդապետներ, և դուրսէն տաճկաբան մը գաղղիաբան մը, կառավարիչ՝ Եզնիկ վարդապետ Գալբաթեան, ժամօրհնող՝ Եղիկեան Արսէն վարդապետ, լուսարար՝ դպիր Միհրան Փափապեան, դպրապետ և ձայնագէտ՝ Պապա Համբարձում Չէրչեան: Առաջին տարին միայն մէկ դասարան բացուած ըլլալուն երկրորդ տարուան թողուեցաւ Եղիշէ վարդապետ Դուրեանը ուսուցչութեան հրաւիրելու որոշումը: Աշակերտներ կամ ընծայածուներ պիտի ըլլային գոնէ 18 տարեկան նախակրթական ընթացք աւարտողներ: Դպրեվանքի ընթացքը պիտի տւէր եօթը տարի, երեքը ընդհանուր ուսումներու յատկացուած՝ երկրորդական վարժարանաց աստիճանով և կրօնական նիւթերու յաւելուածով, և երեքը բարձրագոյն եկեղեցական ուսմանց և լեզուներու վարճացման համար, և վերջին տարին վանապան վարժութեանց և աւարտական ուսումնասիրութեան վերապահուած: Աշակերտուները պիտի առնուէին վանապան վիճակներէ, թէպէտ պայման չէր որ իւրաքանչիւրը իր վիճակը դառնար, բայց միշտ յարմար էր օգուտը ընդարձակելու, ուստի ընտրութեանց մէջ այդ կէտին մտադրութիւն դարձուեցաւ, որպէսզի բոլորը Կ. Պոլսոյ և Նիկոմիդիոյ վիճակներէն չըլլան: Դպրեվանքի գլխաւոր նպատակն էր կուսակրօն եկեղեցականութեան վարկ տալ, վասնզի անկէ ըլլային վիճակները կառավարողներ և դպրոցական յառաջադիմութեան ոյժ տուողներ, բայց գլխաւոր նպատակը միակ նպատակ չէր, զի եկեղեցական ծառայութեանց համար պէտք էր վարճացնել քահանաներ և կրօնական հմտութեամբ ու վգացմամբ վարդապետներ ալ ունենալ, մանաւանդ գաւառներու համար: Ծրագիրը այնպէս կազմուած էր որ առաջին եռամեայ շրջանը աւարտողը բաւական ըլլար քահանայութեան և վարժապետութեան պաշտօններուն, ուստի առաջին շրջանին վերջը՝ հրաւեր պիտի կարգացուէր աշակերտներուն կուսակրօն եկեղեցականութեան մտնելու և սարկաւագ ձեռնադրուելու, և միայն հաւանողներ պիտի պահուէին և մնացեալները պիտի արձակուէին, յանձնարարելով որ եթէ ոչ ամուսնաւոր քահանայութեան գոնէ վարժապետութեան մտնեն: Միանգամայն թէպէտ խիստ քննութեամբ կարողներ կընտրուէին բայց առաջին տարւոյ վերջն ալ փայլուն ապագայ չխոստացողներ պիտի արձակուէին: Դպրեվանքը ուղղակի եկեղեցւոյ, ոչ թէ կարօտութեան օգնել նպատակ ունենալուն, աղքատի և որբի նպաստելու պարտքը չէր վգար, մանաւանդ թէ աւելի նպատակայարմար կը կարծէր լաւ ընտանիքներէ աշակերտներ ունենալ և ընծայացուներ պատրաստել: Աշակերտաց թիւ սահմանուեցաւ շուրջ 30 քսանը առաջին շրջանի և տասը երկրորդ շրջանի մէջ, երկու շրջաններէն միայն մէկ մէկ դասարան պիտի պահուէր, և իւրաքանչիւր երեք տարի երկրորդ շրջանը լրացնողներու տեղ նոր դասարան պիտի կազմուէր: Գործին վարկ տալու համար երկրորդ տարւոյն սկիզբը երկրորդ դասարանը բացուեցաւ, բայց երկու դասարան պահելու սկզբունքը չփոխուեցաւ: Աշակերտաց վգեստը առաջին շրջանին մէջ դպրոցական վգեստ էր, տաբատ և գօտեպինդ կարճ

պատմուճան, և եկեղեցական ու պաշտօնական պարագայից համար դպիրի վերարկու, իսկ երկրորդ շրջանի սարկաւազներուն համար կատարեալ եկեղեցական զգեստ: Կերակուրը նախաճաշ մը առաւօտուն, կէսօրուան ճաշ՝ երկու պնակ կերակրով նոյնպէս երեկոյեան ընթրիքին ցուրտ եղանակներուն առաւօտուն թէյ ալ կը տրուէր: Ուսմանց ծրագիրը կը պարունակէր երեք լեզուներ, հայերէնը մատենագրութեամբ և քերթողականով, օտար լեզուները գրելու և խօսելու վարժութեամբ, աշխարհագրական և պատմական հմտութիւններ ընդարձակ ուսողական և բնական գիտութիւններ բաւականաչափ, և ձայնագրութիւն: Իսկ կրօնական ճիւղը առաջին շրջանի մէջ ունէր Սուրբ Գիրք ու վարդապետութիւն, և երկրորդ շրջանի մէջ լեզուներու զգացումէն զատ, իմաստասիրական և աստուածաբանական ճիւղեր, եկեղեցական մատենագրութիւն և օրէնագիտութիւն և բեմբասացութիւն: Բոլոր ուսումներ, մանաւանդ եկեղեցականներ, լոկ տեսական հմտութեամբ չէին լրանար, այլ ճոխացած էին, ներածական և պատմական, ծիսական և դաւանական, քննադատական և քարոզչական վարժութիւններով: Աւարտական ճառը պիտի ըլլար քննական և ընդարձակ երկասիրութիւն մը, և շրջանավարտները ազգային և եկեղեցական դպրութեանց և գիտութեանց վկայել մասնագէտի աստիճան իրաւունք պիտի ունենային (ՕՕ.ՕՐԱ.183-184): Առ այժմ այս չափով Դպրեվանքի կազմութիւնը բացատրելէ ետքը, առաջիկայի կը թողունք արդիւնքը պատմել:

2942. ԱՇԸԳԵԱՆԻ ԱՌԱԻՆ ՕՐԵՐ

Աշըգեան Խորէն պատրիարքի առաջին գործը երկարօրէն բացատրեցինք, գործին կարևորութիւնը նկատի առնելով, բայց պիտի չկարենանք նոյն կերպով յառաջ բերել իր գործունէութեան ուրիշ մասերը: Թէպէտ հետամուտ էր նա ամէն բանի մէջ կանոնաւոր ընթացք պահել, սակայն ինչպէս ըսինք գործնականէն աւելի վերացականին սիրահար ըլլալուն, տարածամ կամ անսովոր ձեռնարկներով ստէպ ապարդիւն կը մնար: Կ. Պոլսոյ աթոռին դիրքը բաւական տարաբերած է ուրիշ աթոռներու կերպերէն, և այդ ալ հնօրեայ սովորութեան զօրութիւն զգեցած է պարագայից բերմամբ: Կ. Պոլիս միշտ բազմաթիւ անպաշտօն եպիսկոպոսներ ունեցած է, որոնք կամ բնաւ իսկ պատրիարքարանէ չեն հեռացած, և կամ որևէ թեթև պատճառով թեմերնին թողած և Կ. Պոլիս են եկած, ուր ժողովականութեամբ պաշտօն մը, և հանդիսադրութեամբ կամ հանդիսակցութեամբ օգուտներ կը ձարեն, և հանգիստ կեանք կը վարեն մայրաքաղաքի մէջ՝ ազգականաց կամ ծանօթից տուները, և ապա կը մնան գաւառներու ձանձրութիւններէն ու նեղութիւններէն: Աշըգեան որ միշտ վանքի մէջ ապրած և այդ կեանքը երբեք վարած չէր, իսկոյն ձեռնարկեց եպիսկոպոսները գաւառները դրկել և դիւրութիւններ վլանալ որպէսզի ստիպուին մայրաքաղաքը թողուլ: Եպիսկոպոսներ սովոր էին ամէնքն ալ աթոռ բազմիլ և գաւազան կրել եկեղեցական հանդիսութեանց ատեն, քանի հատ ալ ըլլան և նոյն իսկ պատրիարքի ներկայութեան: Աշըգեան այդ սովորութիւնը արգիլեց, որ 1888 նոյեմբեր 29-ին Սերովբէ Կիւլպէնկեանի այրի և Պատրիկ Կիւլպէնկեանի մայրը՝ տիկին Հռիփսիմէի յուղարկաւորութեան (88. ԱՐԼ. 1473) գործադրուիլ սկսաւ, սակայն Երուսղէմի պատրիարք Վեհապետեանի և նախկին պատրիարք Խրիմեանի վրայ չտարածուեցաւ, և Խորէն Նարպէյ եպիսկոպոսն ալ՝ իբրև բողոքոյ նշան՝ իր բերած գաւազանը ձեռքը ոտքի վրայ կանգնած կեցաւ բոլոր արարողութեան և Խրիմեանի խօսած դամբանականին ատեն: Աշըգեան իր մտքէն չդարձաւ և դեկտեմբեր 5-ի կրօնական ժողովին ալ որոշում տալ տուաւ (88. ԱՐԼ. 1478), բայց եպիսկոպոսներ չսեպեցին և ըստ առաջւոյն շարունակեցին, և Աշըգեան ալ չկրցաւ աւելի պնդել և իր ձեռնարկը հետևանք չունեցաւ: Դարձեալ՝ եպիսկոպոսներ և վարդապետներ իսկ որ եկեղեցի որ հանդիպէին, համարձակ քարոզ կը խօսէին, թէպէտ տեղւոյն քարոզիչը չըլլային: Այս ալ իբրև թեմակալութեան իրաւունքի հակառակ

նկատելով, Աշըգեան սկսաւ պահանջել որ առանց իր արտօնութեան կամ հրամանին չկարենան քարոզել (89.ԱՐԼ.1561), սակայն այս կէտին մէջ ալ չկրցաւ յաջողութիւն գտնել: Այդ մանրամասնութիւնները կը յիշենք միայն Աշըգեանի ձեռնարկներուն մէջ գործնականութեան կնիքին պակասը ցուցնելու համար, զի իր վերացական կամ տեսական սկզբանց հետեանքն էր, առանց գործին վերջաւորութիւնը կշռելու, անհեռատես ձեռնարկներ ընել և յետոս կասիլ: Չենք գիտեր թէ արդեօք այդ ձեռնարկներու քաջալերուեցաւ ամէն նոր պատրիարքի շուայլուած գովեստներէ՞ն, և իր պաշտօնավարութեան առաջին օրերուն իսկ բարեբախտութիւն ունենալով յաջող և փառաւոր պարագաներու հանդիպելէն զի նոյեմբեր 13-ին Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ, և նոյեմբեր 29-ին Իւսկիւտարի Ս. Կարապետ (88.ԱՐԼ.1466) եկեղեցիներու օծումներուն նախագահեց, որոնց նորոգութիւնները լրացած էին իր ընտրութենէն առաջ, առաջինը կեդրոնական վարժարանի խնամակալութեան ջանքով, և երկրորդ Աբիկ և Մաթոս Ունձեան եղբարց ծախքով: Աշըգեանի յաջողութեանց կարգին յիշենք նաև կայսերական զինանշան շքեղ Թուլրայի մը սուլտանին կազմէն պատրիարքարանի նուիրուիլը (89.ԱՐԼ.1546): Խորէն պատրիարք օսմանեան հաւատարմութեան համբաւ վայելած էր կանուխէն, և այդ համոզմամբ ողջունած էին զինքն տաճկական լրագիրներն ալ (88.ԱՐԼ.1426), զի անծանոթ չէր ժամանակին Ներսէսի ձեռնարկներուն հակառակ գաղափարը յայտնած ըլլալը: Թերևս այս և ասոր նման վկայութիւններ յորդորեցին կայսրը յիշեալ ընել պատրիարքարանին, որ կրօնական նախարարութեան պաշտօններու և բարապաններու ձեռքով բերուեցաւ 1889 մարտ 1-ին, կամ ելեմտական 1305 տաեգլուխին օրը, և մեծահանդէս արարողութեամբ, երգելով և համբոյրներով, խնկօք և դպրօք, զետեղուեցաւ պատրիարքարանի դահլիճին ճակատը (89. ԱՐԼ. 1548): Յիշենք և պատրիարքական անդրանիկ կոնդակը, որ 1888 նոյեմբեր 20-ին կարդացուեցաւ մայրաքաղաքի եկեղեցիներուն մէջ և գաւառներ ալ յղուեցաւ: Կոնդակն ալ կը կրէ միևնոյն ըզգացմանց կնիքը, որ կրօնասէր օծութեամբ գրուած մըն է, և պատրիարքին հոգին ու սիրտը կը ներկայացնէ, և իբր կնիք իր խօսից կը յիշէ եկեղեցին, հաւատքն ու աղօթքը, և անոնց վրայ կը հիմնէ իր խրատական յորդորները (88. ԱՐԼ. 1465 և 1467): Իսկ ոճն ու գրածը այն ըմբռնումը կու տային թէ գրագէտ պատրիարք մը ունենալ նիս ակներև է: Մելքիսեդեկի խնդիրն ալ իր մտադրութեան առարկայ եղաւ, և թէպէտ նա տեղապահութեան օրեր ըստ հաճոյս պատարագած էր, բայց Խորէն չուպեց արտօնել մինչև որ նա անձամբ չվստահեցուց թէ յիշատակութեան ընդհանուր ձևէն պիտի չշեղի, և Օրմանեանի յանձնեց պաշտօնապէս և լիազօր իրաւունքով հսկել 1889 ապրիլ 16-ին, Նոր Կիրակի օրը Գատըքէօյի Ս. Թագաւոր եկեղեցին պատարագելուն առթիւ (89.ԱՐԼ.1584): Աշըգեանի դիտողութեանց առարկայ եղան նաև այն նորատեսակ հրատարակութիւններն, որոնք սկսած էին երևան գալ արտասահման երկիրներու մէջ՝ օսմանեան կառավարութեան ժողովուրդին մէջ գրգիռ յառաջ բերելու դիտումով, իբր թէ այս ճամբով պիտի կարենային եւրոպական տէրութիւնները վճռական գործունէութեան ստիպել, և օսմանեան պետութիւնը խոստացուած բարենորոգումներու գործադրութեան բռնադատել (88.ԱՐԼ.1470): Յարութիւն պատրիարք այդ երևոյթները խոհական կերպով պետական մտադրութենէն հեռացնելու կը յաջողէր, իսկ Խորէն պատրիարք անոնց դէմ մաքառելու ձևը նախադասելով, կարծես թէ ևսքանվաւս վայրացնելու առիթ ընծայեց, որով և պետական մտադրութիւնն ալ հետզհետէ շեշտուեցաւ, ինչպէս առաջիկային պիտի տեսնանք:

2943. ՎԵՀԱՊԵՏԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Յարութիւն պատրիարքի Կ. Պոլսոյ աթոռէն Երուսաղէմի աթոռը անցնելէն ետքը տարիի մօտ միջոց մը ևս Կ. Պոլիս մնացած ըլլալը յիշած ենք արդէն (2936): Այդ յապաղումը միակ նպատակ

ունէր գաւառներէ վինուորական տուրքին հետ գանձուած երեք դահեկանի պարտաւորեալ նուէրին, պետական սնտուկէն գանձուածը իրականացնել: Ինչպէս քանիցս յիշեցինք երկու գումարները խառն մտած էին պետական սնտուկները, և անոնց պտուիլն ու պատուիլը Գալպպեան Յակոբ Փաշայի երախտիքն էր եղած՝ իր երևմտից նախարարութեան ատեն, սակայն վճարումները կարգադրելու ժամանակ չէր ունեցած, և Յարութիւն պատրիարք նոր նախարարին հետ գործելու պարտաւորուեցաւ: Գործը դիւրացնելու համար շարունակ դիմումներ ըրաւ կայսեր և մեծ եպարքոսին և բոլոր նախարարներուն և գործադիր պաշտօնեաներուն մօտ, և շարքը չընդհատեց, բայց եթէ երբ հնարաւոր յաջողութիւնը աւարտեց, մաս մը գումար հնչուն գանձելով, մաս մըն ալ Երուսաղէմի կառավարական սնտուկին վրայ փոխգիր ստանալով, ընդամէնն իբր 20,000 օսմանեան լիրայի գումար մը ապահովել, և վերջին մասն ալ առաջիկային կարգադրել (2878 և 2923): Մայրաքաղաքի բնիկներէն վինուորական տուրք չէր գանձուէր, ուստի ընդհանուր ժողովով որոշուած էր պատրիարքարանի ձեռքով հաւաքել անոնց պարտաւորեալ նուէրը, և գործն ալ յանձնուած էր Երուսաղէմի պարտուց բարձման յանձնաժողովին. անոր հետ ալ Յարութիւն պատրիարք գործերն ու գանձումները լրացուց, որով յանձնաժողովին գործունէութիւնն ալ լրացաւ: Այդ ձեռնարկներուն մէջ յամենայնի Յարութիւնի օժանդակ եղան փոխանորդ Սիմէոն եպիսկոպոս Սէֆէրեան և հրաւիրակ եկող Մամբրէ եպիսկոպոս Մարկոսեան, իր ընկերը Գէորգ վարդապետ Երէցեան: Իսկ ապագային կարգադրութեան և Երուսաղէմի պատքին ջնջումը Յարութիւն պատրիարքի անձնական յաջողութեան կը մնար. և երանի՛ թէ նա աչքը գոցած օրը աթոռը առանց պարտքի թողուր, և Յովհաննէս պատրիարքի ստացած օրհնութեանց արժանանար (2703), ուսկից դրկեալ մնաց Եսայի պատրիարք (2913): Յարութիւն Կ. Պոլիս անցուցած օրերը ալ գային կեանքէ հեռու չմնաց, բայց վարչական միջամտութենէ վզուշանալով, բաւականացաւ հանդիսական և անպաշտօն մասնակցութիւններով: Վերջապէս երբ Երուսաղէմի համար ստիպողական գործեր չմնացին, իր մեկնելուն օրը որոշեց, և հրաժեշտի ողջոյններուն սկսաւ, և կայսեր և նախարարաց ալ այցելեց (89.ԱՐԼ.1603-1604): Կ. Պոլիսէ մեկնիլը տեղի ունեցաւ մայիս 10-ին, Երևման խաչի չորեքշաբթի օրը արտասովոր հանդէսով, ոչ միայն եկեղեցական և վարչական անձինք, այլ և բիւր մը ժողովուրդ խոնուած էր Գումգաբու, պատրիարքներ փոխադարձ այցելեցին և ողջագուրուեցան, եկեղեցական երգեցողութիւններ եղան, և Յարութիւն՝ Արդ ահաւասիկ ես երթամ յԵրուսաղէմ և որ ինչ անդ ընդ իս անցանելոց է չգիտեմ (ԳՐԾ.Ի.22) բնաբանով սրտառուչ քարոզ մըն ալ խօսեցաւ մայրեկեղեցւոյն բեմէն, և համակրանաց մեծ ցոյցերով և ընկերակիցներով Գումգաբուի նաւամատոյցէն շոգեմակոյկ նստելով եգիպտական ընկերութեան ուղևոր շոգենաւր ելաւ, որ երեկոյեան դէմ մեկնեցաւ նաւահանգիստէն: Պատրիարքին կուղեկցէին Երուսաղէմի հրաւիրակներ Մամբրէ եպիսկոպոս և Գէորգ վարդապետ, և Փիլիպպոս եպիսկոպոս Նաճառեան որ իր վանքը կը վերադառնար, կրօնական ժողովոյ կողմէն Խորէն Նարպէյ եպիսկոպոս և Յակոբ Աշոտ վարդապետ, և քաղաքական ժողովոյ կողմէն բնիկ Երուսաղէմացի Յովհաննէս Թօրոսեան և Արևելք լրագիրի թղթակից Տիգրան Արփիարեան: Ուղևոր պատրիարքը պատուասիրուեցաւ միև օր Տարտանէլ (89.ԱՐԼ.1608), և 17-ին ու 18-ին Աղեքսանդրիա (89.ԱՐԼ.1615), և 19-ին Յոպպէ, և վերջապէս 20-ին, երկրորդ Ծաղկապարդի նախընթաց շաբաթ օրը, մտաւ Երուսաղէմ ամենայն փառաւորութեամբ, և պետական ու ժողովրդական, ալ գային և օտարապգի դասակարգերու պատգամաւորներով և հանրային եռանդուն ցոյցերով: Յոպպէի դուռնէն սկսեալ շքեղ թափօրով առաջնորդուեցաւ մայր տաճարը, ուր ուխտը կատարելէ և ատենաբանելէ ետքը բազմեցաւ Ս. Յակոբայ առաքելական աթոռը, որուն երեքուկէս տարիէ ի վեր իրաւունքը ստացած էր: Բանախօսութիւններ եղան պատրիարքարանի դահլիճին մէջ Խորէն Նարպէյ և Սահակ Խապայեան

Եպիսկոպոսներէ և Յարութիւն Թորոսեանի կողմէ, և բազմաթիւ բաժակաճառեր արտասանուեցան 40 սեղանակիցներու մեծ հացկերոյթին ատեն (89. ԱՐԼ. 1618) և միաբանական սեղանին վրայ (89. ԱՐԼ. 1623): Յաջորդ շաբաթը բոլորպաշտօնական այցելութիւններով անցաւ, (89. ԱՐԼ. 1621), և հապիւ մայիս 30-ին կրցաւ պատրիարքը ձեռք վարնել վարչական գործերու (89. ՏՆՕ. 349):

2944. ՎԵՀԱՊԵՏԵԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յարութիւն պատրիարք ձեռնարկած գործին նոր և ընթացքին խակ մէկ մը չէր, զի այթոռին և վանքին կառավարութիւնը ինքն կատարած էր Եսայիի եռամեայ բացակայութեան, և Կ. Պոլսոյ այթոռին վրայէն հսկած էր Երուսաղէմի ընդհանուր ընթացքին վրայ, և իբրև գործին ծանոթ ու փորձառու կանցնէր անոր գլուխը: Ասով մէկտեղ Յարութիւն փոփոխութիւն մը չէր բերեր գործերուն ընթացքին, այլ Եսայիի օրէն սկսած և տեղապահութեան միջոցին շարունակած ձևն էր վոր գրեթէ անխախտ կը պահէր: Նոր կանոնագիր որ իր գործակցութեամբ հաստատուած էր, անօրէն ժողովոյ իւրովի մուծած կը նուիրագործէր, և ինչ որ իրապէս գործնական էր՝ տիրապէս օրինական կը դառնար, և Վեհապետեանի նախագահութեամբ 1889 յունիս 19-ին ընտրուած տնօրէն ժողովը դարձեալ Ղևոնդ Մաքսուտեանի և Գէորգ Երէցեանի անխուսափելի մասնակցութեամբ կը կազմուէր, որոնք իրենց մշտնջենաւոր օժանդակ ունէին Սահակ Խապայեան լուսարարապետ Եպիսկոպոսը (89.ՄԻԱ.467), և այս երեքն էին միշտ որ կացութեան կը տիրէին, և Յարութիւն ալ անոնց կը հետևէր և կը հովանաւորէր, ինչպէս ըրած էր Եսայի: Ասով չենք ուզեր ըսել թէ ապիկարներու վրայ կը տարածէր նա իր հովանաւորութիւնը, այլ բաղձալի էր, որ իր գործին տէր անձ մը, ինչպէս ձանչցուած էր Վեհապետեանը, մտադրութիւն դարձնէր միանգամայն, թէ գործիչները անձնականը հանրայինին նախադասելու միտում ունէի՞ն, կամ թէ այթոռին շահը ամենայն ուղղամտութեամբ կը պաշտպանուէ՞ր արդեօք: Մայիս 30-ի տնօրէն ժողովոյ գումարման մէջ Յարութիւն պատրիարք պետական սնտուկէն ձեռք անցուցած գումարումներուն հաշիւը ներկայած էր, թէ 2880 լիրա հնչուն ստացած է, 7580 լիրայի փոխ գիր առած է Երուսաղէմի կառավարական սնտուկի վրայ, նոյնչափ մըն ալ յաջորդ տարին գանձելի, և 960 լիրայի ալ գանձումն յանձնած է փոխանորդին, որ է բովանդակ 19, 000 լիրա, ուսկից վատ կայ և ճշդուելիք մաս մըն ալ (89. ՏՆՕ. 350): Իսկ իր վարչական ծրագիրը կը պարզէր յունիս 19-ին միաբանական գումարման մէջ խօսած բացման ճառովը: Անցեալին վրայ վերապահութիւններով շնորհակալութիւն յայտնելէն ետքը, կը գովէր Կիրակոս պատրիարքի օրով պահուած խարհրդականաց գրութիւնը, և կը նախադասէր Եսայիի օրով մուծուած ժողովական գրութեան, թէպէտև նոյնն էր իր բերած նոր կանոնագիրն գրութիւնն ալ, որուն մէջ գուցէ տնօրէնի ձեռնահասութեան ընդարձակուիլը իբր խորհրդականաց գրութեան վերադարձ կը նկատէր. սակայն առաջ պատրիարքն էր որ խորհրդականները կը գործածէր, մինչև այժմ տնօրէնն էր որ պատրիարքը պիտի գործածէր, ինչպէս ինքն ալ կը խոստովանէր թէ իբրև պատրիարք չպիտի կարենամ բնաւ առանձինն գործածել, այլ պիտի գործադրեմ ինչ որ միաբան կորոշուի (89. ՄԻԱ. 465): Նախորդ պատրիարք Եսայիի գործերէն ինչինչ մեծ սխալ, և ինչինչ ամուլ և ապարդիւն կը հռչակէր (89. ՄԻԱ. 464), բայց չէր ցուցնէր թէ ինչո՞վ ինքը կացութիւնը պիտի բարւոթէ: Իբրև նոր և գլխաւոր գործ մը՝ միաբանութեան կաաջարկէր անձնական արդիւնքները յումպէտս չվտանել, այլ կալուածներ դնել կամ շինել, և ցորչափ կենդանի են օգուտը վայելել, այլ չվաճառել և չփոխանցել որ յետ մահուան այթոռին մնան (89. ՄԻԱ. 465): Յարութիւն պատրիարք այդ գաղափարը օրինակով ալ կը պօրացնէ, զի իր առաջնորդութեան և պատրիարքութեան ատենէն ձեռք բերած ու չվատնած և շահեցուցած դրամական կարողութիւնը, որ մինչև 20.000 լիրայի մօտեցած կը կարծուի, ամբողջաբար Երուսաղէմի և Յոպպէի մէջ շինութեանց տրամադրած էր

անդատին Եսայիի փոխանորդութիւնը վարած օրերէն սկսելով, և Կ. Պոլիսէ ալ շարունակելով, և միշտ յետ մահուան՝ աթոռին սեփականութիւն դարձնելու պայմանով: Յարութիւն բնական բերմամբ դրամական գործողութեանց սիրահար և յաջողակ անձ եղած էր, ինչպէս ճանչցուած էր և Մաքսուտեան ալ, և ասկէ կը յառաջէր որ երկուքը ձիրքով ու կիրքով իրարու կը մօտենայի, Վեհապետեան Մաքսուտեանը գնահատող և Մաքսուտեանը Վեհապետեանի սիրելի կը դառնային, և Մաքսուտեանի դուռ կը բացուէր Վեհապետեանի միտքին ու կամքին տիրանալու: Նա օգտի և դարձուածքի փայլուն երևոյթներ կը ցոլացնէր, և սա համակիր միամտութեամբ ներքինը թափանցելու պէտք չէր տեսնար, և չէր զգար կամ թէ չզգար կը ձևացնէր, որ երբ ինքը անձնականով վանքը կը ձոխացնէր, Մաքսուտեան ընդհակառակն վանքով անձնականը կը ձոխացնէր: Վեհապետեան թէպէտ 70 տարեկան էր երբ Երուսաղէմի վարչութիւնը կը ստանձնէր, բայց տակաւին միտքով արթուն, կամքով ամուր, գործով առոյգ, և բռնութեամբ բուռն էր, բայց դրամական գործողութեանց առջև զիջող էր, և ահա թէ ի՛նչպէս կը մեկնուի որ ոչ նւազ քան Եսայի համակերպող և հպատակող եղաւ եռեակին ազդեցութեան, որուն վերածուած էր նախկին հնգեակը (2874) զի Վահան Յակոբեանէ ետքը Գաբրիէլ Անոյշեան ալ հետզհետէ իրականութեանց խորը թափանցելով և ընկերներուն վարած դերերը ստուգելով կը հեռանար իր նախկին ընկերներէն, թէպէտ միաբանութենէ չէր բաժնուեր, և անոր շահերէն չէր ուժանար, ինչպէս ըրած էր Յակոբեան, մանաւանդ թէ նախանձայոյզ մը կը դառնար զեղծումներու դէմ: Եռեակին առանձնայատկութիւններուն մտնելով, դիտելի է որ Խապայեան գրականի և վանականի տուած էր ինքզինքը, և Երէջեան յարաբերականի և ընտանեկանի հետամուտ էր, և Մաքսուտեան ազատ կը գտնէր առանձնականի և շահադիտական ասպարէզը, և իրեն թողուած ազատութիւնը կը փոխարինէր միւսներուն սիրած և նախադասած գետինը ընդարձակելով անոնց առջև: Միաբանութեան գալով՝ երկու տարրներէ կը կազմուէր, հիները և նորերը: Հիներ իրենց չափաւորութեան մէջ ամփոփուած՝ մրցումէ կը խուսափէին ու ցայտուն խօսքերով կօրօրուէին, իսկ նորեր տակաւին անփորձ և անձեռնհաս էին և կարողագունին կը հետևէին: Յարութիւն պակասած չէր կարող նորահասներ ունենալու կամքէն, և այդ նպատակով Կ. Պոլիս եղած ատեն Երուսաղէմ դրկած էր եւրոպական համալսարաններուն մէջ վարգացած Զուղայեցի Թորոս Տէր-Իսահակեանը, և անոր ետևէն ազգային և պատմական հմտութեամբը ծանօթ Մարկոս Նաթանեանը, սակայն տակաւին գործունեայ ասպարէզի մտնելու պատրաստներ չէին հասած: Յարութիւն բնական բերմամբ և բուռն բնաւորութեամբ դիւրաւ տիրապետուելու անձը չէր, բայց Մաքսուտեանի դարձուածները չլացուցին անոր տեսութիւնը, մանաւանդ որ այդ մասին անոր մրցակից ըլլալու կարողներ չէին գտնուեր իր ձեռքին ներքև, և ինքն ալ բաւական յոգնած, գործը բոլորովին իր ձեռքը անցունելու աշխոյժը չունէր, և կանոնական ձևերու ալ յարգող էր, նոյն իսկ եթէ իր միտքին համաձայն չըլլային: Այդ կացութեան մէջ սահեցան Վեհապետեանի առաջին սաղիմական տարիները, որոնք իրաւ ի վերջոյ չյեղաշրջեցան, և Մաքսուտեանի մասին իր տեսութիւնն ու դատողութիւնը փոխուեցան, սակայն այլևս Վեհապետեանի կորովը բոլորովին կորած էր, և Մաքսուտեանի նպատակը լրացած էր: Եղելութեանց մանրամասնութիւնները թողունք առաջիկային:

2945. ՄԱԿԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆՔ

Զանապան աթոռներու անցից մէջ ժամանակագրական համեմատութիւնը պահելու համար պահ մը նորէն կը դառնանք Էջմիածին, Մակարի կաթողիկոսութեան ժամանակ կատարուած գործերէն կարևորագոյնները յիշատակելու: Սակայն կը կանխենք յայտնել թէ հետաքրքրական կամ նորալուր բաներ չունինք պատմել: Թէ Մակարի հանդարտ բնաւորութիւնը և թէ տարիքին

պահանջը չէին ներեր անոր նորանոր ձեռնարկներ յուսել, կամ նորինորոյ ձեռնարկներ փորձել, այլ վարժարանաց և ճեմարանի մասին իր առաջին թափը գործածելէն ետքը (2926 և 2927), բաւական սեպեց հսկել որ գործեր կանոնաւոր կերպով յառաջեն, բարեկարգութիւնը կարելի եղածին չափ հոգացուի, լաւ գիտնալով որ անգործադրելւոյն դիմել կարելին անարգել է, և կեղակարծ ձեռնարկներ հնարաւոր յաջողութիւնները կը ջլատեն: Մակարի շինարար գործերէն յիշատակենք երկուքը, տաճարին նորոգութիւնը և տպարանին հիմնարկէքը: Մայր տաճարի շինուածը ոչ միայն շատ մը բեղեկի կարօտ մասեր ունէր, այլ և ճեղքեր և պատուածքներ ամբողջ շէնքը վտանգեալ կը ցուցնէին, զի Մովսէս Տաթևացի կաթողիկոսին կատարած նորոգութենէն ի վեր (1645) ուրիշ նորոգութիւն տեսած չէր (88.ԱՐԲ.288): Ուստի հարկ եղաւ ճարտարներու ձեռքով մանրակրկիտ և խղճամիտ պնդութիւններ ընել տալ, որոնք կրկնուեցան և երեքնեցան մինչև որ հաստատուեցաւ թէ հիմնապէս վնասուած չէ և կրնայ նորոգութիւն վերցնել: Նորոգուելիք մասերուն գալով՝ գլխաւոր երեք կէտեր նկատի առնուեցան. ներքին խոնաւութիւնը դարմանել, տանիքին հաստատութիւնը կատարել, և շուրջանակի ճեղքուած և տխեղծ մասերը նորոգել: Խոնաւութիւնը հետևանքն էր վանքին բակին մէջ հոգին բարձրանալուն, և անկէ սկսան նորոգութիւնները, և 1888 ապրիլ 6-ին, Մեծ պահոց հինգերորդ չորեքշաբթին և Մակարի ծննդեան 75րդ տարեդարձին (88.ԱՐԼ.1297) սկսաւ վանքին բակին հողը կանգուն մը ցածցնելու գործը, որով տաճարին յատակը շուրջանակի հողէն վեր մնաց, մինչ առաջ երեք ոտք սանդուխով կիջնէր, և ոտք մը սանդուխով վեր ելլելու վերածուեցաւ: Միքայէլ Սալամբէդեան ճարտարապետին յանձնուեցաւ գործը, և Ներսէս և Սարգիս եպիսկոպոսներ հսկող նշանակուեցան, և երբ հողին ցածնալուն պատճառով տաճարին առջև գտնուող գերեզմաններ երևան եկան, Մաղաթիա և Մամբրէ եպիսկոպոսներ ալ աւելցուեցան, լուելեայն և զգուշաբար անոնք կարգադրելու համար: Տասըհազար մէթր քառակուսի է վանքին բակը, և անոր հողերը պարպելը, տարայատակներ վերաշինելը, և շուրջանակի պատերուն պատուանդաններ յարմարցնելը բաւական ընդարձակ գործ մըն էր, որ յաջողութեամբ լրացաւ 1888 ամառուան ընթացքին: Ծախքին համար ամէն կողմեր հրաւերներ և յորդորներ գրուեցան և արդիւնաւոր եղան, զի Էջմածին Հայ ապգին հոգին է, Հայ ապգին սիրտն է, նա ամբողջ ապգինն է, նա բոլոր եկեղեցեաց մայրն է (88.ԱՐԲ.284,287): Իսկ նոր տպարանի հիմնարկէքը ծագում առաւ Աստուածաշունչի տպագրութեան պէտքը զգացուելէն, զի Հայ աթոռի մը հսկողութեան ներքև հրատարակուած ամբողջ Աստուածաշունչ մը չկար Հայ եկեղեցւոյ պաշտօնէից և վաւակաց ձեռք: Սակայն Էջմիածնի տպարանը հին վարժարանի խարխուլ շէնքին մէջ վետեղուած էր, և ձեռաց մամուլներով միայն կը գործէր, և արագատիպ մամուլի համար հաստատուն չէնք անհրաժեշտ էր: Այսպէս ծագեցաւ ի հիմանց հաստատուն տպարան մը շինելու հարկը, որ հիմնուեցաւ վանքին բակէն դուրս, շէնքն ալ աւարտեցաւ 1889 հոկտեմբերին (89.ԱՐԼ.1743, և բոլոր տպարանական պէտքերու համապատասխանող մը եղաւ: Բայց Աստուածաշունչի տպագրութիւնը չգործադրուեցաւ, զի գործադրութիւնը յանձնուած էր Օրմանեանի, և նա ալ կանուխէն մեկնած էր (2927): Առաջիկային կրկնուած փորձերն ալ ապարդիւն մնացին, և ցարդ մեր եկեղեցին զուրկ կը մնայ իր իշխանութեամբ և հսկողութեամբ հրատարակուած Աստուածաշունչ մատեան ունենալէ, որ մեծ պակաս մըն է ստուգիլ: Իրաւ առաջին Ոսկանեան տպագրութիւնը Մայրաթոռոյ հրամանով և պաշտօնեաներով կատարուեցաւ, սակայն դժբախտաբար հարապատ Հայ թարգմանութեան վրայ կատարուած չէր (1746): Տաճարի և տպարանի երկու գլխաւոր շինութիւններէ դուրս մասնաւոր նորոգութիւններ ալ տեղի ունեցան, սակայն տեղական մանրամասնութիւններով զբաղիլ մեր նպատակէն դուրս է:

Պատմութեանց հետևողներուն նոր բան մը ըսած պիտի չըլլանք, եթէ յիշեցնենք, թէ ժամանակաց հանգամանքներ փոփոխական են դէմքերու և դէպքերու, պէտքերու և պարտքերու փոփոխուելուն համեմատ: Այս փոփոխութիւնները երբեմն անըզգալի կերպով կը կատարուին, և երբեմն ալ յանկարծական կը յեղաշրջուին, ինչպէս եղան Հայութեան գործերը 1889էն սկսելով, և յաջորդաբար աւելի շեշտուելով: Կանուխէն բորբոքած էր Հայութեան մէջ կացութիւնը բարւոքելու եռանդը, բայց միշտ օրինաւոր և սովորական ընթացքը պահելով թէպէտ ըլլար տարբեր չափով և աստիճանով տարբեր անհատներու և տարրներու վրայ: Այդ եռանդը կրնար մշտատև և անհրաժեշտ ըլլալ մարդկային զգացմանց մէջ, այլ կան պարագաները, որ բուռն կերպով կը սաստկացնեն վայն, երբ վանալան պատճառներ իրարու բարդուելով կարծարծեն անոր տենչը, ինչպէս են, ներկայիս անգոհացուցիչ վիճակը և ապագային լաւանալուն ակնկալութիւնը: Իրօք ալ այս մջոցին այս տեսակ պարագաներ կը ճշմարտուէին յարաճուն նեղութիւններէն և վրկումներէն, և կը զօրանային ներսէն ու դուրսէն շուայուած խոստումներով և յայտարարութիւններով, որոնք սակայն գործադրութեան չէին անցներ, և հետևաբար իրականացնելու համար փորձեր կը յաճախէին և ստիպումներ կը փորձուէին: Այդ էր երևումը և այդ էր միայն դիտումը, սակայն արդիւնքն ու հետևանքը տարբեր կըլլային, Հայութեան վրայ իշխող երկու մեծ տէրութիւնները, օսմանեանն ու ռուսականը, այդ ճիգերուն մէջ ըմբոստութեան նշաններ և մեղադրելի շարժումներ կերակայէին, և իբր թէ անոնք արգիլելու համար վրկումներ և զսպումներ ձեռք կառնէին, որոնք կը վայրացնէին նորահաս և ձեռնարկու դասակարգերը, և սաստիկ խոհեմութեան ու զգուշաւորութեան կը մղէին հանդարտ դասակարգերը, և հայ հանրութեան ծոցին մէջ մրցումներ և երկպառակութիւններ կը յուզուէին: Բնական էր որ Հայութեան երկու մասերուն գլուխը գտնուողները, Մակար ի Ռուսաստան և Խորէն ի Տաճկաստան խոհական և զգուշաւոր ընթացքը նախադասէին, ինչպէս բնական էր նաև որ ձեռնարկուներ և նորահասներ դժգոհ պիտի մնային երկուքէն ալ, և ազգին մէջ ասուլիսներ տարածուէին: Յորչափ այս խօսքեր ու գործեր ու ձեռնարկներ երկու տէրութեանց սահմաններուն մէջ պարփակուէին, գուցէ տարածուելու դիւրութիւն չունենային և չափազանցնելու խայծ չգտնային, բայց արտասահմանի դուռերը բաց էին, ուր ոչ թէ լոկ դիւրութիւններ և գրգռութիւններ, այլ և համարձակ հրատարակութիւններ և ուրիշ միջոցներ կը գտնային, և երկու տէրութեանց սահմաններուն մէջ ալ կը տարածուէին: Ահա համառօտագիծ պատկեր մը հայութեան մէջ յառաջ եկած նորօրինակ երևոյթներուն, և Մակարի ու Խորէնի մասին յայտնուած տարբեր դատաստաններուն բացատրութիւնը: Տաճկաստանի մէջ առանձնաշնորհմանց ամփոփման ձեռնարկները, և Ռուսաստանի մէջ դպրոցական օրէնքներու սեղմումները այս պարագաներէ առաջ կու գային, և Մակար ու Խորէն կամբաստանուէին, թէ պէտք եղած չափով դիմադրութիւն չեն ըներ, թէ իրաւանց պաշտպանութեան մէջ կը տկարանան և բաղդատութիւններ ու վուզակշիռներ կը կատարուէին երկու աթոռներուն նախորդ և այժմեան գահակալներու միջև: Մակար տարիքով և Խորէն բնոյթով յուզումնալից ձեռնարկներէ հեռու, ներքին կարգադրութեանց կը հետևէին, այլ եթէ Մակար իր արդարացումը կը գտնէր Ռուսիոյ տիրող օրէնքներուն մէջ, որոնք եկեղեցական իշխանութեան չէին ներեր արտաքին կացութեան գործերով վբաղիլ, այդ արդարացումը չէր գտնար Խորէն, որուն պատրիարքական իշխանութիւնը արտաքին կացութեամբ ալ վբաղելու իրաւասութիւն կու տար, և մանաւանդ Խրիմեանի և Վարժապետեանի օրերէն ասդին, քանի որ Տաճկաստանի կառավարութիւնն ալ անհակառակ ընդունած էր ընդհանուր բարեկարգութեանց մասին անոնց դիմումներն ու միջամտութիւնները, լսած էր անոնց գանգատները, խոստացած էր անոնց դարմանները, և հաղորդած էր որ ձեռք առած միջոցները: Իրօք ալ Խորէն պատրիարք իր մտադրութեան առակայ ըրած էր միայն

պատրիարքարանը (2940), դիւանական գործառնութեանց կարգադրութիւնը, ծննդոց և վախճանմանց արձանագրութիւնները (99.ԱՐԼ.1620), առաջնորդութեանց յարաբերութիւնները (89.ԱՐԼ.1744), ուսումնական խնդիրները (89.ԱՐԼ.1749), դրամօժիտի դրվութեան խաւիանումը (89.ԱՐԼ.1746), առաջնորդներու ընտրութիւնն ու եպիսկոպոսացումը, վանքերու մատակարարութիւնը (89.ԱՐԼ.1821), և եկեղեցականաց պաշտօններուն և պարտքերուն մասին պատրաստած ծրագիրը (89.ԱՐԼ.1904), և ներքին կարգադրութեանց համար հրահանգներ և շրջաբերականներ կը տեղացնէր, մինչ բարեկարգութեանց գործադրութեան, հարստահարութեանց դադարման և միջազգային օժանդակութեանց կէտերը իր տեսութենէն կը վրիպէին, և իրեն ընթացքին վրայ դժգոհութիւնները կը սաստկացնէին ժողովուրդին որոշ մէկ բաժինին մէջ, և մինչև վայրոյթի աստիճան կը բարձրացնէին: Ի լրումն այս պարագայից՝ գաւառներէ յուլիչ լուրեր կը հասնէին հետզհետէ, և Տարոնոյ պատուհասը դարձած Մուսա պէյը դատաստանով կարդարանար և տեղը դառնալ կարտօնուէր, և յեղակարծ գոյժ մըն ալ Կարինէն կու գար, ուր յունիս 18ին իսլամ տարրը Հայոց վրայ յարձակում գործած էր աննշանակ կասկածներու պատճառով, և արիւնոտ դէպքի տեսարաններ կը պարզուէին (ՃԳՆ.Բ.9), չնայելով որ միւս կողմէ Հայեր կը բանտարկուէին: Վիճակին առաջնորդը Գէորգ Իւթիւճեան վարդապետ, որ 1890 մարտ 18-ին նոր հասած էր պաշտօնատեղին, այլյայլմէ եղած, երեք ամիսէն ոտքի փոշին թօթուելով կը մեկնէր և յուլիս 24-ին Կ. Պոլիս կը մեկնէր: Վարչութիւնը անոր հեռանալուն վրայ Խարբերդի առաջնորդ Ղևոնդ Շիշմանեան եպիսկոպոսը Կարին կը փութացնէր պարտուպատշաճը գործելու և վիճակին գլուխ անձնելու: Բայց մայրաքաղաքը այդ լուրերով կը յուզուէր, և պատահէն օգտուելու մտադրութիւն ունեցողներ վայն շփոթութեան մատնելու կը ձեռնարկէին:

2947. ԳՈՒՄԳԱՌՈՒԻ ԴԷՊՔԸ

Վերև տրուած տեղեկութիւններ բաւական էին կռահել տալու թէ շփոթութեան մը նախօրէքին կը գտնուէր մայրաքաղաքի հայաբնակչութիւնը, և իրօք ալ այն տեղի կունենար 1890 յուլիս 15-ին, Վարդավառի դիմացի կիրակին, որ միանգամայն Տաճկաց Գուրպան պայրամին առաջին օրն էր: Նոյն օր կանուխէն կը սկսին Գումգաբու հաւաքուիլ խումբ խումբ ազգայիններ, ընդհանրապէս գաւառացիներ, և գաղտնի կուսակցութեան մը յարողներ, որ 1887 դեկտեմբերին ժընէվի մէջ հրատարակուիլ սկսած Հնչակ ամսաթերթին անունէն (ՃԳՆ.Ա.127) Հնչակեան կոչուիլ սկսած էին, և 1890 տարւոյ սկիզբէն մայրաքաղաքի մէջ ըմբոստ և յանդուգն ցոյցերու ձեռնարկող վարիչ մարմին մը կազմած էին: Այդ մարմինին համոզմամբ իբր թէ մայրաքաղաքի մէջ ցոյց մը՝ պիտի կարենար Եւրոպան միջամտելու և Թուրքիան գործելու բռնադատել. ուստի կորոշեն այդպիսի ցոյց մը կազմակերպել (ՃԳՆ.Բ.9-11), պահանջագիր մը կը պատրաստեն ժողովուրդին մէջ ցրուելու, և կը խորհին վայն յուզումնալից կերպով հրապարակ հանել, և պատրիարքին ձեռքով կայսեր ներկայացնել տալ: Յոյցին գործադրութիւնը յանձերնին կառնեն Յարութիւն ճանկիւլեան Վանեցի և Համբարձում Պօյաճեան Հաճընցի, կեցծ անունով Կայծիկ և Մուրատ, այլ վերջին պահուն առաջինը կըլլայ թէ պահանջմնագիրը առաւօտեան ժամերգութեան ատեն մայրեկեղեցւոյ մէջ կարդացողը, և թէ պատրիարքը մահուան սպառնալիքով և ատրճանակներու ցուցադրութեամբ դէպի կայսերական պալատը երթալու ստիպողը, մինչ երկրորդը ամբոխին մէջ դիտողի և հսկողի դեր կը վարէ: Մուսա պէյի գործը, Կարինէ եկած գոյժը, գաւառներէ տեղացող լուրերը, և կառավարութեան հետ վարուած պատրիարքարանի առանձնաշնորհութեանց խնդիրը, պատրաստուած ցոյցին հիմը կը կազմէին, և ամբոխը պահանջելու կը մղէին որ պատրիարքը իրենց առջևն իյնայ և պահանջմնագիրը կայսեր ներկայացնէ: Յայտնի է որ նա չէր կրնար այս տեսակ պատրաստութեամբ կայսեր ներկայանալ, և կը

ջանար գործին ձևը փոխել և ամբողջը ցրուել, և մինչև իսկ խոստանալ միևս օրը պաշտօնական այցելութեան առթիւ գրուածը տանիլ (ՃԳՆ.Բ.29): Այդ բուն ցոյցերու կարգին կայսեր կողմէ չորսուկէս ամիս առաջ նուիրուած (2942) պինանշանի վրայ կը խոյանար ճանկիւլեան, ու վար առնելով կը ջախջախէր: Պատրիարքը ճարահատած և մահուան սպառնալիքին ներքև շուարած, բռնութեան հպատակելով տեղի կու տար, և ամբողջը հետը պատրիարքարանէ կը մեկնէր: Գիտցողներ կը հաւաստեն թէ պատրիարքական փոխանորդ Ներսէս վարդապետ Ասլանեան ցոյցին պատրաստութեան լուրն ունէր օրեր առաջ, բայց իբրև հեռաւոր պարագայ մը իմացուցած էր պատրիարքին, և սա ալ նոյն կերպով հաղորդած էր ոստիկանութեան նախարարին, բայց ճիշդ օրը պատրիարքին չէր պեկուցած, որ եթէ իմացած ըլլար, գուցէ նախապաշտական միջոցներ ձեռք առնէր: Գումգաբուի ժխորը լսելուն վրայ՝ ոստիկանութիւնը տեղւոյն վրայ կը հասնէր, երբ արդէն պատրիարքն ու ամբողջը դէպի Քատրեկա յառաջացած էին, գնացքը հասած տեղը կը կեցնէր, և պատրիարքը յոյնի մը մերձակայ կը տարուէր, իրեն հետ ճանկիւլեանն ալ, որ պատրիարքին պաշտպանութեան դերը ստանձնած էր, ամբոխէն 27 գլխաւորներ կը ձերբակալուէին (ՃԳՆ.Բ.117), և նոյն տան մէջ հարցաքննութիւններ և հետապօտութիւններ կը սկսէին, որոնց կը նախագահէր Տէրվիշ փաշա՝ կայսեր յատուկ հրամանով պի կայսրը որ նոյն պահուն պայրամի հանդիսական արարողութեանց մէջ կը գտնուէր, և պահ մը շուարած էր կարծելով թէ մի՛ գուցէ տաճկական իւրտում մը ըլլայ, հպիւ կը հանդարտէր երբ Հայոց կողմէ մասնակի շարժում մը ըլլալը կըստուգուէր: Ասով մէկտեղ նոյն ժամայն ոստիկանութեան նախարար Քեամիլ պէյը պաշտօնանկ կըլլար, ժամանակին արթուն չգտնուելուն համար և դատաստանի կենթարկուէր, և Նալըմ պէյ անոր կը յաջորդէր (90. ԱՐԼ. 1950): Եկեղեցւոյ մէջ թուղթ կարդացողը և թուղրան կտորողը կը փընտըռուէին, իբրև շարժումին պետերը, նոյն իսկ ճանկիւլեանի առջև, որ հանդարտորէն նստած էր պատրիարքին մօտ, մինչև որ երկուքն ալ նոյն իսկ ինքն եղած ըլլալը ականատեսներէն կը վկայուէր, և նա ալ ձերբակալութեան և հարցաքննութեան կենթարկուէր պատերազմական ատեանի առջև և սպարապետի նախագահութեամբ (ՃԳՆ. Բ. 47-51), մինչ լրագիրներ Գումգաբուի մէջ անտեղութիւններ տեղի ունեցած ըլլալէն աւելի բան չէին կրչած գրել (90. ԱՐԼ. 1949): Աչըգեան իր բնակարանը դառնալէն ետքը ինքզինքը տկար և հիւանդ պզալով, միևս օր յուլիս 16 ին դրան գործակատարին միջնորդութեամբ պայրամի շնորհաւորութիւնը կը մատուցանէր կայսեր և նախարարաց (90. ԱՐԼ. 1951), և քանի մը օր ետքը յուլիս 20-ին պատրիարքութենէ հրաժարականը կը հաղորդէր մեծ եպարքոսին (90. ԱՐԼ. 1954): Ակնյայտնի էր որ Աչըգեանի հրաժարականը այս պարագայից մէջ չէր կրնար ընդունուիլ կառավարութենէն, ինչպէս յուլիս 28-ին իրեն ալ կը հաղորդուէր (90. ԱՐԼ. 1961), բայց Աչըգեան հրաժարականը կը կրկնէր յուլիս 31ին (90. ԱՐԼ. 1963), և այս անգամ Գապապեան Յակոբ փաշա նախարարին կը յանձնուէր պինքն համուլել (90. ԱՐԼ. 1963), բայց Աչըգեան կը պնդէր: Միևս կողմանէ սաստիկ հետապնդութեամբ յառաջ կը տարուէր պինուորական ատեանին դատավարութիւնը, և վերջապէս օգոստոս 8-ին վճիռը կը հրատարակուէր, որով Յարութիւն ճանկիւլեան կամ Ճիհանկիւլեան մահուան, և կայսերական ներմամբ ցկեանս բերդարգելութեան, և ուրիշ երեք անձեր 15 և հինգ ալ 5 տարուան բերդարգելութեան կը դատապարտուէին (90. ԱՐԼ. 1969), 16 հոգի ալ անպարտ կարձակուէին (90. ԱՐԼ. 1972) բայց ապագային համար սաստիկ սպառնալիքներ կը հրատարակուէին (90. ԱՐԼ. 1969): Նկատողութեան արժանի է որ դատապարտեալներէն երկուքը յոյներ էին: Դատապարտութեան հիմ կը կապմեր ապստամբութեան գաղափարը և Թուրքիոյ մէկ մասը օսմանեան իշխանութենէ հանելու նպատակկ, վոր տաճիկ լրագիրներ ալ կը կրկնէին, թէպէտ այսպիսի գաղափարի կամ նպատակի մը գոյութիւնը թէ ամբաստանեալներուն կողմէն հերքուած էր (ՃԳՆ. Բ. 108-110), և թէ հայ

լրագիրները կը բողոքէին (90. ԱՐԼ. 1960): Դատապարտելոց Կ. Պոլիսէ մեկնիլը տեղի ունեցաւ սեպտեմբեր 15-ին (ՃԳՆ. Բ. 151) Խաչի պահոց հինգշաբթին, և տարբեր բերդաքաղաքներ որոշուած էին իւրաքանչիւրին, իսկ ճանկիւլեանի վիճակած էր Աքքեայի կամ հին Պտղոմայիսի խիստ բանտը:

2948. ԼՐԱԺԱՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ Աչըգեանի երկրորդ հրաժարականի մերժումը իրեն հաղորդուեցաւ օգոստոս 8-ին (90. ԱՐԼ. 1970), բայց նա երրորդ անգամ հրաժարագիր մատոյց օգոստոս 16-ին (90. ԱՐԼ. 1975), որչափ ալ ըսողներ կային թէ հրաժարականի խնդիրը փակուած ըլլայ (90. ԱՐԼ. 1972), սակայն խնդիրը աւելի ընդաձակութիւն առած էր, Վի ոչ ևս Գումգաբուի դիպուածն էր անոր գրգռիչը, այլ պատրիարքարանի առանձնաշնորհութեանց սեղմումը կամ վլացումը, որով կը վբաղէր Յունաց պատրիարքարանն ալ, և որուն համար Հայոց պատրիարքարանի համագումար և խառն ժողովներ ալ յաճախ գումարումներ կուներնային, և կրօնից նախարարութեան հետ յիշատակագիրներ կը փոխանակուէին, վարչական մարմիններն ալ պատրիարքը կը քաջալերէին հրաժարականին վրայ պնդել, և Ընդհանուր ժողովն ալ հրաժարականի խնդիրը ճարտար կերպով կը յետաձգէր, մինչև որ գլխաւոր խնդիրը լուծման մը յանգէր (90. ԱՐԼ. 1975): Օգոստոս 19-ին կայսեր գահակալութեան տարեդարձը պիտի տօնուէր, ուստի երկու օր առաջ կայսերական հրաման մը նախարարութեան կը պատուիրէր Հայոց պատրիարքարանի պահանջներուն վերջ տալ հնարաւոր գոհացումներով, և այդ նպատակով յանձնաժողովը մը կազմել, ինչպէս որ կանուխէն այդ մտադրութիւնը Տատեան Յարութիւն փաշայի միջնորդութեամբ ալ պատրիարքին հաղորդուած էր: Իսկ 18-ին թիկնապահ մը պատրիարքը պալատ կը հրաւիրէր (90. ԱՐԼ. 1977), ուր կայսերական քարտուղար Սիւրէյտ փաշա պաշտօնապէս կը հաղորդէր եղած կարգադրութիւնները, և մանաւանդ գաւառացի Հայերուն անդորրութեան և ապահովութեան համար ձեռք առնուած միջոցները, որոնց մասին պատրիարքը գոհութիւն յայտնելով յանձն կառնէր հրաժարականին վրայ չպնդել և պաշտօնավարութիւնը շարունակել, և 19-ին շնորհաւորութեան ուղերձին հետ շնորհակալութիւն ալ կը մատուցանէր կայսեր առաջին սենեկապետին ձեռքով, ինչպէս նախընթաց օրէն խառն ժողովոյ անդամներուն ալ ծանուցած էր (90.ԱՐԼ.1976): Յունաց պատրիարքարանը՝ հաստատուն ելք մը ձեռք ձգելու համար՝ կը շարունակէր առանձնաշնորհութեանց բանակցութիւնները, իսկ կառավարութիւնը բաւական կը սեպեր եւրոպական տէրութեանց մօտ դեսպաններուն ծանուցանել Հայոց պատրիարքարանի խնդիրներուն կարգադրուած ըլլալը: Ընդհանուր ժողովն ալ օգոստոս 24ին եղած բանակցութեանց և թղթակցութեանց ծանօթանալէ ետքը հրաժարականի խնդիրը փակուած կը նկատէր, մինչ միւս կողմէն Հայոց և Յունաց պատրիարքարաններու խնդիրներուն համար որոշուած պետական յանձնաժողովին պաշտօնապէս կը լսուէր: Բայց յանկարծ համագումարի տեղեկատու յիշատակագիրին կրօնից նախարարութենէ ետ դարձուիլը միտքերը կը շփոթէր, և պատրիարքը կրկին վերադարձել կը պարտաւորուէր (90.ԱՐԼ.1985), և վրդովելէն դարձեալ հրաժարականի միտքը կը յղանար, յանձնաժողովի հրաւերին չէր պատասխաներ, և սեպտեմբեր 1-ին նոր հրաժարական մը կը գրկէր կառավարութեան, և երեսփոխանութեան ալ կը հաղորդէր (90.ԱՐԼ.1989): Աչըգեան աճապարած էր պալատան քարտուղարին բերանացի յայտարարութեանց վրայ գրով շնորհակալութիւն մատուցանել, և երբ պաշտօնական գործողութիւնք խոստումներուն համապատասխան չէին եղած, դժուարին կացութեան մատնուած կը գտնուէր, և նոր հրաժարականով կը ջանար կացութիւնը դարմանել: Վարչական կրկին ժողովներու ատենաբանութեանց հրաժարականներն ալ այդ միջադէպին հետեանքն էին, մինչ միւս կողմէն Մուսա պէյ որ Մուշ դառնալու համար ճամբայ ելած էր, հսկողութեամբ ետ կը բերուէր (90. ԱՐԼ.

1989): Կացութիւնը տակաւ կը կնճռոտէր պետական յանձնաժողովին կողմէ Հայոց խնդիրներուն համար կտրուկ որոշում չտրուելովը, որուն կը հետևէր վարչութեան խմբովին հրաժարականը (90. արԼ. 1993): Սեպտեմբեր 7-ին Ընդհանուր ժողով կը գումարուէր, որուն նախապէս կը հաղորդուէր պետական պաշտօնագիր մը որ որևէ ցոյցի դէմ սպառնալիքներ կը յայտնէր, քանի որ պետական յանձնաժողովը, և Աչըգեանի պատրիարքութիւնը հիմնովին խախտած տեսնելով անոր հրաժարականը կընդունէր 47 ներկայից 37 քուէով, իսկ վարչութեան հրաժարականը կը մերժէր (90. ԱՐԼ. 1995), թէպէտ վարչութիւնը չէր յօժարեր գործի գլուխ դառնալ: Պատրիարքական փոխանորդ Ասլանեան վարդապետն ալ ինքզինքը մեղադրանց ենթարկեալ կը տեսնէր, և նա ալ հրաժարականով կը քաշուէր (90. ԱՐԼ. 2026), և գործադիր իշխանութեան ոչ մի ներկայացուցիչ չէր մնար պատրիարքարանի մէջ, և միայն եկեղեցական համագումարը մերթ ընդ մերթ կը գումարուէր, թէպէտ սահմանադրապէս ոչ մի գործադիր իրաւասութեան տէր չէր: Կառավարութիւնն ալ կը զգար այդ անկերպարան գիրքին վերջ տալու ստիպողականութիւնը, և հիմ մը ունենալու համար պետական յանձնաժողովի նիստերը յաճախակի կը կրկնէր, որպէսզի պաշտօնական ծրագրի մը վրայ քալած ըլլայ: Յունաց պատրիարքարանն ալ իր պահանջումներն ունէր, սակայն նա վերժ էր Հայոց պատրիարքարանին կողմէ առջև գրուած բռնադատական և հարստահարական գործերէն, և պարզապէս իրաւասական կէտեր էին, որոնք դիւրաւ իրենց լուծումը կը գտնէին, իսկ Հայոց առաջարկները քաղաքական պարագաներ ալ ունէին, և կասկածներու տեսակէտով կը նկատուէին, և կացութիւնը կը կնճռոտէին: Յուլիս 15-ի դիպուածը չէր մոռացուած և ոստիկանութիւնը, ապստամբողական շարժումի մը դիմաց գտնուելու իրական կամ ենթադրական կասկածի հիմամբ, ձերբակալութիւնները կը շարունակէր, և որևէ ազգային երգի թերթ մը կամ կուսակցական թղթիկ մը բաւական կըլլայ աննշանակ անհատներ դատարաններու առջև հանելու և դատապարտութեան ենթարկելու, միշտ Թուրքիոյ մի մասը օսմանեան կառավարութենէն անջատելու կարծեցեալ յանցանով, և այս նպատակին դէմ կազմուած օրինական յօդուածին պարտութեամբ (90.ԱՐԼ.2036,2048,2051), թէպէտ ոչ ամբաստանեալներ և ոչ ամբաստանութեան ծառայող փաստեր այսպիսի գաղափարներ չէին պարունակեր, և հայաբնակ գաւառներու աղէտալի կացութիւնը բարեկարգութիւն մտցնելու դիտումէն անդին չէր անցներ: Հայ տարրին դարաւոր նախընթացը, և օսմանեան տարրին և կառավարութեան հետ սերտ սիրով և գործունեայ շահով կապուած ըլլալը պէտք էր այլապէս թելադրէր գործի գլուխ գտնուողները, և գոնէ առերևոյթ խոստումներով սիրաշահելու, և ոչ թէ անհիմն խոստումներով ուժացնելու և խրտչեցնելու, որ հարկաւ աւելի միտքերը շփոթելու պիտի առաջնորդէր:

2949. ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ԼՈՒԾՈՒՄԸ

Պատրիարքարաններու առանձնաշնորհմանց խնդիրները քննելու պաշտօն ունեցող յանձնաժողովը յաճախ գումարումներով եզրակացութիւններով մը կը յանգէր, և իր որոշումները վերջապէս հոկտեմբեր 13-ին Հայոց պատրիարքարանին կը հաղորդուէին (90.ԱՐԼ.2024), և 19-ին պատճենն ալ պաշտօնապէս կը հրատարակուէր (90.ԱՐԼ.2029): Տրուած որոշումներն հետևեալներն էին: 1. Առաջնորդներու փոփոխութիւնը ու տեղափոխութիւնը միշտ պատրիարքարանի խորհրդակցութեամբ եղած է, այնպէս ալ պիտի շարունակուի, յանցանքի մը գործադրութեան պահուն ձերբակալուածներէն վատ: 2. Եկեղեցականաց բանտարկութիւնը եթէ պարտքի համար է՝ պատրիարքարանի կամ առաջնորդարաններու մէջ կը գործադրուի. եթէ պատժական պատճառով ձերբակալուած են, հարցաքննութեան միջոցին կառավարական պաշտօնատան մէջ առանձինն կը պահուի. վճիռէն ետքը եթէ թեթև յանձանքով

դատապարտուած են՝ դարձեալ պատրիարքարանի կամ առաջնորդարաններու մէջ կը գործադրուի. իսկ եթէ ոճիրի կամ եղեռնի համար դատապարտուած են, կարգալոյծ կըլլան և պատիժը հասարակաց բանտի մէջ կը գործադրուի: Զինուորական օրէնք հրատարակուած ատեններ և տեղեր բացառութիւն չըլլար: 3. Եկեղեցականներուն քաղաքական կամ պատժական դատարաններուն առջև երդնուլ պէտք եղած ատեն, պատրիարքարանի կամ առաջնորդարաններու մէջ պիտի կատարուի համաձայն մասնաւոր օրինական տրամադրութեանց: 4. Բաժնուած ամուսիններու պարէնի վճիռները պատրիարքարանէ և առաջնորդարաններէ կը տրուին և պետական պաշտօնէութեան ձեռամբ կը գործադրուին: Եթէ դատապարտուած կողմէն անկարողութեան առարկութիւն ըլլայ, դարձեալ պատրիարքարանի և առաջնորդարաններուն պիտի հաղորդուի, և յետ քննութեան անոր բարեփոխուած կամ հաստատուած վճիռը անխափան պիտի գործադրուի: 5. Ժառանգական դատերու մէջ ազգակցական կամ խնամիական տեղեկութիւններն ու որոշումները պատրիարքարանի և առաջնորդարաններուն պատկանիլը ընդունուած է, և ըստ այնմ դատարաններու ալ հրահանգ պիտի տրուի: 6. Ազգային հաստատութեանց և մատակարարութեանց համար յօժարակամ և մասնաւոր նուէր առնողներուն արգելք չի դրուիր, բայց տոմսակներ ցրուելով հանգանակութիւն բանալու համար պէտք է կառավարութեան հաղորդուի և արտօնութիւն ստացուի: 7. Կրօնական ու կրթական ու բարեգործական նոր շինութեանց համար կառավարութեան արտօնութիւն ստանալ սկսբէն ի վեր հաստատուն օրէնք է: Իսկ վերև յիշուած 3-րդ կէտին մասին սեպտեմբեր 29-ի թուականով շրջաբերական հրահանգը հոկտեմբեր 26-ին կը հրատարակուէր (90.Ա.Ր.Լ.2034): Ինչպէս յիշեցինք ազգային գործադիր իշխանութեան բացակայելուն պատճառով, համագումարը վբաղեցաւ տրուած որոշումներով հոկտեմբեր 16-ին, և յանձնաժողովի մը յանձնեց անոնք ուսումնասիրել և տեղեկագրել, անգամ նշանակելով Խրիմեան, Նարայէյ, Իվմիրլեան, Ալէաթձեան և Սրուանձտեան եպիսկոպոսները, Ասլանեան ու Արշարունի վարդապետները, և Տէր-Սարգիսեան ու Մկրեան բահանները (90.Ա.Ր.Լ.2026): Յանձնաժողովը քանիցս գումարուելով ուսուած տեղեկագիրը պատրաստեց, և հոկտեմբեր 31-ի համագումարին նիստին ներկայեց, որ ամբողջովին ընդունուեցաւ և ստորագրուեցաւ (90.Ա.Ր.Լ.2050): Տեղեկագիրին պարունակութիւնը համակերպութիւն էր՝ տրուած որոշումներուն, իբր պի կային ապագայն ապահովող կէտեր: Իսկ վերապահուած մասեր պետական ձևակերպութեանց ընդհանուր սկսբունքներէն օտար չէին: Պատրիարք քաջուած կը մնար քանի որ իր հրաժարականը Ընդհանուր ժողովէն ընդունուած էր, սակայն կայսրն ու նախարարութիւնը ընդունած չէին, և կառավարութեան կողմէ ստացած յանձնարարութեամբ շարունակ Աչըգեանի հետ խորհրդակցութեան մէջ էին Սիմէոն Մաքսուտեան և Արիկ Ունձեան, որ պայն պատրիարքարան դարձնելու կերպը որոշեն, ուսկից պէտք է ըսել թէ Աչըգեան ալ հեռու չէր, մանաւանդ որ պետական յանձնաժողովոյ անդամներն ալ նոյն միտքով էին և իրենց որոշումներն ալ գոհացուցիչ կը տեսնուէին: Իրաւ, որոշումներէ դուրս ուրիշ կէտեր ալ կային, զոր օրինակ, դպրոցականն ու առաջնորդականը, որոնք գլխաւորապէս Յունաց պատրիարքարանէն առաջարկուած և որոշման ենթարկուած էին, բայց Հայոց հաղորդուած պաշտօնագիրին մէջ յիշուած չէին, այլ պատրիարքը բաւականացած էր բերանացի բացատրութեամբ թէ Յունաց հետ համահաւասար կըլլայ գործադրութիւնը: Կայսեր միտքը հանդարտելու համար պետական հայ պաշտօնէաներէն 36 հոգի, Յակոբ և Աբրահամ և Յարութիւն փաշաններ գլուխնին, նոյեմբեր 28-ին հայ ազգին դարաւոր հաւատարմութիւնը երաշխաւորող, և ապօրէն հրատարակութեանց և գործողութեանց համարձակողներուն ամենափոքր և յանուն ազգի խօսելու կամ գործելու հանգամանք չունեցող խմբակ մը ըլլալը յայտարարող ուղերձ մը կը ներկայէին, որ

վեհապետական գոհունակության կարժանանար (90. ԱՐԵ. 532-534): Նմանօրինակ հանրագիր մըն ալ Զմիւռնիայէ կը հասնէր հարւիւրէ աւելի ազգայիններու ստորագրութեամբ (90. ԱՐԼ. 2105): Վերջապէս համաձայնութիւնը կը գոյանար և Աչըզեան իբրև պատրիարք Ապտիւհամիտ կայսեր կը ներկայանար նոյեմբեր 29-ին, և լիաբերան գոհունակութեան ուղերձ մը կը կարդար, և պաշտօնի մէջ կը վերահաստատուէր կայսերական հրամանով (90. ԱՐԼ. 2063), երեսփոխանութեան հաճութենէն առաջ, ճիշդ ինչպէս Վարժապետեանի հանդիպած էր (2864), և ժամանակին Աչըզեանի կողմէն քննադատուած էր: Կայսերական հրամանով նոյնպէս հրաժարեալ վարչութիւնն ալ գործի կը դառնար (90. ԱՐԼ. 2064), խառն ժողովը նիստ կուներնար դեկտեմբեր 5-ին, և Ընդհանուր ժողովն ալ, որուն գումարումները վերին հրամանով յետաձգուած էին (90. ԱՐԼ. 2030), դեկտեմբեր 14-ին կը հաւաքուէր և իր քուէով կը վաւերացներ պատրիարքին վերահաստատուիլը և կողջունէր վարչութեան գործի դառնալը, և Աչըզեան սրտեռանդն և լիաբերան գոհունակութեան և ուրախութեան ճառ մը կը խօսէր (90. ԱՐԼ. 2026): Իբրև հաշտաբար քաղաքականութեան նշանաւ նոյն օրեր, Կարնոյ դիպուածին առթիւ բանտարկեալները (2946) ներմամբ կարձակուէին (90. ԱՐԼ. 2018), և այսպէս կը փակուէր յուլիս 15-ին սկսած միջադէպը, որ վանապան պարագաներ իրարու չյաղթուելով մինչև դեկտեմբեր 14 հինգ ամիս ամբողջ պատրիարքարանը անտէր անտէրունչ վիճակի մատնած էր, և բաւական դժպիհ կացութեան պատճառ եղած էր: Աչըզեան գործի գլուխ կը վերադառնար, բայց ոչ պօրացած պի ընդհանուր կարծիքը և համակրութիւնը իրեն կը պակսէր, և պետական որոշմանց մէջ պալի բարւոքում չէր տեսնուէր, բերանացի խոստումներն ալ գործադրութիւն չէին ուներնար, դպրոցական խնդիրներ աւելի չժգոհութեան քան թէ գոհունակութեան առիթ կընծայէին: Տխուր տպաւորութիւն կը գործէր նախկին պատրիարք Խրիմեանի պետական հրամանով Երուսաղէմի բռնադատեալ ուխտաւորութեան պարտաւորուիլը, ուր պիտի մեկնէր նոյեմբեր 22 ին (90. ԱՐԼ. 2056), այլ տկարութեանը պատճառով քանի մը օր ևս յապաղելով կը նաւէր դեկտեմբեր 20 ին (90. ԱՐԼ. 2080), որ է ըսել Աչըզեանի գործի գլուխ անցնելէն քանի մը օր ետքը:

2950. ԱՉՂԳԵԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ինչ որ այդ պարագաներու մէջ Աչըզեանի վրայ կը դիտուէր տկարամտութիւնն էր և վարչական կորովի ու ճարտար վարմունքի պակասութիւնը, որ իր հրաժարականին ստուար մեծամասնութեամբ ընդունուելուն ալ պատճառ եղած էր (2948): Աչըզեանի տկար մտայնութիւնը աւելի ևս կը յայտնուէր քաջուած օրերուն մէջ գրիչի առած Կենցաղ եկեղեցականաց գրուածովը, զոր գործի գլուխ անցնելէն ետքը 1891 տարւոյ սկիքները հրատարակութեան կու տար: Այս գրութեամբ ուզած էր նա եկեղեցականութեան ապելու և գործելու ուղեցոյց մը ընծայել, և կոչումն, վսեմութիւն, համեստութիւն, հեղութիւն, կենցաղավարութիւն, ուսումնասիրութիւն, ժողովրդասիրութիւն, նախանձայնութիւն, աշխարհուրացութիւն, և կարգապահութիւն գլուխներու ներքև (ԿԵՆ. 213) պարզած էր իր տեսութիւնները, և իբր նուէր կը ցրուէր եկեղեցականութեան մէջ (91.ԱՐԼ.2139): Գնահատելի էր գործը պարզ բարոյականի տեսակէտէն, պի իբրև կատարեալ վանական, լոկ հոգևորական և գրեթէ ճգնողական ընթացք մը կը թելադրէր (90.ԱՐԼ.2169), այլ վանց եղած էր վարչական ու յարաբերական կենցաղագիտութիւնը, պի և ոչ իսկ նկատի կառնուէին կուսակրօն և ամուսնացեալ եկեղեցականներուն ազգային տեսակէտները, և այդ կողմէն ունեցած պարտաւորութիւններն ու պատասխանատուութիւնը: Աչըզեան կը պահանջէր որ եկեղեցականը աշխարհականի հետ որևէ շփումէ մինչև իսկ տեսակցութենէ ալ խորշի, և նոյն իսկ կուսակրօններուն փակեղին վերին մասին մանուշակագոյնէ սևի փոխուիլը, աշխարհասիրութեան վտանգ կը մեկնէր, չյիշելով որ նախապէս ինքն իսկ սևը իբր

կրօնաւորութեան գոյն յանձնարարած էր (ԿԵՆ.46), և մոռանալով կամ մոռանալ կեղծելով, այդ փոփոխութեան առիթ տուող միջադէպը (2859): Աշըգեան իր գործին մէջ կուսակրօն և ամուսնացեալ եկեղեցականութեան կոչումները նկատի կառնէ, և ուր որ կը պատէ կը թողու անոնց ազգային կեանքի մէջ ունենալիք դերերը: Իր գրիչին ներքև միշտ կը տիրեն ներքին առաքինութեան և արտաքին ուրացութեան պագումները, որոնք իրաւ արհամարհուելու չեն, այլ պատրիարքի մը ստորագրութեամբ հրատարակուած հեղինակութեան մը մէջ հարկ էր ազգային կեանքի և վարչական պահանջի եկեղեցական պաշտօնի պահանջներն ալ բացատրած տեսնել: Աշըգեան իր յանձնարարած հոգւոյն տղայութենէն ի վեր հետևող և վանական կեանքի ունակութեամբ ապրող, երկարամեայ պատրիարքութեան փորձառութենէ ետքն ալ իր պագումներն ու գործունէութեան կերպը չփոխեց, թէպէտ անոնց դժպիսի հետևանքներուն ալ ենթարկուեցաւ, և իր պատրիարքութեան 1891 տարւոյ գլուխէն սկսող երկրորդ մասն ալ առաջին մասին ճշգրիտ կրկնութիւնն եղաւ, որով ոչ ինքն կանոնաւոր պաշտօն կրցաւ վարել, և ոչ իր պաշտօնավարութիւնը ազգին համար կանոնաւոր արդիւնաւորութիւն ունեցաւ: Չենք ուզեր ծածկել թէ տիրպետող կուսակցութեան յախուռն և անխոհական քայլերը մեծ դեր ունեցան ազգային կեանքին վրայ հասնող դժպիսի պարագայից մէջ, և չենք ալ ուրանար թէ պետական շրջանակներու անհիմն կասկածները և չափապանցեալ տեսութիւններով պօրացած ձեռնարկները ևս քան վևս գրգռեցին դժնդակ պատահականութիւնները, այլ միայն կուզենք շեշտել, թէ երկու ծայրերուն մէջ միջնորդի դեր վարող և յարաբերութեանց պաշտօնեայ եղող անձին վրայ պարտաւորութիւն կը ծանրանար ամուր ու ճարտար, գործնական ու պատահական միջոցներով կացութիւնը մեղմացնել և յարաբերութիւնները քաղցրացնել, և ոչ թէ վերացեալ սկզբունքներու պատասխանատուութենէ վերժ համարել: Ահա ընդհանուր գիծերով Աշըգեանի պատրիարքութեան 1891-է երկրորդ մասին նկարագիրը, զոր անաչառ կերպով ներկայել պատմագիրի պարտք պաշտօնական անձերու ներքին պագումներուն դատաւոր ըլլալ, զի պատմութիւնը պարզապէս և սոսկապէս եղելութիւններով կը պբաղի ու ոչ մտածումներով, և երբեք չէինք ուզեր Աշըգեանի ներքին դիտումներով պբաղիլ: Սակայն այդ մասին ալ երևան եկած ինչինչ նշաններ մտաւորական վարանմանց առիթ կընծայէին, երբոր միտք կը բերուի թէ իր բերանին մէջ ստէպ կը յեղյեղուի կայսեր կողմանէ խոստացած մատանիի մը նուէրը, որուն հասնելու ճիգերով գործելու յորդոր տուողներուն կը պատասխանէր, թէ պատրիարքութենէ հրաժարելէն ետքը հանգստեան թոշակի պետական շնորհքը վտանգելէ կը պգուշանար: Աշըգեանի պատրիարքութենէն նոր դիպուածներու մտնելէն առաջ դարձեալ կանցնինք Մայրաթոռոյ եղելութեանց:

2951. ՄԱԿԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Մակար կաթողիկոս 78 տարեկան եղած, տակաւին միտքով ժիր էր և մարմնով առոյգ կերևէր, և մանաւանդ իր բարձր պաշտօնին գիտակցութիւնը զինքն օրէօր ազգային եկեղեցւոյ նախանձախնդիր և իրաւանց պաշտպանութեանը աւելի խիպախ դարձուցած էր: Միւս կողմէն կայսերական գահուն և հայրապետական աթոռին յարաբերական գործերը աւելի շեշտուած ձև առած էին (2946), և ինչչափ ալ Պետրբուրգ երթալով ռուսաց կայսեր ներկայացած (88.ԱՐԼ.1250-1253), և անոր Կովկաս գալուն առթիւ խնդրամատոյց եղած էր (89.ԱՐԼ.1636) բայց ակնկալեալ յաջողութիւնները ոչ միշտ և ոչ կատարեալ գոհացուցիչ արդիւնք կը ստանային: Նոյն միջոցին ռուսական կառավարութիւնը Հայ դպրոցներու համար յատուկ կանոնագիր մը հրատարակեց, որով թէպէտ դպրոցներուն վերին հսկողութիւնը և ընտրութիւնը կաթողիկոսին և անմիջականը առաջնորդներուն կը յանձնուէր, սակայն ուսուցչաց փակեալ ցանկը և ծրագիրին պարտաւորիչ պարունակութիւնը կառավարական հաճութեան կենթարկուէր (89. ԱՐԼ. 1628): Նշանակալից էր

գլխաւորապէս Հայոց պատմութեան առանձինն դասին պակասը (89. ԱՐԼ. 1669): Երբ Կովկասի կառավարչապետը յատկապէս Էջմիածին գալով կանոնագիրը կաթողիկոսին կը յանձնէր և անոր տեսութիւններն ու առաջարկները կը հարցնէր, Մակար ոչինչ բառի չոր պատասխանէն աւելի բան մը չէր ըսեր (89. ԱՐԼ. 1636), բայց կը ստիպուէր կանոնագիրը գործադրութեան դնել (89. ԱՐԼ. 1614), և բացատրութեան համար ինչինչ հրահանգներ ալ կը հրատարակէր (90. ԱՐԲ. 517-521): Զրոյցներ ալ կը լսուէին թէ Մակարի առաջարկուած լինի Հայոց եկեղեցին ռուսականին հետ ձուլել սակայն անհիմն վրոյց էր՝ Մակարը անուանարկելու հետամուտ խմբակէն յերկրած (90.ԱՐԵ.90), որ չէր հաստատուած (88.ԱՐԼ.1450): Պետական վարժարաններու մէջ Հայոց կրօնքին ուսումը ռուսերէնով աւանդելու և կաթողիկոսը կրթական հսկողութեան դերին մէջ ըստ ամենայնի Կովկասի կրթական վերատեսուչին ենթարկելու հրամաններ տրուած էին, բայց Մակար այդ մասին պէտք եղած դիմումներով կրցած էր հրամաններուն գործադրութիւնը կասեցնել, և ուսուցչաց փակեալ ցանկին համար ալ հինգ տարուան պայմանաժամ ստացած էր նոր պահանջուած հանգամանքները չունեցողներն ալ գործածելու: Վերջին դիպուածներու կարգին անցողակի յիշենք Մակարի պարսից Շահին ներկայանալը Տփղիսի մէջ (89. ԱՐԼ. 1609), և Շահին փոխադարձաբար Էջմիածին այցելելը (89. ԱՐԼ. 1700), ինչպէս նաև երկու սարկաւագներու ուսումնական վարձացման համար Էջմիածինէ առաջին անգամ Գերմանիա յղուիլը, Կարապետ Տէր-Մկրտչեանը աստուածաբանական և Սողոմոն Սողոմոնեանը երաժշտական ճիւղի համար (89. ԱՐԼ. 1723), իբր գործնական փաստ մը Մակարը հնօրեայ գաղափարներով տոգորուած և յառաջադիմութեան անփոյթ կարծողներու դէմ, թէպէտ այդ մասին ձեմարանի համար ցուցած ջանքն ալ (2927) բաւական էր իբր փաստ ծառայել: Մակար կաթողիկոս իր ընտրութենէն սկսելով շարունակ դժպիսի պարագաներու հանդէպ գտնուելու դժբախտութիւնն ունեցաւ, և մանաւանդ իբր երկրորդ ընտրելի ներկայանալով առաջին ընտրեալ եղած ըլլալը վիշտն դատափետելու և անարգելու պատրուակ դարձաւ որոշ խմբակի մը ձեռք: Որչափ ալ իր գերազանց խոհեմութիւնը և մեղմօրինակ վարմունքը վիշտն իբր ռուսական կառավարութեան կոյր գործակից կարծել կու տար, սակայն արդէն պատմուած անցքեր ցուցուցին, թէ ոչ հլու համակերպող և ոչ ալ դիմումներէ և դիմադրութենէ խորշող մըն էր, և եթէ ոչ լիովին գոնէ գոհացուցիչ արդիւնքներ ձեռք ձգած էր: Իրեն յանցանքը չէր ստուգիւ որ ինչպէս անգամ մը յիշեցինք (2946), ապա մէջ երևան եկած տարբեր շարժումներ և շփոթ պարագաներ ռուսական կառավարութիւնն ալ զսպողական և զրկողական միջոցներ ձեռք առնելու թելադրեց, որոնք աւելի շեշտուած ձև մը առին 1891 տարւոյն մէջ: Պետրբուրգի նախարարութիւնը Կովկասի կառավարչութեան հետ ալ խորհրդակցելով և ուզելով Հայոց գործերէն կասկածելի անձերը հեռացնել, թէ հին ձևերը նորոգելու և թէ նորեր աւելցնելու որոշումներ կը հաղորդէ կաթողիկոսին 1891 մարտի սկիւբը: Այս կարգին դարձեալ կը յիշուին. 1. Հայոց դպրոցներու մէջ ձեմարանաւարտներուն և թեմականաւարտներուն ուսուցչութիւնը արգիլել մինչև որ յատկապէս կառավարութենէ արտօնուին: 2. Հայոց լեզուէն և կրօնքէն վատ ամէն առարկայ ռուսերէնով աւանդել Հայ դպրոցներու մէջ. 3. Պետական դպրոցներու մէջ Հայոց կրօնքն ալ ռուսերէնով աւանդել: 4. Հայոց եկեղեցական կալուածները կառավարութեան յանձնել փոխարէն պաշտօնէից թոշակ և ծախուց գումար ստանալու պայմանով: 5. Էջմիածինի աթոռին պատկանող գիւղերուն տասանորդի կամ արդիւնքի հասոյթը յարթունիս գրաւել՝ դրամական փոխարինութեան պայմանով: 6. Դատարաններու առջև ելլողներուն դատաստանական երդումը ռուսերէն լեզուով ընել տալ: 7. Քաղաքական շարժումներու մասնակցող եկեղեցականները անմիջապէս ձերբակալել, պատել և պատժել, կաթողիկոսին տեղեկութիւն տալէ առաջ (91. ԱՐԵ. 323-326): Այդ հրամաններուն

վերջինը յայտնապէս կը ցուցնէ թէ ինչ կը դիտէին և ինչպէս գրգռուած էին բոլոր այդ որոշումները որոնք նոր ալ չէին, և հին կարգադրութեանց կրկնումներ և ժամանակաւոր թույլատրութեանց դադարում էին:

2952. ՄԱԿԱՐԻ ՄԱՀԸ

Ինչ ալ ըլլային այդ եղելութեանց արժէքը կամ նշանակութիւնը, Մակար վրդովուեցաւ՝ երբոր բաւական ճիգ թափելէ ետքը և քիչուշատ յաջողութիւն ձեռք ձգելէ ետքը, ինքզինքը պարտաւորուած տեսաւ նորէն բուռն ջանքեր և սաստիկ ճիշեր ձեռք առնելու: Միաբանութիւնն ալ կը զգար այդ վրդովման տագնապը, բայց անով կը հանդարտէր որ կաթողիկոսը թէպէտ ծերացած՝ բայց ժիր էր իւր գործողութիւններում և նորա դատողութիւնների և գրութիւնների մէջ արտափայլում էր մտաց կատարեալ թարմութիւն: Այդ անցուդարձերու հետևանօք ապրիլ 8 երկուշաբթի առտու Մակար մասնաւոր խորհրդակցութեան հրաւիրած էր Սուքիաս ու Ներսէս ու Սարգիս եպիսկոպոսները, Նահապետ Աբեղան, որ է նոյնինքն ձեմարանի տեսուչ Արշակ Նահապետեանը, և Արարատի խմբագիր Պետոս Սիմէոնեանը, և անոնց կը հաղորդէր մարտ 7-ի կառավարական պաշտօնագիրին հետ իր պատրաստած պատասխանը, որ Նահապետեանի կը յանձնուէր ուսերէնի վերածելու: Այս գիրին օրինակը ապրիլ 4 թուականով անագան լոյս տեսաւ, որ կիրակի նման զօրաւոր գրութիւն մըն է (91.ԱՐԼ.2273): Ապրիլ 9 երեքշաբթի կը զբաղէր անձնական դիւանի գործերով, գիրերը կը կարդար և պատասխանները կը թելադրէր, որոնց կարգին էր քաջալերական կոնդակ մը և շքեղապարզ պահակէ մը Խորէն պատրիարքին, և վարդապետական լանջախաչ մը Ամերիկայի հոռոր հովիւ Սարաձեան Յովսէփ վարդապետի: Չորեքշաբթի 10-ին վանական գործեր կը կարգադրէր, պաշտօնեաներ կը հրահանգէր, և գրութիւններ կը թելադրէր: Իսկ հիգշաբթի 11-ին զբաղեցաւ երկուշաբթի խորհրդակցութեան մէջ որոշուած ուսերէն յիշատակագիրով և կառքով անտառ գնաց թէ օդ առնելու և թէ ջրուղիներու մաքրութիւնը պնտելու, որուն կը հսկէին Սուքիաս և Ներսէս եպիսկոպոսները: Ուրբաթ 12-ին սինոդական գործեր քննեց, բժշկի հետ խորհրդակցեցաւ և կէսօրէն ետքը բաղանիս մտաւ: Ապրիլ 13-ին շաբաթ օր նախարարութեան յղուելիք պատասխանը ստորագրեց, որ գեղեցիկ գրուած մը կոչուած է (ՋԱՄ.Բ.179), ժամերով տեսակցեցաւ գաւառապետին և պրոկուրորին հետ, Միքայէլ Նիկոլայէվիչ կայսերեղբօր ամուսնոյն մահուան առթիւ ցաւակցական հեռագիր ուղղեց, Սուքիաս եպիսկոպոսի հետ հին գործողութեանց մասին խօսակցեցաւ, և լուսարարապետ Երեմիա եպիսկոպոսին յաջորդ օրուան պատարագին և հոգեհանգիստին համար հրահանգներ տուաւ: Ապրիլ 14 Ծաղկապարդի կիրակիին քիչ մը թուլութիւն զգալուն եկեղեցի չիջաւ, բայց դիւանական և վանական գործերով կրցաւ զբաղիլ, պաշտօնեաներ ընդունեցաւ և հրահանգեց, և օրուան քարովիչ Մակար Բարխուդարեան վարդապետի հետ երկար խօսակցութիւն արեց: Ապրիլ 15 Աւագ երկուշաբթի օր նախընթաց օրից աւելի առոյգ դրութեամբ զբաղուեց սովորական գործերէ վատ նախարարէն հասած մարտ 21 թուակիր նոր գրութեամբ մը, որուն մի ընդարձակ և գեղեցիկ պատասխան պատրաստած էր, և որուն պատճէնը անագան երևցաւ ապրիլ 14 թուականով (91.ԱՐԼ.2240), և ստորագրուած գրութեան առաքումը յետաձգեց, որ նոր թուղթին պատասխանին հետ միասին յղուի, զոր ստիպաւ նոյն օր ուսերէնի վերածել և լրացնել հրամայեց: Նոյն երեկոյին վեհարանի մէջ երկար շրջագայութիւն կատարելէ ետքը, ժամը երոպական 9-ին ընթրեց և վայելեց ամենայն ախորժանօք իւր շաթրների ներկայութեան, և ժամը 10-ին ննջարան կը քաշուի կատարեալ հանգստութեամբ, մինչև իսկ իրեն մօտ հսկող գիշերապահը պայն բոլորովին առողջ տեսնելով նոյն երեկոյ իր տունը կը մեկնի: Ապրիլ 16-ին Աւագ երեքշաբթի առտուն վեհարանի ծառայողներ պանգակի ազդարարութեամբ կը մտնեն կաթողիկոսի ննջասենեակը, որ կը ծանուցանէ թէ քէֆս

լաւ չէ, և թեթև թէյ մը կուղէ, բայց դեռ չմատուցուած սենեկապետին խառնաշփոթ աղաղակը կը լսուի: Հետզհետէ կը հասնին ծառայողներ, վարդապետներ, եպիսկոպոսներ, որոնք տարօրինակ նուազումը տեսնելով կապուրելու և պօրացնելու միջոցներ և դեղեր կը գործածեն (91.ԱՐՐ.228ԻԹ-ԼԲ), բժիշկն ալ հասնելով պօրաւոր դեղեր բերել կու տայ, բայց և միանգամայն դրուութիւնը անյուսալի կը յայտարարէ, և իբր կէս ժամէն, առաւօտեան ժամը 7 ուկէսին Մակար կաթողիկոս հոգին կաւանդէ (91. ԱՐՐ.228 ԼԴ): Ինչպէս տեսնուեցաւ նա մինչև վերջը երևոյթով առողջ էր բայց կանուխէն սիրտի ընդլայնում և արիւնի նուազութիւն ունէր, և վերջին պաշտօնագիրները պինքն սաստկապէս յուլած էին, մանաւանդ եկեղեցականաց մասին սպառնալիքը, և տագնապը օրէօր պօրացած էր: Այսօրինակ պարագաներու մէջ սիրտի հիւանդութիւն ունեցողներուն սովորական է յանկարծական պայթումով կեանքերին վերջացնելը: Նոյնը հանդիպած էր և Մակարի, որուն մասին թունաւորուած ըլլալու ենթադրութիւնն ալ պակաս չեղաւ, զոր ժողովրդական կասկածը միշտ կը կցէ ամէն յանկարծական մահերու, զորս սակայն աւելի ճշդութեամբ կանխաւ պատրաստուած բայց անտեսնուած մահեր պէտք էինք կոչել, քան յանկարծական անակնկալներ: Աւագ երեքշաբթիէն մինչև Զատիկի օրը մարմինը պահուեցաւ վեհարանի մէջ, և միայն ապրիլ 21-ին Զատիկի երեկոյին մեծահանդէս պատրաստութեամբ և ծիսական հանգիստներով տարուեցաւ մայր տաճարը, և երեկոյեան ժամերգութեամբ արարողութիւնը փակուեցաւ: Իսկ միւս օր ապրիլ 22 Զատիկի մեռելոցի երկուշաբթի առտուն պատարագ մատուցուեցաւ, օծումը կատարուեցաւ և մարմինը թաղուեցաւ մայր տաճարի վանգակատան հարաւային սիւնին մօտը Դանիէլ և Ներսէս կաթողիկոսներու գերեզմաններուն հանդէպ: Տխուր հանդէսին նախագահեց Երեմիա եպիսկոպոս Գալըստեան Սինողի նախանդամ և տեղապահ, պատարագեց և օծեց Սարգիս եպիսկոպոս Տէր Գասպարեան իրմէ ձեռնադրուածներէն ներկայ երիցագոյնը, և դամբանական խօսեցաւ Արիստակէս եպիսկոպոս Դաւթեան նոյնպէս իրմէ ձեռնադրուած: Ժողովուրդին բազմութիւնը, ընդհանուր յարգանաց նշանները, հեռուէն եկող պատգամաւորները (91. ԱՐՐ. 228. Թ ժԱ.) և ամէն կողմէ տեղացող ցաւակցական հեռագիրները (91. ԱՐՐ. 228. ԺԷ-ԻԸ.) վկայութիւններ եղան հանգուցելոյն արդեանց և արժանեաց:

2953. ԱՐԴԻԻՆԶՆ ՈՒ ԱՐԺԱՆԻԶԸ

Մակար կաթողիկոս մահուանէ 10 օր առաջ լրացուցած էր իր 78 տարիները, և ընտրութենէն հաշուելով վեց տարիէ 5 օր պակաս եղած էր իր կաթողիկոսութիւնը, զի ապրիլ 6-ին ծնած, և 21-ին ընտրուած էր, և 16-ին ալ վախճանեցաւ: Ապրիլը նորա կեանքին մէջ ուրիշ նշանակութիւն ալ ունեցած էր, զի նոյն ամսոյ 12-ին սարկաւագ ձեռնադրուած էր, 30-ին սինողի անդամ անուանուած, 12-ին ծայրագոյն աստիճան ստացած, և 2-ին Տփղիս քննիչ յղուած էր. ապրիլը երկար ապրելուն ալ բարեգուշակ եղած էր: Մակար կաթողիկոս կարգ ըստ արգէ ուսումնական և վարչական պաշտօններու ամենէն ալ անցած էր, և կարևոր պատգամաւորական յանձնարարութիւններ ալ կատարած էր, մասնակցած էր Մայրաթոռոյ շուրջը դարձող ամէն նշանաւոր գործողութեանց, և երբեք պաշտօնի մը մէջէն ձախողուածով չէր ելած, թէպէտ յաճախ դժուարութեանց հանդէպ գտնուած էր: Հանդարտ խոհականութիւնը, ծանրաբարոյ վարմունքը, Պատկառապդեցիկ կերպարանը, իրեն նկարագիրը կը կազմէին, անխոնջ աշխատասիրութեան հետ միացած: Իր անունը երբեք ստգտանաց կամ գորովանաց չէր հանդիպած մինչև կաթողիկոսական հաստատութիւնը, երբ ազգային իրաւանց պաշտպանութեան քօղին ներքև վայն անարգել ձեռնարկեցին առաջին ընտրելի նկատուած Մելիքսեդեկի անձնական բարեկամները: Բայց այդ պարագայն չէր կրնար ոչ մի կերպով Մակարի անձնականին վերագրուիլ, և ինչ որ այդ մասին

գրուեցաւ կամ Կրուցուեցաւ Մակարի անձին կամ Մակարի բարեկամներուն գաղտնի մեքենայութեանց մասին, իրաւունք վաստակելու մարմաջով յերկրուածներ էին: Մելիքսեդեկի չհաստատուելուն պատճառը, ինչպէս քանիցս ըսինք աւելորդ չենք կարծեր անգամ մըն ալ կրկնել, լոկ քաղաքային կամ ոստիկանական էր, զի ոռուսահպատակ ծնած ոռուսական օրինաց հակառակ հեռացած և հպատակութիւն փոխած էր, և ոռուսական կառավարութիւնը չէր կրնար ոչ ոռուսահպատակութեան անցունել. և քանի որ պօլօժէնիէի տրամադրութեամբ եպիսկոպոս մը անընտրելի հռչակելու իրաւունք չունէր, անընդունելի ըլլալը ժամանակին յայտնած էր, և Մելիքսեդեկ այդ յայտնութեան վրայ լիուրի քուէ ստացած էր, որպէսզի ընտրելիներէն միոյն չէզոքանալովը միւսը հաստատուի, Մակարը կամ Խրիմեանը, որոնցշուրջը կը դառնար մրցումը, և Մակար՝ Խրիմեանէ երեք քուէ աւելի ստանալով իրօք առաջին ընտրելի կը դառնար: Այս պարագային մէջ Մակարի անձը նշանակութիւն չունէր, և ինքն ալ յանձնառութենէ տարբեր ճամբու չէր կրնար հետևիլ զի եթէ հաստատութենէն առաջ կամ յետոյ հրաժարէր ալ, Մելիքսեդեկ չէր հաստատուեր, մինչ երեք տարիէ ի վեր թափուր մնացած այժոռը նոր տագնապի մը մատնուած պիտի ըլլար, որ Հայ եկեղեցւոյ ճշմարիտ շահուն հակառակ էր, իսկ Մակարը չճանչնալը եկեղեցին պատկառելու դաւաճանութիւն եղած պիտի ըլլար: Մակար կաթողիկոսութեան յանձնառու ըլլալով ոչ թէ անձնահաճ կամ փառասէր ձգտումներ ունեցած պէտք է ըսուի, այլ մանաւանդ եկեղեցասիրութեան և ազգասիրութեան գործ մը կատարած պիտի համարուի: Կաթողիկոսութենէն առաջ վարած կեանքն ու գործունէութիւնը ոչ ուրեք և ոչ երբեք մեղադրանաց ներքև ինկած ըլլալուն, անոնց վրայ խօսիլ իսկ չենք ուզեր. իսկ կաթողիկոսութենէն ետքը կատարած պաշտօնավարութիւնը կատարելապէս արդարացուցած է իր արժանիքը: Ամենէն դժնդակ պարագաներու մէջ այժոռ բարձրացած, ոռուսական կառավարութեան հակակիր տրամադրութեանց հանդէպ կանգնած, ազգայնոց ոմանց յարուցած անխոհեմ և աննպատակ շարժումներուն տխուր հետևանքներուն ենթարկուած, ընդհանուր համակրութիւնը խանգարելու կամ նուազելու համար թափուած գրգիռներէ շրջապատուած, նա կրցաւ տակաւին կացութիւնը բարւոքել հնարաւորութեան սահմանին մէջ. կորուսանէն բան մը ձեռք ձգել յաջողեցաւ, իսկ գտնուածէն և ոչ մի բան ձեռքէ չհանեց. աղմկալից և խրոխտաձայն ձեռնարկներ չյուզեց, բայց և պատշաճ դիմադրութեան մէջ պակասաւոր չգտնուեցաւ, նեքին կարգապահութեան արթուն հսկեց, ուսումնական և կրթական կարևոր ձեռնարկներ կատարեց, և իրեն յանձնուած աւանդը գտածէն լաւագոյն վիճակի հասուց և այնպէս թողուց: Իր մահը անկեղծ վիշտ և ճշմարիտ կորուստ նկատուեցաւ ամէն կողմերէ, և իր երդուեալ հակառակորդներն իսկ մահուանէ ետքը խոստովանեցան թէ որչափ ալ անոր հաստատութեան դէմ շարժուեցան ու մաքառեցան սակայն կը մաղթէին որ աւելի երկար ապրէր (91.ԱՐԵ.): Հայ եկեղեցւոյ հաւատարիմ պաշտպանութեան համար ունեցած համոզման կը վկայէ Լևոն ԺԳ. պապի կոնդակին առթիւ 1888 դեկտեմբեր 8-ին հրատարակած ընդհանրականը, որպէսզի հայ ժողովուրդը չխաբուի օտարներու քարոզութիւններէ (89.ԱՐՐ.65). իսկ ազգային իրաւանց պահպանութեան համար ունեցած նախանձայնութիւնը վկայելու բաւական ըլլայ ոռուսերէն երդումը արգիլելու համար քահանաներու ուղղած շրջաբերականը (91.ԱՐԼ.2178): Իր մասին վանապան առիթներով գրածներուս իբր կնիք պիտի աւելցնենք թէ մօտէն տեսակցութեամբ կապմած գաղափարներու հաստատութիւնը կը գտնեն մահուանէ ետև իր անունին շուրջը տարուէ տարի կապմուռոյ յարաձուն գնահատութեանց և գովաբանութեանց մէջ, համաձայն ժողովրդական առածին, որ ճշմարիտ բարիին յարգը կորուստէ ետքը կը ճանչցուի:

Գէորգ կաթողիկոս իր կեանքին վտանգը նախատեսած ատեն, աթոռին ապագան ապահովելու համար սինոդականութեան կոչած էր Մակարը, որպէսզի աթոռոյ պարապութեան միջոցին խելահաս մէկ մը ըլլայ անոր պահապան կանգնողը, որչափ ալ ինքն իր կենդանութեան Մակարի համակիր և բարեացակամ եղած չըլլար (2886): Մակարի պակսեցաւ այդ նախատեսութիւնը, գուցէ մօտալուտ չտեսաւ իր վախճանը, և տեղապահութիւնը վիճակեցաւ սինոդականաց երիցագոյն և նախանդամ Երեմիա եպիսկոպոս Գալստեանի, որ Կաթողիկէին փակակալը կամ Էջմիածնի լուսարարապետն էր միանգամայն: Երեմիա ոչ պարզացմամբ, ոչ կարողութեամբ, ոչ լայնախոհութեամբ, և ոչ ուղղամտութեամբ օժտեալ մէկ մը չէր. վարուց ուղղութիւնն իսկ կասկածներու ենթարկուած էր: Անակնկալ փառքը զինքը շլացուց, և միանգամայն պատասխանատուութեան բեռը տանելու համար նեցուկ փնտռելու մղեց, և այդ կերպով իրեն յարեցաւ կամ թէ ինքն յարեցաւ Արիստակէս եպիսկոպոս Սեդրաքեանի, որուն կարողութիւնը հնար չէր ուրանալ, բայց միանգամայն բուռն կիրքերէ տիրապետուած ըլլալն ալ, մեծամեծ ձգտումներէ և սաստիկ պայրոյթէ մղուիլն ալ յայտնի էր, որոնց տեղի տուած էին Մակար կաթողիկոսի հանդէպ իր ցուցադրած հակառակութիւնը և Մակարի վայն Տփղիսի առաջնորդութենէն հեռացնելը: Երբոր Մակար ոչ ևս էր, Սեդրաքեանի առջևը նոր ասպարէզ կը բացուէր, և շատ դիւրին տեսաւ իրեն յանկուցանել տկարամիտ տեղապահը, որ սկսած էր կաթողիկոսանալու երազով օրօրուիլ: Սեդրաքեան ձեռնարկեց անոր այդ ձգտումները մշակելով՝ տեղապահութիւնը իրեն գործիք դարձնել, զի իրեն դիւրին էր վերջին վայրկեանին առաջնորդութիւնը իրեն վրայ դարձնել: Ահա թէ ի՛նչ հիմամբ և ի՛նչ նպատակով կը կազմուէր Գալստեան-Սեդրաքեան համաձայնութիւնն ու գործակցութիւնը, թէպէտև իրարու համամիտ չէին իրենց իսկական և ներքին նպատակին մէջ: Յաջողութեան միակ միջոց ընտրեցին տիրող պետութեան համակրութիւնը և վայն վաստակելու համար ապահով կերպն էր անհակառակ համակերպութիւնը, մանաւանդ թէ ինքնայօժար գործակցութիւնը և ինքնանուէր ծառայութիւնը, քանի որ Մակարի վերջին տարիները, և նոյնիսկ վերջին օրերը, դիմադրութեան ճիգերով անցած էին, և կառավարութիւնը չէր կրնար անտարբեր ըլլալ անձնամատոյց ծառայութեան հանդէպ, որով պիտի կարենային գործադրուիլ և իրականանալ բոլոր նոր առաջարկները (2951): Այդ նոր երևոյթին քաջալերիչ և հովանաւորող էր Էջմիածնի պրոկուրորը, Գանչելի անուն հայրենագէտ Վրացի մը, որ Հայ եկեղեցւոյ օգուտին պագցումն ալ չունէր, զոր միշտ ունեցած էին հայազգի պրոկուրորները, վերջընթեր Նիկողայոս Յովսէփեանի բացառութեամբ (2927): Այդ դարձուածները յաջողեցնելու համար հարկ եղաւ տեղապահական պաշտօնավարութեան ձեռնհասութիւնները ընդարձակել, Մակարի ժամանակէն մնացած գրութիւնը հիմնայատակ քանդել, աթոռին և աթոռական գործոց նոր ուղղութիւն տալ, մէկ խօսքով բացարձակ տիրապետութիւն գործածել, թէպէտև պէլէժէնիէի հոգիէ և տիրող կանոնէ և գործադրուած սովորութենէ ցուցուած տեղապահական ձեռնհասութիւնը կը փակուէր պարզ պահպանութեան շրջանակին մէջ, նախորդ կաթողիկոսէ թողուած կացութիւնը անփոփոխ և անայլայլ յանձնել յաջորդ կաթողիկոսին: Ընդհակառակն Երեմիա առաջի օրէն սկսաւ իբրև ժամանակաւոր կաթողիկոս ձևանալ, առանց սինոդի, առանց խորհրդակցութեան և նոյն իսկ սինոդին կարծեաց և որոշմանց հակառակ տնօրէնութիւններ փոփոխել, անուանումներ կատարել, և գլխաւորապէս Սեդրաքեանը սինոդականութեան մտցնել, համարձակ կրկնելով այդ իմ գործս է, այդ մասին հաշուատու չեմ (ՍՈւ.86), բացատրութիւններ, զորս Գէորգ ալ, Մակար ալ չէին համարձակած գործածել: Սինոդականներ որ գործերու կանոնաւորութեան նախանձայուպութիւնը կը կրէին, պիտի չկրնային անտարբեր աչքով նկատել այդ ընթացքը, և շուտով հրապարակ ելաւ տեղապահի և սինոդականաց

համաձայնությւնը: Ընդդիմութեան գլուխ կանգնողն էր Աստապատոցի Սուքիաս եպիսկոպոս Պարպեանց, իրեն աջակից ունենալով Վաղարշապատոցի Ներսէս եպիսկոպոս Խուտավէրտեանը, որոնց համամիտ էին Սարգիս Տէր-Գասպարեան և Արիստակէս Դաւթեան եպիսկոպոսներն ալ: Պարպեանց բուռն գործի և համարձակ խօսքի տէր, և ակնածութեանց հանդէպ ապստամբ բնոյթ ունեցող անձ մը, սկսաւ խօսքն ու գործը չխայել՝ ուզելով չափաւորեալ տեղապահին ընթացքը և արգելք դնել քմահաճ կարգադրութեանց: Իսկ Խուտավէրտեանց թէպէտ բնութեամբ հանդարտ ու մեղմիկ, բայց հաստատամտութեամբ ազդեցիկ գործիչ մըն էր և սուրբ գործակից: Խնդիրը հետզհետէ գործնականէն օրինականին անցնելով վէճէր ու բանակոխներ սկսան թէ օրինական է, որ Սինոդի նախանդամը միանգամայն և կաթողիկոսական տեղապահ համարուի, առանց ուրիշ պայմանի, թէ ի՞նչ սահմանների մէջ են պարփակուած տեղապահի իրաւունքները, թէ դպրոցներ նրա բացարձակ իրաւասութեան ենթարկվո՞ւմ են արդեօք (ԶԱՄ. Բ. 179), թէ ի՞նչ պայմաններով կրնան պաշտօնէից փոփոխութիւններ կատարուել, այս և այլ սրանց հետ կապուած խնդիրներ, որոնք յայտնի խոռվութիւնների պատճառ դարձան (ԶԱՄ. Բ. 179): Երբոր Սեդրակեան-Գալստեան-Գանչելի ընկերակցութիւնը իր ընթացքը օրէնքով արդարացնելու կերպը չգտաւ, և իր ընդգրկած ուղղութենէն ետ դառնալու ուղղամտութիւնը չունեցաւ, ձեռք վարկաւ այսպիսեանց սովորական եղող քսութեանց և մատնութեանց միջոցներուն, և առաջինին թելադրութիւնը, երկրորդին բողոքը, և երրորդին պաշտօնական ընթացք տալը՝ բաղձացուած լուծումը պատրաստեցին, և ընդդիմութեան պարագլուխներուն աքսորը երբեակ ընկերակցութեան յաղթանակը պսակեց: 2955.

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԱՔՍՈՐԸ

Մականի մահուանէ վեց ամիս ետքը, 1891 հոկտեմբեր 14-ին Խաչի հինգերորդ երկուշաբթին, կէսօրէն ետքը, Վաղարշապատ քաղաքը յանկարծ վիճուորական գիրք ստացաւ, և էջմիածնայ վանքը պաշարման ենթարկուեցաւ, երբ միաբանութիւնն անկասկած ոչ եղելութեան լուրն ուներ, և ոչ ալ այսպիսի անօրինակ դիպուած մը միտքէն կանցնուէր: Ներս մտնող վիճուորական հրամանատարը Պարպեաց և Խուտավէրտեանց եպիսկոպոսներու սենեակները 12-ական վիճուորներով հսկողութեան ներքև առաւ, և իրենց ներկայանալով պաշտօններնէն դադարած ըլլալնուն, և սեպտեմբեր 19-ին արձակուամբ բարձր հրամանով (91. ԱՐԼ. 2337) անմիջապէս որոշուած աքսորավայրեր մեկնելնուն պատուէրը հաղորդեց: Իսկ Տէր-Գասպարեան և Դաւթեան եպիսկոպոսներու մօտ ալ երթալով՝ տեղապահին իշխանութիւնը յարգել ազդարարեց (91. ԱՐԼ. 2333): Վաղարշապատոցի ժողովուրդը այլայլմէ եղած փողոցներն էր թափուած, միաբաններ շփոթաց խուցերնին էին քաշուած, տեղապահը և գործակիցը իբրև թէ չկային (91. ԱՐԼ. 2332): Ներսէս որ միանգամայն գանձապահ էր, սինոդականներէ ոմանց ներկայութեամբ արկղը կը յանձնէ, որ կը կնքուի առանց հաշիւ նայելու (91.ԱՐԼ.2329): Հապճեպ պատրաստութեան համար հապի ժամ մը կամ երկու կը տրուի, և օրը մթնալէն ետքը երկու եպիսկոպոսները, առանց տեսակցելու և առանց հրաժեշտի ողջոյնի, վիճուորէն շրջապատուած վանքէն կը հանուին, և վատ վատ կառքերու մէջ կը վետեղուին, և ամէն յարաբերութիւններէ և հաղորդակցութենէ արգիլուած ու հսկողութեան ներքև ճամբայ կելլեն դէպի Երևան: Վաղարշապատեցի հետևողներ որևէ տեսակցութեան կամ խօսակցութեան կերպ չգտնելով յուսաբեկ ետ կը դառնան: Հնար չէր ենթադրել որ Գալստեան և Սեդրաբեան անտեղեակ եղած ըլլային, ուստի նշանակալից կը դառնար իրենց անտարբերութեան ցոյցը: Գիշերով առանց Երևանի մէջ կենալու կամ յարաբերութիւն ընելու կառքերը ճամբանին կը շարունակեն կայարանէ կայարան ձիերը փոխելով մինչև կը հասնին երկաթուղու գլուխը, ուսկից անդին անհաղորդ բաժիններու մէջ վետեղուած, Տփղիսի մէջէն ալ առանց կենալու և առանց հաղորդակցութեան կանցնին, մինչև կը հասնին

Պայթում, և անկէ ծովագնացութեամբ կելլեն Օտեսա, ուսկից կառաջնորդուին իրենց համար որոշուած աքսորավայրերը, Խուտավերտանցը Պոլտավա և Պարպեանցը Արեօլ կամ Օրէլ, երկուսուսուսաբնակ և հայ չգտնուող քաղաքներ, ուր կը մնան ամբողջ տարի մը խիստ հսկողութեան ներքեւ (91. ԱՐԼ. 2332): Անլուր դիպուածը բովանդակ հայութեան մէջ շփոթութեան և գայթակղութեան նիւթ եղաւ, ու Ռուսահայեր, մանաւանդ Տաճկահայեր սկսան համարձակ գաղափարներ յայտնել անօրինակ եղելութեան մասին, որոնք անչափ և քողարկեալ, սակայն չէին կրնար ծածկուած մնալ (91. ԱՐԼ. 2326-2339): Հրատարակուած տեղեկութիւններ և մեկնութիւններ հաճելի չէին կրնար ըլլալ Գալստեան -Սեդրաբեան գործակցութեան, և այդ նպատակով փութացին ընդարձակ պաշտպանողական մը հրատարակել, Էջմիածնի պաշտօնական ամսագրի 1892 փետրուարի համարին մէջ (92. ԱՐՐ. 139-170), իբր թէ երևան հանելով Պարպեանցի և Խուտավերտեանցի ապօրէն գործերը, և արժանապէս պատժուած ըլլալնին հետևեցնելով: Սակայն աղքատ ջատագովութիւններ և կցկտուր մեղադրանքներ աւելի ևս կը հաւաստեն եղելութեան թաքուն նպատակը և անցուդարձերուն հեղինակները կը պարտաւորեցնեն: Պետական պաշտօնագիրն ալ երկու եպիսկոպոսները իրենց ապօրինի գործողութիւնների համար սինոդի անդամների պաշտօնում, պատժուած կըսէ (91. ԱՐԼ. 2337), միշտ պաշտօնաթերթի ջատագովականը, որ աւելի Պարպեանցի վրայ կը ծանրանայ, Երևանի թեմակալութեան ատեն շատ ձեռնադրութիւններ ընել տուած ըլլալը, Մակար կաթողիկոսին օրէն ձեռներէցութիւններ ունեցած ըլլալը, և Գէորգ կաթողիկոսի օրով յանդիմանուած ըլլալը կը յիշէ, որոնք չէին կրնար կառավարութիւնը հետաքրքրել, մանաւանդ երկար ատեն անցնելէն ետքը նորոգուիլ: Իբրև վերջին դիպուած յառաջ կը բերուի Մակարի թողօնին իբր գող ամբաստանուած Յակոբ Կիրակոսեան փոքրաւորին գողակից ենթադրուիլը: որ եթէ պետական մտադրութեան առարկայ եղած ըլլար, խուսարկութեանց և դատաստանի ենթարկուած պիտի ըլլար, և ոչ թէ առանց քննութեան և առանց ամբաստանութեան և առանց դատաստանի կառավարական ձևով հեռացուելուն: Ակնարկութիւն կըլլայ նաև վերջին ատեններ տեղապահական գործունէութեան դէմ դժուարութիւններ յարուցանելուն. սակայն ասոնք ալ եթէ քսութենէ ու մատնութենէ վերծ ըլլային, օրինական դիտողութենէն և քննութենէ աւելի հետևանք չէին կրնար ունենալ, Պարպեանց, որ ինչպէս ըսինք ակնածութեան դէմ ապստամբ և համարձակութեան մէջ անկոպար բնոյթ ունէր, Արեօլի աքսորավայրէն 1892 ապրիլ 20-ին ընդարձակ հերքում մը կը կրէ Գալստեանի, միառմի ցրելով Արարատի յօդուածին յառաջ բերած կէտերը (ՍՈՒ. 5-131), զոր սակայն սա գաղտնի կը պահէ, և կերևի թէ կը ջնջէ ալ, զի և ոչ մահուանէ ետքը անոր թուղթերուն մէջ կը գտնուի, և իբրև իր հին օրերու յիշատակ կը հրատարակէ վայն Պարպեանց (ՍՈՒ. 3): Մենք աւելորդ կը դատենք այդ գրութեան վերլուծումը տալ, միայն հետաքրքրական կը գտնենք այն փաստացի ցուցմունքները, որոնք կը պարունակեն Մկրտիչ եպիսկոպոս Բաբամեանի տեղապահական գործունէութիւնը արգիլելու կամ չափաւորելու համար նոյն ինքն Երեմիայի բանիւ և գրով և գործով ըրած ձեռնարկները (ՍՈՒ.43-52) և ձեռնադրութեանց ընդարձակման համար Երեմիայի կատարած միջնորդութիւնները (ՍՈՒ.67-74):

2956. ԸՆՏՐԵԼԵԱՑ ԽՆԴԻՐԸ

Գալստեան-Սեդրաբեան թելադրութեամբ, գուցէ և գրչութեամբ հրատարակուած Արարատի անձնաջատագովականը, բնաւին չէր ակնարկեր առաջիկայ կաթողիկոսական ընտրութեան, բայց այս շեշտուած լուծիւնը աւելի ևս մատնանիշ կընէր երկու եպիսկոպոսաց մասին կատարուած բողոքոյ և մատնութեան իսկական նշանակութիւնը: Տեսանք որ պաշտօնէութեանց փոփոխութիւնները և մտաբաններու տեղափոխութիւնները նպատակ ունէին քուէի տէր

պաշտօնները և վանքին մէջ ներկայ երիցագոյններէն քուէի իրաւունք ստացող միաբանները հլու և հնազանդ խումբէն կազմել, և հեռացնել այնպիսիները, որոնք երբեք Գալստեանի կամ Սեդրաքեանի քուէ պիտի չտային, և մանաւանդ այն երկուքը որոնք իրենց ազդեցութեամբը կրնային ուրիշները համոզել, և իրենց հետևող ընել միաբանութեան մեծամասնութիւնը: Այդ ձեռնարկին մէջ աչքի առջև կառնուէր վերջին ընտրութեան պարագայն, զի Մակար միաբաններու քուէով էր զօրացած. Ռուսահայոց աշխարհականները թուով նուազ էին, իսկ Տաճկահայոց քուէները պաշտօնապէս հաշիւի չէին առնուեր իրենց հակապօլօժէնիական ձևին պատճառով, իսկ Տաճկահայոց ցուցուցած ընտրելիները յարգելը, պարզ փափկանկատ զիջողութիւն մըն էր հիներուն կողմէն, որ ապագայով պարտաւորիչ չէր կրնար ըլլալ, կամ լաւ ևս չէին ուզեր ընել այժմեան վարիչները: Պարզեանց և Խուտավերտեանց իրենց ընդդիմադիր ուղղութեամբը ներկային մէջ տեղապահական ձեռներէցութիւնները արգիլելէն աւելի, ապագային մէջ աթոռին տիրապետող դառնալը խափանել կաշխատէին: Այս տեսակէտով էր որ Պարզեանցի առաջնորդած խումբը տաճկահայ ընտրելի ունենալու կողմն էին, ինչ որ միւս կողմէ առեղծուած մը կը նկատուէր, զի ինքն Պարզեանց եղած էր նախընթաց ընտրութեանց մէջ և խրոխտ կերպով հակառակողը Տաճկահայոց բռնած ուղղութեան, որոնք իրենց քուէներու շատութեան վրայ կրթնած և իրենց սահմանադրութեան ձևին ապաւինած Էջմիածնի ընտրողական ժողովին արդէն ընտրեալներ կուզէին ներկայել և ոչ ընտրութեան մասնակցիլ: Այդ կէտը նոյն ժամանակին ալ տաճկահայ մտայնութիւնը շփոթի մատնած էր, և Պարզեանց իր ուղղութիւնը յանկարձ փոփոխած կենթադրուէր, իսկ Պարզեանց իր ուղղութիւնը մշտատև նոյն պահած ըլլալը կը պնդէր, ինչպէս բացատրած է կառավարական ներկայացուցիչ Միքայէլ Ամբարտանեանցի հետ տեսակցութեան առթիւ: Պարզեանց պինդ ունելով Էջմիածնի ընտրողական ժողովին իրաւունքին ու պատուոյն պաշտպանութիւնը, դժկամակած էր որ նոյն ժողովէ դուրս կատարուած ընտրութիւն մը իբր թէ խաղալիկ դարձնէ Էջմիածնի ընտրողականը, և միւս կողմանէ գիտնալով և տեսնելով որ Էջմիածնի ընտրողականէ դուրս կատարուած որևէ գործողութիւն երբեք նշանակութիւն և գործադրութիւն պիտի չունենայ ռուսական օրէնքի և օրնականութեան առջև, ցաւած էր որ Տաճկահայոց մասնակցութիւնը մեռեալ տառ կը մնայ: Սակայն այդ ցաւը իրեն բնական խրոխտ և բուռն խօսքերով յայտնելը տարբեր մեկնութեանց առիթ տուած էր: Անցեալ ընտրութեանց մէջ Պարզեց ինքն ալ առջև նետուողներէն մին և իր հոգևոր ծնողին Մակարի ուղղութեան (2892) ոյժ տուողն եղած է, Տաճկահայոց ընտրելիները կամ ընտրեալները իւրացնելու և ընդունելութեամբ յարգելու: Սակայն ներկայ պարագայից մէջ կը կարծէր, մանաւանդ թէ վստահ էր որ նոր վարիչներէն նոյն փափկանկատութիւնը պիտի չտեսնուի, ուստի սկսած էր հետամուտ ըլլալ որ Տաճկահայերը պօլօժէնիէի ձևակերպութեանց համակերպին, և իրենց անկախ քուէներու առաւելութեամբ նոր դարձուածները պարապի հանեն: Այս տեսութեամբ Պարզեանց հակառակած էր աթոռական և եկեղեցական գործառնութեանց մէջ պօլօժէնիէի յայտնի պահանջէն աւելի պետական միջամտութեանց, որոնց հանդէպ յօժարակամ ընդարձակ մուտք կը բանար Գալստեան տեղապահը, որպէսզի կառավարական համակրութիւն շահի, իսկ Պարզեանց կընդդիմանար և կը ջանար որպէսզի արտասահմանի հայեր չնչին արժէք ունեցող խնդիրների մասին գոյթակողութիւնէ ազատ լինին, և հանդարտ սիրտով համոզուին իրենց ընտրողական պատգամաւորներին այս վաղաւուրց Էջմիածնի տաճարում գումարուելուն (ՍՈՒ. 21), որով միայն կը կարծէր նա ի դերև հանել տեղապահին և իր գործակցին, կամ լաւ ևս իր առաջնորդին երազած յաջողութիւնը: Այս էր Պարզեանցի վրայ փոփոխութիւն կարծուած երևոյթին իսկութիւնը:

Պարագայից շարունակութիւնը մեզ կաթողիկոսական խնդիրին դիմաց կը հանէ, որ այնչափ աղմուկներու և բանակոխներու առիթ տուաւ Մակարի հաստատութենէն ետքը, որոնց մենք ալ ըստ բաւականին հետեւեցանք Մելիքսեդեկի անցքերը պատմելով (2330): Տաճկահայոց երեսփոխանութեան ընդունուած բանաձևը կը պարունակէր բացառաբար համակերպիլ, համապգային ժողովով խնդիրը պարզել, և Տաճկահայոց պատուութիւնը վերապահել (2914), որ եթէ խնդիրը առժամապէս կը փակէր, սակայն հիմնապէս չէր լուծեր, և միշտ առկախ կը մնար Տաճկահայոց նոր կաթողիկոսական ընտրութեան ատեն բռնելիք ընթացքը, և չէր ջնջեր Տաճկահայոց առանձնակի իրենց ժողովով կատարելիք ընտրութեան գրութիւնը: Ուստի անդստին Մակարի կաթողիկոսութիւնը ճանչնալու օրէն որոշուած էր կաթողիկոսական յանձնաժողով մը ընտրել, որպէսզի խնդիրը խորապէս ուսումնասիրուի, հանդարտօրէն կշռադատուի, Մայրաթոռի հետ բանակցութիւններ կատարուին, և ընդհանուր հաւանութեամբ հաստատուն ձև մը որոշուի: Յանձնաժողովը կազմուեցաւ 1886-ին լաւագոյն և կարողագոյն տարրերով, բայց Յարութիւն պատրիարքի ժամանակ անգործ մնաց, հարկաւ գործեր ստիպողական չտեսնելով, և ուստից սկսելով ուր վերջացնելն չգիտնալով, մինչև որ հարկ եղաւ որ Մակար կաթողիկոս 1889 մարտ 28-ի կոնդակով Խորէն պատրիարքին յիշեցնէր, ստիպել յանձնաժողովն կաթողիկոսական ընտրութեան, փութով աւարտել զգործ եղանակի ընտրութեան և մատուցանել ի տնօրէնութիւն ապգային Ընդհանուր ժողովոյն, վասնզի միտք բերելով անցելոյն մէջ յուլած վէճերը և յարուցուած աղմուկները՝ կըսեր, ամենակարևոր գործող այդ յոյժ ցանկալի է և վասն մեր (89. ԱՐԼ. 1594): Լրագրութիւնն ալ իրաւունք տուաւ հեռատես ծերունի կաթողիկոսին զգաստացուցիչ ազարարութեան (89. ԱՐԼ. 1604), բայց դարձեալ արդիւնքն մը առաջ չեկաւ, այնպէս որ երեսփոխութեան 1889 հոկտեմբեր 6-ին գումարման մէջ առաջարկ եղաւ յանձնաժողովը լուծեալ նկատել և գործը ժողովին դարձնել (89. ԱՐԼ. 1720): Ասոր վրայ սկսաւ լսուիլ թէ յանձնաժողովը գումարուիլ սկսեր է (89. ԱՐԼ. 1736), սակայն խնդիրն այնքան բարձրէն և այնքան արմատական կերպիւ բռնուած էր, որ անդամներէնմին հոկտեմբեր 27 ին նիստին մէջ կը յայտնէ թէ կը վախնայ որ տարիներ տևէ լուծումը, և ժողովականներէն մին ալ մեռելատիպ մարմին մը դարձած կը կարծէր յանձնաժողովը: Այս առիւ կը ծանուցանէր թէ ընտրութեան ձևին մասին թղթակցութիւնք եղած են Հայրապետի և Պոլսոյ կրօնական ժողովոյ մէջ (ՍՈՒ. 21): Յանձնաժողովը վերջապէս համառօտ տեղեկագիր մը կը բերէ, որ աւելի խնդիրը քնացնելու կերպարանըն ունէր, բայց երեսփոխութիւնը կը սկսի անո զբաղիլ շարք մը դռնփակ նիստերու մէջ, որոնք եզրակացութեան մը չէին յանգէր, թէև պատրիարքը 1890 ապրիլ 20-ին նիստին մէջ կը յանձնարարէր վերջնական որոշման մը հասնիլ (90. ԱՐԼ. 1879): Յաջորդ ամիսներուն մէջ ալ գործը աւելի առաջ չկրցաւ երթալ. վրայ հասան Գումգաբուի դէպքը և պատրիարքի հրաժարականը (2847-2849), և Ընդհանուր ժողովոյ գումարները ընդհատեցան, և հարկ եղաւ նիստերը դադրեցնել (91. ԱՐԼ. 2141) որով երբ ապրիլ 16-ին կաթողիկոսը վախճանեցաւ, կաթողիկոսական խնդիրը կը մնար տակաւին իր տարտամ վիճակին մէջ, առանց ընտրողական հաստատուն կանոն մը ունենալու, և վեց տարիէ ի վեր յայտնուած մտադրութիւնը անգործ բաղձանք միացած էր և կը մնար տակաւին:

2958. ԸՆՏՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Այդ անգործութիւնը սակայն բացարձակ անհոգութեան և անտարբերութեան հետևանք պիտի չկարենանք ըսել, այլ մանաւանդ թաքուն մտադրութենէ առջև եկած կը կարծենք: Յորմէհետև էջմիածին ռուսական տիրապետութեան ներքև մտած էր, և էջմիածնի համար յատուկ կանոնագրութիւն մը հաստատուած էր, և անոր մէջ ընտրութեան որոշ ձև մը հաստատուած էր,

Տաճկահայերի ի պուր աշխատած էին իրենց կողմէ տարբեր ընտրութեան կանոն կազմել, և ամէն ընտրութեան տարբեր ձև մը գործածած, և անով աւելի իրենց տկարութիւնը յայտնած և հաստատուն կանոն մը չունենալնին խոստովանած, որով իրենց առաջարկած ձևերը նշանակութենէ վուրկ կը մնային, և ռուսական պետութեան օրէնքով հաստատուած կանոնը նոյնութեամբ կը գործադրուէր: Մայր աթոռը միշտ պագուցած էր թէ որևէ տարբեր ձև մը պիտի չկրնայ հաստատուիլ և ընդունելի ըլլալ, թէ պօլօթէնիէի հաստատած ձևին մէջ ընդհանուր ազգին մասնակցութիւնը աւելի լաւ կերպով կը պահպանուի, իսկ երկու ընտրելիներէ կամ ընտրեալներն մէկին կայսեր կամքով որոշուիլը, քաղաքական իշխանութեան անխուսափելի մասնակցութեան թէ ոչ նախադասելի, գոնէ ապահովագոյն կերպն էր: Այդ կէտերը վերջին անգամ մըն ալ Մայրաթոռէն և դեսպանատունէն զեկուցուած էին, և այս պարագաներն էին որ Տաճկահայերը կը թուլցնէին, նոր ձևի մը հաւանականութիւնը չէին տեսնար, և իրենց մասնակցութեան աննշանակ մնալը ծանր կու գար: Որչափ ալ պօլօթէնիէի համակերպելու պէտքը կը պագուէր, սակայն վայն համարձակ արտայայտել դժուար կըլլայ, և միւս կողմէն ամենէն ջերմ հակապօլօթէնիականներն ալ լռութիւն կը պահէին թող տալով որ գործը իրեն ընթացքով հասնի այնտեղ ուր հասցնելը անհրաժեշտ կերևէր: Այս տեսութիւնները կը պարզեն վեցամեայ անգործութեան ներքին պատճառը, որ իրեն շարունակութիւնը ունեցաւ նոյնիսկ Մակարի մահուանէ ետքը, և այս պարագային իսկ շարժում մը չեղաւ ընտրութեան ձև մը գտնելու: Ռուսահայեր փափաքելով որ Տաճկահայոց ձայնը չզրկուի ընտրութեանց մէջ, սկսան հրաւեր կարդալ որ երկու կողմերը իրենց պատգամաւորներով համամիտ և համակամ միակ ժողովի մէջ կատարեն ընտրութիւնը, և էջմիածինէ դուրս կատարուած ընտրութիւն մը իբրև պարտագիր չբերուի էջմիածին, որ միութեան կապերը չէր ամրացներ: Տաճկահայոց մէջ ալ կամաց կամաց լեզուներ սկսան բացուիլ, և 1891 օգոստոսի մէջ, այսինքն Մակարի մահուանէ չորս ամիս ետքը, արդէն այս գաղափարներ սկսած էին հրապարակելնել (91. Ա.ՐԼ.2277): Հետզհետէ յորդորականներ սկսան հրատարակուիլ, որպէսզի այլևս աւելորդ ջանքեր և ճիգեր չթափուին, և յաջողելու միակ ձևը համարձակ ձեռք առնուի (91.Ա.ՐԼ.2288) և իրօք ալ երեսփոխանական և այլ ազգային մարմիններու մէջ արդէն ընդհանուր ընդունելութեան արժանացած էր սա գաղափարը, թէ այս անգամ պէտք է թողուլ որ գաւառի թեմօրայք իրենց եկեղեցական և աշխարհական պատգամաւորներով երթան մասնակցին հայրապետի ընտրութեան իջման տեղւոյն մէջ (Ա.ՐԼ.2294): Բայց որպէսզի այդ ձևը գործադրուի պէտք էր որ պատրաստ ըլլային Մայրաթոռոյ հրաւիրագիրերը, որոնք թէպէտ 1891 մայիս 5 թուականով պատրաստուած էին վրկուելու համար (91.Ա.ՐԼ.2361). սակայն հոկտեմբեր 2-ին դեռ Կ. Պոլիս յղուած չէին, և հարկ եղաւ փութացնելու համար դիմում ընել (91.Ա.ՐԼ.2314): Այսպէս կերևի թէ ռուսական կառավարութիւնը կամաւ կուշացնէր, որպէսզի եթէ Կ. Պոլսոյ մէջ տակաւին հին տեսութիւնները տիրեն, իւրաքանչիւրը վիճակին ուղղակի հասցնէ հրաւիրագիրները: Բայց երբոր վստահացաւ թէ հին տեսութիւնները մէկդի կը թողուի, 44 հրաւիրագիրներ միահապոյն յանձնուեցան պատրիարքարանին հոկտեմբեր 28-ին (91.Ա.ՐԼ.2328): Արդէն Խառն ժողովոյ կողմէն յանձնաժողով մը ընտրուած էր պէտք եղած ձևակերպութիւնները ճշդելու (91.Ա.ՐԼ.2315 և 2320), և սահմանադրութեան համաձայն գործած ըլլալու համար Ընդհանուր ժողովոյ գումարման համար արտօնութիւն ստանալու պէտք կը պագուէր և կորոշուէր: Սահմանադրութեան տառը կը պարունակէր կաթողիկոսի ընտրութեան մասնակից ըլլալ (ՍՍ.Լ.40), որ առաջ իբր ընտրելու գործողութիւն կատարել իմացուած էր, բայց այժմ պարզապէս Տաճկահայոց մասնակցութեան ձևը որոշելու իմաստով սկսած էր իմացուիլ, և թեմօրէից ուղղակի մասնակցութիւնը Ընդհանուր ժողովով որոշել կուզէր, Սակայն Ընդհանուր

ժողովոյ նիստերը խափանուած էին պետական կարգադրութեամբ, և պէտք եղած ատեն յատուկ արտօնութիւն ստանալու հարկը ծագած էր: Վարչութիւնը վերակազմելու համար արտօնութիւն ստացուած և կարգադրուած էր, կաթողիկոսական ընտրութեան համար ալ ուլուեցաւ (91.ԱՐԼ.2356), բայց արտօնութիւնը յապաղեցաւ ընտրական ժողովին համար որոշուած 1892 մայիս 3-ին հապիւ երեքուկէս ամիս կը մնար, և արտօնութիւն ստանալու ակնկալութիւններն ալ սկսան տկարանալ, ուստի Աշըգեան պատրիարք գործունեայ դերը սիանձնելու քաջալերուած՝ 1892 փետրուարին առաջին օրէն վիճակներու ուղղուելիք շրջաբերականը պատրաստել ձեռնարկած էր, և փետրուար 11-ին հրաւիրագիրերը և շրջաբերական հրահանգները թղթատարութեան յանձնեց, և 12-ին Խառն ժողովին հաղորդեց (92.ԱՐԼ.2414,2416): Պէտք է ընդունիլ թէ Աշըգեան այս պարագային մէջ վարչական գործունէութեան արդիւնք ցուցուց և արժանիք ունեցաւ, սակայն խնդիրը որևէ արտաքին տեսութենէ անկախ էր և լոկ հոգևորական մակարդակի վրայ կը մնար, և Աշըգեան ալ իրեն սեփական շրջանակին մէջ կը գտնուէր:

2959. ԱՆՄԻՉԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ

Պատրիարքին յանձնուած հրաւիրագիրերը 44 հատ էին, զի 1858-ին կազմուած և ընդունուեցաւ Կ. Պոլսոյ պատրիարքութեան 45 վիճակներու ցուցակէն (2690) ջնջուած էր Կարսը, որ 1876-էն ի վեր Ռուսիոյ անցած էր, և մէկն ալ նոյն իսկ Կ. Պոլսոյ վիճակն էր, որով պատրիարքարանէ ցրուած հրաւիրագիրեր եղան 43 (ԱՂԱ.19-20): Սիսի և Աղթամարի և Երուսաղէմի աթոռներուն սահմանուած միմի գրաւագիրերը Կ. Պոլսոյ պատրիարքարանին չյանձնուած, այլ ուղղակի իրենց հասցէին ղրկուեցան: Իսկ անոնց ենթադրեալ վիճակներու բաժանումը, որ 1866-ի ընտրութեան ատեն կազմուեցաւ, Մայրաթոռէ ընդունուած չէր, և հետևապէս աւելցած 17 վիճակներուն անունով հրաւիրագիրեր չուղղուեցան, և միայն երեք աթոռները իբրև միմի վիճակները հրաւիրուեցան, որչափ ալ աւելցած վիճակներուն անունները յիշուած կը տեսնենք (92.ԱՐԼ.4679 և ԱՂԱ.21), թէպէտ հրաւիրներ յղուած ըլլալը ո՛չ ըսուած է և ոչ լսուած: Տաճկահայոց վիճակներուն սեփական պատգամաւորներով մասնակցելուն որոշումը բնաւ դիտողութեան կամ ընդդիմութեան չհանդիպեցաւ, որ նշան է միտքերուն արդէն պատրաստուած ըլլալուն: Նոյնիսկ նախընթաց ընտրութեան առթիւ հակապօլօժէնիական եռանդով տեղեկագիր պատրաստողներ և ճոռոմաբան ատենաբաններ, որ գործի վրայ ալ էին, բնաւ ձայն չհանեցին, իսկ վիճակներ կարծեսթէ ակնկառոյց կը սպասէին, խնդութեամբ ընդունուեցաւ տրուած որոշումը, և հապիւ թէ պաշտօնագիրները ձեռուընին հասան՝ իսկոյն ընտրութեանց և կարգադրութեանց ձեռնարկեցին: Առաջին լուրը փետրուար 28-ին Ջմիւռնիայէ հասաւ (92. ԱՐԼ. 2430), և միւս օր մարտ 1-ին Նիկոմիդիոյ, Պրուսայի և Տրապիզոնի ընտրութեանց լուրերը առնուեցան (92. ԱՐԼ. 2431), և այսպէս հետզհետէ: Արդէն փետրուար 26-ին խառն ժողովը Կ. Պոլսոյ աշխարհական պատգամաւոր ընտրաց էր Տիգրան Կիւմիւշկէրտան բարեսէր վաճառականը, Հիւանդանոցի հոգաբարձու և Էջմիածնի գանձանակաց հսկող (92. ԱՐԼ. 2428), իսկ Աշըգեան պատրիարք իրեն կողմէն պատգամաւոր նշանակեց Արմաշու փոխ վանահայր և վերատեսուչ Օրմանեան Մաղաթիա եպիսկոպոսը (92. ԱՐԼ. 2437), որ կրկին և կրկին հրաժարականներով ջանաց խոյս տալ այդ պաշտօնէն, սակայն թէ՛ պատրիարքին և ժողովականներուն, և թէ՛ Դպրեվանքի խնամակալութեան ստիպմանց վրայ հարկադրուեցաւ զիջանիլ և Կ. Պոլիս հասաւ ապրիլ 17-ին, և մինչ կը պատրաստուէր անմիջապէս Էջմիածին ուղևորիլ, Կովկասի կառավարչապետէն ռուսական դեսպանատան հասնող հեռագիր մը արգելք կը դնէր Օրմանեանի պատգամաւորութեան: Գալստեան-Սեդրաքեան ընկերակցութեան մի դրդումն էր, որ Օրմանեանի պատգամաւորութիւնը իրենց ծրագիրին (2956) անյարմար տեսնելով, կառավարչապետին թելադրած էին զայն արգիլել՝

հիմնուելով Օրմանեանի 1888-ին Էջմիածինէ մեկնելուն պարագաներուն վրայ (2927): Սակայն ռուսական և օսմանեան կառավարութիւնները ընդարձակ դիրքութիւններ տուած էին պատգամաւորներուն որոշման և ուղևորութեան: Ռուսական կառավարութիւնը, որ եկեղեցականներու տրուելիք անցագիրներուն համար նախարարական արտօնութիւն կը պահանջէ, լիազօր իշխանութիւն տրուած էր դեսպանին ամէն պատգամաւորներու անցագիրները անխտիր վաւերացնել, և Օրմանեանի անցագիրն ալ արդէն վաւերացուած էր: Օրմանեան կառավարութիւնն ալ մաէն պատգամաւորի առանց դժուարութեան անցագիր կու տար (92.ԱՐԼ.2477) իսկ պատրիարքարանի պատգամաւորներուն Օրմանեանի և Կիւմիշկերտանի յատկապէս նոր շքանշաններ ալ շնորհած էր: Դեսպանը ինքն փութաց նախարարութեան ձեռքով խափանել կառավարչապետի անհաճ միջամտութիւնը և թիւրիմացութիւնը բառնալ, և Օրմանեան ապրիլ 25-ին Կ. Պոլիսէ մեկնելով, առանց ուրեք դադար առնելու, մայիս 2-ին առտուն կը մտնէր Էջմիածին, և 3-ին ընտրողական ժողովը կը բացուէր: Իսկ Կիւմիշկերտան ապրիլ 11-ին Կ. Պոլիսէ մեկնած (92.ԱՐԼ.2464), և կանուխէն Էջմիածին հասած կը գտնուէր ուրիշ տաճկահայ պատգամաւորներու հետ:

2960. ԺԱՄԱՆԱԿԻՆ ԿԵՐՊԱՐԱՆԸ

Կաթողիկոսական ընտրութեան պարագաները պատմելու չանցած, համառօտիւ քաղենք Մակարի վերջին օրերուն և աթոռոյ պարագութեան միջոցին տեղի ունեցած ինչինչ դէպքերը, թէպէտ շատ նշանաւոր բաներ չունենանք յառաջ բերելու: Կ. Պոլսոյ պատրիարքութեան գործերը յառաջեցին նոյն տարտամ և անկայուն վիճակին մէջ, որուն ստուերագիծը անգամ մը տւինք արդէն (2950): Երեսփոխանութեան նիստերը խափանուած ըլլալով նորանոր խնդիրներու աղբիւրն ալ ցամաքած էր, վարչութիւնը կը գոհանար օրըստօրեայ գործերու կարգադրութեամբ, և գաւառական ու թաղական խնդիրներու հնարաւոր լուծումները տալով և խնդիր յուլելէ խուսափելով, պատրիարքը գոհ էր ընդհանուր մտահոգութենէ վերժ մասնաւոր խնդիրներու հետևելով, սակայն իրեն դէմ արտասահմանի մէջ հակառակութիւնը կաճէր, իսկ ներքին շրջանակին մէջ դժգոհութիւնը կաւելնար, սակայն խնդիր յուլելու և տագնապ պատճառելու պատասխանատուութիւնը գործիչները կը կասեցնէր, և առերևոյթ հանդարտութիւն կը տիրէր: Իբրև արտասահմանի խլրտումներուն դարման Աչըզեան պատրիարք մերթընդմերթ հաւատարմութեան յորդորող շրջաբերական կոնդակներ կը հրատարակէր, ինչպէս 1891 նոյեմբեր 7-ին (91. ԱՐԼ. 2540), և դեկտեմբեր 31-ին (92. ԱՐԼ. 2930), սակայն հիմնական բարեկարգութիւն մը չէր տեսնուեր կացութեան վրայ: Օսմանեան կառավարութիւնը և առանձնապէս Ապտիւհամիտ կայսրը որևէ վտանգի առջևն առնելու և անկարգութեանց տեղի չտալու նպատակով, երբեմն քաղաքական յանցանքով դատապարտեալներու մասնաւոր ներումներով կը կարծէր միտքերը քաղցրացնել, և երբեմն պիտակ կասկածներով ձերբակալութիւններ և դատապարտութիւններ շատցնելով անախորժ ձգտումները սպաւել կը խորհէր, սակայն երկու փորձերն ալ իրական և հիմնական արդիւնք չէին բերեր: Եւրոպական պետութիւններ, որոնք Պերլինի դաշնագիրով իբրև թէ երաշխաւորութիւն ստացած էին հայաբնակ գակառներու կացութիւնը բարւոքելու, կը գոհանային հանդիպած անտեղութեանց տեղեկագիրները հաւաքել իրենց հիւպատոսներէն, որոնք այնչափ վատ էին, և հայ ազգին վիճակը այնպիսի ահուելի գոյներով կը նկարագրէին, որ այս միջոցին չհամարձակեցան հրատարակել իրենց գոյնպոյն յիշատակագիրներուն կարգին (ԹՈՒ. Բ. 550): Բայց ինչպէս չէին հրատարակէր, նոյնպէս ալ խնդիր չէին յուլեր, պի կերևի թէ իրենց շահերուն տեսակէտէն հետապնդելու խնդիր չունէին որ Հայոց խնդիրը իբր լծակ ձեռք առնէին: Աչըզեան կրնար արդարանալ միջազգային միջամտութիւնը չգործածելուն մէջ, եթէ գոնէ

օսմանեան կառավարութեան մօտ ապրու դիմումներով ձեռք առնուած խնդիրին հետևէր, ուր ընդհակառակն ընդհանուր դժգոհութեան առիթ կու տար իր հետևած անտարբեր դիրքը բարեկարգութեանց խնդիրին հանդէպ. թէպէտ ներքին կարգադրութեանց, դիւանական գործառութեանց մասին շրջաբերականները և հրահանգները կառատացնէր: Կը ճանչնանք որ շատ տարբեր են պատասխանատուութեան ներքև գտնուողի և հեռուէն անպատասխանատու դիտողին մտայնութիւնները, ինչպէս տարբեր են վերէն վար և վարէն վեր նայողներուն տեսութիւնները, և այս խորհրդածութիւններ կը ծառայեն Աշըգեանի կացութիւնը ուղիղ կշռադատելու: Սակայն իբրև եղելութեանց անաչառ պատմագիր՝ չէին կրնար լռել իրեն պաշտօնավարութեան դէմ տիրող ընդհանուր դժգոհութիւնը:

2961. ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅ

Առանձինն յիշատակութեան արժանի կը համարինք Աշըգեանին Նարպէյի դէմ, Խորէնի մը միւս Խորէնին դէմ, ունեցած մէկ արարքը, որ շատ խօսել տուաւ իր ժամանակին: Պատրիարքական կոնդակ մը կարգադրուեցաւ յանկարծ մայրաքաղաքի եկեղեցիներու մէջ, 1892 յունուար 19-ին ամսուն 16-ի թուականով, որով Խորէն Նարպէյ եպիսկոպոսի մասին կը վճռուէր դադարեցնել Պէշիքթաշի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ քարոզչութենէն, և արգելուլ վինքն առ այժմ իւր հոգևոր կարգին յատուկ բոլոր պաշտամանց գործածութենէն ի մեծամեծաց մինչև ի փոքունս, աւելին յանձնելով ընդհանրական Հայրապետի վերին հեղինակութեան, թէպէտ աթոռոյ պարապութեան միջոց էր: Իսկ իբր պատճառ կը ցուցուէր, որ բացի առաջները եկեղեցական կարգապահութեան հակառակ վարմանց մէջ գտնուելէն, վերջին օրերս ամենածանր յանցանաց մէջ գտնուած է լոկ ի պատճառս չարաշահութեան, և թէ իր գործերը պաշտօնապէս ծանօթ են պատրիարքարանին, և թէ իւր իսկ խոստովանութեամբ հաստատուած են: Աւելի յայտնի բան մը չհրատարակուեցաւ, բայց նորօրինակ և անակնկալ եղելութիւնը հետաքրքրութիւն շարժեց, զի Նարպէյ բարձր դիրքի տիրացած, երկար ատեն կրօնականի ատենապետութիւնը վարած, պատրիարքութեան հաւանական ընտրելի եղած, և անձնական արժանիքներով ճոխացած անձնաւորութիւն մըն էր, որուն դէմ գործական կարգադրութեան վճիռը կարտասանուէր կրօնական ժողովոյ որոշումն ալ չյիշուելով: Ստոյգ աղբիւրներէ քաղուած տեղեկութիւններն հետևեալներն եղան: Նարպէյ վերջին ատեններ ներքին և մտերիմ բարեկամութեան մէջ կը գտնուէր բժշկապետ Մավրօյենի փաշայի հետ, որ Ապտիւլ համիտ կայսեր ամենամօտիկ անձն էր, և անոր միջնորդութեամբ Նարպէյ արքունեաց բարեացակամութիւնը և վստահութիւնը կը վայերէր, մինչև իսկ իր հանապապօրեայ կերակուրը արքունի խոհանոցէն կը մատակարարուէր: Բայց նա միւս կողմէ եւրոպական լրագիրներու թղթակցութիւն կը կատարէ եղեր, և ունեցած նեքին յարաբերութիւններէն օգտուելով պալատան գաղտնիքներ ալ կը հաղորէ եղեր ոչ նպաստաւոր ուղղութեամբ: Այս նամակներէն մէկը ոստիկանութեան ձեռք կանցնի, ինչպէս կը կարծուի նոյն իսկ իր քեռորդւոյն գործածկութեամբ, որուն վրայ Նարպէյ ոստիկանական հարցաքննութեան կենթարկուի, որուն մէջ նամակին հեղինակն ըլլալը կը խոստովանի արդարացուցիչ պարագաներով, և կայսերական գթութեան դիմելով: Աշըգեան պատրիարք այդ հարցաքննութեան ատեն, վարագոյրի ետև ծածկուած ուկնդիրներ կը յղէ, և այսպէս կրօնական ժողովոյ ատենապետին, պատրիարքական փոխանորդին, պատրիարքարանի գործակաւտարին և մայր եկեղեցւոյ թաղական խորհրդոյ երկու անդամոց ներկայացուցած տեղեկագիրին վրայ հիմնուելով կարտասանէ իր վճիռը յիշելով գործողութեան պաշտօնապէս ծանօթ ըլլալը, և գործողին խոստովանութիւնը: Ապտիւլ համիտ կայսր կը բաւականանայ իր շնորհները դադարեցնելով և գթութեան դիմողին յանցանքը ներելով՝ անպատիժ կը թողու մինչ Աշըգեան մասնաւոր նամակի

մը մէջ պարծանքով կը յիշէ, թէ թէպէտ կայսրը ներեց, բայց ինքն չէր կրնար ներել: Աշըգեանի ընթացքը քննադատելու չենք մտներ, միայն չենք կրնար չդիտել, որ եթէ անձնական կիրք մը խառնուած չըլլար, պաշտօնական ոչ մի հարկ չէր ստիպէր Վինքն քան վթագաւորն թագաւորական ըլլալ ըստ ծանօթ առածին: Նարպէյի կեանքը առեղծուածական ըլլալու չափ տարօրինակ զուգորդութիւն մըն է միտքի ու գործի, լեզուի ու գրիչի գերազանցապէս ընտիր ձիրքերու հետ խառնուած թեթևութեանց և անտեղութեանց և ստորնութեանց: Բանասէր և բանաստեղծ, լեզուագէտ և հեղինակ, քարուպիչ և ատենարան, խօսքի հմուտ և գործի վարիչ աստիճանի տիրացած և վարմունքի գիտակ, բան մը չէր պակսեր իրեն առաջնակարգ դեր վարելու, եթէ այդ առաւելութեանց չզուգորդէր այնպիսի պարագաներ, որոնք ոչ թէ բարձրաստիճան եկեղեցականի այլև հասարակ մարդու մը վրայ ծիծաղելի պիտի ըլլային. կանացի պչրանքի և արտաքին չպարի կիրառութիւնը, անուններու և երևոյթներու անկոպար վակատումը. լուրջ գործունէութիւններէ և աշխատալի պաշտօններէ խուսափումը, արտաքնայարդար ցուցադրութեանց և մուրացածոյ պատուաւիրութեանց տենչանքը, համարձակ յարաբերութեանց և ընտանեկան կենաց ընդարձակումը, լոկ երևոյթներով քան արդիւնքներով բարձրանալու հետապնդումը, և հակառակ իր մտաւորական կարողութեան՝ անհարկի միջոցներու միամիտ հետևողութիւնը, որոնց իբրև լրման պսակ եղաւ արքայապուն լուսինեանութեան առասպելական կազմակերպութիւնը, և այսպէսով պարապի ելաւ այնչափ արժանաւորութեանց գագաթնակէտն եղաւ ճարտար բայց ոչ աննենգ դարձուածով ձեռք ձգուած եպիսկոպոսութիւնը մինչ Ներսէս Վարժապետեանի համարձակ խոստովանութեան համեմատ՝ իրմէ ալ առաջ կրնար ըլլալ անոր պատրիարքական աթոռ բարձրանալը իր կարողութեանց և ձեռնահասութեանց արժանեօք: Ճշմարիտ ցաւով է որ այս տողերը կը պարտաւորուինք գրել, լոկ պատմական եղելութեանց ներքին կապակցութիւնները պարզաբանելու պարտաւորութեան հպատակելով: Նարպէյ հասարակ գործառութենէ իսկ չէր քաշուէր երբոր ցուցադրութեան մը հրապոյրը կը վգար, ինչպէս եղած էր իբր պարզ հետևակ պաշտօնեայ Յարութիւն պատրիարքի մինչև Երուսաղէմ ընկերանալը, և վերջերն ալ Սանասարեան Մկրտիչ բարերարին դագաղին հետ իբրև յուղարկաւոր պաշտօնեայ Կ. Պոլիսէ Տփղիս ուղևորիլը: Աշըգեանի կոնդակով տրուած հարուածը բոլորովին չլարեցուց Նարպէյը, որ մէկ ծայրէ միւս ծայրը անցնելով և ունեցած նիւթական կարողութիւնն ու առձեռն միջոցներն ալ ծածկելով խեղճ և անկեալ անձի մը կերպարանը վգեցաւ, ներկայ ալիքը սպիտակացան, չպարեալ այտերը խորշումեցան, երփներանգ և սեթևեթեալ վգեստները հնոտիներու փոխուցեան, ցուցադրութեանց ձևն ու կերպը փոփոխուցեան, մուրալու և գութ շարժելու միջոցներու հետևեցաւ: Ամենէն ծանր հետևանքն եղաւ ներքին վիշտերը ոգելից ըմպելեաց մէջ թաղելու որոշումը, թէպէտ առաջ ալ բոլորովին օտար չէր անոնց կիրառութենէն, որոնք վգալի կերպով ազդեցին իր կազմութեան վրայ, և սիրտի տկարութենէն և արիւնի համախրոնութենէն յառաջ եկած յանկարծական վախճանը փութացուցին, որ տեղի ունեցաւ 1892 տարւոյ նոյեմբեր 4-ին, կոնդակի հարուածէն իննուկէս ամիս ետքը, թունաւորման վրոյցը այս առթիւ ալ կրկնուեցաւ, սակայն նա իր քրոջ տունը կը մնար ու կապրէր, և պալատէն կերակուր այլևս չէր ընդունէր: Նոյն օր ոգելից ըմպելեաց չափազանց կիրառութենէ և դժուարամարս կերակուրի առատ վայելումէ ետքը պարտէվ կիջնայ և գլուխն ի կախ հողային աշխատութեանց կը պարապի, և այս պարագային յառաջ կու գայ սիրտի պայթումը, և վրայ հասնող բժնշկն ալ անդարմանելի կը գտնէ արկածը, և քիչ ետքը հոգին կաւանդէ: Աշըգեան պատրիարք մահուանէ անդին ալ վարելով իր խստութիւնը, միայնոյ Գրիգորիս Յովհաննէսեան եպիսկոպոսի կը յանձնէ օծումն ու դամբանականը, և փոխանորդ Գաբրիէլ Ճէվահիրճեան վարդապետի յուղարկաւորութեան նախագահութիւնը սակայն Մատթէոս Իվմիրլեան, Գրիգորիս

Ալէաթճեան, Հմայակ Դիմաքսեան և Աբրահամ Մամիկոնեան եպիսկոպոսներ ինքնահրաւեր կու գան հանդէսին մասնակցիլ, աւելի իբր կարգադրողին հակակիր քան հանգուցելոյն համակիր ցոյցի մը դիտումով: Իսկ Օրմանեան եպիսկոպոս, որ նոյն իսկ նոյեմբեր 4-ին երեկոյին Արմաշէ Կ. Պոլիս հասած էր, լոկ իբր սգակիր ազգական ներկայ կը գտնուի և մինչև Շիշլիի գերեզմանոցը ընկերանալով՝ գերեզմանի օրհնութիւնը կը կատարէ (92. ԱՐԼ. 2637): Այսպէս անփառունակ կը փակուի կեանք մը, որ շատ մեծ փառքի արանի էր իր արժանիքներով, այլ վրիպեցաւ աւելի քան ուրիշի իր իսկ կիրքերով: Ծնած էր 1832 հոկտեմբեր 1-ին (2682) և 60 տարեկան ու մէկ ամսական էր վախճանած ատենը, կրնանք ըսել տարածամ, զի իրենպէսներուն համար աւելի երկար կեանք մը սովորական կրնայ ըսուիլ: Իր ետևէն թողած համբաւը գրագէտի և լեզուագէտի հոշակն է միայն, և այն աւելի եպիսկոպոսութենէ առաջ արտադրած արդիւնքներով, իսկ անկէ ետքը իրմէ սպասուած գործիչի և վարիչի հոշակը դժբախտաբար արդիւնաւոր տեղ մը չի գրաւէր ազգային կեանքի մէջ:

2962. ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆԶՏԵԱՆՑ

Խորէն Նարպէյէ միայն 13 օր ետքը, նոյեմբեր 17-ին կը փակուէր ուրիշ կեանք մըն ալ, շատ յիշուած և շատ զրուցուած և իրաւամբ գովուած, Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց, տեղական Վանեցի հնչմամբ Սանդեոնց, որուն անունը տուած ենք անդստին Վարագայ վանքին մէջ Խրիմեանի աշակերտած օրէն: Գարեգին &րոպական և արտաքին դաստիարակութիւն չէր ունեցած, բայց կատարեալ էր ազգային ուսմամբ և հմտութեամբ, լոկ ինքնօգնութեան շնորհիւ, անխոնջ աշխատասէր մը եղաւ ազգային յիշատակաց հաւաքման և հրատարակութեան նուիրուած, որոնք արտաքիններէն ալ գնահատուեցան: Անձնուէր վաստակաւոր մը եղաւ ազգին նա, հովուական և քարոզչական պաշտամանց մէջ. խոհական գլուխ և հաւատարիմ օգնական մը վարչութեանց և ժողովականութեանց մէջ, անկեղծ բնոյթ, անսեթևեթ կենցաղ, և զուարթ ընկերակից: Ազգային խնդիրներու մէջ եռանդուն գործակցութիւնը ոմանց աչքին կասկածաւոր երևցաւ, և նոյն իսկ պետական կասկածանաց երեսէն տեղափոխութեանց ստիպուեցաւ, այլ երբեք պարտաւոր կամ արատաւոր չմնաց, և ոչ ալ գործէ քաշուելով պարապութեան մատնուեցաւ: Վերջին ատեններ Տրապիզոնի առաջնորդութենէ հեռացած՝ Բերայի քարոզչութեամբ և կրօնականի փոխատենապետութեամբ կը վբաղէր: Գրական երկասիրութեանց մասին չենք խօսիր, զի ընդհանուր կերպով մասնագիտական նիւթը իբրև առանձին ճիւղ մեր շրջանակէն հեռու պահեցինք: Սրուանձտեանց վախճանեցաւ ազգային հիւանդանոցի մէջ, ուր փոխադրուած էր խնամուելու համար, երբոր այլ ևս բնասպիտային ախտը վտանգաւոր աստիճանի հասած էր: Իր կազմին և առողջութեան վստահացած բժշկական դարմանները կանարգէր, և կարևորութիւնը չէր տար իր մէջ բունեալ ախտին, մինչև որ այն իր անողոք ընթացքը կատարեց և իր զոհը գերեզման տարաւ 52 տարին լրացնելէն 15 օր առաջ: Աշըգեան պատրիարք, չափաւանց զգուշաւորութեան թէ նախանձոտ ուղղութեան հետևանօք, Սրուանձտեանցի յուղարկաւորութիւնն ալ անշուք ընել տալ կուզէր, պետական կասկածանօք Տրապիզոնէ հեռացուելուն վրայ յենելով, մինչև որ ամէն կողմէ բարձրացող բողոքներ ստիպեց զինքն անձամբ կատարել օծումը եպիսկոպոսական դասուն մասնակցութեամբ, իսկ պատարագն ու դամբանականը վիճակեցաւ Օրմանեանի պատրիարքին ստիպմամբ, թէպէտ նա յանձն չէր առներ հանգուցելոյն հետ եղբայրական սիրով ու մտերմութեամբ կապուած ըլլալուն համար: Սրուանձտեան իր գրական արդիւնքներէն պատ համեստ գումար մըն ալ կը թողուր Վանայ մէջ հիւանդանոցի մը հաստատութեան սահմանուած:

2963. ԱՐՄԱՇԻ ԴՊՐԵՎԱՆՔԸ

Քանիցս յիշեցինք Օրմանեանի Արմաշէ Կ. Պոլիս իջնալն ու դառնալը, և աւելի ալ յաճախ էր այդ երթևեկը. վասնզի Դպրեվանքին վերին հսկողութիւնը Կ. Պոլիս գտնուող խնամակալութեան

յանձնուած էր, և վերատեսուչին յարմարագոյն և դիւրագոյն կըլլայ Կ. Պոլիս գալ, կարևորը բերանացի հաղորդել, ժողովով խորհրդակցիլ, որոշումները լրացնել, և միջոցները կարգադրելով դառնալ: Դպրեվանքը կանոնաւորապէս կը յառաջէր, այնպէս որ բանիմաց այցելուներ և նոյն իսկ եկեղեցական կրթութեան խեթիւ նայողներ, անձամբ այցելելով գոհունակութեամբ կը դառնային, և իրենց տպաւորութիւնները լրագիրներու մէջ գովեստով կը հրատարակէին (91.ԱՐԼ.2285) և (92.ԱՐԼ.2468): Դժգոհ միայն էին Արմաշու քանի մը հին միաբաններ, որ իրենց հացը ձեռուրներնէն խլուած կը կարծէին, և Օրմանեանի Էջմիածին գտնուած միջոցին պատրաստուած միջադէպով մը, 1892 յունիսին կարծեցին Դպրեվանքը դադրեցնել և վանքը նորէն ձեռք անցունել, բայց Օրմանեանի դիւրին եղաւ երեք օրով միջադէպը փակել, և ամենայն ինչ սովորական ընթացքին մէջ պահել: Կանոնագիրը վերաքննուեցաւ և յուլիս 29-ին խառն ժողովով հաստատուեցաւ և կանոն գործոց դարձաւ (92. ԱՐԼ. 2549): Քիչ ետքը Դպրեվանքի առաջին եռամեային հետ անդրանիկ աշակերտաց խումբին առաջին շրջանը կը լրանար, ուսկից յետոյ պէտք էր եկեղեցականութեան մտնելու որոշումին ստանալ և սարկաւազ ձեռնադրուելով՝ երկրորդ մասնագիտական շրջանին անցնիլ: Դպրութեան աստիճանները տարիէ մը կը տրուէի, լոկ եկեղեցականութեան բաղձանքին վրայ առանց ուխտագիր արտայայտութիւն պահանջելու, և ըստ այսմ առաջին դասարանը ստացած էր 1890 սեպտեմբեր 28-ին, երկրորդը 1891 սեպտեմբեր 28-ին և երկրորդը 1892 սեպտեմբեր 26-ին: Իսկ եռամեայն լրացնողներուն հրաւէր և յորդոր կարդացուեցաւ 1892 սեպտեմբերին, և ինէն, մին բացակայ և մին ալ անհաւան գտնուելով, եօթը աշակերտներ կուսակրօն եկեղեցականութեան ուխտագիր մատուցուին սեպտեմբեր 17-ին, և գիրերը կեդրոնին հաղորդուեցաւ և պատրիարքարանէ ընդունուեցան սեպտեմբեր 24-ին պաշտօնագիրով, և 27-ին Վարագայ խաչի կիրակիին առաջին եօթները սարկաւազութեան աստիճան ստացան Օրմանեանի ձեռնադրութեամբ: Նշանակալից օր մը եղաւ այն ոչ միայն Դպրեվանքին, այլև Կ. Պոլսոյ պատրիարքութեան համար, որ կանոնաւոր ուսմամբ վարգացած և եկեղեցական յատուկ դաստարակութեամբ պատրաստուած ապագայ պաշտօնեաներ կուենար վիճակներու վարչութեան և առաջնորդութեանց համար: Մինչև այն որ Դպրեվանքը նիւթապէս ալ բարեկարգուած և փոխացած էր. վի հրկիպեալ հիւրանոցին տեղ նոր և քարուկիր ընդարձակ շինուած մը բարձրացաւ, որուն հանդիսաւոր օրհնութիւնը կատարուեցաւ 1891 սեպտեմբեր 11-ին: Չարխափանի տաճարը ներսէն և դուրսէն կարևոր նորոգութիւններ ունեցաւ և վանգակատուն աւելցուեցաւ, և տաճարին հանդիպակաց թաղն ալ վար առնուելուն վաթսուն աշակերտի բաւական քարաշէն ուսումնարանի փոխուեցաւ, որուն նաւակատիք կատարուեցաւ նոյն իսկ սարկաւազաց ձեռնադրութեան օրը, 1892 սեպտեմբեր 27-ին, և հոկտեմբեր 27-ին, և հոկտեմբեր 10-ին աշակերտները վեհարանի առժամեայ ուսումնարանէն նոր շինուածին մէջ փոխադրուեցան: Խնամակալութիւնը, և աւելի ճիշդ Աբիկ Ունձեան խնամակալը, հոգւով չափ և անձնական ձեռնտուութեամբ և զոհողութեամբ Դպրեվանքի կատարելագործութեան և ապահովութեան համար ամէն միջոցները կը հոգար, և նուիրատուներ ալ և բարերարներ ալ գտնուելու կաշխատէր, որոնց կարգին յատկապէս յիշատակութեան արժանի է Գրիգոր Կիւտիկեան Եւդոկիացի վաճառականը, որ ուսումնարանի շինութեան ծախքը առատաձեռնեց, 1894 մայիս 24-ին անձամբ ալ այցելեց և երախտածանօթ ընդունելութիւն գտաւ (94.ԱՐԼ.3098), և քիչ ետքը վախճանեցաւ 1894 նոյեմբեր 25-ին (94.ԱՐԼ.3244): Հողագործական արդիւնքով սնունդի պէտքերը ապահովելու համար մշակութեան ալ մտադրութիւն դարձուեցաւ, վարուցանի արտերը շատցան, սերմերը նորոգուեցան, անտառը հոգացուեցաւ, այգին խնամուեցաւ, թթաստաններ աւելցան, և շերամատածութեան ընդարձակ գործ բացուեցաւ: Երկար տարիներէ ի վեր մտածուած և բաղձացուած հաստատութիւն մը,

վերջապէս յաջող ուղղութեամբ կը յառաջէր և ընդհանուր գոհունակութեան առակայ էր, մանաւանդ խնդութեան պատճառ էր Աշըգեան պատրիարքին իր Արմաշը պայծառացած և եկեղեցական ձգտումը իրականացած տեսնել, և սովոր էր կրկնել, որ եթէ ոչ ուրիշ պարագաներով, Դպրեվանքը բաւական էր իր պատրիարքութիւնը արդարացնելու: Սակայն իր մասը հովանաւորի դերն էր, նիւթականը Ունճեան Աբրիկ և ներքինը Օրմանեանի և Դուրեանի արդիւնք էր:

2964. ՄԵԾ ԱԹՈՌՆԵՐ

Յրիւ տեղեկութիւններ լրացնելու համար պէտք է խօսինք Տաճկահայոց միւս մեծ աթոռներուն վրայ ալ: Երուսաղէմ կը շարունակէր արդէն բացատրուած ուղղութեան մէջ (2944): Վեհապետեան պատրիարք Մաքսուտեան տեսուչի անձնատուր, և Մաքսուտեան վանական շահերուն հետ անձնականը, և ընդհանուր մատակարարութեան մէջ մասնաւոր օգուտն ու պատիւը աճեցնելու հետամուտ, իսկ միաբանութիւնը համամիտ իշխանութեանց հանդէպ լռին համակերպութեան հպատակ, ահա Երուսաղէմի կացութեան համառօտ ստուերագիծը: Օտարաց հետ միջադէպներ չէին յուզուեր այս միջոցին, Կ. Պոլսոյ պատրիարքարանի հետ վէճեր և խնդիրներ չկային, ներքին կեանքն էր միայն որ կը վբաղերնէր, և այն ալ դրամականին և յառակս դարձած պարտքի շրջանակին մէջ փակուած: Ուխտաւորական և բարեպաշտական արդիւնքներու տակաւ նուազման համոզմամբ, և ապագային ապահովութիւնը կալուածական հասոյթներէ սպասելու ակնկալութեամբ, նոր շինութեանց տենդը կը տիրէր, և Մաքսուտեան Վեհապետեանի հովանաւորութեամբ այդ ճիւղին նուիրուած էր, և նպատակը գովելի կը ներկայանար: Այս առթիւ միաբաններու անձնական խնայողութիւնները վանական կալուածներու կապելն ալ իր օգտակարութիւնն ունէր, և այդ տեսութիւններ կարդարացնէին ղևոնդական գործունէութիւնը, և նկատուութենէ կը վրիպեցնէին որ շինութեանց հաշիւները գաղտնիք էին դարձած, Ղևոնդի նիւթական շահը վգալապէս կաճէր, աթոռին պարտքը հասած նպաստներով նուազելու տեղ հետզհետէ կը շատնար, շինուած մեծ պանդոկը արեղաթաղի ճղճիմ ձևն ունէր, մինչ եւրոպական պանդոկներու մրցակից կը ներկայացուէր: Ընդհանուր վարչութեան վրայ անձնական և անձնագոհ ձևը վօրացած էր, և յիշատակութեան արժանի կը նկատենք, որ միաբանական ժողովներու տոմարին համեմատ, 1889 նոյեմբեր 13-ի նիստին յաջորդը 1893 յուլիս 5-ին գումարուած է (89.ՄԻԱ.470-479). իսկ տնօրէնի գործերը Ղևոնդի կամաց կը հպատակէին: Յարութիւն պատրիարքի Կ. Պոլիսէ բերած նպաստները (2943) գործածուելէն ետքը Երուսաղէմի պարտքը 1889 նոյեմբեր 10-ին պաշտօնագիրներին մէջ 30,000 օսմանեան ոսկի կը հաշուուի, և Վեհապետեան այս պարտքը ջնջելու համար կը ցուցնէ 10,000 ոսկի պետութեան ձեռք մնացած գումարը գանձել, 9000 ոսկի Կ. Պոլսոյ հայաբնակութենէ իբր պարտաւորեալ նուէր հաւաքել, և 11,000 ոսկի արտասահմանի նուիրակութեամբ և բացառիկ նպաստելով հոգալ (89. ՄԻԱ. 476), և այս նպատակով ճամբայ հանուած էին Գաբրիէլ վարդապետ Անուշեան դէպի Պարսկաստան և Հնդկաստան, և Գէորգ վարդապետ Երէցեան դէպի Պուլկարիա և Ռումանիա (93. ՄԻԱ. 487): Հաշտութեան նպատակով Կ. Պոլիս յղուած 1893 հոկտեմբեր 6-ի տեղեկագիրը խճողեալ բացատրութեանց նմոյշ կրնայ ըսուիլ, որ բնաւ լոյս չի սփռէր իսկական կացութեան վրայ (93. ՄԻԱ. 488-491), և անշուշտ տեսչական գրիչէ ելած է: Նոյն տեղեկագիրին մէջ իբրև նորաշէն յաւելուածներ կը յիշուին Ս. Փրկիչի գետինին և գերեզմաննոցին և Բեթղէհէմի գերեզմաննոցին շրջապատերը, երկու տուններ մեծ արտին հարաւակողմը, և մեծ պանդոկը նոյն մեծ արտին վրայ, որոնց ծախքերը հոգացուած կըսուին նոյն արտէն վաճառուած մասերու գիներով և նուիրատուաց ոմանց նպաստներով (93. ՄԻԱ. 486), և պէտք չէր որ միանգամայն պատճառ ցուցուէին պարտքին աճելուն: Այդ աճման դիմաց ուսումնական և բարոյական վարճացման առաւելութիւն մըն ալ չի ցուցուիր, որ արդար

փոխարինությունն ըլլար. զի այս միջոցէն սկսած է նորահաս միաբանութեան տակաւ անկումը, որ առաջիկային աղիտաբար եղաւ Ս. Յակոբեանց միաբանութեան և պատրիարքական աթոռին: Յարութիւն պատրիարք իբրև սկզբունք կը սիրէր աւելի քան ուսմամբ վարգացեալ, սուրբ տեղեաց պաշտօնավարութեան նուիրեալ միաբաններ ունենալ, և Ղևոնդի առաջնորդութեամբ գործող տնօրէն ժողովոյ այդ սկզբունքը որդեգրելով, չէր վարանէր անխտիր ընդունելութիւններով հետզհետէ ստորացնել միաբանութեան ուսումնական և բարոյական վիճակը: Միւս կողմէն նոր կանոնագիրին յայտնի ներհակութեամբ, ամենէն պատասխանատու պաշտօնեայն տնօրէնի վարիչն էր դարձած, մինչ որևէ պատասխանատու պաշտօնեայ տնօրէնի անդամակցութեան ընտրելի պիտի չըլլար (2933): Երուսաղէմէ Սոյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց անցնելով, վատթարագոյն ևս կը ներկայանայ մեզ այդ աթոռներուն կացութիւնը, որոնց աթոռակալները, Մկրտիչ և Խաչատուր, աւելի բռնակալ տիրապետողի քան օրինաւոր հովուի գեր ստանձնած, անձնական շահի և կիրքի սկզբունքներով կը գործէին, իրենց հօտին ճշմարիտ հովութիւնը մոռցած, և միայն անոնց ասրն ու կաթը վայելելու հետամուտ: Նեղուած ժողովուրդներ մերթընդմերթ ձայն կը բարձրացնէին, բայց Կ. Պոլսոյ կեդրոնն ալ ինքն տագնապներով պաշարուած հազև թէ կը անոնց ձայնը, և երկու աթոռակալներ համարձակ կը գործէին իրենց ուղղութեամբ: Մանրամասն պարագաներու և մասնաւոր դիպուածներու մտնել աւելորդ կը սեպենք, քանի որ և ոչ մի շինարար և միսիթարական բան պիտի կարենանք յառաջ բերել:

2965. ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Կրկին Ռուսահայոց կողմը անցած ատեննիս՝ անցողակի յիշենք Մոսկուայի Լազարեան ճեմարանը, որուն սկզբնաւորութիւն և Լազարեանց տոհմին անունը անմահացնող հաստատութեան ծագումը ժամանակին բաւական ընդարձակօրէն պատմեցինք (2378, 2380), բայց այլ ևս առիթ չունեցանք անոր վրայ խօսելու, զի ուսումնական կանոնաւոր ընթացք մըն էր անցուցածը, միշտ լաւէն լաւագոյնի անցնելով: Այսպէս բոլորած էին 70 տարիներ 1815-ի նախնական հիմնարկութենէն հաշուելով: Իսկ 1865-ին արևելեան լեզուաց Լազարեան ճեմարանի մասնագիտական դասարանները փակուած էին, Լազարեան ազգատոհմին ուղիղ գիծն ալ սպառած էր, և ճեմարանի գլխաւոր կառավարիչի պաշտօնը թափուր մնացած էր: Նոր ճիգ մը եղաւ գործերը իրենց կանոնական հաստատուն ձևին վերածելու, պատուակալ հոգաբարձուի տիտղոսը տրուեցաւ Աբամելիք Լազարեանց գերդաստանին, որ Լազարեանց տոհմի կրտսեր ձիւղն էր նախարար Տեմետր Տոլստոյ 1871-ին յանձն առաւ գլխաւոր կառավարիչի պաշտօնը, անմիջապէս նոր կանոնագիր մը կազմուեցաւ, և 1872-ին կայսերական վաւերացում ստացաւ, մասնագիտական երեք դասարանները բացուեցան, և եօթանասունհինգ ամեայ աղամանդեայ յոբելէնին լման 1890 մայիս 10-ին ճեմարանը ամենայաջող պարագաներու ներքև կը գտնուէր, ուստի որոշուեցաւ յոբելէանական տօնախմբութիւնը կատարել հոկտեմբեր 24-ին: Բայց մեզ հետաքրքրող կէտեր հանդիսական ցոյցերու մանրամասնութիւնները չեն, և կը նախադասեն յիշատակել թէ երախտածանօթ յիշատակներու և եռանդուն ուղերձներու մէջ կարևոր տեղեկութիւններ ալ ուրացան, որոնց կարգին Խաչատուր Լազարեանցի 200,000 թուրքիի իշխանական նըւէր, ճեմարանի դրամագլուխին 900,000 թուրքիի հասած ըլլալը, 50,000 թուրքիի յաւելուածը ձրիավարժներ շատցնելու համար, և 32,000 թուրքիի պահեստի գումարը նոր դահլիճի մը կառուցման սահմանուած: Որչափ ալ Լազարեան ճեմարանին վերին վարչութիւնը նոր կանոնադրութեամբ և հիմնադիրներու կամքով Լուսաւորութեան մինիստրութեան, այսինքն կրթական նախարարութեան յանձնուած էր, Հայոց լեզուի և կրօնի անձեռնմխելի կերպով հայերէն դասաւանդութիւնը, ձրիավարժներուն հայագի լինելը, պատուակալ հոգաբարձուին Լազարեան տոհմին

վերապահուիլը, վերատեսուչէն և տեսուչէն գոնէ մէկին հարկաւ հայապօղի ըլլալը, և ընդհանուր աշակերտութեան գոնէ մէկ երրորդին հայ ըլլալուն պայմանը (90.Ա.ՐԼ.2050), հայկական հաստատութիւն ըլլալը կերաշխաւորէն, և նոյն ճեմարանը բոլոր հայ հաստատութեանց մէջ առաջինը կրնայ ըսուիլ իր ապահովեալ գոյութեամբ, որ և ցարդ նոյն կերպով կը յառաջէ, և նոյնիսկ պետական հսկողութեան յանձնուած ըլլալը իր ապահովութեան հիմը կը կապմէ:

2966. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՄԷԶ

Մայրաթոռոյ մէջ Պարսկեանց ու Խուտավերտեանց եպիսկոպոսներու աքսորէն և Տէր-Փասպարեան ու Դաւթեան եպիսկոպոսներու ահաբեկութեան վրայ, Փալստեան Սեդրաբեան ընկերակցութիւնը յաղթական տիրապետող դերը ստանձնած արձակ համարձակ կը գործէր, և կաթողիկոսանալու երապով կորօրուէին երկու գործակիցները հաւասարապէս. բայց որովհետև երկուքը միանգամայն չէին կրնար կաթողիկոս հռչակուիլ, համերաշխ գործակցութեան քողին ներքև փոխադարձաբար վիրար խաբելու նենգաւոր դերը կը վարէին: Նոյն իսկ սինոդին իրենց առած նոր անդամակիցները դժգոհ էին իրաց վիճակէն, սակայն ընդհանուր միաբանութեան վրայ տիրող երկիւղալից համակերպութիւնը անոնք ալ կը մասնակցէին. զի հակառակ պարագային հարուածի ալ կը հանդիպէին, ինչպէս հանդիպեցաւ Բարթողիմէոս վարդապետ Գէորգեանի, որ տիրապետողներու դէմ յայտնած կարծիքը սինոդէ արտաքսուելով լուծեց, որուն տեղ իսկոյն համակերպողներ անցան: Ուստի վանական շրջանակին մէջ բոլոր յոյսը դուրսէն օգնութեան վրայ դրուած էր որ տիրապետողներու նպատակը խանգարուի: Նկատողութեան արժանի միջադէպ մը եղաւ Տփղիսի աշխարհական պատգամաւորին ընտրութիւնը, ուր առաջին անգամ յաջողեցաւ Աբգար Յովհաննէսեան պաշտպան Գրիգոր Արծրունիի դէմ, և ընտրութիւնը առաջնորդէն վաւերացուեցաւ, բայց սինոդը Սեդրաբեանի ազդեցութեամբ ընտրութիւնը անվաւեր հռչակեց, և Էջմիածինէ յատուկ եպիսկոպոս յղելով նոր ընտրութեամբ Արծրունին յաջողցուց: Բայց Յովհաննէսեան ալ դուրս չմնաց, զի Պրոսպի տաճկահայ վիճակէն պատգամաւոր ընտրուեցաւ, որ դուրսէն սպասուած օգնութեան բարեգուշակ նշանն եղաւ: Հետևաբար Տաճկահայոց կողմանէ ուղղակի վիճակներու պատգամաւորներով ընտրութեան մասնակցելու լուրերը տիրապետող վարիչներու հաճելի չէին. զի այս նոր տարրին վրայ ալ ազդելու համար նոր աշխատութեանց կը պարտաւորուէին, ելքն ալ անստոյգ ըլլալու պայմանով: Ուստի շոշափելի արդիւնքով մըն ալ ազդել կարենալու համար միաբանական թաղի մը շինութեան ձեռնարկուեցաւ, բաւական ճաշակաւոր և ընդարձակ ծրագիրով երկյարկանի շինուած մը, ներքևի բնակարանները երկու բաժանումներով՝ եպիսկոպոսաց համար, որով պիտի կարենար տեղապահական վարչութեան շինարար ուղղութիւնը շեշտուիլ, եթէ հնար ըլլար լոկ արտաքինով ընտրողները խաբել մինչև վարչութեան ներքինը բոլորովին հակառակը կը հաստատէր, նոյնիսկ վերիվերոյ պննողներու աչքին: Այդ պատրաստութիւններով կը սպասէր Փալստեան Սեդրաբեան ընկերակցութիւնը ընդունել և հրապուրել Տաճկահայերուն պատգամաւորները, զի ռուսահայ եկեղեցականութիւնը պատրաստուած կը կարծէր, իսկ ռուսահայ աշխարհականութիւնը թիւին նուազութեամբն իսկ մտահոգութիւն չէր պատճառէր: Այս պարագաներն էին որ յատկապէս Օրմանեանի պատգամաւորութեան վրայ մտադրութիւն հրաւիրեցին, զոր իրենց դարձուածներուն նախածանօթ մը գիտէին, և անոր դէմ արգելքի միջոցը կը գործածէին, թէպէտ ակնկալուած արդիւնքը չէին ունենար (2959): Արգելքի հեռագիրին մէջ Մանկունի Վահրամ եպիսկոպոսի անունն ալ խառնած էին, անշուշտ միայնումիայն Օրմանեանի վրայ մտադրութիւն դարձուցած չերևնալու համար որովհետև երբեք Մանկունիի պատգամաւորութիւնը խօսուած չէր, նա ինքնիրեն իրաւունք չունէր, և ուրիշի ալ փոխանորդութեան կոչուած չէր, և փոխանորդելու

տրամադրութիւն չունէր: Այս պատրաստութիւններով՝ Գալստեան Սեդրաքեան ընկերակցութիւնը պատրաստ կը գտնուէր պատգամաւորները ընդունելու, որոնք 1892 ապրիլին մէջ հետզհետէ հասնիլ սկսան, թէպէտ հնար չէր որ երկուքն ալ անձնական յաղթանակ չերապէին, և անձնական ձգտումներ չունենային, զի միակ աթոռը երկուքը միանգամայն չէր կրնար գոհացնել, և ի հարկէ իրենց ներքինին մէջ արտաքինէն տարբեր միտքեր կը մշակէին զիրար գլելու, և համերաշխ գործունէութիւնն անձնական նպատակին ծառայեցնելու:

Տ. ՄԿՐՏԻՉ Ա. ՎԱՆԵՑԻ

2967. ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Վերջապէս ընտրական ժողովին բացման համար որոշուած 1892 մայիս 3 օրը կը հասնէր. եկեղեցական և աշխարհական պատգամաւորներ բաւական թուով հաւաքուած էին, քանի մը հոգի ալ վերջին օրեր կու գան. ամենէն վերջիններէն էր Օրմանեան, որ մայիս 2-ին շաբաթ առտու էջմիածին կը մտնար (2959), և անմիջապէս անոր շուրջը կը բոլորուէին տաճկահայ պատգամաւորներուն գլխաւորները, իսկ Գալստեան և Սեդրաքեան ոչ միայն բարիգալստեան աղջոյը կը վլանային, այլ և բնակարան իսկ չէին յատկացուցած պատրիարքական պատգամաւորին, որ կը պարտաւորուէր Դաւիթեան եպիսկոպոսի սենեակներուն մէջ պատսպարուիլ: Տաճկահայոց մէջ նշանաւոր դեր ստանձնած էր Տիգրան Կիւմիւշկերտան, և շատ վարմանալի էր տեսնել որ Կ. Պոլսոյ լոին գործիչը և ձեռներէցութենէ խուսափողը, էջմիածինի մէջ ատենաբան և ատենադպիր է կտրեր, կը գումարէ, կատենապետէ, կը խօսի, կը համոզէ, և իրաւարարի ու դատաւորի դեր կը վարէ: Սեդրաքեան բաւական յաջողեր էր տաճկահայ խումբին վրայ ալ ներգործել, բարեկարգութեանց նախանձայոյս, Տաճկահայոց կացութեան արդարահատող, և անոնց վիճակին բարւոքմամբ վբաղող ձևանալով, և անոնց համակրութիւնն ալ շահած էր, Գալստեանը ետև թողլու չափ, և մինչև իսկ գործնական միջոցներու և միջազգային օժանդակութիւններու ծրագիրներ պարզելու սկսեր էր: Գրիգոր Արծրունի Մշակ լրագրոյ ծանօթ խմբագրապետը և Սեդրաքեանի երդուեալ բարեկամը, իր պաշտպանեալին առաքելութիւն կը վարէր և մեծամեծ յոյսեր կը ցուացնէր Տաճկահայոց աչքին: Օրմանեանի դժուար չեղաւ խոհական և չափաւոր կերպերով երևոյթը իսկականէն, ու խօսքը գործէն ու կեղծիքը ճշմարտութենէ վատել տալ տաճկահայ խումբին գլխաւորներուն, թողլով որ անոնց ձեռքով այդ տեսութիւնները ընդհանրանան: Օրմանեանի դիմեցին նաև սինոդական և միաբան նախածանօթ էջմիածնեցիներ, Սեդրաքեանէ և Գալստեանէ խորշող խումբին պատկանողներ, որոնք անոնցմէ հեռանալու համոզումնին կազմած, նախադասելի կաթողիկոսացուին մասին որոշում մը կը փնտռէին: Շաբաթ ցերեկը այդ խօսակցութիւններով անցաւ և կէսօրէն ետքը կազմական նիստը գումարուեցաւ, պատգամաւորներուն վաւերաթուղթերը քննուեցան, և քուէի իրաւունքները ճշդուեցան: Կ. Պոլսոյ պատրիարքարանի պաշտօնագիրը կարդացուեցաւ, որուն մէջ ժամանակին իմացուած անուանումները հաղորդուած էին, և Օրմանեան որ պաշտօնագիրը ներկայացնողն էր, պէտք եղած բացատրութիւններն ու լուծումներն ալ բերանացի կաւելցնէր՝ պատրիարքական ներկայացուցիչի դերը լրացնելով: Ռուսահայոց մասին պաշտօնական գործողութիւնները արդէն լրացած էին: Այս առթիւ կը ծանուցուէր ևս թէ կանոնագիրին համեմատ իւրաքանչիւր անհատի երկուքէ աւելի քուէի իրաւունք չէր կրնար տրուիլ, որով մաս մը յանձնարարական քուէներէն, զոր օրինակ Օրմանեանի երեք և Կիւմիւշկերտանի հինգ քուէներէն, միայն երկուքը հաշիւի մտան: Ըստ այսմ ժողովական կազմութիւնը կը լրանար 65 անձերով և 72 քուէներով, հետևեալ կերպով բաշխուած, Ռուսահայոց այսինքն Ռուսաստանի և Պարսկաստանի կողմէն հաշուուեցան 7 ներկայ սինոդականներ, միայն մէկը պակաս՝ անուանուած չըլլալուն համար, 7 միաբանութեան

ներկայացուցիչներ, վիճակներէն 4 անձամբ, և 3 փոխանորդով և Աստրախանինը պակաս. և 8 աշխարհական պատգամաւորներ ներկայ, ընդամէնն 29 անձ և 29 քուէ և միայն 2 պակաս: Իսկ Տաճկահայոց կողմէ մեծ աթոռներէն երկու պատրիարքաց ներկայացուցիչներ ներկայ, իսկ երկու կաթողիկոսաց պակաս, վիճակներէն 12 անձամբ ներկայ, և 5 փոխանորդով և 5 երկրոր քուէով, և 21 պակաս աշխարհական պատգամաւորներ մեծ աթոռներուն հետ միասին 17 անձամբ ներկայ և 2 երկրորդ քուէով և 26 պակաս. ընդ ամէնն Տաճկահայերէ 36 անձ և 43 քուէ, և 49 պակաս, որ է բովանդակ 65 անձ և 72 քուէ, և 51 պակաս: Այսպէս ժողովական կազմութիւնը լրացնելով երեկոյին թողուեցաւ խորհրդակցութեամբ չորս ընտրելիներու և երկու ընտրեալներու մասին համաձայնութիւն գոյացնել, և ի վուր քուէներու ճապաղում չպատճառել:

2968.. ԸՆՏՐԵԼԵԱՅ ՄԱՍԻՆ

Բաւական կնճռոտ խնդիր մըն էր այդ համաձայնութիւնը: Կի ժողովական հոսանքներ և անձնական ձգտումներու իրարու կը բաղխէին և իրար մօտենալու հաւանականութիւն չէին ցուցներ, և ամէնուն հետաքրքրութեան առակայ դարձած էր թէ ի՞նչ պիտի կարենար ըլլալ ժողովին արդիւնքը: Նախկին պատրիարք Խրիմեան Մկրտիչ եպիսկոպոսի անունը ժողովրդական խաւերու մէջ նուիրական դարձած էր, մանաւանդ Ռուսահայոց մէջ, և Պաթումէ սկսելով մինչև Էջմիածին՝ պատգամաւորներու վրայ ազդելու և համոզելու դիմումներ կը շարունակէին: Տաճկահայոց մէջ ալ նոյն միտքը կը տիրէր, բայց Խրիմեանի անունը բարձր արտասանելու համարձակութիւն կը պակսէր: Մինչև իսկ պաշտօնական շրջանակներու կողմէ վգուշութիւն կը հրամայուէր, և պատրիարքն իսկ պատգամաւորներուն կազդարարէր թէ Խրիմեանի քուէ տուողներ պիտի չկարենան տեղերնին դառնալ: Տփղիսի Օսմանեան հիւպատոս Հասիպ պէյ՝ տաճկահայ պատգամաւորները հացկերոյթի և երեկոյթի հրաւիրելով միևնոյն վգուշաւորութիւնը կը յանձնարարէր, և Օրմանեանի ժամի մը չափ միայն Տփղիսի կայարանը մնալուն առթիւ, անձամբ գալով նոյն յանձնարարութիւնը կը խօսէր: Սակայն Խրիմեանի անունը նախընթաց երկու ընտրութեանց ատենէ սկսելով սաստկապէս շեշտուած էր Տաճկահայոց մէջ, և հին բաղձանքը միշտ մնայուն էր: Խրիմեանի անունը ամէն կողմէն կը լսուէր, և աւելորդ պարծենկոտութիւն էր Մշակ լրագիրին վայն իբր իր ընտրելին ցուցնելը և անիրաւ չէր կարծել թէ Խրիմեանի անունը պատրուակ էր սեդրաքեանի ընտրութիւնը յաջողցնելու (ԳՐԻ. Գ. 412): Սեդրաքեան Արիստակէս և Գալստեան Երեմիա եպիսկոպոսներուն կաթողիկոսանալու տենչանքը և գործածած միջոցներ արդէն բացատրեցինք, բայց ժողովրդական շրջանակներու մէջ Գալստեանը համակրութիւն չէր վայելէր և անոր յոյսը բոլոր ռուսական հովանաւորութեան վրայ հաստատուած էր: Իսկ Սեդրաքեան ունէր Ռուսահայոցմէջ իրեն նպաստաւոր խումբ մը, որ Մշակական անունով կը յիշուէր, Գրիգոր Արծրունին Մշակ լրագիրէն առնելով իր անունը, և բաւական ալ ընդարձակ կը կարծուէր, իսկ Տաճկահայեր նոր սկսած էին անոր մասին խորհիլ Արծրունիի և իր իսկ Սեդրաքեանի գործունեայ ջանքերուն հետևանքով: Խորէն Աչըգեան պատրիարք կաթողիկոսութեան յոյսով կօրօրուէր, և նոյն իսկ Օրմանեանի պատգամաւորութեամբ կը յուսար իր գործը յաջողցնել, վասնպի եպիսկոպոսներու մէջ անկէ վատ իրեն մոտ և իրեն համակիր երևցող մէկը չունէր: Նա չէր քաշուած տաճկահայ պատգամաւորներէ շատերուն յայտնապէս յանձնարարել իր ընտրութիւն, իբր օսմանեան տէրութենէն բաղձացուած և ռուսական կառավարութենէ ընդունուած ելք մը, և խօսուած ընտրելութեանց մէջէն նախադասուածը, և մայրաքաղաքի պատգամաւորներէն ամուր յուսադրութիւններ և յայտնի խոստումներ ալ առած էր, այնպէս որ ոչ թէ նպատակը յաջողցնելու աշխատանք, այլ լոկ գործը կանոնաւորելու յանձնարարութիւն կընէր Օրմանեանի: Այդ միտքերը ուրիշներու ալ հորդորուած ըլլալէն, շատերու կողմէ Օրմանեանը իբր թէ Աչըգեանի պաշտպան

նկատելու գաղափարը կապմուծ էր (ԳՐԻ. Գ. 425): Իսկ ժողովրդական մանաւանդ գաւառական դասակարգերու մէջ Աչըզեան ոչ մի համակրութիւն չէր վայելեր Տաճկահայոց կողմը, իսկ Ռուսահայոց կողմէ հակակրութիւնը հակառակութեան կը հասներ: Ընտրելեաց կարգին շատ խօսուածներէն մէկն ալ Իգմիրլեան Մատթէոս եպիսկոպոսն էր.որ թէպէտ որոշ խումբի մը պաշտպանելը չէր, սակայն իրեն մասին բնաւ հակակրութիւն կամ հակառակութիւն չկար, և իբր լուրջ և անձնուէր, և անբասիր անձնաւորութիւն մը ընդհանուր ընդունելութիւն կը գտներ: Ռուսահայոց մի մասին կողմէն Խապայեան Սահակ եպիսկոպոսի անունն ալ կը տրուէր, որ Նուիրակութեան ժամանակէն բարի համբաւ և լաւ գնահատութիւն թաղած էր իր ետևէն, և ներկայ ժողովականներէ մէկն էր իբրև Երուսաղէմի պատրիարքին ներկայացուցիչ, որչափ ալ Տաճկահայոց մէջ յատուկ մտադրութեան առարկայ եղած չէր: Մայիս 2 շաբաժ երեկոյի գումարման մէջ բոլոր այդ ընտրելեաց անունները տրուեցան և թերուդէմ խօսակցութիւններ երկարեցան, յիշուածներէն դուրս անուններ ալ գրուեցան, և գլխաւորապէս Վեհապետեան Յարութիւն պատրիարքի անունը, որուն յայտնապէս ընդդիմացաւ իր փոխանորդը Երուսաղէմի աթոռին պէտքերու տեսակէտէն: Օրմանեան կը լսուէր ստասելով որ ատենաբաններ իրենց տեսութիւնները լրացնեն, իսկ խօսելու հրաւիրուած ատեն իր փոխանորդելոյն վրայ խօսիլ իրեն համար պատշաճ չըլլալը կը պատճառէր, մինչև որ անձնական տեսութիւնները պարզելու կը հրաւիրուէր: Այն ատեն նա հայրապետի մը և հասարակաց հօր մը ընտրութեան համար գումարուած ժողովին քաղաքական խորհրդարաններէն տարբերութեան սկզբունքը հիմ դնելով, կառաջարկէր չպնդել այն անուններուն վրայ, որ կարծեաց տարբերութեան առիթ կու տային, և խորշիլ քանի մը քուէի առաւելութեամբ յաղթանակ տանելու մրցումէն, այլ այն անունները միայն առնել, որոնց շուրջը տարաձայն կարծիքներ չեն լսուիր, և խօսքը եզրակացնելով կամփոփէր Խրիմեանի և Իգմիրլեանի անուններուն վրայ, միև երկու ընտրելեաց անունները ժողովին ազատութեան թողլով, քանի որ մէկ օր յիշուելիք և միև օր թողուելիք թարմատար անուններ պիտի ըլլային: Առաջարկը ընդունելութիւն գտաւ մանաւանդ անոնց կողմէ որ այս կամ այն անունին հանդէպ շեշտուած հակակրութիւն կը վգային, և այսպէս ամէն քուէարկութենէ առաջ մէկ կողմ թողուեցան Աչըզեանի ու Գալստեանի ու Սեդրաքեանի անունները, և կաթողիկոսական աթոռին անյագ տենչանօք հետապնդողներ յուսախաբ մնացին, յատկապէս երկու վերջինները, զի Աչըզեան բացակայ էր և անցած դարձածէն տեղեութիւն չունէր: Իսկ Օրմանեան որ Աչըզեանի պաշտպան կը կարծուէր, Աչըզեանը դուրս ձգելու առաջին քայլը առած կըլլայ, և երբ իր փոխանորդելոյն պաշտպանութեանը պակասաւոր գտնուած կերևէր, նա իր արդարացումը կը պատրուակէր թէ չէր ուզեր ձախող փորձի մը ենթարկել Կ. Պոլսոյ պատրիարքին պատիւը: Այսպէս կայացաւ երկու նախապատիւ ընտրելեաց մասին համաձայնութիւնը, և միև օր աւելցան Մխիթարեան Խորէն և Տէր Սահակեան Երեմիա եպիսկոպոսներուն անունները՝ քառեակ լրացնելու համար կարծես, իբրև Աչըզեան Խորէն և Գալստեան Երեմիա անունները փոխանակող համանուններ: Երկու նախադասելի ընտրելեաց անունները իսկապէս ընդհանուր հաւանութեան արժանացան, իբր զի Իգմիրլեան անունը ոչ մի կողմէն հակակրութիւն կը պատճառէր, իսկ Խրիմեանի անունը ամէնէն յիշուած էր, նոյնիսկ անձնամատոյց ընտրելիներէ, որոնք Խրիմեանը ռուսական կառավարութեան անընդունելի նկատելով անոր անունը կու տային և իրենցինին կը միացնէին՝ իրենց նախադասուիլը ապահովելու միտքով:

2969. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ընտրողական ժողովը բացուեցաւ մայիս 3ին Երևման Խաչի կիրակիին առտուն: Ժողովական ձևակերպութեանց մասին այս անգամ քիչ մը մանրամասնութեանց մտնել աւելորդ չենք սեպեր,

քանի որ այս առաջին անգամ էր որ իրօք համապատասխան ժողովի մը ձևը կը կազմուէր, և ուղղակի նոյն ժողովով պիտի ընտրուէր Ամենայն Հայոց ընդհանրական հայրապետը: Ժողովը երեք նիստեր պիտի ունենար, առաջին բացման, երկրորդը չորս ընտրելիներու քուէարկութեան, և երրորդը երկու վերջնական ընտրելիներու կամ ընտրեալներու քուէարկութեան համար, և երեքն ալ Մայր Տաճարի մէջ: Առաջին նիստին ատեն տաճարը իր սովորական կարգուսարքը կը պահէր հանդիսաւոր պատարագ մատուցուեցաւ, որուն բոլոր պատգամաւորներ ներկայ եղան թափօրով վեհարանէ իջնալով, և իրենց հետ պետական յատուկ ներկայացուցիչ Պրիբիլ, և սինոդի պրովուրոր Գանչելի, և սինոդական պաշտօնեաներ: Բակին մէջ խոնուած ժողովուրդը Խրիմեանի անունը հնչեցուց, եկեղեցին ալ լեցուց, իսկ պատարագը մատուց սինոդի նոր բայց երիցագոյն անգամ Աղուանեան Գրիգորիս եպիսկոպոսը (92. ԱՐԲ. 455), որուն վերջը 25 աշխարհական պատգամաւորներ ուղղութեամբ և անաչառութեամբ քուէ տալու ուխտը ըրին, ուխտագիրը ստորագրեցին (92. ԱՐԼ. 2481): Այս ուխտը եկեղեցականներէ չպահանջուիր, որոնք իրենց նուիրական կարգին ուխտադրութեամբ այս պարտքը ստանձնած կը նկատուին: Ժողովականք տաճարէ ելլալուն՝ կրկին ողջունուեցաւ ժողովուրդէն Խրիմեանի անունը հնչեցնելով, իսկ ժողովականները լրացուցին ընտրելեաց մասին համաձայնութիւնը ինչպէս արդէն պատմեցինք: Մայիս 4-ի երկուշաբթի դռնփակ գումարմանհամար Մայր տաճարը ժողովարահի ձևի մտած էր կիսաբոլորակ մը կազմելով արտաքին մասին մէջ, երես յարևելս, որուն մէջտեղը կը նախագահէր տեղապահը, իր երկու քովերը ունենալով Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքաց ներկայացուցիչները, և անոնցմէ ետքը տեղապահին աջակողմը կամ տաճարին ձախակողմը եկեղեցական պատգամաւորները, և նախագահին ձախակողմը աշխարհական պատգամաւորները և եկեղեցականներէ մաս մը: Պետական պաշտօնեաները առանձին տեղ մը կը գրաւէին տաճարի ձախակողմը: Նիստը բացուեցաւ շարականով և աղօթքով և տեղապահի յորդորականով: Քուէարկութիւնը պիտի ըլլար բերանացի մինչև չորս անուններ տալով և կրտսերագոյնէն սկսելով: Պարսկաստանի պատգամաւոր Համբարձում Առաքելեան կրտսերագոյնի պատիւը խնդրեց և ստացաւ, և համառօտ ատենաբանութեամբ տուաւ չորս ընտրելիներուն անունները, պատշաճ բացատրութիւններ տալով և Խրիմեանի անունին վրայ ծանրանալով (92. ԱՐԲ. 470-471): Համաձայնութիւն հաստատուած ըլլալով ամէնքը միաբերան համակարծիք ըլլալնին յայտնեցին, բայց պետական ներկայացուցիչին պահանջին վրայ իւրաքանչիւրը առանձինն ալ կրկնեց, և այսպէս Խրիմեան, Իզմիրլեան, Մխիթարեան և Տէր Սահակեան հաւասարապէս 72-ական քուէ ստացած եղան: Այս քուէարկութեան մէջ ստացած եղան: Այս քուէարկութեան մէջ բացականերուն տուած գրաւոր քուէներն ալ հաշիւի կառնուին, և գրաւոր ըլլալով 14 անձերէ քուէներ եկած էին, հինգ վիճակներու եկեղեցականներէն և աշխարհականներէն միանգամայն, երկուքէն միայն եկեղեցականներէ և երկուքէն միայն աշխարհականներէ (92. ԱՐԲ. 469), որ 22 անուններ կը պարունակէին և քուէները տրուած էին, Աչըգեանի 6. Խրիմեանի 5. Վեհապետեանի 3. Մխիթարեանի 2. Շիշմանեանի 2. Օրմանեանի 2. Իզմիրլեանի 1, և Գէորգ Տէր-Ներսէսեանի 1. որ անունով եպիսկոպոս գոյութիւն չունէր: Այս քուէները ներկայից 72 քուէներուն բարդուելով Խրիմեան ունեցաւ 77, Մխիթարեան 74, Իզմիրլեան 73, և Տէր-Սահակեան մնաց 72 (92. ԱՐԲ. 459), իսկ մնացեալ քուէները նկատի իսկ չէին կրնար առնուիլ: Այս 14 գրաւոր քուէ տուողներ 51 պակասներէ վեղչերով (2967), միայն 37 քուէարկուներ պակասած կըլլան առաջին քուէարկութեան մէջ: Մայիս 5-ի վերջնական քուէարկութենէ առաջ Օրմանեան ոմանց թելադրած էր, երկու ընտրելիներն ալ առաջին չորս ընտրելիներու նման հաւասար քուէով հանել, և այնպէս կարծուեցաւ թէ Խրիմեանի ընտրութեանը վնասել ուզած ըլլայ, սակայն շուտով թիւրիմացութիւնը

բացատրուեցաւ: Վերջնական նիստը երկրորդին նման ձևով բացուեցաւ, պատգամաւորներուն թափօրով վեհարանէն իջնալուն առթիւ դառձեալ Խրիմեանի անունը հնչեց: Այս անգամ ալ քուէարութիւնը բերանացի էր, չորս ընտրեալներէ իւրաքանչիւրը պատպատ քուէի պիտի դրուէր և իւրաքանչիւրին համար ամէն պատգամաւոր ընտրեմ կամ ոչ ընտրեմ պիտի արտասանէր և արտասանածը պիտի ստորագրէր, և կապուած չէր երկու ընտրեմ և երկու ոչ ընտրեմ ըսել, այլ կրնար մինչև իսկ չորս ընտրեմ կամ չորս ոչ ընտրեմ ըսել: Առաջին քուէի դրուողը Խրիմեանի անունն էր, և բացակայից քուէ չէր ընդունուեր, և 72 ներկաներ համամիտ և համաձայն կերպով ընտրեմը արտասանեցին և ստորագրեցին, և 72 տարեկան Խրիմեանը 72 ձայնով առաջին ընտրելի կամ ընտրեալ հռչակուեցաւ: Այս արդիւնքը իսկոյն բակին մէջ խոնուած ժողովուրդին հաղորդուեցաւ և խնդութեան աղաղակներ ահեղագոչ բարձրացան: Օդը ամպոտ էր, և յանկարծ ճեղքուած ամպերուն մէջէն արևի ճառագայթ մը փայլեցաւ, որ իբրև երկնային օրհնութեան յաջող նշանակ մեկնուեցաւ և խնդութեան աղաղակները կրկնելու առիթ ընծայեց (92.ԱՐԲ.461): Խրիմեանէ ետքը միւս երեք անուններն ալ նոյն կերպով քուէարկուեցան, և Իվմիրլեան 50 քուէով երկրորդ ընտրելի հռչակուեցաւ, իսկ Տէր Սահակեան 19 և Մխիթարեան 16 քուէով ընտրութենէ դուրս մնացին (92.ԱՐԲ.462) ինչպէս նախապատրաստուած էր: Ժողովը չցրուեցաւ մինչև որ ատենագրութիւնը կազմուեցաւ և կայսեր ներկայանալիք պաշտօնագիրը պատրաստուեցաւ և բոլոր ներկաներէ ստորագրուեցաւ: Ժողովէ ետքը հանդիսական հացկերոյթ տրուեցաւ բոլոր ժողովականաց և պետական պաշտօնէից, բաժակաձառեր իրարու յաջորդեցին, Գալստեան (92. ԱՐԲ.462), և Օրմանեան (92.ԱՐԼ.2486) ռուսական և օսմանեան կայսերաց համար առաջարկեցին, յիշելով համապային ժողովին համար անոնց ընծայած դիւրութիւնները, և Պրիբիլ Հայ եկեղեցւոյ համար առաջարկեց, և հետզհետէ ուրիշներ ընտրելոց և աշխատողաց համար (92.ԱՐԲ.463), և երեկոյին լուսավառութիւն ալ կատարուեցաւ (92.ԱՐԲ.464): Ձևակերպութիւնները լրացնելով պատգամաւորներ սկսան ցրուիլ: Հինգշաբթի մայիս 7-ին Երևանի մէջ հացկերոյթ տրուեցաւ տաճկահայ պատգամաւորաց, ուր Օրմանեան յատուկ բաժակաձառի մը առթիւ յայտարարեց, թէ Հայեր անմիաբան են ըսող և ընտրողական ժողովին վրայ կասկածողներ, թող՝ միաձայնութեամբ կատարուած ընտրութեան առջև՝ լեզուին փոխեն , և այլ ևս Հայեր ըսեն:

2970. ԸՆՏՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Որչափ ալ Խրիմեանի ընտրութիւնը ժողովական միաձայնութեամբ կատարուեցաւ, և ընտրութիւնը խանդավառութեամբ ողջունուեցաւ, սակայն միտքերէ չէր փարատած հաստատութեան մասին կասկածը. զի Խրիմեանի ազգասիրական հոգին ու համարձակ լեզուն ու ազատամիտ գործունէութիւնը աշխարհածանոթ էին, և ոչ միայն ռուսական կառավարութեան հաստատելը անստոյգ կերևէր, այլ և օսմանեան թելադրութենէն և միջամտութենէն ալ կը վախցուէր: Այդ երկիւղից տագնապը օրէ օր կը սաստկանար, քանի որ սովորական պայմանաժամը կանցնէր և պաշտօնական յայտարարութիւնը կը յապաղէր: Օրմանեան իր դարձին Տփղիսէ անցնելուն հանդարտեցուցիչ բացատրութիւններ տուէր էր հիւպատոս Հասիպ պէյի, որուն հետ Կ. Պոլիսէ նախածանոթ էր, բայց ի՞նչ էլք ունենալը յայտնի չէր: Ռուսական կառավարութեան կողմէն նուազ էր կասկածը, ասն զի ոչ միայն միաձայն ընտրութիւնը իր ազդեցութիւնն ունէր, այլ և ռուսական քաղաքականութիւնը զինքն վստահ կը զգար իր օրինականութեամբ մասնաւորաց տեսութիւններուն շատ կարևորութիւն չտալ: Կը խօսուէր Աշրգեանի սաստիկ ցաւած ըլլալը, բայց այդ մասին ալ Օրմանեան կրցած էր անոր միտքը հանդարտեցնել, մայիս 15ին Կ. Պոլսոյ հասնելէն ետքը ունեցած տեսակցութեան մէջ, բացատրութիւններով թէ քանի որ մեծամասնութիւն գոյացնել անհնար էր, չորս ընտրելեաց մէջ յիշուելուն ինքն դիմադրած էր

ձախողուածի կերպարանը խնայելու համար: Բայց հաստատութեան գործը կը շարունակէր յապաղիլ, և մինչև իսկ Խրիմեան, գործին ելքին վրայ վարանելով, ստոյգ կամ վստահելի տեղեկութիւններ կորոնէր: Գործին լրման համար երկու կայսերութեանց համեմատութիւնը պէտք էր, զի ռուսականը իր հրովարտակը արձակելու համար կը պահանջէր որ նախապէս ընտրելոյն հպատակութիւնը փոխուի, որպէսզի իբրև իր հպատակին վրայ վճիռ արձակէ: Իսկ փոփոխութեան համար ալ օսմանեան կայսեր հաւանութիւնը պէտք էր վերջին դաշնագիրերու համեմատ: Այդ հաւանութիւնը ստանալու համար ռուսական դեսպանատունը դժուարութեանց կը բաղխէին, և հապիւ ուրեմն ընտրութենէ չորս ամիս ետքը խոստումը կը ստանար, և ռուսաց կայսեր Խրիմեանը հաստատելու որոշումը պատրիարքարանի կը հաղորդէր, որ իր կարգին սեպտեմբեր 14ին տեղապահին կը հեռագրէր, թէ դեսպանատունէն ծանուցաւ որ կայսրն Ռուսաց հաճել է հաստատել զընտրութիւն (ՌՒՂ.3), իսկ տեղապահը կը պատասխանէր թէ մեկանում պաշտօնական տեղեկութիւն չկայ (ՌՒՂ.4): Հպատակութեան փոփոխութիւնը խոստումէն ետքն ալ գործադրութիւնը դարձեալ կը յապաղէր, և մէն մի պարագայ նոր խնդրի նիւթ կը դառնար, և անշուշտ գործը դիւրացնելու համար էր որ Խրիմեան մայիս 20-ին հաւատարմական և երախտագիտական հեռագիր մը կուղղէր կայսեր, և այսպէս 1892 սեպտեմբերէն մինչև 1893 յունիս ութ ամիս անցնելէ ետքը դժուարութիւնք կը հարթուէին, և օսմանեան կայսեր հաւանութիւնը պաշտօնապէս կը ստացուէր, այն պայմանով որ Խրիմեան Կ. Պոլիսէ և օսմանեան երկիրներէ չանցնի Էջմիածին երթալու համար. պայման մը, որուն հարկ եղաւ զիջանիլ գործին էականը փրկելու համար (ՌՒՂ.18): Թէպէտ օսմանեան կայսեր միտքն էր Տաճկահայոց կողմէ տեղի ունենալիք ցոյցերը արգիլել, սակայն արտասահմանի մէջ աւելի նշանակալից ցոյցերու առթիւ տուած եղաւ: Վերջապէս ձևակերպութիւններ և պայմանագրութիւններ լրացան և 1893 յունիս 3ին արձակուեցաւ՝ ռուսական հաստատութեան հրովարտակը (ՌՒՂ.304), և նոյն օր հաղորդուեցաւ Խրիմեանի՝ Երուսաղէմի մէջ (ՌՒՂ.8) և նա ալ հեռագրեց Էջմիածին, ուր աւետիսը լսուեցաւ յունիս 4-ին (ՌՒՂ.6): Այս անգամ ալ հեռագրական բանակցութիւններ շարունակեցին մինչև որ Կովկասի կառավարչապետութենէ պաշտօնական լուրը տրուեցաւ Էջմիածին, որ զայն ստացաւ յունիս 13-ին (93.ԱՐՐ.576), և ասոր վրայ յունիս 21-ին ուղևորեցան հրաւիրակներ Արիստակէս Սեդրաքեան և Սարգիս Տէր-Գասպարեան եպիսկոպոսներ, և Եփրեմ Սուքիասեան ու Մեսրոպ Տէր-Մովսիսեան վարդապետներ (93.ԱՐՐ.587 և ՌՒՂ.20): Իսկ կաթողիկոսի անունին յիշատակութիւնը աւելի կանուխ սկսած էր Մայրաթոռի մէջ յունիս 13ին, և Տաճկահայոց մէջ Խորնէ պատրիարքի յունիս 18-ի շրջաբերականով (ՌՒՂ.10):

2971. ԵՐՈՒՍԱՂԷՄԷ ԷԶՄԻԱԾԻՆ

Հրաւիրակները Պաթումէ նաւերով հետզհետէ հանդիպեցան Տրապիզոն Սամսոն, Կ. Պոլիս Աղեքսանդրիա, և Երուսաղէմ մտան յուլիս 22-ին և նորընտիր կաթողիկոսին հանդիսապէս ներկայացան 23-ին (ՌՒՂ.127-133): Երուսաղէմի հանդէսներ պատուասիրութիւններ և փոխադարձ համակրութեան ցոյցեր լիուլի կատարուեցան տասն օրեր շարունակ, և մանաւանդ յոյժ աչքառու էր Յարութիւն պատրիարքին յուզումը, որ իրմէ տարի մը կրտսեր ծերունապարզ ընկերակիցը երեք տարի հիւրասիրեր էր և այժմ անկէ պիտի բաժնուէր (ՌՒՂ.164): Հրաժեշտի միաբանական սեղանը նշանաւոր եղաւ իրարու հանդէպ սիրալիբ արտայայտութեանց բաժակաճառերով (ՌՒՂ. 166), և վերջապէս նորընտիր և հրաւիրակները Երուսաղէմէ մեկնեցան օգոստոս 3-ին: Սուրբ Յակոբեանց միաբանութիւնը ուղեկցեցաւ մինչև երկաթուղոյ կայարան, պետական և հիւպատոսական ներկայացուցիչներու, և ի պատիւ յղուած հեծելոց գումարտակի հետ, և երկու վարդապետներու ուղեկցութեամբ մինչև Յոպպէ (ՌՒՂ. 167-168): Երկու օր այնտեղ մնալով 5-ին կը նաւեն Եգիպտոս

(ՌԻՂ. 169), և որ մըն ալ Բօրսայիտի նաւահանգիստը անցնելով՝ 7-ին կը հասնին Աղէքսանդրիա, ուր նորէն կը սկսին հանդէսներ և հացկերոյթներ, Աղէքսանդրիոյ և Գահրիէի պատգամաւորութիւններ կը ներկայանան ուղերձով, Եգիպտոսի փոխարքայն ունկնդրութեան կընդունի կաթողիկոսը, և օգոստոս 10-ին դարձեալ նաւելով 14 ին կը հասնին Թրիեստ, ուր Խրիմեանը կը դիմաւորէն Վիէննայի և Մանչեսարի պատգամաւորութիւնները և Վիէննական Մխիթարեանց ներկայացուցիչները, և Խրիմեանի հանգստանալու համար քանի մը օր Թրիեստ մնալէն օգոստեւելով՝ հրաւիրակները կայցելեն Վենետիկ քաղաքը և Ս. Ղապարու վանքը, ուստից դառնալով օգոստոս 20-ին շօգեկառքով կուղևորին Վիէննա, ուր համախմբուած կը գտնեն իբր հարիւր ազգայիներ Եւրոպիոյ աւելի քան 15 քաղաքներէ յատկապէս հաւաքուած, որոնք միւս օր կը ներկայանան եռանդուն ուղերձներով և յիշատակի ընծաներով, մէջերնին ըլլալով նաև Հունգարիոյ հռոմէադաւան Հայ հասարակութեանց պատուիրակութիւնները (ՌԻՂ. 163-216): Այցելութեան կու գան պարսկական դեսպան հայազգի Նարիման Խան, և Վիէննական Մխիթարեանց արքահայր Արսէն եպիսկոպոս Այտընեան, որոնց այցելութիւնը կաթողիկոսը փոխադարձեց (ՌԻՂ. 216), նոյն օրը աւստրիական նախարարին և մեծ դեսպաններուն հետ, հացկերոյթներ կրկնուեցան և նախաճաշ տրուեցաւ վերջին առտուն օգոստոս 22-ին (ՌԻՂ. 223) և նոյն երեկոյ Վիէննայէ մեկնեցաւ, և միւս երեկոյին օգոստոս 23-ին հասաւ Վօլօշինսկ և ոտք կոխեց Ռուսիոյ հողին վրայ (ՌԻՂ. 225), և ճամբան շարունակելով 24-ին հասաւ Օտեսա, ուր հասած էին Ռումինիոյ և Ռուսիոյ հայ հասարակութեան պատուիրակութիւնները: Համառօտ տեսակցութիւններէ ետքը նոյն երեկոյին պատրաստ շոգենաւով ուղևորեցան պատգամաւորութիւններէն շատերուն ընկերակցութեամբ, և Սևաստապոլ հանդիպելով՝ 26-ին հասան Պաթում: Այնտեղից անդին ընդունելութեան նշաններ խանդավառութեան աստիճան առին, որ արձագանգն էր տարի առաջ Էջմիածնի համազգային ժողովին առեն կատարուած արտայայտութիւններուն, և մենք աւելորդ կը սեպենք անոնց մանրամասնութիւններով վբաղիլ: Պաթումէ Տփղիս և Տփղիսէ Երևան և անկէ Էջմիածին, ամէն քաղաք, ամէն գիւղ և ամէն կայարան մէյմէկ հանդէսներ կատարուեցան, հարևան ևս և հեռաւոր տեղերէ խմբուած բազմութեանց կողմէ: Ամէնէն եռանդուն և ուռուցիկ ուղերձներ արտասանուեցան, որոնց իւրաքանչիւրին կը պատասխանէր Խրիմեան իրեն սեփական պարզ և անսեթևեթ՝ բայց զգայուն և սրտաբուխ ոճով: Իր յատուկ մտադրութեան առարկայ եղան Վասպուրականի և Տարօնի գաղթականներն ու պանդուխտները: Օգոստոս 28-ի առտուն Պաթումէ մեկնելով և Գորի ու Սուրամ ու Մծխիթ հանդիպելով 29-ին հասաւ Տփղիս, ուր եկեղեցական հանդիսութեամբ մտաւ վանքի մայր եկեղեցին և անկէ առաջնորդարան ելաւ հանգստանալ: Անհնար է միառմի պատմել հանդէսները, որոնք օգոստոս 29-էն մինչև սեպտեմբեր 7 շարունակեցին անընդհատ (ՌԻՂ.262), ամէն դասակարգ, ամէն պատգամաւորութիւն, ամէն ընկերութիւն, ամէն յատուկ մարմին իր ուղերձով և ոմանք ընծայով ալ կը ներկայանային: Սեպտեմբեր 3-ին կատարուեցաւ կառավարչապետին երթալը և կայսերական հրովարտակին և վեղարի խաչին և մեծ շքանշանին յանձնուիլը (ՌԻՂ.295-307): Միևնոյն սեպտեմբեր 3-ի երեկոյին իրենց արքորավայրէն Տփղիս հասան Սուքիաս Պարպեանց և Ներսէս Խոտապետեանց եպիսկոպոսները և 4-ին առտուն Խրիմեանի ներկայացան (ՌԻՂ.308): Կաթողիկոսական ընտրութեան գործին լրանալովը արքորի պայմանաժամն ալ լրանալը յայտնապէս՝ կը հաւաստէ որ ոչ յանցանքի մը համար և ոչ պատիժի նպատակով կարգադրուած էր այդ արքորը, այլ միոյն Գալստեան-Սեդրաքեան ընկերակցութիւնը ապատ թողլու համար իրենց տիրապետութիւնը վարելու և իրենց ընտրութիւնը ապահովելու, որուն դէմ էին երկու եպիսկոպոսները, այլ կրնային ուրախ ըլլալ որ իրենց արքորուելուն ալ իրենց նպատակը

իրականացած էր, տաճկահայ մը բարձրացած էր կաթողիկոսական աթոռը, և Գալստեան ու Սեդրաքեան յուսախաբ մնացած էին իրենց ակնկալութեանց և իրենց աշխատութեանց մէջ: Խրիմեան և հետևորդներ սեպտեմբեր 7-ին Տփղիսէ մեկնեցան, Աղստաֆա 500 հայ և թուրք Ղաչագցի ձիաւորներ հաւաքուած էին իրենց գաւառին սահմանին մէջ հետպահեալ Տիլիջան և Ելենկովա գիշերելով, և Էյլարի մէջ տեղապահէն և սինողականներէն ողջունուելով՝ սեպտեմբեր 10-ին Խրիմեան մտաւ Երևան, 11-ին այնտեղ տօնեց Խաչվերանցը, և 12-ին Երևանէ եկաւ Էջմիածին փառահեղ և հրաշափառ ընդունելութեամբ, և ուղղակի մտաւ մայր տաճարը, և միւս օր մաղթանք կատարուեցաւ իր ներկայութեամբ: Հանդիսական ներկայացման և տեղեկատուութեանց պարագաներ տևեցին դեռ քանի օրեր, օծման պատրաստութիւնները լրացան, շաբաթ 25-ին հաւատարմութեան ուխտագրութիւնը տեղի ունեցաւ, և օծման վեհ արարողութիւնը կատարուեցաւ սեպտեմբեր 26-ին, Վարագայ Խաչին կիրակիին, և Վանեցւոց համար նուիրական տօնին օրը, գլխաւորութեամբ Սմբատեան Մեսրոպ եպիսկոպոսի: Այս արարողութեան նորութիւնն էր որ օծումը փոխանակ տաճարին մէջ կատարելու, բակին մէջ պատրաստուած շարժական տախտակամածի մը վրայ կատարուեցաւ, որպէսզի հաւաքուած անթիւ բազմութիւնը կարենայ ապաստարար հանդէսը վայելել մնացեալ մասերու մէջ արարողութեանց և հանդիսադրութեանց պարագաները սովորականներն էին (ՈՒՂ. 364-369): Հանդիսութիւն մըն ալ ձեմարանի տարեդարձն էր որ սեպտեմբեր 25-ին կիյնայ և օծման զուգարկութեամբ տօնուեցաւ հոկտեմբեր 9-ին Թարգմանչաց տօնին օրը (ՈՒՂ. 375), և այսպէս կը լրանայ, ուրախութեանց և հանդիսութեանց շրջանը, որ յուլիս 22-ին հրաւիրակներու Երուսաղէմ մտնելու օրէն 80 օր տևած էր, և որ ստուար հատորով մը մանրամասնորէն պատմուած է հրաւիրակ և ականատէս Տէր-Մովսիսեան Մեսրոպ վարդապետէ (ՈՒՂ.) իսկ 1892 մայիս 5-ի ընտրութենէն մինչև 1893 սեպտեմբեր 26-ի օծման օրը 17 ամիսներ անցած էին, քանի մը օր պակաս:

2972. ԽՐԻՄԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ինչ որ մենք քաղուած օրէն պատմեցինք տկար և տժգոյն ստուերագիծ մըն է այն եռանդնոտ և խանդավառ խնդութեան, որով ամէն կողմերէ ողջունուեցաւ և տօնուեցաւ Խրիմեանի կաթողիկոսութիւնը, իր տեսակին մէջ գերազանց և աննախընթաց ըսելու արժանի տպաւորութեան ներքև, այնպէս որ իրաւամբ կրնանք հարցնել թէ ի՞նչ էր այդ երևոյթին իսկական պատճառը: Հադիսական և տօնական ցուցադրութիւններ երկու տեսակէտով կը կազմուին, մէկը իբր անցեալին երախտագիտութիւն և միւսը իբր ապագային ակնկալութիւն: Այդ պատճառները Խրիմեանի պատշաճեցնելով իր՝ նախընթացին մէջ չենք տեսնար այդ բոցեռանդն շարժումը, արդարացնող արդիւնքներ: Տարօնի վանահայրական և առաջնորդական պաշտօնը ապարդիւն անցած էր, Կ, Պոլսոյ պատրիարքութիւնը դժգոհութիւններու առիթ տուած և հրաժարելու ստիպած էր, Վանայ տեղապահութիւնը նշանաւոր հետք մը թողած չէր. բաղդատմամբ օգտակար եղած է Վարագայ վանահայրութիւնը, բայց այն ալ շատ արտասովոր բան մը չէր, այնպէս որ իր բոլոր պաշտօնավարութիւններովը նշանաւոր արդիւնք մը ցուցած չէր որ այդչափ եռանդուն երախտագիտութիւն հրաւիրէր: Իսկ ապագային համար վարչական հանձար չէր խօստանար, ծերութեան հասած 72 տարեկան էր ընտրուած, բազմակողմանի վարգացմամբ չէր պատրաստուած, լեզուագիտութեան և ճաշակէ վուրկ էր, կանոնաւոր պաշտօնավարութեան անընդունակ կը ճանչցուէր, և փորձառնութենէ առաւելութիւններ քաղած չէր մեծ ակնկալութիւններ չէին ուրեմն որ կեանքին վերջին մասին մէջ տարբեր բան մը յուսադրէին քան ինչ որ ցուցած էր իր նախընթացին մէջ: Ասոր հետ մէկտեղ իրականութիւն մըն էր իրեն շուրջը բորբոքուած խանդավարութիւնը, որ ոչ կեղծիք էր, որ կուսակցական ճիգ մըն էր, և ոչ ալ

մուրացածոյ հայթհայթուած էր: Բայց աշխարհավարութեան ասպարէզին մէջ նոր չէ որ ճշմարիտ արդիւնաւորութիւնը երբեմ համակրութիւն չի պատճառեր և անհատը անհամ կը թողու, ինչպէս դիմաբաժանեալ կերպով երբեմն պակասութիւններ, և նոյն իսկ թերութիւններ ալ անհատը համեղ կը պահեն և նոյնիսկ համակրութիւն կը ներշնչեն: Այդ վերջին տեսակէն էր Խրիմեան. տեսակ մը որ ցանցառ է ստուգիւ, բայց անհնար չէ: Անոր ալ գաղտնիքը մենք կը գտնենք զգացմամբ շրջանակին մէջ. անկեղծ բնաւորութիւն, անշահասէր գործունէութիւն, ուղիղ միտք, բաց սիրտ, համարձակ խօսք, ժողովրդասէր գործ, անխտոր անարուեստ այլ սրտաբուխ էին իր ատենաբանութիւնները: Մարդիկ աւելի կը սիրեն ապիկար բարութիւնը քան չարամիտ կարողութիւնը, և Խրիմեանի քուէ տուող 72 պատգամաւորներէ, և անոր շուրջը ցոյցեր կազմակերպող հազարաւոր անձերէ, չենք կարծեր և ոչ մէկը գտնուի որ Խրիմեանի ջանքով ոսկեպարզ նորոգուած, երջանկութիւնը իրականացաւ և բոլոր ձգտումները լրացած տեսնելու համոզումը ունեցած ըլլայ: Ասոր հետ մէկտեղ ամենէն աւելի Խրիմեանի արդիւնաւորութեան մասին թերահաւատներն ալ, սիրտով և համոզումով տուած են իրենց քուէն, գլխաւորապէս այն նպատակով որ անշուշտ Խրիմեանի անունով և անձով ազգին մէջ համերաշխ սէրը պիտի աճէր, և մասնաւորապէս կանուխէն գոյացած և Մակարի օրէն պօրացած Մայրաթողին և Տաճկահայոց, ևս ռուսահայ աշխարհականութեան միջև տիրող պաղութիւնը պիտի վերնար, և ցրուեալ ազգայնոց փոխադարձ սէրը պիտի ամրապնդուէին, ինչ որ անարգելիք արդիւնք մը չէր: Խրիմեանի գերազանց արժանիքը եղած էր հայ տարրին սիրտին մէջ ինքնաձանաչ զգացմանց, ներքին վարգացմանց, գաւառական պահանջից, և ստորին դասակարգի պաշտպանութեան գաղափարը ոչ թէ միայն արծարծել, այլ և ստեղծել, ինչպէս որ նկատած ենք իր պատրիարքական ընտրութեան առթիւ (2779): Խրիմեան ստեղծիչ կամ հիմնադիր եղաւ այդ ըմբռնմանց, և այս է Հայրիկ մակդիր անունին իմաստը, որ իրեն տրուեցաւ անդստին իր առաջին կեանքին մէջ վարժապետութեամբ զբաղած օրերէն: Մենք պէտք չունինք նոր կաթողիկոսը ճանչցնելու համար անոր նախընթացը պատմել, որուն հետևած ենք Կ. Պոլսոյ մէջ իբր պանդուխտ հասած և վարժապետութեան սկսած օրէն (2679), և քայլ առ քայլ յառաջացած ենք մինչև Հայրապետական աթոռ բարձրանալը և հանրային գործոց գլուխ անցնիլը, երբ 73 տարեկանէ միայն 8 օրով պակաս էր. տարիք մը որ յօգնած կրնար ըսուիլ, թէպէտ ինքն մարմնով ժիր և միտքով առոյգ էր տակաւին: Խրիմեան իր նախորդ Մակարէն եօթը տարի ետքը կընտրուէր, ճիշդ եօթը տարեկան ալ պատիկ էր, գրեթէ օրը օրին հանդիպած ըլլալով անոնց ծնունդը, Մակարինը 1813 արպիլ 6-ին Պուլանըքի Թեղուտ գիւղը, և Խրիմեանինը 1820 ապրիլ 4-ին Վանայ Յայնկոյսներ թաղը. ընտրութեանց օրերն ալ միայն 15 օրով կը տարբերէին իրարմէ ապրիլ 21-էն մինչև մայիս 5:

2973. ՎԵՀԱՊԵՏԵԱՆ ԵՒ ԱՇԸԳԵԱՆ

Յարութիւն պատրիարքի գլխաւոր հոգածութիւնը դրամական մատակարարութիւնը կարգի դնելն էր, անոր համար կալուածներ շատցնելը կը քաջալերէր և պարտքը ջնջելու կը հետապնդէր. բայց այս երկու դիտումները շեղակի կը համեմատէին, քանի որ պարտքով իսկ շինութիւններ կը կատարուէին Ղևոնդի ձեռքով և կամեցողութեամբ: Յաջողութեան յոյսը բոլոր Կ. Պոլիսէ գալիք նպաստին վրայ էր գրուած, պետական սնտուկէ պահանջին և մայրաքաղաքի Հայոց պարտաւորեալ նուէրին վրայ. սակայն անոնք ալ արդիւնք չէին տար, հակառակ Սէֆէրեան Սիմէոն եպիսկոպոսի անդուլ ջանքերուն: Ստացուած տեղեկութեան համեմատ Երուսաղէմի աթոռին անունով պետական սնտուկներուն գանձած գումարը 36,000 օսմանեան լիրա էր, և անկէ 27,000 արդէն գանձուած էր (92. ՏՆՕ. 169), և մնացորդէն Սէֆէրեան միայն 60 ոսկի կրցած էր գանձել (92. ՏՆՕ. 1701). իսկ մայրաքաղաքի ժողովուրդէն առնուածը եկեղեցիներու գանձանակներէն

հաւաքուած աննշան գումարներն էին միայն: Նուիրակութիւններէ ալ նշանաւոր արդիւնաւորութիւն չէր գոյացած, ուստի Վեհապետեան խորհեցաւ անձամբ Կ. Պոլիս դառնալ և գանձումներու ոյժ տալ: Սէֆէրեան փոխանորդ ուղղակի դիմումով յաջողեցաւ պետական արտօնութիւնը ստանալ, և 1893 մայիս 27-ի նամակով հաղորդեց Վեհապետեանի (93. ՏՆՕ. 307), բայց Խրիմեան կաթողիկոսի հաստատուիլը և մեկնիլը վրայ հասաւ, և միայն անոր օգոստոս 3-ին մեկնելէն ետքը ինքն ալ մեկնեցաւ (93. ՏՆՕ. 8), և օգոստոս 22-ին Կ. Պոլիս հասաւ, (93. ԱՐԼ. 2866): Իրեն կուղեկցէր Սէֆէրեան, որ հրաւիրակներուն հետ Երուսաղէմ էր եկած, Կ. Պոլսոյ գործերը յանձնելով իր օգնականին Երէցեան Գէորգ վարդապետի, որ նախընթաց մարտին այդ պաշտօնին կոչուած էր (93. ԱՐԼ. 2737): Յարութիւն պատրիարք իր ուղևորութեան իբր պատճառ կը ցուցնէր օդափոխութեան պէտքը և կայսեր ներկայանալու պարտքը, սակայն գլխաւորը դրամական խնդիրն էր, որուն համար անմիջապէս սկսաւ նախարարութեան դիմել, այցելել և տեսակցիլ, պնդել և պահանջել, կայսերական արքունիքն ալ ներկայացաւ, Կ. Պոլսոյ ժողովուրդը, յիշելով անոր իշխանութեան օրերը, սկսաւ պատուուսիրութեան ցոյցերը յաճախել, համակրութեան բացատրութիւնները առատացեալ, և ազգային գործոց համար առաջարկներ ընել, և ներկայ պատրիարքէն սպասածը ու չտեսածը նախորդ պատրիարքէն լուսալ: Աշըգեան Վեհապետեանի գալուն մէջ մաս ունեցած չէր, որ իրեն հաճելի չէր կրնար ըլլալ, և գալէն ետքը անոր հանդէպ գործածուած յարգանքները ևս առաւել սաստկացուցին իրեն տհաճութիւնը, և ահա թէ ուստի յառաջ եկաւ Վեհապետեանի շուտով Երուսաղէմ դառնալու որոշումը՝ նպատակը իրականացնելէ առաջ: Բնական էր որ հրապարակաւ և յայտնի չլինէին ձեռք առնուած միջոցները, բայց կառավարական տեսակցութեանց մէջ սկսաւ թելադրուիլ Վեհապետեանի, թէ հարկ չկար նմա իրեն աթոռէն դուրս նեղութիւն քաշել, և թէ պէտք եղածը դիւրաւ կրնար կարգադրուիլ իր տեղը գտնուած ատենն ալ: Վեհապետեան վզաց այդ թելադրութեանց համակերպելու հարկը՝ աւելի ձախող միջադէպներու առիթ տուած չըլլալու համար: Իսկ կառավարութեան կողմէ գործը քաղցրացնելու համար օսմանիէ մեծ շքանշանի շնորհը տեղի ունեցաւ դեկտեմբեր 17-ին (93. ԱՐԼ. 2964), և Վեհապետեան այլ ևս չուշացուց իր ուղևորութիւնը, և 23-ին Կ. Պոլիսէ մեկնելով (93. ԱՐԼ. 2969), նոր 1894 տարւոյ յունուար 5-ին Ծննդեան ճրագալոյցի օրը Յոպպէ հասաւաւ (92. ԱՐԼ. 2981): Իսկ տրուած խոտումներն ու ակնկալութիւններն արդիւնաւորութիւն չունեցաւ, և պարտքի կնճռոտ խնդիրը հետզհետէ աւելի ծանր կերպարան առաւ, ինչպէս որ կարգ ըստ կարգէ պիտի պատմենք անկէ ծագած միջադէպները: 2974. ԱՇՂԳԵԱՆ Ն ՀՐԱԺԱՐԵԱԼ

Աշըգեանի պատրիարքութիւնը չկրցանք դժբախտաբար հաճելի գոյներով պատկերացնել: Որչափ ալ իր մասին չկարենանք ոչ չարամտութեան և ոչ ապիկարութեան արատներ դնել, և որչափ ալ շփոթ և խանգարեալ կացութեան հանդէպ գտնուած ըլլալը խոստովանինք, պիտի չկարենանք իր վարչական կորովի և հաստատամիտ ուղևորութեան պակասութիւնը ծածկել, ինչ որ պաշտօնապէս Ընդհանուր ժողովոյ մջ անձնական անբաւականութիւն ըսուեցաւ (94. ԱՐԼ. 3252): Իր պատրիարքութեան առաջին օրերէն ունեցած միտքը (2940) վերջերը նորէն մէջտեղ դրաւ, առաջնորդներուն անուանումը պատրիարքարանի վերապահելու, վիճակային ընտրութիւնը դադրեցնելու, որ ժողովներէ մերժուեցաւ իբրև ազգային եկեղեցոյ սկզբանց հակառակ և նպատակին անբաւական (94. ԱՐԼ. 3013,3025): Աշըգեանի վարանոտ վարչականութիւնը աւելի շեշտուեցաւ Գումգաբուի դէպքէն ետքը, (2947), երբ այնպիսի անգոյն ընթացք մը ունեցաւ որ և ոչ մի կողմ, խոհական կամ ոչ, բուռն կամ ոչ, չկրցաւ համարձակօրէն համակիր յարաբերութիւն պահել անոր հետ: Յիշեալ դէպքին վրայ Աշըգեանի ևս քսու և մատնտու կարծուած անձերուն կարգին հակառակութեան առարկայ եղաւ, սակայն առանց անոր ալ վանալան պարագաներ ծանրացուցին

իրեն կացութիւնը: Վերջին կրօնական ժողովին ընտրեալներուն մէջէն Իվմիրլեան Մատթէոս և Ալէաթճեան Գրիգորիս եպիսկոպոսներ հաստատութեան պաշտօնագիրէն դուրս ձգուած էին, իբր պի ուժգնապէս դիմադրած էին համագումարի ժողովին մէջ Աշըգեանի թելադրութեանց, և Աշըգեան անփոյթ եղաւ անոնց պաշտպանութիւնը ստանձնել: Խորէն Նարպէյի հանդէպ բռնած ընթացքը (2961), և Յարութիւն պատրիարքի Կ. Պոլիս չմնալուն համար կատարուած անցուդարձերը (2973), մինչև իսկ Գարեգին Սրուանձտեանի մասին երկմիտ տրամադրութիւնը (2962), և անպաշտօն և հիւր եպիսկոպոսներու և վարդապետներու դաս ելլալու արգելքը, աննպաստ մեկնութեանց առիթ ընծայեցին, իբրև թէ յառաջադէմ եկեղեցականներ նկուն վիճակի մէջ կամ կառավարութեան աչքին կասկածելի պահելով, կը բաղձայ իր գիրքը ապահովել: Նոյնիսկ մատանիի մը նուէրին կայսերական խոստումին, և հրաժարելէն ետքը հանգստեան թոշակի ապահովութեան մասին իր յայտնած միտքերը (2950), վրոյցներու առիթ ընծայեցին: Վերջին ատեններ քանիցս հրաժարականը պահանջելու ցոյցեր եղան, որոնց հանդէպ ինքն պետական հովանաւորութիւնը ևս քան վաս ապահովելու միջոցները սաստկացուց, կրկին և կրկին հաւատարմութեան շրջաբերականներ ցրուեց՝ ապագային խոովարարներ մատնանշելով (94.Ա.ԲԼ.3017), որոնք ձախողակի մեկնուեցան, այնչափ որ բռնադատողներու կողմէ մահափորձի միջոցն ալ գործածուեցաւ իր վրայ: Իր գաղափարն էր եղած կայսեր ծննդեան և գահակալութեան օրերը, մայրեկեղեցւոյ մէջ շարականով և ընթերցուածով և աւետարանով մաղթանքներ կատարել՝ եկեղեցական և պաշտօնական և ժողովրդական դասերու մասնակցութեամբ, և յորդորական ու մաղթողական քարոզով, որ հետզհետէ պարտադիր սովորութեան կարգն անցաւ: Սակայն հակառակութեան ցոյցերը ստացան, և քահանաներու և բոլոր եկեղեցականներու սպառնական նամակներ ցրուեցան, որ անոր անունը պատարագի մէջ յիշելը դադրեցնեն, և կասկածաւորներու ձերբակալութեամբ ալ ցոյցերուն առջև չառնուեցաւ, և վերջապէս հրաժարելու և քաշուելու ստիպուեցաւ (94. ՏՆՕ. 112), և յանկարծ յունիս 14-ին հրատարակուեցաւ թէ պատրիարքի հրաժարականը կայսեր կողմէ ընդունուած է (94. Ա.ԲԼ. 3108), և ոչ ոք գտնուեցաւ որ պարագային վրայ ցաւ յայտնէր, թէպէտև մօտ վեց տարի պաշտօնին վրայ եղած էր և ակնածութեան ու ակնառութեան պահանջով գովեստներ ալ լսած էր: Տեղապահի ընտրութեան արտօնագիրը ստացուեցաւ յունիս 22-ին, և այն ինչ խառն ժողովը ընտրութեան հրաւիրուած էր, յունիս 28-է 29 գիշերը տեղի ունեցած ահեղ երկրաշարժը գումարումը յապաղեց (94. Ա.ԲԼ. 3120), և հապիւ օգոստոս 3-ին ընտրութիւնը կատարեցաւ, և Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան տեղապահ հռչակուեցաւ (94. Ա.ԲԼ. 3147), և 15-ին հաստատուեցաւ և 16-ին գործի ձեռնարկեց, և մինչև այն օր ամիսուկէս ժամանակ գործերը փոխանորդ ճէվահիրճեան Գաբրիէլ վարդապետի ձեռքը մնացին, իսկ նախկին պատրիարքին հանգստեան թոշակը հոկտեմբեր 10-ին շնորհուեցաւ (94.Ա.ԲԼ.3201): Աշըգեան պատրիարքութենէ հրաժարելով քաշուեցաւ Մաքրիքէօյ արուարձանի մէջ նոր կառուցուած տունը, և բոլորովին առանձնացած կեանք մը անցուց, իր վրայ խօսիլ չտալու չափ պզուշանալով մինչև իր մահուան օրը 1899 հոկտեմբեր 26-ին, տակաւին 57 տարեկան: Առողջ կապմ ունէր պատրիարքութենէ առաջ, այլ հետզհետէ կորսնցուց իր պաշտօնավարութեան ատեն, 1893 սեպտեմբերի մէջ Եալովայի ջերմուկներն ալ գնաց՝ յատուկ կայսերական արտօնութեամբ և շնորհով, բայց չկապդուրուեցաւ, և պատրիարքութեան վերջին երկու տարիները ստէպ հիւանդութեամբ անցուց և յաճախ պատրիարքարանէ բացակայեց: Խորէն Աշըգեան շատ աւելի պատուաւոր կեանք ունեցած և համբաւ թողած պիտի ըլլար, եթէ պատրիարքութեան բարձրացրած չըլլար և մնար վանական և դրական կեանքի շրջանակին մէջ իբր պարգացեալ անձ մը և իբր նախանձայոյզ եկեղեցական: Պատրիարքական բեռը ծանր եկաւ իր ուսերուն և անյարմար իր

ձիրքերուն և կիրքերուն, որոնք հեռի էին վարչական ընդունակութենէ, և առանց ուրանալու ալ իր բացառաբար պարագաներու հանդէպ գտնուիլը, չենք ալ ծածկեր թէ ամէն պաշտօնեայի պարտք է իր գտնուած կացութեան վրայ տիրապետել, և ոչ թէ անոր առջև տկարանալ: Այսու հանդերձ Օրմանեան, որ անոր դամբանականը խօսեցաւ, չվարանեցաւ յայտարարել թէ իրարմէ շատ կը տարրին վարէն վեր և վերէն վար նայուածքները, թէ վերէն վար նայողներուն բնական և գլխու պտոյտի ենթարկուիլը, և թէ պետք չէ վարէն վեր նայելով դատել՝ վերէն վար նայելու ստիպողներուն գործերը:

2975. ԱՐԿԱԾԱԼԻՅ ԺԱՄԱՆԱԿ

Տեղապահութեան միջոցը արկածալից ժամանակ մը եղաւ, որոնց առաջինը էր Կ. Պոլսոյ ահուելի երկրաշարժը, որ նշանաւոր շէնքեր վնասեց, տուներ քանդեց, թաղեր աւերեց, բազմութիւններ վրանաբնակ դարձուց, խեղճութիւնը ընդարձակեց, և պետական նպաստներու քով ազգայիններ և անհատականներ ալ պէտք եղան, և մինչև հեռաւոր տեղեր և օտար ազգեր օգնութիւններ փութացուցին: Միևնոյն ժամանակ հրդեհ մըն ալ մայրաքաղաքի Խասքէօյ թաղը լափեց, ուրիշ մեծ հրդեհ մըն ալ Կիլիկիոյ Հաճըն քաղաքը վտանգեց, և տեսակ տեսակ դժպիսի պարագաներ շատ գաւառներ օգնութեան կարօտ դարձուցին: Այդ արկածներէն աւելի սաստիկ եղան ներքին յուլմունքները և ընդհանուր կոտորածներ որ ազգային կեանքը վրդովեցին: Երբ գաւառներու մէջ ապահովութիւններ կը քիչնային, և պանապան կողմերէ պաշտօնէութենէ և խուժանէ գործուած անտեղութիւններ կը շատնային, կուսակցականներ ալ բուռն շարժումները կընդարձակէին և անձնապաշտութեան կազմակերպութիւնները կը քաջալերէին, և այդ նպատակով ազգայիններէ բռնադատեալ միջոցներ հաւաքելու կը ձեռնարկէին և սպառնական ձևերով ազգայինները կը նեղէին: Եւ փոխադարձաբար կառավարութիւնը Հայոց վրայ խռովարարական և ապստամբողական ոգի ենթադրելով իր խստութիւնները կը շատցնէին և կոտորածները կը կարգադրէր, և այսպէս ներհակընդդէմ մրցմամբ ազգային կացութիւնը կը վատթարանար: Ճիշդ այդ միջոցին էր որ 1894 յուլիսին տեղի կունենար Սասունի կոտորածը (ԹՈՒ.Բ.552), որուն մասին խօսիլ առաջիկային կը թողունք հետևորդ պարագաներուն հետ յարակցութիւնը չընդհատելու համար: Ազգային ներքին վարչութիւնը տագնապներէ պաշարուած՝ հապիւ թէ կրնար իր գոյութիւնը պահել, թէպէտ առանց մեծ արդիւնաւորութեան, և այն ալ օրական դիպուածներու և կարօտութեանց նպաստելու պարունակին մէջ ամփոփուած: Իսկ անցելոյն հետ յարաբերութեանց և տիրող մտայնութեան իբր նշանակ՝ յիշենք միայն կրօնական ժողովոյ այն որոշումը, որով կը վերցուէր Աշըգեանի արգելական հրամանը, որ պաշտօն և հիւր վեղարաւորները կը դրկէր դաս ելլելու իրաւունքէ, պարտաւորելով աւանդատուներուն մէջ առանձինն աղօթել: Կրօնականին նոր հրամանը պատրիարքարանի կը վերապահուէր միայն պատարագի արտօնագիր տալ (94, ԱՐԼ. 3164, 3180):

2976. ԲԷՖՍԻՉԵԱՆԻ ՄԱՀԸ

Կիլիկիոյ Մկրտիչ կաթողիկոսի ձախող գործունէութիւնը պատմեցինք անդստին Երուսաղէմէ միաբանութեան օրէն (2649) մինչև Կիլիկիոյ կաթողիկոսութեան բարձրանալը (2818) և անկէ ետքն ալ իրեն ձեռնարկներն քննադատեցինք (2860), և յաճախ թեթևակի ակնարկներով մատնանշած ենք անոր անյաջող կաթողիկոսութիւնը, որ բաւական ալ երկարեցաւ, 26 տարի, և մինչև իր կենաց շուրջ ութսներորդ տարին, Կի վախճանեցաւ 1894 նոյեմբեր 15-ին, և 1815-ին կը տրուի իր ծնունդը: Տարի մը առաջ 1893 սեպտեմբերին կորաքամակ տկարացած և վախճանը մօտեցած կըսուէր (93, ԱՐԼ. 2884), բայց տակաւին կեանքը քաշկուտեց, թէպէտ ինքն ալ իր մահուան մօտալուստ ըլլալուն համոզուած էր: Ինչու որ 1894 փետրուար 5-ին գրած նամակով, իր նախկին միաբանակցութիւնը

յիշելով, Երուսաղէմի պատրիարքութեան կառաջարկէր, բոլոր իր հարստութիւնը նոյն աթոռին թողուլ, պայմանով որ Երուսաղէմի Ժառանգաւորացը Սրբոց Յակոբեանց աթոռոյն և Կիլիկիոյ աթոռոյն վարժարանը կոչուի, և գոնէ 20 կիլիկեցի և 20 ոչ-կիլիկեցի աշակերտներ պահէ, իր մարմինը ուր որ ալ մեռնի Երուսաղէմ փոխադրուի և Ս. Փրկչի բակը թաղուի, և ամէն տարի Հոգեգալուստի օրը իրեն համար հոգեհանգիստ կատարուի, բայց առաջարկը ընդունելի չէր ըլլար (94. ՏՆՕ. 72-73), թէպէտև նա կը կրկնէր (94. ՏՆՕ. 106), բայց Երուսաղէմ դարձեալ կը մերժէր Քաբրիէլ Անոյշեան վարդապետի տեղեկագիրին վրայ, որ յատկապէս Բերիա յղուած էր, ուր կը գտնուէր Բէֆսիպեան խօթագին վիճակի մէջ (94. ՏՆՕ. 120): Մկրտիչ Բէֆսիպեանի այդ հարստութիւնն էր որ իրեն քալ գայթակղութեան եղած էր. Վի անոր սիրուն ամէն տեսակ միջոցները գործածած էր, և օրինականութիւն և պատշաճողութիւն Վոհած էր իր շահագէտ ձգտումներուն, և ինչ որ աւելի աւաղելի էր ունեցածն ու գանձածը վտանգաւոր դիրքի մէջ կը գտնուէր: Ինչպէս ինքն ալ խոստովանած էր թէ Երուսաղէմի փոխանցելուն մէջ գլխաւորապէս կը դիտէր իր հարստութիւնը կորուստէ վերծուցանել: Այդ հարստութեան տենչանքն էր որ իր դիրքն ու շահը ապահովելու համար Վինքն մինչև իսկ քսու և մատնտու դրութեանց մղած էր, ինչպէս եղան ապգային պատրիարքարանի կառավարութեան մատուցած պաշտօնական յիշատակագիրները, թէ անոր պահանջները նպատակ ունին Ռուսիոյ ապդեցութեան ծառայեր, Թուրքիոյ Կիլիկեան աթոռը Ռուսիոյ կաթողիկոսութեան հպատակեցնելով, և թէ Միացեալ ընկերութիւն անուանեալ մի մարմնոյ կողմէ, ուսուցիչի անունի ներքև խոովարկուներ կը յղուին Կիլիկիոյ քաղաքները, և թէ ինքն օսմանեան պետութեան ծառայելու համար միայն ստանձնած է կաթողիկոսական պաշտօնը (95.Ա.ՔՍ.115): Բէֆսիպեան այն անձնաւորութեններէն մին եղաւ, որոնք եթէ կարողութեան և յաջողութեան կողմէն նկատուին՝ անարգուելիք անհատներ չեն. բայց իրենց կրողութիւնն ու յաջողակութիւնը պարզապէս ստորին շահերու և ապարդիւն ձեռնարկներու ծառայեցնելով՝ յարգ ու վարկ չեն ստանար և վատ համբաւ միայն կը թողուն իրենց ետևէն, և ապնի կիրքերու, բարձր ու գոեհիկ բնապդներու խառնուրդ մը կը ներկայեն յիշատակաց աշխարհին մէջ: Կիլիկիոյ աշխարհը և Կիլիկիոյ աթոռը բախտաւոր եղած պիտի ըլլային եթէ Բէֆսիպեան իր յաջողակութիւնը, ինչչափ ալ չափաւոր ըլլար, անոնց բարւոքման նւիրած ըլլար, ինչպէս յաճախ բերանացի կը կրկնէր, և կարծէս ժողովուրդ խաբելու համար առերևոյթ ձևակերպութիւններ ալ կը կատարէր: Այնթապի գիշերօթիկը և Մարաշի ձեմարանը մրցակից կը կանգնէր, ոչ միայն կարճատև, այլև պիտականուն հիմնարկութիւններ էին, և անպտուղ ըլլալու սահմանուած էին, քանի որ տարեկան 100 ոսկիէ աւելի ծախք չէր կրնար ընել անոնց վրայ իր բնածին ազահութիւնը (95. Ա.ՔՍ. 132): Մէկ խօսքով՝ ինքն բախտ չունեցաւ աթոռին վրայ, Վի հարստութիւնն ալ չկրցաւ վայելել և վայելցնել, աթոռն ալ դժբախտ եղաւ իրեն ներքև անխնամ լքուելով և անբնակ ամայնալով: Իսկ Կիլիկիոյ ժողովուրդը իր անկեալ վիճակին մէջ մնաց և աւելի ևս սուլեցաւ: Գործոց կերպարանը և ոչ մանրամասնութիւնները տալու նպատակին մէջ մնալով, այդչափը բաւական կը համարինք Բէֆսիպեան Մկրտիչի յիշատակին համար: Կարծես չարագուշակ ապդեցութիւնը իր ետևէն ալ շարունակեց, Վի ութը ամբողջ տարիներ անգլուխ մնաց Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը:

2977. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Տեղապահութեան միջոցին արկածալից տագնապները եթէ մէկ կողմէ կը դժուարացնէին պատրիարքական ընտրութիւնը, միև կողմէն ալ անհրաժեշտ կընէին Վայն, որպէսՎի կացութեան տէր և գործին գլուխ կատարեալ իրաւասութեամբ և օրինական իշխանութեամբ ձոխացեալ անձ մը գտնուի, և նախորդին անբաւականութեամբը (94.ԱՐԼ.3252) խանգարուած դիրքը յաջորդին բաւականութեամբը դարմանուի: Դիմաքսեան

տեղապահ վանց չըրաւ գիրով և բերնով հետապնդել որ կառավարութենէ ստանայ պատշաճ արտօնութիւնները, երբ ուրիշ կողմէ պարտաւոր էր նպաստի և օժանդակութեան միջոցները խնդրել և կարգադրել: Ընդհանուր ժողովոյ սովորական նիստերը խափանուած էին, Պատրիարքական աթոռը թափուր էր, վարչական ժողովներու պայմանաժամը լրացած էր, բայց առանց յատուկ արտօնութեան հնար չէր երեսփոխանութիւնը գումարել: Պատրիարքի հրաժարականէն երեք ամբողջ ամիսներ անցած էին՝ երբ առաջին նախապատրաստութեան ձեռնարկուեցաւ և համագումարը հաւաքուեցաւ 1894 նոյեմբեր 25-ին պատրիարքութեան և կրօնական ժողովոյ ընտրելեաց ցանկերը պատրաստելու: Չայնատէր հրաւիրեալներ 49 եղած էին, և ներկայ գտնուեցան 8 եպիսկոպոս, 13 վարդապետ, 12 աւագերէց և 13 աթոռակալ, բովանդակ 46, քուէ մըն ալ նամակով, որով 2 միայն պակաս մնացին: Պատրիարքական ընտրելեաց ցուցակին առաջին եօթները եղան, Իվմիրլեան, 34, Դիմաքսեան 29, Ալէյաթճեան 19: Չամիչեան 16, Մխիթարեան 11, Սէֆէրեան 9 և Շիշմանեան 9 քուէով և ուրիշ 9 անուններ 6-էն 1 քուէով (94.ԱՐԼ.3242): Իսկ կրօնականի ընտրելեաց ցանկը կը պարունակէր 42 անուններ՝ 41-է մինչև 5 քուէ առնողներ (94.ԱՐԼ.3243): Իսկ քաղաքականի եօթը անդամոց ներկայութեամբ կազմած հնգանուն ցանկը եղաւ, Իվմիրլեան 7, Սէֆէրեան 7, Չամիչեան 6, Յովհաննէսեան 5, և Թահմիլչեան 2 (94.ԱՐԼ.3244) վերջին երկուքներէն Յովհաննէսեան համագումարէն 6 քուէ առած էր, իսկ Թահմիլչեան ցանկէն ալ դուրս մնացեր էր և անոր անունը գրուեցաւ Դիմաքսեանի անունին տեղ, որ վերջնական ընտրելիութենէ հրաժարեցաւ, զի ապագայ պատրիարքի մասին համաձայնութիւնը արդէն գոյացած էր (94.ԱՐԼ.3242): Կարգը եկած էր երեսփոխանութիւնը գումարելու, և հին ցանկերը աչքէ անցնելով պաշտօնի վրայ գտնուեցան, 15 եկեղեցական, 66 մայրաքաղաքի և 23 գաւառաց աշխարհականները, բովանդակ 104: Ասոնցմէ վատ կային, 12 բացականեր և 9 մեռածներ, որով բաց կը մնային 15 աթոռներ (94. ԱՐԼ. 3250), բայց այս վերջիններէն 11 ընտրեալներ կային, որոնք նիստի սկիզբը վաւերացուեցան ու մասնակցեցան որով պաշտօնի վրայ եղողներ եղան 115: Սակայն դեկտեմբեր 7-ի գումարման 76 միայն ներկայ գտնուեցան և 67 քուէով պատրիարք ընտրուեցաւ Մատթէոս եպիսկոպոս Իվմիրլեան. իսկ մնացորդ 9 քուէներ տրուած էին, Չամիչեանի 3, Դիմաքսեանի 2, Շիշմանեանի 2, Թահմիլչեանի 1, և 1 սպիտակ քուէ (94. ԱՐԼ, 3252): Վարչական ժողովներու ընտրութիւնները կատարուեցան դեկտեմբեր 16-ի և 23-ի նիստերուն մէջ (94. ԱՐԼ. 3259 և 3568): Նորընտիր պատրիարքին հաստատութիւնը ստացուեցաւ դեկտեմբեր 20-ի (94. ԱՐԼ. 3263), ուխտադրութիւնը կատարուեցաւ 26-ին (94. ԱՐԼ. 3268) իսկ կայսեր ներկայանալը տեղի ունեցաւ 31-ին, տարւոյն վերջին օրը (94. ԱՐԼ. 3272), որով 1895 տարեգլուխի օրէն սկսաւ օրինական և կանոնաւոր պաշտօնաւարութիւնը:

2978. ԻԶՄԻՐԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

Մատթէոս Իվմիրլեան, Կ. Պոլսոյ նորընտիր պատրիարքը, նոր անուն մը չէ մեր պատմութեան մէջ, այսուհանդերձ աւելորդ չէ կենսագրական յօդուած մը նուիրել անոր: Ծնած էր Կ. Պոլսոյ Գումգաբուի դուրսի թաղը, 1845 փետրուար 12-ին. և Տեառընդառաջին օրը մկրտուած՝ Սիմոն անունով, Համեստ կացութեան այլ բարեպաշտ ըզգացմանց տէր ծնողաց վաւակ: Իր մանկութիւնը անցուց թագին վարժարանը և կատարելագործուեցաւ մայր վարժարանին մէջ, և 1862-ին 17 տարեկան փոխադրուեցաւ Օրթաքէոյ, Կապուտիկեան Յովհաննէս եպիսկոպոսի հովանաւորութեամբ, տեղւոյն վարժարանին մէջ կառավարիչի պաշտօնով: Դպրոցական պաշտօնը շատ մոտաւոր էր երբեմն եկեղեցական կոչումին, մանաւանդ երբոր հովանաւորը բարեկրօն եկեղեցական մըն էր, և երիտասարդն Սիմոն Իվմիրլեան Կապուտիկեանի ձեռքին ներքև նուիրուեցաւ եկեղեցական կոչման, և 1869 յունիս 29-ին Լուսաւորչի Բարեկենդանին, 24 տարեկան

բահանայական ձեռնադրութիւն ստացաւ նոյն եպիսկոպոսէն՝ Մատթէոս անունով, ի պատիւ Մատթէոս կաթողիկոսի, որուն յիշատակը կենդանի էր թագին մէջ իբրև բազմամեայ և արդիւնաւոր քարուպիչ և Կապուտիկեանի նախորդ: Քիչ մը ետքն ալ սեպտեմբեր 28-ին Վարագայ խաչի կիրակիին վարդապետական աստիճան ստացաւ նոյն եպիսկոպոսէ: Իվմիրլեան աշակերտութեան ժամանակ շատ բան մը ստացած չէր կրնար ըլլալ, ուստի ինքնօգնութեան տուաւ ինքզինքը Տէր-Սարգսեան Սահակ բանիբուն բահանայի առաջնորդութեամբ, և շարունակեց մինչև ձեռնադրութիւնը և ձեռնադրութենէն ալ ետև գրեթէ անընդհատ: Բայց որովհետև օտար լեզուի սկզբունքները չունէր, ստիպեալ Հայ դիրքերու շրջանակին մէջ մնաց, և ազգային կրօնական և պատմական հմտութիւններով և ժամանակակից դէպքերու տեղեկութիւններով ճոխացաւ իր միտքը: Սահմանադրական սկզբնաւորութեան ժամանակ իր առաջին երիտասարդական շրջանը, որու հոգևով ու սիրտով փարեցաւ, և ազգային սահմանադրութեան մոլեռանդն եղաւ, և այդ ուղղութեամբ գործողներուն հետևող և ընկերակից ըլլալէն ետքը առաջնորդն ըլլալու աստիճանին բարձրացաւ: Ուշիմ հանձար և արթուն միտք և անխոնջ աշխատող, ժամանակի խնդիրներուն մէջ առաջնակարգ դերակատար հանդիսացաւ անաչառ քննադատ, անկոպար պահանջող և աննկուն բնոյթ, շուտով իր դիրքը գտաւ Ղալաթիոյ օձախ կոչուած խումբին մէջ, և անոնց գործակից եղաւ տեսական սկզբանց մէջ, բայց ոչ գործնական մեղադրելի պարագայից մէջ, ամէն յուլմանց մասնակցելով հանդերձ, և անբասիր մնաց ինչպէս եկեղեցական կենցաղով նոյնպէս վարչական գործունէութեամբ: Դժբախտաբար անձուկ պարունակի մէջ ապրած ու գործած ըլլալով, անմասն մնաց լայնախոհ տեսակէտներէն, և նեղ գաղափարներ վինքն աւելի հրապուրեցին քան ընդհանուր տեսութիւններ, մասնաւոր պարագաներ և պատահարներ վինքն աւելի գրաւեցին քան ընդհանուր տեսութիւններ: Բնութեամբ խիստ և անաչառ, յամառօրէն փարեցաւ օրէնքին տառին քան հոգւոյն իր վարգացման պակաս կողմերուն գիտակ ըլլալով, հրապուրուեցաւ առերևոյթ առաւելութեանց կերպարանէն, և հետևող և գործակից եղաւ անոնց, որոնք հեռու էին իր սկզբունքներէն իսկ: Մինչև պատրիարքութեան օրը աւելի ժողովներու և յանձնաժողովներու կերպական աշխատութիւններով անցուցած էր իր օրերը, խուսափած էր վանապան առիթներով իրեն առաջարկուած վարչական պատասխանատու պաշտօններէ, և Եգիպտոսի առաջնորդութիւնն, որուն վերջիվերջոյ ստիպուեցաւ վիջանիլ, մարմնոյն տկար կազմին կապուուման ալ փափաքով, կրցաւ արդիւնաւոր ըլլալ օրինական ձևերու պահպանութեամբ, բայց ոչ յարաբերական և շահեցողական տեսակէտով, որով անհամբոյր երևցաւ մեծամեծաց և անհամակիր սոսկականաց, և մինչև իսկ եկեղեցւոյ մէջ ժողովրդական տգեղ ցոյցերու առարկայ եղաւ, և պաշտօնը շարունակելը դժուարին տեսնելով՝ հեռացաւ: Մարմնական կազմովն ալ զօրաւոր մէկ մը չէր, բայց հոգւոյն կորովով մարմնոյ կորովը կը լրացնէր. եկեղեցական և պաշտօնական աշխատութեանց ճշդապահ գտնուեցաւ, անձնական ընթերցմանց և գրութեանց վբաղեցաւ, կեանքը համեստ և անսեթևեթ, դէմքը խոժոռ և խօսքը կտրուկ, առանց պատշաճից պահանջները վիրաւորելու, և ուղղամտութեան և բարոյականութեան կողմէ անօգտանելի վկայուած: Ասոնք եղան այն փաստերը, որ ընդհանուր համաձայնութեամբ պատրիարքութեան յարմարագոյն անձը դատուեցաւ, ինչ որ ակներև երևցաւ համագումարի և քաղաքականի և երեսփոխականի ընտրողական քուէարկութեանց միշտ գլուխը դասուելովը՝ քուէից ստուար մեծամասնութեամբ: Աշըգեանի պաշտօնավարութեամբ ստորնացած գիրքը բարձրացնելու և դժուարին կացութեան հանդէպ արիական ընթացք ունենալու յարմար մէկն ունենալու փափաքն էր որ ամէն հայեացք Իվմիրլեանի վրայ կեդրոնացաւ, և Ընդհանուր ժողովոյ քուէով պատրիարքութեան բարձրացաւ, 50- րդ տարին լրացնելու մօտ, կեանքին կէսը ազգային

գործունէութեան մէջ անցուցած ըլլալով, ինչպէս իրենց կարգին պատմած ենք, և կրկնելու հարկ չենք վզար:

2979. ՊԱՇՏՕՆԻՆ ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Բայց անաչառութիւնն ալ ունի իր կերպը և ճշմարտասիրութիւնն ալ պիտի ունենայ իր չափը: Իզմիրլեան իր անկաշկանդ սկզբունքին սիրահար, և վերջին ընտրութեամբ ևս քան վես քաջալերուած, իր առաջին քայլին մէջ իրաւունք կարծեց այդ կէտերէն և չափերէն վեր բարձրանալ: Ուխտադրութեան օրը Ընդհանուր ժողովին առջև խօսած ատենաբանութեան մէջ, հաւատարմութեան կէտը շոշափելով և անոր պարտադիր ըլլալը հռչակելով հանդերձ, չվարանեցաւ յայտարարել թէ հաւատարմութիւնն ալ երկկողմանի պայմանագրեալ պարտք մըն է, և ժողովուրդն ու կառավարութիւնը, հպատակն ու վեհապետը հաւասարապէս կը պարտաւորէ, և փոխադարձաբար պիտի պահուի որ զօրութիւն ունենայ: Այդ բացատրութիւնը շատ ականջներու խայթիչ երևցաւ, այնպէս որ նոյն օրուան ատենագրութեան հրատարակութիւնը յետաձգուեցաւ, և միայն յաջորդին օրով տպագրուեցաւ այդ բացատրութիւնը վեղչելով: Սակայն ձայնը բարձր տեղեր ալ արձագանգեց և դժգոհի տպաւորութիւն պատճառեց: Արդէն յիշեցինք Աշըգեանի օրէն Իզմիրլեանի և Ալէաթճեանի անուններուն իբր կասկածաւոր նշանակուած և կրօնական ժողովոյ անդամակցութենէ վեղչուած ըլլալը, ուստի պատրիարքական ընտրութեան կայսերական վաւերացումը ընտրութենէն 13 օր ետքը իբր ազգային բաղձանք հանդէպ մեծ զիջում մը, և երբ վերանորոգեալ հաշտութեան նշանակ շնորհուած էր: Բայց Իզմիրլեանի առաջին քայլը միտքերը շփոթելու առիթ տուած էր, և ձախող տպաւորութիւնը կրկնապատկուեցաւ՝ երբոր կայսեր ներկայացած օրը ընկերակից առաւ Ալէաթճեանը, թէպէտ յորդորողներ եղան որ վայն թողու և ուրիշ մը առնէ, այլ ինքն խստիւ պնդեց թէ քանի որ ինքն ալ ամբաստանուած ըլլալով սրբուած է, պէտք է որ իր ամբաստանեալ ընկերն ալ իրեն հետ սրբուած նկատուի և արգելք չյարուցուի, որով հարկ եղաւ լռել, որպէսզի պաշտօնավարութեան առաջին օրէն տարաձայնութեան նշաններ չտրուին և վրոյցներ չտարածուին: Սակայն այցելութիւնը հաճութեամբ չընդունեցաւ և անդրանիկ ատենաբանութեանը տպաւորութիւնը սաստկացաւ, այնչափ որ արքունեաց մէջ սովորական եղող պատուասիրութիւններն ալ վանց եղան և հապճեպ կերպով ետ դառնալու առաջնորդուեցաւ, և սովորական եղող շքանշանն ալ վլացուեցաւ: Այդ առաջին քայլին թողած տխուր տպաւորութիւնը գլխաւոր պատճառներէն մին եղաւ, որ խանգարեց Իզմիրլեանի պատրիարքութեան արդիւնաւորութիւնը, խարբալեց պատրիարքարանի և արքունեաց մէջ պահուելիք յարաբերութեան ձևը, որոնք հետզհետէ աւելի կծու կերպարան առին, Իզմիրլեանը հաստատութեան կերպարանին ներքև գայթակղուեցին, Սուլտանի իշխանական վրէժխնդրութեան պատրաստուած կիրքը վայրացուցին, միջազգային միջամտութիւններ անսօր և պիտակ ցուցադրութիւններով հակառակ արդիւնքներ ներգործեցին, և կուսակցութիւնները կացութեան տէր դարձնելու՝ նպաստեցին, որոնք պատրիարքին անձին և միտքին վրայ ալ տիրապելու դիւրութիւններ գտան: Բայց մենք չկանխենք հետևութիւններ հանել, և թող տանք որ եղելութիւնք ինքնիրեն խօսին, և ընթերցողներ առանց նախապաշարման իրենց տեսութիւնները կազմեն:

2980. ՍԱՍՈՒՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Ռուսութեան պատերազմին ժամանակ (2743), Վինուորական ոյժը շատցնելու համար հարկ տեսնուած էր պատերազմի դաշտը իջեցնել քուրդ հեծելազօրքը, որոնք Վինուորութենէ ազատ և պետական ընդհանուր օրէնքներէ վերծ, աղիկամի կացութիւն մը կը վայելէին և կառավարական պաշտօնէութենէ անկախ և իրենց ցեղապետերուն իշխանութեան միայն հպատակող էին: Այդ անկանոն Վինուորութեան գունդերը եկան իրօք պատերազմին ասպարէզը, բայց օգնութենէ աւելի

վնաս հասուցին կանոնաւոր բանակին, զի աւարառութեանց ատեն միշտ խիպախ, պատերազմի ճակատներէն կը խուսափէին, ուր մեծ գործ մըն ալ չէին կրնար ընել իրենց հնօրեայ վէնքերով նոր ոճով պինուած գունդերու դէմ: Ասկէ ծագեցաւ քուրդ հեծեալները լաւագոյն վէնքերով և քիչուշատ պինուորական մարզանքով օգտակար ընելու գաղափարը, և այս նպատակով գունդեր և վաշտեր և գումարտակներ կազմուեցան, ցեղապետ հրամանատարներու քով մարպիչ անունով կանոնաւոր սպաներ աւելցուեցան, իբրև իսկական հրամանատարներ, նոր վէնքեր բաշխուեցան, յատուկ համապատասխան տրուեցան, իրենց աւանդական զգեստները ու վէնքերը թողուցին և Համիտիյէ անունով նոր պինուորութիւն մը կազմեցին, մինչև աստիճան մը օրինակելով Ռուսիոյ Խապախ կոչուած ցեղական պինուորութիւնը: Այս նոր հաստատութեան նպատակն էր ոչ միայն պինուորական ոյժ մը աւելցնել, այլև քուրդերու առանձնայատկութիւնները ջնջելով թուրք տարրին հետ ձուլել, և այս նպատակով ցեղապետերու և գլխաւորներու վաւակաց համար յատուկ վարժարան մըն ալ բացուեցաւ մայրաքաղաքի մէջ, որուն բովանդակ ծրագիրը թուրքերէն լեզուի և թուրքերէն կենցաղի վարժեցնելն էր: Ընդհանուր կերպով այնպէս ըմբռնուեցաւ թէ Համիտիյէ գունդերու կազմութիւնը ուղղակի Հայերը ճնշելու և ջնջելու նպատակով պատրաստուած ըլլայ. բայց եթէ գլխաւոր նպատակը չէր ստուգուի այդ եղաւ մեծ արդիւնքը, զի քուրդը առանց գործին խորը թափանցելու պինքն պատուուած և պօրացած զգաց, և աւելի ևս ընդարձակեց իր հուղկահար և աւազակաբարոյ ընթացքը Հայերու հանդէպ: Փոխադարձաբար Հայերու միտքերուն մէջ ծնաւ ու վարգացաւ անձնապաշտպանութեան գաղափարը, և յատկապէս Սասունի, Խոյթի և Բոնաշէնի լեռնաբնակ Հայերու մէջ, որ Սասունցի կոչուած են ընդհանուր անունով, և որոնց կենցաղը շատ կը նմանէր քրդականին: Հայաբնակ գաւառներու բնիկ բնակչութիւնը հայութեան անուններով բաժնելէն աւելի յարմար կըլլար դաշտեցի և լեռնեցի անուններով կատել, դաշտեցին անդէն հողագործ և լեռնեցին պինեալ խաշնարած: Սասունցիներ լեռնեցի Հայեր էին, ինչպէս կային միւս կողմէն դաշտեցին Զուրդեր Լեռնեցիներ դաշտեցներու արտադրած պարբերութեամբ ապրելու պարտաւորուած և օրինական պահանջներու ըմբոստ՝ բռնի ստացման և աւազակութեան կը հետևէին: Համիտիյէ գունդերու կազմակերպութեամբ քուրդերը աւելի պօրացած ըլլալով: Սասունցիներ ալ ինքնօգնութեամբ պօրանալու պարտաւորութիւն զգացին, և այսպէս եղաւ Սասունի խլրտում կոչուած միջադէպին իսկութիւնը, և Սասնոյ տեղացի գործիչներուն գլուխն անցաւ Մուրատ, Գումգաբուի դէպքին Համբարձում Պօյաճեանը (2947): Այդ փոխադարձ գործունէութիւն փոխադարձ մրցակցութիւն ստեղծեց, և Սասունի քուրդ ցեղերը, իրենց առաւելութեանց վստահացած, ուկեցին ընկձել Սասունի հայ ցեղերը, և 1894 յուլիսին արշաւանք մը կազմեցին, բայց պօրաւոր ընդդիմութեան բաղխեցան և ետ մղուեցան և բաւական կորուստներ տուին, և չվստահելով իրենք վրէժ լուծել կառավարական օգնութեան դիմեցին, և Բաղէշի կուսակալութեան առջև Հայերը ըմբոստացած ամբաստանեցին, և կուսակալը կանոնաւոր բանակով և քուրդ ցեղեր իրենց անկանոն խումբերով Հայ Սասունի վրայ յարձակեցան և անխնայ կոտորեցին և ջարդեցին, աւերեցին և աւարեցին, և իրենց ձեռնարկին գերագոյն չափը լրացուցին 1894 օգոստոս 18-ին, Ապտիլ համիտ կայսեր գահակալութեան տարեդարձին նախօրէքին (ԹՈՒ.552): Պերլինի մէջ դաշնադրուած հայաբնակ գաւառներու բարեկարգութեան պայմանը, որ քանի տարիներէ ի վեր գրեթէ մոռացութեան տրուած էր, և Աշըգեանի պատրիարքութեան օրով գրգռուած չէր, յանկարծական վարթում մը ունեցաւ Սասունի կոտորածին առիթով: Առաջին արթնցողը Վանայ անգղիական հիւպատոս Հոյվորտն եղաւ, որուն սահմանին մէջն էր Բաղէշի կուսակալութիւնն ալ, բայց տեղական կառավարութիւնը ընդդիմացաւ անոր քննութեան գալուն, գործը կեդրոնին անցաւ, անգղիական դեսպան Ֆիլիք Բըրրի և օսմանեան կառավարութիւն

դէմդէմի գտնուեցան իրենց ստորակարգելները պաշտպանելու: Օսմանեան կառավարութիւնը Հայերը իբր գրգռիչ և ապստամբ կը ներկայացնէր, անգղիական դեսպանը խառն յանձնաժողովով պաշտօնական քննութիւն կը պահանջէր, կառավարութիւնը ինքնին ընել կառաջարկէր, իսկ անգղիական դեսպանը գաղիականէն և ռուսականէն ապդու գործակցութիւն չգտնելով կը հաւանի երեք դեսպանութեանց կողմէ պատուիրակներու պարզ ներկայութիւնը դարձուդարձ բանակցութիւններէ ետքը: Յանձնաժողովը կը կազմուի և տեղւոյն վրայ հասնելով գործելու կը սկսի և կը գործէ 1895 յունուար 12/24էն մինչև յուլիս 12/24, պատուիրակներ անագան կը հասնին բայց կը յաջողին հաստատել տալ, թէ Հայք ոչ թէ ապստամբ էին, այլ յարձակմանց դէմ ինքզինքնին կը պաշտպանէին (ՕԶԱ.243) և թէ Հայեր ջարդուեցան առանց հասակի և սեռի խտրութեան երեք շաբաթի ժամանակամիջոցին մէջ օգոստոս 12էն սեպտեմբեր 4, և թէ թուրք կառավարութեան փնտռածը ոչ թէ այնչափ խառնակիչ Մուրատ մը գտնելն էր, որչափ Կէլէյկիւլան և Տալւորիկ գաւառները հիմնովին ջնջել (ԹՈՒ.Բ.552-555), այսինքն հայ Սասունի կեդրոնները:

2981. ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆՑ ԾՐԱԳԻՐԸ

Այդ միջոցներուն կը հանդիպէր Իզմիրեան ընտրութիւնը և վաւերացումը և գործունէութեան սկիզբը, և շուտով կը մեկնուին Իզմիրեանի անձին վրայ գրուած ակնկալութիւնները և վաւերացման համար կայսերական պիջողութիւնը, և գործունէութեան սկիզբը նորընտիրին համարձակութիւնը: Ընդդ այն օրեր կը կատարուէր քննիչ յանձնաժողովին կազմութիւնը, որ 1895 յունուար 12-ին, այսինքն Իզմիրեանի գործի սկսած օրերը, նա ալ Մուշի մէջ իր քննութեանց կը ձեռնարկէր (ԹՈՒ. Բ. 554): Իզմիրեան բնական բերմամբ ոգևորեալ կը զգար ինքզինքը, և պարագայք կը յուսագրէին և մինչև իսկ կը վստահեցնէին ձեռնարկին յաջող ելքը, պի դեսպանատուներ գործը ձեռուրնին առած էին, Սասունի յանդուգն ձեռնարկը լաւ կերպարան ստացած էր, գործին գլուխ գտնուող Մուրատը Հընչակեան կուսակցութեան պատուիրակն էր, կուսակցութիւնը ուրեմն յուսակից ծրագրի մը ձեռնարկած էր, և անոր ոյժ տալ ու հետևիլ յաջողութեան օգնել էր, և այս է Իզմիրեանի կազմած մտայնութեան վերլուծումը: Ասոր հետևանքը կըլլայ որ մայրաքաղաքի մէջ գտնուող Հնչակեան գործիչներ պինքը կը պատեն, ինքն ալ անոնց անսացող կը դառնայ, ևրոպական թերթերէ թարգմանուած լուրեր և ուղուցիկ յօդուածներ հեղինակութիւն կը կազմէն, դեսպանատուներու հետ յարաբերութիւն պահող իր թարգմանները, Տիգրան Բէլէկեան և Յարութիւն Մոստիչեան՝ համանուններուն կրտսերը, յուսադրութիւնները իբր իրողութիւններ կը բերեն, ինքն ալ անոնցմէ կը գրաւուի, քանի որ ոչ թերթեր կրնար կարդալ և ներքինը թափանցել, և ոչ դեսպաններուն հետ բերանացի խօսակցելով հոգինին իմանալ: Այս պարագաներու վրայ աւելցնելով Իզմիրեանի անկաշկանդ և հաստատամիտ բնաւորութիւնը և օտարին իսկութիւնը չճանչնալով անոր վրայ զգացած անպայման յարգն ու վարկը շուտով կը գտնենք Իզմիրեանի ընթացքին հիմն ու բացատրութիւնը: Այդ ամէն պարագայից իբրև պսակ նոր պարագայ մըն ալ կու գար աւելնալ: Հայաբնակ գաւառներ կոչուած շրջանակը կը ճշդուէր վեց կուսակալութեանց վրայ, որոնք են, Վան, Կարին, Բաղէշ, Խարբերդ, Տիգրանակերտ և Սեբաստիա, և այդ վիլայաթը սիթթէ կոչուած վեց կուսակալութեանց շրջանակին համար յատուկ վարչական ծրագիր մը կը սկսէր ուսումնասիրուիլ Պերլինի դաշնագիրին գործադրութիւն ստանձնող Անգղիոյ և Գաղղիոյ և Ռուսիոյ երեք դեսպանատուներէն, որոնք գործի կը ձեռնարկէին 1895 ապրիլ 6-ին ու երեք շաբաթէ կաւարտէին ապրիլ 28-ին (ԹՈՒ. Բ. 555), և 29-ին օսմանեան կառավարութեան կը ներկայէին Մայիսեան ծրագիրը (ՕԶԱ. 244), որ 40 յօդուածներով (ԹՈՒ. Բ. 654-668), 13 գլուխներու բաժնուած, որոնք են

կուսակալներ, կառավարիչներ, փոխ-կառավարիչներ, ոստիկանություն, ոստիկան պինուորներ, բանտեր, նախաքննիչ յանձնաժողով, քուրդ ցեղեր, համիտիյէ գունդեր, կալուածագիրեր, հարկահաւաքներ, և դատարաններ: Ծրագիրին քննութիւնը երկարեցաւ հինգ ամիս և աւելի, պի երեք դեսպանատուներու մէջ համերաշխութիւնը պակսեցաւ, և գլխաւորապէս Ռուսիա չէր կրնար մտադիր պիջանիլ որ իր հայկական շրջանակին կից ուրիշ հայկական շրջանակ մը ստեղծուի, որ իրենէն լաւագոյն կացութիւն ունենայ, ուստի վանապան դժուարութիւններ առջև կը դնէր Ռուսիոյ նախարարապետը (ԹՌԻ. Բ. 556), և օսմանեան արքունիքը օգուտ կը քաղէր ամէն պատիկ պարագայէ: Բանակցութիւնները շարունակեցին և հետզհետէ ճապարկեցան և կանուխէն կազմուած ակնկալութիւններ սկսան թեթևալ, ինչ որ դիւրաւ կրնար նախատեսուիլ դիւանագիտական յարաբերութեանց խորը առանց նախապաշարման դիտող որևէ անձէ: Օսմանեան կառավարութեան վրայ բռնադատիչ ճնշում բանեցնելու պայմանը Ռուսիայէ մերժուեցաւ: Անգղիա վախեցաւ որ ձեռնարկը բոլորովին վիժէ, Գաղղիա չկրցաւ ապդուապէս յայտարարուիլ Ռուսիոյ դէմ, որուն հետ շահելով կապուած էր, իսկ Ապտիլհամիտ կասկածեցաւ որ բոլորովին մերժելով կրնայ դիմացիները իրարու մօտեցնել, վերջապէս առժամեայ համակերպութեամբ գործը տեղ մը կապելու միտքը ամէնուն վրայ տիրել կը սկսէր: Հայեր, կամ աւելի ճիշդ Հայոց դատը ստանձնած ըլլալու կերպարանն առնող Հնչակեան գործիչներ, տեսնալով որ վստահութեամբ սպասուած ելքը պարապի ելլալու նշաններ կը ցուցնէ, հրապարակային ցոյցի մը որոշումը կու տան, և սեպտեմբեր 18-ին (ՎՐԺ.142) Խաչվերացի երկուշաբթի առաւօտուն մայր եկեղեցւոյ բակին մէջ տիկիներ և օրիորդներ Իպիրլեանի կը ներկայանան (ՕԶԱ.248), իսկ հապարաւոր ժողովուրդը նշանակալից բազմութեամբ օսմանեան բարձրագոյն դուռը կը դիմեն, որպէսպի խնդիրը շուտ և արդիւնաւոր կերպով վերջացնելու նպատած ըլլան: Կառավարութիւնը ենթադրելով կամ ենթադրել ձևացնելով թէ պինուած ցոյցի մը դիմաց կը գտնուի, պինուորական ոյժով արգիլելու միջոցներու կը դիմէ, խռովութիւններ կը ծագին, սպանութիւններ ալ տեղի կունենան և քաղաքին մէջ ալ կոտորածներ կը սկսին, և ահաբեկած Հայերը իբրև ամուր ապակինի եկեղեցիները կապաստանին, և դուրս ելլալ չեն ուզեր վտանգի ենթարկուելու կասկածով: Դեսպաններ կը պարտաւորին միջամտել, թարգմաններ բանակցութեանց կը դրկուին, և վերջապէս երոպական տէրութեանց երաշխաւորութեամբ, և անհատական ապահովութեան գրաւոր տոմսեր բաշխելով եկեղեցիներէն կը սկսին պարպուիլ 28-ին: Պարագաներ այնպէս կը բերեն որ դեսպանատուներ իրաւունք ստացած կըլլան կառավարութիւնը վերջնական համաձայնութեան ստիպուելու, ուստի հոկտեմբեր 1-ին և 2-ին, իրենց ծրագիրը քննութեան և փոփոխութեան ենթարկելով, 3-ին համաձայնութեամբ կը ստորագրեն վերակազմեալ ծրագիրը (ԹՌԻ. Բ. 559) իբրև վերջնական ծրագիր 32 յօդուածներով և 16 գլուխներու բաժնուած, որոնք են, կուսակալներ և կառավարիչներ, փոխ կառավարիչներ, հանրային պաշտօններու մէջ քրիստօնէից համեմատութիւն, կառավարական ժողովներ, գաւառակներ, դատարաններ, ոստիկանութիւն, ոստիկան պինուորներ, գիւղական ոստիկանութիւն, բանտեր ու նախաքննիչներ, քուրդ ցեղեր, Համիտիյէ գունդեր, կալուածագիրներ, հարկահաւաքներ, տասանորդներ, և քննիչ մնայուն յանձնաժողով (ԹՌԻ. Բ. 658-676): Երեք դեսպանատանց համաձայնութիւնը կը կարծէր այս կերպով յաղթանակը տարած ըլլալ, և Հայեր ալ պահ մը կօրորուէին ակնկալեալ յաջողութիւնը ձեռք ձգած կարծելով, սակայն այս անգամ ալ յուսախաբութեան մատնուեցան: Երկկողմանի ստորագրուած ծրագիրը պէտք էր որ կայսերական հրովարտակով հաստատուէր, սակայն ոչ կայսրը հաճեցաւ այդ պայմանը լրացնել, և ոչ կառավարութիւնը ուզեց ծրագիրը պաշտօնապէս հրատարակութեան տալ, և եղած գործողութիւնը թաքնութեան մէջ մնաց, որ անգործադրելի ըլլալուն նշանակն էր: Իբրև

պատճառանք կը ցուցնէր թէ մահմետականք գրգռուած են, և հրովարտակ մը օգուտէն աւելի վնաս կընէ (ԹՈՒ. Բ. 559): Սակայն եղելութիւնը գաղտնի չէր կրնար մնալ, ուստի մտադրութիւնները ցրուելու համար հոկտեմբեր 5-էն տաճկերէն լրագիրներ յօդուածներ հրատարակել սկսան, թէ կայսրը բոլոր կուսակալութեանց բարեկարգութեանց համար ծրագիրներ կապմած է, որպէսզի իւրաքանչիւր տեղույ և նահանգի ընդունակութեան, և ժողովուրդին խառնուածքին և բնութեանը ու ժամանակին պահանջմանց համաձայն բարենորոգութիւնք մտածուին, և քաղուածօրէն կը յիշէին ստորագրուած ծրագիրին գլուխները և կաւելցնէին թէ Հայկական խնդիր անունով ձեռնարկ չկայ և արտասահման գտնուող կարճամիտներ վայն հնարած են, և բարենորոգումները բոլոր կուսակալութեանց մէջ պիտի գործադրուին (95. ԱՐԼ. 3493-3494): Այս հրատարակութիւններուն ծածուկ կանխամտածութեան մը արտայայտութիւն ըլլալը շուտով վգացուեցաւ: Զի միևնոյն ժամանակ կանոնաւոր ջարդերու լուրերը սկսան հասնիլ գաւառներէն, որոնց առաջինը Տրապիզոն էր կատարուած սեպտեմբեր 26-ին, որ է ըսել Կ. Պոլսոյ մէջ կատարուած ցոյցէն և կոտորածէն շաբաթ մը ետքը (96. ԱՐԲ. 87), և ծրագիրին պաշտօնական ստորագրութենէն հինգ օր առաջ: Կոտորածներուն տպաւորութիւնը բոլոր ուշադրութիւնները և գործադրութիւնները գրաւեց, և ծրագրի խնդիրը իբրև մեռեալ ծնեալ մը թագուեցաւ և անհետացաւ, դիւանագիտական աշխատութիւններ և ազգային յուսադրութիւններ ապարդիւն մնացին, և Ապտիլահմիտի քաղաքականութիւնը այս անգամ ալ յաղթանակեց:

2982. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՈՏՈՐԱԾԸ

Կոտորածներու կատարեալ տեղեկագրութիւնը մը երկարօրէն մեզ պիտի վբաղեցնէր, եթէ մանրամասնաբար քաղաքէ քաղաք և գիւղէ գիւղ և վիճակէ վիճակ անոնց հետևիլ և բոլոր դէպքերը քաղել ուզէինք, որոնց կարևոր և յիշատակաց արժանի ըլլալը ընդունելով մէկտեղ՝ հարկ կը վգանք թողուլ յատկապէս սոյն նիւթով վբաղողներուն (ԹՈՒ.Բ.95.Ա.ԶԱ. և 96.ԱՐԲ.), որոնց մէջ և նաև օտարազգի հիւպատոսները, որոնք իբր ականատեսներ այդ քստմնելի անցքերը տեղեկագրեցին: Մեզի բաւական կը սեպենք քաղուածօրէն ընդհանուր գաղափար մը տալ, որչափ կը ներէ մեր պատմութեան պահանջը: Գաւառներու կոտորածը, ինչպէս ըսինք սեպտեմբեր 26-ին ծովեզերեայ Տրապիզոնէն սկսաւ, և կարծես կարգաւորեալ ձևով մը դէպի ներքին գաւառները տարածուեցաւ, և մինչև դեկտեմբերի կէսը շարունակեց մերձաւորաբար եռամսեայ միջոց մը (ՕԶԱ.252), որ յայտնի նշան մը է թէ բարձրագոյն կամքի գործադրութիւնն էր որ համարձակօրէն կը կատարուէր, ապա թէ ոչ կառավարական իշխանութեանց դիւրին էր կոտորածին առջևն առնել, եթէ լոկ խուժանին յանկարծական շարժումը եղած ըլլար անոր պատճառը: Թող որ այդ տեսակ շարժումներ բնական չեն տաճիկ տարրին, որ սովոր է միայն բարձր հրամանով մը գործել իր ամէն ձեռնարկները և շարժումները: Այդ կէտը ևս քան վկա կը հաստատուի դիտելով որ նոյն օրեր իբր բարեկարգական քննիչ ասիական գաւառներ ղրկուած Շաքիր Փաշայի հասնիլն ու շրջիլը ժամանակագրական և տեղագրական զուգընթացութիւն մը կը ցուցնեն կոտորածներուն տարածուելուն հետ, և թէ ամենուրեք քաղաքական և պինուորական իշխանութիւններ ոչ միայն չեն արգիլած, ալ և յաճախ ուղղակի գործակցած և առաջնորդած են, և յայտնի միջոցներ բանեցուցած են ջարդուողներուն հակառակ և ջարդողներուն պաշտպանութեան: Կոտորածներուն տեղեկագրական ընդարձակութեան մասին կրնանք ըսել թէ Փոքրասիոյ մէջ Սամսոն, Ամասիա, Կեսարիա, Ատանա, Մերսին, հիւսիսէ հարաւ գիծի մը արևելեան կողմը, և Անտիոք, Բերիա, Մամպուտ, Նորտուզ, Աղբակ, արևմուտքէ արևելք գիծի հիւսիսային կողմը եղող օսմանեան երկիրներու մէջ քաղաք և գիւղ չէ մնացած որ կոտորածէն և աւարառութենէ և ամէն տեսակ հարստահարութենէ ազատ մնացած ըլլայ, որ է ըսել թէ յատկապէս մտադրութիւն դարձուած է

ջարդել և ջնջել Սեբաստիոյ, Կարնոյ, Վանայ, Բաղէշի, Խարբերդի և Տիգրանակերտի կանխաւ նշանակուած (2981) վեց կուսակալութեանց Հայերը, յարակցելով Անկիւրիոյ, Ատանայի և Բերիոյ դրացի կուսակալութեանց հայաշատ մասերը: Հետևաբար աւելորդ կը դառնայ ևս քաղաքներու և գիւղերու ցուցակներներ յառաջ բերել: Իսկ կոտորածներու յառաջացումը հնար է երեք գիծերու վերածել: Մէկը Տրապիզոնէն դէպի Կիւմիւշխանէ, Բաբերդ, Դերջան, Կարին, Բասէն, Պայապիտ, Քղի, Կամախ, Երզնկա, Արճէշ, Ալճավազ, Վան, Շատախ, Կարճկան, Սղերդ, Բաղէշ, Խիպան, Մուշ և Սասուն: Միւսը Սամսոնէ դէպի Ամասիա, Մարսուան, Եւդոկիա, Սեբաստիա, Նիկոպոլիս, Զիլէ, Կեսարիա, Խարբերդ, Ակն, Արաբկիր, Եդեսիա, Պիրեճիկ, Սելերեկ, Բալու և Տիարալէքիր: Իսկ երրորդը Կիլիկիոյ վիճակաց մէջ, Կիւրին, Ալպատան, Հաճըն, Գերմանիկ, Մելիտինէ, Ատանա, Տարսոն, Մերսին, Չօքմէրպիվէն, Եէնիճէքալէ, Այնթապ, Բերիա, Իսկէնտէրուն և Անտիոք: Այդ թեմերուն մէջ և այդ քաղաքներուն շուրջը գտնուող գիւղերէն և ոչ մէկը ապատած է ահուելի արկածէն: Գալով գործուած բռնութեանց մասին, կեանք, ինչք, շէնք, պատիւ, ոչինչ չէ ապատած հուղկահար հրոսակին ձեռքէն, թէ խմբովին և թէ անհատաբար սպանութիւնները գործուած են ըստ հաճոյս, սուսերահար կամ դաշունահար, գլխատուած կամ խեղդուած, կախուած կամ չարչարուած, այրած կամ յօշոտած մօրերնուն գիրկը, սիրելիներ իրարու աչքին ներքև, թող ազգի ժամերով յերկարաձգուած անլուր տանջանքները, որոնց յիշատակն իսկ սիրտերը կը ճմլէ և միտքերը կը քստմնեցնէ: Տուներ թալնած, խանութներ կողոպտուած, քսակ և գրպան խուլարկուած, մինչև իսկ զգեստներէն մերկացած: Տուներ և բնակարաններ, թաղեր և թաղաբաժիններ կրակի տրուած, վանքեր գլխաւորապէս ուրուրեք որ գտնուին՝ քանդուած և վնասած, եկեղեցիներ պղծուած, և սրբութիւններ ոտնակոխ եղած, ծիսական գիրքեր պատռած, և նուիրական առարկաներ անարգ կիրառութեան գործածուած: Հապա կանանց և աղջկանց հետ գործածուած բռնութիւնները, մերկանդամ խայտառակուած, յայտնապէս լլկուած, հափափուած և յափշտակուած, և ամէն տեսակ չարչարանքներու ենթարկուած, և արիւնլուայ մէջտեղ թողուած, տեսարաններ, որոնք միտքէ իսկ անցունել անհնար կերևէր, ակնյայտի իրականացած: Այս սոսկալի արկածներէ ապատելու միակ միջոց կառաջարկուէր իսլամական կրօնք ընդունիլ, և մինչև իսկ բռնապատել որ ընդունին: Այդ ճամբան մտնողներ եղած են ոչ սակաւ, ոչ միայն անհատներ և ընտանիքներ, այլև ամբողջ գիւղեր և ամբողջ թեմեր, որոնք այդ յետին միջոցին դիմած են կամ դիմել բռնադատուած են կեանքերնին ապատելու համար: Այդ որոշման հետևողներուն մէջ գտնուած են և քահանաներ, ոչ միայն ինքզինքնին ապատելու, այլև իրենց փոքրիկ հօտը անհովիւ չթողլու համար: Յատուկ խստութիւն գործածած է եկեղեցականներու վրայ, որոնց մէջ շատուշատ եղած են, ոչ միայն առանց հարցուփորձի սպանուածներ, այլև կրօնափոխութիւնը յանձն չառնելու համար յօժարակամ մահը յանձն առնողներ: Վարդապետներէն ալ գտնուած են քանիմըներ, որոնք իսլամանալ զիջած են, սակայն ընդհանրապէս անոնք հաստատ մնացած են իրենց կոչման վրայ, և ոչ միայն մահը, այլև երկարաձիգ տանջանքներ յանձն առած են հաւատքին սիրոյն: Այս կարգին հարկ կը սեպենք յանձնուանէ յիշել ոմանց անունները ի յաւերժական յիշատակ ապագային, իբրև ճշմարիտ հաւատոյ մարտիրոսներ, և ցուցակին գլուխը կը նշանակենք Յովհաննէս Փափապեան Արզնոյ վանահայր, և անոր ետևէն Պետրոս Մուրատեան Սորբայ, Սահակ Տէր Կարապետեան Խիպանու, Սարգիս Տէր Ղապարեան Ծկորի, Դանիէլ Գորանեան Վարագայ վանահայրերը: Սոյն կարգին կաւելցնենք Սահակ Սահակեան Մելիտինոյ եպիսկոպոսը, Խորէն Կիւրոյեան ուսումնական վարդապետը, և Տիմոթէոս Արամեան Բասենի վանահայրը: Սակայն ոչ միայն քահանաներ և վարդապետներ, այլև աշխարհական դասէ այրեր և կիներ, ծերեր և երիտասարդներ, բազմաթիւ եղան հաւատքնին չուրանալու համար յօժարակամ կեանքերնին, վրայ

տուողներ: Կոտորածին հասուցած վնասներուն վրայ ընդհանուր գաղափար մը ունենալու համար բաւական ըլլայ գիտնալ, որ վերև գծուած սահմաններու մէջ վանք չէ եղած որ անձեռնախելի մնացած չըլլայ, եկեղեցի չէ մնացած որ կամ քանդուած կամ պրծուած կամ մվկիթի փոխարկուած չըլլայ եկեղեցւոյ վարդ ու սպաս բոլորովին անհետացած է, եկեղեցական պաշտամունք իսպառ դադարած են, քահանայական դասակարգէն կէսէն աւելի սպանուած, և մնացածն ալ կրօնափոխութեամբ ապատած է. շատերը թլփատուած ալ և քանի մը կիներու հետ իսլամական օրէնքով ամուսնացուցած: Իսկ ընդհանուր հայ ժողովուրդէն պակասձը, սպանուած և վերքէ և հիւանդութենէն ու նեղութենէն մեռած, և ցրուած ու կրօնք փոխած 300,000 է աւելի հաշուուած է ընդհանրապէս, որուն կէսէն աւելի ջարդուած ու կոտորուած է արժանահաւատ տեղեկագիրներու նուազագոյն թիւերն իսկ առնելով: Կոտորածներուն մէջ աւելի նշանաւոր եղած են Եդեսիոյ եկեղեցւոյն մէջ այրուածները, և Տիարպէքիի ու Խըրթըրպըշի մէջ նոյնպէս այրուածները (96.Ա.Ր.Ր.421), և մանաւանդ Վանայ ահուելի կոտորածը, որ մինչև ումբակոծութեան սպառնալիքին հասաւ, և որուն մանրամասնութիւնները սարսոեցուցիչ պավմութիւն մը կը կապմեն (96.Ա.Ք.Ս.105-126 և 98.Ա.Ք.Ս.113-122, և 96.Ա.Ր.Ր.381-384, և 525-530): Այդ ամէն ձեռնարկներու հիմ կապմած է Հայերու կարծեցեալ ապստամբութիւնը, որ երբեք իրականութիւն ունեցած չէ, և ուրեք ուրեք ցոյց տրուած ընդդիմութիւնը քրդական հրոսակին դէմ անձնապաշտպանութենէ տարբեր բան մը չէ եղած: Իսկ կոտորածին դերակատարներուն գլուխը գտնուած են նոր կապմակերպուած համիտիյէ գունդերը, որոնց նախընծայ քաջագործութիւնը կըլլայ անպէններու դէմ պատերազմը և որոնց կօգնէին գրգռուած ամբոխը ու դրդուած խուժանը, և երբեմն նոյնիսկ կանոնաւոր պիւնուորութեան գումարտակները: Եւ այսչափ բաւական ըլլայ 1895-ի աղիտալի կոտորածին վրայ:

2983. ՉԷՅԹՈՒՆԻ ԽԼՐՏՈՒՄԸ

Վերև պատմուած կոտորածներուն առթիւ Հայոց կողմէ պատահական ընդդիմութեան մասին ակնարկներ ըրինք, և դիտել տուինք անոնց ապստամբութեան ձև տալ ուլուիլը, թէպէտ անհիմն կերպով, զի ոչ իշխանութեամբ և օրինապէս հրամայուած գործ մըն էր որ կը կատարուէր, այլ անպուսպ խուժանի ձեռնարկ մը, որուն դէմ ոչ մի օրէնք չէր արգիլէր անձնապաշտպանութեան իրաւամբ դիմադրել: Այդ ընդդիմութեանց կարգին յատկապէս խօսեցաւ Վանայ քաղաքն մասին, ուր յունիս 4-էն 8 երկու կողմէր բուռն ճիգեր թափեցին, բայց երբ 8-ին կառավարութեան կարգադրած ումբակոծութիւնը օրնիրուն շարունակեցին, հիւպատոսներու և օտարապի քարոզիչներու յորդորներով Հայոց կողմէն դրսեցի երեք պարագլուխներ և տեղացիներէն մօտ 1500 երիտասարդներ քաղաքէն հեռացան, և յունիս 9-ին ժողովուրդը անձնատուր եղաւ, և թէպէտ բնաջինջ ըլլալէ ապատեցան, բայց այսպիսով կոտորածի յանցանքն ինկաւ հայերի վրայ (96. Ա.Ր.Ր. 383): Այս շարժումէն աւելի նշանաւոր եղաւ Ձէյթունի շարժումը և վերջը տարբեր: Ձէյթուն վանապան ժամանակներ խօսել տուած է իր վրայ, և մենք արդէն քաղուած մը տուած (2732) և պատմած ենք վերջին անգամ 1862-ին տեղի ունեցած կարգադրութիւնները (2733): Անկէ և ասդին յիշատակաց արժանի պարագայ մը չէր հանդիպած մինչև դէպքերը Ձէյթունցիները գրգռեցին և պետական շրջանակներ սկսան խեթիւ նայիլ Ձէյթունի վրայ: Հնչակեան գործիչներն ալ յարմար դատեցին Ձէյթունի մէջ շարժում մը գրգռել, որ իրենց կարծիքով պիտի պօրացնէր բարենորոգմանց ծրագիրը (2891), և հակակշիռ մը պիտի ըլլար ընդհանուր կոտորածին (2982): Կուսակցական չորս գործիչներ յատկապէս Ձէյթուն եկան, Աղասի, Հրաչեայ, Ապահ, Մլեհ կեղծանուններու ներքև (Լ.Ա.Թ.Բ.163), որոնց հետ էին ուրիշ երկու օժանդակ կեղծանուններով Նշան և Կարապետ (ԹՈՒ.Բ.579), և սկսան նախ յայտարարութիւններ սփռել (Լ.Ա.Թ.Բ.164-171), և նախապատրաստութիւններ կարգադրել, և Ձէյթունի չորս թաղերէն գործակիցներ տրամադրել

(ՎՐԺ.147): Ձէյթունի փոխ կառավարիչը և պահակապօրքին գնդապետը արցունդարձէն տեղեկութիւն առնելով Մարաշի կառավարիչէն օգնական գունդեր ուկեցին փափաքելով Ձէյթունցիներն ալ Սասունի վիճակին հասցնել (ՎՐԺ.145): Ձէյթունցիք այս լսելով թաղերու և հասարակութեանց ներկայացուցիչներով և գործիչներու գլխաւորութեամբ ժողովի կը գումարուին և վտանգին առջևն առնելու որոշումը կու տան և եռագոյն և կարմիր դրօշնին մէջտեղ կը հանեն (ԼԱԹ.Բ.172-184), կեդրոնին Ալապաշի մէջ կը հաստատեն, հայախօս լրտեսները կանհետացնեն (ՎՐԺ.247): Հապիւ թէ Բերդուսի բարձրունքներու վրայ նոր հասնող պօրքերուն վրանները կը տեսնեն, անոնց շատնալուն ատեն չթողլով իսկոյն յարձակումը կը կազմակերպէն 1895 սեպտեմբեր 26-ին, ճիշդ Տրապիզոնի կոտորածին օրը, և գիրքերու ծանօթութեան շնորհիւ հարիւր մը պինուած Հայեր կը յաջողին իբր 700 հոգւոյ գունդը ցիրուցան ընել և հալածել (ՎՐԺ.150): Այս առաջին յաջողութենէ քաջալերուած՝ կը ձեռնարկեն վերջերը հաստատուած կառավարական հաստատութեանց գրաւումը փորձել, այսինքն փոխ կառավարիչի պալատը և պահակ գունդին պօրանոցը: Առաջ պօրանոցին վրայ կերթան և բազմութեամբ կը պաշարեն և յարձակման կը սկսին որպէսզի գալիք նոր գունդերը չհասած գործը վերջացնեն: Ջօրանոցի շուրջը հրամանատարներու և սպաներու ընտանիքներուն համար բաւական տուններ կառուցուած էին, անոնցմէ մէկը կը գրաւեն և կայրեն, միւսները անձնատուր կըլլան: Երբ պօրանոցին մէջինները կը դիմադրէին ուրիշ խումբ մը կառավարչատունը կը պաշարէ, և կառավարիչը ոչ միայն ինքն անձնատուր կըլլայ, այլ և պօրանոցին ալ անձնատուր ըլլալու հրահանգը կը դրկէ, և այնպէս երկուքն ալ Ձէյթունցւոց ձեռքը կանցնին իրենց ճոխ աւարներով, առատ պարէնով և ռազմամթերքով, շատ մը վէնքերով և երկու թնդանօթներով: Աւարը եօթը բաժին ըլլալով՝ չորսը թաղերու և երեքը դիւղերու թողուցան: Գերի ինկողներէն պինուորները մասնաւոր տուններու մէջ հսկողութեան ներքև պահուցան, իսկ ընտանիքները իրենց սնտուկներով ապահովութեամբ և պատուով Մարաշ դրկուցան, ինչպէս խոստում տրուած էր: Մարաշի կառավարական շրջանակները շփոթի մատնուցան, պի պինուորական ոյժերին շատ քիչ ու տկար էր, այնպէս որ օտարապգի ականատասի վկայութեամբ, եթէ Ձէյթունի շարժումը առաջնորդողներ պատերապմական գործերու վարժ անձեր եղած ըլլային, շատ դիւրին պիտի ըլլար պօրանոցին և պալատին գրաւումէն ետքը ուղղակի Մարաշի վրայ քալել և քաղաքին ալ տիրանալ և Մարաշի ու Այնթապի Հայերուն միանալով՝ Բերիա իսկ գրաւել (ԼԱԹ.Բ.179): Սակայն հայուն միտքին մէջ այս տեսակ գաղափար չէր անցներ. ոչ յաղթութիւն և ոչ ապստամբութիւն և ոչ տիրապետութիւն էր անոր նպատակը, այլ միայնումիայն ապահովութիւն և հանգիստ վայելել օսմանեան տէրութեան ձեռաց նարքև: Ձէյթունցիք բաւական սեպեցին շրջակայ թուրք գիւղերը պինաթափ ընել, և դէմ դարձողները ձեռնարկեցին ընկձել, այն ալ լոկ իրենց ապահովութեան համար (ՎՐԺ.159-164): Սակայն կառավարութիւնը մեծ ապստամբութիւն մը նուաճելու ձևով սկսաւ պօրաւոր բանակ մը կազմել Ասորիքի գաւառներէն և մինչև իսկ Մեքքէէ և Եէմէնէ գունդեր բերելով (ՎՐԺ.165): Առաջին անգամ գնդապետ Ալի պէյ 30,000 մեծաւ մասամբ անկանոն պինուորերով Ֆրունկի կողմէն յարձակեցաւ և գիւղերու բնակիչներէն և ճամբան հանդիպածներէն իբր 600 հոգի կոտորեց, որոնց մէջ նաև չորս քահանաներ, և ձեռք չիյնալու համար կամովին ժայռերէ վար գահավիժող օրիորդներ և մանկամարդ կիներ (ՎՐԺ. 169-170): Դեկտեմբեր 12-ին լսուցաւ որ պօրավար Մուսթաֆիա Ռէմպի փաշա մեծ բանակով Մարաշէ կը յառաջանայ, որ եկաւ և կանոնաւոր պատերապմը սկսաւ: Մինչև չորրորդ օր արդիւնքն եղած էր քանակին համար յուսահատութիւն և վհատութիւն, իսկ Ձէյթունցիներու յաղթութիւն և քաջալերութիւն (ՎՐԺ. 177), որոնք վերջնական ձակատամարտի կը պատրաստուէին աղօթքով և հաղորդուելով (ՎՐԺ. 178), երբ Ռէմպի յաջողեցաւ գաղտագողի

ճամբաներով և տեղացի թուրք լրտեսներու առաջնորդութեամբ քաղաքին վրայ տիրող գազաթները բարձրանալ և թնդանոթներով սպառնայ, մինչ Զէյթունցիք կը շարունակէն ուժգնակի դիմադրել, և այդ միջոցին Ճակատամարտին նպատակակէտը եղող պօրանոցն ալ կայրեն (ՎՐԺ. 183): Յանկարծ լսուեցաւ թէ Ռէմպի պօրավարին յաջորդած է Էահէմ փաշա, իբր պի Ռէմպի 110,000 պորք ունեցած ատեն 60,000 և ուլած էր յաղթութիւնն ահապովելու համար (ԹՌԻ.Բ.580): Էահէմ գործը ստանձնելուն սկիզբը պատգամաւոր մը կը յղէ որ եթէ Զէյթունցիք պէնքերնին վար դնեն սուլտանը ընդհանուր ներում պիտի շնորհէ, բայց Զէյթունցիք անվստահութիւն կը յայտեն և պատերազմը կը շարունակեն իրենց նպաստաւոր ելքով (ՎՐԺ.184): Դեկտեմբեր 12-էն մինչև 23 միջոցին կատարուած էին այդ անցքերը, նոյն օր և յաջորդ 24-ին շարունակեցին պետական բանակին յարձակումները և ոմբակոծութիւնները առանց ակնկալեալ արդիւնքի:

2984. ԽԼՐՏՈՒՄԻՆ ՎԵՐՁԸ

Դեկտեմբեր 25 արշալոյսին հեռագիր մը կը հասնի Զէյթուն: Հեռագիրը կրոպական վեց մեծ տէրութեանց Բերայի հիւպատոսներէն էր, դեկտեմբեր 23-ին տրուած, զուր կուղղէին Զէյթունի շարժումին գլուխներուն, յայտնելով թէ իրենց դսպաններէն պաշտօն ունին երկու կողմերուն միջև միջնորդելով խնդիրը կարգադրել, և թէ սուլտանը հաւանած է պինդադար ընել, և կը վերջացնէին ըսելով, եթէ կընդունինք հեռագրեցէք որ գանք: Անմիջապէս պատասխանուեցաւ, կընդունինք եկէք, և նոյն օրէն պինդադարը սկսաւ (ԼԱԹ. Բ. 236): Զէյթունցիք այնպէս հաւատացեր էին թէ հայկական հարցը լուծուած է և Հայաստանի բարենորոգմանց ծրագիրը Սուլտան Համիտ ստորագրած է, և չէին կարծեր թէ Հայաստանը արեան ծով դարձած է (ՎՐԺ. 158): Վեց հիւպատոսները հասան 1896 յունուար 11-ին և 15-ին բանակցութեանց սկսան, կը նախագահէր իտալականը Հենրիկոս Վիթթօ իբրև երիցագոյն, որ ծեր ալ էր և ձիաւորել չկրնալով պատգարակով էր եկած: Հիւպատոսներ միասին բերած էին իրենց թարգմանները, որոնց գլխաւորն էր գաղղիականը: Բանակցութեանց համար չորս թաղեր երկերկու ներկայացուցիչներ ընտրած էին, որոնց առաջին օր ընկերացան հնչակեան գործիչներէն Հրաչեայ, Աղասի և Ապահ: Զէյթունի դիմաց կը կենար Էահէմ և հիւպատոսներուն հետ միայն յարաբերութեան կը մտնէր իսկ Մարաշի կառավարիչը թէպէտ Զէյթուն եկած, բայց գործի չէր խառնուէր: Առաջին նիստին մէջ հիւպատոսները իբրև պայման կառաջարկեն. 1. Այրուած պօրանոցը Զէյթունցոց ծախքով վերաշինել. 2. Պատերազմներու առթիւ եղած վնասներ տուժել. 3. Գրաւուած պէնքերը վերադարձնել. 4. Յեղափոխականները յանձնել. 5. Տեղական կառավարութեան առաջին ձևը վերահաստատել: Պայմանները ծանր և անտանելի էին և ներկայացուցիչներ հարկ տեսան ժողովուրդին հաղորդել, և ողովի գումարուելով՝ պատասխաննին պատրաստեցին պատերազմական գիրքերնին տակաւին ամուր պահելով: Երկրորդ օրուան նիստին բերած պատասխաննին եղաւ. 1. Գրաւուած պէնքերէն պատրաստը կը յանձնեն. 2. Զօրանոց վերաշինելու և վնասներ տուժելու նիւթապէս անկարող են. 3. Յեղափոխականներ չունին որ յանձնեն, այլ պինուած են, ամէնքնին մինչև իսկ կիները, լոկ անձնական պաշտպանութեան համար. 4. Երկրին կրած վնասներուն փոխարէնը եօթը տարի տուրք պիտի չվճարեն. 5. Անկէ ետքն ալ տուրքերը պիտի պեղչուին. 6. Պայմաններուն գործադրութիւնը կրոպական երաշխաւորութեան ներքև պիտի առնուին (ՎՐԺ. 190-192): Այս երկրորդ նիստին հնչակեան գործիչներ ներկայ չէին, վասնպի իբրև Զէյթունի օտարներ ձայնատէր չէին նկատուէր, և հիւպատոսներու երաշխաւորութեամբ և ապահովութեամբ ճամբայ ելած էին տեղերնին դառնալու (ՎՐԺ. 191): Հիւպատոսներ բնակցութիւնները իրենց դեսպաններուն կը հաղորդէին, հրամանատարն ալ կայսերական պալատ

կիմացնէր, և անոնցմէ եկած պատասխաններուն համեմատ շարունակեցին մինչև յունուար 28, որ օր բանակցութիւնները վերջացան և պայմանագիրը կնքուեցաւ: Հիւպատոսներուն արձանագրած պայմանները եղած են. 1. Ընդհանուր ներում. 2. Հնչակեան գործիչներու հեռացում. 3. Գրաւեալ վէնքերու վերադարձում: Իսկ յետամնաց տրոց շնորհը և նոր տուրքերու պեղչը սուլտանին գթութեան և կամքին թողուեցաւ (ԼԱԹ. Բ. 236): Իսկ իրենց պաշտօնագիրին մէջ կը յիշեն. 1. Գրաւուած վէնքերու յանձնում Զէյթունցիներու և բոլոր շրջակայ բնակիչներու կողմէ, պահելով անձնականները. 2. Ընդհանուր ներում հնչակեան գործիչներու հեռացումով. 3. Յետամնաց տուրքերու շնորհը և սօրանոցի շինութեան վրայ պնդելը սուլտանին բարի կամեցողութեան թողուած. 4. Քրիստոնէայ փոխկառավարիչի անուանումը բարեկարգութեանց ընդհանուր ծրագիրին պահուած. 5 Տաճկական պահակ գունդին հեռացումը մերժուած (ԹՈՒ.Բ.583): Սակայն հայ տեղեկատուներ որոշուած և որոշուելիք կէտերը իրարու միացնելով հետևեալ կերպով կը կապմեն պայմաններու ամողջութիւնը 1. Կատարեալ ներում Զէյթունցիներուն և իրենց գործակիցներուն 2. Քրիստոնէայ փոխկառավարիչի անուանում եւրոպական տէրութեանց հաւանութեամբ. 3. Կառավարական և ոստիկանական պաշտօնեաները տեղացիներէն առնել. 4. Իբր 100,000 ոսկի յետամնաց տուրքերու ներում և հինգ տարի ապահարկութիւն. 5. Տուրքերու համեմատական չափաւորում. 6. Կեանքի, ինչքի, պատուի և կրօնքի ապահովութիւն. 7. Զէյթուն ապաւինողներուն տեղերնին դառնալու երաշխաւորութիւն. 8. Գրաւուած վէնքերու յանձնում սեփականները պահելով և շրջակայ թուրքերէն ալ պետականները ետ առնելով. 9. Ջօրանոցի վերաշինութիւնը կառավարութեան թողուած. 10. Բանակի հեռացում և պահակ գունդին ներքին գործոց չխառնուիլ. 11. Հիւպատոսներու չերթալը՝ մինչև պայմաններուն գործադրութիւնը. 12. Մարաշի մէջ եւրոպական հիւպատոսներ հաստատել՝ Զէյթունի վրայ հսկելու իրաւունքով. 13. Պայմանագիրը վեց տէրութեանց և օսմանեան կառավարութեան միջև դաշնագիրով հաստատել (ՎՐԺ.192-193): Այս մանրամասնեալ պայմաններուն ամենամեծ մասը թուղթի վրայ գործադրուեցան կըսուի (ՎՐԺ.194). Վի իսկական պայմաններն ալ պաշտօնապէս այսչափ ընդարձակ եղած չեն, ինչպէս տեսնուեցաւ, թող որ շատ դաշնագիրեր ալ նոյն բախտի արժանացած են, նաև աւելի հանդիսաւոր ձևակերպութիւններու ներքև: Հիւպատոսները պայմանագիրէն ետքը բաւական ժամանակ պահեցան շրջակայ գիւղերու կոտորածէն փախչելով Զէյթուն ապաւինողներուն վերջադարձը ապահովելու. Վի ցուցակով 58 գիւղերէ եկողներ կային, որոնց շարժական ինչլերը կողոպտուած էին, և 20 եկեղեցիներ և 3 վանքեր ալ այրած էին (ԼԱԹ.236-237): Օսմանեան բանակին գործած աւերածներուն մէջ Լատին կրօնաւորաց վանքեր ալ կը յիշուին, և ամենէն նշանաւորն եղած է Եէնիճէքալէի վանքին մէջ Սալվաթօրէ Լիլի (ԼԱԹ.Բ.240) կրօնաւորին ուրիշ 12 անձերու հետ ողջ ողջ այրուած և վանքին թաւանուած ըլլալը (ՎՐԺ.161): Պատերազմի միջոցին քաղքցի Զէյթունցիները մեռածները կը հաշուուին 500 հոգի, և ապաստանեալներէն կորածը 5000 հոգի ամէն սեռէ ու հասակէ: Իսկ օսմանեան բանակը, որ 40,000 կանոնաւոր և 70 հազար անկանոն զինեալ ունէր 25,600 մարդու կորուստ ունեցած է իր իսկ հաշուով (ՎՐԺ.198): Իսկ Զէյթունի նիւթական վնասին հաշիւը տալ անհնար է, Վի դէմդիմաց պատերազմներու պատճառով բանի չէ խնայուած: Զէյթունցիք ալ իրենց այրած գիւղերուն վրէժը լուծած էին 11 տաճկաբնակ գիւղեր աւերելով (ԼԱԹ.Բ.237): Այդ առիթ կապմուած վիճակը նոր փոփոխութեանց առիթ տուած չէ քսանամեայ ժամանակ մը, Զէյթունցիք ալ քիչուշատ համակերպած են անոր յարմարիլ, և նոյն միջոցին աւելի ոյժ տրուած է դպրոցներու վարճացումը և բարեկեցութեան օգուտները քաջալերելու

4. Պոլիս նոր փորձանքի ենթարկուած չէր երբոր Ձէյթուն և գաւառներ աղէտներու մատնուած էին, սակայն անփորձ մնացած չէր կրնար ըսուիլ: Մայրաքաղաքին մէջ ալ սարսափը տիրած կը մնար ամենուն վրայ, նիւթական վնասն ալ շատուշատ էր. Վի մայրաքաղաքի հրապարակէն ապառիկ պայմանով վաճառուած ապրանքներ թաւանի մատնուած և առնողներ սնանկացած ըլլալով, վնասը հայ վաճառականներուն վրայ կը ծանրանար: Միւս կողմէ խեղճութեանց հանդէպ անտարբեր մնալ անհնար էր, և ամէն ոք Վոհողութեանց իսկ ենթարկուելով նպաստի ձեռք կարկառել կը ստիպուէր: Տեղապահութեան ժամանակ էր Սասունի աղէտը, այլ Իվմիրեան պաշտօնի վրայ էր երբոր գաւառներու կոտորածները և Ձէյթունի խլրտումը սկսան: Տեղապահը առժամեայ էր և վարչութեան պայմանաժամը լրացած էր, և գլխաւոր մտադրութիւնը հաստատուն վարչութիւն և վարչութեան հաստատուն գլուխ բերելն էր, առ ձեռն նպաստներն ու օժանդակութիւնները մոռացութեան չտալով: Իսկ կոտորածներու ընդհատման և Ձէյթունի Վինադադարին միջոցին արդէն Իվմիրեան պատրիարք գործի գլուխ կը գտնուէր (2977), և հանրութեան մեծամեծ ակնկալութեանց շրջանը կը տիրէր: Ուստի հետաքրքրական պէտք էր ըլլար գործերուն կերպարանը և նոր պատրիարքին պաշտօնին արդիւնաւորութիւնը, որուն մասին թէպէտ նախնական տեղեկութիւններ տուինք (2979), բայց հարկ կը վզանք կացութեան վրայ ուրիշ բացատրութիւններ ալ աւելցնել: Հոկտեմբերի սկիզբը վեց կուսակալութեանց համար կազմուած ծրագիրը բացատրած ենք, յաւելլով թէ կառավարութիւնը Վայն պաշտօնապէս չէր հրատարակած, բայց և բոլորովին գաղտնի չէր կրցած պահել: Ասկէ յառաջ եկաւ բարենորոգման ի Փոքրասիոյ անունի ներքև պետական նոր ձեռնարկ մը (95.ԱՐԼ.3518), այնպէս ցուցնելով թէ կայսրն իր նախաձեռնութեամբ ընդհանուր կերպով օսմանեան կայսրութեան բոլոր գաւառները բարեկարգել ձեռնարկած է, իւրաքանչիւրը իր բնութեան համաձայն կարգադրութեամբ օժտելով (2981): Պաշտօնական հրամաններ իրարու եիւէն կը հրատարակուէին, կեդրոնական յանձնաժողով մայրաքաղաքի մէջ (95. ԱՐԼ. 3508), յանձնաժողովներ գաւառներու մէջ ճիւղաւորուած (95. ԱՐԼ. 3518), ընդհանուր քննիչ Շաքիր փաշայի օգնականներ (95. ԱՐԼ. 3506, 3520), անկարգութիւններ արգիլելու Վէնքի կոչուած գունդեր և նոր կազմուած վաշտեր (95. ԱՐԼ. 3517), նոր անուանուած կուսակալներ և կառավարիչներ, վարչական և դատական քննիչներ, նոր կազմուած նախարարութիւն (95. ԱՐԼ. 3511-3512), յարաճուն գործունէութեան երևոյթ մը, օտարաց առջև իբրև պատրաստականութեան երաշխաւորութիւն, ժողովուրդին առջև իբրև վստահութեան գրաւական կը ներկայացուէին: Միանգամայն պաշտօնական ծանուցումներ Հայոց ընդհանրութիւնը չքմեղելով, կարճամիտ, չարամիտ, գրգռիչ խումբ մը դատապարտելու ձեռնարկած էին, և երբ անկարգութեանց գոյութիւնը կը խոստովանուէր՝ հանապազօր լրագիրներու մէջ հրատարակել կը տրուէր թէ շնորհիւ վեհափառ սուլթանին կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն կը տիրէ գաւառներու մէջ, և իւրաքանչիւր անգամ ութը տասը կուսակալութիւններ յանուանէ կը յիշուէին, այնպէս որ ժողովրդական կարծիքը անմիջապէս յիշուած նահանգներու մէջ կոտորած մը եղած ըլլալը կը հետևցնէր: Իվմիրեան այս կացութեան և այս մտայնութեան առջև կը գտնուէր, և որչափ ալ կոտորածներու և խեղճութեանց լուրերով շրջապատուած էր, բայց պարագայից կշռադատութեամբ և իր խիպախ բնոյթին հետևմամբ, Վինքն աւելի պաշտպանուած քան լքուած կը տեսնար, աւելի Վօրացած քան տկարացած, աւելի յաջողած քան ձախողած, և քաջալերական վստահութեամբ գործի կը հետևէր: Իրեն տեսութեամբ հայուն վրայ հասած աղէտները անոր պաշտպանութեան առիթ ընծայած էին, հայուն հարստահարուելուն և կոտորուելուն հեղինակ եղողներ վրանին հանրային Վայրոյթ հրաւիրած էին, աղէտը բախտի և մահը կեանքի դուռ բացած էին, մեծ տէրութիւններ վեց կուսակալութեանց պաշտօնութիւնը

ստանձնած էին, և կայսրն ալ վեցը ընդհանուրի վերածելով ալ յատկապէս վեցերուն վրայ մտադրութիւն դարձուցած էր, որով հայը բարեբաստիկ ապագայի մը դիմաց կը գտնւէր արդէն այդ տեսութեամբ ոգևորեալ էր պատրիարք երբ իր անդրանիկ ատենաբանութեան մէջ հաւատարմութիւնը կը բացատրէր, և իր անդրանիկ յարաբերութեան մէջ վեհապետան հանդէպ անախորժ քայլ կառնէր: Իր տեսութեամբ վտանգուած հայը կարծես հոգին մէջ մեռած աւետարանական ցորենհատն էր՝ արգասաբեր արդիւնքներ առատացնելու սահմանուած: Անգղիա տաճկասէր քաղաքականութենէն հեռացած, Թուրքիայէ յուսահատ, Ռուսիոյ միացած, նոր ուղղութեան կը հետևէր, և մինչև իսկ նաւատորմիղը օսմանեան ջուրերն էր բերած (ԹՈՒ.Բ.587): Երեք տէրութիւններ բարեկարգութեանց ծրագիրը կազմել տուած և վանազան ձեռնարկներու պարտաւորուած էին: Վեց տէրութիւններ Ջէյթունի համար միջամտած, խլրտող լեռնցիներուն խնդիրը պատուաւոր տեսակէտով կը փակէին (2984): Իզմիրեան մեծայոյս էր, և անիրաւէն հատուցում պահանջելու իրաւունքով ազդու բողոքագիր կը ներկայէր և կը ստիպէր որ բաւարարութիւն տրուի կողոպտուածներին, պատժւին մարդասպանները և առևանգիչները, բռնաբարողները և սրբութիւններ պղծողները, յետ կոչուին քաղաքական և վիճակական պաշտօնեաներ որոնք յայտնի մասնակցութիւն էին ունեցել քրիստոնեաների ջարդի մէջ (96. ԱՐՐ. 40) : Ահա Իզմիրեանի հայեցուածքին առաջին կէտը: Երբոր նա ձախող պարագաներն ալ յաջողութեան տեսակէտէն կը նկատէր, հարկաւ անտարբեր չէր կրնար ըլլալ անոնց հանդէպ որ ձախող ձեռնարկներով յաջողութեան առաջնորդած էին: Անոնք էին որ Վանայ և Սասունի և Ջէյթունի մէջ յայտնապէս ասպարէզ իջած էին (2980,2984), գաւառներու մէջ պատրաստութիւններ և տրամադրութիւններ և հրահանգներ տարածած էին, մայրաքաղաքին մէջ կը գործէին, պատրիարքին համարձակ մօտենալու իրաւունք ստացած էին, արտասահմանի հետ գրական և գործնական յարաբերութիւններ ունէին, մէկ խօսքով կուսակցական գործունէութիւններ կացութեան տիրացած էին, և լաւ հետևանքները անոնց արդիւնքներն էին: Այս էր հնչակեան գործիչներու հանդէպ Իզմիրեանի կազմած երկրորդ հայեցուածքը : Ահա գլխաւոր հայեցուածքները որոնք Իզմիրեանի ուշնուրուշը գրաւած էին:

2986. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

Եթէ լոկ տրամաբանական տեսակէտէն քննենք Իզմիրեանի հայեցուածքները, թերևս դիտողութեան առիթ չունենանք. սակայն պարզ տրամաբանութիւնը չէ որ քաղաքականութեանց և յարաբերութեանց կառաջնորդէ, որոնց մէջ աւելի մեծ դեր կը վարեն շահն ու կամայականութիւնը, պարագան ու դիպուածը, չըսենք և կեղծիքն ու նենգութիւնը: Իզմիրեան միջապագային պաշտպանութեանց և պետական վիճողութեանց վրայ այնչափ վստահացաւ, որ իրաւունք կարծեց տիրող պետութեան և իշխող վեհապետին ազդեցութիւնը հաշիւի չառնել. անոնց հանդէպ խրոխտ և խիզախ գիրքը իրաւացի և օրինաւոր սեպեց, և այս համոզմամբ երբ վեհապետէն տեսակցութեան կը հրաւիրուէր մերժել համարձակեցաւ կեանքի վտանգ պատճառելով, պաշտօնագիրներ ուղղած ատեն վանց ըրաւ այն քաղաքավարի ձևակերպութիւնները ու բացատրութիւնները, զորս անհատ անհատի ալ չի վլանար, բանագնացութեան համար արքունեաց կողմէն յղուած պատգամաւորներուն հետ բուռն և խիստ գիրք պահեց, և համերաշխութեան և համակերպութեան համար բաց ցուցուած դուռները փակեց. և մինչև իսկ ընդդիմութեան և հակառակութեան արտայայտութիւններն ալ չխնայեց: Թող ներուի մեզ մեր պատմագրական ոճը երբոր անկաշկանդ և անաչառ բացատրութիւններ գործածել կը ստիպուինք: Հաստատամտութեան և իւրաւապահութեան և ճշմարտասիրութեան մարմաջէն ազդուծ այնպիսի ձևերու յաւակնեցաւ Իզմիրեան, զորս և ոչ մեծ տէրութեանց դեսպանները սովոր էին գործածել: Նա

դիւանագիտական ասպարէզը մտաւ, դիւանագիտական ճարտարութեան և ձկունութեան կանոնները անտեսելով: Իր միակ յոյսը երեք տէրութեանց միջամտութիւնն էր, որուն յարատեւութեանց երաշխաւորութիւնը չէր կրնար իրեն խոստացուիլ: Իրօք ալ շատ չանցաւ և անոնց համերաշխ գործակցութեան յոյսերը սկսան տկարանալ իրարմէ սկսան խիթալ, մէկը մեկի առանց Հայու Հայաստան մը պէտք է սկսաւ ըսել, միւսը, Մարմարա պատրաստ նաւերուն խելքը իր մըտքին հետ ետ դարձուց, և միջապագային միջամտութիւնը սահմանեան ընդդիմութեան տեղի տուաւ, և դժնդակ յուսախաբութիւնը տիրեց, և վեհապետին ու պատրիարքին միջև դէմընդդէմ հակառակութիւնը անձնական ատելութեան փոխուեցաւ, և հետևանքը ազգին վրայ ծանրացաւ: Պաշտօնական յայտարարութիւններ Հայերը ըմբոստ և ապստամբ և մեղապարտ հրատարակեցին, ընկճուած և անօգնական ժողովուրդը տարափի պէս սկսաւ տեղացնել վըղջական յայտարարութիւններ, գրգռիչներէ խաբուած, ձեռնարկներէ անմասն, վեհապետին շնորհապարտ, պաշտօնեաներէ գոհ, կացութիւն համակերպող, Հրամաններու հնազանդ խոստովանելով վինքն և անտրտունջ ընդունելով որ կոտորածէ ապատուածները իբրև ոճրագործներ բանտերը լեցնեն և դատարաններով ծանր պատիժներու ենթարկեն: Իզմիրլեանի հաստատամտութիւնը այդ հետևանքներուն առջև ալ ուղղութիւնը չփոխեց. թէպէտ այլայլեցաւ, պատրիարքարանէ գրեթէ հեռացաւ, իր բնակութեան տունը իբրև հիւանդ փակուեցաւ, ժողովներու ցանցառակի նախագահեց, յարաբերութիւններէն և գործերէն քաշուած ըլլալու ձևը նախընտրեց բայց կուսակցական խորհրդականներ շարունակեցին վինքն քաջալերել, աղէտներու պօրութեամբ ևրոպական նոր միջամտութիւն խոստանալով, մինչև իսկ Անգղիական դեսպանին խոստումներուն հիմնուելով միւս դեսպանատուները ուժացնելու չափ: Տիրող պետութեան յարաբերութեանց փորձառու անձերու խոհական յորդորներ անլսելի մնացին, և կուսակցականներու յուսադիր քաջալերութիւնները աւելի ազդեցին, բայց ակնկալեալ բարւոքումներ չարտադրուեցան, ոչ դուրսի միջամտութիւնը գործեց, և ոչ ներսի իշխանութիւնը ուզեց, և դժբախտ կացութիւնը չփոխուեցաւ, թերևս սաստկացաւ ալ, բայց Իզմիրլեան իր ուղղութենէն չխախտեցաւ, իր թելադրողներէն և քաջալերողներէն երկաթեայ պատրիարքի մակդիր անունո գովուեցաւ, որոնք չմտաբերեցին թէ աւելի հատու է ձկուն պողպատը քան անթեթելի երկաթը, և թէ մետաղներուն ապնուագոյնը երկաթը չէ: Մենք իրակութիւնը անսթեթեթ կերպով բացատրած ատեննիս, ոչ չարամտութիւն և ոչ չարակամութիւն կուզենք վերագրել Իզմիրլեանի և գիտենք թէ խիղճի կատարեալ հանդարտութեամբ գործած է, օգտակարագոյն շաւիղի հետեւելու համոզմամբ, սակայն ինչ որ ենթակայաբար կրնայ գործողը արդարացնել, չի կրնար առարկայաբար գործն ալ արդարացնել, և գործողին դէմքէն անկախաբար յառաջ եկած հետևանքը, և դեն ծանրանար իր խիղճին, չեն ալ բարձրացներ իր գործը և իսկութեան մէջ իսկ պատճառը բնոյթին անատակ և բերմունքին անյարմար ասպարէզի մէջ գտնուած ըլլուն դժբախտութիւնը կըլլայ: Կը խոստովանինք թէ ևրոպացւոց դիւանագիտական և կեղեկարծ քաղաքականութեան անփորձ ըլլալը յանցանք չէ, բայց մարդը առանց յանցանքի ալ վնասաբար կրնայ ըլլալ: Միակ կէտը, որ Իզմիրլեանէ չէր սպասուէր, նորահաս երիտասարդութեան խորհուրդները փորձառութեան խոհականութեան խորհուրդներուն նախադասելն է թերևս: Իրականութեան փաստը յուսադրութեան փաստէն հպօրագոյն է: Կուսակցականութեան վրայ խօսելով, անոնց նախնականը Արմենականն էր եղած, Մկրտիչ Փորթուգալեանի Արմենիայով և Մինաս Չերագի Արմենիով սկսած, և լոկ տեսական ու գրական շրջանակի մէջ ամփոփուած: Անկից յառաջացաւ Հնչակեանը 1887-ին, որ տեսականը գործնականի վերածեց, և Հնչակի հնչուն ձայնով ցոյցերու բուռն գործունէութիւնը հռչակեց, բայց վերջին գործունէութեանց ձախող ելք կուսակցականներուն վրայ ալ ազդեց, և անոնց

հանդարտագոյն մասին՝ գործնականութեան չափ դնել թելադրեց: Սակայն իրենց մէջէն աւելի եռանդոտներ, և յատկապէս Կովկասի մէջ գործը հեռուէն նկատողներ և հետևանքներուն չենթարկողներ, սկզբունքներու տեսակէտով ազդուած հայ յեղափոխական դաշնակցութեան դրոշակը պարզած էին 1890-էն ի վեր, և դաշնակցական բուռն գործունէութեան ասպարէզը նետուեցան (ՕԶԱ. 257, ԹՌԻ. Բ. 617), և կուսակցական գործողութեանց առաջնորդը դարձան, և տեսնելով որ մասնակի ցոյցեր անպոր են ազդելու Եւրոպայի շահերուն, և նոյնիսկ թուրք կառավարութեան վրայ, մայր երկրին մէջ լուրջ պատրաստութիւններու կերպը ընդգրկեցին ընդհանուր շարժումով մը գործելու երբ յարմարագոյն ըլլային ներկայանար (ՕԶԱ.258-259): Գիտենք թէ դժպիսի և ծանր է ժամանակակից և կենակից անձանց վրայ գրել, և թերևս շատերու ալ արտաքին իսկ չէ գրուած տեսնել. սակայն անգամ մը որ մեր պատմութիւնը սկիզբէն մինչև մեր օրերը հասցնել խոստացանք, այլևս պարտաւորութեամբ կաշկանդուած անկաշկանդ գրիչի հարկին ներքև կը գտնուինք: Առ այժմ եղելութիւնները յառաջ կը բերենք, մեր տեսութիւնները եղելութեանց լրման կը երապահենք:

2987. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Եղելութեանց ընդհանուր նկարագիրը ամփոփ կերպով տուած ըլլալու համար, բաւական ըլլայ մեզ ըսել, թէ հրապարակի վրայ գտնուող երեք մարմիններն ալ այլ ընդ այլոյ ուղղութեան վրայ գտնուելով մէկտեղ, նպատակին մէջ իրարու համամիտ երևեալ կաշխատէին: Ամենուն բերնին վրայ եղող նպատակը, օսմանեան պետութեան ասիական գաւառներուն բարեկարգութիւնն էր, և իբրև նախաքայլ ձեռք առնուած էր պետութեան հուսկ արևելեան վեց կուսակալութեանց շրջանակը, իբր զի հարաւային կուսակալութիւնները արաբական աշխարհը կը կազմէին և ինքնուրոյն կացութիւն կը վայելէին և կառավարութեան ազդեցութիւնն ալ նուազ էր անոնց վրայ. իսկ արևմտակողման կուսակալութեանց մէջ թուրք տարրը կը տիրէր, և կառավարութիւնն ալ թուրք ըլլալով բնական պաշտպանն էր իր տարրին: Կը մնային արևելակողման կուսակալութիւնները, որոնց կացութիւնը տագնապալի էր, զի հայ քրիստոնեայ և քուրդ մահմետական տարրերը դէմ դիմաց կը գտնուէին, հայը անպէն և ճնշուած, իսկ քուրդը զինուած և ճնշող, և կառավարութիւնն ալ գրեթէ անհոգ անտարբեր էր, եթէ չուզէինք անպուսպ քուրդ տարրին համակիր ըսել: Հայ տարրը Խրիմեանի պատրիարքութեան օրէն 1870-ին կազմուած հարստահարութեանց տեղեկագրով սկսած էր իր կացութեան բարւոքումը հետապնդել (2823): Անկէ քառորդ դար անցած էր, բայց կացութիւնը միևնոյն էր, հակառակ որ Վարժապետեանի պատրիարքութեան օրով հայուն գործը միջազգային խնդիր ըլլալու կարևորութիւնը ստացած էր (2843): Բայց յուսախաբութենէ վօրաւորագոյն պատճառ չկայ վայրացում գոյացնելու, հայ տարրին մէջ ալ վայրացման նշաններ սկսան երևան գալ: Միջազգային միջամտութիւնը որ 1878-ի պերլինեան յօդուածով գոյութիւն առած էր (2845), խնդիրը կօրօրէր առանց վերջացնելու, և իրօք այլապէս ըլլալ ալ հնար չէր քանի որ քաղաքականապէս անհնար էր վեց պետութեանց տեսութիւններուն և շահերուն համերաշխաբար նոյն կէտին վրայ համաձայնիլը, մանաւանդ որ հայը ոչ ցեղակից և ոչ կրօնակից էր խնդիրը ձեռք առնողներուն հետ, այլ ինքն պարզ լծակ մըն էր իւրաքանչիւրին ձեռք իր շահը շարժելու, և նորա օգուտը չէր կրնար և ոչ մէկուն սրտագին և անկեղծ և իսկական նպատակն ըլլալ: Այս էր առաջին մարմինին ընթացքը, իսկ երկրորդը, այսինքն օսմանեան կառավարութիւնը, որ իր կալուածին մէջ կը պարունակէր խնդիրը, լաւ գիտէր Հայուն արժէքը և կարողութիւնը և շատ օգտուած էր անոր ձիրքերէն, երբ նա անգիտակից ծառայականութեամբ կը գործէր, սակայն չէր հանդուրժեր վայն գիտակցութեան կերպարանին ներքև տեսնալ: Հետևաբար հայուն պահանջը ուրանալ և Եւրոպացւոց պահանջը մերժել չկրնալով,

խաբկանքէն պատ եղանակ չէր գտներ, և անպօր խոստումներով և անգործ ձեռնարկներով և առերևոյթ կերպերով ատեն կանցունէր, և միանգամայն Հայուն կողմէ յայտնուած բարենորոգման ձգտումը անջատողական դիտումի կը վերագրէր և հարցը Հայուն հետ ջնջելու կը ձեռնարկէր, չնայելով որ իր իսկ պարգացման անհրաժեշտ մէկ ոյժէն կը պրկւէր: Թերևս նա իր միտքին մէջ փորձառութեան փաստով պինքն կարդարացներ, պի հետպհետէ տեսած էր Յոյնին, Սերպին ու Ռումէնին, և վերջին օրեր Պուլկարին, բարւոքման ճիգերով անջատման և անկախութեան հասնիլը, բայց տարադէպ էր նմանութեան այդ փաստը, պի Հայը ոչ ամփոփ սահմանի մէջ կեդրոնացած էր, ոչ իր սահմանին մէջ միակ տարրն էր, և ոչ ալ իր ամբողջութեամբը միևնոյն տէրութեան ներքև կը գտնուէր, ուստի անջատման գաղափարը ոչ կրնար ծնիլ անոր միտքին մէջ և ոչ իրականանալ գոյութեան շրջանակին մէջ: Այսպէս երեք մարմինները, Օսմանցին, Եւրոպացին և Հայեցին, միևնոյն բարենորոգմանց նպատակին համար աշխատած ատեննին, իրօք տարբեր նպատակներու կը ծառայէին, և բնական էր որ բաղձացուած արդիւնքը չիրականանար: Հայ մարմինին անունով կուսակցութիւններն ալ միևնոյն բարենորոգմանց նպատակին համար ապարէպ իջած էին, բայց համարձակ պիտի ըսենք թէ անոնք ալ նպատակը իրականացնելու կերպը գտած չէին: Արմենականաններու տեսակ և գրական ոճը անբաւական նկատուելով՝ կապուած էր Հնչակեաններու գործնականը, և Հնչակեաններու ընդգրկած ցոյցերու գործնականութիւնն ալ ապարդիւն տեսնուելով՝ մտածուեցաւ Դաշնակցականներու յեղափոխական գործունէութիւնը որ էր հայաբնակ մայր երկիրը իր ապագայ բարւոքման իւրովի պատրաստելու սկզբունքը: Ասկէ ծնալ պայն պինելու և պօացնելու միտքը, անոր համար ալ պինելու և պօացնելու միջոցներ փնտռելու պէտքը, և գործի ձեռնարկուած ատեն անբաւական գտնուեցաւ անհատական և յօժարակամ ձեռնտուութիւնը գործաւորին լումայով և միամիտին ստակով հայթհայթուած: Ունեցողը պգուշութեան պարտաւորուեցաւ, կասկածներէ խոյս տուաւ, արդիւնքին թերահաւատ եղաւ, և նոյն իսկ հաւաքողներուն կենցաղէն և կիրառութենէն գայթակղեցաւ և յօժարակամութեան դժուարացաւ: Այս կերպով ծագում առաւ դժկամները ստիպելու եղանակը, սպառնական նամակներ, արինակերպ կարմիր կնիքով պարդարուած, սկսան տարածուիլ գլխաւորապէս մայրաքաղաքի մէջ: Եւ որպէսպի սպառնալիքներ սին օդային անպոր միջոցներ չկարծուին, սահափորձեր ալ սկսան յաճախել: Սիմոն Մաքսուտ, ապնուատոհմիկ, մեծատուն և բազմամեայ ապգային վարիչ, թէպէտ դարանակալ մահափորձէն ապատեցաւ, բայց կրած յուլումին հատկանքով կեանքը վրայ տուաւ 1895 յունուար 10-ին (95. ԱՐԼ. 3278): Տիգրան Գարակէօպեան, բարեսէր և դեղագործ անձնաւորութիւն և նշանաւոր կտակով մը բարերարի փառքին արժանաւոր, դաւաճան գնդակին պոհ գնաց 1896 յունուար 11-ին (96.ԱՐԼ.3573). իսկ Իվմիրլեան պատրիարք պարագայից գիտակ չհաճեցաւ անձամբ պատուել արժանաւոր յիշատակները: Գործ մը, որ ինքնվբերաբար պաշտպանութեամբ ոյժ պիտի ստանար, տկարացաւ երբոր ոմանց բռնադատութեան արդիւնք ըլլալը տեսնուեցաւ: Ահաբեկումը, կամ ինչպէս իրենք կը կոչէին, տէրրորի (terreur) գրութիւնը հայկական խնդիրին տկարութիւնն եղաւ, և պայն գործողներուն վարկը նուապեց, և ընդհանուր բարինքին անձնական օգուտի կերպարանը տուաւ: Մահափորձեր վրէժխնդրանք նպատակով ալ կատարուեցան, որոնք թէպէտ նոյն նշանակութիւնը չունէին, սակայն նպատակը պօացնելու ալ չի ծառայեցին: Այդ կարգէն յիշենք Գումգաբուի դէպքին առթիւ կասկածի ենթարկուածներուն վրայ փորձուածները, ինչպէս են, Խորէն Աշրգեան պատրիարք, Սուքիաս Ստեփանեան աւագերէց, Տաճատ Ոսկանեան վարդապետ, իսկ Մամբրէ Պէնկլեան վարդապետ փորձին ալ պոհուեցաւ: Նոյն վախճանը ունեցաւ և Պօղոս Մելիքեան եպիսկոպոս Վանայ մէջ 1896 փետրուար 16-ին (96.ԱՐԼ.3602). բայց այս մասնաւոր դիպուածներով

չէ որ կուզենք վբաղիլ. մեզի բաւական ըլլայ ընդհանուր գիծերով գործին վիճակը ցուցուցած ըլլալ, և միանգամայն բացատրել թէ ի՛նչպէս երեք կողմերէ միևնոյն աշխատութեան ձեռնարկուած ատեն ակնկալեալ արդիւնաւորութիւնը ձեռք չբերուեցաւ:

2988. ՇԵՐՈՅԵԱՆԻ ՄԱՀԸ

Այդ միջոցին կը կհանդիպէր ուրիշ մահ մըն ալ, պոր արժանի է յիշատակել, եթէ ոչ մեռնողին արժանեաց, գոնէ պատմութեանս նիւթ եղած անձնաւորութեան մը վերջը յիշած ըլլալու համար: Խաչատուր Շերոյեան Պոլսոյնուցի Աղթամարայ կաթողիկոսը վախճանէր 1895 տարուոյ դեկտեմբեր 22-ին, որ թէպէտ 85 տարեկան ըսուած է (95.ԱՐԼ.3564), բայց ստուգագոյն տեղեկութիւնք 1819-ին ծնած ըլլալը կը հաւաստեն (2752), որով 77 տարեկան վախճանեցած կըլլայ: Պատմած ենք Պետրոս Պիւլպիւլի սպանութեամբ և տարօրինակ կերպով աթոռ բարձրանալը, պետական և ազգային իշխանութեանց կողմէն սպաննիչ նկատուիլը, այդ նպատակով քննութիւն բացուիլը, Կ. Պոլիս բերուիլը, դատաստանի ենթարկուիլը (2752), և փաստեր պակսելով արդարանալը (2838), և Աղթամարայ աթոռին պաշտօնապէս տիրանալը: Ժամանակակից էին Քէֆսիպեանի և Շերոյեանի կաթողիկոսութիւնները. երկուքն ալ ապօրէն և մեղադրելի գործունէութեամբ ծանօթ, նա թէպէտև օրինաւորապէս ընտրուած (2816), իսկ սա և ոչ իսկ օրինաւորապէս ընտրուած, մահերն ալ տարի մը ամիս մը տարբերութեամբ տեղի ունեցած (2976), և այսպէս երկու մասնաւոր կաթողիկոսական աթոռներ թափուր կը մնային միանգամայն, բայց չենք կրնար աւելցնել թէ մեծ կորուստ մը կը կրէին: Ինչ որ Քէֆսիպեանի մասին գրեցինք, նոյնը պիտի կրկնենք Շերոյեանի 31 տարուոյ պաշտօնավարութեան մասին, որ աշխարհէ մեկնեցաւ առանց գովանի յիշատակ մը և առանց արդիւնք մը թողլու իր ետևէն: Աղթամարայ աթոռը թէև կաթողիկոսութեամբը փոքր, բայց իբրև վիճակ բաւական ընդարձակ է, և վերջին բաժանմամբ Վանայ և Բաղէշի կուսակալութեանց վրայ բաշխուած է. իր թեմերն են Հայոցձոր, Ոստան, Կարձկան, Շատափ, Մոկք, Խիպան, Կարկառ, Կեցան, Սպարկերտ, Մամուտանք, Շիրվան, Պահտան, որոնց մէջ կը գտնուին 57 վանքեր, 194 գիւղեր և 272 եկեղեցիներ վանականներն ալ միասին առնելով, և իբր 100,000 ժողովուրդ: Իրաւ վանքերէն շատեր լքուած էին, և քաղաք կամ նշանաւոր գիւղաքաղաք մը չունէր աթոռը, բայց վանքեր ունէին ընդարձակ հողեր և գիւղեր՝ գոհացուցիչ կացութիւն, և արթուն հովիւ մը շատ բան կրնար ընել, վարժարաններ շատցնելով, քահանայութիւնը վարգացնելով և ժողովուրդին դիրքը բարւոթելով: Խաչատուր չաշխատեցաւ այդ հողերը արդիւնաւորելու, թէպէտ չպակասեցաւ իրեն հասոյթները առատացնելու ճարտարութիւնը, սակայն ինչ որ արտադրեց՝ իրեն սեփականեց իբրև հասարակ ազարակատէր մը, որ իր անձնականը միայն կը հոգայ, նոյնիսկ իր բանաւոր հօտին ալ միայն ասրը խուլելու և կաթը կթելու գործին պարապեցաւ: Ամէն եկեղեցական արդիւնքներ կապայի կու տար մասնաւորներու, հայերու ու քուրդերու անխտիք, և արթուն էր իրաւունքը հաւաքելու և իւրացնելու: Բայց դժբախտաբար հաւաքածն ալ վայելել չէր գիտեր ազահութեան տիպար մը որ միշտ դիպելու աշխատութիւնը կը կրէր, այլ պահել և վայելել չէր գիտեր, և յաճախ կը դողցնէր և կը կորսնցնէր, և կորածը ձեռք բերելու աշխատանքով կը տանջուէր (96. ԱՐԼ. 3568): Գողութիւններէն մէկը յիշեցինք Օրմանեանի Վանայ քննչութեան երթալուն առթիւ (2922,2929): Քէֆսիպեանի մահուանէ ետքը ութը տարի Կիլիկիոյ աթոռը թափուր մնացած էր, իսկ Շերոյեանի թողած աթոռը տակաւին թափուր է մինչև այսօր (1917 մայիս) 22 տարիէ ի վեր կեդրոնը նոր ձեռնադրութիւններ իր հաւանութեան ենթարկած էր, Շերոյեան ալ բնաւ հոգ չունեցաւ նոր ձեռնադրութիւն կատարել, գուցէ վախցաւ որ իր եպիսկոպոսներն ալ իր դէմ կը կատարեն ինչ որ ինքն իր ձեռնադրողին դէմ կատարած էր, որով իր մահուան ատեն աթոռը Պետրոսէ ձեռնադրուած Խոստեղեան Յովսէփ եպիսկոպոս չունէր, նա ալ Աղթամարը թողած Կտուց էր

բաշուած, և Էջմիածնայ աթոռին միաբանելու համար 1888-ին Մակար կաթողիկոսին դիմած էր, որ չէր ընդունած անոր առաջարկը: Կ. Պոլսոյ վերջին պատրիարքէն ալ ոչ մէկը փոյթ ունեցաւ Աղթամարայ աթոռը կենդանացնել և յատկապէս Օրմանեան, որ թէպէտ Կիլիկիոյ աթոռը կենդանացնել աշխատեցաւ, այլ քննչութեամբ Աղթամար գացած ըլլալով, ոչ մի պարագայ չէր տեսած աթոռին կարևորութեան նշանակ: Մենք կը կարծենք թէ հնար է այժմէն իբրև դադարել նկատել Աղթամարայ աթոռը, որ Դաւիթ Թոռնիկեանի ժամանակէն (928) մինչև Խաչատուր Շերոյեանի մահը, 1113 էն մինչև 1895 շարունակած կըլլայ 782 տարի, և թէպէտ հակաթոռութեամբ սկսած բայց Մայրաթոռին հետ հաշտուած էր, և հակառակութեան խնդիր չէր յուզեր, ինչպէս ապրեցան Շերոյեան ալ, որ նուիրապետական կարգերու դէմ չմեղանչեց երբեք ճանչնալով Էջմիածնայ և ազգային պատրիարքարանի իրաւասութիւնները (96. ԱՐԼ. 3668):

2989. ԿԻԼԻԿԻՈՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Սոյ աթոռը ութը տարի թափուր մնացած ըսինք, բակայն Աղթամարայ նման թափուր թողլու կամք չէր: Նոյն իսկ Բէֆսիպեանի հիւանդութեան միջոցին խորհուած էր Սիս յղել Աբրահամ Մամիկոնեանի եպիսկոպոսը, որ էր նախկին Երուսաղէմի միաբան Վարդան վարդապետը, որպէսպի աթոռը անտէրունչ չմնայ, ուսկից հեռացուած էր կաթողիկոսին աջ բազուկն եղող Մկրտիչ Վեհապետեան եպիսկոպոսը, որ էր Սոյ միաբան Ներսէս Մանիսալեան վարդապետը, առաջ Անկիւրա, յետոյ Երուսաղէմ աքսորական, և ուրիշ գործունեայ մէկ մը կը պակսէր աթոռին մէջ, մինչ կացութիւնը գործոն մէկու մը ներկայութիւնը կը պահանջէր: Բայց երբոր Բէֆսիպեան վախճանեցաւ, ընտրութեան նախագահելու պաշտօնը յանձնուեցաւ Գրիգորիս Յովհաննէսեան եպիսկոպոսի, որ Ասպահանի առաջնորդութենէն հեռացուելէ, և պահ մը Էջմիածին մնալէ ետքը Կ, Պոլիս էր եկած, և մինչև իսկ կրօնականի ատենապետ եղած Յովհաննէսի համար պետական պաշտօնագիրը ստացուեցան, 1895 մարտ 30 ին (95. ԱՐԼ. 3341), և մեկնեցաւ ապրիլ 12-ին, (95. ԱՐԼ. 3348), և պարտուպատշաճ պատրաստութիւններ լրացնելով ընդհանուր ժողով գումարեց մայիս 24-ին, ապրիլ 26-ին տրուած հրահանգին համեմատ (95. ԱՐԼ. 3393), և ընտրելեաց հնգանուն ցանկը կազմել տուաւ, որոնք եղան Իվմիրլեան 51 քուէով, Մուրատեան 50, Ալէաթճեան 49, Յովհաննէսեան և Դիմաքսեան (95. ԱՐԼ. 3387), և կեդրոնական խառն ժողովը մայիս 30 ին եռանուն ցանկը կազմեց Ալէաթճեան 16, Յովհաննէսեան 14, և Թահմիպեան 14 քուէով (95.ԱՐԼ.3386): Ըստ օրինի խառն ժողովոյ գործը տեղական Ընդհանուր ժողովին հիգանուն ցանկէն երեք յանձնարարելիներ որոշած ըլլալով դուրսէն Թահմիպճեան Պետրոս եպիսկոպոսին յանձնարարելը տարօրինակ էր, գլխաւորապէս կանոնաց և սահմանադրութեան ճշդապահ Իվմիրլեանի նախագահութեամբ գումարուած ժողովի մը մէջ: Դիւրին է մեկնել Իվմիրլեանի իր անունը վանց ընել տալը, Մուրատեանցի անձն ալ հարկաւ նկատի առնուած էր օտարահպատակ ծնած ըլլալուն տեսակէտէն ամէն առթի մէջ եռանունին կազմութիւնը յատկապէս կը շեշտէր Ալէաթճեանի ընտրուելուն համար եղած հետապնդումը միւսնոյն դիտումով, որով տեղի ունեցած էր անոր արքունիք տարուիլը (2979): Իվմիրլեանի կողմէ Ալէաթճեանի համար եղած պաշտպանութիւնը կը հիմնուէր երկուքներուն մասին Աշըգեանի ժամանակ կրօնականէ դուրս ձգուելուն և հաւասարապէս կառավարութենէն կասկածելի նկատուելուն վրայ, ապա թէ ոչ ծանօթ էր որ իրարու շատ համակիր եղած չէին երբոր Իւսկիւտարի երկու եկեղեցիներուն մէջ դրացի քարոզիչներ էին: Որչափ ալ Իվմիրլեան Ալէաթճեանի ընտրութեան կաշխատէր, Կիլիկեցոց մէջ մեծ էր Մուրատեան Մելքիսեդէկ եպիսկոպոսը ընտրելու փափաքը, որուն դիմում ալ եղած էր որ չհրաժարի, սակայն անոր վերջնականապէս հրաժարելուն և դիմումները մերժելուն վրայ Ալէաթճեան կընտրուէր յունիս 7-ին (95.ԱՐԼ.3396), որև անմիջապէս ընդունելը կը յայտնէր:

Գրիգորիս Ալէաթճեան լրագրութեան մէջ սկսած էր իր հանրային գործունէութիւնը Թոնակ պարբերականը հրատարակելով, որ իրեն վրայ իբրև մակդիր անուն ալ մնաց: Թէպէտ Կ. Պոլսեցի, բայց աւելի գաւառի կեանքով զբաղած էր, եկեղեցականութենէ առաջ ալ պատելով, և եկեղեցականութենէ ետքը Երզնկայի, Բաբերդի, Մուշի և Վանայ առաջնորդութիւնները վարելով: Գործունեայ և ձեռներէց էր (95.ԱՐԼ.3398), բայց միանգամայն բուռն և յախուռն ըլլալով և կասկածներու ենթարկուելով տեղափոխութեանց պարտաւորուած էր, քննութեանց ներքև ինկած, կասկածելի նկատուած, ինչպէս վերջին անգամ կրօնականի անդամակցութենէն մերժուելովը յայտնուեցաւ, և հաստատութիւնն ալ անատոյճ էր, ինչպէս որ ալ տեղի ունեցաւ և աթոռին երկարօրէն թափուր մնալուն պատճառ եղաւ: Այս պարագան էր որ Սոյլ եպիսկոպոսներէն Նիկողայոս Դաւթեան և Յովհաննէս Գալանճեան և Աբրահամ Մամիկոնեան, իրենց գործակից ունենալով Կէօքեան Կիրակոս վարդապետը, յունիս 14-ին, ընտրութենէն շաբաթ մը ետքը յանուն Կիլիկիոյ թեմականներու բողոքագիր մատուցին կառավարութեան թէ եղած ընտրութիւնը ընկալեալ սովորութեանց և տիրող կանոնաց հակառակ է (95.ԱՐԼ.3401), իբր պի ընտրութեան մէջ մասնակցութիւն ունեցած չէ աթոռին եպիսկոպոսական ժողովը, և աթոռին եպիսկոպոսներէն չէ ընտրեալը, ինչպէս սկիզբէն ի վեր աթոռին կանոնն եղած է (95.ԱՐԼ.3409): Կառավարութիւնը բացատրութիւն պահանջեց պատրիարքարանէ, և խառն ժողովը, ընդհանուր ժողովոյ բացակայութեան, անոր գործը իւրացնելով, օրինական և վաւերական դատեց ընտրութիւնը և յունիս 16-ին վայն հաստատեց (95.ԱՐԼ.3411). բայց բողոքող երեք եպիսկոպոսներ և վարդապետը Կ. Պոլիսէ մեկնեցան յունիս 29-ին (95.ԱՐԼ.3414), և Սիս հասնելով յուլիս 18-ին իրենց մէջէն Յովհաննէս Գալանճեան կաթողիկոս օժեցին գաղտագողի կերպով (95.ԱՐԼ.3418) կարծելով յաղթանակը տարած ըլլալ: Բայց եթէ աթոռին եպիսկոպոսաց իրաւունքը պաշտպանել կը պնդէին, պէտք չէին մոռնալ որ իրենցմէ դուրս կային ևս Կիրակոս Բէքմէլճեան և Կարապետ Քէչէճեան և Մկրտիչ Վեհապետեան եպիսկոպոսները, որոնք իրենց համամիտ և գործակից չէին: Կեդրոնական վարչութիւնը յուլիս 19ին յայտարարութեամբ կը մերժէր Գալանճեանի կարծեցեալ կաթողիկոսութիւնը, և ըստ այնմ կառավարութեան ալ կը հաղորդէր, և կառավարութիւնն ևս կը պարտաւորուէր վայն չճանչնալ: Բայց եթէ Գալանճեանը չէր ճանչցուեր, Ալէաթճեանի համար տրուած տեղեկագիրն ալ ընթացք չէր ունենար, և անոր անձին մասին եղած դիտողութեանց հետ, նոր ծագած կնճիռն գործին յաջողութիւնը կը կասեցնէր: Խնդիրը անլուծ մնաց Իզմիրլեանի պատրիարքութեան ժամանակը, ոչ սա յանձնառու եղաւ իր միտքը փոխել, և ոչ կառավարութիւնը ետ կեցաւ իր մտադրութենէն, Գալանճեանի ալ չզլացաւ իր գաղտնի և անուղղակի պաշտպանութիւնը, որ կրցաւ համարձակ գործել և կողմնակիցներ շահիլ, և իրեն դիրքը քիչուշատ ամրացնել, կառավարութիւնն ալ իրեն նպաստաւոր պահել, հաւանաբար իբրև Իզմիրլեանի հակառակ ցոյց մը, մինչև իսկ յաջողիլ Ատանայի եկեղեցին հանդիսաւոր մուտք գործել, քանի որ կառավարութիւնը մինչև վերջը շարունակեց իր ընդդիմութիւնը, և վերջապէս մերժեց Ալէաթճեանի կաթողիկոսական ընտրութիւնը (ՕՄԱ.67):

2990. ԴՊՐԵՎԱՆՔԻ ՆՈՐԸՆԾԱՆԵՐԸ

Արմաշի Դպրեվանքի վրայ խօսեցանք մինչև անդրանիկ դասարանին 1892ին սարկաւագ ձեռնադրուիլը (2963): Եռամեայ մըն ալ լրացաւ 1895 ին, և կանոնագիրն համեմատ քահանայութեան և աբեղայութեան բարձրանալուն պայմանաժամը լրացաւ: Յարմարագոյն պատուեցաւ վայն կատարել գարնանային ուխտաւորութեան ժամանակին, աշնանային մեծ ուխտաւորութեան ժամանակին, աշնանային մեծ ուխտաւորութեան ժխորէն ազատ են ընտրեալ եկաւորներուն ներկայութեան միջոցին: Ըստ այսմ ժամանակին լրացան պատրիարքարանի առջև

պաշտօնական ձևակերպությունները և խնամակալության հետ մատակարարական պահանջները, և ձեռնադրության օրը ծանուցանելով՝ լաւ բազմութիւն մըն ալ հաւաքուեցաւ Արմաշ: Դպրեվանքին երկրորդ դասարանի հինգ սարկաւագները ձեռնադրուած էին 1893 սեպտեմբեր 26 ին, երրորդ դասարանէ ալ մէկ մը միայն ձեռնադրուեցաւ 1895 յունիս 17-ին, իսկ քահանայական ձեռնադրութիւնը և արեղայական օրհնութիւնը կատարուեցան յունիս 18-ին, Լուսաւորչայ կիրակիին, շքեղ հանդեսութեամբ: Եօթը նորընծաներ այս առթիւ նոր և պատմական անուններ ստացան, Բարդէն, Խոսրով, Զաւէն, Մուշեղ, Սմբատ, Ադան և Մաշթոց (95. ԱՐԼ, 3405): Դպրեվանքի հաստատութիւնը որչափ և բաղձացուած և գովուած, բայց իրեն խծրծողներն ալ ունէր որոշ դասակարգի մը մէջէն, որուն հաճելի չէր եկեղեցականութեան վօրանալը, և կրօնական կրթութեան մէջ յետամիտ և խաւարասէր ուղղութիւն միայն կը տեսային և լուսաւորութեան դարուն պետ անյարմար կը կարծէին: Այս կարծիքին ներկայացուցիչներէն ալ եկած էին Արմաշ, և Դպրեվանքին յաղթանակն ու հռչակը աւելցուց անոնց վկայութիւնը, որոնք Դպրեվանքի աշակերտութեան հետ շփուելով՝ իրենց կարծիքին հակառակ իսկական վարձացում գտած էին անոր վրայ, լուրջ և ուղղամիտ դաստիարակութիւն մը արդիւնք: Այս կէտը յայտնապէս լուսաբանուեցաւ նախապաշարեալ կարծիքներուն և խոստովանեալ իրականութեան դիմաբաժանեալ բաղադրութեամբ: Նորընծաները իրենց քառասունքը աւարտեցին յուլիս 25-ին Երկոտասան Մարգարէից յիշատակին և Ձեռնադրող Վերատեսչին անուան տօնախմբութեան առթիւ, և օգոստոս 22-ին յատկապէս Կ. Պոլսոյ առաջնորդութեան իրենց յարգանքը պատրիարքին մատուցանելու, ուր ազգային հաստատութեանց ալ այցելելով վանք դարձան օգոստոս 31-ին, և ըստ կանոնի տարի մը ևս պարապեցան աւարտական ճառերնին պատրաստելու, զորս լրացուցին մէյ մէկ ստուար պրակներով 1896 ամառուան սկիզբները նիւթ ունենալով Եղիշէի, Տաթևացիի, Օձնեցիի, Նարեկացիի, Լամբրոնացիի, Յաճախապատումի և Շարականի մատենագրութիւնները, պատմական և գրական և կրօնական տեսակէտներէն ուսումնասիրուած, որոնք արժանապէս գովուեցան, և այդ հիմամբ մայիս 25-ին վարդապետական աստիճանի գաւապան ալ ստացան և ընթացքնին կնքեցին: Այս առթիւ կրօնաթերթի մը հրատարակութիւնն ալ կարգադրուեցաւ Օրմանեանի և Դուրեանի գլխաւորութեամբ և նոր վարդապետներու խմբագրութեամբ, իբրև Դպրեվանքի ծրագրին լրումն, որուն առաջին թիւը հրատարակուեցաւ յունիս 1-ին Մասիս անունով, և հանրութեան կողմէն գնահատութեան արժանացաւ, միանգամայն Դպրեվանքի նորահասները գործնական ասպարէզ մտնել սկսան (96.ԱՐԼ.3687): Երբոր այսպէս Դպրեվանքի իր յաջողութեան գագաթնակէտին կը հասնէր, 1896 տարւոյ ամառուան վերջերը տեղի ունեցած աղէտներով ինքն ալ վնասուեցաւ և վտանգուեցաւ, և նոյն օրեր սեպտեմբեր 16-ին երկրորդ շրջանի չորս սարկաւագներ ալ քահանայացան և արեղայացան, Թաթուլ, Փառէն, Վահրիճ և Թորգոմ անուններով: Սակայն այդ անցքերուն վրայ պիտի դառնանք առաջիկային:

2991. ԽՐԻՄԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խրիմեանի կաթողիկոսական օժոմ ընդունելու և այթոռ բարձրանալուն առթիւ համարձակ կերպով յայտնեցինք մեր տեսութիւնը՝ անկէ սպառուած գործունէութեան մասին: Նոյն իսկ ընտրութեան օրեր խօսուած էր թէ ընտրութիւնը պիտի կատարուի, բայց մեծ արդիւնք մը սպառելու չէ, հետևաբար նոր բան մը պիտի չըլլայ եթէ վարչական գործունէութեան նշանաւոր գործ մը չպատմենք անոր կաթողիկոսական արդիւնաւորութեան մասին: Ինքն Խրիմեան ալ սովոր էր ըսել իր մասին, թէ ի՞նչ տուած էք որ ի՞նչ պահանջէք, ի՞նչ կրթութիւն և ի՞նչ վարձացում տեսած ենք, որ ինչ կարողութիւն ցուցնենք: Խրիմեան այն գեղապաճոյճ ծաղիկներէն էր, որոնց պէս Եւ ոչ Սողոմոն, յամենայն ի փառսն իւր զգեցաւ իբրև զմի ի նոցանէ, բայց վերջապէս դաշտի

ինքնաբոյս շուշան էր, որ ոչ ջանայ և ոչ նիւթէ պի Խրիմեանի կապմուտելուն շրջանը Վանայ լքեալ քաղաքին և Վարագայ նախնական վարժարանին մէջ անցաւ: Իրաւ չէին պակսեր իրեն ոչ միտք ձգտումներ, ոչ սիրտի պագցումներ, և ոչ բաղձանքի թռիչներ. միայն կը պակսէր իր նպատակին հասնելու համար ճարտար աշխատանքը, նպատակը պատկերելու համար կիրթ ճաշակը, և դիմումը յաջողցնելու համար ճկուն և ճարպիկ գործունէութիւնը, և այս պատճառով նա մի երևելի բան չարտադրեց, որովհետև նա կառավարչական մարդ չէր (ՐԱՖ.18): Ժողովուրդի վաւակ և ժողովրդական շրջանակի մէջ մնացած, բարձրագահ աթոռի վրայ չկրցաւ փայլեցնել այն մեծավայելչական և վեհափառական կերպերը, որոնք Գէորգի և Մակարի պօրաւոր կապմերն էին այլ աթոռ բարձրացուց անձնական համակրութիւնն ու խանդավառ սիրելութիւնը, որոնք ինքն լաւ գիտէր վարել ու վառել: Զգաց կամ պագցուցին իրեն պատշաճից պահանջած այցելութիւնները կատարել, բայց ոչ Վինքն ցուցադրելու պագցմամբ, որ շատ հեռու էր Խրիմեանի բնոյթէն, այլ ժողովուրդը տեսնալու և ճանչնալու և ուղղութեան և համերաշխութեան սկզբունքներ թելադրելու դիտմամբ: Առաջին այցելութիւնը կատարեց դէպի Պաթում, ուր հասաւ 1895 փետրուար 7-ին մնաց մինչև 14 Աղեքսանդր Մանթաշեանի կողմէ հիւրասիրուելով և տեղական գործերու պանդուխտներու կացութեամբ հետաքրքրուելու համար, ուսկից անցաւ Նովորոսիսկ և անկէ Եկատիրինոտար, և դարձաւ իջաւ Օտեսա և Պաթումի վրայէն դարձաւ Էջմիածին: Նոր կաթողիկոսներու կայսեր ներկայանալու պարագան էր որ յորդորեր էր Խրիմեանը այդ ճանապարհողութեան, այլ վերջին կարգադրութեամբ ընդունելութեան օրը յետաձգուած ըլլալով ետ դարձաւ, և կրկին մայիսի սկիզբներ մեկնեցաւ Էջմիածինէ, Տփղիսի և Նոր Նախիջևանի և Մոսկուայի ճամբով Պետրբուրգ երթալու, ուր հասաւ 25-ին, սիշտ խանդավառ ցոյցերու մէջ, որոնք ճանապարհին ալ կրկնուէր էին ամէն տեղ: Աղեքսանդրիա կայսրուհւոյն ծննդեան տարեդարձին էր հասած օրն և քաղաքը բոլոր դրօշապարդուած էր, ուղղակի եկեղեցին առաջնորդուեցաւ, և յատկապէս պատրաստուած բնակարանին մէջ հանգստանալու քաշուեցաւ, և պետական ներկայացուցիչները ընդունեցաւ: Միւս օր 26-ին այցելեց ռուսական Ս. Պետրոս-Պօղոս եկեղեցին և Աղեքսանդր Գ. կայսեր գերեզմանին, և ընդունեցաւ հանրային կրթութեան նախարար հայապգի Տելիանեանի այցելութիւնը, և փոխարձ այցելեց նախարարներուն: Հասած օրը Հոգեգալստեան հինգշաբթին էր. Եղիայի կիրակին եկեղեցի իջաւ և յաջորդ շաբթուան մէջ յաճախ ներկայ գտնուեցաւ Հովիսիմեանց, Գայեանեանց, Կարապետի, Լուսաւորչի և Էջմիածնի տօներուն առթիւ: Մայիս 31-ին կայսեր տեսակցութիւնը՝ Կարապետ Եպեացի թարգմանչութեամբ, նախաճաշով ալ պատուուեցաւ, և վեց սպիտակ ձիերով լծուած Աղեքսանդր Բ. ի պատմական կառքով վերադարձաւ: Յունիս 1-ին այցելեց կայսերապանց և նախարարաց, 2-ին այցելեց մետրոպոլիտին, և եկող աւագանւոյն, 3-ին ալ նախարարաց և պալատականաց այցելութիւնները ընդունեցաւ, 7-ին պարտեցաւ թանգարանը, 8-ին ռուսական մայր եկեղեցին, 10-ին շոգենաւով Նեվայի գետափները դիտեց մինչև Ելագին կղզիները, 11-ին Ղազարի տաճարը գնաց, 12-ին Լեռնային ձեմարանը և հրաժեշտի այցելութիւններ ըրաւ, և 13-ին Պետրբուրգէ մեկնեցաւ Մասկուտ: Զանց կընենք խանդավառ ցոյցերու մանրամասնութեանց մտնել, որ ամէն ակնկալութենէ վեր եղան (95. ԱՔՍ. 219-227): Յիշենք ևս որ մի քանի անգամ ներքին և կրօնական գործոց նախարարական պաշտօնէից հետ խորհրդակցութիւններ տեղի ունեցան և քննուեցան կարևոր խնդիրներ Հայ եկեղեցու կառավարութեան վերաբերմամբ, և այս մասին Խրիմեան վանապան պաշտօնական թղթեր ներկայացրեց (95. ԱՔՍ. 226): Համակրութեան ցոյցեր և խնդութեան նշաններ կրկնուեցան Մոսկուայի մէջ ալ, ուր մնաց մինչև յունիս 22, և անկէ եկաւ Թէոդոսիա (95. ԱՐԼ. 2414), Յովհաննէս Այվապովսքի մեծ նկարչի հրաւերով, և դարձաւ Էջմիածին: Խրիմեանի ուղևորութեան առթիւ

Պետրբուրգի և Մոսկովայի և ուրիշ տեղերու մեծատուններ նշանաւոր գումարներ նուիրեցին էջմիածնի նորոգութեանց համար: Այս երթուդարձերու մէջ պանց ըրինք առանձինն խօսիլ Տփղիսի վրայ, ուր յաճախարի կրկնուեցան առաջին գալուն ցոյցերը: Միւս տարին 1896 ամառուան մէջ յատուկ այցելութիւն մըն ալ տուաւ Սևանի վանքը և շրջակայ աւանները (96. ԱՐԼ. 3721): Բագուցիներուն ալ խոստացած էր յատկապէս այցելել, բայց յապաղեցաւ մինչև 1898 փետրուար և հասաւ ամսոյն 5-ին (ԲԱԳ. 5), և մնաց մինչև 13: Այստեղ երկու կէտեր աւելի գրաւեցին Խրիմեանի մտադրութիւնը և պանդուխտ գործաւորներուն կացութիւնը: Մտադրութեամբ շրջեցաւ ամէն կողմեր, մտաւ Սև Բաղաքը տեսաւ գործարանները, և մանաւանդ օրերով դուռը բաց թողուց ամէն աստիճանի եկողներ ընդունելու և մխիթարելու: Իրեն ուղեկից էր Գէորգ Երէցեան վարդապետը, Եպիսկոպոսական ձեռնադրութեան համար Կովկաս եկած, որ և պատարագեց և քարոզեց փետրուար 12-ին Վարդանանց տօնին օրը (ԲԱԳ. 27): Խրիմեան կատարելապէս իր սիրտին մոտ դիրքի մէջ գտաւ ինքզինքը Բագու եղած միջոցին, ուր հապարաւորներ կային հայ պանդուխտ գործաւորներ, որոնց համար նախարդիւնաբերներու մօտ ալ բարեխօսեց (ԲԱԳ. 21): Ինչպէս ըսինք ուրիշ շատ մանրամասնութիւններ չունինք պատմելու Խրիմեանի ներքին գործունէութենէն, և նորէն կանցնինք Տաճկահայոց անցքերուն:

2992. ԻԶՄԻՐԼԵԱՆ ՀՐԱԺԱՐԵԱԼ

Տաճկահայոց մէջ այս միջոցին տեղի ունեցող գլխաւոր դէպքը արքունիքի և պատրիարքարանի, կամ Ապտիւհամիտի և Իվմիրլեանի միջև գոյացած հակառակութիւնն էր, որ կարծես յարաբերութեանց խլումի ձևն էր առած, և անոր հետևանօք ազգին մէջ ալ ներհակ ուղղութեանց ասպարէզ բացուած էր: Ադիտալի անցքերը, ընդհանուր կոտորածը, և կոտորածէն ալ աւելի վնասաբեր եղող ամէն կողմ տարածուած թալանը, յափշտակութիւնն ու աւարառութիւնը իրաւամբ կը վայրացնէին Իվմիրլեանի սիրտը և կը փոթորկէին անոր միտքը, և հնար չէր, այժմ այլհնար չէ չարդարացնել անոր յուզմունքը: Կացութիւնը այնպէս խղճալի վիճակ առած էր որ մինչև իսկ սնունդը կը պակսէր, մերկութիւնը ծածկելու ցնցոտիներու կարօտութիւն կը տիրէր, որբեր հապարներով և բիւրերով կը հաշուէին, եկեղեցիներու սպաս և անօթ և վգեստ և գիրք չկային, պաշտամունքը վերսկսել անհնար կը դառնար, թող բռնի իսլամացեալներուն շփոթ դիրքը: Այդ ամէնը իրողութիւն և իրականութիւն էին, Իվմիրլեանի տագնապն ու տառապանքը իսկական, վգացումը արդար և յուզումն իրաւացի, նպաստից անհրաժեշտութիւնը ակնյայտնի, բայց միջոցներու հոգածութիւնը անհնարին դարձած: Այս ստուգութեանց հանդէպ ինչ որ դիտողութիւն կրնար վերցնել դարմանի մասին ձեռք առնուելիք ձևն էր: Ապիւհամիտ ալ պայն վզալով, թէպէտև առերևոյթ, բայց մերձեցման ինչինչ ձևեր ու նշաններ ձեռք կառնէր, ինչպէս էին քաղաքական ամբաստանութեամբ բանտարկեալներու մասնակի ներումներ, կոտորածներու գլուխ կանգնող Հայտարանցի Հիւսէյին փաշային դատի ենթարկուիլը (95.ԱՐԼ.3522) և նշանաւոր Մուսա պէյին կրկին բանտարկութիւնը (95.ԱՐԼ.3546), մինչ Իվմիրլեան հակառակ ցոյցերէ իսկ չէր քաշուեր, տէրութեան նպաստաւոր յայտարարութիւն տուող Ադրիանապոլսոյ առաջնորդ Սուքիասեան Մեսրոպ Եպիսկոպոսը պաշտօնէ կը դադրեցնէր (95.ԱՐԼ.3385), և անգղիական դեսպանատան դաշտային գիշերահանէսին անձամբ կը մասնակցէր (95.ԱՐԼ.3374): Իր համոզումն էր թէ աղէտից սկզբնապատճառը նոյնինքն սուլտանն էր, որով անկէ դարման սպասելը անտրամաբանական կը գտնէր, և բոլոր յոյսը եւրոպական միջամտութեան վրայ հաստատած ըլլալով, անոնց հետ յայտնի և համարձակ յարաբերութիւն կը մշակէր, միշտ միջնորդ ունենալով կուսակցական գործիչները և անոնց համակիր իր թարգմանները: Իվմիրլեանի դժբախտութիւնն եղաւ իր ակնկալութեանց և իսկական իրականութեանց մէջ տիրող անջրպետը: Եւրոպական

պետութիւնները, ըլլան Պերլինի դաշնագիրը ստորագրոց վեցերը, ըլլան գործադրութիւնը ստանձնող երեքները, երեք ամիս շարունակ տևող կոտորածը արգիլելու իսկ միջամտութիւն չէին ըրած, կոտորածին հետևանքներուն մտադրութիւն չէին դարձուցած բայց Իվմիրլեան իր տեսութեանց վրայ ամուր, ապարդիւն խոստումներով կորօրուէր և իր բուն ու յախուռն ընթացքէն չէր հեռանար, կուսակցական գործիչներէ քաջալերութիւնները կը յարգէր, քաղաքական փորձառութեամբ պօրացած խոհականներու թելադրութիւնները կանարգէր: Այս կացութեան մէջ կը սկսէր 1896 տարին, ներքին արտաքին տագնապներու գագաթնակէտը հասած տարին, և ինչ որ կը սպասուէր, սկսաւ երևան գալ. կայսեր կողմէն պահանջուեցաւ որ պատրիարքը հրաժարի և քաշուի, քանի որ անոր ընթացքը իրեն դէմ անձնական հակառակութեան ձև էր առած, հակառակութիւնը փոխադարձ ատելութեան հասած: Այս պարագային առջև ալ Իվմիրլեան ամուր կը մնար իր տեղը, միշտ միևնոյն խորհրդակիցներու ազդեցութեամբ պօրացած, և միշտ միևնոյն ակնկալութեանց օրօրներով հրապուրուած: Ազգին մի մասը սկսաւ պայքարագայից պահանջը և հետևաբար հարկ տեսաւ Իվմիրլեանը հրաժարելու և քաշուելու յորդորներ. բայց ասոնց մէջ տէրութեան պաշտօնեաներ և ունևոր վաճառականներ գտնուիլը Իվմիրլեանի կարծել տուաւ թէ իշխանութեան ստրկաբար ծառայողներ և ազգային շահը անարգողներ են այդ խրատտուները, ուստի դարձեալ իրեններուն խորհուրդը նախադասեց, և երբ պագ որ կացութիւնը օրէօր կը վայրանար, առանց հրաժարելու գործէ հեռու երևնալու կերպը ստեղծեց, պատրիարքարան չյաճախելով, վարչութեան ցանցառ նախագահելով, դիմումներ չընդունելով, Հիսարտիպի փողոցի բնակարանը մնալով, և յաճախ Իսկիւտարի բարձունքը հեռանալով. մինչև իսկ պատրիարքի հասցէին եկած գրութիւնները բանալու արտօնութիւն կու տար փոխանորդին և դիւանապետերուն (96.ԱՐԼ.3693): Բայց տակաւին հրաժարելը կը պաշտօնաբար Երոպայի միջամտութեամբ մօտալուտ յաղթանակին ակնկալութեամբ: Ահա 1896 յունուարէ յուլիս ժամանակամիջոցին պատկերացումը, պոր ընդհանուր գիծերով միայն կը ներկայացնենք պանց ընելով հապարումէկ մասնակի միջադէպները: Յուլիս 19-ին իրեն այցելողներուն հրաժարած չըլլալը և հրաժարելու միտք չունենալը հաստատութեամբ կը յայտարարէր, բայց 21-ին հրաժարականը կը ստորագրէր, և պատճառը գաղտնիք մը չէր: Նոր պեկուցագիրով մը դիմած կը Կ. Պոլսի դեսպանութիւններին, գործ ստանձնող երեքներին և խորհուրդ խնդրած ազգին գործերը բարելաւելու համար. իսկ անոնք այդ խորհուրդն ալ վլացան նրան տալ, որով նա այն ժամանակ հրաժարական տուաւ: Այդ պարագայն, որ իբր փաստ կը բերուի երկաթեայ պատրիարքին պիջողութիւնը արդարացնելու, մեր տեսութեամբ աւելի հակառակ եզրակացութեան կը տանի պի քաղաքականութեամբ պբաղող և դիւանագիտական յարաբերութեանց հիմամբ գործող անձի համար նախատեսութիւնը պարտաւորիչ հանգամանք է, և գործերը մինչև անդարմանելի ըլլալու վիճակը հասցնել՝ թերութիւն է, եթէ յանցանք ալ չէ: Վարիչը պարտի իրողութեանց ներքինը թափանցել և եղելութեանց իսկութեան տեղեկանալ և ոչ թէ անհիմն ակնկալութիւններով գործը մինչև իր յետին կործանումը մղել այլ գործոց ընթացքին հպատակիլ, կամ թէ վարչութենէ ձեռք քաշել: Յուլիս 21-ին տրուած հրաժարականը 22-ին կընդունուէր, քանի որ պահանջուած ալ էր և 24-ին պաշտօնապէս կը հրատարակուէր, և այսպէս կը վերջանար Իվմիրլեանի պատրիարքութիւնը 1894 դեկտեմբեր 7-ին ընտրուած, և 20-ին հաստատուած և 26-ին պաշտօնի ձեռնարկած, ուսկից հաշտուելով տևած կըլլար 19 ամիս: Տարբեր են կարծիքներ Իվմիրլեանի անձին և պաշտօնավարութեան շուրջը կապմուած և յայտնուած ոմանց համար հաստատամիտ և անվկանգ երկաթեայ պատրիարքն է նա, ուղղութեան հետևող և իրաւանց պաշտպան, մինչ ուրիշներու համար անհեռատես և կամակոր պաշտօնակալն է՝ աղէտից առիթ ընծայող և պարագաները

գործածել չգիտցող, և աւելորդ կը սեպենք մատնանիշ ընել ներհակընդդէմ կարծիքներու տէրերը: Եթէ կը ներուի մեզ ալ անկաշկանդ տեսութիւն մը յայտնել, չենք երկմտիր յայտարարել, թէ պաշտօնավարութեանց և գործունէութեանց մէջ ոչ վերացնել տեսութիւններն են որ անձը կարդարացնեն, այլ իրականութիւններն են որ գործողին պիտի առաջնորդեն:

2993. ԱՌԺԱՄԵԱՅ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Պատրիարքի հրաժարելովը պէտք էր որ խառն ժողովը տեղապահի ընտրութիւն կատարէր. սակայն այս անգամ պատրիարքի հետ գործող վարչութեան վրայ ալ կը տարածուէր հարուածը, և վարչական ժողովներու պայմանաժամը լրացած և անդամներէ շատերուն հրաժարած ըլլալը իբր պատճառանք կը ծառայէր զիրենք պաշտօնէ և իրաւունքէ զրկելու, և անոնց տեղ նոր խառն յանձնաժողով մը կազմելու յուլիս 24-ի պաշտօնագիրով, ութը եկեղեցական և ութը աշխարհական անդամներով՝ իբրև աւելի վստահելի անձերով, որոնք եղան Մեսրոպ Սուքիասեան, Բարթողիմէոս Չամիչեան, Մելիքսեդեկ Մուրատեան և Վահրամ Մանկունի եպիսկոպոսներ Գաբրիէլ Ճէվահրեճեան և Գէորգ Երէցեան վարդապետներ, և Յովհաննէս Մկրեան ու Գաբրիէլ Խանճեան քահանաներ. իսկ աշխարհականներէն Աբրահամ Երամեան, Յովհաննէս Նուրեան, Էլիաս Չայեան և Սեպուհ Մաքսուտեան պետական շրջանակներէ, և Պատրիկ Կիւլպէնկեան, Գրիգոր Գարակէօսեան, Կարապետ Գարամաճեան ու Տիգրան Մանուկեան առևտրական դասակարգէն: Ասոնք 25-ին պատրիարքարան հրաւիրուեցան (96.ԱՐԼ.3736), ուր կրօնից տեսուչ Զիվէր պէյ անձամբ պաշտօնագիրը հաղորդեց և տեղապահ մը ընտրելին յանձնարարեց: Մուրատեան եպիսկոպոսէ և Երեմեան փաշայէ վատ 14-ներ ներկայ էին այն օր (96.ԱՐԼ.3734): Իրենց առաջին նիստը կազմեցին 26-ին և ժողովին կազմակերպութիւնը լրացուցին, Երեմեանն ու Նուրեանը ատենապետութեան և Չայեանն ու Մկրեանը ատենադպրութեան կոչելով, և Չամիչանն ալ տեղապահ ընտրելով (96.ԱՐԼ.3735), որուն վաւերացումը ստացան 29-ին և 30-ին գործի ձեռնարկեց (96.ԱՐԼ.3737-3738), և օգոստոս 2-ին կայսեր ներկայացաւ ուռուցիկ ուղերձներով, որոնց մէջ կը յայտարարէր թէ ինքն սուլթանին ստրուկն է, ազատագրուիլ յանձն չառնող ստրուկ մը, և թէ այս կեանքին և թէ հանդերձեալ կեանքի մէջ իւր ամէնէն մեծ պատիւն ու երջանկութիւնը կայսերական փափաքները իրականացնելու բախտաւորութիւնն ունենալն է (96.ԱՐԼ.3741): Իսկ առժամեայ վարչական ժողովին գործունէութենէն Մուրատեան և Կիւլպէնկեան ընդհարապէս հեռու մնացին, Երեմեան ատենապետութիւնը պատուակալ ձևով միայն պահեց, իսկ գործին եռանդեամբ փարող, և կայսերական կամաց կատարեալ համակերպութեամբ փայլողներն եղան Չամիչեան տեղապահը և Նուրեան իսկական ատենապետը. ոչ միայն հաւատարմութեան շրջաբերականներ ամէն կողմ տեղացուցին, այլև շնորհակալութեան մաղթանքներ և հանդէսներ կատարելու հրամաններ դրկեցին բոլոր գաւառներու առանց խտրութեան: Կառավարութեան ալ յիշատակագիրներ մատուցին յայտնապէս մեղադրելով Հայ ուղղութեան ընթացքը և վայն իբր յանցապարտ ներկայելով, և ամենայն չարեաց պատճառ Սահմանադրութիւնը ցուցնելով: Ժողովուրդը շուարած և ընկճուած՝ կրաւորական համակերպութենէ վատ եղանակ չունէր, մանաւանդ որ գաւառներու մէջ իսպառ դադարած չէին սպանութիւնները և յափշտակութիւնները, և մայրաքաղաքն ալ ինքզինքը ազատ չէր վզար նմանօրինակ վտանգներէ և շշուկներ օրէօր կաւելնային: Կուսակցական գործիչներ և իրենց խումբեր բոլորովին խանգարուած տեսնալով իրենց գործունէութեան ասպարէզը, և Իվմիրլեանէ Չամիչեան անցքը դիւրաւ չկրնալով տանիլ, նորէն բուռն ցոյցի մը որոշման կը յանգէին, միշտ նոյն համոզմամբ թէ որևէ արկածալից աղէտք մը պիտի կարենար եւրոպական տէրութիւնները գործունէութեան ստիպել և օսմանեան կառավարութիւնը բարենորոգմանց գործադրութեան պարտաւորուեցաւ: Անորոշ ձայներ սկսած

էին լսուիլ, բայց շատերուն անհասկանալի կերևար, իբր պի նախընթաց անպտուղ ցոյցերու օրինակը պէտք էր գործիչներն իսկ չկրկնելու համոզած ըլլար: Առժամեայ վարչութեան առաջին օրերը կանցնէին, երբոր յանկարծ ծագեցաւ օգոստոս 14ը, Աստուածածնայ պահոց աղիտալի չորեքշաբթին:

2994. Կ. ՊՈԼՍՈՅ ԿՈՏՈՐԱԾԸ

Օգոստոս 14-ին առտուն որոշ բան մը չէր լսուէր և որոշ նշան մը չէր տեսնուէր, թէպէտ վերջին օրեր կասկածներ շատցած էին. կէսօրին ատենները ձայն ելաւ թէ Սամաթիա թաղի մէջ շփոթ մը տեղի ունեցեր է. և միևնոյն ատեն Ղալաթիա տագնապի և խուճապի մատնուեցաւ: Բսանահինգ հոգիէ խումբ մը Կարնեցի Գարեգին Փասարմաճեանի, կեղծ անուամբ Արմեն Կարօյի առաջնորդութեամբ մէկով երկուքով, Վօյվօտա փողոցի վրայ գտնուող օսմանեան կայսերական դրամատան շէնքը կը մտնային, և սանդուխներու վրայ և ճեմելիքներու անկիւնները դիրք բռնելով յանկարծ ձեռքի ումբեր կը պայթեցնեն, կը սպառնան, կը պահանջեն, փողոցի վրայ ալ նետեն իբր թէ դրամատան տիրացած ըլլան: Սարսափահար կը մնայ ոչ միայն ներքին պաշտօնէութիւնը այլև դուրսը գտնուող ժողովուրդը, և քաղաքը նաև անմիջապէս դրամատունը պաշարող կանանաւոր պօրաց վաշտը: Միևնոյն ատեն երեք լեզուով տպագրուած պահանջագիր մը կը ցրուեն, որուն մէջ յիշեցնելով կոտորածները, բողոքները, Երոպիոյ լուծիւնը և օսմանեան կառավարութեան ընթացքը, 12 գլուխ պայմաններ կառաջարկեն: Օսմանեան դրամատան վտանգը շարժումի դրաւ դեսպանատունները, և յատկապէս գաղղիական ու անգղիականը, որոնց ազգութեան կը պատկանի այդ օսմանեան սեղանաւորական հաստատութիւնը: Միւս դեսպանատուներ և կայսեր կողմանէ թիկնապահներ ալ միջամտեցին և գործողներու գլուխ կանգնեցաւ Մաքսիմով ուսական թարգման և անգղիացի Վինսըն և գաղղիացի Օպուանտօ դրամատան վարիչներու հետ բանակցութիւնները վերջացուց. յարձակողներէն 17-ին երոպական երաշխաւորութեամբ և օտար շոգենաւով օսմանեան սահմաններէն ելլելուն, և 3 սպանուածներուն պատուաւոր թաղումին, և 5 վիրաւորներուն օրինաւորապէս դարմանելուն պայմաններով (ՕԶԱ.261-263): Սակայն արդէն ցոյցին սկիւբէն Կ. Պոլսոյ քրիստոնէաբնակ թաղերու մէջ խուժան մը սկսած էր կազմուիլ ձեռուընին բիրերով, որով անխնայ կը վարնէին և կը սպաննէին որչափ Հայ որ դիմացնին ելլար կամ հայ կարծէին. առաւելապէս Ղալաթիոյ ու Կ. Պոլսոյ մաքսերու և նաւամատոյցներու կողմերը և Ոսկեղջիւրի Խասքէօյը, ուր բազմութեամբ կը մնան հայ պանդուխտ գործաւորները և բեռնակիրները: Շարժումն ու կոտորածը սաստկացաւ երբոր դրամատուն յարձակողներ շոգենաւ մտան: Խորհրդաւոր զուգադիպութեամբ Համիտիէյ քուրդերու վաշտ մը քիչ որ առաջ եղած էր Կ. Պոլիս, և քուրդի զգեստով մարդիկներ բազմաթիւ երևցան ամբոխին մէջ, սպանութեանց գործիք եղող բիբերն ալ նմանօրինակ էին ամէն յարձակողներուն ձեռքերը: Յայտնի էր որ կառավարութիւնը լուր ունեցած էր ըլլալէն առաջ, և կանխաւ կատարած էր իր պատրաստութիւնները, ինչպէս և Համիտիէյ գունդը կատարածէն անմիջապէս ետքը արդէն մեկնած էր մայրաքաղաքէ: Հայոց կողմէ տեղտեղ, գլխաւորապէս Սամաթիա, ընդդիմութիւններ և անձնապաշտութեան ձեռնարկներ տեղի ունեցած են, բայց անոնք կոտորածի ոչ սկզբնաւորութեան, և ոչ արդարացման պատճառ կրնար ըլլալ: Արկածը երեք օր տևեց և հապիւ չորրորդ օրը 18-ին սկսաւ մեղամանալ, սպանուածներուն թիւը 10:00-ը անցաւ, որոնց իբր 3,000-ը Խասքէօյի մէջ մերձակայ ծովակալութեան խումբերուն ձեռքով: Բերայի մէջ ալ դեսպանատուներու դուռներուն առջև կոտորածներ եղան, և դրամատունը ապատելու համար վայրկենապէս իրարու անցնող երոպական դեսպանութիւններ և կառավարութեան վրայ պիջանելու բռնութիւն գործածող ներկայացուցիչներ, կրցան անտարբերութեամբ ականատես

ըլլալ իրենց աչքին առջև կատարուած անլուր անգթութեանց և եղերական տեսարանները դիտեցին, աղբակիր կառքերով դիակներու և տեղափոխուիլը նկատեցին, որոնց մէջ կիսակենդանիներ ալ գտնուեցան: Սպանելոց դիակներէն մի մասը միայն Պալըքլըի, Շիշլիի, Խաաքէօյի և ուրիշ տեղերու գերեզմաննոցները տարուեցան, մեծ մասը Ղալաթիոյ և Ստամպուլի քարափներէն ծովամոյն եղան, փորերնին ճեղքելով որ ուռելով ջուրին երեսը չելլան: Մայրաքաղաքի կոտորածը գաւառներու մէջ ալ իր արձագանքն ունեցաւ, և շատ տեղեր կրկնուեցան 1894-ի կոտորածներուն յաւելուածները (ՕԶԱ.236, և 96.ԱՐԲ.381): Գործին նկատելի կողմերէն մին եղաւ ջարդին յաջորդ օրէն սկսելով մնացածներէն հարիւրաւորներ իբր յանցապարտներ ձերբակալել և արտասովոր ատեանի դատարանին յանձնել, և միւս կողմէն Կ. Պոլիս մնացած պանդուխտ Հայերը հաւաքել, և իբր 20,000 հոգի յատուկ նաւերով ասիակողման գաւառները դարձնել, գործաւորներու և բեռնակիրներու կայանները ջնջելով քուրդերու յանձնել (96.ԱՐԲ.420), և այնպիսի ահուսարսափ մը ազդել տուներ ալ կոխելով, որ ժողովուրդը ցերեկները քաշուած և գիշերները մութին նստելու պարտաւորուեցաւ: Այս կացութեան մէջ տեղապահը վտարման գործը դիւրացնելու միջոցներ կը մատակարարէր ոստիկանութեան, և օգոստոս 19-ին կայսեր գահակալութեան տարեդարձին օրը հանդիսաւոր մաղթանք կը կատարէր, կոտորածին նախընթաց օրը դադրած ըլլալուն երախտագիտութեամբ: Վտարելոց կարգին մտադրութիւն դարձուեցաւ Իվմիրեանի վրայ ալ, իբր թէ Ղալաթիոյ կուսակցական շարժումը իր պաշտպանութեամբ և իր դրդմամբ եղած ըլլայ, և կայսերական հրաման ելաւ անմիջապէս Երուսաղէմ հեռանալու, որ և կատարուեցաւ տեղապահական միջնորդութեամբ, գուցէ և ներքին մասնակցութեամբ, որով հրաժարելէն իբր ամիս մը ետքը հսկողութեան ներքև Կ. Պոլիսէ մեկնեցաւ, և սեպտեմբեր 1-ին կիրակի օր Երուսաղէմ մտաւ, ուր և մնաց 12 տարիներ:

2995. ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՔ

Բարթողիմէոսի տեղապահութիւնը շատ միտքերու վրայ ախորժ տպաւորութիւն չէր թողած, բայց գոնէ կը սպասուէր որ ջարդերու վերջ տրուէր, այլ Կ. Պոլսոյ կոտորածը այդ մասին ալ յուսախաբութիւն յառաջ բերաւ, և աւելի ևս խարբալեց հասարակաց ըմբռնումը, և նոր պայրոյթ պատճառեց կուսակցական գործիչներու վրայ, և սկսան ուղղակի իր կեանքին սպառնալ: Չամիչեան շուարած պատրիարքարանի վերածել Նշանթաղի իր բնակարանը, և պաշտօնապէս հրատարակել տուաւ, թէ ինքն իր տան մէջ պիտի կարգադրէ ընդհանուր խնդիրները, իսկ օրական և մասնաւոր գործերը պատրիարքարանի մէջ պիտի նայի և կարգադրէ ժողովի անդամներէն Սուքիասեան եպիսկոպոսը, որ արդէն Եէնիգաբու կը բնակէր: Իր տունին մօտը վատ տեղ մըն ալ վարձեց, ու սկսան աշխատիլ դիւանական պաշտօնեաները: Միւս կողմէն ոստիկանութեան պաշտպանութեան ալ դիմեց, և հինգ վեց ծպտեալ հսկողներ տրուեցան իրեն, որոնք տունին մէջ կը մնային և դուրս ելած ատեն կառքին ետևէն կը ձիավարէին վտանգներէ պահպանելու համար: Բայց այս աւելի ևս իր դիրքը տկարացներ, զի ասով իրեններէն երկիւղ ունենալը կը յայտնէր: Միևնոյն ատեն հրապարակագիրներու վրայ ալ ճնշում կը գործածէր որ զինքը գովաբանէ, իր գործերը ներբողեն, և պատրիարքակերպ ձևերով բարձրացնեն: Բայց միւս կողմէ չէր կրնար այսչափով ալ յագենալ, ուստի պատրիարքական ընտրութիւն կատարել տալու ձեռնարկներուն կը հետևէր պետական հովանաւորութեան վստահելով և քրէարկուներ շահելու աշխատելով: Իրեն այդ պատրաստութիւններէն օգտուիլ ջանացին նաև անոնք, որ անոր իշխանութեանը վերջանալուն կը սպասէին, և ընտրութեան արտօնութեան օգտուելով կաշխատէին ուրիշ մը բարձրացնել պատրիարքական աթոռը, որչափ ալ կառավարութեան կողմէ տեղապահին ուղղուած պաշտօնագիրը յանուանէ զինքն մատնանիշ կընէր իբրև հաճոյական ընտրելի: Բարթողիմէոսի

հեռացումը ընտրելի: Բարթողիմէոսի հեռացումը փափաքողներ այլևս միայն կուսակցականները չէին, և ոչ անոնց համակիրներ, այլ նոյնիսկ ապգին խոհականագոյն դասակարգը, որուն ծանր կու գար ապգին ղեկը յանձնուած տեսնել այնպիսի մէկու մը, որ պարպապէս իր անձնական շահին ու փառքին ետևէն վակատեալ, անփոյթ և անվգայ կը մնար ժողովուրդին վգացած նեղութեանց և կրած տառապանաց հանդէպ: Այս խոհական դասակարգին համարձակ գլուխ կանգնեցաւ Յարութիւն փաշա Տատեան արտաքին գործոց նախարարութեան խորհրդական, արքունիքէն գնահատուած և յարգուած, և միջապգային յարաբերութեանց համար ձեռնհաս և վստահելի ընդունուած անձ մը, և միանգամայն ամենալաւ հայ ճանչցուած, և իւր փափուկ դիրքին չնայելով իւր ապգութեան դէմ երբէք չմեղանչած մէկ մը (96. ԱՐՐ. 576): Երբոր Բարթողիմէոս իր պատրիարքանալուն համար միջոցներ կը գործածէր, և անհամակիր կարծուածներու հանդէպ եթէ չէր խոստանար, գոնէ անկարեկիր կը մնար, Տատեան իր Պէշիկթաշի բնակարանին մէջ գումարումներ են խորհրդակցութիւններ կը կատարէր, կարծիքներ կը փոխանակէր և լուսաբանութիւններ կը ստանայ յարմարագոյն ընտրելին որոշելու և համեմատութիւն գոյացնելու, միանգամայն կայսերական հաճութիւնն ալ վաստկելու համար պարտուպատշաճ միջոցներ կը պատրաստէր, և կայսեր գահակալութեան յարմար յայտարարութիւններն ալ չէր ագահէր թէ անձամբ և հանրագրական ձևերով, մինչև որ հաւանութիւն կը ստանար Բարթողիմէոսի անձին չկապուելու, ալ ընտրել մէկ մը, որ կայսեր խօսքով թող իւր ապգը սիրէ, բայց իրեն դէմ սուր չքաշէ: Արկածելոց կարօտութեան նպաստը ժամանակին պահանջներուն առաջիններէն էր, բայց Բարթողիմէոս համարձակութիւն չունեցաւ հասարակաց գթութեան դիմումներ ընելու, և միայն կայսերական նուէրով ստացուած քանի մը հարիւր ոսկիներու բաշխումով շատցաւ հատկաբար երբոր տեղապահը չէր համարձակէր հանգանակութիւն բանալ, դժուար ձեռնարկներ ընել, ժամանակին գլխաւոր գործունէութիւնը երկու կողմերէն ալ պատրիարքական ընտրութեան շուրջը կը դառնար, թէպէտ տարբեր ուղղութիւններով, Չամիշեան իր ընտրութիւնը ապահովելու, և Տատեան ուրիշ ընտրելի գտնալու: Վերջինիս միտքով յարմարագոյնը Մուրատեան Մելիքսեդեկն էր, եթէ օտարահպատակ ծնած ըլլալու դժուարութիւնը դարմանուէր, կամ եթէ ինքն ալ, որ կաթողիկոսութեան հովերով կորոշուէր, պատրիարքութեան պիջանելու հաւանէր, պի արդէն այդ միտքով Կիլիկիոյ աթոռին ընտրելի ըլլալն ալ մերժած էր (2989): Անկէ ետքն իւր ընտրելի կը յիշուէին Հմայակ Դիմաքսեան, Գրիգորիս Յովհաննէսեան, Գրիգորիս Ալէաթձեան, Պետրոս Թահմիպեան, սակայն ամէնն ալ պահանջներուն բաւարարութիւն չէին ընծայէր:

2996. ՎԱՐՉԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դըպրեվանքի նորընծաներուն վրայ խօսած ատեննիս յիշեցինք, թէ Դըպրեվանքը իր գագաթնակէտին հասած վայրկեանին յանկարծ պինքն անկման վտանգին դիմացը գտաւ (2990): Օրմանեան որ յաճախ Կ. Պոլիս կու գար խնամակալութեան հետ խորհրդակցելու և կարգադրելու, վերջին անգամ ալ եկած էր 1896 յուլիս 18-ին, ուսկից մէկ երկու օր ետքը Իվմիրեան պատրիարք հրաժարականը կու տար, որ 24-ին պաշտօնապէս կը ծանուցանէր (2992), և օգոստոս 14-ին ալ տեղի կունենար մայրաքաղաքի աղիտալի կոտորածը, որուն վտանգէն ինքն Օրմանեան ալ ապատելու բախտը կունենար, և կասկածաւոր կարծուածներու հալածանքին կարգին, Կեդրոնական Վարժարանի խնամակալներէն Աբիկ Ունձեան և Յարութիւն Նորատունկեան ալ կը ձերբակալուէին: Ունձեանի բանտարկութիւնը Դըպրեվանքը անտէրունչ կը թողուր և առձեռն միջոցներէ կը վրկէր: Իսկ Օրմանեան, Խաչի ուխտաւորութեան առթիւ տեղը գտնուելու համար, հարկ կը սեպէր սեպտեմբեր 10-ին Արմաշ դառնալ, թէպէտ ոչ միայն բնաւ ուխտաւոր չէր հասնէր,

այլ և Արմաշ և Խասկալ գիւղերու կոտորածի սպառնալիքներուն հանդէպ պոզուշուքեան միջոցներու կը պարտաւորուէր, և միայն չորս սարկաւագները արեղայութեան կը բարձրացնէր, Թաթուլ, Փառէն, Վահրիճ և Թորգոմ անուններով: Դուրսէն մայրաքաղաք գալու բացարձակ արգելքը իրեն Կ. Պոլիս դառնալն ալ անհնար կընէր, ամէն միջոցներէ պրկումը կը տիրէր, օրապահիկը հայթայթելու անհնարութիւն կը սկսէր և աշտուճ հացով ազարակին խնձորը կը մնար իբրև սնունդի միակ միջոց: Սաստիկ հոգածութիւնը Օրմանեանի առողջականին ալ կապուէր, և հապիւ թէ Բարթողիմէոսի մօտ ընդունելի միջնորդութիւններ Կ. Պոլիս գալու պետական արտօնութեան դուռը կը բանային, որով հոկտեմբեր 15-ին Կ. Պոլիս կը հասնէր Դուրեան Եղիշէ վարդապետի ընկերակցութեամբ: Առաջին տեսակցութեան մէջ Չամիշեան տեղապահ և Նուրեան ատենապետ Դպրեվանքին աւելորդ հաստատութիւն մը ըլլալը, և անոր օգնութեան պէտք չըլլալու կը յայտարարէին, որուն վրայ Օրմանեան իր հրաժարականը գրաւոր կը մատուցանէր, և Կ. Պոլիսէ հեռանալու համար արտօնութիւն և անցագիր կը խնդրէր: Պատրիարքական ընտրութեան ճիգերուն վերջին օրերն էին, և Օրմանեանի Կ. Պոլիս հասնելուն լուրը Տատեանի տան խորհրդակցութեանց մէջ անոր անունն ալ ընտրելեաց մէջ յիշելու առիթ կընծայէր, և քանիներ այդ մասին Տատեանի միտքին վրայ պղծելու կաշխատէին, և տեղեկութեանց և բացատրութեանց նոր գլուխ մը կը բացուէր: Իսկ Օրմանեան արդէն տկարացած և առջև նետուելու դժկամակ, և իրեն նախընթացին հետևանք ընտրելիներու կարգը չդասուելուն համոզուած, բոլորովին քաշուած և Դպրեվանքի հոգէն ալ հրաժարած, պահ մը հանգստութեան օրեր կանցունէր, որչափ ալ ասոր անոր բերանով իր ընտրելիութեան մասին խաբեր ականջը կը հասնէին: Հոկտեմբեր 20-ին համագումարը ժողովը կը հաւաքուի, և Օրմանեան կրօնական ժողովոյ ընտրելեաց մէջ կը գրուի 24 քուէով, և պատրիարքական ընտրելեաց եօթներորդը կըլլայ 13 քուէով: Աւելի քուէ ստացողներն եղած էին առաջին Համայնակ Դիմաքսեան 43 քուէով, և յետոյ Բարթողիմէոս Չամիշեան, Գրիգորիս Յովհաննէսեան, Մարոպ Սուքիասեան և այլք: Հոկտեմբեր 31-ին կրօնական ժողովը ընտրուի, և 4 եպիսկոպոս անդամներէն մէկը կըլլայ Օրմանեան 57 քուէարկուներու 47 քուէով մնացեալներն են 5 վարդապետ և քահանայ: Նոյն օր ընտրուեցաւ քաղաքական ժողովն ալ փորձառու և խոհական անդամներով, որոնց մէջ կը գտնուէին Յարութիւն Տատեան, Ստեփան Ասլանեան, Գաբրիէլ Նորատունկեան, Տիգրան Եուսուֆեան, Էլիաս Չայեան, Չարեհ Տիլպէրեան, Գրիգոր Խաբեան, Միհրան Սէթեան, և այլք ամէնն ալ ծանօթ և ողջամիտ անձնաւորութիւններ: Նոյեմբեր 4-ին վարչական ժողովներով կը վաւերացուին, 5-ին քաղաքականը կը կազմակերպուի Տատեանի և Ասլանեանի ատենապետութեամբ, և Չայեանի և Սեթեանի ատենադպրութեամբ, միանգամայն յանձնարարելի ընտրելեաց հնգանուն ցուցակը կը կազմուի, գլուխը անցունելով Օրմանեանի անունը, մէկի մացառութեամբ բոլոր ներկաներու միաձայնութեամբ, ինչ որ Տատեանի գլխաւորութեամբ կատարուած ըլլալով կատարուելիք ընտրութեան նախագուշակութիւնն էր, և Օրմանեանի ականջը հասնելուն տխրութեան և յուզման առիթ կը դառնար: Միև չորսերն էին Բարթողիմէոս Չամիշեան, Խորէն Միսիթարեան, Ստեփանոս Յովակիմեան և Մամբրէ Մարկոսեան: Նոյեմբեր 6-ին կը հաւաքուէր Ընդհանուր ժողովը, ուր նախապէս Տատեանի առաջարկութեամբ կորոշուէր սահմանադրութեան վերաքննութիւնը պետական պահանջից պօրութեամբ, և քննիչ յանձնաժողովոյ պաշտօնը, փոփոխութիւնները վաւերացնել տալու և վաւերացուածը գործադրելու իրաւունքով մէկտեղ կը յանձնուէր նորընտիր խառն ժողովին: Ուսկից ետքը պատրիարքական ընտրութեան անցնելով 62 ներկաներու 48 քուէով պատրիարք կը հռչակուէր Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան: Այնչափ էր Բարթողիմէոսի իր ընտրութեան մասին բռնադատութիւնը և հակառակ քուէ տուողներու երկիւղը, որ կը պատմուի թէ

շատեր քուէի երկու թերթիկներ պատրաստելով, և մէկուն Բարթողիմէոսի անունը գրելով և իրեն ցուցնելով, երկրորդը նետած են քուէատուփին մէջ: Բարթողիմէոս ալ քուէհամարի ատեն իր յուսախաբութիւնը չկրնալով պսպել, պայրացմամբ քուէհամարի շարունակութիւնը աւելորդ դատած է, ժողովականաց միտքին արդէն իմացուած ըլլալը բարձրաձայն յայտարարելով:

2997. ԸՆՏՐՈՒԹԵԱՆՅ ՀՈԳԻՆ

Իր տեսակին մէջ անօրինակ և աչքառու էր Օրմանեանի պատրիարքութեան ընտրուիլը, զի օտար դաւանութենէ վերադարձողի մը այդ աթոռին բարձրացած ըլլալուն նախընթացը չկար, և պակաս չէին այդ մասին կանխաւ դիտողութիւն ընողներ. բայց ոչ ոք դժգոհութիւն յայտնեց ընտրութեան լրանալէն ետքը: Օրմանեան առաջին օրէն իսպառ թօթափած էր իր վրայէն հռոմէականութեան կերպերն ու հակումները, մինչև Ներսէս իսկ պատրիարք, Լիմայ վարդապետի մը կը նմանիս ըսած էր անոր, ինքն ալ կը պարծենար թէ գիտակցաբար ընդունած է հայադաւանութիւնը, մինչ ուրիշներ անգիտակցաբար գտնուած են անոր մէջ, և իր գիտակցութիւնը ցուցուցած էր հայ դաւանութեան ուղղափառութիւնը և Հայ եկեղեցւոյ ինքնուրոյնութիւնը հրապարակաւ պաշտպանելով: Իր ներշնչած վստահութեամբ առաջին օրէն ամէնէն փափուկ պաշտօնները յանձնուեցան իրեն: Վերադարձի առաջին ամիսներու մէջ Կարնոյ կարևոր վիճակին առաջնորդ ընտրուած էր՝ հինգ յարակից վիճակներու յաւելուածով. Մակար կաթողիկոսի նման աւանդապահ հայրապետէ մը հայկական աստուածաբանութեան ուսուցիչ նշանակուած էր, Խորէն Աշըգեանի պէս կրօնքի և եկեղեցւոյ մենամոլ պատրիարքէ մը Դպրեվանքի կազմակերպող և վարիչ և ուսուցիչ ընտրուած էր, միթէ՞ միայն պատրիարքութիւնն է կսէին հանրութեան ըմբռնմանց թարգման եղողները, որ շատ պիտի տեսնէինք այսքան արժանաւոր, այսքան ընդունակ, այսքան կարող եկեղեցականի մը: Օրմանեանի ընտրութեան առաջնորդող տեսութեանց մէջ նկատի առնուած կէտերն եղան գլխաւորապէս, համալսարանական վարգացում ունեցած, օտար լեզուաց հմուտ, քաղաքական կենաց ծանօթ, եւրոպական յարաբերութեանց վարժ ըլլալը, որով թէ պետական և թէ դեսպանական անձանց հետ կրնար ուղղակի խօսակցութեան մտնել: Նկատի առնուեցաւ նաև ազգային ձգտումներու և կենցաղական պէտքերու անկեղծ հետևող ըլլալը, որ ոչ Աշըգեանի պէս պատրիարքական գահը սուլթանին գոծիք կը դարձնէր, և ոչ ալ ինքնամատոյց անձնուիրութեամբ մը իր խիղճն և ազգային պագումները կը սպաննէր (ՕԶԱ.232). միւս կողմէ Իվմիրլեանի պէս ալ պատշաճից և շահեցողական ձևերը անարգելով քաղաքագիտական ճկունութիւնը մոռանալով պայրոյթ չգրգռել, և վտանգները չմօտեցնել և չաճեցնել: Այդ մտայնութեան հետևանքն էր որ առաջինը չափազանց կակուղ և երկրորդը չափազանց պինդ նկատուած ատեն, Օրմանեանը իբր երկուքէն խառն ընթացքի տէր նկատուեցաւ, և նոյն իսկ կուսակցականներ, յիշելով որ 1883-ին Օրմանեան ալ պետական կասկածներու ենթարկուած էր (2888), վստահութեամբ նայեցան անոր ընտրելիութեան վրայ: Միևնոյն նպատակին իբր նպաստաւոր պայմաններ նկատուեցան Օրմանեանի կանոնական և ճշդապահ եղած ըլլալը, որով ո՛ր տեղ և ի՛նչ գործի որ կոչուեցաւ առանց դիտողութեան հետևած էր, բնաւ բամբասուած չէր, իրեն հասուցած Դպրեվանքիներով օգնականներ և գործակիցներ պատրաստուած էր, և գաւառական կեանքին և Մայրաթոռոյ ընթացքին և եւրոպական կենցաղին անձամբ ծանօթութիւն և փորձառութիւն ունէր, որով ոչ մի յարաբերութեան հանդէպ օտար չէր գտնուեր (96.ԱՐԲ.572-574): Ասոր հետ մէկտեղ մենք հեռու չենք կարծելէ, որ ժամանակին տագնապն ու կացութիւնը ուժգնապէս ազդած են բոլոր եպիսկոպոսներու վրայ, որոնք յօժարակամ խուսափած են ընտրելի ըլլալէ, միակ Չամիչեանի բացառութեամբ, որ ոգևիւն կը հետապնդէր, բայց վայն ալ հանրային կարծիքը չէր ընդունէր, որով ոչ խնդրող և ոչ միտքէն անցունող, և իր

պատրիարքանալի չկարծուիլ նաև շատերուն համարձակ խօսող Օրմանեանի (ՕՄԱ.18) վիճակեցաւ ահագին պատասխանատուութեան և անտանելի պաշտօնավարութեան բերը: Այդ ծանրութիւնը ինքնալ զգացած էր, որով ընտրութեան առաջին լուրը յուզմունքէն զինքն թողուց, և հոկտեմբեր 7-ին առտուն երեսփոխանութեան կողմէ պաշտօնապէս ներկայացող Գաբրիէլ Գաբրիէլեան ատենապետ և Յակոբ Գուրգէն ատենադպիրին, որոնք յանձնառութեան յորդորներ կը խօսէին, յայտնապէս պատասխանեց, թէ դատապարտութենէ հրաժարելու սովորութիւն չէ եղած, որ իմ վրայ դրուած վճիռէն կայենայի հրաժարիլ (ՕՄԱ.21): Կացութիւնն ալ կը ստիպէր զինքն առանց վարանման յանձնառութեան, զի ընդհանուր ժողովոյ գումարման և պատրիարքի ընտրութեան արտօնութիւնը հաւարումէկ դժուարութեամբ ստացուած էր, և առաջինը վիժել տալով երկրորդ արտօնութիւն ստանալը անստոյգ էր, և ազգը անգլուխ թողուլ կամ տեղապահական իշխանութիւնը շարունակել տալ, ազգային կեանքի դէմ յայտնի դաւաճանութիւն եղած պիտի ըլլար: Այդ ընտրութեան մէջ ազգային հանրութեան կամ ազգային ժողովին ունեցած մտայնութեան յայտնի նշան մըն էր վարչական կրկին ժողովներուն, և յատկապէս քաղաքական ժողովին կազմութիւնն ալ, որուն բոլոր անդամները չափաւորութեան և ձկունութեան անձնաւորութիւնն էին, որով պատրիարքարանի առաջիկայ ուղղութեան ուղեգիծը ցուցուած կըլլար: Այս ամէն տեղեկութիւններով մէկտեղ չպակսեցան կառավարութեան և արքունեաց միտքը պղտորելու և Օրմանեանի կասկածելի անձ մը եղած ըլլալը յիշեցնելով վաւերացումը արգիլելու աշխատողներ, որոնց մէջ տեղապահին ալ գտնուած ըլլալը հաստատողներ եղան: Իրօք ալ հաստատութիւնը տասնումէկ օր յապաղեցաւ և հապիւ 17-ին ստացուեցաւ, այն ալ Տատեանի յատուկ աշխատութեամբ և դեսպանատանց միջամտութեամբ, որով հապիւ նոյեմբեր 20-ին կրցան կատարուիլ ուխտին նիստը՝ և գործի ձեռնարկելը սկսուիլ:

2998. ԱՌԱՋԻՆ ԶԱՅԼԸ

Օրմանեան պատրիարքական գործունէութեան առաջին քայլին դիմացն ելած դժուարութիւնը սահմանադրական խնդիրն էր: Կառավարութիւնը նախապէս Չամիչեան-Նուրեան թելադրութեանց համաձայն մտադիր էր պատրիարքական ընտրութիւնը սահմանադրութեան վերաքննութենէն և վաւերացումէն ետքին թողուլ, որ անպայման պիտի յետաձգէր առժամեայ վարչութիւնը: Բայց Տատեան յջողեցաւ կայսրը համոզել թէ առանց օրինաւոր գլխոյ վերաքննութիւն՝ վաւերացում անհնար է, և պատրիարքական ընտրութիւնը պէտք էր յառաջէր, բայց միանգամայն յանձնառու եղած էր ընտրութենէն անմիջապէս ետքը վերաքննութեան ձեռնարկել տալ, և այդ նպատակով յատուկ որոշում կայացնել տուեր էր ընտրողական ժողովին սկիզբը: Իսկ հանրութեան մէջ սահմանադրութեան վերաքննութիւնը վտանգաւոր և փոփոխութիւնը հակազգային նկատուած էր, և երեսփոխութեան որոշման զօրութեամբ սահմանադրութիւնը իբրև առժամապէս դադարած նկատողներ ալ կային, և հետաքրքրութեամբ կը սպասուէր նորընտիրին ուխտին բանաձևը, մինչև իսկ ինքն Տատեան վարանոտ դիմումներ ըրած էր Օրմանեանի վաւերացման յապաղելուն օրերուն մէջ: Օրմանեան վստահացուցած էր թէ դժուար չէ մէջէն ելլել, և սիրտերու մեծ հանդարտութիւն տրուեցաւ, երբոր 20-ի գումարման մէջ Օրմանեան իր ուխտը արտասանեց ճիշդ սահմանադրութեան մէջ գրուած բանաձևով (ՍՀՄ. 16), բայց պետական պահանջման և ժողովական որոշման կէտն ալ վանց ըրած չըլլալու համար, տեղապահին ձեռքէն պատրիարքական գաւապանը ընդունելով և ժողովականաց դառնալով յայտարարեց, թէ իր ուխտին առարկան այսօր ոյժ ունեցող սահմանադրութիւնն է, և կը փոխուի միայն երբոր ամէն օրինական և վաւերական ձևակերպութեանց լրմամբ նոր սահմանադրութիւն մը այսօր ոյժ ունեցողին կը յաջորդէ: Սիրտերու ավհուն գոհունակութեամբ ընդունուեցաւ այս

յայտարարութիւնները և սկզբնական լաւ տպաւորութիւն գործեցին: Իսկ ապօրին դէպ առ կայսրն ունենալիք վզացմանց կէտն ալ ճարտարօրէն հեռաւոր անցեալին և ապագայ ակնկալութեան վրայ հիմնելով, տեսակ մը վերապահութիւն ըրած եղաւ ներկային և մոտաւոր անցեալին վրայ: Տատեան փաշա, որ անդրանիկ ատենաբանութեան պատճենը անմիջապէս թարգմանելով կայսեր ներկայացուց, բայր գոհունակութեան արտայայտութեամբ հանդարտեցաւ, և զինքն արդարացած վզաց, մանաւանդ երբ անմիջապէս 22-ին կայսերական ընդունելութեան հրամանը արձակուեցաւ, բայց օրը ուրբաթ ըլլալուն՝ հրամանը կարևոր տեղեր ժամանակին չէր հասած, և հարկ եղաւ որ հրամանին կրկնուելովը շատ ուշ ատեն կատարուէր ընդունելութիւնը նոյեմբեր 23-ին պատուոյ ամէն պայմաններով: Այդ առթիւ Ապտիլհամիտ կայսեր յայտարարեց թէ պատրիարքի անձին և վզացմանց մասին վստահացուցիչ տեղեկութիւններ ստացած էր պետական խորհրդոյ նախագահ Սաիտ փաշայէ, նոյն ինքն Բիւրա Սաիտ մականուանեալը, որ Կարին քննիչ եկած էր Օրմանեանի առաջնորդութեան միջոցին, և թէ ինքն իմացած էր որ գիտնական մէկ մըն է, և համոզուած է որ գիտնական անձը առաքինի ալ կըլլայ: Նոյեմբեր 23-ին շատ ուշ ատեն ընդունելութիւնը կատարուած ըլլալուն, բարձրագոյն դուռը այցելելու ատեն չէր մնացած, ուստի 26-ին պալատական կառքեր կրկին անգամ պատրիարքարան եկան բարձրագոյն դրան և արդարութեան և կրօնից նախարարութեան պաշտօնական այցելութիւնները լրացնելու, որ իբր անօրինակ և բացառիկ շնորհ մը նկատուեցաւ, և թէպէտ շատ կշիռ ունեցող պարագայ մը չէր, բայց ժամանակին բերմամբ մեծ տպաւորութիւն գործեց, և արքունեաց ու պատրիարքարանի յարաբերութեանց քաղցրանալուն բարեգուշակ համարուեցաւ: Երկրորդ յաջող պարագայ եղաւ բանտարկելոց ապատութիւնը, զի հարկ էր որ վզալի գործով մը հաստատուէր բարեգուշակ յեղաշրջման իրականութիւնը: Օրմանեան նոյեմբեր 28-ին առհասարակ քաղաքական յանցանքով ամբաստանեալ և դատապարտեալ Հայոց ապատութեան համար խնդրամատոյց եղաւ, ելքը փութացնելու համար քանի մը որ ալ տկարութեան պատճառանքով գործերը դադրեցուց, և դեկտեմբեր 10-ին ընդհանուր ներման կայսերական հրամանը ստացաւ, բացարձակ ներումն և ապատութիւն կայսերական ամէն կողմերը թէ դատաստանի ներքեւ եղող և թէ դատական վճիռով մինդև ցկեանս թիպարտութեան դատապարտուած բանտարկեալներուն, որոնց անուանական ցուցակը հապար երկու հարիւրէ աւելի եղաւ: Միայն մահուան դատապարտուածներուն ներումը՝ կեանքի շնորհումն եղաւ, սպանութեանց յանցապարտ նկատուելուն պատճառով, և պատիժին ժամանակաւոր բերդարգելութեան փոխուելով մինչև վզաստանան: Ասոնք ալ հարիւրի չափ էին (ՕՄԱ. 57), և մէջերնէն չորսը եկեղեցականներ, որոնք երկրորդ դիմումով բոլորովին ապատ արձակուեցան պատրիարքարանի հսկողութեան ներքեւ մնալու պայմանով: Այս չորսերն էին Եզնիկ եպիսկոպոս Ապահունի Խասթօյի քարոզիչ Յակոբոս վարդապետ Շահպալեան Բաղէշի տեղապահ, Յուսիկ քահանայ Բաջունի Արաբկիրի փոխանորդ և Վահան քահանայ Խոյեան Տրապիզոնի փոխանորդ, որոնք մայրաքաղաք բերուելով վանական եկեղեցիներու մէջ պաշտօնավարութեան յատկացուեցան: Կայսերական հրամաններուն բարեհաճ կամօք կատարուած ըլլալուն իբր նշանակ՝ դեկտեմբեր 29-ին ալ նորընտիր պատրիարքը մէծիտիէ առաջին աստիճանի շքանշանով պատուուեցաւ:

2999. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Օրմանեանի պատրիարքութիւնը բաւական երկար եղաւ, և մինչև 12-րդ տարին լրացնելու մօտ տևեց. ժամանակին պարագաներ և նկատելի միջադէպեր անոր կարևորութիւնը աւելցուցին, և ներքին տեղեկութիւններն ալ առիթ կընծայեն մանրամասնօրէն զբաղելու. բայց որպէսզի երկարաբանութեանց դուռ բացած չըլլանք, աւելի յարմար կը սեպենք նիւթերու բաժանմամբ

ամփոփումներ տալ, քան ժամանակագրության հետևելով կրկնութեանց պարտաւորուիլ: Այս նպատակով հարկ կըլլայ նախապէս ընդհանուր կերպով պատկերացնել ժամանակին կացութիւնը: Գաւառներու ջարդերն ու թալանները 1894-է ի վեր իսպառ վերջացած չէին, մանաւանդ անոնց տխուր հետևանքները դարմանուած չէին: Մայրաքաղաքի կոտորածը եկած էր պսակել աղէտից բազմադիմի և երկարատև շարքը, ահն ու սարսափը, խեղճութիւնն ու նեղութիւնը կը տիրէին ամէն կողմ: Տիրապետող շրջանակներու մէջ հաստատուած էր այն գաղափարը, թէ պէտք էր նկատառութեան հրապարակէն վերցնել հայը, թէ պէտք էր վայն չքացնել եթէ ոչ նիւթապէս գոնէ բարոյապէս. որովհետև եւրոպական քրիստոնէաներուն մասին եղած ձեռնարկները անոնց ինքնութիւնը շեշտած էին և անոնց համար քաղաքական գոյութիւններ կազմած էին, ասիական քրիստոնէայ հայուն համար ալ արձակուած էր Եւրոպիոյ նպատաւոր ձայնը, ուրեմն կրնար միւսներուն չափ յառաջել: Այս տեսութեամբ ծագեցան 1894-1896-ի արիւնոլուշտ գործերը, որոնց աւելցան թալանն ու աւեր, և հայոց համար արգիլուեցան երթևեկներ, առուտուրներ, պաշտօնավարութիւններ, յարաբերութիւններ, գործունէութիւններ, դիւրութիւններ, վերջապէս այն ամէն միջոցներ, որոնք շահուելու և ոգևորուելու և կապդուրուելու կրնային ծառայել: Մինչև իսկ Հայոց համար յատուկ օրէնքներ շինուած էին, և Հայերը դիւրաւ դատապարտուելու համար նոր դատարաններ կազմուած էին: Ամէն միտք շփոթած, ամէն սիրտ կոտրած, քաջալերութիւն կորած, հանդարտութիւն վրդովուած, փողոցի վրայ երևնալու իսկ երկիւղ, ամէն վայրկեան լրտեսի կամ քսուի կը թակարդին իյնալու վախ, ամէն մէկ քայլի համար վարանոտ կասկած, կեցած տեղը ահուդող, կատարեալ անապահովութիւն, մինչև իսկ եկեղեցի երթալու անվստահութիւն, գիշերները ճրագ վառելու կամ ճրագ շատցնելու սարսափ: Ահա 1896 տարւոյ վերջին օրերուն ընդադօտ նկարագիրը: Երբոր նոր պատրիարքը ընտրութենէն քանի մը շաբաթ ետքը հռչակաւոր և յաճախաւ Ղալաթիոյ ուխտատեղին իջաւ կանխաւ ծանուցումներով, եկեղեցին գրեթէ դատարկ գտաւ: Ս. Ստեփանոս նախավկայի տօնին ալ երբ Խաաբէօյի եկեղեցին գնաց, հնոտիներով և ցնցոտիներով ծածկուած ցանցառ ժամաւորներէ աւելի ժողովուրդ չտեսաւ: Այս բարոյական երևոյթին հանդէպ կը կանգնէր կարոտութեանց ամբարտակը: Գաւառներու ամէն կողմերէն անօթութեան աղաղակներ կը լսուէին, անսուաղ մեռնողներու գոյժերը կը հասնէին, մերկութեան ամօթէն կիներ և աղջիկներ ոտքի վրայ կանգնելու չէին համարձակէր, և այդ անտանելի նեղութեան զուգընթաց եղող ախտեր հապարաւոր կեանքեր կը հնձէին, որոնց թիւը կերթար աճեցնել սուրի և հուրի, բիբի ու վէնքի, դաշոյնի ու հրապէնի գոհ գացող հապարաւորները, և կը լրացնէր երեսուն բիւր կորուստներուն թիւը (2982): Ծնողազուրկ սրբերու բազմութիւնն ալ առանձինն տագնապ մը կաւելցնէր զորս վերիվերոյ ցուցակ մը առաջին օրերուն իսկ 22,000-ին կը հասցնէր (98. ԱՔՍ. 160), և լրացնել հաշիւները 50,000-ի կը բարձրացնէին (97. ԱՐԲ. 272), և փողոցներու մէջ անտէրունչ լքուած էակներ պաշտպան ձեռքի կարօտէին: Օտարազգիներու կողմէ ընձեռուած առաջին նպաստները սկսած էին բայց ոչ միայն ոչ միայն բաւական չէին, այլև խիթալի էր որ միասին չբերեն մարդաորսութեան նպատակը, յատկապէս կաթոլիկ միաբանութեանց ձեռքով բաշխուածները, զի հեռու երկիրներ ալ կը տարուէին կատարելապէս իւրացնելու վտանգով: Բարոյական և նիւթական խղճալի կացութեան աւելցնենք պաշտօնականն ալ: Վիճակներ մեծ մասամբ առանց առաջնորդի և առանց վարչութեան, դպրոցներ գոցուած, եկեղեցիներ փակուած, եթէ ոչ քանդուած, սպաս և վարդ և անօթ և զգեստ և կարասի կողոպտուած, պաշտամունք վարդարած, քահանաներ նուազած, քրիստոնէութեան պատիւն ու պէտքը անարգուած, ժողովուրդէն ալ լաւ մաս մը բռնի իսլամացած, մէկ խոսքով ամենայն ինչ խառն ի խուռն և անկերպարան, վայրավատին և լքուած: Այս պարագաներուն մէջ կը սկսէր Օրմանեանի

պատրիարքութիւնը: Նորա մասին ամէնքն ալ կը նդունէին թէ փշալից էր գրուած աթոռը իսկ ինքն կը պատասխանէր թէ փուշերէն աւելի աթոռին խախտւտ ըլլալը իր միտքը կը տանջէր, զի անհնար կըներ սաստիկ միջոցներով փուշերը ճզմել: Միակ յաջող պարագան օտարապետաց նպաստներէն պատ, դեսպանատանց միջամտութեամբ, բռնապատեալ իսլամութեանց անպաշտօն և անվաւեր համարուելուն համար տրուած կայսերական հաւանութիւնն էր:

3000. ՊԱՐՏԱԻՈՐԵԱԼ ԸՆԹԱՅՔ

Յիշատակել դժուարութեանց հանդէպ նկատողութեան և բացատրութեան կարևոր կէտ մը կը դառնայ նոր պատրիարքի և նոր վարչութեան համաձայնութեամբ ընդգրկուած յարաբերական ընթացք. և օսմանեան կառավարութեան հանդէպ, կամ աւելի ճիշդ Ապտիւլհամիտ կայսեր հանդէպ զի ոչ ոքի գաղտնիք է թէ այդ միջոցին կառավարական ամբողջ կազմը, մինչև իսկ ամենամանր պարագաները կայսեր բացարձակ կամքին կը հպատակէին և անոր ձեռքը ամփոփուած էին, և նախարարութիւնն ու նախարարները բարձրագոյն հրամանաց և հրահանգաց պարզ գործակատարներն էին, զոր չէին քաշուիր իրենք ալ խոստովանիլ, թէ ի վուր են իրենց եղած դիմումները և պէտք էր որ արքունիքին դիմումներ ամէն գործի համար: Մեծապարքուն իսկ, փոխանորդն ալ փոխանորդուողն ալ արքունիքին մէջն են. կըսէ երբոր կայսեր փոխանորդէ իրմէ բան մը կը խնդրուէր: Պալատական պաշտօնակալներն ալ պարզ քարտուղարէ աւելի դեր մը չէին վարեր, և որևիցէ գործի համար հրահանգ չստացած պատասխան տալու համարձակութիւն չունէին: Ասկէ կը հետևէր որ ամէն գործի համար, մեծ ըլլայ կամ փոքր, արտասովոր կամ սովորական, կայսերական պալատ դիմելը կանոնաւոր և պարտաւորեալ դարձած էր: Հոն ալ իւրաքանչիւր պաշտօնակալի ճիւղը որոշուած էր, և Հայոց գործերուն ճիւղը առաջին քարտուղար Թահսին փաշայի յանձնուած էր: Եթէ նախարարներուն ալ դիմումներ կը կատարուէին, կամ միտքերնին նախապատրաստելու, կամ քաղաքավարական ձևերը վանց չընելու, կամ աւելի յաճախ արքունիքէն տրուած հրամանին կամ հրահանգին գործադրութիւնը փութացնելու և դիւրացնելու համար էր: Այս էր յարաբերական գործունէութեան ընթացքը, որուն պիտի աւելցուին դիմումներու առարկայ եղող կէտերը և դիմումի ձևերը: Նախորդ պատրիարքէն Աշըգեանը չափապանց կակուղ և Իվմիրլեանը չափապանց պինդ նկատուած ատեն, երրորդին կը մնար երկուքէն խառն ընթացք մը գործածել, որ է երկու կողմերն ալ շօշափել, և այս եղած էր ընտրողներու ալ տեսութիւնը, ինչպէս գիտեցինք վարչական ընտրութիւնները բացատրած ատեննիս (2996): Ըստ այսմ դիմումներու առարկաներն եղան, հնարաւոր չափի մէջ, բռնութիւնները մեղմացնել, սպառնացող նորանոր վտանգները հեռացնել, հարստահարութիւնները չափաւորել, տեղի ունեցած վնասները դարմանել, և ազգային հարուածեալ և վիրաւորեալ վիճակին կողմը ման միջոցներ հոգալ: Իսկ միւս կողմէն շատ առջև չերթալ զիջումներու մէջ, այլ ազգային իրաւունքներու աւանդը պաշտպանել, ազգին կացութեան բարւոքումին հետամուտ լինել, և ազգային դատին պատկանող սկզբունքները չվտանգել: Իսկ դիմումներու ձևին գալով այնպիսի ոճ մը գործածել, որ ըլլայ երկու ծայրերը միանգամայն նկատի առնող, հանդարտութեամբ և խոհեմութեամբ գործերը վարող, հնարաւորը բացարձակին նախադասող, հարուածեալ ազգին վրայ նոր հարուածներ չհրաւիրող, մէկ խօսքով լատին առածին հետևողութեամբ գործին ուժեղ, կերպին համեղ վարմունք մը (Fortiter in re, suaviter in modo) (ՕՄԱ.21): Այս ընթացքին հետևելու համար իբր ոյժ տուող և համոզող պարագաներ նկատի առնուեցան, և նախապէս և գլխաւորապէս հանրութեան մէջ յայտնուած ըմբռնումը, զի այս տեսութիւններ ամէնուն բերնէն կը լսուէին, և ժողովրդական արտայայտութիւններ միևնոյն դիտումը կը պնդէին: Բայց ժողովուրդը ըսելով կիմանանք անշուշտ այն հանրութիւնը, որ երկրին մէջ կապրէր և փորձանքներուն հետևութիւնները կը կրէր, և

անձնական փորձառութեամբ օգտակար անօգուտէն և երևակայականը իրականէն վատել ուսած էր, և ոչ անոնք որ աղէտալի կացութեան նկարագիրը իբր նկար միայն կը տեսնէին, իսկ կրելու պագուամը չունէին (ՕՄԱ.55), և ապա տրեկիրներ ապրելով ապատօրէն իրենց հաճոյքին կրնային ծառայել, մեծ մեծ ջարդելով և գրգռութիւններ պատճառելով, որոնց հետևանքները իրենք պիտի չկրէին: Այսպիսիներու ուղղակի ազդարարութիւն հասցնելու ալ փոյթ տարուեցաւ, որ խիղճի հակառակ է այնպիսի ձեռնարկներ ընել, որոնց ձախող հետևանքը ուրիշներ պիտի կրեն և ոչ իրենք: Ուրիշ պատճառ մըն ալ, որ այդ ընթացքին կը ստիպէր, հայաբնակ գաւառներու բարեկարգութիւնը երաշխաւորող տէրութեանց հանդէպ անտարբերութիւնն էր, նոյն իսկ իրենց պաշտօնական յանձնառութեանց հանդէպ: Անոնք ներքին գաւառներու կոտորածները և ոչ իսկ բողոքի նիւթ ըրած էին. Կ. Պոլսոյ կոտորածը երեք չորս օր իրենց դեսպանատանց դուռներուն առջև շարունակուած էին և ձայն չէին հանած, վեց կուսակալութեանց խնդիրը մէկ կողմ թողլով՝ ընդհանուր կայսերութեան ծրագիր մշակել սկսած էին, քանի մը ամիս ետքը յունական պատերազմին ծագելովը ընդհանուր ծրագիրն ալ ծալլեր վերցուած էին վերջերս ուղղակի երոպակողման կուսակալութիւններով պաշտի սկսել էին համարձակ յայտարարելով, թէ առաջին փորձը երոպակողման վրայ յաջողցնելու կաշխատին, որ ետքը ասիակողման վրայ տարածեն: Երբոր ներքին գաւառներու աղէտները իրենց կը պատասխանէին թէ մենք առայժմ միջամտել չենք կրնար, և օսմանեան նախարարութեան խօսելու հրահանգը կու տար ամենէն արգահատող կարծուած տէրութեան ներկայացուցիչը: Ուրիշ դեսպան մըն ալ պատրիարքին կառաջարկէր թէ ի՛նչ կը մտածէ ընել բարեկարգութեան խնդիրին մասին, որուն Օրմանեան կը պատասխանէր, թէ դաշնագիրը ստորագրող և երաշխաւորող տէրութեանց կարգին Հայեր չեն յիշուիր (ՕՄԱ. 87): Երբոր այսպէս կրոպական երաշխաւորողները կը խուսափէին, անհրաժեշտ էր դէմ առ դէմ գտնուիլ կառավարութեան հետ. որուն անկարեկիր հալածանքին պոռութիւնը ամենայն ուժգնութեամբ կը տիրէր կացութեան վրայ (ՕՄԱ. 21): Այդ կացութեան մէջ գործելու ստիպուած պատրիարքն ու վարչութիւնը մէկէ տարբեր ճամբայ չունէին, և անկէ քալելէ տարբեր ընթացք չէին կրնար ունենալ: Ինչ որ իրենց կը մնար ընել միջասահման ձևերէն չշեղիլն էր, համակերպութիւնը ստրկութեան չտանիլ, աղէտները չծածկել, բողոքները չդադրեցնել, անտեղութիւնները նշաւակել, դարմանները պահանջել: Այս պարագային մէջ ալ, որովհետև ամենայն ինչ կայսեր անձէն և կամքէն կը սպասուէր, իրմէ իրեն բողոքել հնար չէր, ուստի ճարտար դարձուածքով մը պաշտօնակալները կամբաստանուէին իբրև կայսեր կամքին հակառակ վարուողներ, և Կ. Պոլսոյ մէջ ոստիկանութեան նախարարը, և գաւառներու մէջ կուսակալները պատրիարքարանի գանգատներով կը նշանակուէին, և անոնք ուղղելն ու սաստելը կայսրէն կը պահանջուէր, գիտնալով հանդերձ թէ անոնք պարզ հրամանակատարներ են (ՕՄԱ. 47): Հապի թէ Օրմանեան պատրիարքական աթոռ կը բազմէր, կուսակցականներէն ազդարարութիւն կընդունէր թէ պինքն իրենց համամիտ կը ձանձնան, և կը սպասեն որ իրենց ձեռնարկներուն գործակցի և իրենց ծրագիրներուն գործադիր ըլլայ: Որչափ ալ Օրմանեան իրեն նախընթացովը և գործունէութեամբը. քարոզներով և ատենաբանութիւններովը կրնար այդ գաղափարը ներշնչած ըլլալ, բայց ոչ մի կուսակցութեան որդեգրուած կամ անուն տուած չէր, պի իր վրայ ազդող հեղինակութիւն մըն ալ չէր պար կուսակցութեան մէջէն: Ուստի կը փութար անոնց իմացնել թէ պաշտօնի վրայ անձնական ուղղութիւնները չեն որ պիտի տիրեն, այլ պաշտօնին պահանջը և պաշտօնավարութեան կոչումը, թէ պաշտօնի մը պահանջին համակիր և համակերպ շեղող կրնայ պաշտօնը չընդունիլ կամ պաշտօնէ քաշուիլ. բայց եթէ պարտաւոր կը լինի պաշտօնը ընդունիլ, ինչպէս իրեն հանդիպած էր (2997), այլ ևս պէտք էր ուղղութեանը հնապանդիլ, այն ուղղութեան

վոր արդէն բացատրեցինք (ՕՄԱ.22): Ուստի իրենց կը պահանջէր թէ ազգը վիրաւորուած և հարուածուած և շատ արիւն կորսնցուցած և տկարացած հիւանդ մըն է, որուն վրայ անհնար է սաստիկ դեղեր և բուռն ցնցումներ փորձել, և ոչ ալ անոր մարմինէն արիւն հանելու համարձակութիւն ունենալ, հիւանդը ամէն կողմէ հանդարտութեան պէտք կը յայտնէ և կը պահանջէ, և այլապէս գործել հնար չէ (ՕՄԱ. 46): Հրապարակաւ ալ բեմերուն վրայէն կը յայտարարէր թէ փոթորիկի մատնուած նաւապետէն չի կրնար պահանջուիլ որ հովերը զսպէ և փոթորիկը հանդարտեցնէ այլ իր ընելիքն է միայն չշփոթել և միտքի հանդարտութիւնը չկորսնցնել, չյուսահատիլ և նաւը չլքանել կոհակներուն և հովերուն ուղղութեան համեմատ դառնալ, մինչև իսկ պատահական և մանաւոր վոհողութիւններէ չքաշուիլ, բաւական է որ նաւը ողջառողջ պահէ և նաւահանգիստ առաջնորդէ, հող չէ որ ճանպան փոխէ և երկնցնէ (ՕՄԱ. 45): Համարձակաձայն բարբառով ալ կը յայտարարէր թէ իրեն առաջին պարտք կը ճանչնայ ազգին գորյութեանը աշխատիլ, և թէ վայդ ապահովելէ ետքը հնար է ապագային և վարգացման խնդիրները յուզել: Այդ տեսութիւնները կը կանխենք արձանագրել, որպէսզի պատրիարքի և վարչութեան հետևած ընթացքին իսկութիւնը միանգամ ընդմիջտ բացատրած ըլլալնք, պարզապէս պատմական տեսակէտով և ոչ ջատագովական նպատակով:

3001. ԸՆԹԱՑՔՆ ՈՒ ԱՐԴԻՒՆՔԸ

Օրմանեանի պաշտօնավարութեան առաջին ժամանակամիջոց կրնանք համարել 1896 նոյեմբեր 20-ի ուխտի օրէն մինչև 1897 օգոստոս 6-ի արկածին օրը անցնող ութ ու կէս ամիսները: Այս ամիսները գրեթէ փոխադարձ պայմանագրեալ փորձի մը միջոց եղած էր, որպէսզի պատրիարքի կողմէն գործադրուած հանդարտեցուցիչ ձեռնարկները փոխանակուին արքունեաց կողմէ գործադրուած բարեացակամ տնօրինութիւններով և հալածանաց դադարմամբ: Վերև յիշուած 1896 դեկտեմբերի ներումը (2998) արդիւնքէ աւելի գրաւական կը նկատենք և անոր վրայ չենք ծանրանար: Բայց արդիւնքն էր փախստականներու ազատ և ապահով վերադարձին համար ստացուած պայմանաժամը, ուսկից 12,000 հոգիներ (97.Ա.ՐՐ.526) և աւելի ալ օգտուեցան իրենց տունները դառնալու և լքած ընտանիքնին հոգալու ու գործերնին շարունակելու: Արդիւնք էին նաև նորէնոր կասկածի ներքին ինկողներու և վանապան պատճառներով ձերբակալուածներու և դատապարտուածներու համար ստացուած մասնաւոր ներումները: Արդիւնք էին նմանապէս առաջնորդներէն հալածանքի և հակառակութեան ենթարկուողներուն անհակառակ տեղերնին թողուիլը, և պակասած տեղեր տեղապահներ հասցնելու դիւրութիւնները: Արդիւնք էին վերջապէս յետամնաց տուրքերու ներումը ստացուած հրամանները: Ամենէն աւելի մեծ եղած է կոտորածներու պաշտօնապէս վարդարման արդիւնքը: Մոլեգին խուժանը տակաւին զգալի նշան մը տեսած չէր, որ ստիպուէր ձեռք քաշել ջարդէն ու թալանէն, ուստի համարձակեցաւ նոր փորձ մը ևս ընել Եւդոկիոյ վրայ, 1897 մարտ 7-ին: Պատրիարքը ուժգնակի բողոքեց, և մինչ նախընթաց առիթներուն մէջ ջարդուողները կը դատապարտուէին, այս անգամ յատուկ քննիչներ յղուեցան Կ. Պոլիսէ, ատեան կազմուեցաւ, դատաստան տեսնուեցաւ, ջարդին մասնակցող թուրքերէն 72 դատապարտութիւններ կրեցին, և պատիժին լրացնելու համար ափրիկեան Տրիպոլիս փոխադրուեցան: Ասով ամբողջ ըզգաց թէ այլ ևս ազատ չէ անպատիժ կերպով ջարդել և կոտորել, աւերել և աւարել, և միանգամայն ընդ միջտ կոտորածներուն վերջ տրուեցաւ (ՕՄԱ. 57): Արդիւնքներու չարքին պէտք է անցնի նաև պատրիարքարանի հանդէպ ցոյց տրուած Վստահութիւնը, որուն պարզ խօսքին կամ առաջարկին վրայ արգիլել երթևեկները կը դիւրանային, և դուրսէ եկողներուն մասին քննութիւններ կը կարճէին: Պանդիստութեան վարժուող Բղեցիներէն երեք հարիւր հոգւոյ խումբ մը մայրաքաղաք վերադառնալ արտօնուեցաւ, այլ անոնց անմիջապէս

արտասահման մեկնիլը գործին շարունակութիւնը չքաջալերեց (ՕՄԱ. 57): Համարձակ պէտք է ըսենք, թէ Օրմանեան Ղալաթիոյ բարոյչութեան և Կարնոյ առաջնորդութեան օրերէն սկսելով յայտնի հակառակորդ եղած էր գաւառացիներու պանդխտութեան, որ հայաբնակ գաւառներու հայաբնակութիւնը կը նուազեցնէր, լքեալ ընտանիքները խեղճութեան կը մատնէր, և քաղաքներու ու նաւահանգիստներու մէջ պանդուխտ բազմութեան կենցաղականն ու բարոյականը կապականէր: Նա Հայերուն իրենց ծննդավայրին մէջ մնալուն և աճելուն մեծ բարոյչին եղած էր որ եթէ գաւառացին տեղական դժուարութիւններու դիմաց կը գտնուէր, այլ ալ օգտակար կը սեպէր անոր միտքը սրելու և սիրտը ժրելու և իր բնագաւառին մէջ իր բարօրութիւնը պատրաստելու: Այդ ձևը նպաստաւոր կը վատէր նոյն իսկ հայկական խնդիրին տեսակէտով. զի հայկական տարրին նուազելովը հայկական խնդիրին գետինն ալ կը վնասուէր, կալուածն ալ կը վտանգուէր: Այս վնասէն ապատելու համար հարկ էր հայ տարրը աճեցնել, ընդարձակել, դաստիարակել հարստացնել, հողատէր ընել և հոգալ, հայկական խնդիրին ամրանալուն ծառայել: Ահա Օրմանեանի և վարչութեան տեսակէտը, անպատրաստ և ապաժաման և անբաւական փորձերէ և ցոյցերը խուսափիլ, որոնք ազգը ևս քան տկարացնելու և վտանգելու կառաջադրէին: Այս նպատակով էր որ չաշխատեցան Հայուն տեղէն ելնելը դիւրացնելու, այլ մանաւանդ աշխատեցան դուրս ելնողներուն անպայման և համարձակ վերադարձին, և բոլոր փաստական և ցրուած Հայերուն իրենց տեղերը դառնալուն: Նոր վարչութեան առաջին ժամանակամիջոցին մէջ հաստատուած հանդարտութիւնը և պետական կասկածները արթնցնող դէպքերու նուազումը, հետզհետէ բարձրագոյն վստահութիւն ալ կարդինաւորէր, և ասոր իբր յայտնի նշանակ պէտք է ընդունիլ 1897 յունիս 18-ի ներքին գործոց նախարարութեան պաշտօնական հրահանգը, յատկապէս հայաբնակ վեց կուսակալութեանց ուղղուած, որով վեց պետութեանց հետ համաձայնութեամբ հաստատուած 32 յօդուածները կը յիշատակուին, և պաշտօնեաներու, ոստիկաններու և դատարաններու անձերուն և խառն կազմութեան համար որոշակի կերպեր և թիւեր կը ցուցուին (97.ՃԷՐ.3630), և այն որ ժամանակին ցացկուած և կոտորածի առաջնորդած էր, այս անգամ կը յայտնուէր և պաշտանութեան կերպարան կը զգենուր: Հետևաբար իրաւամբ կրնանք եզրակացնել թէ ազգին համար ամէնէն աւելի նպաստաւոր ատեններէն մին եղած էր 1897 տարւոյ ամառը, երբ նոր վարչութեան գործի ձեռնարկելէն ի վեր գրգռիչ պատահարներ դադրած էին (ՕՄԱ.18). սակայն դժբախտաբար 1897 օգոստոսի ռումբը վերիվայր յեղաշրջեց յառաջացեալ պատրաստութիւնը (ՕՄԱ.19):

3002. ՕԳՈՍՏՈՍԻ ՌՈՒՄԲԸ

Ինչ որ մենք իբրև օգտակար, մանաւանդ թէ իբրև օրինական պահանջ կը ներկայացնենք համաձայն չէր կուսակցական գործիչներու սկեռեալ տեսակէտին և նախակարգեալ ծրագիրին, կամ իրենց կացութեան և կենցաղին, կամ նոյն իսկ իրենց գեղի կեանքին, ինչպէս հրապարակաւ ալ իրենց մասին խօսեցաւ, իբր զի կուսակցական շարժումին անուամբ կատարուած յօժար կամ բռնի հանգանակութիւններն էին իրենց ապրուետի և վայելքի միջոցները: Նոր վարչութեան նախադասած ձևը կը տկարացնէր կամ կը դադրեցնէր այդ առթիւ ձեռք ձգուած նւթական օգուտը, իրենց կարծիքով կը վնասէր հայկական խնդիրին գոյութեանը, որոն միակ եղանակ կը կարծէին աղէտներ շատցնել, որոնցմէ պիտի բղխէր Եւրոպիոյ գրգռուիլը, և Եւրոպիոյ գրգռուելէն պիտի ծագէր օսմանեան կայսերութեան ստիպուիլը, և ասոր ստիպուելէն հայաբնակ գաւառներու բարեկարգութիւնն և Հայոց բարօրութիւնը, հոգ չէ թէ ջարդուելով և կողոպտուելով, աղքատանալով և սպասուելով: Ահա՛ այն մտայնութիւնը որ տեղի տուաւ 1897 օգոստոս 6-ի արկածալից ցոյցին: Այս անգամ իրենց ցոյցին յենարան կորոշէին բարձրագոյն դուռը և կործանիչ

ռումբ մը կը պայթեցնէին բարձրագոյն դրան շէնքին ներքեւ, ժողովի հաւաքուած ամբողջ նախարարութիւնը միանգամայն կոտորելու համար. սակայն տեղն ու ժամը շփոթելով, կամայ թէ ակամայ չենք գիտեր, շէնքին երկրորդական մի մասին վնասելէ, և սպասաւոր մը սպանելէ և երեք սպասաւոր ալ վիրաւորելէ աւելի հետեւանք չէր ունենար: Ռումբ մըն ալ Բերայի կառավարչատան առջև կը պայթեցնեն, և հատ մըն ալ Ղալաթիոյ օսմանեան դրամատան մէջ չպայթած կը բռնուի: Միևնոյն ատեն ապգային վարչութիւնն ալ հաւաքուած էր Ղալաթիոյ ժողովարանը, և ձայնը լսուելուն և եղելութիւնը հասկցուելուն վրայ նոյնհետայն պատրիարքը Երլտըվի կայսերական պալատը կը փութայ, և եղելութեան վրայ ցաւ յայտնելով, կը խնդրէր որ դաւաճանութեան յանդգնողներէն պատ ուրիշի վրայ ձեռք չդրուի, ամբոխական շարժումը արգիլուիլ, պինուորական և ոստիկանական և քաղաքական իշխանութեանց չափաւորութիւն և կանոնաւորութիւն յանձնարարուի, գաւառներ, հրամաններ դրկուին, օրինական գործողութիւններէն պատ որ և է կամայականութիւն չներուի, մէկ խօսքով օրէնքին ներածէն պատ գործողութիւն չըլլայ, ձերբակալութիւններ չընդարձակուին և հետապնդումներ չտարածուին, հալածանքներ արգիլուին: Կայսրը գոհ մնալով ուղղակի իրեն եղած դիմումէն, իսկոյն ամէն կողմ հեռագրական և հեռաձայնական հրամաններ հասցնել կը հրամայէր, և իրօք տեղւոյն վրայ ձեռք ինկողներէն և անոնց խոստովանութեամբը ցուցուած գործակիցներէն չափաւոր թուով անձերու վրայ ձեռք կը դրուի, որոնցմէ տասը հոգի միայն դատարանի կը յանձնուին, և անոնցմէ ութը մահուան կը դատապարտուին, և մահու պատիժն ալ բերդարգելութեան կը փոխուի: Միւս կողմէ մայրաքաղաքի և գաւառներու մէջ հաւասարապէս վգուշութիւններ կը կատարուին, որ ամբոխային և խուժանային շարժումներու դուռ չբացուի և խլրտումներ ալ պսպուի (ՕՄԱ.57), և այսպէս կը վերջանայ պատահար մը, ուսկից շատ թեթևներ անցեալին մէջ կոտորածներու պատճառանք եղած էին: Սակայն այդ արդիւնքը հաճելի չեղաւ կուսակցական գործիչներուն, որոնց ծրագիրով աղէտներ կոտորած մը պէտք էր յառաջ բերէին, որ հայկական խնդիրը վերանորոգուէր և արդիւնաւորուէր, իբր թէ մեծ օգուտներ յառաջ եկած ըլլային 1894-ի և 1896-ի կոտորածներէն (2982) և ցոյցերէն (2994), պի կարծես թէ օգոստոս 14-ի ցոյցին տարեդարձը տօնել կերևակայուէր: Այս դիպուածով այլ ևս կուսակցական գործիչներու աչքին վերջացաւ Օրմանեանը իրենց ձեռնարկներուն գործակից գոնէ քաջալերիչ տեսնելու ակնկալութիւնը, և այն օրէն կը սկսէր սպառնական և ահացուցիչ նամակներուն շարքը, որ չդադրեցաւ անոր պատրիարքութեան ամբողջ ժամանակը: Անոնց պահանջն էր կամ իրենց գործակից ըլլալ կամ թէ այթողէն հրաժարիլ, սակայն Օրմանեան երկուքին ալ չհամաձայնեցաւ: Գործակցութիւնը վտանգաւոր արկածխնդրութիւն դատեց, արդէն նախորդ պատրիարքներու օրէն անպտուղ և վնասակար դարձած. իսկ պաշտօնէ քաջուիլն ալ ապգին դէմ դաւաճանութիւն կըլլայ վտանգի ատեն, նաւը լքանող նաւապետի մը, կամ բանակէն փախչող պօրավարի մը վատութեան համահաւասար պի շատ կեղակարծ էր նոր ընտրութեան հաւանականութիւնը, և շատ անստոյգ անոր օգտակարութիւնը: Հապիւ թէ ապգը օրինական ձևերով կապմուտ վարչութիւն մը կրցած էր ունենալ, պայն տապալելը, անգլուխ ապգը արկածներու մատնել ըսել էր: Այդ կացութիւնը շարունակեց մինչև Օրմանեանի պատրիարքութեան վերջը, և Օրմանեան իսկապէս սալին ու մուրճին մէջտեղը մնացող երկածին դերը վարեց, մէկ կողմէն սալին պնդութեան և միւս կողմէ մուրճին ելեւջներուն հարուածերը կրելով: Սակայն այդ կացութեան մէջ ալ ինչ ինչ յաջողութիւններ ձեռք բերուեցան, որոնց կարգին յիշենք 1898 ապրիլ 15-ին հրամայուած 25 աշակերտաց պետական վարժարաններու մէջ ձրիաբար գիշերօթիկ ընդունուիլը, և օգոստոս 20-ին Ապգային Հիւանդանոցին նուիրուած օրական պարէնին 600 քաշ հացի և 150 քաշ միսի բարձրանալը:

3003. ՆՊԱՍՏԻՑ ԳՈՐԾԸ

Նոր վարչութեան վրայ դրուած կարևորագոյն գործերէն մէկն ալ նպաստից հոգածութիւնն էր: Ընդհանուր կոտորածէն տարի ու կէս անցած էր. չենք ըսեր թէ Իվմիրեան պատրիարք բան մը ըրած չէր, կամ թէ Չամիչեան տեղապահի ժամանակ բան մը եղած չէր կառավարութիւնը յատուկ յանձնաժողով մը հաստատած էր և մայրաքաղաքի մէջ ազգային մարմին մըն ալ կազմուած էր Ալէաթեան եպիսկոպոսի նախագահութեամբ, և տարագրելոց յանձնաժողով մըն ալ հաստատուած էր այս եկեղեցական սպասներ և զգեստներ և գիրքեր հոգալու համար, և այս վտարեալ պատդուխտներուն գոյքերը և հաշիւները ամփոփելու համար: Դիմումներ եղած էին մասնաւորներու և Էջմիածնի և Երուսաղէմի տպարաններուն, և հացակարօտ բազմութեան ալ նպաստ հասցնելու աշխատուած էր, սակայն հիմնական կարգադրութիւն մը եղած չէր, և կացութիւնը փոխարկելու չափ արդիւնք տեսնուած չէր խեղճութիւնն ու կարօտութիւնը իրենց ամբողջական վիճակը կը պահէին, և գլխաւորապէս որբերու հոգածութեան ձև մը հաստատուած չէր: Օտարապգի մարդասէրներ ձեռք կարկառելու սկսած էին, և Անգղիայէ ու Գաղղիայէ, Գերմանիայէ ու Հելլենտիայէ գումարները հասցնողներ և անձամբ աշխատողներ եկած էին, սակայն նպաստը պէտքին համաչափ չէր և ոչ ալ կրօնական քարոզչութենէ վերծ էր, յատկապէս կաթողիկականը: Հետևաբար գործը տակաւին իր լրմամբը կը ներկայանար նոր վարչութեան առջև և նոր պատրիարքի աչքին, որոնք արկածելոց նպաստն ու դարմանը իրենց պաշտօնավարութեան գլխաւոր գործը և անհրաժեշտ պէտքը ճանչցան, և այդ գործով զբաղիլ սկսան 1896 նոյեմբեր 27-ին, ուխտի նիստէն եօթն որ ետքը գումարուած իրենց առաջին նիստին մէջ: Առաջին անգամ դեկտեմբեր 27-ին տէրութեան արտօնութեամբ կարօտելոց ազգային յանձնաժողով մը կազմել փորձեցին, բայց յաջողութեան հաւանականութիւն չը տեսնելով՝ 1897 տարեմուտին պատրիարքը յատուկ կոնդակով մասնաւոր նուէրներու և առձեռն նպաստներու ձևին թափեց գործը իր անհատական նախաձեռնութեան և պատասխանատուութեան ներքև, բայց միւս կողմէ պետական արտօնութիւնը ձեռք ձգելու աշխատութիւնը չդադրեցաւ, և միայն երբոր չյաջողեցաւ 1897 մարտ 28-ին պետական յանձնաժողովին երեք անդամակից տալ առաջարկուեցաւ, բայց մինչև որ յաջողէր յանձնաժողովին գործառութիւնները վերջացան, և նպաստից գործին ուրիշ ձև չմնաց, բայց եթէ տարեմուտին բացուած անհատական ձեռնարկը և պետական յանձնաժողովին մնացորդէն մասնաւոր գումար մը: Պատրիարքին պնդելուն վրայ նպաստից հսկող ազգային մարմին մը կազմուեցաւ, որ երբէք ժողովական կազմակերպութիւն չունեցաւ և իր անունով գործելու և ստորագրելու չմիջամտեց, և բոլոր պաշտօնական ձևակերպութիւնները միայնոյ պատրիարքին անձին թողուց: Այդ մասին պատրիարքին դուրսէն դիտողութիւններ պակաս չեղան, առանց յատուկ արտօնութեան գործելուն մասին, որոնց նա համարձակ կը պատասխանէր թէ ողորմութիւն բաշխել իր կոչումին ու աստիճանին սեփական գործն է, և բաշխելու համար հաւաքելու պէտք ունի, և թէ հարուստէն առնելու աղքատին տալու իրաւունքը ոչ ոք կրնայ իրեն վլանալ: Միայն տոմսով ու տոմարով հանգանակութիւն բանալու ձևէն զգուշացաւ, և ամենայն ինչ, նպաստ ուզելն ալ, գումարի հանելն ալ, պատրիարքական կոնդակներով և սովորական նամակներով կատարեց: Հսկող մարմինը առաջին անգամ կազմուած էր, մէկ կրօնական ժողովէ, երկու քաղաքականէ, մէկ ալ դիւանէ և չորս ալ դուրսէն առնուած անդամներով: Սակայն դուրսէն առնուածները և ոչ իսկ մօտեցան. մինչև իսկ իրենց մէջ խոհականագոյն եղող անձը, Սահակ Ղապարոսեան, գործը վտանգաւոր տեսնելուն պատրիարքն իսկ ետ կենալու կը յորդորէր: Սակայն անհրաժեշտ պէտքին առջև հնար չէր որ պատրիարքը ետ կրնար, և առանց վարանմանգործը շարունակեց իր անձնական պատասխանատուութեան ներքև: Իսկ հսկող մարմինէն չորս

արտաքիններուն քաշուելուն վրայ, չորս ներքինները մինչև աստիճան մը շարունակեցին և ծանուցանել պաշտօններու բողին ներքև աջակցեցան հաշիւները տեսնելու և խորհուրդ տալու շրջանակին մէջ (ՆՊՍ. 1-2): Այդ ձևը հրապարակաւ ալ ծանուցուեցաւ, և գումարումները, հասած նուէրներ, յղուած նպաստներ, որոշուած ձևեր լրագիրներով ալ հրատարակուեցան, և կառավարութիւնը աչք գոցեց, լսած ու չիմացած ըլլալու բարեհաճութիւնը պահեց, և այնպէս ալ շարունակեց մինչև վերջը: Երբոր ընկերութեանց անունն իսկ տալ հնար չէր, և հետևաբար Միացեալ Ընկերութեան դպրոցական գործն ալ նպաստից գործին միացնել անհրաժեշտ եղաւ, հսկող մարմինին երկուք ալ ուսուցիչներ աւելցան իբրև խորհրդակից, և այսպէս շարունակեցան մինչև 1901, երբ հսկող ընկերներուն յօգնելուն և թուլնալուն պատճառով յանձնաժողովը վերանորոգուեցաւ 1902 դրամատներ դասակարգէն առնուած հինգ երիտասարդ ոյժերով Ասոնք ալ մինչև 1906 շարունակեցին և հետզհետէ քաշուեցան, և դժուար եղաւ այլևս երրորդ յանձնաժողով մը կազմել (ՆՊՍ. 3), գործն ալ նուազած ըլլալով, և պատրիարքը շարունակեց նպաստից գործը մինչև իր հրաժարիլը 1908, արդէն ալ սկիզբէն գործունէութիւնը ամբողջ անոր վրայ ծանրացած էր (ՕՄԱ. 59): Նպաստից գործին սկզբնաւորութեան և կերպաւորութեան վրայ խօսելնէս ետքը պէտք էր անոր գործառնութեանց մասին ալ տեղեկութիւններ տալ, սակայն գործին ընթացք այնպէս միապաղաղ շաղկապեալ է, որ դժուար պիտի ըլլար վայն տարիներու կամ շրջաններու վրայ բաժնել, ուստի յարմագոյն կը դատենք առ աժմ լռել, և Օրմանեանի պատրիարքութեան վերջը այդ մասին լիուլի ամփոփում մը տալ: Այստեղ բաւական ըլլայ գիտնալ թէ նպաստից բաշխումները ընդարձակուեցան. 1. վիճակներու. 2. որբանոցներու. 3. վարժարաններու. 4. առաջնորդարաններու. 5. բանտերու և 6. վանապաններու ճիւղերով: Իսկ մուտքերը հաւաքուեցան աշխարհի ամէն կողմերէն, և Թուրքիա, Ռուսիա, Եւրոպա, Ամերիկա հաւասարապէս մասնակցեցան, ոչ միայն ազգայիններ այլ և օտարազգիներ: Գործառնութիւնք սկսան նոր վարչութեան հաստատուելէն, բայց 1896 տարուոյ քանի մը օրերը 1897 տարուոյն կցուեցան, աւելի արդիւնաւոր եղան առաջին տարիները, զի և պէտքերն ալ աւելի էին: Վերջապէս յիշենք թէ 1896է 1908 տասներկու տարիներու մուտքը 82,447 օսմանեան ոսկուոյ լրացաւ (ՆՊՍ. ԺԱ.), որչափ ինչ որ մի նպաստից ազգային ձեռնարկ յաջողած էր իրականացնել մինչև այս ատեն:

3004. ՆԱԽՆԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆՔ

Վարչական գործունէութեան մանրամասն տեղեկութիւնները տալ ոչ հնար է և ոչ կը պահանջուի ընդհանուր անցից պատմագիրէն մեր միտքըն ալ այդ չէ բաւական ըլլայ ուրեմն գիտնալ թէ պատրիարքարանի կազմը այնքան շփոթաց և անկերպարան դարձած էր, և այնչափ լքուած ու խառնուած էին ամենէն սովորական գործերն իսկ որ նոր վարչութիւնը պարտաւորեալ զգաց զինքն ընդհանուր գործունէութեան ծրագիր մը կազմել, և գրեթէ վարչական ընթացքը նորինորոյ կազմակերպել: Նախ և առաջ խառն ժողովը գործունէութեանց ճիւղեր հաստատեց և իւրաքանչիւր ճիւղին համար իր մէջէն մասնախումբեր որոշեց, թէ յետամնաց դիպուած թուղթերը գտնելու և զննելու, և թէ նոր եկողները ուսումնասիրելու, և նիւթերը ծեծուած ու պատրաստուած ժողովներուն հաղորդելու որպէսզի առանց ժամավաճառութեան որոշումները տրուին և գործադրութիւնները փութացուին (97. ԱՐԵ. 119): Յառաջնութիւն պահանջող գործերէն մին եղաւ առաջնորդական խնդիրը, որուն համար պատրիարքը, Յովհաննէսեան եպիսկոպոսի և Նորատունկեան Գաբրիէլի խորհրդակցութեամբ, 1897 փետրուար 11ին ընդարձակ վիճակացոյց տեղեկագիր մը ներկայեց (97. ՃԷՐ. 528 և 97. ԱՐՐ. 87-89): Այս տեղեկագիրէն կը քաղուէր թէ Տաճկահայոց բովանդակ 65 վիճակներէն 7 միայն առաջնորդ ունէին և 20 ալ առժամեայ տեղապահներով կը կառավարուէին, որով 38 վիճակներ անտէրունջ կը մնային, կամ թէ 34 ը եթէ

հաշիւէ դուրս թողունք Երուսաղէմի չորս թեմերը, սակայն ուրիշ տաս վիճակներ կային, որոնք 65 վիճակներու ցուցակին անցած չէին, բայց օրինաւոր առաջնորդներով կառավարուելու կարևորութիւն ունէին: Կ. Պոլսոյ մէջ կը գտնուէին 30 ի մօտ կուսակրօն եկեղեցականներ, որոնք առանց որոշ պաշտօնի եկեղեցիներու քարոզչութեամբ կը վբաղէին. ասոնցմէ ոմանք տարիքի և ոմանք առողջութեան պատճառով. իսկ աւելի շատեր ժամանակին դժուարութեանց պատճառանքով պաշտօնէ կը խուսափէին: Տեղեկագիրը 16ին համար վիճակներ կառաջարկէր, քանի մը վարդապետ ալ Երուսաղէմէ ուզել կը յիշեցնէր, իսկ Դպրեվանքի նորահաս վարդապետները մեծ վիճակներու և փորձառու առաջնորդներու մօտ իբրև օգնական յղել կը թելադրէր: Այս տեղեկագիրին հետևողութեամբ վարչութիւնը լրջօրէն ձեռք առաւ առաջնորդութեանց կարգադրութիւնը, և դժուարութիւնները հարթելով ու պարագայից յարմարելով շատ տեղեր թէ ոչ ընտրելագոյն՝ գոնէ հնարաւոր տեղապահներ յղեց իբրև առժամեայ առաջնորդներ պետական հրովարտակով պօրացած: Մինչև իսկ իր կողմէ տեղապահներուն ծախքերը և մասամբ պահպանութիւնն ալ վրան առաւ, կարևորագոյն նպաստ սեպելով այդ հոգածութիւնը: Առաջնորդութեանց համահաւասար կարևոր էր վարժարանաց գործն ալ, որ մայրաքաղաքէն սկսելով ամէն տեղ խանգարուած էր: Հեռաւորներուն համար հրահանգներ և մասնաւոր որոշումներ եղան ձեռնտուութեան ուսումնական խորհրդոյ, որ կարող և աշակուրջ և անձնաձիր աշխատող անդամներով կազմուած ընտիր մարմին մը եղաւ, ատենապետութեամբ բժշկապետ Վահրամ Թորգոմեանի: Կարօտներու համար ալ նպաստներ սկսան յղուիլ: Մայրաքաղաքի մէջ Օրմանեան ինքն ալ, իբր վաղեմի ուսուցիչ, ձեռք առաւ թաղական վարժարաններու պարբերական այցելութիւնները, խելամտելով և հետապնդելով կանոնաւոր ներքին կազմութիւնները և օրինաւոր դասաւանդութեան պայմանները: Գլխաւոր ձեռնարկներէն մին եղաւ նախակրթական ծրագիրին միատեսակ և պարտաւորիչ ձևը, որով քաղաքին մէջ թաղէ թաղ կամ գաւառաց մէջ գիւղէ գիւղ փոխադրուող աշակերտներ ապառ պիտի մնային ծրագիրներու և ընթացքներու անյարմարութենէ առջև եկող ժամանակի կորուստէն: Տարիներ առաջ պատրաստուած բայց կիրառութեան չհրամայուած ծրագիր մը երևան եկաւ, որ անգամ մըն ալ աչքէ անցուելով և տպագրուելով ցրուեցաւ և գործադրութեան մտաւ, առանց վանց ընելու ազգային պատմութեան աւանդումն ալ: Կրթական գործին մաս մը կազմէր նաև օտարազգի և օտարադաւան մարմիններու կողմէ խնամուած որբերուն հոգը: Հնար չէր օտարաց մարդասիրական օգնութիւնը անարգել, և ոչ ալ հնար էր հինգ բիւր սրբերու հոգածութիւնը լիողին ստանձնել, բայց միագամայն հարկ էր արթուն մնալ, որպէսզի մեր սրբեր իրենց լեզուէն և հայ կրօնքէն չհեռանան և ուղղութեան համար կորած չըլլալուն, որ կերպով մը ընդարձակել կըլլար կոտորածին հետևանքը: Այդ նպատակով պատրիարքը թէ գաւառական վարչութեանց արթնութիւնը հրաւիրեց, և նոյն իսկ օտար տեսչութեանց հետ բանակցելով, և ի հարկին դեսպանատուներուն ալ դիմելով, հայ լեզուի և հայ կյանքի ուսուցիչներ ընդունել տայ ջանաց հայ որբեր խնամող հաստատութեանց: Այդ մասին պէտք է յիշենք ի պատիւ թէ բողոքականներ շուտով կը համակերպէին, և կընդունէին պատրիարքին առաջարկներ, բայց ոչ նոյնպէս կաթօլիկները, և յատկաբար կրօնաւորական միաբանութեանց ձեռքով կառավարուած որբանոցները:

3005. ՎԵՐԱԸՆՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Չանց ընելով ուրիշ վարչական և կրթական և մատակարարական թէպէտ կարևոր խնդիրներ, քանի մը խօսք աւելցնենք սահմանադրութեան վերաքննութեան մասին: Ըսինք արդէն թէ Չամիչեան-Նուրեան վարչութեան առաջարկութեամբ, կառավարութիւնը պատրիարքական ընտրութենէ առաջ կուզէր ընել վայն, և թէ Տատեանի միջամտութեամբ, և աստիճան մը

երաշխաւորութեամբ ընտրութենէն ետքին թողուած էր, և այսպէս ալ երեսփոխանութենէ ընդունուած և վաւերացուած էր: Ապգին մէջ ալ կար մաս մը, որ սկիզբէն ի վեր վերաքննութեան պաշտպան կանգնած էր, և այս պատեհի յարմար կը կարծէր նպատակին հասնելու: Օրմանեան, առանց սահմանադրական սկզբունք մերժելու, 1860ի և 1863ի սահմանադրական ձևերուն համակիր մը չէր, բայց այս անգամ վերաքննութեան ձեռնարկուելուն համակերպող չեղաւ, ոչ թէ եղածը յարգելուն և փոփոխութիւնը կորուստ կարծելուն, այլ իբրև տիրող գրութեան աւանդապահ իր ձեռքով վայն վերջացուցած չըսուելու, և ապգին վնասակար գործ մը ըրած չկարծուելու համար: Օրմանեան համոզուած էր թէ կառավարութեան պահանջածը ոչ թէ վերաքննութեամբ բարեփոխել էր, այլ իրեն դժպիսի երևցած սահմանադրութիւնը խափանել, սկզբունքն ալ միասին ջնջել, որով ինչ որ ալ ապգէն առաջարկուէր, կամ ետ պիտի չի դառնար, կամ թէ անձանայ ըլլալու չափ խեղաթիւրուած պիտի ըլլար, այն ալ շատ երկար պայմանաժամի մէջ. իսկ միւս կողմէ եթէ անգամ մը ապգին կողմէն նոր առաջարկ ներկայանար, նովին իսկ ապգը իւրովի եղածէն հրաժարած պիտի սեպուէր: Օրմանեան չէր ուզեր այդ կեղտը իր վրան առնել, բայց որովհետև բան մը չընել անհնար էր, խոստացուած յանձնառութեանց և տրուած որոշմանց պատճառով, ուստի լոկ վարչութեան անդամներով վերաքննիչ յանձնաժողով մը կազմել տուաւ, ընդարձակ ուսումնասիրութիւն բացաւ, առաջնորդներէ և փորձառու անձերէ կարծիքներ ու տեսութիւններ ու ծրագիրներ ուզեց, և քանի անգամ որ որ կառավարութենէ տեղեկութիւն կուզուէր, ուսումնասիրութիւններ կը շարունակէն և չեն աւարտած պատասխանը կու տար, և այսպէս կրցաւ մինչև երկու տարի գործը երկարաձգել, և յանձնաժողովի նիստերը պատահաբար ձգձգելով և գործը եւրակացութեան չհասցնելով. թէպէտ մասնաւոր որոշումներ և յօդուածներու վրայ փոփոխութիւններ կը կատարուէին, և քարտուղարի ձեռքո պատճէններ կը պատրաստուէին միշտ նոր դիտողութեանց ենթարկելու պայմանով: Տատեան և Ասլանեան ատենապետներ, առաջինը իբր խոստումին և երաշխաւորութեան տէր, և երկրորդը իբր վերաքննութեան հնօրեայ պաշտպաններուն գլուխ, մերթ ընդ մերթ գործը մղելու առաջարկներ կը բերէին, սակայն ներքնապէս անոնք ալ Օրմանեանի տեսութեանց համամիտ էին և գործը երկարելուն կը գործակցէին, միշտ գոնէ եղածը պահելու և իրենց ձեռքով բան մը վրայ չտալու նախանձաւորութեամբ: Այդ ընթացքով Տատեան իր խոստումին հանդէպ արդարացած եղաւ, երեսփոխութեան որոշումն ալ անարգուած չեղաւ, և գործը երկարելով և յետաձգելով մոռացութեան տալու և մէկ կողմ թողլու ձևն առաւ (ՕՄԱ. 31): Ընթացքին հետևանքն եղաւ, որ պատրիարքական հրովարտակ ստանալու հետամտութիւն չեղաւ, և Օրմանեան մինչև վերջը առանց անձնական հրովարտակի պաշտօն վարեց, հին փառաւոր հրովարտակ մը ի տես ցուցադրելով: Պատճառը սահմանադրութեան խնդիրն էր, զի տեղեկութիւն առնուած էր, թէ պատրաստուած պատճէնին մէջ սահմանադրութեան կէտը զեղչուած էր, ուստի այն զեղչը պաշտօնական չդարձնելու համար հրովարտակը չառնել նախադասելի սեպուեցաւ: Արդէն պատրիարքական պաշտօնը իր աւանդական ձևն ունէր: Օրմանեան ալ ամէն ձևակերութիւններով պատրիարք ճանչցուած էր, և եթէ երբեք հրովարտակ յիշել հարկ ըլլար, պատրիարքական հրովարտակներ կը յիշուէին փոխանակ ըսելու (ՕՄԱ.32). հակառակ կողմէն ալ դիտողութիւն ընող չեղաւ, և այս կերպով վերաքննութեան գործը մինչև 1899 յետաձգուեցաւ, երբ անգամ մըն ալ նորոգուեցաւ, ինչպէս իր կարգին պիտի պատմենք:

3006. ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Սահմանադրութեան հանդէպ յայտնուած մտայնութիւնը անոր մասին պետութեան կողմէն ցուցուած հակառակութիւնը, չէր արգիլեր սակայն որ Օրմանեանի պատրիարքական պաշտօնավարութիւնը սահմանադրական պահանջից համաձայն չըլլար: Սահմանադրական

ձևերուն ու պայմաններուն մէջ կա՛ն կէտեր, որոնք առտնին կը գործադրուին, և արտաքին յարաբերութեանց տեղ չեն տար. կա՛ն ալ կէտեր, որ հրապարակին վրայ կերևան և պետական պաշտօնավարութեանց մտադրութիւնը կը գրաւեն: Առաջինները անթերի կատարուեցան, երկրորդներուն պոզաւորութիւն գործածուեցաւ. բայց բարեբախտաբար այ դվերջինները քիչ էին, և մէկէ ու երկուքէ անդին չէին անցներ: Առաջինն ու գլխաւորը կեդրոնի երեսփոխանութեան գումարումներն էին, որ բացարձակապէս արգիլեալ էին, և առանց յատուկ արտօնութեան հնար չէր հրաւիրել, և այն ալ շատ բացառիկ կերպով կը ստացուէր, ինչպէս եղաւ 1894-ի և 1896-ի պատրիարքական ընտրութեանց համար: Երկրորդն էր թաղական ընտրելու համար քուէարկութիւնը, որ ներքին շարժումներու առիթ կը ծայէր, և նոյնիսկ թաղեցիներ ալ ձանձրութեանց չմատնուելու համար քուէարկութենէ կը խուսափէին: Առաջինին պէտք էր անհրաժեշտաբար համակերպիլ, ինչպէս նախորդներն ալ համակերպած էին. իսկ երկրորդին մասին պոզաւորութեամբ վարուիլ, պարագաները պննելով ու հսկելով արտօնել, իսկ պակասները լրացնել քաղաքականէ անուանուած առժամեայ թաղականներով: Այս ձևը որուն այս անգամ աւելի ընդարձակ տեղ տրուեցաւ, նախնի ժամանակներուն մէջ ալ անսովոր չէր, որ է ըսել ըստ ինքեան սահմանադրութեան հակառակ չէր: Իսկ իրապէս աւելի ալ օգտակար կրնար ըսուիլ: Թէ՛ սկզբունք և թէ՛ փորձառութիւն հաստատած են որ մատակարարութեան գլուխ կեցողներ պէտք է ընդունակութեամբ և համերաշխութեամբ օժտուած ըլլան, որոնք յառաջ չեն գար ժողովրդական ուղղակի քուէարկութիւններէն, որոնց մէջ շահ, կիրք, կուսակցութիւն և անձնականութիւն մեծ դեր կը խաղան. իսկ այս անտեղութիւններ նուազ են պաշտօնական անուանումներու մէջ, գոնէ մէկ ուղղութեամբ կապմուտ չեն իսկ քուէով ընտրուածները աւելի տևական եղած են: Դիտելու կէտ մըն է նաև որ բոլոր սահմանադրական օրէնագրութեանց մէջ ընդունուած չէ մատակարար մարմինները ուղղակի ժողովրդական քուէով ընտրել, ինչ որ պագային սահմանադրութեան տկար կողմերէն մէկն է: Ըստ այսմ աւելի յաճախ պաշտօնական անուանումներով առժամեայ թաղականներ առնուեցան, թէպէտ քուէարկութիւնը իսպառ չխափանուեցաւ, և յարմար պարագաներուն թոյլատրուեցան, դժբախտաբար առանց օգուտ մը յառաջ բերելու, այլ լոկ օրէնքին խափանուած չըլլալը պագնելու ծառայեց: Իսկ պատրիարքարանի ներքին տեսուչ խորհուրդները և բոլոր յանձնաժողովները ըստ օրինի անուանուեցաւ և գործեցին, բացառութիւն ըլլալով քանի մը հատերը, այն ալ նախորդ պատրիարքներու ժամանակէն մուծուած կարգադրութեանց շարունակութեամբ: Ելամտից հոգաբարձութիւնը կանուխէն ջնջուած և տեսչութեան փոխուած էր, նոր վարչութիւնը հոգաբարձութեան ձևը նորոգեց, և քանի մը անգամ ընտրութիւններ ըրաւ, բայց դժբախտաբար դրամական անճկութեան պատճառով յանձնառուներ չգտնուեցան, և վերջիվերջոյ վարչական յանձնախումբի մը յանձնուեցաւ պատրիարքի նախագահութեամբ: Կտակաց և վանօրէից խորհուրդներ հինէն խափանուած էին, պի վանքեր մեծաւ մասամբ գաւառական վարչութեանց յանձնուած էին, և կտակներն ալ նոր խնդիրներ չէին ներկայեր այսուհանդերձ անոնց գործերը բաշխուեցան և վարչական տեսակէտէն կրօնականի ու հաշուական տեսակէտէն տնտեսականին յանձնուեցան: Բերայի ու Ղալաթիոյ կալուածոց հոգաբարձութիւնները յատուկ խնամակալութեանց ձեռքը թողուեցան, ինչպէս որ 15 տարիներէ ի վեր կը գործադրուէր, և այդ կարգադրութիւնն ալ նոր վարչութեան վերագրելի չէր: Իսկ գաւառներու մէջ ընտրութիւններ ու քուէարկութիւններ և ժողովներ մտադրութիւն չէին հրաւիրեր, որով անարգել հրահանգուեցան և գործադրուեցան ընդհանուր ժողովներու ընտրութիւններ ու գումարումներ և գործողութիւններ, առաջնորդաց ընտրութիւններ և թաղականաց կապմութիւններ սահմանադրական կանոններու համաձայն: Հետևաբար համարձակ հնար է

հաստատել թե պատրիարքարանը իւր ներքին ընթացքին մէջ փոփոխութիւն չկրեց. իսկ արտաքին գործողութեանց պատկանեալ պակասը ոչ շատ էր և ոչ մեծ եղաւ (ՕՄԱ.33-34): Վարչական ժողովներու և տեսուչ խորհուրդներու արձանագրութիւնները, պաշտօնական թղթակցութեանց տոմարները, և կառավարութեան մատուցուած ծանուցագիրներն ու յիշատակագիրներու պատճէնները լիովին կը հաստատեն այդ կէտը: Կեդրոնի երեսփոխանական ընդհանուր ժողովներուն մասին ալ աւելորդ չսեպուի յիշեցնել, թէ սահմանադրական յօդուածով անոր նիստերը երկտարեկան ըսուած են (ՍՀՄ.40) և ոչ երկշաբաթական: Գործոց ընթացքը հանրութեան գիտակցութենէ չծածկելու համար, պատրիարքը սովորութիւն ըրած էր Ծնունդի ու Զատիկի շնորհաւորական համախմբութիւնները կատարեալ համարատուութեան վերածել, յաջողն ու ձախողը պատմելով ընդարձակ ատենաբանութեամբ:

3007. ՄԻԱՅԵԱԼ ՈՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ

Վերջին տարիներու խառնակ և շփոթ կացութիւնը իր տխուր ազդեցութիւնը տարածած էր ազգային հաստատութեանց վրայ ալ, թէպէտ ոչ ամէնքը միևնոյն պատճառով և միևնոյն կերպով: Գաւառներու կրթական գործին համար աշխատող ընկերութիւններ, Միացեալը մանչերու և ԱԱԿգանուէրը աղջիկներու ճիւղին, իրենց դպրոցները կորուսած էին կոտորածներու և թալաններու պատճառով, և՛ պէտք էր ամենայն ինչ նորէն հիմնել և կարգադրել, սակայն արգելք կըլլար պետական հրամանը որ ընկերութեան ձևով ոչ մի ձեռնարկ չէր ընդունել և չէր թոյլատրել: Հետևաբար հարկ եղաւ Միացեալի գործունէութիւնը վարող ընկերական տնօրէն ժողովը պաշտօնական հոգաբարձութեան վերածել (97. ՃԷԲ. 3767) որչափ ատեն որ կեդրոնին մէջ տրամադրելի միջոցներ կային: Բայց երբոր անոնք ալ սպառեցան, ուղղակի նպաստից ձեռնարկին դպրոցական ճիւղին խառնուեցան, ինչպէս այս մասին Օրմանեանի պատրիարքութեան վերջը պիտի խոսինք (3003): Կեդրոնին մէջ յատուկ մտադրութեան արժանի ձեռնարկը Ղալաթիոյ Կեդրոնական Վարժարանն էր, որ յատուկ հալածանքի ռարկայ եղած էր, իբրև թէ յեղափոխական սկզբանց և գործունէութեան օրրան եղած ըլլար. այդ հաստատութիւնը որ 1889-ին հաւատարմութեան դպրոց անունով ողջունուած էր կայսեր կողմէ եկող թիկնապահապետ Կօրավարին բենով: Այդ կասկածին տեղի տուած էին աշակերտներէն ոմանց կասկածելի խումբերու պատկանիլը, և նախորդ տեսուչ Մինաս Չերապի Երոպա քաջուիլը և լրագիր հրատարակելը, և վերջին տեսուչին Յարութիւն Մոստիչեանի՝ Իվմիրլեանի գործակցած ըլլալը: Վարժարանը գոցուած էր, խնամակալներէն բանտակուածներ կային, որոնք թէպէտ ներումով արձակուեցան սակայն գործի չդարձան: Այսուհանդերձ վարժարանը փակելու հրաման եղած չէր, և ազգային կեդրոնական մը ունենալու առաւելութիւնը ձեռքէ հանելու չէր, ուստի նոր վարչութիւնն ու իր նախագահը ամէն ջանք ըրին որ խնամակալութիւն մը հաստատուի և վարժարանը բացուի որևէ կերպով ալ ըլլայ, բաւական էր որ գոյութիւնը դադարած չըսուի: Այսպէս պահուեցաւ Կեդրոնականի գոյութիւնը, և յաջորդաբար կատարելագործումը և վարգացումը ստացաւ նախնականին համահաւասար կերպով:

3008. ԴՊՐԵՎԱՆՔ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԱԼ

Աւելի վտանգուած էր Արմաշու Դպրեվանքը, որուն նիւթական միջոցներն ալ իսպառ պակասած էին, և Օրմանեանի ու Դուրեանի հեռանալով և հրաժարելով ամբողջ կազմն ալ լուծուած էր: Թերևս ուրիշ պատրիարքի ձեռքին տակ Դպրեվանքը բոլորովին փակուէր, սակայն Օրմանեան պատրիարքի նուիրական պարտք էր Դպրեվանքը վերակենդանացնել: Իրեն մեկնած պահուն փոխանորդութեան պաշտօնը յանձնած էր Արմաշու հին միաբաններէն Մամբրէ վարդապետ Նալպանտեանի, իսկ մնացած աշակերտներուն տեսչութիւնը նորահասներէն Զաւէն վարդապետ

Տէր-Եղիապարեան, և անոր ալ Կ. Պոլիս գալուն առթիւ՝ Աղան վարդապետ Համամճեանի: Սակայն ասոնցմով հնար չէր Դպրեվանքի կազմը վերանորոգել, և Դուրեանն էր միակ անձը, որուն հնար ըլլար գործը վստահիլ: Սակայն նա ալ վարանոտ էր ապագային վրայօք և թերահաւատ՝ կարևոր միջոցներուն մասին: Օրմանեանի հարկ եղաւ ամէն միջոցներով ազդել նորա վրայ և ամէն կերպով ապահովել կենցաղական միջոցներուն հայթհայթումը, մինչև որ յաջողեցաւ համոզել, կրօնական ժողովոյ ատենադպրութենէն չհրաժարելով Արմաշ երթալ 1897 Ջատկին, վերատեսչութեան պաշտօնով, իսկ սեպտեմբերին փոխվանահայրութիւնն ալ աւելցնելով, իրեն կատարեալ յաջորդ ընել, որով սեպտեմբեր 24-ին Արմաշու առաջնորդական աթոռը բազմեցաւ (97.ՃԷՐ.3722): Միակ տարբերութիւնն այն էր որ մինչ առաջին պատրիարքներ Դպրեվանքի վանահայրութիւնը իբր պատուոյ տիտղոս կը պահէին և ամենայն ինչ փոխ վանահօր գործունէութեան յանձնուած էր, Օրմանեանի հարկ եղաւ իբր վանահայր հեռուէն ալ գործել, պատշաճը հրահանգել, խնդիրները լուծել, միջադէպները հարթել, և գլխաւորապէս նիւթական միջոցներ հայթհայթել և յղել: Այս նպատակով 20 որբերու դասարան մըն ալ բացուեցաւ Դպրեվանքին մէջ, որոնք ընտրուեցան Կ. Պոլիս բերուածներուն ուշիմներէն, և նպաստից սնտուկէն ալ լիովին նպաստներ որոշուեցան, տիպար որբանոց մը կազմելու նպատակով: Իր պաշտօնին պահանջներուն և իր անձնական արդիւնաւորութեան հիմամբ, միւս տարին 1898 հոկտեմբեր 25-ին, Եղիշէ Դուրեան՝ Եպիսկոպոսութեան ալ բարձրացաւ Դպրեվանքի անունով, և վերանորոգեալ Դպրեվանքը հետզհետէ նոր ընթացաւարտներ ընծայեց, որոնցմէ վեցը 1898 օգոստոս 30-ին Կ. Պոլիս գալով սարկաւագութեան աստիճան ստացան պատրիարքին ձեռնադրութեամբ: Առաջին հասնողներէն մեծ վիճակներու մէջ փոխանորդներ դնելու գաղափարը (3004) ընթացք չունեցաւ, զի նոյն իսկ նշանակեալ առաջնորդներ չուզեցին փոխանորդներ ունենալ, զորս թերևս իրենցմէ աւելի վարճացեալ կը նկատէին. ուստի որոշուեցաւ պարբերաբար պատրիարքարանի մէջ գործածել զանոնք անձնական քարտուղարի պախտօնով, և պահ մը վարչական գործող ընթացքին ընտելանալէն ետքը վիճակներու իբր տեղապահ զրկել, և մինչև իսկ կարևորագոյն վիճակներ, Կարին, Տրապիզոն, Մուշ, Արաբկիր, Շապին, Ճանիկ, վստահորէն անոնց յանձնուեցան, և տեղապահութեամբ գացողներ պաշտօնին մէջ յաջողելով, շուտով առաջնորդ ընտրուեցան: Պաշտօնավարութեան ելլալուն առթիւ առաջին վեցերուն Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան ալ տրուեցաւ 1897 սեպտեմբեր 21-ին (97. ՃԷՐ. 3710), իսկ երկրորդ դասարանի նորընծաներէն ալ, Սարկաւագ Վարդապետի, Ներսէս Շնորհալիի, Յովհաննէս Երզնկացիի, Գրիգոր Մագիստրոսի և Սիւնեաց Դպրոցի մատենագրութեանց վրայ իրենց աւարտաճառերը լրացնելով (97. ԱՐՐ. 527) հետզհետէ վարդապետութեան աստիճան ստացան և պաշտօններու անցան: Հիներու կողմէ ցուցուած դժկամակութեան հանդէպ իսկապէս գնահատելի և օրնակելի եղաւ դպրեվանքի վարդապետներուն գաւառական պաշտօնեաներու նուիրուած յօժարակամ և անձնուէր և արդիւնաւոր աշխատութիւնը: Անցողակի յիշատակենք թէ Օրմանեանի Արմաշի մէջ ձեռնադրած եօթներուն (2990) և չորսերուն (2996) երկուք ալ աւելցան Դպրեվանքի աշակերտներէն, զորս Կ. Պոլսոյ մէջ ձեռնադրեց 1897 յունուար 19-ին և սեպտեմբեր 28-ին Գնէլ և Տիրայր անուններով, և Մկրտիչ մըն ալ քահանայութեան մէջ այրիանալով՝ վեղար ստացաւ իբրև Դպրեվանքի աշակերտ: Այս 14-երուն յաջորդները Դուրեան Եպիսկոպոսէ ձեռնադրուեցան իրենց կարգին:

Պարագայ մը ևս յիշենք, որ իր պարզութեան մէջ ժամանակին հանգամանքը և վարչութեան հոգին լաւ կը պատկերացնէ: Բաւական ժամանակէ ի վեր հայ առևտրականներ սկսած էին հաստատուիլ Եւրոպիոյ պանապան կեդրոնները, Մանչեսթըր, Փարիզ, Մարսելիա, Անվերս, ևս և հիւսիսային Ամերիկիոյ քաղաքները, որոնք ընդհանրապէս Տաճկահայեր էին և անոնց հոգևոր պէտքերը Կ. Պոլսոյ պատրիարքարանին կողմէն կը հոգացուէին, և արտասահմանի գաղութներ Կ. Պոլսոյ թեմերը կը նկատուէին, որոնց մէջ հայ եկեղեցիներ ալ սկսած էին շինուիլ, ինչպէս Անգղիոյ Մանչեսթըր, Ամերիկոյ Ուսթըր և Գաղղիոյ Փարիզ, և ուրիշ քաղաքներ: Այս գաղութներ որ առաջ լոկ խոհական վաճառականներէ կը կազմուէին, վերջին շփոթութեանց պատճառով հետզհետէ բազմամարդացած էին տաճկահայ փախստականներով, կուսակցական գործիչներով և արկածախնդիր պանդուխտներով, ևս և ռուսահայ նմանիներով: Արդէն կուսակցական կեդրոններն ալ Եւրոպիոյ մէջ էին և հոն կը հրատարակուէին շարժումներ գրգռող և միտքեր յուզող պարբերականներ, որոնք բնական էր որ օսմանեան արքունիքին մտադրութիւնը հրաւիրէին իրենց վրայ, և խափանելու համար մինչև իսկ պետական նպաստներով խրատատու պատուիրակներ և շահելու աշխատողներ կրկուեցան Կ. Պոլիսէ, թէպէտ բնաւ արդիւնաւորութիւն և յաջողութիւն չունեցան: Նոր վարչութեան գործի գլուխ անցած ատենը այդ կացութիւնը բուռն ու սաստիկ աստիճանի հասած էր, ինչպէս հնար է քաղել կոտորածներու և պանոնք գրգռողներու մասին տրուած համառօտ տեղեկութիւններէն: Արքունիքը քաջալերուած վարչութեան խոհական ընթացքէն՝ սկսաւ անկէ պահանջել, որ կուսակցական կեդրոնները խափանէ, գործիչները շահի կամ զսպէ, մէկ խօսքով անհետ ընէ ազգին մէջ մուծուած և արտասահմանէ եկած շարժումի հոգին: Օրմանեան գործին անհնարութեանը գիտակ՝ ջանաց միշտ իրմէ հեռացնել այդպիսի յանձնառութիւն մը, թէպէտև Տատեան ատենապետ մինչև աստիճան մը միտեալ էր յանձնառու ըլլայ, եթէ արքունիքէն դրամական միջոցներ և շնորհներու խոստումներ առատապէս ապահովուէին: Այդ կէտին վրայ Օրմանեան և Տատեան համամիտ չկրցան ըլլալ, զի պատահական պարգևներէ օգտուելու միտքը չկրցաւ ներգործել Օրմանեանի վրայ: Օրմանեան միանգամ ընդմիշտ գործը վրայէն նետելու և պատասխանատուութենէ վերծ մնալու համար սկսաւ պատասխանել թէ ինքն Թուրքիոյ պատրիարք ըլլալով՝ արտասահմանի վրայ ներգործելու և ազդելու միջոցներ չունէր: Ըստ այսմ ալ կանխած և Խրիմեան կաթողիկոսի հաղորդած էր, թէ որչափ ալ մինչև վերջի ատեններ Եւրոպիոյ և Ամերիկոյ նոր գաղութներուն հոգերը Կ. Պոլսոյ աթոռէն նայուած էր, սակայն պատահական և առժամեայ եղած էր, երբ գործը կարևորութիւն ալ չունէր: Բայց քանի որ գաղութները աճած են, և Եւրոպա ու Ամերիկա առանձինն առաջնորդութիւններ ըլլալու կարևորութիւնն ստացած են, այլևս Մայրաթոռոյ կը պատկանի անոնց հոգը ստանձնել, զի իր աթոռին իրաւասութիւնը Թուրքիոյ երկիրներով սահմանափակուած է, և անկէ դուրս չի կրնար օրինաւորապէս իրաւունք գործածել: Խրիմեան կաթողիկոս անհակառակ հաճեցաւ այդ առաջարկութեան և իսկոյն Եւրոպիոյ և Ամերիկոյ առաջնորդութիւնները նուիրագործեց, և Օրմանեան այլևս ազատ մնաց Եւրոպիոյ և Ամերիկոյ գործերուն և շարժումներուն և կուսակցութեանց վրայ հակակշիռ գործածելէ կամ պատասխանատուութիւն ունենալէ, և այս եղաւ մինչև վերջ իր պատասխանն ու չըքմեղանքը որևէ առաջարկի կամ մեղադրանքի մասին, որ առքունեաց կողմէն իրեն կը հաղորդուէր: Խրիմեան կաթողիկոս իրեն եղած առաջարկը ընդարձակելով Ռումինիոյ և Պուլկարիոյ վիճակներն ալ ուղղակի իր իրաւասութեան ներքև անցնելու սկսաւ, որոնք հին ատեններէն Կ. Պոլսոյ կապուած էին, և Կ. Պոլսոյ 45 վիճակներուն մէջ կը հաշուուէին: Այս երկիրներէ դուրս կար Սուչավայի թեմը, Աւստրիոյ Պուքովինա նահանգին մէջ, որ դիւրաւ թողուեցաւ Եւրոպիոյ նորահաստատ առաջնորդութեան,

ինչ որ հնար ընել Պուլկարիոյ համար, և պայն Թուրքիայէ պատել, իբր պի օսմանեան գերիշխանութեան ներքև կը մնար, և Կ.Պոլսոյ աթոռին անկէ ձեռք քաշելը քաղաքագիտական նշանակութիւն կառնէր: Ուստի ըստ այսմ լուր տրուեցաւ Մայրաթոռոյ, և նա ալ ներկայացուած տեսութիւնը յարգելով Պուլկարիայէ ձեռք քաշեց: Ռումանիոյ մասին լուր առնուեցաւ թէ տեղական կառավարութիւնը չէր ուզած ճանչնալ Էջմիածինէ յղուած փոխանորդը, ուստի հարկ եղաւ Կ. Պոլսոյ դեսպանատանհետ բանակցութեան մտնել և բացատրել թէ ինչպէս Ռումանիոյ անկախ պետութիւն հռչակուելովը և Թուրքիայէ պատուելովը Ռումանիոյ հայեր ուղղակի Էջմիածինէ իրաւասութեան անցած կը նկատուին: Դեսպանը հարկ սեպեց իր նախարարութեան դիմել և տրուած բացատրութիւնները հաղորդել, սակայն ռուսական կառավարութիւնը չուզեց ընդունիլ Էջմիածնի իրաւասութիւնը, ռուսական միջամտութեան առթիւ նկատելով, և պատասխանեց թէ կը սիրէ հին կապերն ու սովորութիւնները պահել իրեն հպատակ Հայոց համար: Ըստ այսմ ալ Մայրաթոռոյ ծանուցուեցաւ և Ռումանիա կապուած մնաց Կ. Պոլսոյ աթոռին: Իսկ Եւրոպիոյ առաջնորդութեան մնացին Անգղիա, Գաղղիա, Բելգիա, Հելլենտիա, Աւստրիա, ուր հայ գաղութներ կային, և պատահաբար եթէ ուրիշ տէրութեանց մէջ ալ Հայեր գտնուին: Առաջնորդանիստ ճանչցուեցաւ Փարիզ. իսկ Ամերիկոյ համար Ուսթը առաջնորդանիստ, և Միացեալ Նահանգաց կամ Միացեալ պետութեան հիւսիսային երկիրները իբրև սահման իրաւասութեան, և պատահաբար Հարաւային Ամերիկոյ հանրապետութիւններն ալ:

3010. ՄԵՐ ՀԱՐՑ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ

Անգամ մը ակնարկեցինք թէ կարօտներու և որբերու համար կաթոլիկներէ ընձեռուած նպաստները, իբր խայծ կը ծառայէին կրօնական որսորդութեան տարածելու: Ինչ որ առաջ քողարկեալ և վարպետ կերպով կը գործուէր, հետզհետէ սկսաւ համարձակ ընդարձակուիլ և գրեթէ պաշտօնապէս հաց ջամբած ատեննին՝ փոխարէն պահանջեցին անոնց լոյս հաւատքը, և դրամ տուած ատեննին եկեղեցին փոխել պայման դրին, և այնչափ ալ յառաջեցին որ ուր հաւատացեալք այդ պայմանը չգործադրեն, սկսան նաև դատաստանու և բռնի յետս առնուլ տուած ողորմութիւննին: Այս գործը աւելի աչքառու դարձաւ Վանայ մէջ, ուր մաս մը ժողովուրդ ալ յայտնապէս կաթոլիկ եղաւ Կլորթաղի մէջ, Լիմայ միաբան Յակոբ Սարգիսեան վարդապետի մը գլխաւորութեամբ: Երբ այդ իրողութիւնները բաւական պրոյցներու պատճառ եղան, յանկարծ իբրև դարման և արդարացում փոքրիկ տետրակ մը հրատարակուեցաւ հռոմէականներու կողմէն 1899 տարւոյ մարտին սկիզբը, Մեր Սուրբ Հարց դաւանութիւնը անունով, միակ նպատակ ունենալով պապական գրութիւնը պաշտպանել, և Աւետաանէն և հայ սուրբ հայերու դիրքերէն քաղուած վկայութիւններով հաստատել, թէ Հայ Եկեղեցին պապութիւնը ճանչցած է, և Գրիգոր Լուսաւորչէն սկսեալ մինչև Ներսէս Լամբրոնացի ամէնն ալ հռոմէական և հռոմէադաւան եղած են, և թէ հայերն ալ երբ հռոմէականութիւն կընդունին անոնց հետևած կըլլան (ԴԻՆ.2): Տետրակին հեղինակին կը պրուցուէր Աշձեան Մկրտիչ վարդապետը, սակայն հաւանակագոյն էր որ նոյն իսկ Ստեփանոս Ապարեան կաթողիկոս-պատրիարքնին եղած ըլլար բուն հեղինակը, գոնէ ծրագիրը տուողը, որ քիչ ետքը յանկարծ հիւանդացաւ և ապրիլ 19-ին մեռաւ: Պատրիարքի և մանաւանդ Օրմանեան պատրիարքի անհնար էր լուռ մնալ Հայ Եկեղեցւոյ դէմ եղած անպատկառ անարգանքին դիմաց, ուստի անգամ մը Բերայի մէջ ոգևորեալ քարոզ մը խօսեցաւ Հայ Եկեղեցւոյ վարդապետութիւնը բացատրելով, և մարտ 10-ին կոնդակ մըն ալ հրատարակեց, որուն մէջ ընդհանուր գիծերով կը հերքէր Մեր Սուրբ Հարց դաւանութեան մասին հրատարակուած սխալ ու մոլար տեսութիւնները, կը վզուշացնէր ժողովուրդը օտարներու խաբէութենէն և չարաշահ ընթացքէն, և կը յանձնարարէր ամէն աստիճանէ պաշտօնէից արթնութեամբ հսկել ժողովուրդին

վրայ: Իր նպատակն էր յատուկ հրատարակութեամբ մըն ալ միառմի հերքել հռոմէականաց տետրակին անխիղճ աղաւաղումները և մտացածին մեկնութիւնները: Սակայն երբոր կուպէր տպագրել տալ պատրաստուած պրակը, գրաքննութիւնը չէր ներեր, արգելքը արդարացնելով, թէ մտադրութեամբ մը արտօնուեր է առաջին տետրակը, և եթէ պատասխանն ալ արտօնուի երկու հասարակութեանց մէջ խնդիրը պիտի երկարաձգուի և հակառակութիւն ու գժտութիւն պիտի աճի: Բայց պէտք չէ մոռնալ որ գրաքննութեան պաշտօնեաներէն մէկն ալ Աշճեան վարդապետի եղբայրը Միքայէլ Աշճեանն էր: Իսկ Օրմանեան որ չէր ուզեր տեղի տալ և յարձակման դիմաց լռելու ստիպուած կարծելիլ, ուստի օգուտ քաղեց պաշտօնական կոնդակներու առանց գրաքննութեան հրատարակուելու թոյլտուութենէն, և տպուելիք բացատրական պրակը կոնդակի ձևի վերածել, և մանր գիրով ու սեղմ շարուածքով մեծ լրագրի մը չորս երեսներուն տարածութեամբ և գրքոյկի մը պարունակութեամբ կոնդակ մը հրատարակեց 1899 մայիս 24-ին, և մայրաքաղաք ու գաւառներ ցրուեց: Այս կոնդակով նախապէս կը նշաւակէ ողորմութեան ձևի ներքև դաւանակից որսալու անհաճ ձեռնարկը (ԴԻՆ. 1-2), ընդարձակօրէն կը բացատրէ Պետրոսի մասին հռոմէականներուն յառաջ բերած աւետաբանէ վկայութիւնները (ԴԻՆ. 3-5), կը հերքէ Լուսաւորչի Հոռոմ երթալու, Սեղբեստրոսէ աստիճան և շնորհ ընդունելուն, և Դաշանց թուղթին պրոյցները (ԴԻՆ. 5-7) և կարդաւ կը բացատրէ Ներսէս Մեծէ, Սահակ Պարթևէ, Մասրոպ Վարդապետէ, Եղիշէէ, Խորենացիէ, Մանդակունիէ և չարականներէ առնուած կտորները (ԴԻՆ. 7-10), նմանապէս Անձևացիէ, Նարեկացիէ, Շնորհալիէ և Լամբրոնացիէ քաղուած վկայութիւնները (ԴԻՆ. 10-11), ուղիղ իմաստին բերելով, և ընդհանուր տեսութեամբ մը կը փակէ (ԴԻՆ. 12): Ալ անկէ ետքը հռոմէականներու կողմէ դիմադարձ հրատարակութիւններ չեղան և միջադէպը փակուեցաւ, հարկաւ Ազարեանի մահն ալ իր դերը ունեցաւ այս պարագային մէջ:

3011. ՆԵՐՔԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՔ

Ներքին կարգադրութեանց մասին ալ անտարբեր չէր կրնար մնալ Օրմանեան, որ անդստին մանկութենէն ամէն բան կարգով ու կանոնով գործելու վարժութիւնն ունէր: Առաջին գործերէն մին եղաւ դիւանական ձևերը որոշ գիծերու վրայ հաստատել, զորս պահ մը բերանացի աւանդելէ ետքը, 1899 մայիս 1-ին գրաւոր հրահանգի վերածեց: Դիւանի գործերը ինը ուրոյն ճիւղերու բաշխուեցան, 1. Վարչական, 2. Յարաբերական, 3. Կրօնական, 4. Արձանագրութեան, 5. Ազգահամարի, 6. Ելևմտից, 7. Գործակատարութեան, 8. Փոխանորդարանի և 9. Անձնական դիւաններու անուններով, որոնց գրծառութիւնները իրենց կոչումներէն կը յայտնուին: Առաջին երկուքին դիւանապետներ նշանակուեցան Բարթող Թելեան և Կարապետ Խաչատուրեան, փորձառու պաշտօնեաներ. խառն և քաղաքական ժողովներու ատենագրութիւնները և պաշտօնագիրները վարչականին սեփականուեցան, տեսուչ խորհուրդներուն գործերն ալ նոյն դիւանին մէջ ամփոփուեցան, դիւանապետներէն յատուկ քարտուղարներ նշանակելով: Իսկ տաճկերէն յիշատակագիրներ և ծանուցագիրին յարաբերականին յանձնուեցան: Միւս չորս ճիւղերուն գլուխ դիւանական տեսուչներ դրուեցան, Խորէն քահանայ Փէհլիվանեան, Մկրտիչ Մելիքեան, Սեպուհ Բուլատեան և Միհրան Չոպանեան, վերջինը այս առիթ ելևմտից տեսուչի պաշտօնը թողլով ելևմտից հոգաբարձութեան վերահաստատութեամբը: Գործակատարութեան դիւանը կը կազմուէր գործակատարով և օգնականով, առձեռն տեղեկագիրներու համար. փոխանորդարանի դիւանին միացաւ դատաստանական խորհուրդը, իսկ անձնական դիւանի մէջ դրուեցան Դպրեվանքի շրջանաւարտները պաշտօնական գործոց ընթացքին ընտելանալու համար, և առձեռն գրութիւնները պատրաստելու, և միւս դիւաններու, յատկապէս կրօնականի օժանդակելու պաշտօնով: Իւրաքանչիւր դիւանի դիւանապետներ և գրագիրներ յատկացուեցան

գործերու պահանջին չափով: Մեծ մտադրութիւն դարձուեցաւ հասած թուղթերը արձանագրելու և պահելու, և յատուկ տոմարներ տպագրուեցան պատրիարքին կողմանէ կազմուած գործնական ձևով, իւրաքանչիւր թուղթի վրայ նմանօրինակ պիտակ մը դնելով, իսկ գացած գիրերը արձանագրել վարչական դիւանին յանձնուեցաւ առաքմանց հոգածութեամբ: Դիւանի կանոնաւորութեան ոչ միայն անձամբ կը հսկէր պատրիարքը, այլ և կարևոր խնդիրներուն գիրերը ինքն կը խմբագրէր: Դիւանական հրահանգին երկրորդ մաս մըն ալ աւելցաւ թղթակցութեանց հրահանգ անունով, և ամէն պաշտօնատուն և վիճակ և վանք և թաղ հաղորդուեցաւ, թէ ի՛նչ ոճով և ի՛նչ պարունակութեամբ պիտի պատրաստուին պատրիարքարան ուղղուելիք գիրերը, որոնք սովորաբար պատրիարքին գովաբանութիւններով, երկար ողբերով և անօգուտ երկարաբանութիւններով կը լեցուէին, իսկ իրողութեան իսկութիւնը բացատրող պարագաներ վանց կըլլային: Օրմանեան եկեղեցական բարեկարգութեան քանի մը հրահանգներ անունի ներքև կուսակրօն եկեղեցականութեան համար 30 և մայրաքաղաքի ամուսնացեալ եկեղեցականութեան համար 50 յօդուածներով ծրագիր մըն ալ պատրաստեց, և իբր ձեռագիր տպագրել տալով ուլեց որ խառն ժողովով ալ հաստատուի բայց երբ նկատեց որ անձնական տեսակէտներ վիճաբանութիւնները կընդարձակեն, լաւագոյն սեպեց վաւերացումը վանց ընել, և միայն իբրև գործնական ուղղութիւն իրեն պահեց առաջարկուած սկզբունքներն ու պայմանները: Բարեկարգութեանց առարկայ եղան նաև դպրաց դասերը, որոնց հնագոյններն են մայր եկեղեցւոյ 1719-ին, Սամաթիոյ 1720-ին, և Պալաթին 1740 ին հաստատուածները: Օրմանեան նորեր ալ կազմելու աշխատեցաւ, և հետզհետէ երևան եկան Նաուլըգաբուի, Մաքրիքէօյի, Կէտիկ-Փաշայի, Գումաքաբուի Դրսի, և հետզհետէ Բերայի և Պէշիկթաշի և Ղալաթիոյ դպրաց դասերը: Ասոնք շատցնելու մէջ ոչ միայն կը տիրէր եկեղեցական պաշտամանց կարգադրութիւնն ու պայծառացումը, այլ և ընկերակցական գրութեան օգուտը չկորսնցնելը. Վի թէպէտ ընկերութիւններ արգիլուած էին, բայց դպրաց դասերը եկեղեցիներու հովանաւորութեան ներքև դիտողութենէ վերծ կը մնային: Երբոր ասոնք բաւական թիւով շատցան և գործը ընդարձակուիլ սկսաւ, տեսնալով որ հիններուն կանոնագիրները սահմանադրական ձևերու համաձայն չեն, և նորերուն գրուածները առժամեայ են, հարկ եղաւ կանոնագիրները համերաշխ և միօրինակ ձևի վերածել, ուստի Օրմանեան ընդհանուր կանօնագիր մը ուսումնասիրեց 1903 տարուոյ վերջերը, որ կրօնական ժողովով ալ վաւերացուեցաւ 1904 փետրուար 3-ին, և գործադրութեան հրամայուեցաւ փետրուար 5-ին: Կանոնագիրը 70 յօդուածներէ կը բաղկանայ, կազմութիւն, վարչութիւն, մատակարարութիւն, պարտաւորութիւնք, երգեցողութիւն, ժողովներ, հանդէսներ, և նոր կազմակերպութիւններ գլուխներու բաժնուած: Դպրոց դասերուն շատնալուն արդիւնքը Վգալի եղաւ եկեղեցական հանդէսներու պայծառութեամբ և ժողովրդական եկեղեցասիրութեան աճելով: Յատուկ մտադրութիւն դարձուեցաւ եղանակներու ընտրութեան, կամայական ծեփծեփմանց դադարման, ձայնանիշներու կիրառութեան, և եռաձայն ու քառաձայն ոճերու հետևողութեան դպրութեան պատիւն ալ հետզհետէ բարձրացաւ, և Կարապետ Պաղտատալեան հինաւուրց և արդիւնաշատ դպրապետին յուղարկաւորութիւնը առիթ ընծայեց յատուկ հանդէս մը կազմակերպելու Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցին 1903 հոկտեմբեր 5-ին, ուր բոլոր դպրաց դասերէ 100-ի չափ դպրիներ համախմբուեցան և երգեցին, և Օրմանեան ինքն նախագահեց և դպրաց պաշտօնը բարձրացնող դամբանական խօսեցաւ (ՕՅ.ԲԻՁ.2146): Յիշենք նաև իբրև բարեկարգական յիշատակ հարսանեաց կոնդակին նոր խմբագրութիւնը 1901 մայիս 1-ին, նշանադրութեան և պսակադրութեան և հարսանեաց պարագաները կանոնաւորելու նպատակով և գործնական հրահանգներով, որոնց գլխաւորն եղաւ տուններու մէջ պսակադրութիւնը արգիլել և

եկեղեցւոյ մէջ կատարելը պարտաւորիչ ընել, որով շատ մը անվայել անկարգութեանց առջևն առնել: Այդ արգելքը յատկապէս հռչակուեցաւ 1902ի պատրիարքական կողակով: 3012. ԼԱՀԷԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Ժամանակներու կապակցութիւնը առիթ կընծայէ մեզ խօսիլ մասնաւոր հեռագիրի մը վրայ, որ թէպէտ ըստ ինքեան մեծ կարևորութիւն ունեցող պարագայ մը չըլլայ, սակայն վերջէն տրուած նշանակութիւնը կը յորդորէ այժմէն եղելութիւնը պատմել: Ռուսաց կայսրը գեղեցիկ խորհուրդ մը յղեցաւ պատերազմներու աղէտը խափանել, և այս նպատակով բոլոր պետութեանց դիմեց և համահաճութիւն կազմեց դեսպանախորհուրդ մը կատարել, որուն տեղ որոշուեցաւ Հոլանտիոյ կամ Ստորին Նահանգաց թագաւորանիստ Լահէյ մայրաքաղաքը: Դեսպանախորհուրդը միակ նիւթ պիտի ունենար պատերազմները խափանելու միջոցներուն վրայ խորհիլ և խորհրդակցիլ, առաջարկներ կազմել և որոշում կայացնելու դիւրութիւն ընծայել բացարձակ կերպով պայմանաւորուած էր իւրաքանչիւր պետութեան ներքին գործերը կամ մասնաւոր խնդիրները ոչ առաջարկի և ոչ վիճաբանութեան նիւթ ընել: Գրեթէ աշխարհի բոլոր պետութիւնները ներկայացուցիչներ յղեցին, օսմանեան պետութիւնն ալ մասնակցեցաւ յատկապէս շեշտաւով որ իր ներքին գործերը նիւթ պիտի չըլլան: Այդ պարագաները հրատարակուած և պրապարակուած ըլլալով միատեղ՝ հայ կուսակցական կեդրոններ որոշեցին հայկական խնդիրը դեսպանախորհուրդին առջև հանել և նպաստաւոր որոշում և լուծում ստանալ, և այս դիտմամբ պատրաստութիւններ և շարժումներ սկսան կազմակերպել Եւրոպիոյ և Ամերիկոյ պանապան քաղաքաց մէջ: Լուրերը Կ. Պոլիս ալ հասան և 1899 ապրիլ 14-ին, կառավարութեան կողմէ յատուկ ազարարութիւն եղաւ պատրիարքին զգուշանալ և ժողովուրդը զգուշացնել: Պատրիարքը, գործերուն ընթացքին և եղելութեանց և տեղեկութեանց հետևող՝ վստահեցուց թէ մեր մէջ այդպիսի շարժումներ տեղի չեն ունենար, միայն թէ արտասահմանիմէջ եղածներուն երաշխաւոր չի կրնար ըլլալ, քանի որ իր իրաւասութենէն դուրս կը գտնուին: Կառավարութիւնը այս բացատրութեանց վրայ նորէն Հայոց մասին գործածուած բացառիկ խստութիւնները ծանրացուց, նպատակ ունենալով արտաքիններուն հետ յարաբերութիւնները արգիլել, միանգամայն աւելի սաստիկ միջոցներու սպառնալիքներ ալ աւելցնել (ՕՄԱ. 124): Մինչ այս բանակցութիւնները կը շարունակէին, ապրիլ 25-ին լսուեցաւ թէ Պուլկարիոյ մէջ շարժումներ կը յառաջեն, որոնց մասին հնար չէր արտասահմանի համար տրուած չքմեղանքները կրկնել, քանի որ Պուլկարիա Թուրքիոյ գերիշխանութեան ներքև էր, և Թուրքիոյ պատրիարքութեան իրաւասութեան ալ ենթարկուած էր (3009): Դժուար էր հրահանգներ յղել Պուլկարիա, որոնց արդիւնք ունենալն ալ յուսալի չէր, և դատապարտելու ձևով յայտարարութիւննալ վտանգէ չէր, և խոհականութիւնը չէր ներեր այդ միջոցին դիմել: Միւս կողմէն միևնոյն ատեն վարչութիւնը նորոգելու դիմումներ կըլլային, ինչպէս ստորև պիտի տեսնենք, և խնդիրները կնճռուտել ի դէպ չէր: Ուստի անուղղակի և կցկտուր կերպով ժամանակ վաստկելու ջանքեր կը շարունակէին, երբ մայիս 7 ին լուր առնուեցաւ թէ Պուլկարիոյ Հայեր համախումբ ժողով կազմելով հայկական խնդիրը դեսպանախորհուրդին ներկայելու համար իրենց կողմէն պատուիրակ ընտրել են Փարիզ գտնուող Մինաս Չերապ գրագէտ խմբագիրը, և նա ալ յանձն առեր է դիմումը կատարել: Լուրը արքունեաց մէջ ալ ըսուած ըլլալով. պատրիարքի վրայ ստիպումներ և սպառնալիքներ սաստկացան Պուլկարահայոց գործը տկարացնելու, անոնց դիմումը քրելու և Տաճկահայոց գոհունակութիւնը վկայելու, որոնցմէ դարձեալ պատրիարքը կաշխատէր ճողոպրիլ միջանկեալ խնդիրներով և խորհելու յետաձգումներով (ՕՄԱ.125): Թերևս Չերապ ալ վերջին պահուն ետ կենար ձեռնարկէ մը, որուն առանց հետևանաց մնալը իրեն անծանօթ պէտք չէր ըլլար, մօտէն տեղեակ ըլլալով

դեսպանախորհուրդին նպատակին և պայմաններուն: Հակառակ այդ ակնկալութեանց Չերապի Լահէյ եկած ըլլալուն լուրը հասաւ: Կ. Պոլսոյ մէջ ալ խօսքեր տարածուեցան, որոնք գործեր կարծուելով, խստութիւններ սաստկացնելու պատճառ նկատուեցան: Պատրիարքի ժամավաճառութեան և ձգձգած միջոցներն ալ տակաւ կարճեցան, որոշման մը յանգելու, քայլ մը առնելու հարկը անհրաժեշտ դարձաւ. բայց ոչ հնար էր Տաճկահայոց կացութիւնը յայտնել, և ոչ ալ պաշտօնապէս ստել. հնար ալ չէր Պուլկարահայերը մեղադրել և ոչ ալ ուղղակի իրենց հետ յարաբերութեան մտնել, զի ամէնէն անմեղ բացատրութիւնն ալ կրնար գործին իսկութեան հերքում կամ մերժում մեկնուիլ: Օրմանեան բռնապատուած էր որևէ յայտարարութիւն մը ընելով կայսերական ցասումը չհջուցանել, ինչպէս ստիպուած էր որևէ հակառակ յայտարարութիւն չընել, որ ոչ միայն կացութեան իսկութիւնը ուրացած չըլլար, այլ և ինքն իրեն շարունակեալ գանգատներուն և նոյն օրեր իսկ ուղղած բողոքներուն հակասած չըլլար: Իր մտադրութիւնն էր ուղղակի դեսպանախորհուրդին անորոշ հեռագիր մը ուղղել, երբ մայիս 12ին կանուխ հեղինակաւոր աղբիւնրէ լուր առաւ թէ Չերապ 10-ին դիմած էր դեսպանախորհուրդին և չէր ընդունուած: Պատեհը կորսնցնելու չէր, իսկոյն խորհրդակցութեան մտաւ քաղաքական ժողովոյ անդամներէն և անգամ չեղողներէն ոմանց հետ (ՕՄԱ.304), և փոխադարձ հաւանութեամբ գաղղիներէն հեռագիր մը խմբագրուեցաւ, որուն իմաստն էր, թէ պաշտօնական կերպարան չենք ձանձնար այն անձանց վրայ, որոնք լրագիրներու գրածին համեմատ դեսպանախորհուրդիդ կը դիմեն հայ ազգին անունով, և անոնց դիմելն ալ չենք ձանձնար (ՕՄԱ.302): Արդ, Չերապ երկուշաբթի օր դեսպանախորհուրդին դիմելով, չորեքշաբթի առտու 12-ին պատասխան էր առած թէ իր դիմումը դեսպանախորհուրդին նպատակէն դուրս և պայմաններուն հակառակ ըլլալուն նկատի չէր կրնար առնուիլ (ՕՄԱ.313): Իսկ Օրմանեանի հեռագիրը նոյն չորեքշաբթի օր մայիս 12-ին կէսօրէն, 2,18 ժամ ետքը Բերայի հեռագրատունը ներկայացուած ըլլալուն (ՕՄԱ.311), և հեռագիրներուն կարգին և գրաքննական թոյլտուութեան պատճառներով հապիւ թէ 12-է 13 գիշերուան մէջ կրնար Լահէյ հասած ըլլալ, որով ինքնին կը հերքուէր վերջին յուշուած խնդիրը, իբր թէ Օրմանեանի հեռագիրը Չերապի մերժուելուն և հայկական խնդիրին չնայուելուն պատճառ եղած ըլլայ թո՛ղ որ դեսպանախորհուրդին էական պայմաններէն էր պատերազմի խնդիրէն վատ ուրիշ խնդիր նկատի չառնելը, ինչպէս չնայուեցաւ ամերիկաբնակ Հրէից իրենց ռուսաբնակ համապագիներուն համար կատարած դիմումն ալ (ՕՄԱ.312): Իսկ Օրմանեանի ժողովէն առաջ 12-ին ստիպողաբար տուած հեռագիրը, 14-ին ուրբաթի ժողովին մէջ վարչութեան հաղորդուեցաւ և լիագոյն հաւանութեամբ ընդունուեցաւ, թէպէտ ատենագրութեան չանցաւ, ինչպէս սովորութիւն էր այդպիսի փափուկ խնդիրները և յարաբերական դարձուածները ատենագրութեան չանցունել և հրապարակ չհանել (ՕՄԱ.297):

3013. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Նոր վարչութեան սկսւբնական շրջանի հանգրուան նշանակեցինք 1897 օգոստոս 6-ը (3002), անկէ մինչև 1899 օգոստոս նոր շրջան մը ևս կրնանք վատել, որուն մէջ պատրիարքը վարչութեան համերաշխ համաձայնութեամբ հարկ վատեց աւելի ճշդել ազգին պէտքերը և աւելի շեշտել գոհացումը տալու հարկը: Արկածալից ռուսաբնի միջադէպը գէշ աղէկ փակուած էր առանց նոր աղէտից առիթ ընծայելու, և կայսրը իր մեղմացեալ քաղաքականութեան փոխարէն կը պահանջէր արտասահմանի շարժումները և գործիչները լռեցնել և Տաճկահայոց մէջ սպրդելնին արգիլել: Պատրիարքը արտասահմանի գաղութներուն վրայ իրաւասութիւն չունենալը պնդելով մէկտեղ (3009), կը յիշեցնէր թէ ինքն իր կողմէն խրատէ և աղօթքէ վատ ուրիշ միջոց չունի, մինչ արտասահման եղողներ ոչ խրատը կը լսեն և ոչ աղօթքը կընդունին, և թէ միակ համոզիչ միջոց

կրնայ ըլլայ եթէ փորձով տեսնուի որ իր ապդեցութիւնը ոյժ մը ունի կառավարութեան առջև և իր առաջարկները կը յարգուին կայսեր կողմէն, զի ասով միայն հնար էր վստահութիւն ներշնչել իր խոստումներուն և համակերպութիւն յուսալ իր հրահանգներուն: Այդ նպատակով սկսաւ աւելի մանրամասնօրէն բացատրել արգիլուելիք անտեղութիւնները և հաստատուելիք բարեկարգութիւնները, որպէսզի հնար ըլլար անցած աղէտները մոռացնել և ապագայ բարօրութիւն յուսադրել: Այս պէտքերը հետզհետէ ներկայացուցան յատուկ յիշատակագիրներով, և ինչինչ կարգադրութիւններ ալ հրամայուեցան, ինչպէս քանդուած եկեղեցիներու համար վերաշինութիւնները որոշող խառն անդամներով յանձնաժողովներ կազմելու հրամանը, և գաւառներէ երթեկներու մասնաւոր դիւրութիւններ. սակայն ասոնք ոչ կացութիւնը կը փոխադրէին, և ոչ անկեղծ և լիագոյն գործադրութեամբ կը պսակուէին: Այսուհանդերձ վարչութիւնը չէր ուզեր խիստ ձևեր գործածել իր սահմանադրական երկու տարիի պաշտօնավարութիւնը չլրացուցած, որ 1896 նոյեմբերէն սկսելով 1898 նոյեմբերին, պիտի լրանար. այլ յարմարագոյն սեպուեցաւ սահմանադրութեան ճշդած ապրիլի վերջը պայմանաժամն ալ յարգելով (ՍՀՄ.24 և 27), երկամեայ մինչև 1899 ապրիլ 30-ը երկարել (ՕՄԱ.34) ուստի մինչև այն ատեն նոր քայլ ընել հարկ չտեսնուեցաւ (ՕՄԱ.65). բայց նխապատրաստութիւններն ալ վանց չընելու համար 1897 դեկտեմբեր 23-ին պատրիարքը ընդարձակ յիշատակագիր մը ներկայեց կայսեր, որուն մէջ 16 որոշ հատուածներով կը բացատրուէին կատարուած անտեղութիւնները և Հայոց հանդէպ գործածուած բացառիկ կարգադրութիւնները, իբրև ամփոփումն նախընթացաբար եղած դիմումներուն, որ պիտի ծառայէր իբրև լիակատար յայտնագիր փոխադարձ յարաբերութիւններու ծրագիրին: Բնական էր որ այդպիսի բազմամասնեայ առաջարկ մը իսկոյն և լիագոյն լուծում գտնել չկարենար, ուստի պատրիարք և վարչութիւն շարունակեցին խստիւ չպնդել լարը որ չբեկանի, և գործին հետևիլ հանդարտօրէն, զի 1898 փետրուարի մէջ 16 կէտերէն քանի մը հատին գոհացում կը լսուէր, ներքին երթեկի դիւրութիւն, զինուորական տուրքերու երկամեայ ներում, կարօտութեանց օգնելու համարձակութիւն, և դպրոցներ բանալու արտօնութիւն: Այդ դիմացէ դիմաց ձգձգեալ վիճակը տևեց տակաւին մինչև երկամեայ պաշտօնավարութեան լրումը, երբ իբրև թէ կանոնական գործի մը համար յատուկ արտօնութեան պէտք չըլլար, 1899 ապրիլի սկիզբը պատրիարքը իբր պարզ լուր կը հաղորդէր թէ մօտ օրէն Ընդհանուր ժողով պիտի գումարուի վարչական նոր ընտրութեանց համար: Սակայն կառավարութիւնը իսկոյն փութաց ապդարարել թէ տրուած խոստումին համաձայն պէտք է որ գտնուող վարչութիւնը նախապէս սահմանադրութեան վերաքննութիւնը և փոփոխութիւնը լրացնէ, և ապա ըստ այնմ նոր ընտրութիւն կատարուի, և թէ այժմեան վարչութիւնը պարտաւոր է մինչև իւր գործին լրումը պաշտօնը շարունակել (ՕՄԱ.36): Վարչութեան առջև երեք եղանակներ կային այդ հրամանին հանդէպ, կամ անմիջապէս վերաքննութիւնը լրացնել, կամ անպայման ժամանակով պաշտօնավարութիւնը շարունակել, և կամ պաշտօնը լքանելով գործէ քաշուիլ: Լուրջ նկատողութեան և հասուն խորհրդակցութեան նիւթ եղաւ խնդիրը և վարչութիւնը քանիցս գումարումներ ունեցաւ այդ մասին: Վարչութիւնը դիտեց թէ վերաքննութիւն կատարել միանգամընդմիջտ վտանգաւոր դատուած և կողմ թողուած էր (3005), պաշտօնը լքանել և քաշուիլն ալ ազգին դէմ դաւաճանութիւն պիտի ըլլար պատրիարքն ալ բոլոր ոյժովը դէմ կը դնէր երկու ենթադրութեանց, որով կը մնար երկրորդ կերպը այսինքն պաշտօնը շարունակել, և այս կըլլար միաձայնութեամբ տրուած որոշումը, չպատասխանելով պետական պաշտօնագիրին, գրաւորապէս յանձնառութիւն և միտք չյայտնելով, և լոկ գործնականապէս որոշումը իրականացնելով: Այդ ընթացքը թերևս ոմանց աչքին վարչութեան կողմէն պաշտօնի վրայ

մնալու բաղձանք մեկնուի, սակայն կացութիւնը անկողմնակալ կերպով ողջամիտ դատողներ շուտով պէտք է համոզուին, թէ վարչութեան դիրքը ոչ պատիւի ու շահի և ոչ ապրեցութեան ու իշխանութեան կողմէն փափաքելի և հաճելի կողմ մը չունէր, որ ժողովականները պայն պահելու հրապուրուէին, ընդհակառակն շարունակ ծանրատաղտուկ բեռի մը տակ մնալու վիճակն էր որ իրենց կը սպասէր, անհնարութեան կերպարան առած գործի մը ներքև ճնշելու, ոչ կայսրը ողոքել, ոչ ազգը հաճեցնել, ոչ կացութիւնը բարւոքել, և ոչ խեղճութիւնը դադրեցնել, և անհնարինն դէմ սրտմաշուք կրել շարունակել: Եւ ոչ ալ հնար է մտածել թէ պատրիարքը նորերէն խիթալով հիները պահելու հետևած ըլլայ, զի փորձով հաստատուած քան մըն է, թէ աւելի դիւրին է նորերու հետ գործել քան հիներու հետ մաքառիլ, աւելի դիւրին է անվարժներ գործածել քան վարժուածները կառավարել. արդէն սահմանադրութեան օրինագրած անմիջական անվերընտրելիութեան պայմանն ալ պարզապէս վարչական ժողովներու ոյժը բեկանելու համար դրուած է (ՕՄԱ.33-34):

3014. ՀՐԱԺԱՐԵԼՈՒ ՓԱՍՏԸ

Ժողովականաց փոփոխութեան արգելքը, կացութեան նորստացիկ կերպարանը, և տիրող անտեղութեանց տևողութիւնը, վրայիվրայ բարդւելով այնչափ ծանրացան որ պատրիարքը ստիպեցին բուռն միջոցներ ձեռք առնել, գոնէ դիրքը տանելի ձևի մը հասցնելու համար: Հայոց համար ստեղծուած բացառիկ կարգադրութեանց ջնջումն էր ընդհանուր անունով պահանջուածը. զի Հայեր տէրութեան օրէնքներէն դուրս դիրքի մը ենթարկուած էին, և իրենց համար արգիլուած էին այն ամէն դիւրութիւնները որ բոլոր իսլամ և ոչ-իսլամ հպատակներու բաց էին: Հայեր ընկճուած էին այն ամէն դժուարութեանց ներքև որոնցմէ բոլոր իսլամ և ոչ-իսլամ հպատակներ ալատ էին: Խնդիրը այս հիմամբ բանակցութեանց նիւթ դարձած էր 1899 ապրիլէն ի վեր, և պատրիարքն ալ տակաւին յուսադրական խոստումներու ելքին կը սպասէր, բայց ամիսներ կանցնէին և լուծմանց կամ բարւոքմանց նշոյլը չէր տեսնւէր: Վերջապէս 1899 օգոստոս 4-ին խիստ պաշտօնագիր մը ներկայացուց կայսեր, որ կայսեր կողմանէ նկատողութեան և հոգածութեան առարկայ եղաւ, որով քանի մը օրեր ևս տևեցին ձգձգեալ բանակցութիւնները, բայց վերջապէս օգոստոս 25-ին խառն ժողովի գումարման մէջ պատրիարք գործէ քաշուելու միտքը յայտնեց: Լուրն իսկ ապրեցութիւն ըրած ըլլալու նշան տուաւ. զի Թուրքիան և Տատեան և Թէվֆիք փաշաներէ յանձնաժողով մը կազմուած ըլլալը լսուեցաւ, Հայոց պատրիարքին բողոքները և գործը կարգադրելու պաշտօնով: Այդ լուրը նոյն ինքն Տատեան սեպտեմբեր 1-ին նիստին մէջ ժողովին հաղորդեց, բայց պատրիարքը պատրիարքարան իջնելը դադրեցուց՝ նոր որոշման ելքը տեսնելու սպասելով: Ամիսի մօտ տևեց այդ ձևն ալ. ժողովականներ և ոչ-ժողովականներ ստիպողաբար պատրիարքի կը յանձնարարէին քաշել բայց չփրցնել, սպասել և չշտապել. սակայն ակնկալեալ ելքը կը յապաղէր, թէպէտ երեք փաշաներու գումարումները կը լսէին: Առկախ վիճակը ալ աւելի ևս երկարել վայել չէր, ուստի սեպտեմբեր 24-ին պատրիարք իր հրաժարականը կը յղէր նախարարութեան և կը հաղորդէր արքունեաց և վարչութեան: Բացարձակ կերպով և անձնական պատճառանքով հրաժարական մը չէր տուածը, այլ կացութեան անտանելի ըլլալուն, և այդ կացութեան մէջ պաշտօնավարել անհնար դառնալուն հիմամբ հեռանալ էր եթէ կացութիւնը չփոխուէր, յայտարարելով միանգամայն որ եթէ բոլոր Հայեր յանցաւոր, յանցաւորներու գլուխ մնալու չստիպեն զինքն, իսկ եթէ բոլոր Հայեր յանցաւոր չեն, յանցաւորներու պատկանեալ վարմունքը ընդհանուրին վրայէն վերցուին: Հրաժարագիրը ետ բերուեցաւ 24-ին, 25-ին յատուկ պատգամաւոր մը եկաւ արքունեաց կողմէն, բայց Օրմանեան միտքը չփոխեց, 28-ին Թուրքիան ու Տատեան ու Թէվֆիք ու Ռըտվան ու Շէֆիք փաշաներու նոր խորհրդակցութիւն տեղի ունեցաւ, 29-ին 51 բանտարկեալներ արձակուեցաւ, ոստիկանապետ Շէֆիք ներքին երթևեկի դիւրութեանց

հրահանգներ տուաւ, կրօնական նախարարութիւնը եկեղեցիներու շինութեանց հրամաններ արձակեց, Հայերուն վանապան գործառնութիւններու արգելքին հրամանը դադրեցաւ, և թէպէտ Օրմանեան աւելի կատարեալ ելքի մը յանգելու համար իր որոշումը կը յապաղէր, սակայն խառն ժողովոյ հոկտեմբեր 6-ին գոհացուցիչ բաւարարութիւն գտած ըլլալու որոշումը կու տար, աւելի ևս պնդելը լարը փրցնել կը դատէր, և պատրիարքն ալ համակերպիլ կը ստիպուէր. և հոկտեմբեր 9-ին յանձն կառնէր պատրիարքարան երթալ առանց ուրիշ ձևակերութեան (ՕՄԱ.67-68), իբր քառասնօրեայ բացակայութենէ ետքը, որ միջոցին սակայն գործերը բարձիթողի չէր ըրած և բերանացի հրահանգներով պատշաճը գործադրել կու տար պատրիարքական փոխանորդ Գաբրիէլ ճէվահիրճեան եպիսկոպոսի ձեռքով և անունով Այս առաջին անգամն էր որ Օրմանեան հրաժարելու փաստը կը գործածէր, ոչ ապարդիւն և ոչ կատարելապէս գոհացուցիչ կերպով: Հրաժարելու փաստը իր տեսութեամբ անմիջապէս պարագայի մը հանդէպ իբր դեղթափ կրնար գործածուիլ, և ոչ թէ հիմնապէս կացութիւնը փոփոխելու կրնար ծառայել, որ միայն իշխանաւորին միտքին վրայ ներգործելով կրնար ստացուիլ: Ուրիշ անգամներ ալ պիտի տեսնենք զինքն այդ փաստին դիմելու հարկադրուած, բայց միշտ ամփոփ և պատահական նպատակի մը սահմանին մէջ, իսկ բոլորովին գործէ ձեռնթափ ըլլալու միտքը երբեք չունեցաւ, զի պաշտօնէն խուսափելը իբրև դասալքութիւն, և պաշտօնին հաւատարիմ մնալը իբր առաքելական պատգամ կը ճանչնար (ՕՄԱ. 64), առանց պաշտօնի սիրահար մը ըլլալու, զոր միշտ իբր ապաշնորհ ըզբաղանք կը նկատէր, բեռ կրելու և ոչ բերկրելու պատճառ:

3015. ԿԻԼԻԿԻՈՅ ԽՆԴԻՐԸ

Կ. Պոլսոյ պատրիարքարանին գործերը ժամանակիս գլխաւոր պատմական իրողութիւններն են, և ներքին պարագայից գիտակցութիւնն ալ առաւել ևս կը գրաւէ պատմագրին ուշադրութիւնը: Բայց առանց ասոր ալ էջմիածնի և Երուսաղէմի աթոռները իրենց սովորական ուղղութենէն դուրս յատուկ յիշատակութեան արժանի միջադէպներ չէին ներկայեր այդ միջոցին, որ մտադրութիւննիս անոնց կողմը դարձնենք: Աղթամարն ալ Խաչատուրի մահուանէ ետքը բոլորովին մոռացութեան տրուած աթոռ մը եղաւ (2968). իսկ Կիլիկիոյ աթոռը թէպէտ կարևոր նիւթ կընծայէ մեզի, սակայն այն ալ անձուկ կապերով միացած է, Կ. Պոլսոյ պատրիարքարանի հետ: Պատմած ենք Իզմիրլեանի պատրիարքութեան օրով Ալէքսանդրի Գրիգորիս եպիսկոպոսի վրայ կատարուած կաթողիկոսական ընտրութիւնը, և ընտրութեան խառն ժողովով հաստատուիլը, և կառավարութեան կողմէ մերժուիլը, և երեք եպիսկոպոսներու ըմբոստ ընթացքը, և Գալանճեան Յովհաննէս եպիսկոպոսի գողունի կաթողիկոս օծուիլը (2989), և այս վիճակի մէջ էին Կիլիկիոյ գործերը Իզմիրլեանի հրաժարած միջոցին 1896 յուլիսին: Որչափ ալ Կ. Պոլսոյ պատրիարքարանը մերժած էր Գալանճեանի կարծեցեալ կաթողիկոսութիւնը, սակայն նա համարձակութիւն գտաւ Չամիշեանի տեղապահութեան օրով, որուն ուշնուրուշը իր անձին շուրջը կը դառնար, որով Գալանճեան պետական հովանաւորութեամբ զօրացաւ և մինչև իսկ յաջողեցաւ յաղթական մուտք գործել Ատանա, և 1896 դեկտեմբեր 1-ին հանդիսաւոր պատարագ մատուցանել ոստիկանական պաշտպանութեամբ և անունը յիշատակել տալ և կացութեան տիրապետել: Այս էր Կիլիկիոյ աթոռին վիճակը նոր պատրիարք և նոր վարչութիւն գործի գլուխ կանցնէին, և պէտք էր նախ գետինը մաքրել, ինքընտիր կաթողիկոսը հեռացնել, որ հնար ըլլար օրինաւոր աթոռակալութեան խնդիրը ձեռք առնել: Ատանացիք ալ հակառակ էին Գալանճեանի ապօրինի կաթողիկոսութեան, և քաջալերուած Կ. Պոլսոյ վարչութենէն ինչպէս որ ամէն առթի մէջ նախանձայոյց եղած էին ազգային կեդրոնի յարաբերութեանց, դեկտեմբեր 29-ին յիշատակութիւնը արգիլել տուին, ժամարար քահանային բնաւ յիշել չտալով, և բուրվառակիրին կիսկատար կաթողիկոս անունով

յիշելովը որուն վրայ Գապանձեանի աջակիցներուն հանած շփոթին և բողոքներուն վրայ 40-ի չափ ատանացիներ իբր խռովայոյսներ բանտարկուեցան: Սակայն պատրիարքարան այդ շփոթն ալ առիթ առնելով իր բողոքը կրկնեց ու սաստկացուց, և Գապանձեանի հեռացումը պահանջեց, թէպէտ նա դեկտեմբեր 29-էն ետքը հրապարակէ քաշուած էր և առանձնական կեանք կը վարէր: Արդէն իր ընտրութեան անվաւեր պարագաներով կատարուած ըլլալը յայտնի էր, կառավարութեան մէջ ալ նոր պատրիարքը գոհացնելու միտքը կը տիրէր, նոր կուսակալ Պահրի փաշա Օրմանեանի ծանօթ և երախտապարտ էր, և Գապանձեան կառավարութեան ձեռքով Ատանայէ և Կիլիկիայէ հեռացուեցաւ, և կաթողիկոսութեան յաւակնութիւնը ջնջուեցաւ, և իբր աքսորական Պէյրութ փոխադրուեցաւ 1897 մարտի սկիզբները, այն տեղէն ուրիշ տեղ չերթալու պայմանով և ապրուստի թոշակ մը կապուելով: Իսկ գործակիցները Նիկողոս և Աբրահամ եպիսկոպոսներ և Կէօքեան վարդապետ գործէն ձեռնթափ եղան ինքզինքնին ապաստելու մտադիր, և այլևս ձայն հանելու իսկ չհամարձակեցան: Իսկ իբր աղմկայոյս ձերբակալեալներ Սէլէֆկիէ դատարանէն անպարտ արձակուեցան: Գապանձեան այլևս երբէք չխլրտեցաւ արդէն բնութեամբ ալ հանդարտ մէկն էր, և իր արդարացման համար սովոր էր կրկնել, թէ կաթողիկոս օծուիլ յանձնառու եղած էր Աբրահամի ձգտումները արգիլելու համար որ շատ աղիտաբեր պիտի ըլլար եթէ երբէք օծուիլ յաջողէր: Կիրակոս եպիսկոպոս Բէքմէլձեան պաշտօնապէս կաթողիկոսական տեղապահ ճանչցուեցաւ, որ թէպէտ մեծ կարողութեան տէր անձ մը չէր, և տարիքն ալ ութսունի մօտ էր, բայց պէտք է իբր գովեստ յիշատակենք, թէ կատարեալ հաւատարմութեամբ գործեց յօգուտ իր միաբանական աթոռին, և միշտ համակերպող գտնուեցաւ Կ. Պոլսոյ պատրիարքարան հրահանգներուն, և եթէ երբեմն յանկարծորէն նենգամիտ թելադրութիւններէ գրաւուեցաւ, ինչպէս Գապանձեանի օծման պահուն, շուտով ուղղութեան դառնալու արիութիւնն ունեցաւ: Երբոր այսպէս գետինը արգելքներէ մաքրուեցաւ, կարգը եկաւ օրինաւոր աթոռակալը հաստատելու, ուստի նոր վարչութիւնը իւրացուց կանխապէս կատարուած ընտրութեան պաշտպանութիւնը և պաշտօնապէս խնդրեց Ալէաթձեանի կաթողիկոսութեան հաստատութիւնը: Այստեղ ալ Ալէաթձեանի համար իբր գովեստ պիտի յաւելունք, թէ իրեն շուրջը կատարուող անցուդարձերուն մէջ կատարելապէս կրաւորական ընթացք մը բռնեց, իր եպիսկոպոսական դիրքէն և սովորական պաշտօններէն վեր ձգտումներ չունեցաւ, և երբէք չնմանեցաւ Մելիքսեդեկ Մուրատեանի նմանօրինակ պարագայի մէջ ցուցած յաւակնութիւններուն (2930): Երկու տարի և աւելի տևեց պատրիարքարանի և կառավարութեան միջև տեղի ունեցած բերանացի և գրաւոր բանակցութիւնը Ալէաթձեանի ընտրութեան շուրջը, որ յետոյ ստուար պարութայի մը նիւթ կազմեց: Պատրիարքարան ամէն տեսակ պաշտպանութիւն ընծայեց Ալէաթձեանի անձին, նոյնիսկ անոր ստորագրութեամբ յայտարարութիւն ալ մատոյց յառաջ բերուած դիտողութիւնները ցրելու և հերքելու աշխատեցաւ, կատարուած ընտրութեան օրինաւորութիւնը փաստաբանեց, բայց անհնար եղաւ կայսեր միտքին վրայ ազդել և ընդդիմութիւնը ցածուցանել: Այս մտայնութեան իսկական պատճառը Ալէաթձեանի անունին իրական կամ պատահական կերպով Իվմիրլեանի անունին անգամ մը յարակցած, և այնպէս ալ շարունակած ըլլալն էր, և այն ամէն դժպիհ գաղափարները որոնք Իվմիրլեանի մասին կայսեր միտքին մէջ սևեռուած էին, կը ցլանային Ալէաթձեանի վրայ, և Ալէաթձեան ալ կաթողիկոսական գահին վրայ իբրև նոր ոմն Իվմիրլեան ըլլալ կը կարծուէր, և անհաշտ և անողոք կը դարձնէր կայսեր միտքը, մինչև որ վերջապէս ամէն դարձուածներ մէկ կողմ թողլով բացարձակ մերժումի յանգեցաւ, որուն հանդէպ անհնար դարձաւ վարչութեան և պատրիարքին դարձեալ ընդդիմանալ, և ստիպողական նկատուեցաւ համակերպիլ: Այս միջանկեալ տարիներու մէջ որչափ ալ Բէքմէլձեան պաշտօնապէս տեղապահ ճանչցուած էր, սակայն ամէն

դիմում Կ. Պոլիս կուղղուէր, և անկէ կը տրուէին պատշաճ որոշումները և հրահանգները, մանաւանդ որ կարևորագոյն գործերը, նպաստներն ու որբանոցներն էին, որոնք Կ. Պոլսոյ պատրիարքին ձեռքը կեդրոնացած էին:

3016. ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Նոր էր ազգային կատարուած ընտրութեան մը հանդէպ գրուած պետական մերժումը, և ցարդ նախընթաց ունեցած չէր, ինչ որ կը դժուարացնէր վարչութեան դիրքը, և կրնար ամէն տեսակ պրմյցներու և մեղադրանքներու առիթ ընծայել համակերպութեան համար տրուած որոշումը: Սոյն դժուարութիւնը իրենք ալ զգացած էին, և այդ պատճառով երկու տարիէ աւելի երկերեծ էին կառավարութեան հետ բանակցութիւնը, և երբոր բանակցութեան դուռերը գոցուեցան, կարծիքներու անհամաձայնութիւնը ժողովին մէջ ալ երևցաւ, հակառակ որ ամէն խնդիրներու հանդէպ նշանակալից միաձայնութիւն տիրած էր անցեալին մէջ: Ստուգիւ ալ շատ դժուարին կացութիւն էր օրէնքի կարգ անցնելու չափ հաստատուն սովորութեան մկ հակառակ տրուած արգելքին համակերպիլը: Վարչութիւնն ալ քանի քանի նիստեր նուիրեց պարագաները վննելու և չափելու և օգուտն ու վնասը նժարի մէջ կշռադատելու, մինչև որ կարծիքներ իրարու մոտեցան և համակերպելու պէտքը վճռական դարձաւ: Գլխաւոր փաստերէն մին եղաւ դիտել կառավարութիւնը իր իրաւունքին վրայ կը գտնուէր երբոր ընտրութիւն մը կը մերժէր, անշուշտ հաստատելու իրաւունքը չհաստատելու իրաւունքն ալ կը պարունակէր, ապա թէ ոչ հաստատութիւնը իրաւունքի գործ եղած չէր ըլլար: Իսկ եկեղեցական ընտրութեանց մէջ պետական միջամտութիւնը ընդհանրապէս ընդունուած պարագայ մըն էր, որ Ռուսիոյ մէջ երկու ընտրեալներէն մին առնելու ձևով կը գործադրուէր: Յունաց սահմանադրութեան մէջ ընտրեալներու ցուցակը զեղչելով կը գործադրուէր, իսկ Հայոց միակ ընտրեալ մը ներկայացնելը մերժումի պարագան կենթադրէր: Դիտելու կէտ մըն ալ էր նաև որ մերժումը դատապարտութիւն չէր, այլ միայն նուազ հաճելի ըլլալու արտայայտութիւն, որ մերժեալին վրայ բարոյական ծանրութիւն չէր բերեր, և ոչ ալ տիրապէս զրկուած մըն էր, զի օրինաւորապէս իրաւունքի անցնելէն առաջ կը կատարուէր, ապա թէ ոչ ամէն ոչ ընտրեալներ զրկուածներ պէտք էր սեպուէին: Գալով ներկայ պարագային, քանի որ կայսրը հաճեցնելու կամ համոզելու կամ ստիպելու կերպը բացարձակապէս հեռացուած էր, կը մնար միայն անպայման ժամանակաւ կամ մինչև Ալէաթձեանի մահը դատարկ թողլու Կիլիկիոյ աթոռը, որ արդէն վնասուած էր Քէֆսիպեանի մահէն յետոյ վեց տարիէ ի վեր դատարկ և ժողովուրդը անտէրունչ, և նոյն իսկ Քէֆսիպեանի օրերէն սկսելով անխնամ մնալով, և օտարադաւաններու համարձակ ասպարէզ էր դարձած: Ընդհանուր Հայ եկեղեցոյ տեսակէտէն ալ ազգին մէջ իբր առած ընդունուած էր, թէ Սիսը պէտք էր էջմիածնի համար, որպէսզի Արարատեան Մայրաթոռը խաղալիք չդառնայ տիրող պետութեան, մանաւանդ նկատելով նոյն ատեններ ձեռք առնուած խիստ միջոցները, որոնք Մայրաթոռին վտանգ կը սպառնային, և Կիլիկիոյ աթոռին պարապութիւնը կրնար ևս քան վաս քաջալերել յարձակումը և վտանգը ծանրացնել: Վարչութիւնը իր մէջը համաձայնութիւն գոյացնելէ ետքը, պէտք ունէր հանրութեան կարծիքն ալ պատրաստել, և այդ ամէն պարագաները Կիլիկիոյ մասին տրուելիք վերջնական որոշման պայմանաժամը երկարեցին: Վերջապէս զգուշութեան ամէն պայմանները լրացնելով՝ համակերպելու որոշումը տրուեցաւ 1899 տարուոյ Ջատիկէն ետքը, և թէպէտ ասկէ անկէ դիտողութիւններ սկսան լսուիլ, սակայն շուտով վերջացան Ալէաթձեանի վերահաս մահուամբը, որ բնաւ նախադասելի չէր, այլ անակնկալ մահացու հիւանդութիւն մը վերջ կու տար անոր կեանքին 1899 օգոստոս 15-ին, Վերափոխման կիրակի օրը, և երկուշաբթի յուղարկաւորութիւնը կը կատարուէր մեծաշուք հանդերձանօք: Վարչութիւնը

համակերպության որոշման հետ նոր ընտրության անցնելու արտօնությունը կառավարությունն խնդրած էր, բայց այդ առթիւ ալ ընտրելիին Սոյ միաբան ըլլալը, ընտրողական գործողութեան ձևերը, ընտրութիւնը վարելու իրաւասութիւնը, նոր և միջանկեալ խնդիրներու առիթ կընծայէին, երբ ընտրութեան գործերը վարելու համար պատրիարքական պատուիրակի մը առաքումը կորոշուէր, և այս պաշտօնին կը կոչուէր Երուսաղէմի կաթողիկէին փակակալ կամ աթոռին լուսարարապետ Սահակ եպիսկոպոս Խապայեան իբրև եկեղեցական իրաւանց նախանձաւոր, կարգաց և կանոնաց հմուտ, և ակնառութենէ և տեղական տեսակէտներէն զերծ անձնաւորութիւն: Խապայեան եպիսկոպոս, Երուսաղէմի համար կարևորութիւն ունեցող Աւագ Տօներու և Աստուածայայտնութեան հանդէսներուն առթիւ իր պաշտօնին պահանջները լրացնելով Երուսաղէմէ մեկնեցաւ և Կիլիկիա հասաւ 1900 տարւոյ փետրուարին առաջին օրերը (ՕՄԱ.68): Երուսաղէմի աթոռին աւանդական սովորութիւններէն մին ալ լուսարարապետներուն աթոռէն չհեռանալու պայմանն էր, սակայն Յարութիւն պատրիարք բնաւ այդ կէտը դիտողութեան նիւթ չըրաւ, ազգային գործին կարևորութիւնը յարգելով. արդէն ինքն ալ 1892-ին Խապայեան լուսարարապետը Էջմիածինի ընտրութեան պատգամաւոր յղած էր (2969):

3017. ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՓՈՐՉ ՄԸ

Երբ պատրիարքարան ամէն դժուարութիւնները լուծած և գործը իրականացման ճամբուն վրայ կը կարծէր, յանկարծ փետրուար 14-ին լուր կառնէր, թէ Ատանայի կուսակալը նախարարութենէ առած հրահանգին համեմատ, Կ. Պոլիսէ յատուկ յղուած կրօնից տեսչութեան օգնականին աջակցութեամբ, և պատրիարքական պատուիրակին ներկայութիւնն ալ չսեպելով, ուղղակի Բէքմէլզէեան տեղապահին հրամայած է ընտրողական ժողովը գումարել, և իր նախագահութեամբ ընտրութիւն կատարել տալ, և տեղապահն ալ ընդդիմանալ չկրնալով՝ շրջաբերական հրաւիրագիրներ յղած է, որ ընտրողներ մարտ 10ին Ատանա հաւաքուին ընտրութիւն կատարելու: Կուսակալին հրամանը կը պարունակէր նաև նախապէս ընտրելեաց ցանկ կազմել, ցանկը արդարութեան և կրօնից նախարարութեան հաղորդել, և ցանկին զեղչուած դառնալէն ետքը ընտրութիւնը լրացնել և նախարարութեան յղել, և Կ. Պոլսոյ պատրիարքութենէն անկախաբար գործ աւարտել: Պատրիարք և վարչութիւն իսկոյն սաստիկ հրամաններ յղեցին Կիլիկիոյ գլխաւոր տեղերը, պատրիարքարանի հրահանգներուն համեմատ գործել, և առանց պատուիրակի նախագահութեան ընտրութիւն չկատարել, միանգամայն կառավարութեան մօտ դիմում բողոք մատուցին, և հետզհետէ սաստկացուցին. զի կենսական խնդիր էր պատրիարքութեան ազգապետական գրութիւնը խախտել, հայ ազգութիւնը երկուքի բաժնել, և Կիլիկիոյ համար նոր հայ ազգութիւն մը կազմել, ինչ որ Քէֆսիպեանի երազներէն մին եղած էր, բայց չէր. յաջողած: Օրմանեան համարձակ կը յայտարարէր թէ ինքն բովանդակ Թուրքիոյ հայութեան պատրիարք ընտրուած ըլլալով, չէր կրնար յանձն առնուլ անոր մի մասին իր պատրիարքութենէն զատուիլը, և ազատութիւն կը զգար կիսուած հայութեան պատրիարք չմնալու: Ժամանակը նեղ էր, պատրիարք գործը կը փութացնէր, մինչ կառավարութիւնը ժամավաճառութեան ձևեր կը բռնէր պատրիարքարանը լրացեալ իրողութեան դիմաց դնելու համար: Որչափ ալ Խապայեան պատուիրակ օրինաւորութեան պաշտպան կը կանգներ, Բէքմէլզէեան տեղապահն ալ պատրիարքարանի իրաւանց և հրահանգաց համակերպելու պատրաստականութիւն կը ցուցնէր, Կիլեկեցիներն ալ և գլխաւորապէս Ատանայի գլխաւորներն ու ժողովուրդը կեդրոնական պատրիարքարանէն արարքներէն զատուելու կամք չունէին, բայց խիթալի էր կառավարութեան բռնադատութեամբ աղիկամի գործողութեան մը կատարուիլը, ուստի վերջին պահուն մարտ 8-ին Ատանայի գումարման համար որոշուած օրէն երկու օր առաջ

Օրմանեանի հրաժարագիրէն միայն հինգուկէս ամիս ետքը, միշտ միևնոյն պայմանական ոճով և պատրիարքութեան կիսուելուն վրայ հիմնուած: Ինչ որ իբր կասկած կը յայտնուէր, իրօք ալ կը փորձուէր կուսակալին և յատուկ պաշտօնէին տեղապահը և պատուիրակը համաձայն էին առանց պատրիարքարանի հրահանգին ժողով չգումարել և ընտրութիւն չկատարել, բայց ստիպողական բռնադատութեան առջև կը պիջանէին ժողովի բացում միայն կատարել, ուր կուսակալը հեռագրական հրաման մը կը հաղորդէր, ընտրութեան վրայ կը խօսէր բայց գործը անորոշ թողուով կը մեկնէր, իրեն կը յաջորդէր կրօնից օգնականը և նախագահական աթոռը անցնելով անմիջապէս ընտրութեան կը ստիպէր: Պատուիրակը բացարձակ կերպով ժողովին կը հաղորդէր թէ կուսակալին հետ տարբեր կերպով պայմանաւորուած են, և օգնականին առաջարկը անոր հակառակ է: Ինքը կը մեկնի, և երբ ժողովականներուն քուէարկելու հրամանը կը կրկնուի օգնականէն, հաւաքուած ընտրողները, մեծաւ մասամբ Ատանացիներ, թէպէտ գաւառներու ներկայացուցիչներ, միայն պատուիրակին նախագահութեամբ ժողովին մէջ քուէ տալու արտօնութիւն ունենալ նին մի առ մի կը յայտարարեն, և այսպէս ընտրական գործողութիւնը պարապի կելլայ, և պատրիարքարանի շրջաբերական հրահանգը կարդարանայ, Ատանացուց ցոյց տուած արիասիրտ ընդդիմութեամբ: Անշուշտ պատրիարքի հրաժարականն ալ իր ազդեցութիւնն ունեցած էր, զի կառավարութիւնը անմիջական կերպով հրաժարականը ետ առնելու ստիպումներու սկսած էր, և հրաժարագիրը ետ դարձուցած, զոր Օրմանեան կրկին կը յղէր, և մինչև 15 օր շարունակ յետ և յառաջ կը բերուէր ու կը տարուէր, մինչև որ վերջին անգամ մարտ 25-ին դարձեալ զրկուելուն վրայ նախարարութեան մօտ կը մնար: Պատրիարքական հրաժարականը աւելի ոյժ կառնէր վարչութեան համեմատութեամբը, որ մարտ 10-ին նիստերը կը դադրեցնէր. իսկ Ատանայի ժողովը մարտ 10-էն ապրիլ 3-ի կը յետաձգուէր, բայց գումարել իսկ չէր փորձուէր, և այսպէս ինքնիրեն կը լքուէր առանց պատրիարքարանի Կիլիկիոյ մէջ ընտրութիւն կատարել տալու փորձը: Օրմանեան իր հրաժարագիրին մէջ խառնած էր առաջին հրաժարականին ժամանակ տրուած խոստումներուն մեծաւ մասամբ անգործադիր մնացած ըլլալը, և աւելի ընդարձակութիւն տուած էր բողոքներուն. ուստի պատրիարքին հետ բանակցութիւնները սկսան մարտ 20-ին, նախապէս արդարութեան և կրօնից նախարարին հետ, և մայիս 2-ին ներքին գործոց նախարարին հետ, առանց յիշելու մասնաւոր պատգամաւորները, և նոյն իսկ կայսերական հրամանով Տատեանի և Նորատունկեանի բերնով հաղորդուած յորդորները, որոնց Օրմանեան միշտ կը դիմադրէր պնդելով թէ չի կրնար ազգային հիմնական կազմակերպութեան հակառակ որ և է նոր ձև ընդունիլ, և այնպիսի պայմանի մը գործակիցիլ որ հայ ազգութիւնը երկփեղկելու, և տարբեր ազգութեանց բաժնելու նպատակն ունէր: Վերջապէս ապրիլ 13-ին կառավարութիւնը առանց ազգային միջամտութեան ընտրել տալու միտքէն հրաժարիլ յայտարարեց: Սակայն Օրմանեան տակաւին հրաժարականին վրայ կը պնդէր սպասելով որ նախապէս խոստացուած բայց լիապէս չգործադրուած կէտերն ալ պարզուին և լրանան, մինչև որ մայիս 11-ին արքունեաց առաջին քարտուղարը Տատեանի ընկերակցութեամբ երկար ժամերով և ամէն վստահութիւն ներշնչելով կը բռնադատէր պաշտօնը վերստանձնել: Մայիս 11-ի տեսակցութեան տեղեկութիւնները 12-ին Տատեան վարչական ժողովին կը հաղորդէր, խոստումներուն ոյժը կը բացատրէր, և ժողովին ընդունիլ կու տար իր գործունէութիւնը շարունակել և Օրմանեանն ալ գործոց գլուխը դարձնել: Այդ որոշումը 13-ին պատրիարքին կը հաղորդուէր, որ այլ ևս ներքին և արտաքին համակամութեան առջև պիջանիլ կը ստիպուէր, միայն ընդհատ կերպով պատրիարքարան գալ յանձն կառնէր. իսկ եկեղեցիներ և այլուր երևնալէ կը զգուշանար մինչև յուլիսի վերջը ամբողջական գործադրութեան սպասելով: Կառավարութիւնը մայիս 22-ին զինուորական անվճար տուրքերուն մի մասը կը ներէր, և մի մասին ալ յապաղում կը

շնորհէր, իսկ 28-ին ինչինչ ուրիշ կարգադրութիւններ կը հաղորդէր, զոր օրինակ երթեկի սեղմումներէն մաս մը ևս կը դադրեցնէր գործառնութեանց և վբաղմանց ընդլայնում կու տար, կատարելոց նպաստ կը պարգևէր, բայց պատրիարքը չէր դադարէր պահանջել քաղաքական սովորական իրաւանց կատարեալ վայելումը և ամէն արգիլքներու բարձումը:

3018. ԱՊԱՐԴԻԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Կիլիկիոյ ընտրութեան դառնալով երբոր կառավարութիւնը առանց պատրիարքարանի միջամտութեան ընտրութիւն ընելու միտքէն կը հրաժարէր, պայման կը դնէր ընտրելեաց ցանկին ներկայացման և վեղջման ձևը, ինչ որ նոր բանակցութեանց դուռ կը բանար և գործը կերկարէր: Խապայեան պատուիրակ որ իր գործունէութիւնը արգիլուած կը տեսնէր, ինն ամիսներ Կիլիկիա մնալէն ետքը 1900, նոյեմբերին Երուսաղէմ կը դառնար, ուր իր լուսարարապետական պաշտօնը պինքն կը կոչէր ուխտաւորութեանց և տօնախմբութեանց միջոցին, նորէն դառնալու մտադրութեամբ երբոր դժուարութիւնք հարթւին: Կառավարութեան առաջարկած պայմանէն ծագող խնդիրն ալ աւելի կերկարէր, զի այս մասին կրօնական ժողովն ալ վերապահութեամբ կը մնար և ընտրելեաց ցուցակը ներկայելու չէր հաւաներ, որով կրօնականի և քաղաքականի միջև վիճաբանութիւնները շարունակեցին գրեթէ վեց ամիս ամբողջ, մինչև որ կրօնականն ալ յանձն առաւ տեղի տալ: Քաղաքականի կողմէ իբրև փաստ կը գործադրուէին սահմանադրութեան մէջ Կիլիկիոյ մասին ձև մը օրինադրուած չըլլալը, ընտրելեաց ցանկին ներկայացումն Յունաց սահմանադրութեան մէջ պարունակուած և հայկաթողիկներէն ընդունուած ըլլալը, նախապէս վեղջման ձևին վերջէն մերժման ձևին վրայ շատ տեսակէտներով նախադասելի ըլլալը, կառավարութեան որևէ կերպով ընտրութեանց միջամտելը պետական ընկալեալ իրաւունք ըլլալը, աւելորդ պնդումներով Կիլիկիոյ աթոռը անտէրունչ թողուելուն վնասակար նկատուիլը, ռուսական կառավարութեան կողմէ Մայրաթոռին վրայ փորձուած սեղմումներուն Կիլիկիոյ աթոռին դատարկութիւնը վերջացնելու հարկը վգացնելը, և ասոնց ամէնուն վրայ Մայրաթոռոյ հայրապետ Խրիմեանի կողմէ եկած յայտնի յորդորական, որպէսզի ցուցակի ներկայացման խնդիրին կարևորութիւն չտալով օր առաջ Կիլիկիոյ աթոռին վրայ կաթողիկոս մը հաստատուի: Այդ ամէն տեսութիւններ երկար ցեցուելով՝ վերջապէս խառն ժողովը համաձայնութեան յորդորեցին, և 1900 դեկտեմբեր 1-ի նիստին մէջ կրօնականն ալ քաղաքականի համաձայնելով ընտրելեաց ցանկը ներկայացնելու և ընտրելեաց վեղջը յանձն առնելու որոշումը տրուեցաւ: Այդ խնդիրին վերբերմամբ անցած ժամանակը նկատի առնուած ատեն չի կրնար երբեք ըսուիլ թէ վարչութիւնը թուլութեամբ կամ անմտադրութեամբ գործ մը կատարած ըլլայ, այլ թէ իսկական անհրաժեշտ պահանջի մը առջև պիտանելու պարտաւորուած է. ինչ որ իր օրինական արդարացումն ալ է: Օրմանեան ալ բաւական սեպեց որ իր ընդդիմութեամբ և հրաժարականով ազգային բաժանման առջևն առնել յաջողեցաւ, համոզուած ըլլալով որ հրաժարականներ կրնան միայն պատահական խնդիր մը կարգադրել, թէպէտ ընդհանուր կացութիւնը հիմնապէս բարւոքելու արդիւնքը չունենան: Իսկ ընտրելեաց ցանկին ներկայացման կէտը նկատեց լոկ իբրև պետական ձևակերպութեան մը փոփոխութիւն, և ոչ նորինորոյ պետական միջամտութիւն ստեղծելու առիթ, և գուցէ ալ ցանկին առաջուց վեղջումը ապագայ մերժումին նախադասելի իսկ նկատելով որ, ինչպէս կառավարութեան կողմէն ալ կը դիտուէր, աւելի դիւրին և աւելի պատուաւոր է կերպով մը ներս չառնել, քան թէ ներս առնելէն ետքը դուրս հանել: Երբոր ամէն միջանկեալ խնդիրներ հարթուեցան, Խապայեան պատուիրակ հրաւիրուեցաւ Կիլիկիա դառնալ, ուր հասաւ 1901 օգոստոսի մէջ, Երուսաղէմի տօներուն պէտքերը իբր լուսարարապետ աւարտելէն ետքը, և սկսաւ վբաղիլ ժողովի կազմութեամբ, պատգամաւորներու ընտրութեամբ, և նոյն իսկ ժողովի նախագահութեամբ

ևս և կուսակալին ներկայութեան և գիրքին խնդիրով: Այդ գործողութիւնները ընտրողական ժողովին գումարումը յետաձգեցին մինչև 1901 հոկտեմբեր 20, որուն մէջ ընտրելեաց վեցանուն ցանկը կազմուեցաւ: Գլուխը կը գտնուէին երկու Երուսաղէմի եպիսկոպոսները Սահակ Խապայեան և Գէորգ Երէցեան 50 և 48 քուէով 54 քուէարկուներու վրայ, կը յաջորդէին երեք Կ. Պոլսեցի եպիսկոպոսներ Վահրամ Մանկունի և Հմայեակ Դիմաքսեան և Գրիգորիս Յովհաննէսեան 45, 44 և 30 քուէներով, վեցերորդ անունը Օրմանեան պատրիարքին էր 28 քուէով (Օ1. ԲԻՋ. 1543): Օրմանեանի անունին յատուկ նշանակութիւն տրուած էր զի վրոյց մը հռչակուած էր իբր թէ հետամուտ էր պատրիարք մնալով կաթողիկոս ընտրուիլ, և Կիլիկիոյ ու Կ. Պոլսոյ աթոռները միացնել միտք մը որ անգամ մը Տատեանի բերնէն լսուած էր, իսկ Օրմանեան ժողովի մէջ յայտարարուած էր թէ այդ ենթադրութեան մէջ Հայ եկեղեցւոյ նուիրապետական կարգաց խանգարում յառաջ կու գար, զոր ոչ ինքն յանձն կառնէր և ոչ ուրիշի մը կը ներէր ընել: Բայց ինչ ալ ըլլար այդ մասին կատարուած անցուդարձը, բնաւ ենթադրելի չէր Օրմանեանի ընտրուիլը, և կառավարութիւնն ալ առաջ անոր անունն էր զեղչած, արդէն պաշտօնի վրայ գտնուելուն պատճառով, և ապա միահոգոյն զեղչած էր երեք Կ. Պոլսոյ եպիսկոպոսները, թէպէտ երկուքը կրօնական ժողովոյ ատենապետներն էին, և թողած էր միայն երկու Երուսաղէմի եպիսկոպոսները: Այդ որոշման համար ալ ամիս մը հարկ եղած էր, զի միայն նոյեմբեր 23-ին պաշտօնական կերպով հաղորդուեցաւ (Օ1. ԲԻՋ. 1571): Այս կերպով Կիլիկիոյ ընտրողական ժողովին շրջանակը շատ ամփոփուած էր, և հաւանականագոյն կը կարծուէր Խապայեանի նախադասուիլը, և այս էր պատրիարքին և վարչութեան ալ միտքը, և այդպէս կըմբռնուէր ընտրողներուն ալ դիտումը, որոնք մօտէն գործի վրայ տեսած էին զայն, մինչ իրենց համար բոլորովին անծանոթ մըն էր Երէցեանը: Սակայն հակառակ այդ նախատեսութեան՝ նոյեմբեր 29-ի գումարման մէջ Երէցեանի կը վիճակէր 32 քուէներու առաւելութիւնը մինչ Խապայեան կը մնար 27 քուէով, թէպէտ վեցանուն ցանկին մէջ Խապայեանի քուէները աւելի էին Երէցեանի քուէներէն (Օ1. ԲԻՋ. 1577): Չենք կրնար ճշդել թէ ընտրողաց կողմէն Խապայեանի մասին կասկածի մը, կամ թէ Խապայեանի կողմէն իր հին ընկերակցին և մտերիմին գիրք մը պատրաստելու բաղձանքին հետևանքն էր այդ ընտրութիւնը: Ստոյգ է որ Խապայեան ընտրութենէ խուսափելով Երէցեանի վրայ հրաւիրած է ընտրողաց քուէները (Օ1. ԲԻՋ. 1587), բայց կը յիշուի նաև որ նոյն օրեր Կ. Պոլիսէ եկող Ատանացի մը, մայրաքաղաքի մեծամեծներէն ոմանց թելադրութեամբ, Երէցեանը յարմարագոյն և կարողագոյն ցուցած է, և այսպէս գոյացած է 5 քուէից առաւելութիւնը:

3019. ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

Երէցեան Գէորգ եպիսկոպոսին ընտրուելուն լուրը անակնկալ մը եղաւ մայրաքաղաքի մէջ, բայց որովհետև կատարուած գործողութիւն մըն էր և Երէցեանի անձն ալ բաւական յարգ ու վանկ կը վայրէջէր հասարակութեան մէջ, համակրութեամբ ողջունուեցաւ, շնորհաւորութիւններ ամէն կողմէն յաճախեցին, և ինքն ալ մտադիր ընդունեցաւ իրեն հանդէպ յայտնուած պատուաւոր ցոյցերը, թէպէտ անոնց մէջ լաւ մաս մը ունէր գործին ըստ ինքեան կարևորութիւնը. զի 1895 նոյեմբեր 15-ին դատարկացած Կիլիկիոյ աթոռը վեց տարի ետքը 1901 նոյեմբեր 29-ին աթոռակալ մը պիտի ունենար, բաւական դժուարութիւններէ և բազմադիմի խնդիրներէ անձնելէն ետքը. սակայն դժբախտաբար այս պարագային ալ ձեռնունայն պիտի ելլէր Կիլիկեան աթոռը: Նոյեմբեր 29-էն մինչև դեկտեմբեր 13, երկու շաբաթ ամբողջ, Երէցեան ընդդիմութեան նշան չցուցուց, ինքզինքը կատարուած գործողութեան հանդէպ տեսաւ, թէպէտ այցելուներուն կը յիշեցնէր գործին դժուարութիւնը, պէտքերու շատութիւնը, կացութեան անորոշութիւնը, և յարաբերութեանց շփոթութիւնը, ինչ որ ամէն նոր պաշտօնի կաշուողներուն սովորական խօսքերն են: Օրմանեանի

հետ ստեպ տեսակցութիւններ կունենար, և միասին կը խորհրդակցէին թէ ի՞նչ ճամբով, ո՞ր ժամանակ, ի՞նչ պայմաններով յարմար էր ուղևորիլ, ո՞ր անձեր կրնային գործածուիլ, ի՞նչ միջոցներ պէտք էին, ի՞նչ կապակերպութիւն պէտք էր հաստատել, ի՞նչ յարաբերութիւններ մշակել. նմանապէս պատրիարքարանի դիւանապետերէն ալ կարևոր տեղեկութիւններ քաղելու կը հետևէր, և այս ամէնը ընտրութեան համակերպելուն նշաններն էին, թէպէտ պաշտօնական յայտարարութիւնը կը վերապահէր տեղեկագիրին հասնելուն: Ընդհանուր համոզում գոյացած էր թէ պաշտօնը պիտի ստանձնէ, ուստի վարմացմամբ լսուեցաւ դեկտեմբեր 13-ին յղած հրաժարագիրը, որ վարչական ժողովի ներկայացաւ (01.ԲԻՁ.1588), և 14-ին պատասխանուեցաւ անընդունելի լինելը յայտնելով, նա ալ ի պատասխանի հրաժարականը կրկնեց դեկտեմբեր 20-ին, բայց Ամանորի և Ծննդեան տօնական օրերէն ետքը 1902 յունուար 9-ին կը պատասխանէր պատրիարքը շատ երկար գրութեամբ մը, միառմի ցրելով յիշուած կամ ենթադրուած պատճառները. իսկ վարչութիւնը յունուար 18-ին միայն կրնար այս խնդիրով վբաղիլ, արգիլուելով տօնական օրերէն վատ պատրիարքին տիրամօր յունուար 14ին վախճանելէն: Վարչութիւնն ալ հրաժարականը մերժելով պատճառներուն մասին բացատրութեան կը սպասէր (02.ԲԻՁ.1617), և Երէցեան երկարօրէն կը պատասխանէր յունուար 21-ին պատճառելով թէ 17-ին միայն ստացած է պատրիարքին գիրը: Օրմանեան կատարուած ընտրութեան համակերպելու պէտքը պնդած էր ամէն տեսակէտներէ եկեղեցական կոչումէն, եպիսկոպոսական ստիճանէն, Կիլիկիոյ պահանջէն, յայտնուած գոհունակութենէն, նոր ընտրութեան դժուարութենէն, հանրային տպաւորութենէն, սկիւբէն ցուցած համակերպութենէն, և ընդհանուր գործին համար անձնական զոհողութեան պարտաւորութենէն, յիշեցնելով Խրիմեան կաթողիկոսին ալ այդ մասին համամտութիւնը: Իսկ Երէցեան իր պաշտպանութեան համար յառաջ կը բերէր կանխաւ Խապայեան պատուիրակին ընտրելիութենէ հրաժարելու համար գրած գիրը, ուսկից պատրիարքարան տեղեկութիւն չունէր, և պատուիրակն ալ վայն իբրև չեղեալ նկատեր էր. Վի երկանուն ցանկէն առաջ էր գրուած, թող որ ամէն գործողութենէ առաջ ինքնաբերաբար ընտրելիութենէ հրաժարիլը, սովորաբար իր անունը միտք ձգելու կերպ մը ճանչցուած է: Երէցեան կը յիշեցնէր ևս Երուսաղէմի միաբան և պաշտօնեայ ըլլալը, որ երբեք չէր արգիլեր ընդարձակագոյն պաշտօնի կոչուիլը, և Յարութիւն պատրիարք շնորհաւորողներուն առաջիններէն եղած էր: Կակնարկէր Կիլիկիոյ աթոռին յարաբերութեանց անորոշ ըլլալուն, որուն մասին Օրմանեան արդէն ըսած էր թէ այս կէտը յարմարագոյն էր կարգաւորել երբ աթոռին տիրանար: Երէցեան կը յիշէր նաև թէ անհիմն դարձուածներ տեղի ունեցած ըլլան ընտրողական ժողովի գործողութեանց մէջ, որպիսի ինչ ոչ գրուած: Հաստատութիւնը ոչ վարչական այլ երեսփոխանական ժողովէն կը սպասէր, չյիշելով որ նոյն իսկ Ալէքսանդրեանի հաստատութիւնը և այս ընտրութեան նախընթաց գործերը վարչութեամբ կատարուած էին: Իբրև փաստ կուզէր գործածել անգամ մը Օրմանեանի իր համակերպելու պարտաւորութեան մասին խստիւ խօսած ըլլալը (01. ԲԻՁ. 1590), ինչ որ միայն աննշանակ պարագայ մըն էր, այլև Օրմանեան՝ իբրև ազգային շահուց պաշտօնեայ ստիպելը իրեն պաշտօնական պարտաւորութիւն կը ճանչնար: Երէցեան կը յայտարարէր ևս թէ իրեն ծանր եկած է իր հրաժարման մասին այլընդայլոյ վրոյցներ խօսուիլը, որուն դարմանը սակայն հրաժարականին վրայ չպնդելն էր, և ոչ թէ պնդելով վրոյցները զօրացնել: Իբրև արդարացում կը յիշեցնէր Բարթողիմէոս Կապուտիկեանի, Պօղոս Թաքթաքեանի և Ներսէս Վարժապետեանի էջմիածնի ընտրութենէն և Մելիքսեդեկ Մուրատեանի Կիլիկիոյ ընտրելիութենէն հրաժարիլը: Սակայն Կապուտիկեան հակառակութեան առջև տեղի տալով քաշուած էր (2226), Թաքթաքեան ընտրուած չէր որ հրաժարէր: Վարժապետեան մահացու հիւանդութեամբ կը տառապէր, իսկ Մուրատեան

կրցեր էր կանուխէն ընտրողները համոզել, ինչ որ ինքն ալ կրնար ըրած ըլլալ եթէ իր ընտրութենէն իսկապէս հրաժարիլ կուզէր մինչ իր անունը իր բարեկամներէն թելադրուած էր և իր գիրը իր բարեկամին յղուած մտերմական յայտարարութիւն մըն էր: Մանաւանդ ընտրութիւնը լսելէն ետքը փոխանակ իսկոյն միտքը յայտնելու, եթէ կանուխէն, հաստատուած էր, երկու շաբաթ պատուոյ ցոյցերը հաճութեամբ ընդունած էր և պատրաստութեան պարագաներն ու պայմանները ուսումնասիրած: Զանց կընենք անկարողութեան և դժուարութեանց պատճառանքները, որոնք իբրև քաղաքավարական արտայայտութիւն կը կրկնուին ամէն ընտրեալներէ և անուանեալներէ: Վարչութիւնը յունուար 25-ին հրաժարականի գործով պաղեցաւ, իր անդամակիցներուն բանիւ և գրով ըրած դիմումները լսեց, և Երէցեանի վերջապէս պնդելուն վրայ համոզում գոյացուց, սակայն դարձեալ իր որոշումը յետաձգեց (02. ԲԻՁ. 1623), և հուսկ յետոյ ժամավաճառութեան վերջ տալու համար փետրուար 1-ի նիստին մէջ, երկամսեայ աշխատութիւնը բաւական սեպելով, որոշեց պնդումները դադրեցնել և նոր ընտրութեամբ պաղիլ (02.ԲԻՁ.1630): Իսկ Երէցեան, Օրմանեանի և իր նամակներուն պատճէները ներփակելով, Խրիմեանէ ստացած յունուար 10-ի նամակին կը պատասխանէ յունուար 29-ին՝ աւելի ընտրողական ժողովոյ գործին վրայ ծանրանալով (ՆՄԿ.), և Օրմանեանի ստիպումը մեղադրելով, որոնց առաջինը լոկ երևակայական էր, և երկրորդը պաշտօնական գործ էր: Հարկաւ նոյն եղած էր Խրիմեանի ալ տպաւորութիւնը, որ Երէցեանի նամակին պատասխանել իսկ չուզէր: Երէցեանի հրաժարականին վրայ կազմուած ընդհանուր կարծիքը այն տեսութեան յանգեցաւ, թէ նա թէպէտ սկիզբէն փառքի տեսակէտէն չլրացաւ, բայց վերջէն իր վրայ աւելի ազդեցիկ քաղքենի կենաց և ընտանեկան յարաբերութեանց տեսակէտները, որոնց շատ մօտ էր իր կենցաղը, մանաւանդ որ շատ մօտ կը տեսնէր Կ. Պոլսոյ պատրիարքութեան հասնիլը, ուսկից անշուշտ օր մը չէ օր մը, այն ալ ոչ հեռաւոր ապագայի մէջ, Օրմանեան պիտի ստիպուէր քաշուիլ: Այդ մեկնութեանց առիթ տուած են իր բերնէն սարդած ինչինչ բացատրութիւններ և Օրմանեանի վրայ խօսած մեղադրանքը, թէ կուզէր վինքն հեռացնել հզօր մրցակիցէ մը ապատելու համար: Սակայն իր հրաժարականը ոչ բախտ և ոչ յաջողութիւն եղան իրեն համար, անձնադիրութեան վակատեալ ըլլալու գաղափարը հաստատել տուաւ իր վրան, իր պիտակ պատճառաբանութիւնները խստիւ քննադատուեցան, և այն օրէն սկսաւ վայելած յարգն ու վարկն ալ նուազել, և անձնական պատիւն ալ մթագնելու երես բռնեց:

3020. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Թէպէտ ժամանակակից ուրիշ կարևոր եղելութիւններ ունինք պատմելու, սակայն յարմարագոյն կը սեպենք նախապէս Կիլիկիոյ ընտրութեան պատմութիւնը աւարտել. Վի գործողութեանց ընթացքն ու նշանակութիւնը աւելի լաւ կը լուսաբանուին իրենց ամբողջութեան մէջ: Խապայեան պատուիրակ հապի թէ ընտրողական գործողութիւնը աւարտեց 1901 նոյեմբեր 29-ին և տեղեկագիրը ճամբայ հանեց, իսկոյն Երուսաղէմ դառնալու ձեռնարկեց, ուր կը կոչէին վինքն ոչ միայն ուխտաւորական և տօնական օրերը, այլև Յարութիւն պատրիարքի տկարանալուն լուրերը, ուստի շուտով մեկնեցաւ դեկտեմբեր 4-ին (01. ԲԻՁ. 1580): Կիլիկեցիք իրենց աթոռին գործը լրացուցած ըլլալու գոհունակութեամբ անոր պաշտօնական գործադրութեանը կակնկալէին, և երբ Երէցեանի հրաժարականը լսեցին յուսադրութեամբ կը սպասէին պատրիարքարանի պնդումներուն յաջողելուն, և երբ 1902 փետրուար 1-էն ետքը այս կողմէ ալ յուսախաբ մնացին, նոր քայլ մը չառին, միշտ Կ. Պոլսոյ պատրիարքարանէն չբաժնուելու անկեղծ մտադրութեամբ, զոր անդստին Քէֆսիպեանի ժամանակէն այնչափ հաստատամտութեամբ յայտնած էին, համոզուած ըլլալով թէ Կիլիկիա ինքնիրեն չէր կրնար ունենալ այն ոյժը, զոր կրնայ իրեն ընձեռել ապագային կեդրոնին հետ միաւորութիւնը: Այդ մասին հարկ կը սեպենք յատկապէս

յիշատակել Ատանացիները, որոնք իսկապէս Կիլիկիոյ մայրաքաղաքացիները կը համարուին, և բոլոր Կիլիկեցւոց առաջնորդելու առաւելութիւնը կը վայելեն: Իրենց պատրիարքարանը հակադրուեցաւ ընտրութեան ապարդիւն ելքը պաշտօնապէս կառավարութեան հաղորդել. և նոր ընտրութեան համար պէտք եղած թոյլտուութիւնը խնդրել: Միւս կողմէն նոր պատուիրակի մը ընտրութեան հետևեցաւ, զի հնար չէր այլևս Խապայեան եպիսկոպոսը գործի հրաւիրել, և այդ պաշտօնին յարմարագոյն դատեց ճանիկի առաջնորդ Փափապեան Յակոբ Աշոտ եպիսկոպոսը և պաշտօնապէս որոշեց փետրուար 12-ին (02. ԲԻՋ. 1641): Թէպէտ ընտրեալը հաճեցաւ, սակայն ճանիկի վարչութեան ցուցած դժկամութեան և վիճակային գործերու ստիպողականութեան վրայ, մայիս 15-ին որոշուեցաւ ուրիշ մը ընտրել (02. ԲԻՋ. 1712), և 22-ին ընտրուեցաւ Պիլէճիկի առաջնորդ Կէօմրիւքճեան Մովսէս եպիսկոպոսը, և իր հաւանութիւնն ալ ստացուեցաւ 31-ին յատուկ յիշատակագիրով կառավարութենէն խնդրուեցան պաշտօնական գիրերը (02. ԲԻՋ. 1718,1726): Նոյն միջոցին թէպէտ իբր գործը փութացնելու միջոց Կիլիկիոյ տեղապահին բերնով խնդրուեցաւ Երէցեանէ միայն 5 քուէ պակաս ստացող Խապայեանը կաթողիկոսութեան կոչելու, սակայն ոչ մի կանոնական պայման չէր կրնար արդարացնել այդ տեսակ անուանում մը (02. ԲԻՋ. 1642): Բայց յայտնի տեսնուեցաւ թէ Կիլիկեցւոց միտքը այլևս Խապայեան անձին վրայ հաստատուած է. հարկաւ պղծացած ալ էին առաջին ընտրութեան մէջ ոմանց թելադրութեամբ իրենց նախնական միտքէն շեղած ըլլալնուն վրայ, զոր յայտնած էին վեցանուն ցանկին գլուխը գրեթէ միաձայնութեամբ Խապայեանի անունը դնելով: Պաշտօնական ձևակերպութիւնները և Կէօմրիւքճեանի ուղևորութեան պատրաստութիւնները ամիսէ աւելի տևեցին, և վերջապէս պատուիրակը յուլիս 10-ին վարչութեան ներկայանալով և պաշտօնական գիրերը ու անպաշտօն հրահանգները ստանալով անմիջապէս մեկնեցաւ, և Ատանա հասնելով գործի ձեռնարկեց: Բէքմէյճեան տեղապահ դարձեալ իբր գործը դիւրացնելու միջոց, պատրիարքարանէ կը խնդրէր ընտրելեաց ցուցակը, որուն պատրիարքը ուրիշ պատասխան չէր կրնար տալ, բայց եթէ ընտրելիները ընտրող ժողովէն պէտք է որոշուի (02.ԲԻՋ.1805), թէպէտ գաղտնիք չէր կեդրոնին միտքն ալ Խապայեանի վրայ հաստատուած ըլլալը: Պատուիրակը սերպեմբեր 5-ին կը ծանուցանէր ընտրողական ժողովին կազմութիւնը 20 եկեղեցական և 42 աշխարհական բովանդակ 62 անդամներով որոշուած, և պատգամաւորներուն ընտրուած ըլլալը, և ընտրողներուն սեպտեմբեր 29-ին նիստի հրաւիրուիլը (02.ԲԻՋ.1809): Որոշուած օրը Վարազայ Խաչին Կիրակիին, ժողովը կը բացուէր նախընթաց ընտրութեան ձևակերպութիւններով, լոկ բացման աղօթքը ծերունի տեղապահին իսկ բոլոր գործողութիւնները պատուիրակին վերապահելով: Կուսակալը գումարման սկիզբը ներկայանալով և պաշտօնական բացումը հռչակելով կը մեկնէր, և կուսակալութեան ընդհանուր քարտուղարը իբրև կառավարական հսկող կը մնար: Այն օր ներկաները 45 էին, իսկ կրկին պատգամաւորութեան իրաւունք ունեցողներն ալ համրելով 57 քուէ, ամբողջականէ միայն 5 քուէ պակաս: Նախապէս 14 յարմարագոյններու ցուցակ մը կազմուեցաւ, և անոր վրայ վեցանուն ցանկը քուէարկուեցաւ (02. ԲԻՋ. 1837), որուն մտան Տրդատ Պալեան 44, Ստեփանոս Յովակիմեան 42, Բարթողիմէոս Չամիշեան 40, Ներսէս Ասլանեան 39, Սահակ Խապայեան 37, և Մովսէս Կէօմրիւքճեան 34 քուէով. և ցանկը նոյն օրին հաղորդուեցաւ պատրիարքարան նախարարութեան ներկայացուելու համար (02.ԲԻՋ.1830): Այս անգամ ալ քուէարկութեան ելքը ակնկալութեան հակառակը կը հանդիպէր, և Կիլիկեցիներին միտքը կը շփոթէր Խապայեանի հինգերորդ տեղը գրաւելուն վրայ, կասկածելով որ մի՛ գուցէ ցաւելով հրաժարիլ մտադրէ, ուստի կը սկսին յարմար միջնորդներով համակրութիւննին յայտնել և հրաժարելու վտանգը հեռացնել (02.ԲԻՋ.1838): Զարմանալի է այդ ժողովներուն մէջ քուէարկութեան արդիւնքնին՝ քուէարկուաց միտումին

հակառակ ըլլալը, որ կը ցուցնէ ժողովական ձևակերպութեանց հմուտ և ճարտար չըլլալնին: Հարկաւ առաջին անգամ կառավարութենէ վեղչուածներ, Օրմանեան, Յովհաննէսեան, Մանկունի, Դիմաքսեան և հրաժարեալ Երէցեան, այս անգամ ընտրելեաց ցանկին պիտի չմտնէին, բայց վարմանալի էր բոլորովին չխօսուածներուն առաւելագոյն քուէ ստանալը: Կեդրոնի վարչութիւնը հոկտեմբեր 1-ի նիստին մէջ ընտրելեաց ցանկը հաստատեց և որոշեց կառավարութեան ներկայել (02.ԲԻՋ.1831, որ այս անգամ աւելի շուտափոյթ գտնուեցաւ, և շաբաթէ մը, հոկտեմբեր 9-ին, ցանկը դարձուց, ուսկից վեղչուած էին Յովակիմեանի, Ասլանեանի և Պալեանի անունները, և կը մնային միայն Չամիչեան, Խապայեան և Կէօմրիւքճեան: Պաշտօնագիրը հոկտեմբեր 10-ին վարչական ժողովին ներկայացուելով՝ հեռագրուեցաւ Ատանա (02.ԲԻՋ.1839): Բայց Չամիչեան իսկոյն պատրիարքին ծանոյց իր վերջնականապէս ընտրելիութենէ հրաժարիլը, և պատրիարքն ալ փութաց նոյնհետայն հաղորդել պատուիրակին և տեղապահին (02.ԲԻՋ.1840), և ընտրողական ժողովը հոկտեմբեր 12-ին Թարգմանչաց տօնին շաբաթ օրը, քուէարկութեան նստած պահուն, նորէն երկանուն ցանկ ունէր իր դիմաց, որոնց մէկը միշտ պատուիրակը: Կէօմրիւքճեան, որ հարկաւ ընտրողաց միտումը տեսած և իմացած էր, յատենի ժողովոյ յանձնարարեց իրեն համար բաւարար պատիւ համարել պատուիրակութեան պաշտօնը, Կիլիկեցուց յարգանքը, և Կիլիկիոյ աթոռին պարապութեան վերջ տալու բախտաւորութիւնը, և ընտրողները հրաւիրեց իր անունը մէկ կողմ թողուլ և միաձայնութեամբ կաթողիկոս հռչակել Խապայեան Սահակ եպիսկոպոսը, որուն արժանաւորութիւնը բարձրացուց: Այս անգամ ժողովին ամբողջական 62 քուէից կազմը պատրաստ էր 45 անձանց ներկայութեամբ, որոնց ստուար մեծամասնութիւնը ատանացիներ կը կազմէին (02.ԲԻՋ.1829): Ջի վիճակներ դիւրագոյն և յարմարագոյն կը գտնէին Ատանայի մէջէն առնել իրենց պատգամաւորները: Ընտրութեան արդիւնքն եղաւ որ Խապայեան 62 քուէներու միաձայնութեամբ կաթողիկոս հռչակուեցաւ ի մեծ խնդութիւն և մխիթարութիւն բոլոր Կիլիկեցիներու, ըսենք նաև բոլոր Հայերու. Վի բովանդակ հայութեան սևեռեալ մտահոգութիւնը դարձա ծէր Կիլիկիոյ աթոռին խնդիր և Կիլիկիոյ իսկական միտքը կը բացատրուէր առաջին ընտրելեաց ցանկին և վերջին ընտրութեան համաձայնութեամբը, և դժուար կըլլայ մեզ գոհացուցիչ մեկնութիւն մը տալ առաջին ընտրութեան և երկրորդ ցանկին տարբերութեան վրայ, որոնք ընտրութիւնը յապաղելու առիթ ընծայեցին: Յանկերու կազմութեան մէջ դիտելու արժանի էր նաև որ Կիլիկեցիք և ոչ մի անգամ իրենց աթոռին եպիսկոպոսներէն մէկը ընտրելեաց շարքին մէջ նշանակեցին:

3021. ՍԱՀԱԿ ԽԱՊԱՅԵԱՆ

Սահակ եպիսկոպոս Խապայեան մեր ընթերցողներուն անծանոթ անձնաւորութիւն մը չէ, անոր գործունէութեան բոլոր մասերը առիթ ունեցեր ենք իրենց կարգին յիշել, չազահելով մեր գնահատումը լաւ կողմերուն, և չխնայելով մեր դիտողութիւնները՝ հարկ տեսնուած պարագաներուն մասին: Սահակ, աւագանի անունով Գաբրիէլ, ծնած էր 1849 մարտ 25-ին Խարբերդի վիճակին Եղեգիս գիւղը, որով 53 ուկէս տարեկան կըլլար կաթողիկոս ընտրուած ատեն գործունէութեան և արդիւնաւորութեան կատարեալ հասակի տէր: Կանուխէն աշակերտած Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանին աւելի ուշիմ ուսանողներէն մին հանդիսացաւ, և երբ Գաբրիէլ Մուրատեանի տեսչութեան ատեն ուղուեցաւ աւելի վարկ տալ վարժարանին վարգացման և միաբանութեան բարձրացման, Գաբրիէլ երեք ընտրեալներէն մին եղաւ, որոնք 1869-ին սարկաւագութեան աստիճանով Կ. Պոլիս յղուեցան ուսումնական կատարելագործման համար: Երկամեայ պարապմունքէ ետքը երեքը միասին Խապայեան Գաբրիէլ ու Յակոբեան Մելքոն ու Մաքսուտեան Մաքսուտ 1871-ին Երուսաղէմ դարձան, և իբրև վարգացեալ ու

կատարելագործեալ, իմաստագոյն ու կարողագոյն անձեր բոլոր գործերու տիրացան, և տակաւին սարկաւագ վանական բարձրագոյն գիրքերը գրաւեցին և Անոյշեան Գաբրիէլ վարդապետի և Երէցեան Գէորգ սարկաւագի հետ միանալով, հինգերու վարչական տիրապետութիւնը կազմեցին: Եսայի պատրիարք խնդամիտ հովանաւորութեան և հիներու յօժարակամ համակերպութեան ներքև, մանաւանդ 1877-ին Սահակ և Վահան և Ղևոնդ անուններով վարդապետութեան աստիճանի բարձրանալէն ետքը (2868): Հինգերուն յաջողութիւնը անհակառակ տևեց մինչև 1881, և Յակոբեան բաժնուեցաւ, ինչպէս պատմած ենք (2873), և չորսերը շարունակեցին իրենց գիրքը, մինչև որ Անոյշեան ալ պատուեցաւ, և այնուհետև երեքներու, Խապայեանի ու Մաքսուտեանի ու Երէցեանի միութիւնը կազմեց սաղիմական գործունէութեան առանցքը և վարչական ուղղութեան տիրապետութիւնը (03. ԲԻՁ. 1929,1940): Այդ միութեան մէջ տարբեր էր իւրաքանչիւրին վարած դերը, զի երբ Մաքսուտեան բոլորանուէր գրաւուած էր ելեմտական և դրամական գործողութիւններով, և Երէցեանի սիրելագոյն էին արտաքնայարդար և յարաբերական մասերը, Խապայեան և գոհունակութիւնը կը գտնէր գրական աշխատութեան և վանական կացութեան մէջ, և թէպէտ երեքներուն երիցագոյնն էր, սակայն աւելի միւսներուն հետևողն էր և ոչ թէ միութեան առաջնորդը: Արտաքին գործեր, վարչական յարաբերութիւններ, ելեմտական զբաղումներ երբեք չէին զինքն հետաքրքրած ընկերներ ալ գոհ էին անոր այդ զգացումներէն և աննախանձ անոր կը թողուին ուսումնապետութեան և եպիսկոպոսութեան պաշտօնները և աստիճանները (2909) բաւական էր որ անոր համաձայնութիւնն և օժանդակութիւնը վայելէին իրենց սիրելագոյն ճիւղերուն մէջ, զորս Խապայեան անհակառակ կառատաձեռներ, եթէ ոչ ուղղակի գործակցութեամբ, գոնէ բարոյական պաշտպանութեամբ: Ահա թէ ի՛նչպէս կը բացատրուի որ երբ Մաքսուտեան կը մեղադրուէր իր ելեմտական գործունէութեան մէջ, և Երէցեան կը զրուցուէր իր կենցաղին և յարաբերութեան համար, Խապայեան չէր մեղադրուեր և անբասիր կը մնար հանրութեան աչքին առջև, չնայելով որ քաջալերիչ էր երկուքին ալ ընթացքին, առանց մասնակցելու անոնց շահուն և վայելքին: Խապայեանի վերջնական բարձրացման համաձայնութեամբ նպաստեցին պատրիարքին ջանքը, վարչութեան ընթացքը և Կիլիկեցոց համակրանքը, որոնք թէպէտ տարբեր տեսակէտներով առաջնորդուած, սակայն համամիտ կերպով յաջողցուցին Խապայեանի կաթողիկոսութիւնը: Պատրիարքը հաստատուն կերպով համոզուած էր Կիլիկիոյ աթոռին դատարկութիւնը վերջացնելու, իսկ իր շուրջը գտնուող յառաջադէմ եպիսկոպոսներէն ոմանք պետութենէ կասկածելի ըմբռնուած, ոմանց ընթացքը իրեն անընդունելի, և ոմանց անգործ թուլութիւնը յայտնապէս անյաղթելի կը տեսնէր, Բէֆսիպեանի անջատական դիտումներու վտանգն ալ իսպառ հեռացնել ուզելով, Խապայեանէ աւելի ընտրելագոյն ընտրելի չէր գտնար և անոր վրայ սևեռած էր իր ուշադրութիւնը: Վարչութիւնն ալ սկզբունքով համեստ, կեանքով պարկեշտ, ուղղութեամբ զգաստ, և յարաբերութեամբ դիւրամերձ ընտրելի մը փնտռելով, Խապայեանի նախադասելի ուրիշ մը չէր գտներ: Իսկ Կիլիկեցիք Բէֆսիպեանի թողած եպիսկոպոսներուն ընթացքէն գայթակղած, անհամեմատ բարձրութիւն մը կը տեսնէին Խապայեան պատուիրակին վրայ և մտադիւր գրաւուած էին անոր մասին: Կառավարութեան կողմէն ալ անոր անունին բնաւ կասկածներ եղած չըլլալը և Ատանայի կուսակալին հետ համեղ յարաբերութիւնները Խապայեանի արժանաւորութեան և ընդունելութեան լրումը կազմեցին: Ահա տարբեր մտայնութեանց վերլուծումը և Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոսին մասին տիրող համոզմանց ամփոփումը, ինչպէս որ կը ներկայանար ընտրութեան վայրկեանին այլ թէ ակնկալութիւն և իրականութիւն որչափ և ինչպէս համեմատեցան իրարու, առաջիկային կը թողունք պրպտել: Առայժմ բաւական ըլլայ աւելցնել, որ նոյն իսկ Երուսաղէմի աթոռին և

միաբանութեան կողմանէ ալ գոհունակութեամբ նկատուեցաւ Խապայեանի կաթողիկոսութիւնը, իբր պի անոր տկար կողմերուն ներքին գիտակցութիւնը հաճելի կը դարձնէր Երուսաղէմէ բաժնուիլը և հեռանալը, ու նոյն իսկ ներքնապէս համակիր եղողներն ալ ցաւ չյայտնեցին Երուսաղէմէ հեռանալուն վրայ:

3022. ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ

Հոկտեմբեր 12-ի ընտրութիւնը նոյն երեկոյին լսուեցաւ Կ. որսոյ պատրիարքարանը, և շնորհաւորական հեռագիրով մը ուղուեցաւ ընտրելոյն հաւանութիւնն իմանալ, որ հապիւ հոկտեմբեր 20-ին հասաւ (02.ԲԻՁ. 1848), հեռագրական թելերու խանգարման պատճառով, և 23-ին պաշտօնական տեղեկագիրն ալ հասաւ, բոլոր ընտրողաց հանրագրական ուղերձով մը ի դէմս պատրիարքին, կառավարութեան և կուսակալին և պատրիարքարանին բարեացակամ աշխատութեանց համար (02. ԲԻՁ 1850): Վարչութիւնը գործողութիւնները կանոնաւոր գտնելով հաստատեց հոկտեմբեր 25-ին, և կառավարութեան ներկայացուց (02.ԲԻՁ.1852), նախարարութիւնն ալ 27-ին ընտրութիւնը վաւերացուց և հրովարտակի շնորհման համար կայսեր ներկայացուց: Կատարուած ընտրութիւնը համակամ հաճութեամբ կողջունուէր ամէն կողմերէ, որուն մեծ արտայայտութիւնն էր ընտրելոյն ստացած շնորհաւորական և խնդակցական հեռագիրներուն 108 թիւը (02.ԲԻՁ.1870): Կայսերական վերջնական հաստատութեան լուրը կառնուէր դեկտեմբեր 9-ին (02.ԲԻՁ.1890), իսկ հրովարտակը պատրիարքարան կը յանձնուէր 16-ին (02.ԲԻՁ.1897), որուն մէջ յայտնի կերպով շեշտուած էր հնաւանդ ձևը, Կիլիկիոյ կաթողիկոսութեան Կ. Պոլսոյ պատրիարքութեան մէջ պարունակուած ըլլալը (02.ԲԻՁ.1898), և միանգամ ընդ միշտ հերքուած կըլլար Կիլիկիոյ համար անջատ և ազատ պատրիարքարան մը ստեղծելու Քէֆսիպեանի յղացած տարադէպ նպատակը, և հեռացած կըլլար Տաճկահայ ազգութիւնը պառակտելու վտանգը: Պատրիարքարանը թէպէտ ամէն եղելութիւնները օրը օրին թէ՛ Ատանա և թէ՛ Երուսաղէմ կը հեռագրէր, սակայն դարձեալ թելերու խանգարման պատճառով միայն դեկտեմբեր 17-ին կիմանար Ատանա՝ դեկտեմբեր 9-ին կայսերական հաւանութեան աւետիսը (03.ԲԻՁ.1911), և Կիլիկեցոց միխթարութիւնն ու ուրախութիւնը կը լրանար յունուար 4-ին պատրիարքարանի միջնորդութեամբ նորընտիրին շնորհուած առաջին աստիճանի մէջիտիէ շքանանշանով (03.ԲԻՁ.1915): Այս առթիւ շքանշաններ ստացուած էին ընտրութեան աշխատող և ընտրողներու գլխաւոր պանապան անձերու (03.ԲԻՁ.1919): Միանգամայն կը սկսէին ընդունելութեան պատրաստութիւնները և նոր գործունէութեան ծրագիրները: Իսկ Խապայեան իրեն հանդէպ ցուցուած համակիր արտայայտութեանց կը պատասխանէր գոհունակութեամբ և շնորհակալութեամբ և պատրաստականութեամբ, սակայն իր դիրքը չէր այլայլեր և լուսարարապետութեան պաշտօնավարութիւնն ալ չէր լքանել, միշտ օգնական ունենալով Յովհաննէսեան Եղիա վարդապետը, որ պինքն փոխանակած էր իր բացակայութեան միջոցներուն: Յարութիւն պատրիարք Երուսաղէմի միաբանական ժողովը կը գումարէր 1903 յունուար 20-ին լուսարարապետի ընտրութեան համար, ուր նախապէս Խապայեան ընդարձակ յայտարարութեամբ իր հրաժարականն ու հրաժեշտը կը ներկայէր: Այս գրաւոր ատենաբանութեան մէջ շնորհակալութիւն կը յայտնէր Գլխադիրին, պատրիարքին, միաբանութեան և ժողովին, կը քաղէր իր առաջին կեանքը, առանց մոռանալու Վահան վարդապետ Յակոբեանի Բմահաճ և ինքնահաւան կամայականութիւնը, և Ղևոնդ վարդապետ Մաքսուտեանի պաշտօնավարութեան բարերար նախախնամութիւնը մը եղած ըլլալը: Կը Խօսէր իր լուսարարապետութեան պաշտօնին վրայ, որ տևած էր պակաս տասն օրով տասն և եօթն տարի, յատկապէս յիշելով գանձատան նորոգութիւնը և հերքելով գանձարանէ ադամանդ և մարգարիտ և պահեստի գումարներ վերացած ըլլալու ամբաստանութիւնը, և

յանձնարարելով գանձատան պարունակությունը մանրամասն տոմարի առնել, զոր ինքն չէր յաջողած կապմել: Ատենաբանության վերջը ժողովը շնորհակալություն կը քուէարկէր, և անկէ ետքը ատենապետի առաջարկութեամբ քուէարկություն կը կատարուէր, և 45 ներկայ ու 4 գրաւոր, բովանդակ 49 քուէարկուներէն 28-ին քուէով լուսարարապետ կընտրուէր Գաբրիէլ անոյշեան վարդապետը, որ Պաղտատ կը գտնուէր առաջնորդական պաշտօնով. իսկ մնացորդ քուէներէն 16-ը տրուած էր Գրիգորիս վարդապետ Պօյաճեանի և 5-ը ցրուած (03.ՄԻԱ.526): Այդ ընտրությունը մեծ նշանակություն ունէր իբրև կացութեան տիրապետող կողմին այլայլում և խանգարում բերող զի Անոյշեան յայտնի քննադատող և հակառակող մը եղած էր եռեակին ընթացքին, և իր ընտրությունը սկզբնաւորությունն էր այն մեծ պայքարին, որ այնչափ զբաղեցուց երկու աթոռները և բոլոր հայությունը, և տակնուվրայ ըրաւ նաև Խապայեանի միտքին տրամադրությունները: Երուսաղէմի խնդիրին վրայ առանձինն խօսելու ըլլալով, այստեղ զանց կընենք այդ եղելություններուն մանրամասնութեանց մտնել: Խապայեան այլ ևս չուզէր Երուսաղէմի մէջ երկար մնալ և ուղևորութեան պատրաստութեանց ձեռնարկէր: Կեդրոնէն հրաւիրակ նշանակուած էր վաճառական դասակարգէն Յարութիւն Գարամանեան, որ յունուար 29-ին Կ. Պոլիսէ մեկնեցաւ (03.ԲԻՋ.1933) միասին առնելով հրովարտակն ու շքանշանը: Փետրուար 14-ին Վարդանանց տօնին յաջորդ ուրբաթ օրը և Տեառնընդառաջի տօնին, Խախայեան հրաժեշտի պատարագը, մատոյց հայրապետական հանդէսով որ դարձեալ դառնացաւ փետրուար 15-ի և 16-ի միջադէպներով վերջապէս փետրուար 17-ին եկեղեցական պատուիրակ Կէօմրիւքճեան եպիսկոպոսն ալ Երուսաղէմ հասաւ Գարամանեանի ետևէն և Կիլիկիոյ աթոռին ժողովներուն հրաւիրակներով մէկտեղ (03-ԲԻՋ.1949), և փետրուար 26-ին նորընտիրը բոլոր հրաւիրակներով և միաբանութեան ներկայացուցիչ և իր օժակից Մամբրէ Մարկոսեան եպիսկոպոսի հետ Երուսաղէմէ մեկնեցաւ: Իրեն հետ կը տանէր Երուսաղէմի միաբաններէն Վաղարշակ Պօղոսեան վարդապետը, և Մանուկ Մխիթարեան սարկաւագը: Յոպպէի մէջ պարտուպատշաճ կերպով պատուասիրուեցաւ տեսուչ Մատթէոս Գայլճեան վարդապետէ, և միւս օր փետրուար 27-ին նաւերով, մարտ 3-ին հասաւ Մերսին (03.ԲԻՋ.1961), մարտ 5ին Ատանա, (03.ԲԻՋ.1965), և մարտ 10ին Սիս (03.ԲԻՋ.1974): Դիտող եղած է թէ Խապայեան միաբանութեան կողմէ անշուք կերպով յուղարկուած ըլլայ (03.ԲԻՋ.1976), սակայն շատ փառաւոր նկարագրություն մը տուած է լրագիրը (03.ԲԻՋ.1967), և Յարութիւն պատրիարքի կողմէ փառաւոր պանակէ մը ընծայ կը յիշուի (03.ԲԻՋ.1930): Աւելորդ կըլլայ Մերսինի և Ատանայի և Սիսի ընդունելութեանց մասին մանրամասնություններ տալ, զի Կիլիկեցիք իրենց ձեռքէն եկածին չափ և եկածէն աւելին շռայլեցին այդ առիթներուն, և նիւթական հանդերձանքէն զատ մե՛ծ էր ներքին խանդավառությունը: Բէֆսիպեանի օրով ընկճուած ու Բէֆսիպեանէ ետքը տառապած ժողովուրդը նոր զարթնում և նորոգություն կը զգար ազգովին ընտրուած, կեդրոնէ համակրուած, կառավարութենէն փառաւորուած և հասարակութենէն փայփայուած կաթողիկոսին ներկայութեամբը: Ժողովուրդը մոռացած էր իր կացությունը, և բարօրությունն ու բարեկարգությունը իբրև արդէն իրականացած կը կարծէր: Ամէն տեղ շարժում, ամէն տեղ խնդություն, տագնապի ու տառապանքի մոռացում: Օծման հանդէսը յարմար սեպուեցաւ Զատիկէն ետքին յետաձգել, թէ՛ ժողովրդեան դիւրութեան և թէ՛ պատշաճ պատրաստութեանց համար, և տեղապահ ու պատուիրակ զոյդ ստորագրութեամբ և մարտ 19 թուականով շրջաբերական հրաւիրագիր ցրուեցին, ապրիլ 20ին Կանաչ Կիրակիին օծման, և 27ին Կարմիր Կիրակիին Միւռոնի օրհնութեան համար (03.ԲԻՋ.1987), զի շատոնց սպառած էր Սիսի միւռոնը և Կ. Պոլիսէ կը յղուէր պէտք եղածը (03.ԲԻՋ.1722): Օծման հանդէսը կատարուեցաւ ամենափառաւոր շքեղութեամբ, ուր տեղական ու շրջակայից բազմութենէն զատ 20,000ի կը

հասնելին պանապան կողմերէ եկող ուխտաւորները, զոր Սիս քաղաք չէր կրնար պատարագել, և քաղցր եղանակին շնորհիւ վրանով կամ բացօթեայ՝ քաղաքէն դուրս՝ կօթևանէին: Այդ պատճառով հարկ եղաւ եկեղեցական արարողութիւնները վանքին բակին մէջ շարժական սեղանի վրայ կատարել: Հանդիսագիր եղաւ պատուիրակ Մովսէս եպիսկոպոս Կէօմրիքճեան ընկերակցութեամբ տեղապահ Կիրակոս Բէքմէլճեան, Ֆոնուլի Նիկողայոս Դաւիթեան և Ջէյթունի Կարապետ Բէշէճեան եպիսկոպոսաց, և մասնակցութեամբ 12 վարդապետաց և 45 քահանայից և բազմաթիւ դպրաց: Իբրև ուրախութեան լուրմըն նոյն օր կը հասնէր Թւան ագարակի ապատութեան աւետաւոր Օրմանեանի տուած հեռագիրը (03.ԲԻՋ.2010): Միւռոնի օրհնութիւնն ալ միւս կիրակիին կը կատարուէր նմանօրինակ շքեղութեամբ (03.ԲԻՋ.2016): Նկատողութեան արժանի պարագայ կը սեպենք աւելցնել թէ Կիլիկիոյ Սահակ նորընտիր կաթողիկոսը, այդ երկու նախընթաց հանդէսներուն առթիւ մատուցած պարագաներուն մէջ, իր հանգուցեալ նախորդներուն յիշատակութենէն ետքը Եւս առաւելով յիշատակեց Արարատեան Մայրաթոռոյ Մկրտիչ կաթողիկոսը: Սակայն Խրիմեան կանխած էր Տրդատ Պալեան և Հմայեակ Դիմաքսեան եպիսկոպոսներուն հետզհետէ հեռագրել, որ յանուն Մայրաթոռոյ օծման ներկայ գտնուին, սակայն առաջինը հիւանդութեան և երկրորդը ժամանակին սղութեան պատճառով չէին կրցած երթալ, և Խրիմեան ապրիլ 10էն շնորհաւորական հեռագիր էր յղած (03.ԱՐՐ.427, 428): Այստեղ կը փակենք Կիլիկիոյ պատկանող հատուածները, առաջիկային թողլով խօսիլ Խապայեանի գործունէութեան և ընթացքին վրայ: 3023. ՆՇԱ.ՆԱ.ԻՈՐ ՄԱ.ՀԵՐ

Պատմութեան մէջ ընդգրկուած ոճը կը պահանջէ ազգին հանրութիւնը և ազգային կացութիւնը շահագրգռող գլխաւոր եղելութիւնները պարագաներով և առնչութիւններով բացատրել, զանց ընելով մասնաւոր դիպուածներու յիշատակութիւնները, որոնք աւելի լրագրական կամ օրագրական ոճին կը վերաբերին: Սակայն այդ ոճէն օտար չենք կարծեր ազգային կեանքի մէջ նշանակութիւն ունեցող քանի մը անձերու մահերը յիշել: Ակնարկեցինք արդէն Ալէաթճեան Գրիգորիս եպիսկոպոսի մահուան, որ տեղի ունեցաւ 1899 օգոստոս 15ին (3015): ալէաթճեան իր ժիր գործունէութեամբ, աներկիւղ ձգտումներով և անկաշկանդ տեսութիւններով կանուխէն նշանաւոր դէմք մըն էր եղած: Ծննդեամբը մայրաքաղաքացի 1840 յուլիսին ծնած, գաւառական գործիչի կատարեալ տիպար էր եղած, Բարձր Հայք, Տուրուբերան, Աղձնիք և Վասպուրական էին իր գործունէութեան ասպարէզները, մինչև որ պետական պահանջմամբ ստիպուեցաւ մայրաքաղաքի մէջ փակուիլ: Աշըգեանի պատրիարքութեան ատեն իր համարձակ ընթացքը զինքն անհաճոյ ըրին պատրիարքին և կասկածելի կառավարութեան. իր գործակիցին՝ Իվմիրլեանի պատրիարքութիւնն ալ չբաւեց զինքն այդ կասկածէ մաքրել և կաթողիկոսական ընտրութիւնը արգելքի հանդիպեցաւ (2989), մինչև որ պատրիարքարանը ստիպուեցաւ պահանջելէ հրաժարիլ, որուն վրայ քանի մը ամիս միայն ապրեցաւ (3015): Մահը անակնկալ եղաւ, բայց չենք կարծեր որ կաթողիկոսական ընտրութեան պարապի ելլալը զինքն յուզած ըլլայ, զի այդ մասին շատոնց ցուցած էր իր անտարբերութիւնը: Ձեռնադրութեան մը առթիւ ժողովրդական ցոյց մը զինքն այլայլած կըսուի, որ եթէ ներքնապէս չարդարանար, ժամանակով կը զուգընթանայ. զի հիւանդութիւնը անմիջապէս հետևեցաւ, ուսկից չկրցաւ բուժուիլ և վախճանեցաւ տակաւին 59 տարեկան: Ալէաթճեան աղքատ մեռաւ և իր հիւանդութեան ժամանակ խնամքը պատրիարքի ջանքով և բարեսիաց նպաստներով հոգացուեցան: Ալէաթեանի մահուան հետևեցաւ նախկին պատրիարք Խորէն Աշըգեանի մահը, որ վախճանեցաւ 1899 հոկտեմբեր 26ին, Ներսէս Վարժապետեան պատրիարքի մահուան 15րդ տարեդարձին օրը: Կանխահաս էր Աշըգեանի մահն ալ, որ 1842 նոյեմբեր 4ին ծնած Նիկոմիդիոյ վիճակին Բէրէմէթ գիւղը, կը վախճանէր տակաւին 57

տարեկան: Ընդարձակօրէն խօսած ենք Աշըգեանի պատրիարքական գործունէութեան վրայօք, և ծանրացած ենք իր վրայ ըստ բաւականին (2950 և 2974). սակայն այն պատճառ չէ որ ուրաստ լինինք իր անձնական արժանիքը, բազմակողմանի հմտութիւնը, անբասիր կենցաղը, կրօնական նախանձայնութիւնը և խստապահանջ բարոյականութիւնը: Եթէ վարչական գործունէութեան մէջ թերացաւ, այն հետևանքն էր իր նախընթաց կեանքին մէջ պահպանողական ուղղութեան և վերացական տեսութեան շրջանակէն դուրս ելած չըլլալուն, և Օրմանեան ալ չզլացաւ անոր անձնական արժանիքը հռչակել հոկտեմբեր 28-ին Բերայի եկեղեցին խօսած ընդարձակ դամբանականին մէջ: Նշանաւոր կորուստ մը եղաւ քաղաքական ժողովոյ ատենապետ և արտաքին գործոց նախարարութեան խորհրդական Տատեան Յարութիւն փաշայի մահը՝ 1901 հոկտեմբեր 7ին: Տատեան բարձր կրթութիւն առած էր Բարիպի մէջ, և հապիւ Կ. Պոլիս դարձած էր երբ պապական նուիրակ Ֆէրրիէրիի պատուոյն ճառ գոհութեան խօսեցաւ 1848 ապրիլ 1ին (2598): Տատեան շատ յաջող և շատ փառաւոր ընթացք ունեցաւ դիւանագիտական ասպարէզին մէջ, և մինչև արտաքին գործոց նախարարութեան խորհրդականի պաշտօնին և վէպիրութեան աստիճանին բարձրացաւ, և գրեթէ նախարարութեան վարիչը դարձաւ, ի բան ի գիր գերազանց կարողութեամբը, վոր Ապտիլ համիտ կայսրն ալ բացարձակապէս գնահատած էր: Իսկ ազգային շրջանակին մէջ ալ գործունէութենէ հեռի չմնաց. անդրանի ուսումնական խորհրդոյ անդամներէն եղաւ (2638), երկար ատեններ ընդհանուր ժողովոյ ատենապետութիւնը վարեց. բայց իր գլխաւոր արգասիքն եղաւ Իլմիրլեան պատրիարքի դադարումէն և Չամիչեան տեղապահի պաշտօնավարութենէ ետքը, ազգային օրինական նոր վարչութիւն կազմելու աշխատութիւնն ու յաջողուածը և անոր ատենապետութիւնը ստանձնելը: Տատեանի մասին ինչինչ արկածախնդիր պարագաներ խօսուած են, որոնք մասամբ չափազանցուած և մասամբ կարևորութենէ զուրկ կէտեր են, և ոչ մի կերպով կրնան ստուերած բերել անոր անհամեմատ կարողութեան և անկեղծ ազգասիրութեան: Տատեան Յարութիւն-Փարեգին շուրջ 75 տարեկան էր վախճանած ատեն, այլ մտաւորական կարողութիւններն և նկարագրի բարձրութիւնը երբեք նուազած չէին: Մարմինը թաղուեցաւ: Պէշիկթաշ եկեղեցւոյն և իր տան միջև գտնուած պարտէզին մէջ ինչպէս ի կենդանութեան խնդրած և արտօնուած էր կայսեր կողմանէ: Վարչութեան առաջին ատենապետին մահուանէ միայն քառասուն օր ետքը տեղի ունեցաւ երկրորդ ատենապետին Ասլանեան Ստեփան փաշայի մահը: Ութսունամեայ էր Ասլանեան վախճանած ատեն, այլ երիտասարդական թարմութիւն կը պահէր իր նիւթական և բարոյական և մտաւորական կեանքին մէջ: Նա կրնար իրաւամբ ազգային գործիչներու ոչ միայն երիցագոյնը այլև արդիւնաւորագոյնը սեպուիլ: Ասլանեան իր գործունէութեան մէջ ազատական ձգտումներու վոյդ կը պահէր չափաւոր ուղղութիւնը, վերացական սկզբունքներէ չէր հեռացեր գործնական տեսութիւնները, և ամէն դասակարգէ և ամէն կուսակցութենէ հաւասարապէս յարգուած էր. տարաձայնութիւնները համաձայնութեան բերելու ձիրքն ունէր: Համեստ դասակարգէ՝ ծեփարար Եղիայի զաւակ էր, պետական վարժարաններ յաճախող քրիստոնեայ աշակերտներուն անդրանիկը կը սեպուեր բժշկութեան ճիւղին մէջ համբաւ կը վայելէր թէ՛ իբրև ուսուցիչ և վարիչ և թէ՛ դարմանիչ. Վիտուրական դասակարգէն ըլլալով՝ մինչև վօրավարութեամբ աստիճանին հասած էր: Վերջին վայրկեանին Օրմանեանէ խնդրեց իր գործերը հոգալ և իր երկրորդ ամուսնոյն դստեր տէր կանգնիլ, և նա մտադիր ստանձնեց և Շիշլիի գերեզմանատան մէջ պատշաճ շիրիմ մըն ալ կանգնելու հոգ տարաւ: Ասլանեանի ազգային գործունէութեան գլխաւոր մասերը պատմութեանս կարգին յիշած ենք արդէն: Վարչութեան երկու ատենապետներու մահուամբը՝ պաշտօնը ստանձնեց Տիգրան

ԵՆՍՈՒՖԵԱՆ, նա ալ ապգային գործոց փորձառու մը, որ փոխանորդաբար սկսած էր վարել ատենապետութիւնը երկուքին հիւանդութեան օրերէն:

3024. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ Կիլիկիոյ ընտրութեան պատմութիւնը ամբողջացնելու համար ետ թողուցինք նոյն միջոցին վարչութեան և կառավարութեան յարաբերութեանց պարագաները պատմել: Ըսինք իր կարգին թէ 1899 ապրիլին վարչութիւնը սահմանադրական շրջան մը լրացուցած ըլլալով փորձեց նոր ընտրութեան անցնիլ, բայց ստիպուեցաւ լռել և շարունակել (3012), և նոր ընտրութեան խօսք չըրաւ մինչև որ 1901 ապրիլին երկրորդ երկամեայ շրջան մը ևս լրացուց, և անգամ մըն ալ կրկնեց նոր ընտրութեան պէտք լինելուն ազդարարութիւնը: Սակայն կառավարութեան կողմէ միևնոյն պատասխանը կրկնուեցաւ, որ է ընտրութենէ առաջ վերաքննութիւնը լրացնել, և վարչութիւնը դարձեալ ստիպուեցաւ շարունակել, զի ոչ կրցաւ սահմանադրութեան փոփոխութիւն յանձն առնուլ, և ոչ պատրիարքարանը առանց վարչութեան լքանել (ՕՄԱ.75): Քանի քանի անգամներ կրկնուեցան կառավարութեան կողմէ տրուած դիւրութեանց խոստումները, և խոստումներուն ալ առժամեայ և չափաւոր գործադրութիւնները, այնպէս որ թերևս անյարիր նկատուին նորէն պատրիարքարանի կողմէն եղած պահանջները ու բողոքները: Ստուգիւ ալ իրականութիւնը ճշմարիտ երևէջ մըն էր դիւրութեանց և դժուարութեանց, մեղմութեանց և խստութեանց: Որչափ պատրիարք ու վարչութիւն առիթները հեռացնելով հանդարտ գործունէութեան արդիւնաւորման կը հետևէին, այնչափ կուսակցական կեդրոններ և գործադիր գործիչներ միջադէպներ ստեղծել կը ջանային հանդարտութիւնը խանգարելու, մասնաւոր խլրտումներով աղէտներ ստեղծելու, և կառավարութիւնը խոստացնելու, և իբրև հետևանք եւրոպական միջամտութիւններ ակնկալելու, և հայկական խնդրի լուծումը փութացնելու համար: Մինչև իսկ երևակայական խլրտումներու և գաղափարական պատրաստութիւններու լուրեր կը հասցնէին կայսեր՝ անանուն տեղեկատուներու դերը վարելով, միշտ կայսրը գրգռելու, և գրգռելով իրենց ծրագիրը իրագործելու նպատակով: Այդ մասնաւոր և անբաւական փորձերու ասպարէզ ընտրած էին Սասունը, դրացի Մուշով և մերձակայ Վանով խառնուած: Այս նպատակով գրգռուած էին Կէլիէկուպանի և Ջբաղանքի միջադէպերը, և անոնցմէ առաջ կու գային յարաբերութեանց ելևէջները: Գրգռութիւնները իրոք խստութիւններ կը նորոգէին, բայց ակնկալեալ միջամտութիւնը չէր չէր յաջորդէր, և պատրիարք ու վարչութիւն կը ստիպուէին դիւրութեանց և մեղմութեանց վերանորոգուելուն համար դարձեալ ողոք ու բողոք գործածել: Խլրտումներ և վրոյցներ անգամ մըն ալ կացութիւնը ծանրացուցած էին 1902 մարտին մէջ, և ապրիլ 4-ին յատուկ և խիստ բողոքագիր մը մատուց պատրիարքը, չնայելով որ ապրիլ 2-ին կայսեր կողմէ ականակուռ օսմանիէ պատուանշանը շնորհուած էր իրեն, գանգատները լռեցնելու դիտմամբ. իսկ բողոքագիրէն ետքը Եւրոպիոյ Հայոց համախմբութեան և Պարսկաս տանի Հայոց յարձակման խոսքերով ջանք կըլլար պատրիարքը ահացնել ու լռեցնել: Իսկ նա համախմբութիւնը եղելութեանց փաստով կարդարացնէր, և յարձակումը մտացածին ցուցնելով կը հերքէր (ՕՄԱ.73): Զննութիւններ և վննութիւններ ապրիլ 4-ի բողոքագիրին ելքը կուշացնէր, ուստի մայիս 6-ին կայսեր և յունիս 1-ին նախարարութեան կրկնումներ դրուեցան. վարչական ժողովն ալ պատրիարքին համամիտ գտնուելով՝ յունիս 6-ին իր նիստերը դադրեցուց իբր նշան համերաշխութեան: Պատրիարքն ալ պահանջումները սաստկացնելով այս անգամ ինքն ալ գործէ քաշուելու միտքը կապմեց, և յուլիս 10-ի վարչութեան հաղորդեց, թէ մտադիր ըլլալով հրաժարական ներկայել և ընդունուիլը հաւանական երևնալով, պէտք է որ ինքը գործի գլուխ դառնայ որպէսզի պատրիարքարանը առանց իշխանութեան չմնայ (ՕՄԱ.74): Իրօք ալ Օրմանեան յուլիս 20-ին պայմանական հրաժարագիրը կը հասցնէր նախարարութեան և կը հաղորդէր

արքունեաց և վարչութեան և մինչ կառավարութիւնը անընդունելի կը հռչակէր, վարչութիւնը իր համեմատութիւնը կը յայտնէր կրօնական և քաղաքական ատենապետներու պատգամաւորութեամբ: Նախարարութիւնը կրկին և կրկին հրաւերներով կը փորձէր պատրիարքը հրաժարականէն ետ դարձնել, աստ և անդ յայտնուած խլրտումները կը վեկուցանէր, և կայսերական ցասումն ու վայրոյթը կը պատճառէր, բայց երբ այս միջոցներով ալ արդիւնք մը չէր տեսներ, իբրև պիջողութեան պայման պատրիարքի և վարչական ժողովներու անդամոց անձնական երաշխաւորութիւնը կը պահանջէր, թէ երթեկի թոյլտուութենէն որ և է անտեղութիւն պիտի չծագի. պատրիարք և վարչութիւն չվարանեցան երաշխաւորութիւն տալ օգոստոս 14-ին, կայսերական հրաման արձակուեցաւ և 17-ին, թէ Հայոց նկատմամբ միևնոյն ձևերը պիտի գործածուին ինչ որ ուրիշ ազգերու համար կը գործածուին: Պատրիարքը գրաւոր յայտարարութիւն ալ պահանջեց, բայց արքունական առաջին քարտուղարը իր պաշտօնական յայտարարութիւնը և պաշտօնատուներուն ալ հաղորդուած ըլլալուն լուրը բաւական սեպեց և պատրիարքը օգոստոս 18-ին պարտաւորուեցաւ պիջանիլ (ՕՄԱ.75), ոչ միայն պի պնդելը անձնական պատուոյ խնդիր կրնար նկատուիլ, և կայսեր գահակալութեան նախընթաց օրը վարմունքի անապնդութիւն մեկնուիլ, այլ և Կիլիկիոյ խնդիր կար մէջտեղ, պոր մղելու և վերջացնելու համար պէտք էր պաշտօնական մարմինը տեղը գտնուէր: Վարչութիւնը օգոստոս 28-ին ժողովական որոշմամբ պատրիարքին ընթացքը հաստատեց և իւրացուց, երթեկի և ուրիշ կէտերու դիւրութիւններ ալ պահ մը իրօք տեսնուեցան (ՕՄԱ.76) և այսպէս փակուեցաւ 1902-ի տագնապը, որ կրնայ երրորդ ըսուիլ, նախնական 1899-ի (3013), Կիլիկեան 1900-ի (3017) պատրիարքական տագնապներէն ետքը:

3025. ՍՊԱՌՆԱԼԻՔ ԵՒ ՄԱՀԱՓՈՐՁ

Պատրիարք և վարչութիւն իրենց ուղղութեամբ կը յառաջէին և համերաշխ համաձայնութեամբ կը գործէին, միակ նպատակ ունենալով կացութիւնը հնարաւորութեան չափով բարւոքել, աղէտները խափանել, վտանգեալ ազգութիւնը պահպանել, կարելիութեան աստիճանով կապդուրել, երևակայական փորձերը վզուանալ, անխորհուրդ ձեռնարկներ խափանել: Թուրքիոյ մէջ ապրող հայութիւնը, որ իրեն կրած նեղութեանց դարմանին կը բաղձար, գոհ էր այդ ուղղութենէն, և թէ մայրաքաղաքէն և թէ գաւառներէն շնորհապարտ գոհունակութեան արտայայտութիւններ կը տեղային և պատրիարքին ու վարչութեան իրենց ուղղութեամբը շարունակելու համոզումը կաճեցնէին: Բայց համամիտ չէին արտասահմանի կուսակցական կեդրոնները, իրենց կողմէն եկող գրգռիչներն ու գործիչները, և անոնմէ գրաւուած հետևողները, ինչպէս կը քաղուէր անոնցմէ բխող պարբերական և թռուցիկ հրատարակութիւններէ, որոնցմով կը հրապուրուէին միամիտ հետևողները: Կուսակցութեանց ուղղութիւնն էր ներկայելով չպբաղիլ, մանաւանդ թէ աղէտները ծանրացնել, որ Եւրոպան վայրանայ ու գրգռուի և բարօրութեան ապագան պատրաստուի: Այդ միտքին որոշիչ փաստը պիտի ըլլար եւրոպական պետութեանց ընթացքը, բայց պատրիարք և վարչութիւն պետութեան և դեսպանատանց հետ շարունակ յարաբերութիւններ ունէին, անոնց անտարբեր ընթացքը կը տեսնէին (3000) , և երևակայական տեսութիւններ չէին կրնար մշակել մինչ կուսակցականներ որ ինքպիքնին յայտնապէս յեղափոխական ալ կանուանէին, կը յուսային կամաւոր պոհողութեամբ Եւրոպան բռնադատել, հետևաբար կուզէին պատրիարքարանի վրայ ճնշում գործել, և ժողովականները մէկ կողմ թողլով պատրիարքին վրայ կը ծանրանային . կամ այն էր վայն կարևորագոյն և դիրքին ու գործին տէր նկատէին, կամ թէ ճնշումը մէկուն վրայ ամփոփելով համերաշխութիւնը քակտել և ամբողջը ահաբեկել կը յուսային: Պատրիարքը ստիպելու համար սպառնական նամակներ կը տեղացնէին

շարունակ, զորս նաև ոչ իսկ մէջտեղ կը հանէր, և կառավարութենէ ու հանրութենէ հաւասարապէս կը ծածկէր, առաջին բռնութեանց առիթ չընծայելու և վերջինին վհատութիւն չպատճառելու համար: Այդ բռնադատիչ միջոցները նուազած էին 1902 տարուոյ վերջին ամիսներուն մէջ, երբ յանկարծ խօսքին տեղ գործը կու գար, և 1903 յունուար 6-ին երկուշաբթի օր կենաց դաւաճանութիւն կը փորձուէր Օրմանեանի վրայ: Ճրագալոյցի կիրակի օրը այնպիսի սաստիկ ձիւն մը կը տեղար, որ ոչ կառք և ոչ մարդ կերէր փողոցները, բայց Օրմանեան ստիպուած Բերայի բնակարանէն Գումագաբուի պատրիարքարանը կու գար: Ծննդեան առտուն ձիւնը կը շարունակէր, որով յամրաբար պատրիարքը չկրցաւ ըստ սովորութեան խորհրդարանի մէջ զգեստաւորուելով եկեղեցի մտնել, և աւանդատունէ դաս անցաւ: Երբոր խնամակալութեան թափօրին համար դասին աջակողմեան դուռնէն դուրս կելլէր, հրապէնի ձայն մը կը լսէր, և աչքը դարձուցած ատեն վէնքը գլխուն վրայ կը տեսնէր: Իսկոյն կը ցածնար և երկրորդ հարուածը վրայէն կանցնէր, երրորդ հարուածը կը շեղէր վէնք պարպողին ձեռքին վարնուելէն: Պատրիարք Ս. Ծնունդի մատուռը կապաստանէր, իսկ վէնք պարպողը բարապաններուն և ժողովրդականներուն ձեռքով կը բռնուէր և վրայ հասնող ոստիկաններու կը յանձնուէր: Օրմանեան միայն մատուռին մէջ կը զգար թէ վիրաւորուած է, գնդակը եկեղեցական զգեստները և աջ ուսին միսը ծակելով անցած էր, բարեբախտաբար ոսկրին չէր դըպած, բայց հարկ եղաւ որ ժամարարութենէ հրաժարի և Երէցեան Գէորգ եպիսկոպոս փոխանակեց: Պատրիարքարանի մէջ նուազումի վտանգէն ալ ապատելով անկողին ինկաւ, և լուրը տարածուելով այցելութիւններ յաճախեցին, և օրերով շարունակեցին, թէպէտ լրագիրներու արգիլուեցաւ եղելութիւնը գրել: Պալատէն թիկնապահներ և բժիշկներ, նախարարութիւններէն ողջունաբերներ, և ոստիկանութեան և դատարանի պաշտօնեաներ իրարու յաջողեցին լուր առնելու և նախնական քննութիւն բանալու: Օրմանեանի ջանքն եղաւ գործին կարևորութիւնը նուազեցնել, քննութեանց ընդարձակումը արգիլել, տարապարտ հալածանքներու առիթ չընծայել, վէնք պարպողին իսկոյն ձերբակալուած ըլլալն ալ այդ նպատակը դիւրացուց: Դեղագործութեան աշակերտ երիտասարդ մըն էր նա, Յակոբ Խաչիկեան, որդի Կարնեցի Մկրտիչ Խաչիկեանի, որ Կարինէ և Կ. Պոլիսէ Օրմանեանի ծանօթ և պաշտօնի վրայ գտնուած անձ մըն էր: Եօթը ութը հագուոյ փոքրիկ խումբի մը վրայ ամփոփուեցաւ գործին պատասխանատուութիւնը, գլխաւոր Կ. Պոլիսէ խոյս տուած գտնուեցաւ, Յակոբ մահուան և չորս ընկերներ բերդարգելութեան վճիռ ստացան յունուար 25-ին, որ փետրուար 17-ին վճռաբեկէն ալ հաստատուեցաւ սակայն Օրմանեանի միջնորդութեամբ Յակոբի պատիժն ալ բերդարգելութեան փոխուեցաւ մարտ 8-ին: Դաշնակցութեան կեդրոնը և անոր պաշտօնական պարբերականը իրմէ օտար հռչակեց գործուած դաւաճանութիւնը, զոր իբր անձնական նախաձեռնութեան գործ նկատել տալ ուզեց, թէպէտ գործող խումբին անհատները դաշնակցական անդամակիցներ և յանձնարարական գործիչներ էին: Օրմանեան շաբաթի մը չափ պատրիարքարանի մէջ խնամուելով՝ 11-ին տուն փոխադրուեցաւ, մերժելով հեծեալ ոստիկաններու զգուշական ուղեկցութիւնը: 25-ին կրցաւ Ղալաթիոյ եկեղեցին ուխտի և կայսերական պալատ շնորհակալութեան երթալ, 30-ին պատրիարքարան գնաց, 31-ին կայսեր կողմէ յատուկ ունկնդրութեան ընդունուեցաւ, և փետրուար 5-ին սկսաւ կանոնաւորապէս պաշտօնական գործոց հետևիլ, որչափ ալ հիւանդութեան միջոցին հրահանգներ ու թելադրութիւններ պանց չէր ըրած: Մահափորձին հետևանքն եղաւ, որ Օրմանեան ոչ միայն պաշտօնը լքանելու միտքը չունեցաւ, նոյն իսկ նոյն օրը գրուած սպառնական նամակին վրայ, այլևս անձնական վտանգի պատճառով դասալիք մը չերևնալու համար հրաժարականի խօսքն ալ լռեցնել հարկ սեպեց, և երկար միջոց մը այդ փաստը չգործածեց դժուարութեանց հանդէպ և կառավարութեան առջև: Կուսակցական

գործունէութեան մասին մեղադրանքով խօսեցանք, բայց տարապարտ խօսած չենք ըլլար, երբոր կը տեսնենք որ իրենք են որ պիրար չարաչար կը մեղադրեն, և իրարու դիմակը վար առնելու նպատակով անախորժ հրատարակութիւններ կը կատարեն (ՃԳՆ. Դ.): Սկզբունքի և ուղղութեան մասին ալ իրար չհասկացող դարձած՝ իրարմէ կը պառակտին, և Հնչակեան, Դաշնակցական, Վերակազմել, Վերվերակազմել, Միութենական, Ռամկավարական և ուրիշ անուններով իրարմէ անկախ և իրարու հակառակ մաքառող ճիւղեր կը կազմեն, և իրարու վրայ մահափորձեր կը կատարեն, և սպանութիւններ ալ կը գործեն (ՃԳՆ. Դ. 235): Մենք չենք սիրեր այդ անախորժ պատմութիւնները կրկնել, և ոչ ալ յեղափոխականներէ սպաննուած յեղափոխականներու անունները տալ բաւական կը սեպենք ազգային կեանքին պատմութիւնն ըրած ու պաշտօնական կեդրոնին ուղղութիւնը բացատրած ըլլալ:

3026. ՌՌՒՍԱՀԱՅ ԿԱԼՈՒԱԾՆԵՐ

Կուսակցական շարժումներ իրենց նախօրէքին պարզապէս Տաճկահայոց կացութեամբ պբաղելուն և հակառակակային ուղղութիւն ունենալուն, ռուսական կառավարութեան անպատեհ չերևցան, և մինչև աստիճան մը լռելյայն և անուղղակի քաջալերութիւն ալ գտան: Սակայն իրենց շարունակութեան մէջ ընդարձակութիւն ունեցան, տաճկահայկականը ընդհանուր հայկականի կերպարան առաւ, Ռուսահայոց վիճակն ալ տագնապալի և վարմանալի երևցաւ, Ռուսիոյ ոչնչական շարժումին հետ շփուեցաւ, և անոր հետ միացած ու անկէ որդեգրուած կարծուեցաւ, և հայութիւնը, հայութեան բարօրութիւնը, հայութեան ապագան, ռուսական մտադրութիւնն ալ գրաւեցին, և այսպէս բոլորովին կերպարանափոխուեցան ռուսական կառավարութեան և Ռուսահայ հանրութեան յարաբերութիւնները, նախ կասկած, կասկածէ վգուշութիւն, և վգուշութենէ խստութիւն, խստութենէ բացառութիւն, բացառութենէ հալածանք Ռուսահայոց վրայ ալ ծանրանալ սկսան: Շատոնց Ռուսաց կառավարութիւնը մտադրութիւն դարձուցած էր Հայոց դպրոցներուն վրայ, որոնք Մակարի ընտրութենէն առաջ անդամ մըն ալ փակուեցան (2886ա.) և Մակարի օրով վերաբացուեցան (2926), բայց միշտ կասկածոտ վերաբերումը չվերցուեցաւ հասարակութեան և գլխաւորապէս դպրոցներու վրայէն: Խնդիրը վերանորոգուեցաւ 1897 յունիս 2-ին, և անոր վրայ նոր օրէնք մը հրատարակուեցաւ 1898 մարտ 26-ին ոչ միայն դպրոցները այլև դպրոցական կալուածները կառավարական հսկողութեան ներքև առնելու, որ բաւական տագնապեցուց Խրիմեանի կաթողիկոսութիւնը, բայց և Մայրաթողը յաջողեցաւ դատարանական վճռով ապացուցանելու թէ կալուածները պատկանում են իբրև սեփականութիւն ոչ թէ դպրոցներին, այլ եկեղեցիներին և վանքերին (ԴԷՊ.10): Կովկասի կառավարչապետ իշխան Գալիցին, որ կարծես յատկապէս Հայերը վսպելու հրահանգով այդ պաշտօնին կոչուած էր, երբ առաջին միջոցը խափանուեցաւ, ուղղակի եկեղեցական կալուածները կառավարութեան ձեռքն անցունելու առաջարկը կազմեց, որ առաջին տեսութեամբ խիստ երևցաւ նախարարներէն ոմանց, իբր վի Հայ ազգաբնակչութեան մէջ խոր դժգոհութիւն կարող էր առաջացնել, և մասնաւոր հսկողութեան կերպը մտածուեցաւ: Նոր ծրագիր մը կազմուեցաւ նպատակ ունենալով կարճել Հայոց բարձր հոգևորականութեան և ինդելիգենցիայն օրինականց գործակցութիւնը, և յատուկ քննութեան ենթարկուեցաւ, որ նախադասեց սահմանափակել Հայոց եկեղեցու ինքնավարութիւնը, և հաստատել իրական վերահսկողութիւն եկեղեցական արդիւնքների և ծախքերի վրայ (ԴԷՊ.11): Բայց կառավարչապետը միշտ իր առաջին առաջարկին վրայ կը պնդէր, և ներքին գործոց նախարարութեան յանձնուեցաւ անոր հետ խորհրդակցիլ և որոշման մը յանգիլ, որ թէպէտ երկուքին մէջ գոյացաւ բայց 1901 յուլիս 26-ին դարձեալ ամբողջական նախարարութեան յանձնուեցաւ քննել և որոշել: Այս առթիւ ներքին գործաց նախարար Պլեվէ ամրապէս

պաշտպանեց Գալիցիին տեսութիւնները, և բաւական երկար խորհրդակցութիւններէ ետքը, վերջապէս 1903-ին անհրաժեշտ նկատուեց Հայ-Լուսաւորչական եկեղեցու կալուածների վարչութիւնը կեդրոնացնել կառավարչական հիմնարկութիւնների տեսչութեան տակ, և յունիս 12-ին կայսերական ստորագրութիւնն ալ ըստացուեցաւ և հաստատուեցաւ (ԴԷՊ. 14), և Կովկասի մէջ իբրև բօթաբեր գոյժ մը հնչեց պաշտօնական հեռագիրը, թէ լոյս տեսաւ բարձրագոյն հրաման Հայ-Լուսաւորչական եկեղեցու կալուածները գրաւելու մասին (ԴԷՊ. 9): Նոր օրէնքը կը տրամադրէր. 1. Ռուսաստանի և Կովկասի Հայ եկեղեցիներու և ուրիշ հոգևոր հաստատութիւններու բոլոր կալուածներուն մատակարարական վարչութիւնը յանձնել երկրագործութեան և պետական կալուածներու նախարարութեան, ի բաց առեալ հաստատութեանց շէնքերը, եկեղեցի, վանք, վարժարան, առաջնորդարան, գերեզմաննոց և անոնց շուրջը գտնուող երեք արտավարի չափ գետիներ, որոնք օտարի չեն վարձուիր: 2. Նոյն մատակարարութեան ենթարկել ասկէ ետքը ստացուելիք կալուածները: 3. Կալուածներէ արդիւնաւորած հասոյթները և տոկոսներէ գանձուած գումարները յանձնել ներքին գործող նախարարութեան: 4. Բոլոր հասոյթները 10% պատել մատակարարութեան ծախքերու և կալուածոց նորոգութեան համար, և 5% պահեստի դրամագլուխ կազմելու համար, և մնացեալով հոգալ եկեղեցիներու ու վանքերու ու հոգևորականներու պէտքերը: 5. Հանրային կրթութեան նախարարութեան յանձնել դպրոցներու պահպանութեան որոշուած գումարները: 6. Ներքին գործոց նախարարութեան իրաւունք տալ մատակարարական կանոններ հաստատելու, համարատուութեան ձևեր որոշելու, և ամէն պատահական խնդիր լուծելու և գործադրելու: 7. Օրէնքը նոր գրութիւնը կը պարգևեր և կը վճռէր պահպանելով Հայ-Լուսաւորչական եկեղեցու սեփականութեան իրաւունքները այդ կալուածների ու դրամագլուխների վրայ (ԴԷՊ. 16-19), և կը յայտարարէր թէ այժմեան մատակարարութիւնը չէ համապատասխանում ոչ պետական իշխանութեան նպատակներին և ոչ իրեն եկեղեցու օգուտներին, և ոյժ կու տար պահեստի դրամագլուխի գրութեան իբրև միջոց բոլոր եկեղեցիները հաւասարապէս հոգալու, մինչ այժմ, կըսէր, շատ կան այնպիսի ծուխեր որ միջոցները չափապանց անձուկ են, և գիւղական հոգևորականութիւնը սակաւ ապահովուած է (ԴԷՊ. 14): Թէպէտ օրէնքին հրատարակութիւնը 1903 յունիս 12-ին լսուեցաւ, սակայն մի ամբողջ ամիս թաքստի մէջ պահուելէ յետոյ պաշտօնապէս հրատարակուեցաւ յուլիս կէսին (ԴԷՊ. 16): Իսկ Գալիցիին որ այդ նպատակով եօթը ամիսներ Պետրբուրգ մնացած էր (ԴԷՊ. 10), գործը աւարտելէն ետքը յաղթական ձևով Տիդիս դարձաւ, և անմիջապէս գաղտնի հրամաններ արձակեց ոստիկանութեան ու զօրանոցներուն (ԴԷՊ. 19): Ռուսական կառավարութեան այդ նոր ձեռնարկին հիմը կը կազմէր այն համոզումը, թէ Հայ կղերը պարագլուխ է հայկական շարժումին և մինչև իսկ նախապատրաստող Մեծ-Հայաստանի ամբողջական վերականգման, և թէ ամէն տարի անապատուելի դրամ է տալիս հայկական գործին: Այսպէս Հայոց և Հայաստանի իշխող երկու կայսրութիւններ համամիտ կը գտնուէին վերագրելու հայուն այն կարևորութիւնը զոր նա չունէր, և կուսակցական գործիչներուն վրայ մեծ կարողութիւն և ճարտար գործունէութիւն մը կերակայէին, որ շատ հեռու էր իրականութենէ:

3027. ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՍԿԻՋԲԸ

Իրաւացի էր Հայերուն վրայ ազդած խոր տպաւորութիւնը և միտքերու շարումը, զի 1836-ի պօլօժէնիէն բացարձակ կերպով կապահովէր եկեղեցական կալուածոց մատակարարութիւնը նոյն իսկ եկեղեցիներուն (ՊՕԼ. 22), և վանական կալուածոց մատակարարութիւնը վանքերուն պատկանիլը (ՊՕԼ. 18): Պօլօժէնիէի օրէնքն ալ կաթողիկոսարանի հետ համաձայնութեամբ կազմուած էր (2520), իսկ այժմ թէ պօլօժէնիէն հիմնապէս կը փոխուէր, և թէ կաթողիկոսարանի հետ բանակցութիւն եղած չէր: Յուլիսին կէսէն Էջմիածին ստացած էր օրէնքի ամբողջութիւնը

կառավարչապետի պաշտօնագիրով, և լուրին վրայ յունիս 20-ին Աղէքսանդրապոլ ճշմարիտ հայաբաղաբը առաջին եղած էր կաթողիկոսին դիմելու, որ եկեղեցւոյ հնաւանդ և պաշտօնապէս ճանչցուած իրաւունքը պաշտպանուի (ԴԷՊ. 44). յուլիս 16-ին Օրմանեան պատրիարքը Կ. Պոլիսէ հարցնէր թէ ստո՞յգ է արդեօք լրագիրներու մէջ տեսնուած գրաւման լուրը, թելագրելով միանգամայն պատշաճ դիմադրութիւնն ընել, նկատելով որ նոր օրէնքը թէ եկեղեցւոյ թէ եկեղեցւոյ իրաւանց եղծիչ էր և թէ եկեղեցւոյ պաշտօնեաներուն անարգական (ԴԷՊ. 81): Մայրաթոռոյ միաբանութեան կողմէն ալ յուլիս 30-ին բողոքի և դիմադրութեան յայտարարութիւն ներկայացուած էր եղածին դէմ (ԴԷՊ.129): Նոյնը կընէր օգոստոս 3-ին Երեւանի քաղաքէն ու վիճակէն հաւաքուած հոծ բազմութիւն մը առաջնորդ Սուքիաս Եպիսկոպոսի գլխաւորութեամբ (ԴԷՊ.83) Վաղարշապատի մէջ (ԴԷՊ.63): Իսկ Խրիմեան որ զինքն Թուրքիոյ հալածանքնէն ապառած կարծելով Ռուսիոյ ծանրագոյն հալածանքին հանդիպած և շարուած էր, առ ժամս կը գոհանար օրէնքը Մայրաթոռոյ կողմէն հրատարակութեան չտալով և վիճակներու չհաղորդելով, մինչև որ գործը որոշ ձև մը առնէր: Իսկ Գալիցիոյ շտապ և կտրուկ գործելու հետամուտ (ԴԷՊ.33), խիստ հրամաններ կը հասցնէր ուղղակի եկեղեցականներու, վանահայրերու, առաջնորդներու և փոխանորդներու ոստիկաններու միջոցով, և խիպախ հեծեալներու և իսլամ գիւղապահներու ջոկատներով. զի կը կարծէր և պետական շրջանակներու ալ վստահացուցած էր, թէ կաթողիկոսը ծեր ու տկար է և շուտով կը համակերպի, ժողովուրդն ալ իր եկեղեցականներէն զվուած է և ուրախութեամբ կընդունի (ԴԷՊ.34). բայց ճիշդ անոնցմէ կը սկսէր դիմադրութիւնը: Կաթողիկոսը ընկճելու համար ուղղակի Պլեվէէ հեռագիր կը հասնէր օգոստոս 3-ին, օրէնքը անյապաղ գործադրելու և ծանր հետևանքներու առիթ չտալու (ԴԷՊ.43): Իսկ Խրիմեան կը պատասխանէր օգոստոս 6-ին թէ գործը կրնար ամբողջ հայ եկեղեցու համար անցանկալի հետևանքներ ունենալ. ուստի սինոդական դիմում ընել որոշուած էր, բայց պրոկուրորին չներելուն համար, այժմ նախարարութենէ կը խնդրէ ժամանակաւորապէս յետաձգել գործադրութիւնը և կարելիութիւն տալ կայսեր բացատրութիւններ մատուցանելու (ԴԷՊ.44), և նախարարէն պատասխանը ուշանալուն վրայ օգոստոս 10-ին ուղղակի կայսեր կը հեռագրէր, աւելցնելով բացատրութիւնները անձամբ մատուցանելու պարագան: Ասոր վրայ 12-ին Պլեվէ կը պատասխանէր թէ յետաձգումի և կայսեր ներկայանալու առաջարկները մերժուած են (ԴԷՊ.45), և բացատրական խիստ գրութիւն մըն ալ կը յղէր, թէ այդ առաջին շեղումն չէ Էջմիածնի կաթողիկոսի կողմից, և թէ իրեն հրամայուած է քննութեան ձեռնարկել թէ ուս միապետների հայ եկեղեցուն պարգևած վարչական կազմը ո՛րքան է շարունակում համապատասխանել պետական շահերին (ԴԷՊ.46): Խրիմեան բաւական ոգևորուած էր զանազան կողմերէ յայտնուած յորդորներով, որոնց կը ձայնակցէր Եւրոպիոյ դաշնակցական կեդրոնէն բխած կոչ մը, թէպէտ քիչ մը պոռոտախօս ոճով գրուած (ԴԷՊ.76-78), և այլ ևս յայտնի դիմադրութեան որոշումը տուած էր, զի օգոստոս 4-ին պաշտօնական կոնդակով սինոդին կը հրամայէր օրէնքը չհրատարակել և գործը սահմանափակել ու պէտք եղած հին վաւերագիրերը պատրաստել (ԴԷՊ.36 և 83), և օգոստոս 7-ին նոյն ուղղութեամբ ընդարձակ պատասխան մը գրեց Կ. Պոլսոյ պատրիարքին, նոր վաւերագիրներու պատճէններն ալ յարակցելով, իր ուղղութիւնը գծելով, և թեմակալներն ու վանահայրերը ու փոխանորդները համագումար ժողովի հրաւիրած ըլլալը ծանուցանելով (ԴԷՊ.82-84): Միանգամայն պատ պատ կոնդակներով սինոդին և վեց թեմակալներուն կը հրամայէր ոչ մի կերպով նոր օրէնքին գործադրութեան մասնակից գտնուիլ (ԴԷՊ.37): Ծանուցուած ժողովին նախ կը գումարուէին թեմակալներ և սինոդականներ 9 հոգի, Սուքիաս Եպիսկոպոսի նախագահութեամբ, և օգոստոս 9-ին հրամանին համակերպելով հրաժարականին կը մատուցանէին, որ սակայն ընթացք

չէր ունենար: Երկու օր ետքը օգոստոս 11-ին կը գումարուէին վանահայրեր և փոխանորդներ 22 հոգի, դարձեալ Սուբիաս եպիսկոպոսի նախագահութեամբ, և կայսեր հաւատարմութիւննին վկայելով կը խոստանային գործադրութեան չմասնակցիլ (ԴԷՊ.131-133): Նման յայտարարութիւն մըն ալ ամբողջ միաբանութիւնը կը ներկայէր (ԴԷՊ.129-130) յուլիս 30-ին: Իսկ Կ. Պոլսոյ պատրիարքը կանխած էր Տաճկահայոց բողոքին պաշտօնականութիւն և ծանրակշռութիւն տալու համար օգոստոս 5-ին Կ. Պոլիս գտնուող եպիսկոպոսները ժողովի գումարել ներկայութեամբ 12 անդամոց, որոնք էին ինքն Օրմանեան, Մեսրոպ Սուբիասեան, Բարթողիմէոս Չամիչեան, Գրիգորիս Յովհաննիսեան, Վահրամ Մանկունի, Տիմոթէոս Սափրիչեան, Ելնիկ Ապահունի, Հմայեակ Դիմաքսեան, Մկրտիչ Վեհապետեան, Գէորգ Երէցեան, Ներսէս Ասլանեան և Գաբրիլ Ճէվահիրճեան եպիսկոպոսներ (ԴԷՊ.84): Լոկ եպիսկոպոսներով ժողով գումարելու ձևը նախադասուեցաւ, զի գործը ընդհանուր հայ եկեղեցւոյ և ուղղակի Մայրաթոռոյ հետ կապ ունէր, և յի սահմանադրական վարչութեան կրօնական և քաղաքական ժողովներուն նշանակութիւնը նուազ էր ռուսական կառավարութեան աչքին: Այդ ժողովին մէջ նկատի առնուեցաւ թէ Մայրաթոռոյ և բոլոր ռուսահայ եկեղեցեաց և վանօրէից և վարժարանաց շարժական կամ անշարժ գոյքերը պօլօթէնիէէն ճանչցուած և ընդունուած են իբր ընդհանուր ստացուած ողջոյն լուսաւորչական եկեղեցւոյն Հայոց (ՊՕԼ.21), որով իրենք ալ իբր նոյն եկեղեցւոյ եպիսկոպոսներ և նոյն աթոռի միաբաններ իրաւունք ունին իրենց ձայնը լսելի ընել տալ: Այդ սկզբամբ որոշուեցաւ յիշեալ գոյքերու սեփականութեան համար և մատակարարութեան համար ամենուն ստորագրութեամբ գրել ամենայն Հայոց կաթողիկոսին և ուղղակի դիմել Ռուսաց կայսեր և ծանուցանել Ռուսաց դեսպանին, և պատրիարքին յանձնուեցաւ գրութիւնները պատրաստել և առաքումները հոգալ: Կաթողիկոսին գիրը շուտով պատրաստուելով անմիջապէս ճամբայ հանուեցաւ (ԴԷՊ.84-85), իսկ կայսեր ուղղուելիք գիրը գաղղիերէն պատրաստուեցաւ և Հայերէնի վերածուեցաւ, թէ՛ ազգային լեզուն պահելու և թէ՛ բոլոր ստորագրողներուն մատչելի ընելու համար, և նոր գումարման մէջ կարդացուեցաւ և հաստատուեցաւ օգոստոս 21-ին, և երկու լեզուով ընդօրինակուելով և ստորագրուելով յղուեցաւ (ԴԷՊ.91-95) ուղղակի կայսերական պալատան նախարար Ֆրիտիրիքսի՝ դեսպանին խորհրդով որ յարմարգոյն դատեց գործակից չերևնալ, իսկ Իվան Ջենովիէվ դեսպանին յանձնուեցաւ ընդարձակ գաղղիերէն յիշատակագիր մը սեպտեմբեր 9 թուականով (ԴԷՊ.95-106), որուն համեմատ նա ալ արտաքին գործոց նախարարութեան տեղեկագրեց յոյժ նպաստաւոր ոճով, զի Գալիցիինի ուղղութենէն տարակարծիք ըլլալը քանիցս առանց քաշուելու յայտարարած էր:

3028. ՊԱՏՐԻԱՐՔՐԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս գտնուող եպիսկոպոսներ կաթողիկոսին ուղղուած գիրով կը յանձնարարէին նոր օրէնքին գործադրութիւնը արգիլելու համար Ռուսաց կայսեր դիմել, և կը թելադրէին յիշեցնել յատուկ օրէնքով ապահովուած իրաւունքները պաշտօնական յայտարարութիւններով հաստատուած սկզբունքները, ժողովուրդին բարեպաշտական քաղաքական հաւատարմութեան հիմ ըլլալը, եկեղեցական կալուածոց և գոյից դպչողներուն դէմ արձակուած ահագին նպովքները, հայրապետական իշխանութեան պէտք եղան անհրաժեշտ պահանջները, և այլ նմանօրինակ կէտեր, և կը խոստանային իրենք ալ գործել և ճգնիլ որքան և պէտք իրացն պահանջիցեն և դիմել ուր և յոյս ակնկալութեան ելցէ ընդ առաջ: Իսկ կայսեր ուղղուած օգոստոս 21-ի ուղերձով պատշաճ յառաջաբանէ մը ետքը՝ կը յայտարարէին թէ գոյից մատակարարութեան մշտնջենաւոր դադարումը համապօր է սեփականութեան դադարման, և այդ ալ հաւասար է իրաւունքնին ջնջուելուն, և հայ եկեղեցւոյ իրաւունքնին ջնջուիլն ալ եկեղեցւոյն դադարումն է, և խափանում է

միոյն ի հիմնական օրինաց պետութեան: Իսկ իրենք և իրենց ձայնակից բոլոր եպիսկոպոսներ և թեմակալներ երդմամբ պարտաւորեալ ըլլալով իրենց եկեղեցւոյն պաշտպանութեան՝ յայտնի մատնութիւն ընդդէմ եկեղեցւոյ և ուրացութիւն ընդդէմ հաւատոց իւրեանց ըրած պիտի ըլլային եթէ լռէին: Կը յիշեցնեն ևս թէ Ռուսիոյ մէջ գտնուող բոլոր կրօնքներ իրենց կրօնական պաշտօնեաներու ձեռքով կը մատակարարեն իրենց սեփականութիւնները, և հայ եկեղեցին ալ պէտք է նոյն կերպով մատակարարուի, մանաւանդ որ Ռուսիոյ հայ եկեղեցիներու բոլոր գոյքերը արդիւնք և սեփականութիւն են ընդհանուր հայ եկեղեցւոյ և ոչ լոկ Ռուսահայոց, Ինչպէս պօլօժէնիէն ալ կընդունի: Վստահ են որ եթէ այդ դիտողութիւններ կանխաւ վեկուցուած ըլլային նոր օրէնքն իսկ կազմուած չէր ըլլար: Կը վկայեն թէ Հայեր իրենց եկեղեցին պահելէ վատ ուրիշ ձգտում չունին, և կը մերժեն իրենց վերագրուած անուղիղ մտայնութիւնները, կը յիշեցնեն Հայերու կողմէ ռուսական պետութեան ընդարձակման և վարգացման համար մատուցուած ծառայութիւնները, կը խնդրեն հրամայել վղադարումն բռնադատիչ գործադրութեանց, և կը կնքեն օրհնութիւններով և մաղթանքներով (ԴԷՊ. 91-95): Դեսպանատան մատուցուած սեպտեմբեր 9-ի յիշատակագիրը կը սկսի յայտարարել թէ ի՛նչպէս եկեղեցւոյ սեփականութիւնը ի վաղուց անտի և անյիշատակ ժամանակաց հաստատուած իրաւունք կը կազմէ պօլօժէնիէն ալ պայն ընդունած է, հակասական կը գտնէ նոր օրէնքին սեփականութեան իրաւունքը պահելը և մատակարարութեան իրաւունքէ ընդմիջտ վրկելը, և այդ կէտը կը փաստաբանէ պանապան գիտական սկզբունքներով և տրամաբանական պատճառաբանութիւններով, հիմնուելով նաև Ռուսաստանէ դուրս գտնուող Հայերուն իրաւունքին տէր լինելուն, և պետական հսկողութեան պէտք եղած պայմաններուն պօլօժէնիէով հաստատուած ըլլալուն վրայ: Նկատի կառնէ որ ռուսական եկեղեցւոյ գոյքերն սինոդով, և կաթողիկ ու բողոքական ու մահմետական կրօնքներու գոյքերն կրօնական մարմիններով կը մատակարարուին, և Հայոց համար ալ նոյն օրէնքը կը հերքէ հայ հոգևորականութեան կողմէ վատ մատակարարութեան բարուրանքը, նկատելով որ ցարդ և ոչ մէկ ամբաստանութիւն եղած է սինոդի և ատեաններու դէմ, որ եթէ ճշմարիտ ալ ըլլայ, պաշտօնական քննութենէ և ժամանակաւոր հսկողութենէ աւելի հետևանք չէր կրնար ունենալ: Մտադրութիւն կը հրաւիրէ որ Ռուսահայեր ցարդ փայլած են իրենց հաւատարմութեամբ և անձնուէր ծառայութեամբ, կը հետևցնէ ընդհանուր հայութեան վագացած ցաւը և միանգամայն վարմանքը, իրենց եկեղեցւոյն պատպան եղած Ռուսիոյ յանկարծ իր դերը փոխելուն վրայ, որ մինչև իսկ կրօնական ընդհանուր սկզբունքներ ոտնահար ընելու կերպարանը կը վզենու: Կը պատմէ Տաճկահայերուն մէջ վագացուած ցնցումը, ամէն կողմերէ պատրիարքարան տեղացող բողոքները, կաթողիկոսին գրուած յայտարարութիւնը, Ռուսաց կայսեր մատուցուած դիմումը, և կը յուսայ որ դեսպանատունն ալ, որ այդ ամէնը աքին ներքև կը տեսնէ, պիտի հաճի իր կառավարութեան հաղորդել և գայթակղութիւնը վերջացնել տալ (ԴԷՊ.95-106): Պատրիարքը առանձին գրութեամբ սեպտեմբեր 24-ին կը հաղորդէր կաթողիկոսին այդ դիմումներուն պատճէնները կարևոր բացատրութիւններով, ինչպէս նաև օգոստոս 25-ի երկրորդ կոնդակին պատասխանները: Լսած ըլլալով որ կաթողիկոսը միտք ունի հրաժարիլ կամ Ռուսիայէ մեկնիլ, երկու միտքերն ալ եկեղեցւոյ վնասակար ըլլալը բացատրելով, յանուն եպիսկոպոսական դասուն և վարչութեան և ժողովրդեան, կը յորդորէ արիաբար դիմադրել առանց հրաժարելու և առանց հեռանալու: Ակնարկելով օսմանեան կառավարութեան միջնորդութեան ալ դիմում ընելու միտքին, կը յայտարարէ թէ պետական յարաբերութիւնք երկուց կայսերութեանց բարեկամական կրեն կերպարան, և ոչինչ ի մերոյն անտի լինի մեզ ներել որ ձերոյն չիցէ հաճելի: Կը յիշեցնէ նաև որ ժողովրդական բուռն ընդդիմութիւնը, քարաձգութիւնք և հրապինաց կիրառութիւնք, եթէ

ստոյգ են, կրնար Հայերուն վրայ խռովարարի անունը հաստատել և վնասակար դառնալ: Վերջապէս եպիսկոպոսաց կողմէն կաթողիկոսին ուղղուած գրութեան պատճէնը ամէն եպիսկոպոսներու և առաջնորդներու յղուեցաւ, որ ստորագրելով դարձնեն, ուստի պատրիարքը կը խոստանայ հասածները հետզհետէ յղել ի լրումն համերաշխ համաձայնութեան բովանդակ եպիսկոպոսական դասուն ընդ գրոյն յղելոյ ի գտելոցն ի մայրաքաղաքի: Պատրիարքը այսչափով ալ չգոհանալով խնդիրին իսկութիւնը բացատրող ընդարձակ գրութիւն մը պատրաստեց գաղղիերէն լեզուով, գործին անիրաւութիւնը և անտեղութիւնը բացատրող լուսաբանող բոլոր պատճառաբանութիւններով և տեղեկութիւններով, և վայն ուսուցչապետ Փիլիպպոս Վարդանեանի ձեռքով և պարսկական դեսպանատան խորհրդական Մասեհեան Յովհաննէս Խանի ծախքով Պերլինի մէջ տպագրել տալով, բոլոր Եւրոպիոյ և Ամերիկայի նախարարութեանց ու դեսպանութեանց և լրագիրներու և հանդէսներու խմբագրութեանց ցրուել տուաւ, որ բաւական մեծ և նշանակալից յուզում պատճառեց ամէն կողմեր, և խիստ մեղադրանքներ շարժեց ուսական քաղաքականութեան դէմ, որոնք իրենց ազդեցութիւնն ունեցան գործին վերջաւորութեան վրայ:

3029. ԳՈՐԾԱԴՐԱԿԱՆ ԽՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Գալիցիինի կազմած շուտ ու կտրուկ գործելու ծրագիրը գործադրութեան գրուած էր երբոր այդ թղթակցութիւնք և փոխադարձ յարաբերութիւնք կը կատարուէին: Կաթողիկոսին կողմէ յայտարարուած դիմադրութեան և օրէնքին գործադրութենէ խուսափելուն վրայ, Երեւանի փոխ նահանգապետ իշխան Նակաշիցէ սեպտեմբեր 3-ին Երեւանէ կը մեկնէր (ԴԷՊ.177), և 4-ին կաթողիկոսին կը ներկայանար գործադրութեան ստիպելու (ԴԷՊ.38): Կաթողիկոսը կը պատասխանէր թէ պետական գործոց համար երդուած էր կայսեր հաւատարիմ ըլլալ և պատրաստ էր կենօք չափ ծառայել, բայց հոգևորական և կրօնական գործոց համար աւելի կանուխ երդուած էր Աստուծոյ՝ հաւատարիմ մնալ եկեղեցւոյ, և չէր կրնար ուրիշ կերպ գործել: Պատգամաւորը կը կրկնէր թէ ինքն ալ երդուած կայսեր հաւատարիմ ըլլալ և անպայման ծառայել և պարտաւոր էր իր թագաւոր կայսեր սուրբ կամքը գործադրել. իսկ կաթողիկոսը կը կրկնէր թէ եկեղեցւոյ դէմ ձեռնարկին մասնակից լինել չէր կրնար, և իրեններուն ալ հրամայած էր մասնակից չըլլալ (ԴԷՊ.38-40): Իսկ Նակաշիցէ սեպտեմբեր 6-ին ձեռնամուխ լինելով Էջմիածինայ վանքապատկան Վաղարշապատի կայքերն իրապէս ընդունելու, կամ որ նոյն է, հողային կալուածները գրաւելու, Վաղարշապատի կառավարչական պաշտօնատունը ժողով կը գումարէր և պաշտօնապէս կը հրատարակէր, թէ եկեղեցական կալուածների սեփականութեան իրաւունքը մնում է նոյն եկեղեցուն, և միայն փախուում է գոյքերի կառավարելու ձևը, թէ ինքն չէ դիպչում ոչ կրօնքին և ոչ եկեղեցական սրբութիւններին, և թէ այսուհետև այդ կալուածները գործածողները և վարողները գործ պիտի ունենան երկրագործութեան և պետական գոյքերու նախարարութեան հետ, և ոչ Էջմիածնայ վանքին հետ, և այդ ամէնը գիրի առնելով կնքել կու տայ 7 պաշտօնեաներու, 6 գիւղապետներու, և 18 պատուաւոր գիւղացիներու առանց կաթողիկոսի կամ կաթողիկոսարանէ մէկու մը մասնակցութեան, համաձայն կաթողիկոսի յայտարարութեան: Այդ յայտարարութիւնը իբրև ապստամբութիւն նկատելով (ԴԷՊ. 41) Գալիցիինի կողմէ ամէն տեղ հրամայուեցաւ վօրութեամբ և բռնութեամբ եկեղեցական կալուածներէ վատ գոյից և դրամոց և արժէից ալ տիրանալ, որով ընդարձակուեցաւ բռնապատութեանց շրջանը (3027): Կաթողիկոսի հետ Նակաշիցէի տեսակցութիւնը կրկնուեցաւ սեպտեմբեր 15-ին, ուր պատգամաւորը յայտնեց թէ ինչպէս կալուածները գրաւած են նոյնպէս պիտի գրաւեն գանձարանի մէջ գտնուած գումարը: Կաթողիկոս կը պատասխանէ թէ սեպտեմբեր 13ին դիմում ըրած է կայսեր և պատասխանին կը սպասէ, իսկ գտնուած դրամը չի կրնար յանձնել որ միաբանութեան օրապահիկն է և իր պաշտօնին

անհրաժեշտ է: Նակաշիցե կը կրկնէ թէ իր նախագահած յանձնախումբը կալուածները գրաւած ատեն ընդդիմութեան հանդիպած չէր և գանձարանին գումարը շատ աննշան է գրաւած կալուածներուն արժէքին հանդէպ, իսկ կայսեր դիմումը գործադրութիւնը չէր կրնար արգիլել, պի ի հարկին ամէն բան նոր հրամանի համեմատ կրնար կարգադրուիլ: Ասոր վրայ կաթողիկոսը նորէն կը կրկնէ թէ գործադրութեան չի կրնար մասնակցիլ, և թէ իրեններուն ալ հրամայած է չմասնակցիլ: Պատգամաւորը գանձարանը կնիքի ներքև առնելով կը մեկնի, բայց կը դառնայ սեպտեմբեր 23-ին: Նախապէս վանքը, վեհարանը, ճեմարանը, դպարապատը պաշարման ենթարկելէ յետոյ գանձարանին դուռը կը հրամայէ կոտորել, դրամարկղը փշրել և պարունակութեան կը տիրանայ, արժեթուղթեր 400,000 ուրբի, թղթադրամ 14,000, ոսկեդրամ 1 ֆունտ, արծաթ դրամ 6 ֆունտ, և հին դրամներ, զորս պինուորական մեծ հսկողութեամբ կը փոխադրեն Երևան (ԴԷՊ. 177-180): Երբոր այսչափ բռնութիւն կը գործուէր Մայրաթոռի մէջ կաթողիկոսի անձին դէմ, կրնայ մտածուիլ թէ ինչե՛ր կրնային գործուիլ ուրիշ քաղաքներու մէջ, որոնց պատմութիւնները մի մի եղերական վէպեր կրնան կազմել, բայց մենք անոնց մանրամասնութեանց մտնել պանց կընենք, և բաւական կը սեպենք Աղեքսանդրապոլիս, Երեւանի, Ախալքալաքի, Կարսի, Գանձակի, Տփղիսի, Բագուի, Շուշիի, Նորնախիջևանի, Մեծղարաքիլիսայի անունները յիշատակել (ԴԷՊ.206-246): Աւելի սաստիկ էին գիւղական քահանաներու և եկեղեցականներու վրայ գործածուածները: Գիւղ մը 150 հեծելազօր ռազմական շեփորով կը մտնէ և ժողովուրդին վրայ կը ծանրանայ, քահանայն և եկեղեցպանը կը ծեծուին և կը կապուին (ԴԷՊ.166): Ուրիշ գիւղ մը 22 եկեղեցպաններ միասին կը բանտարկուին, գրաւումը ստորագրել կը բռնադատուին, և երբ չեն հաւանիր, մտրակով կը ծեծուին, ցեխերու և ջուրերու մէջէն քալելով ճամբայ կը հանուին, գաւառապետին կը տարուին, գոմերու մէջ կը բանտարկուին, և մահուան սպառնալիքով կը տանջուին ու կը չարչարուին (ԴԷՊ.168): Ղամարլուի գիւղապետը երբոր երկար ու սաստիկ հարուածներ ընդունելէ ետքը, հարուածողի վրայ կը խոյանայ, գիւղացւոց վրայ հրացանաձգութիւն կը հրամայուի, և չորս դիւաներ ու 25 վիրաւորներ գետին կը փռուին (ԴԷՊ. 170): Ուրիշ գիւղի մը եկեղեցպանը և աւանդը սաստիկ կը գանակոծուին՝ յօժարակամ եկեղեցին ու գոյքերը չյանձնելուն համար, հեծեալներու առջևէն կը վաղցնեն և բռնի եկեղեցի մտնելով միայն 26 կոպեկ կը գտնեն (ԴԷՊ. 172): Սոխումի շրջանակէն գիւղի մը եկեղեցիին առաստաղը բանալով կը մտնեն, և քահանան ու եկեղեցպանը ու աւագը ձերբակալելով դատարանի կը յանձնեն (ԴԷՊ. 174): Նոյնը կը կատարեն Կարսի և Նուխիի ևև ուրիշ շատ շրջանակներու գիւղերուն մէջ. ամէն կողմ ծեծ, տանջանք, սպանութիւն, նոր օրէնքին անունով (ԴԷՊ. 175): Սիւնեաց կողմեր եկեղեցպան մը ծեծի տակ կը մեռնի, քահանաներ կը բանտարկուին, եկեղեցիներ կը պղծուին, մինչև իսկ եկեղեցւոյ խորաններ և սեղաններ կը քանդուին, միշտ ծածկուած հարստութիւն ձեռք ձգելու նպատակով: Անհատնում է այս տեսակ դիպուածներու շարքը (ԴԷՊ. 247-250), որոնք կարծէս թէ պարսից խաների ժամանակէն հնութեան փոշիով ծածկուած գործերը վերականգնեցին (ԴԷՊ. 101):

3030. ԲՈՆԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ

Ոչ միայն անակնկալ, այլ և անհաւատալի ըլլալու չափ անսպասելի էր Կովկասի հայկական շարժումը: Եկեղեցական գոյից պահպանութիւնը նուիրակին և կրօնական զգացմանց լրումն էր, և կաթողիկոսական գահէն արձակուած հրահանգը ամէնքը կը յուպէր, ապա թէ ոչ հնար չէր միտքէ իսկ անցունել, որ Կովկասի խաղասէր հայը, և ռուսական պետութեան ներքև իր բարօրութիւնը գտած և իր փափաքին տիրացած ըլլալու գոհունակութիւնը զգացող հայը, այսչափ խստիւ և յայտնի և անկաշկանդ ծառանար ռուսական հրամանին դէմ, և ամէն կերպով ու զոհողութեամբ

դիմադրեր նոյն իսկ պինեալ գունդերու և անհարկու խապահներու դէմ: Շարժումին բուն հիմը և դիմադրութեան մղող իսկական գրգիռը հայուն կրօնական պագացումն էր, կրօնամոլ երևնալու չափ իր եկեղեցւոյն յարած և փարած պագացումը. պի հայը որչափ ալ դաւանութենէ դաւանութիւն անցնելու դիւրամէտ տեսնուի քրիստոնէութեան ընդարձակ և ապատամիտ ըմբռնմամբ, նոյնչափ ալ ամուր կը մնայ իր եկեղեցիին պաշտպանութեան երբ իրաւունքի խնդիր ներկայանայ: Հետևաբար երբեք հայուն բնաւորութենէն օտար կամ ընթացքէն վարտողի չէր Ռուսահայերուն մէջ արթընցած եռանդը և իր եկեղեցական օտարութիւններէն պրկուելուն դէմ պագացած պայրոյթին եռանդի հետ խառնուելով յառաջ բերած ընդդիմութիւնը, որ կը յայտնուէր երբեմն պրկմանց հանդէպ յանձնառու համակերպութեամբ, և երբեմն բռնութեանց հանդէպ յախուռն դիմադրութեամբ, երկուքն ալ արիական և հաստատակամ հետևանք: Սակայն եղան որ կարծեցին կամ հաւատացնել ջանացին թէ բոլորովին տարբեր եղած ըլլայ հայուն ընթացքը իբրև արդիւնք կուսակցական շարժումներու մինչ կուսակցական շարժումներու. մինչ կուսակցական ոգին անարգող է կրօնական պագացմանց, և կրօնական խնդիրներու հանդէպ անտարբեր կը մնայ, կրօնքն ու կրօնականութիւնն ու կրօնասիրութիւնը ծաղու առարկայ դարձնելու չափ: Ըսած ենք արդէն թէ կուսակցական շարժումը, և ի մասնաւորի դաշնակցականը, օսմանեան կառավարութեան ընթացք և Տաճկահայերուն վիճակը իրեն նպատակ ունէր, և Ռուսիոյ մէջ հալածուած չէր, որով Ռուսահայոց մէջ բաւական ընդարձակուած էր, կուսակցականութիւնը այդ պարագայէն օգտուեցաւ, և եկեղեցական գոյից խնդիրը իր գործունէութեան ասպարէզ կապմեց, և շարժումը ուղղեց օրէնքին դէմ, և իրեն հետևողները դիմադրութեան ասպարէզ հանեց, կարծես մարպանքի փորձեր ընելու գետին գտած ըլլար: Այսպէս միացան Ռուսահայոց մէջ եկեղեցական ըպագացումներն ու կուսակցական շարժումները, և դաշնակցական պետեր պարծանքի առիթ կապմեցին, իբրև թէ իրենք շարժած ըլլային ապգովին դիմադրութեան գաղափարը, իրենք պահած հաստատակամ յարատևութիւնը, իրենք արգիլած նոր օրէնքին համակերպութիւնը, և իրենք ապատած կրօնքն ու եկեղեցին, իբր պի գնդակահար ըրեր են Վաղարշապատի գլխաւորներէն Սարգիս Փօթոյեանը, և Ղարատողլու գիւղի Գարեգին քահանայն, և խեղդամահ ըրեր են Կորիս գիւղի Խաչատուր քահանայէն, օրէնքին գործադրութեան համակերպելուն համար (ԴԷՊ. 252): Մինչև իսկ Խրիմեանն ալ մասնաւոր նամակի մէջ կը գրէր թէ բանի մը օգտակար եղած ըլլան այդ խենթուկ տղաները: Սակայն պատմական եղելութեանց հետևելով դժուար չէ տեսնել, թէ կուսակցական ձևով և ոգւով շարժումներէն քաղուած օգուտները, եթէ իրօք ալ եղան եկեղեցական յուլումին մէջ, աւելի մեծ եղան անոնցմէ յառաջ եկած վնասներն ու վտանգները: Եկեղեցւոյ պաշտպանութեան համար մղուած պայքարին, կորչի միապետութիւնը, կեցցէ հանրապետութիւնը աղաղակներուն խառնուիլը (ԴԷՊ. 195,196,198), խնդիրը իր տեսակետէն խախտեց, և պաշտպանողական ձևին յարձակողականի փոխարկուիլը գործին իսկութիւնը շփոթեց, հայ տարրին դէմ թաթարական տարրը պինելու պատճառանք կապմեց, և ապգային կորուստներու ու վնասներու առիթ ընծայեց, և դաշնակցական ոյժը իր մէջը ոչընչացուց, որ եթէ Ռուսահայոց մէջ աճելով Տաճկահայոց պիտի նպաստէր, Ռուսահայոց վրայ ալ, հալածանքներ, բանտարկութիւններ, աքսորանքներ, դատաստաններ և դատապարտութիւններ հրաւիրեց, և խաղաղ դիմադրութեան ձեռնարկը պինուած դիմադրութիւն և ապստամբութիւն կարծեցնել տուաւ (ԴԷՊ. 204): Իրաւ դէմընդդէմ մրցումը ժամանակ անցնելով թուլացաւ և եպերական հետևանքները նուազեցան, սակայն տեղական կառավարութեան միտքէն չջնջուեցաւ Հայոց հանդէպ կասկածոտ և պսպողական ընթացքը, որուն տեղի տրուած չէր ըլլար, եթէ կուսակցութիւնը գործի խառնուած չըլլար, կամ գոնէ խառնուած ատեն խնդիրին օտարոտի ձևերը և պարագաներ չխանէր: Տէրոր

(terreur) ըստածը, որ է սպառնալիքով ահաբեկել, և գործադրութեամբ սպառնալիքը պօրացնել, պոր դաշնակցականութիւնը իբր պարծանք կիւրացնէր, չենք կարծեր որ եկեղեցական գոյից խնդիրը լուծելու իսկական փաստն եղած ըլլայ, մինչ ընդհակառակն Ռուսահայերը հալածանքի և նեղութեանց ենթարկուելուն իրական առիթը տուաւ: Գալիցիին կառավարչապետին վրայ 1903 հոկտեմբեր 14ին կատարուած դաշունահար մահափորձը (ԴԷՊ.253), Գալիցիինը չկասեցուց իր բռնաւորական ձեռնարկներէն, և Անտրէէվ նահանգապետի (ԴԷՊ.258) և Բօգուսլովսքի գաւառապետին (ԴԷՊ.263) և Բըկով գնդապետին (ԴԷՊ.264), և ուրիշ քանի մը լրտեսներու սպանութիւնները (ԴԷՊ.265) չնուազեցին անիրաւ պաշտօնեաներու թիւը, երբ աճեցուցին Ռուսահայոց վրայ կատարուած փորձանքներուն դէպը:

3031. ԴԻՄԱԴԱՐՁ ԳՈՐԾՈՒՆԷՌԻԹԻՒՆ

Երբ կուակցական շարժումները Կովկասի մէջ խնդիրին իսկութիւնը կը խանգարէին, խաղաղ դիմադրութեան նախնական ձևը խափանուած չէր բարձր շրջաններու և արտասահմանի շրջանակներու մէջ, և կը շարունակէր օրինական դիմումներով, համուպիչ յորդորակներով և ոգևորեալ քաջալերութիւններով, որոնք ամէն կողմերէ կը հասնէին Խրիմեանի, որպէսպի տեղի չտալ և ոչ ալ տեղէն կամ պաշտօնէն հեռանայ, այլ կրաւորական և խաղաղ դիմադրութեամբ անեղծ պահէր սկզբունքն ու իրաւունքը: Նոր օրէնքին պահած ցնցումը մինչև նոր աշխարհ հասած էր, և Ամենիկայի, Փրովիտէնս և Շիքակօ և Ուստր քաղաքներէ բողոքախառն քաջալերականներ կը հասնէին (ԴԷՊ.68-69), Պուկարիա, Եգիպտոս, Պարսկաստան, Հնդկաստան իրենց ձայնը կը բարձրացնէին (ԴԷՊ.69-76), Թուրքիոյ եպիսկոպոսներ և առաջնորդներ Կ. Պոլիսէ յղուած գրութեան համերաշխութիւննին կը յայտարարէին, որոնք հետզհետէ Մայրաթոռ կը յղուէին, Կիլիկիոյ կաթողիկոս Խապայեան, Երուսաղէմի պատրիարք Վեհապետեան, նախորդ պատրիարք Իսմիրեան (ԴԷՊ.86), իրենց հեղինակաւոր ձայնով Խրիմեանը կը սրտապնդէին. Օրմանեան շարունակեալ թղթակցութեամբ եղելութեանց ամէն մանրամասնութիւնները կը հաղորդէր, Կ. Պոլիս գտնուող եպիսկոպոսներ Ռուսաց կայսեր մատուցած ուղերձին պատասխանը ուշանալուն և հետզհետէ բռնութեանց և բռնադատութեանց լուրեր հասնելուն վրայ, նոյեմբեր 12-ին երկրորդ ուղերձ մըն ալ կը յղէին կայսեր, որուն մէջ գործածուած բռնութեանց դէմ կը գանգատէին, թէ նոր կարգադրութիւնք պատիժք են յայտնապէս, և մի՞թէ մեղապարտ համարեցին մարդիկ, թէ ընդէր չառնուն յանձն անձամբ անձին ածել վպատիժն: Ուրիշ տեսութեամբ մըն ալ կը հաւաստէին թէ հայն կեցեալ է ցարդ միայն վասն կրօնից և վասն եկեղեցւոյ իւրոյ, և թէ նա սրբապղծութիւն համարի վամենայն ձեռնարկ ընդդէմ եկեղեցւոյ, և չի կրնար գործակցիլ սրբապղծութեան: Ուրիշ շատ փաստերով կը ջանան եպիսկոպոսներ կայսեր խիղճին և հաւատքին վրայ ազդել, որ դադարին օրէնքին գործադրութիւնը և գործադրութեան բռնութիւնները, պորս համառօտակի բայց համարձակ կը թուարկեն: Կիլիկիոյ կաթողիկոսն և Երուսաղէմի պատրիարքն ալ կայսեր հասցէին մէկմէկ ուղերձ հասուցած էին պատրիարքին, պորս Օրմանեան գաղղիերէն թարգմանելով կը յղէ հասցնէին և արքունեաց նախարարը նոյեմբեր 26-ին և դեկտեմբեր 2-ին պաշտօնագիրներով Օրմանեանի կը հաղորդէր կայսեր ուղղուած բոլոր գիրերուն կայսեր յանձնուած ըլլալը, բայց միսիթարական արդիւնք մը չէր լսուեր տակաւին, ընդհակառակն լրագրական տեղեկութիւն մը կը հաղորդէր թէ պատասխանը ժխտական է (ԴԷՊ.116). բայց կաթողիկոսն ալ կը հաւաստէր թէ եկեղեցական կալուածները չյանձնելու որոշումը վերջնական է իրենց կողմէ (ԴԷՊ.124): Ասոր հետ մէկտեղ կաթողիկոսը կը տեղեկացնէր, թէ որչափ ալ օրապահիկի միջոցներէ ալ պրկուած է աթոռը, սակայն ջերմեռանդ ապգայիններ սատար հանդիսացան և հանդիսանան, և միաբանութիւնն ու ձեմարանը չթողուն պուրկ յաւուր պարենէ և

յանհրաժեշտ պիտոյից (ԴԷՊ. 119): Միւս կողմէ Կ. Պոլիս կը յանձնարարէր թէ պէտք չէ կառաարութենէ դրամ ընդունիլ, եթէ տալ իսկ ուզուի (ԴԷՊ. 117), կը յանձնարարէր ևս մէկ կամ երկու կարող անձեր ունենալ Պետրբուրգ, որ կարենան տեղեկանալ և տեղեկացնել կատարուած անցուդարձերը, և ծանօթութիւններ քաղել Պօլօժնիէի մուծուելիք փոփոխութեանց վրայ, և թախանձանօք կը խնդրէ միտքէ հանել հրաժարելու կամ հեռանալու կամ աթոռ տեղափոխելու խորհուրդները: Այս ցրիւ տեղեկութիւնները բաւական կը սեպենք Էջմիածնայ Մայրաթոռին վրայ տիրող տագնապին նկարագիրը գծելու առանց շատ մանրամասնութեանց մտնելու: Խրիմեան կաթողիկոս կացութեան սաստկանալը տեսնալով և անձամբ Պետրբուրգ երթալու արտօնութեան պլացուելուն վրայ, շատ ընդարձակ (ԴԷՊ. 137-165) բացատրական գրութիւն պատրաստել կու տար, նոր օրէնքին տրամադրութեանց և հետևանց, Հայ Եկեղեցւոյ իրաւանց և կանոնաց, և օրէնքին իբր պատճառ ցուցած ենթադրութեանց վրայ: Պարունակութիւնը վերագոյնդ գրաւած կամ քաղուած տեղեկութեանց համաձայն ըլլալուն, նորէն քաղել աւելորդ կը սեպենք: Բացատրական գիրը դեկտեմբեր 12 թուակիր նամակով մը կայսեր կը յղէր, խնդրելով նկատի առնել իր գիրը և յատուկ յանձնաժողով մը կազմել այդ գործին քննութեան համար, և իրեն ալ ձայն տալ նոյն ժողովին մէջ, որպէսպի արդարութիւն և ճշմարտութիւն երևան գան և գայթակղութիւն ու տագնապ վերջ գտնան (ԴԷՊ. 134-137): Սակայն այդ արդար խնդրանքն ալ նկատի առնուեր, այնպէս որ 1903 սեպտեմբեր 2-ին Բագուի մէջ սկիզբ առած արձակ համարձակ դիմադրութեան տարեդարձին, 1904 սեպտեմբեր 2 ին կուսակցական մարմինը հայերը կը հրահրէր դիմադարձութեան վրայ հաստատուն մնալու (ԴԷՊ. 198-200): Բայց տակաւին շուտով չվերջացաւ տագնապը, ինչքեր և կալուածներ գրաւելու համար թափուած հայու արիւնը, բողոքող պոհերը, դիմադարձ ըմբոստացումները գրեթէ տարի մը ևս շարունակեցին, ցորչափ Գալիցիոյ իր պաշտօնին վրայ մնաց, և բռնութեամբ ժողովուրդը սպաւելու և յուսադրութեամբ կառավարութիւնը խաբելու ձեռնարկը շարունակեց:

3032. ՌԻՂՂՈՒԹԵԱՆ ՅԵՂԱՇՐՋՈՒՄ

Ռուսահայոց վրայ հասած տագնապին իբրև հեղինակ և գործադիր մատնանիշ եղած է Կովկասի կառավարչապետ Գալիցիոյնը. սակայն նա չէր յաջողեր եթէ իրեն հովանաւոր և քաջալերող չունենար ներքին գործոց նախարար Պլէվէն, որ ոչ միայն կայսեր վրայ կապդէր պէտք եղած հրամանները արձակել տալու, այլև Գալիցիոյնը կը պաշտպանէր և բուռն հրահանգներով կը պինէր: Այդ կէտը վստահօրէն կրնանք շեշտել, դիտելով որ Ռուսիոյ կայսերական և կառավարական շրջանակներուն տեսութիւնները փոխուեցան Պլէվէի մահուամբը, որ տեղի կունենար 1904-ի վերջին օրերը: Իրեն յաջորդող Ավիաթօրուս-Միրսքի իշխանին առաջին գործերէն մին կըլլար Գալիցիոյնը պաշտօնէն հեռացնել (05. ԲԻՋ. 2529), և Կովկասը առժամարար յանձնել օգնական Մալամա պօրավարին, մինչև նոր կառավարչապետի ընտրութիւնը: Պարզեան Սուքիաս եպիսկոպոս և վարդապետներէն բաւական թուով Գալիցիոյնի հրամանով Ռուսիոյ ներսերը աքսորուած էին, իբր Մայրաթոռոյ դիմադրութիւնը սպաւելու միջոց, Մայրաթոռը կը մնար ամէն միջոցներէ պուրկ, և բարեպաշտներու նպաստներուն կարօտ, ալևորեալ ու տկար ու հիւանդագին կաթողիկոսը տագնապներու ներքև կընկճուէր, ներքին բարեկարգ ընթացքին օձանները կը պակսէին, սակայն դիմադարձ ուղղութիւնը միշտ միևնոյն կերպով կը շարունակէր. և այդ ձախող ընթացքը, ով գիտէ, մինչև ե՞րբ պիտի տևէր եթէ Պլէվէ ապրէր և Գալիցիոյն իշխէր. բայց այս երկուքին հրապարակէն պակսելը առիթ ընծայեց խաղաղական դիմադարձութեան նոր շրջան մը սկսելու, որուն առաջին նշանը Կ. Պոլիսէ տրուեցաւ, և 1905 յունուար 2-ին Օրմանեան նոր դիմում մը ըրաւ Ռուսիոյ կայսեր (05, ԲԻՋ. 2544), առիթ առնելով Վանայ վանքերուն Կովկասի մէջ ունեցած հայսոյթներուն ալ գրաւուիլը (05. ԲԻՋ. 2529), և կրկնելով ընդհանրապէս նոր օրէնքին

դադարման մասին կանխաւ եղած դիմումները (3027): Կայսերական արքունեաց նախարարը 12-ին կը պատասխանէր և բոլոր գրութեանց յանձնուած ըլլալը կը ծանուցանէր (05. ԲԻՁ. 2545): Յուսադրական էր պատասխանը և կառավարական տեսութեանց մէջ յեղաշրջումին նշանն էր. Վի Մալամա ալ եթէ օրէնքը Տփղիսէ խախտել չէր կրնար, գոնէ ուղղակի Տփղիսէ բխած կարգադրութիւններ կը մեղմէր և աքսորուած միաբաններուն հետզհետէ դառնալը կը ներէր (05. ԲԻՁ. 2549): Խրիմեան ալ նոր ոգևորութիւն կը զգենուր և նոր յիշատակագիրի մը հետ պատգամաւորներ ալ կը յղէր Պետրբուրգ տեղեկութիւն քաղելու և բացատրութիւն տալու, և այդ յանձնարարութեամբ ճամբայ կը հանէր Խուտավերտեան Ներսէս եպիսկոպոսը՝ իբր աթոռական գործոց հմուտ և վարժ, և Տէր Մովսիսեան Մեսրոպ վարդապետը՝ իբր Ռուսիոյ համալսարանական և լեզուին քաջահմուտ, որոնք Պետրբուրգ հասնելով ներքին գործոց նախարարը փոխուած և Պուլիկինը անցած կը գտնէին, Սվիաթոբոլոքէն ոչ նուազ նպաստաւոր անձնաւորութիւն մը (05.ԲԻՁ.2564): Նպաստաւոր յեղաշրջման հիմ կը կազմէր 1903 փետրուար 16-ի հրովարտակը, որով պաշտօնական անձեր կը հրահրուէին կառավարական բարեօրման և բարգաւաւաճման համար ներկայել իրենց դիտողութիւնները ծրագիրների կատարման կարգին մասին, և այդ ծրագիրներուն մէջ կը մտնէր նաև բոլոր այլակրօն և այլադաւան հպատակների ապատութիւնը, դաւանելու իրենց կրօնը և կատարելու իրենց ծէսերն ըստ կրօնի (03.ԱՐԲ.292-293): Այդ ժամանակները սկսած էր և կը շարունակէր 1904 յունուար 27-ին ճաբոնի դէմ հրատարակուած պատերազմը (04.ԱՐԲ.195), և զէնքի բախտը նպաստաւոր չէր դառնար Ռուսներուն, ինչ որ կը գայթակղեցնէր և կը վայրացնէր նոյն իսկ միամիտ ժողովուրդը, տեսնելով ոչ քրիստոնեաց ազգի մը քրիստոնէին վրայ զօրանալը, և կառավարութիւնը կը ստիպէր ժողովուրդէն հեռացնելու քրիստոնեաները վշտացնող և միտքերը վրդովող պարագաները, և մեղմօրինակ ընթացքով մը տէրութեան համակիր և կառավարութեան համերաշխ պահելու իր ամէն դասակարգերը և ամէն ազգութիւնները: Որչափ ալ Ռուսիոյ կառավարական շրջանակներու մէջ բարեմտութեան զօրանալը ենթադրենք, չենք կրնար չխոստովանիլ թէ կառավարութեան մը, մանաւանդ Վիեննայի ամենիմաստ և ամենակարող ըմբռնող կառավարութեան մը համար, դիւրին չէր որոշումէն ետ դառնալ, վճռածը ջնջել, սխալած ըլլալը ընդունիլ, մտաւորական երկունքի մը հոգեկան ցաւերը յանձն առնուլ: Այդ փորձէն անցան Հայ եկեղեցւոյ գոյից և կալուածոց համար 1903-ին, և Հայ դպրոցներու համար 1898-ին տրուած գրաւման հրամանները: Յատուկ յանձնաժողով մը կազմուեցաւ ներքին գործոց նախարարութեան մէջ, որուն մասին փետրուարին վերջերը լսուեցաւ թէ գրուած օրէնքները անփոփոխելէ պահել կը խորհի (05.ԲԻՁ.2570). սակայն շուտով վրայ հասաւ Կովկասի կառավարչապետութեան փոխարքայական վերածուիլը և Իլարիոն Վորոնցով-Տաշկով կոմսին մարտ 8-ին այդ պաշտօնին անուանուիլը, որ կը յիշեցնէր Կովկասի մէջ պաշտելի ըլլալու չափ սիրուած նախկին Վորոնցով անունը, որուն թոռն ալ էր Տաշկովի ամուսինը, (05.ԲԻՁ.2580), և միևնոյն ատեն կը լսուէր թէ Հայոց գործն ալ նոյն փոխարքային յանձնուած է (05.ԲԻՁ.2588): Պետրբուրգ գտնուող պատգամաւորները այս անգամ սկսան Վորոնցովի հետ բանակցիլ, և յուսադրական և քաջալերական պատասխաններ ընդունիլ, ինչպէս Խիւտավերտեան մարտ 28-ին Խրիմեանի կը հեռագրէր (05. ԲԻՁ. 2592). բայց դարձեալ վերջնական որոշումը կը յապաղէր Վի պէտք էր սովորական ձևակերպութիւնները լրացնել և արդարացուցիչ հանգամանքները պատրաստել, որչափ ալ խոստումներ և յուսադրութիւններ օրէօր կը զօրանային և կը վկայուէին, որոնց արձագանգ կըլլար նոյն իսկ Լապարեան իշխանապունը (05. ԲԻՁ. 2605): Տփղիսի քաղաքային ժողովն ալ պաշտօնապէս դիմում կը կատարէր Հայոց ի նպաստ (05. ԲԻՁ. 2614), ուսական հեղինակաւոր լրագիրներն ալ, որ երբեմն Հայերու հակառակ հրատարակութիւններ ըրած էին, այս

անգամ ստիպողական կը հռչակէին Հայերը որ առաջ գոհացնել (05. ԲԻՁ. 2608): Այս նպատակով փոխարքային հասնելէն ետքը յատուկ յանձնաժողով մը կազմուիլը կը խօսուէր (05. ԲԻՁ. 2635), միևս կողմէ կը հրատարակուէր թէ վերցուած է Տաճկահայ եպիսկոպոսներուն համար Էջմիածին գալու արգելքը որ Գալիցիինէ գրուած էր, և Հայ եկեղեցականներուն դատարանական արտօնութիւններէ վրկուելուն բարձր հրամանը (05, ԲԻՁ. 2637): Վերջապէս Վորոնցով Տփղիս հասաւ մայիս 5-ին, Հայերը խանդավառութեամբ ընդունելութիւն ըրին սպասուած յաջողութիւնը իբր լրացած նկատելով, կաթողիկոսին կողմէ յատուկ պատգամաւորութիւն մը եկած էր Էջմիածինէ փոխարքան ընդունելու, որ փոխադարձաբար նոյն իսկ հասած օրը Օրթոտոքս եկեղեցի ուխտ ընելէ ետքը, Հայոց Մայր եկեղեցին ալ կու գար ուխտ կատարելու (05. ԲԻՁ. 2638): Վորոնցով շուտով պաշտօնական քննութիւն բացաւ, տեղեկութիւններ հաւաքեց, և որչափ ալ բարձրագոյն հաճութիւնը կանխաւ ստացած էր, ձևակերպութիւններն ալ վանց ընել հնար չէր, և մայիս 29-ին տակաւին գործը անորոշ կըսուէր (05. ԲԻՁ. 2681). սակայն յունիս 25-ին, կաթողիկոսին անձամբ կատարած բարեգալստեան այցելութեան առթիւ, փոխարքան կը յայտնէ թէ ձեր այս խնդիրը պիտի կատարուի (05.ԲԻՁ.2683), ինչ որ ենթադրել կու տայ թէ նա արդէն պէտք եղած պաշտօնագիրը յղած էր Պետրբուրգ, որ ըստ այնմ հրովարտակը պատրաստուի:

3033. ՏԱԳՆԱՊԻՆ ՎԵՐՋԱՆԱԼԸ

Յունիս 25-ի աւետիսը սիրտերը հանդարտեցուցեր էր. Պետրբուրգէ դարձող Տէր-Մովսիսեան ալ վստահութիւն ներշնչող տեղեկութիւններ բերած էր կաթողիկոսին, բայց ամիս մը ևս կանցնէր և սպասուած պաշտօնական հրովարտակը դեռ չէր երևնար: Խրիմեան, Վորոնցովի տուած այցելութենէն ետքը, Պօրժօմի ամարանոցը մեկնած էր իր վտանգեալ առողջութիւնը կազդուրելու: Յուլիս 24-ին Տփղիս դարձաւ Միքայէլ որդի Նիկողայոս մեծ դուքս ողջունելու, և քանի մը օրեր ևս Տփղիս դեղերելով Էջմիածին դառնալու: Օգոստոս 2-ին երկուշաբթի օր, կէս յուսախաբ, այլ ոչ յուսաբեկ, փոխարքայական ապարանքը այցելութեան գնաց՝ կոմսին և կոմսուհույն հրաժեշտի ողջոյնը տալու: Երբոր խօսքը նորէն դպրոցներու և կալուածներու խնդիրներուն շուրջը կը դառնար, և կաթողիկոս իր սովորական ակնկալութիւններն ու բացատրութիւնները խօսելու կըլլար, Վորոնցով խօսքը ընդհատելով կաւետէ թէ թագաւոր կայսրը, համաձայն կաթողիկոսի խնդրանքին և իր տեղեկագիրին, բարեհաճեցաւ նպաստաւոր միտքով վճռել Հայոց եկեղեցական կալուածներուն վերադարձման և հայ դպրոցներու վերաբացման խնդիրը (05. ԲԻՁ. 2714). իրօք ալ նախորդ օր օգոստոս 1-ին ստորագրուած էր բարձրագոյն հրամանը վարիչ ծերակոյտին ուղղուած (05. ԲԻՁ. 2713): Խրիմեան ակնորժելի և մխիթարական անակնկալի դիմաց կը գտնուէր, իսկոյն օրհնական բերանը կը բանայ կայսեր և կայսերութեան համար, ամէն մաղթանքներ և եռանդուն շնորհալիքներ կը խօսի, և վստահութիւն ստանալով, անմիջապէս առաջնորդարան կը դառնայ և հեռագիրներ կը պատրաստէ սինոդին, Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքներուն, Ռուսահայոց և Պարսկահայոց առաջնորդներուն, գլխաւոր վանահայրերուն և կարևոր քաղաքներուն, զորս նոյն երեկոյ և յաջորդ առտու հետզհետէ կը յղէ: Կ. Պոլիս ուղղուած հեռագիրը օգոստոս 3-ի երեկոյին հասնելուն, փոխանակ Գումգաբուի պատրիարքարան տարուելու, Բերայի կայարանէն Բերայի պատրիարքին տունը յանձնուած էր, զոր նա հոն պատրաստ կը գտնէր, երբոր ուշ ատեն տուն կը դառնար, և նոյն գիշեր ու յաջորդ առտու աւետիսը բոլոր կարևոր անձանց կը հասցնէր: Աւելորդ է Օրմանեանի զգացած մխիթարութեան մասին առանձինն խօսիլ, զի ամէնքը ծանօթ էին անոր երկու տարիէ ի վեր շարունակել անձնական և հաւաքական ջանքերուն, դիմումներուն, ձեռնարկներուն, և բերանացի ու գրաւոր յօգնութիւններուն (03. ԲԻՁ. 2708): Բովանդակ հայութեան մէջ ալ մեծ եղաւ

խնդութիւնը, որչափ մեծ եկած էր երկու տարի առաջ պագցուած տխրութիւնը, որուն հաւաստիքն են ոչ միայն Ռուսիոյ բոլոր քաղաքներուն ու գիւղաքաղաքներուն ու գիւղերուն մէջ կատարուած տօնական հանդէսները, այլ և ամէն կողմերէ տեղացող հարիւրաւոր հեռագիրները, ամէնն ալ սիրտի եռանդուն վեղուածներով լեցուն: Կաթողիկոսը շրջաբերականով հրամայած էր առաջիկայ օգոստոս 7-ին Աստուածածնայ բարեկենդանի կիրակի օրը, գոհաբանական մաղթանքներ կատարել Ռուսիոյ եկեղեցիներուն մէջ. Տփղիս ինքն նախագահեց վանքի մայրեկեղեցւոյ բակը կատարուած մաղթանքին, ուր մոտ 20,000 բազմութիւն էր հաւաքուած. Էջմիածնի մէջ ալ տեղապահ Արիստակէս Դաւթեան եպիսկոպոսի գլխաւորութեամբ, և ամէն տեղ նմանօրինակ մաղթանքներ և շքեղ հանդիսութիւններ կատարուեցան: Խրիմեան օգոստոս 8-ին Տփղիսէ մեկնեցաւ, Ղարաքիլիսա գիշերեց և օր մը հանգստացաւ, և 10-ին մտաւ Ալեքսանդրապոլ, որտեղ անցուց 13-ին Շողակաթի և 14-ին Վերափոխման տօները, և 15-ին Էջմիածին մտաւ եռանդուն ցոյցերով և հանդիսական շքեղութեամբ (05.ԱՐՐ.799-803): Տփղիսէ չելած Խրիմեան երախտագիտական հեռագիրներ ուղղած էր կայսեր ի Պետրբուրգ և փոխարքային Կիւլովորսկ, որոնց պատասխաններուն մէջ կայսրը կը շեշտէր, Աստուած իմաստնացնի հայ հօտը արդարացնելու իմ նրան ցոյց տուած վստահութիւնը, և փոխարքայն կը յիշեցնէ թէ վստահ է որ Կովկասի հայերը կը կարողանան իրենց հաւատարիմ հպատակութեամբ ապացուցանել թէ որքան շնորհապարտ են: Տփղիսի մեծամեծներն ալ առանձին հեռագրով իրենց շնորհապարտ իղձերը յայտնած էին փոխարքային (05.ԱՐՐ.767-772): Խրիմեան միևնոյն օգոստոս 7-ին շրջաբերական աւետաւոր կոնդակ մը ուղղած էր ամբողջ հայութեան, յանուանէ յիշելով Սահակ կաթողիկոսը և Յարութիւն ու Մաղաքիա պատրիարքները (05.ԱՐՐ.773-776): Այսպէս կը լրանար Ռուսահայոց և ամենայն Հայոց երկարատև տագնապին շրջանը, և խնդութեան և խնդակցութեան պագցումներ կը յայտնուէին աշխարհիս մէկ ծայրէն մինչև միւս ծայրը, ուրուրեք որ կը գտնուէին ցրուեալ ու վայրավատին հայութեան մէկ անդամը: Հայութեան պագցած ուրախութիւնը հայութենէ դուրս ալ կը տարածուէր պի բովանդակ ապգերու վրայ տխուր տպաւորութիւն թողած էր Ռուսիոյ ընդգրկած Պլէվէեան ուղղութիւնը և Գալիցիեան գործունէութիւնը: Ռուսաստան ինքն ալ նոյն օրեր դժուարին տագնապներէն կանցնէր, Ճաբոնական պատերազմին ձախողութիւնը և ժողովրդական ներքին յուլումները շատ մօտէն հետևած էին Հայոց դէմ ձեռք առնուած խստութեանց, և կարծես թէ Հայոց հանդէպ ցուցուած արդարակորով հատուցումը բարեգուշակ կըլլար բովանդակ ռուսական կայսերութեան պի նոյն օրեր, օգոստոս 6-ին հրապարակուեցաւ ժողովրդական ապատութեանց խոստումնալից հրովարտակը (05.ԱՐՐ.763-766), և օգոստոս 17-ին կը կնքուէր Ճարոնի և Ռուսիոյ միջև Բօրթսմութի հաշտութեան դաշնագիրը, Ամերիկոյ նախագահ Ռուզվելթի միջնորդութեամբ, և Ռուսիոյ կողմէ տուգանք չվճարելու և միայն Սախալին կղզիին կէսը թողլու նպաստաւոր պայմաններով (05. ԲԻՁ. 2718):

3034. ՊԱՇՏՕՆԱԳԻՐՆԵՐՈՒ ԱՄՓՈՓՈՒՄ

Օգոստոս 1-ին բարձրագոյն հրամանագիրը, ռուսերէն կոչմամբ ուքապը, իբրև հիմ կընդունի թէ վերջին կարգադրութիւններ արգելք էին լինում հայ ապագաբնակութեան կանոնաւոր և խաղաղ վարգացման, և թէ թիւրիմացութիւններ յառաջ կու գային վերջին գոյութիւն ունեցող օրէնսդրութեան թերութիւնից. ծանր խոստովանութիւններ, որոնք լիովին կարդարացնեն Մայրաթողին և ռուսահայ ժողովուրդին հաստատամիտ դիմադարձութիւնը: Իսկ իբր հրամանին նպատակ կընդունի Հայ Լուսաւորչական հոգևորականութեան անհրաժեշտ գործունէութեան ընդարձակ միջոցներ շնորհել ժողովուրդի լուսաւորութեան համար, ինչ որ եղած էր հայութեան ալ մշտնջենական պահանջը, որ այս կերպով իր գոհացումը կը գտնուէր: Հայոց կրած տագնապը

սկիզբն առած էր ազգային դպրոցները ազգային իշխանութեան ձեռքէն հանելով պետական իշխանութեանց յանձնելու որոշումէն: Առաջին քայլը առնուեցաւ դպրոցներու վարչութիւնն ու ծրագիրը ձեռ առնելու հրամանով, իսկ այդ հրամանը պօրացնելու համար դպրոցներու հասոյթներուն ու մատակարարութեան վրայ ձեռք գրուեցաւ, 1898 մարտ 26-ի օրէնքով, և երբ հասոյթներուն եկեղեցւոյ և ոչ դպրոցի սեփականութիւն ըլլալը դատաստանով հաստատուեցաւ, եկեղեցիներու և բոլոր հոգևորական հաստատութեանց կալուածներուն և հասոյթներուն գրաւումը օրինադրուեցաւ 1903 յունիս 12-ի օրէնքով, ուսկից ծագեցաւ մեծագոյն տագնապը (3025): Ուստի կրնանք ըսել թէ եկեղեցական կալուածոց գրաւումը օրէնքին իսկապէս նպատակը չէր, այլ միջոց էր դպրոցական օրէնքին գործադրութիւնը ապահովելու, ուսկից կը հետևի օգոստոս 1-ի հրամանագիրին իբր հիմնական տրամադրութիւն նկատելը ազգային դպրոցներուն վարչութեան՝ 1894 յուլիս 19-ի օրէնքին վերադառնալը, որ է ըսել Գէորգ կաթողիկոսի օրով հաստատուած գրութեան վերահաստատուիլը, որով ըստ ինքեան կոչնչանան և շեղեալ կը դառնան 1898-ի և 1903-ի օրէնքները, որոնք իբրև թերի և իբրև վնասակար վկայուած են նոր հրամանագիրին մէջ: Այս նոր պաշտօնագիրին պարունակութիւնը վերլուծած ատեննիս կը գտնենք ևս մաս մը կարգադրութիւններ որոնք անմիջապէս պետի կարգադրուին, և մաս մըն ալ որոնք պիտի ուսումնասիրուին առաջիկային օրէնք դառնալու համար: Առաջիններն են, 1. Դպրոցներուն վարչութիւնն ու մատակարարութիւնը յանձնել ազգային հոգևոր իշխանութեան, 2. Նոր դպրոցներու բացումը արտօնելու իրաւունքը յանձնել փոխարքայութեան. 3. Վերադարձնել բոլոր գրաւեալ կալուածներն ու հասոյթները ու գոյքերը: 4. Ներքին գործոց և արքունական կալուածոց նախարարներուն հետ հաշիւները կարգադրել, ճշդելով եղած գանձումները ու վեղչելով կալուածոց վրայ ծախքերը, դպրոցաց և եկեղեցեաց և ուրիշ հաստատութեանց համար վճարուածները և գրաւմանց առթիւն ծախքերը. 5. Ներքին գործոց և պետական կալուածոց և հանրային կրթութեան նախարարութեանց ձեռք քաշել տալ Հայ եկեղեցեաց և դպրոցաց գործերէն, և պետական գործերը յանձնել փոխարքայութեան. 6. Ամէն միջանկեալ խնդիրներ և խնդիրի առիթ տուող պարագաներ ենթարկել փոխարքայութեան որոշման: Իսկ ուսումնասիրուելիք և պատրաստուելիք գործերն են. 1. Հայոց եկեղեցական նախնական դպրոցներու կանոնադրութիւն. 2. Հայ եկեղեցւոյ ստացուածոց մատակարարութեան կանոնադրութիւն. 3. Հայ եկեղեցւոյ պատկանող հողերու վրայ հաստատուած բնակութեանց համար կանոնագրութիւն, որ է ըսել աթոռապատկան գիւղերու տուրքերուն և յարաբերութեանց մասին կանոններ (05. ԱՐԲ. 585 և 05. ԲԻՁ. 2713-2714): Այդ նխատեսեալ կանոնագրութիւնները պէտք էր որ կայսերական հաստատութեամբ օրէնքի կարգ անցնէին. սակայն մինչև այն ատեն հնար չէր գործերը առկախ թողուլ, ուստի մասնաւոր կանոններ սկսան հրատարակուիլ փոխարքայութեան հեղինակութեամբ: Առաջինը եղաւ եկեղեցական գոյքերու և հոգևոր դպրոցներու և վանքապատկան կալուածներու մատակարարութեան հրահանգը, որուն մէջ ընդունուած է ծիսականներու ընդհանուր ժողովի գրութիւնը, որ հոգաբարձութիւններ պիտի ընտրէ, որոնք պիտի գործէն թեմակալի հաստատութեամբ և գլխաւորութեամբ միայն դպրանոցներու հոգաբարձութիւնները կաթողիկոսէ պիտի հաստատուին (05. ԱՐԲ. 788-790): Այդ հրամանին համաձայն Խրիմեան կաթողիկոս սեպտեմբեր 16-ին շրջաբերական կոնդակ մը յղեց Կովկասի թեմակալ առաջնորդներուն թէ ի՞նչ ձևով պիտի կատարուին ընտրութիւնները, և ինչ են հոգաբարձութիւններուն գործերը, և թեմակալներուն իրաւունքները (05. ԱՐԲ. 863-864): Յատուկ հրահանգ մըն ալ հրատարակեց փոխարքայն նոյեմբեր 4-ին թէ ինչ ձևակերպութիւններ և պայմաններ պիտի գործադրուին գրաւեալ սեփականութիւնները վերադարձնելու

գործողութեանց մէջ, մանրամասնելով բոլոր նախատեսելի գլխաւոր պարագաներ, և իւրաքանչիւրին պէտք եղած բացատրութիւնները աւելցնելով (05. ԱՐԲ. 1045-1051): Այսպէս հետըզհետէ օրինական և կանոնաւոր ձև կը ստանային հոգևորական և կրօնական գործոց խանգարուած կարգերը զի թէպէտ 1903-է 1905 երկամեային մէջ Կովկասի կառավարչապետութիւնը ջանացած էր իր յղացած գրութիւնը օրինաւոր իրականութեան վերածել, և կովկասաբնակ հայութիւնն ալ մինչև աստիճան մը համակերպութեան բռնադատած էր սակայն երկու կողմերն ալ չէին կամեցած փոխադարձ համերաշխութեան յանգիլ, առանց որոյ անհնար էր որևէ խաղաղ կացութիւն գոյացնել: Ռուսահայոց եկեղեցական կալուածներուն վերաբերեալ տեղեկութիւններ փակելու առթիւ հարկ կը տեսնենք յետահայեաց ակնարկ մը նետել գործերու կապակցութեան, և պատճառին ու արդիւնքին յարաբերութեանց վրայ: Երբոր կայսերական հրամանագիրն ալ կընդունի 1903-ի կարգադրութեան թերի և վնասաբեր եղած ըլլալը, երբոր ռուսական հանրային կարծիքը և իրեն թարգման կանգնող լրագրութիւնը յայտնապէս կը պախարակէ Պլէվէեան ուղղութիւնը և Գալիցիանեան գործունէութիւնը, երբոր Կ. Պոլսոյ ռուսական դեսպանութիւնն ալ պատրիարքին հետ պաշտօնական խօսակցութեանց մէջ համարձակ կը մեղադրէ բոլոր եղածները, մեզի ալ ներեալ կը սեպենք անկաշկանդ կերպով եզրակացնել, թէ ապօրէն և անկանոն գործերը իրենց մէջ կը պարունակեն իրենց անյաջողութիւնը և իրենց կը պարտին իրենց ապարդիւն վախճանը: Ասոր հետ մէկտեղ անհնար է չըճանչնալ որ Մայրաթոռին և Ռուսիոյ հայաբնակութեան և ընդհանուր հայութեան հաստատուն և յամառ դիմադարձութիւնը իրենց նշանակութիւնն ունեցան տարօրինակ կարգադրութիւնները ձախողուածի մատնելու մէջ: Բայց դիմադարձութիւն ըսելով կիմանանք խաղաղական և կրաւորական ընդդիմութիւնը, և ոչ կուսակցական բուռն և զինեալ դիմադրութիւնը, որ թաթարական խնդիրին ծագում էր տուած և երկիրը ընտանի պայքարի մատնած: Սակայն այս ալ 1905 փետրուարին վերջացած էր, երբ երկու կողմեր եկեղեցիներում և մզկիթներում հանդիսապէս ուխտեցին առ միմեանս մնալ սիրով և խաղաղութեամբ և վստահութեամբ, և յունիս 15-ին Հայոց կաթողիկոսը և Կովկասու Շէյխիլիսլամը զոյգ ստորագրութեամբ շրջաբերական հեռագիր յղեցին Էջմիածինէ փոխադարձ սէր և հաշտութիւն վստահութիւն և խաղաղութիւն յանձնարարելով (05. ԱՐԲ. 523), որ է ըսել, թէ Վորոնցով-Տաշքով փոխարքային խաղաղագործ պաշտօնավարութենէն առաջ ամբոխավար դիմադրութիւնը կորսուած էր իր ոյժն ու գոյութիւնն իսկ, և ձեռք ձգուած յաջողութիւնը արդիւնք էր տակաւին տևող խաղաղական և կրաւորական ընդդիմութեան: Եթէ այդ շարժումներէն հետևանք մը մնաց, այն ձախող գաղափարն եղաւ զոր ռուսական կառավարութիւնը իր միտքէն չհանեց կուսակցական կազմութեան և գործունէութեան վրայ, որոնք առաջիկային յայտնի հալածանքներու և խիստ դատաստաններու նիւթ կազմեցին: Այդ զգացմամբ էր որ Կ. Պոլսոյ եպիսկոպոսները 1905 սեպտեմբեր 5-ին հանրագիր թուղթով Խրիմեան կաթողիկոսի կը դիմէին և պատրիարքն ալ առանձին նամակով զայն ուշադրութեան կը յանձնէր, որպէսզի հաճի նա իր բարձր հեղինակութեամբ խրատել յախուռն գործիչները, և արգիլել խառնակութիւններ յուզելէ, որոնցմով հայութիւնն սկսեր էր նկատուիլ իբր վոհմակ դաւաճան սրիկայից կամ երամս անգիտակից տխմարաց: Այս առթիւ պատրիարքը կը յիշէր Չմիւռնիոյ մէջ գտնուած վէնքերուն և հրանիւթներուն համար հարիւրաւորներու ձերբակալուիլը, և Աթէնքի մատուոհին մէջ գտնուած հրանիւթներու համար բաւական Հայերու հելլենական դատարանին մատնուիլը, և յուլիս 5-ին Աբիկ Ունճեան բարերարին դաւաճանութեամբ սպանուիլը (ՆՄԿ.):

Պատմական եղելությունները մինչև իրենց լուծումը շարունակելու յարմարությունը, և եղելութեանց շարունակութեամբ անոնց ներքին կապերը լուսաբանելու փափաքը, մեզ ստիպեց և կը ստիպէ ժամանակագրական ճշդապահութենէ հրաժարիլ, և ստէպ, ետև դառնալով ուրիշ եղելություն մը ձեռք առնել: Այս դիտողությունը յաճախ կը կրկնենք, որպէսզի կանխաւ ինքզինքնիս արդարարուցած ըլլանք անոնց առջև, որ կրնան մեր պատմութեան ժամանակագրական անճշդությունները քննադատել: Առաջիկային ուրիշ ընդարձակ խնդիրով մըն ալ վբաղիլ պարտաւորուած ըլլալով, դեռ անոր չմտած կղզիացեալ դէպքը մը յիշենք, որ կարևորութենէ վուրկ չէ ազգային ընդհանուր օգուտի տեսակետէն: Գարակէօպեան հինգ եղբայրներ որոշուած էին 1874-ին իրենց վաղամեռիկ եղբոր Բիւզանդի ժառանգութենէն հրաժարիլ, և անոր թողօնը ամբողջապէս վաճառականական վարժարանի մը հիմնարկութեան յատկացնել, և Ներսէս պատրիարք պաշտօնական ձևակերպությունները կատարած, և Թաքսիմի դադարեալ գերեզմաննոցին մէջ վարժարանը կայսերական արտօնությունը ստացած էր նոյն 1874 տարին: Սակայն մտադրութեան գործադրությունը խափանուած էր Գարակէօպեաններէն Կարապետ մահուամբը, որ գործին հոգին էր (2849): Բիշ ետքը Նապարէթ ալ կը վախճանէր, և կենդանի մնացորդներէն որչափ և Տիգրան գործադրութեան կաշխատէր, նոյնչափ Գրիգոր և Յովսէփ գործադրութենէ կը խուսափէին և այսպէս անցան շատ տարիներ, այնպէս որ Գարակէօպեան կտակի խօսքը յառակս դարձած էր ազգին մէջ, թէպէտ իսկութեամբ կտակ չէր, այլ ժառանգութեան մը մասին ժառանգորդներու տրամադրությունն էր, որոնք տէր կը մնային իրենց կամքին: Տիգրան Գարակէօպեան, նախնական մտադրութեան վրայ հաստատուն, ուլած էր գործը իսկական կտակի վերածել իր կողմէն, և ինքնագիր կտակ մը պատրաստած և իբր գաղտնիք յանձնած էր Յակոբեան փաստաբանին, որ միայն Տիգրանի 1896 յունուար 11-ին դաւաճան գնդակին վոճ երթալուն առթիւ մէջտեղ կը հանէր և կտակագիրը Իվմիրլեան պատրիարքին կը յանձնէր (2987): Կտակը պարզ ու փոքրագիր թերթ մըն էր, առանց որևէ պաշտօնական հանգամանքի 1891-ին պատրաստուած: Տիգրան այս կտակով, իր մահուան նախորդ ամսավերջի հաշուեփակի հիմամբ, իր սեփական հարստութեան մէկ երրորդ կը թողուր վաճառականական վարժարանի մը կառուցման և պահպանութեան, վերանորոգելով Բիւզանդի թողօնին մասին յղացուած գաղափարը: Այս մասին մէջ ալ թերի էր կտակային տրամադրությունը, զի ոչ իր հարստութեան քանակը գոնէ վերիվերոյ որոշած էր, ոչ գումարը ուրկէ քաղուելիքը ցուցած էր, ոչ ալ կտակակատար նշանակած էր: Գրիգոր Կ. Պոլիսէ բացակայ էր Տիգրանի մահուան ատեն, և բանակցությունն ալ պէտք էր անոր հետ ըլլար, իբրև մեծահարուստ և ամուրի, ինչպէս էր և Տիգրան, մինչ Յովսէփ ամուսնացած և վաւակաց տէր էր, և ոչ ալ աւելի հարուստ էր: Ժողովրդական վրոյցը առանց որոշ փաստի և հաշուի, Տիգրանի հարստությունը 300,000 օսմանեան լիրա ենթադրելով, 100,000 լիրա կը հաշուէր կտակաբաժինը, որ Գրիգորէ սկսաւ պահանջուիլ երբոր Կ. Պոլիս դարձաւ, իսկ Գրիգոր 25-30,000 միայն տալու պատրաստականություն կը ցուցնէր: Փաստաբաններ պատրիարքը կը վստահացնէին դատարանով ձեռք ձգել նշանակուած գումարը, և Իվմիրլեան անոնց տուած ապահովութեան վրայ հիմնուելով՝ զիջողութեան կծու ձև մը առին, և Գրիգոր բացարձակ մերժման յանգեցաւ: Այս միջոցին Իվմիրլեան պատրեարք կը հրաժարէր: Չամիշեան տեղապահ աւելի Գրիգորի օժանդակելու կողմը կը միտէր, Յովսէփ 14-ի կտտորածին մէջ կը ըսպաննուէր, և նոր ընտրություններէ ետքը Օրմանեան պատրիարք և Գրիգոր Գարակէօպեան, որ վարչութեան անդամ ալ ընտրուած էր, դէմդիմաց կը գտնուին: գրիգոր կը շարունակէր մնալ իր բացարձակ մերժման վրայ, պատրաստ էր դատարանի առջև ալ ելլել, զոր շատեր փորձել կը թելադրէին, այլ Օրմանեան դատարանի դիմելու կը հակառակէր: Վարչութեան

անդամներ երկու կարծիքի բաժնուած էին, և փաստաբաններ և խմբագիրներ դատարանի դիմելու կը քաջալերէին, և լրագրութեան մէջ ալ ձայնակիցներ կը գտնէին: Ժողովուրդին մէջ ալ կար մաս մը որ Գարակէօպեանը դատարանով պարտաւորցնելու հակամէտ էր, մինչ Օրմանեան մինչև վերջը անյողդող կը մնար իր տեսութեան վրայ: Իրեն գլխաւոր դիտողութիւններն էին՝ կտակագիրին պարզ թուղթ մը ըլլալը առանց վաւերացման և առանց վկայից, հանգուցելոյն հաշիւներուն ծանոթ չըլլալը, հաշուետումարներուն փոխուած կամ անյայտացած ըլլալուն կասկածը, կտակագիրին թուականին սխալմամբ հինգ թուանշանով գրուած ըլլալը, Տիգրանին ազգայիններէ դաւաճանուելէն ետքը քանի մը օր ապրելովը կտակը ետ առած ըլլալուն վկաներ յարմարցնելու դիւրութիւնը, և մանաւանդ ազգին ձեռքը մեծ գումար մը հասնելուն դէմ պետական արգելքի հաւանականութիւնը, և դատաստանը նրեն նպաստաւոր դարձնելու համար հակառակորդին դիւրութիւնը, Ծախքի համար ազգային սնտուկին անբաւականութիւնը, և վատ արելու յորդորող փաստաբաններուն հեղինակութիւն կազմելու անձեռնհասութիւնը: Այս և ասոր նման տեսութիւններ այնչափ ծեծուեցան ու վիճաբանուեցան վարչութեան մէջ, և այնչափ յանձնարարուեցան ժողովէ դուրս եղող փորձառու անձերէ, որ վերջապէս ստուար մեծամասնութեամբ դատի չդիմելու կարծիքը ընդունուեցաւ, և Օրմանեանի ու Նորատունկեանի յանձնուեցաւ մտերմական բանակցութեամբ եզրակացութեան մը հասնիլ: Այս աշխատութիւնն ալ ամիսներ տևեց, աւելի պակասի, ձևի ու կերպի առաջարկներ փոխուեցան ու փոփոխուեցան, մինչև 1898 օգոստոս 25-ի նիստին մէջ խառն ժողովէ ընդունուեցան և հաստատուեցան վերջնական պայմանները և վեց անգամով յանձնաժողով մը կազմուեցաւ գործադրուեցան հսկելու (05. ԱՐԼ. 3792-3793): Պէտք չէ մոռնանք յիշել Գարակէօպեան եղբորորդիներն ալ, Արշակ և Միհրան՝ Կարապետի, Թագւոր և Երուանդ և Արամ՝ Նապարէթի, և Սարգիս՝ Յովսէփի զաւակները, մանաւանդ Երուանդն ու Արշակը, որոնք մեծապէս նպաստեցին Գրիգորը պիջողութեան համոզելու: Ընդունուած պայմաններուն համաձայն կտակին յիշած նպատակը մէկ կողմ կը թողուէր, և վաճառականական վարժարանի տեղ կանցնէր ազգային որբանոցը, և Գրիգորի վճարելիք գումարը 20,000-ի կը կապուէր, 5-ը նոր շէնքի կառուցման և 15-ը կալուածի վնման սահմանուած, կտակագիրը Գրիգորի պիտի դարձուէր, բայց Օրմանեան գաղտնապէս լուսանկարել տուած և չորս եպիսկոպոսներու ստորագրութեամբ վաւերացնել տուած էր վայն: Կալուածը շուտով գտնուեցաւ և գնուեցաւ Բերայի մեծ փողոցին Խաչփալանին (Տէօրթեօլապը) գտնուող Խըտիվեալ կոչուած օթարանը (օթէլ) իր ընդարձակ յարակիցներով, որուն վրայ վերջէն յաւելուած ալ եղաւ և նորոգութիւններով ու փոփոխութիւններով ծախքը 25,000 ոսկոյ բարձրացաւ, որուն տարբերութիւնը Գրիգոր վճարեց փոխատուութեան ձևով (05. ԲԻՋ. 2572), իսկ որբանոցի շէնքի համար տարիներ ետքը գնուեցաւ Բերայի բարձունքը Շիշլի թագը գտնուող կիսաշէն հիւանդանոցն ու պարտէզը, որուն գնման և նորոգութեան, փոփոխութեանց և կարասեաց ծախքերուն պակասը լրացուցին Գարակէօպեան երբօրորդիներ, և վերջապէս 1913-ին Գարակէօպեան Ազգային Որբանոցը բացուեցաւ ամենայն պատրաստութեամբ և կատարելութեամբ: Եկեղեցական և կրթական և բարեգործական հաստատութեանց պահպանութեան և պայծառութեան համար կատարուած ձեռնարկներէն ուրիշ շատեր ալ կրնայինք կցել այս տեղ, սակայն լաւագոյն կը սեպենք վերջէն ամփոփում մը տալ ասոնց մասին, ինչպէս նաև ուրիշ մասնաւոր իրողութեանց վրայ, և կանցնինք խօսիլ Երուսաղէմի վրայ, որ ազգային ուշադրութիւնը գրաւելու տարադէպ բախտն ունեցաւ:

Երուսաղէմի վերջին եղելութեանց կարգին յիշատակի արժանի կը գտնենք Գերմանիոյ կայսեր այցելութիւնը: Վիլհելմ որ է Գուլիէլմոս Բ., Փրեզերիկոս Գ.ի որդի և Գուլիէլմոս Ա.ի թոռ, 1859 յունուար 15/27-ին ծնած, և 1881 փետրուար 15/27-ին Աւգոստա-Վիկտորիայի հետ ամուսնացած, և 1888 յունիս 3/15-ին կայսր հռչակուած, շատոնց փափաքած Պաղեստինի ուղևորութիւնը կատարելու համար՝ 1898-ին կայսերուհւոյն ընկերակցութեամբ և Իտաիոյ ու Ադրիականի ճամբով Կ. Պոլիս հասաւ հոկտեմբեր 6-ին, ուր Ապիւլ համիտ կայսր հնարաւոր եղածին չափ փառաւոր և ճոխ ընդունելութիւն կատարեց հինգ օր, մինչև հոկտեմբեր 10 շաբաթ օր, և նոյն երեկոյին ուշ ատեն կայսրն կայսրուհին ուղևորեցան դէպի Պաղեստին (98.ԱՐԼ.3832): Կայսեր Կ. Պոլիս գտնուած միջոցին Օրմանեան գերեզմանական դեսպանատան մօտ դիմումներ ըրած և յուսադրութիւն ալ ստացած էր ուկնդրութեան ընդունուելու, նպատակ ունենալով Վիլհելմի մտադրութիւն հրաւիրել ի նպաստ Տաճկահայոց և Թուրքիոյ քրիստոնէութեան, այլ նպատակին չկրցաւ հասնիլ, չենք գիտեր թէ աւելի Ապտիւլհամիտի ընդդիմութենէն թէ Վիլհելմի անտարբերութենէն: Կայսրն ու կայսրուհւոյն 13-ին նաւէն Հայֆա եղան (98.ԱՐԼ.3835) և ցամաքի ճամբով և գերմանական գաղութներ հաստատութիւններ այցելելով՝ 17-ին շաբաթ օր մտան Երուսաղէմ, և ուղղակի Ս. Գերեզմանին այցելեցին: Ս. Յարութեան տաճարին աւագ դուռը Լատին, Պատանատեղին Հայ, և Գերեզմանին առջև Յոյն պատրիարքներէ ընդունուեցան (98.ԱՐԼ.3838). հետզհետէ Երուսաղէմի և Բեթղեհեմի սրբավայրերը այցելեցին, հոկտեմբեր 19-ին երկուշաբթի առտուն բողոքականաց նորաշէն եկեղեցւոյ նաւակատիքը կատարեցին, և կէսօրէն ետքը Ապտիւլհամիտ կողմէ Վիլհելմի նուիրուած Սիոնի վրայ և ընտրեաց սրբավայրին կից ընդարձակ գետինին յանձնուելուն հանդիսական ձևակերպութիւնը լրացուցին: Հայոց պատրիարքութիւնը ամէն այցելութեանց և հանդիսութեանց մէջ իր ներկայացուցիչները ունեցած էր, իսկ այս վերջին հանդէսին երթալուն և դառնալուն, վանքին առջևէն անցնելուցն առթիւ ամբողջ միաբանութիւնը պատրիարքը գլուխնին ի պատիւ շարուած էին: Կայսերն ու կայսերուհին նշանակալից ցոյցէն վզածուած, դառնալուն ատեննին կառքերնէն իջան, և իրենց բազմաթիւ շքախումբով առաջ Ս. Յակոբայ տաճարը այցելեցին և անկէ պատրիարքարանի դահլիճն ալ ելան, առանց առաջուրէն կարգադրութիւն եղած ըլլալու: Հոն գոհութեամբ դիտեցին իրենց գերմանացի և անգղիացի նախնեաց պատկերները, և պարտուպատշաճ կերպով պատուասիրուեցան: Նշանակալից էր Հայոց հանդէպ կատարուած այդ գնահատելի ցոյցը, դեռ ուրիշ պատրիարքարան չայցելած, և Կ. Պոլսոյ մէջ ցուցուած անտարբերութեան հետ բաղդատուելով: Երուսաղէմի մէջ Հայոց վայելած դիրքին յարգանք մըն էր այդ այցելութիւնը, որ կարդարացնէր Հայուն իր Սաղիմական աթոռին հանդէպ ունեցած արդարացի խնամքը և վզացած իրաւացի պարծանքը: Միայն յաջորդ օրերը կայսրը, առանց կայսրուհւոյ ընկերակցութեան, այցելեց Լատին ու Յոյն պատրիարքարաններուն, որ թերևս տեղի ալ չէր ունենար եթէ Հայոց պատրիարքարանի ինքնայօժար այցելութիւնը կանխած չըլլար: Աթոռին կողմէ կայսերուհւոյն նուիրուեցաւ հին ու թանկագին ասեղնագործած մը, իսկ կայսերական ամուլին կողմէ իբրև յիշատակ նուիրուեցան իրենց ստորագրեալ լուսանկարները, և պատրիարքին շնորհուեցաւ բարձրաստիճան շքանշան մը: Իսկ վանքն ալ իբր յիշատակ պահեց անոնց գործածած ըմպելւոյ սկահակները: Երուսաղէմի կայսերական այցելութիւնը եօթնեակ մը միայն տևեց, և 23-ին մեկնեցան Յոպպէ և անկէ Վերիտոն ու Դամասկոս և 30-ին Վերտիոն դառնալով (98. ԱՐԼ. 3850) նաւարկեցին և Գերմանիա դարձան Աւստրիոյ վրայէն: Սիոնի վրայ Գերմանիոյ կայսեր նուիրուած գետինը, անոր կողմանէ ալ կաթոլիկ գերմանացիներու նուիրուեցաւ նոյն իսկ հանդէսին պահուն, ուր յետոյ յանուն Ննջման Աստուածածնի վանք կառուցեցաւ և Դոմինիկեան միանձնաց յանձնուեցաւ: Այս գերմանական վանքին Հայոց վանքին

դրացութիւնը մեծապէս օգտակար եղաւ, դադարեցնելով Սիոնի մոլեռանդ թաղին կողմէ Հայոց Ս. Փրկիչ վանքին դէմ սովորական դարձած թշնամական և անարգական ցոյցերը:

3037. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԱՀԵՐ

Երուսաղէմի մեծ խնդիրին պիտի մտնենք, բայց ի դէպ կը կարծենք կանխել և համառօտիւ յիշել Երուսաղէմի միաբանութենէն պակասած քանի մը դէմքերը, զորս ստէպ առիթ ունեցած ենք յիշել անցեալ եղելութեանց մէջ, և որոնց մահն ալ կշիռ ունեցաւ առաջիկային պատմուելիք եղելութեանց մէջ, իբր հեղինակաւոր անձնաւորութեանց գործոց հրապարակէն պակսելուն հետևանք: Այս կարգին թէ ժամանակով և թէ նշանակութեամբ առաջին պիտի դասուի Սիմէոն Եպիսկոպոս Սէֆէրեան, որ 66 տարեկան կը վախճանէր 1896 ապրիլ 13-ին (96. ԱՐԼ. 3648): Ծնած էր Նիկոմիդիոյ վիճակին Կէյվէի Օրթաքէօյ գիւղը 1830-ին, ձեռնադրուած 1857-ին, և Եպիսկոպոսացած 1867 մայիս 31-ին, Գէորգ կաթողիկոսի անդրանիկներուն կարգին, որուն ուղեկից եղած էր յանուն Երուսաղէմի միաբանութեան (2764-2765): Սիմէոն վանական պաշտօններ վարած է սկիզբը, բայց իր երկարատև և արդիւնաւոր ասպարէզը եղաւ Կ. Պոլսոյ մէջ Երուսաղէմի աթոռին փոխանորդութիւնը, որուն օգնական նշանակուեցաւ 1863 մարտ 13-ին, Իսահակ Աստուածատուրեան Եպիսկոպոսանալու երթալուն առթիւ (2734), և վերջէն ուղղակի փոխանորդութիւնը ստանձնեց 1865-ին, Իսահակի նորընտիր Եսայի պատրիարքին հետ վանք դառնալուն առթիւ: Սիմէոն գործոն դեր վարած էր օգնականութեան միջոցին ներսէն-դուրսէն խնդիրին մէջ (2739). իսկ փոխանորդութիւնը վարեց մինչև իր մահը մէկ երկու համառօտ ընդհատումներով, և Երուսաղէմի ամէն նշանաւոր խնդիրներու մէջ դեր վարեց: Սիմէոնի յուղարկաւորութիւնը մեծաշուք կատարուած էր ապրիլ 14-ին Իզմիրեան պատրիարքի նախագահութեամբ և դամբանակով իսկ, 30-ին Դպրէվանքի մէջ յատուկ յիշատակ կատարեց Օրմանեան պատարագով և դամբանակով (96. ԱՐԼ. 3657), ի նշան եղբայրական ցաւակցութեան յԱրմաշէ յԵրուսաղէմ, և յուշարար սիրոյն որով երկու միաբանութիւնք իրարու կապուած են (96. ԱՐԼ. 3659): Սիմէոն ուսումնական հմտութեամբ և կրթական վարգացմամբ ճոխացեալ անձ մը չէր, և վանական հասարակ ծառայութենէ բարձրացած էր եկեղեցական աստիճանին: Ի բնէ ուշիմ և խոհական, մատակարարական կարողութեամբ և վարչական յաջողակութեամբ գերազանց գիրք վայելեց, որ ոչ թէ լոկ վանական շրջանակի մէջ նշանակութիւն ունեցաւ, որ կարենար անձուկ պարունակի մէջ յաջողած ըսուիլ, այլ և մայրաքաղաքի և կեդրոնական վարչութեան մէջ իրեն գերագոյն աստիճանին հասաւ, կրօնական ժողովոյ ատենաբանութեամբ, կրօնական գործոց տեսչութեամբ, և պատրիարքական տեղապահութեամբ: Օրմանեան գիտել տուած էր թէ բազմակողմանի է եկեղեցական կոչումը, և ոչ ամէնքը ամէնով պարտաւոր են պայծառանալ բաւական է որ միով կամ միւսով արդիւնաւոր լինին, և թէ մատակարարականով բարձրացողն ալ դպրոցականով կամ առաջնորդականով բարձրացողէն նուազ արժանաւոր մէկը չըլլար, (96. ԱՐԼ. 3659): Սիմէոն իր միաբանութեան կողմէ ալ Եսայիի ընտրութեան ատեն պատրիարքական ընտրելեաց մէջ ներկայացուեցաւ և հարկաւ Եսայիէ ընտրելագոյն պատրիարքը եղած պիտի ըլլար, եթէ կեդրոնական վարչութիւնն ու երեսփոխանութիւնը ծանօթ հակառակութեան ոգով վարուած չըլլային (2738): Յարութիւն պատրիարքի ընտրութեան առթիւ ալ Սիմէօն եղած կըլլար ընտրեալը, եթէ ինքն Սիմէոն առկախ ընտրութեան ձևը հնարելով Յարութիւնի ընտրութիւնը յաջողցուցած չըլլար (2920): Սիմէոն մէկ միտք ունէր և այն ալ Ս. Յակոբեանց միաբանութիւնն էր իր բոլոր կեանքը և բոլոր գործունէութիւնը ուղղուած էին և կը դառնային անոնց շուրջը, և երբ անոնցմէ դուրս կեդրոնական վարչութեան մէջ կը գործէր դարձեալ Սաղիմական շահը իր միակ ուղեցոյցն էր: Այս նպատակով էր որ Սիմէոն Կ. Պոլսոյ մէջ երեք ուսանող սարկաւագաց պաշտպանութեամբ,

նախկին հնգեակի և երջին եռեակի կազմակերպության սատարող երևցաւ, բայց չենք կրնար երբեք Սիմէոնը մեղադրել, երբ նա պարզապէս վարգացեալ միաբաններ ունենալու նպատակով կը գործէր, առանց անոնց ապագայ գործունէութեան ձևն ու հոգին թափեցնելու, և կամ երբ այթոռէ յանձնարարուած մատակարարական գործերը ճշդութեամբ կը կատարէր առանց մասնաւոր դիտումներու մասնակից ըլլալու: Սիմէոն երկար ատեն մայրաքաղաքի մէջ ապրելով՝ իր կենցաղին համար չտրուեցաւ, և ոչ ալ շահագիտութեան կամ չարաշահութեան համար բամբասուեցաւ, այլ պատկառելի դէմք մը մնաց մինչև վերջը: Մահուանէ տարի մը առաջ սիրտի կաթուածով տկարացաւ, և հիւանդագին անցուց իր վերջին տարին, և կաթուածին կրկնուելովը մահկանացուն կնքեց: Գէորգ վարդապետ Երէցեան, որ արդէն Սիմէոնի օգնականութիւնը կը վարէր, անոր յաջորդ նշանակուեցաւ, և տսնամեայ մը պաշտօնավարեց և գործեց իբրև եռեակի անդամակից: Երկրորդ դէմքը, որ Ս. Յակոբեանց միաբանութենէն պակսեցաւ, Երեմեայ Տէր Սահակեան եպիսկոպոսն էր, բնիկ Խարբերդցի Բէսիրիկ գիւղէն, և 1872 սեպտեմբեր 17-ին եպիսկոպոսացած, և 71 տարեկան վախճանուած 1900 յունուար 7-ին: Երեմիայի կեանքն ալ միաբանական պաշտոններու մէջ ամփոփուեցաւ մինչև վերջ, և միշտ ալ վանական շրջանակի մէջ, միայն Կովկասի և շրջակայից նուիրակութեամբ անդամ մը հեռացած: Ամէն պաշտօններէ անցաւ մինչև պատրիարքական փոխադրութիւն՝ Եսայիի ժամանակ Յարութիւնի Կ, Պոլսոյ պատրիարքութեամբ մեկնելէն ետքը, և պատրիարքական տեղապահութիւն՝ Յարութիւնի առկախ ընտրութենէն ետքը մինչև անոր գործի գլուխ անցնիլը: Յարգելի և պատկառելի դէմք մը մնաց Երեմիա միաբանութեան մէջ, ինչ ալ ըլլար իրեն հանդէպ միաբաններու փոփոխեալ յարաբերութիւնը: Ուղղութեան և խոհականութեան տեսակէտէն երբեք չստեց իր համբաւը և մեծապէս օգտակար եղած պիտի ըլլար իր ներկայութիւնը, եթէ 1900-ին ներքին խնդիրներուն ծագելէն քիչ առաջ յաստեացս հանդերձեալին փոխադրուած չըլլար: Նշանակալից դէմք մըն էր նաև Աստուածատուր եպիսկոպոս Տէր-Յովհաննէսեան, բնիկ Խարբերդցի Երեմիայի գիւղակից, 1831-ին ծնած, 1857-ին ձեռնադրուած, և 1876 յունիս 6-ին եպիսկոպոսացած, որ 1900 փետրուար 10-ին կը վախճանէր 69 տարեկան: Աստուածատուր ոչ միայն միաբանական շրջանակէ դուրս գործ չէր ունեցած, այլև միաբանութեան մէջ տնօրէնի անդամակցութենէ և ընդհանուրի ատենապետութենէ բարձր գիրք չէր ունեցած: Իր արժանիքը եղած էր ուսումնական արդիւնաւորութիւնը, առանց սկիւբէն ուսումնական կեանք ունեցած ըլլալու, այլ լոկ ինքնաջան և ինքնօգնական աշխատութեամբ լեզուագէտ և պատմագէտ դառնալով, որուն հաւաստիքն է ժամանակագրական Պատմութիւն Սուրբ Երուսաղէմի, երկհատոր ըստուար հրատարակութիւնը, խղճամիտ հետազօտութեանց և հաստատամիտ հետապնդութեանց արդիւնք, վաւերագիրներով և ժամանակագրական ճշդութիւններով հարուստ (ԱՍՏ.): Միաբանութեան մէջ յարգելի և սիրելի դէմք և սիրելի դէմք մը եղած էր Աստուածատուր, և իր ներկայութիւնն ալ օգտակար եղած պիտի ըլլար եթէ շփոթուար ձեպել իր եղբայրակցին ետեւէն՝ անկէ ամիս մը միայն ետքը: Վերոյիշեալներու աշխարհէ մեկնելովը երիցագոյն միաբանի դերը կը մնար Ներսէս եպիսկոպոս Գէորգեանի, բնիկ Ռոտոսթոցի, 1839-ին ծնած, 1853-ին ձեռնադրուած, և 1876 յունիս 6-ին եպիսկոպոսացած, և արդէն 71 տարեկան, բայց տարիքէն աւելի կարողութեամբ տկարացած: Ժամանակ մը Ռոտոսթոցի առաջնորդութիւնն էր վարած, որով աւելի ինքնութիւն և աւելի փորձառութիւն կը սպասուէր իրմէ, այլ կարծես երկուքէն ալ մերկացած, և իր երբեմնի անկախութիւնն ալ կորուսած, տիրապետող եռեակին հլու գործիքն էր դարձած:

Երուսաղէմի անցից պատմութեան մտնելով՝ պէտք է յիշել որ Յարութիւն պատրիարք թէ իր Կ. Պոլսոյ պատրիարքութեան միջոցին, և թէ Երուսաղէմի պատրիարքութեան գործոց գլուխն անցնելուն, իրենց կէտ նպատկի ունեցած էր, Երուսաղէմի աթոռին պարտքը ջնջել, և իրապէս հաւասարակշիռ երևմտացոյց մը ունենալ, և երբ պետական վանձին անցած գաւառներու պարտաւորեալ նպաստէն բաւական գումար մը առած, և մնացորդին վանձուելուն և մայրաքաղաքի պարտաւորեալ նպաստին իրականանալուն յուսադրութեամբ Երուսաղէմ կու գար 1889-ին, կը յուսար իր փափաքին հասնիլ, և բոլոր ջանքը այդ նպատակին էր նուիրուած, այնպէս որ կրնանք համարձակ ըսել, թէ Երուսաղէմի կեանքին ու պատմութիւնը այլևս պարտքի և հաշտուի պատմութիւն էր, ինչպէս պիտի ըլլայ մեր առաջիկային գրելիքն ալ: Ելեմտական գործը ամբողջութեամբ Մաքսուտեան Ղևոնդ վարդապետի ձեռքն էր, որ ելեմտից տեսուչ և անօրէնի մշտնջենական անգամ և մշտնջենական ատենապետ և միանգամայն, թէպէտ 1888-ի կանոնագիրը, ելեմտական գործոց ընթացքը միաբանական ժողովէն հանելով տնօրէնի ձեռքը յանձնած ատեն, պաշտօնեաները տնօրէնի անդամակցութենէն հեռացուցած էր, փոխադարձ հակակշիռ մը գոյացնելու դիտմամբ: Մաքսուտեան այդ կանոնին բացառութիւն էր, և միաբանականն ալ չենք գիտեր ինչպիսի դիւրիչ ազդեցութեամբ մղուած՝ իր քուէով կը հաստատէր այդ ընթացքը, և իր պատրիարքն ալ լիագոյն վստահութեամբ անոր ձեռքը ձգած էր ոչ միայն աթոռական, այլ և իր անձնական կալուածոց շինութիւնն ու հասութաբերութիւնը: Այս պատճառով միաբանութիւնը ելեմտական գործոց ընթացքէն տեղեկութիւն չունէր: Վերջին ընդհանուր ժողովը 1889 նոյեմբեր 10-ին գումարուած էր (89. ՄԻԱ. 470), և չորս տարի էր որ հաշուեցոյց և տեղեկագիր ներկայացուցած չէր, թէպէտ շարունակ պարտքի վրայ կը խօսուէր: Լրագիրներ ալ լեզու ելած էին, ներքին նեղութիւնն ալ շատցած էր, և Յարութիւն պատրիարք տեսնելով որ ակնկալեալ գումարներ չէին հասներ, կը մտածէ անձամբ Կ. Պոլիս դառնալ 1893-ին Խրիմեան կաթողիկոսը ուղևորելէն ետքը (2971): Այս միտքը պատճառ կըլլայ ձևակերպութիւններն ալ լրացնելու, ուստի 1893 յուլիս 5-ին միաբանական ժողով կը գումարուի, և չորս տարուան հաշուոց ու գործողութեանց տեղեկագիրը կը հաղորդուի (93. ՄԻԱ. 479), և միւս օրուան նիստին մէջ կեդրոնին վրկուելիք տեղեկագիրը պատրաստ չըլլալուն, տնօրէնին կը յանձնուի կապմել ու յղել և նոր տնօրէն կընտրուի (93. ՄԻԱ. 481), բայց անգամ կը յղուի Կ. Պոլիս Յարութիւն պատրիարքի ետեւէն, որ կանխած էր մեկնիլ, և օգոստոս 22-ին Կ. Պոլիս հասած էր, և միայն հոկտեմբեր 6-ին կրնար կեդրոնին հաղորդել (93. ՄԻԱ. 491) հաշուեցոյցն ու ելեմտացոյց բացատրական նամակով (93. ՄԻԱ. 492-495), որոնք կը հաստատուին (ՊՐՏ. 23) հետևաբար մեկի ալ անոնց վրայ անդրադառնալու հարկ չի մնար: Յարութիւն պատրիարք Կ. Պոլսոյ մէջ շատ աշխատեցաւ, բայց ոչ պետական սնտուկէն բան մը գանձել և ոչ մայրաքաղաքի պարտաւորեալ նպաստէն բան մը ձեռք ձգել չկրցան և իր ներկայութիւնն Աշըգեան, պատրիարքի անախորժ և կառավարութեան աւելորդ երևնալը վգալով, չորս ամիսէն ետ դարձաւ ձեռնունայն, 1894 յունուար 5-ին Յոպպէ ելաւ (2973), և պարտքի խնդիրը մնաց ուր որ էր, արտաքիններուն գայթակղութեան պատճառ և ներքիններուն դժգոհութեան առիթ, գլխաւորապէս հաշիւ չներկայացուելուն պատճառով:

3039. ԳԱԲՐԻԷԼ ԱՆՈՅՇԵԱՆ

Նոր ընտրուած 1893-ի տնօրէն ժողովին մէջ, Մաքսուտեանի մշտնջենական անդամակցութեամբ և իր համամիտներու կամ միամիտներու ընկերակցութեան հետ երկու նոր անձեր կը մտնէին, Ներսէս եպիսկոպոս Գէորգեան իբր անկախ ըբոնուած, և Գաբրիէլ վարդապետ Անոյշեան, երբեմն քննադատ (93. ՄԻԱ. 481), որ Հնդկաց նուիրակութենէն դառնալու վրայ էր,

բայց հապի թէ չորս ամիս ետքը կը հասնէր, և նոյեմբեր 19-ին գործելու կը սկսէր (93. ՏՆՕ. 30): Անոյշեանի ընտրութիւնը կրնանք նկատել իբրև հաշուեպահանջութեան առաջին քայլը: Իրօք ալ Անոյշեանի գլխաւոր գործն եղաւ անցած հաշիւները տեսնելու և քննելու հետապնդութիւն վի Կ. Պոլիս յղուած տեղեկագիրն և 1889-1893 հաշուեցոյցերը և 1893-94 ելևմտացոյցը (03, ՄԻԱ. 492) առանց իրեն կապմուած էին և ինքը գոհացուցիչ չէր գտնէր: Բայց որպէսզի իրաւունք ունենար ուրիշէն պահանջել, ինքն կանխեց և իր երեքուկես տարւոյ նւիրակութեան մանրամասնութեանց հաշիւը ներկայեց(93. ՏՆՕ. 47): Անոյշեանի այդ ընթացքը միաբանութեան մեծամասնութենէն համկրութեամբ ողջունուեցաւ, սակայն նա շուտով ինքզինքը կղզիացեալ գտաւ և հետևողները պակսեցան: Ասոր ալ պատճառ եղաւ իր անկաշկանդ բնոյթը և չափազանց նախայուզութիւնը, և շահեցողութեան կերպին մէջ անյաջողակութիւնը: Առիթ առնելով ներքին բարեկարգութեան մասին տնօրէնէ տրուած որոշումէ մը (93.ՏՆՕ12), սկսաւ անձամբ ճշդապահութեան հետամուտ ըլլալ, թուլութեանց դէմ խստանալ, համարձակ յանդիմանութեանց ձեռնարկել , որով իրմէ ուժացոյց և հեռացուց նոյն իսկ իր համակիրները, և իր համակիրները, և իր հակառակորդին պատրուակ ընծայեց իրեն մասին եղած պահանջումներն ալ չափազանցնել ուղղութեան և անխորհուրդ գործունէութեան վերագրել: Անոյշեանի փոխուիլ հնար չէր, տեղափոխուիլը աւելի դիւրին գտաւ, և յանձնառու եղաւ 1894 յունիսին Բէֆսիպեանի մօտ երթալ Բերիա անոր յօգուտ Երուսաղէմի մտադրած կտակին մասին խորհրդակցելու համար (94. ՏՆՕ. 113), որ վանական վարչութեան վերջանական մերժմամբը փակուեցաւ յուլիս 6-ին, Անոյշեանէ առնուած տեղեկութեանց հետևանքով (94. ՏՆՕ. 124): Բէֆսիպեանի խնդիրէն ետքը Անոյշեան Եգիպտոս անցաւ՝ Գահիրէի և Աղէքսանդրիոյ կալուածներուն և հաշիւներուն քննութեան պաշտօնով (94. ՏՆՕ. 126), բայց իսկապէս բացակայութիւնը երկարելու դիտմամբ, քանի որ իր ներկայութիւնը ժողովրդականաց անհաճոյ և իրեն անախորժ կը դառնար: Սակայն այդ պաշտօնները առժամեայ էին, և պատմելով դարձաւ Երուսաղէմ, և անօրէնի մէջ դարձեալ իր պահանջումները ձեռք առաւ, գլխաւորաբար հիմնուելով նոր շինութեանց հաշիւներուն վրայ, որոնք Մաքսուտեանի մօտ գաղտնիք կը մնային . բայց պէտք չէր որ այնպէս ըլլային, մանաւանդ որ շինութեանց խնդիրներու հետ արժեթուղթերու վաճառմանց գործեր ալ կը խառնուէին: Մաքսուտեան իր համամիտ կամ միամիտ ընկերները շուտով համաձայնութեան կը բերէր դարձուդարձ ձևերով և ուռուցիկ խօսքերով, որոնց Անոյշեան չէր կրնար շուտով համակերպիլ՝ առանց հաշուեթուղթ ու վաւերաթուղթ տեսնելու և ասկէ սկսան ծագիլ յայտնի վէճեր, երբ միւս ժողովականներ յանձն չէին առներ և ոչ իսկ կասկած յարուցանել Մաքսուտեանի վստահելիութեան վրայ: Անոյշեան լաւ առաջնորդ եղած պիտի ըլլար հաշուեպահանջ միաբաններու եթէ իր ընթացքով անոնք պարզեցուցած չըլլար, և միայնակ մնալով իր նախանձայուզութիւնը չարաչար չմեկնուէր: Այս կացութեան հետևանօք Անոյշեան ընկեր ժողովականներ մինչև իսկ համարձակեցան պաշտօնական արձանագրութեանց մէջ վինքը պախարակել. այնպէս որ շինութեանց համար խանիաւ հաւանութիւն, հաւանութեանց համար օրինաւոր նախատեսութիւն շինութեանց գործածուած գումարներու ծագում, եղած ծախուց համար քանակով և տեսակէտով հաշիւներ պահանջելը, բուն կրիւք առարկութիւններ արձանագրուեցան (95.ՏՆՕ.175), և 1895 փետրուար 21-ի նիստին մէջ Մաքսուտեանի կողմէ ատենագրութիւններէ քաղուած ցուցմունքներուն Անոյշեանէ անբաւական պատուիլը, իբրև տրուած որոշմանց դէմ յաւակնութիւն սեպուեցաւ, և ենթադրական պարագաներ իբր փաստ գործածուեցան (95.ՏՆՕ.179), մինչև որ Անոյշեան մարտ 24-ին միաբանութենէ իսկ հրաժարելու որոշման կը հասնէր, և ետ կը դարձնէր պատրիարքի ձեռքով իրեն յղուած 50 ոսկույ նուէրը: Այս վերջնական քայլին հանդէպ տնօրէնը չուզելով

հրաժարականին ընդունելութեամբ այլընդայլոյ մեկնութեանց առիթ տալ, պատրիարքին յանձնարարեց կերպով մը վայն սիրաշահիլ (95.ՏՆՕ.185), որ և յաջողեցաւ Դամասկոսի տեսչութեամբ հեռանալուն հաճեցնել, ինչպէս որ կը հաստատուէր մայիս 4-ին (95.ՏՆՕ.202) և ինքն ալ մայիս 24-ին տեղը հասած և նախորդ տեսուչ Վահրամ Ավարեան վարդապետէ փոխանցումը ստացած ըլլալը կը գրէր (05.ՏՆՕ.213): Եօթը տարի մնաց Անոյշեան Դամասկոսի տեսչութեան վրայ, առանց գործունեայ մաս ունենալու Երուսաղէմի անցուդարձերուն մէջ, և բաւականանալով մերթընդմերթ, գլխաւորապէս 1898 և 1899 տարիներում ամբաստանական և բացատրական նամակներ ուղղել Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքներուն Երուսաղէմի պատրիարքին գրածները յայտնի էր, որ Մաքսուտեանի հեղինակութեամբ անապղեցիկ կը մնային, Կ. Պոլսոյ պատրիարքն ալ կարևորութիւն չընծայեց Անոյշեանի գրութեանց և անոնց հիմամբ խնդիրներ չյուզեց, ոչ միայն զի լոկ իր անուամբ կը գործէր, այլ և շատ մեծ խնդիրներու շատ պզտիկ ցուցմունքներ կը ներկայէր, որ իր գիտակցութենէն և վկայութենէն անդին չէին անցներ, առանց վաւերաթուղթերու և առանց փաստաթուղթերու. մինչ Երուսաղէմի պարտքին խնդիրը աւելի լուրջ և աւելի հաստատուն պայմաններու պէտք ունէր: Անոյշեան տեսնելով որ իր ճիգերը արդիւնք ունենար, Երուսաղէմի սահմաններէն ալ հեռանալ ուզեց, և 1902-ին սկիզբը սիրով ընդունեց Պաղտատի առաջնորդական տեղապահութեան պաշտօնը, և Մեծ-պահիս սկիզբը, առանց Երուսաղէմ հանդիպելու, Դամասկոսէ մեկնեցաւ Պաղտատ, ուր մնաց գրեթէ տարի մը մինչև լուսարարապետութեան ընտրութիւնը (3022):

3040. ՀԱՇՈՒԵՊԱ ՀԱՆՋ ԴԻՄՈՒՄՆԵՐ

Անոյշեանի կողմէ թափուած ճիգերուն ատեն միաբանութիւն կը լուրջ, գուցէ անոնց ելքին սպասելով. բայց անոր Դամասկոս երթալէն ետքն ալ Երուսաղէմի մէջ պաշտօնապէս ոչ մի գործողութիւն չկատարուեցաւ: Պարտքին վրայ կը խօսուէր, և շա՛տ, սակայն խնդիրը միշտ հաշիւ ներկայելու ձևակերպութեան տեսակէտով կը յուզուէր, թէ ինչու՞ Ընդհանուր Ժողով չէր գումարուէր, և ինչու՞ տարեկան հաշիւ չէր ներկայուէր, և այդ խօսքերով երկամեայ շրջան մը կը բոլորուէր 1895-է սկսելով, բայց եղածը մասնաւոր խօսակցութիւն էր առանց պաշտօնական կամ հվրապակային երևոյթի: Երէցեան Գէորգ վարդապետի եպիսկոպոսական վկայական տալու պարագան կը ստիպէր այս նպատակով միաբանական ժողով գումարել 1897 հոտեմբերին, և միաբանութեան հաշուեպահանջ մասը առիթ կառնէ համարատուութեան խնդիր յուզելու. այլ խնիրը կը փակուէր ելեմտապետին և լուսարարապետին և իրենց միամիտ ընկերներուն կողմէ պատրիարքին բերնով տրուած խոստումներով, թէ մօտ ատենէն և առաառաւելն ելեմտական տարւոյ վերջը 1898 մայիսին, 1893-1897)՝ հնգամեայ հաշիւները և տեղեկագիրները ըստ օրինի և ըստ կանոնի պիտի ներկայուին: Երէցեանի եպիսկոպոսանալուն մասին թէ՛ Երուսաղէմ և թէ՛ Կ. Պոլիս խօսուեցաւ այն ատեն, թէ Տատեան ատենապետի հետապնդմամբ եղած, ըլլայ, ինչոր համաձայն կու գայ Տատեանի և Երէցեանի միջև անդստին Իվմիլեանի աքսորին օրէն հաստատուած մտերմութեան: Խօսուած էր միանգամայն իբր թէ Տատեան իր մտերիմը Կ. Պոլսոյ պատրիարքոս պատրաստելու դիտում ունեցած ըլլայ, ինչ որ սակայն Օրմանեանը չարգիլեց Վեհապետեանի յանձնարարութեան համեմատ, թէ օսմանեան կառավարութեան և թէ՛ ռուսական դեսպանատան կողմէ յարուցուած դժուարութիւնները հարթելով, Երէցեանը Էջմիածին ուղևորել Խրիմեանէ ձեռնադրուելու: Ինչպէս ալ տեղի ունեցաւ 1898 փետրուար 28-ին: Վերև յիշուած 1898 մայիսի պայմանաժամը լրացաւ, բայց համարատուութեան դարձեալ չկատարուեցաւ. իսկ գանգատները ականջէ ականջ և բերանէ բերան խօսակցութիւններէն անդին չանցան, և երկու տարի ևս առանց հրապարակային երևոյթի անցաւ, մինչև որ 1900-ին անհրաժեշտ եղաւ

միաբանական ժողով գումարել տնօրէն ժողով վերակազմելու համար, որ բոլորովին անկերպարան վիճակ ստացած էր, և լուսարարապետին ալ Կիլիկիոյ պատուիրակութեան մեկնած ըլլալուն պատճառով, գրեթէ միայնոյ ելեմտապետի կամքով կը տնօրինուէր ամենայն ինչ, ոչ միայն մատակարարութիւնք և փոխառութիւնք, այլև շինութիւնք և վաճառմունք և այդ միջոցին կը կատարուէին Երիթովի արտին և Աղեքսանդրիոյ գետնին նշանաւոր վաճառումները: Բայց այս ժողովին մէջ ալ յուլուած գանգատները ու պահանջումները կը լռէին պատրիարքի գրաւոր ճառին խոստումներով, թէ մօտաւոր ապագայի մէջ միաբանութիւնը պիտի լսէ տնօրէն ժողովոյ համարատուութիւնը, չնայելով որ տնօրէնը 1895-է ասդին պաշտօնի վրայ էր անդամոց ոմանց մասնակի փոփոխութիւններով. սակայն լուսարարապետի և ելեմտապետի անփոփոխելիութիւնները, ուրիշ փոփոխութիւնները մտադրութենէ կը վրիպեցնէին: Այսպէս թէ այնպէս 1900 մայիս 1-ի ժողովը նոր ընտրութիւնները կատարեց, որուն չենք գիտեր թէ դիւթիչ պօրութեամբ մը, կամ թէ պատասխանատուները իրենց տեղը պահելու մտածումով, նոր ընտրութիւններ նոր անձեր չբերին: Այս ժողովէ ետքը կը հանդիպէր միաբաններէ ոմանց պտոյտի պատճառով Երիթով երթալը, ուր մօտէն կը տեսնէին վաճառուած աթոռապատկան արտը, և անոր դիրքն ու ջուրը ու արդիւնքը մտադրութիւննին կը գրաւէր, միանգամայն աթոռին Երիթովի մէջ անժառանգ մնացած ըլլալը նկատողութեան կառնուէր, և բոլոր տեսնողներու ու լսողներու վիշտ կը պատճառէր, և առանց միաբանութեան գիտակցութեան աղիկամի գործողութիւնները միտքեր կը յուլէին: Վանքին մէջ իբր արքայական գտնուող ոչ-միաբան եկեղեցականներն ալ իրենց դիտողութիւնները պակաս չէին ըներ, որով կարծես վերջին ժողովին մէջ դիւրաւ լռած ըլլալուն պղծալով, անմիջապէս 17 ձայնատէրներ, վարդապետներ և արեղայ և սարկաւազ, նոյեմբեր 4 թուականով գրաւոր դիմում կուղղէին Յարութիւն պատրիարքին, պահանջելով որ տնօրէն ժողովը իւր եօթնամեայ հաշուետուութիւնն ընէ: Ասոր վրայ ստորագրողներէն երեք վարդապետներ, Յակոբ Սանասարեան, Հմայեակ Երէցեան և Սարգիս Աճէմեան, իբրև շարժումը հրահրողներ, տնօրէն ժողովին գումարման կը կոչուին և կը յայտարարուի թէ իրաւացի է պահանջնին, և կը խոստացուի թէ առաջիկայ 1901 փետրուարին հաշիւները անպատճառ պիտի պատրաստուին, ինչոր ժողովին և նախագահին կողմէ ձախող խոստովանութիւն մըն էր, թէ էօթը տարիներէ ի վեր հաշիւներ նայուած և պատրաստուած չեն, և ելեմտապետն ալ անտրտունջ կընդունէր այդ հետևանքը, բաւական էր որ հնշիւները ներկայելու վտանգէն ապատ մնար: Սակայն պրոյցները սկսած էին տարածուիլ, և աննպաստ մեկնութիւններ շատնալ, և մինչև Մայրաթոռ հասնիլ, որուն իբրև դարման Երէցեան եպիսկոպոս 1901 մարտ 9-ին Խրիմեան կաթողիկոսը կը ջանար հանդարտեցնել վկայելով թէ հաշուեպահանջ միաբանից ընթացքին մէջ խոհեմութիւն և բարեմտութիւն չեմ տեսներ (ՊՏՃ. 1): Փետրուարը շատ մօտ էր ապրիլի ելեմտական ամսավերջին, այն ալ կանցնէր և ութերորդ անհամարատու տարին ալ կը լրանար, հակառակ մայիսի մէջ ամբողջական հաշիւները ներկայելու նորոգուած խոստումին: Հաշուեպահանջութիւնը սակաւ կը սաստկանար, բայց տակաւին յայտնի ցոյցի մը չէր հասնէր (02. ՄԻԱ. 516), հանդարտ դիմումներ կարծես թէ կը քաջալերէին ելեմտապետին վանցառութիւնը, գործակիցներէ պաշտպանուած և նախագահէ հովանաւորուած: Տարի մը ևս կանցնէր և 1902 ապրիլին անհամարատու իններորդ տարւոյն լրանալէն ետքն ալ համարատուութեան փոյթ չէր տարուէր, հաշուեցոյց և տեղեկագիր նպատակէ դուրս կը մնային, միակ ջանքը միաբանութենէ բխած տնօրէն ժողով մը ունենալն էր, որպէսզի 1888-ի կանոնագիրին պօրութեամբ ամենայն ինչ անոր հեղինակութեամբ պաշտպանուի և միաբանութեան հանդէպ կատարուելիք համարատուութեան կանոնը իբրև պարզ ձևակերպութիւն մէկ կողմ թողուի, և կեդրոնական երեսփոխանութեան ներկայուելիք

տեղեկագիրն ալ կեդրոնին լուծեամբը մոռացութեան մատնի: Բայց երկարող գործերն ալ վերջիվերջոյ ծայր մը կունենան, և հաշուեպահանջներուն իննամեայ խաղաղական դիմումներն ալ օր մը յուզումնալից ցոյցերու պիտի փոխուէին:

3041. ՀԱՇՈՒԵՊԱՀԱՆՋ ՑՈՅՑԸ

Հաշուեպահանջ դիմումներուն ցոյցերու փոխուելուն սկզբնաւորութիւնը ի դէպ է դնել, տնօրէն ժողովոյ լրացուցիչ ընտրութեան համար գումարուած 1902 յունիս 12-ի միաբանական ժողովին: Ցոյցերու առիթ առնուեցաւ ժողովական գործողութեանց առաջնութեան խնդիրը, թէ պատրիարքի գրաւոր առաջարկին ընթերցումէն, և դիւանի կազմութենէն և տնօրէնի երեք անդամոց ընտրութենէն, ո՞րը առաջին պիտի ըլլար: Տիրող վարչութեան և անոր ծրագրին պաշտպանութիւնը վրայ առեր էր լուսարարապետ Խապայեան, և ոգի ի բոին կաշխատէր տնօրէնին, բայց իրօք ելամտապետ Մաքսուտեանին օգտին, որ լաւագոյն սեպած էր նիստէն բացակայիլ, ուղղակի մեղադրանքներու նշաւակ չդառնալու համար: Հաշուեպահանջ խումբը իր ընդդիմութիւնը սկսաւ նախ դիւանի կազմութիւնը կատարել առաջարկելով. մինչ տնօրէնին պաշտպանը կուզէր նախ իր պէտքը հոգալ, և տնօրէնի կազմութիւնը լրացնելով իր դիրքը պօրացնել, և յետոյ մնացեալ խնդիրներ սովորական եղող և այսչափ տարիներէ ի վեր գործածուած խոստումներով փակել. իսկ այս ընտրութեան անցնելու համար պէտք էր պատրիարքական գրաւոր ճառը կարդալ, և այս կէտին վրայ ամփոփեց Խապայեան իր փաստաբանութիւնը: Նախագահական ճառին ընթերցումը կանխել իրաւացի կըլլար, եթէ բացման ճառ ըլլար, մինչ այս անգամ յառաջ բերուածը պարզապէս գործի մը առաջարկ էր. այսու հանդերձ քանի մը ձայներու առաւելութեամբ ընթերցումը որոշուեցաւ, և այդ առաջին պայքարը Խապայեան շահեցաւ, որ կարծես թէ հակառակ կողմը պայլացնելով պօրացնելու քան թէ ընկճելով տկարացնելու ծառայեց: Շատ աւելի յաջող եղած կըլլար իր փաստաբանութիւնը, եթէ դիւանի կազմութեան չհկառակէր և իր գաղտնի միտքը չմատնէր: Նախագահական ճառը ըստ կանոնի երեք անդամոց դադարման վիճակով որոշուիլը աւելորդ կը դատէր, զի Մարկոսեան Մամբրէ եպիսկոպոս հրաժարած և քաշուած էր իր միջնորդութեամբ տրուած խոստումին չկատարուելէն վշտացած: Ապարեան Վահրամ վարդապետ սկիզբէն բացակայ կը մնար, և Փորթուզաւեան Խորէն վարդապետ վախճանած էր, և կը մնային երեք միայն Ներսէս եպիսկոպոս Գէորգեան և Եղիա վարդապետ Յովհաննէսեան և Ղևոնդ վարդապետ Մաքսուտեան, իսկ Սահակ եպիսկոպոս Խապայեան իբր լուսարարապետ մշտնջենական անդամ էր: Համարատուութեան վրայ խոսելով՝ պատրիարքը դարձեալ կը վստահացնէր, թէ պաշտօնէից հաշիւներն առնուած, տարեկան հաշիւները քննուած ու պատրաստուած են, և 1902 ապրիլին վերջացող տարւոյ հաշուեփակին հետ պիտի ներկայացուին, և թէ թիւրիմացական տարաձայնութիւնք և լրագրական անհարկի հրատարակութիւնք, միաբանական գործօն և անձնուէր ոյժն ջլատելէ վատ, իմա Մաքսուտեան մատակարարութեան ոյժը նուազեցնելէ վատ, առ սուրբ աթոռն ազգին սէրն ու համակրանքը և օտարաց վստահութիւնը կը նուազեցնեն (02. ՄԻԱ. 509), որ է ըսել ընտրութիւնը կատարել, իսկ համարատուութեան ակնկալել: Ընթերցումէն ետքը կարգը կու գար դիւանի կազմութեան և տնօրէնի ընտրութեան խնդիրներուն յառաջնութեանը, և այս անգամ հաշուեպահանջները կը յաղթանակէին, և նախապէս դիւանի կազմութիւնը կորոշուէր, և կրկին քուէարկութեամբ կը հռչակուէին, Եղիշէ վարդապետ Չիլինկիրեան առաջին և Սարգիս Աճէմեան երկրորդ ատենապետ Մեսրոպ վարդապետ Նշանեան առաջին և Յարութիւն վարդապետ Պարոնեան երկրորդ ատենադպիր (02. ՄԻԱ. 513): Կը մնար տնօրէնի անդամոց լրացուցիչ ընտրութեան խնդիրը, և այս անգամ հաշուեպահանջները շիտկէշիտակ համարատուութեան խնդիրը կը յուզէին և նոր ընտրութիւն ընելու հակառակէին, որպէսզի պատասխանատու եղողներ

իրենց համարատուութիւնը ներկայէն, և միաբանութիւնն ալ կացութեան գիտակցութեամբ նոր ընտրութիւն կատարէ, և գործը որոնց յանձնելիքը գիտնայ: Հաշուեպահանջներուն առաջարկին պաշտպանութիւնը կը ստանձնէր գլխաւորապէս Դաւիթ վարդապետ Տէրտէրեան, իերն ձայնակից ունենալով Յակոբ Սանասարեան, Հմայեակ Երէցեան, Վահան Բէյշիշեան և Սարգիս Աճէմեան վարդապետները իսկ հակառակին պաշտպանութիւնը Խապայեան լուսարարապետը կը վարէր միշտ ձայնակցութեամբ Անդրէաս Միրզայեան և Ղուկաս Յովհաննէսեան վարդապետները, մինչև ելևմտական Մաքսուտեան գործին տէրը կը բացակայէր, ինչպէս ըսինք: Նախագահ պատրիարքը քանիցս կը միջամտէ համերաշխութեան կէտ մը գտնելու, սակայն ինքն ալ չի կրնար ուրախնալ կամ հերքել ինը տարիէ սողին կրկնուած խտրէական խոստումները, պատասխանատու անձերուն իրենց համարատուութիւնը ներկայելու պարտքը, և միաբանութեան առանց կացութեան գիտակցութեան ընտրութիւն կատարելուն անտեղութիւնը: Խապայեան իբր իրեն փաստ կուզէ գործածել համարատուութիւն ներկայելու համար տնօրէնի կատարեալ կազմութեան պէտքը, որուն կը պատասխանուի թէ այն կազմով որով գործեցին, նոյնով կրնան համարատուութիւն ալ ընել: Մերձաւոր ապագայի մէջ համարատուութիւնը ներկայելու խոստումները կը կրկնուին, որուն համարձակօրէն կը պատասխանուի թէ տանիսներու վրայ կը պողային միաբանութեան երեսին թէ հաշիւ տալու պարտաւոր չեն: Իբր արգելք կը յիշուէր ևս ընդհանուր ժողովներուն պարագայից բերմամբ կասկածաւոր երևնալը. այլ կը պատասխանուէր թէ բոլոր գաւառներ իրենց ընդհանուր ժողովները կանոնաւորապէս կը գումարէին, և Երուսաղէմի մէջ ալ խափանուած չէր: Խապայեան իբրև փաստ յառաջ կը բերէր որ եթէ ազգային կեդրոնական վարչութիւնը իր համարատուութեան իրաւունքը ի գործ դնէր, և Չիլիկիրեանն ալ կը ձայնակցէր որ եթէ նա պահանջելու ըլլար, բնականաբար տնօրէն ժողովը իւր համարատուութիւնը պիտի ներկայացնէր, կամ որ նոյն է, բնականաբար սուրբ աթոռոյ վարչութիւնն ալ պիտի փութար գոհացնել վեդրոնն, միանգամայն իբրև կեդրոնի արդարացում կը յիշուէր, թէ ծանրատաղտուկ գործերով բեռնաւորուած էր 402.ՄԻԱ.511): Ներուի մեզ այստեղ յաւելուլ, որ իրաւ էր որ կեդրոնը համարատուութիւն պահանջած չէր, սակայն անոր չպահանջելը, տալու պարտաւոր եղողը չէր արդարացներ, ինչպէս ծանրատաղտուկ գործերն ալ չէին արդարացներ կեդրոնին չպահանջելը: Սակայն կեդրոնին չպահանջելուն բուն պատճառը Երուսաղէմի փոխանորդին և եռեակի անդամակցին, Երէցեան եպիսկոպոսին, կեդրոնը վստահեցնելն էր, թէ Երուսաղէմի մատակարարութիւնը հաւասարակշիռ կը քալէ, թէ պարտք չունի, և թէ պարտք ունենալու խօսքերը իբրև վգուշաւորութեան կը վրուցուին, որպէսզի դուրսէն բեռեր ու պահանջներ չծանրանան աթոռին վրայ, կամ ինչպէս Խրիմեանի ալ կը գրէր, որպէսզի չարթնացնեն շրջապատող անօթիներու ախորժակը (ՊՏՃ.1): Միւս կողմէն կեդրոնը երեսփոխանութիւն գումարելու անհնարութեան մէջ, եթէ համարատուութիւնը ինքն պահանջէր, գուցէ այդ դժուարութիւնը իբրև առարկութիւն գործածուէր իրեն դէմ: Ժողովական գործողութեանց դառնալով, ներհակընդդէմ պատճառաբանութիւններ և բացատրութիւններ բաւական երկարեցան, նախագահը գումարումը թողով մեկնեցաւ, և առենապետն ալ տեսնելով, որ ժողովական անդամոց յուզուած լինելով ժողովական բարեկարգութիւնը խանգարուիլ սկսաւ, առանց երակացութեան յանգելու, ժողովը փակեց (02.ՄԻԱ.518), որով հաշուեպահանջներուն ցոյցը իր նպատակին հասաւ, ընտրութիւնը խափանեցաւ և համարատուութեան պարտքը շեշտուեցաւ, և 1902 յունիս 12-ի 31 ժողովականաց ներկայութեամբ գումարուած ժողովը (02.ՄԻԱ.506) հաշուեպահանջ կողմը պօրացուցած եղաւ:

Բայց ցոյցն ալ գործնական արդիւնք չունեցաւ, և 1902 յունիս 12-ի ժողովն ալ չբաւեց լուսարարապետը և ելեմտապետը և տնօրէնի համամիտ կամ միամիտ ընկերները համոզելու, թէ վերջապէս պէտք է որևէ գոհացում տալ կանոնական պահանջէ մը յառաջ եկած յուլմունքը ցածուցանելու համար. վի երբ որոշ պատճառ մը չէր տրուեր և միայն սուտ խոստումներով խաբել կաշխատուէր, իրաւացի չըլլալը խոստովանուած կըլլար, և յայտնուած դժկամութեան ներքև ամենէն ձախող ենթադրութիւններն ընել ներեալ կը դառնար. ապաթէ ոչ միաբանական համարատուութիւնը այնչափ դժուարին գործ մը չէր, եթէ Երէցեանի խօսքին համաձայն հաշուեպահանջներուն պարագլուխները ինքեանք իսկ հաշուէ հասկցող չեն (ՊՏՃ.1): Մաքսուտեան ունէր ոլորապտոյտ դարձուածներով հաշուեցոյցեր և տեղեկագիրներ վաւերացնել տալու ճարտարութիւնը, ինչպէս 1893-ին յաջողած էր չորս տարուան հաշիւները պարզ ընթերցմամբ մը վաւերացնել տալ (3036), և երբ այժմ այս ձևէն ալ փախուստ կու տար, ծածկելու անհնարին խարդաւանքներ ենթադրելու առիթ կընծայէր: Միաբանութեան ոգևորումը պիտի աճէր եթէ արտասովոր պարագայ մը, լուսարարապետ Խապայեան եպիսկոպոսի, յունիս 12-ի փաստաբանին, հոկտեմբեր 12-ին Կիլիկիոյ կաթողիկոս ընտրուիլը վրայ չհասնէր: Յունիս 12-ի նշանակալից ցոյցը, եթէ ոչ ուրիշ պաշտօնակալներու, գոնէ 84 տարեկան պատրիարքին ազդած էր, որ մինչև իսկ անձամբ ելեմտապետի կը դիմէր որ հաշիւ ու տեղեկագիր պատրաստէ և յուլմունքը դադրի, և միաբանութիւնը տակն ու վրայ չըլլայ: Նոյն յանձնարարութիւնը լուսարարապետին ալ կը կրկնէր, կաթողիկոսական ընտրութիւնը շնորհաւորելուն առթիւ, և կը յանձնարարէր որ ելեմտապետը ստիպէ համարատուութիւնը լրացնել, քանի որ դեռ ինքն ալ մեկնած չէ: Բայց ծերունուոյն աղաչանքներն ալ ազդեցութիւն չեն ըներ, և Վեհապետեանի միտքն ալ Մաքսուտեանի մասին կը սկսի կասկածներու մատնուիլ իսկ Մաքսուտեանը միւս կողմէն պատրիարքը մեղադրելու կը սկսի, թէ ինքն հաշիւները անոր յանձնած է, և միաբանութեան ներկայելը անոր կը պատկանի և ոչ իրեն: Այդ վրոյցները ուխտաւորաց և քաղաքացւոց մէջ ալ կը տարածուին, և շահուած թղթակիցներու և վարձուած խմբագիրներու ձեռքով մայրաքաղաք ալ կը հասնին, և հաշուեպահանջներու ու հաշուեխոյսներու պայքարը ընդհանուր մտադրութեան և խօսակցութեան նիւթ կը դառնայ (ՊՃՆ.21): Լուսարարապետին կաթողիկոսութեամբ մեկնիլը յաջորդի ընտրութեան հարկը կը պատճառէր, որ տեղի կունենար 1903 յունուար 20-ին միաբանական ժողովով: Հաշուեպահանջները լռին բայց ազդու ցոյցի մը կը գործածէին ընտրութեան առիթը, և լուսարարապետ կընտրուէր Անոյշեան Գաբրիէլ վարդապետը, հաշուեպահանջութեան ծանօթ նախայարձակը, պարագայից գիտակ և անաչառ ընդդիմադիրը, որ Պաղտատ կը գտնուէր տեղապահական պաշտօնով: Տիրող կողմը ընտրելի նշանակած էր Պօյաճեան Գրիգորիս վարդապետը, որ միայն 16 քուէ կը ստանար Անոյշեանի տրուած 28 քուէներու հանդէպ (Օ3.ՄԻԱ.526), որով միաբանութեան ստուար մեծամասնութիւնը հաշուեպահանջ կողմին իրաւունք տուող կը յայտնուէր: Որչափ ալ ժամանակաին պարագաները ցոյցերու նպաստաւոր չէին, և պատշաճիչ փափկութիւնը հանդարտ վիճակ կը պահանջէր, սակայն ներհակընդդէմ շարժումները և պատահական յուլումները հնար չէր արգիլել, և ամէն դէպքեր անակնկալի առիթ կընծայէր: Անոյշեանի ընտրութիւնը վայրացուցած էր ելեմտապետը և իրեն խումբը, ուստի գայթակղական միջոցներով վայն խափանելու ջանքեր սկսան. մինչև իսկ դպրոցական աշակերտութիւնը ձեռք առնուեցաւ և ազդեցութեան ենթարկուեցաւ վարժարանաց տեսուչ Չիլինկիրեանի, կարծիք և ընթացք փոխելու հակամէտ անձին ձեռամբ, որ այս վերջին օրեր ելեմտապետէն շահուած էր: Ասով մէկտեղ միջոց մը միջադէպ մը տեղի չունեցաւ և ամէն ինչ խաղաղ անցաւ մինչև փետրուար 14-ին Խապայեանի հրաժեշտին հայրապետական

պատարագը (3022), այլ 15-ին շաբաթ երեկոյի ձայն տուաւ փոթորիկը շատ աննշան պարագայէ մը: Աշակերտներէն ոմանք երգեցողութեան չմասնակցելուն վրայ, աջակողեան դասի ժամասաց Տէրտէրեան Դաւիթ վարդապետէ, յունիս 12ի ժողովին ընդդիմաբաններուն առաջնորդէն, բերանով ու ձեռքով կը յանդիմանուին. իսկ վարժարանի տեսուչը աշակերտաց պաշտպանութիւնը կը ստանձնէ, իբրև Տէրտէրեանի դէմ հակառակութեան նշանակ. աշակերտներ կը քաջալերուին և յաջորդ 16-ին, Բուն Բարեկենդանի կիրակիին առտուն, աւելի յայտնի ցոյցի կը համարձակին, այնպէս որ պատրիարքը աշակերտներէն մին դասէն կարտաքսէ, որուն վրայ ամէնքը խմբովին Ս. Ստեփանոսի աւանդատան մատուռը կը քաշուին, և աղաղակներ կը բարձրացնեն թէ իրենց տեսուչէն վատ ուրիշէ, և ոչ իսկ պատրիարքէ հրաման չեն ընդունիր: Միանգամայն զիրենք հանդարտեցնելու համար աւանդատուն դրկուած կամ գացած Մեսրոպ Նշանեան և Յակոբ Սանասարեան վարդապետները և Իգնատիոս Սարգիսեան սարկաւազը կը ծեծեն և աշտանակի հարուածներ կիջեցնեն. հաշիւ պահանջած ըլլալու և Անոյշեանը ընտրած ըլլալու յանդիմանական ձայներ ալ կը բարձրացնեն ժխորին մէջ, որուն ուրիշ խառնուողներ ալ կաւելնան, և մինչև իսկ օրուան պատարագը կը խափանուի: Նշանակութեան արժանի է տնօրէնի ժողովականներուն անտարբեր լուծիւնը այդ տեսարաններուն հանդէպ. զի եթէ Խապայեան իր նոր դիրքը պատճառելով կը սիրէր չխառնուիլ, նոյն արդարացումը չունէին ելամտապետ-ատենապետ Մաքսուտեանը և փոխանորդ Գէորգեանը: Պատրիարքը չկրնալով անտարբեր մնալ աշակերտական ըմբոստութեան առջև, գլխաւորներէն ութը հատը պատրիարքարան բերել կը հրամայէ միանգամ և երկիցս և բազմիցս, բայց Չիլինկիրեան միշտ խոյս կու տայ՝ չեն հնազանդիր պատրուակով: Պատրիարք վարժարանէ արտաքսելու սպառնալիքը Բեթղեհէմ հեռացնելու կը փոխէ, բայց և ոչ այնպէս Չիլինկիրեան ընթացք կու տայ պատրիարքական հրամանին, մինչ Մաքսուտեան և Գէորգեան պատրիարքէն հեռու կը մնան, և ժողովի հրաւերէն ալ կը խուսափին, գայթակղութիւնը աճեցնելու յայտնի դիտումով:

3043. ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՄԻՋԱԴԷՊԸ

Յարութիւն պատրիարք հաշուեպահանջներուն հանդէպ դժուարութեան մատնուած, և իրեն օգնական կարծուածներէն լքուած, կացութեան դարման տանելու պարտաւոր անձերուն անտարբերութենէն վշտացած, տարիքին բերմամբ իրեն բնական բուռն վարչականութենէն զրկուած, գործէ քաշուելու և պատրիարքութենէ հրաժարելու միտքը կորոճայ, և վերջապէս փետրուար 19-ին, Մեծապահոց առաջին չորեքշաբթի օրը գործադրելու կը ձեռնարկէ: Փոխանորդ Գէորգեանը կը կոչէ, նպատակը կիմացնէ, իսկ Գէորգեան՝ որ ժողովի հրաւերներէն կը խուսափէր՝ հրաժարականի յայտարարութեան չընդդիմանար, և կը սկսի ընդունիլ կնիք, բանալի, աւանդ, տոմար, պաշտօնագիր, և ուրիշ պատրիարքական պաշտօնականներ, զորս Վեհապետեան կը յանձնէր: Հրաժարականի ձայնը կը լսուի, և առաջին հաշուեպահանջները կը դիմեն վայն արգիլելու, զի այլևս յայտնի եղած էր, որ եթէ ցարդ իրենց առաջարկները անտեսնուած էին, բուն պատասխանատուն պատրիարքը չէր, մանաւանդ թէ նա վերջերը համարատուութիւնը կատարել տալու համար դիմումներ և հետապնդումներ և հրամաններ կատարած էր, և արգելքը ելամտապետին կողմէ եղած էր, լուսարարապետին ալ համամտութեամբ: Կը մտածէին ևս որ պատրիարքի հրաժարելով աթոռին անգլուխ մնալը վատթարագոյն հետևանքներ կրնար ունենալ: Պատրիարքին մօտ առաջին հասնողը եղած էր աթոռին թարգման Աձէմեանը, որ Գէորգի կարգիլէ պատրիարքին յանձնածները ստանալ, վրայ կը հասնին հաշուեխոյսները, և կարծես պատրիարքի հրաժարելուն փափաքով հաշուեպահանջներուն կը հակառակին, պատրիարքարանի արտաքին Ս. Մինասի կոչուած սրահին մէջ իրարանցում կը սաստկանայ, կռիւը բանակուի և հարուածներ

վէճերու կը յաջորդեն, ոստիկանութիւն հրաւիրելու աղաղակներ կարձակեն հաշուեխոյսները, իբր թէ ԱՃէմեան ծեծած ըլլայ, Գէորգեանը կամ թէ Մաքսուտեանի փնտոուիլը սպաննելու նպատակով եղած ըլլայ, մինչ հրաժարականը արգիլելէն անդին չէր անցներ հաշուեպահանջներուն դիմումը, որ այլևս չի լսուիր, և կը կարծեն թէ յաջողած են, սակայն Վեհապետեան միտքէն ետ չէր դարձած, և հրաժարականը Կ. Պոլիս Օրմանեանի հեռագրած էր, թէպէտ անկէ ալ իսկոյն մերժման պատասխան ստացած: Օրմանեան հեռագիրին ետևէն նամակով ալ կրկնած էր մերժումը, թէ միտքէ իսկ անցունել ներեալ չէ Ձեր Սրբապանութեան առաքելական աթոռէն հեռանալու գաղափարը (ՊՃՆ.7): Կ. Պոլսոյ հեռագիրը, միաբաններու թախանձանքը, Խապայեանի ուղևորութեան պարագայով պատուիրակ եկող Յարութիւն Գարամանեանի միջամտութիւնը, և Մաքսուտեանի հրամանով ութն աշակերտներու Բեթղեհէմ դրկուիլը, Վեհապետեանը կը յորդորեն և կը համոզեն հրաժարականին վրայ չպնդել և պաշտօնը շարունակել (ՊՃՆ.8): Իսկ Խապայեան, որ այս անցուդարձները կը տեսնէր, կը փութայ Երուսաղէմէ հեռանալ, և փետրուար 26-ին կուղևորի Յոպպէ և անտի կը նաւարկէ Կիլիկիա երթալու: Յիշած էինք (3022) թէ Խապայեան անշուք կերպով ճամբայ դրուած ըլլայ, և թէ բացարձակ ստոյգ չէ, բայց թէ բան մը նուազ եղած է, բնական հետևանք էր վերջին պատահարներուն, զորս ինքն կրնար խափանել, եթէ Մաքսուտեանը հաշուետուութեան յորդորէր, բայց կանուխ հովանաւորելով և վերջը անտարբեր մնալով կամակից ըլլալու նշաններ տուած կըլլար, և ուղղութեան և խաղաղութեան միջնորդ գտնուած ըլլալու պատուաւոր դերը կը կորսնցնէր: Հարկաւ ինքն ալ այդ ցաւը պագցած էր, որ Ատանա հասնելուն պէս, մարտ 13-ին, վշտացեալ պագցամբ գանգատներ կուղղէր Օրմանեանի, այն համակիր կամ գոնէ ոչ-համակիր նշանաց համար, զորս միաբանութիւնը իր գլխով ունեցած էր իրեն հանդէպ (ՊՃՆ.35), ինչ որ կը հաւաստէ, թէ Վեհապետեանի մտայնութիւնը արդէն պղտորած էր եռեակին գործունէութեան մասին: Բայց միայն Խապայեան չէր որ վերջին եղելութեանց մասին կեդրոնին կը դիմէր շատեր շատ կողմերէ կը փութային իրենց տեսութիւնները ներշնչել կեդրոնին, և անկէ իրենց համար պաշտպանութիւն սպասել, որոնք աւելի կեդրոնը շփոթելու քան թէ համոզելու կը ծառայէին: Այդ կարգին աւելի աչքառու եղաւ 13 միաբաններու, 8 վարդապետ, 3 արեղայ և 2 սարկաւագ, մարտ 1-ին կեդրոնին ուղղած գրութիւնը, իբր բացատրութիւն իրենց տուած գանգատանաց հեռագիրին, որուն մէջ կը խօսէին Վեհապետեանի հրաժարականին շարժառիթը պարզելու, հաշուեպահանջութեան խնդիրը լուսաբանելու, Բուն Բարկենդանի և չորեքշաբթի եղելութիւնները բացատրելու, և Մաքսուտեանն ու Խապայեանը իբրև գրգռիչ և պատասխանատու ցուցնելու մասին: Կանխէնք յիշել որ 13-ներէն 5 վարդապետներ միայն 1900-ի դիմումը ստորագրող 17-ներէն էին, մնացեալ 8-ները նորեր էին, որ այս կամ այն պատճառով այն ատեն ստորագրողներէն 12-ները կամ շահուած էին, կամ պատահական պատճառով մը այս անգամ ստորագրել չէին կրցած: Կեդրոնի վարչութիւնն ու պատրիարքը չէին կրնար այլևս անտարբեր մնալ վերջին եղելութեանց և դիմումներու գրութեանց հանդէպ, որոնց մասին հաղորդուած պարունակութիւններէ վատ, Երուսաղէմի փոխանորդին լուրերն ու տեղեկութիւններն ալ կը լսէին: Իսկ Երէջեան, եռեակի անդամակից, Մաքսուտեանի և հաշուեխոյսներու պաշտպան կը հանդիսանար, և հաշուեպահանջներուն նպաստաւոր չէր կրնար ըլլալ. իսկ ասոնց կողմէ եկած 13-ներու գրութիւնն ալ կացութիւնը պարզելէ և եղելութիւնները պատմելէ աւելի ջատագովկան ոճ ունէր, և կասկածներ կը վարթուցանէր շփոթութեանց և ժողովին իսկական գրգռիչներուն մասին:

3044. ԿԵԴՐՈՆԻ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ

Գործոց ընթացքը բնական բերմամբ Կ. Պոլսոյ կեդրոնը կը մղէր Երուսաղէմի գործերով պբաղիլ Հանրային կարծիքը տգեղ միջադէպներէ վայրացած և պարտքի անունէն պզուած

կեդրոնական վարչութիւնը կը ստիպէր գործը ձեռք առնել և յստակել: Հաշուեխոյսներ կեդրոնը կը հրաւիրէին այն ակնկալութեամբ, որ հրակաւ իրենց կողմի պաշտօնական և երիցագոյն անձանց հեղինակութիւնը պիտի ապդէ կեդրոնին, քան գործերուն ներքին իսկութիւնը և եղելութեանց ճշգրիտ կշիռը: Հաշուեպահանջներ ալ իրենց կողմէն կեդրոնին միջամտութիւնը կը հրաւիրէին, վստահ ըլլալով թէ ճշմարտութիւնը երևոյթներու կը նախադասուի (ՊՃՆ. 29): Խապայեան որուն Մաքսուտեանի հետ համեմատութիւնը յայտնի էր, կեդրոնէ քննիչ յղել կը թելադրէր (ՊՃՆ. 36): Իվմիրլեան որ տեղւոյն վրայ գտնուող հեղինակաւորագոյն անձն էր, կեդրոնական վարչութեան միջամտութիւնը անհրաժեշտ կը տեսնէր (ՊՃՆ. 26). թող ամէն կողմերէ և ամէն կուսակցութիւններէ կեդրոնին ուղղուած գիրերը, որոնք անկէ կը սպասէին ամէն կարգադրութիւն (ՊՃՆ. 40), միշտ առաւելագոյն պնդումը հաշուեխոյս կողմէն ըլլալով: Այս կացութեան հանդէպ Օրմանեան պատրիարք վարչութեան համաձայնութեամբ գործը երկու որոշ մասերու կը բաժնէր, և ներքին վարչութիւնը մատակարարութենէն կը վատէր, առաջինը ուղղակի Երուսաղէմի պատրիարքին և իր վարչութեանն կը թողուր, այնպէս ալ իր գիրերուն մէջ կը յեղյեղէր և հրապարակաւ ալ կը յայտարարէր (05. ԲԻՋ. 2530). իսկ մատակարարականները կեդրոնի պատրիարքին և իր վարչութեան կը վերապահէր, ոչ միայն ապգային սահմանադրութեան և սաղիմական կանոնագրութեան հետևելով, կեդրոնը համարառու ըլլալու իրաւունք ունենալուն. այլ և եթէ Երուսաղէմ էր որ պարտքը կը բարդէր, ապգային հանրութիւնն էր որ պարտքը կը վճարէր, ինչպէս վերջին անգամ եղած էր (2878): Այս էր կեդրոնական վարչութեան հիմնական ուղղութիւնը Վի չէր ալ կրնար լիովին անտարբեր գտնուիլ, նոյն իսկ ներքին վարչութեան խնդիրներու մէջ, երբոր անոնք կացութիւնը կը շփոթէին, և անոնց մասին իրենց դիմումներ կըլլային (ՊՏՃ. 167), որով այս կէտին վրայ ալ պարտաւոր կըլլային մասնաւոր մտադրութիւն դարձնել, առանց իրաւասութեան կէտին մտնելու, այլ ստիպողական եղած չափով գործնական կարգադրութիւններ ընելով, որպէսզի պատահական գրգռութիւնը լռեցնելով հնար ըլլայ մատակարարական խնդիրը պարզել: Այս նպատակով գրուեցաւ մարտ 25-ին պատրիարքական պաշտօնագիրը (ՊՃՆ. 29-33), փոխանորդ Գէորգեանի ուղղուած, իբր 13-ներու հաղորդուելիք պատասխան: Պաշտօնագիրին դիտած կէտերն էին. 1. Թէ 13-ներու ձայնը անկարևոր փոքրամասնութիւն էր 50 անձէ բաղկացած միաբանութեան մէջ. 2. Թէ ամբողջական պատմութիւն չէր գրածին. 3. Թէ պատրիարքի հրաժարականը պարզապէս կիրակիի դէպքերուն վերագրել ուղիղ չէր. 4. Թէ աշակերտաց գործերը Մաքսուտեանի և Խապայեանի վերագրելով՝ դատաւորի քան թէ բողոքի դեր ստանձնած կըլլային. 5. Թէ ներկայ պարագայից մէջ Խապայեանի դէմ գրել նին վայել չէր. 6. Թէ ներկայէն ոստումով մը եօթը տարի առաջուան դէպքերուն անցնիլ իրենց պատրիարքը մեղադրել և անուանարկել էր. 7. Թէ հաշիւներու խնդիրին մէջ Մաքսուտեանը մեղադրել նին, վերջին տարիներ վայն նորէն ընտրել նուն կը հակասէր: Այս տեսութեանց վրայ Երուսաղէմի ներքին վարչութեան միջամտել չուզել նին կը կրկնուէր, և կը յայտնուէր թէ հաշիւներու խնդիրը աւելի Վօրաւոր կերպով ներկայացուած կըլլար, և առանց շփոթութեանց առաջարկուէր: Պաշտօնագիրը կը փակուէր պատշաճ յորդորներով: Այս գիրը թէպէտ իր պարունակութեամբ աւելի Մաքսուտեանի նպատաւոր ոճ ունէր, նպատակ ունենալով յուզեալ խումբը հանդարտել, սակայն այսուհանդերձ Մաքսուտեան չհամարձակեցաւ վայն 13-ներուն հաղորդել և ոչ ալ պաշտօնական ընթացք տալ, առերես պատճառելով թէ խնդիրը չկայ և խաղաղութիւնը տիրած է (03. ԲԻՋ. 2016). բայց անշուշտ իրեն համար վտանգաւոր տեսնելով, որ հաշուեպահանջութեան սկզբունքը պաշտպանած է (ՊՏՃ. 158), և միւս կողմէն Վգուշացաւ որ 13-ներ պաշտօնագիրին պատասխանելով մուշ ցուցուած կէտերը լրացնելու, և իրեն դարձուածներուն

մանրամասնութեանց մտնելու, և անհաճոյ գործողութիւնները երևան հանելու պատեհ ունենան: Բայց երբոր ամբողջ գրութիւնը իր հասցէին հաղորդելէ կը քաշուէր, մէջէն իրեն հաճոյագոյն հատուածներ օտարներու հաղորդելու կը փութար, որով իբր թէ իր գործը կեդրոնէն պաշտպանուած կը ցուցնէր: Կեդրոնը միևնոյն ժամանակ Յարութիւն պատրիարքի կը յանձնարարէր յետամնաց տարեկան հաշուեցոյցները և տեղեկագիրները փութացնել և կեդրոնին յղել, բացատրութեանց համար ալ Մաքսուտեան ելևմտապետը միասին յղել իր գործը պաշտպանող, և հաշուեպահանջներէն Սանասարեան և Աճէմեան և Տէրտէրեան վարդապետները ընկերացնել իբրև իրենց ընդդիմութիւնները ներկայացնող (ՊՃՆ. 40), և միանգամայնիբրև անուղղակի միջոց գլխաւորները հեռացնելով երկու կողմերուն միջև մօտաւորութիւնը դիւրացնելու: Եթէ Մաքսուտեան իրեն հակառակորդներուն ուղղուած դիտողագիրն ալ չամարձակեցաւ յօգուտ գործածել, հաւանաբար Երէցեանէ ստացած մասնաւոր տեղեկութիւններէ ալ առաջնորդեցաւ, որ կեդրոնը հաշուեպահանջութեան վրայ հաստատուն է, որով հաշուեպահանջներու բաց դուռ ցուցնել իրեն համար պոզաւանալի կէտ մըն է: Հետևաբար զուր տեղ Խապայեան ադ մասին Վեհապետեանը կը ջանայ մեղադրել, թէ վարչութեան կողմէն դրկուած տասներեքներու պատաստացուցիչ գիրը հրապարակ հանելու ուղղամտութիւնը չունեցաւ (ՊՏՃ, 14), զի գիրը որ թէ պատրիարքին այլ փոխանորդին ուղղուած էր, և փոխանորդը ատենապետէն կը ստանար իր հրահանգը և ոչ պատրիարքէն: Իսկ Իզմիրլեանի ընդարձակ տեղեկագիրէն (ՊՃՆ. 9-29) Օրմանեան օգտուելով մէկտեղ մտերմաբար կը խնդրէր Երուսաղէմի գործոց միջամտութենէ և այդ մասին գրութիւններէ պոզաւանալ. զի Մաքսուտեան և Երէցեան իրենց պաշտպանութեան համար միջոցներու կարգին, քսութենէ և մատնութենէն ալ չէին քաշուիր, օգուտ քաղելով պետական կասկածաւոր հոսանքներէ, ինչպէս և այս անգամ Իզմիրլեանը կառավարութեան աչքին իբրև գրգռիչ ներկայացուցած էին, իբրև թեկնածու Երուսաղէմը իրեն հրատարակեցնելու և Երուսաղէմի միջոցներով յեղափոխականներու օգնել: Ասոր վրայ էր որ արդարութեան և կրօնից նախարարութենէն Օրմանեանի հաղորդուեցաւ, Իզմիրլեանը հայչագտնուող տեղ մը փոխադրելու որոշումը, որ Իզմիրլեանի ալ ականջէ հասած էր, և գոհունակութեամբ լուր առած էր Օրմանեանի նախարարութեան քով ըրած պաշտպանողականին մասին (ՊՃՆ. 10): Օրմանեան յաջողեցաւ Իզմիրլեանը Երուսաղէմի մէջ պահել, թէպէտ չյաջողեցաւ վայն Կ. Պոլիս դարձնելու ճիգերուն մէջ, պարտաւորուելով լուել կայսեր կողմէ հաղորդուած այս խնդիրը չգրգռելու անձնական խնդրանքին առջև: Չմոռանանք յիշել, որ երբ կեդրոնը Երուսաղէմի խնդիրով կը վբաղէր, աւելի ծանր և տագնապալի խնդրով մըն ալ վբաղելու պարտաւորուած էր, Ռուսահայոց եկեղեցական սեփականութեանց խնդիրով, զոր արդէն լիովին բացատրած ենք (3026-3034):

3045. ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏԻ ԽՆԴԻՐ

Երբոր Երուսաղէմի միաբանութիւնը հաշուեպահանջութեան խնդիրով կը տագնապէր, լուսարարապետութեան խնդիր մըն ալ կու գար անոր խառնուիլ և տագնապը վայրացնել: Գաբրիէլ վարդապետ Անոյշեան 1903 յունուար 20-ի լուսարարապետ ընտրուած, փետրուար 19-ին Պաղտատէ կը մեկնէր, և մարտ 27-ին Երուսաղէմի կը մտնէր (03.ԲԻՁ.1952) Ծաղկապարդաբէ երեք օր առաջ, և ուրիշ արարողական պատշաճից հետ Մաքսուտեանի հետ ալ կը տեսակցէր սիրալի կերպով և յուսադրելով որ պիտի աշխատի պատուաւոր և հաշտաբար վերջ մը տալ տիրող երկպառակութեան (03.ԲԻՁ.1994), քանի որ լուսարարապետի դերը շատ պօրաւոր է Երուսաղէմի մէջ իբրև տնօրէն խորհրդոյ մշտնջենաւոր անդամ, իբրև ներքին տեսուչ կամ իբրև տեղական վանահայր մը միբանութեան վրայ: Անոյշեան մարտ 30-ին Ծաղկապարդի երեկոյին սովորական արարողութեամբ

և ուխտով պաշտօնը կը ստանձնէ գանձատան բանալիները Ս. Գլխագիրի սեղանէն առնելով, և առաջին գործերէն մին կըլլայ փետրուար 16-ի ըմբոստութեան համար Բեթղեհէմ յցուած ութը աշակերտները պատրիարքի ներմամբ ետ դարձնել: Չատկական տօնախմբութեանց պատշաճներուն կը յօգնի, և առաջուց ունեցած և ճանապարհին գրգռուած ստամոքսի քաղցկեղը կը սաստկանայ, և անկողին կիյնայ և ապրիլ 23-ին Աշխարհամարտն չորեքշաբթին հոգին կաւանդէ, միայն 25 օր լուսարարապետութեան պաշտօնին վրայ մնալով: Անոյշեան Գաբրիէլ վարդապետ բնիկ Կ, Պոլսոյ Գումգաբու թաղէն, 1845-ին ծնած, 1865-ին Երուսաղէմի աշակերտած, և 1871-ին ձեռնադրուած, տակաւին 58 տարեկան կը վախճանէր: Իր մասին խոսած ենք արդէն (3038), կարող, գործունեայ, ուղղամիտ և յուսալից անձնաւորութիւն մը աշխարհն կը մեկնէր հետք մը չթողլով երիտասարդական տարիները ապարդիւն անցուցած էր իր բուռն և չափազանցեալ նախանձայոյց և ոչ-չինիշ բնաւորութեամբ և կեանքը կը կնքէր երբ տարիքն ու գիրքը ու պարագայք արդիւնաւոր ապագայ մը կը յուսադրէին: Յարութիւն պատրիարք ալ մահուանէ քանի մը օր առաջ հեռագրած էր կեդրոնին թէ նոր լուսարարապետին ջանքով խնդիրները փակուած են և երկպառակութիւնը վերջացած է, և թէ Մաքսուտեան ալ հաշիւները ներկայելու համակերպած է (03. ԲԻՉ. 2005): Անոյշեան Կոհ կերթար հնացեալ և անողոք պիտին (03. ԲԻՉ. 2006), և արդար չենք կարծեր Խապայեանի գրածը թէ հաշուեպահանջները Գաբրիէլ վարդապետի մահուան պատճառ եղան (ՊՏՃ. 15): Եթէ ցաւալի էր Անոյշեանի պակսիւրը, աւելի ցաւալի եղաւ յաջորդ ընտրելու պարագան: Նորէն ցցուեցան միաբանութեան երկպառակեալ մրցումները և 1903 յունիս 16-ի ժողովին մէջ հաշուեպահանջներու ընտրելին Սարգիս Աճէմեան 20 քուէով ետև կը մնայ, և 22 քուէով լուսարարապետ կը հռչակուի հաշուեխոյսներու ընտրելին Վահրամ Ապարեան (03. ՄԻԱ. 528). սակայն լոկ երկու քուէով յաղթուած կողմը չուկեց պարտութիւն խոստովանիլ, և հաշուեպահանջութեան խնդիրը նոր ընդարձակութիւն ստացաւ Ապարեանի ընտրութիւնը ջնջելու ճիգերով, որոնք իրօք արդիւնաւոր եղած պիտի ըլլային, եթէ նոյն իսկ նիստին մէջ արձագանգ ունեցած ըլլային: Երկու ընտրելիներն ալ Ապարեան և Աճէմեան, գործին ատակ և պաշտօնին յարմար անձեր չէին, այլ պարզապէս կուսակցութեանց ոյժ հայթհայթելու պիտի ծառայէին ուստի ինչպէս Աճէմեանի համակիրներէն լմանք վերջին պահուն շահուելով քուէին Ապարեանի տուեր էին, նոյնպէս Ապարեանի քուէ տուողներէ ոմանք. մասնաւոր պարագաներէ գրգռուած անոր դէմ եղողներուն կը յարէին, որով այս անգամ Ապարեանը չուկողներ մեծամասնութիւն կը կազմէին, և Յարութիւն պատրիարք, որ ընտրութիւնը հաղորդելու համար Եգիպտոս գտնուող Ապարեանի հեռագրած էր, անմիջապէս ետքը կը հեռագրէր տեղէն չշարժիլ և նոր հրահանգի սպասել: Այսպէս Ապարեան եթէ իրաւական տեսութեամբ մեծամասնութեան ուկածն էր իրական տեսութեամբ մեծամասնութեան չուկածը կը դառնար, և ինքն ալ իր կացութեան համոզուելով չէր փութար գալ և պաշտօնի մտնել, թէպէտ ետքն հակառակը կը գործէր, ինչպէս առաջիկային պիտի տեսնենք: Ըստ այս յայտնի կը տեսնուի թէ միևնոյն հաշուեպահանջութեան խնդիրն էր, որ մէջտեղ կու գար լուսարարապետութեան անունին ներքև քօղարկուած: Ապարեանի դէմ եղած հակառակութիւնը կը հիմնուէր, անոր պաշտօնին համար անյարմար ըլլալուն, կենցաղով բամբամսուած և ոչ-պարկեշտ ճանչցուելուն (03.ԲԻՉ.2091), Աղեքսանդրիոյ գետնին վաճառման մէջ կասկածելուն, տնօրէնի անդամակից ընտրուելով առանց հրաժարելու վանք դառնալ չուկելուն վրայ (03.ԲԻՉ.2095), բայց իսկապէս նա այլևս մեծամասնութեան ընտրեալն ըլլալէ դադարած էր, երբոր իրեն քուէ տուողներէն քանիներն ալ իրեն դէմ դարձած էին: Ինքն Օրմանեանի գրելով կը պնդէր թէ չէր կարծեր որ 24-ի կամ 26-ի հետ գործ ունեցած ըլլայ, առաջինը ճզմել ուկելով և երկրորդին հետևելով (ՊՏՃ.20). սակայն իրօք այս էր ըրածը.

պատահական 22-ին կրթնելով, և մեծամասնութիւնը կորսուած ըլլալուն մտադրութիւն չդարձնելով: Իրեն պաշտպաններն ալ, Խապայեան (ՊՏՃ.13) Գէորգեան (ՊՏՃ.27) և Մարկոսեան (ՊՏՃ.19), ընտրութեան առօրեայ և դիպուածական մեծամասնութենէն պատ փաստ չունէին, և օրէնք, կանոն, իրաւունք, պահանջ, պատշաճութիւն, ամենայն ինչ անոր վրայ կը հիմնէին, առանց դիտելու որ Ապարեան մեծամասնութենէ վուրկ մնացած ատեն պաշտօնի անցնելով, իսկապէս տիրապետութեան ձև առած պիտի ըլլար, որչափ ալ ինքը կը յայտարարէր, թէ պինու պօրութեամբ գրաւուած քաղաքի մը պէս չէր սպասեր Ս. Յակոբայ գանձատան տէր կանգնիլ: (ՊՏՃ.20):

3046. ԱՌԱՋԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ պատրիարքին և վարչութեան դառնալով և գործը վերէն ձեռք առնելով, կը տեսնենք որ ամէն կողմերէ թախանձուած և ստիպուած էին, բայց չէին ուզեր իրենց գծած ուղղութենէն շեղիլ և Երուսաղէմի մատակարարութենէն դուրս վարչականներուն ալ միջամտել յատկապէս լուսարարապետութեան խնդիրին մէջ ալ ընտրութեան և ոչ հաստատութեան իրաւունք կը վայելէին, ինչպէս Օրմանեան ալ կը կրկնէր երբոր իրմէ կը պահանջուէր որ Ապարեանի ընտրութեան պաշտպան կանգնի, այլ նա ընդհակառակն անոր քաշուելուն կողմը կը հակէր, տեսնելով որ Յարութիւն պատրիարքն ալ պայն հրաժարելու կը յորդորէր: Իր մտածած և առաջարկած միջոցն էր հաշիւները տեսնել, որուն առանց հաշուեպահանջ շարժման ալ Երուսաղէմ պարտաւոր էր, և երբոր հաշիւները տեսնելով վճիռ արձակուէր խնդիրն ալ փակուած կըլլար, ինչ որ ամենէն օրինաւոր և կտրուկ եղանակն էր, և հաշիւները արդարապէս դատելու համար, ելևմտապետը և հաշուեպահանջները միանգամայն լսել կուզէր: Բայց այդ օրինական և պարտաւորիչ եղանակէն կը խուսափէին հաշուեխոյսներու պաշտպանները, Խապայեան և Գէորգեան և Երէցեան և Մարկոսեան, և կը պահանջէին որ հաշիւի խօսք չըլլայ, Մաքսուտեան առանց հաշիւ ներկայելու արդարացուի, և հաշիւ պահանջողները իբրև խռովարար դատապարտուին և մերժումին: Այդ ոճը կը գործածէին կառավարութեան առջևն ալ երբոր պատրիարքարանը ստիպել չէին յաջողեր, և կը կարծէին յաջողիլ կառավարութեան առջև, որ միտեալ էր ամէն շարժում խռովարարութիւն և յեղափոխականութիւն մեկնել. բայց այս պարագային ալ իրենց դիմաց կը գտնէին Կ. Պոլսոյ պատրիարքարանը, որ կառավարութեան միտքը լուսաբանելու և սիրտը հանդարտեցնելու միջոցները պանց չէր ըներ: Այս պարագայից մէջ Մաքսուտեան կը շարունակէր հաշիւ չներկայել, և Յարութիւն պատրիարքի ալ յայտարարեալ կու տար թէ Ղևոնդ վարդապետի հեռանալը անհնարին է, և թէ Յակոբ և Սարգիս և Դաւիթ վարդապետներ չեն ուզեր մեկնիլ առանց Ղևոնդ վարդապետի (ՊՃՆ. 40): Եթէ Մաքսուտեան հաշիւները պատրաստ ունէր, և եթէ իր պատրաստ հաշիւները պաշտօնական քննութեան ենթարկուելու պաշտօնական քննութիւն չէին կրեր, պէտք էր երկու ձեռքով փակէր վարչութեան առաջարկին, մանաւանդ որ ինչպէս Օրմանեան ետքէն իրեն ըսաւ, եթէ Երուսաղէմի Պրոպատիկէն տարին մէկ օր մէկ անձ միայն կը բժշկէր, Գումգաբուի Պրոպատիկէն իրեն եկողներուն ամէնն ալ ամէն օր բժշկած էր: Մաքսուտեանի պաշտպաններ անոր արդիւնաւորութիւնները կը պանծացնէին, և իրենց վստահութիւնը կը վկայէին (ՊՏՃ. 19 և 27), իբր թէ արդիւնաւորութիւն և մասնաւորաց վստահութիւն համարատուութեան պարտքէն ապատէին: Յատուկ դեր մըն ալ Երէցեան կը վարէր, Կ. Պոլսոյ մէջ, թէ Երուսաղէմ պարտք չունի, և թէ հաշիւներուն յայտնուիլը արտաքիններուն հանդէպ վտանգաւոր կըլլար, միև կողմէն ալ յաճախ և երկար գրութիւններով Խրիմեան կաթողիկոսի հաւատացնել կուզէր Օրմանեան պատրիարքի և կեդրոնական վարչութեան սխալ ուղղութիւնը, որպէսզի կաթողիկոսական հեղինակութեամբ պատրիարք ընկճէ, մինչ Խրիմեան լաւ ծանոթ էր Օրմանեանի անձին և լուրթեամբ կը պատասխանէր, և երբեք

Մաքսուտեանի նպաստաւոր վկայութիւն չէր տար, և հապիւ թէ ընդհանուր խոքերով Երուսաղէմը խաղաղեցնել կը յանձնարարէր: Այսպէս կը նշանային գործերը 1903 տարւոյն մէջ, և քսանէ աւելի թերուդէմ գիրերու կոյտ մը վարանման մէջ կը թողուր վարչութիւնը, և կացութիւնը խիթալի կը ցուցնէր սպառնական պարագաներ մէջտեղ դնելով, նոյնիսկ Երէցեան ալ բանիւ և գիրով և խառն ժողովի ներկայանալով կարող չէր լինէր կացութիւնը լուսաբանել: Թղթակցութիւններու դիմելն ալ երկար ձգձգմանց և կիսատ տեղեկութեանց դուռ պիտի բանար (ՊՃՆ.40), և քննիչ յղելու և քննութիւն բանալու առաջարկը աւելի հաշուեխոյսներու կողմէ կը պնդուէր, որ Կ. Պոլսոյ պատրիարքարանէն յուլումներ դադարեցնելու նպատակով գրուած խիստ նամակը, իբր իրենց միտքին հաստատութիւն մեկնելով, կը կարծէին թէ քննութիւնը իրենց նպաստաւոր ելք կունենայ: Իրաւ ալ եթէ պատրիարքարանի իրենց առջև բացած դուռնէն մտնելով հաշիւները ներկայէին, հաւանական էր իրենց յաջողութիւնը, բայց կը սխալէին կարծելով թէ պատրիարքարանը կարենայ իրեն համառութեան իրաւունքէն հրաժարիլ, և պարտքի գոյութեան տագնապը անտեսել: Ճիշդ այդ վերջին կէտերն էին, որ վարչութիւնը յորդորեցին սեպտեմբեր 24-ի գումարման մէջ, Երէցեանն ալ նորէն լսելէ ետքը, պատուիրակի մը առաքումը որոշել, բայց պաշտօնական քննիչներ յղելու նախադասեցին պարզ տեղեկաբեր մը յղել, և այդ պաշտօնին ընտրեցին պատրիարքարանի վարչական դիւանապետ Բարթող Թելեանը (03.ԲԻՋ.2136), որ իր պաշտօնին բերմամբ և ժողովներու ներկայութեամբ լիապէս հմուտ էր ամէն անցուդարձերու և վկայեալ էր իր խոհական ուղղամտութեամբը, Յարութիւն պատրիարքի ալ ծանօթ անձն էր: Թելեանի տուած բերանացի և գրաւոր հրահանգներու հիմն ու նպատակն էր ստացեալ տեղեկութեանց և թղթակցութեանց անյարիր պարագայից և անստոյգ կացութեան անծանօթ մնալուն հանդէպ, խնդիրը իմանալ և լուսաբանել, ամէնը ըսել, կարծիք չյայտնել և եզրակացութիւնը վարչութեան վերապահել (ՊՃՆ.42), որ է ըսել, աւելի տեղեկաբեր մը ըլլալ քան քննիչ մը (03.ԲԻՋ.2150): Յանձնարարուած գլխաւոր կէտը հաշուական վիճակն էր, ստուգել պարտքի գոյութիւնը, և որ Երէցեան կուրանար. ճշդել հաշուոց կանոնաւորութիւնը, որ կասկածի ներքև էր. յանձնարարել համարատուութեան փութացումը, որ խաբէական խոստումներով կը յետաձգուէր. իսկ լուսարարապետի խնդիրը, վարչական կազմակերպութիւնը, կանոնագիրին գործադրութիւնը, հաշտարար դերը ուղղակի չէին յանձնարարուեր, այլ պարագայից կը թողուէին, որ եթէ կարենար տեղեկութիւններ հաւաքէր ու բերէր (ՊՃՆ.41-44): Գլխաւոր կէտ մըն ալ Յարութիւն պատրիարքի միտքն ու համոզումը ստուգապէս և ապահովապէս գիտնալն էր, և իրմէ հասած գրութիւններ և իր գործոց վրայ ստացուած տեղեկութիւններ իրարու համաձայն չէին ըստ ամենայնի. գրութիւններ Մաքսուտեանի նպաստաւոր կերևէին, մինչ տեղեկութիւններ Մաքսուտեանի նպաստաւոր չէին: Կենթադրուէր թէ իր պատիւը և միաբանութեան վարկը չկտրելու համար գրութեանց մէջ Վոյշ էր, և նոյնիսկ Մաքսուտեանի ներկայացած գիրերը կը ստորագրէր, և թէ ներքնապէս կացութիւնը ուղղելու համար Մաքսուտեանի վրայ ծանրանալէ ալ չէր քաշուեր, բայց ենթադրութիւնը ստուգելու պէտք ունէր: Շարունակ կը լսուէր թէ Երուսաղէմի անցուդարձերուն մէջ նշանաւոր դեր ունէր պատրիարքին փոքրաւոր Չընթուշցի Աւետիս Թաշճեան միաբանը, թէ Վեհապետեանը անխպելի կապուած էր անոր հետ իր կենսական և կեդրոնական պէտքերուն համար, և թէ փոխրաւորն ալ անպայման տիրացած էր անոր միտքին վրայ, ինչպէս երբեմն ազդեցութիւն շահած էր Մաքսուտեան վարդապետը: Բայց որչափ ալ այս կացութիւնը յայտնապէս կերևէր Վեհապետեանի վրայ, պէտք էր մօտէն ալ ստուգել և վստահորէն համոզուիլ, և ասոնք էին Թելեանի պատուիրակութեան իսկական նպատակը, և բերանացի յանձնարարութիւններ աւելի ընդարձակ էին քան գրաւոր հրահանգները:

Դիւանապետ Բարթող Թելեան հոկտեմբեր 10-ին Կ. Պոլիսէ մեկնելով (03.ԲԻՋ. 2150), 15-ին Երուսաղէմ կը մտնէր, և 27-ին Երուսաղէմէ մեկնելով նոյեմբեր 8-ին Կ. Պոլիս կը դառնար (03.ԲԻՋ. 2178), որով 12 օր միայն Երուսաղէմ մնացած կըլլար, բայց լիովին կը կատարէր իր պաշտօնը իբր պիարդէն գիտակ էր նայուելիք խնդիրներուն, և պարագաները գիտնալով դիւրաւ կրնար ըմբռնել եղելութեանց և տեղեկութեանց կապակցութիւնը և դիւանական փորձառութեամբ իսկոյն պաշտօնական յիշատակագիրի վերածել: Նա գլխաւորապէս Մաքսուտեանի հետ տեսակցած էր վայն համարատուութեան յորդորելու. իբր պի հաշուեպահանջութիւնը օրինական իրաւունքի վրայ կը գտնուէր, որուն կեդրոնը չէր կրնար դիմադրել: Իսկ Մաքսուտեան խոյս կու տար վանական առձեռն հաշիւները պարտրիարքին պատկանելուն, և շինութեանց հաշիւները իրեն անձնական պատասխանատուութեան վերաբերելուն հիմնուելով: Թելեան՝ պատրիարքի և երկուց կուսակցութեանց գլխաւորներուն հետ ալ օրեր իբուն տեսակցութիւններ ունեցած էր: Իբր արդիւնք այս տեսակցութեանց Թելեանի բերած տեղեկութիւնները կը հաւաստէին և կը ճշդէին հաշուեպահանջ կուսակցութեան օրինական դիրքը, աթոռին ծանր պարտքի ներքև գտնուիլը, Մաքսուտեանի խուսափելու դարձուածները, և միապետական ու ծածուկ գործունէութիւնը, տնօրէն ժողովոյ կազմալուծեալ վիճակը, Վեհապետեանի կողմէ հաշիւներու պատրաստութեան և ներկայացման հաստատուն միտքը և փութաջան հետապնդութիւնը, և մինչև տարեգլուխ ընդհանուր ժողով գումարելու և համարատուութիւնը կեդրոնին յղելու խոստումը (03.ԲԻՋ.2136): Միանգամայն կը հաղորդէն կեդրոնին հանդէպ Վեհապետեանի ունեցած վստահութիւնը և օրինական վերաբերումը, և շնորհակալութեան իղձերը կեդրոնական վարչութեան սրբալան նախագահին բարեացակամ տրամադրութիւնը և փութկոտ հոգածութեանը Երուսաղէմի գործոց մէջ (03.ԲԻՋ.2179): Մաքսուտեան առաջարկած էր Թելեանի վանական ծախուց հաշուետոմարները պննել, վստահ ըլլալով թէ պիտի չկարենար անոնց դարձուդարձ կազմակերպութենէն բան մը քաղել, ինչ որ քանիցս միաբանութեան ալ առաջարկած էր, միշտ առօրեայ ծախուց հաշուետոմարները ցուցնելով, և շինութեանց ու վաճառմանց հաշիւները միաբանութենէ և Թելեանէ ծածկելով, փոխանակ լիակատար և օրինաւոր հաշուեցոյց և բացատրական տեղեկագիր ներկայելու: Վարչական գործոց մասին ալ Թելեանի տեղեկութիւնները համաձայն էին վարչութեան կազմած տեսութիւններուն, և լուսարարապետի ընտրութիւնն ալ պատահական և աննշանակ և ոչ իրական մեծամասնութեան արդիւնք ըլլալը կը ստուգուէր, և պարտուց չգոյութեան, հաշուոց պատրաստութեան, և Մաքսուտեանի արդարացման համար Երէջեանի տուած վկայութիւնները կը ստուէին, ինչպէս նաև կեդրոնական վարչութեան ու նախագահին սխալ ուղղութեանը մասին դարձեալ Երէջեանէ կաթողիկոսին գրուած տեղեկութիւնները: Թելեան մինչև վերջին վայրկեանը պզուշացած էր իր համոզումները միաբաններու յայտնելէ, բայց իր ուղղամիտ ընթացքը վստահութիւն գոյացուցած ըլլալով, իրեն ետևէն 18 միաբաններու ստորագրութեամբ շնորհակալութեան և գոհունակութեան գիր մը կը հասնէր Օրմանեանի (03.ԲԻՋ.2178): Վարչութեան խառն ժողովը մէկերու անգամ պատուիրակին բերանացի տեղեկութիւնները լսելէ ետքը տեղեկագիրն ալ կարդաց, 20 երեսէ բաղկացեալ գրուած մը վեց հատուածներու բաժանուած, 1. պատրիարք, 2. հաշիւք, 3. պարտք, 4. վարչութիւն, 5. խնդիր, 6. եկրակացութիւն (03.ԲԻՋ.2199), և նոյեմբեր 19-ին նիստին մէջ վարչական մասնախումբ մը կազմեց գործնական ձևի մը յանգելու և բռնուելիք ուղղութեանը և ըլլուելիք գործերու ծրագիրը կազմելու համար, պատրիարքի նախագահութեամբ, և կրօնականէն Վահրամ Մանկունի եպիսկոպոսի և Կարապետ Սեթեան քահանայի, և քաղաքականէն Գրիգոր Խարեանի և Միհրան

Սեթեանի անդամակցութեամբ (03.ԲԻՋ.2163): Վարչական մասնախումբը նոյեմբեր 24-ի և 27-ի և դեկտեմբեր 1-ի երեք նիստերով իր գործը աւարտեց (03.ԲԻՋ.2187,2189,2193), նորէն կարդաց պատուիրակի տեղեկագիրը և լսեց բացատրութիւնները նոյնպէս լսեց Երէցեանը և աչքէ անցուց անոր ձեռքը գտնուող անստորագիր և ոչ վաւերական քանի մը հաշուեգիրերը և այսպէս իր ելրակացութիւնը յայտագիրի վերածեց: Այս գրութեան նկատելիներուն կարգին կը յայտնուէր թէ աթոռը 12,000 օսմանեան լիրայի տոկոսաւոր պարտքի ներքև է, իսկ հաշուական բացը 30,000-ը կանցնի և տակաւին կալուածական շինութեանց և վաճառմանց մասին տեղեկութիւն չէ առնուած. իսկ ըլլուելիքները 7 գլուխներու վերածած էին, որոնք ապագային ալ իբր գործին առանցքները նկատուեցան. 1. Պարտքին աճիլը բացատրել. 2. Մատակարարութիւն ելեմտացոյցի վերածել. 3. Շինութիւններու ակնկալութիւնները ճշդել. 4. Կանոնագիրին համաձայն ընթանալ. 5. Վանական վարչութիւնը վերակազմել. 6. Համարատուութիւնը օր առաջ իրականացնել. 7. Երկպառակութեանց սերմերը վերցնել (ՊՃՆ.46-48): Դեկտեմբեր 1-ին պատրաստուած այս յայտագիրը 3-ին վարչութենէ կը հաստատուէր, և կորոշուէր ծրագրուած գործողութիւնները փութացնելու համար (03.ԲԻՋ.2194) երկու աշխարհականէ կազմուած, մին ապրիլեցիկ դիրք ունեցող և Երուսաղէմի խնդիրը սերտած, և միւսը հաշուագէտ անձ (ՊՃՆ.47), նոր պատուիրակութիւն Երուսաղէմ յղել: Միննոյն ժամանակ Յարութիւն պատրիարքի ալ կը պատասխանուէր, յանձնարարելով որ խոստացուած համարատուութիւնը նախընթաց անգամներու նման երկարաձգման չմատնուիլ, և առաջիկայ տարեգլուխի խոստացուած պայմանաժամին լրանայ (ՊՃՆ.46): Երէցեան թէպէտ պարտաւոր էր իբր պատրիարքական փոխանորդ իր պաշտօնական դիրքը անկողմնակալութեամբ պահել, բայց ընդհակառակն երեակի անդամակցութեան հնօրեայ կողմնակցութեան պօրութեամբ, ուղղակի Մաքսուտեանի պաշտպանութեան կը հետևէր, և լրագիրներ կը վարձէր, ազգայիններ կը հրապուրէր, և պետական շրջանակներ կը սողոսկէր, և Խրիմեան կաթողիկոսի այլ ընդ այլոյ տեղեկութիւններ կը հաղորդէր: Ասկէ առաջ այդ ձեռնարկները քողարկելով կը կատարէր, բայց վարչութեան վերջին որոշումէն ետքը յայտնապէս հրապարակ կիջնէր, և իբր կեդրոնին վստահութիւնը կորսուած՝ փոխանորդութենէ հրաժարական կը հեռագրէր Յարութիւն պատրիարքի (03.ԲԻՋ.2201), թէպէտ ընթացք չէր ունենար: Միւս կողմէ Օրմանեանէ կը պահանջէր Թելեան տեղեկագիրը իրեն հաղորդել, որպէսզի Մաքսուտեանի յղէ, և նա ալ պատասխանը պատրաստէ (03.ԲԻՋ.2202): Լրագիրներու մէջ հրատարակութիւններ կը տեսնուէին թէ կեդրոնը չի կրնար Երուսաղէմի գործոց միջամտել և ոչ ալ հաշիւներու քննութեան մտնել, եթէ միաբանական ժողովէն չեն անցած, և թէ Յարութիւն պատրիարք կեդրոնի միջամտութիւնը չընդունիր (03.ԲԻՋ.2201), առանց նկատի առնելու որ Երուսաղէմի կանոնագիրը, պարտքի գոյութիւնը և կանոնապահութեան հարկը կեդրոնին իրաւունք կու տային Երուսաղէմի գործոց միջամտելու (03.ԲԻՋ.2197), թէպէտ կեդրոնը իր միջամտութիւնը հաշուական մասին վրայ կը կերոնացնէր, իսկ վարչականին միջամտելէ կը պաշտօնաւոր, կամ թէ իրեն եղած ստիպողական դիմումներուն շրջանակէն անդին չէր անցնէր:

3048. ԱՐԴԻԻՆՔԻՆ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ Վարչութեան որոշումները նոր յուլումներ յառաջ կը բերէին Երուսաղէմի մէջ, զի Մաքսուտեան իր հաշուեխոյսներով անոնց գործադրութիւնը խափանելու աշխատած ատեն, հաշուեպահանջներ իրենց ձիգերը կրկնապատկել կը ջանային: Մաքսուտեան կը մտածէ լուսարարապետի խնդիրը գրգռելով հաշուոց խնդիրը թաղել, և ասկէ կը սկսին Յարութիւն պատրիարքի վրայ ստիպումներ, որպէսզի Վահրամ Ապարեանի Եգիպտոս մնալու հրամանը ետ առնէ, և Երուսաղէմ գալու և պաշտօնի անցնելու հրաման արձակէ (03.ԲԻՋ.2208): Երբ Վեհապետեան չհաւանիր, Մաքսուտեան իր ստորագրութեամբ բայց

պատրիարքի անունով Ապարեանը կը հրաւիրէ, և նա ալ անմիջապէս ճամբայ կելլէ և Յոպպէ կը հասնի 1903 դեկտեմբերի կէսէն ետքը, զոր լսելով Յարութիւն պատրիարք՝ Չիլինկիրեան վարդապետը Յոպպէ կը փութացնէ Ապարեանի Երուսաղէմ գալը արգիլելու կամ թէ պաշտօնէ հրաժարել տալու, և միանգամայն Մաքսուտեանի ցաւ կը յայտնէ կատարուած դարձուդարձներուն մասին: Այդ եղելութիւններ Կ. Պոլիս կը հաղորդուին դեկտեմբեր 24-ի հեռագիրով (03.ԲԻԶ.2213), և Օրմանեան ոյժ կու տայ Վեհապետեանի որոշումներուն, մինչ Մաքսուտեանի մտերիմներէն Մարկոսեան (ՊՏՃ.19) և Գէորգեան Երուսաղէմէ (ՊՏՃ17) և Խապայեան Սիսէ (ՊՏՃ.17) և ինքն Ապարեան ալ Յոպպէի (ՊՏՃ.23), Օրմանեանէ կը պահանջեն Ապարեանի ընտրութիւնը պաշտպանել, և ոչ իսկ յիշելով թէ տարեգլուխը անցած էր, և տակաւին կեդրոնի պահանջած և Երուսաղէմի խոստացած հաշուետուութիւնը Մաքսուտեանի ձեռքէն չէր ելլեր, միաբանական ժողովին չէր ներկայացուեր և կեդրոնին չէր դրկուեր: Մաքսուտեան կը կարծեր առօրեայ առուծախի հաշուեցուցակներով մէջէն ելլել, մինչ թէ միաբանութիւնը և թէ կեդրոնը 1893 մայիս 1-էն սկսելով տասնամեայ օրինաւոր հաշուեցոյցեր և տեղեկագիրներ տեսնել վաճառմանց և շինութեանց հաշիւներով մէկտեղ (03.ԲԻԶ.2203): Ասոր հակառակ, հաշուեխոյսներ Ապարեանը պաշտօնի անցունելու խնդիրը կը վարէին, և այս նպատակով իրենցմէ երեքը 1904 յունուար 25-ին Վեհապետեանի վրան կերթան զայն աղաղակներով և բռնադատութիւններով ստիպելու, և Եղիա վարդապետ Յովհաննէսեան հոն գտնուելով կանոնաւորութեան յորդորելուն պատճառով, դուրս ելլելուն՝ վրան կը յարձակին և ծեծի տակ մինչև իսկ արիւնուայ կը դարձնեն: Հաշուեպահանջներ օգնութեան և հաշուեխոյսներ ընդդիմութեան կը դիմեն և ծեծկուութիւնը կաճի Մաքսուտեանի սենեսակին առջև: Առիթը օգուտ գործածելով, այս անգամ ալ Մաքսուտեանը սպանել ուզելու զրպարտութիւնը կը յօրինուի, հաշուեխոյսներ Մաքսուտեանի ապակիները կը կոտրտեն փաստ կազմելու համար, քանիներ գլուխ և թև կը կապկպեն հարուածեալ երևնալու համար, ոստիկանութիւնը կը հրաւիրեն իրենց պաշտպանութեան համար, և մերձակայ զօրանոցին գունդը դուրսով ներսով վանք կը խոնուի, և Մաքսուտեանը ինքը դատախապի դերը ստանձնելով հաշուեպահանջներէն 19 հոգի յանուանէ կամբաստանէ իբր սպանութեան մեղապարտներ և չքաշուիր ընկերակից միաբանները, իբր մարդասպան, քաղաքական ատեանին մատնել, և դատի կոչել եղեռնադատ ատեանին առջև, չխնայելով և ոչ իսկ աւելորդ վարդապետներու պատկառելի հասակին (ՊՏՃ. 170), և կուրացուցիչ կիրքին մէջ ամբաստանելոց կարգին նոյն իսկ սենեսակին մէջ անդամալոյծ մնացած արդապետի անունն ալ տալով: Մաքսուտեան իր նպատակին հասնելու համար կանխած էր տեղական կառավարութեան առջև հաւատարիմի դերը վարել, և ընկերակիցները իբր յեղափոխականներ, և հիւրաբար աքսորականները իբրև գրգռիչը ներկայել, և եղելութիւնները այդ քսութեանց խառնելով իբրև արտայայտութիւններ ցուցնելու, և զինքն իբրև հաւատարմութեան զոհ պատկերացնել, որով մինչև իսկ յատուկ շքանշանով վարձատրուելու բախտին ալ արժանացած էր: Հակառակորդէ ապատելու կերպը, թէ ոչ օրինաւոր էր արդար, գոնէ իրեն օգտակար եղած պիտի ըլլար, եթէ Յարութիւն պատրիարքի բուռն ընդդիմութիւնը և պարտուպատշաճ բացատրութիւնը, և իրեններուն համար բացարձակ երաշխաւորութիւնը պարապի չհանէին Մաքսուտեանի մեքենայութիւնը, և Օրմանեան պատրիարքի կեդրոնական նախարարութեան մոտ ձիգերը չհանդարտեցնէին յուզեալ կառավարութեան վրայ տեղական կառավարութեան թելադրուած կասկածները, որոնց մէջ բոլորովին անմասն չէր երևար Երէցեանի ալ յօգուտ ընկերակցին խուլ գործունէութիւնը: Տխուր միջադէպը կը փակուի, այլ խուսափողական ճարտարութիւնը չդադիր, և Ապարեանի պաշտօնի անցնիլը իբրև պայման կառաջարկուի համարատուութիւն ներկայելու, իբր թէ տասը տարիներէ ի վեր եղած վանցառութիւն մը, վերջին

օրեր ծնգած ոչ հաշուական միջադէպով մը կարենար արդարանալ: Վեհապետեան նկատելով որ Ապարեան Յոպպէ մնալը դուրսէ դուրս շփոթութիւններու և շփումներու պատճառ կըլլայ, Զատիկը անցնելէն ետքը, որ այն տարի մարտ 27ին կը հանդիպէր, կը հրամայէ որ Երուսաղէմ գայ, և գործը իր աչքին առջև ըլլայ. բայց պաշտօնի չանցուներ և յատուկ սենեակ մը կը նստեցնէ: Մաքսուտեան իրեններով այս անգամ ալ կառավարական դուռը ափ կառնէ իբրև պագային ներքին գործողութիւնները ճնշող վօրութիւն, որպէսզի Վեհապետեանը ստիպէ Ապարեանը պաշտօնի անցունել տալ, ոչ իբրև Ապարեանի բարեկամութիւն, այլ իբրև հաշուեխուսութեան յաղթանակ գոնէ իբրև անկէ խուսափելու միջոց: Իսկ պատրիարքը, առիթ առնելով կեդրոնէն նոր պատուիրակութիւն յղելու որոշումը, անոր սպասելու պատշաճողութիւնը կը շեշտէ և առաջարկին կը դիմադրէ, և այսպէս կանցնին քանի մը ամիսներ ևս, մինչև որ կառավարիչը կը փոխուի. բայց Մաքսուտեան ալ կօգտուի իր խուսափողական ժամաշահութեամբ, և իր դիմումները կը կրկնէ օգոստոսին հասնող նոր կառավարչին մօտ (04.ԱՐԼ.5658): Սա ալ քանի մը անգամ Մաքսուտեանի միտքով յանձնարարութիւններէ ետքը, անգամ մը, իբրև վերջնական միջոց կը թելադրէ կամ պաշտօնի անցունել և կամ պաշտօնէն զրկել, և Վեհապետեան այդ պատեհէն կօգտուի Ապարեանը կոչելու և պաշտօնապէս պաշտօնին իրաւունք չունենալը իրեն հաղորդելու և լուսարարապետութեան թափուր ըլլալը հռչակելու (ՊՏՃ.32): Ապարեան այլևս յուսաբեկ բախտովին վիճակուած պաշտօնը գրաւելու, կամ իրեն բացատրութեամբ, Ս. Յակոբայ գանձատան տէր կանգնելու (ՊՏՃ.26) յաւակնութիւնները կը դադրեցնէ, հարկաւ ներքնապէս ցաւելով ուրիշին կիրքին և իրմէ օտար մէկ գործին խաղալիկ դառնալուն վրայ: Ապարեան միջոց մը ևս Երուսաղէմ մնաց, և Եգիպտոս դառնալու արտօնութիւն ստանալով՝ գնաց այնտեղ հանգիստ կեանք վայելել Աղեքսանդրիոյ գետինին վաճառման առթիւ տիրացած կալուածներու հասոյթով, և այլևս վանք ու գործ ու տեղ չփոխեց մինչև իր մահը որ տեղի ունեցաւ 1908 փետրուարին 53 տարեկան եղած ատեն: Լուսարարապետութեան պաշտօնը թափուր էր 1903 ապրիլ 23-էն, Անոյշեանի մահուանէն իվեր, և Եղիա վարդապետ Յովհաննէսեան փոխանորդաբար կը վարէր առօրեայ գործերը, և այնպէս ալ շարունակեց Ապարեանի ընտրուելէն, առկախ մնալէն և պաշտօնապէս դադրելէն ետքն ալ միշտ նոյն Յովհաննէսեանի փոխանորդութեամբ:

3049. ԿԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ Եղելութեանց չարայարութիւնը մեզ հասուցած է 1904 տարին, զոր կրնանք Երուսաղէմի խառնակ կացութեան գագաթնակէտի միջոց նկատել: Միաբանութիւնը 1902 յունիս 12ի ժողովին մէջ վլացեր էր անցեալին համարատուութիւնը չստացած նոր տնօրէն ժողով ընտրել (3041), բայց գտնուող տնօրէնն ալ կազմալուծեալ էր: Մարկոսեան եպիսկոպոս 1901 յունիսէն ի վեր վշտացած և հեռացած նոյնպէս կը շարունակէր, թէպէտ միևնոյն ատեն Մաքսուտեանի հաշուեխուսութեան պաշտպան կը կանգնէր, թէպէտև համարատուութեան չտրուիլն էր իր վիշտին շարժառիթը: Փորթուգալեան 1902 մարտին վախճանած էր, Ապարեան միշտ ժողովէն բացակայ կը մնար, Խապայեան կաթողիկոսութեամբ մեկնած էր, կը մնային միայն Գէորգեան և Յովհաննէսեան, բայց իրարու անհամաձայն տրամադրութեամբ, և Մաքսուտեան ալ բոլոր շփոթներու արմատը: Ըստ այսմ հին տնօրէնը այլևս վարիչ չէր. նորը չէր ընտրուեր, առժամեայ մըն ալ հաստատուելու գետինը կը պակսէր, որով Վեհապետեան անձամբ կը վարէր գործերը, ի բաց առեալ այն կէտերը զորս Մաքսուտեան իրեն սեփականած էր: Վեհապետեան իր վարչութեան մէջ վճռական դեր մը չէր կրնար ցուցնել, բայց եթէ բացառիկ պարագաներու մէջ, զի հաշուեպահանջներուն իրաւունքը կը ձանձնար, իսկ հաշուեխոյսներն ալ գործածել կը պարտաւորուէր. ոչ առաջինները կրնար գոհացնել, ոչ վերջինները կուզէր քաջալերել, միշտ այն յոյսով թէ վերջապէս ամէն կողմերէ ստիպումները

Մաքսուտեանը համարատուութեան պիտի պարտաւորեցնեն, և կացութիւնը պիտի պարզուի: Այս մտադրութեան հանդէպ Մաքսուտեան դիւրութիւն կը գտնէր իր դերը շարունակել. բայց հաշուեպահանջներուն ալ շարժումը չէր դադարեր, որուն պօրաւոր թարգմանն էր պատրիարքին մօտ Աւետիս փոքրաւորը: Իսկ կեդրոնը միշտ գործերը առկախ կը թողուր այն յոյսով, որ եթէ ոչ տարեգլուխին, գոնէ Մեծ-պահօրին, եթէ ոչ այս ամիս գոնէ գալ ամիս, Վեհապետեանի ջանքը կը պսակուի և համարատուութիւնը կը հասնի: Անգամ մը երկրորդ պատուիրակութիւն յղել որոշուած էր (3047), բայց գործադրելու համար պատեհութեան և դիւրութեան կը սպասուէր: Վանական գործին հետ մտադրութեան առարկայ էին վանքին մէջ գտնուող աքսորական հիւրերն ալ, որոնք անհնար էր որ անցուդարձէն իսպառ անմասն մնային: Նախորդ պատրիարք Իվմիրլեան իր առաջին տեղեկագիրէն ետքը իսպառ լուծ էր (3044), իսկ Մշոյ առաջնորդ Ներսէս վարդապետ Խարախանեան սկիզբէն հրապարակի վրայ երևցած չէր, թէպէտ երկուքն ալ օրէնքի և կանոնի յարած անձեր էին, և չէին կրնար հաշուեպահանջներուն իրաւունքը չճանչնալ: Տարբեր դեր կը վարէր Կարնոյ առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Շիշմանեան, անդստին սկիզբէն անձնական օգուտի ծառայող անձ մը, որ Կարնոյ մէջ ալ շեշտուած թրքամոլութենէ կուսակցականաց ձեռնտուութեան անցած էր, երբոր յանուն կուսակցութեանց կատարուած հանգանակութիւնները շիլ աչքերը շլացուցեր էին: Մաքսուտեանի առատ և առատաձեռն միջոցները պինքն շուտով գրաւեցին և անոր գովաբանը դարձաւ Կ. Պոլսոյ լրագիրներու մէջ Վրոյը, և Տփղիսի լրագիրներու մէջ Գիրուկ ծածկանունով, և մինչև իսկ շողոքորթ գրութեամբ Խրիմեան կաթողիկոսն ալ գրաւելու ձգտելով (ՊՏՃ.147-150): Նոյն ինքն էր Արարատ ամսագրիի մէջ հրատարակուած ճշմարտութիւնը յօդուածին հեղինակը (04.ԱՐԲ.508 526), ճշմարտութիւնը քօղարկելու դիտմամբ խմբագրուած, և Մարգարեան Կիրակոս վարդապետի ստորագրութեան ներքև դրուած. բայց գոնէ այնպիսի մէկու մը անունը գործածուէր որ գրելու կարողութիւնը ունենար: Շիշմանեան իբրև յանգէտս ուրիշ նամակով մը նոյն յօդուածին գովութիւնը կը գրէ (04. ԱՐԲ. 152), և իրեն ձայնակից կըլլար Երէցեան ալ (ՊՏՃ. 36), և չենք գիտեր թէ ինչ ազդեցութեամբ յիշուած յօդուածը հիւրընկալող Էջմիածնի ամսագիր կը վլանայ Օրմանեանի յղած պատասխանը (ՊՏՃ. 158-170), և Երուսաղէմէ վրկուած բացատրութիւնը հիւրընկալել, քանի որ գիտենք որ Խրիմեան կաթողիկոսի բացարձակ համոզումն էր, թէ Հայր Ղևոնդ պարտուց թըլանշան պէտք է տայ (ՊՏՃ. 151): Իսկ Յարութիւն պատրիարք համոզելով և ստիպելով, աղաչելով և հրամայելով կը շարունակէր Մաքսուտեանը մղել պահանջուած հաշուետուութիւնը կատարելու:

3050. ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՎՈՒԹԻՒՆ Կեդրոնական վարչութեան 1903 դեկտեմբեր 3 ին տուած նոր պատուիրակութիւն յղելու որոշումը (3047) պատահական յետաձգումներով, համարատուութեան ակնկալութեամբ և պատեհի սպասելո տակաւին կուշանար, երբոր վերջապէս 1904 մայիսին Յարութիւն պատրիարքի ապրիլ 28 ի նամակը առիթ ընծայեց որ վարչութիւնը այլևս չուշացնէ որոշումը գործադրել, և յարմար անձի վրայ խորհրդակցելով մայիս 26 ի գումարման մէջ կանգ առաւ Գէորգ Ասլանեանի վրայ, որ ազգային պաշտօնով տնտեսականի ատենապետն էր, և պետական պաշտօնով հանրօգուտ շինութեանց նախարարուրեանց մէջ խճուղեաց և կամրջաց վերատեսուչն էր, և նոյն պահուն Բերիա կը գտնուէր, իբրև Սիւրիոյ կուսակալութեանց իր ճիւղին նախարարական քննիչ: Ասլանեանի օգնական նշանակուեցաւ Կարապետ Խաչատուրեան, պատրիարքարանի յարաբերական դիւանապետ, իբրև եղելութեանց հմուտ և կալուածագրոց քննութեան վարժ անձ մը (04. ԱՐԼ. 5575): Ասլանեանի պետական պաշտօնի մէջ գտնուելովը՝ պէտք էր նախարարութեան հաւանութիւնն ալ ստանալ, վոր դիւրաւ կարգադրեց պատրիարքը՝ Պաղեստինի նահանգն ալ անոր քննչական շրջանակին աւելցնել և ազգային գործերով ալ

վբաղելու արտօնել տալով, և ըստ այս հեռագրով ծանուցուեցաւ մայիս 31 ին (04. ԱՐԼ. 5579): Խաչատուրեան սպասեց մինչև որ Ասլանեան Բերիայէ ուղևորի, և լուր առնելէն ետքը ինքն ալ մեկնեցաւ յունիս 21-ին (04. ԱՐԼ. 5597), միասին տանելով պաշտօնական հրահանգը և կարևոր տեղեկագիրները: Ընդարձակ գրութիւն մըն էր հրահանգը՝ բացատրական տեղեկութիւններով կազմուած (ՊՃՆ. 60-68) նախապէս խնդիրին ծագումը կը յիշէր պատմողաբար, յառաջ կը բերէր վարչական մասնախումբի առաջարկութեամբ որոշուած եօթը կէտերը (3047), և անոնց վրայ կը հիմնէր բացատրութիւնները, կը ցուցնէր եղածը և չեղածը և ըլլուելիքները, որոնց կաւելցնէր քանի մը երկրորդական կէտեր, ինչպէս լուսարարապետութեան խնդիրը, հիւր եկեղեցականաց դերը, փոփոխակի ամբաստանութիւնները, և Ղուկաս Յովհաննէսեան վարդապետի մը քահանայագործութենէ արգիլուիլը, զորս իբր ներքին խնդիրներ Երուսաղէմի պատրիարքին իշխանութեանց կը թողուր, սակայն պատուիրակութիւնն ալ կը հրահանգէր տեղեկանալ և պարզ խորհուրդներով օգնել: Գլխաւոր կէտը որ այս հրահանգին էութիւնը կը կազմէր, հաշուեքննութիւնը Կ. Պոլիս փոխադրելու առաջարկն էր, նկատելով Երուսաղէմի մէջ տիրող ներհակընդդէմ կիրքերը և հանդարտ քննութեան անհնարութիւնը (ՊՃՆ. 64): Ասլանեան Բերիայի Երուսաղէմ կը մեկնէր անշուշտ գործին ձեռնարկելու համար, զի լուր ալ կու տար թէ նախարարութեան կողմէ արտօնութիւն ստացած չէր, և պատրիարքը նախարարին կողմէ հեռագրական հրաման յղեր կու տար յունիս 24-ին: Ասլանեան Երուսաղէմ կը հասնէր յունիս 20 ին, և առանց հրահանգի սպասելու և առանց պաշտօնական պայմաններու տեսակցութիւններ կունենար և տեղեկութիւններ կը քաղէր, և անկէ ետքն է որ յանձնարարական պաշտօնէն հրաժարելով՝ 27-ին Երուսաղէմէ կը մեկնէր և 27-ին Յոպպէի մէջ Խաչատուրեանի կը հանդիպէր և հրահանգը կը ստանար, բայց իր որոշումը տուած ըլլալով, Յոպպէ կը նաւարկէր և յուլիս 5-ին Կ. Պոլիս կը հասնէր (04. ԱՐԼ. 5610): Առաջին անգամ պատրիարքի մոտ մասնաւոր տեղեկատուութեան կը փութար, և յուլիս 14-ին խառն ժողովին կը ներկայանար իր տեսածը և քննածը հաղորդելու: Ասլանեանի եզրակացութիւնն այն էր, թէ հրահանգի պարունակութիւնը գործին լաւ հասկացուած ըլլալը կը ցուցնէ, և թէ նոր քննութեան տեղի չի մնար: Ասլանեան հաստատեաց հաշուետուութեան անհրաժեշտութիւնը, հաշուեպահանջութեան օրինակութիւնը, և Երուսաղէմի մէջ հաշուեքննութեան անհնարութիւնը, և հաշուեցոյցները ստանալու համար իրեն Երուսաղէմ մնալուն աւելորդ ըլլալը (04. ԱՐԼ. 5616): Ասլանեանի տեսութեամբ մինչև իսկ վտանգաւոր եղած պիտի ըլլար, եթէ Երուսաղէմէ մէջ հաշուեքննութեան սկսուէր, զի կառավարութիւնը նահանգական համարակալին ալ քննութեան մասնակցելուն առաջարկը մէջտեղ գրած էր, և Մաքսուտեան եղած էր այդ միջոցը թելադրողը, միշտ կառավարական պաշտօնէաներու ձեռքով ազգային իշխանութիւնը ընկճելու, և գործը իրեն նպաստաւոր դարձնելու դիտումով: Կառավարական առաջարկը Կ. Պոլսոյ մէջ ալ յայտնուած ըլլալով, Օրմանեան ամէն կերպով ջանաց նոր միջամտութիւնը արգիլել, և յաջողեցաւ նախարարութիւնն ալ համոզել առաջարկին անտեղի և օրէնքի հակառակ ըլլալուն, բայց Ասլանեանի նախազգուշութիւնն ալ և քննութիւն չբանալը արդարացի էր: Կատարուած շինութեանց և օթարաններուն վրայ ալ նպաստաւոր գաղափար չյայտնեց Ասլանեան, զոր քաղքենի հիւրանոցէ աւելի վանական արեղաթաղի կը նմանեցնէր: Վարչութիւնն Ասլանեանը լսելէ ետքը Խաչատուրեանի հրաման տուաւ Երուսաղէմ սպասել, ուր հասած էր յուլիս 29-ին համարատուութեան հաշուեցոյցները և տեղեկագիրները ստանալ, և կալուածագիրներու վրայ տեղեկութիւններ քաղել, և ոչ թէ Ասլանեանի յաջորդին սպասել, զի Ասլանեանի տեղեկութիւններն ալ հաստատած էին հաշուեքննութիւնը Կ. Պոլիս կատարելու գաղափարը, և նոր

քննիչ պատուիրակ յղելուն աւելորդ ըլլալը: Ասլանեանի պատուիրակութեան առանց գործելու ետ դառնալը, և Խաչատուրեանի ալ մինչև օգոստոս 9 մնալով, ոչ հաշիւներ ստանալ և ոչ կալուածագիրներու դաշիլ կարենալը, և 16-ին Կ. Պոլիս հասնիլը (04. ԱՐԼ. 5645), վճռական որոշմանց հոգին ներշնչեցին Յարութիւն պատրիարքի, որ մինչև այն ատեն հետևած երկկողմանի ջանքերուն վերջ տալով, և հաշտաբար ընթացքին և ներքին կացութիւնը չխայտառակելու միտքը մեկանալով՝ կտրուկ հրամաններու ձեռնարկեց: Ասկէ ետքն էր որ նախ լուսարարապետութեան խնդիրը կտրեց նետեց Ազարեանի ընտրութիւնը իբր շեղեալ հռչակելով, ինչպէս պատմեցինք (3048), և Ազարեանի հեռանալուն և Եգիպտոս դառնալուն ճամբան դիւրացնելով: Կեդրոնին հաղորդեց որ համամիտ է անոր թողուլ հնշիւներու նախնական քննութիւն ալ, ինչպէս որ կեդրոնն ալ օգոստոս 25-ին վերջնական կերպով գործը ստանձնեց և իր նախագահին յանձնեց գործողութեան պարագաներն ու պայմանները հոգալ (04. ԱՐԼ. 5653): Վեհապետեան Մաքսուտեանի ալ հրամայեց հաշիւները պատրաստել, և հաշուեցոյցերուն ու տեղեկագիրներուն հետ Կ. Պոլիս երթալ, և իր հաշուետուութիւնը կեդրոնին ներկայել: Երբ այս հրամանն ալ չգործադրուեցաւ, վճռական կերպով Մաքսուտեանը ելեմտական պաշտօնէն արձակեց և Կ. Պոլիս երթալու ստիպեց, և երբ այդ հրամանն ալ ժամավաճառութեան մատնուեցաւ, ուղղակի կեդրոնին դիմեց որ պետական հրամանով պայն Կ. Պոլիս բերել տալ: Մաքսուտեանի պաշտպանները ի պուր կաշխատին Թելեանն ու Խաչատուրեանը իբրև Վեհապետեանի մոլորեցուցիչներ ամբաստանել, և մղտեսի ըլլալէ վատ ուրիշ արդիւնք մը առաջ չբերին ըսելէ ետքը, աւելի քանդեցին քան թէ շինեցին եզրակացնել (ՊՏՃ. 152): Երկուքն ալ գիրի գրիչի հանդարտ աշխատաւորներ, սողոսկելու և մեքենայելու անվարժ անձեր իրենց յանձնուած պաշտօնին բնութեամբը միայն գործոն դեր վարած եղան, երբոր իրենց ուղղամտութեամբ և ուղղախօսութեամբ իրենց վիճակը ներկայեցին և պատկերացուի: Բայց այդ վերջին եղելութեանց պատմութեան չմտած, անհրաժեշտ կը դատենք քանի մը ընդհանուր տեսութիւններ պարզել, որոնք էական են ազգային կեանքի մէջ նշանաւոր տեղ գրաւած սաղիմական խնդիրը հիմնապէս լուսաբանելու համար:

3051. ՊԱՐՏՔԵՐՈՒ ԱՃՈՒՄԸ

Երուսաղէմի վերջին քառամեայի հաշիւները 1893-ին կեդրոնական երեսփոխանութեան ներկայացուելէն և հաստատուելէն ետքը (3038), 1894 ապրիլի ելեմտական հաշուեփակը 23, 748 օսմանեան լիրայ տոկոսաւոր պարտք (ՊՐՏ. 60), և 31,268 լիրայ կշիռի բաց կը ներկայէր (ՊՐՏ, 56), որոնք յաջորդ տարիներու մէջ մինչև 26,475 (ՊՐՏ. 61), և 41,520 բարձրացան (ՊՐՏ. 57), բայց 1900 ապրիլի հաշուեփակը առանց տոկոսաւոր պարտքի, և միայն 19,470 կշիռի բացով կը գոցուէր: Այդ նշանաւոր հանգրուանը ստացուած էր Աղէքսանդրիոյ վանքապատկան գետնին վաճառմամբ, որ 28123 լիրայ արդիւնք ունեցած էր, բայց միայն 26,314 սնտուկի գին ցուցած էր (ՊՐՏ. 29), և անով պարտքերը վճարուած էին, գրաւամատանց ընթացիկ հարշիւներն ալ միասին (ՊՐՏ. 2): Գոհացուցիչ կացութիւն մըն էր տոկոսաւոր պարտքէ ազատուած ըլլալը, սակայն վաճառման գործողութիւնը կարևոր դիտողութեանց տեղի կու տար. զի գործը կատարուած էր ելեմտապետ Մաքսուտեանի տեսուչ Ազարեանի և Աղէքսանդրիոյ գործակալ Անտոն Արթինոֆի տուած տեղեկութեանց հիմնուելով, որուն իրաւ 1899 մայիս 9-ին հաւանած էր տնօրէն ժողովը (99. ՏՆՕ. 61), և դեկտեմբեր 11-ին որոշումը տուած (99. ՏՆՕ. 138) սակայն գործին ներքինին տեղական գիներուն, դիրքին պարագաներուն, աճուրդի փորձին պանցառութեան, իսկական տեղեկութիւնները կը պակսէին, և Մաքսուտեանի ընկերակից միասիտ ժողովականները, պարտքի անու նէն պուլած, որևիցէ կերպով անկէ ազատելու հոգի տուող ծերունիներ էին, մինչ ելեմտական ճարտարութեամբ ճոխացեալ կարծուած անձը պէտք էր գիտնար, գուցէ և գիտէր, որ իսկական

արժէքը եռապատկիւն մօտ էր, զի և իրօք լոկ ձեռքէ ձեռք անցընելովը իսկոյն կրկին գինով դարձեալ կը վաճառէր: Ելեմտական ճարտարութիւնը կընդունի իրաւ կալուածներու վաճառմամբ տոկոսաւոր պարտքեր փակելը, բայց նուազ արժէքաւոր, և ոչ կարևոր և ապագայ խոստացող կալուածներու վաճառմամբ, ինչպէս այս առիթի մէջ, որ կարևորագոյնի կորուստով սովորական պարտքեր փակելու ձեռնարկ կըլլար, որ և ելեմտապետին կարծեցեալ կարողութիւնը չէր արդարացնէր, և փոխանցման գործադրութենէ օգտուելու կասկածը կը վարթուցանէր: Սակայն ինչ ալ ըլլար այդ գործին իսկական պարտքէ ապատ մնացած ըլլալը, մինչ պարտքեր նորէն բարդուած էին զի 1903 ապրիլին 7,788 տոկոսաւոր պարտք և 27,709 կշիռի բաց կը գոցուէր, որ 1904 ապրիլին 11,255 տոկոսաւոր պարտքի և 31,170 կշիռի բացի կը բարձրանար (ՊՐՏ. 86, 80) և տակաւ բարձրանալու վրայ էր: Այս երևոյթն ալ դեռ միայն տոմարներու ցուցածն էր. մինչ կը գիտցուէր թէ տոմարներէ դուրս կատարուած գործողութիւններ ալ կային, ինչպէս ականջէ ականջ կը խոսուէր, և բերանէ բերան կը տարածուէր, և հաշուեպահանջութեան խնդիրը կը Վօրացնէր, կեդրոնն ալ կը հետաքրքրուէր. բայց Երէցեան փոխանորդ՝ պատրիարքին և ժողովականաց հարցումներուն հանդէպ բացէ բաց կուրանար թէ տոմարական և թէ ոչ տոմարական պարտքերու գոյութիւնը: Չենք կարծեր որ իրեն ալ գաղտնիք եղած ըլլար Մաքսուտեանի ընթացքը զի հնար չէր որ անգիտանար նորօրինակ դարձուածին գոյութիւնը: Վերև ըսինք թէ 1900 ի հաշուեփակին պարտքերը ջնջուած կը ցուցնէին, սակայն իրօք անոնց մէկ մասը կը մնար, ինչպէս կըսուի, նոյնիսկ պարտատէրներուն գանձել չուզելովը, որոնք ապահովագոյն կը նկատէին հայոց պատրիարքարանի սնտուկին յանձնել իրենց գումարները, նոյն իսկ տոկոսի սակը վեղչելով: Այդ կերպով մնացած պարտքը 12,450 գումարի կը հասնէր, որուն պահեստի դրամ անունը կու տար Մաքսուտեան, այսպիսի գումարի մը ուրիշ հաշիւներու մէջ յիշուած տեսնելով, բայց անգիտանալով որ շահին աւելորդէն կամ համեմատական մի մասէն կը կազմուին պահեստի գումարները, և ոչ երբեք պարտքով դրամ փոխ առնելով, որ միայն Երուսաղէմի ելեմտագէտին գլուխէն ելած հանձար մը եղած է: Նա կը յաջողէր պարտքի անունէն զվուած Վեհապետեանն ալ համոզել, առաւելագոյն տոկոսով շահեցնելու և անուղղակի օգուտ մը քաղելու երևոյթով: Ըստ այս պարտքով հայթայթուած գումարը նախապէս Աղէքսանդրիոյ Լիօնեան վախենալով որ աթոռին դէմ դատ վարող աղէքսանդրաբնակ Պօղոս Աչըգեանի կողմէ գումարը գրաւման ենթարկուի, շուտով ետ կառնուէր՝ տոկոսէն հրաժարելով և դրամագլուխէն զեղչելով՝ և Երուսաղէմի յունաց պատրիարքարանին կը յանձնուէր նուազագոյն սակով, և այն ալ ոչ թէ աթոռին կամ պատրիարքի անունին, այլ ներկայացողին վճարելի բաց մուրհակներով, որոնք Մաքսուտեան իր քովը կը պահէր և պատրիարքին չէր յանձնէր, մինչ պահեստի դրամ կոչուած փոխառութեանց պարտամուրհակները պատրիարքի ստորագրութիւնն կը կրկնէին և վանքի վրայ կը ծանրանային: Կանխամտածութեամբ պատրաստուած այդ անուղիղ ընթացքը իր իսկութեամբ երևան ու գար, երբ Մաքսուտեան պաշտօնէ դադարելուն առթիւ կը յայտնուէր, թէ ներկայացողին վճարելի մուրհակները արդէն գանձուած և իւրացուցուած են Մաքսուտեանի կողմէն, առանց տոմարի անցնելու, որով 1905 ապրիլը հաշուեփակին տոմարի, ցուցած 14,304 տոկոսաւոր պարտքը (ՊՐՏ. 88), իսկապէս 23,706 լիրայի կը լրանայ, (ՊՐՏ. 5-7): Ահա նմոյշ մը ելեմտագիտական ճարտարութեան, իրօք ալ ճարտարութիւն մը յօգուտ անձին և ի վնաս աթոռին: Ասկէ վատ ուրիշ մաս մըն ալ կար տակաւին, շինութեանց հաշիւէն մնացած ծանրութիւն մը, զոր երբեք վանական տոմարներուն անցուցած չէր, և բոլորովին անծանօթ կը մնար և միաբանութիւնը տեղեկութիւն չունէր, և զոր հակառակ այնչափ պահանջմանց և ստիպմանց, աղաչանաց և թախանձանաց մէջտէղ հանել հաճած չէր, ամէն տեսակ չարաշահութեանց կասկած վրան հրաւիրելով մէկտէղ,

որոնց թերևս ամենն ալ ստոյգ չեն, սակայն նա որ ստոյգը երևան հանելու երկիւղը կը կրէ, անըստոյգին ներքև ալ ճնշուելու յանձնառու եղած կըլլայ:

3052. ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Չենք կարծեր չափազանցած ըլլալ յառաջ բերելով այնպիսի տեսութիւններ, որոնք նոյն իսկ վերիվերոյ նկատողներու ալ մտադրութիւնը կը վարթուցանեն. բայց հարկ կըլլայ բացատրել ևս թէ ինչպէս և ի՞նչ վգացմամբ կրցաւ միաբանութեան մի մասը այդչափ յայտնի անտեղութեանց պաշտպան կանգնիլ և միաբանութիւնը երկու ընդդիմամարտ կուսակցութեանց բաժնեց: Հաշուեպահանջ խումբը իրաւ պանազան թիւերով ներկայացաւ, բայց իր գերագոյն առաւելութիւնն ունեցաւ Անոյշեանի ընտրութեան առթիւ միացած 28 քուէներով (Օ3. ՄԻԱ. 526), ինչ որ կը յայտնէ թէ հաշուեպահանջ սկզբունքը հաճելի էր միաբանութեան ստուար մեծամասնութեան, և միայն դիպուածական կամ անձնական պարագաներ էին որ պատահական ընդարձակման կամ նուազման պատճռ կըլլային: Ընդհանրաբար ծանօթ եղելութիւն մըն է թէ ահն ու շահը, կիրքն ու ձիրքը, մեծ ազդեցութիւն կը գործեն անձուկ համախմբութեանց մէջ ապրողներուն վրայ: Ըստ այսմ Երուսաղէմի յարաւիժփոխ կացութեան գաղտնիքը բացատրելու համար պէտք է բարձրանանք մինչև հնգեակի կազմութիւնը, որ տիրապետութեան ասպարէզ գտաւ, և իր հաստատութիւնը ամուր կանգնեց Եսայիի և Յարութիւնի թոյլատու հովանաւորութեամբ (2868): Մեծապէս օգտակար եղած պիտի ըլլար այդ վարգացման նկատուած հնգեակին ազդեցութիւնը, եթէ տիրապէս ուղիղ և արդար հիմանց վրայ հաստատուած ըլլար. մինչ հակառակը յայտնեց Յակոբեանի անջատուիլը և Անոյշեանի լքանելը, և հնգեակին եռեակի վերածուիլը, որ տէր մնաց նախապէս պատրաստուած կացութեան: Գովեստի արժանաւոր պիտի սեպուէր եռեակին ալ աշխատանքը արդարացնէր յոյսերը, մինչ միաբանութեան ստորացումը և միաբաններու անկումը և միաբանական հոգւոյն չիջումը եղան յառաջ եկած արդիւնքները, որոնց դէմ թէպէտ իրենք ալ գանգատող և դատախազ կը կանգնին, սակայն չէին կրնար հերքել իրենց իշխանութեան ներքև իրականացած ըլլալը, հետևանք անշուշտ վարժարանի անպտղութեանց, անխտիր ընդունելութեանց, անդէպ քաջալերութեանց, անձնական հետապնդութեանց, և ապիկար պատուանդաններով բարձրացմանց, մէկ խօսքով միամիտ հլուներ խոհական հպատակներու նախադասելու, և ահով ու շահով կապուած գործիքներ ունենալու իշխողական ոճին: Հաշուեպահանջներու և հաշուեխոյսներու ցանկերու վրայ պարզ ակնարկ մը կը բաւէ այդ տեսութիւնները արդարացնելու, և առաջին դասակարգին գլխաւորները աւելի բանիմաց և գործունեայ և կշռադատ միաբաններէն են, իսկ երկրորդ դասակարգին շարքերը միամիտներ կամ մոլիներ կամ իրենք իրենց անբաւականներ կը կազմէն և ինչ վարմանք, եթէ թուով աւելի ըլլան կշիռով պակասներ, մանաւանդ որ մէջտեղ կը ծփայ երրորդ մաս մը օրական տպաւորութիւններու և պատահական շահերու և հեռատեսուած ահերու ազդեցութեամբ գործողներէ բաղկացած սակայն արժանիքը կշիռով կը չափուի և ոչ թիւով: Երուսաղէմի միաբանութիւնն ալ ինկաւ այդ աղիտալի իրականութեան ներքև, և ասոր հետևանք պէտք է ճանչնալ միաբանութենէ անջատուածներուն շատութիւնը, և այն հոգեկցորդ և միասիրտ միութեան պակսիլը որ այնչափ օրնակելի և գնահատելի եղած էր ներսէն դուրսէն խնդիրին ատեն: Իսկ եռեակը որ պարծանքով պիտի ցուցադրէր իր գործը եթէ միաբանութիւնը բարձրացած ըլլար, չի կրնար ինքզինքը ապատել իր օրով օտարացած ըլլալուն պատասխանատուութենէն: Արդարև ցաւալի եզրակացութիւն, բայց ուղիղ տրամաբանութիւն. քամի ցանողին փոշի քաղելն ալ բնական օրէնք է: Այսպէս կը բացատրուի եռեակին իրմէ ետքիներուն վրայ գործած ազդեցութիւնը: Յիշատակութենէ պէտք չէ վրիպեցնել նաև, թէ իրեն պաշտպան խումբ մը պահելու համար, եռեակը օգուտ քաղած է

պաշտօններ տրամադրելու, վեղծումներ պարտկելու, և անձնական դիւրութիւններ բաշխելու միջոցներէն, որոնցմով պարտ է շատերուն վրայ, բայց իրեն համար դժբախտաբար ոչ ամէնուն վրայ պարտ է նաև արտաքնայարդար առաւելութիւններով և ձևակերպական երևոյթներով, որոնք անծանոթ էին հիներուն և գրաւիչ դարձան, մանաւանդ որ ներքինը պրպտելու կարողութիւնն ալ չունէին: Այս մասին ակնյայտնի նմոյշներ են Ներսէս և Մամբրէ եպիսկոպոսներու Խրիմեանի և Օրմանեանի ուղղած պաշտպանողականները, որոնց մէջ միակ փաստ ցուցուած է իրենց հնութիւնը, և Մաքսուտեանի մեծ արգասիքը՝ չէնք շինած ըլլալը, և իբր օգուտ նշանակուած է իրերուն գործունէութիւնը, առանց փնտռելու թէ հնութիւնը արդիւնաւորութիւն ալ կը պարունակ, թէ շինութիւնները օրինական պայմաններով եղա՞ծ են, թէ գործունէութիւնը ընդհանուրէն աւելի անձնականին համար եղած չէ՞: Չենք մտներ Երէցեանի և Խապայեանի պաշտպանողականները վերլուծել, զի անոնց համոզումը գործէն առաջ կանխած է, և պարզապէս նախընթաց կապակցութենէ մը յառաջ եկած է:

3053. ՂԵՒՈՆԴ ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

Եռեակին կապակցութեան և տևողական համաձայնութեան բացատրութեան համար բաւական ըլլայ գիտել, որ որչափ ալ գործակից էին, սակայն քաղուելիք արդիւնքին մէջ իրարու կալուածը գրաւելու մրցում չունէին. զի պատիւ և շահ և հաճոյք տարբեր ասպարէզներու մէջ կը գտնուէին և իրարու արգել չէին հանդիսանար: Իսկ փոխադարձ յարաբերութեանց մէջ թէպէտ պատիւը հաճոյքին վրայ, և շահը պատիւին վրայ զօրեղագոյն էին, սակայն նախանձի առիթ չէին տար, քանի որ իւրաքանչիւրը գոհ էր իր ընտրած բաժինով: Բնական էր որ շահը հետապնդողին գիրքը միւսներուն վրայ հզօրագոյն ըլլար, սակայն իր գործակիցներ ու գործիքներ կը բաւականանային հզօրագոյնէն ստանալով իրենց պաշտպանութիւնն ու իրենց յաջողութիւնը, և հետևապէս անոր զօրանալուն կաշխատակցէին առանց գործերուն ներքինը թափանցելու: Ահա Մաքսուտեանի կազմած գիրքին լուսաբանութիւնը: Սակայն քննադատ աչքեր չէին կրնար վանց ընել ինչինչ ակնյայտնի երևոյթներ. իսկ աւելի աչքի վարնող կէտը Մաքսուտեանի գոյացուցած նշանաւոր հարստութիւնն էր: Անձ մը որ հօրենական ժառանգութենէ բան մը չունէր, որ արհեստական կամ առևտրական ասպարէզին չէր պատկանէր, որ վանական համեստ տարեկանէ աւելի սեփական հասոյթ չունէր, որ եկեղեցական պաշտամանց հետևողութեամբ նուէրներ ձարելու փոյթն ալ չունէր, որ միայն միաբանութեան արկղն ու վարկն ունէր իբրև օգտուելու աղբիւր, եթէ հարստութեան տէր դարձած էր, անշուշտ պէտք էր միակ տրամադրելի միջոցին վեղծումներով օգտուած ըլլար, և այն ալ նշանաւոր չափով: Ոչ ոք գիտէր և ոչ այսօր ալ գիտէ, թէ ինչ հարստութեան տէր է Մաքսուտեան, բայց վերիվերոյ գաղափար մը կրնայ կազմուիլ, երբոր դիտուի որ 1905-է 1917 12 տարիներ պաշտօնէ արձակուելէն ետքը ամենայն դիւրակեցութեամբ ապրեցաւ, իրեններն ալ նոյնպէս ապրեցուց, հաստատուն գոյքեր աւելցուց, լրագիրներ հիմնեց, խմբագիրներ կշտացուց, փաստաբաններ գոհացուց, հետևորդներ ձարեց, և տակաւին ալ ունեցած դրամագլուխը նուազեցուցած չերևար, հարկաւ լայն կերպով շարժեց ձեռքերը վանական սնտուկին մէջ: Երկրորդ դիտելու կէտ մըն է հաշիւ տալու յամած դժկամութիւնը, որևէ յայտնութենէ խուսափիլը, գաղտնութեան քօղին ներքև մնալու անսասան հաստատամտութիւնը, մինչ ըստ անսուտ բանին, այն որ ատեայ վրոյս նշան է թէ վչար գործէ, և անոր համար ոչ գայ առ լոյսն, վասնզի կը վախնայ որ մի յանդիմանեսցին գործք նորա (ՅՈՎ. Գ. 20): Մաքսուտեան ալ եթէ ամէն կասկած ընդունելով և ամէն արհամարհանք արհամարհելով հաշիւ տալէ խուսափեց, ուրեմն ենթադրուածներէն աւելի վեղծումներու հաւանականութիւն հաստատած կըլլայ: Մանաւանդ որ հաշիւ ներկայել օրէնք է, պատիժ չէ. հաշուեպահանջութիւն օրինական է, հաշուեխուսութիւն

ապօրէն է, հաշիւ ներկայել արդարացման դիւրագոյն եղանական է, և Մաքսուտեանի չէր պակսեր նոյն իսկ յօրինուածոյ և յերկրածոյ հաշիւներով միաբանութիւն և կեդրոն գոհացնելու հնարիմացութիւնը. այլ եթէ այդ եղանակէն ալ խուսափեց, ինքն իր վրայ կասկածներ աւելցնելու պատճառ տուաւ: Երրորդ դիտուելու կէտն է, որ եթէ հաշուեպահանջութեան գոհացում տալու նպատակով վանական առօրեայ ծախուց քանի մը պարզ ցուցակներ մէջ կը գնէր, բացարձակ ընդդիմութիւն կը յայտնէր շինութեանց հասոյթներուն և ծախքերուն հաշիւը տալ, որոնք իրեն անձնականին սեպել տալով հաշուետուութենէ ապատ կը ցուցնէր, իբր թէ շինութիւնները իր դրամով և իրեն սեփական կալուածներ ըլլային, և ոչ վանական դրամով աթոռին սեփականութիւն, և վանք ու աթոռ ու կեդրոն գործին օտար ըլլային, և եկածն ու գացածը, գանձուածն ու ծախուածը գիտնալու իրաւունք չունենային: Վանական և կալուածական մասնաւոր շինութիւններէ վատ, Մաքսուտեան իբրև իրեն գլխաւոր փաստ և փայլ սովորութիւն ըրած էր ցուցնել նոր քաղաքամասին մեծ փողոցին գլուխը շինուած երկու հիւրանոցներու լուսանկարները. այլ մթութեան մէջ կը մնային այդ շինութեանց համար պահուած կալուածները, ստացուած գումարները, ծածկուած հասոյթները և փոխադարձ համեմատութիւնները, որոնք միայն պիտի կարենային գործին արդիւնքը արտայայտել, մինչ ծածկուիլը քաղաքական օգուտին անգոյութեան կասկածը կը վարթուցանէր: Շինութեանց արժանիքին մէկ պայմանն ալ անոնց կազմակերպութիւնն ու նպատակայարմարութիւնը պիտի ըլլար, որ դժբախտաբար գործէն հասկցողներուն տեսութեամբ արդարացած չէ: Մաքսուտեանի պաշտպանները առանց այդ կէտերու մտադրութիւն դարձնելու կը սիրեն պնդել, թէ արժանաւոր մարդ է վասնկի շէնքեր շինած է, մեծ մարդ է վասն կի երկար տարիներ պաշտօն վարած է, արդիւնաւոր մարդ է վասն կի կալուածներ աւելցուցած է. բայց չեն քններ թէ հին կալուածները դադրած են, գտնուող արդիւնքներ պակասած են, հաստատուն գոյքեր անհետացած են, իսկ երկար պաշտօնավարութիւնն ալ կանոնագիրին հակառակ պեղծում եղած է, և օրէն չէր ելամտապետութեան, ատենապետութեան, գանձապետութեան, կալուածապետութեան, շինուածապետութեան, իրարու հակակշիռ կազմող պաշտօնները միանգամայն մէկ ձեռքի մէջ ամփոփել, և պաշտօնավարութեան ալ հետևանքը միաբանութիւնը բարձրացնելու տեղ ստորացնելն եղած է (3052): Իբրև մեծ առաւելութիւն նկատուած է վանական հաշիւներու կրկնատոմարի վերածուած ըլլալը, որ եթէ ըստ ինքեան ուղղութեան միջոց է, սակայն անուղղութեան ձեռնտու կըլլայ երբոր ըստ օրինի չի գործածուիր, և իսկութիւններ քօղարկելու կը ծառայէ: Նիւթական տեսութիւններէն պահ մը բարոյականին դառնալով՝ նկատողութեան արժանի կը սեպենք Մաքսուտեանի եկեղեցական կոչմամբ և եկեղեցական սքեմի ներքև եկեղեցական կենցաղէ և ծառայութենէ հեռու եկեղեցականութիւնն անարգելը: Անձ մը որ իր վարդապետի աստիճանը կը ցուցադրէ և եկեղեցական կերպարանը կը շահագործէ, բայց ձեռնադրութեան առաջին պատարագէն ետքը սեղան բարձրացած չէ, եկեղեցոյ ամենէն նուիրական օրերն ալ եկեղեցոյ մէջ երևցած չէ, կրօնական մասնակցութենէ խորշած է, այնպիսին իր ներքինին արտաքինին անհամաձայն ըլլալուն լուսաւոր փաստը տուած կըլլայ, և երբ կրօնքին իսկ հանդէպ կեղծիքէ և խաբէութենէ չի խորշիր, մատակարարութեան և շահագործութեան պարագաներու մէջ կեղծիքէ և խաբէութենէ ապատ ըլլալուն երաշխաւորութիւն չընծայէր, և անձամբ անձին դատակնիքը վճռած կըլլայ:

3054. ՎԵՂԱՊԵՏԵԱՆԻ ԸՆԹԱՅՑ

Սաղիմական ծանօթ լուսաբանութեան համար յառաջ բերուած տեսութիւնները, ակն յայտնի իրողութիւններ դարձան 1904-ի կէսէն ետքը, երբ եղելութիւնները աւելի որոշ ձև մը առին, և ամէնուն առանցքը դարձաւ Վեհապետեան պատրիարքը: Կեդրոնական վարչութիւնը և իր

նախագահ Օրմանեանը իրենց նշանաբան ըրած էին Երուսաղէմի խնդիրին մէջ Երուսաղէմի պատրիարքին դերը անթերի և պատիւը բարձր պահել, և գործերթ այնպէս դարձնել որ Երուսաղէմի աթոռէն բխած ըլլան, իրենց վերապահելով միայն սահմանադրութեամբ և կրօնագիրով ապահովուած համարատուութեան իրաւունքը, և զգուշանալով ազգը անգամ մըն ալ Երուսաղէմի պարտքին համար դժուարութեանց և զոհողութեանց ենթարկելէ (2878): Յարութիւն պատրիարքի նախնական ուղղութիւնն էր գործոց ընթացքը բնականին և սովորականին թողուլ, ներքին ցաւերը չհրապարակել, կեդրոնին վրայ չծանրանալ, իր աթոռին ձեռնահասութիւնը չնուազեցնել, և երկու պատրիարքներ համամիտ էին այդ մեղմօրինակ վարչականութեան վրայ, և գիտակցաբար ժամավաճառ կըլլային տարի ու կէս ի վեր, և կը սպասէին որ վերծերը իրենց ընթացքով հոսին մինչև իրենց լուծման աւազանը: Կեդրոնը միայն անուղղակի մղում տալու համար գործին երկու անգամ պատուիրակներ յղած էր Երուսաղէմ, որոնք եթէ շոշափելի արդիւնք մը ունեցած չէին, գոնէ կեդրոնը իր ուղղութեան վրայ ամրապնդած էին և Երուսաղէմի վստահութիւն ներշնչած էին: Բայց վերջապէս ամէն փորձ իրեն պայմանաժամ մը ունի, ուսկից անգին փորձանք դառնալ կը սպառնայ: Վեհապետեանի համար ալ այդ պայմանաժամը կը լրանար 1904-ի կէսին: Տեսաւ հաշուեպահանջութեան իրաւացի և օրինական գետնին վրայ կայնած ըլլար, զոր անարգել չէր կրնար. նկատեց հաշուեխոյսներուն իրենց առաջնորդով օրէնքի հակառակ քալելը, զոր պաշտպանել չէր կրնար. աշխատեցաւ երկու ծայրերուն մէջտեղը խաղաղական գիծ մը պատրաստել, յանձն առաւ հաշիւներուն մօտ ատէնին ներկայուելիքը խոստանալ, և Մաքսուտեանի անհիմն վրոյցներուն արձագանգ դառնալ: Այսչափին ալ զիջաւ, բայց վերջապէս Վեհապետեանի բնաւորութեան տանելի չէր ուրիշի խաղալիքը դառնալ, ընդհանուր միաբանութեան շահը և իր անձնական պատիւը զոհել, միայն իր գործածած պաշտօնէին գիրքը պաշտպանելու համար: Տարիուկէս էր որ Վեհապետեան զիջողական ընթացքով կը քալէր, բայց ակնկալած յաջողութիւնը չէր իրականանար, առաջարկը պնդումի, պնդումը ստիպումի, ստիպումի հրամանի փոխարկած էր, բայց տակաւին իր նպատակին չէր հասնէր: Աչքովը կը տեսնար որ իր անձն ալ կարհամարհուէր, և Մաքսուտեան սկսեր էր համարձակ իր պատրիարքը մեղադրել, թէ ըրածը չի գիտեր, թէ խոզվարարներէ կը տարուի, թէ փոքրաւորէն կառաջնորդի, թէ վառամեալ ծերուկ դարձած է: Վեհապետեան հաստատուն կամքի տէր, կորովի կամքով գործող, բուռն ուղղութեամբ վարողը, բռնաւոր երևնալու չափ յառաջացող, չէր կրնար այս աստիճանի ինկած ըլլալը ընդունիլ, իրօք ալ բնութեամբ կարծեր եղող իրեր անանկ շուտով չեն կակղնար: Իրաւ 85 տարեկան եղած էր Վեհապետեան, բայց հին Վեհատեանի ինքնութիւնը կորուսած չէր, թերևս քիչ մը աւելի հանդարտած էր և ինքզինքը խստութեանց յոգնութենէն հեռու կը պահէր, բայց ոչ աւելի: Հին Վեհապետեանի բուռն վարչականութիւնը նորէն արթնացաւ 1904-ի կէսէն ետքը, կառավարական միջամտութեանց դէմ ծառայաւ, Ազարեանի լուսարարապետական ընտրութիւնը չեղեալ հռչակեց սեպտեմբերին (04,ԱՐԼ.5084), հաշիւներու նախնական քննութիւնը կեդրոնին փոխադրեց: Մաքսուտեան ելեմտապետին օր առաջ իր հաշիւներով Կ. Պոլիս երթալ հրամայեց, և հաշուեպահանջներէն երկու երեքը իբրև դատախազ ատուէն զրկել որոշեց, Մաքսուտեան որ ցարդ Վեհապետեանի հանդարտութենէն կօգտուէր, պարտաւորուեցաւ իր գործիքները շարժումի դնել, ինքն ալ իր բոլոր ոյժերը ամփոփեց որպէսզի վեհապետեանը նորէն իր զիջողութեան վերադարձնէ, և զէնքերուն գլխաւորը, կառավարութեան առջև քսութիւնը, նորէն ձեռք առնուեցաւ, Վեհապետեան ամբաստանուեցաւ իբր խոզվիչներու և խոզվարարներու անգիտակցաբար հետևող, Աւետիս փոքրաւոր իբրև փոփոխութեան դրդիչ և հեղինակ հռչակուեցաւ, հաշուետուութիւնը իբրև աթոռին վնասակար ցուցուեցաւ, կեդրոնը Երուսաղէմի

գործոց խառնուելու անկարող դատուեցաւ, Թելեան և Խաչատուրեան իբրև թելադրիչներ մեղադրուեցան, Մայրաթոռոյ կաթողիկոսին դիմումներ եղան, աթոռը կործանման մօտալուտ նկարագրուեցաւ: Երուսաղէմը կործանողներուն ձեռքէն ազատելու աղաղակներ բարձրացան, Օրմանեան իբրև ապօրինի գործող և սխալ ուղղութեան հետևող ներկայացուեցաւ, հինէն ու նորէն ինչչափ սուտակասպաս պէնքեր կային մէջտեղ թափուեցան, կարծուեցաւ թերևս թէ Օրմանեան անբաւական ըլլար Երէցեանի յերիւրանքները մերկացնել, կամ թէ Խրիմեան յօժարէր Երէցեանի խօսքով Օրմանեանը դատապարտել: Արդարութիւնն ու ուղղութիւնն էր որ իր ճամբուն կը հորդորէր, օրէնքն ու իրաւունքն էր որ վերջապէս կացութիւնը կը պարզէր, և սուտն ու կեղծիքը հուսկ ուրեմն իր գոյնը դուրս կու տար: Վեհապետեանի պիջողութենէն, Օրմանեանի ձգձգումներէն, Խրիմեանի համակերպութենէն, հաշուեխոյսներու աղաղակներէն և կառավարական ազդեցութենէն, յաջողութեան յոյսը կարուելուն վրայ, նոր պաշտպանութեան ծրագիր մը կը ծագէր եռեակին միտքը:

3055. ԽԱՊԱՅԵԱՆ Ի Կ ՊՈԼԻՍ

Խապայեան կաթողիկոս պաշտօնի անցած օրէն մտադրութիւն ունէր շուտով Կ. Պոլիս այցելել և Կայսեր ներկայանալ (03. ԲԻՋ. 1977), սակայն տարիուկէս անցած էր և միտքը իրականացնելու հետամուտ չէր, մինչև որ Ղևոնդական խնդիրին ընթացքը անոր կարևորութիւնը պզգացուց: Հաշուական խնդիրը ամբողջովին կեդրոնին անցած էր, պէտք էր այնտեղ գործել և աշխատութիւնները այնտեղ դարձնել. Երէցեանի աշխատանքը բաւական չէր եղած, ոչ վարչութիւնը ստիպել և ոչ հանրութիւնը համոզել պէտք էր գերագոյն հեղինակութեան մը ազդեցութիւնը գործածել, և ասոր պիտի ծառայէր կաթողիկոսի մը ներկայութիւնը: Առանց Կ. Պոլսոյ պատրիարքարանին վեկուցանելու, Բերիոյ և Ատանայի կուսկալութեանց ձեռքով Կ. Պոլիս գալու կառավարական տեսութեամբ իր հպատակութիւնը կայսեր յայտնելու, կիլիկեան տեսութեամբ աթոռին և ժողովուրդին գործերը հոգալու, իսկ իսկական տեսութեամբ Ղևոնդական խնդիրը պօրացնելու: Միայն ճամբայ ելլելուն առթիւ լուր կը տրուի Կ. Պոլսոյ պատրիարքութեան որ սակայն առանց դիտողութեան պատուաւոր ընդունելութեան պէտքերը կը հոգայ. մինչև իսկ երբ վերջին գիշեր արքունական թիկնապահով Օրմանեանի կը հրամայուի ընդունելութեան ցոյցերը արգիլել, Օրմանեան իր անձնական երաշխաւորութեամբ արգելքը կը հեռացնէ, և Խապայեան ժողովրդական ցոյցերով և պաշտօնական կարգադրութիւններով մուտք կը գործէ Կ. Պոլիս 1904 սեպտեմբեր 14-ին, և մայր եկեղեցւոյ բեմէն իր առաջին օրհնութիւնը կու տայ ժողովուրդին: Օրմանեան անձամբ ալ կաթողիկոսը կայսեր կը ներկայացնէ, և հետպահետէ բոլոր նախարարներուն, և ինչ որ պատուոյ պահանջ էր՝ լիովին կը կատարէ: Բայց այսչափը չէր բաւեր Խապայեանի նպատակին, որուն ենթական պիտի ըլլար ինքն Խապայեան, և գործիչը Երէցեան, և արդիւնքը պիտի վայելէր Մաքսուտեան: Պէտք էր Խապայեանի գործունեայ դեր մը կազմել և աչքառու կերպով իբրև երևնալ և խնդիրներու միջամտել: Պատուասիրութիւն և իրաւասութիւն իրարու շփոթներով կը պահանջուի, որ Կ. Պոլսոյ պատրիարքը իր աթոռէն իջնայ և տեղը Կիլիկիոյ կաթողիկոսը բարձրանայ, առանց իսկ մտաբերելու որ Կ. Պոլիս Կիլիկիոյ վիճակ չէ. բայց աթոռը պէտք էր՝ որ անկէ ազդեցութիւնը ծագէր, ազդեցութենէն միջամտութիւն և միջամտութենէն Մաքսուտեանի արդարացումը: Օրմանեան յատուկ կաթողիկէով աթոռ ալ պատրաստել տուեր էր, բայց որովհետև պատրիարքական պաշտօնական աթոռը չկրցաւ գրաւել, մայրտաճարէն ալ ոտքը քաշեց և պատրաստուած աթոռը Որդւոց Որոտման տաճարը պետեղեցաւ, և Խապայեան հոն սկսաւ յաճախել երբ որ Գումգաբու կը գտնուէր: Բայց ընդհանրապէս Երէցեանի հոգացողութեամբ այս կամ այն եկեղեցի հրաւէրներ և ընդունելութիւններ և հացկերոյթներ կը պատրաստուէին, որոնց

մտադիր կը հետևէր Խապայեան, առանց տեղական հոգևոր իշխանութեան կողմէ հրաւերի սպասելու, գոնէ այսչափով ժողովուրդին առջև իրաւասական իրաւունք ցուցնելու, որ սանդուխ պիտի կազմէր իսկական նպատակին հասնելու: Օրմանեան չէր արգիլեր պատուոյ արտաքին ցուցադրութիւնները, նոյն իսկ իր կողմէ հացկերոյթով ալ կը պատուէր, միայն իրաւասական կէտին նախանձախնդիր, վարչութեան օրակարգէն հանած էր Երուսաղէմի խնդիրը: Երէցեան ստէպ կը դիմէր Օրմանեանի, անշուշտ Խապայեանի կամակցութեամբ, Երուսաղէմի խնդիրը վերջացնելու, յուսալով Խապայեանի միջամտութեամբ ճամբայ բանալ. իսկ Օրմանեան կը պատասխանէր, թէ խնդիրը ներկայելն էր, զոր իրենք կուշացնէին, և առանց հաշիւներու՝ կեդրոնը բան մը չէր կրնար որոշել որ ներքին խնդիրներուն չէր ուզեր միվջամտել, որով Երէցեան նեղի մտած հաշիւները բերել տալ կը խոստանար (ՊՃՆ.52): Խապայեան ինքն ալ չկրնալով իսպառ լուել իսկ Օրմանեան կրկնելով մէկտեղ թէ լուծման սկզբնաւորութիւնը հաշիւները ներկայելն է, կը յիշէր դառձեալ ինչ որ կանուխէն գրած էր թէ Երուսաղէմի խնդիրը այլևս ուղղակի իր պաշտօնավարութեան և պատասխանատուութեան նիւթ չէր կազմեր (ՊՃՆ.37), թէ Երուսաղէմ իր ետևը մնացած է, և թէ իր առջևը Կիլիկիոյ գործերն են: Սակայն Մաքսուտեան համամիտ չէր հաշիւ ներկայել, և Երէցեան առանց իր յանձնառութիւնը յիշելու, գրաւոր առաջարկ կը ներկայէր հոկտեմբեր 20-ին մասնախումբ մը կազմելու, նոյն իսկ առանց հաշիւներ ներկայելու: Օրմանեան կը պարտաւորուէր այլևս վարագոյրը պարզել և իրողութիւնը բանալ, յայտնելով թէ Կ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքները համամիտ կը գտնուին հաշիւները կեդրոնին մէջ քննելու, և հաշուխոյս Մաքսուտեանն է գործին չնայուելուն պատճառը, չհամակերպելով նոյն ինքն Երէցեանի յանձն առած պայմանը գործադրելու, և թէ ինքն իբր փոխանորդ պարտաւոր էր որ ի պաշտօնէ ոյժ տայ իւր պատրիարքին և կեդրոնական վարչութեան, որ խնդիրը վերջանայ. մինչ ինքն արգիլողին պաշտպան և գովաբան կը կանգնի, և համարձակ կերպով իւր պատրիարքը ու կեդրոնական վարչութիւնը, մին իբր տկարամիտ ու միւսը իբր չարամիտ ցուցնել ճգնելով: Միանգամայն հակասութեան մէջ ալ կը գտնուի, երբ կեդրոնական վարչութեան ձեռնհասութիւնը ճանչնալով, անոր կարգադրութեանց դէմ կը դնէ, թէ կը կանխէ Մաքսուտեանի պաշտպանութեան մտնել, քանի որ հաշիւները տեսնուած չըլլալուն անոր դէմ որոշում արձակուած չէ: Թէ երկար ժամանակեայ միաբանակցութիւն և պաշտօնավարութիւն փաստեր չեն, զոր հաւասարապէս կրնան կրկնել թէ՛ պաշտպանող և թէ՛ ամբաստանող միաբաններ: Ելեմտից տեսուչին ստորակարգեալ պաշտօնեայ մը ըլլալուն ալ կը պատասխանէ, թէ Ղեւոնդ տեսուչին հաշիւները վաւերացնող Ղեւոնդը ատենապետն է, թէ ծերունի պատրիարքին հեղինակութիւնը գործածողն ալ միևնոյն ատենապետը եղած էր անցեալին մէջ, թէպէտ վարչութիւնը ցարդ չէ ուզած անձնականութեանց խնդիր յուզել: Իսկ յանձնաժողով մը կազմելու առաջարկին կը պատասխանէ, թէ հաշիւներ ներկայելէ խուսափելով և ուրիշ խնդիրներ յուզելով՝ իրենք կը կրեն գործին յապաղելուն և ձախող հետևանքներուն պատասխանատուութիւնը (ՊՃՆ.49-52): Այդ խնդիրներուն մէջ Երէցեան մինակ չէր, զի Խապայեանի անունն ու դիրքը կը գործածէր, իսկ Խապայեանն ալ յօժարակամ կը գործակցէր, զի արդէն Երուսաղէմը իրեն հետ Կիլիկիա բերած էր, և Կ. Պոլիս գալուն նպատակը Կիլիկիայէ աւելի Երուսաղէմն էր, և գործով կարդարանար իրեն մասին տարածուած վրոյցը, թէ ՍԻՈՆ էր ՍԻՍՆ եկաւ, ՍԻՈՆ մալ ՍԻՍՆ եղաւ: Երբոր պատրիարքարանի և Երուսաղէմատունի մէջ այդ բանակցութիւնները կը շարունակուէին, կաթողիկոս մեծարելու համար իւրովի ձեռնարկները և յաճախ համախմբութիւնները կը շարունակէին, որոնք ժամանակին բերմամբ կառավարութեան կողմէ դիտողութեան առարկայ կըլլային, և երբեմն արգելքներու իսկ կը հանդիպէին, և արքունեաց կողմէն կաթողիկոսին երբ մեկնելուն մասին ուղղակի իրեն հարցում կուղղուէր: Ասոր

վրայ յանկարծ հոկտեմբեր 31-ին հրաժեշտի քարոզ մը կը խօսի, և ամէնուն միըստմիոջէ շնորհակալութիւններ յայտնելով, միայն Կ. Պոլսոյ պատրիարքը և կեդրոնական վարչութիւնը յիշել կը մոռնայ (04.ԱՐԼ.5711): Այսու հանդերձ տակաւին Կ. Պոլիս կը մնար պանապան այցելութեանց և շոգենաւներու փոփոխութեանց պատճառներով, և միայն նոյեմբեր 20-ին Կ. Պոլիսէ կը մեկնի (04.ԱՐԼ.5728): Օրմանեան, որ Երուսաղէմի խնդիրին միջամտելուն և Կ. Պոլսոյ մէջ իրաւասական դեր ստանձնելուն ընդդիմացած էր, անպայման օժանդակած էր Կիլիկիոյ պատկանող գործերուն, կաթողիկոսին նոր շքանշանին և ամսաթոշակին, Կիլիկիոյ կացութեան և պատուոյն, Սսոյ վանքին նորոգուելուն, յարաբերական գործերու դիւրութեանց, աթոռին պէտքերուն համար ազգային հանգանակութեան, և պանապան մասնաւոր խնդիրներու: Մեկնելուն առթիւ ալ հոգ տարաւ որ պարտուպատշաճ պատուով ու շուքով կատարուի: Իսկ Երուսաղէմի գործը վարչական ժողովներ ձեռք առին նոյեմբեր 24-ին (04.ԱՐԼ.5731) որով եռեակին կապմած մեծ ծրագիրը չկրցան իրենց դիտուած նպատակին հասցնել:

3056. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ Ի Կ.ՊՈԼԻՍ

Հարկաւ Վեհապետեան պագացած էր թէ ինչո՞ւ Խապայեանի Կ. Պոլիս գտնուած միջոցին Երուսաղէմի գործերը յետաձգուեցան, որ ինքն ալ ստիպողական ձևերը մեղմացուց, և միայն Խապայեանի մեկնելէն ետքը սկսաւ Մաքսուտեանի վրայ ծանրանալ, որպէսզի վերջ տայ կանխամտածեալ յապաղմանց, և հաշուեցոյցերը և տեղեկագիրները լրացնէ և կեդրոնին քննութեան և հաստատութեան ներկայացնէ: Յարութիւն պատրիարքի վերջերը ձեռք առած վճռական ընթացքը բաւական եղած էր հաշուեպահանջները հանդարտեցնել, տեսնելով որ պատրիարք ինքն ձեռք առած է իրենց խնդիրները, և հաշուեխոյսներն ալ հանդարտած էին. Վի Մաքսուտեան իր տրամադրութեան ներքև կենթադրէր գործին առանցքը, և առժամեայ խաղաղութիւն կը կարծէր այդ փորձէն ալ յաջողութեամբ անցած ըլլալ: Բայց Վեհապետեան անգամ մը գործը ձեռք առած և իր խոհական դանդաղկոտութեան վերջ տալ որոշած, Խապայեանի մեկնելուն լուրը առնելուն, Մաքսուտեանին կը հրամայէ հաշիւներն առնելով ճամբայ ելլել, և երբ նա հաշիւներու անպատրաստ ըլլալը կառարկէ, այլ ևս համբերելու պայմանաժամը լրացած կը դատէ, և մասնաւոր հրամանով վանք կը կոչէ Յոպպէի տեսուչ Գայրգճեան Մատթէոս վարդապետը, որ 1905 յունուար 1-ին կը հասնի, և 12-ին ելևմտից տեսչութենէն դադարման պաշտօնագիրը Մաքսուտեանի կը յանձնուի իբրև օգնական գործածած Բեթղեհէմցի Նասարեան Գէորգ քահանային ձեռքով, և ելևմտից տեսուչ անուանուելուն պաշտօնագիրն ալ Գայրգճեանի կը տրուի, կառավարութեան դրամատուներուն ալ կը հաղորդուի (05. ԲԻՁ.2547), կեդրոնին ալ կը հեռագրուի. Օրմանեան ալ կը փութայ անմիջապէս պէտք եղած ձեռնարկներն ի գործ դնելու. Երուսաղէմի մէջ ալ միևնոյն յունուար 15-ին հրամանները կը գործադրուին: Գայրգճեան ուղղութեան և ճշդութեան վկայութիւն վայելող, և հաշուական ու առևտրական գործոց արժուքիւն ունեցող անձ, պաշտօնին յարմարագոյն ընտրելին էր, միայն բուն նախանձայուպութեամբ մինչև անհամբերութիւն մղուելը կրնար դիտողութեան առարկայ ըլլայ, որ գործին էութեան չէր վնասեր: Մաքսուտեան պագաց որ այլ ևս Վի ինքն անհարժեշտ նկատել տալու ժամանակն անցած էր, և հարկադրուեցաւ անուղիղ ճամբաներու դիմել իր դիրքը չկորսնցնելու համար: Նորէն ձեռք առաւ տեղական կառավարութեան մօտ իրեն դէմ եղողները իբր պետական տեսակէտով վնասակար անձեր ներկայել, և Վի ինքն իբր աթոռին և միաբանութեան հաւատարմութեան պահպանման ցուցնել, որով կառավարչութեան կողմէն ստիպումներ, և կառավարչութեան ձեռքով նախարարութեան կողմէն հրամաններ հասան պատրիարքին Մաքսուտեանը իր պաշտօնին վրայ պահելու և անոր յաջորդ նշանակուածը հեռացնելու. սակայն Վեհապետեանի

անձն ալ իր գերակշիռ նշանակութիւնն ունէր, և պետական շրջանակներու հետ շփման եղանակներուն լաւ հմուտ էր նա, և երբ իր անձնական կամքը առջև դրաւ, և ասոր կամ անոր, հիւրերու կամ փոքրաւորներու գործիք չըլլալու շեշտեց, Մաքսուտեանի հնարքներ ապարդիւն մնացին: Այն ատեն ներքին սպառնալիքներու դիմեց՝ թէ իր անունին արձանագրուած կալուածները կրնան վտանգի ենթարկուիլ, կամ իրեն վստահելով գումարներ յանձնող փոխատուները, իր հառանալուն վրայ կրնան աթոռը նեղի դնել: Երբոր տեսաւ որ այդ միջոցն ալ իրեն վերահաստատուելուն չի նպաստէր, բացարձակ ընդդիմութեան դիմեց, կեդրոնի մէջ ալ Երէցեանէ պաշտպանուելով, որ թէպէտ փոխանորդ, այլ իր պատրիարքին անաստելով՝ յայտնապէս ապօրէն դիրք մը ստանձնելէ չքաշուեցաւ: Մաքսուտեան հաշիւներու փոխանցման ալ հակառակեցաւ, առօրեայ հաշուետետրներն ալ նոր տեսուչին յանձնել մերժեց (05.ԲԻՋ.2579), և երբոր այդ ամէն միջոցներով չկրցաւ իր դիրքը վերահաստատել, իբր մեկնելու արգելք հիւանդութեան պատճառանքին դիմեց, և ապրիլ 6-ին բժշկական վկայագիր ալ ներկայեց (05.ԲԻՋ.2605), սակայն Վեհապետեան հիւանդութեան անհիմն պատճառանք ըլլալը կեդրոնին հաղորդեց (05.ԲԻՋ.2608) և կառավարութեան ձեռքով բերել տալ յանձնարարեց, միանգամայն տեղական կառավարութեան պաշտօնապէս հաղորդեց Մաքսուտեանի ձեռքով կատարուած առուծախներու ցուցակը քաղել, և այլ ևս անոր միջնորդութեամբ գործողութիւն չկատարել (05.ԲԻՋ.2613): Կ. Պոլսոյ պատրիարքարանը իսկոյն փութաց իրեն եղած յանձնարարութեան ընթացք տալ, պաշտօնական յիշատակագիր ներկայեց նախարարութեան, պարտուպատշաճ բացատրութիւնները խօսեցաւ, նախարարութենէն կառավարչութեան հեռագրուեցաւ. Մաքսուտեանի միջոցները սպառեցան, մայիս 2-ին Երուսաղէմէ մեկնեցաւ, 11-ին Կ. Պոլիս հասաւ և 12-ին Օրմանեան պատրիարքի ներկայացաւ (05.ԲԻՋ. 2526,2534): Այս առթիւ Օրմանեան բերուելուն նպատակը կը բացատրէ, գործածուած միջոցներուն իր պատրիարքին հրամանովը կատարուած ըլլալը կը յայտնէ, և օր առաջ հաշիւները ներկայել կը յանձնարարէ, մայիս 18-ին խառն ժողովին մէջ միևնոյն կէտերը պաշտօնապէս կը կրկնուին: Վերջապէս Մաքսուտեան մայիս 23-ին ինչ ինչ հին և թերի հաշիւի թուղթեր կը ներկայէ պատրիարքին (05.ԲԻՋ.2644): Նա իր բնակութիւնը հաստատած էր Երուսաղէմատուն, և այլ ևս Երէցեանի հետ միասին և միախորհուրդ կը սկսին վբաղիլ արդարացման միջոցները պատրաստելու. բայց ո՛րչափ աւելի դիւրին եղած պիտի ըլլար, եթէ 1903-ին պաշտօնը վրան, գործերը չքննադատուած, ընթացքը չմեղադրուած, պաշտօնական գործողութիւններէ խուսափած չըլլար, և օրինական ճմբէն յօժարակամ հեռացած չըլլար: 3057. ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ

Քննութեան ենթարկելի որ և է նիւթ մը պատրիարքարանի ներկայացուած ըլլալով, քննիչ յանձնաժողովոյ կազմութեան ատենը հասած կըլլար, և վարչութիւնը առանց ժամավաճառ ըլլալու մայիս 25-ին փութաց կազմել հաշուեքննիչ մասնախումբը, անոր անդամակցութեան կոչելով այնպիսի անձեր, որոնք ոչ միայն անկողմնակալ, այլ և աստիճան մը Երէցեանի բարեկամ ճանչցուած էին. բայց վարչութիւն վստահ էր իր ընտրած անձերուն ուղղամտութեան վրայ, բայց միանգամայն ուզեց հակառակութեան հոգի չունենալուն հաւաստիք մը ընծայել: Ընտրուած հինգ անձերն էին. Պատրիկ Կիւլպէնկեան, Վահան Սուրէնեան, Տիգրան Բարաղամեան, Խաչիկ Խօրասանճեան, և Արշակ Գարակէօպեան, չորսը վաճառական դասկարգին պատուաւորագոյն ներկայացուցիչներ, և Սուրէնեան երկրագործական նախարարութեան գլխաւոր պաշտօնեաներէն (05.ԲԻՋ.2645): Օրմանեան պատրաստած էր հաշուեքննիչներուն յանձնուելիք հրահանգները, որոնք վարչութեան յունիս 1-ին նիստին մէջ քննուեցան և ընդունուեցան: Հիմնական նպատակը պիտի ըլլար, ճշդութեանմբ և ստուգութեամբ ի վեր հանել Երուսաղէմի վանքին ելեմտական

կացութիւնը, իւր անցեալին, իւր ներկային, և իւր նախատեսեալ վիճակներուն մէջ (ՊՃՆ.53): Գործողութիւնները պիտի բաժնուէին, չորս ձիւղերու վրայ. հասուծախք, պարտք, կալուածք, շինութիւնք, իւրաքանչիւր ձիւղին կէտերն ալ ճշդուած էին 22 յօդուածներով, որոնք վերջէն 10 ընդհանուր գլուխներու վերածուած էին, և ուրիշ 12 յօդուածներով ալ ցուցուած էին հետապօտութեանց ձևերը (ՊՃՆ.53-56): Ինչպէս կը տեսնուի, վարչութիւնը Մաքսուտեանի մասին բնաւ ակնարկ չունէր, այլ միայն ու միայն կուզէր Երուսաղէմի աթոռին ելեմտական կացութիւնը գիտնալ, որպէսզի ըստ այնմ առաջիկային կատարուելիք գործին պայմանները որոշուէին: Երկրորդական և պատահական պարագայ մը եղած պիտի ըլլար, եթէ հաշուական գործողութեան կարգին Մաքսուտեանի վրայ մեղադրանք կամ ամբաստանութիւն մը ծանրանար, բայց այս չէր հաշուեքննութեան ուղղակի նպատակը: Արդեօք գործին ծանրութիւնը խրտչեցո՞ւց, կամ թէ քննութեանց հետևանքները ազդեցի՞ն, բայց վերջապէս անհնարին եղաւ գործը ստանձնել տալ ընտրուած անձերուն, թէպէտ անգամ մը և երկու հրաժարականին մերժուեցաւ (05.ԲԻՁ.2657), և ոմանց տեղ ուրիշներ ալ նշանակուեցան (05.2663), և ուր ուրեմն յունիս 22-ին որոշուեցաւ վարչական մարմիններէն առնել հաշուեքննիչ անդամները, և 23-ին պաշտօնագիրները հաղորդուեցան, քաղաքական ժողովէն երեք հոգի: Գրիգոր Խարեան, Միհրան Սեթեան և Սեպուհ Տէմիրձեան, և երկու անտեսականէն. Գէորգ Ասլանեան և Վահան Սուրէնեան: Նոյն ժողովին կարդացուեցան Գայրվճեանի պատասխանները վարչութեան հարցումներուն, որով աթոռին պարտքը 23,000 կը ցուցուէր (3051), և վեղծումներու ակնարկներ կային (05. ԲԻՁ. 2670): Վարչական մասնախումբի անդամներէն Տէմիրձիպաշեան նոյեմբեր 17-ին վախճանեցաւ (05. ԲԻՁ. 2796), և հարկ չտեսնուեցաւ նոր անդամ աւելցնել, և մասնախումբը չորս անդամով շարունակեց իր աշխատութիւնները: Մասնախումբին կազմութեան առթիւ վարչութիւնը իր նախագահին առաջարկեց մասնախումբին ալ նախագահել, բայց որովհետև մասնախումբին լոկ տեղեկաբեր քննիչի և ոչ ալ որոշիչ մարմնոյ իրաւասութիւն ալ խոսուեցաւ, Օրմանեան չուզեց քննութեան գործակցիլ, որպէս զի որոշման նախագահի դերը չտկարացնէ. վարչութիւնն ալ այս գաղափարին համակերպեցաւ, և մասնախումբը գործեց Խտրեանի ատենապետութեամբ: Միայն թէ գործին ելքը Օրմանեանին նպատակն ու նախատեսութիւնը չարդարացուց, և կերպով մը զինքն պատասխանատու թողուց, որ մասնախումբը իր բուն նպատակէն հեռացաւ, ինչ որ հաւանաբար տեղի չէր ունենար, եթէ Օրմանեան ինքն վարած ըլլար հետապոտութեանց կարգը և աշխատութեանց ընթացքը, ինդիրը մօտէն ուսումնասիրած, և պատուիրակութեանց հրահանգները պատրաստած, և հաշուեքննութեան ալ ընելիքը ծրագրած ըլլալով:

3058. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Տեսանք արդէն որ 1902 յունիս 12-ին հաշուեպահանջներուն ժողովական ցոյցը տեղի ունեցած էր հաշիւները չտեսած տնօրէն ժողովոյ լրացուցիչ ընտրութիւն կատարել չուզելով: Ժողովականներէն երեքը Մարկոսեան և Փորթուգալեան և Ապարեան պակսած էին վանազան պատճառներով, չորրորդն ալ Խապայեան 1903 յունուարին պակսեցաւ, Անոյշեանի ապրիլի մէջ ժողովի մասնակցիլը շատ վաղանցուկ եղաւ (3045), և գործը վարեցին մնացած երեքներ, Գէորգեան և Յովհաննէսեան և Մաքսուտեան մինչև 1903 դեկտեմբեր, մինչև որ Յովհաննէսեանի ալ Մաքսուտեանի ընթացքէն գայթակղելովը՝ ժողովը լուծուեցաւ, նոր ընտրութիւն չկատարուեցաւ, և տարիուկէս Յարութիւն պատրիարք գործերը վարեց առանց ժողովի, Մաքսուտեան ալ իր ձիւղին մէջ ապատութեամբ գործեց, մինչև որ 1905 յունուար 12-ին պաշտօնէն արձակուեցաւ, բայց չորս ամիս ևս մեկնիլը յապաղեց (3056): Միայն անոր մայիս 2-ի մեկնելէն ետքը Յարութիւն պատրիարք ձեռնարկեց տնօրէն ժողով կազմել, և միաբանական

ընտրութեան դժուարութիւնը, չըսենք անհրաժեշտութիւնը նկատի առնելով, պատրիարքական իշխանութեամբ առժամեայ գրութեան դիմեց, և Մարկոսեան Մամբրէ եպիսկոպոսի և Իփէքեան Յովհաննէս և Պօյաձեան Գրիգորիս վարդապետներու յանձն չառնելուն վրայ, պաշտօնի կոչեց Եղիա Յովհաննէսեան, Գարեգին Սաքայեան, Յակոբ Սանասարեան, Եղիշէ Չիլինկիրեան, Սարգիս Աճէմեան և Դաւիթ Տէրտէրեան վարդապետները: Ասոնցմէ միայն Յովհաննէսեան կար առաջիններէն, իբր Վի Խապայեանի երկու անգամ Կիլիկիոյ պատուիրակութեամբ բացակայելուն և վերջին անգամ կաթողիկոսութեամբ հեռանալէն ի վեր լուսարարապետութեան փոխանորդութիւնը կը վարէր, միայն քանի մը օր Անոյշէանի պաշտօնի անցնելուն դադարելով և Ալարեանի ընտրութենէն ետքն ալ պաշտօնէն չբաժնուելով, և միւս կողմնէ ալ լուսարարապետին տնօրէնի մէջ գտնուիլը կանոնագիրի պահանջ ըլլալով: Միւսներէն Սանասարեան և Աճէմեան և Տէրտէրեան հաշուեպահանջներուն գլխաւորներէն էին, Սաքայեան անտարբերութեամբ և Չիլինկիրեան փոփոխամտութեամբ երկկողմանի դեր վարողներ էին, արդէն այս վերջինը քանի մը օրէն ժողովականութենէն կը հրաժարէր: Իսկ փոխանորդութիւնը առանց ժողովականութեան ընմնար Ներսէս Գէորգեան եպիսկոպոսի վրայ, աւելի իբր պատուակալ տիրողոսը մը քանի թէ գործունեայ պաշտօն մը Վի արդէն 76 տարեկան էր, անձամբ ալ տկարացած, միտքով ալ ցրուած և անգործ դարձած. արդէն շատ ևս չապրեցաւ և 1906 յունուար 12-ին մահկանացուն կնքեց Յարութիւն պատրիարք ինչպէս բացառիկ կարգադրութեամբ տնօրէն ժողովի խնդիրը լուծած էր, լուսարարապետութեան խնդիրն ալ պատրիարքական իշխանութեամբ և բացառիկ անուանմամբ ուլեց լուծել, և 1905 տարուոյ վերջին օրը լուսարարապետութեան բարձրացուց Թադէոս Աստուածատուութեան Եկաւեանց վարդապետը, Լաւողիկէի տեսուչը, իբրև չէկոք և պատկառելի անձնաւորութիւն, երկար տարիներէ ի վեր Լաւողիկէ մնացած, որ գրական արդիւնքով ալ ծանօթ էր, իբր հեղինակ համարաբարբառ Հին և Նոր Կտակարանաց ստուար և համեմատաբար երկասիրութեան, որ Հայ Եկեղեցւոյ եկեղեցական մատենագրութեան մի մեծ պակասը լրացուցած էր, և 1895-ին Ս. Յակոբեանց տպարանէն հրատարակուած: Թադէոս վարդապետ 1906 տարուոյ առաջին օրը պաշտօնին մտաւ, բայց նա ալ սակաւակեաց եղաւ պաշտօնին մէջ. Վի ճիշդ երեք ամիսէ վախճանեցաւ, ապրիլ 1ին, և լուսարարապետութիւնը նորէն թափուր կը մնար: Գէորգեանի մահուամբ պատրիարքական փոխանորդութիւնը լուսարարապետութեան փոխանորդութենէ դադրած Յովհաննէսեանի տրուած ըլլալով, այդ վերջին լուսարարապետի պաշտօնը փոխանորդութեամբ յանձնուեցաւ Սաքայեան Գարեգին վարդապետի, որ տարի մը վայն վարեց մինչև միւս տարուոյ մայիսին՝ լուսարարապետի միաբանական ընտրութիւնը. իսկ առժամեայ տնօրէնը իր պաշտօնը շարունակեց մինչև որ Աստուածատուրեանի մահուանէ ետքը մնացեալներ 1906 սեպտեմբեր 13-ին հրաժարական ներկայեցին, իրենց 16 ամսական պաշտօնավարութեան տեղեկագիրն ալ մատուցանելով: Փափաք յայտնուած էր տնօրէնը վերակազմել միաբանական ընտրութեամբ, բայց Յարութիւն պատրիարք տակաւին պարագաները պատեհ չտեսաւ ընդհանուր ժողով գումարելու, որչափ ալ կեդրոնին մէջ սկսած էր հաշուեքնութիւնը և վանական կացութիւնը հաշուեպահանջներուն կողմը վօրացած կը ցուցնէին. բայց հնար էր որ տակաւին թիւրը արժանիքին դէմ մրցէր և նոր անտեղութեանց տեղի տրուէր. ուստի անմիջապէս սեպտեմբեր 24ին երկրորդ առժամեայ տնօրէն մը անուանեց, առաջիններէն պահելով Յովհաննէսեան, Սաքայեան, Աճէմեան և Տէրտէրեան վարդապետները, և նորէն աւելցնելով Մովսէս Ոսկերիչեան և Պետրոս Սարաձեան վարդապետները, հաշուեպահանջներու խումբէն: Նորոգ կազմութենէն խոյս կու տայ միայն Տէրտէրեան՝ սեպտեմբեր 25ի հրաժարագիրովը, և Տնօրէնը գործի կը սկսէր հինգերու կազմութեամբ, և կը շարունակէր իբր ինն ամիս, և

միաբանական ընտրութեամբ կանոնական կացութիւնը կը վերանորոգուէր 1907 յուլիս 15-ին, ինչ որ շատերու փափաքն էր, և նոր եկող պատուիրակութիւնն ալ այդ կարգադրութեանց ոյժ կու տար, ինչպէս իր կարգին պիտի տեսնենք:

3059. ՓՈՒՍԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ Երուսաղէմի այդ դէպքերուն միջոցին յատուկ միջադէպ մը կապմեց Երէցեանի Կ. Պոլսոյ փոխանորդութենէն հանուիլը: Տասը տարի էր որ Երէցեան Սէֆէրեանի յաջորդելով Երուսաղէմի փոխանորդութիւնը կը վարէր Կ. Պոլսոյ մէջ (3037), և այնպէս համակրած էր պաշտօնին և Կ. Պոլսոյ կեանքին, որ փոխանորդութիւնը իրեն սեփական կալուած կը կարծէր, միայն ապագայ պատրիարքութեամբ մը փոխանակելի, և Մաքսուտեանի պաշտպանութեան վստահացած մինչև իսկ պատրիարքին անձին և ուղղութեանը դէմ պաշտօնը գործածելու համարձակութիւն առած էր: Խօսուեցաւ այն ատեն որ երբոր 1905 յուլիս 8-ին Երլտրվի մվկիթին առջև մահափորձ մը կատարուեցաւ Ապտիւհամիտ կայսեր անձին դէմ (05. ԲԻՋ. 2685), և կայսեր անվնաս պահուելուն վրայ ամէն կողմերէ խնդակցութեան և գոհունակութեան հեռագիրներ և ցոյցեր կը տեղային, Երէցեանի Երուսաղէմ լուր տալու յապաղելուն վրայ Վեհապետեան ետև մնացած էր. ուստի այդ պարագան առիթ անելով՝ Երէցեանը պաշտօնէն կը դադրեցնէր, և կը հրամայէ Երուսաղէմ դառնալ (05, ԲԻՋ. 2695): Սակայն այդ պարագան լոկ իբր արտաքին պատճառ գործածուած էր, իսկ ներքինն ու իսկականը Երէցեանի բռնած Վեհապետեանի հակառակ ընթացքն էր, անոր գործերը անարգելով, հրամաններուն անաստելով, Մաքսուտեանը պաշտպանելով, և իր նամակներուն մէջ Երուսաղէմի հաշուեխոյսները պատրիարքին դէմ գրգռելով, ինչ որ անհնար կը դարձնէր անոր այլևս փոխանորդ մնալը: Վեհապետեանի յուլիս 20 ի հեռագիրը համառոտ էր, բայց յուլիս 23 ին պաշտօնապէս կը գրէր, թէ ցարդ ներողամտութեամբ համբերեցին ձեր արարքներուն, զորս թէ նկատմամբ մեր անձին, և թէ նկատմամբ միաբանական ուխտին ի գործ դրիք վերջին 3-4 տարիներու միջոցին: Մինչև փոխանորդի անուանումը՝ Արիստակէս Խաչատուրեան վարդապետի յանձնարարած էր Երուսաղէմատունին և գործերուն տիրանալ (05.ԲԻՋ.2701), սակայն Երէցեան կընդդիմանար իր պաշտօնէ դադարման դէմ բողոքելուն հիմնուելով, իբրև թէ գործին տէրն ըլլար և ոչ յանձնարարական պաշտօնեայ մը: Օրմանեան ալ այդ փոփոխութեան չուպեց միջամտել, բայց ոչ Երէցեանի իրաւունք տալով և ոչ ալ Խաչատուրեանի անարժանութեան հիմնուելով, այլ Վեհապետեանի կողմէ հրամանը գործադրել տալու իրեն յանձնարարութիւն եղած չըլլալուն համար: Փոխանորդութեան պաշտօնին ընտրուած էր Եղիշէ վարդապետ Զիլինկիրեան, անշուշտ նկատի առնելով կանուխէն վանքի մէջ և վանքէն դուրս պաշտօններ վարած ըլլալը, իսկ եպիսկոպոսական արտօնագիրն ալ գիրքը զօրացնելու համար տրուած ըլլալը: Օգոստոս 17ին Զիլինկիրեանի ուղևորելուն լուրը կը տրուէր, սակայն Երէցեան կանխած էր օգոստոս 9-ին Խրիմեանի բողոքել իր պաշտօնէն հանուելուն դէմ, իսկ հաշուեխոյս խումբն ալ 15 ստորագրութիւններով օգոստոս 15ին Օրմանեանի կը բողոքէր Երէցեանի պաշտօնանկութեան հետ բոլոր վերջին իրողութեանց համար, Մաքսուտեանի քննութեան, Զիլինկիրեանի ընտրութեան, Ագարեանի դադարման. սակայն անձանօթ չէր որ այդ գիրերը (ՊՏՃ.54) Կ. Պոլիս կը պատրաստուէին Երէցեանի և Մաքսուտեանի կողմէ և Երուսաղէմ կը դրկուէին ստորագրելու (ՊՏՃ.63). զի ստորագրողներուն մէջ այդ գրութեանց կարող և այդ ոճին վարժ անձ ալ նշմարել դիւրին չէր, զի և ոչ իսկ վարիչ մը ունէր հաշուեխոյս խումբը Երուսաղէմի մէջ: Զիլինկիրեան Կ. Պոլիս պիտի հասնէր օգոստոս 27ին, և պատրիարքարանի կողմէ պէտք եղած անձեր դրկուած էին ընդունելու և առաջնորդելու, երբ երեկոյին արև մտնելու միջոցին, գործակատարն ու բարապանները լուր բերին Օրմանեանի թէ Զիլինկիրեանի մէկ շոգենաւէ հանուած միւս

շոգեհալով ետ դրկուած է: Օրմանեան Պէշիկթաշ կը գտնուէր կիրակամուտի առթիւ միւս օր եկեղեցւոյ տօնը կատարելու համար: Անմիջապէս մուտք կոխելէն ետքը Երլտրզի արքունիքը կը փութար Չիլինկիրեանի անմիջական դարձը պահանջելու, և իր խնդրանքին հիմ կը կազմէր հարուածին ուղղակի Վեհապետեանի անձին դէմ ըլլալը, որ կառավարութեան ծանօթ, և հաւատարմութեամբ վկայուած արդիւնաշատ ծերունի մըն է, և գուցէ հարուածին ներքեւ ընկճուի: Առաջին քարտուղարը Չիլինկիրեանի դէմ ամբաստանութեան թերթ մը կը ցուցնէր, որուն դէմ Օրմանեան դիմաբաժանեալ կը դնէր Վեհապետեանի և իր վկայութիւնը, և արքունիքէն չէր մեկնէր մինչև որ կայսեր կողմէ ետ դարձնելու հրամանը չտրուէր, և առաջին քարտուղարին կողմէն ալ հրամանը ստիպողական հեռագիրով Չանաքքալէ չհաղորդուէր: Աւելորդ չհամարուի այստեղ անգամ մըն ալ կրկնել՝ քսութիւնն ու մատնութիւնը իբրև պաշտպանութեան վէնք գործածողներուն նողկալի դերը: Համաձայն տրուած հրամանին, միւս օր օգոստոս 28-ին, Չիլինկիրեան Չանաքքալէէ Կ. Պոլիս կը հասնէր, և 29ին երկուշաբթի օր Օրմանեան անձամբ վայն Երուսաղէմատուն կը տանէր և պաշտօնին կանցունէր (05.ԲԻԶ.2729): Երէցեան տակաւին յանձն չէր առնէր Երուսաղէմ դառնալ, և Երուսաղէմատան մի մասին մէջ Մաքսուտեանի հետ առանձին բնակութիւն կը հաստատէին Չիլինկիրեանէ անջատ և անկախ:

3060. ՀԱՇՈՒԵՔՆՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԸ Հաշուեքննիչ մասնախումբին դառնալով, սկսինք յիշել թէ 1905 յունիս 28-ին գործի ձեռնարկելով (ՏՂԿ.Ա.1), միայն 1907 փետրուար 19-ին իր տեղեկագիրը կը մատուցանէր (ՏՂԿ.Ա.36), որ է 20 ամիսներու երկարատև միջոց մը. սակայն մասնախումբը կը ջանայ Վինքն արդարացնել հանդիպած արգելքները յիշելով: Իր առաջին նիստին մէջ Մաքսուտեանէ կը ստանայ 12 վանական ելամուտքի և 12 կշիռի ցուցակներ և 70 կտոր վաճառմանց և գնմանց և շինութեանց ցրիւ թերթիկներ (ՏՂԿ.Ա.2), ամէնն ալ պարզ գրութիւններ առանց հաստատութեան և վաւերացման: Միւս կողմէն մասնախումբին կը յանձնուին Քայրվճեանի ստորագրութեամբ և 1905 փետրուար 9 թուականով թուղթ մը, որ Մաքսուտեանի կը վերագրէր իբր 20,000 լիրայի վեղծումներ, և Մատթէոս Քայրվճեան ու Մեսրոպ Նշանակեան վարդապետներէ պատրաստուած, 1905 յունիս 8 թուականով 59 էջերէ բաղկացեալ հաշիւներու բացատրական տեղեկագիր մը, որով Մաքսուտեանի կը վերագրուին 14,452 լիրայթ վեղծումներ (ՏՂԿ. 2): Թուղթերու քննութեան չմտած հաշուեպահանջներու կողմէ ներկայացուցիչ մը կուլուի, և այդ պաշտօնին կը նշանակուի Քայրվճեան, որ և օգոստոս 27-ին Երուսաղէմէ կը մեկնի. բայց այս անգամ ալ քսութիւն ու մատնութիւն վրայ կը հասնին Քայրվճեանի ուղևորութիւն արգիլելու, որով նա Յոպպէի մէջ կարգիլուի պետական արգելքով և իրեն վրայ մատուցուած ամբաստանութեանց հետևանքով: Ջարմանալի էր որ այդ փորձերը իրենց համար յաջողութեամբ պսակուած չէին, բայց տակաւին վանց չէին ըներ միշտ նոյն տգեղ միջոցին դիմել, հարկաւ արդարութեան վէնք չունենալուն իրենց տրամադրութեան: Քայրվճեանի արգիլուելուն պարագան Վեհապետեանը կը պարտաւորէ Կ. Պոլիս վեկուցանել, որ քննութեան համար Քայրվճեանի սպասուի (ՏՂԿ.Ա.3), և Վեհապետեան Երուսաղէմէ և Օրմանեան Կ. Պոլիսէ արգելքը բառնալու կաշխատին. իսկ Քայրվճեան մինչև նոյեմբեր 15 Յոպպէի մէջ յուսադրութեամբ սպասելէն ձանձրացած, Կիպրոսէ դարձող Սարաճեանի հետ Երուսաղէ կը դառնայ, բայց ապատօրէն նաւարկելու հրամանն ալ ետևէն կը հասնի, և իսկոյն Յոպպէ դառնալով, դեկտեմբեր 1ին անտի կը մեկնի և 12ին Կ. Պոլիս կը մտնէ, և 1906 յունուար 4ին մասնախումբին կը ներկայանար (ՏՂԿ.Ա.3), և կը սկսի բացատրական տեղեկագիրէն (ՏՂԿ.Գ.) խօսիլ. բայց որովհետև Մաքսուտեանի առաջարկներուն վրայ ալ բացատրութեանց կը հրաւիրուի, որոնք իրեն և վանքին անծանօթ էին, պէտք կըլլայ պայմանաժամ տալ, որ քննէ և վննէ, թուղթերը պատրիարքարանէ

չելլալու պայմանով (ՏՂԿԱ.3): Գայրբճեան քանի մը ամիսներ կը դնէ այս աշխատութեան, և 14,462 լիրայի վեղծումներու նոր ցուցակ մը կը քաղէ, բայց բացատրական տեղեկագիրին մէջ յիշուածներէն տարբերող գլուխներ ալ կազմելով, ինչ որ բնական էր նոր տեղեկութեանց հանդիպելուն և ցրիւ թերթերու վրայ, բայց մասնախումբին կարծել կու տայ Մաքսուտեանի դէմ ամբաստանութիւններ ենթադրական կամ կեղծ ըլլան, և մինչև աստիճան մը նախապաշարման կը մատնէ, Մաքսուտեանի թելադրութիւններէն ալ ազդուելով: Մասնախումբը իր քննութեանց կը ձեռնարկէ 1906 մայիս 2-ին, հինգ մասերու վերածելով իր նիւթը. 1. Մատակարարութիւն, 2. Կալուածք, 3. Արժեթուղթ, 4. Պահեստի դրամ, 5. Շինութիւնք: Բայց այս թուականէն համրելով մինչև տեղեկագիրի լրումը՝ դարձեալ 11 ամիսներու երկարատև և պէտքէն աւելի միջոց մըն է որ կանցնի, Մաքսուտեանի կողմէն կանոնաւոր հաշուեցոյց ներկայացուած չըլլալուն պատճառով: Մասնախումբին առաջին քայլերուն պատմութենէ իսկ յայտնի կը տեսնուի, թէ նա տեսակ մը ինքնուրոյն ուղղութեամբ գործի կը մտնէ, երբոր հրահանգին ցուցած հիմնական նպատակը վանց ընելով, որ էր Երուսաղէմի աթոռին ելեմտական կացութիւնը ճշդութեամբ և ստուգութեամբ պատկերացնել (ՊՃՆ.53), բոլոր նպատակը կը դարձնէ Մաքսուտեանի հաշիւները և անոր վերագրուած վեղծումները քննելու, կարծես այդ եղած ըլլար իրեն առաջադրուած գործը, մինչ հրահանգին մէջ և ոչ իսկ Մաքսուտեանի անունը յիշուած էր: Այդ ուղղութեան դուռ բացողը Մաքսուտեան ինքն էր եղած, իր առաջին խօսքերը ոչ օրինական հաշուետուութենէ, այլ անձնապաշտպանութեան բացատրութիւններէ սկսելով (ՏՂԿԱ.1): Այս եղանակը Մաքսուտեանի ընթացքին բնական շարունակութիւնն էր, և երկար տարիներէ իվեր օրինական հաշուետուութենէ խուսափողը պէտք չէր որ մասնախումբին առջև ընկճուէր, բայց մասնախումբին պարտքն էր զինքն օրինական ուղւոյն դարձնել: Մինչև աստիճան մը հաշուեպահանջներն ալ պատասխանատու են այդ շեղումին, իրենց նախնական պահանջը, այսինքն հաշիւներու օրինական ներկայացումը պնդելու տեղ, Մաքսուտեանի գործողութեանց մէջ վեղծումներ առարկելու չէին: Սակայն ասոնց միտքը ոչ այնչափ Մաքսուտեանի վեղծարարութիւնը հետապնդելն էր, որչափ հաշուոց մէջ թերութիւններ ցոյց տալով օրինական հաշուետուութեան անհրաժեշտութեան մասին մտադրութիւն հրաւիրել, աւելի տեղեկատուի քան դատախապի դերը վարել: Անուրանալի է որ հաշուեպահանջներ և իրենց ներկայացուցիչ Գայրբճեանը, և իրենց փաստաբանութիւնը վարող Գայրբճեան ու Նշանեանը, բաւական քան առանց վաւերաթուղթի, միայն պատճառաբանութիւններով և եզրակացութիւններով անցուցած են բացատրական տեղեկագիրին մէջ, սակայն այդ թերութիւնը աւելի Մաքսուտեանի վերագրելի է. որ կանոնական ձևով հաշուետուութենէ խուսափելով, հաշուեպահանջներուն իրաւունք տուած է իրենց տեսութիւններով և բաղդատութիւններով քննելի կէտեր ցուցնել: Այդ կէտերը պէտք էր որ մասնախումբը հետապնդէր և միանգամայն կանոնագիրին պահանջներուն ալ մտադրութիւն դարձնէր, և ներեալ չէր եօթնասուն կտոր վանապան թուղթերը իբր օրինաւոր հաշուետուութիւն ընդունիլ, և անոնցմէ տասն և չորսը միայն Գայրբճեանի ներկայել որ հաշիւ քաղէ, զի իր հաշիւները քաղելու և ներկայելու պարտքը հաշիւ տուողին վրայ կը ծանրանայ և ոչ թէ հաշիւ պահանջողին վրայ:

3061. ՏԵՂԵԿԱԳԻՐԻՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ Զանց կընենք հետիլ հաշուեքննիչ մասնախումբին գործողութեանց, որոնք կրնային մեզ երկարօրէն պաղեցնել օրագրական մանրամասնութեանց առաջնորդելով, և կանցնինք ամփոփում մը տալ 1907 փետրուար 19-ին տեղեկագիրին, զոր գիրի առած է մասնախումբին անդամներէն Սեթեան Միհրան, իբրև հաշուգէտ ատենադպիր, թէպէտ չորսերն ալ հաշուական գործերու վարժ անձեր էին: Մասնախումբին

կապմած հինգ ճիւղերէն առաջինին մասին թուանշանները հակիրճ ամփոփում մը կը ներկայեն, որուն մէջ վանապան գումարներ հաշուեցոյցերէն տարբեր են առանց տարբերութեանց բացատրութիւնը տալու, գլխաւորապէս մատակարարական ճիւղին բացը նախապէս 32,627 ցուցուելէն ետքը (ՏՂԿ.Ա.5), վերջը 28,889 ըսուած է (ՏՂԿ.Ա.9) առանց ուրիշ բացատրութիւն աւելցնելու: Դիտուած է իրաւ որ հաշուեցոյցերը ըստ կանոնի միաբանական ժողովոյ ներկայացուած չըլլալէն վատ բացատրական տեղեկագիրներ ալ չեն պատրաստուած տնօրէն ժողովէն (ՏՂԿ.Ա.4), և թէ կարևոր նորոգութիւններ և մեծածախս բարեկարգութիւններ չեն եղած, և վարժարանի, և այլ հաստատութեանց վարկ չէ տրուած. որ ահագին բացը արդարանար (ՏՂԿ.Ա.9), բայց տակաւին Մաքսուտեան չմեղադրուիր, նկատելով վայն իբրև անմեղուկ ստորակարգեալ պաշտօնեայ մը, առանց իսկ միտքէ անցունելու, որ տնօրէն ժողով ըսուած նոյն ինքն է, որ իբրև ատենապետ կը գործէ կապմակերպութիւնը կորուսած տնօրէնի մը գլուխն անցած, և մէկ երդուեալ և երկու միամիտ ընկերներու միտքն ու կամքը իր ձեռքն անցուցած, որոնք և ոչ իսկ թուանշաններու յարաբերութեանց մտադրութիւն կը դարձնեն, կամ ինչպէս ինքն Մաքսուտեան յայտարարած է, հաշիւէ ալ չեն հասկնար (07.ԱՐԼ.6438), իբր ատենապետ կը վաւերացնէ ինչ որ իբր տեսուչ կը գործէ. իսկ պատրիարքը ներքին ցաւը դուրս չհանելու նախնական ուղղութեամբը յանձն կառնէ համակերպիլ, մինչև որ ցաւը անբուժելի և ցաւագարը անբժշկելի տեսնելով համակերպութեան ընթացքին վերջ տայ: Կալուածոց ճիւղը կապմուած է պարզ յայտարարութեամբ նոյն անձին, որուն հաշիւները քննել յանձն առած է մասնախումբը, առանց ուրիշ որևէ մուրհակի կամ վաւերագրի: Աղէքսանդրիոյ գետնին գինը որ մատակարարութեան ճիւղին մէջ իբր հասոյթ յիշուած էր (ՏՂԿ. Ա. 5) այստեղ նորէն երևան կու գայ (ՏՂԿ. Ա. 11), իսկ այս տեղ յիշուածներ այնտեղ չեն յիշուիր: Վաճառումներ յառաջ կը բերուին, որոնց մէջ մինչև իսկ 492 լիրայ վաճառման գինին վրայ 269 ծախք կը վեղչուի, և մասնախումբը մտադրութիւն չդարձներ (ՏՂԿ. Ա. 11), զի Մաքսուտեան կը վկայէ թէ անօրէն ժողովը, իմա ինքը, հաւանած է, ինչպէս արդէն բացատրեցինք: Աղէքսանդրիոյ գետնին վաճառման մէջ անարդարանալի կէտեր կը տեսնէ մասնախումբը, բայց միշտ տեսուչը կարդարացնէ, վասնզի անօրէնը հաւանած է, թէպէտ ատենագրութեան ալ անցած չէ: Մասնախումբը հետապնդած չէ թէ վաճառուածներ գնուածներէն աւելի յարգի ու շահեկան չէի՞ն արդէօք, և կատարուած փոխանցումները անձնական օգուտներու առիթ ընծայելու համար պատրաստուած չէ՞ն արդէօք: Մասնախումբը աւելի լաւ ըրած կըլլար եթէ քանի մը դիտողութիւններն ալ բոլորովին վանց ընէր և լռէր միտքեր չարթընցնելու համար, քան թէ սնտոի և վարկապարագի բացատրութիւններով արդարացնէր: Արժեթուղթերու վաճառմանց և անոնց գիններուն կիրառմանց մէջ մասնախումբը բոլոր ոյժը կը դնէ պնդելու թէ արդար չգտանք պատասխանատուութեան ենթարկեալ Ղևոնդ վարդապետը (ՏՂԿ.Ա.18), միշտ միևնոյն մտայնութեամբ Մաքսուտեանը արդարացնելու, և ոչ Երուսաղէմի ելեմտական վիճակը պատկերացնելու: Ստոյգ է որ արժեթղթոց գործին մէջ Եսայի պատրիարք, Սիմէոն փոխանորդ Իսահակ լուսարարապետ ալ մասնակցած են սակայն նոյն չափ ստոյգ է որ գործը վարողը Մաքսուտեան եղած է, վաճառուածներուն գինը ինքը գանձած, և արդարուած գումարը ինքը գործածած է, բայց ինչի ծառայած ըլլալնին պարզ չէ երբեմն ընդհանուր մատակարարութեան կը խառնուին, և երբեմն ինքնուրոյն հաշիւ կը կապմէն կան ևս մեծ պարգև շահող և անյայտ եղող թիւերու գաղտնիքներ, որոնք երևան եկած են մտերմական նամակներէն: Պահեստի գումարի գլուխը բացատրած ենք արդէն (3051), բայց գործեու և գիրերու կարգը կը պահանջէ, նորէն դիմաց ելնելուն յիշեցնել անոր ստեղծելուն գաղտնիքը, և վերջէն իւրացուելուն պարագան, նշանաւոր

դրուագներ, պարտքը շահի հետ շփոթելու մտայնութիւն, որոնք մասնախումբի մտադրութենէն վրիպած են, և պահեստի դրամ գլուխը իբր հանձարեղ գիւտ մը գովուած է, հանձարեղ, այո, բայց յօգուտ տեսչին և ոչ տեսչութեան, Մաքսուտեանը դրամի տէր և աթոռը պարտքի տէր ընելու նպատակով: Շինութեանց հաշիւներով երկարօրէն կը վբաղի մասնախումբին տեղեկագիրը (ՏՂԿ.20-30), բայց ձեռքը ոչ հաշիւ ունի և ոչ հաշուեցոյց, ոչ վաւերագիր և ոչ վկայութիւն, այլ միայն Մաքսուտեանի խօսքը և ցրիւ թերթիկներու հաւաքածոյ մը իր գիրով և իր կողմէ կազմուած, որոնք որևիցէ ատեն կրնային պատրաստուիլ ըստ պիտոյից: Մասնախումբը իր ելրակացութեան մէջ կը խոստովանի, թէ հաշիւները չեն այնքան պարզ որքան փափաքելի էր (ՏՂԿ.Ա.29), կը նդունի ևս թէ պէտք է որ Սուրբ Աթոռոյ տոմարաց մէջ արձանագրուած ըլլային (ՏՂԿ.30), բայց այս դիտողութիւններով մէկտեղ ընդունելի կը դատէ Մաքսուտեանի իրեն համար տուած վկայութիւնը իբրև Մաքսուտեանի արդարացուցիչ, և տասն ու քսան հազար ոսկոյ լրացած շինութիւն մը մէկ տողով ցուցուած ծախքը ծախսող Մաքսուտեանի բերնէն իբրև արդարացուցման փաստ կը նդունի. իսկ Գայրքճեանի և Նշանեանի պատճառաբանութեամբ և բաղդատութեամբ և երրորդներու վկայութեամբ յառաջ բերած առարկութիւնները անընդունելի կը գտնէ: Այդ առարկութիւններէն 13 գլուխներ յառաջ կը բերէ (ՏՂԿ.Ա.30-34), բայց և ոչ իսկ քննութեան ենթարկելու հարկ կը տեսնէ, թէպէտ և յառաջ բերուածները տոմարներու և տետրակներու մէջ տեսնուած յայտնի խեղաթիւրումներ կը մատնանշեն, թուականներու և թուահամարներու անյարմարութեամբ կատարուած յաւելումներ կը ներկայեն, մասնախումբը կը բաւականանայ Մաքսուտեանի խօսքով, և եթէ այն ալ չըլլայ, ինքնաբերաբար ալ կը վճռէ, թէ ըստ մեզ կիրքէ բղխած է և հետևաբար զուրկ է կարևորութենէ: Գեղեցիկ է ըստ մեզ փաստը, որուն հիմ կը կազմէ թէ Մաքսուտեան հաստատած է այժմեան կազմակերպութիւնը (ՏՂԿ.Ա.33), մինչ վաճառմանց և գնմանց շինութեանց հաշիւներ տոմարական կազմակերպութենէ դուրս մնացած են, և տոմարական կազմակերպութիւնն ալ երկայրի սուր մըն է, ինչպէս և խօսքը, որուն համար ըսուած է թէ միտքին մտածումները ծածկելու համար ստեղծուած է:

3062. ՏԵՂԵԿԱԳԻՐԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Այս քննադատական ամփոփումը հիմնուած է տեղեկագիրին այն մասին վրայ, զորս չորս անդամակիցներ ստորագրած են (ՏՂԿ.Ա.36) սակայն երբոր Երուսաղէմի հաշիւները վաւերացնելու և կատարուած ելեմտական մատակարարութիւնը արդարացնելու և գովաբանելու կարգը եկաւ, մասնախումբի չորս անդամները երկուքի բաժնուեցան: Ասլանեան և Սուրէնեան հաշուական գիտութեանց հմուտ և ելեմտական վարչութեան փորձառու, և աւելի ազատ տեսութեանց օգտակար չէին տեսնար կատարուած շինութիւնները, շահավէտ չէին դատեր կատարուած փոխանցումները, գնահատելի չէին գտներ մատակարարական ձեռնարկները, քննադատելի կը գտնէին ընդհանուր կացութիւնը, և կը հետևեցնէին թէ Ղևոնդ վարդապետի ներկայացուցած ելեմտից վիճակը հեռի է իբր արգասիք բարուք մատակարարութեան գնահատելի ըլլալէ: Մատթէոս վարդապետի առարկութիւններն ալ լաւ ուսումնասիրուած չեն դատեր և կը թելադրեն նորինորոյ և նոր անձերով կազմել վանքին մատակարարութեան պաշտօնէութիւնը: Ասոր վրայ միւս երկու ընկերներ Խարեան և Սեթեան, նորէն գրիչը ձեռք կառնեն Մաքսուտեանի գործերը արդար, մատակարարութիւնը հանձարեղ, ձեռնարկները օրինաւոր, վիճակը յաջող և արդիւնքը օգտակար ցուցնելու, բան մը որուն պարզ պատմական եղելութիւններն ու առաջին ակնարկով կազմուած ըմբռնումներն ալ չեն նպաստեր, և Խորեանի ու Սեթեանի շինուած կամ նախապաշարուած ըլլալը կասկածել կու տան: Եթէ Խորեանը իբրև հինաւուրց պետական պաշտօնեայ և արտաքին գործոց նախարարութեան ելեմտական տեսուչ, ընդունակ ալ

ենթադրենք այդ շրջանակներուն մէջ գործածուած միջոցներով ազդուելու, նոյնը պիտի չկարենանք կասկածիլ Սեթեանի մասին, ապատ և անկախ առևտրական մը, բնութեամբ խստապահանջ և գործով ուղիղ ճանչցուած: Սակայն այսպիսիներն ալ ընդունակ են տարբեր ազդեցութիւններով շեղուիլ. նախ շլացուցիչ երևոյթներով և ճարտար դարձուածներով վզածուիլ, և յետոյ կազմուած մտայնութեան վրայ յամառօրէն պնդել, մինչև իսկ գործնական անձեր որևէ արդիւնքի մը առջև շատ մը անտեղութեանց աչք գոցել: Միհրան Սեթեանի այդ վիճակին մէջ ինկած ըլլալը տեղի ունեցաւ շինութեանց լուսանկարներով և վարձքերու ցուցակներով, և յայտնի տեսնուեցաւ իր իսկ բերանացի յայտարարութիւններով, երբոր իր կազմած տեղեկագիրը վարչական խառն ժողովին կողմէ ընդունելութիւն չգտաւ: Միւս կողմէն ալ հաշուեպահանջներուն իրաւանց պաշտպանութիւնը, և Գայրզճեան ու նշանեան բացատրական տեղեկագիրին արդիւնքը շատ աւելի յաջող եղած պիտի ըլլար, եթէ փաստաբանութիւնը վարողը իր ուղիղ տեսութեանց հետ նոյնչափ ալ ճարտար ըլլար իր բացատրութեանց մէջ, և փոխանակ յուզուելու ենթակայ և յուզելու առարկայ ըլլալու, եպրակացութիւնները նախապատրաստական փաստերէն առաջ չանցնէր, համոզիչ կերպով և տրամաբանական կապակցութիւններով ուկնդիրները գրաւէր, և մանաւանդ ոյժ տար հաշուեպահանջութեան սկզբունքին, կատարեալ հաշիւ պահանջէր վեղծումները պնդելէ առաջ, որպէսպի իր դիտողութիւնները հաստատուն գետնի վրայ ամրացած ըլլային: Այդ ճարտարութիւնը պակսեցաւ Գայրզճեանի, և այս եղաւ պատճառը որ մասնախումբին երկու բաժիններէն ալ չգնահատուեցաւ իր աշխատութիւնը: Պատասխանատուութենէ ապատ պիտի չկարենանք ըսել Օրմանեանն ալ, որ չափազանցեալ խոհանուրութեամբ կամ թէ վերապահեալ մտայնութեամբ յանձն չառաւ մասնախումբին նախագահել, ուր իր դիրքովը և ձիրքովը, նիւթին ուսումնասիրութեամբը և կարգապահական փորձառութեամբը, պիտի կարենար գործին ուղիղ ընթացքը պահել և պահել տալ, ինչպէս որ ծրագրած հրահանգովը յանձնարարած էր, և աթոռին ելեմտական վիճակը պատկերացնելէն առաջ պիտի չներէր վբաղիլ ոչ Գայրզճեանի առարկութիւններով և ոչ Մաքսուտեանի ջատագովութիւններով, և առաջին գործը պիտի ըլլար անջատ և ինքնուրոյն հաշիւները ընդհանուր միութեան մը վերածել, ինչպէս մի էր հասոյթին տիրական և ծախքին պարտական և Երուսաղէմի աթոռը, և ոչ ալ ասպարէզ պիտի տար Մաքսուտեանի յաւակնութեանց, շինութիւնները իբր աթոռէն անկախ գործերը ցուցնելու, որոնց հաշիւը տալու պարտաւոր չէր, և ամէն բան աւարտելէն ետքը տեղեկութիւն կրնար տալ (ՏՂԿ. Ա. 1): Հարկաւ այն ատեն գործը յստակ և շփոթէ վերծ և ճապաղումէ ապատ եղած կըլլար, եթէ մասնախումբը վարելու գործը Խտրեանի տեղ Օրմանեան ինքն ստանձնած ըլլար, մինչ իր քաշուելովը գործին քաշքշուելուն պատճառ տուաւ:

3063. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Փետրուար 19-ին տեղեկագիրը 21-ին խառն ժողովին ներկայացուեցաւ, ուր ատենապետ Գաբրիէլ Նորատունկեան խնդիրին մասին տեսումը պարզեց, և որոշուեցաւ պատճէնները բազմագրելով իւրաքանչիւրը ժողովականի ուսումնասիրութեան յանձնել (07. ԱՐԼ. 6421), և միանգամայն կրօնականի և քաղաքականի ատենապետներուն և դերատենապետներուն յանձնուեցաւ ուսումնասիրելէ ետքը եպրակացութիւնը գրաւոր ներկայել ժողովին խորհրդակցութեան (07. ԱՐԼ. 6422): Ատենապետներ պատրիարքին տունը երեք անգամ հաւաքուեցան, գլխաւորը մարտ 9-ին, վերջինը 12-ին, Մաքսուտեանն ու Գայրզճեանը նորէն լսեցին և կազմուած բանաձևը մարտ 14-ի գումարման առաջարկեցին, որ պարտուպատշաճ խորհրդածութիւններէ ետքը ամբողջովին ընդունուեցաւ և հաստատուեցաւ, և նախագահին յանձնուեցաւ, և նախագահին յանձնուեցաւ ի գործադրութիւն (07.ԱՐԼ. 6439): Բանաձևը բաւական

ընդարձակ գրուած մըն է (07. ԲԻԶ. 3187) որուն սկիզբը յառաջ կը բերուին Երուսաղէմի կանոնագիրին հաշուական յօդուածները (ՏՂԿ. Բ. 1), կը յայտարարուի թէ Երուսաղէմի աթոռին պարտքը 32,627 լիրայի հասած է, և կազմուած է տոկոսաւոր պարտքերէ, անոնց տոկոսներէ, մատակարարական բացէ և շինութեանց ծախքերէ: Բանաձևը կանցնինկատել պարտքերուն հետզհետէ աճումը (ՏՂԿ. Բ. 2), կը թուէ մատակարարական պակասութիւնները, անխորհուրդ ծախքերը, ելեմտացոյցի պակասը, անշրջահայեաց ծախսարարութիւնները, անհաշիւ շինութիւնները, ենթադրական ձեռնարկները, և յատկապէս առանց տոմարի աննշանակ թերթիկներով հաշիւ տեսնուիլը (ՏՂԿ. Բ. 3), կանոնագիրին հակառակ գործողութիւնները, ելեմտից տեսուչին տնօրէն ժողովին ատենապետելը, միաբանական ժողովին հաշիւ չներկայացուիլը, և տնօրէնին հաստատութեան անբաւականութիւնը: Կը յայտնէ ևս թէ այս անտեղի գործոց պատասխանատուութիւնը գլխաւորաբար կը ծանրանայ Տէր Ղևոնդ Մաքսուտեան վարդապետի վրայ (ՏՂԿ. Բ. 4): Իսկ տեղեկագիրը պակասաւոր կը գտնէ այս կէտը նկատի չառնելուն, և միանգամայն իրմէ պահանջուած Երուսաղէմի աթոռին ելեմտական կազմութեամբ չզբաղելուն և չներկայանալուն համար, և կը պահանջէ վանքին ելեմտից վիճակին վերջնական պատկերն ունենալ ի ձեռին, կալուածոց և շինութեանց հաշիւն ալ անցունելով նոյն աթոռոյ հաշուետումարին մէջ: Այս տեսութիւններուն հիմնուելով կառաջարկէ նախ 1893-է ասդին բոլոր հաշիւները միաբանական ժողովին հաստատել տալ տոմարներու հետ բաղդատելով: 2. Կազմել տալ մինչև ապրիլ 1907 պակաս հաշուեցոյցերը շինութեանց մասերն ալ միասին: 3. Պատրաստել և կեդրոնին ներկայել յաջորդ տարուոյ ելեմտացոյցը: 4. Կեդրոնին ներկայել ամէն կարգի հասոյթներուն ու ծախքերուն, կալուածոց ու սեփականութեանց ցուցակները, և պարտաւորներու ու պարտապաններու ցանկերը: 5. Նորէն կազմել վանքին վարիչ մարմինը: 6. Եկեղեցական և աշխարհական երկու պատուիրակ յղել Երուսաղէմ այդ ամէնը գործադրել տալու: 7. Նոր ընտրելի տնօրէնէն պահանջել նորատացիկ կալուածոց մասին տեսութիւնները ձարտարապետական գնահատումներով: Եւ վերջապէս 8. բանաձևը պատասխանատու կը գտնէ գլխաւորաբար Վրկոնդ վարդապետ Մաքսուտեան իրաց անկերպարան վիճակին, շփոթ կացութեան և անգոհացուցիչ արդեաց (ՏՂԿ. Բ. 5): Այդ բանաձևը դարձեալ իրերը քննութենէ առաջուան ջիճակին կը դարձնէր, սակայն երկամեայ միջոցի մը անօգուտ կորուստէն ետքը: Նոր պատուիրակութիւն յղելու պէտքը կը ծագէր այն խոստովանութենէն զոր մասնախումբի անդամներ և Երուսաղէմի հին ու նոր տեսուչներ կը յայտնէին, թէ կեդրոնին մէջ չեն գտնուիր պահանջուած ցուցակները ու հաշուետումարները, տեղեկութիւններն ու վաւերաթուղթերը, սակայն մասնախումբին պարտքն էր որ կանուխէն այդ պակասը վլացնէր ու վարչութիւնն ալ պատշաճը տնօրինէր, և ինքն ալ Մաքսուտեանի անհիմն պաշտպանութեամբ ժամավաճառ չըլլար: Փետրուար 19-ի տեղեկագիրը ամբողջապէս հրատարակուեցաւ (07.ԱՐԼ.6434-6439), և հանրութեան ըմբռնումը ալ խստիւ քննադատեց անոր պարունակութիւնը և աննպատակ ջանքը (07.ԱՐԼ.6438): Ընդունուած բանաձևը ստորագրած էին կրօնականէն Գրիգորիս Յովհաննէսեան և Վահրամ Մանկունի եպիսկոպոսները, առաջինը իբր հիւանդ ատենապետ Մեսրոպ Սուքիասեան եպիսկոպոսը փոխանակող և երկրորդը իբր դերատենապետ. իսկ քաղաքականէն ստորագրած էին Գաբրիէլ Նորատունկեան ատենապետ և Տիրան Աշնան դերատենապետ (07.ԱՐԼ.6439), իսկ վարչական գումարման ներկայ էին եղած իննական անդամներ երկու ժողովներէն: Անցողակի ակնարկենք թէ նախորդ 1906 յուլիսին նորէն կազմուած էին վարչական ժողովները ինչպէս պիտի պատմենք, երբոր Երուսաղէմի խնդիրը սպառելով Կ. Պոլսոյ պատրիարքարանի ներքին գործերուն դառնանք,

բայց տակաւին շարունակենք Երուսաղէմի խնդիրին ընթացքը, կապակցութիւնները չկորսնցնելու համար:

3064. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԳՈՐԾԵՐ

Շատոնց էր որ Երուսաղէմի միաբանական կեանքը իր կանոնական ընթացքը կորուսեր էր, և կուսակցական ներհակընդէմ պայքարին մէջ, և կեդրոնի որոշողութեան տարապայման յապաղելուն պատճառով վայն վերանորոգել դիւրին չէր, ուստի պատրիարքական բարձր իշխանութեամբ և առժամեայ կարգադրութիւններով կը հոգացուէին աթոռական վարչութիւնը և վանական մատակարարութիւնը, առժամեայ տնօրէն, առժամեայ լուսարարապետ, առժամեայ պաշտօնէութիւններ: Միաբանական ժողով չէր գումարուած 1903 յունիս 10-ի Ապարեանի ընտրութեան ժողովէն ի վեր, և յաջորդը գումարուեցաւ 1907 փետրուար 25-ին, Եալովայի ագարակին իբր անտէրունչ (մահլիւ) նկատուելուն և պետական գրաման վտանգին առջևն առնելու համար (07.ՄԻԱ.529): Թերևս նախաքննիչ մասնախումբին այն օրեր իր գործը աւարտած ըլլալուն պարզ լուրը լաւ մեկնուած և հաշուեպահանջներուն նոր քաջալերութիւն տուած էր, ինչպէս կը հետևին խումբին խիպահներէն Տէրտէրեանի ատենապետ (07.ՄԻԱ.530) և Նշանեանի դերատենապետ ընտրուելէն (07.ՄԻԱ.2), և հաշուեխոյսներու դիտմամբ նիստէն բացակայելէն (07.ՄԻԱ.535): Այս ժողովէն քիչ ետքն էր որ Մարտ 14-ի որոշմամբ կեդրոնը ևսքանկս զօրացուցած էր հաշուեպահանջները ուստի մարտ 18-ին նոր միաբանական ժողով գումարուեցաւ կանոնական ընտրութեամբ տնօրէն ժողով հաստատելու, բայց յարմարագոյն դատուեցաւ մերձաւոր ելեմտական տարեգլուխին յետաձգել, որ առժամեայն իր համարատուութիւն ալ կարենայ կատարել (07. ՄԻԱ. 11): Այս միջոցին Գայրվճեան ալ Կ. Պոլսոյ պաշտօնը լրացուցած ըլլալով, մարտ 31-ին անտի մեկնած և ապրիլ 10-ին Երուսաղէմ դառնալով ձեռք առած էր ելեմտից տեսչութիւնը, զոր իր բացակայութեան փոխադարձաբար վարած էր Ոսկերիչեան Մովսէս վարդապետը: Գայրվճեան ընդարձակ տեղեկութիւններ և պատճէններ բերած էր վարչական բանաձևին և որոշումին մասին, և Յարութիւն պատրիարք ալ յատուկ շնորհակալութեան գիր ուղղած էր կեդրոնին (07. ԲԻԶ. 3216): Մինչև որ առժամեայ տնօրէնը իր համարատուութիւնը պատրաստէր, մայիս 2-ին դարձեալ ընդհանուր ժողով գումարուեցաւ, որուն մէջ հաշուեխոյսներէ 10 ստորագրութեամբ գրութիւն մը ներկայացուեցաւ, որ մտադրութեան արժանի չհամարուեցաւ (07. ՄԻԱ. 13-15), յետոյ կանոնագիրի վերաքննութեան մասնաժողով մը ընտրուեցաւ Եօթն անձանց անդամակցութեամբ, որ եղան, Գայրվճեան, Պետրոս Սարաճեան, Վահան Բէշիշեան և Յարութիւն Պարոնեան վարդապետներ և Եօթնեղբայրեան սարկաւազ (07. ՄԻԱ. 19), վերջին երկուքը միայն հաշուեխոյսներու խումբէն: Նախագահ պատրիարքը առաջարկած էր լուսարարապետի ընտրութիւն կատարել, և ընտրելի լուսարարապետին ինչ իրաւամբ և ինչ պարտաւորութեամբ պաշտօնավարելուն մասին խորհրդակցութիւններէ, և գանձատան բանալին չորս անդամէ բաղկացեալ յանձնաժողով մը պահելու մասին որոշում տրուելէն ետքը, առաջին քուէարկութեամբ և 36 քուէարկուներու 20 քուէով լուսարարապետ ընտրուեցաւ Դաւիթ վարդապետ Տէրտէրեան. մերձաւորագոյնն էր Սամուէլ վարդապետ Կիրակոսեան միայն 4 քուէով, և 6 սպիտակ քուէներ ելան: Տէրտէրեան ատենապետ գտնուելուն՝ փոխատենապետ Նշանեան հռչակեց ընտրութիւնը, (07.ՄԻԱ.30), և Տէրտէրեան դառնեալ ատենապետութեան անցաւ ժողովը շարունակելու: Յարութիւն պատրիարք առանձին գրութեամբ կառաջարկէր ժողովին թէ Գէորգ Եպիսկոպոս Երէցեանը փոխանորդութեան պաշտօնէն դադրեցուցած է (3059), և թէ հետևորդ պատճառներով հարկ կը տեսնէ զինքն միաբանութենէ ալ արտաքսել: Պաշտօնանկութեան պատճառ ցուցուաց էին, թէ Ղևոնդ վարդապետի թև թիկունք ըլլալով կը պաշտպանէր անոր

ապօրէն ուղղութիւնը ի մասին հաշուետուութեան, թէ այդ նպատակով սուրբ աթոռոյս դարաւոր և բազմամեայ հաւատարմութիւնն կասկածի տակ ձգելու ամէն միջոց անխտիր կը գործածէր (07.ՄԻԱ.32), բայց յայտնի ըսուած չէր կայսեր դէմ մահափորձին պարագայն լռելը: Իսկ խորհրդակցութեան մէջ իր պաշտպաններն ալ կընդունէին, թէ իրաւ է որ Գէորգ Եպիսկոպոս Եալովայի ագարակին խնդիրը յուզուելուն պատճառ եղած է (07.ՄԻԱ.34): Իսկ արտաքսման մասին պատճառ ցուցուած էր վանք դառնալու համար կրկին ու կրկին տրուած հրամանին անսաստելը, և քիչ առաջ յունուար 12-ի վախճանած Մարկոսեան Մամբրէ Եպիսկոպոսին քովէն ելած, միաբանական ուխտին մէջ կիրքեր արծարծելու և անհամաձայնութիւնը տևական ընելու հոգևով գրուած նամակները (07.ՄԻԱ.33): Այս խնդիրն ալ թերուդէմ վիճաբանութիւններէ ետքը 14-ի դէմ 18 քուէով ընդունուեցաւ և հաստատուեցաւ պատրիարքին առաջարկը, և Գէորգ Եպիսկոպոս Երէցեան միաբանութենէ արտաքսեալ հռչակուեցաւ (07.ՄԻԱ.37): Այս տեղ աւելցնենք որ Երէցեանի փոխանորդութենէ հանուելուն վրայ, Խապայեան իր ընկերակիցին միխթարութեան համար Խրիմեանի միջնորդած էր արքութեան պատիւ շնորհել, միասին խառնելով իր օծակցին Մարկոսեանի անունն ալ: Խրիմեան չէր ուզած միջնորդութիւնը մերժել. սակայն երկու կոնդակները առանց նամակի ուղղակի Օրմանեանի էր յղած, անշուշտ վերապահեալ դիտումով մը, զի Օրմանեանի դերը թղթատարի պաշտօնը չէր կրնար ենթադրուիլ: Մարկոսեան մեռած էր կոնդակներուն հասած ատենը, բայց երկուքն ալ Երուսաղէմի միաբաններն էին և Կ. Պոլսոյ պատրիարքութեան հետ կապ չունէին, ուստի Օրմանեան ըստ օրինի երկու կոնդակները ուղղակի Երուսաղէմի պատրիարքին յղեց իբր իրենց պետին, իսկ Վեհապետեան Երէցեանի իրեն դէմ ցուցած ընթացքը գիտնալով, անոր անունին եղող կոնդակը յատուկ նամակով մը ետ կը դարձնէ (07.ՄԻԱ.37): Օրմանեանի ընթացքը խառն ժողովին կողմէն հաւանութիւն ստացած էր:

3065. ՏԷՐՏԷՐԵԱՆ ԵՒ ԵՐԷՅԵԱՆ

Մայիս 2-ի Ս. Յակոբեանց միաբանական ժողովը երկու կարևոր որոշումներ կու տար, իր միաբաններէն մին բարձրացնելով, և միւսը տապալելով, որոնք չենք կրնար առանց խորհրդածութեան անցունել: Երկուքին մէջն ալ հաշուեպահանջ ուղղութեան յաղթանակն էր որ կը նշմարուէր քուէից առաւելութեամբ, մանաւանդ բարձրացողին տրուած քուէներուն ակնյայտնի համեմատութեամբը, 20-էն ետքը եկողին 4-էն աւելի քուէ ստանալ չկարենալով, որ հաշուեխոյսներուն շուարած ըլլալուն նշանն էր: Քանիցս կրկնած ենք և անգամ մըն ալ յիշելու պէտք չենք զգար, թէ ի՛նչ բարձրութեան մէջ պահուած է Երուսաղէմի մէջ լուսարարապետութեան կամ փակակալութեան պաշտօնը, ոչ միայն պատրիարքէ ետքը առաջին տեղը գրաւելով միաբանութեան մէջ, այլև չափով մը հակակշռելով պատրիարքական իշխանութիւնը: Այս դիրքին և այս ըմբռնման հետևանք էր որ միշտ միաբանութեան երիցագոյն և հինաւուրց դէմքերուն պահուած էր այդ պաշտօնը, իսկ Տէրտէրեան այս պաշտօնին կընտրուէր հապիւ 35 տարեկան և ձեռնադրութեան իննամեայ իսկ չլրացուցած: Ստոյգ է որ հաշուեպահանջներուն յաղթանակն էր որ կը հռչակուէր, որոնք ևս քան զևս զօրացած էին ատենապետաց բանաձևով և վարչական որոշումով, և պատուիրակութեան ընտրուած անձերուն անուններով. և Տէրտէրեան ալ հաշուեպահանջներուն յառաջադէմներէն էր. սակայն երիցագոյններ չէին պակսեր յաղթանակը հռչակելու, և եթէ Տէրտէրեան կը նախադասուէր, անձնական արժանիքի ալ մաս մը պէտք է ձանձնալ այդ ընտրութեան մէջ: Իրօք ալ ձանձնուած էր նա միտքով ուշիմ, աշխատութեամբ անխոնջ և կենցաղով զգաստ, առաւելութիւններ որոնք առաւել ևս փայլած կըլլային եթէ կանոնաւոր դաստիարակութեամբ և ծրագրական ուսմամբ մշակուած ըլլային: Իսկ նա այս թերին ալ անիմանալի կը դարձնէր ինքնաշխատ ջանքով և

մանաւանդ հետապնդող փափաքով: Յատկապէս նորստացիկ պաշտօնին կապուած ձիրքերն էին որ վինքն յարմարագոյն ընտրելի կը մատնանշէին, եկեղեցւոյ սիրահար, պաշարմանց վարժ, ծէսերու հմուտ, պահպանութեանց նախանձայոյզ, հսկողութեանց անթերի, և սաղիմական իրաւանց և սովորութեան մասնագէտ, իրեն համար չափուած և ձևուած պաշտօն մըն էր իրեն յանձնուած լուսարարապետութիւնը: Նոյն օր Մայիս 2-ին ժողովին փակուելէն ետքը պատրիարքը համախումբ միաբանութեամբ Ս. Յակոբայ տաճարը իջնալով, Ս. Գլխագիրի սեղանին առջև կը կատարուէր Տէրտէրեանի պաշտօնի մտնելուն, ուխտը արտասանելուն, և գանձատան բանալւոյն տիրանալուն սովորական արարողութիւնը: Մինչնոյն օրը որ Տէրտէրի մը վաւակը կը բարձրանար՝ Երէցի մը որդի կիյնայ, որ իրեն համար թէ ոչ Կ. Պովսոյ գոնէ Երուսաղէմի աթոռը վստահօրէն կը պատրաստէր, և ունացած դիրքովը կրնար ալ ինքնիրեն խոստանալ: Ի՛նչ ալ ըլլան Երէցեանի արժանիքները, իրական թէ երևութական, ինչչափ ալ ըլլան անոր վրայօք քննադատութիւնները, հնար չէ ուրանալ թէ երկու աթոռներուն վրայ ալ կրնար պատուով բազմիլ և յաջողութեամբ գործել, արդէն բազմածներէն կամ բազմողներէն շատերուն վրայ առաւելութեամբ ալ Կիլիկիոյ կաթողիկոսական օրինական ընտրութիւնը անհիմն ցոյց մը չէր (3018): Այլ ինչպէս այդ ընտրութենէն իր կամքովը հեռացնել, միւսներէն ալ իր ընթացքովը վրկուեցաւ: Չենք գիտեր որոշակի որ թերութեան վերագրել իր տարաբախտ ապագայն, և չենք ալ ուզեր ոլորապտոյտ խնդիրներու մէջ թափառիլ, այլ պարզապէս հեշուետութեան խնդիրին մէջ ամփոփուելով, անիմանալի կը դառնայ թէ ինչպէս Երէցեան կրցաւ Մաքսուտեանի հաշուեխոսութեան պաշտպան կանգնիլ, տարրական օրինակութեան պահանջը ուրանալ, և ինչ որ ապօրէն դատի մը պաշտպան կանգնողին համար բնական էր ամէն տեսակ ստորին միջոցները, սուտն ու կեղծիքը, քսութիւնն ու բամբասանքը, կամաւոր խեղաթիւրումը ու գիտակից մատնութիւնն իսկ գործածելու վիջանիլ: Պիտի չդժուարանայինք այդ ուղղութիւնը տեսնել հաշուեխոսյաներու ընդհանրութեան վրայ, մի մասն ալ մանր օգուտներու ակնկալութեամբ վօրաւոր ելլամտապետին հետևող ու պաշտպան դարձած, այլ Երէցեանէ կը սպասուէր որ ուղիղ ճամբան ցուցնէր իր պաշտպանեային, օրինականութեան յորդորէր և օրինապահութեան առաջնորդէր: Ինքն Մաքսուտեան գոնէ նիւթական շահ մը կը քաղէր իր ընթացքէն, վի դրամական լաւ կարողութեան տիրացած էր, և տիրանալուն գաղտնիքը հրապարակել կը վգուշանար. այլ Երէցեան և ոչ իսկ Մաքսուտեանի շահէն արժանաւոր շահաբաժին մը քաղած էր, որ գոնէ անով փոխարինուած ըլլար: Եղբայրական սիրոյ և ընկերական համերաշխութեան նուիրական վգացումն ալ չի կրնար Երէցեանը արդարացնել. վի ճշմարիտ սէրը չի կրնար հանդուրժել որ մեղապարտութիւն քաջալերուի, անիրաւութիւն հովանաւորուի, և օրինականութիւն անարգուի, և նիւթական օգուտին համար բարոյական օգուտը վոհուի: Բարոյից թեթևութենէն, երևութական գոհացումէն, արտաքնայարդար ընթացքէն, հաճոյից վակատումէն ուրիշ շարժառիթ չենք գտներ Երէցեանի անորակելի գործունէութեան մէջ, որոնց վոհ տուաւ իր ունեցած ձիրքերն ալ, նոյն իսկ կեանքին ալ տարածամ մահուամբ. վի այդ միջադէպներէն իբր հինգ տարի անշուք և աննշանակ կեանքէ մը ետքը կը վախճանէր 1912 նոյմբեր 11-ին տակաւին 58 տարեկան: Երուսաղէմական խնդիրին ձախողուածէն ետքն ալ ինքզինք նորէն բաձրացնելու դուռը շուտով բացուեցաւ իր առջև՝ Կարնոյ առաջնորդական ընտրութեամբ (07. ԲԻՋ. 3313), բայց կարծես թէ լուրջ արդիւնաւորութեան հանդէպ միանգամ ընդ միշտ հրաժեշտ տուած էր որ պայն ալ մերժեց, հակառակ վիճակին թախանձանքին և ճշմարիտ բարեկամներու յորդորներուն: Բայց մենք դառնանք Երուսաղէմի գործերուն:

Կանոնական պայմաններով կապմուտելիք տնօրէն ժողովոյ ընտրութիւնը յետաձգուած էր Երուսաղէմի ելեմտական ամսավերջին, բայց բնական էր որ ապրիլ 30-էն ետքը միջոց մը պիտի անցնէր մինչև հաշիւները ամփոփուէին, ուստի հապիւ յունիս 21-ին ներկայացած ժողովին (07. ՄԻԱ. 41) և ժողովը նոր ընտրութեան մասին գաղափար ունենալ, և առ այս նախաքննիչ յանձնաժողով մը կազմեց հինգ անդամէ բաղկացած (07. ՄԻԱ. 46), և նոր ընտրութիւնը յետաձգեց մինչև քննութեան յատենի ժողովոյն վերջանալը, և առժամեային յանձնեց պաշտօնը շարունակել (07. ՄԻԱ. 47): Նախաքննիչ յանձնաժողովին վրայօք խորհրդածութիւնները երկու ընդարձակ նիստեր գրաւեցին, յուլիս 13 և 14 օրերը. ամէն կէտեր վիճաբանութեան ենթարկուեցան, թէ վարչական և թէ մատակարարական ճիւղէն (07. ՄԻԱ.50-120), մինչև իսկ վիճաբանութեան նիւթ եղաւ թէ առժամեայ պատրիարքէ անուանուելով և անոր օգնական նկատուելով, միաբանական ժողովին համարատու կրնա՞յ ըլլալ, կամ եթէ անոր գործերը քննութեան ենթարկուին, պատրիարքը քննութեան ենթարկել չը՞լլար արդօք: Այս կարգին Չիլինկիրեանի եպիսկոպոսական վկայագիրին վրայ ալ խօսուեցաւ և ժողովով հաստատուեցաւ (07.ՄԻԱ.62): Իսկ տեղեկագիրին ամբողջութիւնը ընդունուեցաւ յունիս 15-ի նիստին սկիւբը (07.ՄԻԱ.122), և նոյն նիստին առաջիկայ տարւոյ ելեմտացոյցն ալ հաստատուեցաւ, կոր ելեմտապետ Գայրքճեան կապմած և առժամեայ տնօրէնը իւրացուցած և նախաքննիչը նախաքննած էր: Ամէն մի տող յատուկ հաւանութեան ենթարկուելէ ետքը, ժողովը միաձայնութեամբ վաւերացուց ելեմտացոյցը և որոշեց անոր գործադրութիւնը ճշդութեամբ, և ըստ այնմ բոլոր պաշտօնէից հաղորդուեցաւ իբրև ծախուց կանոն (07.ԲԻՁ.3276): Տնտեսական խորհուրդ մը կազմելու առաջարկ եղաւ, և որոշումն ու ընտրութիւնը տնօրէնին թողուեցաւ (07.ՄԻԱ.140), և վերջապէս նոր տնօրէն ժողովականներ ընտրուեցան, չորսը առաջին քուէարկութեամբ, Մեսրոպ Նշանեան, Հմայեակ Երէցեան, Գրիգորիս Պօյաճեան և Վահան Բէշիշեան. իսկ երկու համեմատականներուն համար եօթը անգամ քուէարկութիւն կրկնուեցաւ, և ընտրուեցան Սարգիս Աճէմեան և Մովսէս Ոսկերիշեան (07.ՄԻԱ.143): Կեդրոնական վարչութեան խորհրդակցուցեանց և կարգադրութեանց մէջ Երուսաղէմի կացութեան մասին աննպաստ ակնարկներ շատ էին կրկնուած, որ հաւասարապէս պիտի ազդէր հաշուեպահանջներուն և հաշուեխոյսներուն վրայ, ուստի ընդհանուր էին ներքին կարգադրութեանց և կանոնաւորութեանց ձևերը նորոգելու և ամենայն ինչ օրինական ճամբու վրայ ցուցնելու իղձերը: Երկու կողմերն ալ անշուշտ իրենց ուղղութենէն չէին հրաժարեր. բայց հաշուեպահանջներ իրենց կողմը պաշտպանուած և զօրացած կը զգային. ուստի վստահութեամբ կը յառաջէին, հաշուեխոյսներն ալ, հակառակ մասնակի շեղումներու, ընդհանուր ուղղութեամբ համակերպելու կը պարտաւորուէին: Ամենուն աչքերը դէպի Կ. Պոլիս սևեռուած էին և պատուիրակներուն գալուն կը սպասէին, այս պատճառով համարատուութեան տեղեկագիրն ալ Կ. Պոլիս յղել պանց կընէին, յարմարագոյն նկատելով պատուիրակներուն յանձնել:

3067. ԵՐՐՈՐԴ ԴԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

Մարտ 14-ի ժողովն որոշած էր մին եկեղեցական և միւսը աշխարհական երկու պատուիրակներ յղել, որոնք պէտք էր ազդեցիկ և դիրքի տէր և գործին հմուտ անձեր ըլլային, ուստի նախադասուեցաւ վարչական շրջանակէն առնել ընտրելիները: Եկեղեցական պատուիրակութիւնը առաջարկուեցաւ կրօնական ժողովոյ դերատենապետ և ատենապետի հիւանդութեան պատճառով առժամեայ ատենապետութիւնը վարող Վահրամ Մանկունի եպիսկոպոսի, որ վերջապէս հաճեցաւ համակերպիլ, և պատրիարքն ալ հաւանեցաւ պատրիարքարանի գործակատարին առժամեայ բացակայութեան, և այսպէս ապրիլ 4-ի նիստին մէջ Վահրամ Մանկունի եպիսկոպոս և Արիս

Ֆէսճեան գործակատար պատուիրակ անուանուեցան (07.ԲԻՁ.3198): Երէցեան և Մաքսուտեան գոհ չմնացին այդ անուանումներէ, և նորէն ձեռք առին անուն աղարտելու և կասկած յարուցանելու պէնքը, գլխաւորապէս Մանկունիի վրայ ծանրանալով, որով Օրմանեանի հարկ եղաւ քիչ մը աւելի յօգնիլ պետական արտօնութիւնը ստանալու, զոր վերջապէս յաջողեցաւ ստանալ յունիս 27-ին (07.ԲԻՁ.3266), անուանումէն երկուքուկէս ամիս ետքը: Քիչ օր ետքը տեղի ունեցաւ յունիս 16-ին, կրօնականի ատենապետ Սուքիասեան Մեսրոպ եպիսկոպոսի վախճանը, և Մանկունի թէ այդ պարագան, թէ իր մարմնական տկարութիւնը, և թէ Պաղեստինի ամառնային տօթը նկատի առնելով, ուղևորութիւնը օգոստոսի վերջին յետաձգեց (07.ԲԻՁ.3268), որով դարձեալ ժամանակ մը յապաղեցաւ պատուիրակներուն մեկնիլը: Վերջապէս սեպտեմբեր 2-ին հրաժեշտ առաւ Մանկունի Օրթաքէօյի թաղէն, ուր կը մնար իբր քաղուպիչ 1885-ին Էջմիածինէ դառնալէն ի վեր, 4-ին ալ հրաժեշտ առաւ խառն ժողովէն, և 7-ին Ֆէսճեանի հետ ուղևորեցան բոլոր պէտք եղած գրութիւններով զօրացած (07.ԲԻՁ.3328). պետական արտօնագիրը արդէն պատրաստ էր Օրմանեան յատուկ կոնդակ մը ուղղեց միաբանութեան սեպտեմբեր 4 թուականով, պաշտօնական տեղեկութիւններով (07.ՄԻԱ.147-150) յատուկ նամակ ալ գրեց Յարութիւն պատրիարքին, գրաւոր հրահանգ ալ յանձնեց վարչական որոշմանց համեմատ, Յունաց Յովակիմ պատրիարք ալ յանձնարարական տուաւ Երուսաղէմի Դամիանոս պատրիարքին ուղղուած: Պատուիրակներ Երուսաղէմ մտան սեպտեմբեր 13-ին (07.ԲԻՁ.2334), և ընդունուեցան եկեղեցական արարողութեամբ, մեծ ոգևորութեամբ և մեծագոյն ակնկալութեամբ: Իրենք կը սպասէին աթոռն ու վանքը անկերպարան վիճակի մէջ տեսնել Կ. Պոլսոյ մէջ տարածուած լուրերուն համեմատ (07. ԲԻՁ. 3331), բայց լաւ տպաւորութիւն ունեցան՝ ժողովներ և գործեր կանոնական ձևերու վերածուած տեսնելով: Մէկ քանի անգամներ պատրիարքի և լուսարարապետի և ժողովականաց և պաշտօնակալաց հետ մասնաւոր տեսակցութիւններէ ետքը, միաբանական ժողովին ներկայացան սեպտեմբեր 19-ին, և պատրիարքական կոնդակի ընթերցմամբ պաշտօնին պաշտօնապէս բացին և գործերու ձեռնարկեցին: Ատենապետութիւնը կը վարէր Նշանեան, որ թէպէտ տնօրէնի անդամակցելով դադարած կը համարուէր, սակայն յունիս 15-էն ետքը նոր գումարում չէր եղած, և որ գումարումը ընտրութեամբ սկսիլ յարմար չգտնուեցաւ: Պատուիրակութեան առաջին առաջարկն եղաւ կացութիւնը ճշդելու համար երեք մասնաժողովներ կազմել, որոնց պատուիրակներու հետ աշխատին և տեղեկութիւններ քաղէն և վաւերական երակացութեանց յանգին: Երեք մասնաժողովներ պիտի պահէին, գանձարանով, հաշիւներով և կալուածներով, և իւրաքանչիւրին գործերը մանրամասնորէն ծրագրուած էին: Առաջին մասնաժողովը արդէն կազմուած էր լուսարարապետի գլխաւորութեամբ, և Հմայեակ Երէցեան, Յարութիւն Պարոնեան, Սարգիս Աճէմեան և Պետրոս Սարաճեան վարդապետներու անդամակցութեամբ: Երկրորդին համար առաջարկուեցան Եղիա Յովհաննէսեան, Գրիգորիս Պօյաճեան, Մովսէս Ոսկերիչեան և Մեսրոպ Նշանեան, և երրորդին համար Գարեգին Սաքայեան, Մատթէոս Գայրքճեան, Սիմէոն Թելեան և Սմբատ Գալպպեան, և անհակառակ ընդունեցան (07. ՄԻԱ. 153-155): Հաշուեխոյսներու կողմէ խնդիր յարուցուեցաւ Մաքսուտեանի ներկայութիւնը անհրաժեշտ ցուցնելով, անշուշտ իրենց կողմէն ոյժ աւելցնելու նպատակով, բայց պատուիրակները խնդիրը փակեցին յայտարարելով որ նպատակը տեղեկաբերութիւն է և ոչ որոշում, և թէ հարկ եղած ատեն կոչելը իրենց պաշտօնին կը պատկանի (07. ՄԻԱ. 156-157):

3068. ՀԱՇԻԻՆԵՐՈՒ ԲՆՆՈՒԹԻՒՆ

Հաշուոց և կալուածոց մասնաժողովները անմիջապէս գործի ձեռնարկեցին և սեպտեմբեր 21-ին և 24-ին խառն նիստեր գումարելով նախընթաց հաշուեցոյցերը աչքէ անցուցին, և որոշեցին

անոնց տեղեկագիրը ընդհանուր ժողովին ներկայել (ՏՂԿ. 1) և ըստ այսմ սեպտեմբեր 28-ի և 29-ի միաբանական նիստերուն մէջ պատուիրակաց ներկայութեամբ նկատի առնուեցաւ յուլիս 13 և 14 և 15 նիստերու որոշմանց համեմատ կեդրոնին պրկուելիք տեղեկագիրը (07. ՄԻԱ. 170-181), և ոմանց խօրհանքներէ վերջ ամբողջովին հաստատուելով նախագահ պատրիարքին յանձնուեցաւ Կ. Պոլիս յղել (07. ՄԻԱ. 182): Միւս կողմէ մասնաժողովները իրենց գործը կը շարունակէին, և վարգացմամբ տեսնուեցաւ որ Եղիա վարդապետ Յովհաննէսեան իր ժողովական չեղած օրուան արձանագրութիւնները իբր ատենդալի ստորագրած էր որ Ղևոնդ վարդապետ Մաքսուտեան իբր ատենապետ վաւերացուցած է իր իբր տեսուչ ներկայած հաշիւներ, որ երկուքուկէս տարուան տնօրէնի ատենագրութիւններ ստորագրուած չեն, և սևագրութիւններն ալ Մաքսուտեանի ձեռքով անյայտացած են, որոնք գործոց ապօրէն վիճակ մը կը ցուցնէին, և ատենապետ Մաքսուտեանը պատասխանատու կը թողուին (ՏՂԿ. Դ. 2-4): Իսկ ընդհանուր ժողովոյ վերոյիշեալ սեպտեմբեր 28 և 29-ի նիստերէն ետքը մասնաժողովները հոկտեմբեր 2-էն սկսելով ընդարձակ գործառնութեան մը ձեռնարկեցին 1893-է 1907, տասնուչորս տարիներու հաշիւները պարզելու բաղդատական կշիռով և մանրամասն պրպտումներով: Այս տասնուչորս տարիներէն վերջին երկուքը վերև յիշուած և հաստատուած տեղեկագիրին պարունակածներն էին, իսկ առաջին 12-ին, 1893-1905 տարիներու մասին վերջած էր կեդրոնի հաշուեքննիչ մասնախումբը, միաբանական ժողովէ չանցած ցուցակներու վրայ: Պատուիրակներ ուղեցին որ այս 12 տարիներու հաշուեցոյցերը ևս ընդհանուր ժողովէն անցած ըլլան, ինչպէս վարչութեան մարտ 14-ի որոշման մէջ նշանակուած էր (3063), և այս նպատակով հոկտեմբեր 22-ին միաբանական ժողով գումարուեցաւ, բայց միաբանութիւնը առանց քննութեան ոչ հաստատել և ոչ տեսնել ուղեց, և նոյն օր և յաջորդ հոկտեմբեր 23 օրը բաւական վիճաբանութիւններէ ետքը, վերջապէս Սարաճեանի առաջարկութեամբ (07.ՄԻԱ.194) լոկ ձևակերպութիւն մը կատարած ըլլալու պայմանով խնդիրը փակուեցաւ, սպասելով որ պատուիրակներ և մասնաժողովներ իրենց սկսած քննութեանց տեղեկագիրը ներկայացնեն և որոշում տրուի (07.ՄԻԱ.183-197): Պատուիրակներ և մասնաժողովներ տաժանելի և քրտնաջան աշխատութեան մը ենթարկուեցան 12 տարիներու մանրակրկիտ քննութիւնը կատարելու և ճշդելու, մանաւանդ, ինչպէս Մանկունի յատենի ժողովոյ վկայեց, տեսան որ կարևոր և ընդարձակ արձանագրութիւնք կը պակսին, և ոչ տեղեկագիր կան, և ժամանակին Ղևոնդ հայր սուրբը խորհեր է ընդհանուր տեղեկագիր մը պատրաստել, սակայն ինքն ալ չէ կարողացեր, և խիստ թերի տետրակներ թողուցեր է (07.ՄԻԱ.196): Աշխատութիւնը հանապազօրեայ եղաւ հոկտեմբեր 2-էն մինչև նոյեմբեր 23, և պատրաստուած մասերը հետզհետէ հաստատուելու համար երկու մասնաժողովներ քանիցս խառն նիստեր ունեցան, և վերջապէս նոյեմբեր 23-ին ամբողջը վաւերացաւ և ստորագրուեցաւ (ՏՂԿ.Դ.6-11): Հաշուեքննութեան հիմը պէտք էր կազմէին երևմտացոյցերը իբր բաղդատութեան կանոն, որոնք սակայն բնաւ տեղի ունեցած չէին, և այս պատճառաւ վերջին անգամ 1907-8 տարուոյն համար պատրաստուածը, իբրև չափ գործածեցին քանի որ այս և նախընթաց տարիներու ելևմտից վիճակին վրայ վգալի տարբերութիւններ տեղի ունեցած չեն (ՏՂԿ.Դ.13): Երկուտասնամեայ հաշիւներուն համբերատար քաղուածը և խղճամիտ բաղդատութիւնը տեղեկագիրին մեծ մասը կը կազմէ, չորս վիճակացոյց տախտակներ ալ աւելցնելով, որոնք մենք պէտք չենք տեսներ հետևիլ բաւական սեպելով յիշել տեղեկագիրին եզրակացութիւնը, որ եթէ միևնոյն անձի վրայ կեդրոնացած ժողովականութիւնը և տեսչութիւնը գործոց կացութիւնը չխանգարէր, և հսկողութեան հակակշիռ գրութիւնը տիրած ըլլար, տարեկան միջին հաշուով 2000 լիրայի բացը չէր գոյանար (ՏՂԿ.Դ.132): Բայց ասկէ ալ աւելի երեւան բերին կատարուած բաղդատութիւնները: Հաշուական տոմարներու մէջ վաճառումներ և

գնումներ կը տեսնուէին, որ տնօրէնի արձանագրութեանց մէջ յիշատակութիւնը չունէին, ընտիր կալուածներ կը վաճառուէին և անպիտան գնումներ իբր փոխանակութիւն կը ցուցուէին, սնտուկի մէջ պատրաստ գումարներ գտնուած ատեն փոխառութիւններ կը կնքուէին, նշանաւոր գումարներ առձեռն ծախքեր անունով կը նշանակուէին, միևնոյն ծախքը վանապան գլուխներու ներքև կրկին անգամ կը գրուէին, որոնցմէ բաւական թուով տեղով և գումարով յառաջ կը բերէ տեղեկագիրին դիտողութեանց գլուխը (ՏՂԿ.133-136), լոին անցնելով այդ վեղծումներուն շարժառիթը, որ ամենուն ծանօթ էր, այսինքն է պատրաստ գումարներ տրամադրել ելեմտապետին ձեռքը, դիւրացնելու համար իւրացուցման և անձնական շահի կերպերը, օգուտը իրեն սեփականելով և ծանրութիւնը վանքին բեռցնելով: Գաղտնիք մը չէր Մաքսուտեանի հողային գնմանց և վաճառմանց շահավաճառով վբաղիլը, գումարներու տոկոսները վանքին և փոխանցմանց օգուտը չբերող գնումները վանքին, ձեռքէ ձեռք արդիւնաւորողներ իրեն անցուելով: Այդ դարձուածները ծածուկ պահելու նպատակն էր, հաշուետուութենէն խուսափելու յամառութիւնը մէկ կողմէն, և միւս կողմէն ելեմտապետութիւնը, կալուածապետութիւնը և շինուածապետութիւնը իր ձեռքին մէջ ամփոփելու գաղտնիքը, պակաս կապմածով տնօրէն պահելը և երդուեալ բարեկամներով և միասնտ ընկերներով շրջապատուիլը , և այս ամէն միջոցներով կողմնակիցներ շահիլը:

3069. ԶԵՂԾՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Այդ տեսակ վեղծարար դարձուածներու պսակն է պահեստի դրամ կոչուած գործողութիւնը, որուն յայտնուելէն ետքը Վեհապետեան կեդրոնէն կը խնդրէր վեղծագործին դատապարտութիւնը փութացնել (05. ԲԻԶ. 2725), և որուն մասին համառօտակի խօսած ենք պարտքերու աճումը բացատրելու առթիւ (3051), բայց շատ աւելի մանրամասնորէն պրպտած է վայն մասնաժողովներու տեղեկագիրը (ՏՂԿ. Դ. 136-142), և ներքևը ստորագրած են նոյն իսկ հաշուետոյս անդամկիցները: Այդ գործին յարակից և Աղէքսանդրիոյ գետինին վաճառումը, որուն գինը առաջ 26,314 ցուցուելէն ետքը (3051), ուրիշ վեղչեր ալ աւելցնելով 24,061 նշանակուած է տոմարին մէջ (ՏՂԿ. Դ. 136), մինչ ուրիշ տեղեկութիւններ անգղիական ոսկին ալ օսմանեանի փոխարկելով 28,123 եղած կը ցուցնեն (ՊՐՏ. 41), և 4,000 լիրա վաճառման ծախք կըսուի, իբրև վեղչ հաշուելով Աղէքսանդրիոյ գործակալին 774 լիրա պարտքին շնորհումը, որ պէտք է գետինին վնոյն աւելնար և ոչ թէ անկէ վեղչուէր պարտապանը պարտատէրի փոխարկելով (ՊՐՏ. 42): Պահեստի դրամ կոչուած գումարին ինչով կապմուիլը, և Աղէքսանդրիա վեղչուիլը , և վնասով Երուսաղէմ փոխադրուիլը, տոկոսին վանքին վրայ բարդուիլը, և նոյն տոկոսի տարբեր հաշիւներու մէջ երկու անգամ գրուիլը իբր ծախք, և մայր գումարին ներկայացնողի վճարելի մուրհակներու վերածուիլը, և մուրհակներուն պատրիարքին չյանձնուիլը, և գաղտագողի գանձուելով ելեմտապետէն իւրացուիլը, մասամբ մեր արդէն գրածներէն (3051), և մասամբ տեղեկագիրին մէջ տոմարներէ յառաջ բերուած քաղուածներով ապացուցուած կէտեր են, որ բնաւ չբմեղանքի բաց դուռ չեն թողուր: Նշանաւոր և նաև ժողովական որոշման նիւթ կապմող կէտերէն, լոկ ելեմտապետի ստորագրութեամբ, և այն ալ ոչ ժողովական ատենագրութեանց տոմարին, այլ մուրհակաց առձեռն տետրակին մէջ, իբր ժողովական որոշման նշանակուիլը (ՏՂԿ. Դ. 141), որ միայն շփոթած անձի մը նեղ ինկած պահուն յանխորհուրդս պատրաստած արդարացման կարկտանը կրնայ ըսուիլ, և պատրաստողին մտայնութիւնը արտայայտել: Տագնապի մէջ գտնուող մէկու մը իր անձին մատնտու գործեր են մուրհակաց տետրակներու մէջ բաց գտնուած տեղերը կարգաթուի և թուականի հակառակութեամբ և փոփոխութիւններու ու բերուածներու միջոցներով յաւելուածներ մտցնելը, որոնք ակնյայտնի ցուցուեցան կալուածական փաստի ծառայելու

գրութեանց մէջ և պորս տեղնիտեղօք յիշած է տեղեկագիրը (ՏՂԿ. Դ. 142-143): Տեղեկագիրին այս առաջին մասը որ վանքին ընդհանուր մատակարարութեան սահմանուած էր, միաբանական, ժողովին ներկայացուեցաւ նոյեմբեր 23 ին, և 24-ի և 25-ի նիստերուն մէջ ալ քննուեցաւ մաս առ մաս, և առանձինն հաւանութեան ենթարկուեցաւ, և եղած դիտողութիւններ աւելի խստացուցին խնդիրին վիճակը քան թէ թեթևացուցին պի շատեր նորոգութեանց յատուկ նուէրներով կատարուիլը, և գումարներու յարաբարդուած ըլլալը յիշուեցին (07. ՄԻԱ. 197-218), որով աւելի կը ստուարացնէին քննադատութեանց շարքը ստուարացնէին քննադատութեանց շարքը և կը ծանրացնէին իրարու հակակշիռ ըլլալու սահմանուած հինգ վեց պաշտօնները միանգամայն իր ձեռքն առնող ելեմտապետին պատասխանատուութիւնը: Այս էր ժողովական քննութեանց ելքը, որուն դիմադրողներ ալ գրեթէ չեղան, բայց երբ խնդիրը եպրակացութեան եկաւ, հաշուետոյս խումբը դժուարացաւ Մաքսուտեանի պատասխանատուութիւն ու դատապարտութիւնն արտասանել. այսուհանդերձ մեծամասնութեամբ հաստատուեցաւ, թէ միաբանական ընդհանուր ժողովը, յանձնաժողովոց քննական տեղեկագիրը և գիտակցաբար տեղի ունեցած վեղծումներուն նկատմամբ անոնց ըրած եպրակացութիւնները լսելով ճիշդ գտաւ, և նոյնութեամբ ընդունեց, և որոշեց յղել ապգային կեդրոնական վարչութեան (07. ՄԻԱ. 219):

3070. ՇԻՆՈՒԹԻԻՆՆԵՐ ԵՒ ՓՈՒՍԱՆՑՈՒՄՆԵՐ

Հաշուական քննութեանց երկրորդ մասը նոր շինութեանց և կալուածական փոխանցմանց հաշիւները պիտի պարունակէր, և մասնաժողովը սկսան անոնցմով պբաղիլ: Այդ քննութեանց համար տոմարներ և հաշուեցոյցներ կը պակսէին ելեմտական տեսչութեան և դիւանական արձանագրութեանց մէջ, և անոնց փոխարէն պատուիրակներ իրենց հետ բերած էին Մաքսուտեանի կողմէ վարչական մասնախումբին ներկայացուած կցկտուր թուղթերէն 56 կտորներ, պորս մասնաժողովներուն տրամադրութեան գրին (ՏՂԿ.Դ.144-145): Մասնաժողովներ թէ այդ թերթիկներէն օգտուելով, և բացատրական տեղեկագիրին շինութեանց և վաճառմանց մասերը աչքի առաջ ունենալով (ՏՂԿ.Դ.19-30), և անոնց ամփոփումներն ալ նկատի առնելով (ՏՂԿ.Գ.11), ջանացին թէ վաճառմանց և թէ շինութեանց քաղուածներ կապմել, գործ մը որ ելեմտից տեսուչը ինքն կատարած ըլլալու էր սակայն ընդհանուր հաշուեցոյց կապմելէ խուսափած էր, պի ինչպէս մասնաժողովներու հետապօտութիւններէն երևցաւ, մեծ մեծ շինութիւններ երբեմն վանքի և երբեմն մասնաւոր և երբեմն ալ երկու մասնաւորի միանգամայն կը վերագրուէին, և երկպատիկ գիներ միայն մէկ արդիւնք ունեցած են, որ է ըսել թէ երկու գիներէն մէկը իւրացուած գումար դարձած է: Տեղեկագիրը այդ տեսակ անուղիղ հաշիւներէ վանապան պարագաներ ցոյց տուած է (ՏՂԿ.Դ.165-166), և միանգամայն դիտած է, որ վաճառումներու արդիւնքներ շատ անգամ յումպէտս ծախուած են աւելորդ և անպիտան գնումներով, մինչ օգտակարագոյն եղած պիտի ըլլար, եթէ տոկոսաւոր պարտքեր ջնջուէին կամ փոխառութիւնները չկատարուէին: Այս և ասոր նման դարձուածներն են որ Մաքսուտեան ելեմտապետի գործողութիւնները բանիբուն պատուիրակներու և հետապօտող մասնաժողովներու աչքին քննադատելի ցուցուցին, մինչ կրցած էին ժամանակին երդուեալ բարեկամներու կամ միամիտ ընկերակիցներու աչքերը շլացնել և առանց խորումնկը թափանցելու ճարտար մատակարարութեան երևնալ: Յատուկ նկատողութեան նիւթ եղած են շինութեանց կարգին Մաքսուտեանի անձնականին սեփականուած մասերը, թէպէտ հաշիւի չեն անցած իր անձնականէն հայթայթած գումարներ: Գետնայարկ մը կը շինուի 640 լիրայի և 35 վարձք կը բերէ, վերնայարկ մը կաւելցուի 250 լիրայով և 50ի կը վարձուի, գետնայարկը վանքին կը գրուի, և վերնայարկը Մաքսուտեանի անձնականին (ՏՂԿ.Դ.167). ահա հանձարեղ գիւտի նմոյշ մը: Բայց մեր պատմական ոճը չներեր մանրամասնութիւններով պբաղիլ, պորս

մասնաժողովները հաւաքած են (ՏՂԿ.Դ.165-167). միայն աւելցնենք թէ շինութիւնները ճարտարապետական գնահատման ալ ենթարկելով 3797 լիրայի չափազանցութիւն մը տեսնուեցաւ, չնկատելով իսկ որ գնահատումը գործածուած քարերն ալ հաշիւի անցուցած էր, մինչ անոնք գլխաւորաբար վանքին տրամադրելիէն գործածուած էին (ՏՂԿ.Դ.161-162): Նկատուեցաւ ևս որ շինութեանց մասին ոչ առաջուընէ պատրաստուած յատակագիծներ և ոչ նախահաշիւներ գտնուեցան դիւաններու մէջ, ինչ որ ձեռնարկներուն առանց օրինաւորութեան կատարուած ըլլալը կը ցուցնէր: Վերջապէս քննադատիչ տեղեկագիրը պատուիրակներէն և մասնաժողովներէն ստորագրուեցաւ (ՏՂԿ, Դ. 168) և դեկտեմբեր 17-ի միաբանական ժողովէն մանրազնին դիտողութիւններէ և խորհրդածութիւններէ ետքը (07. ՄԻԱ. 289-308) ամբողջութեամբ ընդունեց՝ բաւական սեպելով աւելցնել, կատարուած իրողութեանց մասին դիտողութիւններով և քննադատութիւններով, ինչպէս Նշանեան և Պօյաճեան առաջարկեցին, և վանք ընելով Մաքսուտեանի գործունէութեան մասին պարսաւմանց քուէն, զոր Տէրտէրեան և Սարաճեան կառաջարկէին, և այս կէտը կեդրոնի վճռին թողով (07. ՄԻԱ. 309-310): Տեղեկագիրը վանք ըրած էր արժէթուղթերու վաճառմանց խնդիրով պաշտօնի իբրև քննելի չորեքտասանամեայ միջոցէն առաջ կատարուած գործողութիւն, թէպէտ վերջին հետազօտութեանց առթիւ, երևան եկած մտերմական գրութիւններ (ՏՂԿ. Թ. 13-14), տխուր լոյս սփռէին այդ գործողութեան մասին:

3071. ԿԱՆՈՆԱԳԻՐԻ ՎԵՐԱԶՆՆՈՒԹԻՒՆ

Այն միջոցին որ մատակարարական և կալուածական մասնաժողովներ հաշուեքննութեանց երկրորդ մասով կը պաշտօնէին, միաբանութիւնը անգործ չմնալու համար կանոնագիրի վերաքննութեան սկսաւ: Արդէն մայիս 2-ի նիստին մէջ կանոնագիրի վերաքննութեան մասնաժողով մը կազմուած էր եօթն անդամներով (3064), որոնցմէ Գայրվճեան և Նշանեան հրաժարեցան, երբ միւս մասնաժողովներու մէջ ծանր պաշտօններու պարտաւորուեցան: Հրաժարելուն պատճառ տուաւ նաև Հմայեակ Երէցեանի և Վահան Քէշիշեանի իրենց նախնական ուղղութենէ շեղիլը, զի կեդրոնին և Վեհապետեանի համամիտ գործունէութեան հանդէպ, Երէցեան և Մաքսուտեան իրենց կողմը պօրացնելու պէտք պգացին, և ներշնչումներով ու խոստումներով կողմնակիցներ շատցնելու հետևցան, և յիշեալ երկուքն ալ պատեհէն օգտուելու որոշման յանգեցան, և յայտնապէս ինքզինքնին ցուցադրելու սկսան: Ըստ այսմ վերաքննութիւն ըստարող հինգերէն չորսը համամիտ գտնուելով միևնոյն նպատակի ծառայող դարձան, և Սարաճեան միայն տարակարծիք ըլլալով մէջերնին մնաց, երբ միւս երկուքը կը հեռանային (07. ՄԻԱ. 248): Նոր պատրաստուած վերաքննեալ ծրագիրին մէջ աւելի աչքի վարնող փոփոխութիւններուն գլխաւորը լուսարարապետին գիրքն էր, զոր կը վրկէին ցկեանս պաշտօնավարութենէ և Տնօրէնի անփոփոխ անդամակցութենէ, և քառամեայ շրջանով միւս տեսչութեանց կարգը կանցունէին, չես գիտեր թէ աւելի Խապայեան լուսարարապետի անցեալին մէջ ըրածէն գայթակղելով, կամ թէ Տէրտէրեան լուսարարապետի առաջիկային ընելիքէն կասկածելով: Տնօրէն ժողովոյ ընտրելիութիւնն ալ բացարձակ կերպով ամէն եկեղեցական միաբանի կը պատշաճեցնէին. ջնջելով պատրիարքի և լուսարարապետի կողմէ պատրաստուելիք երկպառակ փակեալ ցանկի գրութիւնը: Ելնմտից տեսուչը տնօրէնի անդամակցութենէ իսպառ կը հեռացնէին, և ուրիշ մասնաւոր կէտեր ալ փոփոխած էին, ընդհանրապէս դիտելով միաբաններու թիւին ոյժ տալ, որով Մաքսուտեան և ընկերք ինքզինքնին աւելի պօրաւոր կը կարծէին: Յարութիւն պատրիարք ընդունելի չգտաւ առաջարկուած փոփոխութիւնները, գլխաւորապէս լուսարարապետի դիրքին և Տնօրէնի ընտրելեաց մասին մուծուածները. իր միտքը պատուիրակներուն հաղորդեց, անոնք ալ թէ անձնական տեսութեամբ և թէ յանձնաժողովի

հրաժարեալ անդամներու խորհրդակցութեամբ իրաւունք տուին պատրիարքին տեսութեանց, և նոր վերաքննեալ ծրագիր մը պատրաստելով, և պաշտօնէութիւնները դարպասական, կրթական, կալուածական և տնտեսական մասնախումբերու վերածելով՝ հոկտեմբեր 16-ին պատրիարքէն խնդրեցին առ ձեռն տպագրութեամբ միաբանական ժողովի ենթարկել (07.ՄԻԱ. 223): Պատրիարք տպագրութիւնը հրամայեց, ինչ որ ծանր եկաւ առաջին ծրագիրը պատրաստողներու, որոնցմէ Հմայեակ Երէցեան, յանդգնութեան հակամէտ յախուռն բնոյթ մը, ոչ միայն յայտնապէս պատրիարք և պատուիրակ անարգելու, այլևս տպարան մտնելով և աղաղակներով հրատարակութիւնը արգիլելու ձեռներէց ըլլալուն, և խրատներով ու յորդորներով չօգտուելուն վրայ՝ հարկ եղաւ պետական միջամտութեամբ վայն վանքն ալ հեռացնել նոյեմբեր 20-ին, և իբր Սասունցի Մշոյ Ս. Կարապետը յղել տալ, այս առթիւ իր գործակից Վահան Բէշիշեան ալ որոշուեցաւ Լաւոդիկէի տեսչութեամբ հեռացնել: Իսկ ընդհանուր ժողովը գումարուեցաւ նոյեմբեր 26ին Վեհապետեանի պաշտօնագիրով, որ կը յայտնէր առաջին ծրագիրէն լուսարարապետի գիրքին և տնօրէնի ընտրելեաց մասին մուծուած փոփոխութիւնները վերուցած ըլլալը, առաջինը Սուրբ Աթոռոյս անյեղլի օրինաց կարգ անցած հնաւանդ և նուիրական սովորութիւնները անխախտ պահելու նպատակով, և երկրորդը միաբանութեան ներկայ վիճակին մէջ օգտակար և արդիւնաւոր չի կրնար ըլլալը դիտելով (07.ՄԻԱ.221-222): Միաբանական ժողովը նոյեմբեր 26,27,28, և 29 օրերու շարունակեալ չորս նիստերով և պատուիրակներու ներկայութեամբ տպագրեալ ծրագիրին վրայ վերաքննութիւն կատարեց (07.ՄԻԱ.224-285), և բաւական փոփոխութիւններ ներմուծեց, մեծագոյն մասը միտքը պարզելու կամ բացատրութիւնը յստակելու դիտմամբ կատարուած: Միաբանական վերաքննութեան մուծած փոփոխութիւններու ամենէն աչքառուն դառնեալ լուսարարապետի գիրքը կը շօշափէր, որուն պաշտօնին անփոփոխելիութիւնը ընդունելով՝ տնօրէնի հաստատուն անդամակցութիւնը կը վլացուէր երկար դիտողութիւններէ ետքը, որոնք աւելի նախորդ լուսարարապետներու վեղծումներուն կը պատկանէին (07.ՄԻԱ.248-253): Յայտնապէս աւելցած էր որ ելևմտից տեսուչը տնօրէնի անդամակից չի կրնար ըլլալ (07.ՄԻԱ.271), պատրիարքական ընտրելեաց առաջին եօթանուն ցանկին բացականերուն գրաւոր քուէն կընդունուէր (07.ՄԻԱ.247), մատակարարի համար յատուկ յօդուած կաւելցուէր (07.ՄԻԱ.282), վաւերացած կանոնագիրին վերաքննութեան համար տասնամեայ պայմանաժամը պատահաբար հինգի կը կապուէր, եթէ գործադրութեան մէջ դժուարութիւններ տեսնուէին (07.ՄԻԱ.284), և վերջապէս յաւելուածական պայման մը քուէարկուեցաւ որ միայն այս անգամուան համար միաբանութիւնը կընդունի կեդրոնի խառն ժողովոյ վաւերացումը, նկատելով երեսփոխանութիւն հաւաքելու դժուարութիւնը (07.ՄԻԱ.285), և այսպէս փակուեցաւ վերաքննութիւնը, և նախագահ Յարութիւն պատրիարքի և ատենապետ Սմբատ Գալապեան վարդապետի ստորագրութեամբ վաւերացեալ օրինակ մը պատուիրակներու յանձնուեցաւ կեդրոնին ներկայելու:

3072. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՓԱԿՈՒՄԸ

Հաշուական գործողութիւնները չընդհատելու համար կանխեցինք անոնց աւարտը կանոնագիրի վերաքննութենէ առաջ անցունել (3070), թէ ոչ պատուիրակաց ներկայութեամբ կատարուած վերջին միաբանական գումարումը դեկտեմբեր 17-ին կատարուածն է, որուն վերջը աշխարհական պատուիրակ Արիս Ֆէսճեան իր հրաժեշտի խօսքերը արտասանեց (07.ՄԻԱ.310-312): Առաջին գործակատարի բացակայութիւնը վգալի կըլլար պատրիարքարանի գործունէութեան մէջ, և տարապայման ծանրութիւններ կը պատճառէր պատրիարքին վրայ, միւս կողմէն առնուած լուրերն ալ պատուիրակութեան քննչական գործերուն լրացած ըլլալը կը հաստատէին, որով Օրմանեան հաղորդեց Ֆէսճեանի դառնալուն հրամանը, և նա ալ դեկտեմբեր 19ին Երուսաղէմէ և

20ին Յոպպէ մեկնելով 30ին Կ. Պոլիս հասաւ (07.ԲԻԶ.3421): Իսկ Մանկունի եպիսկոպոսի հրահանգ տրուեցաւ ժամանակ մը ևս մնալ Երուսաղէմ, գլխաւորապէս միաբանութեան կարգուսարքին և բաժանեալ կուսակցութեանց համերաշխութեան աշխատելու պաշտօնով, որուն թէպէտ հետևեցաւ, բայց հիմնական դարմանի չկրցաւ յանգիլ, և ապրիլ 13ին Ջատկական տօնախմբութիւններն ալ կատարելով, մայիսի առաջին օրերը Երուսաղէմէ մեկնեցաւ և 7-ին Կ. Պոլիս հասաւ (08.ԱՐԼ.6791): Պատուիրակութեան գլխաւոր արդիւնքն եղաւ հաշիւներու խղճամիտ հետապօտութիւն և կանոնաւոր տեղեկագրութիւնը և կանոնագիրին վերաքննութիւնը, ինչպէս նաև 1907 սեպտեմբերէն մինչև 1908 ապրիլ վաճառքին մէջ խաղաղ կացութիւն մը պահելը: Պատուիրակութեան սկիզբը երեք մասնաժողովներ կազմուած էին որոնց երկուքին, մատակարարականին և կալուածականին, գործառնութիւնները ըստ բաւականին բացատրեցինք. կը մնար գանձատան մասնաժողովը որ պատուիրակներուն հասնելէն առաջ կազմուած էր, ' պաշտօն ունէր գանձատան պարունակութիւնը ճշդութեամբ ցուցակագրել, սակայն պատուիրակութեան միջոցին շարունակելով ալ չկրցաւ լրանալ, և այնպէս մնաց եկեղեցական պատուիրակին մեկնելէն ետքն ալ: Կեդրոնը ուլած էր ունենալ Երուսաղէմի կալուածներուն և հասութաբեր սեփականութենց լիակատար ցուցակը բոլոր հանգամանքներով, և այս ալ իբր պարզ նիւթական աշխատութիւն մը ետև մնաց և չկրցաւ կեդրոնին հաղորդուիլ: Կեդրոնը ուլած էր նաև տոկոսաւոր պարտքերու ամբողջական և անուանական ցուցակը, որ թէպէտ դժուար չէր կազմել, սակայն պատրաստելու հոգ չտրուեցաւ այն մտածումով, որ փոխատուներէն շատեր վանալան ակնածութեամբ, մանաւանդ Յոյն եկեղեցականներ իրենց մեծաւորներէն խիթալով, չեն ուզեր յիշուիլ և անունին գաղտնի պահելու պայման կը դնեն: Թէպէտ Ֆէսճեան կանուխ դառնալով պաշտօնական տեղեկագիրները բերած էր, սակայն պատշաճ դատուեցաւ Մանկունիիալ վերադարձին սպասել լիագոյն տեսութեանց համար, և անկէ ետքը հաշուական տեղեկագիրները վարչութեան ատենապետաց յանձնուեցաւ նախաքննել և եզրակացութիւնին առաջարկել: Մանկունի եպիսկոպոս պատուիրակ գտնուած ըլլալուն չուզեց մասնակցիլ, և Գրիգորիս եպիսկոպոս Յովհաննէսեան ատենապետին ընկերացաւ Կէօմրիւքճեան Մովսէս եպիսկոպոս, որ Մանկունիի բացակայութեան փոխատենապետութիւնը վարած էր, իսկ քաղաքական ժողովէն դարձեալ Նորատունկեան և Աշնան: Կանոնագիրին վերաքննութեան կանուխ ձեռք վարնուեցաւ և ատենապետաց մասնաժողովը քանիցս նիստ ընելով պատրիարքի նախագահութեամբ, միաբանական ժողովի փոփոխութեանց շատերը իւրացուց, շատ տեղ բացատրութիւնները պարզեց և յստակեց, լուսարարապետին տնօրէն ժողովի մէջ հաստատուն անդամակցութիւնը ընդունեցաւ, վերաքննութեան պայմանաժամը հաստատապէս հինգ տարիի կապեց, և Օրմանեանի յանձնուեցաւ ընդհանուր տեսութիւն մը գիրի տոնել յայտնուած գաղափարներու հետևողութեամբ, և մինչև հաստատուն վաւերացումը մէկ տարուան համար ներկայացուած և քիչ փոփոխուած ծրագիրը գործադրութեան հրամայեց: Օրմանեանի պատրաստած նախաքննութիւնը վերաքննեալ կանոնի Ս. Յակոբեանց միաբանութեանց Երուսաղէմի, 39 մեծադիր էջերէ բաղկացեալ գրուած մըն է, եղածը և ըլլալիքը, պարտաւորականը և պատշաճականը պարունակող: Յառաջաբանին մէջ պատմականօրէն ամփոփուած է սկիզբէն իվեր Երուսաղէմի գործոց մէջ կեդրոնին միջամտութիւնը և կանոնագիրի կազմութեան նախաձեռնութիւնը, իւրաքանչիւր յօդուածին մասին տեսութիւններ յայտնուած են, և վերջը նկատողութեան արժանի և ուղղելի կամ կարգադրելի 45 կէտերու ցուցակ մը կազմուած է ուսումնասիրութեան ենթարկելու և ըստ այնմ կանոնագիրին անցունելու համար: Ասոնց գլուխաւորներն են, միաբաններու պարտաւորիչ ծառայութիւնները ճշդել, պաշտօն մը մերժելու օրինաւոր պատճառները նշանակել, վանական

կեանքէ բացակայելու պայմանները որոշել, միաբանութենէ արտաքսելու պատիժը ջնջել, արտաքսումը վրկումներով փոխանակել, տնօրէնի անդամակցութեան 30 տարեկան ըլլալը բաւական սեպել, տնօրէնի ընտրելիներու փակել ցանկը եռապատիկ ընել, պայն կազմելու համար լուսարարապետի հետ փոխանորդի և երկու երիցագոյներու գործակցութիւնը հաստատել, միաբանական հաստատուն ժողովները իւրաքանչիւր քառամսեային կատարել, լուսարարապետի քով վեղարաւոր լուսարար մը աւելցնել, ելեմտացոյցը յունուարէն կազմել փոխառութեանց իրաւունքը հազար լիրայէ անգին կեդրոնի վերապահել, գլխաւոր կալուածներու վաճառումը կեդրոնի հաւանութեան ենթարկել, դպրանոցի ծրագիրը վերակազմել, կարասեաց ցուցակ և դիպուածոց օրագրութիւն հաստատել, աշխատաւորներու և մայրապետներու վիճակը առանձին կանոնագիրով կարգադրել, Երուսաղէմի տեղացիներու վանքին հետ իրաւանց և յարաբերութեանց կէտերը ճշդել: Միևնոյն ժամանակ Երուսաղէմի միաբանութեան 1908 մայիս 9-ի նիստին մէջ առաջիկայ 1908-9 տարւոյ ելեմտացոյցը պատրաստուելով կեդրոնին հաղորդուեցաւ (08. ՄԻԱ. 327-349), և մայիս 17-ին դպրոցաց մասնաժողովին պատրաստած ծրագիրը քննուեցաւ (08. ՄԻԱ. 350-370): Այս առթիւ ելեմտական տեսչութենէ հրաժարած Գայրվճեանի վերաբերող խնդիր մըն ալ պարզուեցաւ, իբր Վի Թադէոս վարդապետի թողօնէն մնացած տասը հատ արժեթուղթերէն մէկին թիւը տարբեր կը գտնուէր, և իբր մեծ պարգև շահած թիւ մը փոփոխած կը կարծուէր: Սակայն օսմանեան դրամատան վկայութեամբ խօսքի նիւթ կազմող թիւին երբեք վիճակով ելած չըլլալը հաստատուելով՝ ամբաստանութեան անհիմն, և տարբերութեան պարզ ընդօրինակութեան սխալանք ըլլալը կը հաստատուէր, և խնդիրը կը փակուէր (07. ՄԻԱ. 286 և 08. ՄԻԱ. 325): Երուսաղէմի խնդիրին (3038) պատմութիւնը փակած ատեննիս հարկ կը սեպենք դիտել տալ, թէ երրորդ պատուիրակութեան գործունէութիւնը բաւական արդիւնաւոր և խնդիրը հիմնովին լուծելու բաւարար կը նկատուէր, և ամէն կողմերէ վստահացուցիչ յուսադրութիւններ կը յայտնուէին, երբ 1908 յուլիս 10-ին և 11-ին օսմանեան ազատութեան հռչակուելովը, ինչպէս ամէն ներքին գործեր, նոյնպէս ազգային պատրիարքարանի գործերն ալ հիմնովին յեղափոխուեցան, և Երուսաղէմի խնդիրն ալ նոր կերպարան առաւ, ինչպէս իր կարգին պիտի պատմենք:

3073. ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Երուսաղէմի խնդիրը ընդհատումներով մթութեան չմատնելու համար շարունակեցինք մինչև 1908 տարւոյ կէսը, այսինքն մինչև Օրմանեանի պատրիարքութենէ դադարելուն օրը. սակայն ամբողջ պատմութիւննիս այնտեղ հասած չէ, և ուրիշ մասերով ետև մնացած ենք, յատկապէս Կ. Պոլսոյ պատրիարքարանի եղելութիւններով, զորս թողած ենք 1903 տարւոյ սկիզբները, Օրմանեանի անձին վրայ կատարուած յունուար 6-ի մահափորձէն ետքը (3025): Այդ առթիւ ակնարկեցինք արդէն թէ այն արկածին վրայ Օրմանեան պահ մը վանց ըրաւ հրաժարականի փաստը գործածել կառավարութեան հանդէպ, որպէսզի սպառնալիքէ վախնալով դասալիք եղողի կերպարանը առած չերևայ, և այս կէտին վրայ հաստատուն մնաց երեք լրացեալ տարիներ, մինչև 1906 յուլիս, թէպէտ այդ միջոցին մէկէ աւելի խնդիրներ կացութիւնը կը ծանրացնէին, և եթէ դասալքութեան գաղափարը միտքին վրայ չազդէր, կանուխէն գործածուած հրաժարականի փաստը դարձեալ գործածուած կըլլար անշուշտ. մինչ յիշեալ գաղափարին պատճառով բողոքոյ փաստին տեղ ողորջ փաստերուն առաջնութիւն տալ պարտաւորուեցաւ (ՕՄԱ. 84), թէպէտ ոչ ամէնքը նոյն գաղափարին յարգողներն էին: Օրմանեանի տեսութեամբ նախադասելի էր անոնց կարծիքը, որոնք վիշտերու ներքև հեծելով՝ մօտէն կրնային պարագաները կշռադատել, և գործնական և օգտակարագոյն միտքերը ճշդել, և զորս խոհական անուանել սովոր էր, քան թէ հետևիլ անոնց, որ վիշտերէ հեռու և եւրոպական ազատ մթնոլորտի մէջ ապրելով, կը կարծէին

փորձանքներով փորձ փորձել, և իբր ապագայ բարօրութեան փաստ ներկայ՝ ղ ժուարութիւնները և նեղութիւնները աճեցնել, պոստ Օրմանեան նմանաձայն անունով խօլական կը կոչէր, և համարձակ կապ դարարէր թէ խիղճի ալ հակառակ է այնպիսի յախուռն փորձերու ձեռնարկել, որոնց հետևանքը ընողը ինքն պիտի չկրէ, և ուրիշներու վրայ պիտի ծանրանայ: Այս տարբեր տեսութեանց պատճառով Օրմանեանի 1903 է 1906 հանդարտ պաշտօնավարութեան ձևը կերպ կերպ քննադատութեանց ենթարկուեցաւ, և միանգամայն սպառնալից նամակներ և յայտարարութիւններ տեղացիին վանապան կողմերէ, որպէսզի անհանդարտ ծրագիրին համակերպի և գործակցի, ապա թէ ոչ հրաժարի և քաշուի, և պատրիարքարանը անկերպարան մնալով նորանոր խառնակութեանց ասպարէզ տրուի, որոնցմէ կը սպասէին բարեկարգութեանց և բարօրութեանց ծագումը. մինչ բոլորովին հակառակն էր Օրմանեանի վարչականութեան սկզբունքը, իրեն համամիտ և քաջալերիչ ունենալով պաշտօնի վրայ գտնուող վարչութիւնը: Անոնց տեսութեամբ պէտք էր ժողովուրդը որևէ նոր վտանգէ և վնասէ վերծ պահել, որչափ հնար էր փորձանքներուն առջևն առնել, ներածին չափ առիթներէ օգտուիլ, ներքին կացութիւնը բարւոքելով ջանալ, հանրութիւնը յուսաբեկութեան չմատնել, և դիւրութեանց հնարաւոր միջոցները մշակել: Ուստի կը ջանային թշուառութիւնները նպաստելով դարմանել, որբանոցներով մանկութիւնը փրկել, դպրոցներով նոր սերունդը կազմակերպել, ինքնաշխատութեամբ և ինքնօգնութեամբ հանրութիւնը վարգացնել, և այս արդիւնքները ձեռք ձգելու համար, օրինաւոր կեանք, ջանացկոտ բազուկ, հանդարտ միտք, և ամուր սիրտ պատրաստել, երևակայական և անհաւանական և անիրականալի ձգտումներով չօրօրուիլ, այլ գործնական, հաւանական և իրականալի ձեռնարկներով վբաղիլ: Օրմանեան իբրև վաղեմի ուսուցիչ և դաստիարակ, անձամբ և անդադար կը շրջէր մայրաքաղաքի դպրոցները, կը հրահանգէր և կառաջնորդէր, գաւառներու դպրոցներուն և որբանոցներուն նիւթական նպաստները և ուսուցչական խրատներ կը հասցնէր, հիւանդանոց և որբանոց ստէպ կարգելէր, եկեղեցական արարողութիւններով ժողովրդական եռանդը վառ պահել կը ջանար, արգիլեալ համախմբութեանց տեղ ներեալները կընդարձակէր, դպրոցական հանդէսներուն անձամբ կը նախագահէր՝ իր ներկայութեամբ ուստիկանական ձանձրացուցիչ միջամտութիւնները արգիլելու համար, և անդադար քարոզութիւններով վգացումները բարձրացնելու և սիրտերը ժրելու կը հետևէր, թաղական մատակարարութեանց և գաւառական վարչութեանց պէտքերը հոգալու մօտէն կը հսկէր, գրութիւններով և միջոցներով կը պօրացնէր, այնպէս որ լքեալ և անտէրունչ թաղ կամ վիճակ քաղաքական միջոցները գործածելէ ետ չէր մնար. մէկ կողմէն արքունիք և նախարարութիւններ կը շրջէր շարունակ միւս կողմէն օտար դեսպանատուներ կայցելէր, որպէսզի տեղեակ ըլլայ ամէն անցուդարձերու, իմանայ նպաստաւոր մտադրութիւններն ու աննպաստ մեքենայութիւնները, և գիտացութեամբ և պարագայից կշռադատութեամբ իր ջանքերը արդիւնաւորէ, ապարդիւն ջանքերով ժամավաճառ չըլլայ և պատեհ առիթներու արդիւնքէն չզրկուի: Աւելի հետամուտ էր ընդհանուր գործառնութեանց քան անհատական խնդրանքներու, ինչպէս օրէնքն ալ կը պահանջէր ընդհանուրը մասնաւորին չզոհել, և տրամադրելի ոյժերը երկրորդականներու վատնելով առաջնականներուն չտիրանալ: Նոյն ուղղութեամբ կը կանխէր ձեռնարկներուն ելքը չափել ու կշռել, և յաջողութիւնը գոնէ հաւանական չտեսած, գործին չմիջամտել, որով ուզածդ կընես ըսողին սովոր էր պատասխանել թէ կրցածս կուզեմ: Երկար պիտի ըլլար պատրիարքական գործունէութեան մանրամասնութիւններով վբաղիլ, ուստի բաւական կը սեպենք այդ համառօտ ստուերագիծը Օրմանեանի ընթացքին մասին, որ բաւական յաջողութեամբ ընդարձակուեցաւ և երկարեցաւ, թէպէտ պարագայից փոփոխուելէն ետքը շատ խժբժանաց ենթարկուեցաւ, սակայն պատմութիւնը կը պահանջէ ամէն եղելութիւն իր

ժամանակին և պէտքերուն և պարագաներուն համեմատութեամբ դատել, և ոչ թէ ընդարձակ տեսութիւններով հողմեր արածել:

3074. ԽՈՒՋԱՐԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Որչափ ալ չուզենք մանսաւոր իրողութիւններով վբաղիլ, սակայն կա՛ն այնպիսի աչքառու դէպքեր, զորս հնար չէ առանց պարտուպատշաճ բացատրութեան անցունել: Ռուսի մը պայթում մը տեղի ունեցաւ 1905 յուլիս 8-ին Երրորդի բացավայրին մէջ, երբ Ապտիւհամիտ կայսր ուրբաթի կէսօրին աղօթքը կատարած Համիտիյէ մվկիթէն դուրս կելլէր: Նպատակը սուլտանին դէմ մահափորձ մը մեկնուեցաւ, դաւաճանութեան հեղինակներուն մասին առաջին այլընդայլոյ պրոյցներէն ետքը գործը հայ յեղափոխականաց վրայ նետուեցաւ: Ազգաւ մարոնի և մեքենայութեանց վարժ Նէճիպ Մելհամէ փաշայի ընդարձակ ասպարէզ տրուեցաւ հետապոտութիւններ կատարելու, դատարաններ և դատապարտութիւններ և հրատարակութիւններ մեծ ծաւալ ստացան: Բայց շատ մը պարագաներ, ինչպէս ռուսի տեղւոյն և մվկիթի դրան տարանջատ հեռաւորութիւնը և անյարմար դիրքը, գործին մէջ Մելհամէի մտերիմ Պելճիացիի մը վարած դերը, ամբաստանուած Հայերուն ևրոպական անուններու ներքև քողարկուած ըլլար, ռուսիին վնասներուն կարծուած նպատակէն դուրս պատահական շրջանակի մէջ ամփոփուիլը, և նոյն ինքն կայսեր այդ վայրկեաններուն պահած դերը ու շարժումներն ու խօսքերը, առիթ կընծայեն խորախորհուրդ դարձուած մը տեսնել կազմակերպեալ դաւաճանութեան մէջ, այլ լուծումը մեր նպատակէն դուրս կը մնայ: Եթէ նպատակը անորոշ ըսուի, արդիւնքն իրականութիւն եղաւ, Հայոց դէմ ընդհանուր խստութեանց նոր ծրագիր մը, զոր Մելհամէի գործունէութիւնը հետզհետէ պարպեց և ծաւալեց (ՕՄԱ. 127): Օրմանեանի ջանքերը կրցան մինչև աստիճան մը գործը ամփոփ պարունակի մէջ պահել, բայց Մելհամէի գիւտերը չդադրեցան շարունակ նոր բողբոջներ տալ, որոնց մէկն էր հայ հաստատութեանց մէջ ծածկուծ վէնքերու մթերք փնտոել: Սեպտեմբեր 21-ի առաւօտուն լսուեցաւ թէ գիշերանց Բերայի դադարեալ գերեզմաննոցին մէջ եկեղեցւոյ պաշտօնները զգուշութեան ներքև առնուելէ ետքը, տապանաքարեր խախտուած են ներքևէն ռուսներ և վէնքեր հանելու համար, որոնց մասին իբր թէ ստոյգ լուր տուողներ եղեր են: Թէպէտ ենթադրութիւնը չէր ճշմարտուած, բայց Օրմանեան փութաց կայսեր բողբոջել, թէ անհիմն պրպարտութեանց և թէ առանց պատրիարքարանի գիտակցութեան սրբավայրեր բռնաբարուելուն համար: Կայսեր կողմէ խոստացուեցաւ անտեղութիւնները արգիլել, և նոյն երեկոյ նախարարութենէն ալ հաղորդուեցաւ որ առանց պատրիարքարանի գիտակցութեան այսպիսի գործ մը պիտի չկրկնուի: Այս անգամ Մելհամէ նոյն իսկ պատրիարքարանի մէջ խուկարութիւններու պէտք կը տեսնէ, իբր թէ ստացուած տեղեկութեանց համեմատ ներքնայարկի որոշ անկիւններու մէջ ռուսներ պահուած ըլլան, և որպէսզի խոստացեալ պայմանը յարգուի: Մելհամէ անձամբ բանակցութեան կը մտնէ Օրմանեանի հետ արքունեաց մէջ սեպտեմբեր 25-ին, Օրմանեանը վստահացնելով թէ իր անձին դէմ որևէ հետևանք չի կրնար ունենալ, քանի որ Իզմիրլեանի օրէն պատրիարքարանի մէջ մթերուած ըլլալը հաստատուած է: Մելհամէի առաջարկը բացէբաց մերժուեցաւ Օրմանեանէ, թէ օրինաց և թէ պատշաճից տեսակէտներով, պնդելով որ առաջին պինքն պաշտօնանկ ընելով հեռացնեն, և յետոյ պաշտօնապէս պատրիարքարան խուկարկեն: Գործը այն օր մնաց, բայց պատրիարքարանը անմիջապէս ոստիկան պահակներէ շրջապատուեցաւ: Օրմանեան 29 ին այդ մասին բողբոջելու համար նորէն Երլտըզ դարձաւ և պահակները վերացնելու խոստումը ստացաւ: Հոկտեմբեր 1-ին բանակցութիւնները նորոգուեցան Օրմանեանի և Մելհամէի միջև, միշտ արքունեաց մէջ, առաջին քարտուղար Թահսին փաշան ալ միջամտեց, Օրմանեան բնաւ զիջողութեան չմօտեցաւ, բանակցութիւնը երկարեցաւ, կայսեր

տարուած լուրեր և բերուած պատասխանները ժամերով շարունակեցին, մինչև որ կայսեր կողմէ առաջարկուեցաւ, առանց պաշտօնական անձանց միջամտութեան, միայն պատրիարքին կողմէ անպաշտօն խուլարկութիւն մը կատարել, յայտարարելով թէ իր պաշտօնեաներէն ա՛լ աւելի վստահութիւն ունի պատրիարքին վրայ: Անպնիւ էր այլ ևս այդ պիջողութեան դիմադրել, և հոկտեմբեր 3-ին պատրիարք անձամբ կատարեց Գումգաբուի պատրիարքարանին եկեղեցիին և վարժարանին ամէն կողմերուն խուլարկութիւնը, իրեն օգնական առնելով պատրիարքարանի չորս աւագ պաշտօնեաները, Արիս Ֆէսճեան, Բարթող Թելեան, Կարապետ Խաչատուրեան, Մկրտիչ Մելիքեան, և Բերայի ատենապետը Ռոպեր Եսպրճեան, իբրև պալատական ծանօթ անձ. բայց Մելհամէի նշանակած տեղերէն և ուրիշ կողմերէն բնաւ խօսուած նիւթերը չգտնուեցան, և ըստ այնմ կայսեր տեղեկագրուեցաւ, և հոկտեմբեր 5-ի խառն ժողովն ալ գոհունակութեամբ լսեց գործին ընթացքը ու ելքը: Մելհամէի ձեռնարկին նպատակը պէտքէն և ռումբէն աւելի դիւանին վրայ ձեռք դնելն էր, վասնզի պրոյց կը շրջէր թէ պատրիարքարանն էր որ Փարիզի ի նպաստ Հայաստանի (Pro-Armenia) լրագիրին տեղեկութիւնները կը մատակարարէր, և երկու դիւանապետներ Թելեան և Խաչատուրեան, հարցաքննութեան ալ կոչուած էին, սակայն ոչ միայն Մելհամէի այդ ներքին միտքն ալ խափանուեցաւ, այլ և դիւանապետներուն հարցաքննութեան կոչն ալ ընթացք չունեցաւ երբոր Օրմանեան պատրիարքարանի գործունէութեան մասին իւր անձնական պատասխանատուութիւնը դիմադրեց և համարաձակ պնդեց, և այսպէս պատրիարքարանն ու ալ գն ալատելու համար կազմուած խարդախ միջոցը, ամուր ընդդիմութեանց և պատուաւոր դարձուածով, ոչ միայն ցնդեցաւ, այլ և օգտակար յաջողութեան վերծուեցաւ (ՕՄԱ. 127-130):

3075. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՄԵԱԿՆԵՐԸ

Որովհետև աչ ժամանակի այլ նիւթերու կարգով կը յառաջենք, շարունակենք կարևորագոյն միջադէպները յառաջ բերել եղելութեանց կապակցութեան հետևելով: Պատմած ենք թէ վարչական ժողովներու երկամեայ շրջանը և վերանորոգելու սահմանադրական կանոնը, վարչութիւնը պաղեցնող գլխաւոր կէտերէն մին եղած էր: Առաջին երկամեայն 1899 ապրիլին կապուեցաւ սահմանադրութեան հաշուած պայմանաժամը յարգելու համար, թէպէտ 1898 նոյեմբերին կը լրանար եթէ ընտրութեան օրէն համրուէր, բայց արգիլուեցաւ (3013): Արգելքը յառաջ կու գար 1896-ին կառավարութենէն պահանջուած, ընդհանուր ժողովէն ընդունուած, և նորընտիր վարչական մարմինէն քննիչ յանձնաժողովոյ պաշտօնը ստանձնուած ըլլալէն (2996), որով կառավարութիւնը չէր ներեր երսփոխանութիւն գումարել և նոր ընտրութիւն ընել այդ պայմանը չիրագործուած: Առաջին երկամեային լրանալուն 1899-ին տեղի ունեցած բանակցութիւններն ու որոշումները պատմած ենք իր կարգին (3013), որով վարչութիւնը ստիպուեցաւ իր գործը շարունակել: Միևնոյն պարագաները կրկնուեցաւ 1901 ապրիլին երկրորդ երկամեային լրանալուն (3034), երկրորդ երկամեայն կը լրանար 1903 ապրիլին, և միևնոյն առաջարկ և արգելք պիտի նորոգուէին, բակայն դեռ նոր անցած էր 1903 յունուար 6-ի մահափորձը, և Օրմանեան որոշած էր առժամանակ մը հրաժարականի խօսքը չընել, սպառնալիքի առջև դասալիք եղածի կերպարանը չառնելու համար (3025), ուստի այս անգամ ժողովականներ վրանին առին ժողովի վերակազմութեան խնդիրը յուլիու, և իբր պարտաւորութենէ աւելի աշխատածներ և երեք շրջան շարունակ ժողովականութիւն վարելով յօգնածներ, սկսան ժողովներէն բացակայիլ և գործերը լքանել, որով Օրմանեանի ալ առիթ կընծայէին յայտարարելու թէ առանց ժողովի և ժողովականի, ոչ գործերը վարելու և ոչ վերաքննութիւն կատարելու հնարաւորութիւնը կը մնար, և պէտք էր երեսփոխութիւն գումարել և նոր վարչութիւն կազմել: Սակայն ժողով և հաւաքում շատ

հեռու էին Ապտիլ համիտի մտիքէն և ակորժակէն, և որպէսզի գտնուող ժողովականները յանձն առնուն տեղերնին մնալ պատիւի շնորհաբաշխութեան միջոցը մտածեց, և ժողովականներու իբր վարձատրութիւն ունեցած շքանշաններուն կամ աստիճաններուն բարձր բացումներ շնորհեց: Բաղաքականի անգամներէն Նորատունկեան, Տիլպէր, Գարակէօպեան, Եուսուֆեան և Տէր Ներսէսեան շքանշանով, Սեթեան, Տէմիրճիպաշեան և Ասասեան աստիճանով, և Խարեան ամսաթոշակի յաւելուածով պատուուեցան, և կրօնական ժողովոյ Յովհաննէսեան և Մանկունի ատենապետներուն ալ շքանշաններ շնորհուեցան (03. ԲԻՁ. 2020), և ժողովականներ չկրնալով պատուագիր կերպերու դիմաց անպատուագիր կերպ մը բռնել, պարտաւորուեցան զիջանիլ, և նորէն կանոնաւորապէս ժողովականութեան պարտքերը կատարել (ՕՄԱ. 75-76), և անգամ մը որ երկամեակի պայմանաժամին տագնապը դադրեցաւ, չորրորդ երկամեակին շրջանը ստանձնած եղան: Ժողովականաց մտայնութիւն կատարեալ բացատրած ըլլալու համար պէտք չէ մտադրութենէն վրիպեցնել, որ պարզապէս արտաքին պատիւները չէին իրենց վրայ ազդոցները, այլ 1903-ին արժարժուող կենսական խնդիրն ալ, Ռուսահայոց եկեղեցական կալուածներու տագնապը (3026), Երուսաղէմի հաշուեպահանջ շարժումը (3038), և Կիլիկիոյ աթոռին նոր կազմակերպուիլը (3022), զօրաւոր ճնշումներ կը բանացնէին իրենց միտքին վրայ պատրիարքարանը անտէրունջ չթողլու համար, և Օրմանեան ևս իր կողմէն միայնակ և անօգնական մնալու ենթադրութեան առջև անտարբեր չէր: Յիշուած ծանր կնճիռները շուտով չփարատուեցան, և ժողովներ, քանի որ անգամ մը այդ խնդիրը ձեռք առած էին, չէին կրնար ընդմիջել, և ստիպուած շարունակեցին չորրորդ երկամեայն ալ 1903-է 1905 ապրիլ, և պայմանաժամին ի դէպ էր նորոգել իւրաքանչիւր երկամեակի վերջ կատարուած ցոյցերը: Բայց փորձերը արդէն հաստատած էին անոնց ապարդիւն մնալը, և միւս կողմէ վերոյիշեալ ռուսահայ և սաղիմական խնդիրները սաստիկ ճգնաժամի մէջ կը գտնուէին, ինչպէս անոնց պատմութիւնը ըրած ատեննիս լիովին բացատրած ենք: Ուստի գրեթէ առանց նոր խնդիր յուզելու վարչական գործերը շարունակեցին 1905 ապրիլին, այսինքն հինգերորդ երկամեակին մտնելէն ետքն ալ, և տարի մը ևս շարունակեցին մինչև 1906 ապրիլ, երբ ակնյայտնի տեսնուեցաւ որ այլ ևս անհնար էր գրեթէ անգործութեան հասած ժողովով պատրիարքարան դարձնել և վճռական որոշումներ տալ. վասնզի իւրաքանչիւր ժողովին 14 անդամներէն կրօնականը 6 և քաղաքականը 4 անդամներով մնացած էր, և խառն ժողովը 28-էն 10 անդամի վերածուած կը գտնուէր: Կրօնականի 14 անդամներէն մին ինքն Օրմանեանն էր, որ ժողովականութեան չսկսած պատրիարք ընտրուած և տեղը բաց էր մնացած: Գէորգ Իւթիւճեան վարդապետ ընտրութեան օրէն բացակայ էր, եպիսկոպոս ալ ձեռնադրուեցաւ և Կ. Պոլիս չդարձաւ: Մելքիսեդէկ Մուրատեան եպիսկոպոս առաջի օրէն հրաժարեցաւ և չմասնակցեցաւ, Չմիւռնիա առաջնորդ գնաց և հոն վախճանեցաւ 1903 յուլիս 12-ին (03.ԲԻՁ.2074): Յովսէփ վարդապետ Այվապեան Եգիպտոսի առաջնորդ գնաց, եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և հոն վախճանեցաւ 1904 յունիս 5-ին (04.ԱՐԼ.5581): Գարեգին վարդապետ Թաթարեան, Խաչատուր քահանայ Տէր-Գաբրիէլեան և Գաբրիէլ քահանայ Խանձեան հետզհետէ Կ. Պոլսոյ մէջ վախճանեցաւ, և Եղիշէ վարդապետ Դուրեան՝ Արմաշի փոխ-վանահայր գնաց, եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և Չմիւռնիոյ առաջնորդ ընտրուեցաւ, ուր և կը գտնուէր, և այսպէս ութ անդամներ պակսելով՝ կը մնային միայն Գրիգորիս Յովհաննէսեան, Վահրամ Մանկունի և Գաբրիէլ ճէվահիրճեան եպիսկոպոսներ և Կարապետ Սեթեան, Յովհաննէս Շահպապեան և Կարապետ Սանտալճեան ծերունի քահանաներ: Իսկ քաղաքական անդամներէն Սենեքերիմ Մանուկեան և Կարապետ Գաբամաճեան սկիզբէն չէին մասնակցած և վախճանած էին. նմանապէս հետզհետէ վախճանած էին Յարութիւն Տատեան, Ստեփան Ասլանեան, Էլիաս

Չայեան, Գրիգոր Գարակէօսեան և Սեպուհ Տէմիրճիպաշեան, Ջարեհ Տիլպէր կարճ միջոց մը մասնակցելէ ետքը իսպառ ձեռնթափ եղած էր, Գրիգոր Խտրեան և Տիգրան Եուսուֆեան հիւանդութեամբ տկարացած՝ չէին կրնար ժողովներու հետևիլ, և գործի վրայ կը մնային միայն Գաբրիէլ Նորատունկեան, Տիգրան Տէր-Ներսէսեան, Միհրան Սեթեան և Մկրտիչ Ասասեան (ՕՄԱ.77):

3076. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Երբոր ժողովներուն վիճակը այս աստիճանին հասաւ, մնացող ժողովականներ շարունակելու բացարձակ անհնարութիւնը տեսնելով, և թերի կազմածով պատասխանատուութեան ներքև մտնելէ բացարձակապէս խորշելով, պաշտօնապէս իրենց որոշումները յայտարարեցին և արձանագրեցին, խառն մայիս 31-ին, քաղաքականը ապրիլ 26-ին, և կրօնականը յունիս 13-ին, և երբոր պատասխանատուութիւնը պատրիարքին թողլով գործէ ձեռնթափ եղան: Պատրիարքն ալ չէր կրնար լոկ անհատական պատասխանատուութեամբ գործի գլուխ մնալ, ուստի յունիս 16-ին իրաց վիճակը պատկերացնելով գլխաւորապէս հաղորդեց նախարարութեան, թէ իրեն ալ անհնար է պաշտօնը շարունակել եթէ դարման մը չկարգադրուէր, և այն ալ նոր ընտրութեամբ ժողով կազմելն էր, զի այլևս ոչ վարչութիւն կար գործելու, և ոչ վերաքննութեան յանձնառու ժողովը կար կառավարութեան պնդած պայմանը լրացնելու: Միանգամայն նոյն տեսութիւնները բերանացի բացատրեց մեծ եպարքոս Ֆէրիտ փաշայի և գլխաւոր նախարարներուն: Կառավարութիւնը ստիպուեցաւ գործը լուրջ նկատողութեան առնել, զի պատրիարքին առաջարկը թէ վճռական էր և թէ տրամաբանական: Պատրիարքը ժողովական կացութեան հարցին հետ զուգակցած էր սկիզբէն ի վեր դժուարութեանց առիթ տուող խնդիրները, ինչպէս էին երթևեկի արգելքները, վարժարաններու հսկողութիւնը, կալուածներու գրաւումները, հալածանքի ձեռնարկները, պաշտօնէից զեղծումները, և Հայուն անհատական իրաւունքէ զրկուած կացութիւնը: Յունիս 18-ին կայսերական թիկնապահով պալատ առաջնորդուեցաւ, գործէ չքաշուելու ազդու յորդորներ եղան, գանգատի նիւթ եղող դժուարութիւններ բառնալու խոստումներ տրուեցան, ժողովներուն պակասը լրացնելու համար իր կողմէ անձեր հաստատուելու առաջարկ ալ եղաւ: Օրմանեան խոսուած կէտէրուն թերահաւատութեամբ պատասխանեց մինչև որ արդիւնք տեսնէր իսկ ժողովական առաջարկելու կէտին ապօրինութիւնը և իր անձեռնհասութիւնը դիմադրեց: Բսան օրի չափ տուեցին այդ հիման վրայ բանակցութիւնները, ոչ միայն պաշտօնապէս այլև անպաշտօն կերպով արքունիքէ և նախարարութենէ թելադրել պաշտօնեաներու և բարեկամներու ձեռքով, մինչև որ պատրիարքի դիմադրութիւնը զիջուցանելէ յոյսը կարելով՝ յուլիս 5-ին նախարարական յանձնաժողով մը կազմուեցաւ, ներքին գործոց նախարար Մէհմուտ փաշայի նախագահութեամբ, որ պատրիարքը կերպով մը հաճեցնելու եղանակ մտածուի: Ասոր վրայ սկսան Օրմանեանի և Մէհմուտի միջև տեսակցութիւնները, յանձնաժողովը մինչև յուլիս 13 խորհրդակցելու, և վերջապէս այն որոշման յանգեցաւ թէ պատրիարք իրաւունք ունի վարչական ժողովներու, թէ չէ հնար պայն բռնադատել ինքնին ժողովական առաջարկելու, բայց և միանգամայն պէտք է զգուշանալ Հայոց Սահմանադրութիւնը գործածութեան մէջ ցուցնելէ, և այդ պայմանով մեծեպարքոսն ալ համաձայնեցաւ և արքունեաց վրայ ալ ազդեց. և անոնք կերպով մը իրականացնելու պաշտօնը Մէհմուտի յանձնուեցաւ Օրմանեանի հետ համաձայնելու և կերպը որոշելու: Այս որոշման գլխաւորապէս առիթ ընծայեց պատրիարքի յայտարարութիւնը թէ

վերաքննութիւնը կանխելու պայմանը անհնարութեան մէջ կը գտնուէր յանձնառու ժողովին իրապէս դադարելովը: Յանձնաժողովը միւս խնդիրներն ալ նկատի առնելով որոշած էր ազգային վարժարանները պատրիարքարանի և առաջնորդարաններու հսկողութեան ներքև ճանչնալ դադրեցնելով անհատական պատասխանատու վարիչներու պայմանը, եկեղեցիներու և հաստատութիւններու բարոյական անունի արձանագրուած և իբրև անտէրունչ գրաւուած կալուածներու դարձնել բացառիկ պարագաները վատելով, երթևեկի արգելք միայն անգործներու վրայ ամփոփել: Այս պայմանները յուլիս 14-ին գիրի առնուեցան, կայսերական հաւանութեամբ զօրացան, և մասնաւոր պարագաներու համար Մէմտուհի և Օրմանեանի տեսակցութիւնները շարունակեցին, ժողովական ընտրութեան սկզբունքը ընդունուեցաւ, միայն հրապարակային ցուցադրական ձևերը վեղչելով: Այդ պայմաններով Օրմանեան սկսաւ ներքին նախապատրաստութեանց, օրինաւորապէս ընտրուած և ներկայ 61 երեսփոխաններ գտնուեցան և նոր ընտրութեանց պէտք չտեսնուեցաւ, զի մեռածները և հրաժարածները վեղչելով, եղածներ օրինական մեծամասնութիւն կը կազմէին. համագումարի կազմելիք կրօնականի ընտրելեաց եռապատիկ ցանկը փոխանակ ժողովի՝ խորհրդակցութեամբ կազմուեցաւ, զի կառավարութեան առջև ամբաստանեալ կամ կասկածելի անունները վեղչելով՝ հապիւ թէ 42 ընտրելիներ կը մնային, յարմար վատուեցաւ ելլողներու անվերընտրելիութեան պայմանը այս անգամուան համար դադրեցնել, քանի մը երկամեակներ անցած և վերջիները բացառիկ կամ առժամեայ պաշտօնավարութիւն նկատուելուն համար, գրաւոր քուէ յղելու պայմանը արդէն ընդունուած ձև էր, քուէները չցրուելու հոգացողութիւնն ալ վանց չեղաւ, և վերջապէս համախրութիւնն ալ դիտողութենէ վերժ պահելու համար՝ ժողովի որ որոշուեցաւ յուլիս 25 երեքշաբթի, Երկուսասան Մարգարէից տօնը, և պատրիարքի անունին շնորհաւորութիւնը պատրուակ առնելով, և ըստ այսմ հրաւիրագիրներ ցրուեցան: Այսչափ պզուշաւորութեամբ մէկտեղ ալ ուստիկանութիւնը նոյն օր հարցուփորձի եկած էր թէ ի՞նչ կը նշանակէր եկողներու շատութիւնը, և պատրիարքի անունին շնորհաւորութեան բացատրութեամբ մեկնած էր: Որոշուած օրը ժողովը բացուեցաւ պատրիարքարանի ժողովական սրահը, առժամեայ դիւանով և Տիգրան Բարաղամեանին ատենապետութեամբ և պատրիարքին բացատրութիւններով խնդիրներու և պայմաններու վրայօք, և գործածուած ձևերու վրայ, յատուկ որոշման ենթարկուեցաւ ժողովականութենէ ելլողներուն վերընտրելիութիւնը, կացութեան վրայ ալ տեղեկութիւններ հաղորդուեցան, և այս ձևերը լրացնելէն ետքը քուէարկութիւն և քուէհամար կատարուեցաւ, և առաջին քուէարկութեամբ երկու ժողովներն ալ ընտրուեցան, միայն կրօնականին վերջինը համեմատականի մնաց Գէորգ Երէցեան եպիսկոպոսի և Կարապետ Սանտալձեան քահանայի վրայ, և երկրորդ քուէարկութեամբ Սանտալձեան առնուեցաւ: Ժողովին արդիւնքը նոյն օր պաշտօնապէս հաստատութեան առաջարկուեցաւ, քաղաքականի ընտրեալներ դիտողութեան չհանդիպեցան, սակայն կրօնականէն հինգ հոգի իբր կասկածելի չէին հաստատուած, Յովհաննէսեան Գրիգորիս և Մանկունի Վահրամ եպիսկոպոսներ, Դուրեան Ղեւոնդ և Պալագեան Գրիգորիս վարդապետներ իբր անհատապէս վստահութենէ վուրկ, իսկ Տէր Սարգիսեան Սահակ քահանայ երիտասարդ Իվմիրլեանի ուսուցիչ եղած ըլլալուն պատճառով: Պատրիարքը հաստատութեան պահանջը կրկնեց օգոստոս 24-ին, և հաստատուածներն ալ չգումարեց մինչև որ այդ հինգերն ալ հաստատութիւն ստացան, և սեպտեմբեր 20-ին առաջին անգամ ժողովները բացուեցան և ատենապետութիւններ կազմուեցան, կրօնականը Մեսրոպ Սուքիասեան և Վահրամ Մանկունի եպիսկոպոսներով, և քաղաքականը Գաբրիէլ Նորատունկեան և Տիրան Աշնան պետական բարձր պաշտօնեաներով (06.ԲԻՁ.3055): Այսպէս վերանորոգուեցաւ վարչութիւնը, որուն մէջ դադարողներէն կային հինգ կրօնականներ և

երեք բաղաբաղականներ (06.ԲԻՁ.3049), և մնացած 20 ժողովականներ նորեր էին: Սահմանադրական պահանջները պահուցեցան իրենց էական մասերուն մէջ և բացառութիւնները անկարևոր կէտերու վրայ եղան, արդէն ամէն օրէնք ալ կը ներէր էականները փրկելու համար աննշանակներ զոհել: Պատրիարքը բաւական աշխատեցաւ և գնահատուեցաւ սահմանադրութիւնը պահպանած ըլլալուն, և ինքնին ընտրելներ չցուցնելուն և դժուարութեան հանդիպողներն ալ հաստատել տուած ըլլալուն համար, ոչ միայն արդիւնքը գոհունակութեամբ ողջունուեցաւ, այլև անկեղծ խնդակցութեան նիւթ եղաւ (07. ԱՐԲ. 42): Այդ նոր ժողովներն եղան որ Երուսաղէմի խնդիրին մասին վերջնական որոշումները տուին (3063): Ժողովի խնդիրին հետ առաջարկուած միւս խնդիրներուն լուծման համար եղած կամ խոստացուած կարգադրութիւններուն մասին պատրիարքը միայն պայմանական հաւանութիւն յայտնեց, իրեն գրուածներուն իրական գործադրութեան սպասելով (ՕՄԱ. 78-80):

3077. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԵՒ ԿԻԼԻԿԻԱ

Գլխաւոր խնդիրներուն վրայ կեդրոնացնելով մեր մտադրութիւնը, կանցնինք բացատրել Կիլիկիոյ և Կ. Պոլսոյ աթոռներուն, և յատկապէս Խապայեանի և Օրմանեանի միջև տեղի ունեցած իրաւական և իրաւասական խնդիրները: Թէ՛ Օրմանեան և թէ՛ կեդրոնական վարչութիւնը Խապայեանի Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութիւնը քաջալերած ատեննին, այն համոզումն ունէին, որ պիտի վերջ գտնային Բէֆսիպեանի յարուցած անտեղի խնդիրները, ինչպէս ինքն Խապայեան ալ կը գրէր, թէ պիտի աշխատուի կրկին աթոռոց յարաբերութիւնները քաղցրացնել և սուրբ միութիւնը պահպանել, և ազգի կրկին հատուածոց, Էջմիածնականաց և Կիլիկեցոց մէջ եղբայրական սէր հաստատել (ԿԻԼ. 43): Իրօք ալ մինչև Խապայեանի Կ. Պոլիս այցելելը երբեք անոր կողմէն խնդիր չյուզուեցաւ. և այնպէս ըմբռնուեցաւ թէ վարչական որոշմամբ ժամանակին Բէֆսիպեանի հաղորդուած պայմանագիրը (2858) ընդունելի և գործադրելի նկատուած է Խապայեանի կողմէ: Կ. Պոլիս գալուն առթիւ ալ սկիզբէն այդ խնդիրը չյուզուեցաւ, զի բոլոր մտադրութիւնը Մաքսուտեանի խնդիրին շուրջը կը դառնար, և կեդրոնը ուրիշ խնդիրներով վատ տրամադրութեանց ենթարկուելէ կը զգուշացուէր (3055): Իսկ երբ այլևս այս մասին յաջողութեան յոյսերը նուազեցան, Սսոյ և Կ. Պոլսոյ աթոռոց յարաբերութեանց խնդիրը սկսաւ խօսուիլ, վարչութիւնը դարձեալ Բէֆսիպեանի ժամանակ կազմուած պայմանագիրը հաղորդեց, և նոր խորհրդակցութեանց համար Խապայեանը ժողովոյ նիստին հրաւիրեց. բայց նա ժողովին չեկաւ (04.ԱՐԼ.5712), և քիչ օր ետքն ալ մեկնեցաւ, և Սիսէն սկսաւ Կ. Պոլսոյ հետ յարաբերութեանց խնդիրներ յուզել: Յայտնի էր Կ. Պոլիս գալուն բուն նպատակին մէջ չյաջողելուն ցաւէն զգացուած ըլլալը, որով ուրիշի վրայ, քննադատած և իրեն կանուխէն չհետևած խնդիրները նորոգել կը ձեռնարկէր, և իրեն վէճի և մրցման գետնին կընտրէր եպիսկոպոսական ձեռնադրութեանց համար կեդրոնին հաւանութեան պահանջը, և դեկտեմբեր 10-ին նամակով մինչև իսկ Խրիմեան կաթողիկոսին կը դիմէր իրաւունք ստանալու համար (ԿԻԼ.29-31), զի գաղտնիք մը չէր Խրիմեանի Կիլիկիոյ հանդէպ տածած համակրութիւնը: Խնդիրը լուսաբանելու համար Օրմանեան ընդարձակ նամակ մը գրեց, իրեն իբրև հիմնակէտ առնելով այն սկզբունքը, թէ հայութիւնը մէկ եկեղեցի է, և մէկ կեդրոն ու գլուխ կրնայ ունենալ որ է Էջմիածինը, և տաճկահայութիւնը մէկ ազգ է, և մէկ կեդրոն ու գլուխ կրնայ ունենալ որ է Կ. Պոլիսը որով Սիսը երկու տեսակէտով ալ պէտք էր երկրորդական նկատուէր և առաջնութեան ձգտումներ չունենար, որպէսզի եկեղեցւոյն և ազգին բաժանման առիթ տուած չըլլար: Գալով եպիսկոպոսական ձեռնադրութեանց համար կեդրոնի հաւանութիւն պահանջուելուն, և կը յիշեցնէր թէ Էջմիածնի Մայրաթոռն ալ առանց Կ. Պոլսոյ ընծայագիրին Տաճկահայոց եպիսկոպոս չի ձեռնադրէր, իսկ

ձեռնադրուածներուն իրենց աթոռին մէջ ծառայելուն պայմանը նորութիւն չէր, այլ Էջմիածնի Փիլիպպոս և Կիլիկիոյ Ներսէս Կաթողիկոսներուն միջև Երուսաղէմի 1652 ի ժողովով հաստատուած կանոն էր (1691): Գալով Օրմանեանի Կիլիկիոյ աթոռին հանդէպ տածած վգացմանց, կասկածելն իսկ միտքէ անցնելու կէտ մը չէր, և Խապայեան ինքն տեղեակ էր որ երբ Խրիմեան Ռուսահայոց կալուածներուն գրաւման և պօլօժէնիէի փոփոխութեանց տագնապներուն մէջ, մինչև իսկ Էջմիածնի աթոռին խափանուելուն երկիւղը կը կրէր, Հայ եկեղեցւոյ ապագայ վտանգը տեսնելով՝ Օրմանեանի դիմած էր, թէ ի՞նչ նախապգուշական միջոց հնար էր գործածել. Օրմանեան գրաւոր և պատճառաբանեալ խորհուրդ տուած էր այժմէն Կիլիկիոյ աթոռն ու աթոռակալը իբրև Մայրաթոռոյ աթոռակից հռչակել, որպէսզի Մայրաթոռին և աթոռակալին որևէ վտանգի ենթարկուելուն առթիւ, Կիլիկիոյ աթոռն ու աթոռակալովը նովին իսկ Հայ եկեղեցւոյ գլուխ դառնայ և եկեղեցին անգլուխ մնալու վտանգէն ու վնասէն ապատ մնայ, գուցէ ռուսական կառավարութիւնն ալ այդ նախատեսելով վտանգաւոր որոշումէն վգուշանալ: Յայտնի էր միանգամայն թէ Օրմանեան բոլորով սիրտով ու միտքով աշխատած էր Կիլիկիոյ աթոռը երկարատև պարապութենէն ապատելու, պայն իբրև Հայ եկեղեցւոյ կարևոր տարր մը նկատելով մինչ և ոչ իսկ միտքէն անցուցած էր Աղթամարայ աթոռը վերականգնեցնել, զի Հայ եկեղեցւոյ տեսակէտով կարևորութիւն ունեցող տարր մը չէր: Խապայեան պէտք չէր նաև դիտողութենէ վրիպեցնէր, որ Կիլիկիոյ վիճակնր ու քաղաքներ 1896 է 1903 վարժուած ըլլալով իրենց ամէն գործերուն համար Կ, Պոլսոյ պատրիարքարանին դիմել, Խապայեանի օժուելէն ետքն ալ նոյնպէս դիմումներու ըրած ատեննին, Օրմանեան անոնց յանձնարարած էր թէ պարտաւոր էր ուղղակի իրենց կաթողիկոսին դիմել: Այդ յիշատակութիւնները պէտք էր բաւական ըլլային Օրմանեանի մասին չկասկածելու. սակայն Խապայեանի միտքն տեսութիւնը անգամ մը պղտորած էր Մաքսուտեանի անձին օգտակար եղած չըլլալուն վրայ, և Մաքսուտեանի Կ. Պոլիս բերուելուն և հաշուեքննութեան ենթարկուելուն լուրերն ալ զինքն առաւելօք յուզուած էին, և այդ պարագաներուն պատասխանատուութիւնը ամբողջաբար Օրմանեանի վրայ կը ծանրացնէր, և զինքն Պոլիսէն շուտ հեռացնելու թաքուն նպատակ չկրնալուն մէջ (ԿԻԼ. 43):

3078. ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ԽՆԴԻՐԸ

Խապայեան անգամ մը Կ. Պոլսոյ պատրիարքարանի հանդէպ աննպաստ վգացումներով գրաւուած, Կիլիկիոյ գահակալին կաթողիկոս անունը և եպիսկոպոս ձեռնադրելու և միւռոն օրհնելու արտօնութիւնը փաստ գործածելով, մինչև իսկ Կիլիկիոյ հայութիւնը ապգութեան յատուկ և անջատ հատուած նկատելու կը հասնէր, և օգտուելով Մակար և Մկրտիչ կաթողիկոսներուն կողմէն Գէորգի հակակիլիկեան մարմաջին ու կարգադրութեանց ջնջուիլը ու խափանուիլը, զորս մենք ալ մեղադրելով յիշած ենք իրենց կարգին, և ինքզինքը համերաշխութեան առաքել կարծեցնելու փափաքով, դարձեալ և դարձեալ եպիսկոպոսաց համար կեդրոնի հաստատութեան պահանջին դէմ կը մաքառէր, և պայն իբրև մեծ անիրաւութիւն նկատել տալ կուզէր, որուն Մայրաթոռոյ գահակալներն իսկ համակերպած էին: Այդ դիտմամբ 1906 մարտ 21-ին ընդարձակ գրութիւն մը կուղղէր պատրիարքին, և սովորական խնդիրին կը խառնէր նաև Կիլիկիոյ եպիսկոպոսներուն Էջմիածնական վիճակաց մէջ ապատօրէն պաշտօնավարելու և Կ. Պոլսոյ պատրիարք ընտրուիլ կարենալու կէտերը (ԿԻԼ. 33-36), հակառակ նոյն իսկ ապգային սահմանադրութեան: Խառն ժողովը այս գիրը նկատողութեան առնելով իր նախագահին կը յանձնէր, նախապէս նոյն ինքն Խապայեանի, նաև Մայրաթոռոյ կաթողիկոսին հետ բանակցիլ և արդիւնքը ժողովին բերել, և ըստ այս իրեն Խապայեանի ալ գրուած էր (ԿԻԼ. 44), և լրագիրի մէջ ալ հրատարակուած էր (ՕԵ. ԱՐԼ. 6494): Բայց ինքն, չենք գիտեր որ լրագիրի մէջ կարդալով, թէ

ժողովը ստիպողական չէ համարեր իւր գիրը, և յետաձգեր է նկատողութեան առնել առիթը ներկայացած ատեն, իբր հակառակ ցոյց, հոկտեմբեր 25-ին եպիսկոպոս կը ձեռնադրէ Դպրեվանքի աշակերտութենէն Սերոբեան Մուշեղ վարդապետը որ Ատանայի առաջնորդ կը գտնուէր, իսկ կեդրոնական վարչութիւնը հարկ կը տեսնէ յայտարարել թէ ժողովն որոշած է որ Կիլիկիոյ մէջ ձեռնադրուած եպիսկոպոսները կրնան պաշտօնավարել Կիլիկիոյ թեմերուն մէջ միայն (06. ԲԻՁ. 3091): Իսկ Խապայեան իր այդ մեծ գործողութիւնը յաղթանակաւ կը պանծացնէ Խրիմեանի առաջ նոյեմբեր 19 ին նամակով (ԿԻԼ. 37-39): Խապայեան կարծած է թէ վարչութեան այդ յայտարարութիւնը Կիլիկիոյ աթոռին դէմ հակառակութենէ առաջ եկած ըլլայ, մինչ կանգիտանայ կամ անգիտանալ կը ձևացնէ թէ նոյն միջոցին Օրմանեան ու կեդրոն ետևէ էին եպիսկոպոսացուներ յղել Էջմիածին Խրիմեանէ ձեռնադրուելու, որուն կառավարութիւնը սաստիկ կը հակառակէր, և հարկաւ մէկէ մը դրդուած Սիսը կը ցուցնէր իբրև ձեռնադրութիւն ստանալու տեղ, որուն Օրմանեան իրենց եկեղեցական կանոնին հակառակ ըլլալը կը պնդէր: Նոյն օրեր Խապայեանի ձեռնադրութիւն կատարելը, կառավարութիւնը արդարացնելու և վարչութիւն ստելու նշանակութիւնն ունէր, և յայտարարութիւնը ստիպողական կը դառնար, ինչ որ միւս կողմէն կրկնումն էր Երուսաղէմի ժողովին որոշման, որոնք հրատարակութեան ալ կը տրուէին: Գալով ձեռնադրութեան ապագակին, ժողովուրդին թախանձանքէն աւելի պօրաւոր էր Սերոբեանի ժառանգը, որ Խապայեանը հաճեցնելու համար մինչև իսկ իր համոզման հակառակ Մաքսուտեանի պաշտպանութեան համար նամակ մը կուղղէր Օրմանեանի, պատճէնը Խապայեանի և Երէցեանի հաղորդելով, իսկ իր նպատակին հասնելէն հապիւ 8-10 օր ետքը, նոր նամակ մը կը գրէր Օրմանեանի, այս անգամ իբր իր ուսուցիչ և հոգևոր ծնողի, որպէսզի պինքը Մայրաթոռոյ եպիսկոպոսաց շարքին անցունելու միջնորդէ: Խապայեան ուրիշէ առաջնորդուելու վարժ, անգիտացած էր անշուշտ այդ դարձուածները և Սերոբեանի գործածած միջոցները, և ակներև էր Մաքսուտեանի պաշտպանութեան մէջ ձախողերէն շարուած ըլլալը: Միւս կողմէն անգամ մը ձեռք առած խնդիրին վրայ պնդելով աւելի ընդարձակ նամակ մը կուղղէ կեդրոնին 1907 փետրուար 26ին, միշտ միևնոյն թելը հնչեցնելով, և ապառ եպիսկոպոսական ձեռնադրութիւն, և իր եպիսկոպոսներուն համար Էջմիածնի վիճակաց մէջ համարձակ պաշտօնավարութիւն և Կ. Պոլսոյ պատրիարքութիւն պահանջելով, և իր կատարած ձեռնադրութիւնը արդարացնելու համար, չենք գիտեր ո՛ր լրագիրի մէջ կարդացած մէկ տողը յառաջ բերելով, առանց պաշտօնագիրի սպասելու կամ պաշտօնագիրի միտ դնելու: Սերոբեանի ուխտագիրին պատճէնն ալ կը հաղորդէր, զոր Խրիմեանի ալ ղրկած էր, ջանալով իբրև մեծ վիջողութիւն ցուցնել, Կիլիկիոյ աթոռը Ամենայն Հայոց Կաթողիկոս, և յաջորդ Լուսաւորչաց Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ կոչելէն ետքը, Մայրաթոռոյ կաթողիկոսը իր անունի յետադասելը, որպէս և հայրապետին Արարատեան Մայրաթոռոյ անցողակի յիշատակութեամբ մը (ԿԻԼ.42,44):

3079. ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Խապայեան միշտ համերաշխութեան արմատը Կիլիկիոյ աթոռին բարձրութեանը մէջ դնելով, և եկեղեցականապէս Մայրաթոռէն և ապագայնապէս կեդրոնէն անկախ և համահաւասար դիրք մը կապմել ուզելով, իր վերջին 1907 փետրուար 26-ի նամակով ութը յօդուածներ կառաջարկէր իբրև հիմն համերաշխութեանց և յարաբերութեանց: 1. Մայրաթոռոյ կաթողիկոսը և վիճակներէն, բայց փոխադարձ պէտք է որ Կիլիկիոյ կաթողիկոսն ալ յիշուի Էջմիածինէն և իրեն վիճակայիններէն: 2. Կիլիկիոյ կաթողիկոսը ի կրօնականս անկախ է Կ. Պոլսոյ պատրիարքարանէն, իսկ Էջմիածնի կաթողիկոսին հետ խորհրդակցութիւն կամ կարծեաց փոխանակութիւն կը կատարէ: 3. Կիլիկիոյ եպիսկոպոսները կեդրոնի ընծայագիրով պիտի ձեռնադրուին եթէ ապառ ըլլալն Էջմիածնի

վիճակաց մէջ պաշտօնավարել և՛ բարձրագոյն պաշտօններու համար ընտրելի ըլլալ: 4. Կիլիկիոյ կաթողիկոսին ամենապատիւ ածականը քիչ է, աւելի բարձր անուն որոշելու է. ուրիշ անգամ ինքն Շնորհապարդ առաջարկած էր: 5. Կիլիկիոյ կաթողիկոսը օսմանեան կեդրոնական իշխանութեան հետ յարաբերութիւնները 4. Պոլսոյ պատրիարքի միջնորդութեամբ կը կատարէ, բացի ստիպողական պարագաներէ: 6. Կիլիկիոյ առաջնորդաց հաստատութիւնը կաթողիկոսին կը պատկանի և ոչ պատրիարքարանին: 7. Առաջնորդաց հրովարտականները պատրիարքարանը կը ստանայ, բայց կաթողիկոսը կը յանձնէ: 8. Մութաթայի տուրքը կաթողիկոսը կը գանձէ և միայն կէսը պատրիարքարանին կը յղէ, ի վերջոյ կը յաւելու թէ նպաստից և նիւթական պայմաններու չուպէր խառնիլ (ԿԻԼ. 45-46): Այդ առաջարկներու մէջ կարևորութենէ վուրկ կէտերու հետ, ինչպէս է կաթողիկոսին տրուելիք ածականը, այնպիսի կէտեր ալ կան, զորս հնար չէր կեդրոնի որոշմամբ ընդունիլ և վերջացնել. ուստի խառն ժողովը դարձեալ նախագահին յանձնեց բանակցութեան մտնել, բացատրութիւններ տալ և առնել, ի հարկին Մայրաթոռոյ ալ կարծիքն ու կամքը իմանալ և եզրակացութիւնը նորէն ժողովին բերել (07. ԱՐԼ. 6439): Կիլիկիոյ կաթողիկոսին յիշատակութիւնը իբրև պատուոյ կէտ մը կը նկատէ Խապայեան, մինչ իսկապէս իրաւասութեան նշանակ է, և Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը իրաւասութիւն չի վայելեր Էջմիածնայ սահմաններուն վրայ, մինչ Մայրաթոռոյ իրաւասութիւնը Կիլիկիոյ վրայ ալ կը տարածուի: Եթէ Երուսաղէմի պատրիարքին յիշատակութիւնը իբր օրինակ կը յիշուի, պէտք է գիտնալ թէ այն պատմական պարագայ մըն է, 4. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքութեանց ժամանակ մը միացած ըլլալէն, և Յովհաննէս Կոլոտի կողմէ Գրիգոր Շղթայակիրի ընթացումը պատիւէն առաջ եկած: Կրօնական խնդիրներու մէջ Կիլիկիոյ կաթողիկոսին միայն խորհրդակցութեան կամ կարծեաց փոխանակութեան համար Մայրաթոռ դիմելը, Մայրաթոռոյ իսկութիւնը ուրանալ է: Կիլիկիոյ եպիսկոպոսներուն 4. Պոլսոյ վիճակներուն մէջ պաշտօնավարած ըլլալուն օրինակներ պակաս չեն, իսկ բարձրագոյն պաշտօններու, իմա՝ 4. Պոլսոյ պատրիարքութեան թեկնածու ըլլալը, ազգային սահմանադրութեան հակառակ է, և փոխելը Խապայեանի կամքով չէր կրնար ըլլալ: Խապայեանի ձեռքն եղող հրովարտակն 4. Պոլսոյ պատրիարքութեան ներքև Կիլիկիոյ կաթողիկոսութիւն կը ճանչնայ, և կառավարութեան օրէնքին հակառակ կըլլար Կիլիկիին ուղղակի նախարարութեանց հետ յարաբերութեան դնելը, զի ստիպողական պարագաներու բացառութիւնը կրնար կամայական մեկնութեանց և ընարձակմանց առիթ տալ: Առաջնորդներու հաստատութիւնը կեդրոնէն հանելով Կիլիկիոյ կաթողիկոսին փոխանցելը, կեդրոնին ընդհանուր տաճկահայութեան վրայ իրաւասութիւնն ուրանալ կըլլար: Ասոնց հետ մէկտեղ սահմանադրութիւնը ազգային վարչութեան համար ժողովներ կը պահանջէ, մինչ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ազգային ժողովներ չունէր, և Խապայեանն ալ կաթողիկոսին անհատական իշխանութիւնը պաշտպանելով սահմանադրական գրութիւնը եղածած կըլլար: Այս տեսութիւններ պարզուեցան Օրմանեանի կողմէն և բանակցութիւններ շարունակեցին. սակայն դեռ եզրակացութեան չյանգած օսմանեան կառավարութեան ձևը փոխուեցաւ, պատրիարքարանը ուրիշ ձեռքերու անցաւ, և Խապայեանի համերաշխական առաջարկները մէկ կողմ թողուեցան: Կարծես թէ ինքն Խապայեան ալ ազգային վարչական տեսակէտը անտես ընել կը ջանար, երբոր ամենայն ինչ կրօնական տեսակէտի կուպէր վերածել, և լոկ ազգային սովորութենէ առաջ եկած եպիսկոպոս ձեռնադրելու և միւռոն օրհնելու արտօնութեանց կաշառելով, շարունակ Խրիմեանի կը դիմէր, անոր օգնութեամբ և հեղինակութեամբ 4. Պոլսոյ ազգային վարչութիւնը ճնշելու: Խրիմեան որչափ ալ Գէորգի տեսութիւններէն հեռու և Կիլիկիոյ հետ իր գործունէութեան սկիզբէն սրտագին կապուած (2775), սակայն չէր կրնար եկեղեցական կանոններէն և ազգային պահանջներէն հեռանալ, մանաւանդ որ

Խապայեան չէր քաշուած նոյն իսկ Մայրաթողը վիրաւորող կէտեր առջև դնել, ինչպէս էին Մայրաթողոյ յիշատակութիւնը յետադասելը և հեղինակութիւնը խորհրդակցութեան վերածելը և հարկաւ այս էր պատճառը որ խապայեանի դիմումները անպատասխանի կը մնային, և կը պարտաւորուէր սինդոն նախանդամ Սուրէնեան Գէորգ եպիսկոպոսի դիմել մարտ 25-ին, և լուռութեան մասին գանգատիլ: Խրիմեան վերջապէս պատասխան մը կը գրէր ապրիլ 26-ին, որով կը յորդորէր չհետևիլ սնափառ և ոչ էական խնդրոց. և վեհանձնութեամբ նայիլ յարտաքին ձևակերպութիւնսն, և կը խրատէր պայքար մղել միայն ընդդէմ վնասաբեր խոչընդոտաց, աշխատելով դաստիարակութեան հայ մանկաւոյն, բարձրացուցանել զբարոյական անկեալ վիճակ ժողովրդական գաւառաց, և լուսաւորել զմիտս նոցա համերաշխ եղբայրութեամբ կենցաղավարել (ԿԻԼ. 51-52): Հարկաւ թափանցեց Խապայեան հայրապետական խրատներուն խորին իմաստը, որ այլևս չյուլեց համերաշխութեան անունին ներքև ծածկուած խնդիրները, իր աթոռին ինքնօրէնութիւնը, կեդրոնէ անկախութիւնը, ածականի տարբերութիւնը հետապնդել, որոնք եթէ չհասան Բէֆսիլեանի ըմբոստ և ապերասան չափազանցութեանց, սակայն բոլորովին չթօթափեցին կարծուէր թէ վերջ պիտի տրուէր Խապայեանի օրով, և կը կարծենք թէ իրօք վերջ տրուած կըլլար, եթէ կարենար նա մերկանալ եռեակի յարաբերութեանց արմատացեալ կապերէն:

3080. ԿԻԼԻԿԻՈՅ ԳՈՐԾԵՐ

Խապայեանի կաթողիկոսութեան սկիզբէն մինչև օսմանեան ապատութեան թուականը, 1903-էն 1908, հինգ տարիներ անցան, և մենք իրեն գործունէութենէն յառաջ բերինք միայն Կ. Պոլիս այցելելը (3055), և Կիլիկիեան խնդիրը յուլեւը (3077), և կը մնայ համառօտ ակնարկ մըն ալ նետել իր ժամանակի վիճակային գործոց վրայ: Բայց անոնց չմտած յիշենք 1903 օգոստոս 14-ին, այսինքն Խապայեանի օծումէն միայն չորս ամիս ետքը հանդիպած, Կիլիկիոյ տեղապահ Բէքմէլեան Կիրակոս եպիսկոպոսի մահը (03.ԲԻՁ.2103): Թէպէտ խորին ծերութեամբ տկարացած, թէպէտ ոչ մեծ մտաւորական և գործնական պաշարով ճոխացած, սակայն յիշատակաց արժանի անուն մը թողուց նա, նեղ ժամանակներու մէջ հաւատարմութեամբ պահպանելով Կիլիկիոյ աթոռին իրաւունքները, և օրինաւոր յարաբերութիւն պահելով կեդրոնին հետ, և իր փափաքին լրումը տեսնելով, աթոռը օրինաւոր աթոռակալի յանձնելով: Խապայեանի գալով, միաբանական կեանքի վարժ և ներքին բարեկարգութեանց գաղափարներով սնած, կը յուսուցուէր որ նոր կեանք և նոր ոգևորութիւն ներշնչէր Կիլիկիոյ աթոռին և մայրավանքին և վիճակներուն վրայ: Բայց ակնկալութիւնը արդիւնաւորութեան չպատասխանեց, և Կիլիկեան հայ կեանքը զգալի փոփոխութիւն չկրեց իր պաշտօնավարութեան առաջին հնգամեային մէջ: Ի դէպ էր որ այս ու այն կողմ գտնուող Սոսոյ միաբանները շուրջը հաւաքել, և իւրաքանչիւրը իր ընդունակութեան համեմատ գործածելով՝ աթոռոյ միաբանութիւնը կազմակերպուէր, մինչ անելի սիրեց Երուսաղէմէ արտաքսուածները կամ հեռացածները շուրջը հաւաքել, որոնք ոչ աթոռին հետ կապ մը չգացին և ոչ բնիկ միաբանութիւնը զօրացնելու ծառայեցին: Հապիւ 1905-ին, որ է ըսել պաշտօնի մտնելէն երկու տարի ետքը, մատակարարի ու շինուածապետի ու կալուածապետի ու ագարակապետի անուանումներ եղած ըլլալը լսուեցաւ (05. ԲԻՁ. 2531), բայց գործերնին չիմացուեցաւ: Կանոնաւոր ժողովներ չկազմուեցան, թէպէտ Կիլիկիոյ աթոռին ազգային իրաւունքներ և ազգային գործունէութիւն պահանջուեցաւ մինչ պէտք էր նախապէս այդ պատրաստութիւնները լրացնել, որ վստահութիւն ներշնչուէր, և գործի և ոչ երևոյթի, արդիւնքի և ոչ սեթևեթի հետամուտ ըլլալու գաղափարը չպարթուցանէր. պէտք էր կըսենք առաջ նախապատրաստութիւններ լրացնել և աթոռին ազգային կազմակերպութիւն մը տալ ժողովներով և խորհուրդներով, և առիթ շարուէր Կիլիկիոյ աթոռին ազգային կեդրոն ըլլալու անընդունակութիւնն ու անյարմարութիւնը

դիմադրելու: Եթէ դպրանոցի մը բարեկարգութեան ձեռնարկուեցաւ, և եթէ քանի մը վիճակներու մէջ քիչուշատ կարգադրութեան սկզբունքներ երևցան (04. ԱՐԼ. 5502), Արմաշու դպրեվանքէն տրամադրուած ոյժերն էին որ գործեցին, և ոչ Սոսյ ծոցէն ելած գործիչներ: Խապայեան հետևեցաւ վիճակները այցելել, կացութեան տեղեկանալու հետաքրքրութիւնն ունեցաւ, բայց հետևանքը անկէց անդին չանցաւ: Մայրավանքին շէիքին վրայ ինչ ինչ բարւոքումներ մտցնել խորհուեցաւ, բայց մասնաւոր նորոգութիւններ եղան կատարուածները: Ընդհանուր դաստիարակութիւնը քաջալերելու փափաքն ալ ցուցուց, բայց կեդրոնին նպաստներէն աւելի միջոցներ չգործածուեցան: Դիուտելու գլխաւոր կէտն է որ չկրցաւ ոգևորել իր ժողովուրդը, ինչ որ ոմանք Կիլիկեցւոյն աննպաստ կերպով որչափ գիտենք, կարող և գործունեայ, բաղձալից և տրամադրելի տարր մըն է Կիլիկեցի հայաբնակութիւնը, և եթէ Կիլիկիոյ թեմականներն ոմանց աչքին, ըստ բաւականին գնահատած ըլլալ չեն թուիր իրենց կաթողիկոսն արժանիքն ու աշխատանքը (07. ԲԻՋ. 3230), պատճառը ոչ այնչափ Կիլիկեցւոյն որչափ կաթողիկոսին վրայ ծանրացնելու է, պի Կիլիկեցւոց թափանցիկ տեսութիւնը հաճութեամբ չնկատեց իր կաթողիկոսին Կիլիկիայէն աւելի Երուսաղէմով վբաղիլը, և Երուսաղէմի օգտակար ըլլալու հոգւով քէֆսիպեանանման խնդիրներ յուզելը, որոնցմէ ձանձրացած էր, կանուխէն իր միտքը յայտնած էր Քէֆսիպեանի դէմ դժկամութեամբ, և ընտրութենէ առաջ և ընտրութեան ատեն կեդրոնի կարգադրութեանց համակերպութեամբ, և գահակալը փոխելով ոճը փոխուած չէր տեսներ: Քառամեայ տեղեկագիր մը հրատարակուեցաւ 1907 մայիսին, որով տեղեկութիւններ կը տրուին կաթողիկոսական այցելութեանց, վիճակային և կրթական գործերու, կալուածական և շինուածական ձեռնարկներու վրայ, սակայն պաշտօնական հրատարակութիւն մը չէ հրատարակուածը, այլ լրագրական թղթակցի մը, Միսաք Գապապեանի ստորագրութիւնը կը կրէ (07. ԲԻՋ. 3228), բարեմարդիկ ըլլալու վգացումներէ ալ ապատ չերևիր գրուածը: Շինութեանց կարգին մասնաւոր նորոգութեանց հետ քանի մը մասնաւոր շինութիւններ ալ կը յիշուին բարերարներու նուէրներով կատարուած, սակայն շատ աւելին հնար է քաղել Կիլիկեցի ունևորներէն, եթէ բոլորապատուղ Կիլիկեցւոյն նուիրուելով և հաի խնդիրներէ ձեռք քաշելով ոգևորուած ըլլար Կիլիկեցի հայութիւնը, Խօսքերնիս ամփոփելով պիտի չըսենք թէ բոլորովին անպատուղ եղած ըլլայ Խապայեանի պաշտօնավարութեան առաջին հնգամեայն, սակայն այն չեղաւ ինչ որ կը սպասուէր, և պատճառը եռեակի հին խնդիրն էր, որուն առաջ հետամուտ եղաւ նպաստել, և երբ չյաջողեցաւ՝ օտարոտի խնդիրներով կեդրոնի հետ մաքառիլ սկսաւ, և փոխանակ համակրութիւն շարժելու ու շահուելու, անտարբերութեան հանդիպեցաւ: Կ. Պոլիս այցելելուն սկիզբները Կիլիկիոյ համար մայրաքաղաքէ հանգանակուած երկու հապար ոսկւոյ գումարը, եթէ վերջէն իրեն չյանձնուեցաւ, եթէ Շահնապարեանի կտակային գումարին մասին նպաստաւոր որոշում շարուեցաւ, պարզապէս Մաքսուտեանի պաշտպանութենէ ծագած ձախող տպաւորութիւնն էր պատճառաւոր: Այդ խնդիրին իր վրայ ներգործած տխուր ազդեցութեան նմոյշ կրնայ նկատուիլ, Օրմանեանի ուղղած մէկէ աւելի նամակները, որոնցմով կը պահանջուէր որ նա յայտարարէ թէ ինքն Երուսաղէմի թանգարանէն գրչագիր աւետարան մը վերցուցած չէ (ՊՃՆ, 48), իբր թէ Երուսաղէմի թանգարանը Կ. Պոլիս գտնուէր և Օրմանեանի տրամադրութեան ներքև ըլլար, որ կարենար ստուգել թէ հատորը տեղն է թէ ոչ:

3081. ԷՋՄԻԱԾՆԻ ԳՈՐԾԵՐ

Կիլիկիոյ աթոռին գործերէն կանցնինք Մայրաթոռոյ գործերէն կանցնինք Մայրաթոռոյ գործերուն, պորս թողուցինք 1905 տարուոյ կէսին, դպրոցաց և կալուածոց խնդիրներուն նպաստաւոր լուծման պատմութեամբ (3033): Այդ թուականէն, այսինքն 1905 օգոստոս 2-էն մինչև 1907 հոկտեմբեր 29, երկու տարի ու երեք ամիս ևս ապրեցաւ Խրիմեան կաթողիկոս, և բոլորեց իր

կեանքին 85.87 տարիները: Թէպէտ խոր ծերութեան հասած, սակայն տակաւին հին Խրիմեանի ժիր հոգին չհեռացաւ իրմէ, իր ազգասիրական և ժողովրդական ձգտումները իրենց թռիչները չկորուսին, անոր միտքին մէջ եղող հին գաղափարներ վերջին օրերուն մէջ ալ երևան եկան. բայց տակաւին պահ մը պարտաւորուեցաւ մեծ տագնապին հետևանքներով պաղիլ, գրաւեալ ինչքերը ետ առնել, իւրաքանչիւրին մնացած ատեն խաթարեալ կալուածները հաշիւները ճշդել, կառավարութեան ձեռքը յարդարել, անհոգութեամբ վնասուածները կարգադրել և շինուածները նորոգել, որոնք նոր աշխատութեան և հոգածութեան դուռ բացին որոնց թէպէտ մօտէն հետևելու Խրիմեան ոչ յառաջ յարմարութիւն և ոչ վերջերս վօրութիւն ունէր, սակայն իւրաքանչիւր գործին յանձնաժողովներ և յանձնակատարներ նշանակելու փոյթ տարաւ: Խրիմեանի ծերութիւնը ոչ միայն կալուածոց մեծ տագնապին վերջանալովը մխիթարուեցաւ, այլ և ուսական պետութեան մէջ հռչակուած ազատական սկզբունքներուն հրատարակութեամբը սփոփուեցաւ: Հայոց խնդիրը կարգադրող հրովարտակէն քանի մը օր ետքը, օգոստոս 6-ին հրատարակուած էր ազատութեանց խոստումնալից հրովարտակն ալ (3033). սակայն ուսական տարրը ճաբոնական պատերազմին ձախողութենէն տպաւորուած և ազատութեան նոր խոստումներով գրգռուած, չսպասեց որ ամենայն ինչ հետզհետէ կայսերական շնորհէն բղխէր. անմիջական գործադրութեան փափաքը պայրացաւ իր վրայ, ժամանակով անմտադիր անցնող խստական կամ բռնական դիպուածներ, արդարութեան և իրաւունքի փորձանքներուն շփուիլ սկսան, և պահանջներ ցոյցեր սկսան հրապարակ իջնել: Մոսկուայի համլսարանին ընտրութեամբ նշանակուած տեսուչ Տրուբեցկոյի, հանրային կրթութեան նախարարին ներկայութեամբ նիստի մը մէջ ժողովրդեան և ուսանողութեան ազատութեան համար ճառելիս տեղի ունեցած մահը կիրքերը յուպեց, և Պետրբուրգի մէջ 120,000 հոգուոյ բազմութիւն մը դագաղին շուրջը պատեց, և ազատութեան երգերով յուղարկաւորութիւն կազմեց: Ոստիկանութիւնը զսպելու միջոցներու ձեռնարկեց, բազմութիւնը ըմբոստացաւ, ցոյցը հանրային դարձաւ, ամէն քաղաքներէն համերաշխութեան ձայներ միացան (05.Ա.Ր.Ր.987), և վերջապէս կայսրութիւնը տեղի տուաւ, և Նիկողայոս կայսր երկիրը խաղաղացնելու միակ միջոցը գտաւ 1905 հոկտեմբեր 17-ի ազատութեան և սահմանադրութեան հրովարտակը հրատարակել, (05.Ա.Ր.Ր.977), և 21ին ընդհանուր ներում շնորհուեցաւ (05.Ա.Ր.Ր.982), և գրաքննութեան խիստ օրէնքն ալ դադրեցաւ (05.Ա.Ր.Ր.979): Խրիմեանի ծերութիւնը երիտասարդացաւ, իր մանկութենէն տենչացած ազատ մթնոլորտը շնչել սկսաւ, և յարմար առիթ սեպեց հայ եկեղեցական շրջանակին մէջ ալ ազատութեան խնդիրներ յուպելու և հրամաններ արձակելու, և կանուխ ձեռք առածները աւելի ուժգնութեամբ պնդելու: Ամուսնալուծման արտօնութիւնները արձակեց, թէպէտ կանոնական ձևի մը չվերածեց, և օրինական պայմանները իմանալ փափքողին կը պատասխանէր, թէ իմ օրէնք իմ սիրտն է: Մայր աթոռոյ միաբանական ժողովներով վանական մատակարարութեան հսկելու և վանական պաշտօնեաներու ընտրութիւններ ընելու, թէպէտ այդ մասին ալ որոշ գիծեր չսահմանուեցան: Աւելի ճշդութեամբ վարուեցաւ ազգակցութեան և խնամութեան ճիւղերով արգիլուած ամուսնութիւնները թուլացնելու մէջ, ազգակցութեան արգելքը եօթնէն վեցի վերածելով և խնամութեան արգելքը եօթնէն չորս իջեցնելով, և կնքահայրութեան կամ հոգևոր ազգակցութեան արգելքն ալ երեքի մէջ ամփոփելով: Այրի քահանաներու վերամուսնութեան խնդիրն ալ ձեռք առաւ, ժողովրդականաց և այրիացեալ քահանայից ոմանց խնդրանքէն շարժուած. բայց այս կէտը չուպեց վճռել առանց Կիլիկիոյ և Երուսաղէմի և Կ. Պոլսոյ մեծ աթոռներու խորհրդակցութեան և Ռուսիոյ եպիսկոպոսաց ալ կարծիքն ալ առնելու ուստի 1906 սեպտեմբերի պաշտօնագիրներով հարցումներ ուղղեց (06. Ա.Ր.Ր. 636), բայց երեք աթոռներն ալ ժխտական պատասխան տուին:

Յարութիւն պատրիարք աթոռին մէջ գտնուող եպիսկոպոսներու և մեծ վարդապետներու խորհրդակցութեամբ և հոկտեմբեր 12 ի համառօտ նամակով մը կը հիմնուէր եկեղեցւոյ հնաւանդ կանոններու վրայ (06. ԱՐԲ. 820): Սահակ կաթողիկոս նր նոյեմբեր 2 ի նամակով յառաջ գալիք անտեղութիւնները կը բացատրէր (06. ԱՐԲ. 809), իսկ Մաղաքիա պատրիարքին պատասխանը ընդարձակագոյն էր, որ կրօնական ժողովոյ բոլոր անդամներու միաձայն ստորագրութեամբ խնդիրը նկատի կառնէր իր վանապան տեսակէտներու ներքև: Նախ Պօղոսի թուղթերով կը հաստատէր եկեղեցականաց որևէ կերպով երկրորդ ամուսնութիւններուն արգիլուած ըլլալը, և առաքելական կանոնաց պարզ եկեղեցական կանոնաց նման ըստ պարագայից փոփոխելի չըլլալը, և քրիստոնէութեան ամէն ճիւղերուն այդ մասին համամիտ գտնուիլը: Կը յայտարարէր թէ եկեղեցական վրկանքները փոխադարձ հետևանքներն են իրենց ստացած նուիրական առաւելութեանց, թէ մասնաւորաց վրկումները հիմն են ընդհանրական բարին դիտող օրէնքներուն, թէ երկրորդ ամուսնութեան արտօնութիւնը սիրահարութեանց դուռ կը բանայ, և համարձակութիւն կու տայ անտեղութեանց, խիղճերու հետ գործ ունեցող քահանայից. թէ վերամուսնութեան արտօնուող այրի քահանաներ միայն երիտասարդներ կենթադրուին, որ մեծ թիւ չեն կազմեր և ընդհանուր օրէնքի վրայ չեն կրնար ազդել, թէ սակաւաթիւ հետևողներու առջև պատուաւոր ամուսնութեան դուռը բաց է եկեղեցականութենէ հրաժարելով, որ կամաւոր և պայմանաւոր յանձնառութիւն է և ոչ երբեք անհատական իրաւունք մը: Կ. Պոլսոյ պատրիարքը և կրօնական ժողովը առիթ կառնեն յիշեցնել, որ շատ օգտակար կըլլար, եթէ ամէն կարևոր առիթներու մէջ Մայրաթոռը մեծ աթոռներու խորհրդակցութեանց դիմէր (06. ԱՐԲ, 812-819): Թէպէտև լրագիրներ և նոյնիսկ քանի մը եկեղեցականք (06. ԱՐԲ. 821-824, և 07. ԱՐԲ. 40) պաշտպան կանգնեցան այրի քահանաներու վերամուսնութեան, սակայն Խրիմեան կաթողիկոս այլևս խնդիրը չյուզեց, և Կ. Պոլսոյ պատրիարքարանի 1907 ապրիլ 4-ի կոնդակով, կարգաւոյժ հռչակեց Բաղէշ վիճակի Ղուլթիկ գիւղի Ղապար Տէր-Ղապարեան և Պաս գիւղի Յովհաննէս Տէր-Յովհաննէսեան այրի քահանաները, որոնք փոխադարձաբար իրարու վերամուսնութիւնները օրհնած էին (07.ԲԻԶ.2190): 3082. ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱՅ ԺՈՂՈՎ

Պետական ապատութեանց հռչակմամբ եկեղեցական ապատութեանց ալ համարձակ ասպարէզ տալու փափաքը շատ աւելի շեշտուեցաւ Խրիմեանի կողմէն, երբ Տաճկահայոց ունեցած ազգային վարչութեան նման կազմակերպութիւն մըն ալ Ռուսահայոց համար հաստատել ուզեց փոխարքայական ժամանակաւոր կանոններն ալ պատեհութիւն ընծայեցին այդ նպատակին (07. ԱՐԲ. 33): Իրաւ այդ մասին եկեղեցական և աշխարհական յորդորողներ շատ ունեցաւ իր շուրջը, բայց առանց անոնց ալ Խրիմեանի տրամադրութիւնները ուրիշէ թելադրուելու պէտք չունէին. սակայն գործադրութեան պահուն հասած քաջալերութիւններն ալ իրենց դերը ունեցան, զի որչափ ալ պետական ապատութեան հռչակուելուն առաջին օրերէն, 1905 հոկտեմբերէն այդ խօսքերը կըլլային, բայց Խրիմեան դեռ վարանոտ էր, և հապիւ թէ 1906 մայիս 6-ին իր որոշումը տուաւ, և յանձնարարեց Տաճկահայոց սահմանադրութեան հետևողութեամբ կանոնադրութիւն մը կազմել, բայց գործադրութիւնը դիւրին չէր. միւս կողմէն որոշումը տրուելէն ետքը յապաղելու չէր, որ չըլլայ թէ միտք փոխելու ժամանակ տրուի: Գործը հետապնդողներ մայիս 10-ին կաթողիկոսին կը դիմեն և կը թախանձեն գոնէ սկզբունքը հռչակել յաջորդ օրը մայիս 11-ին Համբարձման տօնախմբութեան առթիւ: Իսկոյն կոնդակի պատճէնը կը պատրաստուի աշխարհաբար լեզուով, որ այն ալ նորութիւն մըն էր էջմիածնի մէջ, բայց հապիւ մինչև երեկոյ կուղղուի, կընդօրինակուի ու կը ստորագրուի, մայիս 10 թուականով, և գիշերով կը տպագրուի, ինչպէս գիշերով հեռագրատունն ալ բանալ կը տրուի որ լուրը վիճակներու և գլխաւոր քաղաքներու հասնի տօնին առտուն (06. ԱՐԲ.

401): Կոնդակը համառօտ էր, կը յիշէր Հայ Եկեղեցւոյն իր ժողովուրդին տուած իրաւունքը, իրեն Խրիմեանի 13 տարիէ ի վեր այդ իրաւունքը Ռուսահայոց ալ դարձնելու միտքը, և պարագայից այժմ յաջողիլը իսկ իբր ընտրելի պաշտօնեաներ կը յիշէր, թեմակալ առաջնորդները, յաջորդները, գործակալները, և հոգևոր վարչական հաստատութեանց պաշտօնեաները: Ընտրութեան ձևին համար ալ մինչև պատգամաւորներու ժողովով հաստատուն կանոնադրութեան մշակումը կը հրամայէր հետևիլ կաթողիկոսական ընտրութեան եղանակին ընդհանուր և անմիջական յանձնատուութեամբ (06. ԱՐԲ. 376): Մայիս 11, Համբարձման առտուն, լուսարարապետ Յովակիմեան Ղևոնդ եպիսկոպոս կը պատարագէ, Վաղարշապատի ժողովուրդը խուռն կը դիմէ վեհարանի ներքին պարտէզը, հոն հայրապետական մաղթանք կը կատարուի բացառիկ կերպով, կաթողիկոսը որ եկեղեցի չէր կրցած իջնալ, պատշգամէն կօրհնէ, պատգամաւորութիւն մը շնորհակալութեան կը ներկայանայ, և ուրախութեան տօն կը կատարուի ինչպէս Վաղարշապատ, նոյնպէս ուրիշ տեղեր ուր որ գիշերով յղուած հեռագիրները հասած էին (06. ԱՐԲ.402): Մայիս 10-ի կոնդակին հետեցաւ յունիս 7-ի կոնդակը, որ պատգամաւորաց ժողով կը հրաւիրէր օգոստոս 15-ին, Վերափոխման երեքշաբթի օրը, և պատգամաւորներու վերաբերեալ գլխաւոր հրահանգները կաւանդէր, իւրաքանչիւր հաւար ընտրողի կամ մօտաւորապէս 20,000 ժողովուրդի մէկ պատգամաւոր, իսկ բովանդակ Ռուսահայոց 60 պատգամաւոր՝ վեց վիճակներու վրայ բաշխուած. Բեսարաբիոյ 1, Աստրախանի 2, Շամախի 3, Արցախի 8, Տփղիսի 17, և Երեւանի 29 (06.ԱՐԲ 471-477): Պատգամաւորաց համաժողովին վբաղելու նիւթերն ալ պիտի ըլլային միայն դպրոցական, տնտեսական և ընտրական (06.ԱՐԲ.518): Ընտրութիւնները սկսան, և յառաջ անցնողներ եղան, անոնք որ կուսակցական գործունէութեամբ ձգտում և վարժութիւն ունէին, թէ առաջ անցնելու փափաքը չունէին և թէ միւսներուն գործունէութեան խառնուելէն կը վգուշանային: Եկեղեցականութիւնը իբրև որոշ մարմին ներկայացուցչութիւն չունէր, թէպէտ քանի մը քահանաներ պատահմամբ ընտրուած էին իբր պարզ ժողովրդական անձեր: Ընտրեալներ հետզհետէ սկսան էջմիածին խմբուիլ, բայց պատգամաւորներուն կրկին թիւով ուրիշ անձեր ալ հաւաքուեցան, խմբագիրի, թղթակցի, օգնականի և համակիրի անուններու ներքև, որոնք ամէն բան, ոչ միայն բնակութիւն և սնունդ, այլև անհատական պիտոյք էջմիածինէ կը պահանջէին և կընդունէին առատօրէն: Կաթողիկոսը որոշուած օրը համաժողովը բացաւ, ժողովասրահի վերածուած ձեմարանի հիւանդանոցին մէջ, բայց այլ ևս նիստերու չմասնակցեցաւ, որոնց շարունակեցին տպարանի սրահին մէջ՝ դաշնակցական յայտնի գործիչ Սիմէոն Ջաւարեանի ատենապետութեամբ: Ժողովի եկողներ առաջի օրէն մոռցան իրենց համար որոշուած դպրոցական և տնտեսական և ընտրական խնդիրներու շրջանակը, և սկսան ուրիշ շրջանակներ արշաւել, եկեղեցական, դաւանական, ծիսական, կանոնական, իրաւասական խնդիրներ յուզել, և իրենց իմացած ազատութեամբ ամենայն ինչ իրենց կամքին ենթարկուած կարծել. Հայոց եկեղեցին և եկեղեցականութիւնը վնասակար էր հրատարակում հայ ժողովուրդի համար, հակաեկեղեցական տրամադրութիւն էր ստեղծում, եկեղեցու պաշտօնէութեան դէմ պայքար, և եկեղեցականութեան պատկառելի դէմք մը՝ Սուքիաս Պարպեանց եպիսկոպոսը՝ անպատուութեան կենթարկուէր թթակոծութեան եղանակով: Մինչև իսկ հայրապետական իշխանութիւն առ ոչինչ կը համարուէր, չմտածելով որ գոյութիւննին ու գործողութիւննին ալ անկէ ստացած էին: Այս յայտարարութեանց պարագլուխներ և հետևողներ առաւելապէս որոշ կուսակցութեան սպասաւորներն էին (07.ԱՐԲ.36): Պատահմամբ ընտրուած խոհական և եկեղեցական անդամներ սկսան ժողովէն քաշուիլ, Աթոռի միաբանութիւնը ձայն բարձրացուց՝ Աթոռի մէջ և Աթոռի ծախքով Աթոռի դէմ գործող նորահաստատ ժողովին դէմ պետական պաշտօնեաներուն ալ մտադրութիւնը գրգռուեցաւ, երբոր

կառավարութեան ալ իրենց գործին խառնուելու իրաւունք չունենալու յայտարարութիւնը լսուեցաւ:

3083. ԺՈՂՈՎԻՆ ՑՐՈՒԻԼԸ

Յուսախաբութիւնն ու հիասթափումը Խրիմեանն ալ գրաւեց, երբոր գործին ձախող ուղղութիւնը տեսաւ, և երբոր իր հայրական խրատներն ալ, զորս անշուշտ չէ խնայած, արդիւնք չունեցան իր ստեղծած և գումարած կեդրոնական ժողովին առջև, որ գոնէ կառավարութեան առջև կարենար իր նախաձեռնութեամբը ստանձնած պատասխանատուութիւնը արդարացնել: Արդէն յայտնի էր որ ռուսական կառավարութիւնը չպիտի հանդորժէր ազգայնական գրութեան և անկոպար ազատութեան պայմաններու ներքև կազմուած ժողովի մը, որ չէր կրնար յարմարիլ իր ընդունած և հաստատած օրէնքին: Խրիմեան պարտաւոր էր կանուխէն այդ կէտը կառավարութեան հետ խորհրդակցութեամբ և համերաշխութեամբ կարգադրած ըլլալ, և ոչ յանկարծ իր կողմէն օրէնքի փոփոխութեան ձեռնարկել, այնչափ և այնպիսի ընդարձակութեամբ մը, որուն ոչ թէ եկեցին կամ Ռուսաստան, այլև բոլոր ազգերու և պետութիւններու օրէնքները դեռ ևս չէին ձեռնարկած, որպէս էր ժողովներին մասնակցելու և պաշտօններ ստանձնելու իրաւունք ունին հաւասարապէս 21 տարին լրացուցած բոլոր արք և կանայք: Տարօրինակ էր նաև իր բնութեամբը կրօնական կամ հոգևորական ժողովին մէջ եկեղեցական դասակարգին ներկայացուցիչ չունենալը, զի եթէ Հայ Եկեղեցին իր լայնախոհ հայեցումով աշխարհականը եկեղեցւոյ մէջ ամէն նրաւունքէ չի զրկէր, և աշխարհականը մատակարարական և ընտրական կէտերու մէջ իբր եղեկեցականի ընկերակից կրնդունի, բայց ոչ երբեք եկեղեցականը զրկելով միայն աշխարհականի կը յանձնէ իր գործերն ու շահերը: Պօլօժնիէն կաթողիկոսի ընտրութենէն դուրս աշխարհականին ընտրողական մասնակցութիւնը չի յիշէր, միայն կաթողիկոսէ առաջարկութիւնը և պետութեան որոշումը օրինադրելով, սակայն կաթողիկոսը չի զրկէր իր գործին համար խորհրդակիցներ ունենալէ. ուստի դժուար չէր կառավարութենէն ստանալ եթէ կաթողիկոսը առաջարկէր վիճակներու և թեմերու ընտրութեան համեմատ որոշել կայսեր ներկայանալիք երկու ընտրելեաց կամ ընտրելոց անունները (ՀԵԿ. 182): Խրիմեանի չէ հնար ուրանալ բարենպաստակ ձգտումներու արժանիքը, բայց միևնոյն ժամանակ հարկ է ձանձնալ գործ մը օրինապէս կազմակերպելու, ձեռնարկ մը նախապաշտութեամբ պատրաստելու, եղելութիւն մը ճարտարութեամբ վարելու վարչական ձիրքին պակասութիւնը, որով իր ձեռքէն ելած գործեր աւելի ձախողուածով վերջացան քան թէ յաջողուածով պսակուեցան: Նոյնը հանդիպեցաւ այդ պարագային ալ ռուսական կառավարութիւնը մայիս 10-ի կոնդակին և յունիս 7-ի հրահանգին վրայ հարկ չսեպեց միջամտել, նոր հռչակուած ազատութեան օրէնքը, կրօնական ազատութեան սկզբունքը, հետևանքը չտեսած դիտողութեան մտնելը, իր նորակազմ գրութեան պահանջը, զգուշութիւն կը թելադրէին, և հետևապէս լռեց մինչև օգոստոս 15-ի բացումը, թէպէտ հնար չէ որ ընտրութեանց վրայ մտադրութիւն դարձուեցաւ չըլլայ. ուստի ժողովը ազատորէն բացուեցաւ, բայց կառավարական միջամտութեան պէտքը զգացուեցաւ այն վայրկեանէն, որ տիրող օրէնքներու դէմ յայտարարութիւններ եղան, պետական իշխանութիւնը չձանձնալու արտայայտութիւններ արտասանուեցան, և նախատեսեալ դպրոցական և անտեսական և ընտրական խնդիրներէ օտար խնդիրներ ժողովական որոշմանց նիւթ դարձան: Երբոր կաթողիկոսն ալ հիասթափած և վայրացած ամէն միջամտութենէ ձեռնթափ եղաւ, բացումէն քիչ ետքը յանկարծ գաւառական ոստիկանութեան օգնականը վանք գալոգ ժողովականաց յայտարարեց թէ ժողովին նիստերը դադարած են, և թէ ժողովի եկողներ պէտք է իսկոյն տեղերնին դառնան. որուն վրայ ամէնքն ալ, և ոչ իսկ բողոքի ձայն հանելով, փութացին այթոռէն իրենց ձանապարհածախսը ստանալ, և երկու

հարիւրի չափ անհարկի հիւրեր անմիջապէս վանքէն մեկնեցաւ, և այսպէս փակուեցաւ Ռուսահայոց ազգային ժողովը, և պատգամաւորաց կեդրոնական համաժողովի անունն ալ այլևս չյիշուեցաւ: Միայն ծխական կամ թաղական մատակարարութեանց ժողովները մնացին, որոնց համար նոր հրահանգ մը կազմուեցաւ 1907 յունուար 11-ին (06. ԱՐԲ. յաւել.) բայց այն ալ կանոնաւոր ընթացք չունեցաւ, զի ինչ ինչ տարադէպ և տարօրինակ կարգադրութիւններ և Խրիմեանի նոյն տարւոյ մէջ տեղի ունեցած վախճանը, և կառաարութեան կողմէն դաշնակցականաց դէմ բացուած հալածանքն ու բանտարկութիւնները բոլորովին մոռացութեան մատնեցին Խրիմեանի նուիրագործել ուլած ազգայնական իրաւունքը և ժողովրդական ընտրութիւններու ձեռնարկը:

3084. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԸ

Խրիմեանի կաթողիկոսութեան վերջերը հասած ընդհանուր ակնարկ մը պիտի նետենք անոր 14 տարւոյ կաթողիկոսական գործունէութեան վրայ, որ իսկապէս տառապանաց շրջան մը եղաւ, և հապիւ դադրեցաւ երբ Խրիմեան այլևս գործելու ժրութենէն դադրած էր: Կայսերական հաստատութեան յապաղիլը Խրիմեանի առաջին տագնապն եղաւ, որ բաւական մտահոգութեան մատնեց զայն (2970): Հաստատուելէն ետքն ալ առանց Կ. Պոլիսէ անցնելու Էջմիածին մտնելն ալ նոր վրկում մը եղաւ (2971), թէպէտ այսպիսի անձնական և պատահական դէպքերէն շատ զգացուողը չէր Խրիմեան: Էջմիածին հասնելէն ետքը ներքին անհամբերութիւններ պակաս չեղան Երեմիա Գալստեան և Արիստակէս Սեդրակեան եպիսկոպոսներու կողմէն, որոնք իրենց ձգտումներուն մէջ յուսախար եղած (2954-2956), չքաշուեցան մեքենայութիւններ գործածել ընտրելոյն դէմ, որպէսզի արդարացնեն ազգին և մանաւանդ կառավարութեան առջև իրենց գործի գլուխ գտնուելու մարմանջը, մինչև որ Սեդրակեան իբրև առաջնորդ Աստրախան հեռացաւ, և Գալստեան ալ յանկարծամահ եղաւ 1897 նոյեմբեր 3-ին: Միևնոյն ժամանակ սկսած էր դպրոցական խնդիրին առաջին արարուածը, որով դպրոցներու վարչութիւնը ազգային հոգևորական իշխանութենէ պետական պաշտօնէութեանց ձեռքը կանցնէր: Երբոր այս բաւական չեղաւ Գալիցիի նպատակին, 1898-ին սկսաւ երկրորդ արարուածը, որ էր դպրոցներուն հասոյթներուն ու մատակարարութիւնը պետական պաշտօնէութեանց փոխանցելը: Եւ երբոր դպրոցական հասոյթներուն եկեղեցւոյ անունով արձանագրուած ըլլալը երեւան եկաւ, մէջտեղ ելաւ 1903-ի երրորդ արարուածը, բոլոր եկեղեցական կալուածոց և գոյից, արդիւնաւորմանց և մատակարարութեանց գրաւումը, որ երկու տարիներ ծանր տագնապներ իրականացնելէ ետքը, 1905 օգոստոսի սկիզբը նպաստաւոր կերպով փակուեցաւ (3033): Բայց տակաւին ժամանակ մը ալ տևեց տագնապը մինչև որ գրաւումները ետ առնուեցան, վնասուածները դարմանուեցան, և հապիւ 1906-ին վերջերը կանոնաւոր վիճակ մը կը ստացուէր, բայց Խրիմեան ուժաթափ եղած էր արդէն: Այս ամէն պարագայից մէջ Խրիմեանի մեծ արժանիքն եղաւ արիական դիմադրութիւնը առանց պատշաճից պահանջումները մոռնալու, և ամէն պատասխանատուութիւնը իր վրայ առնելը, մինչև իսկ առաջնորդներու և յաջորդներու և վանահայրերու պաշտօնէ դադարման կոնդակներ յանձնելով, որպէս զի ի հարկին ինքպիւնքին պատասխանատուութենէ ապատելու փաստ ունենան ձեռուընին: Արիութիւնը այնչափ բնական էր Խրիմեանի, որ մենք պիտի չըսենք ալ թէ տագնապները իրեն կեանքը վտանգեցին: Խրիմեանի կրած տագնապներուն մէջ նշանաւոր տեղ մը պէտք է տանք նաև Տաճկահայոց կոտորածներուն, որոնք ոչ միայն զինքն խորապէս վշտացուցին իրենց սիրելի գաւառներուն յաւեր և յաւար մատնուելովը, այլ և հարկ եղաւ որ հոգածութիւնը ստանձնէր նպաստ հասցնելու, հասարակութիւլը յորդորելու, և մանաւանդ սամհմանագրուին անցնող և Կովկաս ապաւինող և Էջմիածինի վրայ թափուող փախստական գաղթականները ապրեցնելու և հագուեցնելու և պատսպարելու համար: Խրիմեան բնութեամբ

առոյգ և երթևեկի վարժ, ստէպ էջմիածինէ ելլելով Տփղիսի և ուրիշ կողմեր ժամանակաւոր պտոյտներ կը կատարէր, բայց իր ուղևորութեանց մէջ նշանաւորագոյն եղան Երուսաղէմէ էջմիածին գալը (2971), որ պինքն յարաբերութեան մէջ գրաւ Եւրոպա գտնուող համապգիներու հետ, յետոյ Ռուսաց կայսեր ներկայանալու համար Պետրբուրգ երթալը, որ ատեն կրցաւ Ռուսաստանի ներքին գաղութներուն այցելութիւնն ալ կատարել. նմանապէս Պաքուի ուղևորութիւնը երբ Կովկասահայոց ունևորներ նուիրատուութեան յորդորեց, և փախստական ու գաղթական գործաւոր դասակարգին կեաքին հետ շահագրգռուեցաւ: Եւ վերջապէս Սիւնիք և Արցախ տուած հովուական այցելութիւնը, երբ Տաթևն ու Գանձասարը և բազմաթիւ հայ վանքերը տեսաւ, և անոնց նշանակութեամբը, անցեալովն ու ներկայովը վբաղեցաւ: Իրեն սիրելագոյն տեղը եղած էր Սևանայ անապատը, ուր ամէն տարի կայցելէր, և որուն նոր կեանք ներշնչեց և նոր ասպարէզ բացաւ, հին վանքին տեղ նորը կառուցանելով և գիւղական քահանայացուներու համար ընծայարանի տեղ և հրահանգուելու դիւրութիւններ պատրաստելով: Խրիմեանի անունն ու անշահասէր ընթացքը և օժանդակելու ձգտումը կտրողներուն քսակն ու սնտուկը դիւրութեամբ կը բանային իր առջև, որով ինքն ալ կարող կըլլար լիաբուռն նպաստել կարօտներուն, օգնել գաղթականներուն, և առատաձեռնել շինութիւններուն: Էջմիածնի մայրավանքին վրայ նշանաւոր փոփոխութիւններ և օգտակար յաւելուածներ եղան իր օրով: Զահկեցիին Ղապարապատ հիւրանոցը քանդեցաւ և ի հիմանց կառուցուեցաւ Խրիմեանի Հայրիկապատը, վանքէն անջատ հիւրանոց մը: Հին սինոդի շէնքը վերցուեցաւ և տեղը Հայրիկեան թանգարանը կանգնեցաւ հնութեանց և հետաքրքրական իրաց հաւաքարան, իսկ սինոդին նոր ու վայելուչ տեղ պատրաստուեցաւ մայրավանքի մուտքին առաջին բակին մէջ: Մեծ բակին հիւսիսակողմը բարձրացաւ նոր մատենադարանը իր ամէն կազմածներով և ընդարձակ հանդիսասրահով, և շրջակայ անտառն ալ որմափակ պատերով ժողովրդական վբօսավայրէ միաբանական հանդիսավայրի փոխուեցաւ: Ս. Հռիփսիմէ և Ս. Գայիանէ վանքերը նորոգուեցան և յարդարուեցան, և երկրորդին նոր շինութիւն աւելցնելու որբանոցի նպատակով, որ յետոյ հիւրանոցի յաւելուած դարձաւ և ծառուղիով վանքին հետ միացաւ: Հին խոհանոցը, շտեմարանը, սառնատունը նորերով փոխանակուեցան, Մակարի հիմնած տպարանը յաւելուածով ընդարձակուեցաւ, տեղապահութեան հիմնած միաբանական թաղը ձամարանի ու մատենադարանի մէջ տարածուեցաւ. ձեմարանին նոր հիւանդանոց շինուեցաւ, և այդ նոր շինութեանց հետևանք մեծ բակին հիւսիսային և արևելեան կողմերը գտնուող հին շէնքերը վերցուեցան, և բակը կրկնապատիկ ընդարձակուեցաւ: Վանքին և Վաղարշապատին ջուրը առատացաւ Բասախէ նոր ջրանցքով, և հին ջրուղիի մը բացուելովը, լուսաւորութեան և մեքենական ոյժի համար ելեքտրական հաստատութիւնմը հիմնուեցաւ : Հին Զուարթնոց եկեղեցւոյ պեղմանց և յարգամանց գործը պաշտպանուեցաւ և քաջալերուեցաւ, Վաղարշապատի ընդարձակուելովը Ս. Շողակաթի վանքը ծխական եկեղեցիի փոխուեցաւ: Վերջապէս նոր վեհարանի շինութեան գաղափարն ալ իրականութիւն մտաւ, և Խրիմեան չվախձանած աւագ ու քար սկսան վիջուիլ, թէպէտ հիմնարկէքը մնաց: Որչափ ալ բարերարներ ու նուիրատուներ, գործակիցներ ու աշխատակիցներ մաս ունեցան անոնց մէջ, սակայն միշտ գլուխ գտնուողին ջանքն ու փոյթը, դիմումն ու միջնորդութիւնը, յորդորն ու քաջալեութիւնը գլխաւոր տեղ կը վայելեն ապօգուտ ձեռնարկներուն մէջ: Երբ այդ մանրամասնութիւնները գովութեամբ կը յիշատակենք, չենք կրնար առանց ցաւ յայտնելու լուել մայր տաճարին ներքին վարդերուն, Յովնաթանի նկարներուն փձացումը (2208), աստ անդ երկրորդական վանքերու վրայ եղած ծախքերը, որոնք ոյ յարգի անցեալի մը պահպանութիւնն և ոչ օգտակար ներկայի մը

հանգամանքն ունեին: Նմանապես դիտողութենէ վերծ չի կրնար ըլլայ իր եղբօրորդւոյն Խորէն Խրիմեանի և իր փոքրաւորին Կորիւն Սահակեան վարդապետի դրամական գործոց մէջ թողուած անկշռադատ ձեռնհասութիւնը, բաշխուած նպաստներու և օգնութիւններու մէջ Վանեցւոց հանդէպ ցուցուած դիւրահաս տկարութիւնը, և վերջապէս Աստուածաշունչի տպագրութեան համար հոգածութեան նուազութիւնը, արտաքիններէ օգնութիւններ և ներքիններէն նպաստներ ստանալէ և կոնդակներով յանձնառութիւններ ստանձնելէ ետքն ալ:

3085. ԽՐԻՄԵԱՆԻ ՄԱՀԸ

Խրիմեանի գործունէութեան վերջը հնչած էր այլևս, երբ 1907 ապրիլ 4-ին իր ծննդեան 87րդ տարեդարձը կը կատարուէր և 88րդ տարին կը թևակոխէր (07.ԱՐԲ.330). Վի վախճանական ծերութեան տկարութիւններուն ենթարկուած էր, արդէն իր սովորական կեանքը, իր պտոյտները ու շրջագայութիւնները պարտաւեալ կը քիչցընէր, նոյնիսկ Բիւրականի ամառնային օդափոխութեան ալ լիապէս կատարելու ոյժ չէր վգար: Բայց ոչ ախտ մը ունէր և ոչ ցաւ մը կը կրէր, այլ տարիքի պահանջելով ուժաթափութիւնն էր որ իր վրայ հետզհետէ կը ծանրանար: Ասոր հետ մէկտեղ բոլորովին անգործ չէր կենար, գիրերը և լրագիրները դիւանադպիրին կարդալ կու տար, կը խօսակցէր, ամէն եղելութեանց լիովին տեղեկանալ կուզէր: Սեպտեմբերի մէջ օրէ օր տկարանալը վգալի կերպով կը յայտնուէր, թէպէտ Խրիմեանի քաջողութեան և կորովին վրայ կազմուած համոզումը մօտալուտ վտանգի մը գաղափարը կը հեռացնէր, և երկարակեցութեան բարեմաղթութիւններով կը տօնուէր սեպտեմբեր 30-ին Վարագայ Խաչին օրը իր կաթողիկոսական օծման 14 րդ տարեդարձը, և ինքն առանց դժուարութեան ընդունելութիւն կը կատարէր բազմախուռն շնորհաւորողներուն (07. ԱՐԲ. 896): Բայց նուազումը կը յառաջէր, և փոփոխութիւններ ակնյայտնի էին իր կենսական գրութեան վրայ, և իրեն հետ եղողներ արթուն կը հսկէին ամէն մի տարբերութեան վրայ: Հոկտեմբերի կէսին այլ ևս որևիցէ բանով վբաղելու ոյժ չէր վգար: Սահակ վարդապետ Աստուածատուրեան, իր անձնական և փութաջան խնամուածուն, հոկտեմբեր 28-ին Գիւտիսաչի կիրակի առտուն խշրտուքի ձայներ կառնէր անոր կոկորդէն, իսկոյն լուր կու տայ սինոդի նախանդամ Սուրէնեան Գէորգ եպիսկոպոսին սինոդականներ և բժիշկներ կը հաւաքուին, վտանգը կը հաստատուի, երեկոյին արձանագրութիւն կը կազմուի, գիշերը վարդապետ և բժիշկ անքուն կը հսկեն, հետզհետէ հոգեվարքի նուազումը կը գիտեն, գիտակցութիւն կէս գիշերէն ետքը կը դադրի, և երկուշաբթի կէսօրին երեք ժամ առաջ, սինոդականաց ներկայութեամբ և կատարեալ խաղաղութեամբ, առանց որևէ բուռն շարժման հոգին կաւանդէ, պարզապէս կենսական շունչին դադարելովը, ձէթը սպառած կանթեղի մը պէս (07. ԱՐԲ. 2): Մկրտիչ կաթողիկոս Խրիմեան կը վախճանէր 87 տարեկան և 7 ամսական, 6 օր միայն պակաս, ձեռնադրութենէն 53, և եպիսկոպոսութենէ 39 տարին լրացուցած, կաթողիկոսական ընտրութենէն 15 տարի 5 ամիս, իսկ օծումէն 14 տարի 1 ամիս ապրած: Բարձրահասակ անձնեայ, վեհ դէմքով և առողջ կազմով անձ մը Խրիմեան բնութեամբ վուարթ, պարագայից յարմարող, ոչ ձախորդութեամբ ընկճուող և ոչ յաջողութեամբ ճոխացող, արտաքնայարդար ձևերէ հեռու, փառքի երևոյթները անարգող, միշտ ժպտուն և կատակախօս, հմտութեամբ ալգային շրջանակի մէջ հարուստ, տոսպական աւիւնով երգիչ մը, որ մինչև վերջի ատեններ խօսող մը ու գրող մը մնաց իմաստալից գիւտերով և գրաւիչ ոճով: Ահա Խրիմեանը իր անհատական նկարագիրին մէջ: Մարմինը երկուշաբթիէն շաբաթ վեհարան մնաց հանապապ օրեայ հոգեհանգիսներով, շաբաթ օր 3 նոյեմբեր լուացման կարգը կատարուեցաւ և Մայրտաճար փոխադրուեցաւ կիրակի 4 նոյեմբեր պատարագ մատուեցաւ և եկեղեցւոյ կարգը կատարուեցաւ, և երեքշաբթի 6-ին հողին յանձնուեցաւ Մայրտաճարի աւագ դրան հարակողմը, Աշտարակեցի Ներսէս կաթողիկոսի գերեզմանին կից,

որուն շատ կէտերով նմանութիւնը կը բերէր, մանաւանդ ազգասիրական պագացումներովը ու հայրենասիրական ճիգերովը, և որուն մահուան թուականին արդէն 37 տարեկան, և գործիչ և վարդապետ կը գտնուէր: Թաղման առթիւ ընդհանուր եղան սգակիր համակրութեան նշանները, դագաղին վրայ 11 արծաթեայ, 15 մետաղեայ և 7 թարմ ծաղկեայ պսակներ նուիրուեցան. պատգամաւոր ներկայացուցիչներ եկած էին Ռուսահայոց ամէն քաղաքներէն և ամէն հաստատութիւններէն, և արտասահմանէ փոխանորդներ նշանակուած էին (07.ԱՐՐ.ԺԹ.ԻԵ.): Իսկ սգակիր հեռագիրներ անթիւ և անհամար եղան (07.ԱՐՐ.ԻԶ.-ԾԶ): Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ երիցագոյն եպիսկոպոս Մեսրոպ Սմբատեանի նախագահութեամբ և տասն եպիսկոպոսներու համախմբութեամբ: Ամենափառաւոր պաշտօն մըն ալ Օրմանեան կատարեց Գումգաբուի մայր եկեղեցւոյն մէջ նոյեմբեր 6-ին թաղման օրը, ինքն պատարագեց և դամբանական խօսեցաւ, հոգեհանգիստ ալ Մաշտոցի պատշաճներով կատարուեցաւ. ներկայ եղան ամէն դեպանատանց թարգմաններ, բոլոր պատրիարքարանաց ներկայացուցիչներ, ազգային հաստատութեանց վարիչներ, հայապգի և օտարապգի խումբ բազմութիւն, և կարգադրութիւնք և պատրաստութիւն, ամէն պարագաներով կատարեալ եղան: Խրիմեանի թողած գրական արդիւնքներն եղած են Արարատեան և Երկրին Աւետեաց հրաւիրակները, Հայագոյժն ու Վանգոյժը, քանի մը ազգային վէպեր, և ցրիւ հրատակաուած ոտանաւորներ, բայց ոչ մի ուսումնական երկասիրութիւն: Թափուր աթոռին տեղապահութիւնը պօլօժէնիէի օրէնքով սինոդի նախանդամին վիճակուեցաւ, որ էր Գէորգ Սուրէնեան, իսկ պայմանաժամը նոյն օրէնքով տարիի մը կապուած ըլլալով և այն ալ ձմեռնամուտին հանդիպելուն, թէ՛ սինոդ իր կողմէն և թէ՛ Օրմանեան պատրիարք խառն ժողովի համաձայնութեամբ սինոդին և դեսպանին դիմելով, ուզեցին վեց ամիսէն մայիսին ընտրութիւն կատարելու արտօնութիւն ստանալ կառավարութենէ, այլ խնդրանքը չընդվունուեցաւ, և ընտրութիւնը մնաց մինչև 1908 նոյեմբեր 1: Աթոռոյ պարապութեան ժամանակ նշանաւոր դէպքեր պակաս չեղան, վորս մենք պիտի շարունակենք պատմել Մկրտիչ Ա. Վանեցի կաթողիկոսին անունին ներքև:

3086. ԱՐԴԻԻՆՔՆ ՈՒ ԱՐԺԱՆԻՔԸ

Պատմութեանս կարգին նկատի առած ենք Խրիմեանը իբր պաշտօնական անձնաւորութիւն ու հանրային գործիչ, այն ամէն կերպարներուն ներքև որոնցմէ անցաւ հետպհետէ իբրև գաւառացի վարժապետ, եկեղեցւոյ վարդապետ, Վարագայ վանահայր, Տարոնոյ առաջնորդ, Կ. Պոլսոյ պատրիարք, վարչութեան մասնակից, Երուսաղէմի աքսորական, և Ամենայն Հայոց կաթողիկոս. և իւրաքանչիւր կերպարանին նկատմամբ ալ անաչառ և անկաշկանդ կերպով յայտնած ենք մեր համոզումը ու քննադատութիւնը, սակայն իր կեանքը վերջանալուն առթիւ չենք կրնար բոլորովին լուծեամբ անցնիլ և առանց վէժ մը թաւալելու բաց թողուլ իր գերեզմանին բերանը: Եթէ ազգային ժամանակակից պատմութիւնը առեղծուածական դէմք մը կընդունի, և հին դէմքերու հանգիտակ անբացատրելի անձնաւորութեան մը գոյութեան կը հաւանի, այն ալ Մկրտիչ Խրիմեանն է անշուշտ, պաշտելի դարձած իր Հայրիկ մակդիր կոչմամբը, ինչպէս իրօք ալ այսօր իր գերեզմանը իբրև ուխտատեղի կը պատուուի Կաթողիկէ Մայրտաճարին մուտքին առջև: Բայց ի՛նչ է տիրապէս Խրիմեանի արդիւնքը: Գաւառացի վարժապետի գործունէութիւն սովորական երևոյթ մըն է. աշխատող վարդապետներ ցանցառ չեն. Տարոնոյ առաջնորդութիւնը ապարդիւն ճիգերով անցաւ. Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը անյարմարութեան և անկարութեան վճիռ ստացաւ. վարչական գործունէութիւնը աչքառու հետևանք մը չունեցան. Երուսաղէմի աքսորականութիւնը արդիւնք արտադրելու հանգամանք չունէր գերագահ կաթողիկոսութիւնը նշանաւոր և արդիւնաւոր հետք մը չթողուց Վարագայ վանահայրութեան

յաջողութիւնն ալ մարդ մը անմահացնելու բաւական չէր, այնպէս որ պայմանագիրը կը վարանի ինչնով արդարացնել Խրիմեանի անունին վայելած ընդհանուր համակրութիւնը. զի եթէ մենք արդիւնքի նուազութիւնները յիշենք, ուրիշներ արժանիքի պակասութիւններն ալ շեշտելու կը յառաջեն: Բայց իրականութիւն մըն է որ Խրիմեանի անունը համակրելի եղաւ իր թերութիւններովը մէկտեղ, գովելի մնաց իր պակասութիւններով, և կը շարունակէ նոյնպէս մնալ այսօր ալ, և գուցէ աւելնայ իսկ ապագային մէջ: Եւ որ եւսն է, ոչ մենք և ոչ ուրիշ մը պիտի համարձակի ըսել, թէ խարդախութեամբ վաստակուած, կեղծաւորութեամբ կազմուած և նենգութեամբ պահուած հռչակ մը եղած է Խրիմեանի հանդէպ ցուցուած ընդհանուր համակրութիւնը: Սակայն եթէ ժողովրդային ըմբռմանց խորը թափանցենք, կը տեսնենք որ շատ անգամ կերպը իրին կը յաղթանակէ, զգացմունքը մտածմունքէն վեր կը բարձրանայ, և իսկութիւնը յօժարութեան տեղի կու տայ: Խրիմեանի վարգացումն ու հմտութիւնը միակողմանի էր, լոկ հայերէնով սահմանափակուած, միջազգային և օտարազգի տարրներով ճոխացած չէր, գործի ճաշակ և չափակցեալ համեմատութիւն չէր ճանչնար, վարչական հանձարը պակաս ըլլալու չափ քիչ էր, հեռատես և նախատես զգուշաւորութիւնը իր ասպարէզը չէր, հանդարտ նախապատրաստութեամբ և կշռադատութեամբ ձեռնարկները իրեն սովորական չէին: Բայց ունէր բնածին ուշիւնութիւն մը, որ իր ըմբռնելու և յիշելու և որոշելու կարողութիւնը կը կազմէր. ունէր բնատուր ճարտարութիւն մը, որով ամէն պարագայէ անվնաս դուրս ելլելու կերպը կը գտնէր ունէր գրաւիչ ոճ մը և ազդեցիկ խօսք մը, որով գիտէր սիրտերու վրայ տիրապետել. և ամէնուն վրայ ունէր անկեղծ և անուղիղ զգացում մը, որ ամէն թերութիւն կը լրացնէր, աւրուածը կը շինէր, ծուռը կը շտկէր, և որևէ պակասութիւն կը ծածկէր: Ահա՛ նկարագիր մը, որ եթէ կատարեալ պատկեր չէ, բաւարար ստուերագիծ մըն է Խրիմեանի առեղծուածային դէմքին գաղափարը տուող: Առուեղծածային ըսինք և կը կրկնենք, թէ իսկապէս այսպէս է անձ մը, որ մեծ գործեր արտադրած չէ, որ ետևէն մեծ հետք մը թողած չէ, որ պաշտօններուն մէջ ընդհանրապէս յաջողած չէ, որ դիտողութեանց և ստգտանաց ներքև ալ ինկած է, և տակաւին անբասիր մնացած է, համակրութիւն կորուսած չէ, և համարձակաձայն գովեստներով յիշատակուած է: Հետք մը թոպած չէ ըսինք խօսքներիս իրական եղելութեանց պարունակին մէջ ամփոփելով, ապա թէ ոչ զգացմանց շրջանակին մէջ, ինքն զտիչն ու ստեղծիչն եղած է ազգասիրական և հայրենասիրական զգացումներուն, որոնցմով ազգը տոգորեցաւ յիսուն վաթսուն տարիներէ ի վեր, և որ պատահական զեղծումներու բացառութեամբ, նոր կեանք ներշնչեց, նոր գործունէութիւն ազդեց, և նոր առաւելութիւն բերաւ հայ տարրին վրայ: Խրիմեան Մկրտիչ այդ զգացումը շնչեց ու տարածեց ազգային պարունակին մէջ, Վարժապետեան Ներսէս նոյն զգացումը հռչակեց և ընդարձակեց միջազգային շրջանակին մէջ, և այդ երկու կէտերն են որ նոյն երկու անուններուն ազգին մէջ վայելած պաշտելութիւնը և ազգէն դուրս գտած համբաւը կարդարացնեն և անաղարտ կը պահեն: Գիտենք և կը ճանչնանք որ այդ զգացումները կրցան ոմանց գայթակղութեան քար ըլլալ, ոմանց զեղծումներու առիթ ընծայել և ոմանց սուտակասպաս կեղծիքներու գործիք դառնալ: Սակայն ընտիր իրեր և ուղիղ գործեր իրենց ներքին իսկութեամբ կարդարանան, և պատահական անտեղութիւններով չեն այլափոխուիր:

3087. ԵՐԵՔ ՄԱՀԵՐ

Էջմիածնի պատահարներուն և եղելութեանց շարքը չփակած, յիշատակենք հրապարակէ պակսող քանիմ նշանաւոր և խօսուած դէմքերը: Առաջին կը հանդիպենք Գալստեան Երեմիա Եպիսկոպոսի որուն արդէն ակնարկեցինք (3084): Երեմիա բնիկ Վաղարշապատցի, 1840-ին ծնած, 1862-ին Մայրաթոռոյ միաբանած, 1864-ին ձեռնադրուած, և 1873-ին Եպիսկոպոսացած, յանկարծամահ կը վախճանէր 1897 նոյեմբեր 3-ին 57 տարեկան: Գէորգի օրով և Մանկունիի

պաշտպանութեամբ առաջ քաշուածներէն մէկն էր Գալստեան. կանուխ եպիսկոպոսացած, և միանգամայն սինոդի անդամակցած, և կաթողիկէի լուսարարապետութեան կոչուած: Մակարի մահուան ատեն սինոդի նախանդամ գտնուելով՝ տեղապահութիւնը ստանձնեց, և Խրիմեանի գալէն ետքն ալ դիրքը պահեց: Գալստեան ուսումով և դաստիարակութեամբ աղքատ, այլ տենչով և ձգտումով հարուստ, արժանեաց պակասը նախանձով և քսութեամբ լրացնելու ճամբան մտած էր. բայց իր ձեռնհասութեանը չվստահելով՝ օգնականներու պէտքը կը վգար, և անոնք շահելու համար հետևող և գործիք դառնալու կը պարտաւորուէր: Յիշած ենք արդէն Օրմանեանը Էջմիածինէ հեռացնելու մէջ վարած դերը (2927), պատմած ենք Մակարի մահուանէ ետքը կաթողիկոսանալու տենչով կատարած անորակելի դարձուածքները, և մինչև եպիսկոպոսներ աքսորել տալու ձեռնարկը (2954-2955): Իբրև բարձրանալու սանդուխ կառավարութեան դիտումներուն ծառայելը կը գործածէր, և այս դիտմամբ պրոկուրորներու խուլ գործունէութեան գործիք էր եղած, վերջին ատեններ ալ Վահան Տէր-Գրիգորեան և Նահապետ Նահապետեան վարդապետները բամբասելու և ամբաստանելու կօզնէր, որով անոնց աքսորը իր ձեռքով պատրաստուած կըլլար: Սակայն իր ձախորդութեանն ալ միանգամայն պատճառ կըլլար. Կի յանկարծական մահն ալ նոյն տիտուր ձեռնարկէն յառաջ եկած ըլլալը յայտնուեցաւ, երբ որ դիպանական գործողութեամբ հաստատուեցաւ, որ սիրտը ճարպակալուած է եղեր, և երկուց տեղից ձեղքուած, և մահը սիրտի պայթումից է առաջ եկել: Այդ ալ պատահած էր առտուն կանուխ, երբոր անկողնոյ մէջ լուացուելիս Կանչելի պրոկուրորէն մտերմաբար լուր կը հասնէր, թէ Տէր Գրիգորեանի և Նահապետեանի գործը փափաքանաց համեմատ կատարուած է, և սաստիկ ուրախութեան յուզումն ու ցնցումը ախտացեալ սիրտին վրայ կը ներգործէր: Իրօք ալ թաղումէն քիչ օր ետքը երկու վարդապետները Ռուսաստանի ներսը հեռացուեցան: Սակայն ինչպէս Խրիմեան դամբանականին մէջ ըսած էր, հերիք է որքան դատեցինք Երեմիա Սրբազանը, մահից յետոյ ամէն ինչ Աստուծոյ դատաստանին կը մնայ, և մենք ալ աւելի առաջ չենք երթար: Իբր պատմական եղելութիւն աւելցնենք թէ դիպանութիւնը կառավարութեան հրամանով կատարուեցաւ, յանկարծական մահէն ծագած կասկածի վրայ, և այս պատճառով հարկ եղաւ մարմինը եկեղեցի տարուելէ ետքը դուրս բերել, ինչպէս կաթողիկոսն ալ բացառաբար հաւանեցաւ, ցանկանալով որ ամէն մի կասկած փարատած լինի: Կաթողիկոսական ընտրութեան առթիւ կատարուած անորակելի դարձուածներուն Գալստեանի ընկեր, և մինչև աստիճան մը Գալստեանի ուղղեցոյց ցոյց տուինք Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոսը, և այն ալ թէպէտ Գալստեանէ իբր տասը տարի ետքը, բայց Խրիմեանէ առաջ գերեզման կիջնէր, 1906 նոյեմբեր 10-ին (ՕԵ.ԱՐՐ.711): Սեդրակեանի համար չենք կրնար կրկնել Գալուստեանի մասին ըրած քննադատութիւննիս: Սեդրակեանի բնիկ Ղալֆալու գիւղէն 1844ին ծնած, մանկութենէ մայր աթոռի աշակերտած, և անկէ ետքն ալ ինքնօգնութեամբ վարգացած, 1865-ին ձեռնադրուած, 1882ին եպիսկոպոսացած կը վախճանէր Տփղիսի մէջ՝ 62 տարեկան: Իր առաջին կեանքը իբր գործունեայ վարդապետ և իբր եպիսկոպոս առաջնորդ գովութեանց արժանի և արդիւնաւոր եղած է ամէն պաշտօններու մէջ, Կորս հետպահեալ վարած է գրական երկասիրութիւններ ալ հրատարակած է, որոնց մէջ թարգմանութեանց և կենսագրութեանց հետ կան նաև գնահատելի կրօնական ուսումնասիրութիւններ: Այս կերպով արժանացած է հասարակութեան գովեստին և համակրութեան, մանաւանդ նոր սերունդին մէջ, իբրև նորածարձ գաղափարներով օժտուած միտք մը: Սեդրակեանի ընծացքը կը փոխուի Մակարի օրով, երբոր կը համարաձակի կաթողիկոսական հեղինակութեան հետ մաքառիլ, և կը պայրանայ երբոր Տփղիսի առաջնորդութենէն կը հեռացուի: Ժողովրդական համակրութեան վրայ յենելով, Մակարի

վաղահաս մահէն ետքը, անոր յաջորդութեան թեկնածու կը դառնայ, և իրեն գործիք կընէ միամիտ Գալստեան տեղապահը, և անոր բարձրացումին քօղին ներքև իր անձնականը կը յառաջացնէ: Այդ նպատակով չքաշուիր տարբեր երևոյթներով տարբերներու ներկայանալ, և թունդ ազգամոլութեան հետ պրոկուրորներու գործակցութիւնը վուզակցել և իրեն նպատակին ծառայել, միակ նպատակ ունենալով որևիցէ կերպով իր բարձրացումը ապահովել: Երբոր ընտրողական ժողովէն ձեռնունայն կելլէ, (2969), և Խրիմեանի հրաւիրակ երթալով պայն իրեն շահիլ և գործիք ընել չյաջողիր (2971), պահ մը Խրիմեանի նեղութիւն ալ կը պատճառէ (3084): Բայց վերջապէս քաշուելու հեռանալու որոշումը կու տայ, և 1895 յունիսին Աստրախանի առաջնորդութիւնը կը ստանձնէ և նոյն պաշտօնին վրայ կը մնայ 11 տարի, իսկ Տփղիսի մէջ վախճանիլն հետևանք է բուժուելու համար հոն եկած ըլլալուն (07. ԱՐՐ. 51-52): Այդ վերջին առաջնորդութեան միջոցին շատ աչքի վարկաւ Պարպեանցի հետ Պլէվէէ Պետրբուրգ կոչուիլը կալուածոց գրաւման խնդիրին պատճառով. իսկ Պետրբուրգէ Պարպեանցի աքսոր և Սեդրակեանի էջմիածին պրկուիլը, կամ որ նոյն է, ազգային ու եկեղեցական մեծ խնդիրին երեսէն և Պլէվէի կողմէն մէկուն պատժուիլը և միւսին պատուուիլը: Նշանաւոր դէմք մըն ալ հանդիսացաւ Նահապետ եպիսկոպոս Նահապետեան, Ներսիսեանի և ձեմարանի Արշակ Նահապետեան տեսուչը, որուն վախճանը ճիշդ քառասունք մը կանխած էր Սեդրակեանի մահէն: Նահապետեան բնիկ Ախլցխացի 848-ին ծնած, բնական գիտութեանց համալսարանական ընթացք լրացուցած, անդստին սկիպբէն իր գործունէութիւնը ազգային հոգևորական բարձր վրժարանաց նուիրեց, և աշխարհական ըլլալով եկեղեցականութիւն բարձրացնելու և վարճացնելու նպատակին ծառայեց, ինչպէս պատմած ենք իր կարգին (2927): Այս նպատակով և իր նախաձեռնութեամբ Օրմանեան ձեմարանի ուսուցչութեան կոչուեցաւ, որ թէպէտ միամեայ դասատուութիւնից յետոյ ստիպուած էր հեռանալ կառավարութեան որոշմամբ, բայց նորա ներկայութիւնը էական նշանակութիւն ունեցաւ մտքերի պատրաստութեան համար (07. ԱՐՐ. 47): Այդ փոփոխութիւնը ոչ միայն աշակերտներու այլ և տեսուչի վրայ ալ տեսնուեցաւ, զի ինքն ալ եկեղեցականութեան մտաւ և ձեռնադրութիւն ստացաւ 1889-ին, 41 տարեկան եղած ատեն: Նահապետեանի եկեղեցական պաշտօնէութիւնն ալ արդիւնաւոր եղաւ, միշտ ուսումնականին վուզընթացութեամբ, մինչև որ 1897 նոյեմբերին աքսորուեցաւ, և հապիւ եօթնուկէս տարի ետքը դառնալու հրաման ըստացաւ 1905 մայիսին, և յունիսին եպիսկոպոսացաւ, այլ 16 ամիսէ վախճանեցաւ Նորնախիջևան 1906 հոկտեմբեր 1-ին: Վերջին ատեններ սինոդական ալ եղաւ և գլուխ նշանակուեցաւ գրաւուած գոյքերը ու կալուածները յետ ստացող յանձնաժողովին, և գլխաւոր դեր ունեցաւ ջուրի առատութեան և ելեքարական ոյժի հաստատութեան ձեռնարկելուն մէջ (3084): Նահապետեանի սկզբունքի մը վօրութեամբ եկեղեցականութեան մտած, ինչպէս իր առաջին նոյնպէս վերջին կեանքի մէջ ալ կարգապահութիւն, պարտաճանաչութիւն, ճշդապահութիւն, մաքրութիւն և ուղղութիւն իբրև սեփական դրոշմ պահեց, և ըստ այնմ ալ գործեց (07. ԱՐՐ. 44-50): Նպատակիս մահացուցակ կազմել չըլլալով, կը բաւականանանք երեք նշանաւորագոյն դէմքերը յիշատակել, որոնց թէպէտ իրարմէ տարբեր տեսակէտի ներքև, բայց պատմական գիրք մը գրաւեցին: Նմանապէս վանց կընենք առ այժմ այթոռոյ պարապութեան առթիւ սկսած ընտրողական պայքարին վրայ խօսիլ, վերապահելով ամբողջութիւնը մէկ անդամէ տալ, երբոր ընտրութեան վրայ խօսելու կարգը հասնի:

3088. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՄՓՈՓՈՒՄ

Նորէն պիտի դառնանք Կ. Պոլսոյ այթոռին և Օրմանեան պատրիարքին, որուն պաշտօնին վերջանալուն մօտ կը գտնուինք, նոյեմբերի սկիպբէն մինչև յաջորդ յուլիսին կէսը, միայն ութուկէս ամսու համառօտ միջոցով դատուած: Այդ միջոցին համար նոր և նշանակելի եղելութիւն

մըն ալ չունինք ընդարձակօրէն բացատրելու, զի 1906 յուլիս 25-ին ընտրուած և սեպտեմբեր 20-ին պաշտօնի ձեռնարկած վարչութիւնը (3076), սովորական գործունէութեամբ կը շարունակէր նախընթացաբար գծուած ծրագիրին համեմատ, և օրական պարագայից պահանջներուն հետևելով: Օրմանեանի պատրիարքութեան օրով տեղի ունեցած եղելութիւններէն, միայն նոյնութեամբը և հետևանքովը նշանաւորագոյն եղողները յատկապէս պատմելու և պարագներով պարզաբանելու մտադրութիւն դարձուցինք մինչև հիմա, սակայն դիպուածներովը կարևոր և մերձաւորութեամբը շահագրգիռ և քննադատութիւններով հետաքրքրական դարձած այդ պատրիարքութեան ժամանակ, տեղի ունեցած են ուրիշ շատ եղելութիւնները, ընդհանուր կացութիւնը և վրչական գործունէութիւնը լուսաբանողներ, որոնք պէտք է գիտցուին պատմական ամբողջութիւնը լրացուցած ըլլալու համար: Ուստի ի դէպ կը կարծենք վանական տացուած արդիւնքներէն ինչինչ կէտեր յառաջ բերել նիւթերու կապակցութեան հետևելով, և այսպէս լրացնել այն ընդհանուր տեսութիւնները զորս կանխած ենք բացատրել (2998-3011), և մանրամասնութիւնները վերապահել պատմական գլխաւոր գիծերը տալէն ետքը լրացնելու: Այդ ոճը նախադասեցինք նմանօրինակ պարագայից վրայ կրկին և կրկին չվերադառնալու, և պարագայից կապակցութեան վրայ ամփոփ գաղափար մը տուած ըլլալու համար: Մանաւանդ որ Օրմանեան պաշտօնավարութիւնը, թէպէտ ներքին գոհունակութեամբ ամրացած և յարգուած էր տասներկու տարիէ ի վեր, սակայն երկրին օրինական կացութեան և քաղաքական տեսութեանց փոփոխուելովը բնական էր որ տարբեր գնահատման հանդիպէր, և ենթադրուածէն աւելիին ալ հանդիպեցաւ, ինչպէս իր կարգին պիտի յիշենք. ուստի պատմական պահանջը կը սեպենք լիովին տեղեկութիւններով խնդիրները լուսաբանել, աւելի պատմագիրի դերի մէջ մնալով, քան թէ քննադատի կամ ջատագովի դերը ստանձնելով:

3089. ՆՊԱՍՏԻՅ ՀԱՍՈՅԹՆԵՐԸ

Առաջին ձեռք կառնենք նպաստից ճիւղը, որուն կազմակերպութիւնն ու ընդհանուր գիծերը տուած ենք արդէն (3003), իսկ մանրամասնեալ համարատուութիւնը արդէն մաս առ մաս գործին ընթացքին ժամանակ պատրաստուած էր, և ամբողջականը ներկայեց Օրմանեան 1908 օգոստոս 6-ին, և տպագրել տալով ցրուեց և տարածեց 12 հաշուական տախտակներով և 55 մեծագիր երկիջեան երեսներէն կազմուած տեղեկագիրով (ՆՊԱ.): Անոր մէջ մի առ մի ցուցուած են թէ հասոյթները և թէ ծախքերը, տարիներու և տեսակներու և գումարներու մանրամասնութիւններով և հաշուական մայր տոմար մըն ալ կազմուած է պատրիարքարանի համար, որուն մէջ յանուանէ նշանակուած են մինչև իսկ 10-20 դահեկանի նուէր տուողները, կամ եղած ծախքերը. սակայն այսչափ մանրամասնութիւններ հնար չէր համարատուութեան անցունել կամ տպագրութեան տալ առանց ստուար հատոր մը կազմելու, որուն աշխատութիւնն ու ծախքը կարևորութեանը չէր համապատասխանէր: Մենք այս տեղ գումարներ յիշած ատեննիս՝ պիտի բաւականանանք ամբողջ օսմանեան լիրաներու կամ ոսկիներու թիւերը տալ, վանց ընելով կոտորակ դուրուշներու կամ դահեկաններու թիւերը, պարզապէս յօդուածնիս չծանրաբեռնելու համար, որոնք ամենայն ճշդութեամբ կը տեսնուին թէ՛ տպագրեալ տետրակին և թէ՛ պատրիարքարանի մայրատոմարին մէջ: Նպաստից հասոյթներէն սրսելով, նախ պիտի յիշենք թէ Իվմիրլեան պատրիարքի օրով կատարուած հանգանակութեանց և բաշխուած նպաստներու մնացորդ 1227 գումարէն միայն 389 անցաւ նպաստից յանձնաժողովին, մնացեալը Չամիչեան տեղապահի օրով պատրիարքարանի ծախուց գործածուած ըլլալուն համար (ՆՊԱ.4): Կայսերական հրամանով պետական յանձնաժողովէ կամ սնտուկէն ստացուած գումարն եղաւ 4856, ուսկից 2689 առաջին և 1425 երկրորդ տարւոյն մէջ (ՆՊԱ.5): Կոստանդնուպոլիս մայրաքաղաքէն հանգանակուած գումարը

եղաւ բովանդակ 4111, որ թերևս նուազ երևի, սակայն միտքէ վրիպեցնելու չէ որ Կ. Պոլիս ինքն ալ արկածուեցաւ. գաւառներուն աւերն ու աւարը Կ. Պոլսոյ վաճառականներուն վրայ ծանրացաւ, և նպաստից յանձնաժողովին յանձնածէն վատ, ամէն ոք նպաստներու պարտաւորուեցաւ: Մայրաքաղաքի ընդհանուր գումարը կը ստորաբաժնուի, 2606 անհատական նուէրներէ, 757 թաղական հանգանակութիւններէ, 100 վարժարաններէ, 391 լրագիրներու ձեռքով, և 256 եկեղեցիներու պնակներէ (ՆՊՍ.5-6): գաւառներէ սպասուած նուէրը նշանաւոր չէր կրնար ըլլալ, քանի որ գաւառներն էին օգնութեան կարօտ արկածեալները. այսու հանդերձ կրոպակողման երկու վիճակները նւիրեցին 494, իսկ ասիակողման բոլոր գաւառները 2595 առաւելապէս արկածէ պերծ մնացող Ջմիւռնիա, Աֆիօնգարահիսար և Պանտրմա, մինչ Պրուսա և Նիկոմիդիա ակնկալութիւններ չարդարացուցին (ՆՊՍ. 6-7): Օսմանեան գերիշխութեան ներքև գտնուող երկու իշխանութիւններէն Եգիպտոս նուիրեց 1443 և Պուլկարիա 1115: Նշանաւոր եղան ռուսահայ ազգայինք տաճկահայ ազգակցաց օգնութեան հասնելու մէջ, զի եթէ այստեղ նշանակուած 14631 ընդհանուր նպաստներու միացնենք որբանոցներու համար յատկապէս նուիրուածները, կունենանք 37832, կամ ուրիշ բացատրութեամբ նպաստից սնտուկին մատակարարած գումարին հարիւրին քառասունուհինգ մասը (ՆՊՍ.7): Ռուսահայոց ընդհանուր նուէրներն ալ կը ստորաբաժանենք 3274 կաթողիկոսէ, 2170 Ջաննշեանցէ, 1078 Պետրբուրգէ, 1663 Մոսկուայէ, 3270 Տփղիսէ, 2538 Պաքուէ, և 637 ուրիշ քաղաքներէ (ՆՊՍ.7-8): Արտասահմանի երկիրներէն ստացուած ընդհանուր նպաստներ արտադրեցին. Պարսկաստանէ 256, Հնդկաստանէ 57, Ջաւայէ 342, Անգղիայէ 2730, Գաղղիայէ 1097, Պելճիգայէ և Հելուեդիայէ 95, Գերմանիայէ 112, Իտալիայէ 131, Ռումանիայէ և շրջականներէ 428, և Ամերիկայէ 3894: Այս մանրամասնութիւնները միայն իբրև ճաշակ մը քաղեցինք, ապա թէ ոչ պարտաւորութիւն չենք զգար տեղեկագիրին բոլոր մանրամասնութիւնները տալ: Նպաստից գործը յատուկ մտադրութիւն դարձուց որբերու խնամքին, կամ ահեղ կոտորածներէ ազատած անտէրունչ էակներուն խնամքին, որոնց ծանօթ և հաշուուած թիւը 50,000-ի հասաւ, թո՛ղ հաշիւներէ դուրս անծանօթ մնացածները: Որբերու վիճակը աւելի ազդու էր սիրտերու և միտքերու վրայ, և անոնց անունով շատ աւելի շարժուեցան ողորմած նուիրատուները, այնպէս որ բովանդակ հասոյթին չորս տաներորդը որբոց անունով ստացուած է: Որբոց անունով նուէրներ կերպ կերպ եղան, կամ ամբողջապէս որբանոց մը պահելու յանձնառութեամբ, կամ որոշ թիւով որբեր որդեգրելով, կամ իրենց առձեռն նուէրներին տեղը որոշելով: Ասոնք որբախնամ և սանատէր և մասնաւորող անուններով պատուած են հասոյթներու կարգին, թէպէտ ամէնքն ալ սրբոց համար յատկացուած նուէրներ: Որբանոցներու հետ միացած են գաւառական վարժարաններու համար յատկացուած մանր նուէրները, որոնք Վարնուէր անունով յիշուած են տեղեկագիրին մէջ: Գլխաւոր գումարները յիշած ըլլալու համար բաւական ըլլայ գիտնալ, թէ սրբախնամ անունի ներքև Տաճկաստանէ ստացուած է 2360, Ռուսիայէ 22893, Եւրոպայէ 2299, Ամերիկայէ 3636, սանատէրներէ 932, մասնաւորներէ 1226: Թէպէտ անուններ չենք յիշեր, սակայն բացառութիւն պէտք է ընենք Գրիգոր Ջաննշեանց ռուսահայ խմբագիրին համար, որ յատուկ հրատարակութեամբ մը գոյացուցած արդիւնքով 6191 ընձեռեց իր յանձնարարութեամբ բացուած որբանոցներուն, 2169 ալ ընդհանուր նուէրներուն մէջ ունէր, որ է ըսել համագումար 8360 օսմանեան ոսկի: Նպաստից սնտուկին մաս կը կազմեն նոյն միջոցին վանապան կողմերէ և վանապան անուններով ստացուած գումարներ, ինչպէս են մասնաւոր նպատակներու համար հանգանակուած 2884, Կովկասի համար 208, Կիլիկիոյ համար 2071, նոյնպէս դադարեալ կամ նոր հաստատութիւններու հասոյթէն, Միացեալէն 695, Ապգանուէրէն 180, մասնաւոր յանձնաժողովներէն 958, Պոպով կտակէ 135, Եօանէսքու կտակէն 1242, նպաստից

յանձնաժողովին հրատարակած դասագիրքերէն 696, իրեղէն նուէրներէ 188, յատուկ յանձնարարութեններէ 843: Վերջապէս յիշենք 1918 գումար մըն ալ որ ձեռք ձգուեցաւ հասած դրամները ընթացիկ հաշուի յանձնելով ստացուած պահեստի տոկոսներէ, որոնց ամբողջ գումարը եղած է 82,447 (ՆՊՍ.10-25). գումար մը՝ որուն հասած չէր երբեք մինչև այն ատեն նպաստի անունով բացուած որևէ ձեռնարկ մը, նոյն իսկ 1880-ի սովելոց յանձնաժողովը, որ իր նախընթացները գերապանցած էր (2857):

3090. ՆՊԱՍՏԻՅ ԾԱԽՔԵՐ

Նպաստից ծախքերուն պանապան ճիւղերը յիշած ենք արդէն (3003), և առաջին դրած ենք վիճակներուն պէտքը, այսինքն կարօտ և տառապեալ ժողովուրդին յատկացուցած օրապահիկի գումարներ: Ասոնք բաշխուած են վիճակներու վրայ, և վիճակներն ալ ամփոփուած են վեց կուսակալութեանց համեմատ, որոնք են. Կարին, Վան, Բաղէշ, Տիարպէքիր, Խարբերդ և Սեբաստիա, եօթներորդ բաժին մը եղած է Կիլիկիա, և ութերորդ ասոնցմէ դուրս մնացած այլևս վիճակներ: Այդ նպաստակին յատկացուցած է 27,858 ոսկի, և առաւելագոյն ստացող վիճակներն եղած են, Վան 5980, Մուշ 3843, Կարին 2474, Բաղէշ 1476, Զէյթուն 1253: Իսկ տարիներու մէջ ամենէն շատ բաշխուած է 1899-ին 7100, 1897-ին 4285, 1900-ին 3386: Վիճակներ որ նպաստ ընդունած են, եղած են 36. Կ. Պոլիս ալ առանձինն նշանակուած է 1921, ոչ ամէնը Կ. Պոլսեցիներուն, այլ առհասարակ ուղղակի պատրիարքն ներկայացողներուն: Այդ նպաստներուն որոշ գիծեր սահմանել դժուար էր, զի տեսուածին և պատշաճին յարմարցնել պէտք էր բաշխումները, բաշխողներուն խիղճին թողլով մնացածը, որոնք տեղւոյն ընտրելագոյններէն կազմուած յանձնաժողովներ էին (ՆՊՍ. 25-30): Երկրորդ ճիւղը կը կազմէին որբանոցները: Որբերուն խնամքին համար պահ մը խորհուեցաւ կեդրոն բերել, և Կ. Պոլսոյ, ըԶմիւռնիոյ Ադրիանուպոլսոյ և Արմաշի մէջ խնամել, սակայն շուտով և թողուեցաւ այդ ձևը, և լաւագոյն սեպուեցաւ իւրաքանչիւր վիճակի մէջ մասնաւոր որբանոցներ ունենալ որոշ որբերու թիւով, և իւրաքանչիւր որբի համար տարեկան հինգ ոսկւոյ վարկով: Հրահանգ մըն ալ պատրաստուեցաւ, յանձնարարելով որբանոցները վանքերու մէջ բանալ և անոնց արդիւնքներ գործածել, գաւառական կեանքի պայմաններով ապրեցնել, ուսմանց համար տեղական վբաղումներ հաստատել, մատակարարութիւնը հոգեբարձութեան մը և ներքինը տեսուչի մը յանձնել, որբերը փոխանակելով որոշուած թիւերու մէջ պահել: Իսկ որբանոցներու պայմանաժամը չորս տարւոյ վրայ հաստատուեցաւ (ՆՊՍ. 31): Այս ոճով 36 որբանոցներ բացուեցան գաւազան վիճակներու մէջ ըստ պահանջից. Կիլիկիոյ մէջ 11. Վանայ մէջ 7, Բաղէշի մէջ 5, և 13 ուրիշ կուսակալութեանց մէջ: Ծախուց բովանդակութիւնը եղաւ 30,048, և աւելի ստացողներն եղան Մուշ 2162 Մարաշ 2318, Զէյթուն 1648, Եդեսիա 1559, Սեբաստիա 1545, Սալանապատ 1403, Վարազ 1218, Մուշ աղջկաց 1210, Տիարպէքիր 1116, Արաբկիր 1106, Գլակ 1001: Առաւելագոյն ստացողները ընդհանրապէս կարողագոյն որբախնամ ունեցողներն եղան: Որբանոցներուն 36 թիւը հաստատուն մնաց 1899-էն 1902 քառամեային մէջ, անկէ ետքը քառամեայն լրացողներ և նուազ պէտք ունեցողներ հետզհետէ փակուեցան, և որբանոցները մինչև 16 նուազեցան (ՆՊՍ. 32-41): Որբանոցներուն նուազելուն առթիւ աւելի վարկ տրուեցաւ գաւառական վարժարաններու, աւելի կարոտ գիւղերը նկատի առնելով քան քաղաքներուն վարժարանները բարձրացնելով: Նպաստից սնտուկին բանալ տուած և պահած վարժարանները 34 եղան, որոնց գլխաւորապէս վարժապետի թոշակը կը հայթայթուէր և պիտոյք կը վրկուէին, տեղացիներն ալ հրաւիրելով մասնաւոր օգնութիւն ընել նիւթական նպաստներով և տեղ պատրաստելով: Ուսման ծրագիրն ալ յատուկ կազմուեցաւ համեստ պայմաններու շրջանով, կարդալ ու գրել ու հաշուել, և կրօնք ու ազգ գիտնալու չափով: Վարժարաններու համար

բովանդակ ծախքը եղաւ 10,189 և աւելի ստացողներն եղան Զէյթուն 1390, Սգերդ 1002, Բաբերդ 603, Ալաշկերտ 546, Չարսանձագ 537, Մարաշ 495, Բալու 445, Մալաթիա 345 (ՆՊՍ. 42-48): Առաջնորդարաններու անունով ալ ծախքեր եղած են վիճակներ յղուած առաջնորդներուն և տեղապահներուն և փոխանորդներուն ուղևորութիւնը, հրովարտակը, առձեռն պէտքերը և երբեմն պահեստն ալ հոգալու համար, այն մը և հոգածու մը ունենալ շատ աւելի մեծ բարիք է վիճակին, քան թէ դրամական գումար մը հասցնել: Այս կողմէն ծախքերը եղած են 2820, ուսկից առաւելագոյն օգտուողներն եղած են, Վան 437, Մուշ 240, Բաղէշ 148, Տրապիզոն և Ճանիկ 138, Բալու 132, Երզնկա և Կամախ 120, Սղէրդ 113, Չմշկաածդ 102 (ՆՊՍ. 48-50): Յատուկ գլուխ մըն ալ մտցուած է աքսորի և բանտի մէջ գտնողներուն պակուած նպաստներուն համար, որոնք բովանդակ եղած են 1112, և առաւել նպաստաւորուած են, Շամթարապլուս և Աքեա 226, Երուսաղէմ 206, Տիրապէքիր 122, Երզնկա 75, Ղարաթարապլուս 73 (ՆՊՍ. 50): Եղած են նաև ընդհանուր ծախքեր, կարօտութեանց և նեղութեանց համար առհասարակ, ըստ պարագայից յատկացնելու համար, եկեղեցւոյ և վարժարանի պիտոյք 469, որբոց և անանկաց պիտոյք 366, փոխադրութեանց ծախք 127: Ընդհանուր ծախքեր են ևս նամակի և հեռագրի և տպագրութեան համար դիւանական ծախքերը 416, և դրամական գանձմանց և յղմանց համար 86, իսկ գրութեանց համար բնաւ ծախք հաշըւած չէ. Վի առաւելագոյն աշխատութիւնը սիրով կատարած են պատրիարքարանի պաշտօնեաները գիշերներ ալ կոհելով, քանի որ ամէն թղթակցութիւն և յարաբերութիւն ձեռագիր նամակներով կատարուած են, և երեսուն ընդօրինակութեան տոմարներ լեցուած են, և գրական պիտոյք ալ պատրիարքարանի սնտուկէն հայթայթուած են: Գլխաւոր հաշուեկալութիւնը Օրմանեան անձամբ կատարած է (ՆՊՍ. 50-52): Վերջապէս տեղեկագիրը առանձին բաժին կը յիշատակէ յատուկ հաշիւներու ծախքերը, ինչպէս հասոյթներն ալ առանձինն նշանակուած էին, և պէտք էր փոխադարձաբար համեմատել, աւելին կամ պակասը իմանալու համար: Այս յատուկ ծախքեր արդէն նշանակուած կարգով եղած են, մասնաւոր հանգանակութեանց համար 216, Կովկասի 385, Կիլիկիոյ 1741, դադարեալ կամ նոր հաստատութիւններէն Միացեալի 1083, նոր հրատարակութեանց 797, մանր յանձնարարութեանց 804, Եօանէօբու կտակին 181, որ է բովանդակ 5206 (ՆՊՍ.53-55): Իսկ բովանդակ ծախքերուն գումարը եղած է 79,398, որով սնտուկի պատրաստը Օրմանեանի հաշիւները փակած օրը եղած է 3049: Տեղեկագիրը կը ցուցնէ թէ ո՛ր կը գտնուի այդ գումարը կապմող մասերը, և որչափ ինչ որոնց կը պատականին, որով վուտ տրամադրելի կը մնայ միայն 783: Ըսուած է ևս թէ հաշիւները կանոնաւորապէս փակուած են 1908 յուլիս 15-ին, և թէ պարտք չունի բնաւ նպաստից սնտուկը (ՆՊՍ.55): Լարկ չենք տեսներ նպաստի գործէն յառաջ եկած օգտակար արդիւնքները յիշել, որոնք յայտնի կըլլան գումարներու քանակը և կիրառութեանց եղանակները կշռելով: Անօթութենէն և մերկութենէն խնայուածներուն մօտ շատ աւելի գնահատելի կը դատենք որբանոցներուն և վարժարաններուն դարձուած մտադրութիւնը, և եղած ծախքը համագումար 41,320 ոսկւոյ կը հասնի, որ է տրամադրելի գումարին կէսը: Այդ ծախքը նոր սերունդի մը պահպանութիւնը ապահոված և քիչ ու շատ ժամանակին պիտոյից համեմատուած է:

3091. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՇԷՆՔԸ

Որչափ ալ խեղճութեանց և կարօտութեանց ժամանակ մըն էր Օրմանեանի պատրիարքութեան միջոցը, սակայն հնար չէր վանց ընել այնպիսի ձեռնարկներ, որոնք յայտնի պահանջներ էին, թէպէտ տրամադրելի գումար չգտնուելուն բարեսէրներու առատաձեռնութեան և վուարթառատ տուրքին դիմելու հարկ կար: Պատրիարքը այդ մասին ալ անգործ և անպտուղ չմնաց և յարմար դիտումներով յաջողեցաւ գոնէ անհրաժեշտ ձեռնարկները ի գլուխ հանել: Այս

կարգին առաջին եղաւ պատրիարքարանը, որ թէ՛ նեղ և անձուկ էր պահանջուած պայմաններուն հանդէպ, և թէ՛ հնացեալ և խաթարեալ կերպարան ստացած էր անպատիւ երևնալու աստիճան: Փամանակով պատրիարքարանի կից ճանիկ ամիրայի մեծ տունը, և երուսաղեմատան և պատրիարքարանի միջև գտնուած փոքր տնակը գտնուած էին նոր պատրիարքարան կառուցանելու դիտմամբ, որուն սակայն միջոցները կը պակսէին և խեղճ կացութիւնը կը շարունակէր, և նորստացիկ տուները պանդուխտներու բնակարան էին եղած: Օրմանեան փափաքեցաւ գոնէ եղածը կարգադրելով հնարաւոր վայելչութիւնը տալ. ուստի պատդուխտները տեղափոխելով փոքրիկ տունը քակուեցաւ, ամիրայական տունը նորոգուեցաւ և հոն փոխադրուեցաւ պատրիարքարանի դիւանը, իւրաքանչիւր ճիւղին, անձնականին, վարչականին յարաբերականին, կրօնականին, գործակատարութեան, արձանագրութեան, երևմտից, հաշուակալութեան և ազգահամարի վատ վատ սենեակներ յատկացնելով, որոնք առաջ երկու նեղ սենեակներու մէջ ամփոփուած էին. լրագիրներու լրաբերներու իսկ յատուկ սենեակ, և գործի սպասողներուն մեծ սրահները յատկացնելով, և պատրիարքարանէ դիւաններուն անցնելու թէ վերայարձակէն և թէ գետնայարկէն հաղորդակցութիւններ բանալով: Այս կերպով նախկին պատրիարքարանը պատրիարքին և փոխանորդին մնաց, ժողովասարհ և սպասման սենեակ որոշուեցան, և մեծ դահլիճին հետ վայելաչապէս թղթապատուեցան, կարասին ամբողջ նորոգուեցաւ, միակտուր գորգեր սփռուեցան, պատրիարքներու պատկերներ գծագրուեցան և շարուեցան, բոլոր մասերը յարդարուեցան, մեծ սանդուխին վրայ գտնուող սենեակը վերցուելով անցքը բացուեցաւ, և հեծելութեան յարմարցուած սանդուխին վարի գլուխը փոխուեցնելով ուղղուեցաւ, և մուտքի գաւիթին փողոցային սալայատակն ալ մեծ սալաքարերով փոխանակուեցաւ: Արտաքին ճակատն ալ մտադրութենէ չվրիպեցաւ և երկու շէնքերու միացմամբ բաւական յարմար կերպարան մը առաւ: Այնպէս որ պատրիարքարանի երևոյթները ամենուն աչքի վարնելու չափ վայելուչ և վարդարուն ներկայանալ սկսաւ: Ծախքերը և նիւթեղէնները մասնաւոր դիմումներով հաւաքեց Օրմանեան կարող ազգայիններէն իւրաքանչիւրին յարմարութեան համեմատ, բոլորը իբր 1300 լիրայով փակեց, ու հաշիւն ալ ընկալագիրերով մէկտեղ տնտեսականին ներկայեց: Նորոգութեան ձեռք վարնուեցաւ 1901 փետրուար 26-ին և մարտ 24-ին վերջացաւ (ՕՄԱ.145): Պատրիարքարանի արտաքին կերպարանին հետ ներքին գործառնութեանց կարգուսարքին ալ պէտք էր մտադրութիւն դարձնել, և դարձուեցաւ ինչպէս սկիզբէն բացատրուեցաւ (3011) և կրկնելու հարկ չի մնար:

3092. ՇԻՆԱՐԱՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Պատրիարքարանէ ետքը պիտի յիշենք մայրաքաղաքի եկեղեցիները, որոնց վրայ նշանաւոր նորոգութիւններ կատարուեցան պատրիարքի դիմումներով և քաջալերութիւններով: Գումգաբուի մայր եկեղեցին անկեալ և պատառատուն կերպարան ստացած էր, և նորոգուեցաւ սպիտակ մարմարի ոճով և ոսկեպօծ գիծերով, սինապարդ յաւելուածով և նոր ջահերով և նստարաններով, Սմբատեան Մանուկ Վանեցի վաճառականի առատաձեռնած գումարով, և 1902 դեկտեմբեր 28-ին օրհնուեցաւ և 29-ին հանդիսաւոր պատարագ մատուցուեցաւ, և բարերան ալ վախճանելուն, իբրև եկեղեցաշէն, մայր տաճարին քովը թաղուեցաւ: Նոյնին հրաւերով Գասըմփաշայի Ս. Յակոբ եկեղեցւոյն վրայ ալ նորոգութիւններ կատարուեցան: Ֆէրիքէօյի Ս. Վարդան փայտաշէն եկեղեցին վտանգ սպառնալու աստիճանին հասած էր, Ջենոբ Մէրամէթճեան ձարտարապետի ձեռքով և ծախքով վերաշինուեցաւ: Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցին բարեկարգութիւններ ստացաւ Ստեփան Թելլիեան թաղական ատենապետին ծախքով: Նոյնպէս Խասքէօյի Ս. Ստեփանոս եկեղեցին ալ ատենապետ Եղիա Շահապեանի ջանքով և նուէրով վերանորոգուեցաւ:

Գուրումչէշմէի Ս. Խաչ եկեղեցին ներքնապէս և արտաքնապէս կարգադրուեցաւ թաղեցւոց ծախքով: Պէօյիւքտէրէի Ս. Հոիփսիմէ եկեղեցւոյն մուտքը ձևակերպուեցաւ Երեմեան Աբրահամ փաշայի ծախքով: Պէշիկթաշի Ս. Աստուածածին եկեղեցւոյն կրած վնասները դարմանուեցան ընդհանուր հանգանակութեան արդիւնքով: Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին ներքնապէս յարդարուեցաւ թաղական հասոյթներով: Սամաթոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ ժամատունը և կալուածները կառուցուեցան Յակոբեան Միքայէլ վաճառականի բարերարութեամբ: Մաքրիքէօյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ և ժամատան պակասները լրացան թաղեցւոց առատաձեռնութեամբ: Եկեղեցական բարեկարգութեան գլխաւոր օժանդակը և շինուածներէն ալ աւելի ներքին բարեկարգութիւններն են, և այդ մասին դարձուած մտադրութիւնը բացատրած ենք դպրաց դասերուն և եկեղեցական երգեցողութեանց վրայ խօսած ատեննիս (3011): Նոյն նպատակին ծառայելու համար կազմակերպուեցան Կաղպուանցի Ջաքարիա պատրիարքին մահուան հարիւրամեակի հանդէսը, 1899 մայիս 16-ին Գուրումչէշմէի Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ, ուր է բազմարդիւն պատրիարքին գերեզմանը (99.ՍՐՀ.60): Մեծահանդէս տօնախմբուեցան Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն հարիւրամեակն ալ, 1907 յունիս 10-ին (07.ԲԻՋ.3253), և 1903 յունիս 8-ին Էջմիածնայ մայր տաճարին 16-րդ դարադարձը Գամգաբուի մայր եկեղեցւոյն մէջ (03.ԲԻՋ.2044), և առհասարակ մեծ փոյթ տարուեցաւ եկեղեցական հանդէսներու կարգաւորութեան և շքեղութեան, իբրպի երբ ազգային հանդէսներու դէմ պետական արգելքներ կը տիրէին, գոնէ եկեղեցականները անարգել կը կատարուէին, և կրօնքի հովանաւորութեան ներքև ազգայնոց սիրտն ու միտքը պարաբելով, զգացումները վառ պահելու կը ծառայէին: Չախող պարագայ մը եղաւ Գարակէօմրիքի Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյ հրդեհը 1900 յուլիս 6-ին, ուր կը պատուուէր Խնդրակատար Ս. Աստուածածնայ պատկերը և մայրաքաղաքացւոց նշանաւոր ուխտատեղի էր Փոքր-Արմաշ անունով (00.ԲԻՋ.1140): Պատկերը լուսարար Թաշձեան Արիստակէս քահանայի ձեռքով ազատած՝ Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցին զետեղուեցաւ յատուկ կոնդակով (00.ԲԻՋ.1152) և ուխտաւորութիւնը շարունակեց: Եկեղեցական բարեկարգութեանց կարգին կրնանք յիշել գերեզմաննոցներու վրայ դարձուած մտադրութիւնն ալ: Շիշլիի բարձունքին վրայ Բերայի նոր գերեզմանատան որմափակը 1884-ին կարգադրուած էր, Օրմանեանի քարոյչութեան միջոցին (2889), բայց դուռը չէր շինուած և խեղճ տախտակորմով կը մնար: Այդ պակասը լրացնելու ձեռնարկուեցաւ 1902-ին (02.ԲԻՋ.1736), և երկյարկանի գեղեցիկ շէնք մը բարձրացաւ, քահանայի, տնօրէնի, պահապանի և գերեզմանափորերու յատկացեալ սենեակներով, և յուղարկաւորներու հանգիստին տրամադրելի սրահներով, և 1904 մայիս 16-ին հանդիսապէս օրհնուեցաւ (04.ՍՐՀ.1603): Ծախքերը հոգացուեցան կալուածներու հոգաբարձութենէն գերզմաննոցի հասոյթներուն հաշուոյն: Պալըքլըի ընդարձակ և Էտիրնէգաբուի յատուկ հնօրեայ գերեզմաննոցներն ալ որմափակուեցան, և Պէշիկթաշի և Օրթաքէօյի գերեզմաննոցներն ալ, որ Երլտըզի արքունիքին մօտ էին, գրամանէ ազատուեցան (ՕՄԱ.146): Բարեգործութիւնն ալ բվարեպաշտութիւն է, և հիւանդանոցն ալ կը կցենք եկեղեցիներուն: Հիւանդանոցի պահպանութեան և կատարելագործման համար եղած ջանքերը և կարող հոգաբարձութեամբ մը օժտուելու համար ձեռք առնուած միջոցները (07.ԲԻՋ.3261), իբրև յայտնի կէտեր մանրամասնելու չենք մտներ. սակայն յատուկ յիշատակութեան արժանի են Աբիկ Ունձեան և Յովհաննէս Յակոբեան և Պատրիկ Կիւլպէնկեան նուիրատուաց ծախքով կառուցուած երեք նոր ընդարձակ տաղաւարները, որ գիտական պահանջմանց համեմատ կառուցուեցան, Միքայէլ Խօրասանձեան բժշկապետի նուէրով կազմուած և կազմակերպուած նոր դեղարանը, նոյնպէս հականեխական հաստատութիւնը, և Թահթապրունեան Աղաթան և Կարապետ եղբարաց ծախքով իրենց

հանգուցեալ եղբոր Դիոգինէսի յիշատակին շինել տուած նոր եկեղեցին: Երեք յարկերը հիմնուեցան 1905 մայիս 25-ին (05. ԲԻՁ. 2616), իսկ եկեղեցին 1909 փետրուար 10-ին և օծուեցաւ նոյն տարւոյ դեկտեմբեր 3-ին (06. ԲԻՁ. 2867 և 3118): Հիւանդանոցի բարգաւաճման պարագայ մը եղած է նաև կառավարութեան կողմէ յատկացուած օրական պարէնին 600 քաշ հացի և 150 քաշ միսի բարձրանալը, որ կայսեր կողմանէ շնորհուեցաւ 1898 օգոստոս 20-ին Օրմանեան պատրիարքի կողմէ բացատրուած կարօտութեան և խնդրուած օժանդակութեան վրայ: Այս փոքրիշատէ յիշատակները բաւական ըլլան նեղ պարագաներու մէջ շինարար գործունէութեան դարձուած մտադրութիւնը բացատրելու:

3093. ԿՐԹԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Ուսմանց և դպրոցաց համար Օրմանեանի ունեցած ընդհանուր հոգածութիւնը առիթ ունեցանք յիշատակել (3004, 3011, 3090), այստեղ աւելցնենք քանի մը մասնաւոր յիշատակներ ևս: Օրմանեան պատշաճ դիմումներով պետական վանապան վարժարանաց մէջ ցրիաբար վետեղեց 25 աշակերտներ 1898 ապրիլ 15-ին (98.ՃԷՐ:3885), և 6 ալ Սուլթանիէ երկրորդական վարժարանին մէջ 1906 սեպտեմբեր 10-ին (06.ԲԻՁ.1196): Դպրոցականներու քաջալերութեան առիթներ են ամավերջի հանդէսները՝ վկայականաց կամ մրցանակաց բաշխման համար, որ վերջերը արգիւուած էին կամ ուստիկանական հսկողութեան յանձնուած: Օրմանեան անձնական նախաձեռնութեամբ առաջին անգամ համեստ հանդէս մը սարքեց պատրիարքարանի մէջ 1899 նոյեմբեր 4-ին, և իր ներկայութեամբ ուստիկանական միջամտութիւնը խափանելով՝ հետզհետէ բոլոր թաղերու տարածեց և այդ հանդէսները սովորականի վերածեց: Նոյնպէս դպրոցականներու քաջալերութեան համար Ծնունդի և Զատիկի պաշտօնական ընդունելութեանց աւելցուց ուսուցիչներու և աշակերտական խումբերու ընդունելութիւնը. փոյթ տարաւ դպրոցական շինուածներու նորոգութեան և առողջապահիկ պայմաններու, իր յորդորներով դաստիարակութեան ծախքերը աւելցուց, աշակերտական բարեկրթութեան հոգ տարուեցաւ, ուսուցիչներուն ընտրութիւնը և ընթացքը հսկողութեան ներքև առնուեցան, և գլխաւորապէս ազգային վարժարանաց նորէն պատրիարքարանի և առաջնորդարանի իրաւասութեան ներքև անցնիլը յաջողցուց, որ կրթական ջանքերուն պսակն եղաւ: Մասնաւոր ձեռնարկներու կարգին առանձինն յիշատակութեան արժանի են Խասքէօյի թաղական վարժարանին վերաշինութիւնը Բարաղամեանց ծախքով, Գալֆայեան որբանոցին անկեալ վիճակէն բարձրացումը, և տիկնանց խնամակալութեամբ պաշտպանուիլը, և կարող մայրապետի մը և քոյրերու հոգածութեան յանձնուիլը, շէնքին հիմնապէս նորոգուիլը, և յարկ մը ևս աւելնալը, և յարակից ճեպայիրլեանց ապարանքին կայսերական շորհիւ ստացուիլը 1908 մայիս 6-ին, որուն հաղորդակցութեան բացումը անձամբ կատարեց Օրմանեան յունիս 27-ին: Ազգային որբանոցին վրայ ալ յատուկ մտադրութիւն դարձուեցաւ՝ երբ տակաւին Ձէյթինպուրնուի Ս. Յակոբի հին շէնքին մէջ կը գտնուէր, հնարաւոր նորոգութիւններ և կարգադրութիւններ հոգացուեցան, և գլխաւորապէս որբերու ապագան ապահովելու համար արհեստանոցներ բացուեցան չորս առձեռն արհեստներու, կոշկակարութեան, ատաղձագործութեան, թիթեղագործութեան, դերձակութեան գործարաններով և կարող ուսուցիչներով միանգամայն որբանոցի նախակրթարան ուսմանց ալ յատուկ մտադրութիւն դարձուեցաւ, այնպէս որ տարեկան քննութեանց և ընդհանուր մրցմանց մէջ, որբանոցի աշակերտութիւնը թաղականներէ բարձր յաջողակութիւն արդարացուց: Նոր որբանոցի կառուցման համար ալ ամէն հոգ և ջանք թափուեցաւ, և Եէտիգուլէի հիւանդանոցի պարտէզին կամ Իւսկիւտարի Պալեան Վադըֆ գետնին մէջ շինելու արտօնութիւնն ալ ստացուեցաւ, բայց շինութեան ծախքին դժուարութեանց առջև վերջէն Տիգրան Գարակէօպեան կտակին արդիւնքովը

իրականացաւ (3035): Ռէթէնս Պէրպէրեանի վարժարանին համար ըրածն ալ նշանաւորագոյն եղաւ, ուրիշ մասնաւոր վարժարանաց համար ըրածներուն կարգին, իբր պի բաւական տարիներէ ի վեր արդիւնաւոր հաստատութիւն մը եղած էր, և քանիցս վարժարանին համար կրկնուած կառավարական դիտողութիւններ պատրիարքին միջնորդութեամբ հարթուած էին: Երբոր Պէրպէրեանի նախկին սաները փափաքեցան քսանհինգամեայ յոբելեանի առիթով հանդէս մը և օժանդակութիւն մը ընել իրենց ուսուցչին, Օրմանեան ամենայն ինչ իր անձնական պատասխանատուութեան ներքև առաւ, որով կառավարական դժուարութիւններ հարթուեցան, հանգանակութիւնը արդիւնաւորուեցաւ, և 1901 հոկտեմբեր 28-ի եկեղեցական և դպրոցական հանդէսները ամենայն փառաւորութեամբ և ոգևորութեամբ կատարուեցան: Պէրպէրեան հիմնարկութեան 1876 թուականը, Ռ.Պ.Հ.Զ., Ռէթէնս Պէրպէրեան Հայր Զարգացելոց վերտառութեամբ արձանագրուեցաւ, Պէրպէրեան ուսուցչապետի կոչմամբ պատուուեցաւ, և պատրիարքի քարոզին բնաբանը, Սիրեաց զիմաստութիւն և յարգեցաւ (ԱՌԿ.Զ.9), վարժարանին նշանաբանը դարձաւ, և իրօք ալ ամէն բանէ վեր իմաստասէր մըն էր Պէրպէրեան: Իսկ երբ Ռէթէնս Պէրպէրեան անակնկալ կերպով վախճանեցաւ 1907 ապրիլ 8-ին և վաւակները չափահաս չէին (07.ԲԻԶ.3201-3203), Օրմանեան թէ՛ վարժարանին և թէ՛ վաւակաց խնամակալութիւնը ուղղակի իր վրան առաւ, ժառանգական և կառավարական գործոց համար պաշտօնէական յանձնաժողով մը կազմեց (07.ԲԻԶ:3201), վարժարանին տեսչութիւնը Պետրոս Կարապետեանի յանձնեց, ամէն պարագայից անձամբ հսկեց, և Ռէթէնս Պէրպէրեանի յաջողակ և կարող հսկողութեամբ ազգին մեծապէս օգտակար եղած երեսուն և միամեայ հաստատութիւնը անվտանգ պահպանեց, և ամավերջի հանդէսն ալ կանոնաւորապէս կատարեց: Այստեղ յիշենք և ԼՈՅՍ կրօնաթերթին հրատակութիւնը 1905 յունուար 1-ին, Բաբգէն Կիւլէսէրեան վարդապետի խմբագրութեամբ և Կարապետ Խորասանձեանի դրամական ձեռնտուութեամբ, որուն պատրիարքն ալ լայնօրէն գործակցեցաւ, և իր տեսակին մէջ լաւագոյն հրատարակութիւնն եղաւ. սակայն միայն երկու տարի կեանք ունեցաւ: Կրթական ջանքերուն մասին այս քանի մը ակնարկները բաւական կը սեպենք, ձաշակ մը տուած ըլլալու համար:

3094. ՅՐԻԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Պաշտօնական շրջանակի ուրիշ ճիւղերն ալ չվրիպեցան Օրմանեանի մտադրութենէ: Բաջ գիտնալով որ կերպերը աւելի դիւրամատոյց կընծայեն գործերը քան իսկութիւնները, և թէ յարաբերութիւններ իրաւունքներէ և փաստերէ աւելի կազդեն դժուարութիւններ հարթելու, Օրմանեան յատուկ մտադրութիւն դարձուց ամէն շրջանակի հետ լաւ յարաբերութիւններ պահելու, առանց ստրկութեան հասցնելու և առանց բախումներ յառաջ բերելու: Այդ նկատմամբ թէ՛ արքունիք, թէ՛ նախարարութիւնները և թէ՛ դեսպանատունները իրեն մօտիկ և իրեն հանդէպ բարեմարդիկ պահեց, ի հարկէ առաւելապէս անոնք որոնց հետ գործերու կամ դիմումներու շփոթներ յաճախ էին: Հայոց պատրիարքարանը արքունեաց և նախարարութեանց շրջանակներու մէջ պատուաւոր գիրը պահեց, դեսպանատուններու մէջ գնահատելի տեղ բռնեց, արտաքիններու աչքին յարգելի վիճակ ունեցաւ, պատրիարքարաններու հետ բարեկամական կապ հաստատեց, և հանրութեան կողմէ ակնածելի վերաբերում տեսաւ (ՕՄԱ. 148): Օրմանեան հաստատեց տարին մէկ անգամ պատրիարքներու անձամբ այցելելու սովորութիւնը, ինքն կանխելով Յունաց պատրիարքարանը երթալ (98. ԱՐՐ. 208), Կաթողիկոս և Պուլկարաց պատրիարքարանները անոց գալէն ետքը փոխադարձ այցելել: Ծնունդի առթիւ այցելութիւնները դարձեալ փոխանորդներուն թողուց, պի այլապէս ինքն պարտաւոր պիտի ըլլար ամէնուն կանխել, Հայոց Ծնունդը ամենէն վերջը առնուելուն պատճառով: Մերթընդմերթ մասնաւոր այցելութիւններ ալ աւելցուց,

պատրիարքներու համերաշխ դիմումներ պատրաստելու համար, որով կը պօրանային իր ընելիք դիմումներ: Մօտէն յարաբերութիւններ պահեց Լրոպական թղթակցութեանց և հեռագրութեանց ներկայացուցիչներուն հետ, որով թէ արտաքին անցուդարձերու կը տեղեկանար, և թէ՛ պէտք եղած տեղեկութիւնները հաղորդելու և հասցնելու դիւրութիւն կունենար: Իսկ ապագային շրջանակի մէջ ոչ մէկու հետ յարաբերութիւնները խզեց կամ համառօտեց, որչափ ալ իրեն հանդէպ հակակիր ըլլային, և գործերու գլուխ պաշտօնեաներ բերելու առիթներուն, կարողութիւնն ու կամեցողութիւնն էր իր փնտռածը և ոչ համակիր կամ հակակիր պագացումները, ամէն բանէ առաջ գործը յաջողցնելու և նպատակին հասնելու տեսակէտին հետեւելով: Այս նպատակով էր որ գաւառական առաջնորդներուն ու տեղապահները և տեղական ժողովներու հայ անդամները շքանշանով կամ աստիճանով բարձրացնելու միտ կը դնէր, որ յաջող և ակնածելի ըլլան իրենց պաշտօններուն վրայ: Գործ յաջողցնելու նպատակով թղթակցութեանց շատութենէն ալ չէր խուսափեր, և կրնանք ըսել թէ շատ ցանցառ էին անպատասխանի թողուած նամակներ, անոնք ալ որոշ պատճառի մը հիմնուելով. կարևոր գրութիւններն ալ անձամբ կը խմբագրէր, բոլոր աւելի դիւրին կը գտնէր քան թէ իր ըմբռնումները փոխանցելը և պատրաստուած սևագրութիւններ ուղղելը: Երբոր ընդհանուր էր պէտքը հրահանգները ու հրամանները կը սփռէր իբրև գործելու ուղեցոյց, ինչպէս եղան որբանոցներու հրահանգը, արհեստանոցներու շրջաբերականը, Գալֆայեան որբանոցի կոնդակը, Եկեղեցական գոյից պահպանութեան հրահանգը թեմօրէից փոխանորդներու կարգադրութիւնը (05.ԲԻՁ.2537), կալուածող կանոնագիրը (05.ԲԻՁ:2722), առաջնորդական ընտրելեաց ցուցակը (07.ԲԻՁ.3237), ուսումնական դատերու հրահանգը (07.ԲԻՁ.3283), Եկեղեցեաց և թաղականութեանց շրջաբերականը (07.ԲԻՁ.3089), և քահանայացուած ընտրութեան խնդիրը (07.ԱՐԼ.6393), և ուրիշ շատեր, որոնցմէ յիշած ենք արդէն դպրաց կանոնագիրը, և Եկեղեցեաց բարեկարգութեան ծրագիրը, և պատրիարքական սնտուկին (08.ԲԻՁ.3164), և նպաստից գումարներուն համարատու տեղեկագիրները: Խոհական պզուշաւորութեանց հետևողութիւնը, որչափ ալ մօտ էր Օրմանեանի միտքին իպուր խնդիրներ չշատցնելու համար, սակայն հարկ եղած դիտողութիւններէն և բողոքներէն և նախաձեռնութիւններէն ալ երբեք չէր խուսափեր: Չեղաւ անտեղութիւն կամ անիրաւութիւն, որուն համար լռութիւն պահած ըլլար (ՕՄԱ.314-332). անպօգուտ բայց կառավարութեան անհամակիր անձանց մասին ալ պարտուպատշաճը պանց չըրաւ, և փառաւոր հոգեհանգիստներ կատարեց Նուպար փաշայի, Գրիգոր Ջանշեանցի, և Խրիմեան կաթողիկոսի, թէպէտ կային չընելու յորդորողներ՝ կառավարութեան մտադրութիւնը չհրաւիրելու համար: Եկեղեցական վեղծումներու մասին ալ անաչառ նախանձախնդիր կանգնեցաւ, և իր վճիռներով կարգաւոյժ հռչակեց Կիրակոս Կէօքեան, Գարեգին Աժտէրեան, Ներսէս Ըջըլեան վարդապետները, և Խորէն Մուրատեան, Ղազար Տէր-Ղազարեան, Յովհաննէս Տէր Յովհաննէսեան քահանաները, և երբեք չպիջաւ վճիռը ետ առնել, կարգաւոյժը Եկեղեցականօրէն մեռեալ և մեռելոց յարութիւնը իր կարողութենէ վեր դասելով: Յիշենք ևս ամերիկաբնակ Յովհաննէս Թաւշանձեանի նշանակած նուէրով բացուած քարոյի մրցումը, որուն ընթացքը կարգադրել, քննութիւնները կատարել և յատուկ հատորով հրատարակել տուաւ (03.ԲԻՁ.1988): Պաշտօնական գործերուն կարգին ի դէպ է յիշել հին կտակներու մասին կատարած կարգադրութիւնները զի շատերուն դրամագլուխները կորած կամ կալուածները ոչնչացած էին, և շատերուն դրամագլուխն ալ անկեալ թղթադրամով էր կապմուած, և Եկեղեցիներու բեռ էին և ոչ օգուտ, որոնց ամէնքը հաստատուն հիման մը վերածեց, մայր Եկեղեցւոյ Պէպճեան կտակէն սկսվելով (97.ՃԷՐ.3783): Պսակներու օրհնութիւնը հարկաւ Եկեղեցւոյ և ոչ տուններու մէջ կատարել հրամայեց (02.ԲԻՁ.1892): Մայր Եկեղեցւոյ քահանայից դասը երբեք

թաղերու վրայ բաշխեց ու վատեց (98.Ա.ՐԼ.3776): Իւսկիւտարի երեք թաղերուն վարժարանական միութիւն հաստատեց (05. ԲԻԶ. 2715), թէպէտ յարատև չեղաւ: Բերայի մէջ կարօտ հիւանդներու դարմանատուն բանալ տուաւ (97. ՃԷՐ. 3663): Եւ վերջապէս Եթովպացի պատուիրակութեան մը Կ. Պոլիս գալուն առթիւ բանակցութեան մտաւ, և մինչև իսկ եթովպական եկեղեցին՝ ապագային հայկականին հետ յարաբերութեան և կապակցութեան բերելու գրաւոր առաջարկ ներկայեց (05. ԲԻԶ. 2623):

3095. ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ՄԻԶԱԴԷՊԵՐ

Ներուի պահ մըն ալ ինչինչ թեթև, և աւելի ծիծաղաշարժ բան կարևոր միջադէպներ յառաջ բերել, որոնք կրնան գաղափար մը տալ թէ ինչ տարադէպ պարագաներու մէջ անցած Օրմանեանի պատրիարքութեան օրերը: - Թաղական վարժարանները իրենց մանկապարտէզի բաժնին պատիկներուն կարմիր գոգնոցին վրայ սովորութիւն ըրած էին երկու սկզբնատառ նշանակել, և ըստ այսմ Պալաթի վարժարանն ալ Խ. Մ. Խորէնեան Մանկապարտէզ, տառերը որոշած էր: Զսու անձեր, որ դժուարին ժամանակներու մէջ աւելի շատցած էին իբրև լքուած արտերու մոլախոտներ, կառավարութեան կը թելադրեն թէ խեղճ մանուկ կը նշանակէ, և թէ կառավարութեան դէմ ցոյց մըն է կոտորածներու յիշատակը վերանորոգելու: Օրմանեան կը պարտաւորուի գրաւոր և բերանացի շատ մը աշխատութեանց ներքև մտնել համոզելու համար թէ անհիմն քսութիւն է, և միայն վարժարանին անունին նշանակն է: - Ուրիշ անգամ մը պատրիարքին գրաւոր հրաման կը հասնի որ հայ օրիորդներու և մանկամարդ կիներու արգիլէ կարմիր բաձկոնակ գործածել, իբր թէ կարմիրը յեղափոխութեան նշանակ է, և վայն գործածել հայ յեղափոխութիւնը ցուցադրել է: Այս անգամ ալ նոր աշխատութիւն և երթևեկ և բացատրութիւն հարկ կըլլայ կատարել իմացնելու համար թէ տարւոյն նորաձևութեան հետևանքն է, և նորաձևութենց հեղինակներ Հայեր գտածին գործածելու ստիպուած են: - Եկեղեցական երգեցողութեան մէջ եռաձայնի տրուած քաջալերութիւնը ուրիշ քսուներու առիթ կընծայէ տեղեկագրել, թէ Օրմանեան եկեղեցիները թատրոնի փոխարկած է, և այստ առթիւ համախմբութիւններ կը պատրաստէ: Օրմանեան բաւական կը յօգնի արքունիքը համոզելու թէ եկեղեցական պաշտամունք երգեցողութեամբ կը կատարուին, և եղածը երգեցողութեան կանոնաւորութիւնն է, և ժողովուրդին համախմբութիւնը գոհ մնալուն հետևանքն է, և եկեղեցեաց համախմբութիւնն ամէնէն անվնաս մանաւանդ թէ օգտակարն է. այլ եթէ կառավարութեան անհաճոյ կերևի, թող հրամայուի և ժողովուրդը գինետուններու և սրճարաններու կը դարձնէ: - Ուրիշ անգամ մը ապդարարութիւն կը տրուի պատրիարքին թէ արտասահմանէ եկած յաղափոխականներ կը շրջին քաղաքին մէջ եկեղեցական տարազի ներքև: Այս անգամ ալ հարկ կըլլայ Օրմանեանի ուժգնապէս պնդել, թէ բոլոր եկեղեցական տարազ կրողներ անունով և դէմքով ծանօթ են պատրարքարանին, և թէ անծանօթ մնացած և եկեղեցական տարազ կրող անձ չկայ քաղաքին մէջ, որ եթէ ուստիկանութիւնը կը ճանչնայ թող մատնանիշ ընէ որ ինքն քննէ և ստուգէ: - Ուրիշ անգամ մը կայսերական թիկնապահով արքունիք կը հրաւիրուի Օրմանեան, ուր իրեն կը հաղորդուի թէ հալար հայ յաղափոխականներ Կիպրոսի մէջ պինուած կը սպասեն Կիլիկիա անցնիլ, և պատրիարքէն կը պահանջուի անոնց արշաւանքը արգիլել: Պատրիարքը կը ժպտի, և երբ առաջարկը կը կրկնուի, կը պատասխանէ թէ Կիպրոսէ Կիլիկիա ծովով անցնիլ հարկ է, ուստի իր տորմիդը պիտի դրկէ հրոսակին անցքը արգիլելու: Եւ վերջապէս կը յայտարարէ, որ եթէ ստոյգ է, արգիլել կառավարութեան գործն է և ոչ իրեն, այլ թէ պրոյցը անհիմն է, և թէ այսպիսի գործի մը բնաւ հաւանականութիւն չկայ, և այս յայտարարութեամբ կայսրը կը գոհանայ: - Օր մը յանկարծ բոլոր գրավաճառներ պատրիարքարան կը դիմեն թէ գրաքննութիւնը բոլոր ժամագիրքերը գրաւած և կնիքի ներքև առած է, ճակատը

Հայաստանեայց բառը գտնուելուն համար: Պատրիարքը գործը վրան կառնէ և իսկոյն արքունիք կը փութայ յայտարարել թէ մտադիր է եկեղեցիները փակել, վասնզի նոր իմացեր է որ այդչափ դարերէ ի վեր եկեղեցւոյ մէջ գործածուած աղօթքները վնասակար են եղեր, մինչ պաշտօնեայք առանց ժամագիրքի ալ գոց կը կրուցեն, ուստի դրամանը արմատաքի ընելու համար եկեղեցիները փակել հարկ կը սեպէ: Գրաքննութեան ձախող քայլը կայսրն ալ դժգոհ կը թողու, և իսկոյն հրաման կը տրուի կնիք և արգելք վերցնել, և միջադէպը կը փակուի: - Հայաստանեայց բառին կիրառութիւնը ուրիշ առիթով ալ նախարարութեան և պատրիարքարանի մէջ երկար գրութեանց առիթ կընծայէ, պատրիարքական կոնդակի մէջ գործածուած ըլլալուն առիթով: Նախարարութիւնը Հայաստանեայց և Հայոց բառերու տարբերութեան կը մտնէ, առաջին աշխարհագրական և երկրորդը ազգաբանական կոչում ցուցնելով. մինչ Օրմանեան նոյնանշանակ ըլլալը կը պնդէր, և վերջապէս հայերէն բառերու իմաստը նախարարութեան գրագիրներէն սորվելու պէտք չունենալը յայտարարելով խնդիրը կը վերջացնէ: - Անգամ մը գինով մը ձերբակալուած գրպանէն Հայոց Պատմութեան ձեռագիր թերթ մը կելլէ, և ծագումը փնտռուելով իր պատիկ տղուն դպրոցէն բերած ըլլալը կիմացուի, և տղուն դասարանին վարժուհին կամբաստանուի և դատարանի կենթարկուի: Օրմանեան անձամբ առաջ կանցնի, վարժարանաց կարգադրողն ու պատասխանատուն ինքն ըլլալը կը յայտնէ, և վարժուհիին տեղ Վինքն դատելու հարկը կը ցուցնէ, գործը կերկարի փոխադարձ պնդումներու վրայ, մինչև որ կայսերական հրամանով խնդիրը կը փակուի և դատաստանը անհետևանք կը թողուի: Իսկ Օրմանեան վարժապետներու և վարժուհիներու երկիւղը փարատելու համար շրջաբերականով կը հրամայէ Հայոց Պատմութիւնը վանց չընել, Հայ եկեղեցւոյ պատմութիւն անունը գործածելով: - Պետական գրաքննիչներէն մէկը, դժբախտաբար ուրացեալ հայ վարդապետ մը, Հայր մերին մէջէն եկեսցէ արքայութիւն քո բառերը կը ջնջէ, իբր թէ Հայերը ազգային թագաւորութիւն ունենալ կը ձգտին: Բարեբախտաբար հայերէնագիտ թուրք գրաքննիչ մըն ալ պատրիարքարանի օգնութեան կը հասնի՝ յայտարարելով թէ քրիստոնէից տիեզերական աղօթքն է, և օսմանեան կառավարութիւնը ցիցադելի կը դառնայ այս տեսակ որոշումով մը: - Օրմանեան աշխարհիկ լեզուն կանոնաւորելու փափաքով արդի հայերէնի բառարան և քերականութիւն պատրաստելու համար յանձնաժողով մը կը կազմէ ամէն դաւանութիւններէ գրագէտ հայ անդամներով, և յատուկ հրահանգ և ուղեցոյց ալ յօրիւնով: Այս անգամ ալ սովորական քսուներ կը հասնին թելադրել, թէ համահայկական մարմին մըն է կազմուածը, ազգայնական տեսակէտով, և Օրմանեանի կազմարարուի ետ կենալ այդ խորհուրդէն, բառարանն ու քերականութիւնը պատրիարքական պաշտօնի վրայ գտնուողին գործը չըլլալուն պատճառանքով: Թէպէտ Օրմանեան կը պատասխանէ թէ իրեն պէս ուսուցչութենէ եկող պատրիարքի մը գործն է իր ձեռնարկը, սակայն անդամակցութեան հրաւիրեալներ կասկածով ետ կը քաշուին և գործը կը խափանուի: Ինչպէս ըսինք, այս պատմուածները աւելի ծիծաղաշարժ, քան թէ կարևոր միջապէսներ են, սակայն գոնէ իբրև նմոյշ կը ծառայեն, և կը ցուցնեն թէ մինչև ո՛ւր իջնալ և յոգնիլ պարտաւոր էր ժամանակին պատրիարքութեան վրայ գտնուող անձը, որ եթէ ոչ յարգանք՝ գոնէ արդահատանք կրնայ հրաւիրել իր վրայ: Անցողակի աւելցնենք որ Օրմանեան թէպէտ ամէն կողմէ հասնող սպառնական գիրերը ծածուկ կը պահէր, սակայն հարկ սեպեց բացառութիւն ընել քանի մը նամակներու համար, որոնք փոխանակ սպառնական ոճոյ, շնորհակալութիւն և գոհունակութիւն կը յայտնէին թէ այսչափ գումար և զէնք յղած էր յեղափոխականներուն, և այսչափ ալ կը խոստանար տակաւին յղել: Այդ ալ յայտնապէս ծիծաղաշարժ դէպքերու շարքին կը պատկանէր:

Պատմութեանս կարգին նոր և գլխաւոր եղելութեան մը չանցած, ինչպէս եղաւ ազգային շրջանակի մէջ Օրմանեանի պատրիարքութենէ դադարիլը, համառոտ ակնարկներով մահացուցակ մըն ալ կուզենք աւելցնել վանապան պարագաներով յիշուած անձերէն պատմագիրի պարտաւորութեանց լրումը նկատելով այդ մասն ալ: Եկեղեցական դասակարգէն սկսելով յիշենք նախ Մուրատեան Մելիքսեդեկ եպիսկոպոսը, որ 67 տարեկան վախճանեցաւ 1903 յուլիս 12-ին (03. ԲԻՋ. 2074), և որուն մասին խօսած ենք իր Երուսաղէմի գործունէութեան (2742,2868), և մանաւանդ կաթողիկոսական ընտրութեան առթիւ (2930): Երբոր ամէն կողմերէ յուսախաբ և յուսահատ մնաց՝ յանձնառու եղաւ Ջմիւռնիոյ առաջնորդութեան դառնալ, բայց աւելի հանգստանալու և հանգիստ վախճանելու համար, զի կեանքին այս վերջին մասին մէջ որևէ արդիւնաւոր գործունէութիւն չունեցաւ: Մուրատեան իր ունեցած ձիրքերով և ստացած պաշարովը աւելի փառաւոր և աւելի արդիւնաւոր կեանք մը ունեցած կըլլար, եթէ կաթողիկոսութեան մարմանջով զգլխումի կերպարան առած չըլլար: Ջմիւռնիոյ առաջնորդութիւն վարած էր նաև Ներսէս եպիսկոպոս Ասլանեան, որ Տրապիզոնի առաջնորդութեան մէջ վախճանեցաւ 1905 նոյեմբեր 4-ին (05. ԲԻՋ. 2792): Չափաւոր կարողութեան բայց համեստ բնաւորութեան տէր անձ մը եղաւ Ասլանեան, իր ժամանակակից և ընկերակից եկեղեցականաց մէջ արժանաւորագոյնը, որ անոնց թեթևութեան ալ չհետևեցաւ, երբոր Այազմալեանը՝ Դիմաքսեան, Իւսիւքճեանը՝ Ապահունի, Մէխանէճեանը՝ Արշարունի, Իսքէնտէրեանը՝ Ռուբինեան անուններով վարգացուեցան: Աւելի սիրող եղաւ Կ. Պոլսոյ հանդարտ կեանքին քան գաւառական փոթորկալից մթնոլորտին, այր երբոր ստիպուեցաւ Եւդոկիոյ, Վանայ, և Ջմիւռնիոյ վիճակներն ալ գնաց հովուելու, բայց միշտ առաջին առիթով թօթափելու պայմանով: Տարածամ վախճանեցաւ տակաւին 51 տարեկան: Բիշ առաջ վախճանած էր Յովսէփ Այվապեան եպիսկոպոս Եգիպտոսի առաջնորդութեան մէջ, 1904 յունիս 5-ին, 71 տարեկան եղած ատեն (04. ԱՐԼ. 5585): Այվապեան հայ հռոմէական և ոչ-վանական կղերին կը պատկանէր, և Պարտիպակ զրկուելով այնտեղ կաթողիկոսիւն քարոզած և հետևողներ շահած էր, բայց վերջէն իրեններով միասին Հայ եկեղեցւոյ ծոցը դարձաւ և նախանձայոյզ գործիչ, հմուտ վարդապետ և վարժ քարոզիչ հանդիսացաւ, և վանապան վիճակներ տեղապահութիւն վարելէ ետքը Եգիպտոսի առաջնորդ ընտրուած էր: Լի աւուրբ վախճանեցաւ 1907 յուլիս 15-ին (07.ԲԻՋ.3283): Մեսրոպ եպիսկոպոս Սուքիասեան 73 տարեկան, կրօնական ժողովոյ ատենապետութեան մէջ (3076), որ թէպէտ գործունեայ ձիրքերէ զուրկ չէր, սակայն շատ մեղադրուեցաւ, իր Տրապիզոնի և Եգիպտոսի և Ադիանուպոլսոյ առաջնորդութեանց մէջ, միշտ անհատական շահի վակատեալ ըլլալու պատճառով: Վերջին ատեններ յօգնած և դադարած առանձնական կեանք կը վարէր Կ. Պոլսոյ մէջ, և վերջին յիշատակ մը թողուց ազգային հիւանդանոցի եկեղեցւոյն նուիրելով իր ծանրագին եպիսկոպոսական զգեստը: Իրմէ առաջ վախճանած էր 1906 ապրիլ 7-ին Բարթողիմէոս եպիսկոպոս Չամիչեան, զոր յիշած ենք Պրուսայի առաջնորդութեան առթիւ և ներկայացուած ենք պատրիարքական տեղապահութեան մէջ, ուսկից ետքը անպաշտօն կեանք կը վարէր՝ երբ վախճանուեցաւ 68 տարեկան: Անձնդիւրութեան, անհոգ հանգստեան և հեշտալից հաճոյից տիրապար մըն էր իր անհատական կեանքին մէջ. իսկ մտայնութեամբը համոզուած տաճկասէր մը ըստ ամենայնի և յամենայնի, եթէ չուզենք կարծել որ այդ զգացումը իբրև յաջողութեան միջոց կը գործածէր: Իր վրայ խօսուած մեղադրանքներ այդ կէտին շուրջը կը դառնային, ազգային օգուտն ու իրաւունքը անարգելու և զոհելու չափ, և նոյն իսկ պատրիարքանալու անյագ տենչանքն ալ այդ կերպով յաջողցնել կը յուսար, թէպէտ յուսախաբ մնաց (2995): Ծերունի մըն էր Պետրոս եպիսկոպոս Թահմիպեան, որ 90 տարին լրացուցած վախճանեցաւ 1907 ապրիլ 22ին (07.ԲԻՋ.3212), թէպէտ մինչև վերջը սպիտակ չունէր մօրուքին մէջ: Իր գործունէութեան սկիզբը ամբաստանուած էր,

իբրև Գալֆայեան Կարապետ Սեբաստիոյ եպիսկոպոսին մահուան պատասխանատու, սակայն արդարացաւ և յաջորդեց և շատ երկար պաշտօնավարութիւն ունեցաւ և պաշտօնին վրայ վախճանեցաւ: Արտաքին կերպարանով վտիտ և տկար, կենցաղով ու սնունդով ճգնաւորի տիպար, արտաքին գործունէութեան իբրև թէ անկար, սակայն անշահասէր, բարեխնամ և ժիր առաջնորդ մը եղաւ իր վիճակին, և յօժարակամ քննիչի և խաղաղարարի դեր ալ վարեց դրացի վիճակներու մէջ: Տարբեր ճամբու հետևեցաւ Ղևոնդ եպիսկոպոս Շիշմանեան, որ 68 տարեկան վախճանեցաւ 1904 դեկտեմբեր 12-ին (04.ԲԻՋ.2747), Երուսաղէմի մէջ, ուր աքսորական կը մնար Կարնոյ առաջնորդութենէն վտարուած: Աշխարհի կեանք արելէն և այրիանալէն ետքը միաբանած էր Արմաշի, և առաջնորդութիւններ վարած Պիլէճիկ և Եօզքատ և Կարին. սակայն եկեղեցական կոչումը շուկայիկ կեանքի ձևով վարած ըլլալու գաղափարը տուած էր միշտ, ինչպէս որ մենք ալ յիշեցինք Երուսաղէմի խնդիրին վրայ խօսած ատեննիս (3049): Յիշենք նաև Յովհաննէս Գալանձեան եպիսկոպոսը, պիտականուն կաթողիկոսը (2989), որ հակառակաթոռ կոչուելու կարևորութիւնն ալ չունեցաւ, որ Օրմանեանի պատրիարքութեան սկիզբը Ատանայէ և Կիլիկիայէ վտարուեցաւ և Վերիտոն մնաց, մինչև որ Խապայեանի գահակալութենէն ետքը Սիս փոխադրուեցաւ, և պարզ եպիսկոպոսի աստիճանով և դիրքով ապրեցաւ մինչև իր մահը 1907 յուլիս 12ին, արդէն 80 տարեկան եղած ատեն: Գալանձեան ոչ մեծամեծ ձգտումներու և ոչ փքուռոյց յաւակնութիւններու մարդ էր եղած, և միայն այդ պատճառով տէր Աբրահամ Մամիկոնեան եպիսկոպոսի կրաւորական հետևող մը եղաւ, և ինքզինքը կարդարացնէր թէ ապօրինի օծութիւնը յանձն առած էր Աբրահամի ասպարէզ չտալու համար: Հանգուցեալ եպիսկոպոսներու հետ յիշենք կրօնական ժողովոյ անդամակից Խաչատուր Տէր-Գաբրիէլեան, և 1903 յունիս 14ին վախճանած Գաբրիէլ Խանձեան, և 1907 ապրիլ 17-ին վախճանած Կարապետ Սեթեան քահանաները, որոնք Կ. Պոլսոյ քահանայութեան ընտրելագոյն անդամներն էին իրենց կեանքովը և պաշտօնովը, առաջինը աւելի բարեսիրտ ողորմածութեամբը, երկրորդը ծիսական և ծխական յաջողակութեամբը, և վերջինը վարչական գործունէութեամբը, որ և մահուան անկողինին մէջ կատարեց իր յիսնամեայ յոբելեանը (07.ԱՐԼ.6444):

3097. ԺՈՂՈՎԱԿԱՆԱՅ ՄԱՂԵՐ

Շատ ընդարձակ պէտք էր ըլլար ցուցակնիս եթէ Օրմանեանի պատրիարքութեան միջոցին աշխարհական դասէ պակասած նշանաւոր և ականաւոր ազգայիններուն անունները ուզէինք լիովին յառաջ բերել: Ուստի գլխաւորապէս պաշտօնական շրջանակին մէջ ամփոփուելով՝ յիշենք նախ Էլիաս Չայեան քաղաքական ժողովոյ ատենադպիրը, որ 1902 ապրիլ 21ին կը վախճանէր: Արտաքին գործոց նախարարութեան մէջ մինչև խորհրդականութեան օգնականի պաշտօնը հասած էր, և անկէ պետական խորհուրդին կանցնէր: Կարող և խոհական անձնաւորութեան համբաւ էր ստացած, ազգային շրջանակներու մէջ ալ գովութեամբ պաշտօնավարած էր (02.ԲԻՋ.1690): Վարչութեան անդամ էր նաև Սեպուհ Տէմիրճիպաշեան, 1905 նոյեմբեր 17-ին վախճանած, առևտրական շրջանակին մէջ ականւոր եղած, և գլխաւորապէս պետական հայցայթմանց յանձնառու եղած և պատուաւոր համբաւով ապրած, ազգային շրջանակին մէջ ալ խորհուրդներու և յանձնժողովներու և տեսչութիւններու մէջ արդիւնաւոր գտնուած (05. ԲԻՋ. 2796): Վարչութեան անդամ էր ևս Գրիգոր Գարակէօպեան՝ սեղանաւորաց դասակարգէն, որուն մասին խօսեցանք Գարակէօպեան կտակի վրայ տրուած բացատրութեանց կարգին (3095): Ունևոր ազգայիններէն մէկն էր, բայց իբրև կամք դժկամակ և ձեռքը ժլատ անձմը ըմբռնուած էր, որչափ ալ որևէ նուէրէ ետ մնացած չէր, և Գումգաբուի աղջկանց վարժարանն ալ իր արդեամբ վերաշինած էր: Այս պարագաներուն մէջ աւելի կերպը քան թէ իրն էր որ իր մասին կազմուած ըմբռնուման պատճառ

կըլլար: Հակառակ իր աստիճանին և կարողութեան, նոյն իսկ իր անձին հանդէպ խնայողութիւններու և զրկողութիւններու յանձնառու ըլլալը, ամէն մի աթոռին զլացումներով և խժրժանքներով սկսիլը, իր գրասենեակն ալ գծուծ և նախնական վիճակի մէջ պահելը, իր մասին կազմուած գաղափարին պատճառ կը դառնային: Վախճանեցաւ 1905 սեպտեմբեր 2-ին (05. ԲԻՁ. 2732), Գարակէօպեան եղբարց վերջինը, և չհասաւ տեսնալ Գարակէօպեան որբանոցին բացումը, որ իրեն ալ մխիթարութիւն և պատիւ պատճառած պիտի ըլլար՝ եթէ ինչ որ ըրաւ շուտով և փութով կատարած ըլլար, մանաւանդ որ ամուրի ալ էր և իրմէ ետքինները մտածնելու առիթ մը չունէր: Իր ժառանգողները, Նապարէթի և Կարապետի և Յովսէփի զաւակները, թողօնը քննած ատեննին, ցաւով նկատեցին որ սեղմ և ճիշտ բնաւորութեան պատճառով նշանաւոր վնասներու ալ ենթարակուած էր: Վարչութեան անդամներէն էր և Գրիգոր Խտըրեան, պետական ծառայութեան ելեմտական և հաշուական պաշտօններու մէջ յառաջացած և մինչև բարձրագոյն հաշուական ատեննին անդամակցութեան բարձրացած, և կարևոր յանձնաժողովներու մասնակցած: Վախճանեցաւ 1908 փետրուար 24-ին (08. ԱՐԼ. 6730): Իր կեանքին առաջին մասին մէջ ազգային պաշտօններու մէջ շատ մտած չէր, բայց 1896-ին քաղաքական ժողովականութեան ընտրուելով գործունեայ դեր վարեց, մանաւանդ երբոր պէտք եղաւ նախ պատրիարքարանի ելեմտական կացութիւնը ճշդել, ու յետոյ ելեմտից հոգաբարձութեան կազմութիւնը անհնարութեան մատնուելուն՝ հարկ եղաւ վարչական մասնախումբի մը հսկողութեամբ վարել պատրիարքարանի ելեմտական մատակարարութիւնը: Ազգային պաշտամանց հնօրեայն էր Տիգրան Եռսուֆեան, առաջին երիտասարդութենէն ազգային գործերով ըզբաղած, ամէն ժողովներու և յանձնաժողովներու և խորհուրդներու անդամակցած և ատենապետած, և բացարձակ վարչապետութիւն ալ վարած՝ երբոր ժողովական գրութիւնը տեսչական գրութեան վերածուեցաւ Ներսէսի օրով, ինչպէս իրենց կարգին նշանակուեցաւ: Մասնակից գտնուեցաւ ամէն ազգային նշանաւոր խնդիրներու և յուլմունքներու, և փայլեցաւ իրեն սեփական հաշտարարի և համերաշխութեան աշխատողի ջանքերով: Գլխաւոր դեր ունեցաւ 1896-ին ընտրուած վարչութեան մէջ, և որուն ատենապետութիւնն ալ վարեց Տատեանի և Ասլանեանի մահերէն ետքը: Պետական պաշտօնէութեան մէջ դատական ճիւղին ծառայեց մինչև վերջը, և մինչև վճռաբեկ ատեննի անդամակցութեան բարձրացաւ: Շատ նշանաւոր դատերու դատաւոր նստեցաւ, և յիշատակելի և իր նախաձեռնութիւնը, երբոր նախկին կայսր Մուրատի և Մայր Կայսրուհւոյն դէմ յարուցուած ամբաստանութեան ընթացքը խափանեց, Միահաթ փաշայի և ընկերաց դէմ ապտիւլապիլի սպանութեան անունով վարուած դատին մէջ: Այնչափ համարձակ որչափ ըզգուշաւոր, այնչափ գործունեայ որչափ դանդաղկոտ սիրտով մեծ և կերպարանով փոքր, արդիւնաւոր դէմք մը եղաւ Եռսուֆեան Տիգրան, ազգային կեանքին մէջ առաջնակարգ դեր ունեցող գործիչ մը, որ 74 տարեկան վախճանեցաւ 1908 յունուար 18-ին (08. ԱՐԼ. 6099), բաւական երկար խօթութեան օրեր անցընելէն ետքը: Վերջին վարչութեան անգամ ընտրուած, բայց բնաւ մասնակցած չէր Սենեքերիմ Մանուկեան, առևտրական դասակարգէն, որ վախճանեցաւ 1908 յունուար 14-ին, այլ արդէն արդիւնաւոր եղած էր ժամանակին, թէ քաղաքական ժողովոյ ատենապետութեամբ և թէ ազգային հիւանդանոցի մատակարարութեամբ, որուն անձնապէս տէր կանգնեցաւ ամենադժուարին պարագաներու մէջ և յաջողութեամբ կործանման վտանգէն ապստեց, և ազգային երախտաւորներուն կարգին անցնելու իրաւունք ստացաւ: Վերջին անգամ 1906 յուլիս 25-ին վերակազմուած վարչութեան անգամ ընտրուած էր Նապար Երամեան, յաւապանէն Ղապար, և հաստատուած ալ էր, այլ չհասաւ սեպտեմբեր 20 ին ժողովականի աթոռը բազմիլ, զի յանկարծ մահը կանխեց օգոստոս 16-ին (06. ԲԻՁ. 3021): Հանրային պարտուց վարչութեան կարևորագոյն և

բարձրագոյն պաշտօնեաներէն էր, և նոր պիտի մտնէր ազգային վարչութեան մէջ, և մեծ ակնկալութիւններ կը ներշնչէր իր կարող մտայնութեամբ և ազգասէր պագումներով: Օրմանեանի վիճակուեցաւ բոլոր այդ (3023, 3096) նշանաւոր կորուստներուն գնահատումը խօսիլ և ողբալ, այնպէս որ ինքն ալ կը դժկամակէր իրեն ինկած այդ դժուարին պաշտօնին դէմ:

3098. ՆԿԱՏԵԼԻ ՄԱՂԵՐ

Ժամանակիս կորուստներուն շարքը ժողովական գտնուողներով չի փակուիր, ուրիշ շատեր ալ ունինք յիշատակաց արժանի անձերէ պակասածներ, և գոնէ գլխաւորներուն անունները յառաջ բերել պարտք կը սեպենք ապագայից յիշատակին յանձնելու համար: Ազգային և պետական շրջանակներուն մէջ փայլած անձեր են յառաջ բերելիքներնիս, որոնք ժողովականութեան և վաշականութեան ալ ծառայած են վանապան ժամանակներ: Միքայէլ Մամիկոնեան թաղական և վարչական պաշտօններու մէջ մեծապէս օգտակար եղած, սպարապետութեան դրան աւագ թարգման էր, բարեգործական ձեռնարկներու փութաջան, խոհական և կշռադատ բնաւորութիւն, և վախճանեցաւ 1905 յունուար 19-ին (05.ԲԻՁ.2539): Նշան Սէֆէրեան, արատքին գործոց նախարարութեան մեծ պաշտօնեաներէն, տպագրական և խմբագրական պաշտօններու մէջ յառաջադէմ, հեռու չմնաց ազգօգուտ ձեռնարկներէն, թէպէտ պաշտօնական դեր չստանձնեց տեսակ մը փափկանկատութեամբ. վախճանեցաւ 1906 օգոստոս 26-ին: Միքայէլ Յակոբեան նշանաւոր վաճառական և սեղանաւոր, ազգային վարչական դեր չստանձնեց ռուսահպատակ ըլլալուն, բայց մեծապէս անդինաւոր եղաւ ազգային հիւանդանոցին երկարատև ատենապետութեամբ հիւանդանոցին վերաշինութեան միջոցին. գլխաւոր նուիրատուներէն մին ալ եղաւ, և Սամաթոյ Ս. Գէորգ եկեղեցւոյն վերաշինութեան բարերարը հանդիսացաւ, և վախճանեցաւ 1904 մայիս 20-ին: Միքայէլ Խորասանձեան բժշկապետ, գերազանց կարողութեան համբաւով հռչակուած, արժանի է իբրև ազգային պարծանք նկատուիլ: Իր ճարտարութեամբ և բարեգործութեամբ օգտակար ալ եղաւ իր ազգին, թէպէտ պաշտօնական ծառայութիւններէ հեռու ապրեցաւ, բայց հիւանդանոցին համար ոչ շինութիւններով ետև մնաց և ոչ նուէրներով. վախճանեցաւ 1904 փետրուար 16-ին (03.ԲԻՁ.2129): Թորիկ կամ Թորոս Բարաղամեան յիշատակելի է Խասքէօյի վարժարանին վերաշինութեան բարերարը հանդիսանալով. վախճանեցաւ 1904 դեկտեմբեր 2-ին (04. ԱՐԼ. 5738): Բժիշկ Միհրան Վարդապարեանի անունը կը յիշենք յօգուտ աղքատիկ հարսնցու օրհորդաց օժիտին կտակովը, վախճանեցաւ 1908 մարտ 11-ին (08. ԱՐԼ. 6746): Նշան Գապապեան, Յակոբ փաշայի եղբայրը. արդիւնաւոր եղած էր թաղական պաշտօններու մէջ, և նշանաւոր եղաւ կտակած ագարակովը, վախճանեցաւ 1908 յունիս 6-ին (08. ԱՐԼ. 6816): Առանձինն յիշատակութեան արժանի է Աբիկ Ունձեան, յաւապանէն Աբիսողոմ, նշանակալից տիպար մը, կարողութեամբը, բարերարութեամբը, վարչականութեամբը, նախանձայնութեամբը և եկեղեցասիրութեամբը: Ազգային ամէն ծառայութեանց մասնակցեցաւ, սիրեց ամէն գործոց միջամտել, բայց խորշելով խորշեցաւ վարիչ և գլխաւոր երևնալէ, բաւականացաւ պարզ անդամակցութեան անունով: Թէպէտ աշխատութեանց առաջնակարգ բեռը սիրով ստանձնեց: Կրնանք համարձակ ըսել թէ չեղաւ ազգին մէջ գլխաւոր գործ մը, որուն Ունձեան մասնակցած չըլլայ. բայց իր մեծամեծ արդիւնքներն եղան 1879-ին սովելոց նպաստող յանձնաժողովը (2857), և 1889-ին սկսած Արմաշու Դպրեվանքը (2940), և Իւսկիտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ հրկիպութենէ ետքի շինութիւնը, սակայն յանձնաժողովներուն մէջ պարզ անդամակիցէ աւելի անուն չունէր, թէպէտ ձեռնարկներուն հոգին էր, անխոնջ աշխատող, ժամանակը պոհող, և առատաձեռն նպաստող: Ազգային կացութեան և ապագային բարւոքման խնդիրն ալ վինքն անտարբեր չգտաւ, այնպէս որ այդ երեսէն բանտարկութեան և դատապարտութեան ալ

Ենթարկուեցաւ հալածանաց ժամանակ: Միտքէ անցունել հնար չէր որ այսպիսի անձնաւորութիւն մը կարենար ապագայէր կոչուողներու կիրքին գոհ երթալ, և ապա ու ապինք վարմացան երբոր 1906 օգոստոս 13-ին յանկարծ լսուեցաւ թէ Ունճեան տապաստ ինկած է Ղալաթիոյ մէջ կուսակցականներու դաւաճան գնդակով: Օրմանեան չքաշուեցաւ իբր ոգակիր յուղարկաւորութեան ներկայ գտնուիլ, իբրպի Ունճեան կենդանութեան ատենէն կամք յայտնած էր աղքատաց ձևով յուղարկաւորուիլ, բայց դամբանակը խօսուեցաւ նոյնիսկ եղբօրը՝ իւրայնոց զգուշաւորութեան հակառակ: Ապագոգուտ և բարերար անձանց սպանութեան կեղտը կուսակցական մարմինին անորակելի արատներէն մէկն է, ուսկից դժուարաւ կրնան ինքզինքնին արդարացնել, վանապան ճիւղեր իրար ամբաստանելով կամ անհատական նախաձեռնութեան վերագրելով վատ արարքը: Նոյն բանը կատարուած էր Մատթէոս Պալեօպեանի վրայ Ջմիւռնիոյ մէջ, և Իսահակ Ժամհարեանի վրայ Պաքուի մէջ, և Յովհաննէս Թաւաշանճեանի վրայ ալ կատարուեցաւ Նիւ Եորքի մէջ 1907 յուլիս 9-ին (07.ԲԻՋ.3279), անձ մը որ ամերիկաբնակ հայութեան պաշտպանն ու օգնականը, և ընդհանուր հայութեան համար արդիւնաւոր եղած էր, և դժբախտաբար հայ վարդապետ մըն ալ Ամերիկեան դատարանէն մեղապարտ վճռուեցաւ: Թէպէտ պոլսական կեդրոնէն հեռու, այլ ոչ պատրիարքարանէն օտար շրջանակի կը պատկանին Նուպարեան Նուպար և փեսայն Տիգրան Ապրոյ, կամ Նուպար և Տիգրան փաշաներ, որոնց առաջինը 1899 յունուար 2-ին (99.ՃԷՐ.4107), և երկրորդը 1904 յուլիս 14-ին (04.ԲԻՋ.3620) վախճանեցան: Յայտնի է առաջինը իբր ժամանակակից մեծ քաղաքագէտներուն առաջիններէն մէկը, Եգիպտոսի նախարարապետը և բարեկարգիչը ու կենդանացուցիչը, և աշխարհահռչակ համբաւով ծանօթ: Ոչ նուազ երկրորդն ալ Եգիպտոսի քաղաքական կենաց արդիւնաւոր եղած է, և երկուքն ալ Եգիպտոսի ապագային կենաց համար աշխատաւոր և երախտաւոր եղան, և ընդհանուր հայութեան համար ալ ջանքերնին պակաս չըրին, որոնց մանրամասնութեան մտնել վանց կընենք, աւելցնելով միայն թէ իրենց բաց թողած տեղը արժանապէս լրացուց Պօղոս Նուպար փաշա, անոնց որդին և աներձագը:

3099. ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ՄԱՀԵՐ

Գրական աշխարհի կորուստներէն ալ քանի մը անուններ յիշենք մեր ամփոփ մահացուցակը փակելէ առաջ: Եւ գլուխը նշանակենք Կարապետ Իւթիւճեանը 81 տարեկան վախճանած 1904 յունուար 28-ին (04.ԱՐԼ.5603): Իւթիւճեանի մեծ արժանիքն է իբր Մասիս լրագիրի տէր և խմբագրապետ և իբրև թարգմանիչ՝ նոր կեանք և ուղղութիւն տուած ըլլալը աշխարհաբար լեզուին, միանգամայն ապագային խնդիրներու մասնակցիլը ուղիղ ընթացքով վարչականին մէջ և քաջալերիչ աշխատանքով ուսումնականին մէջ: Ուսումնական վարգացման շրջանակին մէջ նշանակելի տեղ գրաւեց նաև Յակոբ Ոսկան հռոմէադաւան ծնած և կրթուած բայց հայադաւան եկեղեցւոյ անցած, աննկուն եռանդով աշխատած ուսումնական ասպարէզին մէջ մինչև իր մահը 1907 յունուար 13-ին (07.ԲԻՋ.3183): Ռէթէոս Պէրպէրեանն ալ այդ կարգին պիտի յիշէինք եթէ արդէն իր մասին խօսած չըլլայինք (3083): Եկեղեցականէ աւելի ուսումնական աշխարհին կը պատկանի Սուքիաս վարդապետ Պարոնեան, որ Փարիզ վախճանեցաւ 1903 օգոստոս 24-ին (03.ԲԻՋ.2115): Վենետկոյ Միխթարեան միաբանութենէն բաժնուած և հայադաւան եկեղեցւոյ վերադարձած 1882-ին, և Փարիզի և Մանչեսթըրի հայ գաղթականութեանց հոգևորական պաշտամանց հետևած, ապագային և օտարապգի դպրութեանց և պատմութեանց ներհուն, ընդարձակ հետապօտութիւններով և ուսումնասիրութիւններով վբաղած, սակայն դժբախտաբար իր ետևէն նշանակութեան արժանի երկասիրութիւն չէ թողած, որով իր մտային պաշարը իրեն հետ տարած ըլլալը կրկնակի կորուստ եղած է հայ գրական աշխարհին: Միևնոյն գրական աշխարհին մէջ պիտի յիշենք Կարապետ Եպեանցի անունն ալ, որ Պետրբուրգ վախճանեցաւ 1905 մայիս 31-ին

(05.ԲԻՋ.2651), և որոյ յիշատակը հանդիսապէս կատարուեցաւ Կ. Պոլսոյ Մայր եկեղեցին (05.ԲԻՋ.2658), զի թէպէտ ռուսահայ հասարակութենէ, բայց աւելի տաճկահայը եղած էր իր իղձերուն և ջանքերուն նպատակակէտը: Եպեանց ռուսական նախարարութեանց բարձրագոյն պաշտօնեաներէն էր, և ռուսահայ ուսումնարանաց և ուսանողաց և էջմիածնայ աթոռին խնամողն ու պաշտպանն եղաւ. ասով մէկտեղ ուսումնական կեանքը ձեռքէ չթողուց, որուն նուիրուած էր իր գործունէութեան սկիզբը, և Հայոց պատկանող պատմական յիշատակները կենդանացնելու ջանադիր եղաւ, և հրատարակութեանց ալ աշխատեցաւ թէ՛ անձամբ և թէ՛ հովանաւորութեամբ, և իր հրատարակած Լեհահայոց կաթողիկոսութեան (ԲՌՆ..), և Հայոց ու Ռուսաց յարաբերութեանց մասին (ԵՋՆ.) երկասիրութիւնները՝ Հայոց պատմութիւնը ճոխացնելու գնահատելի աղբիւրներ եղան: Բայց ասոնցմէ ալ աւելի նշանաւոր կրնանք դասել Սանասարեան վարժարանի և Իզմիրլեանց մրցանակի հաստատութիւնները. զի եթէ նիւթական դրամագլուխներ Մկրտիչ Սանասարեանցի և Յովսէփ Իզմիրեանցի արդիւնքն են, սակայն միտքը յղացողը, գործը կարգադրողը, բարերարները համոզողը, և գործադրութիւնը պատրաստողը Կարապետ Եպեանցն է եղած, զոր երկու հաստատութեանց իբր հոգին պէտք է ձանձնալ: Ռուսահայոց կողմէն առանձինն յիշատակութեան արժանի են Պետրոս Սիմոնեանց և Գրիգոր Արծրունի և Աբգար Յովհաննէսեանց, որոնք լրագրական կամ պարբերական հրատարակութիւններով նոր պարկ տուին Ռուսահայոց պարգացման և հայկական ոգւոյն պարթուցման, թէպէտ իրարմէ տարբեր ուղղութեամբ գործեցին և տարբեր սկզբունքներէ առաջնորդուեցան: Մխիթարեան միաբանութեանց անդամակիցներէն պակտողներ այստեղ չենք յիշեր, ազգային վարչական շրջանակէն դուրս ըլլալուն համար, թէպէտ հնար չէ առանց յիշելու անցնիլ գոնէ Վենետկոյ միաբան հայր Ղևոնդ Ալիշանի անունը, որ վախճանեցաւ 1901 նոյեմբեր 10-ին (01.ՄՆՋ.175): Իսկ Վիէննական միաբանութեան անդամներէ յիշած ենք ժամանակին երեք ընկերակիցները, Յովսէփ Գաթրճեան և Արսէն Այտընեան և Մատաթիա Գարագաչեան հայրերը, որոնցմէ Գաթրճեան իր պատմական և մատենագրական գործերովը մեծապէս գովելի, մեղադրանքէ վերծ չմնաց մոլեռանդ հռոմէադաւանութեամբը, և կանուխ վախճանեցաւ 1881 դեկտեմբեր 28 ին, տակաւին 61 տարեկան (ՅՇՐ. 29): Իսկ Այտընեան միաբանութեան արքայական աթոռը բարձրացաւ եպիսկոպոսական աստիճանով, և վախճանեցաւ 1902 յուլիս 8 ին, 78 տարեկան (ՅՇՐ. 14), և համակրութեամբ խօսուեցաւ իր մասին ազգային շրջանակի մէջ, գլխաւորապէս աշխարհաբար լեզուի նուիրած Բըննական Բերականութիւնովը, և տպագրական պարգացման և լեզուաբանական խնդիրներու համար աշխատութիւններովը, և մանաւանդ Հայոց ազգին և եկեղեցւոյն հանդէպ լայնախոհ տեսութիւններովը (2899): Ասոնցմէ տարբեր եղաւ Գարագաչեանի կեանքը, որ մաքանութիւնն ու սքեմըն ալ թողած, մայրաքաղաքի վարժարաններուն նուիրուեցաւ բոլորովին երկամեայ դասախոսութիւններով և բազմաթիւ դասագիրքերով, և իսկապէս հայ դպրոցներու պարգացման և հայ լեզուի ուսուցման արդիւնաւոր և երախտաւոր աշխատող մը հանդիսացաւ. նոյն իսկ կենցաղն ալ հայ տարրին մէջ և հայ շահերու շփմամբ անցաւ մինչև իր մահը 1903 նոյեմբեր 20-ին (03. ԲԻՋ. 2183), 85 տարեկան, խոր ծերութեան ժամանակ: Վերջին պահուն թէ ոչ ծիծաղելի գոնէ զուարճալի դարձաւ, մինչև իսկ իր անկեղծ քրիստոնէութեան մասին կասկած տուող անձին, գիտակցութենէ զրկուած հոգեվարքի վերջին վայրկեանին դարձի եկած ըլլալը Մէնվիշեան հայր Գաթրիէլ վկայութեամբ, և հանդիսական քահանայաթաղով յուղարկաւորութիւն կատարուիլը հայ հռոմէական եկեղեցւոյ մէջ:

Շատոնց է որ առիթ չունեցանք Հայ կաթոլիկներու մասին խօսիլ, զի հետաքրքրական ու նշանակալից եղելութիւններ ալ տեղի չունեցան ուշադրութիւննիս գրգռելու համար: Ստեփանոս Պետրոս Ժ. Ապարեան կաթողիկոս պատրիարքը Հակահասունեանց գրութիւնը ջնջելէն և բոլոր տաճկահայ կաթոլիկութիւնը իր իշխանութեան ներքև մտցնելէն ետքը (2897), այլևս ապատ և աղիկամ գործունէութեան ասպարէզ ունեցաւ, շահեցողական արտաքնայարդար ձևերը վանց չընելով, որոնց մէջ մեծ յաջողականութիւն ունէր սկիզբէն: Իր մահը տեղի ունեցաւ 1899 ապրիլ 19ին յեղակարծ սրընթաց խօթութեան հետևանօք (99.ՃԷՐ.4197), որուն համար մինչև իսկ ըսուեցաւ թէ սիալ դարմանով ծանրացած ըլլայ: Յաջորդին ընտրութիւնը կատարուեցաւ Հակահասունեանց հետ հաշտութեան ժամանակ հաստատուած ձևով, և կաթողիկոս-պատրիարքութեան կոչուեցաւ նոյն տարւոյ յուլիս 14ին Պօղոս Պետրոս ԺԱ. Էմմանուէլեան, Կեսարիոյ առաջնորդ (99.ՃԷՐ.4270), բնիկ Թէլէրմէնցի,, Ջըմմառի միաբան, փրօփականտայի մէջ ուսած, մայրաքաղաքի կեաքին մէջ ուսած, մայրաքաղաքի կեաքին անտեղեակ, և պարզասէր անձ մը: Իր պաշտօնաւարութիւնը առանց միջադէպի անցաւ, զի շրջապատող պաշտօնութեան վրայ չծանրացաւ, և յատուկ մտադրութիւններ և նպատակներ չունեցաւ, և գործերը իրենց հոսանքին թողուց: Սակայն երկար չեղաւ իր պաշտօնավարութիւնը և 1904 ապրիլ 5 ին մեռաւ (04. ԱՐԼ. 5531), և յուլիս 22 ին (04. ԱՐԼ. 5625) իրեն յաջորդ ընտրուեցաւ Պօղոս Պետրոս ԺԲ. Սապպաղեան, Եգիպտոսի առաջնորդ, բնիկ Բերացի, Ջըմմառի միաբան, աւելի դարմով քան թէ միտքով հարուստ, բայց և խոհական և խաղաղսէր անձնաւորութիւն մը, որ պաշտօնի վրայ կը մնար 1908ին, մեր պատմութեան նշանաւոր հանգրուանին, ինչպէս պիտի տեսնուի, թէպէտև իբրև անկար և անհոգ կը նկատուէր հասարակութենէն և հրաժարեցնելու միտքեր կը յայտնուէին: Հայ կաթոլիկ միաբանութեանց գործունէութիւնն ալ նշանաւոր պարագայ մը չի ներկայեր յատուկ պատմութեան նիւթ ընելու համար: Վենետկոյ Մխիթարեանց արբահայր կը մնար տակաւին Իգնատիոս Կիրեպեան եպիսկոպոս, ամէն նախաձեռնութենէ խորշող և կայուն վիճակը զոհողութեանց գնով պահելու հակամէտ միտք մը, որ յառաջադիմական քայլերու և գնահատելի երկասիրութիւններու ալ ասպարէզ չբացաւ միաբանութեան առջև, արդարացնելով ուրիշ տեղ ալ ըրած դիտողութիւննիս, թէ նախնական արդիւնքներու ընդարձակութեամբ և վերջին գործերու ամփոփմամբ, բրդաձև կերպարան մը առած էր Վենետիկի միաբանութեան արտադրութեանց պատկերը: Այտընեանի արբահայրութեան ժամանակ նոր վարկ և նոր հոգի սկսած էր երևնալ Վիէննայի միաբանութեան վրայ, որ սակայն նուազեցաւ անոր մահուամբը 1902 յուլիս 8-ին (ՅՇՐ. 14), և ներքին խնդիրներու պատճառով յաջորդի ընտրութիւնը յետաձգուեցաւ փրօփականտայի հրամանով, և Հայր Թադէոս Թոռնեան վարդապետ՝ տեղապահ նշանակուեցաւ և եօթը տարի պաշտօնավարեց (ՅՇՐ. 14), և պաշտօնի վրայ էր 1908 ին մեր պատմական հանգրուանին: Անտոնեանց կացութիւնը աւելի աննշանակ էր, միշտ Հռոմի փրօփականտայէն սպասելով իրենց միաբանութեան վերակենդանացումը, մերթընդմերթ դիմումներով արտօնուիլ կակնկալէին, միևս կողմէն մահերով իրենց թիւը աւելի կը նուազէր. և Միասէրեան Ռափայէլ արբահայր իր խոր ծերութեան տարիները կանցունէր Վոսփորի օրթաքէօյի վանքին մէջ մէկ քանի միաբաններով շրջապատուած և անպաշտօն կերպով տասնեակ մը աշակերտներ հաւաքած: Ջըմմառի հին կաթողիկոսական աշակերտութիւնը, կանոնաւոր կղերականութեան ձև ու պայմանով միաբանութիւն մը ճանչցուելու հտամուտ էր, և համեստ ժառանգաւորաց վարժարան մը կը պահէր Լիբանանի լերանց վրայ, Ջըմմառի վանքին մէջ: Այս համառօտ ակնարկները բաւական են արդարացնել ինչ որ սկիզբէն ըսինք, թէ Հայ կաթոլիկ հասարակութիւնը մտադրութիւն չգրգռող կացութիւն մը կը վարէր: Այստեղ փակելով վերջին ժամանակները պատկերացնող այլապան տեղեկութիւնները,

անցնինք պատմել 1908-ի պատմական հանգրուանի տեղի ունեցած նշանաւոր փոփոխութեանց պարագաները:

3101. ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՌՉԱԿՈՒԻԼԸ

Որչափ ալ միշտ պատմական շրջանակը ազգային գործերով պարփակուած պահել ուզենք, չենք կրնար իսպառ լուել այն քաղաքական դիպուածները, որոնք ազդած են ազգային կեանքին վրայ և պատճառ եղած նորանոր եղելութեանց: Յայտնի ու խոսուած կէտ մըն է Ապտիւհամիտ կայսեր բռնապետական կառավարութիւնը, որոնք ներքև կը հեծէին օսմանեան մայրաքաղաքն ու գաւառները և երկրին պէսպիսակ տարրները, որ վայրացկոտ դիմադրութեան կը գրգռէր, և որուն երևոյթներէն մէկն էր հայ յեղափոխական շարժումն ալ: Սակայն հայութիւնը ոչ թիւով, ոչ պօրութեամբ, ոչ միջոցներով և ոչ հանճարեղ ընթացքով չէր կրած և չէր ալ կրնար ազդել օսմանեան կայսերութեան ընթացքին և երկրին բախտին վրայ: Այդ նպատակին պիտի առաջնորդէր իսլամ տարրին մէջ տիրած դժգոհ և ըմբոստ, վայրացկոտ և ձեռներէց հոգին, որ կանուխէն սկսած և օրըստօրէ աւելի տարածուած էր քանի աւելի կը հալածուէր: Ապտիւհամիտի երեսէն գաղտնի կամ յայտնի սպանեալներ, ներքին գաւառներ վտարուած աքսորականներ, երոպական երկիրներ ապաստանող փախստականներ, հոգիները աւելի կը բողոքէին, սպանեալներ իրենց մերձաւորաց և բարեկամաց վայրագին վրէժխնդրութիւնը կը գրգռէին, աքսորականներ իրենց դժկամակ պագումները գացած տեղերնուն կը հաղորդէին, փախստականներ երոպական շփումներով իրենց նպատակին կը կրթուէին: Այսպէս սկսած էր իսլամներու մէջ հիմնուած Միութիւն և Յառաջադիմական (Իթթիհատ վէ Թէրաքքը) ազատական կուսակցութիւնը, որուն առաջնորդ եղած ըլլալու պարծանքը իրենց կը սեփականէին հայ կուսակցականներ, և ի մասնաւորի Դաշնակցական ճիւղը: Շփոթ կացութիւնը օրըստօրէ կը պօրանար, բայց Ապտիւհամիտի արթուն և ճարտար գործունէութիւնը և իսլամ տարրին անձեռներէց ճանչցուած բնոյթը, յուզումի և յաջողութեան հաւանականութիւնը կը հեռացնէին: Սակայն իրաց ելքը այլափոխուեցաւ երբոր վիճակական դասակարգին մէջ տիրապետաց դժգոհութեան հոգին և անտեղութեանց վերջ տալու միտքը. դասակարգ մը, որ իր նկարագիրով և կոչութեամբը իննևտասներորդ դարու բոլոր պատրիարքներուն պաշտօնավարութիւններէն աւելի էր տևած: Չանց կընենք քննադատութեանը կամ գնահատմանը մտնել, և Օրմանեանի պաշտօնավարութեան վրայ յետահայաց ակնարկ մը նետել, զի անոր շուրջը յարուցուած խնդիրները առիթ պիտի ընծայեն մեզ բացատրութեանց մտնել և եղելութեանց իսկութիւնը պարզել:

3104. ԱՐԿԱԾԱԼԻՑ ՅՈՅՅԸ

Յուլիս 16ի հրաժարականէն մինչև 25. տասնօրեայ միջոց մը անցաւ, որուն մէջ Օրմանեան իր տունը առանձնացած կը վբաղէր իր պաշտօնավարութեան մասին յիշատակագիր և նպաստից մասին հաշուական տեղեկագիր պատրաստել, որոնք ոչ միայն կը նախատեսուէր թէ պէտք պիտի ըլլային, այլև արդէն պտտող վրոյցները անհրաժեշտ կը ցուցնէին, որպէսզի պատշաճ ժամուն պաշտօնապէս ներկայացուին կամ թէ հրատարակութեան տրուին: Օրմանեանի անձը, պաշտօնը, գործերը, գիրերը, հրամանները, հրաժարականը, ամենայն ինչ ամէնուն բերնին ծամոց էին դարձած, լրագիրներն ալ անոնցմով կը լեցնէին և կը վարդարէին իրենց էջերը, և կօգտուէին վաճառմանց ընդարձակուելովը լուրջ նկատուող թերթերն իսկ ըստ բերման քննադատութիւններ կը ցուցադրէին, մինչ թեթևներ և վաւեշտներ ըստ հաճոյս առաջ կը մղուէին, սուտն ու կեղծիքը, երևակայական չխտրելով. և լրագիրները վատ թռուցիկ թերթեր ալ կը ցրուէին ծիծաղելի յօդուածներով և վզուելի պատկերներով: Հրաժարականը անկում, տապալում, կործանում անուներով կորակուէր, նախատական, անարգական, թշնամական բացատրութիւններ սովորական

էին դարձած, և քիչ մը չափաւոր լեզու գործածողներ յայտնապէս կը քննադատուէին: Օրմանեանի նախընթացն ալ անարգութեան փաստ կը դառնար, թէ իր վերադարձը արդէն խիճղով և գիտակցութեամբ եղած չէր և թէ ով հայ ծնած չէ չկրնար հայուն ցաւը պզակ (ՕՑ.ՄՆՁ.2188). մինչդեռ այս և ասոր նման ասութիւններ ցուցմունք չէին, և բան մը չէին կրնար հաստատել, սակայն կիրքեր յագեցնելու լաւ կը ծառայէին: Նկատելի էր որ պաշտօնավարութեան մասին որոշ ու յատուկ ամբաստանութիւններ չէին լսուեր տակաւին, և գլխաւոր մտադրութիւնը նպաստից հաշիւներուն շուրջը կը դառնար, իբր թէ առանց հաշուի և առանց գիտակիցի 100,000 ոսկոյ գումար ձեռքէն անցած է, ուսկից 30-40,000 իւրացուցած է, մնացածին կիրառութեան գործակից և գիտակից ունենալ ուզած չէ: Ըստ այսմ Օրմանեանի դէմ որոշակի ուղղուած առաջին և գլխաւոր ամբաստանութիւնը հաշուական էր, որուն ծագումն ու դիտումը գուշակել դժուար չէր, քանի որ այդ ամբաստանութիւնը յուզողներուն գլուխը կը գտնուէին Մաքսուտեանի փաստաբանները, և անոր համակիր և պաշտպան եղողներ, իբր թէ Մաքսուտեանի քննադատին վեղծարար ցուցուելէն Մաքսուտեանի արդարացումը պիտի հետևէր: Գործին ոյժ տալու համար թուրքիկ մըն ալ ձեռք կը պատէր, իբր Իլմիրլեանէ տրուած նամակ մը, թէ Օրմանեանի փախչելուն կը սպասենք անոր հաշիւները ուզելու համար (ՕՄԱ. 175): Այդ փախչելու վրոյցէն ծագեցաւ Օրմանեանի անձին տիրանալու խորհուրդը, և վայն գործադրելու համար յուլիս 25 ուրբաթ օր կապմուտած անօրինակ շարժումը: Քանի մը ժողովրդականներ առաջի օրէն կը ներկայանան Օրմանեանի թէ ժողովուրդը կուզէ վինքը պատրիարքարանի մէջ պահպանութեան ներքև առնել, և Օրմանեանի մերժելուն վրայ տունը հսկողութեան ներքև կառնեն, և 25ին առտուան առաջարկը կը կրկնեն. բայց Օրմանեանի օրինաւոր իշխանութեան պաշտօնական հրամանագիրը պահանջելուն վրայ, ամբոխը կը սկսի խառնուիլ բռնի գործադրելու համար: Ամէն տեսակէ և ամէն ազգէ գործիչներ և ցուցարարներ, հետաքրքիրներ և պարապողներ տանը շուրջը եղող փողոցներ կը լեցուին, և դուռին չբացուելուն վրայ պատուհաններէ մագլցելու ալ կը սկսին, աղաղակ և ժխորը կը շատնայ, մինչև որ ոստիկանութեան պաշտօնեաներ կը ներկայանան, և ներս մտնելով կը յայտարարեն, թէ ոստիկանութիւնը չկրնալով ամբոխը ցրուել կամ պսակել և արկածէ կասկածելով որոշած է վինքն ոստիկանութեան մէջ ապահովութեան ներքև առնել: Օրմանեան կը պատրաստուի կառավարական հրամանին համակերպիլ և պատրաստուած կառքով տունէ կը մեկնի, ոստիկաններ կառքին մէջ, ժողովրդական գործիչներ կառքին վրայ և շուրջը, և հարիւներով ամբոխ մը ետևէն առջևէն աղաղակելով և լուտանքներով: Այսպէս կանցնին Բերայի և Ղալաթիոյ մեծ փողոցներէն, Գարաբէօյի կամուրջէն, և բարձրագոյն դրան պողոտաներէն, և քանի քանի անգամներ կառքը թաւալելու և կապմածները խլելու փորձեր կը կրկնուին: Ոստիկանական նախարարութեան անկիւնը պայքար մը կը սկսի, ոստիկաններ դէպի նախարարութիւն և ժողովրդականներ դէպի պատրիարքարան տանելու ներհակ ընդդէմ ջանքեր կընեն, մինչև վերջինները կառքին և սանձերուն կը տիրանան և դէպի Գումգաբու կառաջնորդեն միշտ ամբոխին և ժխորին ընկերակցութեամբ: Ոստիկաններ միասին պվտրիարքարան կը մտնեն և իրենց հսկողութիւնը կը շարունակեն: Օրմանեան բոլոր ճամբուն մէջ կառքին մէկ անկիւնը լռին կը մնար, աղաղակները կը լսէր, եղածները կը տեսնէր, ճիգերը կը դիտէր, և արկածին ելքը Աստուծոյ կը յանձնէր: Պատրիարքարան դատարկ թողուած էր, թէպէտ տակաւին աշխատութեան ատեն էր, դռնապան ու սենեկապան ու երկու բարապան միայն պահնորդ մնացեր էին: Օրմանեան ժողովասենեակը առանձնացաւ երբ դուրսը շփոթն ու աղաղակը կը շարունակէր: Կէս ժամ ետքը երիտասարդ թուրք խմբագիր մը ներս մտաւ լուր քաղելու, բայց և միանգամայն յայտնեց, թէ ազատութեան թուրք գործիչներ եղածին վրայ վայրացած պիտի գան վինքը իր բնակարանը վերադարձնել: Իրօք ալ

շատ չանցաւ, հապարապետ Իսմայիլ Հագգը պէյ և երկու ընկերակիցներ, Թալեաթ պէյ և Նէճիպ պէյ հասան, ժողովուրդին խօսեցան, գործերնուն տգեղութիւնը յայտնեցին, ապատութեան անկարգութիւն և բռնութիւն չլինելը բացատրեցին, Օրմանեանն ալ քաջալերեցին, և կառքի և պինուորական պահպանութեան պէտքերը կարգադրեցին, և Օրմանեանի հետ կառք մտնելով, Գումգաբուէն մինչև Թագսիմ եկան, և վայն իր տունը յանձնեցին, նոր հաւաքուած ամբոխը ցրուեցին, և մերձակայ պահականոցին պինուորական հսկողութիւն հրամայեցին: Բերայի կարգապահութեան պաշտօնը վարողներ ալ հետզհետէ ներկայացան, վստահութիւն և քաջալերութիւն ներշնչեցին. միայն հապարապետը խնդրեց որ երեք վստահելի ժողովրդականներ տանը մէջ գիշերեն, որպէսպիսի Օրմանեանի փախուստը արգիլելու ձևով ժողովրդական շարժումը հանդարտի: Օրմանեանի առաջնորդող երեք անձերէն, Թալեաթ նոյն ինքն էր որ մինչև մեծ եպարքոսութեան բարձրացաւ. Հագգը պարտաւորութեան աստիճանով և կայսերական փեսայութեան պատուով պատերազմի դաշտին վրայ մեռաւ. իսկ Նէճիպ իր հայրենքին Ալպանիոյ ծառայելու մեկնեցաւ: Իսկ տունին հսկողներն եղան բժիշկ Ռիպա Թէֆիպ, և պինուորական Սէլիմ Սըրրի, և գլխաւոր գործիչներէն Քէմալ պէյերը: Այսպէս վճարեցաւ 1908 յուլիս 25ի անօրինակ արարքը, որուն համար ուրիշ քրիստոյնեայ ազգեր և թուրք շրջանակներ մեծապէս մեղադրեցին հայ հասարակութիւնը և հայ գործունէութեան գլուխ գտնուողները (ՕՄԱ.173-182):

3105. ԺԱՄԱՆԱԿԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Օրմանեանին անձին շուրջը յարուցուած անցուդարձը ամփոփելու համար յուլիս 25-ին արկածալից ցոյցը յարակցեցինք յուլիս 16 ի հրաժարականին. այժմ կու գանք լրացնել երկու դէպքերու միջոցին տեղի ունեցած եղելութիւնները: Յուլիս 17 ին հինգշաբթի օր Օրմանեանի կանուխէն պատրաստած կարգադրութեան համեմատ մայր եկեղեցւոյ մէջ ապատութեան և սահմանադրութեան և ներման առթիւ որոշուած գոհաբանական մաղթանքը կատարուեցաւ, որուն նախագահեց Դուրեան, նախընթաց օր տեղեպահ նշանակուած, թէպէտ Օրմանեանի հրաժարականին կառավարական ընդունելութիւնը և տեղապահին պաշտօնին հաստատութիւնը չէր լրացած: Յուլիս 17-ին Կ. Պոլիս կը հասնէր Օրմանեանի Դպրեվանքի աշակերտներէն Սերոբեան Մուշեղ եպիսկոպոս (3077), որ ապատութեան առաջին շշուկին ճամբայ ելած էր,

գուցէ յուսալով նոր պատահարներուն առթիւ նոր բախտի մըն ալ տիրանալ, և այս տեսութեամբ Օրմանեանի դէմ ցոյցերու մասնակցութեան հետևելով: Տեղապահի հաստատութենէն ետքը սկսան ընդհանուր ժողովոյ կազմութեան համար երեսփոխական ընտրութիւնները թէ մայրաքաղաքի և թէ՛ գաւառներու մէջ, և միւս կողմանէ պատրիարքարանի թեթև և առձեռն գործեր կը կատարուէին Օրմանեանի գործակից վարչական ժողովներէն, որոնք կը կարծէին նախագահը զոհելով իրենց գիրքն ու պատիւը պաշտպանած ըլլալ. սակայն իրենց դէմ ալ վրոյցները հետզհետէ աճեցան, և կամաց կամաց պարտաւորուեցան տեղի տալ քաջուիլ: Այս միջոցին ամենէն աշքառու դէպքը, բանտարկուած, աքսորուած, փոխած ու գաղթած անձերուն մայրաքաղաք դառնալն էր, ըլլան հայազգի, ըլլան օտարազգի, որով մայրաքաղաքը բաբելոնական խառնակութեան երևոյթն էր ստացած: Արդէն ժողովուրդն ալ խելայեղ կերպով իրարու անցած ծայրայեղ և անկապակից գործունէութեան մատնուած էր, զոր ժամանակ անունով որակած են ժամանակակիցները: Խօսքերնիս մերազնէից վրայ ամփոփելով աւելցնենք թէ խառնադանջ բազմութիւն մը սկսաւ խուժել ամէն կողմէ խեղճ ու կարօտ վիճակի մէջ, որոնց հանդէպ նպաստն ու օգնութիւնը անհրաժեշտ էր, և պատրիարքարանի կողմէն բաշխումներ կը կատարուէին, եկեղեցիներ և նոյն իսկ պատրիարքարանը իբրև օթարան թողուեցան, բայց կանոնաւոր հսկողութիւնն ու կարգապահութիւնն պակսեցաւ, այնպէս որ կանոնաւոր գործ ու

վաստակ ունեցող գաւառացիներ հին հագուստով մը ծպտուած կրնային դրամ կորսել ըստ հաճոյս, և կամ անուն փոխելով կրկին ու կրկին դրամ ստանալ: Ղեւոնդ վարդապետ Դուրեան, տեղապահ Դուրեանի հօրեղբօրորդին և անփորձ երիտասարդ, փոխանորդութեան կոչուած, շփոթ կացութեան վրայ տիրելու կարողութենէն պուրկ, անհաշիւ և անկշիռ բաշխմանց կարգաւորութեանց և եղելութեանց ուղղութեան մասին ստգտանքէ պերծ չմնաց, և տեղապահութեան կողմէն առանց պատշաճաւոր քննութեան արձակուած վստահութեան և արդարացման յայտարարութիւնները չէին բաւեր միտքերը հանդարտել: Մայրաքաղաք եկողներուն մէջ էին կուսակցական յայտնի գործիչներն ալ, որոնց մէջէն դաշնակցականներ, իբրև թուրք իթթիհատականներու դաշնակիցներ, ալատութիւնը իրենք բերած ըլլալու պարծենկոտութեամբ, սկսան ճոխանալ, կացութեան տիրանալ և պատրիարքարանն ալ իրենց ազդեցութեան ներքև առնել, որուն չկրցան դիմադրել Դուրեան տեղապահին տկար վարչականութիւնը և արտասաւոր պարագայից հանդէպ անբաւականութիւնը, և ստիպեալ անձնատուր կը դառնար յախուռն գործողներուն առջև: Այս կացութեան նշանաբանը կրնայ համարուիլ, կուսակցական սպառնալեաց ներքև իրեն դիմող պաշտօնեաներուն տուած պատասխանը, որ եթէ իրեն ալ մէկը ե՛լ ըսէ, ելլելու պարտաւոր է: Այս խեղճութեան հակապատկերն էր ցոյցերու և հանդէսներու յաճախութիւնը, որոնք երբեմն իբր պագսմանց արտայայտութիւն, և երբեմն իբր վերադարձողներու պատուասիրութիւններ կը կրկնուէին շարունակ: Տաճկաց կողմէ մեծ ցոյցեր եղան Ապտիլհամիտէ հալածուածներէն յուլիս 31ին Ֆուատ փաշայի, օգոստոս 2ին Ռէճէպ փաշայի, օգոստոս 21ին Սէպահէտտին իշխանին հասնելուն: Հայերն ալ աւելի փառաւորութեամբ կատարեցին օգոստոս 13ին Իզմիրլեան նախկին պատրիարքին ընդունելութիւնը Երուսաղէմէ վերադարձին առթիւ, որ օգոստոս 4ին անկէ մեկնած էր բոլոր քաղաքին կողմէն հանրային ցոյցերով, 6ին Յոպպէ նաւարկած, 11-ին Ջմիւռնիոյ մէջ պատրաստուած, և 13-ին Չանաքքալէ դիմաւորած, և նոյն օր երեկոյան դէմ Կ. Պոլիս կը մտնէր շոգենաւերով և նաւերով և նաւակներով դիմաւորողներէ շրջապատուած (08.ԱՐԼ.6874): Իզմիրլեանի կուղեկցէին Ներսէս վարդապետ Խարախանեան, Մշոյ քստրական առաջնորդը, և Մեսրոպ վարդապետ Նշանեան, որ Երուսաղէմի միաբանութեան անունին ընկերելու նշանակուած էր մինչ ի Կ. Պոլիս: Նմանօրինակ հանդիսական ընդունելութիւն կազմուեցաւ սեպտեմբեր 4ին Մինաս Չերապի Փարիզէ վերադարձին համար. այլ շոգենաւին ուշ մնալու և նաւահանգիստ մտնել չկրնալուն, ցուցարարները ձեռնունայն ետ դարձան և Չերապ 5ին առտուն կանուխ պարզօրէն ցամաք ելլալ պարտաւորուեցաւ (08.ԱՐԼ.6892): Իզմիրլեան Երուսաղէմէ մեկնելուն առթիւ տեղւոյն իթթիհատական խումբը յատուկ պսակ մը յանձնած էր անոր Կ. Պոլսոյ մէջ թաղուած 1986ին կոտորած Հայերուն գերեզմանին վրայ դնելու, և Իզմիրլեան յանձնարարութիւնը անձամբ կը կատարէր օգոստոս 16-ին Շիշլիի գերեզմանատան մէջ եկեղեցական շքեղ հանդիսութեամբ և ժողովրդեան բազմութեամբ: Բայց մենք բոլոր մանրամասնութիւնները ամփոփելու նպատակ չունինք, միայն դիտմամբ քանի մը ակնարկներ առաջ բերել հարկ սեպեցինք:

3106. ԴՈՒՐԵԱՆ ԵՒ ՕՐՄԱՆԵԱՆ

Եղիշէ Եպիսկոպոս Դուրեան, որ պատրիարքական տեղապահ էր ընտրուած, 1890 էն 1896 Դպրեվանքի մէջ Օրմանեանի գործակից էր գտնուած, և անկէ ետքն ալ մինչև 1904-ին Ջմիւռնիոյ առաջնորդութեան անցնիլը, Դպրեվանքի գործերը համերաշխ իրար օգնութեամբ վարած էին, և կենթադրուէր որ անտարբեր չկարենար մնալ Օրմանեանի արկածներուն հանդէպ. սակայն չհամարձակեցաւ ինքպինքը յայտնել, և չկրցաւ հոսանքին դիմադրել, և եթէ բացարձակապէս հակառակութեան չգործածկեցաւ, անգործ անտարբերութեան շրջանակէն ալ դուրս չելաւ, և յուլիս 25ի արկածալից օրը ոչ միայն աներևութացաւ, այլ և ոչ տեղեկեանալու կամ որպիսութիւն

հարցնելու տարրական հոգածութիւնը արտայայտեց, մինչև իսկ իր բերնէն ելած կցկտուր խօսքեր իբրև Օրմանեանի դէմ փաստեր յիշուելուն պատճառով, պարտաւորուեցաւ ան յուլիս 25ին համառօտ գանգատագիր մը ուղղել, թէ ստութիւններ նորա անունով ալ կը սկսին հրատարակուիլ: Մինևոյն վագսումը շօշափող կէտ մըն էր իր հրամանով 1909 տարւոյ օրացոյցներուն մէջ աւելցուած ծանուցումը, թէ ժամանակին յապաւուած մասեր եղած էին իբր թէ Օրմանեան այլայլած ըլլայ տօնացոյցը, մինչ համիտեան խիստ գրաքննութեան ներքև տպագրուած օրացոյցէն ոչ մի էական կամ կարևոր բառ կամ մաս վերցուած չէր, և միայն աննշանակ փոփոխութիւններ եղած էին ճարտար դարձուածներով: Ամէնէն ծանրը Վարդանանց և Տրդատայ և Աբգարու տօներէն մերոյ բառին վեղջուիլն էր, որով մեր ըլլալէ չէին դադրած, մանաւանդ որ ինքն Դուրեան ժամանակին Աբգարին մերը չըլլալը պաշտպանած և կրօնական ժողովին մեղադրանքին ենթարկուած էր, որով իր տեսութեանց հաստատութիւնը գտած կըլար. և արդէն ալ մերոյ բառը հնապանդ չէր, այլ Սիմոնէ մուծուած էր նախընթաց դարուն վերջերը (ՕՄԱ.189-192): Օրմանեանի դառնալով՝ պէտք էր որ պաշտօնական իրաց կանոնաւորապէս փոխանցումը կատարուէր, սակայն յուլիս 16ի և 25ի (3103,3104) յախուռն պատահարները արգիլած էին այդպիսի կանոնաւորութիւններով վբաղիլ, և Օրմանեան իրաւունք ունէր իր դիմացը կատարելապէս օրինաւոր և պատասխանատուութիւն ստանձնող իշխանութիւն մը ունենալ, ինչպիսի չէր չհաստատուած տեղապահը և անկայուն վարչութիւնը: Այսու հանդերձ յուլիս 27ին կառաջարկէր որ ժողովական որոշում մը տրուի և իրեն հաղորդուի, որ ըստ այնմ փոխանցումները կատարուին (ՕՄԱ.214): Սակայն պատասխան չէր ստանար, և գործը չձգձգելու համար օգոստոս 1ին գոնէ կնիքներն ու գրասեղանի բանալիները կը դրկէր, և տեղապահէն 4ին գիր մը կընդունէր, որով միայն նպաստից գումարին մնացորդը իրեն տրամադրութեան անցունել կառաջարկէր: Ուստի օգոստոս 5ին, դրամատան՝ Գարակէօպեան Թ. և Ե. եղբարց վրայ՝ 1528 լիրայի և 79 դահեկանի և 30 փարայի փոխանակագիրը կը յղէր (ՕՄԱ.245), և երկրորդ ընդարձակ դրամատան մօտ եղած 36 և 676 լիրա գումարներու փոխանակագիրներն ալ կը յղէր, և նպաստից սնտուկին յուլիս 15ի վիճակը մանրամասնեալ ցուցակներով կը մով աւելի ձեռներէց և մինչև իսկ յախուռն ըլլալու ընդունակ էր: Մայրաքաղաքը և գլխաւոր քաղաքներ հետզհետէ վարակուեցան այդ մտայնութեամբ բայց գործի յարմարագոյն կեդրոն նկատուեցաւ Սելանիկ քաղաքը, իբր կեդրոն եղած եւրոպական երեք կուսակալութեանց, Սելանիկի և Մանասթըրի և Եանեայի համար հաստատուած և եւրոպական ներկայացուցիչներէ կազմուած բարեկարգիչ յանձնախումբին, որ դիւրութիւն կընծայէր աւելի խորապէս վգածուելու, աւելի դիւրաւ արտայայտուելու, աւելի յաջողութեամբ գործելու: Այսպէս աճելով հրահրեցաւ օսմանեան երկրին ներքին խառնարանը, որ յեղակարծում բորբոքեցաւ 1908 յուլիս 10ին Մանասթըր քաղաքի մէջ, երկու յանդուգն սպաներու Նիպլիի և Էնվէրի առաջնորդութեամբ, իրենց գլխաւորներու կամակցութեամբ, և իրենց գունդերուն և իրենց դէմ դրկուած գունդերուն գործակցութեամբ: Արքունիքը լուր առած էր և իբր կանխահոգ դարման յուլիս 9ին նախարարութեան փոփոխութիւններ կատարած էր, բայց այս չարգիլեց յուլիս 10ի շարժումը, որուն համար լսուեցաւ ևս թէ ապատութիւն և սահմանադրութիւն հռչակող բանակը Կ. Պոլսոյ վրայ կը քալէ: Եղելութեան աւելի ոյժ տուած էր Հիւսէյին Հիւմի փաշա, որ բարեկարգիչ յանձնախումբին նախագահն էր, և ուռուցիկ լուրերով Ապտիւլհամիտի միտքին վրայ տպաւորութիւնը կը սաստկացնէր: Կայսրը վերջին պահուն, յուլիս 11ի ուրբաթ առտուն, թերթերու մէջ հասարակ լուրերու կարգին երկտողով մը հրատարակած տուած էր, թէ 1878ին խափանուած օսմանեան երեսփոխանութիւնը նորէն գումարուելու կայսերական հրաման արձակած է: Սահմանադրական վարչութեան վերանորոգման կամ վերահաստատութեան որոշումն էր, որ թերի

և անորոշ կերպով կը ծանուցուէր, կարևորութիւն տուած չըլլալու ձևով մը, որ գործին բռնադատութեան ներքև եղած ըլլալը կը յայտնէր, և հաւանաբար ժամավաճառութեամբ անգործադիր թողլու ներքին մտադրութիւն ալ ենթադրել կու տար: Սակայն ուրբաթ առտուն լուրը ժողովուրդին մէջ իսկոյն տարածուեցաւ, միտքերը գրգռեց, սիրտերը վստահեցուց, և ապատութեան աւետիսը ամէնուն ուշադրութիւնը գրաւեց: Յուլիս 12 շաբաթ օր արդէն հրապարակային ցոյցեր սկսեցին, և թուրք ժողովուրդն ալ ամբոխային շարժումներ կը կատարէր, դրօշակներ առջևնին և կեցցէներու աղաղակը բերաննին խմբովին պաշտօնատուներ կը շրջէին, իրարու շնորհաւորութիւններ կը փոխանակէին, քրիստոնեաներ ալ անխտիր կը մասնակցէին, համերաշխութեան նշաններ կը ցուցադրէին, և ընդհանուր եզրակացութեան արտայայտութիւններ կը փոխանակէին: Շարժումին գլուխը կը գտնուէին կրօնքով իսլամ և ծագմամբ հրեայ Սելանիկցի վաճառականներ, որոնք ծախքերու ալ չէին խնայեր ժողովրդական խանդավառութիւն արծարծելու համար: Սակայն պաշտօնական ոչ մի նոր յայտարարութիւն չէր երևցած ապատութիւն ու սահմանադրութիւն հռչակող, որ այդպիսի նշանաւոր եղելութեան համար իբրև հիմ ու փաստ կը պահանջուէր, կայսերական հրովարտակ չէր հրատարակուած, պաշտօնատուներ իրենց սովորական ընթացքը չէին փոխած, և իբրև կարևոր նշանակ միայն ընդհանուր ներում մը եղած էր յուլիս 13ին, և ամէն տեսակէ և ամէն աստիճանէ բանտարկեալներէ ապատ արձակուած էին, այնպէս որ բանտերու մէջ արգելական մարդ չէր մնացած, և բանտերը հասարակ ժողովուրդին հետաքրքրական վրօսավայրերուն դարձած էին: Ընդհանուր ներման հետ հրատարակութեանց գրաքննութիւնն ալ ջնջուած էր, իսկ ցոյցերը շաբաթ սկսած և կիրակի աճած էին, նոյն իսկ եկեղեցիներու մէջ կիրակի առտու ժողովրդական խնդութեան նշաններ կատարուեցան, գլխաւորապէս քարոզիչներու աւետաւոր և ճոռոմաբան բեմբասացութիւններով: Միև կողմէն ալ գաղթածներ և փախածներ մօտ տեղերէն դառնալ սկսած էին, և թշնամական ու անարգական ցոյցեր կը կատարուէին պետական անձերու դէմ, գլխաւորապէս պալատական և ոստիկանական պաշտօնեաներու և Խաֆիյէ անունով որակուած լրտեսներու և քսուներու դէմ: Այսպէս եղաւ ապատութեան հռչակման սկզբնաւորութիւնը կայսեր աչքին ներքև, որ սաստիկ շուարման մէջ ամէն պաշտօնական և գործնական որոշումներէ ձեռք քաշած և կրօնաւորական դիրք մը ստանձնած էր, և անցեալ կացութեան գործերը իր պաշտօնէից վինքն խաբելուն կը վերագրէր, որ անոնք ժողովուրդին վրէժխնդրութեան մատնելով ինքն ապատ մնար:

3102. ՕՐՄԱՆԵԱՆԻ ԸՆԹԱՅՔԸ

Օրմանեան հինգշաբթի յուլիս 10 երեկոյէ երոպական թղթակիցներէ լուր առած էր Մանասթըրի շարժումին վրայ, ուստի յուլիս 11ի ուրբաթ առտուան անկատար լուրը վինքն չվարմացուց, մանաւանդ որ մտադրութիւն դարձուց լուրին թերի ու անկերպարան ձևին վրայ, և շարունակեց այն որ Բերայի Եսայեան վարժարանին դպրոցական հանդէսին նախագահել: Շաբաթ օրուան ցոյցերը գործին աւելի կարևորութիւն տուին, և պատրիարքարան երթալով ջանաց տեղեկութիւններ հաւաքել բարձրագոյն դուռնէն և նախարարութենէն և պատրիարքարանէն, այլ ոչ մէկ կողմէ պաշտօնական հրատարակութեան կամ գործողութեան լուր կամ պատրաստութիւն չտեսնելով, որոշեց ինքն ալ պաշտօնական ձևէն և դիրքէն չպատուիլ. կիրակի եկեղեցի չիջաւ, բայց ժողովրդական ցոյցերը քաջալերեց և քարոզիչները հետևելու հրահանգեց: Ասով մէկտեղ իր լուրթիւնը ոմանց կողմէ իբր ապատութեան դէմ դժկամակութեամբ նշան մեկնուեցաւ, և լրագիրներ ալ արձագանք եղան այդ կարծիքին, թէպէտ Օրմանեան շաբաթ օրուրնէ պատրիարքարանի նոր ընթացքին համար նախապատրաստական որոշումներ ձեռք առած էր, ընդհանուր ժողով գումարելու համար երեսփոխաններու ցուցակը քննելով ամէնն ալ

պայմանաժամանին լրացուցած գտած էր, և ընդհանուր նոր ընտրութեան պէտքը որոշած, դիւաններուն ալ ապդարարած էր օրինական լեզու գործածել փոխանակ ողոքանաց և աղաչանաց ոճերու, պաշտօնական հանդէսի մը կատարումը վարչական ժողովոյ հաւանութեամբ և գործակցութեամբ պաշտօնական ձևի վերածելու համար երեքշաբթիին կրօնականը և չորեքշաբթիին խառնը հրաւիրեց, որ հինգշաբթիին պաշտօնական հանդէսը տեղի ունենայ: Չգաց և յայտարարեց ալ պատրիարքի հրաժարելուն և քաշուելուն պէտքը, սակայն հարկ դատեց անխորհուրդ հրաժարմամբ գործերը անտէրունչ չլքանել, այլ ընդհանուր ժողովը հաւաքել և անոր մատուցանել հրաժարականը և անոր թողուլ կացութեան նոր կազմակերպութիւնը: Օրմանեանի ձեռնպահութեան պատճառը գործով ալ արդարացաւ. Կի կիրակի յուլիս 13-ին ոչ պետական և ոչ պատրիարքական շրջանակներու մէջ պաշտօնական ցոյց չեղաւ, և Հայոց պատրիարքին մէջտեղ նետուիլը ապատական համակրութենէ աւելի քաղաքագիտական թեթևութիւն ու պստիկութիւն եղած պիտի ըլլար: Երկուշաբթի 14 յուլիս պաշտօնական այցելութիւններ տուաւ մեծ եպարքոս Սաիտ և նախարար Բեամիլ փաշաներու, շնորհաւորութիւն և շնորհակալութիւն յայտնելու, սահմանադրութեան պայմանաց և գործադրութեան վրայ խօսակցելու, և համարձակ գործակցութիւն խոստանալու: Գլխաւոր ապգայնաց հետ ալ տեսակցութիւն ունեցաւ, իր միտքը, յայտնեց և փոխադարձ հաւանութիւն և համակամութիւն լսեց: Երեքշաբթի 15 յուլիս կրօնական ժողովին նախագահեց, սովորական օրակարգը թողլով նոր պարագայից վրայ խորհրդակցելու, համագումարը հրաւիրուեցաւ ընտրելեաց ցուցակներու համար, և ապատութեան ու սահմանադրութեան ու ներման համար հանդէսը հինգշաբթի պաշտօնապէս կատարել որոշուեցաւ, յաջորդ օրուան խառն ժողովի որոշումն ալ լրացնելով թէև հրաւիրագիրները անմիջապէս չկրկուեցան: Որոշուեցաւ ևս առաջիկայ կիրակի յուլիս 20 ին նմանօրինակ հանդէս և մաղթանք կատարել բոլոր թաղական եկեղեցիներու մէջ, նոյն միտքով բոլոր առաջնորդարաններու ալ հեռագրական հրահանգ չկրկուեցաւ: Առձեռն խնդիրներէ ալ ստիպողականները նայուեցան, և ընդհանրապէս գործերը ամփոփելու և կանոնաւորապէս թողլու նախապատրաստութեանց ձեռնարկեց: Որչափ ալ Օրմանեանի հրաժարելու և քաշուելու միտքը հաստատուն էր, և պատրիարքարանին ներսը այդ գործողութիւններ կը կատարուէին, դուրսը պատրիարքը հրաժարեցնելու միտքերը կը կապմուէին, և գործադրութեան պատրաստութիւններ սկսած էին, և շատ մանրամասնութիւններ ալ կը լսուէին, մինչև իսկ յաջորդ օրը հրապարակ իջնելու որոշումն ալ տրուած կըսուէր: Ի՞նչ էր սակայն այդ որոշման շարժառիթը: Ստոյգ է որ կացութեան փոխուելովը, հին կացութեան մէջ գործունեայ դեր վարողները պէտք է նոր կացութեան մէջ քաշուէին. ասիկա շատ բնական տեսութիւն մըն էր, որուն առաջին ինքն Օրմանեան համոզուած էր, և առաջին վայրկեանին ալ միտքը յայտնած. և նոյն միտքով նախապատրաստութեանց ձեռնարկած էր, և հարկ չէր իրեն դէմ բռնադատական միջոցներու դիմել: Այլ եթէ երբեք կը կասկածուէր որ յայտարարութիւնները ու նախապատրաստութիւններ կեղծիք ըլլան, այն ատեն ալ շտապելու պէտք չկար, և պատշաճ էր պատրաստութեան լրման և յայտարարութեանց իրականացման ատեն տալ: Հետևաբար այդ պարզ գաղափարներէն աւելի պատճառներ պէտք էր ըլլային, երբոր թշնամանց և անարգանաց միջոցներ կը խորհուէին: Այդ կերպերու նախաձեռնարկութիւնները ընողներ կուսակցական գործիչներ պէտք էր ըլլային, Կի Օրմանեանը իրենց ծառայեցնել կրցած չըլլալուն ցաւը կը կրէին, մանաւանդ թէ իրենց յախուռն և անխորհուրդ ձեռնարկներուն հակառակ գործած ըլլալուն համար վշտացած էին. բայց անոնք տակաւին արտասահմանէ դարձած և հրապարակ իջած չէին, և իրենց պիտակ հետևողներն ալ կանխելու և շտապելու իրաւունք չունէին: Հետևաբար յայտնի է որ ներքին շարժումը

պատրաստողներ տեղւոյն վրայ շեղող և այս կամ այն անձնական պատճառով Օրմանեանէ օգուտ չտեսնող, կամ խաղերնին քալեցնել չկրցող, և կամ իրենց անտեղի պահանջից գոհունակութիւն չստացող անձերն էին, որոնք առիթէն օգտուելու և կերպով մը վրէժ լուծելու մարմաջով կը գործէին: Երկուշաբթի և երեքշաբթի օրեր լսուած շշուկները մեծ ու ծանր պատահարներ կը սպառնային, մինչև իսկ խոհական և բանիմաց անձեր խորապէս պատճառած երեքշաբթիէ սկսելով Օրմանեանի յորդոր կը կարդային կանխել և հրաժարականը ներկայել և ժողովրդական անախորժ դէպքերէ ազատ մնալ: Սակայն տարբեր էր Օրմանեանի համոզումը ան իր յանկարծ քաշուելուն հետևանքը յաջող չէր տեսներ, և ազգային վիճակին վտանգաւոր կը դատէր, ինքնաբերաբար քաշուեովը հետևանքին պատասխանատուութիւնը ստանձնելէ կը խուսափէր, և պարտաւորուած հրաժարելովը պատասխանատուութենէ վերժ մնալու խիղճի հանդարտութիւնը կուզէր ունենալ: Ասկէ վատ կը յուսար ալ որ վարչական ժողովներ պարագաները կշռելով ու թափանցելով իրեն օժանդակ կը հանդիսանան և վինքը չեն լքանել: Վասնզի լսուած ալ էր թէ Յունաց և Կաթողիկաց մէջ ալ նմանօրինակ շարժումներ սկսեր են իրենց պատրիարքներու դէմ, բայց վարիչ ժողովականներ միջամտելով արգիլեր են անխորհուրդ և հասարակութեան վնասաբեր ձեռնարկը:

3103. ՀՐԱԺԱՐՄԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Յուլիս 16 չորեքշաբթի առտուն իսկ ժողովականներէն ոմանք անձամբ և ոմանք միջնորդով Օրմանեանը կը յորդորէին հրաժարականը յղել և ժողովի չգալ. այլ նա անյողդողդ կը մնար իր միտքին վրայ, թէպէտ վճռապէս կը յայտարարէր թէ պատրիարք կերթայ և հրաժարեալ կը դառնայ: Տակաւին ոչ Ղալաթիոյ բակին մէջ և ոչ փողովատեղւոյն սանդուխին վրայ ոչ ոք կերևար, հետզհետէ հասնող ժողովականներ կատարուելիք մեծ ցոյցին վրայ ստացած լուրերնին կը խօսէին, և կրօնականէն ինը և քաղաքականէն ութը անդամներ լաւ մեծամանսութիւն մը կազմեցին, նկատի առնելով պակասած անդամները: Նիստին բացուելուն Գաբրիէլ Նորատունկեան ատենապետ նոր կացութեան հանդէպ վարչական նոր կազմակերպութեան պէտքը բացատրեց. Օրմանեան ալ դժուար ժամանակներու մէջ պաշտօնի անցած, դժուարութեանց ներքև պաշտօնավարած, ազգին գոյութիւնը չվտանգելու աշխատած, սահմանադրութիւնը անձեռնմխելի պահելու ամէն ջանք ըրած ըլլալը, յիշելով նոր կազմակերպութեան պէտքը և իր քաշուելուն հարկը յայտարարեց, աւեցնելով թէ նախապէս օրինաւոր մարմին մը և ազգը ներկայացնող ժողովը պէտք է կազմուի, որպէսզի ազգային ժողովէ իրեն յանձնուած պատրիարքական իշխանութեան աւանդը դարձեալ ազգային ժողովի մը յանձնէ և աւանդը անտէրունչ լքած չըլլայ, մանաւանդ որ վարչութեան ալ վերակազմութիւնը սահմանադրական պահանջ մըն էր: Այդ միջոցին էր որ լուր տրուեցաւ թէ Օրմանեանի հրաժարականը պահանջող բազմութիւն մը խըմբուած է: Եղելութեան մանրամասնութեանց մտնել մեր ոճէն դուրս է (ՕՄԱ. 167-174), բայց հետաքրքրութիւն գրաւած գործի մը պայմանները բացատրել կարևոր և անհրաժեշտ է, ուստի դիտել կու տանք թէ ցոյցին գլուխը գտնուողներու էին երեք փաստաբաններ, Աւետիս Սուրէնեան, Խնդիր Սիմոնեան և Արիստակէս Գասպարեան, որոնք ուրիշ գրգիռ մը չունէին բայց եթէ Օրմանեանէ գնահատուած չըլլալնին, Պաշտօններու չկոչուելնին, և պատրիարքարանի հաշուոյն դատեր յուզելու և վարելու, օրինակ Տիգրան Գարակէօզեան կտակը (3035) ասպարէզ չգտանալնին. իսկ առաջին երկուքը նաև Մաքսուտեան Ղեւոնդ վարդապետի պաշտպանութիւնը ստանձնած էին, որոնց ամէնը անձնականի շահի շրջանակէն անդին չէին անցնիր: Իսկ ցուցարարներուն թիւը, որ ահեղ բազմութիւն ըլլալիք կըսուէր, յիսուն հոգիէ աւելի չէր եղած, Ղալաթիոյ եկեղեցւոյն և վարժարանին վերաբերող հետաքրքիրներն ալ համարելով: Իսկ յառաջ բերուած պատճառն ալ պարզապէս չենք ուզեր մըն էր, և ամբաստանութեան որոշ կէտ

չէր յիշուեր: Վարչութեան դժուար չէր համամիտ և հաստատամիտ դիմադրութեամբ միջադէպը փակել, կամ համերաշխութեան փաստը առաջ դնելով կամ որոշման պայմանաժամ առաջարկելով յետաձգել, այլ կերևի թէ ժողովականներն ալ ծանր տպաւորութեան ներքև կը գտնուէին, կամ թէ ցոյցին իրենց դէմ ալ դառնալէն կը վախնային, և կամ անկանոն ժամանակի մէջ անախորժ պատահարի մը դիմաց գտնուելին կը կասկածէին, մինչև իսկ հակառակ պարագային պատրիարքին կեանքին վտանգ և իրենց անարգանք կը նախատեսէին, որով քանի մը ժողովականներու դիտողութեան հակառակ մեծամասնութիւնը պատրիարքի հրաժարականին ստիպողականութեան կողմը գտնուեցան: Նոյն ինքն ատենապետ Նորատու նկեան կը Վիջանէր

ժողոտարահէն ելնելով դուրսիններուն հետ երկու երեք անգամ բանակցութիւն կատարել, երբ միւս կողմէն ալ մտերմաբար Օրմանեանին հրաժարիլ կը թելադրէր: Երբոր գործը այս կէտին հասաւ, այլևս Օրմանեանի սպասած ժամը լրացած էր, ուստի նոյն տեղ հրաժարագիրը պատրաստեց և ժողովրդականաց յանձնեց (ՕՄԱ. 171), բացատրական խոսքեր և հրաժեշտի հուսկ խօսքեր ալ աւելցնելով: Միւս կողմէն իր ներկայութեամբ գործերու գլուխ մը նշանակելու կէտը վիճաբանուեցաւ, և ուղղակի տեղապահ ընտրելու որոշումը տրուեցաւ, և ժողովական եպիսկոպոսներու յանձնառու չըլլալուն վրայ, ընտրութիւնը յանգեցաւ Չմիւռնիոյ առաջնորդ Դուրեան Եղիշէ եպիսկոպոսին վրայ, որ այն միջոցին մայրաքաղաք կը գտնուէր: Օրմանեան իր հրաժարականով և բերանացի յաւելուածներով կը յիշեցնէր ազգային սահմանադրութիւնը տասներկու տարիէ իվեր ջնջելու վտանգէն ազատելով ամբողջաբար սիրելի ազգին յանձնելը, և առանց իւր կամքին ազգին կողմանէ պաշտօնի կոչուած ըլլալը, և դասալքութիւն ըրած չըլլալու համար պաշտօնի վրայ մնալը, և այժմ որ ամենայն ինչ փոխուած է և դժուարութիւնները վերցուած են, ուրախութեամբ և հանդարտ սիրտով մեկնիլը (ՕՄԱ. 171-172): Սիրալիր արտայայտութիւնները և ցոյցերը առատապէս փոխանակուեցան, ժողովականներ անձամբ հսկեցին ժողովրդականաց կողմէն անպատեհ շարժում կամ ցոյց մը չըլլալուն, և ամենայն հանդարտութեամբ իր Բերայի բնակարանը դարձաւ, ուր իր ետևէն հասան ժողովականներ և պաշտօնեաներ կառավարութեան ներկայացուելիք պարզ հրաժարականը ստանալու, և այսպէս փակուեցաւ 1896 նոյեմբեր 6-ի ընտրութեամբ սկսած է 1908 յուլիս 16 ի հրաժարականով վերջացած, տասներկու տարիէ միայն երկուկէս ամիս պակաս տևած պատրիարքութիւնը, որ իր երկարուելով որ իր դիտողութիւնները նկատի իսկ չէին առնուեր, դեկտեմբեր 3-ին նոյնը կը կրկնէր ատենապետին հասցէին (ՕՄԱ. 211), և 16-ին կը դառնար աւելի ընդարձակորեն Իվմիրլեանի ներկայիլը, որչափ ալ հիւանդութեան հետևանքներուն պատճառով, դեռ Վգուշաւորութեամբ և չափաւորութեամբ աշխատելու իր պարտաւորուէր: Իր գիրը ամփոփելով կը վերջացնէր, թէ ձեզ կը թողում իմաստասիրել և եւրակացնել, թէ ինչ բանէ յառաջ եկած կրնայ ըլլալ, ձեռքի տակ եղող հաշիւները քննել չուզել, որինաւոր համարատուութիւն մը ունենալ չուզել, ակն յայտնի նիւթական եղելութիւն մը ճանչնալ չուզել, և մտացածին կարծիքներու իբր ամբաստանութեանց կարևորութիւն տալ (ՕՄԱ. 212-216): Օրմանեանի գիրերը անպատասխանի կը մնային միշտ, ինչպէս նաև դեկտեմբեր 2-ին ուղղած խնդրանքը որ մերձակայ տօներուն առթիւ արտօնուի Բերայի Ս. Յարութիւն փոքրիկ և առանձնակ եկեղեցւոյն մէջ պաշտամանց մասնակցիլ և հոգևորապէս մխիթարուիլ (ՕՄԱ. 274): Այս ամէն դիմումներու իբր գործնական պատասխան դեկտեմբեր 19 ին պատրիարքի նախագահութեամբ քննիչ յանձնաժողովոյ ընտրութիւն կը կատարուէր: Իսկ Օրմանեան այսու հանդերձ վանց չէր ըներ 1909 յունուար 6-ին ամանորի և ծնունդի շնորհաւորութեան յարգանաց պատշաճը լրացնել նոր նամակով մը, որուն կը խառնէր յունուար 3-ին հաղորդուած կաթողիկոսական ընտրութեան հաստատուելուն համար

շնորհաւորութիւնը (ՕՄԱ. 275). սակայն այդ նամակն ալ նախընթացներուն նման անպատասխանի մոռացութեան կը մատնուէր, և միւս կողմէ քննիչ յանձնաժողովը գործի վրայ կը գտնուէր, ամբաստանագիրներ կարդալով, և ամբաստանողներ լսելով, որով Օրմանեան այլևս կը լռէր տեսնելով որ յամառ կամայականութիւն մը կայ զինքն հալածելու և երկայնամիտ համբերութեան որոշումը կու տար իրեն համար (ՕՄԱ. 205), և այլևս բացարձակ կրաւորական գիրք մը կը պահէր: Զատկական տօնախմբութեան առթիւ կը շատանար պարզ այցատոմս մը յղել Իզմիրլեանի մարտ 29 ին, և Զատիկէն 21 օր ետքը վատկական շնորհաւորութիւն կընդունէր Իզմիրլեանէ ապրիլ 18 ին, աւելցնելով թէ ստացած է նաև պանպան առթիւ ուղղուած շնորհաւորական գիրերը (ՕՄԱ. 276), և ըսել թէ ինն ամիսներ անցեր էին շնորհաւորականները ստանալէն ի վեր: Արդէն փետրուար 12 ին պատրիարքութենէ դադրած էր, և կաթողիկոսական ընտրութեան ձևակերպութիւնները լրացած ըլլալով մեկնելու կը պատրաստուէր, Օրմանեանը անպատուելու ինչ որ պէտք էր գործուած էր, մօտ օրէն Ռուսահայոց մէջ պիտի ըլլար, ուր Օրմանեանը գնահատողներ շատ էին, և առջև որևէ ձև մը պէտք էր ցուցադրել, և առ այս կերևի պիտի ծառայէր ապրիլ 18 ի նամակը, և անկէ ետքը մայիս 18 ի տեսակցութեան հրաւերը, զոր իր կարգին կը թողունք քաղել:

Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ

3109. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Կաթողիկոսական ընտրութիւններէ առաջ ստէպ ընտրողական պայքարներ պատմելու առիթ ունեցանք: Խրիմեան կաթողիկոսի մահուանէ ետքը հայ հասարակութիւնը այդ խնդիրով շատ վբաղեցաւ, զի պարագաներն ալ ինքնին մատնանիշ կընէին երկու ընտրելեաց կամ ընտրելոց անունները: Գործունեայ պաշտնավարութեամբ և դժուարին կացութեան վրայ տիրապետութեամբ կը ներկայանար Օրմանեան պատրիարքին անունը. աքսորի և հալածանքի ենթարկուելովը և տեսակ մը արիական հոգւովը համակրութիւն շահած էր Իզմիրլեան նախորդ պատրիարքին անունը, և այդ երկուքն էին որ ամէնուն կողմէն, կը խօսուէին, և օրագիրներէն և օրացոյցներէն իբր նախագուշակութիւն կը կրկնուէին, միանգամայն երկու բաժիններու համերաշխութեան գետին կը դառնային, զի թէ՛ պահպանող և շահեցող խոհական կողմը, և թէ՛ յեղափոխական և յուզող խօլական կողմը, իրենց փափաքը լրացած կը տեսնէին, եթէ այս երկու անունները կազմէին վերջնական երկանունը, և պարագայից կը մնար մէկին կամ միւսին ընտրողականէն նախադասուիլը կամ կայսրէն նախընտրուիլը: Խրիմեանի մահէն մինչև օսմանեան պատուութեան հռչակուիլը անցնող ութը ամիսներու մէջ հաւանականութիւնը Օրմանեանի վրայ կը դառնար թէ՛ ժողովրդական մեծամասնութեան և թէ՛ պետական ուղղութեան տեսակէտէն, բայց կացութեան փոխուելով միտքեր և միտումներ ալ փոխուեցան, Իզմիրլեանի անձնականութիւնը և պատահական պարագաները առաւելութիւն ստացած էին և հաւանականութիւն անոր նպաստաւոր էր դարձած: Ասով մէկտեղ Օրմանեանի վրայ նկատուած կէտերը չէին կրնար չքանալ, և Իզմիրլեանի յաջողութեան հաւանականութիւնը աճած ըլլալով մէկտեղ, անոր կուսակիցները հակառակին երկիւղէն ապատ չէին. ուստի ամէն լուտանք և նախատինք, կեղծիք և ստութիւն, կամայականութիւն և ամբոխավարութիւն, քննադատութիւն և ամբաստանութիւն կը գործածուէին և կը բարդուէին, որպէսզի մի՛ գուցէ գաղտնի քուէն յայտնի աղմուկին յաղթանակէր, կամ ինչպէս ամբաստանողներուն յառաջընթաց Գասպարեան Արիստակես կը գրէր, մի՛ գուցէ նախորդ պատրիարքը յաջողէր կաթողիկոսութեան քուէ ստանալ, թէպէտ պարագաները այլևս յայտնի կը ցուցնէին Օրմանեանի նախադասուելուն անհնարութիւնը: Զարմանալի էր ստուգիւ որ տակաւին հակառակ կողմէն բուռն ճիգեր կը թափուէին Օրմանեանի յաջողութիւնը արգիլելու, իբր զի չէր կրցած անհետանալ այն միտքը թէ լռողներ կրնան նպաստաւոր քուէ տալ, և թէ նոյնիսկ հակառակ

խօսողներէն շատեր հակառակութիւնը չգրգռելու կեղծողներ ըլլալին: Այդ նպատակով մեծ ջանք տարուեցաւ պատգամաւորներու ընտրութեան մէջ, Օրմանեանէ դժգոհներ և կուսակցականներ շատցնելու, և եկեղեցական ձայնատէրներու վրայ ճնշումներ բանեցնալ, որով, ինչպէս գործին առաջնորդողներէն Աւետիս Ահարոնեան կը յայտարարէր, Օրմանեանականներ սակաւաթիւ կը մնալին և անոնց ձայնը շուտով կը խեղդուէր (08ԱՐԼ.6946): Արդէն Օրմանեանի դէմ ելլողներ անձնական պատճառներէ գրգռուողներ էին, շատեր իրենց կամքը յառաջ տանելու մէջ արգելքի հանդիպողներ էին, և նոյնիսկ կուսակցականներ պարզապէս պատրիարքը իրենց ծառայեցնել չկրնալնուն համար վշտացողներ էին: Յիշեցինք թէ Կ. Պոլսոյ երեսփոխանութեան մէջ ալ պատգամաւորութեան ընտրեալին արժանիքը Օրմանեանի քուէ չտալը նկատուեցաւ, և հասարակ դասակարգէն անուս թեփալաճառ մը մայրաքաղաքի պատգամաւոր նշանակուեցաւ (3107), մինչ բարձրագոյն դասակարգէ ընտրեալներ և ընտրելիներ պայմանը չընդունելնուն համար հրաժարած էին: Կուսակցականաց կողմնակիցներ Ռուսահայոց մէջ ալ կային և ընտրուիլ կը յաջողէին, թէպէտ Կովկասի խոհական մեծամասնութիւնը տարբեր ուղղութեան կը հետևէր: Երբոր պատգամաւորներ Էջմիածին հաւաքուեցան իրենց նախապատրաստական գումարումներուն մէջ, գլխաւոր աշխատանքին երկրորդ ընտրեալի անունը որոշելն եղաւ, և շատ լեզուներ և այլընդայլոյ տեղեկութիւններ և խեղաթիւրեալ պատմութիւններ թափուեցան, որպէսզի Օրմանեանի անունը մէկ կողմ թողուի, և ուռուցիկ արժանիքներ բարդուեցան Դուրեանի վրայ, որոնք դրական ձիրքերէ կամ բարոյական կեանքէ անդին չէին անցներ, և դիտուած նպատակին չէին տաներ: Այսու հանդերձ լաւագոյնը չգտնուելով՝ անոր վրայ համաձայնեցան, և Էջմիածնի միաբաններէն Մեսրոպ Սմբատեան և Գրիգոր Գառնակերեան եպիսկոպոսներուն անունները քառանուն ցանկը լրացնելու իբր ուսահայոց իպատիւ: Օրմանեանի անունը քառանուն ցանկի քուէարկութեան մէջ չորսերէն անմիջապէս ետքը կու գար 9 քուէով, երբ հոկտեմբեր 30ին հինգշաբթի օր հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ, և 31ին քառանուն ցանկը կազմուեցաւ Իզմիրլեան 78 և Դուրեան 66 և միւս երկուքը 35 քուէով (08.ԱՐԼ.6941): Իսկ նոյեմբեր 1ին շաբաթ օր վերջնական ընտրութիւնը կամ երկանուն ցանկը քուէարկուեցան Իզմիրլեան 73 և Դուրեան 55 քուէով (08.ԱՐԼ.6956): Այդ ընտրութեան չուպեց մասնակցիլ Խապայեան, իբր զի Կիլիկոյ կաթողիկոսութեան միակ հրաւիրագիր վրկուած էր յանուն այթողին. մինչ ինքն կը պահանջէր որ 13 վիճակներ վատ վատ ներկայացուին ընտրողական ժողովին մէջ, ինչպէս որ Կ. Պոսոյ երեսփոխութիւնը որոշած էր Գէորգին ընտրութեան առթիւ, 65 ի բարձրացնելով Տաճկահայոց նախապէս 45 ցուցուած վիճակները (08. ԱՐԼ. 6919), սակայն այդ յաւելուածը պաշտօնապէս չէր առաջարկուած և ընդունուած: Այն ատեն 45 և 65 միակ պատմագրով ներկայացնելու ձևը կը պնդուէր, և մայրաթողի ու Ռուսիոյ կառավարութեան մօտ Մատթէոսի ընտրութեան ատեն ցուցուած 45 վիճակներու ցուցակը կը տիրէր: Երեսփոխութիւնը Աղթամարն ալ 2 և Երուսաղէմն ալ 5 վիճակներու բարձրացուցած էր, սակայն անոնք այս կէտին վրայ չպնդեցին ու մասնակցեցան: Կատարուած ընտրութեանց ձևակերպութեանց վրայ իբրև կարևոր գիտելիք պիտի աւելցնենք, թէ այս անգամ գաղտնի քուէարկութեան ձևը ընդունուեցաւ, սպիտակ և սեւ գնդիկներու կիրառութեամբ, փոխանակ յայտնի ձայնատուութեան: Պատգամաւորներու ալ չներուեցաւ երկրորդ ձայն գործածել, մինչ յառաջ երրորդ ձայնը միայն կարգիլուէր: Իսկ պատգամաւորներուն թիւը առաջին անգամ 82 անձ և 105 ձայն էր հաշուած (08. ԱՐԼ. 6948), մինչ վերջին քուէարկութեան մէջ միայն 77 անձ ու ձայն գտնուեցաւ, որ է ըսել թէ 23 երկրորդ ձայներ խափանուեցան, և 5 անձ ալ բացակայեցին Օրմանեանի անունը սաստիկ պատգամաւորներէն: Վերջնական քուէահամարը տուած էր Իզմիրլեանի 73 սպիտակ և 4 սեւ քուէ, Դուրեանի 55 և 22

Սմբատեանի 11 և 65, և Գառնակերեանի 19 և 56, և կերևի թէ վերջիններ իրենց անունին քուէարկած չէին (08.ԱՐԼ. 6956):

3110. ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Էջմիածնայ ընտրողական ժողովրդին արդիւնք իմացուած վայրկեանէն Իզմիրլեան սկսաւ ամէն կողմէ խնդակցական իղձեր ընդունիլ, և իբրև վերջնականապէս կաթողիկոս ընտրուած ողջունիլ, թէպէտ պօլօթէնիէի օրէնքով տակաւին Ռուսաց կայսեր կամքն ու հրամանը պէտք էր այդ վերջնականութիւնը ապահովելու: Իզմիրլեան թէպէտ չափաւոր աստիճանով բայց լիովին հաճութեամբ ու գոհունակութեամբ կընդունէր եղած ցոյցերը, և միտքէն իսկ չէր անցունէր որ քանի անդամներ, բանիւ և գրով փաստով և վէճով, իր կողման անիրաւ և ապօրէն և անվաւեր հռչակուած պօլօթէնիէի կանոնով էին կատարուած իր ընտրութեան ամէն գործողութիւնները, և տակաւին պօլօթէնիէի նուիրագործած կայսերական կամքին պէտք էր սպասել եղած ընտրութեան տէր դառնալու համար: Միևս կողմէն ապատած էր Օրմանեանի մրցակցութեան երկիւղին, բայց կերևի որ սիրտը հանդարտած չէր, որ հոկտեմբեր 31 ին պատրիարքական աթոռ բարձրանալէն և նոյեմբեր 1 ին կաթողիկոսութեան ընտրուելէն ետքն ալ, նոյեմբեր 7 ին առաջին անգամ երեսփոխանութեան նախագահած օրը, իր նախընծայ գործունէութիւնը կը սկսէր Օրմանեանի դէմ ամբաստանութիւնը քաջալերելով, սահմանադրութեան օրինագծին հակառակ պաշտօնի վրայ եղող պատրիարքին համար տրամադրուածը դադարեալ պատրիարքին պատշաճեցնելով, և ներքին կանոնագիրին որոշած նախաքննութիւնը վանց ընելով, և իր առաջարկուեցան վրայ քննիչ յանձնաժողովոյ կազմութիւնը անմիջապէս որոշել տալով, որպէսպի Օրմանեանը պաշտօնապէս ամբաստանելի վիճակին ենթարկէ: Իզմիրլեան շատ աւելի մեծանձն և վեհոգի գտնուած պիտի ըլլար, եթէ օրէնքին ճշդութեան վրայ մնալով, և իր վայելած ազդեցութիւնը ազնուօրէն գործածելով, և իր խոստովանութեամբ Օրմանեանի իրեն պաշտպանութեան համար ըրածը յիշելով (ՊՃՆ. 10), և առանձնական կիրքէ աւելի ընդհանուր պատիւը նկատի առնելով, ամբաստանագիրին ներկայացումն իսկ արգիլած ըլլար: Սակայն թողունք այս կէտը և ընտրութեան դառնալով դիտել տանք որ հասարակաց ըմբռնման մէջ Իզմիրլեանի կաթողիկոսութեան հաստատութիւնը կասկածի տեղի չէր թողուր զի Ռուսաստան 1905էն և Տաճկաստան յուլիսէն իվեր ապատութեան օրէնքներ հռչակած էին, և հին անցեալներ եթէ միտքի մէջ մնացած ալ ըլլային, օրինական գործողութեանց չէին խառնուեր, և արդէն ընտրութենէն քանի մը օր առաջ Ապտիլհամիտ Իզմիրլեանի պատրիարքութիւնը հաստատած էր, և քիչ օր ետքն ալ 15ին կը շնորհաւորէր անոր ընտրութիւնը (08.ԱՐԼ.6953), և նոյնը պիտի ընէր անշուշտ Ռուսիոյ կայսրն ալ: Այսու հանդերձ երկու ամիսներ անցան առանց լուրի, և միայն 1909 յունուար 3-ին ռուսական դեսպանատան թարգմանը հաղորդեց թէ իբր կաթողիկոս ընդունուած է, բայց պէտք է հպատակութեան փոփոխութիւնն ալ լրանայ: Ամիս մը և աւելի ևս անցաւ այդ ձևակերպութեանց համար ալ, և փետրուար 10ին կառավարութեան կողմէն պատրիարքարանի հաղորդեցաւ թէ Իզմիրլեանի հպատակութիւնը փոխուած է, որով պատրիարքութենէ դադարած կը սեպուի, որուն վրայ 11-ին խառն ժողովը տեղապահ ընտրեց Արշարունի Յովհաննէս եպիսկոպոսը Պրոսպայի Առաջնորդը (09.ԱՐԼ.7023), և 12ին, որ Իզմիրլեանի ծննդեան 64րդ տարելիցին ճիշդ օրն էր, ռուսական թարգմանն ալ իրեն հաղորդեց հաստատութեան վճռուած ըլլալը: Թէպէտ շատ համառօտ եղաւ Իզմիրլեանի երկրորդ պատրիարքութիւնը, հոկտեմբեր 31էն փետրուար 10, հարիւրմէկ օր միայն, սակայն նախապէս այս միջոցին դէպքերուն գոնէ գլխաւորները բացատրել կը պարտաւորուինք, ինչպէս նաև Արշարունիի տեղապահութեան ժամանակին դէպքերը. զի Իզմիրլեանի Կ. Պոլիսէ մեկնիլը մինչև մայիսի վերջերը յետաձգուեցաւ, թէ՛ Էջմիածնի

հրաւիրակներուն գալուն սպասելով, և թէ՛ Կ. Պոլսոյ մէջ ունեցած գործերը կարգադրելու
վբաղելով:

3111. ՕՐՄԱՆԵԱՆ ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ

Յիշեցինք արդէն թէ Օրմանեանի դէմ ներկայացուած ամբաստանութիւնը դատական
քննութեան յանձնելու որոշումը իսկոյն տրուեցաւ նոյեմբեր 7ին, բայց քննիչ մարմինին
կազմութիւնը յապաղեցաւ մինչև դեկտեմբեր 19: Նոր ամբաստանութիւնը նախընթացաբար
խօսուած և կրկնուած կերպերէ տարբեր ոճ ունէր, և կերևի թէ նոր գետին կազմելու պէտքը
վգացուած էր: Օրմանեանի դէմ սկիզբէն խօսուածները մասամբ վերջին օրերու վերաբերեալ
քննադատութիւններ էին, ապատութեան հռչակուած օրը ժողովուրդին հետ հրապարակ
չնետուելուն համար, և մասամբ և առաւելապէս հաշիւներու խնդիրն էր որ մէջտեղ կը նետուէր, և
որ յուլիս 25ի արկածալից ցոյցին հիմ էր կազմած: Օրմանեան առանց խօսուածներուն ու
գրուածներուն միառմի պատասխանելու, գործերը ամբողջապէս ներկայել նախադասեց և
տեղեկագիրներ պատրաստելու ձեռնարկեց: Առաջ նպաստից տեղեկագիրը կազմեց և
պաշտօնապէս պատրիարքարանի ու տպագրութեամբ հասարակութեան ներկայեց, և այս բաւական
եղաւ որ այլևս հաշուական վեղծմանց, կամ թէ 30-40,000 ոսկոյ իւրացուցման առասպելը
չկրկնուէր: Միևնոյն կերպով սկսած էր տեղեկագիր կամ յիշատակագիր մը պատրաստել իր
վարչական գործունէութեան պարագաները բացատրելու, և իրեն մասին վրուցուած ու գրուած
քննադատութիւնները անուղղակի ցրելու, և կը յուսար որ նպաստից տեղեկագիրին պէս վարչական
յիշատակագիրին ալ բաւական կըլլար վրոյցները կարճելու և վրպարտութիւնները լռեցնելու,
ուղղադատներուն միտքը հանդարտելու և վրպարտողներուն բերանը գոցելու, մէկ խօսքով տիրող
խնդիրները և հակառակութիւններն ինքնին դադարեցնելու: Թէպէտ կային բարեացակամ անձեր,
որոնք Վինքը կը յորդորէին իւրաքանչիւր քննադատութեան յօդուածներով պատասխանել,
ինչպէս կային և իր յօդուածները հրատարակելու պատրաստական լրագրապետներ, այլ Օրմանեան
իր սկզբունքին հաստատ՝ կը խորշէր հրապարակի վրայ բանակուիլի ներկայացնէր, և օգոստոս 6ին
ալ նպաստից սնտուկին 12 տարիներու հաշուեցուցակները կը յղէր (ՆՊԱ.Գ.-ԺԲ.), նոյն իսկ իր
ձեռքին տակ եղած հաշուետետրը ներկայելով աւելի վստահութիւն ազդելու համար, նպաստից
գործին ընթացքը կը բացատրէր, յանձնաժողովէ ստորագրուած առաջին տեղեկագիրին
պատրիարքարանի մէջ գտնուիլը կը յիշեցնէր, և ընդարձակագոյն տեղեկագիրն ալ մօտ առենէն
յղել կը խոստանար, և իր յղածներուն ստացման գիրը կը պահանջէր (ՕՄԱ.266): Խոստացեալ
տեղեկագիրը կը յղէր սեպտեմբեր 29-ին, 180 երեսէ բաղկացեալ և կազմեալ հատորով մը
(ՕՄԱ.268), զոր միւս կողմէն տպագրութեան կը յանձնէր բոլոր պաշտօնական անձանց և
նուիրողներու և ծախսողներու ցրուելու համար (ՆՊԱ.1-55), զոր մենք արդէն քաղեցինք
(3089,3090): Տեղապահը միայն օգոստոս 12ին նամակով կը հաճէր յուլիս 27էն իվեր ստացուած
նամակներուն և փոխանակագիրներուն և իրերուն ստացութիւնը հաղորդել, առաջարկեով որ
արժէք և արժէթուղթ և վաւերաթուղթ պարունակող արկղներն ալ յանձնէ, որուն Օրմանեան
օգոստոս 13ին կը պատասխանէր թէ յարմարագոյն կը սեպէ փոխանորդով կատարել այդ
գործողութիւնը, և իր կողմէն ներկայացուցիչ կը նշանակէր Տիգրան Բարաղամեան և Խաչիկ
Խօրասանձեան պատուական և ուղղամիտ ազգայինները (ՕՄԱ.254): Ըստ այսմ օգոստոս 25ին և
27ին վարչութեան ներկայացուցիչներու հետ արկղները կը բացուէին, և պարունակութիւնները
կարձանագրուէին, միացնելով գրասեղանի բանալիներու ստացութենէ ետքը անոր
պարունակութեան համար իրենց կողմէ օգոստոս 2ին կազմուած արձանագրութիւնը (ՕՄԱ.254-
263): Ասոնց պատճէնը սեպտեմբեր 1ին Օրմանեանի ալ կը հաղորդուէր և նա ալ 3ին ինչինչ

բացատրութիւններ կաւելցնէր (ՕՄԱ.264), և իր անձնական իրերը կուպէր, որոնք կը ղրկուէին ճի նամակով (ՕՄԱ.272): Այսպէս կը փակուէր նպաստից հաշիւներուն և Օրմանեանի ձեռքը գտնուած պաշտօնական իրերուն փոխանցումը: Կը մնային պատրիարքարանի սնտուկին հաշիւները, որոնց վերաբերեալ գումարները և տոմարները և վաւերաթուղթերը ելեմտից և հաշուակալութեան դիւանները կը մնային, բայց Օրմանեան 1897-1904 ութը տարիներու համար կանուխէն ընդարձակ տեղեկագիր մը կազմած էր. վերջերը 1905-1906 երկու տարիներու տեղեկագիրն ալ աւելցուցած էր, որոնց վրայ 1907 տարուոյ տեղեկագիրն ալ պատրաստելով, 11 տարիներու հաշիւները տեղապահութեան կը ղրկէր սեպտեմբեր 10ին, որպէսզի ընդհանուր ժողովին ներկայացուի ի պարտուպատշաճ քննութիւն և վաւերացումը (ՕՄԱ.217): Որչափ ալ պատրիարքարանի ելեմտական տեղեկագիրը իրմէ պահանջուած գործ մը չէր, այլ Օրմանեան՝ վարչական գործոց կանոնաւորութեան համար պագացած նախանձայուկութենէ՝ ուրիշին պակասն ալ լրացնելէ ետ չէր կեցած, և հաշուական գործոց կանոնաւորութիւնը խղճահարութեան հասուցած էր, և պատրիարքարանի սնտուկին վրայ 772 ոսկուոյ պահանջ ունենալով մէկտեղ, իր տրամադրութեան ներքև գտնուող հնգապատիկ գումարը մինչև յետին բնիոնը տեղապահին կը յանձնէր (ՕՄԱ. 370), չկրնալով ենթադրել որ տեղապահութիւնը կամ պատրիարքութիւնը իր համարձակ և ուղիղ ընթացքին դիմաց խծրծանքներու կարենայ դիմել: Իսկ իր պահանջը առջև եկած էր պաշտօնէից թոշակները լիովին վճարելով ինքզինք վրկելու պահանջներէն: Դուրեանի և Օրմանեանի յարաբերութիւնները լոկ հաշուական էին մինչև ընդհանուր ժողովի բացուիլը: Միայն տեղապահական գիրերուն մէջ ակնարկ մը տեսնուած ըլլալով թէ խառն ժողովը իրմէ վարչական համարատուութիւն կը պահանջէ, Օրմանեան հարկ սեպեց սեպտեմբեր 10 ի նամակով յիշեցնել, թէ սահմանադրութեան օրէնքով համարատուութիւնը վարչութենէն կը պահանջուի և ոչ պատրիարքէ, և թէ իրեն ինկած նպաստից համարատուութիւնը կատարած է, և պատրիարքարանի սնտուկին հաշիւն ալ իր կողմէն աւելցուցած է, և իրմէ ուրիշ բան պահանջելու իրաւունք չկայ (ՕՄԱ. 216-217): Իսկ հոկտեմբեր 3 ին ընդհանուր ժողովի բացման առթիւ, իբրև օրինապահութեան լրումն, իր հրաժարականին մասին պաշտօնական յայտարարութիւն ուկեց ժողովին կարևոր բացատրութիւններով, և համարատուութեան խնդիրին ալ ակնարկելով նորէն կրկնեց թէ պարտքը վարչական ժողովներուն է. այլ որովհետև ժողովի և նախագահի համերաշխութիւնը կարևոր է, ինքն ալ կը փափաքի այդ մասին աշխատիլ կամ աշխատակցիլ եթէ դիւանական ատենագրութիւններ և պաշտօնագիրներ տրամադրութեան ներքև ունենայ (ՕՄԱ. 191): Սակայն գիրը անագան հանուեցաւ ընդհանուր ժողովին, որով Օրմանեան պարտաւորուեցաւ Բիւզանդիոն լրագիրին հոկտեմբեր 6 ի թերթով հրատարակութեան տալ (ՕՄԱ. 193). բայց անկէ ետքն ալ երբ ընդհանուր ժողովին մէջ խօսքը անցաւ, ընթերցումը և որոշումը յետաձգուեցաւ: Այստեղ կը փակենք Դուրեանի և Օրմանեանի պաշտօնական յարաբերութեանց պարագաները, որոնք կը սպասուէր որ աւելի մտադրութեան արժանացած ըլլային Դուրեանի կողմէ, և հիմ չդրուէր այն տխուր յարաբերութեանց, որոնք հետզհետէ վայրացան:

3107. ԻԶՄԻՐԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԶ

Դուրեանի տեղապահութեան միջոցը երեքուկէս ամիս տևեց, յուլիս 16էն մինչև հոկտեմբեր 31, մինչև Իզմիրլեանի պատրիարքական պաշտօն ստանձնելը: Արդէն Կ. Պոլիս մտած օրէն Իզմիրլեան իբրև պատրիարք ողջունուած էր, ինչ որ շատ ալ բնական էր, զի պետական բռնադատութեան ներքև պատրիարքութենէ հրաժարած, և 12 տարի աքսորական մնացած, և ազատութեան հռչակուելովը ու հալածանաց դադրելովը, մայրաքաղաք դարձած, աթոռին ալ դառնալու բարոյական իրաւունք կը վայելէր: Եթէ տակաւին երեք ամիսներ անցան մինչև որ այդ

նախատեսութիւնը իրականանար, պարզապէս օրինական ձևակերպութեանց պահանջն էր պատճառը. պէտք էր որ ընդհանուր ժողովը ընտրուէր մայրաքաղաքի և գաւառներու երեսփոխաններով, ժողովը բացուէր, իր ներքին կազմակերպութիւնը լրացնէր, վարչական ժողովներն ալ կազմուէին, որ պատրիարքական ընտրութիւն կատարելու պայմանները լրանային: Այդ միջոցին Իզմիրլեան իր Իւսկիւտարի բնակութեան մէջ կը մնար, պաշտելութեան հասած յարգանքները կը վայելէր, ամէն կողմերէ այցելութիւններ և խնդակցութիւններ կը ստանար, և մինչև աստիճան մը պատրիարքարանի գործերէն ալ հեռու չէր մնար. զի Դուրեան իր ձեռնասունը կը համարուէր, և անձնական ու պատահական պարագայք Դուրեանը կը յորդորէին Իզմիրլեանի հրահանգներուն ու թելադրութիւններուն հետևիլ: Իզմիրլեան միանգամ մայրեկեղեցին հանդիսապէս պատարագեց հոկտեմբեր 19ին (08.ԱՐԼ.6929), և սովորաբար առտնին կեանք վարեց: Վերջապէս ընտրութեան կարգը հասաւ. երեսփոխանութեան առաջին բացումը տեղի ունեցաւ հոկտեմբեր 3ին, ուր Իզմիրլեան ալ գտնուեցաւ իբրև եկեղեցական երեսփոխան, և առաջիկայ կաթողիկոսական ընտրութեան վրայ խօսք առնելով առաջարկեց որոշել, թէ ո՞ր ձևին պիտի հետևի ժողովը, նախապէս որոշուած և Ընդհանուր ժողովոյ ձեռքով կատարուած ձևին, թէ ոչ Աշըգեանի օրով գործադրուած պօլօթէնիէի ձևին: Ժողովը առանց վիճաբանութեան այդ վերջինը նախադասեց, և Իզմիրլեան որ ժամանակին այնչափ բուռն կերպով խօսած ու գրած ու գործած էր պօլօթէնիէի ձևին դէմ, այս անգամ լուռ մնաց (08. ԱՐԼ. 6916), զի կը դէր պայն ապահովել քան թէ նորէն անհիմն իրաւունքներու բծախնդրութեամբ իր նպատակը վտանգել: Համագումարը պատրիարքական ընտրելեաց ցանկը կազմեց հոկտեմբեր 8 ին, գլուխը կը գտնուէր Իզմիրլեան 35 ներկաներու 31 բուէով. իսկ 16 եպիսկոպոսաց ցանկին առաջին եօթն ընտրելիներու թիւը կը լրացնէին, Հմայեակ Դիմաքսեան, Եղիշէ Դուրեան, Ստեփանոս Յովակիմեան, Գաբրիէլ Ճէվահիրձեան, Յովհաննէս Արշարունի և Գրիգոր Յովհաննէսեան (08. ԱՐԼ. 6920): Հոկտեմբեր 10-ին երկրորդ նիստը հաւաքուեցաւ, մայր դիւանի կազմութիւնը կատարուեցաւ, և ընտրուեցան Մինաս Չերապ առաջին, և Վահրամ Թորգոմեան բժիշկ ու Գէորգ Ասլանեան ճարտարագէտ երկրորդ ու երրորդ ատենապետներ: Պատրիարքական ընտրութեան անցնելու խօսքեր եղան, բայց օրինաւորութիւնները պահելու համար վարչութեան ընտրութենէն ետքը թողուեցաւ: Ըստ այսմ վարչութեան ընտրութիւն ընելու անցան, և նախորդ վարչութեան անդամները անվերընտրելի հռչակուեցան, թէպէտ համագումարը հակառակ որոշում տուած էր (08. ԱՐԼ. 6922): Երբոր նիստին մէջ հոկտեմբեր 15 ին վարչական ժողովներուն ընտրութիւնները լրացած, կրօնականին մէջ միայն երկու եպիսկոպոս մտան, Հմայեակ Դիմաքսեան և Մկրտիչ Վեհապետեան և 3 վարդապետ ու 9 քահանայ, իսկ քաղաքականին մեծամասնութիւնը ազատական անուանուած նոր խումբէն էր. կուսակցականաց բարեկամներէ և պաշտպանողներէ կազմուած, որոնցմէ Ստեփան Գարաեան պետական դատաւոր ատենապետ ընտրուեցաւ, իսկ բուն յեղափոխականներէն միայն երկու հատ կային ժողովին մէջ, Յարութիւն Շահրիկեան և Համբարձում Պօյաձեան, թէպէտ դուրսէն ամբողջ ազգութիւնը անոնց ձեռքն էր: Կաթողիկոսական պատգամաւորի համար քանի մը ընտրութիւններ պարապի ելած էին ժողովին մէջ, ոմանց պնդելուն վրայ, թէ հարկաւ Իզմիրլեանի պիտի տայ բուէն և Օրմանեանի պիտի չտայ: Ասոր վրայ թեփալաճառ Ստեփան Թելլիեան բարձրաձայն կաղաղակէ և կերդնու մինչև վերջը պաշտպանէ ժողովէն ցուցուած ընտրելին, և իսկոյն առանց ուրիշ ձևակերպութեան Կ. Պոլսոյ պատգամաւոր կը նշանակուի (08. ԱՐԼ. 6926): Հոկտեմբեր 17 ին նիստը գաւառական նեղութեանց և անոնց դարմաններուն վրայ խօսելով անցաւ (08. ԱՐԼ. 6928), 18-ին վարչական ժողովներու հաստատութիւնը ստացուեցաւ (08. ԱՐԼ. 6929), և 22 ին առտուն նախապէս քաղաքական ժողովը հնգանուն ցանկը պատրաստեց, Իզմիրլեանի, Դուրեանի,

Յովակիմեանի, Դիմաքսեանի և Երէցեանի անուններով, և վերջէն ընդհանուր ժողովը պատրիարքական ընտրութիւնը կատարեց Իզմիրլեանի վրայ 83 ներկայից համամիտ ձայնով, առանց վանց ընելու քուէարկութեան ձևակերպութիւնը(08. ԱՐԼ. 6932), 26 կայսերական հաստատութիւնը ստացուեցաւ (08. ԱՐԼ. 6937), և 31 ին մայր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ ուխտի նիստը, և Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոս երկրորդ անգամ պատրիարքական աթոռ բարձրացաւ, որ 1860 սահմանադրութեան սկիզբէն ի վեր տեղի ունեցած չէր, հրաժարել կամ դադարեալ պատրիարքի մը վերստին աթոռ բարձրանալը, իսկ նորընտիր պատրիարքին կայսեր ներկայանալը յապաղեցաւ մինչև նոյեմբեր 15: Իզմիրլեան նոր անձնաւորութիւնը մը չէ որ ներկայելու պէտք պզանք, առիթ ունեցած ենք իր նկարագիրը պատկերացնել, իր գործունէութիւնը բացատրել, իր արդիւնաւորութիւնը քննել և քննադատել իսկ, և վերստին նոյն կէտերուն դառնալ աւելորդ կըլլար: Իբրև վարքով անբասիր, եկեղեցականութեամբ նախանձայոյզ, դիտումներով ուղղամիտ, աշխատութեամբ անխոնջ, նպատակով անաչառ, գովուած է իրաւամբ, թէպէտ ինքնահաւան և վրէժխնդիր խառնուրդ մը կը չափաւորէր վարչականութեամբ ալ փայլէր, գործերուն այդ ձիրքերը, այսու հանդերձ ուր էր թէ տիրապետել կարենար, և միջոցներու գործածութեան մէջ ճարտարութեան և դիւանագիտական հանձարը իրեն առաջնորդ ունենար, որ յաջողութեամբ ալ պսակուէր, ինչ որ պակսեցաւ իր առաջին պատրիարքութեան մէջ, և երկրորդին մէջ ալ չարդարացաւ, աքսոր կրած ըլլալու առաւելութիւնը անձին փայլ մը եղաւ, բայց ոչ արդիւնքի արժանաւորութիւն, զի պատրիարքութիւնը հանրութեան պէտքերուն համար հաստատուած պահանջ մըն է, և ոչ հալածանաց մրցանակ: Իզմիրլեան ինչպէս առաջին անգամ հնչակեաններու, երկրորդ անգամ ալ նոր պօրացած դաշնակցականներու ազդեցութեան ներքև մնաց, և իր քանի մը ամսուան պատրիարքութեան մէջ նշանակութեան արժանի գործ մը չկատարեց: Նոյն իսկ Երուսաղէմի խնդիրը, որուն մէջ 12 տարիներէ ի վեր մտած ու կատարեալ տեղեկացած և համոզում կազմած էր, իր օրով փոխանակ լուծուելու և վերջանալու աւելի կնճռոտ վիճակի մատնուեցաւ: Իզմիրլեան 1908 հոկտեմբեր 31 ին պատրիարքական աթոռ բարձրացած, յաջորդ օրը նոյեմբեր 1 ին էջմիածնի ընտրողական ժողովէն կաթողիկոս հռչակուեցաւ, և 1909 փետրուար 10 ին ռուսական հպատակութեան անցնելով պատրիարքութենէ դադրեցաւ, ուստի պէտք է որ մենք ալ կաթողիկոսական ընտրութեան և նոր կաթողիկոսի ժամանակամիջոցին անցնինք:

3108. ԻԶՄԻՐԼԵԱՆ ԵՒ ՕՐՄԱՆԵԱՆ

Բայց անցնելէ առաջ լուսաբանելու արժանի կը նկատենք Իզմիրլեանի իր նախորդին Օրմանեանի հանդէպ բռնած ընթացքը: Օրմանեանի և Իզմիրլեանի անուններուն յարակցութիւնը առաջին անգամ լսուեցաւ յուլիս 25 արկածալից օրուան թուուցիկովը (3104), որ եթէ կեղծ ալ էր, հարկաւ հնարողին միտքին մէջ յարմարութեան տեսութիւն մը կը պարունակէր: Իզմիրլեան Յոպպէէ հեռագիրով հերքած էր այդ հրատարակութիւնը, և Կ. Պոլիս հասնելուն օրինաւոր քննութեան և դատարանի ենթարկել յայտարարած էր: Երբոր օգոստոս 13-ին Կ.Պոլիս հասաւ, 14-ին Օրմանեան բարի գալուստի գիր մը ուղղեց, թուուցիկին և իր հեռագիրին ալ ակնարկելով, որպէսզի խոստացուած քննութիւնն ու դատաստանը յիշեցնէ, սակայն Իզմիրլեան ոչ քննութիւն բացաւ, ոչ դատաստան ուզեց, և ոչ գիրին պատասխանեց, թէպէտ գիրը ստանալուն պատասխանել խոստացած էր (ՕՄԱ. 272): Անշուշտ նոր խորհրդականներ այլապէս թելադրած էին, ինչպէս լրագիրներ ալ գրեցին (ՕՄԱ. 272): Օրմանեան չկասեցաւ երկրորդ խնդակցութիւն մըն ալ ուղղել հոկտեմբեր 23-ին, պատրիարքական ընտրութեան վաղորդայնին և տեսակցութիւն ալ խնդրեց, որ բերանացի վլացուեցաւ ողջոյնով մը, և երկրորդ նամակն ալ մնաց անպատասխանի: Քանի մը օր ետքը Արիստակէս Գասպարեան ամբաստանագիր մը կը մատուցանէ նոյեմբեր 7 ի ընդհանուր

ժողովի գումարման, որուն մէջ հինգ կամակատարներու ձայնակցութեամբ, Օրմանեանի պաշտօնավարութեան մէջ 17 ապօրինութիւններ ցոյց կու տար: Ամբաստանութեանց գուխներուն մասին դիտողութիւնները ուրիշ հատուածի կը վերապահենք, այստեղ նպատակ ունենալով միայն Իվմիրլեանի կողմէ Օրմանեանի հանդէպ բռնուած ընթացքը լուսաբանել: Ժողովին կը նախագահէր Իվմիրլեան, որ սահմանադրութիւնը խորապէս ուսումնասիրած ըլլալուն վրայ միշտ կը պարծենար, և պէտք չէր անգիտանար որ սահմանադրութեան 6-րդ յօդուածը (ՍՀՄ. 17), պաշտօնի վրայ գտնուող պատրիարքը պաշտօնէ դադարեցնելու խնդիրը միայն կը վբարդի, և թէ ընդհանուր ժողովոյ ներքին կանոնագիրը կը տրամադրէ ամէն առաջարկուած խնդիր նախաքննութենէ անցունել, և եթէ ինքն չյիշեց, պէտք չէր որ անտեսէր ատենապետին այս մասին առանձնակի ըրած դիտողութիւնները, և այդ ամէն տեսութեանց հակառակ անմիջապէս գործի ձեռնարկել առաջարկէր, և ժողովն ալ Սրբապան պատրիարք հօր առաջարկութեան վրայ, որոշէր որ նախորդ պատրիարքի մասին եղած ամբաստանութիւնները քննելու պաշտօն ունեցող յանձնաժողովը յառաջիկայ լիագումար նիստի մը մէջ կազմուի (08. ԱՐԼ. 1946): Օրմանեան նոյն երեկոյ լուր կառնէր անցուդարձէն և սաստկապէս կը յուզուէր, ինքն որ ոչ յուիս 16 ի ցոյցէն (3103), և ոչ յուիս 25 ի արկածալից ցոյցէն (3104) այլալածիսկ չէր, և ամբոխավար շարժումներու կարևորութիւն տուած չէր. սակայն տարբեր էր գործը երբոր իշխանութեան կողմէ և իշխանութեան գլուխին կողմէ պինքն անարգելու և ապատելու կամայական դիտումը կը տեսնէր, և մինչև իսկ ամբաստանագիրին պատրիարքի գիտակցութեամբը մատուցուած ըլլալը կը լսէր: Նոյեմբեր 8 ին հիւանդացած էր արդէն որ առաջ երեք և յետոյ եօթը բժիշկներու խորհրդակցութեամբ յուզումէ յառաջ եկած արիւնի ուղեղային համախոհութիւն ձանչցուեցաւ: Ուստի չկրցաւ անմիջապէս դիտողագիր մը յղել, և միայն նոյեմբեր 19-ին իր տեսութիւնները պատրիարքին կը հաղորդէր (ՕՄԱ. 209-210): Նոյեմբեր 22 ին, որ է հիւանդութենէ 15 օր ետքը Գէորգ վարդապետ Ասլանեան յանուն Իվմիրլեանի որպիսութիւնը հարցնելու համար Օրմանեանի կայցելէր, սակայն անցուդարձին վրայ խօսելու հրահանգ չուներ: Օրմանեան կրկին տեսակցութեան խնդրանք կը յղէր, որ դարձեալ կը վլացուէր (ՕՄԱ.274), և իջնելէ ու վրպարտողներու հետ հակաձառութեան մտնելէ, և յիշատակագիրի պատրաստութիւնը բաւական կը սեպէր վարչական տեսակէտէն ամէն պրոյց միանգամայն կարճելու, ինչպէս որ նպաստից տեղեկագիրը բաւական եղած էր հաշուական տեսակէտէն յօրինուած վրպարտութիւնները հիմնովին վերջացնելու: Բայց կերևի այդ ելքին նախատեսութիւնը Օրմանեանը հալածելու ուխտած խմբապետներն ալ ունեցան որ կանխեցին չև Օրմանեանի յիշատակագիրը մէջտեղ ելած, պաշտօնական ամբաստանագիր ներկայել կամ ներկայացնել տալ ընդհանուր ժողովոյ իբրև ազգային գերագոյն ատենի, և իսկոյն դատարան կազմել, հարցաքննութիւն բանալ, և Օրմանեանը դատափետեալի նկուն և վրկեալ վիճակին ենթարկել: Այս նոր երևոյթին առջև Օրմանեան այլևս աւելորդ սեպեց իր պաշտպանողականը մէջտեղ հանել, որ կրնար թերևս հակառակորդներուն քաշկոտութի նիւթ մատակարարել, մանաւանդ որ վերահաս ուղեղային համախոհութեան խօթութիւնն ալ, թէ՛ ըստ ինքեան և թէ՛ բժիշկներու ստիպողական կարգադրութեամբ բացառիկ հանգիստ կը պահանջէր: Ասով մէկտեղ միամտութիւն ունեցաւ քանի մը նամակներով Իվմիրլեան պատրիարքին դիմել, և ընդհանուր բացատրութիւններով կամայական գործերուն դադարումը խնդրել և բերանացի բացատրութեան համար տեսակցութիւն ուզել. բայց երբ իր գիրերուն անպատասխանի մնալը և տեսակցութեան վլացուիլը տեսաւ (3108), և Իվմիրլեանի մտայնութեան մասին վստահելի տեղեկութիւններ ստացաւ, համոզուեցաւ թէ իր ճիգերը արդիւնք պիտի չունենան, և օրինական պահանջումներ կամայական հակառակութեանց վրայ պիտի չազդեն, որոշեց այլևս լուր, բացարձակապէս

կրաւորական դերի մէջ փակուիլ, և երկայնամիտ համբերութեան ճամբուն (ՕՄԱ.205), որ 1908 տարւոյ վերջին ամիսներէն մինչև 1912 տարւոյ վերջին օրերը տևեց՝ տևեց չորս ամբողջ տարիներ: Երբոր 1908 նոյեմբեր 7ին դատական քննութեան որոշումը տրուեցաւ միայն Արիստակէս Գասպարեանի ամբաստանագիրը կար որոշման հիմ կազմող, որ իրեն գրութեան ստորագրող հինգ ընկերներ ևս ճարած էր, Միրզա Մսերեան, Արթաքի Սաֆարեան, Հայկապուն Պէկեան, Տէվլէթ Տատուրեան, Ղապարոս Չըպլաքեան, հինգն ալ ազգային և վարչական գործոց մէջ մասնակցութիւն չունեցած և չունեցող, և գրութեան մէջ յիշուած պարագաներուն անտեղեակ անձեր: Կերևի որ այդ ամբաստանագիրին անբաւականութիւնը աչքի վարկած էր, որ տրուած որոշումէնետքը նոր ամբաստանագիրեր ալ ճարելու հետապնդում եղաւ, և նոյեմբեր 12 ին Յովհաննէս Հինգլեան, 14 ին Ղապարոս Չըպլաքեան, անկէ ետքը Յովհաննէս Տէրունեան, դեկտեմբեր 11 ին Հմայեակ քահանայ Էքսէրճեան, և 12 ին Ղևոնդ Դուրեան և Գրիգորիս Պալաքեան վարդապետներ և Միքայէլ Աշճեան քահանայ նոր ամբաստանագիրներ ներկայեցին, և ասոնք ալ ճարելէն ետքն էր որ դեկտեմբեր 19ին դատաքննիչ մարմինը ընտրուեցաւ հինգ եկեղեցական և հինգ աշխարհական անդամներով, ուսկից հրաժարողներուն տեղը լրացուելով, անդամներն եղան, Մաղաքիա Տէրունեան եպիսկոպոս, Եղիշէ Գալֆայեան և Գնէլ Գալէմբարեան վարդապետներ, Արիստակէս Հիսաբլեան ու Տաճատ Փաշայեան քահանաներ, և Վռամշապուհ Մանուկեան, Նշան Ճիվանեան, Սարգիս Էսմէրեան, Հմայեակ Արամեան ու Սարգիս Սուին աշխարհականներ:

3112. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամբաստանութեանց վրայ մանրամասնօրէն խօսիլ կրնար մեզ երկարաբանութեանց տանիլ, միւս կողմէն շատ սեղմօրէն գրելն ալ մութ կը թողուր խնդիր մը, որ ժամանակին բաւական կարևորութիւն ստացաւ և բաւական տարիներ ալ տևեց և շատ գրութեանց նիւթ ընծայեց: Ուստի միջաշաւիղ կերպ մը պահելով, նախ քանի մը ընդհանուր տեսութիւններ պիտի ներկայենք, և յետոյ ամբաստանութեանց համառօտ քաղուածը պիտի տանք: Արդ, սահմանադրութեան 6րդ յօդուածը (ՍՀՄ.17), շատ յստակ կերպով ամբաստանութեան խնդիրը բացառաբար կը յատկացնէ պաշտօնի վրայ գտնուող պատրիարք մը դադրեցնելու պարագային, և նոյն իսկ եթէ պատրիարքը պարտաւոր դատուի պաշտօնէ դադրելէն ետքը անոր մասին որևէ դատական կամ պատժական տրամադրութիւն չի նշանակէր, որով այն յօդուածը պաշտօնէ դադրած պատրիարքին պատշաճեցնել սահմանադրութիւնը խեղաթիւրել էր, և երեսուն տարիէ իվեր սահմանադրութիւն ուսումնասիրած ըլլալու պարծեցողներուն հնար պիտի չըլլար այդչափ յայտնի ու տարրական կէտ մը չնշմարել, եթէ անձնական մղումով մը վարուած չըլլային: Յիշեցինք ևս որ ընդհանուր ժողովոյ ներքին կանոնագիրը կը տրամադրէ նոր առաջարկուած խնդիրի մը նախաքննութիւնը փոքր դիւաններէն միոյն յանձնել, և անոր տեղեկագիրէն ետքը նկատի առնելով: Այս կէտն ալ այս անգամ անց եղաւ, և առանց նախաքննութեան իսկոյն առաջարկին ընթացք տրուեցաւ և դատաքննիչ մարմինը կազմել որոշուեցաւ, և այս ալ Սրբազան պատրիարքին առաջարկութեան վրայ տեղի ունեցաւ: Դիտելի կէտ մըն էր ևս, որ սահմանադրութիւնը յայտնի յօդուածով, պատրիարքին վրայ ամբաստանութիւն ընելու միայն ընդհանուր ժողովն և կրօնական ու քաղաքական ժողովներն իրաւունք ունին կըսէ (ՍՀՄ,17): Իսկ այս անգամ ոչ երեսփոխանական ժողովն և ոչ վարչական ժողովներն էին ամբաստանողները, այլ վարչական գործոց մէջ դեր չունեցող մէկու մը և անկէ գրգռուած ու ճարուած ազգային գործոց անտեղեակ հինգ ընկերներէ մատուցուած ամբաստանագիրը, որ մրամադրութիւն իսկ չէր կրնար առնուիլ, եթէ սահմանադրութեամբ պարծեցողներ սահմանադրութեան հետևէին: Դիտելու արժանի կէտ մըն էր

ևս, որ դադարեալ պատրիարքը ինքնիրեն պաշտօնավարած չէր և ինքնագլուխ գործած չէր, իրեն մօտ վարչական ժողովներ ունեցած էր, և մինչև իսկ առանց ժողովի չմնալու համար պատրիարքական տագնապ ալ յուզած էր (3076): Աւելցնենք որ սահմանադրութիւնն ալ ժողովները պատասխանատու կը ճանչնայ, և մինչև իսկ անոնցմէ կը պահանջէ վարչական համարատուութիւնը և ոչ պատրիարքէն (ՍՀՄ.40): Նմանապէս սահմանադրութեան ոգւոյն հակառակ էր վարչութիւն թողլով վարչական գործոց մասին պատրիարքը դատաւիտել, և վարչական ժողովներուն լուծ ատեն՝ վարչութենէ օտար մէկ անձին ձայնին հետևիլ: Ասիկա օրինական շաւիղէն դուրս գործ մըն էր, որ միայն անձնական կիրքերու յագեցման նպատակը կը ցուցնէր: Ընդհանուր ժողովը իրաւունք ունէր անցեալ վարչութեան համարատուութիւնը պահանջել, և մինչև աստիճան մը պատրիարքի ալ իբր վարչութեան նախագահի համերաշխութիւնը պնդել, և միայն համարատուութեան մէջ թերութիւններ նկատած ատեն կրնար բացատրութիւն պահանջել նախապէս վարչութենէ, և եթէ անոնք գանգատէին՝ պատրիարքէն ալ, և անկէ ետքը միայն իր պարսաւանաց քուէն տալ վարչութեան, կամ վարչութեան և պատրիարքին միանգամայն, եթէ բացատրութիւններ գոհացուցիչ չդատուէին: Նկատելու արժանի կէտ մըն է ևս, որ պատրիարք մը ամբաստանելու համար ազգավնաս կամ ազգադաւ գործողութիւն մը պէտք էր ունենալ իբր փաստ, և ոչ ձևերու կամ կերպերու կամ եղանակներու աւելի պակաս պարագաներ, որոնք գլուխ գտնուողի մը իշխանութեան մաս կը կազմեն՝ ըստ պարագայից տնօրինել կամ վանց ընել, և որոնք ըստ ինքեան գործի մը էութիւնը չեն փոփոխեր, և էականը ապատելու համար կը ծառայեն: Եթէ նախաքննութիւն կատարուած ըլլար, այդ կէտը հարկաւ երևան կու գալ, ինչպէս որ մեր տալիք քաղուածն ալ պիտի ցուցնէ: Ուստի այս ամէն տեսութիւնները վանց ընելով անմիջապէս պատրիարք դատաւիտել, սահմանադրաբար արդարանալ չէր կրնար, մինչ ամբաստանութիւնը առաջարկող անձը կը պնդէր, և պարսաւանաց քուէով և ուրիշ ձևերով Օրմանեանի դատապարտութիւնը կը պահանջէր վճռական կերպով մը, դատախազ և դատաւոր կանգնելով միանգամայն: Արդէն Օրմանեան համարատուութեան հարկը կանխած յայտնած էր տեղապահին՝ սեպտեմբեր 10ի նամակով (ՕՄԱ.217), և ընդհանուր ժողովին՝ հոկտեմբեր 3ի յայտարարութեամբ (ՕՄԱ.193), և վարչութեան գործակցելու և համարատուութիւնը դիւրացնելու աշխատութեան ալ յանձնառու եղած էր, եթէ դիւանական ատենագրութիւններ և պաշտօնագիրներ իրեն տրամադրութեան ներքև դրուէին, որով, այդ պայմաններն անտեսելով, անմիջապէս դատաքննութեան անցնուիլը, թէ՛ սահմանադրութենէ և թէ՛ ամէն օրինականութենէ օտար ընթացք մըն էր, և ինքն Օրմանեան ալ այդ ամէնը յիշեցնելով՝ մեղմօրէն կեպրակացնէր, թէ չուկեր կարողութիւններու կամ դիտումներու վրայ ծանրանալ, որպէսզի ձախող եպրակացութեան մը չյանգի (ՕՄԱ.202): Ընդհանուր ժողովի մէջ նոյեմբեր 7ին տրուած որոշումէն անմիջապէս ետքն ալ նոյեմբեր 19-ին (ՕՄԱ. 129) և դեկտեմբեր 16-ին (ՕՄԱ. 212), այսինքն դատաքննիչ յանձնաժողովին կազմութենէն առաջ, Օրմանեան Իվմիրլեան պատրիարքին դիմեց, որ օրէնքի հակառակ որոշման գործադրութիւնը խափանուի և որոշումը փոփոխուի, սակայն յամառ լուծենէ և կամայական գործադրութենէ վատ պատասխան կամ բացատրութիւն չստացաւ:

3113. ԱՄԲԱՍՏԱՆԱԳՐՈՑ ԱՄՓՈՓՈՒՄ

Դեկտեմբեր 19-ին դատաքննիչ մարմինին կազմութենէն մինչև երեքուկէս ամիս Օրմանեանի բնաւ տեղեկութիւն չտրուեցաւ, և ոչ ալ ընտրուած մարմինին պաշտօնը, նպատակը, գործունէութիւնը, ձեռնահասութիւնն ու իրաւասութիւնը ծանուցուեցաւ, որ ինչ ընելիքը գիտնար, և միայն 1909 մարտ 2 ին ստացաւ փետրուար 23 ին պատրիարքական քննիչ յանձնաժողովին կողմէ ատենապետի և ատենադպրի ստորագրութեամբ գրուած նամակը, որ ստիպողական

մակագրութեամբ հանդերձ, ութն օր գրած էր Գումգաբուէ Բերտ մէկ ժամուան ճամբան ընելու: Նամակը բացատրութիւն կը պահանջէր ութը կտոր թուղթերու վրայ, զի վերև յիշուած վեց ամբաստանագիրներէն վատ (3111), կցուած էին Արիստակէս Գասպարեանի մասնաւոր մէկ գիրը, և Մանկունի Վահրամ եպիսկոպոսի յունուար 15-ի դիտողագիրը: Դատաքննիչ մարմինը ոչ Օրմանեանի նախընթաց գիրերը կը յիշէր, ոչ ամբաստանութեանց մէջէն բացատրութիւն ստացածները և կարևորութիւն չունեցողները և պատասխան պահանջողները կը վատէր, ոչ ալ ամբաստանութեանց որոշ կէտեր կառաջարկէր, այլ խառն կերպով և անորոշ ձևով ներկայուած գիրերուն մասին բացատրութիւն կը խնդրէր: Օրմանեան այդ պարագաները վերապահութեամբ դիտել տալով մէկտեղ, չուկեց պատասխանէ և պատասխանատուութենէ խուսափելու կասկած տուած ըլլալ, և ինքն գտնելով պարունակուած կէտերը, իւրաքանչիւրին բացատրութիւնը յատկացնելով, մարտ 12-ին, այսինքն տասն օրէն ընդարձակ պատասխան գրեց և յղեց (ՕՄԱ.221-242): Գասպարեան գրութեան մէջ պարունակուած ամբաստանութիւններն էին. 1. Սահմանադրութիւն անթերի չէ կատարած: 2. Ժողովական որոշումները կանխելու արտօնութիւնը անհարկի ի գործ գրած է: 3. Խորհուրդներու անդամները փոփոխելու իրաւունքը չարաչար գործածած է: 4. Տասը տարի միևնոյն ժողովով գործած է: 5. Ժողովներուն անդամներուն թիւը լրացուցած չէ: 6. Քիչ ներկաներով ժողով գումարած է: 7. Ժողովներու և խորհուրդներու իրաւունքը յարգած չէ: 8. Վանօրէից և կտակաց և ելեմտից խորհուրդներ չէ կազմած: 9. Առժամեայ թաղականներ պահած է: 10. Ընդհանուր ժողով չէ գումարած: 11. Վարչութեան վերակազմութիւնը ապօրինի եղած է: 12. Վարչական ժողովականներ տեսուչ խորհուրդներու անդամակցած են: 13. Նպաստից հաշիւը իր ձեռքը ամփոփած է: 14. Լահէի դեսպանախորհուրդին անհարկի հեռագիր մը տուած է: 15. Սասունի ջարդին տեղեկագիրը անյայտացուցած է: 16. Բռնապետութեան պարագլուխներուն գործիք եղած է: 17. Պատրիարքութենէ չէ հրաժարած: Այս կէտերը յիշուած են առանց որոշ տեղ և ատեն և անուն ցուցնելու, այլ ընդհանուր խօսքերով և ձրի ստորասութեամբ: Հինգըլեանի ամբաստանագիրը կը յիշէր, 1. Պատրիարքութենէ յօժարակամ չհրաժարեցաւ: 2. Ազգային վիճակը տագնապալից և անտանելի էր: 3. Ուրիշի մը աղէկ չկառավարելուն փաստ չունէր: 4. Վարչական անդամները բարոյական ոյժ ցոյց չեն տուած: 5. Սահմանադրութիւն պահելու ջանքերը յայտնի չեն: 6. Առածէն վատթարագոյ վիճակ չձգելը արժանիք չէ: 7. Դժուարագոյն պաշտօնէ խուսափելով դիւրինը ստանձնած է: 8. Ինքն Հինգըլեան գրաշանօք Օրմանեանէ հեռու մնացած է: Այս կէտերը պարզ դիտողութիւններ են և ոչ ամբաստանութիւն, և քանի մը հատը Օրմանեանի նպաստաւոր կը դառնան: Չըպլաքեանի ամբաստանագիրը կըսէր: 1. Սահմանադրական սկզբունք արհամարհած է: 2. Նպաստից հաշիւ չէ ներկայացուած: 3. Բանտարկեալներու և աքսորականներուն անկարեկիր եղած է: 4. Բանտերուն մէջ սպանուածներուն համար չէ բողոքած: 5. Պատրիարքարանի խուլարկութիւնը և կառավարութեան նամակներ բանալը և ուրիշ դէպքեր իբր ամբաստանութիւն կը յիշէ: 6. Կը մեղադրէ Լահէի հեռագիրը: 7. Նոյնպէս Աղթամարայ արկածին մասին վրուցած խօսքերը: Այս կէտերն ալ գրողին եղելութեանց անգիտակ կամ կամաւ խեղաթիւրող ըլլալը կը յայտնէ: Տէրունեան կը յիշէ: 1. Աղաւնի Գալպպեանի ամուսնալուծումը: 2. Այդ մասին շէյխիսլամութեան մատուցուած գիրը: 3. Եւ նոյն գործին փակուիլը, որոնք պարզապէս իր անիրաւ շահէ մը վրիպելուն շուրջը կը դառնան: Էքսէրձեան կը դիտէ. 1. Թէ վարչութիւնը հաշիւներու պատասխանատու չէ: 2. Նոյնպէս պատասխանատու չէ պատրիարքի կարգադրութեանց: 3. Թէ համարատուութիւնը պատրիարքին կը պատկանի: 4. Թէ ինքն պատրիարքին համակարծիք չէ եղած: 5. Թէ ինչինչ ծանուցագիրներ նախապէս ժողովի մէջ չեն կարդացուած: 6. Թէ պատրիարքը

ամուսնական խնդիրներու մէջ կողմնակցութիւն ըրած է: 7. Թէ ինքն Պէշիկթաշի գերեզմանատան յանձնուելուն հակառակ եղած է: 8. Թէ պատրիարք Մուշեղ եպիսկոպոսի Հոգւոյն Սրբոյն դէմ գրածին համար պայն չէ յանդիմանած: 9. Թէ վարչութիւնը դժուարին ժամանակաց մէջ պաշտօն վարած ըլլալուն համար շնորհակալութեան արժանի է: 10. Կառաջարկէ որ ազգային դրամները պատրիարքէն պահանջուին: Այս ալ աւելի իր պաշտպանութեանը քան թէ պատրիարքի ամբաստանութիւնը հետևած է: Դուրեան և ընկերք իրենց ամբաստանագիրով կը յայտնեն. 1. Թէ ամբաստանուած ըլլալնուն համար կամբաստանեն: 2. Թէ պատրիարքը միահեծան գործած է: 3. Թէ ժողովին հետ համաձայնութեամբ գործած չէ: 4. Թէ օրակարգի խնդիրները իր ուլած կերպով վարած է: 5. Թէ համակարծիք չեղողները վտարել սպառնացած է: 6. Թէ յանդուգն խոսողները յանդիմանած է: 7. Թէ Օրթաքէօյի գերեզմանատան համար յանդուգն խօսողը զգուշաւորութեան հրաւիրած է: 8. Թէ ժողովականն մը ոստիկանութենէ հարցուփորձուած է: 9. Թէ Լահիէի հեռագիրը առանց ժողովի հաւանութեան յղած է: Ասոնք ալ իրենց ժողովականութեան ժամանակին չպատկանող գործերով կը վբաղին և որոշ պարագաներ չեն ցուցներ: Ահա վեց ամբաստանագիրներուն պարունակած համանդամայն 54 կէտերը, զորս թուարկել հարկ սեպեցինք՝ շօշափելի կերպով ցուցնելու համար թէ իրապէս ամբաստանութիւն ըսուելու կէտ մը չկար անոնց մէջ, ընդհանրապէս սահմանադրական ձևակերպութեանց և երկրորդական կէտերու կակնարկեն, զորս պետական արգելքներու ներքև այլապէս տնօրինել հնար չէր, մինչ արդիւնք և արժանիք էր էութիւնը պահելը և սահմանադրութիւնը ձեռքէ չհանելը, ինչպէս պատմութեանս կարգին ալ վանապան խնդիրներու առթիւ բացատրուած է: Մասամբ ալ ամբաստանողները անձնական անցքերուն կամ շահերուն մէջ նպատակներնուն չհասնելէն գրգռուած են, ինչպէս Հինգլեան պաշտօններէ խուսափելուն արդարացումը կը գրէ, Չըպլաքեան իր քեռորդւոյն մասին պատրաստուած բողոքին իր վախին և արշաւանքին վրայ յետաձգուիլը պարտկել կաշխատի, Տէրունեան իր եղբօր կողմէն Աղաւնի Գապապեանի թողօնէ օգտուելէ վրիպելուն կը ցաւի, Էքսէրճեան իր ազգականներէն մէկուն համար պահանջած անիրաւ որոշումը ձեռք ձգել չկրնալէն գրգռուած է, Դուրեան և Պալագեան ոչ ժողովականութեան, այլ պատրիարքարանի քարտուղարութեան պաշտօններուն տեսակէտէն դիտողութիւններ լսած են: Ամբաստանութեանց ոյժ տալու համար պէտք էր որ ընդհանուր խօսքեր մասնաւոր դիպուածներով և փաստերով հաստատուէին, որոնք երբեք չներկայացուեցան, և կամ Օրմանեանի պաշտօնավարութենէն ազգին հասած վնաս մը մատնանիշ ըլլար, որ երբեք չեղաւ: Իսկ ասոնցմէ դուրս լսուածներ պարագայից համեմատ վարուելու պարտաւորութենէն կը ծագին, որ խոհական գերզգօնութիւն կը կոչուի, հնարաւորով գոհանալ երբ հնար չէ բացարձակը ձեռք ձգել, շահիլ երբ հնար չէ վսպել, դարձնել երբոր հնար չէ դիմադրել, մինչև իսկ կարասին ծով նետել նաւը ազատելու համար: Գլխաւոր դիտողութեան արժանի կէտ մըն է, որ 12 տարիներու երկար տևողութեան մէջ, թէ՛ առաջին բազմաեայ ժողովին ատեն, երբեք նախագահի և ժողովականաց մէջ խնդիր կամ տարաձայնութիւն, իսկումն կամ բաժանում տեղի ունեցած չէ, և միշտ համերաշխութեամբ գործած են (ՕՄԱ.27-28), որ եթէ տեղի ունեցած չըլլար անհնար պիտի ըլլար Օրմանեանի 12 տարիներ պատրիարքութիւն վարել: Այս տեսութեանց հետևողութեամբ հարկ չենք տեսնար քաղել Օրմանեանի տուած հերքումները ու դիտողութիւնները ու բացատրութիւնները, որոնք մասամբ նախընթացաբար գրուած պատումութիւններէ, և մասամբ նոյնիսկ ամբաստանութեանց բնութենէն դիւրաւ կը տեսնուին ու կը յայտնուին: Իսկ վերջէն յարակցած երկու գիրերը առանձին բացատրութեան չեն կարօտիր, զի Գասպարանի գիրը համառօտ ընդհանուր տեսութիւն մըն է (ՕՄԱ.221), իսկ Մանկունիի գիրը պարզապէս պատրաստուելիք համարատուութեան մասին ինչինչ

դիտողութիւններ կը պարունակէ, և ամբաստանութեան դիտում և ոճ չունի (ՕՄԱ.240): Օրմանեանի 1909 մարտ 12ին յղած գրաւոր բացատրութիւններէն ետքը ամբողջ ինն ամիսներ ևս անցան, և ոչինչ չխօսուեցաւ, չգրուեցաւ ու չգործածուեցաւ մինչև դեկտեմբեր 12ի բերանացի հարցաքննութիւնը, երբ Իզմիրլեան արդէն Կ. Պոլիսէ մեկնած էր, ուստի ամբաստանութեանց խնդիրը ընդհատելով, ուրիշ եղելութիւններ պատմելու կանցնինք:

3114. ՎԱՐՉԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Փետրուար 10ին վերջացած (3110) Իզմիրլեան պատրիարքութեան, և փետրուար 17 ին սկսած (09. ԱՐԼ. 7029) Արշարունի տեղապահութեան առաջին օրերուն, ազգային կեանքին մէջ նշանաւոր եղելութիւն չունինք պատմելու, և միայն ընդհանուր ակնարկ մը կը նետենք վարչական գործոց ընթացքին վրայ: Ապատութեան հռչակուիլը Հայերուն ըմբռնման մէջ, աւելի քան ընդհանուր բարեկարգութեան և բարօրութեան թուական մը, իրենց յատկացեալ թուական մըն էր, ամէն ձախողուածի և նեղութեան վերջ, երջանիկ կեանք ամէն կողմէ, գաւառներու վերակենդանացում, ժողովուրդին գոհացում, և մինչև իսկ ազգայնական բուռն ձգտումներու իրականացում, և սեփական ու անդորրաւէտ Հայաստան մը ունենալու գրաւական: Այդ ըմբռնումը գինովցնելու և վզխելու աստիճան տիրապետած էր Հայերու ընդհանրութեան վրայ, և 1908 յուլիս և օգոստոսի մեծադորդ ցոյցերը, և հանդարտութեամբ շարժուողներու դէմ յայտնուած մոլեգին ձեռնարկները, հետևանք էին այդ մտայնութեան, որուն ուրիշ բան չի կրնար մեղադրուիլ, բայց եթէ երևոյթը արդիւնքէն, երևակայականը իրականէն, խօսքը գործէն չպատելու շտապը, և ժամանակին ժամանակ չտալու անհամբերութիւնը: Շատ անցած չէր, և ահա սկսան բերաններէ գանգատներ, գաւառներէ բողոքներ, լրագիրներէ տրտունջներ, և հետզհետէ սովորական դարձան. ամէն օր նոր գոյժ մըն էր որ հասնէր ներքին նահանգներէն և քաղաքներէն, անիրաւութիւններ ու հարստահարութիւններ պատմող, բռնութիւններ և ճնշումներ նկարագրող, կոտորածի և աւերածի սպառնալիքներ գուշակող, սովի և նեղութեանց պարագաներ հաղորդող, գաղթելու և փախչելու պատրաստութիւններ նախատեսող: Ժողովական նիստերը տեղեկութիւններով և դարմանի խորհրդածութիւններով և միջոցներու առաջարկութիւններով կանցնէին, լրագիրներու էջերը այդ նիւթերով կը լեցուէին, և պատրիարքարան ու վարչութիւն խստիւ կը քննադատուէին: Կիլիկիոյ կաթողիկոսը հրաժարիլ կորոշէր բռնապետութեան ատեն իսկ չբռնաբարուած վանքապատկան իրաւունքներուն, սահմանադրական վարչութեան օրով գրաւումէն վզածուած (09. ԱՐԼ. 7033): Ընդհանուր ժողովը պաշտօնապէս և հանդիսապէս կառավարութեան բողոք ներկայել կորոշէր (09. ԱՐԼ. 7038), և ձեռք առնուած միջոցներուն ապարդիւնութիւնը՝ տեղապահին վրայ սառնասրտութեան մեղադրանքը կը հրաւիրէր (409. ԱՐԼ. 7059): Իզմիրլեան պատրիարք կիրքերը չզայրացած՝ գործին մէջէն ելնելու բախտն ունեցած էր, և Արշարունի տեղապահին վրայ կը բարդուէր անցեալին բեռն արդէն կազմուած դիրքն ալ, որուն եթէ պատասխանատու պիտի ըսուի նոր կազմուած պետական կառավարութիւնը, հնար պիտի չըլլայ բոլորովին չբմեղեալ ազգային նորակազմ վարչութիւնն ալ և հայ մտայնութիւնն ալ: Հռչակուած ապատութիւնը իբր հայկական ապատութիւն ըմբռնելով, և հայ տարրին խնդիրը ձեռուընին առնելով, Այօսեֆանոյի և Պերլինի դաշնագիրներէն սկսելով հայկական գաւառաց բարեկարգութեանց համար կազմուած ծրագիրները կը յիշեցնէին, և բացառաբար այդ նահանգներուն վիճակով կը վբաղէին: Այս ըմբռնումը հնար չէր որ տաճկական շրջանակներուն վրայ անախորժ տպաւորութիւն չներգործէր, որոնք միւս կողմէն տիրող տարրի և տիրապետեալ տարրի տարբերութիւնները սկսան առջև դնել, և երկուքին հաւասար նկատառութիւնը անուղղակի հերքել, և Հայոց ձգտումները վսպելու միտքեր իսկ յղանալ: Ապատութեան յառաջապահ

հանդիսացող տաճիկ սպաներ, արտասահմանի մէջ հայ յեղափոխականներու հետ շփուող երիտաարդներ, մինչև իսկ հայ կուսակցութիւնները իրենց առաջնորդ և ուսուցիչ խոստովանող թուրք գործիչներ, սկսեր էին համարձակ Հայոց երեսն ի վեր յայտարարել, որ եթէ ազգայնական և հայկական վերանորոգման կամ սեփական բարեկարգութեան միտքով կօրօրուին, առաջին իրենց սուրը պիտի վզան կուրծքներնուն մխուած: Հայեր իբրև սնամէջ սպառնալիք կարծեցին այդ խօսքերը, և կարևորութիւն չտուին, այլ ժամանակը անոնց իրականութիւնը հաստատեց, մինչ պէտք էր կանուխէն արթննալ և իբր նախընթաց նշաններ ճանչնալ վերև ակնարկուած պատահարները, զոր դժբախտաբար չկրցաւ թափանցել կացութեան տիրապետող կուսակցութիւնը: Նա ազատութեան հռչակումը իր գործն ու արդիւնքն ու պարծանքը կարծելով, յոխորտ և յախուռն ընթացքով և կացութեան վրայ տիրապետելով, ամենայն ազգային գործունէութիւնը իր ձեռքն առած էր, պատրիարքարանն ու վարչութիւնը, ընդհանուր գործունէութիւնն ու ազգային ուղղութիւնը: Համակերպելու պատրաստներու և հետևողութեան դւրամէտներու յանձնելով պաշտօնական դերերը, որով կը յաջողէին ըստ հաճոյս վարել ազգային կեանքը, նախատանաց և հալածանաց մատնելով իրենց չհամակերպող փորձառուները, ինչ որ ժամանակին ժողովականներու և նախագահներու ցուցակները կը վկայեն ամէն գիտակ ու գիտակ անձերու: Իրաւ իրենք ժիր գործիչներ էին, բայց իբր ամբոխավար տիպարներ, և մինչև աստիճան մը անվախ ձեռնարկուներ, և լաւագոյն ելք կունենային անշուշտ, եթէ ժրութեան արթնութիւն, ամբոխավարութեան աշխարհավարութիւն, և անվախութեան խոհականութիւն զուգակցած ըլլային, կամ գոնէ իրենց առաջնորդներու մէջ այսպիսի անձեր ունենային, որոնց պակասութեան տխուր հետևանքները թէ ազգին կրել տուին և թէ իրենք կրեցին, և անխորհուրդ ձեռնարկներով ժամանակին և միջոցնին իզուր վատնեցին, մինչ իրօք ազգային տեսակէտէն արդիւնաւոր և օգտակար, և անձնական տեսակէտէն պատուաւոր և յաջող եղած կըլլային, եթէ ժամանակները քննել, պարագաները դատել և հնարաւորը կշռել գիտնային, մանաւանդ որոնց հետ գործ ունենային խորապէս թափանցէին, զի երբ անաչառ պատմագիր մեր դիտողութիւնները համարձակ կը յայտնենք, երբեք դժպիհ գործողութեանց հեղինակներուն արդարացման չենք թևակոխեր:

3115. ԶԱՂԱԶԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Այդ խառնակ ժամանակներու մէջ հետաքրքրական էր Ապտիւլհամիտ կայսեր հետևած ընթացքը: Դէպքերուն յարմարելով եռանդուն և հնօրեայ ազատականի և սահմանադրականի դերը կը վարէր առանց վերապահութեան, հին պաշտօնեաները լքած նորերով և շրջապատուէր, խօսքերուն և արտայայտութիւններուն մէջ անկեղծ և համոզուած ազատականի շեշտը կը գործածէր, անցեալը դրսևորելու չէր վարաներ, պատասխանատուութիւնը իրմէ հեռացնելով իրեն պաշտօնեաներուն կը բեռցնէր, հրապարակային ցուցադրութիւններու իսկ կը զիջանէր, այն աստիճան որ ամենէն կասկածոտ միտքերն ալ կատարեալ դարձի գաղափարը կազմելու յօժարակամ կը միտէին: Նոյն իսկ Իթթիհատ վէ Թէրաքքը կուսակցութեան գլխաւոր գործիչներ իրենց զօրաւոր պաշտպան և անվերապահ հովանաւոր ճանչցած էին երբեմն այնչափ առած և ամէն անարգական անունով որակած կարմիր սուլթանը: Սակայն Ապտիւլհամիտ փոխուած չէր, և ոչ ալ կրնար իր վզացումներն ու դիտումները փոփոխել, ինչպէս հնար չէ որ փոխիցէ հնդիկ վմորթ իւր, և ինձ վխայտուցս իւր (ԵՐՄ. ԺԳ. 25), և ամենայն գաղտնութեանց կը գործէր և կաշխատէր ազատութեան նորաշէն ամբարտակը հիմնովին տապալել: Որոն՞ք եղան իրեն միջնորդներն ու գործիչները, դժուարին է որոշակի ճշդել, թէպէտ յետոյ այս անունով շատեր ամբաստանուեցան ու դատուեցան ու կախաղանով պատժուեցան: Ապտիւլհամիտ յաջողեցաւ առատ պարգևներով

իրեն յանկուցանել զհնուորներու հասարակ դասակարգը, նոյնինքն Սելանիկէ եկած ապատութեան պաշտպան բանակին հասարակ զհնուորները, և անոնք բորբոքել իսլամական օրէնքին կամ շէրիին նախանձայուպութեամբ, ապօրինի ցուցնել և ատելի ընել ապատական նորութիւնները, և գործերը նախնական և ուղիղ իսլամական հիմամբ կազմուած վիճակին վերածելու համար ջնջել կամ նորակազմել օրէնագիր եղած ծերակուտական և երեսփոխանական մարմինները, որոնք ոչ չէրիի օրէնքով կը վճռէին, ոչ զուրանին սկզբունքներով կը վարուէին, և ոչ իսլամական հաւատքին ուսմամբ պատրաստուած էին: Դաւաճան խորհուրդը իրեն ճամբան առած և ընդարձակուած էր ամենայն գաղտնութեամբ. զօրականը վրակուած էր այդ քարուպիւններով, քաջալերուած էր իրեն առատաձեռնուած ոսկիներով, նոյն իսկ բանակին սպաները անգիտակ էին անցուդարձին, և իրենց դէմ գրգռուած ատելութեան, իբր զի իրենք էին եղած ապատութեան կամ անօրէնութեան գործիչները և սահմանադրութեան կամ հակաշէրիականութեան պաշտպանները: Յուլիս 10էն մինչև յաջորդ մարտին վրջերը՝ ութուկէս ամիսէ ի վեր շարունակած էր այդ մտայնութիւնը, նոյնիսկ արթուն կարծուած իթթիհատական գործիչներ չէին թափանցէր թէ ուր կը դիմէր այդ պատրաստութիւնը. յանկարծական հրաման մը բաւական պիտի ըլլար գործի մղել պատրաստ գործիքները, պպտիկ դրողմ մը բաւական պիտի ըլլար տարածել բոցածաւալ հրդեհը և մայրաքաղաքը ամբողջ յանկարծակի և անակնկալի հանդէպ գտաւ զինքն մարտի 31-ի առտուն, որ Ջատկի երեքշաբթին էր հաւասարապէս հին և նոր տոմարներու համար: Վստահելի աղբիւրներէ քաղուած տեղեկութիւններ կը հաւաստեն թէ տրուած հրամանին համեմատ, տաճկական ժամահաշուով ցերեկի ժամը եօթնին, որ է կէսօրը ժամուկէս անցած, ծերակոյտին և երեսփոխանութեան հաւաքուած պահուն վաստակուած գունդերը պիտի խուժէին և հաւաքուէին Այասօֆիայի հրապարակը և պիտի յարձակէին խորհրդարանին վրայ, պիտի ցրուէին երկու ժողովները՝ ժողովականներուն ալ չխնայելով, և վերջ պիտի տային գործի վրայ գտնուող և նորութեանց աղբիւր եղող հակաշէրիական ժողովներուն. նոր նախարարութիւնն ալ անոր հետ պիտի տապալէին, և Ապիւհամիտի դիւրին պիտ ըլլար ամենայն ինչ իր կամքով վերակազմել, և այս երկրորդ անգամ ապատական սահմանադրութեան վերջ տալ, կամ անունը պահելով իսկութիւնը այլայլել: Դիպուածական թիւրիմացութեամբ մը թէ ոչ խաղին մէջ խողով մը, կէսօրը կէսգիշերին հետ կը շփոթուի, և զհնուորական խուժանը գործի կը սկսի գիշերուան ժամը եօթնին երբ խորհրդարանը դատարկ էր: Նախապէս իրենց սպաները կը ձերբակալեն, քանինները կը սպաննեն, Այասօֆեայի հրապարակը կը խմբուին, իթթիհատի կեդրոնը կը կոխեն, կը խորտակեն, կը թալանեն, Իթթիհատի գլխաւորները կը փնտռեն, քաղաքը ահուդողի կը մատնեն, մինչ կարգուկանոն պահելու համար կայսերական հրամաններ կը հասնին և յանձնարարութիւններ կը կրկնուին: Զինորական շարժումին նշանաբանն էր շէրիի պահպանութիւնը, և իբր շէրիի հակառակ գործող իթթիհատի պետերուն հեռացումը, իբր գլխաւորներ յիշելով Հիւսէյին Հիւմի մեծ եպարքոսը, ահմէտ Ռիպա երեսփոխանութեան ատենապետը, պատերազմական ու ծովային նախարարները, ճավիա և ճահիտ Ռահմի երեսփոխանները, միանգամայն իրենց ցուցուած անձերուն անուանումը կը պահանջէին իբրև շէրիի պաշտպաններ, որոնց մէջ Գրիգոր Զոհրապի անունն ալ կար: Կայսերական հրամանը փոփոխութիւնները կը կատարէր, բայց իր ուլածները կանուանէր: Զինուորական խուժանը մէկ կողմէն ոստիկանական պաշտպանութեամբ հաւաքուած երեսփոխանութեան պահանջներ կը ներկայայէր, և միւս կողմէն հրացանի ձայներ կը հնչեցնէր և կռիւներ կը վարէր շարժումին չմիացած վաշտերուն հետ: Եղելութիւնը հապիւ թէ Սելանիկի մէջ կը լսուի, տեղուոյն հրամանատարը Մահմուտ Շէվքէթ փաշա իր բանակը շարժման կը դնէ և դէպի Կ. Պոլիս քալելու կը ձեռնարկէ: Ապրիլ 6-ին Չաթալճա հասեր էին Սեանիկի առաջին գունդերը և

ապահովութեան կը պահանջէին սահմանադրութեան պահպանութեան համար, որ բերանացի կը տրուէր և պատգամաւոր գացող անձեր կը վստահեցնէին, բայց շէրիի անունը բերաններէն չէր դադրէր, ուստի վերջապէս Մահմուտ Շէվքէթ փաշա ինքն ալ վերջին գունդերով առաջ եկողներուն միացաւ, ապրիլ 7-ին Կ. Պոլիսը պաշարման ենթարկեց և հետզհետէ սեղմեց: Ապստամբ գունդեր, որոնք գլխաւորապէս անցեալ յուլիսին Սելանիկէ եկող յառաջընթաց ապստարարներէն էին, իրենց ձեռնարկին կրկնակի վատութեան գիտակ, և գործուած ոճիրին ներման արժանանալէն անյոյս, մոլեգին դիմադրութենէ վատ ելք մը չէին գտներ առջնին: Կ. Պոլսոյ նաւահանգիստին մէջ գտնուող տորմիդն ալ Ռումելիէ եկող բանակին համամտութիւն յայտնեց, քաղաքին գրեթէ ամբողջութիւնն ալ նոյն բանակին կը համակրէր: Ապիւհամիտ իբրև դաւաճանութեան գլուխ կը սկսէր ամբաստանուիլ, և երեսփոխանութիւնն ու ծերակոյտը Այօսթէֆանոյի արուարձանը ապահով նկատելով կորոշէին հոն հաւաքուիլ Ռումելիի բանակին պաշտպանութեան ներքև, իսլամական օրէնագէտներ ու լրագիրները ձայնակից էին Ապիւհամիտը վալիմ կամ բռնապետ յայտարարել, և խնդիրը պաշտօնապէս դենպետին կը ներկայացուէր օրինական պատգամը ստանալու: Ապիւհամիտ վերջին յուսահատութեան մէջ իր մտերիմ պաշտօնեաներէն 13 հոգիներ յանուանէ իբրև դաւաճաններ կը ներկայէր, և խաժամուժ ամբոխ մըն ալ կը վարձուէր ամբողջ քաղաքը աւարի և սուրի մատնելու և այրեացաւեր դարձնելու նպատակով. բարեբախտաբար շաբաթ օր ապրիլ 11ին քաղաքը զինուորական ուժով կը գրաւուէր, դիմադրող և ըմբոստ գունդեր կը զսպուէին և կը ձերբակալուէին, աստուանդ երևցող խուժանի խումբը կը ցրուէին: Յարձակումը կատարուած էր Բերայի բարձունքներուն կողմէն Երրորդի արքունիքին սպառնալով. պալատին պահակ գունդերը կամ կը փախչէին կամ անձնատուր կըլլային, և նոր հասնող բանակը Երրորդին ալ կը տիրանար, և նոյն ինքն Ապիւհամիտ ալ անձնատուր կըլլար կանանոցին բազմութեան կողմէ յայտնուած և պնդուած արիւնհեղութիւնը արգիլելու թախանձանքին վրայ, և քաղաքը զինուորական օրէնքի կենթարկուէր յաղթանակ բանակին սպարապետ Մահմուտ Շէվքէթի հրամանով: Վերջապէս բանակին ներկայութեամբը զօրացած Այանն ու Մեպուսան, ծերակոյտն ու երեսփոխանութիւնը, որ Ապիւհամիտի գահընկէցութեան խնդիրով կը վբաղէին Այօսթէֆանոյի մէջ, ապրիլ 14-ին համագումար նիստ կը կազմեն Այասօֆիայի խորհրդարանին մէջ, և իբրև գերագոյն սահմանադիր ժողով, Ապտիւհամիտի գահընկէցութիւնը պաշտօնապէս կը վճռեն, և կայսր կը հռչակեն Մէհմէտ Ռէշատ եղբայրը, որ օր առաջ իր հաւանութիւնը տուած էր Ապտիւհամիտի կեանքին խնայելու պայմանով, իբր զի նա թէպէտ զինքն նեղած ու հալածած էր, բայց իր կեանքին խնայած էր: Այսպէս վերջացաւ Ապտիւհամիտի երկարատև իշխանութիւնը, որ 1877 օգոստոս 19ին գահ բարձրացած էր իր հօրեղբօր Ապտիւլապիւի և եղբօրը Մուրատին գահընկէցութեամբ, և նմանօրինակ ձևով կը փակուէր 33րդ տարին լրանալուն մօտ, և երբ ինքն խորհրդարանը տապալել կուլէր, խորհրդարանը ինքն կը տապալէր, և ի վուրն զոր փորեաց և պեղեաց ի նոյն անկանէր ի խորխորատ զոր և գործեաց (ՍԱՂ.Է.16): Ապտիւհամիտի հզօր բռնապետութիւնը կը փակուէր առանց և ոչ մի կողմանէ իրեն պաշտպան մը ունենալու, առանց օրհնաձայն մաղթանք մը ստանալու իր հպատակներէն, և նոյն իսկ զինքն շրջապատող և իրմով օգտուող մտերիմ պաշտօնեաներէն ալ դժգոհութեամբ և զգուանօք լքուած: Մէհմէտ Ռէշատ արքայեղբայրը գահաժառանգը նոյն օր ապրիլ 14-ին պաշտօնապէս գահ կը բարձրանար Մէհմէտ Հինգերորդ կոչմամբ, և արարողական պատշաճը կը կատարուէր սպարապետութեան մեծ դահլիճին մէջ: Ապտիւհամիտ Երկրորդ կայսրը ունէր ուշմութեան և հնարագիտութեան, քաղաքագիտութեան և աշխատասիրութեան ձիրքերը սակայն հպատակներուն օգտին չգործածուեցան, շահեցողական

ուղղութեան տեղ պսպողականը գործածեց շարունակ, որուն յաջողութիւնը մշտապէս չէր կրնար ըլլալ դժբախտաբար: Գահընկէցութենէ ետքը որոշուեցաւ պինքն Սելանիկ Փոխադրել իբրև ապահովագոյն միջավայրը, և խիստ հսկողութեան ներքև պահել իբրև ի գառագոյի: Մէհմէտ Ռէշատ ճոխացած չէր իր եղբօր կարողութեան ձիրքերով, ընկճուած ալ էր երկարատև տարիներ պրկանաց ներքև անցունելով, այլ թերին կրնար լրացնել իր բարեսիրտ և ուղղամիտ պագումներովը:

3116, ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Նոյն օրեր որ Կ. Պոլսոյ մէջ այս իրողութիւնները կը կատարուէին, ահարկու և քստմնելի տեսարաններ կը բացուէին Ատանայի կուսակալութեան քաղաքին և գաւառներու մէջ, բայց ոչ քաղաքական տեսակէտով կանոնաւոր բանակներու ընդհարում կամ կուսակցութեանց մրցակցութիւն, այլ մոլեռանդ խուժանի մը ձեռքով խաղաղ ապրող տարրին վրայ յարձակում և ջարդ, և ականատեսներու հաշուով իբր երեսուն հազար անմեղ կեանքերու անողորմ կոտորած (ԹԵՐ. 836 և ՊՐԷ. 369): Այսպիսի պժգալի իրողութիւն մը տեղի կունենար ապատութեան հռչակուելէն և սահմանադրական իրաւունքներ ապահովելէ ետքը, այն ալ ծովափնեայ և դիւրամատչելի նահանգի մը մէջ. և այս է պատճառը որ աւելի դրդողեց քաղաքակիրթ աշխարհը քան տասնչորս տարի առաջ կատարուած երեքհարիւր հազարներու խողխողումը, և առիթ ընծայեց առատ մելան թափելու յորդահոս արիւններու վրայ, որոնց ստուերագիծը միայն կրնանք տալ մեր ընդհանուր պատմութեան մէջ: Կոտորածը պագուեցաւ 1909 մարտ 31ին, Կ. Պոլսոյ շփոթութեանց օրը, և սկսաւ միւս առտուն ապրիլ 1ին, ինչ որ երկու եղելութեանց ներքին կապը կը մատնանշէ: Բացարձակապէս և ամբողջապէս Ապտիլ Համիտի բռնապետական նախաձեռնութեան պիտի վերագրուէր այդ աղետալի կոտորածը, եթէ իր գործադիրներու մէջ ապատական և ապատաբար կոչուած խումբէն անձեր չգտնուէին, և եթէ տիտուր եղելութեանց տիրագոյն հետևանքները Ապտիլ համիտի գահընկէցութենէ ետքն ալ չշարունակէին: Ապտիլ համիտի նախաձեռնութեամբ մայրաքաղաքի մէջ պատրաստուած շփոթին գաւառական արձագանք պէտք էր, և Ատանա նախկին կոտորածներու ատեն խնայուած (2982), հարուածին յարմարագոյն գետինն էր, կուսակալ ձեւատ պէյ Երլտրպի հին քարտուղարներէն և անձնուէրներէն էր, և յարմար գործիք կը նկատուէր: Կոտորածի միջոցին Ապտիլ համիտի համար աղօթելու ստիպումները, և սահմանադրութեան ու ապատութեան հռչակման առթիւ կանգնուած կամարին հրամայեալ քանդումը (ԹԵՐ. 113-115), շատ նշանակալից դէպքեր են: Միւս կողմէն Ատանայի հայութեան բարգաւաճ վիճակը ապգայնամու տաճկութեան աչքին փուշ էր, Կիլիկիոյ շուրջը դարձող հայկական կուսակցութիւններ գրգիռը կը շատցնէին ապատութեան հռչակուելէն ետքը Կիլիկիոյ հայութեան ստացած ոգևորութիւնը կասկածաւորի նկատառութեան կը տանէր, և այսպէս Ապտիլ համիտի բռնապետութիւնը և Իթթիհատի ապատականութիւնը իրարու կը մօտենային, և տարբեր տեսակէտներէ մղուելով նոյն նպատակի վրայ կը գուգակցէին, և առեղծուածային կարծուած համաձայնութիւնը կիրականանար: Կոտորածին օրը արձակուած շէրիաթի աղաղակները (ԹԵՐ. 10-11), մայրաքաղաքի մէջ յուլուած համիտական ծրագիրը կը յիշեցնէին. իսկ տիրող կառավարութեան կոտորածին նախապատրաստութեանց մէջ ունեցած դերը (ԹԵՐ. 9-33) և հա տարրին ապատութենէ օգտուիլը արգիլելով թուրք տարրը յառաջացնելու ծրագիրը (ՄՈՒ, 54), իթթիհատական մասնակցութիւնը կը պարպէր: Արդէն եթէ ոչ կրօնամու, գոնէ ապգամու ուղղութիւնն էր որ Ապտիլ համիտի ու իթթիհատի փոխադարձաբար համամիտ, թէ ոչ համիմաստ յարաբերութիւններուն հիմը կը կապմէր. Ապտիլ համիտ իթթիհատը նենգել կը կարծէր, և իթթիհատ Ապտիլ համիտէ օգտուիլ կը գիտէր: Ատանայի դառնալով մարտ 31 երեկոյէն դիտուած

էին տաճիկ խուժանին շարժումի նշանները, և խումբ խումբ կառավարական պաշտօնատուն դիմելը, կարծես ձեռնարկին հրահանգն ու արտօնութիւնը ստանալու համար շրջանակներէն խուժանային ամբոխ մը լեցուած էր քաղաքը, շաբաթներէ ի վեր պինուելու եռանդին շատցած էր: Ապրիլ 1ի չորեքշաբթի առտու կը լսուի թէ հայ մը, ատաղձագործ Լուսիկը, գիշերանց սպաննուած է, հայ տուներ քարկոծուած են, բաւական հայեր վիրաւորուած են, սպառնալեաց աղաղակներ շահցած են (ԹԵՐ.26): Խորհրդածելու ատեն չմնաց, և ահա կը սկսի նոյն իսկ թաղերու վրայ համարձակ յարձակումը, փողոցներու մէջ շտապը, խանութներու վրայ թալանը: Առաջնորդական փոխանորդը և ազգային երևելներ կառավարութեան կը դիմեն և ժողովուրդ հանդարտելու համար խառն խմբակներ պատօցնել կորոշուի, Դաւիթ Ուրֆալեան կառավարական ժողովական պատած ատեն կը սպանուի, Յարութիւն Շատրիկեան՝ ան ալ կառավարական անձ՝ կուսակալին կը ներկայանայ, և անոր աչքին առջև կը սպանուի, խուճապը կը տիրէ, շուկաները կը պարապուին, տուներէ փողոցներ, եկեղեցիներ և օտարազգի հաստատութիւններ և հայաշատ օթեաններ կը խոնին: Իբրև թէ կառավարութիւնը վստահութիւն ներշնչել կաշխատի, բայց ոչ մարդասպան մը կը ձերբակալուի, և ոչ մէկ տաճիկ պինաթափ կըլլայ: Հայ երիտասարդներ գոնէ մայրեկեղեցոյ շուրջը եղող հոծ հայութիւնը պաշտպանելու կը ձեռնարկեն, և 179 հոգի փողոցներու բերանները գրաւելով խուժանին ներս մտնելը մինչև աստիճան մը կարգիլեն (ԹԵՐ. 39), բայց այդ շրջանակէն դուրս եղողներ անխնայ կը կոտորուին, վազվզող վոհմակներ անարգել կը գործեն ամէն տեսակ խժողութիւններ և բիւրազգի բռնաբարութիւններ խառնելով իրենց անօրինակ գործունէութեան: Մութը կոխած էր, բայց յանկարծ, գիշերուան մթութիւնը կը լուսաւորի, սուրեր և հրապէներ ջահերու փոխուած են, քարիւղի ամաններն ալ ձեռուրնին, Հայոց թաղը կրակի տրուած է. ցերեկի խոցերէն ալատուածներ գիշերուան բոցերուն կը գոհուին (ԹԵՐ. 42): Երկրորդ օրը կը ծագի, հինգշաբթի ապրիլ 2 կոտորածներ և յարձակումներ ալ աւելի կը սաստկանան հայութիւնը անյոյս է ամէն կողմէ, նախընթաց երեկոյին Մերսինէ հասնող անգղիական հիւպատոսն ալ անկար կը մնայ, թէպէտ կառավարութիւնը արգիլելու անկամ կամ գործելու կամակից, հիւպատոսը կը հրաւիրէ որ խուժանը զսպէ: Հայ երիտասարդներ աստ և անդ դիմադրութեան գործը կը շարունակեն, բայց հապի թէ անկիւն մը կրնան պաշտպանել հապարաւորներու դէմ. վի խուժանը տուներ ալ կը բռնադատէ, օտար հաստատութիւններն ալ կը պաշարէ, կրակը կընդարձակէ: Երրորդ օրը ուրբաթ 3 ապրիլ, յարձակումները ա՛լ աւելի կը սաստկանան, խուժանը Հայոց կեդրոնական թաղին տիրելու կը մօտենայ, ինքնապաշտպանութեան գործը կը տկարանայ, Հայոց թաղին մէջ բնակող թուրք երևելի մը, Օսման պէյ Թէքէլիպատէ (ԹԵՐ.53) յանձն կառնէ անձամբ կուսակալին երթալ, Հայոց պաշտպանութիւնը խնդրել և անմեղութիւնը վկայել (ԹԵՐ.53): Կուսակալը կոտորածը դադրեցնելու համար Հայերէ մեղայագիր կը պահանջէ, ինչ որ միջնորդին ընկերացնող Հայ երևելիներու բերանացի յայտարարութեամբ կը փակուի (ԹԵՐ. 54), և Հայերը կը խոստանան զէնք չպարպել, թէպէտ ինքնապաշտպանութենէ տարբեր նպատակով պարապած ալ չունէին: Ուր ուրեմն հասնող կառավարական հրամանը իսկոյն խուժանը կը զսպէ, և պինուորական պահնորդ ջոկատ մը Հայոց թաղը կը վետեղուի, պաշտպանելու համար: Երրորդ օրն էր կոտորածին որ կառավարութեան աչքին առջև համարձակ կը կատարուէր, և երրորդ օրը վերջացող տագնապը, առաջին վայրկեանէն ալ կրնար զսպուիլ եթէ տարբեր ըլլար դիտումը և տարբեր կարգադրութիւնը: Կ. Պոլսոյ 1896 օգոստոսի կոտորածն ալ երրորդ օրը դադրած էր հրամանի մը պօրութեամբ (2994): Քաղաքին կրած վնասը ճշդել պիտի չաշխատինք հապարներով էին պահուած կեանքեր, բիւրով էին այրած ու թալանուած տուներ ու վաճառատուներ, միլիոնով եղան նիւթական կորուստներ:

Դիակներ մասամբ այրեցան, և մեծաւ մասամբ գետամոյն եղան և գետն ի վայր ծովին վրայ ծփացին, մինչև վիրաւորներ կիսակենդան Սիհունի մէջ նետուեցան ու խեղդուեցան:

3117. ԱՏԱՆԱՅԷ ԴՈՒՐՍ

Կոտորածին քաղաքին մէջ դադրիլը որչափ ալ Թէքէլիպատէի միջնորդութեան վրայ հրամայուած ըսինք, այլ հարկաւ աւելի ծանր դրոյիչ պատճառ ունեցած ըլլալը կը մտածուէր: Իրօք ալ հապիւ գոյժը մայրաքաղաք հասաւ, երոպական դեսպանատուները վայրացկոտ դիտողութիւններ ըրած էին կառավարութեան, Գերմանական պահականաւը իսկոյն ճամբայ ելնելով՝ երեքշաբթի չորեքշաբթի գիշեր Մէրսինի նաւահանգիստը խարսխած էր, Անգղիական երկու մարտանաւեր և Գաղղիական մարտանաւ մը չորեքշաբթի առտու ետևէն հասած էին, անոնց ալ ետևէն Իտալական մը, Ռուսական մը, և երկու Ամենիկեան մարտանաւեր (ԹԵՐ.61): Արշարունի տեղապահն ալ կառավարութեան դիմած էր, և թէպէտ շարժումը Հայոց կողմանէ սկսած ըլլալուն պատասխանը առած, և յորդորական հեռագիր յղած էր Ատանա, բայց անհնար էր որ պատրիարքարանի միջամտութիւնն ալ կառավարական մտադրութիւնը գրգռած չըլլալը, և այդ ամէն պարագաներ միանալով առիթ չընծայէին որ տագնապը դադրեցնելու կամ ձևը փոխելու նոր հրահանգ արձակուէին կեդրոնէն, մանաւանդ որ ինչպէս յիշուեցաւ նոյն օրեր նախարարութեան փոփոխութիւն ալ տեղի ունեցած էր: Յաջորդ չորեքշաբթի օրը ապրիլ 8ին ուրիշ հետաքրքրական պարագայ մըն ալ տեղի կուենար: Ատանայի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոս Սերոբեան կոտորածի օրերը Ատանա չէր: Երկրագործական վարժարան մը հիմնելու գաղափարը յղացած, և 1900 փետրուար 16ին գաւառական ժողովին որոշել տուած էր նպաստ հաւաքելու համար իր Եգիպտոս երթալը, և մարտ 4ին Ատանայէ մեկնած է (ՄՈՒ.27): Սերոբեանի յայտնի էին իր Վիճակին կասկածելի կացութիւնները, տաճկահայ գրգռութիւնը, վտանգի նախատեսութիւնը, ինչպէս ինքն ալ չի ծածկեր (ՄՈՒ.18-26 և 64), և իր պաշտօնական դիմումները կը հաւաստեն (ԹԵՐ.461), որով միայն վայրկեանական համառօտ հանդարտութեան փաստով կաշխատի արդարացնել իր բացակայութիւնը (ՄՈՒ.27): Վտանգէ խուսափիլը թերևս անյարմար նկատուի Սերոբեանի խիպախ բնաւորութեան, սակայն պատասխանատուութենէ պոռնջանալը կրնար իր միտքին վրայ ազդել: Բայց ի՛նչ ալ ըլլայ անյարմար ժամանակ մը բացակայելով ժողովուրդը անգլուխ թողլուն պատճառը, հապիւ, գոյժը լսած, Եգիպտոսէ կը մեկնի, և ապրիլ 8ին չորեքշաբթի Մերսին կը հասնի, բայց նաւամատոյցեն կարգիլուի ցամաք ելլել և կը պարտաւորուի շոգենաւ դառնալ: Յամաք չելլալուն հրամանը անգղիական մարտանաւին հրամանատարութենէն ալ կը կրկնուի, և հարկ կըլլայ որ նոյն օր մեկնի Եգիպտոս դառնալ: Սերոբեանի դէմ դրուած արգելքը ոմանց տեսութեամբ գրգռիչ և վտանգաւոր անձ մը հեռացնելու համար էր, իբրպի յայտնի էր իր համարձակ գործունէութիւնը և յեղափոխական մարմիններու հետ սերտ յարաբերութիւնը, իսկ ըստ այլոց անոր անձը խնայելու համար անուղղակի պատրաստուած նախապոռնութիւն էր: Ամէն առթ մէջ Սերոբեան անմասն մնաց իր վիճակին մէջ կատարուած մեծ իրողութիւնէն, և միայն հեռուէն հրատարակութեանց դիմեց (ԹԵՐ.854, և ՄՈՒ.), բայց պատերազմական ատենին վճիռէն պատ չմնաց: Վերև տագնապը դադրեցնելու հրամանին մէջ, կամ ձևը փոխելու խօսքը աւելցուցինք, որովհետև քաղաքին մէջ կոտորածին դադրելովը կոտորածը դադրած չեղաւ: Հողագործական մեծ աշխատութեանց ատենն էր Ատանայի համար, և բարեբեր արտերու վրայ գործաւորներու խուռն բազմութիւն մը խմբուած էր, որոնց թիւը 80,000 կը հասցնեն (ՄՈՒ. 37): Ասոնցմէ էին քաղաքին մէջ գործող խուժանը կազմողներ, բայց մեծագոյն մասը դաշտին վրայ էր: Երբոր քաղաքին տագնապը հարկ եղաւ դադրեցնել, խուժանը հրահանգուեցաւ գիւղերու մէջ գործել, և բոլոր հայութեան արու անհատները սուրի և հրապէնի մատնել: Ատանայի շրջակայ Ինճիրլիք,

Ապոստոլու, Բօզօլուք, Խրիստոսեան քէօյ, Շատրիկին և Միսիս և բոլոր ուրիշ գիւղերու մէջ հայ ըլլալով այր մարդ չմնաց: Երբեմն Կեավուրտագ կոչուած ճէպէլիպէրէքէթ նահանգին մէջ Օսմանիէ, Համիտիէ, Պախճէ, Հասանպէյլի, Լաբաճլը, Խառնի, Կէօքչայրը, Եանըքտէյիրմէն, Բօյուք, Էնթիլլի, Էքպէյ, աւաններ և գիւղեր միևնոյն հարուածն ունեցաւ, բոլոր այրեր սպանուեցան և գիւղեր այրուեցան: Աւելի հեռաւոր կողմեր, Տարսոն և Սայկէշիտ ալ մեծ կորուստներ տուին, իսկ մասնաւոր կորուստ չտուող տեղ չէր մնացած Ատանայի կուսակալութեան Սէլէֆքէի նահանգէն դուրս: Նոյն իսկ Սիս, Հաճըն, Տէօրթեօլ, Գարսիֆաղար, Ֆէքէ, և Շէյխմուրատ, որոնք կամ գինու վօրութեամբ կամ ճարտար հնարքներով ինքնապաշտպանութիւն փորձած կամ կատարած էին, կորուստներէ, ապա չմնացին: Հալէպի կուսակալութեան մէջ ալ տարածուեցաւ կոտորածը, և աւելի կորուստ տուող տեղերն եղան Անտիօք և Բէսապ և Բըրըքիան, և վնասներէ վերծ չմնացին Պէյլան, Մարաշ, Սուէյտիէ, Անտէրուն, Կէօքսին, իրենց շրջանակներով: Ատանայէ դուրս կատարուած ջարդն ու թալանը ապրիլի առաջին կէսին մէջ կատարուեցան, երբոր քաղաքը հանդարտած և ամէն վտանգ հեռացուած կը կարծուէր:

3118. ԴԱՐՁԵԱԼ ԱՏԱՆԱ

Քաղաքին մէջ վագացուած վստահութիւնը այնչափ մեծ էր, որ երբ ապրիլ 5-ին կառավարութիւնը Հայերէն պահանջեց իրենց պէնքերը յանձնել, անհակառակ համակերպեցան, միտքէ իսկ չանցունելով թէ կրնայ խարդախ ծուղակ մը ծածկուած ըլլալը այդ հրամանին ներքև, մանաւանդ որ օտարապահներէ ալ չընդդիմանալու յորդորներ կը կրկնուէին, Կ. Պոլսոյ տեղապահէն ալ պէնք չգործածելու հրահանգներ կը հասնէին (ԹԵՐ.60): Հայերուն վստահութիւնը չափազանց եղաւ, զի կամակար իրենց պէնքերը յանձնեցին երբ Տաճկահայերու պէնքերը չուկուեցան ու չհաւաքուեցան, և ոչ ալ Իթիտալ անունովն որ հրատարակուիլ սկսած լրագիրին յօդուածներէն ցնցուեցան, որուն խմբագրապետը Իհսան Ֆիքրի, իթթիհատի տեղական ակումբին պետը, շարունակ հայերը հարուածելու, և ապրիլ 1-ի ոճիրին սկզբնաւորութիւնը ու պատասխանատուութիւնը Հայերուն վրայ ձգելու, և Թուրքերը անմեղ զոհերու կերպրանով ցուցնելու կաշխատէր ու կը գրէր: Այդ նպատակին ուղղուած յօդուածներուն լրումն է ապրիլ 7ին Իսմայիլ Սաֆա ստորագրութեամբ և սոսկալի ապստամբութիւն մը վերտառութեամբ հրատարակուած երկար յօդուածը (ԹԵՐ.61-70), ուսկից աւելի չարամիտ թելադրութիւն և աւելի սուտակասպաս վրպարտութիւն դժուար է մտածել (ՄՈՒ.34): Հայերը տակաւին անկասկած էին, և Կ. Պոլսոյ վրայ քալող Սելենիկի բանակին հրամանատար Մահմուտ Շէվքէթ փաշայէ հասած հեռագիրը, որ Ատանայի խաղաղութեան համար վաշտ մը զինուոր Տէտէպաճէ ձամբայ հանած ըլլալը կը ծանուցանէր, ևս քան վես աճեցուցած էր Հայերուն վստահութիւնը: Իրօք ալ վաշտը հանդէսով Ատանա մտաւ կիրակի առտու ապրիլ 12ին, և Հայերու կողմէ որոտընդոստ ծափերով և կէցցէներով մեծարուեցաւ և ստոյգ ապատարարի ցնծութեամբ որջունուեցաւ (ԹԵՐ.94): Քանի օրերէ իվեր քաշուած խուժանին բազմութիւնը վաշտին հասնելուն առթիւ յանկարծ նորէն համախմբուեցաւ քաղաքին կեդրոնին մէջ, յայտնի նպատակով աւերն ու աւարը նորոգելու, և խաղաղութիւն պահպանելու եկող զինուորներն ալ իրենց գործակից ընելու: Իթիտալ լրագիրին շարունակեալ յօդուածները, կառավարութեան պաշտօնական անձանց ընթացքը, կատարուած գործողութեանց պարագաները, կասկած չեն թողուր պատրաստուած մտադրութեան հեղինակներուն վրայ: Գոռում գոչումներ, անհիմն վրպարտութիւններ, մինչև իսկ հոյակապ քարաշէն Եազձամիսի մվկիթը կրակելու ամբաստանութիւններ, խուժանապետներու ընկերակցութեամբ կեղծ կամ իրաւ մոլեռանդ փաթթոցաւորները ամբոխը հրահրելու և ժխորը գրգռելու ջանքերը, յայտնի նշաններ են նորոգուած տագնապին սկզբնաւորութիւնը ճշդելու:

Իբրև գրգռութեանց լրումն՝ պիտուորականներուն կողմն ալ պէնք կը պարպուի, իբրև թէ Հայեր արձակած ըլլան, մինչ անոնք քիչ առաջ այնչափ անկեղծ խնդութեամբ գունդին հասնիլը ողջունած էին: Վերջապէս նպատակը կը յաջողի, նոր հասնող գունդն ալ խուժանին կը խառնուի, սուր և հուր, հրապէս և հրդեհ, խողուրոց միանգամայն ձեռք կառնուին, կիրակի ապրիլ 12 կէսօրէին քանի մը ժամ ետքը, հայաբնակ Ատանան լայնածաւալ հրկիպութեամբ կը շրջապատուի, հրդեհի շրջանակէն դուրս գտնուող բնիկ և օտար հաստատութիւններ, գործարաններ, տուներ, և շրջափակներ, խուճապի մատնուած Հայերով կը լեցուին, և բարեսէր անձանց կանանց և աղջկանց, ընդունելութեան և պաշտպանութեան կապաւինին, իսկ որոնք չեն կրնար հասնիլ անողորմ խուժանին և կատաղի զօրականին հարուածներուն ներքև կը մահանան, և այս երկրորդ ջարդը նախորդէն հարիւրապատիկ աւելի վնասներ կը պատճառէ կործանելով Ատանան: Հրդեհին մէջ այրած շէնքերուն կարգին յիշատակուելու արժանի են, Հայոց Ս. Ստեփանոս եկեղեցին, և Մուղեղեան ու Աշխէնեան վարժարանները, Հայ-Հռոմէականաց եկեղեցին ու վարժարանը, Հայ Բողոքականաց ժողովարանն ու վարժարանը, Ասորոց եկեղեցին, Լատին կրօնաւորաց վանքը ու մայրապետաց կուսաստանը, Հայոց շուկան ամբողջապէս, և Հայոց տուներէն հինգէն չորսը, իսկ բովանդակ Ատանայի կուսակալութեան մէջ այրած ու վնասուած քաղաքներ ու գիւղեր 37 կը հաշուուին (ԹԵՐ.668), եկեղեցիներ և դպրոցներ 50, տուներ և ամառանոցներ, տնակներ և խանութներ 5000է աւելի. իսկ անձեր ամէն կերպով պակսածները գումարելով 30000-ի կը հասնին իսկ կոտորածին մէջ ինկողներ Ատանայի և Հալէպի կուսակալութեանց մէջ 20,000 կամ 21,330 (ԹԵՐ.254) և կամ 22,512 հաշուուած են, երկու կուսակալութիւններէ դուրս տեղերէն եկած պանդուխտ գործաւորները չհամրելով (ԹԵՐ.281): Իսկ կառավարական յայտարարութիւններ նախ 10,000ի վերածեցին կոտորելոց թիւը (ԹԵՐ.302), իբր թէ այսչափ կոտորելը ներեալ ըլլար, բայց վերջէն այս թիւն ալ պեղչելով 1435ի իջեցուցին, 1924 ալ իսլամ սպանեալ հարկադրելով (ԹԵՐ.607), ինչ որ ոչ մի կերպով կրցաւ հաստատուիլ: Սպանելոց մէջ յանուանէ ծանօթ կրօնականներէն կը յիշուին՝ 4 վարդապետ, 12 քահանայ և 19 բողոքական քարոզիչ (ԹԵՐ.158-160): Ասոնց հետ պետական պաշտօնեաներ ալ սպաննուած են բաւական թուով, որոնց գլուխը կրնանք դասել Պօղոս Թագւորեան կուսակալութեան երկրաչափը (ԹԵՐ.100): Ատանայի երկրորդ ջարդը, որ կիրակի երեկոյին սկսած էր, շարունակեց բոլոր գիշեր և միւս օրը, և դադարեցաւ միայն երեքշաբթի 14ին, երբ Ապտիւլհամիտի գահընկէցութեան և Մէհմէտ Ռէշատի գահակալութեան լուրը հասաւ, և նոյն իսկ կոտորածը արժարժող գունդը յանկարծ ազատարարի փոխուեցաւ, ինչպէս սպաններէն մէկը բարձրաձայն կը կոչէր, թէ ասկէ ետքը մի՛ վախնաք, մենք ազատարար պիտուորներս զձեզ պաշտպանելու եկած ենք (ԹԵՐ.124): Բայց շատ ուշ, Ատանան կործանած էր, Հայաբնակ Ատանան այլևս չկար, անտէրունչ փախստականներ անօթի և ծարաւ և բացօթեայ կը տուայտէին, իսկ Մերսինի առջև խարսխած եւրոպական մարտանաւերու միջազգային տորմիդը, որ առաջին ջարդին լրանալուն հասած էր, չէր ազդած և չէր շարժած երկրորդ ջարդը արգիլել:

3119. ՆՊԱՍՏՔ ԵՒ ԽՆԱՄՔ

Կոտորածը արգիլելու եկող տորմիդին երախայրիքը եղան անգղիական մարտանաւին բժիշկները և հիւանդապահները, կարծես աւելի Կարմիր Խաչի քան պիտուորական ոյժի դերը վարելու եկած ըլլային: Կոտորածին երեսէն ծագած խեղճութեանց տեսարանն ու լուրերը ոչ թէ ականատես տորմիդը, այլև բոլոր աշխարհ դղրդեցին, և ամէն կողմերէն բարեսէր և բարեսիրտ անձանց խիղճը շարժեցին, հնարաւոր օգնութիւնը հասցնել անոք և անօգնական մնացող կիներու և տղաքներու պի կոտորածին դիտած և ջարդած զոհերը յատկապէս այր մարգերն եղած էին: Բաւական մանրամասնութիւններ տուինք վնասներու մասին, որոնց համապատասխան պէտք էր

ըլլային հասած նպաստները, պէտք էր բաւէին հազարներով այրիներ և որբեր կերակրելու և հագուեցնելու և բնակեցնելու, ամբողջ քաղաքաբաժնի մը բազմաթիւ գիւղերու բնակարաններ վերաշինելու, թալանուած և չքաւոր դարձած վաճառականներու գործերը վերանորոգելու, հանրօգուտ կրօնական և դպրոցական հաստատութեան տեղերը վերականգնելու, յուսաբեկ և յուսակորոյս ժողովուրդին վրայ գործունէութեան աշխոյժ և աշխատանքի ժրութիւն ներշնչելու: Առաջին շարժումը ազգէն պէտք էր սկսէր, և պատրիարքարանը թէ ազգային և թէ միջազգային յանձնաժողովներ կազմեց, հաւաքմանց և բաշխմանց և յարմարագոյն որոշմանց համար: Հոգ տարաւ որբանոցներ բանալ՝ Մերսին, Ատանա, Հաճըն, Տէօրթետլ, Հասանպէյլի, Այնթապ և Մարաշ, անխնամ վիճակէ յառաջ եկած համաճարակներուն առջևն առնելու համար բժշկական դարմաններ հասցնել, լքեալ այրիներ պահելու և աշխատեցնելու կերպեր մտածել, և այդ նպատակներուն համար պատուիրակներ յղել տեղւոյն վրայ, Վի գործի գլուխ կանգնելու մարդն ալ կը պակսէր: Առաջին հասնողներ եղան Գէորգ Ասլանեան վարդապետ և Սարգիս Սուին յանձնակատար, որոնց կընկերանար Մկրտիչ Վեհապետեան եպիսկոպոս՝ Մարաշի առաջնորդութեան երթալուն առթիւ: Անոնց կը հետևէին Յակոբ Աշոտ Փափապեան եպիսկոպոս, Գնէլ Գալէմբեարեան վարդապետ և Գալուստ Պօղոսեան քահանայ: Կարմիր Խաչի անունով քսան երիտասարդներու և մանկամարդերու խումբ մը յօժարակամ աշխատութեան կը փութար, որոնց կարգին յանուանէ յիշուելու արժանի են Արշակունի Թէոդիկ և Զապէլ Եսայեան տիկիներ և Սաթենիկ Օհանջանեան օրիորդ: Կնճիռներու առիթ տուող գործերու պաշտպանութեան փութացին Խնդիր Սիմոնեան և Կարապետ Այճեան փաստաբաններ, և ընդհանուր հսկողութեան պաշտոնով հասան խաչատուր Գոռուպեան պատուելի, և Յովհաննէս Զայեան և Լևոն Փափապեան գործակատարներ (ԹԵՐ. 151-153): Կարմիր Խաչի անունով անձնուէր աշխատողներուն հետևեցաւ Կարմիր Մահիկի խումբն մըն ալ թուրք և հայ բժիշկներէ և դեղագործներէ և հիւանդապահներէ բաղկացած (ԴԵՐ. 147), ընդհանուր խիղճն էր որ իր Վգացումները գործով կը յայտարարէր: Զմոռնանք յիշել օտարազգի հաստատութեանց առատաձեռնած նպաստն ու խնամքը (ԹԵՐ, 835), ինչպէս նաև միջազգային տորմիդին կողմէ ընծայուած օգնութիւնը, խեղճերուն նպաստելու և հաւաքելու և փոխադրելու համար եթէ օգտակար չէր չարիքը արմատէն խափանելու: Նպաստի գումարներն ալ ուզելով յիշել պատրիարքարանը առաջին 1000 ոսկիին վրայ իբր 20,000 ոսկի ալ ազգային յանձնաժողովին ձեռքով բաժնեց, և 16,000 ալ միջազգային ճիւղէն հաւաքուեցաւ և յղուեցաւ, որոնցմէ դուրս են Մանչեսթրի և Փարիզի հայ գաղութներէն Վրկուած 100 հազ Կգեստից և գեղօրէից պիտոյք (ԹԵՐ. 814-818): Իսկ որբերուն թիւը որչափ հնար եղած է ցուցակագրել հաշուած է 1,426 ազգային որբանոցներու մէջ, 1,738 օսմանեանն օտար հաստատութեանց մէջ, և 7,593 մօրերնուն մօտ խնամուած (ԹԵՐ. 819-822): Ասոնք ցուցակագրուածներն են, թող աստուանդ մնացածները, թո՛ղ ցուցակագրուելէն առաջ սնունդի պակասութենէն և հիւանդութիւններէ մեռածները (ԹԵՐ. 336): Այրիախնամ ալ առանձինն գործեց 4,072 ցուցակագրեալ այրիներու հոգը ստանձնելով 67 քաղաք ու գիւղերու մէջ ցրուած (ԹԵՐ. 831-833): Պետութիւնն ալ ետ չմնաց եթէ ոչ վնասին համաչափ, գոնէ պարագայից համեմատ օգնութիւններ յղել. 100,000 ոսկույ նպաստ մը Օսմանեան երեսփոխութիւնը քուէարկեց, և հինգ տարուան համար ալ տարեկան 10,000 ոսկի կառավարութենէ սահմանուեցաւ որբերու ծախքերուն: Իսկ վաճառականներուն օգնութեան համար հինգ տարի պայմանաժամով 50,000 ոսկի փոխ գումար տրամադրուեցաւ (ԹԵՐ. 811): Ասով մէկտեղ շատ վաճառականներ փչացան, շատ անձեր գաղթեցին, գործատէրներ պաշտօնեայ դարձան, և Կիլիկիա Վգալապէս նուազեցաւ իր առաջին բարգաւաճ վիճակէն: Աղետին ընթացքին չպակասեցան բարեսիրտ անձեր, նոյն իսկ Տաճիկներ,

որոնք հարիւրաւոր անձերու պաշտպան կանգնելով կեանքերը ապատեցին, որոնց կարգին յատուկ յիշատակութեան արժանի է Լաւոդիկէի կառավարիչ Մուհամմէտ Ալի պէյը, որ Քէսապի և շրջակայից բնակիչներէ 7,000 հոգի կոտորածէ պերժ պահեց և ապահով տեղեր փոխադրեց (ՊՐԷ.262-265, ԹԵՐ.802): Ատանայի Հայ Հոռմէականաց առաջնորդ Պօղոս Թերպեան եպիսկոպոսն ալ նոյն նպատակին աշխատեցաւ (ՊՐԷ.274), և կատարեալ պիտի ըլլար իրեն համար գովեստը, եթէ իր նամակներով իր ծածուկ միտքը չյայտնէր, այդ կերպով Հայ եկեղեցւոյ վաւակները հոռմէադաւանութեան ծոցը հրապուրելու նպատակը: Իսկ Խապայեան կաթողիկոս Սոյ մայրավանքը կը մնար աղէտներու միջոցին, ինքն ալ արգելական և Սիսն ալ խաժամուժին ձեռնարկներուն ենթակայ, հապի թէ տեղացիները կարգաւորելով և զինուորական օգնութիւններ փութացնել տալով Սիսի ինքնապաշտպանութեան մէջ մեծ բաժին ունեցաւ (ԹԵՐ.232), գլխաւորապէս ապրիլ 6ի բուռն յարձակումին օրը (ԹԵՐ.228), և վտանգը անցնելէն ետքը հնարաւոր օգնութիւնն ու պաշտպանութիւնն ըրաւ վանապան կողմերէ փախստական վանք ապաւինողներուն (ԹԵՐ.231): Մերձակայ վտանգեալ տեղեր այցելութեան ելաւ (ԹԵՐ.456), միխթարելու և սփոփելու աշխատեցաւ, և միւս կողմէն չկասեցաւ թէ՛ տեղական իշխանութեանց և թէ՛ ազգային ու պետական կեդրոններու տեղեկութիւններ հասցնել և կարևորը թելադրել (ԿՍԿ.65):

3120. ԴԱՏԱՍՏԱՆ ԵՒ ՎՃԻՌ

Կիլիկիոյ աղէտին ահաւոր տեսարանը չէր բաւեր չափաւոր նպաստներով և հնարաւոր խնամքներով չարը դարմանել և այսչափով գոհանալ, գործին բարոյական և օրինական մասը կար, պատասխանատուութեան խնդիրը կար, դատաստանին և պատիժին որոշումը կար, և հանրային կարծիքն ու գործոց պաշտօնական ընթացքը այդ կէտերուն պարզուիլը կը պահանջէր: Օսմանեան կառավարութեան վրայ անտնօրինելի պարտք մը կը ծանրանար աշխարհի առջև բացատրութիւն մը ներկայել, և որչափ հնար էր տխուր գործին մասին իր վրայ ծանրացող կասկածը փարատել: Հակառակ շատերու տեսութեանց, մենք Ապտիլհամիտը ապատ չցուցուցինք գործին մասնակցութենէն, բայց և միանգամայն Ապտիլհամիտի և իթթիհատի տեսակ մը համաձայնական գործունէութեան կերպարանը պարպեցինք, ազգայնամուլ գետնի մը վրայ իրարու մերձաւորութեամբ, թէև ոչ անկեղծ և ոչ համամիտ համոզման մը հետևանք: Իթթիհատի շատ դիւրին պիտի ըլլար բոլոր պատասխանատուութիւնը Ապտիլհամիտի վրայ բեռցնելով ինքզինքը ամբողջովին ապատել, բայց այս հնար չեղաւ. ուստի իթթիհատը իրեն պատուոյ խնդիր ըրաւ իր կուսակցութիւնը չաղարտել, նորակազմ վարչականութիւնը նախորդին պաշտպանութիւնը ստանձնեց, և անմեղը մեղաւոր և մեղաւորը անմեղ ցուցնելու գրութիւնը կազմեց, որ զինքն արդարացնէ: Թէպէտ կուսակալ ճէվատ պէյի տեղ Պապանվատէ Մուստաֆա Ջիհնի փաշան անցաւ (ԹԵՐ.282), բայց անձը փոխուեցաւ և ոչ ուղղութիւնը: Զինուորական ատեանի դրութիւնը խորհուեցաւ, բայց առաջ յանցաւորներ պատրաստելու համար կամայական ձերբակալութիւններու ձեռնարկուեցաւ, բանտակելով ողջ մնացած Հայերը, և ձեռքի տակէն փախցնելով աղէտին կազմակերպողները (ԹԵՐ. 339), և միայն խուժանէն քանիներ բանտարկելով, բայց ոչ վարիչները, մինչ Հայերէն աւելի աչքի ինկող անձեր կը ձերբակալուէին: Աղէտի նոր արարուած մը սկսան կազմել ձերբակալութիւններն ու բանտարկութիւնը, անոնց վրայ գործածուած բռնութիւնները, վայրագ պաշտօնեաներու թոյլատրուած հարստահարութիւնները: Վերջապէս զինուորական ատեանը մայրաքաղաքէ հասաւ և գործի ձեռնարկեց, գլխաւորը Ատանայի Մէջ նստաւ, Էրպիսի և Անթաքայի մէջ ալ մասնաւոր ատեաններ կազմուեցան (ԹԵՐ. 373), Պահ մը գեղերեսեց նա իր պաշտօնը, բանտէն ապատ արձակելով բաւական թիւով Հայեր, և ընդհակառակը ձերբակալել տալով բազմաթիւ թուրքեր խուժանին գլխաւորներէն (ԹԵՐ. 340): Բանտարկեալներուն մասին ալ

ընթացքը փոխուեցաւ արաբացի կոշտ պինուորներու տեղ մայրաքաղաքէ եկող ոստիկաններ անցան, և մինչև աստիճան մը կարգապահութիւնը կամայականութեանց փոխանակեց (ԹԵՐ, 368), բայց գլխաւոր նպատակը չփոխուեցաւ, ատեանները ոչ ուղիղ արդարութեան, այլ քաղաքագէտ ճարտարութեան հետևողութեամբ գործելու հրահանգուած էին պէտք էր Հայերը իբրև առաջին գրգռիչներ դատել և իբրև յանցաւորներ դատապարտել, թուրքերը իբրև պաշտպանողականը չափազանցողներ ներկայել, իսկ բուն սկզբնապատճառները ծածկել ու փախցնել ու մոռացուեցամբ քողարկել: Այդ ալ եղաւ պատերազմական ատեաններուն գործողութեանց արդիւնք, և վայն արտադրելու համար անխըտիր գործածուեցան սուտ վկայութիւններ (ԹԵՐ, 354), անգիտական վկաներ, խոշտանգանօք իլուած խոստովանութիւններ, և ենթադրական կարծիքներ: Մահուան վճիռ ստացան վեց Ատանացի և վեց Հաճընցի Հայեր: Ատանացիներու դատապարտութեան համար իրենց կայտառ կերպարանքէն և մսագործութեան արհեստէն պատ հիմ չկար, պի ոչ իսկ ինքնապաշտան խումբին մասնակցած էին և շփոթ օրերը պահուրտած անցուցեր էին, այսու հանդերձ կախաղան բարձրացան մայիս 18-ի գիշերը (ԹԵՐ.377-383): Իսկ վեց Հաճընցիներէն միայն մէկին վրայ վճիռը գործադրուեցաւ, և միւս հինգերուն կեանքը շնորհուեցաւ (ԹԵՐ.377): Մահուան դատապարտուած Հայերուն 13-երրորդը Սերոբեան Յուշեղ եպիսկոպոսն եղաւ, իբրև կանուխէն ժողովուրդը ապստամբութեան գրգռող (ԹԵՐ.378), այլ նա բացակայ էր, և վերջէն պատիժը բոլորովին ներուեցաւ: Իսկ թուրքերէն յիսունի չափ մահուան դատապարտուածներուն ամէնն ալ հասարակ խուժանի կարգէն էին, և միայն մէկ երկու խուժանապետներ, բայց միայն հապիւ քսանի չափ հոգիներու վճիռը գործադրուեցաւ, և այն ալ շատ ուշ, ամէն կողմէ ձայն ու դիտողութիւն բարձրանալէ ետքը, և մնացեալներուն պատիժը բերդարգելութեան փոխուեցաւ: Իսկ գլխաւոր գրգռողներ և դաւաճանութիւն կազմակերպողներ անպատիժ մնացին, որպէսպի հնար ըլլայ գործին կերպարանը այլայլել, և աղէտին պատասխանատուութիւնը Հայերու վրայ ծանրացնել: Վերոյիշեալներէն պատ վանապան պատիժներով դատապարտուած Հայեր եղած են 30 հոգի Էրպիւնի ատենէն (ԹԵՐ.378), և 14 Ատանայի ատենէն, և ուրիշ բազմաթիւ հայեր ի բացակայութեան (ԹԵՐ.383): Դատապարտուածները ընդհանրապէս Ռոտոսի և Պօտրումի բանտերը փոխադրուեցան, շատերը շղթայակապ (ԹԵՐ.378): Թուրքերէն վանապան պատիժներով դատապարտուածներ երկու հարիւր եղան, որոնց մեծ մասը քանի մը ամիսներէն ներուեցան և միայն 86 հոգի մնացին. իսկ Ատանայի պատահարին առթիւ դատապարտուածներուն ընդհանուր ներումը երկուքուկէս տարի ետքը շնորհուեցաւ, 1912 դեկտեմբեր 20-ին, և կոտորածին հաշիւը գոցուած համարուեցաւ (ԹԵՐ.836):

3121. ԲՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՈՂՈՔ

Սակայն ընդհանուր ըմբռնումը չհամակերպեցաւ պինուորական ատեաններու վճիռներուն, ոչ այնչափ դատապարտուածներուն թիւին կողմէն, որչափ ընդհանուր տեսակէտէն, իբր թէ Հայեր եղած ըլլային կոտորածին պատճառները, ապստամբական կազմակերպութիւններ պատրաստած, և թէ վայն իրագործելու ձեռնարկած ատեանին Տաճիկներու արդար վրէժխնդրութեան մատնուած ըլլային: Աչքառու պարագայ մըն ալ էր որ դատապարտուածներ և կախաղան հանուածներ կատարեալ անմեղներ էին, որոնց վրայ հնար չէր և ոչ իսկ պատահական կամ ենթադրական յանցապարտութիւն մը յարմարցնել, և այս ևս քանվ և կը շեշտէր պինորական ատեաններուն սխալ քաղաքականութեան և ոչ արդարութեան ծառայած ըլլալը, ինչպէս որ կը յայտնուի նոյն ատեանին արդարութեան դատաւորի տեղ քաղաքական քննիչի դերը ստանձնելով և հին դէպքերը խեղաթիւրելով, Հայերը յանցապարտ ցուցնելու համար յունիս 24 թուականով կազմած ընդարձակ տեղեկագիրէն (ԹԵՐ. 717-741): Ատանայի մէջ գտնուող վանապան քրիստոնեայ հասարակութեանց

եօթը հոգևոր պետերը, կանխեր էին տեղեկագիր մը ներկայել պատերազմական ատեանին, եղելութեանց իսկութիւնը պարզող (ԹԵՐ. 393-399): Մէպուսանին կամ օսմանեան երեսփոխանութեան մէջ խնդիրը նկատողութեան կառնուէր, և ապրիլ 19 նիստին մէջ կը յայտարարուէր ճէվատ կուսակալին 13 ին վրկած տեղեկագիրը, որ հայերը կամբաստանէր (ԹԵՐ. 592-593), սակայն վօրաւոր ձայն մը, Ռիպա Թէվֆիք փիլիսոփայ բժշկին ձայնը, ընդհանուր ծափերուն մէջ կը յայտնէր, թէ ապատութիւն վերստանալու համար մեզ օգնող, և հակառակ մեզմէ տեսած տգեղ վարմունքներուն մեզմէ չբաժնուելու մրցող ժողովուրդ մը սկէ կերպով չենք կրնար ամբաստանել (ԹԵՐ. 599): Յաջորդ նիստերու մէջ ալ Ատանայի աղէտը խօսից նիւթ կըլլար, և վերջապէս Մեպուսանը հարը կը սեպէր իր կողմէ քննիչներ նշանակել ճշմարտութիւնը ստուգելու, և մայիս 19 ին քննիչ կընտրուէին Յակոբ Պապիկեան և Եուսուֆ Բէմալ երեսփոխանները (ԹԵՐ. 611), որոնք իսկոյն մեկնեցաւ, ինչ որ չարգիլեց մայիս 28 ի կախաղանները (3120): Կառավարութիւնն ալ իր կողմէն յատուկ քննութեան պաշտօնով Ատանա յղած էր պետական խորհրդոյ գերնախագահ Ֆայիք պէյը և դատական քննիչ Յարութիւն Յոստիշեանը, անոնց ընկերակից տալով Մերսինի կառավարիչ Էստա պէյը (ԹԵՐ. 699), որ գովելի ընթացք ունեցած էր կոտորածի օրերը: Ատանայի կրօնական պետերը անմեղներու դատապարտութենէն և մեղապարտներու արդարացումէն և Հայոց դէմ յարուցուած յօրինուածոյ վրպարտութիւններէն յուզուած, յունիս ամսոյ մէջ իրենց դիմումները շատցուցին, նամակներով և հեռագիրներով իսկութիւնը պարզեցին, նախ իրենց մօտ գտնուող ատեաններուն և քննիչներուն, և յետոյ հեռուն եղող կայսեր և նախարարութեանց և խորհրդարանին և դեսպանատանց և պատրիարքարանաց: Խապայեան կաթողիկոսն ալ Սիսէն ամէն կողմ կը հասցնէր իր բողոքները (ԿՍԿ.67-70), յունիս 11ին ընդարձակ տեղեկագիր մըն ալ Մէպուսանին կը դրկէր Հայոց վրայ դրուած վրպարտութիւնները հերքելով և անմեղներու մահապարտութեան դէմ բողոքելով (ԿՍԿ.70-75): Սերոբեան ալ Եգիպտոսէն հերքմնագիր մը կը ցրուէր թէ՛ իր անձին և թէ՛ իր ժողովուրդին վրայօք խօսուած ու գրուած վրպարտութեանց դէմ (ՄՈՒ.87-89,ԹԵՐ.754-765): Ազգային ժողովի մէջ ալ շարունակ էին բուռն վիճաբանութիւններ նոյն աղէտին հետևանքներուն մասին, Հայոց վրայ բարդուած վրպարտութեանց համար ցաւելով, և մանաւանդ գլխաւոր մեղապարտներու անդատապարտ մնալուն պայրանալով: Արշարունի տեղապահին ազգային վարչութեան հետ համախորհուրդ դիմումներն ու գրութիւնները կը շարունակէին որոնց կարգին մայիս 23ի յիշատակագիրը ծափահարութիւններով կը կարդացուէր Ընդհանուր ժողովին մէջ (ԹԵՐ.551-559): Իբրև արդիւնք այդ ամէն ձիգերու թէ՛ կառավարական և թէ՛ խորհրդարանական քննիչներու տեղեկագիրները կու գային հաստատել ազգային բողոքներուն ստուգութիւնը, և մատնանիշ ալ կընէին կոտորածին իսկապէս պատասխանատու անձերուն անունները, և կառավարական քննիչ յանձնաժողովը յունիս 27ի տեղեկագիր մը (ԹԵՐ.689-699) և ամբաստանագիր մը կը ներկայէր (ԹԵՐ.699-715), առաջինով եղելութեան ճիշդ պատմութիւնը կը քաղէր, և երկրորդով դատական ոճի համեմատ ամբաստանութեան ապացոյցները կու տար 24 յօդուածներով, և կոտորածին պատասխանատու անձանց անունները կը յիշէր: Յարութիւն Մոստիշեան համարձակ ոճով գիրի առած էր ամբաստանագիրը և իր ընկեր Ֆայիք պէյի հետ ստորագրած: Իսկ Յակոբ Պապիկեան Ադրիանուպոլսեցի՝ Իթթիհատի անդամակից և մայրաքաղաքի անժանօթ անձ մըն էր. պահ մը կասկածի առակայ եղած էր շատերու կողմէ, սակայն իր հեռագիրը (ԹԵՐ.442), իր տեղեկագիրը (ԹԵՐ.446-454), և իր լրագիրներու հաղորդած յայտարարութիւնները (ԹԵՐ.455-463), արիութեամբ և անկեղծութեամբ և մինչև Իթթիհատը մեղադրելու աստիճան առաջ երթալովը, մեծ և արդար ազգասէր մը յայտնեցին զինքն, այնպէս որ քիչ օր ետքը յուլիս 19ին խորհրդաւոր կերպով տեղի

ունեցած իր յանկարծական մահը (09.ՄՆՁ.2445) արդար կասկածներու տեղի կու տար, երբ որոշուած էր միւս օր 21ին յատենի ժողովոյն իր տեղեկագիրը կարդալ (ԹԵՐ.445), որ օր յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ աննախընթաց և անօրինակ և փառաւոր հանդէսով (09.ՄՆՁ.2446): Տեղեկագիրին ընթերցումը մահուան պատճառով 25ին կը յետաձգուէր ընթերցումը իր ընկերին Եուսուֆ Բէմալին տեղեկագիրին հետ միասին, որ հրապարակաւ յայտարարած էր թէ ներկայուելիք ամէն կէտերու մասին համաձայնութիւն ունեցած էին (ԹԵՐ.621): Սակայն յուլիս 25ի ընթերցումն ալ խափանուեցաւ, և տեղեկագիրները նախաքննիչ յանձնաժողովին յղուեցան և հոն մնացին, և այլևս Կիլիկիոյ աղէտին խնդիրը անգամ մըն ալ չյիշուեցաւ օսմանեան երեսփոխանութեան ժողովին մէջ (ԹԵՐ.623): Սակայն նախարարութեան մէջ բարձրթողի չեղաւ: Գաբրիէլ Նորատունկեան առևտրական գործոց նախարար՝ իր ընկերակիցները համոզեց և յորդորեց գործին պատուաւոր վերջ մը տալ, ինչպէս Մեծեպարքոս Հիւսէյին Հիլմի փաշա՝ Իվմիրլեան կաթողիկոսն ալ կը վստահեցնել հրաժեշտի ընդունելութեան առթիւ, թէ և յանցաւորները օրէնքի ամբողջ խստութեամբ պատժելու խոստումը կը խօսէր (ՄՐԴ.9), բայց դարձեալ անգործադիր կը մնար մինչև Դուրեան պատրիարքին կողմէ եղած ստիպումներուն վրայ (09.ՄՆՁ.2437) յուլիս 31ին բոլոր կուսակալութեանց եպարքոսական ընդարձակ շրջաբերական մը կը յղուէր, որ կը հաւաստէր թէ բացարձակ կերպով ապացուցուեցաւ թէ հայ ժողովուրդը օսմանեան մեծապօր կայսրութեան հանդէպ իր ունեցած հաւատարմութենէն երբեք չի եղած: Այդ պաշտօնական յայտարարութիւնը ի դէպ կու գար ճշմարտութիւնը փաստերով և ցուցմունքներով հռչակել համարձակող տաճիկ հեղինակներու գրութեանց, ինչպէս Վիլլիէտտին Եէկէն Մուքաթթեմ լրագիրին մէջ (ԹԵՐ.493-496), Թէքատտիւմ թերթին խմբագրապետը իր դիտողութեանց մէջ (ԹԵՐ.789), և Միլան լրագրի տնօրէն Կովկասցի Մուրատ պէյը իր պատճառաբանեալ յայտարարութեանց մէջ (ԹԵՐ. 805-810): Գաղղիոյ և Գանդիոյ խորհրդարաններն ալ (ԹԵՐ.624 և 648) Հայոց անմեղութեամբը կը վբաղէին, բայց լոկ խօսքերը չէին գոհացներ Հայոց աղէտուր պագումը, որ կոտորածին պատասխանատու անձերուն վրայ արդարութեան գործադրութիւնը կը պահանջէր, և որուն պատրիարքութիւն և երեսփոխանութիւն չէին դադարեր թարգման ըլլալ, ինչպէս առաջիկային պիտի պատմենք:

3122. ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

Կիլիկիոյ աղէտին պատմութիւնը առիթ կը նծայէ անգամ մըն ալ Կիլիկիոյ կաթողիկոսարանին վրայ ընդհանուր ակնարկ մը նետել, իբր լրումն այն համառօտ տեսութեանց, զորս կանխաւ տուած ենք Խապայեանի պաշտօնավարութեան մասին (3080): Յարաբերութեանց խնդիրներուն վրայ պիտի չանդրադառնանք, զորս լիովին բացատրած ենք, թէ՛ Մաքսուտեանի սաղիմական կնճիռին տեսակէտէն (3055), և թէ՛ Կիլիկիոյ աթոռին դիրքին և կարծեցեալ իրաւունքներուն տեսակէտէն (3077-3079): Այդ խնդիրները վերջին տարիներու մէջ մեռեալ տառ մնացին, և Խապայեան երկու տեսակէտներէն ալ գործունեայ դեր մը չվարեց այլևս, զի 1908-ի փոփոխութիւնը արմատաքի ցնցեց նախընթաց դիրքը, և նոյն խնդիրները յուզելու կամ պնդելու տեղի չթողուց: Մաքսուտեանի անձին հանդէպ սէրը և անոր մեղադրեալ գործունէութեան մասին համակրութիւնը, անջնելի մնացեր էին Խապայեանի սիրտին մէջ, բայց այլևս չհամարձակեցաւ ինքզինքը յայտնել, տեսնելով որ նորերու մէջ շատ աւելի խիստ ընթացք մը ունեցաւ կեդրոնը Մաքսուտեանի մասին քան որչափ ինչ գործած էր նախընթաց օրերուն մէջ: Կիլիկիոյ աթոռին կարծեցեալ իրաւունքներուն մասին ալ նոր քայլ մը չառաւ Խապայեան, հարկաւ կռահելով որ նոր գործի գլուխ անցնողներ նոր գաղափարներէ առաջնորդուած, և ոչ իսկ նկատի առնելու պատիւը պիտի շնորհէին իր առաջարկութեանց: Գալով Կիլիկիոյ աթոռին ներքին կացութեան, այն տխուր

նկարագիրը պոր Խապայեան առջի օրէն 1903 յունիս 3 թուականով կեդրոնին հաղորդած էր (ԿՍԿ.4-27), հիմնապէս բարեփոխուած չէր. նա մեծամեծ գաղափարներով կօրօրուէր, Էջմիածնի շինութեանց համար Մանթաշեանցի և ուրիշ Ռուսահայերու առատաձեռն նուէրները իր միտքը կը գրգռէին (ԿՍԿ.1), և ինքն ալ թախանձագին կը դիմէր Տաճկահայոց ունևորներուն, Պատրիկ Կիւլպէնկեանի (ԿՍԿ.2), Գալուստ Կիւլպէնկեանի (ԿՍԿ.28), Յակոբ Տատեանի (ԿՍԿ.35), Միհրան Գարակէօսեան (ԿՍԿ.82), Աբրահամ Բարթողի (ԿՍԿ.45), Պօղոս Նուպարի (ԿՍԿ.54), սիրտերը շարժելու ջանալով և ձեռքերը բանալու յորդորելով, և նոյն իսկ Խրիմեան կաթողիկոսի (ԿՍԿ.3,31,36) գութը շարժելու համար մեղամաղձօտ նկարագիրներ կը տեղեկացնէր, և Ռուսաստանէ ալ Կարապետ Եզեանցի (ԿՍԿ.40), Յովհաննէս Ժամհարեանցի (ԿՍԿ.46), Տիրուհի Պոպովեանցի (ԿՍԿ.34) և ուրիշներու սրտագին դիմումներ կընէր: Դժբախտաբար արդիւնքը իր ջանքերուն չէր համապատասխաներ, կարծես հակառակ իր փութաջան ճիգերուն՝ խուլ թերահաւատութիւն կը տիրէր իր անձին շուրջը: Տաճկահայոց միտքին վրայ Մաքսուտեան խնդիրին արձագանգը նպաստաւոր գաղափարներ չէր արժեր (3080), և Ռուսահայոց վրայ լաւ տպաւորութիւն չէր գործեր կաթողիկոսական ընտրութեան չմասնակցելով Էջմիածինէ հեռու մնալու երևոյթը: Խապայեան Երուսաղէմի մէջ վարժարանաց հոգածութեան մէջ գտնուած, Սոոյ մէջ ալ ժառանգաւորաց վարժարանի վրայ կամփոփէր իր տեսութիւնը, և Սիս հասած ատեն գտած վարժարանին խեղճութիւնը տեսնալով, և անոր չէութիւնը էութիւնէ աւելի օգտակար համարելով, վարժարանը ցրուած էր, կամ լաւագոյնը ունենալ կամ բնաւ չունենալ սկսբունքով (ԿՍԿ.11): Բայց շուտով վագացած էր չունենալուն անտեղութիւնը, և նորէն բացած էր վարժարանը տեղական տկար ոյժերով, և հետզհետէ հնարաւոր վարգացումը տալու դիտմամբ, տեսչութեան կոչած էր Դպրեվանքի աշակերտութենէն Խաչատուրեան Գարեգին վարդապետը, որ 1906 ամանօրին պաշտօնի մտնելով, երկու դպրոցական տարեշրջան բոլորելէն ետքը, 1907 յունիսին հրաժարած էր իր տեսութեանց յարգ չընծայուելուն պատճառով, և Սոոյ միաբաններէն Դանիէլեան Ներսէս վարդապետի կը յանձնուէր վարժարանը սակայն անոր գործունէութիւնը գոհացուցիչ չգտնուելով՝ 1908 սեպտեմբերին դարձեալ Խաչատուրեան տեսչութեան կը կոչուէր, բայց տարին չլրացուցած 1909 մայիսին պաշտօնէ կը դադրէր Կիլիկիոյ աղետին երեսէն ժառանգաւորացը փակելու տրուած որոշման պատճառով: Այս առթիւ դիմում կըլլար կառավարութեան արձակեալ աշակերտներէն եօթը ընտիրները պետական վարժարանաց մէջ ընդունելու (09.ՄՆԶ.2436): Ժամանակին անձկութիւնն և ուրիշ ծանր հոգածութիւններ էին իսկական պատճառը, թէպէտ չտեսաւ այդ փակումը, բայց ձայն ալ հանելը չտեսաւ, զի տագնապը փութաջան գործունէութիւն ազդած էր Խապայեան կաթողիկոսին վրայ, որ իր տառապեալ հօտին պէտքերը հոգալու, Հայոց վերագրուած վրպարտութիւնները և մինչև կայսերական գահը բողոքներ ուղղելու (ԿՍԿ. 69), և արկածեալ տեղեր այցելելու փութաջանութեամբ, համակրական վագացումներ հրաւիրած էր իր վրայ և ստուգիւ ալ առաջին ժամանակներէն շատ աւելի գործունեայ դեր մը ստանձնած էր Խապայեանի, սարսափելի արկածին ազդու տպաւորութեան ներքև: Երբոր Իվմիրլեան կաթողիկոսի յաջորդին ընտրութեան ձեռնարկուեցաւ, Խապայեան դերձեալ չուզեց մասնակցիլ, և իր ընթացքը արդարացնելու ալ ջանաց մտերմական գիրերով (ԿՍԿ. 80): Հանրային կարծիքը նորէն լաւ աչքով չնկատեց այդ ձեռնապահութիւնը, թէպէտ ընտրութենէն ետքը իր շնորհաւորութիւնը փութացուց (ԿՍԿ. 89), և պահ մըն ալ միտք յղացաւ աննախընթաց քայլ մը առնել և անձամբ երթալ նորընտիրին յարգանք և շնորհաւորութիւն մատուցանելու, և այդ գաղափարը Արշարունի պատրիարքին ալ հաղորդեց (ԿՍԿ. 90), բայց նամակն իսկ անպատասխանի թողուեցաւ կեդրոնէն (ԿՍԿ. 91) անշուշտ աննախընթաց և չափազանցեալ առաջարկը իբրև ընդ խաղ խօսք մը

նկատուելուն պատճառով: Խապայեանի կաթողիկոսութիւնը մեծ աղէտէն ետքն ալ նորանոր տագնապալից արկածներու և տառապալից փորձանքներու շարք մը եղաւ, որ փոխանակ որ մը դադարելու, աւելի ահաւոր և ահարկու փորձանքներու դուռ բացաւ, և 1914 ի տառապանքով գագաթնակէտը հասաւ, բաց ասոնք իրենց կարգին:

3123. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Երուսաղէմի աթոռին և միաբանութեան վերաբերեալ գործերուն պատմութիւնը թողած ենք Մանկունի եպիսկոպոսին և Արիս Ֆէսճեանի պատուիրակութեան փակումին, երբ պատուիրակներուն Կ. Պոլիս դառնալէն ետքը կրօնական և քաղաքական ժողովներու ապենապետներէն բաղկացած մասնաժողովին յանձնուեցաւ պատուիրակութեան բերած տեղեկութեանց ամփոփումը կազմել, և Երուսաղէմի խնդիրին վերջնական կարգադրութեան ձևը առաջարկել: Իսկ Երուսաղէմի մէջ Մաքսուտեան հաշուեխոյս և շահակից ուղղութիւնը նուազած էր, և կանոնի նախանձախնդիր հաշուեպահանջներու առաջնորդութեամբ գործերը բաւական կարգաւոր և հանդարտ վիճակի մէջ կը քալէին, և ընդհանուր կերպով Երուսաղէմի կնճիռին վերջնական որոշմամբ մը փակուելուն վստահութիւնը կը տիրէր: Տնօրէն ժողովին անդամներէն Հմայեակ Երէցեան և Վահան Քէշիշեան վարդապետներ իրենց աղմկայոյս շարժումներուն համար հեռացուած էին (3072), առաջինը անպաշտօն ի Տարօն և երկրորդը տեսչութեամբ ի Լաւողիկէ, և մնացած հինգ անդամներ կը գործէին Յարութիւն պատրիարքի հովանաւորութեամբ: Ճիշդ այդ միջոցին էր որ օսմանեան ապատութեան հռչակուելովը Կ. Պոլսոյ պատրիարքարանին գործերը հիմնական փոփոխութիւն կրեցին հիներու դէմ յուզուած հակառակութիւնը և նորերու աղիմակի տիրապետութիւնը գործոց ընթացքը, այլայլեցին, և պարտերու արձակման և աքսորականներու ազատման հրաման տրուեցաւ, ուսկից օգտուեցան Երուսաղէմի գտնող Իզմիրլեան նախկին պատրիարք և Խարախանեան Տարօնոյ առաջնորդ Կ. Պոլիս դառնալու: Այս առիթով տնօրէն ժողովէն անգամ մըն ալ պակսեցաւ, Մեսրոպ Նշանեան վարդապետը, որ Իզմիրլեանի մինչև Կ. Պոլիս ուղեկցելու որոշուեցաւ (3105),բայց հոն հանելէն ետքը Երուսաղէմի շփոթները լսելով ետ դառնալը յապաղեց, և տնօրէնը շարունակեց չորս անդամով գործել որոնք էին, Դաւիթ Տէրտէրեան լուսարարապետ, Գրիգորիս Պօյաճէան, Մովսէս Ոսկերիչէն և Սարգիս Աճէմեան: Ելեմտից տեսուչ էր Մատթէոս Գայրվճեան, վարժարանաց տեսուչ Պետրոս Սարաճեան, և Յոպպէի տեսուչ Սերոբէ Սամուէլեան, և գործերը կը շարունակէին տակաւին համերաշխութեան ընթացքով: Սակայն Կ. Պոլսոյ անցքերը հետզհետէ սկսէր էին ազդել Երուսաղէմի մտայնութեանց վրայ, թէպէտ հակառակ ուղղութեամբ: Մայրաքաղաքին մէջ սահմանադրական ապատականներն էին, որ իբրև թէ աղիկամի գործողներու վրայ կը զօրանային, իսկ Երուսաղէմի մէջ աղիկամի գործողներն էին որ կանոնի նախանձախնդիրներուն վրայ ճոխանայ կը յաւակնէին: Իրաւ այդ խուլ պայքարը մղողներուն ջանքը երբեք արմատաքի դադարած չէր, բայց այս անգամ նոր պարագաներէ քաջալերուած կացութիւն այլայլելու կը ձգտէին, և Կ. Պոլիս գտնուող պետերը Մաքսուտեան և Երէցեան յորդոր և հրահանգ հասցնել կը փութային, միջոցներ ալ հայթայթելով Երուսաղէմի քաղաքացիներէն իրենց թեթիկունք ձարելու, և պետական պաշտօնեաններէն իրենց հովանաւորներ պատրաստելու, և կը յաջողէին շահել կառավարիչ Էքրէմ պէյի յաջորդող Սուպի պէյը: Յուլիս 7-ին վերջին փոփոխութիւններէն քիչ օր առաջ գումարուած միաբանական ժողովին խօսից նիւթ եղած էր, վանքէն դուրս գտնուող չորս միաբան վարդապետներու: Եզնիկ Պապայեանի, Դանիէլ Յակոբեանի, Անանիա Հապարապետեանի և Վարդան Գասպարեանի վանք դառնալու հրաւերին անձնական պատճառներով չհամակերպիլը (08. ՄԻԱ. 4) և գործը փակուած է հրաւերը կրկնելու որոշմամբ (08. ՄԻԱ. 9): Այս խնդիրը առիթ տուաւ որ նոր քաջալերուող

միտքերու մէջ պարթնու իրենց գլխաւորներէն և ընկերներէն հեռացուածներուն վերադարձին փափաքը, որ հետզհետէ նոր խնդիրի նիւթ դարձաւ: Երուսաղէմի կացութիւնը լիապէս պարզելու համար յիշենք ևս թէ այթողին մէջ գտնուող եպիսկոպոսներէն ոմանց վախճանելովը և ոմանց մեկնելովը, վանքին մէջ կը մնար միայն Մաղաքիա եպիսկոպոս Տէրունեան, նախկին միաբան և վանապան տեղեր առաջնորդական պաշտօններ վարած, որ Ամերիկայի առաջնորդութենէն դառնալով և պատրիարքարանէ առաջարկուած Պուլկարիոյ տեղապահութիւնը չառնելով և պահ մը ալ Եւրոպիոյ մէջ դեգերելով 1903 փետրուարէն ի վեր Երուսաղէմ կը գտնուէր, և եպիսկոպոսաց պակսելուն վրայ եպիսկոպոսական հանդէսներու կը նախագահէր: Օգոստոսի մէջ օդափոխութեան համար Վերիտոն էր գացած, և Վերափոխման տօնին դարձած, սակայն պահանջներն աճեցնելուն և գոհունակութիւն չգտնելուն վրայ՝ սեպտեմբերին վերջը Կ. Պոլիս կը մեկնէր, որով այթողը առանց եպիսկոպոսի կը մնար (08. ՏՆՕ. 321):

3124. ԱՌԱՋԻՆ ԽԼՐՏՈՒՄՆԵՐԸ

Անգամ մը որ ոխտքեր կը լարուին և կիրքեր կը յուզուին, այլևս որևէ պարագայ մեծ շարժումներու պատճառանք կը դառնայ, և գաղտնի դիտումներու հրապարակ ելնելուն առիթ կընծայէ: Սուրբ Տեղեաց կողաժողիկ պատահարներէն նոր մը, 1908 յունիսին յուզուած, առիթ թուած էր Թելեան Սիմէոնվար դապետի, որ 1907 դեկտեմբերէն ի վեր այթողոյ թարգմանի իրաւունքը պաշտպանելու, և կառավարութեան աննպաստ միտքերուն խստիւ դիմադրելու և ուժգին խօսելու, ուսկից վշտանալով կառավարիչին առժամեայ փոխանորդութիւնը վարող պինուորական հրամանատարը թարգմանի փոփոխութիւնը պահանջած էր, որուն հարկ կըլլար համակերպիլ, և պաշտօնը վերստին կը ստանձնէր Աճէմեան, որ կանուխէն նոյն պաշտօնին վրայ կը գտնուէր: Թելեան այս առթիւ Ս. Հրեշտակապետի տեսչութեան կը կոչուէր, սակայն փոփոխութիւնը իրեն շատ դիւր չէր գար, և մինչև աստիճան մը տնօրէնին և ցաւէր, որ իր հաշուեպահանջ ընկերներէն կազմուած էր, իր գործակցութիւնը կը թուլցընէր, թէպէտ իր սկզբունքէն և ուղղութենէն չէր փոխուէր: Իսկ երբ քաղաքացւոց մտայնութեան մէջ նոր շարժումներ կը տեսնէր: Ս. Հրեշտակապետի տեսչութենէն ալ կը հրաժարէր անախորժ շփումներէ հեռու մնալու համար, իբր պի Ս. Հրեշտակապետի տեսուչներուն են որ կատարեն Երուսաղէմի քաղաքացւոց հոգևոր հովիւի և ծխատէրի պաշտօնները: Նոր խնդիր մըն ալ կը ծագէր Աճէմեանի թարգմանութեան պաշտօնը ստանձնելէն, որ պաշտօններու յարաբերութեանց պարագաներէն ազդուած հարկ կը տեսնէր տեսնէր տնօրէն հրաժարիլ, և տնօրէնը միայն անդամով մեծամասնութիւնը կորսուած կըլլար: Միաբանութեան մէջ այս պարագան վէճի նիւթ կըլլար օգոստոս 25-ի ընդհանուր ժողովին մէջ (08. ՄԻԱ., 24), ուր անօրէն ժողովին վրայ ուրիշ մեղադրանքներ ալ կը խօսուէին, առիթ առնելով դարձեալ Սուրբ Տեղեաց վերաբերեալ տարբեր խնդիր մը: Տնօրէնի անդամներէն Պօյաճեան իրենց ամբողջապէս քաշուիլը կառաջարկէր, մինչ Տէրտէրեան կացութիւնը հիմնովին չխախտելու ճիգեր կը թափէր: Դուրսը գտնուող չորս միաբաններուն վերադարձին խնդիրը (3123) կընդարձակուէր, և Կարապետ Տէր Կարապետեան կայսերական ընդհանուր ներումը (3101) օրինակ առնելով, միաբանական ընդհանուր ներում կառաջարկէր բոլոր կարգէ և միաբանութենէ և վանքէ պրկուած միաբաններու համար, և վայն իբր ամէն երկպառակութիւնը ջնջելու և ընդհանուր սէրը վերահաստատելու միակ միջոց կը նկատէր (08. ՄԻԱ. 33): Շատ մը միջանկեալ խնդիրներ ալ կը խառնէին և կը վիճէին, և վերջապէս Սարաճեան ատենապետի ամփոփումով Աճէմեանի հրաժարականը կը մերժուէր, չորս անդամով տնօրէնին քանի մը ամիս ևս պաշտօնավարելը կորոշուէր, և 1900է ասդին վտանեալ կամ դրկեալ միաբաններու նորէն ընդունիլը իբր ընդհանուր փափաք կարձանագրուէր, և ըստ այսմ նախագահ

պատրիարքին կը հաղորդուէր (08.ՄԻԱ.37): Նոր խլրտող խումբը պինքն աւելի պօրացած կը կարծէր այդ վերջին որոշումով, որով Երէցեան վանք պիտի դառնար, Մաքսուտեանի խնդիրը պիտի փակուէր, Վահան և Հմայեակ պաշտօնի պիտի մտնէին, Կիրակոս և Ղուկաս գործի պիտի դառնային և իրենց շարքերը պիտի պօրանային: Խլրտող միաբաններուն գլուխ կանգնող և առաջնորդող էին Եղիա Յովհաննէսեան ու Կարապետ Տէր-Կարապետեան վարդապետներ, և Գէորգ Եօթնեղբայրեան ու Գրիգոր Հովիւեան սարկաւազներ, իսկ գործադրութեանց մէջ պարագլուխներ կերևային Սամուէլ Կիրակոսեան և Աթանաս Ասլանեան վարդապետներ: Երբ այդ եղելութիւններ միաբանութեան մէջ կը կատարուէին, քաղաքացւոց մէջ ալ շարժումները կը պօրանային գլուխ ունենալով Յարութիւն Թորոսեան և Եսայի Նալպանտեան Մաքսուտեանէ շահուողներուն, և Հապիպ Պշարա կառավարութեան թարգմանը, և հովանաւոր Սուպհի պէյ կառավարիչը: Քաղաքացւոց հրապարակ իջնելուն պատրուակ կընծայէր Ս. Հրեշտակապետի տեսուչ Թելեանի հրաժարելուն վրայ Ոսկերիչեան Մովսէս անոր տեղ նշանակուիլը, որուն դէմ կելլար քաղաքացւոց խումբը, առիթ առնելով Ս. Հրեշտակապետի տեսուչներուն պաշտօնին բնութիւնը, իբր թէ նոր ապստոլութեան հռչակուելով ընտրութեան իրաւունք ստացած ըլլար, պոր երբեք ունեցած չէր, պի Երուսաղէմի հայաբնակութիւնը թաղական կազմակերպութիւն ալ ունեցած և ունենալու իրաւունք ալ չէր կրնար ունենալ, քանի որ իր եկեղեցին և վարժարանը, բժիշկն ու դեղը, բնակարաններն ու պինուորական տուրքը, և ստուար մի մասին հացն անգամ միաբանութեան կողմէն կը հոգացուէր, և ոչ թէ քաղաքացին իր դրամով թաղականութեան պատկանող ծախքերը կը հոգար: Շարժումին աղմկալից ցոյցը տեղի կուսնար հոկտեմբեր 5ին, երբ Ոսկերիչեան բռնի եկեղեցիէ դուրս կը հանուէր, ուսկից ետքը Գրիգորիս Պօյաձեան յայտնուած փափաքանաց համեմատ Ս. Հրեշտակապետի տեսուչ կը նշանակուէր: Միաբանական ժողովին և Հրեշտակապետի տեսուչին պուզընթաց միջադէպները դուռ կը բանային այլևս ըմբոստ վարմանց, համարձակ բռնութեանց, և անտեղի պահանջմանց, թէ՛ ժողովրդական ամբոխին և թէ՛ միաբանական խմբակին կողմէն հաւասարապէս, աստ և անդ թռուցիկներ կը ցրուէին, պատերու վրայ լկտի ապգեր կը տեսնուէին, վանքին ներսէն ու դուրսէն լրագիրներու հաղորդուած անորակելի թղթակցութիւնները կը հրատարակուէին. մինչև իսկ միաբանական և ժողովրդական ամբոխավարութիւնը ձեռք ձեռքի տուած պատրիարքի անձին դէմ ալ կթրելու կը յաւակէին: Հոկտեմբեր 13ին Եօթնեղբայրեան և Հովիւեան սարկաւազներ սպառնալեօք կը բռնանային լուսարարաբարտին վրայ, որ եկեղեցական անկարգութեան համար ազդարարութիւն էր ըրած իրենց: Հեռացուածներուն դարձն ալ մշտատև պահանջմանց նիւթ էր դարձած: Միաբաններու հակառակութեան գլխաւոր առարկայն Աւետիս Թաշձեան փոքրաւորն էր, որուն պատրիարքի վրայ ունեցած խնամքն ու ազդեցութիւնը իրենց աչքին իբրև պօրաւոր խոչընդոտ կը տեսնուէր, և պատրիարքի քովէն հեռացնել կը ջանային: Յարութիւն պատրիարք այլևս 90ը թևակոխելու հասած ծերունի ըլլալով ալ ուշը չէր կորուսած և միտքը չէր տկարացած, բայց տարիքի բերմամբ եղող ըմբոմամբ ինքպինք նեղելով իր կենքը վնասելէ կը պգուշանար, ուստի մեղմօրէն յորդորներով կուզէր կացութիւնը հանդարտել, և կեդրոնէ պօրաւոր օգնական և յարմար պօրավիգ մը խնդրած և խոստում ստացած ըլլալով, անոր հասնելուն սպասելու պէտքը կը յիշեցնէր, և գոնէ առժամեայ հանդարտութիւն պահել կը խրատէր, բայց ի պուր. ամբոխավար ժխորը ներմէն ու դուրսէն օրէօր կը պայրանայ, և կառավարիչին դիմելով անոր միջամտութեամբ իր կամքը կատարել տալ կաշխատէր, և մինչև աստիճան մը քաջակերութիւն ալ գտնալով աւելի կըմբոստանար:

4. Պոլսոյ կեդրոնական վարչութիւնը, ուսկից տիրող շփոթին լուծումը պիտի սպասուէր, ուշադիր կերպով Երուսաղէմի գործին չէր հետևէր, գուցէ հետևիլ ալ չէր կրնար, զի կացութեան փոփոխութենէ, կարգաւորութեանդ պակսելէն, և բանտէ ու աքսորէ ու գաղթէ դարձողներուն պատճառած աղմուկներէն գլուխ առնելով հանդարտ մտադրութիւն պահանջող գործերով պաղելու դժուարութիւն կը կրէր: Դուրեան տեղապահ դժուարութեանց առջև արիանալու և արգելքներու վրայ իշխելու անձը չէր, Իզմիրլեան գործերու միջամտած ըլլալու երրևոյթէն կը խուսափէր, և իրեն մօտ մնացող սաղիմական միաբան և հաշուեպահանջ խումբին յառաջադէմներէն եղող Նշանեանն ալ, թէ՛ Կ. Պոլսոյ վարչական մթնոլորտին օտար էր և թէ՛ Իզմիրլեանը գործի մղելու ձեռներէցութիւնը չունէր: Ահա թէ ինչո՞ւ Երուսաղէմի շարժումը փոխանակ իր սկզբնաւորութեան մէջ կեդոնի իշխանութեամբ զսպուելու, երթալով կաճէր ու կը սօրանար: Օրմանեանի օրէն հաստատուած ատենապետաց մասնաժողովը իր պատասխանատուութիւնը ապատելու համար, օգոստոս 2ին իր տեղեկագիրը վարչութեան կը ներկայէր, որ անկէ ալ երեսփոխանութեան անցնի և խնդիրը լուծուի, բայց տակաւին երեսփոխանութիւնը կազմակերպուած չէր, և կազմակերպուելէն ետքն ալ շատ ներքին գործեր ունէր, որով տեղեկագիրը (ՏՂԿ.Ե.) տեղապահին մօտ անհետևանք կը մնար: Այս տեղեկագիրը նկատի առած էր նախընթաց գործողութիւնները, և գլխաւորապէս երրորդ պատուիրակութեան կազմած ընդարձակ հաշուտետրը (ՏՂԿ.Դ.), նորէն լսած էր Մաքսուտեանի բերանացի բացատրութիւնները, և ըստ այնմ պարզած էր վերջնական տեսութիւնները 1893-1907 տասն և չորս տարիներու հաշիւներուն վրայ, որոնց առաջին 12 տարիները Մաքսուտեանի պաշտօնավարութեան քննելի միջոցը կը կազմէին, և վերջին երկու տարիները անոր պաշտօնէ հեռանալէն ետքը անցած էին: Առաջին մասին մէջ երեք գլուխները կը պատէր տեղեկագիրը մատակարարութիւն, կալուածք, շինութիւնք, և իւրաքանչիւրին մէջ թերի և պատասխանատուութիւն հրաւիրող կէտերը կը ճշդէր: Մատակարարութեան մէջ բարոյական պատասխանատուութիւն կը տեսնէ 1900ի անհարկի փոխառութեան, և գումարը ներկայացնողին վճարելի փոխգիրներու վերածելուն, և պարտամուրհակաց տոմարին անկարգ արձանագրութեանց, և առանց ելևմտացոյցի մատակարարութիւն կատարելումնէջ: Իսկ նիւթական պատասխանատուութիւն կը գտնէ 36 ոսկի վճարումը երկու տեղ գրուելուն, և 74 ոսկի անցեալէ առձեռն ծախքեր անունով մէկ գրիչով նշանակուելուն, և Արթինօֆի 774 ոսկի պարտքը շնորհուելուն մէջ (ՏՂԿ.Ե.2-4): Կալուածոց գրուիսին ներքև դիտողութեան արժանի կը գտնէ Երիքովի արտին և ճառներին գետնին մի մասին վաճառմամբ անարժէք տեղեր գնուիլը, քաղաքի մէջ անհաստատ կալուածներու ստացութիւնը, և 4702 ոսկուոյն վանապան գնումները, ամէնն ալ Մաքսուտեանի կողմէ կանոնական պայմաններու հակառակ կատարուած (ՏՂԿ.Դ.5-7): Շինութեանց մէջ մատնանիշ կընէ հանգուցեալ միաբաններու հաշիւէն Մաքսուտեանի անցած 905 ոսկին, ճարտարապետական քննութեամբ հաստատուած ծախուց վրայ 3797 ոսկուոյ բարդումը, շինութեանց հաշիւներուն համար ոչ մի տոմար կամ արդարացուցիչ թուղթ ներկայացուիլը 2799 ոսկի տոկոս բարդուիլը, ճգնաւորեանի 400 ոսկուոյ իւրացուիլը, և բոլոր յիշուած կէտերուն մասին Մաքսուտեանի տուած, բերանացի բացատրութիւնները անհիմն և անբաւական կը դատէ (ՏՂԿ.Ե.8-10): Իսկ վերջին երկու տարիներու հաշիւներու մէջ դիտողութեան արժանի կը գտնէ մեծ պանդոկի յետնեալ վարձքերուն վրայ նշանաւոր պեղչը, և 500 ոսկի հաստատուն բացով ելևմտացոյց կազմելը (ՏՂԿ.Ե.11-12): Մաքսուտեան, տեղեկագիրին իրեն դէմ ըրած դիտողութեանց վրայ չոր բողոքագիր մը հասցուցած է երեսփոխանութեան նոյեմբեր 14ին (08.ՄՆԶ.2281), առանց պատճառաբանութեանց և առանց վաւերացեալ բացատրութեանց, իսկ երեսփոխութիւնը

տեղեկագիրին հետ բողոքագիրին ալ նկատի առնելու պատեհ չէ ունեցած, ժամանակին մեծադորդ ցոյցերէն ու աղմկայոյզ ժխորէն շրջապատուած, և հապի թէ Երուսաղէմի մէջ տեղի ունեցած անկարգութիւնները լսելով վարչութեան յանձնարարած է պատուիրակութիւն մը մղել Երուսաղէմ և անկարգութեանց առջևն առնել (ՏՂԿ. Դ. 2):

3126. ԱՂՄՈՒԿԻՆ ԱՃԻԼԸ

Երուսաղէմի մէջ յուլուած և միաբաններու և քաղաքացիներու ընկերակցութեամբ վայրացած ժխորը երթալով կաճէր և իբրև պահանջի գլխաւոր հիմ կը գործածուէր արտաքսեալ և հեռացեալ միաբաններու կրկին միաբանութեան մէջ ընդունուիլը և վանք դառնալը, որ իբրև ընդհանուր փափաք ընդունուած էր օգոստոս 25 ի միաբանական ժողովին մէջ (3124), և հապի երեք օր ետքը 23 միաբաններու կողմէ խնդիր ներկայացուած էր պատրիարքին, իբր թէ որոշման գործադրութիւնը յետաձգուած ըլլար (08. ԱՐԼ. 6904): Իրաւ ալ Յարութիւն պատրիարք մտադիր չէր գործադրութիւնը փութացնելու, նախատեսելով նորերու հասնելով կացութեան ևս քան վաս աճելը, և միշտ կեդրոնէ սպասուած օգնականին հասնելուն սպնսել կը խրատէր: Միաբանութեան երկու հոսանքներէն իւրաքանչիւրը իր տեսակէտէն նամակներ և հեռագիրներ կը հասցնէր տեղապահութեան, որ իսկապէս ինչ ընելիք չէր գիտեր, Վի ոչ խնդիրին խորապէս տեղեակ էր, և ոչ կնճռոտ խնդիրներ լուծելու ոյժն ու փոյթն ունէր: Տէրունեանի մեկնելէն ետքը թողին մէջ եպիսկոպոս մնացած չէր որ գոնէ իր աստիճանով նշանակութիւն ունենար, թէպէտ Տէրունեան ալ ոչ մի նշանակելի ոյժ էր եղած: Յարութիւն պատրիարք օգնական խնդրած էր կեդրոնէն, որ չէր գիտեր ինչ սկզբունքով և ինչ հրահանգով մէկ մը յղել: Անստուգութիւնը կը ծանրանար և ամբոխավար շարժումը Վեհապետեանի դժկամութեան պատճառ միայն Աւետիս փոքրաւորը կը նկատէր, և անոր դէմ հակառակութիւնը կը սաստկացնէր, մինչև որ սա մեկնելու և հեռանալու որոշման կը յանգէր, և թէպէտ պատրիարքը կընդդիմանար, բայց սա վերջապէս կը յաջողէր անոր դիմադրութիւնը մեղմացնել, և հոկտեմբեր 20-ին վանքէն կը մեկնէր, և շիտակ Կ. Պոլիս կուղևորէր: Յարութիւն պատրիարքը, ինչպէս ըսինք, թէպէտ կորող նուազած, բայց միտքով տկարացած չէր. կացութեան վրայ ճիշդ ըմբռնումը կը պահէր, ուստի հեռացուածներուն կոչը կը յապաղէր, ծայրը լաւ չտեսնելով, միանգամայն պաշտօնի վրայ գտնուող ժողովականներուն խորհուրդն ալ կը յարգէր, որոնք ինչպէս տեսանք հաշուեպահանջ ուղղութեան հետևողներ էին: Պատրիարքը իրենց կամքին բռնադատողներուն գլուխները Եղիա և Կարապետ էին, որոնք մինչև իսկ վայրագին կերպերով պատրիարքին վրայ խուժելէ չէին քաշուէր, պատշաճից պահանջներն անգամ ոտնակոխ ընելով, մինչ Յարութիւն պատրիարք միշտ կը շարունակէր իր մտադրութենէն չջեղել: Իսկ ըմբոստ խումբը ընդդիմութենէ լուտանքի և լուտանքէ սպառնալիքի անցնելով հաշուեպահանջներու վրայ կը ծանրանար, և Աւետիսի մեկնելէն ետքը անոնք իբրև պատրիարքի ընդդիմութիւնը քաջալերողներ կը նկատէր: Պատրիարքը ճարահատ և մեղմօրէն խրատներու անարգութիւնէն վայրացած, և աղմկայոյզ խլրտումները տկարացնելու դիտմամբ, նախապէս օրինական վնասութիւնները կատարելէ և կատարել տալէ ետքը, պետական իշխանութեանց, մեծ եպարքոսութեան, կրօնից նախարարութեան և տեղական կառավարութեան կը դիմէր որ Եղիա և Կարապետ Երուսաղէմէ հեռացուին, և ազգային կեդրոնին ալ կը վեկուցանէր: Նախարարութիւնը ընթացք տալով պատրիարքի խնդրանքին, կառավարչութեան կը հրամայէ Եղիան ու Կարապետը Դամասկոս փոխադրել: Այդ կը կատարուի նոյեմբերի առաջի օրերը և երկուքին կը հաղորդուի պետական հրամանը, բայց երկուքն ալ կընդդիմանան, իրենցներն ալ անոնց ետևէն, և կառավարիչէն կը պահանջեն հրամանը չգործադրել, մինչ Սուպի արդէն պատրաստական էր ամբոխավարներու պաշտպանութեան: Կառավարչական պաշտօնատունէն դարձողներ,

քաղաքացիներէն ալ հետևորդներ աւելցնելով, նոյն օր նոյեմբեր 4-ին խմբովին պատրիարքին վրայ խուժելու կը դիմէն, սակայն պատրիարքական յարկաբաժնին արտաքին դուռը իրենց դէմ գոցուած կը գտնեն պատրիարքի հրամանով, և Տէրտէրեանի ու Գայրվճէանի ու Աճէմեանի գործակցութեամբ: Դուրսէն ամէն բռնադատութիւն կը գործուի, դուռը բանալու բռնի միջոցներ կը գործածուին, աղաղակներու լուտանքներ, բաշխումներ և հարուածներ չեն խնայուիլը, մինչև որ ոստիկանութիւն վրայ կը հասնի, աղմկայոյզներ կը ցրուէին, և պատրիարքի պաշտպանութեան համար յարկաբաժնին արտաքին դուռը երեք պինել ոստիկաններու պահպանութեան կը յանձնէ, և պատրիարքին մօտ ելումուտքը կարգիլէ: Պատրիարքը իբրև յետին դարման իսկոյն հրաժարականը կը հեռագրէ կեդրոնական վարչութեան: Ասոր վրայ աղմկարար խումբը կը սկսի ծանր սպառնալիքներ արտայայտել հաշուեպահանջներէ իրենց դէմ եղողներուն վրայ, որոնք պահ մը անձնական ապահովութեան պէտքը կը տեսնեն: Իսկ իրաւանի Կ. Պոլիս գտնուելէն ի վեր կտրուկ կարգադրութեան համար ակնկալութիւններնէն յուսախաբուելնին կը վգային, հակառակ որ իրենց դատին լիովին պաշտպանելուն վստահութիւնը կը տածէին, մանաւանդ որ արդէն պատրիարքական այթոռ բազմած էր: Յարութիւն պատրիարքի հրաժարականին ելքն ալ կեղակարծ կը նկատեն, և կերպով մը անոր ալ ոյժ աւելցնելու միտքով մը անոր ալ ոյժ աւելցնելով միտքով կորոշեն վանքէն խոյս տալ, և ինքզինքնին ապահովել Ռէմլէի վանատան մէջ, ուր տեսուչ էր Թովմաս վարդապետ Պետրոսեան, թէպէտ ոչ իրենց համամիտ, այլ բնութեամբ հանդարտ և յախուռն չգործող անձ մը: Այս տեսակէտներով յորդորուած նոյեմբեր 5է 6 չորեքշաբթիէ հինգշաբթի գիշերը (ՏՂԿ.Ձ.13) լուելեայն վանքէն կը մեկնին (08.ՄՆՁ.2284), ելևմտից տեսուչ Մատթէոս Գայրվճէան, Աթոռոյ թարգման Սարգիս Աճէմեան, և վարժարանի տեսուչ Պետրոս Սարաճեան վարդապետները, որոնց կը միանան Սմբատ Գալպպեան և Սահակ Սարգիսեան արեղաները, և Խորէն փոստոյեան ու Սիմոն Հայրապետեան սարկաւազները: Իսկ լուսարարապետ Դաւիթ Տէրտէրեան պատրիարքի մօտ փակուած կը մնայ, իբրև անոր անձին նեցուկ և ընկերակից, և անոր մօտ մտնողներուն վրայ հսկող: Մեկնողներ Ռէմլէ կը գտնուէին արդէն, երբ նոյեմբեր 8ին անկէ կանցնէր և Երուսաղէմ կերթար Գրիգորիս եպիսկոպոս Յովհաննէսեան, զոր կեդրոնը ուր ուրեմն Կ. Պոլիսէ ճամբայ հանած էր իբր Յարութիւն պատրիարքի օգնական և աղմուկը հանդարտեցնելու միջնորդ, նկատելով վայն իբրև պատկառելի և փորձառու անձնաւորութիւն, թէպէտև արդիւնքը չէր համապատասխաներ այդ նկատողութեանց: Յովհաննէսեան առած էր կամ ոչ Ռէմլէ եկողներուն լուրը, սակայն առանց անոնք տեսնալու և լուսաբանութիւն մը ստանալու ուղիղ Երուսաղէմ կը փութայ: Երուսաղէմի մէջ երկու վարդապետներուն Եղիայի և Կարապետի մասին պետական հրամանին իբրև գործադրութիւն, կառավարիչը կը բաւականանար վանոնք յորդորել որ պահ մը Բեթղէհեմ երթալով Երուսաղէմէ հեռացած ըլլան, հոգ չէ որ շուտով ետ դառնան, ինչպէս որ անոնք ալ կը կատարէին: Պատրիարքարանի յարկաբաժնին արտաքին դրան պիտուորկան հսկողութիւնը կը շարունակէր իբր երկու եօթնեակ, սակայն տակաւ խստութիւնը կը թուլնար, հարկաւ, ոչ առանց կառավարիչին և կառավարական թարգմանին հրահանգին: Ռէմլէ գացողներէն ալ երկու սարկաւազներ ետ դառնալու ապագարարութեան համակերպելով վանք կը դառնային, զի իբրև սարկաւազներ դիմադրութիւննին աւելի յառաջ մղելէ կը վգուշանային, գուցէ և վանքին կացութեան վրայ ստոյգ տեղեկութիւն առնելու և հաղորդելու նպատակ ունէին:

3127. ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՓՈՒՍՈՒԱԾ

Պատրիարքին յարկաբաժնին արտաքին դուռին հսկողութեան հետզհետէ թուլնալը քաջալերութիւն տուաւ աղմկայոյզ խմբակին, բուռն և ուժգին յարձակում մը գործել նոյեմբեր 20 հինգշաբթի երեկոյին, ընծայման նախատօնակէն ետքը, որուն պահակները չկրցան կամ

չկամեցան ընդվդիմանալ, որով խմբակը ներս խուժելով առաջին գործն ըրաւ Տէրտէրեանը բռնի և բռնցի դուրս հանել, և այլևս անօգնական մնացած պատրիարքի անձին և գործին տիրանալ: Իրօք ալ այն վայրկեանին Յարութիւն պատրիարքի դերը կը փոխուի: Ինչպէս անգամ մը դիտել տուինք իննսնամայ տարիքով մարմնոյ նուազման հետ կորովն ալ նուազած էր, որչափ ալ բուռն կամքի և բռնադատիչ գործունէութեան տէր անձ մը եղած ըլլար, իր տեսութեանց ուղղութիւնը չկորսնցնելով մէկտեղ կը զգուշանար զինքն նեղել և կեանքը վտանգել, և երբ որևէ նեցուկ և օգնական մնացած չէր տեսներ՝ անձնատուր կըլլար տիրող զօրութեան և այսպէս 1908 նոյեմբեր 20 երեկոյէն սկսելով Յարութիւնի անձին և գործին վրայ յեղաշրջում տեղի կուներնար. աղմկայոյզ խումբը զօրացած էր այլևս և կացութիւնը փոխուած, հաշուեպահանջներուն գլխաւորները հեռացած, ուրիշներն ալ լուած և քաշուած, Տէրտէրեան ընկճած, և վանքը նոր երևոյթ մը առած հաշուեխոյսներու տիրապետութեամբ, ևր Մաքսուտեանի և Երէցեանի յաղթանակին գրաւականը պիտի ըլլար: Տէրտէրեան՝ պատրիարքի մօտէն վտարուելէն ետքը՝ չէր ուզած լուսարարապետութեան սենեակը դառնալ, նախատեսելով իր անձի վրայ նոր բռնադատութեանց հաւանականութիւնը, և առժամեայ բնակութիւն էր հաստատած արեղաթաղի տրամադրելի սենեակի մը մէջ, մասնաւոր յարաբերութիւններ պահելով միաբաններէն և քաղաքացիներէն թաքուն մտերիմներու հետ: Իսկ աղմկավար խումբը իր յաղթանակը շուտով ընելու համար, պատրիարքական հրաւերով ժողովի կը գումարուէր նոյեմբեր 24-ին երեքշաբթի օր, նոր տնօրէն ժողով կազմելու և գործերու տիրանալու և Ռէմլէ մեկնողներուն մասին տնօրէնութիւններ ընելու համար: Առաջ ընդհանուր ժողովոյ ատենապետութիւնը կը կազմուէր Կարապետ Տէր-Կարապետեան և Յարութիւն Պարոնեան վարդապետներով (08.ՄԻԱ. 40), և յետոյ տնօրէն ժողովը կընտրուէր Եղիա Յովհաննէսեան, Գարեգին Սաքայեան, Սամուէլ Կիրակոսեան, Յովսէփ Սողոմոնեան, Եսայի Կարապետեան, Կարապետ Տէր-Կարապետեան և Յարութիւն Պարոնեան վարդապետներով (08. ՄԻԱ. 43), բայց վերջին երկուքը կը ստիպուէին այնինչ ստացած ատենապետութենէն հրաժարիլ, և Սարգիս Տէր-Սարգիսեան և Գրիգորիս Պօյաճեան ատենապետութեան կանցնէին: Նշանակալից էր պատրիարքական պաշտօնագիրին (08. ՄԻԱ. 44), մէջ յիշուած եօթն անձէ բաղկացեալ տնօրէն ժողով մը ընտրելու հրահանգը (08. ՄԻԱ. 40) զի տնօրէն ժողովի եօթը թիւը լուսարարապետի մշտնջենաւոր անդամակցութեամբը կը լրանար, և Տէրտէրեան լուսարարապետութենէն հրաժարած կամ արձակուած չէր, որով եօթնի ընտրութիւնը զայն հեռացնելու թաքուն միտքը կը մատնէր: Ռէմլէ մեկնողներու մասին խօսակցութիւններ երկարեցան թէ չափաւոր և թէ չափազանց առաջարկներով, պաշտօնին լքանելով մեկնելինն դիտուեցաւ, պատրիարքի և Յովհաննէսեան եպիսկոպոսի հրաւերներուն չանսալնին յիշուեցաւ, թաքուն միտքերու և կանխամտածութեան նշաններ պրուցուեցան, և վերջապէս յաղթանակեց պատրիարքի առաջարկը որ Թելեան Սիմէոն վարդապետ Յոպպէ երթայ և համուկէ ետ բերէ, զի Ռէմլէ գացողներ միջոց մը հոն մնալէ ետքը տեսուչ Սերոբէ Սամուէլեան վարդապետի հրաւերով Յոպպէ փոխադրուած էին իբրև աւելի ապահով և աւելի նպատակայարմար օթարան: Թելեանի, իբրև առաջին հաշուեպահանջներուն ընկերակից և մեկնողներուն մտերիմ, և միայն թարգմանութեան պաշտօնին մէջ չպաշտպանուելէն վշտացած ու գործէ քաշուած, յարմարագոյն անձը նկատուեցաւ գացողները համուկելու, թէպէտ ելքը յաջող չեղաւ և ձեռնունայն ետ դարձաւ, գուցէ և ցաւը մոռցաւ և վստահացուցիչ լուրեր ալ չկրցաւ հաղորդել: Գայըզճեանի և Աճէմեանի և Սարաճեանի Յոպպէ փոխադրուելուն առթիւ միասին եկած էին Գալպպեան և Սարգիսեան ալ, որ յետոյ հարկ տեսան Երուսաղէմ դառնալ կոչերուն համակերպելով թէպէտև իրենց ուղղութենէն հիմնապէս փոխուած չէին: Իսկ նոր տնօրէն ժողովը իր առաջին գործն կընէր հաշուեպահանջ

միաբանները գործերէ հեռացնել, և այս նպատակով Հմայեակ Երէցեան, որ աքսորէն դառնալով Վերիտոն հասած էր, Երուսաղէմ կը կոչեն և Յոպպէ տեսուչ կը կոչեն նշանակեն Սամուէլեանի տեղ, բայց Յոպպէի մէջ գտնուող միաբանական խումբը ուժգին կը դիմադրէ ըմբոստ տնօրէնին կարգադրութեանց և կեդրոնին կը բողոքէ, Իվմիրլեան պատրիարք հեռագրով կը հաւանի, անվաւեր կը նկատէ ըմբոստ խումբէ բխող հրամանները և դիմադրել կը յանձնարարէ: Յոպպէի հայաբնակութիւնն ալ Երուսաղէմի քաղաքացիներէն տարբեր պագամամբ Հմայեակը չընդունիր երբ բազմաթիւ ընկերներով Յոպպէ կը հասնէր դեկտեմբեր 20-ին և եկեղեցւոյ դասէն ալ դուրս ելլալու կը ստիպէ, երբ 23-ին Դաւիթի և Յակոբայ տօնին օրը կանխած և տեսուչի տեղը գրաւած էր, որով կը պարտաւորուէր Երուսաղէմ դառնալ: Մովսէս Ոսկերիչեանն ալ Լաւողիկէի տեսչութեան պաշտօնով կը հեռացնէր, որպէսզի կանուխ հեռացուած Վահան Քէշիշեանը վանք դառնայ: Ս. Մինասայ գանձատան բանալին Տէրտէրեանէն կառնէր պատրիարքի միջնորդութեամբ, պատճառանք ընելով ներսը անձրևէն ջուր հաւաքուած ըլլալը: Կարգը կու գար Տէրտէրեանը ստիպելու որ լուսարարապետի վենեակը պարպէ և պաշտօնէ դադարած ըլլալը հաստատուի. սակայն Տէրտէրեան ստիպումներու կընդդիմանար ուղղակի պատրիարքէն իրեն հրաման տրուիլը պահանջելով, և յանուն պատրիարքի խօսքերը իբր պաշտօնական չընդունելով: Ընդդիմութենէ պայրացած նոր տիրապետող խումբին կիրքը տակաւ վայրագութեան կը հասնի, և 1909 յունուար 12-ի երեկոյին ութօրէքի նախատօնակէն առաջ Տէրտէրեանի վրայ կը յարձակին, քաշկուտելով մինչև լուսարարապետութեան յարկաբաժնին արևմտեան դուռը կը բերեն, և հարուածելով ու խոշտանգելով բանալին յանձնելու կը ստիպեն, իսկ Տէրտէրեան միշտ իր միտքին վրայ հաստատուն պատրիարքի ուղղակի հրամանը կը պահանջէ, զոր ամբոխավարները պատրիարքէն չեն կրնար խլել: Բանալիին տիրանալու մրցումը ժամի մօտ կը տևէ, մինչև որ Տէրտէրեանի ձեռքերը կապելով և գրպանները խուզարկելով բանալի մը ձեռք կանցունեն, և լուսարարապետի կրկին դուռներու վրայ փորձելով կը յաջողին բանալ և ներս մտնել և Տէրտէրեանի գոյքերը դուրս հանել: Այդ միջոցին Յոպպէէ դարձող արեղաներէն Գալպպեան խոյս տալու և թաքցելու կը փութայ, իսկ Սարգիսեան ոստիկանութեան լուր կու տայ, որուն հասնիլը լսելով հուղկահարը խումբը իրարու կանցնի, Տէրտէրեանը կապերէն կարձակէ, սենեակը պարպելու գործը կընդմիջէ և կը ցրուի: Տէրտէրեան հանդարտելու համար Յովհաննէսեան եպիսկոպոսի մօտ կերթայ, որ չէզօք անձի և անտարբեր հանդիսատեսի ձևն էր պահած բաւական տևած պայքարի միջոցին, պատրիարքն ալ որևէ կերպով արտայայտուելէ արգիլուած կը մնար: Յունուար 13-ի առտուն համակիր քաղաքացիներ եղելութիւնները լսելով վանք կու գան և Տէրտէրեանը տեսնելու և պաշտպանելու և դուրսը ապահովութիւն գտնելու կօգնեն: Անգղիական հիւպատոսը նոր դրութեան հետևանքով տէր կանգնելու անհրաժեշտութիւնը կը յայտնէ, կառավարիչը վանքէն դուրս պաշտպանել և ապահովել կը խոստանայ: Բայց Տէրտէրեան երոպական պանդոկներու մէջ յարմար և տրամադրելի տեղ չգտնելուն վրայ, յանկարծական որոշմամբ շիտակ Յոպպէ կը մեկնի Սարգիսեանի ընկերակցութեամբ, ուր Գալպպեան ալ իրենց կը հետևի, ինչպէս նաև Ղևոնդ արեղայ Պէքեարեան, որ վարանոտ նախընթացէ մը ետքը վերջապէս հաշուեպահանջներուն յարած էր, և այսպէս կը կապմուտի Յոպպէ ապաւինողներու խումբը, որոնք են. Տէրտէրեան, Գայրգճեան, Աճէմեան, Սամուէլեան, Սարաճեան, Գալպպեան, Պէքեարեան և Սարգիսեան: Ասոնց հետ կը գտնուին նաև Սարաճեանի մեկնելուն վրայ ժառանգաւորաց վարժարանի մէջ ծագած շփոթութեան առթիւ խոյս տուող երեք չափահաս աշակերտներ: Ամենուն ակնկալութիւնը Կ. Պոլիսէ գալիք պատուիրակութեան վրայ էր, որուն օրէօր կը սպասուէր: Նոյն միջոցին Թելեան օղափոխութեան համար մեկնելու արտօնութիւն կը ստանայ, և ուր ուրեմն իր հաշիւներուն

կարգադրությունն ու պահանջին դարձումը լրացնելով կը մեկնի Եգիպտոս, ուր կը մնար երբ Յոպպէի մէջ հաշուեպահանջներուն համախմբութիւնը կը կազմուէր, որոնցմէ ինքն ալ տարակարծիք չէր, թէպէտ գործունեայ դեր չէր ստանձնած:

3128. ԶՈՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ Երուսաղէմի խնդիրը գործնական որոշման մը յանգած չէր կեդրոնական վարչութեան կողմէ Դուրեանի տեղապահութեան օրերը, ի բաց առեալ Յովհաննէսեան եպիսկոպոսի առաքումը, որուն այդ նպատակին յարմար անձը չըլլալը յայտնի էր, և Երուսաղէմէ հասած լուրեր (ՏՂԿ. Զ. 2) և կառավարութենէ հաղորդուած տեղեկութիւններն ալ (ՏՂԿ. Զ. 7) նոյնը կը հաստատէին: հանրութեան աչքը Իզմիրլեանի պաշտօնի գլուխ անցնելուն վրայ հաստատուած էր, որպէսզի իբրև իրողութեանց ներքնապէս ծանօթ և իբրև արի գործող մը, կտրուկ որոշմամբ կնճիռը արմատաքի լուծէր, ինչպէս իր նամակով ալ ադ ակնկալութիւնը բացատրած էր (08. ՄՆԶ. 2290): Իզմիրլեան հոկտեմբեր 31-ին գործի սկսած, նոյեմբեր 7-ին քաղաքականին տեղեկութիւններ կը հաղորդէր (ՏՂԿ. Զ. 2), և 8-ին նոյն տեղեկութիւնները երեսփոխանութեան կը կրկնէր (ՏՂԿ. Զ. 1) և Յարութիւն պատրիարքի հրաժարականը մերժելով (ՏՂԿ. Ը. 3) պատուիրակութիւն մը յղել կորոշուէր, և 14-ին Իզմիրլեան պատուիրակի ընտրութիւնը կառաջարկէր, և հետզհետէ հրաժարողները փոխանակելով, հապիւ դեկտեմբեր 10-ին վերջնապէս կը նշանակուէին (ՏՂԿ.Զ.9) Յակոբ Աշոտ եպիսկոպոս Փափապեան և Գէորգ Ֆիքրի Աճէմեան ու Հայկապուն Պէկեան: Առաջինը Յովհաննէսեանէ ոչ նուազ տկար եպիսկոպոս մը, և միւսները դատական և երկրագործական նախարարութեանց կարող և բարձր պաշտօնեաներ, նոյն միջոցին պետական պաշտօնով Զմիւռնիա և Եգիպտոս գտնուող, բայց ընդհանրապէս ազգային խնդիրներու մէջ նոր և անտեղեակ անձեր: Միննոյն ատեն Երուսաղէմի կանոնագիրին վերաբնութեան համար վեց անդամներով մը կը կազմուէր (ՏՂԿ.Զ.5) որ անմիջական դարման մը չէր, և ընդհանուր ժողովէ ալ նոյն նպատակով յանձնաժողով մը կազմուած ըլլալուն դիւրութենէ աւելի դժուարութեան պատճառ կրնար ըլլալ: Ընտրուած պատուիրակութիւնը, զոր չորրորդ կը կոչենք, իբր Մանկունիի և Ֆէսճեանի պատուիրակութեան (3067) անմիջապէս յաջորդող, պանապան կողմերէ հասնելով Յոպպէ կը միանար, և 1909 յունուար 23-ին հոն առաջին նիստ կը գումարէր (ՏՂԿ. Է. 1) վարչական հրահանգը բանալով կընթեռնուր (ՏՂԿ. Է. 1) պարունակութեան կը տեղեկանար (ՏՂԿ. Ը. 4-11), և իր խորհրդածութիւններովը գիրի կառնէր, եպրակացնելով թէ կարելի պիտի չըլլայ հրահանգը բաւարար գործադրել, զոր եթէ կեդրոնը չընդունի, յակամայս պիտի ստիպուին գործէ քաշուելու (ՏՂԿ. Է. 12-14): Պատուիրակներ յունուար 25 ին ուշ ատեն Երուսաղէմ կը մտնեն (ՏՂԿ. 15), որ է ըսել Իզմիրլեանի պատրիարքութեան անցնելէն երեք ամիս ետքը, և պատրիարքութենէ դադարելէն քանի մը օր առաջ, մինչ շատ աւելի արագ և ազդու գործողութիւն մը կը սպասուէր Իզմիրլեանի գործունէութենէն և Երուսաղէմի աթոռին և վանքին վրայ ծանրացած տարադէպ եղելութեանց մասին կազմած համոզումէն և ունեցած մտադրութենէն: Պատուիրակութեան գործողութեանց դառնալով, վանք մտնալնին խաղաղ կանցնի, և եկեղեցական արարողութեամբ կընդունուին, ինչպէս սովորութիւն է բոլոր նոր հասնող եպիսկոպոսներուն ընել (ՏՂԿ. Է. 15): Պատուիրակները չէին կրցած Յոպպէ գտնուողներուն կեանքին վտանգը երաշխաւորել, որ միասին Երուսաղէմ գալու վստահանային (ՏՂԿ.Ը.12), ուստի իրենք առաջձինն առաջ անցած էին, և հասնելնուն առաջին օրն իսկ իրենց պաշտօնագիրերը Յարութիւն պատրիարքի կը յանձնէին, որ միաբաններու ներկայութեան բարձրաձայն կարդալ կու տար, բայց երկար խօսքի չէր մտներ տկարութիւն պատճառելով (ՏՂԿ. Ը. 13): Յունուար 26-ին Յովհաննէսեան եպիսկոպոսի հետ կը տեսակցին, որ իր չէզօք մնալը կը յայտնէ, իր պաշտօնը անուանական դատելով: Տնօրէնի անդամներուն այցելութիւնը կընդունին, որոնց կողմէն Տէր-

Կարապետեան իբր ատենապետ կը յայտարարէ, թէ վանքը հանդարտ վիճակ մը ունի, թէ խոռվութիւն հանողներ փախած են, և թէ միաբանութիւնը յանձնաժողովի պաշտօնին դէմ առարկութիւն ունի (ՏՂԿ. Է. 13), աւելցնելով իսկ, դուք վախեցէք մենէ, մենք ոչ ոքէ կը վախնանք (ՏՂԿ. Է. 16): Յունուար 27-ին դարձեալ պատրիարքին կը ներկայանան, բայց խօսակցութեան չմտած ժողովականներ և միաբաններ ներս կը խուժեն, պատրիարքը կայլայլի, և այլ կը նեղուիմ կոր ըսելով ամէնքն ալ կարձակէ. իսկ միաբանութեան մէջ լուր կը տարածայնուի թէ պատրիարքը քննիչները քովէն վռնտեր է: Յունուար 28-ին փոխանորդ Եղիա Յովհաննէսեան առանձինն կը հրաւիրեն, որուն եիւէն ուրիշներն ալ կու գան և պատուիրակութեան հրահանգը տեսնալու խնդիրը կը յարուցանեն, որուն հարկաւ պատուիրակներ չափտի կարենային համակերպիլ (ՏՂԿ.Է.17-18,Ը.14): Միանգամայն ելից կերպ մը գտնելու համար 29-ին Յովհաննէսեան եպիսկոպոսի միջնորդութեամբ պատրիարքէ առանձինն տեսակցութիւն կը խնդրեն, և ըստ այնմ 30-ին կը հրաւիրուին, բացատրութիւններ կու տան, հրահանգը պատրիարքին կը հաղորդեն, որ ժողովականներէ և միաբաններէ քանիներ կանչելով կը յայտարարէ. պէտք է առանց ընդդիմութեան ամէնքն ալ համակերպին յանձնաժողովին կարգադրութեանց, և հրահանգ տեսնել ուսողներուն կը սաստէ թէ իրենց չպատկանիր հրահանգը, ինքը կարդացած է: Պատուիրակները նոյն օր տնօրէն ժողովէ կը հրաւիրուին, ուր իրենց դարձեալ կը հաղորդուի թէ միաբանութիւնը կը պահանջէ, և ժողովն ալ օրինաւոր կը դատէ, որ չձեռնարկած հրահանգը հաղորդեն: Պատուիրակներ կը պատասխանեն թէ իրենք միաբանութիւնը քննելու պաշտօնով եկած են և ոչ թէ միաբանութենէ քննուելու համար, և ժողովին պնդելուն վրայ կը հեռանան, և չհստահելով իրենց գիրերն ու հեռագիրները Երուսաղէմի պաշտօնատանց յանձնել՝ Յոպպէ կը յղեն Կ. Պոլիս լուր հասցնելու համար, զի աղմկայոյցներ ոչ միայն նամակ ու հեռագիր ձեռք կը ձգէին, այլ և պատուիրակներու կեանքին դէմ սպառնալիքներ կը խօսէին, և Յակոբ եպիսկոպոս փետրուար 1-ին վարժարանական հանդէսէ մը ելած ատեն, ատրճանակը ձեռքը երիտասարդ մը զինքը կը դիմաւորէ, այս քեզի համար է գոչելով (ՏՂԿ.Ը.16-19): Պատուիրակներ վերջապէս համոզում կը գոյացնեն, թէ վանքը վեղժարարներու, լրտեսներու, սինլիքորներու որջ մը դարձած է (ՏՂԿ.Ը.20), թէ անոնց գործունէութեան մէջ ի հեռուստ տրուած ծրագիրներու ազդեցութիւնը կը տեսնուի, և թէ շահակից ու ձրիակեր քաղաքացիներու գործակցութեամբ ու կերծ ուխտաւորներու ներկայութեամբ կը զօրանան անոնց ձեռնարկները: քանի մը օր ևս կը շարունակեն հնարաւոր միջոցներով պաշտօնին գործադրելու եղանակ գտնել, բայց ամէն կողմէ իրենց դէմ յայտնապէս ցոյցեր կը տեսնեն, սպառնալիքներ կը բազմապատկուին վատ և տմարդի միջոցներով, իրենց կեանքին դէմ դաւաճանութեան նշաններ կը նշմարեն, և համոզուելով թէ այլ ևս նկարելի եղած է իրենց Երուսաղէմ մնալը, փետրուար 6-ին բարեկենդանի վերջին ուրբաթ օրը, հանելէն 12 օր ետքը, Յոպպէ կը դառնան, և այնտեղէն ամէն կողմ պէտք եղած հեռագիրները կու տան: Յարութիւն պատրիարքի ալ կը տեղեկացնեն թէ միայն կատարեալ ապահովութիւն հաստատուելէ ետքը Յոպպէ գտնուողներն ալ պիտի կարենան վանք դառնալ և քննչական գործողութիւնները կատարուիլ (ՏՂԿ.Ը.22-23): Փետրուար 8-ին ընդարձակ տեղեկագիր մը կը յղեն վարչութեան Իզմիրլեան պատրիարքի հասցէին, որ 10-ին պաշտօնէ կը դադրէր և ընդունելու չէր հասներ, որուն մէջ եղելութիւններն ու իրենց ընթացքը բացատրելէ ետքը, իբր անմիջական պայմաններ կառաջարկեն. 1. Յարութիւն պատրիարքի կարող և ազդեցիկ եկեղեցական փոխանորդ մը նշանակել: 2. Եղիա Յովհաննէսեան, Կարապետ Տէր-Կարապետեան և Եսայի Կարապետեան վարդապետները, Գէորգ ճանսրպեան ու Գրիգոր Պահլաւունի աբեղաները, և Գէորգ Եօթնեղբայրեան սարկաւազը անմիջապէս Երուսաղէմէն վտարել: 3. Դրամատուներու և

տեսչութիւններու արգիլել տնօրէն ժողով ըստած մարմինին որևէ վճարում ընել, ստուգուած ըլլալով որ 3000 ոսկի ձեռք անցուցած և յումպէտս վատնած են: 4. Իսպառ չէզոքացնել քաղաքացւոց ապօրէնութիւնը, և դադրեցնել վանքին վրայ բեռ ըլլալնին (ՏՂԿ. Ը. 12-26): Միւս կողմէ կորոշեն Յոպպէ սպասել մինչև կեդրոնին նոր հրահանգը: 3129. ԱՊԱՐԴԻԻՆ ՓԱԿՈՒՄԸ

Պատուիրակներ Յոպպէ հասնելնէն երկու օր ետքը, փետրուար 10-ին, Յարութիւն պատրիարքի ստորագրութեամբ և 8-ին տրուած հեռագիր որ կը ստանան Երուսաղէմէ, որով կը յարտարարէր, թէ միաբանութիւնն ու տնօրէնէր իրեն հրահանգներուն հակառակ վարուած չեն, թէ վանքինօգտին համաձայն գործուած է, և թէ Յոպպէ գտնուող և իրեն կոչին չանսացող միաբանները չի ճանչնար (ՏՂԿ. Է. 37): Այդ հեռագիրը նոյն Յարութիւն պատրիարքի յունուար 30-իրենց ներկայութեամբ յայտնած կարծիքներուն բացարձակապէս հակառակ ըլլալուն, այդ հակասութիւնը շեշտող ընդարձակ հեռագիրով մը կը պատասխանեն, իսկ Յոպպէ գտնուող միաբաններուն դառնալուն համար, և պատուիրակութիւնը շարունակելու համար կառավարական երաշխաւորութեամբ ապահովութեան պէտքը կը յայտնեն (ՏՂԿ. Է. 38), և նոյն իմաստով կառավարութեան ալ կը հեռագրեն (ՏՂԿ. Է. 39): Յարութիւն պատրիարքէ պատասխան չեն առներ, Յովհաննէսեան եպիսկոպոսէ տեղեկութիւն կը խնդրեն, որ փետրուար 17-ին իրենց հեռագրին Երուսաղէմ հասած ըլլար ծանուցանելով, և պատրիարքի գիտակցութեամբ պատասխանուած ըլլալը ստուգել չկրնալով, կը յաւելու թէ իրեն ալ սպառնացողներ պակաս չեն, և կը խնդրէ որ այլևս իրեն խնայեն, որպէսզի կարենայ գոնէ եկեղեցական հանդիսութեանց նախագահելով ուխտաւորները մխիթարել (ՏՂԿ. Է. 42): Պատուիրակներ թէպէտ հեռագիր և նամակ անպակաս կը յղէին կեդրոնին, սակայն պատասխան չեն ընդունիր, անշուշտ Իվմիրլեանի պատրիարքութենէ դադարելուն և Արշարունիի տեղապահութեան հաստատուելուն միջոցին հանդիպած ըլլալուն համար. բայց իրենք կը կարծէին թէ պատրիարքարանն ալ դժուարութեան բաղխած է, և ինչինչ պարագաներու և դարձուածներու տակ չկրնար վերջնական և վճռական որոշումներ տալ: Այդ համոզումը պատուիրակներու և Յոպպէ գտնուող միաբաններու վրայ ալ կապղէ, ուստի նախ Պէկեան կը մեկնի փետրուար 24-ին նախարարութենէ պաշտօնին վրայ հրաւիրուելուն համար (ՏՂԿ.Է.45), Յոպպէ գտնուող Տէրտէրեան, Գայրգճեան, Աճէմեան, Սամուէլեան ու Սարաճեան վարդապետները և Գապպեան, Պէքէտարեան ու Սարգիսեան արեղաները իրենց իրաւունքը ազգային վարչութեան առջև պաշտպանելու համար ստիպեալ Կ. Պոլիս երթալնին կը յայտարարեն 24-ին (ՏՂԿ.Է.46), և 26-ին կը մեկնին առաջին եօթները, իսկ Սարգիսեան վանք կը դառնայ անձնական կարգադրութեանց պատճառանքով: Նոյն օր 26-ին կը մեկնին Յակոբ եպիսկոպոս և Գէորգ Ֆիքրի պատուիրակներն ալ (ՏՂԿ.Է.48) զի իրենց պատուիրակութեան իրաւունքը հաւաքաբար և ոչ անհատաբար ըսուած էր (ՏՂԿ.Է.46), և Պէկեան մեկնելով հաւաքականութիւնը կորած ըլլալուն՝ անգործ մնալու ստիպուած պիտի ըլլային: Երկու պատուիրակները Մէրսին կելլեն Ատանայ երթալու, իսկ եօթը միաբաններ ուղիղ կը նաւեն մինչև Կ. Պոլիս: Այսպէս ապարդիւն կերպով կը փակուի չորրորդ պատուիրակութիւնը, Երուսաղէմի վանքին վրայ նոր տիրապետող աղմկայոյզ խմբակին անորակելի ընթացքին հետևանօք: Պատուիրակութիւնը յունուար 23-ին Յոպպէ բացուած և փետրուար 26-ին Յոպպէ գոցուած ըլլալով 34 օր տևած է, որոնց միայն 12 օրը Երուսաղէմի մէջ, և միայն այն համոզումը տուած է, թէ Երուսաղէմէ վանքն ու արթորը սաստիկ խառնակութեան մէջ կը գտնուին և բացարձակ ու բացառիկ կարգադրութեան կը կարօտին: Այդ կարգադրութիւնն ալ անշուշտ ազգային կեդրոնէն կը սպասուէր, իբրև գերագոյն ազգային իշխանութենէ, սակայն մենք կեդրոնին գործունէութեան չանցած Երուսաղէմի անցքերը քաղենք, ընդհանուր կացութեան մասին տեսութիւնները ճշդելու համար:

Պատուիրակներուն և Յոպպէ ապաւինած միաբաններուն մեկնելու մտադրութիւնը հապիւ թէ լսուեցաւ Երուսաղէմի մէջ, տենդոտ գործունէութեան դուռ բացուեցաւ վանքին տիրապետող կուսակցութեան առջև, որ հարկ սեպեց միաբանական զգացմանց և որոշմանց ձևերով իր գիրքը ամրացնել, և բոլոր իրմէ բաժնուածները միաբանութենէ արտաքսեալ հռչակելով հռչակելով աթոռին և ուխտին և վանքին բացարձակ տէր դարձած սեպուիլ և իր գիրքը ապահոված կարծել: Վերջին միաբանական կարծել: Վերջին միաբանական ժողովը 1908 նոյեմբեր 24-ին հաւաքուած էր (08, ՄԻԱ. 39), և երեք ամիս էր որ նոր ժողով գումարուած չէր, որ է ըսել պատուիրակութեան ընտրուելէն մինչև գալը և գալէն մինչև մեկնիլը: Այդ ժամանակամիջոցին գործերը պարզապէս տնօրէն ժողովոյ հեղինակութեամբ կարգադրուած էին, և կերևի թէ տնօրէնը իր համախոհներուն վրայ կատարեալ վստահութիւն չունէր, որ միաբանական գումարումներէ զգուշացած էր: Երբոր պատուիրակներ և տարակարծիք միաբաններ Յոպպէ պիտի հեռանային, տնօրէնը իր յաղթանակը տարած և գիրքը ապահոված կը կարծէր և միաբանական ժողովները շատցուց, իր դիմումներուն օրինական ձև տալու համար: Այդ անցուդարձերուն գերագոյն վարիչը Կարապետ Տէր-Կարապետեան վարդապետն էր, տնօրէնի ատենապետը, որուն օգնական կը հանդիսանար Եղիա Յովհաննէսեան վարդապետ՝ իր պատրիարքական փոխանորդի կերպարանովը: Իսկ Յարութիւն պատրիարք իր անձնական տեսութիւններ առաջ տանելու անհնարութեան մատնուած, և դիմադրութեան անօգուտ ըլլալուն համոզուած, և բոլորովին անօգնական մնացած, անձնատուր հետևորդի դերը կը վարէր: Նոր գործունէութեան շրջանը և միաբանական ժողովներու շարքը սկսաւ փետրուար 24-ին միևնոյն օրը որ Պէնկեան կը մեկնէր, և միաբաններ ու պատուիրակներ երկու օրէն մեկնելին կորոշէին (3129): Սովորութիւն էր գումարմանց նպատակը և որոշուելիք կէտերը պատրիարքական պաշտօնագրով ներկայել ժողովին, դարձեալ նոյն ձևը պահուեցաւ, և Յարութիւն պատրիարքի ստորագրութեամբ տնօրէնին պատրաստած պաշտօնագիրը կարդացուեցաւ, որ կառաջարկէր Երէցեան Գէորգ եպիսկոպոսի պատրիարքի օգնական նշանակուիլը, և արդէն կեդրոնին հաղորդուած կանոնագիրին (3071) նորէն վերաքննուիլը: Երէցեանի վանք դառնալուն անհնարութիւնը կանուխէն, յունուար 16-ին, որոշած էր Խառն ժողովը, Երուսաղէմի հաշիւներուն քննութեան և այլ վանապան պատճառներով (ՏՂԿ. Զ. 9), ուստի միաբանական որոշման (09.ՄԻԱ.60) հեռագիրով կեդրոնին ծանուցուելուն վրայ խառն ժողովը մարտ 4-ին միևնոյն անհնարութիւնը կրկնեց և հաղորդեց (ՏՂԿ.Զ.12): Իսկ կանոնագիրին վերաքննութիւնը դարձեալ նախաքննութեան յղուեցաւ (09.ՄԻԱ.61): Միաբանական ժողովը պոռոտախօս յայտարարութեանց մէջ առատացաւ նախորդ տնօրէնի հասցէին և նախորդ գործիչներու մասին, մինչև իսկ դժգոհութեան և պարսաւանաց բուէ տուաւ Մանկունի և Ֆէսճեան պատուիրակներուն (09.ՄԻԱ.61): Յաջորդ օրուան փետրուար 25-ի գումարման մէջ Վահան Բէշիշեան և Հմայեակ Երէցեան, երբեմն հեռացուածներ (3071), ատենապետութեան ընտրուեցան (09.ՄԻԱ.65). Տէրտէրեան, Գայըգճեան, Աճէմեան և Սամուէլեան միաբանութենէ վտարուած հռչակուեցան, իսկ մնացած միւս չորսերուն համար որոշեցին յարմար կարգադրութիւնը թողուլ յետագային (09.ՄԻԱ.73), և անցան մեծ պանդոկին ապառիկ վարձքերուն գումարին վրայ եղած վեղչին խնդիրը յուլել (09.ՄԻԱ.75): Մարտ 4-ի նիստը կանոնագիրին վերաքննութեան յատկացուցին, և վերջին խմբագրութեան վրայ (3071) քանի մը փոփոխութիւններով աւարտեցին և փակեցին, որոնք էին նոյն այն կէտերը, որոնք ժամանակով իրենց կողմէ պաշտպանուած էին, բայց ընդունուած չէին (3071). այսինքն է լուսարարապետութիւնը մշտնջենաւոր քառամեայի վերածել, լուսարարապետը տնօրէն ժողովի անընտրելի նկատել, միաբաններուն անձնական

հասոյթները ի կեանս վայելելու իրաւունք տալ՝ առանց ուրիշի վրայ փոխանցել կարենալու, տնօրէնէ ամէն երեք ամիս համարատուութիւն պահանջել, բայց վանական հաշիւները հրատարակութեան չտալ, վերաքննութեան պայմանաժամն ալ 7-էն 5 տարիի իջեցնել (09.ՄԻԱ.79): Այս փոփոխութիւններով նոր տպագրութիւն մըն ալ պատրաստուեցաւ, բայց կեդրոնական երեսփոխանութեան հաստատել տալու պայմանին նախ յիշատակութիւն չեղաւ, և վերջէն վանք ընելով գործածութեան սկսիլ որոշեցաւ (09.ՄԻԱ.108): Մարտ 6-ի նիստը ապառիկ վարձերէն զեղչին և կեդրոնի մէջ Երուսաղէմի մասին խօսուած միտքերու և առաջարկներուն վրայ խորհրդածութիւններ անցաւ (09.ՄԻԱ.83): Ապրիլ 11-ին դարձեալ ժողով գումարուեցաւ և սարկաւագներէն արեղայութեան և ուրարակիրներէն սարկաւագութեան կոչելու որոշումներ տրուեցան (09.ՄԻԱ.89-91), և պատրիարքի ստորագրութեամբ կեդրոնին դէմ նախարարութեան տրուելիք հեռագիրի մը օրինակը ընդունուեցաւ (09.ՄԻԱ.95): Ապրիլ 14-ի նիստին մէջ Մաղաքիա եպիսկոպոս Տէրունեան հրաժարեալ միաբան՝ դարձեալ միաբանութեան ընդունուեցաւ (09.ՄԻԱ.101), իսկ Սահակ արեղայ Սարգիսեան և Յարութիւն սարկաւագ Մանավեան կարգաւոյժ հռչակուեցան (09.ՄԻԱ.104-105): Յիշած ենք արդէն թէ Սարգիսեան Կ. Պոլիս մեկնողներէն բաժնուած և վանք դարձած էր (3129), ուր հասնելով մեղայագիր ալ տուած և իր գործերը կարգադրելու ժամանակ շահած էր, բայց յետոյ Դամասկոս ժամարար երթալու համար վանքէն մեկնելով, Յոպպէ հասնելուն տեղացւոց համաձայնութեամբ տեղւոյն տեսչութիւնը ձեռք կանցունէր, զի Երուսաղէմէ նոր տեսուչներ ժողովուրդը չէին ընդունուել, և տեսչութիւնը Սամուէլեանէ մեկնելէն ետքը թափուր կը մնար, իսկ Մանավեանն ալ ետևէն հասնելով Սարգիսեանի օգնական կը դառնար, և այս էր կարգաւոյժ հռչակուելուն պատճառը, թէպէտ իրենք ականջ չէին կախեր: Նոյն նիստին մէջ միաբանութենէ կը վտարուէին նաև Սարաձեան և Գալպեան և Պէքեարեան, որ Կ. Պոլիս մեկնած էին: Նոյն որոշումը կը տրուի Նշանեանի համար ալ, որ Կ. Պոլսոյ մէջ իր հին ընկերներուն միացած էր և վարձքերու զեղչին մէջ յանցաւոր կը նկատուէր: Կառաջարկուի Կ. Պոլսոյ փոխանորդ Չիլիկիրեան Եղիշէ վարդապետն ալ միաբանութենէ վտարել, մեկնողներուն պաշտպան ըլլալուն և Երուսաղէմատան մէջ պատսպարելուն համար, սակայն նկատելով որ դժուար պիտի ըլլայ վայն Երուսաղէմատունէն հանել, առայժմ կորոշեն ազդարարութեամբ գոհանայ (09.ՄԻԱ.109): Երուսաղէմի մէջ կատարուած այս անցուդարձերուն քաղուածը, առանց ուրիշ խորհրդածութեան և մեկնութեան կը բաւէ ապացուցանել թէ ի՛նչ աստիճան խառնակութեան և անդեակ կառավարութեան մատնուած էին աթոռն ու միաբանութիւնը, թէպէտ իրենք կը յաւակնէին պարծենալ, թէ վտանգներու առաջքն առնուելով, ինչպէս միւս պաշտօնէութիւնք, նոյնպէս ելամուտքը, ստացան սպասուած կանոնական ուղղութիւնը (09.ՄԻԱ.113): Յայտնի կը տեսնուէր իրենց միտումը, որևէ անկախ կացութիւն մը ստեղծել, և նուիրագործել այն շահախնդրական ուղղութիւնը որ Մաքսուտեանով մուծուած էր միաբանութեան մէջ, և որուն մասնակցութեամբ օգտուիլ կը կարծէին ամէն անոնք, որոնք կանոնական սեղմումներէ և օրինական պայմաններէ կը նեղուէին: Մինչև իսկ լսուած էր որ մայրաթոռէ ալ բաժնուելով Կիլիկիոյ աթոռին հպատակութեան անցնիլ կը խորհէին (ՏՂԿ.Ը.28), ուր Խապայեան կաթողակալէր և պատրաստ էր պաշտօնապէս իրենց հովանաւոր ու պաշտպան կանգնիլ: Տեղեկութիւնները լրացնելու համար աւելցնենք թէ Յոպպէի մէջ Սարգիսեանի ներկայութեամբ կազմուած բացառիկ կացութեան վերջ տալու համար, կառավարիչ Սուպի անձամբ Յոպպէ իջնալով՝ տեսուչ ընտրուած Գարեգին վարդապետ Սաքայեանը պաշտօնին վրայ կը հաստատուէր, Սարգիսեան Կ. Պոլիս կը մեկնէր, իսկ Մանավեան տեղւոյն վարժարանին ուսուցիչ կը մնար, և Երուսաղէմի և Յոպպէի յարաբերութիւնները կը վերանորոգուէին: Յովհաննէսեան

Գրիգորիս եպիսկոպոսն ալ վատկական տօնախմբութիւնները աւարտելով, իսկ ձեռնադրութիւն ընել յանձնառու չըլլալով՝ Երուսաղէմէ կը մեկնէր և մայիս 5-ին Կ. Պոլիս կը դառնար, և Երուսաղէմ դարձեալ առանց եպիսկոպոսի կը մնար (09. ԱՐԼ. 7092):

3131. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Երուսաղէմի վանքին մէջ տիրող խառնաշփոթ վիճակը պէտք էր կեդրոնական վարչութեան մտադրութիւնը հրաւիրէր, և շուտափոյթ կերպով ազդու և կտրուկ որոշմանց յանգէր, որպէսզի օր առաջ վերջանար անախորժ կացութեան տագնապը, սակայն այդ պէտքը բաղձանք կը մնար և սպասուած գործադրութիւնը չէր տեսնուէր: Իրաւ խնդիրը կնճռոտ և բազմակողմանի ըլլալուն լուրջ քննութեան կը կարօտէր, միանգամայն նոր պաշտօնի անցած Յովհաննէս Արշարունի տեղապահը՝ պարագայից անտեղեակ ըլլալով՝ չէր կրնար իսկոյն որոշման յանգիլ, սակայն այս պակասը շուտով կրնար լեցուիլ Իվմիրլեանի ձեռքով, որ ինչչափ ալ հպատակութեան փոփոխութեամբ և կաթողիկոսական հաստատութեամբ պատրիարքական աթոռը թողած էր, բայց ազգային գործերէ ձեռնթափ չէր և չէր կրնար ըլլալ, և յատկապէս սաղիմական խնդիր խորապէս ուսումնասիրած էր, պէտքերն ու դէմքերը մօտէն տեսած ու վննած էր, և ազգային շրջանակի մէջ անդիմադրելի հեղինակութիւն կը վայելէր, տեղապահն ալ իր ձեռնադրածն էր, ուստի դիւրերու կրնար պատշաճը թելադրել և գործադրութիւնը դիւրացնել: Նշանեան վարդապետն ալ, որ Երուսաղէմի շփոթներուն սկսիլը լսելով ետ դառնալը յապաղած էր, և շփոթներուն աճելովը բացակայութիւնը երկարած էր, և վերջապէս Երուսաղէմէ մեկնողներուն միացած էր, իբրև Իվմիրլեանի ներքին խորհրդակից և վստահելի գործակից, կրնար թէ պատշաճը ցուցնել և թէ գործադրութեան աջակցիլ, այսու հանդերձ տկար պատուիրակութեան մը յղուելէն և ձեռնունայն դառնալէն աւելի գործ մը տեսնուած չէր, և Երուսաղէմէ մեկնող միաբաններու խումբը կը ստիպուէր Կ. Պոլսոյ մէջ դեգերիլ, միաբանութեան օգուտն ու աթոռին պատիւը անձամբ վարչութեան առջև մղելու և պաշտպանելու համար: Մարտ 17-ին խառն ժողովը նախ լսած էր պատուիրակ Պէկեանը, որ դժուարութեանց և սպառնալեաց պատճառաւ գործ մը տեսնել կրցած չըլլալնին կը բացատրէր, և Յրութիւն պատրիարքի համար ալ տարիքին բերմամբ հեղինակութիւն չունենալը և մտային յեղյեղուկ վիճակ ունենալը կը վկայէր: Պէկեանէն ետքը նոյն օրը խառն ժողովին ներկայացած էին Յոպպէ հասնող եօթները, և կեանքի վտանգ վզալով վանքէ մեկած, և Ռէմլէ ու Յոպպէ մնացած, յուսահատութեան վիճակի մէջ Կ. Պոլիս եկած ըլլալնին յայտնած էին. Երուսաղէմի տագնապին վիճակը բացատրած, Մաքսուտեանի խնդիրը իբր սկզբնապատճառ ցուցած, և միաբանութեան ու ժողովուրդին ու կառավարութեան ընթացքին պատճառը շահակցական կապերն ըլլալը պարզած (ՏՂԿ.Զ.12): Կ. Պոլիս եկող եօթները Սարգիսեանի ետևէն հասնելովը, Թելեանի Եգիպտոսէ գալովը, Նշանեանի իր հին ընկերներուն միանալովը, Չիլինկիրեանի իրենց պաշտպան հանդիսանալովը, և օդափոխութեան համար եկած Նիկողայոս Ֆրանկիլեան վարդապետին իրենց յարելովը, տասնուերկուքի լրացած էին, և իրենց անհատական արժեքովն ալ պատկառելի խումբ մը կազմած էին, բայց տակաւին ոչ վարչութիւնը գործական որոշում մը տուած էր, և ոչ Իվմիրլեան օգտակար թելադրութիւն մը ըրած էր: Եթէ իբրև արդարացում ընդունինք այդ միջոցին տեղի ունեցած մայրաքաղաքին քաղաքական կացութեան փոփոխութիւնը (3115), և Ատանայի կոտորածը և անոր հետևանքները (3116-3120), պէտք չէ մտադրութենէ վրիպեցնել որ այս տագնապներէն առաջ փետրուար և մարտ ամիսները պարապի անցած էին, և պատուիրակութենէն երեք ամիս ետքը, միայն 12-ին, խառն ժողովոյ մէջ դարմանին վրայ կը խորհուէր, և տարօրինակ որոշմամբ մը, Յարութիւն պատրիարքը ամբաստանել, և ընդհանուր ժողովով դատապարտել և պաշտօնանկել, և աթոռը տեղապահի մը յանձնել կը

մտածուէր: Եթէ պատուիրակութիւնը լաւ թափանցէր և վարչութիւնը լրջօրէն քննէր, պիտի տեսնէր որ Յարութիւն պատրիարքի վրայ յեղյեղուկ վիճակ ըսուած և հեղինակութիւն չունենալը, ուղիղ միտքի և անօգնական վիճակի պայքարն էր, որ իր իրաւացի և ճիշդ տեսութեանց հանդէպ գործադրելու ոյժ և օգնութիւն չունենալը կարտայայտէր: Ուղիղ տրամադրութիւնը և արդար վարչականութիւնը, ոչ Յարութիւնը ամբաստանելու և ոչ դատապարտելու և պաշտօնանկելու ելրակացութեան կրնային տանիլ, այլ ոյժ և օգնութիւն հայթայթելով ճշգրիտ միտքին և իրաւացի տեսութեանց իրականացման պէտք էր առաջնորդէին: Յարութիւն պատրիարքի մօտ ուղղամիտ և բանիմաց, ճարտար ու փորձառու օգնական մը պէտք էր աւելցնել, որով պատրիարքական հեղինակութեան և բազմամեայ արդիւնաւորութեան պօրութիւնը չէր ջլատուեր, և օգտակար ու արգասաւոր գործադրութեան ճամբայ կը բացուէր: Իզմիրլեան տակաւին Կ. Պոլիս էր երբոր մայիս 12-ի տարադէպ խորհուրդը վարչութեան ժողովին մէջ պաշտօնական ձև կը պզտնուր, և հարկաւ եօթնեակներով ալ առաջ անպաշտօն խորհրդակցութեանց նիւթ եղած էր: Նա լաւ կը ճանչնար Վեհապետեանը, մօտէն գիտէր անոր միտքին ուղղութիւնը, տեսած էր նեցուկ և օգնական գտած ատեն ցուցած գործունէութիւնը, իրաւամբ կը սպասուէր իրմէ իսկութիւնը վարչութեան յայտնել և հեղինակօրէն պարտադրել. բայց որովհետև վարչութեան որոշած ձևին գործադրութիւնը Իզմիրլեանի Կ. Պոլիսէ մեկնելէն ետքը տեղի ունեցաւ, մենք ալ անցնինք նախապէս անոր ուղևորութեան պարագաներ պատմել:

3132. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

Իզմիրլեանի կաթողիկոսական ընտրութեան Ռուսիոյ կառավարութեան կողմէն ընդունուած ըլլալը, թէպէտ 1909 յունուար 3-ին դեսպանատան կողմէ պեկուցուած էր (3110), սակայն շատ մը ձևակերպութեանց լրումը քանի մը ամիսներ ևս տևեց, մինչև որ կայսերական հրովարտակը հրատարակուեցաւ ապրիլ 7-ին (09. ԱՐԼ. 7038), և անկէ ետքն է որ մայրաթոռոյ հրաւիրակները, Քարեգին Սաթունեան Տփղիսի ու Աշոտ Շախեան Արցախի եպիսկոպոսներ, և Մեսրոպ Տէր-Մովսիսեան ու Բաբգէն Աղաւելեան վարդապետներ ճամբայ ելան Կ. Պոլիս գալու, ուր կը հասնէին մայիս 13-ին (ՄՐԴ. 1): Նախընթաց կաթողիկոսական ընտրութեանց առթիւ սովորութիւն եղած էր Բերայի մէջ վայելուչ և ընդարձակ տուն մը յատկացնել նորընտիրին բնակութեան և ընդունելութեանց. բայց այս անգամ նախադասուեցաւ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ կալուած և յարակից, Մկրտիչ Թօթաթլեանի վարած Սբլանտիտ կոչուած նորաշէն պանդոկը յատկացնել նորընտիրին և հրաւիրակներուն միանգամայն, իբր զի տակաւին նոր կը բացուէր և խոնուած չէր, և յարակից ճաշարանովը և եկեղեցւոյ բակին հետ մասնաւոր հաղորդակցութեամբը յարմար դիւրութիւններ կը ներկայէր: Հրաւիրակներ պարտուպատշաճ պատուով ընդունուեցան և յիշեալ պանդոկը առաջնորդուեցան: Իզմիրլեան մինչև վերջին օրեր Իւսկիւտարի Եէնիմահալլէ թաղը կը մնար, և Ս. Կարապետ եկեղեցին կը յաճախէր, ուր մայիս 10-ին Դպրեվանքի աշակերտներէն Մեսրոպ Նարոյեանի ու Ղևոնդ Դուրեանի ու Գրիգորիս Պալաքեանի Ծայրագոյն Վարդապետութեան օրհնութիւն, և 14-ին Արմենակ Ինձէեան փաստաբանին քահանայական օժուճ և արեղայական վեղար տուած էր, իր իսկ Մատթէոս անունով կոչելով զայն (09. ՄՆԶ. 2423,2426), և 16-ին, շաբաթ օր, ինքն ալ Իւսկիւտարէ Բերայի պանդոկը կը փոխադրուէր (ՕՄԱ. 278): Իսկ 17-ին Հոգեգալստեան տօնին օրը, որ Բերայի եկեղեցւոյն տարեկանաց օրն է, գահակալութեան հանդէս մը տեղի կունենար: Ժամերգութեան ատեն փառքիբարձունսէն առաջ կաթողիկոսը հանդէսով եկեղեցի կիջնէր, հրաւիրակ եպիսկոպոսներ հայրապետական գաւազանն ու խաչը կը յանձնէին, Սաթունեան ծանուցման և բարեմաղթութեան ատենաբանութիւնը կը կատարէր, և նորընտիր ներկայ եկեղեցական դասակարգին պաշտօնական յարգանքը կընդունէր,

ուսկից ետքը ինքն ալ պատշաճաւոր քարոզը կը խօսէր, Հայ եկեղեցւոյ կեանքը պատկերացնելով և իր պարտականութիւնը բացատրելով (ՄՐԴ. 1-3): Այդ առթիւ նոր կաթողիկոսին անունն ալ պատարագին մէջ առաջին անգամ կը յիշատակուէր : Յերեկին ճոխ հացկերոյթ մը կը տրուէր ճաշարանին մեծ սրահին մէջ բազմաթիւ եկեղեցական և պաշտօնական և ականաւոր հրաւիրեալներով, որ ատեն սովորական բաժակաճառերը կը խօսուէին ըստ պատշաճի (ՕԳԱՐԼ.7100): Պարագային պահանջած արարողութեանց լրման համար պէտք էր որ նորընտիրը հայրապետական պատարագ մըն ալ մատուցանէր, զոր դժուար եղաւ Հոգեգալստեան օրը կատարել, և ուրիշ կիրակի օր մնացած չըլլալուն, մայիս 21-ի հինգշաբթի օրուան թողուեցաւ և մեծահանդէս շուքով տեղի ունեցաւ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, թէ՛ բնակավայրին մօտ ըլլալուն և թէ՛ թաղին կեդրոնական դիրք ունենալուն պատճառով, բարձրաստիճան եկեղեցականներու, մեծամեծ ազգայիններու, պաշտօնական մարմիններու և դեսպանական անձերու ներկայութեամբ: Իզմիրլեան առիթ առաւ դարձեալ Հայ Եկեղեցւոյ և հայ ազգին վրայ տեսութիւններ յայտնել և մաղթանքներ ընել (ՄՐԴ.3-5):

3133. ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ

Յատկապէս յիշատակութեան արժանի կը դատենք Իզմիրլեանի և Օրմանեանի տեսակցութիւնը, որ տեղի ունեցաւ մայիս 18ին երկուշաբթի օր: Օրմանեան միանգամ և երկիցս Իզմիրլեանէ տեսակցութիւն խնդրելէ և վլացուելէ ետքը, այլևս լռած էր և նոր հետապնդութիւն չէր ըրած (3108), և ոչ իսկ երբոր մեկնելուն պատրաստութիւնները կը կատարուէին: Մայիս 14ին Բերայի թաղականութեան ատենապետ Յակոբ Էսսեանի ձեռքով լուր ստացաւ Իզմիրլեանէ, թէ մինչև հիմա պարագաներ նպաստաւոր չէին տեսակցութեան, բայց Բերա իջնելուն երբ ուզէ գայ, սիրով կը սպասէ տեսակցիլ (ՕՄԱ.277): Օրմանեան պատասխանեց թէ որչափ ալ նա իր շատ մը գիրերուն տարի մը ետքը լոկ երկու տող պատասխան մը յղած է, հոգևորական միսիթարութենէ վրկած է, եկեղեցականութեան դասակարգէն դուրս թողած է, համագումարէ և եպիսկոպոսաց հրաւերներէ վրկած է, պատրիարքներու կարգէն պատկերը վերցուած է, սակայն չուզեր պատշաճից հակառակ գործել և հրաւերները մերժել, միայն թէ կը փափաքի որ յարմար առիթը նա ինքն որոշէ (ՕՄԱ.278): Ասոր վրայ մայիս 18ին Բերայի թաղականներէն Արտաշէս Ֆնտրզլեան պատրաստ կառքով եկաւ առաջնորդել, և ընդունելութիւնը սիրով և ողջագուրանօք սկսաւ: Տեսակցութիւնը երկու մաս ունեցաւ, առաջինին Էսսեան և Ֆնտրզլեան ալ ներկայ գտնուեցան: Օրմանեան շնորհաւորութիւններ յայտնեց և յայտարարեց թէ ի սրտէ կը փափաքիմ որ դուք յաջողիք որպէսզի մենք չձախողինք: Խօսքը դարձաւ Էջմիածնի վրայ, օսմանեան ազատութեան վրայ, անոր ապագային և հետևանքներուն վրայ, երկրին կացութեան վրայ, և վերջապէս Իզմիրլեան ինքն ակնարկեց, թէ Օրմանեան ցաւած կրնայ ըլլալ եկեղեցիէ վրկուած ըլլալուն համար, և յարեց թէ չհամարձակեցաւ արտօնել՝ վախենալով որ տգեղ ցոյց մը տեղի կունենայ, որուն Օրմանեան պատասխանեց թէ պատրիարքական իշխանութիւնը եթէ ուզէր, կրնար իր անվայել դատած եղելութիւնները խափանել: Իսկ թշնամանաց արարքներուն համար ցաւ յայտնեց պաշտօնական շրջանակներէ ալ գոծածուելուն համար, աւելցնելով որ եթէ թշնամոյն նախատեալ էր համբերէի արդեօք (ՍԱՂ.ԾԴ.13): Տեսակցութեան առաջին մասը փակուեցաւ թէյի պատուասիրութեամբ, ուսկից ետքը Էսսեան և Ֆնտրզլեան մեկնեցան (ՕՄԱ.280-281): Երկրորդ մասին մէջ Իզմիրլեան դարձեալ Օրմանեանը եկեղեցական և հոգևորական միսիթարութենէ վրկելուն պաշտպանութիւնը սկսաւ կրկնել, միշտ տգեղ ցոյցի մը վախը առաջ դնելով, և ոչ թէ այդ բանին համար որևէ արգելք մը նկատած ըլլալուն համար, և շատ մը փաղաքշական բացատրութիւններ աւելցուց, թէ արժանիքը կը ճանչնայ, թէ վստահ է որ շատ ևս ծառայութիւններ պիտի կարենայ ազգին ընծայել,

թէ իմացեր է որ ժամանակին պէտք եղած հոգածութիւնն ու պաշտպանութիւնը պատրիարքն իրեն համար ըրեր է (ՕՄԱ.282), թէ ինքն պատրիարքին միջնորդութեամբ նորանոր փորձանքներէ ապատեր է (ՕՄԱ.283), թէ Օրմանեան օգտակար պաշտօնավարութիւն ունեցած է, թէ սահմանադրութեան վերաքննութիւնը արգիլելով՝ վայն անվնաս պահելը ապգովին երախտագիտութեան արժանի արդիւնք մըն է, թէ ամէնքը գիտեն որ շատ դժուարին պարագաներու դիմաց գտնուած է, և եզրակացնելով թէ ամէն բան շուտով կը փարատի և ճշմարտութիւնը կը յայտնուի (ՕՄԱ.285): Այդ երկրորդ մասին խօսակցութիւնների ժամի մօտ տևեցին, որոնց մէջ Իվմիրլեան առիթ գտաւ ամբոխային ցոյցերու վրայ գանգատելու, ժողովականաց ընթացքը մեղադրելու, գործերու անկանոնութիւնը խոստովանելու, և Օրմանեանը միխթարելու համար իրեն ալ թշնամանաց և հալածանաց ենթարկուած ըլլալը յիշեցնել, որոնց Օրմանեան կը պատասխանէր թէ ան արտաքիններէն թշնամանուած էր, մինչև ինքն ապագային պաշտօնական անձերէ և մարմիններէ գիտակցաբար կը թշնամանուէր: Տեսակցութիւնը միշտ միևնոյն կէտերուն վրայ դառնալուն՝ Օրմանեան հարկ սեպեց հրաժեշտի աղջոյնը տալ նորէն դառնալու պատեհ չունենալուն, և սիրալիր և պատուազիր ձևերով բաժանուեցան: Բերայի թաղականներ պահ մը իրենց խորհրդարանը հրաւիրեցին Օրմանեանը, և առաջիկայ հինգշաբթի հայրապետական պատարագին գտնուելը առաջարկեցին, որուն Օրմանեան պատասխանեց թէ բոլոր եպիսկոպոսաց ցրուած հրաւիրագիրը իրեն յղուած չէ, և թէ տակաւին մինչև այս վերջին վայրկեանը եկեղեցի երթալու արգելքը իրեն առջև կը նետուի (ՕՄԱ.287): Այս տեսակցութեան իբրև յաւելուած իդէպ է յիշել, թէ ժամանակ լրագիրի խմբագրապետը մայիս 21ի թիւին մէջ կը հրատարակէր, թէ Իվմիրլեան իրեն ըսած է թէ չէր կրնար որևէ քարոզչական պաշտօն տալ Օրմանեանի քանի որ ամբաստանուած էր և թէ միայն քննութիւնը արդիւնքին վրայ կարելի է որևէ բան տնօրինել, թէ Օրմանեանի ալ այսպէս խօսած է (ՕՄԱ.288): Տեսակցութիւնս քաղուածը կրնայ ծառայել իբր լրումն այն տեղեկութեանց, զորս քաղեցինք Իվմիրլեանի և Օրմանեանի յարաբերութիւնները բացատրելու համար (3108): 3134. ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Իվմիրլեանի հարկ էր Օրմանեան երկիրէն չմեկնած, օսմանեան կառավարութեան հրաժեշտի ողջոյնը տալ, և ըստ այսմ մայիս 21ին, նոյն իսկ հայրապետական պատարագին օրը, փութաց կայսերական պալատ երթալ հրաւիրակներով և պատրիարքարանի ժողովներու ատենապետներով, կայսեր կողմէն ընդունուեցաւ, ուղերձ մը արտասանեց, որով Հայոց վրայ կայսերական հովանին կը խնդրէր, Ատանայի աղետին ակնարկելով անոր հետևանքներուն դադարելուն վստահութիւն կը յայտնէր, և իր մասին ալ ցուցուած մտադրութեան համար շնորհակալութիւն կը մատուցանէր: Կայսեր պատասխանն ալ յոյժ սիրալիր եղաւ, Հայոց մասին համակրանք վկայեց, ամէն ապգերու վրայ հաւասար խնամք ունենալը յայտարարեց, և հաւատարմութեան սկզբունքը յանձնարարելով՝ աւելցուց թէ պէտք է հոգևոր պետերն ալ միևնոյն ոգւով յորդորեն իրենց ժողովուրդները (ՄՐՏ.7): Այս առթիւ Իվմիրլեանի առաջի աստիճանի օսմանիէ և չորս հրաւիրակներու պատշաճ աստիճանով մէճիտիյէ շքանշաններ շնորհուեցան: Իվմիրլեան կայսեր այցելութենէն դառնալով՝ բարձրագոյն դուռ եկաւ մեծեպարթոս Հիւսէյին Հիլմի փաշային այցելութեան, ուր դարձեալ միևնոյն յայտարարութիւնները կրկնուեցան: Իսկ Ատանայի աղետին մասին եպարթոսը կը վստահեցնէր թէ կառավարութիւնը մէկ կողմէն հարկաւոր միջոցները ձեռք առած է արգիլելու համար նմանօրինակ դէպքերու կրկնութիւնը, և միւս կողմէն վճռած է յանցաւորները օրէնքի խստութեամբ պատժել (ՄՐԴ.8): Արտաքին գործոց նախարար Ռէֆայթ փաշայի մօտ ալ գնաց Իվմիրլեան, այլ անոր բացակայութեան պատճառով խորհրդական Մանուկ Ապարեանէ ընդունուեցաւ (09.ՄՆԶ.2432): Իվմիրլեան կանխած էր ռուսական դեսպան Իվան Զինովիէվի ալ

այցելել, և փոխադարձ այցելութիւնը ընդունած էր: Ըստ այսմ մայիս 21ի հինգշաբթի օրը պաշտօնական գործողութիւններով անցաւ, իսկ մեկնելուն նախորդ ուրբաթ օրը, մայիս 22ը, ապագային գործոցութեանց յատկացուեցաւ: Այն օրը գումարուած ապագային ժողովը նշանաւոր եղաւ իր կատարած գործերով, զի միևնոյն օր և միևնոյն նիստին մէջ կատարուեցան նոր պատրիարքի ընտրութիւնը, և Երուսաղէմի տեղեկագիրին ներկայացումը և Իզմիրլեանի հրածեշտի ողջոյնը: Երուսաղէմի տեղեկագիրին վրայ խօսիլը առայժմ վանց կընենք, վերապահելով անոր վրայ վերադառնալ նկատառութեան առնուելուն առթիւ: Երուսաղէմի և Իզմիրլեանի սերտ յարաբերութիւնը ծանօթ ըլլալով՝ ամէն ոք կը սպասէր Երուսաղէմի մասին Իզմիրլեանի տեսութիւնները լսել, և ինքն ալ յաճախ խօսած էր թէ կարևոր յայտնութիւններ ունէր ընելու, թէպէտ լաւագոյն ըրած պիտի ըլլար եթէ Երուսաղէմէ դառնալէն ետքը և իր պատրիարքութեան միջոցին ըրած ըլլար այդ յայտնութիւնները, ապագային ժողովը և քննիչ յանձնաժողովը լուսաբանած, գործադրելու կերպերը որոշած, և իրականացման աշխատած, և ոչ թէ անկողմնակալութիւն ցուցդրելով ներել Երուսաղէմի մէջ սկսած շփոթները, և սպասել մինչև այն օրը այլևս խնդիրին միջամտելու առիթ պիտի չունենար: Իսկ նոյն օր այդ նիստին մասին խօսածները խնդիրին լուծուելուն օգնութիւն մը չէին բերեր, զի նոր յայտնութիւններ չէին յիշեալները, թէ հաշուականէ վատ վարչական գեղծումներ ալ գործուած են Երուսաղէմի մէջ, թէ կեդրոնը իրաւունք ունի Երուսաղէմի գործերուն միջամտելու, թէ միայն ներքին գործերն են որ Երուսաղէմի պատրիարքին իշխանութեան պիտի թողուին, և թէ ի՞նչ կերպով պարտքեր կը շատնան սաղիմական մատակարարութեան մատակարարութեան մէջ, բոլորն ալ յանձնաժողովոյ տեղեկագիրին մէջ յիշուած կէտեր: Իրմէ կը սպասուէր որ խնդիրին լուծման ձևն ու կերպը ցուցնէր, և ոչ թէ պարզ իղձ մը արտայայտել թէ գոհ պիտի ըլլայ եթէ էջմիածնի մէջ իմանայ թէ արդար վճիռ մը տրուած է: Իզմիրլեանէ սպասուածը արդար վճիռին համար գոհ ըլլալը չէր, այլ արդար վճիռը իրեն ձեռքով տուած ըլլալ և չներել որ իրականանային Երուսաղէմի մէջ այն տխուր անցքերը, զորս համառօտիւ քաղեցինք (3130): Իսկ հրածեշտի ճառը գոհունակութիւն և շնորհակալութիւն էր Երուսաղէմէ դառնալէն ետքը ցուցուած պատիւներուն և նորէն պատրիարք ընտրելուն համար, և խոստում որ էջմիածնի մէջ ալ սիրտով միացած պիտի մնայ Տաճկահայոց շահերուն, որոնց համար երկար տարիներէ ի վեր աշխատած է (09. ԱՐԼ. 7105 և 09. ՄՆՁ. 2433):

3135. ԴՌԻՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԶ

Մայիս 22 ին կատարուած պաշտօնական գործերուն գլխաւորը պատրիարքական ընտրութիւնն էր, որուն Իզմիրլեան յատկապէս կը հետապնդէր որ ինքը չմեկնած կատարուի, և միանգամայն կաշխատէր որ ընտրեալը Դուրեան Եղիշէ եպիսկոպոսն ըլլայ, զոր իբր իր հաւատարիմ ձեռնասունը կը նկատէր, և անոր ընտրութեամբը կը յուսար Տաճկահայոց վրայ իր ազդեցութիւնը մշտնջենաւորել: Ընտրելեաց ցանկը կազմելու համար համագումարի նիստը տեղի ունեցած էր 20 ին, և 30 ներկաներէ բուէարկուած 15 անուններէն առաջին եօթներն եղած էին, Եղիշէ Դուրեան, 24, Հմայեակ Դիմաքսեան 20, Յովհաննէս Արշարունի 17, Ստեփանոս Յովակիմեան 13, Տրդատ Պալեան 12, Գէորգ Երէցեան 9, և Մաղաքիա Տէրունեան 6 բուէով (09, ՄՆՁ. 2431): Բաղաքական ժողովը որ նախադասելիներու հնգանուն ցանկը կազմելու առթիւ ցուցակի անցուցած էր եօթներէն Դուրեանը, Յովակիմեանն ու Պալեանը, և Եօթներէն դուրս Վահրամ Մանկունին և Գաբրիէլ Ըէվահիրճեանը, որոնք համագումարէն միայն 5 ու 4 բուէ ստացած էին, և դուրս թողած էր Դիմաքսեանն ու Արշարունին, որոնք համագումարի ցանկին վերերը կը գտնուէին (09.ՄՆՁ.2433): Այդ կէտը բաւական խորհրդածութեան և խոսակցութեանց տեղի տուաւ, իբր զի սովորութեան և փափկանկատութեան հակառակ էր, և եկեղեցականութեան

հանդէպ անարգական ձև մը ունէր: Զանազան մեկնութիւններէն յարմարագոյն ու հաւանականագոյն ընդունուեցաւ Իզմիրլեանի կողմէ Դուրեանի մասին յայտնուած պաշտպանութիւնը, որուն հետևելով քաղաքական ժողովը յարմարագոյնները դուրս թողած էր քուէից ցրուումը արգիլելու, և անարժէքերու առաջարկութեամբ՝ Դուրեանը պարագնելու համար: Ընդհանուր ժողովոյ քուէարկութիւնն ալ այդ նախապատրաստութեանց համաձայն եղաւ, և 91 քուէարկուներէն Դուրեան 54 քուէ ստացաւ, իսկ մնացեալ 37 քուէները տրուած էին, 30 Արշարունիի, 3 Դիմաքսեանի, 1 Երէցեանի և 3 սպիտակ: Արշարունիին տրուած 30 քուէները տեսակ մը բողոքի նշանակութիւն ունէին՝ տեղապահին անունին հնգանունէն դուրս թողուելուն դէմ: Ըստ այսմ Դուրեանի պատրիարքութեան ընտրուիլը Իզմիրլեանի յատուկ պաշտպանութեան արդիւնքն եղաւ, թէպէտև յետոյ ինքն ալ մեծ գոհունակութիւն պատու առիթ չունեցաւ: Դուրեան գիրքի ու գրիչի մարդ, վարչական պաշտօնները սկիզբէն իրեն օտար նկատած էր, և իր կոչումն ու դիրքը Դպրեվանքն էր, և Օրմանեան աշխատած է այնտեղէ հեռանալը արգիլելու: Եթէ Դուրեան իր սիրած ուսումնական կեանքէն պատուելով վարչականին մտնել փախաբեցաւ, ոչ թէ վարչական պաշտօնին վրայ յարգ կամ բաղձանք ունենալէն յառաջ եկաւ, այլ պարզապէս իր ապագային համար նիւթական միջոցներու պէտքը պատու հետևանքն եղաւ, որուն ստուգիչ շատ ձեռնտու չէր Դպրեվանքը, և եթէ եկեղեցականի կեանքն ու ապագան դիտենք, անտեղի և անիրաւ պիտի չկարենանք ըսել յառաջացեալ տարիքին համար նիւթական միջոցներ պատրաստած ըլլալու անհրաժեշտութիւնը: Դուրեանի Զմիւռնիոյ առաջնորդութեան մէջ ցուցած արդիւնքը վարժարաններու հոգածութեան և ուսոցչութեան և եկեղեցւոյ բեմէն բորւչութեան գործերով կը լրանայ, և վարչական պաշտօնին կողմէ Զմիւռնիոյ վիճակը մեծ պահանջներ չէր ներկայէր: Իսկ պատրիարքական տեղապահութիւնը գրեթէ աննշան անցած էր, և լրագիրներն ալ համարձակ կը գրէին, թէ ժամանակին պահանջներուն համեմատ եղած չէր, և ապագային մեծ ակնկալութիւն չէր ներշնչէր, բայց թէ աստ և այժմ աւելի վստահութիւն ապրող ընտրելի ալ չկար (09. ԱՐԼ. 7108): Այդ պարագաներուն առջև շատեր Արշարունին Դուրեանի կը նախադասէին, որ աւելի գործունէութիւն ցոյց տուած էր Ատանայի աղետին առթիւ քան Դուրեան ապատութեան հոշակուելուն առթիւ, բայց անոր ալ ջղագրգիռ բնավորութիւնը շատերուն միտքեր կը պղտորէր, և այդ պարագաներու ներքև Իզմիրլեանի կողմէ գործածուած ազդեցութիւնը իրեն նպատակին հասաւ, թէպէտ քաղաքականին Արշարունիի ստացած 30 քուէները շատ նշանակալից եղան: Ընդհանուր ժողովին Գումգաբուի մայրեկեղեցւոյ մէջ քուէարկութեան պաշտօնը տեսնելով՝ Իզմիրլեան պատրիարքարան նստած անտարբեր չէր մնար և գործողութեանց ընթացքին կը հսկէր:

3136. ԻԶՄԻՐԼԵԱՆ Ի ՊԵՏՐՔՈՒՐԳ

Իզմիրլեան նորընտիր կաթողիկոս մայիս 22 ին Դուրեանի ընտրութեամբ իր դիտած նպատակը իրագործած, 23 ին շաբաթ օր Կ. Պոլիսէ կը մեկնէր հայրապետական այստեղ երթալու, սակայն առաջ դեսպանատան արդարարութեամբ կը պարտաւորուէր էջմիածին չգացած նախապէս Պետրբուրգ երթալ և կայսեր ներկայանալ: Այս տեսակ մի կարգադրութիւն նախորդներէն Մատթէոսի, Գէորգի, Մակարի և Մկրտիչի չէր առաջարկուած, և միակ օրինակը Ներսէս Աշտարակեցիի ընտրութեան առթիւ տեսնուած էր (2572): Աչքառու էր Ներսէսի պարագայն, որ հայկական ազգութեան ոգով տոգորուած և նշանակալից ձեռնարկներու գլուխ կանգնած, ռուսական հովանաւորութիւնը վայելելէն ետքը՝ ռուսական պաշտօնաւորութեանց ենթարկուած էր (2457), և թէպէտ կաթողիկոսական ընտրութիւնը հաստատուած, բայց գործի ձեռնարկելէն առաջ պետական ազդեցութեան ծանրութիւնը պաշտօնը նկատուած էր, և օծումէն առաջ Պետրբուրգ երթալ հրաւիրուած էր: Նմանօրինակ և համանպատակ պէտք է ըսել Իզմիրլեանի ալ

առաջարկուած նախապէս Պետրբուրգ երթալու պարտադիր հրաւերը: Իզմիրլեանի ծանօթ էր պօլօժէնիէի ռուսական օրէնքին դէմ բանիւ և գրով և գործով յայտնած բուռն հակառակութեամբը (2890 և 2913), և նոյն իսկ ռուսական կառավարութեան դէմ յայտարարութիւններովը, ապագային խնդիրներու մէջ բռնած ուղղութեամբը, առաջին պատրիարքութեան ատեն Ռուսիոյ հանդէպ ցրտութեամբը (2916): Վերջապէս անտարբեր չէր վերջին օրեր դաշնակցական բանախօսի պոռոտախօս յորդորներուն հանդէպ լուծիւնը, որ կը թելադրէր, ուժգին դիմադրել ռուսական բռնապետութեանց, որ իր կողքին օգնական կանգնած են դաշնակցական շարքերը: Իզմիրլեանի այդ հակառուսական զգացմանց ծանօթութիւնն էր անշուշտ որ վայն նախապէս Պետրբուրգ տանել և քաղցր միջոցներով մեղմացնելու միջոցը կը թելադրէր որպէսզի ըստ այնմ ազդուի իր առաջիկայ գործադրութեանց մէջ: Այս հրաւերին պատասխանած էր նորընտիրը թէ վայն իբրև պատիւ կընդունի, և միանգամայն կաւելցնէր թէ չև օժուած պիտի չկարենայ ներկայել Հայաստանեայց եկեղեցւոյ ծայրագոյն պատրիարքի հանգամանօք, այլ իր ամենախորին յարգանքները անպաշտօն հանգամանօք պիտի մատուցանէր, և այդ միտքը գիրով կը հաղորդէր դեսպանին, խնդրելով որ իւր խոնարհ տեսութիւնները դնէ յոտս կայսերական գահոյից, և այդ գիրը ընդհանուր ժողովին ալ հաղորդէր: Հարկաւ Իզմիրլեան ինքն ալ լաւ թափանցած էր ռուսական կառավարութեան թաքուն դիտումին, որ այս կերպով կուզէր թեթևցնել իր Պետրբուրգ երթալուն նշանակութիւնը: Իսկ ռուսական հողին ոտք դնելէն ետքը չափազանց մտադրութիւն կը դարձնէր ռուսական կայսրը բարձրացնելու, ռուսական օրէնքները յարգելու, և ժողովուրդը բուռն և յախուռն շարժումներէ զգուշացնելու, ուր բացարձակը անհնար է՝ հնարաւոր դարմաններով և կացութեամբ գոհանալու, և այդ խօսքեր կապ ունէին նոյն օրեր վարչական կասկածներով Հայոց վրայ կատարուած ձերբակալութեանց հետ, և յատուկ նշանակութիւն կառնէին: Կ. Պոլիսէ մեկնիլը տեղի ունեցաւ մայիս 23ին շաբաթ օր կէսօրէն առաջ, Գումբաբուէ Թօփհանէ կառքերով, և Թօփհանէէն, որ դեսպանաց սովորական նաւամատոյցն է, ռուսական պահականաւին մակոյկներով անցաւ Օտեսա մեկնող երթակէի շոգենաւին վրայ: Սովորական ոգևորութիւնը սաստիկ էր, և ողջերթ մաղթող պետական և օտարազգի և ապագային ներկայացուցիչներ բազմաթիւ էին (ՄՐԴ.10 և 09.ԱՐԼ.7105): Իզմիրլեանի կուղեկցէին Էջմիածինէ եկող չորս հրաւիրակները, և Կ. Պոլիսէ աւելցան, Երուսաղէմի միաբան Մեսրոպ վարդապետ Նշանեան, որ Երուսաղէմէ ուղեկցած էր և զոր Իզմիրլեան իրեն մօտ պահած էր իբր վստահել և մտերիմ քարտուղար ու գաւազանակիր, և Գրիգորիս վարդապետ Պալաքեան Դպրեվանքի աշակերտութենէն որ Գերմանիա գտնուած և գերմաներէնի հմուտ ըլլալով օգտակար պիտի ըլլար ուղևորութեան միջոցին, և ապագային ժողովին կողմէն իբրև պատուագիր ուղեկից Մինաս Չերապ իր ատենապետը: Մայիս 23ին կէսօրէն քիչ առաջ մեկնող շոգենաւը, միւս օր 24ին՝ կէսօրէն քիչ ետքը Օտեսա հասաւ, և ամէն կողմերէ եկած պատուիրակութիւններ մեծահանդէս ընդունելութիւն կատարեցին, Բեսարաբիոյ առաջնորդ Ներսէս Խուտավէրտեան եպիսկոպոսի գլխաւորութեամբ, որուն կընկերանար Արտակ Սմբատեան վարդապետը, և քահանայից ստուար խումբ մը, որոնց հետ նախ եկեղեցի առաջնորդուեցաւ: Նոյն օրը հանդիսական ցոյցերով անցաւ, և եկեղեցպան Սիրական Աստուածատուրեանի տունը գիշերեց, միւս օր երկուշաբթի կայսրուհւոյն ծննդեան տարեդարձին մաղթանքին նախագահեց, օրհնեց և օրհնաբանեց, կայսեր հեռագրեց և պատասխան ստացաւ, տեղական իշխանութիւններէ մեծարուեցաւ, և կէսօրին երկաթուղիով մեկնեցաւ միշտ համակրական ցոյցերու մէջ հետևորդներուն աւելցած էին Ներսէս եպիսկոպոս և Արտակ վարդապետ (ՄՐԴ.11-13): Օտեսայէ ուղիղ ճանապարհորդեց մինչև Պետրբուրգ, ուր հասաւ մայիս 27ին չորեքշաբթի կէսօրէն առաջ: Ընդունելութիւնը պատրաստուած էր ամենայն շքեղութեամբ, կայարանի մէջ, եկեղեցւոյ ճամբուն

վրայ, և եկեղեցւոյ մէջ, և իշխան Աբիմելիք-Լապարեանի ապարանքը ուր պիտի օթևանէր, և այն օր անցուց այցելութիւններով և ուղերձներով: Մայիս 28ին առաջին այցելութիւնը տուաւ նախարարապետ Ստօլիպինի (ՄՐԴ.14-18), որուն հետ սիրալիր և պատուաւոր տեսակցութիւն ունեցաւ թարգմանչութեամբ հայերէնագէտ Նիկողայոս Մարը ուսուցչապետին, և այս առթիւ որոշեց իւր ուղղութիւնն ու կաթողիկոսական ապագայ գործունէութեան ընդհանուր ծրագիրը (ՄՐԴ. 36-38): Յատկապէս խօսեցաւ երդումներուն ըլլալուն, դպրոցներու ծրագիրը ընդլայնելուն, և հայ բանտարկեալներ արձակելու մասին (09. ԱՐԼ. 7120): Կայսերական ընդունելութիւնը տեղի ունեցաւ ուրբաթ 29-ին (09. ԱՐԼ. 7111), և կայսրը յայտնեց օծումէ առաջ տեսնալուն գոհունակութիւնը , և մանաւանդ իր վստահութիւնը թէ հոգ պիտի տանի որպէսզի երիտասարդութիւնը Ռուսիոյ հանդէպ սիրոյ և անձնուիրութեան ոգիով տոգորուի: Կաթողիկոսը կայսեր ալ ուղղեց բանտարկեալներուն պատուութեան խնդրանքը, որուն համար արդէն Ստօլիպին կսած էր թէ անմեղները կարձակուին և յանցաւորները դատարանին կը յանձնուին (09. ԱՐԼ. 7120): Կայսրը վստահութիւն յայտնեց, թէ պիտի յորդորէ իւր հօտը դէպի խաղաղ և առաքինի կեանք ու հնապանդութիւն օրինական իշխանութեանը (09. ԱՐԼ. 7120), ինչ որ նշանակալից իմաստ ունէր: Ունկնդրութենէն վերջ յանձնուեցան կայսերական հրովարտակը և վեցարի ադամանդակուռ խաչը (09. ԱՐԼ. 7112): Եկեղեցական հանդիսութիւնը տեղի ունեցաւ կիրակի 31 մայիս, Էջմիածինի կաթողիկէի տօնին, և Իզմիրլեանի Պետրբուրգ այցելելը շաբաթ մը տևեց, մայիս 27-էն յունիս 4, որուն մէջ առիթ ունեցաւ թէ քաղաքին նշանաւոր տեղերը տեսնել, և յատկապէս կայսերաց դամբարանն, ուր արծաթեայ պսակ մը դրաւ Աղէքսանդր Գ. Աղէքսանդր Գ. ի գերեզմանին վրայ, և թէ ազգային կեանքով հետաքրքրուեցաւ, և թէ Ռուսաց մետրապօլիտին և պետական և պետական անձերու հետ այցելութիւններ փոխանակեց և շահագրգիռ տեսակցութիւններ ունեցաւ: Յունիս 3-ին մայր կայսրուհիէն ալ ընդունուեցաւ, ուր ճաշի ալ մնաց, և վերջապէս յունիս 4 հինգշաբթի երեկոյ մեկնեցաւ միշտ համակրական ցոյցերու մէջ, և ուղևորեցաւ Մոսկուա, ուսկից յատուկ հրաւիրակներ ալ եկած էին:

3137. ՊԵՏՐԲՈՒՐԳԷ ԷԶՄԻԱԾԻՆ

Պետրբուրգէ Էջմիածին հանդիսական և գրեթէ յաղթական գնացք մը եղաւ Իզմիրլեանի ուղևորութիւնը: Նոր կաթողիկոսի հանդէպ սովորական ցոյցերուն կը բարդուէին, Իզմիրլեանի անձին շուրջը դարձած պարագաները, ընդդիմադիր ընթացքը գովուած, հալածանքն ու արքորը արգահատուած, և ընտրութեան հաստատութիւնը ազգային յաղթանակ նկատուած, որ աւելի փայլ առած էր կայսերական այցելութեան և պատուագիր ու պատուաբեր ընդունելութեանց և մտադրութեանց լուրերովը, որոնք բերնէ բերան կը խօսուէին ամէն կողմ: Յատուկ խնդրութեան և խնդակցութեան առարկայ եղած էր կայսեր կողմէն խոստացուած ըլլալը թէ ձերբակալեալները կարձակուին ինքն Էջմիածին չհասած (09.ԱՐԼ.7118), թէպէտև կային Իզմիրլեանի այդ մասին խնդրանքը անժամանակ և կայսեր խոստումը առերևոյթ կարծողներ: Իզմիրլեան յունիս 4-ի երեկոյին Պետրբուրգէ մեկնելով 5-ին ուրբաթ առտու Մոսկուա մտաւ, ուր խանդավառութիւնը շատ աւելի եղաւ քան Պետրբուրգ, որուն հայաբնակութիւնը նուազ է. ցոյցեր կրկնուեցան կայարանի մէջ, եկեղեցին և Յովհաննէս Ժամհարեանց ապարանքը ուր օթևանեցաւ անհնարին էր բազմութիւնը, հետևող կառքերը հարիւրաւոր կաթողիկոսին կառքը վեցաձի, ուղերձները ոգևորեալ, և կեցցէները անսպառ: Կաթողիկոսը աւելի ևս կոզևորուէր ժողովուրդը եռանդուն յայտարարութիւններով, բոլորանուէր ընծայելով աթոռին և ազգին, ապագան չափաւորութեան և օրինապահութեան վրայ հաստատելով, և ազգին ամէն դասակարգերուն օժանդակութիւնը անհրաժեշտ հռչակելով: Գերեզմաննոցը, Լապարեան ձեմարանը, կայսերական պալատը,

ռուսական եկեղեցիները յատկապէս գրաւեցին իր մտադրութիւն: Եկեղեցական արարողութիւնը կատարուեցաւ յունիս 6-ին Մեծին Ներսէսի տօնին, և 7-ին Մոսկուայէ մեկնելով 8-ին հասաւ Ռոստով, ուսկից հանդիսաւոր թափօրով անցաւ Նոր-Նախիջևան հայաքաղաքը: Այստեղ կրկնուեցան և կրկնապատուեցան հանդիսական և համակրական ցոյցերը, եկեղեցական արարողութիւնը կատարուեցաւ երկուշաբթի 9-ին հայրապետական հոգելից քարոզով: Միւս օրը յատկացուեցաւ կարևոր տեղերու այցելութեան և պաշտօնական հացկերոյթի, և 11-ին հինգշաբթի օր ուղևորեցաւ դէպի Տփղիս ուղղակի, կանխելով լուր տալ Արմաւիր, Վլատիկաւկաս, Տէրբէնտ, Բագու, Գանձակ և ուրիշ երկրորդական քաղաքներու հայաբնակութեանց, թէ ոչ քաղաքում հանգստանալու չէ (ՄՐԴ.30-31): Ուստի ժողովուրդը գոհացաւ կայարաններու մէջ ցոյցեր կատարելով, որոնց գլխաւորն եղաւ Բաղուցոց հանդիսական ցոյցը Բալապարի կայարանը յունիս 13-ին, Լուսաւորչի Գիւտի Նշխարաց շաբաթ օրը (ՄՐԴ.31-34): Ճամբուն մէջ ներկայացան Գանձակի պատամաւորները, և Աղստաֆայի կայարանը հաւաքուած էին բոլոր շրջակայից ներկայացուցիչները և Տփղիսի հրաւիրակ պատգամաւորութիւնը: Միշտ նոյն ոգևորութիւն, նոյն խանդավառութիւն, և կաթողիկոսին կողմէն նոյն յայտարարութիւններ: Յատուկ յիշատակութեան արժանի է Աղստաֆայի մէջ Ղապախի Թուրքերուն պատուիրակութիւնը՝ Մահյատ Եաւուբովի գլխաւորութեամբ (ՄՐԴ.34-38): Տփղիս հասնիլը տեղի ունեցաւ յունիս 14ին կիրակի կէսօրին: Մինչև Տփղիս անցած տեղերը կրնային իբր պարզ գաղութներ նկատուիլ, մինչ Տփղիս հայ կեդրոն էր, և նոյն համեմատութեամբ առատացան հանդէսները և ցոյցերը, խանդավառութիւններ ու յայտարարութիւնները: Տփղիսի կայարանին մէջ առաջին բարի գալուստ մաղթողն եղաւ փոխարքայէն յղուած պատուիրակութիւնը. հետզհետէ հետևեցան ազգային ներկայացուցիչները: Մեծահանդէս թափօրով եկաւ վանքի մայր եկեղեցին ուր մտաւ հրաշափառով, աղօթեց և օրհնեց ու խրատեց, յանձնարարելով օրինապահութիւն, կարգապահութիւն, խոհեմութիւն և զգուշաւոր գործունէութիւն, յախուռն և հետևանքը շշկուած գործողութիւններէ խուսափում, և դէպի ռուսական հզօր կայսրութիւնը հաւատարմական զգացումներու ամրապնդում (ՄՐԴ. 43): Նոյն օր այցելեց Վրաստանի մայր եկեղեցին Վորոնցով Տաշկով փոխարքային, և ընդունեց քաղաքագլխութեան պաշտօնակատար Խատիսեանի և անդամոց այցելութիւնը (ՄՐԴ. 43-45): Յունիս 16 երկուշաբթի օրը յատկացուեցաւ ազգային մարմիններու ընդունելութեան, սկսելով քահանայական դասէն որ 60 անձերով ներկայացաւ, Գարգին Սաթունեան առաջնորդի գլխաւորութեամբ, ուր վիճակագրական տեղեկութիւններ ալ հաղորդուեցան կաթողիկոսին, և պատշաճ ազդարարութիւններ ըրաւ հոգևորական պաշտօնէութեան (ՄՐԴ. 46-51): Այցելութիւններ միւս օրն ալ շարունակեցին, որոնց մէջ Թուրքիոյ հիւպատոսը, իսլամական դէնպետը, Էջմիածինէ եկող պրոկուրոր, և ռուս եկեղեցական և պետական պաշտօնէութիւններ: կաթողիկոսը գլխաւոր այցելութիւնները փոխադարձեց, իսկ եկեղեցական արարողութիւնն ու քարոզը տեղի ունեցան յունիս 18-ին, Սահակայ և Մեսրոպայ տօնին օրը: Կատարուեցաւ Սեդրաքեան Արիստակէս եպիսկոպոսի տապանաքարին բացումը, 19-ին այցեց Մետեխի բանտը, ուր է Ս. Շուշանիկի գերեզմանը, և առիթ ունեցաւ բանտարկեալներուն խօսիլ, յիշելով թէ ինքն ալ կրած է բանտարկութեան ծանր հոգեկան տանջանքները (ՄՐԴ. 58), թէպէտև Երուսաղէմի փառաւոր վանքը շատ տարբեր է Մետեխի խիստ բանտէն: Յունիս 20-ին կատարուեցաւ Աղէքսանդր Մանթաշեանցի բարերարութեամբ կառուցուելիք Ներսիսեան նոր վարժարանին հիմնարկէքը (ՄՐԴ. 56): Ժողովրդականներն ալ պահ մը կաթողիկոսի աջը համբուրելու ընդունուեցան, և վերջապէս հասնելուն տասներորդ օրը, յունիս 23-ին երեքշաբթի առտու, Տփղիսէ մեկնեցաւ (ՄՐԴ.63), Սանահին գիշերեց, 24-ին պահ մը դադար առաւ Ղարաքիլիսա, և երեկոյին

հասա Աղեքսանրապոլ եռանդուն հայաբաղաբը, ուր դարձեալ մեծ ընդունելութիւն էր պատրաստուած, և ցոյցեր և հանդէսներ կրկնուեցան: Յովնիս 25-ին հինգշաբթի այցելեց Անիի աւերակները, ուր իրեն առաջնորդեց ուսուցչապետ Նիկողայոս Մարը նոր պեղումներու վերակացուն, 26-ին Ղօշավանք և Արգինա ալ այցելեց, և 27-ին կատարուեցան պաշտօնական ընդունելութիւնները (ՄՐԴ.76-81) ուղերձներով և պատասխաններով: Յունիս 28-ին կիրակի առտու Աղեքսանդրապոլէն մեկնելով, կէսօրը ժամ մը անցած հասա Կորխուն գիւղի մօտ եղող Էջմիածին կայարանը, և սկսան աթոռական ընդունելութեան պատշաճները, ուսկից երկու ժամուան կառքի ճամբով հասա Վաղարշապատ, մտաւ մայր տաճարը եկեղեցական արարողութեամբ, ուխտը կատարեց և ողջունուեցաւ տեղակալ Գէորգ Սուրէնեանէ, բարձրացաւ վեհարան, և յետոյ վանքի սեղանատան մէջ նախագահեց 200 հոգւոյ հացկերոյթին, և լուսավառութիւն կատարուեցաւ ըստ սովորութեան (ՄՐԴ.83-85): Երկուշաբթի առտու 29-ին կատարուեցաւ միաբանութեան ամբողջական ընդունելութիւնը, և այդ առթիւ Իվմիրլեան երկարօրէն խօսեցաւ եկեղեցւոյ և ազգին կացութեան, առաջիկային պէտք եղած աշխատութեանց, և եկեղեցականութեան ու միաբանութեան պարտաւորութեանց վրայ: Ռուսական դեսպանատան ուղղագիծ գիրն ալ հաղորդելով ուպեց շեշտել թէ չև օժեալ իսկապէս կաթողիկոս չէ, և բացատրել նախապէս Պետրբուրգ երթալուն պարագայն: (ՄՐԴ.86-94): 3138 . ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՕԾՈՒՄ

Այն օրէն որ Իվմիրլեան Կ. Պոլսոյ մէջ ընդհանուր ժողովին հրաժեշտի ողջոյնը կու տար, մինչև մայրաթոռոյ միաբանութեան պաշտօնական ընդունելութիւնը, 40 օրեր անցեր էին, և այդ միջոցին Իվմիրլեան գրեթէ կրկնապատիկ թուով բանախօսութիւններ և յայտարարութիւններ արտասանած էր եկեղեցւոյ պէտքերը, ազգի կարօտութիւնները, փութաջան աշխատութիւններ և փոխադարձ օժանդակութիւններ բացատրած, և ամենուն աչքը սևեռեալ էր անոր մայրաթոռ հասնելուն, որպէսզի վայն անմիջապէս գործի ձեռնարկած տեսնէ: Եւ որովհետև պաշտօնապէս և անպաշտօն կերպով շարունակ կրկնած էր թէ կաթողիկոսութիւնը օժջմամբ կը նուիրագործի և օժմամբ կը ստացուի իշխանութիւն արելու իրաւունքը, ամէն ոք կակընկալէր որ հասնելէն քիչ օր ետքը արարողութիւնը կը կատարուի և գործունէութիւնը կը սկսի: Ուստի յուսախաբութեան կերպ մը առաւ, երբ միաբանութեան խօսած յայտարարութիւններէն ետքը լսուեցաւ թէ կաթողիկոսական օժման հանդէսը յետաձգուած է սեպտեմբեր 13-ին Խաչվերացի տօնին, հասած օրէն 78 օր կամ երկու քուկէս ամիս անգին: Իրօք ալ քանի մը օր Էջմիածին անցընելէ յետոյ, կը մեկնէր Բիւրականի ամարանոցը, իրեն հետ տանելով Նշանեան և Պալաքեան Կ. Պոլիսէ ընկերացող վարդապետները, և մեկնելու պահուն յատկապէս կրկնելով Սուրէնեան տեղակալին, թէ ինքն տակաւին կաթողիկոս չէ, և աթոռին ու վանքին գործերը պէտք է նա վարէ ըստ առաջնոյն: Յապաղման պատճառը տօթագին եղանակն էր, որ պէտք չէր ազդեր եկեղեցւոյ գործերուն, եթէ արգելք ալ ըլլար ժողովուրդին յաճախելուն, հանդէսին փառաւորութեան, և նիւթական արդիւնքին առաւելութեան: Եթէ սինոդէն ալ ըլլար թելադրութիւնը, Իվմիրլեանէ կը սպասուէր երկրորդական և ցուցադրական պատճառանքներով իր գործունէութիւնը չկասեցնել և անտարբերութեան երևոյթով չսկսիլ իր պաշտօնավարութիւնը: Եթէ երկարելը հարկ տսած էր. գոնէ պէտք չէր որ ուղևորութեան մէջ շտապէր, անցած տեղերը աւելի վբաղէր, և գլխաւոր տեղերն իսկ անտեսելով չանցնէր, կամ թէ ինչպէս որ նախորդներուն օրով սովորութեան մտած էր կաթողիկոսական գործունէութիւնը օժման հետ խստիւ չկապէր, և երկու քուկէս ամիս ամարանոցի մէջ ու աթոռէն հեռու ձեռուրները ծալլած, չնստէր, ինչ որ լաւ տպաւորութիւն չթողուց, մանաւանդ հեռաւոր տեղեր, և յայտնի է որ առաջին տպաւորութիւնը մեծ նշանակութիւն և բաւական կշիռ կունենայ յաջորդ գործունէութեան վրայ: Իվմիրլեան կաթողիկոսի առանձնացեալ կեանքը, շարունակեց մինչև

Խաչի շաբաթապահքը, և հանդեսէն երկու օր առաջ սեպտեմբեր 11-ին ուրբաթ օր 50-ի չափ հաւաքուած տաճկահայ ուխտաւորներու յարգանքը ընդունեց, 12-ին ռուսական հպատակութեան և հաւատարմութեան երդումը կատարեց մայրտաճարի մէջ, Երևանի նահանգապետ կոմս Տիպէնհաուպէնի ներկայութեամբ, և 13-ին առտուն տեղի ունեցաւ օծման արարողութիւնը՝ Սմբատեան Մեսրոպ Եպիսկոպոսի գլխաւորութեամբ և սովորական պայմաններու մէջ: Հեռուէ եկող ներկայացուցիչները չափաւոր էին, շատ տեղերէ միայն մէկմէկ հոգի (09. ԱՐՐ. 711), իսկ Վաղարշապատցիներ և Երևանցիներ և շրջակայ գիւղացիներ, որոնք իբր տասն հազար կը ըսուին, (09. ԱՐՐ. 707), ամէն առթին գտնուողներէն են: Պաշտօնական հացկերոյթին ներսէն ու դուրսէն մօտ երեք հարիւր անձեր մասնակցած են, և ամբողջ երեկոյին գիւղական պարերով և երգերով և նուագարաններով ուրախութիւն կատարած է (09.ԱՐՐ.710): Եկեղեցական արարողութեան կատարուելէն ետքը Մատթէոս Բ. կաթողիկոս սկսաւ գործերու ձեռնարկել, անդանիկ օրհնութեան կոնդակը հրատարակեց սեպտեմբեր 24ին, օծումէն 11 օր ետքը, նոյն օր արձակուեցաւ նաև պաշտօնական կարգադրութեանց առաջին կոնդակը (09.ԱՐՐ.778): Այստեղ կընդհատենք մայրաթոռոյ անցքերը, առաջիկային թողլով Մատթէոս Իգմիրլեանի կաթողիկոսական գործունէութեան տեղեկութիւնները, և կը դառնանք Կ. Պոլսոյ և Երուսաղէմի եղելութեանց:

3139. ՎԵՀԱՊԵՏԵԱՆ ՊԱՇՏՕՆԱՆԿ

Կ. պոլսոյ Երուսաղէմի միջև տեղի ունեցած եղելութեանց գլխաւորը նոյն ինքն Երուսաղէմի աթոռին և միաբանութեան վիճակն էր, որուն տխուր նկարագիրն ու աճումը բացատրած ենք (3126), Կ. Պոլսէ յղուած պատուիրակութեան ապարդիւն ելքն ալ պատմած (3129), և ակնարկած Յարութիւն պատրիարքը ամբաստանելու և պաշտօնանկելու տարադէպ խորհուրդին (3131): Վարչութիւնն իր ամբաստանագիրը պատրաստեց յունիս 10 թուականով (ՏՂԿ. Զ. 14-19), որուն մէջ համառօտ պատմականէ մը ետքը վարչութիւնը վբաղած էր հաշուական խնդիրով, որուն քննութիւնը յատուկ յանձնաժողովի յանձնուած էր ընդհանուր ժողովէ, իսկ վարչութիւնն ինքն կաշխատէր վանքին ելամտապետական վիճակին տէր դառնալ անմիջական հսկողութեան միջոցներով (ՏՂԿ. 14), որովհետև Երուսաղէմի մէջ այնպիսի փոփոխութիւններ տեղի ունեցած էին որ կացութիւնը հիմնապէս կը խանգարէին, և Յարութիւն պատրիարք սկսած էր Երուսաղէմ ի գործակցութիւն հրաւիրել վանոնք, զորս իբր մեղապարտ, վտարած էր, և ապստամբ ու միակ յանցապարտ ներկայացնել վանոնք որոց հետ համաձայն կերևար յառաջագոյն: Ասոր վրայ վրկուած էր պատուիրակութիւնը, որ չէր ընդունուած Երուսաղէմի կողմէ, և կեանքի վտանգէ փախչելով ձեռնունայն ետ էր դարձած (3129): Կառավարութիւնն ալ այդ նոր կացութեան պաշտպանութիւն կընէր, և կեդրոնը անձեռնհաս կը նկատէր Երուսաղէմի գործերուն միջամտելու. հետևաբար կը մնար միայն սահմանադրութենէն օգտուիլ, և անոր կազմած պայմանին հետևողութեամբ պատրիարք պաշտօնէ դադրեցնել և գործերը նոր տեղապահի յանձնել. իսկ առ այս պէտք կըլլար պատրիարքը ամբաստանել և պաշտօնանկել: Այս նպատակին համար կազմուած էր ամբաստանագիրը, և ճանչնալով հանդերձ Վեհապետեանի տարիքի բերմամբ տկարութիւնը (ՏՂԿ. Զ. 18), վայն պատասխանատու կը նկատէր կանոնի հակառակ վարմունքին և կանոնները չգործադրելուն, և այս կէտերու վրայ հիւսուած էր ամբաստանագիրը, որով երեսփոխանութենէ կը խնդրէր Յարութիւնի դէմ դատապարտութեան և պաշտօնանկութեան վճիռը և տեղապահի անուանումը: Որչափ ալ վարչութիւն իր գրութեան օրինական ձև տալու աշխատած էր, սակայն, անհնարին է չտեսնել անոր մէջ օրէնքի մեկնութեան ձախող տեսակէտը: Տարիքի բերմամբ անկարողութիւնը աւելի արդարացման փաստ էր քան թէ դատապարտութեան. նոյնպէս հակառակ յայտարարութիւններ ընելը աւելի բռնութեան ներքև ընկճուած ըլլալը կը հաստատէր և ոչ թէ

օրէնքի ընդդիմութիւն կը ցուցնէր: Պատուիրակութեան բերած տեղեկութիւնները և Իզմիրլեանի անձնական գիտակցութիւնը, ուղիղ տրամաբանութեան կանոնով պէտք էր վարչութիւնը առաջնորդէին պատրիարքը բռնութենէ ապատելու և իրեն կարող և գործունեայ օգնական մը տալու, և ոչ թէ տկար պատճառաբանութեամբ պաշտօնանկութեամբ ծրագիրը յղանալու: Այդ կէտը երեսփոխանութեան մէջ ալ նկատի առնուեցաւ յուլիս 3-ի նիստին մէջ (09.ԱՐԼ.7141), և ամբաստանագիրին դէմ խօսողներ եղան Դիմաքսեան Հմայեակ եպիսկոպոսի գլխաւորութեամբ, և փոխանորդ կամ օգնական նշանակուելու միջոցը յիշուեցաւ: Սակայն այսպէս խօսողներ ուղղամիտ չնկատուեցան, գուցէ և չէին իսկ, այլ Մաքսուտեանի և իրեն կողմնակիցներու պաշտպան ըմբռնուեցան, զի և Մնքսուտեան ինքն ալ կը պարծենար և ամբաստանագիրին դէմ խօսողները իրեն նպաստաւոր կը ցուցնէր: Միւս կողմէն Երուսաղէմի նոր տիրապետողներն ալ օգնականի խնդիրը կանխաւ ընդգրկած և Երէցեանը այդ պաշտօնին նշանակած էին (09.ՄԻ.52), և այդ պարագայն ալ օգնականի ձևը շատերուն աչքին կասկածաւոր կը ցուցնէր: Սակայն այդ տեսութիւններ գործին հիմը այլայլելու պէտք չէր ծառայէին, և խորաթափանց վարչութեան աչքին դժուար պիտի չըլլար անուղիղ միտքերը ուղիղ մատայնութենէ ատել, և առանց Երուսաղէմի բռնադատ գործիչներու միտքին և առանց Մաքսուտեանի անձնականութեան ծառայելու, ուղիղ տրամաբանութեան ցուցածը գործադրել, և միանգամայն անոնց միտքը չիրականացնել: Առ այս բաւական էր գործերն ու իրերը իրենց նախնական վիճակին վերադարձնել, նոր տիրապետողներուն գլխաւորներէն քանինները հեռացնել, զի մեծամասնութիւնը Վօրաւորին հետևողներէն կազմուած էր, ինչպէս ամէն տեղ և ամէն ատեն կը հանդիպի: Այսչափով Յարութիւն պատրիարք բռնութենէ ապատած և օգնականով Վօրացած, իր նախնական միտքին և իր համոզումին համաձայն գործելու ապատութիւնը կը վերստանար: Յուլիս 3-ի ընդհանուր ժողովը բաւական վէճերէ վերջ, վարչութեան տեսակէտէն վարուեցաւ, և անուղղակի տեսութիւններէ տարուեցաւ, և վարչական ամբաստանագիրը նկատի առնելու յանգեցաւ, և իբր ձևակերպութեան պահանջ՝ տասն անդամներէ բաղկացած յանձնժողովի յանձնեց ի նախապննութիւն: Այս որոշման իբր նոր փաստ ծառայեց, մայիս 12-ին յայտնուած միտքին դէմ (3131) Յարութիւն պատրիարքի անուամբ կառավարութեամբ մատուցուած բողոքը, զոր ոմանք իբր ազգային վարչութեան դէմ դաւաճանութիւն կոչելու հասան (09.ԱՐԼ.7141): Նախաքննիչ յանձնժողովը իր եզրակացութիւնը ներկայեց յուլիս 17-ի նիստին, որով Յարութիւն մեղապարտ կը դատէր իբր նախագահ ու տնօրէն ու վարիչ ներկայ անկարգութեանց ծագելուն և կանոնները չգործադրելուն, և իբր մեղմացուցիչ պարագայ կը նդունէր երկար տարիներ ազգին ծառայած ըլլալը և անկարողութեան մէջ գտնուիլը, ուստի կառաջարկէր պարզապէս պաշտօնէ հեռացնել և տեղապահ նշանակել: Այդ տեղեկագիրը առիթ տուաւ ամբաստանագիրին շուրջը կատարուած վէճերը վերանորոգել. սակայն վերջիվերջոյ վարչութեան տեսակէտը յաղթանակեց և 75 քուէարկուներու (09.ԱՐԼ.7152) 39 քուէով և շատեր ձեռնպահ մնալով, տեղապահ կարգելու որոշումը հաստատուեցաւ (09.ՄՆՁ.2443): Որոշում մը սակայն, որ իր մէջ ընդդիմամարտ և օրինաց անհամաձայն և նպատակին անյարմար ըլլալովը, ոչ օգտակար կրնար ըլլալ և ոչ ալ եղաւ: Գլխաւորապէս դատապարտեալ և պաշտօնանկ պատրիարքը պէտք չէր որ այլ ևս իր տեղը մնար. մինչ որոշումը ոչ միայն վայն իր տեղը կը պահէր, այլ և պատրիարքական պատուոյն ու դիրքին բոլոր պահանջները անփոփոխ կը թողուր, և պաշտօնանկութիւն հեռացում կոչելով կը կարծէր ամէն անտեղութեանց առաջքն առած ըլլալ:

Ստեփան Գարայեան ատենապետութեամբ և Յարութիւն Շահրիկեանի նախաձեռնութեամբ գործող վարչութիւնը, խիթալով գուցէ որ օր անցնելով որոշման մասին փոփոխութիւն մը ծագի, նոյն օր յուլիս 17-ի նիստին մէջ շուտափոյթ հապճեպով տեղապահի ընտրութիւնն ալ կատարել կու տայ: Առաջուրնէ ընդունուած էր որ ընտրելին հարկաւ Երուսաղէմի միաբան ըլլայ, և միանգամայն ընդդիմադիր կուսակցութենէ և ոչ մէկուն պատկանի և խնդիրներէն անմասն մնացած ըլլայ: Այդ պայմաններու համապատասխանող գտեր էին միայն Կեսարիոյ առաջնորդ Պալեան Տրդատ եպիսկոպոսը և Ադրիանուպոլսոյ առաջնորդ Յակոբեան Դանիէլ վարդապետը: Առաջինին դէմ իսկոյն Ժիրայր Պօյաձեանի մահապարտութեան խնդիրը յարուցուեցաւ, և միակ ընտրելի մնաց Յակոբեանը, և 64 քուէարկուներէն 59 քուէով Երուսաղէմի տեղապահ հռչակուեցաւ Պալեան և Օրմանեան մէկմէկ քուէ առած էին և երեք սպիտակ ելան. որով Յակոբեան գրեթէ միաձայնութեամբ ընտրուած եղաւ: Իսկոյն կառավարութեան մատուցուելիք յիշատակագիրն ալ պատրաստուեցաւ, որուն մէջ իբր հիմ կը գրուէր Յարութիւն պատրիարքի ներքին կանոնագիրին տրամադրութեանց հակառակող ընթացքը, և ծանօթ անկանոնութեանց և վերծմանց առջևն չառնելը, կընդունուէր ծերութեան անկարողութիւնը, և որոշումը կը հիմնուէր սահմանադրութեան 19-րդ յօդուածին վրայ, եպրակացնելով Յարութիւն պատրիարքի ամբաստանելով հեռացումը և Յակոբեան Դանիէլ վարդապետի տեղապահ ընտրուելը: Կառավարութեան հաստատութիւնը իմացուեցաւ յուլիս 30-ին (09.ԱՐԼ.7163), և պաշտօնագիրը յանձնուեցաւ օգոստոս 5ին (09.ԱՐԼ.7168), և 7-ին ինքն ալ Ադրիանապոլիսէ Կ. Պոլիս հասաւ (09.ԱՐԼ.7169), և վարչութեան ծրագիրը իր լրումը ստացած եղաւ: Սակայն անհնար է չաւելցնել թէ նպատակայարմար և ազդեցիկ կարգադրութիւն մը չեղաւ: Նախ ընտրեալ տեղապահին անձին սկսելով անոր ոչ դիրքը և ոչ ձիրքը, ոչ նախընթացը և ոչ գործունէութիւնը պէտք եղած վստահութիւնը չէին ներշնչեր որ կարենայ դժուարին կացութեան և կնճոռոտ հանգոյցին լուծում տալ: Այդ կէտը ոչ միայն հրապարակաւ կը խօսուէր, այլև իրեն ալ կը հաղորդուէր, գուցէ ինքն ալ կը, բայց անակնկալ բախտէն ալ հրաժարիլ չէր սիրեր (09.ԱՐԼ.7168): Այս տեսութեամբ էր հարկաւ որ պաշտօնի ձեռնարկելու համար գրաւոր կերպով օգոստոս 14-ին պայման կը դնէր որ Երէցեանի և Մաքսուտեանի խնդիրները վճռուին և վերջանան, որ միաբաններէն և քաղաքացիներէն ըմբոստութեան պարագլուխները Երուսաղէմէ հեռացուին և պատժուին, և որ վստահելի և վարգացեալ և կարող անձ մը իրեն օգնական տրուի (ՏՂԿ.Զ.21): Վարչութիւնը որ ընտրելին նշանակած էր, անոր պայմանները կատարելու պարտաւոր էր ուստի յուլիս 31-ի նիստին մէջ հաշուեքննիչ յանձնաժողովոյ մայիս 22-ի տեղեկեգիրին (ՏՂԿ.Թ) մասին երեսփոխանութեան որոշումը կը պահանջէր:

Գործը կերկարէր և Յակոբեան տեղապահ սեպտեմբեր 29-ին, որ է ըսել ընտրութենէն երկու քուկէս ամիսետքը, հրաժարական կը գրէր բայց չէր պնդեր, զի պատրիարքական հրաժարականի ալ տագնապ կար նոյն օրերը (ՏՂԿ.Զ.23) Ատանայի ջարդին հետևանքներէն գրգռուած, և Երուսաղէմի խնդիրը ետև կը մնար, տեղապահն ալ մայրաքաղաքի մէջ ալ մայրաքաղաքի մէջ կը դեգերեր, և ոչ ալ հնար եղած էր երեք նշանակուած միաբանները Կ. Պոլիս բերել տալ: Իրաւ ալ պատրիարքական հրաժարականը և վարչական ժողովներու նորոգուիլը նկատողութեանարժանի արգելքներ էին, սակայն միւս կողմէ Մաքսուտեանի հաշուական խնդիրը առկախ կը մնար, և Երուսաղէմի մէջ անկարգ կացութիւնը կը շարունակէր և հետզհետէ կը պայրանար:

Ընդհանուր ժողովէն 1908 դեկտեմբեր 3-ին ընտրուած Երուսաղէմայ հաշուոց քննիչ խորհրդարանական յանձնաժողովը իսկապէս կարող անձերով կազմուած էր, զի եօթն անդամներուն մէջ կը գտնուէին, Յովսէփ Եուսուֆեան համարողական գետութեանց մասնագէտ ուսուցիչ, Միհրան Գարագաշեան ելեմտից նախարարութեանխորհրդական, Պարզև Փափապեան օսմանեան դրամատան հաշուակալ, Գարեգին Տէմիրճիպաշեան հանրային պարտուց պաշտօնեայ, Լևոն Սահաթեան և Յակոբ Գորեան պատուաւոր և առաջնակարգ վաճառականներ, և այս վեցերը խղճիմտօք գնած էին հաշիւները, վասնզի Երուանդ Գարայեան առջի օրէն հրաժարած էր անձնական տկարութեան պատճառով (ՏՂԿ, Թ. 1): Յանձնաժողովի տեղեկագիրը նկատի առած էր 1893-1908 տասնևհինգ տարիները, բայց յատկապէս զբաղած էր Մաքսուտեանի տեսչութեան վերջին և ոչ-վաւերացեալ ժամանակամիջոցին 1893-1905 տասներկու տարիներով, և բաշխուած էր եօթը գլուխներու: Առաջինին մէջ յիշուած էին կանօնական դիտողութիւնները, և Երուսաղէմի կանոնագիրէն 15 յօդուածներ առաջ բերուելովցուցուած էր թէ գործադրուած չեն, մանաւանդ թէ հակառակը գործուած է (ՏՂԿ. Թ. 2-5): Զննիչներ Մաքսուտեանի համբաւեալ հաշուակալութեան օրով կազմուած կրկնատոմարները զննելով կատարեալ քառասային գտած են, որոնց մէջ անհարժեշտն ու կարևորը կը պակսին, և միայն ձևերը կը փրկուին, և բացատրութիւններն ալ տուած են (ՏՂԿ. Թ. 6): Երկրորդ գլուխը նուիրուած է մատակարարութեան, որուն գլխաւոր բաժանմունքները կը ցուցուին, և 1897-8 տարւոյ համար կազմուած ելեմտացոյցը հիմ բռնելով 12 տարիներու մէջ 18,015 ոսկի աւելի ծախուած ըլլալը կը ցուցուի (ՏՂԿ. Թ. 7), համաձայն Մակունի-Ֆէսճեան պատուիրակութեան քաղած հաշիւներուն (3068), և մասնաւոր տեղեկութիւններ ալ կաւելցուին (ՏՂԿ.Թ.7): Առանձինն քննուած է Կ. Պոլսոյ փոխանորդ Երէցեանի ձեռքով մատակարարուած մայրաքաղաքի և ագարակներու հաշիւը, և շատ անվգոյշ և անխորհուրդ ծախքեր յառաջ կը բերուին, որոնք պաշտօնագիրներով ալ հաստատուած են (ՏՂԿ.Թ.8-10): Իբր մատակարարութեան գլուխին ելրակացութիւն, միայն թիւերով և պարագաներով յայտնի և Մաքսուտեանի անցած եօթը գումարները կը յիշուին, 1650 ոսկւոյ համագումար կազմող (ՏՂԿ.Թ.11), որոնք ատենապատաց տեղեկագիրին մէջ ալ յիշուած են (3125): Այս գլուխին աւելցուցած է Յոպպէի շինութեանց մէջ կատարուած շահախնդիր դարձուածքը, զոր մենք ալ յիշած ենք (3070), և միանգամայն նոյնութեամբ բերուած են Եսայի պատրիարքին օրէն գրուած Մաքսուտեանի երկու նամակներ և երեք ատենագրութիւններ, ժողովին թողլով հարկ եղած հետևութիւնը հանել (ՏՂԿ.Թ.12-15), որուն ինչ ըլլալը մեկնել շատ աշխատութեան տեղի չի թողուր, և յայտնապէս կը տեսնուի եւրոպակողման երկաթուղեաց արժեթուրթերէն մեծ պարզև շահող թիւերէ գոյացած գումարներուն գաղտնութեամբ իւրացուիլը: Երրորդ գլուխը նոր շինութեանց հաշիւները կը քննէ, զորս քննիչներ թուաբանական ճշդութեանց ենթարկելով կը գտնեն թէ Մաքսուտեան իր տրամադրութեան տակ գտնուած դրամները գործածելով՝ երբեք պէտք չէ ունեցած տոկոսաւոր փոխառութիւն կնքել, և անընդունելի կը դատեն 3628 ոսկի տոկոսի գումարը, և ընդհանուր հաշիւին մէջ 138 ոսկի պարտք կը ցուցնեն Մաքսուտեանի վրայ (ՏՂԿ. Թ. 16-20): Գնել և վաճառեալ կալուածներու հաշիւէն քննիչներ կը զեղչեն անընդունելի կալուածներու գինը 2698 ոսկի (ՏՂԿ. 21-22), և նկատի կառնեն պահեստի սնտուկէն իւրացուած և ներկայացնողի վճարելի փոխագիրներով ձեռք անցուած 9749 ոսկին (ՏՂԿ. Թ. 23-24), և վերջապէս Մաքսուտեանը 13,966 ոսկւոյ պարտական կը գտնեն յօգուտ Երուսաղէմի սնտուկին (ՏՂԿ. Թ. 27): Միանգամայն Երէցեանն ալ 105 ոսկւոյ պարտական կը ցուցնեն Կ. Պոլսոյ հաշիւներէն (ՏՂԿ. Թ. 27): Մաքսուտեանի պաշտօնավարութենէ կանցնին 1905-1908 երեք տարիներն ալ քննութեան ենթարկել 6-րդ գլուխին մէջ, և ինչ ինչ դիտողութիւններ կընեն

մատակարարական թերութեանց մասին, բայց պատասխանատուութեան կէտ չեն ցուցներ: Վերջին 7-րդ գլուխը նախընթացներուն ամփոփումն ու բանաձևուած եզրակացութիւնն է: Բաղուժնիս բաւական կը սեպենք Մաքսուտեանի դէմ տեղեկագիրին մասին գաղափար մը տուած ըլլալու և ուրջ տեղեկագիրներու առիթով ըսուածները չկրկնելու համար: Այս տեղեկագիրը առաջին անգամ երեսփոխանութենէն նկատի առնուեցաւ յուլիս 31-ին նիստին մէջ (09. ՄՆԶ. 2455), որուն դէմ Մաքսուտեան փութացած էր ներկայել հերքումն եզրակացութեանց տեղեկագիրին գրուած մը (ՏՂԿ. Ժ. Ժողովին ներկայ էին նաև Մաքսուտեանի իբր իրենց պաշտպան ցուցած երեսփոխանները (09. ԱՐԼ. 7157-7158), և բաւական աղմուկ բերին, և վիճաբանութեան նիւթ եղաւ տեղեկագիրին քննուիլը կամ վերաքննիչ յանձնաժողովոյ վրկուիլը, մինչև իսկ մենամարտի ձայներ լսուեցան բուն վիճող երեսփոխաններու միջև, և առանց որոշման նիստը փակուեցաւ (09. ԱՐԼ. 7164): Մաքսուտեան այս հերքմանագիրին մէջ իրեն անցած գումարները մերժելու համար երբեմն հաշուակալը և երբեմն լուսարարապետը մէջտեղ կը դնէ իբրև հաշիւներու պատասխանատու, մինչ ամենայն ինչ և ամէն բան իր ձեռքով կատարուած ըլլալը յայտնի է, և իր ներկայած բացատրութիւններն ու միջադէպները միայն իր վկայութեամբ կը կարծէ հաստատել, մինչ տոմարներու անձշողութիւններ և ատենագրութեանց կամայականութիւնները, և իր չորս պաշտօն միանգամայն վարելը, և մին միւսին իբր վկայութիւն գործածելը, պինքն բնաւ չեն արդարացներ: Իր ամենէն Վորաւոր փաստն է, թէ մէն մի նոր քննութեան ժամանակ նորանոր խնդիրներու և տարբեր թուանշաններու պատասխանել կը պարտաւորուի (ՏՂԿ, Ժ. 5), և իր պարտքը չորս տարբեր գումարներով հաշուած ըլլալը (ՏՂԿ. Ժ. 7) իբր արդարացած նշան կը կարծեցնէ: Սակայն չուզէր այս տարբերութեանց իսկական պատճառը փնտռել, որ իր հաշուեխոյս սկզբունքէն յառաջ եկած է. պի բանի որ ամբողջական հաշիւ մը տալէ փախուստ տուած է, հաշուեքննիչները տարբեր հետապոտութիւններով և գնահատումներով և տարբեր տեղեկութիւններով, տարբեր հաշիւներ քաղելու պարտաւորուած են, ինչ որ տեղի ունեցած չէր ըլլար եթէ ինքն ընդհանրական և ամբողջական հաշիւ մը ներկայած ըլլար, և ոչ թէ շարունակ առարկութիւններ ցրելու յօգնած և լրագիրներ շահելու և պաշտպաններ ձարելու ծախսած ըլլար: Իբրև իր պաշտպանողականին լրումն՝ սեպտեմբեր 25-ին ակնարկ մըն ալ ներկայեց առաջին և վերջին հաշուեքննիչ յանձնաժողովներու եզրակացութեանց վրայ (ՏՂԿ, ԺԱ.), որոնք եթէ իրարու անյարմար ալ ըլլան, դարձեալ ըսածներնուս համեմատ յանցանքը իր հաշուեխոսութեան կը պատկանի, թող որ առաջին յանձնաժողովի անդամները միաձայնութիւն չունեցան, և երկուք երկուքի դէմ պինքն պատասխանատու ցուցուցին, և թերի ու մասնակի քննութիւն մը եղած էր ըրածին, որ վարչութեան որոշմամբ ալ անբաւական դատուեցաւ (3062-3063): Յուլիս 31-ին նիստին մէջ անորոշ յետաձգուած սաղիմական հաշիւներու խնդիրը, նոյնպէս մնացած չորս ևս ամիսներ, Կիլիկիոյ աղէտին ծագած խնդիրներուն սաստկանալովը և Դուրեան պատրիարքին հրաժարականին և նոր վարչութեան ընտրութեան պատճառներով:

3142. ՏԵՂԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

Երուսաղէմի տարադէպ տեղապահութեան անգործ միջոցին դէպքերը յիշեցինք, Երուսաղէմի նոր կացութիւնն ալ անով կը վբաղէր, և Կ. Պոլսոյ մէջ որոշուած տեղապահութեան հանդէպ իր ընթացքը ճշդել կը ջանար, գիրքը չկորսնցնելով և ձեռք անցուած բախտը ձեռքէ չհանելու ճիգերով: Յունիս 20-ին ժողով կը գումարուէր, որուն մէջ նոր ընտրուած տնօրէնը վեցամսեայ համարատուութիւն կը ներկայէր, կանոնական նախանձախնդրութիւն ցուցնելու երևոյթով, և իր տեսութեամբ պաշտօնական գրասեղաններու, իմա կեդրոնական ժողովներու, վրայ նետուած անբարեմիտ վրպարտութեանց գործնական հերքում տալու մտայնութեամբ (09. ՄԻԱ. 114),

սակայն կանոնագիրին էական մի կէտը, համարտուութիւնը կեդրոնական ներկայելու կէտը, նոյն պահուն չէր գար: նոյն ժողովին մէջ լուսարարապետ Տէրտէրեանի հեռանալուն վրայ՝ վայն պաշտօնանկ նկատելով, նոր լուսարարապետի ընտրութեան կը ձեռնարկեն, նախապէս իրենց կազմուած կանոնագիրին համաձայն ընտրելիէն տրուելիք խոստումնագիր մը բանաձևելով (09.ՄԻԱ.149): Իսկ ընտրութիւնը հապի չորս քուէարկութենէ ետքը կրնար արդիւնք ունենալ, և վերջապէս առաջին քուէարկութեան մէջ միայն մէկ քուէ շահող Վահան Բէշիշեան վարդապետ, որ ժողովին ատենապետն էր, չորրորդին մէջ 20 քուէով լուսարարապետ կը հռչակուէր, խոստանալով նոր հաստատուած ձևերու համաձայն պաշտօնավարել (09.ՄԻԱ.120-121): Բէշիշեանի լուսարարապետ ընտրուելուն պատճառով ժողովին ատենապետութիւնը Հմայեակ Երէցեան կը շարունակէր, թէպէտ ատենագրութիւնը Մելքիսեդէկ Հովիւեանի ստորագրութիւնը կը կրէ (09.ՄԻԱ.122): Ժողովը դարձեալ կը գումարուի յուլիս 21-ին, դիւան կը նորոգէ, գանձատան հսկող եկեղեցական ժողովը կը լրացնէ, մեկնող միաբաններուն սենեակները բանալ կորոշէ, և կանցնի գլխաւոր և ամէնքէն ծանր խնդիրին, որ է կեդրոնէ ընտրուած տեղապահին մասին որոշում մը տալ, այդ բանին առաջքն առնելու համար (09.ՄԻԱ.129): Կարծիքներ կը փոխանակուին, առաջարկներ կը շատնան, վերջապէս բողոքելու և չընդունելու որոշումը կը յաղթանակէ, և տնօրէն ժողովին անսահման իրաւունք կը տրուի որ տեղապահութեան խնդրոյ առթիւ կարելին ի գործ դնէ (09.ՄԻԱ.133): Նոյն ժողովին մէջն է որ Եղիշէ Զիլինկիրեանի տրուած եպիսկոպոսութեան վկայականը չեղեալ նկատուեցաւ, ինքն ալ միաբանութենէ վտարուեցաւ, ինչ որ սակայն չարգիլեց որ քիչ ետքը նա Էջմիածին ուղևորի, և 1910 փետրուար 21-ին Իվմիրլեանի կաթողիկոսէ ձեռնադրուի: Սիմէոն Թելեանի Կ. Պոլիս անցնելն ալ նկատի առնուեցաւ, և որոշուեցաւ որ վերջին անգամ մըն ալ վանք դառնալու հրաւիրուի: Նախընթաց ժողովի մէջ վանց եղած համարատուութիւնը կեդրոնին հաղորդելու գործը լրացնելու համար օգոստոս 3-ին առանց հրաւերի բացառիկ նիստ մը կը կազմուի, և տեղեկագիրի պատճէնը կը կարդացուի, սակայն Կ. Պոլիս հասնելուն լուրը կը պակսի և անհետևանք մնացած կերևայ: Արդէն այլևս միաբանական նիստերն ալ կը դադրին և տնօրէնի անսահման իրաւունքը գործերը կը կարգադրէ Տէր Կարապետեանի առաջնորդութեամբ: Կ. Պոլսոյ մէջ տեղապահութեան մասին կարգադրութիւնները պահ մը լուծ էին, Դուրեան պատրիարքի հրաժարականին և Ստեփան Գարայեանի ատենապետութեամբ վարչութեան դադարելովը և Մանուկ Ապարեան ատենապետութեամբ նոր վարչութեան կազմուելուն պատճառով: Չորս ամիս էր որ տեղապահութեան կոչուած Յակոբեան մայրաքաղաքի մէջ կը դեգերէր, և Երուսաղէմի մէջ գործերը միշտ յոռեգոյնին կը դիմէին, որով Յակոբեան 1909 նոյեմբեր 6-ին գիրով մը վարչութեան մտադրութիւնը կը հրաւիրէր, բայց ինքն կանխած էր և հոկտեմբերի մէջ Սիմէոն Թելեանը Երուսաղէմ էր յղած իբր տեղապահութեան փոխանորդ և նախապատրաստութիւններ կատարող: Թելեան գաղտնի պահած էր իր պաշտօնը և միայն իբրև հրաւերին համակերպող կը ցուցնէր Վինքն, և առանձին կերպով կառավարութեան ձեռքով վօրանալ կաշխատէր, որ սակայն յայտնապէս ըմբոստները կը պաշտպանէր, և Կ. Պոլսոյ մէջ նախարարութիւնն ալ նոյեմբեր 7-ին օրինաւոր չէր տեսներ պաշտօնին տիրոջ իր գործին չտիրացած անոր փոխանորդը ձանձնալ, այլ պատրիարքարանի ամէն աջակցութիւն կը խոստանար, և տեղապահին փութով մեկնիլ և գործի ձեռնարկելը կը յանձնարարէր: Վարչութիւնը կորոշէր Կ. Պոլիս կոչուած երեք գլխաւոր ըմբոստները բերել տալու համար կառավարութեան մօտ դիմումները նորոգել, և տեղապահը օր առաջ ձամբայ հանել (ՏՂԿ.Զ.24): Տեղապահին ընկերանալիք եկեղեցականի և աշխարհականի համար տասնէ աւելի անձերու առաջարկուելէ և հրաժարուելէ ետքը, վերջապէս Պարգև Փափապեան յանձնառու կը լինի, և իբր համարակալ կառնէ

Տիրան Մարտիկեանը (ՏՂԿ.Զ.27-28), և տեղապահն ալ իբր քարտուղար կորոշէ Աշոտ Նշանեանը: Միանգամայն Հայկ Խօճասարեան և Սարգիս Սուին ժողովականներու կը յանձնարարուի հրահանգի ծրագիր մը պատրաստել, որով պիտի առաջնորդուի Պարգև Փափապեանի յանձնուած նոր պատուիրակութիւնը, ընկերակցութեամբ կեդրոնէ ընտրուած տեղապահին (ՏՂԿ.Զ.33): Նոյեմբեր 20-ի երեսփոխանական ժողովին հաղորդուեցաւ Յարութիւն պատրիարքի բողոքոյ գիրը իրեն մասին տրուած որոշման դէմ, յայտարարելով թէ վանքն ու աթոռը չի կրնար ուրիշի յանձնել: Կարդացուեցաւ նաև 27 միաբաններու բողոքը կեդրոնէն ընտրուած տեղապահութեան դէմ, և երկուքն ալ մերժուեցան առանց երկար վիճաբանութեան (09.ԱՌՕ.50): Տեղապահի մեկնելուն և Երուսաղէմէ կոչուած երեքներուն խնդիրները իրարու հետ կապակցութիւն ունէին իբր հանդարտ գործունէութեան պայման, ինչպէս Թելեան ալ Երուսաղէմէ կը թելադրէր (ՏՂԿ.Զ.46), սակայն այս վերջիններուն դիմադրելուն պատճառով վարչութիւնը ստիպուեցաւ երկու գործերը իրարմէ անկախ նկատել (ՏՂԿ.Զ.27), և Դանիէլ տեղապահ և Պարգև պատուիրակ, որ նոյեմբեր 24-ին մեկնել կը խորհէին (ՏՂԿ.Զ.25), վերջապէս դեկտեմբեր 8-ին ուղևորուեցան երկուքը միասին իրենց երկու հետևորդներով. իսկ Գաբրիէլ Նէշտէրճեան, որ պատուիրակութեան ընկեր պիտի ըլլար, վերջին պահուն արգելիչ պատճառ ունեցաւ և մնաց (09.ԱՌՕ.64): Խառն ժողովը օր առաջ որոշած էր Դանիէլ վարդապետ Յակոբեանի եպիսկոպոսական վկայագիր տալ նոր պաշտօնին բերմամբ և իր նախընթաց պաշտօններուն նկատառութեամբ (09. ԱՌՕ. 62): Չիլինկիրեան Եղիշէ արդէն մեկնած էր Էջմիածին և փոխանորդութիւնը առժամապէս յանձնուած էր Գապանճեան Սմբատի (09. ԱՌՕ. 45). Նշանեան Մեսրոպ Իվմիրլեան կոթողիկոսի հետ Էջմիածին էր գացած, և Սերովբէ Սամուէլեան անձնական պատճառներով ընկերներէն զատուած Յոպպէ կը մնար և կը կենակցէր տեղւոյն տեսուչ նշանակուած ըմբոստներու գործիչներէն Կիրակոսեան Սամուէլ վարդապետի հետ: Սիմէոն Թելեան կանուխէն Երուսաղէմ յղուած էր, իսկ Կ. պոլիս գտնուող հաշուեպահանջներուն մնացածները, Տէրտէրեան, Ֆրանկիլեան, Գապանճեան, Աճէմեան, Սարաճեան, Պէքեարեան և Սարգիսեան տեղապահէն շաբաթ մը առաջ դեկտեմբեր 1-ին առանց աղմուկի մեկնած էին՝ Յոպպէի մէջ անոր սպասելու դիտաւորութեամբ: Իբրև լրումն տեղապահութեան շուրջը կատարուած իրողութեանց պէտք է յիշենք որ հաշուեքննիչ յանձնաժողովին տեղեկագիրը, որուն հաստատութիւնը մայիս 22-է ի վեր պանապան պատճառներով յապաղած էր, վերջապէս երեսփոխանութեան նոյեմբեր 27-ի նիստի մէջ համամտութեամբ հաստատուեցաւ և Մաքսուտեանի հերքմնագիրը մերժուեցաւ (09. ԱՌՕ. 56), և որոշման գործադրութիւնը վարչութեան յանձնուեցաւ:

3143. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիսէ մեկնող եօթը վարդապետներ Յոպպէ կը հասնին դեկտեմբեր 7-ին, ուր Սամուէլեան Սամուէլէ հեռանալով դարձեալ առաջի ընկերներուն կը միանար: Թելեան ալ որ Երուսաղէմի վանքէն ելած պանդոկ կը բնակէր, անմիջապէս Յոպպէ կիջներ, ուր կը գտնուէր արդէն Մանավեան սարկաւագ, Գէորգ Յովհաննէսեան արեղայն և Տիրան Քէմաճեան սարկաւագն ալ ինչինչ առիթներէ գրգռուած Յոպպէ կու գային աշխատաւոր միաբաններէն ալ հինգ վեց հոգի, որոնք տիրող կողմէն վտարուած էին, Արդէն Յոպպէի խումբին միացած էին, որով տեղապահն և պատուիրակ դեկտեմբեր 14-ին Յոպպէ հասնելով իրենց պաշտպանեալներուն թիւնը կրկնապատկուած գտան: Բնական էր որ իսկոյն հաղորդակցութեան մտնէին առաջիկայ գործողութեան հանգամանաց վրայ: Վարդապետներուն խումբը կառաջարկէր ամենքնին Երուսաղէմ մեկնիլ, և պետական պաշտպանութեամբ գործին տիրանալ զի կառավարիչ Սուպահին Երուսաղէմէ մեկնած էր երկար արձակուելով, և Բօր-Սայիտ նաւահանգիստին մէջ Յոպպէէ

Աղէքսանդրիա և Աղէքսանդրիայէ Յոպպէ գացող շոգենաւերուն իրար հանդիպելովը, բարեկամական բարևներ և յաջողութեան հրահանգներ փութացեր էր հաղորդել վարդապետական խումբին: Կառավարութեան պաշտօնն ալ փոխանորդութեամբ կը վարէր Վինուորական հրամանատարը որ բարերարոյ և բարեացակամ անձ մը ճանչցուած էր, և այդ պարագաներ նպաստաւոր էին առաջիկայ ձեռնարկին յաջողութեան: Իսկ տեղապահ և պատուիրակ կեդրոնէն առած խորհուրդներուն բառացի և տառացի հետևողութեամբ կը Վգուշանային խմբովին ուղևորիլ, և իրենց հաստատուելէն ետքը խումբը հրաւիրել կը նախադասէին: Յոպպէ սպասող վարդապետաց Երուսաղէմ ելնելն արգիլող կառավարական հրաման ալ ստացած էին, որուն գրգռողը ըմբոստ վարդապետաց Պոլսոյ գործակալութեան, իմա Մաքսուտեանի և Երէցեանի, ճարպիկութիւնն էր անշուշտ (ՏՂԿ. ԺԲ. 3): Ի վուր խումբը չորրորդ պատուիրակութեան միայնակ երթալովը ձախողած ըլլալը կը յիշեցնէր,բայց վերջապէս կը հարկադրուէր հրահանգին և հրամանին համակերպիլ, և տեղապահ ու պատուիրակ դեկտեմբեր 16-ին առանձին կուղևորէին Յոպպէ Երուսաղէմ: Վանքին մէջ գտնուող միաբաններ Յոպպէի տեսուչին եկտեմբեր 14-ի հեռագիրով տեղեկացած լին անոնց հասնելուն և 15-ին ժողովի կը գումարէին իրենք իրենց կարևորութիւն տալով, թէ պատմութեան մէջ մեծ տեղ պիտի գրաւէ այս խորհրդակցութիւնը (09. ՄԻԱ. 153): Այս մեծամասնութեամբ իւրաքանչիւր ոք կը սկսի պոռոտախոս և երկար ճոռոմաբանութեամբ իր կարծիքը ցուցադրել, և իբր վերջին եկրակացութիւն Երէցեան Հմայեակի առաջարկութեամբ և ձեռամբարձ քուէից միաձայնութեամբ Դանիէլ վարդապետի տեղապահութիւնը կը մերժուի, այլ Եօթնեղբայրեանի յաւելուածով կը Վիշանան և կը յայտարարեան, թէ պէտք է որ իբր եկեղեցական յարգենք ու պատուենք Վինքը (09. ՄԻԱ. 157): Ըստ այսմ երբ 16-ի երեկոյին տեղապահ և պատուիրակ կը հասնին, իբր պատուաւոր հիւրեր կընդունուին և կը տեղաւորուին մեծարոյ հիւրերու վերապահուած ցորենաթաղի Կիրակոսեան յարկաբաժնին մէջ, Վոր Խրիմեան և ԻՎմիրլեան սրբապաններու ձգնարան կը կոչեն եկողները (ՏՂԿ. ԺԲ. 2): Այդ տեղ կը մնան տեղապահ և պատուիրակ ամբողջ ամիս մը, բոլորովին անպաշտօն և անգործ վիճակի մէջ: Վանական միաբանութիւնը, պատուիրակին տեսութեամբ, անշուշտ առաջնորդուելով գաղտնի ձեռքերէ և ուզելով շարունակել իւր անպատասխանատու վարչութիւնը, իւր անգիտակից պատրիարքին նախագահութեամբ ձևացեալ ժողովներով (ՏՂԿ. ԺԲ. 2) ամէն հաղորդակցութենէ և մասնակցութենէ հեռու կը պահէ եկողները, իբր թէ անգիտանալով անոնց պաշտօնը, չփնտուելով իսկ անոնց գալուն նպատակը, եկեղեցիէ իսկ կը Վրկէ Դանիէլ տեղապահը, և իւրավի կը կատարէ Աւագ տօներու և Ծնունդի հանդէսները: Յարութիւն պատրիարք ոչ իբր անգիտակից, այլ իբր անօգնական լքուած և բռնութեան ներքև ձնշուած չի կրնար պաշտպանել եկողները, որոնցմէ ինքն պաշտպանութիւն կը սպասէր, և այս նպատակով հրաւիրած էր կանուխէն: տեղական կառավարութիւնն ալ առժամապէս Վինուորական հրամանատարի յանձնուած գործնական և կտրուկ որոշումներէ կը Վգուշանար, և թէպէտ ոչ անկարեկիր, սակայն Վինուորական ուղղութեամբ ամէն քայլին համար կեդրոնի յատուկ հրահանգին կը սպասէր. թէև բարի տրամադրութիւններով օժտուած աննենգ անձ էր, այլ քաղաքական գործոց մասին քաղաքական պաշտօնէութեան ազդեցութիւնը կը կրէր, և գլխաւորաբար թարգման Պշարա էֆէնտիի, որ միշտ գէշ դեր ունեցած էր Երուսաղէմի խնդիրներու նկատմամբ, և պաշտպան հանդիսացած էր ազգին դէմ ըմբոստ խմբակին (ՏՂԿ.Ձ.31): Ուստի հրամանատարը իրեն եղած դիմումներուն յուսադրութենէ աւելի խոստում չէր կրնար տալ, և ամէն պարագայ նախարարութեան հաղորդելով որոշ պատասխանի կը սպասէր, և այս ալ կը յապաղէր: Այս պարագաներ տեղապահն ու պատուիրակը ձախող կացութեան կը մատնէին, և իրենց դիմադրողները կը քաջալերէին անարգանօք վարուիլ իրենց հետ,

անկաշկանդ ծաղրել, անպատկառ նախատել, և յայտնապէս հեզնել, մինչև իսկ կեանքերնուն սպառնալ, ոչ միայն իրենց այլև իրենց համակիրներուն դէմ (ՏՂԿ.Զ.34-35), այնպէս որ բոլորովին անտանելի կը դառնար կացութիւննին: Իրենք ալ պատրիարքարանի յղած գիրերնուն և հեռագիրներուն գոհացուցիչ պատասխան չէին ստանար, որով կը ստիպուէին Երուսաղէմէ հեռանալ և Յոպպէ դառնալ, նորոգելով նախընթաց չորրորդ պատուիրակութեան ապարդիւն ելքը: Մեկնելնին կը հաղորդեն փոխկառավարիչ հրամանատարին, կը խնդրեն որ ստանալիք հրահանգը կամ տեղեկութիւնը հաճի իրենց հաղորդել, և իրենք առանց աղմուկի 1910 յունուար 18-ին Երուսաղէմէ Յոպպէ կը մեկնին, ուստից մեկնած էին ամիս մը առաջ դեկտեմբեր 16-ին, և դարձեալ տխրութիւնն է որ կը պատէ Յոպպէ սպասողները, թէպէտ ելքը անոնց նախատեսութեան համաձայն եղած ըլլար:

3144. ՅԱԶՈՂ ՎԵՐՉԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ պատրիարքարանը, ուսկից կը սպասուէր յաջողութեան ակնկալութիւնը, բոլորովին անգործ չէր, թէպէտ Դուրեան պատրիարքի վարչական մեղմութեան վրայ հրաժարականի պարագայն ալ աւելցած էր, սակայն Մանուկ Ապարեան նոր վարչութեան ատենապետը, յօգուտ գործածելով իր պետական բարձր դիրքը, և եթէ ոչ բուն այլ յամառ գործունէութիւնը, կը յաջողէր կտրուկ և վերջնական հրահանգներ տալ նախարարութենէ Երուսաղէմի փոխկառավարիչին, ինչ որ գրեթէ կը զուգադիպէր տեղապահին և պատուիրակին Երուսաղէմէ հեռանալուն: Մեկնելէն երկու օր ետքը յունուար 20-ին փոխկառավարիչ Կօրավարը Յոպպէ կը կոչէր Պարգև Փափապեան պատուիրակը, որ կը հասնէր 21-ին ընկերակցութեամբ Աճէմեան վարդապետի: Փոխկառավարիչը մտերմաբար կը հաղորդէր թէ որոշ և կտրուկ հրահանգ ստացած է Կ. Պոլիսէ, երեքները բռնի յղել, տեղապահը նստեցնել, դիմադրողները ձերբակալել և աքսորել, և պէտք եղած ոստիկանական և զինուորական ոյժը գործածել: Հետևաբար օր կորոշեն առաջիկայ երկուշաբթին Յոպպէ եղողներուն բոլորին Երուսաղէմ գալուն, պատուիրելով այդ կարգադրութիւնը բացարձակապէս գաղտնի պահել, զի ինքն ալ ամէն միջոց ձեռք պիտի առնէ որ լուրը դուրս չելլայ, և վանքին մէջ եղողները անակնկալի դիմաց գտնուին: Փափապեան 22-ին կը դառնայ Աճէմեանի հետ, և միայն տեղապահին կը հաղորդէ առած հրահանգը: Երուսաղէմի վանքին մէջ կը լսուի Փափապեանի գալն ու երթալը, կը սկսին կասկածիլ, կասկածնին կը շատնայ Սամուէլ տեսուչին Յոպպէ գալովը, զի տեղապահը ճանչնալ չուզելուն վրայ տեղապահի հրամանով պաշտօնանկ եղած և Յոպպէի վանքէն վտարուած, Երուսաղէմ կու գար իրաւունք ստանալու յոյսով, այս առթիւ Յոպպէի տեսչութիւնը կը յանձնէր Թելեան Սիմոնի: Մինևոյն ատեն Վերիտոնէ ալ տեսուչ Պետրոսեանի դէմ գանգատներ հասած ըլլալով Սարաճեան Պետրոս յղուած էր արդէն տեսչութիւնը ստանձնելու: Յոպպէի մէջ յունուար 24 կիրակի երեկոյին միայն հաղորդուած էր սպասողներուն կառավարական կարգադրութիւնը և պատրաստութիւններ կատարուելով երկուշաբթի առտու կանուխ յունուար 25-ին ճամբայ ելլելով Երուսաղէմ կը դիմէին: Որչափ ալ Աճէմեան Երուսաղէմի և տեղապահը Յոպպէի մէջ յուսահատ լուրեր տարածած էին, և մինչև իսկ Երուսաղէմ մնացած գոյքերը Յոպպէ բերելու հրամաններ տրուած էին իբր Կ. Պոլիս մեկնելու նշան, և որչափ ալ կառավարական հեռագիրը հսկողութեան ներքև առնուած էր, Այսու ամենայնիւ երկաթուղոյ պաշտօնէութեան մէջ գտնուող ըմբոստներու կուսակիցներ, երկաթուղոյ մասնաւոր հեռագիրով կրցած էն մեկնելուն լուրը ըմբոստներուն հասցնել, որոնք անակնկալին դիմաց դուռերը կը փակեն եկողները ներս չառնելու համար: Մինչ այս մինչ այն Յոպպէ եկողներ կը հասնին, իրենց համակիրներէն կողջունուին, և կառավարական պաշտպանութեան ներքև և կառքերու շարքով կու գան վանքին մօտ եղող զինուորական

հրամանատարութեան պաշտօնատունը: Վանքին իրարանցումը և դուռներուն փակուիլը լսուած էր, ուստի հրամանատարը երկուշաբթի կէսօրին, անձամբ և պաշտօնէից ընկերակցութեամբ և պինուորական պաշտպանութեամբ առջև կանցնի եկողներուն առաջնորդել: Երեք անգամ վանքին աւագ դուռը կը բաղխէ, և բարձրաձայն յանուն կառավարութեան դուռը բանալ կը հրամայէ տաճկերէն լեզուով, զոր Փափապեան հայերէն թարգմանութեամբ կը կրկնէ, և տեսնելով որ ձայն չի տրուիր և դիմադրութիւնը կը շարունակէ, ետ կը դառնայ հետևորդներուն հետ, պինուորական հսկողութեան ներքև առնելով վանքին դուռը, և ամէն ելք ու մուտք արգիլելով, թէպէտև վանքը մէկէ աւելի հաղորդակցութեան դուռներ ունէր: Ամբողջ խումբը հրամանատարի պաշտօնատունը կը դառնայ, ուր եղելութիւնը արձանագրութեան ներքև կառնուի բոլոր ներկայից ստորագրութեամբ: Հոն մտած կը տեսնուի Գէորգ ճանսրվեան արեղայն, որ թարգմանի պաշտօն կը վարէր ըմբոստ վարչութեան հրամանով, և սողոսկած էր բան իմանալու դիտաւորութեամբ, բայց տեղապահին կողմէ Աճէմեան իբր թարգման ներկայացուած ըլլալով, հրամանատարը խիստ յանդիմանութեամբ ճանսրվեան սրահէն դուրս հանել կու տայ: Հեռագիրներ կը դրկուին և նամակներ կը գրուին թէ՛ նախարարութեան և թէ՛ պատրիարքարանի հասցէին, և Յոպպէէ եկողներ կը ստիպուին պանդոկի մէջ պատսպարուիլ մինչև պատասխաններուն հասնիլը: Նկատելով որ վանքին մէջ ռուսահպատակ ուխտաւորներ ալ կան, հրամանատարը լուր կը դրկէ հիւպատոսին իրենները պատել և հանել որ հետևանքներէ չվնասուին. հիւպատոսարանը ազդարարութիւն կը յղէ, սակայն դուրս ելլող չըլլար: Երկուշաբթիէ չորեքշաբթի օրերը սպասելով կանցնին և փոխկառավարիչը նոր քայլ մը չառնէր, որով տեղապահ և պատուիրակ իսկ կը սկսին թերահաւատիլ և պատրիարքարան կը գրեն թէ եղած պինուորական ձևակերպութիւնը առիցոյց էր, և երևոյթները փրկելու համար կանխաւ տնօրինուած միջոց մըն էր: Հինգշաբթի 28 յունուար մէջտեղ կելլայ Իթթիհատի տեղական ակումբին վարչութիւնը, վանք կը մտնէ, և բացարձակ կը յայտարարէ, թէ հպատակելէ պատ ուրիշ միջոցին չունին, ծանրագոյն և ամենախիստ հետևանքներէ ազատելու համար, թէ կառավարութեան կամքը որոշ է և իրենց մասին ամէնէն սաստիկ որոշումները տրուած են, ուստի հարկաւ պէտք է որ երեքը հպատակին Կ. Պոլիս երթալ, և միւսները տեղապահին հնազանդին, եթէ չեն ուզեր իրենք ալ պատժուիլ և արքորուիլ: Այլապէս տարրին միջամտութիւնը և Իթթիհատի ծանօթ պօրութիւնը և յայտարարութեանց պաշտօնական կերպարանը ամէնքը կը ցնցեն, հնազանդելու որոշումը կու տան: Իսկոյն Պարգև Փափապեան քանի մը նշանաւոր քաղաքացիներով ներս կը հրաւիրուին, դրամարկղները կը կնքուին, հաշուտետրները կը փակուին, դիւանական գրութիւններ կամփոփուին, երեք նշանակեալ միաբաններ, Կարապետ Տէր Կարապետեան, Սարգիս Տէր-Սարգիսեան և Աբգար Եօթնեղբայրեան, հրամանատարին կը ներկայանան, և իսկոյն Յոպպէ վրկուելու համար ոստիկանութեան կը յանձնուին: Ուրբաթ առաւօտ վանքին դուռները բաց և ազատ կը տեսնուին. բայց պանդոկ եղողներ դեռ չեն գար, մինչև որ շաբաթ առտու յունուար, 30ին, վանքէն հրաւիրակներ պանդոկ կը ներկայանան առաջնորդելու համար, Հանդիսական թափորով կուղևորին և եկեղեցական արարողութեամբ եկեղեցի կը մտնեն: Տեղապահը պատշաճ ատենաբանութեամբ մը միաբանութիւնը կողջունէ, և առաջիկային անցածը մոռցնել տալու յորդոր կը կարդայ, և աթոռին ու վանքին շահն ու պատիւը ազգին հետ համաձայնութեան վրայ հաստատուած ըլլալը կը շեշտէ: Եկեղեցիէ մեծ դահլիճ կելլեն, Յարութիւն պատրիարքն ալ կը միանայ, փոխկառավարիչ հրամանատարն ալ կուգայ քաղաքական և պինուորական հետևորդներով. նա ալ ատենաբանութիւն մը կը կրնէ, և ձեռնարկին Իթթիհատի միջամտութեամբ ըլլալը յիշատակելով, կեցցեներով և ներկայից ձայնակցութեամբ Իթթիհատը կողջունէ, և իսկոյն աւետաւոր հեռագիրներ կը յղուէին Կ. Պոլիս նախարարութեան և պատրիարքին

(ՏՂԿ. Զ. 38): Այսպէս կը փակուի տխուր միջադէպը, որ այնչափ պբաղեցուց ընդհանուր ազդեցութիւն, և բաւական ծանր ազդեց Երուսաղէմի աթոռն և վանքին վրայ:

3145. ԱՌՁԵՌՆ ԳՈՐԾԵՐ

Իրաւ գոհունակութեան առիթ էր և վերջապէս ազգային իշխանութեան յարգուիլը, ըմբոստներու ընկճուիլը, և ազգին ապաւինողներուն յաջողիլը, սակայն պէտք էր մեծ տագնապին հետևանքները դարմանել, անկարգութիւններուն հետքը ջնջել, և բարեկարգ ապագայի մը հիմերը դնել: Առ այս ընդարձակ միտքի, փորձառու անձի և ուժով կամքի պէտքը կար, որուն տեղապահն ու պատուիրակը ինքզինքնին անբաւական ճանչնալով՝ պատրիարքարանին կառաջարկէին, բարձրաստիճան եկեղեցականի մը նախագահութեամբ եկեղեցականներէ և աշխարհականներէ խառն յանձնաժողով մը կազմել և յուղարկել (ՏՂԿ. Զ. 39): Այսպէս Դանիէլ տեղապահ կը խոստովանէր իր անկարողութիւնը և անբաւական գործունէութիւնը, որ պէտք չէր անծանոթ ըլլար կեդրոնին, իսկ Փափապեան պատուիրակ պագացած էր վանական վարչութեան մասնագիտական ճիւղ մը ըլլալը և իրեն անկէ անմասն գտնուիլը, և երկուքն ալ կը պոռնանային պատասխանատուութեան ներքև մտնելէ: Կեդրոնն ալ անմիջական որոշման յանգելու փաստերը չունենալով յետաձգած էր առաջարկին նկատառումը (ՏՂԿ. Զ. 39), խիթալով իսկ վանական դիրքը խանգարել երբ պայն բարեկարգել կուզուէր: Միաբանական տարրին ամբողջութիւնն ալ պահանջուած վստահութիւնը չէր ներշնչէր. երկու կուսակցութեանց բաժնելով տկարացած էր, և իրար նախատելու և ստորնացնելու հանրութեան միտքերը պղտորած էին: Եթէ մէկ կողմ խոհական կերևէր՝ սակայն մեծամասնութեան ոյժը չունէր, և եթէ միւս կողմը մեծամասնութեամբ կը ներկայանար՝ սակայն խոհականութեան մասին շատ ետև կը մնար: Այսու հանդերձ պէտք էր գործի ձեռնարկել, թէ ներկայն ապահովող կարգադրութիւններ ընել թէ առաջիկային պէտք եղած բարեկարգութիւնը ճշդել: Ամէն պարագայի մէջ ստիհողական էր ներքին վարչութիւնը վերանորոգել և գլխաւոր պաշտօնակալները որոշել: Ըստ այսմ Տէրտէրեան իր լուսարարապետութեանը կանցնէր, Գարզեան ելևմտից և Սամուէլեան վարժարանաց տեսչութիւնները կը ստանձնէին, Աճէմեան արդէն թարգման որոշուած էր, Թելեան Յոպպէի և Սարաճեան Վերիտոնի տեսչութեանց անցած էին. տնօրէն ժողոն ալ կը կազմուէր առանց քուէարկութեան դիմելու, որ կրնար անյարմար ելք մը ունենալ, և պաշտօնի կը կոչէին Դաւիթ Տէրտէրեան լուսարարապետութեան իրաւամբ, Արիստակէս Խաչատուրեան, Գրիգորիս Պօյաճեան, Պօղոս Շահնապարեան, Սերովբէ Սամուէլեան և Գէորգ Յովհաննէսեան, տեսակ մը միջակային շահեցողական ուղղութեամբ: Ըմբոստութեան երեք գլխաւորներուն մեկնելէն ետքը, Հմայեակ Երէցեան ալ Դամասկոսի և Վահան Քէշիշեան Բեթղէհեմի տեսչութեամբ կը հեռացուէին: Աթանաս Ասլանեան և Եփրեմ Պէպիրճեան Ս. Յարութիւն և Ս. Փրկչայ տեսչութիւններէն կարձակուէին, և բոլոր առձեռն կարգադրութեանց մտադրութիւն կը դարձուէր: Կը լսուէր թէ երեք Կ. Պոլիս մեկնողներ սնտուկէն մեծկակ գումարներ վերցուած են, ուստի Յոպպէի մէջ ձեռուրներնէն առնելով ճանապարհորդութեան բաւական ծախքը միայն կը թողուէր իրենց: Ամենէն փափուկ և դժուարին կէտը Յարութիւն պատրիարքի անձնաւորութեան հանդէպ բռնուելիք կերպն էր: Իրեն քով առաջին մտնողը Տէրտէրեանն էր որ վերջին ելլողն էր եղած, իսկոյն ոգևորութեան շարժում մը կը տեսնուէր ծերունապարզ պատրիարքին դէմքին վրայ, որ սիրտին խորէն պայրագին հառաչանք մը կարձակէր տագնապներու պատճառ եղող ըմբոստներու դէմ, և գերութենէ ապատագրելի մը խանդավառութիւնը կը յայտնէր: Տեղապահ և պատուիրակ մեծարանացող ջոյներ կը մատուցանէին, բայց պաշտօնական կացութեան վրայ խօսելէ կը պոռնանային:

Դարձող միաբաններ հետզհետե՛լ յարգանաց աջահամբոյրի կը մտնէին, սակայն հնար չէր կացութեան իսկութեան վրայ խօսիլ եւ լիովին բացատրել: Վեհապետեան անգիտակ չէր իրեն դէմ եղած որոշման, բայց վեհանձնական զգացմամբ անոր վրայ անդրադառնալ չէր սիրեր. տեղապահ եւ պատուիրակ եւ ընկերացողներ կը զգային թէ պաշտօնական որոշումներ եւ պաշտօնական ձեռնարկներ այդ որոշման հիմնուելով կատարուած էին, եւ վայն փոփոխել կամ այլապէս գործել անհնար էր, հետեւաբար փոխադարձ վերապահեալ մտածումներով եւ լռին ընթացքով պէտք էր նոր ձեւուած կացութեան համակերպիլ եւ ըստ այնմ վարել տիրող ընթացքը: Արդէն կողորոնի երեսփոխանական որոշումը պատուոյ մասը ամբողջաբար պահած էր պաշտօնանկ հռչակեալ պատրիարքին վրայ. իսկ գործունէութենէ զինքն հեռու պահելն ալ կը պատրուակուէր տարիքին եւ տկարութեան բերամամբ չյոգնեցնելու պատճառանքով, եւ այդ սեթեւեթեալ ձեւով շարունակուեցան պատրիարքին եւ պաշտօնէութեան ու միաբանութեան յարաբերութիւնները ութն ամիսներ՝ մինչեւ պատրիարքին մահը: Վանքին մէջ եպիսկոպոս մնացած չէր, տեղապահն ալ վարդապետ էր, մինչեւ սուրբ տեղեաց իրաւասական հանդէսները եպիսկոպոսական նախագահութիւններ կը պահանջեն, եւ այդ պակասը լրացնելու համար պատրիարքարանի կարգադրութեամբ մարտի կէսին պատկական միջոցէն առաջ, երկրորդ անգամ Երուսաղէմ կը հասնէր Յովհաննէսեան Գրիգորիս եպիսկոպոս, որուն ուրիշ պաշտօնական գործունէութիւն յանձնուած չէր: Վանական ներքին վարչութիւնն ու մատակարարութիւնը իրենց սովորական ձեւն առած էին եւ հանդարտօրէն կը շարունակէին. ըմբոստ խմբակին պետերը այլեւս չկային, իսկ հետեւորդներ ամէն տեղ զօրաւորին ու տիրողին հպատակելու եւ գործակցելու վարժ տարր մը կազմէն. այնպէս ալ կ'իրականանար Երուսաղէմի մէջ, ուր ժամանակ մը եւս կը մնար կեդրոնի կողմէ տեղապահին պարգեւուած Պարգեւ պատուիրակը: Անցողակի աւելցնենք այստեղ թէ կեդրոնական Ըմբոստը ժողովոյ կողմէն հաշուեքնիչ յանձնաժողովոյ ելրակացութեան հաստատութեան, եւ գործադրութիւնը վարչութեան յանձնուելուն վրայ (§3141), վարչութիւնը 1908 դեկտեմբեր 16-ին Երէցեանը 105 եւ Մաքսուտեանը 11,268 ոսկի վճարելու հրահրած էր: Թէպէտեւ հաշուեքնիչը 13,966 ցուցած էր Մաքսուտեանի պարտքը (ՏՂԿ.Թ.27), սակայն վարչութիւնը զեղչած էր 2698 ոսկի անընդունելի կալուածոց զնոյն պատահմամբ տեղի ունեցած կրկնումը (ՏՂԿ.Ժ. 14), Երէցեան դեկտեմբեր 24-ին կը պատասխանէր, թէ իրմէ պահամջուած գումարին մէկ մասը լրագիրներուն նպաստ տրուած է, եւ միւս մասը Յարութիւն Մամբեանի Ալէլուիա գրքին տպագրութեան ծախսուած է, որ ամբողջաբար Երուսաղէմատուն կը գտնուի. Մաքսուտեան ալ դեկտեմբեր 30-ին իր հերքմնագիրին (ՏՂԿ. Ժ.) բովանդակութիւնը կը կրկնէր, եւ այս գրութիւններ նախաքննութեան կը յանձնուէին (ՏՂԿ. Զ. 36):

3146. ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՃԻԳԵՐ

Դժուար չէր առձեռն գործերը կերպաւորել առժամեայ կարգադրութիւններով, բայց Երուսաղէմի խնդիրը այսչափով չէր փակուեր, զի վերջին եղելութիւններ ուշագրաւ մտադրութիւն կը հրահրէին հիմնական կէտերու վրայ: Երբոր առաջին անգամ Օրմանեանի պատրիարքութեան օրով Երուսաղէմի անցքերը ստիպեցին որ կեդրոնը միջամտէ (§3044), երկու գլխաւոր կէտերկը ներկայանային իբրեւ կարեւորագոյն պահանջ.- Երուսաղէմը ապատել Մաքսուտեանով սկսած ու եռեակով ամրացած շահածնդի վարչութենէն, եւ Երուսաղէմի սնտուկին դարձեալ Մաքսուտեանի կողմէն իւրացուցուած գումարները: Առաջինը իրագործուեցաւ Խապայեանի կաթողիկոսութեամբ հեռանալովը եւ Մաքսուտեանի իշխանութեամբ դուրս հանուելովը (§3056), եւ վանքը յանձնուեցաւ կանոնի նախանձախնդիր հաշուեպահանջ կուսակցութեան, հնարաւոր աստիճանով հանդարտ վարչութիւն եւ կանոնաւոր մատակարարութիւն սկսաւ Երուսաղէմի

աթոռին եւ վանքին մէջ: Երկրորդ կէտը հաշուական մանրախոյզ պնդութեանց պէտք ունէր, բայց տոմարներ եւ վաւերաթուղթեր կը պակսէի. Մաքսուտեան ամբողջական հաշիւ ներկայելէ կը խուսափէր, մանուածապատ պաշտպանողականներով խնդիրը կը պղտորէր, մակաբերական քննութեանց ընթացքը դատական ճշդութենէ վուրկ կը մնար, եւ ազգային իշխանութիւնն ալ բարոյական էր եւ պետական դատարաններու բռնադատիչ պօրութիւնը չունէր: Հետեւաբար խնդիրը կ'երկարէր, բայց հետզհետէ կը լուսաբանուէր եւ լուծման մօտեցմած էր: Օրմանեանի դադրելովը եւ Իվմիրլեանի յաջորդելովը կը սպասուէր որ առաջին կէտը աւելի եւս ամրանար, եւ երկրորդ կէտն ալ վերջնական լուծման յանգէր, քանի որ Իվմիրլեան Երուսաղէմի մէջ ապրած էր, իրողութեանց խորապէս գիտակ էր, Մաքսուտեանի դէմ խնդիրը ուսումնասիրած եւ շարժումը քաջալերած էր, եւ նոր սկսած վարչականութեան մէջ համակրական պօրութիւն եւ անհակառակ հեղինակութիւնը կը վայելէր: Սակայն արդիւնքը բոլորովին հակառակ էր եղած, Մաքսուտեան կրցած էր պօրանալ, ազդեցութեան վերադառնալ, կացութիւնը այլայլել, գործերու տիրապետել: Այս նպատակի գործածուած միջոցները փնտոել աւելորդ կ'ըլլայ, երբ հետեւանքին ոյժն ու ծանրութիւնը մէջտեղ է: Կեդրոնի եւ հանրութիւնը եւ ընդհանուր կարծիքը, մէկ խօսքով ազգը, գործ եւ հետեւանք կը փնտոել, երբոր անոնք ձախողած են, վուր ջանք եւ սին աշխատանք կ'ըլլայ ձախողուածին ինչո՞ւն եւ ինչո՞վը եւ ինչպէ՞սը հետապօտել: Հաշուապահանջ կողմը առաջին կացութեան մէջ վստահութիւն ազդած եւ պօրաւոր կարծուած եւ կացութեան տիրացած էր, բայց երբ ան իր դիրքէն վտարուած օգնութիւն խնդրելու համար կեդրոն կը դիմէր, Երուսաղէմի խնդիրը հիմնովին քայքայուած կ'երեւար: Հաշուեխոյսներ վստահութիւն չէին ազդեր. հաշուեպահանջներ պօրութենէ վուրկ էին. Երուսաղէմի խնդիրին համար հիմնական պահանջը կը պակսէր, եւ դարմանը ուրիշ կողմէ փնտոել անհրաժեշտ կը դառնար, եւ այս երեւոյթին դիմաց կը գտնուէր կեդրոնական վարչութիւնը: Դարմանին համար ոյժ պէտք էր, ոյժին համար դիրք, դիրքին համար կանոն, եւ գտնուած կանոնն ալ տկար գտնուած էր: Ահա ի՛նչպէս կը ներկայանար Երուսաղէմի խնդիրը երբոր ըմբոստ վարչութեան տեղ կեդրոնէն կազմուած տեղապահական շրջանը կը սկսէր: Կեդրոնական վարչութիւնը իր մէջէն ձեռնհաս դատուած անդամակիցներու, Հայկ Խօճաարեանի եւ Սարգիս Սուիւնի, յանձնած էր ծրագիր մը պատրաստել, միեւնոյն ատեն պատուիրակ Փափապեանի ալ յանձնարարած էր ուրիշ ծրագիր մը պատրաստել տեղւոյն վրայ քաղուած տեղեկութիւններով եւ կատարուած խորհրդակցութիւններով: Այս կրկնակի յանձնարարութեանց արդիւնքն եղան 1910 մարտ 8-ին խառն ժողովէ ընդունուած պատուիրակի հրահանգը (ՏՂԿ. Ձ. 40-44), եւ մայիս 3-ին պատուիրակին ու տեղապահին համաձայնութեամբ ներկայացուցած բարեկարգական հրահանգը (ՏՂԿ. ԺԲ. 14-18): Վարչական հրահանգը թէպէտ կը դիտէ տեղապահին տեղաւորուելէն ետքը Պարգեւ պատուիրակին ընթացքը ճշդել. սակայն այդ առթիւ սկզբունքներ ալ կը շօշափէ, եւ իբրեւ հիմ կ'ընդունի 1888ի կանոնագիրը (§ 2933), Երուսաղէմի աթոռին եւ վանքին եւ ուխտատեղեաց սեփականութիւնը ընդհանուր ազգի պատկանիլը կը շեշտէ (ՏՂԿ. Ձ. 41), պատրախարքի եւ միաբանական ու տնօրէն ժողովներու իրաւունքները կը ձանձնալ, նոր պաշտօնէութիւն կազմել կը յանձնարարէ, աթոռին ընդհանուր եւ միաբաններու մասնաւոր սեփականութեանց վաւերական ցուցակները կը պահանջէ, 1893-1908 տարիներու հաշիւներու կը հրամայէ, 1909- 1910 ըմբոստ ժամանակին համար խիստ քննութիւն կը պատուիրէ, բոլոր գոյից ցուցակներու հետ բաղդատութիւնը կը հրահանգէ, տեղապահի պաշտօնը պօրացնել կը թելադրէ, եւ ընդհանուր բարեկարգութեան եւ վարգացման համար անհրաժեշտ դատուած պայմանները ներկայացնել կը հրամայէ (ՏՂԿ.Ձ. 44): Իսկ պատուիրակի եւ տեղապահի ծրագիրը առժամեայ կարգադրութիւններէն վատ կ'առաջարկէ, մատակարարական յանձնաժողով մը կազմել

միաբաններէ (ՏՂԿ. ԺԲ. 14), նախատեսեալ ելեւմտացոյց ունենալ, նոր պարտք չաւելցընել, պաշտօնէից ամսատետրները ջնջել, ամէն ծախքերու անդորրագիր պահանջել, կալուածական վարձքերը յաւելուլ, հեռաւոր տեղեր գտնուող ապարդիւն կալուածները եւ վանքին մէջ եղող աւելորդ գոյքերը վաճառել, հողային կալուածները արդիւնաւորել, քաղաքացւոց համար ծախքերը հետզհետէ նուազեցնել, վարժարաններու եւ տպարանի ոյժ տալ, փուռ եւ մոմատուն փակել, քանի որ արդիւնաւորել դժուար է (ՏՂԿ. ԺԲ. 18): Ինչպէս այս ամփոփումներէ կը տեսնուի, կեդրոնը եւ անկէ բղխած հրահանգները բնաւ կամք չունին Երուսաղէմի աթոռին եւ միաբանութեան դիրքը խախտել, կամ իրաւունքները վեղչել, այլ նպատակ ունին տիրող կանոնագրի խիստ պահպանութեամբ կացութիւնը բարւոքել եւ բարեկարգել, եւ բացառիկ տեղապահութիւնն ալ շարունակել մինչեւ որ կանոնաւոր կացութեան վերանորոգմամբ՝ հնար ըլլայ միաբանական ժողովով եւ կեդրոնով պատրիարքի ընտրութիւն կատարել:

3147. ՀԵՏԵԻՈՐԴ ԵՂԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարգեւ Փափապեան պատուիրակ 1910 յունուարի վերջէն մինչեւ մայիսի ըսկիպըր, երեք ամիս Երուսաղէմ մնաց իբրեւ կեդրոնի լիազօր ներկայացուցիչ եւ իբրեւ տեղապահի օգնական, այնպէս որ կրնանք համարձակ ըսել թէ վանքին իսկական վարիչն եղաւ, լրացնելով Դանիէլ տեղապահին վարչական պակասը, եւ առաջնորդելով առ հասարակ ամէն պաշտօնէութեանց գործերուն, եւ սկսկանաւորելով նոյն բարեկարգական կէտերը, որոնք վերջէն գրի առնելով կեդրոնին ներկայացուց, եւ զորս մենք վերեւ հակիրճ կերպով ամփոփեցինք (§3146): Վանքին ընթացքը հանդարտ կերպարան առաւ, խաղաղ կեանքի երեւոյթը ընդարձակուեցաւ, թէպէտեւ նոր առաւելութեանց եւ վարգացման կողմէն աչքառու պարագայ մը չունինք նշանակել: Այդ կացութիւնը տեղապահը քաջալերեց օր առաջ ձեռք անցունել եպիսկոպոսական ձեռնադրութիւնը, որուն որոշումը Կ. Պոլիսէ չմեկնած կեդրոնէն տրուած էր, եւ միաբանական նոր որոշման պէտք չէր վգացուեր, քանի որ միաբանական ժողովներ ընդհատուած էին, եւ ներքին վարչութիւնն ալ բացառիկ պարագաներու ներքեւ կը գտնուէր: Տեղապահին բացակայութեան ատեն դիրք ունեցող փոխանակող մը ունենալու համար, տեղապահ եւ պատուիրակ եւ կեդրոն համաձայնեցան Պալեան Տրդատ եպիսկոպոսի վրայ, եւ վայն նշանակեցին խորհրդական անունով. թէպէտեւ Կեսարիոյ առաջնորդութեան անունով եւ ոչ միաբանական որոշումով 1899 մայիս 27ին եպիսկոպոս ձեռնադրուած ըլլալուն, անկէ ի վեր միաբանութենէ մերժուած կը նկատուէր. բայց բացառիկ օրերու մէջ այսպիսի պարագաներու շատ մտադրութիւն չէր դարձուեր: Պալեան Կ. Պոլսոյ մէջ գտնուելով իսկոյն Երուսաղէմ ուղեւորեցաւ, եւ ապրիլ 20ին հասաւ իրեն առաջարկուած դիրքը գրաւելու, եւ Դանիէլ անմիջապէս մեկնելու կարգադրութեանց ձեռնարկեց: Պարգեւ պատուիրակն ալ իր պաշտօնը լրացած սեպելով որոշեց մեկնիլ, Գայրզճեան ալ վանական շփոթութիւններէն յոգնած Եգիպտոսի աթոռական կալուածներու հսկողութեան եւ Ազարեան Վահրամ վարդապետի ժառանգական խնդիրին կարգադրութեան համար տեսչական պաշտօնով Եգիպտոս երթալ փափաքեցաւ եւ արտօնուեցաւ, եւ Պալեան այս առթիւ տեղապահի փոխանորդութեան հետ ելեւմտից տեսչութիւնն ալ ստանձնեց: Մայիս 8ին Գայրզճեան եւ Փափապեան Աղեքսանդրիոյ չամբով, եւ 10ին Դանիէլ Վերիտոնի գիծով մեկնեցան, եւ քիչ օր ետքը յունիս 1ին Երուսաղէմ հասաւ Չիլինկիրեան, որուն էջմիածին եպիսկոպոսանալու երթալը յիշած ենք (§3142), եւ փետրուար 21ին ձեռնադրուելով դարձած էր Կ. Պոլիս իր փոխանորդական պաշտօնը շարունակելու միտքով: Սակայն յարմարագոյն դատուեցաւ Գալապեանը պահել պաշտօնի վրայ եւ զինքը Երուսաղէմ կոչել: Յովհաննէսեան ալ մեկնեցաւ Չիլինկիրեանի հասնելէն ետքը, զի վանքին մէջ երկու եպիսկոպոսներ ալ կը գտնուէին այլեւս հանդէսներու պէտքը լրացնելու, որոնց

աւելի կը հետեւէր Չիլինկիրեան քան Պալեան: Իսկ Յարութիւն պատրիարք առանձնական կեանք կ'անցունէր, հեռու պաշտօնական գործէրէ եւ աշխատութիւններէ, եւ երբեմն ալ յատուկ պարագաներու առիթով եկեղեցական պաշտամանց կը նախագահէր Ս. Յակոբայ աթոռական եկեղեցւոյն մէջ, պահելով պատրիարքական դիրքին ու պատուոյն բոլոր պահանջները: Բոլոր վանականներ, մեծէն մինչեւ պսակը, ամէն փափկանկատ պաշտութիւն կը գործածէին չզգացնելու համար իրեն պաշտօնական դիրքին խախտուած ըլլալը. արդէն շատ ալ չէին իրեն մօտ յաճախողներ, եւ գացողներ գիտէին ճարտար դարձուածներով պինքն հանդարտել, երբոր ինչինչ պաշտօնական գործողութեանց մասին կը հետաքրքրուէր, վատահեցնելով թէ պէտք չէ ինքն մտահոգ լինի, եւ թէ ամէն բան իր բաղձանքին համաձայն կը կատարուի: Խորագէտ ծերունին, որուն գիտակցութիւնը այլապէս չէր, լաւ կը հասկնար իրեն հանդէպ գործածուած ձեւերուն ներքինիմաստը, բայց վեհանձն պագամամբ անգիտակ ձեւանալով, թէ՛ իր դիրքը կը պահէր, եւ թէ՛ պինքն չէր նեղեր, ինչպէս ամէն ծերերու, մանաւանդ իննսնամեաներու բնական բերմունքն է: Կեանքը կանոնաւոր էր, առողջութեամբ գոհացուցիչ, առանց ակնոցի երկար ժամեր ընթերցման կը պարպէր, եւ տարիքին հմեմատ քաջառողջ էր, մտերմական եւ պուարթ խօսակցութիւններէ կ'ախորժէր, եւ վերջին օրեր աւելի լաւ կը պար պինքն, եւ բժիշկներ ալ կը վկայէին. միայն ելնելու եւ նստելու համար պաշտութեամբ շարժուելու կամ օգնութիւն փնտրելու պէտք ունէր: Սեպտեմբերի վերջին օրը յանկարծ անպզոյշ շարժումով մը սենեակին մէջ կ'իյնայ, սաստիկ կը ցնցուի, տենդ կը յաջորդէ, անկողին կ'իյնայ, թոքատապ կը յայտնուի, բժշկական խորհրդակցութիւնն ալ չի կրնար յառաջացումը արգիլել եւ չորս հինգ օրէն կեանքը կը վերջանայ, որ առանց իյնալու արկածին, բժշկական վկայութեամբ, կրնար բաւական ժամանակ եւս երկարել: Վախճանը տեղի ունեցած է հոկտեմբեր 5-ին, թէպէտ 8ին Կ. Պոլսոյ մէջ ստոյգ լուր հասած չէր հեռագիրին յապաղելուն պատճառով: Սակայն վիճակին ծանրանալը իմացուած ըլլալով սկսած էր խօսուիլ, եւ մինչեւ իսկ պահ մը մայրաքաղաքի մէջ կը կարծուէր, թէ մահուան գոյժը դիտմամբ կը պահուի, եւ թէ թաքուն միտք մը կայ (10. ԱՐԼ. 7438): Երուսաղէմի մէջ հանգուցելոյ թաղումը կատարուեցաւ 7ին ամենայն շուրջով եւ պատրիարքներու յատուկ պայմաններու լիով պահպանութեամբ եւ Չիլինկիրեանի նախագահութեամբ: Այս անգամ աթոռը իսկապէս թափուր էր. Կեդրոնը որոշեց որ տեղապահի նոր ընտրութեան պէտք չկայ, եւ թէ Դանիթլ, որ սեպտեմբեր 19ին եպիսկոպոս ձեռնադրուեած էր, պէտք է տեղապահութիւնը շարունակէ, եւ նոր ընտրութեան նախագահէ (10.ԱՐԼ. 7439): Ուստի Էջմիածին հեռագրեց դարձրփութացնել. ան ալ քիչ ետքը, հոկտեմբեր 3-ին, Բագուէ ուղեւորած էր (10. ԱՐԼ. 7442), Տփղիս հանդիպեցաւ, 18ին Կ. Պոլիս հասաւ (10. ԱՐԼ. 7445), եւ անկէց փութաց Երուսաղէմ երթալ: Իզմիրլեան կաթողիկոս սեպտեմբեր 19ին տասը եպիսկոպոս միանգամայն ձեռնադրած էր, եւ Երուսաղէմի գործերուն մասին պագած գոհունակութեան իբր յայտարար, Դանիթլի առաջնութիւն տւած էր, հակառակ ձեռնադրութեանց կարգին եւ մահնգամայն արքութեան պատուանունն ալ շնորհած (410. ԱՐՐ. 818 եւ 905):

3148. ՎԵՀԱՊԵՏԵԱՆԻ ԱՆՁՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Երուսաղէմի պատրիարք Յարութիւն Վեհապետեանի կեանքին քայլ առ քայլ հետեւած ենք, սկսելով իր մանկութենէն (§2651) եւ օտարապ գի ծագումէն (10. ԱՐԼ. 7436), եւ գրածներնուս վրայ անդրադառնալու պէտք չենք պար. բայց ինչպէս քանիցս ակնարկած ենք, նշանաւոր եւ պատմական անձերու կեանքը հնար չէ փակել առանց ընդհանուր տեսութեամբ մը անոնց շիրիմը կնքելու: Յարութիւն 1910 յունիս 2ին իր եպիսկոպոսութեան յիսնամեակը լրացուցած էր, եւ 1911 դեկտեմբեր 8ին քահանայական ձեռնադրութեան վաթսունամեակը պիտի լրացնէր, եւ Երուսաղէմի պատրիարքութեան ընտրուելէն քսանեւհինգամեակն ալ եղած էր, եւ միաբանութիւնը մտադիր էր

մեծահանդէս յոբելեան մը կատարել առաջիկայ Զատիկին, իր անուան տօնին եւ ուխտաւորութեան միջոցին, եւ կատարած ալ կ'ըլլար յակառակ 91 լրացած տարիներուն, եթէ իյնալուն դժբախտ պատահարը տեղի չունենար: Վիմարդեայ կազմի եւ անթերի առողջութեան տէր եղած պէտք է ըսուի Վեհապետեանը, եթէ այդչափ երկար կեանքին մէջ ըմպելեաց եւ ծխելեաց ժուժկալութիւնն ունեցած չէր: Սակայն երկարագոյն կեանքը բարձրագոյն արժանեաց գրաւական չէ. Վի սողմոսերգուն ալ ութսունէ անդին տարիները ցաւօք եւ հեծութեամբ որակած է (ՍԱՂ. 2Թ. 10): Ութսունին, որ է ըսել Երուսաղէմի պաշտօնավարութեան կիսուն, Յարութիւն իր փառաւոր օրերուն գագաթնակէտն էր, եւ իր շինարար օգուտները կը փառաբանուէին, եւ աւելի փարելի եւ սիրալի եղած պիտի ըլլար իր յիշատակը հանրութեան միտքին մէջ, եթէ հոն եղած ըլլար վերջին տպաւորութիւնը: Ընդհանրապէս շատ աւելի բարձր եղած է կատարեալ գործունէութեան մէջ կնքուած կեանքերուն յիշատակը, քան գործունէայ ընթացքը աւարտելով անգործ հնդարտութեան մէջ փակուած կեանքը: Յարութիւն վանապան ասպարէզներու մէջ աշխատեցաւ, բայց գլխաւորապէս կը յիշուին Կարնոյ առաջնորդութիւնը, Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը, եւ Երուսաղէմի պատրիարքութիւնը: Կարնոյ առաջնորդութիւնը թէպէտ քննադատուած ու մեղադրուած, բայց նշանակալից երկարութիւն ունեցաւ, դժուարին պարագաներու յաղթանակեց, եւ շինարար յիշատակներ թողուց: Կ. Պոլսոյ պատրիարքութեան մէջ յարաբերական խնդիրները խոհականութեամբ գործածեց, եւ կաթողիկոսական խնդիրին մէջ եկեղեցոյ տեսակէտէն օգտակար ուղղութիւնը պաշտպանեց: Իսկ Երուսաղէմի պատրիարքութեան մէջ սովորական ընթացքը ամրապէս պահեց, բայց մեղադրուեցաւ Մաքսուտեանի եւ եռեակի առջեւ բացած լայն ասպարէզին մէջ, եւ իր վերջին տարիներու մէջ վանական խառնակութիւնները չվսպելուն համար, եւ մենք ալ այդ երկու կէտերուն վրայ մեր դիտողութիւնները չխնայեցինք: Բայց արդար ըլլալու համար խառնակութեանց կէտին մասին պէտք է ընդունիլ տարիքին չքմեղանքը, եւ Երուսաղէմի պատրիարքէն աւելի կենդրոնական վարչութիւնը մեղադրել, որ ապատութեան շրջանին մէջ Երուսաղէմի խնդիրին բնութիւնը այլափոխեց, կացութեան ներքինին չթափանցեց, պէտքին ու դարմանին համեմատութիւնը չկշռեց, եւ ի վուր բազմամեայ եւ բազմավաստատ աշխատաւորին վարկին ու պատուոյն գամագիւտ եղաւ պաշտօնանկութեան վճիռով դարմանել փորձեց: Յարութիւն, կեդրոնէ դատապարտուած եւ պաշտօնէ վրկուած, անաչառ քննադատութեան կշռորդով ո՛չ յանցապարտ մը եղած է, եւ ո՛չ պատասխանատուութեան ենթարկուած է. անխորհուրդ վճիռին ձախորդ հետեւանքը պէտք է վճռատուներուն վրայ դարձնել եւ կարող գործագիրներու յանձնուած չըլլալը դիտել: Թերեւս Վահապետեան իրաւամբ կարենայ դատափետտուիլ Մաքսուտեանի ներած ապատութեամբը, եւ եռեակի առջեւ բացած ընդարձակութեամբը, թէպէտ սկզբնապատճառն ու ստեղծիչը ինն չեղաւ. բայց իր կարողութիւնը Եսայիի կարողութենէն վեր էր, եւ իր փորձառութիւնը Եսայիի փորձառութենէն աւելի էր, եւ իրմէ կրնար ըսպասուիլ որ Եսայիի շեղումը շտկէ եւ Եսայիի թերին լրացնէ: Բայց ինչ որ այս մասին կրնանք Յարութիւնի ի նպաստ աւելցնել, սխալին մէջ իսպառ չյարատելէն է. Վի թէպէտ անագան, բայց ոչ կատարելապէս անժամանակ, այլ դարմանի ատակ եւ ընդունակ միջոցի մէջ, ինքն իր վրայ անդրադարձաւ եւ երկար տարիներ պաշտպանածէն ետ կեցաւ, երբոր շօշափելի կերպով անոր սխալ ուղղութիւնը վզաց եւ չարաշահ գործունէութիւնը տեսաւ: Այս կերպով, եթէ պահ մը սխալելով խաբուած ըլլալը ցուցուց, սակայն նենգաւոր դիտումով եւ յամառ չարակամութեամբ գործած ըլլալու դատավճիռէն ազատ մնաց. իսկ եթէ վերջին միջոցին դարձեալ նախապէս պաշտպանածին նպաստաւոր երեւցաւ, երբեք յօժարակամ եւ համոզուած չեղաւ այն յայտարարութիւնները, այլ անօգնական ծերունոյն բնութեան հանդէպ անձնատուր եղած

ըլլալուն արդիւնքն եղան, եւ այս ալ յայտնի տեսնուեցաւ երբ ուրախութեամբ ողջունեց իր ուղիղ համոզման համաձայն կատարուած փոփոխութիւնը: Հետեւաբար ոչինչ կ'արգելու որ ինչպէս նիւթական, նոյնպէս եւ բարոյական տեսակէտէն պատուով յիշուի Վեհապետեան Յարութիւն պատրիարքի անունը պատմութեան մէջ, եւ իր յիշատակը օրհնուի Երուսաղէմ եւ Կոստանդնուպոլիս եւ Կարին եւ ուրուեք նշանաւոր հետքեր եւ օգտակար արգասիքներ կենդանի կը պահեն իր արդիւնաւորութիւնը:

ՎԵՐՋ

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՁԵՌՔՈՎ ԵՂԱԾ ՅԱԻԵԼՈՒՄՆԵՐ ԵՒ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ

Էջ 118. Տ.Ս.ԱՐԻՍՏԱԿԷՍ Ա. ՊԱՐԹԵԻԻ 82րդ հատուածին վերջը.

- «Գրիգոր Քահ. Ճէպէճեան կ'ըսէ թէ տեղական աւանդութիւնը Նիկիոյ լիճին կը պատշաճեցնէ Արիստակէսի մասին ըսուածը»:

Էջ 217. տող 7-9.

- «Խախ գիւղը նոյնացուցեր էինք Ռումսէրայի գիւղին հետ, հետեւելով Ալիշանի (ՏԵՂ. 41). այլ նոր տեղեկութիւնք (ԱՄԱ.) կը հաւաստեն թէ Խախ անունով գիւղը կը մնայ տակաւին Երվնկայի դաշտին արեւմտեան կողմը ջրաշատ եւ գեղապուարձ դիրքի վրայ, մինչ Ռումսէրայի կը գտնուի դաշտին հիւսիսակողմը անջրդի եւ անհրապոյր տեղ մը: Խախի շատ մօտ են Թիլ եւ Չրմէս, այժմ Չէրմէ»:

Էջ 327. վարէն տող 8-9. «Ասողիկի ըսելը թէ սա անկաւ ի թիւ հայրապետաց»- «կրնայ սա անկաւ ի թուոյ հայրապետաց իմացուիլ»:

Էջ 337. 4րդ տողին վերջը.

- «Նահատակներու թիւին մասին դիտողութեան արժանի է Ոսկանեան Տօնացոյցին յիշատակութիւնը, որ կը գրէ Սրբոց Վարդանանց եւ այլոց զօրավարացն Հայոց Եօթնասուն հազարից վկայիցն որք կատարեցան ի մեծի պատերազմին (ՈՍԿ. 35), եւ կ'երեւի թէ բովանդակ պատերազմիկ բանակը վկայից կարող կը դնէ, 66,000ն ալ 70,000ի լրացնելով, չենք գիտեր թէ լաւ աղբիւրէ մը առնելով թէ ոչ իր անձնական տեսութեամբ: Տօնացոյցի հնագոյն օրինակ մը, Ստեփանոս Գոյներիցանցէ գրուած շուրջ 1280ին, պարզապէս Վարդանանցն Հայոց Զօրաւարացն գրած է առանց թիւի, եւ թերեւս այս հին բացատրութիւնը լրացուցած է Ոսկան, մինչեւ օրինակներ պահած են պատմագիրներու յիշած 1036 նահատակաց թիւը»:

Էջ 661-62. «ՀԵՐԱՎԼԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ» հատուածին (444) համար.

- «Ազգային յիշատակ մը կ'աւանդէ թէ Բիւրեղ Տիկին Սիւնեաց՝ Հերակլը դիմաւորեց երբ Պարսկաստան կ'երթար, եւ վայն հիւրընկալեց, նուիրելով միանգամայն վանձս բազումս եւ Հանդերձս եւ ձի եւ ջորի, եւ սպառապէնս եւ զրահս 1000, եւ զէնս ոսկեկուռս 400, եւ սաղաւարտ 1000, եւ արք պատերազմի 3000: Եւ թէ կրկին դիմաւորեց յաղթական դառնալուն, բերեալ ընծայս առաւել քան վառաջինն: Այս առթիւ Հերակլ ալ Բիւրեղի կ'ընծայէ մասն ի կենսատու Սուրբ Խաչէն: Յիշատակարանը կը յիշէ ԿԲ=613 թուականը, որ Պարսից արշաւանքին տարին է (ՏՄՐ. 39). ապա թէ ոչ Երուսաղէմ առնուեցաւ 614-ին, Հերակլ պատերազմի ելաւ 622ին, եւ Խաչին գերեզարձը տեղի ունեցաւ 631ին, Հերակլի դառնալէն ետքը: Իսկ Ս. Խաչի մասը կը կարծուի Արկաղանի կամ Արգեաղու Ս. Խաչ դրուած, եւ այժմ եկեղեցւոյ հիմին մէջ թաղուած» (ՍԻՆ. 118):

Էջ 1271. Վարէն 5-7 տողերը սրբագրած է այսպէս.

«Մարիամ, Գագիկ Աբասեանի դուստրը (ԿԱԼ. 225)», եւ կ'աւելցնէ անմիջապէս, .

«ինչպես կը հաստատուի նոյն ինքն Աբասի աւետարանին յիշատակարանէն, որ կը պահուի Երուսաղէմի գանձատունը, եւ ուր յատկապէս յիշուած է Գարունդուխտ Աբասի թագուհին, որ հաւանաբար վախճանած կ'ըլլայ Աբասի իր դստեր հետ Կ. Պոլիս եկած ատեն: Մարիամ արայադուստր»:

Էջ 1601. Վարէն 13րդ. տողին վրայ կ'աւելցնէ՝ Կոստանդին Ա. Բարձրբերդցիի վրայ. գրելով.

- «Ծնողքը Վահրամ եւ Շուշիկ, եղբայրները Գորգ քահանայ եւ Գրիգոր, եւ քոյրերը՝ Շուշանիկ եւ Վանենի» (ԲՐԶ.):

Էջ 1636. Վարէն 19րդ. տողէն ետքը կ'աւելցնէ.

- «Վարդան շարունակեց իր գործունէութիւնը, եւ եպիսկոպոսներու եւ իշխաններու աջակցութեամբ ժողովներ գումարեց եւ Սոյ կանոնները ջանաց տարածել (ՇԱՂ. 30): Ասոնց մէջ յիշատակութեան արժանի է Ձագավանից ժողովը, Բջնոյ Գրիգոր եպիսկոպոսի գլխաւորութեամբ հաւաքուած 1270 Յունիս 29ին, Ս. Լուսաւորչայ կիրակէին (ՇՈՂ. 41), եւ որոյ գործերը վերջին անգամ գտնուեցան (ՇՈՂ. 22), եւ կոնոններուն մէջէն հետարքրական կը սեպենք տարիքներու չափերը քաղել: Ամուսնութեանց համար փեսային 15 եւ հարսին 14 (ՇՈՂ. 43) . աշխարհի երէցներուն համար 15 ամուսնութիւն, 20 դպրութիւն, 25 սարկաւագութիւն եւ 30 քահանայութիւն: Իսկ վանականներուն համար 20 սքեմաութիւն եւ 30 սարկաւագութիւն եւ 31 քահանայութիւն (ՇՈՂ. 46):

Էջ 1804. վարէն 11րդ. տողին վրայ կ'աւելցնէ վերջակէտէն ետքը.

- «Երուսաղէմի թանգարանին մէջ պահուած Թիւ 1950 Ստեփանոս Կրակցի Տարսոնի արքեպիսկոպոսին (§1230) գրել տուած մագաղաքեայ գեղեցկագիր աւետարանին իշատակարանն ալ ՉԿԵ=1317 տարին ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ Կեսարացոյ կը դնէ առանց ուրիշ յաւելումի»:

Էջ 1805. վարէն 20րդ. տող.

«Անաւարպեցին չարքին» կը սրբագրէ եւ կ'ընէ - «Կեսարացին շարքէն»:

Էջ 2002, վերէն 20րդ. տողէն ետքը կ'աւելցնէ.

- «Կարի ի դէպ այս միջոցին պատշաճեցնել Արձէշի վանահայր Յակոբ վարդապետի ալ նահատակուիլը Թաթարաց կողմէն օգոստոս 14ին, Վերափոխման կիրակի օրը, երեսուն միաբանակից ընկերներով, մինչդեռ ի պաշտօն էին ի ժամու ահեղ գիշերին (ՆՐՎ. Բ. 321): Իսկ այդ միջոցին Վերափոխումը օգոստոս 14ին հանդիպած է 1401 տարին, զոր կրնանք ընդունիլ իբր Յակոբի եւ ընկերաց նահատակութեան թւական»:

Էջ 2034. վերէն 7րդ. տողին վրայ կ'աւելցնէ վերջակէտէն ետքը.

- «Կոստանդին Զ. Վահկացի կաթողիկոսէ, եպիսկոպոսութեան ատեն 1413ին գրուած յիշատակարան մը, ի հայրապետութեան տեառն Տէր Յակոբայ կաթողիկոսի ընդհանուր ամենայն հայկապնեան սեռի (ԲՐԶ.) գրած է, եւ հարկ կ'ըլլայ գոնէ մինչեւ 1414 յետաձգել Յակոբայ մահը, կարճելով յաջորդին տարիները»:

Էջ 2039, վերէն 16րդ. տողին վրայ կ'աւելցնէ ստորակէտէն ետքը.

- «Թուականը պէտք է յետաձգել գոնէ մինչեւ 1414, ինչպէս վերեւ դիտել տուինք (§ 1405):

Էջ 2064. վարէն 7րդ. տողին վրայ կ'աւելցնէ վերջակէտէն ետքը.

- «Վահկացիին նախընթացին նկատմամբ կը գտնեմք թէ որդի էր Վասիլի եւ Տիրուհիի, ամուսնացեալ էր Մարիունի հետ, եւ Յակոբ վաւակ մըն ալ ունեցած էր, որ 10 տարեկան կը մեռնի, ինքն ալ կ'այրիանայ, եւ եկեղեցականութեան կը նուիրուի, եւ 1413-ին արդէն եպիսկոպոսացած է: Սոյն տարին Յակոբ Գ. Սսեցի կաթողիկոսին, եւ աթոռակալ Վահրամ եպիսկոպոսին եւ բոլոր

իշխաններուն հրամանով կ'ուղեւորի Խրիմ, Կաֆացի ապագայնոց պառակտումները հաշտեցնելու: Խոր ձմեռուան մէջ յունուար 15ին ճամբայ կ'ելլէ, ցամաքին վրայ ձիւնէ եւ սառնամանիքէ եւ ծովին վրայ ալեկոծութենէ կը նեղուի, բայց վերջապէս նպատակըն կը հասնի, բայց Կաֆան պաշարումէ նեղուած կը գտնէ, եւ հապիւ Պէնտէկոստէին, որ այն տարի յունիս 11-ին կը հանդիպէր, քահանաները եւ գլխաւորները կը հաւաքէ, եւ կը յաջողի յիւրեանց մէջն խաղողութիւն եւ սէր հաստատել (ԲՐԶ.): Կաթողիկոսանալն 17 տարի ետքն է, բայց ուրիշ տեղեկութիւն չենք գտներ այդ միջոցին վրայ»:

Էջ 2209. վերէն 15րդ տողին վրայ կ'աւելցնէ վերջակէտէն յառաջ.

- «Յունուար 28-ին (ՄՄՍ. 435)», իսկ 22րդ տողին վերջին՝ - (ՄՄՍ. 435):

Էջ 2373. վերէն 3րդ տողին վերջը կ'աւելցնէ. (ՂՐԴ. 478). իսկ 11րդ տողին վրայ կ'աւելցնէ վերջակէտէն յառաջ (ՂՐԴ. 361):

Էջ 2395. վերէն 25րդ տողին վրայ կ'աւելցնէ վերջակէտէն ետքը

-«Սեպտեմբեր 10-ին չորեքշաբթի (ՄՇՏ...):

Էջ 2758. վերէն 21րդ տողին վրայ կ'աւելցնէ վերջակէտէն ետքը.

- «Այս նամակը հրատարակուած ալ է, եւ գրուած է 1707 տարույ մեծապահօքին մէջ, աւագ շաբթուն եւ Զատիկին մօտ օրերը. ուղղուած է Սամաթիոյ ութը քահանաներուն, որոնց կը յայտարարէ թէ չըլլայ որ մտածէք թէ դուք վճարա ինչ նուաստիս հասուցիք. ոչ. եւ կը յաւելու թէ ամենեւին ոչ արարից վճանուցումն, եւ ոչ վերան իմ բացից ի մէջ եկեղեցույ, եւ ձերոց արարողութեանց եւ հրամանաց հպատակ կացից (67. ԺՄՆ. 129)»:

Էջ 2864. վերէն 28րդ տող «Շղթայակրին անուրը» բառերէն մինչեւ հատուածին վերջ 8 տող գծած եւ տեղը դրած է.

- Այս աւանդութեան հետեւողութեամբ Շղթայակրին անուրը կը կարծուէր այն օղակը, որ Սինայի սեղանին միակ սիւնին գլուխը խոյակին ներքեւը կը տեսնուի, եւ է միակտուր երկաթէ մեծ օղակ մը, Վոր ամրացուցած պիտի ըլլար վիպին շուրջը, թէպէտ անհնար էր ճշդել թէ ի՛նչ ազուցիկ կերպով եղած էր այդ ամրացումը: Սակայն Շղթայակրի ժամանակակից յիշատակագիր Պօղոս վարդապետ՝ շղթայագործ երկաթ կ'անուանէ Շղթայակրի պարանոցին վրայ եղողը (ԲՐԶ.), եւ որ օղակաւոր եւ հիւսկէն շղթայի գաղափարը կը ներշնչէ, որպիսի ինչ պատուով կը պահուի Ս. Ստեփանոսի աւանդատունը Ս. Կիւրպի սեղանին վրայ եւ գուցէ այդ ըլլայ Շղթայակրին վիպին վրայ կարծր, թէպէտ աներկբայ ստուգութեամբ չենք կրնար հաստատել »:

Էջ 2974. վերէն առաջին տողերուն մէջ Շղթայակրի մահուան ամսաթիւնը ստուգելով կ'աւելցնէ.

- «Մահուան օրը թէպէտ գերեզմանաբարին վրայ ալ վանց եղած, յիշատակարաններէ քաղելով ստուգուած է փետրուար 2ին, ճիշդ առաջին անգամ Երուսաղէմ մտած օր՝ կը գրէ Սաւականեան (ՍԱԻ. 888), թէպէտ Հաննա փետրուար 12ին կը դնէ մուտքը (ՀՆՆ. 148):

Էջ 3358. վերէն 6րդ տողին կամ հատուածին վերջը կ'աւելցնէ.

- «Միայն թէ երբոր Աշտարակեցին 1808 մարտին Ռուսաստանէ Էջմիածին դարձաւ, եւ Դանիէլը հիւանդ դրութեան մէջ գտաւ, իբրեւ աթոռի պարապութեան նախապզուշութիւն, բարձրագոյն խորհրդարանը կամ սինոդը վերանորոգել տուաւ, եւ անգամ նշանակուեցան՝ Գրիգոր Խամսեցի նախկին Կ. Պոլսոյ պատրիարքը, եւ Բարսեղ, Յովակիմ, Յովհաննէս, Աստուածատուր, Անդրէս եւ Ալիքսան եպիսկոպոսներ. ու Ներսէս եւ Ռէթէոս վարդապետներ (ԵՐՅ. Բ. 283), ամենքն ալ Դաւիթ անհաշտ հակառակորդներ: Ասոնցմէ Խամսեցին՝ Դանիէլի մահուանէ ետքը տեղապահութիւն պիտի վարէր մինչեւ Եփրեմի հասնիլը»:

Էջ 2494-95 «Դարանեղցիին մահը հատուածը կը փակէ սա խօսքերով.

- «Այսպէս կը կնքուի բաւական իր վրայ խօսել տուած կեանք մըն ալ, որուն մեծ գովութիւնը թէպէտ անարուեստ եւ ոչ ալ անկողմնակալ, գոնէ ժամանակակից պատմութիւն մը գրած ըլլալն է, որ տակաւին տպագրուած չէ»:

- Բայց 1915ին, այսինքն Ազգապատումի Բ. ռդ Մասին հրատարութենէն (1914) տարի մը ետքը Սրբոց Յակոբեանց տպարանէն լոյս տեսաւ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿԱՄԱԽԵՑԻՈՅ ԿԱՄ ԴԱՐԱՆԱՂՅԻՈՅ. Մեսրոպ Վրդ. Նշանեանի խնամքով, եւ ինքն Օրմանեան Սրբազան 1914 դեկտ. 15/28ին, Երուսաղէմի մէջ, ուղերձ մը գրեց ատոր սկիւբը:

Դարանեղցիին ժամանակագրութեան հրատարակութիւնը կ'արձանագրենք հոս ճիշդ այն պատճառաւ որ Օրմանեան Սրբազան այդ գործը կարդալէ ետքը, խորունկ ցաւ յայտնած է որ այսպիսի աղբիւր մը իր ձեռքին տակ չէ ունեցած Ազգապատումը գրելու ատեն, եւ մասնաւորապէս Կիլիկիոյ կաթողիկոս Ազարիա Ջուղայեցիի մասին գրածները փափաք յայտնած է սրբագրել, հիմնուելով Դարանեղցիի այն տեղեկութեան վրայ թէ Ազարիային վերագրուած եւ Վատիկանի Մատենադարանին մէջ պահուած այդ դաւանագիրը կեղծ է:

Օրմանեան՝ Ազարիա կթղի. մասին գրած է Ազգապատումի 2280-85 էջերուն մէջ, կարծելով որ յիշեալ դաւանագիրը ստոյգ է. բայց Դարանեղցիին կը պատմագրէ թէ ի'նչպէս դարբնուեցաւ այդ կեղծ պաշտօնագիրը.

- «Եւ այն չարաչար հերձուած տումարն, այսինքն կոնդակն, որ յանուն Ազարիայի կաթողիկոսին էին հնարել չարափառքն, նա մի՛ ոք կարծեսցէ նմա արարեալ, որպէս ամենայն վարդապետ ժամանակին շատ մեղդրութիւն արարին նմա վասն չար հերձուածին քաղկեդոնականացն հաւանական գիր ուղարկելոյ Հռովմայեցոցն: Նա յուրաստ եղեալ, երդուեալ չարաչար թէ օ՛ն եւ օն արասցէ ինձ Տէր եւ օ՛ն եւ օն յաւելցի, եթէ տեղեակ եմ երբեք, եւ կամ ի բերանոյ իմմէ այնպիսի չար հերձուածոյ բանք թէ ուրուք ոք լուեալ ոք լուեալ են, թո՛ղ վկայեն, նա մեղապարտ լինիցիմ առաջի Աստուծոյ եւ առաջի ամենայն վարդապետացո: Եւ այսպիսի փղջական բանիցս լուեալ վարդապետացն ի կաթողիկոսէն, հաւատացեալ լոեցին: Եւ յետոյ լուեալ այսպիսի չարահնար կերպիւք, որ ոմն Ղազար եպիսկոպոս Հալապեցի՝ չարածեր եւ չարահնար, վատշուեր եւ թոյլամորթ եւ անարգամիտ՝ ընդ ֆոանգ եպիսկոպոսի մի վայն կոնդակն չար գրելով գաղտ յանուն Ազարիային եւ զմոհրն գողանալով եւ կնքելով ի վերայ, որ այն չար Ղազար չեպիսկոպոսն Ազարիային ժամասացն եւ քոխեայի պէս լինելով եւ հաւատարիմ բարեկամ ու վերակացու ամենայն ընչիցն եւ գոյիցն եւ ամենայն կաթողիկոսարանին Հալապայ:

Եւ այլ ոմն՝ մականունն Ղօփուլ եպիսկոպոս անուն ի Բաղչու յերի կալով գաւառացն, որ ուրացող եւ ֆռանգադաւան եղեալ էր եւ աշխարհի նեցին կալով, սա ընդ ֆռանգ եպիսկոպոսին լինելով, քալամաճի գոլով վասն միջնորդութեան ֆռանգին խօսելով ի լեզուս նոցա ընդ կաթողիկոսին, եւ ընդ այլոց թարգման լինելով եւ այսպիսի չար հնարիւք մեծ անօրէնութիւն գործեցին եւ անհաշտ խոռվութեան պատճառ արկին վայն չար գիրն՝ ի մէջ Հռովմայեցոցն եւ Հայոց գիտնականաց - ժմնակգրթին. Դարանեղցոյ. (էջ 380-381):

[Ծնթ. Բ. Ե.]